Հավելված N 2
ՀՀ կառավարության 2021 թվականի
նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ Ն Ե Ր

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	
NN	**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ**
1	**<u>1.1«Աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտի 2022-2026 թվականների ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ</u>** 1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտում վարվող պետական քաղաքականության հիմնական առաջնահերթությունների սահմանման, ոլորտի կառավարման արդյունավետության բարձրացման, այդ թվում՝ սոցիալական պաշտպանության ոլորտի տարբեր բնագավառներում վարվող քաղաքականությունները փոխկապակցելու նպատակով անհրաժեշտ է մշակել աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտիառաջիկա 5 տարիների ռազմավարություն: Սույն միջոցառման մշակման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4-րդ՝ «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի 4.6-րդ՝ «Աշխատանք և սոցիալական պաշտպանություն» ենթաբաժնի պահանջներից: 1.1. կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները Աշխատանքի և սոցիալական պաշտպանության տարբեր բնագավառներում իրականացվող բարեփոխումների համատեքստում, հաշվի առնելով նաև, որ ՀՀ պետական բյուջեի ծախսերի շուրջ 30 տոկոսն ուղղվում է սոցիալական պաշտպանության ոլորտին, արդիական է սոցիալական պաշտպանության ոլորտում առաջիկա տարիների տեսլականի՝ մեկ միասնական ռազմավարության առկայության խնդիրը, որը միաժամանակ համահունչ կլինի երկրում՝ սոցիալ-տնտեսական և այլ ոլորտներում վարվող քաղաքականությունների հիմնական ուղղություններին: Աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտի տարբեր բնագավառներում վարվող քաղաքականությունները առավել արդյունավետ իրականացնելու նպատակով անհրաժեշտ է նաև ապահովել դրանց փոխկապակցվածությունը՝ բացառելով տրամադրվող ծառայությունների կրկնությունները և ապահովելով դրանց առավել հասցեականությունն ու որակը: 1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Ռազմավարությամբ կամարագրվեն 2022-2026թթ. սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման հիմնական գերակայությունները/ առաջնահերթությունները, նպատակները, դրանց հասնելու համար անհրաժեշտ առանցքային բարեփոխումներն ու քաղաքականության գործիքները, ինչպես նաև առկա խոչընդոտները և հիմնական ռիսկերը: Ռազմավարությունը սոցիալական պաշտպանության առանձին բնագավառներին առնչվող մանրամասներ չի ներառի, սակայն ապահովելու է բավարար ուղենիշեր ժողովրդագրության, աշխատանքի և զբաղվածության, կենսաթոշակային ապահովության, սոցիալական աջակցության բնագավառներում, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց, կանանց և երեխաների, տարեցների հիմնահարցերին առնչվող ծրագրերի մշակման ժամանակ ընդհանուր տրամաբանությամբ առաջնորդվելու համար: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

	Աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտի վերաբերյալ իրականացված հետազոտությունների ու վերլուծությունների առկայություն, ինչը թույլ կտա մշակել ու բարելավել ոլորտում վարվող քաղաքականությունը: Կձևավորվի աշխատանքային խումբ, որը կմշակի 2022-2026 թթ.՝ 5 տարիների սոցիալական պաշտպանության ոլորտի հիմնական գերակայությունները/ առաջնահերթությունները, թիրախային նպատակները, դրանց հասնելու միջոցներն ու ռեսուրսներն, անհրաժեշտ առանցքային բարեփոխումներն ու քաղաքականության գործիքները, ինչպես նաև զարգացման խոչընդոտները և հիմնական ռիսկերը:
2	**<u>2.1 «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ</u>** 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի դրույթներից, որի 4-րդ՝ «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի 4.6-րդ՝ «Աշխատանք և սոցիալական պաշտպանություն» ենթաբաժնում նախատեսվել է, որ արժանապատիվ աշխատանքի իրավունքի իրացման նպատակով պարզեցվելու և բարելավվելու են աշխատանքային հարաբերությունների կարգավորման մեխանիզմները՝ համապատասխանեցվելով նաև ՀՀ կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների պահանջներին: Միջոցառման համար հիմք են հանդիսանում Սահմանադրության 6-րդ հոդվածի դրույթները: Միջոցառման նպատակը ՀՀ աշխատանքային օրենսգրքի առանձին դրույթների՝ միջազգային պայմանագրերով (Աշխատանքի միջազգային կազմակերպության կոնվենցիաներ և Վերանայված եվրոպական սոցիալական խարտիա) ամրագրված պահանջներին համապատասխանեցումը, ոչ հստակ կամ տարաբնույթ ընկալման տեղիք տվող դրույթների հստակեցումը, ինչպես նաև որոշակի խմբերի համար աշխատանքային պայմանագրի լուծման պարագայում առանձին երաշխիքների սահմանումը, երեխա ունեցող աշխատողների իրավունքների ընդլայնումը, աշխատողների մասնագիտական հմտությունների զարգացմանը և արտադրողականության խթանմանն ուղղված կարգավորումների նախատեսումն է: 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները 2015 թվականի հունիսի 22-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-96-Ն օրենքով ՀՀ աշխատանքային օրենսգրքում կատարվեցին բավականին մեծ թվով փոփոխություններ, որոնց զգալի մասը ՀՀ աշխատանքային օրենսգրքի դրույթները միջազգային իրավունքի նորմերին, այդ թվում՝ նաև Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի և ԱՄԿ-ի կոնվենցիաների դրույթներին համապատասխանեցնելու գործընթացի համատեքստում էր: Օրենքի ընդունումը պայմանավորված էր նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի որոշակի դրույթների կիրարկման ընթացքում ի հայտ եկած խնդիրների լուծման անհրաժեշտությամբ: ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ առկա կարգավորումների շարունակական բարելավման ու կատարելագործման, աշխատանքային հարաբերությունների կարգավորման առավել ճկուն մեխանիզմներ նախատեսելու, ինչպես նաև աշխատանքային հարաբերությունների կարգավորման ոլորտում ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերի (Աշխատանքի միջազգային կազմակերպության կոնվենցիաներ և Վերանայված եվրոպական սոցիալական խարտիա) առանձին դրույթներին՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի պահանջների համապատասխանեցման անհրաժեշտությունից ելնելով հարկավոր է մշակել ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ նախատեսող նախագիծ: Մասնավորապես, անհրաժեշտ է նախատեսել սոցիալական գործընկերությանը, կոլեկտիվ պայմանագրերին, արհմիությունների դերին, գործադուլին, ամենամյա արձակուրդներին, աշխատանքային պայմանագրի կնքմանը և բովանդակությանը, երեխաների աշխատանքին վերաբերող, ինչպես նաև աշխատանքային հարաբերությունների մի շարք այլ կարգավորումների համապատասխանեցում ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերի պահանջներին (Աշխատանքի միջազգային կազմակերպության կոնվենցիաներ և Վերանայված եվրոպական սոցիալական խարտիա) և լուծումներ առաջադրել նաև իրավակիրառական պրակտիկայում ի հայտ եկած խնդիրներին: Միաժամանակ, օբյեկտիվ անհրաժեշտությամբ պայմանավորված՝ հարկավոր է որոշակի խմբերի համար աշխատանքային պայմանագրի լուծման պարագայում սահմանել առանձին երաշխիքներ: Բացի այդ, աշխատող-գործատու հարաբերությունների բարելավման նպատակով անհրաժեշտություն է նաև աշխատանքային հարաբերությունների կարգավորումների պարզեցումը: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Միջոցառման շրջանակներում աշխատանքային հարաբերությունների կարգավորման ոլորտում ՀՀ կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների (Աշխատանքի միջազգային կազմակերպության կոնվենցիաներ և Վերանայված եվրոպական սոցիալական խարտիա) պահանջներին ՀՀ աշխատանքային օրենսգրքի դրույթների անհամապատասխանությունների վերլուծության և բացահայտման, իրավակիրառական պրակտիկայում ի հայտ

	եկած խնդիրների վերլուծության արդյունքում կմշակվի ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ նախատեսող նախագիծ, որով կնախատեսվի սոցիալական գործընկերությանը, կոլեկտիվ պայմանագրերին, արհմիությունների դերին, գործադուլին, ամենամյա արձակուրդներին, աշխատանքային պայմանագրի բովանդակությանը, երեխաների աշխատանքին վերաբերող, ինչպես նաև աշխատանքային հարաբերությունների մի շարք այլ կարգավորումների համապատասխանեցում ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերի պահանջներին, կիստակեցվեն ՀՀ աշխատանքային օրենսգրքի այն դրույթները, որոնք իրավակիրառական պրակտիկայում ոչ հստակ կամ տարաբնույթ ընկալման տեղիք են տալիս, աշխատանքային պայմանագրի լուծման պարագայում որոշակի խմբերի (հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայող, ինչպես նաև 1-ին խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստացողի կամ զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամ (ամուսին, երեխա, հայր, մայր, հարազատ քույր, հարազատ եղբայր, տատ, պապ) համար աշխատողների քանակի և (կամ) հաստիքների կրճատման դեպքում աշխատանքում մնալու նախապատվության իրավունք կսահմանվի, ինչպես նաև կնախատեսվեն կարգավորումներ ուղղված երեխա ունեցող աշխատողների իրավունքների ընդլայնմանը, աշխատողների մասնագիտական հմտությունների զարգացմանը և արտադրողականության խթանմանը: Որպես միջոցառման համակատարող նշված է Էկոնոմիկայի նախարարությունը: Միջոցառման համակատարողից ակնկալվում է նախատեսված աշխատանքների իրականացման ժամանակ համատեղ քննարկումների անցկացում աշխատանքների իրականացման ողջ ընթացքում, ինչպես նաև վերջնական նախագծի վերաբերյալ կարծիքի ամփոփում՝ մինչև փաստաթղթի ներկայացումը Վարչապետի աշխատակազմ: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Կվերանայվեն աշխատանքային օրենսդրության, մասնավորապես սոցիալական գործընկերությանը և կոլեկտիվ պայմանագրերին (կոլեկտիվ բանակցությունների վարման ընթացակարգերի հստակեցում, սոցիալական գործընկերության ինստիտուտի դերի կարևորում), արհմիությունների դերին (արհմիությունների դերի բարձրացման նպատակով արհմիությունների լիազորությունների վերանայում, աշխատողների ներկայացուցչական մարմիններում ընտրված աշխատողների պաշտպանվածությանը վերաբերող կարգավորումների նախատեսում), գործադուլին (գործադուլ կազմակերպելու և գործադուլ հայտարարելու մասին որոշման ընդունմանը վերաբերող կարգավորումների վերանայում, գործադուլի իրավունքը միայն կոլեկտիվ աշխատանքային վեճի առկայությամբ չպայմանավորելու կարգավորումների նախատեսում), ամենամյա արձակուրդներին (ամենամյա արձակուրդի իրավունքի իրացման համար գործուն մեխանիզմների ամրագրում), աշխատանքային պայմանագրի կնքմանը (կնքման այլընտրանքային եղանակների նախատեսում) և բովանդակությանը (բովանդակության մեջ ներառվող պարտադիր պայմանների շրջանակի վերանայում) երեխաների աշխատանքին վերաբերող (մասնավորապես՝ աշխատանքային ժամերի տևողության վերանայում), ինչպես նաև աշխատանքային հարաբերությունների մի շարք այլ կարգավորումները: Կկարգավորվեն իրավակիրառական պրակտիկայում ի հայտ եկած խնդիրները, այդ թվում՝ որոշակի խմբերի (հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայող, ինչպես նաև 1-ին խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստացողի կամ զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամ (ամուսին, երեխա, հայր, մայր, հարազատ քույր, հարազատ եղբայր, տատ, պապ) համար աշխատողների քանակի և (կամ) հաստիքների կրճատման դեպքում աշխատանքում մնալու նախապատվության իրավունք կսահմանվի, կընդլայնվեն երեխա ունեցող աշխատողների իրավունքները (ավելի կարճ ժամերով աշխատելու հնարավորության նախատեսում, իրենց կարգավիճակով պայմանավորված տրամադրվող ընդմիջումների օգտագործման ճկուն մեխանիզմների սահմանում), կնախատեսվեն աշխատողների մասնագիտական հմտությունների զարգացմանը և արտադրողականության խթանմանն ուղղված կարգավորումներ (աշխատողների մասնագիտական ուսուցման կազմակերպման համապարփակ կարգավորումների նախատեսում), ինչպես նաև կպարզեցվեն աշխատանքային հարաբերությունների կարգավորումները՝ աշխատող-գործատու հարաբերությունների բարելավման նպատակով:
	<u>2.2 Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի» շրջանակներում՝ ԵՄ հրահանգների պահանջներին ՀՀ աշխատանքային օրենսդրության համապատասխանեցման նպատակով համապատասխան իրավական ակտերն ընդունված են</u> 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի դրույթներից, որի 4-րդ՝ «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի 4.6-րդ «Աշխատանք և սոցիալական պաշտպանություն» ենթաբաժնում նախատեսվել է, որ արժանապատիվ աշխատանքի իրավունքի իրացման նպատակով պարզեցվելու և բարելավվելու են աշխատանքային հարաբերությունների կարգավորման մեխանիզմները՝ համապատասխանեցվելով նաև ՀՀ կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների պահանջներին:

	Միջոցառման համար հիմք են հանդիսանում Սահմանադրության 6-րդ հոդվածի, «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքի հավելվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի 274-րդ հոդվածի դրույթները: Միջոցառման նպատակը ՀՀ աշխատանքային օրենսդրության առանձին կարգավորումները Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի շրջանակներում ԵՄ հրահանգների պահանջներին համապատասխանեցնելն է: 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի՝ աշխատանքային իրավունքի մասով ուժի մեջ մտնելուց հետո, համաձայնագրի հավելվածի համաձայն, 5-ամյա և 7-ամյա ժամկետներում իրականացվելու է ՀՀ աշխատանքային օրենսդրության մոտարկում Եվրամիության համապատասխան հրահանգներին: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Նախատեսվում է Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի շրջանակներում սահմանված ժամկետներին համապատասխան մշակել և Վարչապետի աշխատակազմ ներկայացնել ԵՄ հրահանգների պահանջներին ՀՀ աշխատանքային օրենսդրության համապատասխանեցմանն ուղղված համապատասխան իրավական ակտերի նախագծերը: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Միջոցառման իրականացումից ակնկալվում է, որ ՀՀ աշխատանքային օրենսդրությունը կհամապատասխանեցվի ԵՄ հրահանգների պահանջներին:
	<u>2.3 Աշխատանքային վեճերի լուծման արտադատական համակարգի ներդրման մոդելի և ֆինանսական գնահատականի վերաբերյալ վերլուծության ներկայացում Վարչապետի աշխատակազմ</u> <u>1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը</u> Միջոցառման անհրաժեշտությունը բխում է է ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի դրույթներից, որի 4-րդ՝ «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի 4.6-րդ «Աշխատանք և սոցիալական պաշտպանություն» ենթաբաժնում նախատեսվել է ներդնել աշխատանքային վեճերի լուծման արտադատական արդյունավետ համակարգ, որը կբարձրացնի նաև սոցիալական գործընկերների դերակատարումը: 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Հայաստանի Հանրապետությունում անհատական աշխատանքային վեճերը, ՀՀ աշխատանքային օրենսգրքի համաձայն, ենթակա են քննության դատական կարգով: Մյուս կողմից, ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված է, որ աշխատանքային վեճերը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի և «Առևտրային արբիտրաժի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան, կարող են հանձնվել արբիտրաժային տրիբունալի լուծմանը, եթե աշխատողի և գործատուի միջև կնքվել է համաձայնություն, կամ կոլեկտիվ պայմանագրով նախատեսված է վեճն արբիտրաժին հանձնելու հնարավորություն: Հարկ է նկատել, որ դատական կարգով աշխատանքային վեճերի քննությունը կողմերից պահանջում է նախ ի սկզբանե, իսկ այնուհետև նաև ընթացիկ բավականին մեծ ծախսեր: Բացի այդ, դատական կարգով աշխատանքային վեճերի քննությունը կողմերից պահանջում է նաև տևական ժամանակ: Դատական կարգով աշխատանքային վեճերի լուծման այլընտրանքային տարբերակ է աշխատանքային վեճերի լուծման արտադատական համակարգը: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Կարևորելով աշխատանքային իրավունքների պաշտպանությունն առավել կարճ ժամկետներում և առանց հավելյալ ծախսերի իրականացնելու հարցը, ինչպես նաև գործատու-աշխատող հարաբերություններում ազատ բանակցելու համար նպաստավոր միջավայրի ստեղծումը՝ առաջարկվում է, դատական կարգով աշխատանքային վեճերի քննությունից բացի, աշխատանքային հարաբերությունների կողմերի համար նախատեսել աշխատանքային իրավունքների պաշտպանության այլընտրանքային տարբերակ՝ աշխատանքային վեճերի լուծման արտադատական համակարգի ներդրում: Սակայն, մինչ համակարգի ներդրման ուղղությամբ գործնական քայլեր ձեռնարկելը անհրաժեշտ է ունենալ համակարգի ներդրման մոդելի և համակարգի ներդրման համար պահանջվող ֆինանսական միջոցների

	վերաբերյալ համապատասխան գնահատական, որով պարզ կլինի Հայաստանի Հանրապետությունում նշված համակարգի ներդրման համար պետական բյուջեից պահանջվող ֆինանսական միջոցների չափը: Աշխատանքային վեճերի լուծման արտադատական համակարգի ներդրման համար համապատասխան մոդելի և պահանջվող ֆինանսական միջոցների վերաբերյալ համապատասխան գնահատականն ունենալուց հետո՝ այդ համակարգի ներդրման համար պետական բյուջեից համապատասխան միջոցների տրամադրման հնարավորության և նպատակահարմարության պարագայում՝ կմշակվեն աշխատանքային վեճերի լուծման արտադատական համակարգի ներդրմանն ուղղված իրավական հիմքերը: Որպես միջոցառման համակատարող նշված է Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակը: Միջոցառման համակատարողից ակնկալվում է նախատեսված աշխատանքների իրականացման ժամանակ համատեղ քննարկումների անցկացում աշխատանքների իրականացման ողջ ընթացքում, ինչպես նաև վերջնական փաստաթղթերի վերաբերյալ կարծիքի ամփոփում՝ մինչև փաստաթղթի ներկայացումը Վարչապետի աշխատակազմ: 2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Աշխատանքային վեճերի լուծման արտադատական համակարգի ներդրման համար նախընտրելի մոդելի վերաբերյալ առաջարկություն և մոդելի ներդրման համար պահանջվող ֆինանսական միջոցների գնահատական: Աշխատանքային վեճերի լուծման արտադատական համակարգի ներդրման մոդելի և համակարգի ներդրման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների վերաբերյալ վերլուծության առկայություն: Աշխատանքային վեճերի լուծման արտադատական համակարգի առկայությունը հնարավորություն կտա աշխատանքային վեճերը լուծել հնարավորինս կարճ ժամկետներում, առանց հավելյալ ծախսերի: Համակարգի ներդրումը նաև գործատու-աշխատող հարաբերություններում ազատ բանակցելու համար նպաստավոր միջավայր կապահովի:
	<u>2.4 Աշխատանքային վեճերի լուծման արտադատական համակարգի ներդրման մոդելի և ֆինանսական գնահատականի վերլուծության արդյունքները հաշվի առնելով՝ աշխատանքային վեճերի լուծման արտադատական համակարգի ներդրման համար 2025-2027 թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրով կամ ծրագրի ընդունումից հետո շահագրգիռ քննարկումների արդյունքներով պետական բյուջեից համապատասխան միջոցների տրամադրման հնարավորության պարագայում՝ աշխատանքային վեճերի լուծման արտադատական համակարգի ներդրմանն ուղղված օրենքներին հավանություն տալու մասին ՀՀ կառավարության որոշումն ընդունված է</u> 1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման անհրաժեշտությունը բխում է է ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի դրույթներից, որի 4-րդ՝ «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի 4.6-րդ «Աշխատանք և սոցիալական պաշտպանություն» ենթաբաժնում նախատեսվել է ներդնել աշխատանքային վեճերի լուծման արտադատական արդյունավետ համակարգ, որը կբարձրացնի նաև սոցիալական գործընկերների դերակատարումը: Միջոցառման համար հիմք են հանդիսանում Սահմանադրության 6-րդ հոդվածի դրույթները: 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Հայաստանի Հանրապետությունում անհատական աշխատանքային վեճերը, ՀՀ աշխատանքային օրենսգրքի համաձայն, ենթակա են քննության դատական կարգով: Մյուս կողմից, ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված է, որ աշխատանքային վեճերը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի և «Առևտրային արբիտրաժի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան, կարող են հանձնվել արբիտրաժային տրիբունալի լուծմանը, եթե աշխատողի և գործատուի միջև կնքվել է համաձայնություն, կամ կոլեկտիվ պայմանագրով նախատեսված է վեճն արբիտրաժին հանձնելու հնարավորություն: Դատական կարգով աշխատանքային վեճերի քննությունը կողմերից պահանջում է նախ ի սկզբանե, իսկ այնուհետև նաև ընթացիկ բավականին մեծ ծախսեր: Բացի այդ, դատական կարգով աշխատանքային վեճերի քննությունը կողմերից պահանջում է նաև տևական ժամանակ: Դատական կարգով աշխատանքային վեճերի լուծման այլընտրանքային տարբերակ է աշխատանքային վեճերի լուծման արտադատական համակարգը: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Կարևորելով աշխատանքային իրավունքների պաշտպանությունն առավել կարճ ժամկետներում և առանց հավելյալ ծախսերի իրականացնելու հարցը, առաջարկվում է, դատական կարգով աշխատանքային վեճերի քննությունից բացի, աշխատանքային հարաբերությունների կողմերի համար նախատեսել աշխատանքային

	իրավունքների պաշտպանության այլընտրանքային տարբերակ՝ աշխատանքային վեճերի լուծման արտադատական համակարգի ներդրում: Աշխատանքային վեճերի լուծման արտադատական համակարգի ներդրման մոդելի և համակարգի ներդրման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների վերաբերյալ վերլուծությունն ու գնահատականն ունենալուց հետո՝ այդ համակարգի ներդրման համար պետական բյուջեից համապատասխան միջոցների տրամադրման հնարավորության և նպատակահարմարության պարագայում՝ նախատեսվում է մշակել և Վարչապետի աշխատակազմ ներկայացնել աշխատանքային վեճերի լուծման արտադատական համակարգի ներդրմանն ուղղված իրավական ակտերի նախագծեր: Որպես միջոցառման համակատարող նշված են ՀՀ արդարադատության նախարարությունը, Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակը և Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը: Միջոցառման համակատարողներից ակնկալվում է նախատեսված աշխատանքների իրականացման ժամանակ համատեղ քննարկումների անցկացում աշխատանքների իրականացման ողջ ընթացքում, ինչպես նաև վերջնական փաստաթղթերի վերաբերյալ կարծիքի ամփոփում՝ մինչև փաստաթղթի ներկայացումը Վարչապետի աշխատակազմ: 2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Աշխատանքային վեճերի լուծման արտադատական համակարգի առկայություն, որը հնարավորություն կտա աշխատանքային վեճերը լուծել հնարավորինս կարճ ժամկետներում, առանց հավելյալ ծախսերի:
	<u>2.5 «Արհեստակցական միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ</u> 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի դրույթներից, որի 4-րդ՝ «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի 4.6-րդ «Աշխատանք և սոցիալական պաշտպանություն» ենթաբաժնում նախատեսվել է ընդլայնել աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ ոչ պետական վերահսկողության գործիքակազմը և վերանայել արհեստակցական միությունների լիազորությունների շրջանակը, ինչպես նաև բոլոր մակարդակներում սոցիալական գործընկերության զարգացման և խորացման նպատակով՝ վերանայել գործատուների և արհեստակցական միությունների գործունեության օրենսդրական կարգավորումները: Միջոցառման համար հիմք են հանդիսանում նաև Սահմանադրության 6-րդ հոդվածի դրույթները: Միջոցառման նպատակը արհմիությունների ինստիտուտի դերի բարձրացումն է, ինչպես նաև բոլոր մակարդակներում սոցիալական գործընկերության զարգացման և խորացման նպատակով համապատասխան հիմքերի ապահովումն է: 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Աշխատողների իրավունքների պաշտպանության համակարգի արդյունավետության ապահովման շրջանակներում ամենակարևոր դերակատարներից մեկն արհեստակցական միություններն են: Աշխատողների իրավունքների երաշխավորված պաշտպանության լավագույն երաշխիքներից է գործուն արհեստակցական միության առկայությունը: Սակայն հարկ է նկատել, որ գործող ոչ բոլոր արհմիություններն են արդյունավետ կերպով իրականացնում օրենքով սահմանված իրենց գործառույթը: Արհեստակցական միությունների գործունեությունը կարգավորվում է «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքով: Միաժամանակ առկա է նաև արհեստակցական միությունների գործունեությունը կարգավորող օրենսդրությունը ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների (Աշխատանքի միջազգային կազմակերպության կոնվենցիաներ և Վերանայված եվրոպական սոցիալական խարտիա) պահանջներին համապատասխանեցնելու անհրաժեշտություն: 1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Միջոցառման շրջանակներում նախատեսվում է համապատասխան առաջարկությունների մշակմամբ ստեղծել անհրաժեշտ իրավական հիմքեր՝ արհեստակցական միությունների գործիքակազմի ընդլայման համար: Միջոցառման շրջանակներում միաժամանակ նախատեսվում է ներկայացնել համապատասխան փոփոխությունների և լրացումների վերաբերյալ առաջարկություններ, որոնք ուղղված կլինեն արհեստակցական միությունների գործունեությունը կարգավորող օրենսդրությունը ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններին համապատասխանեցնելուն, ինչպես նաև կխթանեն բոլոր մակարդակներում սոցիալական գործընկերության խորացումն ու զարգացումը:

	Որպես միջոցառման համակատարող նշված են Էկոնոմիկայի նախարարությունը և Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակը: Միջոցառման համակատարողներից ակնկալվում է նախատեսված աշխատանքների իրականացման ժամանակ համատեղ քննարկումների անցկացում աշխատանքների իրականացման ողջ ընթացքում, ինչպես նաև համապատասխան առաջարկությունների վերջնական փաթեթի վերաբերյալ կարծիքի ամփոփում՝ մինչև փաստաթղթի ներկայացումը շահագրգիռ մարմիններ և Վարչապետի աշխատակազմ: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Միջոցառման իրականացումից ակնկալվում է ընդլայնել արհեստակցական միությունների գործիքակազմը, ապահովել գործուն արհեստակցական միությունների առկայություն, որոնք արդյունավետորեն կհամագործակցեն նաև գործատուների հետ՝ կոլեկտիվ աշխատանքային հարաբերությունների շրջանակներում: Միաժամանակ, առաջարկվելիք լուծումներով արհեստակցական միությունների գործունեությունը կարգավորող օրենսդրությունը կհամապատասխանեցվի նաև ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների (Աշխատանքի միջազգային կազմակերպության կոնվենցիաներ և Վերանայված եվրոպական սոցիալական խարտիա) պահանջներին: Մասնավորապես, կնախատեսվեն կարգավորումներ, որոնք հնարավորություն կստեղծեն ճյուղային, տարածքային և հանրապետական մակարդակներում մեկից ավելի միությունների ներկայացվածության համար, ինչը բոլոր մակարդակներում սոցիալական գործընկերության զարգացման և խորացման համար համապատասխան հիմքեր կապահովի:
	<u>2.6 «Գործատուների միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ</u> 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի դրույթներից, որի 4-րդ՝ «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի 4.6-րդ «Աշխատանք և սոցիալական պաշտպանություն» ենթաբաժնում նախատեսվել է բոլոր մակարդակներում սոցիալական գործընկերության զարգացման և խորացման նպատակով՝ վերանայված գործատուների և արհեստակցական միությունների գործունեության օրենսդրական կարգավորումները: Միջոցառման համար հիմք են հանդիսանում նաև Սահմանադրության 6-րդ հոդվածի դրույթները: Միջոցառման նպատակը բոլոր մակարդակներում սոցիալական գործընկերության զարգացման և խորացման նպատակով համապատասխան հիմքերի ապահովումն է: 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Գործատուների միությունների գործունեությունը կարգավորվում է «Գործատուների միությունների մասին» ՀՀ օրենքով: Ներկայում առկա է գործատուների միությունների գործունեությունը կարգավորող օրենսդրությունը ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների (Աշխատանքի միջազգային կազմակերպության կոնվենցիաներ և Վերանայված եվրոպական սոցիալական խարտիա) պահանջներին համապատասխանեցնելու անհրաժեշտություն: 1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Միջոցառման շրջանակներում միաժամանակ նախատեսվում է ներկայացնել համապատասխան փոփոխությունների և լրացումների վերաբերյալ առաջարկություններ, որոնք ուղղված կլինեն գործատուների միությունների գործունեությունը կարգավորող օրենսդրությունը ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններին համապատասխանեցնելուն, ինչպես նաև կխթանեն բոլոր մակարդակներում սոցիալական գործընկերության խորացումն ու զարգացումը, ուղղված կլինեն գործատուների գործուն միությունների ձևավորմանը: Որպես միջոցառման համակատարող նշված են Էկոնոմիկայի նախարարությունը և Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակը: Միջոցառման համակատարողներից ակնկալվում է նախատեսված աշխատանքների իրականացման ժամանակ համատեղ քննարկումների անցկացում աշխատանքների իրականացման ողջ ընթացքում, ինչպես նաև համապատասխան առաջարկությունների վերջնական փաթեթի վերաբերյալ կարծիքի ամփոփում՝ մինչև փաստաթղթի ներկայացումը շահագրգիռ մարմիններ և Վարչապետի աշխատակազմ: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Առաջարկվելիք լուծումներով գործատուների միությունների գործունեությունը կարգավորող օրենսդրությունը կհամապատասխանեցվի ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների (Աշխատանքի միջազգային կազմակերպության կոնվենցիաներ և Վերանայված եվրոպական սոցիալական խարտիա) պահանջներին: Մասնավորապես, կնախատեսվեն կարգավորումներ, որոնք հնարավորություն կստեղծեն ճյուղային, տարածքային և հանրապետական մակարդակներում մեկից ավելի միությունների ներկայացվածության համար, ինչը բոլոր մակարդակներում սոցիալական գործընկերության զարգացման և խորացման համար համապատասխան հիմքեր կապահովի: Կսահմանվեն նաև կարգավորումներ՝ ուղղված գործատուների գործուն միությունների ձևավորմանը, որոնք

	արդյունավետորեն կիամագործակցեն նաև արհմիությունների հետ՝ կոլեկտիվ աշխատանքային հարաբերությունների շրջանակներում:
3	**<u>3.1 «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1691-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումն ընդունված է</u>** 1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Նույն ոլորտում գործունեություն ծավալող նույնատիպ կազմակերպությունների աշխատողների համար միատեսակ սոցիալական երաշխիքներ նախատեսելու հարցում սոցիալական արդարության պահպանման, ինչպես նաև սոցփաթեթից օգտվելու իրավունքի շարունակականության ապահովման անհրաժեշտությամբ: 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Սոցփաթեթի համակարգն ի սկզբանե ներդրվել է՝ պետական մարմինների և պետական ոչ առևտրային կազմակերպությունների (ընտրվել են միայն կրթության, մշակույթի և սոցիալական պաշտպանության և գիտության ոլորտների մի շարք պետական ոչ առևտրային կազմակերպություններ) հաստիքային աշխատողների համար՝ որպես լրացուցիչ սոցիալ-աշխատանքային երաշխիք: Սակայն, «Սոցիալական փաթեթների ապահովում ծրագրի» (1015) համար համար հատկացված սուղ միջոցներով պայմանավորված՝ նույնիսկ կրթության, մշակույթի և սոցիալական պաշտպանության և գիտության ոլորտների ոչ բոլոր կազմակերպությունների աշխատողներն են հանդիսանում սոցփաթեթի շահառուներ: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները ՀՀ կառավարության 27.12.2012 N 1691-Ն որոշման N 1 հավելվածով սահմանված են այն կազմակերպությունները, որտեղ աշխատող հաստիքային աշխատողներն օգտվում են սոցփաթեթի իրավունքից: Նախագծով նախատեսվում է ընդլայնել նշված սոցփաթեթի շահառուների ցանկը, մասնավորապես՝ 1) «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան», «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ», «Երևանի Գևորգ Էմինի անվան N 182 ավագ դպրոց», «Ծաղկունք բաց դպրոց», «Հայ-չինական բարեկամության դպրոց» հիմնադրամները ներառվել են սոցփաթեթի շահառուների ցանկում՝ հաշվի առնելով այն, որ նշված հիմնադրամները նախկինում հանդիսանալով ՊՈԱԿ-ներ, օգտվել են սոցփաթեթի իրավունքից, սակայն վերակազմակերպվելով հիմնադրամների՝ դուրս են եկել Որոշման 1-ին հավելվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված սոցփաթեթի շահառուների ցանկից: Այս հիմնադրամները ցանկում լրացնելու պարագայում՝ սոցփաթեթի շահառուների շրջանակը կհամալրվի շուրջ 299 շահառուով (տարեկան 21,528.0 հազ. դրամ սոցփաթեթի գումարով): 2) Սոցիալական փաթեթի շահառուների ցանկում ինչպես միջին մասնագիտական, այնպես էլ՝ բարձրագույն մասնագիտական, լրացուցիչ կրթության, այդ թվում՝ արտադպրոցական դաստիարակության, հետբուհական մասնագիտական կրթության ուսումնական հաստատությունները չեն ներառվել՝ հաշվի առնելով միջոցառման համար հատկացվող միջոցների սղությունը: Հետևաբար, ոլորտում աշխատողների համար միասնական սոցիալական երաշխիքներ ապահովելու նպատակով՝ առաջարկվում է սոցփաթեթի շահառուների շրջանակի ընդլայնում, որի արդյունքում հնարավորություն կտրվի նաև միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների, 2 մարզաքոլեջի, 26 մանկապատանեկան մարզադպրոցի թվով 996 մարզիչներին, 77 կրթական ծրագրերով ուսումնական հաստատությունների և ներկայացված այլ կազմակերպությունների աշխատողներին, 26 մանկապատանեկան մարզադպրոց հանդիսացող պետական ոչ առևտրային կազմակերպություններում աշխատող 499 մարզիչ-մանկավարժներին և կրթության և սպորտի ոլորտի այլ հաստիքային աշխատողներին՝ թվով 6507 շահառուի (468,504.0 հազ. դրամ) ևս օգտվելու սոցփաթեթից: 3) Նույն ոլորտում գործունեություն ծավալող նույնատիպ կազմակերպությունների աշխատողների համար միատեսակ սոցիալական երաշխիքներ նախատեսելու հարցում սոցիալական արդարության պահպանման նպատակով սոցփաթեթի շահառու կազմակերպությունների ցանկը նախատեսվում է լրացնել Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի Մ. Աբեղյանի անվան N 3, Երևանի պետական մանկավարժական համալսարանի N 57, Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի «Հերացի», Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի «Երևանի» ավագ դպրոցներով՝ հաշվի առնելով այն, որ այդ դպրոցների կողմից ևս իրականացվում են հանրակրթական ծրագրեր, ինչպես, որ ՊՈԱԿ հանդիսացող հանրակրթական դպրոցների կողմից, սակայն նշված ավագ դպրոցները, հանդես գալով համալսարանների կազմում և չունենալով առանձին կազմակերպաիրավական ձև, Որոշման N 1 հավելվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերության շրջանակներում չեն կարողանում օգտվել սոցփաթեթի իրավունքից: Այս դպրոցները ցանկում լրացնելու պարագայում՝ սոցփաթեթի շահառուների շրջանակը կհամալրվի շուրջ 245 շահառուով (տարեկան 17,640.0 հազ.դրամ սոցփաթեթի գումարով): 4) «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի իմաստով՝ պետական քաղաքական, պետական վարչական, ինքնավար (բացառությամբ դատավորների, դատախազների և քննիչների, գլխավոր դատախազի և նրա

	տեղակալների, քննչական մարմինների ղեկավարների և ղեկավարների տեղակալների, ՀՀ նախագահի, ՀՀ Ազգային ժողովի նախագահի, ՀՀ վարչապետի խորհրդականների, օգնականների, ՀՀ վարչապետի գլխավոր խորհրդականի, ՀՀ նախագահի մամուլի քարտուղարի պաշտոններ զբաղեցնող, հատուկ հանձնարարություններով դեսպանի պաշտոն զբաղեցնող, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի դեպարտամենտների ղեկավարների պաշտոններ զբաղեցնող անձանց (շուրջ 415 անձ) համար սոցփաթեթի կարգով սահմանված է սոցփաթեթից օգտվելու սահմանափակում: Պետական համակարգի աշխատողների համար միասնական սոցիալական երաշխիքներ նախատեսելու նպատակով նախատեսվում է նաև սոցփաթեթից օգտվելու հնարավորություն տալ նշված պաշտոններ զբաղեցնող շուրջ 415 անձանց, որի համար տարեկան կպահանջվի 29,880.0 հազ.դրամ: 2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Սոցիալական փաթեթի շահառուների շրջանակի ընդլայնում, որի արդյունքում՝ սոցփաթեթի իրավունք կունենան նաև՝ 1)սոցփաթեթի շահառու կազմակերպությունների կազմակերպաիրավական ձևի (պետական ոչ առևտրային կազմակերպությունից հիմնադրամի վերակազմակերպված) փոփոխությամբ պայմանավորված սոցփաթեթի իրավունքից զրկված շուրջ 299 անձինք, 2)միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների, մարզաքոլեջի, մանկապատանեկան մարզադպրոցի և կրթության, սպորտի ոլորտի այլ հաստիքային աշխատողներ (ընդհանուր՝ շուրջ 6507 շահառու), 3)համալսարանների կազմում ներառված ավագ դպրոցների շուրջ 245 հաստիքային աշխատողները, 4)«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի իմաստով՝ պետական քաղաքական, պետական վարչական և այլ պաշտոնատար (ընդհանուր շուրջ 415) անձինք:
4	**<u>4.1 «Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի մասին» ՀՀ օրենքի նախագծի և դրանից բխող ՀՀ մի շարք օրենքներում փոփոխություններ նախատեսող օրենքների նախագծերի փաթեթի ներկայացում Վարչապետի աշխատակազմ</u>** 1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման անհրաժեշտությունը բխում է է ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի դրույթներից, որի 4-րդ՝ «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի 4.6-րդ «Աշխատանք և սոցիալական պաշտպանություն» ենթաբաժնում նախատեսվել է կամավորության մշակույթի տարածման և խրախուսման նպատակով ամրագրել կամավորական գործունեությունը և կամավոր աշխատանքը կարգավորող միասնական իրավական մեխանիզմներ: Միջոցառման համար հիմք են հանդիսանում նաև Սահմանադրության 6-րդ հոդվածի, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 102-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները: Հարկ է նշել, որ «Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակումը բխում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 102-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջից, համաձայն որի՝ կամավոր և օգնություն ցուցաբերելու նպատակով աշխատանքների կատարման կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով: Միաժամանակ, Հայաստանի Հանրապետությունը, 2005 թվականի դեկտեմբերին վավերացնելով «Երիտասարդների անդրազգային երկարաժամկետ կամավորական ծառայության խթանման մասին» Եվրոպական կոնվենցիան, ստանձնել է կամավորությունը խթանելու և խրախուսելու պարտականություն: Նման պարտականություն է սահմանված նաև «Կամավորականությանն աջակցելու» ՄԱԿ-ի հանձնարարագրով (2002 թվականի հունվարի 10): Օրենքի նախագծի մշակումը պայմանավորված է նաև միասնական իրավական հիմքերի սահմանման, ինչպես նաև ներկայում կամավորի ներգրավման կամ կամավորի օգնության կարիք ունեցող, սակայն իրավական հիմքեր չունեցող կազմակերպությունների համար նման իրավասության սահմանման և ոլորտում առկա կամավորի մշակույթի զարգացմանն ու ներդրմանը խոչընդոտող այլ խնդրիների լուծման անհրաժեշտությամբ: 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Կամավորական գործունեությունն ու կամավոր աշխատանքը կամավորության վրա հիմնված, հանրօգուտ, անվարձահատույց, ոչ պարտադիր կամ ոչ հարկադիր գործունեություն կամ աշխատանք է, որը մշտապես եղել և մնում է քաղաքացիական հասարակության ուշադրության ներքո: Երկրում կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի հետ կապված հարաբերություններն ունեն սուղ, դրվագային կարգավորումներ, ըստ էության, բացակայում են կամավորության մշակույթի զարգացման ու տարածման համար միասնական իրավական հիմքերը: Այնուամենայնիվ, կամավորներ ներգրավելու հետ կապված որոշ ընդհանրական կարգավորումներ առկա են բարեգործության ոլորտում բարեգործական ծրագրեր

	իրականացնող կազմակերպությունների համար և առավել որոշակի, ընդ որում՝ պայմանագրային կարգավորումներ առկա են հասարակական կազմակերպությունների համար: «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով թույլատրվում է հասարակական կազմակերպություններին իրենց ոչ ձեռնարկատիրական գործունեության մեջ ներգրավել կամավորներ: Շաբաթական 20 ժամը գերազանցող կամավոր աշխատանքի դեպքում սահմանված են կամավորի հետ պայմանագիր կնքելու, կամավոր աշխատանքի մասին պայմանագրի բովանդակության, կամավոր աշխատանքի կատարման հետ կապված փոխհատուցման որոշակի կարգավորումներ: Հարկ է նշել, որ մինչև 20 ժամ ծանրաբեռնվածությամբ կամավոր աշխատանք կատարողների համար որևէ իրավական երաշխիք օրենքով ամրագրված չէ: Բարեգործության բնագավառի ՀՀ օրենսդրությամբ սահմանված են կամավորի հասկացությունը, բարեգործություն ստացողների շրջանակը, որոնց օգտին կամավորների կողմից կատարվում են անհատույց աշխատանքներ, բարեգործական կազմակերպությունները, որոնք կարող են ստեղծվել հասարակական միավորումների, հիմնադրամների կամ օրենքով նախատեսված այլ ձևերով: Սահմանված են նաև բարեգործական որակված ծրագրերի շրջանակներում ներգրավված կամավորների հաշվառման և խրախուսման վերաբերյալ որոշակի օրենսդրական կարգավորումներ: Սակայն սահմանված չի ստույգ ընթացակարգ՝ պայմանագրային կարգավորումներ, կողմերի իրավունքներ և պարտականություններ, սոցիալական երաշխիքներ, ծախսերի հատուցման վերաբերյալ կարգավորումներ: Հարկ է նշել, որ հիմնադրամների կամ օրենքով նախատեսված այլ ձևերով ստեղծված կազմակերպությունների համար կամավորների հետ կապված օրենսդրական կարգավորումներ սահմանված չեն: Էական նշանակություն ունի նաև այն, որ առկա օրենսդրական կարգավորումներով հստակ տարանջատված չեն հասարակական կազմակերպության կողմից մինչև շաբաթական 20 ժամ ծանրաբեռնվածությամբ ներգրավված կամավորները, որոնք կամավոր աշխատանքների են ներգրավվում առանց պայմանագրի և անօրինական աշխատողները, սահմանված չեն ոլորտում գործունեություն ծավալող բոլոր սուբյեկտների (կամավոր ներգրավելու անհրաժեշտություն ունեցող կազմակերպություններ, կամավոր աշխատանք կատարող անձինք) համար հավասար պայմաններ և հնարավորություններ, սահմանված չեն կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի հետ կապված հարաբերությունները և, հետևաբար, դրանք հստակ տարանջատված չեն աշխատանքային հարաբերություններից: «Պրոբացիայի մասին» օրենքի գործող կարգավորումներով էլ, օրինակ, սահմանված են պրոբացիայի ծառայության կամավորի վերաբերյալ որոշակի կարգավորումներ, մասնավորապես սահմանված է պրոբացիայի ծառայության կամավորի հասկացությունը, նախատեսված են պայմանագրային կարգավորումներ և այդ կամավորների համար որոշակի իրավունքներ և պարտականություններ: Այսպիսով, ինչպես նշվեց, առկա են օրենքով կարգավորման ենթակա որոշակի խնդիրներ, որոնք կարող են խոչընդոտել ոլորտի կայացմանն ու հետագա զարգացմանը: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Առաջարկվող օրենսդրական կարգավորումները հիմնականում նպատակաուղղվելու են կամավորի ինստիտուտի կայացմանը, այդ թվում՝ հասարակության լայն շերտերի կամավորական գործունեության և կամավոր աշխատանքների ներգրավելու համար անհրաժեշտ նախապայմաններ ամրագրելուն, հասարակության մեջ փոխօգնության մթնոլորտի ձևավորմանը, բնակչության կյանքի որակի բարձրացմանն ու կենսակերպի բարելավմանն աջակցելուն, ինչպես նաև ինքնակազմակերպվող ու քաղաքացիական ակտիվ հասարակություն ձևավորելուն: Մասնավորապես նախատեսվում է ամրագրել. 1) կամավորական գործունեության և կամավոր աշխատանք կատարելու հետ կապված հարաբերություններն աշխատանքային կամ քաղաքացիական-իրավական հարաբերություններից, կամավոր աշխատանքն անօրինական կամ վարձու աշխատողի աշխատանքից տարանջատելու լիարժեք իրավական կարգավորումները, 2) կամավոր աշխատանք կատարելու իրավասություն ունեցող անձանց շրջանակը, 3) կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի սուբյեկտները (Կազմակերպությունները, կամավորները, կամավոր աշխատանք կատարող այլ անձինք), 4) կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի սահմանափակումներն ու առանձնահատկությունները, 5) կամավորի և կազմակերպության միջև փոխհարաբերությունների պայմանագրային կարգավորումները, 6) կամավոր աշխատանքի կատարման հետ կապված ծախսերի փոխհատուցման մեխանիզմները, կամավոր աշխատանքների կատարման հետ կապված ծախսերի փոխհատուցման մասով հարկային արտոնությունների սահմանումը,

	7) կամավոր աշխատանքի ընթացքում կամավորների և այլ անձանց առողջության և անվտանգության ապահովման երաշխիքները, 8) կամավոր աշխատանք կատարող անձի կրած վնասի հատուցման իրավական հիմքերը, 9) կամավոր աշխատանքի հետ կապված հնարավոր ռիսկերից (դժբախտ դեպքերից, մասնագիտական հիվանդություններից) ապահովագրության կարգավորումները, 10) կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի սուբյեկտների հիմնական իրավունքները և պարտականությունները: 2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի ամբողջական և միասնական օրենսդրական կարգավորումների, այդ թվում՝ կամավորի ինստիտուտի կայացման և կամավորության մշակույթի զարգացման և տարածման համար անհրաժեշտ պայմանների ու մեխանիզմների ամրագրում:
	<u>4.2. Կամավորական դաշտը կարգավորող տեղեկատվական հարթակի (կայքի) շահագործում՝ 2024-2026 թթ. միջնաժամկետ ժամանակահատվածի ծախսային ծրագրով համապատասխան հնարավորության առկայության պարագայում</u> 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը «Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո, նոր օրենսդրական կարգավորումների վերաբերյալ հանրությանը լայն իրազեկման անհրաժեշտություն կառաջանա, ինչպես նաև կամավորության մշակույթի զարգացման հարցում էական դերակատարում կունենա հատուկ կամավորության վերաբերյալ պաշտոնական կայքի առկայությունը: 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Երկրում կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի հետ կապված հարաբերություններն ունեն սուղ, դրվագային կարգավորումներ, ըստ էության, բացակայում են կամավորության մշակույթի զարգացման ու տարածման համար միասնական իրավական հիմքերը: ԻՆչը խոչընդոտում է կամավորության մշակույթի տարածմանը երկրում: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Կամավորական դաշտը կարգավորող տեղեկատվական հարթակի (կայքի) ամբողջական մշակման, բովանդակության տեղադրման, տեխնիկական շահագործման աջկման, անվտանգային սերտիֆիկատի ապահովման, դոմեյնի գնման և տեխնիկական աջակցման համար անհրաժեշտ կլինի 1,5-3 մլն դրամ: Հետևաբար, նման կայքի շահագործումը հնարավոր կլինի՝ 2024-2026 թթ. միջնաժամկետ ժամանակահատվածի ծախսային ծրագրով համապատասխան միջոցները տրամադրելու պարագայում: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Ինչպես քաղաքացիները, այնպես էլ՝ կամավորական գործունեություն իրականացնող և կամավոր աշխատանք կատարող անձինք պարբերաբար հնարավորություն կունենան պաշտոնական աղբյուրից տեղեկացված լինելու առկա օրենսդրական կարգավորումների վերաբերյալ, ինչպես նաև կձևավորվի ճկուն հարթակ, որտեղ կապահովվի կապ՝ կամավորների և կամավորներ ներգրավելու կարիք ունեցող մարմինների կամ կազմակերպությունների միջև:
5	**<u>5.1 2025-2027 պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի քննարկման արդյունքներով նվազագույն աշխատավարձի բարձրացման համապատասխան հնարավորության առկայության պարագայում՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշումն ընդունված է</u>** 1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման անհրաժեշտությունը բխում է է ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի դրույթներից, որի 4-րդ՝ «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի 4.6-րդ «Աշխատանք և սոցիալական պաշտպանություն» ենթաբաժնում նախատեսվել է, որ Կառավարությունը քայլեր է ձեռնարկելու մինչև 2026 թվականը նվազագույն աշխատավարձը 85,000 դրամ սահմանելու համար: Միջոցառման համար հիմք են հանդիսանում Սահմանադրության 6-րդ հոդվածի դրույթները: Նվազագույն աշխատավարձի բարձրացումը բխում է նաև ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերով (Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիա, Աշխատանքի միջազգային կազմակերպության N 131 կոնվենցիա) ստանձնած պարտավորություններից: «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակման նպատակը նվազագույն աշխատավարձի չափի բարձրացման համար համապատասխան իրավական հիմքի ապահովումն է:

	Միաժամանակ, հարկ է նշել նաև, որ «Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050»-ում որպես թիրախային ցուցանիշ նախատեսված է 2025 թվականի համար միջին աշխատավարձի չափը 237.000 դրամ, իսկ նախատեսված հավակնություններից է միջին աշխատավարձի իրական աճը՝ 5 տարի հետո՝ 30%-ով: 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Հայաստանում աշխատավարձերի պետական կարգավորման հիմնական գործիքը նվազագույն աշխատավարձն է, որը սահմանվում է օրենքով՝ Հայաստանի ողջ տնտեսության համար: Նվազագույն աշխատավարձը պետության կողմից սահմանվող նվազագույն երաշխիք է, որը պետք է ապահովի աշխատողի և աշխատողի ընտանիքի անդամների կենսագործունեության համար բավարար եկամուտ: Նվազագույն ամսական աշխատավարձը վերջին անգամ բարձրացել է 2020 թվականի հունվարի 1-ից՝ 55000 դրամից դառնալով 68000 դրամ: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Առաջարկվում է ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի դրույթների համաձայն՝ երկրի մակրոտնտեսական իրավիճակից ելնելով, ՀՀ պետական բյուջեի միջնաժամկետ ծախսերի ծրագրերի շրջանակներում նվազագույն աշխատավարձի չափի բարձրացման հնարավորությունը քննարկելուց և համապատասխան պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրում նվազագույն աշխատավարձի չափի բարձրացում նախատեսելուց հետո՝ մշակել «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ: 2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Նվազագույն աշխատավարձի բարձրացում, ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի՝ նվազագույն աշխատավարձի բարձրացման վերաբերյալ դրույթների, ինչպես նաև ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերի դրույթների ապահովում, զբաղված անձանց շրջանում աղքատության կրճատում, նվազագույն և միջին աշխատավարձերի միջև հարաբերակցության նվազում, բնակչության կենսամակարդակի բարձրացում, մինչև 2026 թվականը նվազագույն ամսական աշխատավարձի սահմանում 85 000 ՀՀ դրամ:
6	**<u>6.1 «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ</u>** 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014թ. ապրիլի 17-ի N 534-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակումը բխում է ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4-րդ՝ «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի 4.6-րդ՝ «Աշխատանք և սոցիալական պաշտպանություն» ենթաբաժնի պահանջներից: Միջոցառման համար հիմք են հանդիսանում ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի, «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները: Միջոցառման համար ուղենիշ է հանդիսանում «Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050» թիրախային ցուցանիշները, մասնավորապես՝ զբաղվածության ցուցանիշը 2025 թ-ին պետք է լինի 1,200.0 հազ. մարդ: 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները Զբաղվածության պետական քաղաքականության բարեփոխումների, այդ թվում՝ իրավակիրառական պրակտիկայի ընթացքում վեր հանված խնդիրների լուծմանն ուղղված առաջարկությունների մշակում, անհրաժեշտության դեպքում զբաղվածության պետական նոր ծրագրերի ներդրում՝ նպատակաուղղված շահառուների շրջանակների ընդլայնմանը և հասցեականության բարձրացմանը: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Նախագծով կբարձրացվի զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի հասցեականությունն ու արդյունավետությունը, ըստ անհրաժեշտության, կներդրվեն նոր ծրագրեր՝ նպատակաուղղված աշխատաշուկայում երիտասարդների, հաշմանդամություն ունեցող անձանց, կանանց մրցունակության բարձրացմանը, «կրթություն-աշխատաշուկա» փոխառնչությունների խթանմանը: Կշարունակվի բարելավվել երեխա ունեցող ծնողների համար աշխատանքը և երեխայի խնամքը համատեղելուն աջակցող միջոցառումները: Կմշակվեն և շարունակաբար կբարելավվեն ռազմական գործողությունների հետևանքով հաշմանդամություն ստացած անձանց զբաղվածության ապահովմանն ուղղված ծրագրերը: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Նախագծով ակնկալվում է զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի հասցեականության բարձրացում, իրավակիրառական պրակտիկայում ի հայտ եկած խնդիրների կարգավորմամբ ծրագրերի

	արդյունավետության բարձրացում, ըստ անհրաժեշտության, նոր ծրագրերի ներդրում՝ նպատակաուղղված աշխատաշուկայում երիտասարդների, հաշմանդամություն ունեցող անձանց, կանանց մրցունակության բարձրացմանը, «կրթություն-աշխատաշուկա» փոխառնչությունների խթանմանը:
	<u>6.2 «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 12-ի N 1326-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ</u> 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 12-ի N 1326-Լ որոշման մեջ փոփոխություններ մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակումը բխում է ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4-րդ՝ «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի 4.6-րդ՝ «Աշխատանք և սոցիալական պաշտպանություն» ենթաբաժնի պահանջներից: Միջոցառման համար հիմք են հանդիսանում ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի դրույթները: Միջոցառման համար ուղենիշ է հանդիսանում «Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050»-ի 4.2.3 թիրախային ցուցանիշը: 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 12-ի N 1326-Լ որոշմամբ գործող կարգավորումների համաձայն՝ միջոցառումն իրականացվում է մինչև 2021 թվականի դեկտեմբերի 20-ը դիմում և թափուր աշխատատեղի հայտ ներկայացրած գործատուների հետ: Անհրաժեշտություն է առաջացել ընդլայնել ռազմական գործողությունների հետևանքով վնասվածք (վիրավորում) ստացած և հաշմանդամություն ունեցող անձ ճանաչված նախկին զինծառայողների՝ միջոցառման միջոցով աշխատանքի տեղավորման հնարավորությունները: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Նախագծով հնարավորություն կտրվի իրականացնել ռազմական գործողությունների հետևանքով վնասվածք (վիրավորում) ստացած և հաշմանդամություն ունեցող անձ ճանաչված նախկին զինծառայողներին (նրանց հավասարեցված անձանց) աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին պետական աջակցության տրամադրման միջոցառումը նաև 2022 թվականին դիմում և թափուր աշխատատեղի հայտ ներկայացրած գործատուների հետ: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է 2022 թվականի ընթացքում միջոցառման միջոցով ապահովել շուրջ 200 ռազմական գործողությունների հետևանքով վնասվածք (վիրավորում) ստացած և հաշմանդամություն ունեցող անձ ճանաչված նախկին զինծառայողի (նրանց հավասարեցված անձանց) զբաղվածություն, որից 20-ի համար՝ աշխատատեղի հարմարեցմամբ: Այսինքն, միջոցառման իրականացման համար ՀՀ պետական բյուջեից կպահանջվի ՝ շուրջ 90 մլն դրամ (100 000*4*200+20*500 000):
7	**<u>7.1 Հանրակրթական համակարգում մասնագիտական կողմնորոշման կարողությունների զարգացում և մեթոդական աջակցություն</u>** 1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Ներկա ժամանակներում մասնագիտության ընտրությունը գնալով դառնում է ավելի դժվար խնդիր, քանի որ դժվարանում է տնտեսությունների կանխատեսումը հատկապես միջնաժամակետ և երկարաժամկետ հատվածում, արագ են զարգանում տեխնոլոգիաները, փոխվում են հասարակության արժեքները, նոր սերնդի նկարագիրը և այլն: Մասնագիտության գիտակցված ընտրությունը որոշում է մարդու սոցիալական ակտիվությունը, գործնական պատրաստվածությունը, իրազեկվածությունը և ընդհանուր առմամբ՝ դիրքորոշումները կյանքում: Հասարակության տեսանկյունից յուրաքանչյուր անձի մասնագիտության գիտակցված ընտրությունից կախված է ազգային տնտեսության մեջ աշխատանքի արտադրողականությունը, մտավոր ներուժի օգտագործման արդյունավետությունը, ներքին և արտաքին միգրացիայի ծավալները և այն: Հետևաբար, այն անմիջական ազդեցություն ունի նաև երկրի տնտեսության վրա: Սույն միջոցառման իրականացման իրավական հիմքը ՀՀ կառավարության 05.12.2019թ. թիվ 1753-Լ որոշմամբ հաստատված «Աշխատի՛ր, Հայաստան» ռազմավարությունն է. Գործողություն 1.5. «Դպրոցներում մասնագիտական կողմնորոշման ինստիտուտի համատարած ներդրում»: Հաշվի առնելով փորձնական ներդրման արդյունքները՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարի 18.12.2019թ. թիվ 1287-Ա/2 հրամանով հաստատվել է ՀՀ ԱՍՀՆ կողմից մշակված «Հանրակրթական դպրոցներում մասնագիտական կողմնորոշման աշխատանքների ուսումնամեթոդական ուղեցույցը» և երաշխավորվել կիրառման: 1.1. կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները Մասնագիտական կողմնորոշման առաջնային և հիմնարար օղակը հանրակրթությունն է, որտեղ սկսվում են անձի մասնագիտության ընտրության և ինքնորոշման աշխատանքները: Հիմք ընդունելով շուկայամետ տնտեսության պահանջներն ու խնդիրները՝ ՀՀ ԱՍՀՆ կողմից մշակվել է հանրակրթական հաստատություններում

մասնագիտական կողմնորոշման ծառայությունների ներդրման մոդելներ, աշակերտների մասնագիտական կողմնորոշման մեթոդաբանություն (ուսումնական ծրագրեր և մոդուլներ): 2013-2021 թթ. վերապատրաստվել է Երևանի և հանրապետության բոլոր մարզերից թվով 500 դպրոցի 900-ից ավելի մանկավարժ, վերջիններիս հետ տարվել են անհատական խորհրդատվական աշխատանքներ դպրոցներում: Երևանի և ՀՀ մարզերի հանրակրթական դպրոցներում մասնագիտական կողմնորոշման աշխատանքների իրականացման ներկա վիճակը և գործընթացի կիրառվող մեխանիզմները բացահայտելու, մանկավարժների ներգրավվածությունն ու վերապատրաստման կարիքը գնահատելու նպատակով, 2021թ. Իրականացված առցանց գնահատման արդյունքում արձանագրվել է, որ հարցմանը մասնակցած 800 դպրոցներից մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման վերապատրաստված մանկավարժ ունի 33%-ը, 66,5%-ը նշել են, որ իրենց դպրոցներում իրականացվում են մասնագիտական կողմնորոշման աշխատանքներ, սակայն վերապատրաստված մանկավարժներ չունեն: Մինչդեռ ՀՀ ԱՍՀՆ կողմից վերապատրաստված մանկավարժներ ունեցող դպրոցների 83%-ում իրականացվում է մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման աշխատանքներ, իսկ 17%-ում՝ չեն իրականացվում:

Գնահատման արդյունքները փաստում են, որ մասնագիտական կողմնորոշման համակարգի ներդրման տեսանկյունից աշխատանքները բավարար չեն, քանի որ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից դեռևս ապահովված չէ դպրոցներում մասնագիտական կողմնորոշման աշխատանքների ինստիտուցիոնալացումը:

1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Հանրապետության բոլոր պետական հանրակրթական 1355 դպրոցներում մինչև 2023-2024 ուսումնական տարվա սկիզբը մասնագիտական կողմնորոշման ակումբների ներդրման նպատակով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կողմից պետք է վերապատրաստվի ավելի քան 2500 մանկավարժ և տարեկան սուպերվիզիայի ծառայություններ ապահովվի ավելի քան 500 վերապատրաստված մասնագետի: Նախարարությունը շարունակում է ակտիվ համագործակցությունը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ դպրոցներում մասնագիտական կողմնորոշման համընդհանուր համակարգի ներդրման ուղղությամբ: Ս/թ սեպտեմբերի 1-ից Տավուշի մարզի բոլոր պետական հանրակրթական դպրոցներում մեկնարկող նոր չափորոշիչների փորձնական կիրառման գործընթացին զուգահեռ մեծ տեղ է տրվելու նաև խմբակների ներդրմանը: Մասնավորապես, որպես նոր պարտադիր խմբակ գործարկվելու են մասնագիտական կողմնորոշման ակումբները, որոնք 2021-2022 ուսումնական տարում կստեղծվեն Տավուշի մարզի բոլոր դպրոցներում:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է, որ 2023 թվականի 2-րդ տասնօրյակում հանրապետության բոլոր պետական 1355 հանրակրթական դպրոցներում ստեղծված մասնագիտական կողմնորոշման ակումբներն ապահովված կլինեն համապատասխան մեթոդաբանությամբ վերապատրաստված մանկավարժներով, որոնք 8-11-րդ դասարաններում սովորող աշակերտներին հնարավորություն կտան կատարել մասնագիտության գիտակցված ընտրություն:

<u>7.2 Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգում այցելուի մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման ծառայությունների ներդրում</u>

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Հանրապետությունում շարունակում է խնդրահարույց մնալ կառուցվածքային գործազրկությունը: Դրա հիմքում մասնագիտական կրթության և աշխատաշուկայի միջև խրոնիկ անհավասարակշռությունն է, մասնագիտության ընտրության հարցում կանխատեսվող պահանջարկի և տնտեսության զարգացման ուղղությունների մասին տեղեկատվության պակասը, արագ զարգացող տեխնոլոգիաների մուտքը տնտեսության տարբեր ոլորտներ, ինչի արդյունքում ձևավորվում է նոր մասնագիտությունների և նոր հմտությունների պահանջարկ: Պետք է ընդունենք, որ ազատ շուկայական տնտեսությունը թելադրում է բնակչության կայուն զբաղվածության համար նոր մոտեցումներ ու պահանջներ: Եվ ՀՀ կառավարության որդեգրած ներառական տնտեսության քաղաքականության շրջանակում ներառական աճի կարևոր տարրերից մեկը ներդրումն է մարդկային կապիտալի ձևավորման ու զարգացման գործում: Սա նաև կայուն զարգացման օրակարգի նպատակներից մեկն է: Պետք է առանձնացնել նաև այն փաստը, որ վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի հոդված 1-ի 4-րդ ենթակետի պահանջի համաձայն ՀՀ ԱՍՀՆ կողմից պետք է ապահովվի անձի մասնագիտական կողմնորոշման իրավունքի իրացումը: Եվրոպական սոցիալական խարտիայի Հայաստանի կողմից ընդունված հոդվածների պահանջների կատարման մասին նախարարների կոմիտե ներկայացված 2015թ. զեկույցն առաջընթաց է գրանցել մասնագիտական կողմնորոշման համակարգի ներդրման մասով, սակայն նոր զեկույցով Կոմիտեն ակնկալում է տեղեկատվություն, մինչդեռ սոցիալական ոլորտում մասնագիտական կողմնորոշման ծառայությունները դեռևս լիարժեք ներդրված չեն:

1.1. կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները

Միասնական սոցիալական ծառայությունների համակարգի անցմամբ պայմանավորված նոր խնդիրներ են առաջադրվել սոցիալականծառայությունների համակարգում մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման ծառայությունների մատուցման գործընթացում: Միասնական սոցիալական ծառայությունների համակարգի ձևավորմամբ պայմանավորված նախկինում զբաղվածության պետական գործակալության տարածքային կենտրոնների վերապատրաստված մասնագետների մեծ մասը ներկայումս չի աշխատում համակարգում կամ զբաղեցնում է այլ պաշտոն, ուստի միջնաժամկետում առաջնային խնդիրներից է 49 կենտրոնների մասնագետների մեթոդական աջակցությունն ու կարողությունների զարգացումը՝ հիմք ընդունելով սոցիալական աշխատանքի և զբաղվածության ծրագրերի արդյունավետ իրականացման շրջանակում անձի մասնագիտական կողմնոշման և կարիերայի ուղղորդման ծառայությունների առաջնահերթությունը: Անհրաժեշտ է գնահատել համակարգի մարդկային ռեսուրսի կարողությունները, մշակել միասնական սոցիալական ծառայության շրջանում սույն ծառայությունների կազմակերպման և իրականացման գործընթացի մոդել, վերապատրաստել համապատասխան մասնագետներին:

1.2.առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Հանրապետություն նոր ձևավորված թվով 49 միասնական սոցիալական ծառայությունների կենտրոններում մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման ծառայությունների հասանելիությունն ապահովելու ուղղությամբ անհրաժեշտ է մշակել համակարգի ներդրման մոդել, կազմակերպել և իրականացնել համապատասխան մասնագետների վերապատրաստում, աջակցել մեթոդաբանությամբ և շարունակական մեթոդական խորհրդատվությամբ:

2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Միջոցառման իրականացմամբ ակնկալվում է նորաստեղծ միասնական սոցիալական ծառայությունների բոլոր 49 տարածքային կենտրոնների այցելուների համար ապահովել մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման ծառայություններից օգտվելու հնարավորություններ, ունենալ կոմպետետն մասնագետներ, ովքեր կնպաստեն աշխատանք փնտրող և գործազուրկ անձանց աշխատաշուկայում մրցունակության բարձրացմանն ու արդյունավետ զբաղվածության ապահովմանը, ինչպես նաև՝ զբաղվածության պետական ծրագրերի նպատակային իրականացմանը:

<u>7.3 Երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում մասնագիտական կողմնորոշման ծառայությունների ներդրմանն աջակցություն</u>

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, նաև հաշմանդամություն ունեցող դեռահասների և երիտասարդների մասնագիտության գիտակցված ընտրության, աշխատաշուկայում մրցունակ լինելու և զբաղվածությունն ապահովելու նպատակով առանձնահատուկ կարևորվում է ՀՀ ԱՍՀՆ համակարգում գործող երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում մասնագիտական կողմնորոշման ծառայությունների ներդրումը:

1.1. կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները

ՀՀ ԱՍՀՆ կողմից մշակված մեթոդաբանությամբ 2017-2021 թթ. շարունակաբար վերապատրաստվել է սույն հաստատությունների բազմամասնագիտական խմբի ավելի քան 30 մասնագետ: Հաշվի առնելով շահառու երեխաների սոցիալական և առողջական վիճակը՝ մեթոդաբանության հիմքում դրված է ոչ մասնագիտական կողմնորոշման, այլև անձի ֆունկցիոնալ գնահատման և մասնագիտական կոմպետենտության որոշարկման սկզբունքը: Համակարգի բարեփոխումների արդյունքում դեռևս ոչ բոլոր հաստատություններում է ներդրված մասնագիտության ընտրությանն ուղղված համընդհանուր սկզբունքներ և մեթոդաբանություն:

1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Շարունակվում են հանրապետությունում գործող երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման ծառայությունների ներդրման ուղղությամբ աշխատանքները:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Սույն միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է գործող երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող բոլոր հաստատություններում ներդնել մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման ծառայություններ, ունենալ համապատասխան վերապատրաստում անցած մասնագետներ, ովքեր կնպաստեն դեռահասների մասնագիտության գիտակցված ընտրությանը, մասնագիտական կրթություն ստանալուն և աշխատաշուկայում մրցունակության բարձրացմանը:

<u>7.4 Նախնական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման (ՆՄԿՈՒ) հաստատություններում ներդրված մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման կենտրոնների զարգացում</u>

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

	ՄԿՈՒ համակարգի բարեփոխումների շրջանակում առանձնացվել է ՆՄԿՈՒ հաստատություններում կարիերայի ստորաբաժանումների ստեղծման ու զարգացման խնդիրը՝ կարևորելով դրանց դերը ուսանողների և շրջանավարտների մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման, աշխատաշուկայում արագ ինտեգրման, մրցունակ աշխատուժի ձևավորման գործում: ՄԿՈՒ հաստատություններում կարիերայի կենտրոնների ստեղծումը որպես առանձին նախապայման սահմանված էր նաև ՀՀ կառավարության և ԵՄ կողմից ստորագրված բյուջետային աջակցության «Որակավորումների բարելավում ավելի լավ աշխատատեղերի համար» (Better Qualifications for Better Jobs) 2017-2019 թթ-ի համաձայնագրի շրջանակներում: ՄԿՈՒ հաստատություններում շրջանավարտների կարիերայի ուղղորդման ծառայությունների մատուցումը պետք է նպաստի նրանց զբաղվածության ապահովմանը: 1.1. կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները Կարևորելով աշխատաշուկայի զարգացումներին համարժեք մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման ծառայությունների մատուցումը՝ ՀՀ ԱՍՀՆ կողմից մշակված մոդելով և մեթոդաբանությամբ հանրապետության բոլոր 103 ՆՄԿՈՒ հաստատություններում 2018 թ-ից համընդհանուր ներդրվել են մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման կենտրոններ: Բոլոր կենտրոններում ծառայություններն իրականացվում են սահմանված գործիքակազմերով՝ հնարավորություն տալով մշտադիտարկել և գնահատել ուսանողների և շրջանավարտների հետ տարվող աշխատանքների արդյունքները, արդյունավետությունը: Համաձայն 2019 թ. չորրորդ եռամսյակում իրականացված մշտադիտարկման արդյունքների, 2018-2019 թթ. շրջանավարտների 97,3 %-ը և 2019-2020 թթ. շրջանավարտների 97,3 %-ը ստացել է կարիերայի ուղղորդման անհատական և խմբային մի շարք ծառայություններ: Կարիերայի կենտրոնների ստեղծմամբ պայմանավորված աճել է նաև այն շրջանավարտների թիվը, ովքեր ավարտելուց մեկ տարվա ընթացքում անցնում են աշխատանքի իրենց մասնագիտությամբ: Համակարգը դեռևս նոր է ներդրված և դրա կայունությունն ապահովելու համար կարևոր նախապայման է մասնագետների շարունակական մեթոդական աջակցությունն ու մասնագիտական խորհրդատվությունը: Խնդիրների շարքում պետք է առանձնացնել ուսանողների, գործատուների և այլ տեղեկատվական էլեկտրոնային շտեմարանների վարման հնարավորությունների բացակայությունը: 1.2.առկա խնդիրների առաջարկվող լուծումները Ներդրված համակարգի կայունությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է շարունակել ՄԿՈՒ հաստատությունների կարիերայի կենտրոնների մասնագետների կարողությունների զարգացմանն ուղղված վերապատրաստումները, մեթոդական խորհրդատվությունը: Ինչպես նաև ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից ստեղծել ուսանողների և շրջանավարտների հետ տարվող աշխատանքների փաստագրման էլեկտրոնային միասնական համակարգ, ինչը հնարավորություն կտա որոշում կայացնողներին իրականացնել անհրաժեշտ վիճակագրական վերլուծություններ: 2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Սույն միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է շարունակաբար զարգացնել ՆՄԿՈՒ հաստատություններում գործող մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման կենտրոնների գործունեությունն ու ապահովել կայունություն, ինչի արդյունքում ՆՄԿՈ հաստատությունների շրջանավարտները կլինեն առավել մրցունակ աշխատաշուկայում և կունենան կայուն զբաղվածություն:
8	**<u>8.1 «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի ներկայացում Վարչապետի աշխատակազմ</u>** 1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021թ. օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 4-րդ՝ «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի 4.6 ենթաբաժնի առաջին և երրորդ պարբերություններով սահմանված նպատակից՝ Սոցիալական աջակցության քաղաքականությունը հիմնվելու է սոցիալական կարիքի գնահատման և դրան համաչափ սոցիալական ծառայություններ տրամադրելու սկզբունքի վրա՝ խրախուսելով անձի սոցիալ-տնտեսական ակտիվացումը: Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և աղքատ ընտանիքների կարողությունների և հմտությունների զարգացման միջոցով, զբաղվածության և ինքնազբաղվածության միջոցների ապահովմամբ և աղքատության փուլային հաղթահարման մոդելների կիրառմամբ ընտանիքները դուրս են գալու աղքատությունից: Նախատեսվում է ավելի շատ ընտանիքների տրամադրել սոցիալական ծառայություններ՝ ավելացնելով ինքնաբավ, արժանապատիվ և սեփական վաստակն ունեցող ընտանիքների թիվը՝ հետզհետե վերացնելով նրանց կախվածությունը պետական աջակցությունից: Աշխատունակ յուրաքանչյուր քաղաքացու աշխատանքի քաջալերումը, խրախուսումը և այս նպատակով անձի հմտությունների ու հնարավորությունների զարգացումը պետության սոցիալական քաղաքականության առանցքն են: Որակյալ սոցիալական ծառայություններ տրամադրելու համար անհրաժեշտ է հանրապետությունում ունենալ սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների պրոֆեսիոնալ անձնակազմ՝ շարունակական մասնագիտական զարգացման հնարավորություններով:

1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Սոցիալական աջակցության քաղաքականությունն ունի վերանայման կարիք՝ կատարելով ավելի մեծ շեշտադրումներ անձի սոցիալ տնտեսական ակտիվացման վրա, որի արդյունքում կապահովվի իրավական հենք ընտանիքներին (անձանց) կարողությունների և հմտությունների զարգացման միջոցով աղքատությունից դուրս բերելու մեխանիզմների մշակման համար: Ենթակա են ընդլայման նաև օրենդրությամբ սահմանված սոցիալական ծառայությունների տեսակները:

Մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում մեծ դերակատարում ունեն սոցիալական աշխատողները: Սոցիալական աշխատանքը մասնագիտական գործունեություն է, այն ուղղված է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց (ընտանիքների), խոցելի խմբերի սոցիալական կարիքների բացահայտմանը, գնահատմանը և տարբեր մեթոդների կիրառությամբ մարդու իրավունքների պաշտպանությանը, մարդու կարողությունների զարգացմանը, ինքնիրացմանն ու ինքնորոշմանը: Այս առումով անհրաժեշտ է ընտանիքների հետ մասնագիտացված սոցիալական աշխատանքի իրականացումը՝ կարիքի գնահատումից մինչև սոցիալական աջակցության կամ ծառայության տրամադրումը և դրա արդյունքում ընտանիքների աղքատության հաղթահարումը:

1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Մշակվելու են «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծեր, որով ձևավորվելու է սոցիալական պաշտպանության բնագավառի սոցիալական աջակցության ոլորտին վերաբերող հատվածի իրավական հենքը, որը թույլ կտա սոցիալական կարիքի գնահատման և դրան համաչափ սոցիալական ծառայություն տրամադրելու սկզբունքի հիման վրա նպաստել անձի ինքնորոշման, ինքնօգնության սոցիալական հմտությունների զարգացմանը՝ խրախուսելով անձի սոցիալ-տնտեսական ակտիվացումը:

Միաժամանակ, օրենսդրական փաթեթի ընդունմամբ սոցիալական աշխատանքի ինստիտուտի զարգացման, սոցիալական աշխատանքի որակի վերահսկման մեխանիզմների, շարունակական մասնագիտական զարգացման համակարգի ներդրմամբ հնարավոր կլինի ընդլայնել բնակչությանը տրամադրվող սոցիալական ծառայությունների դաշտը, տեսականին և որակը: Ներդրվելու են սոցիալական աշխատանքի մասնագետների որակավորման ծրագրեր, համապատասխան դասընթացների հնարավորություններ, բարելավվելու են աշխատանքային պայմանները, ներառյալ կատարած աշխատանքի դիմաց համարժեք հատուցումը, ինչպես նաև սահմանվելու են սոցիալական ծառայությունների մատուցման և սոցիալական աշխատանքի ստանդարտները: Սրանով հնարավորություն է ստեղծվում ձևավորելու սոցիալական աշխատողների պրոֆեսիոնալ անձնակազմ և սոցիալական աջակցության բնագավառում իրականացվող աշխատանքները դնել պրոֆեսիոնալ հիմքերի վրա: Օրենսդրական փաթեթում կներառվեն նաև կարգավորումներ ՀՀ կառավարության 16.05.2019թ. N 650-L որոշման N 1 հավելվածի 17.2-րդ կետով նախատեսված միջոցառման («Սոցիալական աշխատանքի մասին» օրենքի նախագծի մշակման անհրաժեշտության մասով) նպատակի իրականացման համար:

Ելնելով վերոգրյալից.

1) կմշակվեն և կհաստատվեն սոցիալական աշխատանքի ստանդարտներ,

2) կներդրվեն սոցիալական պաշտպանության ոլորտի սոցիալական աշխատողների շարունակական վերապատրաստումների մեխանիզմներ:

2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Կձևավորվի իրավական հենք՝ մատուցվող սոցիալական ծառայությունների տեսակներն ավելացնելու և դրանց որակը բարձրացնելու համար:

<u>8.2 «Հայաստանի Հանրապետության կառավարության 10.05.2015 թ. N 1061-Ն և 30.01.2014 թ. N 145-Ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումն ընդունված է</u>

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021թ. օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 4-րդ՝ «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի 4.6 ենթաբաժնի երկրորդ պարբերությունով սահմանված նպատակից՝ հիմք ընդունելով «Սոցիալական աջակցության մասին» և «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքները՝ ներդրվելու է անապահովության գնահատման նոր համակարգ, որի շնորհիվ սոցիալական աջակցության ծրագրերը կլինեն ավելի հասցեական: Առաջարկվող ոչ ֆինանսական ծառայությունների փաթեթներն ուղղված կլինեն մարդկանց առաջնային կարիքների բավարարմանը կրթական, առողջապահական և սոցիալական ոլորտներում: Կներդրվի սոցիալական խնդիրների լուծման հստակ ձևաչափ՝ խնդրի արձանագրումից մինչև դրա լուծումը:

1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

ՀՀ կառավարության 30.01.2014թ. N 145-Ն որոշմամբ հաստատված է ընտանիքների անապահովության գնահատման կարգը, իսկ ՀՀ կառավարության 10.09.2015 թ. N 1061-Ն որոշմամբ սահմանվել են Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների լիազորությունների իրականացման, սոցիալական

	ծառայությունների տրամադրման կարգն ու պայմանները: Ընտանիքի սոցիալական գնահատման կարգը, որը ներառելու է նաև ընտանիքի ռեսուրսները, դեռևս գործարկված չէ: Վերանայման կարիք ունեն նաև ընտանիքների անապահովության գնահատման բնութագրիչները (վերջին տարիներին չեն փոփոխվել և համահունչ չեն ներկայիս մարտահրավերներին) տարածքային կենտրոնների կողմից մատուցվող ծառայությունների քանակն ու որակը: 1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները Առաջարկվում է վերանայել ՀՀ կառավարության վերոգրյալ որոշումները՝ գործարկելով ընտանիքի սոցիալական գնահատման համակարգը, վերանայել գործող բնութագրիչները (որոնց հիման վրա նշանակվում են նաև ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստները) և կիրառել աղքատության փուլային հաղթահարման մոդելներ: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը ՀՀ կառավարության նախագծերի ընդունմամբ կբարձրանա աղքատ ընտանիքների կենսամակարդակը:
	<u>8.3 «Կացարանի կարիք ունեցող ընտանիքների կողմից բնակարանի կամ բնակելի տան ձեռքբերմանը պետական աջակցություն տրամադրելու նպատակային ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ</u> 1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021թ. օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 4-րդ՝ «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի 4.6 ենթաբաժնի չորրորդ պարբերությունով սահմանված նպատակից՝ հիմք ընդունելով «Սոցիալական աջակցության մասին» օրենքը՝ իրականացվելու են ծրագրեր՝ ուղղված կացարանի կարիք ունեցող ընտանիքների բնակարանային խնդիրների լուծմանը: 1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները ՀՀ վիճակագրական կոմիտեն, Համաշխարհային բանկի աջակցությամբ յուրաքանչյուր տարի իրականացվող տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունների շրջանակում, գնահատում է նաև բազմաչափ աղքատություն, որի հինգ չափումներից մեկը բնակարանային պայմաններն են, որի վերաբերյալ ցուցանիշները մտահոգիչ են՝ հատկապես սոցիալապես խոցելի խմբերի համար: Նախատեսվում է կացարանի կարիք ունեցող ընտանիքների համար սահմանել սոցիալական հիփոթեք, որը յուրաքանչյուր տարի որոշակի թվով ընտանիքների համար կստեղծի կեցության արժանապատիվ պայմաններ: 1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները Միջոցառմամբ առաջարկվում է կացարանի կարիք ունեցող ընտանիքների համար սահմանել սոցիալական հիփոթեք, որը յուրաքանչյուր տարի որոշակի սոցիալական խմբերին դասված ընտանիքների համար կստեղծի կեցության արժանապատիվ պայմաններ: Կսահմանվեն նաև բնակարանի կամ բնակելի տան առավելագույն չափը, շահառուների շրջանակը և անհրաժեշտ այլ պայմանները: ՀՀ կառավարության որոշման նախագծով կսահմանվեն ընտանիքների կողմից բնակարանի կամ բնակելի տան ձեռքբերման նպատակով ամբողջությամբ սուբսիդավորվող հիփոթեքային վարկավորման կարգը և պայմանները ու շահառու հանդիսացող ընտանիքների խմբերի ցանկը: Նշված ելակետային տվյալները՝ շահառուների թվաքանակը և անհրաժեշտ ֆինանսական միջոցները կդիտարկվեն և կքննարկվեն ՄԺԾԾ ծրագրերի շրջանակներում: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Կացարանի կարիք ունեցող ընտանիքների բնակարանային խնդրի լուծում:
	<u>8.4 «Բնակարանով ապահովելու միասնական սոցիալական ռազմավարությունը և հնգամյա գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումն ընդունված է</u> 1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021թ. օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի 4-րդ՝ «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի 4.6 ենթաբաժնի 4-րդ պարբերությունով սահմանված նպատակից՝ հիմք ընդունելով «Սոցիալական աջակցության մասին» օրենքը՝ մշակվելու է բնակարանով ապահովման միասնական սոցիալական քաղաքականություն՝ ցածր եկամուտներ ունեցող, ինչպես նաև անապահով ընտանիքներին և խոցելի այլ խմբերին մշտական կամ ժամանակավոր կացարաններով ապահովելու նպատակով: 1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Տարբեր սոցիալական խմբերի համար բնակարանային ծրագրեր իրականացվում են մի շարք նախարարությունների կողմից, որոնց շահառուները տարբեր սոցիալապես խոցելի խմբեր են: Վերջիններիս կողմից կիրառվում են նաև մշտական կամ ժամանակավոր կացարաններով ապահովման տարբեր մեխանիզմներ, և այս հարցում չկա պետության կողմից միասնական քաղաքականություն: 1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները

	Միջոցառմամբ առաջարկվում է մշակել »Բնակարանով ապահովելու միասնական սոցիալական ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որով ցածր եկամուտներ ունեցող, ինչպես նաև անապահով ընտանիքներին և խոցելի այլ խմբերի համար կնախատեսվեն մշտական կամ ժամանակավոր կացարաններով ապահովման մեխանիզմներ (կացարանի ձեռք բերման այլընտրանքային մեխանիզմներ՝ բնակարանի գնման վկայագրերի տրամադրում, հիփոթեքային վարկի սպասարկում՝ պետական բյուջեի միջոցներից, վարձակալության գումարի մասնակի հատուցում և այլն), ինչպես նաև կապահովվի միասնական քաղաքականության իրականացումը: Նախատեսվում է միջոցառման իրականացման շրջանակներում՝ սոցիալական բնակարանային ֆոնդի ընդլայման նպատակով ստեղծել նաև հիմնադրամ: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Նախագծի ընդունմամբ ցածր եկամուտներ ունեցող, ինչպես նաև անապահով ընտանիքների և խոցելի այլ խմբերի համար կստեղծվի մշտական կամ ժամանակավոր կացարան ունենալու հնարավորություն:
	<u>8.5 Սոցիալական պաշտպանության համակարգի՝ ճգնաժամային իրավիճակներում արագ արձագանքման, դիմակայունության մեխանիզմների ներդրում</u> 1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021թ. օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի 4-րդ՝ «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի 4.6 ենթաբաժնով սահմանված նպատակից՝ Կառավարությունը քայլեր է ձեռնարկելու մինչև 2026 թվականը՝ ➢ վերացնել ծայրահեղ աղքատությունը: 1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Հայաստանում ճգնաժամային իրավիճակների ռիսկը բարձր է, սակայն սոցիալական պաշտպանության համակարգի արագ արձագանքման, դիմակայունության մեխանիզմները խիստ անբավարար են: Այդ մեխանիզմներն ունեն վերանայման կարիք՝ հատկապես համավարակի և ռազմական դրությամբ պայմանավորված, հանրապետությունում ստեղծված իրավիճակից հետո: 1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները 1) ընտանիքի, անձի համար առաջացած հրատապ կարիքի առաջացման դեպքում սոցիալական պաշտպանության համակարգի կողմից արագ արձագանքման մեխանիզմ կարող է հանդես գալ սոցիալական շտապ օգնության, այդ թվում մթերային բանկի ստեղծումը: Նախատեսվում է, որ սոցիալական շտապ օգնության, այդ թվում մթերային բանկի, ստեղծումն իրականացվելու է պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային և հասարակական կազմակերպությունների համագործակցության միջոցով: Այս ծրագիրը նախատեսում է հասարակության ներսում փոխօգնության համակարգ, որտեղ իր ներդրումը կարող է ունենալ յուրաքանչյուր ոք, համակարգին նվիրաբերելով որոշակի նյութական՝ կենցաղային առաջին անհրաժեշտության ապրանքներ, հագուստ, մթերք և այլն, օգնություն, որը պահեստավորվելուց հետո վերաբաշխվելու է դրանց կարիքն ունեցող ընտանիքներին, անձանց: Համագործակցության միջոցով ամբողջությամբ ներդրվելու է արագ արձագանքման գործիք՝ տեղեկատվական հարթակ, որտեղ կգրանցվեն հրատապ օգնության կարիքները և համագործակցող կողմերը կկարողանան արագ հասցնել անհրաժեշտ օգնությունը: 2) միաժամանակ, սոցիալական դեպքի վարման տեղեկատվական ենթահամակարգում ներառվելու է ճգնաժամային իրավիճակներում արագ արձագանքման մեխանիզմների ծրագրային փաթեթ, որը հնարավորություն կտա ճգնաժամերի դեպքում անմիջական և թիրախային աջակցություն ցույց տալ դրա կարիքն ունեցող խոցելի խմբերին: 3) ներդրվելու է սննդային քարտերի համակարգ, որը գործելու է հանրապետության ողջ տարածքում: Միաժամանակ, նախատեսվում է վերոգրյալի համար օրենդրական հիմքն ապահովել «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերով: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Նյութական օգնության տրամադրման նոր հնարավորությունների ստեղծում՝ աղքատ ընտանիքներին աջակցելու համար:
	<u>8.6 «Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի բարեփոխման ռազմավարությունը և միասնական սոցիալական ծառայության զարգացման հնգամյա գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումն ընդունված է</u> 1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

	Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021թ. օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի 4-րդ՝ «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի 4.6 ենթաբաժնի 3-րդ պարբերությունով սահմանված նպատակներից՝ հիմք ընդունելով «Սոցիալական աջակցության մասին» օրենքը՝ Կառավարությունը հզորացնելու է նոր ձևավորված Միասնական սոցիալական ծառայությունը: Շարունակաբար զարգացնելու է սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների անձնակազմի մասնագիտական կարողությունները: Մինչև 2023 թվականը Միասնական սոցիալական ծառայության սոցիալական աշխատողների 100%-ն անցնելու է մասնագիտական վերապատրաստում: 1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Սոցիալական պաշտպանության ոլորտի բարեփոխումների շրջանակում՝ ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման համատեքստում 2021թ. ապրիլի 1-ից գործարկվել է Միասնական սոցիալական ծառայությունը, որը ստեղծվել է սոցիալական պաշտպանության ոլորտի բոլոր 4 մարմինների ներգրավմամբ՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակա մարմին սոցիալական ապահովության ծառայություն, բժշկասոցիալական փորձաքննության, զբաղվածության պետական գրասենյակներ և մարզային ենթակայության սոցիալական աջակցության գործակալություններ և համայնքային ենթակայության սոցիալական աջակցության բաժիններ: Ծառայությանը օրենքով վերապահվել են մի շարք լիազորություններ, ինչպես նաև իրականացվում են հաստիքների համալրման աշխատանքներ: Ծառայությունն ունի հզորացման կարիք: 1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները Միջոցառմամբ առաջարկվում է միասնական սոցիալական ծառայության ինստիտուցիոնալ և մասնագիտական կարողությունների հզորացում, որի կապակցությամբ անհրաժեշտ է մշակել «Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի բարեփոխման ռազմավարությունը և միասնական սոցիալական ծառայության զարգացման հնգամյա գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, ինչպես նաև իրականացնել հետևյալ գործողությունները. 1) գործարկել սոցիալական դեպքի վարման տեղեկատվական ենթահամակարգը, մշակել ընտանիքի սոցիալական գնահատման ենթահամակարգի բովանդակային նկարագիրը, 2) միասնական սոցիալական ծառայության շենքային պայմանների բարելավում և տեխնիկապես վերազինված տարածքային կենտրոնների առկայություն, 3) Միասնական սոցիալական ծառայության վերապատրաստված մասնագիտական անձնակազմ, 4) միասնական տեղեկատվական համակարգի առկայություն, ծառայությունների տրամադրման ընթացակարգերի պարզեցում, որոշումների ընդունման գործընթացների ավտոմատացում: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Բազմաբնույթ ու ամբողջական սոցիալական ծառայությունների փաթեթի տրամադրում և մատուցվող ծառայությունների որակի բարձրացում:
9	**<u>9.1 Սոցիալական պաշտպանության հաստատություններում խնամվող և դրանցից դուրս գտնվող տարեցների սոցիալական կարիքների գնահատում</u>** 1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակըՄիջոցառման իրականացումը բխում է է ՀՀ կառավարության 2021թ. օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի 4-րդ՝ «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի 4.6 ենթաբաժնի դրույթներից (կետ 25) և նպատակ ունի ամբողջությամբ և լիարժեք վերանայել և գնահատել տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները: Դրանք այսօր արդեն գործող, ինչպես նաև նոր ծառայությունների ներդրմամբ պայմանավորված՝ անհրաժեշտություն են: 1.1.կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Տարեցների, այդ թվում՝ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում խնամքի ծառայություններ ստացողների կարիքների լիարժեք և համակողմանի գնահատումն անհրաժեշտ է անհատապես ուսումնասիրելու յուրաքանչյուրի սոցիալական, հոգեբանական, առողջական վիճակը, նրանց բնակարանային պայմանները, ընտանեկան և սոցիալական այլ կապերը, նրանց ցանկությունները, պահանջմունքներն ու ներուժը՝ ինքնուրույն ապրելու, որոշակի ծառայություններից օգտվելու և այլ գործոններ: 1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները Ծառայությունների ցանկում ներառված համայնքահեն յուրաքանչյուր ծառայության համար նկարագրի (անձնագրի), տրամադրման ընթացակարգի, ծառայությունների տրամադրման և գնահատման քանակական և որակական չափորոշիչների, մեթոդաբանության ամբողջական մշակում, հաստատում, այդ թվում՝ յուրաքանչյուր ծառայության համար ծախսարդյունավետության գնահատում: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Գնահատված են ինչպես սոցիալական պաշտպանության հաստատություններում խնամվող, այնպես էլ դրանցից դուրս գտնվող տարեցների սոցիալական կարիքները (գնահատված է շուրջ 1000 տարեցի կարիք): Նախընտրելի ծառայությունների ցանկը առկա է: Համայնքահեն ծառայությունների ցանկը հաստատվում է ըստ ծառայությունների տեսակների և ըստ համայնքների:

<u>9.2 «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1112-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող խնամքի հիմնական սկզբունքները և ծառայությունների ու հաստիքային միավորների չափորոշիչները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումն ընդունված է</u>

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացումը բխում է է ՀՀ կառավարության 2021թ. օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի 4-րդ՝ «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի 4.6 ենթաբաժնի դրույթներից (կետ 25) և նպատակ ունի վերանայել և հստակեցնել տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող խնամքի ծառայությունների տրամադրման կարգն ու պայմանները, դրանք համապատասխանեցնել ժամանակակից մոտեցումներին և դրանում ներառել այնպիսի դրույթներ, որոնք գործող կարգում բացակայում են, սակայն այսօր արդեն գործող, ինչպես նաև նոր ծառայությունների ներդրմամբ պայմանավորված՝ անհրաժեշտություն են: Միաժամանակ, տարեց մարդկանց արժանապատիվ կենսամակարդակի ապահովումը, որպես պետության պարտավորություն, ամրագրված է ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածի 12-րդ ենթակետում:

1.1.կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Ներկա դրությամբ տարեց անձանց խնամք և սոցիալական այլ ծառայություններ տրամադրող կազմակերպությունները գործող կարգում ամբողջությամբ ներառված չեն, մասնավորապես՝ սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնների տարանջատում չկա, բացակայում է սննդի տրամադրման ծառայությունը, նույն խնդիրը կա տնային խնամքի պարագայում, երբ գործող կարգում բացակայում է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ծառայությունների մատուցման վերաբերյալ դրույթ, այն դեպքում, երբ այդ ծառայությունը փաստացի գործում է 2020 թվականից: Խնդիր կա նաև կապված խնամքի համար դիմելու կարգի ու պայմանների հետ՝ պայմանավորված Միասնական սոցիալական ծառայությունների ներդրմամբ: Վերանայման անհրաժեշտություն կա նաև խնամքի տրամադրման համար բժշկական հակացուցումների, հատկապես՝ սահմանափակումների մասով:

1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Միջոցառման իրականացման շրջանակում կվերանայվի ՀՀ կառավարության վերը նշված որոշումը, որտեղ կհստակեցվեն խնամքի տրամադրման համար դիմելու կարգը և պայմանները, մասնավորապես՝ ամրագրելով Միասնական սոցիալական ծառայության գրասենյակի դերակատարումը, կտարանջատվեն խնամքի ծառայությունների տարբեր տեսակները, ցերեկային կենտրոնների տիպերը, ցերեկային կենտրոնները կառանձնացվեն ճաշարաններից (վերջիններս դիտարկելով որպես սոցիալապես անապահով անձանց բնամթերային օգնության տրամադրման միջոց), կամրագրվի դրույթ նոր ծառայությունների ներդրման վերաբերյալ, կվերանայվեն խնամքի տրամադրման սահմանափակումները և այլն:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Ոլորտի օրենսդրության կատարելագործում, իրավական ակտի վերանայում, խնամքի տրամադրման կարգի հստակեցում, խնամքի գործող չափորոշիչների վերանայում և ծառայությունների տեսակների նկարագրերի համապատասխանեցում առկա և ակնկալվող ծառայություններին:

<u>9.3 «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1069-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումն ընդունված է</u>

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացումը բխում է «Սոցիալական աջակցություն մասին» օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ ենթակետի դրույթներից: Միջոցառման իրականացման շրջանակում նախատեսվում է փոփոխություններ և լրացումներ կատարել գործող իրավական ակտում, ինչը բխում է Կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1069-Ն որոշման N 4 հավելվածով հաստատված՝ որոշակի բնակության վայր չունեցող անօթևան անձանց ժամանակավոր կացարանով ապահովելու կարգը հստակեցնելու, ինչպես նաև ըստ անօթևան մարդկանց կարգավիճակի՝ նոր ծառայություններ սահմանելու անհրաժեշտությամբ: Միջոցառման իրականացման նպատակը որոշակի բնակության վայր չունեցող և տարբեր առողջական վիճակ ու սոցիալական կարգավիճակ ունեցող անձանց համար նրանց գնահատված կարիքին համապատասխան կացարանով և սոցիալական ծառայություններով ապահովելն է:

	1.1.կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Ներկա դրությամբ հանրապետությունում գործում է անօթևան մարդկանց մեկ ժամանակավոր կացարան, որտեղ ընդունվելու համար կան որոշակի հակացուցումներ՝ համաձայն գործող կարգի: Սակայն կան անօթևան մարդիկ, ովքեր ունեն կացարանի ու խնամքի կարիք, սակայն քանի որ ունեն տուբերկուլոզ կամ հոգեկան առողջության խնդիրներ, կամ՝ անորոշ կարգավիճակ ու ախտորոշում, այդ պատճառով զրկվում են կացարանով ապահովվելուց և համապատասխան սոցիալական ծառայություններ ստանալուց, քանի որ հանրապետությունում չկան մասնագիտացված հատուկ կացարաններ անօթևան մարդկանց համար, իսկ ժամանակավոր կացարանի տրամադրման գործող կարգը նման կարգավորումներ չունի: 1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները Միջոցառման իրականացման արդյունքում կլուծվի անօթևան մարդկանց համար տարբեր տիպի ծառայությունների ստեղծման հարցը և այդ մարդիկ՝ ըստ իրենց կարգավիճակի, հիվանդության կամ այլ հանգամանքով պայմանավորված կտեղավորվեն կամ անօթևան մարդկանց ժամանակավոր կացարանում, կամ՝ մասնագիտացված կացարանում, կամ՝ ընդունիչ-ախտորոշիչ կենտրոններում: Կառավարության որոշման նախագծով կկարգավորվեն վերը նշված խնդիրը: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Միջոցառման իրականացման շրջանակում մշակվող իրավական ակտի ընդունման արդյունքում կունենաք որոշակի բնակության վայր չունեցող անօթևան անձին կացարանով ապահովման երեք տիպի ծառայություն՝ ժամանակավոր օթևան (կացարան), մասնագիտացված կացարան (տարբեր առողջական խնդիրներ ունեցող անօթևան անձանց համար, որոնց բժշկական ախտորոշումներն օրենսդրությամբ սահմանված կարգով համարվում են հակացուցումներ ժամանակավոր օթևան ընդունվելու համար: Դրանք հիմնականում ունեն երկու ուղղվածություն՝ տուբերկուլոզ և (կամ) սեռավարակներ (այդ թվում՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ) ունեցող և հոգեկան առողջության խնդիրներ (ծերունական թուլամտություն, դեմենցիա, փսիխոզ, հոգեկան առողջության և (կամ) մտավոր խնդիրներ) ունեցող անօթևան անձանց համար) և ընդունիչ-ախտորոշիչ կենտրոն, որը հանդիսանում է մյուս ծառայությունների միջև միջանկյալ օղակ և նախատեսված է անձի ինքնությունը չպարզված, ակնհայտ ոչ ադեկվատ վարքագիծ դրսևորող, կասկածելի հոգեկան առողջությամբ անօթևան անձանց հրատապ սոցիալական աջակցություն տրամադրելու համար: Արդյունքում կապահովվի բոլոր անօթևան մարդկանց կացարան ունենալու իրավունքը և կլուծվեն նրանց սոցիալ-հոգեբանական և առողջապահական խնդիրները:
10	**<u>10.1 «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2022-2027 թվականների համալիր ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ</u>** 1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2022-2027 թվականների համալիր ծրագիրը հաստատելու մասին» կառավարության որոշման նախագծի մշակման անհրաժեշտությունը բխում է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-ի ա. կետի և ՀՀ կառավարության 2021թ. օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 4-րդ՝ «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի 4.6 ենթաբաժնի 22-րդ կետի պահանջներից: Միջոցառման նպատակն է ամրագրել հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանն ուղղված հիմնական ուղղությունները, հասարակական կյանքի բոլոր ոլորտներում հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառումն ապահովող համապարփակ միջոցառումների և ծրագրերի ցանկը: 1.1.կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները 2017 թվականի հունվարի 8-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2017-2021 թթ համալիր ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 1 արձանագրային որոշման գործողության ժամկետը ավարտվում է 2021 թվականին: Ուստի անհրաժեշտություն է առաջանում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման, խթանման և պաշտպանության ոլորտում մշակելու նոր ռազմավարական փաստաթուղթ, որում կամրագրվեն պետական քաղաքականության հիմնական ուղղությունները, հաշմանդամություն ուենցող անձանց սոցիալական ներառմանն ուղղված 5 ամյա գործողությունների ծրագիրը: 1.2.առկա խնդիրների առաջարկվող լուծումները 2010 թ. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի 2006 թ. Կոնվենցիայի վավերացումից հետո տարբեր ոլորտներում իրականացվում են միջոցառումներ՝ ուղղված հաշմանդամություն ունեցող անձանց հավասար և մատչելի պայմաններ ապահովելուն, նրանց հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանությանը: Այնուամենայնիվ, դրանք բավարար և համակարգված չեն: Հաշմանդամություն ունեցող անձանց համար ապահովված չեն մատչելի պայմաններ, ինչը լուրջ խոչնդոտ է հանդիսանում նրանց սոցիալական ներառման համար:

2021 թվականի մայիսի 5-ին ընդունվել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրամունքների մասին» օրենքը, որն ամրագրում է հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար հնարավորությունների ապահովման, հաշմանդամության հիմքով խտրականության բացառման գործուն մեխանիզմներ: Հիմք ընդունելով վերոգրյալը անհրաժեշտ է միջոլորտային ակտիվ համագործակցության շնորհիվ ձեռնարկել հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառումն ապահովող անհրաժեշտ միջոցառումներ: Ապահովել դրանց հաշվետվողականությունը, մշտադիտարկումը՝ կատարելով նաև միջազգայնորեն ստանձնած պարտավորությունը:

2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Հաշմանդամություն ունեցող անձանց հավասար հնարավորությունների, սոցիալական ներառման և անկախ կյանքի ապահովում:

<u>10.2 «Խելամիտ հարմարեցումներ ապահովելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ</u>

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

«Խելամիտ հարմարեցումներ ապահովելու կարգը հաստատելու մասին» կառավարության որոշման նախագծի մշակման անհրաժեշտությունը բխում է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ կառավարության 2021թ. օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 4-րդ՝ «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի 4.6 ենթաբաժնի 22-րդ կետի պահանջներից:

Միջոցառման նպատակն է ամրագրել խելամիտ հարմարեցումների ապահովման մեխանիզմները, որն հնարավորություն կտա անհրաժեշտ հարմարեցումների և մատչելի պայմանների ապահովման միջոցով իրացնել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները:

1.1.կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

2010 թ. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի 2006 թ. Կոնվենցիայի վավերացումից հետո պետությունը պարտավորություն է ստանձնել ապահովել հավասար հնարավորություններ և մատչելի պայմաններ հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառումն ապահովելու նպատակով: Ծառայությունների, ծրագրերի, մատչելիության ապահովման համար կիրառվում է խելամիտ հարմարեցումը, որը ենթադրում է անհրաժեշտ և համապատասխան փոփոխությունների և հարմարեցումների (շտկումների) կատարում, որոնք չեն առաջացնում անհամաչափ կամ անհարկի բեռ և ուղղված են հաշմանդամություն ունեցող անձի՝ մարդու իրավունքներից և հիմնական ազատություններից մյուսների հետ հավասար հիմունքներով օգտվելուն:

1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Սույն միջոցառմամբ նախատեսվում է ամրագրել խելամիտ հարմարեցումների տրամադրման կարգը և պայմանները, որով աշխատավայրում, ուսումնական հաստատությունում և ծառայությունների մատուցման ոլորտում կապահովվի բոլոր անհրաժեշտ պայմանները հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացման և սոցիալական ներառման համար: Հարկ է նշել, որ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքի իմաստով խելամիտ հարմարեցումների ապահովման մերժումը նույնպես համարվում է հաշմանդամության հիմքով խտրականություն:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Հաշմանդամություն ունեցող անձանց հավասար հնարավորությունների և մատչելի պայմանների ապահովում, հաշմանդամության հիմքով խտրականության դրսևորումների բացառում:

<u>10.3 «Պետական հավաստագրերի միջոցով հաշմանդամություն ունեցող անձանց խնամք և սոցիալ-վերականգնողական ծառայություններ տրամադրելու մասին» ՀՀ կառավարության որոշումն ընդունված է</u>

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

«Պետական հավաստագրերի միջոցով հաշմանդամություն ունեցող անձանց խնամք և սոցիալ-վերականգնողական ծառայություններ տրամադրելու մասին» կառավարության որոշման նախագծի մշակման անհրաժեշտությունը բխում է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 2021 թ. օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 4-րդ՝ «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի 4.6 ենթաբաժնի 22-րդ և 23-րդ կետերի պահանջներից:

Միջոցառման նպատակն է հզորացնել հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանն ուղղված սոցիալ-վերականգնողական ծառայությունները, ներդնել նոր մեխանիզմներ ապահովել դրանց արդյունավետությունը:

1.1.կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

ՀՀ պետական բյուջեի առանձին ծախսային միջոցառումների շրջանակներում իրականացվում են հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի և սոցիալ-վերականգնողական ծառայություններ՝ ուղղված

	հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի կազմակերպմանը, նրանց սոցիալական ներառմանը և անկախ կյանքի հմտությունների ձևավորմանը: 2019 թվականից ծառայությունների իրականացման նպատակով հայտարարվում են մրցույթներ, որոնց կարող են մասնակցել աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից սահմանված կարգով հավաստագրված կազմակերպությունները: Մրցույթների արդյունքում հաղթող կազմակերպություններին ՀՀ պետական բյուջեից տրամադրվում են դրամաշնորհներ՝ ցերեկային կենտրոններում հաշմանդամություն ունեցող անձանց խնամքը, զբաղվածությունը, անհրաժեշտ հմտությունների ուսուցումը կազմակերպելու նպատակով: Ծառայությունների միջև մրցակցությունը և հետևաբար ծառայությունների որակը և հասցեականությունը բարելավելու նպատակով նախատեսվում է հաշմանդամություն ունեցող անձանց գնահատված կարիքի հիման վրա տրամադրել պետական հավաստագրեր՝ սոցիալ-վերականգողական ծառայություններ ստանալու նպատակով: 1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները Սույն միջոցառմամբ ամրագրվում է պետական հավաստագրերի միջոցով հաշմանդամություն ունեցող անձանց խնամք և սոցիալ-վերականգնողական ծառայություններ տրամադրելու կարգը և պայմանները: Պետական հավաստագրերը ձևավորվում են ըստ հաշմանդամություն ունեցող անձի գնահատված կարիքի: Պետական հավաստագրի միջոցով շահառուն հնարավորություն է ստանում ընտրել կազմակերպությունը, որտեղ կարող է ծառայություն ստանալ: Պետական հավաստագրերով ծառայությունների տրամադրումը ապահովում է համայնքներում կազմակերպությունների թվի ավելացումը, ծառայությունների մրցակցությունը և որակի բարելավումը: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվող սոցիալ-վերականգնողական ծառայությունների ընդլայնում, ծառայությունների մատուցման նոր մեխանիզմների ներդնում:
11	**<u>11.1 «Անձի ֆունկցիոնալության գնահատման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 2-ի N 276-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ</u>** 1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը ««Անձի ֆունկցիոնալության գնահատման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 2-ի N 276-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակման անհրաժեշտությունը բխում է «Անձի ֆունցիոնալության գնահատման մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2021 թ. օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 4-րդ՝ «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի 4.6 ենթաբաժնի 24-րդ կետի պահանջներից: Միջոցառման նպատակն է անձի ֆունկցիոնալության գնահատման համակարգի ներդնումը, հաշմանդամության գնահատման կարգի ամրագրումը: 1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները 2021 թվականի մայիսի 5-ին ընդունվել «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» ՀՀ օրենքը, համաձայն որի ներդրվում է հաշմանդամության գնահատման նոր մոդել՝ հիմնված Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման սկզբունքների հիման վրա: Վերոգրյալով պայմանավորված անհրաժեշտություն է առաջացել ուժը կորցրած ճանաչել բժշկասոցիալական փորձաքննության ոլորտի իրավական ակտերը և մշակել «Անձի ֆունկցիոնալության մասին» օրենքից բխող ենթաօրենսդրական ակտեր: 1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները Սույն միջոցառմամբ ամրագրվում է անձի ֆունկցիոնալության գնահատման կարգը, պայմանները, ժամկետները և այլն: 2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Անձի կարիքների բազմակողմանի գնահատման վրա հիմնված հաշմանդամության գնահատման նոր մոդելի առկայություն, գնահատման գործընթացի թվայնացում:
	<u>11.2 «Անձի ֆունկցիոնալության գնահատման չափորոշիչներն ու գործիքները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի N 780-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ</u> 1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը «Անձի ֆունկցիոնալության գնահատման չափորոշիչներն ու գործիքները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի N 780-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակման անհրաժեշտությունը բխում է «Անձի ֆունցիոնալության գնահատման մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2021 թ. օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հավանության

	արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 4-րդ՝ «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի 4.6 ենթաբաժնի 24-րդ կետի պահանջներից: Միջոցառման նպատակն է անձի ֆունկցիոնալության գնահատման համակարգի ներդնումը, հաշմանդամության գնահատման չափորոշիչների ամրագրումը: 1.1.կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները 2021 թվականի մայիսի 5-ին ընդունվել «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» ՀՀ օրենքը, համաձայն որի ներդրվում է հաշմանդամության գնահատման նոր մոդել՝ հիմնված Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման սկզբունքների հիման վրա: Վերոգրյալով պայմանավորված անհրաժեշտություն է առաջացել ուժը կորցրած ճանաչել բժշկասոցիալական փորձաքննության ոլորտի իրավական ակտերը և մշակել «Անձի ֆունկցիոնալության մասին» օրենքից բխող ենթաօրենսդրական ակտեր: 1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները Սույն միջոցառմամբ ամրագրվում են անձի ֆունկցիոնալության գնահատման չափորոշիչները: 2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Անձի կարիքների բազմակողմանի գնահատման վրա հիմնված հաշմանդամության գնահատման նոր մոդելի առկայություն, գնահատման չափորոշիչներ հաստատում:
	<u>11.3 «Ծառայությունների անհատական ծրագիրը կազմելու և իրականացնելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24 N-ի 1535-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ</u> 1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը «Ծառայությունների անհատական ծրագիրը կազմելու և իրականացնելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24 N-ի 1535-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակման անհրաժեշտությունը բխում է «Անձի ֆունցիոնալության գնահատման մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2021 թ. օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 4-րդ՝ «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի 4.6 ենթաբաժնի 24-րդ կետի պահանջներից: Միջոցառման նպատակն է կատարելագործել ծառայությունների որոշարկման մեխանիզմները՝ հիմնվելով անձի կարիքների բազմակողմանի գնահատման վրա: 1.1.կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները 2021 թվականի մայիսի 5-ին ընդունվել «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» ՀՀ օրենքը, համաձայն որի ներդրվում է հաշմանդամության գնահատման նոր մոդել՝ հիմնված Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման սկզբունքների հիման վրա: Ֆուկցիոնալության գնահատման արդյունքում որոշարկվելու է անձի ծառայությունների փաթեթը հիմք ընդունելով ֆունկցիաների սահմանաձակումները, գործունեության մեջ և միջավայրում ունեցած խնդիրները: 1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները Միջոցառմամբ ամրագրվում է ծառայություններ անհատական ծրագրի մշակամն կարգը և պայմանները՝ հիմնված անձի կարիքների բազմակողմանի գնահատման վրա: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Անձի կարիքների բազմակողմանի գնահատման հիման վրա ծառայությունների որոշարկման մեխանիզմների կատարելագործում:
12	**<u>12.1 «ՀՀ ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ իրականացնելու մասին» ՀՀ օրենքի փաթեթին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշումն ընդունված է</u>** 1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է երեխաների այլընտրանքային խնամքի՝ մասնավորապես խնամատարության և որդեգրման գործընթացների բարեփոխման, ինչպես նաև երեխաների իրավունքների պաշտպանության մեխանիզմների հզորացման կարևորությունից: Միջոցառման համար հիմք է հանդիսանում ՀՀ Սահմանադրության 36-րդ, 37-րդ և 86-րդ հոդվածները, ինչպես նաև բխում է ՀՀ կառավարության 2021 թ. օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 4-րդ՝ «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի 4.6 ենթաբաժնի 17-րդ, 18-րդ, 19-րդ և 20-րդ կետերի պահանջներից: 1.1.կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Ներկայում ոլորտային օրենսդրությամբ սահմանվող կարգավորումներում առկա բացերը թույլ չեն տալիս երեխայի իրավունքների իրացման համար ապահովել լիարժեք նախապայմաններ, ինչպես նաև բացակայում է երեխաների կարծիքի հաշվի առնման գործընթացների հստակ նկարագիրը և անհրաժեշտ մեխանիզմները:

1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Օրենսդրության փոփոխությամբ կապահովվի փաստացի առանց ծնողական խնամքի մնացած երեխաների հետագա խնամքի կազմակերպման գործընթացների հստակեցումը, այդ թվում՝ ընտանեկան տիպի այլընտրանքային խնամքի եղանակների: Երեխաների կարծիքի հաշվի առնման գործընթացները կլինեն հստակ ամրագրված:

2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Միջոցառման արդյունքում կապահովվի լավագույն շահն ապահովող օրենքի նախագծի ներկայացումը ՀՀ վարչապետի աշխատակազմ:

<u>12.2 «Երեխայի իրավունքների մասին ՀՀ օրենքում, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ իրականացնելու մասին» ՀՀ օրենքների փաթեթին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշումն ընդունված է</u>

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտի դերակատարների գործառույթների հստակ տարանջատման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման կարևորությունից: Միջոցառման համար հիմք է հանդիսանում ՀՀ Սահմանադրության 36-րդ, 37-րդ և 86-րդ հոդվածները, ինչպես նաև ՀՀ կառավարության 2021 թ. օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 4-րդ՝ «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի 4.6 ենթաբաժնի 17-րդ, 18-րդ, 19-րդ և 20-րդ պարբերությունները:

1.1.կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Ներկայում երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտի դերակատարների գործառույթներն ամրագրված են մասնակի, որոշ դեպքերում առկա են գործառույթների վերածածկ, ինչը խոչընդոտում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին առնչվող աշխատանքների արդյունավետությանը:

1.2.առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Փոփոխությունների շնորհիվ կամրագրվեն երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտի մասնագետների հստակ լիազորությունները սահմանող, ինչպես նաև ոլորտային այլ բարեփոխումներ:

2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Փոփոխությունների շնորհիվ կապահովվի երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտի մասնագետների հստակ լիազորությունները սահմանող, ինչպես նաև ոլորտային այլ բարեփոխումներ բովանդակող նախագծերի ներկայացումը ՀՀ վարչապետի աշխատակազմ:

<u>12.3 «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ իրականացնելու մասին» ՀՀ օրենքի փաթեթին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշումն ընդունված է</u>

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին տրամադրվող արտոնությունների շրջանակի ընդլայնման կարևորությունից:

Միջոցառման համար հիմք է հանդիսանում ՀՀ Սահմանադրության 37-րդ և 86-րդ հոդվածները, ինչպես նաև ՀՀ կառավարության 2021 թ. օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 4-րդ՝ «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի 4.6 ենթաբաժնի 17-րդ պարբերությունը:

1.1.կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Վերջին տարիներին նախնական (արհեստագործական) մասնագիտական ուսումնական հաստատությունների ընդունելությունն իրականացվում է նաև վճարովի ուսուցման համակարգով, և մրցութային հիմունքներով վճարովի ուսուցման համակարգ են ընդունվում նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձինք, ինչը Օրենքով չի կարգավորվում և չի բխում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների շահերից:

1.2.առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Առկա խնդրի լուծման նպատակով առաջարկվում է ընդլայնել սահմանված արտոնությունների շրջանակը և նախնական մասնագիտական (արհեստագործական) պետական հաստատություններ անվճար հիմունքներով ընդունվելու հնարավորությունը ևս հասանելի դարձնել առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց:

2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Միջոցառման արդյունքում կապահովվի առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց կրթական իրավունքի իրացման համար նպաստավոր պայմանները, ինչպես նաև կբարելավվեն շուրջօրյա խնամքի հաստատություններում խնամք ստացող առանց

	ծնողական խնամքի մնացած երեխաների և շուրջօրյա խնամքի հաստատությունների շրջանավարտ հանդիսացող առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց ինքնուրույն կյանքի անցմանն ուղղված պայմանները:
13	**<u>13.1. Շուրջօրյա խնամք մատուցող պետական ոչ առևտրային առնվազն 3 կազմակերպությունների շենքային պայմանների մոնիթորինգ և գնահատում</u>** 1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 թ. օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 4-րդ՝ «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի 4.6 ենթաբաժնի 26-րդ կետի պահանջներից և նպատակ ունի վերանայել և հստակեցնել շահառուներին մատուցվող խնամքի ծառայությունների տրամադրման պայմանները, կատարել վերանորոգումներ և բարեկարգումներ, դրանք համապատասխանեցնել ժամանակակից մոտեցումներին, որոնք այսօր արդեն գործող, ինչպես նաև նոր ծառայությունների ներդրմամբ պայմանավորված՝ անհրաժեշտություն են: 1.1.կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Ներկա դրությամբ շահառուներին խնամք և սոցիալական այլ ծառայություններ տրամադրող կազմակերպությունների շենքերն ու շինությունները շարունակում են գտնվել ծանր պայմաններում, ունեն շտապ վերանորոգման կարիք, գույքը հնամաշ է: Սա ոչ միայն խնամքի և բնակության համար անվայելուչ պայմաններ է ստեղծում, այլև դժվարեցնում է աշխատանքը և այն դարձնում ոչ ներկայանալի: 1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները Միջոցառման իրականացման շրջանակում կվերանայվի ՊՈԱԿ-ների կողմից իրենց շենքային պայմանների գնահատումը, կանցկացվի մոնիթորինգ, և կարձանագրվեն բոլոր բացերը: Այս անհրաժեշտությունը բխում է այն հանգամանքից, որ նման աշխատանքներ տասնամյակներ շարունակ չեն կատարվել, և կարիք է առաջացել հիմնանորոգել եղածը: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Ոլորտում գործող շուրջօրյա խնամքի հաստատություններում վերանորոգման և բարեկարգման աշխատանքների սկզբի ազդարարում, որը հիմք կհանդիսանա նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և բարեկարգման համար:
	<u>13.2. Համապատասխան մասնագետների կողմից շուրջօրյա և ցերեկային խնամք մատուցող պետական ոչ առևտրային առնվազն 3 կազմակերպությունների շենքային պայմանների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում՝ մրցույթով ընտրված կազմակերպության միջոցով</u> 1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման անհրաժեշտությունը բխում է Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 թ. օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 4-րդ՝ «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի 4.6 ենթաբաժնի 26-րդ կետի պահանջներից և նպատակ ունի հստակեցնել շահառուներին մատուցվող խնամքի ծառայությունների տրամադրման պայմանների, մասնավորապես՝ վերանորոգումներ և բարեկարգումներ կատարելու չափը, որը այդ աշխատանքների կատարմամբ պայմանավորված՝ անհրաժեշտություն է: 1.1.կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Կառուցման սկզբից շենքերն ու շինությունները երբևէ չեն ենթարկվել հիմնանորոգման, և գոյություն ունեցող խնդիրները պարբերաբար խորացել են: Չեն կատարվել հաշվարկներ՝ մասնագիտացված ընկերությունների կողմից, ինչով պայմանավորված հայտնի չի եղել, թե որքան միջոցներ են անհրաժեշտ՝ վերացնելու խնամքի և բնակության համար անվայելուչ պայմանները: 1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները Միջոցառման իրականացման շրջանակում մասնագիտական գնահատական կտրվի նախկինում մոնիթորինգի ենթարկած և բովանդակային վարչության կողմից նոր չափորոշիչներով ներկայացված պահանջների գնահատմանը՝ ստեղծելով հստակ հաշվարկների հստակ մեխանիզմ և պատկեր: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Ոլորտում գործող շուրջօրյա խնամքի հաստատություններում վերանորոգման և բարեկարգման աշխատանքների չափելիություն, ինչը կհստակեցնի ֆինանսավորման աղբյուրից միջոցի տրամադրման չափը:
	<u>13.3 Շուրջօրյա և ցերեկային խնամք մատուցող պետական ոչ առևտրային առնվազն 3 կազմակերպությունների շենքային պայմանների բարելավման գործընթացի կազմակերպում</u> 1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 թ. օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 4-րդ՝ «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի 4.6

	ենթաբաժնի 26-րդ կետի պահանջներից և նպատակ ունի վերանայել և հստակեցնել շահառուներին մատուցվող խնամքի ծառայությունների տրամադրման պայմանները, կատարել վերանորոգումներ և բարեկարգումներ, դրանք համապատասխանեցնել ժամանակակից մոտեցումներին, որոնք այսօր արդեն գործող, ինչպես նաև նոր ծառայությունների ներդրմամբ պայմանավորված՝ անհրաժեշտություն են: 1.1.կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Խնամքի կենտրոններում վերանորոգման աշխատանքները՝ պետական կամ համայնքային բյուջեի, օրենքով չարգելված այլ միջոցների, միջազգային գործընկերների ֆինանսավորման միջոցով քիչ են իրականացվել կամ չեն իրականացվել, քանի որ չկար հստակ կարիքի գնահատում: Նախագծանախահաշվային փաստաթղթերի առկայությունը ներկայացնում է դրամական միջոցի չափը, թույլ տալիս դասակարգել խնդիրները ըստ անհրաժեշտության և լուծելիության: 1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները Մասնագիտացված կազմակերպությունների կողմից իրականացված մոնիթորինգային գնահատումն ու նախագծանախահաշվային փաստաթղթերի ներկայացումը կտրամադրվի արդեն միջնաժամկետ ծախսերի ծրագրում՝ կառավարության ծրագրի պահանջներին համապատասխան չափելի գումար պահանջելու տեսանկյունից: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Շուրջօրյա խնամքի երեք հաստատություններում վերանորոգման և բարեկարգման աշխատանքների իրականացում, ինչը կստեղծի կյանքի և խնամքի համար բարենպաստ պայմաններ, նոր շունչ կհաղորդի խնամքի կենտրոններին և կդարձնի ոլորտն ավելի ներկայանալի:
14	**<u>14.1 «Գենդերային քաղաքականության իրականացման 2024-2028 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումն ընդունված է</u>** 1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 30-րդ հոդվածից, «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածից, ՀՀ կառավարության 2021 թ. օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 4-րդ՝ «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի 4.6 ենթաբաժնի 16-րդ պարբերությունից, ինչպես նաև ուղենիշային հիմք է հանդիսացել «Հայաստանի վերափոխման ռազմավարություն» 2050-ով սահմանված գործողությունների «5.3» ենթակետով նշված թիրախային արդյունքները և դրանից բխող ցուցանիշները: Միջոցառման իրականացման նպատակն է օրենսդրական բարեփոխումների միջոցով, ինչպես նաև սերտորեն համագործակցելով քաղաքացիական հասարակության ինստիտուտների հետ՝ ամրապնդել և կատարելագործել կանանց առաջխաղացման ազգային մեխանիզմը՝ ապահովելով հասարակական կյանքի բոլոր ոլորտներում կանանց հավասար մասնակցությունը: 1.1.կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Չնայած պետական մարմինների կողմից հասարակական կազմակերպությունների և միջազգային կառույցների աջակցությամբ իրականացվել են տարբեր ոլորտներում գենդերային հավասարությանն ուղղված մի շարք աշխատանքներ և դրվել են ներգործուն միջավայրի ստեղծման անհրաժեշտ հիմքերը, ոլորտային և միջոլորտային ուղղորդված քաղաքականության իրականացման համար, գենդերային հավասարության հասնելու ճանապարհին առկա են մի շարք խոչընդոտներ և մարտահրավերներ, ինչպես նաև ակնհայտորեն առկա է գենդերային ճեղքվածքը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում: 1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները Սույն միջոցառմամբ նախատեսվում է ստեղծել գործուն մեխանիզմներ՝ ուղղված հասարակական-քաղաքական կյանքին կանանց գործուն մասնակցության աջակցությանը, հասարակության ժողովրդավարացման գործընթացներում կանանց սոցիալական և քաղաքական ռեսուրսների ընդգրկման մեխանիզմների ներդրմանը, գործող Կանանց հարցերով խորհրդի և ՀՀ մարզպետատարաններում և Երևանի քաղաքապետարանում գործող Գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովների աշխատանքների և համագործակցության բարելավմանը, հասարակական կյանքի բոլոր ոլորտներում կանանց հավասար մասնակցության ապահովմանը: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Հասարակական կյանքի բոլոր ոլորտներում այդ թվում կառավարման և որոշումների կայացման ոլորտում կանանց հավասար մասնակցության առկայություն, տնտեսության ոլորտում կանանց ձեռներեցությունը խթանող ծրագրերի առկայություն, կրթական և առողջապահական ոլորտներում հավասար մատչելիությունն ապահովող ծրագրերի առկայություն, կանանց առաջխաղացման ազգային մեխանիզմի ամրամնդմանն ուղղված միջոցառումների առկայություն:

	<u>14.2 «Կանանց ռեսուրս կենտրոնների» համագործակցային ցանցի հիմնում Հայաստանի Հանրապետության 8 մարզերում</u> 1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը: Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 30-րդ հոդվածից, «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածից և ՀՀ կառավարության 2021 թ. օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 4-րդ՝ «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի 4.6 ենթաբաժնի 16-րդ պարբերությունից, ինչպես նաև ուղենիշային հիմք է հանդիսացել «Հայաստանի վերափոխման ռազմավարություն» 2050-ով սահմանված գործողությունների «5.3» ենթակետով նշված թիրախային արդյունքները և դրանից բխող ցուցանիշները: Միջոցառման իրականացման նպատակն է՝ կանանց համար ապահով միջավայր ստեղծելու և նրանց անհրաժեշտ ռեսուրսներ տրամադրելու միջոցով նրանց անձնական և մասնագիտական հմտությունները զարգացնելը, հասարակության մեջ տեղի ունեցող հասարակական, քաղաքական, տնտեսական և մշակութային գործընթացներին ակտիվ մասնակցություն ապահովելը: 1.1.կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Մարզաբնակ կանանց ներգրավվածությունը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում շատ ցածր է և ակնհայտորեն առկա է գենդերային սուր ճեղքվածք, հատկապես ցածր է մարզաբնակ կանանց զբաղվածության մակարդակը, ակտիվորեն ներգրավված չեն իրենց համայնքներում որոշումների կայացման գործընթացում: 1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները Սույն միջոցառմամբ նախատեսվում է ՀՀ 8 մարզերում ստեղծել և զարգացնել «Կանանց ռեսուրս կենտրոնների» համագործակցային ցանց, որը կպաստի կանանց անձնական և մասնագիտական հմտությունների զարգացմանը, կարողությունների հզորացմանը, հասարակության մեջ տեղի ունեցող հասարակական, քաղաքական, տնտեսական և մշակութային գործընթացներին ակտիվ մասնակցությանը: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը ՀՀ 8 մարզերում «Կանանց ռեսուրս կենտրոնների» համագործակցային ցանցի առկայություն, որի հիմքում ընկած կլինի կանանց անհրաժեշտ հմտությունների և կարողությունների զարգացմանն ուղղված՝ ուսուցման և այլ օժանդակող ծրագրերի իրականացումը:
15	**<u>15.1 «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի յոթերորդ՝ 2023-2026 թթ. Ազգային ծրագիրը և դրանից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումն ընդունված է</u>** 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը: Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է «<u>Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին»</u> Հայաստանի Հանրապետության օրենքից և ՀՀ կառավարության 2021 թ. օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 4-րդ՝ «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի 4.6 ենթաբաժնի 15-րդ պարբերությունից: Ազգային ծրագրի նախատեսված դրույթները առավել ընդգրկուն ու համապարփակ կդարձնեն մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարը՝ համախմբելով ներգրավված շահագրգիռ բոլոր կողմերի ուժերը, նպաստելով մասնագետների կարողությունների հզորացմանն ու որակավորման բարձրացմանը, երևույթի առավել արդյունավետ կանխարգելմանը: 1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Ներկայումս մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի շրջանակում՝ ՀՀ ԱՍՀ նախարարությունը համարվում է որպես քաղաքականության մշակման և հիմնական սոցիալ-վերականգնողական ծառայություններ տրամադրող լիազոր մարմին, որը համակարգում է նաև մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի շրջանակում միջգերատեսչական աշխատանքները: ԱՄՆ պետքարտուղարության հերթական զեկույցում պետությանը ցուցվում է իրականացնել մի շարք միջոցառումներ՝ ոլորտի բարեփոխումները պատշաճ իրականացնելու և պետության դիրքերը բարելավելու համար: 1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի շրջանակում պետության կողմից տրամադրվող թրաֆիքինգի և շահագործման, սեռական բռնության ենթարկված անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայությունների բարելավում, միջգերատեսչական, միջազգային և հասարակական կառույցների հետ համագործակցության կայուն մեխանիզմների ներդնում: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

	Ազգային ծրագրի ընդունման արդյունքում կունենանք մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի շրջանակում համապարփակ միջոցառումների իրականացման և երևույթի առավել արդյունավետ կանխարգելման առկայություն (բարելավված օրենսդրական դաշտի առկայություն, խնդրով զբաղվող միջգերատեսչական ակտիվ համագործակցության առկայություն, խնդրին առնչվող առաջնային օղակի որակավորված մասնագետների առկայություն, առավել շատ թվով բացահայտված դեպքերի առկայություն, աջակցության և պաշտպանության մեխանիզմների հստակեցում:
	<u>15.2 Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց սոցիալ-վերականգնողական ծառայությունների ընդլայնում</u> 1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը: Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» ՀՀ օրենքից և ՀՀ կառավարության 04.06.2020թ. N 909-Լ որոշումից և ՀՀ կառավարության 2021 թ. օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 4-րդ՝ «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի 4.6 ենթաբաժնի 15-րդ պարբերությունից: Միջոցառման իրականացման նպատակն է բարելավել մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի շրջանակում պետության կողմից տրամադրվող թրաֆիքինգի և շահագործման, սեռական բռնության ենթարկված անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայությունները, բարձրացնել հասարակության իրազեկցածության մակարդակը խնդրի դեմ պայքարի շրջանակում, բարելավել զոհերի հայտնաբերման և նույնացման մեխանիզմները: 1.1.կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Ներկայումս մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի շրջանակում՝ ՀՀ ԱՍՀ նախարարությունը համարվում է որպես քաղաքականության մշակման և հիմնական սոցիալ-վերականգնողական ծառայություններ տրամադրող լիազոր մարմին, որը համակարգում է նաև մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի շրջանակում միջգերատեսչական աշխատանքները: ԱՄՆ պետքարտուղարության հերթական զեկույցում պետությանը ցուցվում է իրականացնել մի շարք միջոցառումներ՝ ոլորտի բարեփոխումները պատշաճ իրականացնելու և պետության դիրքերը բարելավելու համար: 1.2.առկա խնդիրների առաջարկվող լուծումները Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի շրջանակում պետության կողմից տրամադրվող թրաֆիքինգի և շահագործման, սեռական բռնության ենթարկված անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայությունների բարելավում, միջգերատեսչական, միջազգային և հասարակական կառույցների հետ համագործակցության կայուն մեխանիզմների ներդնում: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Սոցիալական վերաինտեգրմանը և սեփական կյանքի ինքնուրույն կազմակերպմանն ուղղված մեխանիզմների ներդրման վրա՝ մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց աջակցություն տրամադրող մասնագիտացված կազմակերպության/ների կողմից անհատական կարիքի գնահատման վրա հիմնված մատուցվող ծառայությունների ընդլայնված համակարգի առկայություն:
16	**<u>16.1 Բոլոր մարզերում և Երևան քաղաքում գործող ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների կողմից տրամադրվող աջակցության տեսակների և մատուցվող ծառայությունների ընդլայնում, մասնավորապես, կանանց տնտեսական զարգացմանն ու հզորացմանն ուղղված աջակցության նոր տեսակների ավելացմամբ</u>** 1.Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը: Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ««<u>Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին»</u> ՀՀ օրենքից և ՀՀ կառավարության 2021 թ. օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 4-րդ՝ «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի 4.6 ենթաբաժնի 16-րդ պարբերությունից: Միջոցառման իրականացման նպատակն է ընդլայնել բոլոր մարզերում և Երևան քաղաքում գործող ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների կողմից տրամադրվող աջակցության տեսակները և մատուցվող ծառայությունները, նրանց կողմից իրականացվող ծրագրերը՝ նպատակ ունենալով ներդնել կանանց տնտեսական զարգացմանն ու հզորացմանն ուղղված աջակցության նոր տեսակներ: 1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Ներկայում ընտանիքում բռնության դեմ պայքարի շրջանակում՝ ՀՀ ԱՍՀ նախարարությունը համարվում է որպես քաղաքականության մշակման և հիմնական սոցիալ-վերականգնողական ծառայություններ տրամադրող լիազոր մարմին, որը համակարգում է նաև ընտանիքում բռնության դեմ պայքարի շրջանակում միջգերատեսչական աշխատանքները: Առկա կարգավորումները բավարար չեն ընտանիքում բռնության դեմ պայքարին համահունչ

	արձագանքելու համար և պահանջում են լրացուցիչ լուծումներ: Միջազգային կոնվենցիաներով նախատեսված դրույթներով պայմանավորված՝ պետությունը պետք է բարելավի և ընդլայնի սոցիալ-վերականգնողական ծառայությունները, աջակցության տեսակները: 1.2.առկա խնդիրների առաջարկվող լուծումները Միջոցառման իրականացման շրջանակում շահագրգիռ գերատեսչությունների և ոլորտային գործընկեր հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ կմշակվի և կներդրվի համալիր ծրագրեր, որոնց ուղղված կլինեն ընտանիքում բռնության ենթարկված անձանց վերաինտեգրմանը և սեփական կյանքի ինքնուրույն կազմակերպմանն ուղղված մեխանիզմների ներդրմանը: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Սոցիալական վերաինտեգրմանը և սեփական կյանքի ինքնուրույն կազմակերպմանն ուղղված մեխանիզմների ներդրման վրա՝ ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցություն տրամադրող մասնագիտացված կազմակերպությունների կողմից անհատական կարիքի գնահատման վրա հիմնված մատուցվող ծառայությունների ընդլայնված համակարգի առկայություն:
	<u>16.2 Ընտանիքում բռնության ենթարկված անձանց ապաստարանի ծառայությունների ավելացում</u> 1.Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը: Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է «<u>Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին»</u> ՀՀ օրենքից և ՀՀ կառավարության 2021 թ. օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 4-րդ՝ «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի 4.6 ենթաբաժնի 16-րդ պարբերությունից: Միջոցառման իրականացման նպատակն է ընդլայնել ընտանիքում բռնության ենթարկված անձանց ապաստարանների քանակը և մատուցվող ծառայությունների տեսակները: 1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Ներկայում ընտանիքում բռնության դեմ պայքարի շրջանակում՝ ՀՀ ԱՍՀ նախարարությունը համարվում է որպես քաղաքականության մշակման և հիմնական սոցիալ-վերականգնողական ծառայություններ տրամադրող լիազոր մարմին, որը համակարգում է նաև ընտանիքում բռնության դեմ պայքարի շրջանակում միջգերատեսչական աշխատանքները: Առկա կարգավորումները բավարար չեն ընտանիքում բռնության դեմ պայքարին համահունչ արձագանքելու համար և պահանջում են լրացուցիչ լուծումներ: Միջազգային կոնվենցիաներով և ներպետական օրենսդրությամբ նախատեսված դրույթներով ՝ պետությունը պետք է պատշաճ ապահովի ապաստարանների կողմից տրամադրվող սոցիալ-վերականգնողական ծառայությունների մատուցման գործընթացը: Ներկայումս պետական համաֆինասավորմամբ գործում է 2 ապաստարան (նախատեսված է տարեկան ծառայություն տրամադրել 60 անձի), որտեղ ընտանիքում բռնության ենթարկված կանայք, ինչպես նաև իրենց խնամքի տակ գտնվող երեխաները ստանում են օրենքով նախատեսված ապաստարանի ծառայությունները: Պետք է շեշտել, որ ռեսուրսների սահմանափակվածությամբ պայմանավորված՝ ապաստարան են տեղափոխվում միայն ընտանիքում բռնության ենթարկված այն կանայք, որոնց կյանքին վտանգ է սպառնում, քանի որ բռնարարի հետ համատեղ կյանք վարելու դեպքում հնարավոր է բռնության կրկնություններ, գործող ապաստանների տեղակայումը գաղտնի է, որոնք աշխատում են փակ ռեժիմով, այսինքն այնտեղ տեղափոխված կանանց ելքը և մուտքը սահմանափակված է, իրականացվում է ապաստարանի աշխատակիցների հսկողությամբ: Այս գործընթացի հիմքում ընկած է այն հիմնավորումը, որ պետք է բռնարարաը տեղյակ չլինի բռնության ենթարկված անձի տեղակայման վայրի մասին, որպեսզի հետագայում չհետապնդի: Գործող ապաստարանի ծառայությունների տրամադրման գործընթացից դուրս են մնում ընտանիքում բռնության ենթարկված այն կանայք, որոնք չեն ցանկանում ապրել բռնարարի հետ, դուրս են եկել այն տնից որտեղ համատեղ բնակվել են, գնալու և բնակվելու այլ վայր չունեն, միևնույն ժամանակ չեն կարող հանդիսանալ գործող ապաստարանի շահառու, քանի որ բռնարարի կողմից հետապնդման, կյանքի և անվտանգության հետ կապված ռիսկը նվազ է: Բացի այդ, վերոգրյալ թիրախային խմբի կանայք որոշ դեպքերում ունենում են կայուն զբաղվածություն, ոսկ գործող ապաստարան տեղափոխվելու պարագայում՝ չեն կարող բաց ռեժիմով ելք ու մուտք ունենա և աշխատանքի գնան: Վերոգրյալ հանգամանքներով պայմանավորված՝ այս թիրախ խմբի կանայք, փաստացի կարիք են ունենում կարճաժամկետ կացարանի ապահովման, սակայն պետությունը չունի միջոցներ ռեսուրսներ իրենց ապահովելու կարճաժամկետ բաց ռեժիմով գործող կացարանով: 1.2.առկա խնդիրների առաջարկվող լուծումները Միջոցառման իրականացման շրջանակում շահագրգիռ գերատեսչությունների և ոլորտային գործընկեր հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության արդյունքում՝ կընդլայնվի ընտանիքում բռնության ենթարկված անձանց ապաստարանների քանակը և մատուցվող ծառայությունները: Կմշակվի և կներդրվի համալիր ծրագրեր, որոնք ուղղված կլինեն ընտանիքում բռնության ենթարկված անձանց վերաինտեգրմանը և սեփական կյանքի ինքնուրույն կազմակերպմանն ուղղված մեխանիզմների ներդրմանը: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

	Ընտանիքում բռնության ենթարկված անձանց ապաստարանների քանակի ավելացում և սոցիալական վերաինտեգրմանը և սեփական կյանքի ինքնուրույն կազմակերպմանն ուղղված մեխանիզմների ներդրման վրա՝ մատուցվող ծառայությունների ընդլայնված համակարգի առկայություն:
17	**<u>17.1. ՀՀ ժողովրդագրական իրավիճակի բարելավման նոր ռազմավարության և 2022-2026 թվականների գործողությունների ծրագրի նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ</u>** 1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Նախագիծը նպատակ ունի սահմանել ՀՀ ժողովրդագրական իրավիճակի բարելավման նոր ռազմավարությունը և դրանից բխող՝ 2022-2026 թվականների գործողությունների ծրագիրը՝ հիմք ընդունելով Սահմանադրության 86-րդ հոդվածը (Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են՝ ... 5) ծնելիության և բազմազավակության խթանումը) և ՀՀ կառավարության 2021 թ. օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 4-րդ՝ «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի 4.1 ենթաբաժինը (Կառավարությունը ձեռնամուխ է լինելու մշակելու ՀՀ ժողովրդագրական իրավիճակի բարելավման նոր ռազմավարություն և 2021-2026 թվականների գործողությունների ծրագիր): 1.1.կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները ՀՀ ժողովրդագրական իրավիճակի բարելավման նոր ռազմավարության և դրանից բխող՝ 2022-2026 թվականների գործողությունների ծրագրի ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության ներկա ժողովրդագրական իրավիճակով, որը, նախ և առաջ, կապված է ծնելիության ցածր մակարդակի հետ: Ծնելիության մակարդակի գործող ցուցանիշներով չի ապահովվում անգամ բնակչության պարզ վերարտադրություն, որի համար ծնելիության գործակիցը անհրաժեշտ է որ լինի 2.1 երեխա: Սակայն, միայն պարզ վերարտադրության հաղթահարմամբ (մեկ ընտանիքում 2-3 երեխա) հնարավոր չէ ապահովել ընդլայնված վերարտադրություն և հասնել ծնելիության մակարդակի էական բարձրացման, քանզի առաջիկա տարիներին ամուսնական տարիք կմտնի 2000-ական թթ. սկզբին ծնված ոչ բազմաքանակ սերունդը, որի վերարտադրողական ներուժը անհրաժեշտ է առավելագույն օգտագործել: Այսինքն, ժողովրդագրական կայունության հաստատման և պահպանման համար հարկավոր է ոչ միայն ապահովել պարզ, այլև ընդլայնված վերարտադրությունը, կտրուկ ավելացնել առնվազն 3 և ավելի երեխա ունեցող ընտանիքների թվաքանակը՝ վերջիններիս տալով որոշակի երաշխիքներ: 1.2.առկա խնդիրների առաջարկվող լուծումները «Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050»-ի «5. Բազմազավակ և բարեկեցիկ ընտանիք» բաժնի 5.1-ին կետին (բնակչության բնական հավելաճի բարձր տեմպ) համահունչ նախատեսվում է սահմանել ՀՀ ժողովրդագրական իրավիճակի բարելավման նոր ռազմավարությունը և դրանից բխող՝ 2022-2026 թվականների գործողությունների ծրագիրը: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Կսահմանվի ՀՀ ժողովրդագրական իրավիճակի բարելավման նոր ռազմավարությունը և դրանից բխող՝ 2022-2026 թվականների գործողությունների ծրագիրը:
	<u>17.2 «Պետական նպաստների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ</u> 1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Նախագիծը նպատակ ունի բարելավել ժողովրդագրական իրավիճակը՝ խնամքի նպաստ նշանակելով նաև մինչև 2 տարեկան երեխա խնամող և չաշխատող ծնողներին՝ հիմք ընդունելով Սահմանադրության 86-րդ հոդվածը (Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են՝ .... 5) ծնելիության .... խթանումը) և ՀՀ կառավարության 2021 թ. օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 4-րդ՝ «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի 4.1 ենթաբաժինը (Կընդլայնվի մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի շահառուների շրջանակը՝ ի հաշիվ չաշխատող մայրերի՝ անկախ նրանց հաշվառման (բնակության) վայրի): 1.1.կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները «Պետական նպաստների մասին» օրենքով սահմանված է մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի իրավունքը, նպաստի նշանակման և վճարման կարգը, ինչպես նաև խնամքի նպաստ ստանալու իրավունքը դադարեցնելու և վերականգնելու, խնամքի նպաստ վճարելը դադարեցնելու և վերսկսելու, չվճարված խնամքի նպաստի գումարը վճարելու հետ կապված հարաբերությունները: Համաձայն օրենքի՝ նպաստը նշանակվում և վճարվում է ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող ծնողին, ինչպես նաև գյուղական բնակավայրի հասցեով հաշվառված և փաստացի բնակվող ծնողին:

Նախորդ ժամանակահատվածում արձանագրված ժողովրդագրական իրավիճակի զարգացման բացասական միտումները մեղմելու և ժողովրդագրական իրավիճակը բարելավելու նպատակով առաջարկվում է խնամքի նպաստի իրավունք սահմանել նաև այն ընտանիքների համար, ովքեր չեն հանդիսանում վարձու աշխատող կամ գյուղաբնակ ծնող՝ մինչև երեխայի 2 տարին լրանալը:

1.2.առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Նախատեսվում է սահմանել, որ խնամքի նպաստի իրավունք ունի նաև երեխայի՝ ՀՀ բնակչության պետական ռեգիստրում հաշվառված ծնողը՝ մինչև երեխայի երկու տարեկանը լրանալը:

Ընդ որում, չաշխատող ծնողին խնամքի նպաստը նշանակվում և վճարվում է, անկախ ծնողին, որպես վարձու աշխատող, խնամքի նպաստ նշանակելու և վճարելու հանգամանքից:

Չաշխատող ծնողին խնամքի նպաստ նշանակելու համար հիմք են հանդիսանում բնակչության պետական ռեգիստրի տվյալները ծնողի և երեխայի հաշվառման (բնակության) վայրի վերաբերյալ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ չաշխատող մայրերին ևս հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածի համար տրվում է մայրության նպաստ, նախատեսվում է չաշխատող ծնողին խնամքի նպաստը նշանակել հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածի վերջին օրվան հաջորդող ամսվա 1-ից:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Միջոցառման արդյունքում ակնկալվում է 2023թ. հունվարի 1-ից ընդլայնել մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի շահառուների շրջանակը՝ ի հաշիվ չաշխատող մայրերի (2023թ. հունվարի 1-ին և դրանից հետո ծնված երեխաների խնամքի կապակցությամբ), անկախ նրանց հաշվառման (բնակության վայրի), ինչը կխթանի ծնելիությունը՝ հաստատուն հիմքեր և նախապայմաններ ձևավորելով բնակչության թվաքանակի հետագա կայուն աճն ապահովելու համար:

17.3. «Ընտանիքում 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ նոր ծնված երեխային դրամական աջակցություն նշանակելու և վճարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Նախագիծը նպատակ ունի բարելավել ժողովրդագրական իրավիճակը. ընտանիքում 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծնվելու կապակցությամբ նոր ծնված երեխային նշանակել և վճարել պետական նպաստ՝ ամսական 50000 դրամի չափով, մինչև երեխայի 6 տարեկանը, հիմք ընդունելով Սահմանադրության 86-րդ (Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են՝.... 5) ծնելիության և բազմազավակության խթանումը) և 146-րդ հոդվածները, ինչպես նաև ՀՀ կառավարության 2021 թ. օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 4-րդ՝ «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի 4.1 ենթաբաժինը (Ժողովրդագրական իրավիճակի բարելավման համատեքստում մշակվելու է օրենքի նախագիծ՝ հստակ ամրագրելով ծնունդների խրախուսումներն ու բազմազավակ ընտանիքներին տրամադրվող սոցիալական երաշխիքները, այդ թվում՝ ընտանիքներին 3-րդ և հաջորդ երեխաների համար մինչև 6 տարեկանը ամսական 50,000 դրամ ֆինանսական աջակցություն տրամադրելու ձևով):

1.1.կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

ՀՀ գործող իրավակարգավորումների համաձայն՝ երեխայի կարգաթվով պայմանավորված դրամական աջակցություն տրվում է միայն երեխայի ծննդյան դեպքում, որը միանվագ բնույթի է: Երեխայի ծննդյան միանվագ նպաստը տրվում է երեխայի ծնվելուց հետո 12 ամսվա ընթացքում դիմելու դեպքում: Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը պայմանավորված է նոր ծնված երեխայի կարգաթվով:

Ըստ էության, ժողովրդագրական իրավիճակի բարելավմանն ուղղված՝ պարբերական բնույթի դրամական աջակցություն՝ երեխայի կարգաթվով պայմանավորված ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ:

1.2.առկա խնդիրների առաջարկվող լուծումները

«Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050»-ի «5. Բազմազավակ և բարեկեցիկ ընտանիք» բաժնի 5.2-րդ կետին (երեք և ավելի զավակ ունեցող ընտանիքների բարեկեցության բարձր մակարդակ) համահունչ Նախատեսվում է ընտանիքում 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծնվելու կապակցությամբ նոր ծնված երեխային նշանակել և վճարել դրամական աջակցություն՝ ամսական 50000 դրամի չափով, մինչև երեխայի 6 տարեկանը լրանալու ամիսը՝ ներառյալ:

Նախատեսվում է նպաստը նշանակել, եթե ծնողը և երեխաները, այդ թվում՝ նոր ծնված երեխան, Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում հաշվառված են Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով և դիմելու օրվա դրությամբ գտնվում են Հայաստանի Հանրապետությունում:

Սահմանվելու են նաև աջակցության համար դիմելու ժամկետները, դիմելու կարգը երեխայի կարգաթիվը որոշելու առանձնահատկությունները, աջակցությունը նշանակելու ժամկետները, աջակցությունը մերժելու հիմքերը:

	Դրամական աջակցությունը վճարվելու է անկանխիկ եղանակով: Սահմանվելու են նաև աջակցության իրավունքի դադարեցման և վերականգնման հիմքերը, ինչպես նաև վճարման դադարեցման և վերականգնման հիմքերը: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Միջոցառման արդյունքում ակնկալվում է սահմանել դրամական աջակցության նոր տեսակ և 2022 թ. հունվարի 1-ից հետո ծնված երեխաների հաշվառմամբ ընտանիքներին մինչև 6 տարեկան 3-րդ և հաջորդ երեխաների համար ամսական կտրամադրվի 50,000 դրամ ֆինանսական աջակցություն, ինչը կխթանի ծնելիությունը՝ հաստատուն հիմքեր և նախապայմաններ ձևավորելով բնակչության թվաքանակի հետագա կայուն աճն ապահովելու համար:
	<u>17.4. «Գյուղաբնակ երիտասարդ և երեխա ունեցող ընտանիքներին աջակցելու պետական աջակցության 2023-2026 թվականների ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ</u> 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառումը նպատակ ունի սահմանել պետական ծրագրեր, որոնց շրջանակում պետական աջակցություն կտրամադրվի գյուղաբնակ երիտասարդ և երեխա ունեցող ընտանիքներին, հիմք ընդունելով Սահմանադրության 86-րդ (Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են՝ .... 5) ծնելիության և բազմազավակության խթանումը) և 146-րդ հոդվածները, ինչպես նաև ՀՀ կառավարության 2021 թ. օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի 4-րդ՝ «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի 4.6 ենթաբաժինը (Իրականացվելու են գյուղաբնակ երիտասարդ և երեխա ունեցող ընտանիքներին աջակցելու, այդ թվում՝ եկամտաստեղծ գործունեությանը միտված պետական աջակցության թիրախային ծրագրեր): 1.1.կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Հայաստանի Հանրապետության ներկա ժողովրդագրական իրավիճակից ելնելով՝ անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել գյուղական բնակավայրերում ծնելիության մակարդակի բարձրացման խնդրի լուծմանը, ինչը կնպաստի ժողովրդագրական կայունության հաստատմանը և պահպանմանը: 1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները Գյուղական բնակավայրերում ծնելիության մակարդակը բարձրացնելու համար, «Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050»-ի «5. Բազմազավակ և բարեկեցիկ ընտանիք» բաժնի 5.1-ին կետին (բնակչության բնական հավելաճի բարձր տեմպ) համահունչ առաջարկվում է ընդունել «Գյուղաբնակ երիտասարդ և երեխա ունեցող ընտանիքներին աջակցելու պետական աջակցության 2023-2026 թվականների ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումը: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը «Գյուղաբնակ երիտասարդ և երեխա ունեցող ընտանիքներին աջակցելու պետական աջակցության 2023-2026 թվականների ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշմամբ հստակ կսահմանվեն այն ծրագրերը, որոնք ուղղված կլինեն հատկապես գյուղական բնակավայրերում ժողովրդագրական վիճակի բարելավմանը:
18	**<u>18.1 «ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ</u>** 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառումը նպատակ ունի բարձրացնել կենսաթոշակառուներին և նպաստառուներին մատուցվող ծառայությունների որակը, ինչպես նաև օպտիմալացնել կենսաթոշակների և նպաստների նշանակման (վերահաշվարկման) գործընթացը, հիմք ընդունելով Կառավարության ծրագրի 4.6-րդ կետը (Կենսաթոշակառուներին և նպաստառուներին մատուցվող ծառայությունների որակը բարձրացնելու, ինչպես նաև կենսաթոշակների և նպաստների նշանակման, վճարման գործընթացներն օպտիմալացնելու նպատակով կկատարելագործվի օրենսդրությունը) և «Պետական կենսաթոշակների մասին» օրենքի 33-րդ կետի 9-րդ մասը (... կենսաթոշակ նշանակելու (վերահաշվարկելու) ... կարգը սահմանում է Կառավարությունը): 1.1.կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Կենսաթոշակ վերահաշվարկելու կարգը «Պետական կենսաթոշակների մասին» օրենքի 33-րդ կետի 9-րդ մասի համաձայն՝ սահմանված է ՀՀ կառավարության 2011 թ. մայիսի 5-ի N 665-Ն որոշմամբ: Գործող իրավակարգավորումների համաձայն՝ կենսաթոշակը վերահաշվարկվում է կենսաթոշակառուի՝ անձամբ տարածքային բաժին ներկայացրած դիմումի և անհրաժեշտ փաստաթղթերի հիման վրա: Կենսաթոշակի վճարման գործընթացներն օպտիմալացնելու նպատակով առաջարկվում է ներդնել առցանց դիմումի հիման վրա կենսաթոշակը վերահաշվարկելու գործընթաց: 1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Հաշվի առնելով վերը նշվածը՝ «Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050»-ի «3. Արդյունավետ և հաշվետու կառավարում» բաժնի 3.2-րդ կետին (հանրային ծառայությունների հանրամատչելիություն և բարձր որակ) համահունչ նախատեսվում է վերակազմակերպել կենսաթոշակների վերահաշվարկման գործող ընթացակարգերը:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Միջոցառման արդյունքում ակնկալվում է կենսաթոշակը վերահաշվարկել նաև առցանց ներկայացված դիմումի հիման վրա՝ օպտիմալացնելով կենսաթոշակների վերահաշվարկման գործընթացը:

<u>18.2 «ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 670-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ</u>

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառումը նպատակ ունի բարձրացնել կենսաթոշակառուներին և նպաստառուներին մատուցվող ծառայությունների որակը, ինչպես նաև օպտիմալացնել կենսաթոշակների և նպաստների վճարման գործընթացը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2021 թ. օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի 4.6-րդ ենթաբաժնի 27-րդ կետը (Կենսաթոշակառուներին և նպաստառուներին մատուցվող ծառայությունների որակը բարձրացնելու, ինչպես նաև կենսաթոշակների և նպաստների նշանակման, վճարման գործընթացներն օպտիմալացնելու նպատակով կկատարելագործվի օրենսդրությունը) և «Պետական կենսաթոշակների մասին» օրենքի 33-րդ կետի 9-րդ մասը (.... կենսաթոշակ վճարելու ... կարգը սահմանում է Կառավարությունը):

1.1.կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Կենսաթոշակ վճարելու կարգը «Պետական կենսաթոշակների մասին» օրենքի 33-րդ կետի 9-րդ մասի համաձայն՝ սահմանված է ՀՀ կառավարության 2011 թ. մայիսի 5-ի N 670-Ն որոշմամբ:

Գործող իրավակարգավորումների համաձայն՝ կենսաթոշակ (նպաստ) վճարելու եղանակը կամ կենսաթոշակ (նպաստ) վճարող կազմակերպությունը ընտրվում է կենսաթոշակառուի (նպաստառուի)՝ անձամբ տարածքային բաժին ներկայացրած դիմումի և անհրաժեշտ փաստաթղթերի հիման վրա:

Կենսաթոշակի վճարման գործընթացներն օպտիմալացնելու նպատակով առաջարկվում է կենսաթոշակ (նպաստ) վճարելու եղանակը կամ կենսաթոշակ (նպաստ) վճարող կազմակերպությունը ընտրելու դիմումը աշխատող կենսաթոշակառուի կողմից առցանց ներկայացնելու հնարավորություն:

1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Հաշվի առնելով վերը նշվածը՝ նախատեսվում է վերակազմակերպել կենսաթոշակ (նպաստ) վճարելու եղանակը և վճարող կազմակերպության ընտրության վերաբերյալ որոշումներ կայացնելու գործող ընթացակարգերը:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Միջոցառման արդյունքում ակնկալվում է օպտիմալացնել կենսաթոշակների և նպաստների վճարման գործընթացը՝ ընձեռելով կենսաթոշակ (նպաստ) վճարելու եղանակը կամ կենսաթոշակ (նպաստ) վճարող կազմակերպությունը ընտրելու դիմումը նաև առցանց եղանակով ներկայացնելու հնարավորություն:

<u>18.3 ՀՀ պետական բյուջե վերականգնված՝ սխալմամբ (ՀՀ օրենսդրության խախտմամբ) ավել վճարված կենսաթոշակների և նպաստների գումարների հաշվառման ենթահամակարգի գործարկում</u>

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառումը նպատակ ունի բարձրացնել կենսաթոշակառուներին և նպաստառուներին մատուցվող ծառայությունների որակը, ինչպես նաև օպտիմալացնել կենսաթոշակների և նպաստների նշանակման, վճարման գործընթացները, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2021 թ. օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի 4.6-րդ ենթաբաժնի 27-րդ կետը (Կենսաթոշակառուներին և նպաստառուներին մատուցվող ծառայությունների որակը բարձրացնելու, ինչպես նաև կենսաթոշակների և նպաստների նշանակման, վճարման գործընթացներն օպտիմալացնելու նպատակով կկատարելագործվի օրենսդրությունը) և «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 22.1-ին մասը (Միասնական սոցիալական ծառայությունը 11) վարում է շտեմարանը...):

1.1.կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Ներկայումս կենսաթոշակների, նպաստների նշանակումն ու վճարումն իրականացվում է «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգի միջոցով՝ պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանում առկա տեղեկատվության հիման վրա:

Իրավակիրառ պրակտիկայում առկա են դեպքեր, երբ կենսաթոշակները և նպաստները վճարվում են սխալմամբ (ՀՀ օրենսդրության խախտմամբ):

Սխալմամբ (ՀՀ օրենսդրության խախտմամբ) ավել վճարված կենսաթոշակների և նպաստների հետգանձման (պետական բյուջե վերադարձման) կարգը սահմանված է օրենսդրությամբ:

Պետական բյուջե վերականգնվող գումարների հաշվառումը ներկայումս ավտոմատացված չէ:

Ոլորտի կառավարման համակարգի արդյունավետությունը բարձրացնելու համար նպատակահարմար է ներդնել սխալմամբ (ՀՀ օրենսդրության խախտմամբ) ավել վճարված կենսաթոշակների և նպաստների գումարների հաշվառման ենթահամակարգ:

1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները (միջոցառումը համակատարող ունենալու դեպքում նշելով նաև համակատարողի կողմից համապատասխան միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները)

Հաշվի առնելով վերը նշվածը՝ «Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050»-ի «3. Արդյունավետ և հաշվետու կառավարում» բաժնի 3.2-րդ կետին (հանրային ծառայությունների հանրամատչելիություն և բարձր որակ) համահունչ նախատեսվում է մշակել և ներդնել սխալմամբ (ՀՀ օրենսդրության խախտմամբ) ավել վճարված կենսաթոշակների և նպաստների գումարների հաշվառման ենթահամակարգ:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Միջոցառման արդյունքում ակնկալվում է բարձրացնել կենսաթոշակառուներին և նպաստառուներին մատուցվող ծառայությունների որակը՝ բարելավելով կենսաթոշակային ապահովության, պետական նպաստների բնագավառի կառավարման համակարգի արդյունավետությունը:

<u>18.4 «Պետական նպաստների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքներին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշումն ընդունված է</u>

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Նախագիծը նպատակ ունի բարելավել մայրության նպաստի նշանակման և վճարման գործընթացը և ապահովել մայրության նպաստի հասցեականությունը, հիմք ընդունելով Սահմանադրության 83-րդ հոդվածը (Յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի մայրության, ... հիվանդության... սոցիալական ապահովության իրավունք) և ՀՀ կառավարության 2021 թ. օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի Կառավարության ծրագրի 4.6-րդ կետը ենթաբաժնի 27-րդ կետ (Կենսաթոշակառուներին և նպաստառուներին մատուցվող ծառայությունների որակը բարձրացնելու, ինչպես նաև կենսաթոշակների և նպաստների նշանակման, վճարման գործընթացներն օպտիմալացնելու նպատակով կկատարելագործվի օրենսդրությունը):

1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Գործող իրավակարգավորումների համաձայն՝ մայրության նպաստն ամբողջությամբ վճարվում է պետական բյուջեի միջոցների հաշվին՝ հիմք ընդունելով ներկայացված անաշխատունակության թերթիկը:

Ընդ որում, «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» օրենքի համաձայն՝ վարձու աշխատողի մայրության նպաստը նշանակում, հաշվարկում և վճարում է գործատուն: Նպաստի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից վճարման ենթակա գումարները գործատուն վճարում է տվյալ ամսվա համար հաշվարկված եկամտային հարկի հաշվին: Եթե տվյալ ամսվա համար հաշվարկված եկամտային հարկը բավարար չէ նպաստի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից վճարման ենթակա գումարները վճարելու համար, ապա գործատուն նպաստի պակասող մասը վճարում է իր միջոցներից, որը փոխհատուցում է լիազոր մարմինը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով գործատուի կողմից հարկային մարմին ներկայացրած տեղեկանքի հիման վրա հարկային մարմնի հաստատած տեղեկանքը լիազոր մարմին ներկայացնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

«Պետական նպաստների մասին» օրենքի համաձայն՝ չախատող անձանց մայրության նպաստը նշանակում և վճարում է Միասնական սոցիալական ծառայությունը՝ ներկայացված անաշխատունակության թերթիկի հիման վրա:

Հարկ է նկատի ունենալ, որ հղիության և ծննդաբերության դեպքում անաշխատունակության թերթիկը տրամադրում է այն բժշկական կազմակերպությունը, որտեղ հղին կանգնած է հաշվառման:

Այսպիսով, ստացվում է մի կողմից պետական բյուջեի միջոցներից տրվող գումարները կառավարվում են գործատուի կողմից և հնարավոր են որոշակի չարաշահումներ, մյուս կողմից՝ ինչպես գործատուի, այնպես էլ հղի կնոջ համար մայրության նպաստի նշանակման գործընթացում բավականին բարդ է վարչարարությունը:

1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Նախատեսվում է, որ էլեկտրոնային առողջապահության համակարգից ստացված՝ ժամանակավոր անաշխատունակության թերթիկում առկա տվյալների հիման վրա մայրության նպաստը պետք է նշանակի և վճարի պետական մարմին՝ Միասնական սոցիալական ծառայությունը, ինչի շնորհիվ կապահովվի առավել ճշգրիտ հաշվետվողականությունը, ինչպես նաև նպաստի հասցեականությունը:

Բացի այդ, մայրության նպաստի նշանակման համար անհրաժեշտ տվյալները էլեկտրոնային առողջապահության համակարգից ինքնաշխատ կերպով ստանալու դեպքում կբարելավվի նպաստի նշանակման

	գործընթացի վարչարարությունը, և հնարավոր կլինի նպաստ նշանակել նաև առցանց՝ առանց փաստաթուղթ ներկայացնելու: Միջոցառումը հնարավոր է իրականացնել բացառապես Առողջապահության նախարարության կողմից վարվող՝ էլեկտրոնային առողջապահության համակարգի կիրարկմամբ այդ համակարգից տվյալներ ստսնալու դեպքում: 2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Միջոցառման արդյունքում ակնկալվում է բարելավել մայրության նպաստի նշանակման գործընթացը և ապահովել հասցեականությունը՝ էլեկտրոնային առողջապահության համակարգի տվյալների հիման վրա մայրության նպաստը կնշանակի և կվճարի Միասնական սոցիալական ծառայությունը:
19	**<u>19.1 «ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N 1734-Ն, 2013 թվականի դեկտեմբերի 26-ի N 1489-Ն և 2015 թվականի դեկտեմբերի 29-ի N 1566-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումն ընդունված է</u>** 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառումը նպատակ ունի ապահովել կենսաթոշակների և նպաստների չափերի պարբերական ավելացումը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2021 թ. օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի 4.6-րդ ենթաբաժնի 2-րդ պարբերությունը (Կառավարությունը քայլեր է ձեռնարկելու մինչև 2026 թվականը նվազագույն կենսաթոշակի և կենսաթոշակի միջին չափերը հավասարեցնել, համապատասխանաբար՝ պարենային և սպառողական զամբյուղների արժեքներին, վերացնել ծայրահեղ աղքատությունը) և «Պետական կենսաթոշակների մասին» օրենքի 15-րդ, 16-րդ, 21-րդ և 23-րդ հոդվածները, «Պետական նպաստների մասին» օրենքի 6-րդ հոդվածը: 1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները «Պետական կենսաթոշակների մասին» օրենքի համաձայն՝ աշխատանքային կենսաթոշակի չափը հաշվարկվում է հիմնական կենսաթոշակի չափից և աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքից (հաշվի առնելով աշխատանքային ստաժի տևողությունը): Զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկվում է հիմնական կենսաթոշակի չափից և զինվորական ստաժի մեկ տարվա արժեքից (հաշվի առնելով զինվորական ստաժի տևողությունը): Աշխատանքային և զինվորական կենսաթոշակների չափերը հաշվարկելու համար հիմնական կենսաթոշակների չափերը, նվազագույն կենսաթոշակի չափը, աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը, զինվորական ծառայության ստաժի մեկ տարվա արժեքը, ինչպես նաև՝ օրենքի 21-րդ և 23-րդ հոդվածներով սահմանված դեպքերում կենսաթոշակների չափերը սահմանված են ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N 1734-Ն որոշմամբ: «Պետական նպաստների մասին» օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 26-ի N 1489-Ն որոշմամբ սահմանված են ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների չափերը, իսկ 2015 թվականի դեկտեմբերի 29-ի N 1566-Ն որոշմամբ՝ մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի չափը: Ըստ այդմ, կառավարության ծրագրի վերը նշված դրույթի իրականացումն ապահովելու՝ կենսաթոշակների և նպաստների չափերը բարձրացնելու համար, անհրաժեշտ է փոփոխություններ կատարել ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N 1734-Ն և 2013 թվականի դեկտեմբերի 26-ի N 1489-Ն որոշումներում՝ բարձրացնելով նվազագույն կենսաթոշակի չափը, հիմնական կենսաթոշակների չափերը, նվազագույն կենսաթոշակի չափը, աշխատանքային և զինվորական ծառայության ստաժների մեկ տարվա արժեքները, նպաստների չափերը: Ընդ որում, նախատեսվում է տարբերակել ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների չափերը, իսկ հաշմանդամության նպաստի դեպքում՝ նաև հաշվի առնել հաշմանդամության խումբը: 1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները Պարենային զամբյուղի ամսական արժեքը 2021թ. II եռամսյակի միջին ընթացիկ գներով կազմել է 31900 դրամ, նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը՝ 59015 դրամ: Կառավարության ծրագրի 4.6-րդ կետի համաձայն՝ Կառավարությունը քայլեր է ձեռնարկելու մինչև 2026 թվականը նվազագույն կենսաթոշակի և կենսաթոշակի միջին չափերը հավասարեցնել, համապատասխանաբար՝ պարենային և սպառողական զամբյուղների արժեքներին, վերացնել ծայրահեղ աղքատությունը: Կառավարության ծրագրի 4.6-րդ կետի համաձայն՝ Կառավարությունը քայլեր է ձեռնարկելու մինչև 2026 թվականը նվազագույն կենսաթոշակի և կենսաթոշակի միջին չափերը հավասարեցնել, համապատասխանաբար՝ պարենային և սպառողական զամբյուղների արժեքներին, վերացնել ծայրահեղ աղքատությունը: 1)3 տոկոս միջին տարեկան գնաճի դեպքում 2026թ. պարենային զամբյուղի ամսական արժեքը կկազմի 36981 դրամ, նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը՝ 68415 դրամ: Ըստ այդմ, նախնական հաշվարկներով, անհրաժեշտ է 2022-2026թթ. ապահովել կենսաթոշակների և նպաստների չափերի այնպիսի ավելացումներ, որ 2026թ. միջին կենսաթոշակը կազմի 68000 դրամ, նվազագույն կենսաթոշակը և նպաստները՝ 37000 դրամ: Սա նշանակում է, որ աշխատանքային կենսաթոշակների միջին ամսական չափը 2021թ. նկատմամբ 2026թ. պետք է

	ավելանա ավելի քան 24500 դրամով (68000-43500) կամ 56 տոկոսով (68000/43500): Նվազագույն կենսաթոշակը և նպաստների չափը 2021թ. նկատմամբ 2026թ. պետք է ավելանա ավելի քան 10500 դրամով (37000-26500) կամ 40 տոկոսով (37000/26500): Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ 2022-2024թթ. ՄԺԾԾ-ով կենսաթոշակային ոլորտի գծով նախատեսված ծախսերը չեն կարող ապահովել նշված ավելացումների տարեկան չափը, նախատեսվում է, որ կենսաթոշակների և նպաստների ավելացումը կկատարվի 4 տարվա ընթացքում՝ 2023-2026թթ.: Կենսաթոշակների և պետական նպաստների չափերի ավելացումները հնարավոր են համապատասխան տարվա պետական բյուջեով անհրաժեշտ միջոցներ նախատեսելու դեպքում: 2)Պարենային զամբյուղի ամսական արժեքը 2022 թ. II եռամսյակի միջին ընթացիկ գներով կազմել է 39066.0 դրամ, նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը՝ 72272.1 դրամ (մեկ մեծահասակի հաշվով, մեկ ամսում սպառված սննդամթերքի արժեքը՝ հաշվարկված Համաշխարհային բանկի մեթոդաբանությամբ՝ ըստ ԱՐՄՍՏԱՏ-ի կողմից տնային տնտեսություններում իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքների հիման վրա փաստացի ձևավորված սպառողական զամբյուղի) կամ 44431.3 դրամ և 82198.0 դրամ (հաշվարկված ԱՐՄՍՏԱՏ-ի կողմից, ըստ Առողջապահության նախարարության կողմից մշակված սննդամթերքի կազմի, կառուցվածքի և էներգետիկայի): 3)2023 թ. 3 տոկոս միջին տարեկան գնաճի դեպքում 2023թ. պարենային զամբյուղի ամսական արժեքը կկազմի 40238 դրամ, նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը՝ 74440 դրամ (հաշվարկված՝ Համաշխարհային բանկի մեթոդաբանությամբ՝ ըստ ԱՐՄՍՏԱՏ-ի կողմից տնային տնտեսություններում իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքների հիման վրա փաստացի ձևավորված սպառողական զամբյուղի) կամ 45764 դրամ և 84664 դրամ (հաշվարկված ԱՐՄՍՏԱՏ-ի կողմից, ըստ Առողջապահության նախարարության կողմից մշակված սննդամթերքի կազմի, կառուցվածքի և էներգետիկայի): Ըստ այդմ, 2026թ համար ծրագրային ցուցանիշի հասանելիությունն ապահովելու համար անհրաժեշտ է 2023թթ. ապահովել կենսաթոշակների և նպաստների չափերի այնպիսի ավելացումներ, որ 2023թ. միջին կենսաթոշակը կազմի շուրջ 50920 դրամ, նվազագույն կենսաթոշակը և նպաստները՝ շուրջ 34318 դրամ (հաշվարկված՝ Համաշխարհային բանկի մեթոդաբանությամբ՝ ըստ ԱՐՄՍՏԱՏ-ի կողմից տնային տնտեսություններում իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքների հիման վրա փաստացի ձևավորված սպառողական զամբյուղի) կամ 52574 դրամ, նվազագույն կենսաթոշակը և նպաստները՝ շուրջ 35424 դրամ: 4) 2024 թ. 3 տոկոս միջին տարեկան գնաճի դեպքում 2024թ. պարենային զամբյուղի ամսական արժեքը կկազմի 41445 դրամ, նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը՝ 76673 դրամ (հաշվարկված՝ Համաշխարհային բանկի մեթոդաբանությամբ՝ ըստ ԱՐՄՍՏԱՏ-ի կողմից տնային տնտեսություններում իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքների հիման վրա փաստացի ձևավորված սպառողական զամբյուղի) կամ 47137 դրամ և 87204 դրամ (հաշվարկված ԱՐՄՍՏԱՏ-ի կողմից, ըստ Առողջապահության նախարարության կողմից մշակված սննդամթերքի կազմի, կառուցվածքի և էներգետիկայի): Ըստ այդմ, 2026թ համար ծրագրային ցուցանիշի հասանելիությունն ապահովելու համար անհրաժեշտ է 2024թ. ապահովել կենսաթոշակների և նպաստների չափերի այնպիսի ավելացումներ, որ 2024թ. միջին կենսաթոշակը կազմի շուրջ 59576 դրամ, նվազագույն կենսաթոշակը և նպաստները՝ շուրջ 37269 դրամ (հաշվարկված՝ Համաշխարհային բանկի մեթոդաբանությամբ՝ ըստ ԱՐՄՍՏԱՏ-ի կողմից տնային տնտեսություններում իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքների հիման վրա փաստացի ձևավորված սպառողական զամբյուղի) կամ 63509 դրամ, նվազագույն կենսաթոշակը և նպաստները՝ շուրջ 39710 դրամ: **5)** 2025թ. 3 տոկոս միջին տարեկան գնաճի դեպքում 2025թ. պարենային զամբյուղի ամսական արժեքը կկազմի 42688 դրամ, նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը՝ 78974 դրամ (հաշվարկված՝ Համաշխարհային բանկի մեթոդաբանությամբ՝ ըստ ԱՐՄՍՏԱՏ-ի կողմից տնային տնտեսություններում իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքների հիման վրա փաստացի ձևավորված սպառողական զամբյուղի) կամ 48551 դրամ և 89820 դրամ (հաշվարկված ԱՐՄՍՏԱՏ-ի կողմից, ըստ Առողջապահության նախարարության կողմից մշակված սննդամթերքի կազմի, կառուցվածքի և էներգետիկայի): Ըստ այդմ, 2026թ համար ծրագրային ցուցանիշի հասանելիությունն ապահովելու համար անհրաժեշտ է 2025թթ. ապահովել կենսաթոշակների և նպաստների չափերի այնպիսի ավելացումներ, որ 2025թ. միջին կենսաթոշակը կազմի շուրջ 69704 դրամ, նվազագույն կենսաթոշակը և նպաստները՝ շուրջ 40474 դրամ (հաշվարկված՝ Համաշխարհային բանկի մեթոդաբանությամբ՝ ըստ ԱՐՄՍՏԱՏ-ի կողմից տնային տնտեսություններում իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքների հիման վրա փաստացի ձևավորված սպառողական զամբյուղի) կամ 76719 դրամ, նվազագույն կենսաթոշակը և նպաստները՝ շուրջ 44515 դրամ:

	6) 2026թ. 3 տոկոս միջին տարեկան գնաճի դեպքում 2026թ. պարենային զամբյուղի ամսական արժեքը կկազմի 43969 դրամ, նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը՝ 81343 դրամ (հաշվարկված՝ Համաշխարհային բանկի մեթոդաբանությամբ՝ ըստ ԱՐՄՍՏԱՏ-ի կողմից տնային տնտեսություններում իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքների հիման վրա փաստացի ձևավորված սպառողական զամբյուղի) կամ 50008 դրամ և 92515 դրամ (հաշվարկված ԱՐՄՍՏԱՏ-ի կողմից, ըստ Առողջապահության նախարարության կողմից մշակված սննդամթերքի կազմի, կառուցվածքի և էներգետիկայի): Ըստ այդմ, 2026թ. համար ծրագրային ցուցանիշի հասանելիությունն ապահովելու համար անհրաժեշտ է ապահովել կենսաթոշակների և նպաստների չափերի այնպիսի ավելացումներ, որ 2026թ. միջին կենսաթոշակը կազմի շուրջ 81554 դրամ, նվազագույն կենսաթոշակը և նպաստները՝ շուրջ 43955 դրամ (հաշվարկված՝ Համաշխարհային բանկի մեթոդաբանությամբ՝ ըստ ԱՐՄՍՏԱՏ-ի կողմից տնային տնտեսություններում իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքների հիման վրա փաստացի ձևավորված սպառողական զամբյուղի) կամ 92676 դրամ, նվազագույն կենսաթոշակը և նպաստները՝ շուրջ 49901 դրամ: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Միջոցառման արդյունքում ակնկալվում է 2026թ. ապահովել 2021թ. նկատմամբ կենսաթոշակների միջին չափի 56 տոկոս աճ՝ որպես կենսաթոշակի միջին ամսական չափի թիրախ դիտարկելով նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը: Կավելանան նվազագույն կենսաթոշակի և նպաստների չափերը՝ որպես թիրախ դիտարկելով պարենային սպառողական զամբյուղի արժեքը: Միջոցառման արդյունքում ակնկալվում է 2021–2025թթ. ապահովել կենսաթոշակների միջին չափի և կենսաթոշակի նվազագույն չափի այնպիսի աճ, որը 2023-2026թթ. երեք տոկոս միջին տարեկան գնաճի դեպքում 2026թ. կապահովի թիրախային ցուցանիշների հասանելիությունը:
20	**<u>20.1 «Պետական կենսաթոշակների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ</u>** 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառումը նպատակ ունի բարելավել զինվորական կենսաթոշակների չափերի պայմանները՝ հիմք ընդունելով Սահմանադրության 83-րդ կետը (Յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի հաշմանդամության, խնամքի կարիք ունենալու, կերակրողին կորցնելու, ծերության, աշխատանքը կորցնելու և այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք) և ՀՀ կառավարության 2021 թ. օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի 1-ին՝ «Անվտանգություն և արտաքին քաղաքականություն» բաժնի 1.3 ենթաբաժինը (Կառավարության ուշադրության կենտրոնում մշտապես եղել և լինելու է զինծառայողների և նրանց ընտանիքների սոցիալական պաշտպանության բարձրացումը, ուստի Կառավարությունը մեծացնելու է զինծառայողների նյութական և սոցիալական ապահովման երաշխիքները): ի հաշիվ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում նախատեսվող փոփոխությունների, որոնց ընդունման դեպքում կսահմանվեն նոր դրույքաչափեր: 1.1.կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Զինվորական կենսաթոշակների հաշվարկման կարգը սահմանված է «Պետական կենսաթոշակների մասին» օրենքով: Գործող իրավակարգավորումների համաձայն՝ զինվորական կենսաթոշակը հաշվարկվում է այդ թվում՝ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված գործակցի և զինծառայության ստաժի հաշվառմամբ: Ըստ այդմ, օրեսդրությամբ զինծառայողի վարձատրության համակարգը վերանայելու դեպքում հարկ կլինի անդրադառնալ նաև զինվորական կենսաթոշակի հաշվարկման կարգին: 1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները Հաշվի առնելով վերը նշվածը՝ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» և «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքներում փոփոխություններ կատարելու և զինծառայողների վարձատրության համակարգը վերանայելու դեպքում նախատեսվում է փոփոխություններ կատարել նաև «Պետական կենսաթոշակների մասին» օրեքում: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Միջոցառման արդյունքում ակնկալվում է վերանայել զինվորական կենսաթոշակի հաշվարկման կարգը՝ պայմանավորված զինծառայողների վարձատրության համակարգի փոփոխությամբ:
	<u>21.1 «Նախկինում վերցված ու չմարված գյուղատնտեսական վարկերի պատճառով վատ վարկային</u>

	<u>պատմություն ունեցող անձանց վարկային պատմությունների բարելավման նպատակով խորհրդատվության</u> **<u>տրամադրման ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ</u>** <u>1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը</u> Հանրապետությունում գյուղատնտեսական վարկեր ունեցող անձանց մեջ մեծ թիվ են կազմում այն անձինք, որոնք նախկինում վերցված ու չմարված գյուղատնտեսական վարկերի պատճառով ունեն վատ վարկային պատմություն, ինչը հնարավորություն չի տալիս նոր վարկեր ձեռքբերել և զարգացնել սեփական գյուղացիական տնտեսությունները: ՀՀ կառավարության որոշման նախագծի նպատակն է ունենալ խորհրդատվության տրամադրման ծրագիր՝ վատ վարկային պատմություն ունեցող անձանց վարկային պատմությունների բարելավման նպատակով: <u>1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները</u> Նախկինում վերցված ու չմարված գյուղատնտեսական վարկերի պատճառով վատ վարկային պատմություն ունեցող անձինք՝ չկարողանալով նոր վարկեր ձեռք բերել, հնարավորություն չունեն զարգացնել իրենց գյուղացիական տնտեսությունները: <u>1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները</u> Խորհրդատվության տրամադրման ծրագիրը կառաջարկի լուծումներ վատ վարկային պատմություն ունեցող անձանց, որոնք կկարողանան ձեռք բերել նոր վարկեր և զարգացնել իրենց գյուղացիական տնտեսությունները: <u>2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը</u> Նախկինում վերցված ու չմարված գյուղատնտե-սական վարկերի պատճառով վատ վարկային պատմություն ունեցող անձանց վարկային պատմությունների բարելավման նպատակով խորհրդատվության տրամադրման ծրագրի առկայություն:
22	**<u>22.1 Սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի և մատուցվող ծառայությունների մշտադիտարկման և գնահատման (ՄԳ) համակարգի ներդրում</u>** <u>1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը</u> Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ ՀՀ պետական բյուջեի ծախսերի շուրջ 30 տոկոսն ուղղված է սոցիալական պաշտպանության ոլորտին, ուստի խիստ կարևորվում է ճիշտ գնահատել իրականացվող պետական բյուջե ներառված ծրագրերի արդյունավետությունը և օգտավետությունը, իսկ դրա իրականացման համար անհրաժեշտ է մշտադիտարկման և գնահատման ամբողջական համակարգի առկայություն, որի նպատակն է Սոցիալական պաշտպանության ոլորտում վարվող քաղաքականության առաջնահերթությունները սահմանելու համար առկա խնդիրների բացահայտումը, իրականացվող ծրագրերի արդյունավետության և հասցեականության բարձրացումը, շահառուների և այլ շահագրգիռ կողմերի ծրագրերից բավարարվածության աստիճանի գնահատումը, ՀՀ պետական բյուջեի միջոցների նպատակային օգտագործումը և կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը : 1.1. կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները ՀՀ պետական բյուջեի ծախսերի շուրջ 30 տոկոսն ուղղված է սոցիալական պաշտպանության ոլորտին, ուստի խիստ կարևորվում է ճիշտ գնահատել իրականացվող պետական բյուջե ներառված ծրագրերի արդյունավետությունը և օգտավետությունը, դրանց ծախսարդյունավետությունը, որի արդյունքում որոշել ծրագրի/միջացառման անհրաժեշտությունը: 1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Առկա խնդիրների լուծման համար անհրաժեշտ է ներդնել իրականացվող ծրագրերի և մատուցվող ծառայությունների մշտադիտարկման և գնահատման (ՄԳ) համակարգ: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի և մատուցվող ծառայությունների մշտադիտարկման և գնահատման համակարգի ներդրումը հնարավորություն կընձեռի համապատասխան բնագավառներում իրականացնել մոնիթորինգ և գնահատում, որի արդյունքներով ներկայացված առաջար-կությունների հիման վրա լրամշակել ծրագրերի կիրարկումն ապահովող իրավական ակտերը, բարձրացնել այդ ծրագրերի արդյունավետությունն ու հասցեականությունը, ապահովել շահառուների գնահատված կարիքներին համապատասխան ծառայությունների մատուցումը, ինչպես նաև կանխել հնարավոր կոռուպցիոն ռիսկերը: Նախանշվում է, որ մինչև 2026թ. ավարտը սոցիալական պաշտպանության ոլորտի՝ ՀՀ պետական բյուջե ներառված բոլոր ծրագրերը և նրանցում ընդգրկված միջոցառումները կգնահատվեն:
23	**<u>23.1 «Հայաստանի Հանրապետության միգրացիոն քաղաքականության՝ ինտեգրման և վերաինտեգրման խնդիրների կարգավորման 2025-2035 թվականների ռազմավարությունը և դրանից բխող 2025-2026</u>**

	<u>թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ</u> 1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման իրականացման համար հիմք է «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածը: Դա բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 2021թ.-ի օգոստոսի 26-ի № ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021- 2026թթ ծրագրի 4.2 -րդ բաժնով նախատեսված հանձնառություններից: Միջոցառման իրականացման նպատակը առաջիկա տասնամյակի համար ինտեգրման և վերաինտեգրման քաղաքականության միասնականացումն ու հստակեցումն է, ինչպես նաև առաջիկա տարիների համար դրա իրականացման ճանապարհային քարտեզի ընդունումը: Միջոցառման իրականացման համար հիմք է «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ մասը և 34-րդ հոդվածի 10-րդ մասը: **1.1** կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Ներկայումս գոյություն չունի Հայաստանում վերադարձող միգրանտների վերաինտեգրմանն ուղղված համապարփակ քաղաքականություն, ինչպես նաև չկան իրավասու պետական մարմինների համար սահմանված հստակ գործառույթներ: Մյուս կողմից վերջին տարիներին նկատվում է Հայաստանում տարբեր նպատակներով բնակություն հաստատող օտարերկրացիների թվի աճ, և դրանով իսկ մեր պետությունը բացառապես էմիգրանտների ծագման երկրից վերածվում է նաև իմիգրանտներ ընդունող երկրի: Այս անձանց խնդիրներին լուծում տալու նպատակով ՀՀ կառավարությունը 2016թ. հուլիսի 21-ի N 28 արձանագրային որոշմամբ ընդունել է ՀՀ-ում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց, ինչպես նաև երկրաժամակետ միգրանտների ինտեգրման քաղաքականության հայեցակարգը, 2017թ. փետրվարի 23-ի N 8 արձանագրային որոշմամբ էլ հաստատել է հայեցակարգի կիրարկմանն ուղղված գործողությունների ծրագիրը: Սակայն այս ծրագրի շրջանակը սահմանափակ է ինչպես թիրախ խմբերի (փախստականներ, ապաստան հայցողներ), այնպես էլ վերաինտեգրման աջակցության (հայոց լեզվի ուսուցում, քաղաքացիական կողմնորոշման դասընթացների կազմակերպում, կացարանի խնդրի լուծում) տեսանկյունից: **1.2** առկա խնդիրների առաջարկվող լուծումները «Հայաստանի Հանրապետության միգրացիոն քաղաքականության՝ ինտեգրման և վերաինտեգրման խնդիրների կարգավորման 2021-2031 թվականների ռազմավարությունը և դրանից բխող 2021-2025 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը 2021թ. հունիսին ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ և ներկայումս գտնվում է լրամշակման փուլում: Հաշվի առնելով այն հանգամանքը որ նախագիծը դեռևս քննարկման փուլում է, ՀՀ վարչապետի աշխատակազմից առաջարկվել է վերանայել ռազմավարության և գործողությունների ծրագրի նախագծերի գործողության ժամկետները՝ 2021-2031թթ..-ի փոխարեն սահմանելով 2025-2035թթ և 2021-2025թթ. փոխարեն 2025-2026թթ համապատասխանաբար: ՀՀ վարչապետի 17.01.2023թ. 02/08.3/1442-2023 հանձնարարականի կապակցությամբ 16.12.2022թ. N ՀՕ-457-Ն օրենքով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում կատարված փոփոխությունների և լրացումների արդյունքում Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած փախստականների, տեղահանվածների, երկարաժամկետ միգրանտների և հարկադիր վերադարձող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ինտեգրման կամ վերաինտեգրման ոլորտներում Կառավարության քաղաքականության մշակման ու իրականացման լիազորությունները վերապահվել են Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը «Հայաստանի Հանրապետության միգրացիոն քաղաքականության՝ ինտեգրման և վերաինտեգրման խնդիրների կարգավորման 2025-2035 թվականների ռազմավարությունը և դրանից բխող 2025-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումն ընդունված է:
24.	**<u>24. 1 ՀՀ վերադարձող քաղաքացիների վերաինտեգրման ուղղված ծրագրերի իրականացում</u>** 1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության առաջնահերթություններից է հանդիսանում հայրենադարձության խթանումը, ինչպես նաև ՀՀ վերադարձող քաղաքացիների վերաինտեգրման գործընթացին պետական աջակցությունը: Հայրենադարձությունը հանդիսանում է համահայկական օրակարգի առաջնային հարցերից մեկը, այն կարևորվում է ինչպես երկրում առկա ժողովրդագրական մարտահրավերների լուծման, այնպես էլ վերադարձողների մարդկային և ֆինանսական ներուժն ի նպաստ Հայաստանի սոցիալտնտեսական զարգացմանն օգտագործելու ենթատեքստերում: ՀՀ վերադարձող քաղաքացիների վերաինտեգրման ուղղված ծրագրերի իրականացումը բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 2021թ.-ի օգոստոսի 26-ի № ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021-2026թթ.. ծրագրի 4.2 -րդ բաժնով նախատեսված

	հանձնառություններից: Միջոցառման իրականացման նպատակն է օժանդակել հայրենիքում հայության ներուժի կենտրոնացմանը և այդ ներուժի զարգացման ապահովմանը: **1.1** կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները ՀՀ կառավարության 2020թ. մարտի 19-ի N 336-Լ որոշմամբ հաստատվել է «ՀՀ վերադարձող (այդ թվում՝ հարկադիր վերադարձող) քաղաքացիների վերաինտեգրմանն ուղղված առաջնային աջակցության պետական ծրագիրը», որի շրջանակներում ծրագրի չափանիշներին բավարարող վերադարձող քաղաքացիներին տրամադրվում է բնակվարձի փոխհատուցում՝ 6 ամիս ժամկետով՝ ամսական 60 հազար դրամի չափով: Սա պետական մակարդակով իրականացվող առաջին և միակ ծրագիրն է: Վերադարձող քաղաքացիների վերաինտեգրմանն ուղղված մյուս բոլոր ծրագրերն իրականացվում են հիմնականում հասարակական կազմակերպությունների կողմից՝ գլխավորապես միջազգային կառույցների և միգրանտներին վերադարձնող երկրների ֆինանսավորմամբ, որոնց երբեմն մասնակցում են նաև պետական կառավարման որոշ մարմիններ: Այդպիսի ծրագրերը, սակայն, շարունակական բնույթ չեն կրում: Բաց է մնում նաև այս ուղղությամբ տարբեր կառույցների կողմից իրականացվող աշխատանքների համակարգման հարցը, ինչը բացասաբար է անդրադառնում ոչ միայն պետական մարմինների, այլև այդ ոլորտում գործող միջազգային կազմակերպությունների և հասարակական կազմակերպությունների գործունեության ու համագործակցության վրա: Միջոցառման համակատարողներն են ՝ ՀՀ ներքին գործերի, կրթության, գիտության մշակույթի և սպորտի, առողջապահության, էկոնոմիկայի նախարարությունները, Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի հայաստանյան գրասենյակը: **1.2** առկա խնդիրների առաջարկվող լուծումները Խնդիր է դրվում վերացնել ՀՀ վերադարձող քաղաքացիների հաջող վերաինտեգրման հետևյալ խոչընդոտները՝ իրենց բիզնեսը Հայաստան տեղափոխելու, կամ Հայաստանում նոր բիզնես հիմնելու հետ կապված աջակցության բացակայությունը, Հայաստանում բնակություն հաստատելու հետ կապված ամբողջական տեղեկատվության ցածր հասանելիությունը, և այն մեկ պատուհանի սկզբունքով ստանալու ահնարինությունը, վերադարձողներին միավորող միասնական հարթակի բացակայությունը, առողջապահական համակարգից օգտվելու հետ կապված խնդիրները, դպրոցահասակ երեխաների հայոց լեզվով ուսուցման հետ կապված խնդիրները և այլն: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Իրականացվում են ՀՀ վերադարձող քաղաքացիների վերաինտեգրմանն ուղղված ծրագեր, այդ թվում՝ պետական ֆինանսավորմամբ կամ համաֆինանսավորմամբ:

Առողջապահության նախարարություն	
NN	**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ**
1.	**1.1 «Առողջության համապարփակ ապահովագրության հայեցակարգը հաստատելու մասին» կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածի 1-ին ենթակետից, վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 728-Լ որոշմամբ հաստատված Առողջապահության նախարարության կանոնադրության 10-րդ կետից, ինչպես նաև ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 1-ին ենթակետից և պայմանավորված է ՀՀ-ում Առողջության համապարփակ ապահովագրության ներդրման նպատակով «Առողջության համապարփակ ապահովագրության հայեցակարգը հաստատելու մասին» կառավարության որոշման ընդունմամբ: **1.1. Կարգավորման ենթակա հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս գործող պետպատվերի տեղադրման մեխանիզմը ավելի շատ ծառայում է բժշկական կազմակերպությունների պահպանմանը, քան հանդես է գալիս որպես բնակչին մատուցվող ծառայությունների անհրաժեշտ որակի և ծավալի ապահովմանն ուղղված միջոց: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** «Առողջության համապարփակ ապահովագրության հայեցակարգը հաստատելու մասին» Կառավարության որոշման ընդունում, որով կամրագրվեն առողջության համապարփակ ապահովագրության հիմնական

	սկզբունքները, ծառայությունների փաթեթները, ապահովագրության ներդրման միջոցառումները և դրանց ներդրման ժամկետները: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Կապահովվի բնակչության համար հիմնական բժշկական ծառայությունների ֆինանսական հասանելիությունը և պաշտպանվածությունը, բժշկական ծառայությունների դիմաց կատարվող աղետալի ծախսերի կրճատումը և դրա հետևանքով աղքատացող բնակչության թվաքանակի կրճատումը, առողջապահության բնագավառում ծախսվող գումարների արդյունավետության և նպատակայնության մակարդակի բարձրացումը, կբարելավվեն բուժօգնության որակի ցուցանիշները:
	1.2. «Առողջության համապարփակ բժշկական ապահովագրության մասին» օրենքի նախագիծը Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածի 1-ին ենթակետից, վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 728-Լ որոշմամբ հաստատված Առողջապահության նախարարության կանոնադրության 10-րդ կետից, ինչպես նաև ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 1-ին ենթակետից, որի նպատակն է առողջության համապարփակ բժշկական ապահովագրության ներդրման միջոցով իրավական հիմքերի ամրագրումը: **1.1. Կարգավորման ենթակա հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում գործում են ապահովագրության ոլորտը կանոնակարգող «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» և «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքները, իսկ առողջության համապարփակ բժշկական ապահովագրության մասին որևէ օրենսդրական կանոնակարգում չկա: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Առաջարկվում է օրենքի ընդունումով լրացնել և կանոնակարգել առողջության ապահովագրության ոլորտը: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** «Առողջության համապարփակ բժշկական ապահովագրության մասին» օրենքի ընդունումը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետությունում ներդնել առողջության համապարփակ բժշկական ապահովագրությունը, որը բժշկական օգնության և սպասարկման անհրաժեշտություն ունեցող յուրաքանչյուր ապահովագրված քաղաքացու հնարավորություն կտա օգտվելու առողջապահական ծառայությունների փաթեթից՝ անկախ սեռից, տարիքից, բնակության վայրից և սոցիալական կարգավիճակից:
	1.3. Առողջության համապարփակ ապահովագրության հիմնադրամի և դրա կառավարման խորհրդի ստեղծում, վերջինիս գործունեությունը կարգավորող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի փաթեթի մշակում, առողջության համապարփակ ապահովագրության ներդրումն ապահովող ենթաօրենսդրական ակտերի ընդունում **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 1-ին ենթակետից, որի նպատակն է ՀՀ-ում Առողջության համապարփակ ապահովագրության ներդրման նպատակով ձևավորել միասնական գնորդի/վճարողի սկզբունքով գործող պետության կողմից հիմնադրված հանրային կառույց՝ ԱՀԱ հիմնադրամ, որը կապահովի միասնական գնորդի համակարգի ձևավորում և բնակչության բոլոր խմբերին հիմնական ծառայությունների փաթեթով՝ օգտագործելով պետական բյուջեից առողջապահությանը կատարվող հատկացումները և ապահովագրական վճարի միջոցով հավաքագրված գումարները, բժշկական ծառայությունների ռազմավարական գնման գործառույթների կիրարկումը: ԱՀԱ հիմնադրամի գործունեությունը կարգավորելու համար անհրաժեշտ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի փաթեթի մշակումը, ենթաօրենսդրական փաստաթղթերի ընդունումը: **1.1. Կարգավորման ենթակա հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

	Ներկայումս գործող պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման գործընթացը իրականացվում է առողջապահության նախարարության (մասնավորապես պետական առողջապահական գործակալության) միջոցով և հանդիսանում է և գնորդ և պատվիրատու: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** ՀՀ-ում Առողջության համապարփակ ապահովագրության ներդրման նպատակով ձևավորել միասնական գնորդի/վճարողի սկզբունքով գործող պետության կողմից հիմնադրված հանրային անկախ կառույց՝ ԱՀԱ հիմնադրամ: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Կձևավորվի ԱՀԱ հիմնադրամ, որը կապահովի բժշկական ծառայությունների ռազմավարական գնման գործառույթները:
	1.4. Հիմնական բժշկական ծառայությունների փաթեթի գնահատման ավտոմատացված համակարգի մշակում, հիմնական ծառայությունների փաթեթների գնահատում՝ ակտուարական հաշվարկների և կանխատեսումների միջոցով **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 1-ին ենթակետից, որի նպատակն է հիմնական բժշկական ծառայությունների փաթեթների գնահատման գործընթացի ավտոմատացումը և դրա արդյունքում սուբյեկտիվ գործոնների հնարավորինս բացառումը: **1.1. Կարգավորման ենթակա հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս գործող պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների փաթեթների գնահատումը իրականացվում է առողջապահության նախարարության առանձին ստորաբաժանումների աշխատակիցների կողմից Արմեդ համակարգից արտահանված և բժշկական կազմակերպություններից հավաքագրված տվյալների վրա: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Առաջարկվում է մշակել և ներդնել Հիմնական բժշկական ծառայությունների փաթեթի գնահատման ավտոմատացված համակարգ՝ ակտուարական հաշվարկների հիման վրա կանխատեսումներ իրականացնելու նպատակով: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Հիմնական բժշկական ծառայությունների փաթեթի գնահատման ավտոմատացված համակարգի ներդրման արդյունքում ակտուարական հաշվարկների հիման վրա ավտոմատ ռեժիմով կիրականացվեն կանխատեսումներ ֆինանսական ծախսերի, ծառայությունների հիմնական փաթեթում անհրաժեշտ ծառայությունների ներառման, տարբեր ռիսկերի վերաբերյալ:
	1.5. «Բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների գների միասնական մեթոդաբանությունը, բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների գների կանոնակարգման հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը, ինչպես նաև մշտադիտարկման և վերանայման կարգը, անհրաժեշտ տվյալների հավաքագրման ձևաչափերը հաստատելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի ընդունում **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 1-ին ենթակետից, որի նպատակն է բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների գների հաշվարկման մեկ միասնական մեթոդաբանության ընդունումը, դրա նպատակով բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների գների կանոնակարգման հանձնաժողովի ձևավորում ու գործունեության և աշխատանքների կազմակերպման կարգերի ընդունում: **1.1. Կարգավորման ենթակա հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.**

	Ներկայումս գործող բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների գների հաշվարկման համար մեկ միասնական կարգ չի գործում, գները հաշվարկվում են տարբեր մեթոդաբանությամբ և, որի արդյունքում միևնույն ծառայության համար հաճախ հաստատվում են իրարից զգալի տարբերվող գներ: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Առաջարկվում է Առողջապահության նախարարի հրամանով մշակել և ներդնել բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների գների միասնական մեթոդաբանություն, ձևավորել բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների գների կանոնակարգման հանձնաժողով, ինչպես նաև բժշկական ծառայությունների գների մշտադիտարկման և վերանայման կարգեր ընդունել, որը հաշվի կառնի առողջապահության տեխնոլոգիական զարգացումը և իրական ծախսերի փոփոխությունները: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների գների հաշվարկման մեկ միասնական մեթոդաբանության ընդունման դեպքում կկանոնակարգվի բժշկական ծառայությունների գնհաշվարկները, միևնույն ծառայությունները գնային առումով շատ չեն տարբերվի, որն իր դրական ազդեցությունը կունենա ծառայությունների շուկայի վրա և այն կդառնա առավել կանխատեսելի բնակչության համար:
	1.6. «Բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների գների հաշվարկման ավտոմատացված տեղեկատվական համակարգը և հիմնական ծառայությունների փաթեթում ընդգրկված ծառայությունների գները հաստատելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի ընդունում **1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 1-ին ենթակետից, որի նպատակն է բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների գների հաշվարկման մեկ միասնական մեթոդաբանության ընդունումից հետո մշակել և ներդնել բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների գների հաշվարկման ավտոմատացված տեղեկատվական համակարգ: **1.1. Կարգավորման ենթակա հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս գործող բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների գների հաշվարկման համար մեկ միասնական կարգ չի գործում, գները հաշվարկվում են տարբեր մեթոդաբանությամբ և, որի արդյունքում միևնույն ծառայության համար հաճախ հաստատվում են իրարից զգալի տարբերվող գներ: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Առաջարկվում է Առողջապահության նախարարի հրամանով մշակել և ներդնել բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների գների միասնական մեթոդաբանության հիման վրա Բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների գների հաշվարկման ավտոմատացված տեղեկատվական համակարգ: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների գների հաշվարկման մեկ միասնական մեթոդաբանության հիման վրա բժշկական ծառայությունների գնհաշվարկները կիրականացվեն ավտոմատ (ինքնաշխատ) սկզբունքով, որով կբացառվի գործընթացի սուբյեկտիվ կողմը և կարագացնի ծառայությունների գների հաշվարկման գործընթացը, որը ներկայումս միայն պետպատվերի մասով կազմում է մոտ 3.5 հազար ծառայություն:
	1.7. «Բժշկական ծառայությունների գնման մրցակցային ընթացակարգը հաստատելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի ընդունում **1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 1-ին ենթակետից, որի նպատակն է բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների գնման համար մշակել և ներդնել մրցակցային ընթացակարգ, որը կբերի ծառայությունների մատուցման որակի, հասանելիության և մատչելիության բարձրացման: **1.1. Կարգավորման ենթակա հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

	Ներկայումս գործող բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների գնման գործընթացը իրականացվում է «մեկ անձից» սկզբունքով, և բացակայում է մրցակցային սկզբունքը: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Առաջարկվում է Առողջապահության նախարարի հրամանով մշակել և ներդնել բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների գնման մրցակցային ընթացակարգ: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների փաթեթների մրցակցային ընթացակարգով գնումները կբերեն ծառայությունների մատուցման որակի, հասանելիության և մատչելիության բարձրացման: Արդյունքում մասնավոր ծախսերի տեսակարար կշիռը ընդհանուր առողջապահական ծախսերում կնվազեցվի 40 տոկոսով:
2.	**2.1 «Արտաընդերային վիրուսային հեպատիտների կանխարգելման և վերահսկման 2019-2023 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի շարունակական իրականացում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետից, ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 2-րդ ենթակետից, ինչը կարևոր է սոցիալական նշանակության առավել տարածված վարակիչ հիվանդություններից արտաընդերային հեպատիտների դեմ պայքարի, համաճարակաբանական հսկողության, կանխարգելման, կադրային ներուժի զարգացման կազմակերպման և իրականացման անհրաժեշտությունից ելնելով՝ ՀՀ-ում նշյալ վարակներից հիվանդացությունն ու մահացությունը նվազեցնելու նպատակով: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Արտաընդերային հեպատիտները ՀՀ-ում սոցիալական նշանակության առավել տարածված վարակիչ հիվանդություններ են և ունեն արտահայտված համաճարակային ներուժ, լայն տարածում և զգալի սոցիալ-տնտեսական բեռ: ՀՀ-ում հեպատիտների դեմ պայքարի և կանխարգելման ուղղությամբ աշխատանքները կատարվում են հիմնականում վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի և ընդհանուր մոտեցումների հիման վրա, սակայն դրանց առաջացման ռիսկերն առանձնահատուկ են՝ յուրօրինակ փոխանցման գործոններով և տարածման առանձնահատկություններով, ինչպես նաև հաճախ զարգացող ծանր բարդություններով /լյարդի ցիռոզ, առաջնային քաղցկեղ/: Ուստի հեպատիտների դեմ պայքարի արդյունավետ միջոցառումների սահմանումը շատ կարևոր է հիվանդության համաճարակաբանական հսկողության համակարգի կատարելագործման, ինչպես նաև վերջիններիս հետևանքով առաջացող ծանր բարդությունների հսկողության տեսանկյունից: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Հեպատիտներին հակազդումն արդյունավետ կլինի պայքարի համալիր և համակարգված միջոցառումների կիրառման դեպքում: Հատկապես կարևորվում է վիրուսային հեպատիտ Ց-ով տարեկան առնվազն 1000 անձի ընդգրկում բուժման ծրագրում և այս ծրագրի շրջանակներում դեղի անվճար տրամադրում պացիենտներին: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** ՀՀ-ում արտաընդերային հեպատիտների կանխարգելում, հիվանդացության և մահացության մակարդակների նվազում:
	2.2 «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման 2022-2026թթ. միջոցառումների ծրագիրը» հաստատելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի ընդունում **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը բխում է Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետից, «Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» օրենքի 2-րդ հոդվածից, ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 2-րդ ենթակետից: ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման պետական նպատակային ընթացիկ հնգամյա ծրագիրն ավարտվում է 2021

	թվականին, ինչն էլ նոր հնգամյա ծրագրի մշակման և համապատասխան իրավական ակտով հաստատման անհրաժեշտության հիմք է: Միջոցառումների իրականացումը կարևոր է սոցիալական նշանակության առավել տարածված վարակիչ հիվանդություններից ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի, համաճարակաբանական հսկողության, բնակչության շրջանում այդ հիվանդությունների կանխարգելման վերաբերյալ գիտելիքների տարածման, ախտորոշիչ, բուժական օպտիմալ և մարդակենտրոն համակարգերի ներդրման, կադրային ներուժի զարգացման, կազմակերպման և իրականացման անհրաժեշտությունից ելնելով՝ ՀՀ-ում նշյալ վարակից հիվանդացությունն ու մահացությունը նվազեցնելու նպատակով: **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկայիս վիճակը և առկա խնդիրները** ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ը ՀՀ-ում սոցիալական նշանակության առավել տարածված վարակիչ հիվանդություններից է: ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ն առայժմ սահմանափակված է ՄԻԱՎ-ի նկատմամբ խոցելի խմբերի շրջանում, սակայն վերջին տարիներին արձանագրված դեպքերում գերակշռում են հետերոսեքսուալ ճանապարհով փոխանցված դեպքերը, մասնավորապես այլ երկրներ արտագնա սեզոնային աշխատանքի մեկնող բնակչության և նրանց զուգընկերների շրջանում, ինչը լուրջ մարտահրավերներ է առաջացնում բնակչության այս հատուկ խմբի համար վարակի կանխարգելման արդյունավետ ծառայությունների մշակման անհրաժեշտության իմաստով: ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 15-ի նիստի N 25 արձանագրությամբ ընդունվել է ՀՀ-ում 2017-2021թթ. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման պետական նպատակային ծրագիրը և առաջնահերթ միջոցառումների ցանկը: Ներկայումս անհրաժեշտ է մշակել նոր ծրագիր՝ հետագա տարիների համար: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդումն արդյունավետ կլինի պայքարի համալիր և համակարգված միջոցառումների կիրառման դեպքում: Հատկապես կարևորվում է վարակի վերահսկման, կանխարգելման, ախտորոշման և բուժման արտահիվանդանոցային մարդակենտրոն ծառայությունների համակարգերի ստեղծումը, կադրային ներուժի զարգացումը, հանրային իրազեկման միջոցառումները, բնակչության խոցելի խմբերի շրջանում հիվանդությունների կանխարգելմանն ուղղված գիտելիքների տարածումը, խնդիրների լուծմանն ուղղված միջգերատեսչական, ինչպես նաև համայնքահեն, հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը՝ դրանց իրականացման համար իրավական դաշտ ապահովելով: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելում, հիվանդացության և մահացության մակարդակների նվազում:
3.	**3.1. Չարորակ նորագոյացությունների դեմ պայքարի միջոցառումների իրականացում, դեղի անվճար տրամադրում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 4-րդ և 5-րդ ենթակետերից և պայմանավորված է առավել տարածված ոչ վարակիչ հիվանդություններից չարորակ նորագոյացությունների կանխարգելման, վաղ հայտնաբերման և բժշկական օգնության և սպասարկման արդյունավետ կազմակերպման անհրաժեշտությունից՝ ՀՀ-ում չարորակ նորագոյացություններից մահացությունը նվազեցնելու նպատակով: **1.1. Կարգավորման ենթակա հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Միջազգային վիճակագրական տվյալները վկայում են, որ աշխարհում տարեկան արձանագրվում է քաղցկեղով հիվանդացության շուրջ 12 մլն և մահացության շուրջ 8 մլն. դեպք: Կանխատեսվում է, որ մինչև 2030 թվականը նոր դեպքերի թիվը կարող է հասնել 27 մլն-ի, իսկ մահերինը՝ 17 մլն-ի: Չարորակ նորագոյացություններից մահվան դեպքերի 70%-ը բաժին է ընկնում ցածր և միջին եկամուտ ունեցող երկրներին (ԱՀԿ, 2017թ. փետրվարի տեղեկագիր): Հարկ է նշել նաև, որ առաջիկա երկու տասնամյակի ընթացքում կանխատեսվում է քաղցկեղի դեպքերի թվի հետագա աճ շուրջ 70%-ով (ԱՀԿ, 2017թ. փետրվարի տեղեկագիր), ինչը լրացուցիչ բեռ է հանդիսանալու առողջապահական համակարգի վրա՝ պահանջելով հավելյալ միջոցներ ձեռնարկել պացիենտների բուժման արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Միևնույն ժամանակ, տարեկան 75 մլն մարդ ապրում է 5 և ավելի տարի՝ քաղցկեղ ախտորոշելուց հետո: Այսպիսով, քաղցկեղների թվի ավելացումն անհերքելի իրողություն է ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում: Հայաստանում արձանագրված չարորակ նորագոյացությունների հիվանդացության, տարածվածության և մահացության ցուցանիշները, միջազգային վիճակագրության տվյալները և հիվանդացության կանխատեսական

միտումները, ինչպես նաև հասարակության շրջանում ուռուցքաբանության ոլորտի կարևորության շեշտադրումը, անհրաժեշտություն են առաջացրել Առողջապահության նախարարի 2021 թվականի ապրիլի 7-ի N 1126-Լ հրամանով հաստատել չարորակ նորագոյացությունների դեմ պայքարի միջոցառումների ծրագիրը, որի նպատակն է բնակչության շրջանում վաղ հայտնաբերել և կանխարգելել չարորակ նորագոյացությունների հետագա զարգացումը: Միջոցառումների իրականացումը շատ կարևոր է ՀՀ-ում չարորակ նորագոյացություններով պայմանավորված հիվանդացությունը և մահացությունը նվազեցնելու տեսանկյունից:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Չարորակ նորագոյացությունների դեմ պայքարի միջոցառումների ներդրման աշխատանքների շրջանակներում նախատեսվում է իրականացնել չարորակ նորագոյացությունների կանխարգելում՝ հանրային իրազեկվածության և շարունակական պատվաստումների միջոցով, չարորակ նորագոյացությունների վաղ հայտնաբերում՝ կրծքագեղձի քաղցկեղի վաղ հայտնաբերման, արգանդի պարանոցի քաղցկեղի և կոլոռեկտալ քաղցկեղի կանխարգելման ու վաղ հայտնաբերման սքրինինգային ծրագրերի իրականացման միջոցով: Նախատեսվում է նաև ներդնել համաճարակաբանական հսկողության համակարգ, մասնավորապես չարորակ նորագոյացությունների ռեգիստրի ստեղծում, ինչպես նաև չարորակ նորագոյացություններով պացիենտներին օպտիմալ բուժման տրամադրման և մի շարք այլ միջոցառումներ:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Միջոցառումների իրականացման ավարտին դեղի անվճար տրամադրման շնորհիվ ակնկալվում է չարորակ նորագոյացություններից մահացության ցուցանիշի նվազում 2,5%-ով, վաղ հայտնաբերման ցուցանիշի բարելավում՝ 5%-ով - 5 և 10 տարվա ապրելիության ցուցանիշների բարելավում՝ համապատասխանաբար 25%-ով և 10%- ով:

Միջոցառումների իրականացման արդյունքում ակնկալվում է մինչև 2025 թվականը բնակչությանն ապահովել որակյալ և մատչելի առողջապահական ծառայությունների և ամբուլատոր բուժման համար անհրաժեշտ դեղորայքի հասանելիության ծածկույթ 90 տոկոս:

3.2. 2022 թվականից սկսած՝ ուռուցքաբանական, մասնավորապես՝ կրծքագեղձի քաղցկեղի ախտորոշմամբ 4-րդ փուլի HER դրական ենթատիպով պացիենտներին նոր սերնդի, թանկարժեք «Տրաստուզումաբ լուծույթ ե/մ ներարկման 600մգ/5մլ» դեղի տրամադրում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 4-րդ և 5-րդ ենթակետերից և կարևոր է կրծքագեղձի քաղցկեղի ախտորոշմամբ 4-րդ փուլի HER դրական ենթատիպով պացիենտներին, նոր սերնդի, թանկարժեք «Տրաստուզումաբ լուծույթ ե/մ ներարկման 600մգ/5մլ» դեղի անվճար տրամադրմամբ, ինչպես նաև շուրջ 200 պացիենտի կյանքի որակի՝ մահացության մակարդակի նվազմամբ և ապրելիության, կյանքի տևողության մինչև 5 տարի, երկարացմամբ:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Սկսած 2020 թվականից՝ կրծքագեղձի քաղցկեղի ախտորոշմամբ 1-ին, 2-րդ և 3-րդ փուլերի HER դրական ենթատիպով շուրջ 195 պացիենտներին տրամադրվում է նոր սերնդի, թանկարժեք «Տրաստուզումաբ լուծույթ ե/մ ներարկման 600մգ/5մլ» դեղը, իսկ կրծքագեղձի քաղցկեղի ախտորոշմամբ 4-րդ փուլի HER դրական ենթատիպով պացիենտներին դեղեր չեն տրամադրվում՝ ֆինանսական միջոցների սղության պատճառով, արդյունքում պացիենտների կյանքի տևողությունն ու ապրելիությունը նվազում է և բարձրանում է մահացության մակարդակը:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

2025-2026 թվականներից՝ ուռուցքաբանական մասնավորապես՝ կրծքագեղձի քաղցկեղի ախտորոշմամբ 4-րդ փուլի HER դրական ենթատիպով պացիենտներին նոր սերնդի, թանկարժեք «Տրաստուզումաբ լուծույթ ե/մ ներարկման 600մգ/5մլ» դեղի անվճար տրամադրում:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Շուրջ 200 պացիենտի կյանքի որակի բարելավում, մահացության մակարդակների նվազում և ապրելիության, կյանքի տևողության մինչև 5 տարի երկարացում: Ըստ այդմ մինչև 2026 թվականն անկալվում է կյանքի սպասվելիք միջին տևողությունը հասցնել 78 տարեկանի, ինչպես նաև բնակչությանն ապահովել որակյալ և

	մատչելի առողջապահական ծառայությունների և ամբուլատոր բուժման համար անհրաժեշտ դեղորայքի հասանելիության ծածկույթ 90 տոկոս:
4.	**4.1. «ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 30-ի N 642-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» կառավարության որոշման ընդունում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 4-րդ և 5-րդ ենթակետերից: Նախատեսվում է իրականացնել ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 30-ի N 642-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ: Նախագծով առաջարկվելու է որոշման N 2 հավելվածում ավելացնել թվով 4 նոր հիվանդություններ և համախտանիշներ, ինչպես նաև արդեն իսկ ընդգրկված թվով 12 հիվանդությունների բուժման համար նախատեսված դեղերի ցանկի վերանայում, ընդլայնում և ձեռք բերվող քանակների ավելացում: **1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս վերոնշյալ հիվանդությունների ցանկերում ընդգրկված է միայն 12 հիվանդություն, որոնց առկայության դեպքում պետության կողմից դեղերը տրվում են անվճար, ինչպես նաև արդեն ընդգրկված հիվանդությունների համար ձեռք են բերվում բուժման դասական ուղեցույցներում ներառված դեղեր, իսկ նոր սերնդի դեղերի ընդգրկվածությունը բավականին ցածր է՝ հաշվի առնելով ֆինանսական միջոցների սղությունը: Միաժամանակ, տարեցտարի տեղի է ունենում շահառուների թվի աճ, շուրջ 12 %, պայմանավորված հիվանդացության աճով, որը իր հերթին անհրաժեշտություն է առաջացնում ավելացնել ձեռք բերվող դեղերի քանակները: Օրինակ, վիճակագրական տվյալների համաձայն, ՀՀ-ում բնակչության շրջանում շաքարային դիաբետով հիվանդացությունը տարեց տարի բավականին բարձր է՝ 2017թ-ին կազմում է 77307, 2019թ-ին՝ 83535, 2020թ-ին՝ 84833,2021թ-ին՝ 91918 պացիենտ: Նախատեսվող նոր հիվանդությունները և համախտանիշների համար անհրաժեշտ դեղերը նախկինում երբևէ չեն տրամադրվել պետության կողմից և շուրջ 350 շահառու, որոնց թվում նաև երեխաներ են, կամ չեն բուժվում, կամ ստանում են թերի բուժում՝ ֆինանսական միջոցների բացակայության պատճառով: Արդյունքում շուրջ 200 350 շահառու 100%-ով կապահովվի դեղերով, հիվանդությունների թիվը, որոնց առկայության դեպքում դեղերը տրամադրվում են անվճար, 12-ից կդառանա 16, որի շնորհիվ ակնկալվում է հիվանդանոցային բեռի թեթևացում, հիվանդության առաջընթացի կանխարգելում, հաշմանդամության և մահացության ցուցանիշների նվազում շուրջ 4 %, որոշ հիվանդությունների վաղ հայտնաբերումը և ժամանակին բուժումը հնարավորություն է տալիս հիվանդներին ապրել լիարժեք և առանց հետագա բարդությունների: **1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Ներկայումս վերոնշյալ ցանկերում ընդգրկված են բուժման դասական ուղեցույցներում ներառված դեղեր, իսկ նոր սերնդի դեղերի ընդգրկվածությունը բավականին ցածր է՝ հաշվի առնելով ֆինանսական միջոցների սղությունը: Միաժամանակ, տարեցտարի տեղի է ունենում շահառուների թվի աճ, շուրջ 12 %, պայմանավորված հիվանդացության աճով, որը իր հերթին անհրաժեշտություն է առաջացնում ավելացնել ձեռք բերվող դեղերի քանակները: Օրինակ, վիճակագրական տվյալների համաձայն, ՀՀ-ում բնակչության շրջանում շաքարային դիաբետով հիվանդացությունը տարեց տարի բավականին բարձր է՝ 2017թ-ին կազմում է 77307, 2019թ-ին՝ 83535, 2020 թ.-ին՝ 84833, 2021 թ.-ին՝ 91918 պացիենտ: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Արդյունքում շուրջ 200 350 շահառու 100%-ով կապահովվի դեղերով, հիվանդությունների թիվը, որոնց առկայության դեպքում դեղերը տրամադրվում են անվճար, 12-ից կդառանա 16, որի շնորհիվ ակնկալվում է հիվանդանոցային բեռի թեթևացում, հիվանդության առաջընթացի կանխարգելում, հաշմանդամության և մահացության ցուցանիշների նվազում շուրջ 4 %, քանի որ հիվանդությունների վաղ հայտնաբերումը և ժամանակին բուժումը հնարավորություն է տալիս հիվանդներին ապրել լիարժեք և առանց հետագա բարդությունների: Ինչպես նաև նոր սերնդի դեղերի տրամադրման մակարդակի բարձրացումը, շարունակական, անխափան անվճար հատկացումը նպաստում է բուժման արդյունավետության բարձրացմանը, կյանքի որակի բարելավմանը, դեղերի կողմնակի ազդեցություններից առաջացած բարդությունների և մահացության ցուցանիշների նվազմանը: Օրինակ, չնայած այն հանգամանքին, որ շաքարային դիաբետով հիվանդացությունը տարեց տարի բարձրանում է, ՀՀ-ում բնակչության մահացության կշռում շաքարային դիաբետից մահացությունը

	2010 թվականին կազմել է 5 տոկոս, 2015 թ.-ին 4,6 տոկոս, 2018-2019 թթ.-ին 2 տոկոս, իսկ 2020 թվականին 1,3 տոկոս: Մահացության նվազմանը նպաստում է շաքարային դիաբետով պացիենտներին նոր սերնդի դեղերով 100 տոկոսով ապահովումը: Միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է մինչև 2026 թվականը բնակչությանն ապահովել որակյալ և մատչելի առողջապահական ծառայությունների և ամբուլատոր բուժման համար անհրաժեշտ դեղորայքի հասանելիության ծածկույթ 90 տոկոս:
	4.2. «Առողջապահության նախարարի 2021 թվականի հուլիսի 28-ի N 56-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի ընդունում 1. **Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 4-րդ և 5-րդ ենթակետերից և «Դեղերի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասից: 2023 թվականին նախատեսվում է իրականացնել ՀՀ հիմնական դեղերի ցանկի վերանայման, լրամշակման, ԱՀԿ մոդելային ցանկին և ՀՀ գրանցված դեղերի գրանցամատյանին համապատասխանեցման աշխատանքներ: Միջոցառման շնորհիվ ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 30-ի N 642-Ն որոշման N 1 հավելվածով բնակչության սոցիալական կամ հատուկ խմբերի ցանկում ընդգրկված 220 000 շահառուների դեղերով ապահովվման մակարդակը կբարձրանա 80%-ով, կյանքի որակը կբարելավվի և կթեթևանա պացիենտների կողմից դեղին հատկացվող ֆինանսական բեռը: 1.1 **կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** ՀՀ «Հիմնական դեղերի ցանկը» լրամշակվել և հաստատվել է առողջապահության նախարարի 2021 թվականի հուլիսի 28-ի N 56-Ն հրամանով: Ցանկը վերանայվել և համալրվել է դեղերի նոր դեղաչափերով և դեղաձևերով, նոր դեղերի անվանումներ չեն ավելացվել՝ հաշվի առնելով ֆինանսական միջոցների սղությունը: Նշենք, որ ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 30-ի N 642-Ն որոշման N 1 հավելվածով ներառվել են 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի Հանրապետության կողմից 44-օրյա պատերազմի ընթացքում վիրավորում ստացած անձինք՝ զինծառայողներ և ոչ զորահավաքային զորակոչով պատերազմի մասնակիցներ, որոնց բուժումն իրականացնելու համար անհրաժեշտ են դեղեր, որոնք ընդգրկված չեն գործող ցանկում: Արդյունքում տեղի է ունենում դեղերի ոչ լիարժեք տրամադրում և բուժման արդյունավետության նվազում, իսկ շահառուների կողմից՝ դժգոհություններ: 1.2. **առկա խնդիրների առաջարկվող լուծումները** ՀՀ «Հիմնական դեղերի ցանկը» լրամշակվել և հաստատվել է առողջապահության նախարարի 2021 թվականի հուլիսի 28-ի N 56-Ն հրամանով: Ցանկը վերանայվել և համալրվել է դեղերի նոր դեղաչափերով և դեղաձևերով, նոր դեղերի անվանումներ չեն ավելացվել՝ հաշվի առնելով ֆինանսական միջոցների սղությունը: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** 2023 թվականին նախատեսվող ՀՀ «Հիմնական դեղերի ցանկի» վերանայման, լրամշակման, ԱՀԿ մոդելային ցանկին և ՀՀ գրանցված դեղերի գրանցամատյանին համապատասխանեցման աշխատանքների արդյունքում ցանկը կլրամշակվի նոր դեղերի անվանումներով, որը կնպաստի բուժման արդյունավետության բարձրացմանը և կյանքի որակի բարելավմանը, բնակչության սոցիալական կամ հատուկ խմբերի ցանկում ընդգրկված 220 000 շահառուների դեղերով ապահովման մակարդակի բարձրացմանը շուրջ 80%: Ցանկի վերանայումը և լրամշակումը իրականացվում են հիմք ընդունելով 2017 թվականի սեպտեմբերի 28-ի «Հիմնական դեղերի ընտրության չափանիշները և կարգը սահմանելու մասին» N 1178-Ն կառավարության որոշումը: Միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է մինչև 2025 թվականը բնակչությանն ապահովել որակյալ և մատչելի առողջապահական ծառայությունների և ամբուլատոր բուժման համար անհրաժեշտ դեղորայքի հասանելիության ծածկույթ 90 տոկոս:
5.	**5.1 Կոլոռեկտալ քաղցկեղի վաղ հայտնաբերման սքրինինգային ծրագրի ներդրում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Կոլոռեկտալ քաղցկեղի վաղ հայտնաբերման սքրինինգային ծրագրի իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 2-րդ ենթակետից, որի նպատակն է բնակչության ռիսկային խմբերի շրջանում կոլոռեկտալ քաղցկեղի կանխարգելումը և վաղ հայտնաբերումը:

1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.

Հայաստանի Հանրապետությունում կոլոռեկտալ քաղցկեղի սքրինինգ չի իրականացվում, ինչպես նաև նշված հիվանդության կանխարգելման նպատակներով դիմելիությունը բժշկական հաստատություններ շատ ցածր է, որի արդյունքում, հիվանդությունը բացահայտվում է վերջին փուլերում, որն առաջացնում է բուժման գործընթացի բարդացում: Հայաստանի Հանրապետությունում 2017թ. և 2018թ. կոլոռեկտալ քաղցկեղով հիվանդացության ցուցանիշը 100 000 բնակչի հաշվով կազմել է 24.1 և 25.2, իսկ մահացությունը՝ 17.6 և 16.9 մարդ համապատասխանաբար: Հիվանդացության ամենաբարձր ցուցանիշները (դեպքերի 82%) արձանագրվել են 60-64 և 65 և բարձր տարիքային խմբերում: Հայաստանի Հանրապետությունում չափազանց բարձր է ուշ հայտնաբերված դեպքերի թիվը, մասնավորապես, 2018թ. դրանք կազմել են շուրջ 63%: Նկատվում է նաև մինչև 50 տարեկան անձանց շրջանում կոլոռեկտալ քաղցկեղով հիվանդացության աճ:

1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել ԱԱՊ օղակի բուժաշխատողների կողմից բնակչության ռիսկային խմբերի շրջանում խորհրդատվություններ, բնակչության ռիսկային խմբերի շրջանում թեստավորում՝ կղանքում թաքնված արյան որոշման նպատակով, անհրաժեշտության դեպքում կոլոնոսկոպիկ և պաթոմորֆոլոգիական հետազոտությունների կատարում:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը.

Միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է բարձրացնել կոլոռեկտալ քաղցկեղի վաղ հայտնաբերելիությունը, իջեցնել մահացության ցուցանիշը, պահպանել կյանքի որակը: Ծրագրի արդյունքների վերլուծությունը հնարավորություն կտա քննարկել հետագայում սքրինինգի ենթակա բնակչության ռիսկային խմբերի ընդլայնման անհրաժեշտությունը: Միաժամանակ, առավել տարածված 4 ոչ վարակիչ հիվանդությունների հետևանքով առաջացող վաղաժամ մահացության ինդեքսավորված ցուցանիշը մինչև 2025 թվականն ակնկալվում է նվազեցնել մինչև 0,9:

5.2. Շարունակել և ընդլայնել կանանց ընդգրկվածությունը արգանդի պարանոցի քաղցկեղի՝ ՊԱՊ-քսուքի հետազոտություններում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 3-րդ ենթակետից:

Հայաստանում առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների (ՈՎՀ) մահացության կառուցվածքը կրկնօրինակում է եվրոպական տարածաշրջանի մահացության պատկերը: Բնակչության մահացության ընդհանուր կառուցվածքում ՈՎՀ մահացության բեռը կազմում է մոտ 80%, ընդ որում, չարորակ նորագոյացությունների մասնաբաժինը կազմում է՝ 20,0%,

Հանրապետությունում տարեց տարի ավելացող ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման նպատակն է ռիսկային բնակչության շրջանում վաղ հայտնաբերել և կանխարգելել այդ հիվանդությունների հետագա զարգացումը:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

2015թ.-ին մեկնարկել և մինչև 2020թ. ավարտը շարունակաբար ՀՀ ողջ տարածքում իրականացվում են սքրինինգային հետազոտություններ, որոնք ուղղված են արգանդի պարանոցի քաղցկեղի կանխարգելմանն ու վաղ ախտորոշմանը: 30-60 տարեկան բոլոր կանայք հնարավորություն ունեն անվճար հետազոտվել՝ ՊԱՊ թեստի հետազոտության միջոցով արգանդի պարանոցի նախաքաղցկեղի վաղ ախտորոշման և քաղցկեղի կանխարգելման նպատակով:

01.01.2015թ.-ից 31.08.2021թ. ընկած ժամանակահատվածում, Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող սքրինինգային հետազոտությունների իրականացման արդյունքում, կանանց շրջանում իրականացվել է շուրջ 320 հազար ՊԱՊ թեստի հետազոտություն:

Հաշվի առնելով ծրագրի կարևորությունը՝ կանանց շրջանում արգանդի պարանոցի քաղցկեղի կանխարգելման նպատակով ՀՀ ողջ տարածքում պլանավորված է շարունակել անվճար սքրինինգային հետազոտությունների իրականացումը:

1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Նախատեսվում է Հայաստանի Հանրապետության բնակչության ռիսկային խմբերում շարունակաբար իրականացնել ոչ վարակիչ հիվանդությունների, մասնավորապես՝ արգանդի պարանոցի քաղցկեղի հայտնաբերման և վաղ կանխարգելման զանգվածային սքրինինգներ:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Միջոցառման իրականացման դեպքում ակնկալվող արդյունքը Հայաստանի Հանրապետության բնակչության ռիսկային խմբերում սքրինինգային հետազոտությունների իրականացումն է՝ նպաստելով ոչ վարակիչ հիվանդությունների վաղ հայտնաբերմանը և վերահսկմանը, ինչպես նաև մահացության նվազեցմանը: Ըստ այդմ, նախատեսվում է առավել տարածված 4 ոչ վարակիչ հիվանդությունների հետևանքով առաջացող վաղաժամ մահացության ինդեքսավորված ցուցանիշը մինչև 2025 թվականը նվազեցնել մինչև 0,9:

5.3. Ոչ վարակիչ հիվանդությունների զարգացմանը նպաստող ռիսկի գործոնների տարածվածության հետազոտության իրականացում

1. Միջոցառման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 6-րդ ենթակետից: Միջոցառման նպատակն է՝ ուսումնասիրել և գնահատել ՀՀ բնակչության շրջանում ոչ վարակիչ հիվանդությունների (ՈՎՀ) վարքագծային (ծխախոտի և ալկոհոլի օգտագործում, ֆիզիկական թերակտիվություն, անառողջ սնունդ, ավելցուկային քաշ և ճարպակալում) և կենսաբանական (զարկերակային բարձր ճնշում/գերճնշում, արյան մեջ խոլեսթերինի և գլյուկոզայի բարձր մակարդակներ, աղի օգտագործման միջին մակարդակ) ռիսկի գործոնների (ՌԳ) տարածվածությունը Կովիդ-19 համավարակի պայմաններում, ինչպես նաև ռիսկի գործոնների տարածվածության բաշխվածությունն ըստ սոցիալ-ժողովրդագրական խմբերի, ինչը թույլ կտա արդյունավետորեն պլանավորել ՌԳ-ի հսկողության և կանխարգելման միջոցառումների կազմակերպումը, քաղաքականությունների մշակումը, բարեփոխումների իրականացումը:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

ՈՎՀ-ի կանխարգելումը և վերահսկումը ներկայացնում են բազմակողմանի ռազմավարական ուղղությունների հանրագումար, որի նպատակն է բարելավել բնակչության շրջանում առողջապահական հիմնական ցուցանիշները, կանխարգելել ու նվազեցնել ՈՎՀ-ի առաջացումը, և այդ հիվանդություններից առաջացած բարդություններն ու հաշմանդամությունը, բարելավել նրանց կյանքի որակը:

Հայաստանում գրանցված բոլոր մահերի շուրջ 90%-ը պայմանավորված է ՈՎՀ-ով, ընդ որում առավել տարածված 4 ՈՎՀ-ով, որոնցից 47.3%՝ արյան շրջանառության համակարգի հիվանդություններ (ԱՇՀՀ), 15%՝ չարորակ նորագոյացություններ (ՉՆ), 1.3%՝ շաքարային դիաբետ (ՇԴ), 1.1%՝ թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդություններ (ԹՔՕՀ): 4 առավել տարածված ՈՎՀ հիվանդություններից վաղաժամ մահացությունը (մինչև 70 տարեկան) ընդհանուր մահերի կառուցվածքում կազմում է 51%: Հարկ է նշել, որ այդ մահերի գերակշռող մասնաբաժինը գրանցվում է 35-65 աշխատունակ տարիքային խմբում:

ՈՎՀ-ից առաջացած տնտեսական բեռի վերլուծությունը փաստում է, որ Հայաստանում առավել տարածված 4 հիվանդությունների բուժմանն ուղղված պետական ծախսերը կազմում են 55.6 մլրդ դրամ: Կորցրած աշխատունակության արդյունքում առաջացած անուղղակի լրացուցիչ ծախսերը ավելի քան չորս անգամ գերազանցում են պետության կողմից նախատեսված ծախսերին՝ կազմելով 294.9 մլրդ դրամ: ՀՀ տնտեսության վնասն այս պահի դրությամբ տարեկան կազմում է 362.7 մլրդ դրամ, որը համարժեք է 2017 թ-ի երկրի տարեկան համախառն ներքին արդյունքի 6.5%-ին:

ՈՎՀ-ի ամենամյա աճն ակնհայտորեն պայմանավորված է բնակչության շրջանում այդ հիվանդությունների զարգացմանը նպաստող ռիսկի գործոնների բարձր տարածվածությամբ:

2016-2017 թթ. Առողջապահության համաշխարհային կազմակերպության մեթոդաբանությամբ իրականացված STEPS հետազոտության տվյալները վկայում են, որ տղամարդկանց յուրաքանչյուր երկրորդը ծխում է (52%), տղամարդկանց 11% չարաշահում է ալկոհոլային խմիչքների օգտագործումը, բնակչության 21.3% ֆիզիկապես թերակտիվ է, յուրաքանչյուր երկրորդի մոտ առկա է ավելցուկային քաշ և ճարպակալում, 37.8% մոտ առկա է զարկերակային բարձր ճնշում, 35.7% ունեն ՈՎՀ-ի զարգացմանը նպաստող երեք, կամ ավելի ՌԳ:

Կովիդ-19 համավարակի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այդ հիվանդությունից մահացության հիմնական պատճառներից է ՈՎՀ-ի առկայությունը, որը ծանրացնում է հիվանդության ընթացքը և մեծացնում է մահացության հավանականությունը:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Միջոցառումը թույլ կտա ստեղծել ՈՎՀ զարգացմանը նպաստող ՌԳ մոնիթորինգային համակարգ և գնահատել ՈՎՀ-ի ՌԳ-ի տարածվածության միտումները նախորդ 4 հետազոտությունների արդյունքների համեմատ: Հարկ է նշել, որ նախորդ չորս հետազոտություններն իրականացվել են միջազգային կազմակերպությունների ֆինանսական աջակցությամբ: Ներկայումս հասունացել է այս հետազոտության ինստիտուցիոնալիզացման անհրաժեշտությունը, ինչպես դա արվում է այլ Եվրոպական տարածաշրջանի երկրներում:
Հաշվի առնելով ՀՀ-ում ՈՎՀ-ի բեռի աճող խնդիրը, վերջինիս արդիականությունը, ինչպես նաև ահռելի տնտեսական և սոցիալական հետևանքները, անհրաժեշտություն է առաջացել միջոցներ ձեռնարկել ՈՎՀ-ի կանխարգելման և վերահսկման ուղղությամբ, ինչին մեծապես կնպաստի նման հետազոտության իրականացումը:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

ՀՀ կառավարության համապատասխան ռազմավարությունները և ծրագրերը կյանքի կոչելու նպատակով կապահովվի ՈՎՀ-ի զարգացմանը նպաստող ՌԳ-ի տարածվածության վերաբերյալ փաստահեն տեղեկատվության առկայությունը, որը հիմք կհանդիսանա ՌԳ մոնիթորինգային համակարգի ստեղծման, ինչպես նաև առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վաղ հայտնաբերման նպատակով՝ գործող սքրինինգային ծրագրերի շարունակական ապահովման, նոր սքրինինգային ծրագրերի ներդրման և ընդլայնման համար:
Հետազոտության թե՛ ընթացքը և թե՛ արդյունքների հրապարակումը կնպաստեն ՈՎՀ-ի առաջացման ՌԳ-ի ազդեցության վերաբերյալ բնակչության իրազեկվածության մակարդակի բարձրացմանը:
Հետազոտության արդյունքները հնարավորություն կընձեռեն արդյունավետ կերպով պլանավորել ռիսկի գործոնների հսկողության և կանխարգելման միջոցառումների կազմակերպումը, բարեփոխումների և քաղաքականությունների իրականացումը:

5.4. «Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին» օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով մշտադիտարկման աշխատանքների իրականացում

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Համաձայն Առողջապահական համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) տվյալների՝ ծխախոտի օգտագործման հետևանքով յուրաքանչյուր տարի մահանում է ավելի քան 8 մլն մարդ, որից ավելի քան 1,2 մլն չծխողներն են, որոնք ենթարկվում են երկրորդային ծխի ազդեցությանը, իսկ 7 մլն հանդիսանում են ծխողներ: Աշխարհի 1,1 մլրդ. ծխողների շուրջ 80% -ը ապրում է ցածր և միջին եկամուտ ունեցող երկրներում:
Ծխելը հանդիսանում է ոչ վարակիչ հիվանդությունների զարգացման գործոններից մեկը: Համաձայն 2018թ. վիճակագրական տվյալների՝ Հայաստանի բնակչության շրջանում առավել տարածված ոչ վարակիչ հիվանդություններից մահացության բեռը կազմում է մոտ 80%, ընդ որում մահացության բուրգում արյան շրջանառության համակարգի հիվանդությունները զբաղեցնում են առաջին տեղը՝ 55.2%, որոնց հաջորդում են չարորակ նորագոյացությունները՝ 20.2%, շաքարային դիաբետը՝ 2,3%, թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդությունները՝ 1.5%: Հայաստանում ամեն տարի ախտորոշվում է շնչափողի, բրոնխների և թոքի չարորակ նորագոյացությունների մոտ 1500 նոր դեպք, տղամարդկանց շրջանում թոքի քաղցկեղով հիվանդացությունը և մահացությունը 5-6 անգամ բարձր է՝ կանանց համեմատությամբ: Թոքի քաղցկեղի 80%-ը պայմանավորված է տղամարդկանց շրջանում ծխախոտի օգտագործման բարձր տարածվածությամբ: Թոքի քաղցկեղի ախտորոշմամբ մարդկանց միայն 12%-ն է ապրում մինչև 5 տարի: Հայաստանում ամեն տարի գրանցվում է ԱՇՀՀ շուրջ 55 000 նոր դեպք, որոնց զարգացման հիմնական պատճառներից մեկը նույնպես ծխելն է:
Ծխախոտի օգտագործումը առաջացնում է նաև զգալի տնտեսական բեռ, ինչը, մասնավորապես, արտահայտվում է առողջապահական նշանակալի ծախսերի տեսքով՝ կապված ծխախոտի օգտագործման հետևանքով առաջացած հիվանդությունների բուժման հետ, ինչպես նաև մարդկային կապիտալի կորստով՝ կապված ծխախոտի օգտագործման հետևանքով առաջացած հիվանդացության և մահացության հետ:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

2020 թվականի փետրվարի 13-ին Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին» ՀՀ օրենքը, որի նպատակներն են՝ ներկա և ապագա սերունդներին պաշտպանել առողջության վրա ծխախոտահումքի, ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների օգտագործմամբ պայմանավորված բացասական ազդեցության, ծխախոտի ծխի վնասակար հետևանքներից, սոցիալական, տնտեսական ոլորտների և շրջակա միջավայրի վրա դրանց բացասական ներգործությունից, ինչպես նաև բնակչության ընկալումներում ծխախոտային

արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների օգտագործումը որպես անառողջ և մերժելի վարքագիծ արմատավորելը:
Հաշվի առնելով, որ Օրենքի դրույթները ուժի մեջ են մտնում փուլային եղանակով՝ Օրենքի կիրարկումն ապահովելու և տնտեսավարողներին իրազեկելու նպատակով անհրաժեշտ է մշտադիտարկման աշխատանքների իրականացում:
2021 թվականի հոկտեմբերի 12-ին առողջապահության նախարարի N 3855 - Ա հրամանով հաստատվել է «Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին» օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով մշտադիտարկման աշխատանքների նկարագիրը:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը
«Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին» օրենքի դրույթների կիրարկման ուղղությամբ տարեկան առնվազն 1000 օբյեկտի մշտադիտարկում և համապատասխան տնտեսավարողների իրազեկում:

5.5. Սիրտ-անոթային հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումների իրականացում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը
Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 2-րդ ենթակետից և պայմանավորված է առավել տարածված ոչ վարակիչ հիվանդություններից սիրտ-անոթային հիվանդությունների կանխարգելման, վաղ հայտնաբերման և բժշկական օգնության և սպասարկման արդյունավետ կազմակերպման անհրաժեշտությունից ելնելով՝ ՀՀ-ում նշյալ հիվանդություններից մահացությունը նվազեցնելու նպատակով:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները
Համաձայն Առողջապահության նախարարության առողջապահության տեղեկատվական վերլուծական ազգային կենտրոնի (ԱՏՎԱԿ) տվյալների, բնակչության շրջանում առավել տարածված ոչ վարակիչ հիվանդություններից մահացության բեռը կազմում է մոտ 80%, ընդ որում, մահացության բուրգում արյան շրջանառության համակարգի հիվանդությունները (ԱՇՀՀ) զբաղեցնում են առաջին տեղը՝ 47,3% (2020թ.-ի տվյալներով): Հանրապետության բնակչության «կյանքի անաշխատունակ տարիների» ցուցանիշի ավելացման (DALY, disability adjusted life years) 10 հիմնական պատճառներից չորսը պատկանում են սիրտ-անոթային հիվանդություններին (սրտի իշեմիկ հիվանդություն, ուղեղանոթային հիվանդություններ, զարկերակային գերճնշում (ՁԳ), սրտի այլ հիվանդություններ): Առողջապահության նախարարի 2019 թվականի օգոստոսի 26-ի N 2341-Լ հրամանով հաստատված սիրտ-անոթային հիվանդությունների դեմ պայքարի նպատակն է բնակչության շրջանում վաղ հայտնաբերել և կանխարգելել սիրտ-անոթային հիվանդությունների հետագա զարգացումը: Ուստի սիրտ-անոթային հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումների իրականացումը շատ կարևոր է ՀՀ-ում սիրտ-անոթային հիվանդություններով պայմանավորված հիվանդացությունը և մահացությունը նվազեցնելու տեսանկյունից:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները
Սիրտ-անոթային հիվանդությունների դեմ պայքարը արդյունավետ կլինի միջոցառումների համալիր և համակարգված կիրառման դեպքում: Հատկապես կարևորվում է պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով ՍԱՀ ախտորոշման և բուժման ծառայություններից օգտվող շահառուների խմբերի ընդլայնումը, ամբողջ բնակչությանը անվճար պայմաններով մատուցվող սրտամկանի սուր ինֆարկտի անհետաձգելի վիրահատական ծառայությունների և գլխուղեղի սուր կամ ենթասուր իշեմիկ կաթվածների բուժման, ներառյալ՝ ներերակային թրոմբոլիտիկ թերապիան ալտեպլազա դեղով) ծառայությունների մշտադիտարկումը և խնդիրների վերհանումը, մարզային բնակչության համար ծառայությունների հասանելիության ապահովումը, համապատասխան կադրերով ապահովվածության բարելավումը՝ խթանիչ մեխանիզմների կիրառմամբ, հանրային իրազեկվածության բարձրացումը և մի շարք այլ միջոցառումների իրականացումը:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը
Ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման ավարտին ակնկալվում է արյան շրջանառության համակարգի հիվանդություններից մահացության ցուցանիշի նվազում 5%-ով: Միաժամանակ, առավել

	տարածված 4 ոչ վարակիչ հիվանդությունների հետևանքով առաջացող վաղաժամ մահացության ինդեքսավորված ցուցանիշը մինչև 2025 թվականն ակնկալվում է նվազեցնել մինչև 0,9:
	5.6. Օրգանների և/կամ հյուսվածքների փոխպատվաստման ծառայությունների ընդլայնում **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 2-րդ ենթակետից և պայմանավորված է բնակչությանը պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով /համավճարային սկզբունքով/ մատուցվող փոխպատվաստումային բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների ընդլայնման անհրաժեշտությամբ: 1.1 **Կարգավորման հարաբերությունների ներկայիս վիճակը և առկա խնդիրները** Ներկայում պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով /համավճարային սկզբունքով/ իրականացվում է երիկամների փոխպատվաստում՝ քրոնիկ երիկամային անբավարարություն ունեցող անձանց մոտ, լյարդի փոխպատվաստում՝ քրոնիկ լյարդային անբավարարություն ունեցող անձանց մոտ և ոսկրածուծի/ցողունային բջիջների աուտոփոխպատվաստման վիրահատությունների իրականացում՝ արյունաբանական հիվանդություններ ունեցող անձանց մոտ: Ընդ որում՝ երիկամի փոխպատվաստման համար նախատեսված է 4,000,000դր. մասնակի փոխհատուցում, լյարդի փոխպատվաստման համար նախատեսված է 5,000,000 դր. մասնակի փոխհատուցում, իսկ ոսկրածուծի փոխպատվաստման համար նախատեսված է 6,500,000 դր. փոխհատուցում: Տարեկան իրականացվում է շուրջ 25 փոխպատվաստում: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Միջոցառման իրականացմամբ առաջարկվում է ընդլայնել արդեն իսկ պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով /համավճարային սկզբունքով/ մատուցվող փոխպատվաստումային բժշկական օգնության և սպասարկման ծառայությունները՝ տարեկան փոխպատվաստումների թիվը հասցնելով մինչև 40, ինչպես նաև ընդլայնել ծառայությունները՝ ընդգրկելով նաև ոսկրածուծի/ցողունային բջիջների ալլոգեն փոխպատվաստման ծառայությունը: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է փոխպատվաստումների ընդհանուր թիվը հասցնել մինչև 200-ի 5 տարվա ընթացքում:
	5.7. Առողջ ապրելակերպի՝ ներառյալ առողջ սնուցման, ֆիզիկական ակտիվության խթանման, ծխախոտի օգտագործման, ծխախոտի ծխի վնասակար ազդեցության, ալկոհոլի չարաշահման վնասների վերաբերյալ հանրային իրազեկման միջոցառումների կազմակերպում (էլեկտրոնային հաղորդակցության, կրթական ծրագրերի իրականացման, ինչպես նաև տպագիր նյութերի տարածման միջոցով) **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացումը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 6-րդ ենթակետից: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Համաձայն Կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի՝ Կառավարության գերակա խնդիրներից են բնակչության հիվանդացության և մահացության ցուցանիշների բարելավումը, առողջ ապրելակերպի խթանումը, մասնավորապես, առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների (այսուհետ՝ ՈՎՀ) զարգացմանը նպաստող ռիսկի գործոնների (այսուհետ՝ ՌԳ) տարածվածության նվազեցումը: Հայաստանում գրանցված բոլոր մահերի շուրջ 80%-ի բեռը բաժին է ընկնում առավել տարածված չորս ՈՎՀ-ի վրա, որոնցից 53.7% պայմանավորված է ԱՇՀՀ, 20.8%՝ ՉՆ, 2.0%՝ ՇԴ, 1.3%՝ ԹՔՕՀ: Այդ հիվանդություններից վաղաժամ մահացությունը (մինչև 70 տարեկան) ընդհանուր մահերի կառուցվածքում կազմում է 18.8%: Հարկ է նշել, որ այդ մահերի գերակշռող մասնաբաժինը գրանցվում է 35-65 աշխատունակ տարիքային խմբում: ՈՎՀ-ի զարգացումն ասոցացվում է կենսակերպային առանձնահատկությունների և դրանց հետ կապված՝ ռիսկի գործոնների հետ: Բնակչության առողջության վրա ռիսկի գործոնների վնասակար ազդեցությունն արտահայտվում է ոչ թե անմիջապես, այլ համեմատաբար երկար ժամանակ անց: Ռիսկի գործոնների տարածվածության կրճատումը նպաստում է առողջության ցուցանիշների բարելավմանը, մասնավորապես, կյանքի սպասվող տևողության աճին, ՈՎՀ-ի տարածվածության և դրանցից մահացության կրճատմանը:

ՈՎՀ–ի զարգացման հիմնական ռիսկի գործոններն են՝ ծխախոտի օգտագործումը, ալկոհոլահին խմիչքների չարաշահումը, ավելորդ քաշը, զարկերակային բարձր ճնշումը և ֆիզիկական թերակտիվությունը:
ՈՎՀ-ի ամենամյա աճը ակնհայտորեն պայմանավորված է բնակչության շրջանում այդ հիվանդությունների զարգացմանը նպաստող ռիսկի գործոնների բարձր տարածվածությամբ:
18-69 տարեկանների շրջանում յուրաքանչյուր երրորդի (36,0%) մոտ առկա է ՈՎՀ-ի զարգացմանը նպաստող 3-5 ռիսկի գործոն, իսկ 40-69 տարեկանների շրջանում յուրաքանչյուր վեցից մեկի մոտ (16,5%) բարձր է ԱՇՀՀ զարգացման կամ հաջորդ տասը տարվա ընթացքում այդ հիվանդությամբ պայմանավորված մահվան հավանականությունը:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Առողջ կենսակերպի արմատավորմանն ուղղված համալիր միջոցառումների իրականացումը բոլոր շահագրգիռ մարմինների կողմից:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Միջոցառման իրականացման դեպքում ակնկալվում է առողջ ապրելակերպի և վարքագծի վերաբերյալ բնակչության իրազեկվածության մակարդակի բարձրացմամբ պայմանավորված առողջության համար հիմնական վարքագծային ռիսկերի ենթարկվող անձանց թվաքանակի նվազեցում ու առողջ կենսակերպ վարող անձանց թվաքանակի բարձրացում: Միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է առողջ ապրելակերպ վարող անձանց թվի ավելացում (երեխաների շրջանում մինչև 60%, մեծահասակների՝ 30%):

5.8. Սննդամթերքում հագեցած ճարպերի/ տրանսճարպերի, ազատ շաքարների և աղի քանակների սահմանափակմանն ուղղված միջազգային փորձի ուսումնասիրություն և համապատասխան միջոցառումների իրականացման առաջարկությունների ներկայացում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացումը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 6-րդ ենթակետից:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Անկանոն սնվելն ու նախաճաշը բաց թողնելը Հայաստանում ընդունված վարքագիծ է: Համաձայն ԴԵԱՎ հետազոտության տվյալների՝ տարիքի հետ պակասում է նախաճաշող դեռահասների քանակը: Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ հայ երիտասարդները քաղցրավենիքի չափազանց մեծ սպառում ունեն՝ գրեթե կրկնակի ավելի, քան եվրոպական և կենտրոնական Ասիայի այլ երկրներում: Քաղցր գազավորված ըմպելիքներ 17 տարեկան երեխաների 30%-ը օգտագործում են ամեն օր:
Համաձայն ԱՀԿ-ի՝ կերակրի աղի օրական օգտագործումը չպետք է գերազանցի 5 գրամը (օրական < 2 գրամ նատրիումին համարժեք), մինչդեռ Հայաստանում աղի սպառման ծավալները կրկնակի գերազանցում են այս շեմը: Ըստ 2016- 2017 STEPS հարցման տվյալների՝ չափահաս բնակչության 35%-ը սնվելիս մշտապես կամ հաճախ աղ է ավելացնում կերակրին, իսկ 71%-ը տանը կերակուր պատրաստելիս մշտապես աղ է ավելացնում: 2010 թ.-ին 20-69 տարեկանների շրջանում գրանցված սիրտ-անոթային հիվանդություններից մահերի 26%-ը օրական 5 գրամից ավել կերակրի աղի օգտագործման հետևանք է (օրական > 2 գրամ նատրիում): Համաձայն 12 ԴԵԱՎ հետազոտության տվյալների՝ 11-15 տարեկան դեռահասների 20%-ն առնվազն օրը մեկ անգամ չիպս է օգտագործում:

1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Բնակչության ֆիզիկական և մտավոր ճիշտ զարգացումը, իմունային, հորմոնալ, ֆերմենտային և կենսական նշանակություն ունեցող այլ համակարգերի բնականոն և առողջ գործունեությունը հնարավոր է միայն սննդի լիարժեքության և անվտանգության ապահովման պայմաններում: Մեծ նշանակություն ունի սննդամթերքի ճիշտ ընտրությունը, պատրաստումը, պահպանումը և ընդունման ձևը, քանի որ ցանկացած սննդանյութի անբավարար կամ հավելյալ քանակությունը կարող է վնասել մարդու առողջությանը և դառնալ ՈՎՀ զարգացման պատճառ:
Բնակչության համար սննդամթերքի բաղադրության մաս հանդիսացող ավելացված շաքարի, աղի և հագեցած ճարպերի (որոնց չափազանց քանակների օգտագործումը հակացուցված է հիվանդությունների առանձին տեսակների դեպքում) քանակների վերաբերյալ տեղեկատվության հասանելիության ապահովումը կնպաստի ՈՎՀ-ով հիվանդացության ցուցանիշների նվազեցմանը:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է առողջ սնուցման խթանմանը, ինչպես նաև սննդամթերքում հագեցած ճարպերի, տրանսճարպերի, ազատ շաքարների և աղի քանակների վերաբերյալ սպառողների իրազեկվածության բարձրացմանն ուղղված օրենսդրական կարգավորմների իրականացում:

5.9. «Սննդային նյութերի պրոֆիլավորումը սահմանելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրամանի ընդունում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացումը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 6-րդ ենթակետից:

1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Դեռահասների վարքագիծը բացահայտելու նպատակով աշխարհի 50 երկրներում ԱՀԿ-ի կողմից երաշխավորված ընդհանուր մեթոդաբանությամբ իրականացվում է «Դպրոցահասակ երեխաների առողջության վարքագծի հետազոտություն» (այսուհետ՝ ԴԵԱՎ): Հետազոտությունը իրականացվում է 11, 13, 15, 17 տարեկանների շրջանում: 2017/2018 թթ. Հայաստանում իրականացված ԴԵԱՎ-ի տվյալները վկայում են, որ դեռահասների 70%-ը օգտագործում է քաղցրավենիք օրը մի քանի անգամ, բանջարեղենը կանոնավոր օգտագործում են դեռահասների 43%-ը, միրգը՝ 57%-ը, քաղցր գազավորված ըմպելիքները՝ մոտ 30%-ը: Երբևիցե կյանքում ալկոհոլը օգտագործել են 15 տարեկան տղաների 58%-ը, աղջիկների 38%-ը: Երբևիցե կյանքում ծխախոտ են օգտագործել 15 տարեկան տղաների 21%-ը և աղջիկների 3%-ը:

Հայաստանում երեխաների շրջանում արձանագրվում է գերքաշության ցուցանիշի աճի միտում: Համաձայն ժողովրդագրության և առողջության հարցերի 2015թ. հետազոտության տվյալների՝ մինչև 5 տարեկան երեխաների շուրջ 15%-ը ունեցել է ավելորդ քաշ կամ ճարպակալում: Համաձայն ԴԵԱՎ հետազոտության՝ 11 տարեկանների շրջանում դեռահաս աղջիկների 18%-ի և տղաների 26%-ի մոտ նկատվում է ավելորդ քաշ կամ ճարպակալում, 15 տարեկանում այս թվերը նվազում են, հասնելով համապատասխանաբար 6% աղջիկների և 15 % տղաների շրջանում:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Սննդային նյութերի պրոֆիլները՝ հիվանդությունների կանխարգելման և առողջության խթանման նպատակով սննդային նյութերի բաղադրությանը համապատասխան սննդամթերքի դասակարգման գործիք: Սննդային նյութերի պրոֆիլի որոշումը թույլ է տալիս տարբերակել սննդամթերքները, որոնք քիչ թե շատ հավանականությամբ հանդիսանում են առողջ սննդակարգի բաղադրիչ մաս: Սննդային նյութերի պրոֆիլը հանդիսանում է սննդամթերքների դասակարգման գործիք, այլ ոչ թե սննդակարգի, սակայն դրա կիրարկումն կարող է բերել ընդհանուր սննդակարգի սննդային արժեքի բարձրացման:

ԱՀԿ-ի տվյալները վկայում են, որ երեխաներին ուղղված գովազդում շատ տարածված է հագեցած ճարպերի, աղի և (կամ) ազատ շաքարների բարձր պարունակությամբ արտադրանքների մարքեթինգը, որի ժամանակ օգտագործվում է համոզիչ գովազդ, որն առավել տպավորիչ է երեխաների համար և առկա է տարբեր լրատվամիջոցներում, ներառյալ հեռուստատեսությունում և համացանցում:

Համաձայն ԱՀԿ-ի տվյալների՝ ազատ շաքարների, աղի և հագեցած ճարպերի բարձր պարունակությամբ սննդամթերքի մարքեթինգը, որն ուղղված է երեխաներին, հանդիսանում է մանկական ճարպակալման առաջացման վրա ազդող հիմնական գործոններից մեկը:

Այս խնդրի լուծման նպատակով ԱՀԿ-ն կոչ է անում անդամ պետություններին իրականացնել համապարփակ միջոցառումներ՝ ուղղված ազատ շաքարների, աղի և հագեցած ճարպերի բարձր պարունակությամբ սննդամթերքի՝ երեխաներին ուղղված մարքեթինգի սահմանափակմանը: Սննդային նյութերի պրոֆիլավորումը հանդիսանում է օժանդակ գործիք երեխաներին ուղղված սննդամթերքի մարքեթինգի սահմանափակման համար:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է ունենալ գործիք երեխաներին ուղղված սննդամթերքի գովազդի կարգավորման համար:

5.10. Առողջ սնուցմանն ուղղված օրենսդրական կարգավորումների ուսումնասիրություն, բացերի վերհանում և «Առողջ սնուցմանն ուղղված իրավական ակտերի փոփոխությունների առաջարկների ներկայացման ժամանակացույցը սահմանելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի ընդունում

1. **Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 6-րդ ենթակետից, որի նպատակն է առողջ սնուցմանն ուղղված օրենսդրական դաշտի կարգավորումը:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Բնակչության ֆիզիկական և մտավոր ճիշտ զարգացումը, իմունային, հորմոնալ, ֆերմենտային և կենսական նշանակություն ունեցող այլ համակարգերի բնականոն և առողջ գործունեությունը հնարավոր է միայն սննդի լիարժեքության և անվտանգության ապահովման պայմաններում: Մեծ նշանակություն ունի սննդամթերքի ճիշտ ընտրությունը, պատրաստումը, պահպանումը և ընդունման ձևը, քանի որ ցանկացած սննդանյութի անբավարար կամ հավելյալ քանակությունը կարող է վնասել մարդու առողջությանը և դառնալ ՈՎՀ զարգացման պատճառ:

STEPS ազգային հետազոտության արդյունքները փաստում են, որ բնակչության 10-ից 1-ն ընդհանրապես չի օգտագործում միրգ և բանջարեղեն, 10-ից 4-5-ն օգտագործում է 1-2 չափաբաժին, ինչն ըստ ԱՀԿ խորհրդատվության, բավարար չէ առողջ սննդակարգի համար և ավելացնում է ՈՎՀ առաջացման ռիսկը: Համաձայն ԴԵԱՎ հետազոտության (2017/2018 թթ.) բանջարեղենի օգտագործումը 11-15 տարեկան աղջիկների շրջանում կազմում է 51%, տղաների շրջանում՝43%, 17-տարեկանների շրջանում՝ 41%:

Անկանոն սնվելն ու նախաճաշը բաց թողնելը Հայաստանում ընդունված վարքագիծ է: Համաձայն ԴԵԱՎ հետազոտության տվյալները՝ տարիքի հետ պակասում է նախաճաշող դեռահասների քանակը. 13 տարեկանում կանոնավոր նախաճաշում են տղաների 61%-ը և աղջիկների 50%-ը, իսկ 17 տարեկանում արդեն տղաների 44%-ը և աղջիկների 38%-ը:

Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ հայ երիտասարդները քաղցրավենիքի չափազանց մեծ սպառում ունեն՝ գրեթե կրկնակի ավելի, քան եվրոպական և Կենտրոնական Ասիայի այլ երկրներում: Դեռահասների գրեթե 50%-ը օգտագործում է քաղցրավենիք (այսինքն՝ խմորեղեն, աղանդեր, հրուշակեղեն) ամեն օր: Քաղցրավենիք են օգտագործում օրը մի քանի անգամ 13 տարեկան աղջիկների 70%-ը և տղաների 61%-ը, 15 տարեկան աղջիկների 68%-ը և տղաների 64%-ը և 17 տարեկանների՝ միջինում 51%-ը: Քաղցր գազավորված ըմպելիքները օգտագործում են 13 տարեկան աղջիկների 26%-ը և տղաների 29%-ը, 15 տարեկան աղջիկների 24%-ը և տղաների 33%-ը, իսկ 17 տարեկանների խմբում քաղցր գազավորված ըմպելիքներ ամեն օր օգտագործում է 30%-ը:

Համաձայն ԱՀԿ-ի՝ կերակրի աղի օրական օգտագործումը չպետք է գերազանցի 5 գրամը (օրական < 2 գրամ նատրիումին համարժեք), մինչդեռ Հայաստանում աղի սպառման ծավալները կրկնակի գերազանցում են այս շեմը: Ըստ 2016-2017 STEPS հարցման տվյալների՝ չափահաս բնակչության 35%-ը սնվելիս մշտապես կամ հաճախ աղ է ավելացնում կերակրին, իսկ 71%-ը տանը կերակուր պատրաստելիս մշտապես աղ է ավելացնում: 2010 թ-ին 20-69 տարեկանների շրջանում գրանցված սիրտանոթային հիվանդություններից մահերի 26%-ը օրական 5 գրամից ավելի կերակրի աղի օգտագործման հետևանք է (օրական > 2 գրամ նատրիում): Համաձայն ԴԵԱՎ հետազոտության տվյալների 11-15 տարեկան դեռահասների 20%-ը առնվազն օրը մեկ անգամ չիպս են օգտագործում:

1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Այս խնդրի լուծման նպատակով անհրաժեշտ է իրականացնել առողջ սնուցմանն ուղղված օրենսդրական կարգավորումների ուսումնասիրություն և բացերի վերհանում:

2. **Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է առողջ սնուցման խթանմանն ուղղված օրենսդրական կարգավորմների իրականացում:

5.11. Կրծքագեղձի քաղցկեղի կանխարգելման և վաղ հայտնաբերման սքրինինգային հետազոտությունների իրականացում ՀՀ Լոռու, Տավուշի և Սյունիքի մարզերի բնակչության ռիսկային խմբերի շրջանում

1. **Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 3-րդ ենթակետից:

	Կրծքագեղձի չարորակ նորագոյացություններն ամբողջ աշխարհում ամենահաճախ ախտորոշվող չարորակ նորագոյացություններն են կանանց շրջանում, կազմելով ավելի քան երկու միլիոն նոր դեպք 2018թ.: Հայաստանում կրծքագեղձի քաղցկեղը կանանց շրջանում գրավում է առաջին տեղը՝ քաղցկեղային հիվանդությունների շարքում: Վերջին տարիներին նկատվում է կրծքագեղձի քաղցկեղով հիվանդացության աճ՝ մասնավորապես 2010թ.-ին կյանքում առաջին անգամ հայտնաբերված կրծքագեղձի քաղցկեղով կանանց թիվը կազմել է 982, իսկ 2014թ.-ին, 2015թ.-ին, 2016թ.-ին և 2017 թ.–ին արձանագրվել է համապատասխանաբար 1,210, 1,093, 1,039 և 1,118 դեպք: Ծրագրի նպատակն է Հայաստանի Հանրապետության 3 սահմանամերձ մարզերի կանանց մոտ կրծքագեղձի չարորակ նորագոյացությունների վաղ հայտնաբերումը և կանխարգելումը: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Հայաստանի Հանրապետությունում կրծքագեղձի կանոնակարգված սքրինինգ չի իրականացվում, իսկ մարզերում նշված հիվանդության կանխարգելման նպատակներով դիմելիությունը բժշկական հաստատություններ շատ ցածր է: Արդյունքում, հիվանդությունը բացահայտվում է վերջին փուլերում, երբ դրա բուժման գործընթացը առավել բարդ է և թանկ: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Հայաստանի Հանրապետության և Եվրասիական զարգացման բանկի միջև 2018թ. ստորագրված Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից ֆինանսավորվող «Առողջապահության առաջնային օղակում ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման կատարելագործում» դրամաշնորհային ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) շրջանակներում նախատեսվում է սահմանամերձ ՀՀ Տավուշի, Սյունիքի և Լոռու մարզերում իրականացնել կրծքագեղձի մամոգրաֆիկ սքրինինգային հետազոտություններ: Հետազոտությունները նախատեսվում են իրականացնել կանանց 50-69 տարիքային խմբում՝ ապահովելով առնվազն 50% ընդգրկվածություն (շուրջ 26 հազար հետազոտություն): **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Ծրագրի խնդիրն է ծրագրում ընդգրկված յուրաքանչյուր մարզում ապահովել առնվազն 50% 50-69 տարիքային խմբի կանանց ընդգրկվածություն իրականացվող սքրինինգին, կանխարգելիչ հետազոտությունների միջոցով հայտնաբերելով հիվանդությունը և հնարավորություն ընձեռելով հնարավորինս շուտ սկսել դրա բուժումը: Իրականացվող ծրագիրը պիլոտային է: Դրա արդյունավետ իրականացման և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում նախատեսվում է ձեռք բերված շարժական մամոգրաֆիայի սարքավորման միջոցով շարունակել կրծքագեղձի վաղ հայտնաբերման սքրինինգային հետազոտությունները Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում:
6	**6.1. «Հոգեկան առողջության պահպանման և բարելավման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի ընդունում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասին 7-րդ կետից, «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածի 2-րդ կետից, վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 728-Լ որոշմամբ հաստատված Առողջապահության նախարարության կանոնադրության 10-րդ կետից, ինչպես նաև ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 16-րդ ենթակետից, որի նպատակն է 2022-2026 թթ. համար հոգեկան առողջության պահպանման և բարելավման միջոցառումների ցանկի սահմանումը: Միջոցառման իրականացման նպատակն է բարելավել բնակչության հոգեկան առողջությունը, պաշտպանել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքները, զարգացնել հոգեկան առողջության պահպանման և բարելավման համակարգը, կանխարգելել բնակչության հոգեկան առողջության խնդիրների առաջացումը, ապահովել հոգեկան առողջության երկարատև խնդիրներ ունեցող անձանց հոգեսոցիալական վերականգնումը և սոցիալական ներգրավվածությունը, ինչպես նաև զարգացնել կադրային ներուժը: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

	Համաձայն վիճակագրական տվյալների, Հայաստանի Հանրապետությունում վերջին տարիների ընթացքում գրանցվել է բնակչության հիվանդացության աճ հոգեկան խանգարումներով, մասնավորապես հաշվառման մեջ գտնվող հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց թիվը 2000թ., 2015թ. և 2019թ. համապատասխանաբար կազմել է 32717, 51167 և 57164՝ արձանագրելով համապատասխանաբար 56% և 74% հիվանդացության աճ 2015թ. և 2019թ.-ին՝ 2000թ. համեմատությամբ: Նաև, աճել է դիսպանսերային հսկողության տակ վերցված հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց թիվը 1990թ. 2005թ. և 2019թ. համապատասխանաբար կազմելով 1169, 2042 և 2353՝ արձանագրելով համապատասխանաբար 74% և 101 % աճ 2005թ. և 2019թ.-ին՝ 1990թ. համեմատությամբ: Ուստի, հոգեկան առողջության պահպանման և բարելավման միջոցառումների ծրագրի հաստատումը կարևոր է հոգեկան առողջության պահպանման և բարելավման համակարգի զարգացման և բնակչության հոգեկան առողջության խնդիրների առաջացման կանխարգելման նպատակով: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Հոգեկան առողջության պահպանման և բարելավման միջոցառումների ներդրման աշխատանքների շրջանակներում նախատեսվում է կանխարգելել բնակչության հոգեկան առողջության խնդիրների առաջացումը, ապահովել հոգեկան առողջության երկարատև խնդիրներ ունեցող անձանց հոգեսոցիալական վերականգնումը և սոցիալական ներգրավվածությունը, ինչպես նաև զարգացնել կադրային ներուժը: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման իրականացման արդյունքում նախատեսվում է սահմանել 2022-2026թթ. համար հոգեկան առողջության պահպանման և բարելավման միջոցառումների ցանկը:
7	7.1 **«Ծխախոտի դեմ պայքարի Առողջապահության համաշխարհային կազմակերպության» շրջանակային կոնվենցիայի «Ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առևտուրը վերացնելու մասին» արձանագրության վավերացում ՀՀ Ազգային ժողովի կողմից** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 6-րդ ենթակետից, որի նպատակն է ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առևտրին հակազդումը և ծխախոտային արտադրատեսակների ապօրինի ոլորտում միջազգային համագործակցության իրավական ասպեկտների ամրապնդումը: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Հայաստանի Հանրապետության կողմից 2004 թվականին վավերացվել է «Առողջապահության համաշխարհային կազմակերպության Ծխախոտի դեմ պայքարի շրջանակային կոնվենցիան» (այսուհետ՝ Կոնվենցիա), որի նպատակն է ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում կողմերի իրականացմանը ենթակա՝ ծխախոտի դեմ պայքարի համար համապատասխան շրջանակներ ապահովելու միջոցով ներկա և ապագա սերունդներին ծխախոտի օգտագործման և ծխախոտի ծխի ազդեցության՝ մարդկանց առողջության համար քայքայիչ հետևանքներից, ինչպես նաև սոցիալական, բնապահպանական և տնտեսական հետևանքներից պաշտպանելը, որպեսզի մշտապես և էականորեն կրճատվի ծխախոտի օգտագործման և ծխախոտի ծխի ազդեցության տարածվածությունը: Սույն Կոնվենցիայի 15-րդ հոդվածը վերաբերում է ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առևտրին, ըստ որի կողմերը ընդունում են ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առևտրի բոլոր ձևերի վերացումը, այդ թվում՝ մաքսանենգության, ապօրինի արտադրության և կեղծման վերացումը...: «Ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առևտուրը վերացնելու մասին» արձանագրությունը Կոնվենցիայի առաջին արձանագրությունն է, որի նպատակը ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առևտրի բոլոր ձևերի վերացումն է: Այն նոր ինքնուրույն միջազգային պայմանագիր է, որը հիմնվում է Կոնվենցիայի 15-րդ հոդվածի վրա և վերաբերում է հակածխախոտային համապարփակ քաղաքականության կարևորագույն ասպեկտ հանդիսացող ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առևտրին հակազդելու միջոցներին: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Արձանագրության վավերացումը կարևոր գործիք է ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առևտրին հակազդելու և ի վերջո, այն վերացնելու համար, ինչն իր հերթին կարող է նպաստել հանրային առողջության

	պահպանմանը և ծխախոտային արտադրատեսակների ապօրինի ոլորտում միջազգային համագործակցության իրավական ասպեկտների ամրապնդմանը: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է Ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առևտրին հակազդումը և ծխախոտային արտադրատեսակների ապօրինի ոլորտում միջազգային համագործակցության իրավական ասպեկտների ամրապնդում:
8	8.1. **«Հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության հսկողության և կանխարգելման ռազմավարությանը և 2023-2027 թվականների միջգերատեսչական միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության որոշման ընդունում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետից, «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածի 2-րդ կետից, վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 728-Լ որոշմամբ հաստատված Առողջապահության նախարարության կանոնադրության 10-րդ կետից, ինչպես նաև ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 11-րդ և 12-րդ ենթակետերից, որի նպատակն է «Մեկ առողջություն» գաղափարի շրջանակներում բոլոր ոլորտներում Հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության կանխարգելումը: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայում համաշխարհային առողջապահության համար լուրջ հիմնախնդիր է հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության զարգացումը: Դեղակայուն ձևերով վարակիչ հիվանդությունները ենթակա չեն ստանդարտ սխեմաներով բուժման, արդյունքում երկարում է հիվանդության ընթացքը, դեղաբուժությունը դառնում է անարդյունավետ և մեծանում է անբարեհաջող ելքերի և բարդությունների թիվը: Եվրոպական տարածաշրջանի որոշ երկրներում հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության տարածվածության մակարդակը հասնում է 25% և 29 երկրների տվյալներով դեղակայուն ձևերով վարակների տարեկան 400 000 դեպքերից մահանում է 25000 մարդ: Իրականում հավանական է, որ այս տվյալներն ավելի բարձր են, քանի որ հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության պատճառով հետևանքների գրանցումն ու հաշվետվությունը լիարժեք չի իրականացվում: Հայաստանի Հանրապետությունում հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության զարգացման պատճառ են հանդիսանում այդ խնդրի հետ առնչվող բոլոր ոլորտներում (բնապահպանություն, գյուղատնտեսություն, առողջապահություն) հսկողության ցածր մակարդակը: Հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության և հակամանրէային դեղերի սպառման կարգավորումը պահանջում են համակարգված և համապարփակ գործողություններ՝ ուղղված հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության և հակամանրէային դեղերի սպառման կարգավորմանը: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Խնդրի լուծման նպատակով անհրաժեշտ է համալիր և համապարփակ մոտեցումներ կիրառել «մեկ առողջություն» գաղափարի շրջանակներում և կիրառել միջոլորտային կառավարման մեխանիզմներ: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման իրականացման արդյունքում կապահովվի հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության և հակամանրէային դեղերի սպառման կարգավորմանն ուղղված միջոցառումների իրականացման գործընթացում բոլոր շահագրգիռ ոլորտների ներգրավվածությունը և փոխհամաձայնեցված շարունակական աշխատանքը:
9.	9.1 **«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջից, ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 13-րդ ենթակետից: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ներկայումս ՀՀ-ում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելու նպատակով լիցենզավորվում են ոչ թե բժիշկները, այլ իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը, որոնք համապատասխանում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված լիզենցավորման համար անհրաժեշտ պահանջ-պայմաններին:
Օրենսդրությամբ սահմանված կադրային հագեցվածության պահանջի բավարարումը սահմանափակվում է համապատասխան կրթություն և/կամ որակավորում ունեցող և վերջին 5 տարում վերապատրաստում անցած մասնագետի առկայությամբ:
Ներկա իրավիճակում ի հայտ են գալիս մի շարք խնդիրներ, ինչպիսիք են՝ բուժանձնակազմի ցածր մոտիվացիան՝ որակյալ բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելու հարցում, որովհետև հիմնականում վերջինիս աշխատավարձը կախված չէ նրա աշխատանքի որակից, ոչ որակյալ բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելու արդյունքում բժշկի պատասխանատվություն չկրելը և այլն:
Ներկայումս բուժաշխատողների լիցենզավորման համակարգ գործում է մի շարք զարգացած երկրներում, ինչպիսիք են Բելգիան, Գերմանիան, Ֆինլանդիան, Դանիան, ԱՄՆ-ը և այլն:
Միաժամանակ վերջին տարիների ընթացքում առողջապահության ոլորտում մասնագետների մասնագիտական գործունեության ընթացքում առաջացան տարաբնույթ խնդիրներ և բացեր ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության բժշկական, ստոմատոլոգիական, դեղագիտական, հանրային առողջապահական և դեղագործական հիմնական մասնագիտությունների և նեղ մասնագիտությունների ցանկերը հաստատելու մասին» N 952 –Ն կառավարության որոշման հետ կապված:

1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Սույն միջոցառման նպատակն է «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ կետում իրականացնել համապատասխան փոփոխություններ՝ առողջապահական ոլորտում մասնագիտական գործունեության հիմնական մասնագիտությունների և նեղ մասնագիտացումների ցանկերը սահմանելու և հստակեցնելու նպատակով, ինչպես նաև բժիշկների անհատական լիցենզավորման համակարգի ներդրման համար օրենսդրական հիմքերը ապահովելու անհրաժեշտությամբ:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Միջոցառման ընդունումը կնպաստի սահմանելու Հայաստանի Հանրապետությունում բժշկական և միջին մասնագիտական բժշկական գործունեություն ծավալելու իրավունք տվող հիմնական մասնագիտությունների և նեղ մասնագիտացումների ցանկը՝ համահունչ դարձնելով այն համաշխարհային առողջապահական փորձի պահանջներին, հստակեցնելով առողջապահության հիմնական, ինչպես նաև միջին մասնագիտական մասնագիտությունների և նեղ մասնագիտացումների տարանջատումը՝ ստեղծելով իրավական հիմք հետագայում առողջապահական ոլորտի համապատասխան հիմնական մասնագիտությունների և նեղ մասնագիտացումներով կադրերի պատրաստման համար: Միջոցառման ընդունման արդյունքում բուժաշխատողներին հնարավորություն կտրվի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելու անհատական լիցենզիա ստանալ, ինչն էլ իր հերթին հիմք կհանդիսանա վերջիններիս կողմից ինքնուրույն մասնագիտական գործունեությամբ զբաղվելու համար: Բացի այդ, այս համակարգի ներդրման արդյունքում ակնկալվում է բարձրացնել բժշկական օգնության և սպասարկման որակը, բացառել մասնագետի կախվածությունը բուժհաստատությունից, հնարավորություն ընձեռել պացիենտին իրացնելու բժշկին ինքնուրույն ընտրելու իր իրավունքը, բժշկի կողմից թույլ տրված սխալի դեպքում սահմանափակել վերջինիս գործունեությունը՝ լիցենզիայից զրկելու միջոցով:

9.2 «Առողջապահության բնագավառի մասնագիտական գործունեության հիմնական մասնագիտությունների և նեղ մասնագիտացումների ցանկերը սահմանելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի ընդունում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջից, ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 13-րդ ենթակետից, ինչի նպատակն առողջապահության բնագավառի մասնագիտական գործունեության հիմնական մասնագիտությունների և նեղ մասնագիտացումների արդիականացված և հստակեցված ցանկերի առկայությունն է:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

	Ներկայումս Հայաստանի Հանրապետության առողջապահական համակարգում գործում է ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության բժշկական, ստոմատոլոգիական, դեղագիտական, հանրային առողջապահական և դեղագործական հիմնական մասնագիտությունների և նեղ մասնագիտությունների ցանկերը հաստատելու մասին» N 952–Ն կառավարության որոշումը: Սակայն վերջին տարիները առողջապահության ոլորտի մասնագետների մասնագիտական գործունեության ընթացքում ի հայտ եկած տարաբնույթ խնդիրները, նպաստեցին վերանայել գործող Հայաստանի Հանրապետության բժշկական, ստոմատոլոգիական, դեղագիտական, հանրային առողջապահական և դեղագործական հիմնական մասնագիտությունների և նեղ մասնագիտությունների ցանկերը, իրականացնել որոշակի օրենսդրական փոփոխություններ՝ առկա բացերը լրացնելու և ուղղելու նպատակով: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Նախագծով առաջարկվում է սահմանել Առողջապահության բնագավառի մասնագիտական գործունեության հիմնական մասնագիտությունների և նեղ մասնագիտացումների ցանկերը՝ համահունչ դարձնելով այն համաշխարհային առողջապահական փորձի պահանջներին: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Իրավական ակտի ընդունումը կկանոնակարգի Հայաստանի Հանրպետությունում առողջապահության բնագավարում մասնագիտական գործունեություն ծավալելու իրավունք ունեցող մասնագետների ցանկը՝ համահունչ դարձնելով այն համաշխարհային առողջապահական փորձի պահանջներին: Կհստակեցնի նաև հիմնական մասնագիտությունները և նեղ մասնագիտացումները, ինչպես նաև միջին մասնագիտական բժշկական մասնագիտությունների տարանջատումը և կստեղծի իրավական հիմք հետագայում համապատասխան հիմնական մասնագիտությունների և նեղ մասնագիտացումներով բարձրագույն և միջին մասնագիտական բժշկական մասնագիտություններով կադրերի պատրաստման համար, ինչպես նաև կհամապատասխանեցնի բժիշկ-մասնագետների կազմը առողջապահական համակարգի ներկայիս և սպասվող պահանջներին:
	9.3. «Բուժաշխատողների մասնագիտական բնութագրերը հաստատելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի ընդունում **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 35-րդ կետից և 31-րդ հոդվածից, ինչպես նաև ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 13-րդ ենթակետից: Սույն միջոցառման իրականացումը պայմանավորված է բժշկագիտության վերջին զարգացումներին համահունչ մասնագիտական բնութագրերի առկայության անհրաժեշտությամբ: **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս առկա չեն բուժաշխատողների բոլոր մասնագիտություններով մասնագիտական բնութագրեր: Ժամանակի ընթացքում քայլեր են իրականացվել դրանք սահմանելու ուղղությամբ, սակայն այդպես էլ ընդհանոր ավարտական արդյունք չի ստացվել: Այս համատեքստում մասնագիտական բնութագրերի ոչ արդիական լինելը, իսկ առանձին դեպքերում դրանց բացակայությունը պրակտիկայում կարող են խնդիրներ առաջացնել մասնագետների ճիշտ ընտրության և մասնագիտական գործունեության իրականացման տեսանկյունից: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Հաշվի առնելով բժշկագիտության զարգացումները՝ անհրաժեշտ է վերանայել և սահմանել բուժաշխատողների մասնագիտական բնութագրերը: **2. Միջոցառման իրականացման դեպքում ակնկալվող արդյունքը** Միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է ունենալ ՀՀ առողջապահության նախարարի կողմից հաստատված բուժաշխատողների մասնագիտական ընդհանուր նկարագրեր, որտեղ սահմանված կլինեն մասնագետի տեսական և գործնական գիտելիքները, աշխատանքային հմտությունները և ունակությունները, ինչպես նաև մասնագիտական իրավունքները, պարտականությունների և գործառույթների ծավալը:
10.	**10.1. «Վերարտադրողական առողջության բարելավման, պերինատալ կորուստների նվազեցման և առողջապահական գործոնով պայմանավորված ծնելիության բարելավման 2024-2026 թթ. ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության որոշման ընդունում**

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետից, «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածի 2-րդ կետից, վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 728-Լ որոշմամբ հաստատված Առողջապահության նախարարության կանոնադրության 10-րդ կետից, ինչպես նաև ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 7-րդ ենթակետից և պայմանավորված է «Առողջապահական գործոնով պայմանավորված ծնելիության բարելավման ծրագիրը և ծրագրի կատարումն ապահովող 2020-2023 թվականների միջոցառումները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 5-ի N 258-Լ որոշմամբ սահմանված գործողությունների շարունակականությունը ապահովելու անհրաժեշտությամբ:

1.1. Կարգավորման ենթակա հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.

2020 թվականին կառավարության կողմից ընդունվել է ծրագիր, որով նախատեսված միջոցառումները միտված են հնարավորինս խթանել ծնելիությունը՝ բարելավելով բնակչության վերարտադրողական առողջությունը, նվազեցնելով պերինատալ կորուստները, հաղթահարելով անպտղությունը: Ծրագիրը ավարտվում է 2023 թվականին, սակայն ծնելիության խթանումը շարունակելու է մնալ որպես երկրի ռազմավարական խնդիր, առավել ևս հաշվի առնելով այն հանգամանքը, որ 44-օրյա պատերազմի ընթացքում մենք ունեցանք վերարտադրողական պոտենցիալի լուրջ կորուստ, ինչը անխուսափելիորեն իր դրսևորումը կունենա՝ սկսած 2023-2024 թթ. -ից:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Գործող ծրագրի գնահատումը թույլ կտա վերհանել վերջինիս թույլ և ուժեղ կողմերը, բնակչության կողմից առավել ընդունելի և մեծ պահանջարկ ունեցող միջոցառումները՝ ուժեղացնելով այդ բաղադրիչները, վերանայելով թույլերը, միաժամանակ ապահովելով ծրագրի շարունակականությունը առավել արդյունավետ ձևաչափով:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Նոր ծրագրի մշակումը կնպաստի առողջապահական գործոնով պայմանավորված ծնունդների խթանմանը, հետևաբար, նաև իր լուման կունենա երկրի առաջ ծառացած ժողովրդագրական խնդրի լուծմանը: Միաժամանակ այն կնպաստի մինչև 2025 թվականը ծնելիության ընդհանուր գործակցի բարձրացման մինչև 18‰:

10.2. Վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներով տրամադրվող ծառայությունների (աշխարհագրական և ֆինանսական) մատչելիության ապահովում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 7-րդ ենթակետից և պայմանավորված է մարզային մակարդակում վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներ մատուցող ծառայությունների զարգացման անհրաժեշտությամբ:

1.1. Կարգավորման ենթակա հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.

Վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներով բուժօգնություն տրամադրող ծառայությունների կենտրոնացումը մայրաքաղաքում հսկայական խնդիրներ է առաջացնում ամուսնական զույգերի համար: Անպտղության բուժումը միջինում կազմում է 1-ից 2.5 տարի: Յուրաքանչյուր ամսվա ընթացքում զույգը բազմիցս այցելում է բժշկին ՝ կնոջ մոտ ֆոլիկուլի աճը որոշելու, և այնպիսի գործողություններ կատարելու համար ինչպիսիք են ՝ էնդոմետրիումի հաստության որոշումը, ինֆեկցիոն և հորմոնալ խանգարումների բուժման արդյունքների ստուգումը: Մեր հաշվարկներով ծախսերի 25-30% ը բաժին է ընկնում տրանսպորտին (սա այն դեպքում, երբ հաշվի չի առնվում ժամանակը, որը տևում է 2-3-ից մինչև 8-9 ժամ): Մինչդեռ ներարգանդային սերմնավորման ծառայություն մատուցող կենտրոնների (Վերարտադրողական բժշկության երկրորդ մակարդակի կենտրոններ) համար պահանջվող թե մասնագիտական, թե սարքավորումային ռեսուրսները շատ ավելի քիչ են, քան արտամարմնային բեղմնավորման պարագայում:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Սույն թվականի հունիսին «Մարդու վերարտադրողական առողջության և իրավունքի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունները հնարավորություն կընձեռեն պարզեցնել ներարգանդային սերմնավորման կաբինետներին ներկայացվող մասնագիտական և սարքավորումային պահանջները, քանի որ հիմնական սարքավորումները, որոնք անհրաժեշտ են վերարտադրողական բժշկության 2-րդ մակարդակի կենտրոնների ստեղծման համար, հետևյալն են.

Ա. Ուլտրաձայնային հետազոտության սարքավորում՝ որովայնային և հեշտոցային տվիչով
Բ. Ցենտրիֆուգ
Գ. Միկրոսկոպ
Դ. Սառնարան
Ե. Անդրոլոգի աշխատանքի համար նախատեսված սեղան
Զ. Համակարգիչ
Լաբորատոր և մեկանգամյա օգտագործման պարագաներ

Մարզային բուժկենտրոները սարքավորումներով հագեցնելով և մասնագիտական վերապատրաստումներ իրականացնելով, առնվազն 3 մարզային կենտրոնում հնարավոր կլինի ստեղծել ներարգանդային սերմնավորման ծառայություն մատուցող կաբինետներ:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Կենտրոնների ստեղծումը մարզային բժշկական կենտրոններում կնվազեցնի մայրաքաղաք այցելելու անհրաժեշտությունը 50-60 %-ով, դրանով իսկ բարելավելով տվյալ ծառայությունների թե աշխարհագրական, թե ֆինանսական մատչելիությունը, ինչը որոշակիորեն կնպաստի ներկայիս առողջապահական գործոնով պայմանավորված ծնելիության բարելավմանը և անուղղակիորեն՝ ժողովրդագրական իրավիճակի բարելավմանը:

Արդյունքում վերարտադրողական խնդիրներով երիտասարդ կանանց և աղջիկների մասնաբաժինը մինչև 2025 թվականը 18.5-ից կնվազի 9.2: Միաժամանակ այն կնպաստի ծնելիության ընդհանուր գործակցի բարձրացման մինչև 18‰:

10.3. Մարզերում պրենատալ ախտորոշման ծառայությունների ուժեղացում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 7-րդ ենթակետից և պայմանավորված է մարզերում պտղի ներարգանդային ախտորոշման ծառայությունների ցածր մակարդակով և վերջինիս զարգացման անհրաժեշտությամբ:

1.1. Կարգավորման ենթակա հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.

Ըստ ՀՀ ԱՆ Առողջապահության ազգային ինստիտուտի 2019 թվականի «Առողջություն և առողջապահություն» վիճակագրական տարեգրքի ՝ ՀՀ բնակչության 0-14 տարեկան երեխաների շրջանում բնածին շեղումների (զարգացման արատների), դեֆորմացիաների, քրոմոսոմային խանգարումների 1398 (2010թ.), 1405 (2015թ.), 1513 (2017թ.), 1361 (2018թ.) դեպքեր են հայտնաբերվել (բացարձակ արժեք):

Զարգացման արատների հայտնաբերման գործում հիմնական դերը ՈՒՁՀ է: Զարգացման արատների ճնշող մեծամասնությունը հնարավոր է հայտնաբերել ժամանակակից ուլտրաձայնային սարքավորումներով՝ համապատասխան որակավորման մասնագետի կողմից: Արատների ուշ հայտնաբերումը առաջացնում է մի շարք բժշկական, հոգեբանական և սոցիալական խնդիրներ: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մեր երկրում առկա է խիստ անհրաժեշտություն բարելավելու ինչպես տրամադրվող հետազոտությունների որակը, այնպես էլ վերջիններիս հասանելիությունը, հատկապես մարզային մակարդակում:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Մասնագետների համապատասխան վերապատրաստումը և սարքավորումներով ապահովումը կարճ ժամկետում ցույց կտա իր արդյունավետությունը՝ պտղի արատների հայտնաբերման և պերինատալ կոնսիլիումի միջոցով վերջիններիս վարման պլանը որոշելու համար կյանքի հետ անհամատեղելի և շտկման չենթարկվող արատների և դրանից մահացության նվազեցման առումով:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Կյանքի հետ անհամատեղելի և շտկման չենթարկվող՝ կյանքի կայուն սահմանափակումների հանգեցնող արատների վաղ հայտնաբերումը թույլ կտա թույլատրելի վաղ ժամկետներում իրականացնել բժշկական ցուցումներով հղիության ընդհատումը, նվազեցնելով մեռելածնությունը և նորածնային մահացությունը, իսկ

	շտկելի արատների դեպքում՝ որոշել հղիության վարման առավել արդյունավետ պլանը: Միաժամանակ, միջոցառման իրականացումը կնպաստի մինչև 5 տարեկան մանկական մահացության նվազմանը մինչև 8.2‰:
11	**11.1. Հայաստանի Հանրապետությունում կեսարյան հատումների աճի միտման պատճառների հետազոտության իրականացում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 7-րդ ենթակետից և պայմանավորված է հետազոտության իրականացման միջոցով Հայաստանում կեսարյան հատումների պատճառական կազմը ուսումնասիրելու անհրաժեշտությամբ: **1.1. Կարգավորման ենթակա հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.** Հանրապետությունում տարեց տարի գրանցվում է կեսարյան հատումների աճի միտում, այսպես, եթե 2017թ. դրանք կազմել են 30%, իսկ 2020թ.35,7%, ապա արդեն 2021թ. օգոստոսի տվյալներով կեսարյան հատումները կազմել են 37%: Շատ դեպքերում կեսարյան հատումը այն միակ միջոցն է, որը թույլ է տալիս խուսափել մոր և երեխայի համար առկա վտանգներից, սակայն, ըստ ԱՀԿ-ի առաջարկների, վերջին 30 տարվա ընթացքում կեսարյան հատումների ցանկալի մակարդակ էր համարվում 10-15%-ը: Միաժամանակ, 2015թ. ԱՀԿ հայտարարեց, որ 10-ից% բարձր կեսարյան հատումների ցուցանիշը չի ասոցացվում մայրական և նորածնային մահացության ցուցանիշի նվազման հետ: Հայտարարության մեջ նշվում էր, որ, այնուամենայնիվ, կեսարյան հատման ցուցանիշի և մեռելածնության, մայրական և պերինատալ հիվանդացություն, մանկաբուժական արդյունքների միջև կապը չի կարող որոշվել տվյալների բացակայության պատճառով, այդ իսկ պատճառով ԱՀԿ-ն չի առաջարկում կեսարյան հատումների մակարդակի իդեալական տարբերակ: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Չնայած որ օպտիմալ կեսարյան հատումների մակարդակը նպաստում է մոր և մանկան կյանքի պահպանմանը, այն պետք է կատարվի բժշկական ցուցումներով: Իրականում, ջանքերը պետք է ուղղված լինեն ոչ թե որոշակի ցուցանիշին հասնելու, այլ ապահովելու կեսարյան հատումները միայն այն դեպքում, երբ դրա կարիքը կա: Կեսարյան հատումների աճը գլոբալ գործընթաց է և աշխարհի մի շարք երկրներում այն նույնիսկ գերազանցում է 50%, ունենալով նաև օբյեկտիվ պատճառներ (Առաջնածինների տարիքային շեմի բարձրացում, առաջնածինների համամասնության ավելացում, բազմապտուղ հղիությունների ավելացում ծննդաբերող կանանց միջին տարիքի ավելացում, ավելորդ քաշով և գեր կանանց ավելացում), սակայն, օրինակ, մանկական և մայրական մահացության ցածր մակարդակ ունեցող Հյուսիսային Եվրոպայի երկրներում այն չի գերազանցում 20-25 %-ը: Աշխարհում հայտնի են կեսարյան հատումների աճի գլոբալ պատճառները, սակայն դրա հետ պայքարի հստակ մեթոդաբանություն և ծրագիր մշակելու համար անհրաժեշտ է վերհանել մեր երկրին բնորոշ պատճառները՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ, որի համար անհրաժեշտ է ազգային ներկայացուցչական հետազոտություն: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Հետազոտության արդյունքների ամփոփումը հնարավորություն կընձեռի ունենալ երկրում կեսարյան հատումների աճի խորքային պատճառների ուսումնասիրություն, որը հիմք կծառայի չհիմնավորված կեսարյան հատումների նվազեցմանն ուղղված իրատեսական միջոցառումների պլանի մշակման համար:
	11.2. «Հայաստանի Հանրապետությունում կեսարյան հատումների աճի դադարեցմանն ու նվազեցմանն ուղղված միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի ընդունում 1. **Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետից, «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածի 2-րդ կետից, վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 728-Լ որոշմամբ հաստատված Առողջապահության նախարարության կանոնադրության 10-րդ կետից, ինչպես նաև ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 7-րդ ենթակետից և պայմանավորված է վերջին տարիներին երկրում արձանագրվող կեսարյան հատումների աճով:

	1.1. Կարգավորման ենթակա հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները. Հանրապետությունում տարեց տարի գրանցվում է կեսարյան հատումների աճի միտում, այսպես, եթե 2017թ. դրանք կազմել են 30%, իսկ 2020թ.35,7%, ապա արդեն 2021թ. օգոստոսի տվյալներով կեսարյան հատումները կազմել են 37%: Աճի այս միտումների պահպանման դեպքում կանխատեսվում է կեսարյան հատումների հետագա աճ, ինչը ոչ բարենպաստ ազդեցություն կունենա, ինչպես կնոջ առողջության, այնպես էլ երեխաներ ունենալու կնոջ որոշման վրա, հաշվի առնելով, որ առաջին կեսարյան հատումից հետո հաջորդ ծննդաբերությունները կատարվում են նույն եղանակով, ազդելով երրորդ և ավելի երեխաներ ունենալու՝ կնոջ որոշման վրա, դրանով իսկ սահմանափակելով պլանավորվող երեխաների քանակը: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Երկրի մակարդակով ներկայացուցչական հետազոտություն իրականացնելուց հետո, կեսարյան հատումների իրականացման գործընթացում բոլոր դերակատարների և պատճառների վերհանումից հետո հնարավոր է մշակել միջոցառումներ, որոնք ուղղված կլինեն ոչ թե հետևանքների մեղմացմանը, այլ պատճառների վերացմանը: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Հայաստանին բնորոշ պատճառների վերհանումից հետո հնարավոր է դառնում մշակել միջոցառումների պլան, որը թույլ կտա կանգնեցնել, իսկ այնուհետև հնարավորինս կրճատել կեսարյան հատումների մակարդակը, նվազեցնելով սուբյեկտիվ գործոնների ազդեցությունը և միաժամանակ խուսափելով մոր և նորածնի համար հնարավոր ռիսկերից: Միջոցառումների իրականացման արդյունքում ակնկալվում է կեսարյան հատումների աճի տեմպերի նվազեցում և դադարեցում, ինչը դրական ազդեցություն կունենա և մայրական առողջության բարելավման, և պետության ֆինանսական բեռի նվազեցման առումով, և ծնելիության խթանման առումով, քանի որ առաջին կեսարյան հատումից հետո հաջորդ ծննդաբերությունները կատարվում են նույն եղանակով, ազդելով երրորդ և ավելի երեխաներ ունենալու՝ կնոջ որոշման վրա, դրանով իսկ սահմանափակելով պլանավորվող երեխաների քանակը:
	11.3. Երևանի ծննդօգնության 3-րդ մակարդակի բժշկական կազմակերպությունների կողմից ծննդօգնություն իրականացնող մարզային բժշկական կազմակերպություններին մեթոդական աջակցության ցուցաբերում **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 7-րդ ենթակետից և պայմանավորված է մարզային մակարդակում ծննդօգնության որակի և մայրական մահացության ցուցանիշների բարելավման անհրաժեշտությամբ: **1.1. Կարգավորման ենթակա հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.** Հայաստանում մայրական մահացության ցուցանիշներն անհանգստացող են՝ հաշվի առնելով վերջին տարիների միտումները, որոնք պայմանավորված են ինչպես կորոնավիրուսային հիվանդության համավարակի ազդեցությամբ, այնպես էլ կանանց սոմատիկ վիճակի վատթարացմամբ, մարզային մակարդակում կադրային ռեսուրսների անբավարարությամբ, նրանց գիտելիքների պարբերական թարմացման անհրաժեշտությամբ, ինչպես նաև Երևանի առաջատար մասնագետների հետ մշտական կապի և բարդ դեպքերում խորհրդատվական աջակցության անհրաժեշտ հարթակի բացակայությամբ: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Առաջարկվում է Երևանի առաջատար կլինիկաների միջոցով կազմակերպել արտագնա այցելություններ կցված մարզային բժշկական կենտրոններ, որտեղ կիրականացվեն մանկաբարձական բարդ դեպքերի քննարկումներ, մանկաբարձական տարածված ախտաբանությունների և բարդությունների վարման ուղեցույցների շարունակական ուսուցում և քննարկում, ինչպես նաև կստեղծվի հնարավորություն՝ խնդրահարույց դեպքերի հեռավար քննարկումները Երևանի առաջատար կլինիկաների մասնագետների հետ կազմակերպելու և երկրորդ կարծիք ստանալու համար: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

	Ծննդօգնություն իրականացնող մարզերի մասնագետների գիտելիքների բարելավում, բարդ մանկաբարձական դեպքերի քննարկման միջոցով մայրական մահացության ցուցանիշների բարելավում 18%-ով:
12.	**12.1. Ադրենոգենիտալ համախտանիշի նորածնային սկրինինգային ծրագրի ներդրում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 7-րդ ենթակետից: Սկրինինգի նպատակն է նորածինների շրջանում վաղաժամ հայտնաբերել ադրենոգենիտալ համախտանիշի աղ-կորցնող ձևերը և ժամանակին բուժմամբ կանխել մահացությունը, հայտնաբերել վիրիլ ձևը տղաների շրջանում, հայտնաբերել ոչ-դասական ձևի մոտ 20%-ը, կանխարգելելով հիվանդության հետ կապված առողջության և զարգացման խնդիրները: Հիվանդության հետ կապված բարդությունները կարելի է կանխել միայն նախքան ախտանիշների զարգանալը բոլոր երեխաներին հետազոտելով և բուժման կարիք ունեցող նորածիններին հայտնաբերելով: Ժամանակին բուժման դեպքում խնդիրների մեծ մասից կարելի է խուսափել, ապահովելով հետագայում երեխայի զարգացումը: **1.1. Կարգավորման ենթակա հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.** Մակերիկամների կեղևի բնածին դիսֆունկցիան (այսուհետ, ՄԿԲԴ) աուտոսոմ-ռեցեսիվ հիվանդություն է, որը պայմանավորված է մակերիկամների կեղևի ստերոիդային հորմոնների սինթեզին մասնակցող ֆերմենտների բնածին դեֆեկտով: Հիվանդության դասական տեսակների հանդիպման հաճախականությունը պոպուլյացիայում կազմում է միջինում 1:14 000 նորածին, իսկ հետերոզիգոտային կրելիության և ոչ դասական տեսակներինը որոշ պոպուլյացիաներում հասնում է մինչև 1:500-1:1000: Ոչ դասական տեսակի տարածվածությունը խիստ տարբեր է տարբեր պոպուլյացիաներում և էթնիկ խմբերում, օր. Նյու-Յորքի բնակչության շրջանում կազմում է 1:100, իսկ Աշկենազի պոպուլյացիայում՝ 1:27: Հայկական պոպուլյացիայում հիվանդության տարածվածության վերաբերյալ որևէ տվյալ հրապարակված չէ, քանի որ նմանատիպ հետազոտություններ կատարված չեն, սակայն այժմ հանրապետական մանկական էնդոկրին դիսպանսերում հաշվառված են 28 երեխա՝ մինչև 6 տարեկան (էնդոկրինոլոգի մոտ դիմելու կամ վերակենդանացման բաժանմունքների միջոցով): 21-հիդրոքսիլազայի դեֆիցիտը կարող է պայմանավորված լինել այդ ֆերմենտի համար պատասխանատու գենի՝ CYP 21A-ի բազմաթիվ մուտացիաներով: ՄԿԲԴ-ի դասական տեսակը սովորաբար ախտորոշվում է ծնվելուց հետո կամ կյանքի առաջին ամիսներին՝ սեռական օրգանների “անհայտ” կառուցվածքի, վիրիլիզացիայի, քաշ և աղ կորցնելու, ջրազրկման, հիպերկալեմիայի և հիպերպիգմենտացիայի հիման վրա, եթե կլինիկական դրսևորումները խիստ արտայատված են: Այս տեսակի դեպքում բուժման բացակայությունը կարող է հանգեցնել երեխայի մահվան՝ կոլապսի և կարդիոգեն շոկի հետևանքով: Սակայն դեպքերի մեծամասնությունում, հատկապես վիրիլ կամ ոչ դասական տեսակների դեպքում, այն ախտորոշվում է բավականին ուշացումով, երբ երեխաների մոտ սկսվում է վաղաժամ սեռական հասունացում: Այն հանգեցնում է մանկական տարիքում արագ աճին, սակայն հետագայում նրանց մոտ ոսկրային հասունացման արագացման և աճի գոտիների շուտ փակվելու հետևանքով առաջանում է կարճահասակություն: ՄԿԲԴ-ի ոչ դասական ձևը կարող է ենթադրվել իգական սեռի երեխաների շրջանում նախա- և հետպուբերտատային տարիքում մենստրուալ ցիկլի խանգարումների և վիրիլիզացիայի դեպքում: Ճնշող մեծամասնությամբ (80%) 21-հիդրոքսիլազայի դեֆիցիտը լինում է մասնակի, այդ պատճառով գլյուկո- և միներալոկորտիկոիդների անբավարարության նշանները, հիմնականում, չեն արտահայտվում և հայտնաբերվում են չբերության կապակցությամբ հետազոտելիս, այն էլ ոչ միշտ: Իսկ արական սեռի երեխաների շրջանում այն կարող է ընդհանրապես մնալ չախտորոշված: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Հանրապետության բոլոր ծննդատներում նորածինների արյան նմուշառում և նրանց մոտ 17OH պրոգեստերոնի որոշում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Սկրինինգի իրականացման շնորհիվ ակնկալվում է նորածինների շրջանում վաղ՝ մինչկլինիկական շրջանում, հայտնաբերել և ախտորոշել ՄԿԲԴ-ն և կատարել ժամանակին և ադեկվատ բուժում, կանխել սուր մակերիկամային անբավարարության առաջացումը և ռեանիմացիոն բուժման անհրաժեշտությունը, նվազեցնել նման երեխաների մահացությունը: Օրինակ՝ ՌԴ-ում 2006թ-ից ներդրված նորածնային սկրինինգը հայտնաբերել է, որ ՄԿԲԴ-ի իրական տարածվածությունն այդ երկրում երեք անգամ ավելի բարձր է, քան ըստ դիմելիության հիվանդության հայտնաբերումը:

Բուժումը հանդիսանում է ցմահ փոխարինող թերապիա, և պահանջում է երեխաների ցմահ դիսպանսեր հսկողություն մանկական հետո նաև մեծահասակների էնդոկրին դիսպանսերներում: Միաժամանակ, միջոցառման իրականացումը կնպաստի մինչև 5 տարեկան մանկական մահացության նվազմանը մինչև 8.2‰:

12.2. Մարզային բժշկական կազմակերպություններում երեխաների ինտենսիվ թերապիայի ծառայությունների բուժանձնակազմի գիտելիքների և մատուցվող ծառայությունների որակի բարձրացում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 7-րդ ենթակետից և պայմանավորված է մարզերում երեխաներին տրամադրվող ինտենսիվ և վերակենդանացման բուժօգնության ծառայությունների որակի բարելավման անհրաժեշտությամբ:

1.1. Կարգավորման ենթակա հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.

3-րդ մակարդակի մանկական վերակենդանացման ծառայությունները տեղակայված են Երևանում, երկրորդ մակարդակի մանկական վերակենդանացման ծառայություն այսօր առկա է միայն Գյումրիում: Հանրապետության այլ մարզերում մանկական վերակենդանացման առանձին բաժանմունքներ չկան, դրանք գործում եմ խառը՝ մեծահասակների բաժանմունքների կազմում: Միաժամանակ, վերջիններիս անձնակազմը կարիք ունի ոչ միայն մանկական հասակում հանդիպող՝ ինթենսիվ թերապիա պահանջող վիճակների ուղեցույցների, այլև պարզ ալգորիթմերի, որոնք կուղղորդեն բուժանձնակազմին, հնարավորություն տալով նրանց արագ կողմնորոշվելու երեխայի բուժման տակտիկայի և բուժական գործողությունների ընտրության հարցում:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Միջոցառմամբ առաջարկվում է գնահատել մարզերում երեխաներին ինտենսիվ և վերակենդանացման բուժօգնություն տրամադրող ծառայությունների հագեցվածությունը և անհրաժեշտության դեպքում վերազինել: Միաժամանակ , ալգորիթմերը մշակվելուց և տպագրվելուց հետո պաստառների տեսքով կփակցվեն յուրաքանչյուր մարզային բուժհաստատության ինթենսիվ թերապիայի բաժանմունքներում, խնայելով երեխայի վերակենդանացման կամ ինթենսիվ թերապիայի համար կողմնորոշվելու և բուժական տակտիկան ընտրելու համար թանկ ժամանակը:

Մարզային բուժանձնակազմի ուսուցումը կկազմակերպվի երրորդ մակարդակի մանկական ռեանիմացիաների առաջատար մասնագետների միջոցով:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Այս միջոցառման ակնկալվող արդյունքը՝ մարզերում աշխատող բուժանձնակազմի գիտելիքների բարելավում, որի արդյունքում ակնկալվում է բուժօգնության որակի բարելավում և մանկական մահացության իջեցում: Միաժամանակ, միջոցառման իրականացումը կնպաստի մինչև 5 տարեկան մանկական մահացության նվազմանը մինչև 8.2‰:

12.3. Հայաստանի Հանրապետությունում մանկական պալիատիվ արտահիվանդանոցային պիլոտային ծառայության ստեղծում՝ Երևանի և մոտակա մարզերի շահառուների համար

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 7-րդ ենթակետից և պայմանավորված է անկարողություններ առաջացնող բնածին և ժառանգական հիվանդությունները, անդարձալի ընթացք ունեցող հիվանդություններով երեխաների կյանքի որակի բարելավման անհրաժեշտությամբ:

1.1. Կարգավորման ենթակա հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.

Պալիատիվ (ամոքիչ) խնամքի առանձնահատուկ հատվածն է մանկական պալիատիվ օգնությունը, որը բավականաչափ տարբեր է մեծահասակների ամոքիչ օգնությունից՝ պալիատիվ օժանդակություն ունեցող երեխաների շրջանում զգալի տեղ են գրավում ոչ թե օնկոլոգիական հիվանդությունները, այլ բազմակի անկարողություններ առաջացնող բնածին և ժառանգական հիվանդությունները, անդարձալի ընթացք ունեցող նյարդամկանային խանգարումները և այլն: Իր ուրույն բնութագիրն ունի պերինաթալ պալիատիվ օգնությունը,

	որը վերաբերում է նորածինների առանձնահատուկ ծանր դեպքերին: Տարբեր են նաև հիվանդների ընտանիքների կարիքները: Հայաստանում միջազգային օժանդակությամբ իրականացված ուսումնասիրությունը գնահատել է մանկական պալիատիվ դեպքերի քանակը՝ տարեկան շուրջ 2000: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Մշակվել է միջազգային արդի մոտեցումներին համապատասխանող հայեցակարգ և պալիատիվ օգնության մոդել: Հաշվի առնելով այն, որ մանկական պալիատիվ դեպքերն ունեն երկարատև ընթացք, ի լրացումն արդեն իսկ գործող կարճաժամկետ հիվանդանոցային օգնությանը, անհրաժեշտ է ստեղծել մասնագիտացված ծառայություն, որի միջոցով կապահովվի տնային պայմաններում տրամադրվող շարունակական պալիատիվ օգնությանը, հիվանդների պարբերական այցերը մասնագետների կողմից: Առաջնային փուլում նախատեսվում է ներդնել նման ծառայություններ Երևանում, այնուհետ մարզերում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման իրականացման արդյունքում հնարավոր կդառնա առավել օպտիմալ կազմակերպել հիվանդ երեխաների խնամքը և խուսափել անհարկի հոսպիտալացումներից, բարելավել կյանքի վերջին փուլում նրանց կյանքի որակը:
	12.4. Մոր և մանկան առողջության պահպանման ոլորտում մատուցվող ծառայությունների, հղիների, երեխաների խնամքի, առավել տարածված հիվանդությունների և վիճակների վերաբերյալ տեղեկատվական/խորհրդատվական ինտերնետային հարթակի ստեղծում, գործարկում, պահպանում և պարբերաբար թարմացում **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 7-րդ ենթակետից և պայմանավորված է հղիների/մայրերի/ խնամողների՝ առավել տարածված հիվանդությունների և վիճակների վերաբերյալ գիտելիքների բարձրացման անհրաժեշտությամբ: **1.1. Կարգավորման ենթակա հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.** Հայտնի է, որ մանկական մահացությունը մեծապես կախված է ոչ միայն առողջապահական ծառայությունների որակից, այլև ծնողների կրթական ցենզից, երեխայի խնամքը ճիշտ կազմակերպելու, հիվանդությունների ժամանակ վիճակը գնահատելու և ճիշտ վարքագիծ դրսևորելու մոր/խնամողի ունակությունից: Սակայն համացանցում տեղադրված տեղեկատվությունը ոչ միշտ է հասանելի, տեղադրված է տարբեր հարթակներում և կայքերում և շատ ժամանակ նաև պարունակում է ոչ ճիշտ տեղեկատվություն: Շատ երկրներում կան նման հարթակներ, որոնցում պարունակվող տեղեկատվությունը երաշխավորվում է պետության կողմից, դրանք մեծ պահանջարկ ունեն բնակչության շրջանում և մեծ դերակատարում: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Ինտերնետային հարթակի ստեղծումը հնարավորություն կընձեռի մայրանալ պատրաստվող կանանց և մայրիկներին այս հարթակի միջոցով ստանալ արժանահավատ տեղեկատվություն, որը կօգնի ծնողին ուղղորդելու, վտանգի նշաններին ծանոթացնելու, տան պայմաններում առաջին օգնությունը ցուցաբերելու և այլ հարցերի շուրջ արժանահավատ տեղեկատվություն տրամադրելու հարցում, միաժամանակ խրախուսելով ծնողին անհապաղ բժշկի դիմել՝ անհրաժեշտության դեպքում, նաև իրենց հասանելիք այլ ծառայություններ (սոցիալական, կրթական, այլ) ստանալու հնարավորության և տեղի վերաբերյալ: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Հարթակի գործարկման շնորհիվ ակնկալվում է խնայել բժշկի և ծնողի ժամանակը, նվազեցնելով հոսպիտալացում չպահանջող այցելությունները հիվանդանոց, բարելավել հանրության տեղեկատվությունը երեխայի հետ կապված բազմաթիվ հարցերի շուրջ, ճիշտ ուղղորդման շնորհիվ նվազեցնելով մանկական հիվանդացությունը և մահացությունը: Ըստ այդմ, միջոցառման իրականացումը կնպաստի մինչև 5 տարեկան մանկական մահացության նվազմանը մինչև 8.2‰:
13	**13.1. Դպրոցահասակ երեխաներին, դեռահասներին մատուցվող առողջապահական ծառայությունների փաստահեն և ծախսարդյունավետ մոդելի մշակում.** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 7-րդ ենթակետից և պայմանավորված է առկա ամբուլատոր-պոլիկլինիկական համակարգում դեռահասային ծառայության ծախսարդյունավետ մոդելի ներդրման անհրաժեշտությամբ:

1.1. Կարգավորման ենթակա հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.
Համաձայն ԱՀԿ, մեծահասակների ոչ վարակային հիվանդություններով վաղաժամ մահացության 70%-ը պայմանավորված է դեռահասային տարիքում ձևավորված առողջական վարքագծով և առողջության խնդիրներով: Համաձայն «Դպրոցահասակ երեխաների առողջության վարքագծի» 2018 թ. ազգային հետազոտության՝ դեռահասների շրջանում առկա են թե՛ առողջության, թե՛ վարքագծի խնդիրներ՝ բազմակի առողջական գանգատներ ներկայացրել են դեռահասների 60% -ը, ընկճախտի նշաններ՝ 30% -ը և այլն: Առկա են անառողջ սննդային և այլ սովորույթներ, մասնավորապես՝ քաղցրավենիքի, գազավորված ըմպելիքների չարաշահում, ինչի արդյունքում մասնավորապես ավելացել է ավելորդ քաշ և գիրություն ունեցող դեռահասների թիվը և այլն: Ցածր է տեղեկատվածությունը ՄԻԱՎ/ՁԻԱՀ, սեռավարակների կանխարգելման վերաբերյալ: Միևնույն ժամանակ, ցածր է դիմելիությունը բժշկական կազմակերպություններ, առկա է դեպքերի ուշ հայտնաբերում: Մինչդեռ աշխարհի և մեր տարածաշրջանի երկրների (Մոլդովա, Էստոնիա և այլն) փորձը ցույց է տալիս, որ դեռահասների առողջությունը և վարքագիծը հնարավոր է բարելավել՝ առավել որակյալ և բարյացակամ ծառայություններ տրամադրելով առաջնային օղակում, երկրորդային և երրորդային մակարդակներում, հանրակրթական հաստատություններում, ինչպես նաև իրականացնելով համայնքային կանխարգելիչ ծրագրեր:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները
Միջոցառման իրականացմամբ կառաջարկվի դեռահասային ծառայության այն լավագույն մոդելը, որը հնարավոր կլինի տեղայնացնել Հայաստանի պայմաններում և ներդնել գործող ամբուլատոր-պոլիկլինիկական համակարգում:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը
Միջոցառման իրականացման արդյունքում հնարավորություն կստեղծվի առավել թիրախային կազմակերպել դեռահասների բժշկական օգնությունը և սպասարկումը, հաշվի առնելով դեռահասին բնորոշ վարքագծային ռիսկերը, տարիքային, առողջական, հոգեբանական առանձնահատկությունները, ինչը հետագայում կհանդիսանա ճիշտ վարքագիծ դրսևորող, առողջ մեծահասակի գրավական:

13.2. «Առողջության առաջնային պահպանման բժշկական կազմակերպություններում և հանրակրթական ուսումնական հաստատություններում դպրոցահասակ երեխաների և դեռահասների բժշկական օգնության և սպասարկման կարգը հաստատելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի ընդունում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը
Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածի 2-րդ կետից, վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 728-Լ որոշմամբ հաստատված Առողջապահության նախարարության կանոնադրության 10-րդ կետից, ինչպես նաև ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 7-րդ ենթակետից և պայմանավորված է առկա ամբուլատոր-պոլիկլինիկական համակարգում դեռահասային ծառայության ծախսարդյունավետ մոդելի ներդրման անհրաժեշտությամբ:

1.1. Կարգավորման ենթակա հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.
Ներկայիս գործող ԱԱՊ համակարգում դեռահասների սպասարկումը դրված է տեղամասային բժիշկների վրա, սակայն, ելնելով նրանց աշխատանքային ծանրաբեռնվածությունից, դեռահասին անհրաժեշտ խորհրդատվական աշխատանքը, ռիսկային վարքագծի կանխարգելումը, մեկուսի պայմաններում նրա կարիքներին արձագանքելը միշտ չէ, որ իրականացվում են պատշաճ մակարդակով:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները
Կմշակվի հրաման, որտեղ, հաշվի առնելով ներկայացված առաջարկները, կհստակեցվի դեռահասային ծառայություն մատուցող բուժաշխատողի տեղն ու դերը, կհաստատվի նրա աշխատանքի նկարագիրը:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

	Միջոցառման իրականացման արդյունքում նախադրյալներ կստեղծվեն հանրապետությունում դեռահասային ծառայության ներդրման համար և լավագույնս արձագանքել դեռահասների կարիքներին:
14.	**14.1. Առողջապահության նախարարի 2020 թվականի փետրվարի 16-ի թիվ 456-Լ հրամանով հաստատված միջոցառումների իրականացում.** **1. Էլեկտրոնային ուղեգրի, դեղատոմսի, անաշխատունակության թերթիկի մոդուլի մշակում և ներդնում:** **2. Հիվանդությունների ռեգիստրների մոդուլի մշակում և ներդնում:** **3. Բժշկական փաստաթղթերի, հաշվետվությունների և մատյանների թվայնացում:** **4. Պացիենտի էջի իրազեկման աշխատանքներ:** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 8-րդ ենթակետից: Միջոցառման իրականացումը պայմանավորված է առողջապահության էլեկտրոնային համակարգի ամբողջական ներդրման անհրաժեշտությամբ՝ ըստ Առողջապահության նախարարի 2020 թվականի փետրվարի 16-ի թիվ 456-Լ հրամանով (այսուհետ՝ հրաման) սահմանված ժամկետների: **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Հրամանով սահմանված են էլեկտրոնային առողջապահության զարգացման ծրագիրը և այն միջոցառումները, որոնք անհրաժեշտ են իրականացնել էլեկտրոնային առողջապահության ամբողջական ներդրման համար, մասնավորապես՝ էլեկտրոնային դեղատոմսի, էլեկտրոնային անաշխատունակության թերթիկների, էլեկտրոնային ուղեգրերի ներդրում, հեռաբժշկության համակարգի փորձարկում և կիրառում, բժշկական հաստատություններում վարվող գրանցամատյանների թվայնացում, բնակչությանը տրամադրվող փաստաթղթերի թվայնացում և այլն: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Կարևորելով երկրի մակարդակով թվայնացման արդիական և կարևոր լինելու հանգամանքը, անհրաժեշտ է նաև առողջապահության ոլորտում ևս փաստաթղթաշրջանառությունն իրականացնել էլեկտրոնային տարբերակով՝ թղթային փաստաթղթաշրջանառությունից աստիճանաբար անցում կատարել թվայինի, ընդլայնել բնակչության կողմից համակարգից օգտվելու հնարավորությունները, ներդնել հեռաբժշկության համակարգ և այլն: **2. Միջոցառման իրականացման դեպքում ակնկալվող արդյունքը** Միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է ամբողջությամբ ներդնել էլեկտրոնային առողջապահության համակարգ՝ ապահովելով էլեկտրոնային առողջապահության համակարգի ենթակառուցվածքի կատարելագործումը, նոր ծառայությունների ներդրումը, առողջապահական ծառայությունների մատչելիության ապահովումը, պացիենտների բավարարվածության մակարդակի բարձրացումը:
15	**15.1. Առողջապահության նախարարության և Պաշտպանության նախարարության փոխհամագործակցության մեխանիզմների և պլանների վերանայում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 10-րդ ենթակետից և ՀՀ հանրապետական տարբեր պլաններով նախատեսված շահագրգիռ բնագավառների փոխհամագործակցության պահանջից, ինչպես նաև ռազմական դրության պայմաններում առողջապահության և պաշտպանության ոլորտների արագ և փոխհամագործակցված աշխատանքներն իրականացնելու, արագ արձագանքման մեխանիզմները, ինչպես նաև անհրաժեշտ կարողությունների և դրանց ծավալման ու մոբիլիզացիայի համակարգերն ու պլանները վերանայելու, անհրաժեշտության դեպքում նոր մեխանիզմներ ներդնելու նպատակից: **1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** ՀՀ հանրապետական տարբեր պլաններով նախատեսված են առողջապահության և պաշտպանության բնագավառների փոխհամագործակցության մեխանիզմները, սակայն անհրաժեշտություն կա դրանք

	վերանայելու, ամրապնդելու, երկրի առջև ծառացած մարտահրավերներին դիմակայելու և առկա ռեսուրսներն ու ուժերը համախմբելու: **1.1. առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Առաջարկվում է Առողջապահության նախարարության և Պաշտպանության նախարարության փոխհամագործակցության մեխանիզմների և պլանների վերանայումն իրականացնել պարբերաբար՝ կախված իրավիճակից և օրենսդրական հետագա բարեփոխումներից: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման իրականացումով ակնկալվում է ունենալ ռազմական դրության պայմաններում արագ արձագանքման ճկուն մեխանիզմներ, անհրաժեշտ կարողությունների և դրանց ծավալման ու մոբիլիզացիայի գործուն համակարգեր:
	15.2. **Առողջապահության նախարարության և Արտակարգ իրավիճակների նախարարության փոխհամագործակցության մեխանիզմների և պլանների վերանայում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 10-րդ ենթակետից և ՀՀ հանրապետական տարբեր պլաններով նախատեսված շահագրգիռ բնագավառների փոխհամագործակցության պահանջից, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում առողջապահության և արտակարգ իրավիճակների բնագավառների պատասխանատու մարմինների միջև արագ արձագանքման ճկուն մեխանիզմներն ու պետական նյութական պահուստում ռեսուրսների վարման կարգերը վերանայելու, մասնագիտական ներուժի պատրաստման, ինչպես նաև անհրաժեշտ կարողությունների և հնարավորությունների մոբիլիզացիայի գործուն համակարգեր ունենալու պահանջից: **1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** ՀՀ հանրապետական տարբեր պլաններով նախատեսված են առողջապահության և արտակարգ իրավիճակների բնագավառների փոխհամագործակցության մեխանիզմները, սակայն անհրաժեշտություն կա դրանք վերանայելու, ամրապնդելու, առկա ռեսուրսների և ուժերի բաշխման կարգերը թարմացնելու: **1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Առաջարկվում է Առողջապահության նախարարության և Արտակարգ իրավիճակների նախարարության փոխհամագործակցության մեխանիզմների և պլանների վերանայում ու պարբերաբար թարմացում, նոր առաջացող ռիսկերի համատեղ գնահատում և արդյունավետ հակազդեցության մեխանիզմների մշակում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման իրականացումով ակնկալվում է ունենալ արտակարգ իրավիճակներում արագ արձագանքման ճկուն մեխանիզմներ և ռեզերվային նյութատեխնիկական ռեսուրսներ, մասնագիտական ներուժ, անհրաժեշտ կարողությունների և հնարավորությունների մոբիլիզացիայի գործուն համակարգեր:
16.	**16.1 Արագ արձագանքման բժշկական թիմի (ԱԱԲԹ) ստեղծում և միջազգային հավաստագրում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 9-րդ ենթակետից և Գերմանական Արբեյտեր-Սամարիտեր-Բանդ (ԱԲԴ) հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ «Ավելի ուժեղ միասին. միջսահմանային արտակարգ իրավիճակների հակազդման համատեղ գործողություն Հայաստանի Հանրապետության և Վրաստանի միջև» ծրագրի կետերի կատարումից, որի նպատակն է՝ • նպաստել տարածաշրջանային համագործակցության մեխանիզմների ներդրմանը՝ հատուկ ուշադրություն դարձնելով կարողությունների ընդլայնմանն ու երկու երկրների առողջապահության բնագավառում արտակարգ իրավիճակների կառավարման համակարգերի ստեղծմանը, • բարելավել Հայաստանի Հանրապետության և Վրաստանի առողջապահության համակարգերում միջսահմանային համագործակցությունը և անհետաձգելի բժշկական օգնության հասանելիության մակարդակը՝ ստեղծելով Արագ Արձագանքման Բժշկական Թիմեր (ԱԱԲԹ) Հայաստանի

	Հանրապետությունում և Վրաստանում, որոնք կհավաստագրվեն Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության (ԱՀԿ) հավաստագրման գործընթացի համաձայն: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ծրագրի վերաբերյալ առաջին հանդիպումը տեղի է ունեցել 2021 թվականի մարտի 24-ին, որի շրջանակներում ներկայացվել են առաջարկություններ երկու երկրների թիմերի ներդաշնակման, նախատեսվող քայլերի ու ներդրվող մեխանիզմների, իրականացվող աշխատանքների և ակնկալվող արդյունքների վերաբերյալ, ինչպես նաև քննարկվել են ծրագրում ներառվող ՀՀ և Վրաստանի կառավարման մարմինների համագործակցության շրջանակները: Ծրագրի պաշտոնական մեկնարկին նվիրված 2021 թվականի հունիսի 11-ին կազմակերպվել է միջոցառում: Միջոցառման ընթացքում Հայաստանի Հանրապետության և Վրաստանի կողմերը ներկայացրել և քննարկել են համագործակցության հնարավոր մեխանիզմները: Միջոցառումն ավարտվել է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության, Վրաստանի օկուպացված տարածքներից տեղահանված բնակչության, աշխատանքի և առողջապահության և սոցիալական հարցերի նախարարության և «Արբեյտեր-Սամարիտեր-Բանդ Վրաստան» (ASB) գերմանական կազմակերպության միջև Փոխըմբռնման Հուշագրի ստորագրումով: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** 2021 թվականի հուլիսի 12-14-ը Երևանում նախատեսվել էր ASB ՀՀ-ի գրասենյակի ղեկավարի և աշխատակազմի և Վրաստանի ASB գրասենյակի ներկայացուցիչների հետ հանդիպում, որտեղ քննարկվել են անհետաձգելի բժշկական թիմերի ձևավորման և հետագա քայլերի վերաբերյալ հարցեր: Ծրագրի իրականացման գործընթացում ներգրավված է նաև ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Հայաստանի Հանրապետությունում և Վրաստանում արագ արձագանքման բժշկական թիմերի (ԱԱԲԹ) ստեղծում և հավաստագրում, թիմերի ներդաշնակում, թիմի մասնակիցների վերապատրաստում, անհետաձգելի իրավիճակներում անհետաձգելի բժշկական օգնության մակարդակի բարձրացում, միջսահմանային համագործակցության բարելավում:
17.	17.1. **«Ազգային լաբորատոր համակարգի զարգացման ռազմավարության և դրանից բխող 2022-2026 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը** 1**. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածի 2-րդ կետից, վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 728-Լ որոշմամբ հաստատված Առողջապահության նախարարության կանոնադրության 10-րդ կետից, ինչպես նաև ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 11-րդ և 16-րդ ենթակետերից և պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում ախտորոշիչ լաբորատորիաների միասնական, ստանդարտացված գործունեության համակարգման, միջազգային պահանջներին համապատասխան որակյալ, անվտանգ, համադրելի ստանդարտ գործելակարգերի կիրառման, լաբորատոր ծառայությունների որակի և հասանելիության բարձրացման, դրանց նկատմամբ վերահսկողության մեխանիզմների սահմանման, լաբորատոր մասնագետների շարունակական կրթական ծրագրերի արդիականացման ապահովման օրենսդրական կարգավորումների անհրաժեշտությամբ: 1.1. **կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս Հայաստանի Հանրապետությունն ունի բարդ լաբորատոր համակարգ՝ կազմված պետական և մասնավոր, ինչպես ինքնուրույն իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, այնպես էլ տարբեր գերատեսչությունների ներքո գտնվող հաստատությունների կազմում գործող ախտորոշիչ լաբորատորիաներից, որոնք գործում են անջատ, չհամակարգված, ոչ ստանդարտ գործելակարգերով, նրանցից ոմանք կիրառում են ոչ արդի մեթոդներ, չունեն անգամ տարրական ենթակառուցվածքային պայմաններ: Երկրում գործող լաբորատոր գործունեության լիցենզավորման պահանջները և կիրառվող վերահսկողական մեխանիզմները դեռևս զարգացման անհրաժեշտություն ունեն և չեն ապահովում միջազգային պահանջներին համապատասխան վերահսկողություն, չկան լաբորատոր ծառայությունների որակի գնահատման ազգային ծրագրեր, դեռևս նշանակված չեն ռեֆերենս լաբորատորիաներ, սահմանված չեն լաբորատոր ցուցանիշների ռեֆերենս չափորոշիչներ, լաբորատոր մասնագետների կրթական և շարունակական մասնագիտական զարգացման ծրագրերում մասամբ են ներառված լաբորատոր որակի կառավարմանը, կենսանվտանգությանն

	ու կենսապահովմանը նվիրված ուսուցողական նյութեր, չկա ազգային մակարդակում «Ին Վիտրո» ախտորոշման սարքավորումների նկատմամբ որակի հսկողություն, ինչի հետևանքով տարբեր լաբորատորիաներում իրականացված ախտորոշիչ հետազոտությունների արդյունքները համադրելի չեն, վստահելի չեն և զուրկ են ապացուցողական հիմքերից: **1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները (միջոցառումը համակատարող ունենալու դեպքում նշելով նաև համակատարողի կողմից համապատասխան միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները)** Նախագծի հաստատմամբ ռազմավարական ծրագրով կսահմանվեն միջոցառումներ, որոնց իրականացումը կապահովի օրենսդրության կատարելագործումը, Առողջապահության նախարարության և գերատեսչական լաբորատորիաներում որակի կառավարման ապահովումը, գործունեության ստանդարտացումը, հավատարմագրումը, արդիականացումը, կայուն զարգացումը: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Նախագծի ընդունման արդյունքում կձևավորվի ախտորոշիչ լաբորատորիաները միավորող Ազգային լաբորատոր համակարգ, որը կենտրոնացված կառավարման շնորհիվ կունենա արդիականացված, միջազգային չափորոշիչներին համապատասխան ստանդարտ գործելակարգեր ունեցող լաբորատորիաներ, որոնց տրամադրած արդյունքները կլինեն հուսալի, համադրելի, ճշգրիտ և ապացուցողական հիմքերով: Ազգային լաբորատոր համակարգի զարգացման արդյունքում որակյալ և մատչելի լաբորատոր ծառայությունները 2025 թվականին կհասնեն 90%-ի:
	17.2. **Խմելու ջրի որակին վերաբերող նորմերի փոփոխության նախագծի մշակում** 1. **Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածի 2-րդ կետից, վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 728-Լ որոշմամբ հաստատված Առողջապահության նախարարության կանոնադրության 10-րդ կետից, ինչպես նաև ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 2-րդ, 3-րդ և 11-րդ ենթակետերից: Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի 5-րդ մասի 16-րդ «Առողջապահություն» գլխի 1-ին կետի կատարումն ապահովելու նպատակով, որի կատարումը պետք է ապահովի Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինը, համաձայն «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերը: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս, խմելու ջրով պայմանավորված վարակիչ հիվանդությունների կանխարգելման նպատակով Հայաստանի Հանրապետությունում գործում է ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 876 և 2002 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 803 հրամանները, որոնցով սահմանված են խմելու ջրի որակին և մոնիթորինգի իրականացմանը ներկայացվող պահանջները, սակայն վերջիններով ամրագրված պահանջները ամբողջությամբ չեն համապատասխանում ԵՄ չափանիշներին: **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները (միջոցառումը համակատարող ունենալու դեպքում նշելով նաև համակատարողի կողմից համապատասխան միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները)** Հայաստանի Հանրապետությունում գործող ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 876 հրամանի վերանայում, համապատասխանեցնելով 03.11.1998թ. N98/83 ԵՄ Մարդու կողմից օգտագործման ջրի որակի դիրեկտիվ պահանջներին: Միջոցառման համակատարողները մշակված նախագծի վերաբերյալ ներկայացնում են կարծիք, անհրաժեշտության դեպքում մասնակցում են նախագծի վերաբերյալ կազմակերպված քննարկումներին և տրամադրում մասնագիտական կարծիք:

	2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Հայաստանի Հանրապետությունում Մարդու սպառման համար նախատեսված խմելու ջրի որակի և դրա հսկողական մոնիթորինգի վերանայված պահանջներ՝ արդյունքում խմելու ջրով պայմանավորված վարակիչ հիվանդությունների կանխարգելում միջազգային մոտեցումներին համապատասխան:
	17.3. **«ՀՀ վարչապետի 2013 թվականի հունվարի 17-ի N 22-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» վարչապետի որոշման նախագծի մշակում և վարչապետի աշխատակազմ ներկայացում** 1. **Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1913-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված ռազմավարական ծրագրի 2012-2016 թվականների միջոցառումների ցանկի 2-րդ կետի 1-ին ենթակետից, ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 9-րդ ենթակետից: Նկատի ունենալով ՀՀ կառավարության կառուցվածքի և կազմի փոփոխությունները, ինչպես նաև՝ «ՀՀ վարչապետի 2013 թվականի հունվարի 17-ի N 22-Ա որոշմամբ հաստատված Միջազգային առողջապահական (բժշկասանիտարական) կանոնների կիրառման հարցերով, վարակիչ հիվանդությունների կանխարգելման և դրանց դեմ պայքարի, համընդհանուր լաբորատոր ցանցի գործողությունները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի անհատական կազմում ներառված անձանց փոփոխությունները, անհրաժեշտություն է առաջացել նշված հանձնաժողովի կազմը համապատասխանեցնել արդի պայմաններին: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները (նշելով նաև ելակետային տվյալներ, եթե դրանք առկա են)** Միջազգային առողջապահական (բժշկասանիտարական) կանոնների կիրառման հարցերով, վարակիչ հիվանդությունների կանխարգելման և դրանց դեմ պայքարի, համընդհանուր լաբորատոր ցանցի գործողությունները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի անհատական կազմը և դրա աշխատակարգը հաստատվել է 2013 թվականին և ներկայում այն չի գործում կառավարության կառուցվածքի, ինչպես նաև՝ ներգրավված կառույցներում պաշտոնատար անձանց փոփոխությունների պատճառով: **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները (միջոցառումը համակատարող ունենալու դեպքում նշելով նաև համակատարողի կողմից համապատասխան միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները)** Բոլոր ներգրավված կառույցների մասնակցությամբ նորացնել «Միջազգային առողջապահական (բժշկասանիտարական) կանոնների կիրառման հարցերով, վարակիչ հիվանդությունների կանխարգելման և դրանց դեմ պայքարի, համընդհանուր լաբորատոր ցանցի գործողությունները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի անհատական կազմը, ինչպես նաև՝ համապատասխանեցնել դրա աշխատակարգը արդի պայմաններին: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջազգային առողջապահական (բժշկասանիտարական) կանոնների կիրառման հարցերով, վարակիչ հիվանդությունների կանխարգելման և դրանց դեմ պայքարի, համընդհանուր լաբորատոր ցանցի գործողությունները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի անհատական կազմը կնորացվի, ինչպես նաև՝ դրա աշխատակարգի համապատասխանեցում արդի պայմաններին:
	17.4 ՀՀ Կառավարության 17.12.2020թ. N 2129-Ն որոշմամբ հաստատված 2021-2025 թվականների իմունականխարգելման ազգային ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման ապահովում **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 2-րդ, 3-րդ և 12-րդ ենթակետերից Իմունականխարգելման աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը հանրային առողջապահության հիմնարար ուղղություններից է, որն ապահովում է կառավարելի վարակիչ հիվանդությունների արմատական վերացում, նվազեցում, դրանց հետևանքով մահվան դեպքերի

կանխարգելում: Կառավարելի հիվանդությունների դեմ արդյունավետ պայքարը, այդ թվում՝ իմունականխարգելման աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը Հայաստանի Հանրապետության առողջապահության համակարգի արդիական հիմնախնդիրներից է: Այս համատեքստում կարևորվում է է ՀՀ Կառավարության 17.12.2020թ. N 2129-Ն որոշմամբ հաստատված «2021-2025 թվականների իմունականխարգելման ազգային ծրագրով» նախատեսված միջոցառումների իրականացման ապահովումը:

1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Հայաստանի Հանրապետությունում կառավարելի վարակիչ հիվանդությունների առումով համաճարակային իրավիճակը բարենպաստ է: Հանրապետությունում չեն արձանագրվում պատվաստումներով կանխարգելվող մի շարք հիվանդություններ՝ դիֆթերիա, պոլիոմիելիտ, նորածնային փայտացում, կարմրուկի և կարմրախտի տեղական դեպքեր, իսկ կապույտ հազը և համաճարակային պարոտիտն արձանագրվում են եզակի դեպքերի տեսքով: 1995 թվականից հանրապետությունում պոլիոմիելիտի դեպքեր չեն արձանագրվում: 2000 թվականից չեն արձանագրվում դիֆթերիայի դեպքեր: Փայտացման եզակի դեպքերն արձանագրվում են հիմնականում չպատվաստված կամ թերի պատվաստված մեծահասակ ազգաբնակչության շրջանում, նորածնային փայտացումն ընդհանրապես չի արձանագրվում, կարմրուկի տեղական դեպքեր չեն գրանցվում 2007 թվականից, բերովի դեպքերը գերազանցապես արձանագրվում են չպատվաստված, պատվաստումներից հրաժարված կամ թերի պատվաստված անձանց շրջանում, հեպատիտ Բ-ի նվազում, մինչև 14 տարեկանների շրջանում սուր դեպքերի բացակայություն: Սակայն վերջին տարիներին հանրապետությունում դիտվում է պատվաստումներում և՛ ժամանակին, և՛ ամբողջական ընդգրկվածության ցուցանիշների կտրուկ նվազում, ինչի շարունակական միտման արդյունքում առկա նվաճումներն ու ձեռքբերումները հնարավոր չի լինի պահպանել:

1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Վերոհիշյալ խնդրի լուծման նպատակով անհրաժեշտ է իրականացնել ՀՀ Կառավարության 17.12.2020թ. N 2129-Ն որոշմամբ հաստատված «2021-2025 թվականների իմունականխարգելման ազգային ծրագրով» նախատեսված միջոցառումները՝ ապահովելով սերտ համագործակցություն շահագրգիռ այլ գերատեսչությունների հետ:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Ակնկալվում է, որ վերոհիշյալ միջոցառումը կապահովի հանրապետությունում կառավարելի վարակիչ հիվանդությունների դեմ կանխարգելիչ պատվաստումներում ընդգրկվածության բարձր ցուցանիշը և բարենպաստ համաճարակային իրավիճակը, կգրանցվի կարմրուկի, դիֆթերիայի և պոլիոմիելիտի դեպքերի զրոյական ցուցանիշ, կապահովվի գերակա հիվանդությունների լաբորատոր ախտորոշում, կստեղծվի հանրային առողջության հնարավոր վտանգների և սպառնալիքների ռեգիստր: Միջոցառման իրականացումը կնպաստի մինչև 5 տարեկան մանկական մահացության նվազմանը մինչև 8.2‰ և վարակիչ հիվանդությունների հետևանքով առաջացող վաղաժամ (մինչև 65 տարեկան) մահացության ինդեքսի նվազմանը մինչև 0.9 մինչև 2025 թվականը:

17.5 Նոր պատվաստումների ներդրում՝ ըստ անհրաժեշտության, պատվաստումների նկատմամբ պահանջարկի բարձրացում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 2-րդ, 3-րդ և 12-րդ ենթակետերից: Իմունականխարգելման ոլորտում վերջին տարիներին հանրապետությունում իրականացվող քաղաքականությունը համապատասխանեցվում է Առողջապահության համաշխարհային կազմակերպության մոտեցումներին և չափանիշներին: Այս համատեքստում կարևորվում է ըստ անհրաժեշտության և համաճարակաբանական ցուցումով նոր պատվաստումների ներդրումը, ինչպես նաև բնակչության շրջանում պատվաստումների պահանջարկի բարձրացումը:

1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Ներկայում հանրապետության առողջապահության համակարգի առջև ծառացել է մեկ այլ խնդիր՝ մեղմել ինչպես հակապատվաստումային ակտիվության, այնպես էլ կորոնավիրուսային հիվանդության համավարակով պայմանավորված ազդեցությունը և պահպանել կառավարելի վարակիչ հիվանդությունների առումով մեծ դժվարությամբ ձեռք բերված նվաճումները: Հաշվի առնելով պատվաստումների կարևորությունը և արդյունավետությունը վարակիչ հիվանդությունների կանխարգելման գործում՝ Հայաստանի Հանրապետության

	առողջապահության նախարարությունն ընդունել է նոր ռազմավարական մոտեցում՝ Պատվաստումների ազգային օրացույցում ներդնել նոր պատվաստանյութեր: **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Վերոհիշյալ խնդրի լուծման նպատակով անհրաժեշտ է ըստ անհրաժեշտության և համաճարակաբանական ցուցումով նոր պատվաստումների ներդրման ապահովումը, ինչպես նաև բնակչության շրջանում պատվաստումների պահանջարկի բարձրացումը: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Ակնկալվում է, որ վերոհիշյալ միջոցառումը կապահովի հանրապետությունում կառավարելի վարակիչ հիվանդություններով, այդ թվում՝ ջրծաղկի և կորոնավիրուսային հիվանության հիվանդացության նվազեցում, դրանց հետևանքով մահվան դեպքերի կանխարգելում և վարակիչ հիվանդությունների նկատմամբ բնակչության անընկալության ապահովում:
18.	**18.1 Կորոնավիրուսային հիվանդության կասկածելի դեպքերի թեստավորում՝ դեպքերի վաղ հայտնաբերում** **1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 2-րդ, 3-րդ և 12-րդ ենթակետերից: Աշխարհում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) համաճարակային իրավիճակն առ այսօր շարունակում է մնալ լարված՝ պայմանավորված շրջանառվող COVID-19-ի չորս նոր, անհանգստություն առաջացնող շտամմներով (VoC)՝ անգլիական, հարավաֆրիկյան, բրազիլական, հնդկական: Նոր շտամմների երկիր ներբերումը և հետագա տարածումը կանխելու նպատակով՝ Առողջապահության համաշխարահային կազմակերպությունը բոլոր երկրներին հորդորում է չթուլացնել զգոնությունը և շարունակել կանխարգելիչ միջոցառումների իրականացումը՝ վարակի տարածման ռիսկը նվազեցնելու համար: **1.1Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** 2020 թ. փետրվարի 3-ից մինչև 2021 թ. հոկտեմբերի 21-ը ՀՀ-ում կորոնավիրուսային հիվանդության հայտնաբերման նպատակով իրականացվել է 1958792 լաբորատոր հետազոտություն, ինչի արդյունքում ապահովվել է դեպքերի վաղ հայտնաբերման, կոնտակտավորների հսկողության, պացիենտների ժամանակին բժշկական օգնության և սպասարկման գործընթացները: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Կորոնավիրուսային հիվանդության հիվանդացության և մահացության ցուցանիշների նվազեցման նպատակով անհրաժեշտ է շարունակել լաբորատոր թեստավորումների իրականացմամբ կորոնավիրուսային հիվանդության դեպքի ստանդարտ բնորոշմանը համապատասխան կասկածելի դեպքերի վաղ հայտնաբերումը: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Իրականացված միջոցառումների արդյունքում ակնկալվում է նվազեցնել կորոնավիրուսային հիվանդության հիվանդացության և մահացության ցուցանիշները՝ նվազեցնել առողջապահական բեռը:
	18.2 Կորոնավիրուսային հիվանդության դեպքերի համաճարակաբանական հետազոտություն **1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 2-րդ, 3-րդ և 12-րդ ենթակետերից: Աշխարհում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) համաճարակային իրավիճակն առ այսօր շարունակում է մնալ լարված՝ պայմանավորված շրջանառվող COVID-19-ի չորս նոր, անհանգստություն առաջացնող շտամմներով (VoC)՝ անգլիական, հարավաֆրիկյան, բրազիլական, հնդկական: Նոր շտամմների երկիր ներբերումը և հետագա տարածումը կանխելու նպատակով՝ Առողջապահության համաշխարահային կազմակերպությունը բոլոր երկրներին հորդորում է չթուլացնել զգոնությունը և շարունակել կանխարգելիչ միջոցառումների իրականացումը՝ վարակի տարածման ռիսկը նվազեցնելու համար: Դեպքերի համաճարակաբանական հետազոտության նպատակը՝ կասկածելի դեպքերի վաղ հայտնաբերման, կոնտակտավորների շրջանակի բացահայտման, համապատասխան կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումների ձեռնարկման արդյունքում վարակի տարածման ռիսկի նվազեցումն է:

	1.1Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Աշխարհում COVID-19-ով պայմանավորված համաճարակային իրավիճակը շարունակում է մնալ լարված: Հոկտեմբերի 22-ի դրությամբ (07:37pm CEST) աշխարհում արձանագրվել է հիվանդության 243,369,763 հաստատված դեպք, որից նոր դեպքերը՝ 461.628, իսկ մահվան ելքով դեպքերը՝ 4,947,453 (2.03%) : Վերջին 14 օրվա ընթացքում ՀՀ-ում արձանագրվել է հիվանդության 21178 դեպք (h.g. 715.7 դեպք ըստ 100.000 բնակչության), ինչը նախորդ նույն ժամանակահատվածի համեմատ (13320 դեպք, h.g. 450.2 դեպք ըստ 100.000 բնակչության) աճել է 59%-ով:Ներկայում դեպքերի համաճարակաբանական հետազոտության արդյունքում հնարավորություն է ընձեռվում կոնտակտավորների շրջանակի բացահայտման և կանխարգելիչ միջոցառումների իրականացման արդյունքում զսպել վարակի տարածման ռիսկը ինչպես կազմակերպ օջախներում, այնպես էլ բնակչության շրջանում: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Միջազգային մոտեցումներին համահունչ անհրաժեշտ է շարունակել ապահովել COVID-19-ի նկատմամբ համաճարակաբանական դիտարկումը և հակահամաճարակային միջոցառումները, որոնք իրենցից ենթադրում են կորոնավիրուսային հիվանդության կասկածելի և հաստատված դեպքերի հետազոտությունների իրականացում, շփված անձանց շրջանակի որոշում, ռիսկերի գնահատում, քարտեզագրում, կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումների իրականացում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Տնային և կազմակերպ օջախներում իրականացված հետազոտությունների հիման վրա ռիսկերի բացահայտում և ներկայացում շահագրգիռ գերատեսչություններին՝ համապատասխան միջոցառումներ կազմակերպելու համար:
	18.3 Իրավական ակտերի լրամշակում, նոր իրավական ակտերի մշակում՝ ԱՀԿ-ի նոր մոտեցումների հիման վրա **1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածի 2-րդ կետից, վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 728-Լ որոշմամբ հաստատված Առողջապահության նախարարության կանոնադրության 10-րդ կետից, ինչպես նաև ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 2-րդ, 3-րդ և 12-րդ ենթակետերից: Աշխարհում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) համաճարակային իրավիճակն առ այսօր շարունակում է մնալ լարված: Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը պարբերաբար վերանայում է կորոնավիրուսային հիվանդության կանխարգելիչ միջոցառումները՝ հիմնվելով ապացուցողական բժշկության վրա և ներկայացնում առաջարկություններ դրանց վերաբերյալ՝ հորդորելով չթուլացնել զգոնությունը և շարունակել կանխարգելիչ միջոցառումների իրականացումը՝ վարակի տարածման ռիսկը նվազեցնելու համար: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Կորոնավիրուսային հիվանդության կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումները մշակվում և տեղայնացվում են ԱՀԿ-ի նոր մոտեցումների հիման վրա, ինչը շարունակական գործընթաց է հաշվի առնելով հիվանդության հարուցչի արագ տեմպերով փոփոխությունը: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Կորոնավիրուսային հիվանդության հիվանդացության և մահացության ցուցանիշների նվազեցման նպատակով անհրաժեշտ է ԱՀԿ-ի մոտեցումներին համահունչ շարունակել հակահամաճարակային միջոցառումներ կանոնակարգող իրավական ակտերի լրամշակումը: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Իրականացված միջոցառումների արդյունքում ակնկալվում է նվազեցնել կորոնավիրուսային հիվանդության հիվանդացության և մահացության ցուցանիշները:
	18.4 Կորոնավիրուսային հիվանդության դեպքերի բուժում **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 2-րդ, 3-րդ և 12-րդ ենթակետերից:
Covid-19-ի բռնկման և դեպքերի ալիքաձև աճի հետ մեկտեղ ՀՀ կառավարությունը հիվանդության կանխարգելումը և տարածման զսպումը համարում է իր գերակա խնդիրը:
Հաշվի առնելով Հայաստանում կորոնավիրուսով հիվանդների աճող թիվը, ազգային առողջապահական համակարգում առկա ծավալներն ու կարողությունները 2020 թ-ին՝ հիվանդության առաջին ալիքի ընթացքում, ամբողջ համակարգը ձեռնամուխ է եղել կորոնավիրուսային սպառնալիքի ռազմավարական պատրաստվածության, այն հայտնաբերելու և պատշաճ արձագանքելու գործին: Նշվածի շրջանակներում պարբերաբար՝ կորոնավիրուսային հիվանդության ախտորոշմամբ հիվանդներ ընդունելու և պատշաճ բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ մատուցելու նպատակով Երևանում և ՀՀ մարզերում վերապրոֆիլավորվում են նորանոր բժշկական կազմակերպություններ՝ կապված տվյալ պահին առկա մահճակալների պահանջարկի հետ: Ըստ անհրաժեշտության, օպերատիվ կերպով իրականացվում են վերապրոֆիլավորված բժշկական կազմակերպությունների մասնակի արդիականացում:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները
2020 թվականի մարտին՝ Հայաստանում COVID-19 առաջին անգամ ախտորոշվելու պահին, ինֆեկցիոն մահճակալների ընդհանուր թիվը կազմում էր 621 («Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց (300 մահճակալ) և «Արմենիկում» կլինիկական կենտրոն (52 մահճակալ) Երևանում, Գյումրու (40 մահճակալ) և Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոցներ (15 մահճակալ), ինչպես նաև բազմաֆունկցիոնալ բուժհաստատություններում, որոնք ունեն ինֆեկցիոն բաժանմունքներ (ընդհանուր՝ 214) Երևանում և ՀՀ մարզերում):
2020-2021թթ-ի ընթացքում կորոնավիրուսային հիվանդության երկրորդ, երրորդ, չորրորդ ալիքների զարգացման հետ մեկտեղ անհրաժեշտություն է առաջացել ամբողջությամբ կամ մասամբ պարբերաբար վերապրոֆիլավորել մայրաքաղաքի և ՀՀ մարզերի շուրջ 28 բուժհաստատություն (15 Երևանում և 13 մարզերում, ընդհանուր՝ շուրջ 3000 մահճակալ), այդ թվում ՀՀ ամենամեծ բուժհաստատություններից մեկը՝ «Սբ. «Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ-ն, որը մինչև այժմ գործում է միայն COVID-19 վարակի բուժումն իրականացնելու նպատակով:
Հիվանդների բուժումը պատշաճ կազմակերպելու համար որոշ մարզային հիվանդանոցներ վերանորոգվել են:
Կախված բուժհաստատության հզորությունից և սպասարկվող հիվանդների թվից հագեցվել են անհրաժեշտ բժկական սարքավորումներով (այդ թվում թթվածնային կոնցենտրատորներ, ԹԱՇ սարքեր, մոնիթորներ, լարինգոսկոպներ և այլն), ինչպես նաև տրամադրվել են շտապօգնության մեքենաներ:
Հաշվի առնելով հիվանդների պարբերաբար աճող քանակը նշված միջոցառումը կրում է պարբերական բնույթ:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները
Ներկայում՝ հիվանդության հինգերորդ ալիքի զարգացման հետ զուգահեռ, երբ օրական COVID-19-ով հիվանդների և հոսպիտալացվածների թիվը միայն ավելանում է, անհրաժեշտություն է առաջացել առկա ռեսուրսների հզորացման, նոր ռեսուրսների ներգրավման և ծառայությունների ծավալման՝ հիվանդանոցային բուժման կարիք ունեցող բոլոր հիվանդներին բուժօգնություն տրամադրելու համար (ներառյալ՝ ինտենսիվ թերապիայի ծառայությունը):

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը
Միջոցառման իրականացման արդյունքում հնարավորինս կապահովվի կորոնավիրուսային հիվանդության ախտորոշմամբ հիվանդների ընդունումն ու պաշտաճ ծավալով և որակով բուժումը:

18.5 Բնակչության իրազեկում կորոնավիրուսային հիվանդության կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումների վերաբերյալ

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը
Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 2-րդ, 3-րդ և 12-րդ ենթակետերից: Աշխարհում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) համաճարակային իրավիճակն առ այսօր շարունակում է մնալ լարված՝ պայմանավորված շրջանառվող COVID-19-ի չորս նոր, անհանգստություն առաջացնող շտամմներով (VoC)՝ անգլիական, հարավաֆրիկյան, բրազիլական, հնդկական: Նոր շտամմների երկիր ներբերումը և հետագա տարածումը կանխելու նպատակով՝ Առողջապահության

	համաշխարհային կազմակերպությունը բոլոր երկրներին հորդորում է չթուլացնել զգոնությունը և շարունակել կանխարգելիչ միջոցառումների իրականացումը՝ վարակի տարածման ռիսկը նվազեցնելու համար: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Քանի որ հանրային հաղորդակցությունը արտակարգ դրության կառավարման ամենակարևոր տարրերից էր, բնակչությանն իրազեկումն ապահովելու ուղղությամբ Առողջապահության նախարարության պաշտոնական կայքում և սոցիալական ցանցերում պատրաստվել և ամենօրյա կտրվածքով հրապարակվել են տեղեկատվական նյութեր՝ հանրությանը իրազեկելով կորոնավիրուսի համավարակի, վարակման ռիսկը նվազեցնելուն միտված՝ անվտանգության կանոնների և վարքաբանության, ինչպես նաև ընթացիկ իրավիճակի, կայացվող որոշումների և իրականացվող միջոցառումների վերաբերյալ: Ինչպես նաև մշակվել և տպագրվել են բնակչության իրազեկմանն ուղղված պաստառներ, որոնք փակցվել են հասարակական վայրերում: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Առողջապահության նախարարության պաշտոնական կայքում և սոցիալական ցանցերում տեղեկատվական նյութերի պատրաստում և ամենօրյա կտրվածքով հրապարակում՝ հանրությանը իրազեկելով կորոնավիրուսի համավարակի, վարակման ռիսկը նվազեցնելուն միտված՝ անվտանգության կանոնների և վարքաբանության, ինչպես նաև ընթացիկ իրավիճակի, կայացվող որոշումների և իրականացվող միջոցառումների վերաբերյալ: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Իրականացված միջոցառումների արդյունքում ակնկալվում է նվազեցնել կորոնավիրուսային հիվանդության հիվանդացության և մահացության ցուցանիշները:
19.	19.1 **«Հանրային առողջապահության մասին» ՀՀ օրենքի նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածի 2-րդ կետից, վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 728-Լ որոշմամբ հաստատված Առողջապահության նախարարության կանոնադրության 10-րդ կետից, ինչպես նաև ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 2-րդ, 11-րդ ենթակետերից և կապված է Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած սահմանադրական փոփոխությունների հետ: Հիմնվելով ՀՀ Սահմանադրության վրա՝ առողջապահության բնագավառի գործունեության բոլոր հիմքերը պետք է սահմանված լինեն օրենքով: Ներկայումս նոր մոտեցումների, գաղափարների ներդրումը և իրականացումը բացառապես կապված է օրենքի կարգավորումների հետ: Միաժամանակ օրենքի մշակումը և հաստատումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում հանրային առողջության պահպանման հետ կապված հասարակական հարաբերությունների, հանրային առողջության պահպանման պետական քաղաքականության սկզբունքների, հանրային առողջության պահպանման բնագավառում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն իրականացնելու և պաշտպանելու պայմանների և կարգի, իրավունքների և ազատությունների սահմանափակումների, նրանց պարտականությունների, հարկադրանքի միջոցներն ու դրանք կիրառելու կարգի, հանրային առողջության պահպանման կազմակերպական, տնտեսական և իրավական հիմքերի սահմանման անհրաժեշտությամբ: **1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները (նշելով նաև ելակետային տվյալներ, եթե դրանք առկա են)** Ներկայումս հանրային առողջության և բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, որն ընդունվել է 1992 թվականին և լրացման ու արդիականացման կարիք ունի՝ հանրային առողջություն և առողջապահություն գաղափարների սահմանման, ժամանակակից իրավահարաբերությունների կարգավորման տեսանկյունից: Ներկայումս հանրային առողջությունը, հանդիսանալով առողջապահական համակարգի կարևոր բաղկացուցիչ մաս, չունի օրենսդրական լիարժեք կարգավորում և օրենսդրական դաշտի բացակայության արդյունքում երկրում չկա ձևավորված հանրային առողջության ապահովման միջազգայնորեն ընդունված մոտեցում. բնակչության առողջությունը չի դիտվում

որպես մարդու հիմնական իրավունք և կարևորագույն միջգերատեսչական խնդիր, բնակչությունը լիովին իրազեկված չէ իր իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության մասին:

1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները (միջոցառումը համակատարող ունենալու դեպքում նշելով նաև համակատարողի կողմից համապատասխան միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները)

Նախագծի հաստատմամբ կկանոնակարգվեն հանրային առողջության ապահովման հետ կապված հարաբերությունները, կսահմանվեն հանրային առողջության ապահովման իրավական հիմքերը և արդյունքում կներդրվեն գործուն մեխանիզմներ հանրային առողջությանը սպառնացող վտանգները, սպառնալիքները և ռիսկերը կանխելու համար: Օրենքով կամրագրվեն պետության կողմից նախատեսվող այն երաշխիքները, որոնք ուղղված են մարդու առողջության վրա սոցիալ-տնտեսական, վարքագծային, շրջակա միջավայրի վնասակար ու վտանգավոր գործոնների ազդեցության կանխարգելմանն ու բացառմանը և ներկա և ապագա սերունդների կենսունակության համար բարենպաստ պայմանների ապահովմանը:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունման արդյունքում օրենքով կամրագրվեն պետության կողմից նախատեսվող այն երաշխիքները, որոնք ուղղված են մարդու առողջության վրա սոցիալ-տնտեսական, վարքագծային, շրջակա միջավայրի վնասակար ու վտանգավոր գործոնների ազդեցության կանխարգելմանն ու բացառմանը և ներկա և ապագա սերունդների կենսունակության համար բարենպաստ պայմանների ապահովմանը:

19.2. «Հանրային առողջապահության անվտանգության ազգային գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության որոշման ընդունում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքի 5-րդ հոդվածից, ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 2-րդ, 3-րդ և 9-րդ ենթակետերից և պայմանավորված է Միջազգային առողջապահական կանոնների (2005 թվական) Հայաստանի Հանրապետությունում ներդրման կայունության ապահովմամբ և կանոններով պահանջվող կարողությունների շարունակական զարգացմամբ:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունը ստեղծել է Միջազգային առողջապահական կանոններով (2005 թվական) պահանջվող բոլոր կարողությունները, սակայն դրանք շարունակական զարգացման անհրաժեշտություն ունեն՝ պայմանավորված միջազգային նոր մոտեցումներով, նոր ի հայտ եկող, վերադարձող հիվանդություններով, վտանգների և սպառնալիքների՝ դեռևս անհայտ աղբյուրների ի հայտ գալով, գիտության և տեխնիկայի զարգացմամբ:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Միջազգային առողջապահական կանոններով (2005 թվական) պահանջվող կարողությունները, դրանց շարունակական զարգացումը համակարգված և համապարփակ կլինեն և կապահովեն կանոնների ներդրման կայունություն համալիր ռազմավարական պլանավորման և վերջինիս գործադրման դեպքում: Առաջարկվում է գնահատել կանոնների ներդրման առկա վիճակը և ռիսկերը, կատարել բացերի վերլուծություն և դրա հիման վրա մշակել համապատասխան ազգային գործողությունների ծրագիր, որը Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից անվանվում է «Հանրային առողջապահության անվտանգության ազգային գործողությունների ծրագիրը», քանի որ կանոններով պահանջվող կարողություններն ի վերջո ապահովում են հանրային առողջապահության անվտանգությունը:

Այդ գնահատման ճանապարհին կարևորագույն միջոցառում է Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) հետ համատեղ արտաքին գնահատումը: 2023 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին պետական կառավարման մարմինների կողմից իրականացվելու է ինքնագնահատում, որից հետո դեկտեմբեր ամսին նախատեսվում է իրականացնել միջազգային փորձագետների հետ համատեղ արտաքին գնահատում: Արտաքին գնահատման արդյունքները ԱՀԿ-ի կողմից Առողջապահության նախարարությանը նախատեսվում է ներկայացնել 2024 թվականի հունվար ամսին, ինչը հիմք կարող է հանդիսանալ «Հանրային առողջապահության անվտանգության ազգային գործողությունների ծրագիրը» մշակելու համար:

	2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Նախատեսվում է միջգերատեսչական համագործակցությամբ, քանի որ հանրային առողջապահությունն ապահովվում է շահագրգիռ ոլորտների գործունեությամբ, մշակել ազգային գործողությունների ծրագիր, որը կսահմանի հանրային առողջապահության անվտանգությանն ուղղված քայլերի իրավական հիմքերը, ինչի արդյունքում Հայաստանի Հանրապետությունը կապահովի Միջազգային առողջապահական կանոնների ներդրման կայունությունը և պահանջվող կարողությունների շարունակական զարգացումը:
	19.3. Շրջակա միջավայրի հետազոտությունների և ազգաբնակչության հիվանդացության միջոցով ռիսկերի բացահայտում, կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ առաջարկությունների փաթեթի մշակում **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 2-րդ, 3-րդ, 11-րդ և 12-րդ ենթակետերից, որից նպատակն է հանքարդյունաբերական և մետաղաձուլման, ինչպես նաև այլ արդյունաբերական ձեռնարկությունների գործունեության ազդեցությամբ պայմանավորված շրջակա միջավայրի հետազոտությունների և ազգաբնակչության հիվանդացության միջոցով ռիսկերի բացահայտումը, կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ առաջարկությունների փաթեթի մշակումը: **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Հանքարդյունաբերական, ինչպես նաև այլ արտադրական գործունեությամբ պայմանավորված շրջակա միջավայրի աղտոտվածությունը օդում, ջրում և հողում է: Հողի և օդի աղտոտվածությունը անձրևաջրերով և ձնհալի ջրերով տեղափոխվում է բաց ջրամբարներ, այդ ջրով ոռոգում են մի շարք համայնքների գյուղատնտեսական հողերը: Այսպիսով՝ սննդային շղթա կարող է ներթափանցել շրջակա միջավայրի աղտոտվածությունը ինչպես աղտոտված հողով , այնպես էլ ոռոգման ջրերով: Բնակչության հիվանդացությունը չարորակ նորագոյացություններով, նյարդային համակարգի հիվանդություններ, բնածին արատներով և արյան շրջանառության համակարգի հիվանդություններով կարող է պայմանավորված լինել այս աղտոտմամբ և ունենալ բարձր ցուցանիշներ: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Գնահատել ՀՀ տարբեր մարզերի ազդակիր համայնքներում հանքարդյունաբերության և այլ արտադրությունների ազդեցությունը բնակչության առողջության վրա՝ հանքարդյունաբերությամբ հողի, օդի և բաց ջրամբարների ջրի աղտոտման հետ, գնահատելով նաև սննդային շղթայով հնարավոր ազդեցությունը: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Հանքարդյունաբերական և մետաղաձուլման, ինչպես նաև այլ արտադրական արդյունաբերական ձեռնարկությունների գործունեության ազդեցությամբ պայմանավորված շրջակա միջավայրի հետազոտությունների և ազգաբնակչության հիվանդացության միջոցով ռիսկերի բացահայտման հիման վրա կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ առաջարկությունների փաթեթի մշակում:
20.	**20.1. Առողջապահության համակարգի՝ ինֆեկցիոն հիվանդությունների բռնկումներին և համավարակներին արձագանքման պատրաստվածության գնահատում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ ենթակետից և 49-րդ հոդվածի 4-րդ մասից: Նոր կորոնավիրուսային հիվանդության համավարակը ցույց տվեց, որ Հայաստանն, ի թիվս այլ երկրների, անպատրաստ էր դրան, այն դեպքում, երբ ստեղծված արտակարգ իրավիճակում արագ որոշումներ կայացնելու անհրաժեշտություն կար: Համավարակը հանգեցրեց նաև երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակի վատթարացման, որի հետևանքների հաղթահարումը տարիներ կպահանջի: Ելնելով վերոգրյալից, անհրաժեշտ է իրականացնել Հայաստանի առողջապահության համակարգի կազմակերպությունների համապարփակ ուսումնասիրություն՝ ուղղված վերջիններիս կարիքների գնահատմանն ու կարողությունների ամրապնդմանը՝ հնարավոր նոր ինֆեկցիոն հիվանդությունների բռնկումների և համավարակների դեպքում դրանց արագ արձագանքմանը պատրաստ առանցքային բժշկական կազմակերպությունների առկայության և անհրաժեշտ ռեսուրսների ապահովման նպատակով:

	1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Ինֆեկցիոն հիվանդությունների բռնկումներին և համավարակներին առողջապահության համակարգի արագ և արդյունավետ արձագանքի ապահովման նպատակով Հայաստանի առողջապահության համակարգի կազմակերպությունների համապարփակ ուսումնասիրություն՝ վերջիններս կարիքների գնահատմամբ առայժմ իրականացված չէ: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Առողջապահության նախարարության կողմից մշակվել և ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամին է ներկայացվել նոր կորոնավիրուսային հիվանդության դեմ պայքարի միջոցառումներին աջակցման դրամաշնորհային ծրագրի հայտ, որում, ի թիվս այլ միջոցառումների, նախատեսվում է իրականացնել առողջապահության համակարգի՝ ինֆեկցիոն հիվանդությունների բռնկումներին և համավարակներին արձագանքման պատրաստվածության գնահատում՝ ինֆեկցիոն հիվանդությունների հետագա հնարավոր բռնկումների դեպքում՝ արագ և արդունավետ արձագանք ապահովելու նպատակով: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Իրականացված ուսումնասիության և գնահատված կարիքների հիման վրա ինֆեկցիոն հիվանդությունների բռնկումներին և համավարակներին արագ արձագանքմանն ուղղված ռեսուրսների մոբիլիզացիա:
21	**21.1. «Առողջապահական ծառայությունների որակի բարելավման ռազմավարությունը և դրանից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի ընդունում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետից, «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 49-րդ հոդվածից: Առողջապահության ծառայությունների որակի բարելավումը և որակի բարելավման ապահովման համապատասխան մեխանիզմների ստեղծումը, ներդրումը և շարունակական կիրառումը համարվում է առողջապահական բարեփոխումների կարևորագույն բաղադրիչը: Սույն ոլորտում ռազմավարության նպատակն է բնակչության համար ապահովել անվտանգ, արդյունավետ, մարդակենտրոն, ժամանակին և մատչելի, առկա ռեսուրսների և ծառայությունների օգտագործման տեսանկյունից օգտավետ և սահմանված որակի ցուցանիշներին և ստանդարտներին համապատասխան համապարփակ առողջապահական ծառայություններ: **1.1. Կարգավորման ենթակա հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.** Հայաստանի Հանրապետությունում շուրջ 53% կանխարգելելի մահերը պայմանավորված են անորակ առողջապահական ծառայություններով (2018): Առողջապահական ծառայությունների որակի հետ կապված խնդիրները հանգեցնում են ներդրված միջոցների անտեղի վատնմանը: Առողջապահության ոլորտում պետական կառավարման լիազոր մարմնի կառուցվածքում և բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կառույցներում բացակայում են որակի ապահովման պատասխանատու ստորաբաժանումներ՝ ներդված չեն որակի աջակցող վերահսկողության և մշտադիտարկման մեխանիզմներ: Բացակայում են նաև բժշկական անձնակազմի գործունեության որակի չափանիշները, բնակչության բավարարվածության գնահատման գործիքները և դրանց վերահսկողության մեխանիզմները: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Առողջապահական ծառայությունների որակի բարելավման ռազմավարությունում կառաջարկվեն լուծումներ հետևյալ ուղղություններով. • Որակի կառավարման մեխանիզմների ներդնում առողջապահական համակարգի բոլոր վարչական մակարդակներում: • Առողջապահության որակի գնահատման և որակի կառավարման համար պատասխանատու բուժաշխատողների կարողությունների բարելավում: • Որակի չափելի ցուցանիշների սահմանում ԱԱՊ օղակի, հիվանդանոցների և առողջապահական համակարգի մակարդակներում: • Էլեկտրոնային տեղեկատվական համակարգի ամբողջական ներդնում, տվյալների հավաքագրում, մշակում, օգտագործում: • Ուղեգրման համակարգի բարելավում: • Առողջապահական ծառայություններից բնակչության բավարարվածության գնահատում: • Որակի ապահովման նոր ուղեցույցների, չափանիշների և կանոնակարգերի մշակում:

	• Որակի ապահովման խրախուսման համակարգի մշակում: • Մասնագիտական շարունակական կրթության նոր հնարավորությունների ստեղծում, մասնագիտական կարողությունների գնահատման նոր մեխանիզմի մշակում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Առողջապահական ծառայությունների որակի բարելավմանն ուղղված գործողությունները հիմնականում ազդելու են որակի հետևյալ տիրույթների վրա՝ առաջնորդություն, տեղեկատվություն, կանոնակարգում, չափորոշիչներ, կազմակերպչական կարողություններ, բնակչության ներգրավվածություն և բավարարվածություն:
	21.2 Կլինիկական ուղեցույցների, պացիենտի վարման գործելակարգերի և այլ փաստաթղթերի մշակում և ներդրում **1. 1. Միջոցառման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 7-րդ ենթակետից և «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 30-32-րդ կետերից: Պատշաճ մշակված և ներդրված կլինիկական ուղեցույցերը, պացիենտի վարման գործելակարգերը և ընթացակարգերը անմիջականորեն ազդում են բուժման և ախտորոշման որակի ու անվտանգության վրա, թույլ են տալիս համակարգել արդի բժշկագիտական տեղեկատվությունը, նվազեցնել մատուցվող բժշկական ծառայությունների որակական և ծավալային անհամաչափությունները, ապահովել ռեսուրսների արդյունավետ օգտագործումը, իրականացնել որակի վերահսկման և շարունակական մասնագիտական կրթության ծրագրեր: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի համաձայն՝ պացիենտի վարման գործելակարգերը և ընթացակարգերը կրում են պարտադիր բնույթ, ուստի առավել կարևորվում է նշված փաստաթղթերի դերը բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելիս: Ուստի սույն միջոցառման նպատակն է լրացնել առկա բացը առանձին հիվանդությունների և կլինիկական իրավիճակների համար ստեղծելով նորմատիվ իրավական բազա: **1.2. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Հարկ է նշել, որ նման միջոցառում նախատեսված է եղել նաև ՀՀ կառավարության 2017 թվականի ծրագրում և այս ժամանակահատվածում էական աշխատանք է կատարվել այդ ուղղությամբ, սակայն այն դեռևս բավարար չէ և կլինիկական ուղեցույցերի, պացիենտի վարման գործելակարգերի և ընթացակարգերի բազան ՀՀ առողջապահական համակարգում խիստ թերի է: 2. **Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Կլինիկական ուղեցույցերի, պացիենտի վարման գործելակարգերի և ընթացակարգերի առկայությունը և գործնական ներդրումը կունենա բազմակողմանի ազդեցություն ամբողջ առողջապահական համակարգի վրա: Կմշակվեն և կներդրվեն արտահիվանդանոցային և հիվանդանոցային պայմաններում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բուժհաստատությունների բուժաշխատողների համար նախատեսված փաստաթղթեր, որոնք էականորեն կնվազեցնեն բժշկական ծառայությունների որակական և ծավալային անհամաչափությունը, մասնավորապես մայրաքաղաքային և մարզային մակարդակներում, կկրճատվեն արտահիվանդանոցային ախտորոշիչ հետազոտությունների ոչ նպատակային ուղղորդումները, կնվազի ոչ հիմնավորված հոսպիտալացումների քանակը, պացիենտներին կտրամադրվի արդի բժշկագիտության նորմերին համապատասխան բժշկական օգնություն և սպասարկում: Բացի այդ, սույն միջոցառման շարունակականությունը կնպաստի շարունակական մասնագիտական զարգացման արդյունավետության բարձրացմանը:
22.	**22.1. Մինչև 2026 թվականը առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկի և նեղ մասնագետների աշխատավարձերի ավելացում՝ 50 %-ով** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 13-րդ ենթակետից, որի նպատակը մինչև 2026 թվականը առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկի և նեղ մասնագետների աշխատավարձերի բարձրացման ապահովումն է 50 %-ով: **1.1. Կարգավորման ենթակա հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.**

	Ներկայում Հայաստանի Հանրապետությունում առողջության առաջնային պահպանում իրականացնող աշխատողների աշխատանքի վարձատրման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի հուլիսի 24-ի N 1791-Ա հրամանով և այլ իրավական ակտերով: Ներկայում անհրաժեշտություն է առաջացել իրականացնել վարձատրման մեխանիզմների վերանայում, որի ընդունման հետ կապված անհրաժեշտություն կառաջանա փոփոխություններ կատարել տվյալ հարաբերությունները կարգավորող համապատասխան իրավական ակտերում: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Հաշվի առնելով, որ ներկայում ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության և սպասարկման ֆինանսավորումը ըստ մարդաշնչի (per capita) կազմում է շուրջ 20.0 մլրդ դրամ: ԱԱՊ օղակի բուժաշխատողի աշխատավարձը 50%-ով բարձրացնելու համար անհրաժեշտ է շուրջ 10,0 մլրդ դրամ: 2022-2026 թվականների ընթացքում յուրաքանչյուր տարի անհրաժեշտ է շուրջ 2 մլրդ դրամի ավելացում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Մինչև 2026 թվականը առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկի և նեղ մասնագետների աշխատավարձերի 50%-ով ավելացումը հնարավորություն կտա իրականացնելու բուժաշխատողների արժանավայել վարձատրություն և կատարած աշխատանքի որակի ապահովում:
23	**23.1 «Առողջապահության համակարգի մարդկային ներուժի զարգացման 2022-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացումը բխում է «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 35-րդ հոդվածից և ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 13 ենթակետից: Առողջապահության ոլորտի մարդկային ներուժի պատրաստման, արդյունավետ պլանավորման և կառավարման միջոցով բժշկական հաստատություններն ապահովել բարձրագույն և հետբուհական ու միջին մասնագիտական կրթությամբ որակյալ մասնագետներով՝ առողջապահության համակարգի երկարաժամկետ կայունությունը և բժշկական օգնության և սպասարկման որակը ապահովելու նպատակով: **1.1. Կարգավորման ենթակա հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.** Երկրում մարդկային ներուժի ճիշտ հավասարակշռման նպատակով իրականացվող պլանավորումը և կառավարումը չափազանց բարդ խնդիր է: Այն ներառում է շատ դերակատարների և շահագրգիռ կողմերի: Մարդկային ներուժի անհավասար բաշխումը նպաստում է նաև բժշկական ծառայությունների անհավասար բաշխման, ռեսուրսների անարդյունավետ վատնման, որոնք ավելի են բարդացնում խնդրի լուծումը: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Հայաստանի Հանրապետությունում անհրաժեշտ առողջապահական կադրերի ներկայիս և հեռանկարային պահանջարկը հաշվարկելու համար նորմատիվների սահմանում (աշխատանքային ծանրաբեռնվածության գնահատում որևէ մարզային բժշկական հաստատությունում՝ օգտվելով ԱՀԿ-ի կողմից մշակված «Անհրաժեշտ աշխատակազմի ծանրաբեռնվածության ցուցանիշները» (Workload Indicators of Staffing Needs) մեթոդաբանությունից և անհրաժեշտ մասնագետների (ներառյալ նրանց կրթության աստիճանը և հմտությունների համախումբը (skill mix) ցուցակի ձևավորում՝ ըստ յուրաքանչյուր մարզի միջին և երկարաժամկետ առողջապահական կարիքների), ինչպես նաև առողջապահական մարդկային ներուժի տեղեկատվական միասնական և համապարփակ տվյալների շտեմարանի ձևավորում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** «Առողջապահության համակարգի մարդկային ներուժի զարգացման 2022-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագծի ընդունումը կապահովի ոլորտի քանակական և որակական չափանիշներին համապատասխան մարդկային ներուժի առկայությունը, կադրային ներուժի զարգացումը՝ երկրի առողջապահական կարիքներին, օրենսդրությամբ սահմանված պահանջներին և աշխատանքի շուկայի իրավիճակին համապատասխան: **23.2. Բուժաշխատողների լիցենզավորման համակարգի ներդրման նպատակով անհրաժեշտ իրավական ակտերի փաթեթի մշակում և ընդունում** **1. Միջոցառման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածի 2-րդ կետից, վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 728-Լ որոշմամբ հաստատված Առողջապահության նախարարության կանոնադրության 10-րդ կետից, ինչպես նաև ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 13-րդ ենթակետից, ինչպես նաև բժիշկների մասնագիտական գիտելիքների մակարդակի բարձրացման և մասնագետների միջև առողջ մրցակցություն ստեղծելու անհրաժեշտությունից:

Սույն միջոցառման նպատակն է շարունակական մասնագիտական զարգացման հիման վրա ներդնել բժիշկների անհատական լիցենզավորման համակարգ:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Ներկայումս ՀՀ-ում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելու նպատակով լիցենզավորվում են ոչ թե բժիշկները, այլ իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը, որոնք համապատասխանում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված լիզենցավորման համար անհրաժեշտ պահանջ-պայմաններին:

Օրենսդրությամբ սահմանված կադրային հագեցվածություն պահանջի բավարարումը սահմանափակվում է համապատասխան կրթություն և/կամ որակավորում ունեցող և վերջին 5 տարում վերապատրաստում անցած մասնագետի առկայությամբ:

Ներկա իրավիճակում ի հայտ են գալիս մի շարք խնդիրներ, ինչպիսիք են՝ բուժանձնակազմի ցածր մոտիվացիան՝ որակյալ բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելու հարցում, որովհետև հիմնականում վերջինիս աշխատավարձը կախված չէ նրա աշխատանքի որակից, ոչ որակյալ բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելու արդյունքում բժշկի պատասխանատվություն չկրելը և այլն:

Ներկայումս բուժաշխատողների լիցենզավորման համակարգ գործում է մի շարք զարգացած երկրներում, ինչպիսիք են Բելգիան, Գերմանիան, Ֆինլանդիան, Դանիան, ԱՄՆ-ը և այլն:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Առողջապահության համակարգի զարգացման, որակյալ կադրեր ունենալու նպատակով առաջարկվում է ներդնել բուժաշխատողների անհատական լիցենզավորման համակարգ, հնարավորություն տալով բուժաշխատողներին ինքնուրույն լիցենզավորվել և զբաղվել մասնագիտական գործունեությամբ:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Միջոցառման իրականացման արդյունքում բուժաշխատողներին հնարավորություն կտրվի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելու անհատական լիցենզիա ստանալ, ինչն էլ իր հերթին հիմք կհանդիսանա վերջիններիս կողմից ինքնուրույն մասնագիտական գործունեությամբ զբաղվելու համար: Բացի այդ, այս համակարգի ներդրման արդյունքում ակնկալվում է բարձրացնել բժշկական օգնության և սպասարկման որակը, բացառել մասնագետի կախվածությունը բուժհաստատությունից, հնարավորություն ընձեռել պացիենտին իրացնելու բժշկին ինքնուրույն ընտրելու իր իրավունքը, բժշկի կողմից թույլ տրված սխալի դեպքում սահմանափակել վերջինիս գործունեությունը՝ լիցենզիայից զրկելու միջոցով:

23.3. Կլինիկական ռեզիդենտուրայի ներդրման նպատակով անհրաժեշտ իրավական ակտերի ընդունում և պիլոտային ծրագրի իրականացում

1. Միջոցառման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածի 2-րդ կետից, վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 728-Լ որոշմամբ հաստատված Առողջապահության նախարարության կանոնադրության 10-րդ կետից, ինչպես նաև ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 13-րդ ենթակետից:

Բժշկական կրթական հետբուհական համակարգում ստանդարտացման գործընթացների ու չափելի ցուցանիշների ներդնումը հնարավորություն կստեղծի բժշկական կադրերի կազմավորման փուլում, ինչպես նաև դրա ավարտին, ունենալ հնարավորություն գնահատելու կադրերի կրթության որակը և ինքնուրույն գործունեության նրանց կոմպետենտությունը:

Սույն միջոցառման նպատակն է տեղայնացնել դասական ռեզիդենտուրայի մոդելը, պիլոտային ծրագրի միջոցով վեր հանել ներդրման հետ կապված խնդիրներն ու առաջարկել դրանց լուծման հնարավոր եղանակները:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները
ՀՀ գործող բժշկական հետբուհական կրթական համակարգը կարիք ունի գնահատման ու վերանայման: ՀՀ ԱՆ կողմից նախաձեռնվել են ոլորտի միջազգային փորձագետների մասնակցությամբ մասնագիտական քննարկումներ, որոնց արդյունքում վեր են հանվել ոլորտում առկա խնդիրները, որոնցից են՝ մասնագետների ընտրության ստանդարտների, միօրինականացված կրթական ծրագրերի, ընթացիկ որակի գնահատման ստանդարտների, վերջնարդյունքների գնահատման ստանդարտ մոտեցումների և չափանիշների, գնահատող ու վերահսկող անկախ ու անկողմնակալ մարմինների բացակայությունը:
Դասական ռեզիդենտուրայի մոդելը ենթադրում է բժշկական կրթական համակարգի գործունեության բոլոր փուլերում չափելի ցուցանիշների առկայություն՝ սկսած մասնագիտացողների քանակի ու յուրաքանչյուր մասնագիտացողի ընտրությունից, մինչև մասնագիտացողի ինքնուրույն գործունեության պատրաստվածության գնահատումը:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները
Միջոցառման իրականացումը հնարավորություն կստեղծի պիլոտային բաղադրիչի իրականացման փուլում բացահայտել ու վերլուծել ռեզիդենտուրայի դասական մոդելի ներդրման դեպքում առաջացող խնդիրները և տալ առաջարկություններ դրանց լուծման համար: Ռեզիդենտուրայի դասական մոդելում մասնագիտացողի ընտրությունը, մասնագիտացողների հնարավոր առավելագույն քանակի հաշվարկումը, մասնագիտացողի կրթության որակի և վերջնարդյունքների գնահատումը, գնահատումն իրականացնող մարմինների անկախությունը, նրանց լիազորություններն ու սահմանված վերահսկողությունը, հիմնվում են ստանդարտացված ու չափելի ցուցանիշների վրա և ներառում են համապատասխան իրավակարգավորումները, ինչը հնարավոր է դարձնում գործընթացի որակի վերահսկողությունը:

2. **Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**
Ստանդարտացված հետբուհական կրթական համակարգի առկայությունն ու գործունեությունը իր արտացոլումը կգտնի մատուցվող բժշկական ծառայությունների որակում, քանի որ որակյալ կադրային ներուժը ոլորտի որակյալ գործունեության կարևոր բաղադրիչներից մեկն է:

23.4. «Բուժքույրական գործի զարգացման ռազմավարությունը և դրանից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի ընդունում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը
Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածի 2-րդ կետից, վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 728-Լ որոշմամբ հաստատված Առողջապահության նախարարության կանոնադրության 10-րդ կետից, ինչպես նաև ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 13-րդ ենթակետից:
Ժամանակակից համընդհանուր գործոնները և մարտահրավերները (ՄԱԿ-ի օրակարգ 2030-ի Կայուն զարգացման նպատակները, համընդհանուր առողջապահական ծածկույթը, բժշկական օգնության և սպասարկման ծախս-արդունավետության կարևորությունը, քրոնիկ հիվանդությունների աճը, ծերացող բնակչությունը, շրջակա միջավայրային վտանգների աճը, կլիմայի փոփոխությունը, բնակչության կողմից անառողջ ապրելակերպի ընտրությունն ու սովորությունները) մի կողմից, ժամանակակից տեխնոլոգիական առաջընթացի հնարավորությունները մյուս կողմից ստիպում են վերանայել բուժքույրերի ներկայիս գործառույթները, կրթության և շարունակական մասնագիտական զարգացման մոտեցումները՝ առողջապահական ծառայությունների տրամադրման մեջ բուժքույրերի դերակատարումը բարձրացնելու նպատակով:

1.1. Կարգավորման ենթակա հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.
Ներկայում բուժքույրերն աշխատում են որպես բժշկի կցորդ և սահմանափակ մասնակցություն ունեն Կայուն զարգացման նպատակներին, ներառյալ համընդհանուր առողջապահական ծածկույթին հասնելու հարցում, մինչդեռ ունենք բուժքույրերի մեծ բանակ, և անհրաժեշտ է հնարավորություններ ստեղծելու դեպքում այդ ներուժը արդյունավետ մասնակցություն կունենա ՄԱԿ-ի օրակարգ 2030-ի Կայուն զարգացման 3-րդ նպատակին (Ապահովել առողջ կյանք և խթանել բարեկեցություն բոլորի համար՝ անկախ տարիքից) հասնելու հարցում:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

	Ռազմավարության ընդունումով կձեռնարկվեն բուժքույրական գործի զարգացմանն ուղղված քայլեր, ներառյալ՝ Բուժքույրական բազային և շարունակական կրթության համակարգի բարելավում, Բուժքույրերի մասնագիտական ցանկի վերանայում և որակավորման բնութագրերի մշակում, բուժքույրերի բարձրագույն կրթության մոդելի ներդնում,Բուժքույրերի կարողությունների բարելավմանն ու գործառույթների ընդլայնմանն ուղղված գործընկերային համագործակցություն: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** «Բուժքույրական գործի զարգացման ռազմավարության» օրենքի ընդունումը հնարավորություն կտա ստեղծել քույրական գործի բարեփոխումներին ուղղված գործընթացների առաջնորդում, կառավարում, բարելավել բուժքույրական բազային և շարունակական կրթության համակարգը, և ներդնել բուժքույրերի բարձրագույն կրթության մոդել:
	23.5. **Բուժաշխատողների ռեգիստրի գործարկում և պետական մարմինների կողմից վարվող տվյալների բազաներին ինտեգրում** **1. 1. Միջոցառման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 9-րդ հոդվածից, ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 13-րդ ենթակետից: Բուժաշխատողների ռեգիստրը երկրի հանրային առողջության կառավարման և հզորացման կարևոր գործիք է՝ միտված բուժաշխատողների վերաբերյալ իրական ժամանակում ամբողջական տեղեկատվության տիրապետման ապահովմանը: Սույն միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև ՀՀ-ում բուժաշխատողների վերաբերյալ ամբողջական և միասնական տեղեկատվական բազա ունենալու հանգամանքով: Միջոցառման նպատակն է 2023թ. ընթացքում գործարկել բուժաշխատողների ռեգիստրը և այն ինտեգրել այլ մարմինների կողմից վարվող տվյալների բազաներին: **1.2. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի պահանջ է բուժաշխատողների ռեգիստր ունենալը, որի վերաբերյալ մշակվել և շրջանառության մեջ է դրվել «Բուժաշխատողների ռեգիստրի ձևավորման և վարման կարգը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը: Առողջապահական աշխատուժի պլանավորման, բժշկական մասնագետների նպատակային ուսուցման կազմակերպման, առողջապահական մասնագետների հավաստագրման համար խիստ անհրաժեշտ է ճշգրիտ և իրական ժամանակում թարմացվող առողջապահական աշխատուժի շտեմարանների առկայությունը: Ռեգիստրը բժշկական անձնակազմի տեղեկատվության հիմնական աղբյուրն է, իսկ առողջապահական ծառայություններ մատուցողները առաջնային աղբյուր են բժշկական ծառայության և պացիենտի հետ կապված տվյալների էլեկտրոնային առողջապահության համակարգ մուտքագման համար: 2. **Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Ռեգիստրի գործարկումը հնարավորություն կընձեռի իրականացնել առողջապահության բնագավառում գործունեություն իրականացնող բուժաշխատողների վերաբերյալ տվյալների հավաքումը, հաշվառումը, պահպանումը, ուսումնասիրումը, վերլուծությունը, կանխատեսումը և օրենքով նախատեսված դեպքերում դրանց փոխանցումը, և համակարգի՝ տվյալների այնպիսի բազաներին ինտեգրվելը, ինչպիսիք են՝ ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի «Հարկատու-3», ՀՀ ոստիկանության «Բնակչության պետական ռեգիստր», ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության էլեկտրոնային կառավարման համակարգ, ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Կրթության կառավարման տեղեկատվական միասնական համակարգը»:
24	**24.1. «ՀՀ առողջության առաջնային պահպանման օղակի բարեփոխումների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի հաստատում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետից, «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածի 2-րդ կետից, վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 728-Լ որոշմամբ հաստատված Առողջապահության նախարարության կանոնադրության 10-րդ կետից, ինչպես նաև ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն

	որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 2-րդ ենթակետից, որի նպատակն է ապահովել առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) օղակի արդիականացումը, շարունակական զարգացումը և արդյունավետության բարձրացումը: **1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.** ԱԱՊ օղակում առկա են մի շարք լուծում պահանջող խնդիրներ, որոնք չեն նպաստում բնակչության առողջության առաջնային ցուցանիշների բարելավմանը: Չնայած այն հանգամանքին, որ դեռևս 2006թ-ից ԱԱՊ օղակում մատուցվող հիմնական ծառայությունները անվճար են բնակչության համար, դրանց սպառումը դեռևս մնում է ոչ գոհացուցիչ մակարդակի վրա՝ կազմելով տարեկան մեկ բնակչի հաշվով շուրջ 4.3 հաճախում, ինչը շուրջ 2 անգամ ցածր է 1990թ., ինչպես նաև Եվրամիության 27 երկրների ներկայիս ցուցանիշից: **1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները.** ԱԱՊ օղակի բարեփոխումների ծրագրի ներդրումը և բարեփոխումների իրագործումը նախատեսում է ԱԱՊ օղակի մասնագետների պատասխանատվության բարձրացում՝ բնակչության առողջության պահպանման գործում, ԱԱՊ բժշկի գործառույթների ուժեղացում, կանխարգելիչ բժշկության հզորացում, հիվանդանոցային դեպքերի թվի նվազում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը.** ԱԱՊ օղակի բարեփոխումների միջոցառումների ծրագրի ներդրման արդյունքում համապատասխան իրավական ակտերի ընդունմամբ կսահմանվեն բարեփոխումների ուղիներ առողջության առաջնային պահպանման օղակում վերհանված խնդիրների առաջարկվող լուծումները, առաջարկվող քաղաքականության հիմնական դրույթները: Կանխատեսվում է, որ միջոցառումների իրականացման արդյունքում ԱԱՊ հաստատություններ մեկ բնակչին բաժին ընկնող այցերի թիվը կաճի մինչև 6 այց տարեկան, իսկ հիվանդանոցային, ինչպես նաև շտապ և անհետաձգելի բուժօգնության դեպքերի թիվը կնվազի 10%-ով:
25	**25.1 Հիվանդանոցային ծառայությունների կառուցվածքի մասթեր-պլանի և ծառայությունների մատուցման ինտեգրացված մոդելի մշակում և ներդնում՝ հիմնված հստակ ձևակերպված ցուցանիշների վրա** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետության առողջապահության համակարգը շարունակաբար արդիականացվում է, ինչը նպաստում է մատուցվող ծառայությունների որակի և մատչելիության բարձրացմանը: Այնուամենայնիվ համակարգը դեռևս կարիք ունի բարեփոխման ինչպես ինստիտուցիոնալ տեսանկյունից, այնպես էլ բովանդակային: Ներկայում զարգացած երկրները որդեգրել են իրենց քաղաքացիներին համապարփակ առողջապահական ծածկույթով ապահովման քաղաքականությունը, ինչը հնարավորինս լիարժեք, արդյունավետ և հասցեական է դարձնում մատուցվող բժշկական օգնության և սպասարկման ծառայությունները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության առողջապահական համակարգը ևս միտված է ի վերջո ապահովել համապարփակ առողջապահական ծածկույթ, անհրաժեշտ է մշակել մի փաստաթուղթ, որը կսահմանի Հայաստանի Հանրապետությունում առողջապահական ծառայությունների բաշխման սկզբունքները, կնախատեսի հստակ մեխանիզմներ՝ ապահովելու համար նեղ մասնագետների կապը առողջության պահպանման առաջնային օղակի հետ: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայում բժշկական օգնության և սպասարկման ծառայությունները մատուցվում են առողջության առաջնային պահպանման օղակի, երկրորդային մակարդակում՝ բազմապրոֆիլ ծառայություններ մատուցող բժշկական հաստատությունների և նեղ մասնագիտական՝ երրորդային մոնոպրոֆիլ բժշկական կազմակերպությունների միջոցով: Նշված եռօղակ համակարգում կապը բժշկական հաստատությունների մեջ գրեթե բացակայում է, ինչը հաճախ ազդեցություն է ունենում բուժման արդյունավետության, տևողության, ծախսատարության վրա: Ներկայում գործում է մարզային առողջապահական համակարգը ներկայացնող Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության մարզերի առողջապահության համակարգերի օպտիմալացման ծրագրերը հաստատելու մասին» N 1911-Ն որոշումը, որը պարբերաբար թարմացվում է՝ ներառելով մարզերում գործող բժշկական կազմակերպությունների գործունեության և կառուցվածքի հետ կապված փոփոխությունները, նշված որոշումը, սակայն, որևէ կերպ չի հանդիսանում ծառայությունների բաշխման համար ուղեցույց և չի սահմանում ելակետային տվյալներ: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

	Նախատեսվում է մշակել Հայաստանի Հանրապետության հիվանդանոցային ծառայությունների կառուցվածքի մասթեր-պլան և ծառայությունների մատուցման ինտեգրված մոդել: Փաստաթղթի հիման վրա յուրաքանչյուր տարածաշրջանում բժշկական օգնության և սպասարկման ծառայությունները կտեղակայվեն հիմքում ունենալով նախապես իրականացված կարիքների գնահատման, սպասարկվող ազգաբնակչության թվաքանակի, սեռի, հիվանդացության վիճակագրության, անհրաժեշտ մասնագետների առկայության, տարածաշրջանում այլ նույնօրինակ ծառայությունների առկայության, մահճակալային ֆոնդի և դրա զբաղվածության, ապագա հեռանկարների և այլ սկզբունքային ցուցանիշների ուսումնասիրությունը: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման իրականացումը կնպաստի Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին առողջապահության համապարփակ ծածկույթով ապահովելուն ուղղված գործուն մեխանիզմների ներդրմանը և առողջապահական որակյալ ծառայությունների ապահովմանը:
26	26.1. **«Շտապ բժշկական օգնության կենտրոնացված ծառայության ներդրման 2022-2025 թվականների ծրագիրը հաստատելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի ընդունում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասին 7-րդ կետից, «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածի 2-րդ կետից, վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 728-Լ որոշմամբ հաստատված Առողջապահության նախարարության կանոնադրության 10-րդ կետից, ինչպես նաև ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 2-րդ և 10-րդ ենթակետերից և պայմանավորված է շտապօգնության ծառայության արագ արձագանքման, մեկ միասնական կենտրոնից ղեկավարման, հանրապետության ամբողջ տարածքում շտապ և անհետաձգելի բժշկական օգնության կանչերի սպասարկումը առավել օպերատիվ և ռացիոնալ կազմակերպելու անհրաժեշտությամբ: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայում Հայաստանի Հանրապետությունում շտապ բժշկական օգնությունը պետական պատվերի շրջանակներում կազմակերպվում է Երևանի քաղաքապետարանի «Շտապբուժօգնություն» ՓԲԸ թվով 7 ենթակայանների, ՀՀ Շիրակի մարզի Գյումրու «Շտապ բուժական օգնության կայան» ՓԲԸ, ԱՆ «Այրվածքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի բազայի վրա ստեղծված շտապ բժշկական օգնության ծառայության (հիմնականում ապահովվում է կորոնավիրուսային հիվանդությամբ պացիենտների սպասարկումը) և ՀՀ մարզերի թվով 44 բժշկական կենտրոնների շտապ բժշկական օգնության ծառայությունների կողմից: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Ռազմական դրությամբ, արտակարգ իրավիճակով, ինչպես նաև մի շարք գործոններով (բնական աղետների առաջացման, միգրացիոն հոսքերի ծավալների աճի հավանականությունը) պայմանավորված շտապօգնության ծառայության արագ արձագանքման և մեկ միասնական կենտրոնից ղեկավարման, շտապ և անհետաձգելի բժշկական օգնության կանչերի սպասարկման ընթացքը շտապ բժշկական օգնության կենտրոնացված ծառայության միջոցով կառավարելու նպատակով, նախատեսվում է ներդնել շտապ բժշկական օգնության կենտրոնացված ծառայության ծրագիրը: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման իրականացման արդյունքում նախատեսվում է հաստատել շտապ բժշկական օգնության կենտրոնացված ծառայության ներդրման 2022-2025թթ. ծրագիր, որով սահմանված միջոցառումների իրականացմամբ կստեղծվի շտապ բժշկական օգնության կենտրոնացված ծառայություն:
27.	27.1 **ԱԱՊ ծառայություններ մատուցող բժշկական հաստատությունների շենքային պայմանների, սարքավորումների և մարդկային ռեսուրսների գույքագրում և գնահատում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 2-րդ, 14-17-րդ ենթակետերից: ՀՀ առողջության առաջնային պահպանման մակարդակի զարգացման հարցը դեռևս արդիական խնդիր է Հայաստանի Հանրապետությունում: Առողջության առաջնային պահպանման ծառայությունները հետագա զարգացման կարիք ունեն, մասնավորապես՝ քաղաքային պոլիկլինիկաները շարունակում են աշխատել խորհրդային տարիներին ձևավորված համակարգով, այն է՝ հիմնականում ոչ օպտիմալ բժշկական

	անձնակազմով, շենքային անբավարար պայմաններով և հին, ժամանակակից չափանիշներին չհամապատասխանող սարքավորումներով: ԱԱՊ հաստատությունների գույքագրումը հնարավորություն կընձեռի ԱԱՊ համակարգի ամբողջական պատկեր ունենալու և հիմք կհանդիսանա հետագա որոշումների կայացման գործում: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Վերջին տարիներին Համաշխարհային բանկի աջակցությամբ առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) օղակում իրականացվող վարկային ծրագրերը հիմնականում ուղղվել են մարզերի համայնքային ԱԱՊ ծառայություններ մատուցողների ենթակառուցվածքների բարելավմանը, ինչպես նաև ընտանեկան բժշկության ներդրման համար նպաստավոր պայմանների ստեղծմանը, որպես կառուցվածքային առավել արդյունավետ, մատչելի ու նպատակահարմար մոդելի: 2000-2013 թվականների ընթացքում ՀԲ աջակցությամբ իրականացված վարկային ծրագրերով վերանորոգվել և կառուցվել են 175 բժշկական ամբուլատորիաների, առողջության կենտրոնների, ԱԱՊԿ-ների և ընտանեկան բժշկության գրասենյակների շենքեր: Վարկային ծրագրերի շրջանակներում 2000-2012 թվականների ընթացքում մասնագիտացում են ստացել 1655 ընտանեկան բժիշկ և 1770 ընտանեկան բուժքույր: Մասնագիտացված ընտանեկան բժիշկների շուրջ 55%-ը և բուժքույրերի շուրջ 65%-ը եղել են ՀՀ մարզերից: Այնուամենայնիվ, Երևան քաղաքում և ՀՀ մարզերում առկա են անմխիթար պայմաններում գտնվող բժշկական ԱԱՊ ծառայություններ մատուցող բժշկական հաստատություններ, որոնց թե՛ շենքային վիճակը և թե՛ տեխնիկական հագեցվածությունը չեն բավարարում միջազգային նորմերին, ինչն անդրադառնում է նաև մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի վրա: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** ԱԱՊ մակարդակում բժշկական օգնության և սպասարկման որակը բարձրացնելու միջոցներից է բժշկական հաստատությունների արդիականացումը՝ կառուցում, հիմնանորոգում և հագեցում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական կահույքով, սարքավորումներով և պարագաներով: 2021-2026թթ-ին նախատեսվում է շարունակել ԱԱՊ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների վերանորոգման/կառուցման և հագեցման աշխատանքների իրականացումը, ինչի համար անհրաժեշտ գույքագրման և գնահատման միջոցով ունենալ ԱԱՊ համակարգի ամբողջական պատկեր: Մասնավորապես՝ 2021-2022թթ. ընթացքում նախատեսվում է իրականացնել ԱԱՊ ծառայություններ մատուցող բժշկական հաստատությունների շենքային պայմանների, սարքավորումների և մարդկային ռեսուրսների գույքագրում և գնահատում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Գույքագրման տվյալները հիմք կհանդիսանան առաջնահերթությունների ձևավորման և հետագա ռազմավարական ծրագրերի մշակման համար:
28.	28.1. **ՀՀ Վայոց ձորի մարզային հիվանդանոցի կառուցում և հագեցում բժշկական կահույքով, սարքավորումներով և պարագաներով** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 14-17-րդ ենթակետերից: ՀՀ մարզերի առողջապահական համակարգի զարգացման հարցը դեռևս արդիական խնդիր է Հայաստանի Հանրապետությունում: Մի շարք մարզային բժշկական հաստատությունների շենքեր դեռևս գտնվում են անմխիթար պայմաններում և կարիք ունեն արդիականացման՝ բնակչությանը տեղում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական ծառայություններ մատուցելու նպատակով: ՀՀ մարզային առողջապահության համակարգի զարգացումը անմիջապես բխում է ՀՀ կառավարության կողմից որդեգրված ՀՀ տարածքների համաչափ զարգացման ծրագրից: Մարզային բժշկական կազմակերպությունների արդիականացմանն ուղղված ծրագրերը անխուսափելիորեն նպաստելու են բնակչությանը տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման որակի և մատչելիության մակարդակի բարձրացմանը: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** 2009թ. ի վեր ՀՀ մարզային առողջապահական համակարգը արդիականացվում է՝ ընդգրկելով մարզերում գործող նոր բժշկական կազմակերպությունների, որոնք կարիք ունեն շենքային պայմանների բարելավման, նոր սարքավորումներով ու կահույքով հագեցման:

Մինչ օրս հիմնանորոգվել և կառուցվել են ՀՀ մարզային 16 բժշկական կենտրոն և շուրջ 175 առողջության առաջնային պահպանման հաստատության շենքեր: Գերակշիռ դեպքերում բժշկական հաստատությունները նաև հագեցվել են արդի բժշկական սարքավորումներով և անհրաժեշտ կահույքով:
Այնուամենայնիվ, ՀՀ մարզերում դեռևս կան անմխիթար պայմաններում գտնվող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններ, որոնց թե՛ շենքային վիճակը և թե՛ տեխնիկական հագեցվածությունը չեն բավարարում միջազգային նորմերին, ինչն անդրադառնում է նաև մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի վրա:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները
Մարզերում մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակը բարձրացնելու միջոցներից է բժշկական հաստատությունների արդիականացումը՝ կառուցում, հիմնանորոգում և հագեցում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական կահույքով, սարքավորումներով և պարագաներով:
2021-2026 թթ.-ին նախատեսվում է շարունակել մարզային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների վերանորոգման/կառուցման և հագեցման աշխատանքների իրականացումը:
Մասնավորապես՝ 2021-2023 թթ. ընթացքում նախատեսվում է իրականացնել ՀՀ Վայոց ձորի մարզի բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների օպտիմալացում և բժշկական կազմակերպությունների արդիականացում:
ՀՀ Վայոց ձորի մարզն ընդգրկում է 3 քաղաք՝ Եղեգնաձոր, Վայք, Ջերմուկ, ինչպես նաև 41 գյուղական համայնք և 52 գյուղ:
Եղեգնաձորի տարածաշրջանում գործում է «Եղեգնաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն՝ 45 մահճակալային ֆոնդով, որը սպասարկում է Եղեգնաձորի տարածաշրջանի շուրջ 32.2 հազար ազգաբնակչությանը: Բժշկական կենտրոնը գտնվում է ոչ բարվոք վիճակում և կարիք ունի կապիտալ հիմնանորոգման, իսկ սարքավորումները, կահույքը և պարագաները ֆիզիկապես մաշված են, մեծ մասն արտադրված է դեռևս Խորհրդային Միության տարիներին:
Վայքի տարածաշրջանում գործում է «Վայքի բուժական միավորում» ՓԲԸ-ն՝ 35 մահճակալային ֆոնդով, որը սպասարկում է Վայքի և Ջերմուկի տարածաշրջանների բնակչությանը՝ շուրջ 17.3 հազար: Ծառայությունները տեղակայված են հիմնական (կառուցված 1962-70թթ..), ծննդատան (կառուցված 1994թ.) և ինֆեկցիոն մասնաշենքերում: Իրականացվել են մասնակի վերանորոգման աշխատանքներ պետական բյուջեի միջոցներով, սակայն մասնաշենքերը հիմնանորոգման և բժշկական սարքավորումներով հագեցման կարիք ունեն:
Ելնելով վերոնշյալից, ինչպես նաև բուժհաստատությունների մահճակալների ծանրաբեռնվածության ցածր ցուցանիշներից՝ նպատակահարմար չի գտնվել արդիականացնել մարզի 2 բուժհաստատությունները:
Ուստի՝ առաջարկվել է միավորել Եղեգնաձորի և Վայքի բժշկական հաստատությունների ստացիոնար ծառայությունները (ընդհանուր՝ 80 մահճակալ հզորությամբ)՝ կառուցելով Եղեգնաձոր քաղաքում Վայոց ձորի մարզային նոր տիպային հիվանդանոց (36 ստացիոնար մահճակալ հզորությամբ), որը կապահովի երկրորդային մակարդակի հիվանդանոցային բոլոր ծառայությունները՝ պահպանելով պոլիկլինիկական ծառայությունները Վայքում և Եղեգնաձորում: Նորակառույց հիվանդանոցը կհագեցվի ժամանակակից բժշկական սարքավորումներով, կահույքով և պարագաներով:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը
Բուժհաստատության արդիականացման արդյունքում Վայոց ձորի մարզի բնակչությանը հնարավորություն կընձեռվի երկրորդային մակարդակի պատշաճ բժշկական ծառայություններ ստանալ տեղում՝ իրենց բնակավայրին մոտ:

28.2. **ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու բժշկական կենտրոնի նոր շենքի կառուցում և հագեցում բժշկական կահույքով, սարքավորումներով և պարագաներով**

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը
Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 14-17-րդ ենթակետերից:
ՀՀ մարզերի առողջապահական համակարգի զարգացման հարցը դեռևս արդիական խնդիր է Հայաստանի Հանրապետությունում: Մի շարք մարզային բժշկական հաստատությունների շենքեր դեռևս գտնվում են անմխիթար պայմաններում և կարիք ունեն արդիականացման՝ բնակչությանը տեղում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական ծառայություններ մատուցելու նպատակով:
ՀՀ մարզային առողջապահության համակարգի զարգացումը անմիջապես բխում է ՀՀ կառավարության կողմից որդեգրված ՀՀ տարածքների համաչափ զարգացման ծրագրից:

Մարզային բժշկական կազմակերպությունների արդիականացմանն ուղղված ծրագրերը անխուսափելիորեն նպաստելու են բնակչությանը տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման որակի և մատչելիության մակարդակի բարձրացմանը:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

2009թ. ի վեր ՀՀ մարզային առողջապահական համակարգը արդիականացվում է՝ ընդգրկելով մարզերում գործող նոր բժշկական կազմակերպություններ, որոնք կարիք ունեն շենքային պայմանների բարելավման, նոր սարքավորումներով ու կահույքով հագեցման:

Մինչ օրս հիմնանորոգվել և կառուցվել են ՀՀ մարզային 16 բժշկական կենտրոն և շուրջ 175 առողջության առաջնային պահպանման հաստատության շենքեր: Գերակշիռ դեպքերում բժշկական հաստատությունները նաև հագեցվել են արդի բժշկական սարքավորումներով և անհրաժեշտ կահույքով:

Այնուամենայնիվ, ՀՀ մարզերում դեռևս կան անմխիթար պայմաններում գտնվող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններ, որոնց թե՛ շենքային վիճակը և թե՛ տեխնիկական հագեցվածությունը չեն բավարարում միջազգային նորմերին, ինչն անդրադառնում է նաև մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի վրա:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Մարզերում մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակը բարձրացնելու միջոցներից է բժշկական հաստատությունների արդիականացումը՝ կառուցում, հիմնանորոգում և հագեցում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական կահույքով, սարքավորումներով և պարագաներով:

2021-2026թթ-ին նախատեսվում է շարունակել մարզային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների վերանորոգման/կառուցման և հագեցման աշխատանքների իրականացումը:

Մասնավորապես՝ նախատեսվում է արդիականացնել ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու բժշկական կենտրոնը՝ վերջինիս համար կառուցելով նոր շենք և հագեցնելով արդի բժշկական սարքավորումներով և կահույքով:

ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու բժշկական կենտրոնը՝ 95 մահճակալ հզորությամբ, բազմապրոֆիլային բժշկական հաստատություն է, որը լայն սպեկտորի ստացիոնար և պոլիկլինիկական ծառայություններ է մատուցում Մարտունու տարածաշրջանի 88.6 հազար բնակչությանը, որից 11.5 հազարը քաղաքային է, 77.1 հազարը՝ գյուղական:

Մարտունու ԲԿ ծառայությունները տեղակայված են 1987թ. կառուցված, եռահարկ պանելային շինությունում, որը շահագործման հանձնելուց ի վեր կապիտալ չի հիմնանորոգվել, ներկայում գտնվում է անբարեկարգ վիճակում, ունի վերանորոգման և սարքավորումներով ու կահույքով, պարագաներով հագեցման կարիք:

Ելնելով վերոնշյալից, շինության չափսերից, ինչպես նաև կենտրոնի մահճակալների ծանրաբեռնվածության ցածր ցուցանիշներից՝ տնտեսապես արդյունավետ չէ Մարտունու բժշկական կենտրոնի ներկա մասնաշենքի հիմնանորոգումը:

Ուստի՝ նպատակահարմար է Մարտունու ԲԿ տարածքում կառուցել հիվանդանոցային և պոլիկլինիկական ծառայություններ մատուցող բժշկական կենտրոնի նոր տիպային մասնաշենք: Նորակառույց կենտրոնը կհագեցվի ժամանակակից բժշկական սարքավորումներով, կահույքով և պարագաներով:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Բուժհաստատության արդիականացման արդյունքում Մարտունու տարածաշրջանի բնակչությանը հնարավորություն կընձեռվի ողջ ծավալի պատշաճ բժշկական ծառայությունները ստանալ տեղում՝ իրենց բնակավայրին մոտ:

28.3. **ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի բժշկական կենտրոնի վերակառուցում**

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 14-17-րդ ենթակետերից:

ՀՀ մարզերի առողջապահական համակարգի զարգացման հարցը դեռևս արդիական խնդիր է Հայաստանի Հանրապետությունում: Մի շարք մարզային բժշկական հաստատությունների շենքեր դեռևս գտնվում են անմխիթար պայմաններում և կարիք ունեն արդիականացման՝ բնակչությանը տեղում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական ծառայություններ մատուցելու նպատակով:

ՀՀ մարզային առողջապահության համակարգի զարգացումը անմիջապես բխում է ՀՀ կառավարության կողմից որդեգրված ՀՀ տարածքների համաչափ զարգացման ծրագրից:

Մարզային բժշկական կազմակերպությունների արդիականացմանն ուղղված ծրագրերը անխուսափելիորեն նպաստելու են բնակչությանը տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման որակի և մատչելիության մակարդակի բարձրացմանը:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

2009 թ. ի վեր ՀՀ մարզային առողջապահական համակարգը արդիականացվում է՝ ընդգրկելով մարզերում գործող նոր բժշկական կազմակերպություններ, որոնք կարիք ունեն շենքային պայմանների բարելավման, նոր սարքավորումներով ու կահույքով հագեցման:

Մինչ օրս հիմնանորոգվել և կառուցվել են ՀՀ մարզային 16 բժշկական կենտրոն և շուրջ 175 առողջության առաջնային պահպանման հաստատության շենքեր: Գերակշիռ դեպքերում բժշկական հաստատությունները նաև հագեցվել են արդի բժշկական սարքավորումներով և անհրաժեշտ կահույքով:

Այնուամենայնիվ, ՀՀ մարզերում դեռևս կան անմխիթար պայմաններում գտնվող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններ, որոնց թե՛ շենքային վիճակը և թե՛ տեխնիկական հագեցվածությունը չեն բավարարում միջազգային նորմերին, ինչն անդրադառնում է նաև մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի վրա:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Մարզերում մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակը բարձրացնելու միջոցներից է բժշկական հաստատությունների արդիականացումը՝ կառուցում, հիմնանորոգում և հագեցում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական կահույքով, սարքավորումներով և պարագաներով:

2021-2026թթ-ին նախատեսվում է շարունակել մարզային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների վերանորոգման/կառուցման և հագեցման աշխատանքների իրականացումը:

Մասնավորապես՝ 2021-2024թթ. ընթացքում նախատեսվում է իրականացնել ՀՀ Սյունիքի մարզում գործող Սիսիանի բժշկական կենտրոնի շենքային պայմանների բարելավում:

ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի բժշկական կենտրոնը՝ 50 մահճակալ հզորությամբ բազմապրոֆիլային բժշկական հաստատություն է, որը լայն սպեկտորի ստացիոնար և պոլիկլինիկական ծառայություններ է մատուցում Սիսիանի տարածաշրջանի 29.7 հազար բնակչությանը, որից 15.1 հազարը քաղաքային է, 14.6՝ հազար գյուղական:

Սիսիանի բժշկական կենտրոնի ծառայությունները տեղակայված են 1967թ. կառուցված հիվանդանոցային և պոլիկլինիկական մասնաշենքերում: Իրականացվել են մասնակի վերանորոգումներ, սակայն կենտրոնը ներկայում ունի հիմնանորոգման և ժամանակակից բժշկական սարքավորումներով հագեցման կարիք:

Ելնելով վերոնշյալից, շինության չափսերից, կենտրոնի մահճակալների ծանրաբեռնվածության ցուցանիշներից, ինչպես նաև մարզում երրորդային մակարդակի ծառայություն տրամադրող բուժհաստատությունների առկայությունից, առաջարկվում է կենտրոնի մահճակալային ֆոնդը կրճատել և իրականացնել վերակառուցման աշխատանքներ:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Բուժհաստատության արդիականացման արդյունքում Սիսիանի տարածաշրջանի բնակչությանը հնարավորություն կընձեռվի ողջ ծավալի պատշաճ բժշկական ծառայությունները ստանալ տեղում՝ իրենց բնակավայրին մոտ:

28.4. **ՀՀ ԱՆ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի մասնաշենքերի վերակառուցում**

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 14-17-րդ ենթակետերից:

Հայաստանում հոգեկան առողջության պահպանման ծառայությունների բարեփոխման և համապատասխան բժշկական կազմակերպությունների արդիականացման հանգամանքը ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում է: Հոգեբուժական ծառայության բարեփոխումը առաջնահերթ և հրատապ է հաշվի առնելով հատկապես հոգեկան խնդիրներ ունեցող հիվանդների թվի աճը, հիվանդությունների կառուցվածքում հոգեկան հիվանդությունների մեծ մասնաբաժինը, ինչպես նաև Հայաստանում հոգեբուժական ծառայություն տրամադրող հաստատությունների ծայրահեղ անբավարար ենթակառուցվածքների առկայությունը: Վերոնշված հաստատությունների շենքային պայմանները գտնվում են անմխիթար վիճակում և ենթակա են արդիականացման՝ հոգեբուժական ծառայության կարիք ունեցող պացիենտներին ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական ծառայություններ տրամադրելու, բուժօգնության որակի և մատչելիության մակարդակի բարձրացման նպատակով:

	1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները ՀՀ հոգեբուժական ծառայություններ մատուցող գրեթե բոլոր հաստատությունների ենթակառուցվածքները մաշված են, կահույքը դեռևս խորհրդային տարիների արտադրության է, իսկ անհրաժեշտ բժշկական սարքավորումները բացակայում են կամ գտնվում են անսարք վիճակում: Առկա հոգեբուժական հիվանդանոցներից ոչ մեկը մասնագիտացված չէ երեխաների և դեռահասների հոգեբուժական խնդիրներով: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** ՀՀ տրամադրվող հոգեբուժական օգնության և սպասարկման որակը բարձրացնելու ուղղություններից է հոգեբուժական ծառայության կառուցվածքի օպտիմալացումը և բժշկական հաստատությունների արդիականացումը (ներառյալ՝ երեխաների հոգեկան առողջության ծառայությունները)՝ կառուցում, հիմնանորոգում և հագեցում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական սարքավորումներով, կահույքով և պարագաներով: 350 մահճակալ հզորությամբ ՀՀ ԱՆ ենթակայության «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ (այսուհետ՝ ՀԱՊԱԿ) ծառայությունները տեղակայված են 1979թ. կառուցված միմյանց հետ կապված երկհարկանի հինգ և մեկ եռահարկ վարչական մասնաշենքերում, ինչպես նաև առանձին տեղակայված մեկուսարանի մասնաշենքում: Շահառուների ընդհանուր թիվը կազմում է շուրջ 3780 մարդ: Ներկայում կենտրոնը գտնվում է խիստ անբավարար վիճակում, ունի վերանորոգման և սարքավորումներով ու կահույքով, պարագաներով հագեցման կարիք: Ուստի, ՀԱՊԱԿ կողմից մատուցվող հոգեկան առողջության պահպանման ծառայությունների բարելավման և ընդլայնման տեսանկյունից, նախատեսվում է մանկական հոգեբուժական հիվանդանոցային ծառայության ստեղծումը, ՀԱՊԱԿ մասնաշենքերի վերանորոգման, նոր մասնաշենքի և կցակառույցների կառուցման շինարարական աշխատանքները: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Բուժհաստատության արդիականացման արդյունքում Հայաստանի բնակչության խոցելի խմբին՝ հոգեկան խնդիր ունեցող պացիենտներին, կտրամադրվեն պատշաճ հոգեբուժական ծառայություններ:
	28.5. **ՀՀ ԱՆ «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի մասնաշենքերի վերակառուցում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 14-17-րդ ենթակետերից: ՀՀ հիվանդանոցային ծառայությունների արդյունավետության և որակի շարունակական բարելավումն իրականացվում է հիվանդանոցների օպտիմալացման, ինչպես նաև ընտրված հիվանդանոցների ենթակառուցվածքների և բուժման հնարավորությունների բարելավման գործընթացներին աջակցություն ցուցաբերելով: Հաշվի առնելով Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոնի հանրապետական նշանակությունը, որի շահառու է հանդիսանում Հայաստանի շուրջ 2 959.7 հազար բնակիչ, նախատեսվել է վերջինիս մասնաշենքերի արդիականացումը: Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոնի մասնաշենքերը գտնվում են անմխիթար պայմաններում և ենթակա են արդիականացման՝ բնակչությանը ժամանակակից չափանիշներին համապատասխան ինֆեկցիոն ծառայություններ տրամադրելու, բուժօգնության որակի և մատչելիության մակարդակի բարձրացման նպատակով: **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** ՀՀ-ում վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման արդյունավետության բարելավումը, ինչպես նաև ինֆեկցիոն ծառայության ենթակառուցվածքների արդիականացումն ու հզորացումն ունի շարունակական բնույթ: Մասնավորապես, հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնը, ինչպես նաև հինգ մարզային մասնաճյուղերն արդիականացված են, վերանորոգված է Գյումրու ինֆեկցիոն հիվանդանոցը, COVID-19 համավարակի շրջանակներում Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոնի տարածքում կառուցվել է մոդուլային տիպի տրիաժ կենտրոն: Միևնույն ժամանակ, դեռևս ինֆեկցիոն ծառայություններ տրամադրող հաստատություններ կան, որոնց թե՛ շենքային վիճակը և թե՛ տեխնիկական հագեցվածությունը չեն բավարարում միջազգային նորմերին, ինչն անդրադառնում է նաև մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի վրա՝ հատկապես COVID-19 համավարակի դեմ պայքարի պայմաններում:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

ՀՀ-ում վարակիչ հիվանդություններով պացիենտներին տրամադրվող բուժօգնության և սպասարկման որակը բարձրացնելու միջոցներից է ինֆեկցիոն ծառայության կառուցվածքի օպտիմալացումը և բժշկական հաստատությունների արդիականացումը՝ կառուցում, հիմնանորոգում և հագեցում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական սարքավորումներով, կահույքով և պարագաներով:

2021-2026թթ-ին նախատեսվում է շարունակել վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման արդյունավետության բարձրացմանն ու ինֆեկցիոն ծառայություններ մատուցող բժշկական կազմակերպությունների արդիականացմանն ուղղված աշխատանքները՝ հաստատությունների շենքային պայմանների բարելավման միջոցով:

Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոնը՝ 260 մահճակալ հզորությամբ հանրապետական նշանակության բժշկական հաստատություն է, որը ինֆեկցիոն ծառայություններ է տրամադրում ՀՀ ողջ ազգաբնակչությանը:

Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոնը կազմված է յոթ մասնաշենքերից, որից Ա և Բ մասնաշենքերը կառուցվել են համապատասխանաբար 1960-ական թթ.. և 1986թ., իսկ հինգ մնացած օժանդակ շինությունները՝ 1930-ական թթ..: Գործող հիվանդանոցային ծառայությունները տեղակայված են Ա և Բ մասնաշենքերում: Կենտրոնի սեփական միջոցներով իրականացվել են մասնակի վերանորոգումներ, սակայն մասնաշենքերը ներկայում գտնվում են անբարեկարգ վիճակում ու հիմնանորոգման և սարքավորումներով, կահույքով և պարագաներով հագեցման կարիք ունեն:

Հաշվի առնելով Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոնի ներկա ֆիզիկական վիճակը, նախատեսվում է գործող մասնաշենքի վերակառուցում, նոր կցակառույցի և մասնաշենքի կառուցում:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոնի արդիականացման արդյունքում հնարավոր կլինի արագ և արդյունավետ կերպով արձագանքել նետված մարտահրավերներին, ՀՀ բնակչությանը հնարավորություն ընձեռելով օգտվել պատշաճ կերպով մատուցված ինֆեկցիոն ծառայություններից:

28.6. **ՀՀ Լոռու մարզի Վանաձորի ԲԿ ինֆեկցիոն ծառայության համար նոր մասնաշենքի կառուցում և հագեցում բժշկական կահույքով, սարքավորումներով և պարագաներով**

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 14-17-րդ ենթակետերից:

ՀՀ մարզերի առողջապահական համակարգի և, մասնավորապես, ինֆեկցիոն ծառայությունների, զարգացման հարցը դեռևս արդիական խնդիր է Հայաստանի Հանրապետությունում, հաշվի առնելով նաև 2020թ. համաշխարհային համաճարակի նշանակության կորոնավիրուսային համավարակով նետված մարտահրավերը: Որոշ մարզային բժշկական հաստատությունների ինֆեկցիոն ծառայությունների մատուցման համար նախատեսված տարածքները դեռևս գտնվում են անմխիթար պայմաններում և կարիք ունեն արդիականացման՝ բնակչությանը տեղում ժամանակակից չափանիշներին համապատասխան պատշաճ ինֆեկցիոն բժշկական ծառայություններ մատուցելու նպատակով:

Ինֆեկցիոն ծառայությունների բարեփոխման և համապատասխան ենթակառուցվածքի արդիականացման միջոցառումները անմիջապես բխում են ՀՀ կառավարության կողմից որդեգրված ՀՀ տարածքների համաչափ զարգացման ծրագրից:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

2009 թ. ի վեր ՀՀ մարզային առողջապահական համակարգը, ներառելով բոլոր մատուցվող ծառայությունները, արդիականացվում է՝ ընդգրկելով մարզերում գործող նոր բժշկական կազմակերպությունների, որոնք կարիք ունեն շենքային պայմանների բարելավման, նոր սարքավորումներով ու կահույքով հագեցման:

Մինչ օրս հիմնանորոգվել և կառուցվել են ՀՀ մարզային 16 բժշկական կենտրոն և շուրջ 175 առողջության առաջնային պահպանման հաստատության շենքեր: Գերակշիռ դեպքերում բժշկական հաստատությունները նաև հագեցվել են արդի բժշկական սարքավորումներով և անհրաժեշտ կահույքով:

Միաժամանակ, ՀՀ-ում վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման արդյունավետության բարելավումը, ինչպես նաև ինֆեկցիոն ծառայության ենթակառուցվածքների արդիականացումն ու հզորացումն արդի ժամանակներում ավելի քան առաջնահերթ է: Նշված ուղղությամբ ևս արդեն իսկ իրականացվել են մի շարք աշխատանքներ, մասնավորապես՝ հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնը, ինչպես նաև հինգ մարզային մասնաճյուղերն արդիականացված են, վերանորոգված է Գյումրու ինֆեկցիոն հիվանդանոցը, COVID-19 համավարակի շրջանակներում Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոնի տարածքում կառուցվել է մոդուլային տիպի տրիաժ կենտրոն:

Միևնույն ժամանակ, դեռևս ինֆեկցիոն ծառայություններ տրամադրող հաստատություններ կան, որոնց թե՛ շենքային վիճակը և թե՛ տեխնիկական հագեցվածությունը չեն բավարարում միջազգային նորմերին, ինչն անդրադառնում է նաև մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի վրա՝ հատկապես COVID-19 համավարակի դեմ պայքարի պայմաններում:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Մարզերում մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակը բարձրացնելու միջոցներից է բժշկական հաստատությունների արդիականացումը՝ կառուցում, հիմնանորոգում և հագեցում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական կահույքով, սարքավորումներով և պարագաներով:

2021-2026թթ-ին նախատեսվում է շարունակել մարզային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների, այդ թվում նաև ինֆեկցիոն ծառայությունների համար հատկացված տարածքների վերանորոգման/կառուցման և հագեցման աշխատանքների իրականացումը:

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոցը՝ 15 մահճակալ հզորությամբ, տրամադրում է ինֆեկցիոն ծառայություններ ՀՀ Լոռու մարզի 213.3 հազար բնակչությանը, որից 126.1 հազարը քաղաքային է, 87.2 հազարը՝ գյուղական: Ինֆեկցիոն հիվանդանոցը տեղակայված է 1976թ. կառուցված երկհարկանի շենքում: 2004թ. հիվանդանոցը հիմնանորոգվել է պետական բյուջեի միջոցներով, ներկայում հիմնանորոգման և ժամանակակից սարքավորումներով հագեցման կարիք ունի:

ՀՀ Լոռու մարզի ինֆեկցիոն ծառայությունն արդիականացնելու և հզորացնելու նպատակով նախատեսվում է ծառայությունը մատուցել Վանաձորի ԲԿ կազմում, միաժամանակ ինֆեկցիոն ծառայության պատշաճ և որակով կազմակերպման համար կառուցելով նոր մասնաշենք՝ Վանաձորի նորակառույց բժշկական կենտրոնի տարածքում: Նախատեսվում է նաև ծառայության հագեցումը ժամանակակից սարքավորումներով, կահույքով և բժշկական պարագաներով:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

ՀՀ Լոռու մարզի ինֆեկցիոն ծառայության արդիականացումը կնպաստի տարածաշրջանում մատուցվող համապատասխան բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների որակի բարձրացմանը, հնարավորություն ընձեռելով ազգաբնակչությանը ստանալ անհրաժեշտ բուժսպասարկումը տեղում՝ իրենց բնակավայրին մոտ:

28.7. **ՀՀ Արմավիրի մարզի Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի մասնաճյուղի վերակառուցում և հագեցում բժշկական կահույքով, սարքավորումներով և պարագաներով**

1. **Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 14-17-րդ ենթակետերից:

Ինֆեկցիոն հիվանդություններին դիմակայելու, արագ արձագանքելու և հիվանդներին պատշաճ բժշկական օգնություն տրամադրելու համար անհրաժեշտ է ունենալ պատրաստված առողջապահական համակարգ, այն է՝ վարակի տարածումը կանխելու համար պահանջվող ենթակառուցվածքներ, հիվանդության վարման և արդյունավետ բուժման համար անհրաժեշտ բժշկական սարքավորումներ, բոլոր օղակներում համապատասխան վերապատրաստումներ անցած բժշկական անձնակազմ, ինչպես նաև ինֆեկցիոն հիվանդությունների համար նախատեսված սանիտարական նորմատիվների պահպանմամբ կառուցված/վերակառուցված կանխարգելիչ, ախտորոշիչ և/կամ բուժական ֆունկցիաներ իրականացնող բժշկական հաստատությունների շինություններ:

Ինչպես Երևանում, այնպես էլ ՀՀ մարզերում հակահամաճարակային համակարգի ուժեղացմանն ու արդիականացմանն ուղղված միջոցառումները անմիջապես բխում են ՀՀ կառավարության որդեգրած քաղաքականությունից: Ուստի և ծրագրավորվում է համաճարակային իրավիճակների կառավարման և վերահսկման գործում ներգրավված առողջապահական հաստատությունների շենքային պայմանների բարելավումը և հագեցումը անհրաժեշտ սարքավորումներով:

1**.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Նշված ուղղությամբ վերջին 30 տարվա ընթացքում ձեռնարկվել են բազմաթիվ միջոցառումներ, մասնավորապես՝ ՀՎԿԱԿ-ի մարզային տասը մասնաճյուղից հինգը (Շիրակ, Լոռի, Սյունիք, Գեղարքունիք, Տավուշ) արդեն իսկ վերակառուցվել/կառուցվել և հագեցվել են լաբորատոր սարքավորումներով:

Դրանցից որոշները, այնուամենայնիվ, շարունակում են գործել անմխիթար շենքային պայմաններում:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները
2022-2024թթ. ընթացքում նախատեսվում է արդիականացնել ՀՎԿԱԿ Արմավիրի մարզային մասնաճյուղը: Նշված մասնաճյուղի արդիականացումը՝ առկա շենքի վերակառուցում և հագեցում անհրաժեշտ սարքավորումներով և կահույքով, հնարավորություն կտա ապահովել հիվանդությունների վերահսկման և կանխարգելման լաբորատոր աշխատանքները նաև ՀՀ Արագածոտնի մարզում: Հարկ է նշել, որ Արմավիրի մարզը Հայաստանում ամենախիտ բնակեցվածներից մեկն է և համարվում է սահմանային գոտի, որի պատճառով այս տարածաշրջանում լաբորատոր կարողությունների զարգացումը խիստ կարևորվում է:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը
Միջոցառման իրականացումը կնպաստի ինֆեկցիոն հիվանդությունների, այդ թվում նաև COVID-19-ի բռնկման ռազմավարական պատրաստվածության և հակազդման գործընթացին, առողջապահական համակարգի, մասնավորապես՝ կորոնավիրուսի հայտնաբերման և ախտորոշման կարողությունների հզորացմանը:

28.8. **ՀՀ Արարատի մարզի Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի մասնաճյուղի վերակառուցում և հագեցում բժշկական կահույքով, սարքավորումներով և պարագաներով**

1. **Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**
Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 14-17-րդ ենթակետերից:
Ինֆեկցիոն հիվանդություններին դիմակայելու, արագ արձագանքելու և հիվանդներին պատշաճ բժշկական օգնություն տրամադրելու համար անհրաժեշտ է ունենալ պատրաստված առողջապահական համակարգ, այն է՝ վարակի տարածումը կանխելու համար պահանջվող ենթակառուցվածքներ, հիվանդության վարման և արդյունավետ բուժման համար անհրաժեշտ բժշկական սարքավորումներ, բոլոր օղակներում համապատասխան վերապատրաստումներ անցած բժշկական անձնակազմ, ինչպես նաև ինֆեկցիոն հիվանդությունների համար նախատեսված սանիտարական նորմատիվների պահպանմամբ կառուցված/վերակառուցված կանխարգելիչ, ախտորոշիչ և/կամ բուժական ֆունկցիաներ իրականացնող բժշկական հաստատությունների շինություններ:
Ինչպես Երևանում, այնպես էլ ՀՀ մարզերում հակահամաճարակային համակարգի ուժեղացմանն ու արդիականացմանն ուղղված միջոցառումները անմիջապես բխում են ՀՀ կառավարության որդեգրած քաղաքականությունից: Ուստի և ծրագրավորվում է համաճարակային իրավիճակների կառավարման և վերահսկման գործում ներգրավված առողջապահական հաստատությունների շենքային պայմանների բարելավումը և հագեցումը անհրաժեշտ սարքավորումներով:

1**.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**
Նշված ուղղությամբ վերջին 30 տարվա ընթացքում ձեռնարկվել են բազմաթիվ միջոցառումներ, մասնավորապես՝ ՀՎԿԱԿ-ի մարզային տասը մասնաճյուղից հինգը (Շիրակ, Լոռի, Սյունիք, Գեղարքունիք, Տավուշ) արդեն իսկ վերակառուցվել/կառուցվել և հագեցվել են լաբորատոր սարքավորումներով:
Դրանցից որոշները, այնուամենայնիվ, շարունակում են գործել անմխիթար շենքային պայմաններում:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները
2022-2024 թթ. ընթացքում նախատեսվում է արդիականացնել ՀՎԿԱԿ Արարատի մարզային մասնաճյուղը: Նշված մասնաճյուղի արդիականացումը՝ առկա շենքի վերակառուցում և հագեցում անհրաժեշտ սարքավորումներով և կահույքով, Հայաստանի հարավում արդեն իսկ արդիականացված Սյունիքի մասնաճյուղի հետ միասին կապահովի հիվանդությունների վերահսկման և կանխարգելման լաբորատոր աշխատանքները նաև ՀՀ Վայոց ձորի մարզում: Միևնույն ժամանակ, Արարատի մարզը սահմանամերձ է (ներկայում՝ նաև Վայոց ձորը), և այս տարածաշրջանում լաբորատոր կարողությունների զարգացումը խիստ անհրաժեշտություն է:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը
Միջոցառման իրականացումը կնպաստի ինֆեկցիոն հիվանդությունների, այդ թվում նաև COVID-19-ի բռնկման ռազմավարական պատրաստվածության և հակազդման գործընթացին, առողջապահական համակարգի, մասնավորապես՝ կորոնավիրուսի հայտնաբերման և ախտորոշման կարողությունների հզորացմանը:

28. **9 ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի բժշկական կենտրոնի վերակառուցում**

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 14-17-րդ ենթակետերից:
ՀՀ մարզերի առողջապահական համակարգի զարգացման հարցը դեռևս արդիական խնդիր է Հայաստանի Հանրապետությունում: Մի շարք մարզային բժշկական հաստատությունների շենքեր դեռևս գտնվում են անմխիթար պայմաններում և կարիք ունեն արդիականացման՝ բնակչությանը տեղում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական ծառայություններ մատուցելու նպատակով:
ՀՀ մարզային առողջապահության համակարգի զարգացումը անմիջապես բխում է ՀՀ կառավարության կողմից որդեգրված ՀՀ տարածքների համաչափ զարգացման ծրագրից:
Մարզային բժշկական կազմակերպությունների արդիականացմանն ուղղված ծրագրերը անխուսափելիորեն նպաստելու են բնակչությանը տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման որակի և մատչելիության մակարդակի բարձրացմանը:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները
2009 թ. ի վեր ՀՀ մարզային առողջապահական համակարգը արդիականացվում է՝ ընդգրկելով մարզերում գործող նոր բժշկական կազմակերպությունների, որոնք կարիք ունեն շենքային պայմանների բարելավման, նոր սարքավորումներով ու կահույքով հագեցման:
Մինչ օրս հիմնանորոգվել և կառուցվել են ՀՀ մարզային 16 բժշկական կենտրոն և շուրջ 175 առողջության առաջնային պահպանման հաստատության շենքեր: Գերակշիռ դեպքերում բժշկական հաստատությունները նաև հագեցվել են արդի բժշկական սարքավորումներով և անհրաժեշտ կահույքով:
Այնուամենայնիվ, ՀՀ մարզերում դեռևս կան անմխիթար պայմաններում գտնվող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններ, որոնց թե՛ շենքային վիճակը և թե՛ տեխնիկական հագեցվածությունը չեն բավարարում միջազգային նորմերին, ինչն անդրադառնում է նաև մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի վրա:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները
Մարզերում մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակը բարձրացնելու միջոցներից է բժշկական հաստատությունների արդիականացումը՝ կառուցում, հիմնանորոգում և հագեցում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական կահույքով, սարքավորումներով և պարագաներով:
2021-2026թթ-ին նախատեսվում է շարունակել մարզային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների վերանորոգման/կառուցման և հագեցման աշխատանքների իրականացումը:
Մասնավորապես՝ 2021-2022թթ. ընթացքում նախատեսվում է իրականացնել ՀՀ Կոտայքի մարզում գործող Չարենցավանի բժշկական կենտրոնի շենքային պայմանների բարելավում:
ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի բժշկական կենտրոնը՝ 35 մահճակալ հզորությամբ բազմապրոֆիլային բժշկական հաստատություն է, որը լայն սպեկտորի ստացիոնար և պոլիկլինիկական ծառայություններ է մատուցում Չարենցավան քաղաքի 20.5 հազար բնակչությանը:
Չարենցավանի բժշկական կենտրոնի ծառայությունները տեղակայված են 1971 թվականին կառուցված գլխավոր և պոլիկլինիկական մասնաշենքերում:
Ելնելով վերոնշյալից, սպասարկվող բնակչության թվից՝ առավել նպատակահարմար է հիվանդանոցային և ամբուլատոր բոլոր ծառայությունները տեղակայել միայն հիվանդանոցային մասնաշենքի հատվածում՝ կրճատելով վերանորոգման ենթակա տարածքը և ծախսերը: Կենտրոնը կարիք ունի նաև սարքավորումներով և կահույքով վերազինման:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը
Բուժհաստատության արդիականացման արդյունքում Չարենցավան քաղաքի բնակչությանը հնարավորություն կընձեռվի ողջ ծավալի պատշաճ բժշկական ծառայությունները ստանալ տեղում՝ իրենց բնակավայրին մոտ:

28. **10 ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի բժշկական կենտրոնի վերակառուցում**

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը
Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 14-17-րդ ենթակետերից:

ՀՀ մարզերի առողջապահական համակարգի զարգացման հարցը դեռևս արդիական խնդիր է Հայաստանի Հանրապետությունում: Մի շարք մարզային բժշկական հաստատությունների շենքեր դեռևս գտնվում են անմխիթար պայմաններում և կարիք ունեն արդիականացման՝ բնակչությանը տեղում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական ծառայություններ մատուցելու նպատակով:
ՀՀ մարզային առողջապահության համակարգի զարգացումը անմիջապես բխում է ՀՀ կառավարության կողմից որդեգրված ՀՀ տարածքների համաչափ զարգացման ծրագրից:
Մարզային բժշկական կազմակերպությունների արդիականացմանն ուղղված ծրագրերը անխուսափելիորեն նպաստելու են բնակչությանը տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման որակի և մատչելիության մակարդակի բարձրացմանը:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

2009 թ. ի վեր ՀՀ մարզային առողջապահական համակարգը արդիականացվում է՝ ընդգրկելով մարզերում գործող նոր բժշկական կազմակերպությունների, որոնք կարիք ունեն շենքային պայմանների բարելավման, նոր սարքավորումներով ու կահույքով հագեցման:
Մինչ օրս հիմնանորոգվել և կառուցվել են ՀՀ մարզային 16 բժշկական կենտրոն և շուրջ 175 առողջության առաջնային պահպանման հաստատության շենքեր: Գերակշիռ դեպքերում բժշկական հաստատությունները նաև հագեցվել են արդի բժշկական սարքավորումներով և անհրաժեշտ կահույքով:
Այնուամենայնիվ, ՀՀ մարզերում դեռևս կան անմխիթար պայմաններում գտնվող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններ, որոնց թե՛ շենքային վիճակը և թե՛ տեխնիկական հագեցվածությունը չեն բավարարում միջազգային նորմերին, ինչն անդրադառնում է նաև մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի վրա:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Մարզերում մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակը բարձրացնելու միջոցներից է բժշկական հաստատությունների արդիականացումը՝ կառուցում, հիմնանորոգում և հագեցում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական կահույքով, սարքավորումներով և պարագաներով:
2021-2026թթ-ին նախատեսվում է շարունակել մարզային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների վերանորոգման/կառուցման և հագեցման աշխատանքների իրականացումը:
Մասնավորապես՝ 2021-2024թթ. ընթացքում նախատեսվում է իրականացնել ՀՀ Արագածոտնի մարզում գործող Թալինի բժշկական կենտրոնի շենքային պայմանների բարելավում:
ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի բժշկական կենտրոնը՝ 40 մահճակալ հզորությամբ բազմապրոֆիլային բժշկական հաստատություն է, որը լայն սպեկտորի ստացիոնար և պոլիկլինիկական ծառայություններ է մատուցում Թալինի տարածաշրջանի 32.2 հազար բնակչությանը, որից 4.3 հազարը քաղաքային է, 27.9՝ գյուղական: Թալինի բժշկական կենտրոնի ծառայությունները տեղակայված են 1969 թվականին կառուցված մեկ եռահարկ մասնաշենքում: 2003թ. և 2011թ. կենտրոնը մասնակի վերանորոգվել է:
Հաշվի առնելով կենտրոնի ներկա ֆիզիկական վիճակը, տարածաշրջանի ազգաբնակչության թիվը, զբաղվածության ցածր ցուցանիշները, նպատակահարմար է արդեն իսկ կրճատված մահճակալների թիվը հասցնել մինչև 30(5), ինչպես նաև առաջարկվում է բժշկական կենտրոնի մասնաշենքի վերակառուցումը՝ շուրջ 3526.6 քմ տարածք:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Բուժհաստատության արդիականացման արդյունքում Թալինի բնակչությանը հնարավորություն կընձեռվի ողջ ծավալի պատշաճ բժշկական ծառայությունները ստանալ տեղում՝ իրենց բնակավայրին մոտ:

28. **11 ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովտի առողջության կենտրոնի կառուցում**

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 14-17-րդ ենթակետերից:
ՀՀ մարզերի առողջապահական համակարգի զարգացման հարցը դեռևս արդիական խնդիր է Հայաստանի Հանրապետությունում: Մի շարք մարզային բժշկական հաստատությունների շենքեր դեռևս գտնվում են անմխիթար պայմաններում և կարիք ունեն արդիականացման՝ բնակչությանը տեղում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական ծառայություններ մատուցելու նպատակով:
ՀՀ մարզային առողջապահության համակարգի զարգացումը անմիջապես բխում է ՀՀ կառավարության կողմից որդեգրված ՀՀ տարածքների համաչափ զարգացման ծրագրից:
Մարզային բժշկական կազմակերպությունների արդիականացմանն ուղղված ծրագրերը անխուսափելիորեն նպաստելու են բնակչությանը տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման որակի և մատչելիության մակարդակի բարձրացմանը:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները
2009 թ. ի վեր ՀՀ մարզային առողջապահական համակարգը արդիականացվում է՝ ընդգրկելով մարզերում գործող նոր բժշկական կազմակերպությունների, որոնք կարիք ունեն շենքային պայմանների բարելավման, նոր սարքավորումներով ու կահույքով հագեցման:
Մինչ օրս հիմնանորոգվել և կառուցվել են ՀՀ մարզային 16 բժշկական կենտրոն և շուրջ 175 առողջության առաջնային պահպանման հաստատության շենքեր: Գերակշիռ դեպքերում բժշկական հաստատությունները նաև հագեցվել են արդի բժշկական սարքավորումներով և անհրաժեշտ կահույքով:
Այնուամենայնիվ, ՀՀ մարզերում դեռևս կան անմխիթար պայմաններում գտնվող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններ, որոնց թե՛ շենքային վիճակը և թե՛ տեխնիկական հագեցվածությունը չեն բավարարում միջազգային նորմերին, ինչն անդրադառնում է նաև մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի վրա:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները
Մարզերում մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակը բարձրացնելու միջոցներից է բժշկական հաստատությունների արդիականացումը՝ կառուցում, հիմնանորոգում և հագեցում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական կահույքով, սարքավորումներով և պարագաներով:
2021-2026թթ-ին նախատեսվում է շարունակել մարզային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների վերանորոգման/կառուցման և հագեցման աշխատանքների իրականացումը:
Մասնավորապես՝ 2021-2024թթ. ընթացքում նախատեսվում է իրականացնել ՀՀ Արագածոտնի մարզում գործող Ծաղկահովտի առողջության կենտրոնի շենքային պայմանների բարելավում:
ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովտի առողջության կենտրոնը՝ 7 մահճակալ հզորությամբ բժշկական հաստատություն է, որը բժշկական ծառայություններ է մատուցում Արագածի տարածաշրջանի շուրջ 13.5 հազար գյուղական բնակչությանը: Ծաղկահովտի առողջության կենտրոնի ծառայությունները տեղակայված են 1973թ. կառուցված երկհարկանի մասնաշենքում: Շահագործման պահից վերանորոգման աշխատանքներ չեն իրականացվել, շենքը գտնվում է անբարեկարգ վիճակում, հիմնանորոգման և սարքավորումներով հագեցման կարիք ունի:
Ուստի, առկա մահճակալների զբաղվածության պարագայում նպատակահարմար է Ծաղկահովտի առողջության կենտրոնը վերակազմակերպել, կրկին կրճատել մահճակալային ֆոնդը մինչև 5 մահճակալ և կառուցել նոր մասնաշենք, ինչպես նաև հագեցնել կենտրոնն անհրաժեշտ բժշկական սարքավորումներով, կահույքով և պարագաներով:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը
Բուժհաստատության արդիականացման արդյունքում Ծաղկահովտի համայնքի բնակչությանը հնարավորություն կընձեռվի պատշաճ բժշկական ծառայություններ ստանալ տեղում՝ իրենց բնակավայրին մոտ:

28. **12 ՀՀ Արմավիրի մարզի էջմիածնի բժշկական կենտրոնի վերակառուցում**

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը
Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 14-17-րդ ենթակետերից:
ՀՀ մարզերի առողջապահական համակարգի զարգացման հարցը դեռևս արդիական խնդիր է Հայաստանի Հանրապետությունում: Մի շարք մարզային բժշկական հաստատությունների շենքեր դեռևս գտնվում են անմխիթար պայմաններում և կարիք ունեն արդիականացման՝ բնակչությանը տեղում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական ծառայություններ մատուցելու նպատակով:
ՀՀ մարզային առողջապահության համակարգի զարգացումը անմիջապես բխում է ՀՀ կառավարության կողմից որդեգրված ՀՀ տարածքների համաչափ զարգացման ծրագրից:
Մարզային բժշկական կազմակերպությունների արդիականացմանն ուղղված ծրագրերը անխուսափելիորեն նպաստելու են բնակչությանը տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման որակի և մատչելիության մակարդակի բարձրացմանը:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

2009թ. ի վեր ՀՀ մարզային առողջապահական համակարգը արդիականացվում է՝ ընդգրկելով մարզերում գործող նոր բժշկական կազմակերպությունների, որոնք կարիք ունեն շենքային պայմանների բարելավման, նոր սարքավորումներով ու կահույքով հագեցման:
Մինչ օրս հիմնանորոգվել և կառուցվել են ՀՀ մարզային 16 բժշկական կենտրոն և շուրջ 175 առողջության առաջնային պահպանման հաստատության շենքեր: Գերակշիռ դեպքերում բժշկական հաստատությունները նաև հագեցվել են արդի բժշկական սարքավորումներով և անհրաժեշտ կահույքով:
Այնուամենայնիվ, ՀՀ մարզերում դեռևս կան անմխիթար պայմաններում գտնվող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններ, որոնց թե՛ շենքային վիճակը և թե՛ տեխնիկական հագեցվածությունը չեն բավարարում միջազգային նորմերին, ինչն անդրադառնում է նաև մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի վրա:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները
Մարզերում մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակը բարձրացնելու միջոցներից է բժշկական հաստատությունների արդիականացումը՝ կառուցում, հիմնանորոգում և հագեցում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական կահույքով, սարքավորումներով և պարագաներով:
2021-2026թթ-ին նախատեսվում է շարունակել մարզային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների վերանորոգման/կառուցման և հագեցման աշխատանքների իրականացումը:
Մասնավորապես՝ 2022-2025թթ. ընթացքում նախատեսվում է իրականացնել ՀՀ Արմավիրի մարզում գործող Էջմիածնի բժշկական կենտրոնի շենքային պայմանների բարելավում:
ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածնի բժշկական կենտրոնի՝ 100 մահճակալ հզորությամբ բժշկական հաստատություն է, որը ստացիոնար ծառայություններ է տրամադրում Էջմիածնի տարածաշրջանի շուրջ 133.2 հազար բնակչությանը, որից 46.2 հազարը քաղաքային է, 87.0 հազարը՝ գյուղական:
Էջմիածնի բժշկական կենտրոնի ծառայությունները տեղակայված են 3 մասնաշենքում, որոնցից երկուսը միմյանց հետ կապված քարաշեն շինություններ են՝ 1989թ. կառուցված քառահարկ վիրաբուժական և 1971թ. կառուցված եռահարկ թերապևտիկ հիվանդանոցային մասնաշենքերը: Պարբերաբար իրականացվել են կենտրոնի մասնակի վերանորոգումներ, սակայն մասնաշենքերը ներկայում գտնվում են անբարեկարգ վիճակում և հիմնանորոգման կարիք ունեն:
Ուստի, ելնելով բժշկական կենտրոնի մահճակալների զբաղվածությունից, ինչպես նաև հաշվի առնելով մասնաշենքերի ֆիզիկական վիճակը՝ նպատակահարմար է օպտիմալացնել մահճակալային ֆոնդը մինչև 85 (10) և բժշկական կենտրոնի բոլոր ստացիոնար ծառայությունները կենտրոնացնել մեկ մասնաշենքում (թերապևտիկ)՝ իրականացնելով վերջինիս վերակառուցման և երկու կցակառույցի կառուցման աշխատանքները:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը
Բուժհաստատության արդիականացման արդյունքում Վաղարշապատ քաղաքի բնակչությանը հնարավորություն կընձեռվի պատշաճ բժշկական ծառայություններ ստանալ տեղում՝ իրենց բնակավայրին մոտ:

28. **13 ՀՀ Շիրակի մարզի Արթիկի բժշկական կենտրոնի կառուցում**

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը
Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 14-17-րդ ենթակետերից:
ՀՀ մարզերի առողջապահական համակարգի զարգացման հարցը դեռևս արդիական խնդիր է Հայաստանի Հանրապետությունում: Մի շարք մարզային բժշկական հաստատությունների շենքեր դեռևս գտնվում են անմխիթար պայմաններում և կարիք ունեն արդիականացման՝ բնակչությանը տեղում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական ծառայություններ մատուցելու նպատակով:
ՀՀ մարզային առողջապահության համակարգի զարգացումը անմիջապես բխում է ՀՀ կառավարության կողմից որդեգրված ՀՀ տարածքների համաչափ զարգացման ծրագրից:
Մարզային բժշկական կազմակերպությունների արդիականացմանն ուղղված ծրագրերը անխուսափելիորեն նպաստելու են բնակչությանը տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման որակի և մատչելիության մակարդակի բարձրացմանը:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները
2009թ. ի վեր ՀՀ մարզային առողջապահական համակարգը արդիականացվում է՝ ընդգրկելով մարզերում գործող նոր բժշկական կազմակերպությունների, որոնք կարիք ունեն շենքային պայմանների բարելավման, նոր սարքավորումներով ու կահույքով հագեցման:

Մինչ օրս հիմնանորոգվել և կառուցվել են ՀՀ մարզային 16 բժշկական կենտրոն և շուրջ 175 առողջության առաջնային պահպանման հաստատության շենքեր: Գերակշիռ դեպքերում բժշկական հաստատությունները նաև հագեցվել են արդի բժշկական սարքավորումներով և անհրաժեշտ կահույքով:
Այնուամենայնիվ, ՀՀ մարզերում դեռևս կան անմխիթար պայմաններում գտնվող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններ, որոնց թե՛ շենքային վիճակը և թե՛ տեխնիկական հագեցվածությունը չեն բավարարում միջազգային նորմերին, ինչն անդրադառնում է նաև մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի վրա:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները
Մարզերում մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակը բարձրացնելու միջոցներից է բժշկական հաստատությունների արդիականացումը՝ կառուցում, հիմնանորոգում և հագեցում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական կահույքով, սարքավորումներով և պարագաներով:
2024-2026 թթ.-ին նախատեսվում է շարունակել մարզային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների վերանորոգման/կառուցման և հագեցման աշխատանքների իրականացումը:
Մասնավորապես՝ 2022-2025թթ. ընթացքում նախատեսվում է իրականացնել ՀՀ Շիրակի մարզում գործող Արթիկի բժշկական կենտրոնի շենքային պայմանների բարելավում:
ՀՀ Շիրակի մարզի Արթիկի բժշկական կենտրոնը՝ 25 մահճակալ հզորությամբ բժշկական հաստատություն է, որը ծառայություններ է մատուցում Արթիկի տարածաշրջանի շուրջ 47.7 հազար բնակչությանը, որից 17.8 հազարը քաղաքային է, 29.9 հազարը՝ գյուղական: Կենտրոնի հիվանդանոցային ծառայությունները տեղակայված են 1950-60 թթ. կառուցված երկհարկանի մասնաշենքում: Իրականացվել են մասնակի վերանորոգումներ, սակայն ներկայում կենտրոնի մասնաշենքը գտնվում է անբարեկարգ վիճակում և հիմնանորոգման կարիք ունի:
Մահճակալների զբաղվածության առկա ցուցանիշների, ինչպես նաև Գյումրու նորակառույց երրորդային մակարդակի ծառայություն տրամադրող բժշկական կենտրոնի առկայության պարագայում նպատակահարմար է մարզում գործող բժշկական կազմակերպությունների օպտիմալացում իրականացնել:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը
Բուժհաստատության արդիականացման արդյունքում Արթիկի տարածաշրջանի բնակչությանը հնարավորություն կընձեռվի երկրորդային մակարդակի պատշաճ բժշկական ծառայություններ ստանալ տեղում՝ իրենց բնակավայրին մոտ:

28. **14 ՀՀ Արարատի մարզի Մասիսի բժշկական կենտրոնի կառուցում**

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը
Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 14-17-րդ ենթակետերից:
ՀՀ մարզերի առողջապահական համակարգի զարգացման հարցը դեռևս արդիական խնդիր է Հայաստանի Հանրապետությունում: Մի շարք մարզային բժշկական հաստատությունների շենքեր դեռևս գտնվում են անմխիթար պայմաններում և կարիք ունեն արդիականացման՝ բնակչությանը տեղում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական ծառայություններ մատուցելու նպատակով:
ՀՀ մարզային առողջապահության համակարգի զարգացումը անմիջապես բխում է ՀՀ կառավարության կողմից որդեգրված ՀՀ տարածքների համաչափ զարգացման ծրագրից:
Մարզային բժշկական կազմակերպությունների արդիականացմանն ուղղված ծրագրերը անխուսափելիորեն նպաստելու են բնակչությանը տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման որակի և մատչելիության մակարդակի բարձրացմանը:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները
2009թ. ի վեր ՀՀ մարզային առողջապահական համակարգը արդիականացվում է՝ ընդգրկելով մարզերում գործող նոր բժշկական կազմակերպությունների, որոնք կարիք ունեն շենքային պայմանների բարելավման, նոր սարքավորումներով ու կահույքով հագեցման:
Մինչ օրս հիմնանորոգվել և կառուցվել են ՀՀ մարզային 16 բժշկական կենտրոն և շուրջ 175 առողջության առաջնային պահպանման հաստատության շենքեր: Գերակշիռ դեպքերում բժշկական հաստատությունները նաև հագեցվել են արդի բժշկական սարքավորումներով և անհրաժեշտ կահույքով:
Այնուամենայնիվ, ՀՀ մարզերում դեռևս կան անմխիթար պայմաններում գտնվող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններ, որոնց թե՛ շենքային վիճակը և թե՛ տեխնիկական

	հագեցվածությունը չեն բավարարում միջազգային նորմերին, ինչն անդրադառնում է նաև մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի վրա: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Մարզերում մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակը բարձրացնելու միջոցներից է բժշկական հաստատությունների արդիականացումը՝ կառուցում, հիմնանորոգում և հագեցում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական կահույքով, սարքավորումներով և պարագաներով: 2021-2026թթ-ին նախատեսվում է շարունակել մարզային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների վերանորոգման/կառուցման և հագեցման աշխատանքների իրականացումը: Մասնավորապես՝ 2022-2025թթ. ընթացքում նախատեսվում է իրականացնել ՀՀ Արարատի մարզում գործող Մասիսի բժշկական կենտրոնի շենքային պայմանների բարելավում: ՀՀ Արարատի մարզի Մասիսի բժշկական կենտրոնը՝ 110 մահճակալ հզորությամբ բազմապրոֆիլային բժշկական հաստատություն է, որը լայն սպեկտորի ստացիոնար և պոլիկլինիկական ծառայություններ է մատուցում Մասիսի տարածաշրջանի 79.0 հազար բնակչությանը, որից 20.6 հազարը քաղաքային է, 58.4 հազարը՝ գյուղական: Մասիսի բժշկական կենտրոնի ծառայությունները տեղակայված են 1975 թվականին կառուցված երեք մասնաշենքում: Կենտրոնի սեփական միջոցներով իրականացվել են մասնակի վերանորոգումներ, սակայն մասնաշենքերը ներկայում գտնվում են անբարեկարգ վիճակում, ունի վերակառուցման և սարքավորումներով ու կահույքով, պարագաներով հագեցման կարիք: Ուստի, հաշվի առնելով մասնաշենքերի ֆիզիկական վիճակը, մահճակալների զբաղվածության առկա ցուցանիշները՝ նպատակահարմար և ծախսարդյունավետ է գտնվել կրկին օպտիմալացնել մահճակալային ֆոնդը՝ մինչև 55 մահճակալ, հիվանդանոցային ու ամբուլատոր բոլոր ծառայությունները տեղադրել մեկ տեղում՝ Մասիսի ԲԿ համար կառուցելով նոր տիպային մասնաշենք: Հետագայում նախատեսվում է նաև բուժհաստատության հագեցումը ժամանակակից բժշկական սարքավորումներով, կահույքով և պարագաներով: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Բուժհաստատության արդիականացման արդյունքում Մասիսի տարածաշրջանի բնակչությանը հնարավորություն կընձեռվի երկրորդային մակարդակի պատշաճ բժշկական ծառայություններ ստանալ տեղում՝ իրենց բնակավայրին մոտ:
	28. **15 ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի բժշկական կենտրոնի վերակառուցում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 14-17-րդ ենթակետերից: ՀՀ մարզերի առողջապահական համակարգի զարգացման հարցը դեռևս արդիական խնդիր է Հայաստանի Հանրապետությունում: Մի շարք մարզային բժշկական հաստատությունների շենքեր դեռևս գտնվում են անմխիթար պայմաններում և կարիք ունեն արդիականացման՝ բնակչությանը տեղում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական ծառայություններ մատուցելու նպատակով: ՀՀ մարզային առողջապահության համակարգի զարգացումը անմիջապես բխում է ՀՀ կառավարության կողմից որդեգրված ՀՀ տարածքների համաչափ զարգացման ծրագրից: Մարզային բժշկական կազմակերպությունների արդիականացմանն ուղղված ծրագրերը անխուսափելիորեն նպաստելու են բնակչությանը տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման որակի և մատչելիության մակարդակի բարձրացմանը: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** 2009 թ. ի վեր ՀՀ մարզային առողջապահական համակարգը արդիականացվում է՝ ընդգրկելով մարզերում գործող նոր բժշկական կազմակերպությունների, որոնք կարիք ունեն շենքային պայմանների բարելավման, նոր սարքավորումներով ու կահույքով հագեցման: Մինչ օրս հիմնանորոգվել և կառուցվել են ՀՀ մարզային 16 բժշկական կենտրոն և շուրջ 175 առողջության առաջնային պահպանման հաստատության շենքեր: Գերակշիռ դեպքերում բժշկական հաստատությունները նաև հագեցվել են արդի բժշկական սարքավորումներով և անհրաժեշտ կահույքով: Այնուամենայնիվ, ՀՀ մարզերում դեռևս կան անմխիթար պայմաններում գտնվող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններ, որոնց թե՛ շենքային վիճակը և թե՛ տեխնիկական հագեցվածությունը չեն բավարարում միջազգային նորմերին, ինչն անդրադառնում է նաև մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի վրա:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Մարզերում մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակը բարձրացնելու միջոցներից է բժշկական հաստատությունների արդիականացումը՝ կառուցում, հիմնանորոգում և հագեցում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական կահույքով, սարքավորումներով և պարագաներով:

2021-2026թթ-ին նախատեսվում է շարունակել մարզային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների վերանորոգման/կառուցման և հագեցման աշխատանքների իրականացումը:

Մասնավորապես՝ 2022-2025թթ. ընթացքում նախատեսվում է իրականացնել ՀՀ Արագածոտնի մարզում գործող Աշտարակի բժշկական կենտրոնի շենքային պայմանների բարելավում:

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի բժշկական կենտրոնը՝ 45 մահճակալ հզորությամբ բազմապրոֆիլային բժշկական հաստատություն է, որը լայն սպեկտորի ստացիոնար և պոլիկլինիկական ծառայություններ է մատուցում Աշտարակի տարածաշրջանի 58.3 հազար բնակչությանը, որից 16.8 հազարը քաղաքային է, 41.5 հազարը՝ գյուղական: Ներկայում կենտրոնի ծառայությունները տեղակայված են 1974թ. կառուցված թիվ 1 և հիմնական պոլիկլինիկական մասնաշենքերում: Իրականացվել են մասնակի վերանորոգումներ: Սակայն, ներկայում կենտրոնը գտնվում է անբավարար վիճակում, ունի վերանորոգման և սարքավորումներով ու կահույքով, պարագաներով հագեցման կարիք:

Հաշվի առնելով կենտրոնի ներկա ֆիզիկական վիճակը, մահճակալների զբաղվածության ցածր ցուցանիշները, առաջարկվում է արդեն իսկ կրճատված մահճակալների թիվը հասցնել մինչև 32, իրականացնել Աշտարակի բժշկական կենտրոնի հիվանդանոցային եռահարկ մասնաշենքի վերակառուցում և պոլիկլինիկական մասնաշենքի կառուցում: Հետագայում նախատեսվում է նաև կենտրոնի հագեցումը ժամանակակից բժշկական սարքավորումներով, կահույքով և պարագաներով:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Բուժհաստատության արդիականացման արդյունքում Աշտարակ քաղաքի բնակչությանը հնարավորություն կընձեռվի պատշաճ բժշկական ծառայություններ ստանալ տեղում՝ իրենց բնակավայրին մոտ:

28.**16 ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդ համայնքի Նաիրիի բժշկական կենտրոնի կառուցում**

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 14-17-րդ ենթակետերից:

ՀՀ մարզերի առողջապահական համակարգի զարգացման հարցը դեռևս արդիական խնդիր է Հայաստանի Հանրապետությունում: Մի շարք մարզային բժշկական հաստատությունների շենքեր դեռևս գտնվում են անմխիթար պայմաններում և կարիք ունեն արդիականացման՝ բնակչությանը տեղում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական ծառայություններ մատուցելու նպատակով:

ՀՀ մարզային առողջապահության համակարգի զարգացումը անմիջապես բխում է ՀՀ կառավարության կողմից որդեգրված ՀՀ տարածքների համաչափ զարգացման ծրագրից:

Մարզային բժշկական կազմակերպությունների արդիականացմանն ուղղված ծրագրերը անխուսափելիորեն նպաստելու են բնակչությանը տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման որակի և մատչելիության մակարդակի բարձրացմանը:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

2009թ. ի վեր ՀՀ մարզային առողջապահական համակարգը արդիականացվում է՝ ընդգրկելով մարզերում գործող նոր բժշկական կազմակերպությունների, որոնք կարիք ունեն շենքային պայմանների բարելավման, նոր սարքավորումներով ու կահույքով հագեցման:

Մինչ օրս հիմնանորոգվել և կառուցվել են ՀՀ մարզային 16 բժշկական կենտրոն և շուրջ 175 առողջության առաջնային պահպանման հաստատության շենքեր: Գերակշիռ դեպքերում բժշկական հաստատությունները նաև հագեցվել են արդի բժշկական սարքավորումներով և անհրաժեշտ կահույքով:

Այնուամենայնիվ, ՀՀ մարզերում դեռևս կան անմխիթար պայմաններում գտնվող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններ, որոնց թե՛ շենքային վիճակը և թե՛ տեխնիկական հագեցվածությունը չեն բավարարում միջազգային նորմերին, ինչն անդրադառնում է նաև մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի վրա:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Մարզերում մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակը բարձրացնելու միջոցներից է բժշկական հաստատությունների արդիականացումը՝ կառուցում, հիմնանորոգում և հագեցում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական կահույքով, սարքավորումներով և պարագաներով:
2021-2026թթ-ին նախատեսվում է շարունակել մարզային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների վերանորոգման/կառուցման և հագեցման աշխատանքների իրականացումը:
Մասնավորապես՝ 2022-2025թթ. ընթացքում նախատեսվում է իրականացնել ՀՀ Կոտայքի մարզում գործող Նաիրիի բժշկական կենտրոնի շենքային պայմանների բարելավում:
ՀՀ Կոտայքի մարզի Նաիրիի բժշկական կենտրոնը՝ 40 մահճակալ հզորությամբ բազմապրոֆիլային բժշկական հաստատություն է, որը լայն սպեկտորի ստացիոնար և պոլիկլինիկական ծառայություններ է մատուցում Նաիրիի տարածաշրջանի 57.2 հազար բնակչությանը, որից 21.2 հազարը քաղաքային է, 36.0 հազարը՝ գյուղական:
Նաիրիի բժշկական կենտրոնի ծառայությունները տեղակայված են 1984թ. կառուցված գլխավոր, պոլիկլինիկական և մանկաբարձագինեկոլոգիական մասնաշենքերում: Բժշկական կենտրոնը շահագործման պահից չի վերանորոգվել, գտնվում է անբարեկարգ վիճակում, հիմնանորոգման և սարքավորումներով ու կահույքով, պարագաներով հագեցման կարիք ունի:
Մահճակալների ծանրաբեռնվածության առկա ցուցանիշների պարագայում, ինչպես նաև ելնելով շինության չափսերից՝ տնտեսապես արդյունավետ չէ Նաիրիի բժշկական կենտրոնի առկա մասնաշենքերի վերակառուցումը: Ուստի, նպատակահարմար է գտնվել հիվանդանոցային և ամբուլատոր բոլոր ծառայությունները տեղադրել նոր կառուցվող տիպային մասնաշենքում՝ կիրառելով/տեղայնացնելով նոր կառուցվող Վայոց ձորի մարզային հիվանդանոցի համար ՀԲ վարկային միջոցներով մշակված տիպարային նախագիծը: Նախատեսվում է նաև կենտրոնի հագեցումը ժամանակակից բժշկական սարքավորումներով, կահույքով և պարագաներով:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը
Բուժհաստատության արդիականացման արդյունքում Նաիրիի տարածաշրջանի բնակչությանը հնարավորություն կընձեռվի երկրորդային մակարդակի պատշաճ բժշկական ծառայություններ ստանալ տեղում՝ իրենց բնակավայրին մոտ:

28. **17 ՀՀ Լոռու մարզի Տաշիր ԲԿ նոր շենքի կառուցում**

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը
Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 14-17-րդ ենթակետերից:
ՀՀ մարզերի առողջապահական համակարգի զարգացման հարցը դեռևս արդիական խնդիր է Հայաստանի Հանրապետությունում: Մի շարք մարզային բժշկական հաստատությունների շենքեր դեռևս գտնվում են անմխիթար պայմաններում և կարիք ունեն արդիականացման՝ բնակչությանը տեղում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական ծառայություններ մատուցելու նպատակով:
ՀՀ մարզային առողջապահության համակարգի զարգացումը անմիջապես բխում է ՀՀ կառավարության կողմից որդեգրված ՀՀ տարածքների համաչափ զարգացման ծրագրից:
Մարզային բժշկական կազմակերպությունների արդիականացմանն ուղղված ծրագրերը անխուսափելիորեն նպաստելու են բնակչությանը տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման որակի և մատչելիության մակարդակի բարձրացմանը:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները
2009թ. ի վեր ՀՀ մարզային առողջապահական համակարգը արդիականացվում է՝ ընդգրկելով մարզերում գործող նոր բժշկական կազմակերպությունների, որոնք կարիք ունեն շենքային պայմանների բարելավման, նոր սարքավորումներով ու կահույքով հագեցման:
Մինչ օրս հիմնանորոգվել և կառուցվել են ՀՀ մարզային 16 բժշկական կենտրոն և շուրջ 175 առողջության առաջնային պահպանման հաստատության շենքեր: Գերակշիռ դեպքերում բժշկական հաստատությունները նաև հագեցվել են արդի բժշկական սարքավորումներով և անհրաժեշտ կահույքով:
Այնուամենայնիվ, ՀՀ մարզերում դեռևս կան անմխիթար պայմաններում գտնվող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններ, որոնց թե՛ շենքային վիճակը և թե՛ տեխնիկական հագեցվածությունը չեն բավարարում միջազգային նորմերին, ինչն անդրադառնում է նաև մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի վրա:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Մարզերում մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակը բարձրացնելու միջոցներից է բժշկական հաստատությունների արդիականացումը՝ կառուցում, հիմնանորոգում և հագեցում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական կահույքով, սարքավորումներով և պարագաներով:
2021-2026թթ-ին նախատեսվում է շարունակել մարզային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների վերանորոգման/կառուցման և հագեցման աշխատանքների իրականացումը:
Մասնավորապես՝ 2023-2026թթ. ընթացքում նախատեսվում է իրականացնել ՀՀ Լոռու մարզում գործող Տաշիրի բժշկական կենտրոնի շենքային պայմանների բարելավում:
ՀՀ Լոռու մարզի Տաշիրի բժշկական կենտրոնը՝ 40 մահճակալ հզորությամբ բժշկական հաստատություն է, որը ստացիոնար և պոլիկլինիկական ծառայություններ է մատուցում Տաշիրի տարածաշրջանի 17. 7 հազար բնակչությանը, որից 7. 2 հազարը քաղաքային է, 10. 5 հազարը ՝ գյուղական: Տաշիրի ԲԿ ծառայությունները տեղակայված են 1976թ. կառուցված երկհարկանի քարե շինությունում: Մեծահասակների և մանկական պոլիկլինիկական ծառայությունները գտնվում են քաղաքի այլ տարբեր հատվածներում՝ 1973թ. և 1951թ. կառուցված մասնաշենքերում: Կենտրոնի մասնաշենքերը ներկայում գտնվում են անբարեկարգ վիճակում և հիմնանորոգման կարիք ունեն:
Ուստի, առկա մահճակալների զբաղվածության պարագայում նպատակահարմար է օպտիմալացնել մահճակալային ֆոնդը՝ մինչև 25(5) մահճակալ՝ հիվանդանոցային ու ամբուլատոր բոլոր ծառայությունները տեղադրելով մեկ մասնաշենքում: Հետագայում նախատեսվում է նաև Տաշիրի ԲԿ հագեցում ժամանակակից սարքավորումներով, կահույքով և բժշկական պարագաներով:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը
Բուժհաստատության արդիականացման արդյունքում Տաշիրի տարածաշրջանի բնակչությանը հնարավորություն կընձեռվի երկրորդային մակարդակի պատշաճ բժշկական ծառայություններ ստանալ տեղում՝ իրենց բնակավայրին մոտ:

28. **18 ՀՀ Արարատի մարզի Վեդու ԲԿ շենքի կառուցում**

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը
Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 14-17-րդ ենթակետերից:
ՀՀ մարզերի առողջապահական համակարգի զարգացման հարցը դեռևս արդիական խնդիր է Հայաստանի Հանրապետությունում: Մի շարք մարզային բժշկական հաստատությունների շենքեր դեռևս գտնվում են անմխիթար պայմաններում և կարիք ունեն արդիականացման՝ բնակչությանը տեղում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական ծառայություններ մատուցելու նպատակով:
ՀՀ մարզային առողջապահության համակարգի զարգացումը անմիջապես բխում է ՀՀ կառավարության կողմից որդեգրված ՀՀ տարածքների համաչափ զարգացման ծրագրից:
Մարզային բժշկական կազմակերպությունների արդիականացմանն ուղղված ծրագրերը անխուսափելիորեն նպաստելու են բնակչությանը տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման որակի և մատչելիության մակարդակի բարձրացմանը:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները
2009թ. ի վեր ՀՀ մարզային առողջապահական համակարգը արդիականացվում է՝ ընդգրկելով մարզերում գործող նոր բժշկական կազմակերպությունների, որոնք կարիք ունեն շենքային պայմանների բարելավման, նոր սարքավորումներով ու կահույքով հագեցման:
Մինչ օրս հիմնանորոգվել և կառուցվել են ՀՀ մարզային 16 բժշկական կենտրոն և շուրջ 171 առողջության առաջնային պահպանման հաստատության շենքեր: Գերակշիռ դեպքերում բժշկական հաստատությունները նաև հագեցվել են արդի բժշկական սարքավորումներով և անհրաժեշտ կահույքով:
Այնուամենայնիվ, ՀՀ մարզերում դեռևս կան անմխիթար պայմաններում գտնվող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններ, որոնց թե՛ շենքային վիճակը և թե՛ տեխնիկական հագեցվածությունը չեն բավարարում միջազգային նորմերին, ինչն անդրադառնում է նաև մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի վրա:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները
Մարզերում մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակը բարձրացնելու միջոցներից է բժշկական հաստատությունների արդիականացումը՝ կառուցում, հիմնանորոգում և հագեցում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական կահույքով, սարքավորումներով և պարագաներով:

2021-2026թթ-ին նախատեսվում է շարունակել մարզային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների վերանորոգման/կառուցման և հագեցման աշխատանքների իրականացումը:
Մասնավորապես՝ 2023-2026թթ. ընթացքում նախատեսվում է իրականացնել ՀՀ Արարատի մարզում գործող Վեդու բժշկական կենտրոնի շենքային պայմանների բարելավում:
ՀՀ Արարատի մարզի Վեդու բժշկական կենտրոնը՝ 90 մահճակալ հզորությամբ (40 հիվանդանոցային և 50 ծննդատան) բազմապրոֆիլային բժշկական հաստատություն է, որը լայն սպեկտորի ստացիոնար և պոլիկլինիկական ծառայություններ է մատուցում Վեդի քաղաքի 11.8 հազար բնակչությանը:
Վեդու բժշկական կենտրոնի ծառայությունները տեղակայված են 1967 թվականին կառուցված գլխավոր, 50-ական թվականներին կառուցված պոլիկլինիկական մասնաշենքերում և 1978 թվականին կառուցված ծննդատան մասնաշենքում:
Ելնելով վերոնշյալից, սպասարկվող բնակչության թվից՝ առավել նպատակահարմար է հիվանդանոցային, ծննդատան և պոլիկլինիկական բոլոր ծառայությունները տեղակայել մեկ հիվանդանոցային մասնաշենքում՝ կառուցելով նոր մասնաշենք: Կենտրոնը կարիք ունի նաև սարքավորումներով և կահույքով վերազինման:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը
Բուժհաստատության արդիականացման արդյունքում Վեդի քաղաքի բնակչությանը հնարավորություն կընձեռվի ողջ ծավալի պատշաճ բժշկական ծառայությունները ստանալ տեղում՝ իրենց բնակավայրին մոտ:

28.**19 ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի ԲԿ պոլիկլինիկայի շենքի վերակառուցում**

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը
Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 14-17-րդ ենթակետերից:
ՀՀ մարզերի առողջապահական համակարգի զարգացման հարցը դեռևս արդիական խնդիր է Հայաստանի Հանրապետությունում: Մի շարք մարզային բժշկական հաստատությունների շենքեր դեռևս գտնվում են անմխիթար պայմաններում և կարիք ունեն արդիականացման՝ բնակչությանը տեղում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական ծառայություններ մատուցելու նպատակով:
ՀՀ մարզային առողջապահության համակարգի զարգացումը անմիջապես բխում է ՀՀ կառավարության կողմից որդեգրված ՀՀ տարածքների համաչափ զարգացման ծրագրից:
Մարզային բժշկական կազմակերպությունների արդիականացմանն ուղղված ծրագրերը անխուսափելիորեն նպաստելու են բնակչությանը տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման որակի և մատչելիության մակարդակի բարձրացմանը:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները
2009թ. ի վեր ՀՀ մարզային առողջապահական համակարգը արդիականացվում է՝ ընդգրկելով մարզերում գործող նոր բժշկական կազմակերպություններ, որոնք կարիք ունեն շենքային պայմանների բարելավման, նոր սարքավորումներով ու կահույքով հագեցման:
Մինչ օրս հիմնանորոգվել և կառուցվել են ՀՀ մարզային 16 բժշկական կենտրոն և շուրջ 171 առողջության առաջնային պահպանման հաստատության շենքեր: Գերակշիռ դեպքերում բժշկական հաստատությունները նաև հագեցվել են արդի բժշկական սարքավորումներով և անհրաժեշտ կահույքով:
Այնուամենայնիվ, ՀՀ մարզերում դեռևս կան անմխիթար պայմաններում գտնվող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններ, որոնց թե՛ շենքային վիճակը և թե՛ տեխնիկական հագեցվածությունը չեն բավարարում միջազգային նորմերին, ինչն անդրադառնում է նաև մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի վրա:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները
Մարզերում մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակը բարձրացնելու միջոցներից է բժշկական հաստատությունների արդիականացումը՝ կառուցում, հիմնանորոգում և հագեցում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական կահույքով, սարքավորումներով և պարագաներով:
2021-2026թթ-ին նախատեսվում է շարունակել մարզային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների վերանորոգման/կառուցման և հագեցման աշխատանքների իրականացումը:
Մասնավորապես՝ 2023-2026թթ. ընթացքում նախատեսվում է իրականացնել ՀՀ Արմավիրի մարզում գործող Արմավիրի բժշկական կենտրոնի պոլիկլինիկայի շենքային պայմանների բարելավում: Արմավիրի ԲԿ-ի պոլիկլինիկան սպասարկում է շուրջ 7289 ազգաբնակչության: Պոլիկլինիկայի մասնաշենքը 1976թ. -ի կառույց է՝

	բաղկացած 4 հարկից: Յուրաքանչյուր հարկը կազմում է 506քմ, ընդհանուրը՝ 2027,2 քմ: Վերջին անգամ մասնակիորեն վերանորոգվել է Խորհրդային ժամանակաշրջանում: Ելնելով վերոնշյալից, սպասարկվող բնակչության թվից՝ առաջարկվում է վերակառուցել շենքը: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Բուժհաստատության արդիականացման արդյունքում Արմավիր քաղաքի բնակչությանը հնարավորություն կընձեռվի պատշաճ բժշկական ծառայությունները ստանալ տեղում՝ իրենց բնակավայրին մոտ:
	28.**20 ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի ԲԿ շենքի կառուցում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 14-17-րդ ենթակետերից: ՀՀ մարզերի առողջապահական համակարգի զարգացման հարցը դեռևս արդիական խնդիր է Հայաստանի Հանրապետությունում: Մի շարք մարզային բժշկական հաստատությունների շենքեր դեռևս գտնվում են անմխիթար պայմաններում և կարիք ունեն արդիականացման՝ բնակչությանը տեղում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական ծառայություններ մատուցելու նպատակով: ՀՀ մարզային առողջապահության համակարգի զարգացումը անմիջապես բխում է ՀՀ կառավարության կողմից որդեգրված ՀՀ տարածքների համաչափ զարգացման ծրագրից: Մարզային բժշկական կազմակերպությունների արդիականացմանն ուղղված ծրագրերը անխուսափելիորեն նպաստելու են բնակչությանը տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման որակի և մատչելիության մակարդակի բարձրացմանը: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** 2009թ. ի վեր ՀՀ մարզային առողջապահական համակարգը արդիականացվում է՝ ընդգրկելով մարզերում գործող նոր բժշկական կազմակերպություններ, որոնք կարիք ունեն շենքային պայմանների բարելավման, նոր սարքավորումներով ու կահույքով հագեցման: Մինչ օրս հիմնանորոգվել և կառուցվել են ՀՀ մարզային 16 բժշկական կենտրոն և շուրջ 171 առողջության առաջնային պահպանման հաստատության շենքեր: Գերակշիռ դեպքերում բժշկական հաստատությունները նաև հագեցվել են արդի բժշկական սարքավորումներով և անհրաժեշտ կահույքով: Այնուամենայնիվ, ՀՀ մարզերում դեռևս կան անմխիթար պայմաններում գտնվող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններ, որոնց թե՛ շենքային վիճակը և թե՛ տեխնիկական հագեցվածությունը չեն բավարարում միջազգային նորմերին, ինչն անդրադառնում է նաև մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի վրա: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Մարզերում մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակը բարձրացնելու միջոցներից է բժշկական հաստատությունների արդիականացումը՝ կառուցում, հիմնանորոգում և հագեցում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական կահույքով, սարքավորումներով և պարագաներով: 2021-2026թթ-ին նախատեսվում է շարունակել մարզային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների վերանորոգման/կառուցման և հագեցման աշխատանքների իրականացումը: Մասնավորապես՝ 2023-2026թթ. ընթացքում նախատեսվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի բժշկական կենտրոնի շենքային պայմանների բարելավում: ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի բժշկական կենտրոնի ստացիոնար հատվածը գործում է 30 մահճակալ հզորությամբ և ծառայություններ է մատուցում Վարդենիսի տարածաշրջանի շուրջ 37.4 հազար բնակչությանը: Վարդենիսի հիվանդանոցային ծառայությունները տեղակայված են 1980 թվականին կառուցված մասնաշենքում (նույն շենքի մեկ հատվածը տրամադրված է ՀՀ պաշտպանության նախարարության զինվորական կայազորային հոսպիտալին): Ելնելով վերոնշյալից, սպասարկվող բնակչության թվից՝ Վարդենիսի բժշկական կենտրոնը ունի արդիականացման՝ շենքային պայմանների բարելավման և վերազինման կարիք: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Բուժհաստատության արդիականացման արդյունքում Վարդենիս քաղաքի բնակչությանը հնարավորություն կընձեռվի ողջ ծավալի պատշաճ բժշկական ծառայությունները ստանալ տեղում՝ իրենց բնակավայրին մոտ:

	28.21 ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի ԱԿ շենքի կառուցում **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 14-17-րդ ենթակետերից: ՀՀ մարզերի առողջապահական համակարգի զարգացման հարցը դեռևս արդիական խնդիր է Հայաստանի Հանրապետությունում: Մի շարք մարզային բժշկական հաստատությունների շենքեր դեռևս գտնվում են անմխիթար պայմաններում և կարիք ունեն արդիականացման՝ բնակչությանը տեղում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական ծառայություններ մատուցելու նպատակով: ՀՀ մարզային առողջապահության համակարգի զարգացումը անմիջապես բխում է ՀՀ կառավարության կողմից որդեգրված ՀՀ տարածքների համաչափ զարգացման ծրագրից: Մարզային բժշկական կազմակերպությունների արդիականացմանն ուղղված ծրագրերը անխուսափելիորեն նպաստելու են բնակչությանը տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման որակի և մատչելիության մակարդակի բարձրացմանը: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** 2009թ. ի վեր ՀՀ մարզային առողջապահական համակարգը արդիականացվում է՝ ընդգրկելով մարզերում գործող նոր բժշկական կազմակերպություններ, որոնք կարիք ունեն շենքային պայմանների բարելավման, նոր սարքավորումներով ու կահույքով հագեցման: Մինչ օրս հիմնանորոգվել և կառուցվել են ՀՀ մարզային 16 բժշկական կենտրոն և շուրջ 171 առողջության առաջնային պահպանման հաստատության շենքեր: Գերակշիռ դեպքերում բժշկական հաստատությունները նաև հագեցվել են արդի բժշկական սարքավորումներով և անհրաժեշտ կահույքով: Այնուամենայնիվ, ՀՀ մարզերում դեռևս կան անմխիթար պայմաններում գտնվող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններ, որոնց թե՛ շենքային վիճակը և թե՛ տեխնիկական հագեցվածությունը չեն բավարարում միջազգային նորմերին, ինչն անդրադառնում է նաև մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի վրա: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Մարզերում մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակը բարձրացնելու միջոցներից է բժշկական հաստատությունների արդիականացումը՝ կառուցում, հիմնանորոգում և հագեցում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական կահույքով, սարքավորումներով և պարագաներով: 2021-2026թթ-ին նախատեսվում է շարունակել մարզային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների վերանորոգման/կառուցման և հագեցման աշխատանքների իրականացումը: Մասնավորապես՝ 2024-2026թթ. ընթացքում նախատեսվում է իրականացնել ՀՀ Վայոց ձորի մարզում գործող Ջերմուկի առողջության կենտրոնի շենքային պայմանների բարելավում: ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի առողջության կենտրոնը՝ 5 մահճակալ հզորությամբ հաստատություն է, որը հիվանդանոցային և պոլիկլինիկական ծառայություններ է մատուցում Ջերմուկ քաղաքի 4.1 հազար բնակչությանը: Ջերմուկի առողջության կենտրոնի ծառայությունները 2006 թվականից տեղակայված են 1982 թվականին կառուցված՝ մանկապարտեզի համար նախատեսված մասնաշենքում: Ելնելով վերոնշյալից, հաշվի առնելով նաև Ջերմուկ այցելող զբոսաշրջիկների քանակը, սպասարկվող բնակչության թիվը առավել նպատակահարմար է նոր մասնաշենքի կառուցումը (առկա տիպային նախագծով)՝ տեղակայելով հիվանդանոցային և ամբուլատոր ծառայությունները մեկ մասնաշենքում: Կենտրոնը կարիք ունի նաև սարքավորումներով և կահույքով վերազինման: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Բուժհաստատության արդիականացման արդյունքում Ջերմուկ քաղաքի բնակչությանը հնարավորություն կընձեռվի ողջ ծավալի պատշաճ բժշկական ծառայությունները ստանալ տեղում՝ իրենց բնակավայրին մոտ:
	28.22 ՀՀ Կոտայքի մարզի Նոր Հաճնի պոլիկլինիկայի վերակառուցում **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 14-17-րդ ենթակետերից:

ՀՀ մարզերի առողջապահական համակարգի զարգացման հարցը դեռևս արդիական խնդիր է Հայաստանի Հանրապետությունում: Մի շարք մարզային բժշկական հաստատությունների շենքեր դեռևս գտնվում են անմխիթար պայմաններում և կարիք ունեն արդիականացման՝ բնակչությանը տեղում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական ծառայություններ մատուցելու նպատակով:
ՀՀ մարզային առողջապահության համակարգի զարգացումը անմիջապես բխում է ՀՀ կառավարության կողմից որդեգրված ՀՀ տարածքների համաչափ զարգացման ծրագրից:
Մարզային բժշկական կազմակերպությունների արդիականացմանն ուղղված ծրագրերը անխուսափելիորեն նպաստելու են բնակչությանը տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման որակի և մատչելիության մակարդակի բարձրացմանը:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները
2009թ. ի վեր ՀՀ մարզային առողջապահական համակարգը արդիականացվում է՝ ընդգրկելով մարզերում գործող նոր բժշկական կազմակերպություններ, որոնք կարիք ունեն շենքային պայմանների բարելավման, նոր սարքավորումներով ու կահույքով հագեցման:
Մինչ օրս հիմնանորոգվել և կառուցվել են ՀՀ մարզային 16 բժշկական կենտրոն և շուրջ 171 առողջության առաջնային պահպանման հաստատության շենքեր: Գերակշիռ դեպքերում բժշկական հաստատությունները նաև հագեցվել են արդի բժշկական սարքավորումներով և անհրաժեշտ կահույքով:
Այնուամենայնիվ, ՀՀ մարզերում դեռևս կան անմխիթար պայմաններում գտնվող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններ, որոնց թե՛ շենքային վիճակը և թե՛ տեխնիկական հագեցվածությունը չեն բավարարում միջազգային նորմերին, ինչն անդրադառնում է նաև մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի վրա:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները
Մարզերում մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակը բարձրացնելու միջոցներից է բժշկական հաստատությունների արդիականացումը՝ կառուցում, հիմնանորոգում և հագեցում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական կահույքով, սարքավորումներով և պարագաներով:
2021-2026թթ-ին նախատեսվում է շարունակել մարզային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների վերանորոգման/կառուցման և հագեցման աշխատանքների իրականացումը:
Մասնավորապես՝ 2023-2026թթ. ընթացքում նախատեսվում է իրականացնել ՀՀ Կոտայքի մարզի Նոր Հաճնի պոլիկլինիկայի շենքային պայմանների բարելավում:
ՀՀ Կոտայքի մարզում մինչ օրս վերանորոգվել կամ կառուցվել են ընդհանուր առմամբ 23 առողջության առաջնային պահպանման հաստատության շենք, որոնց կազմում ընդգրկված չէ Նոր Հաճնի պոլիկլինիկան:
«Նոր Հաճնի պոլիկլինիկա» ՓԲԸ-ն տեղակայված է է առանձին շենքում, սպասարկում է շուրջ 12922 ազգաբնակչության, զբաղեցնում է 896.1 քմ տարածք (2 հարկ): Պոլիկլինիկան գործում է քարե կրող պատերով շենքում, որը գտնվում է անբարեկարգ վիճակում և կարիք ունի հիմնավերանորոգման:
Ելնելով վերոնշյալից, նպատակահարմար է պոլիկլինիկայի մասնաշենքը վերակառուցել:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը
Բուժհաստատության արդիականացման արդյունքում Նոր Հաճն համայնքի բնակչությանը հնարավորություն կընձեռվի ստանալ որակյալ և պատշաճ առողջության առաջնային օգնության և սպասարկման ծառայություններ իրենց բնակավայրին մոտ:

28.**23 ՀՀ Շիրակի մարզի Գյումրու թիվ 1 պոլիկլինիկայի վերակառուցում**

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը
Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 14-17-րդ ենթակետերից:
ՀՀ մարզերի առողջապահական համակարգի զարգացման հարցը դեռևս արդիական խնդիր է Հայաստանի Հանրապետությունում: Մի շարք մարզային բժշկական հաստատությունների շենքեր դեռևս գտնվում են անմխիթար պայմաններում և կարիք ունեն արդիականացման՝ բնակչությանը տեղում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական ծառայություններ մատուցելու նպատակով:
ՀՀ մարզային առողջապահության համակարգի զարգացումը անմիջապես բխում է ՀՀ կառավարության կողմից որդեգրված ՀՀ տարածքների համաչափ զարգացման ծրագրից:

Մարզային բժշկական կազմակերպությունների արդիականացմանն ուղղված ծրագրերը անխուսափելիորեն նպաստելու են բնակչությանը տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման որակի և մատչելիության մակարդակի բարձրացմանը:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

2009թ. ի վեր ՀՀ մարզային առողջապահական համակարգը արդիականացվում է՝ ընդգրկելով մարզերում գործող նոր բժշկական կազմակերպություններ, որոնք կարիք ունեն շենքային պայմանների բարելավման, նոր սարքավորումներով ու կահույքով հագեցման:

Մինչ օրս հիմնանորոգվել և կառուցվել են ՀՀ մարզային 16 բժշկական կենտրոն և շուրջ 171 առողջության առաջնային պահպանման հաստատության շենքեր: Գերակշիռ դեպքերում բժշկական հաստատությունները նաև հագեցվել են արդի բժշկական սարքավորումներով և անհրաժեշտ կահույքով:

Այնուամենայնիվ, ՀՀ մարզերում դեռևս կան անմխիթար պայմաններում գտնվող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններ, որոնց թե՛ շենքային վիճակը և թե՛ տեխնիկական հագեցվածությունը չեն բավարարում միջազգային նորմերին, ինչն անդրադառնում է նաև մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի վրա:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Մարզերում մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակը բարձրացնելու միջոցներից է բժշկական հաստատությունների արդիականացումը՝ կառուցում, հիմնանորոգում և հագեցում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական կահույքով, սարքավորումներով և պարագաներով:

2021-2026թթ-ին նախատեսվում է շարունակել մարզային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների վերանորոգման/կառուցման և հագեցման աշխատանքների իրականացումը:

Մասնավորապես՝ 2023-2026թթ. ընթացքում նախատեսվում է իրականացնել ՀՀ Շիրակի մարզի Գյումրու թիվ 1 պոլիկլինիկայի շենքային պայմանների բարելավում:

ՀՀ Շիրակի մարզում հիմնանորոգվել և կառուցվել են ընդհանուր առմամբ 6 համայնքային բուժհաստատություններ (կառուցում՝ 4 և 2 հիմնանորոգում) և 1 պոլիկլինիկա՝ Գյումրու Ընտանեկան բժշկության կենտրոնը:

Գյումրու թիվ 1 պոլիկլինիկան տեղակայված է առանձին շենքում, սպասարկում է 17835 ազգաբնակչության, զբաղեցնում է 991.57 քմ տարածք (2 հարկ): 1924 թ կառուցված քարե կրող պատերով շենք է, գտնվում է անբարեկարգ վիճակում և կարիք ունի հիմնավերանորոգման:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Բուժհաստատության արդիականացման արդյունքում Գյումրու բնակչությանը հնարավորություն կընձեռվի ստանալ որակյալ և պատշաճ առողջության առաջնային օգնության և սպասարկման ծառայություններ իրենց բնակավայրին մոտ:

28.**24 ՀՀ Շիրակի մարզի Ն.Ա.Մելիքյանի անվան թիվ 2 պոլիկլինիկայի շենքի վերակառուցում**

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 14-17-րդ ենթակետերից:

ՀՀ մարզերի առողջապահական համակարգի զարգացման հարցը դեռևս արդիական խնդիր է Հայաստանի Հանրապետությունում: Մի շարք մարզային բժշկական հաստատությունների շենքեր դեռևս գտնվում են անմխիթար պայմաններում և կարիք ունեն արդիականացման՝ բնակչությանը տեղում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական ծառայություններ մատուցելու նպատակով:

ՀՀ մարզային առողջապահության համակարգի զարգացումը անմիջապես բխում է ՀՀ կառավարության կողմից որդեգրված ՀՀ տարածքների համաչափ զարգացման ծրագրից:

Մարզային բժշկական կազմակերպությունների արդիականացմանն ուղղված ծրագրերը անխուսափելիորեն նպաստելու են բնակչությանը տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման որակի և մատչելիության մակարդակի բարձրացմանը:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

	2009թ. ի վեր ՀՀ մարզային առողջապահական համակարգը արդիականացվում է՝ ընդգրկելով մարզերում գործող նոր բժշկական կազմակերպություններ, որոնք կարիք ունեն շենքային պայմանների բարելավման, նոր սարքավորումներով ու կահույքով հագեցման: Մինչ օրս հիմնանորոգվել և կառուցվել են ՀՀ մարզային 16 բժշկական կենտրոն և շուրջ 171 առողջության առաջնային պահպանման հաստատության շենքեր: Գերակշիռ դեպքերում բժշկական հաստատությունները նաև հագեցվել են արդի բժշկական սարքավորումներով և անհրաժեշտ կահույքով: Այնուամենայնիվ, ՀՀ մարզերում դեռևս կան անմխիթար պայմաններում գտնվող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններ, որոնց թե՛ շենքային վիճակը և թե՛ տեխնիկական հագեցվածությունը չեն բավարարում միջազգային նորմերին, ինչն անդրադառնում է նաև մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի վրա: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Մարզերում մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակը բարձրացնելու միջոցներից է բժշկական հաստատությունների արդիականացումը՝ կառուցում, հիմնանորոգում և հագեցում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական կահույքով, սարքավորումներով և պարագաներով: 2021-2026թթ-ին նախատեսվում է շարունակել մարզային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների վերանորոգման/կառուցման և հագեցման աշխատանքների իրականացումը: Մասնավորապես՝ 2023-2026թթ. ընթացքում նախատեսվում է իրականացնել ՀՀ Շիրակի մարզի Գյումրու Ն.Ա.Մելիքյանի անվան թիվ 2 պոլիկլինիկայի շենքային պայմանների բարելավում: ՀՀ Շիրակի մարզում հիմնանորոգվել և կառուցվել են ընդհանուր առմամբ 6 համայնքային բուժհաստատություններ (կառուցում՝ 4 և 2 հիմնանորոգում) և 1 պոլիկլինիկա՝ Գյումրու Ընտանեկան բժշկության կենտրոնը: Գյումրու Ն.Ա.Մելիքյանի անվան թիվ 2 պոլիկլինիկան սպասարկում է 26607 ազգաբնակչության, զբաղեցնում է 2207,91 քմ տարածք: 1936թ կառուցված պանելային, քարե կրող պատերովշենք է, գտնվում է անբարեկարգ վիճակում և կարիք ունի հիմնավերանորոգման: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Բուժհաստատության արդիականացման արդյունքում Գյումրու բնակչությանը հնարավորություն կընձեռվի ստանալ որակյալ և պատշաճ առողջության առաջնային օգնության և սպասարկման ծառայություններ իրենց բնակավայրին մոտ:
	28.**25 ՀՀ Լոռու մարզի Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկայի վերակառուցում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 14-17-րդ ենթակետերից: ՀՀ մարզերի առողջապահական համակարգի զարգացման հարցը դեռևս արդիական խնդիր է Հայաստանի Հանրապետությունում: Մի շարք մարզային բժշկական հաստատությունների շենքեր դեռևս գտնվում են անմխիթար պայմաններում և կարիք ունեն արդիականացման՝ բնակչությանը տեղում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական ծառայություններ մատուցելու նպատակով: ՀՀ մարզային առողջապահության համակարգի զարգացումը անմիջապես բխում է ՀՀ կառավարության կողմից որդեգրված ՀՀ տարածքների համաչափ զարգացման ծրագրից: Մարզային բժշկական կազմակերպությունների արդիականացմանն ուղղված ծրագրերը անխուսափելիորեն նպաստելու են բնակչությանը տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման որակի և մատչելիության մակարդակի բարձրացմանը: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** 2009թ. ի վեր ՀՀ մարզային առողջապահական համակարգը արդիականացվում է՝ ընդգրկելով մարզերում գործող նոր բժշկական կազմակերպություններ, որոնք կարիք ունեն շենքային պայմանների բարելավման, նոր սարքավորումներով ու կահույքով հագեցման: Մինչ օրս հիմնանորոգվել և կառուցվել են ՀՀ մարզային 16 բժշկական կենտրոն և շուրջ 171 առողջության առաջնային պահպանման հաստատության շենքեր: Գերակշիռ դեպքերում բժշկական հաստատությունները նաև հագեցվել են արդի բժշկական սարքավորումներով և անհրաժեշտ կահույքով:

Այնուամենայնիվ, ՀՀ մարզերում դեռևս կան անմխիթար պայմաններում գտնվող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններ, որոնց թե՛ շենքային վիճակը և թե՛ տեխնիկական հագեցվածությունը չեն բավարարում միջազգային նորմերին, ինչն անդրադառնում է նաև մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի վրա:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Մարզերում մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակը բարձրացնելու միջոցներից է բժշկական հաստատությունների արդիականացումը՝ կառուցում, հիմնանորոգում և հագեցում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական կահույքով, սարքավորումներով և պարագաներով:

2021-2026թթ-ին նախատեսվում է շարունակել մարզային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների վերանորոգման/կառուցման և հագեցման աշխատանքների իրականացումը:

Մասնավորապես՝ 2023-2026թթ. ընթացքում նախատեսվում է իրականացնել ՀՀ Լոռու մարզի Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկայի շենքային պայմանների բարելավում:

ՀՀ Լոռու մարզում վերանորոգվել և կառուցվել են ընդհանուր առմամբ 11 համայնքային բուժհաստատություններ և մեկ Ընտանեկան բժշկության գրասենյակ (կառուցում՝ 8, վերանորոգում՝ 4):

Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկան տեղակայված է առանձին շենքում, սպասարկում է 27169 ազգաբնակչության, զբաղեցնում է 1825.2քմ տարածք (3 հարկ): 1959թ կառուցված քարե կրող պատերով շենք է, գտնվում է անբարեկարգ վիճակում և կարիք ունի հիմնավերանորոգման:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Բուժհաստատության արդիականացման արդյունքում Վանաձորի բնակչությանը հնարավորություն կընձեռվի ստանալ որակյալ և պատշաճ առողջության առաջնային օգնության և սպասարկման ծառայություններ իրենց բնակավայրին մոտ:

28.**26 ՀՀ Սյունիքի մարզի Կապանի բժշկական կենտրոնի պոլիկլինիկական մասնաշենքի վերակառուցում**

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 14-17-րդ ենթակետերից:

ՀՀ մարզերի առողջապահական համակարգի զարգացման հարցը դեռևս արդիական խնդիր է Հայաստանի Հանրապետությունում: Մի շարք մարզային բժշկական հաստատությունների շենքեր դեռևս գտնվում են անմխիթար պայմաններում և կարիք ունեն արդիականացման՝ բնակչությանը տեղում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական ծառայություններ մատուցելու նպատակով:

ՀՀ մարզային առողջապահության համակարգի զարգացումը անմիջապես բխում է ՀՀ կառավարության կողմից որդեգրված ՀՀ տարածքների համաչափ զարգացման ծրագրից:

Մարզային բժշկական կազմակերպությունների արդիականացմանն ուղղված ծրագրերը անխուսափելիորեն նպաստելու են բնակչությանը տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման որակի և մատչելիության մակարդակի բարձրացմանը:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

2009թ. ի վեր ՀՀ մարզային առողջապահական համակարգը արդիականացվում է՝ ընդգրկելով մարզերում գործող նոր բժշկական կազմակերպություններ, որոնք կարիք ունեն շենքային պայմանների բարելավման, նոր սարքավորումներով ու կահույքով հագեցման:

Մինչ օրս հիմնանորոգվել և կառուցվել են ՀՀ մարզային 16 բժշկական կենտրոն և շուրջ 171 առողջության առաջնային պահպանման հաստատության շենքեր: Գերակշիռ դեպքերում բժշկական հաստատությունները նաև հագեցվել են արդի բժշկական սարքավորումներով և անհրաժեշտ կահույքով:

Այնուամենայնիվ, ՀՀ մարզերում դեռևս կան անմխիթար պայմաններում գտնվող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններ, որոնց թե՛ շենքային վիճակը և թե՛ տեխնիկական հագեցվածությունը չեն բավարարում միջազգային նորմերին, ինչն անդրադառնում է նաև մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի վրա:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Մարզերում մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակը բարձրացնելու միջոցներից է բժշկական հաստատությունների արդիականացումը՝ կառուցում, հիմնանորոգում և հագեցում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական կահույքով, սարքավորումներով և պարագաներով:

2021-2026 թթ.-ին նախատեսվում է շարունակել մարզային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների վերանորոգման/կառուցման և հագեցման աշխատանքների իրականացումը:
Մասնավորապես՝ 2024-2026 թթ. ընթացքում նախատեսվում է իրականացնել ՀՀ Սյունիքի մարզի Կապանի պոլիկլինիկայի շենքային պայմանների բարելավում:
ՀՀ Սյունիքի մարզում հիմնանորոգվել և կառուցվել են ընդհանուր առմամբ 19 ԱԱՊ օղակի բուժհաստատություններ (կառուցում՝ 14, հիմնանորոգում՝ 5):
Ներկայում Կապանի բժշկական կենտրոնի կազմում գործող պոլիկլինիկան սպասարկում է 37614 ազգաբնակչության, զբաղեցնում է 244.3 քմ տարածք (4 հարկ), կառուցված է 1971թ. , քարե կրող պատերով շենք է, գտնվում է անբարեկարգ վիճակում և կարիք ունի հիմնավերանորոգման:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը
Բուժհաստատության արդիականացման արդյունքում Կապանի բնակչությանը հնարավորություն կընձեռվի ստանալ որակյալ և պատշաճ առողջության առաջնային օգնության և սպասարկման ծառայություններ իրենց բնակավայրին մոտ:

28.**27 ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի բժշկական կենտրոնի պոլիկլինիկական մասնաշենքի վերակառուցում**

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը
Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 14-17-րդ ենթակետերից:
ՀՀ մարզերի առողջապահական համակարգի զարգացման հարցը դեռևս արդիական խնդիր է Հայաստանի Հանրապետությունում: Մի շարք մարզային բժշկական հաստատությունների շենքեր դեռևս գտնվում են անմխիթար պայմաններում և կարիք ունեն արդիականացման՝ բնակչությանը տեղում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական ծառայություններ մատուցելու նպատակով:
ՀՀ մարզային առողջապահության համակարգի զարգացումը անմիջապես բխում է ՀՀ կառավարության կողմից որդեգրված ՀՀ տարածքների համաչափ զարգացման ծրագրից:
Մարզային բժշկական կազմակերպությունների արդիականացմանն ուղղված ծրագրերը անխուսափելիորեն նպաստելու են բնակչությանը տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման որակի և մատչելիության մակարդակի բարձրացմանը:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները
2009թ. ի վեր ՀՀ մարզային առողջապահական համակարգը արդիականացվում է՝ ընդգրկելով մարզերում գործող նոր բժշկական կազմակերպություններ, որոնք կարիք ունեն շենքային պայմանների բարելավման, նոր սարքավորումներով ու կահույքով հագեցման:
Մինչ օրս հիմնանորոգվել և կառուցվել են ՀՀ մարզային 16 բժշկական կենտրոն և շուրջ 171 առողջության առաջնային պահպանման հաստատության շենքեր: Գերակշիռ դեպքերում բժշկական հաստատությունները նաև հագեցվել են արդի բժշկական սարքավորումներով և անհրաժեշտ կահույքով:
Այնուամենայնիվ, ՀՀ մարզերում դեռևս կան անմխիթար պայմաններում գտնվող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններ, որոնց թե՛ շենքային վիճակը և թե՛ տեխնիկական հագեցվածությունը չեն բավարարում միջազգային նորմերին, ինչն անդրադառնում է նաև մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի վրա:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները
Մարզերում մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակը բարձրացնելու միջոցներից է բժշկական հաստատությունների արդիականացումը՝ կառուցում, հիմնանորոգում և հագեցում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական կահույքով, սարքավորումներով և պարագաներով:
2021-2026թթ-ին նախատեսվում է շարունակել մարզային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների վերանորոգման/կառուցման և հագեցման աշխատանքների իրականացումը:
Մասնավորապես՝ 2024-2026թթ. ընթացքում նախատեսվում է իրականացնել ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի պոլիկլինիկայի շենքային պայմանների բարելավում:
ՀՀ Սյունիքի մարզում հիմնանորոգվել և կառուցվել են ընդհանուր առմամբ 19 ԱԱՊ օղակի բուժհաստատություններ (կառուցում՝ 14, հիմնանորոգում՝ 5):
Ներկայում Գորիսի պոլիկլինիկան գործում է է «Գորիսի ԲԿ» ՓԲԸ-ի կազմում, սպասարկում է 21477 ազգաբնակչության, զբաղեցնում է 1830.9 քմ տարածք (3 հարկ): 1968 թ կառուցված քարե կրող պատերով շենք է, գտնվում է անբարեկարգ վիճակում և կարիք ունի հիմնավերանորոգման:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Բուժհաստատության արդիականացման արդյունքում Գորիսի բնակչությանը հնարավորություն կընձեռվի ստանալ որակյալ և պատշաճ առողջության առաջնային օգնության և սպասարկման ծառայություններ իրենց բնակավայրին մոտ:

28.**28 ՀՀ Արարատի մարզի Արտաշատի բժշկական կենտրոնի պոլիկլինիկական մասնաշենքի վերակառուցում**

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 14-17-րդ ենթակետերից:

ՀՀ մարզերի առողջապահական համակարգի զարգացման հարցը դեռևս արդիական խնդիր է Հայաստանի Հանրապետությունում: Մի շարք մարզային բժշկական հաստատությունների շենքեր դեռևս գտնվում են անմխիթար պայմաններում և կարիք ունեն արդիականացման՝ բնակչությանը տեղում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական ծառայություններ մատուցելու նպատակով:

ՀՀ մարզային առողջապահության համակարգի զարգացումը անմիջապես բխում է ՀՀ կառավարության կողմից որդեգրված ՀՀ տարածքների համաչափ զարգացման ծրագրից:

Մարզային բժշկական կազմակերպությունների արդիականացմանն ուղղված ծրագրերը անխուսափելիորեն նպաստելու են բնակչությանը տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման որակի և մատչելիության մակարդակի բարձրացմանը:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

2009 թ. ի վեր ՀՀ մարզային առողջապահական համակարգը արդիականացվում է՝ ընդգրկելով մարզերում գործող նոր բժշկական կազմակերպություններ, որոնք կարիք ունեն շենքային պայմանների բարելավման, նոր սարքավորումներով ու կահույքով հագեցման:

Մինչ օրս հիմնանորոգվել և կառուցվել են ՀՀ մարզային 16 բժշկական կենտրոն և շուրջ 171 առողջության առաջնային պահպանման հաստատության շենքեր: Գերակշիռ դեպքերում բժշկական հաստատությունները նաև հագեցվել են արդի բժշկական սարքավորումներով և անհրաժեշտ կահույքով:

Այնուամենայնիվ, ՀՀ մարզերում դեռևս կան անմխիթար պայմաններում գտնվող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններ, որոնց թե՛ շենքային վիճակը և թե՛ տեխնիկական հագեցվածությունը չեն բավարարում միջազգային նորմերին, ինչն անդրադառնում է նաև մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի վրա:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Մարզերում մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակը բարձրացնելու միջոցներից է բժշկական հաստատությունների արդիականացումը՝ կառուցում, հիմնանորոգում և հագեցում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական կահույքով, սարքավորումներով և պարագաներով:

2021-2026թթ-ին նախատեսվում է շարունակել մարզային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների վերանորոգման/կառուցման և հագեցման աշխատանքների իրականացումը:

Մասնավորապես՝ 2023-2026թթ. ընթացքում նախատեսվում է իրականացնել ՀՀ Արարատի մարզի Արտաշատի պոլիկլինիկայի շենքային պայմանների բարելավում:

ՀՀ Արարատի մարզում վերանորոգվել կամ կառուցվել են ընդհանուր առմամբ 24 համայնքային բուժհաստատություններ (կառուցում՝ 13, վերանորոգում՝ 11):

Ներկայումս Արտաշատի պոլիկլինիկան գործում է «Արտաշատի ԲԿ» ՓԲԸ-ի կազմում, սպասարկում է շուրջ 28519 ազգաբնակչության, զբաղեցնում է 1499.8 քմ տարածք (3 հարկ): Քարե կրող պատերով շենք է, գտնվում է անբարեկարգ վիճակում և կարիք ունի հիմնավերանորոգման:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Բուժհաստատության արդիականացման արդյունքում Արտաշատի բնակչությանը հնարավորություն կընձեռվի ստանալ որակյալ և պատշաճ առողջության առաջնային օգնության և սպասարկման ծառայություններ իրենց բնակավայրին մոտ:

28.**29 ՀՀ Արարատի մարզի Արարատի բժշկական կենտրոնի պոլիկլինիկական մասնաշենքի վերակառուցում**

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 14-17-րդ ենթակետերից:

ՀՀ մարզերի առողջապահական համակարգի զարգացման հարցը դեռևս արդիական խնդիր է Հայաստանի Հանրապետությունում: Մի շարք մարզային բժշկական հաստատությունների շենքեր դեռևս գտնվում են անմխիթար պայմաններում և կարիք ունեն արդիականացման՝ բնակչությանը տեղում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական ծառայություններ մատուցելու նպատակով:

ՀՀ մարզային առողջապահության համակարգի զարգացումը անմիջապես բխում է ՀՀ կառավարության կողմից որդեգրված ՀՀ տարածքների համաչափ զարգացման ծրագրից:

Մարզային բժշկական կազմակերպությունների արդիականացմանն ուղղված ծրագրերը անխուսափելիորեն նպաստելու են բնակչությանը տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման որակի և մատչելիության մակարդակի բարձրացմանը:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

2009թ. ի վեր ՀՀ մարզային առողջապահական համակարգը արդիականացվում է՝ ընդգրկելով մարզերում գործող նոր բժշկական կազմակերպություններ, որոնք կարիք ունեն շենքային պայմանների բարելավման, նոր սարքավորումներով ու կահույքով հագեցման:

Մինչ օրս հիմնանորոգվել և կառուցվել են ՀՀ մարզային 16 բժշկական կենտրոն և շուրջ 171 առողջության առաջնային պահպանման հաստատության շենքեր: Գերակշիռ դեպքերում բժշկական հաստատությունները նաև հագեցվել են արդի բժշկական սարքավորումներով և անհրաժեշտ կահույքով:

Այնուամենայնիվ, ՀՀ մարզերում դեռևս կան անմխիթար պայմաններում գտնվող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններ, որոնց թե՛ շենքային վիճակը և թե՛ տեխնիկական հագեցվածությունը չեն բավարարում միջազգային նորմերին, ինչն անդրադառնում է նաև մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի վրա:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Մարզերում մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակը բարձրացնելու միջոցներից է բժշկական հաստատությունների արդիականացումը՝ կառուցում, հիմնանորոգում և հագեցում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական կահույքով, սարքավորումներով և պարագաներով:

2021-2026թթ-ին նախատեսվում է շարունակել մարզային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների վերանորոգման/կառուցման և հագեցման աշխատանքների իրականացումը:

Մասնավորապես՝ 2023-2026թթ. ընթացքում նախատեսվում է իրականացնել ՀՀ Արարատի մարզի Արարատ քաղաքի պոլիկլինիկայի շենքային պայմանների բարելավում:

ՀՀ Արարատի մարզում վերանորոգվել կամ կառուցվել են ընդհանուր առմամբ 24 համայնքային բուժհաստատություններ (կառուցում՝ 13, վերանորոգում՝ 11):

Արարատի պոլիկլինիկան գործում է «Արարատի հիվանդանոց ԲԿ» ՓԲԸ-ի կազմում, սպասարկում է շուրջ 23683 ազգաբնակչության, զբաղեցնում է 821.05 քմ տարածք (2 հարկ): Քարե կրող պատերով շենք է, գտնվում է անբարեկարգ վիճակում և կարիք ունի հիմնավերանորոգման:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Բուժհաստատության արդիականացման արդյունքում Արարատի բնակչությանը հնարավորություն կընձեռվի ստանալ որակյալ և պատշաճ առողջության առաջնային օգնության և սպասարկման ծառայություններ իրենց բնակավայրին մոտ:

28.30 ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի պոլիկլինիկայի վերակառուցում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 14-17-րդ ենթակետերից:

ՀՀ մարզերի առողջապահական համակարգի զարգացման հարցը դեռևս արդիական խնդիր է Հայաստանի Հանրապետությունում: Մի շարք մարզային բժշկական հաստատությունների շենքեր դեռևս գտնվում են անմխիթար պայմաններում և կարիք ունեն արդիականացման՝ բնակչությանը տեղում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական ծառայություններ մատուցելու նպատակով:

ՀՀ մարզային առողջապահության համակարգի զարգացումը անմիջապես բխում է ՀՀ կառավարության կողմից որդեգրված ՀՀ տարածքների համաչափ զարգացման ծրագրից:

Մարզային բժշկական կազմակերպությունների արդիականացմանն ուղղված ծրագրերը անխուսափելիորեն նպաստելու են բնակչությանը տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման որակի և մատչելիության մակարդակի բարձրացմանը:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

2009թ. ի վեր ՀՀ մարզային առողջապահական համակարգը արդիականացվում է՝ ընդգրկելով մարզերում գործող նոր բժշկական կազմակերպություններ, որոնք կարիք ունեն շենքային պայմանների բարելավման, նոր սարքավորումներով ու կահույքով հագեցման:

Մինչ օրս հիմնանորոգվել և կառուցվել են ՀՀ մարզային 16 բժշկական կենտրոն և շուրջ 171 առողջության առաջնային պահպանման հաստատության շենքեր: Գերակշիռ դեպքերում բժշկական հաստատությունները նաև հագեցվել են արդի բժշկական սարքավորումներով և անհրաժեշտ կահույքով:

Այնուամենայնիվ, ՀՀ մարզերում դեռևս կան անմխիթար պայմաններում գտնվող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններ, որոնց թե՛ շենքային վիճակը և թե՛ տեխնիկական հագեցվածությունը չեն բավարարում միջազգային նորմերին, ինչն անդրադառնում է նաև մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի վրա:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Մարզերում մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակը բարձրացնելու միջոցներից է բժշկական հաստատությունների արդիականացումը՝ կառուցում, հիմնանորոգում և հագեցում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական կահույքով, սարքավորումներով և պարագաներով:

2021-2026թթ-ին նախատեսվում է շարունակել մարզային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների վերանորոգման/կառուցման և հագեցման աշխատանքների իրականացումը:

Մասնավորապես՝ 2023-2026թթ. ընթացքում նախատեսվում է իրականացնել ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի պոլիկլինիկայի շենքային պայմանների բարելավում:

ՀՀ Վայոց ձորի մարզում կառուցվել են ընդհանուր առմամբ 6 համայնքային բուժհաստատություններ:

Ներկայումս Վայքի պոլիկլինիկան գործում է «Վայքի ԲՄ» ՓԲԸ-ի կազմում, սպասարկում է 9715 ազգաբնակչության, զբաղեցնում է 2430քմ տարածք (1 հարկ): 1962 թ կառուցված պանելային շենք է, գտնվում է անբարեկարգ վիճակում և կարիք ունի հիմնավերանորոգման:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Բուժհաստատության արդիականացման արդյունքում Վայքի բնակչությանը հնարավորություն կընձեռվի ստանալ որակյալ և պատշաճ առողջության առաջնային օգնության և սպասարկման ծառայություններ իրենց բնակավայրին մոտ:

28. 31 ՀՀ մարզերում գործող, առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող 20 բժշկական կազմակերպությունների շենքերի կառուցում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 14-17-րդ ենթակետերից:

ՀՀ մարզերի առողջապահական համակարգի զարգացման հարցը դեռևս արդիական խնդիր է Հայաստանի Հանրապետությունում: Մի շարք մարզային բժշկական հաստատությունների շենքեր դեռևս գտնվում են անմխիթար պայմաններում և կարիք ունեն արդիականացման՝ բնակչությանը տեղում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական ծառայություններ մատուցելու նպատակով:

ՀՀ մարզային առողջապահության համակարգի զարգացումը անմիջապես բխում է ՀՀ կառավարության կողմից որդեգրված ՀՀ տարածքների համաչափ զարգացման ծրագրից:

Մարզային բժշկական կազմակերպությունների արդիականացմանն ուղղված ծրագրերը անխուսափելիորեն նպաստելու են բնակչությանը տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման որակի և մատչելիության մակարդակի բարձրացմանը:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

2009թ. ի վեր ՀՀ մարզային առողջապահական համակարգը արդիականացվում է՝ ընդգրկելով մարզերում գործող նոր բժշկական կազմակերպություններ, որոնք կարիք ունեն շենքային պայմանների բարելավման, նոր սարքավորումներով ու կահույքով հագեցման:

Մինչ օրս հիմնանորոգվել և կառուցվել են ՀՀ մարզային 16 բժշկական կենտրոն և շուրջ 171 առողջության առաջնային պահպանման հաստատության շենքեր: Գերակշիռ դեպքերում բժշկական հաստատությունները նաև հագեցվել են արդի բժշկական սարքավորումներով և անհրաժեշտ կահույքով:

Այնուամենայնիվ, ՀՀ մարզերում դեռևս կան անմխիթար պայմաններում գտնվող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններ, որոնց թե՛ շենքային վիճակը և թե՛ տեխնիկական հագեցվածությունը չեն բավարարում միջազգային նորմերին, ինչն անդրադառնում է նաև մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի վրա:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Մարզերում մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակը բարձրացնելու միջոցներից է բժշկական հաստատությունների արդիականացումը՝ կառուցում, հիմնանորոգում և հագեցում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական կահույքով, սարքավորումներով և պարագաներով:

2021-2026թթ-ին նախատեսվում է շարունակել մարզային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների վերանորոգման/կառուցման և հագեցման աշխատանքների իրականացումը:

Մասնավորապես՝ 2023-2026թթ. ընթացքում նախատեսվում է ՀՀ Սյունիքի, Գեղարքունիքի, Տավուշի, Շիրակի, Լոռու, Արմավիրի, Արարատի,Արագածոտնի, Կոտայքի մարզերում կառուցել թվով 20 ամբուլատորիաներ/առողջության առաջնային պահպանման կենտրոնների շենքեր:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Նշված միջոցառումը հնարավորություն կընձեռի ՀՀ մարզերում մատուցվող ԱԱՊ ծառայությունները դարձնել առավել մատչելի և որակյալ գյուղական ազգաբնակչության համար:

28. 32 Երևանում այրվածքաբանական, մաշկաբանական և վնասվածքաբանական բազմապրոֆիլ ծառայություններ մատուցող նոր բժշկական կենտրոնի շենքի կառուցում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 14-17-րդ ենթակետերից: Առողջապահական համակարգի զարգացման հարցը դեռևս արդիական խնդիր է Հայաստանի Հանրապետությունում: Մի շարք բժշկական հաստատությունների շենքեր դեռևս գտնվում են անմխիթար պայմաններում և կարիք ունեն արդիականացման՝ բնակչությանը տեղում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական ծառայություններ մատուցելու նպատակով: ՀՀ բժշկական կազմակերպությունների արդիականացմանն ուղղված ծրագրերը անխուսափելիորեն նպաստելու են բնակչությանը տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման որակի և մատչելիության մակարդակի բարձրացմանը:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

ՀՀ առողջապահական համակարգը մշտապես արդիականացվում է՝ ընդգրկելով նոր բժշկական կազմակերպություններ, որոնք կարիք ունեն շենքային պայմանների բարելավման/ստեղծման, նոր սարքավորումներով ու կահույքով հագեցման:

Հայաստանում դեռևս կան անմխիթար պայմաններում գտնվող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններ, որոնց թե՛ շենքային վիճակը և թե՛ տեխնիկական հագեցվածությունը չեն բավարարում միջազգային նորմերին, ինչն անդրադառնում է նաև մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի վրա:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակը բարձրացնելու միջոցներից է բժշկական հաստատությունների արդիականացումը՝ կառուցում, հիմնանորոգում և հագեցում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական կահույքով, սարքավորումներով և պարագաներով:

2021-2026 թթ.-ին նախատեսվում է շարունակել բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների օպտիմալացման, ինչպես նաև վերակառուցման/կառուցման և հագեցման աշխատանքների իրականացումը: Մասնավորապես՝ 2022-2026թթ. ընթացքում նախատեսվում է ստեղծել նոր բժշկական կենտրոն ներկայում գործող Մաշկաբանության ազգային կենտրոնի, Այրվածքաբանության ազգային կենտրոնի և Վնասվածքաբանության և օրթոպեդիայի գիտական կենտրոնի հենքի վրա՝ նորաստեղծ բազմապրոֆիլ բժշկական կենտրոնի համար ապահովելով պատշաճ շենքային պայման: Մաշկաբանության ազգային կենտրոնը՝ 86 մահճակալ հզորությամբ բժշկական հաստատություն է, որը ստացիոնար և պոլիկլինիկական ծառայություններ է մատուցում շուրջ 2959.7 հազար ՀՀ բնակչությանը: Բժշկական կենտրոնի ծառայությունները տեղակայված են 1969 թվականին կառուցված հին և անբարեկարգ մասնաշենքում: Այրվածքաբանության ազգային կենտրոնը 60 մահճակալ հզորությամբ հաստատություն է, որը ստացիոնար և պոլիկլինիկական ծառայություններ է մատուցում շուրջ 2959.7 հազար ՀՀ բնակչությանը: Բժշկական կենտրոնի ծառայությունները տեղակայված են 1958 թվականին կառուցված մասնաշենքում: Վնասվածքաբանության և

	օրթոպեդիայի գիտական կենտրոնը 150 մահճակալ հզորությամբ հաստատություն է, որը ստացիոնար և պոլիկլինիկական ծառայություններ է մատուցում շուրջ 2959.7 հազար ՀՀ բնակչությանը: Բժշկական կենտրոնի ծառայությունները տեղակայված են 1950 թվականին կառուցված մասնաշենքում: Ելնելով նշված բժշկական կազմակերպությունների կողմից զբաղեցված շենքերի ոչ բարենպաստ պայմաններից, մաշվածությունից, մատուցվող ծառայությունների բնույթից, կարևորությունից և ծառայություններից օգտվող բնակչության թվից (ՀՀ ամբողջ բնակչությունը)՝ առաջարկվում է վերջիններիս 142 հենքի վրա ստեղծվող, ՀՀ ազգաբնակչությանը այրվածքաբանական, մաշկաբանական և վնասվածքաբանական ծառայություններ մատուցող նոր բժշկական կենտրոնի համար կառուցել նոր շենք: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման իրականացման արդյունքում նորաստեղծ երրորդային մակարդակի բազմաֆունկցիոնալ կենտրոնը ժամանակակից չափանիշներով կառուցված նոր մասնաշենքում կտրամադրի բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ ՀՀ ամբողջ բնակչությանը:
	28.33 ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի ԲԿ պոլիկլինիկայի վերակառուցում **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 14-17-րդ ենթակետերից: ՀՀ մարզերի առողջապահական համակարգի զարգացման հարցը դեռևս արդիական խնդիր է Հայաստանի Հանրապետությունում: Մի շարք մարզային բժշկական հաստատությունների շենքեր դեռևս գտնվում են անմխիթար պայմաններում և կարիք ունեն արդիականացման՝ բնակչությանը տեղում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական ծառայություններ մատուցելու նպատակով: ՀՀ մարզային առողջապահության համակարգի զարգացումը անմիջապես բխում է ՀՀ կառավարության կողմից որդեգրված ՀՀ տարածքների համաչափ զարգացման ծրագրից: Մարզային բժշկական կազմակերպությունների արդիականացմանն ուղղված ծրագրերը անխուսափելիորեն նպաստելու են բնակչությանը տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման որակի և մատչելիության մակարդակի բարձրացմանը: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** 2009թ. ի վեր ՀՀ մարզային առողջապահական համակարգը արդիականացվում է՝ ընդգրկելով մարզերում գործող նոր բժշկական կազմակերպություններ, որոնք կարիք ունեն շենքային պայմանների բարելավման, նոր սարքավորումներով ու կահույքով հագեցման: Մինչ օրս հիմնանորոգվել և կառուցվել են ՀՀ մարզային 16 բժշկական կենտրոն և շուրջ 171 առողջության առաջնային պահպանման հաստատության շենքեր: Գերակշիռ դեպքերում բժշկական հաստատությունները նաև հագեցվել են արդի բժշկական սարքավորումներով և անհրաժեշտ կահույքով: Այնուամենայնիվ, ՀՀ մարզերում դեռևս կան անմխիթար պայմաններում գտնվող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններ, որոնց թե՛ շենքային վիճակը և թե՛ տեխնիկական հագեցվածությունը չեն բավարարում միջազգային նորմերին, ինչն անդրադառնում է նաև մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի վրա: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Մարզերում մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակը բարձրացնելու միջոցներից է բժշկական հաստատությունների արդիականացումը՝ կառուցում, հիմնանորոգում և հագեցում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական կահույքով, սարքավորումներով և պարագաներով: 2021-2026 թթ.-ին նախատեսվում է շարունակել մարզային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների վերանորոգման/կառուցման և հագեցման աշխատանքների իրականացումը: Մասնավորապես՝ 2023-2026 թթ. ընթացքում նախատեսվում է իրականացնել ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի ԲԿ պոլիկլինիկայի շենքային պայմանների բարելավում: Գավառի ԲԿ պոլիկլինիկան սպասարկում է շուրջ 23000 ազգաբնակչության, որից 18 տարեկանից բարձր 18027, մինչև 18 տարեկան՝ 48956 բնակիչ: Զբաղեցնում է շուրջ 1500 քմ տարածք (3 հարկ): Պոլիկլինիկայի շենքը շահագործման է հանձնվել 1982 թ. -ին և մինչ օրս կապիտալ հիմնանորոգում չի իրականացվել: Ելնելով վերոնշյալից, նպատակահարմար է պոլիկլինիկայի մասնաշենքը վերակառուցել: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Բուժհաստատության արդիականացման արդյունքում Գավառ համայնքի բնակչությանը հնարավորություն կընձեռվի ստանալ որակյալ և պատշաճ առողջության առաջնային օգնության և սպասարկման ծառայություններ իրենց բնակավայրին մոտ:
	28. 34 ՀՀ Լոռու մարզի Սպիտակի բժշկական կենտրոնի կառուցում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

	Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.5-րդ կետի 14-17-րդ ենթակետերից: ՀՀ մարզերի առողջապահական համակարգի զարգացման հարցը դեռևս արդիական խնդիր է Հայաստանի Հանրապետությունում: Մի շարք մարզային բժշկական հաստատությունների շենքեր դեռևս գտնվում են անմխիթար պայմաններում և կարիք ունեն արդիականացման՝ բնակչությանը տեղում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական ծառայություններ մատուցելու նպատակով: ՀՀ մարզային առողջապահության համակարգի զարգացումը անմիջապես բխում է ՀՀ կառավարության կողմից որդեգրված ՀՀ տարածքների համաչափ զարգացման ծրագրից: Մարզային բժշկական կազմակերպությունների արդիականացմանն ուղղված ծրագրերը անխուսափելիորեն նպաստելու են բնակչությանը տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման որակի և մատչելիության մակարդակի բարձրացմանը: 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները 2009թ. ի վեր ՀՀ մարզային առողջապահական համակարգը արդիականացվում է՝ ընդգրկելով մարզերում գործող նոր բժշկական կազմակերպությունների, որոնք կարիք ունեն շենքային պայմանների բարելավման, նոր սարքավորումներով ու կահույքով հագեցման: Մինչ օրս հիմնանորոգվել և կառուցվել են ՀՀ մարզային 16 բժշկական կենտրոն և շուրջ 175 առողջության առաջնային պահպանման հաստատության շենքեր: Գերակշիռ դեպքերում բժշկական հաստատությունները նաև հագեցվել են արդի բժշկական սարքավորումներով և անհրաժեշտ կահույքով: Այնուամենայնիվ, ՀՀ մարզերում դեռևս կան անմխիթար պայմաններում գտնվող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններ, որոնց թե՛ շենքային վիճակը և թե՛ տեխնիկական հագեցվածությունը չեն բավարարում միջազգային նորմերին, ինչն անդրադառնում է նաև մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի վրա: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Մարզերում մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակը բարձրացնելու միջոցներից է բժշկական հաստատությունների արդիականացումը՝ կառուցում, հիմնանորոգում և հագեցում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական կահույքով, սարքավորումներով և պարագաներով: 2021-2026թթ-ին նախատեսվում է շարունակել մարզային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների վերանորոգման/կառուցման և հագեցման աշխատանքների իրականացումը: Մասնավորապես՝ նախատեսվում է ՀՀ Լոռու մարզի Սպիտակի բժշկական կենտրոնի պայմանների բարելավում՝ նոր շենքի կառուցում: Սպիտակի բժշկական կենտրոնի ծառայությունները տեղակայված են 5071 քմ տարածք ունեցող մասնաշենքում, որը կառուցվել է Նորվեգիայի կառավարության միջոցներով 1988թ. Սպիտակի ավերիչ երկրաշարժից հետո: Պոլիկլինիկական ծառայությունները տեղակայված են պոլիկլինիկական մասնշենքում՝ 1580 քմ տարածքով: Շենքը կառուցվել է ֆիննական կառավարության աջակցությամբ, հետագայում վերանորոգվել է սեփական միջոցների հաշվին: Մասնաշենքերը գտնվում են Սպիտակ քաղաքի տարբեր մասերում: 2013 թվականին մարզերի համաչափ զարգացման ծրագրի շրջանակներում վերանորգվել է հիվանդանոցային մասնաշենքը: Սպիտակի բժշկական կենտրոնը ծառայություններ է մատուցում Սպիտակի տարածաշրջանի 35,5 հազար ազգաբնակչությանը, որից 12,7 հազարը քաղաքային, իսկ 22,8 հազարը՝ գյուղական ազգաբնակչությանը: Ներկայում՝ հաշվի առնելով բժշկական կենտրոնի շենքային պայմանների ֆիզիկական վիճակը, սպասարկվող ազգաբնակչության քանակը՝ նպատակահարմար է իրականացնել արդիականացում: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Բուժհաստատության արդիականացման արդյունքում Սպիտակի բնակչությանը հնարավորություն կընձեռվի ողջ ծավալի պատշաճ բժշկական ծառայությունները ստանալ տեղում՝ իրենց բնակավայրին մոտ:

Արդարադատության նախարարություն	
NN	**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ**
1.	1. ԴԱՏԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ 2019-2023ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Դատական և իրավական բարեփոխումների ռազմավարության վերանայումը միտված է դրա համապատասխանեցմանը Կառավարության 2021-2026 թվականների ծրագրին և ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության ծրագրին: Միջոցառումը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1363-Ա որոշման 5.3-րդ կետից:

	1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները 2021 թվականի հունիսի 20-ին կայացած արտահերթ խորհրդարանական ընտրությունների արդյունքում ձևավորված կառավարության կողմից ներկայացվել է Կառավարության 2021-2026 թվականների ծրագիրը, որի «Իրավունք և Արդարադատություն» վերտառությամբ 5-րդ բաժինն արտացոլում է ինստիտուցիոնալ ժողովրդավարության, մարդու իրավունքների պաշտպանության, դատաիրավական և ոստիկանության բարեփոխումների, կոռուպցիայի դեմ պայքարի, քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի բարեփոխումների կապակցությամբ Կառավարության տեսլականը: Նշված հանգամանքով պայմանավորված ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1444-Լ որոշման N 1 հավելվածով հաստատված՝ Հայաստանի դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարության որոշ ուղղություններ և դրանց իրականացման ժամկետները չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրին, ինչպես նաև սույն գործունեության ծրագրին: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Կառավարության 2021-2026 թվականների ծրագրով առանձնահատուկ ուշադրություն է հատկացված ընտրական իրավունքին և ինստիտուցիոնալ ժողովրդավարությանը: Նկատի ունենալով ծրագրային հիշյալ դրույթը՝ առկա է անհրաժեշտություն փոփոխություններ իրականացնել նաև դատական և իրավական բարեփոխումների ռազմավարությունում՝ ընդլայնելով ընտրական իրավահարաբերությունների բարեփոխմանը նվիրված ռազմավարական նպատակները: Հանձն առնելով մարդու իրավունքների պաշտպանության ուղղությամբ շարունակական քայլերի իրականացման պարտավորությունը՝ ՀՀ կառավարության կողմից որպես ծրագրային դրույթ նախատեսվել է մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում բարեփոխումների իրականացումը: Հաշվի առնելով կառավարության ծրագրով նախատեսված ուղղությունները՝ անհրաժեշտ է դատական և իրավական բարեփոխումների ռազմավարությունում մասնավորեցնել կառավարության ծրագրով նախատեսված բարեփոխումների իրականացման ուղղությունները: Միաժամանակ, ռազմավարության իրականացման ժամկետները ևս ենթակա են համապատասխանեցման Կառավարության 2021-2026 թվականների ծրագրով նախատեսված ժամկետներին: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է Դատական և իրավական բարեփոխումների ռազմավարության վերանայում և Կառավարության 2021-2026թթ. ծրագրին և գործունեության ծրագրին համապատասխանեցման իրականացում: Դրա արդյունքում առավել ամբողջական կերպով կարտացոլվի Կառավարության տեսլականը արդարադատության ոլորտի բարեփոխումների վերաբերյալ և ռազմավարությունը կդառնա ավելի թիրախային և չափելի:
2.	2. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Սահմանադրական բարեփոխումների իրականացումը նպատակ է հետապնդում երաշխավորել սահմանադրական կայունությունը, սահմանադրական և այլ մարմինների պատշաճ գործունեությունը և անձանց հիմնական իրավունքների իրացվելիությունը: Միջոցառումը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1363-Ա որոշման 5.1-ին կետից: 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Թեև 2015 թվականի փոփոխություններով ընդունված Սահմանադրությունը ունի որոշ առավելություններ նախորդ՝ 2005 թվականի փոփոխություններով ընդունված սահմանադրության համեմատ, մասնավորապես՝ էականորեն բարելավվել է մարդու հիմնական իրավունքների և ազատությունների սահմանումը, այնուամենայնիվ՝ Սահմանադրությամբ առկա են մի շարք խնդրահարույց կարգավորումներ, որոնք, պայմանավորված լինելով սուբյեկտիվ կամ օբյեկտիվ գործոններով, խաթարում են իրավունքի գերակայության սկզբունքը: Ըստ այդմ՝ Կառավարության ծրագրում առաջնահերթություն է դիտվել նոր Սահմանադրության կամ սահմանադրական բարեփոխումների իրականացման ուղղությամբ լայն հասարակական-քաղաքական քննարկումների ծավալումը: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Անհրաժեշտ է հասարակական-քաղաքական շրջանակների հետ քննարկումներ սկսել՝ վերանայելու սահմանադրական բարեփոխումների իրականացման գործընթացի ձևաչափը, փոփոխությունների օրակարգն ու նպատակահարմարությունը՝ Սահմանադրության բարեփոխումների հայեցակարգի և նախագծի մշակման ուղղությունները հստակեցնելու համար: Նկատի ունենալով հիշյալ առաջնահերթությունը՝ անհրաժեշտ է հստակեցնել սահմանադրական բարեփոխումների գործընթացի կազմակերպման ձևաչափը և ձևավորել որոշված մոդելը: Մասնավորապես՝ քննարկման է ենթակա սահմանադրական բարեփոխումների իրականացման նպատակով հանձնաժողովի մոդելի հարցը՝ նկատի ունենալով հնարավորինս արդյունավետ ձևաչափի շուրջ համաձայնության ձեռքբերման անհրաժեշտությունը:

	Սահմանադրական բարեփոխումների ներառականության ապահովման նպատակով անհրաժեշտ է քննարկումների կազմակերպում հանրության լայն շրջանակների հետ՝ դրանց արդյունքում գեներացված խնդիրների լուծման հնարավորությունների հիման վրա փոփոխությունների նպատակահարմարությունն ու օրակարգը որոշելու և բարեփոխումների հայեցակարգի ու փոփոխությունների նախագծի մշակման համար: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է ձևավորել բարփոխումների իրականացումն ապահովող նոր մարմին և հստակեցնել սահմանադրական բարեփոխումների հետագա գործընթացի ուղղությունները: Մասնավորապես՝ ակնկալվում է հստակեցնել սահմանադրական բարեփոխումների իրականացման գործընթացին վերաբերող ընթացակարգային հարցերը, կազմակերպել լայն ներառական քննարկումներ, իրականացնել կարիքների գնահատում, որոշել բարեփոխումների ուղղությունները և դրանց արդյունքում մշակված փաստաթղթերը ներկայացնել ՀՀ վարչապետի աշխատակազմ:
3.	3. ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՎԵՐՀԱՆՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄ 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Ընտրական օրենսդրության բարելավման միջոցառումը նպատակ է հետապնդում ապահովելու ընտրական օրենսդրության շարունակական կատարելագործումը՝ դրա կիրառման ընթացքում արձանագրված խնդիրների լուծման միջոցով: Միջոցառումը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1363-Ա որոշման 5.1-ին կետից: 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները 2018 թ. և 2021 թ. խորհրդարանական ընտրությունները ցույց տվեցին, որ ազատ ընտրությունները Հայաստանում երաշխավորված են, ժողովուրդը Սահմանադրությամբ երաշխավորված իր իշխանությունն անշրջելիորեն իրացնում է ընտրությունների և անմիջական ժողովրդավարության այլ միջոցներով: Հայաստանում ժողովրդավարական ընտրական օրենսդրությամբ սահմանված համակարգի ինստիտուցիոնալ կայացման նպատակով Կառավարությունը հաստատակամորեն կշարունակի իրականացնել ընտրական իրավունքի արդյունավետ իրացմանն ու ընտրական գործընթացի բարելավմանն ուղղված բարեփոխումները: Մասնավորապես, 2021 թ. խորհրդարանական ընտրությունների արդյունքում արձանագրվեցին մի շարք խնդիրներ, որոնց լուծման համար անհրաժեշտ է ընտրական օրենսդրության փոփոխության իրականացում: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Ինստիտուցիոնալ ժողովրդավարության կայացման նկատառումներից ելնելով՝ առաջարկվում է գույքագրել 2018 և 2021 թվականներին տեղի ունեցած խորհրդարանական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքում ծագած խնդիրները և դրանց հիման վրա կազմել Ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարելու նախագիծ: Մասնավորապես, նախատեսվում է քննարկման առարկա դարձնել ընտրական օրենսդրության շրջանակներում բացահայտված խնդիրների լուծման ուղղությունները: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է վերացնել ընտրական օրենսդրության առկա թերությունները: Օրենսդրական բարեփոխումների և տեխնիկական հագեցվածության ու տեխնիկական վերազինման միջոցով կներդրվեն ընտրողների ցուցակների ճշգրտման և արդյունավետ վարման, ընտրողների նույնականացման և տեղեկատվական շտեմարանների փոխգործելիությանն ուղղված նոր գործիքակազմեր:
4.	4. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՐԹԱԿԻ (E-JUSTICE.AM) ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՆԵՐԴՆՈՒՄ 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Էլեկտրոնային արդարադատության միասնական հարթակի ներդնումը նպատակ է հետապնդում ապահովելու արդարադատության ոլորտի մարմինների կողմից իրականացվող գործընթացներ նախաձեռնելու և դրանց մասնակցելու հնարավորությունը հեռահար կերպով և մեկ միասնական էլեկտրոնային գրասենյակի օգտագործմամբ՝ դրանով նվազեցնելով պետական մարմինների կողմից իրականացվող վարույթների ժամկետները և դրանց ծախսատարությունը: Միջոցառումը բխում է 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՕ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի Իրավունք և արդարադատություն վերտառությամբ 5-րդ բաժնի 5.3-րդ, 5.5-րդ,5.6-րդ գլուխներից: 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Արդարադատության ոլորտի մարմիններում փաստաթղթաշրջանառությունը մեծապես իրականացվում է թղթային կրիչների օգտագործմամբ, իսկ վարույթները վարվում են առկա եղանակով: Դրա արդյունքում շարունակում է բարձր մնալ պետական մարմիններում տեխնիկական բնույթի գործառույթների ծավալը: Ցածր է պետական մարմինների կողմից ստացված տվյալների մշակման որակը, ինչի արդյունքում անհնար կամ դժվար է դառնում տվյալների վերլուծությունը, որն էլ թույլ կտար ապահովել փաստահենք քաղաքականության վարումը:

	1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Էլեկտրոնային գործիքների ստեղծման կամ առկա գործիքների լրամշակման արդյունքում նախատեսվում է առավելապես տվյալների (ի հակադրումն փաստաթղթերի) վրա հիմնված համակարգերի ներդնում արդարադատության ոլորտում՝ ապահովելով տեխնիկական բնույթի գործողությունների հնարավորինս լայն ծավալի ավտոմատացում և ընթացող գործընթացներին հեռահար մասնակցության հնարավորություն: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է էլեկտրոնային գործիքների ստեղծման և դրանց զարգացման արդյունքում բարձրացնել արդարադատության ոլորտի մարմինների աշխատանքի արդյունավետությունը, արդարադատությունը դարձնել ավելի մատչելի և հասանելի:
5.	5. ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ՝ ԻՐԱՎԱԿԻՐԱՌ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ ԾԱԳԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԵՎ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Դատավարական օրենսդրության վերանայումը պայմանավորված է քաղաքացիական և վարչական դատավարության ոլորտում առաջացած օրենսդրական բացերի ուղղմամբ, նախկինում կատարված բարեփոխումների մշտադիտարկման արդյունքում ի հայտ եկած խնդիրների վերհանման հիման առանձին իրավական ինստիտուտների՝ ոլորտի զարգացման արդի միտումներին համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ: Միջոցառումը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1363-Ա որոշման 5.3-րդ կետից: 1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները 2018 թվականի փետրվարի 9-ին ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի ընդունմամբ բարեփոխվեց քաղաքացիական արդարադատությունը, ներդրվեցին մի շարք նոր ինստիտուտներ, որոնք ուղղված էին դատարանի ծանրաբեռնվածության նվազեցմանն ու գործի քննության արդյունավետության բարձրացմանը: Այդուհանդերձ, Սահմանադրական դատարանի և Վճռաբեկ դատարանի որոշումներով արձանագրվեցին որոշ նոր կարգավորումների հետ կապված խնդիրներ, և միաժամանակ պրակտիկայում նոր ինստիտուտների կիրառման մասով ի հայտ եկան հակասական մոտեցումներ: Հետևաբար, անհրաժեշտ է վեր հանել առկա խնդիրները և մատնանշել դրանց լուծման ուղիները: Քաղաքացիական գործերով դատարանների ծանրաբեռնավածությունը թեթևացնելու համար կարևոր նշանակություն ունի նաև էլեկտրոնային գործիքների կիրառմամբ պարզեցված վարույթների զարգացումը, դատավարությունում էլեկտրոնային փաստաթղթերի և տվյալների փոխանակումը: Վարչական արդարադատության արդյունավետության բարձրացման համար 2020-2021 թվականների ընթացքում ընդունվեցին ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ նախատեսող օրենքներ, որոնք հիմնականում ուղղված էին Վարչական դատարանի ծանրաբեռնվածության նվազեցմանը և գրավոր ընթացակարգերի նախատեսմանը: Այդուհանդերձ, վարչական դատավարության հիմնաքարային որոշ ինստիտուտներ մնում են չարդիականացված և պրակտիկայում ի հայտ են եկել տարբեր խնդիրներ, ինչպես օրինակ, ծանուցման եղանակների և կարգի ու այլ հարցերի առնչությամբ: Վարչական դատարանների ծանրաբեռնվածությունը թեթևացնելու համար ևս կարևոր նշանակություն ունի նաև առանձին տեսակի վարչական գործերի համար պարզեցված վարույթների ներդրման և պարզեցված վարույթների իրականացման հարցում էլեկտրոնային գործիքների կիրառման անհրաժեշտությունը: Բացի այդ, էլեկտրոնային արդարադատության գործիքների ներդրումը պահանջում է նաև օրենսդրության համապարփակ վերանայում և դրա հնարավորինս հարմարեցում ներդրվելիք համակարգերին՝ էլեկտրոնային ապացույցների, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության, գործերի էլեկտրոնային վարման և քննության, էլեկտրոնային ծանուցումների իրականացման առումով: Այսպիսով, իրավակիրառ պրակտիկայում ծագած և վերհանված խնդիրների, ինչպես նաև էլեկտրոնային արդարադատության ներդրման կարիքների հիման վրա անհրաժեշտ է փոփոխություններ կատարել վերոնշյալ օրենսդրական ակտերում: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Առաջարկվում է մշակել Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ նախատեսող օրենքի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ նախատեսող օրենքի և հարակից օրենքների նախագծերը: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Միջոցառման իրականացմամբ ակնկալվում է պաշտաճ իրավական հիմքեր և կառուցակարգեր ստեղծել էլեկտրոնային արդարադատության համակարգերի տարբեր բաղադրիչների գործարկման համար, լուծում տալ դատավարական օրենսդրության վերջին բարեփոխումների արդյունքում առաջացած իրավակիրառ խնդիրներին և օրենսդրական բացերին, առանձին տեսակի գործերի համար զարգացնել պարզեցված վարույթները, որոնց միջոցով ակնկալվում է երաշխավորել քաղաքացիական և վարչական արդարադատության արդյունավետության բարձրացումը: Արդյունքում ակնկալվում է բարձրացնել քաղաքացիական դատավարության գործընթացում ներգրավված անձանց համար

	արդարադատության հասանելիության և արդյունավետության մակարդակը, վարչական դատավարության մասնակիցների համար բարձրացնել արդարադատության հասանելիության մակարդակը, դատավարության մասնակիցները առավել արդյունավետ են ծանուցվում դատավարական գործողությունների վերաբերյալ, կրճատվել են դատական քննության ժամկետները:
6.	6. ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԵՆԹԱՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Իրավունքի և հասարակական հարաբերությունների զարգացման միտումները հանգեցնում են նրան, որ իրավունքի միևնույն ոլորտի, մասնագիտացման ներսում տեղի է ունենում ճյուղավորում ըստ տարբեր ենթաոլորտների, ինչը նաև հանգեցնում է դատավորների այսպես կոչված ենթամասնագիտացումների առանձնացման անհրաժեշտությանը, օրինակ՝ կոռուպցիոն հանցագործությունների, մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործեր, առևտրային վեճեր, հարկային իրավախախտումների գործեր և այլն: Նման դեպքերում առավել նպատակահարմար է խոսել ոչ միայն մասնագիտացված դատարանների ստեղծման մասին, այլև կամ ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված որևէ դատարանում առանձին մասնագիտացված դատավորների առանձնացման հնարավորության մասին կամ ընդհանուր իրավասության այնպիսի դատարանի ստեղծման մասին, որտեղ կարող են քննվել նման ենթաոլորտների, ենթամասնագիտացման գործեր: Միջոցառումը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1363-Ա որոշման 5.3-րդ և 5.5-րդ կետերից: 1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Ներկայումս դատավորների մասնագիտացման առումով նախատեսված է նրանց մասնագիտացումն ըստ իրավունքի ոլորտների՝ քաղաքացիական, քրեական և վարչական, իսկ քաղաքացիական մասնագիտացման ներսում՝ նաև սնանկության մասնագիտացումը: Չնայած օրենսդրությամբ առկա է առանձին տեսակի գործերով դատավորների առանձնացման հնարավորությունը, սակայն ինստիտուցիոնալ առումով նման մեխանզիմներ ներդրված չեն, այլ դա թողնված է Բարձրագույն դատական խորհրդի հայեցողությանը: Այս առումով կարևորվում է Վճռաբեկ դատարանում ինստիտուցիոնալ առումով առանձին՝ վարչական պալատի ստեղծումը, որը կզբաղվի միայն վարչական գործերով ներկայացված վճռաբեկ բողոքների քննությամբ: Միևնույն ժամանակ այժմ, Հակակոռուպցիոն ռազմավարության շրջանակներում տարվում են աշխատանքներ հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի կայացման աշխատանքների կայացման ուղղությամբ: Մասնավորապես, դեռևս 2019 թվականին ձևավորվել էր Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, որն օժտված է կոռուպցիայի կանխարգելման գործառույթներով: Միևնույն ժամանակ, հակակոռուպցիոն ռազմավարության շրջանակներում 2020 թվականին Գլխավոր դատախազության կազմում ձևավորվել է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչություն, որը քաղաքացիաիրավական ընթացակարգերով իրականացնում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործառույթներ: Սույն համատեքստում ՀՀ Ազգային ժողովի կողմից 2021 թվականի մարտի 24-ին երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել է «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքը և հարակից օրենքները: Հակակոռուպցիոն կոմիտեն քննչական մարմին է, որն իրականացնելու է կոռուպցիոն հանցագործությունների քննություն: 2021 թվականի սեպտեմբերի 16-ին Կառավարության կողմից Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը նշանակվել է: Միևնույն ժամանակ, 2021 թվականի հոկտեմբերի 22-ին սահմանված կարգով համալրվել են Հակակոռուպցիոն կոմիտեի երեսուն ինքնավար թափուր պաշտոնները, որի արդյունքում «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքը և հարակից օրենքները մտել են ուժի մեջ և գործում են: Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի մյուս տարրը ստեղծելու նպատակով՝ 2021 թվականի ապրիլի 14-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել են «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքները, որոնցով նախատեսվում է հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանի ստեղծում, ինչպես նաև վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում համապատասխան մասնագիտացման դատավորների ներդնում: Հարկ է նշել, որ վերոնշյալ իրավական ակտերի փաթեթի սահմանադրականության հարցը քննարկելու նպատակով Նախագահի կողմից դիմում էր ներկայացվել Սահմանադրական դատարան, որը 2021 թվականի հոկտեմբերի 12-ի նիստում ձայների հավասարության հետևանքով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 9-րդ մասի կարգավորումների համատեքստում համարվել է մերժված: Նշվածով պայմանավորված քննարկվող իրավական ակտերը ուժի մեջ են մտել 2021 թվականի հոկտեմբերի 29-ին: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով միջազգային ստանձնած պարտավորությունները և հակակոռուպցիոն ոլորտում որդեգրած քաղաքականությունը, անհրաժեշտ է շարունակել հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանի ստեղծմանն ուղղված աշխատանքները՝ վերջիններիս ապահովելով համապատասխան նյութական և մարդկային ռեսուրսներով, ինչպես նաև բարձր մասնագիտական որակներ և բարեվարք դատավորներով: Դատավորների

	մասնագիտացվածության ապահովման տեսանկյունից կարևոր նշանակություն կարող է ունենալ նաև փոքր հայցապահանջներ քննող, ինչպես նաև առանձին տեսակի վարչական գործեր քննող դատավորների, զինվորական տրիբունալի և մասնագիտացված այլ դատարանների ստեղծման հնարավորության և նպատակահարմարության դիտարկումը: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Առաջարկվում է օրենսդրությամբ ամրագրել ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարաններում դատավորների առանձին ենթամասնագիտացումների ստեղծման հնարավորությունը: Հատկանշական է, որ նման քայլեր արդեն իսկ կատարվել են, մասնավորապես՝ մինչդատական քրեական վարույթի և օպերատիվ-հետախուզական միջոցառումների վերաբերյալ միջնորդություններ քննող դատավորների ինստիտուտի ներդրման միջոցով: Միևնույն ժամանակ առաջարկվում է ապահովել հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանի ստեղծմանն ուղղված գործընթացի շարունակականությունը և վերջինիս ապահովել անհրաժեշտ նյութական և մարդկային ռեսուրսներով: Առաջարկվում է նաև Վճռաբեկ դատարանում առանձնացնել մասնագիտացված վարչական պալատ, որը կզբաղվի միայն վարչական արդարադատության իրականացմամբ, ինչպես նաև դիտարկել այլ ոլորտների մասնագիտացված դատարաններ ստեղծելու նպատակահարմարության հարցը: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Դատավորների նեղ մասնագիտացումը կարող է դրական ազդեցություն ունենալ արդարադատության իրականացման արդյունավետության բարձրացման վրա: Նախ մի կողմից նեղ մասնագիտացումը կապահովի գործերի առավել մասնագիտացված քննությունը, հատկապես երբ խոսքը վերաբերում է բարդ, կոմպլեքս իրավահարաբերությունների և նեղ մասնագիտական գիտելիքների կիրառություն պահանջող գործերի քննությանը, մյուս կողմից հնարավորություն կտա վերաբաշխել դատական համակարգի ընդհանուր ծանրաբեռնվածությունը: Վճռաբեկ դատարանում կառանձնացվի առանձին՝ վարչական պալատ, որը կզբաղվի միայն վարչական գործերով ներկայացված վճռաբեկ բողոքների քննությամբ և արդյունքում կբարձրանա Վճռաբեկ դատարանում վարչական արդարադատության իրականացման արդյունավետությունը: Սույն միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է նաև ապահովել և ավարտին հասցնել հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի կայացման գործընթացը: Բացի այդ, ակնկալվում է, որ Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանի ստեղծմամբ կոռուպցիոն բնույթ ունեցող քրեական և քաղաքացիական գործերի քննությունը կիրականացվի բարձր մասնագիտական կարողություններ ունեցող և բարեվարք դատավորների կողմից, որոնք կունենան լայն հասարակական շրջանակների աջակցությունը և վստահությունը: Վերջնարդյունքում ակնկալվում է ապահովել զարգացած կոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգ, որը իր հերթին կնպաստի կոռուպցիայի նվազեցմանը և պետական իշխանության մարմինների նկատմամբ հասարակության վստահության բարձրացմանը: Նպատակահարմարության դեպքում կարող են ստեղծվել նաև մասնագիտացված այլ դատարաններ:
7.	7. ՓՈՔՐ ՀԱՅՑԱՊԱՀԱՆՋՆԵՐՈՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՎԵՃԵՐԻ (ԳՈՐԾԵՐԻ) ԱՐՏԱԴԱՏԱԿԱՆ ԼՈՒԾՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Փոքր հայցապահանջներով քաղաքացիական վեճերի (գործերի) արտադատական կարգով լուծման մեխանիզմների զարգացման նպատակն է թեթևացնել դատավորների ծանրաբեռնվածությունը, վերաբաշխել ընդհանուր ծանրաբեռնվածությունը, կրճատել գործերի քննության ժամկետները ընդհանուր իրավասության դատարաններում, ապահովել վեճերի առավել արագ, արդյունավետ և ողջամիտ ժամկետներում լուծումը: Միջոցառումը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1363-Ա որոշման 5.3-րդ կետից: 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Ներկայումս առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում ստացվում են գումարի բռնագանձման պահանջների վերաբերյալ մեծ թվով գործեր: Մասնավորապես, 2018 թվականին դրանց թիվը կազմել է 72.072, 2019 թվականին՝ 108.543, իսկ 2020 թվականին՝ 92.543 գործեր: Նշված գործերի շուրջ 80 տոկոսը կազմում են փոքր հայցապահանջներով քաղաքացիական գործերը: Արդյունքում առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում տարեկան ստացվում են 160.000 գործեր, ինչի հետևանքով մեկ դատավորի վարույթում է գտնվում տարեկան շուրջ 2900 քաղաքացիական գործ՝ փոքր հայցապահանջներով: Այսպիսով, փոքր հայցապահանջներով քաղաքացիական գործերի քննության արդյունքում զգալիորեն ավելանում է ընդհանուր իրավասության դատարանների դատավորների ծանրաբեռնվածությունը: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Առաջարկվում է մշակել փոքր հայցապահանջներով քաղաքացիական վեճերի (գործերի) արտադատական կարգով լուծման մեխանիզմների զարգացման ուղղված օրենսդրական փաթեթ: Միաժամանակ, առաջարկվում է սահմանել փոքր հայցապահանջներով արտադատական կարգով լուծված վեճերի (գործերի) համար կատարողական թերթի

	տրամադրման և կատարողական գործընթացների արդյունավետ մեխանիզմներ, ինչը նույնպես կնպաստի սահմանված նպատակի իրագործմանը: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Արդյունքում որոշակի առավելագույն շեմով դրամական պահանջների գործերի հետ կապված վեճերը կլուծվեն առավելապես արտադատական եղանակով, որի արդյունքում կթեթևանա կամ կվերաբաշխվի դատարանների ընդհանուր ծանրաբեռնվածությունը, տեղի կունենա ընդհանուր իրավասության դատարաններում գործերի քննության ժամկետների ընդհանուր կտրվածքով կրճատում, կնախատեսվեն նաև փոքր հայցապահանջներով արտադատական կարգով լուծված վեճերի (գործերի) համար կատարողական թերթի տրամադրման և կատարողական գործընթացների արդյունավետ մեխանիզմներ:
8.	8. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և **նպատակը** Առաջարկվող միջոցառումները պայմանավորված են դատարանների ծանրաբեռնվածության թեթևացման, գործերի քննության ժամկետների կրճատման, ինչպես նաև վեճի՝ կողմերի համար վեճերի առավել ճկուն և միաժամանակ մատչելի և արդյունավետ եղանակով լուծման մեխանիզմներ նախատեսելու անհրաժեշտությամբ: Իր հերթին, վեճերի լուծման այլընտրանքային մեխանիզմների զարգացումը և արդյունքում առևտրային վեճերի լուծման կանխատեսելիության ապահովումը կարող են հանգեցնել Հայաստանի ներդրումային գրավչության բարձրացմանը: Միջոցառումը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1363-Ա որոշման 5.3-րդ կետից: 1.2. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները. Ներկայումս դատարանները գործում են գերծանրաբեռնվածության պայմաններում, ընդ որում, դատարանների վարույթում գտնվող գործերի մեծամասնությունը կազմում են որոշակի տեսակի գործեր, օրինակ, 2020թ.-ի ընթացքում առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում ստացվել են 104,465 գործեր, որից 92,543-ը (88.58%) գումարի բռնագանձման պահանջի մասին: Իր հերթին, նույն ժամանակահատվածում ներկայացվել է 88,372 վճարման կարգադրություն արձակելու մասին դիմում: Ընդ որում, նշված գործերի և դիմումների դեպքում մեծ թիվ են կազմում ֆինանսական կազմակերպությունների մասնակցությամբ վեճերը (դիմումները), քանի որ բացակայում են այդպիսի վեճերի լուծման այլընտրանքային եղանակների արդյունավետ մեխանիզմները: Հարկ է նշել, սակայն, որ ներկայումս Հայաստանում գործում են մի քանի արբիտրաժային կենտրոններ, որոնք առավելապես գործում են տեղական մակարդակով՝ միայն բացառիկ դեպքերում քննելով միջազգային բնույթի գործեր: Ուստի, վեճերի արբիտրաժային կարգով քննության ոլորտում մրցակցությունը բարձրացնելու նպատակով հարկ է ստեղծել, հիմնադրել արբիտրաժային նոր կենտրոն՝ ունակ քննելու և՛ միջազգային, և՛ տարածաշրջանային, և՛ տեղական գործեր: Կենտրոնի ստեղծման գործում պետք է հաշվի առնել ինչպես հարաբերականորեն նոր ստեղծված արբիտրաժային կենտրոնների ստեղծման և գործունեության փորձը (Ռուսաստանի արբիտրաժային կենտրոն, Աստանայի և Դուբայի արբիտրաժային կենտրոններ), այնպես էլ ավանդական և միջազգային մեծ հեղինակություն ունեցող կենտրոնների փորձը (Լոնդոնի, Ստոկհոլմի, Ցյուրիխի կենտրոններ): Արբիտրաժային նոր կենտրոնը պետք է քննի ինչպես ընդհանուր առևտրային բնույթի վեճեր, այնպես էլ փոքր հայցապահանջներով գործեր (օրինակ՝ ֆինանսական կազմակերպությունների և հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների մասնակցությամբ վեճեր)՝ հատուկ վարույթի կարգով: Իր հերթին, ընդհանուր առևտրային բնույթի վեճերի դեպքում նոր կենտրոնը պետք է արդյունավետ հարթակ լինի հատուկ մասնագիտացված գործերի քննության համար, ինչպես, օրինակ, տեղեկատվական տեխնոլոգիաների, ներդրումային, կորպորատիվ կամ այլ վեճերն են: Ինչ վերաբերում է հաշտարարության վերաբերյալ կարգավորումներին, ապա հարկ է նկատել, որ ներկայումս առկա չեն առցանց հաշտարարության, որոշակի դեպքերում (օրինակ՝ ընտանեկան գործերով վեճերով) պարտադիր հաշտարարության վերաբերյալ իրավակարգավորումներ, ինչը նույնպես իր բացասական ազդեցությունն է ունենում վերոնշյալ խնդիրների վրա: Իր հերթին, նշված խնդիրների լուծման արդյունքում, ակնկալվում է՝ անհրաժեշտություն կառաջանա ավելացնելու հաշտարարների թիվը, ինչով պայմանավորված անհրաժեշտ է վերանայել նոր հաշտարարների ներգրավման, ուսուցման, ռեեստրի վարման և ընտրության իրավական մեխանիզմները: Միաժամանակ, բավարար կարգավորված չեն հաշտարարների որակավորման և վերապատրաստման ընթացակարգերը: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները. Վերոնշյալի արդյունքում առաջարկվում է փոփոխություններ կատարել «Հաշտարարության մասին» օրենքում՝ նախատեսելով առցանց հաշտարարության, որոշակի դեպքերում (օրինակ՝ ընտանեկան գործերով վեճերով) պարտադիր հաշտարարության վերաբերյալ, ինչպես նաև հաշտարարության ոլորտի հարաբերությունների զարգացմանն ուղղված այլ իրավակարգավորումներ, մասնավորապես, նոր հաշտարարներ ներգրավելու վերաբերյալ:

	Միաժամանակ, առաջարկվում է Հայաստանում հիմնադրել արբիտրաժային նոր կենտրոն, որի հիմնադրման աշխատանքներին և հետագա գործունեությանը կներգրավվեն ոլորտի անվանի մասնագետներ, կազմակերպություններ (այդ թվում արբիտրաժային կենտրոններ)՝ ներդնելով իրենց փորձը և գիտելիքները, ինչպես նաև նպաստելով կենտրոնի կայացմանը: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը. Միջոցառման արդյունքում ակնկալվում է ստեղծել անհրաժեշտ պայմաններ նոր հաշտարարների ներգրավման և փաստացի գործող հաշտարարների թիվը մինչև 40 տոկոսով ավելացման, նրանց ուսուցումն ու վերապատրաստումն իրականացնելու համար, ստեղծել օրենսդրական լուծումներ առցանց հաշտարարություն իրականացնելու համար, ներդնել ընտանեկան գործերով պարտադիր հաշտարարություն, որի արդյունքում ակնկալվում է, որ նշված գործերով հաշտության դեպքերի քանակը կավելանա մինչև 30 տոկոսով՝ թեթևացնելով դատարանների ծանրաբեռնվածությունը: Արբիտրաժի մասով ակնկալվում է ունենալ միջազգային, տարածաշրջանային և տեղական արբիտրաժային գործերն արբիտրաժային կարգով քննող նոր կառույց, որը կքննի նաև փոքր հայցապահանջներով գործեր և կհանդիսանա առևտրային և այլ վեճերի արդյունավետ քննության հարթակ՝ կրկին թեթևացնելով դատարանների ծանրաբեռնվածությունը՝ միաժամանակ ապահովելով գործերի քննության պրոֆեսիոնալիզմն ու ճկունությունը: Ընդ որում, նոր արբիտրաժային կենտրոնը կքննի մասնագիտացված այնպիսի գործեր, որոնք կարող են առաջանալ տեղեկատվական տեխնոլոգիաների, ներդրումային, կորպորատիվ վեճերով:
9.	9. ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը ՀՀ Կառավարության 03.06.2021թ. N 911-Ն որոշմամբ Կառավարությունը համաձայնություն է տվել ՀՀ Վերաքննիչ վարչական, վերաքննիչ քաղաքացիական, Սնանկության դատարանների դատավորների թվակազմը ավելացնել համապատասխանաբար՝ 3, 3 և 4 դատավորներով: ՀՀ Կառավարության 08.07.2021թ. N 1119-Ն որոշմամբ Կառավարությունը համաձայնություն է տվել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավորների թվակազմը ավելացնել 3, իսկ Առաջին ատյանի դատարանների դատավորների թվակազմը՝ 17 դատավորներով: ՀՀ Կառավարության 03.10.2019թ. <Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին> N 1232-Ն որոշման Հավելված 2-ում նախատեսված 2-րդ և 3-րդ միջոցառումներով համապատասխանաբար նախատեսվել է կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման, քննության գործառույթներով օժտված և անկախության բավարար երաշխիքներ ունեցող հակակոռուպցիոն իրավապահ մարմնի՝ Հակակոռուպցիոն կոմիտեի ձևավորում և բնականոն գործունեության ապահովում և Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանների ստեղծում միջոցառումները: Միջոցառումը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1363-Ա որոշման 5.3-րդ կետից: 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Կառավարության վերոնշյալ որոշումներով փաստացի դատավորների թվակազմի ավելացմամբ պայմանավորված՝ անհրաժեշտ է ապահովել վերջիններիս գործունեության համար անհրաժեշտ շենքային պայմաններով և նյութատեխնիկական հագեցվածությամբ: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Դատավորների գործունեության համար անհրաժեշտ շենքային պայմաններով և նյութատեխնիկական հագեցվածությամբ ապահովելու նպատակով անհրաժեշտ է վերանորոգել և հիմնանորոգել Կառավարության կողմից այս նպատակով հատկացված շենքերը՝ մասնավորապես «ք. Երևան, Հալաբյան 41/ա հասցեում», «ք. Երևան, Գարգեին Նժդեհ 23/1» և «ք. Երևան, Արա Սարգսյան 5/1» հասցեներում գտնվող, ինչպես նաև ձեռք բերել անհրաժեշտ կահավորում և տեխնիկա: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Միջոցառման արդյունքում դատարաններն ապահովված են անհրաժեշտ նյութատեխնիկական հագեցվածությամբ:
10.	10. ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և **նպատակը** 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրությունն իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը: Նշվածով պայմանավորված՝ անհրաժեշտ է նախատեսել իրավական կառուցակարգեր, որոնք հնարավորինս կերաշխավորեն սահմանադրական մակարդակում ամրագրված փաստաբանության գործունեության սկզբունքները: Իր հերթին, միջոցառմամբ նպատակ է հետապնդվում զարգացնել անվճար իրավաբանական օգնության տրամադրման շրջանակները և կարգը՝ որպես պետության

	պարտավորությունների կատարման ապահովում: Միջոցառումը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1363-Ա որոշման 5.3-րդ կետից: 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները. Ներկայումս «Փաստաբանության մասին» օրենքում (այսուհետ սույն կետում՝ Օրենք) սահմանված իրավակարգավորումների համաձայն անվճար իրավաբանական օգնություն հանրային պաշտպանի գրասենյակը մատուցում է միայն որոշակի շրջանակի անձանց, որոնց ցանկը սահմանված է Օրենքով: Սակայն, հարկ է նկատել, որ առկա են նաև այլ խմբերի պատկանող անձինք, որոնց նպատակահարմար է նախատեսել անվճար իրավաբանական օգնության շահառուների ցանկում: Իր հերթին, Օրենքում, ըստ էության, առկա չեն փաստաբանների կողմից անհատույց իրավաբանական օգնության տրամադրումը կարգավորող և խթանող իրավակարգավորումներ, որոնք կարող էին մեծապես խթանել կարիքավոր անձանց իրավական օգնություն ստանալու ապահովմանը: Միաժամանակ, փաստաբանների պալատի ինքնավարության շրջանակներում անհրաժեշտ է կատարելագործել փաստաբանների պալատի ներքին կառուցակարգերը՝ փաստաբանության գործունեության ինքնակառավարման սահմանադրական սկզբունքին համապատասխան: Իր հերթին, Փաստաբանների դպրոցում պարտադիր ուսուցման պահանջը առավելագույնս հաշվի չի առնում փաստաբանի արտոնագիր ստանալու ցանկություն ունեցող անձանց տարբեր շրջանակների առանձնահատկությունները (կրթություն, մասնագիտական փորձ և անցած ուղի և այլն): Փաստաբանների որակավորմանը, ինչպես նաև մասնագիտական վերապատրաստմանը վերաբերող կարգավորումները առավելապես կարգավորվում են փաստաբանների պալատի ներքին իրավական ակտերով, այնինչ այդ հարաբերությունները որոշակիորեն նպատակահարմար է կարգավորել օրենսդրական մակարդակում, քանի որ փաստաբանությունը հասարակության կարևոր ինստիտուտ է, և հանրությունը շահագրգռված է արհեստավարժ փաստաբանական համայնքի առկայությամբ և դրա կայուն զարգացմամբ: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները. Ըստ այդմ՝ առաջարկվում է մշակել «Փաստաբանության մասին օրենքում փոփոխություններ նախատեսող օրենքի և հարակից օրենքների նախագծեր, որով անհրաժեշտ կլինի վերանայել և ընդլայնել անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք ունեցող անձանց շրջանակը՝ դրանում ներառելով ինչպես նոր խմբերի պատկանող անձանց, այնպես էլ վերացնելով առկա իրավական խնդիրները: Իր հերթին, հարկ է Օրենքում նախատեսել փաստաբանների կողմից անհատույց իրավաբանական օգնության տրամադրումը կարգավորող և խթանող իրավական նորմեր՝ ապահովելով այդ հարաբերությունների որոշակիությունը, ինչպես նաև ստեղծելով երաշխիքներ անհատույց իրավաբանական օգնություն տրամադրող անձանց համար: Փաստաբանների պալատի ներքին կառուցակարգերի զարգացման նպատակով անհրաժեշտ է բարձրացնել Փաստաբանների պալատի կոլեգիալ մարմինների դերակատարումը, այդ թվում նախատեսել նոր կոլեգիալ մարմիններ, ինչը բխում է փաստաբանության գործունեության ինքնակառավարման սկզբունքը լիարժեք իրացնելու անհրաժեշտությունից, ինչպես նաև ներդնել Փաստաբանների պալատի գործունեության նկատմամբ հանրային վերահսկողության սահմանման նոր մեխանիզմներ, քանի որ փաստաբանությունը հանրային կարևոր արժեք ներկայացնող գործունեություն է, հանրային ինստիտուտ, ինչով պայմանավորված այդ ինստիտուտը ստացել է սահմանադրական ամրագրում: Ինչ վերաբերում է Փաստաբանական դպրոցում ուսուցմանը և փաստաբանների որակավորման կառուցակարգերին, ապա հարկ է նախատեսել որակավորման քննություններին մասնակցելու, ինչպես նաև Փաստաբանական դպրոցում ուսուցման ճկուն և տարբերակված համակարգեր՝ պայմանավորված դիմողների կարգավիճակից (մասնագիտական փորձառություն, կրթությունը և այլ հանգամանքներ): 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը. Միջոցառման արդյունքում կուժեղացվեն փաստաբանների պալատի ներքին կառուցակարգերը՝ դրա շրջանակներում հիմնավորելով կոլեգիալ կառավարումը, ինչպես նաև փաստաբանության գործունեության ինքնակառավարման սկզբունքի իրականացումը: Կընդլայնվի նաև անվճար իրավաբանական օգնության շահառուների շրջանակը և կհստակեցվեն օգնություն ստանալու չափանիշները, կլուծվեն այդ հարաբերությունները կարգավորող նորմերում առկա իրավական խնդիրները: Իր հերթին, ակնկալվում է ներդնել փաստաբանների կողմից կամավոր անհատույց իրավաբանական օգնության տրամադրումը կարգավորող և խրախուսող իրավական մեխանիզմներ՝ ապահովելով ինչպես կարիքավոր անձանց իրավական օգնություն ստանալու իրավունքը, այնպես էլ հանրային պաշտպանի գրասենյակի ծանրաբեռնվածության թեթևացումը: Միջոցառման արդյունքում ակնկալվում է, որ Փաստաբանների պալատի կառավարման հարցերում ավելի լայն կերպով կապահովվի փաստաբանական գործունեության ինքնակառավարման սկզբունքի իրացումը, ինչպես նաև կբարձրանա

	փաստաբանների պալատի կոլեգիալ մարմինների դերակատարումը: Միաժամանակ, ակնկալվում է բարձրացնել Փաստաբանների պալատի գործունեության հանրային հաշվետվողականությունը: Փաստաբանների որակավորման գործընթացների առումով ակնկալվում է ունենալ օբյկետիվ հանգամանքների վրա հիմնված որակավորման և ուսուցման ճկուն և տարբերակված մոտեցումներ՝ ապահովելով արհեստավարժ փաստաբանական համայնքի կայուն զարգացումը:
11.	11. ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄ 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Սնանկության օրենսդրության վերանայման հայեցակարգի և Սնանկության մասին նոր օրենսգրքի նախագծի մշակումը նպատակ է հետապնդում ապահովել իրավակիրառ պրակտիկայում ծագած և վերհանված խնդիրների լուծումը: Սնանկության ոլորտում համաշխարհային միտումներին և զարգացող տնտեսական հարաբերություններին համահունչ շարունակական բարելավումների իրականացումը կարևորվում է ոչ միայն արդարադատության համակարգի, այլ նաև գործարար միջավայրի բարելավման անհրաժեշտությունից ելնելով: Բացի այդ, օրենսդրության համապարփակ վերանայման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև էլեկտրոնային արդարադատության ներդրման համար անհրաժեշտ օրենսդրական հիմքերի ապահովման կարևորությամբ: Միջոցառումը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1363-Ա որոշման 5.3-րդ կետից: 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Սնանկության մասին նոր օրենսգրքի մշակման անհրաժեշտությունը պայմանավորված է սնանկության վարույթին առնչվող բոլոր ընթացակարգային և նյութական ասպեկտները մեկ միասնական փաստաթղթով կարգավորելու կարևորությամբ: Սնանկության օրենսգրքի շրջանակներում անհրաժեշտ է, ի թիվս այլնի՝ 1. էականորեն փոխել ՀՀ սնանկության մոդելը, առանձնացնելով լուծարման և առողջացման գործընթացները՝ նախատեսել առողջացման կամ լուծարման ծրագիր հենց սկզբից, 2. հստակեցնել սնանկության վարույթի հնարավոր բոլոր կողմերի և մասնակիցների կարգավիճակը, 3. կատարելագործել ֆիզիկական անձանց սնանկության իրավակարգավորումները, 4. կրճատել սնանկության վարույթի ժամկետները, 5. վերանայել բոլոր ներկա կարգավորումները, որոնք պարունակում են կոռուպցիոն ռիսկեր 6. վերանայել սնանկության վարույթում սնանկության կառավարչի կողմից, պարտապանի սեփականության և բիզնեսի կառավարման հարցերը, 7. նախատեսել անդրազգային սնանկության վերաբերյալ իրավակարգավորումներ, 8. նախատեսել սնանկության հատուկ ընթացակարգեր առանձին սուբյեկտների համար: Ներկայումս մշակվող և փուլ առ փուլ ներդրվող էլեկտրոնային արդարադատության, այդ թվում՝ էլեկտրոնային սնանկության համակարգի ներդրումը պահանջելու է նաև դրան համապատասխան օրենսդրության առկայություն, որը հնարավորություն կտա սնանկության վարույթի իրականացումը՝ սկսած դրա հարուցումից մինչև վարույթի ավարտը, իրականացնել էլեկտրոնային եղանակով՝ առանց լրացուցիչ փաստաթղթաշրջանառության, հնարավորինս բացառելով մարդկային միջամտությունը և գործընթացներն իրականացնելով առանց կողմերի անմիջական մասնակցության: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Առաջարկվում է մշակել սնանկության օրենսդրության վերանայման հայեցակարգ և դրա հիման վրա Սնանկության մասին նոր օրենսգիրք, որի միջոցով համապարփակ կարգավորում կստանան իրավակիրառ պրակտիկայում ծագած և վերհանված մի շարք խնդիրներ: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Ակնկալվում է լուծում տալ սնանկության ոլորտի իրավակիրառ պրակտիկայում առկա խնդիրներին, ապահովել սնանկության գործերի՝ առավել սեղմ ժամկետներում քննությունը, ֆինանսական առողջացումների դեպքերի թվի մեծացումը, անդրազգային սնանկության գործերի քննության և լուծման հնարավորությունների ստեղծումը, սնանկության վարույթի իրականացումը էլեկտրոնային եղանակով և առանձին սուբյեկտների համար սնանկության հատուկ ընթացակարգերի նախատեսումը:
12.	12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈԼՈՐ ՄԱՐԶԵՐՈՒՄ «ՄԵԿ ՊԱՏՈՒՀԱՆԻ» ՍԿԶԲՈՒՆՔՈՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԿՈՒՄ, ՈՐՏԵՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԿՄԱՏՈՒՑՎԵՆ ՀՆԱՐԱՎՈՐԻՆՍ ՄԵԾ ԹՎՈՎ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՆԵՐԱՌՅԱԼ ՔԿԱԳ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵԼԱՎՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և **նպատակը**

	Առաջարկվող միջոցառման նպատակն է՝ մշակել և ներդնել հանրային ծառայությունների տրամադրման այնպիսի համակարգ, որով հնարավորություն կստեղծվի օպտիմալ ռեսուրսներով մատուցել առավելագույնս արագ, պարզ, թափանցիկ, կոռուպցիայից զերծ հանրային ծառայություններ՝ ապահովելով սպասարկման բարձր որակ, հանրային ծառայությունների համընդհանուր հասանելիություն և մատչելիություն: Միջոցառումը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1363-Ա որոշման 5.3-րդ և 6.2-րդ կետերից: 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները. 2020 թվականի հուլիսի 22-ից Արդարադատության նախարարության կողմից գործարկվեց «Հանրային ծառայությունների մատուցման միասնական գրասենյակը», որտեղ քաղաքացիները ոչ միայն կարող են օգտվել Արդարադատության նախարարության հանրային բոլոր ծառայություններից, այլ նաև այլ գերատեսչությունների ծառայություններից, որոնց մի մասը ուղղակի փոխկապակցված են միմյանց հետ: Պիլոտային ծրագրի նպատակն էր հասկանալ կենտրոնացված ծառայությունների մատուցման գործնականում առաջացող թերությունները և համակարգային լուծումներով այդպիսի կենտրոններ բացել Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում, որոնցում կընդգրկվեն հանրային բոլոր ծառայությունները: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ 2021 թվականի հունվարի 18-ին Ազգային ժողովը երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունեց երկու նոր օրենքներ և ութ օրենքներում փոփոխություններ, որոնց նպատակն է ապահովել Արդարադատության նախարարության հանրային ծառայությունների թվայնացումը, վարչարարության պարզեցումը, ժամկետների կրճատումը, մատուցվող ծառայությունների որակի բարձրացումը, կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը, քաղաքացիներին մատուցվող ծառայությունների հարմարավետությունը: Մասնավորապես, սահմանվել է ծառայությունների մատուցման front և back office ձևաչափ և հանրային ծառայությունների միասնական գրասենյակների հիմնման իրավական հիմքեր: Հաշվի առնելով 2020 թվականին գործարկված «Հանրային ծառայությունների մատուցման միասնական գրասենյակ»-ի փորձը, 2021 թվականի օգոստոսի 18-ին Կառավարության N 1363-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում Կառավարությունը պետության կողմից հանրությանը մատուցվող ծառայությունների ոլորտում սահմանել է տարբեր ծրագրեր ուղղված բարեփոխելու պետության կողմից հանրությանը մատուցվող ծառայությունների որակը՝ դրանք դարձնելով քաղաքացիակենտրոն և արդիական, առաջադեմ տեխնոլոգիական հիմքով՝ նպատակ ունենալով թեթևացնել քաղաքացիների և գործարար հատվածի անհարկի բեռը նվազեցնելով վարչարարությունը պետության հետ հարաբերություններում: Մասնավորապես, Ծրագրի 5.5-րդ կետում տարածքների համաչափ զարգացման տեսանկյունից Կառավարությունը կարևորել է հանրային ծառայությունների միասնական գրասենյակների ծավալումը բոլոր մարզերում, իսկ «Պետության կողմից հանրությանը մատուցվող ծառայությունների» վերտառությամբ 6.2-րդ կետում սահմանված է, որ պետության կողմից հանրությանը ծառայությունների մատուցման ուղղությամբ Կառավարությունը նախաձեռնելու է նաև՝ ծառայությունների միասնական գրասենյակների արդիական մոդելի մշակումը և ներդնումը: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Առաջարկվում է հանրային ծառայություններ մատուցող այլ գերատեսչությունների հետ համագործակցության միջոցով հանրապետության ամբողջ տարածքում մշակել և ներդնել «Հանրային ծառայությունների մատուցման միասնական գրասենյակներ»-ի նոր մոդել՝ նվազագույնը յուրաքանչյուր մարզկենտրոնում՝ ընդլայնելով մատուցվող ծառայությունների ցանկը՝ դրանցում ներառելով հանրային ծառայությունների ամբողջ սպեկտրը: Առաջարկվում է նաև մշակել և ընդունել հանրային ծառայությունների տրամադրման նոր համակարգի ներդրման հայեցակարգը: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Հայեցակարգի ներդրումը, ինչպես նաև բոլոր մարզերում հանրային ծառայություններ մատուցող գրասենյակների բացումը հիմք կհանդիսանան շտկելու տարիներ շարունակ ոչ արդյունավետ, ավանդական ոչ բարձր որակ ունեցող հանրային ծառայությունների մատուցման ձևաչափերը, վերափոխելով դրանք առավել զարգացած և արդիական ձևաչափերի, որոնց շրջանակներում կապահովվեն ծառայությունների մատուցման թափանցիկությունը, սպասարկման կենտրոնների մրցակցությունը, սպասարկման որակի բարձրացումը և դրա նկատմամբ մշտադիտարկումը, դիմող անձանց իրավունքների և շահերի պաշտպանությունը, կնվազեցվեն ավելորդ վարչարարությունը, կբացառվեն հանրային ծառայությունների մատուցման ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերը:
13.	13. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԽՈՂ 2023-2025ԹԹ. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ 1. ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ Մարդու իրավունքների պաշտպանության նոր ազգային ռազմավարությունն ու դրանից բխող 2020-2022թթ. Գործողությունների ծրագիրն ընդունվել է ՀՀ կառավարության 2019թ. դեկտեմբերի 26-ի N 1978-Լ որոշմամբ: 2020-2022թթ. Գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների կատարման վերջնաժամկետ է սահմանվել 2022թ.: Մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Կառավարության քաղաքականության

	շարունակականության ապահովման նպատակով անհրաժեշտ է մշակել Ռազմավարության իրագործմանն ուղղված հաջորդ 3 տարիների համար (2023-2025թթ.) հստակ ու թիրախային միջոցառումներ սահմանող մեկ միասնական փաստաթուղթ: Միջոցառումը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1363-Ա որոշման 5.2-րդ կետից: 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները. Մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Կառավարության քաղաքականությունն ամրագրվել է Մարդու իրավունքների պաշտպանության նոր ազգային ռազմավարությամբ, որի իրագործումն ապահովող միջոցառումները սահմանվել են 2020-2022թթ. Գործողությունների ծրագրով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022 թթ. գործողության ժամկետն ավարտվելու է 2022 թվականին՝ անհրաժեշտություն է առաջանում մշակել նոր գործողությունների ծրագիր՝ 2023-2025 թվականների համար: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Առաջարկվում է մշակել ՄԻՊ ազգային ռազմավարությունից բխող 2023-2025թթ. Գործողությունների ծրագիր՝ 3-ամյա կտրվածքով, որի նպատակն է առավել համակարգված և արդյունավետ դարձնել հանրապետական գործադիր և օրենքով ստեղծված պետական մարմինների գործողությունները, որոնք հնարավոր կդարձնեն Սահմանադրության 3-րդ հոդվածով և ՀՀ կառավարության ծրագրով ամրագրված նպատակների իրագործումը; 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Կմշակվի և կընդունվի Մարդու իրավունքների պաշտպանության 2023-2025թթ. Գործողությունների ծրագիրը, որը հստակ միջոցառումների միջոցով կհասցեագրի և համակարգված ձևով կտա թիրախային լուծումներ մարդու իրավունքների պաշտպանության տարբեր բնագավառներում առկա խնդիրներին:
14.	14. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ 14.1 «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիայի (108 կոնվենցիա) փոփոխող արձանագրության (108+ կոնվենցիա) ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի ապահովում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Կոնվենցիան անձնական տվյալների պաշտպանության ոլորտում գործող հիմնական միջազգային փաստաթղթերից է, որը Հայաստանի համար ուժի մեջ է մտել 2012 թվականի սեպտեմբերի 1-ին: Միաժամանակ, Արձանագրությունը քննարկվել է Տվյալների պաշտպանության ad hoc կոմիտեի (CAHDATA) ժողովում, որն անցկացվել է 2016թ.-ի հունիսի 15-16-ին Ստրասբուրգում և հայտնի է որպես 108 կոնվենցիայի արդիականացման վերաբերյալ փաստաթուղթ կամ 108+ Կոնվենցիա: Արձանագրությունն արտացոլում է անձնական տվյալների պաշտպանության ոլորտում զարգացումները, ուստի այն վավերացնելը Հայաստանի Հանրապետության համար կապահովի համապատասխանեցում անձնական տվյալների պաշտպանության միջազգային արդի զարգացումներին: Միջոցառումը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1363-Ա որոշման 5.2-րդ կետից: 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները. 108+ կոնվենցիայի վավերացումը նախատեսված էր ՀՀ կառավարության՝ 2019-2023 թվականների գործունեության ծրագրի կատարումն ապահովող միջոցառումներում և Հայաստանն սկսել է վավերացման գործընթացը: Մասնավորապես, 2019 թվականի հոկտեմբերի 2-ին Հայաստանը ստորագրել է 108 կոնվենցիան փոփոխող արձանագրությունը, իսկ 2021 թվականի հունվարի 14-ին ՀՀ կառավարությունը հավանություն է տվել 108 կոնվենցիան փոփոխող արձանագրությունը վավերացնելու մասին օրենքի նախագծի վերաբերյալ ՀՀ կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել է Սահմանադրական դատարան: Սահմանադրական դատարանը 2021 թվականի ապրիլի 13-ի ՍԴՈ-1588 որոշմամբ գտել է, որ 108 կոնվենցիան փոփոխող արձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները. Հաշվի առնելով, որ Հայաստանը դեռևս չի վավերացրել 108+ կոնվենցիան, այսինքն, փաստացի, չի սպառվել ՀՀ կառավարության՝ 2019-2023 թվականների գործունեության ծրագրի կատարումն ապահովող միջոցառումներում նախատեսված գործողությունը՝ 108+ կոնվենցիայի վավերացում նախատեսող միջոցառումն առաջարկվում է վավերացման գործընթացը հետևողականորեն ավարտին հասցնելու համար: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը.

	«Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիան (108 կոնվենցիա) փոփոխող արձանագրությունը (108+ կոնվենցիա) վավերացնելը Հայաստանի Հանրապետության համար կապահովի համապատասխանեցում անձնական տվյալների պաշտպանության միջազգային արդի զարգացումներին: 14.2 Անձնական տվյալների մշակում նախատեսող նոր ընդունվող, ինչպես նաև գործող իրավական ակտերի համապատասխանեցում «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքին, օրենքով սահմանված՝ անձնական տվյալների մշակման սկզբունքներին 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը. Միջոցառումը միտված է անձնական տվյալների մշակում նախատեսող օրենսդրության հարմոնիզացիային, այն է՝ տարբեր ոլորտներում իրականացվող անձնական տվյալների մշակման գործընթացները ՀՀ Սահմանադրության 34-րդ հոդվածից բխող և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված անձնական տվյալների մշակման սկզբունքներին համապատասխանեցմանը: Միջոցառումը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1363-Ա որոշման 5.2-րդ կետից: 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքն ընդունվել է 2015 թվականին՝ փոխարինելով մինչ այդ գործող «Անհատական տվյալների մասին» օրենքին, որը, թեև սահմանում էր անձնական (նախկին օրենքի տերմինաբանությամբ՝ անհատական) տվյալների պաշտպանության իրավունքը, սակայն սկզբունքների մակարդակում հռչակագրային էր, արդիական չէր, չէր արտացոլում տվյալների պաշտպանության սկզբունքների էությունը, չէր նախատեսում այն պաշտպանական կառուցակարգերը, որ կան նոր օրենքով: Փոխարենը, «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքն ընդունվեց՝ հաջորդելով 2012 թվականին Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին կոնվենցիայի վավերացմանը և առարկայացնելով անձնական տվյալների մշակման կոնվենցիոն և դիրեկտիվային (խոսքն Անձնական տվյալների մշակման և այդ տվյալների ազատ տեղաշարժի առնչությամբ անհատների պաշտպանության մասին 95/46 դիրեկտիվի և 2015 թվականին արդեն մշակված դրա արդիականացված տարբերակի՝ Անձնական տվյալների ընդհանուր կանոնակարգի (General Data Protection Regulation) մասին է) սկզբունքները: Արդյունքում, նոր ընդունված «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի կիրառման պրակտիկայից պարզվեց, որ անձնական տվյալների մշակում նախատեսող ինչպես նոր ընդունվող իրավական ակտերի նախագծերում, այնպես էլ արդեն գործող իրավական ակտերում պատշաճ արտացոլված չէին անձնական տվյալների մշակման սկզբունքները. այլ կերպ ասած, տարբեր իրավական ակտերով նախատեսվում կամ արդեն նախատեսված է անձնական տվյալների այնպիսի մշակում, որը չի համապատասխանում անձնական տվյալների մշակման սկզբունքներին: Անձնական տվյալների մշակում նախատեսող ինչպես նոր ընդունվող իրավական ակտերի նախագծերում, այնպես էլ արդեն գործող իրավական ակտերում անձնական տվյալների մշակման սկզբունքները պատշաճ արտացոլված չլինելու խնդիրը նախանշվել էր դեռևս նախորդ տարիներին. ուստի, անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի (Անձնական տվյալների պաշտպանության գործակալության) առաջարկությամբ այն արտացոլվել էր ՀՀ կառավարության՝ 2019-2023 թվականների գործունեության ծրագրի կատարումն ապահովող միջոցառումներում, որտեղ, ի թիվս այլնի, նախատեսված է անձնական տվյալների մշակում նախատեսող նոր ընդունվող իրավական ակտերի համապատասխանեցում «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ անձնական տվյալների մշակման սկզբունքներին: 2019 թվականին Գործակալության միջնորդությամբ համապատասխան շրջաբերական էր ներկայացվել նաև ՀՀ արդարադատության նախարարության ստորաբաժանումներին (մասնավորապես խոսքն Իրավական ակտերի փորձաքննության գործակալության մասին է, որին իրավական ակտերը ներկայացվում են պետական իրավական փորձաքննության)՝ իրենց կողմից մշակվող կամ իրենց ներկայացված և անձնական տվյալների մշակում նախատեսող իրավական ակտերի նախագծերը Գործակալության կարծիքին ներկայացնելու վերաբերյալ: Սա խնդրի լուծման մասնավոր միջոցառում է, սակայն խնդիրը համակարգային է և պահանջում է լրացուցիչ ուշադրություն: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները. Հաշվի առնելով, որ նկարագրված գործընթացն իր իմաստով շարունակական է և մշտապես ուշադրության կարիք ունի՝ անհրաժեշտ է այն ներառել նաեւ Կառավարության՝ 2021-2026 թվականների գործունեության ծրագրի կատարումն ապահովող միջոցառումներում որպես պարբերաբար իրականացվող միջոցառում: Ակնկալվում է, որ միջոցառման բովանդակային իրականացումը, այն է՝ անձնական տվյալների մշակման սկզբունքների տեսանկյունից անձնական տվյալների մշակում նախատեսող իրավական ակտերի գնահատումը, իրականացնելու է անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմինը, սակայն, որպես միջոցառման համակատարող են նշված պետական կառավարման համակարգի մարմինները, քանի որ անձնական տվյալների մշակում նախատեսող իրավական ակտերը նախաձեռնվում (մշակվում) կամ քննարկվում են տարբեր մարմիններում, ուստի, անհրաժեշտ է

	շեշտադրել այդ մարմինների կողմից մշակվող կամ իրենց ներկայացված և անձնական տվյալների մշակում նախատեսող իրավական ակտերի նախագծերը անձնական տվյալների մշակման սկզբունքներին համապատասխանեցնելու (անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի կարծիքին ներկայացնելու, խորհրդատվություն հայցելու և այլն) անհրաժեշտությունը: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը. Անձնական տվյալների մշակում նախատեսող ներպետական օրենսդրությունը կհամապատասխանեցվի անձնական տվյալների մշակման սկզբունքներին, ինչը մի կողմից անձնական տվյալների պաշտպանության ապահովման կարևոր բաղադրիչ է, մյուս կողմից՝ կապահովի իրավական որոշակիություն և թույլ կտա անձնական տվյալների մշակման հարցերում խուսափել տարընթերցումներից: 14.3 ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ, ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ) ՀԶՈՐԱՑՈՒՄ 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը. Միջոցառումը միտված է անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնին (Անձնական տվյալների պաշտպանության գործակալությանը) անձնական տվյալների մշակման ոլորտում առաջացող մարտահրավերներին և խնդիրներին պատշաճ արձագանքելու համար անհրաժեշտ կարողություններով ապահովմանը: Միջոցառումը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1363-Ա որոշման 5.2-րդ կետից: 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները. Անձնական տվյալները արժեքավոր տեղեկություններ են, որոնք իրենց կարգավիճակի (անձնական, մասնավոր լինելու) և մարդու վրա ազդեցության պատճառով որոշակի ներքին զգայունություն ունեն և որոնց միջոցով հնարավոր է միջամտել մարդու այս կամ այն իրավունքներին (խոսքը ցանկացած միջամտության մասին է, ոչ պարտադիր անօրինական): Մյուս կողմից, գիտության ու տեխնոլոգիայի զարգացման պայմաններում գնալով ավելի շատ են մշակվում անձնական տվյալներ, ընդ որում՝ ավելանում է և՛ մշակվող տվյալների ծավալը և՛ անձնական տվյալների նկատմամբ միջամտության ծավալը: 2015 թվականին ընդունված «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի կիրառման պրակտիկայից պարզվեց, որ անձնական տվյալների պաշտպանության հետ կապված խնդիր կա գրեթե բոլոր ոլորտներում: Արդյունքում, մի կողմից անձնական տվյալները զգայուն և արժեքավոր տեղեկություններ են. որոնց միջոցով հնարավոր է այս կամ այն կերպ օրինական կամ ոչ օրինական միջամտել մարդու կյանքին և այլ իրավունքներին, և որոնց կիրառման ծավալները գնալով մեծանում են, մյուս կողմից՝ անձնական տվյալների մշակման սկզբունքները պատշաճ արտացոլված չեն աձնական տվյալների մշակում նախատեսող իրավական ակտերում (հետեւաբար նաև այդ օրենքների կիրառման պրակտիկայում), բարձր է անիրազեկվածությունը և չիմացությունը, անձնական տվյալները շատ դեպքերում մշակվում են իներցիայով, «այնքանով, որքանով»՝ առանց պատշաճ ուշադրության, այդ թվում՝ խոսքը ինչպես օրենքներով, այնպես էլ հենց մարդկանց կողմից սեփական տվյալների օգտագործմանն է վերաբերում: Ընդ որում, իրազեկման և գիտելիքների պակասի խնդիրը անդրադառնում է ոչ միայն մասնավոր կյանքում մարդու անձնական տվյալների պաշտպանության հմտությունների բացակայությանը, այլ նաև անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ պետական մարմիններում անձնական տվյալների մշակման հետ առնչվող անձանց իրազեկման և գիտելիքների բարձրացմանը: Այդուհանդերձ, անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմինն ունի սահմանափակ ռեսուրսներ (մարդկային, ֆինանսական, տեխնիկական): Վերոնշյալ խնդիրն առավել ցայտուն է երևում անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի կողմից իրականացվող հետևյալ գործառույթում. այսպես անձնական տվյալների պաշտպանության իրավունքի վերաբերյալ մարդկանց և տվյալներ մշակողների գիտելիքների և իրազեկման բարձրացման նպատակով 2020 թվականի ընթացքում տարբեր կազմակերպությունների և գերատեսչությունների հրավերով, ինչպես նաև իր նախաձեռնությամբ իրականացրել է 27 ուսուցում, ընդ որում 26-ը շուրջ 1 650 հոգու համար, որից 600 քրեակատարողական ծառայության աշխատակիցներ, 500 սոցիալական աշխատողներ, 400 բուժաշխատող, 49 պետական աշխատակից, 44 լրագրող, 32 ուսանող, կրթական հաստատության 25 աշխատակից, և ևս 1 ուսուցում՝ 70.000 հետևորդ ունեցող ֆեյսբուքյան խմբում: Ավելի քան 1130 հոգու համար շուրջ երեք տասնյակ ուսուցում իրականացվել է նաև 2019 թվականին: Կամ, անձնական տվյալների պաշտպանության ոլորտում հասարակության լայն շերտերին առնչվող և անհանգստացնող խնդիրների լուծման տարբերակների մասին մարդկանց իրազեկելու և անձնական տվյալների պաշտպանության իրավունքի խախտումները կանխելու նպատակով անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմինը մշակել և հրապարակել է տասնյակից ավելի ուղեցույցներ (փափուկ իրավունքի ձևավորում), դրանցից մեկը նաև հրատարակվել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող ‹‹Բազմաոլորտային ազգային հարթակի ուժեղացում՝ ուղղված երեխաների հանդեպ բռնությանը վերջ դնելու գործողությունների պլանավորմանը, իրագործմանը և գնահատմանը›› ծրագրի շրջանակում: Չնայած վերոնշյալին՝ ուսուցումների կամ

	հանրային քարոզարշավի համար առանձնացված ֆինանսական միջոցներ առհասարակ նախատեսված չեն անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի բյուջեով, որը ներառում է միայն Անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի աշխատակիցների (քաղաքացիական ծառայողներ) վարձատրությունը, կամ Անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմինը չունի ուսուցումների համար հարմար տարածք և այլն: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները. Անձնական տվյալների պաշտպանության մարտահրավերները բազմազան են և կարող են փոփոխվել, ուստի, անհրաժեշտ է պետական հոգածություն և ուշադրություն անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի կարողությունների նկատմամբ, և անհրաժեշտ է անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի կարողությունների հզորացումը ներառել նաև Կառավարության՝ 2021-2026 թվականների գործունեության ծրագրի կատարումն ապահովող միջոցառումներում որպես պարբերաբար իրականացվող միջոցառում, ինչպես նաև, չնայած վերոնշյալ մասնավոր օրինակին, նախատեսել որոշակի ֆինանսական ռեզերվ՝ իրավիճակային կազմակերպչական և տեխնիկական միջոցառումների իրականացման համար: Ընդ որում, ակնկալվում է ֆինանսական միջոցներն օգտագործել այնպիսի գործիքներ ստեղծելու կամ միջոցառումներ իրականացնելու համար, որոնք հնարավորինս երկարաժամկետ արդյունք կապահովեն: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը. Կապահովվի անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի գործառնական անկախությունը, ինչպես նաև անձնական տվյալների պաշտպանության իրականացման համար անհրաժեշտ պատշաճ գործիքակազմը և միջոցները:
15.	15. ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԵՎ ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՌԱՁՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ 15.1. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ՝ ՄԻՏՎԱԾ ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ՝ ՈՐՊԵՍ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆԸ ԵՎ ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆԸ 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է Պրոբացիայի ծառայության և պատիժ կատարող այլ մարմինների միջև առկա սոցիալական երաշխիքների պայմաններում դրսևորված տարբերակված մոտեցման միասնականացմամբ: Միջոցառման իրականացման նպատակն է օրենսդրական փոփոխությունների միջոցով դիտարկել Պրոբացիայի ծառայության կարգավիճակի փոփոխման և պրոբացիայի ծառայողների սոցիալական երաշխիքների համակարգի վերանայման (անկախության անհրաժեշտ և բավարար երաշխիքների տրամադրմամբ) հնարավորությունը, որով կբարձրացվի Պրոբացիայի ծառայության գործունեության արդյունավետությունը: Միջոցառումը բխում է 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՕ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի Իրավունք և արդարադատություն վերտառությամբ 5-րդ բաժնի Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի բարեփոխումներ վերտառությամբ 5.6-րդ գլխից: 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները. Ներկայումս պատիժ կատարող մարմիններն ունեն առանձնահատուկ կարգավիճակ և դրանից բխող սոցիալական երաշխիքների ավելի լայն հնարավորություն՝ հիմքում ունենալով պատժի կատարման առանձնահատկությունները, այդ թվում՝ դատապարտյալի հետ տարվող աշխատանքի բնույթը: Լինելով պատիժ կատարող մարմին՝ Արդարադատության նախարարության ենթակայությամբ գործող Պրոբացիայի ծառայությունը չունի այնպիսի կարգավիճակ և չի օգտվում այնպիսի սոցիալական երաշխիքներից, ինչպես պատիժ կատարող այլ մարմինները. Պրոբացիայի ծառայությունում իրականացվում է քաղաքացիական ծառայություն: Այսինքն՝ իր կարգավիճակով և առկա սոցիալական երաշխիքների պայմաններում տարբերակված մոտեցում է դրսևորված Պրոբացիայի ծառայության և պատիժ կատարող այլ մարմինների միջև: Վերոգրյալի համատեքստում հարկ է արձանագրել, որ Պրոբացիայի ծառայությունը ձևավորվել է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի (սույն կետում այսուհետ՝ ԱՊԿԲ) հենքի վրա, որը հանգեցրել է մի շարք խնդիրների: Մասնավորապես՝ ԱՊԿԲ-ից Պրոբացիայի ծառայության կազմում ընդգրկված աշխատակիցները և Պրոբացիայի ծառայությունում նոր ընդունվող աշխատակիցները հայտնվել են սոցիալական պաշտպանության տարբեր մակարդակներում. առաջինները, անցում կատարելով Պրոբացիայի ծառայություն՝ «Պրոբացիայի մասին» օրենքի 67-րդ հոդվածի համաձայն՝ պահպանել են ԱՊԿԲ-ում իրենց համար սահմանված աշխատավարձը, որը գրեթե երկու անգամ բարձր է նոր ընդունվողների աշխատավարձից: Աշխատանքի նույն ծավալի, որակավորման, նույն մակարդակի, ժամանակի առումով նույնական ծանրաբեռնվածության պարագայում նման տարբերակված մոտեցումն արդարացված չէ: Այս մասին արձանագրվել է նաև ՄԻՊ-ի զեկույցում: Դրան զուգահեռ, ԱՊԿԲ-ից Պրոբացիայի ծառայություն տեղափոխված աշխատակիցները սկզբնական պաշտոնից տարբերվող այլ պաշտոնի (անգամ առաջխաղացմամբ) նշանակվելու դեպքում կարող են

	կորցնել իրենց վերապահված սոցիալական երաշխիքների փաթեթը, որի պատճառով նման ծառայողների համար առաջխաղացում նախատեսող պաշտոնները գրավչություն չունեն: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները. Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է. 1) Պրոբացիայի ծառայությունը դիտել որպես հանրային ծառայության ինքնուրույն տեսակ. 2) տարբերակում չսահմանել պրոբացիայի ծառայողների միջև. 3) «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի առանձին աղյուսակով սահմանել պրոբացիայի ծառայողների աշխատավարձային դրույքաչափերը. 4) նախատեսել իրավակարգավորումներ պրոբացիայի ծառայությունում պաշտոնի նշանակելու պայմանների և պահանջների վերաբերյալ և ընդլայնել ծառայության հաստիքների քանակը. 5) սահմանել պրոբացիայի ծառայողներին շնորհվող կոչումները, կոչումների շնորհման ժամկետները, պրոբացիայի ծառայությունում պաշտոնի նշանակելու, ատեստավորման, հատուկ միջոցներ կիրառելու, խրախուսանքի և կարգապահական միջոցներ կիրառելու հետ կապված հարաբերությունները: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը. Պրոբացիայի ծառայության կարգավիճակի փոփոխությամբ միատեսակ մոտեցում կդրսևորվի պրոբացիայի ծառայողների նկատմամբ: Պրոբացիայի ծառայությունը կհամարվի հանրային ծառայության ինքնուրույն տեսակ՝ իր առանձնահատկություններով: Մասնավորապես՝ կսահմանվեն պրոբացիայի ծառայության անցնելու պայմանները, պահանջները, շնորհվող կոչումները և ժամկետները, խրախուսանքի միջոցները և կարգապահական տույժերը, պրոբացիայի ծառայությունից հեռացման հիմքերը և այլն: Առանձին աղյուսակով կսահմանվեն պրոբացիայի ծառայողների աշխատավարձերի դրույքաչափերը: Պրոբացիայի ծառայության կարգավիճակի փոփոխությունը կստեղծի անհրաժեշտ նախադրյալներ ոչ միայն պրոբացիայի ինստիտուտի արդյունավետության բարձրացման, այլ նաև պրոբացիայի համակարգում կոռուպցիայից զերծ մշակույթ ձևավորելու համար: 15.2. ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆԸ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐՈՎ ԶԻՆՈՒՄ 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը. ՀՀ կառավարության կողմից վերջին տարիներին վարած քաղաքականությունը միտված է միջազգային չափանիշներին համապատասխան քրեակատարողական համակարգի կայացմանը, պատժողական քաղաքականությունից վերականգնողական արդարադատությանը անցմանը, քրեական պատիժների ոլորտում վերականգնողական արդարադատության սկզբունքների արմատավորմանը: Հատկանշական է, որ կարևորելով վերականգնողական արդարադատության գաղափարախոսությունը՝ ՀՀ կառավարության գործող ծրագրում ընդգծվել է, որ Կառավարությունը պետք է շարունակի քայլեր ձեռնարկել պրոբացիայի ինստիտուտի զարգացման և կատարելագործման ուղղությամբ, և արդեն իսկ ընդունված Քրեական և Քրեական դատավարության օրենսգրքերի հենքով իրավական համակարգում ներդրված՝ ազատությունից զրկելուն այլընտրանք հանդիսացող նոր պատժատեսակների և խափանման միջոցների արդյունավետ կիրառման նպատակով Պրոբացիայի ծառայությունը զինվելու է էլեկտրոնային հսկողության համար անհրաժեշտ միջոցներով և ենթակառուցվածքներով: Միջոցառումը բխում է 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՕ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի Իրավունք և արդարադատություն վերտառությամբ 5-րդ բաժնի Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի բարեփոխումներ վերտառությամբ 5.6-րդ գլխից: 1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները. Քրեական դատավարության նոր օրենսգրքով (ուժի մեջ է մտնելու 2022 թվականի հուլիսի 1-ին) որպես այլընտրանքային խափանման միջոցներ նախատեսված են տնային կալանքը և վարչական հսկողությունը: Քրեական նոր օրենսգիրքը նախատեսում է ազատազրկմանն այլընտրանք հանդիսացող նոր պատժատեսակ, որը ազատության սահմանափակումն է (վերջինիս մասով կարգավորումներն ուժի մեջ են մտնելու 2023 թվականի հուլիսի 1-ից): Այս պատժատեսակը դատապարտյալին առանց հասարակությունից մեկուսացնելու տնային պայմաններում հսկողության տակ պահելու հետ կապված այլընտրանքային պատիժ է, որը կարող է կիրառվել օրենքով նախատեսված որոշակի հանցագործությունների համար քրեական պատասխանատվության ենթարկվող անձանց նկատմամբ: Տվյալ պատժատեսակին դատապարտվողները չեն կտրվում, օրինակ ուսումնառությունից, սակայն նրանց նկատմամբ կարող են կիրառվել օրենքով նախատեսված որոշակի սահմանափակումներ: Մասնավորապես՝ նրանց կարող է արգելվել որոշակի ժամերի բացակայել տնից, հաճախել տարբեր հաստատություններ (ակումբներ, ժամանցային այլ վայրեր և այլն): Թե՛ նշված խափանման միջոցները, թե՛ նշված նոր պատժատեսակն օբյեկտիվորեն հնարավոր է կիրառել էլեկտրոնային հսկողության միջոցների օգնությամբ, որոնք ամրացվում են ազատազրկված անձի կամ ձեռքին, կամ ոտքին: Էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառմամբ ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայությունը, որի վրա դրվելու է

	տնային կալանքի, վարչական հսկողության և ազատության սահմանափակման կատարումը, կարողանալու է հսկել անձի տեղաշարժը և խախտման դեպքում անմիջապես արձանագրել: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները. Հարկ է ընդգծել, որ էլեկտրոնային հսկողության համակարգի ներդնումը պայմանավորված է ինչպես վերականգնողական արդարադատության սկզբունքների արմատավորմամբ, այնպես էլ պետության կողմից ֆինանսական համապատասխան միջոցների տնտեսմամբ: Այս առումով հարկ է նշել, որ ներկայում պետությունն ազատությունից զրկված մեկ անձին քրեակատարողական հիմնարկում պահելու համար ծախսում է շուրջ 13.000 ՀՀ դրամ, իսկ էլեկտրոնային հսկողության միջոցների փաստացի կիրառմամբ պետության բյուջեում կարձանագրվի ծախսերի նվազում՝ հաշվի առնելով այն, որ էլեկտրոնային հսկողությունն ապահովող կազմակերպությունների կողմից ներկայացված գնային առաջարկները (1 էլ. միջոցը 2000-3000 դրամի սահմաններում է եղել) գրեթե 4 անգամ պակաս են քրեակատարողական հիմնարկում ազատությունից զրկված մեկ անձի պահման համար պետության ծախսած միջոցներից: Նկատի ունենալով նշվածը՝ էլեկտրոնային հսկողության միջոցների ձեռքբերման ուղղությամբ ակտիվ քայլեր են տարվել: Այս պահի դրությամբ ԵՄ բյուջետային աջակցության շրջանակներում հատկացված դրամաշնորհի շրջանակներում հնարավոր է դարձել ապահովել ֆինանսական անհրաժեշտ հատկացումը: Այդուհանդերձ, պետք է նկատի ունենալ, որ 2022 թվականին պետք է իրականացվեն էլեկտրոնային հսկողության միջոցների համալրման աշխատանքներ՝ ապահովելով էլեկտրոնային հսկողության միջոցների ողջամիտ քանակ: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը. Էլեկտրոնային հսկողության համակարգի ներդրմամբ կստեղծվեն նախադրյալներ ազատազրկմանն այլընտրանք համարվող խափանման միջոցների և պատիժների կիրառման համար՝ հնարավորություն տալով անձին վերահսկել հասարակությունից չմեկուսացնելու պայմաններում: 15.3. E-PROBATION ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾԱՐԿՈՒՄ 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը. Նորարարական տեխնոլոգիաների զարգացման միտումներին համահունչ՝ անհրաժեշտ է Պրոբացիայի ծառայության գործունեության արդյունավետությունը բարձրացնելու, փաստաթղթաշրջանառությունը կրճատելու, արդյունավետ, թափանցիկ և հաշվետու կառավարում ապահովելու նպատակով ծառայություններում ներդնել e-probation էլեկտրոնային կառավարման համակարգը: Նշված միջոցառման իրականացումը բխում է արդեն իսկ ընդունված քրեական և քրեական դատավարության օրենսգրքերից, ինչպես նաև 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՕ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի Իրավունք և արդարադատություն վերտառությամբ 5-րդ բաժնի Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի բարեփոխումներ վերտառությամբ 5.6-րդ գլխից: 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները. ՀՀ արդարադատության նախարարության և Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվող «Աջակցություն Հայաստանում պրոբացիայի ծառայության զարգացմանը» ծրագրի շրջանակներում ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայությունում e-probation էլեկտրոնային կառավարման համակարգի մշակման և ներդնման հարցերի վերաբերյալ իրականացվել է գնահատման առաքելություն: Այս համատեքստում հարկ է նշել, որ արդեն իսկ մշակվել և շահագրգիռ մարմիններին են ներկայացվել տեխնիկական բնութագրերը: Առաջիկայում կհայտարարվի մրցույթ՝ e-probation համակարգի ներդրման և տեխնիկական համապատասխան սարքավորումների ձեռքբերման նպատակով: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները. E-probation էլեկտրոնային կառավարման համակարգը հնարավորություն կտա թվայնացնել պրոբացիայի շահառուների հետ տարվող ցանկացած աշխատանքի արդյունքները: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը. E-probation էլեկտրոնային կառավարման համակարգի ներդնման արդյունքում հնարավոր կլինի Պրոբացիայի ծառայության գործունեությունը դարձնել առավել արդյունավետ, թափանցիկ և հաշվետու, ինչպես նաև ազատվել ավելորդ փաստաթղթաշրջանառությունից: 15.4. ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը. Անհրաժեշտ է բարելավել քրեակատարողական հիմնարկների պահման պայմանները: Միջոցառման իրականացման նպատակը ազատությունից զրկված անձանց համար արժանապատիվ պահման պայմանների, իսկ քրեակատարողական ծառայողների համար՝ աշխատանքային կենսապայմանների ապահովումն է:

Միջոցառումը բխում է 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՕ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի Իրավունք և արդարադատություն վերտառությամբ 5-րդ բաժնի Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի բարեփոխումներ վերտառությամբ 5.6-րդ գլխից:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.

Առաջնային խնդիր է մի շարք քրեակատարողական հիմնարկներում շենքային պայմանների բարելավումը և նյութատեխնիկական հագեցվածության ապահովումը: Օրինակ՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» և «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկներում առկա շենքային պայմանները խիստ անբավարար են և ենթակա են փակման՝ տեխնիկական պարամետրերին չհամապատասխանելու պատճառով: Միաժամանակ, այլ քրեակատարողական հիմնարկներում ևս առկա է բարեկարգման աշխատանքներ իրականացնելու անհրաժեշտություն՝ ազատությունից զրկված անձանց պահման պատշաճ պայմաններ ապահովելու նպատակով: Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է իրականացնել համապատասխան ենթակառուցվածքային բարեփոխումներ, քանի որ շենք-շինություններն իրենց ներկա վիճակով անբավարար են: Տնտեսական արդյունավետության տեսանկյունից նպատակահարմար է նաև առաջիկա տարիներին շահագործման հանձնել նոր քրեակատարողական հիմնարկ: Նոր քրեակատարողական հիմնարկ կառուցելու համար անհրաժեշտ հիմնական բաղկացուցիչներն են՝ շենք-շինությունների կառուցումը, օդափոխության և ջեռուցման համակարգերի կառուցումը, անվտանգության և տեսահսկման համակարգերի կառուցումը, արտաքին պահպանության համակարգերի կառուցումը, բարեկարգման աշխատանքների իրականացումը, կահավորումը:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

Առաջարկվում է իրականացնել՝

- քրեակատարողական հիմնարկի և հիվանդանոցի կառուցում,
- քրեակատարողական հիմնարկների շենքային պայմանների բարելավում՝ վերակառուցումներ և կապիտալ վերանորոգում:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը.

Կապահովվեն անհրաժեշտ պահման պայմաններ ազատությունից զրկված անձանց համար, իսկ քրեակատարողական ծառայողների համար՝ անհրաժեշտ աշխատանքային կենսապայմաններ:

15.5. ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՍԱԴԻՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՎ ՎԵՐԱԶԻՆՈՒՄ, ՕՊԵՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՍՏԵՂԾՈՒՄ

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը.

Սույն միջոցառման նպատակները միտված են քրեակատարողական համակարգում կոռուպցիոն բոլոր երևույթների բացառմանը, քրեական ենթամշակույթի հաղթահարմանը: Այս համատեքստում քրեակատարողական հիմնարկներն անհրաժեշտ է վերազինել հսկողության միջոցներով: Հսկողության գործիքների արդիականացումն առաջին հերթին ենթադրում է քրեակատարողական հիմնարկները ժամանակակից տեսադիտման համակարգերով վերազինում, ինչը հնարավորություն կտա ստեղծել օպերատիվ կառավարման կենտրոն և առցանց ռեժիմով իրականացվող հսկողության պայմաններում բացառել քրեակատարողական հիմնարկներում տարածված այնպիսի կոռուպցիոն երևույթներ, ինչպիսիք են հավելյալ զբոսանքը, կրճատված կարանտինային ժամանակահատվածը, բաց խցերը, հանձնուքները չստուգելը և այլն: Այս տեսանկյունից Կառավարությունը վճռական է բացառելու համակարգում տարիներ շարունակ արմատացած կոռուպցիոն դրսևորումներն ու քրեական ենթամշակույթի գոյության համար «բարենպաստ պայմանները»:

Միջոցառումը բխում է 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՕ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի Իրավունք և արդարադատություն վերտառությամբ 5-րդ բաժնի Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի բարեփոխումներ վերտառությամբ 5.6-րդ գլխից:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.

Հատկանշական է, որ կոռուպցիոն միջավայրի ձևավորման և արմատավորման համար բարենպաստ պայմաններ է ստեղծում նաև քրեակատարողական հիմնարկներում առկա քրեական ենթամշակույթը: Հարկ է նշել, որ քրեակատարողական հիմնարկներում գոյություն ունեցող քրեական ենթամշակույթին անդրադարձ է կատարվել միջազգային հանրաճանաչ կառույցների կողմից: Այսպես, ԽԿԿ պատվիրակությունը 2015 թվականի այցի ժամանակ կրկին նկատել է, որ այցելած քրեակատարողական հիմնարկներում առկա էր ղեկավարության և անձնակազմի կողմից քրեակատարողական հիմնարկում ոչ ֆորմալ աստիճանակարգված հարաբերությունների վերին մակարդակում գտնվող՝ ընտրված թվով բանտարկյալներին (այսպես կոչված՝ «զոն նայողներին») լիազորություններ մասամբ պատվիրակելու և քրեակատարողական հիմնարկում պահվող անձանց նկատմամբ վերահսկողություն իրականացնելու (նրանց շարքերում կարգուկանոն պահպանելու) համար նրանց օգտագործելու ընդհանուր միտում: Իրենց լիազորությունն իրականացնելու համար «զոն նայողներին» ակնհայտորեն տրվել էին որոշ արտոնություններ, ինչպես օրինակ՝ հիմնարկում համեմատաբար ազատ տեղաշարժվելու և ցանկացած խուց մուտք գործելու հնարավորություն:

Քրեական ենթամշակույթին անդրադարձ է կատարել նաև ՄԱԿ-ի Խոշտանգումների կանխարգելման կոմիտեն Հայաստանի վերաբերյալ 2017 թվականի չորրորդ պարբերական զեկույցի շրջանակներում: Նշված կոմիտեն գտել է, որ ազատությունից զրկված անձանց միջև բռնության դեպքերի բարձր ցուցանիշը կարող է լինել քրեական ենթամշակույթի և ոչ ֆորմալ հիերարխիայի արդյունքը:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

Ուստի, պետք է ձեռնարկել այնպիսի քայլեր, որոնցով վերջ կդրվի քրեակատարողական հիմնարկներում կարգուկանոն պահպանելու նպատակով քրեակատարողական հիմնարկի ոչ ֆորմալ աստիճանակարգված հարաբերություններից օգտվելուն:

Ըստ այդմ, առաջարկվում է Քրեակատարողական ծառայությունում ստեղծել օպերատիվ կառավարման կենտրոն, որի տեխնիկական և ծրագրային լուծումները թույլ կտան պահպանել և վերլուծել քրեակատարողական հիմնարկներից ստացված տեղեկությունները, ինչպես նաև առցանց (online) իրականացնել վերահսկողություն՝ քրեակատարողական հիմնարկների՝ կոռուպցիոն հնարավոր ռիսկեր ունեցող գործունեության ոլորտների ու տեղամասերի նկատմամբ:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը.

Քրեակատարողական հիմնարկները ժամանակակից տեսահսկման միջոցներով վերազինումը և օպերատիվ կառավարման կենտրոնի ստեղծումը հնարավորություն կընձեռեն բացառել ոլորտում առկա կոռուպցիոն դրսևորումները:

15.6. ԱԶԱՏԱԶՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՄԲ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՎԱԼԻՆ ԵՎ ՈՐԱԿԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՂ, ՄԻՋԱԶԳԱՅՆՈՐԵՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀԵՌԱԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼԻ ՆԵՐԴՆՈՒՄ

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը.

Կառավարության գործող ծրագրում շեշտադրվել է, որ շարունակական քայլեր են ձեռնարկվելու ազատությունից զրկված անձանց հիմնական իրավունքների երաշխավորման, այդ թվում՝ արտաքին աշխարհի հետ կապի ամրապնդման, պահման պայմանների բարելավման, նրանց տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման որակի բարձրացման, վերասոցիալականացման գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով:

Այս ուղղության նպատակները միտված են քրեակատարողական հիմնարկներում բժշկական ծառայության արդիականացմանը: Քրեակատարողական համակարգում վերափոխման կարիք ունի նաև բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների համակարգը՝ հաշվի առնելով այն, որ առողջության պահպանման իրավունքը մարդու բնական իրավունքն է, և այն հատկապես կարևորվում է հասարակությունից մեկուսացման պայմաններում: Նշված խնդիրների լուծման կարևորությունից ելնելով՝ վերջին շրջանում Կառավարության քաղաքականության առանցքային ուղղություններից մեկն է բանտային առողջապահության ոլորտում բարեփոխումների իրականացումը: Քրեակատարողական հիմնարկներում գտնվող անձանց առողջության պահպանման և բժշկական օգնության իրավունքների երաշխավորումը շարունակվում է դիտարկվել որպես առաջնային և հրատապ լուծում պահանջող հարց:

Միջոցառումը բխում է 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՕ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի Իրավունք և արդարադատություն վերտառությամբ 5-րդ բաժնի Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի բարեփոխումներ վերտառությամբ 5.6-րդ գլխից:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.

2019 թվականի նոյեմբերի 1-ին մեկնարկել է ՀՀ արդարադատության նախարարության և Եվրոպայի խորհրդի կողմից համատեղ իրականացվող «Առողջապահության և մարդու իրավունքների պաշտպանության ամրապնդումը Հայաստանի քրեակատարողական հիմնարկներում» ծրագիրը, որի շրջանակներում նախատեսված են մի շարք թիրախային միջոցառումներ:

Ծրագրի շրջանակներում թիրախավորվել է նաև բանտային առողջապահության ոլորտում հեռաբժշկությունը ներդնելու հնարավորությունը:

Ներկայումս արդեն իսկ մշակվել են տեխնիկական պահանջները, որոնք համաձայնեցվում են շահագրգիռ մարմինների հետ: Առաջիկայում հեռաբժշկության ներդրմամբ հնարավոր կլինի մի կողմից բացառել բժշկական օգնության և սպասարկման ժամկետների ձգձգման ռիսկը, մյուս կողմից լրացնել տեղում մասնագետների հնարավոր պակասը:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

Ազատությունից զրկված անձանց մատուցվող բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման ձգձգման ռիսկը նվազեցնելու նպատակով նախատեսվում է ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում ներդնել հեռաբժշկության պիլոտային մոդել: Քրեակատարողական հիմնարկներում Հեռաբժշկությունն իրականացվելու է կալանավորված անձանց և դատապարտյալների անձնական և բժշկական տվյալների գաղտնիության ապահովման, ինչպես նաև բնակչության շրջանում մատուցվող բժշկական խորհրդատվությունների ծավալին և որակին համապատասխանող, միջազգայնորեն ճանաչված սկզբունքներին համապատասխան: Հեռաբժշկությունը ներդրվելու

	է՝ հաշվի առնելով պացիենտներին հավասարապես հասանելիության և իրազեկված համաձայնության սկզբունքները: Հեռաբժշկության ներդրման ընթացքում բժշկական տեղեկությունների գաղտնիությունն ապահովվելու է «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքով նախատեսված պահանջներով: Հեռաբժշկության հիմնական խնդիրներն են՝ 1) պացիենտների պատշաճ բժշկական օգնություն ստանալու իրավունքի իրացման արդիականացումը, 2) նեղ մասնագիտական խորհրդատվություն պահանջող հիվանդությունների ժամանակին ախտորոշման և բուժման արդյունավետության բարձրացումը, 3) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի ստորաբաժանումների միջև համագործակցության արդյունավետության բարձրացումը: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը. Բանտային առողջապահության ոլորտում հեռաբժշկության ներդրման արդյունքում հնարավոր կլինի բացառել բժշկական օգնության և սպասարկման ժամկետների ձգձգման ռիսկը, միևնույն ժամանակ լրացնել տեղում մասնագետների հնարավոր պակասը: 15.7. ԱՆԿԱԽ ՏԱՐԻՔԻՑ՝ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԻ ՆԱԽԱՏԵՍՈՒՄ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը. Վերասոցիալականացման միջոցառումների շարքում ուրույն նշանակություն ունի ազատությունից զրկված անձանց կրթության իրավունքի իրացմանն ուղղված քայլերի ձեռնարկումը, առաջին հերթին խոսքը վերաբերում է ազատությունից զրկված անձանց համար հանրակրթության իրականացման ապահովմանը: Ազատությունից զրկված անձանց կրթական իրավունքի իրացման ապահովման համատեքստում հարկ է իրականացնել ազատությունից զրկված անձանց կրթության կարիքների գնահատում, որի հիման վրա կմշակվեն կրթական նոր ծրագրեր, կամ կփոփոխվեն առկա ծրագրերը: Նշված քայլերի արդյունքների պահպանումը և նոր քայլերի ձեռնարկումը կնպաստեն վերասոցիալականացման գործընթացի արդյունավետության ապահովմանը: Միջոցառումը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1363-Ա որոշման 5.6-րդ կետից: 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները. Հարկ է նշել, որ 2015 թվականից մինչև 2019 թվականի սեպտեմբերի 1-ը՝ ազատազրկման ձևով պատիժ կրող և/կամ կալանավորված անչափահասների հանրակրթությունը չէր ապահովվել: Հատկանշական է, որ այս ոլորտի բարեփոխումների մեկնարկն արդեն իսկ տրվել է: Մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ը Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2018 թվականի մարտի 21-ի թիվ 250-Ա/2 և 251-Ա/2 հրամաններով ստացել է հանրակրթական ծրագրերով քրեակատարողական հիմնարկներում կրթական գործունեություն իրականացնելու լիցենզիաներ: Ավելին՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2018 թվականի հոկտեմբերի 19-ի N 1398-Ա/2 հրամանով հաստատվել է կազմակերպության կողմից մշակված ազատազրկման ձևով պատիժ կրող և/կամ կալանավորված անձանց հանրակրթական հատուկ հաստատության ուսումնական պլանները (այլընտրանքային/հեղինակային/կրթական ծրագիր): Ըստ այդմ՝ հանրակրթություն չստացած անձինք իրացնում են իրենց կրթական իրավունքը՝ հնարավորություն ունենալով սովորել հայոց լեզու, ռուսաց լեզու, օտար լեզու, ինֆորմատիկա, հայ գրականություն, աշխարհագրություն, համաշխարհային պատմություն, հայոց պատմություն, հայոց եկեղեցու պատմություն, հանրահաշիվ, երկրաչափություն, ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, ֆիզկուլտուրա, հասարակագիտություն առարկաները: Ներկայումս «Կրթության մասին» օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ մասով ամրագրված է, որ Հայաստանի Հանրապետությունում տասներկուամյա միջնակարգ կրթությունը պարտադիր է մինչև սովորողի 19 տարին լրանալը, եթե այդ իրավունքը չի իրացվել ավելի վաղ: Սակայն, դատապարտյալների շրջանում բազմաթիվ դեպքեր են արձանագրվում, որ դատապարտյալը, օրինակ՝ 35 տարեկան է, բայց ունի 2-րդ կամ 5-րդ դասարանի կրթություն: Ներկայումս քրեակատարողական հիմնարկներում գտնվող թերի միջնակարգ կրթություն ունեցող դատապարտյալների և կալանավորված անձանց թիվը շուրջ 300 է: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները. Առաջարկվում է օրենսդրական փոփոխության արդյունքում հանել հանրակրթության տարիքային ցենզը և ապահովել քրեակատարողական հիմնարկներում ազատազրկման ձևով պատիժ կրող և/կամ կալանավորված անձանց՝ ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածով ամրագրված կրթության իրավունքը: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը. Ներկայացված միջոցառմամբ ակնկալվում է ապահովել ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով և օրենսդրությամբ ամրագրված՝ ազատազրկման ձևով պատիժ կրող և/կամ կալանավորված անձանց կրթության իրավունքի իրացումը, որը կնպաստի վերջիններիս վերասոցիալականացմանը՝ ըստ այդմ նվազեցնելով կրկնահանցագործության ռիսկը:

15.8. ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ՊԱՀԱՆՋԱՐԿԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը.
Կրկնահանցագործության ռիսկերը նվազեցնելու, ազատությունից զրկված անձանց սոցիալական հաջող վերաինտեգրումն ապահովելու նպատակով կարևորվում է կրթական, այդ թվում՝ մասնագիտական հմտությունների ձեռքբերմանն ուղղված, պահանջարկի վրա հիմնված, թիրախավորված հնարավորությունների ապահովումը ՀՀ քրեակատարողական բոլոր հիմնարկներում: Ինչպես արդեն նշվել է, ազատությունից զրկված անձանց կրթական իրավունքի արդյունավետ իրականացումը երաշխավորելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել կարիքների գնահատում, որի արդյունքում հնարավոր կլինի մշակել և աստիճանաբար բոլոր քրեակատարողական հիմնարկներում ներդնել մասնագիտական կրթական նոր ծրագրեր:
Միջոցառումը բխում է 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՕ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի Իրավունք և արդարադատություն վերտառությամբ 5-րդ բաժնի Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի բարեփոխումներ վերտառությամբ 5.6-րդ գլխից:
1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.
Հարկ է նշել, որ ներկայումս «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից իրականացվում է ինչպես կրթական դասընթացների և հմտությունների ուսուցում, այնպես էլ գեղագիտական կրթություն, որն ուղղված է քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրող և պատժից ազատվելուն նախապատրաստվող անձանց, ինչպես նաև պրոբացիայի շահառուների վերասոցիալականացմանը: Բացի այդ, արդեն իսկ մշակվել են ազատությունից զրկված անձանց մասնագիտական կրթական կարիքի գնահատման մեթոդաբանությունն ու գործիքակազմը, որի կիրառումը հնարավորություն կտա մշակել պահանջարկի վրա հիմնված, նոր և արդյունավետ մասնագիտական կրթական ծրագրեր: Այս համատեքստում հարկ է նշել, որ անհրաժեշտ է նշված, թիրախավորված մասնագիտական ծրագրերը մշակել և աստիճանաբար ներդնել բոլոր քրեակատարողական հիմնարկներում՝ ապահովելով հավասար հնարավորություններ ազատությունից զրկված անձանց համար, ինչպես նաև երաշխավորելով վերասոցիալականացմանն ուղղված նշված միջոցառումների առավել արդյունավետությունը: Բնականաբար, գործընթացը ենթադրում է փուլային սկզբունքով ծրագրային ներդրում՝ հաշվի առնելով այն, որ Կառավարությունն ունի նաև քրեակատարողական հիմնարկների օպտիմալացման և նոր քրեակատարողական հիմնարկիր կառուցման պլան:
1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.
Առաջարկվում է մասնագիտական կրթության երաշխավորման տեսանկյունից գնահատել ազատությունից զրկված անձանց կարիքները, առկա պահանջարկը, դրա հիման վրա մշակել և առնվազն 5 քրեակատարողական հիմնարկներում ներդնել թիրախավորված մասնագիտական կրթական ծրագրեր:
2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը.
Միջոցառման իրականացմամբ ակնկալվում է, ըստ վերանայված լրակազմերի, առնվազն 5 քրեակատարողական հիմնարկներում ապահովել ազատությունից զրկված անձանց համար պահանջարկի վրա հիմնված մասնագիտական կրթական ծրագրերի իրականացումը՝ այդպիսով նպաստելով նշված անձանց սոցիալական հաջող վերաինտեգրմանը:

15.9. «ՀՀ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԵՎ ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՈԼՈՐՏԻ 2023-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2023-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը.
Հիմք ընդունելով քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի բարեփոխումների շարունակականության ապահովման անհրաժեշտությունը, ինչպես նաև կարևորելով ազատազրկման ավանդական գաղափարախոսությունից դեպի վերասոցիալականացման և վերականգնողական արդարադատության գաղափարախոսությանը անցման անհրաժեշտությունը՝ հարկ է մշակել և ընդունել «ՀՀ քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2023-2026 թվականների ռազմավարությունը և դրա իրականացման 2023-2026 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով կթիրախավորվեն ոլորտի կարևորագույն խնդիրները:
Միջոցառումը բխում է 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՕ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի Իրավունք և արդարադատություն վերտառությամբ 5-րդ բաժնի Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի բարեփոխումներ վերտառությամբ 5.6-րդ գլխից:
1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.
Ներկայումս «ՀՀ քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023 թվականների ռազմավարությունը, դրա իրականացման 2019-2023 թվականների միջոցառումների ծրագիրը, ծրագրի ֆինանսական գնահատականը և ծրագրի կատարումը համակարգող խորհրդի ձևավորման և գործունեության կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ

	կառավարության որոշմամբ նախանշված միջոցառումների իրականացումը շարունակվում է, սակայն նշված ռազմավարության ժամկետն ավարտվում է 2023 թվականին, ուստի անհրաժեշտություն է առաջանում ոլորտի բարեփոխումների համակարգային օրենսդրական հետագա կարգավորման: Նշվածին զուգահեռ պետք է արձանագրել, որ նկատի ունենալով այն, որ տվյալ ռազմավարությունն ընդունվել է դեռևս 2019 թվականին, հաշվի առնելով դրանից հետո ոլորտային զարգացումները և հիմքում ունենալով Կառավարության 2021-2026 թվականների ծրագրի ժամկետները՝ նպատակահարմար է քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի նոր ռազմավարության համար որպես իրականացման ժամանակահատված վերցնել 2023-2026 թվականները, որոնք թույլ կտան նաև ապահովել տվյալ հատվածում Կառավարության ծրագրում նշված գործողությունների լիարժեք կատարումը և դրանք ներդաշնակ գործողությունը: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները. Առաջարկվում է քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի կարիքների գնահատման և գործող ռազմավարությամբ նախանշված ուղղություններով բարեփոխումների իրականացման շարունակականության ապահովման հիման վրա մշակել և ընդունել «ՀՀ քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2023-2026 թվականների ռազմավարությունը և դրա իրականացման 2023-2026 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Ըստ այդմ՝ փոփոխություններ կկատարվեն նաև «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական եւ պրոբացիայի ոլորտի 2019-2023 թվականների ռազմավարությունը, դրա իրականացման 2019-2023 թվականների միջոցառումների ծրագիրը, ծրագրի ֆինանսական գնահատականը և ծրագրի կատարումը համակարգող խորհրդի ձևավորման և գործունեության կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի N 1717-Լ որոշման մեջ՝ խուսափելով միջոցառումների կատարման համար նախատեսված ժամկետային հատումներից: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը. Նախագծի ընդունմամբ կապահովվի ռազմավարական ուղղությունների կայուն իրականացումը, ինչպես նաև ոլորտային տեսանելի և հետևողական զարգացումը:
16.	16. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ 16.1. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2023-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՈՒՄ, ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՇՐՋԱՆԱՌՈՒՄ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Կոռուպցիայի դեմ պայքարը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության առաջնային և կարևորագույն ուղղություններից: Սրա մասին է վկայում նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1332-Ն որոշումը (այսուհետ նաև՝ Հակակոռուպցիոն ռազմավարություն): Գործադրված ջանքերի շնորհիվ Կառավարությունը 2019-ից 2021 թվականներին Հակակոռուպցիոն ռազմավարության շրջանակներում գրանցել է էական հաջողություններ, մասնավորապես դրվել է հակակոռուպցիոն պայքարի ինստիտուցիոնալ համակարգի հիմքը, ներդրվել են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված կառուցակարգեր և իրականացվել են ոլորտային այլ բարեփոխումներ: Սույն միջոցառման իրականացումը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1363-Ա որոշման 5.5-րդ կետի իրականացումն ապահովելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի դեմ համակարգված և միասնական պայքարի քաղաքականություն սահմանելու անհրաժեշտությունից: Այս առումով անհրաժեշտ է ընդգծել, որ հակակոռուպցիոն ոլորտում առկա ձեռքբերումները էականորեն պայմանավորված են նաև այն հանգամանքով, որ բարեփոխումները իրականացվել են մեթոդական և համակարգային եղանակով: Այլ կերպ ասած, միայն ռազմավարական մոտեցման արդյունքում է հնարավոր եղել ապահովել համակարգային բարեփոխումները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ անհրաժեշտ է ապահովել հակակոռուպցիոն ոլորտում իրականացվող բարեփոխումների շարունակականությունը, այդ թվում Հակակոռուպցիոն գործող ռազմավարության շրջանակներում սահմանված ուղղություններով՝ հանրային լայն շրջանակների և շահագրգիռ մարմինների մասնակցությամբ մշակվելու է հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2023-2026 թվականների միջոցառումների ծրագիրը: 1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1332-Ն որոշումը ընդունվել է 2019 թվականի հոկտեմբերի 3-ին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հակակոռուպցիոն ռազմավարության գործողության ժամկետն ավարտվելու է 2022 թվականին՝ անհրաժեշտություն է առաջանում մշակել հակակոռուպցիոն նոր ռազմավարություն՝ 2023-2026 թվականների համար: 1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

	Հաշվի առնելով վերոգրյալը անհրաժեշտ է մշակել Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2023-2026 թվականների միջոցառումների ծրագիրը: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Հանրային քննարկումների, ռիսկերի գնահատման, ոլորտային հետազոտությունների, միջազգային գործընկերների հետ համագործակցության արդյունքում կընդունվի հակակոռուպցիոն նոր ռազմավարությունը և Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը կներկայացվի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2023-2026 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, որի ընդունմամբ կուրվագծվեն 2023-2026 թվականների հակակոռուպցիոն հիմնական ուղղությունները՝ հստակ միջոցառումներով: Փաստաթուղթը կսահմանի կոռուպցիայի դեմ պայքարում պետության հիմնական ռազմավարական ուղղությունները՝ ներառելով կոռուպցիոն խնդիրների վերհանումը և լուծումը, միջազգային պարտավորությունների իրականացմանն ուղղված քայլերը: Ռազմավարությունը կարտացոլի Կառավարության ծրագրում ընդգրկված կոռուպցիայի դեմ պայքարի հիմնական ուղղությունները: 16.2 ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ՇԱՀԱԳՐԳԻՌ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԿԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Սույն միջոցառման իրականացումը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1363-Ա որոշման 5.5-րդ կետի դրույթներից, որով նախատեսվում է պետական և տեղական մակարդակում կոռուպցիոն ռիսկերի համապարփակ գնահատման իրականացում և դրա հիման վրա միջոցառումների ծրագրերի մշակում: Միջոցառման շրջանակներում վարչական կոռուպցիայի հաղթահարման նպատակով կիրականացվեն ոլորտային կոռուպցիոն ռիսկերի վերհանման և դրանց նվազեցման, էլեկտրոնային ժողովրդավարության գործիքների ներդրման ու շարունակական կատարելագործմանն ուղղված գործողություններ: Ըստ այդմ՝ պետական կառավարման համակարգի տարբեր ոլորտներում, հաստատված հայեցակարգային ուղենիշների հիման վրա իրականացվելու են կոռուպցիոն ռիսկերի համապարփակ գնահատում և դրա հիման վրա մշակվելու են նշված ռիսկերի չեզոքացմանը ուղղված համապատասխան միջոցառումներ: Զուգահեռաբար, իրականացվող ծրագրերի արդյունավետությունը գնահատելու և, ըստ այդմ, ապացուցահեն հակակոռուպցիոն քաղաքականություն ունենալու նպատակով զարգացվելու են հակակոռուպցիոն ծրագրերի մշտադիտարկման մեխանիզմները: Հարկ է նշել, որ սույն միջոցառման իրականացումը բխում է Հակակոռուպցիոն ռազմավարության շարունակականությունն ապահովելու տրամաբանությունից՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հակակոռուպցիոն ռազմավարությանը համահունչ՝ հանրային կառավարման համակարգը կազմող մարմիններում, այդ թվում՝ տեղական ինքնակառավարման մարմիններում՝ արդեն իսկ տարվում են կոռուպցիոն ռիսկերի ուսումնասիրության և վերհանմանն ուղղված քայլեր: 1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Ներկայումս հանրային ծառայությունների մատուցման, ինչպես նաև պետական իշխանության մարմիններում կոռուպցիոն ռիսկերի վերհանման նպատակով տարվում են համապատասխան աշխատանքներ, սակայն անհրաժեշտ է սույն ոլորտում բարեփոխումներն իրականացնել հստակորեն սահմանված միջոցառումների ծրագրի շրջանակներում: 1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Վերոգրյալի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է մշակել և կառավարության քննարկմանը ներկայացնել կոռուպցիոն ռիսկերի գնահատման, վերլուծության և կառավարման հայեցակարգը, ինչպես նաև պետք է Կոռուպցիոն ռիսկերի գնահատման հիման վրա ոլորտային միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծերը: Նախագծերով պետք է հստակ սահմանվեն այն միջոցառումները, որոնք ուղենիշ կհանդիսանան տարբեր ոլորտներում կոռուպցիոն ռիսկերի հաղթահարման համար՝ հաշվի առնելով յուրաքանչյուր ոլորտի յուրահատկությունները, ինչպես նաև նախանշվեն կոռուպցիոն ռիսկերի գնահատման մեթոդաբանության, դրա կառավարման ուղղությունները՝ հակակոռուպցիոն ռազմավարությանը զուգընթաց օգտագործելով նաև գոյություն ունեցող միջազգային փորձը: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Սույն միջոցառման իրականացումով ակնկալվում է առանձնացնել կոռուպցիոն առավել ռիսկային ոլորտները և, ըստ այդմ, սահմանել հստակ գործողությունների ծրագիր՝ ուղղված նշված ոլորտներում կոռուպցիայի տարբեր դրսևորումների հաղթահարմանը:

16.3 «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՈՒՄ, ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՇՐՋԱՆԱՌՈՒՄ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

«Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի մշակումը և դրանով շահերի բախմանը, անհամատեղելիության պահանջների հստակեցմանն ուղղված կարգավորումների նախատեսումը պայմանավորված է գործող օրենսդրական կարգավորումների կատարելագործման անհրաժեշտությամբ: Նախագծով նախատեսվելու են առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի ունեցած բաժնեմասի հավատարմագրային կառավարման հանձնելու շրջանակներում հավատարմագրային կառավարիչների և պաշտոնատար անձ հանդիսացող հավատարմագրային կառավարման հիմնադիրների միջև փոխկապակցվածությունը բացառող կարգավորումներ, հավատարմագրային կառավարչի համար սահմանվելու են որոշակի պահանջներ և այլն: Բացի այդ նախագծով նախատեսվելու են շահերի բախման լրացուցիչ նորմեր՝ հանրային ծառայողների համար նախատեսելով ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հստակ սահմանափակումներ՝ ամրագրելով իրատեսական, արդյունավետ և թափանցիկ մեխանիզմներ: Սույն միջոցառումը ընդհանուր առմամբ նպատակ է հետապնդում հանրային ծառայության ոլորտում սահմանել այնպիսի կարգավորումներ, որոնք կնվազեցնեն հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի հանրային և մասնավոր շահերի միջև հնարավոր հակասությունները, ինչն իր հերթին կնպաստի հանրային ծառայության ոլորտի բարելավմանը:

1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Ներկայումս հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի շահերի բախման և անհամատեղելիության պահանջների վերաբերյալ կարգավորումները սահմանված են 2018 թվականի մարտի 23-ի «Հանրային ծառայության մասին» ՀՕ 206-Ն օրենքով: Սույն օրենքի 31-րդ հոդվածի կարգավորումների համաձայն՝ հավատարմագրային կառավարիչ կարող են հանդիսանալ ըստ էության բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձինք, առանց որևէ սահմանափակումների:

Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքով միայն հանրային ծառայողի կամ բարձրաստիճան պաշտոնատար անձի՝ առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում ունեցած բաժնեմասի հավատարմագրային կառավարումն իրականացնող սուբյեկտների նկատմամբ չեն տարածվում Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների վերաբերյալ կարգավորումները:

Ի հավելումն վերոգրյալի՝ հարկ է նշել, որ չնայած շահերի բախման վերաբերյալ կանոնակարգումներ սահմանող իրավական ակտերը պարունակում են շահերի բախումը կանխարգելող, շահերի բախման իրավիճակները կարգավորող նորմեր, սակայն դրանց ձևակերպումները ոչ միշտ են հստակ և նույնական, ինչը խոչընդոտում է շահերի բախման միօրինակ ընկալմանն ու հետագա կարգավորմանը և իրավակիրառ պրակտիկայում խոչընդոտում է պատասխանատվության միասնական մեխանիզմերի կիրառությանը:

1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի անհամատեղելիության պահանջների, շահերի բախման վերաբերյալ կարգավորումների հստակեցման նպատակով նախատեսվում է «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի մշակում և ներկայացում վարչապետի աշխատակազմ:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Սույն միջոցառման իրականացմամբ ակնկալվում է միջազգային փորձի հաշվառմամբ հստակեցնել անհամատեղելիության պահանջների, շահերի բախման վերաբերյալ կարգավորումներն այն հաշվառմամբ, որ իրավակիրառ պրակտիկայում ապահովվի սույն իրավահարաբերությունների միատեսակ ընկալումը և լրացվեն գործող իրավակարգավորումների բացերը:

16.4 «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ, ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՇՐՋԱՆԱՌՈՒՄ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Հակակոռուպցիոն պայքարի ոլորտում կարևոր պայմաններից է հանդիսանում հանրային ծառայությունում բարեվարքության համակարգի գործնականում կիրառությունը: Բարեվարքության համակարգը, ի թիվս այլ տարրերի, ընդգրկում է նաև պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման հետ կապված նվերներ ընդունելու արգելքը: Չնայած այն հանգամանքին, որ «Հանրային ծառայության մասին» գործող օրենքով դեռևս 2018 թվականին սահմանված էր, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնեական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների հաշվառման և հանձնման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ համապատասխան որոշումը դեռևս հաստատված չէ:
Սույն կետով նախատեսված օրենքների նախագծերի ընդունումը միտված է նվերների ինստիտուտի կատարելագործմանը, նվերներ ընդունելու արգելքի պահպանման համար պատասխանատու մարմին սահմանելուն, նվերների հաշվառման և հանձնման կարգի առնչությամբ անհրաժեշտ կարգավորումներ նախատեսելուն:
Միջոցառումը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1363-Ա որոշման 5.5-րդ կետից:
1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները
Ներկայումս հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնեական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների ինստիտուտը կարգավորվում է 2018 թվականի մարտի 23-ի «Հանրային ծառայության մասին» ՀՕ 206-Ն օրենքի 29-րդ հոդվածով: Սույն հոդվածի համաձայն, եթե հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից ստացված և օրենքով նախատեսված նվերն իր արժեքով գերազանցում է 60 000 Հայաստանի Հանրապետության դրամը, ապա այն համարվում է պետական կամ համայնքային սեփականություն և հաշվառվում է որպես այդպիսին: Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները Կառավարության սահմանած կարգով պարտավոր են այն հանձնել պետությանը կամ համայնքին: Միաժամանակ, Կոռուպցիայի դեմ պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) 2021 թվականի սեպտեմբերի 22-ին ընդունված չորրորդ փուլի երկրորդ համապատասխանության երկրորդ միջանկյալ զեկույցով արձանագրվել է, որ նվերներ ընդունելու արգելքին առնչվող կարգավորումները դեռևս բարելավման կարիք ունեն: Զեկույցով ընդգծվել է նաև նվերների հաշվառման և հանձնման կարգ ընդունելու անհրաժեշտությունը: Հարկ է նաև նշել, որ գործող օրենսդրությամբ սահմանված չէ նվերներ ընդունելու արգելքի պահպանման նկատմամբ հսկողություն իրականացնող մարմին: Ընդ որում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ բարեվարքության համակարգի այլ տարրերի պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն է, որը նաև ստուգում և վերլուծում է պաշտոնատար անձանց և վերջիններիս ընտանիքի անդամների հայտարարագրերը՝ առավել նպատակահարմար է նվերների կարգավորումների պահպանումը ևս վերապահել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին՝ միաժամանակ վերջինիս համար նախատեսելով նվերների հաշվառման և հանձնման կարգը սահմանելու իրավասություն: Սույն օրենսդրական կարգավորման շրջանակում անհրաժեշտ է դիտարկել նվերների ընդունման արգելքի, նվերներ հաշվառելու այնպիսի կարգավորումների սահմանում, որոնք կհամապատասխանեն Հայաստանի Հանրապետության՝ հակակոռուպցիոն ոլորտում ստանձնած միջազգային պարտավորություններին, կապահովեն նվերների հաշվառման միասնականությունը և նվերների հանձնման վերահսկելիությունը, կսահմանեն նվերների ռեեստրի գործարկման անհրաժեշտ ընթացակարգերը:
1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները
Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է մշակել և Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը ներկայացնել «Հանրային ծառայության մասին» և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերը, որոնցով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին կվերապահվի նվերների ընդունման արգելքի պահպանման նկատմամբ հսկողություն իրականացնելու, նվերների հաշվառման և հանձնման կարգը սահմանելու իրավասություններ, ԳՐԵԿՈ-ի պահանջներին համահունչ կվերանայվեն նվերներ ընդունելուն առնչվող դրույթները:
2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը
Սույն միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է, որ առավել համապարփակ ձևով կսահմանվի նվերներ ընդունելու արգելքը՝ բացառելով հնարավոր տարընկալումները և դրանք շրջանցելու հնարավորությունները, կապահովվի նվերների գրանցման միասնական էլեկտրոնային համակարգի ստեղծումը, գրանցման թափանցիկությունը և էականորեն կբարելավվի ոլորտի վերահսկելիությունը:

16.5 «ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՈՒՄ, ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՇՐՋԱՆԱՌՈՒՄ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը
«Ազդարարման համակարգի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերի ընդունումը պայմանավորված է ազդարարման գործող համակարգի կատարելագործման,

	ինչպես նաև միջազգային ստանձնած պարտավորությունների իրականացման անհրաժեշտությամբ: Նախագծերով առաջարկվելու են հետևյալ առանցքային լուծումները. նախատեսել կարգավորումներ, համաձայն որոնց՝ ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակին հասանելիություն կունենա նաև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը: Միաժամանակ կնախատեսվի, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն իր իրավասության շրջանակներում ապահովելու է միասնական էլեկտրոնային հարթակ մուտքագրված յուրաքանչյուր ազդարարման հաշվառումը, քննարկումը, իր իրավասությունների շրջանակներում միջոցների ձեռնարկումը և անհրաժեշտության դեպքում՝ վարչական իրավախախտման կամ վարչական վարույթի իրականացումը: Բացի այդ, հաշվի առնելով, որ պետական մարմինների կողմից իրականացվում են ներքին և արտաքին ազդարարման աշխատանքներ և դրանց արդյունքները չեն ամփոփվում՝ առաջարկվում է սահմանել իրավասու մարմին, որը կամփոփի և հարթակում կիրապարակի պետական մարմինների կողմից ստացված հաշվետվությունները: Հաշվետվությունը կարող է զետեղվել բաժիններով՝ ըստ ստացման աղբյուրի՝ ներքին կամ արտաքին: Միջոցառումը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1363-Ա որոշման 5.5-րդ կետից: 1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1332-Ն որոշմամբ (այսուհետ՝ Ռազմավարություն) սահմանվել է ազդարարման համակարգի կատարելագործման ու զարգացման նպատակով շարունակական աշխատանքների իրականացմանն ուղղված միջոցառում: Ներկայումս, «Ազդարարման համակարգի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ըստ օրենքի ընթացք են ստանում միայն հանցագործության հատկանիշներ պարունակող հաղորդումները: Մինչդեռ, Օրենքի համաձայն ազդարարման նպատակն է նաև նախատեսել շահերի բախման, էթիկայի կանոնների, անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, հայտարարագրման հետ կապված խախտումների վերաբերյալ հաղորդում տալու հնարավորությունը, որոնք կարող են պարունակել Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով սահմանված վարչական իրավախախտման հատկանիշներ կամ «Կոռուպցիայի կանխարգելման մասին» ՀՀ օրենքով սահմանված վարչական վարույթի հարուցման հիմքեր: Ստացվում է, որ անձը իրավասու մարմնին ներքին կամ արտաքին ազդարարման կամ հարթակի միջոցով կարող է ազդարարել նաև վարչական իրավախախտման հատկանիշներ կամ վարույթի հարուցման հիմքեր պարունակող դեպքերի վերաբերյալ, մինչդեռ նշված ազդարարումներին ընթացք տալու հնարավորությունը Օրենքով նախատեսված չէ: Միաժամանակ, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (այսուհետ՝ ՏՀԶԿ) Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի գնահատման հինգերորդ պիլոտային փուլի շրջանակներում Հայաստանի Հանրապետության մոնիթորինգային զեկույցով ևս անդրադարձ է կատարվել վերոգրյալ խնդիրներին և առաջարկվել է սահմանել համապատասխան կարգավորումներ: 1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Հաշվի առնելով վերոգրյալը, ազդարարման համակարգի կատարելագործման և միջազգային պարտավորությունների ապահովման նպատակով նախատեսվում է «Ազդարարման համակարգի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերի մշակում և ներկայացում վարչապետի աշխատակազմ: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է կատարելագործել ազդարարման գործող համակարգը՝ ապահովելով գործող օրենքի նպատակին և կարգավորման առարկային համահունչ կարգավորումներ և մեխանիզմներ: Նշվածով պայմանավորված հնարավորություն կստեղծվի ապահովել իրապես գործող ազդարարման համակարգ, որը կապահովի ոչ միայն հանցագործությունների վերաբերյալ հաղորդումների ուսումնասիրության պատշաճ ընթացակարգեր, այլ նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողներին օրենսդրությամբ ներկայացվող պահանջների խախտումների վերաբերյալ հաղորդումների ուսումնասիրություն և համապատասխան ներգործության միջոցների կիրառում:
17.	17. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻՑ ԵՎ ՀՈՎԱՆԱՎՈՐՉՈՒԹՅՈՒՆԻՑ ՁԵՐԾ ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Դեռևս 2013 թվականին մարդու իրավունքների պաշտպանի՝ արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ արտահերթ զեկույցով հանրային իշխանության օրակարգ մտավ դատական համակարգում լայնամասշտաբ կոռուպցիայի առկայության խնդիրը: Հետագա տարիներին տարբեր տեղական և միջազգային կազմակերպություններ

	շարունակաբար ընդգծել են այս խնդիրը և դրա դեմ պայքարելու անհրաժեշտությունը: «Կոռուպցիայի համաշխարհային բարոմետր 2017»-ի տվյալներով հարցվածների 41%-ը կարծում է, որ Հայաստանի դատավորների մեծամասնությունը կամ բոլորը կաշառք են վերցնում, իսկ 17%-ը կարծում է, որ միայն որոշ դատավորներ են կաշառք վերցնում: Անշուշտ, չի կարելի անտեսել այն զգալի առաջընթացը, որ դատական համակարգը գրանցել է վերջին տարիներին ինչպես կոռուպցիայի հաղթահարման, այնպես էլ արհեստավարժության բարձրացման հարցերում: Այնուամենայնիվ, հատկապես վերջին տարվա ընթացքում հասարակության լայն զանգվածների կողմից դատական համակարգի նկատմամբ բարձրաձայնված անվստահության պատճառներից մեկը կոռուպցիոն ռիսկերն են: Դատական համակարգում կոռուպցիայի հաղթահարումը սույն ռազմավարության բացարձակ առաջնահերթություններից է:Սույն միջոցառման իրականացումը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1363-Ա որոշման 5.3-րդ և 5.5-րդ կետերից: 1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Սույն ռազմավարության, ինչպես նաև Կառավարության ծրագրի բացարձակ առաջնահերթություններից է դատավորների բարեվարքության գնահատման արդյունավետ համակարգի ներդնումը՝ այդ թվում դատավորի գույքային դրության, գույքի օրինականության ստուգման մասով: Ընդ որում, բարեվարքության ստուգման կառուցակարգի սկզբունքային կետերն են՝ ա) բարեվարքության գնահատումը չպետք է իրականացվի ժամանակավոր գործիքակազմի միջոցով և չպետք է կրի ժամանակավոր բնույթ: Փոխարենը, գործընթացը կրելու է շարունակական բնույթ, և դատավորները մշտապես անցնելու են նման գնահատման միջով՝ վարքագծի կանոնի յուրաքանչյուր ենթադրյալ խախտման համար կարգապահական վարույթի շրջանակներում, բ) դատավորների բարեվարքության գնահատումն իրականացնելու համար ստեղծվելու է ոչ թե նոր՝ ad hoc մարմին, այլ այդ հարցի լուծման համար պատասխանատու է լինելու դատական համակարգի անկախության ապահովման սահմանադրական առաքելությամբ օժտված մարմինը՝ Բարձրագույն դատական խորհուրդը: 1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Սույն միջոցառման իրականացման շրջանակներում առաջարկվող լուծումներն են՝ ● Դատավորների և Բարձրագույն դատական խորհրդի անդամների բարեվարքության գնահատման համար անհրաժեշտ՝ դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջազգային չափանիշներին համապատասխան օրենսդրական հիմքերի մշակում: ● Դատավորների և Բարձրագույն դատական խորհրդի անդամների բարեվարքության գնահատումն իրականացնելու համար անհրաժեշտ կառուցակարգերի ներդնում: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Սույն միջոցառման իրականացման արդյունքում օրենսդրական ամբողջական կարգավորման կենթարկվի դատավորների բարեվարքության գնահատումը: Բացի այդ, դատավորների կարողությունների զարգացման և իրազեկվածության բարձրացման շրջանակներում նախատեսվում է իրականացնել 10 միջոցառում առնվազն 100 դատավորի համար:
18.	18. ՆՈՏԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը. Սույն միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է նոտարական համակարգի արդյունավետության բարձրացմամբ, որը միտված է կատարողական մակագրության ինստիտուտի մի շարք ընթացակարգային խնդիրների լուծմանն ու կատարելագործմանը, ինչպես նաև նոտարին կարգապահական պատասխանատվության ենթարկելու և նրա լիազորությունները դադարեցնելու ընթացակարգերի կատարելագործմանը, ինչպես նոտարների, այնպես էլ կողմերի շահերի արդյունավետ պաշտպանությանը, դատական վեճերի նվազեցմանը և դատական վեճերի դեպքում հավելյալ ապացույցների օգտագործման հնարավորության ապահովմանը: Նոտարական համակարգի արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է վերանայել նոտարին կարգապահական պատասխանատվության ենթարկելու և նրա լիազորությունները դադարեցնելու ընթացակարգերը, քանի որ օրենքով սահմանված հիմքերը և ընթացակարգերը հստակ չեն: Սույն միջոցառման իրականացումը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1363-Ա որոշման 6.2-րդ կետից: 1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Կատարողական մակագրության թերթի ինստիտուտի կիրառումը կարող է հանդիսանալ քաղաքացիական գործերով դատարանների ծանրաբեռնվածությունը նվազեցնելու արդյունավետ միջոց՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում քաղաքացիական գործերով առկա գերծանրաբեռնվածությունը պայմանավորված է, առաջին հերթին, գումարի բռնագանձման պահանջի վերաբերյալ գործերով: Այդուհանդերձ, կատարողական մակագրության թերթի ինստիտուտը դեռևս հնարավոր չէ գործնականում

	լայնորեն կիրառել՝ պայմանավորված այն հանգամանքով, որ մշակված և ընդունված չէ դրա կիրառման համար անհրաժեշտ գործիքակազմը: Նոտարական համակարգի արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է վերանայել նոտարին կարգապահական պատասխանատվության ենթարկելու և նրա լիազորությունները դադարեցնելու ընթացակարգերը, քանի որ օրենքով սահմանված հիմքերը և ընթացակարգերը հստակ չեն: 1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Սույն միջոցառման շրջանակներում առաջարկվող լուծումներն են՝ ● Նոտարիատի մասին օրենքում և այլ օրենսդրական ակտերում փոփոխությունների կատարում՝ բարձրացնելով կատարողական մակագրության թերթի ինստիտուտի արդյունավետությունը: ● Նոտարիատի մասին օրենքում փոփոխությունների կատարում՝ բարելավելով նոտարին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգը: ● Նոտարիատի մասին օրենքում փոփոխությունների կատարում՝ ապահովելով ինչպես նոտարների, այնպես էլ կողմերի շահերի արդյունավետ պաշտպանությունը, նվազեցնել դատական վեճերի հավանականությունը և ապահովել դատական վեճերի դեպքում հավելյալ ապացույցների օգտագործման հնարավորությունը: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Միջոցառման իրականացումը միտված է լինելու Կատարողական մակագրության ինստիտուտի կիրառման անհրաժեշտ ընթացակարգերի ներդրմանը, առկա ընթացակարգերի կատարելագործմանը, ինչպես նաև նոտարին կարգապահական պատասխանատվության ենթարկելու և նրա լիազորությունները դադարեցնելու ընթացակարգերի կատարելագործմանը: Նոտարական գործողությունների արդյունավետության բարձրացման շրջանակներում ակնկալվում է ապահովել ինչպես նոտարների, այնպես էլ կողմերի շահերի արդյունավետ պաշտպանությունը, նվազեցնել դատական վեճերի հավանականությունը և ապահովել դատական վեճերի դեպքում հավելյալ ապացույցների օգտագործման հնարավորությունը
19.	19. ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ՝ ՄԻՏՎԱԾ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆԸ, ՆԵՐԱՌՅԱԼ ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ԵՎ ԷԼԿԵՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը. Արդարադատության արդյունավետության կարևորագույն բաղադրիչներից է հարկադիր կատարման կայուն համակարգի առկայությունը: Հատկանշական է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի ընդունումից ի վեր Հայաստանի Հանրապետության իրավական համակարգը կրել է բազմաթիվ ինստիտուցիոնալ փոփոխություններ: Չնայած այն հանգամանքին, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 23 հուլիսի 2019 թվականի ՀՕ-126-Ն օրենքով կատարվեցին բազմաթիվ էական փոփոխություններ, սակայն, այնուամենայնիվ, հարկադիր կատարման ոլորտի օրենսդրությունը համակարգային վերանայման կարիք ունի: Սույն միջոցառման իրականացումը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1363-Ա որոշման 5.3-րդ կետից: 1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում (այսուհետ՝ Ծառայություն) 2009 թվականից սկսած ներդրված է և տարեցտարի արդիականացվում ու նոր մոդուլներով լրացվում է էլեկտրոնային վարույթների համակարգը, որը հնարավորություն է տալիս իրականացնել էլեկտրոնային վարույթը, համակարգի միջոցով իրականացնել կատարողական վարույթով ծանուցումներ, էլեկտրոնային հարցումներ, կիրառել արգելանքներ, կարճել և ավարտել կատարողական վարույթները, իրականացնել փոխանցումներ, կազմակերպել փաստաթղթաշրջանառության, արխիվի վարման գործառույթները: 2009 թվականից անընդմեջ արդիականացվել և համակարգչային ծրագրային փաթեթներին /մոդուլներին/ համակցվել են նոր մոդուլներ, մասնավորապես՝ ներդրվել են Ճանապարհային Ոստիկանության նոր ավելի արդիական և արագագործ պրոտոկոլի, ՔԿԱԳ էլեկտրոնային համակարգի ինտեգրման համար նոր ծրագրային փաթեթի, ՀՀ-ում գործող բոլոր բանկերի նոր արդիական մոդուլներ և Արխիվի մոդուլների գործող համակարգերի հետ ինտեգրման /համակցման/ ծրագրեր: Նշված համակարգերի միջոցով իրականացվում են հարուցված կատարողական վարույթներով հարցումներ, կիրառվում արգելանքներ, գեներացվում են հարկադիր կատարողների որոշումները, իրականացվում են էլեկտրոնային վճարումներ և կատարողական վարույթի հետ առնչվող այլ գործողություններ: Վերջին երկու տարիների ընթացքում Ծառայության ուժերով արդիականացվել են նաև Ծառայության պաշտոնական կայքէջը և հարկադիր էլեկտրոնային աճուրդի համակարգը: 2021 թվականին Ծառայությունում կներդրվեն «Ավտոմատ բռնագանձում», «Պարտապանի կաբինետ» և «Պահանջատիրոջ կաբինետ» էլեկտրոնային համակարգչային մոդուլները, որոնց տեխնիկական առաջադրանքը նախագծվել է, և ներկայումս ընթանում են ծրագրավորման աշխատանքներ: Վերը նշվածից բացի, Համաշխարհային բանկի հետ կատարված աշխատանքի արդյունքներով ներկայումս հայտարարվել է մրցույթ՝ Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի շրջանակներում շուրջ

	100 մլն դրամ արժողությամբ ծրագրային ապահովման ստեղծման աշխատանքների իրականացման վերաբերյալ: Հայտարարված մրցույթն ընթացքի մեջ է: Համապատասխան տեխնիկական առաջադրանքի հիման վրա մշակված ծրագրային ապահովումը Ծառայության կողմից ներկայումս շահագործվող սերվերի վրա տեղադրելը լինելու է անհնարին, ինչն իր հերթին լրջագույն խնդիրներ է առաջացնելու մրցույթում հաղթած կազմակերպության կողմից մշակված պրոդուկտը թեստավորելու և շահագործման հանձնելու աշխատանքների իրականացման տեսանկյունից: Հաշվի առնելով այն, որ Համակարգի մշակման և ներդրման աշխատանքները, ըստ մրցույթի պայմանների, նախատեսվում է իրականացնել 7 ամսվա ընթացքում՝ համապատասխան սերվերների ձեռքբերումն ու նախապատրաստումն օրհասական նշանակություն ունի ծրագրի բարեհաջող ավարտի, արդյունքների հանձնում-ընդունումը սահմանված կարգով ձևակերպելու և կապալառու կազմակերպության կողմից «Պատվիրատուի մեղքով հիմնավորված» կետանցները բացառելու տեսանկյունից: Հարկ է ավելացնել, որ վերը նշված ծրագրային ապահովման փաթեթների ներդրմանը զուգահեռ կտրուկ աճել է կատարողական վարույթների քանակը, մասնավորապես՝ 2021 թվականի առաջին հինգ ամիսների ընթացքում հարուցված կատարողական վարույթների քանակը կազմել է 2020 թվականին ընթացք տրված ընդհանուր կատարողական վարույթների ավելի քան 55%-ը, ինչն էականորեն ծանրաբեռնել է Ծառայությունում գործող էլեկտրոնային համակարգերի սպասարկումն ապահովող սերվերների ծանրաբեռնվածությունը: Չնայած այն հանգամանքին, որ վերը նշված համակարգչային ծրագրային ապահովումները նպաստել են կատարողական վարույթների որակի բարձրացմանը և հարկադիր կատարողի կողմից աշխատաժամանակի արդյունավետ օգտագործմանը, նշված փաստերն առաջացնում են Ծառայության սերվերային համակարգերի արդիականացման և փոփոխման հրատապ անհրաժեշտություն: Ծառայությունում գործում էին թվով 2 սերվերային հանգույցներ, առաջինը և հիմնական հանգույցը՝ ք. Երևանում, Ծառայության վարչական շենքում, իսկ երկրորդը՝ ք. Գյումրիում, Ծառայության Շիրակի մարզային բաժնի տարածքում՝ որպես պահուստային սերվերային հանգույց: Նշված սերվերային հանգույցները վերջին անգամ արդիականացվել են 2015-2016 թվականներին: 2020 թվականին Ծառայության սերվերային հանգույցում ծագած խնդիրների հետևանքով պահուստային սերվերային հանգույցը տեղափոխվել է Ծառայության վարչական շենք, և ներկայումս պահուստային սերվերային հանգույց գոյություն չունի: Հիմնական սերվերային հանգույցի որևէ բաղադրիչ շղթայի խափանումը ցանկացած պահի կարող է հանգեցնել սերվերներում պահվող և արխիվացվող տվյալների բազայի անվերադարձ կորստի: Բացի այդ, Ծառայության կողմից շահագործվող համակարգիչների զգալի մասը շատ հնացած է, և ելնելով տեխնիկական առանձնահատկություններից և հզորությունից համալրված է Windows XP օպերացիոն համակարգով, որը դեռևս 2014 թվականից հանված է սպասարկումից և աջակցումից, կամ Windows 7 օպերացիոն համակարգով, որն իր հերթին հանված է սպասարկումից և աջակցումից 2020 թվականի հունվարի 14-ից: Այս ամենի արդյունքում բարդություններ են առաջանում թե՛ հակավիրուսային համակարգերի տեղադրման և անվտանգության ապահովման համար, թե՛ նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ ժամանակակից ծրագրերի մշակման և ներդրման համար: 1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Սույն միջոցառման շրջանակներում առաջարկվող լուծումներն են՝ ● Ապահովել կատարողական վարույթի թվայնացումն ու էլեկտրոնային համակարգի ներդրումը, ● արդիականացնել Ծառայության ամբողջ սերվերային հանգույցը, ստեղծել անհրաժեշտ ենթակառուցվածքներ ● ստեղծել թվով 2 դատակենտրոն, ● փոխարինել և արդիականացնել բաժանարար կոմուտատորները, ● ձեռք բերել անխափան սնուցման սարքեր, պահուստային սերվերներ, արխիվացման համար ● ապահովել պահուստային սերվերներ ● վերապատրաստել սպասարկող անձնակազմին: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Սույն միջոցառման իրականացման շրջանակներում սահմանվելու են կատարողական վարույթների վերաբերյալ համապարփակ իրավակարգավորումները, ամրագրվելու են կատարողական ծախսերի տարբերակված դրսևորումները, վերանայվելու են կատարողական վարույթների կասեցման հիմքերը, ընդլայնվելու են կատարողական վարույթում էլեկտրոնային գործիքակազմերի կիրառման եղանակները և կրճատվելու են կատարողական վարույթի ժամկետները: Օրենսդրական մի շարք փոփոխությունների արդյուքնում ակնկալվում է վերացնել հարկադիր կատարման ծառայության ոլորտում առկա խնդիրները, հաղթահարել «Հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» օրենքում առկա բացերն ու անհստակությունները, բարձրացնել Հարկադիր կատարումն ապահովող ծառայության գործունեության արդյունավետությունը, ընդլայնել հարկադիր կատարողի սոցիալական երաշխիքների շրջանակը:
20.	20. ՁԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄ 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Զանգվածային լրատվության մասին օրենսդրության բարեփոխումը պայմանավորված է գործող օրենսդրությունը ոլորտի զարգացման արդի միտումներին համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ: Միջոցառման նպատակն է ավելի արդյունավետ դարձնել զանգվածային լրատվության միջոցների գործունեությունը, ապահովել հասարակությանը

	վերջիններիս կողմից տրամադրվող տեղեկատվության ճշգրտությունը, օբյեկտիվությունն ու բազմակողմանիությունը, բարձրացնել լրագրողների սոցիալական պատասխանատվությունը, նվազագույնի հասցնել զրպարտություն կամ վիրավորանք հանդիսացող տվյալների հրապարակումը, աջակցել լրագրողների պրոֆեսիոնալ էթիկայի, մասնագիտական ազնվության ձևավորմանը: Սույն միջոցառման իրականացումը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1363-Ա որոշման 5.2-րդ կետից: 1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները «Զանգվածային լրատվության մասին» գործող օրենքն ընդունվել է 2003 թվականին, որից հետո օրենքը բովանդակային էական փոփոխության չի ենթարկվել: Օրենքի ընդունումից հետո հասարակական կյանքում տեղի են ունեցել բազմաթիվ փոփոխություններ՝ պայմանավորված տեղեկատվական և հաղորդակցման զարգացմամբ, թվային մեդիայի ձևավորմամբ և լայն տարածմամբ, զանգվածային լրատվության ոլորտում տեղեկատվական տեխնոլոգիաների դերի և կիրառման աճող կարևորությամբ: Արդյունքում, գործող օրենքը չի պարունակում առկա իրականությանը համահունչ կարգավորումներ, չի ապահովում ոլորտի համապարփակ կարգավորումը: Միևնույն ժամանակ, զանգվածային լրատվության միջոցների կողմից իրադարձությունների օբյեկտիվ լուսաբանումը, անձանց՝ հավաստի և բազմակողմանի տեղեկատվություն ստանալու, մասնավոր կյանքի և արժանապատվության իրավունքների իրացման և պաշտպանության ապահովումը պահանջում են լրագրողական էթիկայի կանոնների սահմանման իրավական հիմքերի ձևավորում: Լրագրողական էթիկայի կանոնների գործնական իրականացումը պահանջում է նաև համապատասխան վերահսկողական գործիքների առկայություն: 1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Առաջարկվում է իրականացնել զանգավածային լրատվության ոլորտին վերաբերող միջազգային փորձի ուսումնասիրություն, ոլորտի ներկայացուցիչների հետ քննարկումների իրականացում, բարեփոխումների հայեցակարգային ուղղությունների որոշում և դրա հիման վրա զանգվածային լրատվտության մասին նոր օրենսդրության մշակում՝ ուղղված ոլորտի համապարփակ կարգավորմանը, լրագրողական էթիկայի կանոնների իրավական հիմքերի սահմանմանը և դրանց նկատմամբ վերահսկողության գործիքների ներդրմանը: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Միջոցառման իրականացման արդյունքում կապահովվի զանգվածային լրատվության ոլորտի համապարփակ կարգավորումը՝ զարգացման արդի միտումներին համապատասխան, կսահմանվեն լրագրողական էթիկայի կանոնների սահմանման իրավական հիմքերը, ինչպես նաև լրագրողական էթիկայի կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողական գործիքներ:
21.	21. ԻՐԱՎԱԿԱՆ ՓՈԽՕԳՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԱՐԳԱՑՈՒՄ EV ԽՈՐԱՑՈՒՄ 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Նկատի ունենալով, որ մի շարք պետությունների և Հայաստանի Հանրապետության միջև հանձնման, քրեական և քաղաքացիական գործերով իրավական փոխօգնության և դատապարտյալների փոխանցման ոլորտներին առնչվող միջազգային պայմանագրերի բացակայությունը կամ առկայության դեպքում իրավահարաբերությունների ոչ լիարժեք կարգավորումը՝ անհրաժեշտություն է առաջացել առանձին պետությունների հետ ոլորտը կարգավորող երկկողմ պայմանագերի կնքման, որը հնարավորություն կտա հանցավորության կանխարգելման գործում ապահովել երկու պետությունների միջև առավել արդյունավետ համագործակցությունը, ինչը կնպաստի քրեական և քաղաքացիական ոլորտում կողմերի համագործակցության արդյունավետության բարձրացմանը, երկու պետությունների միջև դատավարական գործողությունների կատարմանը, դատարանների որոշումների փոխադարձաբար ճանաչման և կատարման ոլորտում համագործակցության ամրապնդմանը: 1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Արդարադատության նախարարությունը հանդիսանում է կենտրոնական մարմին 70-ից ավելի երկրների հետ թե՛ երկկողմ, և թե՛ բազմակողմ միջազգային պայմանագրերի շրջանակներում: Բնականաբար, բազմակողմ միջազգային պայամանգրերով արդյունավետ համագործակցությունն իրականացվում է բազմաթիվ պետությունների հետ, սակայն պրակտիկայում առաջանում է անհրաժեշտություն առանձին պետության հետ սահմանել իրավական փոխօգնության կոնկրետ ոլորտում համագործակցության առավել նեղ կամ լայն շրջանակ: Իսկ ինչ վերաբերվում է միջազգային պայմանագրի բացակայության պայմաններում՝ իրավական փոխօգնության ոլորտում, չնայած պետությունների փոխադարձ համաձայնությամբ այն իրականացնելու հնարավորությանը, շատ կարևոր է երկու պետությունների միջև միջազգային պայմանագրի տեսքով իրավունքների և պարտականությունների ամրագրված լինելը: 1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Նախատեսվում է երկկողմ համագործակցության պայմանագրեր կնքել մի շարք պետությունների հետ, ինչպիսիք են, օրինակ, հանձնման ոլորտը կարգավորող երկկողմ պայմանագրեր Հայաստանի Հանրապետության և Արգենտինայի, Հնդկաստանի Հանրապետության հետ, քաղաքացիական և քրեական գործերով իրավական փոխօգնության ոլորտը կարգավորող պայմանագրեր՝ Արգենտինայի, Հնդկաստանի, Եգիպտոսի, իսկ դատապարտյալների փոխանցման

	ոլորտում՝ Իրաքի, Հնդկաստանի հետ: Նշյալի համատեքստում անհրաժեշտություն կառաջանա այդ միջազգային պայմանագրերից բխող ՀՀ օրենսդրության մեջ անհրաժեշտ փոփոխությունների և լրացումների նախաձեռնում: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Նշված ոլորտների կարգավորումը միջազգային պայմանագրերի շրջանակներում հնարավորություն կընձեռի առավել արդյունավետ իրականացնել մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունը Հայաստանի Հանրապետության և օտարերկրյալ պետությունների միջև:
22.	22. ԻՐԱՎԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Հայաստանի Հանրապետությունում քրեական վարույթներով իրավական օգնությունը ներկայում իրականացվում է ՀՀ միջազգային պայմանագրերի և 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 54, 54.1, 54.2, 54.3 գլուխներում ամրագրված դրույթների համաձայն: ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգիրքն արադարացիորեն չի կարգավորում խնդրո առարկա հարաբերությունները՝ դրանք դիտարկելով առանձին օրենքի կարգավորման առարկա: 1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքում վերը նշված գլուխների առկայությունը՝ այդուհանդերձ, դրանցում նշված կարգավորումները հաճախ թերի են, իրարամերժ, գործնականում կիրառելիս առաջացնում են բազմաթիվ խնդիրներ, իսկ առանձին դեպքերում՝ ընդհանրապես կարգավորումներ նախատեսված չեն: Վերոգրյալից հետևում է, որ քրեական վարույթներով իրավական օգնության ոլորտը, ոչ միայն բարելավման, այլ նաև ժամանակին համահունչ պատշաճ օրենսդրական կարգավորման կարիք ունի: 1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները «Քրեական վարույթներով իրավական օգնության մասին» օրենքի ընդունումը, գործուն նշանակություն ունի ոլորտի համակողմանի կարգավորման համար, քանի որ Օրենքի նախագծով առաջարկվում է համապարփակ կարգավորման ենթարկել պետությունների միջև քրեական վարույթներով միջազգային համագործակցությունը: Մասնավորապես, առանձին կարգավորման առարկա են դարձել հանձնումների, դատապարտյալների փոխանցման, օտարերկրյա պետության կամ Հայաստանի Հանրապետության տարածքում պայմանական դատապարտված կամ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատված անձանց հսկողություն իրականացնելու համար տեղափոխելու ընթացակարգերի, ինչպես նաև օտարերկրյա պետությունների դատարանների դատավճիռների ճանաչման (փոխարկման) և դրանց իրավական հետևանքների առնչությամբ իրավական հարաբերությունները: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը «Քրեական վարույթներով իրավական օգնության մասին» օրենքի ընդունման արդյունքում հնարավոր կլինի ներպետական օրենսդրությամբ առավել ամբողջական կարգավորել իրավական փոխօգնության ոլորտում ծագող հարաբերությունները, ստեղծել օտարերկրյա պետությունների հետ իրավական փոխօգնության իրականացման լիարժեք և գործուն մեխանիզմներ՝ իրականցնելով ոլորտում լայն շրջանակների համագործակցություն:

Արտաքին գործերի նախարարություն	
NN	ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

1-18	Միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (Հոդված 13), ՀՀ ԱԺ 2021թ. օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «1.1 Արտաքին քաղաքականություն», «1.2 Ղարաբաղյան հիմնախնդիր» ենթաբաժինների դրույթների, ՀՀ դիվանագիտական ծառայության մասին օրենքի, ՀՀ հյուպատոսական ծառայության մասին օրենքի, ՀՀ երկկողմ և բազմակողմ միջազգային պայմանագրերի, միջազգային հանձնառությունների իրականացման պահանջից: **Միջոցառումների իրականացման նպատակը** Միջոցառումների իրականացման նպատակներն են Հայաստանի Հանրապետության պետական շահերի պաշտպանությունը և ինքնիշխանության ամրապնդումը, անվտանգության և իրավունքների ապահովման միջազգային երաշխիքների ներքո ԼՂ բնակչության վերադարձի իրավունքի ամրագրում, , Հայաստանի շուրջ տարածաշրջանային և միջազգային բարենպաստ մթնոլորտի ձևավորումը, տարածաշրջանային խաղաղության հաստատումը, տարածաշրջանի ապաշրջափակումը և կայունության ապահովումը, միջազգային և տարածաշրջանային գործընթացներին Հայաստանի ակտիվ և նախաձեռնողական ներգրավվածության ապահովումը, համագործակցության զարգացումը երկկողմ և բազմակողմ ձևաչափերում՝ ի նպաստ Հայաստանի շահերի պաշտպանության, զարգացման նպաստավոր պայմանների ապահովման: ՀՀ արտաքին քաղաքականության նպատակները 2021-2026թթ. ժամանակահատվածի համար հետևյալն են՝ 1. Հայաստանի Հանրապետության պետական շահերի պաշտպանություն, տարածքային ամբողջականության, սահմանների անքակտելիության և ինքնիշխանության ամրապնդում, ԼՂ ժողովրդի՝ իր հայրենիքի անվտանգ և արժանապատիվ վերադարձի իրավունքի իրացման ուղղությամբ բարենպաստ պայմանների ձևավորում 2.Տարածաշրջանում խաղաղության հաստատմանը միտված մթնոլորտի ձևավորում, տարածաշրջանային խաղաղության խթանում, տարածաշրջանային կոմունիկացիաների ապաշրջափակում, «Խաղաղության խաչմերուկ» ծրագրի կյանքի կոչում, կայուն զարգացմանը միտված արտաքին միջավայրի ապահովում: 3. Մասնակցություն զանգվածային ոճրագործությունների և ցեղասպանությունների կանխարգելմանն ուղղված միջազգային հանրության ջանքերին: 4. ՌԴ հետ դաշնակցային հարաբերությունների և ռազմավարական գործընկերության խթանում: ՀԱՊԿ և ԵԱՏՄ շրջանակներում փոխշահավետ համագործակցություն:

	5. ՀՀ-ԱՄՆ բարեկամական գործընկերության զարգացում և խորացում, ժողովրդավարական բարեփոխումների, օրենքի գերակայության, կոռուպցիայի դեմ պայքարի հարցերում փոխգործակցության ընդլայնում, տնտեսական և քաղաքական ոլորտներում երկխոսության ակտիվացում: 6. Ֆրանսիայի Հանրապետության հետ առանձնաշնորհյալ հարաբերությունների ամրապնդում և զարգացում: 7. Եվրոպական երկրների և Եվրոպական միության հետ երկկողմ և բազմակողմ համագործակցության ընդլայնում՝ Հայաստան-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) ամբողջական կիրարկում: 8. Եվրոպայի խորհրդում ՀՀ ակտիվ ներգրավվածության և նախաձեռնողական քաղաքականության ապահովում: 9. Հարևան երկրների հետ բարեկամական հարաբերությունների ամրապնդում և զարգացում: 10. Չինաստանի, Հնդկաստանի, Ճապոնիայի, Կորեայի Հանրապետության, Հարավ-Արևելյան Ասիայի երկրների և Ավստրալիայի հետ բարեկամական և փոխշահավետ կապերի ամրապնդում, համագործակցային նոր հարաբերությունների կայացում, ասիական և խաղաղօվկիանոսյան այլ երկրների հետ համագործակցության զարգացում, այդ թվում՝ համագործակցության բազմակողմ ձևաչափերում: 11. Համագործակցության ընդլայնում Միջին Արևելքի և Աֆրիկայի երկրների հետ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում՝ ներառյալ հակամարտության գոտիներում բնակվող մեր հայրենակիցների անվտանգության ապահովումը: 12.Համագործակցության զարգացում ամերիկյան մայրցամաքի պետությունների հետ: 13. Ակտիվ աշխատանքներ ՄԱԿ շրջանակներում՝ կարևորելով կառույցի դերն ինչպես տարածաշրջանային խնդիրների հաղթահարման, այնպես էլ գլոբալ մարտահրավերների ձևակերպման և դրանց հաղթահարման շուրջ աշխատանքների կազմակերպման առումով: 14. Ակտիվ մասնակցություն ԵԱՀԿ շրջանակներում ընթացող գործընթացներին տարածաշրջանային անվտանգության և խաղաղության խնդիրների վերաբերյալ հայկական կողմի մոտեցումների վերաբերյալ իրազեկվածության բարձրացման նպատակով: 15. Անվտանգության ոլորտի միջազգային համագործակցություն, այդ թվում՝ ՆԱՏՕ-ի հետ քաղաքական երկխոսության շարունակականություն, երկկողմ համաձայնագրերի և ծրագրերի հետևողական իրականացում: 16. Օտարերկրյա պետություններում Հայաստանի քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների և շահերի պաշտպանություն: 17. Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացում: 18. Հանրային դիվանագիտություն՝ միջազգային ասպարեզում Հայաստանի դրական կերպարի ամրապնդման, Հայաստանի մշակութային և պատմական ժառանգության հանրահռչակման, հակահայկական քարոզչության հակազդման նպատակով:
19.	**Միջազգային առևտրատնտեսական և ֆինանսական կառույցների հետ համագործակցության խթանում, տնտեսական դիվանագիտության առաջմղում, ինչպես նաև արդյունքների ամփոփում, անհրաժեշտության դեպքում «Տնտեսական դիվանագիտության ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման մշակում:** **1.1 Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը բխում է** ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հավանության արժանացած Կառավարության 2021-2026թթ. ծրագրի «1.1 Արտաքին քաղաքականություն» ենթաբաժնի «Նոր մոտեցումներ դիվանագիտության մեջ» հատվածի դրույթներից: **1.2 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Տնտեսական դիվանագիտության մեխանիզմների լայն և համակարգված կիրառումը միտված է տնտեսական զարգացման շուրջ ջանքերի համախմբմանը, ծրագրերի և բարեփոխումների իրագործման համար բարենպաստ պայմանների ձևավորմանը, հասանելի գիտելիքի, կարողությունների և ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը: Ներկայումս ոլորտը կարգավորվում է ՀՀ կառավարության 03.08.2017թ. N 924-Ա որոշմամբ, որը սահմանում է ՀՀ արտաքին քաղաքականության տնտեսական բաղադրիչի զարգացման նպատակով երկրների թիրախավորման տնտեսական չափանիշները, օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների տնտեսական գործունեության կատարողականի գնահատման չափանիշները, երկրների թիրախավորման տնտեսական չափանիշների հիման վրա ընտրված թիրախային երկրների մեկնարկային ցանկը, որը, սակայն, համապարփակ լուծում չի առաջարկում առկա բոլոր խնդիրներին:

	1.3 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Հայաստանի ներդրումային գրավչության բարձրացման, ներդրումների և արտահանման խթանման նպատակով առաջարկվում է հետևյալ քայլերի համադրումը՝ -ՀՀ կառավարության կողմից տնտեսության բնագավառում իրականացվող բարեփոխումների և ՀՀ տնտեսական գրավչության վերաբերյալ պատշաճ իրազեկում օտարերկրյա պետություններում և համապատասխան միջազգային ոլորտային կառույցներում, ինչին կնպաստի ՀՀ տնտեսական հետաքրքրությունների շրջանակի դասակարգումը և քարտեզագրումը, - ՀՀ կառավարությանը պարբերական բնույթի տեղեկատվության տրամադրում օտարերկրյա պետություններում Հայաստանի տնտեսական զարգացման համար հետաքրքրություն ներկայացնող ուղղությունների վերաբերյալ, - Աշխատանքի համակարգվածության ապահովում պոտենցիալ ներդրողների հետ, ինչպես նաև օտարերկրյա գործարար և գիտական շրջանակների հետ, որոնք հետաքրքրություն են ներկայացնում նաև ժամանակակից տեխնոլոգիաների փոխանցման տեսանկյունից, -Նշյալ ուղղությամբ գործադրվող ջանքերում հայկական սփյուռքի հայտնի գործարարների և արհեստավարժ գործիչների համախմբում և վերջիններիս ներուժի ընդգրկում հիշյալ ծրագրերում՝ այդ թվում օտարերկրյա պետություններում գործող առևտրային ներկայացուցչությունների և ներդրումների խթանման ազգային կառույցների ներկայացուցիչների համապատասխան ուղղորդմամբ: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Տնտեսական դիվանագիտության մասով ռազմավարական մոտեցումների որդեգրման արդյունքում ակնկալվում է դիրքավորել Հայաստանը, որպես ներդրումների համար գրավիչ ուղղություն, ամրագրել Հայաստանի տեղը համաշխարհային ներդրումային քարտեզի վրա, բարձրացնել Հայաստանի ներդրումային հնարավորությունների մասին իրազեկվածությունը, ներկայացնել Հայաստանի մրցակցային առավելությունները, այդ թվում՝ մատնանշելով Հայաստանի աշխարհագրական տեղակայվածությամբ ընձեռվող հնարավորությունները դեպի խոշոր շուկաներ:

Արտակարգ իրավիճակների նախարարություն	
NN	**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ**
1	**1.1 «Փրկարար ծառայության մասին ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** «Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքը նոր խմբագրությամբ շարադրելու վերաբերյալ օրենսդրական փաթեթի նախագծի նախապատրաստումը բխում է Օրենքում առկա բացերը լրացնելու, առկա դրույթներն ու իրավակարգավորումները հստակեցնելու, բոլոր իրավահարաբերությունները Ներքին գործերի նախարարության ձևավորման համատեքստում դիտարկելու անհրաժեշտությունից: Հաշվի առնելով Ներքին գործերի նախարարության ձևավորումն, ինչպես նաև նախատեսված փոփոխությունների ծավալը, օրենքի նախագիծը կներկայացվի նոր խմբագրությամբ: **Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ** Միջոցառումը բխում է ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության ծրագրից: Դրույթը ներառված է ծրագրի «6. Ինստիտուցիոնալ զարգացում» գլխի «6.1 Ռազմավարական պլանավորում և քաղաքականությունների մշակում» բաժնում. «•Քաղաքականությունների մշակումը լինելու է փաստահենք, բավարար վերլուծական հիմնավորվածությամբ, կարգավորման ազդեցության գնահատման գործուն համակարգերով ու պրոֆեսիոնալ կարողություններով • Ներդրվելու է քաղաքականությունների արդյունքների գնահատման ու հանրային հաշվետվողականության առաջադեմ պրակտիկա, այդ թվում՝ հզորացվելու է ինստիտուցիոնալ և անհատական պատասխանատվության ինստիտուտը»: ***1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները***

	Ներկայումս որոշ իրավահարաբերություններ կանոնակարգվում են ոչ հստակ և դրանցով չի ապահովվում Փրկարար ծառայության գործունեության արդյունավետությունը, ինչը խոչընդոտում է ծառայության որակյալ և լիակատար իրականացմանը: ***1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները*** Նախագծի ընդունման արդյունքում կիրարկումն ապահովող միջոցառումների արդյունավետ իրականացման արդյունքում հնարավոր կլինի առավելագույնս կատարելագործել ոլորտի իրավակարգավորումները և դրանով իսկ լուծել առկա խնդիրները: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է լրացնել Փրկարար ծառայության լիազորությունները, հստակեցնել Փրկարար ծառայությունում ծառայության անցնող անձանց նկատմամբ սահմանված չափանիշները՝ հանելով մրցութային կարգով փրկարարական ծառայության անցնելը, ինչը խոչընդոտներ է առաջացնում ծառայության կազմակերպման գործընթացում, կարգավորել փրկարարական ծառայության բարձրագույն կոչումներ շնորհելու առանձնահատկությունները, կանոնակարգել փրկարարական ծառայողների նկատմամբ խրախուսանքների և տույժերի կիրառման կարգը, հստակեցնել և կարգավորել ծառայողների Փրկարարական ծառայության կադրերի ռեզերվում գրանցման հնարավորությունը, հնարավորություն ընձեռել ստեղծելու առաջխաղացման ռեզերվ, նախատեսել հավասարազոր ցածր և բարձր պաշտոնների նշանակման գործընթաց, հստակեցնել արձակուրդների տրամադրման գործընթացը, փրկարարական ծառայության անցնելու պայմանագրերի կնքման կարգն ու ժամկետները, փրկարարական ծառայողների բուժսպասարկման գործառույթները վերապահել Փրկարար ծառայության կազմում գործող բժշկական ստորաբաժանմանը:
2	**2.1 «Աղետների ռիսկի կառավարման ազգային ռազմավարությունը և դրա իրականացման գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը** **1. Միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Ներկայումս աղետների ռիսկի կառավարման ոլորտի քաղաքականությունն իրականացվում է ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 6-ի նիստի N 14 «Աղետների ռիսկի կառավարման ազգային ռազմավարությունը և դրա իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» արձանագրային որոշմամբ: Հաշվի առնելով, որ Սահմանադրական փոփոխություններով պայմանավորված Կառավարության արձանագրային որոշումներն այլևս իրավական ակտերի մաս չեն կազմում և 2021 թվականի նոյեմբերի 1-ից դադարեցվում է դրանց իրավազորությունը, նաև ռազմավարության մեջ անհրաժեշտ դրույթային փոփոխությունները՝ կապված 2020 թվականի 44-օրյա պատերազմի և կորոնավիրուսի համավարակի հետ, անհրաժեշտություն է առաջացել փոփոխություններ կատարել գործող աղետների ռիսկի կառավարման ազգային ռազմավարության մեջ: 1) Հայաստանի ազգաբնակչությունը, տնտեսությունը և շրջակա միջավայրը մեծապես խոցելի են բնական երևույթների հետևանքով առաջացող աղետների նկատմամբ՝ երաշտներ, վաղ գարնանային ցրտահարություններ, կարկտահարություններ, սելավներ, ջրհեղեղներ, ուժեղ քամիներ, քարաթափեր, սողանքներ և անտառային հրդեհներ: Աշխարհագրական դիրքով Հայաստանը գտնվում է բարձր սեյսմակտիվ գոտում, որտեղ պարբերաբար տեղի են ունենում ուժեղ երկրաշարժեր: Դրանց հետևանքով զոհվում և տուժում են բազմաթիվ մարդիկ, իսկ տնտեսությանը պատճառվում է հսկայական վնաս: Բարձր է ուրբանիզացիայի մակարդակը: Տեխնածին աղետները՝ քիմիապես վտանգավոր օբյեկտներ, օգտակար հանածոների հանքավայրերով պայմանավորված պոչամբարներներ, 50 և ավելի տարիներ շահագործվող ջրամբարներ, ևս զգալի ռիսկի աղբյուր են հանդիսանում: 2017-2020թթ.-ին գրանցվել է 51.576 արտակարգ դեպք, որի հետևանքով զոհվել է 4.120 և վիրավորվել՝ 192.385 մարդ (ներառված են Քովիդ-19-ի հետևանքով մահացածները և վարակվածները): Երկրի ամբողջ ազգաբնակչության մոտ 15%-ը ենթակա է այս վտանգին, իսկ պատճառած միջին տարեկան վնասը կազմում է մոտ 10 մլն ԱՄՆ դոլար: 1990-2016 թվականների կլիմայի փոփոխության մասին չորրորդ ազգային հաղորդագրությունը ցույց է տալիս, որ Հայաստանի Հանրապետությունում 1961-1990 թվականների միջինի նկատմամբ դիտվել է տարեկան ջերմաստիճանի աճ 1.23^{0}C-ով և տեղումների նվազում շուրջ 9%-ով: Հայաստանի Հանրապետության տարածքում կան գործող 20-ից ավելի քիմիական գործարաններ, որոնք օգտագործում են ամոնիակ, քլոր, քլորաթթու, ազոտաթթու և այլ վտանգավոր քիմիական նյութեր, 1500-ից ավելի կազմակերպություններ հատ-կանշվում են բարձր պայթյունավտանգությամբ և հրդեհավտանգությամբ: Ուրբանիզացիայի բարձր մակարդակի (մոտ 55-60%) պատճառով աղետների վտանգները, հատկապես սեյսմիկ վտանգը, սպառնում են քաղաքներին:

Ռազմավարության մշակման իրավական հիմքը կկարգավորվի նախագծային փուլում գտնվող «Աղետների ռիսկի կառավարման և բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի շրջանակներում:

Միջոցառման իրականացման իրավական հիմքն է «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետ:

Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ

Միջոցառումը բխում է ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության ծրագրից: Դրույթը ներառված է ծրագրի «6. Ինստիտուցիոնալ զարգացում» գլխի «6.1 Ռազմավարական պլանավորում և քաղաքականությունների մշակում» բաժնում.

«•Քաղաքականությունների մշակումը լինելու է փաստահենք, բավարար վերլուծական հիմնավորվածությամբ, կարգավորման ազդեցության գնահատման գործուն համակարգերով ու պրոֆեսիոնալ կարողություններով

• Ներդրվելու է քաղաքականությունների արդյունքների գնահատման ու հանրային հաշվետվողականության առաջադեմ պրակտիկա, այդ թվում՝ հզորացվելու է ինստիտուցիոնալ և անհատական պատասխանատվության ինստիտուտը»:

• Հայաստանի 2020-2050թթ. վերափոխման ռազմավարության 2-րդ մեգանպատակին և ռազմավարական ուղղություններին. **ունենալ պաշտպանված Հայաստան,** ապահովել լիարժեք պայմաններ՝ Հայաստանի կենսական շահերի պաշտպանության, արտաքին ուժերի ռազմական և հիբրիդային սպառնալիքների, տեղեկատվական և կիբեր հարձակումների, ինչպես նաև բնածին, տեխնածին և մարդածին աղետների ռիսկերը կանխարգելելու, պատճառած կորուստները նվազեցնելու և արագ վերականգնվելու համար»:

1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները

Հայաստանի Հանրապետության առջև ծառացած կարևորագույն խնդիրներից է պաշտպանել բնակչությունը, տնտեսությունը, շրջակա միջավայրը բնածին և տեխնածին վտանգավոր երևույթներից, ինչպես նաև բնապահպանական, տեխնոլոգիական և կենսաբանական վտանգներից: Աղետների ռիսկի կառավարումն (այսուհետ՝ ԱՌԿ) ազգային առաջնահերթություն է, որը պահանջում է հետևողական քաղաքականության ակտիվ և նպատակային իրականացում՝ պետության կայուն զարգացումն ապահովելու համար:

ԱՌԿ ոլորտի իրավական դաշտը կանոնակարգված է, սակայն այն ունի շարունակական կատարելագործման կարիք՝ ելնելով արդի մարտահրավերներից: Հայաստանի Հանրապետությունը, որպես ՄԱԿ-ի անդամ երկիր, 2015 թվականին միացել է Աղետների ռիսկի նվազեցման Սենդայի 2015-2030 թվականների գործողությունների ծրագրին (այսուհետ՝ Սենդայի ծրագիր), որը սահմանում է աղետների ռիսկի նվազեցման բնագավառում պետությունների կողմից անհրաժեշտ ոլորտային և միջոլորտային նպատակաուղղված գործողություններ՝ տեղական, ազգային, տարածաշրջանային և գլոբալ մակարդակներում: Սենդայի ծրագրի թիրախային խնդիրների սահմանմամբ անդամ պետություններին հորդորվում է մշակել և ընդունել ԱՌԿ ազգային ռազմավարություն, ինչը հնարավոր է դարձնում աղետների ռիսկի նվազեցմանը և կառավարմանն ուղղված միջազգային գործիքակազմի և միջոցառումների իրականացումը:

ՄԱԿ-ի անդամ պետությունների՝ մինչև 2030 թվականի օրակարգով կայուն զարգացում ապահովելու համար պահանջվում են ավելի նպատակային, թիրախավորված գործողություններ, որոնք կօգնեն սահմանել և վերլուծել ժամանակակից աշխարհի առջև ծառացած ռիսկերի լայն շրջանակը, համապատասխան միջոցներ ձեռնարկել առկա ռիսկերը մեղմելու և նոր ռիսկերի առաջացումը կանխելու նպատակով:

1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Ներկայացվող նախագծերով ամրագրվում են աղետների ռիսկի կառավարման միասնական համակարգի հիմնադրույթները, կանխարգելում–նվազեցում-արձագանքում–վերականգնում շղթայի իրականացման անընդհատությանն ուղղված քաղաքականությունը՝ աղետների ռիսկի միասնական գործուն համակարգ ունենալու նպատակով: Ռազմավարության իրականացման գործողությունների ծրագրով նախատեսված են աղետներից ապահովագրական համակարգի ներդնումը, աղետների ռիսկի կառավարման ոլորտի իրավական և կազմակերպական դաշտի կատարելագործումը, հաստատությունների մակարդակով աղետների ռիսկի կառավարման ոլորտի զարգացումը, մարդկային ռեսուրսների զարգացումը, աղետների ռիսկի կառավարմանն ուղղված մեթոդաբանական հենքի զարգացումը, աղետների ռիսկի կառավարման ոլորտում ներդրումային ծրագրերի իրականացման հնարավորությունների ընդլայնումը, աղետների ռիսկի կառավարման կարողությունների զարգացումը, ռազմավարության իրականացման մոնիթորինգային համակարգի ներդնումը:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է՝

1) աղետների ռիսկի հետևողական նվազեցում,
2) աղետների ռիսկի կառավարման համակարգի բոլոր մակարդակներում բնակչության պաշտպանության կազմակերպման գործընթացի արդյունավետության բարձրացում,
3) աղետների հետևանքով տուժած բնակչության քանակի, պատճառված նյութական վնասների նվազեցում,

	4) ոլորտը կարգավորող իրավական ակտերի, կարգերի և մեթոդաբանությունների համապատասխանեցումը միջազգային չափանիշներին, 5) արտակարգ իրավիճակներում բնակչության վաղ ազդարարման գործուն համակարգի առկայություն, 6) աղետների ռիսկի կառավարման միջոցառումների ներառում պետական նպատակային և համայնքային զարգացման ծրագրերում, պլաններում և բյուջեներում, 7) աղետների ռիսկի կառավարման ոլորտում մասնավոր ներդրումների ներգրավվում, 8) հետաղետային արագ վերականգման և հետագա վերակառուցման պլանների առկայություն, 9) կամավորական շարժման ընդլայնում՝ հրշեջ հենակետերի ստեղծման նպատակով: Աղետների ռիսկի կառավարման արդյունավետության բարձրացումն զգալիորեն կխթանի տնտեսության աճը, կնպաստի ներդրումների ակտիվության բարձրացմանը, ինչն էլ, իր հերթին, կբերի բնակչության կենսամակարդակի բարձրացմանը, պետության կողմից սոցիալական ծրագրերի իրականացման ընդլայնմանը:
3	**3.1 ՌՀՄԱԿ արձագանքող ուժերի բաղկացուցիչը կազմող ՓԾ ուժերի գույքի բարելավում (հատուկ տեխնիկայի և սարքավորումների տրամադրում): Կադրերի վերապատրաստում (որակավորման բարձրացում):** **3.2 ՌԴ հետ համատեղ բազմաֆունկցիոնալ անգարատիպ վարժահամալիրի կառուցում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ, ՌԴ և երրորդ երկրների տարածքում ծագած արտակարգ իրավիճակների արձագանքման նպատակով ՀՀ և ՌԴ կառավարությունների կողմից ստորագրված համաձայնագրով ստեղծված «Ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոն» միջկառավարական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ՌՀՄԱԿ կամ Կենտրոն) շարունակական զարգացման անհրաժեշտությամբ և նպատակ ունի ՀՀ ԱԻՆ ստորաբաժանումների ժամանակակից տեխնիկայով հագեցման և հրշեջ-փրկարարների մասնագիտական գիտելիքների և գործնական հմտությունների կատարելագործման միջոցով բարձրացնել արտակարգ իրավիճակների դեպքում բնակչության պաշտպանվածության մակարդակը: **Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ** Միջոցառումները բխում են ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության ծրագրից: Դրույթը ներառված է ծրագրի «1. Անվտանգություն և արտաքին քաղաքականություն» գլխի «Աղետներին դիմակայունության բարձրացումը» վերնագրում՝ «Անվտանգության ապահովման հիմնական գործոններից է լինելու աղետների ռիսկի կառավարման ճկուն ու գործուն համակարգը, որի ներդրման շնորհիվ կունենանք պաշտպանված բնակչություն, տնտեսություն, տարածքներ, ենթակառուցվածքներ, մշակութային ու բնապահպանական օբյեկտներ» և «1.1 Արտաքին քաղաքականություն» բաժնում. «• Հայաստան-Ռուսաստան երկկողմ համագործակցության օրակարգի բոլոր ուղղություններով, ներառյալ ռազմաքաղաքական, տնտեսական, էներգետիկ, տրանսպորտային, հումանիտար, մշակութային ոլորտները, Հայաստանը շարունակելու է ամրապնդել և ընդլայնել Ռուսաստանի հետ դաշնակցային հարաբերություններն ու ռազմավարական գործընկերությունը» Միջոցառումը բխում է նաև Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050 «02. Պաշտպանված Հայաստան» մեգանպատակից: Որպես թիրախային արդյունք ունենալու ենք «2.4 Բնածին, տեխնածին և մարդածին աղետներին դիմակայելու պատրաստվածության բարձրագույն մակարդակ»՝ ըստ «2.4.3 Համայնքների, ենթակառուցվածքների և շենք-շինությունների անվտանգության և բնակչության դիմակայունության մակարդակ»-ի (գնահատված մասնագիտական ցուցանիշներ)-ի և ըստ «2.4.2 Տեխնածին և մարդածին աղետների հետևանքով քաղաքացիական զոհերի թիվը» (ՀՀ քաղաքացիների ընդհանուր թվից, ինդեքսավորված ցուցանիշ)-ի: **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները** Ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնն ստեղծվել է ՌԴ և ՀՀ մասնային վճարների հիման վրա: Այն իր մեջ ներառում է ՀՀ և ՌԴ բյուջետային միջոցները, ինչպես նաև կողմերի պետությունների կողմից օգտագործման իրավունքով Կենտրոնին տրամադրված շարժական և անշարժ գույքը: Ըստ համաձայնագրի հայկական կողմը տրամադրել է համապատասխան տարածք, շենքեր, շինություններ, իրականացնում է Կենտրոնի սպասարկման և պահպանման ծախսերը: Ռուսական կողմը տրամադրում է արտակարգ իրավիճակների արձագանքման համար անհրաժեշտ հրշեջ-փրկարարական տեխնիկա, սարքավորումներ, գործիքներ և գույք: Ռուսական կողմը 2017թ. ձեռք է բերել ավելի, քան 16 մլն դոլար ընդհանուր արժեքով 42 անվանում հրշեջ և փրկարարական տեխնիկա, սարքավորումներ, գործիքներ տարբեր նշանակության գույք: 42 անվանումից 37 անվանում գույքը փոխանցվել է ԱԻՆ ստորաբաժանումներին: Կենտրոնի զարգացման գործընթացը կրում է շարունակական բնույթ և այժմ ռուսական կողմի հետ բանակցություններ են տարվում ԱԻՆ և ՌՀՄԱԿ կողմից ներկայացված հայտով միջոցառումների իրականացման ուղղությամբ: 2021թ. ՌՀՄԱԿ և նրա արձագանքող բաղկացուցիչը կազմող ՀՀ ԱԻՆ ստորաբաժնումների վերազինման նպատակով, ՀՀ ԱԻՆ մասնակցությամբ

	կազմվել և ՌԴ ԱԻՆ է ներկայացվել Կենտրոնի զարգացման 2022-2024 թթ. պլանը: Պլանում Հրշեջ-փրկարարական տեխնիկայի, սաքավորումների հետ միասին նախատեսվել են նաև մասնագետների պատրաստման որակի բարելավման նպատակով կառուցվելիք անգարատիպ բազմաֆունկցիոնալ վարժահամալիրի կահավորման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներ, սարքավորումներ, գույք, կենցաղային պարագաներ և այլն: Արդեն 2022 թ.-ից սպասվում է նշված ապրանքների ձեռք բերումը և ներկրումը Հայաստան: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Առկա խնդիրների լուծման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները. - ՌՀՄԱԿ տարածքում փրկարարների ուսումնական գործընթացը կազմակերպելու համար անհրաժեշտ է կառուցել բազմաֆունկցիոնալ ուսումնավարժական համալիր, որը հնարավորություն կտա ՌԴ ԱԻՆ ԲՈՒՀ-երի ուժերով իրականացվող ուսուցման և վերապատրաստման գործընթացում ներգրավել ավելի մեծ թվով մասնագետներ, Covid 19-ի պայմաններում առավելագույնս կրճատել ուսումնական գործուղումները ՌԴ, ինչպես նաև կազմակերպել ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի ուսանողների և վերապատրաստվողների տեսական և գործնական պարապմունքները: Ակտիվացնել համագործակցությունը Կարմիր Խաչի միջազգային կոմիտեի և Հայկական Կարմիր Խաչի ընկերության (դասընթացներ Առաջին օգնության և արդի միջազգային իրավական կարգավորումների վերաբերյալ), Քաղաքացիական պաշտպանության միջազգային կազմակերպության (տարածաշրջանային ուսումնական կենտրոնի ստեղծման ուղղությամբ) հետ: Ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնի 27.05.2021թ. Վարչության նիստի N 3 արձանագրության 4-րդ կետի կատարումն ապահովելու նպատակով Փոխվարչապետ Միհեր Գրիգորյանից գրություն է ուղղվել ՌԴ կառավարության նախագահի տեղակալ Ա. Լ. Օվերչուկին՝ կենտրոնի զարգացման ուղղությամբ համագործակցության վերաբերյալ, համագործակցության մեջ ներառվում է նաև անգարի կառուցումը: **2. Միջոցառումների իրականացումից ակնկալվող արդյունքը** Առկա խնդիրների լուծման դեպքում հայկական կողմը կատարած կլինի ՌԴ և ՀՀ կառավարությունների կողմից ստորագրված միջկառավարական համաձայնագրով ստանձնած իր պարտականությունները: ՀՀ ԱԻ նախարարությունը կունենա բարձրակարգ փրկարարներով համալրված, արտակարգ իրավիճակների արձագանքմանը պատրաստ ստորաբաժանումներ:
4	**4.1 Ազգային մոնիթորինգային դիտացանցի արդիականացում և ընդլայնում նոր GPS կայաններով:** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Հայաստանը գտնվում է սեյսմավտանգ գոտում և համարվում է տարածաշրջանի ամենավտանգավոր և բարձր սեյսմիկ ռիսկով բնութագրվող տարածքներից մեկը: Պարբերաբար տեղի է ունենում ուժեղ և ավերիչ երկրաշարժեր: Նախապատրաստվելով հնարավոր ուժեղ երկրաշարժի, կարելի է արմատապես նվազեցնել նրա ծանր հետևանքները: Դրանցից պաշտպանվելու լավագույն միջոցը սեյսմիկ վտանգի հուսալի մոնիթորինգի ապահովումն է, որն էլ Հայաստանի սեյսմիկ անվտանգության կարևորագույն հիմնախնդիրներից է (2002թ. հուլիսի 6-ի «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՕ-376-Ն ՀՀ օրենք, հոդվածներ՝ 5, 20): **Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ** Միջոցառումը նախատեսված է իրականացնել Ֆրանսիայի ատոմային և այլընտրանքային էներգիայի կոմիսարիատի (CEA) Շրջակա միջավայրի վերահսկողության և վերլուծության դեպարտամենտի (DASE) հետ համագործակցությամբ: Միջոցառումը բխում է ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության ծրագրից: Դրույթը ներառված է ծրագրի «1. Անվտանգություն և արտաքին քաղաքականություն» գլխի «1.1 Արտաքին քաղաքականություն» բաժնում. «•Կառավարությունը շարունակելու է ամրապնդել Ֆրանսիայի Հանրապետության հետ առանձնաշնորհյալ հարաբերությունները՝ ելնելով նաև Ֆրանսիայի ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրի կարգավիճակից: Քաղաքական ոլորտում առկա գործակցությանը զուգահեռ հստակ քայլեր են իրականացվելու Ֆրանսիայի հետ տնտեսական հարաբերությունների խորացման համար:»: «1. Անվտանգություն և արտաքին քաղաքականություն» գլխի «Աղետներին դիմակայունության բարձրացումը» վերնագրում՝ «Անվտանգության ապահովման հիմնական գործոններից է լինելու աղետների ռիսկի կառավարման ճկուն ու գործուն համակարգը, որի ներդրման շնորհիվ կունենանք պաշտպանված բնակչություն, տնտեսություն, տարածքներ, ենթակառուցվածքներ, մշակութային ու բնապահպանական օբյեկտներ: Կատարելով ներդրումներ աղետների ռիսկի կառավարման ոլորտում՝ Կառավարությունն ուղղակի կանխարգելելու և ազդելու է աղետների առաջացման պատճառների վրա՝ խուսափելով հետևանքների վերացման համար պահանջվող անհամեմատ ավելի մեծ ծախսերից»: Միջոցառումը բխում է նաև Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050 «02. Պաշտպանված Հայաստան» մեգանպատակից: Որպես թիրախային արդյունք ունենալու ենք «2.4 Բնածին, տեխնածին և մարդածին աղետներին դիմակայելու պատրաստվածության բարձրագույն մակարդակ»՝ ըստ «2.4.3 Համայնքների,

	ենթակառուցվածքների և շենք-շինությունների անվտանգության և բնակչության դիմակայունության մակարդակ» (գնահատված մասնագիտական ցուցանիշներ)-ի: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները** Այսօր մոնիթորինգի ապահովման հրատապ խնդիրներից է երկրաֆիզիկական բլոկի կայանների սարքերի փոխարինումը ժամանակակից սարքավորումներով, հիդրոերկրաքիմիական կայանների արդիականացումը, ԱԻՆ «ՍՊՏԾ» ՊՈԱԿ-ի հիդրոերկրաքիմիական լաբորատորիայի վերազինումը ժամանակակից սարքերով ու սարքավորումներով և ցանցի ընդլայնումը՝ GPS նորագույն սարքերով: Ներկա դրությամբ ազգային դիտացանցում գործում է 2 GPS կայան, նախատեսվում է ավելացնել ևս 4 GPS կայան: Արդիականացված ցանցերից և կապի ժամանակակից միջոցներով ստացվող տվյալները հանդիսանում են կարևոր բաղադրիչներ՝ օպերատիվ և հուսալի ընթացիկ սեյսմիկ վտանգի գնահատման համար: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Գործող կայանների վերազինումը նոր սարքավորումներով կնպաստի միջազգային ստանդարտներին համապատասխան դիտացանց ստեղծելուն: Հարկ է նշել, որ Ազգային սեյսմիկ մոնիթորինգի դիտացանցի մի շարք դիտակետերում (օրինակ՝ հիդրոերկրադինամիկական, սեյսմիկ, գրունտի ուժեղ շարժումների և այլն) սարքերը և սարքավորումներն արդեն արդիականացվել են միջազգային գործընկեր կազմակերպությունների աջակցությամբ: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Խնդրի իրականացումն զգալիորեն կբարձրացնի սեյսմիկ վտանգի մոնիթորինգի մակարդակը Հայաստանում և կնպաստի սեյսմիկ վտանգի գնահատման հուսալիության բարձրացմանը:
5	**5.1 Հայաստանի Հանրապետության պետական հատուկ նշանակության ջրամբարների պատվարների սեյսմիկ խոցելիության գնահատման նպատակով պլան-ժամանակացույցի հաստատում Արտակարգ իրավիճակների և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարների համատեղ հրամանով**
	5.2 «Սեյսմիկ պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության բնակչության ուսուցման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը Վարչապետի աշխատակազմ ներ-կայացնելը: **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Ծրագրի իրականացման անհրաժեշտությունը բխում է 2002թ. հուլիսի 6-ի «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՕ-376-Ն ՀՀ օրենքի 25-րդ հոդվածից: **Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ** Միջոցառումը բխում է ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության ծրագրից: Դրույթը ներառված է ծրագրի «1. Անվտանգություն և արտաքին քաղաքականություն» գլխի «Աղետներին դիմակայունության բարձրացումը.» բաժնում. «Աղետներին դիմակայելու տեսանկյունից բնակչության իրազեկվածության և պատրաստվածության մակարդակի բարձրացման նպատակով կրթական համակարգում պարբերաբար մշակվելու, թարմացվելու և ներդրվելու են աղետների ռիսկի կառավարման և բնակչության պաշտպանության հարցերով կրթական ծրագրեր»: Միջոցառումը բխում է նաև Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050 «02. Պաշտպանված Հայաստան» մեգանպատակից: Որպես թիրախային արդյունք ունենալու ենք «2.4 Բնածին, տեխնածին և մարդածին աղետներին դիմակայելու պատրաստվածության բարձրագույն մակարդակ»՝ ըստ «2.4.3 Համայնքների, ենթակառուցվածքների և շենք-շինությունների անվտանգության և բնակչության դիմակայունության մակարդակ» (գնահատված մասնագիտական ցուցանիշներ)-ի և ըստ «2.4.2 Տեխնածին և մարդածին աղետների հետևանքով քաղաքացիական զոհերի թիվը» (ՀՀ քաղաքացիների ընդհանուր թվից, ինդեքսավորված ցուցանիշ)-ի: **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները** Հայաստանի Հանրապետության բնակչության նախապատրաստման համար ուժեղ երկրաշարժի վերաբերյալ բազմակողմանի ուսուցողական ծրագրերի մշակման և ներդրման կարգի սահմանում, սեյսմիկ պաշտպանության բնագավառում շահագրգիռ մարմինների հետ իրականացվելիք ծրագրերի արդյունավետ կազմակերպում և իրականացման գործընթացում ներգրավված պետական կառույցների աշխատանքների համակարգում: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Ուսուցման գործընթացն իրականացվում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության ներգրավմամբ: Բնակչության և կառավարման մարմինների իրազեկության բարձրացում և սեյսմապաշտպանության վարքականոնների ուսուցում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

	Ուսուցանված և իրազեկված բնակչություն, իրավական ակտի ընդունման դեպքում ակնկալվում են սեյսմիկ պաշտպանության ոլորտում շահագրգիռ մարմինների համակարգված աշխատանքներ, սեյսմիկ ռիսկի նվազեցմանն առնչվող հարցերում պետական կառավարման հանրապետական, տարածքային ու տեղական ինքնակառավարման մարմինների և գիտական ու այլ կազմակերպությունների միջև համագործակցության զարգացում:
6	**6.1 Քաղաքացիական պաշտպանության համակարգի ղեկավար կազմի և մասնագետների վերապատրաստման ծրագրերի մշակում և ներդրում** **1. Միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Արտակարգ իրավիճակների և ռազմական դրության ժամանակ բնակչության վարքականոնների վերաբերյալ գիտելիքների, հմտությունների ձևավորումը, այդ թվում՝ առաջին օգնության հմտություններին տիրապետելը: Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության հարցերով բնակչության իրազեկվածության և կրթվածության մակարդակի բարձրացումը բխում է «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 4-րդ և 20-րդ հոդվածների, «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ և 11-րդ հոդվածների, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից հաստատված մի շարք որոշումների պահանջներից: **Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ** Միջոցառումը բխում է ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության ծրագրից: Դրույթը ներառված է ծրագրի «1. Անվտանգություն և արտաքին քաղաքականություն» գլխի «Աղետներին դիմակայունության բարձրացումը.» բաժնում. «Աղետներին դիմակայելու տեսանկյունից բնակչության իրազեկվածության և պատրաստվածության մակարդակի բարձրացման նպատակով կրթական համակարգում պարբերաբար մշակվելու, թարմացվելու և ներդրվելու են աղետների ռիսկի կառավարման և բնակչության պաշտպանության հարցերով կրթական ծրագրեր»: Միջոցառումը բխում է նաև Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050 «02. Պաշտպանված Հայաստան» մեգանպատակից: Որպես թիրախային արդյունք ունենալու ենք «2.4 Բնածին, տեխնածին և մարդածին աղետներին դիմակայելու պատրաստվածության բարձրագույն մակարդակ»՝ ըստ «2.4.3 Համայնքների, ենթակառուցվածքների և շենք-շինությունների անվտանգության և բնակչության դիմակայունության մակարդակ» (գնահատված մասնագիտական ցուցանիշներ)-ի և ըստ «2.4.2 Տեխնածին և մարդածին աղետների հետևանքով քաղաքացիական զոհերի թիվը» (ՀՀ քաղաքացիների ընդհանուր թվից, ինդեքսավորված ցուցանիշ)-ի: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները** Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությանն սպառնում են բազմաբնույթ՝ բնածին, տեխնածին, սոցիածին և այլ վտանգներ, ուստի վերոգրյալ խնդիրը խիստ արդիական է, քանի որ դրանց հետևանքով առաջացած իրավիճակներից և ռազմական գործողություններից կարող են լինել տարաբնույթ կորուստներ (մարդկային, տնտեսական, նյութական, մշակութային և այլն): **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների վերապատրաստված ղեկավար կազմի ձևավորված անհրաժեշտ հմտությունները, վարքականոնների վերաբերյալ գիտելիքները, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում պատրաստվածության վերաբերյալ գիտելիքների առկայությունը կապահովի իրազեկվածության և անվտանգության մշակույթի ձևավորման և զարգացման համապատասխան մակարդակ: Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը պետք է աջակցի պաշտպանական կառույցների ղեկավար կազմի և մասնագետների վերապատրաստման ծրագրերի ներդրման հարցում: **2. Միջոցառումների իրականացումից ակնկալվող արդյունքը՝** Միջոցառումից ակնկալվող արդյունքը՝ արտակարգ իրավիճակներում և ռազմական գործողությունների ժամանակ անհրաժեշտ վարքի կանոններ և պահելաձև ձևավորած պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների ղեկավար կազմ:

7	**7.1 ՄԱԿ-ի միջազգային քաղաքային որոնողափրկարարական խորհրդատվական խմբի (INSARAG) չափորոշիչներին համապատասխան արտաքին որակավորում անցած հայկական քաղաքային որոնողափրկարարական թիմի արտաքին վերաորակավորման քննության հանձնման և կարողությունների զարգացման** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Թիմի կարողությունների զարգացումն ու վերաորակավորման քննության հանձնումն անհրաժեշտ է ՄԱԿ-ի միջազգային քաղաքային որոնողափրկարարական խորհրդատվական խմբին (INSARAG) անդամագրվելու համար հավաստագիրը ևս 5 տարի ժամկետով ստանալու համար (Հայկական քաղաքային որոնողափրկարարական թիմն անցել է INSARAG-ի արտաքին որակավորում 2015 թվականին, իսկ վերաորակավորման քննությունը կորոնավիրուսային համավարակով պայմանավորված հետաձգվել է և թիմը պատրաստվում է այն վերահանձնել 2022 թվականին): Թիմի կարողությունների զարգացման հիմնական նպատակն է ՀՀ տարածքում և արտասահմանում խոշոր աղետների ժամանակ մարդկանց կյանքի, նյութական և մշակութային արժեքների փրկումը՝ ՄԱԿ-ի միջազգային քաղաքային որոնողափրկարարական խորհրդատվական խմբի (INSARAG) ուղեցույցի պահանջների համաձայն փոխհամագործակցելով աղետի վայրում գործողությունների համակարգման կենտրոնի, արձագանքող միջազգային քաղաքային որոնողափրկարարական թիմերի, տեղական կառավարման մարմինների և այլ միջազգային կազմակերպությունների հետ: Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս արտակարգ իրավիճակների կանխման, հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման աշխատանքներում փրկարար ուժերի ներգրավման նպատակով՝ 1. Արտակարգ իրավիճակների նախարարությունը՝ 1) Պաշտպանության նախարարություն է ներկայացնում ռազմական նշանակության արտադրանքների ցանկը՝ արտադրանքների ժամանակավոր արտահանման և ներմուծման լիցենզավորման նպատակով. 2) Էկոնոմիկայի նախարարություն է ներկայացնում երկակի նշանակության ապրանքների ցանկը՝ ապրանքների ժամանակավոր արտահանման և ներմուծման թույլտվության տրամադրման նպատակով. 3) փրկարար ուժերն օդային տրանսպորտով ուղարկելու համար նախապես պայմանագիր է կնքում Պաշտպանության նախարարության հետ. 2. Պետական եկամուտների կոմիտեն և Ազգային անվտանգության ծառայությունը Հայաստանի Հանրապետության սահմանային անցակետերում ապահովում են միջազգային պայմանագրերին համապատասխան պարզեցված կարգով փրկարար ուժերի փրկարարական միջոցների ձևակերպման և անձնակազմի սահմանահատման գործընթացները (ՀՀ կառավարության 30.07.2015 թ. N 848 որոշման հավելվածի 7-րդ կետ). 3. Արտաքին գործերի նախարարությունը՝ 1) կազմակերպում է աղետից տուժած երկրի արտակարգ իրավիճակների ոլորտի լիազոր մարմնի հետ փոխգործողությունը և համագործակցությունը. 2) աջակցում է երրորդ երկրի տարածքով, անհրաժեշտության դեպքում, փրկարար ուժերի արագ տեղափոխմանը. 3) ապահովում է աղետից տուժած երկրում հավատարմագրված Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունից աշխատողի տրամադրումը՝ աղետից տուժած երկրի արտակարգ իրավիճակների ոլորտի լիազոր մարմինների ու միջազգային կազմակերպությունների ներկայացուցչությունների հետ համագործակցության ապահովման և փրկարար ուժերին խորհրդատվական աջակցություն ցուցաբերելու նպատակով. 4) աջակցում է փրկարար ուժերի անձնակազմին աղետից տուժած երկրի մուտքի վիզաների տրամադրման հարցում: **Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ** INSARAG –ը ավելի քան 90 երկրների և կազմակերպությունների գլոբալ ցանց է՝ ՄԱԿ-ի հովանու ներքո, որին անդամագրվել է Հայաստանը 2015 թվականից: Միջոցառումը բխում է ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության ծրագրից: Դրույթը ներառված է ծրագրի «1. Անվտանգություն և արտաքին քաղաքականություն» գլխի «1.1 Արտաքին քաղաքականություն» բաժնում. «• Հայաստանը հավատարիմ է ՄԱԿ-ի հիմնարար արժեքներին և բարձր է գնահատում կառույցի դերը խաղաղության, ժողովուրդների համագործակցության, մարդու իրավունքների և հումանիտար հարցերի բնագավառում: Հայաստանը շարունակելու է իր ակտիվ աշխատանքները կառույցի շրջանակներում՝ կարևորելով կառույցի դերն ինչպես տարածաշրջանային խնդիրների լուծման, այնպես էլ համաշխարհային/համընդհանուր մարտահրավերների ձևակերպման և դրանց շուրջ աշխատանքների կազմակերպման տեսակետից»:

Միջոցառումը բխում է նաև Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050 «02. Պաշտպանված Հայաստան» մեգանպատակից: Որպես թիրախային արդյունք ունենալու ենք «2.4 Բնածին, տեխնածին և մարդածին աղետներին դիմակայելու պատրաստվածության բարձրագույն մակարդակ»՝ ըստ «2.4.3 Համայնքների, ենթակառուցվածքների և շենք-շինությունների անվտանգության և բնակչության դիմակայունության մակարդակ»-ի (գնահատված մասնագիտական ցուցանիշներ)-ի և ըստ «2.4.2 Տեխնածին և մարդածին աղետների հետևանքով քաղաքացիական զոհերի թիվը» (ՀՀ քաղաքացիների ընդհանուր թվից, ինդեքսավորված ցուցանիշ)-ի:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունն ՄԱԿ-ի միջազգային քաղաքային որոնողափրկարարական խորհրդատվական խմբի (INSARAG) չափորոշիչներին համապատասխան արտաքին որակավորում անցած քաղաքային որոնողափրկարարական 1 թիմ և ներքին որակավորում անցած քաղաքային որոնողափրկարարական 4 թիմեր, որոնք ունեն համապատասխան գույք-սարքավորումներ աղետի գոտում 7 օր ինքնաբավ փրկարարական աշխատանքներ իրականացնելու համար:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Կատարելագործել թիմի անդամների գործնական և տեսական գիտելիքները՝ ներգրավելով վարժանքների և սեմինարների (այդ թվում միջազգային):

Թիմը համալրել ժամանակակից տեխնիկական միջոցներով՝ առաջացած լայնածավալ աղետների արձագանքումը և համակարգումը դարձնելով ավելի արդյունավետ: Համակատարող մարմինները պետք է աջակցեն ԱԻՆ-ին

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

2015 թվականին թիմն անդամագրվել է ՄԱԿ-ի միջազգային քաղաքային որոնողափրկարարական խորհրդատվական խմբին (INSARAG) և ստացել է հավաստագիր, իսկ արտաքին վերաորակավորման քննությունից հետո թիմը կունենա ՄԱԿ-ի միջազգային քաղաքային որոնողափրկարարական խորհրդատվական խմբի անդամագրման 5 տարի ժամկետով հավաստագիր: Թիմի անդամները վարժանքների և սեմինարների միջոցով (այդ թվում՝ միջազգային) կկատարելագործեն իրենց գործնական և տեսական գիտելիքները: Հայաստանը կշարունակի ունենալ ՄԱԿ-ի միջազգային չափորոշիչներին համապատասխան վերապատրաստված թիմ, որը ՀՀ տարածքում և արտասահմանում խոշոր աղետների դեպքում կարող է արձագանքել և կազմակերպել որոնողափրկարարական աշխատանքներ:

	7.2 ՀՀ Արարատի, Գեղարքունիքի, Վայոց ձորի, Կոտայքի, Արմավիրի, Արագածոտնի մարզերում փրկարարական և արագ արձագանքման թվով 6 թիմերի ստեղծում **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Թիմերի ստեղծման հիմնական նպատակն է խոշոր աղետների ժամանակ մարդկանց կյանքի, նյութական և մշակութային արժեքների փրկումը՝ ՄԱԿ-ի միջազգային քաղաքային որոնողափրկարարական խորհրդատվական խմբի (INSARAG) ուղեցույցի պահանջների համաձայն փոխհամագործակցելով աղետի վայրում գործողությունների համակարգման կենտրոնի, արձագանքող միջազգային քաղաքային որոնողափրկարարական թիմերի, տեղական կառավարման մարմինների և այլ միջազգային կազմակերպությունների հետ: **Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ** Միջոցառումը բխում է ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության ծրագրից: Դրույթը ներառված է ծրագրի «1. Անվտանգություն և արտաքին քաղաքականություն» գլխի «Աղետներին դիմակայունության բարձրացումը.» բաժնում. «Տարածաշրջանային անվտանգային հիմնախնդիրները՝ բնակլիմայական, տեխնածին ու մարդածին աղետները, պատերազմները, համաճարակներն ու ահաբեկչությունները, կլիմայական համընդհանուր (գլոբալ) փոփոխությունները, ինստիտուցիոնալ թույլ կառավարումը, ժողովրդագրական փոփոխությունները պատճառ են դառնում ներքին անկայուն իրավիճակի առաջացման, որի կառավարումը լրացուցիչ ուժեր ու միջոցներ է պահանջում պետությունից: Այդ առումով ստեղծվելու է ներդաշնակ անվտանգ միջավայր՝ աղետներին դիմակայունության բարձրացման, ռիսկերի նվազեցման, իրազեկման ու կրթվածության արդյունավետ համակարգի ներդրման միջոցով»: Դրույթը ներառված է նաև ծրագրի «1. Անվտանգություն և արտաքին քաղաքականություն» գլխի «1.1 Արտաքին քաղաքականություն» բաժնում. «• Հայաստանը հավատարիմ է ՄԱԿ-ի հիմնարար արժեքներին և բարձր է գնահատում կառույցի դերը խաղաղության, ժողովուրդների համագործակցության, մարդու իրավունքների և հումանիտար հարցերի բնագավառում: Հայաստանը շարունակելու է իր ակտիվ աշխատանքները կառույցի շրջանակներում՝ կարևորելով կառույցի դերն ինչպես տարածաշրջանային խնդիրների լուծման, այնպես էլ համաշխարհային/համընդհանուր մարտահրավերների ձևակերպման և դրանց շուրջ աշխատանքների կազմակերպման տեսակետից»: Միջոցառումը բխում է նաև Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050 «02. Պաշտպանված Հայաստան» մեգանպատակից: Որպես թիրախային արդյունք ունենալու ենք «2.4 Բնածին, տեխնածին և մարդածին աղետներին դիմակայելու պատրաստվածության բարձրագույն մակարդակ»՝ ըստ «2.4.3 Համայնքների, ենթակառուցվածքների և շենք-շինությունների անվտանգության և բնակչության դիմակայունության մակարդակ» (գնահատված մասնագիտական ցուցանիշներ) և ըստ «2.4.2 Տեխնածին և մարդածին աղետների հետևանքով քաղաքացիական զոհերի թիվը» (ՀՀ քաղաքացիների ընդհանուր թվից,ինդեքսավորված ցուցանիշ)-ի: ***1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները*** Ներկայումս Հայաստանի Հանրապետությունն ՄԱԿ-ի միջազգային քաղաքային որոնողափրկարարական խորհրդատվական խմբի (INSARAG) չափորոշիչներին համապատասխան արտաքին որակավորում անցած քաղաքային որոնողափրկարարական 1 թիմ և ներքին որակավորում անցած քաղաքային որոնողափրկարարական 4 թիմեր, որոնք ունեն համապատասխան գույք-սարքավորումներ աղետի գոտում 7 օր ինքնաբավ փրկարարական աշխատանքներ իրականացնելու համար, իսկ մյուս 6 մարզերում չկան քաղաքային որոնողափրկարարական թիմեր: ***1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները*** ՀՀ 6 մարզերում ստեղծել քաղաքային որոնողափրկարարական թիմեր, կատարելագործել թիմերի անդամների գործնական և տեսական գիտելիքները՝ ներգրավելով վարժանքների և սեմինարների (այդ թվում միջազգային): Թիմերը համալրել ժամանակակից տեխնիկական միջոցներով՝ առաջացած լայնածավալ աղետների արձագանքումը և համակարգումը դարձնելով ավելի արդյունավետ: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** ՀՀ բոլոր մարզերում ունենալ ՄԱԿ-ի միջազգային քաղաքային որոնողափրկարարական խորհրդատվական խմբի (INSARAG) չափորոշիչներին համապատասխան թիմեր, որոնք ունակ են խոշոր աղետների դեպքում 24 ժամ շարունակ ինքնաբավ կատարել փրկարարական աշխատանքներ:
	7.3 ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության հրշեջ-փրկարարական գույքի բարելավման ծրագիր **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Արագածոտնի Արմավիրի, Արարատի և Կոտայքի մարզային փրկարարական վարչությունների թվով 15 ենթակա ստորաբաժանումների տրանսպորտային

միջոցների թարմացման և մշտական պատրաստակամության ապահովման արդյունքում տուժած բնակչությանն օպերատիվ և արդյունավետ օգնության ցուցաբերման մակարդակի բարձրացման խնդիրների լուծում:

3. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ

Միջոցառումը բխում է ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության ծրագրից: Դրույթը ներառված է ծրագրի «1. Անվտանգություն և արտաքին քաղաքականություն» գլխի «Աղետներին դիմակայունության բարձրացումը.» բաժնում.

«Տարածաշրջանային անվտանգային հիմնախնդիրները՝ բնակլիմայական, տեխնածին ու մարդածին աղետները, պատերազմները, համաճարակներն ու ահաբեկչությունները, կլիմայական համընդհանուր (գլոբալ) փոփոխությունները, ինստիտուցիոնալ թույլ կառավարումը, ժողովրդագրական փոփոխությունները պատճառ են դառնում ներքին անկայուն իրավիճակի առաջացման, որի կառավարումը լրացուցիչ ուժեր ու միջոցներ է պահանջում պետությունից: Այդ առումով ստեղծվելու է ներդաշնակ անվտանգ միջավայր՝ աղետներին դիմակայունության բարձրացման, ռիսկերի նվազեցման, իրազեկման ու կրթվածության արդյունավետ համակարգի ներդրման միջոցով»:

Միջոցառումը բխում է նաև Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050 «02. Պաշտպանված Հայաստան» մեգանպատակից: Որպես թիրախային արդյունք ունենալու ենք «2.4 Բնածին, տեխնածին և մարդածին աղետներին դիմակայելու պատրաստվածության բարձրագույն մակարդակ»՝ ըստ «2.4.3 Համայնքների, ենթակառուցվածքների և շենք-շինությունների անվտանգության և բնակչության դիմակայունության մակարդակ» (գնահատված մասնագիտական ցուցանիշներ)-ի:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները

Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Արմավիրի, Կոտայքի, Արարատի և Արագածոտնի մարզային փրկարարական վարչությունների թվով 15 ենթակա ստորաբաժանումների տրանսպորտային պարկը հին է, ինչի հետևանքով արտակարգ դեպքերի արձագանքումն իրականացվում է ոչ արդյունավետ:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Առաջարկվում է ծրագրի շրջանակներում Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Արմավիրի, Կոտայքի, Արարատի և Արագածոտնի մարզային փրկարարական վարչությունների թվով 15 ենթակա ստորաբաժանումներին տրամադրել 49 հրշեջ-փրկարարական ավտոմեքենաներ՝ որից 25-ը հրշեջ ավտոբաքեր 5 տոննա տարողությամբ, 5-ը՝ 4 տոննա տարողությամբ, 4-ը հրշեջ ավտոսանդուղքներ և թվով 15 փրկարարական մեքենաներ:

Ձեռք բերվող ավտոմեքենաների շնորհիվ հնարավոր կլինի մոտավորապես 30 տոկոսով նվազեցնել արտակարգ դեպքերի և պատահարների արձագանքման ժամանակահատվածը:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Հրդեհների, արտակարգ դեպքերի և պատահարների արձագանքման ժամանակահատվածը հնարավոր կլինի կրճատել մոտավորապես 30 տոկոսով:

Կնվազի նաև արտակարգ իրավիճակներից և հրդեհներից մարդկային զոհերի քանակը, նյութական և մշակույթային արժեքների կորուստները (բնակչությանն ու պետությանը պատճառված վնասի չափերը), նախագծի շրջանակներում ձեռք բերված տեխնիկան և սարքավորումները կտեղակայվեն Արմավիրի, Կոտայքի, Արարատի և Արագածոտնի մարզերում ծագած արտակարգ դեպքերին և պատահարներին արագ արձագանքելու համար:

7.4 Անօդաչու թռչող թվով 6 սարքավորումների ձեռքբերում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Անօդաչու թռչող սարքավորումների ձեռքբերման հիմնական նպատակն է տուժած բնակչությանն օպերատիվ և արդյունավետ օգնության ցուցաբերման մակարդակի բարձրացման խնդիրների լուծման համար կրճատել հրդեհների, արտակարգ դեպքերի և պատահարների հետախուզության և որոշումների ընդունման ժամանակահատվածը, իրականացնել քարտեզագրում:

Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ

Միջոցառումը բխում է ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության ծրագրից: Դրույթը ներառված է ծրագրի «1. Անվտանգություն և արտաքին քաղաքականություն» գլխի «Աղետներին դիմակայունության բարձրացումը.» բաժնում.

«Տարածաշրջանային անվտանգային հիմնախնդիրները՝ բնակլիմայական, տեխնածին ու մարդածին աղետները, պատերազմները, համաճարակներն ու ահաբեկչությունները, կլիմայական համընդհանուր (գլոբալ) փոփոխությունները, ինստիտուցիոնալ թույլ կառավարումը, ժողովրդագրական փոփոխությունները պատճառ են դառնում ներքին անկայուն իրավիճակի առաջացման, որի կառավարումը լրացուցիչ ուժեր ու միջոցներ է պահանջում պետությունից: Այդ առումով ստեղծվելու է ներդաշնակ անվտանգ միջավայր՝ աղետներին

	դիմակայունության բարձրացման, ռիսկերի նվազեցման, իրազեկման ու կրթվածության արդյունավետ համակարգի ներդրման միջոցով: Կատարելով ներդրումներ աղետների ռիսկի կառավարման ոլորտում՝ Կառավարությունն ուղղակի կանխարգելելու և ազդելու է աղետների առաջացման պատճառների վրա՝ խուսափելով հետևանքների վերացման համար պահանջվող անհամեմատ ավելի մեծ ծախսերից»: Միջոցառումը բխում է նաև Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050 «02. Պաշտպանված Հայաստան» մեգանպատակից: Որպես թիրախային արդյունք ունենալու ենք «2.4 Բնածին, տեխնածին և մարդածին աղետներին դիմակայելու պատրաստվածության բարձրագույն մակարդակ»՝ ըստ «2.4.3 Համայնքների, ենթակառուցվածքների և շենք-շինությունների անվտանգության և բնակչության դիմակայունության մակարդակ» (գնահատված մասնագիտական ցուցանիշներ)-ի: ***1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները*** Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության ստորաբաժանումները համալրված չեն նորարական տեխնոլոգիաներով, ինչը դժվարացնում է խոշոր հրդեհների, արտակարգ դեպքերի և պատահարների վճռական ուղղությունների որոշումը, որը հանգեցնում է նյութական վնասների ավելացմանը և կարող է պատճառ հանդիսանալ մարդկային կորուստների: ***1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները*** Առաջարկվում է Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության ստորաբաժանումներին հատկացնել անօդաչու թռչող սարքավորումներ և անձնակազմին ուսուցանել շահագործման կանոնները: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Նորարարական տեխնոլոգիաներով անօդաչու թռչող սարքավորումների կիրառմամբ Արտակարգ իրավիճաների նախարարության փրկարար ծառայության ստորաբաժանումները կիրականացնեն արտակարգ դեպքերի և պատահարների արագ հետախուզություն, քարտեզագրում, կկրճատվի որոշումների կայացման ժամանակահատվածը, կիրականացվի փրկարարների վերապատրաստում: Արտակարգ դեպքերի ժամանակ ուժերի և միջոցների ներգրավումը կիրականացվի ավելի արագ և արդյունավետ, որը հնարավորություն կընձեռի զգալիորեն նվազեցնել հատկապես խոշոր հրդեհի տարածումը, իսկ տուժածներին ցուցաբերել անհրաժեշտ օգնություն՝ կրճատելով որոնման ժամանակը:
8	**8.1 Փրկարար ծառայողների առաջին օգնության հմտությունների ուսուցում և կատարելագործում** ***1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը*** Միջոցառման իրականացումը միտված է առաջին բուժօգնության արագ և արդյունավետ կազմակերպման միջոցով նվազեցնելու արտակարգ իրավիճակների հետևանքով զոհերի և վիրավորների հնարավոր թիվը: **Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ** Միջոցառումը բխում է ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության ծրագրից: Դրույթը ներառված է ծրագրի «4. Մարդկային կապիտալի զարգացում» գլխի «4.5 Առողջապահություն» բաժնում. «• Կառավարության քաղաքականությունն ուղղված է լինելու հանրային առողջապահության ոլորտում արտակարգ իրավիճակներին, մասնավորապես՝ միջազգային նշանակության արտակարգ իրավիճակ ներկայացնող երևույթներին պատրաստվածության և արագ արձագանքման, միջգերատեսչական և միջոլորտային համագործակցության ապահովմանը» Միջոցառումը բխում է նաև Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050 «02. Պաշտպանված Հայաստան» մեգանպատակից: Որպես թիրախային արդյունք ունենալու ենք «2.4 Բնածին, տեխնածին և մարդածին աղետներին դիմակայելու պատրաստվածության բարձրագույն մակարդակ»՝ ըստ «2.4.2 Տեխնածին և մարդածին աղետների հետևանքով քաղաքացիական զոհերի թիվը» (ՀՀ քաղաքացիների ընդհանուր թվից, ինդեքսավորված ցուցանիշ)-ի: ***1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները*** Գործընթացը կրում է մշտական և շարունակական բնույթ: 2021 թվականի ընթացքում՝ - 24.03, 26.03.2021 թվականին հերթապահ բուժանձնակազմը Լուսակերտում մասնակցել է ՓԾ մարզային փրկարարական վարչությունների հրշեջ-փրկարարական ջոկատների հրամանատարների տեղակալների հետ վերապատրաստման դասընթացների գործնական պարապմունքներին (առաջին բուժօգնություն թեմայով). - 14.04.2021 թվականին Ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնի կողմից անցկացվող «Քաղաքային վայրերում (բարձրահարկ շենքերում) խոշոր հրդեհների մարման նորարարական եղանակներ» թեմայով դասընթացի մասնակիցների համար անցկացվել է առաջին օգնության դասընթացներ՝ «Վերքեր և վնասվածքներ, արյունահոսություններ, հենաշարժիչ համակարգի վնասվածքներ, շնչառական համակարգում օտար մարմին» թեմաներով.

	- 06.04.2021 թվականին հերթապահ բուժանձնակազմը Լոսակերտում մասնակցել է «INSARAG»-ի IEC միջազգային չափորոշիչներին համապատասխան «Տակելաժային աշխատանքների կառավարումը» թեմայով դասընթացին. - 29.04.2021 թվականին Լոսակերտի ուսումնական բազայում «INSARAG»-ի IEC միջազգային չափորոշիչներին համապատասխան «Շինարարական կառուցվածքների կայունացման համակարգեր՝ ամրակապում» թեմայով դասընթացների մասնակիցների հետ անցկացվել է առաջին օգնության դասընթացներ. - 12.05.2021 թվականին «INSARAG»-ի IEC միջազգային չափորոշիչներին համապատասխան «Բարձրությունների վրա փրկարարական աշխատանքների կազմակերպում՝ պարանային աշխատանք» թեմայով դասընթացի մասնակիցների համար անցկացվել է առաջին բուժօգնության դասընթաց. - 28.06-02.07.2021 թվականին ԱԲՕԲ անձնակազմը Լուսակերտում և Արզնիում անցկացրել է «INSARAG»-ի IEC միջազգային չափորոշիչներին համապատասխան «Առաջին օգնության ցուցաբերում» թեմայով դասընթաց: ***2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը*** Աղետի գոտում տուժածներին ցուցաբերվող առաջին օգնության որակի բարձրացում:
9	**9.1 Վտանգավոր սողանքային տեղամասերից թվով 6 տեղամասերի գործիքային հետազոտություն** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Վտանգավոր արտածին երկրաբանական պրոցեսներից իրենց տարածվածությամբ ու ազդեցությամբ առավել աղետալի են սողանքները, որոնք սպառնում են ազգային անվտանգությանը: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է և կարևոր սողանքային երևույթների ուսումնասիրությունը, կանխատեսումը, կանխարգելումը տարածքների պահպանման ու ռացիոնալ օգտագործման, բնակչության անվտանգության ապահովման և շրջակա միջավայրի պահպանման նպատակով: **Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ** Միջոցառումը դիտարկվում է որպես սողանքային աղետի կառավարման (կանխարգելիչ) միջոցառում: Միջոցառումը բխում է ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության ծրագրից: Դրույթը ներառված է ծրագրի «1. Անվտանգություն և արտաքին քաղաքականություն» գլխի «Աղետներին դիմակայունության բարձրացումը.» բաժնում. «Անվտանգության ապահովման հիմնական գործոններից է լինելու աղետների ռիսկի կառավարման ճկուն ու գործուն համակարգը, որի ներդրման արդյունքում կունենանք պաշտպանված բնակչություն, տնտեսություն, տարածքներ, ենթակառուցվածքներ ու բնապահպանական օբյեկտներ: Կատարելով ներդրումներ աղետների ռիսկի կառավարման ոլորտում՝ կառավարությունն ուղղակի ձևով կանխարգելելու և ազդելու է աղետների առաջացման պատճառների վրա՝ խուսափելով հետևանքների վերացման համար պահանջվող անհամեմատ ավելի մեծ ծախսերից»: **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները** Սողանքային տեղամասերում հետազոտությունների և դրանց հաջորդող կանխարգելիչ միջոցառումների չիրականացման պատճառով կառավարությունը հարկադրված է մի քանի անգամ ավելի շատ ֆինանսական միջոցներ հատկացնել հարյուրավոր վթարային բնակելի տների բնակիչների վերաբնակեցման խնդիրների լուծման, ինչպես նաև սողանքային երևույթների հետևանքների վերացման համար: Նման մոտեցումը, պահանջելով մեծ ու անընդհատ աճող ֆինանսական միջոցներ, խնդրի լիարժեք լուծում չի ապահովում, քանի որ ժամանակի ընթացքում ավելանում է վնասված ու վթարային տների քանակը, իսկ վերաբնակեցումը հանգեցնում է հատկապես սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի քայքայմանն ու աստիճանաբար վերացմանը, բնակչության տարահանմանը, սոցիալ-տնտեսական և մի շարք այլ լուրջ հիմնախնդիրների առաջացմանը: ***1.2* Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Հաշվի առնելով նախկինում իրականացված միջոցառումների համար պահանջված ֆինանսական ծախսերը (հետազոտություն, մոնիթորինգի համակարգի ներդնում, կանխարգելիչ միջոցառումների իրականացում) առաջարկվում է յուրաքանչյուր տարի սահմանել ֆինանսական միջոցներ հետազոտությունների արդյունքում հիմնավորված ֆինանսական գնահատական ունեցող հակասողանքային միջոցառումների իրականացում: Համակատարող մարմինները կաջակցեն տեղերում աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը, տեղեկատվության տրամադրմանը: Պետական բյուջեով հատկացված 61,290 մլն դրամը նախատեսված է թվով 6 սողանքային մարմինների գործիքային հետազոտությունների համար:

	2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Կապահովի բնակչության պաշտպանության, տարածքների, շենքերի և շինությունների, տարբեր նշանակության կառուցվածքների, հաղորդակցության ուղիների անվտանգ և անխափան շահագործումը:
10	***10.1 Երևանում, Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի և Գեղարքունիքի մարզերում կամավորական արձագանքման խմբերի ստեղծում, դասընթացների և վարժանքների իրականացում*** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Փրկարարական և արագ արձագանքման այլ ուժերի ստեղծումն ու զարգացումն անհրաժեշտ է տարեցտարի աճող արտակարգ իրավիճակներին ավելի արդյունավետ արձագանքելու համար: Փրկարարական և արագ արձագանքման այլ ուժերի ստեղծման ու զարգացման հիմնական նպատակներն են՝ կանխել արտակարգ իրավիճակների հետագա տարածումը կամ մարդկանց կյանքին սպառնացող վտանգը, վերացնել արտակարգ իրավիճակների հետևանքները, իրականացնել փրկարարական աշխատանքներ կամ մարել դեռևս զարգացման սկզբնական փուլում գտնվող հրդեհը, տուժածներին ցույց տալ առաջին օգնություն, փրկել ինչպես մարդկային կյանքեր, այնպես էլ նյութական և մշակույթային արժեքներ, երիտասարդներին ներգրավել բնակչության պաշտպանության, քաղաքացիական պաշտպանության գործընթացներին, բարձրացնել արտակարգ իրավիճակներում բնակչության իրազեկվածության ու կրթվածության մակարդակը: Միջոցառման իրականացման իրավական հիմքերն են «Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին» ՀՀ օրենք, 5-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը: **Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ** Միջոցառումը բխում է ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության ծրագրից: Դրույթը ներառված է ծրագրի «1. Անվտանգություն և արտաքին քաղաքականություն» գլխի «Աղետներին դիմակայունության բարձրացումը.» բաժնում. «Տարածաշրջանային անվտանգային հիմնախնդիրները՝ բնակլիմայական, տեխնածին ու մարդածին աղետները, պատերազմները, համաճարակներն ու ահաբեկչությունները, կլիմայական համընդհանուր (գլոբալ) փոփոխությունները, ինստիտուցիոնալ թույլ կառավարումը, ժողովրդագրական փոփոխությունները պատճառ են դառնում ներքին անկայուն իրավիճակի առաջացման, որի կառավարումը լրացուցիչ ուժեր ու միջոցներ է պահանջում պետությունից: Այդ առումով ստեղծվելու է ներդաշնակ անվտանգ միջավայր՝ աղետներին դիմակայունության բարձրացման, ռիսկերի նվազեցման, իրազեկման ու կրթվածության արդյունավետ համակարգի ներդրման միջոցով»: Դրույթը ներառված է նաև ծրագրի «4. Մարդկային կապիտալի զարգացում» գլխի «4.7 Երիտասարդություն» բաժնում. «•երիտասարդների շրջանում բարձրացնել քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում գործելու գիտելիքների և հմտությունների մակարդակը,»: Միջոցառումը բխում է նաև Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050 «02. Պաշտպանված Հայաստան» մեգանպատակից: Որպես թիրախային արդյունք ունենալու ենք «2.4 Բնածին, տեխնածին և մարդածին աղետներին դիմակայելու պատրաստվածության բարձրագույն մակարդակ»՝ ըստ «2.4.3 Համայնքների, ենթակառուցվածքների և շենք-շինությունների անվտանգության և բնակչության դիմակայունության մակարդակ» (գնահատված մասնագիտական ցուցանիշներ)-ի: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները** Ներկայումս արտակարգ իրավիճակների արձագանքումն իրականացվում է Փրկարար ծառայության հերթապահ ստորաբաժանումների ուժերով, որոնց միջոցները բավարար չեն լայնածավալ աղետների արձագանքման համար: Հայաստանի Հանրապետությունում տարեկան արձանագրվող հազարավոր հրդեհների, բնական, տեխնածին աղետների և պատահարների հետևանքով զոհվում են հարյուրավոր մարդիկ, մի քանի հազարը՝ ստանում տարբեր աստիճանի վնասվածքներ, բնակչությանը և պետությանը պատճառվում է միլիարդավոր դրամների հասնող նյութական վնաս: Ամռան շոգ և չոր եղանակային պայմաններում Արտակարգ իրավիճակների նախարարության գրեթե բոլոր ստորաբաժանումներն աշխատում են գերբեռնվածությամբ, մի դեպքի վայրից մյուս դեպքի վայր մեկնում՝ անցնելով տասնյակ կիլոմետրեր, երբեմն էլ միաժամանակյա մի քանի դեպքերի արձագանքում: Սահմանամերձ և հեռավոր բնակավայրերը գտնվում են սպասարկող հրշեջ-փրկարարական ջոկատներից մինչև 48 կիլոմետր հեռավորության վրա, և հրշեջ-փրկարարական ջոկատների մարտական հաշվարկները, հատկապես սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների արտակարգ իրավիճակների դեպքերի սպասարկման համար, ոլորաններով անցնելիս առավելագույնը 20-30 կմ/ժամ արագությամբ են ընթանում՝ կանչի վայր հասնելով մինչև 50-60 րոպե ուշացումով, ուստի տեղի բնակիչները, շատ անգամ, չեն

	ահազանգում արտակարգ իրավիճակների դեպքերի վերաբերյալ, քանի որ, գիտակցում են, որ հեռավորության և ժամանակի կորուստի պատճառով արձագանքումն արդյունավետ չի կարող լինել: Ներկայումս համայնքների խոշորացման հանգամանքից ելնելով, անհրաժեշտ է վերանայել և կազմավորել այն համայնքների ցանկը, որտեղ կստեղծվեն կամավորական հրշեջ-փրկարարական նոր հենակետեր (այդ թվում՝ երիտասարդների ակտիվ ներգրավմամբ): **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Հայաստանի Հանրապետության սահմանամերձ և հեռավոր բնակավայրերում ստեղծել կամավորական հրշեջ-փրկարարական հենակետեր, կամավորներին ուսուցանել, որպեսզի մինչև հիմնական ուժերի դեպքի վայր ժամանելը, ուսուցանված անձնակազմը կանխի հրդեհի հետագա տարածումը՝ դեռևս զարգացման սկզբնական փուլում: Մարզպետարանները, տեղական ինքնակառավարման մարմինները պետք է օժանդակեն մարզերում, համայնքներում կամավորական արձագանքման խմբերի ստեղծմանը, աջակցություն ցուցաբերեն այդ խմբերի ուսուցման կազմակերպման և վարժանքների իրականացման հարցերում: Միջոցառումը ներառված է եղել ՀՀ կառավարության գործունեության 2019-2023թթ. ծրագրում՝ կատարման ժամկետ նախատեսվել է 2023 թվականը: Հաշվի առնելով, որ ենթակետի կատարման 2023թ. ժամկետը ներառվում է նաև 2021-2026 թվականների մեջ, միջոցառումը ներառվում է նոր ծրագրում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Լայնածավալ աղետների և հրդեհների կանխարգելումը, արձագանքումը և հետևանքների վերացման աշխատանքների համակարգումը դարձնել ավելի արդյունավետ: Արտակարգ իրավիճակներից և հրդեհներից մարդկային զոհերը և նյութական կորուստները նվազեցնել, բարձրացնել արտակարգ իրավիճակներում բնակչության իրազեկվածության ու կրթվածության մակարդակը: Կրճատել արտակարգ իրավիճակների արձագանքման ժամանակահատվածը:
11	**11.1 Արտակարգ իրավիճակների ոլորտում ապահովագրական գործիքների ներդրման վերաբերյալ վերլուծությունների իրականացում և առաջարկությունների ներկայացում Վարչապետի աշխատակազմ** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառումն իրականացվում է ՀՀ-ում արտակարգ իրավիճակների ոլորտում ապահովագրման ինստիտուտի կատարելագործման, բնակչության, տարածքների, ենթակառուցվածքների, շրջակա միջավայրի պաշտպանվածությունն արտակարգ իրավիճակների հետևանքով պատճառված վնասից ապահովելու նպատակով: **Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ** Միջոցառումը բխում է ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության ծրագրից: Դրույթը ներառված է ծրագրի «1. Անվտանգություն և արտաքին քաղաքականություն» գլխի «Աղետներին դիմակայունության բարձրացումը» վերնագրում՝ «Անվտանգության ապահովման հիմնական գործոններից է լինելու աղետների ռիսկի կառավարման ճկուն ու գործուն համակարգը, որի ներդրման շնորհիվ կունենանք պաշտպանված բնակչություն, տնտեսություն, տարածքներ, ենթակառուցվածքներ, մշակութային ու բնապահպանական օբյեկտներ»: Միջոցառումը բխում է նաև Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050 «02. Պաշտպանված Հայաստան» մեգանպատակից: Որպես թիրախային արդյունք ունենալու ենք «2.4 Բնածին, տեխնածին և մարդածին աղետներին դիմակայելու պատրաստվածության բարձրագույն մակարդակ»՝ ըստ «2.4.3 Համայնքների, ենթակառուցվածքների և շենք-շինությունների անվտանգության և բնակչության դիմակայունության մակարդակ» (գնահատված մասնագիտական ցուցանիշներ)-ի: **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները** 1) Տեխնիկական անվտանգության ապահովման ոլորտում համաձայն «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի՝ «**Հոդված 20.** **Առանձնապես վտանգավոր արտադրական օբյեկտների պարտադիր ապահովագրումը** 1. Առանձնապես վտանգավոր արտադրական օբյեկտ շահագործող անձը պարտավոր է իր գործունեության ամբողջ ժամանակահատվածում, ելնելով այն հանգամանքից, որ իր կողմից կատարվող աշխատանքները հանդիսանում են գործունեության առավել վտանգի աղբյուր, պարտադիր կարգով ապահովագրել պատասխանատվության հետևյալ ռիսկերը՝ ա) արտադրական վտանգավոր օբյեկտի շահագործման ընթացքում և դրա հետևանքով իր աշխատողների կյանքին, առողջությանը և գույքին պատճառված վնասները.

	բ) արտադրական վտանգավոր օբյեկտի շահագործման ընթացքում և դրա հետևանքով իր աշխատողների, ինչպես նաև աշխատանքների հետ անմիջականորեն չկապված, սակայն այդ աշխատանքների արդյունքում քաղաքացիների կյանքին, առողջությանը և գույքին պատճառված վնասները. գ) արտադրական վտանգավոր օբյեկտի շահագործման ընթացքում և դրա հետևանքով շրջակա միջավայրին պատճառված վնասները: Ապահովագրության գումարների նվազագույն չափը, ըստ սույն մասով սահմանված ռիսկի առանձին տեսակների, որոշվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: 2. Սույն հոդվածով սահմանված պարտադիր ապահովագրման ենթակա առանձնապես վտանգավոր արտադրական օբյեկտների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:» Հոդվածի կիրարկումը չի ապահովվում՝ առանձնապես վտանգավոր արտադրական օբյեկտների ցանկի սահմանված չլինելու պատճառով, որն էլ իր հերթին հնարավոր չէ սահմանել «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքում ապահովագրական չափորոշիչների բացակայության պատճառով: 2) Պետական պահուստի ոլորտում ներկա պահին առկա են բացեր, որոնց լրացումը ևս պահանջում է կարգավորումներ ապահովագրական համակարգի ներդրման միջոցով: Պետական պահուստում պահպանման ենթակա նյութական արժեքները ներկա դրությամբ պահպանվում են ԱԻՆ Պետական ռեզերվների գրասենյակի տրամադրության տակ գտնվող պահեստներում (բացառությամբ ցորենի) և ապահովագրված չեն բնական և տեխնածին աղետներից, դիտավորյալ կամ կանխամտածված գործողությունների հետևանքով պատճառված վնասներից: Վերոգրյալի ամփոփման արդյունքում՝ անհրաժեշտություն է առաջանում բնական և տեխնածին աղետներից ապահովագրական համակարգի ներդրման, որը կկանոնակարգի առկա խնդրահարույց հարցերը: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Առաջարկվում է շահագրգիռ պետական կառավարման մարմինների հետ իրականացնել ապահովագրական գործիքների ներդրման վերաբերյալ վերլուծություններ՝ պետության մասնակցության մասով, հավաքագրել ելակետային տվյալներ՝ շահառուների քանակի, ռիսկերի տեսակի, վնասների դեպքերի (ըստ տարիների) բացվածքի մասով: Ամփոփված տվյալներով Վարչապետի աշխատակազմ կներկայացվի դիրքորոշում և եզրակացություն՝ ապահովագրական համակարգի ներդրման գործիքակազմի, ռիսկերի, առկա խնդիրների և վերոնշյալ համակարգի ներդրման արդյունքում պետական բյուջեի վրա ավելացող ֆինանսական բեռի վերաբերյալ: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման իրականացման արդյունքում կունենանք ապահովագրական գործուն համակարգ, որը կապահովի բնական և տեխնածին աղետներից բնակչության, տարածքների, ենթակառուցվածքների, շրջակա միջավայրի պաշտպանվածությունը:
12	**12.1 Սեյսմիկ ռիսկի նվազեցման պետական ծրագրի հաստատում ՀՀ կառավարության որոշմամբ** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** 1988թ. Սպիտակի ավերիչ երկրաշարժի հետևանքների վերլուծությունը ցույց տվեց, որ Հայաստանի Հանրապետությունում գոյություն ունեցող շենքերի գերակշռող մասի սեյսմակայունությունն ավելի ցածր է, քան սպասվող սեյսմիկ վտանգի մակարդակը, և փաստորեն նրա ամբողջ տարածքը գտնվում է բարձր սեյսմիկ ռիսկի գոտում: (2002 թ. հուլիսի 6-ի «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՕ-376-Ն ՀՀ օրենք, հոդվածներ՝ 8, 9, 21, 23, 24): Ծրագրի նպատակն է գնահատել ՀՀ տարածքի քաղաքներում գոյություն ունեցող բազմաբնակարան բնակելի շենքերի սեյսմիկ խոցելիության աստիճանը և մշակել առաջարկություններ շենքերի սեյսմիկ խոցելիության նվազեցման ուղղությամբ: Այն մշակվելու է 2020 թվականի հունվարի 23-ի 53-Լ ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված Վայոց ձորի մարզի Ջերմուկ քաղաքի բազմաբնակարան բնակելի շենքերի սեյսմիկ խոցելիության գնահատման ծրագրի մոտեցումների և սկզբունքների հիման վրա: Միջոցառման իրականացման իրավական հիմքերն են «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ օրենք, 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ, հոդված 12-ի 1-ին մասի 2-րդ կետը, 23-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետ: **Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ** Միջոցառումը բխում է ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության ծրագրից: Դրույթը ներառված է ծրագրի «1. Անվտանգություն և արտաքին քաղաքականություն» գլխի «Աղետներին դիմակայունության բարձրացումը» վերնագրում՝ «Անվտանգության ապահովման հիմնական գործոններից է լինելու աղետների ռիսկի կառավարման ճկուն ու գործուն համակարգը, որի ներդրման շնորհիվ կունենանք պաշտպանված բնակչություն, տնտեսություն, տարածքներ, ենթակառուցվածքներ, մշակութային ու բնապահպանական օբյեկտներ» և «6.6 Տարածքային կառավարում և տեղական ինքնակառավարում» բաժնում՝ «շենքերի

	անվտանգությունն ապահովելու նպատակով իրականացվելու են բազմաբնակարան շենքերի սեյսմիկ խոցելիության գնահատման աշխատանքներ»: Միջոցառումը բխում է նաև Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050 «02. Պաշտպանված Հայաստան» մեգանպատակից: Որպես թիրախային արդյունք ունենալու ենք «2.4 Բնածին, տեխնածին և մարդածին աղետներին դիմակայելու պատրաստվածության բարձրագույն մակարդակ»՝ ըստ «2.4.3 Համայնքների, ենթակառուցվածքների և շենք-շինությունների անվտանգության և բնակչության դիմակայունության մակարդակ» (գնահատված մասնագիտական ցուցանիշներ)-ի: **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները** Հայաստանի տարածքը, ինչպես և անցյալում, կարող է ենթարկվել ուժեղ երկրաշարժերի, որոնք կարող են բերել մարդկային կորուստների և զգալի ավերածությունների: Շենքերի և շինությունների ցածր սեյսմակայունությունը, ուրբանիզացման բարձր մակարդակը և այլ գործոններն առաջացնում են խնդիրներ, որոնք դեռևս մնում են չլուծված: Այդպիսի խնդիրներից է բազմաբնակարան բնակելի շենքերի սեյսմիկ խոցելիության նվազեցումը: Այս ծրագրի շրջանակներում բազմաբնակարան բնակելի շենքերի սեյսմիկ խոցելիության գնահատման աշխատանքները դիտվում են որպես սեյսմիկ ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումների առաջին փուլ: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Ծրագրի ընդունումը հնարավորություն կտա իրականացնելու ՀՀ տարածքի բազմաբնակարան բնակելի շենքերի սեյսմիկ խոցելիության մակարդակի գնահատման համակարգված աշխատանքներ: Ընդհանուր առմամբ նախատեսվում է հետազոտման համար ընտրել ՀՀ բոլոր քաղաքների բազմաբնակարան տիպարայնային շենքերը՝ տարբեր ծավալահատակագծային ու կոնստրուկտիվ լուծումներով և կառուցված տարբեր գրունտային պայմաններում: ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից Կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկում ընդգրկված «Բնակելի, հասարակական, արտադրական նշանակության շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացման և անվտանգ շահագործման հետ կապված հարցերի կանոնակարգում» և «Անբավարար տեխնիկական վիճակում գտնվող բնակարանային ֆոնդի հիմնախնդրի կանոնակարգում» կետերով կսահմանվեն անբավարար տեխնիկական վիճակում գտնվող բնակարանային ֆոնդի հիմնախնդրին առնչվող հարցերում ՀՀ կառավարության, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորող նորմերը, տեղեկատվական համակարգի ձևավորման համար իրավական հիմքերը, շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազննությունների անցկացման և արդյունքում տրված եզրակացությունների վարման ընթացակարգերը և կպատրաստվի Պետական և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների հետ համաձայնեցված միջոցառումների ծրագիր՝ ըստ կազմված ժամանակացույցի: Նշված իրավակարգավորումների արդյունքներով 2023 թվականին կներկայացվի բազմաբնակարան շենքերի սեյսմիկ խոցելիության գնահատման ծրագիրը: **3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Ծրագրի իրականացումը հնարավորություն կտա ստանալ ՀՀ տարածքի բազմաբնակարան շենքերի ցանկը, կառուցապատման առանձնահատկությունները և սեյսմիկ ռիսկի գնահատման բաղադրիչների բազա: Շենքերի ուժեղացման առավել օպտիմալ տարբերակների առաջարկություններ, ինչը կսահմանափակի հակասեյսմիկ միջոցառումների կատարման ծավալները և ծախսերը: Այն հնարավորություն կընձեռնի բարձրացնել ինչպես բնակչության, այնպես էլ պետական մարմինների պատրաստվածության մակարդակը դիմակայելու ուժեղ երկրաշարժերին, զգալիորեն ցածրացնել տարածաշրջանի սեյսմիկ ռիսկը, ապահովել ՀՀ տնտեսական և սոցիալական կայունությունը:

Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	
NN	**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ**
1	**1. «Բարձր տեխնոլոգիական ոլորտում տեխնոլոգիական կրթության բարելավում»** **<u>1.1 Բարձրագույն ուսումնական հաստատություններում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ուղղություններով կրթական ծրագրերի վերանայում, համապատասխանեցում ժամանակակից պահանջներին, ոլորտի ռազմավարությանն ու կարիքներին և ըստ անհրաժեշտության նոր կրթական ծրագրերի մշակում այդ թվում՝ միջազգային համագործակցության վրա հիմնված</u>**

	<u>1.2 Բարձր տեխնոլոգիական կրթության առաջխաղացումը Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Գյումրու մասնաճյուղում</u> **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը (նշելով նաև ծրագրի համաձայն ընդունման ենթակա ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման համար հիմք հանդիսացող ՀՀ Սահմանադրության կամ օրենքների դրույթները, ինչպես նաև կառավարության ծրագրի համապատասխան կետը)** Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային ժողովի 26.08.2021թ. ԱԺՈ – 002 - Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի դրույթներից, մասնավորապես՝ 2.3-րդ բաժնի բարձր տեխնոլոգիաներ ենթաբաժնի 4-րդ պարբերության պահանջներից, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հուլիսի 10-ի «Հայաստանի Հանրապետության 2021-2023 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» N 1212-Ն որոշման հավելվածի 2-րդ մասի 6-րդ կետի «1. Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության էկոհամակարգի և շուկայի զարգացման ծրագիր» ենթավերնագրի պահանջներից: Միջոցառման անհրաժեշտությունը կայանում է բարձր տեխնոլոգիական ոլորտում տեխնոլոգիական կրթության բարելավմանը: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները (նշելով նաև ելակետային տվյալներ, եթե դրանք առկա են)** Բարձր տեխնոլոգիաների ոլորտը փոխվում է նշանակալի տեմպերով, հատկապես 4-րդ արդյունաբերական հեղափոխության հաստատումից հետո: Որպեսզի հայկական ընկերությունները կարողանան մասնակցել այս նոր տեխնոլոգիական հեղափոխությանը, անհրաժեշտ նախապայման է ժամանակի պահանջներին համահունչ կրթություն ստացած որակյալ կադրերի պատրաստումը: Թեև հայաստանյան բուհական հաստատությունները ունեն տեխնոլոգիական ուղղվածության տարատեսակ կրթական ծրագրեր, վերջիններս ոչ միշտ են համապատասխանում ժամանակակից տնտեսությունների և գիտության պահանջներին, ինչը ուղղակիորեն ազդում է Հայաստանի տեխնոլոգիական համակարգի մրցունակության վրա: Վերը նշված խնդիրների լուծման նպատակով անհրաժեշտություն է առաջացել վերանայելու և բարելավելու մարդկային կապիտալի ապահովումը Հայաստանում: Մասնավորապես, անհրաժեշտ է ուսումնասիրել ներկա կրթական ծրագրերը, դրանց համապատասխանելիությունը գլոբալ շուկաներում առկա կրթական ծրագրերի և, ընդհանրապես, համաշխարհային պահանջների հետ, այնուհետև համապատասխան քայլեր ձեռնարկել դրանց բարելավման ուղղությամբ, աջակցել նոր կրթական ծրագրերի ներդրմանը: Ի հավելումն, անհրաժեշտ է նաև վերապատրաստումների միջոցով ապահովել տեղական շուկայի կարիքներին համապատասխան կադրերի ապահովումը: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Վերոնշյալ ծրագրերի արդյունքում կբարելավվի տեխնոլոգիական կրթությունը, կբարձրանա աշխատաշուկայի և աշխատանքային ռեսուրսի որակը, ինչը զգալիորեն 204 կբարելավի հայկական ընկերությունների մրցունակությունը աշխարհում և կբարձրացնի Հայաստանի գրավչությունը՝ որպես տարածաշրջանի տեխնոլոգիական կենտրոն:
2.	**2. «Բարձր տեխնոլոգիական ընկերություններում (ստարտափերում) անհրաժեշտ ներդրումներ ներգրավելու և դրանց հետագա զարգացումն ու դեպի համաշխարհային շուկա ելքն ապահովելու նպատակով**

ֆինանսական գործիքներ ներգրավելու հնարավորությունների շարունակական մեծացում, այդ թվում՝ պետական աջակցության ծրագրերի միջոցով»

2.1 «**Բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացման ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ**

2.2 Բարձր տեխնոլոգիաների բիզնես միջավայրի ռազմավարության մշակում և ներկայացում ՀՀ վարչապետի հաստատմանը

2.3 «Բարձր տեխնոլոգիական ձեռնարկությունների ստեղծման, զարգացման և մրցունակության համար օժանդակող մեխանիզմների ներդրման և կիրառման խթանում

2.4 Ազգային վենչուրային ֆոնդի ստեղծում

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը (նշելով նաև ծրագրի համաձայն ընդունման ենթակա ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման համար հիմք հանդիսացող ՀՀ Սահմանադրության կամ օրենքների դրույթները, ինչպես նաև կառավարության ծրագրի համապատասխան կետը)

Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային ժողովի 26.08.2021 թ. 2021 թ. ԱԺՈ – 002 - Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի դրույթներից, մասնավորապես՝ 2.3-րդ բաժնի բարձր տեխնոլոգիաներ ենթաբաժնի 5-րդ պարբերության պահանջներից, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հուլիսի 10-ի «Հայաստանի Հանրապետության 2021-2023 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» N 1212-Ն որոշման հավելվածի 2-րդ մասի 6-րդ կետի «1. Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության էկոհամակարգի և շուկայի զարգացման ծրագիր» ենթավերնագրի պահանջներից: Միաժամանակ, միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության և Համաշխարհային բանկի միջև 2014 թվականին օգոստոսի 6-ին կնքված վարկային պայմանագրի և «Առևտրի խթանում և որակի ենթակառուցվածք» ծրագրից և 2020 թվականի հունվարին դրանում արված փոփոխությունից:

Միջոցառման նպատակը պետության կողմից տրամադրվող աջակցության ծրագրերի և այլ մեխանիզմների միջոցով բարձր տեխնոլոգիական ընկերություններում անհրաժեշտ ներդրումներ ներգրավելու և դրանց հետագա զարգացումն ու դեպի համաշխարհային շուկա ելքն ապահովելու համար ֆինանսական գործիքներ ներգրավելու հնարավորությունների շարունակական ընդլայնումն է:

1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները (նշելով նաև ելակետային տվյալներ, եթե դրանք առկա են)

ՀՀ բարձր տեխնոլոգիական ոլորտը կայուն աճի տեմպեր է դրսևորել վերջին տարիների ընթացքում, սակայն հաշվի առնելով ոլորտի գլոբալ զարգացման բնույթը՝ Հայաստանում վերհանվել են մի շարք ենթակառուցվածքային և ինստիտուցիոնալ գործոններ, որոնք կարող են դանդաղեցնել ոլորտի աճի տեմպերը: Նման գործոնների թվին է դասվում կրթական համակարգի, հետազոտական կարողությունների զարգացումը:

Հաշվի առնելով միջազգային միտումները՝ ոչ պակաս կարևորություն է ներկայացնում կիբեռանվտանգության ոլորտում ազգային կարողությունների զարգացումը, որը ներկայումս դեռ համապարփակ կերպով չի համակարգվում և համապատասխան ոլորտային քաղաքականությունների և կարողությունների զարգացման կարիք է նկատվում:

2019 - 2020 թթ. թվականին ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից անցկացված հետազոտությունները վերհանեցին նորարական ստարտափների շրջանում սաղմնային և վաղ շրջանի ֆինանսավորման հնարավորությունների պակաս:

1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները (միջոցառումը համակատարող ունենալու դեպքում նշելով նաև համակատարողի կողմից համապատասխան միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները)

Հաշվի առնելով ոլորտում առկա հիմնախնդիրները՝ մշակվել է «Առևտրի խթանում և որակի ենթակառուցվածք» ծրագիրը և հետագայում կատարվել փոփոխություն՝ ներառելով նաև ազգային վենչուրային ֆոնդ ստեղծելու ենթակետը:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է 2022-2026 թթ. ընթացքում զարգացնել ՀՀ գիտահետազոտական կարողությունները, էապես բարեփոխել տեխնոլոգիական կրթության համակարգը և

	անհրաժեշտ վենչուրային ֆինանսավորման միջոցների, ինչպես նաև միջազգային լավագույն բիզնես փորձի հասանելիության ապահովում ՀՀ-ում գործող ստարտափների համար:
3.	**3. «Տեխնոլոգիական ներուժի ներգաղթի խթանմանն ուղղված միջոցառումների իրականացում»** **3.1 Տեխնոլոգիական ոլորտի պահանջված մասնագետների ներգաղթի համար գրավիչ պայմանների և խթանիչ մեխանիզմների ստեղծում** **3.2 «Հայկական վիրտուալ կամուրջ» ծրագրի «Ներուժ» բաղադրիչ** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը (նշելով նաև ծրագրի համաձայն ընդունման ենթակա ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման համար հիմք հանդիսացող ՀՀ Սահմանադրության կամ օրենքների դրույթները, ինչպես նաև կառավարության ծրագրի համապատասխան կետը)** Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային ժողովի 26.08.2021թ. 2021թ. ԱԺՈ – 002 - Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի դրույթներից, մասնավորապես՝ 2.3-րդ բաժնի բարձր տեխնոլոգիաներ ենթաբաժնի 6-րդ պարբերության պահանջներից, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հուլիսի 10-ի «Հայաստանի Հանրապետության 2021-2023 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» N 1212-Ն որոշման հավելվածի 2-րդ մասի 6-րդ կետի «1. Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության էկոհամակարգի և շուկայի զարգացման ծրագիր» ենթավերնագրի պահանջներից: Միջոցառման նպատակը ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության ոլորտում պահանջարկ ունեցող մասնագիտացումներին տիրապետող սփյուռքահայ երիտասարդների ներգաղթի խթանմանն ուղղված տարաբնույթ միջոցառումների իրականացումն է: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները (նշելով նաև ելակետային տվյալներ, եթե դրանք առկա են)** Բարձր տեխնոլոգիաների ոլորտներն իրենցից ներկայացնում են գլոբալ շուկաներ, որտեղ աշխատաշուկան ևս գլոբալ է: Բազմաթիվ զարգացած և զարգացող երկրներ մշակում և իրականացնում են հատուկ միգրացիոն քաղաքականություններ գլոբալ տաղանդի ներգրավման նպատակով, և շատ երկրների դեպքում դրանք դառնում են տեխնոլոգիական ոլորտների զարգացման առանցքային գործիք: Հայաստանը փաստացի ետ է մնում գլոբալ տաղանդի համար ընթացող մրցավազքից: Հայաստանյան աշխատաշուկայում գերիշխում են հայաստանյան մասնագետները, իսկ նոր տաղանդի ներգրավման ուղիները (ինչպես օրինակ՝ արտասահմանցի ուսանողներ հայաստանյան բուհերում, գլոբալ ընկերությունների մասնաճյուղերի կողմից իրականացվող փոխանակման ծրագրեր և այլն) սակավաթիվ են: **1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները (միջոցառումը համակատարող ունենալու դեպքում նշելով նաև համակատարողի կողմից համապատասխան միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները)** Վերը նշված խնդիրների լուծման և հայաստանյան տեխնոլոգիական համակարգում նոր գաղափարների ու նորարարությունների ապահովման նպատակով անհրաժեշտ է մշակել և իրականացնել տեխնոլոգիական տաղանդի ներգրավմանն ուղղված միջոցառումներ: Մասնավորապես, անհրաժեշտ է մի կողմից իրականացնել հայկական տեխնոլոգիական ոլորտի վերաբերյալ իրազեկման և ներգրավման արշավներ, և մյուս կողմից՝ համապատասխան տեղեկատվության տրամադրմամբ աջակցել տեղափոխության գործում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Վերոնշյալ միջոցառումների արդյունքում հայկական տեխնոլոգիական համակարգին կմիանան նոր որակյալ մասնագետներ, ովքեր իրենց գիտելիքը և հմտությունները կփոխանցեն տեղացիներին: 3.1 Իրականացվում է «Պետական աջակցություն տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործունեություն իրականացնող առևտրային կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին» միջոցառումը: 3.2 «Ձեռներեցության տեխնոլոգիական էկոհամակարգ» ծրագրի «Ներուժ» բաղադրիչի շրջանակում անցկացված ինգօրյա միջոցառման արդյունքում հաղթող ճանաչված 3 կազմակերպությունների հետ աշխատանքները շարունակվում են:

4.	**4. «Դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում նորաստեղծ ընկերություններին ֆինանսավորման տրամադրման միջոցով բարձր տեխնոլոգիական ոլորտում և տնտեսության բոլոր հատվածներում նոր արժեք ստեղծելու և տեխնոլոգիական լուծումների կիրառության ապահովում»** **<u>4.1 «Գաղափարից մինչև բիզնես» անվան ներքո դրամաշնորհային ծրագրի իրականացում</u>** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը (նշելով նաև ծրագրի համաձայն ընդունման ենթակա ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման համար հիմք հանդիսացող ՀՀ Սահմանադրության կամ օրենքների դրույթները, ինչպես նաև կառավարության ծրագրի համապատասխան կետը)** Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային ժողովի 26.08.2021թ. ԱԺՈ – 002 - Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի դրույթներից, մասնավորապես՝ 2.3-րդ բաժնի բարձր տեխնոլոգիաներ ենթաբաժնի 7-րդ պարբերության պահանջներից, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հուլիսի 10-ի «Հայաստանի Հանրապետության 2021-2023 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» N 1212-Ն որոշման հավելվածի 2-րդ մասի 6-րդ կետի «1. Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության էկոհամակարգի և շուկայի զարգացման ծրագիր» ենթավերնագրի պահանջներից: Միջոցառման նպատակը ֆինանսավորման միջոցով բարձր տեխնոլոգիաների ոլորտի՝ գաղափարից մինչև հասունության փուլում գտնվող պրոդուկտների՝ շուկայում առաջխաղացմանն ու կիրառման հնարավորությունների ընդլայնմանն աջակցելն է: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները (նշելով նաև ելակետային տվյալներ, եթե դրանք առկա են)** Տնտեսության զարգացման կարևոր գործոններից է արտադրողականության ապահովումը, ինչը այնքան էլ բարձր չէ Հայաստանում, հատկապես տնտեսության որոշ ուղղություններում: Արտադրողականության խթանման գործում կարևոր դեր ունեն տեխնոլոգիական նորարարական գաղափարները և դրանց առևտրայնացումը: Վերջիններիս ապահովման համար անհրաժեշտ են գաղափարների շարունակական գեներացում և դրանց իրագործման համար բավարար ֆինանսական միջոցներ, որոնք այնքան էլ հասանելի չեն հայաստանյան տնտեսությունում: **1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները (միջոցառումը համակատարող ունենալու դեպքում նշելով նաև համակատարողի կողմից համապատասխան միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները)** Վերը նշված խնդիրների լուծման և նորարարական գաղափարների առաջխաղացման համար բարենպաստ միջավայրի ստեղծման նպատակով իրականացվում է «Գաղափարից մինչև բիզնես» դրամաշնորհային ծրագիրը: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Վերոնշյալ ծրագրի արդյունքում կապահովվի բարձր տեխնոլոգիական ոլորտներում նոր արժեքի ստեղծումը, ինչպես նաև տնտեսության տարբեր ճյուղերում առկա խնդիրների լուծումը, որով կապահովվի տնտեսության համընդհանուր գործոնային արտադրողականության բարձրացումը: «Գաղափարից մինչև բիզնես» անվան ներքո դրամաշնորհային ծրագրիրն իրականացվում է 2 բաղադրիչով: «Գաղափարի փուլում գտնվող պրոդուկտների համար» դրամաշնորհային մրցույթում հաղթող է ճանաչվել 18 կազմակերպություն, որոնցից յուրաքանչյուրին տրամադրվել է մինչև 5 միլիոն ՀՀ դրամ դրամաշնորհ: Դրամաշնորհային ծրագրով ֆինանսավորվող միջոցառումներն ընթացքի մեջ են: Երկրորդ՝ «Շուկա մուտք գործելու փուլում գտնվող պրոդուկտների համար» դրամաշնորհային մրցույթը դեռևս ընթացքի մեջ է:
5.	**5. «Աշխարհի տեխնոլոգիական, կրթական, գիտահետազոտական կենտրոններից գիտելիքի և հմտությունների ներհոսքն ապահովելու, տեխնոլոգիական ոլորտում զարգացումը, ներդրումների ներգրավումը խթանելու նպատակով կրթական և աքսելերացիոն ձևաչափով ծրագրերի իրականացում»** **<u>5.1 «Հայկական վիրտուալ կամուրջ» ծրագրի իրականացում</u>**

	5.2 Հայկական և արտերկրյա աքսելերատորների/տեխնոլոգիական կենտրոնների միջև կապերի զարգացում, համագործակցությունների հաստատում **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը (նշելով նաև ծրագրի համաձայն ընդունման ենթակա ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման համար հիմք հանդիսացող ՀՀ Սահմանադրության կամ օրենքների դրույթները, ինչպես նաև կառավարության ծրագրի համապատասխան կետը)** Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային Ժողովի 26.08.2021թ. ԱԺՈ – 002 - Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի դրույթներից, մասնավորապես՝ 2.3-րդ բաժնի բարձր տեխնոլոգիաներ ենթաբաժնի 8-րդ պարբերության պահանջներից, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հուլիսի 10-ի «Հայաստանի Հանրապետության 2021-2023 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» N 1212-Ն որոշման հավելվածի 2-րդ մասի 6-րդ կետի «1. Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության էկոհամակարգի և շուկայի զարգացման ծրագիր» ենթավերնագրի պահանջներից: Միջոցառման նպատակը կրթական և աքսելերացիոն ձևաչափով իրականացվող ծրագրերի միջոցով հայկական և արտերկրյա տեխնոլոգիական կենտրոնների միջև կապերի զարգացումը և համագործակցային հարաբերությունների հաստատումն է: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները (նշելով նաև ելակետային տվյալներ, եթե դրանք առկա են)** Նորարարության և տեխնոլոգիական զարգացման կարևոր պայմաններից է նոր գիտելիքի և հմտությունների մշտական աղբյուրների ապահովումը: Հայաստանը, ունենալով շրջափակված տնտեսություն, միատարր բնակչություն և աշխատաշուկա, ունի համաշխարհային գիտելիքի ցանցին միանալու և գիտելիք ու փորձը փոխանցելու լուրջ սահմանափակումներ, ինչը զգալիորեն դանդաղեցնում է Հայաստանի տեխնոլոգիական առաջընթացը: **1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները (միջոցառումը համակատարող ունենալու դեպքում նշելով նաև համակատարողի կողմից համապատասխան միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները)** Վերը նշված խնդիրների լուծման նպատակով առաջարկվում է «Հայկական վիրտուալ կամուրջ» ծրագրի իրականացմամբ, ինչպես նաև աշխարհի տարբեր տեխնոլոգիական կենտրոնների միջև համագործակցության հաստատմամբ նպաստել առկա բացերը լրացնելուն: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Վերոնշյալ ծրագրի արդյունքում կապահովվի աշխարհի տեխնոլոգիական կենտրոններից մեկից գիտելիքի փոխանցումը դեպի հայաստանյան տեխնոլոգիական համակարգ: Առաջատար ձեռնարկատիրական և տեխնիկական գիտելիքը անհատների միջոցով կհաստատվի և կտարածվի նաև Հայաստանում՝ նպաստելով նոր գաղափարների ձևավորմանը և առաջխաղացմանը: 5.1 Ծրագրի շրջանակում հաղթող ճանաչված 13 հայ ձեռներեցներից 3 հոգի մայիս ամսին մեկնել է ԱՄՆ և մասնակցել Դրեյփերի համալսարանում անցկացվող դասընթացին: Եվս մեկ հոգի մեկնել է հոկտեմբեր ամսին: Մյուս մասնակիցների մեկնումը, սուբյեկտիվ գործոններով պայմանավորված, հետաձգվել է: 5.2 Ներկայումս բանակցություններ են ընթանում ամերիկյան աքսելերացիոն կազմակերպությունների հետ՝ համագործակցության հաստատման ուղղությամբ:
6.	**6. «Հայաստանի Հանրապետությունում առկա տեխնոլոգիական կենտրոնների, տեխնոպարկերի, աքսելերատորների և ինկուբատորների կարողությունների բարելավում, ինչպես նաև տարածքային համաչափ զարգացման նպատակով 208 Հայաստանի Հանրապետության մարզերում նոր կենտրոնների հիմնում, այդ թվում՝ միջազգային համագործակցության հիման վրա»** **6.1 «Ինժեներական քաղաք» ծրագրի իրականացում** **6.2 Ձեռնարկատիրական ենթակառուցվածքների ստեղծում** **6.3 Նոր հիմնվող տեխնոլոգիական կենտրոնների, տեխնոպարկերի, աքսելերատորների և ինկուբատորների ստեղծման նպատակով ծրագրի մշակում, ֆինանսավորման մեխանիզմների հստակեցում**

	1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը (նշելով նաև ծրագրի համաձայն ընդունման ենթակա ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման համար հիմք հանդիսացող ՀՀ Սահմանադրության կամ օրենքների դրույթները, ինչպես նաև կառավարության ծրագրի համապատասխան կետը) Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային ժողովի 26.08.2021թ. ԱԺՈ – 002 - Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի դրույթներից, մասնավորապես՝ 2.3-րդ բաժնի բարձր տեխնոլոգիաներ ենթաբաժնի 9-րդ պարբերության պահանջներից, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հուլիսի 10-ի «Հայաստանի Հանրապետության 2021-2023 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» N 1212-Ն որոշման հավելվածի 2-րդ մասի 6-րդ կետի «1. Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության էկոհամակարգի և շուկայի զարգացման ծրագիր» ենթավերնագրի պահանջներից: Միջոցառման նպատակը ՀՀ մարզերում տեխնոլոգիական կենտրոնների ձևավորման և առկա կենտրոնների կարողությունների ընդլայնման շնորհիվ տարածքային համաչափ զարգացման ապահովումն է: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները (նշելով նաև ելակետային տվյալներ, եթե դրանք առկա են)** Նորարարության և բարձր տեխնոլոգիական ոլորտների զարգացման համար էական նշանակություն ունի համապատասխան ենթակառուցվածքների և հասունացած էկոհամակարգի առկայությունը: Հայաստանում, թեև գոյություն ունեն տեխնոլոգիական կենտրոններ, տեխնոպարկեր, աքսելերատոներ և ինբուկատորներ, դրանք քանակապես և որակապես բավարար չափով հասանելի չեն հանրությանը և տեխնոլոգիական առաջընթացի տեմպերին: **1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները (միջոցառումը համակատարող ունենալու դեպքում նշելով նաև համակատարողի կողմից համապատասխան միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները)** Վերը նշված խնդիրների լուծման նպատակով առաջարկվում է մշակել և իրականացնել ծրագրեր՝ ուղղված տեխնոլոգիական և ձեռնարկատիրական էկոհամակարգերում կարողությունների ամրապնդմանը, մասնավորապես՝ գոյություն ունեցող տեխնոլոգիական կենտրոնների, տեխնոպարկերի, աքսելերատոների և ինբուկատորների գործունեության ընդլայնման, բարելավման և նոր կենտրոնների ու ծրագրերի ստեղծման միջոցով: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Վերոնշյալ միջոցառումների իրականացման արդյունքում հայաստանյան ստարտափերը խորհրդատվական, աքսելերացիոն, գաղափարների թեստավորման և աճի համար անհրաժեշտ այլ ծառայությունների առավել լայն հասանելիություն կունենան: Կապահովվի նաև այդ ծառայություններն ապահովող կենտրոնների գործունեության որակական զարգացումը: Կստեղծի բարենպաստ միջավայր նորարարական ձեռներեցության խթանման համար:
7.	**7.«Ինժեներական քաղաքի» օրինակով ճարտարագիտական և արդյունաբերական հատուկ գոտիների ստեղծում և զարգացում»** **<u>7.1 Տեխնոլոգիական և արդյունաբերական կենտրոնների ստեղծում</u>** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը (նշելով նաև ծրագրի համաձայն ընդունման ենթակա ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման համար հիմք հանդիսացող ՀՀ Սահմանադրության կամ օրենքների դրույթները, ինչպես նաև կառավարության ծրագրի համապատասխան կետը)** Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային ժողովի 26.08.2021թ. ԱԺՈ – 002 - Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի դրույթներից, մասնավորապես՝ 2.3-րդ բաժնի բարձր տեխնոլոգիաներ ենթաբաժնի 10-րդ պարբերության պահանջներից, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հուլիսի 10-ի «Հայաստանի Հանրապետության 2021-2023 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» N 1212-Ն որոշման հավելվածի 2-րդ մասի 6-րդ կետի «1. Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության էկոհամակարգի և շուկայի զարգացման ծրագիր» ենթավերնագրի պահանջներից

	1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները (նշելով նաև ելակետային տվյալներ, եթե դրանք առկա են) Հաշվի առնելով Հայաստանի անվտանգային կարիքները, ինչպես նաև առկա հնարավորությունները՝ անհրաժեշտություն է առաջանում առանձին ինժեներական ոլորտի զարգացման ուղղությամբ աշխատանքների իրականացման: Ինժեներական ընկերությունների և հետազոտական խմբերի համար անհրաժեշտ է ստեղծել և ապահովել համապատասխան միջավայր, որտեղ կձևավորվեն և կառևտրայնացվեն նոր ինժեներական գաղափարներ: **1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները (միջոցառումը համակատարող ունենալու դեպքում նշելով նաև համակատարողի կողմից համապատասխան միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները)** Վերը նշված խնդիրների լուծման նպատակով առաջարկվում է Հայաստանում ստեղծել ինժեներական և բարձր տեխնոլոգիական կլաստեր («Ինժեներական քաղաք») և ապահովել դրա զարգացումը: Ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվում է ստեղծել ինովացիոն էկոհամակարգ, որտեղ ինժեներական և բարձր տեխնոլոգիաների ոլորտի ընկերություններն արդիական ենթակառուցվածքների կիրառմամբ կմշակեն և կիրագործեն նորարարական գաղափարներ՝ տեղական ու միջազգային շուկաներում բարձր տեխնոլոգիական լուծումների առաջադրման նպատակով: Ծրագիրն իրականացվելու է ՀԲ-ի «Առևտրի խթանում և որակի ենթակառուցվածքներ» վարկային ծրագրի շրջանակում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Վերոնշյալ ծրագրի իրականացման արդյունքում Հայաստանը կտեղակայվի ինժեներական և բարձր տեխնոլոգիական ոլորտի առաջատար երկրների քարտեզում, որը կգրավի ոլորտի ընկերությունների աշխարհի տարբեր երկրներից: Ընկերությունների գործունեության արդյունքում կստեղծվեն նոր արտադրանքներ և լուծումներ, որոնք կնպաստեն Հայաստանի և աշխարհի կարիքներին:
8.	**8. Աշխարհում, այդ թվում միջազգային հեղինակավոր ցուցահանդեսներում, միջոցառումներում հայկական բարձր տեխնոլոգիական ոլորտի (ընկերությունների) ներկայացվածության ապահովում և առաջխաղացում** **8.1. Շուկայավարության ծրագրերի մշակում և իրագործում** **8.2. Հայկական ընկերությունների հետ համատեղ միջազգային և երկկողմ բիզնես ֆորումների կազմակերպչական աշխատանքներ** **8.3. Հայրենական և միջազգային հեղինակավոր ցուցահանդեսներին, հայկական ԲՏ ոլորտի ընկերությունների հետ համատեղ, մասնակցությունն ապահովելուն ուղղված կազմակերպչական աշխատանքներ** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը (նշելով նաև ծրագրի համաձայն ընդունման ենթակա ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման համար հիմք հանդիսացող ՀՀ Սահմանադրության կամ օրենքների դրույթները, ինչպես նաև կառավարության ծրագրի համապատասխան կետը)** Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային ժողովի 2021թ. օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի դրույթներից, մասնավորապես՝ 2-րդ բաժնի 3-րդ ենթաբաժնի 3.8-րդ պարբերության պահանջներից, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հուլիսի 10-ի «Հայաստանի Հանրապետության 2022-2024 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» N 1171-Ն որոշման 1-ին հավելվածի 2-րդ աղյուսակի «Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության էկոհամակարգի, թվայնացման և շուկայի զարգացման ծրագիր» ենթավերնագրի պահանջներից: Նախարարության կողմից ցուցահանդեսների կազմակերպման/համակարգման և հեղինակավոր ոլորտային հեղինակավոր ցուցահանդեսներին, բիզնես ֆորումներին հայկական ընկերությունների մասնակցության աջակցությունը պայմանավորված է նախ և առաջ ընկերությունների կողմից բարձրացված հայկական ապրանքանիշերի, ընկերությունների ճանաչելիության զգալի պակասով, ինչը խանգարում է միջազգային

շուկաներում առաջխաղացմանը: Միջազգային փորձը, ինչպես նաև 2019-2022 թվականների ընթացքում նախարարության կողմից ունեցած փորձը այս բնագավառում թույլ է տալիս պնդել, որ ցուցահանդեսները առավելապես նպաստում են ընկերությունների.

- միջազգային շուկաներն ուսումնասիրելուն և առաջարկվող ապրանքներն ու ծառայություններն ավելի մրցունակ դարձնելուն
- նոր միջազգային գործընկերներ (ներառյալ մատակարարներ) գտնելուն
- նոր շուկաներ դյուրին մուտք գործելուն
- վաճառքների ավելացմանը և ընկերությունների զարգացմանը

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները (նշելով նաև ելակետային տվյալներ, եթե դրանք առկա են)

Բարձր տեխնոլոգիական ոլորտում գործունեություն ծավալող հայկական ստարտափ կազմակերպությունները և գործող ընկերությունները հաճախ իրենց պրոդուկտները, ծառայությունները և նորարարական գաղափարները դժվարությամբ են ներկայացնում միջազգային շուկաներում: Արդյունքում, ունենալով մեծ ներուժ հայկական ընկերությունները սահմանափակ հնարավորություններ ունեն միջազգային գործընկերներ ձեռք բերելու, ոլորտի միտումներին ծանոթանալու և օտարերկրյա շուկաներում պահանջված և մրցունակ ապրանքներ և ծառայություններ առաջարկելու գործում:

Բարձր տեխնոլոգիական ոլորտում պարբերաբար կազմակերպվում են միջոցառումներ, սակայն հայկական կազմակերպությունները միշտ չէ, որ հնարավորություն են ունենում մասնակցելու միջազգային ֆորումներին, սեմինարներին և ցուցահանդեսներին:

Միջազգային շուկաներում հետաքրքրություն ներկայացնող պրոդուկտների և ծառայությունների վերաբերյալ համապարփակ վիճակագրություն առկա չէ: Հայկական ընկերությունները միջազգային նշյալ միջոցառումների ժամանակ հնարավորություն ունենալով անմիջական բանակցություններ վարել ոլորտային բազմաթիվ ընկերությունների և հավանական սպառողների/օգտատերերի հետ կարողանում են պատկերացում կազմել տվյալ երկրում/տարածաշրջանում առկա առաջնահերթությունների և առանձնահատկությունների մասին, ձեռք բերել գործընկերներ, ավելացնել վաճառքները՝ զարգացնելով ոլորտը:

ՀՀ-ում Բարձր տեխնոլոգիական ոլորտի զարգացման համար առաջնային խնդիրներից է բավարար ծավալի շուկաների ընդլայնումը: Հաշվի առնելով այն փաստը, որ ՀՀ ներքին շուկայի ծավալը բավարար չէ բարձր տեխնոլոգիական ոլորտի անհրաժեշտ աճն ապահովելու համար՝ էական հաջողությունների հասնելու նպատակով անհրաժեշտ է նաև զարգացնել հայկական բարձր տեխնոլոգիական ընկերությունների հնարավորությունները արտաքին շուկաներում ներկայանալու և գործելու ուղղությամբ՝ համակարգային մոտեցումների շնորհիվ ապահովելով հայկական պրոդուկտների և ծառայությունների կայուն առաջխաղացումը արտաքին շուկաներում:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները (միջոցառումը համակատարող ունենալու դեպքում նշելով նաև համակատարողի կողմից համապատասխան միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները)

Ուսումնասիրելով միջազգային փորձը և շուկան, անհրաժեշտ է մշակել ծրագիր՝ հայկական տեխնոլոգիական արտադրանքը միջազգային շուկաներում արդյունավետ ներկայացնելու: Մշակված ծրագրի օգնությամբ կիրագործվեն հայկական ոլորտային ընկերությունների առաջխաղացումը միջազգային շուկաներում:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Ծրագրերի իրականացման արդյունքը հայկական բարձր տեխնոլոգիական պրոդուկտների և ծառայությունների միջազգային շուկաներում առաջխաղացման ծրագիրիրն է: Ծրագրի հետևողական իրագործում էլ կնպաստի ոլորտային նոր ապրանքների և ծառայությունների ստեղծմանը և իրացմանը, ոլորտում շրջանառության աճին: Միջոցառումների իրականացման արդյունքում կմեծանա հայկական տեխնոլոգիական պրոդուկտների և ծառայությունների միջազգային ճանաչելիությունը նավելի նպաստավոր պայմաններ կստեղծվեն հայկական ընկերությունների համար միջազգային շուկաներ մուտք գործելու, ինչպես նաև առկա համագործակցությունները ընդլայնելու համար: Ծրագրի իրականացման արդյունքում հայկական ընկերությունները, կարող են մասնակցել ցուցահանդեսների, սեմինարների, երկկողմ գործարար ֆորումների և այլ միջոցառումների՝ հնարավորություն ստանալով լավագույնս ներկայացնել իրենց պրոդուկները, ծառայությունները և արտաքին շուկաներում:

9.	**9. «Բարձր տեխնոլոգիական ոլորտի առաջանցիկ զարգացման նպատակով տեխնոլոգիական ընկերությունների և ԲՈՒՀ-երի արդյունավետ համագործակցության խթանում՝ նոր մասնագետների պատրաստման և այլ ոլորտի մասնագետներին վերամասնագիտանալու հնարավորության ընձեռման միջոցով»** **<u>9.1 Տարեկան մինչև 4000 շահառուների ուսուցում մարզերում և Երևան քաղաքում</u>** **<u>9.2 Մարզերում դասընթացների կազմակերպման միջոցառման շրջանակում տարեկան մինչև 4000 շահառուների ուսուցման պատշաճ պայմանների ստեղծում և ուսուցում</u>** **<u>9.3 Մարզերում և Երևան քաղաքում դասընթացների կազմակերպման միջոցառման շրջանակում տարեկան մինչև 2000 շահառուների ուսուցման պատշաճ պայմանների ստեղծում և ուսուցում</u>** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը (նշելով նաև ծրագրի համաձայն ընդունման ենթակա ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման համար հիմք հանդիսացող ՀՀ Սահմանադրության կամ օրենքների դրույթները, ինչպես նաև կառավարության ծրագրի համապատասխան կետը)** Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային Ժողովի 26.08.2021թ. թիվ ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի դրույթներից, մասնավորապես՝ 2.3-րդ բաժնի թվայնացման ենթաբաժնի 2-րդ պարբերության պահանջներից, որոնց նպատակն է բարձր տեխնոլոգիական ոլոտում նոր մասնագետների պատրաստման և այլ ոլորտի մասնագետներին վերամասնագիտանալու հնարավորության ընձեռնելու համար իրականացնել միջոցառումներ բարձր տեխնոլոգիական ոլորտի առաջանցիկ զարգացման նպատակով տեխնոլոգիական ընկերությունների և ԲՈՒՀ-երի արդյունավետ համագործակցության խթանման միջոցով: **1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները (նշելով նաև ելակետային տվյալներ, եթե դրանք առկա են)** ՀՀ-ում գործում են մի շարք բարձր տեխնոլոգիաների ոլորտի դասընթացներ իրականացնող ԲՈՒՀ-եր, ինչպես նաև կադրերի վերապատրաստման կենտրոններ, որոնց միջոցով կազմակերպվում են մասնագիտական դասընթացներ, տրամադրվում է բիզնես աջակցություն և խորհրդատվական ծառայություններ: Միաժամանակ, մասնավոր հատվածը նույնպես իրականացնում է ներքին որակավորման դասընթացներ: Բարձր տեխնոլոգիաների անընդհատ զարգացմանը զուգահեռ այժմ ունենք բարձր տեխնոլոգիաների ոլորտում բարձր որակավորում ունեցող կադրերի պակաս, որի նպատակով պետք է իրականացնել շուկայի պահանջներին համապատասխան վերապատրաստման դասընթացներ: Մարզերում դասընթացների կազմակերպում միջոցառման շրջանակում իրականացվում է կենտրոնի աշխատակազմի բնականոն գործունեության ապահովումը: Ներգրավված մասնագետների միջոցով կենտրոնի կողմից իրականացվում են ծրագրեր, մասնավորապես՝ նորաստեղծ կազմակերպությունների հիմնադրման աշխատանքների, գործունեության բիզնես պլանավորման փաստաթղթերի մշակման, գործարար կապերի հաստատման, կազմակերպություններին խորհրդատվական ծառայությունների տրամադրման նպատակով: 2020 թվականի ընթացքում ծրագիրը ՀՀ ԲՏԱ նախարարության կողմից իրականացվել է առաջին անգամ, ընդ որում՝ 2 բաղադրիչով՝ ծրագրավորման հիմունքներ դասընթացի իրականացում, թիրախավորված հեռավար ուսուցման իրականացում: Ծրագրավորման հիմունքներ դասընթացի շրջանակներում թվով 3814 դիմորդներից (որից, ք.Երևան՝ 1883 դիմորդ, մարզեր և ԱՀ՝ 1931 դիմորդ) դասընթացը ավարտել են 2009 շրջանավարտ (որից, ք.Երևան՝ 990 շրջանավարտ, մարզեր և ԱՀ՝ 1019 շրջանավարտ): Իսկ թիրախավորված հեռավար ուսուցման իրականացում դասընթացի շրջանակներում թվով 11546 դիմորդներից (որից, ք.Երևան՝ 5592 դիմորդ, մարզեր և ԱՀ՝ 5954 դիմորդ) դասընթացը ավարտել են 3215 շրջանավարտ (որից, ք. Երևան՝ 1749 շրջանավարտ, մարզեր և ԱՀ՝ 1466 շրջանավարտ): 2020 թվականին 18 ուղղություններով դասընթացներին մասնակցելու համար անցկացվել են ընդունելության քննություններ, որի արդյունքում պետությունը ֆինանսավորել է ուսանողների կրթությունը հետևյալ սանդղակով. 50%-ից ցածր արդյունք՝ ք. Երևան՝ 10%, մարզեր՝ 30%, 51%-75% արդյունք՝ ք. Երևան՝ 40%, մարզեր՝ 60% և 76%-ից բարձր արդյունք՝ ք. Երևան՝ 80%, մարզեր՝ 90%:

	Ընդհանուր առմամբ, գործող և նոր տեխնոլոգիական մասնագիտացված թրեյնինգ կենտրոնների ստեղծման շրջանակներում ակնկալվում է մասնագիտական դասընթացների կազմակերպում, մասնավոր ընկերությունների մասնագետների կողմից փորձի և գիտելիքի փոխանցում շահառուներին, բիզնես աջակցության և խորհրդատվական ծառայությունների տրամադրում, որոնց իրականացման համար անհրաժեշտ է խորհրդատվական և ֆինանսական աջակցություն: **1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները (միջոցառումը համակատարող ունենալու դեպքում նշելով նաև համակատարողի կողմից համապատասխան միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները)** Բարձր տեխնոլոգիաների ոլորտում անհրաժեշտ է մշակել և իրականացնել կադրերի պատրաստման և վերապատրաստման ծրագրեր միջազգային կրթական և ՀՀ-ում արդեն գործող կազմակերպությունների ներգրավմամբ: Անհրաժեշտ է մշակել և իրականացնել որակավորման այնպիսի դասընթացներ, որոնք ուղղված կլինեն նաև մասնավոր հատվածի կողմից կոնկրետ մասնագետների նկատմամբ պահանջարկի ապահովմանը: Անհրաժեշտ է շարունակել նպաստել առկա մարզային տեխնոլոգիական կենտրոններում (Գյումրու և Վանաձորի) բարձր որակավորմամբ մասնագետների ապահովմանը և այլ մարզերում նոր տեխնոլոգիական կենտրոնների ստեղծմանը, ինչպես նաև խթանել մարզային դասընթացների իրականացման գործընթացում ԲՈՒՀ-երի ներգրավումը՝ որպես էկոհամակարգի բաղադրիչի: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է բարձրացնել շուկայի պահանջներին համապատասխան մասնագիտական հմտություններ ունեցող մասնագետների թիվը և նպաստել աշխատաշուկայում նրանց ներգրավմանը: Ծրագրի իրականացման հիմնական նպատակը կրթելու, գիտելիք ձեռք բերելու հնարավորություն ընձեռելու միջոցով ոլորտի որակյալ մասնագետներ և նոր սերունդ պատրաստելն է, իսկ իրականացվող ծրագրի որակը խստագույնս վերահսկվելու է: Ծրագրի իրականացման արդյունքում տեխնոլոգիական կենտրոնների միջոցով ՀՀ մարզերում կձևավորվեն նոր հնարավորություններ տաղանդավոր երիտասարդների, նորարար գաղափարների իրականացման, նոր ընկերությունների և աշխատատեղերի ստեղծման համար՝ նպաստելով, ընդհանուր առմամբ, մարզերի կայուն տնտեսական զարգացմանը և Երևանի ու մարզերի միջև սոցիալ-տնտեսական անհամամասնությունների կրճատմանը:
10.	**10. «Ոլորտի ընկերությունների բիզնես կարողությունների զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացում»** **10.1 <u>Տեխնոլոգիական ընկերությունների համար կարողությունների ամրապնդմանն ուղղված դասընթացների, սեմինարների, աշխատարանների կազմակերպում և իրականացում</u>** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը (նշելով նաև ծրագրի համաձայն ընդունման ենթակա ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման համար հիմք հանդիսացող ՀՀ Սահմանադրության կամ օրենքների դրույթները, ինչպես նաև կառավարության ծրագրի համապատասխան կետը)** Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային Ժողովի 26.08.2021թ. ԱԺՈ – 002 - Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի դրույթներից, մասնավորապես՝ 2.3-րդ բաժնի բարձր տեխնոլոգիաներ ենթաբաժնի 13-րդ պարբերության պահանջներից, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հուլիսի 10-ի «Հայաստանի Հանրապետության 2021-2023 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» N 1212-Ն որոշման հավելվածի 2-րդ մասի 6-րդ կետի «1. Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության էկոհամակարգի և շուկայի զարգացման ծրագիր» ենթավերնագրի պահանջներից: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները (նշելով նաև ելակետային տվյալներ, եթե դրանք առկա են)** Տեխնոլոգիական առաջընթացի գործում էական նշանակություն ունի մարդկային կապիտալը: Թեև հայաստանյան տեխնոլոգիական ընկերությունները ունեն անհրաժեշտ կարողությունների որոշակի մակարդակ,

	այնուամենայնիվ, դրանց հետագա խթանումը կարող է նպաստել ոլորտի աճի տեմպերի արագացմանը: Այդ գործում հատկապես առանցքային նշանակություն ունեն ընկերությունների շրջանում բիզնես կարողությունների ամրապնդումը: **1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները (միջոցառումը համակատարող ունենալու դեպքում նշելով նաև համակատարողի կողմից համապատասխան միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները)** Վերոնշյալ խնդրի լուծման նպատակով առաջարկվում է իրականացնել տեխնոլոգիական ընկերությունների աշխատակիցների շրջանում կարողությունների ամրապնդմանն ուղղված ծրագրեր, որոնք կարող են լինել դասընթացների, սեմինարների և աշխատարանների տեսքով՝ կախված թիրախային խմբերից և նպատակներից: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման արդյունքում ակնկալվում է ապահովել երկրում տեխնոլոգիական առաջընթացի համար անհրաժեշտ կարևորագույն ռեսուրսի՝ մարդկային կապիտալի զարգացումը:
11.	**11. Երկակի նշանակության արտադրատեսակների ներկրման, ինչպես նաև համատեղ ձեռնարկությունների ստեղծման մեխանիզմների խթանման համար ոլորտի օրենսդրական դաշտի բարելավում և պարզեցված ընթացակարգերի սահմանում** **11.1 <u>Ռազմարդյունաբերության ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի բարելավում և պարզեցված ընթացակարգերի սահմանում</u>** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը (նշելով նաև ծրագրի համաձայն ընդունման ենթակա ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման համար հիմք հանդիսացող ՀՀ Սահմանադրության կամ օրենքների դրույթները, ինչպես նաև կառավարության ծրագրի համապատասխան կետը)** Միջոցառումն անհրաժեշտ է ՀՀ ռազմարդյունաբերական համալիրի զարգացումը խթանելու, ՌԱ համալիրի կազմակերպությունների համար բարենպաստ պայմաններ ստեղծելու համար: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները (նշելով նաև ելակետային տվյալներ, եթե դրանք առկա են)** Թեև վերջին տարիների ընթացքում ռազմարդյունաբերության ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտն զգալիորեն բարեփոխվել է, սակայն ՌԱ համալիրի կազմակերպությունների կողմից պարբերաբար բարձրացվող խնդիրներին լուծում տալու նպատակով անհրաժեշտ է համակարգված ու նպատակային քայլեր ձեռնարկել տվյալ ոլորտում: **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները (միջոցառումը համակատարող ունենալու դեպքում նշելով նաև համակատարողի կողմից համապատասխան միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները)** Առաջարկվում է պարզեցնել ՌԱՀ ընկերությունների կողմից երկակի նշանակության ապրանքների շրջանառության ընթացակարգերը, գնումների գործընթացը, սահմանել ՌԱՀ-ի ընկերությունների վարկանիշային սանդղակ՝ մի կողմից դյուրացնելով կազմակերպությունների գործունեությունը, իսկ մյուս կողմից՝ կանոնակարգելով պետություն-բիզնես հարաբերությունները: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման իրականացման արդյունքում ստացվելու են երկակի նշանակության արտադրատեսակների ներկրման դյուրացված ընթացակարգեր, ինչպես նաև ռազմարդյունաբերության բնագավառում համատեղ ձեռնարկությունների ստեղծման պարզեցված իրավական կարգավորումներ:
12.	**12. Արտադրողականության բարձրացում, արտադրական շղթայի ամբողջականության ու արդյունավետության ապահովում** **12.1 <u>Ներդրումների ներգրավում</u>** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը (նշելով նաև ծրագրի համաձայն ընդունման ենթակա ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման համար հիմք**

	հանդիսացող ՀՀ Սահմանադրության կամ օրենքների դրույթները, ինչպես նաև կառավարության ծրագրի համապատասխան կետը) Միջոցառման իրավական հիմքերը սահմանված են «Ռազմարդյունաբերական համալիրի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ, 7-րդ և 13-րդ կետերով: Այն անհրաժեշտ է ՀՀ ռազմարդյունաբերական համալիրի զարգացումը խթանելու, ՌԱ համալիրի կազմակերպություններին անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներով ապահովելու համար: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները (նշելով նաև ելակետային տվյալներ, եթե դրանք առկա են)** Հայաստանի ռազմարդյունաբերության բնագավառում ներքին ու արտաքին ներդրումների ծավալը, ինչպես նաև առկա ներդրումների ընձեռած հնարավորությունները բավարար չեն երկրի առջև ծառացած մարտահրավերներին համահունչ զարգացում ապահովելու համար: Այս ոլորտի խնդիրները պայմանավորված են ինչպես ինստիտուցիոնալ, այնպես էլ տեխնոլոգիական, մասնագետների առկայության և տեխնիկական հագեցվածության գործոններով: **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները (միջոցառումը համակատարող ունենալու դեպքում նշելով նաև համակատարողի կողմից համապատասխան միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները)** Առաջարկվում է կիրառել ֆինանսատնտեսական խթանման մեխանիզմներ, նպաստել մասնագետների ներգրավմանը, ապահովել ժամանակակից տեխնոլոգիաների ներմուծմանն ու կիրառմանը: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Որպես շոշափելի արդյունք հանդես է գալու ՀՀ ՌԱՀ-ի ոլորտում ներդրումների ծավալի շարունակական աճը՝ տարեկան միջինը 3-5%՝ հանգեցնելով հայրենական ռազմարդյունաբերության զարգացմանը նոր թափ հաղորդելուն և այն ՀՀ արդյունաբերական ու տեխնոլոգիական զարգացման քարշակներից մեկը դարձնելուն: **12.2 <u>Ժամանակակից տեխնոլոգիաների ներդրում</u>** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը (նշելով նաև ծրագրի համաձայն ընդունման ենթակա ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման համար հիմք հանդիսացող ՀՀ Սահմանադրության կամ օրենքների դրույթները, ինչպես նաև կառավարության ծրագրի համապատասխան կետը)** Միջոցառման իրավական հիմքերը սահմանված են «Ռազմարդյունաբերական համալիրի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, ինչպես նաև 4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 2-րդ մասի 8-րդ կետերով: Միջոցառման կատարումն անհրաժեշտ է ՀՀ ռազմարդյունաբերական համալիրի զարգացումը խթանելու, ՌԱ համալիրի կազմակերպությունների գործունեությունն առաջատար տեխնոլոգիական լուծումներով առավել արդյունավետ դարձնելու համար: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները (նշելով նաև ելակետային տվյալներ, եթե դրանք առկա են)** Համաշխարհային ռազմարդյունաբերության զարգացումը պայմանավորված է նոր տեխնոլոգիական լուծումների շարունակական ներդրմամբ ու կիրառմամբ: Ընդ որում, այդ գործընթացում առաջնային դիրք են զբաղեցնում քաղաքացիական բնագավառի համար մշակված տեխնոլոգիական լուծումները, որոնք կիրառելի են նաև ռազմարդյունաբերության ոլորտում: Մեր խնդիրները հանգում են հիմնականում ռազմարդյունաբերության բնագավառում տեխնոլոգիական զարգացման համակարգված հայեցակարգային մոտեցումների ոչ բավարար մշակվածությամբ, ոչ բավարար ֆինանսավորմամբ, ոլորտի ոչ բավարար գրավչությամբ: **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները (միջոցառումը համակատարող ունենալու դեպքում նշելով նաև համակատարողի կողմից համապատասխան միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները)** Համակարգային մոտեցման ու պլանավորման պարագայում անհրաժեշտ է ապահովել ռազմարդյունաբերության բնագավառում տարեկան 1-2 ժամանակակից տեխնոլոգիական լուծումների մշակումն ու ներդրումը: Ընդ որում, այդ տեխնոլոգիաները կարող են կիրառվել ինչպես առանձին վերցված ընկերության կողմից

	իրականացվող նախագծի, այնպես էլ մի քանի ընկերությունների կողմից իրականացվող համատեղ նախագծերի շրջանակում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Նշված միջոցառման արդյունքում ակնկալվում է ամեն տարի ունենալ առնվազն 1-2 հաջողված տեխնոլոգիայի ներդրում ռազմարդյունաբերության ոլորտում՝ դրանով նաև հիմք ստեղծելով տեխնոլոգիաների մշակման, ներդրման ու արտահանման՝ հայրենական ներուժը զարգացնելու համար: **12.3 <u>Ռազմարդյունաբերական համալիրի անձնակազմի որակավորման բարձրացում</u>** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը (նշելով նաև ծրագրի համաձայն ընդունման ենթակա ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման համար հիմք հանդիսացող ՀՀ Սահմանադրության կամ օրենքների դրույթները, ինչպես նաև կառավարության ծրագրի համապատասխան կետը)** Միջոցառման իրավական հիմքերը սահմանված են «Ռազմարդյունաբերական համալիրի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, ինչպես նաև 4-րդ հոդվածի 2-րդ մասի 13-14-րդ կետերով: Միջոցառումն անհրաժեշտ է ՀՀ ռազմարդյունաբերական համալիրի զարգացումը խթանելու, ՌԱ համալիրի կազմակերպությունները բարձր որակավորում ունեցող մասնագետներով համալրելու համար: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները (նշելով նաև ելակետային տվյալներ, եթե դրանք առկա են)** Հայաստանի արդյունաբերության բնագավառում առկա դժվարությունները, ֆինանսավորման պակասը, գիտաուսումնական հենքի՝ արդի չափանիշներին չհամապատասխանելը, ինչպես նաև երիտասարդ մասնագետների համար ֆինանսապես ոչ գրավիչ լինելը հանգեցնում են նաև ռազմարդյունաբերության ոլորտում մասնագիտական ներուժի էական պակասի: Արդյունքում ՌԱՀ-ի ընկերությունները բախվում են ինչպես բարձրագույն, այնպես էլ միջին մասնագիտական գիտելիքներ և հմտություններ ունեցող մասնագետներ ներգրավելու անհնարինությանը, ինչն զգալիորեն նվազեցնում է դրանց զարգացման հնարավորությունները: **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները (միջոցառումը համակատարող ունենալու դեպքում նշելով նաև համակատարողի կողմից համապատասխան միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները)** Առաջարկվում է մշակել և գործողության դնել Հայաստանի ու արտերկրի առաջատար հաստատությունների, ինչպես նաև գործընկեր պետությունների ընկերությունների հետ ՀՀ ռազմարդյունաբերական համալիրի անձնակազմի վերապատրաստման ու որակավորման բարձրացման դասընթացների անցկացման մեխանիզմները: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման արդյունքում ակնկալվում է ունենալ ՀՀ ու արտերկրի առաջատար հաստատությունների, ինչպես նաև գործընկեր պետությունների ընկերությունների հետ ՀՀ ՌԱՀ-ի անձնակազմի վերապատրաստման ու որակավորման բարձրացման դասընթացների անցկացման վերաբերյալ իրավական փաստաթղթերի փաթեթ: **12.4 <u>Տնտեսական խթանման մեխանիզմների ներդրում</u>** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը (նշելով նաև ծրագրի համաձայն ընդունման ենթակա ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման համար հիմք հանդիսացող ՀՀ Սահմանադրության կամ օրենքների դրույթները, ինչպես նաև կառավարության ծրագրի համապատասխան կետը)** Միջոցառման իրավական հիմքերը սահմանված են «Ռազմարդյունաբերական համալիրի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով, ինչպես նաև 11-րդ հոդվածով: Միջոցառումն անհրաժեշտ է ՀՀ ռազմարդյունաբերական համալիրի զարգացումը խթանելու, ֆինանսատնտեսական գործիքակազմի կիրառմամբ ՌԱ համալիրի կազմակերպությունների գործունեության արդյունավետությունը և մրցունակությունը ավելացնելու համար: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները (նշելով նաև ելակետային տվյալներ, եթե դրանք առկա են)** Հայաստանի ռազմարդյունաբերության կայացման փուլում անհրաժեշտ է լայնորեն կիրառել օրենքով նախատեսված ֆինանսատնտեսական, արտահանման խթանման գործիքակազմը՝ ապահովելու համար ոլորտի

	ընկերությունների զարգացման այնպիսի ցուցանիշները, որոնք հնարավոր կդարձնեն դրանց մրցունակությունն ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում: **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները (միջոցառումը համակատարող ունենալու դեպքում նշելով նաև համակատարողի կողմից համապատասխան միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները)** Առաջարկվում է լրամշակել և ակտիվորեն կիրառել ՌԱՀ-ի ընկերությունների խթանման գործիքակազմը, որը կարող է ներառել հարկային և վարչարարական ընթացակարգերի բարելավում, հասցեական արտոնությունների տրամադրում, մաքսային ընթացակարգերի պարզեցում, նպատակային կրթական ծրագրեր, ինչպես նաև արտահանման խթանմանն ուղղված քաղաքականության որդեգրում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման կատարումը կհանգեցնի նպատակային ֆինանսատնտեսական, արտահանման խթանման գործիքակազմի, կրթական և սոցիալական ծրագրերի մշակմանն ու իրականացմանը: **12.5 Մշակող արդյունաբերության արտադրանքի արտահանման ծավալների աճին ուղղված մեխանիզմների ներդրում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը (նշելով նաև ծրագրի համաձայն ընդունման ենթակա ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման համար հիմք հանդիսացող ՀՀ Սահմանադրության կամ օրենքների դրույթները, ինչպես նաև կառավարության ծրագրի համապատասխան կետը)** Միջոցառման իրավական հիմքերը սահմանված են «Ռազմարդյունաբերական համալիրի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով: Միջոցառումն անհրաժեշտ է ՀՀ ռազմարդյունաբերական համալիրի զարգացումը խթանելու, ՌԱ համալիրի կազմակերպությունների արտահանման կարողությունները զարգացնելու, դրանց գործունեության արդյունավետությունը և մրցունակությունն ավելացնելու համար: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները (նշելով նաև ելակետային տվյալներ, եթե դրանք առկա են)** Հայաստանից ռազմարդյունաբերական արտադրանքի արտահանման ծավալները ներկայումս չնչին են, ինչը հնարավորություն չի տալիս լիարժեքորեն բացահայտելու ռազմարդյունաբերական ընկերությունների զարգացման ներուժը և բարձրացնելու միջազգային շուկաներում դրանց ներկայացվածության մակարդակն ու մրցունակությունը: **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները (միջոցառումը համակատարող ունենալու դեպքում նշելով նաև համակատարողի կողմից համապատասխան միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները)** ՌԱՀ-ի ընկերություններին խթանելու, նորագույն տեխնոլոգիական լուծումների հասանելիությունը նրանց համար ապահովելու, ֆինանսատնտեսական և արտաքին առևտրային խթանման գործիքակազմը կիրառելու միջոցով հնարավոր կլինի լիարժեքորեն բացահայտել հայրենական ռազմարդյունաբերության ներուժը: Արտաքին շուկաներում հայրենական ռազմարդյունաբերական արտադրանքի առաջխաղացման գործում կարևոր դերակատարում ունի ՀՀ արտաքին գործերի նախարարությունը, իսկ ներքին միջավայրի ձևավորման հարցերում՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման կատարման արդյունքում նախատեսվում է մինչև 2025 թվականը ռազմարդյունաբերական արտադրանքի արտահանման ծավալները հասցնել 120 մլն ԱՄՆ դոլարի: **12.6 ՀՀ ԲՏԱՆ ՌԱԿ-ի կազմում փորձարկման և գնահատման ստորաբաժանման ստեղծում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը (նշելով նաև ծրագրի համաձայն ընդունման ենթակա ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման համար հիմք հանդիսացող ՀՀ Սահմանադրության կամ օրենքների դրույթները, ինչպես նաև կառավարության ծրագրի համապատասխան կետը)** Միջոցառման իրականացումը բխում է ՀՀ ԲՏԱՆ ՌԱԿ-ի կարողություններն ավելացնելու անհրաժեշտությունից: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները (նշելով նաև ելակետային տվյալներ, եթե դրանք առկա են)**

	Ներկայումս ՀՀ ԲՏԱՆ ՌԱԿ-ը չունի ռազմարդյունաբերական ընկերությունների մշակած արտադրանքի և մատուցվող ծառայությունների փորձարկման ու գնահատման բավարար կարողություններ, ինչը դանդաղեցնում է մշակված արտադրանքը կամ ծառայությունները վերջնական սպառողին հասցնելու գործընթացը: **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները (միջոցառումը համակատարող ունենալու դեպքում նշելով նաև համակատարողի կողմից համապատասխան միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները)** Ստորաբաժանման ստեղծումը հնարավորություն է տալու նվազեցնել ԳՀՓԿ աշխատանքների ավարտական ընդունման նպատակով իրականացվող փորձարկումների պահանջների անկատարությունը՝ հիմնվելով ԳՀՓԿԱ պետական փորձարկումների անցկացման մշակվելիք ստանդարտների վրա: ՌԱԿ-ի կազմում ստորաբաժանման կողմից արտադրանքի նախնական փորձարկումների և պետական պատվիրատուի ստանդարտներին համապատասխանեցումը հնարավորություն է տալու ՊՆ-ին խնայել ժամանակ և ռեսուրսներ մինչև արտադրանքը ավարտական վիճակի հասցնելը: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման կատարման արդյունքում նախատեսվում է մինչև 2023 թվականը ՀՀ ԲՏԱՆ ՌԱԿ-ի կազմում ունենալ համապատասխան կարողություններով և գործառույթներով ստորաբաժանում:
13.	**13. Ռազմավարական նշանակության ապրանքների արտադրության ներքին կարողությունների զարգացում** **13.1 <u>Ռազմավարական նշանակության ապրանքների պահանջարկի հստակեցում</u>** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը (նշելով նաև ծրագրի համաձայն ընդունման ենթակա ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման համար հիմք հանդիսացող ՀՀ Սահմանադրության կամ օրենքների դրույթները, ինչպես նաև կառավարության ծրագրի համապատասխան կետը)** Միջոցառման նպատակն է ՀՀ հիմնական սպառողների՝ ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության, ՀՀ ոստիկանության ու ՀՀ ազգային անվտանգության ծառայության՝ ռազմավարական նշանակության ապրանքների պահանջարկը՝ ՌԱ համալիրի կազմակերպությունների հզորությունները դրա բավարարման համար անհրաժեշտ ուղղությամբ զարգացնելու համար, ինչպես նաև մյուս մասը ներկրելու հնարավորություններ ստեղծելու նպատակով: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները (նշելով նաև ելակետային տվյալներ, եթե դրանք առկա են)** Ռազմավարական նշանակության ապրանքների պահանջարկը լիարժեքորեն գնահատված չէ, ինչը բարդացնում է ռազմարդյունաբերության զարգացման և ռազմավարական նշանակության ապրանքների ներկրման նպատակային պլանավորումը: **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները (միջոցառումը համակատարող ունենալու դեպքում նշելով նաև համակատարողի կողմից համապատասխան միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները)** Առաջարկվում է անցկացնել ռազմավարական ապրանքների պահանջարկի միջգերատեսչական համապարփակ գնահատում՝ հստակեցնելով ինչպես ներքին արտադրանքի հնարավորություններն ու թիրախային ցուցանիշները, այնպես է ներկրման ծավալներն ու դրանց համար նախատեսվող միջոցները: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Որպես շոշափելի արդյունք ստացվելու են ռազմավարական նշանակության ապրանքների ներքին պահանջարկի հստակ ցուցանիշներ, ինչպես նաև դրանցից բխող՝ ռազմարդյունաբերության և ներմուծման պլանավորման փաստաթղթեր: **13.2 <u>Արտադրական հզորությունների զարգացման հիմնական ուղղությունների սահմանում</u>** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը (նշելով նաև ծրագրի համաձայն ընդունման ենթակա ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման համար հիմք**

հանդիսացող ՀՀ Սահմանադրության կամ օրենքների դրույթները, ինչպես նաև կառավարության ծրագրի համապատասխան կետը)

Միջոցառման նպատակն է սահմանել ՀՀ ռազմարդյունաբերական համալիրի ընկերությունների արտադրական հզորությունների զարգացման հիմնական ուղղությունները՝ հիմնվելով ինչպես 3.1 միջոցառման արդյունքում հստակեցված տվյալների, այնպես էլ արդյունաբերական ու տեխնոլոգիական զարգացման համաշխարհային միտումների գնահատման վրա:

1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները (նշելով նաև ելակետային տվյալներ, եթե դրանք առկա են)

ՀՀ ռազմարդյունաբերության բնագավառում արտադրական հզորությունների զարգացման հիմնական ուղղությունները համակարգված կերպով սահմանված չեն:

1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները (միջոցառումը համակատարող ունենալու դեպքում նշելով նաև համակատարողի կողմից համապատասխան միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները)

Առաջարկվում է միջգերատեսչական համապարփակ գնահատման հիման վրա հստակեցնել ներքին արտադրանքի հնարավորություններն ու թիրախային ցուցանիշները, համաշխարհային զարգացման միտումները և դրանց հիման վրա սահմանել մեր երկրում արտադրական հզորությունների զարգացման հիմնական ուղղությունները:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Միջոցառման արդյունքում ՀՀ ռազմարդյունաբերական համալիրի ընկերություններն ստանալու են զարգացման հեռանկարային ցուցանիշներ, որոնց շուրջ հնարավոր կլինի պլանավորել զարգացման գործընթացը:

13.3 <u>Ներդրումների ներգրավում</u>

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը (նշելով նաև ծրագրի համաձայն ընդունման ենթակա ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման համար հիմք հանդիսացող ՀՀ Սահմանադրության կամ օրենքների դրույթները, ինչպես նաև կառավարության ծրագրի համապատասխան կետը)

Միջոցառումն անհրաժեշտ է ՀՀ ռազմարդյունաբերական համալիրի զարգացումը խթանելու, ՌԱ համալիրի կազմակերպություններին անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներով ապահովելու համար:

1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները (նշելով նաև ելակետային տվյալներ, եթե դրանք առկա են)

Հայաստանի ռազմարդյունաբերության բնագավառում ներքին ու արտաքին ներդրումների ծավալը, ինչպես նաև առկա ներդրումների ընձեռած հնարավորությունները բավարար չեն երկրի առջև ծառացած մարտահրավերներին համահունչ զարգացում ապահովելու համար: Այս ոլորտի խնդիրները պայմանավորված են ինչպես ինստիտուցիոնալ, այնպես էլ տեխնոլոգիական, մասնագետների առկայության և տեխնիկական հագեցվածության գործոններով:

1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները (միջոցառումը համակատարող ունենալու դեպքում նշելով նաև համակատարողի կողմից համապատասխան միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները)

Առաջարկվում է կիրառել ֆինանսատնտեսական խթանման մեխանիզմներ, նպաստել մասնագետների ներգրավմանը, ապահովել ժամանակակից տեխնոլոգիաների ներմուծմանն ու կիրառմանը:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Որպես շոշափելի արդյունք հանդես է գալու ներդրումային բարենպաստ միջավայրի ձևավորումը՝ հանգեցնելով հայրենական ռազմարդյունաբերության զարգացմանը նոր թափ հաղորդելուն և այն ՀՀ արդյունաբերական ու տեխնոլոգիական զարգացման քարշակներից մեկը դարձնելուն:

13.4 <u>Ժամանակակից տեխնոլոգիաների ներդրում</u>

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը (նշելով նաև ծրագրի համաձայն ընդունման ենթակա ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման համար հիմք

	հանդիսացող ՀՀ Սահմանադրության կամ օրենքների դրույթները, ինչպես նաև կառավարության ծրագրի համապատասխան կետը) Միջոցառումն անհրաժեշտ է ՀՀ ռազմարդյունաբերական համալիրի զարգացումը խթանելու, ՌԱ համալիրի կազմակերպությունների գործունեությունն առաջատար տեխնոլոգիական լուծումներով առավել արդյունավետ դարձնելու համար: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները (նշելով նաև ելակետային տվյալներ, եթե դրանք առկա են)** Համաշխարհային ռազմարդյունաբերության զարգացումը պայմանավորված է նոր տեխնոլոգիական լուծումների շարունակական ներդրմամբ ու կիրառմամբ: Ընդ որում, այդ գործընթացում առաջնային դիրք են զբաղեցնում քաղաքացիական բնագավառի համար մշակված տեխնոլոգիական լուծումները, որոնք կիրառելի են նաև ռազմարդյունաբերության ոլորտում: Մեր խնդիրները հանգում են հիմնականում ռազմարդյունաբերության բնագավառում տեխնոլոգիական զարգացման համակարգված հայեցակարգային մոտեցումների ոչ բավարար մշակվածությամբ, ոչ բավարար ֆինանսավորմամբ, ոլորտի ոչ բավարար գրավչությամբ: **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները (միջոցառումը համակատարող ունենալու դեպքում նշելով նաև համակատարողի կողմից համապատասխան միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները)** Համակարգային մոտեցման ու պլանավորման պարագայում անհրաժեշտ է ապահովել ռազմարդյունաբերության բնագավառում տարեկան 1-2 ժամանակակից տեխնոլոգիական լուծումների մշակումն ու ներդրումը: Ընդ որում, այդ տեխնոլոգիաները կարող են կիրառվել ինչպես առանձին վերցված ընկերության կողմից իրականացվող նախագծի, այնպես էլ մի քանի ընկերությունների կողմից իրականացվող համատեղ նախագծերի շրջանակում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Նշված միջոցառման արդյունքում ակնկալվում է ամեն տարի ունենալ առնվազն 1-2 հաջողված տեխնոլոգիայի ներդրում ռազմարդյունաբերության ոլորտում՝ դրանով նաև հիմք ստեղծելով տեխնոլոգիաների մշակման, ներդրման ու արտահանման՝ հայրենական ներուժը զարգացնելու համար: **13.5 <u>Ռազմարդյունաբերական համալիրի անձնակազմի որակավորման բարձրացում</u>** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը (նշելով նաև ծրագրի համաձայն ընդունման ենթակա ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման համար հիմք հանդիսացող ՀՀ Սահմանադրության կամ օրենքների դրույթները, ինչպես նաև կառավարության ծրագրի համապատասխան կետը)** Միջոցառումն անհրաժեշտ է ՀՀ ռազմարդյունաբերական համալիրի զարգացումը խթանելու, ՌԱ համալիրի կազմակերպությունները բարձր որակավորում ունեցող մասնագետներով համալրելու համար: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները (նշելով նաև ելակետային տվյալներ, եթե դրանք առկա են)** Հայաստանի արդյունաբերության բնագավառում առկա դժվարությունները, ֆինանսավորման պակասը, գիտաուսումնական հենքի՝ արդի չափանիշներին չհամապատասխանելը, ինչպես նաև երիտասարդ մասնագետների համար ֆինանսապես ոչ գրավիչ լինելը հանգեցնում են նաև ռազմարդյունաբերության ոլորտում մասնագիտական ներուժի էական պակասի: Արդյունքում ՌԱՀ-ի ընկերությունները բախվում են ինչպես բարձրագույն, այնպես էլ միջին մասնագիտական գիտելիքներ և հմտություններ ունեցող մասնագետներ ներգրավելու անհնարինությանը, ինչն զգալիորեն նվազեցնում է դրանց զարգացման հնարավորությունները: **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները (միջոցառումը համակատարող ունենալու դեպքում նշելով նաև համակատարողի կողմից համապատասխան միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները)** Առաջարկվում է մշակել և գործողության դնել Հայաստանի ու արտերկրի առաջատար հաստատությունների, ինչպես նաև գործընկեր պետությունների ընկերությունների հետ ՀՀ ռազմարդյունաբերական համալիրի անձնակազմի վերապատրաստման ու որակավորման բարձրացման դասընթացների անցկացման մեխանիզմները: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

	Միջոցառման արդյունքում ակնկալվում է ունենալ ՀՀ ու արտերկրի առաջատար հաստատությունների, ինչպես նաև գործընկեր պետությունների ընկերությունների հետ ՀՀ ՌԱՀ-ի անձնակազմի վերապատրաստման ու որակավորման բարձրացման դասընթացների անցկացման վերաբերյալ իրավական փաստաթղթերի փաթեթ: **13.6 <u>Տնտեսական խթանման մեխանիզմների ներդրում</u>** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը (նշելով նաև ծրագրի համաձայն ընդունման ենթակա ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման համար հիմք հանդիսացող ՀՀ Սահմանադրության կամ օրենքների դրույթները, ինչպես նաև կառավարության ծրագրի համապատասխան կետը)** Միջոցառումն անհրաժեշտ է ՀՀ ռազմարդյունաբերական համալիրի զարգացումը խթանելու, ֆինանսատնտեսական գործիքակազմի կիրառմամբ ՌԱ համալիրի կազմակերպությունների գործունեության արդյունավետությունը և մրցունակությունը ավելացնելու համար: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները (նշելով նաև ելակետային տվյալներ, եթե դրանք առկա են)** Հայաստանի ռազմարդյունաբերության կայացման փուլում անհրաժեշտ է լայնորեն կիրառել օրենքով նախատեսված ֆինանսատնտեսական, արտահանման խթանման գործիքակազմը՝ ապահովելու համար ոլորտի ընկերությունների զարգացման այնպիսի ցուցանիշները, որոնք հնարավոր կդարձնեն դրանց մրցունակությունն ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում: **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները (միջոցառումը համակատարող ունենալու դեպքում նշելով նաև համակատարողի կողմից համապատասխան միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները)** Առաջարկվում է լրամշակել և ակտիվորեն կիրառել ՌԱՀ-ի ընկերությունների խթանման գործիքակազմը, որը կարող է ներառել հարկային արտոնությունների սահմանում, մաքսային ընթացակարգերի պարզեցում, նպատակային կրթական ծրագրեր, ինչպես նաև արտահանման խթանմանն ուղղված քաղաքականության որդեգրում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման կատարումը կհանգեցնի նպատակային ֆինանսատնտեսական, արտահանման խթանման գործիքակազմի, կրթական և սոցիալական ծրագրերի մշակմանն ու իրականացմանը:
14.	**14. Արտադրական կարողությունների շեշտակի բարձրացում** **14.1 <u>Ժամանակակից տեխնոլոգիաների ներդրում</u>** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը (նշելով նաև ծրագրի համաձայն ընդունման ենթակա ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման համար հիմք հանդիսացող ՀՀ Սահմանադրության կամ օրենքների դրույթները, ինչպես նաև կառավարության ծրագրի համապատասխան կետը)** Միջոցառումն անհրաժեշտ է ՀՀ ռազմարդյունաբերական համալիրի զարգացումը խթանելու, ՌԱ համալիրի կազմակերպությունների գործունեությունն առաջատար տեխնոլոգիական լուծումներով առավել արդյունավետ դարձնելու համար: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները (նշելով նաև ելակետային տվյալներ, եթե դրանք առկա են)** Համաշխարհային ռազմարդյունաբերության զարգացումը պայմանավորված է նոր տեխնոլոգիական լուծումների շարունակական ներդրմամբ ու կիրառմամբ: Ընդ որում, այդ գործընթացում առաջնային դիրք են զբաղեցնում քաղաքացիական բնագավառի համար մշակված տեխնոլոգիական լուծումները, որոնք կիրառելի են նաև ռազմարդյունաբերության ոլորտում: Մեր խնդիրները հանգում են հիմնականում ռազմարդյունաբերության բնագավառում տեխնոլոգիական զարգացման համակարգված հայեցակարգային մոտեցումների ոչ բավարար մշակվածությամբ, ոչ բավարար ֆինանսավորմամբ, ոլորտի ոչ բավարար գրավչությամբ: **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները (միջոցառումը համակատարող ունենալու դեպքում նշելով նաև համակատարողի կողմից համապատասխան միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները)**

Համակարգային մոտեցման ու պլանավորման պարագայում անհրաժեշտ է ապահովել ռազմարդյունաբերության բնագավառում տարեկան 1-2 ժամանակակից տեխնոլոգիական լուծումների մշակումն ու ներդրումը: Ընդ որում, այդ տեխնոլոգիաները կարող են կիրառվել ինչպես առանձին վերցված ընկերության կողմից իրականացվող նախագծի, այնպես էլ մի քանի ընկերությունների կողմից իրականացվող համատեղ նախագծերի շրջանակում:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Նշված միջոցառման արդյունքում ակնկալվում է ամեն տարի ունենալ առնվազն 1-2 հաջողված տեխնոլոգիայի ներդրում ռազմարդյունաբերության ոլորտում՝ դրանով նաև հիմք ստեղծելով տեխնոլոգիաների մշակման, ներդրման ու արտահանման՝ հայրենական ներուժը զարգացնելու համար:

14.2 <u>Ռազմարդյունաբերական համալիրի անձնակազմի որակավորման բարձրացում</u>

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը (նշելով նաև ծրագրի համաձայն ընդունման ենթակա ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման համար հիմք հանդիսացող ՀՀ Սահմանադրության կամ օրենքների դրույթները, ինչպես նաև կառավարության ծրագրի համապատասխան կետը)

Միջոցառումն անհրաժեշտ է ՀՀ ռազմարդյունաբերական համալիրի զարգացումը խթանելու, ՌԱ համալիրի կազմակերպությունները բարձր որակավորում ունեցող մասնագետներով համալրելու համար:

1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները (նշելով նաև ելակետային տվյալներ, եթե դրանք առկա են)

Հայաստանի արդյունաբերության բնագավառում առկա դժվարությունները, ֆինանսավորման պակասը, գիտաուսումնական հենքի՝ արդի չափանիշներին չհամապատասխանելը, ինչպես նաև երիտասարդ մասնագետների համար ֆինանսապես ոչ գրավիչ լինելը հանգեցնում են նաև ռազմարդյունաբերության ոլորտում մասնագիտական ներուժի էական պակասի: Արդյունքում ՌԱՀ-ի ընկերությունները բախվում են ինչպես բարձրագույն, այնպես էլ միջին մասնագիտական գիտելիքներ և հմտություններ ունեցող մասնագետներ ներգրավելու անհնարինությանը, ինչն զգալիորեն նվազեցնում է դրանց զարգացման հնարավորությունները:

1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները (միջոցառումը համակատարող ունենալու դեպքում նշելով նաև համակատարողի կողմից համապատասխան միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները)

Առաջարկվում է մշակել և գործողության դնել Հայաստանի ու արտերկրի առաջատար հաստատությունների, ինչպես նաև գործընկեր պետությունների ընկերությունների հետ ՀՀ ռազմարդյունաբերական համալիրի անձնակազմի վերապատրաստման ու որակավորման բարձրացման դասընթացների անցկացման մեխանիզմները:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Միջոցառման արդյունքում ակնկալվում է ունենալ ՀՀ ու արտերկրի առաջատար հաստատությունների, ինչպես նաև գործընկեր պետությունների ընկերությունների հետ ՀՀ ՌԱՀ-ի անձնակազմի վերապատրաստման ու որակավորման բարձրացման դասընթացների անցկացման վերաբերյալ իրավական փաստաթղթերի փաթեթ:

14.3 <u>Տնտեսական խթանման մեխանիզմների ներդրում</u>

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը (նշելով նաև ծրագրի համաձայն ընդունման ենթակա ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման համար հիմք հանդիսացող ՀՀ Սահմանադրության կամ օրենքների դրույթները, ինչպես նաև կառավարության ծրագրի համապատասխան կետը)

Միջոցառումն անհրաժեշտ է ՀՀ ռազմարդյունաբերական համալիրի զարգացումը խթանելու, ֆինանսատնտեսական գործիքակազմի կիրառմամբ ՌԱ համալիրի կազմակերպությունների գործունեության արդյունավետությունը և մրցունակությունը ավելացնելու համար:

1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները (նշելով նաև ելակետային տվյալներ, եթե դրանք առկա են)

Հայաստանի ռազմարդյունաբերության կայացման փուլում անհրաժեշտ է լայնորեն կիրառել օրենքով նախատեսված ֆինանսատնտեսական, արտահանման խթանման գործիքակազմը՝ ապահովելու համար ոլորտի ընկերությունների զարգացման այնպիսի ցուցանիշները, որոնք հնարավոր կդարձնեն դրանց մրցունակությունն ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում:

	1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները (միջոցառումը համակատարող ունենալու դեպքում նշելով նաև համակատարողի կողմից համապատասխան միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները) Առաջարկվում է լրամշակել և ակտիվորեն կիրառել ՌԱՀ-ի ընկերությունների խթանման գործիքակազմը, որը կարող է ներառել հարկային արտոնությունների սահմանում, մաքսային ընթացակարգերի պարզեցում, նպատակային կրթական ծրագրեր, ինչպես նաև արտահանման խթանմանն ուղղված քաղաքականության որդեգրում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման կատարումը կհանգեցնի նպատակային ֆինանսատնտեսական, արտահանման խթանման գործիքակազմի, կրթական և սոցիալական ծրագրերի մշակմանն ու իրականացմանը:
15.	**15. Ռազմարդյունաբերական գիտահետազոտության զարգացում** **15.1 <u>ՀՀ գիտաուսումնական հաստատությունների ներգրավում</u>** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը (նշելով նաև ծրագրի համաձայն ընդունման ենթակա ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման համար հիմք հանդիսացող ՀՀ Սահմանադրության կամ օրենքների դրույթները, ինչպես նաև կառավարության ծրագրի համապատասխան կետը)** Միջոցառման նպատակն է ՀՀ գիտաուսումնական հաստատությունների համակողմանի ներգրավումն է, նրանց հետազոտություններն ու մատուցվող դասախոսությունները ՀՀ ՌԱՀ-ի պահանջներին համապատասխանեցումը և ժամանակակից տեխնոլոգիական լուծումների մատուցումը, ՌԱՀ-ի ընկերություններին բարձրորակ մասնագետներով համալրումը: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները (նշելով նաև ելակետային տվյալներ, եթե դրանք առկա են)** Ներկայումս ՀՀ գիտաուսումնական հաստատությունները համակարգված կերպով ներգրավված չեն ՀՀ ՌԱՀ-ի զարգացման գործընթացին: **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները (միջոցառումը համակատարող ունենալու դեպքում նշելով նաև համակատարողի կողմից համապատասխան միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները)** Համակարգային մոտեցման ու պլանավորման պարագայում անհրաժեշտ է ապահովել առաջատար գիտաուսումնական հաստատությունների մասնակցությունը ՌԱՀ-ի ընկերությունների առջև ծառացող խնդիրների համար լուծումներ մշակելու, մասնագիտական բարձր որակավորում ունեցող կադրեր նախապատրաստելու, եղած մասնագետների որակավորումը բարձրացնելու, ինչպես նաև արտերկրի առաջատար փորձն ուսումնասիրելու և հայրենական արդյունաբերության մեջ ներդնելու գործընթացում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Որպես նշված միջոցառման նախնական արդյունք ակնկալվում է ունենալ ՀՀ գիտաուսումնական հաստատությունների հետ համագործակցության ծրագրեր՝ ամեն տարի դրանք վերանայելու և առկա պահանջներին համապատասխան հստակեցնելու միտմամբ: **15.2 <u>Արտերկրի առաջատար գիտահետազոտական հաստատությունների և ռազմարդյունաբերական/ տեխնոլոգիական ընկերությունների հետ համագործակցության զարգացում</u>** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը (նշելով նաև ծրագրի համաձայն ընդունման ենթակա ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման համար հիմք հանդիսացող ՀՀ Սահմանադրության կամ օրենքների դրույթները, ինչպես նաև կառավարության ծրագրի համապատասխան կետը)** Միջոցառումն անհրաժեշտ է ՀՀ ՌԱՀ զարգացումը խթանելու, աշխարհում գործող առաջատար արդյունաբերական և գիտաուսումնական / գիտահետազոտական կազմակերպությունների փորձն ուսումնասիրելու և յուրացնելու, հետագայում՝ ՀՀ ՌԱՀ-ում ներդնելու համար: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները (նշելով նաև ելակետային տվյալներ, եթե դրանք առկա են)**

	Ռազմարդյունաբերության ոլորտում արտերկրի առաջատար գիտահետազոտական հաստատությունների և ռազմարդյունաբերական / տեխնոլոգիական ընկերությունների հետ համագործակցությունը կրում է հատվածային ու սահմանափակ բնույթ: Հաշվի առնելով արդի գիտելիքի հասանելիությունը, արտերկրի առաջատար հաստատությունների համագործակցության պատրաստակամությունն ու օտարերկրյա գործընկերներ ներգրավելու շահագրգռվածությունը՝ Հայաստանն ամբողջ ծավալով չի օգտագործում այս ոլորտում իր ներուժը: **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները (միջոցառումը համակատարող ունենալու դեպքում նշելով նաև համակատարողի կողմից համապատասխան միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները)** Առաջարկվում է մշակել և գործողության դնել Հայաստանի ու արտերկրի առաջատար հաստատությունների հետ ՀՀ ԲՏԱՆ ռազմարդյունաբերության կոմիտեի, ռազմարդյունաբերական համալիրի ընկերությունների, ինչպես նաև ՀՀ գիտահետազոտական / գիտաուսումնական հաստատությունների համագործակցության ծրագիր, որի իրագործումը էականորեն կընդլայնի ինչպես ՀՀ ռազմարդյունաբերության զարգացման հնարավորությունները, այնպես էլ հայկական կողմի մշակումների շնորհիվ կբարձրացնի Հայաստանի վարկանիշը տվյալ ոլորտում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման արդյունքում ակնկալվում է ունենալ արտերկրի գիտահետազոտական հաստատությունների և ռազմարդյունաբերական / տեխնոլոգիական ընկերությունների հետ համագործակցության ծրագրեր:
16.	**16. Ռազմարդյունաբերության մեջ ներդրումային ծրագրերի խթանում** **16.1 <u>Ինստիտուցիոնալ դաշտի բարելավում</u>** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը (նշելով նաև ծրագրի համաձայն ընդունման ենթակա ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման համար հիմք հանդիսացող ՀՀ Սահմանադրության կամ օրենքների դրույթները, ինչպես նաև կառավարության ծրագրի համապատասխան կետը)** Միջոցառման նպատակն է Հայաստանում ստեղծել ներքին ու արտաքին ներդրումների համար բարենպաստ իրավական, քաղաքական, տնտեսական, կրթական և սոցիալական միջավայր: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները (նշելով նաև ելակետային տվյալներ, եթե դրանք առկա են)** Թեև ռազմարդյունաբերության ոլորտի կարգավորումներն զգալիորեն բարելավվել են՝ հնարավորություն ընձեռելով մի շարք ընկերությունների նոր ֆինանսավորման աղբյուրներ ներգրավելու, այնուամենայնիվ ոլորտի դինամիկ զարգացումը պահանջում է նոր նպատակային ներդրումների ներգրավում, որոնք, բացի ֆինանսական սնուցումից, կարող են ապահովել նաև հարակից տեխնոլոգիաների ներմուծում: **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները (միջոցառումը համակատարող ունենալու դեպքում նշելով նաև համակատարողի կողմից համապատասխան միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները)** Անհրաժեշտ է իրավաքաղաքական ու տնտեսական դաշտի բարելավման միջոցով նպաստել ներդրումային ծրագրերի մշակմանն ու իրագործմանը: Առաջնային խնդիրներից է նաև ՌԱՀ-ի համակարգման արդյունավետության բարձրացումը՝ պետական կառավարման մարմինների կառուցվածքի բարելավման և փոխգործության աստիճանի բարձրացման միջոցով: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման կատարման արդյունքում ակնկալվում է տարեկան 2-3 ներդրումային ծրագրերի մեկնարկ: **16.2 <u>Ենթակառուցվածքների զարգացում</u>** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը (նշելով նաև ծրագրի համաձայն ընդունման ենթակա ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման համար հիմք հանդիսացող ՀՀ Սահմանադրության կամ օրենքների դրույթները, ինչպես նաև կառավարության ծրագրի համապատասխան կետը)** Միջոցառման նպատակն է ապահովել ՀՀ ռազմարդյունաբերական համալիրի զարգացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների զարգացումը:

	1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները (նշելով նաև ելակետային տվյալներ, եթե դրանք առկա են) Վերջին տարիների ընթացքում զգալի աշխատանք է կատարված ինչպես պետական, այնպես էլ հասարակական նախաձեռնությունների մակարդակով՝ ռազմարդյունաբերության համար անհրաժեշտ ենթակառուցվածք ստեղծելու և զարգացնելու ուղղությամբ: Այնուամենայնիվ, Հայաստանի տարածքային ոչ համաչափ զարգացման հետևանքով ՌԱՀ-ի հզորությունների մեծ մասը կենտրոնացված է Երևանում: Մինչդեռ մարզերում տրանսպորտային, հաղորդակցային, արտադրական ու կրթական ենթակառուցվածքի ոչ բավարար մակարդակը խոչընդոտում է ՌԱՀ-ի ընկերությունների մուտքը: **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները (միջոցառումը համակատարող ունենալու դեպքում նշելով նաև համակատարողի կողմից համապատասխան միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները)** Հայաստանում, հատկապես՝ մարզերում, տրանսպորտային, հաղորդակցային, արտադրական, կրթական ենթակառուցվածքի զարգացումը հնարավորություն կտա խթանելու ռազմարդյունաբերական ընկերությունների գործունեությունը՝ ինչպես տեղի, այնպես էլ հրավիրյալ մասնագետների ներգրավմամբ: Դա, իր հերթին, զգալիորեն կնպաստի ինչպես մարզերի զարգացմանը, այնպես էլ ռազմարդյունաբերական համալիրի հզորությունների ապակենտրոնացմանն ու դրանց անվտանգության մակարդակի բարձրացմանը: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման կատարման արդյունքում ակնկալվում է տարեկան 2-3 ներդրումային ծրագրերի մեկնարկ: **16.3 <u>Որակյալ աշխատուժի ձևավորում</u>** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը (նշելով նաև ծրագրի համաձայն ընդունման ենթակա ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման համար հիմք հանդիսացող ՀՀ Սահմանադրության կամ օրենքների դրույթները, ինչպես նաև կառավարության ծրագրի համապատասխան կետը)** Միջոցառման նպատակն է ապահովել ՀՀ ռազմարդյունաբերական համալիրի զարգացման համար անհրաժեշտ մասնագետների հասանելիությունը: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները (նշելով նաև ելակետային տվյալներ, եթե դրանք առկա են)** Հայաստանի անկախացումից ի վեր նկատված արդյունաբերական անկումը հանգեցրել է նաև ճարտարագիտական ու տեխնիկական մասնագիտությունների պահանջարկի նվազմանը, ինչի արդյունքում ներկայումս ՌԱՀ-ի ընկերությունները բախվում են որակյալ մասնագետների պակասի խնդրին: **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները (միջոցառումը համակատարող ունենալու դեպքում նշելով նաև համակատարողի կողմից համապատասխան միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները)** Անհրաժեշտ է վերականգնել միջնակարգ մասնագիտական կրթություն տրամադրող ուսումնական հաստատությունների համակարգը՝ դրանք կապելով ՀՀ արդյունաբերական ընկերությունների ներկայացրած պահանջարկի հետ: Միաժամանակ անհրաժեշտ է խորացնել ուսումնական հաստատությունների կապը ՌԱՀ-ի հետ, ինչը մի կողմից կապահովի պատրաստված որակյալ մասնագետների ներհոսքը ՌԱՀ-ի ընկերություններ, իսկ մյուս կողմից կապահովի ՌԱՀ-ի ընկերություններին նորարարական ու առաջատար լուծումներով: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման կատարման արդյունքում ակնկալվում է տարեկան 2-3 ներդրումային ծրագրերի մեկնարկ:
17.	**17. Գիտատեխնիկական բազայի ընդլայնում ու զարգացում, նոր տեխնոլոգիաների ստեղծում, ներմուծում և յուրացում** **17.1 <u>Ոլորտային գիտատեխնիկական լաբորատորիաների հիմնում</u>** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը (նշելով նաև ծրագրի համաձայն ընդունման ենթակա ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման համար հիմք**

	հանդիսացող ՀՀ Սահմանադրության կամ օրենքների դրույթները, ինչպես նաև կառավարության ծրագրի համապատասխան կետը) Միջոցառման նպատակն է Հայաստանում ստեղծել ոլորտային գիտատեխնիկական լաբորատորիաներ: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները (նշելով նաև ելակետային տվյալներ, եթե դրանք առկա են)** Ներկայումս ՌԱՀ-ի ընկերությունները բախվում են իրենց արտադրանքի՝ տարբեր պայմաններում ճշգրիտ փորձարկումներ անցկացնելու խնդրին, որը բարդանում է համապատասխան լաբորատորիաներ չունենալու պատճառով: **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները (միջոցառումը համակատարող ունենալու դեպքում նշելով նաև համակատարողի կողմից համապատասխան միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները)** Անհրաժեշտ է նախաձեռնել Հայաստանում ոլորտային գիտատեխնիկական մասնագիտացված լաբորատորիաների ստեղծումն ու գործարկումը: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման կատարման արդյունքում ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի ավարտին ակնկալվում է ունենալ 1-2 ոլորտային լաբորատորիաներ: **17.2 <u>Գիտարտադրական ու տեխնոլոգիական կլաստերների ստեղծում</u>** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը (նշելով նաև ծրագրի համաձայն ընդունման ենթակա ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման համար հիմք հանդիսացող ՀՀ Սահմանադրության կամ օրենքների դրույթները, ինչպես նաև կառավարության ծրագրի համապատասխան կետը)** Միջոցառման նպատակն է ապահովել ՀՀ ռազմարդյունաբերական համալիրի ընկերությունների կողմից համատեղ նախագծերի մշակումն ու իրագործումը, որոշ գիտաարտադրական հզորությունների համատեղ օգտագործումը և ընդհանուր գործունեության արդյունավետության բարձրացումը: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները (նշելով նաև ելակետային տվյալներ, եթե դրանք առկա են)** «Ռազմարդյունաբերական համալիրի մասին» ՀՀ օրենքով նախատեսված է միմյանց լրացնող և մրցունակություն ապահովող, ռազմական կարիքների համար պետական պատվերներ կատարող կազմակերպությունների փոխկապակցված խմբերի առկայությունը: Ռազմարդյունաբերական կլաստերների ձևավորումը զգալիորեն կբարձրացներ ՌԱՀ-ի ընկերությունների համատեղ նախագծերի արդյունավետությունը: **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները (միջոցառումը համակատարող ունենալու դեպքում նշելով նաև համակատարողի կողմից համապատասխան միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները)** Ֆինանսավորման և արտոնությունների տրամադրման նախապատվությունը տալով ՌԱՀ-ի ընկերությունների համատեղ նախագծերին (ծրագրերին)՝ կխթանվի ռազմարդյունաբերական կլաստերների ձևավորումը՝ բարձրացնելով ընդհանուր արդյունավետությունը: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման կատարման արդյունքում ակնկալվում է ունենալ գիտարտադրական և տեխնոլոգիական կլաստերներ: **17.3 <u>Միջազգային համագործակցության ընդլայնում</u>** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը (նշելով նաև ծրագրի համաձայն ընդունման ենթակա ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման համար հիմք հանդիսացող ՀՀ Սահմանադրության կամ օրենքների դրույթները, ինչպես նաև կառավարության ծրագրի համապատասխան կետը)** Միջոցառման նպատակն է ընդլայնել ՀՀ ՌԱՀ-ի միջազգային համագործակցության տիրույթը, նպաստել նոր տեխնոլոգիաների ուսումնասիրմանն ու յուրացմանը, մասնագետների որակավորման բարձրացմանը, ինչպես նաև ՌԱՀ-ի ընկերությունների արտահանման ներուժի զարգացմանը:

	1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները (նշելով նաև ելակետային տվյալներ, եթե դրանք առկա են) Ներկայումս միջազգային համագործակցությունը սահմանափակված է մի քանի ավանդական ուղղություններով: **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները (միջոցառումը համակատարող ունենալու դեպքում նշելով նաև համակատարողի կողմից համապատասխան միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները)** Անհրաժեշտ է ընդլայնել միջազգային համագործակցության տիրույթը, ակտիվորեն աշխատել ինչպես ավանդական, այնպես էլ նոր գործընկերների հետ, ավելացնել ՀՀ ՌԱՀ-ի միջազգային համագործակցության ներուժը: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման կատարման արդյունքում ակնկալվում է տարեկան 1-2 նոր տեխնոլոգիական լուծումների փորձարկում և ներդրում, ինչպես նաև միջազգային համագործակցության իրավապայմանագրային հենքի ստեղծում:
18.	**18. Ռազմական նշանակության սարքերին, ռազմական տեխնիկայի, էլեկտրատեխնիկայի մշակման ու արտադրության կազմակերպման համակարգին ներկայացվող պահանջներ սահմանող՝ միջազգային և (կամ) տարածաշրջանային ստանդարտներին ներդաշնակ ազգային ստանդարտների մշակում և ներդրում** **18.1 <u>Ազգային ստանդարտների մշակում</u>** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը (նշելով նաև ծրագրի համաձայն ընդունման ենթակա ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման համար հիմք հանդիսացող ՀՀ Սահմանադրության կամ օրենքների դրույթները, ինչպես նաև կառավարության ծրագրի համապատասխան կետը)** Միջոցառման նպատակն է Հայաստանում ստեղծել ռազմարդյունաբերական համալիրի ընկերությունների գործունեությունը կարգավորող նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի և ազգային ստանդարտների) համակարգ: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները (նշելով նաև ելակետային տվյալներ, եթե դրանք առկա են)** ՌԱՀ-ի ընկերությունների մշակումներն ու արտադրանքն անհրաժեշտ է համապատասխանեցնել միջազգայնորեն ընդունված չափանիշներին, ինչը հնարավոր է ազգային ստանդարտների մշակմամբ ու ընդունմամբ: **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները (միջոցառումը համակատարող ունենալու դեպքում նշելով նաև համակատարողի կողմից համապատասխան միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները)** Անհրաժեշտ է նախապես համաձայնեցված ծրագրերին համապատասխան՝ յուրաքանչյուր տարի մշակել և ընդունել առնվազն 1-2 ազգային նորմատիվ-տեխնիկական փաստաթուղթ: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման կատարման արդյունքում ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի ավարտին ակնկալվում է յուրաքանչյուր տարի մշակել և ընդունել 1-2 ազգային ստանդարտ:
19.	**19. Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարիքների բավարարման համար տեղական արտադրանքի գնման ծավալների ընդլայնում** **19.1 <u>Զինված ուժերի, այլ զորքերի և ընդհանուր ռազմական անվտանգության համակարգի կարիքների հստակեցում</u>** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը (նշելով նաև ծրագրի համաձայն ընդունման ենթակա ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման համար հիմք հանդիսացող ՀՀ Սահմանադրության կամ օրենքների դրույթները, ինչպես նաև կառավարության ծրագրի համապատասխան կետը)**

	Միջոցառման նպատակն է ունենալ Հայաստանի անվտանգային համակարգի կարիքների օբյեկտիվ պատկերը: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները (նշելով նաև ելակետային տվյալներ, եթե դրանք առկա են)** Զինված ուժերի, այլ զորքերի և ընդհանուր ռազմական անվտանգության համակարգի կարիքների հստակեցումն անհրաժեշտ է ՀՀ ՌԱՀ-Ի հզորությունները պլանավորելու, զարգացման ուղղությունները հստակեցնելու համար: **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները (միջոցառումը համակատարող ունենալու դեպքում նշելով նաև համակատարողի կողմից համապատասխան միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները)** Անհրաժեշտ է միջգերատեսչական մակարդակում գնահատել և հստակեցնել ՀՀ զինված ուժերի և ընդհանուր անվտանգային համակարգի կարիքներն ու պահանջմունքները: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման կատարման արդյունքում ստացվելու է ՀՀ ԶՈՒ, այլ զորքերի և ռազմական անվտանգության համակարգի կարիքների ռեեստր: **19.2 <u>Հայրենական ՌԱՀ-ի արտադրած և արտերկրից ներմուծված նույնանման բնութագրերով արտադրանքի նկատմամբ էականորեն տարբերվող հարկային քաղաքականության մշակում և իրավակարգավորում</u>** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը (նշելով նաև ծրագրի համաձայն ընդունման ենթակա ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման համար հիմք հանդիսացող ՀՀ Սահմանադրության կամ օրենքների դրույթները, ինչպես նաև կառավարության ծրագրի համապատասխան կետը)** Միջոցառման իրավական հիմքերը սահմանված են «Ռազմարդյունաբերական համալիրի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով, 4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով: Միջոցառման նպատակն է ապահովել հայրենական ռազմարդյունաբերական համալիրի զարգացումը, ՀՀ զինված ուժերի կարիքների առաջնահերթ բավարարումը, ներմուծումից կախվածության հնարավորինս նվազեցումը, Հայաստանի տնտեսական ու տեխնոլոգիական զարգացումը: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները (նշելով նաև ելակետային տվյալներ, եթե դրանք առկա են)** Թեև ներկայումս զգալի քայլեր են կատարվում հայրենական ռազմարդյունաբերության զարգացման ուղղությամբ, սակայն ՌԱՀ-ի ընկերությունների ոչ բավարար մրցունակությունը, ֆինանսատնտեսական գործիքակազմի բացակները հնարավորություն չեն տալիս էականորեն նվազեցնել Հայաստանի կախվածությունը սպառազինության և ռազմական տեխնիկայի ներկրումից: **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները (միջոցառումը համակատարող ունենալու դեպքում նշելով նաև համակատարողի կողմից համապատասխան միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները)** Անհրաժեշտ է, հայրենական ռազմարդյունաբերական համալիրի հարաբերական առավելությունները հաշվի առնելով և դրանք ՀՀ պաշտպանական ու անվտանգային կարիքների հետ համադրելով՝ համապատասխան ֆինանսատնտեսական ու վարչարարական գործիքակազմի կիրառմամբ խթանել հայրենական ռազմարդյունաբերության հեռանկարային ուղղությունները: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման կատարման արդյունքում ակնկալվում է ՀՀ ԶՈՒ-ին ՀՀ ՌԱՀ-ի կողմից մատակարարվող ապրանքների ու ծառայությունների ծավալի աճի հնարավորինս ապահովում: **19.3 <u>Անհրաժեշտ տեխնոլոգիաների ստեղծում, ներմուծում և ներդրում</u>** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը (նշելով նաև ծրագրի համաձայն ընդունման ենթակա ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման համար հիմք**

	հանդիսացող ՀՀ Սահմանադրության կամ օրենքների դրույթները, ինչպես նաև կառավարության ծրագրի համապատասխան կետը) Միջոցառման իրավական հիմքերը սահմանված են «Ռազմարդյունաբերական համալիրի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով, 4-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով և 11-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով: Միջոցառումն անհրաժեշտ է տեխնոլոգիական զարգացման միջոցով ՀՀ զինված ուժերի և անվտանգային համակարգի կարիքներին համարժեք լուծումներ գտնելու, ՌԱ համալիրի կազմակերպությունների գործունեությունն առաջատար տեխնոլոգիական լուծումներով առավել արդյունավետ դարձնելու համար: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները (նշելով նաև ելակետային տվյալներ, եթե դրանք առկա են)** Ժամանակակից պատերազմների բնույթը պահանջում է համաշխարհային ռազմարդյունաբերության զարգացումը համապատասխանեցնել նոր տեխնոլոգիական լուծումների շարունակական յուրացմանը: Ընդ որում, այդ գործընթացում կարևորվում են ոչ միայն զուտ ռազմական, այլև քաղաքացիական բնագավառի տեխնոլոգիական լուծումները, որոնք հետագայում կիրառվում են նաև ռազմարդյունաբերության ոլորտում: Մեր խնդիրները հանգում են հիմնականում ռազմարդյունաբերության բնագավառում տեխնոլոգիական զարգացման համակարգված հայեցակարգային մոտեցումների ոչ բավարար մշակվածությամբ, ոչ բավարար ֆինանսավորմամբ, արտերկրի փորձի որ պատշաճ ուսումնասիրմամբ: **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները (միջոցառումը համակատարող ունենալու դեպքում նշելով նաև համակատարողի կողմից համապատասխան միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները)** Համակարգային մոտեցման ու պլանավորման պարագայում անհրաժեշտ է ապահովել ռազմարդյունաբերության բնագավառում տարեկան 1-2 ժամանակակից տեխնոլոգիական լուծումների մշակումն ու ներդրումը: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման կատարման արդյունքում ակնկալվում է տարեկան 1-2 նոր տեխնոլոգիական լուծումների ստեղծում, ներմուծում, փորձարկում և ներդրում:
20.	**20. «Նույնականացման և իրավասությունների ճանաչման արդիական համակարգի ներդրում»** **20 <u>Ինքնության նույնականացում, վավերացում և էլ. ստորագրության նոր ենթակառուցվածքի ստեղծում</u>** **20.1 Ինքնության նույնականացման, հավաստագրման և էլեկտրոնային ստորագրության նոր համակարգի կայացում մասնավոր հատվածի հետ համագործակցությամբ** **20.2 «Ես եմ» ազգային նույնականացման հարթակի գործարկում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը (նշելով նաև ծրագրի համաձայն ընդունման ենթակա ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման համար հիմք հանդիսացող ՀՀ Սահմանադրության կամ օրենքների դրույթները, ինչպես նաև կառավարության ծրագրի համապատասխան կետը)** Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային ժողովի 26.08.2021թ. թիվ ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի դրույթներից, մասնավորապես՝ 2.3-րդ բաժնի թվայնացման ենթաբաժնի 1-ին պարբերության պահանջներից: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է նաև «Հայաստանի թվայնացման ռազմավարությանը, ռազմավարության միջոցառումների ծրագրին և արդյունքային ցուցանիշներին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության 11.02.2021 թ.N 183-Լ որոշման N 2 հավելվածի 13 և 18 կետերի պահանջներից: **1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները (նշելով նաև ելակետային տվյալներ, եթե դրանք առկա են)** Բնակչության մի զգալի հատված՝ 82% չի օգտվել էլ.կառավարման գործիքներից, քանի որ կարիք չի ունեցել պետական հատվածի հետ գործարքներ կատարել: Բնակչության 2.3%-ի շրջանում չօգտվելու հիմնական պատճառն է եղել հմտությունների պակասը: Էլեկտրոնային գործարքների ժամանակ միայն բնակչության 3%-ն է օգտագործում նույնականացման քարտը: Ինքնության նույնականացումը և վավերացումը առանցքային դեր է խաղում էլեկտրոնային կառավարման և էլեկտրոնային ծառայություններում, որոնք հնարավորություն են տալիս ապահովել անվտանգ և հուսալի հասանելիություն առցանց գործառույթներին: Ներկայումս կարիք կա ստեղծել ամբողջությամբ թվայնացված փաստաթղթաշրջանառության համակարգ, որտեղ փաստաթղթերը կլինեն ամբողջությամբ էլեկտրոնային՝ DOC, PDF

	(կամ համարժեք) ձևաչափերի փոխարեն կիրառելով ամբողջական թվային, կառուցվածքային փաստաթուղթ (JSON, XML), որը հեշտությամբ հնարավորություն կտա տեղեկատվություն ստանալ փաստաթղթի պարունակության մասին: **1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները (միջոցառումը համակատարող ունենալու դեպքում նշելով նաև համակատարողի կողմից համապատասխան միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները)** Հիմնական նպատակն է ուսումնասիրել արդեն ներդրված նույնականացման քարտերի փորձը՝ հաշվի առնելով դրանց թերությունները և առավելությունները: Հարկավոր է սահմանել և կիրառել՝ ինքնության ապահով նույնականացման և վավերացման արդյունավետ տեխնոլոգիական լուծումներ: Կարիք կա, ավելի մատչելի դարձել էլ. ստորագրության տեխնոլոգիական հնարավորությունները, լինի դա խելացի քարտերի, հեռախոսային քարտերի, անվտանգության այլ սարքերի կամ կենսաչափական հատկանիշների հիման վրա: Թվային փաստաթղթի ստեղծումը նաև ենթադրում է փաստաթղթերի բազայի հետագայում նաև դրանց արխիվացման ենթակառուցվածքի ստեղծում: Սա թույլ կտա թվային փաստաթղթի հիմքի վրա կառուցել սետծել փաստաթղթաշրջանառության տարբեր համակարգեր դրանով իսկ ապահովելով համակարգերի փոխարինելիությունը և մրցակցությունը: Միջոցառման համակատարող է հանդիսանում Էկենգ ՓԲԸ-ն: Էկենգ ՓԲԸ-ն ունի սեփական նույնականացման ներդրված համակարգը և մոտ 12 տարված փորձ այս ասպարեզում; Այն հանդես է գալու համակարգի մշակման և շահագործման փուլերում որպես ծրագրատեխնիկական և մասնագիտական աջակցություն ցուցաբերող կողմ: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Մեկ ընդհանուր նույնականացման ենթակառուցվածքի ստեղծում և էլեկտրոնային ստորագրության արդիականացում: Մեկ ենթակառուցվածքային միասնական լուծման ստեղծում: Կգործարկվի էլեկտրոնային ստորագրության հարթակը, քաղաքացիներն ուղղակի չեն վճարի թվային նույնականացման ծառայությունների համար, առնվազն 1 միլիոն քաղաքացի ազգային նույնականացման համակարգի բաժանորդ է:
21.	**21. «Տեղեկատվական և կիբեռանվտանգության կառավարման և զարգացման համակարգի ներդրում, գրագիտության բարձրացում»** **21.1 Բաց տվյալների քաղաքականությունը սահմանող առանցքային օրենսդրության հաստատմանը** **21.2 Ազգային կիբեռմիջադեպերի արձագանքման՝ միջազգային հավատարմագրված թիմի (CERT/CSIRT) կայացում** **21.3 Կրիտիկական ենթակառուցվածքների կիբեռանվտանգության պատրաստվածության ապահովում** **21.4 Կիբեռանվտանգության կարողությունների ազգային շրջանակի ձևավորում** **28.«ՀՀ բնակչության թվային գրագիտության բարձրացում և թվային գործիքների կիրառման ծավալների աճին ուղղված ծրագրերի իրականացում»** **1. <u>Թվային կրթության ծրագրերի իրականացում</u>** **2. <u>Հաշմանդամություն ունեցող անձանց համար թվային ծառայությունների հասանելիություն</u>** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը (նշելով նաև ծրագրի համաձայն ընդունման ենթակա ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման համար հիմք հանդիսացող ՀՀ Սահմանադրության կամ օրենքների դրույթները, ինչպես նաև կառավարության ծրագրի համապատասխան կետը)** Միջոցառման անհրաժեշտությունը բխում է նաև «Հայաստանի թվայնացման ռազմավարությանը, ռազմավարության միջոցառումների ծրագրին և արդյունքային ցուցանիշներին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության 11.02.2021թ.N 183-Լ որոշման N 2 հավելվածի 16 և 19 կետերի պահանջներից: **1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները (նշելով նաև էլեկտրային տվյալներ, եթե դրանք առկա են)** Ուսումնասիրությունները փաստում են, որ առկա է «թվային հմտություններով» մասնագետների պակաս մասնավոր և պետական հատվածներում: Ստեղծված իրավիճակը հիմնականում պայմանավորված է ներկայիս կրթական ծրագրերի և աշխատանքի շուկայում ձևավորված պահանջարկի միջև անհամապատասխանությամբ:

Պետական հատվածում մասնագետների բացը հիմնականում պայմանավորված է նաև ցածր վարձատրությամբ: Հայաստանի իրական թվայնացումը հնարավոր է միայն հասարակության բոլոր տարիքային և սոցիալական խմբերի շրջանում առանցքային թվային հմտությունների զարգացման միջոցով, որը փոխկապակցված է պետական հատվածի և տնտեսության արդիականացման հետ: Պետական ծառայությունների մատուցման համակարգերն առանձնանում են օգտագործման հարմարավետության ցածր մակարդակով, հաշվի առնված չեն համընդհանուր դիզայնի սկզբունքները, այդ թվում՝ մատչելի չեն հաշմանդամություն ունեցող օգտագործողների համար: Հատուկ ուշադրության միջոցով հավասար հնարավորություններ խթանող ծրագրերի իրականացման անհրաժեշտություն կա,

որոնք կնպաստեն, օրինակ, հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավմանը բիզնես գործընթացներում, կամ հաշմանդամություն ունեցող անձանց համար ընդհանուր բնակչության համար նախատեսված և հատուկ ծառայությունների մատչելիության լիարժեք ապահովմանը:

1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները (միջոցառումը համակատարող ունենալու դեպքում նշելով նաև համակատարողի կողմից համապատասխան միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները)

Նորարարական կրթական տեխնոլոգիաների ներդրման և թվային գրագիտության ձևավորման նպատակով առանցքային է հանրակրթական համակարգում այս ուղղությամբ խորացված դասընթացների ներդնումը: Կիրականացվեն դպրոցական կրթական ծրագրի վերանայմանն ու ուսուցիչների վերապատրաստմանը ուղղված ծրագրեր, որոնք հնարավորություն կտան հանրակրթական համակարգը դարձնել ավելի ճկուն, ապագայի մասնագիտություններին և տնտեսության պահանջներին ավելի համապատասխան: Թվային հմտությունների զարգացումը թիրախավորված կիրականացվի հատուկ կարիքներ ունեցող մարդկանց շրջանում՝ որպես սոցիալական ներառման և աշխատանքային հմտությունների զարգացման կարևոր միջոց: ՀՀ կառավարությունը նախաձեռնում է մշակել օրենսդրական և ծրագրային փոփոխություններ հաշմանդամություն ունեցող անձանց համար թվային ծառայությունների հասանելիություն ապահովելու համար: Արդյունքում՝ կիրականացվեն՝ Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ՀԿ-ների հետ քննարկումներ, հաշմանդամություն, այդ թվում՝ տեսողության, լսողության և մտավոր խնդիրներ ունեցող անձանց՝ պետական ծառայությունների միասնական հարթակից հավասար իրավունքներով օգտվելու պահանջների ուսումնասիրություն և հնարավորությունների ապահովում, Մատչելի լուծումների (Text to Speech և Speech to Text փոխակերպումներ և այլն) մշակում և իրականացում, Համապատասխան իրավական ակտերում անհրաժեշտ փոփոխություններ պետական ծառայությունների էլեկտրոնային եղանակով իրականացումը ամբողջապես համապատասխանեցնելով հաշմանդամություն ունեցող անձնաց կարիքներին:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը և ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը հանդես են գալու, որպես թվային կրթության ծրագրերի իրականացման գործընթացում իրենց մասնագիտական գործառույթների պատասխանատու և խորհրդատու: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հանդես է գալու, որպես ֆունկցիոնալ լուծումների կիրառման տեսանկյունից ոլորտային քաղաքականություն մշակող-խորհրդատու:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Արդյունքում էլեկտրոնային գործիքների կիրառում հանրության մեջ՝ նվազագույնը 60%, 16-65 տարեկան քաղաքացիների շրջանում:

Հաշմանդամություն ունեցող անձանց համար առնվազն 5 ֆունկցիոնալ լուծումների մշակում և ներդրում:

Տեղեկատվության ազատության և հանրային տվյալների մասին, Կիբերանվտանգության մասին և Էլեկտրոնային նույնականացման մասին ՀՀ օրենքների ընդունում:

Ազգային տեղեկատվական համակարգի լիազոր կառույցը լիարժեք է գործարկված է:

Ապահովված է Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալության ներքո CERT կենտրոնի միջազգային սերտիֆիկացման և հավաստագրման (TF-CSIRT, FIRST) գործընթացը:

Քաղաքացիական պարտադիր կիբեռզորավարժությունների կառուցակարգերը ներդրված են:

Առնվազն 100 մարդ անցել է աշխատանքի տարբեր նկարագրերին համարժեք ուսուցում և կրթություն:

22.	**22. «Թվային միջավայրի հիմնական ստանդարտների մշակում և ներդրում»** **<u>22.1 Թվայնացման գործընթացների և պահանջների ձևավորման ազգային ստանդարտների ստեղծում</u>** **<u>22.2 Տեխնիկական պահանջների ազգային ստանդարտների ստեղծում</u>** **<u>22.3</u> <u>Ֆունկցիոնալության ազգային ստանդարտների ստեղծում</u>** **<u>22.4</u> <u>Պետական ամպային ենթակառուցվածքային պահանջների/ստանդարտների ազգային ստանդարտների ստեղծում</u>** **<u>22.5</u> <u>Կիբեռանվտանգության ստանդարտների, ձևաչափերի և ընթացակարգերի մշակում</u>** **<u>22.6</u> Հանրային ծառայությունների թվայնացման ուղեցուցների հրապարակում** **<u>22.7</u> Թվային ծառայությունների «Հենակետ» դիզայն համակարգի ամբողջական գործարկում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը (նշելով նաև ծրագրի համաձայն ընդունման ենթակա ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման համար հիմք հանդիսացող ՀՀ Սահմանադրության կամ օրենքների դրույթները, ինչպես նաև կառավարության ծրագրի համապատասխան կետը)** Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային Ժողովի 26.08.2021թ. թիվ ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի դրույթներից, մասնավորապես՝ 2.3-րդ բաժնի թվայնացման ենթաբաժնի 3-րդ պարբերության պահանջներից: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է նաև «Հայաստանի թվայնացման ռազմավարությանը, ռազմավարության միջոցառումների ծրագրին և արդյունքային ցուցանիշներին հավանություն տալու մասին» ՀՀ Կառավարության 11.02.2021թ.N 183-Լ որոշման N 2 հավելվածի 3 և 4 կետերի պահանջներից:

	1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները (նշելով նաև էլեկտրոնային տվյալներ, եթե դրանք առկա են) Թվայնացման քաղաքականության իրականացման համատեքստում կարիք կա իրականացնել օրենսդրական բարեփոխումներ՝ մասնավորապես թվային ստանդարտների և պահանջների մշակում, առաջնահերթությունների սահմանում, տեխնիկական խորհրդատվություն, թվայնացման միասնական լուծումների մշակում, ամպային տեխնոլոգիաների կիրառման ստանդարտացում, համակարգերի միասնական ճարտարապետության մշակում, ստանդարտների համապատասխանության ստուգում և այլն: **1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները (միջոցառումը համակատարող ունենալու դեպքում նշելով նաև համակատարողի կողմից համապատասխան միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները)** Սրանով սահմանվում են այն ընթացակարգերը և դրանցով գոյացած արդյունքները, որոնք անհրաժեշտ են իրականացնել, ավելի կառավարելի և ավելի լավ վերջնական ապրանք ստանացվի: Թվայնացման նախագծերը պետք է բավարարեն նշված պահանջներին, որով ծրագրի իրականացման ամեն փուլում անհրաժեշտ է ապահովել տվյալ փուլի համար նախատեսված գործընթացները և դրանց արդյունքները: Տեխնիկական պահանջները կկարգավորեն թվայնացված ծառայությունների համար հուսալիության, ընդլայնման, համատեղելիության, սպասարկման, արագագործության, մատչելիության և հասանելիության խնդիրները: Թվայնացման համակարգերին ներկայացվող ֆունկցիոնալ ստանդարտները ուղղված կլինեն աջակցել գործող համակարգերի հուսալիությանը, հաշվետվությունների ստացմանը, խնդիրների բացահայտմանը միասնական մոտեցումներով նաև ապահովել այդ ֆունկցիոնալության առկայությունը համակարգերում: Նախատեսվում է պետական ամպային ենթակառուցվածքի, ամպային տեխնոլոգիաների պահանջների և դրանց սպասարկող ֆիզիկական տվյալների կենտրոնների տեխնիկական պահանջների և միջազգային ստանդարտների տեղայնացում իրականացնել: Արդյունքում ՀՀ կառավարությունը կիրականացնի մեկ միասնական ամպային ենթակառուցվածքի և տվյալների կենտրոնների նկատմամբ ստանդարտների տեղայնացում և ներդրում: Միջոցառման համակատարող է հանդիսանում Էկենգ ՓԲԸ-ն: Էկենգ ՓԲԸ-ն հանդես է գալու ստանդարտների մշակման և շահագործման փուլերում որպես մասնագիտական և ծրագրա-տեխնիկական աջակցություն ցուցաբերող կողմ: ՀՀ Պետական եկամուտների կոմիտեն իրականացնելու է մասնագիտական խորհրդատվություն ընթացիկ աշխատանքներում որպես ամպային տեխնոլոգիաների կիրառման ոլորտում փորձառու մասնագիտական մարմին: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Սահմանվելու են այն ընթացակարգերը և դրանցով գոյացած արդյունքները, որոնք անհրաժեշտ են պետական կառավարման թվայնացման ոլորտում իրականացնել ավելի կառավարելի և ավելի լավ վերջնական ապրանք ստանալու համար: Տեխնիկական պահանջները կարգավորելու են պետական էլեկտրոնային համակարգերի և պաշտոնական կայքերի հուսալիությունը, ընդլայնման հնարավորությունները, համատեղելիությունը, սպասարկման հնարավորությունները, արագագործությունը մատչելիությունը հասանելիությունը: Թվայնացման համակարգերին ներկայացվող ֆունկցիոնալ ստանդարտները կսահմանեն թե ինչպիսի նվազագույն ֆունկցիոնալություն պետք է ապահովեն նոր մշակվող թվային լուծումները: Մեկ միասնական ամպային ենթակառուցվածքի և տվյալների կենտրոնների նկատմամբ ստանդարտների տեղայնացում/ մշակում: Հանրային ծառայությունների թվայնացման գործընթացում պետական մարմինները կիրառում են միասնական սկզբունքներ՝ հենված օգտատիրոջ փորձառության վրա: Հրապարակված են ծառայությունների թվայնացման ստուգաթերթերը և համարժեք ընթացակարգերը: Պետական թվային ծառայությունները կիրառում են արտաքին տեսքի և ֆունկցիոնալության միասնական նախագծման գործիքներ: Բոլոր պետական թվային ծառայությունները նախագծվում են մատչելիության և հասանելիության միջազգային չափորոշիչներին համարժեք:

23 24 25 26 27	**23. «Հանրային ծառայությունների թվայնացում, դրանց առցանց հասանելիություն ապահովում, ծառայությունների միասնական կենտրոնների հիմնում»** **23.6 Թվայնացման պորտֆելի կառավարման և ֆինանսավորման իրավական ու ընթացակարգային կառուցակարգերը ներդրված են** **24. «Պետական և համայնքային ծառայությունների մեկանգամյա դիմումի համակարգի ներդրում՝ բացառելով քաղաքացուց տեղեկություններ պահանջելու դեպքերը, եթե այն արդեն առկա է տեղեկատվական որևէ շտեմարանում»** **24.5 Տվյալների ամբողջական կատալոգի ձևավորում և հրապարակում** **24.6 «Ամպայինն առաջին» քաղաքականության մշակում համարժեք ընթացակարգերի և ենթակառուցվածքների գործարկմամբ** **25. «Արտերկրում գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին մատուցվող ծառայությունների ավտոմատացում՝ անձնագրի փոխում, վավերականության ժամկետի երկարաձգում, տեղեկանքների տրամադրում և մի շարք այլ ծառայություններ»** **26. «Իրավաբանական անձանց հետ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների՝ բացառապես էլեկտրոնային եղանակով հաղորդակցության ապահովում»** **Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Բաց տվյալներ» հանդիսացող և «միայն մեկ անգամ» սկզբունքով պետական հատվածում կիրառելի տվյալներն ամբողջ ծավալով քարտեզագրված են Բոլոր տվյալների շտեմարանների հասանելիության ժամանակացույցը հաստատված է Առցանց տվյալների հարթակը (կատալոգը) ներդրված է, և տվյալների շտեմարանները հրապարկվում են ըստ հաստատված ժամանակացույցի Տվյալների դասակարգման հիման վրա տվյալների պահպանման «ամպայինն առաջին» քաղաքականության հայեցակարգային հիմքերը հաստատված են՝ մասնավոր հատվածի հետ համագործակցությամբ և տնտեսական հիմնավորման (business case) հիման վրա «Ամպայինն առաջին» քաղաքականությունից բխող՝ գնումների ընթացակարգերն ու տիպային պայմանագրերը մշակված և հասանելի են պետական մարմիններին ու շուկայի մասնակիցներին Գործարկված է տվյալների պահպանման և գործարկման ենթակառուցվածքների և ծառայությունների շուկավարման հարթակը (marketplace)

27. «Քաղաքացիների հետ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների՝ գերազանցապես էլեկտրոնային եղանակով հաղորդակցության ապահովում»

1. **<u>Ծրագրերի կառավարման էլեկտրոնային միասնական հարթակի ստեղծում</u>**
2. **<u>Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից էլեկտրոնային ծառայությունների մատուցման կամ գործողությունների կատարման համար օգտագործվող էլեկտրոնային համակարգերի «Պետական փոխգործելիության հարթակի» (GIP) անվտանգ, անխափան և տեխնիկական ընդհանուր պահանջների համապատասխան գործարկման վերահսկում</u>**
3. **<u>Պետական թվային համալիր համակարգի ճարտարապետության մշակում և հաստատում</u>**
4. **<u>Միասնական թվային հենքի ստեղծում (Systems development unified framework)</u>**
5. **<u>Ազգային սուպերհամակարգչային կենտրոնի ստեղծում</u>**

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը (նշելով նաև ծրագրի համաձայն ընդունման ենթակա ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման համար հիմք հանդիսացող ՀՀ Սահմանադրության կամ օրենքների դրույթները, ինչպես նաև կառավարության ծրագրի համապատասխան կետը)

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը (նշելով նաև ծրագրի համաձայն ընդունման ենթակա ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման համար հիմք հանդիսացող ՀՀ Սահմանադրության կամ օրենքների դրույթները, ինչպես նաև կառավարության ծրագրի համապատասխան կետը)

Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային Ժողովի 26.08.2021թ. թիվ ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի դրույթներից, մասնավորապես՝ 2.3-րդ բաժնի թվայնացման ենթաբաժնի 4-րդ, 5-րդ, 6-րդ,7-րդ և 8-րդ պարբերությունների պահանջներից:

Միջոցառման անհրաժեշտությունը բխում է նաև «Հայաստանի թվայնացման ռազմավարությանը, ռազմավարության միջոցառումների ծրագրին և արդյունքային ցուցանիշներին հավանություն տալու մասին» ՀՀ Կառավարության 11.02.2021թ.N 183-Լ որոշման N 2 հավելվածի 9,10,11,17 կետերի պահանջներից:

Միջոցառման անհրաժեշտությունը բխում է Համաշխարհային բանկի «ԱՌԵՎՏՐԻ ԽԹԱՆՄԱՆ ԵՎ ՈՐԱԿԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ» վարկային ծրագրի իրականացման քայլերից:

1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները (նշելով նաև էլեկտրոնային տվյալներ, եթե դրանք առկա են)

Ներկայիս էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգը (պետական կառույցների ներսում և կառույցների միջև էլեկտրոնային փաստաթղթերով հաղորդակցություն) կառուցված է պարզապես փաստաթղթերի՝ թվային հարթակի միջոցով փոխանցման սկզբունքով՝ պահպանելով դրա թղթային տրամաբանությունը: Այն փաստացի կերպով կազմակերպում է թղթային ձևաչափով փաստաթղթերի շրջանառությունը էլեկտրոնային եղանակով՝ առանց անդրադառնալու դրանց պարունակությանը: Նոր առաջարկվող լուծման դեպքում նախագծերի ընթացքի վերահսկումը կատարվում է իրական ժամանակում՝ ապահովելով առավելագույն թափանցիկություն նախագծի բոլոր բաղադրիչ մասերի կարգավիճակների մասին, որի արդյունքում էլ ձևավորվում է վերջնական միասնական կարգավիճակի հաշվետվությունը՝ ժամանակի տվյալ պահին: Նման համակարգի առկայությունը հնարավորություն կստեղծի ավտոմատացված վերահսկողական համակարգերի ներդրմանը, որոնք ավտոմատ կերպով կնախանշեն այն գործընթացները կամ խոչընդոտները, որոնք ռիսկ են ստեղծում ծրագրերի ժամանակային և նշված բյուջեի սահմաններում կատարման ընթացքում:

Ներկայումս մշակվում են մեթոդներ առկա համակարգերի տվյալների փոխանակման ուղղությամբ (GIP պետական թվայնացման հարթակների փոխգործակցության պլատֆորմ): Սա շատ կարևոր օրակարգ է և դրա հաջող իրականացումը էապես կզարգացնի պետական թվային համակարգի ինտեգրվածությունը: ՀՀ Կառավարությունը թվայնացման ոլորտի մի շարք խնդիրների լուծումը տեսնում է միասնական հենքի ստեղծման և ներդրման միջոցով: Պետական ծառայությունների թվային զարգացումը ներկայումս տարբեր գերատեսչություններում գտնվում է տարբեր փուլերում: Ներկա պահին պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ստեղծվել են էլեկտրոնային ծառայությունների մատուցման տարատեսակ հարթակները, որոնց ծրագրային ապահովումները

	էապես իրարից տարբերվում են և տեխնիկապես չեն կարող համատեղվել միասնական հարթակում՝ հաշվի առնելով տեղեկատվության հավաքագրման և պահպանման միասնական մոտեցումներ և ստանդարտներ: Ներկայումս էլեկտրոնային համակարգերի և պաշտոնական կայքերի գնման գործընթացը իրականացվում է ոչ այդքան արդյունավետ և որակյալ ծառայություններ ձեռք բերելու միջոցով: Համակարգերի ստեղծման և սպասարկման ծառայությունները իրականացվում են ոչ համաչափ և արդյունավետ մեխանիզմներով: Արդյունքում ստացվում են ցածր որակային չափանիշներով և թերի ծրագրա-տեխնիկական ապահովմամբ լուծումներ: Ներկայումս բազմաթիվ թվային հարթակներ մշակված են էականորեն տարբերվող սկզբունքների հիման վրա՝ թե գործառնական համակարգերի, թե ծրագրավորման տեխնոլոգիաների, տվյալների բազաների, դրանց կառավարման և հասանելիության մասով: Ներկայումս բացակայում է տվյալների կառավարման և պահպանման միասնական քաղաքականությունը, որը բխում է տվյալների չկարգավորված դասակարգման սկզբունքների բացակայությամբ: Կառավարության գերատեսչությունների միջև տվյալների միասնական օգտագործման գործուն համակարգի (փոխգործելիություն) տվյալների հավաքագրման «միանգամյա» սկզբունքը բացառելու է քաղաքացիների և կազմակերպությունների փաստաթղթերի և տեղեկատվության բազմակի անգամ տրամադրելու անհրաժեշտությունը: **1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները (միջոցառումը համակատարող ունենալու դեպքում նշելով նաև համակատարողի կողմից համապատասխան միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները)** Ներկայումս կարիք կա ստեղծել ամբողջությամբ թվայնացված փաստաթղթաշրջանառության համակարգ, որտեղ փաստաթղթերը կլինեն ամբողջությամբ էլեկտրոնային՝ DOC, PDF (կամ համարժեք) ձևաչափերի փոխարեն կիրառելով ամբողջական թվային, կառուցվածքային փաստաթուղթ (JSON, XML), որը հեշտությամբ հնարավորություն կտա տեղեկատվություն ստանալ փաստաթղթի պարունակության մասին (ուղարկող, հեղինակ, ստացողներ, տեքստային բովանդակությունը արհեստական բանականության միջոցով, մասնավորապես բնական լեզուների մշակում (natural language processing), մետա տեղեկատվություն, կարգավիճակ, փոփոխությունների պատմություն և այլն): Պետական մակարդակի ծրագրերի/նախագծերի կառավարման մեխանիզմը, որը ենթադրում է տարբեր գերատեսչությունների (ենթահամակարգերի) համագործակցություն և արդյունքում նախագծի ընթացքի վերաբերյալ տվյալների հավաքագրում և հաշվետվությունների կազմում՝ ամբողջական կամ ըստ առանձին մասերի: Պետական կառավարման թվայնացումը պահանջում է համակարգային լուծում, որը ենթադրում է ունենալ ընդհանուր պետական թվային համակարգի նկարագիր՝ ճարտարապետություն, որում բաղկացուցիչ մասերը նախագծված են առանձին ոլորտների խնդիրներ լուծելու համար, միևնույն ժամանակ նախատեսված են մնացած բաղադրիչների հետ արդյունավետ համագործակցելու՝ ընդհանուր խնդիրներ լուծելու համար: Նախատեսվում է իրականացնել նոր էլեկտրոնային համակարգերի և թվային գործիքների մշակում ըստ հանրային կառավարման բարեփոխումների քաղաքականության առաջնահերթությունների, որի ժամանակ պետական կառավարման մարմիններում գործընթացների թվայնացման շրջանակներում կվերհանվեն ավտոմատացման ենթակա խնդիրները և էլեկտրոնային նոր գործիքների միջոցով կմշակվեն և կներդրվեն նոր լուծումներ: Այս աշխատանքների համատեքստում նախատեսվում է նաև իրականացնել e-gov 2.0 պետական ծառայությունների միասնական թվային հարթակի ներդրում: Կապահովվի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից էլեկտրոնային ծառայությունների մատուցման կամ գործողությունների կատարման համար օգտագործվող էլեկտրոնային համակարգերի անվտանգ, անխափան փոխգործակցություն «Կառավարության փոխգործելիության հարթակի» (GIP) միջոցով: Թվային լուծումների ձեռքբերման՝ պետական գնումների իրականացման ժամանակ սահմանել մատակարարների ընտրության նոր ավելի արդյունավետ մեխանիզմներ, որի դեպքում հնարավոր կլինի ստանալ որակյալ թվային լուծումներ: Նախատեսվում է սուպերահամակարգչային տեխնոլոգիաների կիրառման կենտրոնի ստեղծում, որտեղ հնարավոր կլինի գեներացնել ամպային ենթակառուցվածքների պետական և մասնավոր տվյալների պահպանման, մշակման և փոխանցման գործառույթներ ապահովելու համար: Միջոցառման համակատարող է հանդիսանում ՀՀ Փոխվարչապետ Տ.Ավինյանի գրասենյակը և Էկենգ ՓԲԸ-ն: ՀՀ Փոխվարչապետ Տ. Ավինյանի գրասենյակը հանդիսանալու է համակարգի վերջնական տեսքով ներդրումը հաստատող մարմին, իսկ Էկենգ ՓԲԸ-ն հանդես է գալու համակարգի մշակման և շահագործման փուլերում որպես

	ծրագրատեխնիկական աջակցություն ցուցաբերող կողմ: Շահառու մարմինները հանդես են գալու որպես հարթակում իրենց էլեկտրոնային ծառայությունների մասնագիտական գործառույթների պատասխանատու և խորհրդատու: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Մեկ միասնական ծրագրերի կառավարման համակարգի փուլային ներդրում: Մեկ միասնական ճարտարապետության ստեղծում՝ ներառելով միկրոսերվիսային մոտեցումներ: Մեկ միասնական թվային հենքի ճարտարապետության ստեղծում, 5 ընդհանուր օգտագործման ենթամոդուլների կիրառմամբ: Մեկ միասնական տվյալների ենթակառուցվածքի ստեղծում, վիրտուալ բաժանումներով (հասանելիության և անվտանգության չափանիշների սահմանմամբ), ընդհանուր վերլուծական գործիքակազմով և սուպերահամակարգչային ծրագրային լուծումների կիրառմամբ: Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից էլեկտրոնային ծառայությունների մատուցման կամ գործողությունների կատարման համար օգտագործվող էլեկտրոնային համակարգերի անվտանգ, անխափան փոխգործակցություն «Գլոբալ փոխգործելիության հարթակի» (GIP) միջոցով, ինչպես նաև Հանրային կառավարման համակարգի արդյունավետության բարձրացում և թափանցիկության խթանում:
29.	**«Կիբեռանվտանգության և փաստերի վրա հիմնված քաղաքականության մշակման կենտրոնի ստեղծում»** **<u>1.Կիբեռանվտանգության ազգային գործակալության ստեղծում</u>** **<u>2.Կիբեռանվտանգության ինկուբատորի, հետազոտությունների և մշակումների (R & D) լաբորատորիայի ստեղծում</u>** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը (նշելով նաև ծրագրի համաձայն ընդունման ենթակա ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման համար հիմք հանդիսացող ՀՀ Սահմանադրության կամ օրենքների դրույթները, ինչպես նաև կառավարության ծրագրի համապատասխան կետը)** Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային Ժողովի 26.08.2021թ. թիվ ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի դրույթներից, մասնավորապես՝ 2.3-րդ բաժնի թվայնացման ենթաբաժնի 10-րդ պարբերության պահանջներից: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է նաև «Հայաստանի թվայնացման ռազմավարությանը, ռազմավարության միջոցառումների ծրագրին և արդյունքային ցուցանիշներին հավանություն տալու մասին» ՀՀ Կառավարության 11.02.2021թ.N 183-Լ որոշման N 2 հավելվածի 3,5 և 12 կետերի պահանջներից: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է Համաշխարհային բանկի «ԱՌԵՎՏՐԻ ԽԹԱՆՄԱՆ ԵՎ ՈՐԱԿԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ» վարկային ծրագրի իրականացման քայլերից: **1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները (նշելով նաև էլեկտրոնային տվյալներ, եթե դրանք առկա են)** Կիբեռանվտանգության ոլորտի տեխնոլոգիաների և սպառնալիքների շարունակական զարգացմանը և փոփոխմանը հետևելու և համապատասխան արդիականացում իրականացնելու համար առանցքային է միջգերատեսչական և մասնավոր հատվածի հետ սերտ համագործակցությունը, միջազգային փորձի տեղայնացումը, ինչպես նաև կիբեռանվտանգության միջազգային ստանդարտների դիտարկումը, միջպետական համագործակցությունը և միջազգային անվտանգության կառույցներին անդամակցությունը: Կիբեռանվտանգության ոլորտում ՀՀ-ում առկա մարտահրավերները հաղթահարելու համար ՀՀ Կառավարությունը նախատեսում է մշակել ընդհանուր կիբեռանվտանգության համալիր քաղաքականություն և գործողությունների պլան, ինչը կներառի կիբեռանվտանգության ազգային գործակալության ստեղծումը, ռիսկերի կառավարման և արագ արձագանքման մեխանիզմների մշակումը՝ բնական աղետների, արտակարգ իրավիճակներում և պատերազմական դրության ժամանակ: Չկա կիբեռանվտանգության ուսումնական պատշաճ դասընթաց: ● Կիբեռանվտանգության առկա կրթությունը և համալսարանական դասընթացները չունեն պատշաճ, արդի ուսումնական ծրագիր: Կիբեռանվտանգության մասին ձեռք բերվող գիտելիքները կիրառելի չեն իրական կյանքում:

	● Ավելի բարձրակարգ հետազոտություններ իրականացնելու համար քրեագիտական լաբորատորիայի բացակայություն: ● Ամբողջ աշխարհում և տարածաշրջանում կիբեռանվտանգության ցածր մակարդակ: ● Դեպքերին արձագանքելու համար պակասում են ժամանակակից գործիքները և կարողությունները, որն էլ հանգեցնում է կիբեռ հարձակումների ավելացմանը: ● Նոր բիզնեսներ ստեղծելու և կիբեռանվտանգության ոլորտում նորարարական լուծումների համար ապակենտրոնացված գիտելիքներ և նպաստող միջավայրի բացակայություն: ● Կիբեռանվտանգության մտածողության բացակայություն և իրազեկվածության պակաս մասնավոր հատվածի և բնակչության շրջանում: ● Երկրում տարբեր գործընկերների համար կիբեռանվտանգության հետ կապված ծառայություններմատուցելու համար ինտեգրված միջավայրի պակաս: **1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները (միջոցառումը համակատարող ունենալու դեպքում նշելով նաև համակատարողի կողմից համապատասխան միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները)** Սրանով սահմանվում են թվային լուծումների իրականացման, սպասարկման, և օգտագործմանը վերաբերող անվտանգության պահանջներ, որոնք կապահովեն թվային համակարգերի և տվյալների հուսալիությունը, ամբողջականությունը և ապահովությունը: Ստանդարտները կօգնեն մի շարք որոշումների կայացման և դրանց ընդհանրական մոտեցման հարցում Կիբեռանվտանգության ինկուբատորի, հետազոտությունների և մշակումների (R & D) լաբորատորիայի ստեղծում ծրագիրը կունենա 3 հիմնական բաղադրիչ՝ 1) Կարողությունների զարգացման բաղադրիչը, որը կապահովի ԿԱ-ի ոլորտում նոր, արհեստավարժ մասնագետների ստեղծումը՝ տարբեր վերապատրաստումների, ինչպես նաև համալսարանական կրթական ծրագիրը թարմացնելու միջոցով, 2) Ինկուբացիոն և աքսելերացման ծրագրի բաղադրիչը, որը նոր պրոդուկտներ և բիզնես կստեղծի կիբեռանվտանգության ոլորտում, որոնք կբավարարեն տեղական և գլոբալ շուկայի կարիքները, 3) Կիբեռանվտանգության դեմո և հետազոտական լաբորատորիայի բաղադրիչը, որը կապահովի ողջ ենթակառուցվածքը, ծրագրային ապահովումը և գործիքները, որոնք անհրաժեշտ են տարբեր թեստեր, սիմուլյացիաներ, կիբեռ հարձակման սիմուլյացիոն վարժություններ և այլն իրականացնելու համար: «Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի ծրագրի» ֆինանսավորումը կօգտագործվի անհրաժեշտ լաբորատորիաների և ինկուբացիոն ծրագրի համար սարքավորումները և կահույքը ձեռք բերելու, հիմնական աշխատակազմի ծախսերը հոգալու, լաբորատորիայի պահպանման և շահագործման ծախսերը հոգալու, այդ թվում նաև միջոցառումներ, վերապատրաստումներ կազմակերպելու և դրամաշնորհների համար: Ելնելով իրենց ոլորտում տեղեկատվական անվտանգության աշխատանքների իրականացման կուտակած մեծ փորձից ՀՀ Ազգային անվտանգության ծառայությունը և ՀՀ կենտրոնական բանկը կիրականացնեն մասնագիտական աջակցություն կիբեռանվտանգության միջազգային ստանդարտների տեղայնացման գործընթացում: ՀՀ Արդարադատության նախարարությունը և ՀՀ Ազգային անվտանգության ծառայությունը հանդիսանալու են գործակալության ստեղծման գործընթացում մասնագիտական խորհրդատվություն ցուցաբերող կողմեր: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Կիբեռանվտանգության ստանդարտների մշակում և պետական հարթակների դրանց համապատասխանության ստուգում:
30.	**«Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերի առնվազն 80%-ում լայնաշերտ (օպտիկամանրաթելային) կապով և պետական թվային ծառայությունների հասանելիությամբ ապահովում» միջոցառման** **<u>30.1 Հայաստանի Հանրապետության տարածքում լայնաշերտ ինտերնետ (օպտիկամանրաթելային) կապի հասանելիության ռազմավարությունը ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացում</u>** **30.2 <u>ADAN (Հայկական Տվյալների Հասանելիության Ցանցի Ասոցիացիա (Armenian Data Access Network)) իրականացման ծրագրային գրասենյակի/խորհրդատուի TOR կազմում</u>**

30.3 ADAN ծրագրային փաթեթի մշակում

30.4 Պետական և նշանակալի կարևորության ռեսուրսների տեղաբաշխում, POPs: Կրիտիկական ենթակառուցվածքի բաղադրիչների ճկունությունն արտակարգ իրավիճակներում, ներառյալ ուսուցումը, սերտիֆիկացումը և մոդելավորումը ՀՀ հեռաղորդակցության և ինտերնետի ենթակառուցվածքի համատեղելիությունը տեխնիկական արդի չափանիշներին, ներառյալ RPKI, DNSSEC, IPv6, improvement of Network Readiness Index position

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

«Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերի առնվազն 80%-ում լայնաշերտ (օպտիկամանրաթելային) կապով և պետական թվային ծառայությունների հասանելիությամբ ապահովում» միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային Ժողովի 2021թ. օգոստոսի 26-ի թիվ ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի դրույթներից, մասնավորապես՝ 2.3 բաժնի, Հեռահաղորդակցության ենթաբաժնի, 4-րդ պարբերության պահանջներից:

Ծրագրի նպատակն է ՀՀ բոլոր բնակավայրերում բարձր արագությամբ լայնաշերտ ինտերնետ կապի ապահովումը, քաղաքացիների և գործարար միջավայրի համար հասանելի հեռահաղորդակցական ցանցային ենթակառուցվածքի ստեղծումը, ինչպես նաև հիմնական ենթակառուցվածքի հիման վրա հետագա հեռահաղորդակցական, պետական կառավարման համակարգի, գործարար, կրթական-գիտական, մշակութային և ժամանցային հնարավորությունների ընդլայնումը:

1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Համաձայն ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից հրապարակված 2020 թվականի տարեկան հաշվետվության՝ հանրային շարժական կապի 4G+ (LTE Advanced) տեխնոլոգիայի ծածկույթով ապահովված են Հայաստանի Հանրապետության բնավայրերի 100% (1002 բնակավայր), մինչդեռ միայն 513 բնակավայր (51.2%) են ապահովված օպտիկամանրաթելային FTTx տեխնոլոգիայի հիման վրա ամրակցված լայնաշերտ ինտերնետ հասանելիությամբ:

1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Հայաստանի Հանրապետության բոլոր բնակավայրերը լայնաշերտ ինտերնետ կապի հասանելիությամբ ապահովելով՝ հնարավորություն կընձեռնվի հանրապետությունում ձևավորել համաշխարհային մակարդակի տեղեկատվական/հաղորդակցական տեխնոլոգիաների ենթակառուցվածք:

Միջոցառումներն իրականանացվելու են հետևյալ փուլերով՝

1. ADAN (Հայկական Տվյալների Հասանելիության Ցանցի Ասոցիացիա (Armenian Data Access Network)) իրականացման ծրագրային գրասենյակի/խորհրդատուի TOR կազմում,
2. ADAN ծրագրային փաթեթի մշակում,
3. ADAN պիլոտային կոմպոնենտի կառուցում,
4. Ուսուցում և սերտիֆիկացիա,
5. ADAN հիմնական կոմպոնենտի կառուցում: Պետական և նշանակալի կարևորության ռեսուրսների տեղեկայում: IPv6, DNSSEC, RPKI, Network Readiness Index:

Վերոնշյալ միջոցառումները նախատեսվում են իրականացնել 5 տարվա ընթացքում:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Այս բաղադրիչի իրականացումը թույլ կտա ապահովել որակական բարձր չափանիշներ ունեցող լայնաշերտ գերարագ ինտերնետի հասանելիությունը Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքով, ինչը նախապայման է հանդիսանում իրերի ինտերնետի, էլեկտրոնային կառավարման լուծումների ներդրման և կիրառման համար:

Միաժամանակ, լայնաշերտ օպտիկամանրաթելային ցանցի ամբողջականացումը կբարձրացնի Հայաստանի Հանրպետությունում ինտերնետ կապի հուսալիությունը, արագագործությունը, ինչպես նաև վերջնական օգտագործողներին մատուցվող ինտերնետ կապի ծառայությունները կլինեն ավելի մատչելի:

31.	**31. <u>«Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում ռադիոեթերի շուրջօրյա վերահսկում և մինչև 100% եթերի մաքրության ապահովում, այդ նպատակով շարժական և բազային ռադիոմոնիթորինգի ժամանակակից համակարգի ներդրում»</u>** **<u>31.1 ՀՀ տարածքում բազային և շարժական ռադիոմոնիթորինգի համակարգերի ձեռքբերում, ՀՀ տարածքում (10 մարզ կենտրոններում) ռադիոհսկման կայանների կառուցում և համակարգի ներդրում</u>** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը:** «Ռադիոեթերի որակի վերահսկման նպատակով ներդնել բազային և շարժական ռադիոմոնիթորինգի համակարգ» միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային Ժողովի 2021թ. օգոստոսի 26-ի թիվ ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի դրույթներից, մասնավորապես՝ 2.3 բաժնի, Հեռահաղորդակցության ենթաբաժնի, 5-րդ պարբերության պահանջներից: Հայաստանի Հանրապետության տարածքում բազային և շարժական ռադիոմոնիթորինգի համակարգի ներդրման նպատակն է ապահովել «էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի պահանջներով իրավասու մարմնին վերապահված գործառույթների շրջանակներում ՀՀ ողջ տարածքում իրականացնել շուրջօրյա ռադիոհսկում, որի արդյունքում կհայտնաբերվեն և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կբացառվեն չթույլատրված հեռարձակումները զերծ պահելով եթերը վնասակար խանգարումներից: **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը** ՀՀ տարածքում ներկայում շուրջօրյա ռադիոմոնիթորինգ իրականացվում է միայն Երևան քաղաքում, որի համար տեխնիկական բազա է հանդիսանում 2002 թվականին կանադական Aerosystems International ֆիրմայի կողմից տեղակայված ռադիոմոնիթորինգի համակարգը իր ծրագրային ապահովմամբ, որը կազմված է 3 բազային և 1 շարժական կայաններից, Գյումրի և Վանաձոր քաղաքներում 8 ժամյա աշխատանքային ռեժիմով մինիմալ տեխնիկական հնարավորություններով: Ներկա վիճակում առկա սարքավորումներով հնարավոր չէ ՀՀ ողջ տարածքում իրականացնել շուրջօրյա մշտադիտարկում, և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով լիարժեք ապահովել և զերծ պահել եթերային հեռուստառադիոծրագրերի հեռարձակման, շարժական բջջային կապի ծառայությունների մատուցման ընթացքում վնասակար և չարտոնված խանգարումներից՝ չթույլատրված ռադիոհաճախականությունների հեռարձակումներից: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Նոր տեխնոլոգիաներով և համապատասխան սարքավորումներով վերազինել ռադիոմոնիթորինգի բազային և շարժական կայանների միասնական համակարգը, որը հնարավորություն կտա ՀՀ ողջ տարածքով իրականացնել շուրջօրյա մշտադիտարկում և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ռադիոեթերը ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պահանջներին չհամապատասխանող վնասակար ռադիոհեռարձակումներց: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** ՀՀ տարածքում բազային և շարժական ռադիոմոնիթորինգի համակարգի ներդրման ծրագրի ընդունման արդյունքում կունենանք ժամանակակից տեխնիկական լուծումներով կառուցված ցանց, որը հնարավորություն կտա ՀՀ ողջ տարածքում իրականացնել շուրջօրյա մոնիթորինգ ժամանակին հայտնաբերելու և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով բացառելու ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պահանջներին չհամապատասխանող ռադիոհեռարձակումները, որն էլ կապահովի պետության անվտանգության համակարգերի, տնտեսավարող սուբյեկտների ռադիոէլեկտրոնային միջոցների անխափան աշխատանքը:
32.	**32. «Թվային ինտերակտիվ հեռուստատեսության համակարգի ներդրում» միջոցառման** **32.1 <u>Հայաստանի Հանրապետությունում թվային ինտերակտիվ հեռուստատեսության զարգացման ծրագրի մշակում և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացում</u>** **32.2 <u>Ստանդարտների ընդունում</u>** **32.3 <u>Համակարգի ներդրում</u>**

	32.4 <u>Հայաստանի Հանրապետությունում մուլտիպլեքսի արբանյակային տարածման համար արբանյակային ունակության վարձակալում</u> **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** «Թվային ինտերակտիվ հեռուստատեսության համակարգի ներդրում» միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային Ժողովի 2021թ. օգոստոսի 26-ի թիվ ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի դրույթներից, մասնավորապես՝ 2.3 բաժնի, Հեռահաղորդակցության ենթաբաժնի, 6-րդ պարբերության պահանջներից: Թվային ինտերակտիվ հեռուստատեսության ներդրման նպատակն է թվային հեռարձակման ցանցի միջոցով հեռուստադիտողին մատուցել լսարանի ժամանակակից պահանջներին համապատասխան ինտերակտիվ կոնտենտ, միաժամանակ, Հանրապետությունում թվային հեռուստահեռարձակման շրջանակներում հանրապետական սփռման մուլտիպլեքսի արբանյակային տարածման համար արբանյակային ունակության վարձակալության ապահովում: **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Հայաստանի Հանրապետությունում թվային հեռուստատեսությունը սկսել է գործել 2016 թվականից: ՀՀ սեփականությունը համարվող թվային հեռարձակման ցանցը բաղկացած է թվով 213 հեռուստակայանից, որոնցից 66-ում հանրապետական սփռման մուտիպլեքսի հաղորդումն իրականացվում է օպտիկամանրաթելային համակարգով, իսկ թվով 147-ում՝ արբանյակային հեռարձակման ցանցի միջոցով: Վերջիններս դժվար հասանելի են օպտիկամանրաթելային համակարգին և հիմնականում գտնվում են բարձրլեռնային և սահմանամերձ բնակավայրերում: Նշված 147 հեռուստակայաններում մուլտիպլեքսը հասցնելու արբանյակային կապի միջոցը այլընտրանք չունի: Այդ կայանները ընդգրկում են հանրապետության բնակավայրերի շուրջ 20 տոկոսը: DVB-T2 ստանդարտի թվային հեռարձակման ցանցի ներդրմամբ հեռուստադիտողին մատուցվեց թվային գերազանց որակի հեռուստատեսություն՝ որոշակի լրացուցիչ հնարավորություններով (օրինակ EPG): Սակայն, անալոգայինի համեմատ ունեցած իր առավելություններով հանդերձ, այն դասվում է ավանդական գծային հեռուստատեսության շարքին, որն ադապտիվ չէ և չունի ինտերակտիվություն: Հիմնականում այդ պատճառով էլ թվային եթերային հեռուստատեսությունը, հատկապես երիտասարդության շրջանում, զիջում է հեռարձակման այլ հարթակներին, ինչպիսիք են IP TV և OTT-ն: Փորձը ցույց է տալիս, որ հեռուստադիտողը ցանկանում է դիտել իր նախընտրած կոնտենտը՝ իր համար նախընտրելի ժամանակահատվածում: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** ՀՀ կառավարության 2013 թվականի հունիսի 20-ի նիստի N 24 արձանագրային որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում վերգետնյա թվային հեռուստահեռարձակման համակարգի ներդրման գործընթացի իրականացման» ծրագրի համաձայն՝ տեղադրվել են արբանյակային հեռարձակման կազմակերպման համար պահանջվող բոլոր հաղորդիչ -ընդունիչ սարքավորումները: Նշված սարքավորումներով արբանյակային ցանցի կենսունակությունը հնարավոր է իրականացնել միայն համապատասխան արբանյակային ունակության վարձակալությամբ, իսկ գործող թվային հեռուստատեսության ինտերակտիվության բաղադրիչի բացակայությունը հնարավոր կլինի լրացնել տարբեր հավելվածների ներդրման միջոցով՝ հետադարձ կապի համար օգտագործելով ինտերնետը: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Ինտերակտիվ հավելվածների ներդրմամբ հնարավորություն է ընձեռվում ձևավորել լսարանի ժամանակակից պահանջներին համապատասխան կոնտենտ, մասնավորապես. Catch-up և Time Shift, 24/7 օպերատիվ լրատվություն, Rich EPG, լրացուցիչ տեղեկատվություն (եղանակի տեսություն, տարադրամի փոխարժեք և այլն), տեսավարձույթ (VoD), սոցիալական ցանցերի մատչելիություն, կոմունալ վճարումներ, հարցումների անցկացում, E-Gov, E-Health, E- Dram, Dasaran կրթական և ուսուցողական ծրագրեր, վիրտուալ տուրիզմ և այլն:
33.	**33. «Հայաստանի Հանրապետության արտաքին կապի որակական, այդ թվում՝ անվտանգության մակարդակի բարձրացում» միջոցառման**

	33.1 <u>Սևծովյան անդրծովյան կապուղու իրականացման ծրագրային գրասենյակի/խորհրդատուի TOR կազմում, նախագծային աշխատանքներ</u> **33.2 <u>Սևծովյան անդրծովյան նոր կապուղու ստեղծում (Բուլղարիա-Վրաստան-Հայաստան)</u>** **<u>-Կապուղու տեխնիկատնտեսական մոդելի մշակում</u>** **<u>-Կապուղու կառուցման կապալառու կազմակերպության ընտրություն</u>** **<u>- Կապուղու կառուցում,</u>** **<u>- Կապուղու շահագործող կազմակերպության ընտրություն/ստեղծում</u>** **<u>- Կապուղու շահագործման հանձնում</u>** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** «Հայաստանի Հանրապետության արտաքին կապի որակական, այդ թվում՝ անվտանգության մակարդակի բարձրացում» միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային Ժողովի 2021թ. օգոստոսի 26-ի թիվ ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի դրույթներից, մասնավորապես՝ 2.3 բաժնի, Հեռահաղորդակցության ենթաբաժնի, 3-րդ պարբերության պահանջներից: Տվյալ նախաձեռնության իրականացումը թույլ կտա ապահովել ինչպես անխափան կապը Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ կստեղծի նախադրյալներ՝ Հայաստանը, որպես ինտերնետ տվյալների փոխանակման և տարանցիկ հոսքերի անցման տարածաշրջանային խոշոր կենտրոն դարձնելու համար: **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս Հայաստանի Հանրապետության կապի օպերատորները վարձակալության հիմունքներով ձեռք են բերում միջազգային հեռահաղորդակցության կապուղիներ, որոնց անվտանգության ապահովումը երաշխավորված չէ: Այդ իսկ պատճառով անհրաժեշտություն է առաջացել ստեղծել նոր այլընտրանքային հեռահաղորդակցային կապուղի: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Սևծովյան անդրծովյան նոր այլընտրանքային մայրուղային կապուղի ստեղծելու նպատակով նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝ - Մշակել կապուղու տեխնիկատնտեսական մոդելը, - Իրականացնել կապուղու կառուցման կապալառու ընկերության ընտրություն, - Կապուղու կառուցում, - Ընտրել կամ ստեղծել կապուղին շահագործող կազմակերպությունը, - Կապուղու շահագործման հանձնում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Նոր ստեղծվող այլընտրանքային մայրուղային կապուղին հնարավորություն կտա կապել Եվրոպական միության երկրները Վրաստանի և Հայաստանի Հանրապետության հետ և թույլ կտա ապահովել տվյալների փոխանցում Մերձավոր Արևելքի, Կենտրոնական Ասիայի, Չինաստանի և Եվրոպայի միջև: Ինչպես նաև նշված կապուղին Հայաստանի Հանրապետության համար կհանդիսանա անվտանգության երաշխիք:
34.	**34 «Ընդունել տիեզերական գործունեության ոլորտում ՀՀ տնտեսության և գիտության զարգացման, անվտանգության ամրապնդման ոլորտում ՀՀ միջազգային համագործակցության ընդլայնման համապարփակ ռազմավարությունը» միջոցառման** **34.1 Մշակել ՀՀ տիեզերական գործունեության ոլորտի համապարփակ ռազմավարություն** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** «Հայաստանի Հանրապետության արտաքին կապի որակական, այդ թվում՝ անվտանգության մակարդակի բարձրացում» միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային Ժողովի 2021թ. օգոստոսի 26-ի թիվ ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի դրույթներից, մասնավորապես՝ 2.3 բաժնի, Հեռահաղորդակցության ենթաբաժնի, 2-րդ պարբերության պահանջներից: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

	Հայաստանի Հանրապետությունում տիեզերական գործունեության ոլորտը կայացման վաղ փուլում է: 2019-2020 թվականներին մշակվել և ընդունվել են ՀՀ օրենքը տիեզերական գործունեության մասին և օրենքի կիրարկումն ապահովող որոշ կարգեր, որոնք սակայն լրամշակման և շարունակական բարեփոխման կարիք ունեն: Մի շարք գերատեսչություններ ներառյալ Արտակարգ իրավիճակների, Շրջակա միջավայրի, Տարածքային կառավարման նախարարությունները օգտագործում են տիեզերական գործունեության ոլորտի հնարավորությունները իրենց աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու համար: Այդ գործընթացը շարունակական բնույթ է կրում՝ նպատակ ունենալով բարձրացնել մատուցվող հանրային ծառայությունների որակը: Ներկայումս ՀՀ-ում գրեթե չկան տիեզերական գործունեությամբ զբաղվող կազմակերպություններ, սակայն կան մասնագետներ, որոնք աշխատել են տիեզերական գործունեության բնագավառում խորհրդային տարիներին, ունեն կուտակած մեծ փորձ և գիտելիքներ: Կան նաև գիտական ինստիտուտներ, որոնք, ներգրավված լինելով ոլորտում, բավարար հնարավորությունների դեպքում կարող են նոր արժեքավոր հետազոտություններ իրականացնել այս զարգացող բազմաշերտ բնագավառներում: Ոլորտի զարգացման տեսլականի և ռազմավարության բացակայությունը էապես խոչընդոտում է համակարգված աջակցության և միջազգային համագործակցությունների նախաձեռնելուն: 1.2. **առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Հաշվի առնելով առկա խնդիրները և ոլորտի առանձնահատկությունները՝ անհրաժեշտ է մշակել ոլորտի զարգացման ազգային համապարփակ ռազմավարություն, որը կներառի, թե՛ համապատասխան ենթակառուցվածքների ստեղծմանն ու ոլորտի գործարար միջավայրի զարգացմանը, թե՛ իրավական դաշտի շարունակական բարելավմանն ուղղված քայլեր: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման ընթացքում ակնկալվում է մշակել տիեզերական գործունեության ոլորտի զարգացմանը նպաստող ռազմավարություն և համապատասխան միջոցառումների ծրագիր, որը որակական և քանակական ցուցանիշներով կհասցեագրի ՀՀ տնտեսության, գիտության զարգացման, անվտանգության ամրապնդման հիմնահարցերը և կնպաստի միջազգային համագործակցության ընդլայնմանը:
35.	**35. «Փոստային կապի ունիվերսալ ծառայությունների հասանելիությունը, մատչելիությունը և մատուցման բարձր որակը»** **<u>35.1 ««Փոստային կապի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի մշակում</u>** **<u>35.2 ««Փոստային կապի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքից բխող իրավական ակտերի մշակում</u>** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը (նշելով նաև ծրագրի համաձայն ընդունման ենթակա ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման համար հիմք հանդիսացող ՀՀ Սահմանադրության կամ օրենքների դրույթները, ինչպես նաև կառավարության ծրագրի համապատասխան կետը)** «Փոստային կապի ունիվերսալ ծառայությունների հասանելիության, մատչելիության և մատուցման բարձր որակի ապահովում» միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային Ժողովի 2021թ. օգոստոսի 26-ի թիվ ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի դրույթներից, մասնավորապես՝ 2.3 բաժնի, Փոստային կապ ենթաբաժնի, 2-րդ պարբերության պահանջներից, ինչպես նաև փոստային կապի բնագավառում գործունեության իրավական հիմքերի կատարելագործման հետ՝ հաշվի առնելով փոստային կապի ոլորտի զարգացման ժամանակակից միտումները, փոստային կապի ծառայությունների մատուցման շուկայի զարգացումը, ինչպես նաև փոստային կապի բնագավառի իրավական կարգավորման միջազգային փորձը: **1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները (նշելով նաև ելակետային տվյալներ, եթե դրանք առկա են)**

	Ներկայումս փոստային ոլորտը Հայաստանի Հանրապետությունում կարգավորվում է «Փոստային կապի մասին» և «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքներով, ինչպես նաև այլ իրավական ակտերով: **1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները (միջոցառումը համակատարող ունենալու դեպքում նշելով նաև համակատարողի կողմից համապատասխան միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները)** Ներկայումս հիմք ընդունելով ոլորտի զարգացման միջազգային միտումները, ինչպես նաև Ստամբուլի Համաշխարհային փոստային ռազմավարությունը փոստային կապի բնագավառում լիազորված մարմնի կողմից իրականացվում է քաղաքականության համապատասխանեցման գործընթացը: **2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման իրականացման արդյունքում փոստային ոլորտի օրենսդրական դաշտը կհամապատասխանեցվի եվրոպական երկրներում գործող փոստային ոլորտի օրենսդրական դաշտին, մասնավորապես, փոստային ունիվերսալ ծառայությունների մատուցման մասով՝ կապահովվեն փոստային կապի ունիվերսալ ծառայությունների հասանելիությունը, մատչելիությունը և մատուցման բարձր որակը: Կակտիվացվեն փոստային ոլորտում շուկայական մեխանիզմները, կապահովվի առողջ մրցակցությունը և բարենպաստ պայմաններ կստեղծվեն ձեռներեցության զարգացման համար:
36.	**36**. **«Փոստային ծառայությունների շուկայի ներդրումային դաշտի գրավչության բարձրացում» <u>36.1</u>** **<u>Փոստային ոլորտի զարգացման հայեցակարգը և հայեցակարգից բխող միջոցառումների իրականացման ժամանակացույցը ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացում</u>** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը (նշելով նաև ծրագրի համաձայն ընդունման ենթակա ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման համար հիմք հանդիսացող ՀՀ Սահմանադրության կամ օրենքների դրույթները, ինչպես նաև կառավարության ծրագրի համապատասխան կետը)** «Փոստային ծառայությունների շուկայի ներդրումային դաշտի գրավչության բարձրացում» միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային Ժողովի 2021թ. օգոստոսի 26-ի թիվ ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի դրույթներից, մասնավորապես՝ 2.3 բաժնի, Փոստային կապ ենթաբաժնի, 3-րդ պարբերության պահանջներից, ինչպես նաև փոստային կապի բնագավառում գործունեության իրավական հիմքերի կատարելագործման հետ՝ հաշվի առնելով փոստային կապի ոլորտի զարգացման ժամանակակից միտումները, փոստային կապի ծառայությունների մատուցման շուկայի զարգացումը, ինչպես նաև փոստային կապի բնագավառի իրավական կարգավորման միջազգային փորձը: **1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները (նշելով նաև ելակետային տվյալներ, եթե դրանք առկա են)** Ներկայումս փոստային կապի բնագավառը Հայաստանի Հանրապետությունում կարգավորվում է «Փոստային կապի մասին» և «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքներով, ինչպես նաև այլ իրավական ակտերով: Փոստային կապի ոլորտի ընդհանուր զարգացումը հիմնովին կախված է ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտից, որի բարեփոխումների նպատակով ուսումնասիրվել է միջազգային լավագույն փորձը: Փոստային կապի ոլորտի առկա խնդիրը ոլորտի կարգավորման առավել ընդգրկուն օրենսդրական դաշտի ստեղծման անհրաժեշտությունն է: **1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները (միջոցառումը համակատարող ունենալու դեպքում նշելով նաև համակատարողի կողմից համապատասխան միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները)** Ներկայումս հիմք ընդունելով ոլորտի զարգացման միջազգային միտումները, ինչպես նաև Աբիջանյան Համաշխարհային փոստային ռազմավարութունը փոստային կապի բնագավառում լիազորված մարմնի կողմից իրականացվում է քաղաքականության համապատասխանեցման գործընթացը: **2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

	Միջոցառման իրականացման արդյունքում կապահովվեն փոստային ոլորտի զարգացմանն ուղղված այնպիսի հայեցակարգային դրույթներ, որոնք հիմք կհանդիսանան ներկայումս գործող օրենսդրության հետագա բարելավման, փոստային ծառայությունների շուկայի ներդրումային դաշտի գրավչության, էլեկտրոնային առևտրի զարգացման և արտահանման խթանման, փոստային ցանցի ենթակառուցվածքների արդյունավետության և փոխգործակցության բարձրացման համար: Սահմանել և խթանել նոր ծառայությունների, այդ թվում՝ փոստբանկային, ֆինանսական և էլեկտրոնային փոստային ծառայությունների ներդրման պայմանները:
37.	**37. «Փոստային բաժանմունքներում ծառայությունների լայն շրջանակի մատուցում» <u>37.1 «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից մատուցվող ծառայությունների, այդ թվում՝ պետական ծառայությունների ցանկի և Հանրային ծառայությունների միասնական գրասենյակների քանակի ընդլայնում</u>** **<u>37.2 «Հայփոստ» ՓԲԸ-ի փոստային ենթակառուցվածքի արդիականացում և վերազինում</u>** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը (նշելով նաև ծրագրի համաձայն ընդունման ենթակա ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման համար հիմք հանդիսացող ՀՀ Սահմանադրության կամ օրենքների դրույթները, ինչպես նաև կառավարության ծրագրի համապատասխան կետը)** «Փոստային բաժանմունքներում ծառայությունների լայն շրջանակի մատուցում» միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային Ժողովի 2021թ. օգոստոսի 26-ի թիվ ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի դրույթներից, մասնավորապես՝ 2.3 բաժնի, Փոստային կապ ենթաբաժնի, 4-րդ պարբերության պահանջներից, ինչպես նաև փոստային կապի բնագավառում գործունեության իրավական հիմքերի կատարելագործման հետ՝ հաշվի առնելով փոստային կապի ոլորտի զարգացման ժամանակակից միտումները, փոստային կապի ծառայությունների մատուցման շուկայի զարգացումը, ինչպես նաև փոստային կապի բնագավառի իրավական կարգավորման միջազգային փորձը: **1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները (նշելով նաև ելակետային տվյալներ, եթե դրանք առկա են)** Հայաստանի Հանրապետությունը 1992 թվականից հանդիսանում է Համաշխարհային փոստային միության անդամ և պարտավորություն ունի ՀՀ ամբողջ տարածքում ապահովել փոստային կապի ունիվերսալ ծառայությունների մատչելիությունը և հասանելիությունը: Ներկայումս, «Հայփոստ» ՓԲԸ-ն՝ որպես փոստային կապի ազգային օպերատոր, կառավարում է 1209 փոստային դասիչներ՝ սպասարկելով ավելի քան 750.000 հասցե Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում՝ 850 փոստային բաժանմունքների միջոցով: Նման ցանցի գոյության պայմաններում խնդիր պետք է դրվի նաև այդ ցանցն առավել արդյունավետ և պետական շահերի տեսանկյունից լավագույնս օգտագործման առումով: Ունենալով հանրային փոստային ցանց, Պետությունը կարիք չունի նմանատիպ այլ ցանցերի ստեղծման, իսկ այս ցանցի ամբողջական ծանրաբեռնումը, բացի պետության ակնհայտ շահերից, կապահովի նաև այլ ծառայությունների ծախսային մոդելի էական փոփոխություն (այդ թվում՝ փոստային ծառայությունների ինքնարժեքի), ինչն իր հերթին հնարավորություն կընձեռի սահմանելու փոստային և այլ հանրային ծառայությունների սակագների առավել ցածր մակարդակ: **1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները (միջոցառումը համակատարող ունենալու դեպքում նշելով նաև համակատարողի կողմից համապատասխան միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները)** «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից մատուցվող ծառայությունների, այդ թվում՝ նաև պետական ծառայությունների ցանկի և Հանրային ծառայությունների միասնական գրասենյակների քանակի ընդլայնում: **2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման իրականացման արդյունքում «Հայփոստ» ՓԲԸ-ի թվով 850 փոստային բաժանմունքներում կապահովվի պետական ծառայությունների մատուցումը և ՀՀ բոլոր մարզերում Հանրային

	ծառայությունների միասնական գրասենյակների բացումը, ինչն էլ հնարավորություններ կընձեռի պետական ծառայությունները հասանելի դարձնել երկրի ողջ տարածքում՝ բոլոր օգտվողների համար, ինչը կապահովի տարածքների համաչափ զարգացում, տարածքային խտրականության բացառում օգտվողների համար, օպերատիվություն և միջոցների խնայողություն:
38.	**38. «Էլեկտրոնային առևտրի զարգացում»** **<u>38.1 «Էլեկտրոնային առևտրի մասին» ՀՀ օրենքի նախագծին հավանություն տալու մասին ՀՀ կառավարության որոշման ընդունում</u>** **<u>38.2 «Էլեկտրոնային առևտրի մասին» ՀՀ օրենքից բխող իրավական ակտերի ընդունում</u>** 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը (նշելով նաև ծրագրի համաձայն ընդունման ենթակա ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման համար հիմք հանդիսացող ՀՀ Սահմանադրության կամ օրենքների դրույթները, ինչպես նաև կառավարության ծրագրի համապատասխան կետը) «Էլեկտրոնային առևտրի զարգացում» միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային Ժողովի 2021թ. օգոստոսի 26-ի թիվ ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի դրույթներից, մասնավորապես՝ 2.3 բաժնի, Փոստային կապ ենթաբաժնի, 5-րդ պարբերության պահանջներից, ինչպես նաև էլեկտրոնային առևտրի ոլորտում իրավական դաշտի կատարելագործմամբ: 1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները (նշելով նաև ելակետային տվյալներ, եթե դրանք առկա են) Էլեկտրոնայի առևտրի ընդհանուր զարգացումը հիմնովին կախված է ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտից, որի բարեփոխումների նպատակով ուսումնասիրվել է միջազգային լավագույն փորձը: Փոստային կապի ոլորտի առկա խնդիրը ոլորտի կարգավորման առավել ընդգրկուն օրենսդրական դաշտի ստեղծման անհրաժեշտությունն է: 1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները (միջոցառումը համակատարող ունենալու դեպքում նշելով նաև համակատարողի կողմից համապատասխան միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները) Էլեկտրոնային առևտրի ոլորտում իրավական դաշտի կատարելագործում 2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Էկոնոմիկայի նախարարություն	
NN	**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ**
1	***ՀՀ էկոնոմիկայի նախարարության միջոցառումների «1. Տնտեսական աճի ապահովում՝ 7-9%» նպատակի իրագործումը կնպաստի «Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050» փաստաթղթի (առնվազն 2025թ. ցուցանիշների) հետևյալ թիրախների և թիրախային արդյունքների ապահովմանը՝*** ***1. 7-րդ գործողության բոլոր թիրախային արդյունքներ, (էջ 46)*** ***2. 9-րդ գործողության 9.1 թիրախային արդյունք, 9.1.2 ցուցանիշ (էջ 54)*** ***3. 9-րդ գործողության 9.2 թիրախային արդյունք, 9.2.1 և 9.2.3 ցուցանիշներ (էջ 54)*** ***4. 14-րդ գործողության 14.4 թիրախային արդյունքի ցուցանիշներն ամբողջությամբ (էջ 53)*** ***5. 15-րդ գործողության 15.1 թիրախային արդյունք, 15.1.3 ցուցանիշ (էջ 54)*** ***6. 3-րդ գործողության 3.4 թիրախային արդյունք 3.4.1 ցուցանիշներ (էջ 54)*** ***7. 4-րդ գործողության 4.2 թիրախային արդյունք, 4.2.2 ցուցանիշ (էջ 43)*** **1.1. Տնտեսական զարգացման քաղաքականության մշակում և իրականացում «Տնտեսական զարգացման քաղաքականությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման հաստատում**

	1. <u>Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը</u> Հայաստանի տնտեսության զարգացման տեսանկյունից կարևոր է սոցիալական ուղղվածություն ունեցող ոլորտներում (կրթություն, առողջապահություն) տնտեսական և գործարարության կոմպոնենտների ձևավորումն ու զարգացումը, ինչը ենթադրում է համապատասխան ոլորտային տնտեսական քաղաքականությունների մշակում և իրականացում, դրանց ներքո նոր գործիքակազմերի մշակում և կիրառում: Վերոնշյալ քաղաքականությունների իրականացումը կհանգեցնի այդ ոլորտների ոչ միայն սոցիալական, այլ նաև՝ տնտեսական զարգացմանը, դրանով իսկ առավել բարձրացնելով մատուցվող ծառայությունների որակը: ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրով նախատեսվում է՝ «անցում կատարել սոցիալական աջակցության մեխանիզմներից դեպի տնտեսական զարգացման մեխանիզմների ներդրմանը»: «Ներդրվելու են ռազմավարությունների և քաղաքականությունների պլանավորման ու իրականացման առաջադեմ պրակտիկաներ, և արդիականացվելու են դրանց համար անհրաժեշտ մեթոդաբանական հիմքերը: Քաղաքականությունների մշակումը լինելու է փաստահենք, բավարար վերլուծական հիմնավորվածությամբ, կարգավորման ազդեցության գնահատման գործուն համակարգերով ու պրոֆեսիոնալ կարողություններով» (ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի «6 Ինստիտուցիոնալ զարգացում» բաժնի 6.1 ենթաբաժնի 1-ին պարբերության 1-ին և 2-րդ ենթակետեր և 6.6 ենթաբաժնի նախավերջին ենթակետ: ՀՀ վարչապետի մարզեր կատարած այցելությունների ընթացքում տրված խոստումներն ըստ էության ոլորտների տնտեսական զարգացման ուղենիշեր են (մասնավորապես՝ Արմավիրի մարզ՝ պետք է ապահովենք, որ կանայք ակտիվ լինեն և աշխատեն, առողջապահության ապահովում և այլն): Նախատեսվող փաստաթղթերի մշակման օրենսդրական հիմք՝ «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՕ–253-Ն ՀՀ օրենքով հաստատված հավելվածի 15-րդ կետ: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Տնտեսական քաղաքականության մշակումը թույլ կտա բացահայտել տնտեսության տարբեր ոլորտների տնտեսական զարգացման հնարավորությունները և միջոցառումներ մշակել այդ ոլորտների սոցիալ–տնտեսական զարգացման նպատակով: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Տնտեսական զարգացման քաղաքականության մշակում և իրականացում **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Տարբեր տնտեսական զարգացման քաղաքականությունը մշակված է:
	<u>1.2. Հանրային ներդրումների կառավարման բարելավում</u> **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի «6.10 Պետական ծախսեր» ենթաբաժնի «Հանրային ներդրումների կառավարման համակարգ» հատվածի 1-ին պարբերություն և 2-րդ պարբերության 2-րդ և 3-րդ ենթակետեր: ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում հանրային ֆինանսների կառավարման առկա համակարգի և հանրային ներդրումների վերաբերյալ որոշումների կայացման գործընթացի կատարելագործման և նշված համակարգի արդյունավետության բարձրացմամբ: Վերջինս հիմքեր կստեղծի հանրային ներդրումային երկարաժամկետ ծրագրերի իրականացման և դրանց սոցիալական, ֆինանսական ու տնտեսական ազդեցությունների ամբողջական գնահատման և կառավարման համար: Նախատեսվող փաստաթղթերի մշակման օրենսդրական հիմք՝ «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՕ–253-Ն ՀՀ օրենքով հաստատված հավելվածի 15-րդ կետ: ՀՀ վարչապետի 2021 թվականի մայիսի 4-ի N 472-Լ որոշում: ՀՀ վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշմամբ հաստատված «ՀՀ էկոնոմիկայի նախարարության կանոնադրության 10-րդ կետի 11-րդ ենթակետ և 11-րդ կետի 4-րդ ենթակետ: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Հայաստանի Հանրապետությունում առկա չէ հանրային ներդրումային ծրագրերի միասնական հարթակ հաշվետվությունների հրապարակման և տվյալների հասանելիության ապահովման համար: Որպես առկա խնդիրներ դիտարկվում են նաև ոլորտային գերատեսչություններում գաղափարների բացակայությունը, պլանավորման և կառավարման հետ կապված խնդիրները և մասնակցային պատասխանատվության բացակայությունը: Հանրային ներդրումների կառավարման համակարգի ներդրման շրջանակներում 2021 թվականի մայիսի 4-ին ընդունվել է ՀՀ վարչապետի «Հայաստանի Հանրապետությունում հանրային ներդրումային ծրագրերի վերհանման, մշակման, գնահատման, առաջնահերթությունների ցանկի կազմման և սահմանման կարգը, հանրային ներդրումային ծրագրերի գնահատման մեթոդաբանությունը, հանրային ներդրումային ծրագրի նախագծի մշակման և գնահատման օրինակելի ձևը հաստատելու մասին» N 472-Լ որոշումը: Այս կապակցությամբ մշակվել և սահմանվել է հանրային ներդրումների գնահատման համակարգը՝ նպատակ ունենալով շարունակաբար բարելավել հանրային ներդրումների կառավարման համակարգը և զարգացնել ինստիտուցիոնալ կարողությունները: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

➢ Հայաստանի Հանրապետությունում հանրային ներդրումային ծրագրերի տվյալների հրապարակման բանկի/շտեմարանի ստեղծում,

➢ ՀՀ կառավարության ծրագրով նախատեսված կապիտալ ներդրումների ամբողջական իրականացմանը նպաստում,

➢ Հանրային ներդրումների կառավարման մեթոդաբանության չափանիշներով ծրագրերի գնահատում և առաջնահերթությունների որոշում,

➢ Մոտարկված ֆինանսական արժեքների, նախնական տեխնիկատնտեսական հիմնավորումների և տեխնիկատնտեսական ուսումնասիրությունների իրականացում,

➢ Ոլորտային գերատեսչությունների կողմից միանման գաղափարների հիման վրա ծրագրերի մշակման բացառում:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Հանրային ներդրումային ծրագրերի տվյալների բազայի ստեղծման ակնկալվող արդյունքներն են՝

➢ հանրային ներդրումային ծրագրերի թափանցիկության, հաշվետվողականության, մշտադիտարկման իրականացման ապահովում,

➢ առաջացող խնդիրների վերհանում և դրանց լուծմանը միտված համապատասխան միջոցառումների ձեռնարկում,

➢ երկրի ենթակառուցվածքային ծրագրերի հաստատված պահանջարկի կամ կարիքի բավարարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալների և ծրագրերի իրականացման տնտեսական արդյունավետության որակական և քանակական ցուցանիշների հաշվառման հնարավորություն,

➢ հաշվետվողականության և ծրագրերի վիճակագրության վարում, շարունակական մոնիթորինգի իրականացում,

➢ հանրային ներդրումային ծրագրերի արդյունավետ իրականացում և կառավարում, հանրային ներդրումների կառավարման պլանավորման փուլի համակարգային և ինստիտուցիոնալ զարգացում:

➢ Հանրային ներդրումային ծրագրերի բանկի/շտեմարանի ստեղծում: Կառավարության ծրագրով նախատեսված կապիտալ ներդրումների ամբողջական իրականացում

<u>1.3 Աշխատանքի շուկայում տնտեսության պահանջարկի վերհանում</u>

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Տնտեսության զարգացմանը զուգընթաց տնտեսության տարբեր ոլորտներում անընդհատ փոփոխվում է նաև համապատասխան աշխատողների և մասնագետների գիտելիքների և հմտությունների նկատմամբ պահանջը: Այս համատեքստում առավել քան կարևորվում է կրթական համակարգի կողմից գործարար միջավայրի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստումը, ինչը հետագայում նաև կնպաստի վերջիններիս զբաղվածությանը, ինչպես նաև կազմակերպությունների գործունեության բարելավմանը:

Վերոնշյալ տեսանկյունից կարևորվում է կրթական համակարգի պատվերի մեթոդաբանության մշակումը, դրա հիմքով համապատասխան հաշվարկների իրականացումը և շարունակականության ապահովման նպատակով համապատասխան առաջարկությունների ներկայացումը, ինչը թե կրթության և թե գործարար միջավայրի կողմից պահանջված է և կշարունակի պահանջված լինել:

ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի համաձայն. «Ներառական տնտեսական աճի խթանման ուղղությամբ աշխատանքներ են իրականացվելու նոր աշխատատեղերի ստեղծման, տնտեսության մեջ մասնակցայնության բարձրացման ուղղությամբ» «Արմատապես վերանայվելու է պետական ծառայողների կրթության, ուսուցման ու վերապատրաստման գործող համակարգը, ներդրվելու են տեխնոլոգիական առաջադեմ լուծումներով ուսուցման հնարավորություններ, վերանայվելու է կարողությունների ու գիտելիքի զարգացման քաղաքականությունը՝ մարդկային կապիտալի զարգացման, պետական հատվածում տաղանդների ներգրավման ու պահպանման նպատակով» և այլ (ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի 6-րդ բաժնի 6.3 ենթաբաժնի 1-ին պարբերության նախավերջին ենթակետ, «2.Տնտեսություն» բաժնի 7-րդ և 8-րդի 1-ին և 3-րդ պարբերություններ, 11-րդ պարրբերություն, 2-րդ բաժնի «ՓՄՁ զարգացում» ենթահատվածի 3-րդ պարբերություն և 5-րդ պարբերության 6-րդ ու 7-րդ ենթակետեր:

ՀՀ վարչապետի նախընտրական խոստումներից. Ավանում հայտարարել է. «Կրթական համակարգ– աշխատանքի շուկա կապը պետք է ամրապնդվի, մարդկանց կյանքն արդյունավետ կազմակերպելու համար», իսկ Տավուշի մարզում նախընտրական խոստումներից է. «Մենք իրականացնելու ենք կրթական հեղափոխություն»:

Փաստաթղթերի մշակման օրենսդրական հիմք՝ «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՆՀՕ–253-Ն ՀՀ օրենքով հաստատված հավելվածի 15-րդ կետ:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները

Ներկա պահին Հայաստանում կրթական համակարգի պատվերի մեթոդաբանություն չկա, ինչը թույլ չի տալիս գնահատել և ստանալ գործարար միջավայրի կողմից աշխատուժին ներկայացվող պահանջների ամբողջական պատկերը: Բացի այդ, վերջինիս բացակայությունը թույլ չի տալիս մշակել համապատասխան ծրագրեր՝ բավարարելով գործարար միջավայրի պահանջները:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից Էկոնոմիկայի նախարարության մասնակցությամբ ներկայումս մշակվում է Զբաղվածության ռազմավարությունը, որով տրվելու են աշխատաշուկայի զարգացման միտումները և կրթական ծրագրերի հիմնական ուղղությունները: Ռազմավարությամբ տրվելու են նաև աշխատուժի պահանջարկի վերհանման մեթոդական հիմնական ցուցումները:

Բացի այդ՝ 2023թ.-ից Եվրոպական Միության աջակցությամբ ադապտացվելու է Զբաղմունքների ISCO-08 միջազգային դասակարգիչը, որը արտացոլում է աշխատաշուկայի ժամանակակից մոտեցումները, և ESCO հմտությունների դասակարգիչը, որոնց միջոցով արդեն հնարավոր կլինի Վիճակագրական կոմիտեի, Պետական եկամուտների կոմիտեի տվյալներն ավելի խորքային վերլուծության ենթարկել և իրապես վեր հանել ոչ միայն պահանջվող մասնագիտությունները, այլև պահանջվող հմտությունները: Դասակարգիչները պատրաստ կլինեն 2023թ.-ի ավարտին:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Կրթական համակարգի պատվերի մեթոդաբանության մշակում, դրա հիման վրա գնահատումների իրականացում և համապատասխան ծրագրային առաջարկների ներկայացում

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Կրթական համակարգի պատվերի մեթոդաբանության մշակում և կիրառում, ինչի արդյունքում կբավարարվի համապատասխան կրթական որակավորմամբ աշխատուժի պահանջարկը:

1. 4. Պետություն-մասնավոր գործընկերության զարգացում,

«Պետություն-մասնավոր գործընկերության ընթացակարգը, պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերի վերաբերյալ տվյալների բազայի ստեղծման և կառավարման կարգը հաստատելու, պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերի շրջանակում մատուցվող հանրային ծառայությունների ոլորտները, պետություն-մասնավոր գործընկերության ստորաբաժանումը, պետություն-մասնավոր գործընկերության ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվության ձևը և ներկայացման ժամկետը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 20-ի N 1241-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի հաստատում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի 6. 10 «Պետական ծախսեր» բաժնի «Հանրային ներդրումների կառավարման համակարգ» հատվածի 1-ին պարբերություն և 2-րդ պարբերությունն ամբողջությամբ: Բացի այդ, միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՊՄԳ օրենսդրական դաշտի ամբողջականացմամբ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում արդյունավետ ՊՄԳ ծրագրերի մշակման, գնման և կառավարման աշխատանքների ապահովման նպատակով անհրաժեշտ կանոնակարգերի մշակմամբ, որտեղ մանրամասն կնկարագրվեն միջազգային լավագույն փորձին համապատասխան հաջողված ՊՄԳ ծրագրեր իրականացնելու ընթացակարգը, քայլերն ու դրանց իրականացման հաջորդականությունը:

Նախատեսվող փաստաթղթերի մշակման օրենսդրական հիմք՝ «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՆՀՕ–253-Ն ՀՀ օրենքով հաստատված հավելվածի 15-րդ կետ: 2019 թվականի հունիսի 28-ի «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» ՀՕ-113 –Ն ՀՀ օրենք: ՀՀ վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշմամբ հաստատված ՀՀ էկոնոմիկայի նախարարության կանոնադրության 10-րդ կետի 9-րդ ենթակետ, 11-րդ կետ 12-րդ ենթակետ:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Ներկայումս ՊՄԳ-ն կարգավորող համակողմանի օրենսդրության բացակայությունը խոչընդոտում է համակարգի լիարժեք զարգացումը՝ որոշակի ռիսկեր առաջացնելով ՊՄԳ ծրագրերի ընտրության և իրականացման բոլոր փուլերում:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Հայաստանի Հանրապետությունում ՊՄԳ ծրագրերի մշակման և իրականացման մասով կիրառելի կանոն-ների և ընթացակարգի հստակ համախմբի մշակում, որը կօժանդակի ՊՄԳ նոր համակարգն առավել ամբողջական դարձնելուն և վերջինիս համար հստակ օրենսդրական դաշտ ձևավորելուն:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Միջոցառման իրականացմամբ կձևավորվեն ՊՄԳ ծրագրերի մշակման, խթանման նպատակով անհրաժեշտ օրենսդրական և ինստիտուցիոնալ հիմքերը, կապահովվի ՊՄԳ արդյունավետ կիրառության ինստիտուցիոնալ կարողությունների զարգացումը, ինչպես նաև կընդլայնվեն ՊՄԳ ձևաչափով ենթակառուցվածքային ծրագրերում և՛ տեղական, և՛ օտարերկրյա մասնավոր հատվածի ներգրավման հնարավորությունները: Մինչև 2026թ. նախատեսվում է առնվազն 3 ՊՄԳ ծրագրի մշակում և մեկնարկ:

1. 5. Երևան-Թբիլիսի արագընթաց գնացքի ծրագրի հայեցակարգի հաստատում, հաստատման դեպքում ճանապարհային քարտեզի մշակում և իրագործում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

	Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է արդիական ենթակառուցվածքի ստեղծմամբ, ինչը հնարավորություն կտա ապահովել բարձրորակ հաղորդակցություն երկու երկրների միջև: ՀՀ վարչապետը Ավան համայնքում նախընտրական քարոզարշավի ժամանակ նշել է. «Հայաստանի արդյունաբերականացման ճանապարհը մենք տեսնում ենք կոմունիկացիաների բացման միջոցով, **որը ենթադրում է նաև երկաթուղային կապ արտաքին աշխարհի հետ»:** ՀՀ կառավարության 2021-2026թթ. 3.1 ենթաբաժնի «Երկաթուղային տրանսպորտ» հատվածի 1-ին պարբերության 1-ին ենթակետ: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս կապը իրականացվում է օդային ճանապարհով և հիմնականում ավտոմոբիլային, ինչը ժամանակատար է: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Նշված խնդրի արդյունավետ լուծման նպատակով նախատեսվում է փոխհատուցել այլընտրանքային ճանապարհով տեղափոխման ժամանակ առաջացող լրացուցիչ ծախսերը, ձեռք բերել արագընթաց գնացք: Պետության միջոցների հաշվին իրականացվելու է գնացի գնումը, իսկ օգտագործումը իրականացվելու է «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի կողմից: Հայեցակարգի մշակումը, հաստատումը և իրագործումը իրականացվելու է համաձայն ՀՀ վարչապետի 2021 թվականի մայիսի 4 «ՀՀ-ում հանրային ներդրումային ծրագրերի վերհանման, մշակման, գնահատման, առաջնահերթությունների ցանկի կազմման և սահմանման կարգը, հանրային ներդրումային ծրագրերի գնահատման մեթոդաբանությունը, հանրային ներդրումային ծրագրի նախագծի մշակման և գնահատման օրինակելի ձևը հաստատելու մասին» N 472-Լ որոշման: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Հաղորդակցության որակի բարձրացում, և տեղափոխման ժամանակի կրճատում:
	1. 6. Պղնձաձուլական կլաստերների ստեղծման հայեցակարգի հաստատում, հաստատման դեպքում ճանապարհային քարտեզի մշակում և իրագործում **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Հանքարդյունաբերությունը և հատկապես՝ պղնձի արդյունահանումը և արտահանումը հանրապետության տնտեսության համար ունեն էական դերակատարում: Միջոցառման նպատակն է նոր տեխնոլոգիաների կիրառմամբ արտադրանքի վերամշակման խորացման միջոցով ստեղծել ավելի բարձր ավելացված արժեք: ՀՀ վարչապետը Արմավիրի մարզի Արմավիր քաղաքում նախընտրական արշավի ժամանակ նշել է, որ «Հայաստանը հանքաքար արտահանող երկրից պետք է դառնա պղնձի պատրաստի արտադրանք արտահանող երկիր», իսկ Սյունիքի մարզի Քաջարա քաղաքում՝ «Մեզ պետք է ՀՀ–ում և վերամշակման պղնձաձուլարան ստեղծել և վերամշակման շղթան հնարավորիս երկարացնել»: Միջոցառումը բխում է նաև ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի «2. Տնտեսություն» բաժնի «2.1 մշակող արդյունաբերություն» ենթաբաժնի 5-րդ պարբերության 4-րդ և 7-րդ պարբերության 5-րդ ենթակետերից: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Հայաստանը ունի պղնձի հարուստ պաշարներ, որոնք անմշակ կերպով՝ որպես պղնձի խտանյութ, արտահանվում են այլ երկրներ: Այս հանգամանքը խոչընդոտում է հնարավորինս երկարացնել արտադրական շղթան, խթանել առավել բարդ և բարձրարժեք արտադրանքի թողարկումը **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Անհրաժեշտ է մշակել պղնձաձուլարանի ստեղծման տեխնիկատնտեսական հիմնավորման փաստաթուղթ, որի հիման վրա կստեղծվի պղնձաձուլարան: Արդյունքում ՀՀ-ում առկա արդյունահանվող հումքը խորը վերամշակում կանցնի, և կհաջողվի ստանալ մաքուր պղինձ, ինչն էլ մեծ հնարավորություններ կստեղծի վերջնական պատրաստի արտադրանք տալու և հավելյալ արժեք ստեղծելու: Հայեցակարգի մշակումը, հաստատումը և իրագործումը իրականացվելու է համաձայն ՀՀ վարչապետի 2021 թվականի մայիսի 4 «ՀՀ-ում հանրային ներդրումային ծրագրերի վերհանման, մշակման, գնահատման, առաջնահերթությունների ցանկի կազմման և սահմանման կարգը, հանրային ներդրումային ծրագրերի գնահատման մեթոդաբանությունը, հանրային ներդրումային ծրագրի նախագծի մշակման և գնահատման օրինակելի ձևը հաստատելու մասին» N 472-Լ որոշման: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Պղնձի արտադրության մետալուրգիական ձեռնարկության շահագործումը լոկոմոտիվային դեր կխաղա հանրապետության տնտեսության զարգացման համար և կխթանի հանրապետության այլ ճյուղերի զարգացումը՝ գեներացնելով հարկեր, ստեղծելով նոր աշխատատեղեր, նպաստելով աղքատության կրճատմանը: Պղնձի վերամշակման խորացումը, ընդհուպ՝ մինչև էլեկրատեխնիկական պղնձի, իսկ հետագայում նաև լարերի արտադրության կազմակերպումը կխթանի հանրապետության էլեկտրատեխնիկական համալիրի զարգացմանը:

	1. 7. Խոշոր ներդրումային ծրագրերի հայեցակարգի հաստատում, հաստատման դեպքում ճանապարհային քարտեզի մշակում և իրագործում **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանի ճանաչելիության և երկրի նկատմամբ վստահության, ներդրումային գրավչության բարձրացման և խոշոր ներդրումային ծրագրերի ներգրավման համար արդյունավետ մեխանիզմի և նպաստավոր միջավայրի ստեղծումը, խոշոր ներդրումների ներգրավում և ծրագրերի իրականացման ապահովում: Միջոցառումը բխում է նաև ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի «2. Տնտեսություն» բաժնի «Գործարար և ներդրումային միջավայրի բարելավում» հատվածի 2-րդ, 5–7-րդ պարբերություններ: ՀՀ վարչապետը Երևանի հրապարակում նախընտրական քարոզարշավի ժամանակ նշել է. «Արտահանման և **ներդրումների պոտենցիալի ընդլայնում**, այդ թվում՝ կոմունիկացիաների բացման քաղաքականության միջոցով»: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Հայաստանն ունի ներդրումների ներգրավման մեծ ներուժ և հնարավորություններ տարբեր ոլորտներում, որի համար անհրաժեշտ է գործուն մեխանիզմների ներդրում և միասնական համակարգի ստեղծում: Տեղական և օտարերկրյա ներդրողներին անհրաժեշտ տեղեկատվության հասանելիության խնդիրներ, ինչպես նաև պետության կողմից ներդրողներին աջակցության համապատասխան գործիքակազմերի վերաբերյալ տեղեկացվածության բաց: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Անհրաժեշտ է մշակել տեղական և օտարերկրյա ներդրողների համար տեղեկատվության հասանելիության միասնական հարթակ և գործուն մեխանիզմներ ծրագրերի արդյունավետ իրականացման համար: Հայեցակարգերի մշակումը, հաստատումը և իրագործումը իրականացվելու է համաձայն ՀՀ վարչապետի 2021 թվականի մայիսի 4 «ՀՀ-ում հանրային ներդրումային ծրագրերի վերհանման, մշակման, գնահատման, առաջնահերթությունների ցանկի կազմման և սահմանման կարգը, հանրային ներդրումային ծրագրերի գնահատման մեթոդաբանությունը, հանրային ներդրումային ծրագրի նախագծի մշակման և գնահատման օրինակելի ձևը հաստատելու մասին» N 472-Լ որոշման: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման արդյունքում ակնկալվում է ապահովել ներդրումային հոսքեր տնտեսության տարբեր ոլորտներում և իրականացնել դրանց իրականացման ուղղությամբ գործուն քայլեր:
	1. 8. Ամուլսարի ոսկու հանքի շահագործման ծրագրի իրագործմանն ուղղված աշխատանքների համակարգում **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է Ամուլսարի ոսկու հանքի շահագործման ծրագրի իրականացմամբ: Միջոցառումը բխում է ՀՀ կառավարության 2021-2026թթ. 2.8 «Բնական ռեսուրսների կայուն կառավարում» բաժնի 1-ին պարբերության 9-րդ ենթակետ: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս Ամուլսարի հանքի շահագործման ուղղությամբ տարվում են աշխատանքներ՝ հաշվի առնելով արդեն իսկ կատարված ներդրումները և հիմնված ենթակառուցվածները: Հիմնական խնդիրն է հանքի շահագործումն իրականացնել՝ առաջնորդվելով բնապահպանական և ընդերքօգտագործման նորմերով: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Նշված խնդրի արդյունավետ լուծման նպատակով նախատեսվում է պետության կողմից հանքի շահագործման պետական հսկողական մեխանիզմի ներդրում և ծրագրի համակարգում: Հայեցակարգի մշակումը, հաստատումը և իրագործումը իրականացվելու է համաձայն ՀՀ վարչապետի 2021 թվականի մայիսի 4 «ՀՀ-ում հանրային ներդրումային ծրագրերի վերհանման, մշակման, գնահատման, առաջնահերթությունների ցանկի կազմման և սահմանման կարգը, հանրային ներդրումային ծրագրերի գնահատման մեթոդաբանությունը, հանրային ներդրումային ծրագրի նախագծի մշակման և գնահատման օրինակելի ձևը հաստատելու մասին» N 472-Լ որոշման: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Ամուլսարի հանքի շահագործում և պետության կողմից ծրագրի ուղղությամբ հետևողական համակարգման իրականացում՝ պետական բյուջեի մուտքերի ապահովում և բնապահպանական նորմերի ապահովում:
2	***ՀՀ էկոնոմիկայի նախարարության միջոցառումների «2. Արտադրողականության աճ և գործազրկության կրճատում Արտադրողականություն 12$ ՀՆԱ/մարդ×ժամ, գործազրկություն՝ <10%» նպատակի իրագործումը կնպաստի «Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050» փաստաթղթի (առնվազն 2025թ. ցուցանիշների) հետևյալ թիրախների և թիրախային արդյունքների ապահովմանը՝*** ***1. 7-րդ գործողության 7.1 թիրախային արդյունք, 7.1.2 ցուցանիշ (էջ 46)***

	2. 7-րդ գործողության 7.2 թիրախային արդյունք, 7.2.2 թիրախային ցուցանիշ (էջ 46) **<u>2.1. Ռազմավարական և առաջնահերթ ոլորտներում տեխնոլոգիական արդիականացում և բիզնես պրոցեսների օպտիմալացում</u>** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառումը մշակվել է հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 31.08.2021թ. N02/08.2/29772-2021 հանձնարարական Վարչապետ Նիկոլ Փաշինյանի ՀՀ համայնքներ կատարած այցելությունների ընթացքում և նախընտրական քարոզարշավի ընթացքում (ս.թ. հունիսի 4-17) քաղաքացիներին տրված նախընտրական խոստումները (Տնտեսության մասին մեր ռազմավարական պատկերացումն այն է, որ այն պետք է լինի գիտելիքահենք, սկսած գյուղատնտեսությունից մինչև արտադրություն՝ պետք է հիմնվի գիտելիքի և իմացության վրա, որի կուլմինացիան պետք է դառնա աշխատանքի արտադրողականության բարձրացումը), ՀՀ կառավարության (2021-2026 թթ.) ծրագրում ամրագրված Կառավարության տնտեսական թիրախներին հասնելու նպատակով նախատեսվող գործողությունների «Գործարար և ներդրումային միջավայրի բարելավում» ենթաբաժնի, «ՓՄՁ պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով ամրագրված պետական աջակցության հիմնական ուղղությունները (նորարարական գործունեության և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման աջակցությունը): Միջոցառումը բխում է նաև ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի «2. Տնտեսություն:» բաժնի «2.1 Մշակող արդյունաբերություն» ենթաբաժնի 7-րդ պարբերության 5-րդ, 7-րդ և 10-րդ ենթակետերի, «Գործարար և ներդրումային միջավայրի բարելավում» հատվածի 7-րդ պարբերության դրույթներից: **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** ՀՀ արդյունաբերության ոլորտում գործող ընկերությունների մեծ մասում ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը ցածր մակարդակի վրա է: Բացի այն հանգամանքից, որ ոչ արդիական սարքավորումների օգտագործումը բերում է հումքի, ժամանակի և էներգետիկ ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործմանը, այն բացասաբար է ազդում թողարկվող արտադրանքի որակի վրա: Ավելին, ոչ արդիական սարքավորումների օգտագործումը հանգեցրել է այնպիսի իրավիճակի, որ Հայաստանի արդյունաբերությունը պատրաստ չէ օգտագործել արդյունաբերական հեղափոխության արդյունքում ի հայտ եկած հնարավոր մրցակցային առավելությունները: **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Վերը նշված խնդիրների լուծման նպատակով անհրաժեշտ է ներդնել արդյունաբերության ոլորտի ձեռնարկությունների համար պետական աջակցության լրացուցիչ գործիքակազմ՝ լիզինգի սուբսիդավորման կառուցակարգ: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման իրականացման արդյունքում նախատեսվում է՝ արտադրողականություն 12$ ՀՆԱ/մարդ x ժամ, գործազրկության կրճատում՝ <10%:
	<u>2. 2 Աշխատաշուկայում բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավում տեղական ընկերություններում</u> 1. **Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է՝ ՀՀ վարչապետի 31.08.2021թ. N 02/08.2/29772-2021 հանձնարարական՝ Վարչապետ Նիկոլ Փաշինյանի ՀՀ համայնքներ կատարած այցելությունների ընթացքում և նախընտրական քարոզարշավի ընթացքում (ս.թ. հունիսի 4-17) քաղաքացիներին տրված նախընտրական խոստումների կատարման (Տնտեսության մասին մեր ռազմավարական պատկերացումն այն է, որ այն պետք է լինի գիտելիքահենք, սկսած գյուղատնտեսությունից մինչև արտադրություն՝ պետք է հիմնվի գիտելիքի և իմացության վրա, որի կուլմինացիան պետք է դառնա աշխատանքի արտադրողականության բարձրացումը): ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագիր «2 Տնտեսություն» բաժնի «Գործարար և ներդրումային միջավայրի բարելավում» հատվածի վերջին պարբերության 3–րդ և 9-րդ ենթակետերի, «2. Տնտեսություն» բաժնի 8-րդ պարբերության 2-րդ ենթակետ, «ՓՄՁ զարգացում» հատվածի 1-ին պարբերության, 4-րդ պարբերության 4-րդ ենթակետի և 5-րդ պարբերության 6 և 10-րդ ենթակետի կատարման անհրաժեշտությամբ: 3. Հիմք՝ ՀՀ կառավարության 27.08.2020թթ. N 1443-Լ որոշման (Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2020-2024 թվականների ռազմավարությունից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիր) Հավելված 2/ Մաս 2 ՓՄՁ սուբյեկտների կարողությունների զարգացում և ձեռնարկատիրական մշակույթի խթանում բաժնի գործողությունների և «Փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի կիրարկման իրականացման ապահովման պահանջով **1. 1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկա իրավիճակի ուսումնասիրության հիման վրա պարզ է դարձել, որ տնտեսական արդի իրողության մեջ անմերժելի է հմտությունների զարգացումը, բիզնեսավարման ժամանակակից մոտեցումների և նորարարական արդյունքի կիրառման անհրաժեշտությունը՝ արդյունավետ, մրցունակ և կայուն տնտեսավարման ապահովման տեսանկյունից:

	1. 2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Միջոցառման իրականացումը կխթանի որակյալ աշխատուժի վերարտադրության ու զարգացման, մրցունակության և սոցիալական համախմբվածության ապահովման գործընթացը: Միջոցառման իրականացումը կնպաստի աշխատաշուկայի միտումների ու կարիքների հիման վրա վերապատրաստված մասնագետների առկայությանը և բիզնեսի կարողությունների բարձրացմանը: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման իրականացմամբ նախատեսվում է որպես արդյունք ունենալ արտաքին աշխատաշուկաներից տարեկան առնվազն 200 պահանջված, բարձր որակավարում ունեցող մասնագետի ներգրավում, որոնցից յուրաքանչյուրին կկցվեն տեղական աշխատաշուկայից ներգրավված առնվազն 2 սկսնակ/տվյալ ոլոտում բավական փորձ չունեցող մասնագետ: Այսպիսով կրթելով և բարձր վարձատրվող աշխատատեղ ապահովելով տարեկան 600 տեղացի մասնագետի:
	<u>2. 3. Տնտեսության մեջ թվային գործիքների կիրառման խթանման հայեցակարգի հաստատում</u> **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Թվային տնտեսությունը ներկայումս բոլոր զարգացումների առաջնագծում է, և ամբողջ աշխարհում միտում է թվային ամբողջականության և համերաշխության հաջորդ մակարդակին հասնելը: Հայաստանի Հանրապետության տնտեսական հետագա զարգացման և 4-րդ արդյունաբերական հեղափոխությանը հաղորդակից լինելու համար, առանցքային է՝ 1. Ընդունել տնտեսության թվայնացման հայեցակարգ, 2. Հաստատել տնտեսության թվայնացման հայեցակարգից բխող գործողությունների ծրագիր, 3. Մշակել և ներդնել բիզնես գործընթացներում էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրումը խթանող գործիքակազմ: Միջոցառման մշակման համար հիմք է հանդիսանում ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի «2. Տնտեսություն» բաժնի», «Գործարար և ներդրումային միջավայրի բարելավում» հատվածի 6-րդ պարբերության 4-րդ ենթակետի և 7-րդ պարբերության 9-րդ ենթակետի դրույթները: ՀՀ վարչապետը Երևանի Հանրապետության հրապարակում նշել է, որ «Տնտեսության մասին մեր ռազմավարական պատկերացումն այն է, որ այն պետք է լինի գիտելիքահենք սկսած գյուղատնտեսությունից մինչև արդյունաբերություն, պետք է հիմնվի գիտելիքի և իմացության վրա, որի կուլմինացիան պետք է դառնա աշխատանքի արտադրողականության բարձրացումը»: Նախատեսվող փաստաթղթերի մշակման օրենսդրական հիմք՝ «ՓՄՁ զարգացման 2020-2024 թվականների ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ ԿՈ 27.08.2020 թիվ 1443–որոշման հավելված 1–ի 4.4 գործողություն: **1. 1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Մինչ կառավարական մակարդակով ծառայությունների թվայնացման ուղղությամբ աշխատանքներ են տարվել, թվային տնտեսություն հատվածը, դեռևս բավականաչափ խորությամբ ուսումնասիրված և ամփոփված չէ գործող ռազմավարական փաստաթղթերում: Թվային տնտեսության ենթակառուցվածքի ամբողջական զարգացմանն ուղղված մեկ կարևոր հանգրվան է հիմնական ծառայությունների թվայնացման ավարտը և տվյալների հավաքման կենդանի բազայի ստեղծումը, սակայն բուն բիզնեսի թվային կարողությունների զարգացումն վերաբերյալ ՀՀ կառավարության գործողությունների ծրագիր դեռ մշակված չէ: **1. 2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Մինչ կոնկրետ պետական մարմինները կկենտրոնանան վերը նշվածի վրա, թվային տնտեսության օրակարգը կլուծվի հետևյալ կերպ. Նպատակներին հասնելու համապարփակ ռազմավարության մշակում՝ • Թվային տնտեսության միջազգային միտումների և լավագույն փորձի վերլուծություն (միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությամբ) • Այս միտումների գնահատումը՝ հաշվի առնելով Հայաստանի տնտեսական զարգացման ներուժը և հնարավորությունները: • Զարգացման կլաստերների հստակեցում՝ որպես առաջնահերթություններ • Գործողությունների ծրագրերի մշակում մասնավոր հատվածի և միջազգային կազմակերպությունների ներգրավմամբ (ֆինանսական և տեխնիկական աջակցություն) **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** • Հայաստանի թվային տնտեսության ուղղությունն ու տեսլականը • Առաջնահերթ կլաստերների հստակեցում, որոնցով Հայաստանը կարող է օգտվել՝ թվային տնտեսության շուկայում դիրքավորվելու համար Նպատակներին հասնելու գործողությունների ծրագիր, ինչպես նաև տնտեսության թվայնացման հայեցակարգի և գործողությունների ծրագրի հաստատում ՀՀ կառավարության կողմից: Նախատեսվում է տարեկան 400 բիզնես

	սուբյեկտի աջակցություն, ով անցում կկատարի էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրմանը բիզնես գործընթացներում:
3	***ՀՀ էկոնոմիկայի նախարարության միջոցառումների «3. Գործարար և ներդրումային միջավայրի բարելավում: Ներդրումներ/ՀՆԱ՝ 25%, ՕՈՒՆ/ՀՆԱ՝ 6%» նպատակի իրագործումը կնպաստի «Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050» փաստաթղթի (առնվազն 2025թ. ցուցանիշների) հետևյալ թիրախների և թիրախային արդյունքների ապահովմանը՝*** ***1. 14-րդ գործողության 14.1 թիրախային արդյունքի ցուցանիշներն ամբողջությամբ (էջ 53)*** ***2. 14-րդ գործողության 14.2 թիրախային արդյունք, 14.2.1 միջոցառում (էջ 53)*** ***3. 14-րդ գործողության 14.4 թիրախային արդյունքի ցուցանիշներն ամբողջությամբ (էջ 53)*** **<u>3.1.Ներդրումային քաղաքականության մշակում և իրագործում: Ներդրումային քաղաքականությունը հաստատելու մասին իրավական ակտի մշակում</u>** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Հայաստանում ներդրումային ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակներն են՝ ներդրումային միջավայրի բարելավում, օրենսդրական դաշտի կատարելագործում և Հայաստանի Հանրապետության տնտեսության մեջ ներդրումների, այդ թվում՝ օտարերկրյա ուղղակի ներդրումների խթանում: Ներդրումային քաղաքականության կատարելագործմամբ կիրագործվեն հետևյալ նպատակները՝ ներդրողների համար առանցքային նշանակության ոլորտներ մուտք գործելու խոչընդոտների նվազում, ներդրողների պաշտպանվածության, երաշխիքների մակարդակի և օրենսդրական դաշտի կայունության բարձրացում, ավելի թափանցիկ, արդյունավետ և գործուն խթանների համակարգ, ինչի արդյունքում կարձանագրվի ներդրումների աճ **1. 1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Վերջին մի քանի տարիներին համաշխարհային ասպարեզում նկատվում է ներդրումների, մասնավորապես օտարերկրյա ներդրումների նվազման միտում, և կա դրա ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա հնարավորինս նվազեցնելու խնդիր: Միջոցառման իրականացումը բխում է նաև ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026 թ. թ. ծրագրից՝ «2. Տնտեսություն» բաժնի «Գործարար և ներդրումային միջավայրի բարելավում» հատվածի 4-րդ և 5-րդ պարբերություն: **1. 2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Նախատեսվում է բարձրացնել ներդրումային քաղաքականության իրականացման արդյունավետությունը, մասնավորապես՝ ներդրումային միջավայրի խոչընդոտները վերլուծելու և վերացնելու, ներդրողների շրջանում վստահությունը բարձրացնելու և պաշտպանության մեխանիզմները բարելավելու միջոցով: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Նախատեսվում է ունենալ անխոչընդոտ հստակ կարգավորված մրցունակ ներդրումային միջավայր, ինչպես նաև միջազգային հարթակներում այն ներկայացնելու տրամաբանական քայլերի հաջորդականություն, որը կբերի ներդրումային հոսքերի աճ: Ներդրումներ/ՀՆԱ՝ 25%, ՕՈՒՆ/ՀՆԱ՝ 6%:
	<u>3.2. Ընկերություններում արդիական կորպորատիվ կառավարման համակարգերի ներդրման խթանում</u> **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** ՀՀ կառավարությունը կորպորատիվ կառավարման (ԿԿ) սկզբունքների կիրառումը դիտարկում է որպես մասնավոր հատվածի կայուն զարգացման կարևոր գործոն, իսկ կազմակերպությունների կառավարման մարմինների հաշվետվողականությունը և դրանց որոշումների թափանցիկությունը՝ որպես մասնավոր հատվածում ռիսկերը կրճատելու և օտարերկրյա ներդրումների հոսքը խթանելու միջոց: Կառավարությունը որդեգրել է մասնավոր հատվածում կորպորատիվ կառավարման սկզբունքների կիրառությունը խրախուսելու և այդ ուղղությամբ իրականացվող ծրագրերի առաջխաղացմանը աջակցելու քաղաքականություն: Միջոցառման իրականացումը բխում է նաև ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագրից՝ «2. Տնտեսություն» բաժնի «Գործարար և ներդրումային միջավայրի բարելավում» հատվածի 8-րդ պարբերության 2-րդ կետ: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** 2014-2015թթ. ընթացքում ԿԿ սկզբունքները վերանայվել են, ուստի վերանայման է ենթակա նաև ՀՀ-ում 2010 թ. -ից գործող կորպորատիվ կառավարման կանոնագիրքը: Բացի այդ, հաշվի առնելով, որ դրա կիրառումը չի կրում պարտադիր բնույթ, սակայն միջազգային պրակտիկայում համարվում է, որ ԿԿ սկզբունքները կիրառող գործընկերներն ավելի վստահելի են, անհրաժեշտ է խթանել ԿԿ սկզբունքների ներդնումը հայաստանյան ընկերությունների շարքում: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

	Առաջարկվում է փոփոխել կորպորատիվ կառավարման կանոնոգիրքը ամբողջությամբ, ինչպես նաև հրապարակել կորպորատիվ կառավարման կանոնագրքի ներդրմանն և կիրարկմանն աջակցող կորպորատիվ կառավարման ուղեցույցը, գնահատման չափորոշիչները և կորպորատիվ կառավարման գնահատման թերթիկը՝ թափանցիկության, վստահության, բարեվարքության և հաշվետվողականության միջավայրի ձևավորման միջոցով տնտեսություն երկարաժամկետ ներդրումների ներգրավումը, գործարար հատվածի կայունությունը ապահովելու, տնտեսական աճը խթանելու, ինչպես նաև տնտեսական որոշումների կայացման գործընթացում հանրության ներգրավվածությունը ապահովելու նպատակով, ինչպես նաև մշակել համապատասխան առաջարկներ/մեխանիզմներ ԿԿ սկզբունքների ներդնումը խրախուսելու ուղղությամբ: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Նախագծի ընդունմամբ պայմանավորված ակնկալվող արդյունքը կլինի՝ կորպորատիվ կառավարման ամրապնդումը՝ որպես գործարար միջավայրը բարելավող և կազմակերպությունների երկարաժամկետ հաջողությանը միտված կառուցակարգի դերը, կազմակերպությունների թափանցիկությունը, կազմակերպությունների կատարողականի բարձրացումը, արդյունավետ վերահսկման միջավայրի ձևավորումը, օրինականության և էթիկական գիտակցության աճի ապահովումը, ինչպես նաև մասնավոր հատվածում երկարաժամկետ ներդրումների ներգրավմանը նպաստելը:
	<u>3.3.Գործարար միջավայրի բարելավման ծրագրի մշակում և իրականացում, «Գործարար միջավայրի բարելավման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման հաստատում</u> **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման նպատակը ՀՀ գործարար և ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված ՀՀ կառավարության կողմից իրականացվող բարեփոխումների շարունակականության ապահովումն է: Միջոցառման իրականացումը բխում է նաև ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագրից՝ «2. Տնտեսություն» բաժնի «Գործարար և ներդրումային միջավայրի բարելավում» հատվածի 6-րդ պարբերությունն ամբողջությամբ: Նախատեսվող փաստաթղթերի մշակման օրենսդրական հիմք՝ «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՈՀՕ–253-Ն ՀՀ օրենքով հաստատված հավելվածի 15-րդ կետ: 3 «Հայաստանի գործարար միջավայրի բարելավման 2020-2023 թվականների միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության 2020 թվականի փետրվարի 27-ի N 246-Լ որոշում, ՀՀ վարչապետի 2019թ. հունիսի 1-ի N 658-Լ որոշմամբ հաստատված ՀՀ էկոնոմիկայի նախարարության կանոնադրության 10-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետեր և 11-րդ կետի 28-30-րդ ենթակետեր: **1. 1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Կառավարությունը շարունակում է քայլեր ձեռնարկել պետական կարգավորումների, ծառայությունների և վարչարարական ընթացակարգերի պարզ, թափանցիկ և քիչ ծախսատար միջավայրի ձևավորման, բոլոր տնտեսավարողների համար բարենպաստ պայմանների ապահովման ուղղությամբ: **1. 2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Նախատեսվում է Գործարար միջավայրի բարելավման ծրագրի մշակում և իրականացում՝ մշակելով և իրագործելով առնվազն 50 իրավական ակտեր: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառումների իրականացման արդյունքում ակնկալվում է շարունակել աշխատանքներ իրականացնել ուղղված տնտեսավարողների համար պետական և համայնքային մարմինների հետ շփման վարչարարական բեռի նվազմանը, կոռուպցիոն ռիսկերի կրճատմանը, գործարարներին ծառայություններ մատուցող մարմինների գործունեության թափանցիկության բարձրացմանը: Հաստատված ծրագրի շրջանակում առնվազն 50 իրավական ակտի պատրաստում և իրագործում, գործարար միջավայրի բարելավում և վարչարարության կրճատում:
	<u>3. 4. «Տնտեսական բարդ ներդրումային ծրագրերի չափորոշիչները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման հաստատում և դրա շրջանակներում ներդրումային խորհրդի ստեղծում</u> **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Հետազոտությունները ցույց են տալիս, որ այն երկրները, որոնց արտահանումն ավելի բարդ է, քան սպասվում էր ըստ իրենց եկամուտների մակարդակի, ավելի արագ են աճում: Միջոցառման նպատակն է՝ տնտեսապես բարդ ապրանք արտադրելու/արտահանելու ներուժ ունեցող ընկերությունների համար խթանող միջավայրի ստեղծումը: Միջոցառման իրականացումը բխում է նաև ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագրից՝ «2. Տնտեսություն» բաժնի «Գործարար և ներդրումային միջավայրի բարելավում» հատվածի 4-րդ պարբերություն, 8-րդ պարբերության 5-րդ կետ և «2. 1 Մշակող արդյունաբերություն» ենթաբաժնի 4-րդ պարբերություն: Նախատեսվող փաստաթղթերի մշակման օրենսդրական հիմք՝ «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՈՀՕ–253-Ն ՀՀ օրենքով հաստատված հավելվածի 15-րդ կետ: ՀՀ վարչապետի 2019թ. հունիսի 1-ի N 658-

Լ որոշմամբ հաստատված ՀՀ էկոնոմիկայի նախարարության կանոնադրության 10-րդ կետի 3-րդ, 11-րդ կետի 28-րդ ենթակետեր:

1. 1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Հայաստանի խոշորագույն արտահանումը բաժին է ընկնում ցածր բարդության ապրանքներին, հանքանյութերին և գյուղատնտեսությանը: Հայաստանը տնտեսական բարդության ցուցիչով դեռևս միջինից ցածր հորիզոնական է զբաղեցնում հարևան և ԵԱՏՄ երկրների շարքում:

1. 2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Առաջարկվում է հաստատել «Տնտեսապես բարդ ներդրումային ծրագրերի չափորոշիչները, գնահատման և հաստատման կարգը, սահմանել աջակցություն չափը և դրանից օգտվելու մեխանիզմները, այդ թվում՝ միջգերատեսչական խորհրդի աշխատակարգը:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Ակնկալվում է ստեղծել բարենպաստ միջավայր տնտեսապես բարդ ապրանքներ արտադրող ընկերությունների համար, ինչը լրացուցիչ խթան կհանդիսանա տնտեսության մրցունակության բարձրացման, ներդրումային գրավչության խթանման և նոր որակի ներդրումների ներգրավման համար:

<u>3.5. Համագործակցություն միջազգային կարևոր ցուցիչներ և ռեյտինգներ հրապարակող ընկերությունների հետ</u>

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման նպատակն է ստեղծել միջազգայնորեն մրցունակ գործարար և ներդրումային միջավայր, թեթևացնել առկա վարչարարական և ֆինանսական բեռը՝ ապահովելով մասնավոր հատվածի ոլորտների բարձր տեմպերով զարգացումը:

Միջոցառման իրականացումը բխում է նաև ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագրից՝ «2. Տնտեսություն» բաժնի «Գործարար և ներդրումային միջավայրի բարելավում» հատված:

1. 1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Նախատեսվում է տնտեսական քաղաքականության որակի և գործարար միջավայրի վրա դրա ազդեցության գնահատականները դիտարկել միջազգայնորեն ընդունված և ճանաչում ունեցող ընդհանրական ինդեքսների միջոցով:

1. 2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Առաջարկվում է ճանապարհային քարտեզի գործարկում, օպերատիվ և պարբերական վերլուծությունների տրամադրում, ցուցիչների և ցուցանիշների բարելավում:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Կանխատեսելի և վստահելի գործարար միջավայրի ձևավորում, որը հանդիսանալու է ներդրումների ավելացման հիմնական գրավականը, ապահովելու է ներքին ներդրումների մեծ ծավալ և օտարերկրյա ներդրումների բավարար ներհոսք:

<u>3.6 Պետական ֆինանսական ենթակառուցվածքների միավորում /DICA, FREDA և այլ/</u>

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Պետական ֆինանսական միջոցների տնտեսում, կառույցների կառավարման համակարգի արդյունավետության բարձրացում, տնտեսավարողների համար առկա գործիքակազմերի հասանելիության բարձրացում և ընթացակարգերի ժամկետների կրճատում, վարչարարության պարզեցում:

Միջոցառումը բխում է նաև ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի «2. Տնտեսություն» բաժնի «2.1 Մշակող արդյունաբերություն» ենթաբաժնի 7-րդ պարբերության 7-րդ ենթակետի դրույթներից:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Ընթացակարգերի ժամկետների երկարատև ընթացք, որը տնտեսավարողների համար լրացուցիչ վարչարարական խոչընդոտներ է առաջացնում և հանգեցնում է գործընթացների դանդաղմանը:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Նշված խնդիրների արդյունավետ լուծման նպատակով նախատեսվում է ՀՀ-ում ունենալ մեկ միասնական կառույց, որի կմիավորի գործող կառույցների և համակարգումն կիրականացվի մեկ կառույցի ներքո: Կառույցի գործունեությունը կնպաստի վարչարարության արդյունավետ և հավասար կիրառմանը:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Արդյունքում կբարձրանա առկա գործառույթների և տրամադրվող ծառայությունների արդյունավետությունը:

<u>3.7. Գույք ներդրումների դիմաց</u>

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է պետական գույքի արդյունավետ օգտագործմամբ: Պետական գույքի տրամադրման պարագայում նախատեսվում է ներդրումների ներգրավում մշակող արդյունաբերության ոլորտներում: Պետության կողմից գնահատվելու է համապատասխան գույքը և ներդրողի կողմից գույքի արժեքի քառապատիկ ներդրում իրականացնելու դեպքում գույքը սեփականության իրավունքով

	տրամադրվելու է ներդրողին: Առաջարկվում է ծրագրի հաստատման ժամկետը սահմանել 2023 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակը՝ հաշվի առնելով, որ ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է մի շարք օրենսդրական փոփոխությունների իրականացում և իրավական դաշտի համապատասխանեցում: Միաժամանակ, նշենք, որ առաջիկայում «Պետական գույքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում նախատեսվում է իրականացնել փոփոխություններ, որով հնարավորություն կընձեռնվի պետական գույը ներդրումների դիմաց անհատույց, սեփականության իրավունքով տրամադրումը: Միջոցառումը բխում է նաև ՀՀ կառավարության 2021-2026թ.թ. ծրագրի «2. Տնտեսություն» բաժնի դրույթներից: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս պետական գույքը վաճառվում է աճուրդի կամ մրցույթի միջոցով: Այս պարագայում ներդրումային ծրագրերի իրականացման արդյունավետությունը լինում է ցածր, քանի որ ներդրողները ստիպված են լինում գույքի ձեռքբերման համար կատարել վճարումներ և այդ գումարները չեն ուղղվում ծրագրի իրականացմանը: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Նշված խնդիրների արդյունավետ լուծման նպատակով նախատեսվում է մշակել մեխանիզմ, որի արդյունքում պետական գույքը կհանդիսանա ներդրումային ծրագրի իրականացման համար ներդրման բաղադրիչ: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Պետական գույքի օգտագործմամբ ներդրումների ներգրավում: Ծրագրի իրականացման համար իրավական դաշտի համապատասխանեցում:
	<u>3. 8. Ենթակառուցվածքներ ներդրումների դիմաց ծրագրի հաստատում և հաստատման դեպքում՝ իրականացում</u> **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է ներդրումների համար բարենպաստ պայմանների ստեղծմամբ: Նախատեսվում է ներդրումների ներգրավում, խրախուսելով և օժանդակելով ներդրողներին, մասնավորապես ապահովելով անհրաժեշտ ենթակառուցվածքով: Նախատեսվող ներդրումների 10 տոկոսի չափով պետության կողմից իրականացվելու է համապատասխան տարածքում ենթակառուցվածքների կառուցում: Միջոցառումը բխում է նաև ՀՀ կառավարության 2021-2026թ. թ. ծրագրի «2. Տնտեսություն» բաժնի «2.1 Մշակող արդյունաբերություն» ենթաբաժնի 5-րդ պարբերության 3-րդ ենթակետի դրույթներից և «Գործարար և ներդրումային միջավայր» հատվածի 6-րդ պարբերության 3-րդ ենթակետից: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս ներդրողները ծրագրի իրականացման ժամանակ ստիպված են լինում նաև կառուցել իրենց գործունեության համար անհրաժեշտ ենթակառուցվածքները, մասնավորապես ճանապարհ, գազամատակարարում, ջրամատակարարում և այլն, ինչը ներդրումների տեսանկյունից Հայաստանը դարձնում է ոչ գրավիչ: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Նշված խնդիրների արդյունավետ լուծման համար նախատեսվում է ներդնել մեխանիզմ համաձայն որի, պետությունը կստանձնի պարտավորություն ներդրումների դեպքում անհրաժեշտ ենթակառուծվածքների ստեղծման: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Ներդրումների ներգրավման գրավչության բարձրացում:
	<u>3.9. Մտավոր սեփականության ոլորտի զարգացում, «Ապրանքային նշանների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունում և «Մտավոր սեփականության ոլորտի զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման հաստատում</u> **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացումը բխում է ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի «2. Տնտեսություն» բաժնի «Գործարար և ներդրումային միջավայրի բարելավում» հատվածի 7-րդ պարբերության 10-րդ կետի՝ «Մշակվելու է մտավոր սեփականության ոլորտի զարգացման ռազմավարությունը՝ ստեղծագործական և ներդրումային բարենպաստ միջավայր ստեղծելու, մտավոր սեփականության իրավունքի արդյունավետ և հուսալի պահպանություն և պաշտպանություն ապահովելու նպատակով» դրույթից: Մտավոր սեփականության իրավունքների (ՄՍԻ) արդյունավետ և հուսալի պաշտպանության համակարգը խթանում է գիտությունն ու նորարարությունը՝ հեղինակների գյուտարարների, նորարարների համար ապահովելով կայուն նախադրյալներ՝ ստեղծելու մտավոր արժեքներ: ՄՍ ռազմավարության նպատակը ՄՍ իրավունքների կարևորության գիտակցումն ու ՄՍ իրավունքների պահպանությանն աջակցելն է՝ խթանելու ստեղծագործական աշխատանքն արվեստի, գիտության, գիտահետազոտական բնագավառներում, ինչպես նաև ապահովելու տեխնիկական առաջընթացը, և դրանց արդյունքների տարածումն ու կիրառումը շուկայում: Այն իր հերթին, որպես հզոր ուժ, կծառայի նորարարության զարգացմանը և կնպաստի Հայաստանի տնտեսական և սոցիալական զարգացմանը:

Միջոցառման իրականացման հիմնական նպատակը Մտավոր սեփականության ոլորտի զարգացման ռազմավարության մշակումն ու Հայաստանի Հանրապետությունում ապրանքային նշանների իրավական պահպանության համակարգի կատարելագործումն է:

Ռազմավարության շրջանակներում կիրականացվեն ինստիտուցիոնալ բարեփոխումներ, կներդրվեն ՄՍ իրավունքների պաշտպանության ավելի արդյունավետ մեխանիզմներ: Ռազմավարության մեջ տեղ գտնեն ՄՍԻ վերաբերյալ ուսումնական ծրագրերի մշակումը և դրանց՝ կրթական համակարգում ներառումը: Կրթական ծրագրերում դրանց ներառման նպատակն է՝ խրախուսել պատանիներին և երիտասարդներին ստեղծագործել, զարգացնել ստեղծագործ և քննական մտածելակերպ, նորարարական հմտություններ, ինչպես նաև ձևավորել հարգանք գիտելիքի, նորարարությունների և մտավոր սեփականության իրավունքների նկատմամբ:

ՄՍ իրավունքների արդյունավետ համակարգը գիտելիքահենք և գիտահենտնտեսության հիմնախնդիրներից մեկն է:

Վերը նշված նպատակների իրականացման համար նախատեսվում է մշակել մտավոր սեփականության ոլորտի զարգացման ռազմավարությունը:

Պրակտիկայում առաջացած խնդիրները լուծելու նպատակով նախատեսվում է փոփոխություններ և լրացումներ կատարել նաև «Ապրանքային նշանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում (այսուհետ՝ Օրենք) և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538-Ն որոշման մեջ:

Օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորված է նաև Օրենքով նախատեսված դրույթները «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրով նախատեսված դրույթներին համապատասխանեցմամբ, ինչպես նաև Օրենքի դրույթների կիրառման պրակտիկայում ի հայտ են եկած խնդիրների լուծմամբ, ընթացակարգային դրույթների կարգավորմամբ, որոնց համար անհրաժեշտ է սահմանել հստակ մոտեցումներ:

Նախատեսվող փաստաթղթերի մշակման օրենսդրական հիմք՝ «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՕ–253-Ն ՀՀ օրենքով հաստատված հավելվածի 15-րդ կետ:

ՀՀ վարչապետի 2019թ. հունիսի 1-ի N 658-Լ որոշմամբ հաստատված ՀՀ էկոնոմիկայի նախարարության կանոնադրության 10-րդ կետի 10-րդ ենթակետ և 11-րդ կետի 47-րդ ենթակետ:

1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

ՀՀ մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության ռազմավարություն մշակվել է 2011թ., իսկ ռազմավարությանը կից միջոցառումները նախատասված են եղել 2011-2013թթ. համար: Ներկայումս ոլորտում բարեփոխումների անհարաժեշտություն է առաջացել: Ուստի անհրաժեշտ է մշակել նոր ռազմավարություն ընդհանուր ՄՍ ոլորտի զարգացման համար՝ 2023-2026թթ. ՄՍ իրավունքների համակարգի բարեփոխումների նպատակը ՀՀ–ում գիտության, տնտեսության և արվեստի զարգացմանն աջակցելն է, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մրցունակության բարձրացումը գլոբալ տնտեսությունում:

Օրենքի կիրառման պրակտիկայում առաջացած մի շարք խնդրահարույց դրույթներ, որոնք օրենքի փոփոխությամբ պայմանավորված պետք է ստանան իրենց կիրառման պարզաբանումները:

Բացի դրանից, համապատասխան փոփոխությունը բխում է նաև «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրով նախատեսված դրույթներին համապատասխանեցնելու անհրաժեշտությունից:

1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Ռազմավարության հիմնական ուղղությունները լինելու են՝

- Ինստիտուցիոնալ բարեփոխումները (ներառյալ ՄՍ իրավակիրարկման գործողություններ)
- Իրավունքների ավելի արդյունավետ պաշտպանության մեխանիզմների ապահովում
- ՄՍԻ վերաբերյալ իրազեկման մակարդակի բարձրացում (ուսումնական ծրագրերի մշակում, ՄՍ իրավակիրարկման ոլորտի համար պատասխանատու պետական մարմինների աշխատակիցների վերապատրաստում, մասնագետների պատրաստում):
- օրենքով սահմանված հեղինակային վարձատրության արդյունավետ հավաքագրում և բաշխում հեղինակների միջև:

Օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու արդյունքում կապահովվի «Ապրանքային նշանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի մի շարք դրույթներ կհամապատասխանեցվեն «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրով նախատեսված դրույթներին:

Բացի այդ, Օրենքի ընդունմամբ կբարելավվի Օրենքի կիրարկման արդյունավետությունը, կապահովվի դրանով սահմանված դրույթների միանշանակ կիրառման հնարավորությունը, ինչպես նաև պրակտիկայում առաջացող հնարավոր խնդիրների լուծումները:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է ունենալ առավել հստակեցված, կատարելագործված ամբողջականացված իրավական ակտեր, ինչպես նաև՝

- Մտավոր սեփականության ինստիտուցիոնալ բարեփոխում.
- ՄՍ բարեփոխված ոլորտ.

	• ՄՍ ոլորտում իրազեկված հասարակություն. • ՄՍ իրավունքների արդյունավետ պաշտպանություն. • Տնտեսության զարգացման ապահովում. • Կրթական համակարգում Մտավոր սեփականության վերաբերյալ ուսուցողական ծրագրերի ներդրում:
4	***ՀՀ էկոնոմիկայի նախարարության միջոցառումների «4. Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացում, ՓՄՁ մասնակցությունը ՀՆԱ-ին՝ 55%» նպատակի իրագործումը կնպաստի «Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050» փաստաթղթի (առնվազն 2025թ. ցուցանիշների) հետևյալ թիրախների և թիրախային արդյունքների ապահովմանը՝*** ***1. 4-րդ գործողության 4.2 թիրախային արդյունք, 4.2.3 ցուցանիշ (էջ 43)*** ***2. 14-րդ գործողության 14.2 թիրախային արդյունքի ցուցանիշներն ամբողջությամբ (էջ 53)*** **<u>4.1 Նորարարական նախաձեռնությունների հայեցակարգի հաստատում, հաստատումից հետո ծրագրերի մշակում և իրագործում</u>** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման մշակումը պայմանավորված է «Փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի 4–րդ հոդվածով սահմանված ՓՄՁ-ի աջակցության պետական ծրագրի, ՀՀ վարչապետի 31.08.2021 թ. N 02/08.2/29772-2021 հանձնարարականի՝ Վարչապետ Նիկոլ Փաշինյանի ՀՀ համայնքներ կատարած այցելությունների ընթացքում և նախընտրական քարոզարշավի ընթացքում (ս.թ. հունիսի 4-17) քաղաքացիներին տրված նախընտրական խոստումների (Երևանից մինչև հեռավոր գյուղերում ապրողները պետք է ունենան հավասար բիզնես հնարավորություններ), ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագրի «ՓՄՁ զարգացում» հատվածում ներառված գործողություններից, մասնավորապես 4-րդ պարբերության 1-ին ենթակետ, ինչպես նաև ՀՀ կառավարության 27.08.2020 թ. N 1443-Լ որոշման (Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2020-2024 թվականների ռազմավարությունից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիր) Հավելված 2–ի Մաս 2.1.–ի գործողությունների /Նորարարության ներդնումը և կիրառումը թիրախավորող աջակցության գործիքակազմի մշակում և ներդնում պետական աջակցության կառույցների միջոցով/ կատարման, ինչպես նաև ՀՀ կառավարության 27.08.2020թ. N1443-Լ որոշման (Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2020-2024 թվականների ռազմավարությունից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիր) Հավելված 2–ի Մաս 2.1.–ի գործողությունների /Նորարարության ներդնումը և կիրառումը թիրախավորող աջակցության գործիքակազմի մշակում և ներդնում պետական աջակցության կառույցների միջոցով/ կատարման ապահովման անհրաժեշտությամբ: Միևնույն ժամանակ, նշենք, որ միջոցառման իրականացման անհրաժեշտությունն առաջացել է Հայաստանի Հանրապետության կառավարության գիտելիքահենք տնտեսություն ստեղծելու տեսլականից: Վերջինիս նպատակն է օգնել, որպեսզի Հայաստանի Հանրապետությունում գործող հետազոտողների գյուտերը և տեխնոլոգիաները վերածվեն ապրանքների և ծառայությունների, որոնք կբարելավեն մարդկանց կյանքի որակը՝ Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաև՝ աջակցել ստեղծելով նոր աշխատատեղեր ու գիտանորարարական կազմակերպություններ և Հայաստանի Հանրապետությունը միջազգային շուկայում դարձնել առավել մրցակցային: Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև ՀՀ կառավարության 2020 թվականի օգոստոսի 27–ի թիվ 1443 որոշմամբ հաստատված Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2020-2024 թվականների ռազմավարության 2020-2022 թ. թ. գործողությունների ծրագրի 2.4.2 կետով նախատեսված միջոցառման՝ ՓՄՁ-ների SS և թվային վերափոխման ծրագրերի տեխնիկական աջակցություն (համաֆինանսավորում) պետական աջակցության կառույցների միջոցով, իրականացման պահանջով: Ինչպես նաև սույն միջոցառման իրականացման արդյունքում կբացվի բիզնեսի աջակցության միասնական կենտրոնը, որը կիրականացվի երկու ձևաչափով: Կենտրոնը կլինի ինչպես բազմաֆունկցիոնալ, այնպես էլ կգործի որպես առցանց հարթակ: Բազմաֆունկցիոնալ կենտրոնում կստեղծվի խորհրդատուների և մասնագետների թիմ՝ բիզնես գործընթացները ուղեկցելու համար (բիզնես պլանների պատրաստում, դրամաշնորհների ներգրավում) և կբացվի զանգերի կենտրոն: Այն նաև հանդես կգա որպես պարզ լուծումների գրասենյակ՝ առաջարկությունների ձևավորման, բիզնես գործընթացների պարզեցման և բարելավման նպատակով: Առցանց հարթակում կստեղծվի նորարարական, ինտերակտիվ և ֆունկցիոնալ ռեսուրս (էլեկտրոնային հարթակ), ստեղծելով՝ առանց կենտրոն այցելելու հայտերի գրանցման և առավելագույն քանակի ծառայություններ ստանալու հարմարավետություն: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Կարևորելով ՓՄՁ դերը ՀՀ տարածքային տնտեսական զարգացման գործում, ինչպես նաև հաշվի առնելով ՀՀ մարզերում (տարածաշրջաններում) ՓՄՁ պետական աջակցության մատչելիության ապահովման անհրաժեշտությունը՝ կենսական նշանակություն ունի «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ (այսուհետ՝ ՆՁԱԿ) կենտրոնի մասնաճյուղերի հիմնումը՝ ձևավորելով վերջինիս մարզային մասնաճյուղերի ցանց:

Ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում գործող գիտահետազոտական ինտիտուտներում, համալսարաններում և այլ գիտական հաստատություններում ծնվող գյուտերի և տեխնոլոգիաների ճնշող մեծամասնությունը այդպես էլ են չեն վերածվում վերջնական ապրանքի, չեն առևտրայնացվում և չեն կիրառվում: Գիտելիքահենք տնտեսություն ունենալու տեսլականը իրագործելու համար անհրաժեշտ է լուծել այս խնդիրը՝ խթանելով, որ երկրում ավելի շատ գյուտեր և տեխնոլագիաներ ստեղծվեն: Դրանք էլ իրենց հերթին վերածվեն նոր ապրանքների և առևտրայնացվեն:

Հայաստանի Հանրապետությունում բիզնեսի խորհրդատվության և աջակցման համար գործող մարմնի բացակայությունը նվազեցնում է ձեռնարկատիրական գործունեության իրականացումը և չի խթանում փոքր և միջին բիզնեսի զարգացումը: Գոյություն ունեցող մարմիններն ու հաստատությունները չեն համապատասխանում աշխարհում առկա ժամանակակից չափանիշներին, չեն տրամադրում համապարփակ տեղեկատվություն և ծառայությունների մատուցում բիզնեսի համար: Այս հաստատությունները չունեն համակարգային լուծումներ բազմաֆունկցիոնալ ծառայությունների մատուցման համար, որպես հեռավար գրասենյակ՝ ապահովված մարզերում ներկայացուցչություններով, կամ ժամանակակից առցանց հարթակ՝ համապարփակ և աշխատանքային ֆունկցիոնալությամբ հագեցված՝ տարբեր պետական ծառայություններ առցանց մշակելու համար: Ձեռնարկատիրական գործունեությունը խթանելու և բիզնեսը զարգացնելու համար անհրաժեշտ է ստեղծել բիզնեսի աջակցության մեկ կենտրոն և՛ խորհրդատվական, և՛ ուղեկցող մարմին, որը կկարողանա լիարժեք տեղեկատվություն տրամադրել և ուղեկցել տարբեր բիզնես-ծրագրերի: Բացի խորհրդատվական գործառույթներից և զանգերի կենտրոնից, այս մարմինը պետք է ունենա պետական աջակցության տրամադրման գործառույթներ՝ ձեռնարկատերերին պետական սուբսիդիաների տրամադրման արդյունավետ կարգավորման համար:

1. 2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

- Բիզնեսին կտրամադվեն պետական աջակցության գործիքներ, կստեղծվեն բիզնեսի և պետության փոխգործակցության աշխատանքային կենտրոններ: Բիզնես կենտրոնի միջոցով կմատուցվեն խորհրդատվական համապարփակ ծառայություններ: Բիզնես կենտրոնին կից կստեղծվեն նաև տեխնիկապես հագեցված գրասենյակային ենթակառուցվածքներ: Ինչպես նաև կմշակվեն ներդրումային գործունեության իրականացման իրական և նորարարական գործիքներ և թափանցիկ մեխանիզմներ:
- Առաջարկվում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ում հիմնել գյուտերի և տեխնոլոգիաների առևտրայնացման գրասենյակ (Technology Transfer Office), որը կօգնի գիտական հաստատություններին առևտրայնացնել գյուտերը և տեխնոլոգիաները: Գրասենյակը կլինի կապող օղակ գիտության և տնտեսության միջև:
- Բիզնեսի աջակցության միասնական բազմաֆունկցիոնալ կենտրոնում հնարավոր կլինի աջակցություն ստանալ ընկերություն գրանցելու, ընկերության աուդիտ անցկացնելու հարցում, տեղեկանալ պետական աջակցության միջոցների մասին, ստանալ մարքեթինգի և շուկայում խթանման ծառայությունների, ինչպես նաև գրանտներ ձեռք բերելու հնարավորության մասին: Բիզնեսի աջակցության միասնական բազմաֆունկցիոնալ կենտրոնում հնարավոր կլինի խորհրդատվություն ստանալ վարկավորման, հարկման, հաշվապահության գծով, ինչպես նաև ընկերության սպասարկման համար լրացուցիչ ծառայություններ ստանալ: Միևնույն ժամանակ, բիզնեսին կտրամադվեն պետական աջակցության իրական գործիքներ, կստեղծվեն բիզնեսի և պետության փոխգործակցության աշխատանքային մեխանիզմներ:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Նախատեսվում է ունենալ ժամանակակից նյութատեխնիկական ապահովվածության մակարդակով ՓՄՁ աջակցության կենտրոններ, որոնք կծառայեն որպես ՓՄՁ խորհրդատվական կենտրոններ, որտեղ կանցկացվեն բիզնես ինկուբացիոն ծրագրեր, վերապատրաստումներ, կունենան նորաստեղծ կամ փոքր ընկերությունների համար հարմարավետ գրասենյակային վարձակալման պայմաններ: Ռեզիդենտ նորարարական ընկերությունների համար կգործեն որոշակի արտոնություններ:

Ինչպես նաև ակնկալվում է, որ գյուտերի և տեխնոլոգիաների առևտրայնացման գրասենյակի գործունեության արդյունքում գիտական հաստատություններում նոր մակարդակի կբարձրանա գյուտերի ու տեխնոլոգիաների առևտրայնացման ամբողջ գործընթացի մասին ունեցած պատկերացումը և նոր մշակույթ կմտնի այդ հաստատություններ: Գիտական հաստատություններում կհստակեցվի մտավոր սեփականության հետ կապված բոլոր օրենսդրական հարցերը, իսկ աշխատանքային պայմանագրերում կհստակեցվեն բոլոր իրավական ներմերը: Գիտական հաստատությունները ավելի ակտիվ կսկսեն զբաղվել կիրառական հետազոտություններով: Կբարձրանա ստեղծվող գյուտերի և տեխնոլոգիաների քանակը: Կշատանան դրանց մտավոր սեփականության գրանցման հայտերը: Դրանց մի մասը կառևտրայնացվի և կմտնի Հայաստանի Հանրապետության տնտեսություն, ինչի արդյունքում կստեղծվեն նոր գիտանորարարական ընկերություններ: Դրանց մի մասը կլիցենզավորի օտարերկրյա ընկերություններին և կապահովի համապատասխան ներդրումներ Հայաստանի Հանրապետության տնտեսության համար: Գյուտերի և տեխնոլոգիաների առևտրայնացման արդյունում այլընտրաքնային ֆինանսավորում կստանան գիտական հաստատությունները և կավելանան նոր գիտահետազոտական ծրագրերը, իսկ ստեղծված

գիտանորարական նոր ընկերությունները կխթանեն Հայաստանի Հանրապետությունում գիտելիքահենք տնտեսության զարգացմանը:

Այս բոլոր միջոցառումները կնպաստեն Հայաստանի Հանրապետությունում բիզնեսի էկոհամակարգի ստեղծմանը, հասարակության և ներդրողների տեղեկացվածության բարձրացմանը Հայաստանի Հանրապետությունում բիզնեսի հնարավորությունների վերաբերյալ, կստեղծվեն բարենպաստ պայմաններ բիզնեսի պարզեցման, խոչընդոտների վերացման և ձեռնարկատիրության զարգացման համար: Բիզնեսի պետական աջակցության ու բիզնեսի և պետության միջև փոխգործակցության աշխատանքային մեխանիզմների ստեղծմանն ուղղված իրական գործիքները հայկական բիզնեսը դուրս կբերի նոր շուկաներ և կբարձրացնի դրանց մակարդակը: «Am.business» էլեկտրոնային հարթակը պայմաններ կստեղծի բիզնեսի համար մի շարք պետական ծառայությունների ավտոմատացման և առցանց գրանցման համար:

Այս ծրագրի իրականացումը պայմաններ կստեղծի ընկերություններ գրանցելու, ընկերությունների աուդիտ և հաշվապահություն իրականացնելու, ինչպես նաև պետական աջակցության հնարավորությունների համար աջակցություն ստանալ:

Որպես արդյունքային ցուցանիշներ նախատեսվում է՝

1. Ամեն մարզում կենտրոնի վերազինում: Կենտրոնում կլինեն բիզնես խորհրդատվական ծառայություններ, կլինեն տեխնոլոգիաների տրանսֆերի գրասենյակներ, կանցկացվեն բիզնես ինկուբացիոն ծրագրեր, վերապատրաստումներ, կլինի նորաստեղծ կամ փոքր ընկերությունների համար հարմարավետ գրասենյակային վարձակալման պայմաններ: Կենտրոնի մասնաճյուղերը կնպաստեն մարզերում ոչ գյուղատնտեսական նոր աշխատատեղերի ստեղծմանը:

2. Ամեն ՆՁԱԿ կենտրոնում վերազինումից հետո տարեկան՝

- 500 կին ձեռներեց (80%-ը՝ Երևանից դուրս) կդառնա ՓՄՁ ինկուբացիոն ծրագրի շահառու,
- 500 ՓՄՁ սուբյեկտի աջակցություն, որից առնվազն 20 գիտատար պրոդուկտ զարգացնող ՓՄՁ-ի աջակցություն,
- 150 վերապատրաստում,
- 10 նոր ռեզիդենտ ընկերության գրանցում,
- 10 գյուտի առևտրայնացում կամ տեղայնացում:

3. Նորարական ինդեքսում դիրքերի շարունակական բարելավում տարեկան 3 դիրք, բիզնեսի գիտահետազոտական կարողությունների զարգացում: 4. Նորարական/ գիտահետազոտական 3 նոր կլաստերի ստեղծում:

1. Ունենալ ազգային EdTech պլատֆորմ, որի շահառուն կհանդիսանա այդ թվում նաև մասնավոր ոլորտը: Կատարել տարեկան 10.000 վերապատրաստում՝ լայն մարզային բաշխվածությամբ:

2. Ունենալ բիզնես գաղափարների և գործունեության աջակցության/խորհրդատվական և վերապատրաստման կենտրոններ: Կատարել տարեկան 500 բիզնեսի խորհրդատվություն:

3. Հաջողված մասնավոր/ոչ ֆորմալ կրթական հաստատությունների հետ համատեղ ստեղծել տարեկան 1 նոր կրթական հաստատություն, արհեստագործական, միջին մասնագիտական և այլ՝ բիզնեսի կողմից պահանջված մասնագետների բացը լրացնելու համար: Տարեկան առնվազն 150 նոր մասնագետի աշխատանքով ապահովում:

<u>4.2. Մասնավոր հատվածի մասնագիտական կարողությունների զարգացում</u>

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է՝ ՀՀ վարչապետի 31.08.2021թ. N 02/08.2/29772-2021 հանձնարարական՝ Վարչապետ Նիկոլ Փաշինյանի ՀՀ համայնքներ կատարած այցելությունների ընթացքում և նախընտրական քարոզարշավի ընթացքում (ս.թ. հունիսի 4-17) քաղաքացիներին տրված նախընտրական խոստումների կատարման (Տնտեսության մասին մեր ռազմավարական պատկերացումն այն է, որ այն պետք է լինի գիտելիքահենք, սկսած գյուղատնտեսությունից մինչև արտադրություն՝ պետք է հիմնվի գիտելիքի և իմացության վրա, որի կուլմինացիան պետք է դառնա աշխատանքի արտադրողականության բարձրացումը) ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագիր, «2. Տնտեսություն» բաժնի «ՓՄՁ զարգացում» հատվածի 3-րդ պարբերությամբ ամրագրված դրույթ:

1. 1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Գիտության և տեխնիկայի զարգացման ներկա փուլում շարունակական կրթության բնագավառում լայն տարածում ունի հեռավար ուսուցումը, որը շահագրգիռ անձանց հնարավորություն է տալիս առցանց ստանալու համապատասխան ուսում կամ մասնակցելու վերապատրաստման դասընթացներին իրենց հարմար վայրում և հարմար ժամերին:

1. 2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Ներկա իրավիճակի ուսումնասիրության հիման վրա պարզ է դարձել, որ տնտեսական արդի իրողության մեջ անմերժելի է հմտությունների զարգացումը, բիզնեսավարման ժամանակակից մոտեցումների և նորարարական արդյունքի կիրառման անհրաժեշտությունը՝ արդյունավետ, մրցունակ և կայուն տնտեսավարման ապահովման

	տեսանկյունից: Մասնագետների պատրաստում՝ միջազգային բարձր որակավարում ունեցող մասնագետի ներգրավմամբ: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** 1. Ունենալ ազգային EdTech պլատֆորմ, որի շահառուն կհանդիսանա այդ թվում նաև մասնավոր ոլորտը: Կատարել տարեկան 10.000 վերապատրաստում՝ լայն մարզային բաշխվածությամբ: 2. Ունենալ բիզնես գաղափարների և գործունեության աջակցության/խորհրդատվական և վերապատրաստման կենտրոններ: Կատարել տարեկան 500 բիզնեսի խորհրդատվություն: 3. Հաջողված մասնավոր/ոչ ֆորմալ կրթական հաստատությունների հետ համատեղ ստեղծել տարեկան 1 նոր կրթական հաստատություն, արհեստագործական, միջին մասնագիտական և այլ՝ բիզնեսի կողմից պահանջված մասնագետների բացը լրացնելու համար: Տարեկան առնվազն 150 նոր մասնագետի աշխատանքով ապահովում:
	<u>4.3. Պետություն-մասնավոր երկխոսության պետական ծրագրի հաստատում և իրագործում</u> **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի թիվ 650-Լ որոշմամբ հաստատված Կառավարության 2019-2023 թվականների գործունեության ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ծրագրի 240.2-րդ /ՓՄՁ զարգացման խորհրդի և ենթախորհրդի ձևաչափի և կազմի փոփոխության արդյունքում Խորհուրդը և ենթախորհուրդը հարթակ կդառնան նաև ՓՄՁ և խոշոր կազմակերպությունների համագործակցության հնարավորությունների բացահայտման և դրանց խորացման համար/, ՀՀ կառավարության 27.08.2020թ. թ. N 1443-Լ որոշմամբ /Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2020-2024 թվականների ռազմավարությունից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիր) հաստատված Հավելված 4.1–ին /Մասնավոր-պետություն երկխոսության մեխանիզմների կայացում և կիրառություն/: ՀՀ կառավարության 2021-2026թ. թ. ծրագրի «2. Տնտեսություն» բաժնի «ՓՄՁ զարգացում» հատվածի 5-րդ պարբերության 1-ին ենթակետ և վերջին պարբերության նախավերջին ենթակետի կատարման անհրաժեշտությամբ: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Հայաստանում գոյություն ունեն հանրային-մասնավոր երկխոսության տնտեսական բնույթի մի քանի հարթակներ: Դրանք ներառում են երբեմն նույն ոլորտային ասոցիացիաների, պետական կառավարման համակարգի ներկայացուցիչներին, ընդ որում հաճած վերջիններս հանդիսանում են միանգամից մի քանի նմանատիպ հարթակների անդամ: Չնայած այն հանգամանքին, որ նշված հարթակների աշխատանքների շրջանակը ներառում է բիզնեսի և ներդրումային միջավայրի բարեփոխումների գործառույթը, սակայն գործառույթները չեն իրականացվում արդյունավետ, քանի որ համակարգված են և խնդիրների կարգավորման միասնական ձևաչափով նախատեսված կարգավորումներ առկա չեն: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Առաջարկվում է հիմնել համակարգված, բարձր մակարդակի հարթակ՝ կառավարության, տեղական գործարար համայնքի և միջազգային ներդրողների և միջազգային ֆինանսական կազմակերպությունների միջև երկխոսության համար, որի շրջանակում կմշակվեն փոխշահավետ, ոչ խտրական, թափանցիկ և կառուցողական բիզնես միջավայրի կայացման կարգավորումներ, ինչը էապես կմեծացնի ներդրումների և զբաղվածության հնարավորությունները: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Որպես արդյունք ակնկալվում է ունենալ՝ • Հաստատել ՊՄԵ նոր աշխատակարգ: • ոլոր գերակա ոլորտներում ունենալ ՊՄԵ խորհուրդ: • Կազմակերպել տարեկան առնվազն 1 բարձր մակարդակի պետություն մասնավոր երկխոսության աշխատաժողով
	<u>4.4. Ֆինանսների հասանելիության ապահովում, «ՓՄՁ ներդրումային ֆոնդի և զարգացման բանկի հայեցակարգի հաստատում, հաստատման դեպքում իրագործում</u> **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ վարչապետի 31.08.2021թ. N02/08.2/29772-2021 հանձնարարականից (Վարչապետ Նիկոլ Փաշինյանի ՀՀ համայնքներ կատարած այցելությունների ընթացքում և նախընտրական քարոզարշավի ընթացքում (ս.թ. հունիսի 4-17) քաղաքացիներին տրված նախընտրական խոստումների կատարումը ապահովելու վերաբերյալ/Մենք հատուկ ծրագրեր ունենք կանանց գործարար ակտիվության վերաբերյալ) և պայմանավորված է ՀՀ կառավարության 27.08.2020թ. թ. N 1443-Լ որոշմամբ հաստատված ՓՄՁ զարգացման 2020-2024 թվականների ռազմավարությունից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագրի կետերի կատարման պահանջով: Մասնավորապես, ծրագրի Ֆինանսական ռեսուրսների հասանելիություն ավելացում բաժնի: ՀՀ կառավարության 2021-2026թ. թ. ծրագրի «2.Տնտեսություն» բաժնի «ՓՄՁ զարգացում» հատվածի 4-րդ պարբերության 4-րդ կետի ենթակետի կատարման անհրաժեշտությունից:

	ՓՄՁ Պետական աջակցության գործիքակազմի արդյունավետության և ծածկույթ ընդլայնում հատվածը սահմանող 1.1–րդ, Ձեռնարկատիրական մշակույթի զարգացում բաժնի 2.5–րդ գործողությունների կատարման պահանջից: Միջոցառման հիմնական նպատակն է ՀՀ տնտեսական զարգացման բնագավառում կանանց ձեռնարկատիրական գործունեության և նախաձեռնողականության խրախուսումը, տնտեսության տարբեր ճյուղերում կին գործարարների նվաճումներն ըստ արժանվույն գնահատումը և սատարումը: **1. 1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** 1. Հայաստանի Հանրապետությունում կայուն տնտեսական աճի ապահովման քաղաքականության համատեքստում փոքր և միջին ձեռնարկատիրության (այսուհետ՝ ՓՄՁ) զարգացումն է կոչված ապահովելու երկրի տնտեսական աճի կայունությունը՝ տնտեսությանը հաղորդելով նորարարական ուղղվածություն և ճկունություն: **1. 2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Միջոցառման իրականացմամբ նախատեսվում է 1) պետական ուղղակի աջակցության մեխանիզմների (գործիքների) միջոցով երկրում ՓՄՁ-ի զարգացման խթանումը 2) ՓՄՁ-ի զարգացման միջոցով երկրի, հատկապես նրա հեռավոր ու սահմանամերձ բնակավայրերի տնտեսական զարգացմանը և անհամամասնությունների հաղթահարմանը նպաստելը. 3) ՓՄՁ-ի զարգացման միջոցով երկրի տնտեսության բազմազանեցմանը նպաստելը և զբաղվածության ու ինքնազբաղվածության մակարդակի բարձրացման ապահովումը. 4) ՓՄՁ-ի սուբյեկտներին պետական աջակցությանը նպատակաուղղված շրջանակների բազմազանեցումը, նաև ՓՄՁ-ի սուբյեկտներին ցուցաբերվելիք պետական աջակցության նպատակայնության ու հասցեականության ապահովումը: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման իրականացմամբ ակնկալվում է՝ 1. ՓՄՁ ներդրումային ֆոնդի և զարգացման բանկի ստեղծում, որի արդյունքում տարեկան 3000 ՓՄՁ կստանա աջակցություն: 2. Սկսնակ և գործող ՓՄՁ աջակցության ծրագրերի շրջանակում տարեկան 2000 ՓՄՁ-ի ֆինանսական աջակցության տրամադրում, թիրախավորելով կանանց և առաջնահերթություն տալով աճի ամենամեծ պոտենցիալը ունեցող ոլորտներին: 3. Կապիտալի շուկայում 3 նոր ներդրումային ֆոնդերի ներգրավում, անհրաժեշտ բարեփոխումների ուղեկցմամբ: 4. Սփյուռքի ներդրումային մանրածախ ռեսուրսի մոբիլիզացիա՝ ՀՀ կառավարության 2020 թվականի հուլիսի 16-ի թիվ 1202-Լ որոշմամբ հաստատված «Կապիտալի շուկայի զարգացման ծրագրով» նախատեսված սփյուռքի պարտատոմսերի նկատմամբ պահանջարկի ուսումնասիրության համատեքստում:
5	***ՀՀ էկոնոմիկայի նախարարության միջոցառումների «5. Արտահանման խթանում: Ապրանքների և ծառայությունների արտահանում/ՀՆԱ՝ 60%» նպատակի իրագործումը կնպաստի «Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050» փաստաթղթի (առնվազն 2025թ. ցուցանիշների) հետևյալ թիրախների և թիրախային արդյունքների ապահովմանը՝*** ***1. 7-րդ գործողության 7.3 թիրախային արդյունք 7.3.1 և 7.3.2 ցուցանիշներ (էջ 46)*** ***2. 15-րդ գործողության 15.2 թիրախային արդյունք 15.2.3 ցուցանիշ (էջ 46)*** **<u>5.1. ՀՀ արտահանման ռազմավարության և կից ճանապարհային քարտեզի մշակում և իրականացում</u>** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Արտահանման ռազմավարության և կից ճանապարհային քարտեզի մշակման նպատակն է նպաստել Հայաստանի Հանրապետությունից արտահանման ծավալների ավելացմանը, հայրենական արտադրանքի մրցունակության աճին, ներքին և միջազգային թիրախային շուկաներում՝ մասնավոր նախաձեռնողականության, առավել արտադրողական տեխնոլոգիաների ներդրման ու նորարարական գաղափարների ընդունմանը: Միջոցառման իրականացումը բխում է ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի №1363-Ա որոշմամբ հավանության արժանացած Կառավարության 2021-2026թթ. ծրագրի «2.2 Կայուն զարգացում և կանաչ տնտեսություն» ենթաբաժնի դրույթներից, ինչպես նաև «2. Տնտեսություն» բաժնի «Արտաքին տնտեսական քաղաքականություն և արտահանման խթանում» հատվածի դրույթներով: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Արտահանման ռազմավարության մշակումը կապված է ոլորտում իրականացվող բարեփոխումների արդյունավետ իրագործման տեսանկյունից, ինչպես նաև բարեփոխումների հիմնական ուղղությունների և դրանցից ակնկալվող արդյունքների, ձեռքբերման առաջընթացի չափելի ցուցանիշների սահմանման անհրաժեշտությամբ: **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Արտահանման ռազմավարության մշակման շրջանակներում նախատեսվում է տնտեսական աճի նոր շարժիչ ոլորտների ձևավորում՝ ի հաշիվ ներկայումս արտահանող և արտահանման ներուժ ունեցող ոլորտների զարգացման:

	3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Արտահանման ռազմավարության հաջող իրականացումը կխթանի արտաքին տնտեսական գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների համար բարենպաստ պայմանների ստեղծմանը:
	<u>5.2. Ներդրումների և արտահանման խթանման ծրագրի Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերության պետական աջակցության 2021-2026 թթ. միջոցառումների իրականացում, «Ներդրումների և արտահանման խթանման ծրագրի 2023թ. միջոցառումները հաստատելու մասին» ՀՀ էկոնոմիկայի նախարարի հրամանի հաստատում</u> **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2021-2026թ. թ. ծրագրի «2. Տնտեսություն» բաժնի «2.1 Մշակող արդյունաբերություն» ենթաբաժնի դրույթներից, ինչպես նաև 2011 թվականի դեկտեմբերի 15-ին ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությանը հավանություն տալու մասին» N49 արձանագրային որոշման դրույթների կատարման անհրաժեշտությամբ: Միջոցառման իրականացման նպատակը պետական աջակցությամբ արտահանման խթանումն է և տեղական կազմակերպությունների մրցունակության բարձրացումը, ինչը ենթադրում է արդյունաբերական ճյուղերի արտահանման հնարավորությունների ընդլայնում՝ ընկերություններին տրամադրվող աջակցության գործիքների միջոցով: Պետական աջակցության գործիքակազմը կրում է շարունակական բնույթ, միջոցառումն իրականցվում է պարբերաբար և յուրաքանչյուր տարվա պետական բյուջեում ամրագրված է միջոցառման իրականացման համար նախատեսված բյուջեն: Այդ իսկ նպատակով առաջարկվում է 2021-2026 թվականների պետական աջակցության աշխատանքները շարունակել ըստ նախատեսված գործիքակազմի: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությունը միտված է տնտեսական աճի նոր շարժիչ ուղղությունների ձևավորմանն ու զարգացմանը՝ ի հաշիվ ներկայումս արտահանող և արտահանման ներուժ ունեցող ոլորտների զարգացման: Ներկայումս գոյություն ունեն որոշակի խնդիրներ, որոնք խոչընդոտում են ոլորտի զարգացումը, օրինակ՝ ներքին փոքր շուկա, ենթակառուցվածքների զարգացվածության ոչ բավարար մակարդակ, լոգիստիկ խնդիրներ, արտադրողականության ցածր մակարդակ: Այս պարագայում շատ հաճախ դժվար է դառնում նախանշված ցուցանիշներին հասնելը և արտահանման խթանելը, երրորդ երկրների շուկաներ մուտքի աջակցելը: Հաշվի առնելով վերոնշյալ խնդիրները՝ զարգացման հիմնական շեշտադրումը պետք է իրականացնել արտահանման խթանման և զարգացման ուղղությամբ: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Առկա խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությունը պետք է տրամադրվի հետևյալ ուղղություններով. – գործարար համաժողովների (ֆորումների), շնորհանդեսների, ինչպես նաև այլ համանման միջոցառումների մասնակցություն և (կամ) կազմակերպում, – օտարերկրյա պետությունում և (կամ) Հայաստանում հայկական արտադրանքի ճանաչելիության բարձրացման և սպառողների կարծիքի ձևավորման (PR) միջոցառումների կազմակերպում և իրականացում, – օտարերկրյա պետությունում և (կամ) Հայաստանում ցուցահանդեսների կազմակերպում և մասնակցության ապահովում, **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Արտահանմանն ուղղված պետական աջակցության տրամադրում, մասնավորապես ցուցահանդեսների և գործարար համաժողովների կազմակերպման, տեղական արտադրանքի առաջմղման և ճանաչելիության բարձրացում, դիստրիբյուտորների և պոտենցիալ գնորդների ներգրավում:
	<u>5. 3. ՀՀ տարածքից արտահանման/ներմուծման նպատակով բեռների՝ լաստանավով, օդանավով և այլ տրանսպորտային միջոցներով տեղափոխման ծախսերի փոխհատուցման ծրագրերի մշակում և իրականացում,</u> **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է տեղական արտադրանքի արտահանման խոչնդոտների մեղմմամբ: Միջոցառման նպատակն է արտահանողների համար ապահովել այլընտրանքային հնարավորություն Լարսի փակման ժամանակ բեռների անխափան տեղափոխման համար, սակայն որը չի բերի ծախսերի ավելացման: Միջոցառումը բխում է նաև ՀՀ կառավարության 2021-2026թ. թ. ծրագրի «2. Տնտեսություն» բաժնի «2.1 Մշակող արդյունաբերություն» ենթաբաժնի դրույթներից: Նախատեսվող փաստաթղթերի մշակման օրենսդրական հիմք՝ «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՊՀՕ–253-Ն ՀՀ օրենքով հաստատված հավելվածի 15-րդ կետ: ՀՀ վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի

	N 658-L որոշմամբ հաստատված «ՀՀ էկոնոմիկայի նախարարության կանոնադրության 10-րդ կետի 4-րդ ենթակետ և 11-րդ կետի 10-րդ և 20-րդ ենթակետեր: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս արտահանողները Լարսի փակման ժամանակ չունեն այլընտրանքային ճանապարհով բեռների տեղափոխման հնարավորություն, կամ առկա հնարավորությունը լրացուցիչ ծախս է ենթադրում, ինչը բերում է ապրանքների մրցունակության անկմանը: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Նշված խնդիրների արդյունավետ լուծման նպատակով նախատեսվում է փոխհատուցել այլընտրանքային ճանապարհով բեռների տեղափոխման ժամանակ առաջացող լրացուցիչ ծախսերը: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Արտահանման անխափան կազմակերպում:
	<u>5.4. Մաքսասակագնային, ոչ սակագնային կարգավորման ոլորտի վերաբերյալ իրավասու մարմիններին առաջարկությունների ներկայացում</u> **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է ԵԱՏՄ համագործակցության շրջանակներում մաքսասակագնային և ոչ սակագնային կարգավորման ոլորտում իրականացվող միջոցառումների մշակմամբ և համակարգմամբ, ԵԱՏՄ չափանիշներին համապատասխանեցմամբ: Միջոցառման իրակացման նպատակն է ՀՀ տնտեսավարող սուբյեկտների համար արտահանման և ներմուծման գործընթացների դյուրացումը, բարենպաստ պայմանների ապահովումը, արտադրական հզորությունների ավելացումը: Միջոցառման իրականացումը բխում է ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի №1363-Ա որոշմամբ հավանության արժանացած Կառավարության 2021-2026թթ. ծրագրի «2.2 Կայուն զարգացում և կանաչ տնտեսություն» ենթաբաժնի դրույթներից, ինչպես նաև «2. Տնտեսություն» բաժնի «Արտաքին տնտեսական քաղաքականություն և արտահանման խթանում» հատվածի դրույթներից: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս ՀՀ տնտեսավարող սուբյեկտների համար որոշ ապրանքների մասով գործող մաքսատուրքերի դրույքաչափերի, ինչպես նաև ոչ սակագնային կարգավորման միջոցների կիրառման հետ կապված առկա են որոշակի դժվարություններ: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Առաջարկվում է իրականացնել ՀՀ համար զգայուն հանդիսացող ապրանքների մասով գործող մաքսատուրքերի դրույքաչափերի, ինչպես նաև ոչ սակագնային կարգավորման միջոցների մասով հիմնախնդիրների ուսումնասիրություն և դրանց լուծման ուղղությամբ աշխատանքների իրականացում: Մասնավորապես առաջարկվում է ՀՀ համար զգայուն հանդիսացող ապրանքների մասով Եվրասիական տնտեսական հանձնաժողով առաջարկությունների ներկայացում՝ իրավական կարգավորումն ապահովման նպատակով: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է մի շարք ապրանքատեսակների մասով հայրենական արտադրողների և/կամ սպառողների համար առավել նպաստավոր պայմանների ապահովում:
	<u>5.5.Ներքին շուկայի պաշտպանության և հակագնագցման միջոցների կիրառման քաղաքականության մշակում</u> **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման նպատակը ԵԱՏՄ անդամ պետությունների արտադրողների պաշտպանությունից բխող երրորդ երկրների ապրանքներից ներքին շուկայի պաշտպանության միասնական միջոցների կիրառումն է: Միջոցառման իրականացումը բխում է ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի №1363-Ա որոշմամբ հավանության արժանացած Կառավարության 2021-2026թթ. ծրագրի «2.2 Կայուն զարգացում և կանաչ տնտեսություն» բաժնի դրույթներից Միջոցառման իրականացումը բխում է ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի №1363-Ա որոշմամբ հավանության արժանացած Կառավարության 2021-2026թթ. ծրագրի «2.2 Կայուն զարգացում և կանաչ տնտեսություն» ենթաբաժնի դրույթներից, ինչպես նաև «2. Տնտեսություն» բաժնի «Արտաքին տնտեսական քաղաքականություն և արտահանման խթանում» հատվածի դրույթներով: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Երրորդ երկրներից Եվրասիական տնտեսական միության տարածք ներկրվող ապրանքները երբեմն ունենում են շատ ավելի ցածր գին, քան ԵԱՏՄ անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների կողմից արտադրվող արտադրատեսակները: Արդյունքում՝ ԵԱՏՄ անդամ պետությունների կողմից նույնանման արտադրանք արտադրողները կրում են նյութական վնաս՝ վերոնշյալ ապրանքների Եվրասիական տնտեսական միության տարածք ներմուծման դեպքում: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Վերոնշյալ խնդրի լուծման նպատակով ԵԱՏՄ անդամ պետությունների կողմից իրականացվում է ներքին շուկայի պաշտպանության և հակագնագցման միջոցների կիրառման միասնական քաղաքականություն:

	2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Միջոցառման իրականացման արդյունքում նախատեսվում է կանխարգելել կամ վերացնել ԵԱՏՄ անդամ պետությունների արտադրողներին երրորդ երկրների տնտեսավարողների կողմից նյութական վնասի պատճառումը:
6	***ՀՀ էկոնոմիկայի նախարարության միջոցառումների «6. Միջազգային առևտրատնտեսական համագործակցության ընդլայնում և խորացում» նպատակի իրագործումը կնպաստի «Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050» փաստաթղթի (առնվազն 2025թ. ցուցանիշների) հետևյալ թիրախների և թիրախային արդյունքների ապահովմանը՝*** ***1. 7-րդ գործողության 7.3 թիրախային արդյունք 7.3.1 և 7.3.2 ցուցանիշներ (էջ 46)*** ***2. 15-րդ գործողության 15.2 թիրախային արդյունք 15.2.3 ցուցանիշ (էջ 46)*** **<u>6.1. ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի իրականացում, ՀՀ-ԵՄ առևտրատնտեսական համագործակցության ապահովում</u>** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով (ՀԸԳՀ) ամրագրված պայմանավորվածություններով և պարտավորություններով և ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության ծրագրի **«2. Տնտեսություն» բաժնի «Արտաքին տնտեսական քաղաքականություն և արտահանման խթանում» հատվածի 1-ին պարբերության 5-րդ ենթակետի դրույթներով**: Միջոցառման նպատակն է ՀՀ-ԵՄ առևտրատնտեսական համագործակցության ընդլայնումն և խորացումը: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ հիմնական դրույթները ժամանակավորապես ուժի մեջ են մտել 2018թ. հունիսի 1-ից: Համաձայնագիրն ամբողջապես ուժի մեջ է մտել 2021թ. մարտի 1-ից: ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը հանդիսանում է Համաձայնագրի «Առևտուր և առևտրին առնչվող հարցեր» մասի իրականացման համակարգող մարմինը: Համաձայնագրով նախատեսված է յուրաքանչյուր տարի անցկացնել ՀՀ-ԵՄ Առևտրի գործընկերության կոմիտեի, ինչպես նաև համապատասխան ենթակոմիտեների նիստեր, որոնց ընթացքում քննարկվում են ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ ներքո ամրագրված դրույթների և պայմանավորվածությունների իրականացման ընթացքը, քննարկվում և վերանայվում են «Առևտուր և առևտրին առնչվող հարցեր» մասի ներքո 12 ճանապարհային քարտեզները: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Իրականացվելու է ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ «Առևտուր և առևտրին առնչվող հարցեր» մասի իրականացման գործընթացի համակարգումը, կազմակերպվելու են ՀՀ-ԵՄ Առևտրի գործընկերության կոմիտեի, ինչպես նաև համապատասխան ենթակոմիտեների նիստերը, իրականացվելու են նիստերի արդյունքում ձեռք բերված պայմանավորվածությունները, վերանայվելու են ոլորտային 12 ճանապարհային քարտեզները, ուսումնասիրվելու և ԵՄ կողմի հետ քննարկվելու են ՀՀ-ԵՄ առևտրատնտեսական համագործակցության խորացման հնարավորությունները: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Ապահովվելու է տարեկան մեկ անգամ ՀՀ-ԵՄ Առևտրի գործընկերության կոմիտեի, ինչպես նաև համապատասխան ենթակոմիտեների նիստերի անցկացումը, ՀՀ- ԵՄ ՀԸԳՀ «Առևտուր և առևտրին առնչվող հարցեր» մասում և ոլորտային 12 ճանապարհային քարտեզներում ամրագրված դրույթների և պայմանավորվածությունների իրականացումը:
	<u>6.2 ԵՄ Արևելյան գործընկերության շրջանակներում երկկողմ և բազմակողմ ձևաչափով համագործակցության ապահովում, ԵՄ ֆինանսավորմամբ ծրագրերի իրականացում</u> **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության ծրագրի «1. Անվտանգություն և արտաքին քաղաքականություն» բաժնի «1.1 Արտաքին քաղաքականություն» ենթաբաժնի 4-րդ ենթակետի և «2. Տնտեսություն» բաժնի «Արտաքին տնտեսական քաղաքականություն և արտահանման խթանում» հատվածի 6-րդ ենթակետի դրույթներով և «Վերականգնում, դիմակայունություն և բարեփոխում. Արևելյան գործընկերության առաջնահերթությունները 2020-ից հետո» ԵՄ փաստաթղթի դրույթներով: Միջոցառման նպատակն է ԵՄ Արևելյան գործընկերության շրջանակներում երկկողմ և բազմակողմ համագործակցության ընդլայնումը: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը համակարգում է ԵՄ Արևելյան գործընկերության բազմակողմ համագործակցության «Տնտեսական ինտեգրման և ԵՄ քաղաքականություններին մոտարկման» պլատֆորմի և նրա ներքո գործող պանելների աշխատանքները, ապահովում է ընթացող քննարկումներին և իրականացվող ծրագրերին մասնակցությունը և ՀՀ դիրքորոշումների ներկայացումը: Միևնույն ժամանակ, ԵՄ կողմից «Վերականգնում, դիմակայունություն և բարեփոխում. Արևելյան գործընկերության առաջնահերթությունները 2020-ից հետո»

	փաստաթղթի շրջանակներում նախատեսվել է ֆինանսական աջակցության փաթեթ, որի ներքո նախանշված Ուղենիշ 1-ով ամրագրված ուղղությունների մասով ոլորտային ծրագրերի իրականացման համակարգումն ապահովում է ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը: Միջոցառման շրջանակներում ծրագրերի ընտրությունը և իրականացումը կախված է ՀՀ կառավարություն կողմից առաջնային ծրագրերի ամրագրումից, եվրոպական կողմի հետ, վարկային և դրամաշնորհային միջոցներ տրամադրող միջազգային կազմակերպությունների հետ բանակցություններից, ինչպես նաև ՀՀ պետական բյուջեից հնարավոր հատկացումներից: Միևնույն ժամանակ հստակ չէ ԱԼԳ պլատֆորմի և պանելների իրականացման ժամանակացույցը: **1. 2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Ապահովվելու է ակտիվ մասնակցություն ԵՄ Արևելյան գործընկերության բազմակողմ համագործակցության Տնտեսական պլատֆորմի և դրա ներքո պանելների աշխատանքներին և հանդիպումներին, Արևելյան գործընկերության շրջանակներում երկկողմ և բազմակողմ համագործակցության ընթացիկ համատեղ ծրագրերին՝ ներկայացվելով և պաշտպանելով հայկական կողմի դիրքորոշումները: Ապահովվելու է ԵՄ Արևելյան գործընկերության շրջանակներում ֆինանսական գործիքների միջոցով Հայաստանին հատկացվելիք 2,6 մլրդ եվրո աջակցության ներքո ծրագրերի շրջանակներում համագործակցությունը, «Աջակցություն կայուն, նորարար և մրցակցային տնտեսությանը. ուղղակի աջակցություն 30000 ՓՄՁ-ների" ուղենիշի շրջանակներում ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից առաջարկվող ոլորտային ծրագրերի մշակումն ու ձևավորումը, այլ շահագրգիռ մարմինների կողից ներկայացված ծրագրերի համադրումը, ամբողջական փաթեթի համաձայնեցումը եվրոպական կողմի հետ և հաստատված ծրագրերի իրականացումը: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Ակնկալվում է ԵՄ Արևելյան գործընկերության ներքո Հայաստանի համար առաջնահերթ նախաձեռնությունների և ընթացիկ ծրագրերի արդյունքների թիրախային ներդրումը ՀՀ տնտեսությունում, ԵՄ աջակցության փաթեթով նախատեսված ոլորտային ծրագրերի իրականացում, ինչը կնպաստի ՓՄՁ-ների ֆինանսների հասանելիությանը, կապիտալ ներդրումներով նրանց գործունեության խթանմանը, գործարարության և ներդրումային միջավայրի բարելավմանը, արտահանմանը միտված արտադրանքի խթանմանը, գյուղատնտեսական ոլորտի զարգացման ծրագրերի արդիականացմանը, որակի ենթակառուցվածքի բարելավմանը, միջին մասնագիտական կրթության կարողությունների հզորացմանը, ինչպես նաև կանաչ տնտեսության զարգացմանը:
	<u>6. 3. ԱՀԿ հետ համագործակցության խորացում և ընդլայնում, ԱՀԿ անդամակցության շրջանակներում ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարում</u> **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը.** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության ծրագրի «2. Տնտեսություն» բաժնի «Արտաքին տնտեսական քաղաքականություն և արտահանման խթանում» հատվածի 1-ին պարբերության 7-րդ ենթակետի, ինչպես նաև ԱՀԿ համաձայնագրերով ամրագրված դրույթներով: Միջոցառման իրականացման նպատակը ԱՀԿ անդամակցության շրջանակներում ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարումն է, ինչպես նաև ԱՀԿ հետ համագործակցության խորացումն և ընդլայնումը: **1. 1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.** Համաձայն ԱՀԿ համաձայնագրերի դրույթների՝ ԵԱՏՄ անդամակցությամբ պայմանավորված ՀՀ-ն 2015թ.-ից մեկնարկել է ԱՀԿ-ում ՀՀ մաքսատուրքերի սահմանային ամրագրված դրույքաչափերի պարտավորությունների փոփոխման փոխհատուցումային բանակցությունների գործընթացը: Բանակցային գործընթացում ներառված են 11 ԱՀԿ անդամ երկրներ: Այդ երկրների հետ ընթանում են երկկողմ բանակցություններ՝ համապատասխան փոխհատուցումների տրամադրման վերաբերյալ համաձայնություններ ձեռք բերելու նպատակով: Ներկա պահին բանակցություններ են ընթանում մասնավորապես ԵՄ և ԱՄՆ հետ: ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը հանդիսանում է նաև ՀՀ ծանուցումների ազգային պատասխանատու մարմին և ԱՀԿ համաձայնագրերի ներքո ապահովում է համապատասխան ոլորտային ծանուցումների տրամադրումը ԱՀԿ քարտուղարությանը՝ ՀՀ օրենսդրական և իրավական դաշտի փոփոխությունների և զարգացումների, ինչպես նաև կիրառվող կանոնակարգերի, միջոցների և ընթացակարգերի վերաբերյալ: Իրականացվում են շարունակական աշխատանքներ ԱՀԿ հետ համագործակցության խորացման ուղղությամբ, այդ թվում՝ ԱՀԿ գործընթացներին և ԱՀԿ շրջանակներում ընթացող երկկողմ և բազմակողմ բազմաոլորտ բանակցություններին մասնակցության միջոցով՝ ՀՀ դիրքորոշումների ներկայացման և շահերի պաշտպանության նպատակով: ԱՀԿ անդամակցության շրջանակներում ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարման նպատակով իրականացվում է նաև ՀՀ առևտրատնտեսական օրենսդրական դաշտը կանոնակարգող փաստաթղթերի նախագծերի ուսումնասիրություն և մշտադիտարկում: **1. 2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.** Իրականացվելու և շարունակվելու են բանակցությունները գործընթացում ընդգրկված ԱՀԿ անդամ բոլոր երկրների հետ, կազմակերպվելու են բանակցային փուլեր, ձևավորվելու և մշակվելու են փոխհատուցումային բանակցային փաթեթները, կազմակերպվելու են ԵԱՏՄ շրջանակներում գործող բանակցային խմբի պարբերական

	հանդիպումներ, ԵԱՏՄ շրջանակներում քննարկվելու և համաձայնեցվելու են միասնական դիրքորոշումներն ու ԱՀԿ անդամ երկրներին ներկայացվող փոխհատուցումային փաթեթները: Մշակվելու, ձևավորվելու և ամփոփվելու են ԱՀԿ համաձայնագրերով սահմանված ժամկետներում և ձևաչափերով պահանջվող ծանուցումները ՀՀ առևտրատնտեսական հարաբերությունները կարգավորող տարբեր ոլորտների մասով և ապահովվելու է դրանց տրամադրումը ԱՀԿ քարտուղարությանը՝ ԱՀԿ անդամ երկրներին շրջանառելու նպատակով: Միջոցառումը իրականացվելու է ՀՀ պետական կառավարման մարմինների և գործակալությունների հետ համագործակցության միջոցով: ԱՀԿ ներկայացվելու են նաև ԵԱՏՄ շրջանակներում կիրառվող միջոցների մասին ծանուցումները: Նախատեսվում է նաև ԱՀԿ անդամ երկրներից ստացված ծանուցումների ուսումնասիրություն, վերլուծություն: Իրականացվելու է ԱՀԿ շրջանակներում ընթացող երկկողմ և բազմակողմ բազմաոլորտ բանակցությունների մասնակցություն և մշտադիտարկում, ԱՀԿ քարտուղարության կողմից ներկայացվող փաստաթղթերի, հռչակագրերի և այլ նյութերի ուսումնասիրություն, ձևավորվելու և ներկայացվելու են առաջարկություններ և դիրքորոշումներ՝ ՀՀ առևտրատնտեսական շահերի պաշտպանության նպատակով: Իրականացվելու է ՀՀ առևտրատնտեսական օրենսդրական դաշտը կանոնակարգող փաստաթղթերի նախագծերի ուսումնասիրություն և մշտադիտարկում՝ ստանձնած պարտավորությունների ապահովման նպատակով: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը.** Ապահովվելու է ԱՀԿ-ում ՀՀ մաքսատուրքերի սահմանային ամրագրված դրույքաչափերի պարտավորությունների փոփոխման փոխհատուցումային բանակցությունների շրջանակներում ԱՀԿ անդամ երկրների հետ երկկողմ պայմանավորվածությունների ամրագրումը և ՀՀ մաքսատուրքերի դրույքաչափերի պարտավորությունների նոր ժամանակացանկի ձևավորումը: Ակնկալվում է ՀՀ ոլորտային առևտրային քաղաքականություններին և կիրառվող միջոցներին առնչվող՝ ԱՀԿ համաձայնագրերով սահմանված մոտ 50 ծանուցումների պատրաստում և ներկայացում ԱՀԿ քարտուղարություն: Նախատեսվում է ԱՀԿ քարտուղարության միջոցով շրջանառված՝ ԱՀԿ այլ անդամ երկրների առևտրային կարգավորումների վերաբերյալ մոտ 500 ծանուցումների ուսումնասիրություն և անհրաժեշտության դեպքում տրամադրում շահագրգիռ մարմիններին, ինչպես նաև ՀՀ առևտրատնտեսական օրենսդրական դաշտը կանոնակարգող մետ 30 փաստաթղթերի նախագծերի ուսումնասիրություն: Ապահովվելու է ՀՀ առևտրային քաղաքականության թափանցիկությունը և կանխատեսելիությունը, որոնք կարևոր ցուցիչներ են հանդիսանում երկրի գործարար և ներդրումային գրավիչ միջավայրի ապահովման, ինչպես նաև շուկայի մատչելիության մեծացման նկատառումներով: Ապահովվելու է ԱՀԿ շրջանակներում ընթացող գործընթացներին, երկկողմ և բազմակողմ ոլորտային բանակցություններին մասնակցություն և ՀՀ դիրքորոշումների ներկայացում և պաշտպանություն Միջոցառման իրականացման արդյունքում կապահովվի ԱՀԿ հետ համագործակցության խորացում և ընդլայնում, ԱՀԿ անդամակցությամբ ՀՀ ստանձնած, ինչպես նաև ԱՀԿ համաձայնագրերի դրույթներով սահմանված պարտավորությունների պատշաճ իրականացումը:
	<u>6.4. Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման խնդիրներով պայմանավորված՝ առանձին ապրանքների արտահանման և (կամ) ներմուծման արգելման կամ քանակական սահմանափակումների ուղղությամբ քաղաքականության մշակում և իրականացում, քվոտաների համակարգի ներդնում</u> **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման նպատակը երրորդ երկրներից ՀՀ ներմուծման և ՀՀ-ից արտահանման ժամանակ ՀՀ տնտեսավարող սուբյեկտների համար ազատ առևտրի համաձայնագրերով ամրագրված արտոնություններից օգտվելու հնարավորության ստեղծումն է, ինչպես նաև ներքին շուկայում տնտեսավարող սուբյեկտների շահերի պաշտպանությունը: Միջոցառման իրականացումը բխում է ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի №1363-Ա որոշմամբ հավանության արժանացած Կառավարության 2021-2026թթ. ծրագրի «2.2 Կայուն զարգացում և կանաչ տնտեսություն» ենթաբաժնի դրույթներից, ինչպես նաև «2. Տնտեսություն» բաժնի «Արտաքին տնտեսական քաղաքականություն և արտահանման խթանում» հատվածի դրույթներից: **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ տնտեսավարող սուբյեկտների համար որոշ ապրանքների մասով արտոնություններից օգտվելու հնարավորության բացակայությամբ: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Առկա խնդիրների լուծման նպատակով առաջարկվում է ՀՀ ներմուծման և ՀՀ-ից արտահանման ժամանակ քվոտավորման համակարգի ներդրում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

	Միջոցառման իրակացման արդյունքն է կնքված ազատ առևտրի մասին համաձայնագրերի, ինչպես նաև ԵԱՏՄ անդամակցության պայմանագրից բխող պարտավորությունների շրջանակներում մի շարք ապրանքատեսակների մասով արտոնյալ դրույքաչափերի կիրառմամբ քվոտավորման մեխանիզմի ներդրումը:
	<u>6.5. Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ արտոնյալ առևտրային ռեժիմների առևտրատնտեսական համագործակցության ընդլայնում</u> **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ արտոնյալ առևտրային ռեժիմների առևտրատնտեսական համագործակցության շրջանակի, դրանց կիրառության գործիքակազմի ընդլայնմամբ, ԵԱՏՄ անդամ պետությունների և երրորդ երկրների հետ համագործակցությամբ: Միջոցառման իրակացման նպատակն է կնքվող ազատ առևտրի համաձայնագրերի շրջանակներում հայրենական արտադրանքի մրցունակության ապահովումը, ինչպես նաև նոր շուկաներ մուտք գործելու ընթացակարգերի դյուրացումը: Միջոցառման իրականացումը բխում է ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի №1363-Ա որոշմամբ հավանության արժանացած Կառավարության 2021-2026թթ. ծրագրի «2.2 Կայուն զարգացում և կանաչ տնտեսություն» բաժնի դրույթներից, Միջոցառման իրականացումը բխում է ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի №1363-Ա որոշմամբ հավանության արժանացած Կառավարության 2021-2026թթ. ծրագրի «2.2 Կայուն զարգացում և կանաչ տնտեսություն» ենթաբաժնի դրույթներից, ինչպես նաև «2. Տնտեսություն» բաժնի «Արտաքին տնտեսական քաղաքականություն և արտահանման խթանում» հատվածի դրույթներից: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Մինչ այժմ վերոնշյալ երկրների հետ փոխադարձ առևտրում չի կիրառվում արտոնյալ առևտրային ռեժիմ: Եգիպտոսի հետ ազատ առևտրի համաձայնագրի կնքման ոչ պաշտոնական նախաձեռնող կողմն է հանդիսանում Հայաստանի Հանրապետությունը: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Առաջարկվում է ԵԱՏՄ համագործակցության շրջանակներում մի շարք երրորդ երկրների հետ ազատ առևտրի համաձայնագրերի կնքում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման իրակացման արդյունքն է ազատ առևտրի համաձայնագրերի կողմ հանդիսացող երկրների շուկաներ արտոնյալ պայմաններով հասանելիության ընդլայնումը:
	<u>6.6. ԵԱՏՄ համագործակցության շրջանակներում, ինչպես նաև երրորդ երկրների հետ փոխադարձ առևտրում խոչընդոտների և արգելքների բացահայտում և վերացման ուղղությամբ առաջարկությունների ներկայացում</u> **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում ներքին շուկայի պաշտպանությամբ: Միջոցառման իրականացման նպատակն է ՀՀ տնտեսավարող սուբյեկտների կողմից ներկայացված փոխադարձ առևտրում առկա խոչընդոտների հավաքագրումը և դրանց լուծման մեխանիզմների մշակումը: Միջոցառման իրականացումը բխում է ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի №1363-Ա որոշմամբ հավանության արժանացած Կառավարության 2021-2026թթ. ծրագրի «2.2 Կայուն զարգացում և կանաչ տնտեսություն» ենթաբաժնի դրույթներից, ինչպես նաև «2. Տնտեսություն» բաժնի «Արտաքին տնտեսական քաղաքականություն և արտահանման խթանում» հատվածի դրույթներից: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** ԵԱՏՄ համագործակցության շրջանակներում, ինչպես նաև երրորդ երկրների հետ փոխադարձ առևտրում առկա են մի շարք խոչընդոտներ և ապրանքների և ծառայությունների ազատ տեղաշարժի սահմանափակումներ **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Առաջարկվում է իրականացնել ԵԱՏՄ համագործակցության շրջանակներում, ինչպես նաև երրորդ երկրների հետ փոխադարձ առևտրում խոչընդոտների ռեեստրի վարում և նշված խոչընդոտների վերացման ուղղությամբ ճանապարհային քարտեզի ձևավորում, ինչպես նաև իրավական կարգավորման ապահովում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման իրականացման արդյունքն է փոխադարձ առևտրում առկա սահմանափակումների վերացումը, ապրանքների և ծառայությունների ազատ տեղաշարժի ապահովումը:

	6.7. ՀՀ և այլ երկրների առևտրային հարաբերությունների զարգացման ճանապարհային քարտեզի մշակում և իրագործում **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության համար առևտրային տեսանկյունից հետաքրքրություն ներկայացնող երկրների ուսումնասիրությունների իրականացմամբ և ստացված արդյունքների հիման վրա յուրաքանչյուր երկրի մասով համապատասխան առաջարկությունների մշակմամբ: Միջոցառման իրականացումը բխում է ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի №1363-Ա որոշմամբ հավանության արժանացած Կառավարության 2021-2026թթ. ծրագրի «2.2 Կայուն զարգացում և կանաչ տնտեսություն» ենթաբաժնի դրույթներից, ինչպես նաև «2. Տնտեսություն» բաժնի «Արտաքին տնտեսական քաղաքականություն և արտահանման խթանում» հատվածի դրույթներից: **1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս Հայաստանի համար առևտրային տեսանկյունից հետաքրքրություն ներկայացնող երկրների վերաբերյալ ՀՀ տնտեսավարող սուբյեկտները բավարար իրազեկված չեն, ինչի արդյունքում ՀՀ արտահանման ներուժը բավարար չափով չի իրացվում: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Առաջարկվում է ևատրային տեսնակյունից հետաքրքրություն ներկայացնող երկրների մասով իրականացնել համապատասխան վերլուծություններ, որոնց հիման վրա հնարավոր կլինի յուրաքանչյուր երկրի գծով նախապատրաստել արտահանման ներուժ ունեցող ապրանքների ցանկեր: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման իրականացման արդյունքն է արտահանման խթանմանն ուղված գործիքակազմի կիրառումը, արտահանման ծավալների աճի ապահովումը:
7	***ՀՀ էկոնոմիկայի նախարարության միջոցառումների «7. Արդյունաբերության զարգացում՝ ոլորտին ուղղելով 80 մլրդ ֆինանսական միջոցներ: Մշակող արդյունաբերություն/ՀՆԱ՝ 15%, Տնտեսական բարդության ցուցանիշը՝ -0. 3-ից հասցնել 0.1-ի» նպատակի իրագործումը կնպաստի «Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050» փաստաթղթի (առնվազն 2025թ. ցուցանիշների) հետևյալ թիրախների և թիրախային արդյունքների ապահովմանը՝*** ***1. 7-րդ գործողության բոլոր ցուցանիշներ (էջ 46)*** **7. 1. Արդյունաբերության զարգացման հինգ գերակա ոլորտների հայեցակարգի մշակում և իրականացում, գերակա ոլորտների ռազմավարությունների հաստատԱրդյունաբերության զարգացման հինգ գերակա ոլորտների (1. Ոսկերչություն և ադամանդագործություն, 2. Թեթև արդյունաբերություն (սնունդ, տեքստիլ և այլն), 3. Ծանր արդյունաբերություն (լեռնամետալուրգիա, քիմիա), 4. Սարքաշինություն (սարքեր, մեքենաներ, արևային տեխնոլոգիաներ), 5. Դեղագործություն) հայեցակարգի մշակում և իրականացում, գերակա ոլորտների ռազմավարությունների հաստատումում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Ելնելով տնտեսության մրցունակության բարձրացման և շարունակական տնտեսական աճի ապահովման հրամայականներից՝ ՀՀ կառավարությունը նախաձեռնել է ակտիվ արդյունաբերական քաղաքականության իրականացման գործընթաց, որը միտված է լինելու տնտեսության արտահանելի հատվածի ընդլայնմանը՝ արտահանման ներուժի բացահայտման և արդյունավետ իրագործման ճանապարհով: Այդ առումով մեկնարկային փուլի համար անհրաժեշտություն է առաջացել ՀՀ կառավարության կողմից գերակա ոլորտների ընտրության, որի արդյունքում կհաստատվեն ոլորտային զարգացման ռազմավարությունները և համապատասխան ընտրված կառուցակարգերի և գործիքակազմի կիրառությամբ կիրականացվեն առանցքային նախագծեր: Միջոցառման նպատակը արդյունաբերության զարգացման գերակա ոլորտների սահմանման միջոցով բարձրարտադրողական, մրցունակ, բարձր արտահանելի և արտահանման առավել մեծ ներուժ ունեցող ենթաճյուղերի զարգացման ապահովումն է: Միջոցառումը բխում է նաև ՀՀ կառավարության 2021-2026թ. թ. ծրագրի «2. Տնտեսություն» բաժնի «2.1 Մշակող արդյունաբերություն» ենթաբաժնի 7-րդ պարբերության 4-րդ և 5-րդ ենթակետերի դրույթներից: Նախատեսվող փաստաթղթերի մշակման օրենսդրական հիմք՝ «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՈՀՕ–253-Ն ՀՀ օրենքով հաստատված հավելվածի 15-րդ կետ: ՀՀ վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-L որոշմամբ հաստատված ՀՀ էկոնոմիկայի նախարարության կանոնադրության 10-րդ կետի 5-րդ ենթակետ և 11-րդ կետի 18-րդ ենթակետ: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս ՀՀ արդյունաբերության կառուցվածքում կան որոշակի ճյուղեր (ենթաճյուղեր), որոնք առավել զարգացած են և/կամ ունեն բավականին մեծ ներուժ՝ դառնալու արդյունաբերության և ընդհանուր առմամբ տնտեսության զարգացման հիմնական լոկոմոտիվ: Վերջիններս են՝ 1. Ոսկերչություն և ադամանդագործություն, 2. Թեթև արդյունաբերություն (սնունդ, տեքստիլ և այլն), 3. Ծանր արդյունաբերություն (լեռնամետալուրգիա, քիմիա),

	4. Սարքաշինություն (սարքեր, մեքենաներ, արևային տեխնոլոգիաներ), 5. Դեղագործություն: Այնուամենայնիվ, նշված ոլորտների առավել մեծ թափով զարգացման գործընթացը չի կարող իրականացվել առանց պետության կողմից ակտիվ հովանավորության և զարգացմանը միտված գործիքակազմի կիրառման: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Արդյունաբերության մրցունակ և զարգացման մեծ ներուժ ունեցող ճյուղերի միջև առաջնահերթ են համարվելու այն ճյուղերը, որոնք արդեն իսկ մրցունակ են միջազգային շուկաներում: Հեռանկարային մրցունակության ներուժ ունեցող ճյուղերի թիրախավորումը կիրականացվի համապատասխան լրացուցիչ խորքային ուսումնասիրությունների հիման վրա: Վերոնշյալ ոլորտներից յուրաքանչյուրի համար մշակվելու է ոլորտային զարգացման ծրագիր, որի արդյունքում գերակա ոլորտները կհամախմբվեն միասնական օրակարգի շուրջ, պետության աջակցության գործիքակազմը զգալիորեն կբարձրացնի տնտեսավարողների միջազգային մրցունակությունը, ինչպես նաև կստեղծվեն պայմաններ Հայաստանի մշակող արդյունաբերության միջազգային մրցունակության աճի համար: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Արդյունաբերության զարգացման նպատակով բարձր ներուժ ունեցող գերակա ոլորտների սահմանում և պետական գործիքակազմի կիրառմամբ առաջմղում:
	<u>7.2 Մշակող արդյունաբերության ոլորտի ձեռնարկությունների տեխնիկական հագեցվածությունը բարձրացնելու և ժամանակակից սարքավորումների ձեռքբերմանը նպաստելու նպատակով Ֆինանսական, տեղեկատվական և մի շարք այլ աջակցության գործիքակազմի ծրագրի մշակում և իրականացում</u> **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է տեղական տնտեսությունում արտադրողականության բարձրացմանը նպաստելուն: Միջոցառման նպատակն է նպաստել ՀՀ տնտեսության ճյուղերում արտադրողականության մակարդակի բարձրացմանը ապահովելով համաշխարային միջինից բարձր ցուցանիշ: Միջոցառումը բխում է նաև ՀՀ կառավարության 2021-2026թ.թ. ծրագրի «2. Տնտեսություն «2.2 Մշակող արդյունաբերություն» բաժնի դրույթներից: Ներկա դրությամբ իրավական ակտերի անհրաժեշտությունը բացակայում է: Արդեն իսկ առկա աջակցության գործիքակազմի և տեղեկատվական աջակցության մեխանիզմների մասով նախատեսվում է յուրաքանչուր տարի ներկայացնել ամփոփ հաշվետվություն: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս տնտեսության զարգացման առումով խնդիր է արտադրողականության ցածր մակարդակը գրեթե բոլոր ճյուղերում, ինչը բերում է արտադրանքի և ծառայությունների մրցունակության անկմանը: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Նշված խնդիրների արդյունավետ լուծման նպատակով նախատեսվում է մշակել համապարփակ ծրագիր, նախանշել այն խնդիրները, որոնք բերում են արտադրողականության նվազմանը և իրականացնել այդ ծրագրով նախատեսված միջոցառումները: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Արտադրողականության մկարդակի բարձրացում: Մշակող արդյունաբերության ոլորտի ձեռնարկություններն հնարավորություն կստանան տեխնիկական հագեցվածությունը բարձրացնելու և ժամանակակից սարքավորումների ձեռքբերմանը նպաստելու նպատակով օգտվել պետության կողմից իրականացվող աջակցության գործիքակազմից:
	<u>7.4 Տնտեսական բարդություն ապահովող արտադրությունների աջակցության կառուցակարգի և գործիքակազմի ծրագրի մշակում և իրականացում</u> **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման ժամկետը սյունակում նշված միջոցառման մասով տեղի էր ունեցել տեխնիկական վրիպակ: Սյունակը լրացվել է ավելացվելով միջոցառման իրականացման հստակ ժամկետը:
	<u>7. 4. Տնտեսական բարդություն ապահովող արտադրությունների աջակցության կառուցակարգի և գործիքակազմի ծրագրի մշակում և իրականացում, «Տնտեսական բարդություն ապահովող արտադրությունների աջակցության կառուցակարգի և գործիքակազմի ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման հաստատում</u> **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Հայաստանի տնտեսական բարդության մակարդակի բարձրացումը ուղղակիորեն կապված է ձեռնարկությունների տեխնոլոգիական վերազինման, ինչպես նաև միջազգային նոր շուկաներ ներթափանցման ու առկա դիրքերի ամրապնդման հետ, ինչպես նաև բարձրորակ մարդկային ռեսուրսների առկայության ապահովման հետ: Քանի որ երկարաժամկետ տնտեսական աճի ներուժը զգալիորեն պայմանավորվում է տնտեսական բարդության

մակարդակով, միջոցառումը նպատակ է հետապնդում էականորեն բարձրացնել Հայաստանի տնտեսական բարդությունը:
Միջոցառումը բխում է նաև ՀՀ կառավարության 2021-2026թ. թ. ծրագրի «2. Տնտեսություն» բաժնի «2.1 Մշակող արդյունաբերություն» ենթաբաժնի 4-րդ պարբերության, 5-րդ պարբերության 4-րդ ենթակետի, 6-րդ պարբերության 2-րդ ենթակետի դրույթներից:
ՀՀ վարչապետը Ավան համայնքում նախընտրական քարոզարշավի ժամանակ հայտարարել է, որ «Արդյունաբերության ցիկլը պետք է հնարավորինս երկարացվի»:
Նախատեսվող փաստաթղթերի մշակման օրենսդրական հիմք՝ «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՆՀՕ–253-Ն ՀՀ օրենքով հաստատված հավելվածի 15-րդ կետ: ՀՀ վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-L որոշմամբ հաստատված ՀՀ էկոնոմիկայի նախարարության կանոնադրության 10-րդ կետի 5-րդ ենթակետ և 11-րդ կետի 18-րդ ենթակետ:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Հայաստանը, ունենալով ծավալներով փոքր տնտեսություն, միջազգային շուկաներում կարող է մրցունակ լինել՝ թողարկելով տնտեսապես բարդ, բարձր ավելացված արժեք ունեցող ապրանքներ և ծառայություններ: Սակայն 2000-2018 թվականներին Հայաստանը աշխարհում բարդությամբ 32-րդ դիրքից գահավիժել է և այժմ գտնվում է 79-րդ դիրքում, ինչը նշանակում է, որ մեր տնտեսության արտահանելի հատվածում պատրաստի արտադրանքի, մեքենասարքավորումների, տեխնոլոգիապես բարդ արտադրանքների մասնաբաժինը նախահեղափոխական շրջանում էականորեն նվազել է:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Անհրաժեշտ է ապահովել բարձր հավելյալ արժեքով արտադրանք ստեղծող ընկերությունների մուտքը ՀՀ շուկա, որը հնարավորություն կտա նոր գիտելիք և հմտություններ ներմուծել, ժամանակակից տեխնոլոգիաների կիրառությամբ և արտադրական գործընթացներում ներդրմամբ ստեղծել բարձրաժեք արտադրանք և մեծացնել արտահանման զամբյուղում արտադրողական ճյուղերի կշիռը: Վերջինս հնարավոր է հարկային/մաքսային արտոնությունների և համապատասխան աջակցության գործիքակազմերի միջոցով:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Միջնաժամկետ հատվածում տնտեսական բարդության ցուցանիշը -0.39-ից հասցնել 0.1 միավորի և ստեղծել հիմքեր՝ 10 տարվա ընթացքում դասվելու բարձր տնտեսական բարդություն ունեցող երկրների շարքին Արտահանվող ապրանքի տնտեսական բարդության ցուցիչը կգերազանցի ՀՀ միջին ցուցիչը:

<u>7.5.Թեթև արդյունաբերության և ստեղծագործ ոլորտների զարգացում, «Թեթև արդյունաբերության և ստեղծագործ ոլորտների զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման հաստատում</u>

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Ելնելով տնտեսության մրցունակության բարձրացման և շարունակական տնտեսական աճի ապահովման հրամայականներից՝ ՀՀ կառավարությունը նախաձեռնել է ակտիվ արդյունաբերական, այդ թվում նաև թեթև, քաղաքականության իրականացման գործընթաց, որը միտված է լինելու տնտեսության արտահանելի հատվածի ընդլայնմանը՝ արտահանման ներուժի բացահայտման և արդյունավետ իրագործման ճանապարհով: Այդ առումով մեկնարկային փուլի համար անհրաժեշտություն է առաջացել ՀՀ կառավարության կողմից ոլորտային զարգացման ռազմավարությունների և համապատասխան ընտրված կառուցակարգերի և գործիքակազմի հաստատումը, որոնց կիրառությամբ կիրականացվեն առանցքային նախագծեր: Միջոցառման նպատակը արդյունաբերության զարգացման գերակա ոլորտների սահմանման միջոցով բարձր արտադրողական, մրցունակ, բարձր արտահանելի և արտահանման առավել մեծ ներուժ ունեցող ենթաճյուղերի զարգացման ապահովումն է: Հայաստանի թեթև արդյունաբերության զարգացման ռազմավարությանը և դրանից բխող միջոցառումների ծրագրի մշակում և իրագործում:
Միջոցառումը բխում է նաև ՀՀ կառավարության 2021-2026թ. թ. ծրագրի «2. Տնտեսություն» բաժնի «2.1 Մշակող արդյունաբերություն» բաժնի 5–րդ պարբերության 1-ին և 4–րդ ենթակետերի, 6-րդ պարբերության 1-ին և 7-րդ ենթակետերի դրույթներից:

1. 1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Ներկայումս ՀՀ արդյունաբերության կառուցվածքում կան որոշակի ճյուղեր (ենթաճյուղեր), որոնք առավել զարգացած են և/կամ ունեն բավականին մեծ ներուժ՝ դառնալու արդյունաբերության և ընդհանուր առմամբ տնտեսության զարգացման հիմնական լոկոմոտիվ: Դրանց թվին է պատկանում թեթև արդյունաբերությունը (տեքստիլ և հագուստի արտադրություն): Սակայն ոլորտի առավել մեծ թափով զարգացման գործընթացը չի կարող իրականացվել առանց պետության կողմից ակտիվ հովանավորության և զարգացմանը միտված գործիքակազմի կիրառման:

1. 2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Արդյունաբերության մրցունակ և զարգացման մեծ ներուժ ունեցող ճյուղերի միջև առաջնահերթ են համարվելու այն ճյուղերը, որոնք արդեն իսկ մրցունակ են միջազգային շուկաներում: Հեռանկարային մրցունակության ներուժ

	ունեցող ճյուղերի թիրախավորումը կիրականացվի համապատասխան լրացուցիչ խորքային ուսումնասիրությունների հիման վրա: Վերոնշյալ համատեքստում անհրաժեշտ է ոլորտային զարգացման ծրագիր, որի արդյունքում ոլորտի աջակցության գործիքակազմը զգալիորեն կբարձրացնի տնտեսավարողների միջազգային մրցունակությունը, ինչպես նաև կստեղծվեն պայմաններ Հայաստանի մշակող արդյունաբերության միջազգային մրցունակության աճի համար: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման իրականացմամբ նախատեսվում է Հայաստանի թեթև արդյունաբերության զարգացման ռազմավարության և դրանից բխող միջոցառումների ծրագրի մշակում և իրագործում: Թեթև արդյունաբերության և ստեղծագործ ոլորտի համար մեկական կլաստերի ստեղծում, որը ոլորտի տնտեսավարողների համար կստեղծի տնտեսական գործունեության համար անհրաժեշտ ենթակառուցվածքների հասանելիություն
8	***ՀՀ էկոնոմիկայի նախարարության միջոցառումների «8. Կանաչ և կայուն տնտեսական զարգացում: Վերականգնվող էներգիայի մասնաբաժինը էլեկտրաէներգիայի արտադրությունում հասցնել 50%, էլեկտրական շարժիչով մեքենաների մասնաբաժինը հասցնել 10%» նպատակի իրագործումը կնպաստի «Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050» փաստաթղթի (առնվազն 2025թ. ցուցանիշների) հետևյալ թիրախների և թիրախային արդյունքների ապահովմանը՝*** ***1. 8-րդ գործողության 8.3 թիրախային արդյունքի բոլոր ցուցանիշները (էջ 47)*** ***2. 13-րդ գործողության 13.2 թիրախային արդյունքի բոլոր ցուցանիշները (էջ 52)*** **<u>8.1. Կանաչ և կայուն տնտեսական զարգացման ռազմավարության մշակում և հաստատման դեպքում՝ դրա իրագործում</u>** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի 2. «Տնտեսություն» բաժնի 2. 2. «Կայուն զարգացում և կանաչ տնտեսություն» ենթաբաժինն ամբողջությամբ և «4.10 Շրջակա միջավայրի պահպանություն» բաժնի «Կանաչ տնտեսություն և կայուն զարգացման երկարաժամկետ նպատակի խթանմանն ուղղված քաղաքականության մշակումն ու իրականացումը» առաջնահերթ ուղղությանը: Նախատեսվող փաստաթղթերի մշակման օրենսդրական հիմք՝ «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՆՀՕ–253-Ն ՀՀ օրենքով հաստատված հավելվածի 15-րդ կետ: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Դեպի կանաչ տնտեսության անցում կատարելուն միտված համակողմանի և միասնական գործողությունների ծրագրի, ինչպես նաև համապատասխան իրավակարգավորումների շրջանակի մշակման անհրաժեշտություն: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Նախատեսվում է իրականացնել ուսումնասիրություն կանաչ և կայուն տնտեսության զարգացման և շարունակական բարելավման ուղիների, առկա մարտահրավերների ու առաջնահերթությունների, ինչպես նաև կանաչ ներդրումային կարիքների վերհանման, գնահատման և հնարավորությունների նախանշման վերաբերյալ: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Ռազմավարությամբ հստակ արտացոլված կլինեն կանաչ և կայուն տնտեսության զարգացման ուղղությունները և նախատեսվող գործողությունների շրջանակը, ինչպես նաև կանաչ տնտեսության խթանման և կայուն զարգացման երկարաժամկետ նպատակների իրագործման մեխանիզմները: Արևային տեխնոլոգիաների զարգացում, արտադրության խթանում: Կանաչ և կայուն տնտեսության զարգացման ճանապարհային քարտեզի հաստատում և իրագործում Աձխաձնազերծ ապրանքների թողարկման խթանում, ըստ անհրաժեշտության համապատասխան իրավական ակտերի հաստատում:
	<u>8.2. Արևային էներգետիկայի համար տեխնոլոգիաների զարգացում, արտադրության խթանում: Ըստ անհրաժեշտության համապատասխան իրավական ակտերի մշակում</u> 1. **Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի 2. «Տնտեսություն» բաժնի 2. 2. «Կայուն զարգացում և կանաչ տնտեսություն» ենթաբաժինն ամբողջությամբ: Նախատեսվող փաստաթղթերի մշակման օրենսդրական հիմք՝ «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՆՀՕ–253-Ն ՀՀ օրենքով հաստատված հավելվածի 15-րդ կետ: Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ, որոշման ակնկալվող արդյունքը սյունակում բացակայում էր ըստ տարիների իրականացվելիք միջոցառումները: Սյունակը լրացվել է՝ ավելացվելով ակնկալվող արդյունքն ըստ տարիների: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Արևային էներգետիկայի համար տեխնոլոգիաների զարգացմանը և վերջինիս արտադրության խթանմանն ուղղված համակողմանի և միասնական գործողությունների ծրագրի, ինչպես նաև համապատասխան իրավակարգավորումների շրջանակի նախատեսում:

	1. 2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Արևային էներգետիկայի համար տեխնոլոգիաների զարգացման միջոցով խթանել արևային էներգիայի արտադրությունը՝ ընդլայնելով նաև կանաչ էներգիայի տեսակարար կշիռը ընդհանուր արտադրության մեջ: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Արևային արդյունաբերության զարգացման և ոլորտի խթանման նպատակով համապատասխան օրենսդրական դաշտի ձևավորում:
	<u>8. 3. Էլեկտրամոբիլների և էլեկտրական շարժիչներով աշխատող տրանսպորտային միջոցների և հարակից ենթակառուցվածքների ներդրման ծրագրի իրականացում</u> **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի «2. Տնտեսություն» բաժնի 2. 2. «Կայուն զարգացում և կանաչ տնտեսություն» ենթաբաժինն ամբողջությամբ: **1. 1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** ՀՀ-ում ճանապարհային տրանսպորտի ոլորտում վառելիքի սպառման կառուցվածքում դեռևս գերակայում է բնական գազի կիրառությունը, որը, ըստ վիճակագրական տվյալների և փորձագիտական վերլուծության, 2020 թվականին կազմել է ճանապարհային տրանսպորտում վառելիքի ընդհանուր սպառման 81 տոկոսը: Բացի այդ, ՀՀ-ում հաշվառված բոլոր տրանսպորտային միջոցների թվակազմում էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոցների, ինչպես նաև էլեկտրական շարժիչային փոքր տրանսպորտային միջոցների մասնաբաժինը շատ փոքր է: **1. 2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Համապատասխան քաղաքականության և օրենսդրական բարեփոխումների նախատեսում ուղղված կանաչ պլանավորման և ներդրումների, նորարարական տեխնոլոգիաների ներգրավմանն ու նոր բիզնես մոդելների կիրարկմանը: Անհրաժեշտ է մշակել և գործարկել լրացուցիչ խթաններ և ընթացակարգեր Հայաստանում էլեկտրական տրանսպորտային միջոցների զարգացումն ապահովելու նպատակով: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Էլեկտրամոբիլների և էլեկտրական շարժիչներով աշխատող տրանսպորտային միջոցների և հարակից ենթակառուցվածքների զարգացման ճանապարհային քարտեզի մշակում և իրագործում, որտեղ հստակ նախանշված կլինեն համապատասխան գործողությունների ծրագիրը:
	<u>8.4. Բնական ռեսուրսների տնտեսական ցիկլում առավել երկար պահպանման նախադրյալների ստեղծում: «Բնական ռեսուրսների տնտեսական ցիկլում առավել երկար պահպանման նախադրյալների ստեղծման հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և հաստատում</u> **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի «2. Տնտեսություն» բաժնի 2. 2. «Կայուն զարգացում և կանաչ տնտեսություն» ենթաբաժինն ամբողջությամբ: Նախատեսվող փաստաթղթերի մշակման օրենսդրական հիմք՝ «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՆՀՕ–253-Ն ՀՀ օրենքով հաստատված հավելվածի 15-րդ կետ: **1. 1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** ՀՀ արտահանման կառուցվածքում գերակշռում է հանքարդյունաբերության ոլորտի հումքային արտադրանքը: Այդ պատճառով ՀՀ-ում ներկայիս արտադրական ցիկլում ավելացված արժեքի ստեղծման ներուժն ամբողջությամբ չի իրացվում: Հետևաբար, անհրաժեշտ է ստեղծել համապատասխան նախադրյալներ բնական ռեսուրսների վերամշակման միջոցով միջանկյալ կամ վերջնական սպառման արտադրանքի արտադրություն կազմակերպելու համար: **1. 2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** ՀՀ-ում բնական ռեսուրսների կայուն կիրառման խթանում, բնական ռեսուրսների առավել արդյունավետ կառավարում և մաքուր արտադրություն: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Հայեցակարգի մշակում և տնտեսական օգուտների վերհանում:
	1.1 <u>Կանաչ ջրածնի արտադրության զարգացում</u> **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի «2. Տնտեսություն» բաժնի 2.2. «Կայուն զարգացում և կանաչ տնտեսություն» ենթաբաժնով: Նախատեսվող փաստաթղթերի մշակման օրենսդրական հիմք՝ «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՆՀՕ–253-Ն ՀՀ օրենքով հաստատված հավելվածի 15-րդ կետ: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները**

	Հայաստանի Հանրապետությունում կանաչ և կայուն տնտեսական զարգացման հանձնառության, ինչպես նաև ածխածնի արտանետումների նվազեցման ուղղությամբ ստանձնված պարտավորության շրջանակում նախատեսվում է նաև խթանել կանաչ ջրածնի արտադրությունը, որը միտված է ընդլայնելու կանաչ էներգիայի տեսակարար կշիռը ընդհանուր արտադրության մեջ: Վերականգնվող էներգիայի արտադրման այս նորարարական գործընթացը կնպաստի առանց CO2 արտանետումների էլեկտրաէներգիայի ստացմանը: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Առաջարկվող միջոցառման իրականացմամբ նախատեսվում է ձևավորել նախադրյալներ և հնարավորինս խթանել կանաչ ջրածնի արտադրությունը Հայաստանի Հանրապետությունում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Կանաչ ջրածնի արտադրության խթանումը կնպաստի կայուն էներգետիկայի ապահովմանը, կանաչ տեխնոլոգիաների լայնամասշտաբ ներդրմանը և կիրառմանը:
	1.2 <u>Կանաչ տաքսոնոմիայի մշակում և հաստատում</u> **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի «2. Տնտեսություն» բաժնի 2.2. «Կայուն զարգացում և կանաչ տնտեսություն» ենթաբաժնով: Նախատեսվող փաստաթղթերի մշակման օրենսդրական հիմք՝ «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՆՀՕ–253-Ն ՀՀ օրենքով հաստատված հավելվածի 15-րդ կետ: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները** Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում բացակայում է կանաչ տաքսոնոմիայի շրջանակը, մինչդեռ կանաչ և կայուն տնտեսության զարգացման համատեքստում կարևորվում է կանաչ տաքսոնոմիայի մշակումը, ինչն առանցքային դեր ունի կանաչ տնտեսության անցման քաղաքականության կիրարկման, կանաչ ֆինանսների ընդլայնման տեսանկյունից: Հայաստանի Հանրապետությունում կանաչ տաքսոնոմիայի մշակման ու ընդունման նպատակը կանաչ տնտեսությանն առնչվող ոլորտների ու գործունեության տեսակների խմբավորումն է և ըստ ոլորտների՝ քաղաքականության ուղղությունների սահմանումը: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Առաջարկվող միջոցառման իրականացմամբ նախատեսվում է մշակել և ընդունել տնտեսական գործունեության տեսակների մասին մեկ ընդհանուր և միասնական դասակարգիչների համակարգ, ինչն էապես կնպաստի քաղաքականություն մշակողներին, ներդրողներին, գործարար շրջանակի ներկայացուցիչներին կանաչ և կայուն տնտեսության վերաբերյալ պրակտիկ դատողություններ և համապատասխան որոշումներ կայացնելու հարցում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Կանաչ տաքսոնոմիայի ընդունումը մեծապես կօժանդակի կանաչ փոխակերպման պլանավորմանը, կնպաստի «կանաչ» ներդրումների իրականացման միջավայրի ձևավորմանը, զարգացման գործընկերների հետ համագործակցության շրջանակի և կանաչ տնտեսության ֆինանսավորման ընդլայնմանը, ինչպես նաև ներդրողներին և ընկերություններին կայացնել տեղեկացված ներդրումային որոշումներ կայուն տնտեսական գործունեության ուղղություններում:
9	***ՀՀ էկոնոմիկայի նախարարության միջոցառումների «9. Գյուղատնտեսության զարգացում և արտադրողականության բարձրացում: ԳՀԱ՝ 1.4 տրլն դրամ, Անմշակ վարելահողերը < 120 հազար հա .» նպատակի իրագործումը կնպաստի «Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050» փաստաթղթի (առնվազն 2025թ. ցուցանիշների) հետևյալ թիրախների և թիրախային արդյունքների ապահովմանը՝*** ***1. 10-րդ գործողության 10.1–ից 10.3 թիրախների ցուցանիշներն ամբողջությամբ (էջ 49)*** ***2. 7-րդ գործողության 7.3 թիրախային արդյունք 7.3.2 ցուցանիշ (էջ 46)*** **<u>9.1 «ՀՀ գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարության իրականացում</u>** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է Ազգային Ժողովի 2021թ. օգոստոսի 26-ի Ն ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի դրույթներից («2.4 «Գյուղատնտեսությունը» ենթաբաժինն ամբողջությամբ), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի

դեկտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարությունը և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարության կատարմանն ուղղված 2020-2022 թվականների միջոցառումների ծրագիրը և ժամանակացույցը հաստատելու մասին» N 1886-Լ որոշման պահանջներից:

Միջոցառման հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարությամբ նախանշված թիրախային ցուցանիշների կատարման ապահովումն է, որի արդյունքում առաջիկա տասը տարիների ընթացքում ունենալ բարձրորակ և մրցունակ գյուղատնտեսական ապրանք արտադրող փոքր ու միջին տնտեսավարողներ, շրջակա միջավայրի հետ ներդաշնակ ապրող երջանիկ և բարեկեցիկ գյուղական բնակչություն:

Ներկայացված 9-րդ նպատակի բոլոր 9.1-ից 9-8 միջոցառումների մասով. ՀՀ վարչապետը նախընտրական քարոզարշավի ժամանակ հանրապետության տարբեր մարզեր ում անդրադարձել է գյուղատնտեսության զարգացման անհրաժեշտությանը (ինտենսիվ այգեգործություն, ջերմոցային տնտեսություններ, կաթիլային ոռոգում, գյուղատնտեսության անտոկոս վարկավորում և այլն):

1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Գյուղատնտեսությունը Հայաստանի Հանրապետության տնտեսության առանցքային ճյուղերից է: Այն ունի մի շարք մրցակցային առավելություններ, այդ թվում՝ երկրի պատմությունը, տնտեսական ինտեգրացիոն գործընթացներում ներգրավվածությունը, ինչը հնարավորություն է ընձեռում արտոնյալ պայմաններով մուտք գործել Եվրասիական տնտեսական միության մեծ շուկա: Որպես առավելություն՝ պետք է նշել նաև գյուղական և քաղաքային բնակավայրերի միջև փոքր հեռավորությունները, գյուղատնտեսական բարձրարժեք մշակաբույսերի վեգետացիայի երկար տևողությունը և վաղահաս բերքի աճեցման համար բարենպաստ ագրոկլիմայական գոտիները, հարուստ գյուղատնտեսական ժառանգությունը և ամենակարևորը՝ բարենպաստ էկոլոգիական պայմանները՝ բարձրորակ ջուրն ու բարձրադիր տարածքները, որոնք ապահովում են առավել համեղ գյուղատնտեսական արտադրանք:

Մյուս կողմից անմշակ հողատարածքների մակերեսը և փոքր հողակտորների տարածվածությունը դանդաղեցնում են գյուղատնտեսության զարգացումը և խոչընդոտում արտադրության ակտիվացմանը և ներդրումների ներգրավմանը: Հայաստանի աշխարհագրական դիրքի և. տարածաշրջանային աշխարհաքաղաքականության, սահմանափակ առևտրային ուղիների ու տրանսպորտային մեծ ծախսերի պատճառով գյուղացիական տնտեսությունները դժվարությամբ են մուտք գործում արտաքին շուկա: Գյուղական վայրերում կրթական մակարդակը ցածր է, ներգրավվածության և զբաղվածության հնարավորությունները՝ սահմանափակ: Ցածր է նաև կոլեկտիվ եղանակով մարտահրավերներին դիմակայելու և համագործակցելու մակարդակը:

Գյուղատնտեսության ոլորտում պետք է հաշվի առնել ներդրումների ցածր մակարդակը և տեխնիկական խոչընդոտները՝ մեքենայացման և ոռոգման արդիական համակարգերի ցածր մակարդակը, գյուղատնտեսական խորհրդատվության թերզարգացած համակարգը, որակյալ ենթակառուցվածքների՝ սառնարանային և պահեստային տնտեսությունների, տրանսպորտային միջոցների սահմանափակ հասանելիությունը, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարական չափանիշների կիրառման և մոնիթորինգի ցածր մակարդակը, ֆինանսների սահմանափակ հասանելիությունը և մարդկային ռեսուրսի պակասը:

Գյուղատնտեսության ոլորտի զարգացման առաջիկա տասը տարիների տեսլականն է ունենալ կայուն զարգացող, նորարարական, բարձր ավելացված արժեք ստեղծող, բնական պաշարների նկատմամբ հոգատար և շրջակա միջավայրի հետ ներդաշնակ, էկոլոգիապես մաքուր արտադրանք ստեղծող և գյուղում բնակվող մարդու բարեկեցությունը երաշխավորող գյուղատնտեսություն:

1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Գյուղատնտեսության ոլորտում և գյուղական բնակավայրերում առկա կարևորագույն խնդիրների լուծման նպատակով Կառավարությունը ձգտում է կիրառել ռեսուրսների արդյունավետ օգտագործման և գործընկերության համակարգված մոտեցում: Ռազմավարության ուշադրության կենտրոնում է գյուղատնտեսության ոլորտի արդյունավետության բարձրացումը, սննդամթերքի անվտանգության մակարդակի բարելավումը, ժամանակակից տեխնոլոգիաների ներդրումը, արտահանման ծավալների ավելացումը և արժեշղթաներում բոլոր դերակատարների, մասնավորապես՝ առևտրի վրա հիմնված փոքր գյուղացիական տնտեսությունների, արտադրող խմբերի, վերամշակողների և արտահանողների եկամուտների ավելացումը: Այս գերակայությունները հանդիսանում են գյուղատնտեսության ոլորտի ռազմավարական յոթ առաջնահերթություններ:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Ռազմավարության իրականացման արդյունքում ակնկալվում է հիմնական նախանշված թիրախային ցուցանիշների ապահովումը՝ գյուղատնտեսության համախառն արտադրանքը հասցնել շուրջ 1,4 տրլն ՀՀ դրամի, գյուղացիական տնտեսությունների թիվը կրճատել՝ մինչև 280 հազարի, տարեկան կտրվածքով 1 գյուղացիական տնտեսության ստեղծած արժեքը հասցնել շուրջ 4.5 մլն ՀՀ դրամի, մշակովի դարձնել վարելահողերի շուրջ 75 %-ը, կրկնապատկել ագրոպարենային արտադրանքի արտահանման ծավալը:

<u>9.2 Բուսաբուծության ճյուղի զարգացման խթանում</u>

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է Ազգային Ժողովի 2021 թվականի օգոստոսի 26-ի N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի դրույթներից («2.4 Գյուղատնտեսությունը» ենթաբաժին, 2-րդ պարբերության հետևյալ ենթակետեր 1, 2, 5, 6, 7, 8, 13):

Միջոցառման հիմնական նպատակներն են՝

- ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող խաղողի, ինտենսիվ պտղատու այգիների, հատապտղանոցների հիմնման, ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի մշակման, ինչպես նաև ոռոգման արդիական համակարգերի և կարկտապաշտպան ցանցերի ներդրման պետական աջակցությունը,
- Հայաստանի Հանրապետությունում տնկանյութի արտադրության, վերարտադրության, հավաստագրման, փոխադրումների, պահպանության, իրացման և օգտագործման հետ կապված հարաբերությունները կարգավորումը,
- բարձր ավելացված արժեք ապահովող մշակաբույսերի տարածքների ավելացումը,
- աշնանացան և գարնանացան մշակաբույսերի սերմերի մինչև 70 %-ով սուբսիդավորման կամ փոխհատուցման միջոցով՝ նպաստել ագրոտնտեսական բարձր ցուցանիշներով օժտված սերմերի հասանելիության ապահովմանը, բերքատվության բարձրացմանը, արդյունքում տեղական աշնանացան և գարնանացան մշակաբույսերի ծավալների և տնտեսավարող սուբյեկտների եկամուտների ավելացմանը,
- մշակաբույսերի նոր սորտերի արտոնագրման և օգտագործման գործընթացի կանոնակարգումը, սելեկցիոն նվաճումների իրավական պաշտպանության ապահովումը, հանրապետության բնակլիմայական տարբեր գոտիներում մշակության երաշխավորվող բույսերի սորտային կազմի ընդլայնումը, ցանքատարածությունների բուսասանիտարական վիճակի վատթարացման, հիվանդությունների, վնասատուների և մոլախոտերի զանգվածային բազմացման կանխարգելումը,
- հանրապետությունում առաջնային կարևոր նշանակության կարտոֆիլի առողջ վիրուսազերծ տնկանյութի արտադրության կազմակերպումը,
- փոքր և միջին ջերմատների կառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության միջոցով ջերմատնային տնտեսությունների մակերեսների ու արտադրության ծավալների ավելացումը, արտադրված արտադրանքի մրցունակության մակարդակի բարձրացումը,
- գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման միջոցով ապահովագրական համակարգի աստիճանական ներդրման նախադրյալների ստեղծման միջոցով՝ համակարգի ամբողջական ներդրման հիմնական մոտեցումների և մեխանիզմների հստակեցումը,
- գյուղատնտեսությունում տնտեսավարողներին մատչելի պայմաններով, մասնավորապես լիզինգային մեխանիզմների կիրառմամբ գյուղատնտեսական տեխնիկայի մատակարարման արդյունքում՝ գյուղատնտեսական հողատեսքերի արդյունավետ օգտագործման և ապրանքային արտադրության կազմակերպման համար նպաստավոր պայմանների ստեղծումը:

Նախատեսվող փաստաթղթերի մշակման օրենսդրական հիմք՝ «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՕ–253-Ն ՀՀ օրենքով հաստատված հավելվածի 15-րդ կետ:

ՀՀ վարչապետի 2019թ. հունիսի 1-ի N 658-Լ որոշմամբ հաստատված ՀՀ էկոնոմիկայի նախարարության կանոնադրության 10-րդ կետի 12-րդ, 15-րդ, 16-րդ ենթակետեր և 11-րդ կետի 40-րդ ենթակետ:

1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Միջոցառման իրականացումը պայմանավորված է հանրապետությունում այգիների տարածքների և արտադրվող արտադրանքի, ոչ ավանդական բարձրարժեք գյուղատնտեսական արտադրանքի ծավալների ավելացման, արտադրված արտադրանքի որակի և արտաքին շուկայում մրցակցային դիրքերի բարելավման, ճյուղի ինտենսիվացման, հողային և ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման, բնակլիմայական աղետների հետևանքով առաջացող վնասների կանխարգելման անհրաժեշտությամբ:

Հայաստանի Հանրապետությունում բուսաբուծությամբ զբաղվող գյուղացիական տնտեսությունների մեծ մասն իրենց փոքր չափերի ու արտադրանքի իրացման դժվարությունների հետևանքով վերածվել են բնամթերային տնտեսությունների, որտեղ անհնարին է կազմակերպել արդյունավետ ապրանքային արտադրություն: Արդյունքում արտադրանքի ինքնարժեքը ստացվում է բարձր և անմրցունակ:

Չնայած վերջին տարիներին ավելացել են ինտենսիվ նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ պտղատու և հատապտղատու այգիների տարածությունները, այնուամենայնիվ դեռևս անհրաժեշտություն կա խթանելու ինտենսիվ այգիների հիմնումը:

Տնկանյութի հավաստագրման մասին օրենսդրության բացակայությամբ պայմանավորված Հայաստանի Հանրապետությունում արտադրված տնկանյութը երբևէ չի հավաստագրվել: 1990-ական թվականներից սկսած հանրապետությունում բացակայում են գիտականորեն հիմնավորված (օրինակելի) տնկարանային տնտեսությունները և չի արտադրվում բարձրորակ ու արժանահավատ տնկանյութ:

	Հանրապետության գյուղատնտեսության արդյունավետ զարգացման նպատակով կարևորվում է տեղական սերմնաբուծությունից և սերմարտադրությունից բացի ունենալ նաև տեղական տնկարանային արտադրություն, որը կարող է երաշխավորել ոչ միայն պտղահատապտղային այգիների տարածքների ավելացումը, այլ նաև հնարավորություն կընձեռի տնկանյութի արտահանման համար: Վերջին տարիների ընթացքում նվազել են աշնանացան և գարնանացան ցորենի հիմնական արտադրատնտեսական ցուցանիշները: Կորոնավիրուսի տարածման հետևանքով, ինչպես նաև ռազմական դրության արդյունքում ստեղծված իրավիճակի պայմաններում առաջանում են ցորենի ներմուծման դժվարություններ, սահմանամերձ տարածքներում օգտագործվող արոտավայրերի կորստի պատճառով առկա է անասնակերի ապահովման խնդիրը: Ներկայումս բույսերի նոր սորտերի և հիբրիդների սորտափորձարկումների, դրանց արտոնագրման ու տնտեսական օգտակարության թույլտվության ձևակերպումների արդյունքում ՀՀ բնատնտեսական բոլոր գոտիների համար ընտրվում և շրջանառության մեջ են դրվում համապատասխան մշակաբույսերի տվյալ պայմաններին առավել հարմարված, բարձր բերքատու, որակական առավել մեծ արժեք ունեցող սորտեր և հիբրիդներ: Կարտոֆիլը մշակվող գլխավոր գյուղատնտեսական մշակաբույսերից է և դրա ամենամեծ ցանքատարածությունները գտնվում են Գեղարքունիքի, Շիրակի և Լոռու մարզերում: Սակայն, ներկայումս ֆինանսական միջոցների բացակայությունը հնարավորություն չի տալիս կենսատեխնոլոգիայի՝ մասնավորապես հյուսվածքային կուլտուրայի եղանակով կազմակերպել կարտոֆիլի սերմնաբուծության ամբողջ գործընթացը: Ուստի, այս բնագավառում 2000 քմ մակերեսով ջերմատան առկայությունը թույլ կտար սկսել բուսակներից մինի պալարների արտադրությունը՝ շարունակելով տնկանյութի հետագա արտադրական շղթան: Ժամանակակից պայմաններում ջերմատնային տնտեսություններն ունենալով մեծ արդյունավետություն պահանջում են ֆինանսական ներդրումներ, զարգացած ենթակառուցվածքների առկայություն, ժամանակակից տեխնոլոգիաների կիրառում, ոլորտային գիտելիքներ: Փոքր և միջին ջերմատնային տնտեսությունների ներդրման պետական աջակցության ծրագրի իրականացմամբ կլուծվի մի շարք խնդիրներ, այդ թվում կառաջադրվեն փոքր և միջին ջերմատնային տնտեսությունների ժամանակակից տեխնոլոգիական լուծումներով չափորոշիչներ և մատչելի տարբերակներ, կկիրառվի ջերմոցների կառուցման հետ կապված ծախսերի փոխհատուցման մեխանիզմը: Գյուղատնտեսության ոլորտում տարվող պետական քաղաքականության մեջ կարևոր դեր է հատկացվել ապահովագրական համակարգի աստիճանական ներդրմանը: Ոլորտի առանձնահատկություններից ելնելով՝ ապահովագրական համակարգի ներդրման համար լուծում են պահանջում մի շարք խնդրիներ, որոնք վերաբերում են գյուղատնտեսությունում ռիսկերի գնահատմանը, վերաապահովագրության ներդրմանը, համապատասխան ենթակառուցվածքների ձևավորմանը, ապահովագրական շուկայի կարգավորմանը, պարտադիր-կամավոր ապահովագրության զուգորդմանը, պետություն-մասնավոր հատված համագործակցությանը և այդ բնագավառում պետական աջակցության ուղղությունների, չափերի, մեթոդների և մեխանիզմների հստակեցմանը: Ներկայումս գյուղատնտեսության ոլորտում առկա գյուղատնտեսական տեխնիկան բնութագրվում է ցածր արդյունավետությամբ, ծախսատարությամբ՝ կապված վերջիներիս բարձր մաշվածության, սարքինության ցածր մակարդակի և պարտադրված պարբերական վերանորոգման հավելյալ ծախսերի հետ: Տնտեսավարող սուբյեկտների մի մասը փորձում են թարմացնել գյուղատնտեսական տեխնիկայի հավաքակազմը, սակայն ֆինանսական սուղ հնարավորությունների, ներմուծվող մեքենայացման միջոցների բարձր գների պատճառով դիմում են ֆինանսական կառույցների օգնությանը՝ լիզինգով գյուղատնտեսական տեխնիկա ձեռք բերելու համար: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** ***ՀՀ-ում ինտենսիվ այգեգործության զարգացման արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության ծրագրով*** նախատեսվում է վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման և ծախսերի մասնակի փոխհատուցման միջոցով խթանել խաղողի, ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնումը, ոռոգման արդիական համակարգերի և (կամ) ջրավազանների կառուցումը, կարկտապաշտպան ցանցերի ներդրումը, ինչպես նաև ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի մշակումը: **Տնկանյութի հավաստագրման համակարգի ներդրման** նպատակով կմշակվի տնկանյութի հավաստագրման վերաբերյալ օրենսդրությունը, որի հիման վրա կիրականացվի հավաստագրման գործընթացը: 2021 թվականի հունիսի 3-ի «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքներով սահմանվեցին հանրապետությունում արտադրական կանեփի արտադրության, օրինական շրջանառության, ներմուծման, արտահանման և մեծածախ առևտրի, դրանց լիցենզավորման առանձնահատկությունները և քվոտավորման պահանջները, ինչպես նաև պետական տուրքի չափերը: Տեղական մշակաբույսերի արտադրության ծավալների ավելացման նպատակով նախատեսվում է

	ՀՀ-ում աշնանացան և գարնանացան մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության ծրագրի իրականացում, մասնավորապես՝ աշնանացան և գարնանացան մշակաբույսերի սերմերի գնի մասնակի սուբսիդավորմամբ կամ փոխհատուցմամբ, խթանել աշնանացան և գարնանացան մշակաբույսերի արտադրության կազմակերպումը: **Սերմերի որակի ստուգման ու պետական սորտափորձարկման միջոցառումների** ընթացքում նախատեսվում է՝ սելեկցիոն նվաճումների հայտերի փորձաքննություններ, գրանցամատյանի վարում, օրիգինատորի հաշվառում, բույսերի սորտերի նկարագրությունների և բնութագրերի կազմում՝ տարեկան 15 հատ, բույսերի սերմերի որակի լաբորատոր հետազոտություններ և փաստաթղթավորում՝ տարեկան շուրջ 12.0 հազ. տոննա, բույսերի նոր սորտերի տեղեկագրի և գրանցամատյանի հրապարակում՝ 4800 էջ, բույսերի նոր սորտերի ստուգիչ ցանքերի իրականացում և դաշտային փորձարկումներ՝ տարեկան 115 հատ: **ՀՀ-ում կարտոֆիլի վիրուսազերծ տնկանյութի արտադրություն** կազմակերպելու նպատակով կիզորացվեն Հայաստանի ազգային ագրարային համալսարանի «Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոն» մասնաճյուղի արտադրական հնարավորությունները՝ 2000 քմ մակերեսով ջերմատան կառուցմանն օժանդակելու միջոցով: **Փոքր ու միջին ջերմատնային տնտեսությունների ներդրման պետական աջակցության ծրագրի** իրականացման շրջանակներում առաջարկվում է ջերմատների կառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման 3 մոդել: Յուրաքանչյուր մոդելի կիրառման դեպքում տրամադրվում է ծախսերի փոխհատուցում (30-50%): Ջերմատների կառուցումը կարող է իրականացվել ինչպես լիցենզիա ունեցող կապալառուի միջոցով, այնպես էլ առանց կապալառուի: **Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցության ծրագրի իրականացման համար** դեռևս 2018 թվականին միջազգային խորհրդատվական կազմակերպությունն իրականացրել է ապահովագրության պիլոտային ծրագրի ներդրման նախապատրաստական աշխատանքներ: ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 24-ի N 1485-Լ որոշմամբ ընդունված վերոնշյալ ծրագրի շրջանակում ներկայումս հանրապետության բոլոր մարզերում գարնանային ցրտահարություն, կարկտահարություն և հրդեհ ռիսկերից ապահովագրվում են ծիրան, դեղձ, խաղող, խնձոր, սալոր, ձմերուկ, սեխ, կարտոֆիլ հացահատիկ (աշնանացան/գարնանացան ցորեն և գարի, վարսակ) մշակաբույսերը: Ծրագրի շրջանակներում իրականացվում է ապահովագրավճարի առնվազն 50-60 %-ի սուբսիդավորում: **Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրի** իրականացման շրջանակներում նախատեսվում է գյուղատնտեսությունում տնտեսավարողների համար առաջարկել գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերման հնարավորինս մատչելի և արդյունավետ մոտեցումներ: Ծրագրով գյուղատնտեսական տեխնիկան տնտեսավարողներին կտրամադրվի լիզինգի պայմանագրով՝ 20% կանխավճարով, 3-10 տարի մարման ժամկետով: Միևնույն լիզինգառուի կողմից ձեռք բերվող լիզինգի առարկաների ընդհանուր գումարը չպետք է գերազանցի 200 մլն ՀՀ դրամը: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման իրականացումից ակնկալվում են ինչպես քանակական, այնպես էլ որակական արդյունքներ (պրոգրեսիվ աճի ապահովում): Մասնավորապես՝ – ոռոգման արդիական համակարգերով և (կամ) կարկտապաշտպան ցանցերով, ժամանակակից ու մրցունակ տնկանյութերի տեսակներով հագեցած այգիների տարածքների, ժամանակակից ոռոգման համակարգեր ունեցող և ջրավազաններով ապահովված հողատարածությունների, ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի տարածքների ավելացում, արտադրանքի ինքնարժեքի իջեցում՝ արտադրության արդյունավետության բարձրացման հաշվին, ցածր բերքատու ավանդական այգիների փոխարեն բարձր բերքատու այգիների հիմնում, այգեգործության ոլորտի ներդրումային գրավչության բարձրացում, ծրագրի մասնակից տնտեսավարողների եկամուտների ավելացում, ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործում, կարկտահարության ռիսկի նվազեցում, – յուրաքանչյուր տարի 1000 հա ինտենսիվ այգիների հիմնում, – Հայաստանի Հանրապետությունում կկանոնակարգվի տնկարանային արտադրությունը և կարտադրվի հավաստագրված տնկանյութ, որը կնպաստի պտղահատապտղային այգիների ծավալների ավելացմանը և արտադրության արդյունավետության բարձրացմանը, – ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի տարածքների ավելացում, – արտադրական կանեփի արտադրության արդյունքում Հայաստանի Հանրապետությունում կընդլայնվի բարձրարժեք մշակաբույսերի տեսականին, գյուղատնտեսության մեջ զբաղվածությունը կավելանա, վերամշակող արտադրության մեջ կներդրվեն նոր ուղղություններ, կգրանցվի արտահանման ծավալների աճ, – հանրապետությունում աշնանացան և գարնանացան մշակաբույսերի բերքատվության մակարդակի բարձրացում,

– հատիկաընդեղեն և կերային մշակաբույսերի ցանքատարածությունների ավելացում,
– անասնակերի ապահովման խնդրի մեղմում,
– ցանքաշրջանառության իրականացման արդյունքում՝ հողի բերրիության բարձրացում,
– գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների բուսասանիտարական վիճակի 5–10 %-ով բարելավում՝ լաբորատոր հետազոտություն անցած բարձրորակ սերմերի օգտագործման արդյունքում,
– մշակաբույսերի բերքատվության բարձրացում լավագույն սորտերի արտոնագրման, գրանցման և օգտագործման թույլտվության հատկացումների արդյունքում՝ 5-10 %,
– 2000 քմ մակերեսով ջերմատան առկայության դեպքում հնարավոր կլինի 2արտադրել առողջ վիրուսազերց տնկանյութ և 2025 թվականից սկսած յուրաքանչյուր տարի հանրապետությունում ստանալ 30 000 տոննա Ա դասի տնկանյութ, որը կնպաստի կարտոֆիլի բերքատվության բարձրացմանը շուրջ 40-50%-ով,
– արդիական տեխնոլոգիաներով կկառուցվեն արդիական չափորոշիչներով ջերմատնային տնտեսություններ, որի արդյունքում կավելանան ջերմատնային արտադրանքի ծավալները, ջերմատնային տնտեսությունների տարածքների ընդլայնում՝ վարկային լիզինգային և փոխհատուցման գործիքներով տարեկան մինչև 10 հա,
– առաջիկա 5 տարիներին կներդրվի գյուղատնտեսական մշակաբույսերի ամբողջական ապահովագրությունը,

– նախադրյալներ կստեղծվեն մատչելի մեխանիզմների կիրառմամբ գյուղատնտեսությունում տնտեսավարողների վճարունակ պահանջարկի բավարարման՝ գյուղատնտեսական տեխնիկայի հավաքակազմի որոշակի նորացման համար՝ տարեկան շուրջ 500 միավորով, որոշակիորեն կբարձրանա գյուղատնտեսությունում մեքենայացման մակարդակը:
–

<u>9.3 Անասնաբուծության ճյուղի զարգացման խթանում</u>

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է Ազգային Ժողովի 2021 թվականի օգոստոսի 26-ի N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի դրույթներից («2.4 Գյուղատնտեսությունը» ենթաբաժին, 2-րդ պարբերության 9–րդ և 10–րդ ենթակետեր):

Միջոցառման հիմնական նպատակներն են՝

– փոքր և միջին անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության միջոցով բարելավել կենդանիների պահվածքի պայմանները՝ արդյունքում բարձրացնելով կենդանիների մթերատվության ցուցանիշները,
– առկա գլխաքանակի, դրանց սեռի, ցեղի և գտնվելու վայրի, տեղաշարժի մասին հավաստի տեղեկությունների ստացումն ու անասնաբուծական արտադրանքի ծավալների կանխատեսումը, վաճառվող մսի և մսամթերքի նկատմամբ սպառողների վստահության բարձրացումը, պետական պատվերի շրջանակներում հակահամաճարակային միջոցառումների լիարժեք իրականացումը և հիվանդությունների կանխարգելմանն ու անասնաբուժական վերահսկմանը նպաստելը, անասնաբուծական մթերքի որակի փորձաքննությունը և երկրի ներսում կենդանիների տեղաշարժի վերահսկումը, ինչպես նաև միջազգային ստանդարտներով սահմանված պահանջների ապահովմամբ՝ միջազգային շուկա մուտք գործելը,
  – ՀՀ-ում տավարաբուծությամբ զբաղվող տնտեսավարողներին մատչելի պայմաններով, մասնավորապես՝ վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման միջոցով տոհմային խոշոր եղջերավոր կենդանինդերի մատակարարումն է, ինչը հնարավորություն կընձեռի անհայտ ծագումնաբանությամբ, վերարտադրության համար ոչ պիտանի, ցածր մթերատու կենդանիների փոխարեն նախիրները համալրել արտադրատնտեսական արժեքավոր հատկանիշներով օժտված տոհմային ԽԵԿ-ով, զարգացնել տոհմային գործը, միջցեղային տրամախաչումների միջոցով բարելավել տեղական կենդանիների մթերատվությունը, ավելացնել կաթի և մսի արտադրության ծավալները, նվազեցնել արտադրվող կաթի և մսի ինքնարժեքը՝ ներկրվող համանման արտադրանքի նկատմամբ այն դարձնելով առավել մրցունակ,
  – պետական աջակցության մեխանիզմների, մասնավորապես՝ մատչելի վարկավորման պայմանների կիրառման և ծախսերի փոխհատուցման միջոցով՝ հանրապետությունում ոչխարաբուծության և այծաբուծության ճյուղերի զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումն է և բարձրարժեք տոհմային ոչխարների և այծերի ձեռք բերման (ներկրման) և բարձր մթերատու հոտերի ձևավորման խրախուսումը, ինչը հնարավորություն կընձեռի կատարելագործել բուծվող ցեղերը, զարգացնել տոհմային գործը, ավելացնել արտադրատնտեսական արժեքավոր հատկանիշներով օժտված մաքրացեղ և տրամախաչումների միջոցով ստացված խառնացեղ կենդանիների գլխաքանակը, ինչպես նաև կայունացնել արտաքին շուկայում մրցակցային դիրքը, ավելացնել կենդանի ոչխարի և ոչխարամսի ու այծի պանրի արտահանման ծավալները:

1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Կենդանիների պահվածքի և խնամքի ոչ ճիշտ կազմակերպումը, նորմավորված կերակրման բացակայությունը, ինչպես նաև սանիտարահիգիենիկ անբավարար պայմաններն այսօր ստեղծել են մի իրավիճակ, որի պայմաններում հնարավոր չէ ապահովել կաթի պահանջարկը տեղական արտադրության հաշվին: Այսինքն, ցածր արտադրողականության գլխավոր պատճառը, հիմնականում, արտադրության հանդեպ էքստենսիվ մոտեցումն է, ինչպես նաև ժամանակակից տեխնոլոգիաների, կառավարման, տեղեկատվության և գիտելիքների պակասը: Եվ, նույնիսկ, ինտենսիվ ֆերմաների համար այսօր կենդանիների պահվածքի հետ կապված վերը նշված խնդիրների լուծումը մնում է առաջնահերթ հարց: Հանրապետության տավարաբուծական արտադրանքի արժեշղթայի բոլոր փուլերում առկա խնդիրները խոչընդոտում են ճյուղի զարգացմանը:

Հայաստանի Հանրապետությունում մինչև այժմ կենդանիների համատարած հաշվառում տեղի չի ունեցել, որը խնդիր է ստեղծում անասնաբուծության բնագավառում կենդանիների գլխաքանակի և սեռատարիքային կազմի վերաբերյալ հստակ տեղեկատվություն ստանալու համար:

Անասնագլխաքանակի մասնատման, ինչպես նաև նախիրներում տոհմային կենդանիների գլխաքանակի կրճատման արդյունքում լուրջ խոչընդոտներ են առաջացել լայնածավալ տոհմասելեկցիոն աշխատանքների իրականացման գործում: Դրա հետևանքով կովերի միջին կաթնատվությունը տարիներ շարունակ տատանվում է 2000 կգ-ի սահմաններում: Մինչդեռ տավարաբուծության վարման ժամանակակից տեխնոլոգիաները և բարձր մթերատու ցեղերի գենոֆոնդի օգտագործումը հնարավորություն են ընձեռում կովերից ստանալ տարեկան առնվազն 4000 կգ կաթ, իսկ մսի համար բտված տավարն իրացնել 450 կգ և բարձր կենդանի զանգվածով:

Հայաստանի Հանրապետությունում ոչխարների գլխաքանակի նվազումը հանգեցրել է նաև արոտավայրերի օգտագործման արդյունավետության նվազմանը: Հանրապետությունում մեկ ոչխարի տարեկան միջին բրդատվությունը տատանվում է 2.2 կգ-ի սահմաններում, իսկ բուծվող տեղական ցեղերի այծերի կենդանի զանգվածը կազմում է 35-36 կգ, կաթնատվության տևողությունը՝ 6-8 ամիս, մեկ այծի միջին կաթնատվությունը տատանվում է 160 կգ-ի սահմաններում, մինչդեռ անասնաբուծության վարման ժամանակակից տեխնոլոգիաները և բարձր մթերատու ցեղերի գենոֆոնդի օգտագործումը հնարավորություն են ընձեռում 2019-2027 թվականներին արտադրել շուրջ 3.5 մլրդ դրամ արժեքով միս և 0.5 մլրդ դրամ արժեքով կաթ:

1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Անասնապահական տնտեսությունների արդիականացման համար, այդ թվում՝ պահվածքի պայմանների բարելավման, կաթնատվության մակարդակի բարձրացման, տնտեսավարող սուբյեկտների եկամուտների ավելացման և ճյուղի շահութաբերության մակարդակի բարձրացման նպատակով անհրաժեշտություն է առաջանում պետական աջակցությամբ իրականացնել **Փոքր և միջին «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության ծրագիրը:** Ծրագիրը մեկնարկել է 2019 թվականից: 2021 թվականի 1-ին կիսամյակի դրությամբ տրամադրվել է 43 շահառուի փոխհատուցում, արդյունքում շահագործման է հանձնվել 24 անասնաշենք:

Գյուղատնտեսական կենդանիների համարակալման և հաշվառման համակարգի ներդրման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ քայլերը՝

- ստեղծել աշխատանքային խումբ,
- մշակել գյուղատնտեսական կենդանիների համարակալման և հաշվառման իրականացման ծրագիր և ծրագրի իրականացմանն ուղղված միջոցառումներ,
- ներդնել գյուղատնտեսական կենդանիների համարակալման և հաշվառման համակարգը:

Հայաստանի Հանրապետությունում 2019-2024թթ. տավարաբուծության զարգացման ծրագիրը նախատեսում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներով իրականացնել տոհմային խոշոր եղջերավոր կենդանիների ձեռք բերման պետական աջակցություն, ինչը հնարավորություն կընձեռի բարձրացնել նախիրների տոհմային արժեքը և տավարաբուծությունում վերականգնել տոհմային գործընթացը:

Հայաստանի Հանրապետությունում 2019-2023թթ. ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման պետական աջակցության ծրագրի միջոցով համալիր միջոցառումներ իրականացնելով՝ կխթանվի հանրապետությունում տոհմային կենդանիների ձեռք բերումը, կձևավորվեն ենթակառուցվածքները, կներդրվի համայնքների վարչական տարածքներում ընկած արոտավայրերի կառավարման համակարգը, արդյունավետ կկազմակերպվեն անասնաբուժական ծառայությունները և տոհմասելեկցիոն աշխատանքները:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքներն են՝

- խելացի անասնաշենքերի կառուցում՝ տարեկան շուրջ 25 միավոր,
- հանրապետությունում փոքր և միջին տավարաբուծական տնտեսությունների զարգացում,
- տավարաբուծության վարման արդիական տեխնոլոգիաների ներդրում, ճյուղի ինտենսիվացում,
- կենդանիների պահվածքի համար բարենպաստ պայմանների ստեղծում (զոոհիգիենիկ պայմանների ապահովում, գենետիկ ներուժի արդյունավետ օգտագործում),
- մեկ գլուխ կովի հաշվով կաթնատվության մակարդակի բարձրացում, անասնագլխաքանակի ավելացում,
- խոշոր եղջերավոր կենդանիների համարակալման, հաշվառման և գրանցման համակարգի ներդրում,

- վաճառվող մսի և մսամթերքի նկատմամբ սպառողների վստահության բարձրացում,
- անասնաբուծական մթերքի որակի փորձաքննությանը և երկրի ներսում կենդանիների տեղաշարժի վերահսկում,
- գենետիկական բարձր ներուժով օժտված խոշոր եղջերավոր տոհմային կենդանիների ձեռք բերման ակտիվացում,
- հանրապետությունում տավարաբուծության ճյուղի աստիճանական ինտենսիվացում,
- տոհմային կենդանիների տեսակարար կշռի ավելացում տարեկան 10-15 %-ով,
- կաթի ու մսի արտադրության ծավալների ավելացմանը,
- գենետիկական բարձր ներուժով տարբեր սեռահասակային խմբերի մանր եղջերավոր կենդանիների ձեռք բերում,
- հանրապետությունում ոչխարաբուծության և այծաբուծության ճյուղերի աստիճանական ինտենսիվացում,
- հանրապետության արոտների և խոտհարքների առավել արդյունավետ օգտագործման համար հնարավորությունների ստեղծում,
- տնտեսավարող սուբյեկտների եկամուտների ավելացում, մրցունակության մակարդակի բարձրացում,
- տնտեսավարող սուբյեկտների մասնագիտական կարողությունների բարձրացում:
-

<u>9.4 Ագրոպարենային արտադրանքի իրացման և արտահանման խթանում</u>

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է Ազգային Ժողովի 2021 թվականի օգոստոսի 26-ի N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի դրույթներից («2.4 Գյուղատնտեսությունը» ենթաբաժին, 2-րդ պարբերության ենթակետեր՝ 11, 12, 14, 19):

Միջոցառման հիմնական նպատակներն են՝

- գյուղատնտեսական մթերքներ վերամշակող արդյունաբերության ոլորտում գործող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին տրամադրվող նպատակային վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման միջոցով վարկավորման մատչելիության մակարդակի բարձրացումը,
- գյուղատնտեսական մթերքների մեծածախ շուկաների և լոգիստիկ կենտրոնների ստեղծումը, որը հնարավորություն կընձեռնի կարգավորել գյուղատնտեսական մթերքների իրացման հիմնախնդիրները,
- թիրախային շուկաներում, մասնավորապես՝ Եվրամիության անդամ երկրներում, հայկական գինիների առաջմղումը և իրացմանը ծավալների ավելացումը,
- ագրոպարենային ոլորտի տնտեսավարողներին մատչելի պայմաններով, մասնավորապես՝ ֆինանսական վարձակալության մեխանիզմների կիրառմամբ սարքավորումների մատակարարումը,
- խաղողի տնկարկների ռեեստրի ստեղծումը, խաղողի հայկական սորտերի գենոֆոնդի պահպանությունը և բազմացումը, խաղողի ֆիլոքսերադիմացկուն տնկանյութերի փորձարարական արտադրությունը,
- «Հայաստանի գինիներ» հովանոցային ապրանքանիշի ստեղծումը և սերտիֆիկացման համակարգի ներդրումը,
- միջազգային շուկաներում հայկական գինիների ճանաչելիության բարձրացումը,
- գինեգործական ընկերությունների մոտ առկա կոնյակի սպիրտի մնացորդների իրացման հարցում աջակցություն ցուցաբերելու անհրաժեշտությունը,
- աշխարհին Հայաստանը որպես գինեգործության երկիր ներկայացնելը, ինչպես նաև գյուղական բնակավայրերում ոչ գյուղատնտեսական գործունեությունը խթանելը,
- արտադրողների խմբերի (ասոցիացիաների) ստեղծման աջակցելը,
- աշխարհագրական նշումներով, ծագման տեղանուններով և երաշխավորված ավանդական արտադրանքի համապատասխանության նկատմամբ պետական վերահսկողության և տեխնիկական հատկորոշումների պահպանման նկատմամբ հսկողություն իրականացնող մարմինների և դրանց գործունեության շրջանակնի հստակեցումը,
- վարչական պատասխանատվության միջոցների սահմանումը՝ տեխնիկական հատկորոշումներին չհամապատասխանող աշխարհագրական նշումով, ծագման տեղանունով և երաշխավորված ավանդական արտադրանքի արտադրության կամ իրացման դեպքերում:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Գյուղատնտեսական մթերքներ վերամշակող արդյունաբերությունը հանդիսանում է գյուղատնտեսական մթերքների երաշխավորված իրացման և վերարտադրության ապահովման կարևորագույն ոլորտներից մեկը և տնտեսության այդ ոլորտի զարգացման մակարդակը մեծապես պայմանավորում է գյուղատնտեսության զարգացումը: Գյուղատնտեսական մթերքներ վերամշակող արդյունաբերության ձեռնարկությունները շրջանառու միջոցների համալրման կարիքները սեփական ազատ միջոցների սղության կամ բացակայության պատճառով մշտապես

	ապահովում են վարկային միջոցների հաշվին, որոնք սովորաբար լինում են միջնաժամկետ (3-5 տարի), երբեմն՝ երկարաժամկետ, դրամով և արտարժույթով, որոնց տոկոսադրույքները և պայմանները ձեռնտու չեն տնտեսավարողների համար: Գյուղացիական տնտեսությունները գյուղատնտեսական մթերքները հիմնականում իրացնում են գյուղատնտեսական մթերքների շուկաներում և առևտրի այլ ցանցերում միջնորդավորված անձանց միջոցով, առանց պատշաճ տեսակավորման և փաթեթավորման: Այս դեպքում գյուղացիական տնտեսությունների եկամուտները ցածր են և միջնորդները հաճախ ունենում են գյուղացիական տնտեսություններից ավելի մեծ շահույթներ, չվճարելով որևէ հարկ՝ պատճառ հանդիսանալով իրացման գների անհարկի թանկացումներին, որը հանգեցնում է գյուղացիական տնտեսությունների արդարացի դժգոհություններին և սպառողների ներկայումս ձևավորված գնողունակության մակարդակի պայմաններում դժվարանում է արտադրված բերքի իրացումը: Միաժամանակ արտադրողը չի կարողանում պլանավորել արտադրանքի տեսականին ու ծավալները: Արդյունքում ամբողջությամբ չի օգտագործվում ոչ միայն ներքին սպառման ներուժը, այլև բացակայում են հայկական գյուղմթերքի շուկա արտասահմանյան գնորդների մուտքն ապահովող մեխանիզմները: Հանրապետության ագրոպարենային ոլորտում իրականացված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ագրոպարենային ոլորտի տնտեսավարողներն օգտագործում են 5-ից մինչև 70% մաշվածության տարբեր տեխնոլոգիական սարքավորումներ, իսկ առանձին կազմակերպություններում դրանք դեռևս Խորհրդային Միության արտադրության են՝ բարոյապես և ֆիզիկապես մաշված: Տնտեսավարողների կողմից վերջին տարիների ընթացքում սարքավորումներ են ձեռք բերվել ինչպես սեփական և վարկային միջոցների հաշվին, այնպես էլ լիզինգով, սակայն դրանց ծավալները փոքր են: Սարքավորումների ձեռքբերման նպատակով վարկային միջոցները տրամադրվում են բարձր, ոչ նախընտրելի տոկոսադրույքներով և պայմաններով, կանխավճարի տոկոսներով, որը շահավետ չէ տնտեսավարողների համար: Տնտեսավարողներն ունեն ֆինանսական սուղ հնարավորություններ, կուտակված վարկային բեռ, չունեն գրավի ազատ առարկա: Հայաստանը համարվում է խաղողագործական և գինեգործական հնագույն օջախներից մեկը: Չնայած Հայաստանում խաղողագործության և գինեգործության հազարամյակների պատմությանը, ներկայումս մեր հանրապետությունում խաղողը հիմնականում ստացվում է Խորհրդային միությունից ժառանգած այգիներից: Դրանք հիմնականում ոչ մաքրասորտ են, տնկվել են առանց հաշվի առնելու տարածքների մասնագիտացումը, սորտերի հասունացման ժամկետները, պտուղների գույնը, բերքի սպառողական և տեխնիկական արժեքները և այլն: Ներկայումս դեռևս ամբողջովին լուծված չեն ինչպես որակյալ գինիների արտադրության ցանկալի մակարդակի ապահովումը, այնպես էլ բարձրորակ հումքի արտադրության և մատակարարման խնդիրները: Խնդիրներ կան նաև որակյալ մասնագետների ներգրավվածության հարցում: Ֆերմերային տնտեսությունները մեծամասամբ լինելով ինքնուսույց կամ կիառելով հին՝ արդի պահանջներին չհամապատասխանող մշակության մոտեցումներ ունեն արդյունավետության ցածր մակարդակ: Կորոնավիրուսի համաճարակով պայմանավորված կտրուկ նվազել են գինեգործական արտադրանքի իրացման, այդ թվում՝ արտահանման ծավալները: 2020 թվականի ընթացքում նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ կոնյակի սպիրտների արտահանման ծավալները նվազել են շուրջ 50%-ով կամ 7.5 մլն լիտրով: Մյուս կողմից, 2020 թվականին մթերվել է շուրջ 235 հազար տոննա խաղող, որից, ըստ գնահատականների, շուրջ 215 հազար տոննան ուղղվելու է կոնյակի սպիրտի արտադրությանը (միջին հաշվով կարտադրվի շուրջ 19.0 մլն լիտր կոնյակի սպիրտ): Հաշվի առնելով, որ կորոնավիրուսի համաճարակը շարունակվում է և դրանով պայմանավորված կոնյակի սպիրտի և կոնյակի արտադրությամբ զբաղվող տնտեսավարողների մոտ գոյացել են արտադրանքի զգալի մնացորդներ, որոնց ավելացել է նաև ընթացիկ տարվա խաղողի վերամշակումից ստացված արտադրանքը, անհրաժեշտություն է առաջացել աջակցել ոլորտի տնտեսավարողներին կոնյակի սպիրտների իրացման հարցում, որպեսզի գործարանները կարողանան իրացնել կոնյակի սպիրտի մնացորդները և մինչև 2022 թվականի խաղողի մթերումների սկսելը ունենան արտադրանքի պահման ազատ տարողություններ: Վերջին տարիներին նկատվում է հայկական գինիների, ինչպես իրացման ծավալների, այնպես էլ իրացման աշխարհագրության աճ, սակայն դրանց ծավալները փոքր են և անհրաժեշտ է միջոցառումներ իրականացնել դրանք ավելացնելու ուղղությամբ: Թիրախային շուկաներում հայկական գինիների իրացման ծավալների ավելացման խոչընդոտներից է առանձին տնտեսավարողների կողմից փոքր խմբաքանակներով մատակարարումների կազմակերպումը, մյուս կողմից կորոնավիրուսի համավարակով պայմանավորված արձանագրվել է գինեգործական արտադրանքի օնլայն վաճառքի ծավալների ավելացում: Հայաստանի գինու հարուստ պատմությունը և մշակույթը, ինչպես նաև հյուրընկալությունը, սնունդը և բնությունը նախադրյալ են ստեղծում Հայաստանում գինու տուրիզմի զարգացման համար՝ միաժամանակ ստեղծելով նախապայմաններ համապատասխան ավելացված արժեքների ստեղծման համար: Սակայն տուրիզմի տվյալ ուղղությունը զարգացնելու նպատակով դեռևս առկա են որոշ խոչընդոտներ, որոնք ընդհանուր առմամբ հանդիսանում են տուրիզմի ոլորտի խնդիրներ՝ տեղեկատվության և դրա հասանելիության պակաս, տուրիստական հիմնական ուղղությունների վրա թերի զարգացած ենթակառուցվածքների առկայություն,

	Հայաստանի՝ որպես գինու տուրիզմի ուղղություն, միջազգային տուրիստների շրջանակում ցածր ճանաչելիություն և այլն: Աշխարհագրական նշման, ծագման տեղանվան կամ երաշխավորված ավանդական արտադրանքի Մտավոր սեփականության գործակալություն գրանցման հայտ ներկայացնելու իրավունք ունի միայն խումբը, որն իրականացնում է հայտում նշված ապրանքների արտադրական գործունեություն, իսկ արտադրողների խումբը կարող է լինել արտադրողների կամ վերամշակողների ցանկացած միավորում, անկախ կազմակերպական-իրավական ձևից և կազմից, որը գործում է իր կանոնադրության հիման վրա և արտադրական գործունեություն է իրականացնում հայտում նշված ապրանքների նկատմամբ: Հայկական ագրոպարենային արտադրանքի ու վայրաճ բույսերի, այդ թվում՝ գինիների, պանիրների, թարմ պտղի, հատապտղի ու բանջարեղենի, ուտելի խոտաբույսերի ու վայրաճ բույսերի բազմաթիվ տեսակներ կարող են գրանցվել որպես աշխարհագրական նշումով, ծագման տեղանունով կամ երաշխավորված ավանդական արտադրանք, որը հնարավորություն կտա դրանք արտահանել և իրացնել զգալիորեն բարձր գներով, արտադրողների համար ապահովելով լրացուցիչ եկամուտներ, մինչդեռ այն Հայաստանում տարածում չի գտնում, և դրա հիմնական պատճառը աշխարհագրական նշումներով, ծագման տեղանուններով և երաշխավորված ավանդական արտադրանք արտադրողների խմբերի, միավորումների կամ ասոցիացիաների բացակայությունն է: Հայկական ագրոպարենային արտադրանքի ու վայրաճ բույսերի, այդ թվում՝ գինիների, պանիրների, թարմ պտղի, հատապտղի ու բանջարեղենի, ուտելի խոտաբույսերի ու վայրաճ բույսերի բազմաթիվ տեսակներ կարող են գրանցվել որպես աշխարհագրական նշումով, ծագման տեղանունով կամ երաշխավորված ավանդական արտադրանք, որը հնարավորություն կտա դրանք արտահանել և իրացնել զգալիորեն բարձր գներով, արտադրողների համար ապահովելով լրացուցիչ եկամուտներ, մինչդեռ այն Հայաստանում տարածում չի գտնում, և այսօրվա դրությամբ գրանցված միակ աշխարհագրական նշումով արտադրանքը «Սևանի իշխանն» է: Աշխարհագրական նշումների, ծագման տեղանունների և երաշխավորված ավանդական արտադրանքի գրանցման, իրավական պահպանության և օգտագործման հետ կապված հարաբերությունները կարգավորում են «Աշխարհագրական նշումների մասին» ՀՀ օրենքով: Օրենքը համահունչ է Եվրամիության օրենսդրությանը, որն արձանագրվել է նաև ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (CEPA) 231-րդ հոդվածի 1-ին մասում: Չնայած դրան աշխարհագրական նշումներով, ծագման տեղանուններով և երաշխավորված ավանդական արտադրանքի տեխնիկական հատկորոշումների մշակման և դրանց նկատմամբ հսկողության իրականացման օրենսդրական կարգավորման հետ կապված առկա են որոշակի բացթողումներ և լրացուցիչ կարգավորման ենթակա դրույթներ: Բանն այն է, որ օրենքով հստակ տարանջատված չեն աշխարհագրական նշումներով, ծագման տեղանուններով և երաշխավորված ավանդական արտադրանքի համապատասխանության նկատմամբ վերահսկողությունը և հսկողությունը կարգավորող դրույթները: Մյուս կողմից օրենքով հստակ նշված չէ, որ տեխնիկական հատկորոշումներով սահմանված պահանջների նկատմամբ հսկողություն իրականացնող մարմինները պետք է հավատարմագրված լինեն «Հավատարմագրման մասին» օրենքով սահմանված կարգով հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմնի (մարմինների) կողմից՝ համապատասխան ստանդարտների հիման վրա: «Աշխարհագրական նշումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Օրենքի նախագծով, ի թիվս այլ կարգավորումների, սահմանվում է, որ պետական վերահսկողություն իրականացող լիազոր մարմինը կարող է արգելել տեխնիկական հատկորոշումներին չհամապատասխանող աշխարհագրական նշումներով, ծագման տեղանուններով և երաշխավորված ավանդական արտադրանքի արտադրությունը, իրացումը, արտահանումը կամ ներմուծումը և տալ շուկայից հետ կանչի վերաբերյալ պարտադիր կատարման ենթակա կարգադրագրեր, իսկ կարգադրագիրը չկատարելն առաջացնում է պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով, մինչդեռ Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսգրքով համապատասխան վարչական պատասխանատվության միջոցներ սահմանված չեն: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** **Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի** շրջանակներում տրամադրվում են սուբսիդավորվող նպատակային վարկեր, որոնք պետք է նպատակաուղղվեն բացառապես մթերվող խաղողի, պտուղբանջարեղենի, կենդանի կենդանիների և կաթի արժեքի վճարմանը, իսկ տրամադրվող վարկի չափը (գումարը) չպետք է գերազանցի վարկառուի գյուղացիական տնտեսությունների հետ կնքված պայմանագրերում նշված հումքի գնման արժեքը, իսկ հումքի գնման նվազագույն գներով հաշվարկված լինելու դեպքում՝ հումքի գնման ակնկալվող արժեքի 120 տոկոսը: Ծրագրի շրջանակներում պտուղբանջարեղենի, խաղողի, կենդանի կենդանիների և կաթի մթերումների (գնումների) նպատակով ֆինանսական կառույցների կողմից տնտեսավարողներին կտրամադրվեն մինչև 14 տոկոս տոկոսադրույքով վարկային միջոցներ՝ 3 տարի մարման ժամկետով խաղողի և 1.5 տարի այլ ուղղությունների համար, որոնց տոկոսադրույքը մասնակիորեն կամ ամբողջությամբ կսուբսիդավորվի:

	Գյուղատնտեսական մթերքների իրացման խնդիրները մեղմելու նպատակով առաջարկվում է ստեղծել մեծածախ շուկաների և լոգիստիկ կենտրոնների ցանց, որը հնարավորություն կտա կրճատել հայկական արտադրության գյուղմթերքի կորուստները և իրացման լոգիստիկ ծախսերը, բարձրացնել արտադրանքի որակը և մրցունակությունը, ապահովել համապատասխան որակական ցուցանիշներով տեսակավորված և փաթեթավորված արտադրանքի խմբաքանակներ, ինչպես ներքին շուկայում առևտրի ցանցերին և հանրային սննդի ոլորտին մատակարարելու, այնպես էլ արտահանելու և արտահանող կազմակերպություններին առաջարկելու նպատակով: **Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրի** իրականացմամբ նախատեսվում է ագրոպարենային ոլորտում գործող տնտեսավարողներին սարքավորումների ձեռքբերման համար լիզինգով տրամադրել մինչև 1 մլրդ դրամ, 8 տարի ներառյալ մարման ժամկետով, տոկոսադրույքների մասնակի կամ ամբողջական սուբսիդավորմամբ, լիզինգի առարկայի ձեռքբերման գնի 20 %-ի չափով կանխավճարով: Ընդ որում լիզինգի մայր գումարի մարման համար սահմանված արտոնյալ ժամկետը լիզինգը տրամադրելու պահից հաշվարկվում է առնվազն 3 ամիս, իսկ լիզինգի չսուբսիդավորվող տոկոսների վճարման պարտականությունը լիզինգառուի մոտ առաջանում է լիզինգի տրամադրման պահից սկսած: **Կոնյակի սպիրտի արտահանման և խաղողի մթերման գործընթացին աջակցության** շրջանակներում նախատեսվում է տնտեսավարողներին տրամադրել պետական օժանդակություն 100 հազար (100 տոկոսանոց սպիրտի հաշվարկով) լիտրը գերազանցելուց հետո կոնյակի սպիրտների այլ խմբաքանակների իրացման իրավունքի ձեռք բերման համար վճարված լրացուցիչ 100 դրամ պետական տուրքի չափով: Հայկական գինիների ճանաչելիությունը բարձրացնելու, թիրախային նոր շուկաներ մուտք գործելու և իրացման ծավալները ավելացնելու նպատակով առաջարկվում է ստեղծել հայկական գինիների լոգիստիկ և հաճախորդների սպասարկման կենտրոն, ինչպես նաև վաճառքի առցանց հարթակ, որտեղ կիրականացվեն պահեստավորման, մաքսազերծման, ապրանքների փաթեթավորման, պիտակավորման և ԵՄ երկրներ տեղափոխման ծառայություններ: Այն կբարձրացնի հայկական գինիների հասանելիությունը եվրոպական շուկայում և կկնպաստի վաճառքների ավելացմանը: Լոգիստիկ կենտրոնը հնարավորություն կընձեռնի միավորել հայկական գինի արտադրող ընկերությունների ներուժը և կազմակերպել հավաքական բեռնափոխադրումներ դեպի ԵՄ-ի տարածքում գտնվող լոգիստիկ կենտրոն: **Գինու զբոսաշրջության զարգացմանն ուղղված միջոցառման** իրականացման առաջարկվող լուծումներն են. – Հայաստանում գինու զբոսաշրջության տարածաշրջաններում ենթակառուցվածքների ստեղծումը և բարելավումը, – փոքր և միջին արտադրողների որակյալ գինիների արտադրության աջակցումը և նպաստումը, ինչպես նաև հյուրընկալության ծառայությունների հմտությունների զարգացումը, – Հայաստանի «Գինու Ճանապարհի» /Wine Route/ մշակումը, – ճանապարհային ցուցանակների մշակումը և տեղադրումը՝ «Գինու Զբոսաշրջության» զարգացման և Հայաստանը որպես գինեգործության երկիր ներկայացնելու նպատակով, – փառատոների կազմակերպումը, գրքերի, տեղեկատվական նյութերի տպագրությունը և տարածումը: Միջոցառման իրականացմամբ առաջարկվում է աջակցել և խթանել աշխարհագրական նշման, ծագման տեղանվան կամ երաշխավորված ավանդական արտադրանք արտադրող խմբերի, միավորումների կամ ասոցիացիաների ստեղծումը: Առաջարկվում է «Աշխարհագրական նշումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ, ըստ որոնց հստակեցվում են աշխարհագրական նշումներով, ծագման տեղանուններով և երաշխավորված ավանդական արտադրանքի համապատասխանության նկատմամբ պետական վերահսկողություն և տեխնիկական հատկորոշումների պահպանման նկատմամբ հսկողություն իրականացնող մարմինները և դրանց գործունեության շրջանակները: Արտադրանքի համապատասխանության նկատմամբ պետական վերահսկողությունը վերապահվում է սննդամթերքի անվտանգության ոլորտի վերահսկողություն իրականացնող լիազոր մարմնին և ընդգրկում է արտադրության և շրջանառության բոլոր փուլերը, իսկ արտադրանքի տեխնիկական հատկորոշումների պահպանման նկատմամբ հսկողությունն իրականացվում է «Հավատարմագրման մասին» օրենքով սահմանված կարգով հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմնի (մարմինների) կողմից և ընդգրկում է արտադրության փուլը (մինչև շուկայահանումը): Առաջարկվում է Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսգրքով նախատեսել վարչական պատասխանատվության միջոցներ՝ տեխնիկական հատկորոշումներին չհամապատասխանող աշխարհագրական նշումներով, ծագման տեղանուններով և երաշխավորված ավանդական արտադրանք արտադրության կամ իրացման դեպքերի համար, ըստ որի նշված խախտումն առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով: Նույն արարքը վարչական տույժի նշանակման օրվանից մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով, իսկ

	տեսչական մարմնի կողմից տեխնիկական հատկորոշումներին չհամապատասխանող աշխարհագրական նշումներով կամ ծագման տեղանուններով կամ երաշխավորված ավանդական արտադրանքի՝ շուկայից հետ կանչի վերաբերյալ կարգադրագիրը չկատարելը առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով: Միաժամանակ վերը նշված վարչական պատասխանատվության միջոցների կիրառման իրավասությունը վերապահվում է սննդամթերքի անվտանգության բնագավառում պետական վերահսկողություն իրականացնող պետական լիազորված մարմնին: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման իրականացման արդյունքում՝ – մեծածախ շուկայների և լոգիստիկ կենտրոնների ստեղծման շնորհիվ կիսով չափ կկրճատվի պտուղբանջարեղենի, կարտոֆիլի և այլ ապրանքների պահման, փաթեթավորման, տեղափոխման և այլ անհարմարությունների պատճառով արժեշղթայում առաջացող շուրջ 30-35 % կորուստները, – մրցակցային պայմաններ կստեղծվի գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվողների շրջանում, սեփական արտադրանքի արտադրության և վաճառքի ծավալների պլանավորման, ընդլայնման ու որակի բարելավման ուղղությամբ, – անցում կկատարվի գյուղատնտեսական մթերքների իրացման քաղաքակիրթ համակարգի և առևտրի կազմակերպման սկզբունքների՝ ապահովելով սննդամթերքի անվտանգության պահանջները, – ապրանքային քանակների ձևավորման շնորհիվ զգալիորեն կավելանա գյուղմթերքի արտադրության և արտահանման ծավալները, - նախադրյալներ կստեղծվեն մատչելի մեխանիզմների կիրառմամբ ագրոպարենային ոլորտի տնտեսավարողների վճարունակ պահանջարկի բավարարման և տնտեսությունները նոր սարքավորումներով վերազինման համար, - վերամշակող ընկերությունների արտադրական կարողությունները կհզորանան և կարդիականացվեն՝ տարեկան կձեռքբերվի շուրջ 250 միավոր սարքավորումներ, - որոշակիորեն կբարձրանա ագրոպարենային ոլորտի նորագույն սարքավորումներով հագեցվածության մակարդակը, տնտեսապես կամրապնդվեն շահառու տնտեսավարողները և պայմաններ կստեղծվեն վերջիններիս կողմից ապրանքային արտադրության կազմակերպման և հետագա զարգացման համար, - հնարավորություն կստեղծվի ագրոպարենային ոլորտի որոշ արտադրատեսակների ներկրումը փոխարինելու տեղական արտադրությամբ, - կկառուցվեն ջերմատներ, սառնարանային տնտեսություններ և սպանդանոցներ, – նախադրյալներ կստեղծվեն ոլորտում վարկունակ պահանջարկի մակարդակի բարձրացման համար, ինչը կհանգեցնի գյուղատնտեսական մթերքների գնման դիմաց գյուղատնտեսությունում տնտեսավարողներին կատարվող վճարումները կարճ ժամկետներում կատարելուն, – վերամշակողների և գյուղացիական տնտեսությունների միջև կհաստատվեն հումքի գնման պայմանագրային հարաբերություններ, որը գյուղացիական տնտեսություններին կտա հումքի իրացման կայուն երաշխիքներ, – հումքի մթերման գործընթացի, կոնյակի ու կոնյակի սպիրտի արտահանմանն աջակցության, ինչպես նաև գինեգործության ու կոնյակագործության արտադրության խթանման արդյունքում առաջիկա 5 տարիներին հումքի մթերման և թողարկվող արտադրանքի ծավալներ կավելանան մինչև 50 %-ով, – 5-ից 7 տոկոսով կբարձրանա պտուղբանջարեղենային պահածոների, գինեգործական արտադրանքի և կաթնամթերքի մրցունակության մակարդակը, որի արդյունքում կավելանան արտադրության ու արտահանման ծավալները, - որոշակիորեն կբարձրանա գյուղատնտեսական մթերքներ վերամշակող արդյունաբերության ոլորտի գրավչության մակարդակը, էականորեն կմեղմվի գյուղատնտեսական մթերքների իրացման հիմնախնդիրը, կմեծանա գյուղատնտեսական հումքի պահանջարկը, - խաղողի կոլեկցիոն այգու համալրում նոր սորտերով, խաղողի գենոֆոնդի պահպանում, քիչ տարածված տեղածին սորտերի տեխնոլոգիական ներուժի բացահայտում, խաղողի հայկական սորտերի միասնական էլեկտրոնային տեղեկատվական բազայի առկայություն և միջազգային հարթակներում հայկական սորտերի ճշգրիտ նկարագրության հասանելիություն, - խաղողի ֆիլոքսերադիմացկուն տնկանյութի արտադրության տնկարանների առկայություն, - բարձրորակ գինիների արտադրության համակարգի լիիրավ կիրարկման ուղեցույց, սերտիֆիկացման և վերահսկողության համակարգերի առկայություն, - գինու տուրիզմի զարգացում, - հայկական գինիների արտահանման հիմնական շուկաներում հավաքական պահեստների ստեղծման արդյունքում կապահովվի հայկական գինիների դյուրին մուտք նոր թիրախային շուկաներ «Հայաստանի գինիներ» ապրանքանիշի իրացման ծավալների աճ, հայկական գինիների ճանաչելիության բարձրացում,

- ստեղծվող ոլորտային ասոցիացիաները (խմբերը) հնարավորություն կունենան օրենքով սահմանված կարգով դիմելու Մտավոր սեփականության գործակալություն՝ գրանցելու իրենց անդամների կողմից արտադրվող աշխարհագրական նշումով, ծագման տեղանունով կամ երաշխավորված ավանդական արտադրանքը, կհստակեցվի և կբարելավվի «Աշխարհագրական նշումների մասին» ՀՀ օրենքը,
- պետական վերահսկողություն իրականացնող լիազոր մարմինը հնարավորություն կստանա կիրառելու համապատասխան պատասխանատվության միջոցներ՝ տեխնիկական հատկորոշումներին չհամապատասխանող աշխարհագրական նշումներով, ծագման տեղանուններով և երաշխավորված ավանդական արտադրանք արտադրելու, իրացնելու, արտահանելու կամ ներմուծելու դեպքերում, որը հնարավորություն կտա կանխարգելելու դրանց արտադրությունը, ներմուծումը և շուկայահանումը,
- կհստակեցվեն աշխարհագրական նշումներով, ծագման տեղանուններով և երաշխավորված ավանդական արտադրանքի համապատասխանության նկատմամբ պետական վերահսկողություն և տեխնիկական հատկորոշումների պահպանման նկատմամբ հսկողություն իրականացնող մարմիններն ու դրանց գործունեության շրջանակները և հնարավորություն կտրվի «Հավատարմագրման մասին» օրենքով սահմանված կարգով հավատարմագրելու արտադրանքի տեխնիկական հատկորոշումների պահպանման նկատմամբ հսկողություն իրականացնելու ցանկություն ունեցող մարմիններին, ինչպես նաև կանխարգելելու տեխնիկական հատկորոշումներին չհամապատասխանող աշխարհագրական նշումներով, ծագման տեղանուններով և երաշխավորված ավանդական արտադրանքի արտադրությունը, իրացումը, արտահանումը կամ ներմուծումը,
- կարտադրվի և հայկական աշխարհագրական նշումներով կգրանցվի արտադրանքի ավելի քան 10 անվանում:

<u>9.5 Պարենային անվտանգության համակարգի զարգացման ռազմավարության և 2022-2026 թվականների գործողությունների ծրագրի մշակում</u>

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է Ազգային Ժողովի 2021 թվականի օգոստոսի 26-ի N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի դրույթներից («2.4 Գյուղատնտեսությունը» ենթաբաժին, 2-րդ պարբերություն, ենթակետ 3, 15, 17):

Միջոցառման իրականացման նպատակն է պարենային անվտանգության համակարգի հետագա կայուն զարգացման ապահովումը:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Ներկայումս պարենային անվտանգության համակարգի ապահովման հիմք է հանդիսանում պարենային անվտանգության 2017-2021 թվականների հայեցակարգը և N 48 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած միջոցառումների ծրագիրը: Հաշվի առնելով, որ ավարտվում է պարենային անվտանգության համակարգի զարգացման համար նախանշված գործողությունների ժամկետը, անհրաժեշտություն է առաջացել մշակելու պարենային անվտանգության համակարգի զարգացման ռազմավարություն և 2022- 2026 թվականների գործողությունների ծրագիր: Մյուս կողմից անհրաժեշտ է նկատի ունենալ, որ պարենային անվտանգության համակարգը բավականին ընդգրկուն է և պարենամթերքի առկայությունից, մատչելիությունից և անվտանգությունից բացի պայմանավորված է նաև մի շարք այլ գործոններով, ինչպիսիք են ենթակառուցվածքների առկայությունն ու հասանելիությունը, ազգաբնակչության տարբեր շերտերի սոցիալ-տնտեսական պայմանները և այլն, ինչպես նաև պարենային անվտանգությանն առնչվող տնտեսության այլ ճյուղերի (կրթություն, առողջապահություն, տեղեկատվական և նոր տեխնոլոգիաներ և այլն) ազդեցությունը:

Ներկայումս անհրաժեշտ է նաև ապահովել ՀՀ-ում սննդամթերքի անվտանգության ոլորտի Եվրասիական տնտեսական հանձնաժողովի իրավական բնույթի նորմատիվ իրավական ակտերի կիրարկման գործընթացը, միաժամանակ վերանայել և ուժը կորցրած ճանաչել ՀՀ կառավարության համապատասխան իրավական ակտերը:

1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Միջոցառման իրականացման շրջանակներում առաջարկվում է մշակել պարենային անվտանգության համակարգի հետագա զարգացման ռազմավարություն և 2022-2026 թվականների գործողությունների ծրագիր, որով կսահմանվեն պարենային անվտանգության զարգացման քաղաքականության հիմնական սկզբունքները, ուղղությունները և գործողությունների ծրագիրը՝ հիմք ընդունելով բազմամակարդակ զարգացման սկզբունքը:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Պարենային անվտանգության համակարգի հետագա զարգացման ռազմավարության և 2022-2026 թվականների գործողությունների ծրագրի առկայություն, որով կնախանշվեն համակարգի հետագա կայուն և համաչափ զարգացումն ապահովող համապատասխան միջոցառումները:

9.6. Սննդամթերքի անվտանգության ապահովում, «Սննդամթերքի անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման հաստատում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է Ազգային Ժողովի 2021 թվականի օգոստոսի 26-ի N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի դրույթներից («2.4 Գյուղատնտեսությունը» ենթաբաժին, 2-րդ պարբերություն, ենթակետ 15):

Միջոցառման հիմնական նպատակներն են՝

- սննդամթերքի անվտանգության համակարգի հետագա կայուն զարգացման ապահովումը,
- սննդամթերքի անվտանգության ոլորտի առկա խնդիրների և օրենդրական բացերի վերհանումը և դրանց հիման վրա համապատասխան իրավական ակտերի մշակումը և ընդունումը,
- Սննդամթերքի անվտանգության ռազմավարության մշակում:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Հայաստանի Հանրապետությունում սննդամթերքի անվտանգությունը կարևոր և հրատապ հիմնախնդիրներից է, որը պահանջում է ժամանակակից պահանջներին և չափորոշիչներին համապատասխան լուծումներ: Ներկայումս, ՀՀ-ում սննդամթերքի անվտանգության համակարգը լիարժեք չի երաշխավորում սպառողներին անվտանգ և որակյալ սննդամթերքով ապահովումը, ինչպես նաև տեղական արտադրության սննդամթերքի մրցունակության բարձրացումն արտաքին և ներքին շուկաներում:

ՀՀ սննդամթերքի անվտանգության համակարգի զարգացման ռազմավարությունը և նրանից բխող միջոցառումների ծրագիրը ընդունվել են 2011 թվականի նոյեմբերի 17-ի նիստի N 45 արձանագրային որոշմամբ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սննդամթերքի անվտանգության համակարգի զարգացման համար նախանշված գործողությունների ժամկետներն ավարտվել են, ինչպես նաև էական փոփոխության են ենթարկվել սննդամթերքի անվտանգության ոլորտի ներկայիս մարտահրավերները, ուստի անհրաժեշտություն է առաջացել մշակելու սննդամթերքի անվտանգության համակարգի զարգացման նոր ռազմավարություն և 2022-2026 թվականների գործողությունների ծրագիր:

Նախատեսվող փաստաթղթերի մշակման օրենսդրական հիմք՝ «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՈՀՕ–253-Ն ՀՀ օրենքով հաստատված հավելվածի 15-րդ կետ:

ՀՀ վարչապետի 2019թ. հունիսի 1-ի N 658-Լ որոշմամբ հաստատված ՀՀ էկոնոմիկայի նախարարության կանոնադրության 10-րդ կետի 12-րդ և 20-րդ ենթակետեր և 11-րդ կետի 39-րդ ենթակետ:

Ներկայումս անհրաժեշտ է նաև ապահովել ՀՀ-ում սննդամթերքի անվտանգության ոլորտի Եվրասիական տնտեսական հանձնաժողովի իրավական բնույթի նորմատիվ իրավական ակտերի կիրարկման գործընթացը, միաժամանակ վերանայել և ուժը կորցրած ճանաչել ՀՀ կառավարության համապատասխան իրավական ակտերը:

1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Միջոցառման իրականացման շրջանակներում նախատեսվում է կատարելագործել ՀՀ սննդամթերքի անվտանգության ոլորտի օրենսդրությունը և մշակել **Սննդամթերքի անվտանգության համակարգի հետագա զարգացման ռազմավարություն և 2022-2026 թվականների գործողությունների ծրագիրը**, որով կսահմանվեն սննդամթերքի անվտանգության զարգացման քաղաքականության հիմնական սկզբունքները, ուղղությունները և գործողությունների ծրագիրը:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Միջոցառման իրականացման արդյունքում՝

- կմշակվի Սննդամթերքի անվտանգության համակարգի հետագա զարգացման ռազմավարության և 2022-2026 թվականների գործողությունների ծրագիրը, որով կնախանշվեն համակարգի հետագա կայուն և համաչափ զարգացումն ապահովող համապատասխան միջոցառումները,

կստեղծվի ՀՀ-ում սննդամթերքի անվտանգությունն ապահովող կատարելագործված համակարգ, սպառողներին կապահովվի անվտանգ և որակյալ սննդամթերքի, ինչպես կբարձրանա նաև արտաքին և ներքին շուկաներում տեղական արտադրության սննդամթերքի մրցունակությունը՝ Հայաստանի Հանրապետությունում սննդամթերքի անվտանգության բնագավառին առնչվող օրենսդրական դաշտի կատարելագործմամբ և համապատասխանեցմամբ ԵԱՏՄ և միջազգային պահանջներին:

9.7. Բույսերի պաշտպանության միջոցառումների իրականացում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է Ազգային Ժողովի 2021 թվականի օգոստոսի 26-ի N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի դրույթներից («2.4 Գյուղատնտեսությունը» ենթաբաժին, 2-րդ պարբերություն, ենթակետ 17):

Միջոցառումը ներառված է «Բուսաբուծության խթանում և բույսերի պաշտպանություն» ծրագրում (այսուհետ՝ ծրագիր) և ապահովում է բույսերի պաշտպանության և կարանտինի միջոցառումների իրականացումն ու հանրապետության տարածքի բուսասանիտարական անվտանգությունը: Ինչի համար անհրաժեշտություն է

	առաջանում յուրաքանչյուր տարի գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում իրականացնել դաշտային հետազոտություններ՝ բույսերի վնասակար օրգանիզմների հայտնաբերման աշխատանքներ: Միջոցառման իրականացման արդյունքում ճշտվում են բույսերի վնասակար օրգանիզմներով վարակվածության արեալը, աստիճանը (թույլ, միջին և ուժեղ), տնտեսական վնասակարության շեմը, որոնց նպատակն է մկնանման կրծողների, մորեխների, թրթուրների, ինչպես նաև բազմամյա տնկարկների, բանջարաբոստանային և հացահատիկային մշակաբույսերի հիմնական վնասատուների ու հիվանդությունների դեմ պայքարի աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը: Ծրագիրը 2020 թվականին բաղկացած է եղել երկու տարբեր միջոցառումներից՝ «Բուսասանիտարիայի ծառայությունների մատուցում» և «Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումներ», սակայն 2021 թվականի բյուջեով հաստատվել է որպես մեկ միջոցառում՝ «Բուսասանիտարիայի ծառայությունների, հողերի ագրոքիմական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումների իրականացում»: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Բուսասանիտարիայի ծառայությունների իրականացման շրջանակներում, բույսերի վնասակար օրգանիզմների հայտնաբերման և հաշվառման նպատակով հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում իրականացվում են դաշտային հետազոտություններ, որոնց արդյունքում համապատասխան առաջարկություն է ներկայացում ՀՀ էկոնոմիկայի նախարարություն: 2021 թվականին պետական բյուջեից ֆինանսավորումը կազմել է 95,880 մլն դրամ (ներառված են նաև հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումների համար ծախսերը), որից փաստացի ծախսը՝ 95,880 մլն դրամ. 2021 թվականի ընթացքում վնասակար օրգանիզմների հայտնաբերման նպատակով հետազոտված տարածքները կազմել են նախատեսված 315000 հա: 2022 թվականին պետական բյուջեից ֆինանսավորումը կազմել է 47,940 մլն դրամ (հատկացումները կրճատվել են 50 %-ով), որը անդրադարձել է նաև հետազոտվող տարածքների վրա՝ ընդամենը 180000 հա: Ֆինանսական միջոցների կրճատման պատճառով 43 % -ով նվազել են հանրապետությունում գյուղատնտեսական հողատեսքերում իրականացվող բուսասանիտարական վիճակի հետազոտման աշխատանքները, որն առնվազն այդքանով էլ մեծացրել է գյուղատնտեսական մշակաբույսերի վնասատուներով և հիվանդություններով վարակվածության հայտնաբերման, տարածման, տնտեսական վնասակարության շեմի գերազանցման ռիսկերը: 2021 թվականին գյուղատնտեսական հողատեսքերում հետազոտվող տարածքներից վերցված հողանմուշներիի լաբորատոր փորձաքննությունների քանակը կազմել է նախատեսված 64325 հատ, գյուղատնտեսական նշանակության հողերի մշակված ագրոքիմիական քարտեզները և համայնքներին տրամադրված պարարտացման կիրառման գիտականորեն հիմնավորված երաշխավորագրերը կազմել են նախատեսված 170 հատ (հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությունում առկա է գյուղատնտեսական մշակովի հողեր ունեցող 852 համայնք/բնակավայրեր: Նկատի ունենալով 5 տարվա ընթացքում հողի վերարտադրության ցուցանիշների փոփոխությունը՝ անհրաժեշտ է 5 տարի պարբերականությամբ իրականացնել համայնքների հողերի հետազոտություններ, հետևաբար, (852 : 5) 4 տարի պետք է կատարվի 170 համայնքի հետազոտություն, 1 տարի՝ 172 համայնքի հետազոտություն և հանրապետության բոլոր համայնքները կունենան ագրոքիմիական քարտեզներ), ընդհանուր առմամբ աշխատանքներն իրականացվել են 100%-ով: 2022 թվականին գյուղատնտեսական նշանակության հողերի մշակված ագրոքիմիական քարտեզները և համայնքներին տրամադրված պարարտացման կիրառման գիտականորեն հիմնավորված երաշխավորագրերը կազմել են 85 հատ: Ֆինանսական միջոցների կրճատման պատճառով 43 % -ով նվազել են հանրապետությունում գյուղատնտեսական հողատեսքերում իրականացվող բուսասանիտարական վիճակի հետազոտման աշխատանքները, որն առնվազն այդքանով էլ մեծացրել է գյուղատնտեսական մշակաբույսերի վնասատուներով և հիվանդություններով վարակվածության հայտնաբերման, տարածման, տնտեսական վնասակարության շեմի գերազանցման ռիսկերը: 50 %-ով նվազել է ագրոքիմիական քարտեզների կազմման աշխատանքները, ինչը նշանակում է խախտել 5 տարի պարբերականությամբ հանրապետությունում պարարտացման կիրառման գիտականորեն հիմնավորված երաշխավորագրերի առկայությունը: Տեղի է ունեցել ագրոքիմիական հետազոտություններ իրականացնող աշխատակիցների հաստիքային կրճատումներ: Ներկայումս բուսասանիտարական վիճակի և ագրոքիմիական հետազոտություններ իրականացնող աշխատակիցների գործառույթները միավորվել են, տեղի է ունեցել մեկ աշխատակցին ընկնող աշխատանքի ծանրաբեռնվածություն, փոխարենը աշխատավարձի նվազում, ինչը բացասաբար կանդրադառնա աշխատանքի արդյունավետության վրա: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Բույսերի պաշտպանության միջոցառումների շրջանակում 2021-2026 թվականների ընթացքում շարունակական կերպով հանրապետության տարածքում կիրականացվեն բուսասանիտարական մշտադիտարկման և գնահատման աշխատանքներ, որոնք ներառում են մկնանման կրծողների, մորեխների, թրթուրների, ինչպես նաև բազմամյա տնկարկների, բանջարաբոստանային և հացահատիկային մշակաբույսերի հիմնական վնասատուների ու հիվանդությունների հայտնաբերման մոնիթորինգը, վնասակար օրգանիզմների տնտեսական վնասակարության շեմի որոշումը, ստացված արդյունքների հիման վրա կկազմակերպվի պայքարի միջոցառումներ:»:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Միջոցառման իրականացման արդյունքում՝ ֆինանսական միջոցների ավելացման պարագայում (վերադառնալով առնվազն 2021 թվականի պետական բյուջեով հատկացված ֆինանսական միջոցների չափաքանակին՝ 95,880 մլն դրամ) հնարավոր կլինի ապահովել կայուն բուսասանիտարական վիճակ, գյուղատնտեսական մշակաբույսերի որակյալ և բարձր բերքատվություն, գյուղատնտեսական հողատեսքերում հետազոտվող տարածքներից վերցված հողանմուշներիի լաբորատոր փորձաքննությունների քանակը կկազմի 64325 հատ, գյուղատնտեսական նշանակության հողերի մշակված ագրոքիմիական քարտեզները և համայնքներին տրամադրված պարարտացման կիրառման գիտականորեն հիմնավորված երաշխավորագրերը կկազմեն 170 հատ:

Հանրապետության ողջ տարածքում 5 տարի հաճախականությամբ ամբողջապես կկազմվի ագրոքիմիական քարտեզները, հողում սննդատարրերի հավասարակշռության վիճակը կլինի կառավարվող, դրանց գրագետ պահպանման պարագայում կբարձրանա հողի բերրիությունը, հետևաբար՝ բերքատվության ցուցանիշը:

<u>9.8.Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում ծրագրի իրականացում</u>

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է Ազգային Ժողովի 2021 թվականի օգոստոսի 26-ի N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի դրույթներից («2.4 Գյուղատնտեսությունը» ենթաբաժին, 2-րդ պարբերություն, ենթակետ 17):

Միջոցառման հիմնական նպատակն է՝

- համայնքային մակարդակով կենդանիների վարակիչ հիվանդությունների նկատմամբ պատվաստված անասնագլխաքանակի կայուն վարակամերժության ֆոնի ստեղծումն ու պահպանումը, արդյունքում՝ անասնաբուժասանիտարական տեսակետից բարձրորակ անասնապահական մթերքի և հումքի արտադրության ապահովում, արտահանման և ներկրման գործընթացի խթանում, ինչպես նաև կայուն միջպետական տնտեսական կապերի հաստատում և բարելավում:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Հաշվի առնելով հարևան երկրներում արձանագրված կենդանիների հատուկ վտանգավոր և պարտադիր ծանուցման ենթակա հիվանդությունների անասնահամաճարակային իրավիճակը և հանրապետության առանձին մարզերում արձանագրված կենդանիների վարակիչ հիվանդությունների համաճարակային իրավիճակը, հանրապետությունում անասնահամաճարակային կայուն իրավիճակ ստեղծելու և պահպանելու նպատակով յուրաքանչյուր տարի իրականացվում են անասնահակահամաճարակային կանխարգելիչ և ախտորոշիչ միջոցառումներ: Հանրապետությունում գյուղատնտեսական կենդանիների, կենդանիների և մարդու համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերացման, ինչպես նաև օտարերկրյա պետություններից կենդանիների կարանտինային, հատուկ վտանգավոր և պարտադիր ծանուցման վարակիչ հիվանդությունների Հայաստանի Հանրապետության տարածք ներթափանցումը կանխարգելող միջոցառումների իրականացումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է նախատեսված չափաքանակներով և ժամկետներում անասնաբուժական դեղամիջոցների ձեռքբերում:

Նախատեսվող միջոցառման իրականացման օրենսդրական հիմք՝ «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՕ–253-Ն ՀՀ օրենքով հաստատված հավելվածի 15-րդ կետ:

ՀՀ վարչապետի 2019թ. հունիսի 1-ի N 658-Լ որոշմամբ հաստատված ՀՀ էկոնոմիկայի նախարարության կանոնադրության 10-րդ կետի 12-րդ և 21-րդ ենթակետեր և 11-րդ կետի 39-րդ և 40-րդ ենթակետեր:

1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում ծրագրով նախատեսվում է գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների (բրուցելոզ, տուբերկուլյոզ, լեյկոզ, սիբիրախտ, դաբաղ, խշխշան պալար, վարրոատոզ, խոշոր եղջերավոր կենդանիների վարակիչ մաշկաբորբ) դեմ պայքարի հակաանասնահամաճարակային կանխարգելիչ միջոցառումների իրականացումը:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Միջոցառման իրականացման արդյունքում՝

- հնարավորություն է կընձեռվի յուրաքանչյուր տարի ապահովել գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների նկատմամբ կայուն անասնահամաճարակային վիճակ, կենդանիների և մարդու համար ընդհանուր վարակիչ հիվանդություններից բնակչության պաշտպանության բարձր մակարդակ,

	<u>9.9.Դաբաղ հիվանդության շճահետազոտության միջոցառումների իրականացում</u> **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է Ազգային Ժողովի 2021 թվականի օգոստոսի 26-ի N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի դրույթներից («2.4 Գյուղատնտեսությունը» ենթաբաժին, 2-րդ պարբերություն, ենթակետ 17): Միջոցառման հիմնական նպատակներն է՝ – դաբաղ հիվանդության նկատմամբ պատվաստումների արդյունավետության և պատվաստված կենդանիների մոտ ձևավորված վարակամերժության լարվածության գնահատումը: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Դաբաղը մշտական խնդիր է հանդիսանում տարածաշրջանային երկրների համար և չնայած վերջին տարիներին մեր հանրապետությունում հակադսաբաղային պատվաստումների արդյունքում առկա էր կայուն համաճարակային իրավիճակ, սակայն 2016 թվականին գրանցվել է հիվանդության բռնկման դեպք, որը պայմանավորված է եղել գենետիկորեն նոր A AGVII դաբաղի վիրուսի ենթատեսակով: Անհրաժեշտություն է առաջացել իրականացնել մշտական և շարունակական պետական շճաբանական հետազոտություն՝ համաճարակային կայուն իրավիճակի ապահովման և գնահատման նպատակով: Նախատեսվող միջոցառման իրականացման օրենսդրական հիմք՝ «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՕ–253-Ն ՀՀ օրենքով հաստատված հավելվածի 15-րդ կետ: ՀՀ վարչապետի 2019թ. հունիսի 1-ի N 658-Լ որոշմամբ հաստատված ՀՀ էկոնոմիկայի նախարարության կանոնադրության 10-րդ կետի 12-րդ և 21-րդ ենթակետեր և 11-րդ կետի 39-րդ և 40-րդ ենթակետեր: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** **Դաբաղ հիվանդության շճահետազոտության** միջոցառման շրջանակներում նմուշառման նպատակով ընդգրկված են ՀՀ բոլոր համայնքները, որոնք խմբավորվել են 2 գոտիների՝ բարձր ռիսկային, որոնք սահմանակից են Թուրքիային, Վրաստանին, Ադրբեջանին, Իրանին կամ այդ տարածաշրջաններում առկա են սեզոնային արոտավայրեր և ցածր ռիսկային գոտի: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման իրականացման արդյունքում՝ – կապահովվի շճաբանական հետազոտությունների վրա հիմնված հիվանդության հնարավոր ներթափանցման ռիսկերի գնահատումը, ինչպես նաև գիտականորեն հիմնավորելու նպատակով՝ թիրախային համայնքներում դաբաղ հիվանդության վիրուսի շրջանառության բացահայտմանը կամ բացառմանը, – մշտական և շարունակական կանխարգելիչ և մոնիթորինգային աշխատանքների արդյունքում կպահպանվի կայուն համաճարակային իրավիճակ,
	<u>9.10. Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի լաբորատոր փորձաքննության միջոցառումների իրականացում</u> **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է Ազգային Ժողովի 2021 թվականի օգոստոսի 26-ի N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի դրույթներից («2.4 Գյուղատնտեսությունը» ենթաբաժին, 2-րդ պարբերություն, ենթակետ 17): Միջոցառման հիմնական նպատակներն են՝ – ՀՀ բնակչությանը կենդանիների և մարդու համար ընդհանուր (զոոնոզ) վարակիչ հիվանդություններից պաշտպանությունը, կենդանական ծագման հումքի և մթերքի անասնաբուժասանիտարական տեսակետից անվտանգ սննդամթերքով ապահովումը: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Անասնահամաճարակային կայուն իրավիճակ ստեղծելու և պահպանելու նպատակով կենդանիների (այդ թվում՝ կենդանիների և մարդու համար ընդհանուր) մի շարք հիվանդությունների լաբորատոր ախտորոշման, անասնահամաճարակային վիճակի դաշտային ուսումնասիրության, ինչպես նաև կենդանական ծագման հումքի և մթերքի փորձաքննության իրականացումն ուղղված է անասնաբուժասանիտարական տեսակետից բարձրորակ և անվտանգ կենդանական ծագման հումքի և մթերքի արտադրության ապահովմանը, արտահանման, վերաարտահանման և ներկրման գործընթացների խթանմանը, ինչպես նաև կայուն միջպետական տնտեսական կապերի հաստատմանը:

	Նախատեսվող միջոցառման իրականացման օրենսդրական հիմք՝ «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՕ–253-Ն ՀՀ օրենքով հաստատված հավելվածի 15-րդ կետ: ՀՀ վարչապետի 2019թ. հունիսի 1-ի N 658-Լ որոշմամբ հաստատված ՀՀ էկոնոմիկայի նախարարության կանոնադրության 10-րդ կետի 12-րդ և 21-րդ ենթակետեր և 11-րդ կետի 39-րդ և 40-րդ ենթակետեր: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** **Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի լաբորատոր փորձաքննության միջոցառումների** շրջանակում անասնահամաճարակային կայուն իրավիճակի և կենդանական ծագման հումքի և մթերքի անվտանգության ապահովման նպատակով միջոցառումներ կիրականացվեն յուրաքանչյուր տարի: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման իրականացման արդյունքում՝ կենդանիների առողջության ապահովում, գյուղատնտեսական ոլորտում գործող արտադրող և վերամշակող ձեռնարկություններին անասնաբուժական տեսակետից ապահով հումքով և մթերքով ապահովում, բնակչության շրջանում կենդանիների և մարդկանց համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների բռնկման դեպքերի կանխում, կայուն միջպետական տնտեսական կապերի ապահովում
	<u>9.11 Հողային ռեսուրսների նպատակային և ջրային ռեսուրսների խնայողական ու արդյունավետ օգտագործում</u> **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է Ազգային Ժողովի 2021 թվականի օգոստոսի 26-ի N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի դրույթներից («2.4 Գյուղատնտեսությունը» ենթաբաժին, 2-րդ պարբերություն, ենթակետ 16): Միջոցառման հիմնական նպատակներն են՝ – գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման արդյունավետության բարձրացումը, չմշակվող հողատարածքները գյուղատնտեսական շրջանառության մեջ վերադարձնելը, – ջրօգտագործողներին՝ մատչելի պայմաններով ոռոգման արդիական համակարգերի ներդրման համար հնարավորության ստեղծումը՝ խթանելով ավանդական (մակերեսային) եղանակից ջրախնայող և արդյունավետ ոռոգման անցման գործընթացը: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Հայաստանի Հանրապետությունում առկա 444 հազար հեկտար վարելահողերից 2020 թվականին նպատակային օգտագործվել է 222,660 հազ. հա-ն (50,15%), կամ տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով չի մշակվել 221,339 հազ. հա հողատարածք (49,85 %): Գյուղատնտեսական նշանակության հողերի չմշակման պատճառները բազմազան են՝ ցածր եկամտաբերություն, շրջանառու միջոցների անբավարարություն, ոռոգման ջրի անհասանելիություն կամ անբավարար մատակարարում, գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման անմատչելիություն, հողի բերրիության ցածր մակարդակ, հողօգտագործողի՝ սեփականատիրոջ բացակայություն և այլն: Կաթիլային ոռոգման և անձրևացման եղանակները հիմնականում լայնորեն կիրառվում են այն երկրներում, որտեղ առկա է ոռոգման ջրի դեֆիցիտ և բարձր ինքնարժեք, ինչպես նաև ռելիեֆի կտրտվածություն, ջրգող օջախների առկայություն և այլն, դրանց ներդնումը նպատակահարմար է ինչպես փոքր տնտեսություններում, այնպես էլ արդյունաբերական մասշտաբով արտադրությունների համար: Հաշվի առնելով ոռոգման արդիական համակարգերի առավելությունները մակերեսային ոռոգման նկատմամբ, հիմք ընդունելով համաշխարհային փորձը՝ կարելի է արձանագրել, որ ոռոգման արդիական համակարգերի զանգվածային ներդրումը հանրապետությունում ապահովելու է ինչպես քանակական (ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործում և էական խնայողություն, բերքատվության աճ, ոռոգելի հողատարածքների ավելացում և այլն), այնպես էլ որակական (բերքի որակի բարելավում, շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության մեղմացում, ոռոգման շրջանում լարվածության նվազում (վերացում), հաշվառման և կառավարման արդյունավետության բարձրացում, ջրօգտագործողի (ֆերմերի) ֆինանսատնտեսական և սոցիալական վիճակի բարելավում, վճարունակության աճ և այլն) արդյունքներ: Եվ չնայած վերը նշված հանգամանքներին, արդեն երրորդ տարին իրականացվող Ոռոգման արդիական համակարգերի ներդրման համաֆինանսավորման ծրագրին՝ ակնհայտ է, որ հանրապետությունում դրանց տարածումն ընթանում է բավականին ցածր տեմպերով, և գործընթացը խթանելուն միտված նոր մոտեցումների, լրացուցիչ միջոցառումների կիրառման անհրաժեշտություն է առաջացել: Վերլուծության, ուսումնասիրության, հարցումների արդյունքում արձանագրվել է ծրագրի դանդաղ ընթացքի մի քանի հիմնական պատճառ՝ շահառուների իրազեկվածության դեռևս ցածր մակարդակ, վարկունակության խնդիր, փոխհատուցման բաղադրիչի ոչ գրավիչ տոկոս: Սակայն հիմնական խոչընդոտը կայանում է նրանում, որ փոքր հողակտորների համար համակարգերի ներդրումը բավականին ծախսատար է. մոտեցնող խողովակը, ջրավազանը (անհրաժեշտության դեպքում), պոմպն ու ֆիլտրը, պարարտացման համակարգը և գլխամասային հանգույցի այլ սարքավորումները ոռոգման համակարգի ներդրման արժեքի առյուծի բաժինն են կազմում, և դրանց առկայության

	պարագայում հարակից հողակտորները մշակողները հնարավորություն կունենան շատ մատչելի գներով անցկացնել ներտնտեսային ցանցը՝ կաթոցիկներով խողովակներ, անձրևացման համակարգեր և այլն: ՀՀ և ՖԶԳ Ֆինանսավորմամբ ներկայումս իրականացվող «Վեդի ջրամբարի և Ոռոգման համակարգի կառուցում» ծրագրով կառուցվում է Վեդի ջրամբարի և Վեդի գետի իշխման տակ գտնվող ութ համայնքի 1200-1400 հա հողատարածքների ոռոգման ներտնտեսային ճնշումային փակ ցանց, իսկ Համաշխարհային բանկի աջակցությամբ Ոռոգման համակարգերի արդյունավետության բարձրացման ծրագրով արդեն իսկ կառուցվել է Բաղրամյան-Նորակերտի ինքնահոս համակարգը՝ շուրջ 600 հա հողատարածքների համար: **1.1. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Հողերի սեփականաշնորհումից հետո հանրապետության բազմաթիվ համայնքներում հողերն օգտագործվում են ոչ լիարժեք, շատ համայնքներում գյուղատնտեսական նշանակության հողերի մի մասը ընդհանրապես չի օգտագործվում՝ ցածր բերքատվության, բնակավայրերից հեռավորության, դաշտային ճանապարհների անմխիթար վիճակի, տեխնիկայի բացակայության, մեծ թեքությունների պատճառով: Ներկայումս փաստացի չի իրականացվում գյուղատնտեսական նշանակության չօգտագործվող հողերի ուսումնասիրություն (դիտարկում), բացակայում են գյուղատնտեսական նշանակության հողերը որպես չօգտագործվող հողեր դասակարգելու չափանիշները և չօգտագործվող հողերի հաշվառման կարգը, ինչը դժվարեցնում է չօգտագործվող հողերը հաշվառելու և դրանց վերաբերյալ տեղեկատվության գրանցման գործընթացը, որն էլ իր հերթին խոչընդոտ է հանդիսանում չօգտագործվող հողերը շրջանառության մեջ ներգրավելուն: Սեփականության իրավունքից զրկելը որևէ պարագայում ընդունելի չհամարելով, անհրաժեշտ է կարգավորել օրենսդրական դաշտը՝ հնարավորություն ստեղծելով տնօրինելու սեփականացված չմշակվող հողատարածքները, այդ թվում՝ հանրապետությունից ընտանիքներով արտագաղթած հողօգտագործողներինը (մինչև իրենց կողմից հողերի մշակմանը ձեռնամուխ լինելը), դրանք գյուղատնտեսական շրջանառության մեջ ներառելու համար: Կմշակվի չօգտագործվող հողերը շրջանառության մեջ դնելու վերաբերյալ իրավական ակտի նախագիծ: Միջոցառումն ուղղված է Արարատի և Արմավիրի մարզերի ջրային պաշարների և ոռոգման ենթակառուցվածքների շարունակական արդիականացմանը, աջակցելու է ոռոգման ժամանակակից համակարգերի ներդրմանը (կաթիլային, անձրևացում և այլն)՝ խորհրդատվական ծառայությունների շարժական խմբերի և ջրօգտագործողների ընկերությունների կողմից նախապես ընտրված 2000 հա պիլոտային տարածքների վրա: Նպատակը կայանալու է վերոնշյալ փորձնական ոռոգվող տարածքների միջոցով խրախուսել կոոպերատիվների ձևավորման մշակույթը հողերի կոնսոլիդացիային և կոոպերատիվների զարգացմանը ձգտող ֆերմերների մոտ: Կգործարկվեն մի քանի աջակցման հիմնադրամներ նշված պիլոտային գործընթացներում ներգրավված ֆերմերների խմբերին և կոոպերատիվներին աջակցելու ոչ միայն գյուղատնտեսական սարքավորումների և ոռոգման տեխնոլոգիաների ոլորտում ներդրումների կատարման, այլ նաև հողերի կոնսոլիդացիայի գործընթացների ֆինանսավորման գործում: **Կստեղծվի պետական կառավարման համակարգի մարմինների ղեկավարների մակարդակով միջգերատեսչական աշխատանքային խումբ ԷՆ-ի, ՏԿԵՆ-ի, ՇՄՆ-ի և կադաստրի կոմիտեի համանախագահության սկզբունքով:** **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման իրականացման արդյունքում՝ – համապատասխան իրավական ակտի մշակման և կատարելագործման արդյունքում յուրաքանչյուր տարի գյուղատնտեսության ոլորտում շրջանառության մեջ կներառվեն նոր հողերի, գյուղատնտեսական նշանակության հողերը կօգտագործվեն արդյունավետ և նպատակային, – կմշակվեն հողերի խոշորացման ուղիներ, միջոցառման իրականացման արդյունքում շուրջ 3000 հա հողատարածքներ կոռոգվեն արդիական համակարգերով:
	<u>9.12 Աջակցություն գիտակրթական համակարգերին, թվային գյուղատնտեսության զարգացմանը և շուկայի պահանջներին համապատասխան կադրերի պատրաստմանը</u> **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է Ազգային Ժողովի 2021 թվականի օգոստոսի 26-ի N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի դրույթներից («2.4 Գյուղատնտեսություն» ենթաբաժին, 2-րդ պարբերության 18-րդ ենթակետ): Միջոցառման հիմնական նպատակներն են՝ – թվային գործիքների կիրառմամբ տվյալների շտեմարանի ստեղծումը, որը կհամախմբի գյուղատնտեսության ոլորտին վերաբերող վիճակագրական կոմիտեի, մաքսային ծառայության, կադաստրի, միջազգային տվյալների բազաների տվյալները և նախարարության տվյալների հետ միասին կձևավորի միասնական տվյալներ շտեմարան: Շտեմարանը օգտագործվելու է նախարարությունում ապացույցների վրա հիմնված քաղաքականության մշակման նպատակով,

- ոլորտի կարողությունների հզորացումը, ոլորտը մասնագիտական կրթությամբ կադրերով ապահովմանը և համալրմանը աջակցելը, թվային գյուղատնտեսությանն ու նորարարությանն ուղղված կրթական համակարգի կարողությունների զարգացումը, պետական աջակցությունը մասնագետների պատրաստման և վերապատրաստման ծրագրերի իրականացումը,
- ագրարային ոլորտի գիտակրթական, արտադրական և խորհրդատվական կառույցների համագործակցության բարելավման, ինտեգրման, գիտակրթական ներուժի օգտագործման և արտադրությունում ներդրման, գիտելիքահենք տնտեսության զարգացման և մրցունակ արտադրանքի թողարկման գործում գյուղատնտեսության ոլորտում գիտակրթական-արտադրական կլաստերների ստեղծման միջազգային փորձի, արդյունավետության և Հայաստանի Հանրապետությունում ներդրման հեռանկարների ուսումնասիրության արդյունքները ներդնելու համար անհրաժեշտ իրավական ակտ(եր)ի ընդունումը և հետագա միջոցառումների իրականացումը:
- գյուղատնտեսությունում տնտեսավարողներին գյուղատնտեսական գիտելիքների, նորարարությունների, նոր տեխնոլոգիաների, գյուղատնտեսության արդյունավետ վարման վերաբերյալ խորհրդատվության մատուցումը և տեղեկատվության հասանելիության ապահովումը:

1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Ներկայումս հանրապետությունում իրականացվում է «Գյուղատնտեսդության ոլորտում քաղաքականության մոնիթորինգի և գնահատման կարողությունների զարգացման» դրամաշնորհային ծրագիրը, որը գտնվում է տվյալների բազաների և վերլուծական գործիքների ստեղծման, տվյալների հավաքման համակարգի ձևավորման, մոնիթորինգի համակարգերի մշակման, միջազգային տվյալների հասանելիության, ուսուցման և աջակցության փուլում: Ընթացիկ փուլի կարևորագույն խնդիրներն են տվյալների շտեմարանի պատրաստումը, գյուղատնտեսության ոլորտում GIS (աշխարհագրական տեղեկատվական համակարգ)-ի ներդրումը, նախարարության աշխատակիցների համար դասընթացների կազմակերպումը:

Ագրարային քաղաքականության իրականացման, ոլորտի մրցունակության և արդյունավետության բարձրացման կարևոր խնդիրներից է ժամանակակից մասնագիտական գիտելիքներին և տեխնոլոգիաներին, գործնական հմտություններին տիրապետող մասնագետների առկայությունը, գյուղատնտեսական գիտության ոլորտում սահուն սերնդափոխության ապահովումը, նորարարական լուծումներով գյուղատնտեսական արտադրության խթանումը, առցանց ուսուցման հարթակների զարգացումը:

Միջոցառման համար ելակետային տվյալներ առկա չեն, միջոցառումը գտնվում է նախնական ուսումնասիրման փուլում: Առկա խնդիրներն են՝ ոլորտի կարողությունների հզորացման նպատակով ժամանակակից տեխնոլոգիաներին տիրապետող մասնագետների պատրաստումը և կադրերի պահանջարկի բավարարումը, գիտահետազոտական և նորարարական գործունեության զարգացումը, մրցունակ արտադրանքի թողարկումը, աշխատանքի արտադրողականության բարձրացումը, բիզնես նախաձեռնությունների խթանումը:

Ներկայումս շարունակվում է հրատապ մնալ ժամանակակից ագրոտեխնիկական կանոնների և տեխնոլոգիական կարողությունների կիրառման ցածր մակարդակը, գյուղատնտեսությունում տնտեսավարողների գործունեության արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունը, ինչպես նաև գյուղատնտեսության կառավարման ոլորտում արդիական տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ հանրապետության գյուղատնտեսության ոլորտի մրցունակության բարձրացման հարցը

1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Առկա խնդիրների լուծման նպատակով առաջարկվում է իրականացնել աջակցություն ոլորտի ժամանակակից տեխնոլոգիաներին տիրապետող կադրերի պատրաստմանը, կադրերի պատրաստման պահանջարկի ուսումնասիրում, մասնակցություն մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչների և որակավորումների ոլորտային շրջանակների բնութագրերի մշակման/վերանայման աշխատանքներին՝ գյուղատնտեսության զարգացման ծրագրերին և առաջնային ուղղություններին համապատասխան, այլ երկրների հետ կրթական և գիտատեխնիկական համագործակցության շրջանակներում պետական աջակցություն մասնագետների պատրաստման և վերապատրաստման ծրագրերի իրականացմանը:

Հաշվի առնելով նաև, որ գյուղատնտեսության զարգացումը հանդիսանում է տնտեսական աճի կարևոր բաղադրիչ, սակայն ագրարային մասնագիտությունների գրավչությունը բնակչության շրջանում բարձր չէ, անհրաժեշտ է աջակցել Հայաստանի ազգային ագրարային համալսարան հիմնադրամին իրականացնել միջոցառումներ ագրարային կրթության վարկանիշի բարձրացման ուղղությամբ:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Միջոցառման իրականացման արդյունքում՝

- կստեղծվի ագրարային քաղաքականության յուրօրինակ գործիքակազմ, որի կիրառման շնորհիվ հնարավոր կլինի ունենալ շարունակական թարմ տվյալներ առավել արդյունավետ քաղաքականության մշակման համար,
- կխթանվի ոլորտի աշխատաշուկայում մրցունակ մասնագետների առկայությունը, գիտելիքահենք գյուղատնտեսությունը,

	– հետազոտության արդյունքում կձևավորվի գյուղատնտեսության ոլորտում թվային ցուցանիշով արտահայտված մասնագետների պահանջարկը, – կստեղծվի ինովացիոն-գործարարական միջավայր, որը կաջակցի ագրարային ուղղվածությամբ կրթական հաստատությունների կիրառական հետազոտությունների և փորձարարական տնտեսությունների գործարկմանը, ագրարային ոլորտում կիրառական հետազոտությունների նվաճումների ներդրման համար մեխանիզմների ստեղծմանը, – կբարձրանա գյուղատնտեսությունում տնտեսավարողների տեղեկացվածության մակարդակը, կբարելավվեն մասնագիտական գիտելիքները, կիզորանան կարողությունները, կբարձրանա տնտեսությունների վարման արդյունավետությունը, գյուղատնտեսության նորարարական տեխնոլոգիաների վերաբերյալ իրազեկվածության մակարդակը, գյուղատնտեսության ոլորտում կավելանան ներդրումները, կամրապնդվի ֆերմերային տնտեսություն-մարզային խորհրդատվական ծառայություններ-Հայաստանի ազգային ագրարային համալսարան կապը (մեխանիզմների/հարթակների և ֆինանսական միջոցների տեսանկյունից):
10	***ՀՀ էկոնոմիկայի նախարարության միջոցառումների «10. Զբոսաշրջության զարգացում: Տարեկան 2.5 մլն զբոսաշրջիկի այցելություն, 20 զբոսաշրջային կլաստերների զարգացում, 50 պատմամշակութային օբյեկտների» նպատակի իրագործումը կնպաստի «Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050» փաստաթղթի (առնվազն 2025թ. ցուցանիշների) հետևյալ թիրախների և թիրախային արդյունքների ապահովմանը՝*** ***1. 16-րդ գործողության 16.1 թիրախային արդյունքի ցուցանիշներն ամբողջությամբ (էջ 55)*** **<u>10.1. «Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենքի և օրենքի ընդունումից բխող մի շարք իրավական ակտերի նախագծի մշակում և իրականացում</u>** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Գործող իրավական դաշտի բարելավման անհրաժեշտությունն առաջացել է զբոսաշրջության բնագավառին բնորոշ դինամիկ զարգացման և նոր մարտահրավերների պայմաններում Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի՝ համաշխարհային զբոսաշրջային շուկայում մրցունակության ամրապնդման ու բարձրացման կարևորությունից: Վերոնշյալը համընկնում է ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի թիվ 1363 – Ա որոշմամբ ընդունված ՀՀ կառավարության ծրագրի «2. 5 Զբոսաշրջություն» ենթաբաժնի դրույթներին: Օրենքի նախագծի և առնչվող այլ իրավական ակտերի մշակմամբ նպատակ է դրվում գործող օրենսդրական դաշտի կատարելագործման՝ արդյունքում անհրաժեշտ իրավական հիմքեր ապահովելով զբոսաշրջության ոլորտում իրականացվող պետական քաղաքականության համար համարժեք տեղեկատվական ռեսուրսների հավաքագրման, ինչպես նաև՝ մատուցվող ծառայությունների որակի ու ներդրումային միջավայրի բարելավման համար: Նախատեսվող փաստաթղթերի մշակման օրենսդրական հիմք՝ Սահմանադրության 87-րդ հոդվածի 1-ին կետ: Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՊՀՕ–253-Ն ՀՀ օրենքով հաստատված հավելվածի 15-րդ կետ: ՀՀ վարչապետի 2019թ. հունիսի 1-ի N 658-Լ որոշմամբ հաստատված ՀՀ էկոնոմիկայի նախարարության կանոնադրության 10-րդ կետի 6-րդ ենթակետը և 11-րդ կետի 17-րդ ենթակետ: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Զբոսաշրջության բնագավառում վարչական ռեգիստրի և ծառայությունների հաշվառման համակարգի ներդրման և որակավորման համակարգերի բարելավման, գործարար ներդրումային դաշտի բարելավման հետ կապված իրավահարաբերությունների կարգավորում: Օրենսդրական փաթեթն ուղղվելու է ոլորտում վիճակագրական, տեղեկատվական համակարգի բարելավմանն ու այդ նպատակով նաև վարչական ռեգիստրի, ծառայությունների հաշվառման համակարգի ներդրմանը և որակավորման համակարգերի կատարելագործմանը, գործարար ներդրումային միջավայրի բարելավմանը: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Նախատեսվում է մասնավոր հատվածի և միջազգային գործընկերների հետ համագործակցությամբ ու միջազգային համարժեք փորձի ուսումնասիրության հիման վրա օրենսդրական փաթեթի մշակում: Մասնավորապես նախատեսվում է՝ - Հստակեցնել զբոսաշրջության բնագավառում օգտագործվող հասկացությունները, սահմանել հասկացություններ, - Զբոսաշրջության բնագավառում ճշգրիտ վիճակագրության վարում - Զբոսաշրջային ծառայությունների որակի բարելավում, ծառայությունների նկատմամբ չափանիշների սահմանում և պահպանում, սպառողի իրավունքների լիարժեք իրականացման ապահովման և այդպիսով Հայաստանի զբոսաշրջային արդյունքի մրցունակության բարձրացման նպատակով

նախատեսել զբոսաշրջային օպերատորների, զբոսաշրջային գործակալների, զբոսավարների, ուղեկցորդների, հյուրանոցային ծառայություններ տրամադրողների, զբոսաշրջային ավտոտրանսպորտային ուղևորափոխադրողների գործունեությունը դարձնել ծանուցման ենթակա գործունեության տեսակ, հյուրանոցային ծառայությունների որակավորման համակարգի բարելավում, զբոսավարների և ուղեկցորդների սերտիֆիկացում և պարտադիր վերապատրաստում, ինչպես նաև պահանջներ զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների նկատմամբ:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Առաջարկվող օրենսդրական կարգավորումները հիմք են հանդիսանալու վարչական ռեգիստրի ներդրմանը՝ ի նպաստ զբոսաշրջության ոլորտում վիճակագրական, տեղեկատվական համակարգի բարելավման և քաղաքականության վերաբերյալ որոշումների ընդունման համար անհրաժեշտ ուսումնասիրությունների ու վերլուծությունների:

Նախագծով նախատեսվող որակյալ ուսումնասիրությունների իրականացումը, զբոսաշրջային ռեսուրսների գույքագրումն ու դրա տվյալների հիման վրա նոր մրցունակ զբոսաշրջային արդյունքների մշակումն ու խթանումը, հայկական զբոսաշրջային արդյունքի և զբոսաշրջային շուկաների դիվերսիֆիկացումը, զբոսաշրջային ծառայությունների որակի բարձրացումը, սպառողի իրավունքների իրականացման ապահովումը էապես կնպաստեն Հայաստանում զբոսաշրջության զարգացմանը, զբոսաշրջային համաշխարհային շուկայում հայկական զբոսաշրջային արդյունքի և Հայաստանի՝ որպես զբոսաշրջային երկրի մրցունակության բարձրացմանը: Նախագծերի ընդունումը նշանակալի ներդրում կունենա Հայաստանում տնտեսական զարգացման, Հայաստանի տարածքային համաչափ զարգացման, մարզերում և համայնքներում ենթակառուցվածքների զարգացման և եկամուտների լրացուցիչ աղբյուրների ձևավորման, հանրապետությունում զբաղվածության ավելացման խնդիրների լուծման գործում: Այն նաև լայն թափ կհաղորդի ընթացիկ զբոսաշրջային ծրագրերի բարեհաջող իրականացմանը և նոր ծրագրերի մշակմանն ու իրականացմանը, այդ թվում՝ նպաստելով հայկական զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացմանը, համայնքներում զբոսաշրջության զարգացմանը, համաչափ տարածքային տնտեսական զարգացմանը, մարդկային ռեսուրսների զարգացմանը, միջազգային համագործակցության ակտիվացմանը և այլն:

<u>10. 2. «Հայաստանի զբոսաշրջության ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի հաստատում և իրագործում</u>

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի թիվ 1363 – Ա որոշմամբ ընդունված ՀՀ կառավարության 2021-2026թ. թ. ծրագրի «2. 5 Զբոսաշրջություն» ենթաբաժնի դրույթներով: Հայաստանի զբոսաշրջության ռազմավարության մշակման նպատակն է ստեղծել զբոսաշրջության ոլորտի հիմնարար փաստաթուղթ՝ ուղղված ոլորտի պետական քաղաքականության արդյունավետ իրականացմանը: Ռազմավարության անհրաժեշտությունը բխում է ուղղորդված միջոցառումների համակարգի առկայությունից, որոնց լուծմանը ուղղված կլինի ոլորտի քաղաքականությունը:

Նախատեսվող փաստաթղթերի մշակման օրենսդրական հիմք՝ Սահմանադրության 87-րդ հոդվածի 1-ին կետ: Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՆՀՕ–253-Ն ՀՀ օրենքով հաստատված հավելվածի 15-րդ կետ:

ՀՀ վարչապետի 2019թ. հունիսի 1-ի N 658-Լ որոշմամբ հաստատված ՀՀ էկոնոմիկայի նախարարության կանոնադրության 10-րդ կետի 6-րդ ենթակետը և 11-րդ կետի 17-րդ ենթակետ:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Ներկա փուլում գործող փաստաթուղթն է Հայաստանի զարգացման հայեցակարգը հաստատված 2008 թվականին, որը արդեն իսկ արդիական չէ: Փաստաթղթում ներառված միջոցառումները հստակեցման և լրամշակման կարիք ունեն:

Զբոսաշրջության բնագավառին բնորոշ դինամիկ զարգացման և նոր մարտահրավերների պայմաններում Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի՝ համաշխարհային զբոսաշրջային շուկայում մրցունակության ամրապնդման ու բարձրացման անհրաժեշտությունից ելնելով առաջացել է զբոսաշրջության ոլորտի ռազմավարության մշակման անհրաժեշտություն:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Լուծումները ուղղված կլինեն հետազոտությունների, վերլուծությունների իրականացմանը, որոնց հիման վրա կմշակվեն միջնաժամկետ և երկարաժամկետ միջոցառումներ՝ ուղղված ոլորտի դինամիկ աճի պահպանմանը: Ռազմավարության մշակման համար անհրաժեշտ է ներգրավել համապատասխան ռեսուրսներ:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Հայաստանի զբոսաշրջության զարգացման ռազմավարության և գործողությունների ծրագրի/ժամանակացույցի առկայությունը հիմք կհանդիսանա զբոսաշրջության բնագավառում զարգացման գործընթացների պլանավորման և իրականացման համար:

	<u>10. 2. 1 Նոր զբոսաշրջային բրենդի մշակում և նոր առաջարկների ձևավորում</u> 1. **Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի թիվ 1363 – Ա որոշմամբ ընդունված ՀՀ կառավարության ծրագրի «2. 5 Զբոսաշրջություն» ենթաբաժնի դրույթներով: Միջոցառման իրականացումն ուղղված է Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի ճանաչելիության և մրցունակության ապահովմանը, զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացմանը: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկա փուլում անհրաժեշտ է Հայաստանի նոր զբոսաշրջային բրենդի ստեղծումը կլուծի միասնական ուղերձով և գրավիչ վիզուալ արտահայտմամբ հանդես գալու խնդիրը: Զբոսաշրջիկների կողմից զբոսաշրջային լայն և գրավիչ առաջարկների բացակայությունը խոչընդոտում է դեպի Հայաստան զբոսաշրջային հոսքերի ավելացմանը, միաժամանակ փաթեթների ձեռքբերման առցանց հարթակի բացակայությունը բացասական է անդրադառնում զբոսաշրջային արդյունքի իրացման գործընթացի վրա: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** - Հայաստանի նոր զբոսաշրջային բրենդ, - ճանաչելի զբոսաշրջային արդյունք, - առցանց հարթակ, որի միջոցով օտարերկրյա զբոսաշրջիկները առավել դյուրին ձեռք կբերեն զբոսաշրջային փաթեթները, ***- Համաշխարհային զբոսաշրջային շուկայում երկրի բարելավված վարկանիշ***
	<u>10. 3</u> <u>Զբոսաշրջային տվյալների հավաքագրում և թվայնացում</u> **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Զբոսաշրջության վիճակագրության բարելավումը և ստույգ վիճակագրական տվյալների հիման վրա բարձրորակ հետազոտությունների ու վերլուծությունների ապահովումը ոլորտում վարվող պետական քաղաքականության հիմնական խնդիրներից են, ինչը ամրագրված է նաև «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության» մասին ՀՀ օրենքով և Զբոսաշրջության զարգացման հայեցակարգով: Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի թիվ 1363 – Ա որոշմամբ ընդունված ՀՀ կառավարության ծրագրի «2. 5 Զբոսաշրջություն» ենթաբաժնի դրույթներով: ՀՀ ԷՆ զբոսաշրջության կոմիտեի, ՀՀ վիճակագրական կոմիտեի, Հայաստանում դոնոր կազմակերպությունների՝ Գերմանիայի Դաշնային ծառայության, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության և Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի համագործակցությամբ արդեն իսկ ՀՀ սահմանային անցման կետերում իրականացվել են երկու վիճակագրական հետազոտություններ: Վիճակագրական հետազոտությունների նպատակն է իրականացնել հանրապետություն ժամանողների և հանրապետությունից մեկնողների շրջանում զբոսաշրջիկների վերաբերյալ հնարավորինս հավաստի տվյալների հավաքագրումը: Հավաքագրված տվյալները կնպաստեն զբոսաշրջիկների աշխարհագրական բաշխվածության, ժամանման/մեկնման նպատակի, զբոսաշրջիկների սեռատարիքային կազմի, ճամփորդության կազմակերպման տարբերակների, կատարված ծախսերի կառուցվածքի և այլնի բնորոշմանը: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Ներկա դրությամբ ոլորտային վերլուծություններ իրականացնելու նպատակով օգտագործվում են 2013թ. իրականացված հետազոտության արդյունքում ստացված տվյալները, որոնք այլևս արդիական չեն և թույլ չեն տալիս բացահայտել Հայաստանի զբոսաշրջության ոլորտի խնդիրները, վերանայել զբոսաշրջության ռազմավարությունը, մշակել զբոսաշրջային նոր փաթեթներ և բարելավել զբոսաշրջության ոլորտում իրականացվող ծառայությունների որակը: Հայաստանի զբոսաշրջային վիճակագրության կայուն հիմքերի ապահովման, զբոսաշրջության ողջ բնագավառն արտացոլող, ներառյալ՝ տնտեսական ցուցանիշների, զբոսաշրջիկների քաղաքացիության աշխարհագրական բաշխվածության, սեռի և տարիքի, այցելության նպատակի, տևողության և կրկնվողականության, զբոսաշրջային վարքագծի և զբոսաշրջիկների նախասիրությունների, Հայաստանում ծախսած գումարների վերաբերյալ ամբողջական վիճակագրական տվյալների հավաքումը և մշակումը հնարավոր կլինի իրականացնել Հայաստանի սահմանային անցման կետերում զբոսաշրջային այցելությունների վիճակագրական հետազոտություն իրականացնելու և արդյունքում ՄԱԿ Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության (ՄԱԿ ԶՀԿ) կողմից մշակված մեթոդաբանությանը համապատասխան զբոսաշրջության սատելիտային հաշիվ ներդնելու միջոցով: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Հայաստանի սահմանային անցման կետերում զբոսաշրջային այցելությունների վերաբերյալ ընտրանքային երրորդ հետազոտության իրականացումը կնպաստի զբոսաշրջիկների աշխարհագրական բաշխվածության, ժամանման/մեկնման նպատակի, զբոսաշրջիկների սեռատարիքային կազմի, ճամփորդության կազմակերպման տարբերակների, կատարված ծախսերի կառուցվածքի և այլնի վերաբերյալ արդիականացված տվյալների հավաքագրմանը, ինչը հնարավորություն կընձեռի բացահայտել Հայաստանի զբոսաշրջության ոլորտի խնդիրները, վերանայել զբոսաշրջության ռազմավարությունը, մշակել զբոսաշրջային նոր փաթեթներ և բարելավել

	զբոսաշրջության ոլորտում իրականացվող ծառայությունների որակը: Միջոցառման իրականացումը նաև առաջիկայում Հայաստանում Սատելիտային հաշիվ համակարգի ներդրման նախապայման է: Սատելիտային հաշիվ համակարգն ուղղված կլինի երկրի զբոսաշրջային ոլորտի ամբողջական վիճակագրական տվյալների հավաքագրմանն ու մշակմանը, ճշգրիտ հետազոտությունների և վերլուծությունների իրականացմանը:
	<u>10.4 Ներքին զբոսաշրջության զարգացում</u> ***<u>Պետության կողմից սոցիալական փաթեթի շրջանակներում իրականացվող ծառայությունների համակարգման էլեկտրոնային համակարգի ներդնում</u>*** **1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Սոցիալական փաթեթի հանգստի ապահովման ծառայության շրջանակներում զբոսաշրջային փաթեթների և առանձին հյուրանոցային ծառայությունների ամրագրման և հաշվետվական էլեկտրոնային համակարգի ներդրման նպատակն է սոցիալական փաթեթի հանգստի ապահովման ծառայության բաղադրիչը դարձնել առավել թափանցիկ և վերահսկելի՝ չխոչընդոտելով մասնավոր հատվածի բնականոն գործունեությանը, նվազագույնի հասցնել հնարավոր չարաշահումների ռիսկը: Համակարգի ներդրումը նպատակ ունի պարզեցնել սոցիալական փաթեթի հանգստի ապահովման ծառայության մեջ ընդգրկված զբոսաշրջային օպերատորների, ծառայություններ մատուցող այլ անձանց (այդ թվում՝ հյուրանոցային ծառայություններ մատուցող անձանց) գործառույթները՝ ծառայությունների մատուցումը առավել մատչելի դարձնելով շահառուների համար: Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի թիվ 1363 – Ա որոշմամբ ընդունված ՀՀ կառավարության ծրագրի «2. 5 Զբոսաշրջություն» ենթաբաժնի դրույթներով: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Սոցիալական փաթեթի հանգստի ապահովման ծառայության շրջանակներում զբոսաշրջային փաթեթները և առանձին հյուրանոցային ծառայությունները ներկայումս իրացվում են շուրջ 70 զբոսաշրջային օպերատորի կողմից: Հետզհետե ավելի է բարդանում զբոսաշրջային օպերատորների նկատմամբ վերահսկողության իրականացումը, ինչպես նաև դժվարանում է զբոսաշրջային օպերատորների կողմից հնարավոր չարաշահումների բացահայտումը: Առկա են նաև բազմաթիվ խնդիրներ հյուրանոցային ծառայություն մատուցող անձ և զբոսաշրջային օպերատոր համագործակցության շրջանակներում (կուտակված պարտքեր, հյուրանոցային ծառայություն մատուցող անձանց կողմից հայտարարված մանրածախ գնից առավել ցածր գնով վերջնական սպառողին ծառայությունների մատուցում և այլն): **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Առկա խնդիրների լուծման նպատակով առաջարկվում է ներդնել Սոցիալական փաթեթի հանգստի ապահովման ծառայության շրջանակներում զբոսաշրջային փաթեթների, տուրերի և առանձին հյուրանոցային ծառայությունների ամրագրման և հաշվետվողական էլեկտրոնային համակարգ: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** - Ներքին զբոսաշրջության տարեկան 30% աճ, - Պետության կողմից սոցիալական փաթեթի շրջանակներում իրականացվող ծառայությունների համակարգման էլեկտրոնային համակարգի ներդրում, Սոցիալական փաթեթի հանգստի ապահովման ծառայության շրջանակներում զբոսաշրջային փաթեթների և առանձին հյուրանոցային ծառայությունների ամրագրման և հաշվետվողական էլեկտրոնային համակարգի ներդրումը թույլ կտա կանխել հնարավոր չարաշահումները, ցանկացած պահին ունենալ վերլուծական տեղեկատվություն կնքված, իրացված, վաղաժամկետ դադարեցված պայմանագրերի, շահառուների քանակի, նախընտրելի ուղղությունների և այլնի վերաբերյալ:
	<u>10. 5 Ներգնա զբոսաշրջության զարգացում</u> **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի թիվ 1363 – Ա որոշմամբ ընդունված ՀՀ կառավարության ծրագրի «2. 5 Զբոսաշրջություն» ենթաբաժնի դրույթներով: Միջոցառման իրականացումն ուղղված է Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի ճանաչելիության և մրցունակության, վիճակագրական տեղեկատվական համակարգի կատարելագործման ապահովմանը, զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացմանը, ենթակառուցվածքների և մարդկային ռեսուրսների զարգացմանը, միջազգային համագործակցության ակտիվացմանը: ՀՀ վարչապետը Գեղարքունիքի մարզի Շողակաթ համայնքում նախընտրական քարոզարշավի ժամանակ նշել է. «Նախորդ տարի կորոնավիրուսի պատճառով զբոսաշրջային հոսքերը նվազել են, բայց մենք հնարավոր բոլոր ենթակառուցվածքները կվերականգնենք, որպեսզի դուք աշխատելու և արարելու հնարավորություն ունենաք»: Նախատեսվող փաստաթղթերի մշակման օրենսդրական հիմք՝ Սահմանադրության 87-րդ հոդվածի 1-ին կետ: Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՕ–253-Ն ՀՀ օրենքով հաստատված հավելվածի 15-րդ կետ: ՀՀ վարչապետի 2019թ. հունիսի 1-ի N 658-Լ որոշմամբ հաստատված ՀՀ էկոնոմիկայի նախարարության կանոնադրության 10-րդ կետի 6-րդ ենթակետը և 11-րդ կետի 17-րդ ենթակետ:

1. 1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Համաձայն «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքի յուրաքանչյուր տարի մշակվում է զբոսաշրջության զարգացման ծրագիր՝ «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը», որը շարունակաբար ուղղվում է ոլորտում առկա խնդիրների լուծմանը:

1. 2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

«Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» տարեկան ծրագրի իրականացման շրջանակներում մասնավորապես նախատեսված են մարքեթինգային, զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացմանը, մարդկային ռեսուրսների և ենթակառուցվածքների զարգացմանը, միջազգային համագործակցության ապահովմանն ուղղված միջոցառումներ:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

- Միջազգային զբոսաշրջիկների թվի ավելացում՝ տարեկան միջինը 10% չափով
- Դեպի ՀՀ և ՀՀ-ից դուրս նոր ուղղություններով չվերթներ իրականացնող ավիաընկերությունների ներգրավմանը և արդեն իսկ շահագործվող ուղղությունների զարգացմանն ուղղված գովազդային, մարքեթինգային և այլ միջոցառումների իրականացում,
- Զբոսաշրջության զարգացման մարքեթինգային քաղաքականության իրականացում՝
    - Միջազգային զբոսաշրջային շուկաների և զբոսաշրջության զարգացման միտումների վերլուծություն, թիրախային շուկաների ընտրություն: Նոր զբոսաշրջային շուկաներում ակտիվ մարքեթինգային միջոցառումներ՝ տարեկան առնվազն 5 շուկայում
    - Միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսների, ճանաչողական այցերի և շնորհանդեսների կազմակերպում, տարեկան 3-5 միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսների, 3-5 ճանաչողական այցերի և 3-5 շնորհանդեսների կազմակերպում
    - Ճամփորդական պարբերականների հետ համագործակցություն,
    - Գովազդատեղեկատվական նյութերի, տեսահոլովակների և լուսանկարների բազայի ստեղծում,
    - Պաշտոնական զբոսաշրջային նոր կայքի ստեղծում (ներառյալ միջոցառումների և տոնակատարությունների օրացույցի մշակում և պարբերաբար թարմացում), դրա ֆունկցիոնալության, բովանդակության թարգմանության ապահովում և առաջխաղացում,
- ՀՀ մարզերի ներգրավում զբոսաշրջային գործունեությանը, տարեկան առնվազն 10 փառատոներ, տոնակատարություններ և այլ զբոսաշրջային միջոցառումների անցկացմանն աջակցության ապահովում,
- Տարեկան առնվազն 7 զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների գործունեության ապահովման աջակցություն
- Հայաստանի՝ որպես տարածաշրջանային բժշկական և առողջարանային կենտրոնի ձևավորում և համապատասխան առաջարկների բազայի հիմնում:

<u>10. 6 Օտարերկրյա պետությունների, տարածաշրջանային և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցություն</u>

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի թիվ 1363 – Ա որոշմամբ ընդունված ՀՀ կառավարության ծրագրի «2. 5 Զբոսաշրջություն» ենթաբաժնի դրույթներով: Հայաստանի, որպես զբոսաշրջության համար բարենպաստ երկրի նկարագրի ձևավորումն ու համաշխարհային զբոսաշրջային շուկային Հայաստանի հասանելիության ապահովումը, երկրի վարկանիշի բարձրացումը ոլորտում վարվող պետական քաղաքականության հիմնական խնդիրներից են, ինչն ամրագրված է ՀՀ զբոսաշրջության զարգացման հայեցակարգով և «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

2021 թվականի հունիսի 2-ից 4-ը Աթենքում (Հունաստան) կայացած ՄԱԿ զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության Եվրոպայի տարածաշրջանային հանձնաժողովի 66-րդ նիստի ընթացքում կայացել է ՄԱԿ ԶՀԿ գործադիր խորհրդին անդամակցության քվեարկություն, որին առաջադրվել էր նաև Հայաստանի Հանրապետության թեկնածությունը: Քվեարկության արդյունքում Հայաստանը ընդգրկվել է ՄԱԿ ԶՀԿ գործադիր խորհրդի կազմում: Համաձայն որի՝ ընդունվել է որոշում ՄԱԿ ԶՀԿ Եվրոպայի տարածաշրջանային հանձնաժողովի 67-րդ նիստը Հայաստանում անցկացնելու վերաբերյալ:

1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

1997թ. -ից Հայաստանը հանդիսանում է ՄԱԿ ԶՀԿ լիիրավ անդամ, հետևում է կազմակերպության գործունեությանը՝ անհրաժեշտության դեպքում նաև որոշակի ներդրում ունենալով ծրագրերում և նախաձեռնություններում, և ակտիվորեն մասնակցում վերջինիս կողմից կազմակերպվող միջոցառումներին:

ՄԱԿ զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության Եվրոպայի տարածաշրջանային հանձնաժողովի 67-րդ նիստի Հայաստանում կազմակերպումը անհրաժեշտ է ՄԱԿ ԶՀԿ հետ համագործակցության ընդլայնման, կազմակերպության գործունեությանն ակտիվ մասնակցության ու նորանոր հնարավորությունների ստեղծման համար:

1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

- ՄԱԿ ԶՀԿ Եվրոպայի տարածաշրջանի անդամ պետությունների հետ արդյունավետ համագործակցություն,
- կազմակերպության գործունեությանն ակտիվ մասնակցություն,
- ՄԱԿ ԶՀԿ կողմից կազմակերպվող միջոցառումներին, ծրագրերին և նախաձեռնություններին ակտիվ մասնակցություն:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

- ՄԱԿ ԶՀԿ Եվրոպայի տարածաշրջանային հանձնաժողովի 67-րդ նիստի կազմակերպում Հայաստանում
- Զբոսաշրջային ոլորտի միջազգային նշանակության միջոցառումների, կոնֆերանսների իրականացում ՀՀ-ում, առնվազն մեկ միջոցառում ամեն տարի
- Համաշխարհային Բանկի, Եվրամիության և այլոց հետ զբոսաշրջային ոլորտի զարգացման նոր, ավելի ճկուն և արդյունավետ վարկային և գրանտային ծրագրերի բանակցում և իրականացում:

<u>10. 7 Զբոսաշրջային ծառայությունների որակի բարելավում</u>

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Զբոսաշրջության ոլորտում ծառայությունների բարելավման համար անհրաժեշտ է ներդնել ստանդարտացման, կարգավորման համակարգեր՝ տնտեսավարողների համար որոշակի որակի չափանիշների համապատասխանեցման նպատակով: Բարձրակարգ ծառայությունների մատուցման առանցքային կարևոր բաղադրիչներից է նաև սպասարկող անձնակազմին ներկայացվող պահանջները, որոնց համար նախատեսվում են ՀՀ մարզերում վերապատրաստման հասանելիության ապահովում: Հայաստանում ընդլայնվում է արկածային զբոսաշրջային առաջարկների տեսակները, և ներգնա զբոսաշրջային օպերատորների (հատկապես միջազգային ներկայացուցիչները) կողմից պահանջվում է միջազգայնորեն ճանաչելի սերտիֆիկացված անձնակազմ: Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի թիվ 1363 – Ա որոշմամբ ընդունված ՀՀ կառավարության ծրագրի «2. 5 Զբոսաշրջություն» ենթաբաժնի դրույթներով

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Հայաստանի զբոսաշրջության ոլորտի տնտեսավարող սուբյեկտների համար ներկայումս գործում է երկու կամավոր սերտիֆիկացման համակարգ. դրանք հյուրանոցային տնտեսության օբյեկտներն են և զբոսաշրջային ավտոբուսները: Սակայն ոլորտում զբոսաշրջային արդյունքների դիվերսիֆիկացման շնորհիվ այլ կարգավորումների անհրաժեշտություն է առաջանում, օրինակ՝ փորձարարական զբոսաշրջության սուբյեկտների սերտիֆիկացում:

ՀՀ մարզերում առկա է մարդկային ռեսուրսների սպասարկման ցածր մակարդակ, ինչն անհրաժեշտություն է առաջացնում խիստ մասնագիտացված վերապատրաստման դասընթացների ապահովման:

Ներկայումս Հայաստանի արկածային զբոսաշրջություն իրականացնողների հիմնական մասը չունի միջազգայնորեն ճանաչված հավաստագրեր՝ ինչը սահմանափակում է տվյալ ուղղությունները նախընտրող հոսքերի ավելացումը:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

- Հյուրընկալության ոլորտի աշխատողների համար վերապատրաստման հասանելիության ապահովում մարզերում,
- Արկածային զբոսաշրջություն իրականացնողների համար միջազգայնորեն ճանաչված սերտիֆիկացման ապահովում:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Զբոսաշրջային ստանդարտների և ծառայությունների որակի համակարգի ներդրում:

<u>10.8 Զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացում, «Զբոսաշրջային գյուղ», «Զբոսաշրջային կենտրոն» հայտարարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծերի հաստատում</u>

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի թիվ 1363 – Ա որոշմամբ ընդունված ՀՀ կառավարության ծրագրի «2. 5 Զբոսաշրջություն» ենթաբաժնի դրույթներով, ինչպես նաև Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի մրցունակության բարձրացման, ժամանակակից ենթակառուցվածքների ստեղծման և կատարելագործման անհրաժեշտությամբ: Միջոցառման նպատակն է դեպի զբոսաշրջային վայրեր հասանելիության ապահովման բարելավումը, Հայաստանում առաջանային զարգացման վայրերում զբոսաշրջային և այլ ենթակառուցվածքների ստեղծում և շարունակական զարգացումը:

1. 1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Համաշխարհային բանկի «Տեղական տնտեսությունների և ենթակառուցվածքների զարգացում» վարկային ծրագրի իրականացումը մեկնարկել է 2017 թվականին, իրականցվում են և նախատեսվում են մի շարք ենթածրագրեր: Ներկա փուլում առաջացել է ծրագրի ժամանակացույցին համապատասխան իրականացման անհրաժեշտությունը՝

	ծրագրում ընդգրկված զբոսաշրջային վայրերի ընտրությունը և հաստատումը: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Առկա խնդիրների լուծման ուղղությամբ առաջարկվում է բարելավել ծրագրի կառավարման համակարգը, մասնավորապես փոփոխություններ իրականացնել ծրագրի կառավարման կոմիտեի կազմում, ինչպես նաև վերանայել աշխատանքային խմբի անհարաժեշտությունը: Նախատեսվում է նաև Ծրագրի առաջին բաղադրիչի (Ժառանգության վերածնունդ և զբոսաշրջային հանգույցների զարգացում) շրջանակներում հստակեցնել ընդգրկված զբոսաշրջային վայրերի շրջանակը, իրականացվող աշխատանքները և մշակել նոր ժամանակացույց: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** - Զբոսաշրջային վայրերի, այդ թվում՝ «Զբոսաշրջային գյուղ», «Զբոսաշրջային կենտրոն» հայտարարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծեր, - 20 զբոսաշրջային կլաստերի, այդ թվում Արենի հանգույցի, զարգացում - 50 պատմամշակութային հուշարձանի վերականգնում - «Ենթակառուցվածքներ ներդրումների դիմաց» ծրագիր, որով կստեղծվի առնվազն 20 նոր զբոսաշրջային օբյեկտ - Ագրոտուրիզմի զարգացում, մասնավորապես գաստրոբակերի և գինետների ծրագրերի իրականացում: Առնվազն 20 նոր ագրոտուրիստական օբյեկտ: - Զբոսաշրջային այցելավայրերի և հարակից տարածքների կառավարման համակարգի ներդրում (գերատեսչությունների պատասխանատվությունների և պարտականությունների հստակեցում) առնվազն 50 այցելավայրում, - Զբոսաշրջության դիվերսիֆիկացում (նոր զբոսաշրջային ուղղությունների ու պրոդուկտների ստեղծում), առնվազն մեկ նոր առաջարկ ամեն մարզում - Միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է բարձրացնել ծրագրի իրականացման արդյունավետությունը, բարելավել զբոսաշրջային ենթակառուցվածքները, զբոսաշրջային վայրերի հասանելիությունը, ինչպես նաև բարձրացնել ընդգրկված համայնքների բնակչության ներգրավվածությունը զբոսաշրջային գործընթացներին: - Առնվազն 20 զբոսաշրջային օբյեկտներում զբոսաշրջային առաջարկի բովանդակային հագեցում, ներառյալ գաստրո ու մշակութային փառատոների և այլ միջոցառումների սատարմամբ, այդ թվում Դաշտադեմի ամրոցում Յարխուշտայի ամենամյա փառատոն:
11	***ՀՀ էկոնոմիկայի նախարարության միջոցառումների «11. Որակի ենթակառուցվածքների զարգացում» նպատակի «Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050» փաստաթղթի (առնվազն 2025թ. ցուցանիշների) հետևյալ թիրախների և թիրախային արդյունքների ապահովմանը՝ 4-րդ գործողության 4.1 թիրախային արդյունք, 4.1.2 ցուցանիշ (էջ 43)***
	11 Որակի ենթակառուցվածքի համակարգի զարգացում **11.4 ՀՀ-ում գործող տեխնիկական կանոնակարգերի, համապատասխանության գնահատման ընթացակարգերի և ստանդարտների վերանայում, ԵԱՏՄ նոր մշակվող տեխնիկական կանոնակարգերի, համապատասխանության գնահատման ընթացակարգերի և ստանդարտների մշակմանը մասնակցություն, արտադրանքի անվտանգության ապահովման նպատակով նոր տեխնիկական կանոնակարգերի մշակում և համակարգում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** ԵԱՏՄ պայմանագրով ամրագրված է ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերի ուղիղ կիրառման պահանջ ԵԱՏՄ անդամ պետություններում: ԵԱՏՀ խորհրդի 2011թ. № 526 որոշմամբ սահմանված է թվով 67 արտադրանք, որոնց նկատմամբ միայն ԵԱՏՄ շրջանակներում պետք է գործեն տեխնիկական կանոնակարգեր և ցանկում չներառված արտադրանքին ներկայացվող պահանջների սահմանումը արգելվում է: Միաժամանակ արգելվում է ցանկում ներառված արտադրանքի ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի ուժի մեջ մտնելուց հետո տվյալ արտադրանքի համար ազգային օրենսդրության առկայությունը (կամ լրացուցիչ պահանջների սահմանումը): Բացի այդ, դեռևս գործող ազգային տեխնիկական կանոնակարգերում անհրաժեշտ է միջազգային ընդունված ստանդարտներին ներդաշնակ այնպիսի ստանդարտների/մեթոդների ներառում, որոնք միտված կլինեն ապահովել և նպաստել տեղական արտադրողների կողմից անվտանգ արտադրանքի արտադրմանը, ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում արտադրանքի մրցունակության բարձրացմանը, առևտրում առկա տեխնիկական խոչընդոտների նվազեցմանը, տեղական արտադրանքի համար նոր շուկաների ձեռքբերմանը: ԵԱՏՄ գործող տեխնիկական կանոնակարգերի վերանայման, ինչպես նաև նոր տեխնիկական կանոնակարգերի նախագծերի մշակման մասնակցությունը պայմանավորված է տեխնիկական կանոնակարգերի կիրարկումն ապահովող ստանդարտների ցանկում ընդգրկված հնացած կամ ուժը կորցրած ստանդարտների արդիականացմամբ, ցանկում բացակա ստանդարտների/մեթոդների ներառմամբ, ԵԱՏՀ 2018թ. դեկտեմբերի N 44 որոշմամբ պայմանավորված նոր տիպային սխեմաների (համապատասխանության գնահատման

ընթացակարգերի) վերանայմամբ, ԵԱՏՄ ԱՏԳԱԱ ծածկագրերի արդիականացմամբ, գիտության և տեխնիկայի զարգացմանը համընթաց արդիական նոր պահանջների սահմանմամբ կամ արդեն իսկ սահմանված պահանջների վերանայմամբ: Այս համատեքստում առկա է նաև ՀՀ և ԵԱՏՄ նոր տեխնիկական կանոնակարգերի, նորմատիվ իրավական ակտերի մշակման, գործող ազգային կանոնակարգերի պահանջների վերանայման ու նոր պահանջների սահմանման, ծխախոտային արտադրանքի փոխարինիչներին ներկայացվող ազգային պահանջների վերանայման, ԵԱՏՄ շրջանակներում՝ նիկոտին պարունակող արտադրանքի նկատմամբ պահանջների սահմանման, այն է՝ նոր տեխնիկական կանոնակարգի մշակման անհրաժեշտություն:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները

Ներկայումս ՀՀ-ում գործում են մեծ թվով ազգային տեխնիկական կանոնակարգեր, որոնք ենթակա են վերանայման «Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենքի, ԵԱՏՄ պայմանագրի, ԵԱՏՄ տվյալ ոլորտում գործող օրենսդրության, ԵՄ համանման դիրեկտիվաների մոտարկման տեսանկյունից: «Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև «Առևտրի տեխնիկական խոչընդոտների մասին» համաձայնագրով սահմանված է առնվազն 5 տարին մեկ գործող տեխնիկական կանոնակարգերի վերանայում: 2014 թվականի մայիսի 29-ի «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրին ՀՀ-ի միացումից հետո ՀՀ ազգային ՏԿ-ների ԵՄ համանման դիրեկտիվաներին մոտարկման գործընթացը սառեցվել է, այս ուղղությամբ աշխատանքների իրականացումը, սակայն, արդի պահանջներին համապատասխանեցումը ներկայումս հրատապ է ու անհետաձգելի, ինչը ապահովվելու է ՍԵՊԱ Համաձայնագրի շրջանակներում: Հաշվի առնելով ՀՀ-ԵՄ համագործակցության վերսկսումը, միաժամանակ ԵԱՏՄ պայմանագրով ՀՀ-ի ստանձնած պարտավորությունները կրկին անհրաժեշտություն է առաջացել այդ համատեքստում վերանայել գործող ազգային տեխնիկական կանոնակարգերը: Ներկայումս առկա է ստանդարտացման, ինչպես նաև որակի ենթակառուցվածքի մյուս ոլորտներում առկա իրազեկության ցածր մակարդակ, ինչը պայմանավորված է նաև մասնավոր հատվածի, տեղական արտադրողի համեմատաբար պասիվությամբ: Գործող տեխնիկական կանոնակարգերի կիրարկումն ապահովող ստանդարտները հաճախ արդիականացված և ներդաշնակ չեն ստանդարտացման միջազգային կազմակերպությունների կողմից ընդունված ստանդարտներին, կամ տեխնիկական կանոնակարգերի կիրարկումն ապահովող ստանդարտների ցանկերում բացակայում են անվտանգության բոլոր ցուցանիշներն ապահովող ստանդարտներ/մեթոդներ և չեն արտացոլում արդի պահանջները, ինչպես նաև չեն ապահովում շուկայահանման, համապատասխանության գնահատման գործընթացների իրականացումն ամբողջ ծավալով: Վերոնշյալը հանգեցնում է տեղական արտադրողների կողմից անմրցունակ և ոչ անվտանգ արտադրանքի արտադրմանը: ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերը մշակվել և ընդունվել են դեռևս 2011-2012թթ., իսկ գիտատեխնիկական զարգացման արդյունքում մշակվել են նոր ստանդարտներ: ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերի կիրարկումն ապահովող ստանդարտների ցանկերի վերլուծության ընթացքում, ինչպես նաև շահագրգիռ մարմինների կողմից տրամադրված տեղեկատվության արդյունքում պարզվել է, որ ստանդարտները հնացել կամ ուժը կորցրած են ճանաչվել կամ փոխարինվել են նոր ստանդարտներով: Բացի այդ տեխնիկական կանոնակարգերով կան սահմանված ցուցանիշներ, որոնց համապատասխանությունն ապահովող մեթոդիկաները բացակայում են: Ոլորտում առկա իրավիճակի վերլուծության արդյունքում անհրաժեշտություն է առաջացել արդիականացնել տեխնիկական կանոնակարգերը՝ ստանդարտների, ցուցանիշների և գնահատման ընթացակարգերի վերանայման տեսանկյունից:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Ներկայումս ՀՀ-ում գործում են մեծ թվով ազգային տեխնիկական կանոնակարգեր, որոնց՝

- օբյեկտ հանդիսացող արտադրանքն արդեն իսկ կանոնակարգվում է ԵԱՏՄ օրենսդրությամբ, ուստի դրանցով սահմանված պահանջները պետք է վերանայվեն՝ ապահովելով անհրաժեշտության դեպքում ազգային օրենսդրությամբ տվյալ արտադրանքի համար սահմանված լրացուցիչ պահանջի առկայության դեպքում դրանց ներկայացում ԵԱՏՀ՝ համապատասխան ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերում դրանց ներառելու համար (եթե տվյալ պահանջի առկայությունը դեռևս արդիական է և բխում է տեղական արտադրողների շահերից), ԵԱՏՄ պայմանագրով ամրագրված դրույթներին չհակասելու համար անհրաժեշտության դեպքում դրանք պետք է ուժը կորցրած ճանաչվեն (շրջանառվող արտադրանքի համար համապատասխանության գնահատման փաստաթղթերի առկայության, գնահատման փաստաթղթի վավերականության ժամկետում դրա շուկայում տեղադրման, պիտանելիության ժամկետների մոնիթորինգի իրականացման արդյունքում ստացված տեղեկատվության հիման վրա), օբյեկտ հանդիսացող արտադրանքը ներառված է ԵԱՏՀ ցանկում, սակայն դրա ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգը բացակայում է (նախագծային փուլում է կամ դեռևս մշակված չէ), ուստի տվյալ արտադրանքի համար ազգային օրենսդրությունը արդիականացման/վերանայման անհրաժեշտություն ունի:
- նոր տեխնիկական կանոնակարգի, նորմատիվ իրավական ակտի մշակում, ներկայացվող պահանջների վերանայում ու նոր պահանջների սահմանում, ծխախոտային արտադրանքի փոխարինիչներին ներկայացվող ազգային պահանջների վերանայում:

ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերի մասով՝

- Շահագրգիռ կողմ հանդիսացող մարմինների՝ Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմնի, համապատասխանության գնահատման մարմինների, հավատարմագրման ազգային մարմնի, ինչպես նաև կանոնակարգող մարմինների աջակցությամբ և համապատասխան աշխատանքային խմբերի ստեղծմամբ ազգային հետաքրքրություն ներկայացնող ստանդարտների, ինչպես նաև ստանդարտացման միջազգային կազմակերպությունների կողմից մշակված արդի ստանդարտների ներառում տեխնիկական կանոնակարգերի միասնական ցանկերում:
- Նիկոտին պարունակող արտադրանքի նկատմամբ պահանջների սահմանում՝ նոր տեխնիկական կանոնակարգի մշակման գործընթացի և դրա հետ կապված ընթացակարգերի ապահովում:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Միջոցառման իրականացման արդյունքում կապահովվի՝

- ԵԱՏՄ շրջանակներում 2023թ. դրությամբ դեռևս չկանոնակարգվող, նիկոտին պարունակող նորարարական արտադրանքի մասով ԵԱՏՄ թվով 1 տեխնիկական կանոնակարգի նախագծի մշակում, հանրային քննարկման ապահովում, 2023-2024թթ. ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի ներպետական համաձայնեցման ընթացակարգերի իրականացման ապահովում, նախագծի 2024թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ ԵՏՀ ներկայացում:
- 2023-2026թթ. ընթացքում յուրաքանչյուր տարի գործող առնվազն 1 ՀՀ և առնվազն 12 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերի կամ դրանց կիրարկումն ապահովող ստանդարտների, համապատասխանության գնահատման ընթացակարգերի վերանայում՝ տնտեսության և գիտության զարգացման պահանջներին համահունչ գործող առնվազն 1 ՀՀ և առնվազն 12 ԵԱՏՄ իրավական կարգավորումների սահմանում, ոլորտի արդիականացում:
- 2023-2026թթ. մարդու առողջության և անվտանգության, շրջակա միջավայրի պահպանություն, անբարեխիղճ գործելակերպի կանխարգելում

- 2023-2026թթ. ԵԱՏՄ շուկայում արտադրանքի շրջանառության շուրջ 95% ծավալ կազմող անվտանգ արտադրանքի շրջանառություն:

<u>11.2 Արդյունաբերական չափագիտական կարողությունների ձևավորում և զարգացում՝ տրամաչափարկման լաբորատորիաների ձևավորում, գործարկում և զարգացում</u>

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Արդյունաբերական չափագիտությունը չափագիտության այն ճյուղն է, որն ապահովում է գրեթե բոլոր ոլորտներում կիրառվող չափման միջոցների ճիշտ աշխատանքը, միջազգային մակարդակով չափումների հետևելիությունը, ինչը նպաստում է այդ ոլորտների, գիտության, տեխնիկայի, տնտեսության զարգացմանը, քաղաքացիների կյանքի որակի բարձրացմանը: Չափումների միասնականության ապահովման բնագավառում լուրջ և հիմնարար դեր է խաղում ժամանակակից պահանջներին համապատասխան սարքավորումներով հագեցված՝ արդյունաբերական չափագիտության կենտրոնի, տրամաչափարկման լաբորատորիաների առկայությունը, որը կապահովի արդյունաբերական ձեռնարկությունների չափագիտական սպասարկման որակի էական աճը, ինչպես նաև օրենսդրական և գիտական չափագիտության զարգացում: Ներկայումս ՀՀ-ում հիմնական չափագիտական ուղղություններն ընդգրկող ժամանակակից տրամաչափարկման լաբորատորիաների հիմնումը խիստ կարևոր, արդիական և հրատապ է:

Միջոցառման շրջանակներում տրամաչափարկման լաբորատորիաների կողմից կապահովվեն տրամաչափարկման աշխատանքների իրականացում՝ նախադրյալներ ստեղծելով գիտական չափագիտության զարգացման, իրականացվող փորձարկումների հավաստիության, չափումների ճշտության համար, կստեղծվեն 6 ուղղություններով տրամաչափարկման լաբորատորիաներ, կապահովվի դրանց հավատարմագրումը և գործարկումը: Գործարկման արդյունքում ռազմական արդյունաբերության, առողջապահության, էներգետիկայի, բնապահպանության, գյուղատնտեսության, հանքարդյունաբերության, շինարարության, մետաղամշակման, գործիքաշինության ոլորտներում, գազալցակայաններում, հավատարմագրված փորձարկման լաբորատորիաներում ճշգրիտ և միջազգային մակարդակով հետևելի չափումներ կիրականացվեն: Միաժամանակ կապահովվի Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմնի կազմում նոր ստեղծվող, միջազգային ճանաչում ունեցող տրամաչափարկման լաբորատորիաների ստեղծում և գործարկում, միջլաբորատոր համեմատություններին մասնակցության ապահովում, մասնագիտական որակավորման ծրագրերին և CMC տվյալների հրապարակում Չափի և կշռի միջազգային բյուրոյի տվյալների բազայում՝ հանդիսանալով չափումների միասնականության ապահովման ոլորտում ազգային և միջազգային մակարդակներում կապող կամուրջ, ազգային չափանմուշների տրամաչափարկում այլ երկրների չափագիտության ազգային ինստիտուտի չափանմուշների հետ՝ ապահովելով միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների հետ չափագիտության ազգային մարմնի անդամակցություն, միջազգային ստանդարտներին համապատասխան տրամաչափարկման աշխատանքների իրականացում՝ բավարարելով սույն միջոցառմամբ թվարկված ոլորտներում ներկա տեղական պահանջարկը:

Նշված համատեքստում կապահովվի արտադրվող, արտահանվող մրցունակ արտադրանքի առկայություն, ինչպես նաև որպես միջոցառման հիմնական թիրախ՝ ՀՀ-ում բազմաթիվ ոլորտներում կիրառվող չափման միջոցների, սարքավորումների ճշգրտության և չափագիտական անկախության/հետևելիության ապահովում, ճշգրիտ փորձարկումների իրականացում:

Միջոցառման կատարման անհրաժեշտությունը բխում է նաև ՀՀ կառավարության օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1363-Ա որոշման հավելվածով հաստատված ՀՀ կառավարության ծրագրից՝ (2021-2026թթ.)՝ «2.Տնտեսություն» բաժին, 2.6 Որակի ենթակառուցվածք» ենթաբաժնի 2-րդ պարբերություն:

1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Նշված նպատակի իրականացման համար նախատեսված հիմնական խնդիրներն են՝

- Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմնում միջազգային չափանիշներին համապատասխան արդյունաբերական չափագիտական կենտրոնի ձևավորում, ինչը կապահովի ՀՀ-ում միջազգայնորեն ճանաչված որակի կառավարման համակարգերի /ՈԿՀ/ ներքո գործող չափագիտական ծառայություններ,
- արդյունաբերական չափագիտության կենտրոնի շենքի և լաբորատորիաների վերանորոգում, լաբորատորիաների համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերում,
- Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմնում անձնակազմի մասնագիտական կարողությունների զարգացման անհրաժեշտություն, որոշ չափման տեսակներով՝ գերժամանակակից սարքավորումներով աշխատելու համար անհրաժեշտ հմտությունների զարգացման նպատակով:

1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Ելնելով ՀՀ-ում տրամաչափարկման ենթակա սարքավորումների պահանջարկի վերաբերյալ կատարված ուսումնասիրություններից, գործող, հավատարմագրված, փորձարկման լաբորատորիաներում, օրենսդրական չափագիտության ոլորտներում ընդգրկված և կիրառվող չափման միջոցների տեսականու վերլուծությունից, գերակա են Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմնում արդյունաբերական 6 հետևյալ չափագիտական լաբորատորիաների հիմնումը՝

1. Զանգվածի և հարակից մեծությունների չափումների լաբորատորիա);
2. Ջերմային չափումների լաբորատորիա;
3. Ուժի և հարակից մեծությունների չափումների լաբորատորիա;
4. Գծային (անկյունագծային) մեծությունների չափումների լաբորատորիա;
5. Էլեկտրական մեծությունների չափումների լաբորատորիա;
6. Քիմիական մեծությունների չափումների լաբորատորիա:

Նշված 6 տրամաչափարկման լաբորատորիաների առկայությունը կստեղծեն նախադրյալներ գիտական չափագիտության զարգացման, չափագիտական բարձր որակի ծառայությունների մատուցման և տրամաչափարկման առկա ներքին կարիքների բավարարման համար:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Տրամաչափարկման լաբորատորիաների կողմից կիրականացվեն տրամաչափարկման աշխատանքներ՝ ստեղծելով նախադրյալներ գիտական չափագիտության զարգացման, իրականացվող փորձարկումների հավաստիության, չափումների ճշտության համար: Կստեղծվեն.

- զանգվածի և հարակից մեծությունների, ջերմային չափումների և հարակից մեծությունների, ուժի և հարակից մեծությունների, քիմիական մեծությունների, Էլեկտրական մեծությունների, գծային (անկյունագծային) տրամաչափարկման լաբորատորիաներ՝ ապահովելով ռազմական արդյունաբերության, առողջապահության, էներգետիկայի, բնապահպանության, գյուղատնտեսության,

հանքարդյունաբերության, շինարարության, մետաղամշակման, գործիքաշինության ոլորտներում, գազալցակայաններում, հավատարմագրված փորձարկման լաբորատորիաներում ճշգրիտ և միջազգային մակարդակով հետևելի չափումներ: Արդյունքում,

- 2022 թվականին զանգվածի և հարակից մեծությունների, ջերմային չափումների և հարակից մեծությունների տրամաչափարկման լաբորատորիաների ստեղծում, հավատարմագրման ապահովում և գործարկում:
- 2023 թվականին գծային (անկյունագծային) տրամաչափարկման լաբորատորիայի ստեղծում
- 2024-2026թթ. ուժի և հարակից մեծությունների, քիմիական մեծությունների, Էլեկտրական մեծությունների, գծային (անկյունագծային) տրամաչափարկման լաբորատորիաների ստեղծում
- 2023-2026 թթ. շարունակաբար ռազմական արդյունաբերության, առողջապահության, էներգետիկայի, բնապահպանության, գյուղատնտեսության, հանքարդյունաբերության, շինարարության, մետաղամշակման,

գործիքաշինության ոլորտներում, գազալցակայաններում, հավատարմագրված փորձարկման լաբորատորիաներում ճշգրիտ և միջազգային մակարդակով հետևելի չափումների իրականացում

- 2023-2026 թթ. շարունակաբար Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմնի կազմում նոր ստեղծվող, միջազգային ճանաչում ունեցող տրամաչափարկման լաբորատորիաների ստեղծում և գործարկում, միջլաբորատոր համեմատություններին մասնակցության ապահովում, մասնագիտական որակավորման ծրագրերին և CMC տվյալների հրապարակում Չափի և կշռի միջազգային բյուրոյի տվյալների բազայում՝ հանդիսանալով չափումների միասնականության ապահովման ոլորտում ազգային և միջազգային մակարդակներում կապող կամուրջ, ազգային չափանմուշների տրամաչափարկում այլ երկրների չափագիտության ազգային ինստիտուտի չափանմուշների հետ՝ ապահովելով միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների հետ չափագիտության ազգային մարմնի անդամակցություն, միջազգային ստանդարտներին համապատասխան տրամաչափարկման աշխատանքների իրականացում՝ բավարարելով վերը թվարկված ոլորտներում ներկա տեղական պահանջարկը:
- Արտադրվող, արտահանվող մրցունակ արտադրանքի առկայություն
- 2022-2026թթ շարունակաբար ՀՀ-ում բազմաթիվ ոլորտներում կիրառվող չափման միջոցների, սարքավորումների ճշգրտության և չափագիտական անկախության/հետևելիության ապահովում, ճշգրիտ փորձարկումների իրականացում:

<u>11.3 Համապատասխանության գնահատման և հավատարմագրման կարողությունների զարգացում՝ թիրախ սահմանելով հավատարմագրման ազգային մարմնի միջազգային ճանաչմանն ուղղված բազմակողմ ճանաչման համաձայնագրերի կնքումը տարածաշրջանային և միջազգային հավատարմագրման կազմակերպությունների հետ (EA, ILAC, IAF)</u>

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Հավատարմագրման հիմնական նպատակներից է Հավատարմագրման ազգային մարմնի հավատարմագրման աշխատանքների արդյունքների, հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմինների կողմից տրամադրվող փաստաթղթերի (համապատասխանության սերտիֆիկատների, փորձարկման արձանագրությունների և այլն) միջազգային ճանաչման համար պայմանների ստեղծումը: Հավատարմագրման ազգային մարմինը նշված նպատակին հասնելու համար հավատարմագրման արդյունքների բազմակողմ ճանաչման համաձայնագրերում պետք է ստորագրող կողմ հանդիսանա: Նշված պահանջն ապահովելու համար ՊՈԱԿ-ի կողմից 2016 թվականի հուլիսի 22-ին հայտ է ներկայացվել EA-ի քարտուղարություն՝ եվրոպական (EA) հավատարմագրման համագործակցությանը որպես ասոցացված անդամ դառնալու նպատակով: Միաժամանակ հավատարմագրման ազգային մարմնի կարողությունների զարգացման և հավատարմագրման գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը նախատեսում է Էլեկտրոնային հավատարմագրման գործընթացի (e-accreditation) ավտոմատացման համակարգի մշակում, ներդրում և գործարկում:

Միջոցառման կատարման անհրաժեշտությունը բխում է նաև ՀՀ կառավարության օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1363-Ա որոշման հավելվածով հաստատված ՀՀ կառավարության ծրագրից՝ (2021-2026թթ.)՝ «2. Տնտեսություն» բաժին, «2.6 Որակի ենթակառուցվածք» ենթաբաժնի 3-րդ պարբերություն:

1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

ՊՈԱԿ-ը ներկայումս հանդիսանում է EA-ի ասոցացված անդամ, սակայն ազգային համապատասխանության գնահատման մարմինների կողմից տրամադրված համապատասխանության գնահատման փաստաթղթերը միջազգային ճանաչում չունեն: Դրան հասնելու համար Հավատարմագրման ազգային մարմինը հավատարմագրման արդյունքների բազմակողմ ճանաչման համաձայնագրերում ստորագրող կողմ պետք է հանդիսանա:

1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Տարածաշրջանային և միջազգային հավատարմագրման կազմակերպությունների հետ (EA, ILAC, IAF) հավատարմագրման ազգային մարմնի միջազգային ճանաչմանն ուղղված բազմակողմ ճանաչման համաձայնագրերի կնքմանը հասնելու համար անհրաժեշտ է.

- ՀՀ հավատարմագրման օրենսդրության համապատասխանեցում միջազգային պահանջներին,
- ՀԱՄ կարողությունների զարգացում, անձնակազմի շարունակական վերապատրաստում,
- Տարածաշրջանային և միջազգային հավատարմագրման կազմակերպությունների կողմից մշակված փաստաթղթերի թարգմանություն, ներդնում, տեղայնացում,
- ԻՍՕ/ԻԷԿ 17011-2017 նոր ստանդարտի ներդնում հավատարմագրման ազգային մարմնում,

- ՀԱՄ-ի և ՀԳՄ-ների կողմից մատուցվող ծառայությունների որակի բարձրացում, թափանցիկության ապահովում,
- Եվրոպական հավատարմագրման համագործակցության կոմիտեների աշխատաժողովներին և գագաթնաժողովներին մասնակցություն:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

- 2022թ. հավատարմագրման եվրոպական փորձագետների կողմից հավատարմագրման ազգային մարմնի կարողությունների սիմուլյացիոն գնահատումների իրականացում, արդյունքում ուղղիչ գործողությունների ապահովում, միջազգային 17011 ստանդարտի պահանջներն ապահովող ներքին ընթացակարգերի մշակում և հաստատում:

- 2022թ. ««Հավատարմագրման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի մշակում և ընդունում կառավարության կողմից, 2023թ. հաստատում Ազգային Ժողովի կողմից:

- 2023թ. հավատարմագրման ազգային մարմնի միջազգային ճանաչմանն ուղղված հայտի ներկայացում հավատարմագրման եվրոպական կազմակերպությանը (EA):

- 2022-2024թ. հավատարմագրման ազգային մարմնի կարողությունների զարգացում՝ 2024-2025թթ. հավատարմագրման ոլորտում միջազգային և տարածաշրջանային հավատարմագրման համակարգերին ինտեգրում

- 2022-2026թթ. շարունակական հավատարմագրման գործընթացի մատչելիության, թափանցիկության ապահովում, գործընթացի արդյունավետության բարձրացում, հավատարմագրման ենթակա նոր ոլորտների ներգրավում՝ օրենսդրական կարգավորումների սահմանմամբ:

- 2023-2026թթ ՀՀ -ում հավատարմագրման գործընթացի էլեկտրոնային համակարգի ներդնում և գործարկում, համապատասխանության գնահատման մարմինների կարողությունների շարունակական զարգացում

- 2025-2026թթ. շուկա մուտք գործող արտադրանքի և որակյալ ծառայությունների ապահովում, գործարար միջավայրի համար համապատասխանության գնահատման աշխատանքների իրականացման համար պահանջվող ժամանակի և ֆինանսական ռեսուրսների կրճատում՝ ԵՄ և երրորդ երկրներում հայրենական արտադրանքի արտահանման ծավալների աճ և մրցունակության բարձրացում:

<u>11.4 ՀՀ-ում գործող տեխնիկական կանոնակարգերի, համապատասխանության գնահատման ընթացակարգերի և ստանդարտների վերանայում, ԵԱՏՄ նոր մշակվող տեխնիկական կանոնակարգերի, համապատասխանության գնահատման ընթացակարգերի եւ ստանդարտների մշակմանը մասնակցություն, արտադրանքի անվտանգության ապահովման նպատակով նոր տեխնիկական կանոնակարգերի մշակում և համակարգում</u>

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

ԵԱՏՄ պայմանագրով ամրագրված է ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերի ուղիղ կիրառման պահանջ ԵԱՏՄ անդամ պետություններում: ԵԱՏՀ խորհրդի 2011թ. № 526 որոշմամբ սահմանված է թվով 67 արտադրանք, որոնց նկատմամբ միայն ԵԱՏՄ շրջանակներում պետք է գործեն տեխնիկական կանոնակարգեր և ցանկում չներառված արտադրանքին ներկայացվող պահանջների սահմանումը արգելվում է: Միաժամանակ արգելվում է ցանկում ներառված արտադրանքի ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի ուժի մեջ մտնելուց հետո տվյալ արտադրանքի համար ազգային օրենսդրության առկայությունը (կամ լրացուցիչ պահանջների սահմանումը):

Բացի այդ, դեռևս գործող ազգային տեխնիկական կանոնակարգերում անհրաժեշտ է միջազգային ընդունված ստանդարտներին ներդաշնակ այնպիսի ստանդարտների/մեթոդների ներառում, որոնք միտված կլինեն ապահովել և նպաստել տեղական արտադրողների կողմից անվտանգ արտադրանքի արտադրմանը, ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում արտադրանքի մրցունակության բարձրացմանը, առևտրում առկա տեխնիկական խոչընդոտների նվազեցմանը, տեղական արտադրանքի համար նոր շուկաների ձեռքբերմանը:

ԵԱՏՄ գործող տեխնիկական կանոնակարգերի վերանայման, ինչպես նաև նոր տեխնիկական կանոնակարգերի նախագծերի մշակման մասնակցությունը պայմանավորված է տեխնիկական կանոնակարգերի կիրարկումն ապահովող ստանդարտների ցանկում ընդգրկված հնացած կամ ուժը կորցրած ստանդարտների արդիականացմամբ, ցանկում բացակա ստանդարտների/մեթոդների ներառմամբ, ԵԱՏՀ 2018թ. դեկտեմբերի N 44 որոշմամբ պայմանավորված նոր տիպային սխեմաների (համապատասխանության գնահատման

ընթացակարգերի) վերանայմամբ, ԵԱՏՄ ԱՏԳԱԱ ծածկագրերի արդիականացմամբ, գիտության և տեխնիկայի զարգացմանը համընթաց արդիական նոր պահանջների սահմանմամբ կամ արդեն իսկ սահմանված պահանջների վերանայմամբ:

Այս համատեքստում առկա է նաև ՀՀ և ԵԱՏՄ նոր տեխնիկական կանոնակարգերի, նորմատիվ իրավական ակտերի մշակման, գործող ազգային կանոնակարգերի պահանջների վերանայման ու նոր պահանջների սահմանման, ծխախոտային արտադրանքի փոխարինիչներին ներկայացվող ազգային պահանջների վերանայման, ԵԱՏՄ շրջանակներում՝ նիկոտին պարունակող արտադրանքի նկատմամբ պահանջների սահմանման անհրաժեշտություն:

Միջոցառման կատարման անհրաժեշտությունը բխում է նաև ՀՀ կառավարության օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1363-Ա որոշման հավելվածով հաստատված ՀՀ կառավարության ծրագրից՝ (2021-2026թթ.)՝ «2. Տնտեսություն» բաժնի, «2.6 Որակի ենթակառուցվածք» ենթաբաժին ամբողջությամբ:

1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Ներկայումս ՀՀ-ում գործում են մեծ թվով ազգային տեխնիկական կանոնակարգեր, որոնք ենթակա են վերանայման «Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենքի, ԵԱՏՄ պայմանագրի, ԵԱՏՄ տվյալ ոլորտում գործող օրենսդրության, ԵՄ համանման դիրեկտիվաների մոտարկման տեսանկյունից: «Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև «Առևտրի տեխնիկական խոչընդոտների մասին» համաձայնագրով սահմանված է առնվազն 5 տարին մեկ գործող տեխնիկական կանոնակարգերի վերանայում: 2014 թվականի մայիսի 29-ի «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրին ՀՀ-ի միացումից հետո ՀՀ ազգային ՏԿ-ների ԵՄ համանման դիրեկտիվաներին մոտարկման գործընթացը սառեցվել է, այս ուղղությամբ աշխատանքների իրականացումը, սակայն, արդի պահանջներին համապատասխանեցումը ներկայումս հրատապ է ու անհետաձգելի, ինչը ապահովվելու է ՍԵՊԱ Համաձայնագրի շրջանակներում:

Հաշվի առնելով ՀՀ-ԵՄ համագործակցության վերսկսումը, միաժամանակ ԵԱՏՄ պայմանագրով ՀՀ-ի ստանձնած պարտավորությունները կրկին անհրաժեշտություն է առաջացել այդ համատեքստում վերանայել գործող ազգային տեխնիկական կանոնակարգերը: Ներկայումս առկա է ստանդարտացման, ինչպես նաև որակի ենթակառուցվածքի մյուս ոլորտներում առկա իրազեկության ցածր մակարդակ, ինչը պայմանավորված է նաև մասնավոր հատվածի, տեղական արտադրողի համեմատաբար պասիվությամբ: Գործող տեխնիկական կանոնակարգերի կիրարկումն ապահովող ստանդարտները հաճախ արդիականացված և ներդաշնակ չեն ստանդարտացման միջազգային կազմակերպությունների կողմից ընդունված ստանդարտներին, կամ տեխնիկական կանոնակարգերի կիրարկումն ապահովող ստանդարտների ցանկերում բացակայում են անվտանգության բոլոր ցուցանիշներն ապահովող ստանդարտներ/մեթոդներ և չեն արտացոլում արդի պահանջները, ինչպես նաև չեն ապահովում շուկայահանման, համապատասխանության գնահատման գործընթացների իրականացումն ամբողջ ծավալով: Վերոնշյալը հանգեցնում է տեղական արտադրողների կողմից անմրցունակ և ոչ անվտանգ արտադրանքի արտադրմանը:

ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերը մշակվել և ընդունվել են դեռևս 2011-2012թթ., իսկ գիտատեխնիկական զարգացման արդյունքում մշակվել են նոր ստանդարտներ: ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերի կիրարկումն ապահովող ստանդարտների ցանկերի վերլուծության ընթացքում, ինչպես նաև շահագրգիռ մարմինների կողմից տրամադրված տեղեկատվության արդյունքում պարզվել է, որ ստանդարտները հնացել կամ ուժը կորցրած են ճանաչվել կամ փոխարինվել են նոր ստանդարտներով: Բացի այդ տեխնիկական կանոնակարգերով կան սահմանված ցուցանիշներ, որոնց համապատասխանությունն ապահովող մեթոդիկաները բացակայում են: Ոլորտում առկա իրավիճակի վերլուծության արդյունքում անհրաժեշտություն է առաջացել արդիականացնել տեխնիկական կանոնակարգերը՝ ստանդարտների, ցուցանիշների և գնահատման ընթացակարգերի վերանայման տեսանկյունից:

1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Ներկայումս ՀՀ-ում գործում են մեծ թվով ազգային տեխնիկական կանոնակարգեր, որոնց՝

- օբյեկտ հանդիսացող արտադրանքն արդեն իսկ կանոնակարգվում է ԵԱՏՄ օրենսդրությամբ, ուստի դրանցով սահմանված պահանջները պետք է վերանայվեն՝ ապահովելով անհրաժեշտության դեպքում ազգային օրենսդրությամբ տվյալ արտադրանքի համար սահմանված լրացուցիչ պահանջի առկայության դեպքում դրանց ներկայացում ԵԱՏՀ՝ համապատասխան ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերում դրանց ներառելու համար (եթե տվյալ պահանջի առկայությունը դեռևս արդիական է և բխում է տեղական արտադրողների շահերից), ԵԱՏՄ պայմանագրով ամրագրված դրույթներին չհակասելու համար անհրաժեշտության դեպքում դրանք պետք է ուժը կորցրած ճանաչվեն (շրջանառվող արտադրանքի համար համապատասխանության գնահատման փաստաթղթերի առկայության, գնահատման փաստաթղթի վավերականության ժամկետում դրա շուկայում տեղադրման, պիտանելիության ժամկետների մոնիթորինգի իրականացման արդյունքում ստացված տեղեկատվության հիման

	վրա), օբյեկտ հանդիսացող արտադրանքը ներառված է ԵԱՏՀ ցանկում, սակայն դրա ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգը բացակայում է (նախագծային փուլում է կամ դեռևս մշակված չէ), ուստի տվյալ արտադրանքի համար ազգային օրենսդրությունը արդիականացման/վերանայման անհրաժեշտություն ունի: - նոր տեխնիկական կանոնակարգի, նորմատիվ իրավական ակտի մշակում, ներկայացվող պահանջների վերանայում ու նոր պահանջների սահմանում, ծխախոտային արտադրանքի փոխարինիչներին ներկայացվող ազգային պահանջների վերանայում: ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերի մասով՝ - Շահագրգիռ կողմ հանդիսացող մարմինների՝ Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմնի, համապատասխանության գնահատման մարմինների, հավատարմագրման ազգային մարմնի, ինչպես նաև կանոնակարգող մարմինների աջակցությամբ և համապատասխան աշխատանքային խմբերի ստեղծմամբ ազգային հետաքրքրություն ներկայացնող ստանդարտների, ինչպես նաև ստանդարտացման միջազգային կազմակերպությունների կողմից մշակված արդի ստանդարտների ներառում տեխնիկական կանոնակարգերի միասնական ցանկերում: - Նիկոտին պարունակող արտադրանքի նկատմամբ պահանջների սահմանում՝ նոր տեխնիկական կանոնակարգի մշակման գործընթացի և դրա հետ կապված ընթացակարգերի ապահովում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման իրականացման արդյունքում կապահովվի՝ - ԵԱՏՄ շրջանակներում 2022թ. դեռևս չկանոնակարգվող, նիկոտին պարունակող նորարարական արտադրանքի մասով ԵԱՏՄ թվով 1 տեխնիկական կանոնակարգի նախագծի մշակում, հանրային քննարկման ապահովում, 2023թ. ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի ներպետական համաձայնեցման բոլոր ընթացակարգերի իրականացման ապահովում, վերջնական խմբագրության ապահովում, 2024թ. ԵՏՀ Խորհրդի կողմից հաստատում: - 2023-2026թթ. ընթացքում յուրաքանչյուր տարի գործող առնվազն 1 ՀՀ և առնվազն 12 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերի կամ դրանց կիրարկումն ապահովող ստանդարտների, համապատասխանության գնահատման ընթացակարգերի վերանայում՝ տնտեսության և գիտության զարգացման պահանջներին համահունչ գործող առնվազն 1 ՀՀ և առնվազն 12 ԵԱՏՄ իրավական կարգավորումների սահմանում, ոլորտի արդիականացում: - 2023-2026թթ. մարդու առողջության և անվտանգության, շրջակա միջավայրի պահպանություն, անբարեխիղճ գործելակերպի կանխարգելում • 2023-2026թթ. ԵԱՏՄ շուկայում արտադրանքի շրջանառության շուրջ 95% ծավալ կազմող անվտանգ արտադրանքի շրջանառություն:
	11.5 Որակի ենթակառուցվածքի համակարգի բաղակացուցիչ ոլորտների՝ բարեփոխման ռազմավարության մշակում և ՀՀ կառավարության կողմից հաստատում **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է ազգային որակի ենթակառուցվածքի զարգացման հեռանկարային ուղղվածության ապահովմամբ և գոյություն ունեցող համակարգի այնպիսի բարեփոխմամբ, որ այն համապատասխանի միջազգային պահանջներին: Այս բարեփոխումը բաղկացած է ստանդարտացման, չափագիտության, հավատարմագրման, տեխնիկական կանոնակարգման, համապատասխանության գնահատման, իրավական, ինստիտուցիոնալ և կարողությունների հզորացմանը և իրազեկության բարձրացմանն ուղղված մի շարք միջոցառումներից: Կարևորելով որակի ենթակառուցվածքի դերը երկրի՝ արտահանմանն առնչվող ռազմավարական գերակայությունների իրականացման հարցում՝ նախատեսվում է Հայաստանի որակի ենթակառուցվածքի լիակատար ինտեգրում գլոբալ համակարգին: Միջոցառման նպատակն է մշակել բարեփոխումների արդյունավետ վերահսկման մեխանիզմ, ինտեգրել համապատասխան ոլորտներում գործող իրավական դաշտը միջազգային պահանջներին և իրագործել, ինչպես նաև հզորացնել թիրախային ինստիտուտների կարողությունները: Միջոցառման կատարման անհրաժեշտությունը բխում է նաև ՀՀ կառավարության օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1363-Ա որոշման հավելվածով հաստատված ՀՀ կառավարության ծրագրից՝ (2021-2026թթ.)՝ «2. Տնտեսություն» բաժին, «2.6 Որակի ենթակառուցվածք» ենթաբաժինն ամբողջությամբ: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները** Որակի ենթակառուցվածքը փոխկապակցված համակարգ է (ստանդարտացման, չափագիտության, հավատարմագրման, տեխնիկական կանոնակարգման, համապատասխանության գնահատման, շուկայի վերահսկողության ոլորտներ) և ներկայումս տվյալ համակարգի բարեփոխման առաջնային խնդիր է համարվում թիրախային կառույցների ինտեգրումը համապատասխան միջազգային կառույցներին, շուկայում անվտագ ու մրցունակ արտադրանքի շրջանառության, մատուցվող ծառայությունների բարձր որակի ապահովումը:

	1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները - բարեփոխել ազգային որակի ենթակառուցվածքը և իրավական դաշտը՝ տնտեսության կարիքները բավարարելու և արտահանումը խթանելու նպատակով - վերակառուցել ազգային որակի ենթակառուցվածքի ինստիտուցիոնալ դաշտը և զարգացնել մատուցվող ծառայությունները՝ թափանցիկություն և անկողմնապահություն ապահովելու նպատակով - ապահովել շուկա մուտք գործող կանոնակարգվող և չկանոնակարգվող արտադրանքի որակը՝ սպառողների պաշտպանության մակարդակը բարձրացնելու նպատակով, - հետամուտ լինել հավատարմագրման համակարգի միջազգային ճանաչման ձեռքբերմանը՝ համապատասխանության գնահատման հուսալի ծառայություններ մատուցելու նպատակով, - հետամուտ լինել միջազգայնորեն ճանաչելի, հետևելի չափումների ձեռքբերմանը՝ հավաստի լաբորատոր արդյունքներ ստանալու նպատակով **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** - 2023թ. որակի ենթակառուցվածքի համակարգի երկարաժամկետ ռազմավարության մշակում, 2024թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ ՀՀ կառավարություն ներկայացում - Հաստատված ոլորտային բարեփոխման ռազմավարության կետերի/միջոցառումների իրագործման արդյունքում 2023-2026թ. շարունակաբար՝ ստանդարտացման, հավատարմագրման, չափումների միասնականության ապահովման, տեխնիկական կանոնակարգման, համապատասխանության գնահատման, սննդամթերքի անվտանգության և շուկայի վերահսկողության ոլորտների զարգացման հեռանկարային ուղղվածության ապահովում, իրավական, ինստիտուցիոնալ կարողությունների հզորացում՝ համապատասխանեցում միջազգային պահանջներին, տարածաշրջանային, միջազգային կառույցներին ինտեգրվածության ապահովում: - 2024թ.-2026թթ. ստանդարտացման, չափագիտության, հավատարմագրման ազգային համակարգի ինտեգրում համապատասխան միջազգային համակարգին/կառույցներին: - 2025-2026թթ. միջազգային ճանաչում ունեցող հավատարմագրման համակարգի ձեռքբերում: - 2025-2026թթ. համապատասխանության գնահատման հուսալի ծառայությունների մատուցում, միջազգայնորեն ճանաչելի ու միջազգային չափանիշներին հետևելի չափումներ, համապատասխանության գնահատման գործունեության վստահելի արդյունքներ: 2025-2026թթ. շրջանառվող անվտանգության արտադրանքի մրցունակության բարձրացում, պատշաճ վերահսկողություն:

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	
NN	**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ**
Կրթություն	
1.	1.1 «ՀՀ կրթության՝ մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ 1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակը Կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների համապատասխանեցումն է հեռանկարային զարգացման ռազմավարական ուղղություններին: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.3 Կրթությունը» բաժնի 2-րդ պարբերությունից, «Կրթության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետից: Կրթության համակարգի ներկա փուլի զարգացման նպատակն է, ընդունելով ժամանակակից մարտահրավերները և ռազմավարության սկզբունքները, արձանագրել հիմնախնդիրների լուծման և առաջընթացի այնպիսի արդյունքներ, որոնք կվերականգնեն կրթության ու գիտելիքի վարկանիշը և կամրապնդեն Հայաստանի՝ որպես գիտակրթական տարածքի, հեղինակությունը: 1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Ներկայում չկա գործող ռազմավարական փաստաթուղթ, որով սահմանված են կրթության ոլորտի թիրախները, նպատակները, գերակայությունները, որոնք կրթության ոլորտում արդյունավետ և նպատակային քաղաքականություն իրականացնելու կարևորագույն գործոններ են: Բացի դրանից ոլորտի զարգացման

	առաջնահերթությունները, գերակայությունները, առկա խնդիրները, հիմնահարցերը, վերաձևակերպման կարիք ունեն, ինչպես նաև՝ վերանայման, ընդհանրացման անհրաժեշտություն: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Նախագծում կսահմանվեն ՀՀ կրթության ոլորտի զարգացման գերակայությունները, պետական ծրագրի/ռազմավարության սկզբունքներն ու ծրագրային ուղղությունները, ինչն ուղղորդիչ դեր կունենա կրթության բոլոր մակարդակների բարեփոխումների համաժամանակեցման համար: Պետական ծրագրի/ռազմավարության նախագիծը կմշակվի՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը, Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության ծրագիրը, կրթության համակարգի վերջին տարիների մարտահրավերները, ինչպես նաև՝ ՄԱԿ-ի «Փոխակերպենք մեր երկիրը. Մինչև 2030 թվականը կայուն զարգացման օրակարգը» և «Կրթություն 2030. դեպի ներառական և արդարացի որակյալ կրթություն ու կրթություն ողջ կյանքի ընթացքում բոլորի համար» Ինչհոնի հռչակագիրը: 2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Պետական ծրագրի/ռազմավարության նախագծում կլինեն այնպիսի մոտեցումների որդեգրում, որոնք կապահովեն կրթության կայուն և ներառական զարգացման առավել նպատակասլացություն և արդյունավետություն: Կրթության ոլորտի հետագա զարգացումները կիրականացվեն՝ ըստ սահմանված գերակա ուղղությունների և զարգացման նպատակային ցուցանիշների, որոնք կնպաստեն Հայաստանի ընդհանուր մրցունակության բարձրացմանը:
	1.2 «Մշակույթի պահպանության, պաշտպանության, զարգացման, տարածման և հանրահռչակման ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ 1.Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակն է մշակութային քաղաքականության ռազմավարական գերակայությունների սահմանումը: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1363-Ա որոշման «4.9 «Մշակույթ» բաժնից, «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 4-րդ մասից: Ռազմավարությունը սահմանում է արվեստի և մշակույթի ոլորտում պետության մշակութային քաղաքականությունը, որի գաղափարն է ստեղծարար և մշակութային երկիր ստեղծելը՝ մշակույթի նորարարության, պահպանության, պաշտպանության, փոխանցման, միջազգային համակեցության, հանրության մշակութայնացման, հասանելիության, ներառականության միջոցով: 1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Ներկայում մշակույթի ոլորտը կարգավորվում է ՀՀ սահմանադրությամբ, «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին», «Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին», «Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին», «Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների մասին», «Արխիվային գործի մասին», «Փաստաթղթերի (վավերագրերի) պարտադիր օրինակի մասին», «Գրադարանների և գրադարանային գործի մասին» ՀՀ օրենքներով», ՄԱԿ-ի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին», «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին», «Մշակութային ինքնարտահայտման ձևերի բազմազանության պաշտպանության մասին», «Մշակութային ինքնարտահայտման ձևերի բազմազանության պաշտպանության և խրախուսման մասին», «Զինված ընդհարման դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին» կոնվենցիաներով և այլն: ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակայությամբ գործում են մշակութային գործունեություն իրականացնող 70 ՊՈԱԿ: Բացի վերոհիշյալ կազմակերպություններից՝ ոլորտում պետության մշակութային քաղաքականությունն իրականացվում է պետական այլ՝ համայնքային, հասարակական կազմակերպությունների, մասնավոր հատվածի և անհատների հետ համագործակցությամբ՝ դաշտում գործող կազմակերպությունների համար նպաստավոր պայմանների ստեղծման, բազմաժանր գործունեության իրագործման, ինչպես նաև ոլորտում հանրային առավելագույն ներգրավվածության նպատակով:

Մշակույթի ոլորտի խնդիրներն են.
- մշակույթի ոլորտի իրավական դաշտի կատարելագործումը,
-թանգարանային և գրադարանային հավաքածուների պահպանվածության ապահովումը, համալրումը, անվտանգության համակարգերի ստեղծումը՝ ժամանակակից տեխնոլոգիական և տեխնիկական միջոցների օգտագործմամբ, թանգարանային ժամանակակից ցուցադրությունների կազմակերպումը, հանրահռչակման և պետական հաշվառման համակարգում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը, գրադարանային տեղեկատվական համակարգի կատարելագործումը, մշակութային արժեքների վերականգնողական աշխատանքներ իրականացնող կադրերի պատրաստումն ու վերապատրաստումը,
- պատմամշակութային անշարժ հուշարձանների պետական հաշվառումը, պահպանական գոտիների նախագծերի կազմումը և հուշարձանների պետական կադաստրի վարումը, ուսումնասիրումը, վկայագրումը, պետական ցուցակների կազմումը և տեղեկատվական բազայի ստեղծումը, զբոսաշրջության երթուղիներում ընդգրկված հուշարձանների բարեկարգումը, այցելուների սպասարկման կազմակերպումը, համապատասխան ուղեցույցների և տեղեկատու վահանակների ապահովումը, պատմամշակութային և բնապատմական արգելոցների, արգելոցների թանգարանների ֆոնդերի համալրումը, հուշարձանների հետազոտման, ամրակայման և վերականգնման ծրագրի մշակումը՝ միջազգային դրամաշնորհների և հովանավորչական ու նվիրատվական ֆինանսավորմամբ,
- թատրոնների, երաժշտական համույթների, համերգային կազմակերպությունների գործունեության ապահովումը, թատերարվեստի և երաժշտարվեստի զարգացման խթանումը, ազատ ժամանցի կազմակերպումը, պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործունեության ապահովումը,
- կինոարվեստի զարգացման համար պայմանների ապահովումը, այդ թվում՝ խաղարկային, մուլտիպլիկացիոն, վավերագրական կինոնկարների արտադրությունը, կինոփառատոներին և կինոշուկաներին մասնակցությունը, կինո-ֆոտո-ֆոնո հավաքածուի պահպանումը, վերականգնումն ու տարածումը:
- ոլորտի զարգացմանը նպաստող տարածաշրջանային, միջազգային ծրագրերին մասնակցությունը և համագործակցության ընդլայնումը:

1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները
Ոլորտում առկա խնդիրների լուծման կարևոր մեխանիզմը օրենսդրական դաշտի կարգավորումն է, կառավարման ժամանակակից համակարգերի ներդրումը, հայ մշակույթի հանրահռչակումն ու միջազգային մշակութային դաշտում դիրքավորման ապահովումը, մշակութային կյանքի մատչելիության և հանրային լայն մասնակցության ապահովումը, մշակույթի և կրթության կապի խթանումը, ՀՀ մարզերում մշակութային ծառայությունների համաչափության, մատչելիության և հասանելիության ապահովումը, ստեղծագործական կարողությունների լիարժեք արտահայտման և իրացման համար բարենպաստ միջավայրի ապահովումը:

2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը
Պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացում, ֆինանսական միջոցների և մասնագիտական ռեսուրսների կենտրոնացում, մասնագիտական կարողությունների զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծում, միջազգային հարթակներում հայ մշակույթի ներկայացում և դիրքավորում:

1.3 «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտների 2022-2030 թվականների ռազմավարությունը և ռազմավարության գործողությունների պլանը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը
Միջոցառման գլխավոր նպատակն է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի համակարգի ենթակառուցվածքների վերազինում և արդիականացումը:
Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.8 ՍՊՈՐՏ» բաժնի 3-րդ պարբերությունից: Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսանում «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքի 7-րդ հոդվածի դ. կետի դ.8 ենթակետը:
Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի գործունեության պետական ֆինանսավորման շարունակական ապահովման անհրաժեշտությամբ:, Ռազմավարությունը շեշտադրելու է զանգվածային խոշոր միջոցառումների անցկացման, մանկապատանեկան մարզադպրոցների գործունեության, մարզական ֆեդերացիաների գործունեության կարևորությունը: Միջոցառման իրականացմամբ կվերհանվեն ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտների առկա բացերը, Հայաստանի Հանրապետությունում կհամալրվեն լողի, հրաձգության և այլ մարզաձևերի ենթակառուցվածքները:

	1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Հայաստանի Հանրապետությունում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառը օգտվում է պետական ֆինանսավորումից, ինչը ապահովում է մանկապատանեկան մարզադպրոցների և երկու քոլեջների (Երևանի օլիմպիական հեթափոխի պետական մարզական քոլեջ և Գյումրու օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ) գործունեություն, պետական աջակցության ծրագրում ընդգրկված ֆեդերացիաների գործունեություն (2020 թվականին՝ 34 ֆեդերացիայի), չորս բազմաֆունկցիոնալ մարզական հասարակական կազմակերպությունների գործունեություն, հանրակրթական դպրոցներում «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասավանդում, զանգվածային միջոցառումների անցկացում, լավագույն արդյունքներ ցուցաբերած մարզիչներին վարձատրության և տարեվերջյան միանվագ պարգևատրության հատկացում, Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի բժիշկներին տարեվերջյան միանվագ պարգևատրության հատկացում, լավագույն մարզիկների տարեվերջյան միանվագ պարգևատրում, Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի կազմում բարձր արդյունքներ ցուցաբերած մարզիկներին, նրանց մարզիչներին և անձնական մարզիչներին անվանական թոշակի և աշխարհի չեմպիոններին ցմահ պատվովաճարի հատկացում, Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի մարզիկների բժշկական սպասարկում, մարզիչ-մանկավարժների վերապատրաստման իրականացում, Հայաստանի Հանրապետության մանկապատանեկան մարզադպրոցների, մարզաձևերի ազգային ֆեդերացիաների, այլ հասարակական մարզական կազմակերպությունների, ինչպես նաև հանրապետության հանրակրթական, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների նյութատեխնիկական բազայի շարունակական համալրում: Թվարկված բոլոր միջոցառումները իրականացնում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը: Սակայն բնագավառում դեռևս առկա են շատ խնդիրներ, և դրանք լուծելու համար կա նպատակաուղղված մոտեցման և նոր հատկացումների անհրաժեշտություն: Խնդիրներից մեկն է Բարձրագույն վարպետության դպրոց չունենալը, ինչի հետևանքով դժվարություններ են առաջանում պատանեկան տարիքից դուրս եկած մարզիկների մարզվելու հարցում: 1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտների 2022-2030 թվականների ռազմավարությունը և ռազմավարության գործողությունների պլանը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը ունենալու է հավելված, որտեղ ներկայացվելու է միջոցառումների պլան: Միջոցառումների իրականացումը կնպաստի Հայաստանի Հանրապետությունում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտների շարունակական զարգացմանը, մարզական ենթակառուցվածքների հետևողական արդիականացմանը և համալրմանը: 2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Միջոցառման իրականացումից ակնկալվում է, որ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից կամ այլ աղբյուրներից հատկացումներ կլինեն լողի, հրաձգության, ֆուտբոլի և այլ մարզաձևերի ենթակառուցվածքների զարգացման համար, քայլեր կձեռնարկվեն հանրապետությունում ակումբային սպորտի զարգացման, բարձրագույն վարպետության դպրոցի ստեղծման համար:
2	2.1 ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող հանրակրթական ուսումնական հաստատությունների դասագրքերի պատվերի ձևավորման և բաշխման գործընթացների մասին ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանի ընդունում 1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը. Միջոցառման գլխավոր նպատակն է ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների լայն կիրառումն ուսուցման ու կրթության կառավարման համակարգերում: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-իթիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ»բաժնի 1-ին, 2-րդ, 3-րդ պարբերություններից: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է նաև ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածից, «Կրթության» մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ կետից, «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածից, ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2021 թ. օգոստոսի 17-ի N 65-Ն հրամանից: Դասագրքերի պատվերի ձևավորման և բաշխման գործընթացների մասին ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է հանրակրթական ուսումնական հաստատությունները դասագրքերով ապահովելու ընթացակարգի փոփոխություններով, հանրակրթական ուսումնական հաստատությունների, այդ թվում՝ օտար լեզվով խորացված ուսուցմամբ, ազգային փոքրամասնությունների, ռուսերենով ուսուցմամբ դասարանների, դասագրքերի տրամադրման մեկ միասնական կարգ սահմանելու, ինչպես նաև դասագրքերի բաշխման գործընթացի կազմակերպման պահանջներով:

1.1 Կարգավորման ընթացիկ իրավիճակը և առկա խնդիրները.

Ներկայումս հանրակրթական ուսումնական հաստատությունները դասագրքերով ապահովելու գործընթացը կարգավորվում է ՀՀ կրթության և գիտության նախարարի 2009 թվականի օգոստոսի 21-ի՝ «ՀՀ ուսումնական հաստատությունները դասագրքերով ապահովելու, հանրակրթական առարկաների դասագրքերը հրատարակելու և հանրակրթության պետական չափորոշչին դասագրքերի համապատասխանության գնահատման առարկայական հանձնաժողովների ձևավորման կարգը հաստատելու մասին» N 752-Ն հրամանով: Ուսումնական հաստատությունների կողմից դասագրքերի հայտագրումը և հետագա ամբողջ գործընթացն իրականացնելու աշխատանքները ընթանում են միայն թղթային եղանակով՝ մարդկային մեծ ջանքերի շնորհիվ, որը և՛ աշխատատար է, և՛ ժամանակատար:

1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

Դասագրքերի պատվերի ձևավորման գործընթացն ամբողջությամբ կդառնա էլեկտրոնային: Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և օրենքով չարգելված այլ միջոցներով հրատարակված դասագրքերի և ուսուցչի ձեռնարկների շրջանառության գործընթացը կիրականացվի «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի (ԿՏԱԿ) կողմից վարվող համակարգում գործող հարթակում, որտեղ ուսումնական հաստատությունները կարող են ներկայացնել անհրաժեշտ դասագրքերի, ձեռնարկների հայտերը: Կկարգավորվեն ոչ միայն ընթացակարգային խնդիրները, այլ նաև գործընթացն էլեկտրոնային դարձնելու արդյունքում նվազագույնի կհասցվի (կբացառվի) դասագրքերի և ուսումնական հաստատության սովորողների միջև քանակական տարբերությունը, ինչը նախկինում վերահսկելի չէր: Կսահմանվի նաև մշտադիտարկում դասագրքերի բաշխման գործընթացի նկատմամբ:

2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը.

Պետական բյուջեից ֆինանսավորվող հանրակրթական դասագրքերի պատվերի ձևավորման և բաշխման գործընթացները թափանցիկ են իրականացվում, վրիպակներն ու սխալները հասցված են նվազագույնի:

2.2 Ավարտական փաստաթղթերի թվայնացում

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը.

Միջոցառման գլխավոր նպատակն է ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների լայն կիրառումն ուսուցման ու կրթության կառավարման համակարգերում:

Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» բաժնի 1-ին, 2-րդ, 3-րդ պարբերություններից, 3-րդ պարբերության 5-րդ 6-րդ կետերից:

Միջոցառման անհրաժեշտությունը բխում է նաև «Կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 9-րդ կետից, «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածից, ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2021 թ. օգոստոսի 17-ի N 65-Ն հրամանից:

Միջոցառման իրականացումը պայմանավորված է հանրակրթության ոլորտում վարչարարության կրճատման, թվային գործիքների զարգացման, ռեսուրսների խնայողության անհրաժեշտությամբ: Մարդկային ռեսուրսների խնայողության, բաց, թափանցիկ համակարգ ձևավորելու նպատակով թվային գործիքների զարգացման միջոցով «Կրթության կառավարման տեղեկատվական համակարգը» ընդլայնում է վիճակագրական տվյալների հավաքագրման և վերլուծության միասնական համակարգը:

1.1 Կարգավորման ընթացիկ իրավիճակը և առկա խնդիրները.

Ներկայումս հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից սովորողներին ավարտական փաստաթուղթ տրամադրելու նպատակով իրականացվող աշխատանքները պահանջում են մեծ ջանքեր, մարդկային ռեսուրսներ և ժամանակ: Աշխատանքների իրականացման ընթացքում չեն բացառվում անճշտություններն ու վրիպումները:

Ավարտական փաստաթղթերը տրամադրվում են թղթային եղանակով.պահանջվում է ժամանակ, ֆինանսական միջոցներ, քիչ չեն նաև կորցնելու, անհրաժեշտության դեպքում հավաստիությունը ստուգելու, այլ ռիսկերով պայմանավորված գործոնները:

1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

Թվայնացնել հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից սովորողներին տրվող ավարտական փաստաթուղթը:

	2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը. Ավարտական փաստաթղթերը կտրամադրվեն էլեկտրոնային եղանակով՝ կրճատելով հատկացվող միջոցների և աշխատանքի համար ներգրավվող մարդկային ռեսուրսների ծավալը, այն կդառնա հասանելի՝ ըստ անհրաժեշտության:
	2.3 Առարկայական ուսուցիչների պակաս ունեցող դպրոցներում տվյալ առարկայի էլեկտրոնային ուսուցման համակարգի ներդնում, էլեկտրոնային ուսուցման գործիքների զարգացում 1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը. Միջոցառման գլխավոր նպատակն է ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների լայն կիրառումն ուսուցման ու կրթության կառավարման համակարգերում: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» բաժնի 1-ին, 2-րդ պարբերություններից, 3-րդ պարբերության 6-րդ կետից: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է նաև ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածից, «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածից, ՀՀ կառավարության՝ «2050 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ» ծրագրի «ՄԻՆՉԵՎ 2030 ԹՎԱԿԱՆԻ ՄԵԳԱՆՊԱՏԱԿՆԵՐԻ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 9-ի 9 . 4. 1 թիրախային արդյունքի ցուցանիշի ապահովման պահանջից, ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2021թ. օգոստոսի 17-ի N 65-Ն հրամանից: Առարկայական ուսուցչի խնդիր ունեցող դպրոցներում որակյալ կրթության կազմակերպման նպատակով նախատեսվում է էլեկտրոնային ուսուցման համակարգի ներդրում: Մենթոր դպրոցների ցանցի ստեղծման և հեռավար ուսուցման համակարգերի գործածամամբ ուսուցման կազմակերպման ծրագիրը նպատակ ունի ապահովելու հավասարապես որակյալ կրթություն ՀՀ դպրոցների բոլոր աշակերտների համար՝ ակտիվացնելու միջդպրոցական համագործակցությունը, լրացնելու մանկավարժական կադրերի պակասը սահմանամերձ կամ փոքր դպրոցներում, աջակցելու ուսուցիչների մասնագիտական կարողությունների զարգացմանը, էլեկտրոնային ուսուցման գործիքների կատարելագործմանը: 1.1 Կարգավորման ընթացիկ իրավիճակը և առկա խնդիրները. Հատկապես գյուղական բնակավայրերում սովորողների կողմից կրթական ծրագրի յուրացման լրջագույն խնդիր է առաջացնում որևէ առարկայի ուսուցչի ֆիզիկական բացակայությունը: Տարեկան գրանցվում է ուսուցիչների 600-700 թափուր տեղ, որոնք չեն համալրվում կամ համալրվում են զգալի դժվարությամբ: Ընդ որում, խոսքը ոչ միայն գյուղական դպրոցների մասին է, այլ նաև քաղաքային. ուսուցիչ գտնելու դժվարության մասին են խոսում նաև երևանյան դպրոցների տնօրենները: Առաջիկայում նախատեսվում է գործարկել նաև ցանցային դպրոցի գաղափարը, որի պարագայում անհրաժեշտ ենթակառուցվածքները տեղակայված կլինեն երկու-երեք մոտ գտնվող բնակավայրերում՝ միավորելով մեկ դպրոց՝ ուսուցչական և աշակերտական միասնական համակազմով: Այս մոտեցումը հնարավոր է դարձնում ուսումնական գործընթացի շարունակականություն ունենալ բոլոր բնակավայրերում՝ միաժամանակ ընդլայնելով հնարավորությունները դասարանների կազմավորման և որակյալ ուսուցիչների ներգրավման ուղղությամբ: Սակայն այս և ստեղծված միջանկյալ լուծումները՝ ուսուցիչների գործուղման կարգի, տրանսպորտային ծառայությունների փոխհատուցման պայմանների բարելավման, խնդրի կարգավորման և համակարգային լուծումներ տալու հիմք չեն կարող համարվել: 1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները. Երեխայի լավագույն շահից ելնելով և սովորողի հավասար կրթություն ստանալու իրավունքը հաշվի առնելով, ինչպես նաև ՀՀ մարզերի համաչափ զարգացման կարևորությունից ելնելով՝ ներդրված էլեկտրոնային ուսուցման համակարգը հնարավոր կդարձնի առարկայական ուսուցչի բացը լրացնել մենթոր դպրոցների մասնագետների կողմից վարած դասերի միջոցով, որի շնորհիվ հավասարաչափ, հասանելի կրթություն ապահովելուն զուգահեռ, նախադրյալներ կստեղծվեն մարզային համայնքներում սովորողների առաջադիմության բարձր ցուցանիշների ապահովման համար: 2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը. Դպրոցները կունենան ուսումնամեթոդական պաշարների հարստացման, օժտված երեխաների բացահայտման և մենթոր դպրոցների նախաձեռնած ծրագրերին մասնակցելու հնարավորություն: ՀՀ կառավարության՝ մինչև 2030 թվականի ռազմավարական թիրախներից մեկի՝ Գործողություն 9-ով սահմանված «Կրթամշակութային առաջանցիկ և համաչափ զարգացում մարզերում» ծրագրի իրագործման համար սույն միջոցառմամբ կկարևորվի նույն ծրագրի «Տարածքային խելամիտ զարգացում մարզերում» նպատակը՝ «Շարունակաբար բարձրացնենք կյանքի որակի չափանիշները՝ յուրաքանչյուր բնակավայրի համար՝ ապահովելով

	«21-րդ դարի» կենսակերպի հնարավորություն», որի կատարումն ապահովելու համար նախատեսվում է նաև մենթոր դպրոցների միջոցով իրականացվող էլեկտրոնային ուսուցման շնորհիվ հասնել «ՀՀ դպրոցականների միջին առաջադիմության ցուցանիշի 80%-ից բարձր արդյունք ունեցողներ մարզերում» ցուցանիշին:
	2.4 Ուսուցիչների վերապատրաստման և ատեստավորման գործընթացներին առնչվող վարչարարության թվայնացում 1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը. Միջոցառման գլխավոր նպատակն է ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների լայն կիրառումն ուսուցման ու կրթության կառավարման համակարգերում: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» բաժնի 1-ին, 3-րդ պարբերություններից: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է նաև «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածից, ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2021 թ. օգոստոսի 17-ի N 65-Ն հրամանից: Հանրակրթության ոլորտում, այդ թվում՝ ուսումնական հաստատությունների՝ հերթական ատեստավորման ենթակա ուսուցչի վերապատրաստման և ատեստավորման գործընթացը դյուրին դարձնելու, վարչարարությունը կրճատելու և հաջորդ ատեստավորման ժամանակ ուսուցչի տվյալների ներբեռնման գործընթացը չկրկնելու, թվային գործիքների զարգացման նպատակով է իրականացվում միջոցառումը, որը կապահովի աշխատանքները համակարգելու արդյունավետություն և տվյալների պահպանման հանրավորություն կընձեռի: 1.1 Կարգավորման ընթացիկ իրավիճակը և առկա խնդիրները. Հայաստանի Հանրապետության կառավարության «Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության՝ հերթական ատեստավորման ենթակա ուսուցչի վերապատրաստման կարգը հաստատելու մասին» N 1667-Ն որոշման համաձայն՝ կրթության կառավարման տեղեկատվական համակարգում տվյալ տարվա ատեստավորման ենթակա ուսուցիչների անձնական գործերում մինչև մայիսի 1-ը կատարվում է համապատասխան նշում՝ «ենթակա է ատեստավորման», ինչպես նաև տնօրենը ուսուցչի ներկայացրած՝ վերապատրաստման դասընթացին մասնակցության և հավաքած կրեդիտների վերաբերյալ փաստաթուղթը ներբեռնում է Կրթության կառավարման տեղեկատվական համակարգ՝ ուսուցչի բնութագրի բաժնում: Նախկինում ամբողջ գործընթացն իրականացվել է փաստաթղթային տարբերակով, որը աշխատատար է՝ մարդկային ռեսուրս և շատ ժամանակ պահանջող: 2.1 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները. Ատեստավորման համար պահանջվող փաստաթղթերի հավաքագրումը էլեկտրոնային տարբերակով իրականացնելը գործընթացը կդարձնի առավել արդյունավետ: Ներբեռնված տվյալները էլեկտրոնային կայքում կպահպանվեն մինչև ուսուցչի հաջորդ ատեստավորումը՝ ուսումնական հաստատություններին ազատելով լրացուցիչ աշխատանք կատարելու պարտավորությունից: Այդ տեղեկատվությունը հասանելի է լինելու նաև համապատասխան հանձնաժողովին, ուստի թղթային տարբերակով փոխանցելու անհրաժեշտություն չի առաջանա: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը. Ուսուցիչների ատեստավորման և վերապատրաստման գործընթացներին առնչվող վարչարարությունը կկրճատվի, վերապատրաստված ուսուցչի ատեստավորման գործընթացը կդառնա դյուրին, տեղեկատվությունը հասանելի կլինի համապատասխան կառույցների համար:
	2.5 Նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության /ՆՄՄԿ/ համակարգում թվային տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունների ստեղծում, մեխանիզմների մշակում 1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակն է ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների լայն կիրառումն ուսուցման ու կրթության կառավարման համակարգերում: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» բաժնի 2-րդ պարբերությունից: Ժամանակակից հասարակության մեջ քաղաքակրթական զարգացումների հիմքում տեղեկատվական գործընթացներն են, որոնցում վճռորոշ դերակատարություն ունեն տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաները: Դրանց ներդրումը տարբեր բնագավառներում նպաստում է կրթության տեղեկատվայնացմանը, որն ուսուցման գործընթացի բարեփոխման ու արդիականացման կարևոր պայման է: Բացի այդ՝ կորոնավիրուսի համաճարակը ցույց տվեց հեռավար դասերի և ուսուցման հիբրիդ ռազմավարությունների իմացության կարևորությունը, ՏՀՏ գործիքների կիրառման նոր մեթոդների անհրաժեշտությունը:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները
Ներկայումս մշակման և համալրման փուլում է գտնվում Մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգը, որը մասամբ է լուծում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ ՆՄՄԿ ուսումնական հաստատությունների կառավարման գործընթացները և տեղեկատվական հոսքերը:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները
Ժամանակակից կրթական ոլորտում տեխնոլոգիաները կիրառվում են ուսումնական նյութը շարժման և զարգացման մեջ ցուցադրելու, այն պարզաբանելու համար: Նոր տեխնոլոգիաները նպաստում են կրթության որակի բարձրացմանը, դրանց կիրառումը որակապես փոխում է մանկավարժի դերը, երկար և անհրապույր դասախոսություններին փոխարինում են նոր մեթոդներն ու միջոցները:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը
Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության համակարգում տեղեկատվակլան տեխնոլոգիաների կիրառման բնակավառների վերաբերյալ առկա է ուսումնասիրություն
Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններում կիրառվում են տեղեկատվական տեխնոլոգիաներ կառավարման և կազմակերպչական գործընթացներում:

2.6 Բարձրագույն կրթության մակարդակում ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների (ՏՀՏ) կիրառմամբ կրթության կազմակերպման գործընթացի արդիականացում՝ թվային հարթակի ներդրմամբ:

2.7 Բուհերում դասապրոցեսի կազմակերպման գործընթացների էլեկտրոնային հարթակների մշակման և ներդրման մասին ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանի ընդունում

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը
Միջոցառման գլխավոր նպատակն է ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների լայն կիրառումն ուսուցման ու կրթության կառավարման համակարգերում:
Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» բաժնի բարձրագույն կրթության բարեփոխումների 8-րդ դրույթից:
Կրթության կազմակերպման ճկուն մոդուլային համակարգի ներդրումն հնարավորություն է տալիս արդյունավետ իրականացնել բարձրագույն կրթության կազմակերպման դասապրոցեսի կառավարումը՝ էլեկտրոնային համակարգերի միջոցով: Բուհերում կներդրվեն թվային հարթակներ, որոնք կապահովեն ճկուն և թափանցիկ ուսումնառության գործընթաց: Միջոցառման նպատակն է կատարելագործել ծառայությունների մատուցման ընթացակարգերը՝ բարելավելով շահառուներին մատուցվող ծառայությունների որակը, շարունակական նվազեցնել կոռուպցիոն ռիսկերը:

1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները
Ուսումնական գործընթացում ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների (ՏՀՏ) կիրառմամբ ուսումնառությունը, ինչպես նաև դասավանդման մեթոդաբանությունը ունի վերանայման կարիք: Անհրաժեշտություն կա շահառուներին մատուցվող ծառայությունները որակական նոր հարթություն տեղափոխելու և կրթական գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու՝ ժամանակակից ՏՏ գործիքների կիրառմամբ:

1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները
Կներդրվեն և կկիրառվեն բարձրագույն կրթության նոր առաջանցիկ դասավանդման գործիքներ և մեթոդներ, որոնք թույլ են տալիս Դասավանդման կառավարման էլեկտրոնային համակարգերը: Այդ համակարգերը միաժամանակ տալիս են հնարավորություն բուհերին բարելավելու իրենց կրթության կազմակերպման գործընթացը, ավելացնելու գրավչությունը և ընդլայնելու համագործակցության շրջանակները այլ առաջատար երկրների բուհերի հետ:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը
Հարթակի միջոցով, ուսումնական պրոցեսը կիրականացվի ճկուն կառուցվածքով: Հարթակի ներդնումը բուհերում թույլ կտա շահառուներին ժամանակը արդյունավետ կառավարելու: Այն կնպաստի բարձրագույն կրթության կազմակերպման որակի բարելավմանը և արդյունավետության բարձրացմանը:

	2.8 Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի ամբողջական ներդրում կրթության բոլոր մակարդակներում 1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակն է ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների լայն կիրառումն ուսուցման ու կրթության կառավարման համակարգերում: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.3 Կրթությունը» բաժնի 2-րդ պարբերությունից: Ներկայիս թվայնացման դարաշրջանի միտումներին համահունչ՝ կրթության ոլորտում տեղի են ունենում վերափոխման կարևորագույն գործընթացներ, որոնք գլոբալ կրթական միջավայրի բարեփոխումների ու արդիականացման առանցքային գործիքներ են: Հայաստանը ևս անմասն չէ այս արդիականացման շրջափուլից, և, այդ համատեքստում, միջոցառման հիմնական նպատակն է կրթության կառավարման տեղեկատվական համապարփակ համակարգի ներդրումն ու այլ համակարգերի հետ փոխգործակցված կիրառումը՝ բարձրացնելով գործընթացների թափանցիկությունը, ճկունությունն ու արդիականությունը՝ միաժամանակ նվազեցնելով վարչարարությունը: 1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Համակարգում արդեն իսկ մեկնարկել են թվայնացման աշխատանքներ՝ առավելապես կրթության կառավարման տեղեկատվական համակարգի ենթահամակարգերի մշակման և աստիճանական ներդրման տեսքով, սակայն ոլորտի էլեկտրոնային ենթահամակարգերը դեռևս խնդիր ունեն տվյալների ամբողջական շտեմարաններ ձևավորելու, գործարկելու և համակարգային գործելու, ինչպես նաև՝ այլ ոլորտների հետ փոխգործակցելու տեսանկյուններից: 1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Առաջարկվում է ամբողջականացնել կրթության կառավարման տեղեկատվական համակարգը՝ ներառելով կրթության բոլոր մակարդակների համապարփակ տվյալներ, ճկուն գործիքակազմ և փոխգործելիության մեխանիզմներ: 2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Արդյունքում Կրթության կառավարման տեղեկատվական համակարգը կդառնա ոլորտի տվյալների ամբողջական շտեմարան՝ ապահովելով ճկուն գործիքների կիրառելիությունը:
3	3.1 Առնվազն 500 մանկապարտեզի և նախակրթարանի կառուցման, հիմնանորգման և վերանորոգման համար հաստատությունների՝ ցանկում ընդգրկման չափանիշների և մեթոդաբանության մշակում: 3.4 Մշակված չափանիշների համաձայն վերանորոգման, հիմնանորոգման և կառուցման ենթակա հաստատությունների ընտրություն և վերջնական ցանկի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ: 3.5 Նոր չափորոշչի և առարկայական ծրագրերին համապատասխան՝ անհրաժեշտ գույքի և սարքավորումների ցանկի վերանայում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ: 3.6 Մանկապարտեզների և նախակրթարանների կառուցման և վերանորոգման աշխատանքների իրականացում, գույքով և սարքավորումներով հագեցում՝ համաձայն հաստատված ծրագրի 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը. Միջոցառման գլխավոր նպատակն է նախադպրոցական հաստատություններում 3-5 տարեկան երեխաների ընդգրկվածությունը հասցնել 85 տոկոսի: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված՝ ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» բաժնի 1-ին, 2-րդ, 4-րդ, պարբերությունից: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է նաև «Կրթության մասին ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ կետից, 48-րդ հոդվածից, «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի 23-րդ, 24-րդ և 29-րդ հոդվածներից, ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի N 744-Ն որոշումից, ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի N 764-Ն որոշումից: Միջոցառման իրականացումը պայմանավորված է նաև ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից ՀՀ համայնքներ կատարած այցելությունների և նախընտրական քարոզարշավի ընթացքում (2021թ. հունիսի 4-17) քաղաքացիներին տրված նախընտրական խոստումների կատարման անհրաժեշտությունից, ինչպես նաև ՀՀ կառավարության «Վերականգնում, դիմակայունություն և բարեփոխում, Արևելյան գործընկերության առաջնահերթությունները 2020թ.-ից հետո» տնտեսական և ներդրումային պլանի 3-րդ ուղենիշի Ա ուղենիշի 6.2 կետով:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ կրթական արդյունքի վրա առավել մեծ ազդեցություն նախադպրոցական ծառայությունն ունենում է երեք տարի և ավելի ընդգրկվածության պարագայում:

Համաձայն TIMSS-ի կատարած հետազոտությունների արդյունքների՝ կրթական արդյունքի վրա առավել մեծ ազդեցություն նախադպրոցական ծառայությունն ունենում է երեք տարի և ավելի ընդգրկվածության պարագայում: Ինչքան ավելի երկար ժամանակով է երեխան ընդգրկված եղել նախադպրոցական ծառայության մեջ, այնքան ավելի բարձր կրթական արդյունք է ցույց տվել հետագայում տարրական դպրոցի ավարտին և հակառակը: Սա վկայում է այն մասին, որ կրթական արդյունքի շեշտակի աճի համար անհրաժեշտ է շարունակաբար ընդլայնել ու բարելավել նախադպրոցական ծառայությունների հասանելիությունն ու որակը:

ՀՀ կառավարությունը սահմանել է նախադպրոցական տարիքի երեխաների առնվազն 85 տոկոսի ընդգրկվածության ապահովման թիրախ, ինչը նշանակում է, որ առաջիկա տարիներին նախադպրոցական ծառայության հասանելիություն պետք է ապահովել առնվազն 23100 երեխաների համար, որն իրագործելու նպատակադրումներից է՝ կառուցել, հիմնանորոգել և վերանորոգել հաստատությունները՝ ապահովելով դրանց ամբողջական հագեցումը անհրաժեշտ գույքով և սարքավորումներով:

Հանրապետության շուրջ 260 բնակավայրերում նախադպրոցական որևէ կրթական ծառայություն դեռևս չի մատուցվում: ՀՀ համայնքների ֆինանսական հնարավորությունները սահմանափակ են համապատասխան նախադպրոցական կրթական հաստատություն կառուցելու կամ գոյություն ունեցող հաստատությունն ամբողջապես վերանորոգելու համար, հետևապես անհրաժեշտություն է առաջանում ոլորտում այլընտրանքային լուծումներ գտնել և դրանք համայնքներում կիրառելի դարձնել՝ պահպանելով գործող նախադպրոցական կրթական չափորոշիչները:

1.1. Կարգավորման ընթացիկ իրավիճակը և առկա խնդիրները.

Նախադպրոցական տարիքի երեխաները կազմում են շուրջ 236 հազար հոգի, որոնցից չհաճախող երեխաները կազմում են շուրջ 154 հազար, այդ թվում՝ գյուղական համայնքներում՝ շուրջ 62 հազար հոգի: Ընդ որում, մտահոգիչ է, որ նախադպրոցական ծառայություններից օգտվողների մեջ 1,5-3 տարեկան երեխաները կազմում են ընդամենը 5419 հոգի կամ այս տարիքային խմբի երեխաների 6,2 տոկոսը: Ուստի, առաջիկա տարիներին առաջնահերթ է ինչպես գյուղական համայնքներում նախադպրոցական ծառայությունների ցանցի ընդլայնումը, այնպես էլ ընդհանուր առմամբ նախադպրոցական ծառայությունների շարքում վաղ տարիքի ծառայությունների զարգացումը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ միջինում մեկ նախադպրոցական հաստատություն հաճախում է շուրջ 90 երեխա, առաջ է գալիս շուրջ 260 նախադպրոցական հաստատությունների կառուցման կամ եղած նախադպրոցական հաստատությունների հզորությունների ընդլայնման խնդիր՝ նոր մասնաշենքերի կառուցմամբ՝ հատուկ շեշտադրելով գյուղական բնակավայրերը:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

Առկա խնդիրները հաշվի առնելով՝ առաջարկվում է լուծումները կենտրոնացնել երկու հիմնական ուղղությամբ՝ ապահովել հանրապետության բոլոր բնակավայրերում նախադպրոցական ծառայությունների հասանելիությունը՝ ըստ անհրաժեշտության մոդուլային շենքերի կառուցման, առկա շինությունների հիմանորոգման և վերանորոգման միջոցով: Այն բնակավայրերում, որտեղ երեխաների թիվը փոքր է, առաջարկվում է իրականացնել այլընտրանքային նախադպրոցական ծառայություններ:

Երկրորդ ուղղությամբ նախատեսվում է ընդլայնել նախադպրոցական ծառայությունների հասանելիությունը այն համայնքներում, որտեղ երեխաների թիվը մեծ է, իսկ առկա նախադպրոցական հաստատությունների հզորությունը՝ անբավարար: Այս դեպքում խոսքը հիմնականում քաղաքային համայնքների մասին է:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը.

Կհաստատվեն առաջնահերթ կառուցման, հիմնանորոգման և վերանորոգման ենթակա նախադպրոցական հաստատությունների ցանկերը, կգնահատվի ծրագրի արժեքը:

Կկազմվեն կառուցման, հիմնանորոգման և վերանորոգման ցանկում ընդգրկման չափանիշներն ու մեթոդաբանությունը:

Կվերանայվի անհրաժեշտ գույքի և սարքավորումների ցանկը՝ նոր չափորոշչի և առարկայական ծրագրերի համապատասխան:

Ցանկում ընդգրկված հաստատություններում կիրականացվեն շինարարական աշխատանքները և կհագեցվեն անհրաժեշտ գույքով և սարքավորումներով:

500 նախադպրոցական հաստատությունների շենքային և գույքային հագեցվածությունը կհամապատասխանեցվի սահմանված պահանջներին:

Նախադպրոցական ծառայությունների ընդլայնման, դրանց որակի բարձրացման, երեխայի զարգացման ամբողջական միջավայրի ձևավորման միջոցով կապահովվի հանրակրթության որակյալ արդյունքը՝ վաղ մանկության զարգացման համար բավարար պայմաններ ստեղծելով:

Նախադպրոցական հաստատություններում ընդգրկված 3-5 տարեկան երեխաների թիվը կհասնի առնվազն 85 տոկոսի:

3.2 Նախադպրոցական կրթական ծրագրերի բովանդակային վերանայում. Նախադպրոցական կրթական ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանի ընդունում

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը.

Միջոցառման գլխավոր նպատակն է նախադպրոցական հաստատություններում 3-5 տարեկան երեխաների ընդգրկվածությունը հասցնել 85 տոկոսի:

Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված՝ ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» բաժնի 2-րդ և 4-րդ պարբերությունից:

Միջոցառման անհրաժեշտությունը բխում է նաև «Կրթության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածից «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետից, ՀՀ կառավարության 2021թ. մայիսի 15-ի N 744-Ն որոշումից, ՀՀ կառավարության 2021 թ. մայիսի 15-ի N 764-Ն որոշումից: Նպատակը նախադպրոցական ծրագրերի բովանդակության և կառուցվածքի վերանայումն է՝ ուղղորդելով դեպի ուսումնառության վերջնարդյունքները:

1.1. Կարգավորման ընթացիկ իրավիճակը և առկա խնդիրները.

Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի N 744-Ն որոշմամբ հաստատվել է նախադպրոցական կրթության պետական չափորոշիչը, որը կոչված է ապահովելու հարթ անցումը դեպի հանրակրթական դպրոցի տարրական աստիճան՝ հիմնվելով կարողունակությունների վրա: Նախադպրոցական կրթության պետական նոր չափորոշչի հաստատումից հետո անհրաժեշտ է վերանայել նաև նախադպրոցական կրթության ծրագրերը:

Գործող ծրագրերը մշակվել և ներդրվել են շուրջ 8-10 տարի առաջ, և հաշվի առնելով երեխաների զարգացման որոշ ոլորտներում տեղի ունեցող սրընթաց փոփոխությունների վերաբերյալ միջազգային հետազոտությունների արդյունքները՝ դրանք վերանայելու անհրաժեշտություն է առաջացել, որպեսզի համահունչ լինեն վաղ մանկության զարգացման ոլորտում Հայաստանի Հանրապետությունում և միջազգային ասպարեզում տեղի ունեցող ժամանակակից կարևորագույն գործընթացներին՝ միտված երեխաների իրավունքների պաշտպանությանը, համընդհանուր ներառմանը, կրթության որակի բարձրացմանը, բազմազանության խթանմանը, սահուն անցմանը դպրոցին և այլն:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

Միջոցառման իրականացմամբ կապահովվի չափորոշչի և ծրագրերի, դրանցից բխող՝ մատուցվող կրթության բովանդակության համապատասխանությունը:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը.

Նախադպրոցական կրթության պետական նոր չափորոշչից բխող՝ վերանայված, արդիականացված և արդի պահանջներին համապատասխանեցված նախադպրոցական ծրագրերով երեխաների կրթության և զարգացման գործընթացի իրականացում:

3.3 ՀՀ կառավարության 2021 թվականի հուլիսի 15-ի «Նախադպրոցական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեից մեկ սանի հաշվարկով ֆինանսավորման կարգը, այդ թվում՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների ապահովման համար անհրաժեշտ ֆինանսավորման բարձրացված չափաքանակը սահմանելու մասին» N 1169-Ն որոշման գործարկում

1.Միջոցառման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման գլխավոր նպատակն է նախադպրոցական հաստատություններում 3-5 տարեկան երեխաների ընդգրկվածությունը հասցնել 85 տոկոսի:

Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-իթիվ 1363-Ա որոշմամբ հաստատված՝ ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ»բաժնի 2-րդ պարբերությունից, 4-րդ պարբերության 1-ին, 2-րդ կետերից: Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է «Նախադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ մասով, ՀՀ կառավարության 2021 թ. մայիսի 15-ի N 744-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության 2021թ. ապրիլի 17-ի N 598-Ն որոշմամբ: Կարգի գործարկման նպատակը նախադպրոցական ուսումնական հաստատություններ երեխաների ընդգրկվածությունը մեծացնելն է, այդ թվում՝ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների:

1.1 Կարգավորման ընթացիկ իրավիճակը և առկա խնդիրները.

Ներկայումս հանրապետության 271 բնակավայրերում նախադպրոցական որևէ կրթական ծառայություն դեռևս չի մատուցվում: ՀՀ համայնքների ֆինանսական հնարավորությունները սահմանափակ են համապատասխան նախադպրոցական կրթական հաստատություն կառուցելու կամ գոյություն ունեցող հաստատությունն ամբողջապես վերանորոգելու համար, հետևապես անհրաժեշտություն է առաջանում ոլորտում այլընտրանքային լուծումներ գտնել և դրանք համայնքներում կիրառելիդարձնել՝ պահպանելով գործող նախադպրոցական կրթական չափորոշիչները: Ներկայումս 2019թ. ՀՀ-ում գործել է 906 համայնքային, գերատեսչական և ոչ պետական նախադպրոցական հաստատություն (ՆԴՀ), որոնցից 701-ը՝ մանկապարտեզ, 70-ը՝ մսուր-մանկապարտեզ, 135-ը՝ դպրոց-մանկապարտեզ: ՆԴՀ-ների ընդհանուր քանակից 842-ը համայնքային ենթակայության է, 10-ը՝ գերատեսչական և 54-ը՝ ոչ պետական: Երեխաների ընդգրկվածությունը ՆԴՀ-ներում (0-5 տարեկան բնակչության թվաքանակից) կազմել է 34.7%, քաղաքներում՝ 39.6%, գյուղերում՝ 25.4%: Մեկ խմբում երեխաների միջին թվաքանակը կազմել է 26 երեխա, տեղերի փաստացի զբաղվածությունը՝ 89.7%: Միջին հաշվով մեկ ՆԴՀ հաճախել է 91 երեխա, մեկ մանկավարժին բաժին է ընկել 13 երեխա: ՆԴՀ-ների շենքերի ընդհանուր մակերեսը կազմել է 778.7 հազ. քառ. մ: ՆԴՀ-ներին կից (օժանդակ) տարածքի մակերեսը կազմել է 747.2 հազ. քառ. մ: 3-5 տարեկան բնակչության շրջանում երեխաների ընդգրկվածությունը ՆԴՀ-ներում կազմել է 64.4%: Ընդ որում, նախորդ տարվա համեմատ նախադպրոցական հաստատությունների թիվն աճել է 22-ով, 3-5 տարեկան բնակչության շրջանում երեխաներիընդգրկվածությունը՝ 6 %-ով: Ըստ տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությանարդյունքների, 2018թ.-ին, ընդհանուր առմամբ, մինչև 6 տարեկան 10 երեխայից գրեթե 7-ը (68.5%) չի հաճախել նախադպրոցական հաստատություն:Որպես հիմնական պատճառներ նշվել է, որ երեխայի մայրը չի աշխատում՝ 39.5%, մանկապարտեզ չկա՝ 11.3%, իսկ դրանից օգտվելը թանկ է ևնախադպրոցական հաստատությունը փակ է՝ 2.1%:Մատչելիության կարևոր ցուցանիշներից է ամենամոտ նախադպրոցական հաստատությանհեռավորությունը տնային տնտեսությունից: Ըստ 2018թ.-ի հետազոտության տվյալների, գյուղաբնակ տնային տնտեսությունների 59.9%-ը պատասխանել է, որնախադպրոցական հաստատությունը գտնվում է մինչև 1 կմ հեռավորության վրա (ամենաաղքատ և ամենահարուստ քվինտիլային խմբերի, համապատասխանաբար՝ 55.3% և67.1%-ը): Միևնույն ժամանակ տնային տնտեսությունների 5.4%-ը պատասխանել է,որ այն գտնվում է 10 կմ-ից հեռու: Վերջին տարիներին պետությունը վարում է նախադպրոցական ծառայություններիծածկույթի ընդլայնման հետևողական քաղաքականություն:

1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Միջոցառումը նպատակաուղղված է նախադպրոցական կրթության ոլորտում երեխաների ընդգրկվածության աճի խթանմանը, երեխաներին տարրական դպրոցին նախապատրաստմանը, նախադպրոցական տարիքի երեխաների կարողությունների և հմտությունների զարգացմանը՝ այլընտրանքային և քիչ ծախսատար կրթական ծառայությունների ներդրման միջոցով:

Նախադպրոցական կրթությունը անձի հետագա զարգացման կարևոր գրավականներից է, որը փաստվում է բազմաթիվ հետազոտություններով: Բացի անձի զարգացման համար առաջնահերթ կարևորությունից, նախադպրոցական ծառայությունների ցանցի զարգացումը հնարավորություն է տալիս ընդլայնել կանանց ներգրավվածությունը աշխատանքային շուկայում և էապես մեծացնել վերջիններիս ներուժի իրացման, հանրային զարգացման հնարավորությունները: Հայաստանի Հանրապետության կառավարությունը նախադպրոցական կրթության մատչելիությունը հռչակել է իբրև կառավարության ծրագրային նպատակներից մեկը՝ ՀՀ կառավարության 2019 թվականի 8 փետրվարի N 65-Ա որոշմամբ արձանագրելով, որ. «Հանրակրթության ոլորտում Կառավարության ծրագրային նպատակներն են՝ բարձրացնել նախադպրոցական կրթության մատչելիության և հասանելիության աստիճանը բոլոր համայնքներում՝ մինչև 2023 թվականը 3 տարեկանից բարձր երեխաների ընդգրկվածությունը հասցնելով 70 տոկոսի»:

2020 թվականի մայիսի 6-ին Ազգային Ժողովն ընդունեց նախադպրոցական կրթության մասին օրենքի փոփոխությունները, որոնցով ամրագրվեց նախադպրոցական կրթության այլընտրանքային մոդելների ներդրման հնարավորությունը: Ըստ այդմ, նախատեսվում է, որ հատկապես փոքրաքանակ կազմով համայնքներում և բնակավայրերում, որտեղ շահառուների թիվը փոքր է և նախադպրոցական ծառայությունների ներդրման համար անհրաժեշտ է դիտարկել նաև դրանց ծախսարդյունավետությունը, կարող են գործել այլընտրանքային նախադպրոցական ծառայություններ, որոնք կարող են կազմակերպվել տարբեր ձևաչափերով, ինչպես իբրև տնային մանկապարտեզ, շարժական ծառայություններ:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը.

Միջոցառման իրականացման արդյունքում սոցիալական տարբեր խմբեր կստանաննախադպրոցական ծառայություններից օգտվելու ընդլայնված հնարավորություններ, նախադպրոցական հաստատությունների գործունեությունը հատկապես գյուղական համայնքներում կկրի ավելի կայուն և շարունակական բնույթ՝ ի հաշիվ պետական աջակցության, կիստակեցվի նախադպրոցական հաստատությունների ֆինանսավորման մեթոդաբանությունը՝ ուղենիշ հանդիսանալով ամբողջ ոլորտի համար:

	Իրավական ակտի գործարկումը հիմք կհանդիսանա նախադպրոցական կրթության ոլորտում երեխաների ընդգրկվածության աճի խթանման համար:
	3.7 Նախադպրոցական այլընտրանքային ծախսարդյունավետ մոդելների ներդրում 1.Իրավական ակտի անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակն է նախադպրոցական հաստատություններում 3-5 տարեկան երեխաների ընդգրկվածությունը հասցնել 85 տոկոսի: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված՝ ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» բաժնի 2-րդ պարբերությունից, 4-րդ պարբերության 1-ին, 2-րդ կետերից: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է նաև «Կրթության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածից, «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածից, ՀՀ կառավարության 2021 թ. մայիսի 15-ի N 744-Ն որոշումից, ՀՀ կառավարության 2021 թ. մայիսի 15-ի N 764-Ն որոշումից: Ներկայացվող նախագծի նպատակն է՝ Հայաստանի Հանրապետությունում ներդնել նախադպրոցական կրթական ծառայությունների այլընտրանքային, ծախսարդյունավետ մոդելներ: 1.1 Կարգավորման ընթացիկ իրավիճակը և առկա խնդիրները. Վերջին տարիներին մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների ազդեցության հետևանքով Հայաստանի Հանրապետության նախադպրոցական համակարգը հայտնվել է անբարենպաստ պայմաններում, ինչի արդյունքում կրճատվել են նախադպրոցական հաստատությունների թիվը, գործող հաստատությունների կարողությունները, նվազել է դրանցում երեխաների ընդգրկվածությունը: Նախադպրոցական հաստատություններ համայնքային ենթակայության են և դրանց գործունեության հետ կապված ցանկացած խնդիր անմիջականորեն աղերսվում է տվյալ համայնքի բյուջետային միջոցների հետ: Արդյունքում անհավասար պայմաններ են ստեղծվում նախադպրոցական տարիքի երեխաների միջև: 1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը՝ ուսումնասիրելով վերջին տարիներին գործընկեր կազմակերպությունների (Հայաստանում ՅՈՒՆԻՍԵՖ-ի գրասենյակ, «Սեյվ դը չիլդրեն ինթերնեշնլ» կազմակերպության հայաստանյան ներկայացչութուն և «Աստղացոլք» ՀԿ) կողմից ձեռնարկված միջոցառումները՝ առաջարկում է ծախսարդյունավետ մոդելներ, որոնց ներդրման արդյունքում հնարավոր է ընդլայնել նախադպրոցական կրթության մեջ երեխաների ընդգրկվածությունը, ինչպես նաև արդյունավետ մեխանիզմներ կիրառել կառավարման մեջ, հանրապետության բազմաբնակավայր համայնքներում ձևավորել այլընտրանքային նախադպրոցական կրթության հաստատություններ, որոնք հնարավորություն կընձեռեն մեծացնել երեխաների ընդգրկվածությունը նախադպրոցական ծառայություններում և ապահովել մատչելիություն՝ հատկապես սոցիալապես անապահով ընտանիքների համար: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը. Այլընտրանքային մոդելների ներդրմամբ հնարավորություն ընձեռել տեղական ինքնակառավարման մարմիններին՝ այլընտրանքային եղանակներով նախադպրոցական կրթությունը հասանելի դարձնելու նախադպրոցահասակ բոլոր երեխաներին:
4	4.1 Նախադպրոցական տարիքի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների գնահատման գործիքակազմի մշակում և հաստատում Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով 4.2 ՀՀ Սյունիքի, Լոռու, Տավուշի մարզերում և Երևան քաղաքում անցում համընդհանուր ներառման 4.3 ՀՀ Արարատի, Կոտայքի, Շիրակի, Գեղարքունիքի, Արագածոտնի, Վայոց ձորի, Արմավիրի մարզերում անցում համընդհանուր ներառման 1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը. Միջոցառման գլխավոր նպատակն է անցնելու համընդհանուր ներառման՝ հանրապետության բոլոր նախադպրոցական հաստատություններում: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» բաժնի 1-ին, 2-րդ, 4-րդ պարբերության 3-րդ կետից: Հայաստանի Հանրապետության ««Նախադպրոցական կրթության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-267 օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն նախատեսված է նախադպրոցական կրթության ոլորտում անցնել համընդհանուր ներառման՝ մինչև 2023 թվականի ավարտը, ուստի ՀՀ կառավարությունը

	նպատակադրել է մինչև 2023 թվականի ավարտը ապահովել նախադպրոցական կրթության ոլորտում համընդհանուր ներառականությունը: Այս նպատակով ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի N 598-Ն որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետության նախադպրոցական կրթության ոլորտում համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանը և ժամանակացույցը: 1.1 Կարգավորման ընթացիկ իրավիճակը և առկա խնդիրները. Ներկայումս կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար նախադպրոցական կրթությունը հիմնականում դժվար հասանելի է: Ներառման փորձառություն ունեն քիչ թվով հաստատություններ, այնինչ վաղ տարիքում ներառումը նպաստում է կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետագա ներառման և կրթական արդյունքի, ինչպես նաև սոցիալականացման արդյունավետության էական բարձրացմանը: Ուստի, առաջնահերթ խնդիր է ապահովել ներառման հնարավորությունները վաղ մանկության շրջանից՝ կանխարգելելու հետագա խնդիրների խորացումը և ապահովելու հավասար պայմանների բոլոր երեխաների կրթության և զարգացման համար: 1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները. Անհրաժեշտ է նախադպրոցական գործող բոլոր այն հաստատություններում, որոնք հարմարեցված չեն հատուկ կարիքներ ունեցող երեխաների համար, իրականացնել անհրաժեշտ հարմարեցման աշխատանքները՝ կառուցել թեքահարթակներ, իրականացնել սանհանգույցների հարմարեցում: Անհրաժեշտ է նաև վերապատրաստել նախադպրոցական հաստատությունների աշխատակիցներին՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ արդյունավետ աշխատանք իրականացնելու համար, մշակել և տրամադրել անհրաժեշտ մեթոդական գործիքները, իրականացնել իրազեկման աշխատանքներ, կցագրել նախադպրոացական հաստատությունները տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններին՝ հետագա կարիքի գնահատման և ծառայությունների տրամադրման համար: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը. Մշակված է նախադպրոցական տարիքի կրթության և զարգացման առաձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների գնահատման գործիքակազմը՝ համաձայն պահանջվող չափանիշների: Մշակված է նախադպրոցական տարիքի կրթության և զարգացման առաձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների գնահատման գործիքակազմը՝ համաձայն պահանջվող չափանիշների: Սյունիքի, Լոռու, Տավուշի մարզերում և Երևանում գործող նախադպրոցական հաստատություններն անցել են համընդհանուր ներառման: Արարատի, Կոտայքի, Շիրակի, Գեղարքունիքի, Արագածոտնի, Վայոց ձորի, Արմավիրի մարզերում գործող նախադպրոցական հաստատությունները անցել են համընդհանուր ներառման: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված՝ բոլորի համար հավասար կրթության իրավունքի, նախադպրոցական կրթության հասանելիության և մատչելիության հիմքերը ապահովելու նպատակով նախադպրոցական բոլոր հաստատություններում իրականացվել են համապատասխան հարմարեցումներ՝ հատուկ կարիքներ ունեցող երեխաների համար, կառուցված են թեքահարթակներ, հարմարեցված սանհանգույցներ, ներգրավված են համապատասխան մասնագետներ:
5	5.1 «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը. Միջոցառման գլխավոր նպատակն է ուսուցիչ-դաստիարակների աշխատանքային առաջխաղացման, շարունակական մասնագիտական զարգացման և վարձատրության փոխկապակցված մեխանիզմի ներդրումը: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» բաժնի 4-րդ պարբերության 4-րդ կետից, ՀՀ կառավարության՝ «2050 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ» ծրագրի «ՄԻՆՉԵՎ 2030 ԹՎԱԿԱՆԻ ՄԵԳԱՆՊԱՏԱԿՆԵՐԻ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5-ի /44-րդ էջ/ 5. 4. 1 թիրախային արդյունքի ցուցանիշի ապահովման պահանջից: ՀՀ կառավարությունը նպատակադրել է կրթության ոլորտում ներդնել մանկավարժների աշխատանքային առաջխաղացման, շարունակական մասնագիտական զարգացման և վարձատրության շարունակական բարձրացման փոխկապակցված մեխանիզմներ, որոնք թույլ կտան ոլորտում ապահովել մասնագիտական կարողությունների անընդհատ զարգացումը, աշխատանքային պայմանների բարելավումը, որպես արդյունք՝ կրթության և մատուցվող ծառայությունների որակի բարձրացումը: Օրենսդրական փոփոխությունը նպատակ ունի

	ամրագրելու աշխատակիցների պարտադիր վերապատրաստման և ատեստավորման դրույթները՝ հետագայում փոխկապակցելով վարձատրության քաղաքականությանը: 1.1 Կարգավորման ընթացիկ իրավիճակը և առկա խնդիրները. Ներկայումս նախադպրոցական կրթության ոլորտում չկա աշխատավարձի և մասնագիտական զարգացման միասնական մեխանիզմ, ոլորտում աշխատավարձերը խիստ ցածր են, մասնագիտական զարգացման հնարավորությունները՝ սահմանափակ և հատվածային: 1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները. Նախադպրոցական հաստատությունների ղեկավարների և մանկավարժական կադրերի վերապատրաստման, մասնագիտական որակի բարձրացման, ատեստավորման,աշխատանքի որակի և վարձատրության խթանման մեխանիզմների ապահովումը մատուցվող կրթական որակի վրա դրական ազդեցություն կունենա: Անհրաժեշտ է նախադպրոցական բոլոր ուսումնական հաստատությունների մանկավարժների մասնագիտական առաջխաղացման հնարավորություն ընձեռնելուն զուգահեռ ստեղծել մանկավարժների ընտրության մեխանիզմ: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը. Օրենսդրությամբ կամրագրվեն մանկավարժների աշխատանքային առաջխաղացման, շարունակական մասնագիտական զարգացման և վարձատրության շարունակական բարձրացման փոխկապակցված մեխանիզմներ: Ոլորտում աշխատակիցների վարձատրության խրախուսումը կխթանի նոր և որակյալ կադրերի մուտքը՝ ապահովելով նախադպրոցական ծառայությունների որակի շարունակական բարձրացման նախադրյալները: Նախադպրոցական հաստատությունների մանկավարժական աշխատողների ատեստավորման մեխանիզմի ներդրմամբ էապես կբարելավվի կրթության առաջին օղակում տրամադրվող պատշաճ ծառայությունների մատուցման որակը:
	5.2 «Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների ընտրության (նշանակման) կարգը հաստատելու մասին» և «Նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենների և մանկավարժական աշխատողների վերապատրաստման կարգերը հաստատելու մասին» ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամաններիի ընդունում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը. Միջոցառման գլխավոր նպատակն է ուսուցիչ-դաստիարակների աշխատանքային առաջխաղացման, շարունակական մասնագիտական զարգացման և վարձատրության փոխկապակցված մեխանիզմի ներդրումը: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» բաժնի 1-ին, 2-րդ, 4-րդ պարբերությունից: Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև «Նախադպրոցական կրթության մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջի կատարմամբ, ՀՀ կառավարության 2021 թ. մայիսի 15-ի N 744-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության 2021 թ. մայիսի 15-ի N 764-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության 2021 թ. ապրիլի 10-ի N 515-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության՝ «2050 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ» ծրագրի «ՄԻՆՉԵՎ 2030 ԹՎԱԿԱՆԻ ՄԵԳԱՆՊԱՏԱԿՆԵՐԻ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5-ի /44-րդ էջ/ 5.4.1 թիրախային արդյունքի ցուցանիշի ապահովման պահանջից: Նախադպրոցական ուսումնական հաստատությունների տնօրենների և մանկավարժների համար նախատեսվող համակարգված վերապատրաստումների անհրաժեշտությունը բխում է վերապատրաստումների միջոցով մարդկային ռեսուրսների հզորացման անհրաժեշտությունից: 1.1 Կարգավորման ընթացիկ իրավիճակը և առկա խնդիրները. Մշակված չեն նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների ընտրության և նշանակման մեխանիզմները, որի արդյունքում համակարգ մուտք են գործում մասնագիտական կրթություն չստացած, անհրաժեշտ մանկավարժահոգեբանական հմտությունների պակաս ունեցող մասնագետներ: Հաճախ վերջիններիս մուտքը հաստատություն պայմանավորված է տնօրենների կամայական որոշումներով, ինչն էլ հղի է կոռուպցիոն ռիսկերով: Նախադպրոցական ուսումնական հաստատություններում չկան մանկավարժների ընտրության մեխանիզմներ, որը երբեմն հանգեցնում է աշխատակազմի ոչ արհեստավարժ և մասնագիտական առաջխաղացման հնարավորություններից զուրկ խմբի գործունեության հետևանքների, ինչը ցանկալի որակ չի կարող ապահովել: 1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

Օրենսդրությամբ կամրագրվեն նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների ընտրության (նշանակման) մեխանիզմները, որոնք էլ իրենց հերթին նախադրյալներ կստեղծեն ապահովելու որակյալ մասնագետների մուտքը հաստատություններ:

Անհրաժեշտ է նախադպրոցական բոլոր ուսումնական հաստատությունների մանկավարժներին մասնագիտական առաջխաղացման հնարավորություն ընձեռնել՝ ընտրության մեխանիզմ ստեղծելուն զուգահեռ: Ընտրության եղանակով մասնագիտական կրթություն ստացած, շարունակական վերապատրաստում անցած, աշխատավարձի բարձրացման հնարավորություն ունեցող մանկավարժական աշխատողներին համակարգում ընդգրկելը նախադպրոցական կրթության որակը էապես բարելավելու ամուր հիմքեր կստեղծի:

Կմշակվեն և կհաստատվեն նախադպրոցական հաստատությունների մանկավարժական կազմի ատեստավորման, վերապատրաստման, տարակարգի շնորհման կարգերը:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը.

Նախադպրոցական կրթության բովանդակային վերանայման համատեքստում նշված միջոցառումը հիմք կհանդիսանա մրցութային եղանակով համակարգը որակյալ կադրերով համալրելու համար, կնպաստի վաղ մանկության խնամքի ծառայությունների մատուցման որակական բարեփոխմանը՝ համապատասխան մասնագիտական կարողություններով օժտված կադրերի միջոցով որակյալ կրթության մատուցմանը, կապահովի երեխաների սահուն անցումը հանրակրթական միջավայր և տարրական դասարանում սովորողի կրթական արդյունքի վրա անմիջական ազդեցություն կունենա:

Հաստատությունների մանկավարժական աշխատողները կընտրվեն մրցութային կարգով, որոնք գործունեության ընթացքում հնարավորություն կունենան վերապատրաստվելու և ատեստավորվելու, ինչպես նաև որակավորման տարակարգ ունենալու:

Վերապատրաստումները մանկավարժական կազմին հնարավորություն կընձեռեն տիրապետելու ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներին, ծանոթանալու ոլորտի նորարարություններին: Մանկավարժական անձնակազմի միջև համագործակցային աշխատառճի սերմանումը կնպաստի է կրթական գործընթացի բարելավմանը, արդիականացմանը:

Կներդրվեն տնօրենների և մանկավարժական աշխատողների մասնագիտական որակների զարգացմանը,ուսումնական գործընթացի պլանավորման, կազմակերպման և հետադարձ վերլուծության արդյունավետության բարձրացման մեխանիզմներ:

Կապահովվի կրթության մատուցման համար որակյալ կադրեր առկայությունը՝ ազդելով կրթական արդյունքի վրա:

5.3 Նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենների և մանկավարժական աշխատողների վերապատրաստումների իրականացում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը.

Միջոցառման գլխավոր նպատակն է ուսուցիչ-դաստիարակների աշխատանքային առաջխաղացման, շարունակական մասնագիտական զարգացման և վարձատրության փոխկապակցված մեխանիզմի ներդրումը:

Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» բաժնի 1-ին, 4-րդ/ 4-րդ կետ/ պարբերություններից:

Միջոցառման անհրաժեշտությունը բխում է նաև «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ և 11-րդ հոդվածներից 24-րդ հոդվածներից, «Կրթության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածից, ՀՀ 2020 թ. ՀՀ կառավարության 2021 թ. մայիսի 15-ի N 744-Ն որոշումից, ՀՀ կառավարության 2021 թ. մայիսի 15-ի N 764-Ն որոշումից, ՀՀ կառավարության 2021 թ. ապրիլի 10-ի N 515-Ն որոշումից, ՀՀ կառավարության՝ «2050 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ» ծրագրի «ՄԻՆՉԵՎ 2030 ԹՎԱԿԱՆԻ ՄԵԳԱՆՊԱՏԱԿՆԵՐԻ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5-ի 5. 4. 1 թիրախային արդյունքի ցուցանիշի ապահովման պահանջից:

Միջոցառման իրականացումը պայմանավորված է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից ՀՀ համայնքներ կատարած այցելությունների և նախընտրական քարոզարշավի ընթացքում (2021թ. հունիսի 4-17) քաղաքացիներին տրված նախընտրական խոստումների կատարման անհրաժեշտությունից:

Նախադպրոցական հաստատություններում առկա խնդրիների ստեղծման հիմնական նախադրյալ է հանդիսանում մանկավարժական աշխատողների մասնագիտական հմտությունների բացակայությունը, որը հաճախ էական և շարունակական ազդեցություն է ունենում երեխայի հետագա զարգացման վրա:

	Կանոնակարգված չէ նախադպրոցական հաստատությունների մանկավարժական կադրերի վերապատրաստման և մասնագիտական որակի բարձրացման, ատեստավորման, ինչպես նաև կառավարման և վերահսկողության համակարգի ապահովման խնդիրը: Նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժների մասնագիտական շարունակական բարելավումը նպատակաուղղված է ոլորտի սպասարկման որակի բարձրացմանը, ինչը փոխկապակցված է հաստատությունների մանկավարժների վարձատրության բարձրացման հետ: 1.1. Կարգավորման ընթացիկ իրավիճակը և առկա խնդիրները. Կադրերի ընտրությունը մրցութային կարգով չի իրականացվում՝ առաջ բերելով մի շարք հետևանքներ: ՀՀ մարզերի քաղաքային և գյուղական համայնքների նախադպրոցական հաստատություններում կրթության կազմակերպման հնարավորությունները խիստ տարբեր են. համակարգում աշխատող անձնակազմի զգալի մասը ոչ միայն չունի մասնագիտական որակավորում, այլ նաև գործընթացն իրականացնելու հետ կապված ուսումնամեթոդական, մանկավարժահոգեբանական կարողունակություններ: Նախադպրոցական գործող հաստատություններում չկան մանկավարժների մասնագիտական առաջխաղացման մեխանիզմներ, լուծված չէ կադրերի վարձատրության խնդիրը. աշխատավարձը ցածր է, աշխատանքը՝ ոչ գրավիչ, արդյունավետությունը՝ զգալի ցածր: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները. Շարունակական վերապատրաստումների միջոցով անհրաժեշտ է ապահովել նախադպրոցական բոլոր ուսումնական հաստատությունների մանկավարժների մասնագիտական առաջխաղացման հնարավորություն, ձևավորել շարունակական մասնագիտական զարգացման և վարձատրության շարունակական բարձրացման փոխկապակցված մեխանիզմ: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը. Նախատեսվում է իրականացնել նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենների և մանկավարժական աշխատողների վերապատրաստումներ (շուրջ 900 տնօրեն, 6000 մանկավարժական աշխատող): Նախադպրոցական ուսումնական հաստատություններում կբարձրանա մատուցվող կրթական ծրագրի արդյունքային ցուցանիշը, որը շարունակական մեծ ազդեցություն կունենա հետագայում դպրոցի կրթական արդյունքի վրա: Միջոցառման իրականացմամբ հիմքեր կստեղծվեն վաղ մանկության խնամքի և զարգացման հասանելի, հանրամատչելի և պահանջված բարձրակարգ ծառայությունների մատուցման համար՝ ներառյալ դայակ-դաստիարակների ծառայությունների որակյալ ծառայությունների մատուցումը: Նախադպրոցական ուսումնական հաստատություններում կբարձրանա մասնագետի աշխատանքի գրավչությունը և մրցակցային դաշտ կստեղծվի: Նախադպրոցական ծառայությունների շարունակականության ապահովման, նախադպրոցական հաստատությունների մանկավարժական կադրերի վերապատրաստման և մասնագիտական որակի բարձրացման, ատեստավորման, հաստատությունների գործունեության կանոնակարգման և զարգացման նորմատիվային դաշտի, ինչպես նաև վերահսկողության համակարգի ապահովման համար իրավական երաշխիքների օրենսդրական հիմք կստեղծվի:
6	6.1 Հանրակրթության պետական չափորոշիչների փորձարկման նպատակով Տավուշի մարզի բոլոր դպրոցներում բնագիտական և ՏՀՏ լաբորատորիաների ստեղծում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը. Միջոցառման գլխավոր նպատակն է համընդհանուր հասանելի և մատչելի սովորողակենտրոն հանրակրթական միջավայրի ստեղծումը: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» բաժնի 1-ին, 2-րդ, պարբերություններից, 3-րդ պարբերության 1-ին, 2-րդ կետերից: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է նաև ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածից, «Կրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ, 5-րդ, 9-րդ, 11-րդ հոդվածներից, ՀՀ կառավարության 2021 թ. փետրվարի 4-ի N 136-Ն որոշման պահանջներից, «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ, 5-րդ, 20-րդ հոդվածներից: Միջոցառման իրականացումը պայմանավորված է նաև ՀՀ կառավարության «Վերականգնում, դիմակայունություն և բարեփոխում, Արևելյան գործընկերության առաջնահերթությունները 2020 թ.-ից հետո» տնտեսական և ներդրումային պլանի 3-րդ ուղենիշի 2-րդ կետի կատարմամբ:

12-ամյա կրթությանը նոր բովանդակություն հաղորդելու նպատակով վերանայված հանրակրթական չափորոշիչները, ուսումնական պլանը և առարկայական ծրագրերը նպատակ ունեն խթանելու սովորողի քննական մտածողությունը, նորարարությունը և վերլուծական ու ստեղծագործական հմտությունները՝ առանձնակի ուշադրություն դարձնելով կոմպետենցիոն կարողությունների զարգացմանը: Այս սկզբունքով մշակված բոլոր առարկաների, այդ թվում՝ (ԳՏՃՄ), ծրագրերը և չափորոշիչները Տավուշի մարզում արդյունավետ փորձարկելու համար կարևորագույն խնդիր է դպրոցները ՏՀՏ լաբորատորիաներով համալրելը, որի արդյունքում բնագիտական առարկաները սովորողները կուսումնասիրեն ժամանակակից ռեսուրսներով համալրված լաբորատորիաներում:

Տավուշի մարզում նոր չափորոշիչները փորձարկելու արդյունքը կարևոր է այն հետագայում ՀՀ բոլոր դպրոցներում ներդնելու տեսանկյունից, որում մեծ դերակատարում ունի դպրոցները ՏՀՏ լաբորատորիաներով ապահովելը և դրանց արդյունավետ կիրառումը՝ գործնական ուսուցման մեթոդով:

1.1 Կարգավորման ընթացիկ իրավիճակը և առկա խնդիրները.

ՀՀ գրեթե բոլոր դպրոցներում ՏՀՏ սարքավորումներով ընդհանուր հագեցվածության ցուցանիշներից Տավուշի մարզի դպրոցները չեն առանձնանում, ինչը լրջագույն խոչընդոտ կարող է հանդիսանալ նոր չափորոշիչների փորձարկման գործընթացում:

Մեծ թիվ են կազմում հին սերնդի, տեխնիկական խնդիրներ ունեցող կամ անսարք համակարգիչ ունեցող դպրոցները, հետևաբար, նոր չափորոշիչների փորձարկման արդյունավետություն տեսանկյունից Տավուշի մարզի բոլոր ուսումնական հաստատությունները բնագիտական և ՏՀՏ լաբորատորիաներով հագեցնելը խիստ անհրաժեշտ է:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

Տավուշի մարզի բոլոր դպրոցներում ՏՀՏ լաբորատոր ենթակառուցվածքների ստեղծումը առաջնահերթություն է, ինչը բնագիտական ոլորտում գործնական ուսուցման մեթոդի կիրառմամբ կրթության որակի բարելավման հիմք կհանդիսանա: Մարզի սովորողները հնարավորություն կունենան գործնական աշխատանքների միջոցով զարգացնել կարողունակությունները, որը նոր չափորոշչով շրջանավարտին ներկայացվող հիմնական պահանջն է:

2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը.

Տավուշի մարզի բոլոր դպրոցներում առկա կլինեն անհրաժեշտ ենթակառուցվածքները՝ նոր չափորոշիչներով առարկայական ուսուցումն իրականացնելու նպատակով:

Կբարելավվի ԳՏՃՄ ոլորտի կրթական միջավայրը՝ ապահովելով Տավուշի մարզի հանրակրթական դպրոցներին անհրաժեշտ ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, աշխարհագրության, ՏՀՏ լաբորատոր սարքավորումներով, նյութերով և գույքով, ինչպես նաև անհրաժեշտ համակարգչային տեխնիկայով:

Մարզի բոլոր դպրոցները ապահովելով անհրաժեշտ ենթակառուցվածքներով՝ առարկայական ուսուցումը կիրականացվի նոր մոտեցումներով՝ գործնական ուսուցման մեթոդներ կիրառելով, ինչն էլ կրթության որակի բարձրացման երաշխիք կհանդիսանա մասնավորապես ԳՏՃՄ ոլորտում:

6.2 Չափորոշիչների ներդրման համար շուրջ 1400 դպրոցներում անհրաժեշտ բնագիտական և ՏՀՏ լաբորատորիաների ստեղծում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը.

Միջոցառման գլխավոր նպատակն է համընդհանուր հասանելի և մատչելի սովորողակենտրոն հանրակրթական միջավայրի ստեղծումը:

Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» բաժնի 1-ին, 2-րդ, պարբերություններից, 3-րդ պարբերության 1-ին, 2-րդ կետերից:

Միջոցառման անհրաժեշտությունը բխում է նաև ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածից, «Կրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ, 5-րդ, 9-րդ, 11-րդ հոդվածներից, ՀՀ կառավարության 2021 թ. փետրվարի 4-ի N 136-Ն որոշման պահանջներից, «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ, 5-րդ, 20-րդ հոդվածներից, ՀՀ կառավարության՝ «2050 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ» ծրագրի «2030-2040 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՎԱԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բաժնի 2-րդ կետի կատարումն ապահովելու՝ հանրակրթության ոլորտում հիմքերի ստեղծման նկատառումներից ելնելով:

Միջոցառման իրականացումը պայմանավորված է նաև ՀՀ կառավարության «Վերականգնում, դիմակայունություն և բարեփոխում, Արևելյան գործընկերության առաջնահերթությունները 2020թ.-ից հետո» տնտեսական և ներդրումային պլանի 3-րդ ուղենիշի 2-րդ կետի կատարմամբ:

Կարևոր խնդիր է դպրոցների հագեցվածությունը բնագիտական և ՏՀՏ լաբորատորիաներով: Լաբորատոր սարքավորումներով հագեցման ծրագիր իրականացվել է միայն առանձին գործող ավագ դպրոցների մասով. 2019-

2020 թվականներին դպրոցներին տրամադրվել են բնագիտական առարկաների լաբորատորիաներ, հանրակրթության նոր չափորոշիչների փորձարկման նպատակով նախատեսվում է ԵՄ-ն հանուն կրթական նորարարության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում լաբորատոր սարքավորումներ տրամադրել նաև Տավուշի մարզի բոլոր դպրոցներին: Սակայն ակնհայտ է, որ առաջնահերթություն է բոլոր դպրոցներում լաբորատոր ենթակառուցվածքների ստեղծումը, ինչը կարող է լավ նախադրյալ լինել բնագիտական ուղղությամբ կրթության որակի և արդյունավետության բարելավման համար: Այս ուղղությամբ, համաձայն իրականացված շուկայի ուսումնասիրությունների և կատարված հաշվարկների, հանրակրթության նոր չափորոշիչներն արդյունավետ ներդնելու համար կպահանջվի շուրջ 721 դպրոցում ստեղծել բնագիտական և ՏՀՏ անհրաժեշտ ենթակառուցվածքներ՝ ընդհանուր առմամբ շուրջ 34 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումարի շրջանակներում:

1.1. Կարգավորման ընթացիկ իրավիճակը և առկա խնդիրները.

Ներկայումս սովորող/համակարգիչ հարաբերակցությունը երկրի դպրոցներում 16,8 է: Դպրոցների ընդհանուր համախմբության մեջ առավել շատ են այն դպրոցները, որոնք ունեն 10 համակարգիչ: Աշխատող համակարգիչների ամենահաճախ հանդիպող ցուցանիշը՝ 3 է: Դպրոցների առաջին կեսն ունի մինչև 12 համակարգիչ, մյուս կեսն ունի 12-ից ավելի համակարգիչ: Աշխատող համակարգիչների դեպքում նշված ցուցանիշը հավասար է 7-ի: Դպրոցների միայն 25%-ը ունի 13 աշխատող համակարգչից ավելի: Դպրոցներում չաշխատող համակարգիչների ընդհանուր թիվը կազմում է 6512, որոնցից՝ 4433-ը՝ տեխնիկական պատճառներով, 1219՝ ծրագրային: Ընդ որում չաշխատող համակարգիչների 78. 7%-ը դուրսգրման ենթակա է: Դպրոցներում օգտագործվող աշխատող համակարգիչների մոտավորապես կեսը՝ 52.8%, Pentium 4 և դրանից ցածր սերնդի են, 47.2%-ը՝ Dual core և ավելի բարձր: Եթե դիտարկում ենք դպրոցներում աշխատող համակարգիչները ընդհանուր համակարգիչների, որ մասն են կազմում, ապա տեսնում ենք, որ 494 դպրոցում կամ ամբողջի 36.9%-ում, եղած համակարգիչների 76-100%-ը աշխատում է, 31.8%-ում աշխատում է համակարգիչների 51%-75%, իսկ մնացած 31.4% դպրոցներում, միայն եղած համակարգիչների 0-50%-ն է աշխատող:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

ՀՀ դպրոցները լաբորատորիաներով հագեցնելու գործընթացում, հաշվի առնելով ծախսարդյունավետության գործոնը, շուրջ 257 լաբորատորիաներ ստեղծել ցանցային դպրոցի սկզբունքով, այսինքն՝ գյուղական փոքրաքանակ դպրոցներում ստեղծել առանձին առարկայական ուղղությամբ լաբորատորիաներ՝ միավորելով դրանք մեկ միջավայրում, երբ, օրինակ, քիմիայի լաբորատորիան տեղակայված է մի բնակավայրում, ֆիզիկան՝ մյուս, աշխարհագրությունը՝ մեկ այլ: Որակյալ կրթություն ապահովելու համար փոքրաքանակ աշակերտական համակազմ ունեցող բնակավայրերը միավորել մեկ կրթական միջավայրում ոչ միայն ենթակառուցվածքների իմաստով, այլ նաև դասարանների արդյունավետ խմբավորման համար անհրաժեշտ սովորողների թվի տեսանկյունից: Ապահովել կրթության որակի բարձրացման երաշխիքներ նաև գործնական ուսուցման մեթոդներ կիրառելով:

2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը.

ՀՀ բոլոր դպրոցներում առկա են հանրակրթության նոր չափորոշիչներով ուսուցման համար անհրաժեշտ լաբորատոր ենթակառուցվածքները:

Ուսումնական հաստատությունները զինված են ժամանակակից լաբորատոր սարքավորումներով:

Հանրակրթության ոլորտում ՀՀ կառավարության 2030-2040 թվականների երկարաժամկետ հավակնությունների 2-րդ ՝ «ԲՏՃԱՄ (STEAM)-ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ԼԱՅՆ ՏԱՐԱԾՈՒՄ» ծրագրի «բնագիտության, տեխնոլոգիաների, ճարտարագիտության, արվեստի և մաթեմատիկայի ուղղվածությամբ՝ բնակչության 1 մլն. շնչին ընկնող ձեռներեցների թվով աշխարհում առաջատար դիրքի գրավում» թիրախի իրականացման համար ստեղծված են նախադրյալներ:

6.3 Հանրակրթական դպրոցներում տարածաշրջանային լեզուների ուսուցման կազմակերպում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը.

Միջոցառման գլխավոր նպատակն է համընդհանուր հասանելի և մատչելի սովորողակենտրոն հանրակրթական միջավայրի ստեղծումը:

Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» բաժնի 1-ին պարբերությունից:

Միջոցառման անհրաժեշտությունը բխում է նաև «Կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ և 2. 1 կետերից:

Օտար, այդ թվում՝ հարևան ժողովուրդների լեզուներն իմանալը թելադրված է սոցիալական, մշակութային, տուրիզմի, կրոնական, առևտրատնտեսական, գիտակրթական բազմաշերտ փոխհարաբերությունների և

Հայաստանի աշխարհաքաղաքական և ռազմավարական մարտահրավերներին պատասխանելու անհրաժեշտությունից:

Թեև տարածաշրջանում մեր հարևան երկրների հետ պատմական իրադարձությունների բերումով դիվանագիտական և փոխհամագործակցության տարբեր հարաբերություններ են ձևավորվել, և դեռևս դրանք շարունակվում են մնալ շատ բազմազան և ինքնքատիպ, այնուամենայնիվ, մեր երկրում տարածաշրջանային լեզուների ուսուցումը պետք է թեև փոքր, սակայն տեսանելի առաջընթաց ապահովող քայլերով իրականացնել:

Պետք է հաշվի նստել մի փաստի հետ, որ ժողովուրդները նույնական չեն պետությունների հետ, և լեզվի իմացությունը պետք է դիտարկել հատկապես Հայաստանի Հանրապետության արդի հիմնախնդիրների և մարտահրավերների տեղական, տարածաշրջանային և գլոբալ համատեքստում: Լեզվին տիրապետելը անհատին կդարձնի իրավիճակներն ուսումնասիրող, վերլուծող և արձագանքող՝ որպես իրազեկ, պատասխանատու և հայրենասեր քաղաքացի:

1.1. Կարգավորման ընթացիկ իրավիճակը և առկա խնդիրները.

Գործող առարկայական ծրագրերով օտար լեզուների ուսուցումը տիրապետելու, հաղորդակցվելու տեսանկյունից արդյունավետ չէ և չի ապահովում սովորողի կողմից լեզուների յուրացման բավարար մակարդակ՝ նույնիսկ օտար լեզուների խորացված ուսուցմամբ դասարաններում:

Ռազմավարական տեսանկյունից կարևորագույն խնդիր է նաև տարածաշրջանային լեզուների ուսուցման խնդիրը:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

Առաջնային դարձնել օտար լեզուների ծրագրային ուսուցման մեթոդաբանության հարցը՝ առարկայական նոր չափորոշիչներով և ծրագրերով դասավանդելու միջոցով դրանց յուրացման մակարդակը բարձրացնելու նպատակով:

Տարածաշրջանային լեզուների ուսուցումը կազմակերպել յուրաքանչյուր համայնքի կարիքներին համապատասխան՝ ակումբային ուսուցման կենտրոնների հիմնման միջոցով՝ ուսուցանելով վրացերեն, պարսկերեն, թուրքերեն՝ աշխարհագրական դիրքից ելնելով:

2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը.

Առաջարկվող մոտեցումը հնարավորություն կընձեռի խթանելու սովորողների կողմից օտար, այդ թվում՝ տարածաշրջանային լեզուների յուրացման մակարդակի բարձրացմանը, կստեղծի օտար լեզուների ուսուցման բավարար հիմքեր և կլուծի լեզուների իմացության՝ առաջնային նշանակություն ունեցող խնդիր:

Կհիմնվեն տարածաշրջանային լեզուների ակումբային ուսուցման կենտրոններ՝ ըստ տարածքային դիրքի՝ համայնքի կարիքին համապատասխան:

6.4 ՀՀ բոլոր դպրոցներում հանրակրթության պետական չափորոշիչների ներդրում

6.5 ՀՀ բոլոր դպրոցները հանրակրթության պետական չափորոշիչներին համապատասխան նոր դասագրքերով ապահովում

6.6 Սովորողների մոտ մեդիագրագիտության հմտությունների զարգացում

6.7 Դպրոցներում մասնագիտական կողմնորոշման ինստիտուտի ներդրում

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը.

Միջոցառումների գլխավոր նպատակն է համընդհանուր հասանելի և մատչելի սովորողակենտրոն հանրակրթական միջավայրի ստեղծումը:

Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» բաժնի 1-ին, 2-րդ, 3-րդ պարբերություններից:

Միջոցառման անհրաժեշտությունը բխում է նաև ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածից, Կրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ, 5-րդ, 9-րդ, 11-րդ հոդվածներից, ՀՀ կառավարության 2021 թ. փետրվարի 4-ի N 136-Ն որոշման պահանջներից, «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ, 5-րդ, 20-րդ հոդվածներից, ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2021 թ. օգոստոսի 17-ի N 65-Ն հրամանից, ՀՀ կառավարության՝ «2050 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ» ծրագրի «ՄԻՆՉԵՎ 2030 ԹՎԱԿԱՆԻ ՄԵԳԱՆՊԱՏԱԿՆԵՐԻ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ «1. ԿԻՐԹ ԵՎ ԿԱՐՈՂՈՒՆԱԿ ՔԱՂԱՔԱՑԻ, ԺՈՂՈՎՈՒՐԴ» /40-րդ էջ/ 1. 2 թիրախային արդյունքներին հասնելու պահանջից:

Հայաստանի Հանրապետությունում հանրակրթության բովանդակությունը կարգավորվում է Հանրակրթության պետական չափորոշչով, իսկ գործող փաստաթղթով իրականացվող կրթական գործընթացը չի ապահովում որակյալ կրթության հասանելիություն ու արդիականություն: Առկա են միջազգային ստուգատեսներով գրանցված ցածր ցուցանիշներ և արձանագրվող լրջագույն խնդիրներ:

Մասնավորապես, մեծ քաղաքներում բնակվող աշակերտների 12-րդ դասարանիի մաթեմատիկայի ավարտական քննության միջին գնահատականը 14.3 է (20-ից), ի համեմատ սահմանամերձ և հեռավոր գյուղերի աշակերտների, որոնց շրջանում միջին գնահատականներն են համապատասխանաբար, 12.1-ը և 11,9-ը: 9-րդ դասարանի ավարտին իրականացվող քննությունների միավորները կազմել են 13.3 (խոշոր քաղաքներ), 12.3-ը (սահմանամերձ տարածքներ) և 12.5-ը (հեռավոր գյուղեր): TIMMS միջազգային ստուգատեսի գնահատման արդյունքները հաստատում են քաղաքային և գյուղական բնակավայրերում կրթության մակարդակի տարբերության արդեն իսկ նկարագրված իրավիճակը: Ստուգատեսի արդյունքները հատկապես ցույց են տալիս քաղաքաբնակ և գյուղաբնակ 4-րդ և 8-րդ դասարանների աշակերտների շրջանում մաթեմատիկայից և բնագիտական առարկաներից գրանցված արդյունքներում մեծ տարբերություն ի օգուտ քաղաքաբնակ աշակերտների: Ավելին, ուսումնասիրելով TIMSS-ի արդյունքները, ակնհայտ է դառնում, որ 2015 թվին մաթեմատիկայից գրանցված արդյունքները եղել են ավելի ցածր քան 2003-ին, իսկ բնագիտական առարկաներից մնացել են նույնը:
Նոր չափորոշչի ընդունմամբ փորձ է արվում արձագանքել վերոնշյալ խնդիրներին և ստեղծել համապատասխան հիմքեր՝ հանրակրթությունը ավելի ճկուն և արդյունավետ կազմակերպելու համար:

Հանրակրթության որակի բարձրացման կարևոր նախադրյալ է պետական չափորոշչի պահանջներին համապատասխան՝ սովորողների որակյալ ուսուցման ապահովումը, որի արդյունքում կարևորվում է սովորողի կարողունակությունների զարգացումը:

1.1 Կարգավորման ընթացիկ իրավիճակը և առկա խնդիրները.

2021 թվականի փետրվարի 4-ի N 136-ն որոշմամբ Կառավարությունը հաստատեց Հանրակրթության պետական չափորոշիչը, որից բխող առարկայական չափորոշիչներով և ծրագրերով բովանդակային նոր մոտեցումներ են առաջարկվում մասնավորապես ուսուցման կազմակերպման, գործիքակազմի կիրառման, գնահատման մեխանիզմի առումով:
Գործող չափորոշիչը հանրակրթությանը ընձեռում է ոչ լիարժեք հնարավորություններ՝
Ուսուցչի սահմանափակ գործիքակազմ, հիմնական թեմատիկ նյութի պասիվ փոխանցման վրա հիմնված ուսուցում, քանակական գնահատման գերակշռում՝ ուսումնական գործընթացի իմաստային խեղաթյուրում՝ բարձր միավորով խրախուսելու և ցածր միավորով պատժելու մենաշնորհային գործիքի միջոցով,
Անբավարար գնահատականների հետևանքով սոցիալական պիտակավորման, չհիմնավորված բավարար գնահատականների գերակշռում:

Անհրաժեշտություն է առաջանում ուսումնական հաստատությունները նոր չափոփոշչից բխող առարկայական չափորոշիչներին և ծրագրերին համապատասխան դասագրքերով ապահովելու:
Նախատեսվում է ՀՀ բոլոր դպրոցներում մասնագիտական կողմնորոշման ինստիտուտի ներդրում, որը սովորողների ապագա մասնագիտության ընտրության հնարավորություն կընձեռի:
Ծրագրի իրականացման արդյունքում հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատություններում կգործեն մասնագիտական կողմնորոշման կենտրոններ, ինչը կկնպաստի սովորողների կողմից մասնագիտության գիտակցված ընտրությանը, առավել որակյալ աշխատուժի ստեղծմանը և երիտասարդների աշխատանքային մրցակցությունը զարգացնող ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական համակարգերի կատարելագործմանը, երիտասարդների ձեռնարկատիրական ներուժի զարգացմանը, ինչպես նաև երիտասարդական քաղաքականության բարելավմանը:

1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

Ի տարբերություն գործող չափորոշչի՝ նոր չափորոշիչը որդեգրում է վերջնարդյունքների ավելի համակարգված մոտեցում՝ ութ կոմպետենցիաների տեսքով:

Չափորոշիչների փորձարկման արդյունքների հիման վրա ամբողջությամբ կվերանայվեն ուսումնական նյութերն ու դասագրքերը՝ ապահովելով դրանց համապատասխանությունը առարկայական նոր չափորոշիչներին և ծրագրերին՝ գործարկելու համար ՀՀ բոլոր դպրոցներում:

Նոր չափորոշիչը գնահատումը կապում է կարողունակություններին. սա կոմպետենցիոն ուսուցումը լիարժեքորեն գործարկելու միակ ճանապարհն է, որը մեծացնում է հավանականությունը, որ կունենանք սովորողներ, որոնք իրենց չեն դիտարկի որպես գիտելիքի պասիվ սպառողներ և հասարակության զարգացման ակտիվ գործոն կդառնան:

Այն հանգամանքը, որ իր ընդունակություններին համապատասխան մասնագիտություն և աշխատանք ընտրած անհատը ավելի մեծ օգուտ է բերում իրեն և հասատակությանը հիմք է դարձել մասնագիտական կողմնորոշման, մասնագիտության ընտրության գործընթացների, գիտական հիմնավորման, մեթոդաբանության մշակման անհրաժեշտության համար:

Մասնագիտական կողմնորոշման առաջնային և հիմնական օղակը և ընդգրկման, և բովանդակության առումով հանրակրթության համակարգն է, որտեղ սկսվում շարունակվում և հիմնականում ամբողջացվում են կողմնորոշման աշխատանքները:

Հանրակրթական ուսումնական հաստատության շրջանավարտների առաջնային խնդիրներից մեկը մասնագիտական գիտակցված ընտրությունն է: Ներկայումս, ազատ տնտեսական հարաբերություններով պայմանավորված՝ այն դառնում է առավել արդիական և հրատապ: Նորագույն տեխնոլոգիաների, կրթության և աշխատանքի նոր շուկաների զարգացման պայմաններում շատ մասնագիտությունների և զբաղմունքների համար ներկայացվում են նոր պահանջներ, որոնց մասին սովորողներն ու նրանց ծնողներն անգամ պատկերացում չունեն: Այս ուղղություններով տեղեկատվախորհրդատվական աշխատանքները սովորողներին կօգնեն ընտրությունը կատարելու գիտակցված՝ դրանով իսկ ստեղծելով կարիերայի համար կայուն հիմքեր, նպաստելով աշխատանքային գործունեության մեջ ներդաշնակության ապահովմանն ու մրցունակ, պահանջված մասնագետ լինելուն: Հանրակրթական ուսումնական հաստատությունները կհամագործակցեն բարձրագույն ուսումնական հաստատությունների և մասնավոր հատվածի հետ:

Ամբողջությամբ կփոխվեն և կներդրվեն առարկայական նոր դասագրքեր և ուսումնական նյութեր՝ նոր չափորոշիչների համաձայն:

Թվային և մեդիա կարողունակությունների զարգացման միջոցով սովորողներին հնարավորություն կընձեռվի զերծ մնալ առկա ռիսկերից՝ գնահատելով մեդիայի ազդեցությունները,որի արդյունքում կզարգանան մեդիա դաշտից ճիշտ օգտվելու կարողություններ:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը.

Հանրակրթության ոլորտում նոր չափորոշչով առաջարկվող հիմնական ուղղություններն են՝

1. Ապահովել հավասար հասանելի որակյալ հանրակրթություն բոլոր երեխաների համար,

Դպրոցը դարձնել սովորելու բաց միջավայր՝ փոխկապակցված համայնքի կրթամշակութային, մարզական և այլ հաստատություններին,

Ստեղծել դպրոցական ինքնավարության և փոխադարձ վստահության վրա հիմնված համակարգ: Ունենալ ստեղծագործ և նախաձեռնող դպրոց՝ ստեղծագործ և նախաձեռնող քաղաքացի:

Հանրակրթական ուսումնական հաստատություններում կստեղծվեն մասնագիտական կողմնորոշման կենտրոններ:

ՀՀ բոլոր դպրոցները ապահովված են հանրակրթության պետական չափորոշիչներին համապատասխան նոր դասագրքերով:

Չափորոշչով սահմանված կարողունակությունները սովորողներին հնարավորություն կընձեռեն ըստ իրավիճակի՝ արդյունավետ ու պատշաճ արձագանքելու, որ հիմնվում է տարբեր առարկաներից ձեռք բերված գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների վրա:

Գիտելիքի, մշակույթի, գիտակցության, հմտությունների համատարած, ներառական, նորարարական և հանրամատչելի զարգացման և յուրացման միջոցով կունենանք քաղաքակիրթ, ստեղծագործ, նախաձեռնող, կարողունակ ու մրցունակ քաղաքացի, ում համար իրավունքների իրացումը նույնքան կարևոր է, որքան պարտականությունների ու պարտավորությունների կատարումը, ով առաջին հերթին իրեն է համարում սեփական բարեկեցության և առողջության պատասխանատուն: Այս համատեքստում ոլորտում հանրակրթության նոր չափորոշչով, բացի ԲՏՃՄ ուղղվածությունից, կարևորվում է նաև հայոց լեզվի և պատմության, հայ և համաշխարհային (ներառյալ գիտաֆանտաստիկ) գրականության, հոգևոր, էթիկական արժեքների, առողջ ապրելակերպի, ինչպես նաև առնվազն երկու օտար լեզուների գծով բավարար գիտելիքների ապահովումը: Այս ցուցանիշների արդյունքները նախատեսվում է ապահովել պետական նոր չափորոշիչների պահանջներին համապատասխան վերապատրաստում անցած ուսուցիչների՝ կատարելագործված հմտությունների ու նոր մեթոդաբանության զարգացման միջոցով հանրակրթությունը կազմակերպելու արդյունքում:

Հասարակագիտական առարկաների՝ չափորոշչով սահմանված վերջնարդյունքի հիման վրա սովորողների մոտ կբարելավվի մեդիագրագիտության մակարդակը:

Սովորողները տիրապետում են մեդիագրագիտության կանոններին ու հմտություններին. պատկերացնում են մեդիայի աշխատանքը և դերը ժողովրդավարական հասարակությունում, կարողանում են կողմնորոշվել տեղեկատվության հոսքերում, գտնել և տարածել տեղեկություններ, քննադատորեն վերլուծել դրանք, գնահատում են մեդիայի ազդեցությունը սեփական և այլոց արժեքային պատկերացումների, դիրքորոշումների և գործողությունների վրա: Թվային մեդիայի օգտագործման հնարավորությունների կողքին գիտակցում են նաև դրանց հետ կապված ռիսկերը, ունակ են գնահատելու և վերափոխելու իրենց վարքը թվային աշխարհում՝ անվտանգության, պատասխանատվության և էթիկայի տեսանկյունից: Տիրապետում են մեդիա արտադրանք ստեղծելու տեխնիկական և ստեղծագործական հմտություններին, ինչպես նաև կարողանում են արդյունավետորեն կիրառել մեդիա գործիքները քաղաքացիական իրավունքների իրացման ու ժողովրդավարական գործընթացների մասնակցության նպատակով:

6.8 Հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթություն բոլոր երեխաների համար ապահովելու շրջանակում հանրակրթական ուսումնական հաստատությունների ռեսուրս-սենյակների վերանորոգում և կահավորում, տարածքային մանկավարժական աջակցության կենտրոնների վերազինում

	1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը. Միջոցառման գլխավոր նպատակն է համընդհանուր հասանելի և մատչելի սովորողակենտրոն հանրակրթական միջավայրի ստեղծումը: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» աժնի 1-ին, 2-րդ պարբերությունից: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է նաև ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածից, «Կրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ, 5-րդ, 6-րդ հոդվածներից, «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ, 5-րդ, 20-րդ հոդվածներից: Բոլոր երեխաների համար հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթություն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով՝ ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 18-ի արձանագրային որոշմամբ հավանություն է տրվել հանրակրթության ոլորտում «Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանին և ժամանակացույցին»: ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը համատեղ իրականացնում են «Ներառական կրթության համակարգի հզորացում Հայաստանում» ծրագիրը, որի նպատակն է թիրախ դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) երեխաների համար ֆիզիկական հասանելիության ապահովումը, դպրոցական և տարածքային մակարդակներում որակյալ և արդյունավետ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրումը: 1.1 Կարգավորման ընթացիկ իրավիճակը և առկա խնդիրները. Ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվում է ունենալ վերանորոգված ու անհրաժեշտ գույքով և դիդակտիկ նյութերով համալրված ռեսուրս-սենյակներ: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները. Հանրակրթական ուսումնական հաստատությունների ռեսուրս-սենյակների վերանորոգում և կահավորում, տարածքային մանկավարժական աջակցության կենտրոնների վերազինում: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը. 100 հանրակրթական ուսումնական հաստատությունների ռեսուրս-սենյակները վերանորոգված և կահավորված են, 5 ՏՄԱԿ-ներ վերանորոգված և ապահովված են անհրաժեշտ գույքով:
7	7.1 «ՀՀ կառավարության 2011 թվականի նոյեմբերի 10-ի՝ N 1745-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ «ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի՝ N 1667-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի մարտի 5-ի N 24-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանի ընդունում «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2013 թվականի օգոստոսի 15-ի N 1031-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանի ընդունում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը. Միջոցառման գլխավոր նպատակն է ուսուցիչների մասնագիտական շարունակական զարգացման և աշխատանքային առաջխաղացման տարբերակված քաղաքականությունը՝ ելնելով ուսուցիչների տարբեր խմբերի կարիքներից: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» բաժնի 3-րդ պարբերության կետից: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է նաև «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 7-րդ և 26-րդ հոդվածներից, ՀՀ կառավարության 2021 թ. փետրվարի 4-ի 136-Ն որոշման պահանջներից: Միջոցառման իրականացումը պայմանավորված է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից ՀՀ համայնքներ կատարած այցելությունների և նախընտրական քարոզարշավի ընթացքում (2021թ. հունիսի 4-17) քաղաքացիներին տրված նախընտրական խոստումների կատարման անհրաժեշտությունից: Աշխարհում կրթության ոլորտում գրանցվող զգալի առաջընթացին զուգահեռ՝ մեր երկրում այն իրականացվում է հին մեթոդաբանությամբ, պահանջներով և գործիքակազմով, ինչը անմիջական հետևանք է ունենում երկում կայուն զարգացման հեռանկարի վրա: Մասնավորապես հանրակրթությունը մեր երկրում մեծ մարտահրավերների առջև է կանգնած՝ ուսումնառության ընթացքում և ավարտին սովորողների գրանցած արդյունքների վերլուծությունների ցուցանիշներով: Խնդրի

	պատճառահետևանքային տարբեր կապերից հարկ է առանձնացնել ուսուցիչների՝ որպես գործընթացն առաջ տանող կարևոր դերակատարների մասնագիտական կարողությունների առկա վիճակը: Հայաստանի դպրոցներում առավել բարձր կրթական արդյունք է գրանցվել այն սովորողների մոտ, որոնց ուսուցիչն ունի մասնագիտական կրթություն, բայց ոչ մանկավարժի որակավորում: Սա ճիշտ է թե՛ մաթեմատիկայի, թե՛ բնագիտության դեպքում, բայց բնագիտության դեպքում առավել ակնհայտ է. մաթեմատիկայի դեպքում գրանցված տարբերությունը կրթական արդյունքի մեջ կազմում է 6 միավոր, բնագիտության դեպքում՝ 15 միավոր: Սա կարող է վկայել այն մասին, որ մանկավարժական կրթության տեղական ծրագրերում առարկայական մասնագիտական գիտելիքի փոխանցումը բավարար չէ: Սա հատկապես մտահոգիչ է բնագիտության տեսանկյունից, որի ուսուցման որակի բարձրացումը առաջնահերթ խնդիր է: Կրթական արդյունքի վրա ազդեցության տեսանկյունից հաջորդ կարևորագույն գործոնը ուսուցչի փորձառությունը կամ աշխատանքային ստաժն է: Ընդ որում, աշխարհում միտումն այն է, որ ինչքան ավելի երկարամյա է ուսուցչի ստաժը, այնքան ավելի բարձր կրթական արդյունք են գրանցում սովորողները: Հայաստանում ամենաբարձր կրթական արդյունքը գրանցում են 10-20 տարվա աշխատանքային ստաժ ունեցող ուսուցիչները՝ արձանագրելով 30 միավորի տարբերությունը: Այս խմբի ուսուցիչների սովորողների գրանցած արդյունքն ավելի բարձր է, քան քսանից ավելի տարիների ստաժ ունեցող ուսուցիչներինը: Ամենացածր արդյունքը գրանցում են մինչև հինգ տարվա աշխատանքային ստաժ ունեցող ուսուցիչները, ինչը վկայում է այն մասին, որ անհրաժեշտ է հետևողական աշխատանք տանել նաև սկսնակ ուսուցիչների մասնագիտական զարգացման ուղղությամբ: Ըստ էության, խնդիրը մանկավարժական կրթության, մասնագիտական հետագա զարգացման ոչ բավարար պայմանների բացակայությունն է, այդ թվում՝ մանկավարժական պրակտիկայի անբավարար գործիքակազմի, որի արդյունքում լուծումը տեղափոխվում է աշխատանքային առաջին տարիների փորձառության դաշտ: Հանրակրթության բովանդակային բարեփոխումների արդյունքում «Հանրակրթության մասին» օրենքում կատարված ծավալուն փոփոխությունները ենթադրում են ենթաօրենսդրական իրավական այլ ակտերի փոփոխություններ: Նպատակը ուսուցիչների մասնագիտական շարունակական զարգացման և աշխատանքային առաջխաղացման տարբերակված քաղաքականության իրականացումն է՝ ելնելով ուսուցիչների տարբեր խմբերի կարիքներից: Ուսուցիչների մասնագիտական զարգացման և խրախուսման գործող համակարգերը բավարար չեն՝ համակարգում ստեղծարար և նորարար ուսուցչական գործունեությունը խթանելու, երիտասարդներին ներգրավելու, ոլորտը գրավիչ դարձնելու համար: 2020թ.-ին ամբողջությամբ վերանայվել են Հանրակրթական պետական, ինչպես նաև առարկայական չափորոշիչները, որի արդյունքում բովանդակային փոփոխություններ արվեցին ուսումնական պլաններում՝ շեշտադրելով երեխայի կարողունակությունները, գիտելիքը, հմտությունը, վերաբերմունքն ու արժեքային բաղադրիչը: Այս ամենը իրագործող ուսուցչի մասնագիտական հմտությունները զարգացնելու նպատակով վերջինիս շարունակական զարգացման գործիքակազմը ամբողջությամբ վերանայման կարիք ունի՝ վերապատրաստումները նոր պահանջներին համարժեք մոտեցումներով իրականացնելու համար: Ուսուցիչներին ոչ միայն մասնագիտական կարողությունները զարգացնելու, մտավոր զինանոցը հարստացնելու և այն սովորողներին փոխանցելու հմտություններ ձեռք բերելու, այլև վարձատրության փոխկապակցված մեխանիզմի միջոցով աշխատավարձի բարձրացման հնարավորություն կընձեռվի: 1.1 Կարգավորման ընթացիկ իրավիճակը և առկա խնդիրները. Գործող իրավակարգավորումներով իրականացվող միջոցառումները չեն ապահովում ուսուցչի մասնագիտական զարգացման և առաջխաղացման բավարար հնարավորություններ: Մասնավորապես, տեստավորման, տարակարգի շնորհման կարգերը ոչ միայն բավարար հմտություններ չեն զարգացնում մանկավարժական աշխատողների համար, այլև վերջինիս սահմանած բնութագրիչները իրականում չափում են ուսուցչի զարգացման այն ուղղությունները, որոնք չեն կիրառվում պրակտիկ գործունեության ընթացքում և պետք է ուղղված լինեն պետական քաղաքականությունը: Ներդրված համակարգի արդյունքում տրվող հավելավճարները էական ազդեցություն չեն ունենում ուսուցչի մասնագիտության գրավչության բարձրացման գործում: Միաժամանակ ուսուցչական գործունեությունը պարզ չի նաև դրանում հնարավոր աշխատանքային առաջխաղացման տեսանկյունից: Բացի այդ, առաջինից չորրորդ աստիճանի տարակարգի շնորհման շրջափուլը չհիմնավորված ինը տարի է՝ զրկելով ուսուցչին ավելի վաղ դիմելու հնարավորությունից: 1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները. «Հանրակրթության մասին» օրենքի մի շարք դրույթների փոփոխությամբ ամրագրել այն բոլոր իրավակարգավորումները, որոնք փոխկապակցված են հանրակրթության մայր օրենքի դրույթների հետ: Նախատեսվող կարգավորումներով կներդրվի ուսուցիչների մասնագիտական զարգացման տարբերակված քաղաքականություն՝ ուսուցչի աշխատանքային առաջխաղացման, շարունակական մասնագիտական զարգացման

և վարձատրության շարունակական բարձրացման փոխկապակցված մեխանիզմի ներդրման հնարավորություն ընձեռող փոփոխություններ իրականացնելով:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ նույնիսկ նոր ուսուցիչների ներգրավման դեպքում վերջիններիս մասնագիտական կարողությունները էական բարելավման կարիք կունենան՝ սովորողների պատշաճ կրթական արդյունքն ապահովելու համար, անհրաժեշտ է էապես բարեփոխել մանկավարժական կրթության բովանդակությունը՝ որակավորում ստացող ուսուցիչների մասնագիտական կարողությունները որակապես փոխելու համար: Անհրաժեշտ է նաև ներդնել սկսնակ ուսուցիչների մասնագիտական զարգացման հստակ քաղաքականություն՝ աշխատանքի սկզբում ոչ թե հատվածական վերապատրաստումների, այլ շարունակական ուղեկցող աջակցություն ցուցաբերելու տրամաբանությամբ:

Հանրակրթության բովանդակային փոփոխությունների համատեքստում կրթական գործընթացը պատշաճ իրականացնելը հնարավոր չէ պատկերացնել առանց ուսուցչին պահանջվող գործիքակազմը տրամադրելու, կարիքին համարժեք անհրաժեշտ վերապատրաստումներ իրականացնելու, առաջընթաց ապահովելուն զուգահեռ՝ աշխատավարձի բարձրացման հնարավորություններ ստեղծելու:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը.

Ուսուցչի աշխատանքային առաջխաղացման, շարունակական մասնագիտական զարգացման և վարձատրության շարունակական բարձրացման փոխկապակցված մեխանիզմի ներդրման հնարավորություն ընձեռող փոփոխությունները հիմք կհանդիսանան արդի պահանջներին համապատասխանող ուսուցիչների վարձատրությունը մոտեցնել երկրի միջին աշխատավարձին՝ ստեղծելով նաև շահադրդող միջավայր:

Ուսուցչի ատեստավորման, տարակարգերի շնորհման և վերապատրաստման կարգերը կվերանայվեն՝ ապահովելով անհրաժեշտ գործիքակազմը՝ բացահայտելու և խրախուսելու արդի պահանջներին համապատասխանող ուսուցիչներին, ուսուցիչների վարձատրությունը աստիճանաբար մոտեցնելով երկրի միջին աշխատավարձին:

Վերանայված մանկավարժական կրթության համակարգը ուսուցչի մասնագիտությունը երիտասարդների շրջանում կդարձնի պահանջված, հեղինակավոր և արդիական:

Պետք է շարունակական բնույթ կրեն ուսուցիչների մասնագիտական զարգացմանն ուղղված միջոցառումները՝ զուգահեռաբար աշխատանքային առաջխաղացում և ֆինանսական բարեկեցություն ապահովելով:

7.2 Ուսուցչի մասնագիտական զարգացման և վարձատրության փոխկապակցված մեխանիզմների ներդրում

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը.

Միջոցառման գլխավոր նպատակն է ուսուցիչների մասնագիտական շարունակական զարգացման և աշխատանքային առաջխաղացման տարբերակված քաղաքականությունը՝ ելնելով ուսուցիչների տարբեր խմբերի կարիքներից:

Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» բաժնի 3-րդ պարբերության 4-րդ կետից:

Միջոցառման անհրաժեշտությունը բխում է նաև «Կրթության մասին» ՀՀ օրենքի 24-րդ և 26-րդ հոդվածներից, «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 7-րդ և 26-րդ հոդվածներից, ՀՀ կառավարության 2021 թ. փետրվարի 4-ի 136-Ն որոշման պահանջներից:

Ուսուցչի մասնագիտական չափորոշիչները սահմանելու անհրաժեշտությունը բխում է ուսուցիչների ատեստավորման, խրախուսման և մասնագիտական զարգացման գործընթացներն առավել արդյունավետ դարձնելու անհրաժեշտությունից: Ուսուցչի մասնագիտական չափորոշիչ հասկացությունը հանդես է գալիս որպես ուսուցչի մասնագիտական գիտելիքների, մասնագիտական գործունեության, մասնագիտական պատասխանատվության և վարքագծի նկարագիր: Նպատակը արդի կրթական պահանջներին համապատասխան մասնագետների միջոցով կրթության իրացումն է:

1.1 Կարգավորման ընթացիկ իրավիճակը և առկա խնդիրները.

Ատեստավորման միջոցով որակավորման տարակարգի շնորհման գործընթացը, հանդիսանալով համակարգում ուսուցիչների մասնագիտական զարգացման և առաջխաղացման հիմնական գործիքներից մեկը, թույլ չի տալիս, որ տարակարգերի շնորհման մեխանիզմը իրապես խրախուսող և խթանող դեր խաղա: Նշված համատեքստում դիտարկվող խնդիր է այլ ուսումնական հաստատություն տեղափոխվելու դեպքում տարակարգի չպահպանվելը, սահմանված բնութագրիչներին համապատասխանելու դեպքում՝ միանգամից հաջորդ աստիճանի տարակարգի համար դիմելու հնարավորություն չունենալը:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

	Ուսուցչի մասնագիտական չափորոշիչների ներառումը հնարավորություն է տալիս հստակեցնելու ուսուցչի աշխատանքային առաջխաղացման հեռանկարը, այն դարձնելու չափելի և տեսանելի, ինչպես նաև փոխկապակցելու վարձատրության համակարգին՝ տարակարգերի շնորհման միջոցով: Մասնագիտական չափորոշչի սահմանումը հնարավորություն կընձեռի նաև հստակեցնելու ուսուցիչների մասնագիտական զարգացման քաղաքականությունները՝ հրաժարվելով միատեսակ և միաչափ վերապատրաստումներից և անցում կատարելով կարիքի վրա հիմնված և մասնագիտական չափորոշչից բխող վերապատրաստումներին: 2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը. Կհաստատվեն ուսուցչի աշխատանքային առաջխաղացման հնարավորությունները նախանշող մասնագիտական չափորոշիչները: Մասնագիտական չափորոշիչները կհստակեցնեն նաև պահանջները ուսուցիչների պատրաստման գործընթացում՝ նպաստելով մասնագիտական կրթության ծրագրերի վերափոխմանը:
	7.3 Հանրակրթության պետական նոր չափորոշիչներին համապատասխան՝ մանկավարժական կրթության ծրագրերի ամբողջական վերանայում 7.4 Մանկավարժական կրթության ընդունելության և ուսումնառության պայմանների վերանայում և հետագայում որակավորված մասնագետների աշխատանքի ապահովման մեխանիզմի ներդրում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը՝ Միջոցառման գլխավոր նպատակն է ուսուցիչների մասնագիտական շարունակական զարգացման և աշխատանքային առաջխաղացման տարբերակված քաղաքականությունը՝ ելնելով ուսուցիչների տարբեր խմբերի կարիքներից: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» բաժնի 1-ին, 3-րդ պարբերություններից: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է նաև «Կրթության մասին» ՀՀ օրենքի 24-րդ և 26-րդ հոդվածներից, «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 7-րդ և 26-րդ հոդվածներից, ՀՀ կառավարության 2021 թ. փետրվարի 4-ի 136-Ն որոշման պահանջներից: Մանկավարժական կրթության բովանդակությունը անհրաժեշտ է վերանայել՝ համապատասխանեցվելով հանրակրթության նոր չափորոշիչներին և ուսուցչի մասնագիտական չափորոշիչներին, կրթության առջև դրված ժամանակակից նոր պահանջներին: Վերանայման անհրաժեշտություն կա նաև մանկավարժական կրթություն ստանալու պայմանների փոփոխությունների առումով: 1.1. Կարգավորման ընթացիկ իրավիճակը և առկա խնդիրները. Կրթական արդյունքի տեսանկյունից ուսուցչի ազդեցությունը չափազանց կարևոր է: Մասնավորապես, կրթական արդյունքի վրա ազդում են ուսուցչի կրթությունը, աշխատանքային փորձառությունը մասնագիտական զարգացման ծրագրերի մասնակցությունը, ուսուցիչների բավարարվածությունն իրենց աշխատանքով: Հարկ է նշել, որ TIMSS-ի արդյունքները ցույց են տալիս, որ ստուգատեսին մասնակցած երկրներում միջինում ավելի բարձր կրթական արդյունք են գրանցել այն սովորողները, որոնց ուսուցիչների որակավորումը տարրական կրթության ոլորտում է: Դրան հաջորդում են այն սովորողները, որոնց ուսուցիչները որակավորում ունեն տվյալ առարկայական ուղղությամբ, օրինակ՝ մաթեմատիկայի, և տարրական կրթության ոլորտում: Երրորդ տեղում են այն սովորողները, որոնց ուսուցիչները տվյալ առարկայական ուղղությամբ մասնագիտական կրթություն ունեն, բայց չունեն մանկավարժի որակավորում: Ներկայումս չի գործում մանկավարժական կրթության արդյունավետ, ճկուն ու դինամիկ գործող համակարգ, որը կառաջարկի ոլորտի զարգացման հիմնական ուղղությունների խնդիրների լուծում: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները. Ե՛վ գործող, և՛ սկսնակ ուսուցիչները պարբերաբար վերապատրաստման և մասնագիտական զարգացման կարիք ունեն՝ ոչ միայն նոր չափորոշիչների ներդրման և կրթության բովանդակային փոփոխություններին համապատասխանեցված կրթություն մատուցելու, այլև կրթության արդիական և ժամանակին համահունչ առաջխաղացումներին իրազեկ դառնալու պահանջով պայմանավորված: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նույնիսկ նոր ուսուցիչների ներգրավման դեպքում վերջիններիս մասնագիտական կարողությունները էական բարելավման կարիք կունենան՝ սովորողների պատշաճ կրթական արդյունքն ապահովելու համար, անհրաժեշտ է էապես բարեփոխել մանկավարժական կրթության բովանդակությունը՝ որակավորում ստացող ուսուցիչների մասնագիտական կարողությունները որակապես փոխելու համար: Անհրաժեշտ է նաև ներդնել սկսնակ ուսուցիչների մասնագիտական զարգացման հստակ

	քաղաքականություն՝ աշխատանքի սկզբում ոչ թե հատվածական վերապատրաստումների, այլ շարունակական ուղեկցող աջակցություն ցուցաբերելու տրամաբանությամբ: Առաջարկվում է ապահովել ազգային կրթական համակարգի զարգացման հիմնական ուղղություններով պայմանավորված խնդիրների լուծում՝ մանկավարժական կադրերի պատրաստման բովադակությունն ու որակը համապատասխանեցնելով հանրակրթության բարեփոխումների պահանջներին: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Մանկավարժական կրթական ծրագրերի վերանայման արդյունքում համապատասխանություն կլինի հանրակրթության նոր չափորոշիչներին և ուսուցչի մասնագիտական չափորոշիչներին միջև: Մանկավարժական կրթություն ստանալու և որակավորված մասնագետներին աշխատանքով ապահովվելու մեխանիզմներ կմշակվեն՝ ստեղծելով նպաստավոր պայմաններ՝ ուսուցչի մասնագիտությունը երիտասարդների շրջանում դարձնելով պահանջված, հեղինակավոր և արդիական: Ուսուցիչները վարձատրության բարձրացման հնարավորություն կունենան: Ուսուցչի վարձատրությունը կդառնա համարժեք և որոշ դեպքերում ավելի՝ երկրի միջին կենսամակարդակից: Կբարձրանա ուսուցչի մասնագիտական գրավչությունը, համակարգում կներգրավվեն նաև տղամարդիկ, որոնց դերակատարումը կրթության կազմակերպման գործընթացն ավելի արդյունավետ կդարձնի՝ կրթադաստիարակչական գործունեության առումով:
8	8.1 Շենքերի սեյսմիկ կայունության, բեռնվածության, գյուղական համայնքներում կրթական գործընթացի արդյունավետ կազմակերպման, շինարարական աշխատանքներին զուգընթաց անհրաժեշտ գույքով և սարքավորումներով ապահովելու սկզբունքներին համահունչ՝ դպրոցների կառուցման, հիմնանորոգման և վերանորոգման ցանկում ընդգրկման չափանիշների ու մեթոդաբանության կազմում 8.2 Մշակված մեթոդաբանության և սկզբունքների համաձայն՝ առնվազն 300 դպրոցների ընտրություն և վերջնական ցանկի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ 8.3 Նոր չափորոշչին և առարկայական ծրագրերին համապատասխան՝ անհրաժեշտ գույքի և սարքավորումների ցանկի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ 8.4 Ցանկում ընդգրկված հաստատություններում շինարարական աշխատանքների իրականացում և անհրաժեշտ գույքով և սարքավորումներով հագեցվածության ապահովում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը. Միջոցառման գլխավոր նպատակն է կառուցել, հիմնանորոգել և վերանորոգել առնվազն 300 հանրակրթական ուսումնական հաստատություններ՝ ապահովել դրանց ամբողջական հագեցումը անհրաժեշտ գույքով և սարքավորումներով: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» բաժնի 1-ին, 2-րդ պարբերություններից, 3-րդ պարբերության 1-ին կետից: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է նաև ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածից, Կրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ, 5-րդ, 9-րդ, 11-րդ հոդվածներից, «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ, 5-րդ, 20-րդ, 22-րդ հոդվածներից, ՀՀ կառավարության՝ «2050 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ» ծրագրի «ՄԻՆՉԵՎ 2030 ԹՎԱԿԱՆԻ ՄԵԳԱՆՊԱՏԱԿՆԵՐԻ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5-ի /44-րդ էջ/ 5.4.3 թիրախային արդյունքի ցուցանիշի ապահովման պահանջից: Միջոցառման իրականացումը պայմանավորված է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից ՀՀ համայնքներ կատարած այցելությունների և նախընտրական քարոզարշավի ընթացքում (2021թ. հունիսի 4-17) քաղաքացիներին տրված նախընտրական խոստումների կատարման անհրաժեշտությունից: TIMSS-ի ուսումնասիրությունների արդյունքները փաստում են կրթության որակի վրա դպրոցական ենթակառուցվածքների և ռեսուրսների առկայությանն ու հասանելիության գործոնի կարևոր ազդեցության մասին: Խոսքը թե՛ դպրոցում առկա ենթակառուցվածքների մասին է՝ սկսած կոմունալ հարմարություններից, կապի առկայությունից, թե՛ գույքային հագեցվածության, անհրաժեշտ պիտույքների և միջոցների հասանելիության: Այդ ազդեցությունը հատկապես զգալի է բնագիտական առարկաների ուղղությամբ գրանցված արդյունքի դեպքում, որտեղ այն դպրոցների պարագայում, որոնց համար սովորողները նշել են, որ կան խնդիրներ ենթակառուցվածքի հետ կապված, առնվազն տասը միավորով տարբերություն է գրանցվում կրթական արդյունքի տեսանկյունից՝ նման խնդիրներ չարձանագրող դպրոցների համեմատ: 455 դպրոց կամ դպրոցների 31,7 տոկոսը կարիք ունի հիմնանորոգման, ևս 383 դպրոցում կամ դպրոցների 26,7 տոկոսում ընթացիկ նորոգման աշխատանքների կարիք կա:

Սովորողների առողջ ապրելակերպի խթանման կարևորագույն նախապայման է դպրոցներում մարզադահլիճների և խաղահրապարակների առկայությունը, դրանց բավարար վիճակը և հագեցվածությունը անհրաժեշտ գույքով:

Այդ նպատակներով նախատեսվում է կառուցել, հիմնանորոգել և վերանորոգել առնվազն 300 հանրակրթական ուսումնական հաստատություններ՝ ապահովելով դրանց ամբողջական հագեցումը անհրաժեշտ գույքով և սարքավորումներով:

1.1. Կարգավորման ընթացիկ իրավիճակը և առկա խնդիրները.

Չնայած դպրոցական շենքերի 80,8 տոկոսը տիպային շենքեր են, այդուհանդերձ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ դպրոցական շենքերի ընդհանուր հզորությունը նախատեսված է շուրջ 650 հազար աշակերտների համար, այնինչ աշակերտների թիվը շուրջ 380 հազար է, այդ շենքերի ծանրաբեռնվածությունը որոշ դեպքերում պահպանման տեսանկյունից անարդյունավետ է դարձնում առկա ծախսերը՝ ուղղորդելով գտնել առավել թիրախային լուծումներ: Մասնավորապես, դպրոցների բեռնվածությունը ցույց է տալիս, որ դրանցից 378-ը կամ դպրոցների 26,3 տոկոսը մինչև 25 տոկոս բեռնվածություն ունի, դպրոցների 19,9 տոկոսն ունի 25-50 տոկոս բեռնվածություն:

Մեկ այլ խնդիր է այն հանգամանքը, որ Հայաստանում մեծ թիվ են կազմում փոքրաքանակ աշակերտական համակազմ ունեցող գյուղական դպրոցները. մինչև 100 աշակերտ ունեցող դպրոցները կազմում են դպրոցների ընդհանուր թվի շուրջ 31,5 տոկոսը, դպրոցների ևս շուրջ 35 տոկոսն ունի 101-300 սովորող: Նման դեպքերում հաստատությունը պետք է ընդլայնի իր նշանակությունը՝ գործելով իբրև համայնքային կենտրոն՝ ապահովելով բնակավայրի մշակութային, մարզական, ժամանցային միջավայրերն ու ենթակառուցվածքները: Այս տրամաբանությամբ են 2020-ից մեկնարկել 20 մոդուլային դպրոցների կառուցման աշխատանքները:

Միջոցառման գլխավոր նպատակն է՝ ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարելավումը և սպառնացող աղետների ռիսկի կառավարման կարողությունների հզորացումը: Դպրոցական շենքերի խոցելիության ամենամասշտաբային ուսումնասիրությունն իրականացվել է դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի շրջանակներում:

Դպրոցական շենքերի և կոմունալ ենթակառուցվածքների պատշաճ ապահովման նպատակով առաջիկա տարիներին նախատեսվում է վերակառուցման, հիմնանորոգման և նորոգման աշխատանքներ իրականացնել և անհրաժեշտ գույքով վերազինել 300 դպրոցներ:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

Կկազմվեն դպրոցների կառուցման, հիմնանորոգման և վերանորոգման ցանկում ընդգրկման չափանիշներն ու մեթոդաբանությունը:

Կմշակվի չափանիշների համաձայն վերանորոգման, հիմնանորոգման և կառուցման ենթակա հաստատությունների ընտրություն և վերջնական ցանկը:

Կվերանայվի անհրաժեշտ գույքի և սարքավորումների ցանկը՝ նոր չափորոշչի և առարկայական ծրագրերի համապատասխան:

Ցանկում ընդգրկված հաստատություններում կիրականացվեն շինարարական աշխատանքները և կհագեցվեն անհրաժեշտ գույքով և սարքավորումներով:

Նախատեսվող միջոցառմամբ առաջարկվում է նաև մարզադահլիճների և խաղահրապարակների առկայությամբ, դրանց բավարար վիճակով և անհրաժեշտ գույքով հագեցվածությամբ խթանել սովորողների առողջ ապրելակերպը դպրոցներում: 300 դպրոցների կառուցման, վերանորոգման և հիմնանորոգման ծրագրով կիրագործվի մի մասը:

Միաժամանակ, առաջարկվում է դիտարկել դպրոցների ընտրության կոմբինացված չափանիշ՝ վթարայնության աստիճանը համադրելով դպրոցի բեռնվածության հանգամանքի հետ, գյուղական բնակավայրերում դիտարկելով նաև ցանցային դպրոցների գործարկման հնարավորությունը և առանձնացնել 300 առաջնահերթ կառուցման, վերանորոգման և հիմնանորոգման կարիք ունեցող դպրոցների ցանկ:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը.

Ցանկում ընդգրկված հաստատություններում կիրականացվեն շինարարական աշխատանքներ, կհագեցեն անհրաժեշտ գույքով և սարքավորումներով:

Նախատեսվում է մինչև 2026 թվականը կառուցել, հիմնանորոգել և վերանորոգել առնվազն 300 դպրոց՝ ապահովելով դրանց ամբողջական հագեցումը անհրաժեշտ գույքով և սարքավորումներով:

Գյուղական բնակավայրերի հաստատությունները կարող են ընդլայնել իրենց նշանակությունը՝ գործելով իբրև համայնքային կենտրոն՝ ապահովելով բնակավայրի մշակութային, մարզական, ժամանցային միջավայրերն ու ենթակառուցվածքները: Կրթական գործընթացի կազմակերպման արդյունավետության տեսանկյունից կարող են

	գործել կրթահամալիրներ, որտեղ հանրակրթական ծրագրերից զատ կարող են իրականացվել նաև նախադպրոցական, անհրաժեշտության դեպքում՝ արհեստագործական, լրացուցիչ կրթական ծրագրեր: Կապահովվի մարզադահլիճների և խաղահրապարակների առկայությունը, դրանք կունենան բավարար վիճակ և կհագեցվեն անհրաժեշտ գույքով: Կբարելավվի դպրոցական շենքերի և կոմունալ ենթակառուցվածքների ֆիզիկական վիճակը: Կրթական միջավայրի բարելավումը դրական ազդեցություն կունենա սովորողների առաջադիմության վրա. մասնավորապես, կձևավորվի ուսումնառության համար դրական միջավայր՝ ներառյալ ժամանակակից գույքով և տեխնիկայով վերազինված դասասենյակներում կրփություն ստանալու հնարավորությունը, որով և երեխան իրեն առավել արժևորված ու ապահով կզգա՝ որպես հետևանք ունենալով կրթական բարելավված արդյունքներ:
9	9.1 «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ 9.3 «ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի՝ N 1392-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ «ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 14-ի՝ N 1391- որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ «ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի՝ N 319-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը. Միջոցառման գլխավոր նպատակն է հանրակրթական ուսումնական հաստատությունների կառավարման և ֆինանսավորման համակարգի արդյունավետության բարձրացումը: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» բաժնի 1-ին, 2-րդ, 3-րդ պարբերությունից, 3-րդ պարբերության 5-րդ կետից: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է նաև «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 7-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ և 26-րդ հոդվածներից, ՀՀ կառավարության 2021 թ. փետրվարի 4-ի 136-Ն որոշման պահանջներից: «Հանրակրթության մասին» օրենքում փոփոխությունների իրականացումը պայմանավորված է հանրակրթական ուսումնական հաստատությունների կառավարման և ֆինանսավորման բարելավված համակարգի ներդրման, գործառույթների իրականացման արդյունավետությունը բարձրացնելու անհրաժեշտությունից, որից բխող ենթաօրենսդրական իրավական ակտերում ևս փոփոխություն կատարելու անհրաժեշտություն կառաջանա: Հանրակրթության որակի բարելավմանն ուղղված աշխատանքների համատեքստում կարևորվում է հաստատությունների կառավարման մեխանիզմների վերանայումը՝ ղեկավարների հավաստագրման և ատեստավորման նոր մեխանիզմներով և պաշտոնեական գործառույթների հստակ բաշխումով: Կարևորվում է հանրակրթական ուսումնական հաստատությունների կառավարման արդյունավետությունը բարձրացնող փոփոխությունների իրականացումը, որոնք ենթադրում են զարգացման ծրագրի դերի և դրա կատարումն ապահովող միջոցառումների իրականացման և աշխատանքի կատարողականի արդյունքի հիման վրա ղեկավարման շարունակականության ապահովումը: 1.1 Կարգավորման ընթացիկ իրավիճակը և առկա խնդիրները. Ներկայումս հանրակրթության ոլորտում առկա են մի շարք առանցքային խնդիրներ, որոնք համակարգային փոփոխությունների սահուն ընթացքի համար լրջագույն խոչընդոտ են հանդիսանում: Մասնավորապես չեն գործում տնօրենների կառավարչական հմտությունների զարգացման և արդյունավետ կառավարման խրախուսման համակարգեր: Արդյունավետ չէ գործող՝ ուսումնական հաստատությունների աշակերտ թվով ֆինանսավորման բանաձևը, որը միանման արդյունք չի ապահովում բոլոր հաստատությունների համար: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները. Փոփոխության դրվող իրավակարգավորումները հնարավորություն կընձեռեն հստակեցնել «Հանրակրթության մասին» օրենքում առաջարկվող լրացումներն ու փոփոխությունները ուղղված են հանրակրթության կառավարման նոր մեխանիզմների ներդրմանը՝ նպատակադրելով առավել ճկուն և արդիական մոտեցումներ կիրառելու համակարգի մի շարք գործընթացներում, այդ թվում՝ կառավարման համակարգի, ինչպես նաև կիրառելու նոր գործիքակազմեր: Մասնավորապես, առաջարկվում է տնօրենի թափուր պաշտոնը համալրելու նոր մոտեցում՝ վերջինիս նշանակումը կրթության պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարի կողմից՝ հայտարարված մրցույթի ընթացակարգային փուլերը հաղթահարած թեկնածու(ներ)ից: Կարգավորումը թույլ կտա կարևորագույն այս պաշտոնին հավակնող թեկնածուի ընտրության հարցը դպրոցի խորհրդի ոչ արհեստավարժ անդամների

	իրավասության դաշտից տեղափոխել լիազոր մարմնի ղեկավարի կողմից նշանակման դաշտ՝ հստակ սահմանված ժամկետներով ներկայացված պահանջներով: Այնուամենայնիվ, դպրոցի աշակերտական, ուսուցչական և ծնողական խորհուրդները շարունակելու են իրենց գործուն մասնակցությունն ունենալ թեկնածուների ընտրության հարցում, որոնցից մեկը պետական կնշանակվի ուսումնական հաստատության տնօրեն: Այնուհետև կազմած զարգացման ծրագրի կատարողականի արդյունքը հետագայում կունենա որոշիչ դերակատարում՝ պաշտոնավարման շարունակականությունն ապահովելու հարցում: Որպես փոխկապակցված իրավակարգավորումներ՝ պետք է մշակվեն կամ փոփոխության ենթարկվեն և վերանայվեն Հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենի նշանակման կարգը, մանկավարժական աշխատողների պաշտոնների նկարագիրը և օրինակելի կանոնադրության համապատասխան դրույթները՝ հստակեցնելով: 2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը. Կներդրվի հանրակրթական ուսումնական հաստատությունների կառավարման նոր մոդել՝ հավաստագրման և ատեստավորման նոր մեխանիզմներով և գործառութային բաշխվածությամբ: Կգործի դպրոցների ֆինանսավորման միասնական մեխանիզմ՝ բոլոր տեսակի դպրոցների համար՝ ներառելով ուսումնական հաստատություններին լրացուցիչ ֆինանսավորելու գործիքակազմ, որով ուսումնական հաստատության արդյունավետ կառավարումը կհանգեցնի նաև ֆինանսական բարելավվման: Հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենի նշանակման, պաշտոնների նկարագրերի և օրինակելի կանոնադրության վերանայման արդյունքում կապահովվի հաստատությունների կառավարման արդյունավետության գործիքակազմը՝ կարևորելով զարգացման ծրագրի կատարողականի արդյունքը: Կընդունվեն հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենի նշանակման, պաշտոնների նկարագրերի և օրինակելի կանոնադրության փոփոխությունների վերաբերյալ ՀՀ կառավարության որոշումներ՝ ապահովելով հանրակրթության կառավարման արդյունավետության ապահովման գործիքակազմը: Կվերանայվի հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների հավաստագրման կարգը, կներդրվի տնօրենների ատեստավորման նոր համակարգ: Հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների և տնօրենների տեղակալների համար կգործի մասնագիտական շարունակական զարգացման մեխանիզմ: Կգործի մրցութային եղանակով և կատարողականի հիման վրա հանրակրթական հաստատությունների լրացուցիչ ֆինանսավորման մեխանիզմ՝ նպաստելով արդյունավետ և որակյալ հանրակրթության իրականացմանը:
	9.2 «ՀՀ կառավարության 2006 թ. օգոստոսի 24-ի 1262-Ն որորշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման մշակում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը. Միջոցառման գլխավոր նպատակն է հանրակրթական ուսումնական հաստատությունների կառավարման և ֆինանսավորման համակարգի արդյունավետության բարձրացումը: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ»բաժնի 1-ին, 3-րդ պարբերությունից, 3-րդ պարբերության 5-րդ կետից: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է նաև «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածից և 30-րդ հոդվածի 26-րդ կետից, ՀՀ կառավարության 2021 թ. փետրվարի 4-ի 136-Ն որոշման պահանջներից: Ներկայումս գործող՝ ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի N 1262-Ն որոշմամբ հաստատված ֆինանսավորման բանաձևը լուծում չի տալիս այնպիսի խնդիրներին, ինչպիսիք են համընդհանուր ներառականությունը, ուսուցչական և ոչ ուսուցչական անձնակազմի հաստիքների և աշխատավարձերի նկատմամբ միասնական մոտեցում ցուցաբերելը, ինչպես նաև որոշ ծախսատեսակների նորմավորումը: Արդյունավետ կառավարվող դպրոցներին լրացուցիչ միջոցներ ձեռք բերելու հնարավորություն չի ընձեռվում: Խնդրահարույց է նաև բազմահամակազմ դասարաններ ունեցող դպրոցների ֆինանսավորման մեխանիզմը: 1.1 Կարգավորման ընթացիկ իրավիճակը և առկա խնդիրները. Գործող իրավակարգավորմամբ չի ապահովվում միասնական մոտեցման բոլոր հաստատությունների համար՝ անկախ վերջիններիս ենթակայության, ինչպես նաև բավարար պայմանների ստեղծում՝ հաստատությունների բնականոն գործունեության համար: Կարևորագույն գործիքը հանրակրթության ֆինանսավորման կարգի փոփոխությունն է՝ անցում անելով սովորող թվով ֆինանսավորման սկզբունքից ըստ դասարանների ֆինանսավորման կարգին, ինչը հնարավորություն կտա խուսափել կրթության որակի վրա բացասական ազդեցություն ունեցող այն պրակտիկայից, որը դրդում է դպրոցներին դասարանները կազմավորել հնարավորինս առավելագույն սովորողների թվով՝ ծախսերը նվազեցնելու

համար: Դրա հետևանքով կազմավորվում են 35 հոգանոց դասարաններ տարրական և միջին աստիճանում, 30 հոգանոց դասարաններ՝ ավագ աստիճանում: Դասարաններով ֆինանսավորման պարագայում դպրոցը հակված կլինի կազմավորել հնարավորինս շատ դասարանները՝ առավելագույն թվի փոխարեն անցում անելով նվազագույն թվին: 20-25 հոգանոց դասարանները ուսումնառության գործընթացի համար կարող են ստեղծել որակապես այլ պայմաններ՝ առաջ բերելով որակապես այլ կրթական արդյունք: Սա հատկապես ազդեցություն կթողնի առավել ցածր առաջադիմություն գրանցող սովորողների վրա, որոնք հաճախ մեծ դասարաններում օբյեկտիվ պատճառներով դուրս են մնում ուսուցչի տեսադաշտից՝ խորացնելով իրենց ուշացումը դասընթացի ընդհանուր ընթացքից:

Այն հնարավորություն չի ընձեռում նաև խրախուսող միջոցներ կիրառելու արդյունավետ կառավարվող ուսումնական հաստատությունների համար:

1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

Առաջարկվող բանաձևով ֆինանսավորման հաշվարկման համար հիմք են հանդիսանում մի շարք ելակետային տվյալներ, այդ թվում՝ դասարանների տարեկան միջին թիվը, մեկ դասարանին ընկնող ուսուցչական դրույքների միջին թիվը, նվազագույն աշխատավարձը, տարբեր տիպի լրավճարներ, ինչպես նաև հաստատությունների պահպանման ծախսերը, վերջիններիս համար սահմանված հաստիքների թիվը:

Այդ ամենը հնարավորություն է տալիս միասնական մոտեցմամաբ հնարավորինս ստույգ հաշվարկել ֆինանսավորումը յուրաքանչյուր անհատական դեպքի համար:

Դպրոցների կատարողականի հիման վրա մրցութային եղանակով կգործի լրացուցիչ ֆինանսավորման կարգ, որը դպրոցները լավ կառավարելու մրցակցային հիմքեր կստեղծի և խթան կհանդիսանա ուսումնական գործընթացն առավել արդյունավետ կազմակերպելու համար:

2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը.

Դասարանների թվի հիման վրա կգործի ֆինանսավորման նոր կարգ: Կգործի նաև արդյունավետ կառավարման հիման վրա լրացուցիչ ֆինանսավորման մեխանիզմ՝ կատարողականի հիման վրա մրցութային ֆինանսավորման նոր չափանիշներով՝ նպաստելով արդյունավետ և որակյալ հանրակրթության իրականացմանը:

Կներդրվի բազմահամակազմ դասարանների ֆինանսավորման ճկուն մեխանիզմ:

Դպրոցներում գործունեության կատարողականի հիման վրա կիրականացվի մրցութային ֆոնդի գործարկում, որը հասանելի կլինի այն դպրոցներին, որոնք ունեն լավ արդյունքներ:

Նոր ֆինանսավորման կարգը կգործի իբրև նորմատիվային՝ բոլոր դպրոցների համար՝ ապահովելով գործունեության հնարավորությունն ու պայմանները, իսկ լրացուցիչը՝ խրախուսելու լավ կատարողականն ու արդյունքները:

9.4 Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների ատեստավորման կարգը սահմանելու մասին որոշման նախագծի մշակում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ: «ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թ. մայիսի 18-ի՝ N 395-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ ԿԳՄՍՆ հրամանի ընդունում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը.

Միջոցառման գլխավոր նպատակն է հանրակրթական ուսումնական հաստատությունների կառավարման և ֆինանսավորման համակարգի արդյունավետության բարձրացումը:

Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ»բաժնի 1-ին, 2-րդ, 3-րդ պարբերությունից, 3-րդ պարբերության 5-րդ կետից:

Միջոցառման անհրաժեշտությունը բխում է նաև «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 10-րդ, 12-րդ հոդվածներից, ՀՀ կառավարության 2021 թ. փետրվարի 4-ի N 136-Ն որոշման պահանջներից:

Ներկայումս գործող իրավակարգավորմամբ հանրակրթական ուսումնական հաստատության գործող տնօրենը և տնօրեն դառնալ ցանկացողը նույն մեկնարկային պայմաններով են վերապատրաստվում հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագիր ստանալու համար:

1.1. Կարգավորման ընթացիկ իրավիճակը և առկա խնդիրները.

Տնօրենների հավաստագրման գործընթացը ներդրվել է 2010 թվականին՝ որպես տնօրեն դառնալ ցանկացողների համար որոշակի որակական նվազագույն պահանջների սահմանման և վերջիններիս նախնական ընտրության գործիք: Այդուհանդերձ, հավաստագրման գործող կարգը գործառնության տասը տարիների ընթացքում ի հայտ է բերել մի շարք խնդիրներ: Մասնավորապես, ի հայտ եկած խնդիրներից է այն, որ հավաստագրման գործընթացը նույնական մոտեցում է բոլորի համար՝ անկախ ունեցած աշխատանքային փորձից: Այդ բացը կարող է լրացնել պարտադիր ատեստավորումը՝ տարբերակված մոտեցում ունենակով մասնակիցների նկատմամբ:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.
Ատեստավորումը և վերապատրաստումը կլրացնեն տնօրենների մասնագիտական հմտությունների և ըստ գործառույթների՝ մեթոդական աջակցություն ստանալու անհրաժեշտ բացը: Ինչպես նաև թույլ կտան կիրառելու տարբերակված մոտեցում՝ ըստ կարիքի, ունեցած փորձառության՝ մասնագիտական առաջխաղացման հնարավորություն ընձեռնելով:

2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը.
Հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների հավաստագրման կարգի վերանայմամբ, ատեստավորման համակարգի ներդրմամբ ապահովված է տնօրենների աշխատանքի արդյունավետության գնահատման գործիքակազմը:

9.5 Հանրակրթական ուսումնական հաստատությունների կոլեգիալ կառավարման մարմինների անդամների վերապատրաստումներ
9.6 Հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների, տնօրենի տեղակալների վերապատրաստումներ

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը.
Միջոցառման գլխավոր նպատակն է հանրակրթական ուսումնական հաստատությունների կառավարման և ֆինանսավորման համակարգի արդյունավետության բարձրացումը:
Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ»բաժնի 3-րդ պարբերությունից, 3-րդ պարբերության 5-րդ կետից:
Միջոցառման անհրաժեշտությունը բխում է նաև «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 11-րդ հոդվածներից, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 4-ի 136-Ն որոշման պահանջներից:
Հանրակրթական ուսումնական հաստատությունների վարչական աշխատողները, ինչպես նաև կոլեգիալ կառավարման մարմնի կազմում ընդգրկված անդամները չունեն գործառույթներն իրականացնելու համար բավարար կարողություններ, իրազեկվածություն և կառավարման հմտություններ: Նախատեսվող վերապատրաստումները նպատակ ունեն լրացնելու նշված բացը, զարգացնելու նշված հմտությունները, ինչը դպրոցնի կառավարման արդյունավետության բարձրացման բարելավման հիմքեր կստեղծի:

1.1 Կարգավորման ընթացիկ իրավիճակը և առկա խնդիրները.
Ներկայումս ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թ. մայիսի 18-ի N 395-Ն և մարտի 18-ի N 113-Ն հրամաններով կարգավորվող գործընթացները կազմակերպելիս բաց է մնում կարևորագույն մի խնդիր՝ կառավարչական հմտությունների ու կարողությունների շարունակական զարգացման պահանջ չի ներկայացվում պատասխանատուների համար: Առկա է կոլեգիալ կառավարման մարմինների անդամների և հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենի տեղակալների՝ օրենքով սահմանված կարգով իրենց վերապահված իրավունքների և պարտականությունների ոչ լիարժեք իմացության մակարդակ: Խնդիր է առաջացել գործառնական բնույթի շարունակական զարգացման մեխանիզմի ներդրման՝ արհեստավարժ մարմին ստեղծելու հիմնավորմամբ:

1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.
Առաջարկվում է վերապատրաստումների միջոցով բարձրացնել կոլեգիալ կառավարման մարմինների անդամների և հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների, տեղակալների իրազեկվածությունը՝ իրենց վերապահված լիազորությունների վերաբերյալ:
Ատեստավորումը և վերապատրաստումը կլրացնեն տնօրենների մասնագիտական հմտությունների և ըստ գործառույթների՝ մեթոդական աջակցություն ստանալու անհրաժեշտ բացը: Ինչպես նաև թույլ կտան կիրառելու տարբերակված մոտեցում՝ ըստ կարիքի, ունեցած փորձառության՝ մասնագիտական առաջխաղացման հնարավորություն ընձեռնելով:
Նոր մոտեցմամբ առաջարկվում է է հաստատության զարգացման ծրագրի՝ որպես գործիքի կիրառության արդյունավետության օգտագործման և հաստատության ռազմավարական զարգացման նպատակով զարգացման ծրագրի կատարման ընթացքի վերահսկողության առավել հստակ մեխանիզմների և պարբերականության ամրագրումը և կատարման արդյունքներով տնօրենին անվստահություն հայտնելու լիազորության վերապահումը հաստատության կառավարման խորհրդին:

2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը.

	Հանրակրթական բոլոր ուսումնական հաստատությունների կոլեգիալ կառավարման մարմնի անդամները տիրապետում են իրենց առջև դրված խնդիրների լուծման համար անհրաժեշտ հմտություններին և կարողություններին (շուրջ 9000 անդամ): Հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների և տնօրենների տեղակալների համար գործում է մասնագիտական շարունակական զարգացման մեխանիզմ (1400 տնօրեն, տնօրենի 2200 տեղակալներ): Ղեկավարման գործառույթ ունեցող պատասխանատու անձանց ձեռք բերած հմտությունների շնորհիվ դպրոցների արդյունավետ ղեկավարման հիմքեր կստեղծվեն, և ուսումնական հաստատություններում այն կիրառելու և լավ արդյունք ցուցաբերելու դեպքում ոչ միայն կրթական որակի բարձրացման, այլև լրացուցիչ ֆինանսավորում ստանալու հնարավորություն կունենան:
10	10.1 ՀՀ Լոռու մարզի հանրակրթական դպրոցների ընդգրկում «Կայուն դպրոցական սնունդ ծրագրում 10.2 ՀՀ Արմավիրի մարզի հանրակրթական դպրոցների ընդգրկում «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրում 10.3 ՀՀ Կոտայքի մարզի հանրակրթական դպրոցների ընդգրկում «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրում 10.4 Վերապատրաստումների իրականացում՝ սննդի տրամադրման ծրագիրը պատշաճ իրականացնելու համար 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը. Միջոցառման գլխավոր նպատակն է ՀՀ բոլոր մարզերի հանրակրթական դպրոցների տարրական դասարանների աշակերտներին ապահովում դպրոցական սննդով: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» բաժնի 1-ին, 2-րդ պարբերությունից: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է նաև «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածից, ՀՀ կառավարության 2021 թ. փետրվարի 4-ի 136-Ն որոշման պահանջներից: Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերի հանրակրթական դպրոցների տարրական դասարանների աշակերտների առողջ սնունդով ապահովելը նպատակ ունի բարելավելու նրանց առողջությունն ու հաղթահարելու աղքատությունը՝ նպաստելով դպրոցականների հաճախելիության բարձրացմանն ու համընդհանուր տարրական կրթության ձեռքբերմանը: Գործընթացը պատշաճ իրականացնելու նպատակով նախատեսվում է դպրոցի անձնակազմի վերապատրաստումների իրականացում՝ սննդի տրամադրման ծրագիրը պատշաճ իրականացնելու համար: 1.1 Կարգավորման ընթացիկ իրավիճակը և առկա խնդիրները. Ներկայումս հանրապետության 8 մարզերում (Արարատ, Սյունիք, Վայոց Ձոր, Տավուշ, Շիրակ, Արագածոտն,Գեղարքունիք, Լոռի) իրականացվում է «Կայուն դպրոցական սնունդ» ծրագիրը: 2021-2023 թվականներին ծրագիրը կներդրվի Արմավիրի և Կոտայքի մարզերում: 1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները. Տարեցտարի կընդլայնվի ՀՀ պետական բյուջեից հանրակրթական դպրոցների նախակրթարանների և տարրական դասարանների սովորողներին դպրոցական սննդով ապահովման ծրագիրը, կստեղծվի դպրոցների տարրական դասարանների սովորողներին դպրոցական կայուն սննդով ապահովելու համակարգ: Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերի հանրակրթական դպրոցների տարրական դասարանների աշակերտները կստանան առողջ սնունդ, որը անմիջական ազդեցություն կունենա սովորողների հաճախելիության և ուսման որակի բարելավման վրա: ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագիրը կշարունակի օժանդակել ծրագրին՝ այդ թվում անցումային մարզերում դպրոցներում ճաշարանների և խոհանոցների վերանորոգման ու կահավորման ուղղությամբ: 2023 թվականին ծրագրի շահառուների թիվը կկազմի 110000-ից ավելի: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը. ՀՀ Լոռու մարզում ուսումնառության ընթացքում սնունդ ստացող շահառուների թիվը կկազմի շուրջ 12600 երեխա, ամբողջ ծրագրի մասով՝ տարրական դասարաններում սովորող շուրջ 78500 երեխա: ՀՀ Արմավիրի մարզում ուսումնառության ընթացքում սնունդ ստացող շահառուների թիվը կկազմի շուրջ 14000 երեխա, ամբողջ ծրագրի մասով՝ տարրական դասարաններում սովորող շուրջ 92500 երեխա: ՀՀ Կոտայքի մարզում ուսումնառության ընթացքում սնունդ ստացող շահառուների թիվը կկազմի շուրջ 15600 երեխա, ամբողջ ծրագրի մասով՝ տարրական դասարաններում սովորող շուրջ 108100 երեխա: Դպրոցների անձնակազմերը ունեն անհրաժեշտ կարողություններն ու հմտությունները՝ ծրագիրն իրականացնելու համար:
11	11.1«Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն /ՆՄՄԿ/ իրականացնող ուսումնական հաստատությունների վերակազմակերպում

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը
Միջոցառման գլխավոր նպատակն է պետական ուսումնական հաստատությունների և դրանցում իրականացվող ծրագրերի տեղաբաշխման ռացիոնալացումը:
Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» բաժնի Նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության բարեփոխումների 1-ին կետից:
Միջոցառման նպատակն է կրթության համակարգի կառավարման արդյունավետության բարձրացումը:
Ժամանակի մարտահրավերները պահանջում են կրթական ընթացակարգերի և գործընթացի կազմակերպման օպտիմալացում առավել քիչ միջոցների և ռեսուրսների օգտագործմամբ, սակայն առավել արդյունավետ կերպով նույն նպատակներին հասնելու հնարավորություն: Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է Մասնագիտական կրթության և ուսուցման /այսուհետ՝ ՄԿՈՒ/ հաստատությունների կառավարման և ծախսարդյունավետության բարձրացմամբ, ռեսուրսների համակենտրոնացմամբ: Միջոցառումը ենթադրում է առաջին հերթին կրթական հաստատությունների ցանցի վերափոխում: Ցանցի ստեղծումը նախատեսում է հորիզոնական գծով խոշորացում՝ նախնական մասնագիտական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության /այսուհետ՝ ՆՄՄԿ/ ուսումնական հաստատությունների վերակազմակերպում, որը հնարավորություն է տալիս օպտիմալացնել օգտագործվող տարածքները և ուսումնանյութական բազան: ՆՄՄԿ համակարգի ուսումնական հաստատությունները կվերակազմակերպվեն և դրա հիմքի վրա կստեղծվեն բազմագործառութային ուսումնական հաստատություններ: ՆՄՄԿ համակագի ռեսուրսների առավել օպտիմալ օգտագործումը կնպաստի մասնագիտական կրթության հետագա զարգացմանը և որակյալ մասնագետների պատրաստմանը:
ՆՄՄԿ ուսումնական հաստատություններում ՀՀ մարզերի զարգացման համար առաջնահերթ և կարևորություն ներկայացնող, ինչպես նաև աշխատաշուկայում առավել պահանջարկված ոլորտների գծով ուսուցման կազմակերպումը, հաշվի առնելով գոյություն ունեցող նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ցանցը, կնպաստի ուսումնական հաստատություններում պետության, ՀՀ մարզերի զարգացման համար առաջնահերթ և կարևորություն ներկայացնող, ինչպես նաև աշխատաշուկայում առավել պահանջարկված ոլորտների գծով նոր մասնագիտությունների ներդրմանը, ուսուցանվող մասնագիտությունների արդիականացմանը:
Միջոցառման իրականացումը հնարավորություն կտա լուծել այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են գրավչության աճը, աշխատաշուկայի պահանջներին արագ արձագանքելը, աշխատաշուկային համապատասխանության ցուցանիշի բարելավումը, շրջանավարտների զբաղունակության խթանումը:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները
2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական ծրագրեր իրականացվում են 54 պետական ուսումնական հաստատություններում, որից 21-ը՝ նախնական մասնագիտական ուսումնական հաստատությունում: Միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացվում են 77 պետական ուսումնական հաստատությունում, որից 67-ը՝ միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունում:
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության համապատասխան մասնագետների կողմից իրականացվել է ՀՀ-ում գործող ՆՄՄԿ պետական ուսումնական հաստատությունների քարտեզագրում՝ ըստ մարզերի, ուսումնական հաստատությունների և շենք-շինությունների, ուսուցանվող մասնագիտությունների, ուսանողների թվի և աշխատողների: Հիմք ընդունելով քարտեզագրման ընթացքում իրականացված ուսումնասիրության և վերլուծության արդյունքները, ինչպես նաև հաշվի առնելով ուսումնական հաստատություններում ուսուցանվող որոշ մասնագիտությունների կրկնությունը, շենքային պայմանները, ուսանողների թվաքանակը, միմյանցից հեռավորությունը, նյութատեխնիկական բազայով հագեցվածությունը, մարզերի տնտեսական զարգացման տնտեսական ուղղությունները, տվյալ մարզում առաջատար հանդիսացող տարածաշրջանային պետական քոլեջների հզորացումը որպես գերազանցության և առաջնորդության կենտրոններ՝ անհրաժեշտություն է առաջացել օպտիմալացնել (խոշորացնել, վերակազմակերպել) որոշ ուսումնական հաստատություններ:
Օպտիմալացման (խոշորացման, վերակազմակերպման) արդյունքում կբարձրանա ուսումնական հաստատության կառավարման արդյունավետությունը, կբարելավվեն շենքային պայմանները, կվերանայվեն իրականացվող մասնագիտություններն ու պատրաստվող մասնագետները, ինչպես նաև հնարավորություն կստեղծվի մեկ հաստատության ներսում իրականացնել և՛ նախնական մասնագիտական (արհեստագործական), և՛ միջին մասնագիտական կրթական ծրագրեր:
Գերակա նպատակ ունենալով ժամանակի պահանջներին և չափանիշներին համապատասխան մասնագետներ պատրաստելը՝ վերջին տարիներին հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացմամբ պայմանավորված մի շարք նոր մասնագիտությունների պահանջարկի մեծացումը, կատարված ուսումնասիրությունները, ՆՄՄԿՈՒ

	հաստատություններում ուսուցանվող մասնագիտությունները ՀՀ մարզային առանձնահատկություններին համապատասխանեցնելու հանգամանքը առանցքային են դարձնում հաստատություններում աշխատաշուկայում պահանջվող մասնագիտությունների գծով ուսուցման կազմակերպումը, ինչը հնարավորություն է ստեղծում նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթությունը դարձնել առավել գրավիչ և համահունչ երկրի սոցիալ-տնտեսական զարգացման միտումներին և ժամանակակից զարգացումներին, ՀՀ մարզերի զարգացման համար առաջնահերթ և աշխատաշուկայում առավել պահանջարկված ոլորտներին, նպաստելով նաև շրջանավարտների զբաղվածությանը: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները ՆՄՄԿ ուսումնական հաստատությունների պարբերական մշտադիտարկումներ ըստ մարզերի, ուսանողների թվի, մասնագիտությունների, ՄԿՈ ուսումնական հաստատությունների արդյունավետ կառավարում, ռեսուրսների համակենտրոնացում, «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների վերակազմակերպման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերի մշակում և ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացում: Գերակա նպատակ ունենալով ժամանակի պահանջներին և չափանիշներին համապատասխան մասնագետներ պատրաստելը՝ վերջին տարիներին հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացմամբ պայմանավորված մի շարք նոր մասնագիտությունների պահանջարկի մեծացումը, կատարված ուսումնասիրությունները, ՆՄՄԿՈ հաստատություններում ուսուցանվող մասնագիտությունները ՀՀ մարզային առանձնահատկություններին համապատասխանեցնելու հանգամանքը առանցքային են դարձնում հաստատություններում աշխատաշուկայում պահանջվող մասնագիտությունների գծով ուսուցման կազմակերպումը, ինչը հնարավորություն է ստեղծում նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթությունը դարձնել առավել գրավիչ և համահունչ երկրի սոցիալ-տնտեսական զարգացման միտումներին և ժամանակակից զարգացումներին՝ նպաստելով նաև շրջանավարտների զբաղվածությանը: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Միջոցառման իրականացման արդյունքում կվերակազմակերպվեն նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական 10 ուսումնական հաստատություններ, կօպտիմալացվեն օգտագործվող տարածքները և ուսումնանյութական բազան, կբարելավվեն շենքային պայմանները, կբարձրանա ուսումնական հաստատության կառավարման արդյունավետությունը, կվերանայվեն պատրաստվող մասնագիտությունները, ինչպես նաև հնարավորություն կստեղծվի մեկ հաստատության ներսում իրականացնել նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր:
	11.2 Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններում ընդունելության տեղերի բաշխման մեթոդաբանության մշակում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակն է պետական ուսումնական հաստատությունների և դրանցում իրականացվող ծրագրերի տեղաբաշխման ռացիոնալացումը: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» բաժնի Նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության բարեփոխումների 1-ին կետից: Միջոցառման իրականացման նպատակն է նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններում ընդունելության տեղերի բաշխումն իրականացնել՝ հաշվի առնելով ՀՀ տնտեսության, ՀՀ մարզերի զարգացման ուղղությունները, առանձնահատկությունները, ուսանողների թվի համամասնությունը, նախկին տարիներին հատկացված տեղերի և փաստացի ընդունելության արդյունքների վերլուծությունը, անհրաժեշտ համապատասխան մասնագետների քանակը, տրամադրվող կրթական ծրագրերի բազմազանությունը: 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Ներկայումս առկա չէ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններում ընդունելության տեղերի բաշխման հստակ մեթոդաբանություն: ՀՀ-ում նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններում ընդունելության տեղերի բաշխումն իրականացնելիս հիմնականում առաջնորդվում են ՆՄՄԿ ուսումնական հաստատությունների ուղղվածությամբ, լիցենզիայով հատկացված տեղերի սահմաններով, ուսումնական հաստատությունների կողմից ներկայացված մասնագիտություններով, որոնք շատ հաճախ չեն համապատասխանում մարզի, տնտեսության զարգացման ուղղություններին: Արդյունքում ուսումնական

	հաստատություններում տրամադրվող կրթական ծրագրերը կրկնվում են, հատկացված տեղերը թափուր են մնում, և շատ հաճախ տեղերի վերաբաշխման անհրաժեշտություն է առաջանում: 1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները Նոր մեթոդաբանության մշակումը կնպաստի ՀՀ տնտեսության կարիքներից բխող մասնագետների պատրաստմանը, մարզերում տրամադրվող կրթական ծրագրերի բազմազանությանը, ուսումնական հաստատություններում ընդունելության տեղերի նպատակային բաշխմանը: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Առկա է և կիրառվում է նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններում ընդունելության տեղերի բաշխման մեթոդաբանությունը, հիմնված տարածքային և ոլորտային զարգացման գերակայությունների և աշխատաշուկայի պահանջների վրա:
	11.3 «ՆՄՄԿ ուսումնական հաստատություններում իրականացվող ծրագրերի վերաբաշխում՝ ըստ տարածքային և ոլորտային զարգացման գերակայությունների, ուսանողների թվաքանակի 1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակն է պետական ուսումնական հաստատությունների և դրանցում իրականացվող ծրագրերի տեղաբաշխման ռացիոնալացումը: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» բաժնի Նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության բարեփոխումների 1-ին կետից: Միջոցառման իրականացման նպատակն է նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններում ընդունելության տեղերի բաշխումն իրականացնել՝ հաշվի առնելով ՀՀ տնտեսության, ՀՀ մարզերի զարգացման ուղղությունները, առանձնահատկությունները, ուսանողների թվի համամասնությունը, նախկին տարիներին հատկացված տեղերի և փաստացի ընդունելության արդյունքների վերլուծությունը, անհրաժեշտ համապատասխան մասնագետների քանակը, տրամադրվող կրթական ծրագրերի բազմազանությունը: 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Միջոցառման իրականացման նպատակն է նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններում ընդունելության տեղերի բաշխումն իրականացնել՝ հաշվի առնելով ՀՀ տնտեսության, ՀՀ մարզերի զարգացման ուղղությունները, առանձնահատկությունները, ուսանողների թվի համամասնությունը, նախկին տարիներին հատկացված տեղերի և փաստացի ընդունելության արդյունքների վերլուծությունը, անհրաժեշտ համապատասխան մասնագետների քանակը, տրամադրվող կրթական ծրագրերի բազմազանությունը: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Նոր մեթոդաբանության հիման վրա տեղերի վերաբաշխումը կնպաստի ՀՀ տնտեսության կարիքներից բխող մասնագետների պատրաստմանը, մարզերում տրամադրվող կրթական ծրագրերի բազմազանությանը, ուսումնա-կան հաստատություններում ընդունելության տեղերի նպատակային բաշխմանը: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններում իրականացվող ծրագրերը համապատասխանում են տարածքային և ոլորտային զարգացման գերակայություններին աշխատաշուկայի պահանջարկին:
12	12.1 «ՆՄՄԿ ուսումնական հաստատություններում կառավարման «պետություն–մասնավոր» համագործակցության մոդելների փորձարկում և ներդնում 1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակն է Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության համակարգի ուսումնական հաստատությունների կառավարման արդյունավետության բարձրացում և դրանց ձեռնարկատիրական գործունեության հնարավորությունների և ձևերի ընդլայնումը Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» բաժնի Նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության բարեփոխումների 3-րդ կետից: Ժամանակակից զարգացումները և գլոբալ բիզնեսի հնարավորությունները կառավարման նոր մեթոդներ և նոր իրավակազմակերպական ձևեր ստեղծելու

անհրաժեշտություն են ստեղծում: Միջոցառման նպատակն է սահմանել ուսումնական հաստատությունների գործունեության իրավակազմակերպական տարբեր ձևեր գործատուների կապը, ազդեցությունը ՆՄՄԿ ուսումնական հաստատությունների գրեթե բոլոր հիմնական ոլորտներում ծավալվող գործունեությանը, գործընթացներին և քաղաքականություններին մեծացնելու համար, ինչպես օրինակ՝ ֆինանսական, կառավարման մարմիններ, ռազմավարական պլանավորում, մարդկային ռեսուրսների կառավարում, ընդունելություն, ուսանողների գնահատում և այլն: Կառավարման նոր մոդելների խթանումը կնպաստի թափանցիկության և հաշվետվողականության բարձրացմանը Հայաստանի նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունների շրջանում:

1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.

Հայաստանում ՆՄՄԿ ուսումնական հաստատությունների հիմնադիրը հանդիսանում է ՀՀ կառավարությունը, որի կառավարումը իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, իսկ կառավարման մարմինը կոլեգիալ կառավարման խորհուրդն է:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները
Միջոցառումը կապահովի ՆՄՄԿ համակարգի զարգացման համար մասնավոր հատվածի, պետության և ուսումնական հաստատությունների ռեսուրսների միավորմանը, կնպաստի որակյալ կադրերի պատրաստման համար առկա ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացմանը:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը
Մշակվել են առաջարկություններ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունների կառավարման այլընտրանքային մոդելների վերաբերյալ:
Ստեղծվել/մշակվել են պետական-մասնավոր համագործակցության հիման վրա կառավարման մոդելի ձևաչափի վրա հիմնված իրավական և ինստիտուցիոնալ հիմքեր:
Կառավարման նոր մոդելը փորձարկման կարգով ներդրվել է առնվազն 1 հաստատությունում : Կառավարման արդյունավետության բաձրացման նպատակով մշակվել են նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունների ֆինանսավորման մոդելներ:

12.2 Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունների ձեռնարկատիրական գործունեության հնարավորությունների և ձևերի ընդլայնման նպատակով ՆՄՄԿ հաստատությունների կանոնադրություններում համապատասխան փոփոխությունների և լրացումների կատարում

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման գլխավոր նպատակն է Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության համակարգի ուսումնական հաստատությունների կառավարման արդյունավետության բարձրացում և դրանց ձեռնարկատիրական գործունեության հնարավորությունների և ձևերի ընդլայնումը:
Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» բաժնի Նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության բարեփոխումների 1-ին կետից «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ կետի 1-ին ենթակետից, «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին Օրենքի 82-րդ մասի 4-րդ կետի ժա)ենթակետից:
Ներկայիս գործարար միջավայրը, որում գործում են կազմակերպությունները, պահանջում է արագ փոփոխություններ և շարունակական զարգացում: Այս դինամիկ և անկանխատեսելի միջավայրում ձեռնարկատիրությունն ու նորարարությունը մրցունակության հիմքն են, որոնք կարող են ընդլայնել նոր լուծումների կիրառումը և բավարարել կազմակերպությունների կարիքները: ՆՄՄԿՆՄՄԿ ուսումնական հաստատությունների կողմից ձեռնարկատիրական գործունեության իրականացումը, տնտեսական ընկերությունների ստեղծումը կնպաստի հաստատություններում արտաբյուջեի ձևավորմանը, հաստատության ձեռնարկությունում ուսանողների համար պրակտիկ ուսուցման կազմակերպմանը:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.

	Ներկայումս ՆՄՄԿ ուսումնական հաստատությունները բյուջե ձևավորում են կրթական գործունեության ապահովմանն ուղղված պետական բյուջետային միջոցներից, վճարովի ուսուցման դիմաց ստացված միջոցներից, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված գործունեության այլ ձևերից գոյացած միջոցներից: Հաշվի առնելով ՀՀ պետական միջոցների սղությունը՝ մասնագիտական կրթության և ուսուցման /ՄԿՈՒ/ համակարգի զարգացման համար ռազմավարական նշանակություն ունի ՆՄՄԿ ուսումնական հաստատությունների համար ձեռնարկատիրական գործունեության հնարավորության ստեղծումը, որը քոլեջներին և ուսումնարաններին կապահովի արտաբյուջե ձևավորելու հնարավորությամբ՝ խթանելով ինքնաֆինանսավորումը, ուսումնական հաստատության համալրումը և համապատասխան գույքով ու սարքավորումներով հագեցումը, ուսանողների համար տեսականին զուգահեռ աշխատանքի վրա հիմնված ուսուցման կազմակերպումը, սովորողների մոտ համապատասխան կարողությունների և հմտությունների ձևավորումը: ՄԿՈՒ հաստատություններն ունեն անհրաժեշտ ենթակառուցվածքներ և դրանց նպատակային օգտագործման համար պետք է ստեղծել համապատասխան միջավայր և իրավական դաշտ: Ուսումնական հաստատություններում տնտեսական ընկերությունների ստեղծումը կնպաստի հաստատություններում ինչպես արտաբյուջեի ձևավորմանը, այնպես էլ հաստատության ձեռնարկությունում ուսանողների համար պրակտիկ ուսուցման կազմակերպմանը: Ներկայումս ՄԿՈՒ 5 հաստատությունում գործում են նման ձեռնարկություններ, որոնք կարող են վերոնշյալ փորձի տարածման լավ նախադրյալ հանդիսանալ: ՄԿՈՒ հաստատությունները կարող են ունենալ իրենց մասնագիտությունների գծով ծառայությունների մատուցելու, ապրանքների արտադրությունն ու վաճառքն ընդլայնելու հնարավորություններ, տարբեր նպատակներով ստեղծել բազմաշահակից աշխատանքային ծրագրեր: Ձեռնարկատիրական գործունեության խթանումը ՄՈՒՀ-երի նյութական ապահովման, աշխատանքի վրա հիմնված ուսուցման կազմակերպման և արդյունավետ գործունության կարևորագույն երաշխիք է: 1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները ՆՄՄԿ ուսումնական հաստատությունների գործունեությունն ընդլայնելու, ՆՄՄԿ ուսումնական հաստատություններում տնտեսական ընկերություններ ստեղծելու, արտաբյուջե ձևավորելու, հաստատության ձեռնարկությունում ուսանողների համար պրակտիկ ուսուցում կազմակերպելու հնարավորություն ստեղծելու նպատակով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունների կողմից ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու, տնտեսական ընկերություններ ստեղծելու կամ նրանց մասնակից դառնալու մեխանիզմների ուսումնասիրության, դրանց վերաբերյալ առաջարկությունների մշակման հիման վրա ստեղծել իրավական հիմք՝ համապատասխան փոփոխությունների կատարելով ՆՄՄԿ ուսումնական հաստատությունների կանոնադրություններում: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ձեռնարկատիրական գործունեության հնարավորությունները և ձևերը ընդլայնված են:
13	13.1 Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերի վերանայում, «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը հաստատելու և ՀՀ կառավարության 2006թ. հունվարի 12-ի N73-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակն է Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտի զբաղունակության բարելավումը: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» բաժնի Նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության բարեփոխումների 1-ին կետից, «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերից: Մասնագիտությունների ցանկերի վերանայումը՝ տարածաշրջանային և ոլորտային զարգացմանը համապատասխան, կնպաստի աշխատաշուկայում պահանջարկ չվայելող մասնագիտությունների բաժինների փակմանը և պետության, ՀՀ մարզերի զարգացման համար առաջնահերթ և կարևորություն ներկայացնող, ինչպես նաև աշխատաշուկայում առավել պահանջարկված ոլորտների գծով նոր մասնագիտությունների ընդգրկմանը ցանկերում, ՄԿՈՒ ոլորտի մասնագիտությունների արդիականացմանը:

1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների ցանկերը վերանայվել են 2018 թվականին: Սակայն վերջին երկու տարիներին ՄԿՈՒ համակարգում իրականացված և իրականացվելիք բարեփոխումները, կատարված ուսումնասիրությունները, ինչպես նաև ՆՄՄԿՈՒ հաստատություններում ուսուցանվող մասնագիտությունները ՀՀ մարզային առանձնահատկություններին համապատասխանեցնելու գործընթացը առաջացրել են անհրաժեշտություն վերանայել մասնագիտությունների ցանկը:
«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերի վերանայումը և համապատասխանաբար «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը հաստատելու և ՀՀ կառավարության 2006թ. հունվարի 12-ի N73-Ն որոշման մեջ փոփոխությունների կատարումը հնարավորություն են ստեղծում Հայաստանում իրականացվող նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթությունը դարձնել առավել գրավիչ և համահունչ երկրի սոցիալ-տնտեսական զարգացման միտումներին և ժամանակակից զարգացումներին՝ կանոնակարգելով նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն իրականացնող հաստատություններում տրամադրվող կրթական ծառայությունների մատուցումը՝ ըստ ՀՀ մարզերի զարգացման համար առաջնահերթ և աշխատաշուկայում առավել պահանջարկված ոլորտների:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Տնտեսության գերակա ոլորտների, հետագա զարգացման միտումների, մարզերի զարգացման ծրագրերի, շահագրգիռ մարմիններից ստացված առաջարկությունների ուսումնասիրություն, դրա հիման վրա նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսուցանվող մասնագիտությունների ցանկերի վերանայում, աշխատաշուկայում պահանջարկ չվայելող մասնագիտությունների հանում ցանկից, նոր մասնագիտությունների ընդգրկում, «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 12-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի մայիսի 18-ի N 242 որոշման մեջ փոփոխություն կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 73-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի մշակում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը:

Միջոցառման իրականացման արդյունքում պարբերաբար կվերանայվեն նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը, կհանվեն պահանջարկ չվայելող մասնագիտությունները և կներառվեն աշխատաշուկայում պահանջարկ ունեցող նոր մասնագիտություններ, ինչը կնպաստի մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) ոլորտի մասնագիտությունների արդիականացմանը, գրավչության աճին, աշխատաշուկայի պահանջներին արագ արձագանքելուն, աշխատաշուկային համապատասխանության ցուցանիշի բարելավմանը, շրջանավարտների զբաղունակության խթանմանը:

13.2 Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում փորձարարական կարգով աշխատանքի վրա հիմնված ուսուցման և դուալ ուսուցման համակարգի ներդրում

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման գլխավոր նպատակն է Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտի զբաղունակության բարելավումը:
Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» բաժնի Նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության բարեփոխումների 2-րդ կետից: Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է աշխատաշուկայում ՄԿՈՒ ոլորտի մրցունակ կադրերի բացակայությամբ, ժամանակակից մասնագիտական գիտելիքների և գործնական հմտությունների պակասով, «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ և 5-րդ հոդվածներով, «Սոցիալական գործընկերության» հայեցակարգով, ինչպես նաև ՀՀ սոցիալ-տնտեսական ներկայիս մակարդակով:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ անհրաժեշտություն է առաջացել մշակել ուսումնական գործընթացի կազմակերպման մոդել և ընտրված տարեկան 2 ՄԿՈՒ ուսումնական հաստատություններում տարեկան առնվազն 1 մասնագիտության գծով փորձարարական կարգով ներդնել և ընդլայնել երկակի (դուալ) ուսուցման համակարգը, ինչը հնարավորությունը կտա ուսումնական գործընթացին զուգահեռ իրականացնել գործնականի վրա հիմնված ուսուցում: Գործատուի մոտ աշխատանքի վրա հիմնված ուսուցման կազմակերպումը կնպաստի աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կադրերի մասնագիտական զարգացմանը, սովորողների մոտ համապատասխան կարողությունների և հմտությունների ձևավորմանը, գործատուների ներգրավմանը և սոցիալական գործընկերության ընդլայնմանը, շրջանավարտների՝ իրենց մասնագիտությամբ զբաղունակությանը, ՄԿՈՒ ոլորտի գրավչության բարձրացմանը, եվրոպական կրթական տարածքին ինտեգրմանը և որակավորումների փոխճանաչմանը:
Նման գործընթացը երաշխավորում է աշխատաշուկայում պահանջարկ ունեցող մասնագետների պատրաստումը բացառապես աշխատաշուկայի կողմից մասնագետներին ներկայացվող պահանջներին համապատասխան, ինչը կարևոր է նրանց մասնագիտական գործունեության, առաջխաղացման, ինչպես նաև երկրի սոցիալ-տնտեսական զարգացման համար:

1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.

ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման գործում իրենց անմիջական ազդեցությունն ունեցող կրթության ոլորտում առկա մի շարք խնդիրներ լուծելու, աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կադրերի մասնագիտական զարգացմանը, գործատուների ներգրավմանը և սոցիալական գործընկերության ընդլայնմանը, եվրոպական կրթական տարածքին ինտեգրմանը և որակավորումների փոխճանաչմանը նպաստելու նպատակով՝ ՆՄՄԿ համակարգի զարգացման ընթացքում գերակա միտում ունի մասնագիտական կրթության համակարգում աշխատանքի վրա հիմնված կրթական համակարգի տարրերի ներդրման և կիրառման հնարավորությունների ընդլայնումը, ինչը թույլ կտա մի կողմից գործատուներին ներգրավված լինել կրթական գործընթացներում, ուսումնական հաստատությունների հետ համատեղ մասնակցել նորարարական նախագծերին, բարելավել սեփական տեխնոլոգիաներն ու արտադրանքը, իսկ մյուս կողմից կնպաստի սովորողների մոտ տեսական և գործնական համապատասխան կարողությունների և հմտությունների ձևավորմանը, զբաղվածության խթանմանը:
2017-2018թթ. ՆՄՄԿՆՄՄԿ 15 ուսումնական հաստատությունում 11 մասնագիտությունների գծով ներդրվել է երկակի ուսուցման համակարգ:
Երկակի (դուալ) ուսուցման համակարգի ընդլայնումը՝ որպես համակարգի զարգացման, շրջանավարտների զբաղվածության ապահովման, գործատուների ներգրավման կարևորագույն նախադրյալ, հանդիսանում է ոլորտի գերակա ուղղություններից, որի զարգացման փուլում առանցքային գործոններ են կազմակերպությունների ներկայացուցիչների ներգրավումն ուսուցման գործընթացին և վարպետային ուսուցման զարգացումը: Միջոցառումը կապահովի ՆՄՄԿ համակարգի զարգացման համար ձեռներեցության, պետության և ուսումնական հաստատությունների ռեսուրսների միավորմանը և կնպաստի որակյալ կադրերի պատրաստման համար առկա ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացմանը:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Պետության, ՀՀ մարզերի զարգացման համար առաջնահերթ և կարևորություն ներկայացնող մասնագիտությունների և դրանց գծով ուսուցում իրականացնող ՆՄՄԿ ուսումնական հաստատությունների ընտրություն, որոնցում փորձարարական երկակի ուսուցման համակարգի (դուալ) ուսումնամեթոդական փաստաթղթերի փաթեթ մշակող աշխատանքային խմբերի ձևավորում, տվյալ ոլորտում ուսումնական հաստատություն-մասնավոր հատվածի հիմքերի ստեղծում, աշխատանքային խմբերի կողմից մշակված կրթական ծրագրերի, ուսումնական պլանների, պրակտիկաների կազմակերպման նոր մեխանիզմների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում ԿԳՄՍ նախարարի հաստատմանը, ընտրված ՆՄՄԿՈՒ ուսումնական հաստատություններում ընտրված մասնագիտությունների գծով փորձարարական կարգով երկակի (դուալ) ուսուցման համակարգի ներդրում, աշխատաշուկայում պահանջարկ ունեցող մասնագետների պատրաստում բացառապես աշխատաշուկայի կողմից մասնագետներին ներկայացվող պահանջներին համապատասխան:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը:
Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական 2 հաստատությունում ներդրված է տարեկան 1 նոր մասնագիտության գծով փորձարարական կարգով աշխատանքի վրա հիմնված և դուալ ուսուցման համակարգ:

13.3 «Կրթության մասին», «ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» օրենքներում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման գլխավոր նպատակն է Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտի զբաղունակության բարելավումը:
Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» բաժնի Նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության բարեփոխումների 2-րդ կետից: Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է աշխատաշուկայում ՄԿՈ ոլորտի մրցունակ կադրերի բացակայությամբ, ժամանակակից մասնագիտական գիտելիքների և գործնական հմտությունների պակասով, «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ և 5-րդ հոդվածներով, «Սոցիալական գործընկերության» հայեցակարգով, ինչպես նաև ՀՀ սոցիալ-տնտեսական ներկայիս մակարդակով:
Հաշվի առնելով վերոնշյալը՝ անհրաժեշտություն է առաջացել մշակել ուսումնական գործընթացի կազմակերպման մոդել և ընտրված ՄԿՈՒ ուսումնական հաստատություններում փորձարարական կարգով ներդնել և ընդլայնել երկակի (դուալ) ուսուցման համակարգը, ինչը հնարավորությունը կտա ուսումնական գործընթացին զուգահեռ իրականացնել գործնականի վրա հիմնված ուսուցում: Գործատուի մոտ աշխատանքի վրա հիմնված ուսուցման կազմակերպումը կնպաստի աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կադրերի մասնագիտական զարգացմանը, սովորողների մոտ համապատասխան կարողությունների և հմտությունների ձևավորմանը, գործատուների ներգրավմանը և սոցիալական գործընկերության ընդլայնմանը, շրջանավարտների՝ իրենց մասնագիտությամբ զբաղունակությանը, ՄԿՈՒ ոլորտի գրավչության բարձրացմանը, եվրոպական կրթական տարածքին ինտեգրմանը և որակավորումների փոխճանաչմանը:
Նման գործընթացը երաշխավորում է աշխատաշուկայում պահանջարկ ունեցող մասնագետների պատրաստումը բացառապես աշխատաշուկայի կողմից մասնագետներին ներկայացվող պահանջներին համապատասխան, ինչը կարևոր է նրանց մասնագիտական գործունեության, առաջխաղացման, ինչպես նաև երկրի սոցիալ-տնտեսական զարգացման համար:
Միևնույն ժամանակ վերոնշյալի լիարժեքիրականացումը պայմանավորված է համապատասխան օրենսդրական և իրավական դաշտի առկայությամբ, սակայն գործող օրենսրդությունը չի պարունակում անհրաժեշտ կարգավորումներ, ինչն էլ իր հերթին առաջացրել է անհրաժեշտություն տվյալ միջոցառման իրականացման:

1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.

ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման գործում իրենց անմիջական ազդեցությունն ունեցող կրթության ոլորտում առկա մի շարք խնդիրներ լուծելու, աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կադրերի մասնագիտական զարգացմանը, գործատուների ներգրավմանը և սոցիալական գործընկերության ընդլայնմանը, եվրոպական կրթական տարածքին ինտեգրմանը և որակավորումների փոխճանաչմանը նպաստելու նպատակով՝ ՆՄՄԿ համակարգի զարգացման ընթացքում գերակա միտում ունի մասնագիտական կրթության համակարգում աշխատանքի վրա հիմնված կրթական համակարգի տարրերի ներդրման և կիրառման հնարավորությունների ընդլայնումը, ինչը թույլ կտա մի կողմից գործատուներին ներգրավված լինել կրթական գործընթացներում, ուսումնական հաստատությունների հետ համատեղ մասնակցել նորարարական նախագծերին, բարելավել սեփական տեխնոլոգիաներն ու արտադրանքը, իսկ մյուս կողմից կնպաստի սովորողների մոտ տեսական և գործնական համապատասխան կարողությունների և հմտությունների ձևավորմանը, զբաղվածության խթանմանը:
2017-2018թթ. ՆՄՄԿ 15 ուսումնական հաստատությունում 11 մասնագիտությունների գծով ներդրվել է երկակի ուսուցման համակարգ:
Երկակի (դուալ) ուսուցման համակարգի ընդլայնումը՝ որպես համակարգի զարգացման, շրջանավարտների զբաղվածության ապահովման, գործատուների ներգրավման կարևորագույն նախադրյալ, հանդիսանում է ոլորտի գերակա ուղղություններից, որի զարգացման փուլում առանցքային գործոններ են կազմակերպությունների ներկայացուցիչների ներգրավումն ուսուցման գործընթացին և վարպետային ուսուցման զարգացումը: Միջոցառումը կապահովի ՆՄՄԿ համակարգի զարգացման համար ձեռներեցության, պետության և ուսումնական հաստատությունների ռեսուրսների միավորմանը և կնպաստի որակյալ կադրերի պատրաստման համար առկա ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացմանը:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

	Աշխատանքի վրա հիմնված և դուալ ուսուցման համակարգի ներդրման, ողջ ՆՄՄԿ համակարգում տարածման նպատակով՝ «Կրթության մասին», «ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» օրենքներում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում, ներկայացնելով առաջարկություններ այլ հարակից օրենքներում կամ իրավական ակտերում անհրաժեշտ փոփոխությունների և լրացումների վերաբերյալ: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը: Միջոցառման իրականացման արդյունքում կլուծվեն ՀՀ կրթության ոլորտում առկա մի շարք խնդիրներ, որոնք իրենց անմիջական ազդեցությունն են ունենում ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման գործում, ինչը կնպաստի աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կադրերի մասնագիտական զարգացմանը, սովորողների մոտ համապատասխան կարողությունների և հմտությունների ձևավորմանը, գործատուների ներգրավմանը և սոցիալական գործընկերության ընդլայնմանը, եվրոպական կրթական տարածքին ինտեգրմանը և որակավորումների փոխճանաչմանը: Աշխատանքի վրա հիմնված և դուալ ուսուցման օրենսդրական և իրավական հիմքերի ապահովման նպատակով մշակվել և ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ«Կրթության մասին», «ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» օրենքներում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Ստեղծվել են անհրաժեշտ օրենսդրական հիմքեր՝ աշխատանքի վրա հիմնված և դուալ ուսուցման ողջ նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության համակարգում ներդրման և հետագայում տարածման նպատակով:
14	14.1 Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն իրականացնող հաստատությունների վարչական, կառավարման խորհուրդների անդամների, տարբեր աշխատանքային խմբերում ներգրավված ճյուղային և ոլորտային միությունների ներկայացուցիչների, մանկավարժական անձնակազմի վերապատրաստում 1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակն է ՆՄՄԿ հաստատությունների մարդկային ռեսուրսների հզորացումը: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» բաժնի Նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության բարեփոխումների 4-րդ կետից, «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ կետից: Ժամանակակից տնտեսության պայմաններում մարդկային ռեսուրսների զարգացումը մշտական գործընթաց է՝ պայմանավորված գործարար միջավայրով և բազմաթիվ փոփոխություններով: ՆՄՄԿ ոլորտի դասավանդողների և դասընթացավարների որակավորման պահանջներն աստիճանաբար աճում են, և դեռևս շատ անելիքներ կան մասնագիտական կարողությունների զարգացման ուղղությամբ: Նոր մշակված պետական կրթական չափորոշիչների պահանջները, փոփոխվող աշխատաշուկայի պահանջներին արագ արձագանքելու, նոր տեխնոլոգիաների, գիտության և տնտեսության զարգացման արդյունքում նոր մոտեցումների ի հայտ գալը ընդգծում են վերապատրաստումների անհրաժեշտությունը: Բացի այդ՝ ուսուցման կամ վերապատրաստման անհրաժեշտություն առաջանում է ոչ միայն ընթացիկ գործընթացների կատարելագործման և կիրառման, այլև նոր համակարգերի ներդրման դեպքում: Ուստի վերապատրաստումը շարունակում է մնալ որպես առանցքային գերակայություն: 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները. ՆՄՄԿ ոլորտում իրականացվող բարեփոխումների գերակա ուղղություններից է վերապատրաստումների միջոցով մարդկային ռեսուրսների հզորացումը: Այս ուղղությամբ յուրաքանչյուր տարի իրականացվել են ՆՄՄԿ վարչական, մանկավարժական կազմի և ՄԿՈՒ հաստատությունների կառավարման խորհուրդների անդամների վերապատրաստումներ. վերջին երեք տարիների ընթացքում ՆՄՄԿ համակարգի աշխատողների և այդ համակարգի աշխատանքներում ներգրավված այլ համակազմերի անձանց համար իրականացվել են վերապատրաստումներ, որոնց ընթացքում վերապատրաստվել է շուրջ 3000 անձ: Սակայն դեռևս շատ անելիքներ կան մասնագիտական կարողությունների զարգացման ուղղությամբ: Նոր մշակված պետական կրթական չափորոշիչների պահանջները, փոփոխվող աշխատաշուկայի պահանջներին արագ արձագանքելը, նոր համակարգերի ներդրումը առաջնային են դարձնում վերապատրաստումների իրականացումը: Վերապատրաստումների ընթացքում որակյալ և առաջատար մասնագետների հետ շփումը, ակտուալ նյութերի տրամադրումն ու ոլորտի զարգացումներին ծանոթացնելը օգնում են դասախոսական կազմին տիրապետել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներին, ծանոթանալ ոլորտի նորարարություններին, իսկ

	վերապատրաստումներից հետո հետադարձ կապի, դասերի դիտարկումների անցկացումը, մանկավարժական անձնակազմի միջև համագործակցային աշխատաոճի սերմանումը նպաստում է կրթական գործընթացի բարելավմանը, արդիականացմանը: 1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Վարչական, կառավարման խորհուրդների անդամների, տարբեր աշխատանքային խմբերում ներգրավված ճյուղային և ոլորտային միությունների ներկայացուցիչների, մանկավաժական անձնակազմի մասնագիտական կարիքների նախնական բացահայտում, գործատուների, առաջատար բուհերի և ոլորտի այլ շահառուների հետ համագործակցելով՝ ՆՄՄԿ ուսումնական հաստատությունների դասավանդողների համար մասնագիտական և մանկավարժական վերապատրաստման ծրագրերի մշակում, դրանց հիման վրա ուսումնական հաստատությունների դասավանդողների և ուսուցման վարպետների մասնագիտական կարողությունների հզորացման նպատակով՝ վերապատրաստումների կազմակերպում, ինչը կապահովի դասավանդողների շարունակական մասնագիտական զարգացումը և կհանդիսանա նրանց խրախուսման և շահադրդման համակարգի ստեղծման նախապայման: Գործընթացը շարունակական է և նախատեսվում է իրականացնել ՀՀ պետական բյուջեի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) բարեփոխումներ» միջոցառման շրջանակում: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության համակարգի 2021-2022թթ. շուրջ 800 վարչական աշխատողներ, կառավարման խորհուրդների անդամներ, տարբեր աշխատանքային խմբերում ներգրավված ճյուղային և ոլորտային միությունների ներկայացուցիչներ, մանկավաժական անձնակազմը վերապատրաստված են և ձեռք են բերել իրենց առջև դրված խնդիրների լուծման համար անհրաժեշտ հմտություններ: Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության համակարգի տարեկան շուրջ 60 վարչական աշխատողներ, կառավարման խորհուրդների անդամներ, տարբեր աշխատանքային խմբերում ներգրավված ճյուղային և ոլորտային միությունների ներկայացուցիչներ, վերապատրաստված են և ձեռք են բերել իրենց առջև դրված խնդիրների լուծման համար անհրաժեշտ հմտություններ:
	14.2 «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն իրականացնող հաստատությունների մանկավարժական կազմի ատեստավորման, վերապատրաստման կարգերը հաստատելու մասին» ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանի ընդունում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակն է ՆՄՄԿ հաստատությունների մարդկային ռեսուրսների հզորացումը: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» բաժնի Նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության բարեփոխումների 4-րդ կետից: Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է «ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասով: Ժամանակակից աշխարհում ուսուցումը զարգացող հմտություն է, ուստի մանկավարժը պետք է շարունակի սովորել անընդհատ փոփոխվող գիտության, տնտեսության և հասարակության մեջ, ինչը պետությունից պահանջում է կարևորել և ներդրումներ կատարել մանկավարժական անձնակազմի մասնագիտական զարգացման մեջ: Հայաստանի Հանրապետության նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության ոլորտում մանկավարժական կազմի ատեստավորման համակարգերի ներդրումը կնպաստի առկա որակյալ մանկավարժների բացահայտմանը, խրախուսմանը, երիտասարդ և մոտիվացված մասնագետների՝ ՆՄՄԿ ուսումնական հաստատություն մուտքի ապահովմանը՝ առաջարկելով նրանց մրցակցային աշխատավարձ: 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները. Վերջին տարիների ընթացքում էականորեն փոխվել են ինչպես գիտությունները, գնահատման եղանակները, այնպես էլ տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաները, որոնց միջոցով իրականացվում է ուսուցման գործընթացը նոր մեթոդներով և ռազմավարություններով: Կորոնավիրուսի համաճարակը ցույց տվեց հեռավար դասերի և ուսուցման հիբրիդ ռազմավարությունների իմացության կարևորությունը, ՏՀՏ գործիքների կիրառման նոր մեթոդների անհրաժեշտությունը: Ներկայիս համակարգը չի արտացոլում մանկավարժների որակական հատկանիշները և հիմնված չէ արդյունքի գնահատման վրա: Չկա մասնագիտական ոչ բավարար գիտելիքների, հմտությունների պատճառով աշխատանքից ազատված մանկավարժի գեթ մեկ դեպք: Միևնույն ժամանակ մանկավարժների ցածր աշխատավարձը խոչընդոտում է նոր մանկավարժների համակարգ մուտք գործելուն:

1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները
Գործում է ատեստավորման համակարգ, ինչը կնպաստի մանկավարժների մասնագիտական որակների զարգացմանը, ուսուցման գործընթացում ՏՀՏ նպատակային կիարռմանը, սովորողների մոտ կարողունակությունների զարգացմանը, մրցակցային աշխատավարձի ձևավորմանը:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը
Առկա են նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն իրականացնող հաստատությունների մանկավարժական կազմի ատեստավորման, վերապատրաստման համար անհրաժեշտ մեխանիզմներ, որոնք կնպաստեն նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն իրականացնող հաստատությունների մանկավարժական կազմի զարգացման և ատեստավորման համակարգերի ներդրմանը՝ փոխկապակցելով վարձատրության մեխանիզմների հետ:

14.3 ՆՄՄԿ հաստատությունների մանկավարժական կազմի ատեստավորում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը
Միջոցառման գլխավոր նպատակն է ՆՄՄԿ հաստատությունների մարդկային ռեսուրսների հզորացումը:
Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» բաժնի Նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության բարեփոխումների 4-րդ կետից: Ժամանակակից աշխարհում ուսուցումը զարգացող հմտություն է, ուստի մանկավարժը պետք է շարունակի սովորել անընդհատ փոփոխվող գիտության, տնտեսության և հասարակության մեջ, ինչը պետությունից պահանջում է կարևորել և ներդրումներ կատարել մանկավարժական անձնակազմի մասնագիտական զարգացման մեջ:
Հայաստանի Հանրապետության նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության ոլորտում մանկավարժական կազմի ատեստավորման համակարգերի ներդրումը կնպաստի առկա որակյալ մանկավարժների բացահայտմանը, խրախուսմանը, երիտասարդ և մոտիվացված մասնագետների՝ ՆՄՄԿ ուսումնական հաստատություն մուտքի ապահովմանը՝ առաջարկելով նրանց մրցակցային աշխատավարձ:

1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.
Վերջին տարիների ընթացքում էականորեն փոխվել են ինչպես գիտությունները, գնահատման եղանակները, այնպես էլ տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաները, որոնց միջոցով իրականացվում է ուսուցման գործընթացը նոր մեթոդներով և ռազմավարություններով: Կորոնավիրուսի համաճարակը ցույց տվեց հեռավար դասերի և ուսուցման հիբրիդ ռազմավարությունների իմացության կարևորությունը, ՏՀՏ գործիքների կիրառման նոր մեթոդների անհրաժեշտությունը:
Ներկայիս համակարգը չի արտացոլում մանկավարժների որակական հատկանիշները և հիմնված չէ արդյունքի գնահատման վրա: Չկա մասնագիտական ոչ բավարար գիտելիքների, հմտությունների պատճառով աշխատանքից ազատված մանկավարժի գեթ մեկ դեպք: Միևնույն ժամանակ մանկավարժների ցածր աշխատավարձը խոչընդոտում է նոր մանկավարժների համակարգ մուտք գործելուն:

1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները
Գործում է ատեստավորման համակարգ, ինչը կնպաստի մանկավարժների մասնագիտական որակների զարգացմանը, ուսուցման գործընթացում ՏՀՏ նպատակային կիարռմանը, սովորողների մոտ կարողունակությունների զարգացմանը, մրցակցային աշխատավարձի ձևավորմանը:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը
ՆՄՄԿ հաստատությունների մանկավարժական կազմը համապատասխանում է որակավորման սահմանված պահանջներին:

14.4 «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն իրականացնող հաստատությունների մանկավարժական կազմի որակավորման տարակարգերի շնորհման կարգը հաստատելու մասին» ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանի ընդունում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը
Միջոցառման գլխավոր նպատակն է ՆՄՄԿ հաստատությունների մարդկային ռեսուրսների հզորացումը:
Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» բաժնի Նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության բարեփոխումների 4-րդ կետից: Միջոցառման իրականացման

անհրաժեշտությունը պայմանավորված է «ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով:
Ժամանակակից աշխարհում ուսուցումը զարգացող հմտություն է, ուստի մանկավարժը պետք է շարունակի սովորել անընդհատ փոփոխվող գիտության, տնտեսության և հասարակության մեջ, ինչը պետությունից պահանջում է կարևորել և ներդրումներ կատարել մանկավարժական անձնակազմի մասնագիտական զարգացման մեջ:
Հայաստանի Հանրապետության նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության ոլորտում մանկավարժական կազմի ատեստավորման համակարգերի ներդրումը կնպաստի առկա որակյալ մանկավարժների բացահայտմանը, խրախուսմանը, երիտասարդ և մոտիվացված մասնագետների՝ ՆՄՄԿ ուսումնական հաստատություն մուտքի ապահովմանը՝ առաջարկելով նրանց մրցակցային աշխատավարձ:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.
Վերջին տարիների ընթացքում էականորեն փոխվել են ինչպես գիտությունները, գնահատման եղանակները, այնպես էլ տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաները, որոնց միջոցով իրականացվում է ուսուցման գործընթացը նոր մեթոդներով և ռազմավարություններով: Կորոնավիրուսի համաճարակը ցույց տվեց հեռավար դասերի և ուսուցման հիբրիդ ռազմավարությունների իմացության կարևորությունը, ՏՀՏ գործիքների կիրառման նոր մեթոդների անհրաժեշտությունը:
Ներկայիս համակարգը չի արտացոլում մանկավարժների որակական հատկանիշները և հիմնված չէ արդյունքի գնահատման վրա: Չկա մասնագիտական ոչ բավարար գիտելիքների, հմտությունների պատճառով աշխատանքից ազատված մանկավարժի գեթ մեկ դեպք: Միևնույն ժամանակ մանկավարժների ցածր աշխատավարձը խոչընդոտում է նոր մանկավարժների համակարգ մուտք գործելուն:

1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները
Գործում է ատեստավորման համակարգ, ինչը կնպաստի մանկավարժների մասնագիտական որակների զարգացմանը, ուսուցման գործընթացում ՏՀՏ նպատակային կիարռմանը, սովորողների մոտ կարողունակությունների զարգացմանը, մրցակցային աշխատավարձի ձևավորմանը:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը
Առկա են նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն իրականացնող հաստատությունների մանկավարժական կազմի տարակարգի շնորհման անհրաժեշտ մեխանիզմներ, որոնք կնպաստեն նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն իրականացնող հաստատությունների մանկավարժական կազմի զարգացման և ատեստավորման համակարգերի ներդրմանը՝ փոխկապակցելով վարձատրության մեխանիզմների հետ: ՆՄՄԿ հաստատություններում ստեղծված է մանկավարժների մասնագիտական առաջխաղացման մեխանիզմ՝ փոխկապակցված աշխատանքի վարձատրության հետ:

14.5 Օտար լեզուներ դասավանդող մանկավարժական կազմի կարողությունների հզորացում, կատարելագործում, ուսումնական նյութերի արդիականացում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը
Միջոցառման գլխավոր նպատակն է ՆՄՄԿ հաստատությունների մարդկային ռեսուրսների հզորացումը:
Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» բաժնի Նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության բարեփոխումների 4-րդ կետից:
Լեզուների իմացությունը մեծ դեր ունի միջմշակութային հաղորդակցությունը և համագործակցությունը զարգացնելու և ամրապնդելու առումով: Ժամանակակից հասարակություններին բնորոշ է միջպետական հարաբերությունների ընդլայնումը, առևտրատնտեսական կապերի խորացումը, գիտության և տեխնիկայի առաջընթացը և գիտատեխնիկական տեղեկատվության պարբերական փոխանակումը: Այս տեսանկյունից ավելի մեծ կարևորություն է ստանում օտար լեզուների դերը՝ որպես աշխարհում գիտատեխնիկական առաջընթացի, սոցիալ-տնտեսական զարգացումների և միջմշակութային հարաբերությունների, ինչպես նաև տարբեր մշակույթների ներկայացուցիչների շփման, հաղորդակցման գործուն միջոց:
Օտար լեզուների տիրապետումը կարևոր է նաև տարբեր մասնագետների համար՝ իրենց մասնագիտության մեջ միջազգային զարգացումներին հետևելու, այլալեզու գործընկերների հետ շփումների, միջազգային հարթակներում սեփական փորձը և ձեռքբերումները ներկայացնելու, այլոց փորձին ծանոթանալու և այլ նկատառումներով: Համակարգի գերակա խնդիրներից է մեր երկրում բազմալեզվության զարգացման խթանումը՝ պահպանելով մայրենի լեզուն:

	1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները. Կրթական բարեփոխումներից հետո ՆՄՄԿ ուսումնական հաստատություններում օտար լեզուների դասավանդման ասպարեզում որակական լուրջ տեղաշարժեր են կատարվել, որոնք դեռևս բավարար չեն: 21-րդ դարը, որպես միջազգային, միջմշակութային հաղորդակցությունների և տեղեկատվության ակտիվ փոխանակման դար, նոր մարտահրավերներ է առաջացնում ազգերի և պետությունների համար և այդ համատեքստում, առաջնային է լեզվական պատնեշների հաղթահարումը: Ակնհայտ է, որ նոր ժամանակների պահանջները բավարարելու համար օտար լեզուների դասավանդման նկատմամբ վերաբերմունքի արմատական փոփոխությունն անհրաժեշտություն է: Ուստի ժամանակի պահանջներից հետ չմնալու, ինչպես նաև կրթական ընդհանուր գործընթացը բարելավելու համար այսօր անհետաձգելի անհրաժեշտություն է խրախուսել հասարակության յուրաքանչյուր անդամի, հատկապես երիտասարդությանը սովորելու և կիրառելու տարածաշրջանային և միջազգային հաղորդակցում ապահովող օտար լեզուներ, որոնք կարող են իրենց նպաստը բերել ինչպես անձի ձևավորման ու զարգացման, այնպես էլ հասարակության առաջընթացի գործում: Համակարգի գերակա խնդիրներից է մեր երկրում բազմալեզվության զարգացման խթանումը՝ պահպանելով մայրենի լեզուն: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Օտար լեզուների դասավանդման նկատմամբ վերաբերմունքի արմատական փոփոխություն, մասնագետների վերապատրաստում, ուսումնական նյութերի մշակում, ինչը կնպաստի անձի ձևավորմանն ու զարգացմանը, կրթական ընդհանուր գործընթացի բարելավմանը, հասարակության առաջընթացին, իրենց մասնագիտության մեջ միջազգային զարգացումներին հետևելուն, այլալեզու գործընկերների հետ շփումներին, շրջանավարտների զբաղունակությանը, միջազգային հարթակներում սեփական փորձը և ձեռքբերումները ներկայացնելուն: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը: Միջոցառման իրականացման արդյունքում յուրաքանչյուր տարի կիրականացվի ՆՄՄԿ ուսումնական հաստատություններից օտար լեզվի 100 դասավանդողների վերապատրաստում, 1-2 ուսումնական ձեռնարկի մշակում և տպագրում:
15	15.1 Ըստ առաջնահերթության՝ վերակառուցման և վերանորոգման ենթակա ՆՄՄԿ ուսումնական հաստատությունների քարտեզագրում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակն է ՆՄՄԿ գրավչության, մատչելիության, բարձրացում, ներառականության ապահովումը: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» բաժնի Նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության բարեփոխումների 5-րդ կետից, «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետից: Վերջին տարիներին ՆՄՄԿ ուսումնական հաստատությունների վերակառուցման, վերանորոգման ուղղությամբ էական փոփոխություններ չեն կատարվել: Ուսումնական հաստատությունների ակնհայտ անմխիթար վիճակը հանգեցնում է տնտեսության պահանջների անհամապատասխանության, որն իր հերթին վտանգում է կրթության որակի և արդյունավետության ապահովումը: Համապատասխան կրթական միջավայրի ստեղծումը կնպաստի համակարգի շարունակական զարգացմանը, ՆՄՄԿ ոլորտում մասնագիտական կրթության և ուսուցման արդիականացմանը, մասնավորապես, մասնագիտական ներուժի կարողությունների հզորացմանը, մասնագիտական կրթության և ուսուցման հեղինակության և վարկանիշի բարձրացմանը: 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները. Վերջին տարիների ընթացքում քայքայվել է կրթության համակարգի շենքային հիմքը: Հարկ է նշել, որ ՆՄՄԿ ուսումնական հաստատությունների շենքերը վերջին 15-20 տարիներին, հիմնականում ֆինանսական միջոցների բացակայության պատճառով, չեն վերանորոգվել կամ վերականգնվել՝ դառնալով վթարային, չապահովելով համապատասխան կրթական միջավայր: Դրանց մի մասը վերջին տարիներին վերականգնվել է պետական բյուջեի և միջազգային կազմակերպությունների միջոցներով: Սակայն ՆՄՄԿ շատ կրթօջախներ չունեն շենքային բավարար պայմաններ, մասնավորապես, հրատապ է տանիքների, կոյուղագծերի և սանհանգույցների նորոգումը: Ուսումնական հաստատությունների ակնհայտ անմխիթար վիճակը հանգեցնում է տնտեսության պահանջների անհամապատասխանության, որն իր հերթին վտանգում է կրթության որակի և արդյունավետության ապահովումը: Ելնելով վերոգրյալից՝ առաջնային խնդիր է դառնում ապահով և անվտանգ միջավայրի ստեղծումը,

մասնավորապես, ըստ գնահատված կարիքների՝ շենքերի հիմնանորոգումը, սեյսմակայունացումը՝ հաշվի առնելով կրթության նորացող մեթոդաբանությունը, անվտանգության և համընդհանուր մատչելիության չափանիշները:
Միևնույն ժամանակ ներկայումս բոլոր առանցքային փաստաթղթերում գյուղատնտեսության ոլորտի զարգացումը սահմանված է որպես Հայաստանի Հանրապետության հետագա արգացման գերակա ոլորտ: Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության զարգացման ներկայիս փուլում առանձնակի է կարևորվում գյուղատնտեսական արտադրության հմտություններին և ագրարային ոլորտում կիրառվող արդիական տեխնոլոգիաներին տիրապետող մասնագետների պատրաստումը, վերջինիս գործընթացում միջազգային լավագույն փորձի օգտագործումը և մեր հանրապետության գյուղատնտեսության առանձնահատկությունները հաշվիառնելով՝ դրա տեղայնացումը: ՀՀ գյուղատնտեսության ոլորտի ներկայիս ցածր մակարդակը պայմանավորված է հիմնականում համապատասխան կադրերի բացակայությամբ, գյուղացիական տնտեսվարողների մոտ ժամանակակից մասնագիտական գիտելիքների և գործնական հմտությունների պակասով: Իսկ գյուղատնտեսության վարման համար բնակլիմայական ոչ նպաստավոր պայմաններում էլ ավելի է կարևորվում գյուղատնտեսության վարման կիրառական գիտելիքների, գործնական հմտությունների ձեռքբերման և արտադրության մեջ ժամանակակից տեխնոլոգիական միջոցների արդյունավետ ներդրման անհրաժեշտությունը:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները
Ուսումնասիրել ՀՀ ՆՄՄԿ ուսումնական հաստատությունների առկա վիճակը, կատարել համապատասխան գնահատում, արդյունքում քարտեզագրել ըստ առաջնահերթության վերանորոգման և վերակառուցման ենթակա հաստատությունների ցանկը:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը
Միջոցառման իրականացման արդյունքում կսահմանվեն ՆՄՄԿ հաստատությունների վերակառուցման, վերանորոգման առաջնահերթությունների ցանկը:

15.2 Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն իրականացնող հաստատությունների շենքային պայմանների բարելավում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը
Միջոցառման գլխավոր նպատակն է ՆՄՄԿ գրավչության, մատչելիության, բարձրացում, ներառականության ապահովումը:
Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» բաժնի Նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության բարեփոխումների 5-րդ կետից, “Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին” ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետից:
Վերջին տարիներին ՆՄՄԿ ուսումնական հաստատությունների վերակառուցման, վերանորոգման ուղղությամբ էական փոփոխություններ չեն կատարվել: Ուսումնական հաստատությունների ակնհայտ անմխիթար վիճակը հանգեցնում է տնտեսության պահանջների անհամապատասխանության, որն իր հերթին վտանգում է կրթության որակի և արդյունավետության ապահովումը: Համապատասխան կրթական միջավայրի ստեղծումը կնպաստի համակարգի շարունակական զարգացմանը, ՆՄՄԿ ոլորտում մասնագիտական կրթության և ուսուցման արդիականացմանը, մասնավորապես, մասնագիտական ներուժի կարողությունների հզորացմանը, մասնագիտական կրթության և ուսուցման հեղինակության և վարկանիշի բարձրացմանը:
Միևնույն ժամանակ ներկայումս բոլոր առանցքային փաստաթղթերում գյուղատնտեսության ոլորտի զարգացումը սահմանված է որպես Հայաստանի Հանրապետության հետագա տնտեսական զարգացման գերակա ոլորտ: Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության զարգացման ներկայիս փուլում առանձնակի է կարևորվում գյուղատնտեսական արտադրության հմտություններին և ագրարային ոլորտում կիրառվող արդիական տեխնոլոգիաներին տիրապետող մասնագետների պատրաստումը, վերջինիս գործընթացում միջազգային լավագույն փորձի օգտագործումը և մեր հանրապետության գյուղատնտեսության առանձնահատկությունները հաշվի առնելով դրա տեղայնացումը:
ՀՀ գյուղատնտեսության ոլորտի ներկայիս ցածր մակարդակը պայմանավորված է հիմնականում համապատասխան կադրերի բացակայությամբ, գյուղացիական տնտեսվարողների ժամանակակից մասնագիտական գիտելիքների և գործնական հմտությունների պակասով: Իսկ գյուղատնտեսության վարման համար բնակլիմայական ոչ նպաստավոր պայմաններում էլ ավելի է կարևորվում գյուղատնտեսության վարման կիրառական գիտելիքների, գործնական հմտությունների ձեռքբերման և արտադրության մեջ ժամանակակից տեխնոլոգիական միջոցների արդյունավետ ներդրման անհրաժեշտությունը:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.

	Վերջին տարիների ընթացքում քայքայվել է կրթության համակարգի շենքային հիմքը: Հարկ է նշել, որ ՆՄՄԿ ուսումնական հաստատությունների շենքերը վերջին 15-20 տարիներին, հիմնականում ֆինանսական միջոցների բացակայության պատճառով, չեն վերանորոգվել կամ վերականգնվել՝ դառնալով վթարային, չապահովելով համապատասխան կրթական միջավայր: Դրանց մի մասը վերջին տարիներին վերականգնվել է պետական բյուջեի և միջազգային կազմակերպությունների միջոցներով: Սակայն ՆՄՄԿ շատ կրթօջախներ չունեն շենքային բավարար պայմաններ, մասնավորապես, հրատապ է տանիքների, կոյուղագծերի և սանհանգույցների նորոգումը: Ուսումնական հաստատությունների ակնհայտ անմխիթար վիճակը հանգեցնում է տնտեսության պահանջների անհամապատասխանության, որն իր հերթին վտանգում է կրթության որակի և արդյունավետության ապահովումը: Ելնելով վերոգրյալից՝ առաջնային խնդիր է դառնում ապահով և անվտանգ միջավայրի ստեղծումը, մասնավորապես, ըստ գնահատված կարիքների՝ շենքերի հիմնանորոգումը, սեյսմակայունացումը՝ հաշվի առնելով կրթության նորացող մեթոդաբանությունը, անվտանգության և համընդհանուր մատչելիության չափանիշները: Միևնույն ժամանակ ներկայումս բոլոր առանցքային փաստաթղթերում գյուղատնտեսության ոլորտի զարգացումը սահմանված է որպես Հայաստանի Հանրապետության հետագա արգացման գերակա ոլորտ: Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության զարգացման ներկայիս փուլում առանձնակի է կարևորվում գյուղատնտեսական արտադրության հմտություններին և ագրարային ոլորտում կիրառվող արդիական տեխնոլոգիաներին տիրապետող մասնագետների պատրաստումը, վերջինիս գործընթացում միջազգային լավագույն փորձի օգտագործումը և մեր հանրապետության գյուղատնտեսության առանձնահատկությունները հաշվի առնելով դրա տեղայնացումը: ՀՀ գյուղատնտեսության ոլորտի ներկայիս ցածր մակարդակը պայմանավորված է հիմնականում համապատասխան կադրերի բացակայությամբ, գյուղացիական տնտեսվարողների մոտ ժամանակակից մասնագիտական գիտելիքների և գործնական հմտությունների պակասով: Իսկ գյուղատնտեսության վարման համար բնակլիմայական ոչ նպաստավոր պայմաններում էլ ավելի է կարևորվում գյուղատնտեսության վարման կիրառական գիտելիքների, գործնական հմտությունների ձեռքբերման և արտադրության մեջ ժամանակակից տեխնոլոգիական միջոցների արդյունավետ ներդրման անհրաժեշտությունը: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Համապատասխան կրթական միջավայրի ստեղծումը կնպաստի համակարգի շարունակական զարգացմանը, մասնագիտական կրթության և ուսուցման արդիականացմանը, մասնավորապես, աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագիտական ներուժի կարողությունների հզորացմանը, հաշմանդամություն ունեցող անձանց համար լիարժեք ֆիզիկական մատչելիության, շրջանավարտների զբաղվածության ապահովմանը, մասնագիտական կրթության և ուսուցման հեղինակության, որակի և վարկանիշի բարձրացմանը: Կրթական հաստատությունների միավորում մեկ կենտրոնում և նրանց ինտենսիվ համագործակցության հնարավորության ապահովում, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Վանաձորի մասնաճյուղի, Ստեփանավանի՝ պրոֆեսոր Ա. Քալանթարի անվան, Գավառի ակադ. Ս. Թամամշևի անվան պետական և Վանաձորի պետական գլուղատնտեսական քոլեջների վերանորոգում և վերազինում, Ապարան համայնքի տարածքում նոր ստեղծվող ուսումնական հաստատություն: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը «Նոր Գեղիի ակադեմիկոս Գ. Աղաջանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ», «Մասիսի պետական գյուղատնտեսական քոլեջ», «Գորիսի պրոֆեսոր Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ», «Նոյեմբերյանի պետական քոլեջ», «Ստեփանավանի պրոֆեսոր Ա. Քալանթարի անվան գյուղատնտեսական քոլեջ», «Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ», «Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությունների, Հայաստանի ազգային ագրարային համալսարան հիմնադրամի Ապարանի մասնաճյուղի գյուղատնտեսական միջին մասնագիտական ծրագիր իրականացնող հաստատության վերակառուցման շինարարական աշխատանքների իրականացված են: Միջոցառման իրականացման արդյունքում վերանորոգված և վերազինված ուսումնական հաստատություններ, ինչը կնպաստի մասնագիտական բարձր գիտելիքների, բազմապրոֆիլ ենթակառուցվածքների ապահովմանը՝ մասնագիտական ուսումնական հաստատություններին որակյալ գործնական կրթություն տրամադրելու համար:
	15.3 ՆՄՄԿ ուսումնական հաստատությունների գույքով և սարքավորումներով համալրում 1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակն է ՆՄՄԿ գրավչության, մատչելիության, բարձրացում, ներառականության ապահովումը: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» բաժնի Նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության բարեփոխումների 5-րդ կետից, “Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին” ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետով:

Նյութատեխնիկական և ուսումնաարտադրական բազայի ակնհայտ ետ մնալը ժամանակակից բարձր տեխնոլոգիական արդյունաբերությունից հանգեցնում է տնտեսության պահանջների անհամապատասխանության, որն իր հերթին վտանգում է կրթության որակի, արդյունավետության, հետևաբար որակյալ մասնագիտական կադրերի պատրաստման ապահովումը:
Ուսումնական հաստատությունների համալրումը և համապատասխան գույքով ու սարքավորումներով հագեցումը կնպաստեն համակարգի շարունակական զարգացմանը, սարքավորումների և ենթակառուցվածքների արդիականացմանը, մասնագիտական ներուժի կարողությունների հզորացմանը: Այն հնարավորություն կընձեռի առավել արդյունավետ կազմակերպել մասնագիտական կրթությունը և ուսուցումը, բարելավել շրջանավարտների զբաղունակությունը, մասնագիտական հմտություններն ու կարողությունները՝ համապատասխանեցնելով դրանք աշխատաշուկայի պահանջներին, նպաստելով մասնագիտական կրթության և ուսուցման հեղինակության և վարկանիշի բարձրացմանը:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.
Հարկ է նշել, որ ՄԿՈ ուսումնական հաստատությունների շենքերը վերջին 15-20 տարիներին, հիմնականում ֆինանսական միջոցների բացակայության պատճառով, չեն վերանորոգվել կամ վերականգնվել և հետևաբար չեն հագեցվել համապատասխան սարքավորումներով, գույքով և չունեն անհրաժեշտ ենթակառուցվածք, այդ իսկ պատճառով էլ ուսումնարանները/քոլեջները չեն ապահովում համապատասխան կրթական միջավայր և կարողությունների և հմտությունների ձևավորմանը միտված որակյալ կրթություն:
Գործարար ոլորտում տեխնոլոգիաների արագ զարգացումները, նոր մասնագիտությունների ի հայտ գալը, որակյալ, աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագիտական կադրերի պատրաստումը, աշխատանքի վրա հիմնված ուսուցման կազմակերպումն ընդլայնելու, տեսականին զուգահեռ գործնական ուսուցում կազմակերպելու, կարողութենամետ նոր մոդուլային ուսումնական պլանների իրականացման անհրաժեշտությունը հրատապ են դարձնում ՆՄՄԿ ուսումնական հաստատությունների համալրման և համապատասխան գույքով և սարքավորումներով հագեցման միջոցառման իրականացումը:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները
Համապատասխան կրթական միջավայրի ստեղծումը կնպաստի համակարգի շարունակական զարգացմանը, մասնագիտական կրթության և ուսուցման արդիականացմանը, մասնավորապես, աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագիտական ներուժի կարողությունների հզորացմանը, շրջանավարտների զբաղունակության, մասնագիտական հմտությունների և կարողությունների բարելավմանը, մասնագիտական կրթության և ուսուցման հեղինակության, որակի և վարկանիշի բարձրացմանը:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը
Միջոցառման իրականացման արդյունքում 2026թ. դրությամբ ՆՄՄԿ ուսումնական հաստատությունները կհամալրվեն և կհագեցվեն համապատասխան գույքով և սարքավորումներով, ինչը կնպաստի համակարգի շարունակական զարգացմանը, սարքավորումների և ենթակառուցվածքների արդիականացմանը, մասնագիտական ներուժի կարողությունների հզորացմանը, մասնագիտական կրթության և ուսուցման առավել արդյունավետ կազմակերպմանը, շրջանավարտների զբաղունակության բարելավմանը, մասնագիտական կրթության և ուսուցման հեղինակության և վարկանիշի բարձրացմանը:

15.4 Գյուղատնտեսական ուղղվածության ՆՄՄԿ հաստատությունների ստեղծում

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը
Միջոցառման գլխավոր նպատակն է ՆՄՄԿ գրավչության, մատչելիության, բարձրացում, ներառականության ապահովումը:
Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021-2026 ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» բաժնի մասնագիտական ոլորտի պարբերությունից:
Ներկայումս բոլոր առանցքային փաստաթղթերում գյուղատնտեսության ոլորտի զարգացումը սահմանված է որպես Հայաստանի Հանրապետության հետագա տնտեսական զարգացման գերակա ոլորտ: Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության զարգացման ներկայիս փուլում առանձնակի է կարևորվում գյուղատնտեսական արտադրության հմտություններին և ագրարային ոլորտում կիրառվող արդիական տեխնոլոգիաներին տիրապետող մասնագետների պատրաստումը, վերջինիս գործընթացում միջազգային լավագույն փորձի օգտագործումը և մեր հանրապետության գյուղատնտեսության առանձնահատկությունները հաշվի առնելով՝ դրա տեղայնացումը:
ՀՀ գյուղատնտեսության ոլորտի ներկայիս ցածր մակարդակը պայմանավորված է հիմնականում համապատասխան կադրերի բացակայությամբ, գյուղացիական տնտեսվարողների ժամանակակից մասնագիտական գիտելիքների և

	գործնական հմտությունների պակասով: Իսկ գյուղատնտեսության վարման համար բնակլիմայական ոչ նպաստավոր պայմաններում էլ ավելի է կարևորվում գյուղատնտեսության վարման կիրառական գիտելիքների, գործնական հմտությունների ձեռքբերման և արտադրության մեջ ժամանակակից տեխնոլոգիական միջոցների արդյունավետ ներդրման անհրաժեշտությունը: 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները. Ներկայումս բոլոր առանցքային փաստաթղթերում գյուղատնտեսության ոլորտի զարգացումը սահմանված է որպես Հայաստանի Հանրապետության հետագա զարգացման գերակա ոլորտ: Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության զարգացման ներկայիս փուլում առանձնակի է կարևորվում գյուղատնտեսական արտադրության հմտություններին և ագրարային ոլորտում կիրառվող արդիական տեխնոլոգիաներին տիրապետող մասնագետների պատրաստումը, վերջինիս գործընթացում միջազգային լավագույն փորձի օգտագործումը և մեր հանրապետության գյուղատնտեսության առանձնահատկությունները հաշվիառնելով՝ դրա տեղայնացումը: ՀՀ գյուղատնտեսության ոլորտի ներկայիս ցածր մակարդակը պայմանավորված է հիմնականում համապատասխան կադրերի բացակայությամբ, գյուղացիական տնտեսվարողների մոտ ժամանակակից մասնագիտական գիտելիքների և գործնական հմտությունների պակասով: Իսկ գյուղատնտեսության վարման համար բնակլիմայական ոչ նպաստավոր պայմաններում էլ ավելի է կարևորվում գյուղատնտեսության վարման կիրառական գիտելիքների, գործնական հմտությունների ձեռքբերման և արտադրության մեջ ժամանակակից տեխնոլոգիական միջոցների արդյունավետ ներդրման անհրաժեշտությունը: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Համապատասխան կրթական միջավայրի ստեղծումը կնպաստի համակարգի շարունակական զարգացմանը, մասնագիտական կրթության և ուսուցման արդիականացմանը, մասնավորապես, աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագիտական ներուժի կարողությունների հզորացմանը, հաշմանդամություն ունեցող անձանց համար լիարժեք ֆիզիկական մատչելիության, շրջանավարտների զբաղվածության ապահովմանը, մասնագիտական կրթության և ուսուցման հեղինակության, որակի և վարկանիշի բարձրացմանը: Կրթական հաստատությունների միավորում մեկ կենտրոնում և նրանց ինտենսիվ համագործակցության հնարավորության ապահովում, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Վանաձորի մասնաճյուղի, Վանաձորի պետական գլուղատնտեսական քոլեջների վերանորոգում և վերազինում և վերակազմակերպում, Ապարան համայնքի տարածքում նոր ստեղծվող ուսումնական հաստատություն: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Միջոցառման իրականացման արդյունքում կլինեն նոր ստեղծված, ինչպես նաև վերանորոգված և վերազինված գյուղատնտեսության ուղղվածության 2 ուսումնական հաստատություն, ինչը կնպաստի մասնագիտական բարձր գիտելիքների, բազմապրոֆիլ ենթակառուցվածքների ապահովմանը՝ մասնագիտական ուսումնական հաստատություններին որակյալ գործնական կրթություն տրամադրելու համար:
16	16.1 «Բուհերի գործունեության կատարողականի արդյունքային ցուցանիշները (KPI) և ծրագրային արդյունքների ֆինանսավորման մեխանիզմները հաստատելու մասին» ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանի ընդունում 16.2 Կատարողականի արդյունքային ցուցանիշների փորձնական ներդրում առնվազն 3 բուհերում: 1.Միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակն է Բարձրագույն կրթության համակարգում արդյունավետ, թափանցիկ, կատարողականի արդյունքային ցուցանիշների (KPI) բաղադրիչի ներառմամբ ֆինանսավորման նոր մեխանիզմների ներդրումը: Միջոցառումների անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության՝ 2021թ. օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված 2021-2026թթ. ծրագրի 4.3 Կրթություն բաժնի բարձրագույն կրթության բարեփոխումներին միտված 6-րդ դրույթից, որով ակնկալվում է բուհերին տրամադրվող ֆինանսական միջոցների նոր մեխանիզմի ներդնում: Միջոցառման նպատակը բարձրագույն ուսումնական հաստատություններում կատարողականի արդյունքային ցուցանիշների ներդրում է: Իրականացվող քաղաքականությունը պետք է ապահովի մինիմալ շեմեր թե՛ կրթության որակի, թե՛ բովանդակության և թե՛ ռեսուրսների բաշխման իմաստով: Այդ շեմերի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է ունենալ վերջնարդյունքի վրա հիմնված պետական աջակցության քաղաքականություն: Առաջարկվում է բարեփոխումները սկսել որակի նվազագույն շեմն ապահովելուց. սահմանել նվազագույն պետական պահանջ և ապահովել, որպեսզի բուհերը ձգտեն բավարարել դրան: Արդյունքում ամրապնդել բուհի հիմնական գործընթացները և ստեղծել կարողություն ավելի բարդ խնդիրներ լուծելու համար: Նշված նպատակին հասնելու համար առաջարկվում է ներդնել բուհերի կառավարման արդյունավետության ցուցանիշների համակարգ: Միջոցառումների նպատակը նաև բարձրագույն ուսումնական հաստատություններին տրամադրվող ֆինանսական միջոցների սկզբունքների վերանայումն է: Անհրաժեշտ է ստեղծել բարձրագույն կրթության

	արդյունավետ, կատարողականի և վերջնարդյունքների վրա հիմնված կառավարման համակարգ և ներդնել արդյունքից կախված ֆինանսավորման նոր մեխանիզմներ: 1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Ուսումնական հաստատությունները պարբերաբար մշակում են ռազմավարական պլաններ, արդյունավետության ցուցանիշներ և հավատարմագրման միջոցով հաշվետվողական են հանրության առջև: Ինստիտուցիոնալ հավատարմագրումը թույլ է տալիս գնահատել բուհի գործընթացները հիմնվելով ոչ միայն փաստացի կատարված գործողությունների այլ նաև դրանց արդյունքում ձեռքբերված վերջնարդյունքի վրա: Սակայն, բարձրագույն ուսումնական հաստատություններում կատարողականի արդյունքային ցուցանիշների համակարգը, բացառությամբ դրա որոշ բաղադրիչների, ներդրված չէ բարձրագույն ուսումնական հաստատություններում, ինչը չի համապատասխանում ժամանակակից մոտեցումներին՝ կառավարման արդյունավետության բարձրացմանը: Բուհերի ֆինանսավորման գործող բանաձևը ժամանակավրեպ է, մշակվել է դեռևս Խորհրդային միության ժամանակաշրջանում, որը չի արտացոլում ժամանակակից մոտեցումներ: Բանաձևով բուհերին տրամադրվում է միայն բազային ֆինանսավորում, որը չի ստեղծում բուհերի միջև առողջ մրցակցություն և բարեփոխումների կամ բարելավման նկատմամբ շահադրդում: Առկա է ֆինանսավորման ծավալների բարձրացման անհրաժեշտություն: 1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումներ Ակնկալվում է մշակել բարձրագույն ուսումնական հաստատությունների կառավարման արդյունավետության ցուցանիշների համակարգ:Արդյունավետության առավել հաճախ կիրառված ցուցանիշների խմբեր կարող են դառնալ՝ կրթությունը հաջողությամբ ավարտած ուսանողների քանակը, գիտությունների թեկնածուների քանակ, երրորդ աղբյուրից ստացված եկամուտի ծավալ, հետազոտական արդյունավետությունը և այլն: Ակնկալվում է մշակել Ֆինանսավորման նոր մեխանիզմ/բանաձև, որը կներառի և բազային, և հետազոտական բաղադրիչ, և արդյունքների վրա հիմնված ֆինանսավորման մասնաբաժիններ, ինչպես նաև կատարողականի արդյունքային ցուցանիշների ներդրում առնվազն 3 բուհերում: Ուսանողի կրթաթոշակը կհետևի ուսանողին, որը կստեղծի հավելյալ մրցակցություն բուհերի միջև՝ որակի բարելավման ակնկալիքով: Կրթաթոշակը կարող է տրամադրվել օրինակ դրամաշնորհի, նպաստի, ուսանողական վարկերի միջոցով, որի համար նույնպես կձևավորվի նոր մոտեցում: 2. Միջոցառումների իրականացումից ակնկալվող արդյունքը Արդյունավետության ցուցանիշները մշակվելու են ելնելով բուհական համակարգի զարգացման հրամայականներից և բուհի առանձնահատուկ կարիքներից: Միջազգային փորձի ուսումնասիրությունը և մի շարք բուհերի հետ ունեցած հարցազրույցները փաստում են, որ արդյունավետության ցուցանիշները և դրանց դրական կանդրադառնա ՀՀ բուհական համակարգի համար: Այն կմղի պետական թիրախային քաղաքականության իրականացմանը և կնպաստի հանրային ռեսուրսների արդյունավետ կիրառմանը: Միաժամանակ, ներկայացված մեխանիզմը թույլ կտա ապահովել թափանցիկություն և հաշվետվողականություն բուհերի և այլ շահակիցների շրջանում: Այսօր շատ է խոսվում բուհերի ինքնավարության մասին, որը լիարժեք գործարկելու համար պետք է ունենալ նաև հաշվետվողականության մեխանիզմներ, որպեսզի հնարավոր լինի չափելի դարձնել բուհերի գործունեության և որդեգրած ռազմավարության/տեսլականի համապատասխանելիությունը: Բուհերը բավարար չափով չեն գործարկում իրենց ընձեռնված ինքնավարությունը հավելյալ ռեսուրսներ ներգրավվելու ուղղությամբ: Ուստի ակնկալվում է ներդնել հաշվետվողականության մեխանիզմ: Հաշվետվողականության մեխանիզմների միջոցով կգնահատվի բուհերի գրանցած առաջընթացը և կձեռնարկվեն խրախուսման միջոցներ, որը կուղղորդի բուհերին հետագայում նախաձեռնողականություն դրսևորելու այլ աղբյուրներից միջոցներ ներգրավվելու համար:
17	17.1 ՀՀ կառավարության 2012թ.-ի ապրիլի 26-ի 597-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում 1-ին արդյունք- Ազգային փոքրամասնություններին օժանդակելու նպատակով բարձրագույն կրթության բակալավրի կրթական աստիճանով (այդ թվում՝ անընդհատ ու ինտեգրացված կրթական ծրագրերով) յուրաքանչյուր տարի մինչև 7 անվճար տեղերի հատկացում: Բարձրագույն կրթության ներառականության ընդլայնման նպատակով ազգային փոքրամասնությունների համայնքներին հասանելի, ներառական և որակյալ կրթական գործընթացի շարունակականության ապահովումն է, որպես միջոցառման կատարման ապահովման ժամկետ սահմանված է 2024թ. ապրիլի 2-րդ տասնօրյակը: 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման գլխավոր նպատակն է բարձրագույն կրթության համակարգում ընդունելության սկզբունքների և մեխանիզմների վերանայումը և ներառականության ընդլայնումը:
Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ինչպես նաև ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» բաժնի բարձրագույն կրթության բարեփոխումների 9-րդ դրույթից:

1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Յուրաքանչյուր տարի ՀՀ բուհերի առկա ուսուցման ընդունելության հանրապետական ընդունող հանձնաժողովի որոշմամբ, համապատասխան մասնագիտությունների մրցութային քննություններից դրական միավորներ ստացած ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ հանդիսացող դիմորդներին պահուստային տեղերից հատկացվում են անվճար ուսուցման տեղեր:
Ազգային փոքրամասնություններին հատկացվող անվճար տեղերի բաշխման հարցը չի կարգավորվում ենթաօրենսդրական իրավական ակտերով և չի իրականացվում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց ընդունելություն ՀՀ գործող պետական կամ հավատարմագրված ոչ պետական ուսումնական հաստատություններ՝ ՀՀ կառավարության որոշմամբ տվյալ տարվա ընդունելության համար հատկացված անվճար տեղերի հաշվին: Ուստի անհրաժեշտ է ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ հանդիսացող դիմորդներին անվճար տեղերի հատկացման հարցին տալ իրավական հենք:

1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումներ
Միջոցառումն իրականացնելու համար կիրականացվի կառավարության որոշման նախագծի մշակում, սահմանված կարգով շրջանառում և ներկայացում Վարչապետի աշխատակազմ:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը
Միջոցառման արդյունքում ակնկալվում է կազմակերպել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց որակյալ կրթությունը, խթանել նրանց ներառման գործընթացը, իրականացնել ամենամյա անվճար տեղերի հատկացում բարձրագույն կրթության բակալավրի կրթական աստիճանով, այդ թվում՝ անընդհատ ու ինտեգրացված կրթական ծրագրերով:

2-րդ արդյունք- Ընդունելության նոր մեխանիզմների մշակում և փորձնական ներդրում առնվազն 3 կրթական ծրագրերում:
Որպես միջոցառման կատարման ապահովման ժամկետ սահմանված է 2025թ. հունիսի 3-րդ տասնօրյակը:
Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» բաժնի բարձրագույն կրթության բարեփոխումների 9-րդ դրույթից:

1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Ըստ գործող կարգի՝ մասնագիտության հայտագրումն անցկացվում է երկու փուլով՝ առաջին և երկրորդ, բուհերի ընդունելության մրցույթը՝ հիմնական և լրացուցիչ փուլերով: Հիմնական փուլի մրցույթն անցկացվում է մեկ մասնագիտության (անվճար և վճարովի) հայտագրմամբ: Դիմորդն ընդունելության դիմում-հայտում պետք է լրացնի բուհերի բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով առկա ուսուցման մասնագիտությունների և ընդունելության քննությունների՝ ցանկով նախատեսված մեկ բուհի և մեկ մասնագիտության անվանումը, տվյալ մասնագիտությամբ սովորելու համար սահմանված ընդունելության քննությունները: Ընդունելության քննությունների հիմնական փուլի մրցույթի արդյունքները հաստատվելուց հետո, բուհերում թափուր տեղերի առկայության դեպքում, ընդունելության քննություններից դրական միավորներ ստացած, սակայն մրցույթից դուրս մնացած դիմորդները կարող են մասնակցել լրացուցիչ՝ թափուր տեղերի մրցույթին՝ առցանց եղանակով լրացնելով դիմում-հայտ: Լրացուցիչ փուլի մրցույթը անցկացվում է մեկ կամ ավելի բուհի մինչև վեց մասնագիտության հայտագրմամբ, եթե տվյալ մասնագիտությունների առարկա(ներ)ից դիմորդն ունի դրական գնահատական(ներ) և այդ մասնագիտություններում (անվճար և վճարովի) առկա են թափուր տեղեր:

1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումներ

Բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության սկզբունքների վերանայմամբ կառաջարկվեն նոր մեխանիզմներ, որի նպատակն է ընդունելության նոր մուտքային պահանջների, մրցույթի անցկացման նոր պայմանների սահմանումը: Նախատեսվում է համապատասխան օրենսդրական հիմքեր ստեղծել և հնարավորություն ընձեռել բուհերին ընդունելության մրցույթի անցկացման հաստատված չափորոշիչների հիման վրա սահմանելու մրցույթի անցկացման կարգը և ինքնուրույն կազմակերպել ընդունելության մրցույթ, որին

	կկարողանան մասնակցել օրենքով և բուհի ընդունելության մուտքային պահանջները բավարարող անձինք՝ նվազեցնելով պատահական կամ չնախընտրած մասնագիտություններով /պատճառը՝ տարբեր մասնագիտություններով ընդունելության նույն քննությունների առկայություն/ բուհ ընդունվելու հնարավորությունը: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Ընդունելության նոր մուտքային պահանջների, մրցույթի անցկացման նոր պայմանների սահմանմամբ կկանոնակարգվի բուհերում ընդունելության գործընթացը,որը կնպաստի մասնագիտական կողմնորոշմանը՝ ընդգծելով մասնագիտության ընտրության կարևորությունը:
	17.2 ՀՀ կառավարության 2006 թվականի N 1183-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու մասին» կարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակն բարձրագույն կրթության համակարգում ընդունելության սկզբունքների և մեխանիզմների վերանայումը և ներառականության ընդլայնումը: Միջոցառման նպատակն է նպաստել բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում սովորողների առանձին խմբերի, որոնք կարող են օգտվել պետության կողմից տրամադրվող նպաստից՝ լրիվ կամ մասնակի, կարգավորելու ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող ուսանողներին, սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների ուսանողներին, մարտական գործողություններին մասնակցած ուսանողներին, սահմանված կարգով առկա ուսուցմամբ բակալավրի կամ ինտեգրացված կրթական ծրագրով ընդունված երկու և ավելի անչափահաս երեխա ունեցող ուսանողներին տրվող նպաստների չափերը, ինչպես նաև ամրագրելու առաջադիմության շեմեր (բուհերում՝ ՄՈԳ), ըստ որոնց կնախատեսվեն համապատասխան փոխհատուցման չափերը՝ նպատակ ունենալով խրախուսել և կարևորել նաև սովորողների առաջադիմությունը, ապահովել կրթության որակի շարունակական բարձրացումը: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ բարձրագույն կրթության և գիտության նոր օրենքի նախագծի 20-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետից (Օրենքը Ազգային ժողովում 2021թ. մարտի 24-ին ընդունվել է 2-րդ ընթերցմամբ), ինչպես նաև ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» բաժնի բարձրագույն կրթության բարեփոխումների 7-րդ դրույթից, ինչպես նաև Հայաստանի մինչև 2050թ. վերափոխման ռազամավարության 1-ին «Կիրթ և կարողունակ քաղաքացի» ունենալու մեգանպատակի իրագործման անհրաժեշտությունից: 1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրներ ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 27-ի N 1183-Նորոշմամբ հաստատված կարգի համաձայն ՀՀ կառավարությունը յուրաքանչյուր տարի ՀՀ տվյալ տարվա պետական բյուջեով բարձրագույն ուսումնական հաստատությունների համար նախատեսված միջոցների սահմաններում, ըստ բուհերի և մասնագիտությունների, բաշխում է պետության կողմից տրվող ուսանողական նպաստների քանակը՝ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքի /այսուհետ՝ օրենք/ 6-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան, ըստ որի՝ ուսման վճարի փոխհատուցում նպաստի ձևով տրվում է մրցույթի արդյունքներով բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունված, ուսումնական տարվա արդյունքներով բարձր առաջադիմություն ունեցող, սոցիալապես անապահով, ինչպես նաև նպատակային ուսուցմամբ ուսանողներին, այդ թվում՝ սահմանամերձ կամ բարձրլեռնային բնակավայրերի ուսանողներին՝ անկախ ուսումնառության համակարգից (անվճար, վճարովի), ՀՀ օրենքներով սահմանված կարգով, ՀՀ կառավարության հաստատած տեղերի քանակին և կարգին համապատասխան: Հիշյալ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասով հստակ նշված էր այն անձանց շրջանակը, որոնց ուսման վճարի փոխհատուցումը տրվում է նպաստի ձևով, մինչդեռ բարձրագույն կրթության բնագավառում պետական քաղաքականությունը միտված է փոխհատուցում ստացող օրենքով նախատեսված անձանց շրջանակը, պետության կողմից ուսանողների ֆինանսական աջակցության հասցեականությունը, նպատակայնությունը և ծավալները ընդլայնելուն, բարձրագույն կրթության հասանելիության և մատչելիության, բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների լայն ընդգրկվածության ապահովմանը: Ըստ Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ ենթակետով սահմանված սկզբունքի՝ պետությունն ապահովում է բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության զարգացում հետևյալ ձևերով. «պետության պահանջներին համապատասխան՝ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին և դրանցում սովորողներին ֆինանսական աջակցության

	ապահովում.»: Այս սկզբունքից ելնելով՝ նախատեսվում է սովորողների այլ առանձին խմբերի ներառումը պետության կողմից ուսման վարձի փոխհատուցում ստացող խմբերի շարքում: 1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումներ Լրացումներ և փոփոխություններ կատարելով, իրավական հիմք, լիազորող նորմ ապահովելով՝ հնարավորություն կստեղծվի ՀՀ կառավարության որոշմամբ սահմանելու բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում սովորողների առանձին խմբերի՝ փոխհատուցում ստացող օրենքով նախատեսված անձանց շրջանակը, պետության կողմից ուսանողների ֆինանսական աջակցության հասցեականությունը, նպատակայնությունը և ծավալները ընդլայնելուն, բարձրագույն կրթության հասանելիության և մատչելիության, բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների լայն ընդգրկվածության ապահովմանը: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունք Միջոցառման արդյունքում ակնկալվում է ունենալ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում ընդգրկված խմբերի մեծացում, սոցիալական տարբեր խմբերի համար հավասար մատչելիության բարձրացում՝ առաջադիմության շեմերի պարտադիր ամրագրմամբ:
18	18.1 ՀՀ ԿԳ նախարարի 2015 թվականի հուլիսի 3-ի «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների կրթական ծրագրերը հաստատելու մասին» N 647--Ա/Ք հրամանում լրացումներ կատարելու մասին» ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանի ընդունում 18.2 Համապատասխան ուսումնական տարիներին 2 կրթական ծրագրով մինչև 8 անվճար տեղերի հատկացում: ՀՀ կառավարության որոշման ընդունում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակն է տարածաշրջանային լեզուներով կրթության ապահովումը: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» բաժնի բարձրագույն կրթության բարեփոխումների 10-րդ դրույթից:Միջոցառման նպատակն է կրթական ծրագրերի վերանայումը և տարածաշրջանային լեզուներով նոր ծրագրերի ձևավորումը՝ ուղղված ազգային անվտանգության և տնտեսության զարգացման պահանջներին: Մասնագիտությունների ցանկի վերանայումը՝ կնպաստի պետության համար կարևորություն ներկայացնող վերոնշյալ մասնագիտությունների ընդգրկմանը ցանկում: 1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Վերջին երկու տարիներին Հայաստանի Հանրապետությունում ստեղծված ֆորս մաժորային իրավիճակները և կատարված ուսումնասիրությունները առաջացրել են անհրաժեշտություն վերանայել պետության համար ռազմավարական նշանակություն ունեցող մասնագիտությունների ցանկը: Առկա է տարածաշրջանային լեզուների իմացությամբ բարձրագույն կրթություն ունեցող որակյալ մասնագետների պահանջարկ: 1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումներ Կատարել լրացումներ ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2015 թվականի հուլիսի 3-ի N 647-Ա/Ք «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության (մագիստրոս) մասնագիտությունների կրթական ծրագրերի ցանկում լրացումներ կատարելու մասին» հրամանի մեջ: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Միջոցառման իրականացման արդյունքում կվերանայվի ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2015 թվականի հուլիսի 3-ի N 647-Ա/Ք «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության (մագիստրոս) մասնագիտությունների կրթական ծրագրերի ցանկում լրացումներ կատարելու մասին» հրամանը, անվանացանկում կներառվեն պետության համար ռազմավարական նշանակություն ունեցող կրթական ծրագրերն ու որակավորումները, ինչը կապահովի բուհերին կազմակերպելու տարածաշրջանային լեզուներով կրթություն:
19	19.1. Որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) պահանջներին համապատասխան որակավորումների ոլորտային շրջանակների (ՈՈՇ) մշակում և հաստատում ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով

	19.2 Կրթական ծրագրերի բովանդակության և կառուցվածքի վերանայում՝ հետազոտական բաղադրիչի շարունակական մեծացմամբ որակավորումների ոլորտային շրջանակներից բխող կրթական վերջնարդյունքների հիմքով 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գխավոր նպատակն է Կրթական ծրագրերի բովանդակության և կառուցվածքի վերանայումը՝ ուղղելով դեպի ուսումնառության վերջնարդյունքներ՝ որակավորումների ազգային շրջանակի պահանջներին համապատասխան: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» բաժնի բարձրագույն կրթության բարեփոխումների 3-րդ դրույթից: Որակավորումների ոլորտային շրջանակի մշակման նպատակն է ՀՀ բուհական համակարգում և աշխատաշուկայում Որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) գործնական կիրառության ապահովելիությունը: 1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտի առաջնային խնդիրներից են բարձրագույն կրթության բովանդակային հենքի և կրթական գործընթացի բարելավումը, արդիականացումը, որակի ապահովումը: Բուհերի կողմից իրականացվող կրթական ծրագրերը ներկայումս ամբողջությամբ չեն արտացոլում ՈԱՇ-ի գիտելիք, կարողություն, հմտություն վերջնարդյունքները, ուստի ներդնելով ոլորտային որակավորումների շրջանակներ կստեղծվի միջանկյալ գործիք՝ բարձրագույն կրթության ծրագրերը ՈԱՇ-ի վերջնարդյունքներին համապատասխան ձևավորելու համար: 1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումներ Պետք է մշակել ՈԱՇ-ին համապատասխան ոլորտային որակավորումների շրջանակներ: Արդյունքում բարձրագույն կրթության կրթական ծրագրերը կվերանայվեն ՈՈՇ-ների գիտելիք, հմտություն, կարողություն վերջնարդյունքներին համապատասխան: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Միջոցառման կատարման արդյունքում յուրաքանչյուր տարի կմշակվեն առնվազն 7 -8 որակավորումների ոլորտային շրջանակներ՝ բարձրագույն կրթության կրթական ծրագրերի վերջնարդյունքները ՈԱՇ-ին համապատասխանեցնելու նպատակով: Կրթական ծրագրերը լրամշակված են որակավորումների ոլորտային շրջանակներից բխող կրթական վերջնարդյունքների հիմքով:
20	20.1 «Ակադեմիական քաղաքի հիմնադրման հայեցակարգի մշակման» մասին ՀՀ կառավարության որոշման ընդունում 20.2 «Ակադեմիական քաղաքի հիմնադրման հայեցակարգից բխող միջոցառումների իրականացում: 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակն է Ակադեմիական քաղաքի հիմնադրման հայեցակարգի մշակումը: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» բաժնի բարձրագույն կրթության բարեփոխումների 12-րդ դրույթից, Հայաստանի մինչև 2050թ. վերափոխման ռազամավարության 9-րդ «Տարածքային խելամիտ զարգացում» ունենալու մեգանպատակով նախատեսված 9.4.2 գործողության իրագործման անհրաժեշտությունից: Մարտահրավերներին դիմակայելու, դրականորեն արձագանքելու և մրցունակ տնտեսություն ունենալու համար Հայաստանի Հանրապետությունը կրթության ոլորտում անհրաժեշտ է ստեղծել կրթության գրավիչ միջավայր իրականացնելով ենթակառուցվածքների ընդարձակում՝ ֆիզիկական, վիրտուալ և սոցիալական, ժամանակակից հետազոտական ենթակառութցվածքների առկայություն՝ միջմասնագիտական հետազոտություններ, ցանցային համագործակցություն և սիներգիա՝ սերտ համագործակցություն բուհերի միջև, միջազգային բուհերի հետ գործընկերություն, սերտ համագործակցություն արդյունաբերության հետ: Նշված խնդիրները արդյունավետ լուծումներ կարող են ստանալ ակադեմիական քաղաքի ստեղծմամբ՝ նախապես հայեցակարգի մշակմամբ, որի հիման վրա 2023-2026թթ. կիրականացվեն ծրագրով նախատեսված միջոցառումներ:

	1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Այսօր բարձրորակ կրթություն և մրցունակ գիտահետազոտություն ապահովելը դարձել է ամենախնդրահարույց և անհանգստություն պատճառող հարցը համաշխարհային շուկայում, և տնտեսությունները այսօր մրցում և հզորանում են կրթության և գիտության միջոցով: Գլոբալիզացիայի արդյունքում՝ մեծ տնտեսությունները կարողանում են ավելացնել իրենց գրավչությունը մեծ արագությամբ ավելացնելով ոլորտում ներդրումների ծավալները և կուտակելով տաղանդներին իրենց մոտ, իսկ փոքր տնտեսությունները, որոնք չեն կարողանում ձևավորել արագ, նորարար և ճկուն մոտեցում իրենց կրթական և գիտահետազոտական քաղաքականության մեջ՝ զգալի տուժում են : 1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումներ Միջոցառումն իրականացնելու համար կիրականացվի ՀՀ վարչապետի որոշման նախագծի մշակում, սահմանված կարգով շրջանառում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Միջոցառման արդյունքում ակնկալվում է ունենալ Ակադեմիական քաղաքի ստեղծման հայեցակարգ, որը կներառի կրթության գրավիչ միջավայր ստեղծելու միջացառման հիմնական ուղղությունները:
21	21.1 Ծրագրային հավատարամագրման չափանիշների վերանայում և իրականացում 21.2 Բուհերում հետազոտություններ իրականացնելու համար համապատասխան միջավայրի բարելավմանն ուղղված համագործակցության հուշագրերի կնքում 1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակն է բարձրագույն կրթության շարունակական բարելավումը, բարձրագույն կրթության մեջ հետազոտական բաղադրիչի շարունակական մեծացումը: Միջոցառման նպատակն է նպաստել բարձրագույն կրթության շարունակական բարելավմանը և բարձրագույն կրթության մեջ հետազոտական բաղադրիչի շարունակական մեծացմանը: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» բաժնի բարձրագույն կրթության բարեփոխումների 2-րդ դրույթից: Միջոցառման իրականացման նպատական է նաև մոտենալու Հայաստանի մինչև 2050թ. վերափոխման ռազամավարության 1-ին «Կիրթ և կարողունակ քաղաքացի» ունենալու մեգանպատակի 1.1. 3 ցուցանիշին: 1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Ներկայումս ծրագրային հավատարմագրումները պարտադիր բնույթ չեն կրում, ինչը էական ազդեցություն ունի կրթության որակի պատշաճ ապահովման համար: 1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումներ Առաջարկվում է իրականացնել ծրագրային հավատարմագրման չափանիշների վերանայում: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունք Միջոցառման արդյունքում ակնկալվում է ունենալ վերանայված ծրագրային չափանիշներ, որոնց հիման վրա՝ կիրականացվի ծրագրային հավատարմագրում առնվազն 3 մասնագիտության կրթական ծրագրերով:
22	22.1 Միջբուհական և միջառարկայական փորձարարական թեմատիկ լաբերի ստեղծում և ծրագրերի իրագործում 22.2 Բնագիտական ուղղություններով պետական աջակցությամբ ֆինանսավորման նոր մեթոդաբանության մշակում մեկ ուսանողի հաշվարկով: ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանի ընդունում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակն է Բնագիտական ուղղություններով բարձրագույն կրթության որակի զարգացումը՝ պետական աջակցության և ինստիտուցիոնալ ներդրումների միջոցով այն հասցնելով միջազգային մակարդակի: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության՝ 2021թ. օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված 2021-2026 թթ. ծրագրի 4.3 Կրթություն բաժնի բարձրագույն կրթության բարեփոխումներին միտված 13-րդ դրույթից: Միջոցառման իրականացման նպատակն է նաև մոտենալու Հայաստանի մինչև 2050թ. վերափոխման ռազամավարության 1-ին «Կիրթ և կարողունակ քաղաքացի» ունենալու մեգանպատակի 1.1.2 ցուցանիշին:

	Միջոցառման նպատակն է բնագիտական ուղղություններով բարձրագույն կրթության որակի զարգացմանը նպաստելը՝ պետական աջակցության և ինստիտուցիոնալ ներդրումների միջոցով այն հասցնելով միջազգային մակարդակի, 1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Բարձրագույն ուսումնական հաստատությունների պետության կողմից ֆինանսավորման մոդելը որակյալ և մրցունակ մասնագետ պատրաստելու ժամանակակից պահանջներին չի բավարարում: Պետության կողմից ուսման վարձի լրիվ փոխհատուցում տրամադրելիս մեկ ուսանողի համար նախատեսված գումարը ներառում է տարբեր բաղադրիչներ, որը ռեալ չի արտացոլում այն ծախսը, որը պետք է իրականացվի տվյալ մասնագիտությամբ շրջանավարտ պատրաստելու համար՝ հատկապես բնագիտական մասնագիտությունների ուղղությամբ, երբ մասնագետ պատրաստելն ավելի ծախսատար է՝ հաշվի առնելով նյութատեխնիկական ապահովվածության հանգամանքը: Ստեղծեով միջբուհական և միջառարկայական թեմատիկ լաբեր՝ միջազգային ստանդարտներին համապատասխան, կապահովվեն միջոլորտային հետազոտական ծրագրերի (կենսաբանություն, ֆիզիկա, քիմիա, նյութագիտություն, ագրոէկոնամիկա և այլ բնագավառների միջև) և բազմապրոֆիլ հետազոտությունների իրականացում, որը ավելի կմեծացնի պետության կողմից մարդկային կապիտալի զարգացման մեջ ներդրվող գումարի արդյունավետությունը, ինչպես նաև ուսանողի մոտ կձևավորի աշխատաշուկայի կողմից պահանջված հմտություններն ու կարողությունները: 1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումներ Բնագիտական ուղղություններով բարձրագույն կրթության որակի զարգացմանը միտված պետական աջակցությունը մեծացնելու համար կմշակվի ֆինանսավորման նոր մեթոդաբանություն՝ մեկ ուսանողի հաշվարկով՝ պետական ֆինանսավորումը դարձնելով ավելի փաստահենք և արդյունավետ: Բուհերի կողմից կիրառական արդյունքի ստեղծման միջոցներից է թեմատիկ փորձարարական լաբերի ստեղծումը՝ միջբուհական սերտ համագործակցության և միջազգային լավագույն փորձի տեղայնացման միջոցով: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Միջոցառման արդյունքում ակնկալվում է ունենալ բնագիտատեխնիկական ուղղություններով ֆինանսավորման նոր մշակված մեթոդաբանություն, ինչպես նաև հետազոտությանը խթանող միջավայր՝ ի դեմս թեմատիկ փորձարարական լաբերի:
23	23.1 Առանձին դասընթացների կամ դասընթացների առանձին թեմաների, ուսումնական մոդուլների և կրթական ծրագրերի՝ օտար լեզվով դասավանդելու հնարավորության ապահովում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակն է բարձրագույն կրթության միջազգայնացման, շարժունության հնարավորությունների ընդլայնումը: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» բաժնի բարձրագույն կրթության բարեփոխումների 4-րդ դրույթից, ինչպես նաև՝ Հայաստանի մինչև 2050թ. վերափոխման ռազամավարության 1-ին «Կիրթ և կարողունակ քաղաքացի» ունենալու մեգանպատակի 1.1.1, 1.3.1 և 1.3. 3 ցուցանիշներով նախատեսված գործողության իրագործման անհրաժեշտությունից: Միջոցառման նպատակն է ընդլայնել բարձրագույն կրթության միջազգայնացման, շարժունության հնարավորությունները: Բարելավել բուհերում կրթական ծրագրերը կառուցվածքային և որակի ապահովման տեսանկյունից, բարձրացնել կրթական ծրագրերի վերաբերյալ օտարերկրյա ուսանողների տեղեկացվածության մակարդակը, որն ավելի տեսանելի կդարձնի բուհերի գործունեությունը միջազգային մակարդակում և դառնալ արտաքին շահառուների համար ցանկալի վայր՝ հետազոտությունների իրականացման և բարձրագույն կրթություն ստանալու համար: Միջոցառումը կնպաստի դասախոսական և վարչական աշխատակազմի փորձի փոխանակմանն ու մասնագիտական զարգացման հնարավորությունների ընդլայնմանը, ինչպես նաև վերապատրաստումների, միջազգային փոխանակման ծրագրերում ընդգրկվածությանը: Ընդլայնել և ամրապնդել հայաստանյան բուհերի համագործակցությունը օտարերկրյա առաջատար բուհերի հետ՝ համատեղ կրթական ծրագրերի ստեղծման միջոցով:

	1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Բարձրագույն կրթության միջազգայնացումը, չնայած որոշակի արդյունքներին դեռևս չի համապատասխանում միջազգային չափանիշներին, ինչը պայման է հանդիսացել օտարերկրյա ուսանողների թվի ոչ բավարար լինելուն: Ոչ բոլոր բուհերում է առկա կրթական ծրագրեր օտար լեզուներով: Ֆորս մաժորային իրավիճակները պատճառ են հանդիսացել միջազգային գործընթացի դանդաղեցման համար: Ուստի Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության միջազգայնացումը, ժամանակակից պահանջների համաձայն, բարձրորակ կադրերի պատրաստման և հետազոտության զարգացման կարևորագույն նախապայմաններից է: Ներկայումս բարձրագույն ուսումնական հաստատություններում առկա է անհրաժեշտություն կատարելագործելու վարչական և գիտամանկավարժական անձնակազմի շարունակական մասնագիտական զարգացման մեխանիզմները՝ ապահովելու օտար լեզվով ուսուցման դասախոսական ներուժը: 1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումներ Առաջարկվում է մշակել օտար լեզվով ուսումնական մոդուլներ և կրթական ծրագրեր, որոնք պայմաններ կստեղծեն բուհերի միջազգայցմանն ուղղված քայլերը բարելավելու համար: Առաջարկվում է իրականացնել պրոֆեսորադասախոսական կազմի և վարչական անձնակազմի վերապատրաստումների և մասնագիտական զարգացումների ծրագրեր, որոնք կնպաստեն օտար լեզուներով կրթական ծրագրերի ներդրմանը, օտար լեզվով ուսուցման դասախոսական ներուժի ավելացմանը: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Միջոցառման արդյունքում ակնկալվում է բարձրագույն ուսումնական հաստատություններում ունենալ օտար լեզվով դասավանդման դասընթացներ կամ դասընթացների առանձին թեմաներ առնվազն 3 մասնագիտություններով և պրոֆեսորադասախոսական կազմի և վարչական անձնակազմի վերապատրաստումների, միջազգային փոխանակման ծրագրերում ընդգրկվածության աճ:
24	24.1 ՀՀ ներկայացուցիչների մասնակցություն Բոլոնիայի հետամուտ խմբի և աշխատանքային խմբերի հանդիպումներին 24.2 ՀՀ բարձրագույն կրթության ավարտական փաստաթղթի՝ դիպլոմի հավելվածի 8-րդ բաժնի /կրթական համակարգի նկարագրի/ վերանայում: ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանի ընդունում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակն է Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի (ԵԲԿՏ) անդամակցությամբ պայմանավորված բարձրագույն մասնագիտական կրթության համակարգի բարեփոխումները: Միջոցառման անհրաժեշտությունը բխում ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» բաժնի բարձրագույն կրթության բարեփոխումների 4-րդ դրույթից: 2005թ. մայիսի 19-20 Բերգենի կոմյունիկեով Հայաստանի Հանրապետությունն անդամագրվել է Բոլոնիայի գործընթացին, որով ստանձնել է այդ գործընթացով սահմանված բարձրագույն կրթության միջազգային սկզբունքների իրականացումը: ՀՀ–ն կազմել է Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի մաս, որի նպատակն է ձևավորված համագործակցության արդյունքում ապահովել բարձրագույն կրթության համակարգի համադրելիությունը և համատեղելիությունը վերոնշյալ տարածքի ուղղություններին: Ապահովել ԵԲԿՏ-ի աշխատանքներին Հայաստանի կայուն մասնակցության ապահովում՝ խթանելով ազգային բարձրագույն կրթության համակարգում ընթացող բարեփոխումների հետևողական իրականացումը: Ապահովել Հայաստանի բարձրագույն կրթության համակարգի, բուհերի, ինչպես նաև համակարգում ընթացող բարեխումների մասին բաց, թափանցիկ, ամբողջական տեղեկատվություն, այդ թվում անգլերեն լեզվով՝ ապահովելով այդ տեղեկատվության մատչելիությունը և հասանելիությունը ոչ միայն Հայաստանում, այլ նաև ողջ աշխարհում: 1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները ՀՀ Ներկայացուցիչները ապահովում են Հայաստանի շարունակական մասնակցությունը Բոլոնիայի քարտուղարության աշխատանքներին՝ պահպանելով ուղղակի կապի, փոխշփման և քննարկման հարթակը ԵԲԿՏ-ի անդամ երկրների բարձրագույն կրթության համար պատասխանատու նախարարությունների հետ, ինչպես նաև ներգրավում են Բոլոնիայի գործընթացի համակարգման ու հիմնարար փաստաթղթերի մշակման աշխատանքներին:

	Նախատեսվում է ձևավորել աշխատանքային խումբ, որը կուսումնասիրի բարձրագույն կրթության համակարգերի զարգացման միջազգային միտումները և կմշակի բարձրագույն կրթության բարեփոխումների ռազմավարություն կամ համապատասխան ծրագիր: 1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումներ Բարձրագույն կրթության միջազգային համակարգի առաջադեմ փորձի համապատասխանեցում գործող ազգային համակարգին: Առաջարկվում է ուսումնասիրել բարձրագույն կրթության առաջընթացը Բոլոնիայի գործընթացի տարբեր ուղղություններով՝ հավաքագրելով և վերլուծելով անհրաժեշտ տվյալները, և պատրաստել Հայաստանի ԵԲԿՏ-ի հերթական փուլի ազգային զեկույցը: Առաջարկվում է վերանայել ՀՀ բարձրագույն կրթության ավարտական փաստաթղթի՝ դիպլոմի հավելվածի 8-րդ բաժինը /կրթական համակարգի նկարագիրը/: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Բոլոնիայի գործընթացով ստանձնած պարտավորությունների և ԵԲԿՏ տարածքի սկզբունքների իրականացում: Բարձրագույն կրթության ոլորտի զարգացման միջազգային միտումներին և բարեփոխումներին ուղղված համապատասխան ծրագրերը մշակված են:
25	25.1 Ոչ ֆորմալ կրթության վիճակագրական քանակական և որակական տվյալների հավաքագրման իրավական հենքի և ինստիտուցիոնալ մեխանիզմների (ներառյալ՝ գործիքակազմի) մշակում և ներդրում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակը ՀՀ-ում ոչ ֆորմալ կրթության զարգացումն ու տարածումն է, ինչպես նաև ոչ ֆորմալ կրթության արդյունքների ճանաչումը: Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի «4.7 Երիտասարդություն» «խրախուսել համայնքներում երիտասարդական կենտրոնների հիմնումը և զարգացումը, քաջալերել ոչ ֆորմալ կրթության, երիտասարդական աշխատանքի և կամավորության առավել լայն տարածումն ու ճանաչումը» կետից: 1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Հայտնի է, որ ժամանակակից դինամիկ փոփոխվող աշխարհում արագ են փոփոխվում աշխատաշուկայի պահանջները, ի հայտ է գալիս նոր հմտություններ և կարողություններ ձևավորելու պահանջարկ: Ներկայումս ոչ ֆորմալ կրթության կազմակերպման, վերապատրաստումների, կարճաժամկետ դասընթացների վերաբերյալ վիճակագրական տվյալների բացակայությունը հնարավորություն չի տալիս այս ոլորտում մշակել և իրականացնել փաստահենք քաղաքականություն: 1.2. առկա խնդիրների աջարկվող լուծումները Ոչ ֆորմալ կրթության վիճակագրական քանակական և որակական տվյալների հավաքագրման իրավական հենքի ստեղծումը անհրաժեշտ է ճիշտ կանխատեսումներ իրականացնելու և նպատակային ու փաստահենք պետական քաղաքականություն մշակելու և իրականացնելու համար: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Միջոցառումը կնպաստի ոչ ֆորմալ կրթության վիճակագրական քանակական և որակական տվյալների հավաքագրման իրավական հենքի և ինստիտուցիոնալ մեխանիզմների ստեղծմանը:
	25.2 Ոչ ֆորմալ կրթության (ներառյալ՝ երիտասարդների և մեծահասակների ուսումնառության և կրթության) իրազեկվածության բարձրացում հասարակության շրջանում ոլորտի ջատագովության, հանրային արշավների իրականացման միջոցով 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակը ՀՀ-ում ոչ ֆորմալ կրթության զարգացումն ու տարածումն է, ինչպես նաև ոչ ֆորմալ կրթության արդյունքների ճանաչումը: Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի «4.7 Երիտասարդություն» բաժնի «խրախուսել համայնքներում երիտասարդական կենտրոնների հիմնումը և զարգացումը, քաջալերել ոչ ֆորմալ կրթության, երիտասարդական աշխատանքի և կամավորության առավել լայն տարածումն ու ճանաչումը» կետից: Նպատակն է ՀՀ-ում ոչ ֆորմալ կրթության կարևորության վերաբերյալ հասարակության իրազեկվածության բարձրացումն է, հանրային արշավների իրականացման միջոցով ոչ ֆորմալ

	կրթական ձևաչափով ձեռք բերվող գիտելիքների, հմտությունների, կարողությունների և արժեհամակարգի ճանաչումը և լայնորեն կիրառումը: 1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Երիտասարդական քաղաքականության ծրագրերի և երիտասարդական քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից տարիներ շարունակ իրականացվել են ոչ ֆորմալ դասընթացներ և ուսումնառություն, սակայն հասարակության մեծամասնության կողմից այն ճանաչելի չէ որպես գործիքակազմ, որի միջոցով հեշտությամբ հնարավոր է նոր հմտություններ և կարողություններ ձևավորել, ինչպես նաև հանդիսանալ հարթակ փորձի փոխանակման և համագործակցության հաստատման համար: 1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները Ոչ ֆորմալ կրթության, երիտասարդների և մեծահասակների ուսումնառության և կրթության կազմակերպման վերաբերյալ իրազեկվածության բարձրացումն ու հանրային արշավների իրականացումը հնարավորություն կտան հստակորեն նախանշել ոչ ֆորմալ կրթության իրականացումն ու ձեռքբերված արդյունքները, կնպաստի աշխատաշուկայի և կրթության միջև հետադարձ կապին: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Միջոցառումը կնպաստի ոչ ֆորմալ կրթության տարածմամբ երիտասարդության, երիտասարդական քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և այլ շահառուների միջև փորձի փոխանակմանն ու մասնագիտական զարգացման հնարավորությունների ընդլայնմանը, ինչպես նաև վերապատրաստումների, միջազգային փոխանակման ծրագրերում ընդգրկվածությանը:
Գիտություն	
26.	26.1 «Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպություններում գիտական կադրերի տարակարգը և չափանիշները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ 26.2 «Հայաստանի Հանրապետությունում գիտության և տեխնիկայի զարգացման 2024-2028 թվականների գերակայությունները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում 26.3 «Գիտական պետական կազմակերպությունների տեսակները, դրանց կառուցվածքներին ներկայացվող պահանջները և դասակարգման չափանիշները՝ ներառյալ գործունեության նկատմամբ ակնկալվող վերջնարդյունքների ցուցանիշները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում 26.4 «Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային, նպատակային-ծրագրային և թեմատիկ (դրամաշնորհային) ֆինանսավորման նոր կարգերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ 26.5 «Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացման 2022-2026 թվականների ռազմավարական ծրագիրը և դրա իրականացման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ 26.6 «Հայագիտության և հումանիտար գիտությունների ոլորտի զարգացմանն ուղղված ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում 1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառումների գլխավոր նպատակը գիտության ոլորտը կարգավորող իրավական դաշտի կատարելագործումն է: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-իմ մասի բ) և ե) կետերից, 17-րդ հոդվածի 3-րդ մասից և 23-րդ հոդվածի 4-րդ մասից՝ ՀՀ ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի 4-րդ՝ «Գիտության ոլորտը կարգավորող իրավական դաշտի կատարելագործում» կետի 1-ին, 2-րդ և 3-րդ նպատակներից 1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները Գիտության ոլորտի զարգացման և սահուն աշխատանքի համար նվազ կարևոր չէ նաև այդ ոլորտը կարգավորող իրավական դաշտի հստակեցումը: Կապված գիտության ոլորտում տեղի ունեցած բարեփոխումների հետ և գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառի իրավահարաբերությունների բարելավման և արդիականացման նպատակով, ոլորտը կարգավորող իրավական ակտերը կարիք ունեն էական փոփոխությունների: Մի շարք իրավական ակտերի վերջին խմբագրությունները դեռևս 2000-ական թվականների են և հաշվի չեն առնում ոլորտում տեղի ունեցած փոփոխությունները, ինչպես նաև ստեղծում են իրավական խոչնդոտներ մի շարք նորարարական ծրագրերի իրականացման համար: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

	Վերոնշյալ խնդրի լուծման համար իրականացվող ծրագրային նպատակներն են՝ - Գիտական կադրերի արդյունավետության նվազագույն պայմանների սահմանում ըստ տարակարգերի, որն իրականացվելու է 2021 թվականի ավարտին և ստեղծելու է հիմք՝ 2026 թվականին համապետական ատեստավորման անցկացման նպատակով: Այսպիսով կսահմանենք գիտական արդյունքի որակի ավելի բարձր նշաձող և հստակ կուրվագծենք մասնագիտական աճի ուղին գիտության ոլորտում, ինչը կնպաստի արդյունավետ աշխատող գիտնականների մոտիվացմանը և կխթանի ոլորտ մուտք գործած երիտասարդ գիտաշխատողների աշխատանքի արդյունավետությանը: - Պետական ֆինանսավորման բազային, նպատակային և թեմատիկ(դրամաշնորհային) կարգերի վերանայումը և համապատասխանեցումը գործող օրենքներին և ոլորտում իրականացվող պետական քաղաքականության պահանջներին՝ մասնավորապես հիմքեր ստեղծելով արդյունքի հիման վրա ֆինանսավորման մոդելի կիրառման համար: - Գիտական կազմակերպություններին ներկայացվող պահանջների հստակեցումը և համապատասխան իրավական դաշտի ստեղծումը, ինչի արդյունքում կսահմանվեն կազմակերպությունների կառուցվածքին ներկայացվող պահանջները, որը հնարավորություն կընձեռի ունենալ հասկանալի և գիտական գործունեությանը ամբողջովին նպաստող ենթակառուցվածքներ: Սրան զուգահեռ մշակվելու են համատեղ օգտագործման կենտրոններից օգտվելու պայմանները: - Մինչև 2024 թվականի երրորդ եռամսյակ՝ գիտության ոլորտում գերակա ուղղությունների սահմանումը, այդ թվում եվրոպական հետազոտական տարածքի խելացի մասնագիտացման տիրույթում ինտեգրման հեռանկարով: Ըստ գերակա ուղղությունների ոլորտային ռազմավարությունների մշակումը և ըստ այդ ուղղությունների հավելյալ ֆինանսավորման ծրագրերի իրականացումը: - ՀՀ գիտության ոլորտի զարգացման 2022-2026 թվականների ռազմավարական ծրագրի և դրա իրականացման միջոցառումների ժամանակացույցի մշակումը՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 17-ի նիստի N 35 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած ՀՀ գիտության ոլորտի զարգացման 2017-2020 թվականների ռազմավարական ծրագրով ամրագրված միջոցառումների կատարման ընթացքը, ընթացիկ և վերջնական արդյունքները: - Հայագիտության և հումանիտար գիտությունների ոլորտի զարգացմանն ուղղված ծրագրի և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցի մշակումը: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը - ՀՀ կառավարության հաստատմանն են ներկայացված՝ ա) բազային ֆինանսավորման նոր կարգը, ներառված են կազմակերպությունների ֆինանսավորման կատարողականի վրա հիմնված մեխանիզմներ, բազային ֆինանսավորման համար սահմանված են ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանման և բոնուսային կամ տույժային մեխանիզմները, բ) թեմատիկ (դրամաշնորհային) ֆինանսավորման նոր կարգը, գ) նպատակային-ծրագրային ֆինանսավորման նոր կարգը, որում սահմանվում են արդյունքի ձեռքբերման, արդյունքի գնահատման և միջանկյալ մշտադիտարկման ընթացակարգերը: - Սահմանված են գիտական կադրերի արդյունավետության նվազագույն պայմանները՝ ըստ տարակարգերի, որը հանդիսանում է հիմք՝ 2026 թվականին համապետական ատեստավորման անցկացման համար: - Սահմանված են կազմակերպությունների կառուցվածքին ներկայացվող պահանջները և նեկայացված են լիազոր մարմնի հաստատմանը: - Սահմանված են գիտության ոլորտի գերակա ուղղությունները, որը հիմք է հանդիսանում ոլորտային ռազմավարությունների մշակման և ըստ այդ ուղղությունների հավելյալ ֆինանսավորման ծրագրերի իրականացման համար: - Ամրագրված են ՀՀ գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառում 2022-2026 թվականներին իրականացվելիք պետական քաղաքականության հիմնական ուղղությունները, նպատակները և այդ նպատակների ձեռքբերմանն ուղղված մարտավարությունները, մարտավարություններին համապատասխան միջոցառումները և արդյունքների գնահատման առանցքային ցուցանիշները: - Հաստատված են Հայագիտության և հումանիտար գիտությունների ոլորտի զարգացմանն ուղղված ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը:
27.	27.1 Գիտական կենտրոնները ժամանակակից սարքավորումներով վերազինում ու համատեղ օգտագործման գիտական սարքավորումների կենտրոնների ստեղծում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակն է մրցունակ գիտական գործունեության համար նպաստավոր ենթակառուցվածքների զարգացումը:

Միջոցառման անհրաժեշտությունը բխում է «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին՝ «Գիտական և գիտատեխնիկական ոլորտի պետական քաղաքականության հիմնական նպատակներ» մասի «ա) հանրապետության գիտական ու գիտատեխնիկական ներուժի զարգացումը, դրա ռացիոնալ տեղաբաշխումը և պահպանումը, գիտական ու գիտատեխնիկական կադրերի պատրաստման արդյունավետ համակարգի ձևավորումը, հասարակության, մտավոր ներուժի վերարտադրումը», «թ) գիտության ժամանակակից ենթակառուցվածքի և տեղեկատվական ապահովման համակարգի ձևավորում» կետից, ՀՀ կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշմամբ հաստատված Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման կարգից, ՀՀ ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի 1-ին՝ «Մրցունակ գիտական գործունեության համար նպաստավոր ենթակառուցվածքների զարգացում» կետի 1-ին նպատակից:

1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները
Գիտական կազմակերպությունների և բուհերի գիտական ստորաբաժանումների ենթակառուցվածքների և նյութատեխնիկական բազայի մեծամասնությունը չեն համապատասխանում գիտության արդի չափանիշներին և չեն ապահովում գիտական ներուժի արդյունավետ օգտագործումը: Գիտական սարքավորումների բացարձակ մեծամասնությունը հնացած են, նրանց տեխնիկական վիճակը հնարավորություն չի տալիս իրականացնելու բարձր մակարդակի գիտական, հատկապես կիրառական բնույթի հետազոտություններ, իսկ պահպանումը և շահագործումը պահանջում են մեծ ֆինանսական միջոցներ:

1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները
Գիտական գործունեության արդյունավետության և մրցունակության բարձրացման կարևորագույն գրավականներից է գիտական ենթակառուցվածքների զարգացվածությունը, որը հնարավորություն է տալիս իրականացնել մրցունակ գիտական հետազոտություններ՝ ոչ միայն ժամանակակից գիտական սարքավորումների և նյութերի միջոցով, այլ նաև ընձեռելով գիտական գործունեության համար բարենպաստ ֆիզիկական միջավայր: Այդ նպատակով առաջարկվում է գիտական կենտրոնները վերազինել ժամանակակից հետազոտական սարքավորումներով՝ դրանց շուրջ ստեղծելով սարքավորումների համատեղ օգտագործման կենտրոններ: Ստեղծված ենթակառուցվածքները կարևոր են նաև կայուն զարգացմանն առնչվող խնդիրների հասցեագրմանը՝ միջազգային մակարդակի հետազոտությունների միջոցով, ինչպես նաև ստեղծելով նախադրյալներ՝ առևտրայնացման բարձր պոտենցիալով կիրառական հետազոտությունների իրականացման համար:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը
Համակարգային ծրագրերի իրականացումը հնարավորություն կընձեռի արդիականացնելու, որոշ դեպքերում նաև՝ ստեղծելու գիտության ոլորտի նոր գիտանորարարական ենթակառուցվածքներ: Միավորված գերազանցության կենտրոններում կամ արդեն իսկ զարգացած հետազոտական ենթակառուցվածքներ ունեցող գիտահետազոտական կազմակերպություններում կձևավորվեն գիտական ունիկալ սարքավորումներով հագեցած կենտրոններ, որոնց համար կիրականացվի սարքերի վրա աշխատող անձնակազմի վերապատրաստումներ և կներդրվեն դրանց համատեղ օգտագործման ընթացակարգերը: Ծրագրի արդյունքում կստեղծվեն պայմաններ փորձարարական գիտություններում համալիր հետազոտությունների համար, ինչը էականորեն կբարձրացնի այդ բնագավառներում տպագրությունների մակարդակը, ինչպես նաև հնարավորություն կընձեռի ավելի սերտ համագործակցելու արտադրության սեկտորի հետ և իրականացնելու կիրառական հետազոտություններ:
Զարգացած ենթակառուցվածքների առկայության պարագայում նաև հնարավորություն կընձեռվի գիտահետազոտական կազմակերպություններին ներգրավվելու միջազգային հետազոտական ենթակառուցվածքների կոնսորցիումներում (ինչպիսին է ERIC European Research Infrastructure Consortium-ը), որը հնարավորություն է ստեղծում մի շարք փոխանակային ծրագրերի համար, միևնույն ժամանակ զարգացած ենթակառուցվածքների հենքի վրա էապես դյուրին է դառնում միջազգային հետազոտական դրամաշնորհների ներգրավումը:

27.2 Գիտական կենտրոնների վերանորոգում

1. 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը
Միջոցառման գլխավոր նպատակն է մրցունակ գիտական գործունեության համար նպաստավոր ենթակառուցվածքների զարգացումը:
Միջոցառման անհրաժեշտությունը բխում «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին՝ «Գիտական և գիտատեխնիկական ոլորտի պետական քաղաքականության հիմնական նպատակներ» մասի «ա) հանրապետության գիտական ու գիտատեխնիկական ներուժի զարգացումը, դրա ռացիոնալ տեղաբաշխումը և պահպանումը, գիտական ու գիտատեխնիկական կադրերի պատրաստման արդյունավետ համակարգի ձևավորումը, հասարակության, մտավոր ներուժի վերարտադրումը», «է) միջազգային

	գիտատեխնիկական համակարգին ինտեգրում», «թ) գիտության ժամանակակից ենթակառուցվածքի և տեղեկատվական ապահովման համակարգի ձևավորում» կետերից, 2-րդ՝ «Գիտական և գիտատեխնիկական ոլորտում պետական քաղաքականության իրականացման հիմնական սկզբունքներ» մասի «զ) գիտական և գիտատեխնիկական միջազգային համագործակցության զարգացումը», «է) գիտության հասարակական վարկի բարձրացումը գիտական և գիտատեխնիկական կադրերի բարեկեցության, նրանց սոցիալական, տնտեսական և իրավական պաշտպանվածության ապահովումը» և «ը) հեռանկարային երիտասարդ գիտնականների ընտրության և խրախուսման համակարգի ստեղծումը» կետերից, ՀՀ կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշմամբ հաստատված Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման կարգից, ՀՀ ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի 1-ին՝ «Մրցունակ գիտական գործունեության համար նպաստավոր ենթակառուցվածքների զարգացում» կետի 1-ին նպատակից Ծրագրի իրականացման անհրաժեշտությունը բխում է նաև հետճգնաժամային ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության կայուն զարգացմանը հասնելու գործում գիտական և տեխնոլոգիական ոլորտի կարևորությունից: 1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները Գիտական կենտրոններում անկախության տարիներից ի վեր չի իրականացվել հետազոտական ենթակառուցվածքների համալիր թարմացում: Մի շարք միջազգային դրամաշնորհային (INTAS, ISTC, CRDF, FP7, Horizon2020, ՀԲ) և պետական աջակցության ծրագրերի արդյունքում իրականացվել է ժամանակակից սարքերով որոշակի համալրման միջոցառումներ, սակայն շատ ոլորտներում փորձարարական բազան դեռևս լիարժեք չէ: Շենքային պայմանները որոշ դեպքերում բարելավվել են ներքին ռեսուրսների կամ վարկային ծրագրերի հաշվին, սակայն լիարժեք նորոգման աշխատանքներ չեն իրականացվել և մեծ մասամբ գիտահետազոտական կառույցներն ունեն անհրապույր և հնամաշ տեսք: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Գիտական կենտրոնների վերանորոգում՝ գրավչության և ներկայանալի տեսքի համար, որը կհանգեցնի ինչպես աշխատանքի նկատմամբ վերաբերմունքի լավացման, այնպես էլ երիտասարդ կադրերի և արտերկրի հետազոտողների ներհոսքին, ինչպես նաև կնպաստի միջազգային համագործակցության հաստատմանը և դրանց մակարդակի բարձրացմանը: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Առկա են հետազոտությունների համար ավելի նպաստավոր միջավայր, ինչպես նաև մարդկային և ֆիզիկական ռեսուրսի արդյունավետ օգտագործման պայմաններ: Տարեկան 1-2 վերանորոգված կենտրոններ:
	27.3 Հետազոտության բնագավառով մոտ փոքր գիտական կազմակերպությունները խոշոր գիտական կենտրոններում միավորմանն ուղղված պետական ծրագրերի իրականացում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակն է մրցունակ գիտական գործունեության համար նպաստավոր ենթակառուցվածքների զարգացումը: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին՝ «Գիտական և գիտատեխնիկական ոլորտի պետական քաղաքականության հիմնական նպատակներ» մասի «ա) հանրապետության գիտական ու գիտատեխնիկական ներուժի զարգացումը, դրա ռացիոնալ տեղաբաշխումը և պահպանումը, գիտական ու գիտատեխնիկական կադրերի պատրաստման արդյունավետ համակարգի ձևավորումը, հասարակության, մտավոր ներուժի վերարտադրումը», «է) միջազգային գիտատեխնիկական համակարգին ինտեգրում», «թ) գիտության ժամանակակից ենթակառուցվածքի և տեղեկատվական ապահովման համակարգի ձևավորում» կետերից, 2-րդ՝ «Գիտական և գիտատեխնիկական ոլորտում պետական քաղաքականության իրականացման հիմնական սկզբունքներ» մասի «զ) գիտական և գիտատեխնիկական միջազգային համագործակցության զարգացումը», «է) գիտության հասարակական վարկի բարձրացումը գիտական և գիտատեխնիկական կադրերի բարեկեցության, նրանց սոցիալական, տնտեսական և իրավական պաշտպանվածության ապահովումը» և «ը) հեռանկարային երիտասարդ գիտնականների ընտրության և խրախուսման համակարգի ստեղծումը» կետերից, ՀՀ կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշմամբ հաստատված Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման կարգից, ՀՀ ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի 1-ին՝ «Մրցունակ գիտական գործունեության համար նպաստավոր ենթակառուցվածքների զարգացում» կետի 2-րդ նպատակից:

	1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները Ներկայումս գիտական կազմակերպությունների առկա քանակը և դրանց չափերը չեն բավարարում գիտական և գիտատեխնիկական գործունեության արդյունավետության բարձրացմանը և մրցունակ հետազոտությունների իրականացմանը, բնագավառում դանդաղ են իրականացվում կառուցվածքային բարեփոխումները, ներդրված չէ աշխատանքների կազմակերպման ու ղեկավարման ժամանակակից համակարգ: 1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Առաջարկվում է հետազոտության բնագավառով մոտ փոքր գիտական կազմակերպությունների միավորում խոշոր գիտական կենտրոններում՝ հետազոտությունների համար ավելի նպաստավոր միջավայրի ստեղծման, ինչպես նաև մարդկային և ֆիզիկական ռեսուրսի արդյունավետ օգտագործման նպատակով: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Առկա են մի շարք գիտական խոշոր կենտրոններ, որոնցում գիտաշխատողների թվաքանակը պակաս չէ 100-ից: Արդյունքում կունենանք ֆիզիկական և վարչական ռեսուրսի արդյունավետ օգտագործման պայմաններ, ֆինանսական հատկացումների ավելի մեծ մասը կհասնի անմիջապես հետազոտությունների կազմակերպմանը, կկրճատվեն պահպանության անհարկի ծախսերը, և նախադրյալներ կստեղծվեն գիտական միջավայրի ստեղծման համար: Տարեկան 1-2 միավորված կենտրոններ:
	27.4 «Նորարարության և գիտատար ձեռնարկատիրության խթանմանն ու աջակցությանն ուղղված տեխնոլոգիաների փոխանցման կառույցի ստեղծման մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում 27.5 Գիտությունից բիզնես ռիսկային նախաձեռնությունների գնահատման և ներդրումների ազգային հիմնադրամի ստեղծում 1. Միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառումների գլխավոր նպատակն է մրցունակ գիտական գործունեության համար նպաստավոր ենթակառուցվածքների զարգացումը: Միջոցառումների անհրաժեշտությունը բխում է «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին՝ «Գիտական և գիտատեխնիկական ոլորտի պետական քաղաքականության հիմնական նպատակներ» մասի «ե) գիտության, կրթության և արտադրության ինտեգրումը» կետից, 2-րդ՝ «Գիտական և գիտատեխնիկական ոլորտում պետական քաղաքականության իրականացման հիմնական սկզբունքներ» մասի «գ) գիտության և տեխնիկայի բնագավառում մրցակցությանն ու ձեռնարկատիրական գործունեությանն աջակցելը», «դ) գիտական, գիտատեխնիկական և ինովացիոն գործունեության խրախուսումը» կետերից, ՀՀ ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի 1-ին՝ «Մրցունակ գիտական գործունեության համար նպաստավոր ենթակառուցվածքների զարգացում» կետի 3-րդ և 4-րդ նպատակներից: 1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները Գիտական և գիտատեխնիկական գործունեության առաջ շատ հաճախ դրվում են պահանջներ՝ շուկային համապատասխան հետազոտությունների իրականացման և հետազոտության արդյունքների առևտրայնացման ուղղությամբ, սակայն անհրաժեշտ է հաշվի առնել, որ հետազոտության արդյունքներից առևտրայնացման հեռանկար ունեցող հետազոտությունների առանձնացման և դրանց առևտրայնացման, շուկայի պահանջների գնահատման և պահանջի ձևակերպման համար ՀՀ-ում բացակայում են կամ պատշաճ մակարդակի վրա չեն համապատասխան ենթակառուցվածքները, ինչպիսիք են օրինակ՝ տեխնոլոգիաների փոխանցման հիմնարկը և համապատասխան աջակցության հիմնադրամները (հրեշտակ ներդրողներ, վենչուրային հիմնադրամներ, բարձր ռիսկայնությամբ ծրագրերում ներդրումային ազգային հիմնադրամներ): 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Առաջարկվում է՝ - ներդնել նորարարության և գիտատար ձեռնարկատիրության խթանման և աջակցության մեխանիզմներ՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կազմում ստեղծելով գիտությունից՝ նոր բիզնես ոլորտների ստեղծման և բիզնեսից դեպի գիտություն պատվերների իջեցմանն աջակցող կառույց, որը կուսումնասիրի գիտության մեջ առկա և առևտրայնացման պոտենցիալ ունեցող մշակումները և կուղեկցի դրանց առևտրայնացման գործընթացը՝ տրամադրելով խորհրդատվություն և իրավական աջակցություն. - հիմնադրել ռիսկային նախաձեռնությունների գնահատման և դրանցում ներդրումների ազգային հիմնադրամ՝ դրան հատկացնելով մինչև 10 մլրդ դրամ դրամագլխային բյուջե: 2. Միջոցառումների իրականացումից ակնկալվող արդյունքը

	Արդյունքում նախատեսվում է ունենալ՝ - տեխնոլոգիաների փոխանցման ազգային համակարգ, ինչպես նաև մտավոր սեփականության պաշտպանության հուսալի և հասկանալի ընթացակարգեր, որոնք միասին հնարավորություն կընձեռեն գիտությունից բիզնես ճանապարհի կայացման համար. - որոշակի ընթացակարգերով անցած գիտական մշակումների հիման վրա ներդրումների միջոցով ստեղծված նոր բարձր տեխնոլոգիական ընկերություններ, որոնց հաջողության պարագայում ոչ միայն կզարգանա տնտեսությունը, այլ նաև նոր աշխատակիցների ներգրավման նպատակով կառաջանա համապատասխան պատվեր բուհական և գիտահետազոտական համակարգերին:
	27.6 Գիտական և գիտատեխնիկական բնագավառում միջպետական կամ միջգերատեսչական պայմանագրերի կամ համաձայնագրերի կնքում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակն է մրցունակ գիտական գործունեության համար նպաստավոր ենթակառուցվածքների զարգացումը: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին՝ «Գիտական և գիտատեխնիկական ոլորտի պետական քաղաքականության հիմնական նպատակներ» մասի «ա) հանրապետության գիտական ու գիտատեխնիկական ներուժի զարգացումը, դրա ռացիոնալ տեղաբաշխումը և պահպանումը, գիտական ու գիտատեխնիկական կադրերի պատրաստման արդյունավետ համակարգի ձևավորումը, հասարակության, մտավոր ներուժի վերարտադրումը», «է) միջազգային գիտատեխնիկական համակարգին ինտեգրում», «ը) գիտատեխնիկական մշակույթի զարգացումը և տարածումը» կետերից, 2-րդ՝ «Գիտական և գիտատեխնիկական ոլորտում պետական քաղաքականության իրականացման հիմնական սկզբունքներ» մասի «զ) գիտական և գիտատեխնիկական միջազգային համագործակցության զարգացումը», «է) գիտության հասարակական վարկի բարձրացումը գիտական և գիտատեխնիկական կադրերի բարեկեցության, նրանց սոցիալական, տնտեսական և իրավական պաշտպանվածության ապահովումը» կետերից, ՀՀ կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգից, ՀՀ ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի 1-ին՝ «Մրցունակ գիտական գործունեության համար նպաստավոր ենթակառուցվածքների զարգացում» կետի 5-րդ նպատակից: 1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները Ներկայումս ավարտվել են բանակցությունները Գերմանիայի կրթության և հետազոտությունների դաշնային նախարարության հետ, և հայտարարվել է հայ-գերմանական հետազոտական նոր դրամաշնորհային ծրագիր, որի նպատակն է փոխայցելությունների և հետազոտությունների արդյունքում միջազգային դրամաշնորհային խոշոր ծրագրերի կազմումը: Ընթացքի մեջ են հայ-եգիպտական և հայ-շվեյցարական գիտական համագործակցության բանակցությունները, որոնց հաջող ընթացքի պարագայում առաջանալու է գիտնականների փոխայցելությունների ծրագրի կամ համատեղ հետազոտական դրամաշնորհների հայտարարման անհրաժեշտություն: Պլանավորվում է վերսկսել բանակցությունները՝ հայ-ֆրանսիական երկկողմ ծրագրերի իրականացման ուղղությամբ, ինչպես նաև սկսել բանացություններ հայ-կորեական, հայ-ճապոնական, հայ-հնդկական և հայ-չինական համատեղ ծրագրերի ուղղությամբ: Ընթացքում են նաև ԵՄ շրջանակային Հորիզոն Եվրոպա ծրագրին Հայաստանի ասոցացման բանակցությունները: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Առաջարկվում է՝ - միջազգային գործընկերության աշխարհագրության ընդլայնում՝ միջպետական կամ միջգերատեսչական պայմանագրերի հիման վրա. - Եվրոպական շրջանակային ծրագրերի հետ ասոցացում և շրջանակային ծրագրերում Հայաստանի ակտիվ մասնակցության խթանում: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Արդյունքում կունենանք՝ - աշխարհի առավել զարգացած պետությունների հետ համագործակցության ինստիտուցիոնալ մակարդակ, որոնց շրջանակներում կիրականացվեն ինչպես համաշխարհային նշանակության հետազոտություններ, այնպես էլ մի շարք շարժունակության ծրագրեր.

	- կստեղծվեն փորձի փոխանակման նպաստավոր պայմաններ, այնպես էլ հնարավորություն՝ մասնակցելու բազմակողմ խոշոր հետազոտական ծրագրերի և զարգացնելու ներքին կարողունակությունները և ենթակառուցվածքները:
	27.7 Եվրոպական շրջանակային ծրագրերի հետ ասոցացման և շրջանակային ծրագրերում Հայաստանի ակտիվ մասնակցության խթանմանը միտված ծրագրերի իրականացում 1. Միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակն է մրցունակ գիտական գործունեության համար նպաստավոր ենթակառուցվածքների զարգացումը: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին՝ «Գիտական և գիտատեխնիկական ոլորտի պետական քաղաքականության հիմնական նպատակներ» մասի ««ա) հանրապետության գիտական ու գիտատեխնիկական ներուժի զարգացումը, դրա ռացիոնալ տեղաբաշխումը և պահպանումը, գիտական ու գիտատեխնիկական կադրերի պատրաստման արդյունավետ համակարգի ձևավորումը, հասարակության, մտավոր ներուժի վերարտադրումը», է) միջազգային գիտատեխնիկական համակարգին ինտեգրում», «ը) գիտատեխնիկական մշակույթի զարգացումը և տարածումը» կետերից, 2-րդ՝ «Գիտական և գիտատեխնիկական ոլորտում պետական քաղաքականության իրականացման հիմնական սկզբունքներ» մասի «զ) գիտական և գիտատեխնիկական միջազգային համագործակցության զարգացումը», «է) գիտության հասարակական վարկի բարձրացումը գիտական և գիտատեխնիկական կադրերի բարեկեցության, նրանց սոցիալական, տնտեսական և իրավական պաշտպանվածության ապահովումը» կետերից, ՀՀ կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգից, ՀՀ ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի 1-ին՝ «Մրցունակ գիտական գործունեության համար նպաստավոր ենթակառուցվածքների զարգացում» կետի 6-րդ նպատակից: 1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները 2020 թվականին ավարտվեց ԵՄ շրջանակային Հորիզոն 2020 ծրագիրը, որի ասոցացված անդամ էր նաև Հայաստանի Հանրապետությունը, ծրագրի մասնակցության համար ՀՀ կողմից իրականացվել է շուրջ 4 մլն եվրոյի չափով անդամավճարի փոխանցում, ինչի դիմաց ՀՀ կազմակերպությունների կողմից ներգրավվել են 3.8-4.2 մլն եվրոյի չափով դրամաշնորհային միջոցներ: ՀՀ մասնակցությանն աջակցելու նպատակով ստեղծված է Ազգային կոնտակտային անձանց համակարգը, որը գործում է կամավորության սկզբունքով, ինչի հետևանքով բավարար մակարդակի աջակցություն չի ցուցաբերվում մասնակիցներին: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Առաջարկվում է հաստատել շրջանակային ծրագրերին ՀՀ մասնակցությունը խթանելու ծրագրերի փաթեթը, որում հստակեցված կլինեն ինչպես առանձին մարմինների խնդիրները, այնպես էլ սահմանված կլինեն մասնակցության ինտենսիվացման և խրախուսման մեխանիզմները: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Արդյունքում կավելանան ՀՀ ներգրավվող գումարների ծավալները, ինչպես նաև կմեծանա ՀՀ մասնակցության արդյունավետությունը և քանակությունը: Սրա հետևանքով ՀՀ կբերվի միջազգային փորձառությունը և հետազոտական մշակույթը, ինչպես նաև կոնսորցիումային ծրագրերի միջոցով ՀՀ հետազոտողները կաշխատեն համաշխարհային նշանակության հետազոտական ծրագրերի վրա:
28	28.1 Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցությանն ուղղված ծրագրերի իրականացում 28.2 Հետդոկտորական հետազոտությունների ծրագրերի իրականացում 28.3 Արտերկրի լավագույն գիտական կենտրոններում գիտական կազմակերպությունների աշխատակիցների մասնագիտական վերապատրաստման և որակավորման բարձրացման ծրագրերի իրականացում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառումների գլխավոր նպատակն է գիտության ոլորտում աշխատողների որակավորման բարձրացումը և երիտասարդ կադրերի ներգրավումը: Միջոցառումների անհրաժեշտությունը բխում է «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին՝ «Գիտական և գիտատեխնիկական ոլորտի պետական քաղաքականության հիմնական նպատակներ» մասի «ա) հանրապետության գիտական ու գիտատեխնիկական ներուժի զարգացումը, դրա ռացիոնալ տեղաբաշխումը և պահպանումը, գիտական ու գիտատեխնիկական կադրերի պատրաստման

	արդյունավետ համակարգի ձևավորումը, հասարակության, մտավոր ներուժի վերարտադրումը», «է) միջազգային գիտատեխնիկական համակարգին ինտեգրում», «ը) գիտատեխնիկական մշակույթի զարգացումը և տարածումը» կետերից, 2-րդ՝ «Գիտական և գիտատեխնիկական ոլորտում պետական քաղաքականության իրականացման հիմնական սկզբունքներ» մասի «զ) գիտական և գիտատեխնիկական միջազգային համագործակցության զարգացումը», «է) գիտության հասարակական վարկի բարձրացումը, գիտական և գիտատեխնիկական կադրերի բարեկեցության, նրանց սոցիալական, տնտեսական և իրավական պաշտպանվածության ապահովումը» և «ը) հեռանկարային երիտասարդ գիտնականների ընտրության և խրախուսման համակարգի ստեղծումը» կետերից, ՀՀ կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգից, ՀՀ ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի 2-րդ՝ «Գիտության ոլորտում աշխատողների որակավորման բարձրացում և երիտասարդ կադրերի ներգրավում» կետի 1-ին, 2-րդ և 3-րդ նպատակներից: 1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները Ներկայումս ՀՀ գիտության ոլորտի առջև ծառացած կարևորագույն խնդիրներից է գիտական ավանդույթներ ունեցող և միջազգային մակարդակին համապատասխանող գիտական դպրոցների պահպանումը, ինչպես նաև հանրապետության կարիքների բավարարման համար անհրաժեշտ նոր հետազոտական ուղղությունների կայուն զարգացման կադրային հենքի ապահովումը: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ ՀՀ գիտության ոլորտում պետք է ձևավորել և ներդնել գիտական աշխատողի կարիերայի շարունակական զարգացման մեխանիզմ: Այդ կարիերայի քայլերից է ասպիրանտուրան, երբ ուսանողը ձեռք է բերում գիտական աշխատանքով զբաղվելու հմտություններ: Մյուսը՝ հետդոկտորանտուրան է, երբ գիտական թեզը նոր պաշտպանած անձանց գիտական աստիճան ստանալուց հետո 5 տարվա ընթացքում հնարավորություն է տրվում ստանալու հետդոկտորանտի կարգավիճակ որոշակի ժամկետով (որպես կանոն երկու տարի՝ մեկ տարի ավելացնելու հնարավորությամբ)՝ մասնագիտական հմտությունները հետագայում զարգացնելու և գիտական կամ գիտակրթական ոլորտներում ապագա մասնագիտական գործունեության իրականացման հարցում վերջնական որոշում կայացնելու համար: Հաջորդ քայլը գիտական աշխատողի տարբեր տարակարգերի պաշտոններ զբաղեցնելու հնարավորություն ունենալն է, ինչը ենթադրում է բոլոր փուլերում եվրոպական չափանիշներին մոտ աշխատանքի վարձատրություն, մրցութային կարգով աշխատանքային կարիերայի հաջորդ մակարդակին անցնելու հնարավորություն, որը ոչ ձևականորեն հաշվի է առնելու մասնագիտական ձեռքբերումները, և տարբեր կազմակերպությունների մրցույթներին մասնակցելու միջոցով աշխատավայրի ընտրության հնարավորությունը: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները - Ասպիրանտական հետազոտությունների աջակցության նպատակով դրամաշնորհային ծրագրերի իրականացում՝ ինչպես ՀՀ առաջատար խմբերում ներգրավված ասպիրանտների աջակցության համար, այնպես էլ արտերկրի լավագույն կենտրոններում ասպիրանտական կրթության կազմակերպման համար, ինչի արդյունքնում մինչև 2026 թվականը ունենալու ենք ծրագրի շահառու մոտ 400 ասպիրանտ: - Նորավարտ հետազոտողների համար ինքնուրույն աշխատանքի և առավել առաջատար խնդիրների վրա աշխատելու փորձառության ձևավորման նպատակով հետդոկտորական հետազոտությունների ծրագրերի իրականացում, որոնց արդյունքում 2026 թվականին կունենանք աշխարհի լավագույն կենտրոններում առաջատար հետազոտական ծրագրերի մասնակցած առնվազն 200 երիտասարդ հետազոտողներ: - Գիտական կազմակերպությունների աշխատակիցների մասնագիտական վերապատրաստման և որակավորման բարձրացման միջին և երկարաժամկետ ծրագրեր աշխարհի լավագույն գիտական կենտրոններում՝ մինչև 2026 թվականը ապահովելով առնվազն 400 վերապատրաստված գիտաշխատողներ, ովքեր ոչ միայն կտիրապետեն ժամանակակից գիտության մեթոդներին և հմտություններին, այլև կունենան հաստատված կապեր և տարբեր մակարդակի համագործակցություններ իրենց միջազգային գործընկերների հետ: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Գիտության ոլորտում աշխատողների որակավորման բարձրացում և երիտասարդ կադրերի ներգրավումով գիտության ոլորտում սերնդափոխության և զարգացման հիմնահարցի լուծում:
29	29.1 Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրերում ընդգրկված գիտական կադրերի աշխատավարձերի նորմավորման գործընթացի իրականացում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակն է գիտության ոլորտում պետական ֆինանսավորման արդյունավետության բարձրացումը:

Միջոցառումների անհրաժեշտությունը բխում է «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ՝ «Գիտական և գիտատեխնիկական ոլորտում պետական քաղաքականության իրականացման հիմնական սկզբունքներ» մասի «է) գիտության հասարակական վարկի բարձրացումը, գիտական և գիտատեխնիկական կադրերի բարեկեցության, նրանց սոցիալական, տնտեսական և իրավական պաշտպանվածության ապահովումը» և «ը) հեռանկարային երիտասարդ գիտնականների ընտրության և խրախուսման համակարգի ստեղծումը» կետերից, ՀՀ կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշմամբ հաստատված Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման կարգից, ՀՀ ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի 2-րդ՝ «Գիտության ոլորտում աշխատողների որակավորման բարձրացում և երիտասարդ կադրերի ներգրավում» և 3-րդ՝ «Գիտության ոլորտում պետական ֆինանսավորման արդյունավետության բարձրացում» կետերից, 2021 թվականի արտահերթ խորհրդարանական ընտրությունների նախընտրական շրջանում վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանի կողմից հնչեցված նախընտրական խոստումների և ծրագրերի 7-րդ կետից (04.06.21 Արարատի մարզ՝ քաղաքԱրտաշատ):

1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները

Ներկայումս գիտության ոլորտի առջև ծառացած կարևորագույն հիմնախնդիրներից է գիտական կադրերի արդյունավետ վերարտադրության հարցը: Շարունակվում է գիտական կադրերի, առաջին հերթին՝ երիտասարդների զգալի արտահոսք գիտության ոլորտից, այդ թվում նաև՝ արտերկիր: Արդյունքում՝ գիտության ոլորտի կադրային կազմի այդպիսի փոփոխությունները հանգեցնում են գիտության արագ «ծերացման», գիտական հետազոտությունների մասնագիտական մակարդակի որակական փոփոխության, խախտվում է սերնդափոխության սահուն ընթացքը, որն առաջիկա 5 տարիների ընթացքում կարող է ունենալ լուրջ բացասական ազդեցություն գիտական համակարգի վրա, ինչպես նաև՝ երիտասարդ կադրերի ցածր ներհոսք և ցածր կայունություն աշխատատեղում:

Մյուս կողմից մի շարք համաշխարհային առաջատար ոլորտներում ունենք մասնագիտական ներուժի բացակայություն կամ ծայրահեղ ցածր թվաքանակ:

2010 թվականից չի իրականացվել գիտական աշխատողների աշխատավարձի ֆոնդի վերանայում, ինչի հետևանքով, հաշվի առնելով գնաճը և դրամի արժեզրկումը՝ գիտաշխատողների բազային պետական աշխատավարձը գտնվում է շատ ցածր մակարդակի վրա՝ միջինում կազմելով 100 000 ՀՀ դրամ (ներառյալ հարկերը), ինչը գիտության ոլորտը երիտասարդ կադրերի համար դարձնում է ոչ գրավիչ և միևնույն ժամանակ չի մոտիվացնում գիտաշխատողներին պատրաստել նոր կադրեր:

Ելնելով վերը նշված հանգամանքներից, ինչպես նաև՝ նպատակ ունենալով գիտական և գիտատեխնիկական ոլորտում նպաստել գիտության հասարակական վարկի բարձրացմանը, գիտական և գիտատեխնիկական կադրերի բարեկեցության ապահովմանը, նրանց սոցիալական խնդիրներին լուծմանը, որոնք որպես գիտական և գիտատեխնիկական ոլորտի պետական քաղաքականության հիմնական նպատակներ և սկզբունքներ ամրագրված են «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի գ) և 2-րդ մասի է) կետերով՝ ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի 747-Լ որոշմամբ փոփոխություններ և լրացումներ կատարվեցին ՀՀ կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշման մեջ՝ համաձայն որի սկսած 2022 թվականի հունվարի 1-ից ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրերում ընդգրկված գիտական կադրերի աշխատավարձն աստիճանական կավելանա՝ հասնելով հանրապետության մասշտաբով պետական համակարգում համեմատելի և համադրելի արժեքների:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

ՀՀ կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշման համաձայն անհրաժեշտ է 2022 թվականի հունվարի 1-ից ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրերում ընդգրկված գիտական կադրերի բազային աշխատավարձը նորմավորել՝ ըստ վերջիններիս տարակարգի :

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

2021 թվականին գիտական կադրերի ատեստավորման արդյունքների հիման վրա գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրերում ընդգրկված գիտական կադրերի աշխատավարձերի աստիճանական ավելացում՝ 2025 թվականին հասցնելով հետևյալ ցուցանիշների՝

լաբորանտ կամ ճարտարագետ՝ 138. 3 հազ. դրամ,

ավագ լաբորանտ կամ ավագ ճարտարագետ՝ 179. 0 հազ. դրամ,

կրտսեր գիտաշխատող՝ 210. 0 հազ. դրամ,

գիտաշխատող՝ 276. 0 հազ. դրամ,

ավագ գիտաշխատող՝ 343. 0 հազ. դրամ,

	առաջատար գիտաշխատող՝ 443. 8 հազ. դրամ, գլխավոր գիտաշխատող՝ 552. 9 հազ. դրամ, գիտական խմբի ղեկավար՝ 410. 0 հազ. դրամ, գիտական ստորաբաժանման ղեկավար՝ 477. 2 հազ. դրամ:
	29.2 «Գիտական կադրերի համապետական ատեստավորման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունում 29.3 «Գիտական կազմակերպությունների կատարողականի գնահատման մեթոդաբանությունը և կատարողականի հիման վրա միջոցառումների իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակն է գիտության ոլորտում պետական ֆինանսավորման արդյունավետության բարձրացումը: Միջոցառումների անհրաժեշտությունը բխում է «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածից, ՀՀ կառավարության 2001 թվականի հոկտեմբերի 3-ի N 935 որոշմամբ հաստատված ՀՀ գիտական կազմակերպություններում գիտական կադրերի որակավորման կարգից և գնահատման չափանիշներից, ՀՀ ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի 3-րդ՝ «Գիտության ոլորտում պետական ֆինանսավորման արդյունավետության բարձրացում» կետի 2-րդ և 3-րդ նպատակներից: 1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները Վերջին շրջանում ՀՀ գիտության ոլորտում տեղի ունեցող բարեփոխումները ենթադրում են պետական բյուջեից և տնտեսության մասնավոր հատվածից գիտության ոլորտին հատկացվող ֆինանսական ծավալների ավելացում: Այդպիսի մոտեցումը պայմանավորված է ինչպես ժամանակակից տնտեսության և հասարակության զարգացման գործում գիտության առանցքային դերով, այնպես էլ հանրապետությունում գիտելիքահենք տնտեսություն ստեղծելու համար անհրաժեշտ բարձր մասնագիտական որակավորում ունեցող կադրերի պատրաստման հրամայականով: Գիտության ոլորտի ֆինանսավորման ավելացումը զգալիորեն մեծացնելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել գիտության ոլորտում պետական ֆինանսավորման արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներ: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Գիտության ոլորտում պետական ֆինանսավորման արդյունավետության բարձրացումն իրականացվելու է հետազոտությունների միջազգային չափանիշների սահմանմամբ և կատարողականի գնահատման մեխանիզմների ներդրմամբ: Այս խնդրի լուծման համար իրականացվող ծրագրային նպատակներն են՝ - Գիտական կադրերի համապետական ատեստավորում՝ առավել անարդյունավետ կադրերի փոխարեն առավել խոստումնալից և հեռանկարային կադրերի ներգրավման համար: - Գիտական կազմակերպությունների բազային ֆինանսավորման մոդելի վերանայում՝ մինչև 5 տարվա ծրագրային ֆինանսավորման մոդելի ներդրմամբ և առավել արդյունավետ կազմակերպություններում բոնուսային ծրագրերի իրականացում՝ կադրային բազայի ընդլայնման և նոր ստորաբաժանումների ստեղծման կամ նոր կադրերի ներգրավման նպատակով: Ցածր արդյունավետությամբ աշխատող կազմակերպությունների համար պատասխանատվության բազմամակարդակ և բազմաբաղադրիչ մեխանիզմների ներդրում՝ ադմինիստրատիվ պատասխանատվությունից մինչև կազմակերպությանը հատկացվող ֆինանսական ծավալների կրճատում: - Մրցութային ֆինանսավորմամբ ծրագրերի նպատակների վերանայում և արդյունքային ցուցանիշների սահմանում, ինչի արդյունքում փոքրամասշտաբ ծրագրերի փոխարեն կսկսվեն իրականացվել ավելի խոշորածավալ և որակի ավելի բարձր չափանիշներով հետազոտական ծրագրեր այդ թվում նաև հետազոտությունների մի շարք առաջատար/գերակա ուղղություններով՝ ստեղծելով ներքին ռեսուրս ապագայի տեխնոլոգիաների յուրացման, ինչպես նաև այդ տեխնոլոգիաների մշակման և զարգացման համար: Այս նպատակով ներգրավվելու են հավելյալ միջոցներ ինչպես պետական բյուջեից, այնպես էլ ԵՄ և միջազգային այլ ծրագրերից: Այս շարքում վերանայվելու են նաև կիրառական արդյունքին միտված կամ երկակի նշանակության ծրագրերի ծավալներն ու տևողությունները՝ հնարավորություն ընձեռելով որոշակի առևտրայնացման կամ հետազոտություններից դեպի փորձարարական մշակումների փուլ անցնելու պոտենցիալ ունեցող ծրագրերի հավելյալ ֆինանսավորում: - Մրցութային մի շարք նոր ծրագրերի իրականացում՝ Սփյուռքի ներուժի առավել արդյունավետ ներգրավման նպատակով՝ վերաբնակեցման կամ հեռավար ղեկավարվող լաբորատորիաների հիմնադրման նպատակով՝ նախատեսելով մինչև 2026 թվականն ունենալ ՀՀ վերադարձած շուրջ 60 գիտնական և շուրջ 60 հեռավար ղեկավարվող գիտական խմբեր, որոնք բացի գիտական ժամանակակից հետազոտություններից կիրականացնեն նաև բարձր տեխնոլոգիական ոլորտում ստեղծագործական աշխատանքի ընդունակ կադրերի պատրաստում: - Մինչև 2023 թվականը գիտության ոլորտի կառավարման միասնական էլեկտրոնային հարթակի ներդրում՝ ռեյտինգային համակարգի ներմուծմամբ, որը հնարավորություն կընձեռի առցանց ռեժիմով բոլոր

մակարդակներում՝ անհատ հետազոտողից մինչև գիտական կազմակերպություն իրականացնել արդյունավետության մշտադիտարկում և ունենալ խնդիրների վաղաժամ վերհանման և հասցեագրման գործիքակազմ, ինչը նաև հնարավորություն կընձեռի ներդնել խրախուսման նոր և բազմաշերտ մեխանիզմներ:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը
- Հաստատված է գիտական կադրերի համապետական ատեստավորման ծրագիրը, որը հիմք է հանդիսանալու արդյունավետության բարձր պահանջներին համապատասխանող գիտական աշխատողների տարակարգման և ըստ գիտական աշխատողների պաշտոնների անվանացանկի գիտական կազմակերպություններին հատկացվող ֆինանսավորման վերանայման համար:
- Հաստատված է կազմակերպությունների կատարողականի գնահատման մեթոդաբանությունը և իրականացված է գիտական կազմակերպությունների կատարողականի բազային գնահատում:
Առավել բարձր կատարողականով կազմակերպություններում բազային ֆինանսավորման 5-ամյա մեխանիզմի ներդրում: Գիտական կադրերի պատրաստման բոնուսային ծրագրի իրականացում բազային ֆինասավորման շրջանակներում:
- Փոքրամասշտաբ ծրագրերի փոխարեն իրականացվում են ավելի խոշորածավալ, վերջնարդյունքի ավելի բարձր չափանիշներով հետազոտական ծրագրեր, այդ թվում՝ նաև հետազոտությունների առաջատար/գերակա ուղղություններով:
- Առկա են ՀՀ վերադարձած շուրջ 60 գիտնական և շուրջ 60 հեռավար ղեկավարվող գիտական խմբեր, որոնք բացի գիտական ժամանակակից հետազոտություններից իրականացնում են նաև բարձր տեխնոլոգիական ոլորտում ստեղծագործական աշխատանքի ընդունակ կադրերի պատրաստում:
- Ներդրված են առցանց ռեժիմով բոլոր մակարդակներում՝ անհատ հետազոտողից մինչև գիտական կազմակերպություն արդյունավետության մշտադիտարկման գործընթացի մեխանիզմներ, առկա է խնդիրների վաղաժամ վերհանման և հասցեագրման գործիքակազմ, 2023 թվականին թողարկված է լավարկված և օգտագործողին հարմարեցված տարբերակը:

29.4 Վերաինտեգրման կամ հեռավար ղեկավարվող լաբորատորիաների ստեղծում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը
Միջոցառման գլխավոր նպատակն է գիտության ոլորտում պետական ֆինանսավորման արդյունավետության բարձրացումը:
Միջոցառման անհրաժեշտությունը բխում է «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին՝ «Գիտական և գիտատեխնիկական ոլորտի պետական քաղաքականության հիմնական նպատակներ» մասի «ա) հանրապետության գիտական ու գիտատեխնիկական ներուժի զարգացումը, դրա ռացիոնալ տեղաբաշխումը և պահպանումը, գիտական ու գիտատեխնիկական կադրերի պատրաստման արդյունավետ համակարգի ձևավորումը, հասարակության, մտավոր ներուժի վերարտադրումը», «է) միջազգային գիտատեխնիկական համակարգին ինտեգրում», «թ) գիտության ժամանակակից ենթակառուցվածքի և տեղեկատվական ապահովման համակարգի ձևավորում» կետերից, 2-րդ՝ «Գիտական և գիտատեխնիկական ոլորտում պետական քաղաքականության իրականացման հիմնական սկզբունքներ» մասի «զ) գիտական և գիտատեխնիկական միջազգային համագործակցության զարգացումը», «է) գիտության հասարակական վարկի բարձրացումը գիտական և գիտատեխնիկական կադրերի բարեկեցության, նրանց սոցիալական, տնտեսական և իրավական պաշտպանվածության ապահովումը» և «ը) հեռանկարային երիտասարդ գիտնականների ընտրության և խրախուսման համակարգի ստեղծումը» կետերից, ՀՀ կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգից, ՀՀ ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի 3-րդ՝ «Գիտության ոլորտում պետական ֆինանսավորման արդյունավետության բարձրացում» կետի 5-րդ նպատակից:

1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները
Վերաինտեգրման դրամաշնորհային ծրագրի իրականացում՝ նպատակ ունենալով պայմաններ ստեղծել Սփյուռքի որոշակի հաջողությունների հասած հայ գիտնականների վերադարձի համար:
Հեռավար լաբորատորիաների ստեղծում՝ նպատակ ունենալով ներգրավել Սփյուռքի հեղինակավոր գիտնականներին՝ հեռավար եղանակով ՀՀ-ում ձևավորված խմբերի ղեկավարման համար:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները
Վերաինտեգրման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսվում է յուրաքանչյուր տարի 3-5 տարով ֆինանսավորել մինչև 10 հետազոտական խմբեր՝ արտերկրի առաջատար կենտրոններում աշխատող և ՀՀ

	վերադարձած հայազգի գիտնականների ղեկավարությամբ՝ ըստ ոլորտային և մասնագիտական առաջնահերթությունների (ներառյալ հումանիտար և հասարակագիտական ոլորտները): Հեռավար լաբորատորիաների ստեղծման արդյունքում յուրաքանչյուր տարի նախատեսվում է մինչև 20 հետազոտական խմբեր՝ արտերկրի առաջատար կենտրոնում աշխատող (համա)ղեկավարի ղեկավարությամբ (տվյալագիտություն, արհեստական բանականություն, այլ soft գիտություններ): 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Որպես արդյունք կունենանք՝ գիտական նոր գերակա ուղղությունների ստեղծում և զարգացում, միջազգային գիտելիքի ներմուծում Հայաստան, բարձր որակավորում ունեցող առնվազն 30 երիտասարդ գիտաշխատող (տարվա կտրվածքով), առնվազն 20 Q1 կամ Q2 պարբերականներում տպագրություններ (տարվա կտրվածքով), գիտական նոր ուղղությունների ստեղծում և զարգացում, բարձր որակավորում ունեցող առնվազն 60 երիտասարդ գիտաշխատող, առնվազն 60 Q1 կամ Q2 պարբերականներում տպագրություններ:
	29.5 Գիտության ոլորտի կառավարման միասնական էլեկտրոնային հարթակի ներդրում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակն է գիտության ոլորտում պետական ֆինանսավորման արդյունավետության բարձրացումը: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի 3-րդ՝ «Գիտության ոլորտում պետական ֆինանսավորման արդյունավետության բարձրացում» կետի 6-րդ նպատակից: 1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները Ներկայումս առկա չէ գիտական կազմակերպությունների և բուհերի գիտական ստորաբաժանումների գործունեության վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն պարունակող առցանց համակարգ, որի բացակայությունը դժվարություններ է առաջացնում գիտական կազմակերպությունների և բուհերի գիտական ստորաբաժանումների կողմից կատարվող գիտական թեմաների և (կամ) ծրագրերի շրջանակներում արդյունավետության մշտադիտարկման իրականացման գործում: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Առաջարկվում է մինչև 2023 թվականը ներդնել գիտության ոլորտի կառավարման միասական էլեկտրոնային հարթակ ռեյտինգային համակարգի ներմուծմամբ: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Գիտության ոլորտի կառավարման միասնական էլեկտրոնային հարթակի ներդրումը՝ ռեյտինգային համակարգի ներմուծմամբ՝ հնարավորություն կընձեռի առցանց ռեժիմով բոլոր մակարդակներում (անհատ հետազոտողից մինչև գիտական կազմակերպություն) իրականացնել արդյունավետության մշտադիտարկում և ունենալ խնդիրների վաղաժամ վերհանման և հասցեագրման գործիքակազմ, որը նաև հնարավորություն կընձեռի ներդնելու խրախուսման նոր և բազմաշերտ մեխանիզմներ:
	29.6 Հասարակական, հայագիտության և հումանիտար գիտությունների բնագավառների հետազոտությունների աջակցությանն ուղղված ծրագրերի իրականացում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակն է գիտության ոլորտում պետական ֆինանսավորման արդյունավետության բարձրացումը: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին՝ «Գիտական և գիտատեխնիկական ոլորտի պետական քաղաքականության հիմնական նպատակներ» մասի «ժ) հայագիտության զարգացմանը նպաստելը» կետից, ՀՀ կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգից, ՀՀ ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի 3-րդ՝ «Գիտության ոլորտում պետական ֆինանսավորման արդյունավետության բարձրացում» կետի 7-րդ նպատակից:

1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները
Հասարակական, հայագիտության և հումանիտար գիտությունների ոլորտին ներկայումս հատկացվում է 2,204,887.6 հազ. դրամ պետական հատկացումներ, սակայն միջազգային ինդեքսավորվող գիտական պարբերականներում տպագրությունների քանակությունը մնում է բավական ցածր:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները
Ոլորտի զարգացման միջոցառումների ծրագրի հաստատմամբ կամրագրվի ոլորտում միջոցառումների իրականացման ճանապարհային քարտեզը, որի միջոցով կիրականացվեն ոլորտի մրցունակության բարձրացմանն ուղղված ծրագրեր՝ այդ թվում տեղական պարբերականներից մի քանիսը միջազգային շտեմարաններում ինդեքսավորելու ծրագիր, վերջնարդյունքի և հետազոտության որակի բարձր մակարդակի սահմանմամբ իրականացվելու են մի շարք թիրախային ծրագրեր՝ արդյունքում բնագավառի ֆինանսավորման ծավալը 2026 թվականին հասցնելով շուրջ 5 միլիարդ դրամի:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը
Միջոցառումների արդյունքում կավելանա ոլորտի միջազգային տեսանելիությունը, տպագրվող աշխատանքների մասով միջազգային պարբերականներում կունենանք քանակական և որակական էական աճ:

29.7 Երկակի նշանակության հետազոտությունների աջակցությանն ուղղված ծրագրի իրականացում
29.8 Կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված գիտական նախագծերի աջակցություն
29.9 Գերակա ուղղություններով հետազոտությունների աջակցությանն ուղղված ծրագրերի իրականացում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը
Միջոցառումների անհրաժեշտությունը բխում է «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին՝ «Գիտական և գիտատեխնիկական ոլորտի պետական քաղաքականության հիմնական նպատակներ» մասի «բ) տնտեսության զարգացման նպատակով գիտության և տեխնիկայի նվաճումների ներդրման խրախուսումը», «դ) մարդու, հասարակության և պետության անվտանգությանն աջակցելը», «ե) գիտության, կրթության և արտադրության ինտեգրումը» կետերից, 2-րդ՝ «Գիտական և գիտատեխնիկական ոլորտում պետական քաղաքականության իրականացման հիմնական սկզբունքներ» մասի «բ) հիմնարար գիտական հետազոտությունների, գիտության և տեխնիկայի գերակա ուղղությունների զարգացման ապահովումը», «գ) գիտության և տեխնիկայի բնագավառում մրցակցությանն ու ձեռնարկատիրական գործունեությանն աջակցելը», «դ) գիտական, գիտատեխնիկական և ինովացիոն գործունեության խրախուսումը» կետերից, ՀՀ կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգից, ՀՀ ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի 3-րդ՝ «Գիտության ոլորտում պետական ֆինանսավորման արդյունավետության բարձրացում» կետի 8-րդ և 9-րդ նպատակներից: Վերջին շրջանում ՀՀ գիտության ոլորտում տեղի ունեցող բարեփոխումները ենթադրում են պետական բյուջեից և տնտեսության մասնավոր հատվածից գիտության ոլորտին հատկացվող ֆինանսական ծավալների ավելացում: Այդպիսի մոտեցումը պայմանավորված է ժամանակակից տնտեսության և հասարակության զարգացման գործում գիտության առանցքային դերի գիտակցմամբ, ինչպես նաև հետճգնաժամային ժամանակահատվածում կայուն զագացման հասնելու համար գիտության բացառիկ դերի ընկալմամբ:
Միջոցառման իրականացումը կնպաստի ՀՀ կառավարության՝ «2050 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՌԱՋՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ» ծրագրի « ԳԻՏԵԼԻՔԱՀԵՆՔ (ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ) ՀԱՅԱՍՏԱՆ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 15-ի 15.1.1 ցուցանիշին հասնելուն:

1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները
Ներկայումս ՀՀ գիտության կոմիտեի կողմից իրականացվում են երկակի նշանակության ծրագրերի աջակցության և կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված ծրագրերի աջակցության մրցութային ծրագրերը, որոնց պայմանների էական վերանայում դեռևս չի իրականացվել: Ներկայումս կարիք կա իրականացնել ինչպես վերջնարդյունքին ներկայացվող պահանջները, այնպես էլ հայտերի ընտրության և ֆինանսավորման պայմանները: Անհրաժեշտ է ստեղծել նաև հաջողությամբ ավարտված ծրագրերի հետագա զարգացման համար հնարավորություններ և մեխանիզմներ: Առանձնահատուկ կարևորություն է ստանում Գիտության և տեխնոլոգիաների զարգացման գերակա ուղղություններով հատուկ ծրագրերի իրականացումը, որոնք միտված կլինեն նշված ուղղություններում ՀՀ մրցունակության ստեղծմանը կամ զարգացմանը:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

	Երկրի տնտեսության պահանջներից բխող, ինչպես նաև երկակի նշանակության բարձր տեխնոլոգիական մրցունակ արտադրանքի ստեղծմանն ուղղված հետազոտությունների խթանման նպատակով Երկակի նշանակության ծրագրերի իրականացման աջակցության և Կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված գիտական նախագծերի հայտերի մրցույթների պայմանների բարելավում, մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված թեմաների քանակի ավելացում, հետազոտական խմբի միջին ամսական աշխատավարձի բարձրացում: Հավելյալ ֆինանասական միջոցների տրամադրում հետևյալ առաջատար ուղղություններին՝ տվյալագիտություն, արհեստական բանականություն, քվանտային տեխնոլոգիաներ, խելացի գյուղատնտեսություն, կենսատեխնոլոգիա, նյութագիտություն, քիմիա, ֆիզիկա, մաթեմատիկա և գերակա ճանաչված այլ ուղղություններին, ինչպես նաև բուհական-հետազոտական կենտրոնների, շահագրգիռ խմբերի և կազմակերպությունների ներգրավում: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Կավելացվեն պաշտպանական և քաղաքացիական նշանակության հետազոտությունների իրականացման համար հատկացվող միջոցների ծավալները և ծրագրերի տևողությունը, ինչպես նաև կստեղծեն հաջողությամբ ավարտված ծրագրերի հետագա զարգացման մեխանիզմներ: Կբարելավվեն Կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված գիտական նախագծերի հայտերի մրցույթի պայմանները, կավելացվի մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված թեմաների քանակը նախորդ մրցույթի թեմաների քանակի համեմատ, և կբարձրացվի հետազոտական խմբի միջին ամսական աշխատավարձը և հետազոտության համար անհրաժեշտ նյութերի ձեռքբերմանն ուղղված միջոցները, կստեղծվեն հաջողված ծրագրերը դեպի առևտրայնացման հետագա մակարդակների տեղափոխման մեխանիզմներ: Հավելյալ ֆինանսական միջոցներ կտրամադրվեն գերակայություններով սահմանված և հետևյալ առաջատար ուղղություններին՝ տվյալագիտություն, արհեստական բանականություն, քվանտային տեխնոլոգիաներ, խելացի գյուղատնտեսություն, կենսատեխնոլոգիա, նյութագիտություն, քիմիա, ֆիզի կա, մաթեմատիկա և գերակա ճանաչված այլ ուղղություններին:
30	30.1 ՀՀ կառավարության 09.07.2001թ. թիվ 615 որոշմամբ հաստատված «ՀՀ-ում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգ»-ի փոփոխությունների նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակն է ապահովել Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանների շնորհման և կոչումների շնորհման արդյունավետ համակարգ: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի Գիտության ոլորտը կարգավորող իրավական դաշտի կատարելագործման 5-րդ կետից, Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին կետի է ենթակետից: Միջոցառման նպատակներից մեկը կարգում առկա դրույթների հստակեցումն է, որը հնարավորություն կընձեռի տարընթերցումներից խուսափելու: Կանոնակարգի վերանայման և փոփոխման անհրաժեշտությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Կանոնակարգում գիտական կոչման շնորհման համար անհրաժեշտ պայմաններից մեկը «գիտամանկավարժական» ստաժի առկայությունն է: Վերջինս խնդրահարույց է այն առումով, որ գիտամանկավարժական ստաժ հասկացությունը սահմանված չէ որևէ իրավական ակտով և հաշվարկման համար հիմք է տալիս սուբյեկտիվ մոտեցման և տարակարծության համար: Գիտական կոչման շնորհման չափանիշները ընդհանուր առմամբ ունեն վերանայման կարիք, սակայն որոշ բնագավառներ՝ մշակույթ, սպորտ, ճարտարապետություն, կարգավորվում են տարբերակված չափանիշների հիման վրա: Վերջիններս ունեն հստակեցման կարիք: 1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Այսօր անհրաժեշտություն կա վերանայելու նշված կարգը՝ կոչումների շնորհման չափանիշները հստակեցնելու, կարգում նոր ձևակերպումներ տալու, դրույթների սուբյեկտիվ մեկնաբանման և կոռուպցիոն ռիսկերի նվազեցման առումով: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Բուհերի, գիտական կազմակերպությունների և անհատ գիտնականների ներգրավմամբ հարկավոր է վեր հանել կոչումների շնորհման կարգում առկա բազմիմաստ դրույթները և դրանց այնպիսի ձևակերպումներ տալ, որոնք տարընթերցումների առիթ չեն տա: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Միջոցառումների արդյունքում նախատեսվում է ունենալ Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգ, որն էապես զերծ կլինի տարընթերցումների առիթ տվող դրույթներից՝ ի հեճուկս գործող կարգի:

30.2 «Հայաստանի Հանրապետության գիտական աստիճաններ և կոչումներ շնորհելու մասնագիտությունների անվանացանկերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի հունիսի 15-ի թիվ 13-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» հրամանի նախագծի ներկայացում ՀՀ ԿԳՄՍ նախարարին

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը
Միջոցառման գլխավոր նպատակն է ապահովել Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանների շնորհման և կոչումների շնորհման արդյունավետ համակարգ:
Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի Գիտության ոլորտը կարգավորող իրավական դաշտի կատարելագործման 5-րդ կետից, «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 15.2-րդ հոդվածի 3-րդ կետի 1-ին ենթակետից: Միջոցառման նպատակն է գիտական աստիճանների և գիտամանկավարժական կոչումների շնորհման անվանացանկերի համապատասխանեցումը միջազգային արդի պահանջներին և սկզբունքներին՝ հաշվի առնելով տեղական հնարավորությունները:
Գիտական աստիճանների և գիտամանկավարժական կոչումների շնորհման անվանացանկերի վերանայումը թելադրված է ժամանակի պահանջով, ըստ որի գիտության որոշ ճյուղերի նկատմամբ հետաքրքրության, ինչպես նաև տվյալ ճյուղում աշխատող գիտնականների թվի աճը կամ նվազումը բերում է արդի գիտահետազոտական ուղղությունների և աստիճանաշնորհման ու կոչումների շնորհման անվանացանկերի անհամապատասխանության և վերջիններիս վերանայումն ու լրացումն անհրաժեշտ են դառնում գործընթացի կազմակերպման արդյունավետության բարձրացման տեսանկյունից:

1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները
Անհրաժեշտ է վերանայել և արդիականացնել գիտական աստիճանների և գիտական կոչումների շնորհման անվանացանկերը՝ մասնագիտական խորհուրդներում մասնագիտության թվանիշին համապատասխան մասնագիտական կազմ հաստատելու և գիտական թեմաները ճշգրիտ թվանիշով հաստատելու նպատակով: Ներկա պահին առկա են բազմաթիվ թվանիշեր, որոնց աստիճանաշնորհման բնագավառի կամ մասնագիտության անվանման շտկման, լրացման կամ փոփոխման կարիք կա: Այս հարցը աստիճանաշնորհման գործընթացում առկա խնդիրներից մեկն է:

1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները
Մասնագիտական խորհուրդների անդամների ներգրավվածությամբ վերանայել և վերահաստատել գիտական աստիճանների և գիտամանկավարժական կոչումների շնորհման անվանացանկերը:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը
Միջոցառումների արդյունքում նախատեսվում է ունենալ Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանների և գիտական կոչումների շնորհման նոր անվանացանկեր, որոնք կհամապատասխանեն տվյալ մասնագիտությամբ ունեցած պոտենցիալին և գիտնականների թվին:

30.3 Հայաստանի Հանրապետությունում հրատարակվող գիտական պարբերականներին առաջադրվող պայմանների վերամշակում և հաստատում ԲՈԿ-ի նախագահի հրամանով

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը
Միջոցառման գլխավոր նպատակն է ապահովել Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանների շնորհման և կոչումների շնորհման արդյունավետ համակարգ:
Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի Գիտության ոլորտը կարգավորող իրավական դաշտի կատարելագործման 4-րդ կետից, ՀՀ կառավարության 08.08.1997թ. «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 327 որոշման 10-րդ կետի 1-ին պարբերությունից: «Ատենախոսությունների հիմնական դրույթների արտացոլման համար ընդունելի գիտական պարբերականների առջև դրված առկա պահանջները չեն նպաստում միջազգային համագործակցությանը, միջազգային գրախոսմանը և որակյալ հոդվածների ներգրավմանը:

	1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները ՀՀ-ում հրատարակվող գիտական պարբերականների առջև դրված պայմանների վերամշակումը խիստ կարևոր է, քանի որ ատենախոսությունների հիմնական դրույթները արտացոլվում են ԲՈԿ-ի կողմից ընդունելի գիտական պարբերականներում որպես հոդվածներ: Այդ ցանկում ընդգրկված պարբերականների որակի բարձրացումը անդրադառնալու է նաև ատենախոսությունների որակի բարձրացման վրա: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Գիտական պարբերականների առջև դրված պայմանների վերամշակումը հարկավոր է կազմակերպել պարբերականների խմբագիրների մասնակցությամբ՝ հաշվի առնելով միջազգային գիտական շտեմարաններում պարբերականների ընդգրկման համար առաջադրվող պայմանները: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Արդյունքում կունենանք վերամշակված պայմաններ, որոնք կնպաստեն գիտական պարբերականների ընդգրկմանը միջազգային գիտական շտեմարաններում: Բացի այդ նոր պայմաններին բավարարող գիտական պարբերականներում տպագրվող հոդվածների որակը միջինում կբարձրանա, ինչը նաև կխթանի ատենախոսությունների որակի բարձրացմանը:
	30.4 «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի N 327 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակն է ապահովել Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանների շնորհման և կոչումների շնորհման արդյունավետ համակարգ: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի Գիտության ոլորտը կարգավորող իրավական դաշտի կատարելագործման 5-րդ կետից, «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին կետի է ենթակետից: Միջոցառման իրականացման նպատակներից են համաղեկավարի ինստիտուտի ներդրումը, միջազգային համագործակցության խթանումը, ազդեցության գործակցով պարբերականներում հոդվածներ ունեցող թեկնածուներին գիտական ղեկավարման թույլտվության ընձեռումը: 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Առկա «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ը հնարավորություն չի ընձեռում համաղեկավար ունենալու: Բացի այդ թեկնածուները գիտական ղեկավար կարող են նշանակվել, երբ ունեն համապատասխան գիտական բնագավառում առնվազն 30 տպագիր գիտական աշխատանքներ, ինչը թույլ չի տալիս ավելի քիչ քանակով, բայց ազդեցության գործակից ունեցող պարբերականներում հրատարակումներ ունեցող թեկնածուներին գիտական ղեկավար նշանակվել: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Բուհերի, գիտական կազմակերպությունների և անհատ գիտնականների ներգրավմամբ հարկավոր է վեր հանել գիտական աստիճանաշնորհման կանոնակարգում առկա նշվածներից զատ խնդիրները և մշակել կանոնակարգի այնպիսի դրույթներ, որոնք կվերացնեն առկա խոչընդոտները միջազգային համագործակցության համար, հենված կլինեն ոչ միայն քանակական, այլ նաև որակական ցուցանիշների վրա: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Միջոցառման իրականացման հետևանքով ավելի սերտ համագործակցության հնարավորություն կստեղծվի սփյուռքում գտնվող հայ գիտնականների հետ:

31	31.1 Գրագողության դեմ պայքարի համակարգչային ծրագրի նոր ֆունկցիոնալությամբ համալրում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակն է գրագողության դեմ պայքարի արդյունավետության բաձրացումը: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի Գիտության ոլորտը կարգավորող իրավական դաշտի կատարելագործման 5-րդ կետին առնչվող փոփոխությունների իրագործման տեխնոլոգիական ապահովումից: Առկա են գրագողության դեպքերը կոծկելու համար օգտագործվող արդեն ստանդարտ դարձած մոտեցումներ: Կիրառելով այդ մոտեցումները որոշ դեպքերում հաջողվում է խոչընդոտել գործող համակարգչային ծրագրի կողմից գրագողության առկայության հայտնաբերումը: Միջոցառման իրականացման նպատակն է այդ բացի լրացումը գրագողության դեմ պայքարի համակարգչային ծրագրում: 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Գրագողության դեմ պայքարի համակարգչային ծրագիրը արդյունավետ է եղել գրագողության դեպքերի բացահայտման գործում, սակայն տարիների ընթացքում մշակվել այն շրջանցելու մեթոդներ, ինչը նվազեցրել է այդ համակարգչային ծրագրի արդյունավետությունը: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Անհրաժեշտություն է առաջացել վերազինել համակարգչային ծրագիրը նոր ֆունկցիոնալությամբ, ինչը ոչ արդյունավետ կդարձնի գրագողությունը կոծկելու հայտնի մեթոդների կիրառումը: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Արդյունքում կկարողանանք կանխել գիտական աստիճանի հաստատումը ատենախոսության մեջ այլ աղբյուրներից առանց հղումների փոխառված նյութեր պարունակելու դեպքում, նույնիսկ երբ կիրառված կլինեն որոշ հնարքներ գրագողությունը կոծկելու համար:
Մշակույթ	
32	32.1 «Թանգարանների և Հայաստանի Հանրապետության թանգարանային ֆոնդի մասին» ՀՀ օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակն է մշակութային ժառանգության բնագավառի օրենսդրության կատարելագործումը: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Սահմանադրության 15-րդ, «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» ՀՀ օրենքի 3-րդ, 11-րդ, 16-րդ, 20-րդ և 22-րդ հոդվածներից, ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված՝ ՀՀ կառավարության ծրագրի «4.9 Մշակույթ» բաժնի մշակութային ժառանգության ոլորտի 2-րդ կետից: «Թանգարանների և Հայաստանի Հանրապետության թանգարանային ֆոնդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մշակումը պայմանավորված է թանգարանների ստեղծման, գործունեության, գործունեության դադարեցման և հավատարմագրման հետ կապված հարաբերությունները կարգավորելու, ինչպես նաև թանգարանների տեսակները, գործառույթները սահմանելու, հանրապետության թանգարանային ֆոնդի ձևավորման, համալրման, հաշվառման, պահպանության և անվտանգության օրենսդրական հիմքերն ապահովելու անհրաժեշտությամբ: 1.1Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Նյութական և ոչ նյութական մշակութային ժառանգության վերաբերյալ արդեն ընդունվել են Հայաստանի Հանրապետության օրենքներ («Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին», «Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին», «Արխիվային գործի մասին»), որոնք կարգավորում են մեր մշակութային ժառանգության որոշակի բնագավառները: Սակայն ներկայում կարգավորված չեն մշակութային ժառանգության մաս կազմող Հայաստանի Հանրապետության թանգարանային ֆոնդի, ինչպես նաև յուրաքանչյուր թանգարանի ֆոնդի օգտագործման, տնօրինման, թանգարանների ստեղծման (անկախ սեփականության ձևից), հավատարմագրման և այլ խնդիրները: Ներկայում

	ՀՀ մշակույթի նախարարության համակարգի թանգարանների գործունեությունը կարգավորվում է ՀՀ մշակույթի նախարարի հրամաններով հաստատած իրավական ակտերով: Կիրարկման մեջ են թվով 6 հրամաններ: 1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Ոլորտում առկա խնդիրների լուծման կարևոր մեխանիզմը օրենսդրական դաշտի կարգավորումն է, որը հնարավոր է «Թանգարանների և Հայաստանի Հանրապետության թանգարանային ֆոնդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունմամբ: Կկարգավորեն թանգարաններում հաշվառված մշակութային ժառանգության պահպանության գործընթացներում ծագող իրավահարաբերությունները, ներառյալ՝ մշակութային արժեքների նույնականացման, փաստաթղթավորման, հետազոտման, կիրառման, վերականգնման, այդ արժեքների նկատմամբ սեփականության իրավունքի պաշտպանությունը: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Նախագծի ընդունման արդյունքում կապահովվի թանգարանային բնագավառում պետական միասնական քաղաքականության կիրարկումը, թանգարանների ստեղծման, գործունեության, գործունեության դադարեցման հետ կապված իրավահարաբերությունների կարգավորում, թանգարանների տիպաբանության սահմանում, թանգարանային առարկաների համալրման, հաշվառման, պահպանության և պաշտպանության իրավական հիմքերի կարգավորում: Օրենքը կսահմանի այդ ոլորտում ֆիզիկական ու իրավաբանական անձանց իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև պետական մարմինների իրավասությունները:
	32.2 ««Գրադարանների և գրադարանային գործի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակն է մշակութային ժառանգության բնագավառի օրենսդրության կատարելագործումը: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված՝ ՀՀ կառավարության ծրագրի «4.9 Մշակույթ» բաժնի մշակութային ժառանգության ոլորտի 2-րդ կետից: Միջոցառման նպատական է գրադարանային ոլորտի համաչափ զարգացման, համայնքային և պետական գրադարանների միջև խզված կապերի վերականգնման, ինչպես նաև համահայաստանյան գրացուցակների ամբողջացման, գրադարանային առարկաների համալրման, հաշվառման, պահպանության և պաշտպանության հետ կապված օրենսդրական դաշտի կատարելագործումը: 1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները ՀՀ մշակույթի նախարարության ենթակայությամբ գործում են 2 ազգային և 10 մարզային գրադարան, որոնք հիմնականում ապահովված են համապատասխան գույքով ու տեխնիկայով, սակայն ժամանակակից տեխնիկական հնարավորությունները և լուրջ մարտահրավերներն ազդարարում են գրադարանների տեղում չդոփելու, այլ ժամանակին համահունչ փոփոխությունների իրականացում և զարգացում, ինչպես նաև նոր ծրագրերի և նոր գաղափարների իրագործում: Գրադարանային ոլորտը այսօր Հայաստանում խիստ անհամաչափ է զարգանում, մի կողմից ունենք ժամանակակից թվայնացվող էլեկտրոնային գրադարանների աճ, լայն հնարավորություններով՝ աշխարհին ներկայացվող գրավոր ժառանգության հայատառ, ինչպես նաև Հայաստանի և հայերի մասին էլեկտրոնային շտեմարաններից օգտվելու հնարավորություն, մյուս կողմից՝ ունենք ոչ բարվոք պայմաններ ունեցող, օրեցօր կրճատվող քանակով՝ փակվող կամ լուծարվող համայնքային գրադարաններ, չհամալրվող, չթարմացվող գրքային հավաքածուներով: Վտանգված են նաև համայնքային գրադարանների գրքային հավաքածուները: Մոտավոր հաշվարկներով խոսքը մինչև 10 միլիոն գրադարանային հավաքածուների մասին է. գրադարանը փակվելուց հետո դրանք ենթակա են կամայական վերաբերմունքի: Հավաքածուները գույքագրված չեն և սահմանված կարգով հաշվառված չեն: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Առկա խնդիրները կարող են լուծվել միայն օրենսդրական դաշտում փոփոխություններ կատարելով՝ հստակ սահմանելով համայնքային գրադարանային առարկաների համալրման, հաշվառման, պահպանության և պաշտպանության, գրավոր ժառանգության ֆոնդերի թվայնացման, ինչպես նաև համահայաստանյան գրացուցակների ամբողջացման կարգ: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

	Իրավական դաշտի կարգավորումը կբացառի սուբյեկտիվ վերաբերմունքի դերը համայնքային գրադարանների գրադարանային հավաքածուների պահպանության և նրանց հետագա բնականոն առաջընթացն ապահովելու գործում, ինչպես նաև համահայաստանյան գրացուցակների ամբողջացման հետ կապված գործառույթներում:
33	33.1 Թանգարաններում և գրադարաններում կրթական ծրագրերի իրականացում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակն է Հայ մշակույթի հանրահռչակումը, հանրային լայն մասնակցության ապահովումը մշակութային կյանքին: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված՝ ՀՀ կառավարության ծրագրի «4.9 Մշակույթ» բաժնից / թանգարանների և գրադարանների՝ որպես սոցիալ-կրթական ինստիտուտների կայացում, հասարակության բոլոր շերտերի և խմբերի համար ոչ ֆորմալ կրթության և ժամանցի միջավայրի ապահովում/: Արդի թանգարաններն ու գրադարանները զուտ ցուցադրական կամ ընթերցանության կազմակերպման տարածքներ չեն, այլև մշակութային գիտակրթական հաստատություններ են, որոնք որպես սոցիալ-մշակութային համակարգ իրականացնում են մշակույթին հաղորդակցության ապահովման և մշակութային ժառանգության փոխանցման գործառույթ: Միջոցառման իրականացումը պայմանավորված է հասարակության տարբեր շերտերին՝ անկախ տարիքից և սոցիալական խմբից մշակութային արժեքների վերաբերյալ գիտելիքների փոխանցման, թանգարաններում և գրադարաններում մշակութային կրթության իրացման անհրաժեշտությամբ: 1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Ներկայում թանգարանների և գրադարանների սոցիալական դերի վերաարժևորման և նրանց դերի վերաիմաստավորման գործընթացներ են իրականացվում, ինչը առաջ է բերում հասարակություն-թանգարան/գրադարան հարաբերությունների նոր մոդելների մշակման անհրաժեշտություն: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Թանգարաններում և գրադարաններում ընդհանուր գիտակրթական ծրագրերի իրականացումը միտված է հասարակության մշակութային կրթության ապահովմանը և թանգարանների, գրադարանների գիտակրթական ներուժի կիրարկմանը: Թանգարանային և գրադարանային հավաքածուների հանրահռչակման բնագավառում արդյունավետության, որպես գիտական և կրթական հաստատություններ վերջիններիս գրավչության մեծացում: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Ծրագրերի իրականացման ընդունման արդյունքում կապահովվի մշակութային ժառանգության պահպանության կարևորության գիտակցության բարձրացումը, կմեծանա թանգարանային և գրադարանային գործունեության նկատմամբ ճանաչողությունը, կբարձրանա հասարակական կյանքում թանգարանների և գրադարանների դերն ու նշանակությունը, ընթերցանության խրախուսում:
	33.2 Հուշարձանների վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակն է Հայ մշակույթի հանրահռչակումը, հանրային լայն մասնակցության ապահովումը մշակութային կյանքին: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված՝ ՀՀ կառավարության ծրագրի «4.9 Մշակույթ» բաժնի մշակութային ժառանգության ոլորտի 1-ին կետից: Տարաբնույթ միջոցառումներով հուշարձանների վերաբերյալ հանրային իրազեկվածությունը զգալիորեն կնպաստի հուշարձանաճանաչ քաղաքացի կերտելու գործին, որն իր հերթին մի կողմից կնվազեցնի ապագայում նյութական ժառանգության նկատմամբ ոտնձգությունները, իսկ մյուս կողմից կբարձրացնի քաղաքացիների պատասխանատվության զգացումն առ սեփական մշակույթն ու պատմական հուշարձանները: Ըստ էության՝ հանրային իրազեկվածության ուղղությամբ արված յուրաքանչյուր քայլ մեզ ավելի կմոտեցնի հուշարձանը և նրա պատմական արժեքը գիտակցող հասարակություն ձևավորելուն: Միջոցառումների իրականացման նպատակն է հուշարձանների պահպանության, դրանց պատշաճ արժևորման հարցերի բարելավումն ու հուշարձանների նկատմամբ հանրային պատասխանատվության ձևավորումը: 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Ներկայում հուշարձանների վերաբերյալ հանրային իրազեկվածության համակարգված աշխատանքը բացակայում է, կան առանձին և անհատական նախաձեռնություններ, որոնցով փորձ է արվում է որոշ ուշադրության կենտրոնում պահել հուշարձաններն ու նրանց հետ կապված հարցերը: Խնդիրները տարատեսակ են՝ ֆինանսական սուղ միջոցներից մինչև ոչ միասնական գործելը, որի հետևանքով երբեմն նույնիսկ լավ նախաձեռնությունները լինում են դիպվածային և ոչ թիրախային, իսկ հանրային իրազեկվածությունը չի ապահովվում:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները
Հանրային իրազեկվածության բարձրացմամբ առկա խնդիրների մի մասը լուծում կստանա: Այստեղ հարկավոր են հստակ մեխանիզմներ և թիրախային միջոցառումներ, որոնք կծառայեն այդ խնդիրների լուծմանը: Որպես նպատակային միջոցառումներ կարող են դիտարկվել գովազդային կարճ հոլովակները, վահանակները և այլն: Հայտնի անձանց ֆլեշմոբերը, զբոսաշրջային նոր երթուղիները ևս կարող են օգտակար լինել այս հարցում: Սակայն առավել կարևոր և խորքային են դպրոցական կրթական ծրագրերը, ամառային դպրոցներն ու ճամբարները հուշարձանների մերձակայքում, խաղերն ու վիկտորինաները: Խիստ ցանկալի է, որ աշակերտներին հնարավորություն տրվի նաև ինչ-որ կերպ մասնակցելու հուշարձանների մաքրմանը, պեղումներին և վերականգնմանը: Կարելի է հաշվի առնել նաև միջազգային փորձը. օրինակ՝ Ֆրանսիայում որոշ դպրոցների կցված են հուշարձաններ, և այդ դպրոցների աշակերտները պարբերաբար այցելում, մաքրում և խնամում են համապատասխան հուշարձանները: Եթե տեղայնացնենք այս փորձը և ավելի ընդարձակենք, ապա կարող ենք ստեղծել «Մեկ դպրոց, մեկ հուշարձան» խորագրով կրթական ծրագիրը: Նմանօրինակ այլ միջոցառումներ ևս կարելի է կազմակերպել: Անկասկած է, որ դրանցով հանրային իրազեկվածությունը ոչ միայն կբարձրանա առաջիկա տարիներին, այլև կնպաստի հուշարձանների հանրահռչակմանը:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը
Միջոցառման կամ միջոցառումների իրականացումը թույլ կտա առաջիկայում առավել գիտակ և հուշարձանաճանաչ սերունդ ունենալ: Նախատեսված կրթական ծրագրերն իրենց անմիջական ազդեցությունը կթողնեն պատանիների մտաշխարհի ձևավորման վրա:
Իրազեկվածության բարձրացումը հասարակության շրջանում կնպաստի նաև հուշարձանների պահպանության հարցերին առնչվող խնդիրների հարցերում:

33.3 Հայաստանում միջազգային և հանրապետական փառատոների և մրցույթների, ստեղծագործական նախագծերի, ցուցահանդեսների իրականացում (այդ թվում՝Դաշտադեմի ամրոցում «Զարկ ֆեստ» (Յարխուշտա) փառատոնի իրականացում)

1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը
Միջոցառման գլխավոր նպատակն է Հայ մշակույթի հանրահռչակումը, հանրային լայն մասնակցության ապահովումը մշակութային կյանքին:
Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված՝ ՀՀ կառավարության ծրագրի «4.9 «Մշակույթ» բաժնի 1-ին պարբերությունից: Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է համաշխարհային մշակույթի, տեսա-լսողական և կատարողական արվեստների ժամանակակից միտումները հայ հանդիսատեսին ներկայացնելու, միջմշակութային առնչությունների, փորձի փոխանակման և ստեղծագործական համագործակցության ամրապնդման, ինչպես նաև հանրության մշակութային ճաշակի ձևավորման և բարձրացման անհրաժեշտությամբ:

1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները
Ներկայում Հայաստանում իրականացվում են տարբեր մշակութային միջազգային ծրագրեր, միջոցառումներ, փառատոներ, որոնք մեծ դերակատարություն ունեն հայ մշակույթի զարգացման և միջազգայնացման, հայկական արվեստի և մշակույթի հանրահռչակման գործում: Սակայն բավարար չեն ծրագրերի միջազգային ճանաչման, հանրային ուշադրության ու լայն շերտերի հաղորդակցման, զբոսաշրջիկների ներգրավման, ինչպես նաև ծրագրերի ֆինանսավորման գործոնները:
1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները
Ապահովել միջազգային նախագծերի իրականացման շարունակականությունն ու ընդլայնումը, միջազգային հեղինակավոր կառույցներին անդամակցության գործընթացը, անցկացվող ծրագրերի աշխարհագրության ընդլայնումը, ծրագրերում աշխարհահռչակ արվեստագետների ներգրավումը, բարձր նշաձողով ստեղծագործական նոր ծրագերրի իրականացումը, մշակութային զբոսաշրջության զարգացման գործընթացում միջազգային նախագծերի ներուժի ամբողջական օգտագործումը, հասարակության լայն շերտերի համար իրականացվող ծրագրերի հասանելիությունը:
2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

	Տարեկան պետական աջակցությամբ առնվազն 50 միջոցառումների իրականացում: Հայկական մշակույթի և ժամանակակից արվեստների հանրահռչակում, մարդկանց հոգևոր պահանջմունքների բավարարում, ստեղծարար, տաղանդավոր անհատ արվեստագերների համար բարենպաստ միջավայրի ձևավորում, պատմամշակութային միջավայրի ճանաչելության բարձրացում:
	33.4 Արվեստի քննադատների ինստիտուտի ակտիվացում 1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1363-Ա որոշման «4.9 «Մշակույթ» բաժնի ժամանակակից արվեստի ոլորտի 7-րդ կետից: Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանում արվեստի քննադատության ինստիտուցիոնալ կայացմանը, մասնավորապես խոսքի դիրքավորմանը, հանրային կարծիքի ձևավորմանը: 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Արվեստի քննադատությունը մշակույթի անբաժանելի մասն է, սակայն Հայաստանում ժամանակակից արվեստի քննադատությունը ճգնաժամ է ապրում, և այս միջոցառուման իրականացումն ուղղված է ուսումնասիրելու և գտնելու հնարավոր լուծումներ ճգնաժամային իրավիճակը հաղթահարելու, առողջ ստեղծագործական միտք ձևավորելու և արդի արվեստի ընկալումն ուսումնասիրելու: 1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Արվեստի ոլորտի քննադատական հոդվածների հրապարակման և վերլուծությունների հարթակների աջակցություն: Պետական դրամաշնորհներով իրականացվող միջոցառումներում, փառատոներում մասնագիտական վերլուծության և քննադատական մտքի խթանում: 2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Քննադատների ինստիտուտի կայացման, ստեղծագործական առողջ մտքի ձևավորման, արվեստի արդիականացման և որակյալ գործերի ստեղծման, ինչպես նաև հանդիսատեսի ընկալման մակարդակի բարձրացման խթանում:
	33.5 Համայնքներում ոչ նյութական մշակութային ժառանգության իրազեկման և կրթամշակութային ծրագրերի իրականացում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակն է Հայ մշակույթի հանրահռչակումը, հանրային լայն մասնակցության ապահովումը մշակութային կյանքին: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված՝ ՀՀ կառավարության ծրագրի «4.9 Մշակույթ» բաժնից /Հայկական պատմամշակութային ժառանգության (նյութական և ոչ նյութական) պահպանության, ուսումնասիրման, օգտագործման և հանրայնացման շարունակականության ապահովում/: Համայնքներում ոչ նյութական մշակութային ժառանգության իրազեկման և կրթամշակութային ծրագիրն իրականացվում է Հայաստանի Հանրապետության 6 մարզերի 27 համայնքներում՝ Կոտայքում (Եղվարդ, Թեղենիք, Քարաշամբ, Հացավան, Գեղադիր համայնքներ), Տավուշում (Նոյեմբերյան, Այրում, Բերդավան, Բաղանիս, Դովեղ, Ջուջևան, Լճկածոր, Պտղավան, Ոսկեվան համայնքներ), Արմավիրում (Հացիկ, Մյասնիկյան, Խանջյան, Վանանդ, Երվանդաշատ, Բագարան,Կողբավան, Արտամետ, Տալվորիկ համայնքներ), Վայոց Ձորում (Խաչիկ համայնք), Արարատում (Դվին, Ջրահովիտ համայնքներ), Սյունիքում (Տեղ համայնք) ուր ստեղծվել են հայ արվեստի 18 «Արար» կենտրոններ: Տեղաբնակ 14 մասնագետներ դասավանդում են ավանդական երգ ու պար, ազգային նվագարաններ, կերպարվեստ, գորգագործություն ու կարպետագործություն, ժանեկագործություն ու ասեղնագործություն, խեցեգործություն, քարի, փայտի և մետաղի գեղարվեստական մշակում, խաչքարագործություն: Դասընթացներում ներգրավված են 500 մասնակիցներ: Ծրագրի նպատակն է ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության, պաշտպանության և տարածման ապահովումը ՀՀ մարզերում, ազգային ոչ նյութական մշակութային ժառանգության հանդեպ հասարակության հոգածության և հարգանքի արմատավորումը, ոչ նյութական մշակութային ժառանգության կիրառման ապահովումը և ոչ նյութական մշակութային ժառանգության փոխանցումը սերունդներին:

	1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Ծրագրի իրականացումը միտված է մշակութային ժառանգության պահպանության արդի մարտահրավերներին համընթաց գործընթացների արդյունավետության ապահովմանը և այդ խնդրի ապահովման համար հատկացված ֆինանսական միջոցների նպատակային տնօրինմանը: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Համայնքներում ոչ նյութական մշակութային ժառանգության իրազեկման և կրթամշակութային ծրագրի ընդլայնում, նոր համայնքների ընդգրկում, ծրագրում ընդգրկված շահառուների թվաքանակի մեծացում, որը միտված է մշակութային ծառայությունների ապակենտրոնացմանը՝ մարզերի մշակութային կյանքը աշխուժացնելու և համաչափ զարգացման համար: Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության, պաշտպանության և տարածման ապահովում ՀՀ մարզերում, ազգային ոչ նյութական մշակութային ժառանգության հանդեպ հասարակության հոգածության և հարգանքի արմատավորում, ոչ նյութական մշակութային ժառանգության կիրառման ապահովում և ոչ նյութական մշակութային ժառանգության փոխանցում սերունդներին: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Ծրագրի իրականացման արդյունքում ապահովվում է ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության, վերականգնման ու փոխանցման գործընթացում համայնքների մասնակցությունը: Աշխատանքներում մարզաբնակ մասնագետների ներգրավմամբ աշխուժանում է մարզային մշակութային կյանքը, նպաստավոր պայմաններ են ստեղծվում ոչ նյութական մշակութային ժառանգության ճանաչելիության, համայնքների կյանքում դրա տեղի ու դերի կարևորման առումով: Ծրագիրը կընդլայնի մարզերի բնակչության ներգրավվածությունը ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության, տարածման, զարգացման ու հանրահռչակման գործում: Ծրագրի արդյունքում կենտրոնի սաների կողմից ստեղծված ազգային մշակույթի նմուշները նշանակալի տեղ ու դեր կունենան համայնքի մշակութային կյանքում, ձևավորելով տեղական մշակութային առանձնահատկությունների համահավաք պատկերը և այդ կերպ նպաստելով մշակութային տուրիզմի զարգացմանը:
	33.6 Դպրոցականների համար բաժանորդային ծրագրի իրականացում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակն է Հայ մշակույթի հանրահռչակումը, հանրային լայն մասնակցության ապահովումը մշակութային կյանքին: Միջացառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 18 օգոստոսի 2021 թ. «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» թվականի N 1363-Ա որոշման հավելվածի 4.9 «Մշակույթ» բաժնի մշակութային ժառանգության ոլորտի «թանգարանների և գրադարանների որպես սոցիալ-կրթական ինստիտուտների կայացում, հասարակության բոլոր շերտերի և խբերի համար ոչ ֆորմալ կրթության և ժամանցի միջավայրի ապահովում» կետից: Դպրոցականների համար բաժանորդային ծրագիրը ապահովում է ամեն հերթական ուսումնական տարվա բոլոր աշակերտների մշակութային հաստատություններ անվճար այցելելու հնարավորությունը և մշակութային կյանքով ապրելու իրավունքը: Ծրագիրը Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր աշակերտին թույլ է տալիս տարվա ընթացքում մեկ անգան անվճար մուտք գործել թատրոն, համերգասրահ և թանգարան: Ծրագրի նպատակներն են մշակութային միջոցառումներին հաղորդակցվելու հնարավորություն ստեղծելը, վաղ հասակից մշակութային հաստատություն այցելելու ավանդույթի ձևավորումը, մշակութային հաստատությունների աշխուժացումը և դրանց համար մրցակցային պայմաններ ստեղծելը՝ խթանելով մասնագտական աճի ձգտումը: 1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Մարզային և հատկապես հեռակա համայնքների բնակիչները և հատկապես դպրոցահասակները առավել հազվադեպ են այցելում մշակութային հաստատություններ, ինչի պատճառներից են մշակութային հաստատությունների անհավասար բաշխվածությունը, ինչպես նաև սոցիալական անբավարար հնարավորությունները: Մի շարք համայնքներում և նույնիսկ մարզերում առկա չեն թատրոններ, համերգասրահներ կամ թանգարաններ, իսկ միջհամայնքային կամ միջքաղաքային փոխադրումները հավելյալ ֆինանսական բեռ են ծնողների համար: Մյուս կողմից հատկապես մարզային մշակութային հաստատությունները կարիք ունեն նոր հանդիսատեսի հոսքերի և մրցակցային միջավայրի ձևավորման, ինչն ապահովվում է բաժանորդային համակարգի ներդրմամբ: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Կատարելագործել բաժանորդային համակարգի ծրագիրը բոլոր դպրոցների աշակերտների համար մշակութային հաստատությունների եռակի մուտքի հնարավորությամբ՝ հիմնված միասնական տոմսային համակարգի,

	խաղացանկի և սոցիալական հարթակի վրա: Բաժանորդային համակարգի ներդրման ծրագիրը հնարավորություն է տալիս մոտ 261,000 աշակերտի՝ անկախ սոցիալական վիճակից, բնակության վայրից և մշակութային հաստատության հասանելիությունից, մասնակցել իր համայնքի կամ ցանկացած այլ քաղաքի մշակութային միջոցառմանը: Ծրագիրը երաշխավորում է դպրոցահասակների մշակութային իրավունքի իրացման նվազագույն հնարավորությունը՝ միաժամանակ մշակութային հաստատություններին ընձեռելով նոր թիրախային խմբեր և մրցակցային հնարավորություններ: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Միջոցառման հիմնական արդյունքներն են՝ աշակերտների պարբերական այցերը մշակութային հաստատություններ, մշակութային հաստատությունից օգտվելու ավանդույթի ձևավորումը վաղ հասակից, ճաշակի ձևավորումը դպրոցահասակների շրջանում, մշակութային գիտելիքների և տեղեկության տրամադրումը՝ օգտագործելով ժամանակակից տեխնոլոգիական միջոցները, հատկապես մարզային մշակութային կյանքի ակտիվացումը՝ ի հաշիվ նոր հանդիսատեսների հոսքի, մրցակցային միջավայրի ձևավորումը և դրա արդյունքում առավել բարձրորակ մշակութային արտադրանքի տրամադրումը:
34	34.1 Ոչ նյութական մշակութային ժառանգության շտեմարանի համալրում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակն է Մշակութային ժառանգության թվայնացում, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ընդլայնումը: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված՝ ՀՀ կառավարության ծրագրի «4.9 Մշակույթ» բաժնից /Հայկական պատմամշակութային ժառանգության (նյութական և ոչ նյութական) պահպանության, ուսումնասիրման, օգտագործման և հանրայնացման շարունակականության ապահովում/: «Հայաստանի Հանրապետության ոչ նյութական մշակութային ժառանգություն» կայքէջը հասանելի է www.int-heritage.am հղումով: Կայքէջի գործարկման անհրաժեշտությունը պայմանավորված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին» կոնվենցիայի, «Ոչ նյութական մշակութային ժառանգության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 3-ի N 1173-Ն «Ոչ նյութական մշակութային արժեքների նույնականացման, փաստաթղթավորման, պահպանության և տեղեկատվության փոխանակման կարգն ու ոչ նյութական մշակութային արժեքի վկայագրի ձևը հաստատելու մասին» որոշման պահանջների կատարմամբ: «Հայաստանի Հանրապետության ոչ նյութական մշակութային ժառանգություն» կայքէջը ՀՀ ոչ նյութական մշակութային ժառանգության տեղեկատվական համակարգ է, որի նպատակն է ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների մասին համապարփակ տեղեկատվության ապահովումը, ոչ նյութական մշակութային ժառանգության ոլորտի իրավական դաշտի զարգացումների, միջազգային համագործակցության ծրագրերի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ իրականացվող գործընթացների, համապատասխան ցանկերի բովանդակության, ինչպես նաև ոլորտի գիտահանրամատչելի նյութերի ներկայացման, նախատեսվող ծրագրերի վերաբերյալ հայտարարությունների տարածման ապահովումը: 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Տեղեկատվական դաշտի միջոցով ոչ նյութական մշակութային ժառանգության ոլորտի և դրա պահպանության, պաշտպանության, փոխանցման և տարածման ծրագրերի իրականացման մասին տեղեկությունների տարածում, ոլորտի ձեռքբերումների հանրահռչակում: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները «Հայաստանի Հանրապետության ոչ նյութական մշակութային ժառանգություն» կայքէջի գոյությունն ու ակտիվ գործունեությունը միտված է այդ ժառանգության մասին տեղեկատվության տարածմանը, թվային տարածքում համակարգմանն ու դասակարգմանը, ինչպես նաև հասարակության մեջ ոչ նյութական մշակութային ժառանգության ճանաչելիության բարձրացմանը, տեղի ու դերի կարևորմանը: «Հայաստանի Հանրապետության ոչ նյութական մշակութային ժառանգություն» կայքէջի գոյությունն ու ակտիվ գործունեությունը ապահովում է ոլորտի վերաբերյալ հասարակության շրջանում տեղեկատվության տարածման ընդլայնումը, ժառանգության պահպանության, պաշտպանության և փոխանցման ծրագրերի, կրողների, ոլորտի նորությունների, տեղական և միջազգային միջոցառումների մասին տեղեկությունների տարածումը: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը «Հայաստանի Հանրապետության ոչ նյութական մշակութային ժառանգություն» կայքէջի գոյությունն ու ակտիվ գործունեությունը հնարավորություն կստեղծի լայն հասարակությանը ծանոթանալու ՀՀ ոչ նյութական մշակութային ժառանգությանը, ոլորտի նորություններին, ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ իրականացվող ծրագրերին և գրանցված ոչ

նյութական մշակութային ժառանգության արժեքների պահպանության գործընթացներին: Կայքի կառուցվածքն ու ձևավորումը, նյութերի ռուսերեն և անգլերեն թարգմանությունները, ինչպես նաև սոցցանցերում համապատասխան հղումների առկայությունը էապես նպաստելու է ոչ նյութական մշակութային ժառանգության մասին հասարակության ճանաչելության բարձրացմանը և գնահատանքին:

34.2 Գրադարաններում էլեկտրոնային սպասարկման ծրագրի ներդնում «ԿՈՀԱ» (Հայաստանյան գրադարանների էլեկտրոնային համահավաք գրացուցակ) ծրագրի շրջանակում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը
Միջոցառման գլխավոր նպատակն է Մշակութային ժառանգության թվայնացում, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ընդլայնումը:
Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված՝ ՀՀ կառավարության ծրագրի «4.9 Մշակույթ» բաժնի մշակութային ոլորտի 11-րդ կետից:
ՀՀ գրադարանների սպասարկման կարևորագույն խնդիրն է մատուցվող ծառայությունները համապատասխանեցնել ընթերցողների ժամանակակից պահանջներին և սպասարկման անհրաժեշտ չափանիշներին՝ գրանցում, առցանց պատվեր, միջգրադարանային բաժնույթ, առցանց խորհրդատվություն, միջազգային գիտական շտեմարանների հասանելիություն:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները
Հայաստանում «ԿՈՀԱ» համակարգը ներդրված է Հայաստանի ազգային գրադարանում, ՀՀ ԳԱԱ հիմարար և մի քանի ակադեմիական գրադարաններում: Համակարգի տեղայնացումը, հայաֆիկացումը, մոդուլների օգտագործման մեթոդաբանության մշակումը և կիրառումը անցել է 10 տարվա ուղի: Համակարգը համապատասխանում է միջազգային ISO չափանիշներին:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները
Գրադարանային գործընթացների էլեկտրոնային կառավարման «ԿՈՀԱ» համակարգի ներդնում:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը
Գրադարանային գործընթացների էլեկտրոնային կառավարման «ԿՈՀԱ» համակարգի ներդնումը հնարավորություն կընձեռի օգտվելու միասնական գրադարանային քարտից, բարձրացնելու վիճակագրական տվյալների բազայի արդյունավետությունը և ճշգրտությունը՝ անձնական տվյալների պաշտպանության դրույթներին համաձայն:

34.3 Թանգարանային հավաքածուների թվայնացում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը
Միջոցառման գլխավոր նպատակն է Մշակութային ժառանգության թվայնացում, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ընդլայնումը:
Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված՝ ՀՀ կառավարության ծրագրի «4.9 Մշակույթ» բաժնի մշակութային ոլորտի 11-րդ կետից:
Թանգարանային հավաքածուների թվայնացումը և դրանք հատուկ այդ նպատակով ստեղծված շտեմարանում ներմուծումը, թվայնացված համակարգի առցանց գործարկումն ու շարունակական համալրումը կապահովի Հայաստանի Հանրապետության պետական, մարզային, համայնքային և մասնավոր մշակութային կազմակերպություններում ու հավաքածուներում առկա մշակութային շարժական արժեքների հաշվառվման,պահպանման, հանրահռչակման, շարժի արդյունավետ համակարգումը:
Շտեմարանը Հայաստանի ողջ մշակութային հարստությունը միասնական ձևաչափով մեկ տիրույթում համախմբելու, միավորելու և աշխարհին ներկայացնելու համար իրական հնարավորություններ կընձեռի:
Միաժամանակ, ինչը նաև չափազանց կարևոր է, հավաքածուների թվայնացումը հնարավորինս սահմանափակում է մասնագետների և ուսումնասիրողների անմիջական, ֆիզիկական շփումները արժեքների հետ, որը կնվազեցնի դրանից բխող ռիսկերը, բացի այդ, հնարավորություն կստեղծվի դրանց հեռակա ուսումնասիրության համար:
Նման շտեմարանի օգտակար գործողության գործակիցը մեծ է այն առումով, որ այն՝ ունեցած տեղեկույթի շրջանակում, կարող է լուծել նաև ծառայողական բազմաթիվ խնդիրներ (մշակութային ժառանգության ամբողջական պատկերի ստացում, տարբեր նպատակներով և ցանկացած պարամետրով ու ձևաչափով դրանց արագ և դյուրին օգտագործում, նույնականացման իրականացում ու իսկության որոշարկում և այլն):

	1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 11-ի 1058-Ն որոշման համաձայն ստեղծվել է «Մշակութային արժեքների էլեկտրոնային տեղեկատվական շտեմարան (Հայկական գանձեր)», որի աշխատանքներն ըստ վերը նշված որոշման նախատեսված էր ավարտել 2020 թվականին: Ըստ էության վերը նշված իրավական ակտով ստեղծվել է թանգարանային առարկաների թվայնացված միասնական համակարգ՝ շտեմարան, որը երբևէ չի կարող համարվել ավարտուն: Շտեմարանը շարունակաբար պետք է համալրվի՝ ըստ թանգարանների հավաքածուների համալրման: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Շտեմարանի ստեղծումը բազմափուլ է, շարունակական և ներառում է համապատասխան ծրագրերի ստեղծում, փորձարկում ու ներդրում, ինչպես նաև տեղեկույթ տրամադրող կազմակերպությունների կողմից անհրաժեշտ սարքաշարերի ձեռքբերում ու տեղակայում, նրանցից այդ տեղեկույթի ստացումը: Կամբողջանա Հայաստանի մշակութային շարժական արժեքների պահպանական ցուցակը, որտեղից կարելի է անվճար տեղեկանալ անհրաժեշտ առարկայի պահպանվելու վայրի մասին և դրա վերաբերյալ ստանալ ընդհանուր պատկերացում՝ մի քանի տասնյակ կայքէջերում փնտրտուք կատարելու փոխարեն: Դա շահեկան է ինչպես այցելուների համար, այնպես էլ ամբողջական տեղեկույթի պահպանությունն ապահովելու առումով: Կապահովվի նպաստավոր պայմաններ արդյունավետ վերահսկելու մշակութային շարժական արժեքների արտահանումն ու ժամանակավոր արտահանումը, կանխելու մշակութային արժեքների ապօրինի արտահանումը և կանխարգելելու դրանց նկատմամբ սեփականության իրավունքի ապօրինի փոխանցումը: Շտեմարանի առկայության պայմաններում ավելի դյուրին կլինի հավաքածուների հաշվառման, առկայության ստուգման, արժեքների նույնականացման, վերականգնման և այլ գործընթացների իրականացումը: Այն արդյունավետ կապ կստեղծի ոլորտի կազմակերպությունների ու արտերկրի միջև, միաժամանակ կնպաստի կազմակերպությունների օբյեկտների հանրահռչակմանն ու դրանց վերաբերյալ տեղեկույթի արդյունավետ օգտագործմանը: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Թվայնացված հավաքածուների շտեմարանի գործարկմամբ Հայաստանի ողջ մշակութային ժառանգությունը մոտ ապագայում կարող է ընդհանուր գծերով հասանելի լինել ցանկացածին: Յուրաքանչյուր ոք կարող է այդ տեղեկույթի շրջանակում ծանոթանալ մեր երկրի մշակութային հարստության ու շարժական ժառանգության ամբողջական պատկերին, իսկ դրանից օգտվելու անհրաժեշտության դեպքերում՝ հետաքրքրող հավաքածուների կամ առանձին արժեքների վերաբերյալ թույլատրելի տվյալները սահմանված ձևաչափով ստանալ դրանք հաշվառող պահոցներից: Շտեմարանը հասանելի հայերենով և ռուսերենով: Նախատեսվում է ժամանակի ընթացքում շտեմարանում տեղադրված տեղեկույթը ներկայացնել նաև անգլերենով, ինչն էլ ավելի արդյունավետ կդարձնի ոչ միայն Հայաստանի մշակութային հարստության և ժառանգության հանրահռչակումն ու գիտահետազոտական նպատակներով օգտագործումը, այլև կնպաստի մշակութային զբոսաշրջության զարգացմանը: Կբարձրանա Հայաստանի ճանաչելիությունը և կմեծանա հետաքրքությունը:
35	35.1 Արտերկրում հիմնված հայկական կրթական և մշակութային կենտրոններում, համայնքային նշանակության, ինչպես նաև անհատական գրադարաններում, պահպանված հայկական գրավոր ժառանգության Հայաստան տեղափոխման «Լքյալ գրադարաններ» ծրագիր 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակն է օտարերկրյա պետություններում հայկական գրավոր ժառանգության պահպանությունը և հանրահռչակումը: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված՝ ՀՀ կառավարության ծրագրի «4.9 Մշակույթ» բաժնի մշակութային ժառանգության ոլորտի 1-ին կետից: Վերջին տարիներին, Սփյուռքում, հատկապես Ֆրանսահայ և Մերձավոր Արևելքի երկրների համայնքներում առաջ է եկել լքված գրադարանների խնդիրը: Համայնքների ուծացման, դեպի Ամերիկա, Կանադա և եվրոպական այլ երկրներ հայերի վերաբնակեցման արդյունքում՝ տասնյակ մասնավոր և համայնքային նշանակության և անհատական, ընտանեկան գրադարաններ մնացին լքված, անորոշ ճակատագրով: «Լքյալ գրադարաններ» ծրագրի շրջանակներում նախատեսվում է Հայաստան տեղափոխել այդ գրադարանների հավաքածուները: 1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Ֆրանսիայի և Մերձավոր Արևելքի երկրների համայնքներն ամենահինն ու ամենահայաշատն էին ժամանակին: Եղեռնից հետո Ֆրանսիայում և Մերձավոր Արևելքում՝ Սիրիայում, Լիբանանում, Իրաքում, ապաստանեցին մազապուրծ եղած մտավորականներ, որոնք շատ արագ ստանձնեցին համայնքի մատաղ սերնդի հայեցի

կրթության, դաստիարակության գործը: Կարճ ժամանակում ստեղծվեցին բազմաթիվ համայնքային նշանակության գրադարաններ, կրթական և մշակութային կենտրոններ, ինչպես նաև մեծ տարածում ստացավ անհատական գրադարաններ հավաքելու գործը: 20-րդ դարի 20-30-ական թվականների սփյուռքահայ սերունդը գնում ու հավաքում էր մեծ թվով հին հրտարակություններ, հազվագյուտ գրքեր, արժեքավոր հավաքածուներ, մամուլ, հանդեսներ, պարբերաթերթեր: Գրադարանների մի մասն էլ ժառանգել էին ծնողներից: Սփյուռքում տանը հայերեն գիրք ունենալը մարդուն կապում էր հայրենիքի ու իր ինքնության հետ: Տարիների ընթացքում համայնքներում սերնդափոխության, օտար միջավայրին ինտեգրման, Ֆրանսիայում արագ ուծացման, իսկ Մերձավոր Արևելքում այդ երկրներում տիրող ռազմաքաղաքական իրավիճակով պայմանավորված հայերի արտահոսքի արդյունքում՝ բազմաթիվ կրթական և մշակութային կազմակերպություններ փակվեցին, իսկ նրանցում առկա գրադարանային հավաքածուները լքվեցին: Ընտանիքներում տարիների ընթացքում խնամքով հավաքված հարուստ գրադարանները դարձան «բեռ» նոր սերնդի համար, որից ազատվելու համար վերջիններս հաճախ դիմում են Հայաստանի դիվանագիտական կամ եկեղեցական ներկայացուցիչներին:

1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները
Ծրագրի իրականացման խնդիրներն են կապ հաստատել արդեն իսկ հանրահայտ լքված գրադարանների վերաբերյալ տեղեկատվություն ունեցող անձանց հետ, սփյուռքի հայկական կազմակերպությունների միջոցով փնտրել և գտնել անորոշ ճակատագրով մասնավոր հավաքածուների տերերին: Կազմել գրադարանների հավաքածուների ցուցակներ և այդ երկրների ՀՀ դիվանագատիկան կառույցների միջոցով՝ կազմակերպել դրանց տեղափոխումը Հայաստան:
Գործընթացում ներգրավվելու են նաև «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ը և «Մատենադարան. Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» հիմնադրամը:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը
Հնարավորություն կստեղծվի կորստից փրկել արտերկրում մշակութային շարժական ժառանգության բացառիկ նմուշներ, կստեղծվեն նպաստավոր պայմաններ արտերկրի մշակութային ժառանգությունը հայրենիք տեղափոխման համար, կհամալրվեն «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ի, «Մատենադարան. Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» հիմնադրամի և Հայաստանի Հանրապետության այլ մշակութային կառույցների հավաքածուները:

35.2 Արտասահմանյան գրադարանների համալրում հայագիտական գրականությամբ

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը
Միջոցառման գլխավոր նպատակն է օտարերկրյա պետություններում հայկական գրավոր ժառանգության պահպանությունը և հանրահռչակումը:
Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված՝ ՀՀ կառավարության ծրագրի «4.9 Մշակույթ» բաժնի մշակութային ժառանգության ոլորտի 9-րդ կետից:
Եվրոպական երկրների մեծ մասի քաղաքային, շրջանային և համալսարանական գրադարանների տվյալների բազան ուսումնասիրելիս արձանագրվեց այն փաստը, որ ֆոնդերում առկա Հայաստանին ու հայերին առնչվող հայ կամ օտար հեղինակների աշխատությունների ճնշող մեծամասնությունը Հայոց ցեղասպանության մասին են, գրեթե բացակայում է հայագիտական, այլ գիտություններին վերաբերող, մշակութային, հանրամատչելի և գեղարվեստական գրականությունը: Անհրաժեշտ է արտասահմանյան գրադարանները համալրել նմանօրինակ գրականությամբ, որի արդյունքում արտերկրի գրադարաններում կավելանա հայագիտական և հայաթեմա ֆոնդը, կապահովվի գրատարածման բնագավառում միջազգային համագործակցություն, կովկասյան տարածաշրջանով զբաղվող արտերկրի գիտնականներին՝ իրենց մենագրություններում հայագիտական գրականությանը հղում անելու հնարավորություն, կհանրահռչակվեն հայ գրականությունը, մշակույթը, պատմությունը:

1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները
Տարիներ շարունակ պատմական Հայաստանի մասին տեղեկատվության բացակայությունը կամ գրեթե բացակայությունը հանգեցրել է մի իրավիճակի, երբ արտերկրի բուհերի ուսանողները և գիտնականները գրադարաններում չեն կարողանում գտնել պատշաճ տեղեկատվություն մեր երկրի մասին: Դրա փոխարեն թշնամական պետությունները տարածում են մեր երկրի և տարածաշրջանի վերաբերյալ թյուր տեղեկատվություն, ինչը գիտության շրջանակներում կարող է շփոթ հարուցել: Այս միջացառումը պիլոտային և համեստ փորձ է լրացնել այդ տեղեկատվության բացակայությունը:

1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

	ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը գրահրատարակչության ոլորտի նախաձեռնությունները քննող մասնագիտական խորհրդի և համապատասխան գիտական-մասնագիտական կառույցների օգնությամբ ձևավորում է այնպիսի օտարալեզու հայագիտական, մշակութային գրականության ցանկ, որի հրատարակման համար հայտարարում է մրցույթ: Հրատարակված գրքերը պահեստավորվում են «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ում: Այնուհետև փոստային առաքման ծառայությունների, դեսպանատների և մշակութային կցորդների և այլ կառույցների օժանդակությամբ և միջնորդությամբ այդ գրականությամբ համալրվում են արտերկրի հանրային և բուհական գրադարանները: Նախարարությունն ակնկալելու է ՀՀ արտաքին գործերի նախարարության, օտար երկրներում ՀՀ դեսպանությունների, Սփյուռքի հանձնակատարի գրասենյակի աջակցությունը: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Միջոցառման իրականացման արդյունքում կապահովվի մեր մշակույթի և գիտության, ինչպես նաև հայագիտության նվաճումների ներկայությունը հանրային նշանակության բոլոր գրադարաններում ու կրթական հաստատություններում, կխթանվի գրատարածման բնագավառում միջազգային համագործակցությունը, հնարավորություն կընձեռվի կովկասյան տարածաշրջանով զբաղվող արտերկրի գիտնականներին՝ իրենց մենագրություններում հայագիտական գրականությանը հղում անելու, արտերկրի գրադարաններում կավելանա հայագիտական ֆոնդը, կհանրահռչակվի հայ գրականությունը, հայագիտությունը, մշակույթը, պատմությունը, Հայաստանի մասին տեղեկատվությունը կդառնա առավել հասանելի:
36	36.1 «Ոչ պետական մամուլի հրատարակում» ծրագիր 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակն է ստեղծագործական կարողությունների լիարժեք արտահայտման և իրացման համար բարենպաստ միջավայրի ապահովումը: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված՝ ՀՀ կառավարության ծրագրի «4.9 Մշակույթ» բաժնի 1-ին պարբերությունից: «Ոչ պետական մամուլի հրատարակում» ծրագրի շրջանակում ՀՀ մշակույթի նախարարության աջակցություն են ստանում բացառապես գրական,մշակութային տպագիր և էլեկտրոնային պարբերականները: Ծրագիրը միտված է գրական, մշակութային դաշտի իրադարձությունները, խնդիրները, նորությունները հասարակական լայն զանգվածներին հասցնելուն, ինչպես նաև մշակույթի, արվեստի տարբեր ոլորտների վերաբերյալ մասնագիտական լուրջ խոսքի (գրականագիտություն, թատերագիտություն, երաժշտագիտություն, արվեստաբանություն և այլն) խթանմանը: Ծրագրի նպատակն է ԶԼՄ-ների ընտանիքում ունենալ մշակույթ, արվեստ լուսաբանող մասնագիտացված, պրոֆեսիոնալ լրատվամիջոցներ, նպաստել մասնագիտական խոսքի խթանմանը, խթանել լրագրության գրական ժանրերի զարգացումը, հոնորարներ տրամադրելու միջոցով հնարավորություն տալ ոլորտի մասնագետներին ստեղծագործական աշխատանքով ապրել և զարգացնել մասնագիտական խոսքը՝ այն հասցնելով հասարակության տարբեր շերտերին: 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Մեր օրերում, երբ մշակույթի, արվեստի ոլորտում տեղի ունեցող իրադարձությունները հիմնականում լուսաբանվում են զուտ լրատվական ժանրի շրջանակում, մասնագիտական-վերլուծական հոդվածներ սակավ ենք հանդիպում, ինչը չի նպաստում հասարակության մշակութային հաղորդակցության զարգացմանը: Գրական և մշակութային իրադարձություններն ու ստեղծագործական ծրագրերը ոչ բավարար լուսաբանման արդյունքում՝ դուրս են մնում հասարակական կյանքից: Բացի այդ պրոֆեսիոնալ տեսարանների համար սահմանափակ են արտահայտման միջոցները: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Պետական աջակցության ձևաչափով գրական և մշակութային մամուլի հրատարակումը կկարգավորի ստեղծագործող-հասարակություն հարաբերությունները, կխթանի մշակութային և գրական բնագավառների կրողների ճանաճելիությանն ու հանրահռչակմանը: Մյուս կողմից էլ՝ ծրագրի շրջանակում լրատվամիջոցին հատկացված գումարի մի մասը կուղղվի հոնորարների տրամադրմանը, ինչը ևս իր հերթին մոտիվացնում է ոլորտի լուրջ մասնագետներին: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Գրական և մշակութային կյանքի տեղեկատվության և վերլուծության հանրայնացման ընդլայնում՝ բովանդակային, մասնագիտացված մամուլի միջոցով:

36.2 «Աջակցություն գրականության հանրահռչակմանը, գրական ծրագրերին և գրքերի միջազգային ցուցահանդեսներին մասնակցությանը» ծրագիր

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը
Միջոցառման գլխավոր նպատակն է ստեղծագործական կարողությունների լիարժեք արտահայտման և իրացման համար բարենպաստ միջավայրի ապահովումը:
Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված՝ ՀՀ կառավարության ծրագրի «4.9 Մշակույթ» բաժնի մշակութային ժառանգության ոլորտի 8-րդ և 9-րդ կետերից:
«Աջակցություն գրականության հանրահռչակմանը, գրական ծրագրերին և գրքերի միջազգային ցուցահանդեսներին մասնակցությանը» ծրագիրն անհրաժեշտ է ընթերցանությունը խթանելու և գրականության հանրահռչակմանը միտված հանրապետական գրական ծրագրերին և գրքի միջազգային ցուցահանդեսներին մեր երկրի մասնակցությունն ապահովելու համար: Հայաստանը այս միջոցառման շրջանակում առանձին տաղավարով մասնակցել է Լայպցիգի, Բոլոնիայի, Թեհրանի, Մոսկվայի, Ֆրանկֆուրտի և այլ գրքի միջազգային ցուցահանդեսներին: Նման հեղինակավոր ցուցահանդեսների մասնակցությունը ստեղծում է համագործակցան հնարավորություններ հայաստանյան և արտերկրի հրատարակչությունների ու գրական գործակալների միջև:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները
Միջոցառման շրջանակում իրականացվող նախագծերը խնդիր ունեն համախմբելու ոլորտի բոլոր ներկայացուցիչներին՝ գրողներին, գրական գործակալներին, գրական մամուլը, հրատարակիչներին, և, իհարկե, ընթերցողներին: Վերջին տարիներին հայաստանյան գրահրատարակչական ոլորտում նկատվում է մեծ աշխուժություն. հետզհետե հրատարակչական գործը մեր երկրում դառնում է եկամտաբեր, ինչպիսին որ երազում էինք տարիներ առաջ: Հայերեն գրականությունը պահանջված է գրադարաններում և գրախանութներում, այս իրողությունը փաստում են հենց վերջինները: Ոլորտի զարգացմանն ուղղված հանրապետական և միջազգային ծրագրերը նպատակ ունեն ամրապնդելու նշված բոլոր ներկայացուցիչների միջև կապերը, գրականության ոլորտի տեղեկատվությունն առավել հասանելի դարձնելը, ժամանակակից հայ գրականության հանրահռչակումը, և վերջապես՝ ընթերցանության խթանումը:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները
Ծրագրի համակարգման շրջանակում ընկած ոլորտում առաջարկվող լուծումներն են հասարակության ստեղծագործական ներուժի վերարտադրման և զարգացման համար պայմանների ստեղծումը, ընթերցանության խթանումը, հայ ժամանակակից գրականության հանրահռչակումը Հայաստանում և արտերկրում, համաշխարհային գրականության կոթողային նմուշների հայերեն թարգմանությունը, հայաստանյան գրահրատարակչական շուկայում հավասար մրցակցության ապահովումը, ինչով և պայմանավորված է ոլորտի տարբեր շերտերի զարգացման միտումների խթանումը, հեղինակային և հարակից իրավունքի հարցերին ուշադրությունը, որոնք միտված են հեղինակ-հրատարակիչ-ընթերցող համագործակցությունը բացառապես օրինական դաշտ տեղափոխելուն, սփյուռքի համայնքներում Հայաստանի մասին լիարժեք և հավաստի տեղեկատվության մատչելիության ապահովումը, գրքի միջազգային ցուցահանդեսներին Հայաստանի պատշաճ մասնակցությունը:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը
Ծրագրում նախարարության դերը ոլորտի համակարգումն ու կարգավորումն է: Նախարարությունը ոլորտի քաղաքականությունը մշակելիս և իրականացնելիս առաջնորդվում է այն համոզմամբ, որ ոլորտի յուրաքանչյուր օղակի զարգացումը հավասարապես կարևոր է: Գրահրատարակչության ոլորտում այս ծրագրի արդյունքը գրական դաշտի բոլոր օղակների հավասարաչափ զարգացումն է, գրական արտադրանքի միջոցով գրական-մշակութային ժառանգության պահպանումը, զարգացումը, տարածումն և հանարհռչակումը, քաղաքացիական հասարակության ձևավորումը, հասարակության ստեղծագործական ներուժի վերարտադրման և զարգացման, գրատարածման բնագավառում միջազգային համագործակցության համար նպաստավոր պայմանների ստեղծումը: Այս ամենը զարգացնում է գրահրատարակչության ոլորտը Հայաստանում և հնարավորություններ է ստեղծում «Հայ գրականությունը թարգմանություններում» դրամաշնորհային ծրագրի արդյունավետ իրականացման, հետևապես և՝ հայ դասական և ժամանակակից գրականության հանրահռչակման համար:

36.3 Մշակույթի տարբեր ոլորտներում ստեղծագործական ծրագրերի աջակցություն՝ դրամաշնորհների հատկացման բաց-մրցութային համակարգի միջոցով, ինչպես նաև դեբյուտային ստեղծագործական ծրագրերի և արվեստի փորձարարական և նորարարական ձևերի խրախուսում (այդ թվում՝ «Զարկ ֆեստ» Յարխուշտայի փառատոնի իրականացում)

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը
Միջոցառման գլխավոր նպատակն է ստեղծագործական կարողությունների լիարժեք արտահայտման և իրացման համար բարենպաստ միջավայրի ապահովումը:
Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված՝ ՀՀ կառավարության ծրագրի «4.9 Մշակույթ» բաժնի 1-ին պարբերությունից:
Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է մրցակցային, արդարացի և թափանցիկ սկզբունքի կիրառման անհրաժեշտությամբ, արվեստի տարբեր ոլորտներում որակի և արդյունավետության բարձրացմանը, արվեստի փորձարարական և նորարարական ձևերին խրախուսմանը, ինչպես նաև ոլորտներում ստեղծագործական, պետական, ոչ պետական կազմակերպությունների և անհատ ստեղծագործողների հավասար մեկնարկային պայմանների ապահովմանը:

1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները
Արվեստի պետական աջակցության ծրագրերի շրջանակներում ժամանակակից արվեստի զարգացմանն ուղղված և մշակութային միջոցառումների աջակցության նպատակով պետության կողմից հատկացվող դրամաշնորհները մինչև 2019 թվականը բաշխվել են սահմանված ընթացակարգով, որը, սակայն, չի ապահովել գործընթացի թափանցիկությունն ու մրցակցային բնույթը, պարունակում է կոռուպցիոն ռիսկեր՝ բացասական ազդեցություն ունենալով պետական միջոցների բաշխման արդյունավետության և հաշվետվողականության ողջ գործընթացի վրա: Դրամաշնորհների բաշխման ընթացակարգը, որոշումների կայացման կենտրոնացվածությամբ և վարչահրամայական բնույթով պայմանավորված, առաջ էր բերում մի շարք խնդիրներ, մասնավորապես՝ արվեստի տարբեր բնագավառների ոչ համաչափ զարգացում, ստեղծագործող անհատների, միավորումների և մշակութային կազմակերպությունների համար մրցակցային դաշտի բացակայություն, մշակութային արտադրանքի ստեղծման և իրացման գործընթացներում անհավասար պայմանների առկայություն: Նշեն նաև, որ երիտասարդության ստեղծարար ներուժը քաղաքակրթական և մշակութային գործընթացների շարժիչ ուժն է, և յուրաքանչյուր հասարակության հաջողությունն ու մշակութային առաջընթացն անհնար է պատկերացնել առանց երիտասարդության մասնակցության, նրանց կողմից նորարարական ստեղծագործական ծրագրերի իրականացման: Երիտասարդական, դեբյուտային և նորարարական ստեղծագործական ծրագրերը մշակութային կյանքում արմատավորված մի շարք բացասական գործոնների, այդ թվում՝ մշակույթի հիերարխիկ բնույթի և հովանավորչության պատճառով հիմնականում լուսանցքային են, ոչ լիարժեք՝ թե մշակութային դաշտում ունեցած ազդեցության և թե պետության կողմից ցուցաբերվող աջակցության առումով:Ներկայում երիտասարդ արվեստագետները դիմագրավում են նաև կրթություն-աշխատաշուկա շղթայի ոչ բավարար գործունեության, պետության կողմից երաշխավորված աջակցության բացակայության հետ կապված մի շարք այլ մարտահրավերների:

1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները
2019 թվականի համար ներդվեց դրամաշնորհների տրամադրման նոր ընթացակարգ, որով կանոնակարգվեց պետական միջոցների տրամադրման ողջ գործընթացը: Դրամաշնորհների տրամադրման նոր ընթացակարգում սկբունքային դերակատարություն է վերապահվելու հատուկ ձևավորված մրցութային հանձնախմբերին, որոնց միջոցով կտրվի մասնագիտական եզրակացություն յուրաքանչյուր ստացված հայտի վերաբերյալ և ըստ այդմ, որոշիչ դերակատարություն կունենան դրամաշնորհների բաշխման գործընթացում՝ ապահովելով ողջ գործընթացի բաց-հրապարակային և բնույթն ու թափանցիկությունը:
Երիտասարդության ստեղծարար ներուժի զարգացման նպատակով անհրաժեշտ է իրականացնել ծրագրեր, որոնք թույլ կտա ապահովել մշակույթի համընդհանուր անխաթար գործընթացը, շարունակել ստեղծագործող անձանց ինքնադրսևորման հավասար և արդարացի պայմանների ապահովման, ստեղծագործական ծրագրերի և գործունեության աջակցության խրախուսման գործընթացները:

2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը
Մշակույթի ոլորտում գործունեություն իրականացնող անհատների և կազմակերպությունների համար պետական աջակցության ծրագրերի մասնակցության հավասար մեկնարկային պայմանների ապահովում, արվեստի տարբեր բնագավառների համաչափ զարգացում, մշակութային միջոցառումների բազմազանության և ստեղծագործական բարձր նշաձողի ապահովում, պետական միջոցների բաշխման թափանցիկության ապահովում, ինչպես նաև երիտասարդ արվեստագետների արտահոսքի կանխում, մշակույթի տարբեր ոլորտների սահուն սերնդափոխության ապահովում, Նորարարական ծրագրերի, ինչպես նաև մշակութային դաշտում նոր անունների բացահայտում և վերհանում, երիտասատրդության շրջանում մշակույթի նկատմամբ հետաքրքրվածության խթանում, հայ մշակույթի զարգացման դիվերսիֆիկացում:

37	37.1«Աղձք» բնապատմական արգելոց ստեղծելու, «Աղձք» բնապատմական արգելոցի մասնաճյուղ ստեղծելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մարտի 7-ի N 312-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակն է Հայաստանում մշակութային զբոսաշրջության զարգացում և ժառանգության ոլորտի ինստիտուցիոնալ ենթակառուցվածքների ընդլայնումը: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված՝ ՀՀ կառավարության ծրագրի «4.9 Մշակույթ» բաժնից, ՀՀ Սահմանադրության 15-րդ հոդվածից, Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի «ե» կետից: «Աղձք» պատմահնագիտական արգելոցի ստեղծումը պայմանավորված է վերջինիս որպես հանրապետական նշանակության հուշարձան Հայաստանի Հանրապետության պատմության և մշակույթի հուշարձանների պետական ցուցակում ընդգրկված լինելու հանգամանքով: Հուշարձանի զբաղեցրած տարածքը համարվում է պետական սեփականություն, որի վրա էլ ստեղծվելու է արգելոցը: Արգելոց-թանգարանի հետագա պահպանությունն ու շահագործումն իրականացվելու է «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ին հատկացված միջոցների հաշվին: Արգելոցի ստեղծումը ամբողջությամբ համապատասխանում է «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի «ե» կետի 17-րդ հոդվածի պահանջներին, քանի որ նրանք ստեղծվում են պատմական միջավայրի և հուշարձանների շուրջը: 1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Հուշարձանները պետական սեփականություն են և 2015 թվականից իրականացվում են պեղման աշխատանքներ պետական միջոցների հաշվին: Պատմամշակութային արգելոցների ստեղծումը միտված է լինելու պատմամշակութային զբոսաշրջության հիմքի վրա զբոսաշրջության բոլոր ձևերի համակցությամբ զբոսաշրջային գրավիչ միջավայրի ձևավորմանը, մասնավորապես՝ համայնքներում զբոսաշրջության զարգացում, տեղական ավանդույթների վերականգնում, զբոսաշրջային ներուժի բացահայտում, զբոսաշրջայինարդյունքի դիվերսիֆիկացում, նոր զբոսաշրջային երթուղիների ձևավորում և միջազգային ու ներքին շուկայում պատշաճ ներկայացում, այդ թվում՝ ավանդական տոնակատարությունների, փառատոների կազմակերպման միջոցով: 1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Պատմամշակութային արգելոցների ստեղծումը միտված է պատմական, հնագիտական, ճարտարապետական հուշարձանների, համալիրների, հուշարձանախմբերի, պատմական և բնապատմական միջավայրի, մշակութային այլ արժեքների ուսումնասիրման և հանրահռչակման աշխատանքների արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների և մասնավոր հատվածի հետ համագործակցությամբ համայնքներում տնտեսական և զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման ծրագրի իրականացմանը: Արգելոց-թանգարանի հուշարձանների շուրջ պատմամշակութային արգելոցների ստեղծում, պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների օգտագործման և հանրահռչակման բնագավառում արդյունավետության, ներդրումային դաշտի գրավչության բարձրացում և զբոսաշրջության ծավալների ընդլայնում: Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Նախագծի ընդունման արդյունքում կապահովվի հուշարձանախմբի ամբողջ տարածքի պատշաճ պահպանությունը, մասնագիտական ամբողջական ուսումնասիրման ու հանրահռչակման հնարավորությունը, զբոսաշրջության երթուղիներում արգելոցների ներգրավումը, ինչպես նաև պետական ֆինանսավորման առավել արդյունավետ օգտագործումը: Միաժամանակ, արգելոցների ստեղծումը կնպաստի զբոսաշրջության զարգացմանը և զբոսաշրջիկների թվի աճին:
	37.2 Արտաշատ մայրաքաղաք» պատմամշակութային արգելոց ստեղծելու, «Արտաշատ Մայրաքաղաք» արգելոցի մասնաճյուղ ստեղծելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մարտի 7-ի N 312-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման գլխավոր նպատակն է Հայաստանում մշակութային զբոսաշրջության զարգացում և ժառանգության ոլորտի ինստիտուցիոնալ ենթակառուցվածքների ընդլայնումը:
Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված՝ ՀՀ կառավարության ծրագրի «4.9 Մշակույթ» բաժնից, ՀՀ Սահմանադրության 15-րդ հոդվածից, Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի «ե» կետից:
«Արտաշատ Մայրաքաղաք» պատմամշակութային արգելոցի ստեղծումը պայմանավորված է վերջինիս որպես հանրապետական նշանակության հուշարձան Հայաստանի Հանրապետության պատմության և մշակույթի հուշարձանների պետական ցուցակում ընդգրկված լինելու հանգամանքով:
Հուշարձանի զբաղեցրած տարածքը համարվում է պետական սեփականություն, որի վրա էլ ստեղծվելու է արգելոցը: Արգելոցների ստեղծումը չի հանգեցնում լրացուցիչ ֆինանսական պարտավորություն: Դրանց հետագա պահպանությունն ու շահագործումն իրականացվելու է «Պատմամշակութային արգելոց թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի արտաբյուջետային միջոցների հաշվին: Զբոսաշրջության կամ տուրիզմի ժամանակակից արդյունաբերությունը հանդիսանում է համաշխարհային տնտեսության ամենախոշոր, արդյունավետ և առավել դինամիկ զարգացող ճյուղերից մեկը: Շահութաբեր այս ոլորտի զարգացման աննախադեպ տեմպերն իրենց ուղղակի ազդեցությունն են թողնում տնտեսության գրեթե բոլոր ճյուղերի համամասնական զարգացման վրա: Հայաստանը հանդիսանում է հարուստ զբոսաշրջային ներուժ ունեցող, սակայն միջազգային տուրիզմի շուկայում չափազանց համեստ տեղ գրավող պետություն: Հուշարձանի հրատապ պահպանությունից, ինչպես նաև զբոսաշրջային հոսքեր ապահովելու նպատակով, 2022 թ. իրականացվել է «Հողի գաղտնիքը. Արտաշատը մշակույթների խաչմերուկում» խորագրով ցուցահանդեսը, որը հնարավորություն է ընձեռնել բացահայտելու պատմական Արտաշատի տարբեր շերտերից գտնված նշանակալի հավաքածու՝ ուստի նպատակահարմար է հուշարձանը դարձնել արգելոց-թանգարան:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները
ՀՀ կառավարության 2003 թվականի մարտի 7-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մարտի 6-ի N 202 որոշման մեջ փոփոխություն կատարելու և պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» N 312-Ն որոշման դրույթներին համապատասխան՝ ՀՀ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության ոլորտում ՀՀ կառավարության կողմից նախատեսվել էր իրականացնել միասնական քաղաքականություն՝ կենտրոնացված կառավարմամբ և վերահսկողությամբ: Նախագծի ներկայացումը նպատակ ունի նաև ապահովել արգելոցի (ՀՀ մյուս հնավայրերի նման)՝ պահպանության, գիտական ուսումնասիրման, հանրահռչակման և օգտագործման սկզբունքների միասնականությունը, ինչպես նաև շահառուների համար առավել բարենպաստ պայմանների ստեղծումը:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները
Պատմամշակութային արգելոցների ստեղծումը միտված է պատմական, հնագիտական, ճարտարապետական հուշարձանների, համալիրների, հուշարձանախմբերի, պատմական և բնապատմական միջավայրի, մշակութային այլ արժեքների ուսումնասիրման և հանրահռչակման աշխատանքների արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների և մասնավոր հատվածի հետ համագործակցությամբ համայնքներում տնտեսական և զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման ծրագրի իրականացմանը: Արգելոց-թանգարանի հուշարձանների շուրջ պատմամշակութային արգելոցների ստեղծում, պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների օգտագործման և հանրահռչակման բնագավառում արդյունավետության, ներդրումային դաշտի գրավչության բարձրացում և զբոսաշրջության ծավալների ընդլայնում:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը
Նախագծի ընդունման արդյունքում արգելոցները և արգելոց-թանգարանները կդառնան մշակութային նյութական և ոչ նյութական ժառանգության համալիր պահպանման և կառավարման արդյունավետ մշակութային կազմակերպություններ,
- կապահովվի հուշարձանախմբի ամբողջ տարածքի պատշաճ պահպանությունը, մասնագիտական ամբողջական ուսումնասիրման ու հանրահռչակման հնարավորությունը, զբոսաշրջության երթուղիներում արգելոցի տարածքի ներգրավումը, ինչպես նաև պետական ֆինանսավորման առավել արդյունավետ օգտագործումը: Արգելոցների ստեղծումը միտված է պատմական, հնագիտական, ճարտարապետական անշարժ հուշարձանների, հուշարձանների համալիրների, հուշարձանախմբերի, պատմական և բնապատմական միջավայրի, մշակութային այլ արժեքների ուսումնասիրման և հանրահռչակման աշխատանքների արդյունավետության բարձրացմանը:

	37.3 «Երերույքի տաճար » պատմամշակութային արգելոց ստեղծելու, Երերույքի տաճար» արգելոցի մասնաճյուղ ստեղծելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մարտի 7-ի N 312-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակն է Հայաստանում մշակութային զբոսաշրջության զարգացում և ժառանգության ոլորտի ինստիտուցիոնալ ենթակառուցվածքների ընդլայնումը: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված՝ ՀՀ կառավարության ծրագրի «4.9 Մշակույթ» բաժնից, ՀՀ Սահմանադրության 15-րդ հոդվածից, Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի «ե» կետից: Երերույքի տաճար պատմամշակութային արգելոցի ստեղծումը պայմանավորված է վերջինիս որպես հանրապետական նշանակության հուշարձան Հայաստանի Հանրապետության պատմության և մշակույթի հուշարձանների պետական ցուցակում ընդգրկված լինելու հանգամանքով: Հուշարձանի զբաղեցրած տարածքը համարվում է պետական սեփականություն, որի վրա էլ ստեղծվելու է արգելոցը: Արգելոցի ստեղծումը չի հանգեցնում լրացուցիչ ֆինանսական պարտավորություն: Դրանց հետագա պահպանությունն ու շահագործումն իրականացվելու է «Պատմամշակութային արգելոց թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի արտաբյուջետային միջոցների հաշվին: Զբոսաշրջության կամ տուրիզմի ժամանակակից արդյունաբերությունը հանդիսանում է համաշխարհային տնտեսության ամենախոշոր, արդյունավետ և առավել դինամիկ զարգացող ճյուղերից մեկը: Շահութաբեր այս ոլորտի զարգացման աննախադեպ տեմպերն իրենց ուղղակի ազդեցությունն են թողնում տնտեսության գրեթե բոլոր ճյուղերի համամասնական զարգացման վրա: Հայաստանը հանդիսանում է հարուստ զբոսաշրջային ներուժ ունեցող, սակայն միջազգային տուրիզմի շուկայում չափազանց համեստ տեղ գրավող պետություն: 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները ՀՀ կառավարության 2003 թվականի մարտի 7-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մարտի 6-ի N 202 որոշման մեջ փոփոխություն կատարելու և պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» N 312-Ն որոշման դրույթներին համապատասխան՝ ՀՀ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության ոլորտում ՀՀ կառավարության կողմից նախատեսվել էր իրականացնել միասնական քաղաքականություն՝ կենտրոնացված կառավարմամբ և վերահսկողությամբ: Նախագծի ներկայացումը նպատակ ունի նաև ապահովել արգելոցի (ՀՀ մյուս հնավայրերի նման)՝ պահպանության, գիտական ուսումնասիրման, հանրահռչակման և օգտագործման սկզբունքների միասնականությունը, ինչպես նաև շահառուների համար առավել բարենպաստ պայմանների ստեղծումը: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Պատմամշակութային արգելոցների ստեղծումը միտված է պատմական, հնագիտական, ճարտարապետական հուշարձանների, համալիրների, հուշարձանախմբերի, պատմական և բնապատմական միջավայրի, մշակութային այլ արժեքների ուսումնասիրման և հանրահռչակման աշխատանքների արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների և մասնավոր հատվածի հետ համագործակցությամբ համայնքներում տնտեսական և զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման ծրագրի իրականացմանը: Արգելոց-թանգարանի հուշարձանների շուրջ պատմամշակութային արգելոցների ստեղծում, պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների օգտագործման և հանրահռչակման բնագավառում արդյունավետության, ներդրումային դաշտի գրավչության բարձրացում և զբոսաշրջության ծավալների ընդլայնում: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը - Նախագծի ընդունման արդյունքում արգելոցները և արգելոց-թանգարանները կդառնան մշակութային նյութական և ոչ նյութական ժառանգության համալիր պահպանման և կառավարման արդյունավետ մշակութային կազմակերպություններ, - կապահովվի հուշարձանախմբի ամբողջ տարածքի պատշաճ պահպանությունը, մասնագիտական ամբողջական ուսումնասիրման ու հանրահռչակման հնարավորությունը, զբոսաշրջության երթուղիներում արգելոցի տարածքի ներգրավումը, ինչպես նաև պետական ֆինանսավորման առավել արդյունավետ օգտագործումը: Արգելոցների ստեղծումը միտված է պատմական, հնագիտական, ճարտարապետական անշարժ հուշարձանների, հուշարձանների համալիրների, հուշարձանախմբերի, պատմական և բնապատմական միջավայրի, մշակութային այլ արժեքների ուսումնասիրման և հանրահռչակման աշխատանքների արդյունավետության բարձրացմանը:

38	38.1 Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության վերանայում, կառուցվածքային փոփոխություն, նոր հաստիքների համալրում, միջազգային կառույցների հետ կապի խթանում, ուղղակի դրամաշնորհների տրամադրում, հնագիտական գտածոների վերականգնման ոլորտի կադրերի վերապատրաստում արտասահմանյան մասնագետների ներգրավմամբ 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակն է Հայաստանի, սփյուռքի, Լեռնային Ղարաբաղի մշակութային ժառանգության պահպանման, անվտանգության, միջազգայնացման, պատմական, իրավական տեղեկացվածության համակարգված տարածման ռազմավարություն մշակող և իրականացնող կենտրոնի ստեղծումը: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված՝ ՀՀ կառավարության ծրագրի «4.9 Մշակույթ» բաժնի մշակութային ժառանգության ոլորտի 11-րդ կետից: Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսանում «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասը: Ռազմավարություն մշակող և իրականացնող կենտրոնի ստեղծումը հնարավորություն կտա ապահովել Հայաստանի, սփյուռքի և Լեռնային Ղարաբաղի տարածքում գտնվող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանության վիճակի, պատմական տվյալների, դրանց իրավական կարգավիճակի և առնչվող իրավահարաբերությունների վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ներկայացումը, մշակութային ժառանգության կոնֆլիկտային գոտիներում գտնվելու և անվտանգության խնդիրների քննարկումը իրավաբանական և ֆիզիկական անձանց լայն շրջանակում, առանձնապես կարևորագույն՝ համաշխարահին դերակատարություն ունեցող հուշարձանների պահպանության խնդիրները միջազգային հարթակում բարձրացնելու, անհրաժեշտ միջոցառումներ նախատեսելու և իրականացման ուղիներ փնտրելու համար: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Խնդրի լուծման համար նախատեսվում է վերանայել «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրությունը, ՊՈԱԿ-ում իրականացնել կառուցվածքային փոփոխություն, կառույցը համալրել նոր հաստիքներով՝ խթանելով միջազգային կառույցների հետ կապը, վերջիններիս ներգրավմամբ քննարկել ուղղակի դրամաշնորհների տրամադրման հարցը, արտասահմանյան մասնագետների ներգրավմամբ կատարել հնագիտական գտածոների վերականգնման ոլորտի կադրերի վերապատրաստումը: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Միջոցառման արդյունքում ակնկալվում է «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագիտական ներուժի խթանումը, սփյուռքի և Լեռնային Ղարաբաղի պատմամշակութային ժառանգության պահպանության խնդիրների ուսումնասիրությունը և թիրախային սփյուռքի և Լեռնային Ղարաբաղի պատմամշակութային ժառանգության պահպանության խնդիրների բացահայտումը և թիրախային տեղեկատվության տարածումը, ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում նոր հուշարձանի ընդգրկումը, հուշարձանների վերականգնման դպրոցի կայացումը, ՊՈԱԿ-ի՝ JICA ծրագրով վերազինված հնագիտական առարկաների վերականգնման լաբորատորիայի ներուժի ամբողջական օգտագործումը
39	39.1 «Ընտանեկան գրադարանավար» ծրագրի ընդլայնում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակն է մշակութային ժառանգության պահպանության ներառականության ապահովումը, հասարակության խոցելի խմբերի համար մշակույթին հաղորդակից լինելու իրավունքի իրացումը: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.9 Մշակույթ» բաժնի մշակութային ժառանգության ոլորտի 8-րդ կետից: Հայաստանում տարեցները, սահմանափակ կարողություններով և հնարավորություններով անձիք բախվում են բազմաթիվ խնդիրների: Այդ խնդիրներից մեկը գրադարանային սպասարկման անմատչելիությունն է: Դրա լուծմանն էր միտված «Ընտանեկան գրադարանավար» ծրագրի իրականացումը Շիրակի և Լոռու մարզային գրադարաններում: Ծրագրի նպատակը տնային պայմաններում տարեցների, սահմանափակ կարողություններով և հնարավորություններով մարդկանց համար գրադարանային սպասարկում ապահովելն է, որի շնորհիվ գրադարանը դառնում է հասանելի հանրության բոլոր շերտերի համար: Տարեցների, սահմանափակ կարողություններով և հնարավորություններով անձանց համար մատչելի և հավասար պայմաններ ստեղծելու, հասարակական կյանքին նրանց ներառելու համար անհրաժեշտություն է առաջացել ընդլայնել ծրագիրը, իրականացնել նաև մարզային 8 պետական գրադարաններում:

1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները
Ներկայում «Ընտանեկան գրադարանավար» ծրագիրը իրականացվում է ՀՀ Շիրակի և Լոռու մարզային գրադարաններում,սպասարկում է 120-ից ավելի տարեցների և հաշմադամների: Արմավիրի, Արագածոտնի, Արարատի, Գեղարքունիքի, Կոտայքի, Սյունիքի, Վայոց ձորի և Տավուշի մարզային գրադարաններում ևս անհրաժեշտություն է առաջացել իրականացնել այս ծրագիրը, քանի որ բոլոր մարզերում էլ առկա է տարեցների, սահմանափակ կարողություններով և հնարավորություններով մարդկանց որոշակի քանակ, ովքեր ընթերցանության պահանջ ունեն:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները
Ներկայում շենքային պայմանները բավարար հարմարեցված չեն տարեցների, սահմանափակ կարողություններով և հնարավորություններով մարդկանց սպասարկելու համար՝ մասնավորապես տեղաշարժման սահմանափակումներ ունեցողների, ծրագիրը հնարավորություն է տալիս գրադարանավարին այցելելու շահառուին, և տնային պայմաններում սպասարկելու գրքերով: Հավասար հնարավորությունների ապահովումն է տարեցների, սահմանափակ կարողություններով և հնարավորություններով մարդկանց համար:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը
Ծրագրի ընդլայնումը հնարավորություն կտա ՀՀ մարզերի 650 տարեցների, սահմանափակ կարողություններ և հնարավորություններ ունեցող շահառուների տնային պայմաններում մատուցել գրադարանային ծառայություններ:

39.2 Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության ներառական ծրագրեր

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման գլխավոր նպատակն է մշակութային ժառանգության պահպանության ներառականության ապահովումը, հասարակության խոցելի խմբերի համար մշակույթին հաղորդակից լինելու իրավունքի իրացումը:
Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Ծրագիր Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026թթ. N 1363-Ա որոշմամբ հաստատված ծրագրի «4.9 ՄՇԱԿՈՒՅԹԸ» բաժին՝ Հայկական պատմամշակութային ժառանգության (նյութական և ոչ նյութական) պահպանության, ուսումնասիրման, օգտագործման և հանրայնացման շարունակականության ապահովում:
Հայաստանի ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության հիմնական ուղղություններից է համայնքներում ներառական հիմունքներով իրազեկման արշավների, ուսուցողական դասընթացների, վերապատրաստումների կազմակերպումը: Նախատեսվում է ընդլայնել համայնքների աշխարհագրությունը և շահառուների թիվը՝ ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանությունը առավել արդյունավետ իրականացնելու, հասարակության տարբեր խմբերի մասնակցայնությունն ընդլայնելու և աշխուժացնելու նպատակով:
Գործընթացի նպատակն է ապահովել ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության ներառական ծրագրերի հետագա իրականացման արդյունավետությունը և ավելի հստակ ու որոշակի քայլեր իրականացնել ոչ նյութական մշակութային ժառանգության ոլորտի ծրագրային գործընթացներում, ինչպես նաև պետական, հասարակական կազմակերպությունների ծրագրերում ներառականության հիմունքների կիրարկման, ինչպես նաև համայնքահեն ժառանգության պահպանության ուղղությամբ:

1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Ներկայում Հայաստանում ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության և կառավարման ծրագրեր իրականացվում են տարբեր պետական, կրթական, մշակութային, հասարակական կազմակերպությունների և համայնքների կողմից ներառականության հիմունքով:
Գործընթացը կազմակերպվում է դրամաշնորհային մշակութային մրցույթների միջոցով, մասնավորապես նկատի ունենալով խոցելի խմբերին, հաշմանդամներին, փախստականներին, ներգաղթյալներին, տարբեր տարիքային խմբերին, կանանց և երիտասարդների ներգրավվածությանը: Մշակութային արժեքներին հաղորդակցվելու և համապատասխան ծառայություններից օգտվելու մատչելիությունը ամրագրված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2003 թվականի «Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին» կոնվենցիայի և «Ոչ նյութական մշակութային ժառանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 4 ենթակետով:

1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները
Գործընթացի իրականացման արդյունավետությունն ու արդյունքային ցուցանիշներ ապահովելու համար առայժմ պիլոտային ծրագրեր են իրականացվում հանրապետության մի քանի համայնքներում:

	2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Հասարակության շրջանում ներառականության և ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության փոխադարձ կապի արժևորում՝ որպես ավանդույթի ուժով ամրապնդված հասարակության առողջության, հզորացման, բարեկեցության և կայուն զարգացման երաշխիք, ինչպես նաև տարբեր համայնքների, խմբերի և անհատների ինքնագնահատականի, ինքնահարգանքի և փոխադարձ հարգանքի ձևավորման միջոց:
	39.3 Հասարակության խոցելի խմբերի համար նպատակային միջոցառումների կազմակերպում 1.Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակն է մշակութային ժառանգության պահպանության ներառականության ապահովումը, հասարակության խոցելի խմբերի համար մշակույթին հաղորդակից լինելու իրավունքի իրացումը: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» 2021թ օգոստոսի 18-ի N1363-Ա որոշման «Մշակույթ» բաժնի 6-րդ կետ: Իրականացվող գործընթացները նպատակաուղղված են լինելու հասարակության խոցերի խմբերի մշակութային կյանքին լիարժեք ինտեգրմանը, նրանց ստեղծագործական հետագա զարգացման և առաջխաղացման պայմանների ապահովմանը, ինքնադրսևորման հնարավորությունների ստեղծմանը, ինչպես նաև հասարակության մեջ հանդուրժողականության մթնոլորտի ձևավորմանը: 1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Հասարակության խոցելի խմբերի ստեղծագործական ներուժի բացահայտման, արվեստի տարբեր բնագավառներում նրանց ինքնադրսևորման և մշակութային գործընթացներին ներգրավման խնդիրը հասարակության առաջընթացի և մշակութային զարգացման կարևոր պայմաններից է: Մինչ այժմ, արվեստի և մշակութային կյանքի զարգացման ուղղությամբ իրականացվող ծրագրերում հիմնական շեշտադրումն ուղղվել է մշակութային ենթակառուցվածքների գործունեության բնականոն պայմանների ապահովման, արվեստի բնագավառում ստեղծագործող անհատների խրախուսման և նրանց գործունեության խթանման գործընթացներին: Իրականացմամբ կլուծվեն նրանց ինքնադրսևորման, մշակութային կյանքին հաղորդակցման և լիիրավ մասնակցության խնդիրը: 1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Ներառական արվեստի զարգացման նպատակով անհրաժեշտ է իրականացնել համալիր ծրագիր, որը թույլ կտա ապահովել մշակույթի համընդհանուր ներառականության անխաթար գործընթացը, շարունակել ստեղծագործող անձանց ինքնադրսևորման հավասար և արդարացի պայմանների ապահովման, ստեղծագործական ծրագրերի և գործունեության աջակցության խրախուսման գործընթացները: 2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Արդյունքում հնարավորություններ կստեղծվեն հասարակության խոցելի խմբերի ստեղծագործական ներուժի բացահայտման և խթանման համար, ինչպես նաև մշակույթի միջոցով կապահովվի նրանց ինտեգրումը հասարակություն՝ խոցելի խմբերի և նրանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների ստեղծագործական ծրագրերի նպատակային աջակցմամբ:
40	40.1 Ոլորտի կազմակերպությունների մարքեթինգի, սեգմենտացիայի, թիրախավորման, դիրքավորման, գիտելիքների և ռեսուրսների ձևավորում, դասընթացների իրականացում 1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակը Մշակույթի կառավարման ժամանակակից համակարգերի ներդրումն է: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1363-Ա որոշման «4.9 «Մշակույթ» բաժնի ժամանակակից արվեստի ոլորտի 1-ին կետից: Միջոցառման նպատակն է կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացում, ֆինանսական ինքնավարության մակարդակի ապահովում, կառավարչական և կազմակերպչական կարողությունների խթանում:

	1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Ներկայումս նախարարության ենթակայությամբ գործող կազմակերպությունների /ՊՈԱԿ-ներ/ կառավարումը գնահատվում է ոչ արդյունավետ: Կազմակերպությունների կանոնադրական խնդիրները ներառում են գործունեության լայն ինքնավարություն, այդ թվում՝ կառավարման և կազմակերպման համակարգերում, ձեռնարկատիրական գործունեության մեջ, կազմակերպության ֆինանսական ռեսուրսների ձևավորման և տնտեսման մեջ, տոմսային տնտեսությունների կառավարման, պլանավորման և այլ հարցերում: 1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Իբրև առկա խնդիրների լուծում առաջարկվում է ոլորտային կազմակերպությունների մարքետինգի, սեգմենտացիայի թիրախավորման, դիրքավորման գիտելիքների և ռեսուրսների ձևավորման նպատակով ծրագրի դասընթացի անցկացում: Դասընթացը հնարավորություն կընձեռի զարգացնել կազմակերպությունների կարողությունները վերոնշյալ ոլորտային և մասնագիտական հարցերում: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը ՊՈԱԿ-ների աշխատակիցներիի մասնագիտական կարողությունների զարգացում: Պետական միջոցների նպատակային կառավարում, մարդկային ռեսուրսների և կարողությունների կատարելագործում, մասնավոր և պետական հատվածների փոխշահավետ համագործակցություն, կառավարման արդի մոդելների ներդրում:
	40.2 Ֆոնդահայթայթման կարողությունների զարգացում 1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակը Մշակույթի կառավարման ժամանակակից համակարգերի ներդրումն է: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1363-Ա որոշման «4.9 «Մշակույթ» բաժնի ժամանակակից արվեստի ոլորտի 2-րդ կետից: Միջոցառման իրականացման նպատակն է մասնակիցներին տրամադրել անհրաժեշտ գիտելիքներ և գործիքներ՝ բիզնեսն ու մշակույթը համատեղելու գրագետ ռազմավարություն ստեղծելու, համար: Դասընթացի իրականացման ընթացքում կուսումնասիրվեն ընկերությունների և արվեստի աշխարհի փոխգործակցության ձևաչափերը, արդյունավետության չափման հաջողված գործոններն ու մոդելները: Մասնակիցները ձեռք կբերեն ֆոնդահայթայթման ռազմավարության տեսլական մշակելու հմտություններ, ինչպես նաև կամրապնդվի պետություն-մասնավոր հատվածի կապը: 1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները ՀՀ կառավարությունը կենտրոնում է մշակույթի զարգացման, մշակութային կազմակերպությունների այլընտրանքային ֆինանսավորման խնդիրներները: Մշակույթի ոլորտում ժառանգված են պետական կառույցների կառավարման իներցիոն եղանակը: Վերանայման կարիք ունեն պետական կառույցների հանրային ներկայանալիության գործիքները, հանդիսատես ներգրավելու և կայուն, հավատարիմ լսարան ձևավորելու խնդիրները: Պետական դրամաշնորհները ծածկում են միայն խիստ անհրաժեշտ պահանջների և ծախսերի մի մասը: Սա հրատապ է դարձնում լրացուցիչ միջոցների գրավումը, պետական հատկացումներից կախվածության նվազեցնումը: 1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Իբրև առկա խնդիրների լուծում առաջարկվում է ոլորտային կազմակերպությունների մասնակցությամբ «Մշակութային ֆոնդահայթայթում» դասընթացի իրականացում, Ֆոնդահայթայթման գործնական ուղեցույցի մշակում և տրամադրում ՊՈԱԿ-ներին: Դասընթացը հնարավորություն կտա զարգացնել կազմակերպությունների կարողությունները՝ ֆոնդհայթայման, օրենքով չարգելված այլ աղբյուրներից ֆինանսական միջոցներ ներգրավելու: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը «Մշակութային ֆոնդահայթայթում» դասընթացների իրականացում: Ֆոնդահայթայթման գործնական ուղեցույցի մշակում: Մշակութային հաստատություններում ֆոնդահայթայթման կարողությունների և մեխանիզմների զարգացում:
	40.3 «Կառավարման կարողությունների զարգացում» դասընթացների իրականացում

	1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակը Մշակույթի կառավարման ժամանակակից համակարգերի ներդրումն է: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1363-Ա որոշման «4.9 «Մշակույթ» բաժնի ժամանակակից արվեստի ոլորտի 3-րդ կետից: Միջոցառման նպատակը մշակույթի ոլորտում կառավարող անձնակազմի մասնագիտական կատարելագործում և կառավարման ժամանակակից ձևաչափերին ծանոթացում: 1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Ներկայում մշակույթի ոլորտի կառավարման գործընթացներում գերիշխում է վարչահրամայական գործելակերպը, տնտեսությունից և արդի մշակութային զարգացումներից կտրված և ինքնամփոփ կառավարման պրակտիկան, որը խորհրդային ժամանակաշրջանի ժառանգություն համարվելով մեծապես խոչընդոտում է մշակութային կազմակերպությունների զարգացմանն ու արդի մարտահրավերներին դիմակայմանը: 1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Առաջարկվում է մշակույթի ոլորտի կառավարիչների, պրոդյուսերների, պետական մշակութային կազմակերպությունների գործադիր մարմինների (տնօրենների) համար իրականացնել հատուկ դասընթացներ՝ հստակ մոդուլներով, գործնական և տեսական աշխատանքների կատարման զուգակցմամբ, ծրագրային և գիտելիքային արդյունքների գնահատման մեխանիզմներով: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը «Կառավարման կարողությունների զարգացում» դասընթացների իրականացում՝ տարեկան 18 ՊՈԱԿ-ի 30 ներկայացուցչի մասնակցությամբ: Ստեղծագործական ԲՈՒՀ-ի «Արվեստի կառավարում» մասնագիտությամբ սովորող ուսանողների փորձառության ձեռքբերում պետական կառույցներում: «Կառավարման կարողությունների զարգացում» դասընթացների ակնկալվող արդյունքն է՝ պրոդյուսերների և տնօրենների աշխատանքային գործունեության արդյունավետության բարձրացումը, գործնական որակների ուժեղացումը, ռազմավարական մտածողության ունակությունների զարգացումը, կառավարման համակարգի արդիականացումը:
41	41.1 Ինքնազբաղ/ անկախ ստեղծագործողների գործունեության խթանում 1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակն է Ինքնազբաղ/ անկախ ստեղծագործողների հանրային ինստիտուցիոնալացումը: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1363-Ա որոշման «4.9 «Մշակույթ» բաժնի ժամանակակից արվեստի ոլորտի 8-րդ կետից: Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է սոցիալական կարգավիճակի բարելավման, պետություն-անհատ ստեղծագործող հարաբերությունների նորմավորման, ամրապնդման անհրաժեշտությամբ: Միջոցառման նպատակն է համագործակցության ընդլայնումը, ստեղծագործական ծրագրերի խթանումը, ստեղծարար, տաղանդավոր արվեստագետների համար բարենպաստ միջավայրի ձևավորումը: 1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Ներկայումս անորոշ է ինքնազբաղ ստեղծագործողների/արվեստագետների ֆինանսահարկային հարաբերությունները, ինչը սահմանափակում է նրանց գործունեության հնարավորությունները: Մասնավորապես, ինքնազբաղ/անկախ ստեղծագործողներ/ չեն օգտվում պետության կողմից ընձեռնված սոցիալական աջակցության այն ձևերից, որոնք հասանելի են պետական կառույցների աշխատողներին, կարգավորված չեն նրանց սոցիալական պաշտպանության խնդիրները: Ինքնազբաղ աշխատանքն, անշուշտ, ունի իր բարդությունները: Հիմնական բարդությունը անորոշությունն է, տարվա կտրվածքով եկամտի անհավասար բաշխումը, գործատուի հետ պայմանագրեր կապելու, իրավական տարատեսակ խնդիրներին քաջատեղյակ լինելու, հաշվապահություն վարելու, մարքեթինգի և այլ բիզնես գործառույթներ վարելու անհրաժեշտությունը: 1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

	Նախատեսվող լուծումներով առաջարկվում է նրանց իրավական, սոցիալ-տնտեսական կարգավիճակի հստակեցում, անկախ ստեղծագործողների համար պետական բյուջեից տրամադրվող դրամաշնորհներից օգտվելու առաջարկների փաթեթի մշակում: 2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Պետական կառույցի և ինքնազբաղ ստեղծագործողների/ արվեստագետների համագործակցության մեխանիզմների մշակում: Տարեկան 3 միջոցառման իրականացում: Օրենսդրական կարգավորումների միջազգային փորձի ուսումնասիրություն, առաջարկի ներկայացում:
	41.2 Կինոնկարների արտադրություն 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակն է Ինքնազբաղ/ անկախ ստեղծագործողների հանրային ինստիտուտիցիոնալացումը: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1363-Ա որոշման «4.9 «Մշակույթ» բաժնի 1-ին պարբերությունից, ժամանակակից արվեստի ոլորտի 8-րդ կետից, 2017 թվականի հունվարի 30-ին Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրված և 2020 թվականի սեպտեմբերի 18-ին ընդունված «Կինեմատոգրաֆիական համատեղ արտադրության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (վերանայված) վավերացնելու մասին» ՀՀ օրենքի պահանջներից: Միջոցառման նպատակն է՝ հայկական կինոարտադրանքի միջազգայնացումը և կինոարտադրության ոլորտում տնտեսական արդյունավետության աճի՝ փոխշահավետ համագործակցության ընդլայնումը: 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները 2006 թվականից մինչ օրս համարտադրությամբ իրականացվել են՝ 35 խաղարկային և վավերագրական կինոնկարներ, և ներկայումս նախաարտադրական և ընթացիկ փուլում են՝ 6 նոր կինոնախագծեր: Հայաստանում իրականացվում են կինոոլորտի բարեփոխման տարբեր ծրագրեր, որոնք ուղղված են միջազգային համագործակցության երկխոսության խթանմանը, սակայն համատեղ նախագծերի իրականացման, միջազգային կինոհարթակներում դիրքավորման և հայկական կինոարտադրանքի մրցունակության ապահովման համար դեռևս կարգավորված չեն կինոարտադրանքի տարածման մեխանիզմները, միջազգային չափորոշիչներին համապատասխան հեղինակային և հարակից իրավունքների պահպանման, ինչպես նաև կինոկրթության բարեփոխման, պետական աջակցության և ոլորտում ներդրումային ծրագրերի ձևաչափերը: 1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Միջազգային համագործակցությունը խթանելու համար անհրաժեշտ է ապահովել օտարերկրյա պետությունների հետ համատեղ ֆիլմարտադրության պայմանագրերի առկայությունը, միջազգային մասնագիտական կառույցներին անդամակցությունը, իրականացնել միջմշակութային կապերի ամրապնդման, ֆիլմարտադրության և հայ կինոյի հանրահռչակման համար անհրաժեշտ զարգացման և ստեղծագործական ծրագրեր, իրավական կարգավորումներ, ինչպես նաև կինեմատոգրաֆիայի ոլորտում առաջարկություններ ներկայացնելու համար ներգրավել մասնագիտական կառույցներին: 2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Հայկական կինոարտադրության զարգացում և միջազգայնացում, այդ թվում՝ համատեղ ֆիլմարտադրություն, միջազգային կինոգործընթացներին ինտեգրում և համագործակցության ընդլայնում, փորձի փոխանակման հարթակների ստեղծում, հայկական կինոարտադրանքի հանրահռչակում և տարածում, կինեմատոգրաֆիայի պետական ֆինանսավորման արդյունավետության ապահովում, տեղական և օտարերկրյա ներդրումների ներգրավում:
42	42.1 Մշակույթի մեկենասի հանրային վարկանիշի ձևավորում, մեկենասության պետական խրախուսում տեղեկատվական դաշտում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակն է մշակույթի մեկենասության ինստիտուտի ներդրում և կայացումը և պետություն-մասնավոր համագործակցության ընդլայնմանն ուղղված փոխշահավետ մեխանիզմների խթանումը:

	Միջոցառման անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1363-Ա որոշման «4.9 «Մշակույթ» բաժնի ժամանակակից արվեստի ոլորտի 10-րդ կետից: Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է մեկենասության ինստիտուտի կայացման անհրաժեշտությամբ, մեկենասների՝ իբրև արվեստի հովանավորյալների հասարակական դիրքի և հեղինակության ամրապնդմամբ, մեկենասության պետական խրախուսման կարևորությամբ: Միջոցառման արդյունքում կբարձրանա արվեստի և մշակույթի հովանավորչությունը, տեղի կունենա որոշակի ֆինանսական միջոցների ներհոսք դեպի ստեղծագործական և մշակութային միջավայր, մշակութային կյանքի աշխուժացում, ստեղծագործական գործունեության խրախուսում և խթանում: 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Մշակույթի ոլորտում մեկենասության ինստիտուտը մեծ տարածում է գտել աշխարհում: Չնայած դրական և առաջավոր փորձին, ՀՀ-ում մշակույթի մեկենասությունը ինստիտուցիոնալ մակարդակ դեռևս չի ձևավորել: Մեկենասության հետ կապված գործընթացները հիմնականում գտնվում են անձնային, անհատական հարաբերությունների դաշտում, զարգացած չէ կորպորատիվ սոցիալական պատասխանատվության համակարգը: Զարգացված չէ ՊՈԱԿ-ների գրավչության բարձրացման մեխանիզմների համակարգը: 1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Նախատեսվող միջոցառմամբ առաջարկվում է մեծացնել մշակույթի մեկենասության դերակատարությունը հանրային կյանքում, նպաստել մշակութային մեկենասության և այդ շրջանակում գործող անձանց հանրային վարկանիշի բարձրացումը, պետության կողմից հանրությանն ուղղվող ազդակների, մեկենասության խրախուսման, մեկենասության մեխանիզմների ներդրման միջոցով, ինչպես նաև «Մեկենաս» տարեգրքի մշակումն ու հրատարակումը: 2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Պետություն-մասնավոր հատվածի փոխվստահելի միջավայրի ձևավորում, ՊՈԱԿ-ների գրավչության և ֆինանսական ինքնավարության բարձրացում, մշակույթի ոլորտում պետական ծրագրերի ընդլայնում: «Մեկենաս» տարեգրքի մշակում և հրատարակում
	42.2 Բարերարների հետ համագործակցություն, պետական միջոցներով կազմված վերականգնման նախագծերի անվճար տրամադրում, մասնագիտական խորհրդատվություն, հուշագրերի ստորագրում, մեկենասության տարեգրքի համար տեղեկատվության տրամադրում 1. 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակն է մշակույթի մեկենասության ինստիտուտի ներդրում և կայացումը և պետություն-մասնավոր համագործակցության ընդլայնմանն ուղղված փոխշահավետ մեխանիզմների խթանումը: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1363-Ա որոշման «4.9 «Մշակույթ» բաժնի մշակութային ժառանգության ոլորտի 4-րդ կետից և ժամանակակից արվեստի ոլորտի 10-րդ կետից, ՀՀ սահմանադրության 15-րդ հոդվածի 2-րդ մասից: Հայաստանի Հանրապետության տարածքում առկա են բազմաթիվ վնասված, վթարային վիճակում գտնվող կիսավեր-կիսաքանդ և խոնարհված հուշարձաններ, որոնց հետագա պահպանության գործընթացները պետական միջոցների սղության պատճառով հնարավոր չէ ապահովել: Պետություն-մասնավոր համագործակցությունը հնարավորություն կստեղծի բարերարների անհատական աջակցությամբ և ֆինանսական միջոցների ներգրավմամբ իրականացնել հուշարձանների վերականգնողական աշխատանքները, թոթափել պետության կողմից հուշարձանների ամրակայման, նորոգման, վերականգնման և տարածքների բարեկարգման նպատակով ֆինանսական հատկացումների տրամադրման բեռը: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Հայաստանի Հանրապետության տարածքում առկա վթարային և ավերված վիճակում գտնվող հուշարձանների հետագա պահպանության նպատակով վերականգնողական աշխատանքների իրականացման համար համագործակցության ուղիների ապահովումը բարերարների հետ, այդ շրջանակում պետական միջոցներով կազմված վերականգնման նախագծերի անվճար տրամադրում բարերարին, աշխատանքների իրականացման նպատակով իրավական հարթակի ստեղծումը և հուշագրերի ստորագրումը, վերականգնողական աշխատանքների

	ընթացքում մասնագիտական խորհրդատվության անվճար ապահովում, բարերարի աջակցությամբ աշխատանքների արդյունքների ներկայացում մեկենասության տարեգրքում: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Պետություն-մասնավոր համագործակցության արդյունքում կապահովվի հուշարձանների պահպանության բնագավառում մասնավորի հետ հարաբերությունների հետագա զարգացումը, հուշարձանների վերականգնման աշխատանքների վերջնարդյունքում կթոթափվի պետական հոգածության պարտավորությունների բեռը, քանակապես կաճի վերականգնված և բարեկարգ միջավայր ունեցող հուշարձանների թվաքանակը, հնարավորություն կստեղծվի հուշարձանների շրջակա տարածքում ենթակառուցվածքների զարգացման, այցելուների լայն սպասարկման, զբոսաշրջության զարգացման համար, որը կնպաստի հուշարձանների հանրահռչակմանը, ինչը կխթանի շահառուների ընդգրկվածությունը, կստեղծվեն նոր աշխատատեղեր:
43	43.1 Մշակութային հաստատությունների գույքի և նյութատեխնիկական բազայի բարելավում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակն է Թատերահամերգային կազմակերպություններում նյութատեխնիկական բազայի արդիացումը: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1363-Ա որոշման «4.9 «Մշակույթ» բաժնի ժամանակակից արվեստի ոլորտի 12-րդ կետից: Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է գեղարվեստական բարձր մակարդակի ապահովմանը, ժամանակակից, մրցունակ թատերական բեմադրությունների և երաշժտական ծրագրերի իրականացմանը, թատրոնների յուրահատկությունների պահպանմանն ու զարգացմանը: 1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Տեխնիկայի ներկա վիճակն անդրադառնում է խաղացանկի ձևավորման, հանդիսատեսի որակյալ սպասարկման, ներկայացումների որակի, ինչպես նաև տուրիստների ներգրավման գործընթացների ապահովման վրա: Թատերահամերգային կազմակերպությունների բնականոն գործունեության ապահովման համար կարևոր է բավարար նյութատեխնիկական բազայի առկայությունը, ինչը պայմաններ կստեղծի գեղարվեստաստեղծագործական անձնակազմի ստեղծագործական աշխատանքի, հանդիսատեսի սպասարկման որակի բարձրացման համար: Նյութատեխնիկական բազայի ամենակարևոր բաղադրիչներից է բեմի և դահլիճի ապահովվածությունը լուսաձայնային տեխնիկայով: Թատրոնի դահլիճը հանդիստեսի համար բարձրարժեք ստեղծագործությունների հետ շփման հիմնական վայրն է, որի բավարար տեխնիկական միջոցների առկայությունը հնարավորություն կտա վերջինիս վայելելու թատերահամերգային արտիստների բարձրակարգ կատարումները: Նյութատեխնիկական ներկա վիճակը չի ընձեռում այդ հնարավորությունը, քանի որ այժմ օգտագործվող տեխնիկան նախորդ դարի 80-ական թվականներից է և գտնվում է վատթարագույն վիճակում, վերանորոգման համար անհրաժեշտ պահեստամասերը, լամպերն ու այլ պարագաները վաղուց դուրս են եկել արտադրությունից: Բացի դա առկա տեխնիկական միջոցները չեն բավարարում ժամանակակից թատրոնի և համերգասրահների պահանջներին, որի հետևանքով տուժում են իրականացվող միջոցառումների որակը և տպավորությունը հանդիսատեսի շրջանում: 1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Թատերահամերգային ոլորտում գործունեության զարգացման պայմաններ ստեղծելու համար անհրաժեշտ է նյութատեխնիկական բազայի համապարփակ արդիականացում: Որոշ բացառություններով նյութատեխնիկական վերազինման, բարելավման կարիք ունեն մշակույթի գրեթե բոլոր պետական կառույցները: Վատթար վիճակում են լուսաձայնային տեխնիկան, բեմերի և դահլիճների կահավորումը, ջեռուցման և անվտանգության համակարգերը, առկա է երաժշտական գործիքների ու բեմական հանդերձի մեծ պակաս: 2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Պետական դրամաշնորհների շրջանակում թատերական կազմակերպությունների գեղարվեստական կահավորման և բեմական հանդերձանքի ապահովում: Տարեկան 3 ՊՈԱԿ-ի նյութատեխնիկական բազայի համալրում: Մշակութային հաստատությունների գույքի և նյութատեխնիկական բազայի բարելավում, գեղարվեստական բարձրարժեք արդյունքի (գույքի) ապահովում (լուսաձայնային տեխնիկա, երաժշտական գործիքներ, բեմական հանդերձ և այլն):

44	44.1 Ստեղծագործական միությունների և պետական կազմակերպությունների համագործակցության խթանում, գույքային պակասորդի մեղմացում գույքային ռեսուրսների և մասնագիտական ներուժի վերլուծություն, քարտեզագրում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակն է պետական կոլեկտիվների լիարժեք գործունեությունն ապահովելու նպատակով ստեղծագործական միությունների գույքային ռեսուրսի քարտեզագրումը: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1363-Ա որոշման «4.9 «Մշակույթ» բաժնի ժամանակակից արվեստի ոլորտի 13-րդ կետից: Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է ստեղծագործական միությունների և պետական կազմակերպությունների համագործակցության խթանմամբ, պետական կազմակերպությունների բնականոն գործունեության ապահովմամբ: 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Ներկա դրությամբ Հայաստանում գործում են շուրջ 9 պետական կարգավիճակ ունեցող մշակութային կազմակերպություններ, որոնք չեն տիրապետում գործունեության մշտական հարթակների, տեղակայված են այլ կառույցներին պատկանող տարածքներում: Այսպես՝ Հայաստանի պարի պետական անսամբլը գործում է Օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում, հռչակավոր Կոմիտասի անվան ազգային քառյակը փորձերն իրականացնում է Կոնսերվատորիայում, «Բարեկամություն» Հայաստանի պարավեստի պետական համույթը՝ «Ա. Խաչատրյան» համերգասրահի նկուղային հարկում, Հայաստանի երգչախմբային ընկերության անբարենպաստ պայմաններում է ստեղծագործում Թ. Ալթունյանի անվ. երգի-պարի պետական համույթը, տանիքից զուրկ է նաև Հայաստանի լավագույն թատրոններից մեկը՝ Հ. Մալյանի անվ. կինոդերասանի թատրոնը: Գերծանրաբեռնված են ամրակցված գույքի տիրապետող կազմակերպությունները. Կամերային երաժշտության ազգային կենտրոնում գործում են 5 ստեղծագործական խմբեր, Հայաստանի պետական ֆիլհարմոնիայում՝ 4, և այդ խմբերից յուրաքանչյուրն, ըստ էության, կարող էր լինել առանձին կառուցվածքային միավոր: 1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Պետական մշակութային կազմակերպությունների բնականոն գործունեության համար անհրաժեշտ տարածքների քարտեզագրում և մշտական հարթակների ապահովում, ստեղծագործական միավորումների գույքային ռեսուրսի վերլուծություն: 2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը 5 ստեղծագործական միավորումների և 1 ընկերության գույքային ռեսուրսի քարտեզագրում:
45	45.1 Դասարան+Դասական» ստեղծագործական կրթական ծրագրի իրականացում 1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակն է մշակութային-կրթական նպատակային ծրագրերի իրականացումը: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1363-Ա որոշման «4.9 «Մշակույթ» բաժնի մշակութային կրթության ոլորտի 4-րդ կետից, գեղարվեստական կրթության հայեցակարգ» ՀՀ կառավարության 2004 թ. նոյեմբերի 18-ի արձանագրային որոշումից և «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» ՀՀ օրենքի 7-րդ և 12-րդ հոդվածներից: «Դասարան+դասական» կրթական ծրագրի շնորհիվ որակական նոր հիմքերի վրա է դրվում թատերական մշակույթի ընկալումը ավագ դպրոցների սաների շրջանում: Ծրագրի նպատակներն են՝ հասարակության ստեղծագործական ներուժի բացահայտումը և առաջընթացի համար պայմանների ստեղծումը, մշակույթի և արվեստների հասանելիության և համընդհանուր ներառականության ապահովումը, ինչպես նաև մշակույթի հանդեպ հանրության հետաքրքրության բարձրացման նոր մոդելների կիրառումը: 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Հայաստանյան պետական թատրոններում իրականացվող կրթական ծրագրերը սակավաթիվ են, այն դեպքում, երբ թատերարվեստի նկատմամբ հետաքրքրությունը երեխաների, պատանիների և երիտասարդների շրջանում մեծ է:

Հանրության, նաև կրտսեր սերնդի շրջանում առկա է թատրոնի աղճատված, հաճախ պարզունակ ընկալում: Դերասանի արվեստը հաճախ է ընկալվում իբրև պարոդիա, և շրջանցվում է թատրոնը՝ որպես հասարարական հաստատության առանձնահատկությունները, բարդ և բազմաշերտ բնույթը:

1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները
«Դասարան+դասական» կրթական ծրագիրը հնարավորություն է տալիս երիտասարդներին ծանոթանալ թատերարվեստի առանձնահատկություններին, խորհուրդներ և ուղղորդումներ ստանալ ոլորտի լավագույն մասնագետներից, փորձել սեփական ուժերը թատերական բնագավառում, դիտել ներկայացումներ, ունենալ քննարկումներ: Ծրագիրը բաղկացած է դասախոսություններից, բեմական խոսքի և դերասանի վարպետության դասերից, ստեղծագործական աշխատանքից և, որպես վերջնարդյունք, պատրաստվում է առանձին էտյուդներից բաղկացած ներկայացում: Նախագծի նպատակն է ոչ միայն տաղանդավոր պատանիների բացահայտումը, այլև թատերական ընկալման գրավչությանը, ապագա հանդիսատեսի, մեծ իմաստով՝ թատերական շուկայի ձևավորումը:

2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը
Ծրագրի շնորհիվ աշակերտները կներգրավվեն թատերական կյանքին ոչ միայն իբրև պասիվ հանդիսատես, այլ ակտիվորեն կմասնակցեն ստեղծագործական պրոցեսին: Սա միաժամանակ մեծապես կավելացնի աշակերտների հետաքրքրությունը թատերական աշխարհի նկատմամբ և կընդլայնի այս ոլորտում նրանց գիտելիքներն ու փորձառությունը: Ծրագրի մասնակցությունը աշակերտներին ոչ միայն հնարավորություն կտա ծանոթանալ և աշխատել թատերական ոլորտի լավագույն մասնագետների հետ, այլ նաև փորձել սեփական ուժերը: Ռեժիսորների հետ անմիջական աշխատանքի արդյունքում աշակերտները բազմակողմանի կընկալեն դերասանի մասնագիտությունը, ինչը կարող է նաև կողմնորոշիչ դեր կատարել մասնագիտական ընտրության հարցում: Մշակութային ծրագրերի միջոցով աշակերտների համար ոչ-ֆորմալ կրթություն ապահովելը և գեղարվեստական արժեքներին հաղորդակից դարձնելը թատերական կրթական ծրագրի հիմնախնդիրներից է: «Էմոցիոնալ կրթության» և խաղարկային մեթոդներով թատրոնի վերաբերյալ պատկերացումների և ընկալումների որակական փոփոխությունը և թատրոնի հանրային վարկանիշի բարձրացումը:

45.2 Ներառական փառատոների կազմակերպում, մշակույթի ոլորտի մասնագետների, արվեստագետների հետ համատեղ միջացառումների իրականացում

1.Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը
Միջոցառման գլխավոր նպատակն է մշակութային-կրթական նպատակային ծրագրերի իրականացումը:
Միջոցառման անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1363-Ա որոշման «4.9 «Մշակույթ» բաժնի մշակութային կրթության ոլորտի 1-ին կետից:
Իրականացվող գործընթացները նպատակաուղղված են լինելու հասարակության խոցերի խմբերի մշակութային կյանքին լիարժեք ինտեգրմանը, նրանց ստեղծագործական հետագա զարգացման և առաջխաղացման պայմանների ապահովմանը, ինքնադրսևորման հնարավորությունների ստեղծմանը, ինչպես նաև հասարակության մեջ հանդուրժողականության մթնոլորտի ձևավորմանը:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները
Հասարակության խոցելի խմբերի ստեղծագործական ներուժի բացահայտման, արվեստի տարբեր բնագավառներում նրանց ինքնադրսևորման և մշակութային գործընթացներին ներգրավման խնդիրը հասարակության առաջընթացի և մշակութային զարգացման կարևոր պայմաններից է: Մինչ այժմ, արվեստի և մշակութային կյանքի զարգացման ուղղությամբ իրականացվող ծրագրերում հիմնական շեշտադրումն ուղղվել է մշակութային ենթակառուցվածքների գործունեության բնականոն պայմանների ապահովման, արվեստի բնագավառում ստեղծագործող անհատների խրախուսման և նրանց գործունեության խթանման գործընթացներին: Իրականացմամբ կլուծվեն նրանց ինքնադրսևորման, մշակութային կյանքին հաղորդակցման և լիիրավ մասնակցության խնդիրները:

1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները
Ներառական արվեստի զարգացման նպատակով անհրաժեշտ է իրականացնել համալիր ծրագիր, որը թույլ կտա ապահովել մշակույթի համընդհանուր ներառականության անխաթար գործընթացը, շարունակել ստեղծագործող անձանց ինքնադրսևորման հավասար և արդարացի պայմանների ապահովման, ստեղծագործական ծրագրերի և գործունեության աջակցության խրախուսման գործընթացները:

	2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Տարեկան շուրջ 600-700 հաշմանդամ և ոչ հաշմանդամ երեխաների գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության ուսուցման կազմակերպում, ինչպես նաև 5 ներառական միջոցառումն իրականացում: «Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության վերանայում, մասնագիտական կադրերի կատարելագործում, նպատակային ծրագրերի իրականացում: «Գեղագիտության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի և «Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ-ի ներառական գործունեության համադրում և փոխհամաձայնեցված իրականացում
	45.3 Երևանի և մարզերի երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների փոխգործակցության «Քույր դպրոցներ» կրթական նպատակային ծրագրի իրականացում 1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակն է մշակութային-կրթական նպատակային ծրագրերի իրականացումը: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1363-Ա որոշման «4.9 «Մշակույթ» բաժնի մշակութային կրթության ոլորտի կետերից, գեղարվեստական կրթության հայեցակարգ» ՀՀ կառավարության 2004 թ. նոյեմբերի 18-ի արձանագրային որոշումից և «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» ՀՀ օրենքի 7-րդ և 12-րդ հոդվածներից, ՀՀ կառավարության՝ «2050 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ» ծրագրի «ՄԻՆՉԵՎ 2030 ԹՎԱԿԱՆԻ ՄԵԳԱՆՊԱՏԱԿՆԵՐԻ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5.ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԵՎ ԲԱՐԵԿԵՑԻԿ ԸՆՏԱՆԻՔ-ի 5.4.3 թիրախային արդյունքի ցուցանիշի ապահովման պահանջից: Ծրագրի իրականացումը պայմանավորված է կրտսեր սերնդի գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության խնդիրների լուծման անհրաժեշտությամբ, նպատակ ունի սիրելի և հասանելի դարձնելու ազգային և համաշխարհային արվեստն ու մշակույթը, աշխուժացնել մարզերում մշակութային կյանքը, աշակերտներին ներգրավվել համերգային գործընթացում: 1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները ՀՀ-ում մշակութային կրթության հաստատությունները հիմնականում գործում են համայնքային ենթակայությամբ, որի շնորհիվ վերջիններս առավել ազատ են սեփական միջոցներն ու ռեսուրսները տնօրինելու, գործունեությունը պլանավորելու և ինքնավարության հարցերում: Սակայն, նշված ձևաչափով գործունեությունն առաջացնում է մի շարք խնդիրներ, որոնցից են՝ ոլորտի պետական միասնական քաղաքականության, մշակութային կրթության ընդհանուր դաշտի գործունեության, ուսուցման որակի վերահսկողության հետ կապված հարցերը, ոչ արդյունավետ կադրային քաղաքականությունը, ներփակվածությունը, հաղորդակցության և առաջավոր փորձի փոխանցման, կոմունիկացիոն բարդությունները: 1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Նշված ծրագրի կատարումը կստեղծի համապատասխան հարթակներ աշակերտների ստեղծագործական ունակությունների զարգացման ու ինքնադրսևորման, դասավանդման նոր մեթոդների և հնարքների ներդրման, որակի բարձրացման, մեթոդական խորհուրդներով մանկավարժների գիտելիքների ընդլայնման, ինչպես նաև շնորհալի երեխաների ունակությունների բացահայտմանն ուղղված դասավանդման առանձնահատկությունների վերլուծության համար: Մշակութային կրթության ոլորտի դերակատարների և շահառուների հորիզոնական շփումների միջոցով, ուսումնամեթոդական աշխատանքների իրականացման ավանդական ձևերին զուգընթաց, ձևավորվում են ուսումնական գործընթացի կազմակերպման և ստեղծագործական աշխատանքի համատեղ իրականացման նոր հարթակներ: 2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Մշակութային կրթության համաչափ զարգացում, մշակութային-կրթական ծառայությունների որակի բարձրացում, տարբեր կրթական և սոցիալական միջավայրերում ձևավորված պատանիների ու երեխաների հաղորդակցվելու հնարավորության խթանում, մի նպատակի շուրջ համախմբվելու և միասին գործունեություն իրականացնելու հնարավորություն ապահովում, արտադպրոցական դաստիարակության բնագավառում մատուցվող ծառայությունների համահարթեցում, ինչպես նաև մշակութային կրթության հասանելիության և մատչելիության ապահովում, ՀՀ-ում գործող երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների ստեղծագործական ներուժի խթանում, փորձառության փոխանակման, համատեղ համերգային ծրագրերի իրականացում, ուսուցման մեթոդական աջակցության գործող մշտառկա կապերի հաստատում, մեթոդական խորհուրդներով մանկավարժների

	գիտելիքների ընդլայնում, շնորհալի երեխաների ունակությունների բացահայտմանն ու զարգացմանն ուղղված դասավանդման առանձնահատկությունների վերլուծություն:
	45.4 «Քո արվեստը դպրոցում» ծրագիր 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակն է մշակութային-կրթական նպատակային ծրագրերի իրականացումը: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1363-Ա որոշման «4.9 «Մշակույթ» բաժնի մշակութային կրթության ոլորտի կետերից, գեղարվեստական կրթության հայեցակարգ» ՀՀ կառավարության 2004 թ. նոյեմբերի 18-ի արձանագրային որոշումից և «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» ՀՀ օրենքի 7-րդ և 12-րդ հոդվածներից: «Քո արվեստը դպրոցում» մշակութային կրթական ծրագրի շրջանակներում աշակերտները հնարավորություն կստանան ծանոթանալ և անմիջական շփում ունենալ հայ արդի արվեստագետների հետ: Ծրագիրը նախատեսված է ՀՀ դպրոցներում սովորող սաների համար: Ծրագրի նպատակն է՝ Մշակույթի և արվեստների հասանելիության և համընդհանուր ներառականության ապահովումը. ծրագրին անվճար հիմունքներով կարող են մասնակցել ՀՀ բոլոր դպրոցների սաները, ծրագիրն անց է կացվում ՀՀ բոլոր մարզերում, ինչի շնորհիվ լուծվում է մարզային դպրոցներում սովորող երեխաների ներգրավվածության խնդիրը: Մշակույթի հանդեպ հանրության հետաքրքրության բարձրացման նոր մոդելների կիրառում. ծրագիրը յուրատեսակ կամուրջ է արվեստագետի և աշակերտի միջև, հնարավորություն է տալիս դպրոցականներին անմիջական ծանոթացում և շփում ունենալ արվեստագետների հետ, ուղղել իրենց հետաքրքրող հարցերը: 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Ներկայումս, երբ երիտասարդ սերունդը մեծամասամբ որպես տեղեկատվության ձեռք բերման հիմնական աղբյուր ընկալում է համացանցը, բավական դժվար է հետևել ստացվող ինֆորմացիայի որակին և արժեքային նշանակությանը: Արվեստի և մշակույթի հետ շփումը շատ հաճախ փոխարինվում է զուտ ժամանցային բնույթ ունեցող միջոցառումներով: Դպրոցական պարտադիր ծրագրից բացակայում է արվեստի պատմության առարկան, իսկ արվեստի առարկաներին տրամադրվող դասաժամերը հիմնականում սահմանափակվում են միջին դպրոցի առաջին տարիներով: 1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները «Քո արվեստը դպրոցում» մշակութային կրթական ծրագիրը հանդիպում-դասախոսությունների շարք է: Այն հնարավորություն է տալիս աշակերտներին ծանոթանալ ժամանակակից արվեստագետներին, լսել նրանց դասախոսությունները, խորհուրդներ և ուղղորդումներ ստանալ ոլորտի լավագույն մասնագետներից: Տարվա ընթացքում նախատեսվում է ունենալ հանդիպումներ տարբեր բնագավառներ ներկայացնող 50 արվեստագետի հետ: Հանդիպումները տեղի կունենան Երևանում և ՀՀ մարզային քաղաքներում: Ընդհանուր առմամբ ծրագրին կկարողանան մասնակցել սաներ 450 դպրոցներից: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Տարեկան նախատեսվում է ծրագրում ընդգրկել Երևանի և ՀՀ 10 մարզերի շուրջ 450 ուսումնական հաստատություն և 50 արվեստագետ: Հայաստանի անվանի մշակութային գործիչների, արվեստագետների կյանքի ու գործունեության ճանաչելիության բարձրացում, հանրակրթական դպրոցների աշակերտների մասնագիտական կողմորոշման խթանում:
	45.5 «Մեկնարկ» տաղանդի զարգացման նպատակային ծրագրի իրականացում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակն է մշակութային-կրթական նպատակային ծրագրերի իրականացումը: Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1363-Ա որոշման «4.9 «Մշակույթ» բաժնի մշակութային կրթության ոլորտի կետերից:Միջոցառումն ուղղված է 11-20 տարեկան առավել տաղանդավոր պատանի երաժիշտ-կատարողների (դասական երաժշտական գործիքներ՝ դաշնամուր, ջութակ, թավջութակ) զարգացմանը, կատարելագործմանը և խրախուսմանը՝ հետագայում միջազգային ասպարեզում հայկական կատարողական արվեստը ներկայացնելու նպատակով:

Միջոցառումը կնպաստի ՀՀ կառավարության՝ «2050 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԿՈՒՍՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ» ծրագրի «16. ՃԱՆԱՉՎԱԾ, ՀԱՐԳՎԱԾ ԵՎ ՀՅՈՒՐԸՆԿԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ » ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ 16.4.2 ցուցանիշին հասնելուն:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները
Մշակութային կրթության ոլորտում իրականացվող ծրագրերն ու միջոցառումներն ուղղված են ոլորտի կայուն զարգացմանն ու մշակութային կրթության և գեղագիտական դաստիարակության մատչելիության և կրթական ծառայությունների համահարթեցման ապահովմանը, որը սակայն, չի ապահովում օժտված երեխաների և պատանիների բացահայտման, նրանց հետագա կատարելագործման և նպատակային զարգացման բավարար պայմանները: Մշակութային կրթության գործող համակարգը թերի է՝ օժտված և տաղանդավոր երեխաների բացահայտման, նրանց մասնագիտական զարգացման, խորացված ուսուցման կազմակերպման և կատարողական արվեստների բնագավառում անհրաժեշտ այլ կարողություններ և հմտություններ փոխանցելու գործառույթներում:

1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները
Նշված ծրագրի կատարումը կստեղծի համապատասխան հարթակներ, որը հնարավորություն կտա ապահովվել ուսուցման նոր մեթոդիկայի, կատարելագործման և ունակությունների զարգացման հատուկ պլան, որի շնորհիվ շահառուները հնարավորություն են կստանա առավել նպաստավոր պայմաններում զարգացել մասնագիտական կարողություններն ու տաղանդը, ձեռք բերել բեմական փորձ, միջազգային շփումներ, մասնակցել վարպետության դասերի աշխարհի լավագույն մանկավարժների և երաժիշտների մոտ:
2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը
Տարեկան նախատեսվում է ծրագրում ընդգրկել 15 տաղանդավոր երիտասարդ երաժիշտ-կատարողի և 6 առաջատար մասնագետի՝ դաշնամուր, ջութակ, թավջութակ մասնագիտություններով: Պատանի տաղանդավոր երաժիշտ-կատարողների բացահայտում, նրանց մասնագիտական կարողությունների զարգացում, հանրային ճանաչելության բարձրացում, մասնակցության ապահովում հանրապետական և միջազգային երաժշտական մրցույթներին, փառատոներին և այլ նախագծերին, ավագ սերնդի փորձի փոխացման լիարժեք պայմանների ստեղծում:

45.6 «Երաժշտական և արվեստի դպրոցների համար ուսումնամեթոդական գրականության մշակում և հրատարակում» ծրագրի իրականացում

1.Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը
Միջոցառման գլխավոր նպատակն է մշակութային-կրթական նպատակային ծրագրերի իրականացումը:
Միջոցառման անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1363-Ա որոշման «4.9 «Մշակույթ» բաժնի մշակութային կրթության ոլորտի կետերից:
Միջոցառման իրականացումը պայմանավորված է մշակութային կրթության որակի բարելավման, ժամանակակից պահանջներին համահունչ ուսումնամեթոդական ձեռնարկների, առարկայական ծրագրերի, աշխատանքային տետրերի, դասագրքերի, ժողովածուների և ուղեցույցների մշակման և կիրառման, դպրոցների գրադարանների համալրման, դասական և ժամանակակից արվեստագետների ստեղծագործությունների և պրակտիկ նյութերի տարածման և հանրահռչակման անհրաժեշտությամբ:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները
Ներկայում Հայաստանում գործող երաժշտական, արվեստի, գեղարվեստի և պարարվեստի 203 դպրոցները երկար տարիներ չեն համալրվել անհրաժեշտ գրականությամբ և ուսումնամեթոդական ձեռնարկներով, որն, իր հերթին բացասաբար է անդրադառնում կրթության կազմակերպման գործընթացին: Մշակութային կրթության հաստատությունների ուսուցիչները հնարավորություն չունեն ծանոթանալու դասավանդման ժամանակակից մեթոդներին, արդի գրականությանը: Եղած ուսումնամեթոդական գրականությունը հիմնականում ռուսերեն է, և հայալեզու գրականության պակասը ոլորտի հիմնական խնդիրներից է:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները
Ծրագրի իրականացմամբ լուծվում է հայալեզու գրականության հրատարակման և տարածման խնդիրը, ապահովվում է մասնագիտական նոր դասագրքերի, ժողովածուների և գրականության հասանելիությունն ու մատչելիությունը:

2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

	Տարեկան նախատեսվում է 7-8 ուսումնական ձեռնարկների մշակում և հրատարակում: Կրթական որակի բարձրացում, ուսումնամեթոդական գրականության հասանելիության ապահովում, գեղարվեստական կրթության ոլորտում ուսուցման նոր մեթոդների վերաբերյալ մասնագիտական շրջանակների իրազեկման բարձրացում, միասնական չափորոշիչների կիրառում, երաժշտական, արվեստի, պարարվեստի և գեղարվեստի դպրոցների գրքային ֆոնդի համալրում:
46	46.1 2022թ. Հայաստանում Ռուսաստանի և Ռուսաստանում Հայաստանի մշակույթի օրերի անցկացում՝ նվիրված ՀՀ և ՌԴ միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակին 1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման առանցքային նպատակը Ռուսաստանի Դաշնության հետ մշակույթի ոլորտում երկկողմ համագործակցության խթանումն է, հայ մշակույթի հանրահռչակումը և ռուսական մշակույթի ներկայացումը հայաստանյան հանդիսատեսին: Օտարերկրյա պետությունների հետ երկկողմ մշակութային համագործակցության նպատակով առկա են մշակված տարբեր ձևաչափեր, որոնցից մեկը հայկական մշակույթի օրերի անցկացումն է օտարերկրյա պետություններում և այլ երկրների մշակույթի օրերի անցկացումը Հայաստանում: Մշակույթի օրերի անցկացումը բխում է ստորագրված երկկողմ փաստաթղթերից: Մշակույթի ոլորտում համագործակցությունն իրականացվում է համաձայն «Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության և Ռուսաստանի Դաշնության մշակույթի նախարարության միջև 2019-2021 թթ. համագործակցության մասին» ծրագրի: 1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Մշակույթի օրերի ձևաչափով փոխադարձության սկզբունքով յուրաքանչյուր տարի իրականացվում են միջոցառումներ տարբեր երկրների հետ: Միջոցառումների բովանդակությունը և ժամկետները որոշվում են դիվանագիտական ներկայացուցչությունների և մշակույթի բնագավառում լիազորված տվյալ երկրի պետական մարմնի հետ բանակցության արդյունքում: «Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության և Ռուսաստանի Դաշնության մշակույթի նախարարության միջև 2019-2021 թթ. համագործակցության մասին» ծրագրի դրույթներին համաձայն՝ նախատեսվում էր 2020 թ. Հայաստանում անցկացնել Ռուսաստանի մշակույթի օրերը, իսկ 2021 թ.՝ Հայաստանի մշակույթի օրերը Ռուսաստանում: Ծրագրերը հետաձգվել են՝ հաշվի առնելով COVID-19 համաճարակով և հետպատերազմական իրավիճակով ստեղծված բարդությունները: 1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները 2020-2021 թթ. նախատեսվող միջոցառումների չեղարկումը պայմանավորված է COVID-19 համաճարակով և հետպատերազմական իրավիճակով: Ռուսական կողմին առաջարկվել է 2022 թ. հայտարարել ՀՀ և ՌԴ միջև մշակույթային փոխանակումների տարի և 2022 թ. գարնանը անցկացնել Հայաստանի մշակույթի օրերը Ռուսաստանում, իսկ 2022 թ. աշնանը՝ Ռուսաստանի մշակույթի օրերը Հայաստանում: Մշակույթի օրերը նվիրված կլինեն ՀՀ և ՌԴ միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակին: 2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Մշակույթի օրերի իրականացման արդյունքում կհաստատվեն նոր և կամրապնդվեն ավանդական դարձած մշակութային կապերը, միջազգային հանրությանը կներկայացվի հայկական մշակույթը, իսկ հայաստանյան հանդիսատեսին կներկայացվեն ռուսական որակյալ և հեղինակավոր մշակութային արժեքները: Կստեղծվեն նոր պայմաններ զարգացնելու հայ-ռուսական երկխոսությունը և համագործակցությունը մշակույթի ոլորտում, որը կներառի նաև համատեղ ծրագրեր իրականացնելու հնարավորությունը:
	46.2 ՀՀ ԿԳՄՍ նախարարության և ՌԴ մշակույթի նախարարության միջև 2022-2024թթ. համագործակցության ծրագրի ստորագրում 1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Ռուսաստանի Դաշնության հետ մշակույթի ոլորտում երկկողմ համագործակցության խթանում և աշխատանքների արդյունավետ կազմակերպման համակարգում: 1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Ներկայումս Հայաստանի և Ռուսաստանի միջև մշակույթի ոլորտում համագործակցությունը կարգավորվում է «Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության և Ռուսաստանի Դաշնության մշակույթի նախարարության միջև 2019-2021 թթ. համագործակցության մասին» ծրագրով, որի գործողության ժամկետն ավարտվում է 2021 թ. դեկտեմբերի 31-ին:

	1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության և Ռուսաստանի Դաշնության մշակույթի նախարարության միջև 2019-2021 թթ. համագործակցության մասին» ծրագրի գործողության ժամկետն ավարվտվում է 2021 թ. դեկտեմբերի 31-ին, ռուսական կողմին առաջարկվել է դիտարկել 2022 թ. նախատեսվող լայնածավալ մշակույթի օրերի շրջանակներում «ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Ռուսաստանի Դաշնության մշակույթի նախարարության միջև 2022-2024թթ. համագործակցության» ծրագրի ստորագրման հնարավորությունը: 2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը «ՀՀ ԿԳՄՍ նախարարության և ՌԴ մշակույթի նախարարության միջև 2022-2024թթ. համագործակցության» ծրագրի ստորագրման արդյունքում կսահմանվի և կկարգավորվի երկու պետությունների միջև մշակույթի ոլորտում համագործակցությունը:
	Սպորտ
47	47.1 Բարձրագույն վարպետության դպրոցի ստեղծում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակն է Մարզական բարձր արդյունքներին ուղղված բարեփոխումները: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.8 ՍՊՈՐՏ» բաժնի 1-ին և 3-րդ պարբերություններից: Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսանում «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքի 7-րդ հոդվածի «դ» կետի դ.12-րդ կետը: 18 տարեկանից բարձր, ՀՀ հավաքական թիմերի թեկնածու հեռանկարային մարզիկների համար մարզումները շարունակելու հնարավորություն, մարզաձևի լավագույն մարզիկներով համալրված միասնական մարզումներ: 1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Ներկայումս բարձրագույն վարպետության դպրոց գործում է միայն Գյումրիում, որը սակայն իրականացնում է մանկապատանեկան մարզադպրոցի գործառույթներ: 18 տարեկանից բարձր, հեռանկարային, ՀՀ հավաքական թիմերի թեկնածու համարվող մարզիկներ ուսումնամարզական գործընթացի կազմակերպման հետ կապված խնդիրների լուծման համար խիստ անհրաժեշտություն է առաջացել ստեղծելու բարձրագույն վարպետության դպրոց: 1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները Հաշվի առնելով, որ համաձայն «Մանկպատանեկան սպորտի մասին» ՀՀ օրենքի՝ մանկապատանեկան մարզադպրոցներում կարող են պարապել մինչև 18 տարեկան պատանիներն ու աղջիկները: 18 տարեկանից բարձր, հեռանկարային, ՀՀ հավաքական թիմերի թեկնածու համարվող մարզիկները իրենց մարզումները կարող են շարունակել միայն բարձրագույն վարպետության դպրոցներում: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Հնարավորություն կընձեռվի իրականացնել մարզաձևի լավագույն մարզիկներով համալրված միասնական մարզումներ, ապահովել օլիմպիական խաղերի ծրագրով նախատեսված մարզաձևերում հանրապետության հավաքականների նախապատրաստմանը մասնակցող մասնագետների գործողությունների հաղորդակցումը և տարբեր մարզաձևերում ազգային հավաքականների կենտրոնացված հատուկ մարզման համակարգի ներդրման կազմակերպումը: 18 տարեկանից բարձր, հեռանկարային, ՀՀ հավաքական թիմերի թեկնածու համարվող մարզիկները կարող են իրենց մարզումները շարունակել մարզումները բարձրակարգ մարզիչ-մանկավարժների ղեկավարությամբ:
	47.2 Ակումբային սպորտի ներդրմանը և զարգացմանը միտված համալիր քայլերի մշակում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակն է Մարզական բարձր արդյունքներին ուղղված բարեփոխումները: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.8 ՍՊՈՐՏ» բաժնի 3-րդ պարբերությունից: Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է պետության ֆինանսական բեռը թեթևացնելու անհրաժեշտությամբ, նպատակը մարզական ակումբների զարգացումն ու ակումբային սպորտի խթանումն է:

	1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Այժմ հանրապետությունում զարգացում են ապրում մասնավոր մարզական ակումբները, հատկապես մասնավոր լողավազանները: Առկա խնդիրներն են, որ ոչ բոլոր մարզաձևերից են զարգանում մասնավոր մարզական ակումբներ: 1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Պայմանների ստեղծում տարբեր մարզաձևերի մասնավոր մարզական ակումբների ստեղծման համար: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը: Միջոցառման իրականացումից ակնկալվում է, որ մասնավոր հատվածը ֆինանսական ներդրումներ կկատարի ակումբային սպորտի զարգացման համար: 2023-2024 թվականներին տարեկան կբացվեն 3-5 մարզական ակումբ:
	47.3 «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծն հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում 47.4 «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում գործունեություն ծավալող ֆեդերացիաների, մարզական ակումբների և մարզական հասարակական այլ կազմակերպությունների գործունեության մշտադիտարկման և գնահատման չափանիշների մշակման վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման ընդունում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակն է Մարզական բարձր արդյունքներին ուղղված բարեփոխումները: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.8 ՍՊՈՐՏ» բաժնի 3-րդ պարբերությունից: Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում գործունեություն ծավալող ֆեդերացիաների, մարզական ակումբների և մարզական հասարակական այլ կազմակերպությունների գործունեության ուսումնասիրումն է և գործունեության համար նպաստավոր դաշտի ստեղծումը: 1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Օլիմպիական խաղերի ծրագրում ընդգրկված մարզաձևերի մեծ մասը և որոշ օլիմպիական խաղերի ծրագրում չընդգրկված մարզաձևեր ստանում են պետական աջակցություն: 2020 և 2021 թվականներին պետական աջակցություն են ստացել յուրաքանչյուր տարում 34 ֆեդերացիաներ: Պետությունից ֆինանսավորում են ստանում չորս բազմաֆունկցիոնալ մարզական հասարակական կազմակերպություններ՝ «Հայաստան» մարզական հասարակական կազմակերպությունը, Հայաստանի «Դինամո» մարզական հասարակական կազմակերպությունը, «Աշխատանքային ռեզերվներ» մարզական հասարակական կազմակերպությունը և Հայաստանի «Սևան» մարզական հասարակական կազմակերպությունը: Շատ չեն հանրապետությունում գործող մարզական ակումբները: Առկա խնդիրներից է մանկապատանեկան տարիքի սաների ներգրավումը ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պարապմունքներին՝ մարզական հերթափոխ ձևավորելու համար: 1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Անհրաժեշտ է մշակել ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում գործունեություն ծավալող ֆեդերացիաների, մարզական ակումբների և մարզական հասարակական այլ կազմակերպությունների գործունեության մշտադիտարկման և գնահատման չափանիշների մշակման վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման նախագիծ: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում գործունեություն ծավալող ֆեդերացիաների, մարզական ակումբների և մարզական հասարակական այլ կազմակերպությունների գործունեության համար նպաստավոր դաշտի ստեղծում:
48	48.1 2022 թվականի Պեկինի ձմեռային օլիմպիական խաղերին Հայաստանի Հանրապետության մարզական պատվիրակության մասնակցության ապահովում 48.2 2023 թվականի Կրակովի Եվրոպական խաղերին Հայաստանի Հանրապետության մարզական պատվիրակության մասնակցության ապահովում, 48.3 2024 թվականի Փարիզի ամառային օլիմպիական խաղերին Հայաստանի Հանրապետության մարզական պատվիրակության մասնակցության ապահովում, 48.4 2026 թվականի Միլանի և Կորտինա դ՛Ամպեցցոյի ձմեռային օլիմպիական խաղերին Հայաստանի Հանրապետության մարզական պատվիրակության մասնակցության ապահովում

	1. Միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառումների գլխավոր նպատակն է միջազգային հեղինակավոր մարզական միջոցառումներին ՀՀ մարզիկների մասնակցության ապահովումը, միջազգային մրցասպարեզներում բարձր մարզական արդյունքների ցուցաբերումը, Հայաստանի Հանրապետության մարզական հեղինակության բարձրացումը: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.8 ՍՊՈՐՏ» բաժնի 2-րդ պարբերությունից: Հեղինակավոր մարզական միջազգային միջոցառումներին Հայաստանի Հանրապետության մարզական պատվիրակության մասնակցության ապահովումը անհրաժեշտություն է, քանի որ Հայաստանի Հանրապետությունը լավագույնս կներկայացվի խոշոր մարզական ստուգատեսներում և ոսկե մեդալ նվաճելու դեպքում կհնչի Հայաստանի Հանրապետության պետական օրհներգը, առաջինից երրորդ մրցանակակիր դառնալու դեպքում կբարձրացվի Հայաստանի պետական դրոշը: Միջոցառման իրականացումը նպատակ ունի հասնելու ՀՀ կառավարության՝ «2050 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ» ծրագրի « 16. ՃԱՆԱՉՎԱԾ, ՀԱՐԳՎԱԾ ԵՎ ՀՅՈՒՐԸՆԿԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ » ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ 16.2.1 ցուցանիշին: 1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Մինչ այժմ տարբեր տարիների օլիմպիական խաղերում Հայաստանի Հանրապետությունը նվաճել է 14 ոսկե, 18 արծաթե, 19 բրոնզե մեդալներ: 2021 թվականի Տոկիոյի 32-րդ ամառային օլիմպիական խաղերում Հայաստանը նվաճել է երկու արծաթե (1-ծանրամարտ և 1-հունա-հռոմեական ըմբշամարտ մարզաձևերից) և երկու բրոնզե (1-բռնցքամարտ և 1-սպորտային մարմնամարզություն մարզաձևերից) մեդալ: 2019 թվականի Մինսկի երկրորդ եվրոպական Խաղերում Հայաստանը ներկայացրել են 37 մարզիկներ, որոնք նվաճել են 5 ոսկե (1 - հունա-հռոմեական ըմբշամարտ, 2 - բռնցքամարտ, 1 - սամբո, 1 - սպորտային մարմնամարզություն), 3 արծաթե (1 - հունա-հռոմեական ըմբշամարտ, 1 - սամբո, 1 - սպորտային մարմնամարզություն) և 3 բրոնզե մեդալներ (2 – բռնցքամարտ, 1 - սամբո): Առկա խնդիրն է նման խոշոր մարզական միջոցառումներին Հայաստանի Հանրապետության մարզական պատվիրակության մասնակցության շարունակականության ապահովումը: 1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Անհրաժեշտ է անխափան իրականացնել ամառային և ձմեռային օլիմպիական խաղերին և եվրոպական խաղերին Հայաստանի Հանրապետության մարզական պատվիրակության մասնակցության ֆինանսավորումը: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Խոշոր հեղինակավոր մարզական միջոցառումներին մասնակցությունը բարձրացնում է Հայաստանի Հանրապետության մարզական հեղինակությունը, խթանում է մարզական արդյունքների աճը, մարզական նվաճումների գրանցումը, նպաստում է Հայաստանի Հանրապետությունում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը:
49	49.1 «Հայաստանի Հանրապետության մանկապատանեկան մարզադպրոցները, մարզաձևերի ազգային ֆեդերացիաները և այլ մարզական հասարակական կազմակերպություններ գույքով ապահովելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը. Միջոցառման գլխավոր նպատակն է մանկապատանեկան սպորտի զարգացումը: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.8 ՍՊՈՐՏ» բաժնի 1-ին և 3-րդ պարբերություններից: Միջոցառման համար հիմք է հանդիսանում «Ֆիզիկական կուլտորայի և սպորտի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի դ. կետի դ.14) ենթակետը: Միջոցառման իրականացման նպատակը մարզական հերթափոխի և բարձրակարգ մարզիկների պատրաստման համար մարզակառույցները ժամանակակից մարզական գույքով ապահովումն է, նրանց նյութատեխնիկական պայմանների բարելավումը: 1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Ոչ բոլոր մարզակառույցներն են համալրված անհրաժեշտ և ժամանակակից մարզագույքով և մարզասարքերով: 2016 թվականին տրամադրվել է 55 անվանում մարզագույք 36 կազմակերպությունների, 2019 թվականին՝ 96 անվանում մարզագույք 56 կազմակերպությունների:

	1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները Անհրաժեշտ մասնագիտական մարզագույքի և մարզասարքերի ձեռքբերում և բաշխում: Մասնագիտական մարզագույքի և մարզասարքերի ձեռքբերման և բաշխման աշխատանքների համակարգում: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Մարզադպրոցների մարզագույքի պահանջարկի հնարավորինս մեծ մասի բավարարում:
	49.2 «ՀՀ կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 1-ի «Մանուկների և պատանիների՝ ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար անհրաժեշտ պայմանների նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» № 1428 որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակն է մանկապատանեկան սպորտի զարգացումը: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.8 ՍՊՈՐՏ» բաժնից, «Մանկապատանեկան սպորտի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասից: Միջոցառման համար հիմք է հանդիսանում «Ֆիզիկական կուլտորայի և սպորտի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի դ. կետի դ.10) ենթակետը: Նպատակն է մանուկների և պատանիների՝ ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու պայմանների նվազագույն չափորոշիչների հստակեցում և համապատասխանեցում արդի պահանջներին: 1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Մանուկների և պատանիների ֆիզիկական զարգացման, առողջ ապրելակերպի և մարզական հերթափոխի պատրաստման ծրագրերն իրականացնում են՝ մարզական ուղղվածության արտադպրոցական ուսումնական հաստատությունները՝ մանկապատանեկան մարզադպրոցները, մարզական-տեխնիկական դպրոցները, օլիմպիական հերթափոխի մանկապատանեկան մարզադպրոցները: 1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Անհրաժեշտ է մանուկների և պատանիների ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար անհրաժեշտ պայմանների նվազագույն չափորոշիչների մշակում և փոփոխում: «ՀՀ կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 1-ի «Մանուկների և պատանիների՝ ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար անհրաժեշտ պայմանների նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» № 1428 որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման կիրառման դեպքում 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Մարզական կազմակերպություններում ուսումնամարզական գործընթացի արդյունավետ կազմակերպում:
	49.3 Մարզական նշանակության կառույցների կառուցում և վերանորոգում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակն է մանկապատանեկան սպորտի զարգացումը: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.8 ՍՊՈՐՏ» բաժնի 1-ին պարբերությունից: Վերանորոգված, հիմնանորոգված և նոր կառուցված մարզակառույցներ՝ ապահովված նաև հաշմանդամություն ունեցող անձանց մուտքի և ելքի համար անհրաժեշտ պայմաններով: 1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Հայաստանի Հանրապետության 174 մարզադպրոցներն ունեն վերանորոգման, հիմնանորոգման խնդիրներ: 1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները 2022 թվականին առաջարկվում է մարզական օբյեկտների շենքերի (մասնաշենքերի) կառուցում (համաշինարարական աշխատանքներ, ջեռուցման համակարգի իրականացում, ներքին հարդարում, տարածքի բարեկարգում) և նախագծում:

	2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Հնարավորինս շատ վերանորոգված և հիմնանորոգված մարզադպրոցների նաև համայնքներում՝ ստեղծելով մարզաձևերի զարգացման համար բավարար պայմաններ:
50	50.1 «Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» սիրողական խճուղային հեծանվավազքի մրցաշարի անցկացում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գխավոր նպատակն է բնակչության տարբեր տարիքային խմբերի համար զանգվածային սպորտի տարածմանը և առողջ ապրելակերպի քարոզմանն ուղղված ծրագրերի իրականացման անընդհատության ապահովումը: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.8 ՍՊՈՐՏ» բաժնի 3-րդ պարբերությունից: Միջոցառումը կնպաստի Հանրապետությունում հեծանվային սպորտի և առողջ ապրելակերպի մասսայականացմանը, հեծանվային սպորտի դերի բարձրացմանը, «Հեծանիվը որպես շրջակա միջավայրը աղտոտվածությունից զերծ պահելու միջոց» գաղափարի քարոզմանը, («Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենք, հոդված 5: 1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Վերջին երկու տարիներին հանրապետությունում տիրող կորոնավիրուսային իրավիճակը զգալիորեն նվազեցրել է բնակչության ֆիզիկական ակտիվության մակարդակը: Ներկայումս առօրյա կյանքը անբավարար ֆիզիկական ակտիվության է մղում մարդկանց, ինչն էլ իր հերթին հանգեցնում է առողջության համար վտանգավոր հետևանքների: Բնակչության զանգվածային մարզական միջոցառումներին հետագա մասնակցության ապահովումը պետության սոցիալական քաղաքականության կարևորագույն ուղղություններից մեկն է և ռազմավարական նշանակություն ունի: 1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները Մրցաշարն անցկացվում է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում՝ (Շորժա-Սևանա լճի թերակղզի ճանապարհահատված), երկու տարիքային խմբով: Կարող են մասնակցել ցանկություն ունեցող 18 և բարձր տարիք անձինք՝ 2 տարիքային խմբով; Մրցաշարի կազմակերպումն ու անցկացումը իրականացվում է Նախարարության կողմից հաստատված հանձնաժողովի և մրցավարական հանձնաժողովի կողմից՝ համագործակցելով համապատասխան ֆեդերացիաների և հեծանվային սպորտի մանկապատանեկան օլիմպիական մարզադպրոցի հետ: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Հանրապետությունում հեծանվային սպորտի և առողջ ապրելակերպի մասսայականացում, շուրջ 400 անձանց մասնակցության ապահովում յուրաքնչյուր տարի. Հեծանվային սպորտում ընդգրկվող երեխաների թվի ավելացում ֆիզիկապես ամուր և առողջ սերնդի դաստիարակության, ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվող մարդկանց քանակի էական աճ:
	50.2 «Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» սիրողական սեղանի թենիսի մրցաշարի անցկացում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գխավոր նպատակն է բնակչության տարբեր տարիքային խմբերի համար զանգվածային սպորտի տարածմանը և առողջ ապրելակերպի քարոզմանն ուղղված ծրագրերի իրականացման անընդհատության ապահովումը: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.8 ՍՊՈՐՏ» բաժնի 3-րդ պարբերությունից: Կապահովվի սեղանի թենիսի մարզաձևի մասսայականացումը, Հայաստանի Հանրապետության մարզերում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինների դերի բարձրացումը: Միջոցառման իրականացման հիմքներն են «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի հունիսի 26-ի ՀՕ-196 օրենքը, Հոդված 9 գ) ենթակետ, «Մանկապատանեկան սպորտի մասին» ՀՀ օրենքը հոդված 8:

	1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Վերջին տարիներին հանրապետությունում նկատվում է երբեմնի սիրված խաղային մարզաձևերի ավանդույթների կորուստ: ներկայումս զբոսայգիների, սպորտով զբաղվելու գոտիների, ոտքով և հեծանվով երթևեկելու համար ճանապարհների, բակային մարզական համալիրների ոչ բավարար թվաքանակը և մարզագույքով թերհագեցվածությունը հանգեցնում է ֆիզիկական կուլտուրայի կանոնավոր պարապմունքներին բնակչության (միջին և բարձր տարիքի անձանց) ոչ բավարար ներգրավվածությունը: 1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները Մրցաշարը անցկացվելու է 2021 թվականից: Կարող են մասնակցել ցանկություն ունեցող 18 և բարձր տարիք անձինք՝ 2 տարիքային խմբով; Մրցաշարի նախապատրաստման և անցկացման աշխատանքները համակարգում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը: Մրցաշարի կազմակերպումն ու անցկացումը իրականացվում է Նախարարության կողմից հաստատված հանձնաժողովի և մրցավարական հանձնաժողովի կողմից՝ համագործակցելով Հայաստանի սեղանի թենիսի ֆեդերացիայի հետ: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Ակնկալվում է բնակչության կենցաղում ակտիվ հանգիստ և առողջ ապրելակերպ վարող անձանց թվաքանակի աճ: Ակնկալվում է 200 մասնակցի ապահովում յուրաքանչյուր տարի:
	50.3 «Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» սիրողական լողի մրցաշարի անցկացում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գխավոր նպատակն է բնակչության տարբեր տարիքային խմբերի համար զանգվածային սպորտի տարածմանը և առողջ ապրելակերպի քարոզմանն ուղղված ծրագրերի իրականացման անընդհատության ապահովումը: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.8 ՍՊՈՐՏ» բաժնի 3-րդ պարբերությունից: Նպատակն է բնակչության տարբեր տարիքային խմբերի առօրյայում արմատավորել ֆիզիկական վարժություններով մշտապես զբաղվելու, առողջ կենսակերպի գաղափարը: 1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Մրցումները անցկացվելու են 2021 թվականից Գեղարքունիքի մարզում, Սևանա լճի հարակից լողափնյա տարածքում, վերջնական վայրը կորոշեն կազմակերպիչները: Ծրագիրը կնպաստի լողի կանոնավոր պարապմունքներին բնակչության (միջին և բարձր տարիքի անձանց) ներգրավելուն, առողջ ապրելակերպ վարելուն: Մրցումների նախապատրաստման և անցկացման աշխատանքները համակարգում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը: Մրցումների կազմակերպումն ու անցկացումը իրականացվում է Նախարարության կողմից հաստատված հանձնաժողովի և մրցավարական հանձնաժողովի կողմից՝ համագործակցելով Հայաստանի լողի ֆեդերացիայի հետ: 1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները Մրցումների նախապատրաստման և անցկացման աշխատանքները համակարգում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը:Մրցումների կազմակերպումն ու անցկացումը իրականացվում է Նախարարության կողմից հաստատված հանձնաժողովի և մրցավարական հանձնաժողովի կողմից՝ համագործակցելով Հայաստանի լողի ֆեդերացիայի հետ: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Ակնկալվում է Մասսայականացնել լող մարզաձևը Հայաստանի Հանրապետությունում, ապահովելով յուրաքանչյուր տարի 100 անձանց մասնակցություն:
	50.4 «Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» խճուղավազքի մրցաշարի անցկացում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գխավոր նպատակն է բնակչության տարբեր տարիքային խմբերի համար զանգվածային սպորտի տարածմանը և առողջ ապրելակերպի քարոզմանն ուղղված ծրագրերի իրականացման անընդհատության ապահովումը: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.8 ՍՊՈՐՏ» բաժնի 3-րդ պարբերությունից: Միջոցառման նպատական է բնակչության շրջանում առողջ ապրելակերպի արմատավորումը, նախորդ տարիների համեմատությամբ վազքով զբաղվող բնակչության թվի աճի ապահովումը: 1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Մրցումների նախապատրաստման և անցկացման աշխատանքները համակարգում է Հայաստանի Մրցումները անցկավելու է 2021 թվականից, Ի կատարումն ՀՀ վարչապետի 2021 թվականիսեպտեմբերի 4-ի № 02/11.3/30554-2021 հանձնարարականի:

1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Մրցումների նախապատրաստման և անցկացման աշխատանքները համակարգում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը: Մրցումների կազմակերպումն ու անցկացումը իրականացվում է Նախարարության կողմից հաստատված հանձնաժողովի և մրցավարական հանձնաժողովի կողմից՝ համագործակցելով Հայաստանի աթլետիկայի ֆեդերացիայի հետ:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Ակնկալվում է 5000 անձանց մասնակցության ապահովում յուրաքանչյուր տարի, Հանրապետությունում աթլետիկա մարզաձևի առողջ ապրելակերպի մասսայականացում:

50.5 Մասսայական սպորտին առնչվող ծառայությունների իրականացում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Բնակչության կենցաղում ֆիզկուլտուրայի և սպորտի ներդնում, ՀՀ ազգային բանակում ծառայելու համար ֆիզիկապես կոփված երիտասարդների դաստիարակում , («Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենք (2001 թ հունիսի 26-ի ՀՕ-196), հոդված 5, 2021 թվականի օգոստոսի 18-ի «ՀՀ կառավարության ծրագրի մասին» ՀՀ կառավարության № 1363-Ա որոշում, 4.8 կետ):

1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Վիճակագրությունը վկայում է, որ ներկայումս Հայաստանի Հանրապետությունը կանոնավոր ֆիզիկական գործունեության առումով հետ է մնում զարգացող երկրներից, որտեղ ֆիզիկական կուլտուրայով զբաղվում է բնակչության ավելի քան 40-50 %-ը, Հայաստանի Հանրապետության 15 տարեկան և ավելի բարձր տարիքի բնակչության շրջանում ֆիզիկական թերակտիվության (հիպոդինամիա) ցուցանիշը կազմում է 16,5 %: Ֆիզիկապես թերակտիվ տղամարդկանց քանակը կազմել է 10,4 %, իսկ կանանցը՝ 22,3 %: Ֆիզիկական թերակտիվությունն աճում է տարիքի հետ, և ամենաբարձր ցուցանիշը արձանագրվել է 60-69 տարեկան (29,3 %) և 70 տարեկան ու ավելի բարձր տարիքային խմբերում (42,6 %):

1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Յուրաքանչյուր տարվա ընթացքում հանրապետության մարզերում և համայնքներում մարզական – զանգվածային միջոցառումների իրականացման միջոցով ըստ բնակության վայրի ֆիզկուլտուրային-առողջարարական և զանգվածային աշխատանքների բարելավում:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Ակնկալվում է յուրաքանչյուր տարի շուրջ 120000 անձանց մասնակցի ապահովում մարզական զանգվածային միջոցառումներին:

50.6 «Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» դպրոցականների թիմային խճուղավազքի անցկացում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Ծրագրի իրականացումը պայմանավորված է «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենք (2001 թ հունիսի 26-ի ՀՕ-196), հոդված 5-ի, (2021 թվականի օգոստոսի 18-ի «ՀՀ կառավարության ծրագրի մասին» ՀՀ կառավարության № 1363-Ա որոշման, 4.8 կետի դրույթների ապահովմամբ՝ այն է Կառավարությունը խթանելու է Հայաստանի Հանրապետությունում ֆիզիկական կուկտուրայի և սպորտի միջոցով՝ բնակչության շրջանում առողջ ապրելակերպի և ակտիվ հանգստի արմատավորումը, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով՝ բնակչության առողջության ամրապնդումը, երկարակեցությունը, հայրենիքի պաշտպանությանը պատրաստ սերունդների դաստիարակումը:

Նապատակը՝ դպրոցականների շրջանում ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու հետաքրքրության բարձրացումը, ֆիզիկական վարժություններով մշտապես զբաղվածության ապահովումը, առողջ ապրելակերպի գաղափարի տարածումը, վազքի և առողջ ապրելակերպի մասսայականացումը, առողջության ամրապնդումը ու ֆիզիկական զարգացումը, երկարակեցության ապահովումն է:

1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

	Դպրոցականների առողջության ամրապնդումը, ֆիզիկական զարգացումը, նրանց ֆիզիկական դաստիարակության անընդհատության ապահովումը պետության սոցիալական քաղաքականության կարևորագույն ուղղություններից մեկն է և ռազմավարական նշանակություն ունի: Ծրագիրն իրականացվում է մասսայական սպորտին ուղղված միջոցառումների շրջանակում և նպաստում է հանրակրթական դպրոցների աշակերտների շրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի կարևորմանը, նրանց կենցաղում առողջ ապրելակերպ վարելու արմատավորումանը, ֆիզիկապես կոփված երիտասարդների դաստիարակմանը: Խնդիրներն են - ֆիզիկական կուլտուրայի կանոնավոր պարապմունքներին դպրոցականների ոչ բավարար ներգրավվածությունը - առողջ ապրելակերպի վերաբերյալ ոչ բավարար քարոզչությունը, - առողջ ապրելակերպ չվարելը - զանգվածային մարզական միջոցառումներին ՀՀ բոլոր մարզերի հանրակրթական դպրոցների աշակերտների մասնակցության ապահովումը: 1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները Ծրագրի իրականացումը կնպաստի սպորտի նկատմամբ հետաքրքրվածության և մասնակցության ընդլայնմանը, նրանց կենցաղում առողջ ապրելակերպի արմատավորմանը : Խճուղավազքն անցկացվում է Դիլիջան քաղաքի «Պարզ լիճ» տանող ճանապարհին: Կարող են մասնակցել ցանկություն ունեցող հանրապետության բոլոր մարզերի դպրոցների թիմերը, որոնք մարզային փուլերի մրցումներում հաղթել են և ճանաչվել լավագույնը: Խճուղավազքի անցկացման կարգն ու պայմանները որոշում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից ստեղծված մրցավարական հանձնաժողովը: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Հանրապետության դպրոցականների շրջանում վազքի և առողջ ապրելակերպի մասսայականացում, առողջության ամրապնդում, ֆիզկուլտուրայի և սպորտի քարոզչության ապահովում, յուրաքանչյուր տարի շուրջ 500 դպրոցականների մասնակցություն եզրափակիչ փուլում: Ֆիզիկապես ամուր և առողջ սերնդի դաստիարակում, ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվող երեխաների քանակի էական աճ:
Երիտասարդություն	
51	51.1 «Երիտասարդության մասին» ՀՀ օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակը Պետական երիտասարդական քաղաքականության իրավական հիմքերի կատարելագործումն է: «Երիտասարդության մասին» ՀՀ օրենքի ընդունման համար հիմք են հանդիսանում՝ 1. ՀՀ սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ (Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով Սահմանադրությամբ նախատեսված մարմինները կարող են օրենքով լիազորվել ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր: Լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին:) և 86-րդ հոդվածի 12) Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են՝ քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքին երիտասարդության մասնակցության խթանումը.) կետերը: 2. ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի «4.7 Երիտասարդություն» «ստեղծել իրավական միջացայր և ապահովել անհրաժեշտ ռեսուրսներ երիտասարդության ներուժի բացահայտման, համակողմանի զարգացման, ինքնահաստատման և ինքնադրսևորման համար» կետը: Միջոցառման իրականացումը բխում է ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի «4.7 Երիտասարդություն» «ստեղծել իրավական միջացայր և ապահովել անհրաժեշտ ռեսուրսներ երիտասարդության ներուժի բացահայտման, համակողմանի զարգացման, ինքնահաստատման և ինքնադրսևորման համար» կետից: 1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Պետության զարգացման և հասարակական առաջընթացի գրեթե բոլոր բնագավառներում իր ակտիվ մասնակցությունն ու ներդրումն ունի երիտասարդությունը: Հաշվի առնելով երիտասարդության առանցքային դերը մեր երկրի կայացման գործընթացներում՝ անհրաժեշտ է երիտասարդների ներուժի զարգացման, երիտասարդների կայացման և հզորացման համար պայմանների և հնարավորությունների համար ստեղծել իրավական հիմք:

	Ներկայումս չկա երիտասարդության մասին օրենք, որը կլուծի երիտասարդական պետական քաղաքականության մշակման և իրականացման գործընթացներում առաջացող այն իրավական խնդիրները, որոնք հնարավոր չէ լուծել ոլորտին առնչվող այլ՝ ավելի ցածր իրավական ուժ ունեցող իրավական ակտերով: 1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները Երիտասարդության մասին օրենքի առկայությունը կնպաստի երիտասարդության ոլորտում արդյունավետ գործունեության իրականացմանը, ինչպես նաև երիտասարդության ներուժի իրացման ու զարգացման, երիտասարդական մասնակցության խթանման համար սոցիալ-տնտեսական, իրավաքաղաքական, հոգևոր-մշակութային պայմանների ստեղծմանը՝ ի շահ Հայաստանի Հանրապետության զարգացման և հզորացման, ազգային անվտանգության ամրապնդման: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Երիտասարդական ոլորտի իրավական կարգավորման ապահովում:
	51.2 Երիտասարդական աշխատանքի և երիտասարդական աշխատողի պատրաստման ուղեցույցի և կրթական ծրագրի մշակում և ներկայացում ՀՀ ԿԳՄՍ նախարարի հաստատմանը 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակը Պետական երիտասարդական քաղաքականության իրավական հիմքերի կատարելագործումն է: Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի «4.7 Երիտասարդություն» «խրախուսել համայնքներում երիտասարդական կենտրոնների հիմնադրումը և զարգացումը, քաջալերել ոչ ֆորմալ կրթության, երիտասարդական աշխատանքի և կամավորության առավել լայն ճանաչումն ու տարածումը» կետից: Վերջին երեք տասնամյակների ընթացքում աշխարհի տարբեր երկրներում հասարակական և համայնքային կյանքի բարելավման հարցերում կարևոր գործոն է դարձել երիտասարդական աշխատանքը: Երիտասարդական աշխատանքն իր բնույթով երիտասարդների ներուժի բացահայտմանը, իրացմանը, հանրային կյանքի տարբեր ոլորտներում և մակարդակներում կայացվող որոշումներին ակտիվ մասնակցությանը և ներառմանը միտված սոցիալական գործունեություն է: 1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Հայաստանի անկախացումից հետո երիտասարդական հասարակական մի շարք կազմակերպություններ սկսել են իրականացնել երիտասարդական աշխատանք: Սակայն Հայաստանի Հանրապետությունում երիտասարդական աշխատանքի ինստիտուցիոնալ կայացմանը, ճանաչմանը և տարածմանը խոչընդոտում են մի շարք խնդիրներ, ինչպիսիք են՝ · երիտասարդական աշխատողի պատրաստման կրթական ծրագրի բացակայությունը. ·երիտասարդական աշխատողների լրացուցիչ և շարունակական վերապատրաստման ուղեցույցի բացակայությունը. ·հասարակության շրջանում երիտասարդական աշխատանքի վերաբերյալ իրազեկվածության պակասը, ինչի արդյունքում լիարժեք չի գնահատվում երիտասարդական աշխատանքի ողջ ներուժը (պոտենցիալ): Այսպիսով, Հայաստանում երիտասարդական աշխատանքի զարգացման հարցում առանձին կազմակերպությունների և կառույցների ջանքերը բավարար չեն և չեն ծառայում երիտասարդական ներուժի բացահայտմանը և երիտասարդական աշխատանքի զարգացմանն ու կայացմանը: 1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները Հայաստանի Հանրապետությունում երիտասարդական աշխատանքի ամրապնդման և կայացման մեխանիզմների մշակումը կնպաստի երիտասարդության մասնակցության խթանման կազմակերպչական մեխանիզմի ներդրմանն ու աշխատանքների կանոնակարգմանը, երիտասարդական կազմակերպությունների կարողությունների զարգացմանը, երիտասարդության ոլորտում աշխատող մարդկանց՝ երիտասարդության ոլորտի վերաբերյալ մասնագիտական հմտությունների կատարելագործմանը, ինչպես նաև երիտասարդական աշխատանքի ճանաչելիության խթանմանը: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Հայաստանի Հանրապետությունում երիտասարդական աշխատանքի զարգացում և երիտասարդական աշխատանքի ճանաչելիության ապահովում:
	51.3 Երիտասարդության ոլորտում պետական քաղաքականության որակի ապահովման մեխանիզմների մշակում և ներկայացում ՀՀ ԿԳՄՍ նախարարի հաստատմանը Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

	Միջոցառման գլխավոր նպատակը Պետական երիտասարդական քաղաքականության իրավական հիմքերի կատարելագործումն է: Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի «4.7 Երիտասարդություն» «ստեղծել իրավական միջավայր և ապահովել անհրաժեշտ ռեսուրսներ երիտասարդության ներուժի բացահայտման, համակողմանի զարգացման, ինքնահաստատման և ինքնադրսևորման համար» կետից: 1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Երիտասարդական ոլորտում պետական քաղաքականության իրականացման, ինչպես նաև իրականացրած պետական երիտասարդական քաղաքականության արդյունավետությունը չափելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել մշակել երիտասարդական պետական քաղաքականության որակի ապահովման ցուցիչներ և պետական երիտասարդական քաղաքականության արդյունավետությունը բարձրացնող մեխանիզմներ: Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում չկան սահմանված երիտասարդության պետական քաղաքականության որակի ապահովման ցուցիչներ, ինչը անհնար է դարձնում չափելու երիտասարդական պոտական քաղաքականության արդյունավետությունը: 1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները Երիտասարդական պետական քաղաքականության որակի ապահովման ցուցիչների/չափանիշները և պետական երիտասարդական քաղաքականության արդյունավետությունը բարձրացնող մեխանիզմներ առկայությունը կնպաստի երիտասարդության ոլորտում արդյունավետ գործունեության իրականացմանը: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Երիտասարդական պետական քաղաքականության իրականացման արդյունավետության մակարդակի բարձրացում:
52	52.1 Երիտասարդական միջավայրի գործունեության ուղեցույցի մշակում և ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակը Հայաստանի մարզային համայնքներում երիտասարդության ներուժի բացահայտման, համակողմանի զարգացման, ինքնիրացման, ինքնադրսևորման և ինտելեկտուալ ժամանցի կազմակերպման համար երիտասարդական միջավայրի ձևավորումն է: Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի «4.7 Երիտասարդություն» «Խրախուսել համայնքներում երիտասարդական կենտրոնների հիմնադրմանը և զարգացմանը, քաջալերել ոչ ֆորմալ կրթության, երիտասարդական աշխատանքի և կամավորության առավել լայն ճանաչումն ու տարածումը» կետից: 1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում գործում են բազմաթիվ և բազմաֆունկցիոնալ կենտրոններ, որոնցից շատերը ի թիվս այլ գործառույթների իրականացնում են նաև երիտասարդական աշխատանք: Պետական երիտասարդական քաղաքականության իրականացման միասնականությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է, որ ՀՀ-ում գործող և նոր ստեղծվող երիտասարդական միջավայրներում ունենան միասնական մոտեցում՝ համայնքներում իրականացվող գործընթացներն ու միջոցառումներն ուղղորդելով պետական երիտասարդական քաղաքականության իրականացմանն ու առաջխաղացմանը: Երիտասարդական միջավայրերի գործունեության ուղեցույցի առկայությունը կապահովի միասնական մոտեցում գործող երիտասարդական միջավայրերում: 1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները Երիտասարդական միջավայրի գործունեության ուղեցույցը կնպաստի համայնքային երիտասարդական միջավայրերի միասնական մոտեցման ձևավորմանը՝ համայնքներում իրականացվող գործընթացներն ու միջոցառումներն ուղղորդելով պետական երիտասարդական քաղաքականության իրականացմանն ու առաջխաղացմանը: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Միասնական պետական երիտասարդական քաղաքականության իրականացում ցանցային համագործակցության միջոցով:
	52.2 Աջակցություն «երիտասարդական միջավայրի» ձևավորմանը

	1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակը Հայաստանի մարզային համայնքներում երիտասարդության ներուժի բացահայտման, համակողմանի զարգացման, ինքնիրացման, ինքնադրսևորման և ինտելեկտուալ ժամանցի կազմակերպման համար երիտասարդական միջավայրի ձևավորումն է: Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի «4.7 Երիտասարդություն» «նպաստել իրենց բնակության վայրերում երիտասարդների ներուժի բացահայտմանը և զարգացմանը, հետաքրքրությունների իրացման նպատակով ինտելեկտուալ ժամանցի կազմակերպման հնարավորությունների ստեղծմանը» կետից: 1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում գործում են բազմաթիվ և բազմաֆունկցիոնալ կենտրոններ, որոնցից շատերը ի թիվս այլ գործառույթների իրականացնում են նաև երիտասարդական աշխատանք: Հայաստանի մարզային համայնքներում երիտասարդական միջավայրերի ստեղծման նպատակն է ապահովել ստեղծարար միջավայր, որտեղ իրականացվում է երիտասարդական աշխատանք՝ ուղղված երիտասարդների ներուժի բացահայտմանը, սոցիալականացման, ինքնահիրացման, ներգրավման ու զարգացման անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, հանրային կյանքին ու պետականաշինությանը երիտասարդության առավելագույն մասնակցության ապահովմանը: 1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները Երիտասարդական միջավայրերը կնպաստեն երիտասարդության ոլորտում արդյունավետ քաղաքականության իրականացմանը, երիտասարդական մասնակցության խթանման համար սոցիալ-տնտեսական, հոգևոր-մշակութային պայմանների ստեղծմանը, կենտրոնների միջև ցանցային համագործակցության ձևավորմանը: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը երիտասարդական միջավայրի ձևավորում: Միջոցառման արդյունքում ակնկալվում է հիմնել 25 համայնքային երիտասարդական միջավայր/կենտրոն: յուրաքանչյուր կենտրոնում ընդգրկված շահառու երիտասարդների թիվը կկազմի 400:
53	53.1 Երիտասարդների շրջանում ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակության զարգացման մեթոդաբանության մշակում և ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակը Հանրային կյանքի բոլոր ոլորտներում որոշումների կայացմանը երիտասարդների մասնակցության բարձրացումն է: Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի «4.7 Երիտասարդություն» «ստեղծել իրավական միջացայր և ապահովել անհրաժեշտ ռեսուրսներ երիտասարդության ներուժի բացահայտման, համակողմանի զարգացման, ինքնահաստատման և ինքնադրսևորման համար» կետից: 1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները ՀՀ–ում ժողովրդավարական համախմբման ճանապարհին առանցքային խնդիր է տեղական և ազգային մակարդակներում որոշումների կայացման գործընթացում լայն հանրության, այդ թվում՝ երիտասարդության լիարժեք մասնակցության ապահովումը: Այս ոլորտում մասնակցության տեսանկյունից խնդիրներն առաջնահերթաբար դրսևորվում են ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակության, մասնակցային ժողովրդավարության մասին գիտելիքների և մասնակցային հմտությունների պակասով, մասնակցության մեխանիզմների, ընթացակարգերի և օրենսդրությամբ սահմանված հարթակների մասին ոչ լիարժեք իրազեկվածությամբ, քաղաքացիական գիտակցության բարձրացման հրամայականով: Երիտասարդների շրջանում այս խնդիրներին ավելանում է նաև թե իր անձի ապագայի և թե հանրային երևույթների բարեփոխման մեջ կրավորականությունը կամ սեփական դերակատարության (agent of change) ցածր ընկալումը և սեփական համայնքի, տարածաշրջանի, երկրի խնդիրների, մարտահրավերների և զարգացման օրակարգի առումով բեռնավորումը՝ ակտիվ քաղաքացիական կեցվածքի ձևավորման և գործադրման համար: Դա անխուսափելիորեն կբերի պետության՝ որպես հանրային բարիք ստեղծող ինստիտուտի հանդեպ արժեքային վերաբերմունքի ձևավորման և այդ գործընթացին սեփական մասնակցության կարևորման: 1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները Չափազանց կարևոր է երիտասարդների կողմից տեղական մակարդակում մասնակցային ժողովրդավարության գործիքակազմի օգտագործումը, ինչը մի կողմից հնարավորություն կտա ամրապնդել տեղական ժողովրդավարությունը, մյուս կողմից՝ դրսևորվելով ամենակիրառական մակարդակում, երիտասարդների շրջանում

	կամրապնդի ժողովրդավարական արժեքները: Մյուս կողմից նախատեսվում է կյանքի կոչել ազգային մակարդակում որոշումների կայացմանը երիտասարդների մասնակցության մեխանիզմներն ու հարթակները: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Երիտասարդության շրջանում ժողովրդավարական և քաղաքացիական կարողությունների զարգացման մեթոդաբանության հաստատում:
	53.2 Ուսումնական հաստատություններում երիտասարդական ինքնակազմակերպվող խմբերի ձևավորման մեթոդաբանության մշակում և ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակը Հանրային կյանքի բոլոր ոլորտներում որոշումների կայացմանը երիտասարդների մասնակցության բարձրացումն է: Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի «4.7 Երիտասարդություն» «զարգացնել աշակերտական և ուսանողական խորհուրդների, երիտասարդական կենտրոնների և երիտասարդկան կազմակերպությունների մասնակցային կարողությունները և հմտությունները, ինչպես նաև աջակցել տեղական և ազգային մակարդակներում գործող երիտասարդական կազմակերպություններին՝ շեշտադրելով մարզային երիտասարդության քաղաքացիական, միջանձնային, տեխնոլոգիական, ստեղծագործական և այլ ունակությունների զարգացումը» կետից: 1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Երիտասարդության շրջանում հստակ նկատելի են պետական կառավարման համակարգի, տեղական ինքնակառավարման մարմինների, կրթական և այլ հաստատությունների կառավարման մարմինների մեջ ընդգրկվելու մոտիվացվածության բարձրացման և կարողությունների զարգացման խնդիրները: 1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները Չափազանց կարևոր է երիտասարդների կողմից տեղական մակարդակում մասնակցային ժողովրդավարության գործիքակազմի օգտագործումը, ինչը մի կողմից հնարավորություն կտա ամրապնդել տեղական ժողովրդավարությունը, մյուս կողմից՝ դրսևորվելով ամենակիրառական մակարդակում, երիտասարդների շրջանում կամրապնդի ժողովրդավարական արժեքները: Մյուս կողմից նախատեսվում է կյանքի կոչել ազգային մակարդակում որոշումների կայացմանը երիտասարդների մասնակցության մեխանիզմներն ու հարթակները: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Ուսումնական հաստատություններում երիտասարդական ինքնակազմակերպվող խմբերի ձևավորման մեթոդաբանության հաստատում:
	53.3 Ժողովրդավարական և քաղաքացիական մասնակցության, կոռուպցիայի վերաբերյալ տեղեկացվածության բարձրացմանն ուղղված հանրային միջոցառումների կազմակերպում ազգային մակարդակով՝ ներառելով հաշմանդամություն ունեցող երիտասարդներին 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակը Հանրային կյանքի բոլոր ոլորտներում որոշումների կայացմանը երիտասարդների մասնակցության բարձրացումն է: Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի «4.7 Երիտասարդություն» «ընդլայնել հաշմանդամություն ունեցող երիտասարդների ներառականությունը» կետից: 1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Երիտասարդության շրջանում հստակ նկատելի են պետական կառավարման համակարգի, տեղական ինքնակառավարման մարմինների, կրթական և այլ հաստատությունների կառավարման մարմինների մեջ ընդգրկվելու մոտիվացվածության բարձրացման և կարողությունների զարգացման խնդիրները: 1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները Չափազանց կարևոր է երիտասարդների կողմից տեղական մակարդակում մասնակցային ժողովրդավարական քաղաքացիական մասնակցության բարձրացմանն ուղղված հանրային միջոցառումների կազմակերպումը, որը, երիտասարդների շրջանում կամրապնդի ժողովրդավարական արժեքները: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

	Ազգային մակարդակով հանրային միջոցառումների (շնորհանդես, սեմինար, աշխատաժողով, հաղորդաշար, ֆլեշմոբ, ճամբար և այլն) իրականացում: Նախատեսվում է, որ յուրաքանչյուր տարի միջոցառմանը կմասնակցի միջինը 150 երիտասարդ:
	53.4 Մարզաբնակ երիտասարդների կարողությունների զարգացում՝ ուղղված մեդիագրագիտությանը, թվային գրագիտությանը և կիբեռգրագիտությանը 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակը Հանրային կյանքի բոլոր ոլորտներում որոշումների կայացմանը երիտասարդների մասնակցության բարձրացումն է: Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի «4.7 Երիտասարդություն» «խրախուսել երիտասարդների քննադատական մտածողությունը, հետազոտական հմտությունների զարգացումը, նախաձեռնողականությունը, տեղեկատվական տեխնոլոգիաների իմացությունը և համացանցային գրագիտությունը» կետից: 1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները ՀՀ–ում ժողովրդավարական համախմբման ճանապարհին առանցքային խնդիր է տեղական և ազգային մակարդակներում որոշումների կայացման գործընթացում լայն հանրության, այդ թվում՝ երիտասարդության լիարժեք մասնակցության ապահովումը: Այս ոլորտում մասնակցության տեսանկյունից խնդիրներն առաջնահերթաբար դրսևորվում են ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակության, մասնակցային ժողովրդավարության մասին գիտելիքների և մասնակցային հմտությունների պակասով, մասնակցության մեխանիզմների, ընթացակարգերի և օրենսդրությամբ սահմանված հարթակների մասին ոչ լիարժեք իրազեկվածությամբ, քաղաքացիական գիտակցության բարձրացման հրամայականով: Երիտասարդների շրջանում այս խնդիրներին ավելանում է նաև թե իր անձի ապագայի և թե հանրային երևույթների բարեփոխման մեջ կրավորականությունը կամ սեփական դերակատարության (agent of change) ցածր ընկալումը և սեփական համայնքի, տարածաշրջանի, երկրի խնդիրների, մարտահրավերների և զարգացման օրակարգի առումով բեռնավորումը՝ ակտիվ քաղաքացիական կեցվածքի ձևավորման և գործադրման համար: Դա անխուսափելիորեն կբերի պետության՝ որպես հանրային բարիք ստեղծող ինստիտուտի հանդեպ արժեքային վերաբերմունքի ձևավորման և այդ գործընթացին սեփական մասնակցության կարևորման: 1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները Այս առումով առանցքային է քաղաքացիական և ժողովրդավարական կարողունակության զարգացումը, որը ժողովրդավարության, պետական կառավարման մասին գիտելիքներից բացի, ենթադրում է իրավիճակը փոխակերպելու առումով սեփական կարողությունների հանդեպ երիտասարդների վստահության ամրապնդում և սեփական համայնքի, տարածաշրջանի, երկրի խնդիրների, մարտահրավերների և զարգացման օրակարգի առումով բեռնավորում՝ ակտիվ քաղաքացիական կեցվածքի ձևավորման և գործադրման համար: Այս համատեքստում կարևոր նշանակություն ունի կամավորականության՝ որպես համայնքային մակարդակում երիտասարդների գործունեության և քաղաքացիական գիտակցության ամրապնդման եղանակի խթանումը: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Զարգացնել երիտասարդների քննադատական մտածողությունը, նախաձեռնողականությունը, տեղեկատվական տեխնոլոգիաների իմացությունը և համացանցային գրագիտությունը: Յուրաքանչյուր տարի՝ ծրագրին կմասնակցի շուրջ 60 մասնակից,
54	54.1 «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի իրականացում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակը Երիտասարդության սոցիալ-տնտեսական խնդիրների բարելավումը և մասնագիտական կարողությունների զարգացումն է: Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի «2.7 Քաղաքաշինություն» «Երիտասարդ ընտանիքների համար բնակարանի հասանելիության ապահովմանը՝ որպես խթանիչ գործիք դիտարկելով կանխավճարի, ամսական վճարի և տոկոսադրույթի մատչելիությունը» կետից: Ծրագիրն իրականացվում է համաձայն ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագիրը հաստատելու մասին N 98-Ն որոշման: 1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Տնտեսական անկումը, սոցիալական անհավասարության խորացումը, արժեքային համակարգի որոշակի փոխակերպումը և գործազրկության բարձր աստիճանն անկախության առաջին շրջանում վատթարացրել են

Հայաստանի բնակչության համարյա բոլոր շերտերի, այդ թվում՝ երիտասարդ սերնդի կենսապայմանները: Շուկայական տնտեսության անցմամբ երիտասարդության շրջանում նույնպես բարձրացել է գործազրկության աստիճանը: Երիտասարդների գործազրկությամբ ավելացել է արտագաղթողների թիվը, երիտասարդների շրջանում ստեղծվել է անվստահության մթնոլորտ իրենց ուժերի և ունակությունների նկատմամբ, հետևաբար, բացասական ազդեցություն ունի ամբողջ հասարակության վրա:

1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները
«Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագիրը նպատակաուղղված է իրավական, ֆինանսական և կազմակերպչական համապատասխան մեխանիզմների ներդրման միջոցով բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող երիտասարդ ընտանիքներին պետական աջակցության տրամադրմանը:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը
Երիտասարդ ընտանիքների բնակարանային պայմանների բարելավում: Յուրաքանչյուր տարի նախատեսվում է ընտանիքների թիվը ավելացնել միջինը 920-ով:

54.2 Ոչ ֆորմալ կրթական գործիքակազմով մասնագիտական վերապատրաստման հնարավորությունների, մասնագիտական կողմնորոշման ծրագրերի մասին երիտասարդության իրազեկության և ներգրավվածության բարձրացման դասընթացների կազմակերպում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը
Միջոցառման գլխավոր նպատակը Երիտասարդության սոցիալ-տնտեսական խնդիրների բարելավումը և մասնագիտական կարողությունների զարգացումն է:
Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի «4.7 Երիտասարդություն» «խրախուսել համայնքներում երիտասարդական կենտրոնների հիմնադրումը և զարգացումը, քաջալերել ոչ ֆորմալ կրթության, երիտասարդական աշխատանքի և կամավորության առավելլայն ճանաչումն ու տարածումը» կետից:

1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Կրթական համակարգի ճգնաժամը և ֆորմալ կրթության բարեփոխումների անհրաժեշտությունը, ինչպես նաև կրթություն-աշխատաշուկա կապի խզվածությունը, երիտասարդների շրջանում կարողությունների և հմտությունների զարգացումը, փափուկ հմտությունների ձևավորումը ոչ ֆորմալ կրթական ծրագրերը դարձնում են առավել կարևոր: Չնայած այն հանգամանքին, որ երկար տարիներ ՔՀԿ-ները իրականացրել են դասընթացներ և զբաղվել ոչ ֆորմալ կրթության զարգացմամբ և տարածմամբ՝ կարող ենք արձանագրել, որ ոչ ֆորմալ կրթության ձեռքբերումները և ազդեցությունն ընդհանուր կրթական համակարգի, ինչպես նաև աշխատաշուկայի վրա եղել է խիստ սահմանափակ և ոչ շարունակական: Դրան զուգահեռ, ոչ ֆորմալ կրթության զարգացման համար սկզբունքային քայլեր չի ձեռնարկել նաև կրթության կառավարման պետական լիազորված մարմինը: Ոչ ֆորմալ կրթությունը դիտարկվել է միայն որպես միջոց ֆորմալ կրթության բացերը լրացնելու համար՝ փորձելով աշխատաշուկա մուտք գործող երիտասարդներին զինել անհրաժեշտ ունակություններով և հմտություններով, աջակցել նրանց բազմակողմանի զարգացմանը և ներգրավմանը տարբեր ոլորտներում:

1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները
Ոչ ֆորմալ կրթությունը անհրաժեշտ է դիտարկել՝ միջոց ֆորմալ կրթության բացերը լրացնելու համար՝ փորձելով աշխատաշուկա մուտք գործող երիտասարդներին զինել անհրաժեշտ ունակություններով և հմտություններով, աջակցել նրանց բազմակողմանի զարգացմանը և ներգրավմանը տարբեր ոլորտներում:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը
Երիտասարդների մասնագիտական կարողությունների զարգացում: Միջոցառմանը տարեկան կմասնակցի առնվազն 60 երիտասարդ:

54.3 Երիտասարդության ֆինանսական գրագիտության բարձրացման, ինչպես նաև կոռուպցիայի վերաբերյալ դասընթացների կազմակերպում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը
Միջոցառման գլխավոր նպատակը Երիտասարդության սոցիալ-տնտեսական խնդիրների բարելավումը և մասնագիտական կարողությունների զարգացումն է:

	Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի «4.7 Երիտասարդություն» «խրախուսել երիտասարդների քննադատական մտածողությունը, հետազոտական հմտությունների զարգացումը, նախաձեռնողականությունը, տեղեկատվական տեխնոլոգիաների իմացությունը և համացանցային գրագիտությունը» կետից և կիրականացվի «ՀՀ ֆինանսական կրթման ծրագրի և ՀՀ ֆինանսական կրթման ծրագրի 2021/2025 թվականների գործողությունների պլանը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 22 . 07. 2021թ. N1208Լ որոշման համաձայն: 1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Տեղեկատվական տեխնոլոգիաների իմացության, համացանցային գրագիտության բարձրացման, այդ թվում նաև մեդիագրագիտության բարձրացման նպատակով վերջին տարիներին պետության, մասնավոր հատվածի և ՔՀԿ–ների կողմից իրականացվել են բազմաթիվ ծրագրեր և միջոցառումներ: Ներկայում Հայաստանի բնակչության 64.7%-ն ակտիվ օգտագործում է համացանցը, որի մեծ մասն ըստ 2019 թվականին հրապարակված Գլոբալ մրցունակության ինդեքսի կազմում են երիտասարդները: 1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները Իրավիճակը բարելավելու համար կարևոր է տեղեկատվական տեխնոլոգիաների իմացության, համացանցային գրագիտության բարձրացումը, որի արդյունավետության և երկարատև ազդեցության տեսանկյունից ֆորմալ կրթության մեջ ներգրավվածների կողքին տարիքային առանձնահատկություններից ելնելով կարևոր է թիրախավորել երիտասարդությունը: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Երիտասարդների մասնագիտական կարողությունների զարգացում և զբաղվածության խնդիրների բարելավում: Նախատեսվում է, որ միջոցառմանը տարեկան կմասնակցի շուրջ 60 երիտասարդ:
	54.4 Աջակցություն երիտասարդների սոցիալական ձեռներեցության նախաձեռնություններին 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակը Երիտասարդության սոցիալ-տնտեսական խնդիրների բարելավումը և մասնագիտական կարողությունների զարգացումն է: Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի «4.7 Երիտասարդություն» «աջակցել երիտասարդների ձեռնարկատիրական կարողությունների զարգացմանը և երիտասարդների կողմից ձեռնարկությունների հիմնադրմանը սոցիալական ձեռնարկատիրության իրավական դաշտի բարեփոխման և բիզնեսի աջակցման պետական նոր ծրագրերի ներդրման միջոցով» կետից: 1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Հետազոտությունները ցույց են տալիս, որ Հայաստանում, հատկապես մարզերում, ձեռնարկատիրության ներդրման և զարգացման դեռևս չօգտագործված անսահման հնարավորություններ կան, մասնավորապես, սոցիալական ձեռնարկատիրության, որում կարող են թիրախավորվել նաև սակավ հնարավորություններ ունեցող երիտասարդները: Սոցիալական ձեռնարկատիրության համար մարզերում առկա է հսկայական ներուժ, զորօրինակ՝ հյուրատների հիմնադրում, կայուն գյուղատնտեսության մեջ ներգրավում, աղբի վերամշակում, տարեցներին հատկացվող սննդի և կեցության ծառայությունների ստեղծում և այլն: 1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները Երիտասարդության կողմից սոցիալական ձեռնակատիրությունների հիմնադրումը կնպաստի նրանց սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Երիտասարդների զբաղվածության խնդիրների բարելավում:
	54.5 Երիտասարդների շրջանում զբաղվածության աջակցության ծրագրերի, աշխատաշուկայի պահանջների և կրթական ծառայությունների առաջարկի պատկերի վերաբերյալ տեղեկատվության շարունակական տարածում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակը Երիտասարդության սոցիալ-տնտեսական խնդիրների բարելավումը և մասնագիտական կարողությունների զարգացումն է: Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի «4.7 Երիտասարդություն» «աջակցել երիտասարդների ձեռնարկատիրական կարողությունների զարգացմանը և

	երիտասարդների կողմից ձեռնարկությունների հիմնադրմանը սոցիալական ձեռնարկատիրության իրավական դաշտի բարեփոխման և բիզնեսի աջակցման պետական նոր ծրագրերի ներդրման միջոցով» կետից: 1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի 2018 թվականին իրականացված աշխատուժի ընտրանքային հետազոտության՝ ՀՀ-ում աշխատուժը բնակչության 68%-ն է կազմում, որից տնտեսապես ակտիվ են 57%-ը: Տնտեսապես ակտիվ բնակչության շրջանում 20.4%-ը գործազուրկ են: Գործազուրկների 45%-ը մինչև 35 տարեկան են: Այս ցուցանիշներով Հայաստանը ԵԱՏՄ երկրների շրջանում ամենացածր դիրքում է: Առավելագույն տնտեսական ակտիվությունը նկատվում է արական սեռի ներկայացուցիչների շրջանում, և նրանք ավելի շատ աշխատանքային ստաժ ունեն, քան իգական սեռի ներկայացուցիչները, ում տնտեսական ակտիվության արդյունքները բավական ցածր են միջին ցուցանիշներից: 1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները Երիտասարդության շրջանում զբաղվածության աջակցության ծրագրերը կնպաստեն նրանց սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Երիտասարդների զբաղվածության խնդիրների բարելավում:
	54.6 Բնակչության պաշտպանության և աղետների ռիսկի կառավարման կարողությունների զարգացման առկա հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվության տարածում երիտասարդության շրջանում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակը Երիտասարդության սոցիալ-տնտեսական խնդիրների բարելավումը և մասնագիտական կարողությունների զարգացումն է: Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի «4.7 Երիտասարդություն» «երիտասարդների շրջանում բարձրացնել քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում գործելու գիտելիքների և հմտությունների մակարդակը» կետից: 1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Քաղաքացիական պաշտպանության, արտակարգ իրավիճակներում գործելու գիտելիքներն ու հմտությունները լուրջ նախադրյալներ են՝ ապրելու և ստեղծագործելու անվտանգ միջավայր ստեղծելու համար: 1.2 առկա խնդիրների աջարկվող լուծումները Այդ առումով առավել կարևոր է լուրջ աշխատանքներ տանել հատկապես սահմանամերձ համայնքներում երիտասարդական կամավորական կազմակերպությունների ստեղծման ուղղությամբ՝ դիտարկելով այն ազգային անվտանգության խնդիրների համատեքստում: Շատ կարևոր է արտակարգ իրավիճակին արագ արձագանքող և պատրաստված երիտասարդներ ունենալը: Այս առումով առաջնահերթ նշանակություն ունի ամենամյա թեմատիկ դասընթացների կազմակերպումը հատկապես՝ համայնքային երիտասարդության շրջանում: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Երիտասարդների շրջանում քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակում գործելու անհրաժեշտ գիտելիքների ավելացում: Ծրագրի շահառուների թվաքանակը՝ յուրաքանչյուր տարի կկազմի շուրջ 50 մասնակից,
	55.1 Միջազգային փառատոներին, խորհրդաժողովներին, մրցույթներին, գիտաժողովներին, սեմինարներին, դասընթացներին և այլ հանրային միջոցառումներին ՀՀ երիտասարդների և երիտասարդական պատվիրակությունների մասնակցության աջակցություն 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման գլխավոր նպատակը երիտասարդության ոլորտում համահայկական և միջազգային համագործակցության զարգացումն է: Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի «4.7 Երիտասարդություն» «ապահովել երիտասարդության ոլորտում փորձի փոխանակում Հայաստանի և ԵՄ-ի, ԵԱՏՄ-ի, ԱՊՀ-ի և տարածաշրջանային այլ գործընկերների միջև, խթանել գործընկերությունը և համատեղ ծրագրերի իրականացումը Հայաստանի և սփյուռքի երիտասարդական կազմակերպությունների և կառույցների միջև» կետից:

	1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները երիտասարդության ոլորտում միջազգային համագործակցությունը դրսևորվել է ինչպես միջպետական հարաբերություններում երիտասարդության ոլորտում համագործակցության հաստատմամբ՝ երկկողմ և բազմակողմ ձևաչափերով, այնպես էլ միջազգային միջպետական և ոչ կառավարական կազմակերպությունների և տարբեր երկրների միջազգային զարգացման գործակալությունների կողմից՝ Հայաստանում երիտասարդության ոլորտում ծրագրերի ֆինանսավորմամբ և իրականացմամբ: 1.2. առկա խնդիրների աջարկվող լուծումները Երիտասարդներին միջազգային փառատոներին, խորհրդաժողովներին, մրցույթներին, գիտաժողովներին, սեմինարներին, դասընթացներինև այլ հանրային միջոցառումներին ՀՀ երիտասարդների և երիտասարդական պատվիրակությունների մասնակցության աջակցության միջոցով բարձրացնել երիտասարդության ոլորտում միջազգային համագործակցությունը: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Երիտասարդության ոլորտում միջազգային համագործակցության զարգացում: Միջոցառման շահառուների թվաքանակը՝ յուրաքանչյուր տարի կկազմի մինչև 20 երիտասարդ:
Սփյուռք	
56	56.1 Արևելահայերենի իմացության մակարդակների չափորոշիչների ստեղծում և դրանց ներդրման և միջազգային մակարդակում ճանաչման մեխանիզմների մշակում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը՝ Միջոցառման գլխավոր նպատակն է Օտարախոսների համար հայերենի իմացության գնահատման համակարգի ստեղծումը: Չափորոշիչների պատրաստման անհրաժեշտությունը պայմանավորված է դրանով, որ ներկայումս աշխարհում բացակայում են հայերենի իմացության միասնական մակարդակները և գնահատաման համակարգը, ինչը անհնարին է դարձնում սփյուռքում միասնական չափորոշիչների և օրինակելի ծրագրերի կիրառումը և միասնական փաստաթղթի տրամադրումը: 1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները. Ներկայումս բացակայում են սփյուռքում հայերենի միասնական չափորոշիչները, և ամեն կրթօջախ առաջնորդվում է սեփական ծրագրով: Պաշտոնական և միջազգայնորեն ընդունված փաստաթղթի բացակայությունը բառացում է նաև հայերենի գնահատականը տվյալ երկրի կրթական համակարգում կրեդիտների վերածելը և սփյուռքում միասնական գնահատման և համեմատական վերլուծության հնարավորությունը: 1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները. Արևելահայերենի իմացության մակարդակների մշակում և դրանց ներդրմանը և ճանաչմանն ուղղված միջոցառումների ցանկի մշակումս 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Արևելահայերենի իմացության մակարդակների չափորոշիչները, դրանց ներդրմանը և միջազգային մակարդակում ճանաչմանն ուղղված գործողությունների պլանը:
	56.2 «Արևելահայերենի իմացության մակարդակների չափորոշիչները արևմտահայերենի փոխադրում, ներպետական և միջազգային մակարդակում դրանց ճանաչում, «Հայերենի իմացության մակարդակները հաստատելու մասին» ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանի ընդունում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը՝ Ճանաչման նպատակն է հայերենի իմացության համաշխարհային/համաեվրոպական քննությունների կազմակերպելը և ամբողջ այս կրթական տարածքում մեկ փաստաթղթի փոխճանաչումն է: Իսկ քանի որ բազում համայնքներում և կրթօջախներում դասավանդվում է և կիրառվում արևմտահայերենը, ապա ճանաչման գործընթացը պետք է տարվի միաժամանակ հայերենի երկու գրական ճյուղերի համար՝ նախապես ստեղծված չափորոշիչները արևմտահայերենի փոխադրելով, ինչը հնարավոր է անել սփյուռքում գործող լեզվաբանների և համալսարանական կառույցների օգնությամբ:

	1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները. Չափորոշիչների կիրառման գործընթացը գտնվում է միջազգային համագործակցության ոլորտում և պահանջում է ճանաչման գործընթացի իրականացում օտարերկրյա համալսարանների և/կամ միջազգային կառույցների միջոցով (օրինակ՝ Եվրոխորհուրդ): Ներկայումս հայերն գրանցված չէ որևէ կազմակերպությունում և համընդհանուր ճանաչում ունեցող փաստաթուղթ չի կարող տրվել ոչ մի համալսարանի կողմից, անգամ տեղային քննություններ կազմակմերպելու դեպքում: 1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները. Չափորոշիչներ ստեղծելուց հետո դրանց ներդրմանն ու չանափմանն ուղղված գործողությունների իրականացում 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը՝ Արևմտահայերենի իմացության մակարդակների չափորոշիչներ, ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրաման, գրանցման վկայական
57	57.1 Սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման դասընթացների կազմակերպում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը՝ Միջոցառման գլխավոր նպատակն է Սփյուռքի կրթօջախների կարողությունների հզորացումը: Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի «1.4 Սփյուռքի հետ կապերը» բաժնի 8-րդ ենթակետից: Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսանում « Կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ ենթակետը և 6-րդ հոդվածի 7-րդ ենթակետը: Միջոցառման նպատակն է ապահովել սփյուռքում կրթական գործընթացի միասնականությունը և արդիականությունը՝ ուսուցչի ձեռքբերված նոր գիտելիքի և մանկավարժական կարողությունների միջոցով: Միջոցառումը կնպաստի ՀՀ կառավարության «2050 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ» ծրագրի « ԳԻՏԵԼԻՔԱՀԵՆՔ (ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ) ՀԱՅԱՍՏԱՆ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 11-ի 11.4.1 արդյունքի ցուցանիշի ապահովմանը: Միջոցառումը իրականացվում է 2000 թվականից ևտարբերակված մի քանի ծրագրերի հիման վրա, որոնք թարմացվում են հաշվի առնելով սփյուռքի կայուն և փոփոխվող պահանջները: Միջոցառման պահանջը արտացոլված էև Ազգային անվտանգության ռազմավարությունում և այժմ արտացոլում է ստացել կրթության զարգացման ռազմավարությունում: Սույն միջոցառումը միակ մասնագիտացված հարթակ է, որտեղ հանդիպում են սփյուռքի տարբեր երկրների ուսուցիչներ, կարող են փոխանակել փորձըմ կապ հաստատել Հայաստանի մասնագետների հետ և որ միջոցով հնարավոր է բարձրացնել սփյուռքի ուսուցչի դասավանդման որակը և սերնդափոխությունը: 1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները. Ուսուցիչների վերապատրաստման գործընթացը անընդհատ վերափոխում և ստեղծագործական մոտեցում է պահանջում: Կկազմակերպվեն վերապատրաստումներ նոր ողղություններով: 1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները. Ուսուցիչների վերապատրաստման ծրագրի մշակում և իրագործում՝ դրամաշնորհային ընթացակարգի մնիջոցով: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Տարեկան շուրջ 60 ուսուցչի առկա վերապատրաստում՝ տարբեր ուղղություններով, այդ թվում նաև նոր ոլորտներում:
	57.2 «Սփյուռքի ուսուցիչների գնահատման բնութագրիչները հաստատելու մասին» ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանի ընդունում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը՝ Միջոցառման գլխավոր նպատակն է Սփյուռքի կրթօջախների կարողությունների հզորացումը: Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի «1.4 Սփյուռքի հետ կապերը» բաժնի 8-րդ ենթակետից: Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսանում « Կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը և 6-րդ հոդվածի 7-րդ մասը: րամանի պատրաստման անհրաժեշտությունը պայմանավորված է դրանով, որ սփյուռքի ուսուցիչներից շատերը աշխատում են հասարակական հիմունքներով՝ անվճար: Բացի դրանից տեղում կարող են բացակայել

	համապատասխան մասնագիտությամբ մասնագետները, ինչի պատճառով դասավանդումն իրականացվում է ոչ մասնագետների կողմից: Նման պայմաններում դասավադումը չի կարող լինել արդյունքվետ, ուստի անհրաժեշտ է մոտիվացնել ուսուցչին և դրդել նրան տարբեր միջոցառումների միջոցով ինքնակրթության միջոցով անհրաժեշտ նվազագույն մակարդակին հասնելուն: Դրա համար անհրեշտ է նախ՝ սահմանել այս նվազագույն մակարդակը, որն անհրաժեշտ է սփյուռքի դպրոցում դասավանդում իրականացնելու համար: 1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները. Ներկայումս բացակայում է որևէ փաստաթուղթ, որը սահմանում է սփյուռքում ուսուցիչների գնահատումը: 1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները. Սփյուռքի ուսուցիչների գնահատման բնութագրիչների մշակում և ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից հաստատում 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Սփյուռքի ուսուցիչների կարողությունների գնահատման համակարգի առկայություն:
	57.3 Սփյուռքի կրթօջախների ուսումնամեթոդական բազայի բարելավում և ուսումնական նոր ձեռնարկների մշակում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը՝ Միջոցառման գլխավոր նպատակն է Սփյուռքի կրթօջախների կարողությունների հզորացումը: Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի «1.4 Սփյուռքի հետ կապերը» բաժնի 8-րդ ենթակետից: Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսանում « Կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ ենթակետը և 6-րդ հոդվածի 7-րդ ենթակետը: Սփյուռքում գործում են բազմաթիվ կրթօջախներ, որտեղ ուսումը կազմակերպվում է տեղի պայմաններին համապատասխան: Այն կարող է տարբերվել ոչ միայն արևելահայերենի կամ արևմտահայերենի լեզվական միջավայրով, այլև հայերենի իմացության տարբեր մակարդակով, տարիքային կազմով, և տեղի կրթական օրենսդրությամբ: Ուստի սփյուռքի կրթօջախներին աջակցություն ցուցաբերելու համար անհարժետշ է հաշվի առնել բոլոր հնարավոր տարբերությունները և ստեղծել սփյուռքի պահանջներին և պայմաններին համապատասխան գրականություն: 1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները. Ներկայումս ծրագրի շրջանակներում ձեռք է բերվում Հայաստանում շուկայում առկա գրականություն: Սակայն այն չի բավականացնում պահանջները բավարարարելու համար: Հատկապես սուղ է առաջարկը հայրենագիտության, հայոց պատմության մասով: 1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները. Հատկապես սուղ է հայրենագիտության, հայոց պատմության առաջարկը, ինչպես նաև Հարավային և Լատինական Ամերիկայի երկրների դպրոցների համար համարժեք գրականությունը: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Սփյուռքի կրթական կարիքներին և պահանջարկին համապատասխան շուրջ 150000 միավոր դասագրքերի, ձեռնարկների և թվայնացված պաշարների ապահովում
	57.4 Սփյուռքի կրթօջախների տվյալների բազայի ստեղծում 1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը՝ Միջոցառման գլխավոր նպատակն է Սփյուռքի կրթօջախների կարողությունների հզորացումը: Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի «1.4 Սփյուռքի հետ կապերը» բաժնի 8-րդ ենթակետից: Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսանում « Կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ ենթակետը և 6-րդ հոդվածի 7-րդ ենթակետը: Նախատեսվող հրամանը ստույգ տեղեկատվություն ստանալու պահպանելու, հասանելի դարձնելու կանոնակարգման առաջին փորձն է: Նախկինում կրթօջախների հաշվառումը չի կրել նպատակային բնույթ, տվյալները հաճախ փոփոխվում էին, սակայն համապատասխան տեղեկատվություն դրա վերաբերյալ կամ չի եղել

	կամ գրանցվել է ուշացմամբ: Բազայի ստեղծումը հնարավորություն կտա նախ՝ ճշգրիտ տվյալներ ունենալ սփյոռքում գործող կրթօջախների մասին, իչպես նաև հիմք կհանդիսանա բյուջետային որոշ ծրագրերի պլանավորման համար: 1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները. Նախկինում կրթօջախների հաշվառումը չի կրել է նպատակային բնույթ, տվյալները հաճախ փոփոխվում էին, սակայն համապատասխան տեղեկատվություն դրա վերաբերյալ կամ չի եղել կամ գրանցվել է ուշացմամբ: 1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները. Բազային ստեղծումը հնարավորություն կտա նախ՝ ճշգրիտ տվյալներ ունենալ սփյոռքում գործող կրթօջախների մասին, իչպես նաև հիմք կհանդիսանան բյուջետային որոշ ծրագրերի պլանավորման համար: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Սփյուռքի կրթօջախների տվյալների բազայի կառավարման համակարգի՝ էլեկտրոնային հարթակի ստեղծում: Սփյուռքի կրթօջախների կթական կարիքների և պահանջարկի, ինչպես նաև հնարավորությունների քարտեզագրում:
58	58.1 «Համագործակցության ցանցային հայագիտական համալսարանի ձևավորման և զարգացման հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանի ընդունում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը՝ Միջոցառման գլխավոր նպատակն է Օտարերկրյա համալսարաններում հայագիտական կրթական ծրագրերի իրագործմամբ և ցանցային ձևի ներդրմամբ կադրերի պատրաստման որակի բարձրացումը: Սույն հրամանի անհրաժեշտությունը պայմանավորված է օտարերկրյա համալսարաններում հայերենի և այլ հայագիտական առարկաների դասավանդման բյուջետային ծրագրի արդյունավետության բարձրացման պահանջով: Այն կկանոնակարգի ՀՀ-ի կողմից ֆինանսավորվող համալսարանների և Հայաստանի բուհերի միջև միջհամալսարանական կապերը: 1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները. ՀՀ բյուջեի միջոցների հաշվի իրականացվում է օտարերկրյա համալսարանների ֆինանսավորում՝ հայերենի և այլ հայագիտական առարկաների դասավանդման համար: Նախատեսված է տարեկան 2 լրացուցիչ համալսարանի ֆինանսավորում: Սակայն այս համալսարանների միջև կապ չկա, այնինչ միասիան դրանք կարող են իրագործել կոնֆերանդներ և այլ հայագիտական գործունեություն: 1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները. «Համագործակցության ցանցային հայագիտական համալսարանի ձևավորման և զարգացման հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանի նախագծի պատրաստում: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Գործընկեր համալսարանների/կազմակերպությունների բազայի հիման վրա կրթագիտական գործունեության իրա-կանացում՝ ակադեմիական շարժունության ապահովում, համատեղ կրթական ծրագրերի ձևավորում և ուսուցման կազմակերպում, գիտական նախագծերի իրագործում:
	58.2 Օտարերկրյա համալսարաններում ցանցային ձևաչափով հայագիտական կենտրոնների գործունեության ապահովում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը՝ Միջոցառման գլխավոր նպատակն է Օտարերկրյա համալսարաններում հայագիտական կրթական ծրագրերի իրագործմամբ և ցանցային ձևի ներդրմամբ կադրերի պատրաստման որակի բարձրացումը: Հրամանի անհրաժեշտությունը պայմանավորված է օտարերկրյա համալսարաններում հայերենի և այլ հայագիտական առարկաների դասավանդման բյուջետային ծրագրի արդյունավետության բարձրացման պահանջով: Այն կկանոնակարգի ՀՀ-ի կողմից ֆինանսավորվող համալսարանների և Հայաստանի բուհերի միջև միջհամալսարանական կապերը: Միջոցառումը կնպաստի ՀՀ կառավարության «2050 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ» ծրագրի « ԳԻՏԵԼԻՔԱՀԵՆՔ (ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ) ՀԱՅԱՍՏԱՆ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 11-ի 11.1.3 թիրախային արդյունքի ցուցանիշի ապահովմանը: 1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները. ՀՀ բյուջեի միջոցների հաշվի իրականացվում է օտարերկրյա համալսարանների ֆինանսավորում՝ հայերենի և այլ հայագիտական առարկաների դասավանդման համար: Նախատեսված է տարեկան 2 լրացուցիչ համալսարանի

	ֆինանսավորում: Սակայն այս համալսարանների միջև կապ չկա, այնինչ միասիան դրանք կարող են իրագործել կոնֆերանդներ և այլ հայագիտական գործունեություն: 1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները. «Համագործակցության ցանցային հայագիտական համալսարանի ձևավորման և զարգացման հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանի նախագծի պատրաստում: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Օտարերկրյա համալսարաններում ցանցային ձևաչափով հայագիտական կրթական ծրագրերի իրականացում:

Ներքին գործերի նախարարություն	
NN	**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ**
	Ոստիկանություն
1	**1. Ներքին գործերի նախարարության ձևավորում՝ Ոստիկանության և Միգրացիոն ծառայության հիմքով** **1.Միջոցառման անհրաժեշտությունը (նպատակը)** Միջոցառումը բխում է ՀՀ կառավարության 18.08.2021թ. N 1363-Ա որոշմամբ հաստատված 2021-2026թ. ՀՀ կառավարության ծրագրի 5.4.-րդ կետի 7-րդ պարբերությունից: Միջոցառման նպատակն է ստեղծել ժողովրդավարական հասարակարգին բնորոշ ոստիկանության կառուցվածքային մոդել: Միջոցառման իրականացումը համահունչ է ՀՀ կառավարության 2020 թվականի ապրիլի 23-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության բարեփոխումների ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 638-Լ որոշմանը: **2. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրը** Ոստիկանության պատշաճ գործունեության և իր առջև դրված խնդիրների լիակատար լուծման համար անհրաժեշտ նախապայման է այնպիսի կառուցվածքը, որը լիազորությունների տարանջատման արդյունքում թույլ կտա ոստիկանությանը ռեսուրսներն ամբողջովին ուղղել իր հիմնական գործառույթների իրականացմանը: Ոստիկանության գործող կազմակերպաիրավական ձևը դժվարություններ է առաջացնում ստորաբաժանումների համակարգման ընթացքում: Ավելին՝ համակարգում անհրաժեշտություն է առաջացել բացառել նաև կրկնվող գործառույթներ իրականացնող ստորաբաժանումների առկայությունը, մասնավորապես՝ տարբեր ծառայությունների կազմում աջակցող, ինչպես նաև գերատեսչական վերահսկողության լիազորություններ իրականացնող կառուցվածքային միավորների առկայությունը: **3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Ոստիկանության արդյունավետ գործունեության մոդել առաջարկվում է այն համապատասխան ինքնուրույն կարգավիճակով նախատեսել նախարարության կառուցվածքում՝ սահմանելով նախարարությանը ոստիկանության ենթակայությունը, դրա կառուցակարգերը և համապատասխանաբար, փոփոխելով ոստիկանության կառուցվածքն ու հստակեցնելով գործառույթները: Ներկայիս ոստիկանության որոշ ստորաբաժանումներ, որոնց գործառույթները հիմնականում հանգում են հանրությանը ծառայությունների մատուցմանը, դուրս կգան ոստիկանության կառուցվածքից և կներառվեն նախարարության կառուցվածքում: Առաջատար երկրների պրակտիկան ցույց է տալիս, որ միգրացիոն ծառայությունները լավագույնս գործարկվում են համապատասխան ներքին գործերի հարցերով զբաղվող կառույցներում՝ հաշվի առնելով միգրացիոն գործառույթների բնույթն ու մատուցվող ծառայությունների տեսակները (օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց ապաստանի տրամադրման կազմակերպում, ռեադմիսիոն միջպետական համաձայնագրերով սահմանված հանձնառությունների կատարման ապահովում և այլն): Այս համատեքստում անհրաժեշտություն է նաև միգրացիոն ծառայության գործառույթներ իրականացնող մարմնի հետագա կարգավիճակի փոփոխությունն ու այդ գործառույթների ներառումը նոր նախարարության կազմակերպաիրավական ձևում: Ոստիկանության բարեփոխումների ռազմավարությամբ Ներքին գործերի նախարարության ստեղծման ժամկետ է սահմանվել 2021 թվականի 2-րդ կիսամյակը, սակայն Ներքին գործերի նախարարության ստեղծման

	վերաբերյալ օրենսդրական փաթեթը շրջանառվում է ՀՀ արդարադատության նախարարության կողմից և Ազգային ժողովի 8-րդ գումարման նստաշրջանի օրակարգում դեռևս ներառված չէ: Ելնելով վերոգրյալից՝ միջոցառման իրականացման ժամկետ է սահմանվել 2023 թվականի մարտի 3-րդ տասնօրյակը: **4. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Նախարարության կառուցվածքային մոդելը հնարավորություն է տալիս ոլորտում ստեղծել քաղաքականություն մշակող ու հաշվետու մարմին, որը պատասխանատվություն կկրի ոստիկանության գործունեության, ոլորտի միասնական քաղաքականության իրականացման և բյուջեի կատարողականի համար: Նոր քաղաքացիական նախարարությունն, իր մեջ ներառելով նոր ստեղծվող միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը, կապահովի նաև ոլորտի միասնական քաղաքականության մշակումն ու իրականացումը:
2.	**2. Ոստիկանության զորքերի կարգավիճակի վերանայում, խնդիրների և գործառույթների վերաիմաստավորում, Ոստիկանության զորքերի ծառայության կազմակերպաիրավական նոր ձևի սահմանում** **1. Միջոցառման անհրաժեշտությունը (նպատակը)** Միջոցառումը բխում է ՀՀ կառավարության 18.08.2021թ. N 1363-Ա որոշմամբ հաստատված 2021-2026թ. ՀՀ կառավարության ծրագրի 5.4.-րդ կետի 8-րդ պարբերությունից: Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է Ոստիկանության զորքերի գործառույթներն առավել արդյունավետ իրականացնելու պահանջով: **2. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրը** Ոստիկանության զորքերի կարգավիճակը վերանայման և վերափոխման անհրաժեշտություն ունի, Ոստիկանության զորքերի առջև դրված խնդիրները վերաիմաստավորման, արդիականացման կարիք ունեն: **3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Ոստիկանության զորքերի խնդիրների վերաիմաստավորման ուղղությամբ ուսումնասիրությունների իրականացում, դրա արդյունքներով ծառայության կազմակերպաիրավական նոր ձևի վերաբերյալ առաջարկությունների ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ: Միջոցառումը նախատեսված է նաև ՀՀ կառավարության 2020թ. ապրիլի 23-ի 638-Լ որոշմամբ հաստատված Ոստիկանության 2020-2022թթ. բարեփոխումների ռազմավարության գործողությունների ծրագրով, որով նախատեսված միջոցառման ժամկետը հետաձգվում է՝ հաշվի առնելով Ներքին գործերի նախարարության ստեղծման ժամկետը: Նախատեսվում է ուսումնասիրություններ և քննարկումներ իրականացնել Ոստիկանության զորքերի հենքի վրա Ոստիկանության գվարդիա ստեղծելու ուղղությամբ: **4. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Ոստիկանության զորքերի կարգավիճակը նախատեսվում վերանայել և այն համալրել առավել պրոֆեսիոնալ և հասարակական կարգի պահպանության և հասարակական անվտանգության ապահովման գործառույթների իրականացման ուղղությամբ վերապատրաստված արհեստավարժ անձնակազմով՝ իր մեջ ներառելով ոստիկանական այլ ստորաբաժանումներ: Ոստիկանության զորքերի գործառույթները կվերանայվեն՝ առավելապես ոստիկանական խնդիրներին համահունչ լինելու տեսանկյունից: Կհստակեցվեն զորքերի՝ օրենսդրությամբ ամրագրված գործառույթները, ըստ այդմ՝ կնախատեսվի ֆունկցիոնալ արդյունավետ կառուցվածք, հիմնովին կվերափոխվեն զորքերի պատրաստման ու վերապատրաստման ծրագրերը, կներդրվեն կադրերի ընտրության, խրախուսման ու առաջընթացի մտածված և գործուն մեխանիզմ և կզարգանա Զինված ուժերի, փրկարար ծառայության և ռազմականացված այլ ուժերի հետ ոստիկանության զորքերի ներդաշնակ գործակցումը ճգնաժամային իրավիճակներում:

3.	**3. Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում Ոստիկանության պարեկային ծառայության և օպերատիվ կառավարման կենտրոնի ստորաբաժանումների ստեղծում** **1. Միջոցառման անհրաժեշտությունը (նպատակը)** Միջոցառումը բխում է ՀՀ կառավարության 18.08.2021թ. N 1363-Ա որոշմամբ հաստատված 2021-2026թ. ՀՀ կառավարության ծրագրի 5.4.-րդ կետի 2-րդ և 3-րդ պարբերություններից: ՀՀ ողջ տարածքում Ոստիկանության պարեկային և օպերատիվ կառավարման կենտրոնի ստորաբաժանումների ստեղծումը նպատակ ունի Երևան քաղաքի հաջող օրինակով՝ ողջ հանրապետության տարածքում ներդնել արտաքին ծառայության նոր և ժամանակակից տեսակ՝ Պարեկային ծառայությունը, որը հագեցված լինելով նորագույն տեխնոլոգիաներով, քաղաքացիներին մատուցել նոր որակի ծառայություն: Այն դրսևորվելու է քաղաքացիների իրավունքների և օրինական շահերի առավել արդյունավետ պաշտպանությամբ, իրավախախտումներին և հանրորեն վտանգավոր դեպքերին արագ (օպերատիվ) արձագանքմամբ, երթևեկության կազմակերպմամբ, հանցագործությունների և պատահարների վերաբերյալ հաղորդումների հավաքագրման ժամանակակից թվային միասնական համակարգի ստեղծմամբ, ոստիկանական ուժերի ու միջոցների առավել օպերատիվ կառավարմամբ, իրավախախտումների՝ հատկապես սեփականության դեմ ուղղված և (կամ) հանրային վայրերում կատարվող հանցագործությունների արդյունավետ կանխարգելմամբ: Գեղարքունիքի մարզի Պարեկային ծառայության կազմում 2023 թվականի սեպտեմբեր ամսից նախատեսվում է գործարկել մասնագիտացված ջրային պարեկային ստորաբաժանում, որը ջրային տեխնիկայի միջոցով մշտական պարեկային ծառայություն կիրականացնի Սևանա լճի տարածքում և հետիոտն կարգով՝ առափնյա հատվածում: Նախատեսվում է Պարեկային ծառայությունը համալրել կին ծառայողներով՝ այդպիսով նպաստելով գենդերային հավասարակշռության ապահովմանը: Այդ նպատակի իրականացման նախատեսվում է ընդունելության գործընթացը (դիմումների ընդունում, ստուգում, քննարկումների անցկացում և այլն) սկսել 2023թ. հոկտեմբեր ամսին, իսկ 5-ամսյա վերապատրաստումների անցկացումն ավարտել 2024թ. սեպտեմբերի 3-րդ 10-օրյակում: **2. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրը** Ներկայումս ոստիկանության պարեկային (պարեկապահակետային և ճանապարհապարեկային) ծառայությունները չունեն բավարար լիազորություններ և տեխնիկական հագեցվածություն իրավախախտումների առավել արդյունավետ կանխարգելման համար: **3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Հանցագործությունների և այլ իրավախախտումների առավել օպերատիվ ու արդյունավետ կանխարգելման համար առաջարկվում է ՀՀ ողջ տարածքում ստեղծել պարեկային նոր ստորաբաժանում (ծառայություն): Պարեկային ծառայության մարզային յուրաքանչյուր ստորաբաժանման ստեղծմանը զուգահեռ՝ տվյալ մարզում, կգործարկվի նաև Օպերատիվ կառավարման կենտրոնը, որը հանդիսանալու է քաղաքացիներից ահազանգերի ընդունման կենտրոն և բոպեների ընթացքում տալու է անհրաժեշտ խորհրդատվություն, իսկ անհրաժեշտության դեպքում մոտեցնելու է պարեկային կարգախումբը՝ ապահովելով դժվարին իրավիճակում հայտնված անձանց կարճ ժամանակահատվածում Ոստիկանության աջակցության ցուցաբերումը: Միջոցառման իրականացումը նախևառաջ ենթադրում է Ոստիկանության պարեկային ծառայության ենթակառուցվածքի՝ օպերատիվ կառավարման կենտրոնի ձևավորում, տեխնիկական վերազինում, ռադիոկապի համակարգի արդիականացում, պարեկային տրանսպորտային միջոցների ձեռքբերում և կահավորում: Օպերատիվ կառավարման ժամանակակից կենտրոնի ձևավորման արդյունքում, մասնավորապես, հանցագործությունների և պատահարների վերաբերյալ հաղորդումների հավաքագրման ժամանակակից համակարգի ստեղծման միջոցով, կապահովվի Ոստիկանության ուժերի և միջոցների արդյունավետ կառավարում: Օպերատիվ կառավարման կենտրոնի հնարավորությունները թույլ կտան նաև հանցագործության դեպքերի քրեաբանական վերլուծության և կանխատեսման համար կիրառել համապատասխան ծրագրային միջոցներ, ինչը նույնպես կնպաստի հանցագործությունների կանխարգելման (նախականխման) արդյունավետության բարձրացմանը: **4. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Պարեկային նոր ծառայության ստեղծումը ՀՀ ողջ տարածքում կնպաստի քաղաքացիների իրավունքների և օրինական շահերի առավել արդյունավետ պաշտպանությանը, իրավախախտումներին և հանրորեն վտանգավոր դեպքերին արագ (օպերատիվ) արձագանքմանը, իրավախախտումների՝ հատկապես սեփականության դեմ ուղղված և (կամ) հանրային վայրերում հանցագործությունների կանխարգելմանը, երթևեկության կազմակերպմանը: Նոր ստեղծվող ջրային պարեկային ստորաբաժանումը ծառայությունն կապահովի լողափերում, հանգստյան գոտիներում հասարակական կարգի պահպանություն ապահովելով, օպերատիվ կարձագանքի իրավախախտումներին ու պատահարներին, կիրականացնի ապօրինի որսի, ձկնորսության դեպքերի

	կանխարգելում, բացահայտում և այլն: Պարեկային ծառայությունը կին ծառայողներով համալրմամբ կապահովվի գենդերային հավասարակշռությունը տվյալ ոլորտում:
4.	**4. Ոստիկանության ծառայողների վարձատրության և սոցիալական երաշխիքների բարելավում** **1. Միջոցառման անհրաժեշտությունը (նպատակը)** Միջոցառումը բխում է ՀՀ կառավարության 18.08.2021թ. N 1363-Ա որոշմամբ հաստատված 2021-2026թ. ՀՀ կառավարության ծրագրի 5.4.-րդ կետի 5-րդ պարբերությունից, համաձայն որի անհրաժեշտ է ոստիկանության ծառայողների համար սահմանել արժանապատիվ վարձատրության չափ և սոցիալական ապահովության լրացուցիչ երաշխիքներ: Այդ նպատակին հասնելու համար նախատեսվում է ՀՀ ոստիկանությունում ներդնել աշխատավարձերի բարձրացում նախատեսող ոստիկանության ծառայողների կամավոր ատեստավորման համակարգը: **2. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրը** Ոստիկանության ծառայողների վարձատրությունն այլ ծառայությունների ծառայողների վարձատրության համեմատ շատ ցածր է: Անհրաժեշտ է բարձրացնել ոստիկանությունում ծառայության գրավչությունը, ոստիկանությունում ծառայողների մոտիվացման, գործունեության արդյունավետությունը, ինչպես նաև ոստիկանության ծառայողներին կոռուպցիոն դրսևորումներից հնարավորինս զերծ պահելու երաշխիքներ նախատեսել: **3 . Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Նոր ձևավորված պարեկային ծառայության ծառայողների աշխատավարձը 30-50%-ով ավելի է համակարգում առկա վարձատրության չափից: 2024-2026թթ. նախատեսվում է կամավոր ատեստավորման միջոցով բարձրացնել ոստիկանության ծառայողների վարձատրության չափերը: **4. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Ոստիկանության ծառայողների համար կսահմանվի արժանապատիվ վարձատրության չափ, Ոստիկանությունում ծառայությունը կդառնա առավել գրավիչ: Ոստիկանության կամավոր ատեստավորում անցած ծառայողները կստանան բարձր աշխատավարձ, և կնվազեցվեն հնարավոր կոռուպցիոն ռիսկերը:
5.	**5. Ոստիկանության տեխնիկական հագեցվածության մակարդակի բարձրացում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառումը բխում է ՀՀ կառավարության 18.08.2021թ. N 1363-Ա որոշմամբ հաստատված 2021-2026թ. ՀՀ կառավարության ծրագրի 5.4.-րդ կետի 6-րդ պարբերությունից և 6. 2-րդ կետից: Միջոցառման նպատակը ժամանակակից մարտահրավերներին դիմակայող, բարեվարք, մասնագիտացած ու տեխնիկապես հագեցած ոստիկանության վերափոխման միջոցով հասարակական անվտանգության ապահովման նոր որակի ստեղծումն է: Ոստիկանության փորձաքրեագիտական ներուժի զարգացմամբ, հանցավորության դեմ պայքարի առաջավոր փորձի ուսումնասիրմամբ և տեխնիկական հագեցվածության մակարդակի բարձրացմամբ հնարավորություն կընձեռվի ապահովելու հանցագործությունների բացահայտման առավել բարձր ցուցանիշներ, ինչպես նաև կբարձրանա հանցավորության կանխարգելման աշխատանքների արդյունավետությունը: ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության առավել ծանրաբեռնված ստորաբաժանումներում հերթերը կանոնակարգող սարքավորումների տեղադրման արդյունքում քաղաքացիների սպասարկումը կկազմակերպվի առավել արդյունավետ, միաժամանակ կնպաստի կոռուպցիոն ռիսկերի նվազմանը, քանի որ նման սարքավորումների բացակայության պարագայում ավելի շուտ սպասարկվելու հնարավորությունը կոռուպցիոն ռիսկեր է պարունակում:

2. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

ՀՀ ոստիկանության փորձաքրեագիտական վարչությունում ներկայումս առկա տեխնիկական միջոցները թույլ չեն տալիս արագ և արդյունավետ կազմակերպել փորձաքննությունները:

Իսկ Անձնագրային և վիզաների վարչության առավել ծանրաբեռնված ստորաբաժանումներում հերթերը կանոնակարգող սարքավորումների բացակայությունը ազդում է պետության կողմից քաղաքացիներին մատուցվող ծառայությունների որակի վրա:

3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Հանցավորության դեմ պայքարի առաջավոր փորձի ուսումնասիրմամբ փորձաքրեագիտական գործունեությունն առավել արդյունավետ կազմակերպելու համար նախատեսվում է ձեռք բերել հետևյալ սարքերը՝

- ***«EVOFINDER» ձգաբանական նույնականացնող ավտոմատացված համակարգ***

Ձգաբանական փորձաքննությունների և հատկապես կրակված պարկուճների և գնդակների համեմատական և նույնականացման գործընթացը առավել արագ և արդյունավետ կազմակերպելու և իրականացնելու նպատակով ՓՔՎ-ում անհրաժեշտ է ներդնել ժամանակակից ձգաբանական նույնականացնող ավտոմատացված համակարգ:

Տվյալ ասպարեզում առաջատարների շարքում է «EVOFINDER» ձգաբանական նույնականացնող ավտոմատացված համակարգը: Այն արտադրվում է Գերմանիայում, ներդրված է Եվրոպայի գրեթե բոլոր երկրներում /Գերմանիա, Ֆրանսիա, Ավստրիա և այլն/, ինչպես նաև ԱՄՆ-ի հատուկ ծառայություններում /ՀՖԲ, Պենտագոն/ և մի քանի նահանգներում: Համակարգն առանձնանում է սկանավորման որակյալ սարքավորումներով, որոնք աշխատում են նաև 3D ֆորմատում, ապահովում են ստացված պատկերների բարձր որակը, ինչպես նաև ապահովում են օբյեկտների /պարկուճ, գնդակ/ մուտքագրման առավելագույն արագությունը՝ մոտ 2-3 րոպե՝ յուրաքանչյուր պարկուճի կամ գնդակի սկանավորման համար:

«EVOFINDER» ձգաբանական նույնականացնող ավտոմատացված համակարգն ունի միջազգային լայն ճանաչում, արդյունավետության բարձր գնահատական և մեծ հեղինակություն է վայելում իր ոլորտում:

Վերլուծությամբ պարզվել է նաև, որ «EVOFINDER» ձգաբանական նույնականացնող ավտոմատացված համակարգի միակ և բացառիկ մատակարարը հանդիսանում է «ScannBI Technology Europe GmbH» ընկերությունը:

Հայտնելով վերոգրյալը, ՓՔՎ-ն իր դրական կարծիքն է հայտնում հատկապես «EVOFINDER» ձգաբանական նույնականացնող ավտոմատացված համակարգի ձեռք բերման ու ներդրման վերաբերյալ, քանի որ այն նմանատիպ համակարգերի մեջ առանձնանում է իր «գին-որակ-արդյունավետություն» հարաբերակցությամբ և հանդիսանում է ամենաօպտիմալ տարբերակը:

- **«Thermo fisher scientific, MS ISQ 7000» մոդելի մասս-սելեկտիվ դետեկտոր, ավտոսամպլեր 100-200 տեղանոց և ազոտի գեներատոր նույն ֆիրմայի «GC1310» գազային քրոմատոգրաֆին միացնելու նպատակով Մասս-սելեկտիվ դետեկտոր նյութերի ուղղակի ներմուծման համար նախատեսված սարք**

2014 թվականին ՀՀ ոստիկանության կողմից ձեռք է բերվել նաև մեկ հատ ''TRACE 1310'' մոդելի ''Thermo fisher scientific'' ֆիրմայի գազային քրոմատոգրաֆ բոցաիոնիզացնող դետեկտորով, որը հնարավոր է մոդերնիզացնել, դրան միացնել նաև ''Thermo fisher scientific'' ֆիրմայի ''MS ISQ 7000'' մոդելի մասս-սելեկտիվային դետեկտոր: Նշված սարքի մոդերնիզացման արդյունքում բավականին ֆինանսական միջոցներ խնայելով ձեռք կբերվի 2-րդ մասս-սելեկտիվային դետեկտորը, այլ աշտարակով, որը հնարավորություն կընձեռի կիրառել լրացուցիչ հետազոտություններ այլ պայմաններում: Բացի այդ, նախորդ ''DSQ-2'' մոդելի մասս-սելեկտիվային դետեկտորն արդեն իսկ ֆիզիկապես և բարոյապես մաշված է և ժամանակն է մտածել ձեռք բերել նորը՝ ''MS ISQ 7000'' մոդելի մասս-սելեկտիվային դետեկտոր:

Պրեպարատիվ եղանակով առանձնացված թիրախային նյութերը, որոնք գազային քրոմատոգրման ենթակա չեն, մասս-սելեկտիվ դետեկտորի միջոցով հետազոտելու համար:

- **«Foster+Freeman» ֆիրմայի «VSC8000» սարք**

Ստուգում է կեղծ թղթադրամներ և կեղծ փաստաթղթեր ԻԿ և ՈՒՄ լուսային սպեկտորներում:

- **PC-CRASH**

Տրանսպորտային միջոցների բախման 3D մոդելավորում: Տրանսպորտային միջոցներում առկա ուղևորների շարժման մոդելավորում: Տրանսպորտային միջոցների և այլ օբյեկտների բախման մոդելավորում հաշվարկներում օգտագործելու համար:

Մեկ մոդելավորման ընթացքում կարելի է մոդելավորել 1-ից մինչև 32 տրանսպորտային միջոց: Դեֆորմացիայի չափով էներգետիկ համարժեք վնասի հաշվարկ (NHTSH բազայի օգտագործման հնարավորությունով): Սովորեցնում է տարբերել արգելակման ուժը տրանսպորտային միջոցների սռնիների միջև: ABS և ESP համակարգով տրանսպորտային միջոցների շարժման մոդելավորում: Տրանսպորտային

միջոցների և դրանց անիվների կողմից թողնված հետքերի օպտիմալացման համակարգով մինչև 5 դիրք պատկերելու հնարավորություն: Ավտոմատացված նույնականացում՝ տրանսպորտային միջոցների միմյանց, ինչպես նաև այլ օբյեկտների հետ կոնտակտի մեջ մտնելու հետևանքով: Տրանսպորտային միջոցների և այլ օբյեկտների բախումից հետո շարժման ավտոմատացված հաշվարկ: Տրանսպորտային միջոցների հետին տեսանելիության հայելու դիրքից վնասվածքների բարձրության համեմատում:

- **Նախապատրաստական (պրեպարատիվ) հեղուկային քրոմատոգրաֆ UV դետեկտորով**

Սարքավորումը նախատեսված է համակցված շահագործման համար, որի ժամանակ հեղուկային քրոմատոգրման արդյունքում հայտնաբերված նյութերը սույն սարքի միջոցով առանձնացնել, որպես մաքուր նյութեր, որից հետո դրանք կարելի է հետազոտել քիմիական հետազոտության այլ մեթոդներով:

- **Հեղուկներ ֆիլտրացնող սարք վակուումային պոմպով**

Վակուումային պոմպով հեղուկների ֆիլտրացնող սարքն անհրաժեշտ է վերը նկարագրված հեղուկային քրոմատոգրաֆներին, մասնավորապես՝ պրեպարատիվ քրոմատոգրաֆին, քանի որ նշված սարքն իր աշխատանքի ժամանակ ծախսում է բավականին քանակի գերմաքուր լուծիչներ, որոնք թանկարժեք են: Քիմիական լուծիչների ձեռքբերման համար ծախսերը նվազեցնելու նպատակով, նպատակահարմար է ձեռք բերել նշված սարքը, քիմիական լուծիչները մաքրելու համար:

- **«Սոբոլ» կամ «Գազել» մակնիշի ավտոմեքենա (լիաքարշակ՝ 5-ից 7 անձի համար նախատեսված):**

Չինաստանի Ժողովրդավարական Հանրապետությունից, օգնության կարգով, ստացվել է դեպքի վայրի զննության համար նախատեսված՝ 13 անուն հատուկ տեխնիկա: Նշված հատուկ տեխնիկան տեղադրված է իրենց համար նախատեսված՝ հատուկ ճամպրուկատիպ պայուսակների մեջ, որոնք ունեն մեծ չափսեր և դեպքի վայր տեղափոխելու առումով՝ հարմարավետ չեն ու մշտապես ստեղծում են որոշակի դժվարություններ:

ՓՔ վարչությունում չկա համապատասխան տրանսպորտային փոխադրամիջոց, որպեսզի վերը նշված ամբողջ հատուկ տեխնիկան՝ իրենց ճամպրուկատիպ պայուսակներով հանդերձ, անհրաժեշտության դեպքում հնարավոր լինի օպերատիվ կերպով տեղափոխել դեպքի վայր:

- **Հեղուկային քրոմատոգրաֆ DAD դետեկտորով, ավտոսամպլերով և տերմոստատով**

Նշված սարքավորումը կբարձրացնի ՀՀ ոստիկանության ՓՔՎ հատուկ հետազոտությունների բաժնի քիմիական լաբորատորիայի աշխատանքների արդյունավետությունը, մասնավորապես՝ նշված հեղուկային քրոմատոգրաֆը կընձեռի հնարավորություն հետազոտել և որպես նմուշ առանձնացնել բոլոր այն նյութերը, որոնք հնարավոր չէ հետազոտել գազային քրոմատոգրման արդյունքում, ի դեպ, նմանատիպ նյութերը բավական շատ են: Սույն սարքավորումները թիրախային են դառնում պայթյունի հետևանքով մնացորդային պայթուցիկ նյութերի հայտնաբերման համար և մի շարք այլ դեպքերում:

- **Դրոն**

ՀՀ ոստիկանության Փորձաքրեագիտական վարչությունում իրականացվող փորձաքննությունների ընթացքում (մասնավորապես՝ դատաավտոտեխնիկական, դատաձգաբանական, դատահետքաբանական և դատաապրանքագիտական) հաճախ անհրաժեշտություն է առաջանում տեղանքի, օբյեկտների, տարբեր բարձրությունների վրա ֆիքսումը: Բավականին հաճախ բազմաթիվ փորձաքննությունների կատարման ընթացքում, երբ հնարավոր չի լինում որոշակի բարձրությունից ֆիքսել տեղանքը և օբյեկտները (օբյեկտը) հանգեցնում է կատարված եզրակացության ընկալման դժվարացմանը՝ նվազում է դրա դյուրըմբռնելիությունը, իսկ որոշ դեպքերում էլ նշվածի բացակայության պարագայում երկարացնում եզրակացության կատարման ժամանակահատվածը:

- **Դեսելերոմետր**

«Деселерометр»՝ դանդաղաչափիչ, ստեղծվել է արգելակման ժամանակ տրանսպորտային միջոցների դանդաղեցումը և այլ պարամետրերը չափելու համար:

Ոստիկանությունում համակարգչային-տեխնիկական փորձաքննությունների իրականացման նպատակով անհրաժեշտ տեխնիկական միջոցների ձեռք բերում և ծրագրային ապահովում

Համակարգչային-տեխնիկական հետազոտությունների և փորձաքննությունների իրականացումը կապահովի հանցագործությունների բացահայտմանն ուղղված օպերատիվ-հետախուզական միջոցառումների փորձաքրեագիտական ուղեկցումը՝ ապահովելով գիտականորեն հիմնավորված վստահելի ապացուցողական բազայով:

ՀՀ ոստիկանության կազմում ունենալով փորձաքննության այս տեսակը մենք ի զորու ենք լինելու լուծել հետևյալ կարևորագույն խնդիրները՝

- հայտնաբերել և պահպանել ապացուցողական նշանակություն ունեցող տվյալները կամ տեղեկությունները՝ հետագայում այն տրամադրելով նախաքննության մարմնին,
- հայտնաբերել քրեական գործի հարուցման հիմք հանդիսացող փաստեր,
- վերականգնել ոչնչացված տեղեկությունները՝ ինչը հնարավորություն կտա օպերատիվ կերպով /տաք հետքերով/ բացահայտել կատարված հանցագործությունները,

	- բացահայտել հանցագործության այնպիսի տեսակներ, որտեղ թվային ապացույցի առկայությունը հանդիսանում է առաջնայինը, - աջակցություն ցույց տալ ոստիկանության մի շարք ստորաբաժանումներին ապացույցների հավաքագրման և պահպանման գործում: **4. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Ոստիկանության փորձաքրեագիտական ներուժի զարգացմամբ, հատկապես տեխնիկական հագեցվածության մակարդակի բարձրացմամբ հնարավորություն կընձեռվի ապահովելու հանցագործությունների բացահայտման առավել բարձր ցուցանիշներ, ինչպես նաև կբարձրանա հանցավորության կանխարգելման աշխատանքների արդյունավետությունը: ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության առավել ծանրաբեռնված ստորաբաժանումներում հերթերը կանոնակարգող սարքավորումների տեղադրման արդյունքում կբարելավվի քաղաքացիների սպասարկման որակը:
6.	**6. Ոստիկանական կրթական միջավայրի բարելավում, Ոստիկանության տարբեր ստորաբաժանումներում մասնագիտական շարունակական վերապատրաստման կարիքների վերհանում և դրա արդյունքում վերապատրաստման մասնագիտական ծրագրերի վերանայում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառումը բխում է ՀՀ կառավարության 18.08.2021թ. N 1363-Ա որոշմամբ հաստատված 2021-2026թ. ՀՀ կառավարության ծրագրի 5.4.-րդ կետի 4-րդ պարբերությունից: Միջոցառումը պայմանավորված է Ոստիկանության բարեփոխումներով, մասնավորապես ոստիկանության ծառայողների տեսական, տակտիկական գիտելիքների ու մասնագիտական հմտությունների զարգացման, ոստիկանական ստորաբաժանումները որակապես նոր և առաջադիմական կրթական ծրագրերով վերապատրաստված կադրերով համալրելու անհրաժեշտությամբ: **2. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ոստիկանության բարեփոխումների նպատակը ժամանակակից մարտահրավերներին դիմակայող, մասնագիտացված ու տեխնիկապես հագեցած, բարեվարք և հարգանքի արժանի ոստիկանության վերափոխումն ու ժողովրդավարական իրավակարգին բնորոշ նոր ոստիկանի կերպարի ստեղծումն է: Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ նախևառաջ վերանայել ու ըստ մասնագիտական կարիքների բարեփոխել ոստիկանության ծառայողների պատրաստման ու շարունակական մասնագիտական վերապատրաստման համակարգը՝ թե՛ ծրագրերի բովանդակության, թե՛ պատրաստման մեթոդի տեսանկյունից: **3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Անհրաժեշտ է Կրթահամալիրի միջավայրը համապատասխանեցվել է նոր ոստիկանության գաղափարախոսական ուղղություններին՝ համալիրի կրթական և մյուս տարածքների ձևավորման եղանակով, վերանայել ոստիկանության ծառայողների վերապատրաստման ծրագրերը՝ ըստ ստորաբաժանումներում առկա կարիքների, վերապատրաստումներն իրականացնել կրթության ժամանակակից մեթոդների կիրառմամբ: **4. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Ոստիկանության ծառայողների տեսական, տակտիկական գիտելիքների ու մասնագիտական հմտությունների զարգացմանը միտված վերապատրաստման ծրագրերը կծառայեն որպես մասնագիտական առաջընթացի և վերարտակավորման արդյունավետ ու բալանսավորված մեխանիզմ:
7.	**7. «Զենքի մասին» նոր օրենքի ընդունում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառումը բխում է ՀՀ կառավարության 18.08.2021թ. N 1363-Ա որոշմամբ հաստատված 2021-2026թ. ՀՀ կառավարության ծրագրի 5.4-րդ և 6. 2-րդ կետերից: Նոր օրենքի նախագծի մշակման անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ 1998 թվականից «Զենքի մասին» օրենքի կիրառման ընթացքում ի հայտ են եկել բազմաթիվ օրենսդրական հակասություններ և բացթողումներ, որոնք պայմանավորված են հասարակական հարաբերությունների զարգացման ընթացքում ազգային օրենսդրության մեջ կատարված փոփոխություններով: **2. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները**

	«Զենքի մասին» գործող օրենքն ամբողջությամբ չի կարգավորում զենքի շրջանառության ընթացքում ծագող հարաբերությունները, իսկ քաղաքացիների և իրավաբանական անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանող մի շարք իրավադրույթներ ներառված են ենթաօրենսդրական ակտերում և առավել նպատակահարմար է միասնական կարգավորման նպատակով դրանք համախմբել միևնույն օրենքում: **3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Նոր օրենքի նախագծով ներկայիս հասարակական հարաբերությունների զարգացման մակարդակին համապատասխան նորովի կկանոնակարգվեն զենքի օրինական շրջանառությունը, իրավաբանական և ֆիզիկական անձանց իրավունքների ու պարտականությունների շրջանակը, զենքի արտադրության, հարդարման և նորոգման, առևտրի լիցենզավորման, ինչպես նաև զենք ձեռք բերելու, հավաքածու կազմելու, հավաքածու ցուցադրելու, զենք պահելու և օգտագործելու, պահելու և կրելու, զենք ներկրելու կամ արտահանելու, հրաձգարան գործարկելու թույլտվությունների տրամադրման ընթացակարգերը: **4. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Օրենքի նախագծի ընդունման արդյունքում կհստակեցվեն զենքի շրջանառության հետ կապված հարաբերությունները, զենքի ոլորտում լիցենզավորման և թույլտվությունների տրամադրման գործընթացները:
8.	**8. «Քաղաքացիություն չունեցող անձանց մասին» նոր օրենքի ընդունում:** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** «Ապատրիդների (քաղաքացիություն չունեցող անձանց) կարգավիճակի մասին» 1954 թվականի սեպտեմբերի 28-ի և «Ապաքաղաքացիության կրճատման մասին» 1961 թվականի օգոստոսի 30-ի ՄԱԿ-ի կոնվենցիաներն Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ են մտել դեռևս 1994 թվականին, սակայն մինչ օրս ՀՀ կողմից ստանձնած պարտավորությունները պատշաճ կերպով չեն կատարվել: Բացի այդ, Կոնվենցիաների ճշգրիտ կիրառության և ապաքաղաքացիության խնդիրների լուծման նպատակով ՄԱԿ-ի ՓԳՀ-ի նախաձեռնությամբ Ժնևում 2010 թվականին դեկտեմբերին անցկացված՝ ապաքաղաքացիության սահմանման ընթացակարգերի և քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի վերաբերյալ փորձագիտական ժողովի ամփոփ եզրահանգումների հիման վրա մշակված ապաքաղաքացիության վերաբերյալ N 2 ուղեցույցի համաձայն՝ քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակի որոշման համար պետությունը պետք է սահմանի հստակ ընթացակարգ: Հարկ է նշել, որ մինչ օրս որևէ օրենսդրական ակտով նման ընթացակարգ սահմանված չի եղել: «Քաղաքացիության մասին» և «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքները և ՀՀ կառավարության 2006 թվականի մարտի 2-ի N 318-Ն որոշումը միայն դրվագային կարգավորումներ են նախատեսում քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի որոշման և նրանց տրամադրվող փաստաթղթերի վերաբերյալ, ուստի ներկայումս կարգավիճակը որոշվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի պահանջների համաձայն: Բացի այդ, ՀՀ կառավարության 2006 թվականի մարտի 2-ի N 318-Ն որոշմամբ սահմանված կարգով քաղաքացիություն չունեցող անձին տրամադրվող կացության վկայականը ևս իր տեխնիկական պահանջներով ևս չի համապատասխանում ICAO-Ի ստանդարտներին: Միաժամանակ, 2019թ-ին փախստականների գլոբալ Ֆորումի ընթացքում Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է հանձնառություն՝ - Ուսումնասիրել, վեր հանել այն հիմնական պատճառները, որոնք հիմք են հանդիսացել վերջին տարիներին ՀՀ-ում ՔՉԱ-ների թվի կտրուկ աճի համար, գծագրել խնդիրները, ոլորտի հիմնական մարտահրավերները և դրանց լուծման վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ, իրականացնել գործուն քայլեր, - Վերանայել օրենսդրությունը՝ հիմնել իրավական անհրաժեշտ մեխանիզմներ, հիմքեր ՔՉԱ թիվը նվազեցնելու և նրանց իրավունքների իրացումը երաշխավորելու, - Ընդունել իրավական ակտ, որը կկանոնակարգի քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակի որոշման համար հստակ ընթացակարգ: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** ՀՀ ներքին գործերի նախարարության Միգրացիայի և քաղաքացիության ծառայության կազմում միավորվել են ՏԿԵՆ Միգրացիոն ծառայությունը և Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը: «Օտարերկրացիների մասին» գործող օրենքով նշված երկու կառույցների համար սահմանված են գործառույթներ, որոնք պետք է ամբողջությամբ վերանայվեն և հստակեցվեն՝ կրկնվող լիազորությունները բացառելու, աշխատանքները միասնական և համակարգված կազմակերպելու համար: Այսպես, օրինակ, հիշյալ օրենքով նախատեսված մի շարք հիմքերով օտարերկրացիներին կացության ժամանակավոր կրագավիճակի տրամադրումը վերապահված է անձնագրային և վիզաների վարչությանը, իսկ աշխատանքի հիմքով՝ Միգրացիոն ծառայությանը: Ըստ այդմ՝ տարբեր են նաև դիմումները քննարկելու, կարգավիճակները տրամադրելու ընթացակարգերը և իրականացվող վարչարարությունը: Բացի այդ, անհրաժեշտ է լրամշակել նաև անօրինական

	բնակվող անձանց արտաքսման հետ կապված դրույթները, քանի որ երկու տարբեր կառույցների համար սահմանված են տարբեր ընթացակարգային պահանջներ: Նման պայմաններում, արդեն իսկ շրջանառվող «Օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց մասին» օրենքի նախագիծն՝ օտարերկրացիների մասով հարաբերությունների կարգավորման տեսանկյունից ունի ամբողջովին նոր խմբագրությամբ շարադրելու անհրաժեշտություն, քանի որ, ինչպես արդեն նշվեց, օրենքով տարբեր մարմինների վերապահված գործառույթները, դրանց իրականացման կարգը պետք է շարադրվեն այնպես, որ բացառեն կրկնվող գործառույթները, սահմանվի մեկ միասնական վարչարարություն և պարզեցվեն ընթացակարգերը: Միաժամանակ, թվայնացման օրակարգի համատեքստում (որպիսի պահանջ սահմանված է նաև ՀՀ կառավարության 2021թ. նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման 1-ին հավելվածի 90.2 կետով) պետք է նախատեսվեն կարգավորումներ դիմումներն էլեկտրոնային եղանակով ստանալու, քննարկելու հետ կապված հարաբերություններում, ինչը ենթադրում է նաև լրացուցիչ ծրագրային ապահովում, քանի որ Միգրացիոն ծառայությունն իր մասով դիմումներն ընդունել և վարչարարությունն իրականացրել է էլեկտրոնային եղանակով, իսկ անձնագրային և վիզաների վարչությունը՝ թղթային: Բացի այդ, «Օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց մասին» օրենքի նախագիծը արդեն շրջանառվում է գրեթե 7 տարի, ինչի արդյունքում անհրաժեշտություն է առաջացել վերանայել նաև անձանց կարգավիճակի որոշման և փաստաթղթավորման հետ կապված վարչարարությունը: **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Հաշվի առնելով, որ նշված աշխատանքների կազմակերպումը կպահանջի լրացուցիչ ուսումնասիրությունների անհրաժեշտություն և տևական ժամանակ, առաջարկվում է ներկայացված նախագիծը շրջանառությունից հանել, շրջանառել միայն <Քաղաքացիություն չունեցող անձանց մասին> օրենքի նախագիծը: Միաժամանակ, հաշվի առնելով, որ այս ոլորտում առկա է միջազգային փորձի ուսումնասիրության անհրաժեշտություն, ինչն իր հերթին կարող է առաջ բերել լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավման անհրաժեշտություն, ուստի ֆինանսավորումը կիրակացնացվի դրամաշնորհային միջոցներով: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** «Ապատրիդների (քաղաքացիություն չունեցող անձանց) կարգավիճակի մասին» 1954 թվականի սեպտեմբերի 28-ի և «Ապաքաղաքացիության կրճատման մասին» 1961 թվականի օգոստոսի 30-ի ՄԱԿ-ի կոնվենցիաներով ՀՀ կողմից ստանձնած պարտավորությունները պատշաճ իրականացման ապահովում:
Միգրացիայի և քաղաքացիության ծառայություն	

9.	**Միգրացիայի կառավարման համակարգի ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացում** **9.1 ՀՀ կառավարության 2020թ. ապրիլի 23-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության բարեփոխումների ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 638-Լ որոշմանը համապատասխան Ներքին գործերի նախարարության կազմում Միգրացիայի և քաղաքացիության ծառայության ձևավորում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միգրացիոն իրավիճակի շարունակական փոփոխությունը և միգրացիոն քաղաքականության գերակայությունների վերագնահատումն արդիական են դարձնում միգրացիայի կառավարման պետական համակարգի բարեփոխումների և արդյունավետության բարձրացման խնդիրը: Նշված բացերի հաղթահարման և միգրացիայի կառավարման արդյունավետության և համապարփակության մեծացման նպատակով միգրացիայի կառավարումը նպատակահարմար է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միգրացիոն ծառայությունը ոստիկանության անձնագրերի և վիզների վարչության հետ միավորմամբ կենտրոնացնել ոլորտի քաղաքականություն մշակող մեկ կառույցի՝ Ներքին գործերի նախարարության ներքո քաղաքացիական բնույթի ծառայության ձևով՝ ինտեգրված մոտեցում ցուցաբերելով միգրացիոն շղթայի բոլոր բաղադրիչների կառավարմանը: Դա բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 2021թ.-ի օգոստոսի 26-ի № ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021-2026թթ ծրագրի 4. 2 -րդ բաժնով նախատեսված հանձնառություններից: Միջոցառման իրականացման նպատակն է Միգրացիոն ծառայության գործառույթներ իրականացնող մարմնի կարգավիճակի փոփոխությունն ու այդ գործառույթների ներառումը նոր՝ Ներքին գործերի նախարարության կազմակերպահրավական ձևում: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Հայաստանում միգրացիայի կառավարման գործառույթների իրականացումը անարդյունավետ է գնահատվում: Դահիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ միգրացիայի կառավարման էական բաղադրիչներից մեկը՝ քաղաքացիներին, օտարերկրացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց փաստաթղթավորումը և նրանց այս ոլորտում ծառայությունների մատուցումը բաշխված է տարբեր մարմինների միջև, և, ըստ այդմ, շահառու խմբերը ստիպված են լինում գործ ունենալ բազմաթիվ գերատեսչությունների հետ մեկ խնդիր լուծելու համար: Արդյունքում նվազում է միգրացիայի ոլորտի կառավարման արդյունավետությունը և ինտեգրվածությունը, բարդանում է գործողությունների համակարգումը, դանդաղում են հանրային ծառայությունների մատուցման գործընթացները, մեծանում է գործողությունների կրկնակի իրականացումը, առաջանում են տվյալների փոխանցելիության և տվյալների շտեմարանների սինխրոնացման հարցեր, ինչպես նաև անձերի և դեպքերի նույնականացման հետ կապված բարդություններ: **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները** ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միգրացիոն ծառայության և ոստիկանության անձնագրերի և վիզների վարչության միավորմամբ կձևավորվի Միգրացիայի և քաղաքացիության ծառայություն: Այս մարմնի ստեղծմամբ քաղաքացիներին, օտարերկրացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց փաստաթղթավորումը և նրանց ծառայությունների մատուցումը կկենտրոնանա մեկ մարմնում, ինչը կբարձրացնի միգրացիայի ոլորտի կառավարման արդյունավետությունը: Միջոցառման համակատարողներն են ՀՀ արդարադատության նախարարությունը, ՀՀ Ոստիկանությունը : **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը ձևավորված է: **9.2 Միգրացիայի և քաղաքացիության ծառայության առաջին կազմը ձևավորելու նպատակով Միգրացիոն ծառայության և Անձնագրային և վիզաների վարչության աշխատակիցների վերապատրաստման կազմակերպում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** ՀՀ կառավարության 2020թ. ապրիլի 23-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության բարեփոխումների ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 638 - Լ որոշմանը համապատասխան Ներքին գործերի նախարարության կազմում ձևավորվելու է Միգրացիայի և քաղաքացիության ծառայություն: ՀՀ կառավարությունը 2021թ. ապրիլի 15-ի N 586 – Ա որոշմամբ հավանություն է տվել ՀՀ ոստիկանության բարեփոխումների իրականացումն ապահովող օրենսդրական նախագծերի փաթեթին և այն ուղարկել է Ազգային ժողով: ՀՀ ՏԿԵՆ Միգրացիոն ծառայության

	և Ոստիկանության Անձնագրային և վիզաների վարչության այն աշխատակիցների համար, ովքեր հավակնում են պաշտոն զբաղեցնել Ներքին գործերի նախարարության Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունում կազմակերպվելու է վերապատրաստում: Ծառայության առաջին կազմը նշանակվելու է Միգրացիոն ծառայության և Անձագրային և վիզաների վարչության այն աշխատակիցներից ովքեր հաջողությամբ կանցնեն վերապատրաստումը: Միգրացիայի և քաղաքացիության ծառայության առաջին կազմը ձևավորելու նպատակով Միգրացիոն ծառայության և Անձնագրային և վիզաների վարչության աշխատակիցների վերապատրաստման կազմակերպումը բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 2021թ.-ի օգոստոսի 26-ի № ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021-2026թթ.. ծրագրի 4. 2 -րդ բաժնով նախատեսված հանձնառություններից: Միջոցառման իրականացման նպատակն է Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունում պաշտոն զբաղեցնելու հավակնող աշխատակիցներին տրամադրել ծառայության աշխատակիցների համար պաշտոնի անձնագրերով սահմանված ոլորտների առանձնահատկություններին համապատասխան մասնագիտական գիտելիքներ և հմտություններ, նրանց մոտ ձևավորել ընդհանուր պատկերացում Միգրացիայի և քաղաքացիության ծառայության կանոնադրությամբ ծառայությանը վերապահված գործառույթների, խնդիրների և նպատակների մասին, ինչպես նաև ապագա աշխատակիցներին ծանոթացնել քաղաքացու սպասարկման մշակույթի և հաղորդակցման հմտությունների հետ՝ մատուցվելիք ծառայությունների պատշաճ մակարդակ ապահովելու նպատակով: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը ձևավորվելու է ՀՀ ՏԿԵՆ Միգրացիոն ծառայության և Ոստիկանության Անձնագրային և վիզաների վարչության հիմքի վրա՝ երկու մարմինների կողմից իրականացվող գործառույթների համադրմամբ: Անհրաժեշտ է, որպեսզի Միգրացիոն ծառայության և Անձնագրային և վիզաների վարչության աշխատակիցները տեղյակ լինեն նոր՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության կողմից իրականացվելիք բոլոր գործառույթների, խնդիրների և նպատակների մասին: Բացի դրանից բարելավման կարիք կա քաղաքացու սպասարկման մշակույթի մակարդակում, ինչին ուղղված է լինելու վերապատրաստման որոշակի մասը: **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Վերապատրաստումը հնարավորություն կտա ձևավորվելիք Միգրացիայի և քաղաքացիության ծառայության աշխատակիցներին տիրապետել ՀՀ քաղաքացիության, օտարերկրացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց մուտքի և օրինական կացության, աշխատանքային գործունեության թույլտվության, ապաստանի տրամադրման համար անհրաժեշտ չափանիշներին, Ծառայություն դիմող անձանց խորհրդատվության տրամադրման և սպասարկման եղանակներին, քաղաքացիության պարզման, քաղաքացիություն չունեցող անձանց նկատմամբ վարույթի իրականացման, ռեադմիսիոն համաձայնագրերի շրջանակներում վերադարձվող անձանց հետընդունման կարգավորումներին և ընթացակարգերին, ինչպես նաև բարձր մակարդակ սահմանել Ծառայության կողմից մատուցվող ծառայությունների որակի, դրա վերահսկման, մատուցվող ծառայությունների որակի մոնիթորինգի իրականացման հմտությունների առումով: Ունկնդիրը կտիրապետի և կկատարելագործի Ծառայություն դիմող անձանց սպասարկման գործնական հմտությունները, ինչպես նաև աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանման պայմանների վերաբերյալ գիտելիքները: Միջոցառման համակատարողն է ՀՀ ոստիկանությունը : Անհրաժեշտ ֆինանսական միջոցները տրամադրում է Եվրոպական Միությունը՝ Միգրացիայի միջազգային կազմակերպության հայաստանյան գրասենյակի միջոցով: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միգրացիայի և քաղաքացիության ծառայության առաջին կազմը ամբողջությամբ վերապատրաստված է **9.3 Միգրացիոն ծառայությունում առկա սոցիալական ոլորտին առնչվող գործառույթների փոխանցում Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Ներկայումս Միգրացիոն ծառայությունն իրականացնում է միգրացիայի կառավարմամբ զբաղվող մարմիններին ոչ բնորոշ սոցիալական գործառույթներ՝ կապված օտարերկրացիների, փախստականների ինտեգրման և ՀՀ վերադարձող քաղաքացիների վերաինտեգրման հետ: ՀՀ կառավարության 2020թ. ապրիլի 23-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության բարեփոխումների ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 638 - Լ որոշմանը համապատասխան Ներքին գործերի նախարարության կազմում ձևավորվելու է Միգրացիայի և քաղաքացիության ծառայություն: ՀՀ կառավարությունը 2021թ. ապրիլի 15-ի N 586 – Ա որոշմամբ հավանություն է տվել ՀՀ ոստիկանության բարեփոխումների իրականացումն ապահովող օրենսդրական նախագծերի փաթեթին և այն ուղարկել է Ազգային ժողով: Միգրացիայի և քաղաքացիության նոր ծառայությանը

	սոցիալական գործառույթի վերապահումը նպատակահարմար չէ և չի տեղավորվում ծառայության գործառնական դաշտի և լուծվելիք խնդիրների շրջանակում, ուստի անհրաժեշտ է այդ գործառույթը փոխանցել ոլորտի լիազոր մարմնին՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը: Դա բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 2021թ.-ի օգոստոսի 26-ի № ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021-2026թթ.. ծրագրի 4. 2 -րդ բաժնով նախատեսված հանձնառություններից: Միջոցառման իրականացման նպատակն է բացառել պետական մարմինների կողմից իրականացվող գործառույթների կրկնությունները և այդ գործառույթները տարանջատել ըստ այդ մարմիններին վերապահված լիազորությունների շրջանակի: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս Միգրացիոն ծառայությունն իրականացնում է սոցիալական բնույթի հետևյալ գործողությունները. 1) մասնակցում է ՀՀ-ում ապաստան ստացած և փախստական ճանաչված անձանց, ինչպես նաև երկարաժամկետ իմիգրանտների՝ հասարակության մեջ ինտեգրման ռազմավարությունների մշակման և օրենսդրության կատարելագործման աշխատանքներին. 2) իրականացնում է փախստականի կարգավիճակ ստացած անձանց հասարակության մեջ ինտեգրելուն ուղղված՝ ժամանակավոր կացարանով ապահովման ծրագրերը և քաղաքացիական կողմնորոշման դասընթացները, ինչպես նաև մասնակցում է այդ անձանց՝ հայոց լեզվի ուսուցման դասընթացների կազմակերպմանը: Ինտեգրման նպատակը տվյալ անձին այս կամ այն չափով հասարակության մեջ ներառումն է, և դա ապահովելու համար անձին տարաբնույթ աջակցության տրամադրումը: Այդ իսկ պատճառով այս գործառույթը չի կարող ներառվել նոր ձևավորվելիք Միգրացիայի և քաղաքացիության ծառայության գործառույթների շրջանակում, որի հիմնական նպատակը ՀՀ մուտք գործող միգրացիոն հոսքերի կարգավորումն ու կառավարումն է լինելու: **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Համապատասխան օրենսդրական կարգավորումների ընդունումից հետո (նախանշված ՀՀ կառավարության 2021թ. ապրիլի 15-ի N 586 – Ա որոշմամբ) Միգրացիոն ծառայությունում առկա սոցիալական ոլորտին առնչվող գործառույթները Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը փոխանցումը կիրականացվի համապատասխան ենթաօրենսդրական ակտերում փոփոխություններ կատարելու ճանապարհով: Միջոցառման համակատարողն է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միգրացիոն ծառայությունում առկա սոցիալական ոլորտին առնչվող գործառույթները ամբողջական ծավալով իրականացվում են Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից
10	**Միգրացիոն գործընթացների կառավարմանն ուղղված համակարգերի թվայնացում** **10.1 Միգրացիոն գործընթացների կառավարմանն ուղղված համակարգերի թվայնացման տեխնիկական բազայի ստեղծում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միգրացիոն գործընթացների կառավարմանն ուղղված համակարգերի թվայնացումն իրականացնելու համար անհրաժեշտ պայմաններից մեկը համապատասխան տեխնիկական բազայի առկայությունն է: Այդ բազայի ստեղծումը բխում է նաև ՀՀ կառավարության 2021թ. օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 4.2 -րդ բաժնով նախատեսված հանձնառություններից: **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները** Ներկայումս միգրացիոն գործընթացների կառավարմանն ուղղված համակարգերի մեծ մասը թվայնացված չէ և համակցված չէ, այդ համակարգերի թվայնացման և համակցման համար անհրաժեշտ է ունենալ համապատասխան տեխնիկական բազա: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** «Օտարերկրացիներին ՀՀ-ում կացության և բնակության հարցերով մատուցվող ծառայությունների էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման» մշակված ծրագրի հիման վրա՝ Ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության ձևավորումից հետո կսկսվեն ծրագրից բխող օրենսդրական փոփոխությունների մշակման աշխատանքները: Այնուհետև կգնահատվեն պահանջվող տեխնիկական միջոցների տեսակները և քանակները: Կմշակվեն համակարգերի թվայանացումը և համակցումն ապահովող տեխնիկական լուծումները: Միջոցառման համակատարողներն են՝ ՀՀ ոստիկանությունը, ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը, ՀՀ արտաքին գործերի նախարարությունը, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակը:

	2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Միգրացիոն գործընթացների կառավարմանն ուղղված համակարգերի թվայնացման համար անհրաժեշտ տեխնիկական բազան առկա է:
11.	**Քաղաքացիներին, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիներին տրամադրվող ծառայությունների թվայնացում, պարզեցում և ավտոմատացում** **11.1 Քաղաքացիներին, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիներին տրամադրվող ծառայությունների ուսումնասիրության արդյունքում կատարված առաջարկների իրականացում** **1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Կառավարությունը խնդիր է դրել իրականացնել պետության և համայնքների կողմից մատուցվող ծառայությունների թվայնացում, արդիականացնել ծառայությունների համար տվյալների ռեգիստրները, այդ թվում՝ ապահովել առկա թվային ռեգիստրների փոխգործելիությունը, իսկ ոչ թվային ռեգիստրների՝ թվայնացումն ու համակցելիությունը: Այդ համատեքստին համահունչ է նաև միգրացիոն ոլորտում քաղաքացիներին, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիներին տրամադրվող ծառայությունների թվայնացման, պարզեցման և ավտոմատացման խնդրի լուծումը: Դա բխում է նաև ՀՀ կառավարության 2021թ. օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 4. 2 -րդ բաժնով նախատեսված հանձնառություններից: Միջոցառման իրականացման նպատակն է առավելագույնս պարզեցնել քաղաքացիներին, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիներին տրամադրվող ծառայությունները, այդ ծառայությունների թվայնացման և ավտոմատացման ճանապարհով: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս քաղաքացիներին, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիներին տրամադրվող շատ ծառայություններ ժամանակատար են, սինխրոնացված չեն, և շահառուներից պահանջում են տարբեր փաստաթղթերի ներկայացում: Պետական մարմինների կողմից իրականացվող վարչարարությունը նույնպես ժամանակատար է մատուցվող ծառայությունների չթվայնացվածության պատճառով: **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Կատարված է քաղաքացիներին, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիներին տրամադրվող ծառայությունների ուսումնասիրություն: Փաստաթղթում գնահատված են օտարերկրացիների՝ ՀՀ մուտք գործելու, գտնվելու և բնակվելու հետ կապված բոլոր գործընթացները (վիզաների տրամադրում, կացության կարգավիճակների տրամադրում, կացության ժամանակավոր կարգավիճակի տրամադրում աշխատանքի թույլտվության հիմքով, ապաստանի տրամադրում, ՀՀ քաղաքացիության ստացում թվայնացված լինելու/չլինելու տեսանկյունից) և առաջարկներ են ներկայացված դրանց թվայնացման վերաբերյալ: Ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության ձևավորումից հետո կմշակվեն քաղաքացիներին, այդ թվում օտարերկրյա քաղաքացիներին տրամադրվող ծառայությունների թվայնացման, պարզեցման և ավտոմատացման համար անհրաժեշտ այն գերատեսչական իրավական ակտերը որոնք փոփոխություններ են պահանջում, աշխատանքներ կտարվեն խնդրի լուծման համար անհրաժեշտ տեխնիկական բազայի ստեղծման ուղղությամբ: Միջոցառման համակատարողներն են՝ ՀՀ ոստիկանությունը, ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը, ՀՀ արտաքին գործերի նախարարությունը, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակը: Միջոցառման իրականացման համար տեխնիկական աջակցություն կտրամադրի Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի հայաստանյան գրասենյակը՝ ԵՄ ֆինանսական օժանդակությամբ: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Փոփոխություններ են կատարված համապատասխան գերատեսչական իրավական ակտերում, առկա է թվայնացման համար անհրաժեշտ տեխնիկական բազան:
12	**Օտարերկրյա քաղաքացիներին ՀՀ-ում աշխատանքի թույլտվության և կացության տրամադրման համակարգի թվայնացում և պարզեցում** **12.1 ՀՀ-ում աշխատող, այդ թվում առանց աշխատանքի թույլտվության աշխատող օտարերկրյա քաղաքացիների վերաբերյալ ամբողջական վիճակագրական տվյալների հավաքագրում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Օտարերկրացիներին աշխատանքի թույլտվության տրամադրման և օտարերկրացիների աշխատանքային պայմանագրերի հաշվառման էլեկտրոնային կառավարման համակարգի գործարկմամբ հնարավոր կլինի մշակել

	վարչական վիճակագրական տվյալների հավաքագրման և մշակման ձևաչափ (օտարերկրացի աշխատողների սեռատարիքային կառուցվածքի, կրթական և մասնագիտական մակարդակի, ինչպես նաև տնտեսության այն ճյուղերի վերաբերյալ, որտեղ նրանք առավելապես ներգրավված են), ինչն իր հերթին կարևոր հիմք կհանդիսա ինչպես միգրացիոն, այնպես էլ զբաղվածության քաղաքականության մշակման և վերանայման համար: Միաժամանակ օտարերկրացիներին աշխատանքի թույլտվության տրամադրման հետևանքով երկրում աշխատող օտարերկրացիների վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն ունենալը խիստ անհրաժեշտ է նրանց իրավունքները պաշտպանելու և շահագործումից զերծ պահելու նպատակով: Հակառակ դեպքում կարող է բարձրանալ օտարերկրացիների խոցելիության մակարդակը և նվազել պետության՝ թրաֆիքինգի և չարաշահման ենթարկված աշխատողներին հայտնաբերելու հնարավորությունը: Միջոցառման իրականացման համար հիմք է «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 4-րդ գլուխը:ՀՀ-ում աշխատող, այդ թվում՝ առանց աշխատանքի թույլտվության աշխատող օտարերկրյա քաղաքացիների վերաբերյալ ամբողջական վիճակագրական տվյալների հավաքագրումը բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 2021թ.-ի օգոստոսի 26-ի № ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021-2026թթ.. ծրագրի 4. 2 -րդ բաժնով նախատեսված հանձնառություններից: Միջոցառման իրականացման նպատակը Հայաստանում օտարերկրացիների աշխատանքային գործունեության ոլորտում համապատասխան մանրամասն վարչական վիճակագրության հավաքագրման և մշակման գործընթացների ապահովումն է: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Օտարերկրացիներին աշխատանքի թույլտվության տրամադրման ՀՀ-ում գործող ներկա կարգավորումները և դրանց հիման վրա ներդրված գործիքակազմը հնարավորություն չեն տալիս լիարժեք տեղեկատվություն հավաքել ՀՀ-ում աշխատանքի թույլտվության հիմքով աշխատող օտարերկրյա քաղաքացիների վերաբերյալ: Իսկ «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի հիմքով առանց աշխատանքի թույլտվության ՀՀ-ում աշխատող օտարերկրյա քաղաքացիների մասով վիճակագրությունն առհասարակ բացակայում է: Արդյունքում ՀՀ-ում աշխատող օտարերկրյա քաղաքացիների վերաբերյալ հավաքվող տվյալները թերի են և անբավարար ամբողջական պատկերը ստանալու տեսանկյունից: **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Օտարերկրացիներին աշխատանքի թույլտվության տրամադրման և օտարերկրացիների հետ կնքված աշխատանքային պայմանագրերի հաշվառման Էլեկտրոնային կառավարման համակարգ մուտքագրվելու են ինչպես աշխատանքի թույլտվության հիման վրա, այնպես էլ առանց աշխատանքի թույլտվության ՀՀ-ում աշխատող օտարերկրյա քաղաքացիների տվյալները, ինչը հնարավորություն է տալու ստանալ ՀՀ-ում աշխատող օտարերկրյա քաղաքացիների ամբողջական պատկերը: Միջոցառման համակատարողներն են՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, Պետական եկամուտների կոմիտեն: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Ամբողջական վիճակագրական տվյալներ են հավաքագրվում ՀՀ-ում աշխատող, այդ թվում՝ առանց աշխատանքի թույլտվության աշխատող օտարերկրյա քաղաքացիների վերաբերյալ
13.	**Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կառավարման հայեցակարգով նախատեսված՝ ինտեգրման և վերաինտեգրման խնդիրների կարգավորմանը, միգրացիոն հոսքերի կառավարմանը, հարկադիր միգրանտների զանգվածային ներհոսքի ճգնաժամային կառավարմանը, հայրենադրաձության խթանմանն ուղղված գործողությունների կատարման ապահովում** **13.1 «Միգրացիոն հոսքերի կառավարման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** ՀՀ կառավարության 2021թ.-ի մայիսի 20-ի N 801-Լ որոշման հավելված 2-ով հաստատված Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կառավարման հայեցակարգի գործողությունների ծրագրի երկրորդ կետով նախատեսվում է ՀՀ ներքին գործերի նախարարության ստեղծումից հետո ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնել «Միգրացիոն հոսքերի կառավարման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ: Միջոցառման իրականացման համար հիմք է «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածը: Դա բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 2021թ.-ի օգոստոսի 26-ի № ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021-2026թթ.. ծրագրի 4.2 -րդ բաժնով նախատեսված հանձնառություններից: Միջոցառման իրականացման նպատակը միգրացիոն հոսքերի կառավարման պետական քաղաքականության մշակումն է, որում ներառված կարգավորումները համարժեք են այս ոլորտում պետության առջև ծառացած մարտահրավերներին, մասնավորապես կապված սոցիալ-տնտեսական զարգացման, ժողովրդագրության, ազգային անվտանգության խնդիրների հետ:

	1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները ՀՀ կառավարության կողմից 2017 թվականի մարտի 23-ին ընդունված Հայաստանի Հանրապետության միգրացիայի քաղաքականության 2017-2021 ռազմավարությունը Հայաստանի միգրացիոն քաղաքականության սահմանման 4-րդ հիմնարար փաստաթուղթն է 2000 թվականից ի վեր: Այս փաստաթղթում ներառված են 8 հիմնորոշ ուղղություններ որոնք պետք է իրականացվեն 78 միջոցառումների միջոցով: Փաստաթուղթը չի անդրադառնում միգրացիոն հոսքերի կառավարման հետ կապված խմդիրներին, մինչդեռ ռազմավարության ընդունումից՝ 2017թ.-ից, հետո ի հայտ են եկել նոր իրողություններ՝ աշխուժացել են դեպի ՀՀ ուղղված իմիգրացիոն հոսքերը՝ իրենց հետ բերելով բազմաթիվ խնդիրներ, որոնց լուծումը պահանջում է պետության կողմից համապատասխան կարգավորող մեխանիզմների մշակում և ներդրում նկատի ունենալով հատկապես երկրի ազգային անվտանգությանը սպառնացող վտանգները չեզոքացնելու անհրաժեշտությունը: **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները** «Միգրացիոն հոսքերի կառավարման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակումը նախատեսվում է սկսել Ներքին գործերի նախարարության ձևավորումից հետո: Միջոցառման համակատարողներն են՝ ՀՀ ոստիկանությունը, ազգային անվտանգության ծառայությունը, արտաքին գործերի, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունները: **2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** «Միգրացիոն հոսքերի կառավարման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումն ընդունված է:
14.	**Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց ընդունման մեխանիզմների շարունակական կատարելագործում** **14.1 «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում** **1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի կիրարկման ընթացքում ի հայտ են եկել մի շարք բացեր, որոնք խոչընդոտում են Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց ընդունման և միջազգային պաշտպանության տրամադրման գործընթացի արդյունավետ կազմակերպմանը: «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակումը բխում է ՀՀ կառավարության 2021թ. օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 4.2 -րդ բաժնով նախատեսված հանձնառություններից: Միջոցառման իրականացման նպատակը Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց ընդունման իրավական հիմքերի կատարելագործումն է: Միջոցառման իրականացման համար հիմք է «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքը: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս օրենքի կարգավորումները գործնական որոշակի խնդիրներ են առաջացնում: Մասնավորապես, «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքով այն դեպքում, երբ ապաստան հայցողը չի բավարարում փախստականի սահմանմանը, սակայն նրա նկատմամբ կիրառելի է չվերադարձելիության սկզբունքը, այսինքն՝ ծագման երկիր վերադառնալու դեպքում իրական սպառնալիք կա, որ տվյալ անձը կարող է այդ երկրում ենթարկվել դաժան և անմարդկային կամ ստորացուցիչ վերաբերմունքի կամ պատժի, ներառյալ՝ խոշտանգումների, բացակայում են անձանց արդյունավետ պաշտպանության մեխանիզմները, ինչպես նաև հստակ չեն այս հարցում իրավասու մարմնի լիազորությունները: Գործնականում խնդիրներ են առաջանում նաև Ազգային անվտանգության ծառայության կողմից տրամադրվող եզրակացության առնչությամբ, ուստի անհրաժեշտ է ավելի արդյունավետ կառուցակարգ մշակել Միգրացիոն ծառայության և Ազգային անվտանգության ծառայության միջև փոխշահավետ համագործակցության ապահովման համար: Բավականին խնդրահարույց է նաև ապաստան հայցողների հատուկ կարիքների բացահայտումը հենց ապաստանի դիմում ներկայացնելու ժամանակ: Ժամանակին հատուկ կարիքների չբացահայտումը խոչընդոտներ է առաջացնում վարչական վարույթի պատշաճ իրականացման համար: Գործնականում խնդիրներ են ծագում նաև ապաստան հայցողների կամավոր վերադարձի դեպքում հարուցված վարչական վարույթի ավարտման հետ կապված: **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Միգրացիայի կառավարման կարողությունների հզորացում ի աջակցություն կառավարության՝ CEPA-ին համահունչ բարեփոխումների օրակարգի շրջանակներում՝ ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակի աջակցությամբ ստեղծվել է միջազգային պաշտպանության վերաբերյալ ՀՀ օրենսդրության վերանայման հարցերով միջգերատեսչական աշխատանքային խումբ: Խումբն ունեցել է թեմատիկ երկու հանդիպումներ, որոնց ընթացքում արձանագրվել է կատարվելիք աշխատանքների մեծ ծավալը, անհրաժեշտ է համարվել հավելյալ քննարկումներ կազմակերպել շահագրգիռ ավելի շատ կողմերի ներգրավմամբ: Օրենքի փոփոխությամբ խնդիր է դրվում

	չվերադարձնելիության սկզբունքի կիրառելիության, սակայն փախստականի կարգավիճակի տրամադրման մերժման դեպքում սահմանել ժամանակավոր պաշտպանության կարգավիճակ տրամադրելու հնարավորությունը: Օրենքով հստակեցնել Ազգային անվտանգության ծառայության լիազորությունները և վերջինիս կողմից տրամադրվող եզրակացությանը ներկայացվող պահանջները: Նախատեսվում է նաև ապաստանի հայցի ներկայացման դեպքում ապաստան հայցողների նախնական պարտադիր բուժզննման անցկացում վերջիններիս հատուկ կարիքները բացահայտելու համար: Օրենքում պետք է համակողմանի կարգավորվեն ապաստանի հայցով վարչական վարույթի կարճման և կասեցման հիմքերը, մասնավորապես ապաստան հայցողի կամավոր վերադարձի դեպքում: Անհրաժեշտ կլինի վերանայել արագացված կարգով քննվող գործերի իրավակարգավորումները, ինչը կնպաստի գործնականում արագացված ընթացակարգով արդյունավետ վարույթի իրականացմանը: Միջոցառման համակատարողներն են՝ ՀՀ ոստիկանությունը, ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը, ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակը: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի կիրարկման ընթացքում ի հայտ եկած բացերը վերացված են:
15	**Հետընդունման (ռեադմիսիայի) գործընթացների արդյունավետ կազմակերպում՝ այդ բնագավառում ստանձնած միջազգային պարտավորություններին համապատասխան** **15.1 Հետընդունման (ռեադմիսոն) համաձայնագրերի աշխարհագրության ընդլայնում և ոլորտում թվային լուծումների կիրառում** **1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** 2021 թվականի ընթացքում ստորագրվել է հետընդունման 1 համաձայագիր, 2 կիրարկումն ապահովող արձանագրություն, 2022թվականի վավերացվել է հետընդունման 1 համաձայագիր, 2 կիրարկումն ապահովող արձանագրություն: ՀՀ-ն հետընդունման (ռեադմիսիոն) համաձայնագրեր է ստորագրել Եվրոպական Միության և Ռուսաստանի Դաշնության հետ: Հետընդունման (ռեադմիսոն) համաձայնագրերի շրջանակներում ստացվող հայցերը տարեց տարի աճում են, և գործընթացի արդյունավետ կազմակերպմանը մեծապես նպաստում է Ռեադմիսիոն հայցերի էլեկտրոնային կառավարման համակարգի առկայությունը, որը շարունակական կատարելագործման կարիք ունի: Կարևոր է նաև ռեադմիսիոն համաձայնագրերի կնքումը ծագման երկրների հետ: Հետընդունման (ռեադմիսոն) համաձայնագրերի աշխարհագրության ընդլայնումը և ոլորտում թվային լուծումների կիրառումը բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 2021թ.-ի օգոստոսի 26-ի № ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021-2026թթ.. ծրագրի 4.2 -րդ բաժնով նախատեսված հանձնառություններից: Միջոցառման իրականացման նպատակը ավելի մեծ թվով, այդ թվում ծագման երկրների հետ հետընդունման (ռեադմիսիոն) համաձայնագրերի ստորագրումն է, և ստորագրված համաձայնագրերի շրջանակներում մուտքի պետությունների կողմից ներկայացված հետընդունման հայցերին պատշաճ կարգով և սահմանված ժամկետներում պատասխանելու ապահովումը: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս մի շարք պետությունների հետ հետընդունման (ռեադմիսիոն) համաձայնագրերի շուրջ քննարկումներն ավարտված են՝ տեքստերը համաձայնեցված և սպասում են ստորագրման, որոշների հետ էլ բանակցություններն ընթացքի մեջ են: ԵՄ երկրներից հայցերը ստացվում են Ռեադմիսիոն հայցերի կառավարման էլեկտրոնային համակարգի միջոցով, որի նպատակն է հետընդունման գործընթացն արագ և արդյունավետ կազմակերպումը ժամանակակից, ավտոմատացված համակարգի միջոցով: Աշխատանքների կազմակերպման արդյունավետության տեսանկյունից կարևոր է ձգտել որ մյուս պետությունները նույնպես հայցերը ներկայացնեն էլեկտրոնային համակարգի միջոցով: Միջոցառման համակատարողներն են ՀՀ ոստիկանությունը , ՀՀ արտաքին գործերի նախարարությունը, ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը: **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Բանակցություններ են վարվում այլ, այդ թվում ծագման երկրների հետ հետընդունման (ռեադմիսիոն) համաձայնագրերի ստորագրման ուղղությամբ: ՀՀ-ի հետ հետընդունման (ռեադմիսիոն) համաձայնագրեր ստորագրած մյուս պետությունների հետ նույնպես, հնարավորության դեպքում հայցերի ստացման և պատասխանների ուղարկման գործընթացը կազմակերպվում է Ռեադմիսիոն հայցերի կառավարման էլեկտրոնային համակարգի միջոցով: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Հետընդունման (ռեադմիսոն) համաձայնագրերի աշխարհագրությունն ընդլայնված է՝ այն հաշվով, որ Հայաստանը հանդես է գալիս նաև որպես հետ ուղարկող երկիր, ոլորտում կիրառվում են թվային լուծումներ:

Արտակարգ իրավիճակներ	
16.	**16.1 Սյունիքի մարզի թվով 8 սահմանամերձ բնակավայրերում քաղաքացիական պաշտպանության հենակետերի ստեղծում և համապատասխան տրանսպորտային միջոցներով ու գույք սարքավորումներով ապահովում** **16.2 Վայոց ձորի մարզի սահմանամերձ բնակավայրերում թվով 4 քաղաքացիական պաշտպանության հենակետերի ստեղծում և համապատասխան տրանսպորտային միջոցներով ու գույք սարքավորումներով ապահովում** **16.3 Տավուշի մարզի սահմանամերձ բնակավայրերում տեղակայված քաղաքացիական պաշտպանության գործող թվով 11 հենակետերում ավտոտնակների կառուցում՝ տրանսպորտային միջոցների պահպանման համար** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** 2020 թվականի ընթացքում տեղի ունեցած 44-օրյա պատերազմի հետևանքներով պայմանավորված Սյունիքի մարզի արևելյան սահմանամերձ բնակավայրերում ի հայտ են եկել նոր մարտահրավերներ: Մի շարք բնակավայրեր գտնվում են Ադրբեջանի Հանրապետության հետ սահմանագծին, որն էլ իրենից մեծ սպառնալիք է ներկայացնում: Այդ բնակավայրերի բնակչության ազդարարման, պատսպարման, տարհանման, առաջին օգնության ցուցաբերման, հավանական դիվերսիոն հետախուզական խմբերի հետ պայքարի և այլ հարցերի կազմակերպման ու իրականացման նպատակով՝ առաջարկվում է Խնձորեսկ, Շուռնուխ, Դավիթ Բեկ, Եղվարդ, Շիկահող, Ներքին Հանդ, Կոռնիձոր և Խոզնավար բնակավայրերում հիմնել ՓԾ քաղաքացիական պաշտպանության հենակետեր (ստորաբաժանումներ): Հենակետերն այդ բնակավայրերի բնակչության շրջանում կնպաստեն ապահովության ու վստահության մթնոլորտի ձևավորմանն ու ընդհանուր բարոյահոգեբանական վիճակի բարելավմանը: Նախատեսվում է նաև 2021-2026 թվականների ընթացքում Վայոց ձորի մարզի սահմանամերձ Չիվա, Խաչիկ, Բարձրունի և Խնձորուտ բնակավայրերում՝ 4 քաղաքացիական պաշտպանության հենակետերի ստեղծում, ինչպես նաև Տավուշի մարզի սահմանամերձ բնակավայրերում տեղակայված քաղաքացիական պաշտպանության գործող 11 հենակետերում ավտոտնակների կառուցում տրանսպորտային միջոցների պահպանման համար: Միջոցառման հիմք է հանդիսանում «Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ և 6-րդ հոդվածի «ը» ենթակետերը, ինչպես նաև «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ ենթակետը: Քաղաքացիական պաշտպանության ուժերի հավաքական կենտրոնի նշված հենակետերը ստեղծվում են հետևյալ գործառույթների իրականացման նպատակով՝ 1) քաղաքացիական պաշտպանության հետախուզության անցկացում՝ քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմի կողմից հիմնավորված որոշումներ ընդունելու համար. 2) բնակչության, քաղաքացիական պաշտպանության ուժերի լրիվ սանիտարական մշակում, վարակված հագուստի և կոշիկների վարակազերծում. 3) ճառագայթային և քիմիական վարակված տեխնիկայի հատուկ մշակման անցկացում. 4) բնակչության (այդ թվում պատսպարված) և քաղաքացիական պաշտպանության ուժերի անձնակազմի դոզիմետրիկ հսկողության իրականացում. 5) ականապատ տարածքների հայտնաբերում, արգելանշանների տեղադրում (ականազերծման միջոցառումների իրականացում) և տարածքի հսկողության կազմակերպում. 6) ջրաղբյուրների հայտնաբերում, ջրհանման և մաքրման, հորատման աշխատանքների կատարում. 7) ավերված, խարխլված և այրվող շինություններից, փլատակներից տուժածների որոնում, հայտնաբերում, հանման և տեղափոխման կազմակերպում ու իրականացում. 8) վթարների և խոցման օջախներում տուժածներին առաջին բժշկական օգնության ցուցաբերում. 9) բնակչության տարհանման միջոցառումների աջակցում, այդ թվում՝ ճառագայթային աղտոտման և քիմիական ու կենսաբանական վարակված գոտիներից. 10) պարենակապահակային ծառայության կազմակերպում ու իրականացում. 11) մասնակցություն՝ ՀՀ Զինված ուժերի զորամասերի հետ հակառակորդի կողմից ներթափանցած հետախուզական խմբերի հայտնաբերման, շրջափակման և վնասազերծման գործողություններին. 12) պաշտպանիչ մատույցների և դիրքերի կառուցման աշխատանքների կատարում: Ներկայումս՝ ՓԾ ՔՊ վարչության քաղաքացիական պաշտպանության ուժերի հավաքական կենտրոնի բազայի վրա ստեղծված են 2 ջոկատների 12 հենակետեր (Տավուշի ջոկատ՝ Ազատամուտ, Չինարի, Ն.Կամիրաղբյուր, Այգեպար, Մովսես, Պառավաքար, Չորաթան: Նոյեմբերյանի ջոկատ՝ Ոսկեվան, Սարիգյուղ, Բերդավան, Կոթի, Դովեղ): Գործող հենակետերին գրանցված տրանսպորտային միջոցները (բացառությամբ Տավուշի ջոկատի Մովսեսի հենակետի) համապատասխան ավտոտնակներ չունենալու պատճառով, կանգնած են բացօթյա վիճակում, ինչը ձմեռային ժամանակաշրջանում տրանսպորտային միջոցների շահագործման համար առաջացնում է խնդիրներ: **Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ**

Միջոցառումները բխում են ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության ծրագրից: Դրույթը ներառված է ծրագրի «1. Անվտանգություն և արտաքին քաղաքականություն» գլխի «1.3 Պաշտպանության ոլորտ. Զինված ուժերի բարեփոխումներ» բաժնում.
«Կառավարությունը բարձրացնելու է ռազմավարական նշանակության օբյեկտների ու ենթակառուցվածքների անվտանգության մակարդակը»:
Միջոցառումը բխում է նաև Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050 «02. Պաշտպանված Հայաստան» մեգանպատակից: Որպես թիրախային արդյունք ունենալու ենք «2.4 Բնածին, տեխնածին և մարդածին աղետներին դիմակայելու պատրաստվածության բարձրագույն մակարդակ»՝ ըստ «2.4.3 Համայնքների, ենթակառուցվածքների և շենք-շինությունների անվտանգության և բնակչության դիմակայունության մակարդակ» (գնահատված մասնագիտական ցուցանիշներ)-ի:

1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները

Ներկայումս՝ ՓԾ ՔՊ վարչության քաղաքացիական պաշտպանության ուժերի հավաքական կենտրոնի բազայի վրա ստեղծված են 2 ջոկատների 12 հենակետեր (Տավուշի ջոկատ՝ Ազատամուտ, Չինարի, Ն.Կամիրաղբյուր, Այգեպար, Մովսես, Պառավաքար, Չորաթան: Նոյեմբերյանի ջոկատ՝ Ոսկեվան, Սարիգյուղ, Բերդավան, Կոթի, Դովեղ):
2020 թվականի ընթացքում տեղի ունեցած 44-օրյա պատերազմի հետևանքներով պայմանավորված, ինչպես նաև հաշվի առնելով մարզերի ֆիզիկաաշխարհագրական դիրքերը, Սյունիքի և Վայոց ձորի մարզերի տեղանքի բացարձակ բարձրությունների զգալի տարբերություններով, ձմռան ամիսներին դժվարանցանելի, իսկ երբեմն էլ՝ անանցանելի են դառնում գյուղական բնակավայրեր տանող ճանապարհները:
Ամռան չոր և շոգ եղանակային պայմաններում Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Սյունիքի և Վայոց ձորի մարզային փրկարարական վարչությունների գրեթե բոլոր ստորաբաժանումներն աշխատում են գերբեռնվածությամբ, մի դեպքի վայրից մյուս դեպքի վայր մեկնում են անցնելով տասնյակ կիլոմետրեր, երբեմն էլ արձագանքում են մի քանի դեպքերի՝ զգալի ուշացումներով: Մարզում կան գյուղական բնակավայրեր, որոնք, ըստ սահմանված չվացուցակի, գտնվում են սպասարկվող հրշեջ-փրկարարական ջոկատներից (այսուհետ՝ ՀՓՋ) մինչև 48 կմ հեռավորության վրա և ՀՓՋ մարտական հաշվարկները, հատկապես սահմանամերձ բնակավայրերում ծագած արտակարգ իրավիճակների դեպքերում, պատերազմական իրավիճակում սպասարկման համար ոլորաններով անցնելիս դեպքի վայր են հասնում 50-60 րոպե հետո:
2021-2026 թվականների ընթացքում, նախատեսվում է Սյունիքի մարզում ստեղծել 8 քաղաքացիական պաշտպանության հենակետեր՝ Խնձորեսկ, Շուռնուխ, Դավիթ Բեկ, Եղվարդ, Շիկահող, Ներքին Հանդ, Կոռնիձոր և Խոզնավար բնակավայրերում (յուրաքանչյուրը՝ 26 հաստիք), Վայոց ձորի մարզում ստեղծել 4 քաղաքացիական պաշտպանության հենակետեր՝ Չիվա, Խաչիկ, Բարձրունի և Խնձորուտ բնակավայրերում:
Ներկայումս՝ ՓԾ ՔՊ վարչության քաղաքացիական պաշտպանության ուժերի հավաքական կենտրոնի բազայի վրա ստեղծված են 2 ջոկատների 12 հենակետեր (Տավուշի ջոկատ՝ Ազատամուտ, Չինարի, Ն.Կամիրաղբյուր, Այգեպար, Մովսես, Պառավաքար, Չորաթան: Նոյեմբերյանի ջոկատ՝ Ոսկեվան, Սարիգյուղ, Բերդավան, Կոթի, Դովեղ): Գործող հենակետերին գրանցված տրանսպորտային միջոցները (բացառությամբ Տավուշի ջոկատի Մովսեսի հենակետի) համապատասխան ավտոտնակներ չունենալու պատճառով, կանգնած են բացօթյա վիճակում, ինչը ձմեռային ժամանակաշրջանում տրանսպորտային միջոցների շահագործման համար առաջացնում է խնդիրներ: Մասնավորապես հրշեջ ավտոմեքենաների ջրաբաքերում ջրի սառելուց և դրա հետևանքով հրշեջ մեքենայի՝ մարտական վիճակից դուրս գալու խնդիրներից խուսափելու նպատակով 2024-2026 թթ. ընթացքում նախատեսվում է գործող քաղաքացիական պաշտպանության հենակետերում (բացառությամբ Տավուշի ջոկատի Մովսեսի հենակետի) ստեղծել 11 ավտոտնակներ:

1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Նախատեսվում է քաղաքացիական պաշտպանության հենակետերը ստեղծել Արտակարգ իրավիճակների նախարարությանը համապատասխան քանակությամբ հաստիքների տրամադրման դեպքում: Նոր, Սյունիքի և Վայոց ձորի մարզերում նախատեսվող 12 հենակետերի ստեղծման համար անհրաժեշտ են 312 փրկարար ծառայողի հաստիքներ (յուրաքանչյուրը 1 սպայական, 4 ենթասպայական, 20 շարքային-սերժանտական հաստիքներից և 1 տեխնիկական ապասարկող): Սյունիքի և Վայոց ձորի մարզերի սահմանամերձ բնակավայրերում 12 նոր հենակետերին անհրաժեշտ հաստիքներով ապահովման, ինչպես նաև հրշեջ-փրկարարական մեքենաների, փրկարարական գույքի, կապի միջոցների և բարձր անցանելիության ավտոմեքենաների ձեռքբերման համար կպահանջվի մոտ 1, 289 մլրդ դրամ (անձնակազմի համար մոտ 44,5 մլն դրամ, տրանսպորտային միջոցների և գույք-սարքավորումների համար մոտ 62,996 մլն դրամ), Տավուշի մարզի 11 հենակետերում ավտոկայանատեղիների կառուցման համար կպահանջվի մոտ 110 մլն դրամ:
Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, Սյունիքի և Վայոց ձորի մարզպետարանները, համայնքապետարանները իրենց լիազորությունների շրջանակներում պետք է աջակցություն

	ցուցաբերեն միջոցառումների իրականացմանը: Մասնավորապես՝ ստեղծեն իրենց մարզերում, համայնքներում քաղաքացիական պաշտպանության ուժեր, իրականացնեն համայնքի բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարհանումը, բնակչության պատսպարումը և անհատական պաշտպանության միջոցներով ապահովումը, ռազմավարական նշանակության օբյեկտների և ենթակառուցվածքների անվտանգության ապահովումը: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Սահմանամերձ բնակավայրերում քաղաքացիական պաշտպանության հենակետերի ստեղծումը հնարավորություն կտա ապահովել նշված բնակավայրերի բնակչության, կարևորագույն օբյեկտների և ենթակառուցվածքների պաշտպանությունը, սահմանամերձ համայնքներում փրկարարական և հրդեհաշիջման աշխատանքների իրականացումը: Միջոցառումը նախատեսվում է իրականացնել 2024-2026 թվականների ընթացքում՝ անհրաժեշտ ֆինանսական միջոցները ներառելով ՀՀ 2024-2026 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրում ըստ յուրաքանչյուր տարվա նախահաշվի: Ստույգ հաշվարկները կներկայացվեն համապատասխան հայտերով՝ ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
17.	**17.1 ՌՀՄԱԿ արձագանքող ուժերի բաղկացուցիչը կազմող ՓԾ ուժերի գույքի բարելավում (հատուկ տեխնիկայի և սարքավորումների տրամադրում): Կադրերի վերապատրաստում (որակավորման բարձրացում):** **3. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ, ՌԴ և երրորդ երկրների տարածքում ծագած արտակարգ իրավիճակների արձագանքման նպատակով ՀՀ և ՌԴ կառավարությունների կողմից ստորագրված համաձայնագրով ստեղծված «Ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոն» միջկառավարական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ՌՀՄԱԿ կամ Կենտրոն) շարունակական զարգացման անհրաժեշտությամբ և նպատակ ունի ժամանակակից տեխնիկայով հագեցման և հրշեջ-փրկարարների մասնագիտական գիտելիքների և գործնական հմտությունների կատարելագործման միջոցով բարձրացնել արտակարգ իրավիճակների դեպքում բնակչության պաշտպանվածության մակարդակը: **Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ** Միջոցառումները բխում են ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության ծրագրից: Դրույթը ներառված է ծրագրի «1. Անվտանգություն և արտաքին քաղաքականություն» գլխի «Աղետներին դիմակայունության բարձրացումը» վերնագրում՝ «Անվտանգության ապահովման հիմնական գործոններից է լինելու աղետների ռիսկի կառավարման ճկուն ու գործուն համակարգը, որի ներդրման շնորհիվ կունենանք պաշտպանված բնակչություն, տնտեսություն, տարածքներ, ենթակառուցվածքներ, մշակութային ու բնապահպանական օբյեկտներ» և «1.1 Արտաքին քաղաքականություն» բաժնում. «• Հայաստան-Ռուսաստան երկկողմ համագործակցության օրակարգի բոլոր ուղղություններով, ներառյալ ռազմաքաղաքական, տնտեսական, էներգետիկ, տրանսպորտային, հումանիտար, մշակութային ոլորտները, Հայաստանը շարունակելու է ամրապնդել և ընդլայնել Ռուսաստանի հետ դաշնակցային հարաբերություններն ու ռազմավարական գործընկերությունը» Միջոցառումը բխում է նաև Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050 «02. Պաշտպանված Հայաստան» մեգանպատակից: Որպես թիրախային արդյունք ունենալու ենք «2.4 Բնածին, տեխնածին և մարդածին աղետներին դիմակայելու պատրաստվածության բարձրագույն մակարդակ»՝ ըստ «2.4.3 Համայնքների, ենթակառուցվածքների և շենք-շինությունների անվտանգության և բնակչության դիմակայունության մակարդակ»-ի (գնահատված մասնագիտական ցուցանիշներ)-ի և ըստ «2.4.2 Տեխնածին և մարդածին աղետների հետևանքով քաղաքացիական զոհերի թիվը» (ՀՀ քաղաքացիների ընդհանուր թվից, ինդեքսավորված ցուցանիշ)-ի: **3.1 Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները** Ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնն ստեղծվել է ՌԴ և ՀՀ մասնային վճարների հիման վրա: Այն իր մեջ ներառում է ՀՀ և ՌԴ բյուջետային միջոցները, ինչպես նաև կողմերի պետությունների կողմից օգտագործման իրավունքով Կենտրոնին տրամադրված շարժական և անշարժ գույքը: Ըստ համաձայնագրի հայկական կողմը տրամադրել է համապատասխան տարածք, շենքեր, շինություններ, իրականացնում է Կենտրոնի սպասարկման և պահպանման ծախսերը: Ռուսական կողմը տրամադրում է արտակարգ իրավիճակների արձագանքման համար անհրաժեշտ հրշեջ-փրկարարական տեխնիկա, սարքավորումներ, գործիքներ և գույք: Ռուսական կողմը 2017թ. ձեռք է բերել ավելի, քան 16 մլն դոլար ընդհանուր արժեքով 42 անվանում հրշեջ և փրկարարական տեխնիկա, սարքավորումներ, գործիքներ տարբեր նշանակության գույք: 42 անվանումից 37 անվանում գույքը փոխանցվել է ԱԻՆ ստորաբաժանումներին: Կենտրոնի զարգացման գործընթացը կրում է շարունակական բնույթ: 2021թ. ՌՀՄԱԿ և նրա արձագանքող բաղկացուցիչը կազմող ՀՀ ԱԻՆ ստորաբաժնումների վերազինման նպատակով, ՀՀ ԱԻՆ մասնակցությամբ կազմվել և ՌԴ ԱԻՆ է ներկայացվել Կենտրոնի զարգացման 2022-2024 թթ. պլանը: Պլանում Հրշեջ-փրկարարական տեխնիկայի, սաքավորումների հետ միասին նախատեսվել են նաև մասնագետների պատրաստման որակի բարելավման նպատակով կառուցվելիք անգարատիպ բազմաֆունկցիոնալ վարժահամալիրի կահավորման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներ,

	սարքավորումներ, գույք, կենցաղային պարագաներ և այլն: Արդեն 2022թ.-ից սպասվում է նշված ապրանքների ձեռք բերումը և ներկրումը Հայաստան: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Առկա խնդիրների լուծման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները. - ՌՀՄԱԿ տարածքում փրկարարների ուսումնական գործընթացը կազմակերպելու համար անհրաժեշտ է կառուցել բազմաֆունկցիոնալ ուսումնավարժական համալիր, որը հնարավորություն կտա ՌԴ ԱԻՆ ԲՈՒՀ-երի ուժերով իրականացվող ուսուցման և վերապատրաստման գործընթացում ներգրավել ավելի մեծ թվով մասնագետներ, Covid 19-ի պայմաններում առավելագույնս կրճատել ուսումնական գործուղումները ՌԴ, ինչպես նաև կազմակերպել ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի ուսանողների և վերապատրաստվողների տեսական և գործնական պարապմունքները: Ակտիվացնել համագործակցությունը Կարմիր Խաչի միջազգային կոմիտեի և Հայկական Կարմիր Խաչի ընկերության (դասընթացներ Առաջին օգնության և արդի միջազգային իրավական կարգավորումների վերաբերյալ), Քաղաքացիական պաշտպանության միջազգային կազմակերպության (տարածաշրջանային ուսումնական կենտրոնի ստեղծման ուղղությամբ) հետ: Ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնի 27.05.2021թ. Վարչության նիստի N 3 արձանագրության 4-րդ կետի կատարումն ապահովելու նպատակով Փոխվարչապետ Մհեր Գրիգորյանից գրություն է ուղղվել ՌԴ կառավարության նախագահի տեղակալ Ա. Լ. Օվերչուկին՝ կենտրոնի զարգացման ուղղությամբ համագործակցության վերաբերյալ, համագործակցության մեջ ներառվում է նաև անգարի կառուցումը: **4. Միջոցառումների իրականացումից ակնկալվող արդյունքը** Առկա խնդիրների լուծման դեպքում հայկական կողմը կատարած կլինի ՌԴ և ՀՀ կառավարությունների կողմից ստորագրված միջկառավարական համաձայնագրով ստանձնած իր պարտականությունները: ՀՀ ԱԻ նախարարությունը կունենա բարձրակարգ փրկարարներով համալրված, արտակարգ իրավիճակների արձագանքմանը պատրաստ ստորաբաժանումներ:
18.	**18.1 Ազգային մոնիթորինգային դիտացանցի արդիականացում և ընդլայնում նոր GPS կայաններով:** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Հայաստանը գտնվում է սեյսմավտանգ գոտում և համարվում է տարածաշրջանի ամենավտանգավոր և բարձր սեյսմիկ ռիսկով բնութագրվող տարածքներից մեկը: Պարբերաբար տեղի է ունենում ուժեղ և ավերիչ երկրաշարժեր: Նախապատրաստվելով հնարավոր ուժեղ երկրաշարժի, կարելի է արմատապես նվազեցնել նրա ծանր հետևանքները: Դրանցից պաշտպանվելու լավագույն միջոցը սեյսմիկ վտանգի հուսալի մոնիթորինգի ապահովումն է, որն էլ Հայաստանի սեյսմիկ անվտանգության կարևորագույն հիմնախնդիրներից է (2002թ. հուլիսի 6-ի «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՕ-376-Ն ՀՀ օրենք, հոդվածներ՝ 5, 20): **Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ** Միջոցառումը նախատեսված է իրականացնել Ֆրանսիայի ատոմային և այլընտրանքային էներգիայի կոմիսարիատի (CEA) Շրջակա միջավայրի վերահսկողության և վերլուծության դեպարտամենտի (DASE) հետ համագործակցությամբ: Միջոցառումը բխում է ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության ծրագրից: Դրույթը ներառված է ծրագրի «1. Անվտանգություն և արտաքին քաղաքականություն» գլխի «1.1 Արտաքին քաղաքականություն» բաժնում. «•Կառավարությունը շարունակելու է ամրապնդել Ֆրանսիայի Հանրապետության հետ առանձնաշնորհյալ հարաբերությունները՝ ելնելով նաև Ֆրանսիայի ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրի կարգավիճակից: Քաղաքական ոլորտում առկա գործակցությանը զուգահեռ հստակ քայլեր են իրականացվելու Ֆրանսիայի հետ տնտեսական հարաբերությունների խորացման համար:»: «1. Անվտանգություն և արտաքին քաղաքականություն» գլխի «Աղետներին դիմակայունության բարձրացումը» վերնագրում՝ «Անվտանգության ապահովման հիմնական գործոններից է լինելու աղետների ռիսկի կառավարման ճկուն ու գործուն համակարգը, որի ներդրման շնորհիվ կունենանք պաշտպանված բնակչություն, տնտեսություն, տարածքներ, ենթակառուցվածքներ, մշակութային ու բնապահպանական օբյեկտներ: Կատարելով ներդրումներ աղետների ռիսկի կառավարման ոլորտում՝ Կառավարությունն ուղղակի կանխարգելելու և ազդելու է աղետների առաջացման պատճառների վրա՝ խուսափելով հետևանքների վերացման համար պահանջվող անհամեմատ ավելի մեծ ծախսերից»: Միջոցառումը բխում է նաև Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050 «02. Պաշտպանված Հայաստան» մեգանպատակից: Որպես թիրախային արդյունք ունենալու ենք «2.4 Բնածին, տեխնածին և մարդածին աղետներին դիմակայելու պատրաստվածության բարձրագույն մակարդակ»՝ ըստ «2.4.3 Համայնքների, ենթակառուցվածքների և շենք-շինությունների անվտանգության և բնակչության դիմակայունության մակարդակ» (գնահատված մասնագիտական ցուցանիշներ)-ի: **2.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները** Այսօր մոնիթորինգի ապահովման հրատապ խնդիրներից է երկրաֆիզիկական բլոկի կայանների սարքերի փոխարինումը ժամանակակից սարքավորումներով, հիդրոերկրաքիմիական կայանների արդիականացումը,

	«ՍՊՏԾ» ՊՈԱԿ-ի հիդրոերկրաքիմիական լաբորատորիայի վերազինումը ժամանակակից սարքերով ու սարքավորումներով և ցանցի ընդլայնումը՝ GPS նորագույն սարքերով: Ներկա դրությամբ ազգային դիտացանցում գործում է 2 GPS կայան, նախատեսվում է ավելացնել ևս 4 GPS կայան: Արդիականացված ցանցերից և կապի ժամանակակից միջոցներով ստացվող տվյալները հանդիսանում են կարևոր բաղադրիչներ՝ օպերատիվ և հուսալի ընթացիկ սեյսմիկ վտանգի գնահատման համար: **2.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Գործող կայանների վերազինումը նոր սարքավորումներով կնպաստի միջազգային ստանդարտներին համապատասխան դիտացանց ստեղծելուն: Հարկ է նշել, որ Ազգային սեյսմիկ մոնիթորինգի դիտացանցի մի շարք դիտակետերում (օրինակ՝ հիդրոերկրադինամիկական, սեյսմիկ, գրունտի ուժեղ շարժումների և այլն) սարքերը և սարքավորումներն արդեն արդիականացվել են միջազգային գործընկեր կազմակերպությունների աջակցությամբ: **3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Խնդրի իրականացումն զգալիորեն կբարձրացնի սեյսմիկ վտանգի մոնիթորինգի մակարդակը Հայաստանում և կնպաստի սեյսմիկ վտանգի գնահատման հուսալիության բարձրացմանը:
19.	**19.1 Հայաստանի Հանրապետության պետական հատուկ նշանակության թվով 24 ջրամբարների պատվարների սեյսմիկ խոցելիության գնահատում ըստ պլան-ժամանակացույցի: Առաջարկությունների ներկայացում ըստ փորձագիտական եզրակացության:** **1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը** Ծրագրի ընդունմամբ կսահմանվի սեյսմիկ պաշտպանության հատուկ նշանակության օբյեկտի՝ ջրամբարների պատվարների սեյսմիկ խոցելիության գնահատման մոտեցումները և առաջնահերթությունները: (2002 թ. հուլիսի 6-ի «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՕ-376-Ն ՀՀ օրենք, հոդվածներ՝ 8, 9, 10): Միջոցառման իրականացման իրավական հիմքերն են «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ օրենք, 8-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, հոդված 12-ի 1-ին մասի 2-րդ կետը, 23-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը: Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ Միջոցառումը բխում է ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության ծրագրից: Դրույթը ներառված է ծրագրի «3. Ենթակառուցվածքների զարգացում» գլխի «3.3 Ջրային տնտեսություն» բաժնում.«• Ջրամբարների կառուցման հետ մեկտեղ իրականացվելու է պետական հատուկ նշանակության առկա ջրամբարների պատվարների սեյսմիկ խոցելիության գնահատում՝ դրանք անվտանգ ու կիրառելի դարձնելու նպատակով»: Միջոցառումը բխում է նաև Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050 «02. Պաշտպանված Հայաստան» մեգանպատակից: Որպես թիրախային արդյունք ունենալու ենք «2.4 Բնածին, տեխնածին և մարդածին աղետներին դիմակայելու պատրաստվածության բարձրագույն մակարդակ»՝ ըստ «2.4.3 Համայնքների, ենթակառուցվածքների և շենք-շինությունների անվտանգության և բնակչության դիմակայունության մակարդակ» (գնահատված մասնագիտական ցուցանիշներ)-ի: **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Սեյսմիկ խոցելիության մակարդակի գնահատում հատուկ նշանակության ջրամբարների համար չի իրականացվել և սեյսմիկ ռիսկի նվազեցումը պահանջում է գոյություն ունեցող ջրամբարների պատվարների մանրակրկիտ հետազննում՝ դրանց հետագա շահագործումն անվտանգ դարձնելու նպատակով: ՀՀ կառավարության 2021թ. նոյեմբերի 18-ի «ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ որոշմամբ Արտակարգ իրավիճակների նախարարության բաժնի 6.2 ենթակետը նախատեսվում էր իրականացնել 4 տարում՝ 2023-2026 թվականների ընթացքում՝ տարեկան 6 ջրամբարի հետազննում: Սակայն 2023 թվականին այն չֆինանսավորվելու պատճառով 2022 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-L որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 2117-L որոշմամբ միջոցառման իրականացումը տեղափոխվեց 2024-2026 թվականներ՝ տարեկան 8 ջրամբարի հետազննում: 2024 թվականին միջոցառումը ներառված է եղել Արտակարգ իրավիճակների նախարարության 2024-2026 թվականների Միջնաժամկետ ծախսային ծրագրում, սակայն ֆինանսավորում չի հատկացվել: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Ծրագրի ընդունումը հնարավորություն կտա իրականացնելու պետական հատուկ նշանակության ջրամբարների պատվարների սեյսմիկ խոցելիության մակարդակի գնահատման համակարգված աշխատանքներ: Առաջարկություններ ներկայացնել պետական շահագրգիռ մարմիններին՝ դրանց հետագա շահագործումը անվտանգ դարձնելու նպատակով: Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ համագործակցությամբ ձեռք կբերվեն պետական հատուկ նշանակության ջրամբարների պատվարների անհրաժեշտ տեխնիկական բնութագրերը: Միջոցառումը նախատեսվում է իրականացնել 2025-2026 թվականների ընթացքում՝ տարեկան 12 ջրամբարի հետազննում:

	2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Ծրագրի իրականացումը հնարավորություն կտա զգալիորեն բարձրացնել ջրամբարների պատվարների սեյսմիկ պաշտպանվածության մակարդակը, առաջարկների հիման վրա անհրաժեշտության դեպքում ապահովել դրանց ամրացման աշխատանքների իրականացումը:
20.	**20.1 Քաղաքացիական պաշտպանության համակարգի ղեկավար կազմի և մասնագետների վերապատրաստման ծրագրերի մշակում և ներդրում** **2. Միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Արտակարգ իրավիճակների և ռազմական դրության ժամանակ բնակչության վարքականոնների վերաբերյալ գիտելիքների, հմտությունների ձևավորումը, այդ թվում՝ առաջին օգնության հմտություններին տիրապետելը: Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության հարցերով բնակչության իրազեկվածության և կրթվածության մակարդակի բարձրացումը բխում է «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 4-րդ և 20-րդ հոդվածների, «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ և 11-րդ հոդվածների, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից հաստատված մի շարք որոշումների պահանջներից: **Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ** Միջոցառումը բխում է ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության ծրագրից: Դրույթը ներառված է ծրագրի «1. Անվտանգություն և արտաքին քաղաքականություն» գլխի «Աղետներին դիմակայունության բարձրացումը.» բաժնում. «Աղետներին դիմակայելու տեսանկյունից բնակչության իրազեկվածության և պատրաստվածության մակարդակի բարձրացման նպատակով կրթական համակարգում պարբերաբար մշակվելու, թարմացվելու և ներդրվելու են աղետների ռիսկի կառավարման և բնակչության պաշտպանության հարցերով կրթական ծրագրեր»: Միջոցառումը բխում է նաև Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050 «02. Պաշտպանված Հայաստան» մեգանպատակից: Որպես թիրախային արդյունք ունենալու ենք «2.4 Բնածին, տեխնածին և մարդածին աղետներին դիմակայելու պատրաստվածության բարձրագույն մակարդակ»՝ ըստ «2.4.3 Համայնքների, ենթակառուցվածքների և շենք-շինությունների անվտանգության և բնակչության դիմակայունության մակարդակ» (գնահատված մասնագիտական ցուցանիշներ)-ի և ըստ «2.4.2 Տեխնածին և մարդածին աղետների հետևանքով քաղաքացիական զոհերի թիվը» (ՀՀ քաղաքացիների ընդհանուր թվից, ինդեքսավորված ցուցանիշ)-ի: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները** Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությանն սպառնում են բազմաբնույթ՝ բնածին, տեխնածին, սոցիածին և այլ վտանգներ, ուստի վերոգրյալ խնդիրը խիստ արդիական է, քանի որ դրանց հետևանքով առաջացած իրավիճակներից և ռազմական գործողություններից կարող են լինել տարաբնույթ կորուստներ (մարդկային, տնտեսական, նյութական, մշակութային և այլն): **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների վերապատրաստված ղեկավար կազմի ձևավորված անհրաժեշտ հմտությունները, վարքականոնների վերաբերյալ գիտելիքները, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում պատրաստվածության վերաբերյալ գիտելիքների առկայությունը կապահովի իրազեկվածության և անվտանգության մշակույթի ձևավորման և զարգացման համապատասխան մակարդակ: Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը պետք է աջակցի պաշտպանական կառույցների ղեկավար կազմի և մասնագետների վերապատրաստման ծրագրերի ներդրման հարցում: **2. Միջոցառումների իրականացումից ակնկալվող արդյունքը՝** Միջոցառումից ակնկալվող արդյունքը՝ արտակարգ իրավիճակներում և ռազմական գործողությունների ժամանակ անհրաժեշտ վարքի կանոններ և պահելաձև ձևավորած պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների ղեկավար կազմ:
21.	**21.1 Լուսակերտի ուսումնական բազայում վարժահրապարակի կառուցում (հրշեջ-կիրառական մարզաձևի համալիր, գազածխապաշտպան մոդուլ, մոտ 2x6մ չափսի ալպինիստական պատ, 3 դասասենյակ)** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Վարժահրապարակի կառուցումն անհրաժեշտ է փրկարարական ծառայողների վերապատրաստման գործընթացն ավելի արդյունավետ դարձնելու համար: **Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ**

	Միջոցառումը բխում է ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության ծրագրից: Դրույթը ներառված է ծրագրի «1. Անվտանգություն և արտաքին քաղաքականություն» գլխի «Աղետներին դիմակայունության բարձրացումը.» բաժնում. «Աղետներին դիմակայելու տեսանկյունից բնակչության իրազեկվածության և պատրաստվածության մակարդակի բարձրացման նպատակով կրթական համակարգում պարբերաբար մշակվելու, թարմացվելու և ներդրվելու են աղետների ռիսկի կառավարման և բնակչության պաշտպանության հարցերով կրթական ծրագրեր»: Միջոցառումը բխում է նաև Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050 «02. Պաշտպանված Հայաստան» մեգանպատակից: Որպես թիրախային արդյունք ունենալու ենք «2.4 Բնածին, տեխնածին և մարդածին աղետներին դիմակայելու պատրաստվածության բարձրագույն մակարդակ»՝ ըստ «2.4.3 Համայնքների, ենթակառուցվածքների և շենք-շինությունների անվտանգության և բնակչության դիմակայունության մակարդակ» (ըստ մասնագիտական գնահատականի)-ի: ***1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները*** Ներկայումս Փրկարար ծառայության ստորաբաժանումները չունեն վարժահրապարակ վերապատրաստման դասընթացների գործնական պարապմունքներ անցկացնելու համար և գործնական պարապմունքներն իրականացնում են վարձակալության հիմունքներով վարձակալած շինությունում: Հրշեջ կիրառական մարզաձևի մրցումներ չեն անցկացվում, պատանի հրշեջ-փրկարարների հանրապետական առաջնությունները և միջազգային մրցաշարերին մասնակցող պատանի հրշեջ-փրկարարական թիմերի նախապատրաստում անցկացվում են ոչ լիարժեք: Ներքին գործերի նախարարության ձևավորումից հետո վարժահրապարակին ներկայացվող պահանջները կընդլայնվեն՝ չափերի և տեխնիկական հնարավորությունների առումով: ***1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները*** Լուսակերտի ուսումնական բազայում կառուցել վարժահրապարակ, հրշեջ-կիրառական մարզաձևի համալիր, գազաձխապաշտպան մոդուլ, մոտ 2x6մ չափսի ալպինիստական պատ, 3 դասասենյակ: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Վարժահրապարակի կառուցման արդյունքում կստեղծվեն պայմաններ հրշեջ-փրկարարների վերապատրաստման դասընթացներն ավելի արդյունավետ կազմակերպելու համար, կանցկացվեն հրշեջ կիրառական մարզաձևի, հրշեջ շարային պատրաստության, ինչպես նաև մարտավարական էլեմենտների գործնական պարապմունքներ, միջազգային մրցաշարերին մասնակցող պատանի հրշեջ-փրկարարական թիմերի նախապատրաստում: Վարժահրապարակը կծառայի ՆԳՆ համակարգի ուժերի վերապատրաստումների և վարժանքների համար:
	21.2 ՀՀ Արարատի, Գեղարքունիքի, Վայոց ձորի, Կոտայքի, Արմավիրի, Արագածոտնի մարզերում փրկարարական և արագ արձագանքման թվով 6 թիմերի ստեղծում **2. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Թիմերի ստեղծման հիմնական նպատակն է խոշոր աղետների ժամանակ մարդկանց կյանքի, նյութական և մշակութային արժեքների փրկումը՝ ՄԱԿ-ի միջազգային քաղաքային որոնողափրկարարական խորհրդատվական խմբի (INSARAG) ուղեցույցի պահանջների համաձայն փոխհամագործակցելով աղետի վայրում գործողությունների համակարգման կենտրոնի, արձագանքող միջազգային քաղաքային որոնողափրկարարական թիմերի, տեղական կառավարման մարմինների և այլ միջազգային կազմակերպությունների հետ: **Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ** Միջոցառումը բխում է ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության ծրագրից: Դրույթը ներառված է ծրագրի «1. Անվտանգություն և արտաքին քաղաքականություն» գլխի «Աղետներին դիմակայունության բարձրացումը.» բաժնում. «Տարածաշրջանային անվտանգային հիմնախնդիրները՝ բնակլիմայական, տեխնածին ու մարդածին աղետները, պատերազմները, համաճարակներն ու ահաբեկչությունները, կլիմայական համընդհանուր (գլոբալ) փոփոխությունները, ինստիտուցիոնալ թույլ կառավարումը, ժողովրդագրական փոփոխությունները պատճառ են դառնում ներքին անկայուն իրավիճակի առաջացման, որի կառավարումը լրացուցիչ ուժեր ու միջոցներ է պահանջում պետությունից: Այդ առումով ստեղծվելու է ներդաշնակ անվտանգ միջավայր՝ աղետներին դիմակայունության բարձրացման, ռիսկերի նվազեցման, իրազեկման ու կրթվածության արդյունավետ համակարգի ներդրման միջոցով»: Դրույթը ներառված է նաև ծրագրի «1. Անվտանգություն և արտաքին քաղաքականություն» գլխի «1.1 Արտաքին քաղաքականություն» բաժնում. «• Հայաստանը հավատարիմ է ՄԱԿ-ի հիմնարար արժեքներին և բարձր է գնահատում կառույցի դերը խաղաղության, ժողովուրդների համագործակցության, մարդու իրավունքների և հումանիտար հարցերի բնագավառում: Հայաստանը շարունակելու է իր ակտիվ աշխատանքները կառույցի շրջանակներում՝ կարևորելով կառույցի դերն ինչպես տարածաշրջանային խնդիրների լուծման, այնպես էլ համաշխարհային/համընդհանուր մարտահրավերների ձևակերպման և դրանց շուրջ աշխատանքների կազմակերպման տեսակետից»:

	Միջոցառումը բխում է նաև Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050 «02. Պաշտպանված Հայաստան» մեգանպատակից: Որպես թիրախային արդյունք ունենալու ենք «2.4 Բնածին, տեխնածին և մարդածին աղետներին դիմակայելու պատրաստվածության բարձրագույն մակարդակ»՝ ըստ «2.4.3 Համայնքների, ենթակառուցվածքների և շենք-շինությունների անվտանգության և բնակչության դիմակայունության մակարդակ» (գնահատված մասնագիտական ցուցանիշներ) և ըստ «2.4.2 Տեխնածին և մարդածին աղետների հետևանքով քաղաքացիական զոհերի թիվը» (ՀՀ քաղաքացիների ընդհանուր թվից,ինդեքսավորված ցուցանիշ)-ի: ***1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները*** Ներկայումս Հայաստանի Հանրապետությունն ՄԱԿ-ի միջազգային քաղաքային որոնողափրկարարական խորհրդատվական խմբի (INSARAG) չափորոշիչներին համապատասխան արտաքին որակավորում անցած քաղաքային որոնողափրկարարական 1 թիմ և ներքին որակավորում անցած քաղաքային որոնողափրկարարական 4 թիմեր, որոնք ունեն համապատասխան գույք-սարքավորումներ աղետի գոտում 7 օր ինքնաբավ փրկարարական աշխատանքներ իրականացնելու համար, իսկ մյուս 6 մարզերում չկան քաղաքային որոնողափրկարարական թիմեր: ***1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները*** ՀՀ 6 մարզերում ստեղծել քաղաքային որոնողափրկարարական թիմեր, կատարելագործել թիմերի անդամների գործնական և տեսական գիտելիքները՝ ներգրավելով վարժանքների և սեմինարների (այդ թվում միջազգային): Թիմերը համալրել ժամանակակից տեխնիկական միջոցներով՝ առաջացած լայնածավալ աղետների արձագանքումը և համակարգումը դարձնելով ավելի արդյունավետ: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** ՀՀ բոլոր մարզերում ունենալ ՄԱԿ-ի միջազգային քաղաքային որոնողափրկարարական խորհրդատվական խմբի (INSARAG) չափորոշիչներին համապատասխան թիմեր, որոնք ունակ են խոշոր աղետների դեպքում 24 ժամ շարունակ ինքնաբավ կատարել փրկարարական աշխատանքներ:
	21.3 Փրկարար ծառայության հրշեջ-փրկարարական գույքի բարելավման ծրագիր **3. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Փրկարար ծառայության Արագածոտնի Արմավիրի, Արարատի և Կոտայքի մարզային փրկարարական վարչությունների թվով 15 ենթակա ստորաբաժանումների տրանսպորտային միջոցների թարմացման և մշտական պատրաստակամության ապահովման արդյունքում տուժած բնակչությանն օպերատիվ և արդյունավետ օգնության ցուցաբերման մակարդակի բարձրացման խնդիրների լուծում: **3. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ** Միջոցառումը բխում է ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության ծրագրից: Դրույթը ներառված է ծրագրի «1. Անվտանգություն և արտաքին քաղաքականություն» գլխի «Աղետներին դիմակայունության բարձրացումը.» բաժնում. «Տարածաշրջանային անվտանգային հիմնախնդիրները՝ բնակլիմայական, տեխնածին ու մարդածին աղետները, պատերազմները, համաճարակներն ու ահաբեկչությունները, կլիմայական համընդհանուր (գլոբալ) փոփոխությունները, ինստիտուցիոնալ թույլ կառավարումը, ժողովրդագրական փոփոխությունները պատճառ են դառնում ներքին անկայուն իրավիճակի առաջացման, որի կառավարումը լրացուցիչ ուժեր ու միջոցներ է պահանջում պետությունից: Այդ առումով ստեղծվելու է ներդաշնակ անվտանգ միջավայր՝ աղետներին դիմակայունության բարձրացման, ռիսկերի նվազեցման, իրազեկման ու կրթվածության արդյունավետ համակարգի ներդրման միջոցով»: Միջոցառումը բխում է նաև Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050 «02. Պաշտպանված Հայաստան» մեգանպատակից: Որպես թիրախային արդյունք ունենալու ենք «2.4 Բնածին, տեխնածին և մարդածին աղետներին դիմակայելու պատրաստվածության բարձրագույն մակարդակ»՝ ըստ «2.4.3 Համայնքների, ենթակառուցվածքների և շենք-շինությունների անվտանգության և բնակչության դիմակայունության մակարդակ» (գնահատված մասնագիտական ցուցանիշներ)-ի: ***1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները*** Փրկարար ծառայության Արմավիրի, Կոտայքի, Արարատի և Արագածոտնի մարզային փրկարարական վարչությունների թվով 15 ենթակա ստորաբաժանումների տրանսպորտային պարկը հին է, ինչի հետևանքով արտակարգ դեպքերի արձագանքումն իրականացվում է ոչ արդյունավետ: ***1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները*** Առաջարկվում է ծրագրի շրջանակներում Փրկարար ծառայության Արմավիրի, Կոտայքի, Արարատի և Արագածոտնի մարզային փրկարարական վարչությունների թվով 15 ենթակա ստորաբաժանումներին տրամադրել 49 հրշեջ-փրկարարական ավտոմեքենաներ՝ որից 25-ը հրշեջ ավտոբաքեր 5 տոննա տարողությամբ, 5-ը՝ 4 տոննա տարողությամբ, 4-ը հրշեջ ավտոսանդուղքներ և թվով 15 փրկարարական մեքենաներ: Ձեռք բերվող ավտոմեքենաների շնորհիվ հնարավոր կլինի մոտավորապես 30 տոկոսով նվազեցնել արտակարգ դեպքերի և պատահարների արձագանքման ժամանակահատվածը:

	2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Հրդեհների, արտակարգ դեպքերի և պատահարների արձագանքման ժամանակահատվածը հնարավոր կլինի կրճատել մոտավորապես 30 տոկոսով: Կնվազի նաև արտակարգ իրավիճակներից և հրդեհներից մարդկային զոհերի քանակը, նյութական և մշակույթային արժեքների կորուստները (բնակչությանն ու պետությանը պատճառված վնասի չափերը), նախագծի շրջանակներում ձեռք բերված տեխնիկան և սարքավորումները կտեղակայվեն Արմավիրի, Կոտայքի, Արարատի և Արագածոտնի մարզերում ծագած արտակարգ դեպքերին և պատահարներին արագ արձագանքելու համար:
	21.4 Անօդաչու թռչող թվով 6 սարքավորումների ձեռքբերում **2. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Անօդաչու թռչող սարքավորումների ձեռքբերման հիմնական նպատակն է տուժած բնակչությանն օպերատիվ և արդյունավետ օգնության ցուցաբերման մակարդակի բարձրացման խնդիրների լուծման համար կրճատել հրդեհների, արտակարգ դեպքերի և պատահարների հետախուզության և որոշումների ընդունման ժամանակահատվածը, իրականացնել քարտեզագրում: **Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ** Միջոցառումը բխում է ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության ծրագրից: Դրույթը ներառված է ծրագրի «1. Անվտանգություն և արտաքին քաղաքականություն» գլխի «Աղետներին դիմակայունության բարձրացումը.» բաժնում. «Տարածաշրջանային անվտանգային հիմնախնդիրները՝ բնակլիմայական, տեխնածին ու մարդածին աղետները, պատերազմները, համաճարակներն ու ահաբեկչությունները, կլիմայական համընդհանուր (գլոբալ) փոփոխությունները, ինստիտուցիոնալ թույլ կառավարումը, ժողովրդագրական փոփոխությունները պատճառ են դառնում ներքին անկայուն իրավիճակի առաջացման, որի կառավարումը լրացուցիչ ուժեր ու միջոցներ է պահանջում պետությունից: Այդ առումով ստեղծվելու է ներդաշնակ անվտանգ միջավայր՝ աղետներին դիմակայունության բարձրացման, ռիսկերի նվազեցման, իրազեկման ու կրթվածության արդյունավետ համակարգի ներդրման միջոցով: Կատարելով ներդրումներ աղետների ռիսկի կառավարման ոլորտում՝ Կառավարությունն ուղղակի կանխարգելելու և ազդելու է աղետների առաջացման պատճառների վրա՝ խուսափելով հետևանքների վերացման համար պահանջվող անհամեմատ ավելի մեծ ծախսերից»: Միջոցառումը բխում է նաև Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050 «02. Պաշտպանված Հայաստան» մեգանպատակից: Որպես թիրախային արդյունք ունենալու ենք «2.4 Բնածին, տեխնածին և մարդածին աղետներին դիմակայելու պատրաստվածության բարձրագույն մակարդակ»՝ ըստ «2.4.3 Համայնքների, ենթակառուցվածքների և շենք-շինությունների անվտանգության և բնակչության դիմակայունության մակարդակ» (գնահատված մասնագիտական ցուցանիշներ)-ի: ***1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները*** Փրկարար ծառայության ստորաբաժանումները համալրված չեն նորարական տեխնոլոգիաներով, ինչը դժվարացնում է խոշոր հրդեհների, արտակարգ դեպքերի և պատահարների վճռական ուղղությունների որոշումը, որը հանգեցնում է նյութական վնասների ավելացմանը և կարող է պատճառ հանդիսանալ մարդկային կորուստների: ***1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները*** Առաջարկվում է Փրկարար ծառայության ստորաբաժանումներին հատկացնել անօդաչու թռչող սարքավորումներ և անձնակազմին ուսուցանել շահագործման կանոնները: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Նորարարական տեխնոլոգիաներով անօդաչու թռչող սարքավորումների կիրառմամբ Արտակարգ իրավիճաների նախարարության փրկարար ծառայության ստորաբաժանումները կիրականացնեն արտակարգ դեպքերի և պատահարների արագ հետախուզություն, քարտեզագրում, կկրճատվի որոշումների կայացման ժամանակահատվածը, կիրականացվի փրկարարների վերապատրաստում: Արտակարգ դեպքերի ժամանակ ուժերի և միջոցների ներգրավումը կիրականացվի ավելի արագ և արդյունավետ, որը հնարավորություն կընձեռի զգալիորեն նվազեցնել հատկապես խոշոր հրդեհի տարածումը, իսկ տուժածներին ցուցաբերել անհրաժեշտ օգնություն՝ կրճատելով որոնման ժամանակը:
	21.5 Արտակարգ իրավիճակներին արձագանքման փրկարար ծառայության կարողությունների հզորացման ծրագիր **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշման «Անվտանգություն և արտաքին քաղաքականություն» գլխի «Աղետների դիմակայունության բարձրացում» բաժնի դրույթներից, համաձայն որի տարածաշրջանային անվտանգային հիմնախնդիրների՝ բնակլիմայական, տեխնածին և մարդածին աղետների, պատերազմների, համաճարակների և ահաբեկչությունների, կլիմայական

	համընդհանուր (գլոբալ) փոփոխությունների, ինստիտուցիոնալ թույլ կառավարման, ժողովրդագրական փոփոխությունների պատճառով ներքին անկայուն իրավիճակների առաջացման կառավարումը պետությունից պահանջում է լրացուցիչ ուժեր և միջոցներ: Միջոցառման հիմնական նպատակն է ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Տավուշի, Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզային փրկարարական վարչությունների թվով 13 ենթակա ստորաբաժանումների տրանսպորտային միջոցների թարմացման և մշտական պատրաստականության ապահովման արդյունքում տուժած բնակչությանն օպերատիվ և արդյունավետ օգնության ցուցաբերման մակարդակի բարձրացման խնդիրների լուծում: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները** ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Տավուշի, Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզային փրկարարական վարչությունների թվով 13 ենթակա ստորաբաժանումների տրանսպորտային պարկը հին է, ինչի հետևանքով արտակարգ դեպքերի արձագանքումն իրականացվում է ոչ արդյունավետ: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Առաջարկվում է ծրագրի շրջանակներում ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Տավուշի, Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզային փրկարարական վարչությունների թվով 13 ենթակա ստորաբաժանումներին տրամադրել թվով 42 հրշեջ-փրկարարական ավտոմեքենաներ և հատուկ տեխնիկա, որից 12-ը հրշեջ ավտոբաքեր 6 տոննանոց, 12-ը՝ 5 տոննանոց, 3-ը՝ հրշեջ ավտոսանդուղքներ, 12-ը՝ փրկարարական ավտոմեքենաներ (առաջին օգնության ավտոմեքենա), 1 պիկապ, 1 մոտորանավակ և 1 ճնշաթողման խցիկ (барокамера): Ձեռք բերվող ավտոմեքենաների շնորհիվ հնարավոր կլինի մոտավորապես 30 տոկոսով նվազեցնել արտակարգ դեպքերի և պատահարների արձագանքման ժամանակահատվածը: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Հրդեհների, արտակարգ դեպքերի և պատահարների արձագանքման ժամանակահատվածը հնարավոր կլինի կրճատել մոտավորապես 30 տոկոսով: Կնվազի նաև արտակարգ իրավիճակներից և հրդեհներից մարդկային զոհերի քանակը, նյութական և մշակույթային արժեքների կորուստները (բնակչությանն ու պետությանը պատճառված վնասի չափերը), նախագծի շրջանակներում ձեռք բերված տեխնիկան և սարքավորումները կտեղակայվեն Տավուշի, Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզերում ծագած արտակարգ դեպքերին և պատահարներին արագ արձագանքելու համար:
22.	**22.1 Թվով 6 սողանքային տեղամասերում գործիքային հետազոտությունների արդյունքների հիման վրա կանխարգելիչ միջոցառումների իրականացում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Սողանքային տեղամասերում հետազոտությունների և դրանց հաջորդող կանխարգելիչ միջոցառումների չիրականացման պատճառով կառավարությունը հարկադրված է մի քանի անգամ ավելի շատ ֆինանսական միջոցներ հատկացնել հարյուրավոր վթարային բնակելի տների բնակիչների վերաբնակեցման խնդիրների լուծման, ինչպես նաև սողանքային երևույթների հետևանքների վերացման համար: Նման մոտեցումը, պահանջելով մեծ ու անընդհատ աճող ֆինանսական միջոցներ, խնդրի լիարժեք լուծում չի ապահովում, քանի որ ժամանակի ընթացքում ավելանում է վնասված ու վթարային տների քանակը, իսկ վերաբնակեցումը հանգեցնում է հատկապես սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի քայքայմանն ու աստիճանաբար վերացմանը, բնակչության տարահանմանը, սոցիալ-տնտեսական և մի շարք այլ լուրջ հիմնախնդիրների առաջացմանը: Սողանքային աղետի դեմ պայքարի միջոցառումների հետևողական իրականացումը կնպաստի բնակավայրերի կայուն զարգացմանը, ենթակառուցվածքների, կենսապահովման օբյեկտների և բնակելի տների անխափան շահագործմանը, շրջակա միջավայրի պահպանմանը, կտրուկ նվազեցնելով սողանքների պատճառով տնտեսությանը հասցրած վնասը, ինչն անմիջականորեն բխում է ՀՀ ընդհանուր տնտեսական և սոցիալական խնդիրներից և նպատակներից: **Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ** Միջոցառումը դիտարկվում է որպես սողանքային աղետի կառավարման միջոցառում: Միջոցառումը բխում է ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության ծրագրից: Դրույթը ներառված է ծրագրի «1. Անվտանգություն և արտաքին քաղաքականություն» գլխի «Աղետներին դիմակայունության բարձրացումը.» բաժնում. «Անվտանգության ապահովման հիմնական գործոններից է լինելու աղետների ռիսկի կառավարման ճկուն ու գործուն համակարգը, որի ներդրման արդյունքում կունենանք պաշտպանված բնակչություն, տնտեսություն, տարածքներ, ենթակառուցվածքներ ու բնապահպանական օբյեկտներ: Կատարելով ներդրումներ աղետների ռիսկի կառավարման ոլորտում՝ կառավարությունն ուղղակի ձևով կանխարգելելու և ազդելու է աղետների առաջացման պատճառների վրա՝ խուսափելով հետևանքների վերացման համար պահանջվող անհամեմատ ավելի մեծ ծախսերից:»

	Դրույթը մասամբ ներառված է նաև ծրագրի «3. Ենթակառուցվածքների զարգացում» գլխի «3.3 Ջրային տնտեսություն» բաժնում՝ կոլեկտորադրենաժային ցանցի շահագործումը դիտարկելով որպես սողանքային աղետի կանխարգելիչ միջոցառում. • Շարունակվելու են կոլեկտորադրենաժային ցանցի պահպանման և շահագործման աշխատանքները»: Միջոցառումը բխում է նաև Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050 «02. Պաշտպանված Հայաստան» մեգանպատակից: Որպես թիրախային արդյունք ունենալու ենք «2.4 Բնածին, տեխնածին և մարդածին աղետներին դիմակայելու պատրաստվածության բարձրագույն մակարդակ»՝ ըստ «2.4.3 Համայնքների, ենթակառուցվածքների և շենք-շինությունների անվտանգության և բնակչության դիմակայունության մակարդակ» (գնահատված մասնագիտական ցուցանիշներ)-ի: **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները** Սողանքային երևույթները մեծ վնաս են հասցրել և շարունակում են հասցնել հանրապետության սողանքային տեղամասերի բնակելի տներին, ենթակառուցվածքներին, կենսապահովման օբյեկտներին, արտադրական կարողություններին, շրջակա միջավայրին՝ սպառնալով այդ տեղամասերի բնակիչների կյանքին: Սողանքները պատճառ են դառնում հատկապես լեռնային և սահմանամերձ բնակավայրերի ամայացմանը, պատմամշակութային արժեքների ավերմանը, բնակչության աղքատացմանը, տարհանմանը, արտագաղթին, մի շարք սոցիալական հիմնահարցերի առաջացմանը և խոչընդոտում են տնտեսության զարգացմանն ու բնակչության աճին: Սողանքային տեղամասերում հետազոտությունների և դրանց հաջորդող միջոցառումների չիրականացման կամ մասնակի իրականացման պատճառով կառավարությունը հարկադրված մի քանի անգամ ավելի շատ ֆինանսական միջոցներ է հատկացնում հարյուրավոր վթարային բնակելի տների բնակիչների վերաբնակեցման, ենթակառուցվածքների վերականգնման, ինչպես նաև սողանքային երևույթների հետևանքների վերացման համար: Նման մոտեցումը, պահանջելով մեծ ու անընդհատ աճող ֆինանսական միջոցներ, խնդրի լիարժեք լուծում չի ապահովում, քանի որ ժամանակի ընթացքում ավելանում է վնասված ու վթարային տների քանակը, իսկ վերաբնակեցումը հանգեցնում է հատկապես սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի քայքայմանն ու աստիճանաբար վերացմանը, բնակչության տարահանմանը, սոցիալ-տնտեսական և մի շարք այլ լուրջ հիմնախնդիրների առաջացմանը: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Սողանքային տեղամասերում իրականացված հետազոտությունների արդյունքում իրականացնել կանխարգելիչ հակասողանքային միջոցառումներ, որոնք կնպաստեն բնակչության անվտանգության ապահովմանը և շրջակա միջավայրի պահպանմանը, վտանգների և ռիսկերի նվազեցմանն ու կանխմանը: Սողանքային մարմինների երկրաբանական, երկրաֆիզիկական, հիդրոլոգիական, ինչպես նաև կանխարգելիչ միջոցառումների առանձնահատկություններից ելնելով, ֆինանսական հաշվարկները կարող են ունենալ զգալի շեղումներ, ուստի յուրաքանչյուր սողանքային մարմնի մոնիթորինգի և կանխարգելիչ միջոցառումների իրականացման ֆինանսական գնահատական հնարավոր կլինի ներկայացնել ուսումնասիրությունների արդյունքում կազմված նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա: Հաշվի առնելով վերոգրյալը, առաջարկվում է յուրաքանչյուր տարի նախատեսել ֆինանսական միջոցներ ուղղված «Սողանքային աղետի կառավարման» ծրագրի շրջանակներում հետազոտությունների արդյունքում հիմնավորված ֆինանսական գնահատական ունեցող հակասողանքային միջոցառումների իրականացմանը: Նպատակահարմար է յուրաքանչյուր տարի բյուջեով նախատեսել որոշակի գումար կանխարգելիչ միջոցառումների իրականացման համար՝ ըստ իրականացված հետազոտությունների արդյունքների: Համակատարող մարմինները կաջակցեն տեղերում աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը, տեղեկատվության տրամադրմանը: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Հանրապետությունում սողանքային երևույթների ուսումնասիրությունը, կանխատեսումը և կանխարգելումը կնպաստի սողանքներից բնակչության պաշտպանությունն աղետալի իրավիճակից, տարածքների, շենքերի և շինությունների, տարբեր նշանակության կառուցվածքների, հաղորդակցության ուղիների անվտանգ և անխափան շահագործմանը: Սողանքային աղետի դեմ պայքարը, որպես անվտանգության ռազմավարական ուղղություն, անհրաժեշտ է մշտապես ընդգրկել պետական սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերում և համակարգված մոտեցմամբ հետևողական լուծումներ տալով՝ աստիճանաբար կանխել վտանգներն ու նվազեցնել ռիսկերը:

23.	**23.1 «Աղետների վաղ ազդարարման համակարգի ձևավորման հայեցակարգը և դրա իրականացումն ապահովող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը** **1. Միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** «Աղետների վաղ ազդարարման համակարգի ձևավորման հայեցակարգը և դրա իրականացումն ապահովող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը հնարավորություն կընձեռի կանոնակարգել արտակարգ իրավիճակների բնագավառում բնակչության և ղեկավար կազմի ազդարարման ու իրազեկման հիմնախնդիրները, ինչպես նաև կազմակերպել բնակչության ազդարարման ու իրազեկման համակարգի ձևավորումը: Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսանում «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոտվածի դ. կետը, և «Քաղաքացական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոտվածի դ. կետը: Միջոցառման իրականացման իրավական հիմքն է «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետ: **Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ** Միջոցառումը բխում է ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության ծրագրից: Դրույթը ներառված է ծրագրի «1. Անվտանգություն և արտաքին քաղաքականություն» գլխի «Աղետներին դիմակայունության բարձրացումը.» բաժնում: «Տարածաշրջանային անվտանգային հիմնախնդիրները՝ բնակլիմայական, տեխնածին ու մարդածին աղետները, պատերազմները, համաճարակներն ու ահաբեկչությունները, կլիմայական համընդհանուր (գլոբալ) փոփոխությունները, ինստիտուցիոնալ թույլ կառավարումը, ժողովրդագրական փոփոխությունները պատճառ են դառնում ներքին անկայուն իրավիճակի առաջացման, որի կառավարումը լրացուցիչ ուժեր ու միջոցներ է պահանջում պետությունից: Այդ առումով ստեղծվելու է ներդաշնակ անվտանգ միջավայր՝ աղետներին դիմակայունության բարձրացման, ռիսկերի նվազեցման, իրազեկման ու կրթվածության արդյունավետ համակարգի ներդրման միջոցով»: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները** Հայաստանի Հանրապետության տարածքում խորհրդային տարիներին կառուցված ազդարարման համակարգը չի գործում կենտրոնացված «Տելեկոմ-Արմենիա» ՓԲԸ-ի կողմից ավտոմատ հեռախոսային կայանների թվայնացման, անալոգային կապուղիների շահագործումից հանելու և ապամոնտաժելու պատճառով: Հանրապետության տարածքում տեղադրված են 1159 շչակներ, որոնց 60 %-ը գործում են ինքնավար (ավտոնոմ) և ընդգրկված չեն մեկ ընդհանուր ցանցում: Համայնքներին սպառնացող աղետների ռիսկի վերլուծության արդյունքներով՝ կատարված միջազգային կազմակերպությունների, հասարակական կազմակերպությունների կողմից փաստում են, որ համայնքների մեծ մասը անհրաժեշտ է համարում ազդարարման համակարգի արդյունավետ գործունեությունը, տեղեկատվության ապահովումը: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտություն է առաջանում իրավական ակտով կանոնակարգելու Հայաստանի Հանրապետության բնակչության ազդարարման և իրազեկման ուղղությամբ իրականացվող միջոցառումները՝ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության նպատակով: Համակատարող մարմինները իրենց լիազորությունների շրջանակներում պետք է աջակցություն ցուցաբերեն միջոցառումների իրականացմանը: Մասնավորապես՝ ազդարարման համակարգերի տեղադրման վայրի, կոմունիկացիաների հետ կապված կարգավորումների, տեղադրված համակարգերի պահպանության և պատասխանատուների հետ կապված գործառույթների իրականացման հարցերում: **2. Միջոցառումների իրականացումից ակնկալվող արդյունքը** «Աղետների վաղ ազդարարման համակարգի ձևավորման հայեցակարգը և դրա իրականացումն ապահովող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը, հնարավորութուն կընձեռի ներդնել աղետների վաղ ազդարարման գործուն համակարգ, որը կնպաստի տնտեսական վնասների և մարդկային կորուստների նվազեցմանը: Հայեցակարգից բխող միջոցառումների իրականացումը կնպաստի համայնքներն (հատկապես սահմանամերձ) ապահովելու ազդարարման ժամանակակից համակարգով:
24.	***24.1 Պահեստային կառավարման կետի վերանորոգում և կահավորում*** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի «դ» կետը որպես քաղաքացիական պաշտպանության նախապատրաստական միջոցառում սահմանում է. «կառավարման, կապի և ազդարարման համակարգերի հիմնումը և դրանց բնականոն գործունեության ապահովումը»:

	Քաղաքացիական պաշտպանության կառավարման համակարգի փոխկապակցված ամբողջականության մասն են կազմում նաև կառավարման կետերը, որոնք հանդիսանում են արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ կառավարման մարմինների տեղակայման և նրանց աշխատանքների ապահովման համար նախատեսված՝ հատուկ սարքավորված և տեխնիկական միջոցներով հագեցված շինություններ կամ տրանսպորտային միջոցներ: **Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ** Միջոցառումը բխում է ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության ծրագրից: Դրույթը ներառված է ծրագրի «1. Անվտանգություն և արտաքին քաղաքականություն» գլխի «1.3 Պաշտպանության ոլորտ. Զինված ուժերի բարեփոխումներ» բաժնում. «•Կառավարությունը բարձրացնելու է Զինված ուժերի կառավարման և ղեկավարման համակարգի արդյունավետությունը: Իրականացվելու են անհրաժեշտ օրենսդրական փոփոխություններ՝ ուղղված պաշտպանության ոլորտի համապետական խնդիրների լուծմանն ու պաշտպանության կազմակերպման ընթացակարգերի հստակեցմանը, այդ թվում՝ պետության ռազմական անվտանգության համակարգի մարմինների պաշտպանության ոլորտին առնչվող լիազորություններն ու պարտականությունները: Վերանայվելու է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը, մշակվելու է նոր Ռազմական դոկտրին, Պետության պաշտպանության պլան, կատարելագործվելու են պետությունը պաշտպանության նախապատրաստելու գործիքակազմերն ու ընթացակարգերը:» Միջոցառումը բխում է նաև Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050 «02. Պաշտպանված Հայաստան» մեգանպատակից: Որպես թիրախային արդյունք ունենալու ենք «2.4 Բնածին, տեխնածին և մարդածին աղետներին դիմակայելու պատրաստվածության բարձրագույն մակարդակ»՝ ըստ «2.4.3 Համայնքների, ենթակառուցվածքների և շենք-շինությունների անվտանգության և բնակչության դիմակայունության մակարդակ» (գնահատված մասնագիտական ցուցանիշներ)-ի: **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները** Ներկայումս որպես պահեստային կառավարման կետ նախատեսվող պաշտպանական կառույցի տարածքի սեփականության հետ կապված կան խնդիրներ, որոնք լուծման կարիք ունեն: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 1-ի N 1225-ՆԳ և N 1226-ՆԳ որոշումների պահանջներով սահմանվում է կառույցի վերանորոգմանը, անհրաժեշտ գույքով և սարքավորումներով ապահովմանը, օրենսդրական կարգով շահագործմանը ներկայացվող պահանջները: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Ակնկալվում է արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ կառավարման, ինչպես նաև պահպանության, պաշտպանության մակարդակի բարձրացումը, կառույցում հերթապահության իրականացումը:

N	Շրջակա միջավայրի նախարարություն
1	**Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման և որակի բարձրացման նպատակով՝ կառավարման գերարդյունավետ համակարգերի ներդրումը, ջրային ռեսուրսների պահպանման, այդ թվում՝ ջրահեռացման ու կեղտաջրերի մաքրման գործընթացի կանոնակարգումը, Արարատյան արտեզյան ավազանի և գետային էկոհամակարգերի պահպանությունն ու կառավարումը.** **1.1. «Սևանի, Հրազդանի ջրավազանային տարածքների կառավարման պլանների մշակում և Կառավարության որոշման նախագծերը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը » միջոցառման** **1.Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել ՀՀ Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած ՀՀ Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման և որակի բարձրացման նպատակով կառավարման գերարդյունավետ համակարգերի ներդրումը, ջրային ռեսուրսների պահպանման, այդ թվում՝ ջրահեռացման ու կեղտաջրերի մաքրման գործընթացի կանոնակարգումը, Արարատյան արտեզյան ավազանի և գետային էկոհամակարգերի պահպանությունն ու կառավարումը» ուղղությունը և Ջրային օրենսգրքի 17-րդ հոդվածը: Սևանի (Սևանա լիճն իր ջրհավաք ավազանով) և Հրազդանի (Հրազդան, Մարմարիկ, Քասախ և Ամբերդ գետերն իրենց ջրհավաքներով) ջրավազանային տարածքների կառավարման պլանների մշակումը իրականացվում է համապարփակ պլանավորման սկզբունքով, ինչը նպատակաուղղված է հավասարակշռելու ջրօգտագործողների՝ ներառյալ համայնքների, էներգետիկայի, արդյունաբերության և գյուղատնտեսության փոխկապակցված փոխհարաբերությունները: Ջրավազանային կառավարման պլանի նպատակն է հավասարակշռել ջրավազանում ջրի առաջարկը և պահանջարկը **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Համաձայն ՀՀ ջրային օրենսգիրքի, 2006թ. նոյեմբերի 27-ի «ՀՀ ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի 2016-2017թթ. ընթացքում 6 ջրավազանային կառավարման պլաններից մշակվել և հաստատվել է 3-ը՝ Արարատյան, Հարավային և Ախուրյան ջրավազանային կառավարման պլանները: Սևանի և Հրազդանի ջրավազանային տարածքների կառավարման պլանները մշակման ընթացքում են:

1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Սևանի և Հրազդանի ջրավազանային տարածքների կառավարման պլանների մշակում:

1.2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Սևանի, Հրազդանի ջրավազանային տարածքների կառավարման պլանների կազմումը կնպաստի համապատասխան ջրավազաններում ջրի ազգային ու ռազմավարական պաշարների հստակեցմանը, ջրի առաջարկի և պահանջարկի հավասարակշռմանը, որը իր հերթին կբերի ջրային ռեսուրսի արդյունավետ և ճիշտ կառավարմանը, ինչպես նաև ջրային ռեսուրսի խնայողությանը:

1.2. «Հյուսիսային ջրավազանային տարածքի կառավարման պլանի մշակում և Կառավարության որոշման ընդունում» միջոցառման

1.Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման և որակի բարձրացման նպատակով կառավարման գերարդյունավետ համակարգերի ներդրումը, ջրային ռեսուրսների պահպանման, այդ թվում՝ ջրահեռացման ու կեղտաջրերի մաքրման գործընթացի կանոնակարգումը, Արարատյան արտեզյան ավազանի և գետային էկոհամակարգերի պահպանությունն ու կառավարումը» ուղղությունը և Ջրային օրենսգրքի 17-րդ հոդվածը:

Հյուսիսային (Դեբեդ, Աղստև գետերը՝ իրենց ջրհավաքներով, և Քուռ գետի վտակները՝ իրենց ջրհավաքներով) ջրավազանային տարածքի կառավարման պլանի մշակումը իրականացվում է համապարփակ պլանավորման սկզբունքով, ինչը նպատակաուղղված է հավասարակշռելու ջրօգտագործողների՝ ներառյալ համայնքների, էներգետիկայի, արդյունաբերության և գյուղատնտեսության փոխկապակցված փոխհարաբերությունները: Ջրավազանային կառավարման պլանի նպատակն է հավասարակշռել ջրավազանում ջրի առաջարկը և պահանջարկը

1.1.կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Համաձայն ՀՀ ջրային օրենսգիրքի, 2006թ. նոյեմբերի 27-ի«Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի 2016-2017թ.թ. ընթացքում 6 ջրավազանային կառավարման պլաններից մշակվել և հաստատվել է 3-ը՝ Արարատյան,Հարավային և Ախուրյան ջրավազանային կառավարման պլանները: Մշակման ընթացքում է Սևանի և Հրազդանի ջրավազանային տարածքների կառավարման պլանները: Ներակայում Հյուսիսային ջրավազանային կառավարման պլանը մշակված չէ՝ համապատասխան միջոցների բացակայության պատճառով:

1.2.առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Հյուսիսային ջրավազանային տարածքի կառավարման պլանի մշակումը և հաստատումը՝ անհրաժեշտ ֆինանսավորման առկայության դեպքում:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Հյուսիսային ջրավազանային տարածքի կառավարման պլանի կազմումը կնպաստի Հյուսիսային ջրավազանում ջրի ազգային ու ռազմավարական պաշարների հստակեցմանը, ջրի առաջարկի և պահանջարկի հավասարակշռմանը, որը իր հերթին կբերի ջրային ռեսուրսի արդյունավետ և ճիշտ կառավարմանը, ինչպես նաև ջրային ռեսուրսի խնայողությանը:

1.3. «Արարատյան դաշտի գյուղատնտեսական և ձկնաբուծական, ջրօգտագործողների մոտ ավտոմատ կառավարման առցանց ջրաչափական համակարգերի տեղադրման աշխատանքների իրականացում» միջոցառման

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման և որակի բարձրացման նպատակով կառավարման գերարդյունավետ համակարգերի ներդրումը, ջրային ռեսուրսների պահպանման, այդ թվում՝ ջրահեռացման ու կեղտաջրերի մաքրման գործընթացի կանոնակարգումը, Արարատյան արտեզյան ավազանի և գետային էկոհամակարգերի պահպանությունն ու կառավարումը» ուղղությունը, ինչպես նաև ՀՀ Հարկային օրենսգրքի 212-րդ հոդվածը և ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի «Ստորերկրյա քաղցրահամ և թերմալ ջրերի արդյունահանված

	պաշարների հաշվառման նպատակով ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքերի տեղադրման, կնքման և շահագործման, ստորերկրյա քաղցրահամ և թերմալ ջրերի արդյունահանված պաշարների ծավալների վերաբերյալ տվյալների արձանագրման կարգերը և ժամկետները սահմանելու մասին» N 1252-Ն որոշումը: Հայաստանի Հանրապետությունում ստորերկրյա ջրային ռեսուրսների զգալի մասը ձևավորվում է Արարատյան արտեզյան ավազանի մաս հանդիսացող Արարատյան դաշտում: Դաշտում է կենտրոնացված Հայաստանի գյուղատնտեսության և ձկնաբուծության մեծ մասը: Արարատյան դաշտի ստորերկրյա ջրային ռեսուրսների հյուծման սպառնալիքը հրատապ խնդիր է ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության բնագավառում, հաշվի առնելով Արարատյան դաշտում ստեղծված իրավիճակն անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել առցանց հոսքաչափական սարքավորումներ և դրանք տեղադրել ձկնաբուծական տնտեսություններում, քանի որ վերջիններս հանդիսանում են ստորերկրյա ջրային ռեսուրսների խոշոր ջրօգտագործողներ: Հոսքաչափական սարքավորումների տեղադրման նպատակն է առցանց եղանակով հետևել ձկնաբուծական տնտեսությունների կողմից օգտագործվող ջրի ծավալը և տրված ջրօգտագործման թույլտվությունից ավելի օգտագործելու դեպքում ձեռնարկել համապատասխան միջոցառումներ: **1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** 2018թ. ընթացքում Արարատյան դաշտի ձկնաբուծական տնտեսությունների 19 ջրառի կետերում տեղադրվել են առցանց հոսքաչափական սարքավորումներ, ինչպես նաև համակարգչային (SCADA) ծրագրային փաթեթի ներդրման և փորձարկման կազմակերպման աշխատանքները: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Արարատյան դաշտի 30 ջրօգտագործողների մոտ Ավտոմատ կառավարման առցանց ջրաչափական սարքավորումների տեղադրման գործարկմամբ կկարգավորվի ջրօգտագործողների կողմից փաստացի օգտագործվող ջրաքանակի առցանց հաշվառումը: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Ավտոմատ կառավարման առցանց ջրաչափական սարքավորումների տեղադրման արդյունքում առցանց եղանակով հասանելի կլինեն ջրօգտագործողների կողմից օգտագործված ջրի ծավալի վերաբերյալ ստույգ և ճշգրիտ տվալներ, ինչը կնպաստի Արարատյան դաշտի ստորերկրյա ջրային ռեսուրսների առավել արդյունավետ կառավարմանը՝ հետագայում հանգեցնելով ստորերկրյա ջրային ռեսուրսների վերականգմանը: **1.4. «Արտադրական կեղտաջրերի նախնական մաքրմանը ներկայացվող պահանջները սահմանելու մասին» Կառավարության որոշման ընդունում» միջոցառման** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման և որակի բարձրացման նպատակով կառավարման գերարդյունավետ համակարգերի ներդրումը, ջրային ռեսուրսների պահպանման, այդ թվում՝ ջրահեռացման ու կեղտաջրերի մաքրման գործընթացի կանոնակարգումը, Արարատյան արտեզյան ավազանի և գետային էկոհամակարգերի պահպանությունն ու կառավարումը» ուղղությունը, ինչպես նաև ՀՀ վարչապետի 2018թ. մայիսի 29-ի «ՀՀ ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 589-Ա որոշման հավելվածի 6-րդ կետը, ինչը բխում է 2018 թվականի մարտի 2-ին ընդունված և 2020 թվականից ուժի մեջ մտած «ՀՀ ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-126-Ն օրենքի 7-րդ հոդվածով լրացված ՀՀ ջրային օրենսգրքի 62.1 հոդվածից: **1.1.կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Հայաստանի Հանրապետությունում կոյուղու համակարգերի սպասարկման տարածքը սահմանափակ է՝ ընդհանուր առմամբ ներառելով բնակչության միայն 70%-ը, որից քաղաքային բնակչության համար հասանելիությունը 96.4% է, մինչդեռ գյուղական բնակչության համար հասանելիությունը ընդամենը 17% է (Հայաստանում կեղտաջրերի կայուն հավաքման և մաքրման ազգային ռազմավարության մշակում. առաջին փուլի զեկույց, OECD, 2014թ.): Ջրային ռեսուրսների պահպանության և օգտագործման արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտություն է առաջացել ջրահեռացման ոլորտում, և հատկապես կեղտաջրերի մաքրման բնագավառում մեծածավալ բարեփոխումներ և ներդրումներ իրականացնել: **1.2.առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Որոշման նախագծով արտադրական կեղտաջուր արտանետողների նկատմամբ կսահմանվի կեղտաջրերի նախնական մաքրման պահանջ: Կամրագրվի ոչ միայն դեպի շրջակա միջավայր (այդ թվում ջրային ավազան), այլ նաև ջրահեռացման ցանց արտանետվող արտադրական կեղտաջրերին ներկայացվող պահանջները: Վերջիններս,

	ի տարբերություն գործող օրենսդրության, պետք է ուղղված լինեն ոչ միայն ջրային ավազանների անվտանգության ապահովմանը, այլ նաև ջրահեռացման համակարգերի արդյունավետ ու անվտանգ շահագործման ապահովմանը: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Որոշման ընդունումը կբարձրացնի կեղտաջրերի մաքրման մակարդակը, կնպաստի շրջակա միջավայրի, մասնավորապես՝ ջրային ռեսուրսների պահպանությանը, ինչպես նաև ջրահեռացման համակարգերի անվտանգ շահագործման ապահովմանը: **1.5. «Կեղտաջրի նստվածքի օգտագործմանը, հավաքմանը, փոխադրմանը, կուտակմանը, մշակմանը, օգտահանմանը և հեռացմանը ներկայացվող պահանջները սահմանելու մասին» կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը» միջոցառման** **1.Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման և որակի բարձրացման նպատակով կառավարման գերարդյունավետ համակարգերի ներդրումը, ջրային ռեսուրսների պահպանման, այդ թվում՝ ջրահեռացման ու կեղտաջրերի մաքրման գործընթացի կանոնակարգումը, Արարատյան արտեզյան ավազանի և գետային էկոհամակարգերի պահպանությունն ու կառավարումը» ուղղությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 62.3-րդ հոդվածը, ինչպես նաև ՀՀ վարչապետի 2018թ. մայիսի 29-ի «ՀՀ ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 589 որոշման հավելվածի 5-րդ կետը: **1.1.կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Նախորդ 10-15 տարիների ընթացքում համաշխարհային պրակտիկայում արմատական կերպով փոխվել են կեղտաջրերի կառավարման մոտեցումները: Եթե նախկինում այն ընդունվում էր սոսկ որպես կենսագործունեության արդյունք կամ աղտոտված ջուր, ապա այժմ այն դիտարկվում է որպես ռեսուրս (և ոչ միայն ջրային), որը ենթակա է օգտահանման՝ դրանում պարունակվող օգտակար հատկությունների կորզման ու տարբեր բնագավառներում օգտագործման առումով: **1.2.առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Որոշման նախագծով կսահմանվեն կեղտաջրի նստվածքի օգտագործման ընթացակարգը, ինչպես նաև դրա հավաքմանը, փոխադրմանը, կուտակմանը, մշակմանը, օգտահանմանը և հեռացմանը ներկայացվող պահանջներ: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Որոշման ընդունումը կապահովի կեղտաջրերի մաքրման արդյունքում առաջացած տիղմի օգտագործումը և անվտանգ հեռացումը շրջակա միջավայր, կնպաստի ջրային ռեսուրսների պահպանությանն ու արդյունավետ կառավարմանը: **1.6. «ՀՀ ջրային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը» միջոցառման** **1.Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման և որակի բարձրացման նպատակով կառավարման գերարդյունավետ համակարգերի ներդրումը, ջրային ռեսուրսների պահպանման, այդ թվում՝ ջրահեռացման ու կեղտաջրերի մաքրման գործընթացի կանոնակարգումը, Արարատյան արտեզյան ավազանի և գետային էկոհամակարգերի պահպանությունն ու կառավարումը» ուղղությունը, ինչպես նաև 2017թ. նոյեմբերի 24-ին ստորագրված և ՀՀ Ազգային Ժողովի կողմից 2018թ. ապրիլի 11-ին վավերացված ՀՀ և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԳՀՄ) կիրարկման նպատակով հաստատված ճանապարհային քարտեզը: **1.1.կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ջրային քաղաքականության ոլորտում Համայնքի գործողությունների շրջանակը սահմանող Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2000 թվականի հոկտեմբերի 23-ի 2000/60/EC Ջրի շրջանակային դիրեկտիվի, Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2007թ. հոկտեմբերի 23-ի 2007/60/ԵՀ հեղեղումների ռիսկերի գնահատման և կառավարման մասին դիրեկտիվի, Խորհրդի 1991թ. մայիսի 21-ի 91/271/ԵՏՀ քաղաքային կեղտաջրերի մաքրման մասին դիրեկտիվի, Խորհրդի 1998 թվականի նոյեմբերի 3-ի 98/83/ԵՀ մարդու կողմից սպառման համար

նախատեսված ջրի որակի մասին կանոնակարգի, Խորհրդի 1991 թվականի դեկտեմբերի 12-ի 91/676/ԵՏՀ գյուղատնտեսական աղբյուրներից արտանետվող նիտրատների հետևանքով առաջացող աղտոտման դեմ ջրերի պաշտպանության վերաբերյալ դիրեկտիվի դրույթների մոտարկման, ինչպես նաև «Ջրային ռեսուրսների ոլորտում կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագիրը հաստատելու մասին» և «Գետի ինքնամաքրման կարողության գնահատման մեթոդը սահմանելու մասին» Կառավարության որոշման նախագծերի մշակման համար իրավական հիմքի ապահովման նպատակով կմշակվի Օրենքի նախագիծ:

1.2.առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Ջրի շրջանակային դիրեկտիվի սկզբունքներին և մոտեցումներին համահունչ մոտարկման, առկա ոլորտային խնդիրների իրավակարգավորման նպատակով Օրենքի նախագծով ՀՀ ջրային օրենսգրքում կսահմանվեն նոր հասկացություններ, մասնավորապես՝ մակերևութային ջրային մարմին, ստորերկրյա ջրային մարմին, խիստ փոփոխված ջրային մարմին, ջրային ռեսուրսի ինքնամաքրում, կլիմայի փոփոխության նկատմամբ ջրային ռեսուրսների խոցելիություն և հարմարվողականություն և այլ հասկացություններ, կտրվեն ջրօգտագործման թույլտվությունների, դրանց տրամադրման, վերաձևակերպման հետ կապված, ինչպես նաև ջրային ոլորտում կլիմայի հարմարվողականության հետ կապված իրավակարգավորումներ և այլն:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Օրենքի ընդունումը կնպաստի Ջրի շրջանակային դիրեկտիվի սկզբունքներին և մոտեցումներին համահունչ մոտարկմանը, շրջակա միջավայրի էկոլոգիական կայունության ապահովմանը, ինչպես նաև կնպաստի ջրային ոլորտում առկա խնդիրների լուծման իրավակարգավորմանը:

1.7. «Մակերևութային ջրային ռեսուրսների մոնիտորինգի տվյալների արժանահավատության բարձրացում, որոշում կայացնողներին առավել ճշգրիտ տեղեկատվությամբ ապահովում, ջրային ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացում» միջոցառման

1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման և որակի բարձրացման նպատակով կառավարման գերարդյունավետ համակարգերի ներդրումը, ջրային ռեսուրսների պահպանման, այդ թվում՝ ջրահեռացման ու կեղտաջրերի մաքրման գործընթացի կանոնակարգումը, Արարատյան արտեզյան ավազանի և գետային էկոհամակարգերի պահպանությունն ու կառավարումը» ուղղությունը և Ջրային օրենսգրքի 19.1 հոդվածը:

Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի ներքո գործող հիդրոօդերևութաբանական ծառայությունը հանրապետության միակ պետական կառույցն է, որն իրականացնում է մակերևութային ջրային ռեսուրսների քանակական մոնիթորինգ և այդ դիտակետերի դիտարկումների տվյալները կարևոր դեր ունեն ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման տեսանկյունից, հետևապես անհրաժեշտություն է առաջացել իրականացնել այդ հիդրոլոգիական դիտակետերի վերազինում/արդիականացում:

1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները:

Հիդրոլոգիական դիտակետերում շահագործվող գործիք-սարքավորումները հնամաշ են, ինժեներական կառուցվածքները ֆիզիկապես մաշված են, ինչը հնարավորություն չի տալիս ներկայումս ստանալ առավել հավաստի տվյալներ:

1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները:

Դիտակետերում իրականացնել ինժեներական կառուցվածքների հիմնանորոգում, ինչպես նաև տեղադրել ավտոմատ գործիք սարքավորումներ և չափիչ միջոցներ.

-«Քասախի և Հրազդանի գետավազանների 5 (2 ջրամբարային, 3 գետային) և սահմանային Արաքս-Սուրմալու հիդրոլոգիական դիտակետերի արդիականացում, տվյալների գրանցման և առցանց փոխանցման համակարգերով զինված չափիչ սարքավորումների տեղադրում,

-Ախուրյանի ավազանի հիդրոլոգիական դիտակետերի արդիականացում, (աշխատանքներն իրականացվելու են սույն որոշման Հավելված 1-ի ՏԿԵՆ բաժնի 82.1. կետով հաստատված «Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարման ծրագրի»Փուլ 1. Կապսի ջրամբարի կառուցում» ծրագրի շրջանակներում):

2.Միջոցառումն իրականացումից ակնկալվող արդյունքը

Միջոցառման իրականացումից ակնկալվում է մակերևութային ջրային ռեսուրսների մոնիտորինգի տվյալների արժանահավատության բարձրացում, հետևապես որոշում կայացնողներին առավել ճշգրիտ տեղեկատվությամբ ապահովում, ջրային ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացում: Պետք է նշել, որ հիդրոլոգիական դիտակետերն ավտոմատ կայաններով զինելը կբերի ջրային օբյեկտների հիդրոլոգիական ռեժիմի

	վերաբերյալ առավել մեծ հաճախականությամբ տեղեկատվության ստացման, որը ներկայիս գործող դիտարկման համակարգի նկատմամբ ունի հետևյալ առավելությունները. - համակարգը հնարավորություն է տալիս ստանալ ջրի մակարդակի վերաբերյալ տվյալներ Հիդրոմետ ծառայության ներկայիս ֆիքսված դիտարկումների միջև ընկած ժամանակահատվածների համար, - բարձրանում է տվյալների արժանահավատությունը՝ մարդկային գործոնով պայմանավորված սխալմունքների նվազեցման հետևանքով, - բարձրացնում է շահառուներին տրամադրվող հիդրոլոգիական տեղեկատվության որակը, - բարձրացնում է ստացվող տեղեկատվության օպերատիվությունը, - հիդրոլոգիական դիտացանցի ավտոմատացված համակարգը կնպաստի ջրային օբյեկտներում հիդրոլոգիական ռեժիմի կանխատեսումների արդարացվածության բարձրացմանը: **1.8. «Արարատի և Արմավիրի մարզերում խորքային հորերի լուծարման կամ կոնսերվացման աշխատանքների իրականացում» միջոցառման** **1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման և որակի բարձրացման նպատակով կառավարման գերարդյունավետ համակարգերի ներդրումը, ջրային ռեսուրսների պահպանման, այդ թվում՝ ջրահեռացման ու կեղտաջրերի մաքրման գործընթացի կանոնակարգումը, Արարատյան արտեզյան ավազանի և գետային էկոհամակարգերի պահպանությունն ու կառավարումը» ուղղությունը: Շրջակա միջավայրի նախարարի 2023 թվականի ապրիլի 11-ի «Շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի հունիսի 9-ի N 171-Ա հրամանում փոփոխություններ կատարելու մասին» N131-Ա հրամանի համաձայն՝ ստեղծվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ, որի նպատակն է հաշվառել Արարատյան դաշտի (Արարատի և Արմավիրի մարզերի) խորքային հորերը, հայտնաբերել ապօրինի ջրօգտագործումը (դրանցից քանի՞սն է հնարավոր բերել օրինական դաշտ և քանի՞սն է անհրաժեշտ լուծարել և/կամ կոնսերվացնել): Շրջակա միջավայրի նախարարի 2023 թվականի ապրիլի 11-ի N131-Ա հրամանով ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խումբը, 2023 թվականի ապրիլի 21-ից մինչև հուլիսի 7-ը և սեպտեմբերի 7-ից մինչև հոկտեմբերի 26-ը ներառյալ Արարատյան դաշտում գտնվող Արարատի մարզի 5 համայնքի 94 բնակավայրերի վարչական տարածքներում և Արմավիրի մարզի 7 համայնքի 74 վարչական տարածքներում իրականացրել է 2387 խորքային հորերի գույքագրում: Խորքային հորերի լուծարման կամ կոնսերվացման նպատակն է կանխարգելել Արարատյան դաշտի ստորերկրյա ջրային ռեսուրսների հետագա հյուծումը, աղտոտումը: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Իրականացված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Արարատյան դաշտում շարունակվում է ստորերկրյա ջրերի հյուծման գործընթացը՝ անընդհատ իջնում են ստորերկրյա ջրերի ճնշումները և մակարդակները, ինչի հետևանքով նաև փոխվում է ստորերկրյա քաղցրահամ ջրային ռեսուրսների ընդհանուր հատկությունները՝ բարձրանում է հանքայնացումը և կոշտությունը: Նման պայմաններում ստորերկրյա ջրերի շահագործումը հանգեցնելու է Արարատյան արտեզյան ավազանի ստորերկրյա ջրերի շատրվանող գոտու անհայտացմանը և դրանց աղտոտմանը, իսկ ջրերը կդառնան խմելու համար ոչ պիտանի: **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Ստեղծված իրավիճակը կարգավորելու նպատակով, անհրաժեշտ է լուծարել կամ կոնսերվացնել Արարատյան դաշտում ապօրինի շահագործվող, շահագործման համար ոչ պիտանի և չշահագործվող խորքային հորերը: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Արարատյան դաշտի ստորերկրյա ջրային ռեսուրսների հետագա հյուծման կանխարգելում, ստորերկրյա ջրային ռեսուրսի խնայողություն:
2.	**Սևանա լճի էկոհամակարգային հավասարակշռության և կենսաբազմազանության պահպանումը, վերականգնումը, վերարտադրումը, բնականոն զարգացումն ու խելամիտ օգտագործումը.** **2.1. «Սևանա լճի շրջակայքում ջրածածկման ենթակա տարածքներում ջրի տակ մնացած շինությունների ու ենթակառուցվածքների մաքրման աշխատանքների իրականացում» միջոցառման** **1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Սևանա լճի էկոհամակարգային հավասարակշռության և կենսաբազմազանության պահպանումը, վերականգնումը,

	վերարտադրումը, բնականոն զարգացումն ու խելամիտ օգտագործումը» ուղղությունը և 2001թ. «Սևանա լճի մասին օրենքի» 11-րդ հոդվածի ա) կետը, որի համաձայն՝ անհրաժեշտ է բացառել Սևանա լճի ջրային բացասական հաշվեկշռիռը և ապահովել լճի էկոլոգիապես անհրաժեշտ մակարդակի բարձրացումը: 2001թ. դեկտեմբերի 14-ի «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան և համալիր ծրագրերը հաստատելու մասին» N276 ՀՀ օրենքով նախատեսվում է Սևանա լճի մակարդակի բարձրացում 6 մետրով: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** 2010թ. կադաստրի կոմիտեի կողմից կատարված գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների ընթացքում հաշվառվել է 1905.0մ նիշից ցածր 4729 շենք-շինություններ, որոնցից շուրջ 850-ը նախորդ տարիների ընթացքում ապամոնտաժվել է և ներկայումս առկա են 3800 շենք-շինություններ: Հիմք ընդունելով վարչապետի 2018թ. հունիսի 11-ի N745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետը՝ Սևանա լճի ափամերձ, մինչև 1901.5 մետր բացարձակ նիշն ընկած տարածքներում գտնվող և ապամոնտաժման ենթակա շենք-շինությունների ու ենթակառուցվածքների գույքագրման, դրանց ծավալների հաշվարկման աշխատանքների իրականացման նպատակով աշխատանքային խումբ ստեղծելու մասին շրջակա միջավայրի նախարարի 2020թ. փետրվարի 17-ի N57-Ա հրամանով ստեղծված Սևանա լճի ափամերձ մինչև 1901.5 մետր բացարձակ նիշն ընկած տարածքներում գտնվող և ապամոնտաժման ենթակա շենք-շինությունների ու ենթակառուցվածքների գույքագրման, դրանց ծավալների հաշվարկման աշխատանքների իրականացման նպատակով ստեղծված աշխատանքային խմբի կողմից գույքագրվել են 1697 միավոր ապամոնտաժման ենթակա շենք-շինություններ ու ենթակառուցվածքներ՝ 68520.31 մ^2 ընդհանուր մակերեսով, հաշվարկվել են ծավալները, դրանց տեսակները, կազմվել է նախնական խոշորացված ֆինանսական գնահատականը և ներկայացվել է ՀՀ կառավարությանը: 2021թ. ընթացքում «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ը իր միջոցներով ապամոնտաժել է Սևանա լճի 1905.0 մետր նիշից ներքև ափամերձ տարածքներում գտնվող և ապօրինի կառուցված շուրջ 30 միավոր շենք-շինություններ. **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Համաձայն ՀՀ կառավարության 2008թ. դեկտեմբերի 18-ի N1563-Ն որոշման 5-րդ կետի 1) ենթակետի՝ առաջին ենթագոտում (առաջին ենթագոտի՝ Սևանա լճի մակարդակի բարձրացման հետևանքով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ջրածածկման և ողողման ենթակա տարածքները, որը ներառում է «Սևան» ազգային պարկի լճի ջրային սահմանից մինչև 1905.0 մետր բացարձակ նիշը), արգելվում է հիմնական օբյեկտների կառուցումը, հանգստի և սպասարկող օբյեկտների ֆունկցիոնալ կահավորումն ու բարեկարգումն իրականացվում է միայն ոչ հիմնական շինություններով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան: Լճի մակարդակի բարձրացման արդյունքում ջրի տակ չհայտնվելու համար մինչև 1905 նիշն ընկած տարածքների շենք-շինությունները անհրաժեշտ են ապամոնտաժման: Ապամոնտաժման աշխատանքները կիրականացվեն տնտեսվարող սուբյեկտների և պետական բյուջեի՝ սեփական միջոցների հաշվին: **2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Սևանա լճի ջրի մակարդակի բարձրացման հետևանքով ափամերձ տարածքների բարեկարգում, լճի ջրի էկոլոգասանիտարական վիճակի բարելավում: **2.2. «Սևանա լճի շրջակայքում ջրածածկ և ջրածածկման ենթակա տարածքներում անտառմաքրման աշխատանքների իրականացում» միջոցառման** **1.Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Սևանա լճի էկոհամակարգային հավասարակշռության և կենսաբազմազանության պահպանումը, վերականգնումը, վերարտադրումը, բնականոն զարգացումն ու խելամիտ օգտագործումը» ուղղությունը և 2001թ. դեկտեմբերի 14-ին ընդունված «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ օրենքը, ինչով «Սևան» ազգային պարկի տարածքներից նախատեսվել էր մաքրել ջրածածկի ենթակա 5000 հա անտառածածկ տարածք: Անտառներից և բուսածածկույթից չմաքրված և ջրածածկված անտառային տարածքները վատթարացնում են լճի ջրի որակը, նպաստում են ջրի ծաղկմանը և նեխման գործընթացի սկսմանը: Ջրի որակի բարելավման, ջրի տակ հայտնվելու հետևանքով անտառների նեխման գործընթացը կանխելու համար անհրաժեշտ է իրականացնել Սևանա լճի շրջակայքում ջրածածկ և ջրածածկման ենթակա տարածքներում անտառմաքրման աշխատանքներ:

1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները
2005-2021թթ. ընթացքում ՀՀ պետական բյուջեի միջոցներով և «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ու ֆիզիկական անձանց միջև կնքված պայմանագրերով մաքրվել է շուրջ 2200 հա:
Ներկայումս մինչև 1905մ նիշն առկա է ջրածածկ և ջրածածկման ենթակա 2800 հա մաքրման տարածքներ:
1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները
2021 թվականի ՀՀ պետական բյուջեով «Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրում» միջոցառման համար նախատեսված 208,238.5 հազար դրամ գումարի իրականացվել է վերաբաշխում, որի շրջանակներում նախատեսվում է ՊՈԱԿ-ի միջոցներով անտառմաքրման և շինությունների ապամոնտաժման աշխատանքների իրականացման համար ձեռք բերել համապատասխան մասնագիտացված մեքենամեխանիզմներ:

2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը
Սևանա լճի էկոլոգասանիտարական վիճակի և ջրի որակի բարելավում:

2.3. «Սևանա լճի ավազանում հիդրոօդերևութաբանական և շրջակա միջավայրի մոնիթորինգի դիտարկումների համակարգի բարելավում և արդիականացում, ջրային ռեսուրսների կանխատեսումների որակի և հաշվեկշռի բաղադրիչների հուսալիության բարելավում» միջոցառման

1. Միջոցառումների իրակացման անհրաժեշտությունը և նպատակը
Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Սևանա լճի էկոհամակարգային հավասարակշռության և կենսաբազմազանության պահպանումը, վերականգնումը, վերարտադրումը, բնականոն զարգացումն ու խելամիտ օգտագործումը» ուղղությունը և 2021 թվականի սեպտեմբերի 30-ի «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման միջոցառումների 2022 թվականի տարեկան ծրագիրը հաստատելու մասին» N1584-Ն որոշման Հավելվածի 2.1 կետը:
Միջոցառման նպատակն է բարելավել հիդրոօդերևութաբանական դիտարկումների և շրջակա միջավայրի մոնիթորինգի համակարգը, ջրային ռեսուրսների կանխատեսումների որակի և հաշվեկշռի բաղադրիչների հուսալիությունը Սևանա լճի ավազանում, ինչը խիստ կարևոր է Սևանա լճի էկոլոգիական հավասարակշռության վերականգնման և պահպանության տեսակետից՝ Սևանա լճի ավազանում ավտոմատ օդերևութաբանական կայանների և ջրային մակերևույթից գոլորշաչափերի տեղադրման, Սևանա լճի ավազանում շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգի գործընթացում ժամանակակից սարքավորումներով և մեթոդներով հագեցվածության ապահովման, կարողությունների զարգացման միջոցով:
1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները
Սևանա լճի ավազանի դիտարկումների ցանցում ներկայումս շահագործվող մասնագիտական գործիքների ու սարքավորումների 70-80%-ը բարոյապես և ֆիզիկապես մաշված են և ցանցն ունի վերազինման խիստ կարիք:
1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները
Իրականացվելու է Սևանա լճի ավազանում 6 ավտոմատ օդերևութաբանական կայանների ձեռքբերում և տեղադրում և ջրային մակերևույթից գոլորշացման ճշգրիտ գնահատման նպատակով, (ԳԳԻ-3000) գոլորշաչափերի տեղադրում Սևանա լճի ավազանում, շրջակա միջավայրի մոնիթորինգի դաշտային հետազոտությունների, նմուշառումների դիտարկումների սարքերի և միջոցների ձեռքբերում, շահագործում:

2. Միջոցառումների իրականացումից ակնկալվող արդյունքը:
Միջոցառման իրականացումից ակնկալվում է Սևանա լճի ջրային հաշվեկշռի կազմման բարելավում և հաշվեկշռի բաղադրիչների հուսալիության բարձրացում լճի ջրային ռեսուրսների կանխատեսումների որակի բարելավում, շրջակա միջավայրի էկոհամակարգի մոնիթորինգի կարողությունների բարելավում և արդիականացում:
Միջոցառումները նախատեսվում է իրականացնել 2021-2026 թվականների ընթացքում՝ անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության դեպքում:

2.4 «Սևանա լճի ջրածածկ տարածքների մաքրման աշխատանքների համար տեխնիկայի ձեռքբերում» միջոցառման

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը
Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Սևանա լճի էկոհամակարգային հավասարակշռության և կենսաբազմազանության պահպանումը, վերականգնումը, վերարտադրումը, բնականոն զարգացումն ու խելամիտ օգտագործումը» ուղղությունը և 2021 թվականի սեպտեմբերի 30-ի N1584-Ն որոշման 2.7 կետը, որով ամրագրված է ջրի որակի վատթարացումը և լճի ճահճացումը կանխարգելելու նպատակով միջոցառման իրականացումը:

Սևանա լճի շրջակայքում ջրածածկման ենթակա տարածքներում անտառմաքրման աշխատանքների իրականցման նպատակով՝ շրջակա միջավայրի նախարարությունը հանդես գալով որպես պատվիրատու՝ «Հարությունյան Շին» ՍՊ ընկերության (այսուհետ՝ կապալառու) հետ 2019 թվականի սեպտեմբերի 2-ին կնքել էր «Պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման» պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր):
Պայմանագրի շրջանակներում 2019-2021թթ. նախատեսվել էր մաքրել 750հա ջրածածկի ենթակա տարածք, որից 2020 թվականի համար նախատեսվել էր մաքրել 271.0 հա «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի Մարտունու մասնաճյուղի Մարտունի և Երանոս տեղամասերում և Վարդենիսի մասնաճյուղի Վարդենիս և Ծովակ տեղամասերում: Մինչդեռ, մաքրման աշխատանքները կապալառուի կողմից իրականացվել են Պայմանագրով ստանձնած պարտավորությունների որոշակի խախտումներով:
Հիմք ընդունելով նշված հանգամանքը, շրջակա միջավայրի նախարարությունը, միակողմանի (մասնակի) հրաժարվել է կապալային աշխատանքների կատարման պայմանագրից:
Ելնելով վերոգրյալից շրջակա միջավայրի նախարարությունը նախաձեռնել է խնդրո առարկա աշխատանքները իրականացնել անմիջականորեն «Սևան» ԱՊ» ՊՈԱԿ-ի միջոցով: Այդ նպատակով ՀՀ կառավարության 2021 թվականի հուլիսի 8-ի N1133-Ն որոշման համաձայն իրականացվել է 208,238.5 հազար դրամ գումարի վերաբաշխում՝ 132,570.0 հազար դրամ գումարի շրջանակներում ընթացքի մեջ է համապատասխան մասնագիտացված մեքենամեխանիզմների (1 բեռնաբարձող և բեռնաթափող էքսկավատոր, 1 բուլդոզեր-տրակտոր, 1 ինքնաթափ բեռնատար մեքենա) և հատուկ սարքավորումների (6 բենզասղոց) ձեռքբերման գործընթացը, իսկ մնացած 25,222.8 հազար դրամն ուղղվել է «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին՝ վերոնշյալ տեխնիկական միջոցների շահագործման ու սպասարկման ապահովմանը:
Ձեռք բերված սարքավորումների միջոցով, ըստ նախնական գնահատականների և, ելնելով ժամկետային սահմանափակումներից, 2021 թվականին նախատեսվում է, 2019-2021թթ. համար հաստատված նախագծա-նախահաշվային փաստաթղթերի հիման վրա, իրականացնել վերոնշյալ խնդիրների արդյունքում չմաքրված տարածքների մաքրման աշխատանքներ (մոտ 50հա):
Հետագա տարիներին նախատեսվում է մաքրման աշխատանքներն իրականացնել առաջանցիկ տեմպերով: Այդ նպատակով ներկայումս լրամշակման փուլում է գտնվում ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի շրջակա միջավայրի նախարարության հայտը, որի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել ևս 2 միավոր տեխնիկա, ինչպես նաև նախատեսվում են «EU4SEVAN» ծրագրի շրջանակներում ձեռք բերվող ամբարձիչ մեքենայի պահպանման և շահագործման ծախսերը:
Միաժամանակ, «Սևան» ԱՊ կողմից նշված տեխնիկան կներգրավվի նաև Սևանա լճի առափնյա տարածքների ջրածածկման ենթակա շենք-շինությունների ապամոնտաժման աշխատանքներում, ինչը կնպաստի Սևանա լճի էկոհամակարգի ներկայիս վիճակի բարելավմանը:

1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Շրջակա միջավայրի նախարարությունը նախաձեռնել է խնդրո առարկա աշխատանքներն իրականացնել անմիջականորեն «Սևան» ԱՊ» ՊՈԱԿ-ի միջոցով, որի նպատակով նախատեսվում է իրականացնել համապատասխան տեխնիկայի ձեռքբերում: Այդ նպատակով նախատեսվում է իրականացնել «Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրում:

1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Ձեռք բերված սարքավորումների միջոցով, ըստ նախնական գնահատականների և ելնելով ժամկետային սահմանափակումներից, նախատեսվում է 2021 և 2023 թվականների համար հաստատված նախագծա-նախահաշվային փաստաթղթերի հիման վրա իրականացնել վերոնշյալ խնդիրների արդյունքում չմաքրված տարածքների մաքրման աշխատանքներ:

2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Միջոցառման իրականացման արդյունքում ձեռք կբերվի տեխնիկա և միաժամանակ Սևանա լճի ջրածածկ տարածքների մաքրման աշխատանքների համար ձեռք բերված տեխնիկան «Սևան» ԱՊ կողմից կներգրավվի նաև Սևանա լճի առափնյա տարածքների ջրածածկման ենթակա շենք-շինությունների ապամոնտաժման աշխատանքներում:

2.5 «Սևան» ազգային պարկի ռեկրեացիոն գոտում հանրային լողափերի գործարկում» միջոցառման

1.Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Սևանա լճի էկոհամակարգային հավասարակշռության և կենսաբազմազանության պահպանումը, վերականգնումը, վերարտադրումը, բնականոն զարգացումն ու խելամիտ օգտագործումը» ուղղությունը և բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 28.04.2011թ.-ի N527-Ն, 07.06.2012թ.-ի N752-Ն, 01.10.2015թ.-ի N1122-Ն և 13.

	07. 2023թ. N1186-Ն որոշումներով ստեղծված «Սևան» ազգային պարկի ռեկրեացիոն գոտում հանրային լողափերի գործարկման պահանջից: **1.1.կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** «Սևան» ազգային պարկում Կառավարության վերոնշյալ որոշումներով առանձնացված է 12 հանրային լողափ, որոնցից 7-ը մրցութային կարգով պատվիրակված են և ունեն վարձակալներ, իսկ 5-ը՝ դեռ ոչ: *<u>Վարձակալված 7 հանրային լողափերի մասով</u>*՝ - 3 լողափ գործարկված են, սակայան առկա են խնդիրներ սպասարկման որակի մասով, մասնավորապես անվճար մատուցվող ծառայությունների պատշաճ մակարդակով իրականացման հետ կապված: - 4 լողափի բարեկարգման գործընթացը իրականացնելու, լողափնյա սեզոնին ընդառաջ սպասարկման ծառայություններ մատուցման գործընթացում առկա են որոշակի խնդիրներ, մասնավորապես կապված լողափերի շահագործման ժամկետների ձգձգման հետ: Խնդրի կարգավորման համար քննարկումներ են իրականացվել վարձակալների հետ, որի ժամանակ քննարկվել են աշխատանքների ընթացիկ վիճակը, վեր են հանվել առկա խնդիրները: Վարձակալներին տեղեկացվել է, որ 1. կնքված պայմանագրերում անհրաժեշտություն է առաջացել կատարելու փոփոխություններ՝ լողափերը հաշմանդամություն ունեցող անձանց համապատասխանեցնելու պահանջներ ամրագրելու նպատակով, 2. դրվել է խստագույն պահանջ հանրային լողափերի սպասարկումը բարձր մակարդակով և պատշաճ որակով կազմակերպելու համար, 3. տեղեկացվել է, որ վերոնշյալ պահանջների չկատարումը կհանդիսանա պայմանագրերի միակողմանի լուծման հիմք, 4. դրվել է պահանջ լողափերի շահագործման նպատակով ձեռնարկվելիք քայլերն առավել արագ ընթացակարգով իրականացնելու մասով: Չվարձակալված 5 հանրային լողափի համար մեկնարկել է մրցույթների կազմակերպման գործընթաց: **1.2.առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Հանրային լողափերի լուսաբանման և հանրայնացման գործընթացն ակտիվացնելու նպատակով Նախարարությունը նախաձեռնել է մշակել տեսահոլովակ, քարտեզագրական պատկերավոր նյութեր և իրականացնել լայն լուսաբանում՝ հանրային լողափերի հանրայնացման և ներդրումների տեսանկյունից առավել գրավիչ դարձնելու նպատակով: Վերոնշյալով պայմանավորված նախատեսվում է հետամուտ լինել այս մասով իրականացվող աշխատանքներին՝ գործարկված լողափերի սահմանված չափորոշիչներով և որակով ծառայությունների մատուցման իրականացմանը, նոր բարեկարգվող լողափերի շահագործման ընթացքի անհարկի ձգձգումների վերացմանը: Անհրաժեշտության դեպքում քայլեր ձեռնարկել քայլեր վերջնարդյունքի հասնելու ուղղությամբ՝ վերանայելով պայմանագով սահմանված պահանջները: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառումների իրականացման արդյունքում ակնկալվում է «Սևան» ազգային պարկի տարածքում ունենալ բարձր մակարդակով և պատշաճ որակով կազմակերպված, հանրության բոլոր շերտերին հասանելի, նոր «էկոֆրենդլի» մոտեցումներով և նոր մշակույթ ստեղծող լողափնյա սեզոնին ընդառաջ գործող 12 հանրային լողափ:
3.	**Անտառների կայուն կառավարումը՝ անտառների պահպանությունը, պաշտպանությունը, օգտագործումը և անտառածածկ տարածքների ընդլայնումը՝ անտառապատման ու անտառավերականգնման միջոցով, ու դրանց իրականացմանն ուղղված կարողությունների շարունակական հզորացումը.** **3.1. «Անտառային կոմիտեի «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Անտառտնտեսություն» մասնաճյուղերի համար անտառաշինական նախագծերի (անտառկառավարման պլանների) մշակում և հաստատում նախարարի հրամանով» միջոցառման** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Անտառների կայուն կառավարումը՝ անտառների պահպանությունը, պաշտպանությունը, օգտագործումը և անտառածածկ տարածքների ընդլայնումը՝ անտառապատման ու անտառավերականգնման միջոցով, ու դրանց իրականացմանն ուղղված կարողությունների շարունակական հզորացումը» ուղղությունը, ինչպես նաև ՀՀ Անտառային օրենսգրքի 15-րդ հոդվածը: Անտառային տնտեսության վարման հիմք է հանդիսանում անտառաշինական նախագիծը (անտառակառավարման պլանը), որն իրենից ներկայացնում է անտառշինության արդյունքում մշակված և հաստատված տեխնիկական փաստաթուղթ: Անտառշինական նախագծում պլանավորվում է անտառային տնտեսության վարման առաջիկա 10 տարիներին իրականացվելիք միջոցառումները: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

ՀՀ գյուղատնտեսության նախարարի 16 նոյեմբերի 2017 թվականի N253-Ա հրամանով շրջակա միջավայրի նախարարության Անտառային կոմիտեի «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Անտառտնտեսություն» մասնաճյուղի անտառշինական նախագծերը (անտառկառավարման պլանները) ուժը կորցրած են ճանաչվել, և ներկայումս անհրաժեշտություն է առաջացել «Հայանտառ» ՊՈԱԿ-ի բոլոր «անտառտնտեսություն» մասնաճյուղերի համար մշակել և հաստատել նոր անտառաշինական նախագծեր (անտառակառավարման պլաններ): Անտառակառավարման պլանների բացակայությունը լուրջ խոչընդոտ է հանդիսանում անտառների կայուն կառավարման համար:

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի 17 «Անտառտնտեսություն» մասնաճյուղերից 9-ի համար մշակվել և սահմանված կարգով հաստատվել են անտառկառավարման պլանները: , 2022թ. պետական բյուջեի ֆինանսավորմամբ մշակվել են «Հայանտառ» ՊՈԱԿ-ի 4 անտառտնտեսությունների անտառակառավարման պլանները, որոնցից մեկն արդեն իսկ ստացել է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման դրական եզրակացություն և գտնվում է հաստատման փուլում, իսկ երեքը գտնվում են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննության փուլում: Ներկայումս մշակվում են մնացած 4 մասնաճյուղերի անտառակառավարման պլանները ինչի համար պետական բյուջեից հատկացվել է 489261.6 հազ. դրամ:

1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Անտառշինական նախագծերի (անտառկառավարման պլանների) մշակում և հաստատում «Հայանտառ» ՊՈԱԿ-ի բոլոր «անտառտնտեսություն» մասնաճյուղերի համար:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Անտառակառավարման պլանների մշակումը և հաստատումը թույլ կտա հստակեցնել անտառային տարածքների սահմանները, անտառների ներկա վիճակը և պլանավորել անտառային տնտեսության վարման առաջիկա 10 տարիների համար անհրաժեշտ միջոցառումները:

3.2. «Անտառվերականգնման և անտառապատման աշխատանքների կազմակերպում, այդ թվում անտառային տնկարանների հիմնում և սերմնային տնտեսության զարգացում» միջոցառման

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Անտառների կայուն կառավարումը՝ անտառների պահպանությունը, պաշտպանությունը, օգտագործումը և անտառածածկ տարածքների ընդլայնումը՝ անտառապատման ու անտառավերականգնման միջոցով, ու դրանց իրականացմանն ուղղված կարողությունների շարունակական հզորացումը» ուղղությունը: Միաժամանակ, ՄԱԿ–ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի շրջանակներում ընդունված «Ազգային մակարդակով սահմանված նախատեսվող գործողությունները/ներդրումը» (INDC) փաստաթղթով Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է միջազգային պարտավորություն մինչև 2050 թվականը երկրի անտառապատվածությունը ներկայիս 11.2 %-ի փոխարեն հասցնել օպտիմալ 20.1%-ի:

1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Անտառվերականգնման և անտառապատման աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ է ունենալ տարբեր տեսակների որակյալ տնկանյութ, ինչի համար պետք է զարգացնել տնկարանային և սերմնային տնտեսությունները: Ստանձնած պարտավորությունը կատարելու նպատակով մինչև 2030 թվականը նախատեսվում է կատարել 20000 հա անտառապատման աշխատանքներ:

Աշխատանքները նախատեսվում է իրականացնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին: 1 հա անտառապատման աշխատանքների միջին ծախսը կկազմի շուրջ 2000.0 հազ. դրամ:

Շրջակա միջավայրի նախարարության «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղում առկա էր փակ արմատային համակարգով տնկանյութի աճեցման ջերմոցային համալիր՝ 1000 քմ (500քմ+500քմ) ընդհանուր մակերեսով, որտեղ հնարավոր էր աճեցնել մինչև 250000 հատ փակ արմատային համակարգով սերմնաբուսակներ:

«Հայաստանում անտառների դիմակայության բարձրացում՝ մեղմացման միջոցառումների շնորհիվ հարմարեցման և գյուղական վայրերում կանաչ տարածությունների ընդլայնման միջոցով» ծրագրի շրջանակներում շրջակա միջավայրի նախարարության «Հայանտառ» ՊՈԱԿ-ի 3 «Անտառտնտեսություն» մասնաճյուղերում 2022 թվականից սկսվել են 6 հատ ժամանակակից ջերմոցային համալիրների հիմնադրման աշխատանքներ, ինչի արդյունքում 2024 թվականին հնարավոր կլինի աճեցնել շուրջ 1 մլն. փակ արմատային համակարգով սերմնաբուսակներ:

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի «անտառտնտեսություն» մասնաճյուղերում առկա են նաև տնկարաններ, որտեղ աճեցվում են բաց արմատային համակարգով տնկանյութ: Սակայն եղած տնկարաններով հնարավոր չէ բավարարել պահանջվող տնկանյութի ողջ քանակությունը, ուստի, անհրաժեշտ է ընդլայնել և զարգացնել տնկարանային տնտեսությունները: Նախատեսվում է հանրապետության տարբեր մարզերում հիմնել 1.3 հա ընդհանուր մակերեսով ջերմոցային

տնտեսություններ և աճեցնել փակ արմատային համակարգով տնկանյութ, որի համար կպահանջվի 686000.0 հազ. դրամ:
2020-2022 թվականներին պետական բյուջեից փաստացի ծախսվել է 875743.3 հազ. դրամ, որով շրջակա միջավայրի նախարարության «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Անտառտնտեսություն» մասնաճյուղերում կատարվել են անտառապատման (385 հա) և անտառվերականգնման (491 հա) աշխատանքներ: Բացի այդ, «Մայլեռ մաունթայն ռեզորթ» ՓԲԸ-ի կողմից անտառային տնտեսությանը հասցվող վնասի հատուցման ծրագրի շրջանակներում 2022թ. հիմնադրվել է շուրջ 11 հա անտառմշակույթներ: Լոռու և Տավուշի մարզերի անտառտնտեսություններում «Հողերի և անտառի կայուն կառավարման ներդնումը հյուսիս-արևելյան Հայաստանի լեռնային լանդշաֆտներում» ծրագրի շրջանակներում 2020թթ. «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Անտառտնտեսություն» մասնաճյուղերում կատարվել են 1715 հա անտառվերականգնման աշխատանքներ, ինչպես նաև «Պահպանվող Տարածքների Աջակցման Ծրագիր-Հայաստան» ծրագրի շրջանակներում «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Կապանի անտառտնտեսություն» մասնճյուղում հիմնադրվել են 3.0 հա անտառմշակույթներ:
2023 թվականին «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Անտառտնտեսություն» մասնաճյուղերում անտառվերականգնման և անտառապատման աշխատանքների իրականացման համար պետական բյուջեից հատկացվել է 413,011.7 հազ. դրամ, 2024 թվականին՝ նախատեսվում է հատկացնել՝ 2,837,103.82 հազ. դրամ:

1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Անտառվերականգնման և անտառապատման ենթակա տարածքների ընտրություն (անտառակառավարման պլանների առկայության դեպքում հիմք ընդունելով կառավարման պլանի տվյալները), նախագծում և կազմակերպում, անտառային տնկարանների հիմնում և սերմնային տնտեսության զարգացում: Անհրաժեշտ քանակությամբ որակյալ տնկանյութ ստանալու նպատակով ջերմոցային համալիրներ են հիմնվելու Հայաստանի տարբեր մարզերում, ինչը հնարավորություն կընձեռի տարեկան աճեցնել մինչև 3 մլն. հատ բարձրորակ անտառային տարբեր ծառատեսակների փակ արմատային համակարգով տնկանյութ:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Բարձրորակ և բավարար քանակությամբ տնկանյութի ստացում, անտառածածկ տարածքների ընդլայնում, ածխածնի կուտակման ավելացում, կլիմայի փոփոխության ազդեցության մեղմացում:

3.3. «Անտառների կառավարման ոլորտում անտառպահպանության, անտառվերականգնման և անտառօգտագործման նորագույն տեխնիկայի և սարքավորումների ձեռքբերում» միջոցառման

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Անտառների կայուն կառավարումը՝ անտառների պահպանությունը, պաշտպանությունը, օգտագործումը և անտառածածկ տարածքների ընդլայնումը՝ անտառապատման ու անտառավերականգնման միջոցով, ու դրանց իրականացմանն ուղղված կարողությունների շարունակական հզորացումը» ուղղությունը: Անտառապատման և անտառօգտագործման աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու, փայտանյութի մթերումն առանց անտառին վնաս հասցնելու իրականացնելու, կողմնակի անտառօգտագործումը զարգացնելու, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի սեփական եկամուտներն ավելացնելու նպատակով անհրաժեշտ է կատարել տեխնիկական վերազինում:

1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Քանի որ Հայաստանը հանդիսանում է լեռնային երկիր, և անտառները գտնվում են հիմնականում թեք լանջերի վրա, ապա ներկայումս կիրառվող հնացած (դեռևս Խորհրդային Միության տարիներից) տեխնոլոգիաները թույլ չեն տալիս հատատեղերի շահագործումն իրականացնել էկոլոգիապես անվտանգ եղանակով, որը հանգեցնում է բազմաթիվ խնդիրների:
Անտառապատման աշխատանքները նույնպես հիմնականում կատարվում են ձեռքով, քանի որ տարածքները գտնվում են թեք լանջերի վրա և չկան համապատասխան (մեծ թեքությունների վրա աշխատող տրակտորներ և այլն) տեխնիկական միջոցներ:
Անտառները հրդեհներից պահպանելու, ինչպես նաև անտառտնտեսական աշխատանքները առավել արդյունավետ իրականացնելու նպատակով անհրաժեշտ է ձեռք բերել նորագույն տեխնիկա ու սարքավորումներ, որի համար կպահանջվի շուրջ 6.5 մլն. դոլար:
2020-2021թթ. միջազգային ծրագրերի շրջանակներում «Հայանտառ» ՊՈԱԿ-ին տրամադրվել է շուրջ 65.0 մլն. դրամի տրանսպորտային միջոցներ ու սարքավորումներ:

1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Անտառպահախմբի աշխատողների ժամանակակից տեխնիկական և տրանսպորտային միջոցներով վերազինում, հրդեհների արագ արձագանքման խմբերի ստեղծում և այլն:

Նախատեսվում է ձեռք բերել «Պիկապ» տեսակի ամենագնացներ, դրոններ, GPS և այլ սարքավորումներ, ծխի, ձայնի, ջերմության նկատմամբ զգայուն սարքեր /սենսորներ/, տեսանկարահանող սարքեր, դրանց սպասարկող սարքավորումներ, հիմնել անտառային պտուղների և հատապտուղների հավաքագրման և վերամշակման կենտրոններ, բրիկետների արտադրության կետեր և այլն:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը
Կնվազեն ապօրինի հատումները, անտառային հրդեհների դեպքերը, կբարձրանա անտառային ռեսուրսների օգտագործման և անտառապատման աշխատանքների արդյունավետությունը, կավելանան անտառային տնտեսության եկամուտները:

3.4. «Վնասատուներից և հիվանդություններից անտառների պաշտպանության նպատակով անտառպաթոլոգիական ուսումնասիրությունների իրականացում, վնասատուների և հիվանդությունների դեմ կենսաբանական պայքարի իրականացման կազմակերպում» միջոցառման

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը
Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Անտառների կայուն կառավարումը՝ անտառների պահպանությունը, պաշտպանությունը, օգտագործումը և անտառածածկ տարածքների ընդլայնումը՝ անտառապատման ու անտառավերականգնման միջոցով, ու դրանց իրականացմանն ուղղված կարողությունների շարունակական հզորացումը» ուղղությունը և ՀՀ Անտառային օրենսգրքի 17.1-րդ հոդվածը Միջոցառման իրականացման նպատակն է ապահովել անտառպաշտպանական աշխատանքների արդյունավետությունը:
1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները
2023 թվականի գարնանը կատարված անտառպաթոլոգիական ուսումնասիրությունների տվյալների համաձայն վնասատուներով և հիվանդություններով վարակված անտառային տարածքները կազմել են շուրջ 9000 հա, բացի այդ նկատվում են ասեղնատերևավոր ծառատեսակների զանգվածային չորացման դեպքեր:
Հաշվի առնելով անտառպաթոլոգիական ուսումնասիրությունների բազմամյա փորձը՝ նախատեսվում է վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի աշխատանքները կատարել տարեկան միջինում 9000 հա անտառներում: Տվյալ տարվա աշխատանքների փաստացի ծավալը կհստակեցվի անտառպաթոլոգիական ուսումնասիրությունների արդյունքում: 2023 թվականին «Հայանտառ» ՊՈԱԿ-ի 4120 հա անտառածածկ տարածքներում առաջին անգամ վնասատուների և հիվանդությունների դեմ ավիացիոն քիմիական պայքարի փոխարեն իրականացվել են ավիացիոն կենսաբանական պայքարի աշխատանքներ, որի արդյունքում համաձայն անտառպաթոկոգիական ուսումնասիրությունների տվյալների վնասատուների և հիվանդությունների օջախները կտրուկ նվազել են:2024 թվականին նույնպես նախատեսվում է իրականացնել ավիացիոն կենսաբանական պայքարի աշխատանքներ, որոնց համար պետական բյուջեից նախատեսված է հատկացնել 313200.0 հազ. դրամ:
1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները
Անտառային վնասատուների և հիվանդությունների դեմ իրականացնել բացառապես կենսաբանական պայքարի աշխատանքներ, ստեղծել համապատասխան լաբորատորիա և այլն:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը
Առողջ անտառների առկայություն:

3.5. «Անտառային կադաստրի վարում» միջոցառման

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը
Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Անտառների կայուն կառավարումը՝ անտառների պահպանությունը, պաշտպանությունը, օգտագործումը և անտառածածկ տարածքների ընդլայնումը՝ անտառապատման ու անտառավերականգնման միջոցով, ու դրանց իրականացմանն ուղղված կարողությունների շարունակական հզորացումը» ուղղությունը և ՀՀ Անտառային օրենսգրքի 16-րդ հոդվածը Անտառների կադաստրի վարումն իրականացվում է անտառների կայուն կառավարման, անտառների քանակական և որակական փոփոխությունների պարբերական գրանցման, ինչպես նաև ՀՀ կառավարությանը, տեղական ինքնակառավարման մարմիններին, շահագրգիռ իրավաբանական անձանց և քաղաքացիներին անտառային հողերի մասին տեղեկություններով ապահովելու նպատակով:
1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Ներկայումս անտառների կադաստրի վարման համակարգը դեռ չի ստեղծվել, ինչի արդյունքում անտառային և կադաստրային քարտեզներում առկա են մեծ քանակությամբ անճշտություններ և անհամապատասխանություններ, ինչի շտկման նպատակով ստեղծվելու է անտառների կադաստրի համակարգը:
Անտառների կադաստրի ստեղծման և վարման նպատակով 2020թ. պետական բյուջեի ֆինանսավորմամբ ձեռք են բերվել 1 հատ անօդաչու թռչող սարք, 8 հատ համակարգիչ, 8 հատ լազերային տպիչ, 9 հատ գրաֆիկական պլանշետ:
2021 թվականին պետական բյուջեի ֆինանսավորմամբ մշակվել է անտառային կադաստրի վարման ծրագիր, ինչը համատեղվել է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության կողմից նախկինում մշակված Անտառների կառավարման տեղեկատվական համակարգի հետ:
2023 թվականին անտառների կադաստրի վարման համար հատկացվել է 15000.0 հազ. դրամ, որի շրջանակներում իրականացվել է 109 հա չափագրման աշխատանքներ և անտառների կառավարման տեղեկատվական համակարգի սպասարկում:
Անտառների կադաստրի վարման նպատակով 2024-2026թթ, միջնաժամկետ ծախսային ծրագրով պետական բյուջեից նախատեսվում է տարեկան հատկացնել 15000 հազ. դրամ:

1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները
Անտառների կադաստրի վարման համար անհրաժեշտ հենքի ստեղծում:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը
Անտառների կադաստրի համակարգի ստեղծում և վարում:

3.6. «Անտառների պետական հաշվառում» միջոցառման

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը
Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Անտառների կայուն կառավարումը՝ անտառների պահպանությունը, պաշտպանությունը, օգտագործումը և անտառածածկ տարածքների ընդլայնումը՝ անտառապատման ու անտառավերականգնման միջոցով, ու դրանց իրականացմանն ուղղված կարողությունների շարունակական հզորացումը» ուղղությունը և ՀՀ Անտառային օրենսգրքի 16-րդ հոդվածը
Անտառների պետական հաշվառումն իրականացվում է ՀՀ Անտառային օրենսգրքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ 5 տարին մեկ անգամ, անտառների պահպանության, պաշտպանության, վերականգնման, որակական և քանակական փոփոխությունների գրանցման, տեղեկատվության տրամադրման, հաշվարկային հատատեղերի սահմանման, անտառների օգտագործման, զարգացման, անտառատնտեսական այլ միջոցառումների ծրագրավորման, ինչպես նաև անտառների նպատակային կամ գործառնական նշանակության փոփոխման նպատակով:
1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները
Անտառների պետական հաշվառումն իրականացվում է 5 տարին մեկ, սակայն 1993 թվականից հետո չի կատարվել ֆինանսական միջոցների, ինչպես նաև անտառների և անտառային տարածքների վերաբերյալ ամբողջական տեղեկատվության բացակայության պատճառով (ոչ բոլոր անտառտնտեսություններն ունեին անտառակառավարման պլաններ):
1. 2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները
Հայաստանում անտառների պետական հաշվառում վերջին անգամ իրականացվել է 30 տարի առաջ, ինչի արդյունքում առկա տվյալները կորցրել են իրենց արդիականությունը և անհրաժեշտություն է առաջացել իրականացնել անտառների պետական նոր հաշվառում: Սակայն հաշվի առնելով, որ անտառների պետական հաշվառումն իրականացվում է հիմք ընդունելով անտառշինական նախագծերը (անտառկառավարման պլաններ), ապա անհրաժեշտ է այն իրականացնել անտառկառավարման պլանների մշակումից հետո, ինչի վերջնաժամկետն է սահմանված 2023 թվականը: Անտառների պետական հաշվառման համար անհրաժեշտ կլինի հատկացնել շուրջ 260,000.0 հազ. դրամ գումար:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը
Անտառների պահպանության, պաշտպանության, վերականգնման, որակական և քանակական փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվության առկայություն:

3.7. « Անտառներում և բնության հատուկ պահպանվող տարածքներում պահպանության գործընթացի արդյունավետության բարձրացում» միջոցառման

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Անտառների կայուն կառավարումը՝ անտառների պահպանությունը, պաշտպանությունը, օգտագործումը և անտառածածկ տարածքների ընդլայնումը՝ անտառապատման ու անտառավերականգնման միջոցով, ու դրանց իրականացմանն ուղղված կարողությունների շարունակական հզորացումը» ուղղությունը և Անտառային օրենսգրքի 21-րդ հոդվածը, ինչի համաձայն անտառային տնտեսություն վարող անձինք և անտառօգտագործողները իրավունք ունեն անտառները պահպանելու ինքնակամ զավթումներից, ապօրինի հատումներից, ապօրինի արածեցումներից, աղտոտումներից, աղբոտումներից և օրենսդրությամբ արգելված անտառային կենսաբազմազանությանը վնաս պատճառող այլ գործողություններից և անտառային օրենսդրության խախտումներից: «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» օրենքի 23-րդ հոդվածի համաձայն բնության հատուկ պահպանվող տարածքի պահպանությունն իրականացնող իրավաբանական անձի պահպանության ծառայության աշխատողների պարտականություններն են ապահովել բնության հատուկ պահպանվող տարածքի կանոնադրությամբ սահմանված բնապահպանական նորմերի և կանոնների պահանջների կատարումը, կանխել բնության հատուկ պահպանվող տարածքի սահմանված ռեժիմը խախտող ցանկացած գործողություն:

1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Ներկայումս անտառների և բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանությունն իրականացվում է պահպանություն իրականացնող աշխատակիցների միջոցով, որոնք ունեն ցածր սոցիալական պաշտպանվածություն և լիազորություններ, աշխատում են աշխատանքային օրենսգրքով սահմանված հնգօրյա և 8-ժամյա աշխատանքային գրաֆիկով (09:00-18:00), ունեն տեխնիկական ցածր զինվածություն, ինչի արդյունքում հնարավոր չի լինում լիարժեք կատարել տարածքների պահպանությունը:

Ներկայիս Անտառային օրենսգրքի 26-րդ հոդվածը սահմանում է, որ անտառների պահպանությունն իրականացնում է պետական կառավարման լիազորված մարմնի համակարգում գործող անտառային պետական ծառայությունը: Միևնույն ժամանակ, անտառային օրենսգրքի 26-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ անտառային պետական ծառայության գործունեության կարգը սահմանվում է օրենքով: Մինչդեռ, անհրաժեշտություն է առաջացել ամբողջությամբ վերանայել օրենսդրական կարգավորումները և ապահովել միասնական մոտեցում անտառների և բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության հարցում:

1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Վերլուծության արդյունքներով նպատակահարմար է համարվել, որ անտառների և բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության պատշաճ հսկողություն հնարավոր չէ ներկայիս պահպանություն իրականացնող աշխատակիցների սակավ թվակազմով, քանի որ ծառայողների խնդիրը ոչ միայն օրենսդրությամբ սահմանված իրավասության սահմաններում անտառային օրենսդրության խախտումների հայտնաբերման, այլև կանխման, կանխարգելման ապահովումն է, որը հնարավոր է միայն շուրջօրյա հերթապահության պարագայում: Ուստի, առաջարկվել է Կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N1902-Լ որոշման հավելված 1-ի 3.7 կետի «Ակնկալվող արդյունք» սյունակում «Անտառային կոմիտեի կազմում անտառների պահպանության շուրջօրյա հսկողություն իրականացնող 30 հաստիքային միավորից բաղկացած ստորաբաժանման առկայություն՝ անտառային օրենսդրության խախտումների կանխարգելման և նվազեցման նպատակով» նախադասությունը փոխարինել «Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի պահպանության ծառայության մասին օրենքի նախագիծը Կառավարության հավանությանն արժանանալու վերաբերյալ Կառավարության որոշման ընդունում» նախադասությունով:

Ուստի, նախատեսվում է «Հայանտառ» ՊՈԱԿ-ի և բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարումն իրականացվող ՊՈԱԿ-ների պահպանություն իրականացնող աշխատակիցների հաստիքների միանական կառավարում ընդհանուր ծառայության միջոցով՝ 24 ժամ աշխատաժամանակի տևողությամբ, որը կապահովի տարածքների անընդմեջ հսկողությունը և կնպաստի խախտման դեպքերի ժամանակին հայտնաբերմանն ու կանխարգելմանը:

Ընդհանուր առմամբ նախատեսվում է ամբողջությամբ վերանայել կառավարման համակարգը:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Անտառների և բնության հատուկ պահպանվող տարածքների շուրջօրյա պահպանության ապահովում, օրենսդրության խախտումների կանխարգելում և նվազեցում

3.8 «Պետական անտառների, անտառային հողերի օգտագործման տալու և բնության հատուկ պահպանվող տարածքների հողամասերի վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրելու ընթացակարգերի վերանայում» միջոցառման

	1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Անտառների կայուն կառավարումը՝ անտառների պահպանությունը, պաշտպանությունը, օգտագործումը և անտառածածկ տարածքների ընդլայնումը՝ անտառապատման ու անտառավերականգնման միջոցով, ու դրանց իրականացմանն ուղղված կարողությունների շարունակական հզորացումը» ուղղությունը և բխում է Հողային օրենսգրքի 77-րդ հոդվածի 1.1 կետով սահմանված պահանջից: Միջոցառման սահմանման նպատակը պետական անտառների, անտառային հողերի օգտագործման, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքների հողամասերի վարձակալության և (կամ) կառուցապատման տրամադրելու գործընթացում միասնական մոտեցումներ, սկզբունքներ, բնապահպանական պահանջներ, ներդրումներին միտված չափորոշիչներ սահմանելն է՝ ուղղված միատեսակ քաղաքականության իրականացմանը: **1.1.կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս գործում է ոլորտը կարգավորող երկու իրավական ակտ՝ Կառավարության 2007 թվականի մայիսի 24-ի «Պետական անտառները և անտառային հողերն օգտագործման տալու կարգը սահմանելու մասին» N806-Ն և Կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 18-ի «Բնության հատուկ պահպանվող տարածքների հողամասերը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով միջգերատեսչական մրցութային հանձնաժողով ստեղծելու և միջգերատեսչական մրցութային հանձնաժողովի աշխատակարգը հաստատելու մասին» N1578-Ն որոշումները: Սակայն վերոնշյալ որոշումներում առկա են ընդհանուր կարգավորման տարբերություններ, մինչդեռ այդ տարածքները, հանդիսանալով բնապահպանական բարձր արժեք ներկայացնող և օգտագործման սահմանափակ ռեժիմներ ունեցող տարածքներ պետք է ունենան հատուկ մշակված ընդհանրական մոտեցումներ և սկզբունքներ, որոնց հիմքում անհրաժեշտ է դնել դրանց բնապահպանական ու կայուն կառավարման նպատակը: **1.2.առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Վերոնշյալով պայմանավորված՝ առաջարկվում է հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 77-րդ հոդվածի 1.1 կետը մշակել մեկ միասնական իրավական ակտ և ուժը կորցրած ճանաչել գործող կարգերը: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման արդյունքում մեկ իրավական ակտով կկանոնակարգվի պետական անտառների, անտառային հողերի օգտագործման, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքների հողամասերի վարձակալության և (կամ) կառուցապատման տրամադրելու գործընթաց, կստեղծվեն միասնական մոտեցումներ, կսահմանվեն ընդհանուր պահանջներ և պայմաններ, կամրագրվեն այդ տարածքների բնապահպանական կարգավիճակին համապատասխան երկարաժամկետ և կայուն կառավարման հիմքեր:
4.	**Բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման ռեժիմների և վերահսկողության մեխանիզմների արդյունավետության բարձրացումը, հարակից բնակավայրերի կարողությունների զարգացումը.** **4.1.«Բնության հատուկ պահպանվող տարածքների քարտեզագրում և իրավունքների վերագրանցում» միջոցառման** **1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման ռեժիմների և վերահսկողության մեխանիզմների արդյունավետության բարձրացումը, հարակից բնակավայրերի կարողությունների զարգացումը» ուղղությունը և «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները: Սույն միջոցառման նպատակն է բնության հատուկ պահպանվող տարածքների քարտեզագրման, գոտևորման սխեմայի կազմման, ու դրա պահպանման գոտու սահմանների ճշգրտման աշխատանքների իրականացումը: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Բնության հատուկ պահպանվող տարածքների գործառույթներն առաջիկայում պետք է ուղղորդվեն պարկի եզակի անտառների, լանդշաֆտների և կենսաբազմազանության, ինչպես նաև բնական և մշակութային հուշարձանների պահպանության արդյունավետության բարձրացմանը' ի շահ բնության և բնակչության: Խնդիրների լուծման համար ֆինանսական միջոցներ հայթայթելու աշխատանքների իրականացման նպատակով բանակցություններ են տարվում մի շարք միջազգային կառույցների /KFW, UNFCCC AF, CNF, WWF, TGS և այլն/ հետ: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Աշխատանքները նախատեսվում է իրականացնել մրցութային կարգով' շահող կազմակերպության կողմից, որը պետք է իրականացնի հետևյալ աշխատանքները. ա/ ելակետային տվյալների հավաքագրում.

-Բնության հատուկ պահպանվող տարածքների դրա պահպանման գոտում ներկա սահմանների վերաբերյալ նախորդ անտառաշինական (տաքսացիոն-անտառագնահատում և պլան-քարտեզագրական) և արխիվային նյութերի ուսումնասիրություն, արդյունքների վերլուծություն:
-Բնության հատուկ պահպանվող տարածքների դրա պահպանման գոտում տնտեսավարող սուբյեկտների ֆիզիկական գույքագրում և քարտեզագրում:
-Նախատեսվող տարածքների վարչատնտեսական միավորների և հարակից համայնքային հողերի սահմանների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում:
-Նախորդ հողաշինարարության ու անտառաշինության և դրան հաջորդած ժամանակահատվածում անտառային ֆոնդի, գեոդեզիա-քարտեզագրական աշխատանքների, գույքագրման և փոփոխությունների վերաբերյալ անհրաժեշտ տվյալների ձեռք բերում:
բ/ Բնության հատուկ պահպանվող տարածքների սահմանների և ներքին գործառնական գոտիների սահմանների ճշգրտում և նկարագրում.
-Բնության հատուկ պահպանվող տարածքների դրա պահպանման գոտում հանդիպող հազվագյուտ և արժեքավոր բույսերի և կենդանիների տեսակների արեալների ուսումնասիրում և նկարագրություն /քարտեզագրական նկարագրում/:
-Կադաստրի ստեղծման նպատակով արխիվային նյութերի և քարտեզների ուսումնասիրում, դրանց պատճենների ձեռքբերում:
-ՀՀ ԳԱՄ կենդանաբանության և բուսաբանության ինստիտուտներից Բնության հատուկ պահպանվող տարածքների բուսական և կենդանական աշխարհի վերաբերյալ տեղեկատվության ձեռքբերում:
-Դաշտային դիտարկումներ և հետազոտություններ բնության հատուկ պահպանվող տարածքների և դրանց պահպանման գոտու տարածքում:
-Բնության հատուկ պահպանվող տարածքների սահմանների համաձայնեցում հարակից համայնքների հետ:
Բնության հատուկ պահպանվող տարածքների արտաքին սահմանների, ներքին գործառնական գոտիների և պահպանման գոտու սահմանների նկարագրությունը 1:25 000 մասշտաբի քարտեզներով:
գ/ Քարտեզագրական աշխատանքների իրականացում:
դ/Համապատասխան նորագույն տեխնոլոգիաների կիրառում, սարքավորումների և այլ տեխնիկական միջոցների ձեռքբերում կիրառում:
ե/ Սահմանների ամրակայում:
զ/ Բնության հատուկ պահպանվող տարածքների կադաստրային քարտեզի նախապատրաստում՝ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում պետական գրանցում ստանալու համար:
Համագործակցության ընթացքում համակատարողների հետ աշխատանքները կապված են տարածքների և սահմանների համաձայնեցման խնդրո առարկայով՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ, համապատասխան ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակման համար, իսկ պետական գրանցում ստանալու համար՝ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի հետ:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Միջոցառման իրականացման արդյունքում կստեղծվի ճշգրիտ տեղեկատվություն 8 բնության հատուկ պահպանվող տարածքների՝ «Սևան» և «Արևիկ» ազգային պարկերի, «Շիկահող» արգելոց, «Սոսու պուրակ», «Բողաքար», Զանգեզուր», «Սև լիճ», «Խուստուփ» արգելավայրերի, այնպես էլ բուսական ու կենդանական աշխարհի ներկայացուցիչների տարածման արեալների վերաբերյալ, ինչը կստեղծի նախադրյալներ վերը նշված տարածքների կենսաբազմազանության արդյունավետ պահպանման, հարակից համայնքների զարգացման, տարածքներում պահպանության և օգտագործման ռեժիմների ապահովման համար:

4.2. «Բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման պլանների մշակում և Կառավարության որոշումների ընդունում» միջոցառման

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման ռեժիմների և վերահսկողության մեխանիզմների արդյունավետության բարձրացումը, հարակից բնակավայրերի կարողությունների զարգացումը» ուղղությունը և «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդված:
Միջոցառման նպատակն է բնության հատուկ պահպանվող տարածքների կայուն կառավարումը՝ կառավարման պլանների վերանայման ու նոր կառավարման պլանների մշակման միջոցով:

1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Ներկայումս մի շարք բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման պլանները ժամկետանց են կամ ընդհանրապես չունեն կառավարման պլաններ, ինչն էլ խոչընդոտում է տվյալ տարածքի արդյունավետ

կառավարմանը: Մասնավորապես «Սևան» ազգային պարկի կառավարման պլանը նախատեսված էր 2007-2011 թվականների համար, «Արփի լիճ» ազգային պարկի կառավարման պլանը նախատեսված էր 2011-2015 թվականների համար, և այլն:
Բնապահպանության նախարարի 2015 թվականի դեկտեմբերի 22-ի «Կառավարման պլանների մշակման մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին» N 392-Ա հրամանի 3-րդ բաժնով սահմանված է, որ՝
- Կառավարման պլանների նախագծի կազմմանը նախորդում է տվյալ բնության հատուկ պահպանվող տարածքի (գոյություն ունեցող կամ ստեղծվող), ներառյալ դրա պահպանման գոտու, բազմակողմանի ուսումնասիրությունը, առկա տեղեկատվության հավաքը և վերլուծությունը:
- Կառավարման պլանի մշակման ժամանակ ամփոփվում և վերլուծվում է ԲՀՊՏ-ի տարածքային կառուցվածքի, կազմակերպչական առանձնահատկությունների, ենթակառուցվածքների, ֆինանսական գործունեության (ֆինանսավորման ծավալները և աղբյուրները, դրամական ելքերը և մուտքերը), վերջին 5 տարվա ընթացքում ԲՀՊՏ-ի կազմակերպման և գործունեության ուժեղ ու թույլ կողմերի, հիմնական հաջողությունների ու անհաջողությունների, դրանց պատճառների, տեղական ինքնակառավարման մարմինների և ԲՀՊՏ-ին սահմանակից բնակավայրերի բնակչության հետ փոխհարաբերությունների և համագործակցության մասին տեղեկատվությունը:
-Կառավարման պլանի մշակման ընթացքում կատարվում է.

- էկոհամակարգերի և բնական օբյեկտների արդի վիճակի վերլուծություն.
- ԲՀՊՏ-ների զարգացմանը և կենսաբանական բազմազանության ու պատմամշակութային ժառանգության պահպանությանը խոչընդոտող հիմնախնդիրների որոշում.
- տարածքի զարգացման հնարավորությունների և կառավարման կատարելագործման ուղիների որոշում՝ հաշվի առնելով առկա ռեսուրսները և փաստացի իրավիճակը.
- գոյություն ունեցող հիմնախնդիրների լուծման ու սպառնալիքների մեղմացման կամ վերացման ուղիների և մեթոդների մշակում:

Նշված պահանջների կատարումը ենթադրում է ֆինանսական միջոցների ներգրավում:
Այս փուլում հնարավոր չէ հստակ գնահատել աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ միջոցները, քանի որ դրանք կապված են յուրաքանչյուր օբյեկտում կատարվելիք գործողությունների տեսակից և ծավալներից: Աշխատանքներ են տարվում միջոցառման իրականացման համար դոնոր կազմակերպություններին ներգրավելու և ֆինանսական միջոցների ապահովման ուղղությամբ:

1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Առաջարկվում է վերլուծել բնության հատուկ պահպանվող տարածքների առկա խնդիրները, կառավարման պլաններ մշակել այն բնության հատուկ պահպանվող տարածքների համար, որոնց կառավարման պլանները ժամկետանց են, վերանայել և անհրաժեշտության դեպքում լրամշակել ներկայումս գործող կառավարման պլանները:

2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Բնության հատուկ պահպանվող 8՝ «Սևան» և «Արևիկ» ազգային պարկերի, «Շիկահող» արգելոց, «Սոսու պուրակ», «Բողաքար», Զանգեզուր», «Սև լիճ», «Խուստուփ» արգելավայրերի տարածքների կառավարման պլանների առկայություն մինչև 2023 թվականի ավարտը:

4.3.«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» նոր օրենքի նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը» միջոցառման

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման ռեժիմների և վերահսկողության մեխանիզմների արդյունավետության բարձրացումը, հարակից բնակավայրերի կարողությունների զարգացումը» ուղղությունը և արդիականացում և համապատասխանեցում մասնավորապես՝ «Բնության պահպանության միջազգային միության» (IUCN) ընդունված միջազգային չափանիշներին:
«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Հայաստանի Հանրապետության նոր օրենքի նախագծի ընդունման հետևանքով կկարգավորվեն բնության հատուկ պահպանվող տարածքների ստեղծման, պահպանության, օգտագործման և կառավարման հարաբերությունները:
Միջոցառման նպատակն է վերհանել գործող օրենքի կարգավորման անհամապատասխանությունները, օրենքը համապատասխանեցնել միջազգային չափորոշիչներով պահանջներին թե կառավարման և թե ստեղծման ասպեկտներով:

1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Հայաստանի Հանրապետության նախագծի մշակումը պայմանավորված է գործող օրենքի հետևյալ բացերով՝

-օրենքում բացակայում են բնության հատուկ պահպանվող տարածքների ստեղծման նպատակները և հիմքերը.
-հստակ չեն շարադրված բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման սկզբունքները.
-բացակայում են բնության հատուկ պահպանվող տարածքների կատեգորիաների խնդիրները.
-բացակայում են բնության հուշարձանի դասակարգումը, ստեղծման չափանիշները և պահպանության ռեժիմը.
-բացակայում է արգելավայրի պահպանության ռեժիմը.
-բացակայում են պահպանման գոտու, էկոլոգիական միջանցքի և էկոլոգիական ցանցի կառավարման սկզբունքները և պահպանության ռեժիմը.
-բացակայում են կենսոլորտային արգելոցի ստեղծման և կառավարման հարցերը:
Ինչպես նաև՝ «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և այլ իրավական ակտերի միջև առկա են անհամապատասխանություններ և հակասություններ:

1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» նոր օրենքի նախագծով առաջարկվում է գործող օրենքի բացերի վերացում, նոր կարգավորումների ամրագրում, մասնավորապես բնության հատուկ պահպանվող տարածքների ստեղծման նպատակների և հիմքերի: Առաջարկվում է «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը միջազգային չափանիշներին համապատասխանեցում մասնավորապես՝ «Բնության պահպանության միջազգային միության» (IUCN) կողմից սահմանված բնության հատուկ պահպանվող տարածքների 5-րդ (պահպանվող լանդշաֆտ) կատեգորիայի ստեղծման հիմքերի ամրագրում, տեղական ինքնակառավարման մարմինների ներգրավմանը ուղղված իրավական հիմքի ամրագրում՝ բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման գործընթացում:
Միջոցառման իրականացման համակատարող է հանդիսանում տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, քանի որ նախագծով նախատեսվելու է տեղական ինքնակառավարման մարմիններին ևս ներգրավել որոշ բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման գործընթացում:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Միջազգային չափորոշիչներին և արդի հասարակական հարաբերություններին համահունչ օրենքի առկայություն, որի միջոցով առավել արդյունավետ կդառնան բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման գործընթացները:

4.4. «Բնության հատուկ պահպանվող տարածքներին հարակից էկոհամակարգերի և համայնքների հարմարվողականության կարողությունների ամրապնդում» ծրագրի իրականացում միջոցառման

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման ռեժիմների և վերահսկողության մեխանիզմների արդյունավետության բարձրացումը, հարակից բնակավայրերի կարողությունների զարգացումը» ուղղությունը և ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի «Կլիմայի փոփոխություն» բաժնի պարտավորությունը:
Բնության հատուկ պահպանվող տարածքներից օգտվելու օրենքով ամրագրված սահմանափակումներին գումարվում է հողային և ջրային ռեսուրսների օգտագործման անբավարար մակարդակը (սոցիալական վատ պայմանները հնարավորություն չեն տալիս բնակիչների մեծ մասին օգտվելու հեռագնա արոտներից և խոտհարքներից, կիրառելու ոռոգման ջրի խնայող տեխնոլոգիաներ), կլիմայի փոփոխությունը և արդյունքում՝ զգալիորեն մեծանում է բնական և մարդածին ճնշումը համայնքներին հարակից բնական էկոհամակարգերի (անտառներ, գյուղամերձ արոտներ և խոտհարքներ, ջրային տարածքներ և այլն) վրա:
Այս պայմաններում արագանում է համայնքներին համեմատաբար մոտ գտնվող բնական էկոհամակարգերի դեգրադացումը և դրանք կորցնում են կլիմայի փոփոխության նկատմամբ հարմարվողականությունը: Մյուս կողմից կլիմայի դիտվող փոփոխությունները (ջերմաստիճանի բարձրացում, տեղումների քանակի նվազում, ջերմային ալիքների, հեղեղների և կարկուտի հաճախականության մեծացում և այլն) նվազեցնում են գյուղատնտեսական արտադրանքի քանակը, ընկնում է որակը և իջնում է բնակչության կենսամակարդակը:
Միջոցառման նպատակն է նվազեցնել «Խոսրովի անտառ» պետական արգելոցին և «Դիլիջան» ազգային պարկին հարակից համայքների խոցելիությունը կլիմայական ռիսկերի նկատմամբ, այդ տարածքներում հզորացնել գյուղատնտեսության ոլորտի հարմարվողական կարողությունները, ամրապնդել ինստիտուցիոնալ ու պլանավորման հնարավորությունները, համայնքներում իրականացնել կլիմայի փոփոխության նկատմաբ հարմարվողականության միջոցառումներ:
Այդ տեսակետից անհրաժեշտ է մշակել հարմարվողական ռազմավարական միջոցառումներ, որոնք կլիմայական խելացի գյուղատնտեսական տեխնոլոգիաների ներդրման, նպատակային արտադրանքի արժեքային շղթայի

բարելավման, պլանավորման կարողությունների ուժեղացման միջոցով համայնքներում կամրապնդեն կենսապահովման մակարդակը՝ կանխելով հողերի հետագա դեգրադացիան: Ծրագիրն ապահովում է հողի չեզոք դեգրադացիային հասնելու գաղափարի և կլիմայի փոփոխության նկատմամբ հարմարվողականության բարձրացման փոխկապակցվածությունը:

1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Գյուղատնտեսությունից և անասնապահությունից ստացվող եկամուտների նվազումը հնարավորություն չի տալիս բնակիչների մի մասին կենցաղային կարիքների համար բավարար օգտվելու գազից և էլեկտրաէներգիայից: Որպես վառելանյութ է օգտագործվում փայտը և չորացված գոմաղբը: Այս պայմաններում առկա է 2 հիմնական բացասական արդյունք՝

- մեծանում է ճնշումը անտառային էկոհամակարգի վրա, որի հետևանքով նվազում է անտառի կլիմայակարգավորիչ և ջրակուտակիչ հատկությունները: Հատումների հետևանքով առաջանում են էկոհամակարգին ոչ հատուկ բացատներ, նոսրուտներ, ցածրարժեք թփուտներ, որտեղ խիստ վատանում է անտառին հատուկ ծառատեսակների սերմերի ծլումը և նոր անտառի զարգացումը: Էկոհամակարգը աստիճանաբար թուլանում է և կորցնում կլիմայի փոփոխության նկատմամբ հարմարվողականությունը.
- գյուղատնտեսության մեջ նվազում է օրգանական պարարտանյութերի օգտագործման ծավալները: Աստիճանաբար վատանում են հողի որակական հատկությունները և շատ հաճախ դրանք դուրս են մնում մշակությունից, դեգրադացվում են՝ վերածվելով կիսաանապատային կամ շատ նոսր խոտածածկով հողատեսքերի: Համայնքների ինքնակառավարման մարմինները չունենալով բավարար ֆինանսական միջոցներ չեն կարողանում կլիմայի փոփոխության պայմաններում իրականացնել բնական էկոհամակարգերի և գյուղատնտեսական լանդշաֆտների կայունության բարձրացմանն ուղղված էներգախնայողության (մրգերի, դեղաբույսերի արևային չորանոցների, բանջարային մշակաբույսերի սածիլների արտադրության թեթև կոնստրուկցիաներով ժամանակակից ջերմոցների կառուցում և այլն) և արտադրանքի ծավալների մեծացման (ոռոգման համակարգի նորոգում, գյուղատնտեսության դիվերսիֆիկացիա, դաշտամիջյան ճանապարհների վերանորոգում, արոտներում ջրարբիացման կետերի կառուցում և այլն) միջոցառումներ:

Այս և այլ նման միջոցառումները բնակիչների և տեղական ինքնակառավարման մարմինների համար կստեղծեն եկամուտի ստացման այլընտրանքային հնարավորություններ, որի արդյունքում կնվազի ճնշումը բնական էկոհամակարգերի վրա և դրանք ավելի արդյունավետ կարող են հարմարվել կլիմայի փոփոխությանը:

1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

«Խոսրովի անտառ» պետական արգելոցին և «Դիլիջան» ազգային պարկին հարակից համայքների դեգրադացված տարածքներում համայնքահեն խելացի գյուղատնտեսական գործելակերպի կիրառում և կլիմայական ռիսկերի նկատմամբ խոցելիության նվազեցում, գյուղատնտեսական արտադրության արժեքային շղթաների ամրապնդում, համայնքներին կլիմայական խելացի տեխնոլոգիաների փոխանցում, գյուղատնտեսության վարման կլիմայական խելացի գործելակերպի վերաբերյալ իրազեկվածության, պլանավորման, մոնիթորինգի և որոշումների կայացման ներուժի հզորացում:

2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Միջոցառումը կնպաստի հարմարվողական ռազմավարական միջոցառումների մշակմանը, կլիմայական խելացի գյուղատնտեսական տեխնոլոգիաների ներդրմանը, նպատակային արտադրանքի արժեքային շղթայի բարելավմանը, պլանավորման կարողությունների ուժեղացման միջոցով համայնքներում կենսապահովման մակարդակի բարձրացմանը, հողերի դեգրադացիայի կանխարգելմանը, ոռոգման ջրի խնայողական նոր տեխնոլոգիաների ներդրմանը, բնական կերհանդակների արտադրողականության բարձրացմանը, գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության բարձրացմանը և բնակչության եկամուտների բազմազանացմանը:

Միջոցառումն ապահովում է հողիրի չեզոք դեգրադացիային հասնելու գաղափարի և կլիմայի փոփոխության նկատմամբ հարմարվողականության բարձրացման փոխկապակցվածությունը: Մասնավորապես՝

- դեգրադացված արոտավայրերում և խոտհարքներում բուսածածկի վերականգնմանը և կմեծանա դրանց հարմարվողականությունը կլիմայի փոփոխության նկատմամբ,
- կստեղծվի անասնակերի ձմեռային անհրաժեշտ քանակ, որի դեպքում հնարավորություն կլինի նվազեցնել ճնշումը արոտավայրերի և տարածքին բնորոշ այլ էկոհամակարգերի վրա,
- ջրարբիացման կետերի կառուցմամբ կբարելավվեն կենդանիների պահվածքի պայմանները և կբարձրանա կաթնատվությունը,
- ոռոգման ջրի մատակարարման բարելավումը և նոր խնայողական տեխնոլոգիաների կիրառումը հնարավորություն կտա բարձրացնել մշակաբույսերի բերքատվությունը և օգտագործել վարելահողերի մեծ մասը,
- անասնապահները և հող մշակողները կստանան լրացուցիչ եկամուտներ,
- ընդհանուր օգտագործման արևային ջերմոցները կնպաստեն նոր չորադիմացկուն և շուկայում մեծ պահանջարկ ունեցող մշակաբույսերի սածիլների աճեցմանը և տրամադրմանը գյուղացիներին: Ամռանը այդ

	ջերմատներում կարտադրվի բանջարեղեն, որի մի մասը կվաճառվի, իսկ մի մասը կտրամադրվի մանկապատեզին և դպրոցին, ▪ ընդհանուր օգտագործման արևային չորանոցները հնարավորություն կտան արագ չորացնել շուկայում մեծ պահանջարկ ունեցող մրգերը, հատապտուղները, դեղաբույսերը և թեյում օգտագործվող բուսատեսակները, դրանք վաճառելով նաև աշնանը և ձմռանը, ▪ դեպի արոտներ, խոտհարքներ և վարելահողեր տանող գրունտային ճանապարհների վերանորոգումը հասանելի կդարձնի դժվարամատչելի տարածքները և հնարավորություն կստեղծի բարձրացնել առավել դեգրադացված էկոհամակարգերի վերականգնման արդյունավետությունը, • 3 համայնքներում կցուցադրվի էկոհամակարգերի այն հատվածների օգտագործման հնարավորությունները, /մասուրի կամ այլ վայրի հատապտուղների պլանտացիայի հիմնում, կաթիլային ոռոգմամբ պտղատու այգու հիմնում/ որոնք կորցրել են հարմարվողականությունը և բնական ճանապարհով չեն կարող վերականգնվել, ▪ կցուցադրվի հողերի չեզոք դեգրադացիային հասնելու հնարավորությունները:
5.	**Կենսաբազմազանության պահպանությունը և կենսաանվտանգության ապահովումը, կենդանական և բուսական աշխարհի օբյեկտների հաշվառումը**. **5.1 «Կենդանական աշխարհի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը Կառավարության հավանությանն արժանանալու վերաբերյալ Կառավարության որոշման ընդունում» միջոցառման** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Կենսաբազմազանության պահպանություն և կենսաանվտանգության ապահովում, կենդանական և բուսական աշխարհի օբյեկտների հաշվառում» ուղղությունը և և ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի «Շրջակա միջավայր» բաժնի պարտավորությունը, ինչպես նաև օրենքի (այսուհետ՝ Օրենք) ընդունման անհրաժեշտությունը բխում է այն Միջազգային պահանջներին և ԵՄ դիրեկտիվների հետ համապատասխանեցնելու, դաշտը կարգավորող ներպետական օրենսդրության ներդաշնակեցման, անազատ և կիսաազատ պայմաններում վայրի կենդանիների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված կենդանիների պահելու և օգտագործելու իրավահարաբերությունները կանոնակարգելու պահանջից: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա** «Հայաստանի Հանրապետության կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» N 54 արձանագրային որոշման պահանջից ելնելով նախաձեռնվել է Օրենքի մշակման գործընթաց՝ նպատակ հետապնդելով սահմանել կենսաբանական պաշարների գնահատման և օգտագործման ենթակա չափաքանակների որոշման մեխանիզմները, կենդանիների անազատ և կիսաազատ պայմաններում պահման թույլտվության տրամադրման և հաշվառման կարգը և կանոնակարգել կենսառեսուրսների օգտագործման իրավունքները: Խիստ կարևոր հանգամանք է հանդիսանում նաև 2018 թվականի ապրիլի 11-ին վավերացված Հայաստանի Հանրապետություն-Եվրոպական Միություն համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը: Սրա շրջանակներում անհրաժեշտություն է առաջացել ձեռնարկել միջոցառումներ ՀՀ ներպետական օրենսդրության և ԵՄ դիրեկտիվների համապատասխանեցման ուղղությամբ: 2015 թվականին միջազգային մամուլում (Daily Mail) տպագրված Գյումրու մասնավոր կենդանաբանական այգում պահվող կենդանիների թշվառ վիճակին վերաբերող աղմկահարույց հոդվածի հրապարակումից հետո: Բնապահպանության նախարարի 2016 թվականի հունվարի 14-ի NS-Ա հրամանով ստեղծվեց աշխատանքային խումբ (կազմած նախարարության, հասարակական սեկտորի և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներից), որի կողմից վերլուծվեց վայրի կենդանիների անազատ պայմաններում պահման դաշտում առկա բացերը և ներկայացվեց խնդրի լուծման առաջարկությունների փաթեթ: **1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Օրենքի համապատասխան հոդվածներում նախատեսվում է կատարել համապատասխան փոփոխություններ՝ նպատակաուղղված դրանց վայրի կենդանիների պահելու գործընթացն առավել կանոնակարգված դարձնելուն, նախատեսվում է սահմանել անցումային դրույթներ, որով Օրենքի ընդունումից հետո վայրի կենդանիներ անազատ պայմաններում պահողներին (անկախ տվյալ վայրի կենդանու ձեռքբերումը հաստատող փաստաթղթի առկայությունից) տրամադրվում է 12 ամիս ժամանակ՝ գալու և լիազոր մարմնից դրանց պահման թույլտվություն ստանալու և դրանց հաշվառման տվյալները լիազոր մարմնին տրամադրելու համար: Առաջարկվող փոփոխությունների միջոցով նախատեսվում է կարգավորել նաև կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման տեսակներին առնչվող Օրենքի համապատասխան հոդվածները՝ օգտագործման գործընթացի

	կանոնակարգման և վարչարարության նվազեցման նպատակով: Կա նաև ՀՀ Սահմանադրությանը համապատասխանեցնելու պահանջ՝ գործող օրենքի նախաբանում «ՀՀ կենդանական աշխարհը պետության բացառիկ սեփականությունն է» նախադասությունից անհրաժեշտ է հանել է «բացառիկ» բառը: Առկա է նաև գործող օրենքում օգտագործված որոշ հասկացությունների ճշգրտման և մի շարք նոր հասկացությունների ավելացման անհրաժեշտություն: Համակատարող կազմակերպությունները պետք է օժանդակեն նախագծի մշակման աշխատանքներին: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջազգային պահանջներին և ԵՄ դիրեկտիվների հետ համահունչ օրենքի առկայություն, անազատ և կիսաազատ պայմաններում վայրի կենդանիներ, այդ թվում՝ ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիներ պահելու գործընթացի հստակեցում, կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման գործընթացի կանոնակարգում և վարչարարության նվազեցում: Լրամշակվել են Օրենքում օգտագործված որոշ հասկացություններ, ավելացվել են նաև մի շարք նոր հասկացություններ, որոնց վերաբերյալ Օրենքում ներառվել են դրույթներ: **5.2 «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը Կառավարության հավանությանն արժանանալու վերաբերյալ Կառավարության որոշման ընդունում» միջոցառման** **1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Կենսաբազմազանության պահպանություն և կենսաանվտանգության ապահովում, կենդանական և բուսական աշխարհի օբյեկտների հաշվառում» ուղղությունը և ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի «Շրջակա միջավայր» բաժնի պարտավորությունը, ինչպես նաև «Բուսական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) ընդունման անհրաժեշտությունը բխում է այն Միջազգային պահանջներին և ԵՄ դիրեկտիվների հետ համապատասխանեցնելու, դաշտը կարգավորող ներպետական օրենսդրության ներդաշնակեցման, բուսական աշխարհի օբյեկտների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված բույսերի օգտագործելու իրավահարաբերությունները կանոնակարգելու պահանջից: **1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** «Հայաստանի Հանրապետության կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» N 54 արձանագրային որոշման պահանջից ելնելով նախաձեռնվել է Օրենքի մշակման գործընթաց՝ նպատակ հետապնդելով սահմանել կենսաբանական պաշարների գնահատման և օգտագործման ենթակա չափաքանակների որոշման մեխանիզմները, կանոնակարգել կենսառեսուրսների օգտագործման իրավունքները, արտահանման և ներմուծման գործընթացները: Խիստ կարևոր հանգամանք է հանդիսանում նաև 2018 թվականի ապրիլի 11-ին վավերացված Հայաստանի Հանրապետություն-Եվրոպական Միություն համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը: Սրա շրջանակներում անհրաժեշտություն է առաջացել ձեռնարկել միջոցառումներ ՀՀ ներպետական օրենսդրության և ԵՄ դիրեկտիվների համապատասխանեցման ուղղությամբ: **1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Առաջարկվող փոփոխությունների միջոցով նախատեսվում է կարգավորել բուսական աշխարհի օբյեկտների օգտագործման տեսակներին առնչվող Օրենքի համապատասխան հոդվածները՝ օգտագործման գործընթացի կանոնակարգման, վարչարարության նվազեցման, ինչպես նաև դրանց արտահանման, ներմուծման գործընթացները կարգավորելու նպատակով: Համակատարող կազմակերպությունները պետք է օժանդակեն նախագծի մշակման աշխատանքներին: Առկա է նաև գործող օրենքում օգտագործված որոշ հասկացությունների ճշգրտման և մի շարք նոր հասկացությունների ավելացման անհրաժեշտություն: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջազգային պահանջներին և ԵՄ դիրեկտիվների հետ համահունչ օրենքի առկայություն, բուսական աշխարհի օբյեկտների, այդ թվում՝ ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված բույսերի օգտագործման գործընթացի կանոնակարգում և վարչարարության նվազեցում: Լրամշակվել են Օրենքում օգտագործված որոշ հասկացություններ, ավելացվել են նաև մի շարք նոր հասկացություններ, որոնց վերաբերյալ Օրենքում ներառվել են դրույթներ: **5.3. «Բուսական և կենդանական աշխարհի օբյեկտների հաշվառում» միջոցառման**

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Կենսաբազմազանության պահպանություն և կենսաանվտանգության ապահովում, կենդանական և բուսական աշխարհի օբյեկտների հաշվառում» ուղղությունը և « Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածն ու «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածը:

Միջոցառման հիմնական նպատակը՝ ՀՀ տարածքում բուսական և կենդանական աշխարհի պետական հաշվառման կազմակերպումն է: Աշխատանքների իրականացման փուլում նախատեսվում է կազմակերպել և իրականացնել բուսական և կենդանական աշխարհի, ներառյալ օգտագործման իմաստով առավել խոցելի խոշոր խմբերի՝ դեղաբույսերի, ուտելի բույսերի և ուտելի սնկերի, խոշոր և մանր կաթնասունների, թռչունների, ձկների և խեցգետնի ուսումնասիրություններ և հաշվառում՝ ըստ ՀՀ մարզերի, որն իր մեջ կներառի տեսակային կազմի, տարածվածության, քարտեզագրման և հնարավորինս նաև պաշարների գնահատման, տվյալների էլեկտրոնային բազայի ձևավորման, կադաստրի ստեղծման աշխատանքներ:

Վերոնշյալ հաշվառման արդյունքների հիման վրա միայն հնարավոր կլինի ապահովել բուսական և կենդանական տեսակների գիտականորեն հիմնավորված շարունակական օգտագործումն ու վերարտադրությունը, ձևավորել բուսական և կենդանական աշխարհի կադաստրն ու ստեղծել նախադրյալներ մոնիթորինգի իրականացման համար, վերանայել Կարմիր գրքում ներառված բուսական և կենդանական տեսակների ցանկը:

Բուսական և կենդանական աշխարհի հաշվառման արդյունքում հնարավոր կլինի նաև բացահայտել բուսական և կենդանական տեսակների աճելավայրերի և ապրելավայրերի քանակական և որակական փոփոխությունները:

Հաշվառման իրականացման պահանջն ամրագրված է «Բուսական աշխարհի մասին» և «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքներում, որոնց համաձայն՝ ոչ ուշ քան տաս տարին մեկ պետք է իրականացվի բուսական աշխարհի պետական և ոչ ուշ քան հինգ տարին մեկ անգամ կենդանական աշխարհի պետական հաշվառում:

Սակայն ՀՀ տարածքում բուսական և կենդանական աշխարհի միասնական պետական հաշվառում երբևիցե չի կատարվել: Միայն գիտական թեմաների շրջանակներում ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտի, կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի, ՀՀ պետական համալսարանի և այլ կազմակերպությունների կողմից կատարվել են առանձին թեմատիկ ուսումնասիրություններ, որոնք նույնպես ամբողջականացման, համախմբման և կարգավորման կարիք ունեն:

Բացի այդ, ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գիրքը, համաձայն «Բուսական աշխարհի մասին» և «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքների կազմվում է՝ հիմք ընդունելով բուսական և կենդանական աշխարհի պետական հաշվառման արդյունքները և արդեն իսկ լրացել է վերջին Կարմիր գրքի կազմման 10 տարին:

Բուսական և կենդանական աշխարհի հաշվառման աշխատանքների իրականացման համար, որպես հավանական /հնարավոր ֆինանսական աղբյուր կարող է հադիսանալ ԵՄ «Կենսաբազմազանության և կայուն տեղական զարգացում-Հայաստան» ծրագիրը (KfW), ինչպես նաև օրենքով չարգելված այլ միջոցներ:

1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Բուսական և կենդանական աշխարհը հանդիսանում է երկրի տնտեսությանն աջակցող առանցքային աղբյուրներից մեկը, հատկապես գյուղատնտեսության և ռեկրեացիայի, ինչպես նաև սննդային, առողջապահության և այլ արդյունաբերական ոլորտներին հումքի տրամադրման առումով: Սակայն վերջին տասնամյակում բուսական և կենդանական աշխարհի օգտագործումը մեծամասամբ ընթացել է տարերայնորեն, առանց հաշվի առնելու կենսապաշարների վերարտադրության բնական հնարավորությունները և դրա ապահովման անհրաժեշտ նախապայմանները:

Այդ տեսանկյունից չափազանց կարևորվում է հաշվառման իրականացումը, ստացված տվյալների հիման վրա պետական կադաստրի ձևավորումն ու վարումը, որն էլ իր հերթին հնարավորություն կընձեռի ՀՀ տարածքի բուսական և կենդանական աշխարհի բազմազանության, դրանց պաշարների, աճելավայրերի, ապրելավայրերի քանակական և որակական փոփոխությունների վերաբերյալ հավաստի տեղեկատվության միջոցով կանոնակարգելու արդեն իսկ օգտագործման ենթակա չափաքանակները, ինչպես նաև վերանայելու Կարմիր գիրքը, քանի որ այն կազմվել է 2007-2009 թթ. ԳԱՄ բուսաբանության ինստիտուտի, Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի, Երևանի պետական համալսարանի մասնագետների կողմից իրականացված գիտական հետազոտությունների հիման վրա (հիմք բույսերի և կենդանիների Կարմիր գիրք): Այս աշխատանքների իրականացումից արդեն իսկ անցել է 10 տարուց ավել և հետևաբար հաշվառման իրականացումը կարևորագույն պահանջ և արդյունք է հանդիսանալու Կարմիր գրքի վերանայման հարցում:

Հաշվառման անհրաժեշտությունը կարևորվել է նաև ՀՀ կառավարության 2015թ. դեկտեմբերի 10-ի նիստի «Հայաստանի Հանրապետության կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» N54 արձանագրային և ՀՀ կառավարության 2009 թվականի օգոստոսի 13-ի «Հայաստանի Հանրապետության կենդանական աշխարհի պետական հաշվառման ծրագիր» N975-L և ՀՀ

կառավարության 2009 թվականի օգոստոսի 13-ի «Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի պետական հաշվառման ծրագիր» N974-L որոշումներով:
Այսպիսով.
Ըստ ՀՀ մարզերի բուսական և կենդանական տեսակների հաշվառման իրականացումը կնպաստի բուսական և կենդանական աշխարհի պետական կադաստրների ստեղծմանը, վարմանը, ինչպես նաև հիմք կհանդիսանա բուսական և կենդանական աշխարհի մոնիթորինգի իրականացման համար, կապահովի ՀՀ Կարմիր գրքի վերանայման հիմքերը:

1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Բուսական և կենդանական աշխարհի հաշվառման աշխատանքները նախատեսվում է իրականացնել ոլորտի մասնագիտացված, գիտահետազոտական ուսումնասիրությունների իրականացման գործառույթներ ունեցող ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի, ՀՀ ԳԱԱ Ա.Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի, Երևանի պետական համալսարանի մասնագետների հետ համատեղ, առավել ևս, որ նրանց միջոցով են իրականացվել Հայաստանի Հանրապետությունում գործող Կարմիր գրքի ստեղծման աշխատանքները:
Այսպիսով.
Վերը նշված կազմակերպությունների միջոցով ըստ ՀՀ մարզերի իրականացվելու են դաշտային ուսումնասիրություններ հետևյալ խնդիրների լուծման նպատակով.
տեսակային կազմի որոշում,
տարածվածություն, քարտեզագրում /GIS/
պաշարների հաշվառում, օգտագործման ենթակա չափաքանակների վերաբերյալ հիմնավորումների առկայություն,
Կարմիր գրքում ընդգրկված տեսակների ցանկի վերանայում,
հաշվառման արդյունքների ամփոփում և տվյալների էլեկտրոնային բազայի ձևավորում, կադաստրի ստեղծում:
Կարևորագույն գերակայություններից են.
ՀՀ բուսական և կենդանական աշխարհի վիճակի վերաբերյալ արդիականացված, հավաստի և համակարգված տեղեկատվական բազայի առկայությունը:
ՀՀ բուսական և կենդանական աշխարհի աճելավայրերի, ապրելավայրերի պահպանությանն ու կայուն կառավարման համար նախադրյալների ստեղծումը:
ՀՀ բուսական և կենդանական աշխարհի օգտագործման ենթակա չափաքանակների կանոնակարգումը:
Մ՛ոնիթորինգի համար նախադրյալների ապահովումը:
ՀՀ բուսական և կենդանական աշխարհի հաշվառման արդյունքների հիման վրա ՀՀ Կարմիր գրքի վերանայման հիմքերի ապահովում:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Ներկայացված գերակայություններից բխող միջոցառումների իրականացման արդյունքում Հանրապետությունը կունենա ըստ մարզերի բուսական և կենդանական աշխարհի միաժամանակյա, լիարժեք նկարագիրը, ներառյալ պաշարների և օգտագործման ենթակա չափաքանակների վերաբերյալ հիմնավորումները, ինչպես նաև միջազգային չափանիշներով արդյունավետ գործող և նպատակային տեղեկատվություն տրամադրող բուսական և կենդանական տեղեկատվական համակարգ, ձևավորված բուսական և կենդանական աշխարհի կադաստր, ՀՀ Կարմիր գրքի վերանայման համար հավաստի հիմքեր:

5.4. «ՀՀ տարածքում հանդիպող արդյունագործական և սիրողական որսի օբյեկտ հանդիսացող կենդանիների տեսակային կազմի, տարածվածության, քարտեզագրման և պաշարների գնահատման աշխատանքների իրականացում» միջոցառման

1.Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը.

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Կենսաբազմազանության պահպանություն և կենսաանվտանգության ապահովում, կենդանական և բուսական աշխարհի օբյեկտների հաշվառում» ուղղությունը և «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքի 23 և 24-րդ հոդվածները:
ՀՀ տարածքում կենդանական աշխարհի, մասնավորապես արդյունագործական և սիրողական որսի օբյեկտ հանդիսացող կենդանիների հաշվառման ծրագրի իրականացման հիմնական նպատակներից է.
Ըստ ՀՀ մարզերի դաշտային ուսումնասիրությունների իրականացում հետևյալ խնդիրների լուծման նպատակով.

- տեսակային կազմի որոշում,
- տարածվածություն, քարտեզագրում /GIS/,
- պաշարների հաշվառում, օգտագործման ենթակա չափաքանակների վերաբերյալ հիմնավորումների առկայություն,

- Կարմիր գրքում ընդգրկված տեսակների ցանկի վերանայում,
- հաշվառման արդյունքների ամփոփում և տվյալների էլեկտրոնային բազայի ձևավորում,
- կադաստրի ձևավորում/ կատարելագործում,
- տեղեկատվության տրամադրում շահագրգիռ կողմերին,
- հանրային իրազեկում:

Աշխատանքների իրականացման հիմնական թիրախն է ըստ ՀՀ մարզերի կենդանական տեսակների, մասնավորապես՝ արդյունագործական և սիրողական որսի օբյեկտ հանդիսացող կենդանիների հաշվառման իրականացման միջոցով նպաստել կենդանական աշխարհի պետական կադաստրի ձևավորմանը/կատարելագործմանը, վարմանը, ինչպես նաև ստեղծել նախադրյալներ կենդանական աշխարհի մոնիթորինգի իրականացման, օգտագործման չափաքանակների հաստատման, ՀՀ Կարմիր գրքի վերանայման համար, այդպիսով՝ նվազեցնել բացասական ազդեցությունը կենդանական աշխարհի վրա:

1.1.կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

ՀՀ տարածքում կենդանական աշխարհի միասնական պետական հաշվառում չի իրականացվել: Ավելին, կարելի է փաստել, որ միասնական և միաժամանակյա հաշվառում երկրի ամբողջ տարածքում, ըստ մարզերի երբևիցե չի կատարվել: Միայն գիտական թեմաների շրջանակներում ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի, Երևանի պետական համալսարանի և այլ կազմակերպությունների կողմից կատարվել են առանձին թեմատիկ ուսումնասիրություններ, որոնք նույնպես ամբողջականացման, համախմբման և ի մի բերման կարիք ունեն:

Կենդանական աշխարհը հանդիսանում է երկրի տնտեսությանն աջակցող առանցքային աղբյուրներից մեկը, հատկապես գյուղատնտեսության և ռեկրեացիայի, ինչպես նաև սննդային, առողջապահության և այլ արդյունաբերական ոլորտներին հումքի տրամադրման առումով: Սակայն վերջին տասնամյակում կենդանական աշխարհի օգտագործումը մեծամասամբ ընթացել է տարերայնորեն, առանց հաշվի առնելու կենսապաշարների վերարտադրության բնական հնարավորությունները և դրա ապահովման անհրաժեշտ նախապայմանները:

Այդ տեսանկյունից չափազանց կարևորվում է կենդանական աշխարհի, մասնավորապես՝ արդյունագործական և սիրողական որսի օբյեկտ հանդիսացող կենդանիների հաշվառման իրականացումն ու ստացված տվյալների հիման վրա պետական կադաստրի ձևավորումն ու վարումը, որն էլ իր հերթին հնարավորություն կընձեռի ՀՀ տարածքի կենդանական աշխարհի բազմազանության, դրանց պաշարների, ապրելավայրերի քանակական և որակական փոփոխությունների վերաբերյալ հավաստի տեղեկատվության միջոցով կանոնակարգելու արդեն իսկ օգտագործման ենթակա չափաքանակները:

Հաշվառման իրականացման պահանջն ամրագրված է «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքում, համաձայն որի պարբերաբար՝ ոչ ուշ քան տաս տարին մեկ, իսկ առանձին դեպքերում նաև ՀՀ կառավարության որոշմամբ պետք է իրականացվի կենդանական աշխարհի պետական հաշվառում: Օրենքը նախատեսում է նաև պետական հաշվառման նպատակով ուսումնասիրությունների կատարման հնարավորությունը /հոդված 10/ կենդանական աշխարհի պետական կառավարումն իրականացնող լիազորված պետական մարմնի կողմից՝ պետական պատվերի, ձևավորման և տեղադրման միջոցով: Հաշվառման անհրաժեշտությունը կարևորվել է նաև ՀՀ կառավարության 2015թ. դեկտեմբերի 10-ի նիստի «Հայաստանի Հանրապետության կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» N54 արձանագրային և ՀՀ կառավարության 2009 թվականի օգոստոսի 13-ի «Հայաստանի Հանրապետության կենդանական աշխարհի պետական հաշվառման ծրագիր» N975-Ն որոշումներով:

1.2.առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

Ներկայացվող աշխատանքները նախատեսվում է իրականացնել ոլորտի մասնագիտացված, գիտահետազոտական ուսումնասիրությունների իրականացման գործառույթներ ունեցող՝ ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի, Երևանի պետական համալսարանի և մասնագիտական որակավորում ունեցող այլ փորձագետների հետ համատեղ, առավել ևս, որ նրանց միջոցով են իրականացվել Հայաստանի Հանրապետությունում գործող Կարմիր գրքի ստեղծման աշխատանքները:

Նախատեսվող աշխատանքներն իրականացնելու և առկա խնդիրների լուծման նպատակով նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

- Ելակետային տվյալների հավաք, դաշտային ուսումնասիրություններ՝ ըստ ՀՀ մարզերի կենդանական աշխարհի վիճակի վերաբերյալ արդիականացված, հավաստի և համակարգված տեղեկատվության առկայություն:
- Կենդանական աշխարհի հաշվառման արդյունքների վերլուծություն, օգտագործման ենթակա չափաքանակների հիմնավորումների պատրաստում:
- Տվյալների էլեկտրոնային տեղեկատվական համակարգի ստեղծում, կադաստրի ձևավորում/ կատարելագործում, վարման ապահովում:
- Տեղեկատվության տրամադրում շահագրգիռ կողմերին և հանրամատչելի տեղեկատվության տարածում:

2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Ծրագրի արդյունքում հնարավորություն կստեղծվի կենսառեսուրսների կառավարումն իրականացնողներին ապահովելու համապատասխան որոշումների ընդունման համար անհրաժեշտ հիմնական տեղեկատվությամբ՝ ներառյալ արդյունագործական և սիրողական որսի օբյեկտ հանդիսացող կենդանիների տարածվածության ամբողջական GIS քարտեզները, որոշելու լայն կիրառում ունեցող՝ արդյունագործական և որսակենդանիների օգտագործման չափաքանակները, ինչպես նաև հնարավորություն՝ հետագայում կազմակերպելու և իրականացնելու դրանց մշտադիտարկում ՀՀ ամբողջ տարածքում, ինչպես նաև աջակցելու ՀՀ տարածքում լայն կիրառում ունեցող՝ արդյունագործական և որսակենդանիների շարունակական կայուն կառավարմանը՝ նպաստելով կենսաբազմազանության կորստի կանխարգելմանն ու պահպանությանը, աջակցել կենսապաշարների կայուն կառավարման սկզբունքների ներդրմանը:

Կենսապաշարների մասին հստակ տեղեկատվության հիման վրա կիրականացվի կենդանական տեսակների կայուն օգտագործում:

Կստեղծվի էլեկտրոնային տեղեկատվական համակարգ, հնարավորություն կստեղծվի ձևավորել կադաստրի համակարգ:

5.5. «Լայն կիրառում ունեցող բույսերի /դեղաբույսեր, ուտելի բույսեր/ ուսումնասիրությունների իրականացում հանրապետության տարածքում» միջոցառման

1.Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը.

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Կենսաբազմազանության պահպանություն և կենսաանվտանգության ապահովում, կենդանական և բուսական աշխարհի օբյեկտների հաշվառում» ուղղությունը և «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածը:

ՀՀ տարածքում բուսական աշխարհի, մասնավորապես օգտագործման իմաստով առավել խոցելի խոշոր խմբերի՝ դեղաբույսերի, ուտելի բույսերի հաշվառման ծրագրի իրականացման հիմնական նպատակներից է ըստ ՀՀ մարզերի դաշտային ուսումնասիրությունների իրականացում հետևյալ խնդիրների լուծման նպատակով.

- տեսակային կազմի որոշում,
- տարածվածություն, քարտեզագրում /GIS/,
- պաշարների հաշվառում, օգտագործման ենթակա չափաքանակների վերաբերյալ հիմնավորումների առկայություն,
- Կարմիր գրքում ընդգրկված տեսակների ցանկի վերանայում,
- հաշվառման արդյունքների ամփոփում և տվյալների էլեկտրոնային բազայի ձևավորում,
- կադաստրի ձևավորում/կատարելագործում,
- տեղեկատվության տրամադրում շահագրգիռ կողմերին,
- հանրային իրազեկում:

Աշխատանքների իրականացման հիմնական թիրախն է ըստ ՀՀ մարզերի բուսական տեսակների հաշվառման իրականացման միջոցով նպաստել բուսական աշխարհի պետական կադաստրի ձևավորմանը/կատարելագործմանը, վարմանը, ինչպես նաև ստեղծել նախադրյալներ բուսական աշխարհի մոնիթորինգի իրականացման, օգտագործման չափաքանակների հաստատման, ՀՀ Կարմիր գրքի վերանայման համար, այդպիսով՝ նվազեցնել բացասական ազդեցությունը բուսական աշխարհի վրա:

1.1.կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

ՀՀ տարածքում բուսական աշխարհի միասնական պետական հաշվառում չի իրականացվել: Ավելին, կարելի է փաստել, որ միասնական և միաժամանակյա հաշվառում երկրի ամբողջ տարածքում, ըստ մարզերի երբևիցե չի կատարվել: Միայն գիտական թեմաների շրջանակներում ՀՀ ԳԱԱ Ա.Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի, Երևանի պետական համալսարանի և այլ կազմակերպությունների կողմից կատարվել են առանձին թեմատիկ ուսումնասիրություններ, որոնք նույնպես ամբողջականացման, համախմբման և ի մի բերման կարիք ունեն: Բուսական աշխարհը հանդիսանում է երկրի տնտեսությանն աջակցող առանցքային աղբյուրներից մեկը, հատկապես գյուղատնտեսության և ռեկրեացիայի, ինչպես նաև սննդային, առողջապահության և այլ արդյունաբերական ոլորտներին հումքի տրամադրման առումով: Սակայն վերջին տասնամյակում բուսական աշխարհի օգտագործումը մեծամասամբ ընթացել է տարերայնորեն, առանց հաշվի առնելու կենսապաշարների վերարտադրության բնական հնարավորությունները և դրա ապահովման անհրաժեշտ նախապայմանները:

Այդ տեսանկյունից չափազանց կարևորվում է բուսական աշխարհի հաշվառման իրականացումն ու ստացված տվյալների հիման վրա պետական կադաստրի ձևավորումն ու վարումը, որն էլ իր հերթին հնարավորություն կընձեռի ՀՀ տարածքի բուսական աշխարհի բազմազանության, դրանց պաշարների, աճելավայրերի, քանակական և

	որակական փոփոխությունների վերաբերյալ հավաստի տեղեկատվության միջոցով կանոնակարգելու արդեն իսկ օգտագործման ենթակա չափաքանակները: Հաշվառման իրականացման պահանջն ամրագրված է «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքում, համաձայն որի պարբերաբար՝ ոչ ուշ քան տաս տարին մեկ, իսկ առանձին դեպքերում նաև ՀՀ կառավարության որոշմամբ պետք է իրականացվի բուսական աշխարհի պետական հաշվառում: Օրենքը նախատեսում է նաև պետական հաշվառման նպատակով ուսումնասիրությունների կատարման հնարավորությունը /հոդված 10/ բուսական աշխարհի պետական կառավարումն իրականացնող լիազորված պետական մարմնի կողմից՝ պետական պատվերի, ձևավորման և տեղադրման միջոցով: Հաշվառման անհրաժեշտությունը կարևորվել է նաև ՀՀ կառավարության 2015թ. դեկտեմբերի 10-ի նիստի «Հայաստանի Հանրապետության կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» N54 արձանագրային և ՀՀ կառավարության 2009 թվականի օգոստոսի 13-ի «Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի պետական հաշվառման ծրագիր» N974-Ն որոշումներով: **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները.** Ներկայացվող աշխատանքները նախատեսվում է իրականացնել ոլորտի մասնագիտացված, գիտահետազոտական ուսումնասիրությունների իրականացման գործառույթներ ունեցող՝ ՀՀ ԳԱԱ Ա.Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի, Երևանի պետական համալսարանի մասնագիտական որակավորում ունեցող այլ փորձագետների հետ համատեղ, առավել ևս, որ նրանց միջոցով են իրականացվել Հայաստանի Հանրապետությունում գործող Կարմիր գրքի ստեղծման աշխատանքները: Նախատեսվող աշխատանքներն իրականացնելու և առկա խնդիրների լուծման նպատակով նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները. • Ելակետային տվյալների հավաք, դաշտային ուսումնասիրություններ՝ ըստ ՀՀ մարզերի բուսական աշխարհի վիճակի վերաբերյալ արդիականացված, հավաստի և համակարգված տեղեկատվության առկայություն: • Բուսական աշխարհի հաշվառման արդյունքների վերլուծություն, օգտագործման ենթակա չափաքանակների հիմնավորումների պատրաստում: • Տվյալների էլեկտրոնային տեղեկատվական համակարգի ստեղծում, կադաստրի ձևավորում/կատարելագործում, վարման ապահովում: • Տեղեկատվության տրամադրում շահագրգիռ կողմերին և հանրամատչելի տեղեկատվության տարածում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Ծրագրի արդյունքում հնարավորություն կստեղծվի կենսառեսուրսների կառավարումն իրականացնողներին ապահովելու համապատասխան որոշումների ընդունման համար անհրաժեշտ հիմնական տեղեկատվությամբ՝ բուսական տեսակների տարածվածության ամբողջական GIS քարտեզները, օգտագործման չափաքանակները, ինչպես նաև հնարավորություն՝ հետագայում կազմակերպելու և իրականացնելու դրանց մշտադիտարկում ՀՀ ամբողջ տարածքում, ինչպես նաև աջակցելու ՀՀ տարածքում բուսական աշխարհի շարունակական կայուն կառավարմանը՝ նպաստելով կենսաբազմազանության կորստի կանխարգելմանն ու պահպանությանը, աջակցել կենսապաշարների կայուն կառավարման սկզբունքների ներդրմանը: Կենսապաշարների մասին հստակ տեղեկատվության հիման վրա կիրականացվի բուսական տեսակների կայուն օգտագործում: Կստեղծվի էլեկտրոնային տեղեկատվական համակարգ, հնարավորություն կստեղծվի ձևավորել կադաստրի համակարգ:
	5.6. «Հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը Կառավարության հավանությանն արժանանալու վերաբերյալ Կառավարության որոշման ընդունում» միջոցառման **1.Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման համար հիմք են հանդիսանում Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «կենսաբազմազանության պահպանությունը և կենսաանվտանգության ապահովումը, կենդանական և բուսական աշխարհի օբյեկտների հաշվառումը» և «շրջակա միջավայրի պահպանության գործող տնտեսական մեխանիզմների կատարելագործումը՝ հասցված վնասի համարժեք փոխհատուցման սկզբունքի ներդրմամբ, ինչպես նաև կանխարգելմանը, մեղմմանն ու չեզոքացմանն ուղղված օրենսդրական և ինստիտուցիոնալ մի շարք փոփոխությունների իրականացմամբ» ուղղությունները: ՀՀ Սահմանադրության 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Հաշվի

	առնելով կենսապաշարների օգտագործման առկա խնդիրները՝ անհրաժեշտություն է առաջացել որոշակի միջոցներ ձեռնարկել դրանց գերշահագործումը բացառելու նպատակով: ՀՀ տարածքում կենսապաշարների օգտագործումը պետք է իրականացվի հաշվի առնելով դրանց իրական բնապահպանական և տնտեսական արժեքը, օգտագործման գիտականորեն հիմնավորված թույլատրելի չափաքանակները և վերարտադրության հնարավորությունները: **1.1.կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 199-րդ հոդվածի՝ կենսապաշարների օգտագործման համար նախատեսված է բնօտագործման վճար՝ ապահովելու համար («օգտագործողը վճարում է» սկզբունքի կիրառումը: Սակայն, բնօգտագործման վճարների դրույքաչափերը բավականին ցածր են և չեն համապատասխանում ռեսուրսի իրական տնտեսական արժեքին և այդ պատճառով բավարար չափով չեն ազդում տնտեսավարող սուբյեկտների բնապահպանական վարքագծի վրա: Բնօգտագործման վճարների գործող ցածր դրույքաչափերը հնարավորություն չեն ընձեռում ավելի արդյունավետ օգտագործելու դրանք Հայաստանում որպես շրջակա միջավայրի վրա բացասական ներգործությունները նվազեցնելու և բնական ռեսուրսների արդյունավետ (կայուն) օգտագործումն ապահովող կարգավորիչ գործիք: **1.2.առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծի մշակումը և հաստատումը՝ կիրառելով կենասապաշարների օգտագործման համար նախատեսված բնօգտագործման վճարերի դրույքաչափերի վերանայում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման իրականացումը կնպաստի կենսաբազմազանության կայուն կառավարմանը՝ կայուն զարգացման 15-րդ նպատակի իրագործման համատեքստում ապահովելով կենսապաշարների գերշահագործման և ապօրինի օգտագործման կանխարգելումը:
6.	**Կլիմայի փոփոխության հետևանքների նկատմամբ հարմարվողականության և մեղմման գործողությունների իրականացումը.** **6.1.«Կլիմայի փոփոխության հարմարվողականության ազգային գործողությունների ծրագիրը և 2026-2030 թվականների միջոցառումների ցանկը հաստատելու մասին» Կառավարության որոշման ընդունում » միջոցառման** **1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Կլիմայի փոփոխության հետևանքների նկատմամբ հարմարվողականության և մեղմման գործողությունների իրականացումը» ուղղությունը և Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի և Փարիզյան համաձայնագրի 7-րդ հոդվածը: Կլիմայի փոփոխության նկատմամբ երկրի դիմակայունության մակարդակի բարձրացումը՝ մարզերում և տնտեսության տարբեր ոլորտներում կլիմայի փոփոխության հարմարվողականության լավագույն գործելակերպի ներդրման միջոցով, ինչպես գլոբալ այնպես էլ ազգային մակարդակում ուշադրության կենտրոնում է և բխում է Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի և Փարիզյան համաձայնագրի 7-րդ հոդվածի՝ բոլոր մակարդակներում կլիմայի փոփոխության դիմակայման հարմարվողականության պլանավորման գործընթացի ներառման պահանջից: **1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Հայաստանի Հանրապետությունը կլիմայի փոփոխության հետևանքների նկատմամբ խիստ խոցելի երկիր է և կլիմայի բացասական հետևանքների նկատմամբ հարմարվողականությանն ուղղված գործողությունների համակարգված իրականացումն անհրաժեշտ է կլիմայի փոփոխության հետևանքներով բնակչությանը և տնտեսությանը հասցվող վնասները նվազեցնելու համար: Կառավարության քաղաքականության բոլոր ոլորտները, որոնք խոցելի են համարվում կլիմայի փոփոխության ազդեցությունների նկատմամբ, պետք է հատկորոշվեն և ներկառուցվեն կլիմայի փոփոխության հարմարվողականության գործընթացում՝ հարմարվողականության գործողությունների արդյունավետ իրագործմանն ավելի մեծ հստակություն, հավասարակշռություն և ուղղորդվածություն ապահովելու համար: **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Սույն միջոցառման նպատակը հարմարվողականության ազգային ծրագրի շարունակական ուղղորդումն է, որը որպես ելակետային փաստաթուղթ հաստատվել է 2021 թվականի մայիսի 13-ին N749-Լ որոշմամբ: Հանդիսանալով ճանապարհային քարտեզ՝ նոր՝ 2025-2030 թթ. ծրագիրը հնարավորություն կտա բացահայտել, լուծել ու վերանայել

	հարմարվողականության ազգային կարիքները, խնդիրները, առաջնահերթությունները և անհրաժեշտ ռեսուրսները: Այն հանդիսանալու է նաև որպես Ազգային մակարդակով սահմանված գործողությունների (ԱՍԳ/NDC) ձևավորման և ներդրման բնականոն շարունակություն: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Ակնկալվում է ձևավորել անհրաժեշտ մեխանիզմ՝ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման, ոլորտային քաղաքականության և ֆինանսական պլանավորման գործընթացներում հարմարվողականության ազգային ծրագրի ներառման և երկրի ստանձնած միջազգային պարտավորությունների պատշաճ կատարման համար: **6.2. «Կլիմայի փոփոխության մասին» Փարիզյան համաձայնագրի ներքո ՀՀ 2026-2035 թվականների Ազգային մակարդակով սահմանված հանձնառությունները» հաստատելու մասին» Կառավարության որոշման ընդունում» միջոցառման** **1.Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Կլիմայի փոփոխության հետևանքների նկատմամբ հարմարվողականության և մեղմման գործողությունների իրականացումը» ուղղությունը, ինչպես նաև բխում է «Կլիմայի փոփոխության մասին» Փարիզյան համաձայնագրի 4-րդ հոդվածի պահանջից: **1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** 2013 թվականին Վարշավայում կայացած ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի 19-րդ համաժողովի ժամանակ կողմ հանդիսացող երկրներին կոչ արվեց Փարիզյան համաձայնագրին ընդառաջ պատրաստել իրենց Ազգային մակարդակով սահմանված նախատեսվող գործողությունները/ներդրումները (ԱՍՆԳ): Հայաստանի Հանրապետությունը ՀՀ կառավարության 2015թ. սեպտեմբերի 10-ի N41 արձանագրային որոշմամբ հաստատված իր ԱՍՆԳ-ն ներկայացրել է Կոնվենցիայի քարտուղարություն 2015թ.-ին: Հայաստանը վերանայել է իր «Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության 2021-2030 թվականների «Ազգային մակարդակով սահմանված գործողությունները»՝ ԱՍԳ, 2021 թվականին, որը հաստատվել է Կառավարության կողմից 2021 թվականի ապրիլի 22-ի N610-Լ որոշմամբ: 2021 թվականի վերանայումն առաջինն է ապագա փուլերում նախատեսված հերթական վերանայումների և լրամշակումների շարքում: Յուրաքանչյուր հաջորդ ԱՍԳ պետք է «առաջընթաց ենթադրի» և «արտացոլի հնարավոր առավել բարձր հավակնությունը»: ԱՍԳ-ի ներկայացման յուրաքանչյուր փուլին հաջորդելու է 5 տարին մեկ անգամ իրականացվող գլոբալ գույքագրումը, որից հետո երկրներին առաջարկվելու է վերաներկայացնել իրենց ԱՍԳ-ները, կամ մշակել նոր ԱՍԳ՝ վերջին գլոբալ գույքագրման միջոցով արձանագրված արդյունքների և կատարված առաջարկությունների արտացոլմամբ, ինչպես նաև գիտական արդի ձեռքբերումներին համահունչ: **1.2.առկա խնդիրների առաջարկվող լուծումները** ԱՍԳ վերանայման համար հիմք հանդիսացող պատճառները բազմազան են: Դրանց թվում կարող են լինել, հավակնությունների մեծացման վերաբերյալ քաղաքական հռչակումները, կամ Կատովիցեում կողմերի 24-րդ հանդիպման ժամանակ ընդունված ԱՍԳ ուղեցույցերին հետևելու պատրաստակամությունը, կամ ելակետային տվյալների վերանայման անհրաժեշտությունը, որոնք կարող են փոփոխված լինել 2021 թվականից հետո: **2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Նախագծի ընդունման արդյունքում կապահովվի Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության ստանձնած հանձնառության պատշաճ իրականացումը: **6.3.«Կլիմայի փոփոխության մասին» Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության երկարաժամկետ (մինչև 2050 թվականը) ցածր ածխածնային զարգացման ռազմավարութունը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը» միջոցառման** **1.Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Կլիմայի փոփոխության հետևանքների նկատմամբ հարմարվողականության և մեղմման գործողությունների իրականացումը» ուղղությունը, ինչպես նաև բխում է Կլիմայի փոփոխության մասին Փարիզյան համաձայնագրից և Կառավարության 2021 թվականի ապրիլի 22-ի «Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության 2021-2030 թվականների «Ազգային մակարդակով սահմանված գործողությունները» հաստատելու մասին N610-Լ որոշումից: **1.1.կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ցածր ածխածնային զարգացման ուղղությամբ գլոբալ ջանքերին ակտիվ մասնակցելու, կլիմայի փոփոխության մեղմման մասով ստանձնած միջազգային հանձնառությունների պատշաճ իրականացման, մեր երկրի՝ կայուն զարգացման նպատակներին ինտեգրելու, կայունությունը և քաղաքացիների բարեկեցությունը տնտեսական քաղաքականության առանցքում դնելու նպատակով և հաշվի առնելով եվրոպական փորձը նախատեսվում է մշակել երկարաժամկետ ցածր ածխածնային ռազմավարություն:

1.2.առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Ցածր ածխածնային ռազմավարությունը նախատեսվում է, որպեսզի խթանվի երկրում էլեկտրամոբիլների քանակը, վերականգնվող էներգիայի մասնաբաժինը, էներգախնայողության միջոցառումների և լեդ լուսավորության ավելացումը, շրջանաձև տնտեսությունը և այլն:

2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Ակնկալվում է տրանսպորտի, էներգամատակարարման, արդյունաբերության, թափոնների կառավարման ոլորտներում ցածր ածխածնային զարգացման հստակ ռազմավարություն, որի շնորհիվ հնարավոր կլինի թուլացնել մարդածին ճնշումը շրջակա միջավայրի վրա, նպաստել երկրի կայուն զարգացմանը:

6.4.«Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի և Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի թափանցիկության ազգային շրջանակի կառուցում» միջոցառման

1.Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Կլիմայի փոփոխության հետևանքների նկատմամբ հարմարվողականության և մեղմման գործողությունների իրականացումը» ուղղությունը, ինչպես նաև բխում է Հայաստանի Հարնրապետության ստանձնած միջազգային պարտավորություններից, մասնավորապես՝ «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի կողմերի ընդունած որոշումներից և Փարիզյան համաձայնագրի 13-րդ հոդվածի պահանջից:

Միջոցառման նպատակն է ստեղծել Փարիզյան համաձայնագրի իրականացման թափանցիկության ինստիտուցիոնալ և տեխնիկական կարողություններ՝ համաձայն ընդհանուր պայմանների, ընթացակարգերի և ուղեցույցների: Գործողությունների թափանցիկության արդյունավետ շրջանակը կօգնի ճանաչել արդյունավետ մեղղման և հարմարվողականության համար անհրաժեշտ ներդրումները և դրանք կապել ազգային քաղաքականության առաջնահերթությունների հետ:

1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Թափանցիկության շրջանակի արդյունավետ գործարկումը կնպաստի՝

- ✓ կայուն զարգացման նպատակների առաջընթացի համապատասխան ցուցանիշների հավաքագրմանը և հաշվետվությունների կազմմանը,
- ✓ կլիմայական գործողությունների համընկնումների և կրկնօրինակումների նվազեցմամբ գործընթացների արդյունավետության բարձրացմանը,
- ✓ կառավարման բարելավմանը՝ որոշում կայացնողներին տրամադրելով առաջընթացին և արդյունավետությանը հետևելու համար տվյալներ և տեղեկատվություն,
- ✓ հանրության մասնակցությանը Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի իրականացման գործընթացում՝ հավասար տեղեկատվության ապահովման միջոցով:

1.2.առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Համաձայն Կառավարության 2019 թվականի հունիսի 1-ի N666-Ն որոշման՝ ՀՀ-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության կիրարկման ճանապարհային քարտեզի 123–րդ կետի՝ Հայաստանը մինչև 2026 թվականը պարտավորվել է հիմնել «Չափողական, հաշվետվայնության ու հավաստագրման (MRV) համակարգ, ձևավորել կլիմայի փոփոխության խնդիրների լուծմանը ուղղված տեխնոլոգիաների զարգացման և փոխանցման գործընթաց: Վերոնշյալ միջոցառման մաս է կազմելու ՉՀՀ համակարգի հիմնումը :

2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Ակնկալվում է մշակել ոլորտային ձևանմուշներ և ուղեցույցեր հետևյալ ուղություններով՝

- ✓ մեղմման քաղաքականությունների և գործողությունների և դրանց ազդեցությունները գնահատելու և զեկուցելու համար հարմարվողականության գործողությունների, քաղաքականությունների և դրանց ազդեցությունները գնահատելու և առաջնահերթություն սահմանելու մեթոդաբանությունները որոշելու համար,
- ✓ Հայաստանի ստացված կլիմայական ֆինանսական օժանդակության մասին զեկուցելու մեթոդաբանությունը,
- ✓ ներառել գենդերային հարցերը թափանցիկության գործողությունների մեջ,
- ✓ դիտարկել Ազգային մակարդակով սահմանված ներդրումների առաջընթացը,
- ✓ շահագործել թափանցիկության նախաձեռնությունների առցանց հարթակը:

6.5.«Ջրային ռեսուրսների ոլորտում կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը» միջոցառման

1. **Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Կլիմայի փոփոխության հետևանքների նկատմամբ հարմարվողականության և մեղմման գործողությունների իրականացումը» ուղղությունը, ինչպես նաև բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի «Կլիմայի փոփոխության հարմարվողականության ազգային գործողությունների ծրագիրը և 2021-2025 թվականների միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 749-Լ որոշման հավելվածով հաստատված միջոցառումների ցանկի 1.1՝ «Ջրային ռեսուրսների ոլորտում կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման (այսուհետ՝ Որոշման) նախագծի մշակում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ» կետի պահանջից:

Որոշման նախագծի մշակման իրավական հիմքի ապահովման նպատակով մշակվել է «ՀՀ ջրային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որի հաստատումից հետո Որոշման նախագիծը կներկայացվի վարչապետի աշխատակազմ:

1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Հայաստանը դեպի ծով ելք չունեցող, խոցելի լեռնային էկոհամակարգերով երկիր է, որը կլիմայի փոփոխության հանդեպ ունի բարձր ռիսկայնություն, մեծ զգայունություն և հարմարվողականության սահմանափակ կարողություններ: Կլիմայի փոփոխությամբ պայմանավորված՝ սպասվում է ջերմաստիճանի շարունակական բարձրացում, գյուղատնտեսության ոլորտում ակնկալվում է բերքատվության անկում, իսկ ոռոգման ոլորտում՝ ոռոգման պահանջարկի մեծացում:

Հայաստանը համարվում է բարձր ելակետային ջրային սթրեսով երկիր, ինչը նշանակում է, որ օգտագործելի ջրային ռեսուրսների հարաբերակցությունը ջրառի հետ համարվում է ռիսկային և արդեն իսկ ենթարկվում է կլիմայի փոփոխության և ջրի սակավության բացասական ազդեցությանը:

Կլիմայի փոփոխության մասին չորրորդ ազգային հաղորդագրությամբ տրվել է Հայաստանի գետերի տարեկան հոսքի խոցելիության գնահատականը, որի համաձայն 2011-2040թթ. ընկած ժամանակահատվածում Հայաստանի գետերի հոսքը նվազելու է -829.4 մլն. մ^3 կամ -12.2 %, իսկ 2041-2070թթ՝ -1,131.7 մլն. մ^3 կամ -18%:

Հաշվի առնելով վերոգրյալը, անհրաժեշտ է ջրային ռեսուրսների խոցելիության տեսանկյունից կարևոր մյուս բոլոր ոլորտների քաղաքականության համար հիմք հանդիսացող ռազմավարություններում կամ հայեցակարգերում այսուհետ անպայման հաշվի առնել կլիմայի փոփոխության համատեքստում ջրային ռեսուրսների խոցելիության նվազման և հարմարվողականության հիմնախնդիրներն ու դրանց լուծմանն ուղղված քայլերը:

1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Անվիճելի է, որ կլիմայի փոփոխության հետևանքները միանգամից ակնառու չեն և սկզբնական փուլում չեն տարբերվում կլիմայական սովորական տատանումներից, սակայն խնդիրն առկա է և անհրաժեշտ է մշակել ու իրագործել երկարաժամկետ ու համընդգրկուն միջոցառումներ ավելի տևական ժամանակահատվածի համար, որոնք կկանխարգելեն լուրջ հիմնախնդիրների առաջացումը և կարևոր նշանակություն կունենան Հայաստանի սոցիալական և տնտեսական զարգացման նպատակներին հասնելու կարողության համար:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Որոշման ընդունման արդյունքում հստակ կսահմանվեն միջոցառումներ ուղղված ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարմանը և պահպանությանը՝ հաշվի առնելով կլիմայի փոփոխության հետևանքները, դրանց նկատմամբ ջրային էկոհամակարգերի խոցելիությունը և հարմարվողականությունը:

6.6.«Արթիկ քաղաքի փակ քարհանքի թափոնների և ջրհեղեղների կառավարում ծրագրի իրականացում» միջոցառման

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Կլիմայի փոփոխության հետևանքների նկատմամբ հարմարվողականության և մեղմման գործողությունների իրականացումը» ուղղությունը և «Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության 2021-2030 թվականների «Ազգային մակարդակով սահմանված գործողությունները»՝ ԱՍԳ, 2021 թվականի ապրիլի 22-ի N610-Լ որոշումը:

Ծրագրի իրականացման տարածքը գտնվում է Հայաստանի հյուսիս-արևմուտքում, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում: Մարզը արևմուտքից սահմանակից է Թուրքիային, հյուսիսից՝ Վրաստանին: Մարզի տարածքում

	է գտնվում «Արփի լիճ» ազգային պարկը: Մարզի կլիման մեղմ լեռնային է, զով ամառներով և երկար ձմեռներով: Տարեկան տեղումների քանակը 500-600 մմ է: Այստեղ արձանագրվել է Հայաստանում բացարձակ նվազագույն ջերմաստիճանը՝ -46°C: Ծրագրի տարածքն ընդգրկում է Շիրակի մարզի հարավային հատվածում գտնվող Արթիկի տարածաշրջանը, որը հայտնի է տուֆի, պեմզայի, կրաքարի հանքավայրերով: Տարածքը ներկայացված է հրաբխային հարթավայրերով, որը հացահատիկային մշակաբույսերի և անասնաբուծության զարգացման համար աչքի է ընկնում բարենպաստ պայմաններով: Տարիներ շարունակ շահագործվող քարի հանքերը բացասաբար են անդրադարձել շրջակա միջավայրի վրա: Ավելի վաղ Արթիկում և նրա հարակից համայնքներում արտադրվել է հանրապետության շինարարական քարի ընդհանուր ծավալից ավելի քան 60%-ը: Շատ հանքեր փակվեցին, քանի որ շինարարական քարերի սպառման ծավալները կրճատվել են, հանքավայրերի պահպանության և վերականգնման աշխատանքներ չեն իրականացվել, որոնք բազմաթիվ բնապահպանական խնդիրներ առաջացրեցին: Հանքավայրերի շահագործման պատճառով գյուղատնտեսական և բնական լանդշաֆտների հարյուրավոր հեկտարներ դեգրադացվեցին: Ուժեղ քամիների միջոցով հանքավայրերի թափոնների փոշին և ամուր մնացորդները ձնհալի ու անձրևի միջոցով տարածվում են մեծ հեռավորությունների վրա՝ աղտոտելով բնական և գյուղատնտեսական լանդշաֆտները: Արդյունքում նկատվում է գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության, որակի և կլիմայի փոփոխության նկատմամբ բնական լանդշաֆտի հարմարվողականության մակարդակի նվազում: Մեկ այլ խնդիր է վերջին 20 տարիներին ջրհեղեղների աճող հաճախականությունը, որը պայմանավորված է տարածաշրջանին ոչ բնորոշ գարնանային բարձր ջերմաստիճանով: Մինչև 1980-ական թվականները գարնան մեկուկես ամսվա ընթացքում օդի ջերմաստիճանը հասնում էր 20-25 աստիճանի, ապա ներկայումս այն աճում է արագ և անհավասար, որի հետևանքով արագանում է ձնհալը՝ առաջացնելով ուժեղ հեղեղներ, որոնք զգալի վնաս են հասցնում բնակելի և հասարակական շինություններին, գյուղատնտեսական հողերին, տնամերձերին և այգիներին: Հեղեղների հզորացմանը նպաստում է նաև այն հանգամանքը, որ հանքավայրերի արդյունաբերական թափոնները լցվում են Արթիկ քաղաքի տարածքով անցնող երկու հեղեղատար ջրանցքների մեջ և նվազեցնում են դրանց թողունակությունը: Այս երևույթը կրկնվում է ամեն տարի: 2016թ. հունիսին տեղի ունեցած ջրհեղեղը Արթիկ քաղաքի ենթակառուցվածքներին և բնակչությանը պատճառել է ավելի քան 210 000 ԱՄՆ դոլարի վնաս, որի հետևանքների վերականգնումը չի կարող կատարվել միայն քաղաքային բյուջեի միջոցներով: Արթիկ քաղաքի և հարակից համայնքների բյուջեն թույլ չի տալիս վերացնել կրկնվող ջրհեղեղների և քարի թափոնների բացասական ազդեցությունները շրջակա միջավայրի վրա: Միջոցառման իրականացման նպատակներն են՝ 1. բարձրացնել բնական և գյուղատնտեսական լանդշաֆտների հարմարվողականության մակարդակը. 2. կառավարելի դարձնել ջրհեղեղները՝ նվազեցնելով դրանց հետևանքները. 3. վերականգնել կլիմայի փոփոխության և մարդածին ազդեցությունների հետևանքով վնասված բնական լանդշաֆտը՝ ցուցադրելով դեգրադացված բնական լանդշաֆտի հարմարվողականության բարձրացման հնարավորությունները. 4. ստեղծել բնական աղետների կանխարգելման վաղ արձագանքման համակարգ. 5. կլիմայի փոփոխության ներկայիս պայմաններում բարելավել համայնքի հաստատությունների և այլ շահագրգիռ կողմերի հարմարվողական ներուժը. 6. բարձրացնել բնակչության գիտելիքների մակարդակը կլիմայի փոփոխության պայմաններում բնական աղետների կանխարգելման և հարմարվողականության վերաբերյալ: Նպատակն է անտառային և անտառային հողերի ընթացիկ վիճակի ուսումնասիրության միջոցով օժանդակել անտառների կայուն կառավարմանը: **1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ինչպես խորհրդային, այնպես էլ հետխորհրդային տարիներին Արթիկում արդյունահանվել է հանրապետությունում արտադրվող շինաքարի ամբողջ ծավալի ավելի քան 60%-ը, որից միայն 35-40%-ն է օգտագործվել որպես ստանդարտին համապատասխանող շինանյութ, իսկ մյուս մեծ մասը հիմնականում նետվել է շրջակա միջավայր որպես թափոն: Քանի որ թափոնների կուտակման համար հատուկ վայրեր չեն առանձնացվել, դրանք անկանոն կերպով լցվել են հանքերին հարակից տարածքներում: Խորհրդային տարիներին օգտագործվել են Արթիկ քաղաքի և հարակից համայնքների բնական լանդշաֆտները, իսկ հետխորհրդային տարիներին՝ նաև գյուղատնտեսական նշանակության այն հողերը, որոնք սեփականաշնորհվել և հետագայում լքվել են սեփականատերերի կողմից: Հիմնականում աղտոտվել են լեռնատափաստանային սևահողերը, ձորակները և թեք լանջերը, որտեղ տարածված են տարախոտա-հացազգի խոտաբույսերը և թփուտները: Որպես ուղղակի ազդեցություն այս և հարակից տարածքներում էականորեն աղքատացել է բուսական և կենդանական աշխարհը, վատացել է հողերի ֆիզիկաքիմիական կազմը և ջրակուտակիչ հատկությունը: Այս պայմաններում արագանում է ձնհալի և անձրևաջրերի մակերեսային հոսքը, վատանում է հողի ջուր կլանելու և խոնավությունը պահելու հատկությունը, որի արդյունքում նկատվում է բուսական և կենդանական աշխարհների տեսակային և քանակական կազմի կորուստ: Այսպիսի փոփոխությունները արագացնում են բնական լանդշաֆտների դեգրադացման գործընթացները:

Որպես քարհանքների երկրորդային ազդեցություն, առկա է քամու, ձնհալի և անձրևաջրերի միջոցով քարի փոշու, լուծվող նյութերի և համեմատաբար մանր ֆրակցիաների տարածումը հարակից բնական և գյուղատնտեսական լանդշաֆտներ: Տարիների ընթացքում դրանց աստիճանական կուտակումը բացասական ազդեցություն է թողել բնական լանդշաֆտների կայունության և գյուղատնտեսական լանդշաֆտների բերքատվության վրա:
Նշված ազդեցությունների հանրագումարը մեծ չափով թուլացնում է լանդշաֆտների ինքնավերականգնման հատկությունը և հարմարվողականության մակարդակը կլիմայի կանխատեսվող փոփոխությունների նկատմամբ:
Կարելի է ընդհանրացնել, որ չռեկուլտիվացված քարհանքերի և թափոնների բացասական ազդեցությունը կարելի է նմանեցնել մի շղթայի, որի օղակներն են բնական, գյուղատնտեսական և մարդկային գործունեության արդյունքում ձևափոխված լանդշաֆտները, ջրային էկոհամակարգերը, հարակից համայնքները և ենթակառուցվածքները:
Մինչ այժմ Հայաստանի Հանրապետությունում չի իրականացվել փակված քարհանքերի ռեկուլտիվացիա և կլիմայական փոփոխություններին հարմարվողականության տեխնոլոգիաների և մեթոդների ներդրում: Հաշվի առնելով տարածքի կլիման և հողի պայմանները՝ հողի շերտի վերականգնումը և անտառտնկումը կլիմայի փոփոխության դեմ պայքարի առավել արդյունավետ միջոցն են, որոնք կնպաստեն շրջակա լանդշաֆտների հարմարվողականության բարձրացմանը:
Աշխատաքները նախատեսվում իրականացնել օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին՝ ՄԱԿ-ի Հարմարվողականության հիմնադրամի միջոցներով՝ 698.893,7 հազ.դրամ: 2019թ. համար նախատեսված էր 122.000,0 հազ.դրամ:

1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Կլիմայի գլոբալ փոփոխության պայմաններում բնական և գյուղատնտեսական լանդշաֆտների հարմարվողականության բարձրացում, ջրհեղեղների կանխարգելում, մարդածին ազդեցությունների հետևանքով խախտված բնական լանդշաֆտի վերականգնում, կլիմայի փոփոխության և հարմարվողականության վերաբերյալ բնակչության գիտելիքների բարձրացում

2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքները

Նախատեսվող միջոցառումները կնպաստեն Արթիկ քաղաքում ջրհեղեղների կանխարգելմանը, հանքավայրի ազդեցության գոտում գտնվող ավելի քան 300 հա վարելահողերի, 190 հա արոտների, 15 հա խոտհարքների, 640 հա արհեստական անտառի, 80 հա մակերեսով արհեստական ջրամբարի և բնական լանդշաֆտների պայմանների բարելավմանը, ինքնավերականգնման և կլիմայի փոփոխության պայմաններում կայունության ու հարմարվողականության մակարդակի բարձրացմանը, ինչպես նաև 40,0հա փակ քարհանքի լանդշաֆտի վերափոխմանը անտառայգու և հանգստի գոտու:

6.7.«Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի նվազեցում դրամաշնորհային ծրագրի «Շենքերի ոլորտում չափողականություն, հաշվետվողականություն և հավաստագրում (ՉՀՀ) համակարգի ստեղծում և գիտելիքների կառավարում» բաղադրիչի իրականացում» միջոցառման

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը.

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Կլիմայի փոփոխության հետևանքների նկատմամբ հարմարվողականության և մեղմման գործողությունների իրականացումը» ուղղությունը և «Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության 2021-2030 թվականների «Ազգային մակարդակով սահմանված գործողությունները»՝ ԱՍԳ, 2021 թվականի ապրիլի 22-ի N610-Լ որոշումը:
Կլիմայի կանաչ հիմնադրամի (ԿԿՀ) կողմից ֆինանսավորվող «Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի նվազեցում» Ծրագիրը միտված է նվազեցնել ջերմոցային գազերի արտանետումները Հայաստանում գոյություն ունեցող շենքերից և այդ միջոցով, ապահովել կայուն զարգացման օգուտները: Դա իրականացնելու համար Ծրագիրը կենտրոնանում է շենքերում ԷԱ (էներգաարդյունավետոըթյուն) արդիականացմանն ուղղված ներդրումների ընդհանուր ռիսկերի նվազեցման վրա, որպես ՀՀ-ում էներգիայի հիմնական սպառող հատված: ԷԱ արդիականացմանն ուղղված ներդրումների համար բարենպաստ շուկայական միջավայրի և բիզնես մոդելի ստեղծումը հանգեցնելու է էներգիայի էական խնայողությանը, ՋԳ արտանետումների կրճատմանը, կանաչ աշխատատեղերի ստեղծմանը և աղքատության կրճատմանը:
Ծրագիրը շենքերի ԷԱ վերակառուցման առաջ ծառացած խոչընդոտները հաղթահարելու է քաղաքականության և ֆինանսական ռիսկերի նվազեցման գործիքների համադրության և շուկայի առանցքային խաղացողների համար նպատակային ֆինանսական արտոնությունների միջոցով:
Քաղաքականության, ֆինանսական, շուկայական, տեխնիկական և կարողությունների խոչընդոտները թիրախավորելու միջոցով, Ծրագիրը էապես նվազեցնելու է շենքերի ԷԱ արդիականացմանն ուղղված ներդրումների

ռիսկերի պատկերը և խրախուսելու է մասնավոր հատվածի ներդրումները՝ այդպիսով մասշտաբավորելու է երկրում շենքերի ԷԱ արդիականացմանն ուղղվող ներդրումները:
Ծրագիրը շեշտը դնում է գոյություն ունեցող ենթակառուցվածքների վերազինման վրա և աջակցում է քաղաքային համակարգերի ամրապնդման ջանքերին: Ծրագիրը հենվում է ՄԱԶԾ-ի մեծ փորձի վրա և կոչված է աջակցելու Հայաստանի Հանրապետության կառավարությանը և ներգրավելու մասնավոր հատվածին ջեռուցման, շենքերի և լուսավորության ոլորտներում ԷԱ խոչընդոտները հաջողությամբ նվազեցնելու գործում: Հայաստանում ԷԱ արդիականացման ներդրումների համար Ծրագիրը բարենպաստ շուկայական միջավայր և բիզնես մոդել կստեղծի, որը ներդրումների շուրջ 20 տարվա ընթացքում կհանգեցնի արտանետումների 5.1-ից մինչև 5.4 մլն տ CO_2 ՋԳ կրճատմանը:

1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Շենքերը էներգիայի ամենամեծ սպառողներից են: Հայաստանում շենքերի մեծ մասը կառուցվել է Խորհրդային տարիներին (35-60 տարի առաջ), երբ հիմնականում անտեսվում էին ԷԱ պահանջները: Ըստ ՄԱԿ-ի ԿՓՇԿ ներքո Հայաստանի կողմից ներկայացված ՋԳ կադաստրի 2010թ. Ազգային հաղորդագրության, առաջնային էներգետիկ ռեսուրսների գրեթե 28%-ը սպառվում է շենքերի կողմից՝ հիմնականում բնակելի հատվածում, որը կազմում է ջերմոցային գազերի ընդհանուր արտանետումների 20%-ը: Երկար ջեռուցման սեզոնով և -5°C ձմեռային միջին ջերմաստիճանով և -42°C բացարձակ նվազագույն ջերմաստիճանով արտահայտված և ընդգծված մայրցամաքային կլիմայի պայմաններում, շենքերի ոլորտում էներգիայի սպառումը և ջերմոցային գազերի արտանետումները Հայաստանում հիմնականում կապված են ջեռուցման հետ:
Հայաստանի կլիմայական, էներգետիկ և բնակֆոնդի ռազմավարությունների համար շենքերի ոլորտում ԷԱ բարձրացումը բարձր առաջնահերթություն է համարվում: Մասնավորապես, ԷԱ արդիականացման միջոցով ջերմային արդիականացման հասնելը՝ հատկապես բազմաբնակարան շենքերում, նախանշված է որպես ազգային զարգացման առաջնահերթություն: Սա հատկապես հստակորեն արտացոլվում է ԷԱ ազգային Ծրագրի (2007թ.), Ազգային անվտանգության ռազմավարության (2007), էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգի (2013) և էներգետիկ անվտանգության ռազմավարության գործողությունների ծրագրի (2014) դրույթներում, որոնք, բոլորն էլ, ընդունում են շենքերի ոլորտի ԷԱ պոտենցիալը և նախանշում են ձեռնարկվելիք տեխնիկական միջոցառումները/լուծումները:
Այս Ծրագիրը կնպաստի Հայաստանում համապատասխան քաղաքականությունների և գործառույթների իրականացման միջոցով՝ ցածր արտանետումների և կլիմայի տոկուն զարգացման բացահայտված առաջնահերթություններին համահունչ ԷԱ սկզբունքների կիրառմանը, մասնավորապես.

- Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ազգային ծրագիրը (2007թ.) կարևորում է զարգացման պետական քաղաքականության համահարթեցումը, և երկրի ֆինանսավարկային քաղաքականությունն ուղղորդում է դեպի էներգախնայողության և ԷԱ օգուտների և շուկայի մասնակիցների համար արդյունավետ մեխանիզմի ապահովման համար շուկայական ակտիվ կառույցների ստեղծմանը և պահպանմանը:
- ԷԱ կարգավորող երկու օրենքները. Հայաստանի Հանրապետություն էներգետիկայի մասին օրենքը (2001թ.) և Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին օրենքը (2004թ.): Այս օրենքները սահմանում են էներգետիկայի ոլորտի, այդ թվում՝ էներգիայի արդյունավետ օգտագործման ապահովման, Հայաստանի էներգետիկ անկախության ապահովման, և վերականգնվող էներգետիկան և էներգախնայողությունը զարգացնելու նպատակով նոր արտադրությունների ստեղծման և նոր ծառայությունների կազմակերպման, ազգային նպատակային ծրագրերի իրականացման և նոր տեխնոլոգիաների կիրառման հիմնական դրույթներն ու սկզբունքները:

1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

- Օժանդակել քաղաքականության, կարգավորող, ինստիտուցիոնալ և շուկայի վերափոխմանը, որը նպաստում է շենքերի ԷԱ մակարդակի բարձրացմանը և նվազեցնում շենքերի ոլորտից ՋԳ արտանետումները,
- Նպաստել առողջապահական, կրթական, մշակութային և այլ ոլորտների հանրային շենքերի բարելավված ԷԱ, բարելավել հարմարավետության մակարդակը և կրճատել էներգետիկ ծախսերի համար պետական բյուջեից հատկացումները՝ զուգահեռաբար բարելավելով հանրային ծառայությունների ընդհանուր որակը,
- Շենքերի ինտեգրված նախագծման հայեցակարգի կիրառման միջոցով օժանդակել Հայաստանում պատշաճ և մատչելի բնակարանների տրամադրմանը, և նպաստել շենքերի շահագործման ընդհանուր ծախսերի նվազեցմանը, հանրային ծախսերի և օգտագործողների հաճախորդների համար ծախսերի նվազեցմանը,
- Նպաստել շինարարության և շենքերի ոլորտին առնչվող Հայաստանի զարգացման (շրջակա միջավայրի, տնտեսական և սոցիալական) նպատակներին,
- Երկարաժամկետ առումով օժանդակել դեպի ցածր արտանետումներով զարգացման ուղու վերափոխմանը,
- Նպաստել Հայաստանի էներգետիկ անվտանգության բարելավմանը:

Համաձայն ԿԿՀ խորհրդի որոշման ծրագիրը երկարաձգվել է 36 ամսով, այդ թվում նաև երկարաձգվել է առաջին բաղադրիչը, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ նախատեսված ոչ բոլոր շենքերն են ջերմաարդիականացվել: Բաղադրիչի շրջանակում նախատեսվում է նոր ջերմաարդիականացված շենքերի

էներգետիկ աուդիտների իրականացում, էներգետիկ անձնագրերի կազմում, ջերմոցային գազերի արտանետումների գնահատում, ինչպես նաև իրազեկման և գիտելիքների բարձրացման աշխատանքներ: Նշված աշխատանքների իրականացումը հաստատված բյուջեի փոփոխություն չի նախատեսվում:

2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Միջոցառումը կնպաստի՝

- Շենքերի տարբեր կատեգորիաների համար ՄՀՍ /մոնիտորինգ, հաշվետվություն և ստուգում/ շրջանակի, այդ թվում՝ ուղեցույցների և մոնիտորինգի մեթոդաբանության մշակմանը,
- Ցուցադրական և կարողությունների հզորացման նպատակով ընտրված շենքերի ԷԿՏՀ լիարժեք իրականացման աջակցությանը,
- Վեբ կայքի ստեղծմանը, որը տարբեր շահագրգիռ կողմերի միջև տեղեկատվության և հաղորդակցման հարթակ կտրամադրի և առկա գիտելիքների և հմտությունների փոխանակման միջոցով կբարելավի համագործակցությունը և ուսուցումը,
- Տեղեկատվության տարածման ձևաչափերի մշակմանը:

Նախատեսվող արդյունքներն են.

- Շենքերի ոլորտում արտանետումների գործակիցների հաշվարկման մեթոդաբանություններ:
- Էներգետիկ կառավարման տեղայնացված տեղեկատվական համակարգ:
- Արդիականացված և թարմացված Mershenq.am վեբ-կայք:
- Իրականացված դասընթացներ:
- Իրազեկման աշխատանքներ, գովազդային նյութեր:
- Ծրագրով նոր ջերմաարդիականացվող շենքերի Էներգետիկ աուդիտների իրականացում, էներգետիկ անձնագրերի կազմում և ջերմոցային գազերի արտանետումների գնահատում:

6.8.«Անցում էլեկտրական շարժիչով մեքենաների Հայաստանում ծրագրի իրականացում» միջոցառման

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Կլիմայի փոփոխության հետևանքների նկատմամբ հարմարվողականության և մեղմման գործողությունների իրականացումը» ուղղությունը և «Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության 2021-2030 թվականների «Ազգային մակարդակով սահմանված գործողությունները»՝ ԱՍԳ, 2021 թվականի ապրիլի 22-ի N610-Լ որոշումը:

Վերջին 30 տարիների ընթացքում աշխարհում դիտվում է կլիմայի գլոբալ տաքացում, որն արտահայտվում է տարերային աղետների հաճախականության և ուժգնության մեծացմամբ, անապատացման երևույթների արագացմամբ և ջրային ռեսուրսների նվազմամբ: Ապացուցված է, որ կլիմայի գլոբալ տաքացումը արդյունք է ջերմոցային գազերի արտանետումներին, որոնք հիմնականում արտանետվում են տնտեսության տարբեր ոլորտներից:

Ջերմոցային գազերի արտանետումների մեծ բաժինը տրանսպորտն է, որն օգտագործելով մեծ քանակությամբ վառելանյութեր և քսայուղեր մթնոլորտ է արտանետում ածխաթթու գազ, մեթան և այլ գազեր: Հստակ է, որ տրանսպորտի ոլորտից ջերմոցային գազերի արտանետումների նվազեցումը զգալիորեն կնվազեցնի արտանետումների ընդհանուր ծավալը և որոշակիորեն կդանդաղեցնի կլիմայի գլոբալ տաքացումը:

Միջոցառման նպատակն է Հայաստանի Հանրապետությունում ներդնել էլեկտրոմոբիլների կիրառման մշակույթը և ցուցադրել դրա արդյունավետությունը ջերմոցային գազերի արտանետումների ծավալների նվազեցման գործում:

1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Ներկայումս Հանրապետությունում խիստ սահմանափակ է էլեկտրոմոբիլների շահագործումը, քանի որ լուծված չեն լիցքավորման և իրավական մի շարք խնդիրները:

1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

-Ստեղծել աշխատանքները համակարգող միջգերատեսչական մարմին,

-Հստակեցնել էլեկտրական տրանսպորտային միջոցների ձեռքբերման շահագրգիռ խմբերին,

-Վերապատրաստել հիմնական շահագրգիռ կողմերին՝ առաջնահերթությունը տալով կանանց ընդգրկվածությանը,

-Մշակել պետական գնումների, տվյալների հավաքագրման համակարգերի, հաշվետվությունների և վերլուծական շրջանակների նախագիծ,

-Մշակել էլեկտրական շարժիչով աշխատող մեքենաների ներդրման ազգային ռազմավարություն՝ ներառելով տրանսպորտի բոլոր միջոցները, լիցքավորման ենթակառուցվածքները, ինչպես նաև գենդերային վերլուծությունը և գործողությունների ծրագիրը,

-Մշակել և ընդունել քաղաքականության և կարգավորող միջոցառումների փաթեթ՝ միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում էլեկտրական շարժունակությանն անցումը հեշտացնելու համար,

-Կազմակերպել էլեկտրական մեքենաների և լիցքավորման ենթակառուցվածքների գնումներ:

2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը
Միջոցառումը կնպաստի՝
-ջերմոցային գազերի արտանետումների ծավալների նվազմանը,
-կցուցադրվի էլեկտրոմոբիլների արդյունավետությունը և բնապահպանական անվտանգությունը,
-կփոխվի մարդկանց մտածելակերպը էլեկտրոմոբիլների կարևորության վերաբերյալ,
-հնարավորություն կընձեռնվի համակարգված և կանոնակարգված մոտեցումներ ցուցաբերել առկա խնդիրների լուծմանը:

6.9.«Հայաստանի անտառների կայունություն, հարմարվողականության բարձրացում և համայնքային զարգացման կանաչ աճի խթանում՝ կլիմայի փոփոխության մեղմման միջոցով» ծրագրի ՝ «Կլիմայի փոփոխության հետևանքների մեղմում և հարմարվողականություն՝ նոր տեխնոլոգիաների փոխանցման միջոցով» բաղադրիչի իրականացում» միջոցառման

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը.
Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Կլիմայի փոփոխության հետևանքների նկատմամբ հարմարվողականության և մեղմման գործողությունների իրականացումը» ուղղությունը և «Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության 2021-2030 թվականների «Ազգային մակարդակով սահմանված գործողությունները»՝ ԱՍԳ, Կառավարության 2021 թվականի ապրիլի 22-ի N610-Լ որոշումը:
Ըստ ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի երրորդ ազգային հաղորդման, գործողությունների սովորական ընթացքի սցենարի (BAU) համաձայն, գործող անտառների 5-6%-ը կարող է անհետանալ մինչև 2030 թվականը, քանի որ անառողջ ծառերն ու անտառային ծառուտները ավելի զգայուն կդառնան վնասատուների, հիվանդությունների և հրդեհների նկատմամբ: Բացի այդ, գյուղական համայնքները դեռևս մեծապես կախված են անտառներից:
Տնային տնտեսությունների էներգիայի սպառման վերաբերյալ վերջերս կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ հանածո վառելիքի գների բարձրացման հետևանքով վառելիքի սպառումը կավելանա:
Ինչ վերաբերում է հարմարվողականության մարտահրավերներին, անտառտնտեսությունը ներկայացնում է առավել քիչ հարմարեցված ենթաճյուղերից մեկը: TNC-ն կանխատեսում է անտառների սահմանների փոփոխություն այլ էկոհամակարգերի, որը պայմանավորված է անտառային հրդեհների, հիվանդությունների և վնասատուների զանգվածային առաջացման հետ:
ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության վերջին հրապարակումն ընդգրկում է էկոհամակարգերն այն հատվածների շրջանում, որոնք առավել խոցելի են կլիմայի փոփոխության նկատմամբ, և որտեղ ազդեցությունները կլինեն լայն և շոշափելի: Ըստ հաղորդումների, կլիմայի փոփոխության հետևանքով Հայաստանի տնկիների տեսակների 15%-ից ավելին ոչնչացման եզրին են: Ավելի հաճախակի կրկնվող ամառային երաշտները և ջրային սթրեսը կնվազեցնեն ծառերի աճի տեմպերը և կբարձրացնեն վնասատուների և հիվանդությունների նկատմամբ զգայունությունը: Սա նաև պայմաններ կստեղծի ավելի հաճախակի և ուժեղ հրդեհների բռնկմանը, ինչը մոտավոր հաշվարկով մինչև 2030 թվականը կհանգեցնի 14,000-17,000 հա անտառի կորստի:
Կլիմայի փոփոխության հետևանքների մեղմացումը հիմնականում կիրականացվի վերականգնվող էներգիայի (RE), էներգաարդյունավետության (EE), անտառների և հողում ածխածնի պահուստից: 2010թ.-ի համեմատ, կանխատեսվում է մինչև 2030 թվականը արտանետումների աճ 57%, իսկ արդեն նվազած ածխածինն ավելի կնվազի (11% 2010-2014): Կլիմայի փոփոխությանը հարմարվող անտառապատումը, անտառների դեգրադացիայի (օրինակ, վառելափայտի) կրճատումը և անտառների կառավարմանը մասնակցության աճը, կնպաստի կատարել Ազգային մակարդակով սահմանված ներդրումները և կնպաստի ցածր ածխածնային զարգացման ուղիներին, որոնք համապատասխանում են 2°C-ից պակաս ջերմաստիճանի բարձրացմանը:
Նախագիծն ուղղված է ԷԷ-ին և անտառտնտեսությանը վերաբերող նախորդ նախագծերի լավագույն փորձը ընդլայնելուն և ընթացիկ նախագծերի շրջանակում համագործակցություն ծավալելուն՝ նպաստելով NDC թիրախներին:
1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.
Հիմնական պատճառներն ու խոչընդոտներն են.
-Գյուղական բնակչության համար այլընտրանքի բացակայությունը, հատկապես կանանց համար (գյուղական տնային տնտեսությունների 25%-ը ղեկավարում են միայնակ կանայք), որոնք էներգիայի հետ կապված առաջնային կարիքները հոգում են անարդյունավետ և ծախսատար եղանակներով,
-Հաստատությունների տեխնիկական կարողությունների և ինստիտուցիոնալ համակարգման բացակայությունը անտառային ոլորտի էներգետիկ կարիքները և կլիմայի փոփոխությունը լուծելու համար,

-Ազգային մակարդակով սահմանված ներդրումներին ուղղված էկոհամակարգի մոտեցումը կիրառելու և շահագրգիռ կողմերի մասնակցությունը անտառների կառավարմանը ապահովելու համարժեք քաղաքականության մեխանիզմների բացակայությունը:

1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

-Դեգրադացված անտառային տարածքների առնվազն 2.5%-ը վերականգնում և կայուն կառավարում՝ կլիմայի հարմարվողական մեթոդաբանության համաձայն,

-Թիրախային գյուղական համայնքների վառելափայտից կախվածության օպտիմալացում և առնվազն 30% նվազեցում,

-Համապատասխան շահագրգիռ կողմերին հնարավորության ընձեռում իրականացնելու անտառների արդյունավետ և հարմարվողական կառավարում:

Ծրագիրն ըստ պամանագրի նախատեսված է իրականացնել 2022-2029թթ. ընթացքում:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Միջոցառումը կնպաստի՝

- Կլիմային հարմարեցված 3 տնկարանների հիմնում և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի անձնակազմի և շահագրգիռ կողմերի կարողությունների զարգացում,
- 12մլն կոնտեյներային տնկիների արտադրություն,
- Տնկման և պահպանման աշխատանքներ պետական անտառային ֆոնդի ընտրված հողերում (6300 հա) և քաղաքային հողերում (1000 հա),
- Պահանջվող դասընթացների պլանների մշակում և ձևակերպում Շրջակա միջավայրի նախարարության և մասնագիտացված ԲՈՒՀ-ի կողմից,
- Էներգախնայող սարքերի որակի ստանդարտների նախագծում և հաստատում,
- Էներգախնայող սարքերի փորձարկում,
- Տեխնոլոգիական դրամաշնորհները մշակվում և հասանելի են դառնում էներգաարդյունավետ ջեռուցման սարքավորումներին անցում կատարած նպատակային տնային տնտեսություններ համար,
- Համայնքային կազմակերպությունների համար անտառների կառավարման ուղեցույցների մշակում,
- Ինստիտուցիոնալ և համայնքային աջակցություն կլիմայի փոփոխությունների հանդեպ հարմարվողական անտառների կառավարման ուղենիշների կիրառման հարցում՝ ներառյալ գյուղական էներգաարդյունավետությունը,
- Հողերի կատեգորիաների գնահատում, անտառների մոնիտորինգի համակարգի ձևավորում և ազգային կարողությունների զարգացում,
- Դաշտային տվյալների հավաքագրում, ներառյալ հետազոտության տվյալների կառավարումը, որակի ապահովումը, հետազոտության արդյունքների գնահատումը և մեկնաբանությունը,
- Միջամտության տարածքների և ազդեցության գնահատում orthophoto քարտեզագրման և թվային մակերևույթի մոդելների միջոցով,
- Համայնքների հզորացում, իրազեկում և զգայունացում:

6.10.«Հայաստանի Հանրապետության արիդ (Վայոց ձորի մարզ) գոտում կլիմայի փոփոխության ընթացքի մեղմում և հարմարվողականության կարողությունների հզորացում» ծրագրի իրականացում» միջոցառման

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Կլիմայի փոփոխության հետևանքների նկատմամբ հարմարվողականության և մեղմման գործողությունների իրականացումը» ուղղությունը «Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության 2021-2030 թվականների «Ազգային մակարդակով սահմանված գործողությունները»՝ ԱՍԳ, Կառավարության 2021 թվականի ապրիլի 22-ի N610-Լ որոշումը:

Վայոց ձորի մարզը, որտեղ առաջարկվում է իրականացնել Ծրագիրը գտնվում է Հայաստանի Հանրապետության հարավ-արևելքում և երկրի առավել արիդ և սակավանտառ շրջաններից է: Մարզը զբաղեցնում է 2308կմ^2 տարածք, բնակչությունը՝ 60000 մարդ: Անտառային հողերը կազմում են 136,5 կմ^2, որը մարզի տարածքի 5,9%-ն է: Անտառների ավելի քան 80%-ը գիհու նոսրանտառներ են:

Մարզն ունի խոր ձորերով և բարձր լեռներով կտրտված մակերևույթ: Մարզի տարածքին բնորոշ է լանդշաֆտների ուղղաձիգ գոտիականություն: Մարզի տնտեսության առաջատար ճյուղը գյուղատնտեսությունն է: Մինչև 2050թ. սպասվում է ջերմաստիճանի բարձրացում և տեղումների նվազում, հողի երկրորդային աղակալում, տեղատարափ անձրևներ ու հեղեղումներ, որոնց հետևանքով կուժեղանա ջրային էրոզիան, իսկ երաշտների և խորշակների հետևանքով կուժեղանա հողի հողմային էրոզիան:

Կանխատեսվող կլիմայական փոփոխությունները կարող են բացասական ազդեցություն ունենալ բնական և գյուղատնտեսական էկոհամակարգերի և կենսաբազմազանության վրա: Այս պայմաններում արագանում է համայնքներին համեմատաբար մոտ գտնվող բնական էկոհամակարգերի դեգրադացումը և դրանք կորցնում են կլիմայի փոփոխության նկատմամբ հարմարվողականությունը: Մյուս կողմից կլիմայի դիտվող փոփոխությունները (ջերմաստիճանի բարձրացում, տեղումների քանակի նվազում, ջերմային ալիքների, հեղեղների և կարկուտի հաճախականության մեծացում և այլն) նվազեցնում են գյուղատնտեսական արտադրանքի քանակը, որակը և իջնում է բնակչության կենսամակարդակը:

Միջոցառման նպատակն է Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի կլիմայի փոփոխության նկատմամբ առավել խոցելի համայնքների հարմարվողականության բարձրացումը, կլիմայի փոփոխության տեմպի մեղմումը, պարենային անվտանգության մակարդակի բարձրացումը և էկոհամակարգերի կայուն կառավարման վերաբերյալ բնակչության մոտեցումների հիմնարար փոփոխությունը:

Այս նպատակին հասնելու համար խնդիր է դրվում՝

- Մեծացնել հողի օրգանական ածխածնի կուտակման կարողությունները:
- Բարձրացնել գյուղատնտեսական և բնական էկոհամակարգերի հարմարվողականության մակարդակը:
- Մեծացնել համայնքների պարենային անվտանգության հնարավորությունները:
- Նվազեցնել ջերմոցային գազերի արտանետումները:
- Ապահովել արդյունքների պահպանությունը և շարունակականությունը:

1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Գյուղատնտեսությունից և անասնապահությունից ստացվող եկամուտների նվազումը հնարավորություն չի տալիս բնակիչների մի մասին կենցաղային կարիքների համար բավարար օգտվելու գազից և էլեկտրաէներգիայից: Որպես վառելանյութ է օգտագործվում փայտը և չորացված գոմաղբը: Այս պայմաններում առկա է 2 հիմնական բացասական արդյունք:

1. Մեծանում է ճնշումը անտառային էկոհամակարգի վրա, որի հետևանքով նվազում է անտառի կլիմայակարգավորիչ և ջրակուտակիչ հատկությունները: Հրդեհների, հատումների, հիվանդությունների և վնասատուների արագ տարածման հետևանքով, առաջանում են էկոհամակարգին ոչ հատուկ բացատներ, նոսրուտներ, ցածրարժեք թփուտներ, որտեղ խիստ վատանում է անտառին հատուկ ծառատեսակների սերմերի ծլումը և նոր անտառի զարգացումը: Էկոհամակարգը աստիճանաբար թուլանում է և կորցնում կլիմայի փոփոխության նկատմամբ հարմարվողականությունը:

2. Գյուղատնտեսության մեջ նվազում է օրգանական պարարտանյութերի օգտագործման ծավալները: Աստիճանաբար վատթարանում են հողի որակական հատկությունները և շատ հաճախ դրանք դուրս են մնում մշակությունից, դեգրադացվում են՝ վերածվելով կիսաանապատային կամ շատ նոսր խոտածածկով հողատեսքերի:

Տեղական ինքնակառավարման մարմինները անբավարար ֆինանսական միջոցների պատճառով չեն կարողանում կլիմայի փոփոխության պայմաններում իրականացնել բնական էկոհամակարգերի և գյուղատնտեսական լանդշաֆտների կայունության բարձրացմանն ուղղված միջոցառումներ: Առաջարկվող միջացառումները բնակիչների և տեղական ինքնակառավարման մարմինների համար կստեղծեն եկամուտի ստացման այլընտրանքային հնարավորություններ, որի արդյունքում կնվազի ճնշումը բնական էկոհամակարգերի վրա և դրանք ավելի արդյունավետ կարող են հարմարվել կլիմայի փոփոխությանը:

1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Վայոց ձորի մարզի ընտրված համայնքների դեգրադացված տարածքներում՝

համայնքահեն խելացի գյուղատնտեսական գործելակերպի կիրառում և կլիմայական ռիսկերի նկատմամբ խոցելիության նվազեցում,

գյուղատնտեսական արտադրության արժեքային շղթաների ամրապնդում,

համայնքներին կլիմայական խելացի տեխնոլոգիաների փոխանցում,

գյուղատնտեսության վարման կլիմայական խելացի գործելակերպի վերաբերյալ իրազեկվածության, պլանավորման, մոնիթորինգի և որոշումների կայացման ներուժի հզորացում:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Միջոցառումը կնպաստի՝

- հարմարվողական ռազմավարական միջոցառումների մշակմանը,
- կլիմայական խելացի գյուղատնտեսական տեխնոլոգիաների ներդրմանը,
- նպատակային արտադրանքի արժեքային շղթայի բարելավմանը,
- պլանավորման կարողությունների ուժեղացման միջոցով համայնքներում կենսապահովման մակարդակի բարձրացմանը,
- հողերի դեգրադացիայի կանխարգելմանը,
- ոռոգման ջրի խնայողական նոր տեխնոլոգիաների ներդրմանը,
- բնական կերհանդակների արտադրողականության բարձրացմանը,

	• գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության բարձրացմանը և բնակչության եկամուտների բազմազանացմանը, • դժվարամատչելի արոտների, խոտհարքների և վարելահողերի հասանելիության մեծացմանը: **6.11. ««Կլիմայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը Կառավարության հավանությանն արժանանալու վերաբերյալ Կառավարության որոշման ընդունում» միջոցառման** **1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** «Կլիմայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) մշակման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Կլիմայի փոփոխության հետևանքների նկատմամբ հարմարվողականության և մեղմման գործողությունների իրականացումը» ուղղությունը, ինչպես նաև «Փարիզյան համաձայնագրի ներքո «Ազգային մակարդակով սահմանված գործողությունները»՝ (ԱՍԳ) իրականացնելու և իրավական փաստաթղթեր մշակելու համար համապատասխան հիմք հանդիսացող իրավական փաստաթուղթ ընդունելու անհրաժեշտությամբ: «Կլիմայի մասին» Հայաստանի Հանրապետության նոր օրենքի նախագծի ընդունման հետևանքով կկարգավորվեն կլիմայական փոփոխությունների առավել խոցելի ոլորտների կառավարմանն ուղղված հարաբերությունները, կհստակեցվի կլիմայական գործողությունների իրականացման իրավասու մարմինների շրջանակը: Օրենքի ընդունման նպատակն է բարելավել հանրային առողջության և անվտանգության, այդ թվում նաև մարդու առողջության պաշտպանության մակարդակը, հստակեցնել կլիմայի փոփոխության հետևանքով հնարավոր կորուստների և վնասների վերականգման, բնապահպանական կարիքները գնահատելու մեխանիզմները: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** «Կլիմայի փոփոխության մասին» օրենքի մշակումը նպատակ ունի սահմանել Հայաստանի Հանրապետության կլիմայի փոփոխության բացասական հետևանքների դեմ պայքարի հիմնական ուղղությունները, կանոնակարգել կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության մեխանիզմների, կլիմայական գործողությունների իրականացման գործընթացները: Ներկայումս օրենքի բացակայությունը հիմք է հանդիսանում միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների ոչ համակարգված կատարմանը: Հաշվի առնելով կլիմայի փոփոխության բացասական հետևանքների ինտենսիվացման տեմպերը, խիստ անհրաժեշտ է կենսունակ և հրատապ կլիմայական գործողությունների իրականացման համար կանոնակարգված իրավական մեխանիզմների առկայությունը: Խիստ կարևոր հանգամանք է հանդիսանում նաև 2018 թվականի ապրիլի 11-ին վավերացված Հայաստանի Հանրապետություն-Եվրոպական Միություն համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը: Սրա շրջանակներում անհրաժեշտություն է առաջացել ձեռնարկել միջոցառումներ ՀՀ ներպետական օրենսդրության և ԵՄ դիրեկտիվների համապատասխանեցման ուղղությամբ: Կլիմայի փոփոխությանն առնչվող ջերմոցային գազերի արտանետումների դիտանցման և հաշվետվությունների ներկայացման գործուն մեխանիզմների բացակայությունը էական ազդեցություն ունի միջազգային պարտավորությունների կատարման արդյունավետության վրա: **1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Առաջարկվող Օրենքով նախատեսվում է կանոնակարգել կլիմայի փոփոխության վերաբերյալ վարվող պետական քաղաքականությունը, համակարգել կլիմայի մեղմման և հարմարվողականության քաղաքականության մշակման և իրականացման գործընթացները: Օրենքով կսահմանվեն կլիմայի փոփոխության վերաբերյալ հիմնական հասկացությունները, որով կհստակեցվեն յուրաքանչյուր հասկացության վերաբերյալ առկա տարընկալումները: Բացի այդ, իրավական հիմքերի վրա կդրվեն կլիմայի փոփոխության դեմ պայքարի, ջերմոցային գազերի արտանետումներ կրճատմանն ուղղված, ինչպես նաև հարմարվողականության դիմակայուն գործիքակազմերի կիրառման համար միջնաժամկետ և երկարաժամկետ պլանների մշակման աշխատանքները: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջազգային չափորոշիչներին, ԵՄ դիրեկտիվների և արդի հասարակական հարաբերություններին համահունչ օրենքի առկայություն, որի միջոցով առավել համակարգված և արդյունավետ հիմքերի վրա կդրվեն կլիմայի փոփոխության բացասական հետևանքների դեմ պայքարի գործընթացները: «Կլիմայի մասին» ՀՀ օրենքը կամրագրի՝ - երկրում կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության քաղաքականության մշակման, իրականացման, այդ գործընթացների ինստիտուցիոնալ համակարգման իրավական կարգավորումները, -կլիմայական միջնաժամկետ և երկարաժամկետ նպատակների հստակ սահմանում և ոլորտային զարգացման քաղաքականություններում կլիմայական նկատառումների ներկառուցման կարևորությունը:
7.	**Քիմիական նյութերի էկոլոգիապես անվտանգ կառավարման համակարգի ստեղծումը.**

7.1. «Քիմիական նյութերի մասին» ՀՀ օրենքի նախագիծը Կառավարության հավանությանն արժանանալու վերաբերյալ Կառավարության որոշման ընդունում» միջոցառման

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Քիմիական նյութերի էկոլոգիապես անվտանգ կառավարման համակարգի ստեղծումը» ուղղությունը, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով» ստանձնած պարտավորությունների կատարմամբ:

«Քիմիական նյութերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նպատակը քիմիական նյութերի՝ մարդու առողջության և շրջակա միջավայրի պահպանության տեսանկյունից անվտանգ գործածության ապահովումն է:

1.1.կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Հայաստանի Հանրապետությունում քիմիական նյութերի գործածության բնագավառում ընդունված են բավականին մեծ թվով իրավական ակտեր, որոնք հիմնականում բխում են Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերից և կարգավորում են քիմիական նյութերի բնագավառի առանձին, երբեմն միմյանց հետ չկապակցվող իրավահարաբերություններ: Քիմիական նյութերի գործածության բնագավառում ընդունված և՛ միջազգային կոնվենցիաները, և՛ ներպետական օրենսդրությունը, և՛ Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ընդունված իրավական ակտերը հիմնականում կարգավորում են որոշ քիմիական նյութերի արգելման, ներմուծման գործընթացները կամ կարգավորում են սահմանափակ թվով քիմիական նյութերի գործածությունը, մինչդեռ Հայաստանի Հանրապետությունում քիմիական նյութերի ներմուծման, արտահանման, գրանցման և մակնշման հետ կապված հարաբերությունները կարգավորված չեն:

1.2.առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Միջոցառման իրականացմամբ կկարգավորվեն Հայաստանի Հանրապետության տարածքում քիմիական նյութերի գործածության՝ արտադրության, օգտագործման, պահման, փոխադրման, իրացման, ներմուծման և արտահանման ընթացքում շրջակա միջավայրի պահպանության և մարդու առողջության անվտանգության ապահովման, ինչպես նաև քիմիական նյութերի գրանցման համակարգի ներդրման հետ կապված հարցերը:

2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

«Քիմիական նյութերի մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունմամբ կկարգավորվեն Հայաստանի Հանրապետությունում քիմիական նյութերի գործածության հետ կապված իրավահարաբերությունները՝ մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա դրանց հնարավոր վնասակար ազդեցության նվազեցման ու անվտանգության ապահովման նպատակով:

7.2. «Հայաստանի Հանրապետությունում Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիայի իրականացման գործողությունների ազգային ծրագրի 2022-2026 թվականներին իրականացվելիք միջոցառումների ցանկը հաստատելու մասին Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը» միջոցառման

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Քիմիական նյութերի էկոլոգիապես անվտանգ կառավարման համակարգի ստեղծումը» ուղղությունը և «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիայով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարումով:

1.1.կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Հայաստանի Հանրապետությունը 2003 թվականին վավերացրել է «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիան և համաձայն Կոնվենցիայի 7-րդ հոդվածի հանձն է առել պարբերաբար վերանայել և թարմացնել Կոնվենցիայի իրականացման գործողությունների ազգային ծրագիրը: Նախորդ 2016-2020 թվականների ծրագիրը հաստատվել է 2016 թվականի դեկտեմբերի 8-ի Կառավարության նիստի թիվ 49 արձանագրային որոշմամբ, որի գործողության ժամկետն ավարտվել է, ուստի անհրաժեշտություն է առաջացել ներկայացնել գործողությունների թարմացված ազգային ծրագիր:

1.2.առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Առաջարկվում է թարմացնել ՀՀ-ում «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիայի իրականացման գործողությունների ազգային ծրագիրը նոր կայուն օրգանական աղտոտիչների ընդգրկմամբ:

2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

«Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիայից բխող միջոցառումների իրականացումը կնպաստի կայուն օրգանական աղտոտիչների անբարենապաստ ազդեցության նվազեցմանը, արտանետումների կրճատմանը և թափոնների էկոլոգիապես անվտանգ ոչնչացմանը:

7.3.«Հայաստանի Հանրապետությունում քիմիական նյութերի և խառնուրդների ռեեստրի ձևավորում» միջոցառման

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Քիմիական նյութերի էկոլոգիապես անվտանգ կառավարման համակարգի ստեղծումը» ուղղությունը, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2017 թվականի մարտի 3-ի N 19 որոշման 3-րդ կետը, ինչպես նաև 2021թվականի ապրիլի 15-ի N 550-Լ որոշման 1-ին և 2-րդ կետերը:

Քիմիական նյութերի և խառնուրդների ռեեստրի ձևավորման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև «Քիմիական նյութերի մասին» օրենքի նախագծի մշակմամբ, քանի որ օրենքի նախագծով նախատեսվող կարգավորումները, այդ թվում՝ քիմիական նյութերի և խառնուրդների գրանցման մասով, պետք է համահունչ լինեն Եվրասիական տնտեսական միության իրավական ակտերի պահանջներին, իսկ քիմիական նյութերի և խառնուրդների գրանցման համակարգը պետք է լինի միասնական բոլոր ԵԱՏՄ անդամ պետությունների համար:

1.1.կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Հայաստանի Հանրապետությունում բացակայում է քիմիական նյութերի միասնական գրանցման համակարգը և ներկայումս քիմիական նյութերի կարգավորման բնագավառում առաջնային լուծում պահանջող խնդիրը քիմիական նյութերի միասնական գրանցման համակարգի ստեղծումն է, քանի որ քիմիական նյութերի հատկությունների, քանակության, մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա դրանց ազդեցության, քիմիական նյութեր արտադրողների, ներմուծողների, իրացնողների վերաբերյալ տվյալների բացակայությունը հնարավորություն չի տալիս պետական մարմիններին արդյունավետ կարգավորել բնագավառը:

Միջոցառման կատարման ժամկետների սահմանվել են հաշվի առնելով հետևյալը՝

1. 2022թ. դեկտեմբերի 9-ի Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված և առցանց անցկացվող տեսախորհրդակցության ընթացքում ներկայացվել է «Քիմիական արտադրանքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգը (ԵԱՏՄ ՏԿ 041/2017) հաստատելու մասին ԵՏՀ խորհրդի 03.03.2017թ. N19 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԵՏՀ խորհրդի որոշման նախագիծը, ինչով նախատեսվում է փոփոխել ԵԱՏՄ ՏԿ 041/2017 և դրանից բխող իրավական ակտերի, փաստաթղթերի ուժի մեջ մտնելու, ինչպես նաև քիմիական նյութերի և խառնուրդների ռեեստրներ ստեղծելու ժամկետները, մասնավորապես՝

1) «ԵԱՏՄ քիմիական նյութերի և խառնուրդների ռեեստրի ստեղծման և վարման կարգը», ինչպես նաև միջազգային և միջպետական համապատասխան ստանդարտների ցանկը, որոնք անհրաժեշտ են ԵԱՏՄ ՏԿ 041/2017 սահմանված պահանջների կատարման համար, մշակելու և հաստատելու ժամկետ սահմանելով՝ մինչև 2024թ. սեպտեմբերի 1-ը,

2) խնդրել ԵԱՏՄ անդամ պետությունների կառավարություններին՝ քիմիական նյութերի և խառնուրդների ազգային (ներպետական) ռեեստրների ստեղծումն ապահովել մինչև 2025թ.՝ սեպտեմբերի 1-ը, քիմիական նյութերի մասով և սկսած 2030թ. սեպտեմբերի 1-ից՝ խառնուրդների մասով,

3) «Քիմիական արտադրանքի անվտանգության մասին» ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի ուժի մեջ մտնելու ժամկետ սահմանել 2026թ. սեպտեմբերի 1-ը՝ ԵՏՀ խորհրդի 03.03.2017թ. N19 որոշման 2-րդ կետով սահմանված միջոցառումների ապահովման դեպքում:

1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Միջոցառման իրականացումը կնպաստի քիմիական նյութերի և խառնուրդների ռեեստրի ստեղծմանը, ինչը կհանդիսանա Հայաստանի Հանրապետությունում արտադրվող և ներմուծվող քիմիական նյութերի և խառնուրդների վերաբերյալ տվյալների միասնական շտեմարան և կկիրառվի այդ նյութերի անվտանգ գործածության նպատակով:

Միջոցառումը կիրականացվի հինգ փուլով.

1) Հայաստանի Հանրապետությունում քիմիական նյութերի և խառնուրդների ռեեստրի ձևավորման աշխատանքների նախապատրաստման նպատակով, կկատարվի ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի N 550-Լ որոշման 2-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի համաձայն էկոնոմիկայի նախարարության կողմից ներկայացվող՝ արդյունաբերական կազմակերպությունների կողմից օգտագործվող և շրջանառվող՝ հաշվառման ենթակա քիմիական նյութերի և խառնուրդների, ինչպես նաև պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացվող՝ 2015-2020 թթ. ընթացքում ՀՀ ներմուծված և արտահանված քիմիական նյութերի և խառնուրդների վերաբերյալ տեղեկատվության ուսումնասիրում և ամփոփում:

2) կկատարվի ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի N 550-Լ, որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն պետական եկամուտների կոմիտեի կողմից (յուրաքանչյուր տարվան հաջորդող տարվա մինչև հունվարի

	30-ը) ներկայացվող՝ ՀՀ ներմուծված և ՀՀ-ից արտահանված քիմիական նյութերի և խառնուրդների վերաբերյալ տեղեկատվության ուսումնասիրում, առկա տվյալների թարմացում, մշակում և ամփոփում: 3) ՀՀ-ում քիմիական նյութերի ռեեստրի (ԵԱՏՄ քիմիական նյութերի ռեեստրի ազգային մաս) ձևավորման նախապատրաստական աշխատանքներ՝ ա. ռեեստրում գրանցման ենթակա քիմիական նյութերի բնութագրիչների (օրինակ՝ նյութի անվանումը, քիմիական բանաձևը, քիմիական և ֆիզիկական հատկությունները, վտանգավորության աստիճանը՝ մարդկանց առողջության և շրջակա միջավայրի բաղադրիչների համար, կիրառման սահմանափակումները և այլն) հավաքագրում, տվյալների մշակում իրականացնելու նպատակով՝ քիմիկոս, թունաբան կամ համապատասխան այլ մասնագիտական որակավորում ունեցող մասնագետների և կազմակերպությունների ներգրավման համար անհրաժեշտ ծառայությունների գնման մրցույթների կազմակերպում և անցկացում, բ. քիմիական նյութերի վերաբերյալ տվյալների էլեկտրոնային պահոց (բազա) ձևավորելու նպատակով՝ համապատասխան էլեկտրոնային ծրագիր մշակող մասնագետների և կազմակերպությունների ներգրավման համար անհրաժեշտ ծառայությունների գնման մրցույթի կազմակերպում և անցկացում, 4) ՀՀ-ում քիմիական նյութերի ռեեստրի ձևավորման նպատակով հավաքագրված տվյալների նախապատրաստում (ճշգրտում, քիմիական նյութերի վերաբերյալ տվյալների թարգմանում ռուսերեն՝ ԵՏՀ ներկայացնելու համար) ստեղծված էլեկտրոնային համակարգի համալրում քիմիական նյութերի վերաբերյալ տվյալներով՝ նշված աշխատանքներում քիմիկոս, թունաբան կամ համապատասխան այլ մասնագիտական որակավորում ունեցող մասնագետների և կազմակերպությունների ներգրավմամբ: 5) ԵԱՏՄ քիմիական նյութերի և խառնուրդների միասնական ռեեստրում ներառելու նպատակով «Հայաստանի Հանրապետությունում քիմիական նյութերի ռեեստրի» փոխանցում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի համապատասխան ստորաբաժանմանը, ըստ անհրաժեշտության նշված աշխատանքներում համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող մասնագետների և կազմակերպությունների ներգրավմամբ: **2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման իրականացումը կնպաստի քիմիական նյութերի և խառնուրդների ռեեստրի ստեղծմանը, քիմիական նյութերի և խառնուրդների պետական կարգավորման կատարելագործմանը և դրանց գործածության անվտանգության ապահովմանը: **7.4.«Վտանգավոր քիմիական նյութերի արտահանման և ներմուծման կարգը սահմանելու մասին» Կառավարության որոշման ընդունում» միջոցառման** **1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Քիմիական նյութերի էկոլոգիապես անվտանգ կառավարման համակարգի ստեղծումը» ուղղությունը, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով» ստանձնած պարտավորություններից: **1.1.կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվ իրավական ակտերը հիմնականում կարգավորում են որոշ քիմիական նյութերի արգելման, ներմուծման գործընթացները կամ կարգավորում են սահմանափակ թվով քիմիական նյութերի գործածությունը, մինչդեռ Հայաստանի Հանրապետությունում քիմիական նյութերի ներմուծման և արտահանման հետ կապված հարաբերությունները կարգավորված չեն: **1.2.առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Վտանգավոր քիմիական նյութերի արտահանման և ներմուծման ընթացակարգերի սահմանմամբ կկանոնակարգվեն քիմիական նյութերի արտահանման և ներմուծման գործընթացները, մարդկանց առողջության և շրջակա միջավայրի պահպանության նպատակով կսահմանվեն լրացուցիչ պահանջներ, կապահովվի քիմիական նյութերի վերաբերյալ տեղեկատվության հաշվառումը: **2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Վտանգավոր քիմիական նյութերի արտահանման և ներմուծման ընթացակարգերի սահմանմամբ կկարգավորվի Հայաստանի Հանրապետության տարածք քիմիական նյութերի ներմուծման և արտահանման ընթացքում շրջակա միջավայրի պահպանության և մարդու առողջության անվտանգության ապահովման հետ կապված հարցերը:
8.	**Թափոնների (այդ թվում՝ ընդերքօգտագործման) կառավարման համակարգի կատարելագործումը.** **8.1.«Սնդիկի մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո օրենքից բխող ենթաօրենսդրական իրավական ակտերի ընդունում» միջոցառման**

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը
Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Թափոնների (այդ թվում՝ ընդերքօգտագործման), կառավարման համակարգի կատարելագործումը» ուղղությունը և «Սնդիկի վերաբերյալ» Մինամատայի կոնվենցիայով ստանձնած պարտավորություններից:
«Սնդիկի վերաբերյալ» Մինամատայի կոնվենցիայի նպատակը մարդու առողջության և շրջակա միջավայրի պահպանումն է սնդիկի և սնդիկի միացությունների անթրոպոգեն ազդեցությունից:
Ի կատարումն Կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների 2020 թվականից հետո Կոնվենցիան վավերացրած երկրները Կոնվենցիայի 4-րդ հոդվածի համաձայն արգելում են Կոնվենցիայի Ա Հավելվածի I մասում թվարկված սնդիկի հավելիչով արտադրանքի արտադրությունը, ներկրումը կամ արտահանումը:
Միջոցառման ընդունման անհրաժեշտությունը բխում է նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 6-րդ հոդվածից, որի համաձայն պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Հետևաբար, սնդիկի էկոլոգիապես անվտանգ կառավարման պայմանների ապահովման ոլորտում պետական կառավարման մարմինների իրավասությունները պետք է բխեն օրենքից:
1.1.կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները
Հայաստանի Հանրապետությունը 2017 թվականին վավերացրել է «Սնդիկի վերաբերյալ» Մինամատայի կոնվենցիան, որը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2018թ. մարտի 13-ից:
Հայաստանի Հանրապետությունը ստանձնել մի շարք պարտավորություններ, այդ թվում՝ սնդիկի հավելիչով որոշ արտադրանքի նկատմամբ արտադրության, ներմուծման և արտահանման արգելքի սահմանման մասով՝ այդ արտադրանքի շրջանառությունից փուլային դուրսբերման համար նախատեսված ժամկետից՝ 2020 թվականից հետո:
1.2.առկա խնդիրների առաջարկվող լուծումները
«Սնդիկի մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո օրենքից բխող ենթաօրենսդրական իրավական ակտերի նախագծերի ընդունմամբ կսահմանվեն Կառավարության և լիազոր մարմնի լիազորությունները սնդիկի էկոլոգիապես անվտանգ կառավարման պայմանների ապահովման ոլորտում, կամրագրվեն սնդիկի հավելիչով արտադրանքի արտադրության, ներմուծման, արտահանման սահմանափակումները, սնդիկի արդյունահանման արգելքի, Հայաստանի Հանրապետությունից սնդիկի արտահանման և Հայաստանի Հանրապետություն սնդիկի ներմուծման վերաբերյալ դրույթները, ինչպես նաև սնդիկի գործածության մեջ ներգրավված իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի իրավունքներն ու պարտականությունները:

2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը
«Սնդիկի մասին» ՀՀ օրենքի և օրենքից բխող ենթաօրենսդրական իրավական ակտերի ընդունման արդյունքում կստեղծվի սնդիկի կարգավորման իրավական հենք, ինչը կնպաստի սնդիկի էկոլոգիապես անվտանգ գործածությանը, մարդու առողջության և շրջակա միջավայրի պահպանմանը սնդիկի, սնդիկի միացությունների և սնդիկային թափոնների վնասակար ազդեցությունից:

8.2.«Աղբավայրերի շահագործման ընթացքում հսկողության և մոնիթորինգի ընթացակարգը սահմանելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը» միջոցառման
1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը
Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Թափոնների (այդ թվում՝ ընդերքօգտագործման), կառավարման համակարգի կատարելագործումը» ուղղությունը: Աղբավայրերի շահագործման ընթացքում հսկողության և մոնիթորինգի ընթացակարգի սահմանումը բխում է նաև «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով» ստանձնած պարտավորությունների ճանապարհային քարտեզի 2-րդ հավելվածի 105.5 կետը:
1.1.կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները
Հայաստանի Հանրապետությունում շահագործվող աղբավայրերում պատշաճ հսկողությունը բացակայում է, իսկ աղբավայրերի տարածքում շրջակա միջավայրի վիճակի մոնիթորինգ առհասարակ չի իրականացվում:
1.2.առկա խնդիրների առաջարկվող լուծումները
Աղբավայրերի շահագործման ընթացքում հսկողության և մոնիթորինգի ընթացակարգը աղբավայրը շահագործողների, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համար կսահմանի պարտավորություններ ուղղված աղբավայրերի շահագործման կանոնների պահպանմանը և աղբավայրի վնասակար ազդեցության գոտում շրջակա միջավայրի վիճակի և դրա աղտոտվածության որոշմանը:

	2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Սահմանված կարգին համապատասխան պատշաճ իրականացված հսկողությունը կնպաստի աղբավայրերի շահագործման ընթացքում մարդկանց առողջության և շրջակա միջավայրի վրա դրանց վնասակար ազդեցության կանխարգելմանը կամ նվազեցմանը, իսկ մշտադիտարկումների իրականացումը կապահովի թափոնների տեղադրման վայրի ազդեցության գոտում մթնոլորտային օդի, հողի, ջրի աղտոտվածության վերաբերյալ անհրաժեշտ տվյալների հավաքագրումը: Մշտադիտարկումների արդյունքում ստացված տվյալները հնարավորություն կտան գնահատելու աղբավայրը շահագործողի կողմից իրականացրած բնապահպանական միջոցառումների արդյունավետությունը և ըստ անհրաժեշտության դրանց վերանայումը: **8.3.«Պոլիքլորացված բիֆենիլների գործածության տեխնիկական պայմանները հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը» միջոցառման** **1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Թափոնների (այդ թվում՝ ընդերքօգտագործման), կառավարման համակարգի կատարելագործումը» ուղղությունը: «Պոլիքլորացված բիֆենիլների գործածության տեխնիկական պայմանները հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագծի մշակման անհրաժեշտությունը բխում է «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիայով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորություններից, որոնց համաձայն անհրաժեշտ է հսկել և աստիճանաբար էկոլոգիապես անվտանգ եղանակով վնասազերծել/ոչնչացնել պոլիքլորացված բիֆենիլներ պարունակող յուղերը: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Համաձայն Ստոկհոլմի կոնվենցիայի դրույթների՝ Կոնվենցիայի կողմ երկրները պետք է միջոցներ ձեռնարկեն մինչև 2025 թվականը սարքավորումներում (տրանսֆորմատորներ, յուղային անջատիչներ) պոլիքլորացված բիֆենիլներ պարունակող յուղերը վնասազերծելու/ոչնչացնելու համար: Պոլիքլորացված բիֆենիլներից առաջացող խնդիրներից և դրանց վտանգներից խուսափելու համար կարևոր է պոլիքլորացված բիֆենիլների կենսացիկլի բոլոր փուլերում ապահովել դրանց համակարգված և անվտանգ կառավարումը: **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Միջոցառաման իրականացման արդյունքում կսահմանվեն տեխնիկական պայմաններ, որոնք կկանոնակարգեն պոլիքլորացված բիֆենիլների (ՊՔԲ), ՊՔԲ պարունակող թափոնների և ՊՔԲ պարունակող սարքավորումների օգտագործումը, շահագործումը, ապամոնտաժումը, պահեստավորումը, վնասազերծումը և ոչնչացումը, ՊՔԲ պարունակող թափոնների, պահուստային տարողությունների և դրանցում առկա ՊՔԲ-ներով աղտոտված յուղերի հաշվառումը, գույքագրումը, հաշվետվողականությունը, նույնականացումը, մոնիթորինգի իրականացումը, պիտակավորումը, մակնշումը, փաթեթավորումը, փոխադրման աշխատանքների իրականացումը, ինչպես նաև կապահովեն ՊՔԲ-ների և ՊՔԲ պարունակող թափոնների հետ վարվելու անվտանգության կանոնները: **2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Որոշման ընդունումը կնպաստի «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիայով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարմանը, ՊՔԲ պարունակող սարքավորումների և թափոնների էկոլոգիապես հիմնավորված կառավարման ապահովմանը, ինչն էլ կնվազեցնի ՊՔԲ-ների գործածությամբ պայմանավորված հնարավոր ռիսկերը և դրանց բացասական հետևանքները շրջակա միջավայրի և մարդու առողջության համար:
9.	**Ընդերքօգտագործման հետևանքով խախտված տարածքների և ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների լքված, տիրազուրկ տեղամասերի ռեկուլտիվացիայի իրականացումը.** 9.1.«**Ընդերքօգտագործման թափոնների լքված, տիրազուրկ տեղամասերի և օբյեկտների ռեկուլտիվացիայի համար նախագծային փաթեթների մշակում» միջոցառման** **1.Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Ընդերքօգտագործման հետևանքով խախտված տարածքների և ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների լքված, տիրազուրկ տեղամասերի ռեկուլտիվացիայի իրականացումը» ուղղությունը և Ընդերքի մասին օրենսգրքի 60.10 հոդվածը: Միջոցառման նպատակն է կատարել ՀՀ տարածքում առկա տիրազուրկ կամ լքված համարվող ընդերքօգտագործման թափոններով զբաղեցված տարածքների, ինչպես նաև թափոնների օբյեկտների

	լեռնատեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիա՝ դրանք չեզոքացնելով որպես շրջակա միջավայրի աղտոտման աղբյուր, նվազեցնելով տեխնածին աղտոտման մակարդակը և շրջակա միջավայրին հասցվող վնասը: **1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Շրջակա միջավայրի նախարարության կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում ուսումնասիրվել են մետաղական օգտակար հանածոների արդյունահանման արդյունքում ընդերքօգտագործման թափոնների լքված, տիրազուրկ տեղամասեր, դրանց վերաբերյալ ստեղծվել է սկզբնական տեղեկատվական հենք: Առանձնացվել են տասնյակից ավել տեղամասեր, որտեղ ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացումն առավել հրատապ է: Ռեկուլտիվացիոն աշխատանքների նախագծման, թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարման համակարգի ստեղծման համար անհրաժեշտ են շրջակա միջավայրի վրա դրանց բացասական ազդեցությունների մի շարք բնութագրիչ տվյալներ (հողային և ջրային միջավայրերի աղտոտվածության մակարդակ, թափոններով զբաղեցրած տարածքների տոպոգրաֆիական հանույթներ, տարածքների կամ օբյեկտների տարածական-ծավալային եռաչափ մոդելներ և այլն): Վերը նշված աշխատանքների կատարման ֆինանսավորման աղբյուր չկա: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Ընդերքօգտագործման թափոնների լքված, տիրազուրկ տեղամասերի և օբյեկտների ռեկուլտիվացիայի նպատակով նախատեսվում է. 1) Իրականացնել ընդերքօգտագործման թափոնների տեղամասերի և օբյեկտների շրջակա միջավայրի բնական բաղադրիչների աղտոտվածության մոնիթորինգ: 2) Չափագրել ռեկուլտիվացման ենթակա տարածքները: 3) Յուրաքանչյուր տեղամասում կատարել տոպոգրաֆիական մանրակրկիտ հանույթ: 4) Մշակել յուրաքանչյուր տեղամասի/օբյեկտի եռաչափ համակարգչային մոդել՝ դրանց տարածական դիրքի, ծավալային պատկերի, կազմող ապարների, ինֆիլտրացվող ջրային հոսքերի և դրանց բեռնաթափման օջախների, և այլն, վերաբերյալ հստակ ելակետային տվյալներ ապահովելու նպատակով: 5) Մշակել լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայի նախագիծ և իրականացնել այն: 6) Համապատասխան գիտական հաստատությունների հետ քննարկել և ընտրել կենսաբանական ռեկուլտիվացիայի առավել նպաստավոր մեթոդներ՝ կենտրոնանալով տարածքներին բնորոշ էնդեմիկ բուսատեսակների կիրառման հնարավորությունների վրա: 7) Մշակել կենսաբանական ռեկուլտիվացիայի նախագիծ և իրականացնել այն: 8) Ապահովել ռեկուլտիվացված տարածքներում շրջակա միջավայրի հետնախագծային մոնիթորինգ (առնվազն 5 տարի)՝ վերահսկելով կենսաբանական ռեկուլտիվացիոն աշխատանքների արդյունավետությունը: Աշխատանքները հնարավոր կլինի իրականացնել համապատասխան ֆինանսավորման առկայության դեպքում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Ընդերքօգտագործման թափոնների ծավալների կրճատում, շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների նվազեցում/չեզոքացում, վերականգնված հողատարածքների վերադարձ տնտեսական շրջանառության մեջ:
10.	**Հողերի աղտոտման և դեգրադացման կանխարգելմանն ու նվազմանն ուղղված քաղաքականության մշակումը և իրականացումը.** **10.1.«Հայաստանի Հանրապետության տարածքում աղտոտված, դեգրադացված հողերի մոնիթորինգի իրականացում» միջոցառման** **1.Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Հողերի աղտոտման և դեգրադացման կանխարգելմանն ու նվազմանն ուղղված քաղաքականության մշակումը և իրականացումը» ուղղությունը և ՀՀ հողային օրենսգրքի 32-րդ հոդվածը և ՀՀ կառավարության 19.02.2009թ. N276-Ն որոշման դրույթներից, ինչպես նաև Կառավարության 22.03.2018թ. N11 արձանագրային որոշմամբ հաստատված շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների օգտագործման միջոցառումների 2018-2022 թթ. ծրագիրը: Միջոցառման իրականացման նպատակներն են. 1) հողերի վիճակի ուսումնասիրություն, գնահատում և դրա փոփոխության ժամանակին բացահայտում, այդ փոփոխությունների կանխատեսում և բացասական գործընթացների հետևանքների կանխարգելում, 2) տեխնածին աղտոտված հողատարածքների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում, կադաստրի ստեղծում, 3) քարտեզագրական նյութերի թվայնացում և ներկայացում թվային տեղեկատվական միջավայրում, 4) դիտակետերի ցանցի ստեղծում, 5) մոնիթորինգի տեղեկատվության հավաքագրում և գրանցում:

	1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Օրենսդրորեն հստակ սահմանված են հողերի մոնիթորինգի իրականացման ցուցանիշները, սակայն ներկայումս իրականացվում է հողերի աղտոտվածության ոչ կարգավորված և էպիզոդիկ բնույթ կրող մոնիթորինգ: Հողերի աղտոտվածության դիտարկման աշխատանքները կատարվում են տարբեր մակարդակներով, ոչ լիարժեք, ինչի արդյունքում բացակայում է հողերի որակի մոնիթորինգի և դրա վերաբերյալ տեղեկատվության մշտական գործող ու կանոնակարգված համակարգ: Աշխատանքների կատարման համար անհրաժեշտ գումարները գնահատվել են ըստ հողերի տեխնածին աղտոտվածությամբ գնահատվող հարթակների (ընդերքօգտագործման թափոնների օբյեկտներ, բացահանքեր, հանքահորային ջրերի բեռնաթափման վարեր և այլն) քանակի, դրանցից յուրաքանչյուրում նվազագույն նմուշների քանակի և կազմել են մոտ ՀՀ 100300,0 հազ. դրամ: **1.2.առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Իրականացնել աղտոտված, դեգրադացված հողերի դաշտային ուսումնասիրություններ, առանձնացված տարածքները կապակցել կոորդինատական առանցքներով տոպոհիմքերի հետ, զարգացնել նմուշարկման դիտացանց, հատկապես պոչամբարներին և մետաղական հանքավայրերի լցակույտերին հարող տարածքներում, իրականացնել հողերի աղտոտվածությունը բնութագրող շուրջ 30 պարամետրերի որոշում, լրացնել հողերի աղտոտվածության վիճակի վերաբերյալ մոնիթորինգային շարքեր: Աշխատանքները հնարավոր կլինի իրականացնել համապատասխան ֆինանսավորման առկայության դեպքում: **2. միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման իրականացման արդյունքում կձևավորվի ՀՀ տարածքին համարժեք, միջազգային չափանիշներով արդյունավետ գործող և նպատակային ինֆորմացիա արտադրող մոնիթորինգային համակարգ, ինչպես նաև կմշակվեն ՀՀ բնակլիմայական պայմաններին և հողային շերտի աղտոտվածության որակական բաշխման առանձնահատկություններին համապատասխան քարտեզներ:
11.	**Մթնոլորտային օդի պահպանության քաղաքականության մշակումը՝ ուղղված արտանետումների նվազեցմանն ու սահմանափակմանը.** **11.1.«Մթնոլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը» միջոցառման** **1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Մթնոլորտային օդի պահպանության քաղաքականության մշակումը՝ ուղված արտանետումների նվազեցմանն ու սահմանափակմանը» ուղղությունը, ինչպես նաև ՀՀ կառավարության 2018 թվականի մարտի 22-ի նիստի N11 արձանագրային որոշման Շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների օգտագործման կառավարման 2018-2022 թվականների միջոցառումների ծրագրի 1-ին կետը, ինչպես նաև 2017թ. նոյեմբերի 24-ին ստորագրված և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2018թ. ապրիլի 11-ին վավերացված Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԳՀՄ) կիրարկման նպատակով հաստատված ճանապարհային քարտեզը: Մշակվել և 2016 թվականի դեկտեմբերի 15 նիստի N 50 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի հայեցակարգը: Հայեցակարգում հստակ նշվել են այն փոփոխությունները և լրացումները, որոնք իրավական հենք են հանդիսացել տվյալ Նախագծի մշակման համար: Նախագծի նպատակն է իրավական հենքի ստեղծման միջոցով ապահովել մթնոլորտային օդի պահպանության արդյունավետ կառավարումը՝ ժամանակակից մոտեցումներին համապատասխան և կայուն զարգացման համատեքստում: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս մթնոլորտային օդի պահպանության կառավարումն իրականացվում է «Մթնոլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության 1994 թվականի հոկտեմբերի 11-ի օրենքով (այսուհետ՝ Օրենք): Դեռևս 2015-2016 թվականների ընթացքում ուսումնասիրվել և բացահայտվել էին Օրենքում առկա մի շարք խնդիրներ, մասնավորապես՝ հին նորմերի վերանայման և նոր պահանջների ամրագրման անհրաժեշտությունը, որն առաջացել է հասարակական և միջազգային հարաբերություններում տեղի ունեցող որոշակի զարգացումների արդյունքում: Բացի այդ, Օրենքի իրավակիրառման գործընթացում բացահայտվել էին բացթողումներ, որոնք շտկելը նույնպես անհրաժեշտություն է: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Օրենքը հիմնովին լրամշակվել է: Ավելացվել են մի շարք հասկացություններ, որոնք կիրառվում են այլ երկրներում օդի որակի գնահատման համար: Ավելացվել են դրույթներ՝ կապված արտանետումների տեխնիկական նորմավորման, արտանետումների հաշվառման, լիազորությունների բաշխման և այլնի հետ:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունումը կամրագրի մթնոլորտային օդի պահպանության ժամանակակից մոտեցումները, մասնավորապես՝

ա. մթնոլորտային օդի որակի գնահատման մասով.

«կրիտիկական մակարդակ» հասկացությունը, ինչպես նաև դրա որոշման մեթոդները, կիրառումն, աղտոտվածության մոնիթորինգի և վերահսկողության լիազորությունների սահմանումը,

բ. անշարժ աղբյուրներից արտանետումների սահմանափակման մասով.

«տեխնիկական նորմատիվների» և «լավագույն հասանելի տեխնոլոգիաների» որոշման մեթոդների կիրառումը,

գ. շարժական աղբյուրներից արտանետումների սահմանափակման մասով.

արգելքի պահանջները և դրանք կիրառելու իրավասությունները:

դ. արտանետումների հաշվառման մասով.

վնասակար նյութերի և ջերմոցային գազերի արտանետումների (անշարժ և շարժական աղբյուրներից) միասնական հաշվառման դրույթը:

Այսպիսով, կներդաշնակեցվեն աշխարհում ընդունված և ներկայումս երկրում գործող օդի որակի գնահատման չափանիշները, արտանետումների սահմանափակման նպատակով և զարգացած երկրներում լայնորեն կիրառվող «լավագույն հասանելի տեխնոլոգիաների» ներդրման պահանջարկն՝ այն համատեղելով արտանետումների սահմանափակման էկոլոգիական (այդ թվում՝ տարածքային) սկզբունքի հետ: Այն ավելի արդյունավետ կդարձնի մթնոլորտային օդի պահպանության կառավարումը, և կնպաստի միջազգային պայմանագրերով ամրագրված պարտավորությունների պատշաճ կատարմանը:

11.2. «Վնասակար նյութերի և ջերմոցային գազերի արտանետումների (շարժական և անշարժ աղբյուրներ) միասնական հաշվառման համակարգի ստեղծման համար նախադրյալների հիմնում» միջոցառման

1.Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Մթնոլորտային օդի պահպանության քաղաքականության մշակումը՝ ուղված արտանետումների նվազեցմանն ու սահմանափակմանը» ուղղությունը, ինչպես նաև ՀՀ կառավարության 2018 թվականի մարտի 22-ի նիստի N11 արձանագրային որոշման Շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների օգտագործման կառավարման 2018-2022 թվականների միջոցառումների ծրագրի 3-րդ կետը, ինչպես նաև 2017թ. նոյեմբերի 24-ին ստորագրված և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2018թ. ապրիլի 11-ին վավերացված Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԳՀՄ) կիրարկման նպատակով հաստատված ճանապարհային քարտեզը:

Ջերմոցային գազերի արտանետումների հաշվառումը (կադաստրը) իրականացվում է ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի (հոդվածներ 4.1) և Փարիզյան համաձայնագրի դրույթներին համաձայն, ինչն էլ իրականացվում է ԳԷՖ ֆինանսավորմամբ՝ շրջակա միջավայրի նախարարության համակարգման ներքո:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ներկայումս վնասակար նյութերի և ջերմոցային գազերի արտանետումներին վերաբերող տվյալները օգտագործվում են տարբեր միջազգային և ազգային գործընթացներում, ուստի արտանետումների հաշվառման համար անհրաժեշտ են միասնական ելային տվյալներ:

1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Անշարժ աղբյուրներից վնասակար նյութերի արտանետումների հաշվառումը իրականացվում է «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի (հոդված 36), 22.04.1999թ. «Մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների պետական հաշվառման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 259 որոշման և «Անշարժ աղբյուրներից մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի մասին» Ձև N 2-տա (օդ) (տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվության լրացման հրահանգը և «Անշարժ աղբյուրներից մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի մասին» Ձև N 2-տա (օդ) (տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվության ձևը հաստատելու մասին» ՀՀ բնապահպանության նախարարի հրամանի (22.08.2002թ. N 111-Ն, փոփ. 16. 12. 2008թ. N 450-Ն) համաձայն:

Արտանետումների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է տարեկան կտրվածքով, տվյալները վերլուծվում են և ամփոփվում համագարգչային ծրագրի միջոցով:

	Ջերմոցային գազերի (ՋԳ) կադաստրի տվյալների մեծ մասը գնահատվում է Վիճակագրական կոմիտեի կողմից հավաքագրվող տվյալների հիման վրա: Կադաստրը երկամյա կտրվածքով կազմվում է /պետք է կազմվի/ երկամյա կտրվածքով: ՋԳ կադաստրում վնասակար նյութերից ներառվում են միայն նրանք, որոնք ունեն ջերմոցային էֆեկտ կամ հանդիսանում են ջերմոցային գազերի պրեկուրսորներ և դրանք ոչ միայն անշարժ այլ նաև շարժական աղբյուրներից են, ինչպես նաև գյուղատնտեսությունից, հողօգտագործումից և անտառտնտեսությունից և թափոնների ոլորտից: Ջերմոցային գազերի կադաստրները մշակվում են Կլիմայի փոփոխության փորձագետների միջկառավարական խմբի (ԿՓՓՄԽ) ջերմոցային գազերի գույքագրման ուղեցույցի և լավագույն փորձի ձեռնարկների հիման վրա: Ջերմոցային գազերի կադաստրները մշակվում են Կլիմայի փոփոխության փորձագետների միջկառավարական խմբի (ԿՓՓՄԽ) ջերմոցային գազերի գույքագրման ուղեցույցի և լավագույն փորձի ձեռնարկների հիման վրա: Ձև N 2-տա հաշվետվություններում ամփոփվում և ԱՎԾ-ում որպես պաշտոնական տվյալներ հրապարակվում են անշարժ աղբյուրներից մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի մասին տվյալներ, որոնք տարբերվում են կադաստրի հրապարակումներից: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ համադրելի արժեքներ կարելի է ունենալ, եթե օգտագործվեն միևնույն ելային տվյալները (նույն աղբյուրներից) և հաշվարկների մեթոդաբանությունը: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Հաշվառման գործընթացի համար անհրաժեշտ նորմատիվ մեթոդական բազայի կատարելագործում: **2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման իրականացումն արդյունավետ կդարձնի մթնոլորտային օդի պահպանության կառավարումը և կնպաստի միջազգային պայմանագրերով ամրագրված պարտավորությունների պատշաճ կատարմանը:
12.	**Մեկանգամյա օգտագործման պոլիէթիլենային արտադրանքի գործածության աստիճանական կրճատման և սահմանափակման ապահովումը.** **12.1. «Առևտրի և ծառայությունների մասին ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը Կառավարության հավանությանն արժանանալու վերաբերյալ որոշման ընդունում» միջոցառման** **1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Մեկանգամյա օգտագործման պոլիէթիլենային արտադրանքի գործածության աստիճանական կրճատման և սահմանափակման ապահովումը» ուղղությունը և ՀՀ Ազգային ժողովի կողմից 2018թ. ապրիլի 11-ին վավերացված Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԳՀՄ) կիրարկման նպատակով հաստատված ճանապարհային քարտեզը: Գործընթացի առաջին փուլում, որպես թիրախային խումբ, ընտրվել են պոլիէթիլենային տոպրակներն ու պարկերը: Շրջակա միջավայրի նախարարության կողմից մշակվել և 2020 թվականի ապրիլի 17-ին ընդունվել է «Առևտրի և ծառայությունների մասին օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը /ՀՕ-226-Ն/, համաձայն որի 2022 թվականի հունվարի 1-ից առևտրի օբյեկտներում և առևտրի իրականացման վայրերում, շրջիկ առևտրի կետերում արգելվելու է թաղանթի մինչև 50 միկրոն հաստությամբ պոլիէթիլենային պարկերի և տոպրակների վաճառքը (իրացումը)՝ բացառությամբ երկրորդային հումքից պատրաստված տոպրակների ու պարկերի, ինչպես նաև կշռափաթեթավորման համար նախատեսված պարկերի: Սա կարելի է դիտարկել որպես առաջին և կարևորագույն քայլ, ուղղված շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա բացասական ազդեցություն ունեցող այդ ապրանքատեսակի ծավալների կրճատմանը: Երկրորդ փուլով նախատեսվում է ուսումնասիրել և նույն մեխանիզմի կիրառմամբ մշակել մեկանգամյա օգտագործման պլաստիկ արտադրանքի վաճառքը /իրացումը/ արգելող իրավական ակտի նախագիծ: **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Պլաստիկ տարաների գույքագրման վերաբերյալ ՀՀ վարչապետի հանձնարարականի կատարման շրջանակներում մշակվել է պլաստիկ տարաների ամբողջական ծավալի գույքագրման ձևաչափ, և ամփոփ վերլուծություն իրականացնելու նպատակով ներկայացվել է բոլոր շահագրգիռ գերատեսչություններին /ՊԵԿ, էկոնոմիկայի նախարարություն, տարածքային զարգացման և ենթակառուցվածքների նախարարություն, վիճակագրական կոմիտե/: Մինչդեռ, վերջիններիս կողմից ստացված պատասխաններից պարզ է դարձել, որ ներկայումս դեռևս հնարավոր չէ կազմակերպել պլաստիկ տարաների ամբողջական ծավալի գույքագրման գործընթացը՝ տվյալների բացակայության պատճառով: Նախարարությունը պլաստիկ արտադրանքի կառավարման ոլորտում համապատասխան ուսումնասիրությունների, հետազոտությունների և վերլուծությունների իրականացման գործընթացում աջակցություն ստանալու նպատակով դիմել է նաև Հայաստանում ՄԱԿ-ի գրասենյակի:

	Շրջակա միջավայրի նախարարությունը, հիմք ընդունելով նաև շրջակա միջավայրի վրա որոշ պլաստիկ արտադրատեսակների ազդեցության կրճատման վերաբերյալ ԵՄ 2019/904 հրահանգի (Directive (EU) 2019/904 of the European Parliament and of the Council of 5 June 2019 on the reduction of the impact of certain plastic products on the environment) և ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի (UNEP) շրջանակներում մշակված «Մեկանգամյա օգտագործման պլաստիկի կառավարման ճանապարհային քարտեզի» (SINGLE-USE PLASTICS: A Roadmap for Sustainability) դրույթները, նախատեսում է հանդես գալ համապատասխան օրենսդրական նախաձեռնություններով պլաստիկ իրերի այլ թիրախային խմբերի մասով: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում լրացում կատարելու միջոցով նախատեսվում է առևտրի օբյեկտներում և առևտրի իրականացման վայրերում, շրջիկ առևտրի կետերում մեկանգամյա օգտագործման պլաստիկ իրերի որոշակի թիրախային խմբի վաճառքի (իրացման) արգելքի սահմանում: **2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Մեկանգամյա օգտագործման պլաստիկ արտադրանքի գործածության աստիճանական կրճատմանն ուղղված իրավական հենքի ապահովում:
13.	**Շրջակա միջավայրի պահպանության վերահսկողության և մշտադիտարկումների միասնական համակարգի կատարելագործումը, թույլտվությունների, լիցենզիաների միասնական և ժամանակակից համակարգերի ներդրումը, առաջնային տեղեկատվության համակարգված կառավարումը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության համակարգի կատարելագործումը՝ հիմնված կանխարգելման սկզբունքի վրա, փորձաքննության որակի բարձրացմանն ուղղված գործուն մեխանիզմների ներդրմամբ.** **13.1. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը» միջոցառման** **1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Շրջակա միջավայրի պահպանության վերահսկողության և մշտադիտարկումների միասնական համակարգի կատարելագործումը, թույլտվությունների, լիցենզիաների միասնական և ժամանակակից համակարգերի ներդրումը, առաջնային տեղեկատվության համակարգված կառավարումը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության համակարգի կատարելագործումը՝ հիմնված կանխարգելման սկզբունքի վրա, փորձաքննության որակի բարձրացմանն ուղղված գործուն մեխանիզմների ներդրմամբ» ուղղությունը և Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԳՀՄ) «Շրջակա միջավայր» բաժինը: ՄԱԿ-ի ԵՏՀ քարտուղարության կողմից տրամադրված կարողությունների զարգացմանն ուղղված աջակցությամբ, Հայաստանը իրականացրել է «Ռազմավարական էկոլոգիական գնահատման (ՌԷԳ) արձանագրության դրույթների համապատասխանեցումը ազգային օրենսդրության դրույթներին, ազգային փորձի զարգացումը, ՌԷԳ ուղեցույցների մշակումը, ՌԷԳ-ի արդյունավետ իրականացումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագիրը, որի նպատակն էր Էսպո կոնվենցիայի և արձանագրության կիրարկման ապահովումը: **1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Մշակվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի փոփոխությունների նախագիծը, Օրենքի նախագիծը 2017թ.դեկտեմբերի 26-ին ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը: ՀՀ կառավարության կողմից ստացվել են առաջարկություններ և դիտողություններ, այժմ կատարվում են նախագծի վերանայման աշխատանքները: **1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները** «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի փոփոխությունների նախագծի վերանայում և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Օրենքի հասկացությունները կհամապատասխանեցվի Կոնվենցիաների հասկացություններին: Օրենքի գնահատման և փորձաքննության սկզբունքներում կկատարվեն համապատասխան փոփոխություններ: Գործունեությունների ցանկում /14-րդ հոդված/, առաջարկվել են կոնվենցիաներում ամրագրված մի քանի գործունեության տեսակներ: Օրենքում կներառվի է Ձեռնարկողի նախաձեռնությամբ փորձաքննության իրականացման հնարավորությունը և այլն: ՌԷԳ -ը կառանձնացվի ՇՄԱԳ-ից և կներկայացվի առանձին գլխով: Օրենքում կամրագրվեն ՌԷԳ ենթակա լինելու մեխանիզմները, համաձայն արձանագրության դրույթների: Փորձաքննության ենթակա հիմնադրութային փաստաթղթերի ցանկից կհանվեն շրջակա միջավայրի և

առողջապահության ոլորտները: Ամբողջովին նոր խմբագրմամբ կներկայացվի «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման» հոդվածը:
Միջոցառման իրականացման արդյունքում գործընթացները կմոտարկվեն միջազգային չափորոշիչներին, կկարգավորվի Ռազմավարական էկոլոգիական գնահատման /ՌԷԳ/ և Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման /ՇՄԱԳ/ գործընթացները:
Գործընթացները կհամապատասխանեցվեն Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային կոնվենցիաների դրույթներին:
Միջոցառումների իրականացման արդյունքում կկարգավորվեն Օրենքով դեռևս չկարգավորված գործընթացները, ինչը կորոշակիացնի և թափանցիկ կդարձնի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացները, կհեշտացնի Ձեռնարկողների և ոլորտի կառավարումն իրականացնող մարմինների աշխատանքը:

13.2 .«Ռազմավարական էկոլոգիական գնահատման իրականացման կարգը սահմանելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը» միջոցառման

1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը
1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները
Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Շրջակա միջավայրի պահպանության վերահսկողության և մշտադիտարկումների միասնական համակարգի կատարելագործումը, թույլտվությունների, լիցենզիաների միասնական և ժամանակակից համակարգերի ներդրումը, առաջնային տեղեկատվության համակարգված կառավարումը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության համակարգի կատարելագործումը՝ հիմնված կանխարգելման սկզբունքի վրա, փորձաքննության որակի բարձրացմանն ուղղված գործուն մեխանիզմների ներդրմամբ» ուղղությունը և Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԳՀՄ) Հավելվածի «Շրջակա միջավայր» բաժնի 90.3, 90.4 և 92.5 կետերը:
ՄԱԿ-ի ԵՏՀ քարտուղարության կողմից տրամադրված կարողությունների զարգացմանն ուղղված աջակցությամբ, Հայաստանը իրականացրել է «Ռազմավարական էկոլոգիական գնահատման (ՌԷԳ) արձանագրության դրույթների համապատասխանեցումը ազգային օրենսդրության դրույթներին, ազգային փորձի զարգացումը, ՌԷԳ ուղեցույցերի մշակումը, ՌԷԳ-ի արդյունավետ իրականացումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագիրը, որի նպատակն էր Էսպո կոնվենցիայի և արձանագրության կիրարկման ապահովումը:
Մշակվել է «ՌԷԳ իրականացման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Այժմ կատարվում են նախագծի վերանայման աշխատանքները:
1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները
«Ռազմավարական էկոլոգիական գնահատման իրականացման կարգը սահմանելու մասին» Կառավարության որոշման նախագծի վերանայում և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացում:
2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը
ՌԷԳ գործընթացը կհանվի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից, ինչի արդյունքում Օրենքը կպարզեցվի:
Կպարզեցվի նաև բոլոր ոլորտների հիմնադրութային փաստաթղթերի փորձաքննությունը՝ այն կիրականացվի միայն հաշվետվության փուլում: Կպարզեցվեն քաղաքաշինության ոլորտի փոքր տարածքների պլանավորման փաստաթղթերի փորձաքննական գործընթացը:
Միջոցառման արդյունքում կկարգավորվի Ռազմավարական էկոլոգիական գնահատման /ՌԷԳ/ գործընթացը, կմոտարկվի միջազգային չափորոշիչներին և կհամապատասխանեցվի Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային կոնվենցիաների դրույթներին, ինչը որոշակի և թափանցիկ կդարձնի նաև փորձաքննության գործընթացը, կհեշտացնի Ձեռնարկողների և ոլորտի կառավարումն իրականացնող մարմինների աշխատանքը:

13.3. «Շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա ազդեցության գնահատման ուղեցույցը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը» միջոցառման

1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը
1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները
Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Շրջակա

միջավայրի պահպանության վերահսկողության և մշտադիտարկումների միասնական համակարգի կատարելագործումը, թույլտվությունների, լիցենզիաների միասնական և ժամանակակից համակարգերի ներդրումը, առաջնային տեղեկատվության համակարգված կառավարումը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության համակարգի կատարելագործումը՝ հիմնված կանխարգելման սկզբունքի վրա, փորձաքննության որակի բարձրացմանն ուղղված գործուն մեխանիզմների ներդրմամբ» ուղղությունը, ինչպես նաև «Շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա ազդեցության գնահատման ուղեցույցը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագծի մշակման անհրաժեշտությունը բխում է 2014 թվականի հունիսի 21-ի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջից:

1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա ազդեցության գնահատման ուղեցույցի մշակումը անհրաժեշտ է նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի առանձին բաղադրիչների, բնական ռեսուրսների, պայմանների հնարավոր փոփոխությունների և դրանց ծավալների հնարավոր ազդեցության ամբողջական, գումարային գնահատման գործընթացը ճշգրիտ, հիմնավորված կազմակերպելու համար, ինչը նաև փորձաքննության կարևորագույն սկզբունք է: Համակատարող գերատեսչությունը մասնակցում է կազմակերպվող քննարկումներին, ներկայացնում է համապատասխան ոլորտային առաջարկություններ:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական գործընթացի արդյունավետ իրականացման. ՀՀ-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի դիրեկտիվներին բնապահպանական օրենսդրության ներդաշնակեցման և այդ համատեքստում միջազգային համագործակցության ընդլայնման նպատակով շրջակա միջավայրի նախարարության կողմից մշակվել և Կառավարության քննարկմանն է ներկայացվել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը: Կապված սույն Օրենքում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացների իրականացմանն ուղղված փոփոխությունների հետ «Շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա ազդեցության գնահատման ուղեցույցը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագծի մշակումը նպատակահարմար է իրականացնել վերոնշյալ Օրենքի ընդունումից հետո՝ վեցամսյա ժամկետում, ինչպես որ նախատեսված է Օրենքի նախագծում:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա ազդեցության գնահատման ուղեցույցի առկայություն, գնահատման գործընթացի ճշգրիտ, հիմնավորված կազմակերպում, փորձաքննության պատշաճ իրականացում, շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա ազդեցության գնահատման գործընթացի ավելի արդյունավետ իրականացմանը:

13.4. «Շրջակա միջավայրի բաղադրիչների (մթնոլորտային օդի. ջրային ռեսուրսների՝ ներառյալ քաղցրահամ և ստորերկրյա ջրերի. հողերի. կենսաբազմազանության) և թափոնների հեռացման վայրերի մոնիթորինգի դիտացանցերի արդիականացում» միջոցառման

1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Շրջակա միջավայրի պահպանության վերահսկողության և մշտադիտարկումների միասնական համակարգի կատարելագործումը, թույլտվությունների, լիցենզիաների միասնական և ժամանակակից համակարգերի ներդրումը, առաջնային տեղեկատվության համակարգված կառավարումը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության համակարգի կատարելագործումը՝ հիմնված կանխարգելման սկզբունքի վրա, փորձաքննության որակի բարձրացմանն ուղղված գործուն մեխանիզմների ներդրմամբ» ուղղությունը և Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԳՀՄ) «Շրջակա միջավայր» բաժինը:

Շրջակա միջավայրի պահպանության համար կարևորագույն հիմք է հանդիսանում շրջակա միջավայրի վիճակի վերաբերյալ ճշգրիտ գնահատականների առկայությունը, ինչը ստացվում է բաղադրիչների մոնիթորինգի արդյունքում:

1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Ներկայումս, օրինակ՝ մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումներն իրականացվում եմ հիբրիդային դիտացանցի միջոցով: Այն բաղկացած է 16 ակտիվ և ավտոմատ հիմնական անշարժ և 229 շարժական (պասիվ) նմուշառման դիտակետից: Դիտակետերի վերազինումը ավտոմատ սարքավորումներով տեղի է ունեցել 2006-2007 թվականներին: Այդ սարքավորումներից շատերը կարիք ունեն հիմնովին վերանորոգման կամ փոխարինման, որոնց համար պետական բյուջեով ֆինանսավորում չի հատկացվում: Բացի այդ, մթնոլորտային օդի դիտակետերի

գոյություն ունեցող քանակը և դիտակետերում անընդհատ ռեժիմով որոշվող աղտոտիչների տեսակը չի համապատասխանում ՀՀ նորմատիվային պահանջներին (ՀՀ կառավարության 14.09.2017թ. 1120-Ն որոշում), ինչպես օրինակ Գյումրի քաղաքում նվազագույն դիտակետերի քանակը ըստ բնակչության թվի պետք է լինի երեք ներկայիս մեկի փոխարեն:

ՀՀ և միջազգային պահանջների համաձայն հիմնական անշարժ դիտակետերում պետք է կատարվեն հիմնական աղտոտող նյութերի՝ ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի, կախված մասնիկների (PM10 և PM2.5) և գետնամերձ օզոնի (երկրորդային աղտոտիչ) մոնիթորինգ: Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում, շարժական և անշարժ դիտակետերում որոշվող աղտոտիչների ցանկը մասամբ է համապատասխանում նշված պահանջներին: Օդի աղտոտիչների դիտարկումներից ստացված տեղեկատվությունը իրական ժամանակին (real-time) հասանելիության և ժամանակային գնահատականների տեսանկյունից ևս մասամբ է համապատասխանում միջազգային պահանջներին:

Ստորերկրյա քաղցրահամ ջրերի պաշարների գնահատման համար գործող մոնիթորինգի դիտացանցը կարիք ունի ընդլայնման: Ներկայումս, մի շարք գետավազաններում բացակայում են հիդրոերկրաբանական ազգային ցանցի դիտակետերը, այդ թվում՝ Դեբեդ, Հախում, Տավուշ, Խնձորուտ, Ողջի, Մեղրի և այլ գետավազաններում, ինչպես նաև արարատյան արտեզյան ավազանի նախալեռնային գոտիներում:

Հողերի աղտոտվածության մոնիթորինգն իրականացվում է ընդամենը 10 դիտակետում, ինչը բավարար չէ հողերի աղտոտվածության ամբողջական պատկերի գնահատման համար:

Ծրագիրն իրականացնելու համար անհրաժեշտ է 725000.0 հազ.դրամ գումար, սակայն ֆինանսավորման աղբյուրը դեռևս հայտնի չէ:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Հայաստանի Հանրապետությունում մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումները ժամանակակից տեխնոլոգիաներով իրականացնելու, ՀՀ և միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու համար անհրաժեշտ է մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտակետերը համալրել օդի հիմնական աղտոտիչների՝ ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի, գետնամերձ օզոնի, կախված մասնիկների (PM10 և PM2.5) հետազոտությունների ավտոմատ սարքավորումներով: Մթնոլորտային օդի դիտարկումների ավտոմատացումը հնարավորություն կտա առցանց տեղեկանալ օդի աղտոտվածության վիճակի մասին, արագ բացահայտել մարդու առողջության համար վտանգավոր իրավիճակները և կանխատեսել հետագա աղտոտվածության պատկերը:

Ֆինանսավորման առկայության դեպքում հնարավոր կլինի ստորերկրյա ջրերի ազգային ցանցի, հողերի աղտոտվածության մոնիթորինգի դիտացանցի ընդլայնում:

2023 թթ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ ժամկետ սահմանելը պայմանավորված է 2020թ. համար ֆինանսավորման աղբյուրի անորոշությամբ:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Շրջակա միջավարի բաղադրիչների՝ մոնիթորինգի դիտակայանների և դիտացանցերի արդի տեխնոլոգիաներով հագեցվածության առկայություն և շրջակա միջավարի վերաբերյալ ժամանակին, ճշգրիտ ու անընդհատ տեղեկատվության ապահովում:

13.5. «Շրջակա միջավայրի մոնիթորինգի լաբորատորիայի կարողությունների զարգացում» միջոցառման

1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Շրջակա միջավայրի պահպանության վերահսկողության և մշտադիտարկումների միասնական համակարգի կատարելագործումը, թույլտվությունների, լիցենզիաների միասնական և ժամանակակից համակարգերի ներդրումը, առաջնային տեղեկատվության համակարգված կառավարումը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության համակարգի կատարելագործումը՝ հիմնված կանխարգելման սկզբունքի վրա, փորձաքննության որակի բարձրացմանն ուղղված գործուն մեխանիզմների ներդրմամբ» ուղղությունը և Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԳՀՄ) «Շրջակա միջավայր» բաժինը:

1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Շրջակա միջավայրի բաղադրիչների վերաբերյալ ճշգրիտ և հավաստի տվյալների աղբյուր է հանդիսանում բաղադրիչների որակի լաբորատոր հետազոտությունները: Շրջակա միջավայրի նախարարության ենթակայությամբ գործող «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության» ՊՈԱԿ-ի լաբորատորիան իրականացնում է մակերևութային և ստորերկրյա ջրերի, մթնոլորատային օդի, մթնոլորտային տեղումների, հողերի և հատակային նստվածքների որակի լաբորատոր հետազոտություններ:

Սկսած 2004 թվականից, միջազգային և պետական ծրագրերի շրջանակում լաբորատորիան համալրվել է ժամանակակից սարքավորումներով: Լաբորատորիայի մասնագետները երկարամյա փորձառության, ինչպես նաև մասնակցելով որակավորման դասընթացների, ձեռք են բերել բարձր որակի մասնագիտական կարողություններ: Առկա լաբորատոր և մասնագիտական կարողությունները բավարար հիմք են հանդիսանում լաբորատորիայի միջազգային հավատարմագրման համար: Սակայն լաբորատորիայի միջազգային հավատարմագրման համար լաբորատորիայի ներկայիս շենքային պայմանները (լաբորատորիան տեղակայված է վարձակալությամբ Կոմիտաս 29 հասցեում) չեն բավարարում անհրաժեշտ պահանջներին:
ՀՀ կառավարության 2017թ. դեկտեմբերի 7-ի «Տարածք հետ վերցնելու և ամրացնելու մասին» N 1584-Ա որոշմամբ Երևան քաղաքի Պարույր Սևակի 5/2 հասցեում գտնվող Քիմիական ֆիզիկայի ինստիտուտի գլխավոր մասնաշենքի 539.1 քառ. մետր ընդհանուր մակերեսով տարածք է հատկացվել «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի կենտրոնական լաբորատորիային, ինչի վերանորոգման համար 2018թ. պետական բյուջեից հատկացվել է 73542.0 հազ.դրամ գումար՝ 2019թ. ընթացքում իրականացման համար:
Եվրոպական միության Ջրային նախաձեռնություն պլյուս ծրագրի շրջանակում 2021-2026թթ. նախատեսվում է լաբորատորիայի տարածքի սարքավորումների համալրում, մասնագետների վերապատրաստում և լաբորատորիայի միջազգային հավատարմագրման գործընթացի նախապատրաստում:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Լաբորատորիայի կարողությունների զարգացման նպատակով ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 13-ի N 1452- Ն որոշման 2.2 կետի համաձայն 2019թ. ընթացքում «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ին հատկացված 73542.0 հազ. դրամ գումարի շրջանակներում 539.1 քառ. մետր տարածքի վերակառուցման համար:
Կատարման ժամկետը պայմանավորված է համաֆինանսավորմամբ միջազգային գնման գործընթացների ժամկետների երկարաձգմամբ:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Շրջակա միջավայրի մոնիթորինգի լաբորատորիաների վերանորոգված շենքի, ժամանակակից սարքավորումներով հագեցվածության և միջազգային հավատարմագրված լաբորատորիայի առկայություն:

13.6. «Շրջակա միջավայրի վերաբերյալ միասնական տեղեկատվական համակարգի ստեղծում» միջոցառման

1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Շրջակա միջավայրի պահպանության վերահսկողության և մշտադիտարկումների միասնական համակարգի կատարելագործումը, թույլտվությունների, լիցենզիաների միասնական և ժամանակակից համակարգերի ներդրումը, առաջնային տեղեկատվության համակարգված կառավարումը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության համակարգի կատարելագործումը՝ հիմնված կանխարգելման սկզբունքի վրա, փորձաքննության որակի բարձրացմանն ուղղված գործուն մեխանիզմների ներդրմամբ» ուղղությունը և Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԳՀՄ) «Շրջակա միջավայր» բաժինը:

1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

ՀՀ-ում «Եվրոպական Հարևանության և Համագործակցության Գործիք–Բնապահպանական տեղեկատվական միասնական համակարգ» (ԵՀՀԳ-ԲՏՄՀ/ENPI-SEIS) ծրագրի աջակցությամբ մշակվում է ԲՏՄՀ/SEIS սկզբունքներին համապատասխան շրջակա միջավայրի միասնական տեղեկատվական համակարգ, որով շրջակա միջավայրի տեղեկատվության հավաքագրումը և հրապարակումը կիրականացվի մեկ հարթակում՝ մատչելի և հասանելի դարձնելով հանրությանը:

1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Շրջակա միջավայրի միասնական տեղեկատվական համակարգի հիմք են կազմում թեմատիկ շտեմարանները և ինդիկատորային ցուցանիշները: ԵՄ Ջրային նախաձեռնություն ծրագրի շրջանակում նախատեսվում 2019-2020թթ. ջրային տվյալներ ստեղծող կազմակերպություններում հիմնել շտեմարաններ, որոնք Շրջակա միջավայրի նախարարության Ջրային կադաստի մաս կկազմեն: «Եվրոպական Հարևանության և Համագործակցության Գործիք–Բնապահպանական տեղեկատվական միասնական համակարգ» (ԵՀՀԳ-ԲՏՄՀ/ENPI-SEIS) ծրագրի աջակցությամբ կմշակվի Ջրային կադաստրի և պորտալի ինտեգրումը:
Մինչդեռ, շրջակա միջավայի մյուս բաղադրիչների թեմատիկ շտեմարանների ստեղծման գործընթացները կամ նախատեսման փուլում են կամ բացակայում են:
Միջոցառման համակատարող մարմինները հանդիսանում են շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության ստեղծողներ և որոնցում առկա թեմատիկ շտեմարանները մաս են կազմելու ստեղծվող պորտալի:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Շրջակա միջավայրի ազգային պորտալի առկայություն, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ շրջակա միջավայրի վերաբերյալ միասնական հավաքագրված տվյալների առկայություն և դրանց հասանելիության ապահովում:

13.7. «Շրջակա միջավայրի նախարարության կողմից լիցենզիաների ու թույլտվությունների տրամադրման էլեկտրոնային համակարգի ներդրում» միջոցառման

1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Շրջակա միջավայրի պահպանության վերահսկողության և մշտադիտարկումների միասնական համակարգի կատարելագործումը, թույլտվությունների, լիցենզիաների միասնական և ժամանակակից համակարգերի ներդրումը, առաջնային տեղեկատվության համակարգված կառավարումը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության համակարգի կատարելագործումը՝ հիմնված կանխարգելման սկզբունքի վրա, փորձաքննության որակի բարձրացմանն ուղղված գործուն մեխանիզմների ներդրմամբ» ուղղությունը և Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԳՀՄ) «Շրջակա միջավայր» բաժինը:, Կառավարության 2020 թվականի փետրվարի 27-ի N246-Լ որոշման 8-րդ կետի 10ենթակետը և 2019 թվականի հոկտեմբերի 4-ի N1408-Լ որոշումը:

Շրջակա միջավայրի նախարարությունը ՀՀ կառավարության 2015 թվականի փետրվարի 5-ի N 90-Ն որոշման 2-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն և առաջնորդվելով ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 1524-Ն որոշման 5-րդ կետով հաստատված կարգով ապահովում է մասնավորապես՝ ջրօգտագործման թույլտվությունների, վտանգավոր թափոնների, թմրամիջոցների և հոգեմետ նյութերի պրեկուրսորներ չհամարվող թունավոր նյութերի և օզոնային շերտը քայքայող նյութերի ներմուծման և արտահանման մեկանգամյա լիցենզիաների տրամադրումը:

Միջոցառման նպատակը բնապահպանության բնագավառում լիցենզիաների և թույլտվությունների տրամադրումն էլեկտրոնային համակարգի միջոցով իրականացնելն է:

1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Հայաստանի Հանրապետության կողմից արտաքին առևտրի դեպքում սահմանափակումների ենթակա ապրանքների արտահանման և (կամ) ներմուծման մեկանգամյա լիցենզիաները շրջակա միջավայրի նախարարությունը տրամադրում է թղթային տարբերակով: Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) մասին պայմանագրի 7-րդ հավելվածի արձանագրության՝ երրորդ երկրների հետ արտաքին առևտրի դեպքում սահմանափակումների ենթակա ապրանքների արտահանման և(կամ) ներմուծման լիցենզիաների և թույլտվությունների տրամադրման կանոնակարգը սահմանում է, որ լիցենզիան հնարավոր է տրամադրել (ձևակերպել) էլեկտրոնային փաստաթղթի տեսքով՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (ԵՏՀ) սահմանած կարգով, իսկ մինչ այդ ԵԱՏՄ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան: Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 1524-Ն և 2015 թվականի փետրվարի 5-ի N90-Ն որոշումներով լիցենզիաների և թույլտվությունների էլեկտրոնային փաստաթղթի տեսքով տրամադրման համար հայտերի և պահանջվող փաստաթղթերի (տեղեկությունների) առցանց ներկայացման և էլեկտրոնային փաստաթղթի տեսքով տրամադրման ընթացակարգեր սահմանված չեն:

Շրջակա միջավայրի նախարարության կողմից լիցենզիաների ու թույլտվությունների տրամադրման էլեկտրոնային համակարգի ներդրման համար պահանջվող ֆինանսական միջոցներ ներկայումս առկա չեն:

Ակնկալվում է ֆինանսական միջոցներ ստանալ օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Շրջակա միջավայրի նախարարության կողմից լիցենզիաների ու թույլտվությունների տրամադրման էլեկտրոնային համակարգի ներդրումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է մեկանգամյա լիցենզիաների տրամադրումն կանոնակարգող նորմատիվ իրավական ակտերում կատարել համապատասխան լրացումներ, ապահովել էլեկտրոնային համակարգի գործարկման համար անհրաժեշտ ծրագրային և տեխնիկական միջոցների առկայությունը:

Միջոցառման համակատարողներ են հանդիսանում՝ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը և «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ն (համաձայնությամբ):

Ակնկալվում է համակատարողների խորհրդատվությունը և օժանդակությունը էլեկտրոնային համակարգի ներդրման իրավական և տեխնիկական հարցերում:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

	Միջոցառման իրականացումը հնարավորություն կստեղծի էլեկտրոնային հարթակի միջոցով իրականացնել մեկանգամյա լիցենզաների համար լիազոր մարմնին հայտերի և պահանջվող փաստաթղթերի ներկայացումը և լիազոր մարմնի կողմից էլեկտրոնային լիցենզիաների տրամադրումը, որը կնվազեցնի փաստաթղթաշարժի վրա ծախսվող ժամանակը և կավելացնի աշխատանքի արդյունավետությունը: Էլեկտրոնային փաստաթղթի տեսքով տրամադրված մեկանգամյա լիցենզիաները հասանելի կլինեն տվյալ ապրանքների մաքսային բացթողում, ինչպես նաև հսկողություն իրականացնող մարմինների համար:
14.	**Հիդրոօդերևութաբանության և շրջակա միջավայրի մշտադիտարկման համակարգի արդիականացում՝ դիտարկումների նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ.** **14.1. «Հիդրոօդերևութաբանական դիտարկումների, կանխատեսումների, տեղեկատվության մշակման, վերլուծության, արխիվացման և տրամադրման ենթահամակարգերի արդիականացում, տրամադրվող ծառայությունների որակի և հասանելիության մեխանիզմների զարգացում» միջոցառման** **1.Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Հիդրոօդերևութաբանության և շրջակա միջավայրի մշտադիտարկման համակարգի արդիականացում՝ դիտարկումների նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ» ուղղությունը Հայաստանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի «Կլիմայի փոփոխության հարմարվողականության ազգային գործողությունների ծրագիրը և 2021-2025 թվականների միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 749-Լ որոշման հավելվածով հաստատված միջոցառումների ցանկի 2.3 միջոցառումը: Միջոցառման նպատակն է կլիմայի փոփոխության և հիդրոօդերևութաբանական երևույթների գնահատման, կանխատեսման և տեղեկատվության տրամադրման ծրագրերի մշակման կարողությունների զարգացումը՝ հիդրոօդերևութաբանական ծառայության արդիականացման միջոցով և Հայաստանի դիմակայունության բարձրացումը կլիմայի փոփոխության և հարմարվողականության ուղղությամբ: Հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթների վաղ ազդարարման, դրանց արագ արձագանման համակարգի գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է ձևավորել հիդրոօդերևութաբանական երևույթներից առաջացած կորուստների և վնասների հաշվառման, վերլուծության, արխիվացման միասնական բազա, ինչպես նաև ստեղծել տեղեկատվության գրանցման, փոխանցման համակարգ: **1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Հայաստանի պետական հիդրոօդերևութաբանական ծառայության համակարգում ներկայումս գործում են 46 օդերևութաբանական կայաններ, 7 գետավազանային հիդրոլոգիական կայաններ՝ 94 հիդրոլոգիական դիտակետերով: Հիդրոօդերևութաբանական դիտարկումները կատարվում են Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության նորմատիվ փաստաթղթերի պահանջներին համապատասխան, սակայն դիտարկումների պետական ցանցում ներկայում շահագործվող մասնագիտական գործիքների ու սարքավորումների 70-80%-ը բարոյապես և ֆիզիկապես մաշված են և ցանցն ունի վերազինման խիստ կարիք: Զարգացած և պարբերաբար արդիականացվող, դիտարկումների համաշխարհային ցանցում ինտեգրված հիդրոօդերևութաբանական կառույց ունենալու համար անհրաժեշտ է հիդրոօդերևութաբանական դիտարկումների պետական ցանցի տեխնիկական վերազինում և արդիականացում, տեղեկատվական տեխնոլոգիաների ներդնում, տեղեկատվության հավաքման և փոխանակման համակարգի արդիականացում, տվյալների մշակման և կառավարման նոր ծրագրային փաթեթների ներդնում ինչը կնպաստի ՀՀ պետական և տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, ազգաբնակչությանը և տնտեսության ճյուղերին հիդրոօդերևութաբանական տեղեկատվությամբ և շրջակա միջավայրի վիճակի մասին ժամանակին և հուսալի տվյալներով ապահովման բարձրացմանը, վտանգավոր հիդրոօդերևութաբանական երևույթներից տնտեսության, ազգաբնակչության կյանքի, առողջության և ունեցվածքի հնարավոր կորուստների նվազեցմանը, հիդրոօդերևութաբանական դիտարկումների գնահատման և կանխատեսման համակարգի զարգացմանը: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Հիդրոօդերևութաբանական դիտարկումների, կանխատեսումների, տեղեկատվության մշակման, վերլուծության, արխիվացման և տրամադրման ենթահամակարգերի արդիականացում, կառավարման, կազմակերպական և կադրային կարողությունների զարգացում, այդ թվում՝ կանխատեսման մոդելների ուսուցանում, մասնավորապես՝ -«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տեխնիկական միջոցների արդիականացման և նոր սարքավորումներով համալրման աշխատանքների իրականացում, աշխատակիցների կարողությունների և հմտությունների զարգացման նպատակով դասընթացների կազմակերպում, -Հիդրոօդերևութաբանական ավտոմատ կայանների տեղադրում և տեղեկատվության գրանցման, փոխանցման և վիզուալիզացման համակարգի ստեղծում,

	-Հիդրոօդերևութաբանական երևութներից առաջացած կորուստների և վնասի հաշվառման, վերլուծության և արխիվացման միասնական համակարգի ձևավորում և տեղեկատվության հասանելիության ապահովում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման իրականացումից ակնկալվում է հիդրոօդերևութաբանական ծառայության տեխնիկական և մասնագիտական կարողությունների զարգացում և արդիականացում համապատասխան կանխատեսումների և տեղեկատվության տրամադրման արդյունավետ համակարգ ապահովելու համար: Հիդրոօդերևութաբանական ավտոմատ կայանների տեղադրում և տեղեկատվության գրանցման, փոխանցման և վիզուալիզացման համակարգի ստեղծում Հիդրոօդերևութաբանական երևութներից առաջացած կորուստների և վնասի հաշվառման, վերլուծության և արխիվացման միասնական համակարգի ձևավորում և տեղեկատվության հասանելիության ապահովում: Հիդրոօդերևութաբանական դիտարկումների, կանխատեսումների, տեղեկատվության մշակման, վերլուծության, արխիվացման և տրամադրման ենթահամակարգերի արդիականացում, կառավարման, կազմակերպական և կադրային կարողությունների զարգացում, այդ թվում կանխատեսման մոդելների ուսուցանում:
15.	**Շրջակա միջավայրի պահպանության գործող տնտեսական մեխանիզմների կատարելագործումը՝ հասցված վնասի համարժեք փոխհատուցման սկզբունքի ներդրմամբ, ինչպես նաև կանխարգելմանը, մեղմմանն ու չեզոքացմանն ուղղված օրենսդրական և ինստիտուցիոնալ մի շարք փոփոխությունների իրականացմամբ.** **15.1. «Շրջակա միջավայրին հասցվող վնասի կանխարգելման և վերականգնման մասով բնապահպանական պատասխանատվության մասին» Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2004 թվականի ապրիլի 21-ի 2004/35/ԵՀ հրահանգի մոտարկման շրջանակներում օրենսդրական փաթեթի նախագիծը Կառավարության հավանությանն արժանանալու վերաբերյալ Կառավարության որոշման ընդունում» միջոցառման** **1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Շրջակա միջավայրի պահպանության գործող տնտեսական մեխանիզմների կատարելագործումը՝ հասցված վնասի համարժեք փոխհատուցման սկզբունքի ներդրմամբ, ինչպես նաև կանխարգելմանը, մեղմմանն ու չեզոքացմանն ուղղված օրենսդրական և ինստիտուցիոնալ մի շարք փոփոխությունների իրականացմամբ» ուղղությունը, ինչպես նաև Վարչապետի 2018 թվականի հունիսի 1-ի «Հայաստանի Հանրապետության և եվրոպական միության և ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կիրարկման ճանապարհային քարտեզը հաստատելու մասին» N666-Լ որոշմամբ հաստատված ճանապարհային քարտեզի 93.1 և 93.2 կետերով ստանձնած պարտավորությունների կատարումը: Համաձայն նշված կետերով ստանձնած պարտավորությունների՝ մինչև 2026 թվականի ավարտը ՀՀ օրենսդրությունը պետք է մոտարկվի «Շրջակա միջավայրին հասցվող վնասի կանխարգելման և վերականգնման մասով բնապահպանական պատասխանատվության մասին» Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2004 թվականի ապրիլի 21-ի 2004/35/ԵՀ հրահանգով սահմանված պահանջներին: **1.1.կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Սույն կետի կատարման շրջանակներում շրջակա միջավայրին հասցվող վնասների կանխարգելման և հասցված վնասի նվազեցման, կանխարգելման և վերացման նպատակով նախատեսվում է շրջակա միջավայրին հասցված վնասի կանխարգելելման և վերացման ընթացակարգերի, ինչպես նաև աղտոտողի կողմից վնասի կանխարգելման և վերացմանն ուղղված ծախսերի կատարման պարտավորությունների մեխանիզմի ներդրման օրենսդրական փաթեթի մշակում: Նշված հրահանգի հիմնական սկզբունքն այն է, որ այն արտադրողները, որոնց գործունեության հետևանքով շրջակա միջավայրին վնաս է հասցվել կամ գոյություն ունի նման վնասի անմիջական վտանգ, պետք է ֆինանսական պատասխանատվության ենթարկվեն, որն էլ նրանց կշահագրգռի միջոցներ ձեռնարկել և այնպիսի գործունեություն իրականացնել, որը նվազագույնի կհասցնի շրջակա միջավայրին հասցվող վնասը, այնպես, որ վերջիններս ենթարկվեն ավելի քիչ ֆինանսական պատասխանատվության: Նշված սկզբունքի կիրառումը որոշակիորեն կարգավորված է ՀՀ օրենսդրությամբ, մինչդեռ անհրաժեշտ է, վերանայել գործող դրույքաչափերը և տնտեսական լծակների ու մեխանիզմների շրջանակը: **1.2.առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Խնդրի լուծմանն ուղղված, առաջին փուլով նախատեսվում է վերհանել այն իրավական ակտերի շրջանակը, որոնք, մոտարկման շրջանակներում, պետք է վերանայվեն: Կիրականացվի օրենսդրական լայնածավալ վերլուծություն, որի արդյունքների հիման վրա կմշակվեն մի շարք փոփոխություններ գործող իրավական ակտերում, ըստ նախնական վերլուծությունների: Մասնավորապես՝ ՀՀ հարկային օրենսգրքում, «Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» օրենքի, ինչպես նաև

	Կառավարության 2005 թվականի հունվարի 25-ին ընդունված N 91-Ն և 92-Ն, ու 2003 թվականի օգոստոսի 14-ի N1110-Ն որոշումներում: **2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման իրականացմամբ ակնկալվում է ՀՀ կողմից ստանձնած պարտավորությունների կատարման շրջանակներում ԵՄ դիրեկտիվներով ամրագրված սկզբունքներին համապատասխան իրավական ակտերի առկայություն
16.	**Շրջակա միջավայրի պահպանության ոլորտում իրականացվող միջոցառումների ու ծրագրերի մասին հասարակությանն իրազեկումը, էկոկրթության, մշակույթի, դաստիարակության լայնածավալ միջոցառումների իրականացումը, ոլորտի գործունեության թափանցիկության ապահովումը, նորարական տեխնոլոգիաների դերի բարձրացումը՝ ապահովելով սերտ համագործակցություն ակադեմիական ու գիտական ոլորտների հետ.** **16.1. «Էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը» միջոցառման** **1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Շրջակա միջավայրի պահպանության ոլորտում իրականացվող միջոցառումների ու ծրագրերի մասին հասարակությանն իրազեկումը, էկոկրթության, մշակույթի, դաստիարակության լայնածավալ միջոցառումների իրականացումը, ոլորտի գործունեության թափանցիկության ապահովումը, նորարական տեխնոլոգիաների դերի բարձրացումը՝ ապահովելով սերտ համագործակցություն ակադեմիական ու գիտական ոլորտների հետ» ուղղությունը: Միջոցառման նպատակը Հայաստանի Հանրապետությունում էկոլոգիական կրթության, դաստիարակության և իրազեկման համակարգի կատարելագործումն է, պետական կառավարման մարմինների իրավասությունների հստակեցումը՝ ուղղված էկոլոգիական կրթության որակի բարելավմանը, հասարակության իրազեկվածության մակարդակի բարձրացմանը և էկոլոգիական գիտակցության ձևավորմանը: **1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ոլորտում դեռևս առկա է օրենքների, սկզբունքների ներդաշնակ կիրառման պակաս, որը պայմանավորված է բնապահպանական կրթության համակարգի պետական լիազոր մարմինների իրավասությունների ոչ բավարար հստակեցումից և ոչ արդյունավետ փոխհամագործակցությունից: Բավարար չափով ուշադրություն չի դարձվում ընտանեկան և նախադպրոցական հաստատություններում էկոլոգիական դաստիարակության ներդաշնակության վրա, ինչպես նաև հանրակրթական մակարդակում էկոլոգիական կրթության շարունակականության վրա: Այն պետք է իրականացնել տարրական դպրոցից մինչև ավագ դպրոց ներառյալ: Առաջացել է ոլորտի օրենսդրական բազայի կատարելագործման, բնապահպանական կրթության ոլորտում «Կրթությունը հանուն կայուն զարգացման» ռազմավարության գաղափարների և սկզբունքների ինտեգրման, պետական կառավարման մարմինների լիազորությունների վերանայման և հստակեցման անհրաժեշտություն: **1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Ոլորտի խնդիրների արդյունավետ լուծման համար անհրաժեշտ է. • Բնապահպանական կրթության անընդհատության ապահովում, ոլորտի կառավարման արդյունավետության բարձրացում և օպտիմալացում, • Հասարակության լայն խավերի համար բնապահպանական կրթության և իրազեկման մատչելիության ապահովում, • Պետական կառավարման մարմինների միջև սերտ համագործակցություն, միասնական քաղաքականության իրականացում: Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն աշխատակիցների հետ համատեղ քննարկումների իրականացում՝ օրենքի հոդվածներում փոփոխություններ կատարելու և պետական կառավարման մարմինների լիազորությունների վերանայման և հստակեցման վերաբերյալ: **2. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը** Կբարելավվի էկոլոգիական կրթության օրենսդրությունը և կառավարման համակարգը, կստեղծվի կայուն զարգացման սկզբունքներին բավարարող էկոլոգիական կրթության արդյունավետ գործող համակարգ: **16.2.«Ապագա առաջնորդների ներգրավում, երիտասարդների համար հարմարվողականության հիմնախնդիրների և լավագույն փորձի վերաբերյալ թվային կրթական մոդուլի ստեղծում» միջոցառման** **1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Շրջակա միջավայրի պահպանության ոլորտում իրականացվող միջոցառումների ու ծրագրերի մասին

	հասարակությանն իրազեկումը, էկոկրթության, մշակույթի, դաստիարակության լայնածավալ միջոցառումների իրականացումը, ոլորտի գործունեության թափանցիկության ապահովումը, նորարական տեխնոլոգիաների դերի բարձրացումը՝ ապահովելով սերտ համագործակցություն ակադեմիական ու գիտական ոլորտների հետ» ուղղությունը: Ներկայումս հանրապետությունում բացակայում են ավագ դպրոցի աշակերտների համար բնապահպանական խնդիրներին առնչվող խաղաֆիկացված թվային կրթական մոդուլներ: Նման պայմաններում դպրոցականները չեն կարողանում լիովին բավարարել իրենց պահանջները բնապահպանական բազմապիսի խնդիրների առկա վիճակի և դրանց հնարավոր լուծումների վերաբերյալ: Սա բնականաբար բացասական է ազդում աշակերտների գիտելիքների ստացման մատչելի ձևերի բազմազանացման վրա, որի հետևանքով աշակերտները սահմանափակ պատկերացումներ ունեն երկրի առջև ծառացած բնապահպանական խնդիրների և դրանց լուծման ուղիների վերաբերյալ: Միջոցառման նպատակն է ավագ դպրոցի աշակերտների համար ստեղծել հնարավորինս մատչելի և հետաքրքրաշարժ խաղաֆիկացված թվային կրթական մոդուլ, որը հասանելի կլինի հանրապետության բոլոր դպրոցներին: **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Հանրապետության ավագ դպրոցի աշակերտները չունեն բավարար հնարավորություններ մատչելի տեղեկատվություն ստանալու հանրապետության բնապահպանական խնդիրների և լուծման ուղիների վերաբերյալ: Նման պայմաններում դպրոցում մատուցվող նյութը դառնում է համեմատաբար դժվար յուրացվող, քանի որ չի զուգակցվում գործնական և ցուցադրական աշխատանքների հետ: Այս խնդրի լուծմանն է նպատակաուղղված իրականացվող միջոցառումը: **1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Ավագ դպրոցի աշակերտների համար ՝ • կմշակվի խաղաֆիկացված թվային կրթական մոդուլ, • առնվազն 5.000 աշակերտներից և կրթության ոլորտների մասնագետներից կհավաքագրվի կարծիք և տեղեկատվություն, • կստեղծվի ընդլայնված առցանց եռալեզու բջջային հավելված (iOS և Android), • կկազմակերպվի առցանց մրցույթ, որի 40 հաղթողները կմասնակցեն «Հարմարվողականության փորձարարական լաբորատորիայի» աշխատանքներին: **2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Կստեղծվի՝ • բնապահպանական խնդիրների վերաբերյալ եռալեզու բջջային հավելված, • ավագ դպրոցի աշակերտների և կրթության ոլորտների մասնագետների կարծիքների շտեմարան, Միջոցառումը կնպաստի՝ • Բնապահպանական խնդիրների և հնարավոր լուծումների վերաբերյալ դպրոցականների հետաքրքրվածության և տեղեկացվածության մակարդակի բարձրացում, • Կլիմայի փոփոխության մարտահրավերների և հարմարվողականության վերաբերյալ դպրոցականների գիտելիքների բարձրացում:
17.	**Կանաչ տնտեսության և կայուն զարգացման երկարաժամկետ նպատակի խթանմանն ուղղված քաղաքականության մշակումն ու իրականացումը** **17.1. «Շրջակա միջավայրի պահպանության ռազմավարությունը հաստատելու մասին» Կառավարության որոշման ընդունում» միջոցառման** **1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.10 բաժնի՝ «Կանաչ տնտեսության և կայուն զարգացման երկարաժամկետ նպատակի խթանմանն ուղղված քաղաքականության մշակումն ու իրականացումը» ուղղությունը, ինչպես նաև «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 8-րդ մասը: Միջոցառման հիմնական նպատակն է սահմանել շրջակա միջավայրի պահպանության համապարփակ ռազմավարական շրջանակ՝ ապահովելով շրջակա միջավայրի՝ ներառյալ դրա առանձին բաղադրիչների կայուն երկարաժամկետ կառավարման տեսլականը: **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Շրջակա միջավայրի պահպանության ոլորտի հիմնական ռազմավարական փաստաթղթերն են՝ 1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026թթ. ինգամյա ծրագիրը, որտեղ ամրագրված են շրջակա միջավայրի պահպանություն բաժնում ամրագրված են ոլորտի առաջնահերթ ուղղությունները:

	2) ՀՀ-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը, որի «Շրջակա միջավայր» և «Կլիմայի փոփոխություն» բաժիններում ամրագրված են շրջակա միջավայրի պահպանության, որակի վերականգնման, թափոնների կառավարման, օդի որակի, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, բնապահպանական պատասխանատվության վերաբերյալ ազգային օրենսդրության մոտարկման միջոցառումներ: Կլիմայի փոփոխություն բաժնում ամրագրված միջոցառումները ուղղված են մասնավորապես՝ Փարիզյան համաձայնագրից բխող պարտավորությունների կատարմանը, օզոնային շերտը քայքայող նյութերի հետևանքով կլիմայական փոփոխությունների նվազեցմանը և կանխարգելմանը, կլիմայի փոփոխությունների մեղմման և կանխարգելման միջոցառումների արդյունավետության բարձրացմանը: Վերոնշյալ փաստաթղթերը հանդիսանում են ուղենիշային և գերակայությունները սահմանող փաստաղթղեր, բայց ըստ էության չեն ամրագրում ոլորտի զարգացման հիմնական սկզբունքները, գործիքակազմը, թիրախները, իրականացման ռիսկերը, հիմնախնդիրները և դրանց լուծման կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ միջոցառումները: Միասնական ոլորտային ռազմավարություն ունենալու առաջարկությունը ամրագրված է 2022 թվականին ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի Բնապահպանական քաղաքականության կոմիտեի կողմից հաստատված Հայաստանի երկրորդ բնապահպանական կատարողականի վերանայման (Environmental Performance Review) առաջարկություններում: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Ներկայումս մի շարք ոլորտային (կենսաբազմազանություն, անտառ, ԲՀՊՏ, ջրային ռեսուրսներ և այլն) ռազմավարական փաստաթղթեր արդիականացման կարիք ունեն: Միաժամանակ մի շարք ենթաոլորտներում (մթնոլորտային օդ, թափոններ, հողեր, էկոկրթություն և այլն) բացակայում են կոմնորոշիչ ռազմավարական փաստաթղթերը: Նպատակ ունենալով կանոնակարգել շրջակա միջավայրի պահպանության համակարգը առաջարկվում է մշակել համապարփակ ռազմավարություն՝ շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների համար սահմանելով՝ ոլորտի հիմնական սկզբունքները, գործիքակազմը, իրականացման ռիսկերը, հիմնախնդիրները և դրանց լուծման ուղղությունները: **2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Շրջակա միջավայրի պահպանության ռազմավարության մշակումը, հաստատումը և իրականացումը հնարավորություն կտա ապահովել շրջակա միջավայրի՝ ներառյալ դրա առանձին բաղադրիչների կայուն կառավարման երկարաժամկետ արդյունքներ/բնական ռեսուրսների որակական և քանակական ցուցանիշների բարելավում, աղտոտվածության նվազում, շրջակա միջավայրի վրա մարդածին վնասակար ազդեցության կանխարգելու, մեղմում, ռեսուրսախնայող, անթափոն և սակավաթափոն տեխնոլոգիաների կիրառում, կլիմայի փոփոխության հետևանքների մեղմում և այլն/: Ռազմավարությունը՝ որպես ոլորտի համապարփակ ռազմավարական շրջանակ կնպաստի երկրի կայուն տնտեսական զարգացմանը, բնապահպանական մարտահրավերների հաղթահարմանը և աղքատության նվազեցմանը:

Պաշտպանության նախարարություն	
NN	ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ
1.	Ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակին, ռազմական սպառնալիքների գնահատված (կանխատեսվող) մակարդակին և հավանական ռազմական գործողությունների բնույթին համապատասխանող զինված ուժեր կազմավորելու վերաբերյալ 1.1 ՀՀ ՊՆ և ԶՈՒ ԳՇ կառուցվածքային ստորաբաժանումների հաստիքային կառուցվածքների օպտիմալացում, գործառույթների հստակեցում ու բաշխում 1.2. Զորամիավորումների, միավորումների, զորամասերի, ստորաբաժանումների կազմ- կառուցվածքի վերանայում 1.3 ՀՀ ՊՆ և ԶՈՒ ԳՇ կառուցվածքային ստորաբաժանումների նոր կառուցվածքների ներդրման համար անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների նախագծերի մշակում 1. Միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառումների իրականացումը պայմանավորված է ՀՀ ՊՆ և ԶՈՒ ԳՇ գործառույթների հստակեցման, կառուցվածքային ստորաբաժանումների կազմ-կառուցվածքի օպտիմալացման կրկնվող գործառույթներ իրականացնող ռազմական կառավարման մարմինների միավորման անհրաժեշտությամբ (ՀՀ կառավարության 18.08.2021թ. N 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի կետ 1.3 ենթակետ 3): 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրը ՀՀ պաշտպանության նախարարության համակարգում առկա են միանման գործառույթներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումներ, զորամասերի և ստորաբաժանումների կազմ-կառուցվածքը լիարժեք չի ապահովում ժամանակակից ռազմական գործողությունների նախապատրաստման և վարման պահանջները: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները ՀՀ ՊՆ և ԶՈՒ ԳՇ կառուցվածքային ստորաբաժանումների հաստիքային կառուցվածքների օպտիմալացում, գործառույթների հստակեցում ու բաշխում: 2. Միջոցառումների իրականացումից ակնկալվող արդյունքը Արդյունքում կունենանք նոր կառուցվածքով ժամանակակից պահանջներին համապատասխանող մեծ շարժունակությամբ օժտված զինված ուժեր, որն էլ կբերի զինված ուժերի կիրառման արդյունավետության բարձրացմանը:
2.	ՀՀ զինված ուժերի ժամանակակից սպառազինությամբ և ռազմական տեխնիկայով համալրման վերաբերյալ ՀՀ զինված ուժերի համալրում վերանայված կազմ-կառուցվածքին համապատասխանող սպառազինությամբ և ռազմական տեխնիկայով 1. Միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառումների իրականացումը պայմանավորված է ռազմական սպառնալիքների հակազդման նպատակով և հավանական ռազմական գործողությունների բնույթին համապատասխան զինված ուժերի սպառազինման անհրաժեշտությամբ (ՀՀ կառավարության 18.08.2021թ. N 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի կետ 1.3 ենթակետ 4): 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրը Նախկինում զիված ուժերը համալրված էին հնացած սպառազինությամբ և ռազմական տեխնիկայով՝ հիմնական մասը նախկին ԽՍՀՄ-ից ժառանգություն մնացած, որը ռազմական գործողությունների ժամանակ չէր ապահովում խնդիրների կատարումը և հակառակորդին ակնհայտորեն զիջում ենք համալրվածության առումով: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Զիված ուժերը սպառազինել արդի սպառազինության և ռազմական տեխնիկայով և տեխնիկական միջոցներով: 2. Միջոցառումների իրականացումից ակնկալվող արդյունքը Կավելանան զորքերի հետախուզական, կրակային և խուսավարման հնարավորությունները:
3.	ԶՈՒ կառավարման համակարգի արդիականացման և կառավարման արդյունավետության բարձրացման վերաբերյալ 3.1 Շարունակել կապի համակարգի կատարելագործումը 3.2. Շարունակել կառավարման ավտոմատացված համակարգի (ստացիոնար և շարժական տարրերով) արդիականացման աշխատանքները՝ զորատեսակների և ծառայությունների ղեկավարման ենթահամակարգերով 3.3 Բարձրացնել հրամանատարների դերը, ստորաբաժանումների ինքնավարությունը, անձնակազմի շարժառիթավորվածությունն ու նախաձեռնողականությունը: 1. Միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

	Միջոցառումների իրականացումը պայմանավորված է զինված ուժերի կառավարման համակարգի կառուցվածքային և գործառնական առումով կատարելագործման անհրաժեշտությամբ (ՀՀ կառավարության 18.08.2021թ. N 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի կետ 1.3 ենթակետ 2): 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրը Ներկայումս կառավարման համակարգը ամբողջ ծավալով չի ապահովում զորքերի կառավարմանը նեկայացվող պահանջները: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Շարունակել կապի համակարգի կատարելագործման և կառավարման ավտոմատացված համակարգի արդիականացման աշխատանքները: 2. Միջոցառումների իրականացումից ակնկալվող արդյունքը Համակարգը պետք է ըստ անհրաժեշտության ապահովի զորքերի կառավարման ապակենտրոնացումը և դրա համատեղումը կենտրոնացված կառավարման հետ, զորքերի կառավարման կայունության, օպերատիվության, անընդհատության, ծածուկության բարձրացումը, հակառակորդի նկատմամբ որոշումների կայացման գործընթացում առաջանցումը:
4	Պաշտպանության ոլորտի ռազմավարական պլանավորման համակարգի ստեղծման, համապետական խնդիրների լուծմանն ու պաշտպանության կազմակերպման ընթացակարգերի հստակեցմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների իրականացման վերաբերյալ 4.1 Իրականացնել անհրաժեշտ օրենսդրական փոփոխություններ և կազմել պետության պաշտպանության համար մեկ միասնական մտահղացում, ոլորտի պետության պաշտպանության պլանավորման փաստաթղթերի մշակման համար (ԶՈՒ կիրառման պլան, ԶՈՒ ծավալման պլան, ԶՈՒ զարգացման պլան, Տարածքի պաշտպանության օպերատիվ սարքավորման պլան, Զորահավաքային պլան և այլն) 4.2 Մշակել և Անվտանգության խորհրդի հաստատմանը ներկայացնել նոր ռազմական դոկտրինի նախագիծը 4.3 Պաշտպանության ոլորտին առնչվող ՀՀ մի շարք օրենքներում փոփոխությունների նախագծերի փաթեթի մշակման վերաբերյալ 1. Միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման իրականացումը պայմանավորված է պաշտպանության ոլորտի համապետական խնդիրների լուծմանն ու պաշտպանության կազմակերպման ընթացակարգերի հստակեցման և պետությունը պաշտպանության նախապատրաստելու գործիքակազմերի ու ընթացակարգերի կատարելագործման անհրաժեշտությամբ (ՀՀ կառավարության 18.08.2021թ. N 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի կետ 1.3 ենթակետ 2): Օրենքների նախագծերի փաթեթի անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 18.08.2021թ. N 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի 1.3 պաշտպանության ոլորտ, զինված ուժերի բարեփոխումներ բաժնի առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ, վեցերորդ, յոթերորդ պարբերությունների և 2-րդ, 3-րդ, 5- րդ կետերի դրույթներին համահունչ Հայաստանի Հանրապետության պաշտպանության գործընթացում հրամանատարական ուղղահայացի ապահովման և զինված ուժերի ղեկավարման ու կառավարման շրջանակներում զինված ուժերի մի շարք հիմնարար ակտերի հաստատման իրավասությունը ՀՀ վարչապետին վերապահելու, ՀՀ պաշտպանության նախարարության կառուցվածքի համակարգային փոփոխությունների գործընթացում ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի՝ որպես ենթակա պետական մարմին կարգավիճակը դադարեցնելու և ՀՀ պաշտպանության նախարարության կառուցվածքում ներառելու, դրա շրջանակներում ԶՈՒ գլխավոր շտաբի և ԶՈՒ գլխավոր շտաբի պետի գործունեության առանձնահատկությունները սահմանելու հանգամանքով: 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրը Հայաստանի Հանրապետությունում համապետական մակարդակում չկա պաշտպանության ոլորտի ռազմա վարական պլանավորման հստակ ալգորիթմ և օրենսդրորեն կարգավորված չէ մշակվող ռազմավարությունների, պլանների և ծրագրերի մշակման հաջորդականությունը՝ ո՛չ ժամանակային և ո՛չ էլ ենթակայության առումով: ՀՀ պաշտպանության նախարարության կառուցվածքի համակարգային փոփոխությունների, ինչպես նաև ՀՀ պաշտպանության նախարարի՝ որպես ՀՀ զինված ուժերի ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձի, և ՀՀ պաշտպանության նախարարության գործունեության առանձնահատկությունների շրջանակներում անհրաժեշտություն է առաջացել ունենալ «Պաշտպանության մասին» նոր օրենք, ԶՈՒ գլխավոր շտաբը միավորել ՀՀ պաշտպանության նախարարությանը, որի արդյունքում ԶՈՒ գլխավոր շտաբը հանդես է գալու որպես ՀՀ պաշտպանության նախարարության՝ զինվորական կառավարման կենտրոնական մարմնի գործառույթներով գրասենյակի տեսքով, հստակեցնել նախարարության և գլխավոր շտաբի լիազորությունների շրջանակը, գլխավոր շտաբի՝ որպես Հայաստանի Հանրապետության զինված ուժերի զինվորական կառավարման կենտրոնական մարմնի առանձնահատկություններով պայմանավորված, նախատեսել ԶՈՒ գլխավոր շտաբի պետի՝ ի պաշտոնե ՀՀ պաշտպանության նախարարի առաջին տեղակալ հանդիսանալու հանգամանքը, ինչպես նաև այդ նպատակով անհրաժեշտ կարգավորումներ և առանձնահատկություններ նախատեսել նաև «Ռազմական դրության իրավական

	ռեժիմի մասին», «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին», «Հանրային ծառայության մասին», «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» և «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենքներում: Օրենքների նախագծերի փաթեթի ընդունման կապակցությամբ անհրաժեշտություն է առաջանալու համապատասխան փոփոխություններ կատարել ՀՀ կառավարության 30.05.2018թ. N 580-Ա որոշման մեջ, ուժը կորցրած ճանաչել ՀՀ կառավարության 04.07.2019թ. N 922-Լ որոշումը, վերանայել ՀՀ վարչապետի 25.07.2019թ. N 992-Լ որոշումը, ՀՀ կառավարության և Անվտանգության խորհրդի մի շարք այլ ակտեր: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Մշակել մեկ միասնական Պետության պաշտպանության պլան՝ իր բաղկացուցիչ մասերով (հիմք ընդունելով նաև ՌԴ ՊՆ մասնագետների կարծիքը): Օրենքների նախագծերի փաթեթի համաձայն «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքը շարադրվելու է նոր խմբագրությամբ, որի շրջանակներում հստակեցվելու են պաշտպանության ապահովման ղեկավար փաստաթղթերի ընդունման գործընթացում ՀՀ կառավարության, ՀՀ վարչապետի և Անվտանգության խորհրդի լիազորությունները, սահմանվելու են ՀՀ պաշտպանության նախարարության և ԶՈՒ գլխավոր շտաբի համակարգային փոփոխությունները, լիազորությունների շրջանակները և ԶՈՒ գլխավոր շտաբի կարգավիճակը, պաշտպանության համակարգի փոփոխություններով պայմանավորված անհրաժեշտ կարգավորումներ և առանձնահատկություններ են սահմանվելու պետական կառավարման համակարգի գործունեությունը կարգավորող համապատասխան օրենքներում: 2. Միջոցառումների իրականացումից ակնկալվող արդյունքը Պաշտպանության ոլորտում փոխկապակցված փաստաթղթերի համալիրի առկայություն՝ իր բաղկացուցիչ մասերով մեկ միասնական փաստաթղթի մշակմամբ: Օրենքների նախագծերի փաթեթի ընդունումը կապահովի ՀՀ կառավարության 18.08.2021թ. N 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի 1.3 պաշտպանության ոլորտ, զինված ուժերի բարեփոխումներ բաժնի պահանջների կատարումը, պաշտպանական համակարգը կձևավորվի անվտանգային խնդիրներին համապատասխան, կբարձրանա երկրի պաշտպանունակության աստիճանը:
5.	Գործող զորահավաքային նախապատրաստության, պահեստազորային պատրաստության և զորահավաքի համակարգն արդի պահանջներին համապատասխանեցման վերաբերյալ 5.1 Զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի համակարգի վերանայում, պահեստազորային պատրաստության համակարգի կատարելագործում 5.2 Ստեղծել քաղաքացիների հաշվառման միասնական բազա 1. Միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Երկրի անվտանգությունը ապահովելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել վերանայելու և կատարելագործելու զորահավաքային նախապատրաստության, պահեստազորային պատրաստության և զորահավաքի համակարգը (ՀՀ կառավարության 18.08.2021թ. N 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի կետ 1.3 ենթակետ 5): Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է օպերատիվորեն տվյալներ փոխանակելու նպատակով ընդհանուր միասնական ավտոմատացված բազայի ստեղծմամբ (ՀՀ կառավարության 18.08.2021թ. N 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի կետ 1.3 ենթակետ 5): 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրը Գործող զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի համակարգը բավարար չափով չի ապահովում պետության ռազմական անվտանգությունը, որի թերի ու բացասական կողմերը ակնհայտ էին 44-օրյա պատերազմի ողջ ընթացքում: Քաղաքացիներին հաշվառելու, հաշվառումից հանելու, պատադիր զինվորական ծառայության զորակոչելու, պահեստազորում հաշվառելու, ինչպես նաև զորահավաքային միջոցառումներին ընդգրկելու վերաբերյալ տեղեկությունների ստացման ներկայիս աղբյուրները (առանց միասնական տեղեկատվական բազայի) չեն բավարարում գործառույթների արագ և արդյունավետ իրականացմանը: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Վերանայել գործող համակարգերը և կատարելագործել պահեստազորայինների պատրաստության համակարգը: Ստեղծել քաղաքացիների հաշվառման միասնական բազա ելնելով ծառայության պահանջարկից, մեծ սոցիալական ու հանրային նշանակությունից և լայն ընդգրկումից: 2. Միջոցառումների իրականացումից ակնկալվող արդյունքը Կունենանք հստակեցված զորահավաքային նախապատրաստության, պահեստազորային պատրաստության և զորահավաքի համակարգ: Վերոնշյալ համակարգի ստեղծումն էականորեն կբարձրացնի պահեստազորայինների զինվորական հաշվառման մակարդակը և լրիվությունը, զորակոչի կազմակերպման և անցկացման, զորքերին անհրաժեշտ մասնագետների կցագրման աշխատանքները և կնպաստի զորահավաքային ռեսուրսների արդյունավետ կառավարմանը:

6.	ՀՀ-ում տարածքային պաշտպանության համակարգի ներդրման վերաբերյալ «Պաշտպանության մասին» և ՀՀ այլ օրենքներում կատարել փոփոխություններ և լրացումներ, ինչպես նաև կատարել վարչատարածքային բաժանում, ստեղծել տարածքային պաշտպանության կառավարման մարմին 1. Միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման իրականացումն պայմանավորված է տարածքային պաշտպանության ոլորտի խնդիրները, ուժերի ու միջոցների, նրանց ղեկավար մարմինների կազմը, կիրառման ընթացակարգը մեկ միասնական փաստաթղթով կանոնակարգելու անհրաժեշտությամբ (ՀՀ կառավարության 18.08.2021թ. N 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի կետ 1.3 ենթակետ 2): 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրը ՀՀ-ում ստեղծված չէ տարածքային պաշտպանություն և «Տարածքային պաշտպանություն» հասկացությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ: Տարածքային պաշտպանությանն առնչվող խնդիրներն անուղղակի ձևով արտացոլված են «Պաշտպանության մասին», «Ոստիկանության զորքերի մասին», «Սահմանապահ զորքերի մասին», «Հայաստանի փրկարար ծառայության մասին», «Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների մասին» ՀՀ օրենքներում: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները ՀՀ օրենքներում կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ, ինչպես նաև կատարել վարչատարածքային բաժանում, ստեղծել տարածքային պաշտպանության կառավարման մարմին: 2. Միջոցառումների իրականացումից ակնկալվող արդյունքը Միջոցառման իրականացումը կապահովի ոլորտի խնդիրների համակարգումը: Կունենանք տարածքային պաշտպանության համակարգ, որը հնարավորություն կընձեռի պատերազմի ժամանակ հակառակորդի հնարավոր ոտնձգություններից հուսալիորեն պաշտպանել երկրի ներքին շրջանները, բնակչությունը, ենթակառուցվածքը և կարևորագույն օբյեկտները, զորամիավորումների հրամանատարներին պատասխանատվության գոտիներում օժտել իրական լծակներով:
7.	Ռազմական ենթակառուցվածքի օպտիմալացման և զորքերի տեղակայման վայրերի բարելավման վերաբերյալ Ռազմական ենթակառուցվածքն ու զորքերի տեղակայման վայրերը համապատասխանեցնել նորմատիվային պահանջներին 1. Միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման իրականացումը պայմանավորված է կենցաղային և շենքային պայմանների բարելավման, զորքերի տեղաբաշխման վայրերի օպտիմալացման աշխատանքների անհրաժեշտությամբ (ՀՀ կառավարության 18.08.2021թ. N1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի կետ 1.3): 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրը Նոր կազմավորված զորամասերը կահավորված չեն համապատասխան շինություններով, ռազմական ենթակառուցվածքների վիճակը ոչ բավարար մակարդակի վրա է: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Բարելավել միավորումների, զորամասերի և ստորաբաժանումների տեղաբաշխման վայրերը, զարգացնել ճանապարհային ցանցը: 2. Միջոցառումների իրականացումից ակնկալվող արդյունքը Կբարելավվեն շենքային և զինծառայողների կոմունալ-կենցաղային պայմանները, կնվազեցվեն հակառակորդի կողմից խոցման հնարավորությունները, կզարգացվեն ռազմական ենթակառուցվածքները:
8.	Զինված ուժերի բարոյահոգեբանական պատրաստության մակարդակի և հրամանատարի դերի բարձրացման, զինվորական կարգապահության ապահովման և ոչ կանոնադրական հարաբերությունների նվազեցման վերաբերյալ 8.1 Զինված ուժերում զարգացնել զինծառայողի անհրաժեշտ բարոյական հատկությունները, ամրապնդել հոգեբանական կայունությունը և մարտական գործողություններ վարելու պատրաստվածությունը: Բարձրացնել զինվորական կարգապահության մակարդակը և նվազագույնի հասցնել ոչ կանոնադրային հարաբերությունները Զինված ուժերում 8.2 Սահմանված թվով զորամասերում հոգեբանական օգնության կետերի ու հոգեբանական հաղթահարման արգելագոտիների լրասարքավորում 8.3 «ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին նախագծի մշակում 1. Միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառումների իրականացումը պայմանավորված է Զինված ուժերի բարոյահոգեբանական պատրաստության մակարդակի բարձրացման, զորամասերի հոգեբանական օգնության կետերի և հոգեբանական հաղթահարման արգելագոտիների լրասարքավորման անհրաժեշտությամբ (ՀՀ կառավարության 18.08.2021թ. N 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի կետ 8):

	Օրենքի նախագծի անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 18.08.2021թ. N 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի 1.3 պաշտպանության ոլորտ, զինված ուժերի բարեփոխումներ բաժնի երկրորդ պարբերության և 8-րդ կետի դրույթներին համահունչ ապահովել զինված ուժերում կանոնադրային հարաբերությունների բարձր աստիճան, բարելավել բարոյահոգեբանական վիճակը, հստակեցնել հրամանատարների (պետերի) կարգապահական լիազորությունները, նրանց և ենթակա անձնակազմի իրավունքները և պարտականությունները, կարգապահական պատասխանատվության միջոցները, կիրառված կարգապահական տույժերի բողոքարկման ընթացակարգը: 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրը Չնայած այն հանգամանքին, որ զինված ուժերում իրականացվում են մեծածավալ աշխատանքներ զինվորական կարգապահության ամրապնդման ուղղությամբ, սակայն շարունակվում են բացասական երևույթների, կանոնադրական կարգի խախտման և ընդհանուր դեպքերի քանակի աճը ՀՀ զինված ուժերում, որը առավել նկատելի է 44-օրյա պատերազմից հետո, ինչպես նաև թերհամալրված են զորամասերի հոգեբանական օգնության կետերը և հոգեբանական հաղթահարման արգելագոտիները: Գործող օրենքի կիրառման գործընթացը վեր է հանել մի շարք խնդիրներ, որոնք կապված են հրամանատարների (պետերի) կողմից կարգապահական իրավունքի իրացման, խրախուսանքի միջոցների և կարգապահական տույժերի կիրառման, կարգապահական իրավախախտումների գնահատման և դրանց ու քրեական և վարչական իրավախախտումների համադրման, տույժի ենթարկելու վարույթների անցկացման, կարգապահական կոնկրետ իրավախախտումների համար տույժերի տեսակների ընտրության, տրված կարգապահական տույժերի բողոքարկման հետ կապված հարաբերություններում: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Զինծառայողների հետ համապատասխան հոգեբանական աշխատանքի իրականացում: Օրենքի նախագծի համաձայն առաջարկվում է ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրքը նոր խմբագրությամբ շարադրելու միջոցով հստակեցնել հրամանատարների (պետերի) կարգապահական լիազորությունները, նրանց և ենթակա անձնակազմի իրավունքները և պարտականությունները, խրախուսման և կարգապահական տույժերի տեսակները, դրանց կիրառման և կիրառված կարգապահական տույժերի բողոքարկման ընթացակարգերը: 2. Միջոցառումների իրականացումից ակնկալվող արդյունքը Կբարձրանա զինված ուժերում կարգապահության և զինծառայողների բարոյակամային մակարդակը, զինծառայողների՝ ակտիվ մարտական գործողություններ վարելու պատրաստականության աստիճանը: Օրենքի նախագծի ընդունումը կապահովի ՀՀ կառավարության 18.08.2021թ. N 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի 1.3 պաշտպանության ոլորտ, զինված ուժերի բարեփոխումներ բաժնի պահանջների կատարումը, զինվորական ծառայության կազմակերպման գործընթացում կարգապահական իրավահարաբերությունները կունենան ավելի բարձր մակարդակ, կնվազեն զինվորական ծառայության ընթացքում կարգապահական բնույթի իրավախախտումները:
9.	Պարտադիր ժամկետային և պայմանագրային ծառայության փոխլրացնող համակարգի շարունակական բարելավման, արհեստավարժ զինվորական ծառայության համակարգի ընդլայնման վերաբերյալ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի մշակում 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Օրենքների նախագծերի փաթեթի անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 18.08.2021թ. N1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի 1.3 պաշտպանության ոլորտ, զինված ուժերի բարեփոխումներ բաժնի երկրորդ, վեցերորդ, յոթերորդ պարբերությունների և 1-ին, 9-րդ, 10-րդ կետերի դրույթների կատարումն ապահովելու հանգամանքով՝ նպատակ ունենալով բարելավել զինվորական ծառայության կազմակերպման օրենսդրական կարգավորումները, խթանել արհեստավարժ զինվորական ծառայության զարգացման գործընթաց՝ դրա շրջանակներում կրճատելով պարտադիր զինվորական ծառայության ժամկետը, զինծառայության գրավչության ապահովման նպատակով բարձրացնել զինծառայողների, նրանց հավասարեցված անձանց և նրանց ընտանիքների անդամների սոցիալական պաշտպանվածության մակարդակը, պայմանագրային զինծառայողների դրամական ապահովության չափերը: 1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Զինվորական ծառայության կազմակերպման հետ կապված հարաբերություններն անընդմեջ զարգացող գործընթաց են և աներկբա է դրանց օրենսդրական կարգավորման անհրաժեշտությունը՝ ժամանակի պահանջներին և զինված ուժերի առջև դրվող խնդիրներին համապատասխան: 1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները

	Օրենքների նախագծերի փաթեթի համաձայն հստակեցվելու են զինվորական ծառայության կազմակերպման հետ կապված հարաբերությունները՝ կադրային գործընթացների, զինծառայողների իրավունքների և պարտականությունների, ատեստավորման, պարտադիր զինվորական ծառայության ժամկետի կրճատման, զինծառայողների նրանց հավասարեցված անձանց և նրանց ընտանիքների անդամների սոցիալական երաշխիքների իրացման հետ կապված, բարձրացվելու է պայմանագրային զինծառայողների դրամական ապահովության չափերը: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Օրենքների նախագծերի փաթեթի ընդունումը կապահովի ՀՀ կառավարության 18.08.2021թ. N 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի 1.3 պաշտպանության ոլորտ, զինված ուժերի բարեփոխումներ բաժնի պահանջների կատարումը, զինվորական ծառայության գրավչության բարձրացումը:
10.	10. Միջազգային համագործակցության և հավաքական անվտանգության գործող ընթացակարգերի հնարավորությունների ընդլայնման վերաբերյալ 10.1 Շարունակել աշխատանքները ՀՀ-ՌԴ և ՀԱՊԿ շրջանակներում հավաքական պաշտպանության գործող ընթացակարգերի պարզաբանման ուղղությամբ 10.2 ՀՀ-ՌԴ համատեղ (միացյալ) և ՀԱՊԿ ուժերի մարտական կարողություններին զուգահեռ ամրապնդել ՀՀ ԶՈՒ փոխգործունակության մակարդակը 10.3 Իրականացնել բազմակողմ և երկկողմ ձևաչափով ռազմաքաղաքական խորհրդակցություններ 10.4 Ապահովել ՀՀ ԶՈՒ ներգրավվածությունը միջազգային գործողություններին 10.5 Ապահովել ՀՀ պաշտպանության համակարգի բարեփոխումների խորհրդատվական ու փորձագիտական աջակցություն 10.6 Զարգացնել դաշնակից և գործընկեր երկրների հետ ռազմատեխնիկական համագործակցությունը 1. Միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառումների իրականացումը պայմանավորված է դաշնակցային և գործընկերային հարաբերությունների գործող մեխանիզմները կատարելագործելու, զինված ուժերի արդիական սպառազինությամբ և այլ նյութական միջոցներով համալրելու, ստանձնած միջազգային հանձնառությունների կատարումն ապահովելու և պաշտպանական բարեփոխումները կյանքի կոչելու անհրաժեշտությամբ (ՀՀ կառավարության 18.08.2021թ. N 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի կետ 1.3 ենթակետ 4): 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրը Միջազգային ռազմաքաղաքական և ռազմական համագործակցության գործող մեխանիզմներում առկա են որոշակի անորոշություններ փոխադարձ հանձնառությունների և դրանց կենսագործման պայմանների վերաբերյալ: Միաժամանակ, ՀՀ ԶՈՒ՝ արդիական ռազմական նշանակության արտադրանքով համալրման գործընթացը պահանջում է ռազմատեխնիկական համագործակցության անխափանության ապահովում: Անհրաժեշտ է նաև բարձրացնել ՀՀ ԶՈՒ փոխգործունակության աստիճանը: Այս ամենով հանդերձ, առկա է ՀՀ պաշտպանության ոլորտի բարեփոխումներին միջազգային առաջադեմ խորհրդատվական և փորձագիտական աջակցության անընդհատության ապահովման խնդիր: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Առաջարկվում է կատարելագործել ՀՀ-ՌԴ և ՀԱՊԿ շրջանակներում հավաքական պաշտպանության գործող ընթացակարգերը, զարգացնել համատեղ պլանավորման և ուժերի կիրառման կարողությունները, շարունակել բազմակողմ և երկկողմ ձևաչափով նախաձեռնողական ռազմաքաղաքական, ռազմական և ռազմատեխնիկական համագործակցության իրականացումը, բարձրացնել ՀՀ ԶՈՒ փոխգործունակ կարողությունների աստիճանը, ինպես նաև առավել նպատակային դարձնել պաշտպանական բարեփոխումներին խորհրդատվական ու փորձագիտական աջակցությունը: 2. Միջոցառումների իրականացումից ակնկալվող արդյունքը Ռազմաքաղաքական դաշինքների և գործընկերությունների զարգացում՝ պահպանելով ՀՀ ազգային շահերից բխող և առկա ռազմաքաղաքական ընդհանրությունների վրա հիմնված հարաբերությունների ձևավորման հավասարակշռությունը:
11.	Զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության և բարեվարքության ամրապնդում 11.1 ՀՀ ՊՆ ՌՈՒՀ-ի ՍՈԲԿ-ում և ՀՇՖ-ում ներդնել «Պատշաճ կառավարում և բարեվարքության ամրապնդում պաշտպանության և անվտանգության ոլորտներում» կրթական ծրագրի և «Մարդու իրավունքները զինված ուժերում» առարկայի վերանայված ծրագրի ներդրում 11.2 Կանանց իրավունքների պաշտպանության թեմաներով դասընթացների կազմակերպում, ԶՈՒ ստորաբաժանումներին քաղաքացիական և քաղաքական իրավունքների վերաբերյալ տեղեկատվական նյութերի տրամադրում 11.3 Պաշտպանության ոլորտում մշտադիտարկում և քաղաքացիական վերահսկողություն իրականացնող կազմակերպությունների հետ համագործակցության զարգացում 1. Միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

	Միջոցառումների իրականացումը պայմանավորված է տարբեր մակարդակի հրամանատարների և պետերի պաշտպանական ռեսուրսների կառավարման ունակությունների զարգացման, անձնակազմի անհատական և ինստիտուցիոնալ կարողությունների հզորացման, կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության բարձրացման, ստեղծված հայեցակարգային հենքի վրա կոռուպցիայի դեմ պայքարի հիմնական ուղղությունների, ուղենիշների, նպատակների և խնդիրների սահմանման, ՌՈՒՀ-երում դասավանդվող ծրագրերի վերանայման, պաշտպանության ոլորտում կանանց իրավունքների պաշտպանության և հավասար հնարավորությունների ապահովման խթանման և զինված ուժերի անձնակազմի իրավագիտակցության մակարդակի բարձրացման ու իրավական դաստիարակության և իրավական վարքագծի մշակույթ արմատավորման անհրաժեշտությամբ (ՀՀ կառավարության 18.08.2021թ. N 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի հիմնական ուղենիշներ): 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրը ՀՀ ՊՆ ՌՈՒՀ-երի ՍՈԲԿ-ի և ՀՇՖ-ի ծրագրերում ներառված չէին բարեվարքության ամրապնդման և կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ թեմաներ: Ներկայումս Պաշտպանության նախարարությունում և Զինված ուժերում բարեվարքությունն ամրապնդելու և կոռուպցիոն ռիսկերին հակազդելու նպատակով համակողմանի աշխատանքներ են տարվում մի քանի ուղղություններով: Նախարարության կառուցվածքում գործում է առերևույթ կոռուպցիոն դեպքերի/հանցագործությունների վերաբերյալ ահազանգելու արդյունավետ մեխանիզմ: Համաձայն ՀՀ Կառավարության 2019թ. դեկտեմբերի 26-ի N 1978-Լ որոշմամբ հաստատված Մարդու իրավունքների ազգային ռազմավարությունից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագրի 1-րդ կետի պահանջի՝ Պաշտպանության նախարարությունը մշակել և ռազմաուսումնական հաստատությունների ուսումնական ծրագրերում ներառել է «Մարդու իրավունքները զինված ուժերում» առարկան, ինչպես նաև ՌՈՒՀ-երի դասախոսական անձնակազմը անցել է վերապատրաստում և պլանավորվել է համանուն դասագրքի տպագրությունը: Ներկայումս կանանց և տղամարդկանց համար օրենսդրությամբ ամրագրված են հավասար իրավունքներ ունենալու և պարտավորություններ ստանձնելու օրենսդրական երաշխիքներ, այդ թվում՝ ռազմական մասնագիտական կրթություն ստանալու, պաշտպանության համակարգում պետական ծառայության ընդունվելու, զինված ուժերում ծառայության անցնելու, պաշտոնի նշանակման, վերառակավորման, առաջխաղացման հնարավորություններ: Զինված ուժերի տարբեր ստորաբաժանումներում անցկացվում են մարդու իրավունքների վերաբերյալ իրազեկման միջոցառումներ, կազմակերպվում են դասընթացներ: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Ծրագրերի մշակման և ներդրման ժամանակ հիմնվել միջազգային լավագույն փորձի վրա: Առաջարկվում է ապահովել զինված ուժերի անձնակազմի շարունակական կրթությունը մարդու իրավունքների վերաբերյալ, հետևողական աշխատանքներ իրականացնել կին զինծառայողների և զինծառայողների կանանց խնդիրների վերլուծության, զինվորական միջավայրին նրանց արագ ինտեգրմանը խոչընդոտող պատճառները ուսումնասիրության ուղղությամբ: Մարդու իրավունքների խախտումների և կոռուպցիայի դեպքերի անանուն հաղորդման SS հավելվածի մշակումը և ներդրումը հնարավորություն կտա մի կողմից բարձրացնել զինծառայողների իրազեկվածության մակարդակը, մյուս կողմից՝ կանխարգելել դեպքերի աճը: 2. Միջոցառումների իրականացումից ակնկալվող արդյունքը Միջոցառումների իրականացման արդյունքում կբարձրանա հրամանատարական անձնակազմի իրազեկման մակարդակը բարեվարքության, կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի հարցերում, վերապատրաստված սպաները ձեռք բերված գիտելիքները և հմտությունները կօգտագործեն իրենց ծառայության ընթացքում, առավել արագ և արդյունավետ կարձագանքվի առերևույթ կոռուպցիոն դեպքերի/հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներին և ահազանգերին, կապահովվի ՀՀ Կառավարության ծրագրի՝ կոռուպցիայի դեմ պայքարի դրույթների իրականացումը, ՀՀ պաշտպանության ոլորտի հակակոռուպցիոն ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագրի գործարկմամբ վեր կհանվեն պաշտպանության ոլորտում հակակոռուպցիոն քաղաքականության ուղենիշները, սկզբունքները, նպատակները, խնդիրները և դրանց լուծման ուղիները, ինչն առավել արդյունավետ կդարձնի պայքարը կոռուպցիայի դեմ: ՌՈՒՀ-երի ունկնդիրների շրջանում կբարձրանա իրազեկվածությունը մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների միջազգային սկզբունքների վերաբերյալ, նրանք նաև ձեռք կբերեն և կզարգացնեն հմտություններ, որոնք կնպաստեն զինված ուժերում իրենց գործառույթների և պարտականությունների կատարման ընթացքում մարդու իրավունքների հարգմանը և պահպանմանը, ինչպես նաև ոչ կանոնադրային հարաբերություններից (իրավական կարգավորումները մերժելու մշակույթ և «քրեական արժեհամակարգի» վրա հիմնված վարքագծի դրսևորում) բխող վատ վերաբերմունքի դրսևորման դեպքերի կանխարգելմանը: Կբարձրանա զինված ուժերի անձնակազմի շրջանում կանանց և տղամարդկանց իրավահավասարության վերաբերյալ իրազեկության մակարդակը, կավելանա զինված ուժերի տարբեր ստորաբաժանումներում ներգրավված կանանց թվաքանակը: Իրականացված աշխատանքների արդյունքում կնվազի կանանց իրավունքների խախտումների դեպքերի թիվը: Կբարձրանա զինծառայողների իրազեկվածությունն իրենց իրավունքների վերաբերյալ,

	կտիրապետեն դրանք պաշտպանելու օրինական միջոցներին, ինչը կանխարգելիչ դեր կարող է ունենալ մարդու իրավունքների խախտումների հարցում, ինչպես նաև կնպաստի զինված ուժերի անձնակազմի բարոյահոգեբանական պատրաստվածության մակարդակի բարձրացմանը, իսկ երկարաժամկետ հեռանկարում՝ զինված ուժերի մարտունակության ամրապնդմանը: Միջոցառումների իրականացումը պայմանավորված է ՀՈՒ-ում բարեվարքության և կարգապահության մշակույթի ամրապնդման, ՀՈՒ անձնակազմի իրազեկվացության մակարդակի բարձրացման, իրավական դաստիարակության և իրավական վարքագծի մշակույթի արմատավորման, ՀՈՒ-ում մարդու իրավունքների և կոռուպցիոն դեպքերի բացահայտման անհրաժեշտությամբ (ՀՀ կառավարության 18.08.2021թ. N 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի հիմնական ուղենիշներ): Կապահովվի ՀՀ Կառավարության ծրագրի՝ կոռուպցիայի դեմ պայքարի դրույթների իրականացումը: Կբարձրանա անձնակազմի իրազեկվածությունը բարեվարքության, կոռուպցիայի կանխարգելման, դրա դեմ պայքարի, ինչպես նաև մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների միջազգային սկզբունքների և ՀՀ օրենսդրության պահանջների վերաբերյալ: Հնարավորություն կստեղծվի առավել արագ և արդյունավետ արձագանքել առերևույթ կոռուպցիոն դեպքերի/հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներին և ահազանգերին:
12.	Ռազմական կրթության բնագավառում պետական քաղաքականության հիմնական ուղղությունների և գերակայությունների մշակման, ռազմակրթական համակարգի մրցունակության բարձրացման, ռազմական գիտության զարգացման վերաբերյալ 12.1.Սահմանել ռազմամասնագիտական թեքումով դասախոսների ընտրության համար հստակ արժանիքահեն և մրցութային ճկուն ընթացակարգեր 12.2.Մշակել և ընդունել ռազմական կրթության նկատմամբ գրավչության բարձրացմանն ուղղված ծրագիր և դրա իրականացման ժամանակացույց 12.3 Ռազմական գործողությունների պլանավորման ու վարման ձևերի վերանայում 1. Միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման իրականացումը բխում է «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքների համապատասխանաբար 4-րդ հոդվածներից, «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածից (ՀՀ կառավարության 18.08.2021թ. N 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի կետ 1.3 ենթակետ 6): 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրը Նվազել է ռազմամարզական վարժարանների և ռուհերի դիմորդների թվաքանակները, ռուհերի գիտաշխատողները գիտական աստիճանի համար չեն ստանում հավելավճարներ: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Ռազմամասնագիտական թեքումով դասախոսների ընտրության ընթացակարգերի, դիմորդների գրավչությանն ուղղված միջոցառումների և ժամանակցույցի, պրոֆեսորադասախոսական կազմին հավելավճարներ տրամադրելու մեխանիզմների մշակում: 2. Միջոցառումների իրականացումից ակնկալվող արդյունքը Ռազմամասնագիտական թեքումով դասախոսների ընտրության ընթացակարգերի, դիմորդների գրավչությանն ուղղված միջոցառումների և ժամանակցույցի մշակմամբ զինված ուժերը կհամալրվեն բանիմաց կադրերով, կբարձրանա պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության արդյունավետությունը և կխթանի նրանց կողմից գիտական, գիտատեխնիկական և նորարարական աշխատանքներով զբաղվելու գործընթացին:
13.	Տեղեկատվական անվտանգության և կիբեռանվտանգության ոլորտի բարեփոխում, Տեղեկատվական սպառնալիքների և մարտահրավերների մշտադիտարկման, վերլուծության, տեղեկատվական հակազդման և պայքարի միջոցառումների արդյունավետ իրականացում, օրենսդրական դաշտի կատարելագործում 13.1 Հայաստանի Հանրապետության շահագրգիռ գերատեսչությունների ու կազմակերպությունների հետ տեղեկատվական անվտանգության և կիբեռահաբեկչության դեպքերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակման նպատակով կիբեռահաբեկչության դեպքերի արագ արձագանքման խմբերի ընդլայնում 13.2 Հանրային իրազեկվածության բարձրացում, թիրախավորող բացասական տեղեկատվական հոսքերին և հավանական հակառակորդի կողմից իրականացվող սոցիալական, ազգային, կրոնական ատելության, զինված ուժերի վարկաբեկմանն ուղղված քարոզչությանը հակազդելու գործընթացի ապահովում 1. Միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառումների իրականացումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի տեղեկատվական անվտանգության ապահովման ոլորտում հիմնական ուղղությունների և առաջնահերթությունների մշակման և իրականացման, տեղեկատվական անվտանգության ապահովման և ռազմական մարմինների խնդիրների, լուծմանն ուղղված միջոցառումների սահմանման, տեղեկատվական անվտանգության և կիբեռանվտանգության ոլորտի բարեփոխման, տեղեկատվական սպառնալիքների և մարտահրավերների մշտադիտարկման, վերլուծության, տեղեկատվական հակազդման և պայքարի միջոցառումների արդյունավետ իրականացման նպատակով օրենսդրական դաշտի կատարելագործման անհրաժեշտությամբ (ՀՀ

	կառավարության 18.08.2021թ. N 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի կետ 1.3 ենթակետ 7): 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրը Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության և քաղաքականության ապահովման գործող հայեցակարգը չի ապահովում խնդիրների կատարումը: Վերջին տարիներին, ընթացող գործընթացներով պայմանավորված, պետություններն ավելի մեծ և առաջնային ուշադրություն են դարձնում տեղեկատվական անվտանգության ապահովմանը, օրենսդրական կարգավորումների ներդաշնակեցմանը, այդ ոլորտում հնարավոր սպառնալիքների և մարտահրավերների հակազդմանը, ինչպես նաև տեղեկատվական իրավահարաբերությունների կարգավորմանը: Ընդունվել են Տեղեկատվական անվտանգության ապահովման և տեղեկատվական քաղաքականության հայեցակարգը, էլեկտրոնային հասարակության ձևավորմանը, կիբեռահաբեկչության դեմ պայքարին, կիբեռանվտանգության ապահովմանը, անձնական տվյալների պաշտպանությանը և տեղեկատվական անվտանգության ապահովմանն առնչվող հայեցակարգային, ռազմավարական և այլ իրավական փաստաթղթեր: Հայաստանի Հանրապետությունը տեղեկատվական անվտանգության ապահովման ոլորտում վավերացրել է պայմանագրեր միջազգային կազմակերպությունների և առանձին պետությունների հետ, իրականացնում է համատեղ ծրագրեր միջպետական, ինչպես նաև ԱՊՀ-ի, ՀԱՊԿ-ի, ԵՄ-ի, ԵԽ-ի, ՆԱՏՕ-ի հետ համագործակցության շրջանակներում: Հայաստանի Հանրապետության կողմից տեղեկատվական անվտանգության ապահովման ոլորտում իրականացված միջոցառումները լիարժեք չեն կանխարգելել և չեզոքացրել տեղեկատվական անվտանգության նոր սպառնալիքները և մարտահրավերները: Հայաստանի Հանրապետությունում դեռևս լիարժեք կարգավորված չեն և իրավական կարգավորման կարիք ունեն տեղեկատվության ստեղծման ու տարածման, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման, տեղեկատվական համակարգերի ստեղծման և շահագործման, ինչպես նաև տեղեկատվության պաշտպանության հետ կապված հարաբերությունները, պատշաճ սահմանված չեն տեղեկատվության դասակարգումը, տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվության պաշտպանության կառավարման շրջանակները, ամրագրման կարիք ունեն միջազգային համագործակցության և փոխօգնության ապահովմանն ուղղված իրավակարգավորումները և դրանց իրականացման հստակ միջոցները: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Առաջարկվում է կատարելագործել տեղեկատվական սպառնալիքների և մարտահրավերների մշտադիտարկման, վերլուծության գործիքակազմը, ընդլայնել կիբեռահաբեկչության դեպքերին արագ արձագանքման խմբերը և բարձրացնել հանրային իրազեկվածության մակարդակը: 2. Միջոցառումների իրականացումից ակնկալվող արդյունքը Կսահմանվի ռազմական դրություն հայտարարելու ժամանակ խոսքի, հրապարակումների և հաղորդումների ազատության հնարավոր սահմանափակումների շրջանակը, արտակարգ իրավիճակներում կբարձրանա կիբեռահաբեկչության դեպքերին արագ արձագանքման խմբերի արդյունավետությունը, կմշակվի և կներդրվի ՀՀ-ն թիրախավորող բացասական տեղեկատվական հոսքերին հակազդելու, հանրությանն ամբողջական ու ճշգրիտ տեղեկատվություն տրամադրելու, միասնական տեղեկատվական քաղաքականություն ու տեղեկատվական գործողություններ իրականացնելու համակարգ:
14.	Սոցիալական պաշտպանության ապահովման և կենսաթոշակային ոլորտը կարգավորող իրավական դաշտի կատարելագործում, սոցիալական երաշխիքների ընդլայնում և զինվորական ծառայության գրավչության ապահովում 14.1 Ապահովել արտոնյալ պայմաններով երկարաժամկետ հիփոթեքային վարկավորման «Մատչելի բնակարան զինծառայողին» պետական նպատակային ծրագրի իրականացման շարունակականությունը, նախաձեռնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին բնակարանային պայմանների բարելավում ստանալու իրավունքը պահպանած զինծառայողների բնակարանային ապահովման գործընթացի իրականացումը 14.2 Մարտական խնդիրներ իրականացնող գործառույթներ ունեցող պաշտոններ զբաղեցնող սպայական, ենթասպայական և շարքային կազմերի պայմանագրային զինծառայողներին ատեստավորման արդյունքներով հավելավճար սահմանելու նպատակով օրենսդրական փոփոխությունների փաթեթի մշակում 14.3 Աշխատանքային կենսաթոշակ կամ նպաստ ստանալու իրավունք ունեցող՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների մասնակիցների համար ամենամսյա պարգևավճար սահմանելու նպատակով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին ՀՀ օրենքներում փոփոխություն կատարելու մասին նախագծի մշակում 14.4 «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին», «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» և «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի մշակում 14.5 Հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահություն իրականացնող պայմանագրային զինծառայողների համար լրացուցիչ սոցիալական

	արտոնություններ և երաշխիքներ սահմանելու նպատակով «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի մշակում 1. Միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառումների իրականացումը նպատակաուղղված է՝ զինծառայողների բնակարանային ապահովման, դրամական բավարարման և զինվորական կենսաթոշակների ցուցանիշների բարելավման, մարտական հերթապահությունում ընդգրկված պայմանագրային զինծառայողների և ՀՀ պաշտպանության մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ ունեցող անձանց համար ՀՀ օրենսդրությամբ սոցիալական նոր երաշխիքների և արտոնությունների սահմանման, իրավակիրառ պրակտիկայում ի հայտ եկած խնդիրների լուծման, մատուցվող ծառայությունների թվայնացման և օրենսդրության կատարելագործման միջոցով զինծառայողների, նրանց հավասարեցված անձանց և նրանց ընտանիքների անդամների սոցիալական պաշտպանվածության մակարդակը բարձրացնելու և զինվորական ծառայության գրավչության ապահովման անհրաժեշտությամբ (ՀՀ կառավարության 18.08.2021թ. N 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի կետ 1.3 ենթակետ 9): Միջոցառումները բխում են կառավարության 2021-2026թթ. ծրագրի 1.3 կետում նշված՝ «Կառավարության ուշադրության կենտրոնում մշտապես եղել և լինելու է զինծառայողների և նրանց ընտանիքների սոցիալական պաշտպանության բարձրացումը, ուստի Կառավարությունը մեծացնելու է զինծառայողների նյութական և սոցիալական ապահովման երաշխիքները, կատարելագործելու է զինծառայության գրավչության և զինծառայողի հեղինակության բարձրացման մեխանիզմները: Զինծառայողների աշխատավարձերի և այլ վճարների բարձրացումը, բնակարանային ապահովման ուղղությամբ Կառավարության ծրագրերը, պատերազմի հետևանքներն իրենց վրա կրող զինծառայողների սոցիալական և առողջապահական ծրագրերը նոր թափ են ստանալու», 2.3 կետում նշված՝ «Պետական և համայնքային ծառայությունների մեկանգամյա դիմումի համակարգի ներդրում՝ բացառելով քաղաքացուց տեղեկություններ պահանջելու դեպքերը, եթե այն արդեն առկա է տեղեկատվական որևէ շտեմարանում», 4.6 կետում նշված՝ «Ընդլայնվելու են պետական հատվածի աշխատողների սոցիալական երաշխիքները: Կենսաթոշակառուներին և նպաստառուներին մատուցվող ծառայությունների որակը բարձրացնելու, ինչպես նաև կենսաթոշակների և նպաստների նշանակման, վճարման գործընթացները լավարկելու նպատակով կատարելագործվելու է օրենսդրությունը, ընդլայնվելու է առցանց մատուցվող ծառայությունների շրջանակը՝ ի հաշիվ տեղեկատվական համակարգեր ներառող տվյալների ստացման որակական և քանակական բարելավման» և 5.2 կետում նշված՝ «Կառավարությունը մեծապես կարևորում է մարդու իրավունքների և դրանց պաշտպանության միջոցների մասին հանրային իրազեկության բարձրացումը՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց, ինչպես նաև հասարակության և քաղաքացիների կողմից սեփական իրավունքների պաշտպանության խրախուսումը, մարդու իրավունքների և դրանց պաշտպանության միջոցների վերաբերյալ քաղաքացիների գիտելիքների շարունակական կատարելագործումը» դրույթներին: 1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 73-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ բնակարանային պայմանների բարելավում ստանալու իրավունքը պահպանած թվով 1420 պայմանագրային զինծառայողների բնակարանային ապահովման ծրագիր ներկայումս չի իրականացվում, ինչը բացի այն, որ բացասաբար է անդրադառնում նշված զինծառայողների կողմից իրենց ծառայողական պարտականությունների կատարման արդյունավետության վրա, վերջիններիս շրջանում հանգեցնում է նաև արդարացի բողոքների: Բացի այդ, վերջին ժամանակներս տեղի ունեցած գնաճի հանգամանքով պայմանավորված տեղի է ունեցել աշխատավարձերի փաստացի նվազում, ինչի արդյունքում անհրաժեշտություն է առաջացել վերանայել ինչպես ամսական դրամական ապահովման, այնպես էլ՝ զինվորական կենսաթոշակների և թաղման նպաստի չափերը: Մարտական խնդիրների իրականացման, պլանավորման կամ վերահսկման գործառույթներ ունեցող պաշտոններ զբաղեցնող զինծառայողների ծառայության արժևորման, ծառայության գրավչությունը բարձրացնելու ուղղությամբ կարիք կա ձեռնարկել գործուն միջոցառումներ զինված ուժերի՝ որակը և համալրվածությունն ապահովելու համար: Երկարամյա ծառայության և հաշմանդամության զինվորական կենսաթոշակի անցած նախկին զինծառայողների ընտանիքի անդամների համար անվճար բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք սահմանված չլինելու պայմաններում նշված զինծառայողների ընտանիքները հայտնվում են ծանր սոցիալական վիճակում՝ ստանալով ամսական վարձատրության չափից առնվազն 2.5 անգամ պակաս կենսաթոշակ և զրկվելով նաև օրենքով սահմանված սոցիալական ապահովության երաշխիքներից և արտոնություններից (բացառությամբ իրենց բժշկական սպասարկումը): Մարտական հերթապահությունում ընդգրկված պայմանագրային զինծառայողների համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված սոցիալական երաշխիքների և արտոնությունների ծավալները չեն ապահովում զինվորական ծառայության գրավչությունը, վերջիններս, ինչպես նաև 2020թ. սանձազերծված ռազմական գործողություններին մասնակցած անձինք չեն օգտվում նախկին ԽՍՀՄ խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց առաջնահերթության կարգով փոխհատուցում ստանալու իրավունքից:

	ՀՀ պաշտպանության մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ ունեցող անձինք ամենամսյա պարգևավճար ստանալու իրավունք ձեռք են բերում միայն երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ ստանալու դեպքում, իսկ աղվանական պատերազմի մասնակիցները՝ անկախ զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունենալու հանգամանքից: Միաժամանակ, սոցիալական ապահովության որոշ երաշխիքների և արտոնությունների տրամադրման համար անհրաժեշտ մի շարք տեղեկատվություններ հիմնականում ստացվում են կամ շահառուներից պահանջվելու կամ՝ համապատասխան մարմիններին գրավոր կերպով հարցումներ իրականացնելու միջոցով, ինչի արդյունքում բացի այն, որ բավականաչափ երկարում է իրականացվող վարչարարության ժամկետները, որոշ դեպքերում նաև շահառուները ստիպված են լինում պահանջված փաստաթուղթը ներկայացնելունպատակով այցելել մեկից ավելի անգամ: 1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները - Ապահովել «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 73-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին բնակարանային պայմանների բարելավում ստանալու իրավունքը պահպանած զինծառայողների բնակարանային ապահովման գործընթացի իրականացումը՝ 2023-2026թթ. ժամանակահատվածում՝ 2023-2025թթ. և 2024-2026թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրերում ներառելու կամ այլ ծրագրերի միջոցով իրականացնելու միջոցով, - Պայմանագրային զինծառայողների համար սոցիալական երաշխիքների ընդլայնման և զինվորական ծառայության գրավչության ապահովման նպատակով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին», «Պետական կենսաթոշակների մասին» օրենքներում, ըստ անհրաժեշտության նաև այլ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծի մշակում, սահմանված կարգով շրջանառում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ, որի համաձայն կսահմանվի մարտական խնդիրներ իրականացնող գործառույթներ ունեցող պաշտոններ զբաղեցնող սպայական, ենթասպայական և շարքային կազմերի պայմանագրային զինծառայողների ատեստավորում և դրա արդյունքներով կհաշվարկվի որակավորման համար հավելավճարներ, - Զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմնական կենսաթոշակի չափի, զինվորական ծառայության ստաժի մեկ տարվա արժեքի և թաղման նպաստի չափի փոփոխման նպատակով ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N 1734-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում, սահմանված կարգով շրջանառում և ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացում, - Զինվորական ծառայության 20 և ավելի օրացույցային տարվա ստաժով երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի անցած ինչպես նաև հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների ընտանիքի անդամների բժշկական օգնության և սպասարկման իրավունքի սահմանման նպատակով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի մշակում, սահմանված կարգով շրջանառում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ, - Աշխատանքային կենսաթոշակ կամ ծերության նպաստ, կամ հաշմանդամության նպաստ, կամ կերակրողին կորցնելու դեպքում նպաստ ստանալու իրավունք ունեցող՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների մասնակիցների համար ամենամսյա պարգևավճար սահմանելու նպատակով ՀՀ կառավարության 04.02.2021թ. № 141-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում, սահմանված կարգով շրջանառում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ - «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին», «Հայաստանի Հանրապետության պաշտ պանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի մշակում, սահմանված կարգով շրջանառում և ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացում, - Հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահություն իրականացնող պայմանագրային զինծառայողների համար լրացուցիչ սոցիալական արտոնություններ և երաշխիքներ սահմանելու նպատակով «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի մշակում, սահմանված կարգով շրջանառում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ, - ՀՀ կառավարության 2014թ. ապրիլի 23-ի N 460-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում« սահմանված կարգով շրջանառում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ, - Զինծառայողների, նրանց հավասարեցված անձանց և նրանց ընտանիքների անդամների, զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամների և հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների համար սոցիալ-իրավական աջակցության և խորհրդատվական ծառայությունների ինչպես նաև գործող և նոր ընդունված օրենսդրական ակտերի օպերատիվ և հանրամատչելի պարզաբանումների տրամադրում,

	- Զինծառայողների, նրանց հավասարեցված անձանց և նրանց ընտանիքների անդամների, զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամների և հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների սոցիալական պաշտպանության ապահովման ուղղությամբ իրականացվող գործառույթների և մատուցվող ծառայությունների շրջանակներում պետական տեղեկատվական շտեմարաններին (ՔԿԱԳ մարմին, կադաստրի տեղեկատվական կենտրոն, բնակչության պետական ռեգիստր) հասանելիության ապահովում : 1.3 Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Միջոցառումների իրականացման արդյունքում կբարձրանա պետական հոգածության մակարդակը, շարունակականորեն կբարելավվեն շահառուների բնակկենցաղային պայմանները, ատեստավորման միջոցով հավելավճարի հաշվարկման արդյունքում կբարձրանա մարտական խնդիրների իրականացման, պլանավորման կամ վերահսկման պաշտոններ զբաղեցնող զինծառայողների դրամական ապահովությունը, կբարձրանա մահացած կենսաթոշակառուի ընտանիքին վճարվող թաղման նպաստի չափը, կբարելավվի զինծառայողների և զինվորական կենսաթոշակառուների կենսամակարդակը, ինչը կնպաստի նաև զինվորական ծառայության գրավչության մակարդակի բարձրացմանը, մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ ունեցող անձինք ամենամսյա պարգևավճար ստանալու իրավունք ձեռք կբերեն անկախ զինվորական կենսաթոշակի իրավունք ունենալու հանգամանքի, կլուծվեն իրավա–կիրառական պրակտիկայում ի հայտ եկած խնդիրները, կկատարելագործվեն և կհստակեցվեն գործող իրավակարգավորումների շրջանակներում իրականացվող գործառույթները, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» և «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի ընդունմամբ կլուծվեն սոցիալական ապահովման ոլորտում գործնականում առաջացած խնդիրները և կապահովվի տվյալ ոլորտում իրականացվող գործունեության արդյունավետությունը, մարտական հերթապահությունում ընդգրկված պայմանագրային զինծառայողների զավակների և ամուսինների համար կսահմանվի ուսման վարձի մասնակի փոխհատուցում՝ առնվազն 30 տոկոսի չափով, հակառակորդի հետ անմիջական շփման գծում մարտական հերթապահությունում ընդգրկված պայմանագրային զինծառայողները ինչպես նաև 2020թ. սանձազերծված ռազմական գործողություններին մասնակցած անձինք կօգտվեն նախկին ԽՍՀՄ խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց առաջնահերթության կարգով փոխհատուցում ստանալու իրավունքից, կապահովվի՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված իրավունքների, սոցիալական ապահովության երաշխիքների և արտոնությունների վերաբերյալ շահառուների շրջանում հանրային իրազեկվածության մակարդակի բարձրացումը, սոցիալական պաշտպանության ապահովման ուղղությամբ համապատասխան ծառայություններ մատուցելու համար անհրաժեշտ տեղեկատվության ստացումը կիրականացվի ինքնաշխատ եղանակով՝ պետական տեղեկատվական շտեմարաններից օգտվելու միջոցով՝ բացառելով շահառուներից տեղեկություններ պահանջելու դեպքերը:

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	
	ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ
1.	***Մարզպետարանների կազմակերպական կառուցվածքների վերանայում և համայնքային ծառայության համակարգի զարգացում*** **1.1 «Մարզպետների աշխատակազմերի կանոնադրությունները հաստատելու մասին» ՀՀ վարչապետի և «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերի ներկայացում կառավրության քննարկմանը** **1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Մարզպետարանների կազմակերպական կառուցվածքների վերանայման անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում Սահմանադրական բարեփոխումներով՝ ելնելով «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի ընդունման և դրանից բխող ՀՀ մարզպետարանների կառուցվածքի և գործառույթների նկարագրման անհրաժեշտությամբ: Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային ժողովի 2021թ.-ի օգոստոսի 26-ի № ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի 6.6 բաժնի 1-ին պարբերության, ինչպես նաև ՀԸԳՀ կիրարկումն ապահովող ճանապարհային քարտեզի 80-րդ կետով նախատեսված հանձնառություններից: 1.1 **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքով նկարագրվում են մարզպետների լիազորությունները վերջիններիս գործունեության հիմնական ոլորտներում, ինչպես նաև մարզպետների հարաբերությունները պետական կառավարման համակարգի մարմինների տարածքային ստորաբաժանումների հետ: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Խնդրի լուծումն առաջարկվում է իրականացնել «Մարզպետների աշխատակազմերի կանոնադրությունները հաստատելու մասին» ՀՀ վարչապետի և «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերի ընդունմամբ: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը.** Տարածքային կառավարման մարմինների միատեսակ գործառույթների և կառուցվածքի սահմանում: **1.2 Համայնքային ծառայության համակարգի ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումների իրականացում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի ընդունումը, ինչպես նաև ոլորտը կարգավորող ենթաօրենսդրական ակտերի լրամշակումը պայմանավորված է համայնքային ծառայության մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված գործընթացների դիտարկման արդյունքներով բացահայտված խնդիրներին լուծում տալու և համակարգը արդիականացնելու անհրաժեշտությամբ: Համայնքային ծառայողների վերապատրաստման համակարգի արդիականացումը պայմանավորված է համայնքային ծառայողների մասնագիտական գիտելիքների և հմտությունների փոխանցման գործընթացի արդյունավետության բարձրացման անհրաժեշտությամբ: Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 2021թ.-ի օգոստոսի 26-ի № ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի 6.6 բաժնի 6-րդ պարբերությամբ նախատեսված հանձնառություններից: **2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** ՀՀ օրենսդրությամբ նախատեսված գործընթացների դիտարկման արդյունքներով անհրաժեշտություն է առաջացել վերանայել համայնքային ծառայությունը կարգավորող օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերը՝ հարակից օրենսդրական ակտերում տեղի ունեցած փոփոխություններին համապատասխանեցնելու,

	համայնքային ծառայության համակարգի արդիականացումը ապահովելու և գործող կարգավորումներում առկա բացերը վերացնելու նպատակով: Վերապատրաստման գործող ծրագրում ներառված են ընդհանուր թեմաներ, որոնք թերևս չեն ապահովում համայնքային ծառայողների համար այնպիսի մասնագիտական գիտելիքների և հմտությունների կատարելագործում, ինչը թույլ կտա առավել արդյունավետ իրականացնել պաշտոնի անձնագրով վերապահված գործառույթները: Ուստի վերոնշյալ խնդիրներին լուծում տալու համար առաջարկվում է համապատասխան փոփոխություններ կատարել «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքում, ոլորտը կարգավորող ենթաօրենսդրական ակտերում, գնահատել համայնքային ծառայողների վերապատրաստման կարիքները և դրանց արդյունքներին համապատասխան մշակել վերապատրաստման նոր հասցեական ծրագիր/ծրագրեր, անցում կատարել հեռավար վերապատրաստման համակարգին: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը.** • ««Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի ընդունում՝ ուղղված համակարգի կատարելագործմանը, ինչպես նաև հարակից օրենսդրական ակտերի հետ համապատասխանության ապահովմանը, • Համայնքային ծառայությունը կարգավորող մոտ 13 ենթաօրենսդրական ակտերում փոփոխությունների և լրացումների կատարում, • Համայնքային ծառայողների վերապատրաստման նոր ծրագրի /հասցեական ծրագրերի միջոցով համայնքային ծառայողների մասնագիտական գիտելիքների և հմտությունների կատարելագործում, ինչը կապահովի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող գործունեության արդյունավետության բարձրացում:
2.	***Հանրապետության տարածքային համաչափ զարգացման, տարածքների սոցիալ-տնտեսական կայունության և հետագա տնտեսական ակտիվության և աճի ապահովում*** **2.1. Սահմանամերձ համայնքների բնակիչների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանն ուղղված աջակցության ծրագրերի իրականացում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Սահմանամերձ համայնքների սոցիալական աջակցությունն իրականացվում է <<Սահմանամերձ համայնքների սոցիալական աջակցության մասին>> ՀՀ օրենքի հիման վրա, որի գործողության ժամկետը երկարաձգվել է մինչև 2027 թվականի հունվարի 1-ը: Նշվածը ենթադրում է, որ առնվազն մինչև նշված ժամկետի ավարտը սահմանամերձ համայնքների բնակիչներին պետք է տրամադրվի <<Սահմանամերձ համայնքների սոցիալական աջակցության մասին>> ՀՀ օրենքով նախատեսված աջակցությունը: Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 2021թ.-ի օգոստոսի 26-ի № ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի 6.6 բաժնի 5-րդ պարբերությամբ նախատեսված հանձնառություններից: **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** ՀՀ Կառավարության 18.12.2014 թ-ի N 1444-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ սահմանամերձ 13 համայնքների 82 բնակավայրերի բնակիչներին նախատեսվում է տրամադրել սոցիալական աջակցություն: Աջակցության չափը կազմում է 988,933.7 հազ. դրամ: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Սահմանամերձ 13 համայնքների 82 բնակավայրերի բնակիչներին սոցաիալական աջակցություն տրամադրելու նպատակով նախատեսվում է մշակել և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել ՀՀ կառավարության համապատասխան որոշման նախագիծ: **2. Ակնկալվող արդյունքը** Ծրագրի իրականացման արդյունքում կտրամադրվի առնվազն հետևյալ աջակցությունը՝ 1) էլեկտրաէներգիա - օրացուցային տարվա ընթացքում գումարային մինչև 1440 կՎտ/ժ էլեկտրաէներգիայի վճարումները գանձվում են հաստատված սակագնից նվազեցված գնով՝ 50 %-ի չափով (ներառյալ ավելացված արժեքի հարկը): 2) բնական գազ - օրացուցային տարվա ընթացքում գումարային մինչև 360 խ.մ. բնական գազի վճարումները գանձվում են հաստատված սակագնից նվազեցված գնով՝ 50 %-ի չափով (ներառյալ ավելացված արժեքի հարկը),

	3) բնական գազի փոխարեն փոխհատուցում էլեկտրաէներգիայի տեսքով - «էլեկտրաէներգիայի ծախս ունեցող ամիսներին տրամադրվում է 15 խոր. մետր, տարվա ընթացքում աճողական մինչև 180 խոր. մետր բնական գազի քանակության արժեքին համապատասխան գումար: 4) ոռոգման ջուր - ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից օգտագործված ոռոգման ջրի դիմաց տվյալ տարում գանձվող վարձավճարների 50 %-ի չափով: 5) անշարժ գույքի հարկ - վճարման ենթակա հողի և այդ հողերի վրա ունեցած անշարժ գույքի գույքահարկը Կառավարությունը նրանց փոխարեն համապատասխան համայնքի բյուջե է վճարում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով այդ նպատակի համար նախատեսված գումարներից: **2.2 «Հայաստանի Հանրապետության 2022-2027թթ. տարածքային զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ կառավարության քննարկմանը** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Հայաստանի Հանրապետության **2022-2027** թվականների տարածքային զարգացման ռազմավարության ընդունումը հնարավորություն կտա հստակեցնել և վերանայել տարածքային համաչափ զարգացման գերակա ուղղությունները, նպատակները, դրանց հասնելու հիմնական քայլերը, միջոցառումները՝ հաշվի առնելով արդեն իսկ իրականացված ծրագրերը և հետպատերազմյան իրողությունները: Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային ժողովի 2021թ.-ի օգոստոսի 26-ի № ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի, 6.6 բաժնի, ՀՀ 2020-2050թթ. վերափոխման ռազմավարության՝ մասնավորապես «տարածքային խելամիտ զարգացում» մեգանպատակի, ինչպես նաև ՀԸԳՀ կիրարկումն ապահովող ճանապարհային քարտեզի 79-րդ կետով նախատեսված հանձնառություններից: **1.1 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Նախատեսվում է մշակել տարածքային զարգացման նոր ռազմավարություն վերանայելով «Հայաստանի Հանրապետության 2016-2025 թվականների տարածքային զարգացման ռազմավարությունը»՝ վերհանելով իրականացված ծրագրերը, վարչատարածքային բարեփոխումները, ձեռք բերումները և առկա մարտահրավերները և առաջարկել ՀՀ կառավարության միջազգային համագործակցության ծրագրերին համահունչ ուղղություններ և գործիքակազմ: **2 Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման կատարման արդյունքում կապահովվի ՀՀ տարածքային զարգացման ռազմավարության և այլ ռազմավարական փաստաթղթերի տրամաբանական կապը, կհստակեցվի տարածքային զարգացման անհամաչափությունները մեղմելուն ուղղված փոխկապակցված միջոցառումների պլանավորումն ու իրականացումը՝ ուղղված բոլոր մարզերում սմարթ մասնագիտացման մոտեցման ներդրմանը բոլոր մակարդակներում խթանելով հետազոտությունները և նորարարությունները՝ ապահովելով ՀՀ 2020-2050թթ. վերափոխման ռազմավարության «տարածքային խելամիտ զարգացում» մեգանպատակի իրագործումը:
3.	**3.1-3.2 *«Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 1910-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1301-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումների նախագծերը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը*** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Անհրաժեշտությունը պայմանավորված է 2021 թվականի մայիսի 27-ին ընդունված «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-228-Ն ՀՀ օրենքով, որի 8-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված է, որ ՀՀ կառավարությունը պարտավոր է անհրաժեշտ լրացումներ և փոփոխություններ կատարել Կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 1910-Ն որոշման մեջ՝ այն համապատասխանեցնելով սույն օրենքի պահանջներին սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում (օրենքն ուժի մեջ է մտնում

	2022 թվականի հունվարի 1-ից): Միաժամանակ անհրաժեշտություն է առաջացել համապատասխան փոփոխություններ կատարել ՀՀ կառավարության 2007 թվականի նոյեմբերի 8-ի «Սանիտարահամաճարակային իրավիճակի վտանգ առաջանալու դեպքում մահացածների մարմինների դիակիզման, գերեզմանատների վնասազերծման և տեղափոխման ու վրահուղարկավորման կարգերը հաստատելու մասին» 1301-Ն որոշման մեջ: 1. 1 **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Խնդիրը ներկայումս կայանում է նրանում, որ 2021 թվականի մայիսի 27-ին ընդունվել է «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-228-Ն ՀՀ օրենքը, ըստ որի ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգերը, կանոնները և գերեզմանի վկայականի ձևը սահմանելու մասին» թիվ 1910-Ն և ՀՀ կառավարության 2007 թվականի նոյեմբերի 8-ի «Սանիտարահամաճարակային իրավիճակի վտանգ առաջանալու դեպքում մահացածների մարմինների դիակիզման, գերեզմանատների վնասազերծման և տեղափոխման ու վրահուղարկավորման կարգերը հաստատելու մասին» 1301-Ն որոշումները պետք է համապատասխանեցնել հիշյալ օրենքով կատարված փոփոխություններին: **1. 2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Խնդիրը լուծելու համար առաջարկում ենք ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 1910-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1301-Ն որոշումների մեջ կատարել համապատասխան փոփոխություններ դրանք համապատասխանեցնելով 2021 թվականի մայիսի 27-ին ընդունված թիվ ՀՕ-228-Ն ՀՀ օրենքով կատարված փոփոխություններին: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգերը, կանոնները և գերեզմանի վկայականի ձևը սահմանելու մասին» թիվ 1910-Ն և ՀՀ կառավարության 2007 թվականի նոյեմբերի 8-ի «Սանիտարահամաճարակային իրավիճակի վտանգ առաջանալու դեպքում մահացածների մարմինների դիակիզման, գերեզմանատների վնասազերծման և տեղափոխման ու վրահուղարկավորման կարգերը հաստատելու մասին» 1301-Ն որոշումները համապատասխանեցնել 2021 թվականի մայիսի 27-ին ընդունված թիվ ՀՕ-228-Ն «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով կատարված փոփոխություններին:
4.	**4. 1«ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված, համայնքների կողմից ներկայացված և սահմանված չափորոշիչներին բավարարող ծրագրերի իրականացման նպատակով ՀՀ պետական բյուջեից սուբվենցիաների տրամադրման գործընթացի շարունակության ապահովում»** **1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ տարածքային համաչափ զարգացումն ապահովելու նպատակով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին» N 1708-Ն որոշման 2-րդ կետով հաստատված Հայաստանի Հանրապետության պետական տարեկան բյուջեներով նախատեսված սուբվենցիաներից բացի Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի տրամադրման գործընթացի ապահովմամբ: Միջոցառումը բխում է ՀՀ Ազգային ժողովի 26. 08. 2021թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի 6.6 բաժնի 2-րդ պարբերությամբ, ինչպես նաև Հայաստանի վերափոխման 2050 ռազմավարության դրույթներից: **1. 1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** ՀՀ տարածքային համաչափ զարգացումն ապահովելու՝ ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացման նպատակով ՀՀ կառավարությունը 2018 թվականից նախաձեռնել և իրականացրել է համայնքներին սուբվենցիաների տրամադրման գործընթացը, դրանով իսկ անցում է կատարվել

	սուբվենցիաների տրամադրման նոր քաղաքականությանը՝ մրցակցային սկզբունքով սուբվենցիայի լավագույն ծրագրեր ներկայացրած համայնքներին սուբվենցիայի տրամադրման միջոցով: Կարևորելով համայնքների զարգացման գործընթացներում միջոլորտային համագործակցությունը՝ ՀՀ վարչապետի 15. 02. 2018 թվ. թիվ 136-Ա որոշմամբ հաստատվել էր ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով նախատեսված սուբվենցիաներից բացի այլ սուբվենցիաներ ստանալու համար միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու և նրա անհատական կազմն ու աշխատակարգը: «ՀՀ կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների հիման վրա ՀՀ վարչապետի 19. 03. 2019 թվականի թիվ 278-Ա որոշմամբ հաստատվել է Միջգերատեչական հանձնաժողովի նոր կազմը և աշխատակարգը: ՀՀ համայնքների սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրի շրջանակներում 2018-2020 թվականներին ՀՀ համայնքների կողմից մշակվել և քննարկման է ներկայացվել թվով 1483 սուբվենցիոն ծրագիր և քննարկման արդյունքներով և ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծված Միջգերատեսչական հանձնաժողովում կայացած քննարկումների արդյունքներով հավանության է արժանացել 1363-ը: Միջգերատեչական հանձնաժողովի կողմից հավանության արաժանալուց հետո սահմանված կարգով ՀՀ համայնքներին առաջարկվել է սկսել սուբվենցիոն ծրագրերի իրականացման համար մրցութային գործընթացները և մրցույթների արդյունքներով կնքելով ծրագրերի իրականացման պայմանագրերը՝ իրականացնել սուբվենցիոն ծրագրերը: 2018-2020 թվականների ընթացքում ՀՀ մարզերում իրականացվել է թվով 1192 սուբվենցիոն ծրագիր՝ 47,5 մլրդ դրամ ընդհանուր արժեքով, այդ թվում՝ - 25,5 մլրդ դրամ՝ ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորմամբ - 21,5 մլրդ դրամ համայնքների համաֆինանսավորմամբ -500 մլն դրամ մասնավոր ներդրումների ներգրավմամբ: Նշված ծրագրերն ուղղված են ՀՀ համայնքներում ճանապարհների կառուցմանն ու նորոգմանը, փողոցների էներգախնայող լուսավորությանը, ֆոտովոլտային կայանների տեղադրմանը, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցմանն ու նորոգմանը, համայնքների գազամատակարարման համակարգի կառուցմանը, մանկապարտեզների նորոգմանը, վերակառուցմանը և կառուցմանը, բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության տարրերի նորոգմանը, այդ թվում՝ էներգախնայող միջոցառումների կիրառմամբ, հասարակական շենքերի, այդ թվում՝ մշակութային տների, համայնաքային կենտրոնների, առողջապահական, մարզական կենտրոնների նորոգմանն ու կառուցմանը, այգիների, պուրակների կառուցմանն ու բարեկարգմանը, մեքենասարքավորումների, տեխնիկայի և գույքի ձեռքբերմանը: Սակայն ՀՀ համայնքները դեռևս հեռու են ընդհանուր առմամբ զարգացած ենթակառուցվածքներ ունենալուց և անհրաժեշտություն է առաջանում ապահովել վերոհիշյալ ծրագրի շարունակությունը: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 7-ի թիվ 62-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական տարեկան բյուջեներով նախատեսված սուբվենցիաներից բացի Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի տրամադրման կարգի համաձայն, նախատեսվում է մեծ թվով համայնքների ներգրավում սուբվենցիայի տրամադրման գործընթացում, ինչը հնարավորություն կտա զարգացնել համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքները: Ընդ որում ՀՀ վարչապետի 2019 մարտի 2019 թվականի N 278-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի շրջանակներում նախատեսվում է մրցակցային սկզբունքով սուբվենցիայի տրամադրում լավագույն ծրագրեր ներկայացրած համայնքներին: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման կատարման արդյունքում Հանրապետության բոլոր բնակավայրերում համաչափ և կայուն զարգացում ապահովելու, բնակչության բարեկեցությունը բարելավելու, բնակավայրերն ավելի հարմարավետ ապրելու և գործելու կենսամիջավայր դարձնելու, ինչպես նաև գործարարության և ներդրումների համար բարենպաստ միջավայր ստեղծելու ու այցելուների համար որպես գրավիչ զբոսաշրջային ուղղություն ապահովելու համար ՀՀ համայնքներում կիրականացվեն կապիտալ ծախսեր՝ նպատակաուղղված ճանապարհների, այգիների, հրապարակների կառուցմանն ու վերանորոգմանը, էներգախնայող լուսավորության անցկացմանը, հանրային և համայնքային շենքերի վերանորոգմանը, խմելու և ոռոգման ջրագծերի կառուցմանն

	ու վերանորոգմանը, համայնքների գազաֆիկացմանը, բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության տարրերի նորոգմանը և այլն: Միաժամանակ, այս գործընթացում չափազանց կարևորվում է համայնքների դերակատարությունն ու անմիջական մասնակցությունը՝ համայնքների կարիքների գնահատման, առաջնահերթ խնդիրների բացահայտման և դրանց լուծումների ապահովման մասով:
5.	**5.1 «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարեու մասին» օրենքի նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Իրավական ակտի ընդունումը պայմանավորված է 2021 թվականի ապրիլի 1-ի «Աղբահանության համակարգի ռազմավարությունը և ռազմավարության կիրարկումն ապահովող 2021-2023 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N464-Լ որոշման հավելվածով հաստատված ռազմավարության կիրարկումն ապահովող 3. 1 միջոցառմամբ: Միջոցառումը բխում է է ՀՀ-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի և ՀՀ-ԵՄ գործընկերության առաջնայնություններ փաստաթղթի կիրարկումն ապահովող միջոցառումներից, «ՀՀ և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կիրարկման ճանապարհային քարտեզի դրույթներից /105/, ՀՀ Ազգային ժողովի 26. 08. 2021թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի 6.6 բաժնի 3-րդ պարբերության 1-ին նախադասությամբ նախատեսված հանձնառությունից: **1. 1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքով կարգավորվում է Հայաստանի Հանրապետությունում աղբահանության և սանիտարական մաքրման հետ կապված հարաբերությունները, սահմանվում է աղբահանության և սանիտարական մաքրման գործընթացի կազմակերպման սկզբունքները, աղբահանության վճարը, դրա դրույքաչափերը, վճարողների շրջանակը, նրանց իրավունքները և պարտականությունները, վճարման կարգը, պատասխանատվությունը չվճարելու, պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման կարգը աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման բնագավառներում: ՀՀ գործող օրենսդրությամբ չի կարգավորվում աղբի հետ գործածության ամբողջ գործընթացը, այդ թվում՝ աղբի հավաքման, տեսակավորման, օգտահանման, վնասազերծման, վերամշակման և բնապահպանական, սանիտարական և քաղաքաշինական նորմերին համապատասխանող աղբավայրում տեղադրման գործառույթները: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին » ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորված է աղբահանության ոլորտում առկա իրավիճակի կարգավորումներով, մասնավորապես՝ անհրաժեշտություն է առաջանում կանոնակարգել աղբի հետ գործածության գործունեությունը, այդ թվում՝ աղբի հավաքման, տեսակավորման, օգտահանման, վնասազերծման, վերամշակման և բնապահպանական, սանիտարական և քաղաքաշինական նորմերին համապատասխանող աղբավայրում տեղադրման գործառույթները: Հստակեցման կարիք ունեն նաև աղբահանության ոլորտի սահմանումները, այդ թվում՝ արտադրվող աղբի քանակի նվազեցման և շրջանաձև տնտեսության մեխանիզմների կիրարկման տեսանկյունից, ինչպես նաև աղբի տեսակավորված հավաքման և յուրաքանչյուր տեսակի համար գործընթացների կարգավորման մասով: Միաժամանակ հստակեցման կարիք ունեն աղբահանության իրավապայմանագրային հարաբերությունները ոչ բնակելի նշանակության շենք շինություններում արտադրվող աղբի գործածության մասով: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Միջոցառման կատարման արդյունքում օրենքի նախագծի ընդունմամբ ակնկալվում է հանրապետության ողջ տարածքում գոյացող աղբի հավաքման, տեղափոխման և անվտանգ հեռացման կամ օգտահանման ու վերամշակման համակարգի ներդնման համար ստեղծել կայուն իրավական և ինստիտուցիոնալ հենք:

5.2 «Նոր սանիտարական աղբավայրի կառուցում, փակման ենթակա աղբավայրերի փակում և գործող աղբանոցների բարեկարգում»

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացումը պայմանավորված է 2021 թվականի ապրիլի 1-ի «Աղբահանության համակարգի ռազմավարությունը և ռազմավարության կիրարկումն ապահովող 2021-2023 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N464-Լ որոշման հավելվածով հաստատված ռազմավարության կիրարկումն ապահովող 2.1, 2.2, 2.4, 2.5 և 2.6 միջոցառումներով: Միջոցառումը բխում է է ՀՀ-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի և ՀՀ-ԵՄ գործընկերության առաջնայնություններ փաստաթղթի կիրարկումն ապահովող միջոցառումներից, «ՀՀ և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կիրարկման ճանապարհային քարտեզի դրույթներից /105/, ՀՀ Ազգային ժողովի 26.08.2021թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի 6.6 բաժնի 3-րդ պարբերության 3-րդ նախադասությամբ նախատեսված հանձնառառությունից և Հայաստանի վերափոխման 2050 ռազմավարությունից:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Հանրապետության բնակավայրերում տարիների ընթացքում ստեղծվել կամ տարերայնորեն ձևավորվել են բազմաթիվ աղբանոցներ, որոնք զբաղեցնում են զգալի տարածքներ և առաջացնում են լուրջ բնապահպանական և սանիտարական խնդիրներ: Հանրապետությունում առկա աղբի հեռացման վայրերը՝ աղբանոցները, չեն համապատասխանում միջազգային կամ որևէ քաղաքաշինական, բնապահպանական և սանիտարահիգիենիկ չափանիշներին և հանդիսանում են բացառապես աղբի կուտակման վայր: Դրանք հիմնականում չեն համապատասխանում հիգիենիկ և սանիտարական ստանդարտներին և շահագործվում են չհամակարգված: Մասնավորապես, ցանկապատված չեն, ինչի պատճառով տարածք կարող են մուտք գործել անօթևանները և կենդանիները, բացակայում է տեղադրվող աղբի հաշվառման համակարգը, բացակայում են աղբատար մեքենաների լվացման և ախտահանման սարքավորումները, տեղադրված թափոնները չեն ծածկվում հողով, ինչի հետևանքով տեղի է ունենում ինքնաբռնկում, ինչը հանգեցնում է օդի, ջրի և հողի աղտոտմանը, մասնավորապես դիոքսիններով, որոնց բացասական ազդեցությունը մարդկանց առողջության վրա ակնհայտ է: Բացակայում է ստորգետնյա ջրերի և արտանետվող գազերի վերահսկողությունը: Որոշ աղբավայրերում աղբը հրկիզվում է տեղական կոմունալ ծառայությունների կողմից՝ աղբավայրում տեղադրվող աղբի քանակը այդպիսով նվազեցնելու նպատակով:

2017-2019 թվականների ընթացքում ձեռնարկված միջոցառումների արդյունքներով համայնքների կողմից մաքրվել կամ փակվել են 1792-ը: ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ու Հայաստանի Ամերիկյան համալսարանի հետ համագործակցությամբ և ՀՀ մարզերի ու համայնքների մասնակցային գործընթացով գույքագրված և քարտեզագրված աղբանոցների թիվը 2020 թվականի դրությամբ կազմում է 297, որոնք չեն համապատասխանում որևէ քաղաքաշինական, բնապահպանական և սանիտարահիգիենիկ չափանիշներին:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Անհրաժեշտություն է առաջանում ներդնել քաղաքաշինական, բնապահպանական և սանիտարական նվազագույն նորմերին համապատասխան աղբավայրերի համակարգ հանրապետության ողջ տարածքում: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև 2016 թվականի ապրիլի 5-ին ստորագրված միջազգային համաձայնագրի համաձայն՝ իրականացման փուլում գտնվող «Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ծրագրի» շրջանակներում կառուցել և շահագործման հանձնել ԵՄ համապատասխան չափանիշների ստանդարտներին

համապատասխան հանրապետությունում առաջին սանիտարական աղբավայրը, ինչպես նաև միջոցներ ձեռնարկել հանրապետության այլ տարածքներում սանիտարական աղբավայր կառուցելու հնարավորությունների ուղղությամբ: Միաժամանակ առաջարկվում է միջոցներ ձեռնարկել հանրապետության տարածքում փակման ենթակա աղբանոցների փակման ուղղությամբ, մասնավորապես մինչև 2024 թվականի վերջ առաջնահերթ կարգով փակել ՀՀ Կոտայքի և ՀՀ Գեղարքունիքի մարզերի առկա 25 աղբանոցները՝ դրանով իսկ կատարելով միջազգային համաձայնագրով ստանձնած պարտավորությունները: Դրա հետ մեկտեղ միջոցներ ձեռնարկել գործող աղբավայրերի բարեկարգման ուղղությամբ, մասնավորապես 2024 թվականի ընթացքում փակել շուրջ 20 աղբավայր և բարեկարգել շուրջ 10 աղբավայր:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Միջոցառման կատարման արդյունքում ակնկալվում է նվազեցնել մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա աղբի հեռացման վայրերի բացասական ու վնասակար ազդեցությունները, այդ թվում՝ դեպի մթնոլորտ արտանետումների և կեղտաջրերի ստորերկրյա ջրերի ներթափանցման նվազեցում և (կամ) բացառում, ներդնել բնապահպանական և սանիտարահիգիենիկ նորմերին բավարարող աղբավայրերի համակարգ, ինչպես նաև փակելով աղբավայրերը՝ կազատվեն տարածքներ, կբարեկարգվեն և կվերադարձվեն հանրությանը:

5.3 «Գոյացող աղբի պատշաճ կերպով հավաքման, տեղափոխման և հեռացման կամ վերամշակման գործընթացների ապահովում»

1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացումը պայմանավորված է 2021 թվականի ապրիլի 1-ի «Աղբահանության համակարգի ռազմավարությունը և ռազմավարության կիրարկումն ապահովող 2021-2023 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N464-Լ որոշման հավելվածով հաստատված ռազմավարության կիրարկումն ապահովող 1. 2, 1. 3, 1. 5, 1. 6, 1. 7, 1. 9 միջոցառումներով: Միջոցառումը բխում է ՀՀ-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի և ՀՀ-ԵՄ գործընկերության առաջնայնություններ փաստաթղթի կիրարկումն ապահովող միջոցառումներից, «ՀՀ և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կիրարկման ճանապարհային քարտեզի դրույթներից /105/, ՀՀ Ազգային ժողովի 26. 08. 2021թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի 6.6 բաժնի 3-րդ պարբերության 2-րդ նախադասությամբ նախատեսված հանձնառառությունից և Հայաստանի վերափոխման 2050 ռազմավարությունից:

1. 1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Հանրապետության ողջ տարածքում աղբահանության պատշաճ համակարգի բացակայությունը նպաստել է չկարգավորված աղբաթափության սովորության ձևավորմանը, այդ թվում՝ աղբահանության ծառայությունների մատուցման ցածր որակին: Գործող նորմերին համապատասխան աղբահանության սխեմաների բացակայությունը հնարավորություն չի տալիս սահմանված չափի և քանակի աղբամանների տեղադրման և աղբահավաքության երթուղիների ժամանակացույցի մշակման համար: Շինարարական, մեծ գաբարիտով աղբի ինչպես նաև օգտահանման ենթակա թափոնների հավաքման, պահման, տեղափոխման ընթացակարգերը բացակայում են, ինչի հետևանքով կամ չեն հավաքվում կամ խառը անկանոն տեղափոխվում է աղբանոց և հնարավորություն չի լինում օգտահանման ենթակա թափոնների առանձնացումը: Անհրաժեշտություն է առաջանում վերոհիշյալ գործընթացների կարգավորման: Մանսավորապես՝ աղբի հավաքման հստակ սխեմաների կիրառման, տարբեր տեսակի թափոնների հետ գործածության ընթացակարգերի մշակման ու կիրառման:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Միջոցառման կատարման արդյունքում աղբի պատշաճ հեռացմամբ կնվազեցվի մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ու վնասակար ազդեցությունները, կներդրվեն աղբի տարբեր տեսակների հետ գործածության ընթացակարգերը՝ ինչն իր հերթին կխթանի դրանց օգտահանման գործողությունները:

	5.4 «ՀՀ կառավարության 01.04.2021թ N464-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է Պետահիրավական նախարարական կոմիտեի 11.12.2023թ. նիստի քննարկումների և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում 08.12.2023թ. տեղի ունեցած Վարչապետի արտագնա խորհրդակցության ընթացքում տրված հանձնարարականների կատարմամբ, ինչպես նաև ՀՀ-ԵՄ գործընկերության առաջնայնություններ փաստաթղթի կիրարկումն ապահովող միջոցառումներից, «ՀՀ և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կիրարկման ճանապարհային քարտեզի դրույթներից /105/, ՀՀ Ազգային ժողովի 26.08.2021թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի 6.6 բաժնի 3-րդ պարբերության 1-ին նախադասությամբ նախատեսված հանձնառությունից: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** «ՀՀ կառավարության 01.04.2021թ N464-Լ որոշմամբ հաստատված «Աղբահանության համակարգի ռազմավարությունը և ռազմավարության կիրարկումն ապահովող 2021-2023 թվականների միջոցառումների ծրագրի» շրջանկաներում 2021-2023 թվականներին նախատեսվել և իրականացվել են կարճաժամկետ միջոցառումներ՝ ուղղված ոլորտի օրենսդրական և նորմատիվատեխնիկական դաշտի բարելավմանը»: Այժմ, անհրաժեշտություն է առաջացել մշակել և իրականացնել աղբահանության ռազմավարության դրույթներով նախատեսված նորմատիվատեխնիկական փաստաթղթերի կիրարկմանն ուղղված միջոցառումներ, ինչպես նաև միջոցներ ձեռնարկել ռազմավարության դրույթներից բխող, հանրապետության բնակավայրերում ինտեգրված և կայուն աղբահանության համակարգ ներդնելու ուղղությամբ: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** «ՀՀ կառավարության 01.04.2021թ N464-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորված է ռազմավարության դրույնթերից բխող միջոցառումների կատարմամբ, ուղղված գոյացող աղբի ծավալների կրճատմանը, աղբահանության ծառայությունների որակի բարձրացմանը, բնագավառում կայում կառավարման համակարգի ձևավորմանը, ինչպես նաև աղբի տեսսակավորման և վերամշակման գործընթացների իրականացմանը: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման կատարման արդյունքում որոշման նախագծի ընդունմամբ ակնկալվում է հանրապետության բնակավայրերում ինտեգրված և կայուն աղբահանության համակարգի ներդրման ապահովում:
6	**6.1 Սեյսմիկ տեսանկյունից առավել խոցելի և առաջնահերթ կարգով բարելավման անհրաժեշտություն ունեցող դպրոցական շենքերի ուժեղացում/ նորերի կառուցում** **1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացումը պայմանավորված է ՀՀ կառավարության 23. 07. 2015թ. թիվ 797-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման 2015-2030 թվականների ծրագրի դրույթների իրականացմամբ, իմնչպես նաև բխում է Աղետների ռիսկի նվազեցման ազգային ռազմավարությունից, ՀՀ Ազգային ժողովի 26. 08. 2021թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի 6.6 բաժնի 4-րդ պարբերությամբ նախատեսված հանձնառառությունից և Հայաստանի վերափոխման 2050 ռազմավարության դրույթներից:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Հայաստանի Հանրապետության տարածքում գոյություն ունեցող հանրակրթական դպրոցների գերակշռող մեծամասնությունը նախագծվել և կառուցվել են մինչև 1988 թվականը, և նրանց նախագծման հիմքում ընդունված սեյսմիկ ուժերը անհամեմատ ցածր են սպասվելիք ուժերից:

Հարկ է նշել, որ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով Հայաստանի Հանրապետության տարածքում սեյսմիկ պաշտպանության տեսակետից հատուկ և կարևոր նշանակության օբյեկտների սեյսմիկ խոցելիության նվազեցմանը՝ ՀՀ կառավարության կողմից 2015 թվականին հաստատվել է հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման 2015-2030 թվականների ծրագիրը, ինչպես նաև կատարված ուսումնասիրությունների արդյունքներով հաստատվել են ՀՀ սեյսմակայունության տեսակետից առավել վտանգավոր 436 դպրոցների ցանկը:

Կարևորելով ծրագրի իրականացումը, բազմաթիվ քննարկումների և ուսումնասիրությունների արդյունքներով Ասիական զարգացման բանկի հետ 2015 թվականին կնքվել է վարկային համաձայնագիր, որի շրջանակներում իրականացվում է «Սեյսմիկ անվատանգության բարելավման ծրագիրը»: Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 107 մլն ԱՄՆ դոլար, որից բանկի վարկային միջոցները կազմում են 88,5 մլն դոլար: Ծրագիրը մեկնարկել է 2016 թվականին:

Ծրագրի արդյունավետ իրականացման նպատակով Վարչապետի 30.06.2016թ թիվ 582-Ա որոշմամբ և խմբագրված այժմ 18.06.2020թ. թիվ 726-Ա որոշմամբ ձևավորվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ:

Ի տարբերություն այլ վարկային ծրագրերի տվյալ ծրագիրը հանդիսանում է արդյունքահեն, այսինքն ՀՀ-ին տրամադրված գումարները հաստատված է համարվում ոչ թե իրականացված ծախսերի, այլ ծրագրով նախատեսված արդյունքային ցուցանիշների ապահովման դեպքում: Բանկը նմանատիպ ծրագիր տարածաշրջանում իրականացնում է առաջին անգամ:

Ծրագրի իրականացման համար առավելագույն սեյսմիկ խոցելիություն ունեցող 46 դպրոցների ցանկը հաստատվել է Կառավարության 2017 թվականի հուլիսի 13-ի թիվ 805-Ն և 2018 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ N 1438-Ն որոշումներով:

Ծրագրի շրջանակներում արդեն իսկ ավարտվել են թվով 7 դպրոցի շինարարական աշխատանքները և հանձնվել են շահագործման: Կառուցված դպրոցները բավարարում են ժամանակակից քաղաքաշինական և կրթական բոլոր չափանիշներին, մասնավորապես՝ սեյսմակայուն են առնվազն 9 բալ երկրաշարժի դեպքում, էներգախնայող են և այլընտրանքային էներգիայի օգտագործման հնարավորություններ ունեն, մատչելի են հաշմանդամություն ունեցող երեխաների համար, մասնավորապես ապահովված են վերելակով:

Դրա հետ մեկտեղ հարկ է նշել, որ նորակառույց 7 դպրոցները անհրաժեշտ դպրոցական նոր գույքով ապահովելու նպատակով ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով ՀՀ պետական բյուջեից հատկացվել է շուրջ 217,459 մլն դրամ:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Նախատեսվում է ապահովել «Սեյսմիկ անվատանգության բարելավման ծրագրի» շարունակությունը և հնարավորություն ընձեռել հանրապետության տարածքում սեյսմիկ տեսանկյունից առավել խոցելի 16 դպրոցական շենքերի ուժեղացման կամ նորերի կառուցման:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Միջոցառման կատարման արդյունքում հանրապետության տարածքում կկառուցվի շուրջ 18 դպրոցական շենք, որոնք կհամապատասխանեն երկրաշարժերի ուժգնության սանդղակի 9 (IX) բալ ուժգնությամբ երկրաշարժի համար միջազգայնորեն ընդունված սեյսմիկ անվտանգության նորմերին: Ուժեղացված կամ վերանորոգված դպրոցների շենքերը նաև կհամապատասխանեն էներգիայի արդյունավետության մասով կառավարության սահմանած պահանջներին, կունենան հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժի հնարավորություն կամ ներառականության պահանջներին համապատասխանություն: Միաժամանակ նոր կառուցված կամ ուժեղացված դպրոցների առկայությունը կօժանդակի Աղետների ռիսկի նվազեցման ազգային ծրագրի իրականացմանը՝ բարելավելով դպրոցների սեյսմիկ անվտանգությունը, որպեսզի նվազեցվեն դպրոցներում հնարավոր զոհերը և վնասները երկրաշարժերի ժամանակ, և ավելի լավ հնարավորություն ստեղծվի դպրոցների շենքերը երկրաշարժից հետո որպես ընդհանուր հանրության համար կացարաններ և արտակարգ իրավիճակների արձագանքման կետեր օգտագործելու համար:

7.	**Միավորված բազմաբնակավայր համայնքներում տեղեկատվական համակարգերի ներդրում, քաղաքացիներին տրամադրվող վարչական ծառայությունների որակի բարելավում և հասանելիության ընդլայնում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Հանրային ծառայությունների ոլորտում բարեփոխումների իրականացումը ՀՀ կառավարության գերակայություններից է և հանդիսանում է Հանրային կառավարման բարեփոխումների մինչև 2030թ. ռազմավարության չորս հիմնական ուղղություններից մեկը: Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 2021թ.-ի օգոստոսի 26-ի № ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.6 բաժնի 1-ին պարբերության 3-րդ նախադասությամբ նախատեսված հանձնառություններից: **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները (նշելով նաև ելակետային տվյալներ, եթե դրանք առկա են)** Համայնքների միավորման պարագայում, ի թիվս այլ խնդիրների, անհրաժեշտություն է առաջանում քայլեր ձեռնարկել ՏԻՄ-երի կողմից տրամադրվող վարչական ծառայությունների որակի բարելավման և դրանք՝ միավորված համայնքներում բնակավայրերում հավասարապես հասանելի դարձնելու ուղղությամբ: **1.1. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները (միջոցառումը համակատարող ունենալու դեպքում նշելով նաև համակատարողի կողմից համապատասխան միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները)** Միավորված համայնքներում ՀԿՏՀ-ի ներդրումը, ՔՍԳ-ների հիմնումը և պետական որոշ ծառայությունների մատուցումը թույլ կտա բարելավել ՏԻՄ-երի կողմից մատուցվող վարչական ծառայությունների որակը և ընդլայնել դրանց հասանելիությունը: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** ՀԿՏՀ-ի կիրառությունը հնարավորություն կտա միավորված համայնքին մեկ միասնական տեղեկատվական տարածության մեջ ներառել համայնքի կենտրոնի և բնակավայրերի վարչական ղեկավարների գրասենյակները՝ համայնքային ծառայությունները բնակիչների համար հավասարապես դարձնելով համայնքի բոլոր բնակավայրերում: ՔՍԳ-ներում, «մեկ պատուհան, մեկ կանգառ» սկզբունքի կիրառման շնորհիվ, կբարելավվի քաղաքացիներին մատուցվող ծառայությունների որակը, կբարձրանա համայնքապետարանի աշխատանքի արդյունավետությունն ու թափանցիկությունը, կհեշտանան վարչական գործընթացները: Համայնքապետարանի կողմից պետական որոշ ծառայությունների տրամադրման շնորհիվ դրանք անմիջականորեն կմոտեցվեն տվյալ համայնքի բնակիչներին, կկրճատվեն ավելորդ քաշքշուկները, ծառայությունների ստացման համար ծախսվող ֆինանսական միջոցները և ժամանակը: Միջոցառման իրականացման արդյունքում՝ ձևավորվելիք միավորված բազմաբնակավայր նոր համայնքներից 25-ում կներդրվի համայնքային կառավարման տեղեկատվական համակարգ (ՀԿՏՀ), իսկ նման համայնքներից 15-ում կարդիականացվի արդեն գործող ՀԿՏՀ-ն: Կարդիականացվի մոտ 420 բնակավայրերի վարչական գրասենյակներում առկա կազմակերպչական տեխնիկայի պարկը: Քաղաքացիների սպասարկման գրասենյակ (ՔՍԳ) կհիմնվի 10 համայնքում, կարդիականացվեն 4 համայնքներում արդեն գործող ՔՍԳ-ները:
8	**Լիազորությունների ապակենտրոնացում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացումը հնարավորություն կընձեռի ծավալելու ապակենտրոնացման քաղաքականության խորացում և դրա արդյունքում տեղական ինքնակառավարման մարմիններին նոր լիազորությունների փոխանցում: Դա բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 2021թ.-ի օգոստոսի 26-ի № ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.6 բաժնի 1-ին պարբերության 5-րդ նախադասությամբ նախատեսված հանձնառություններից: **1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Լիազորությունների ապակենտրոնացման համար լուրջ խոչընդոտ էր հանդիսանում համայնքների մեծ թիվը և դրանց կարողությունների ցածր մակարդակը: Համայնքների միավորման և դրանց կարողությունների

	ամրապնդմանը միտված վարչատարածքային վերջին բարեփոխումներն արդեն ստեղծում են բավարար հիմքեր՝ լիազորությունների ապակենտրոնացում իրականացնելու համար: **1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Հայաստանի Հանրապետությունում 2016 թվականին տեղական ինքնակառավարման ոլորտում իրականացված օրենսդրական փոփոխությունների արդյունքում համայնքների միավորումը հնարավորություն է ընձեռել խորացնելու լիազորությունների ապակենտրոնացման քաղաքականությունը՝ նոր կազմավորված բազմաբնակավայր համայնքներում տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահելով ավելի մեծ ծավալի լիազորություններ՝ մեծացնելով դրանց դերը հանրային կառավարման համակարգում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Օրենսդրորեն տեղական ինքնակառավարման մարմիններին կփոխանցվեն նոր լիազորություններ, ինչի արդյունքում կբարձրանան տեղական ինքնակառավարման արդյունավետությունը և բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների որակն ու մատչելիությունը:
9	**Միջհամայնքային համագործակցության տարբեր ձևերի ներդրում** **1. Միջոցառման անհրաժեշտությունը և նպատակը** «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 9-րդ գլխում նկարագրվում է միջհամայնքային համագործակցության ձևերից մեկը՝ միջհամայնքային միավորումները: Դա բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 2021թ.-ի օգոստոսի 26-ի № ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.6 բաժնի 1-ին պարբերության 6-րդ նախադասությամբ նախատեսված հանձնառություններից: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Սակայն, առկա են միջհամայնքային համագործակցության այլ ձևեր ևս՝ ասոցիացիաներ, կոմիտեներ, աշխատանքային միություններ, հանրային-իրավական համաձայնություն, նպատակային միություններ, համատեղ վարչական մարմիններ և այլն: **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Առաջարկվում է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 9-րդ գլուխը վերանվանել «Միջհամայնքային համագործակցություն» և ըստ այդմ այդ գլխում նկարագրել միջազգային պրակտիկայում առկա և միջհամայնքային համագործակցության Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և կառավարման համակարգին համապատասխանող ձևերը: **2. Ակնկալվող արդյունքը** Արդյունքում՝ համայնքների համար օրենսդրորեն հնարավորություն կընձեռնվի ընտրելու իրենց առջև դրված նպատակներին համապատասխանող միջհամայնքային համագործակցության ձևեր:
10	**Հանքարդյունաբերության ոլորտում միասնական և համապարփակ քաղաքականության վարում** **10.1 Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության մշակում** **1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը.** Հանքարդյունաբերության ոլորտը հանդիսանալով Հայաստանի Հանրապետության արդյունաբերության կարևոր ոլորտներից մեկը դեռևս չունի հստակ քաղաքականություն և ռազմավարություն, որը թույլ կտա ունենալ տեսլական և իրականացնել կոնկրետ գործողություններ առկա խնդիրների լուծման և ոլորտի կայուն զարգացումն ապահովելու համար: Դա բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 2021թ.-ի օգոստոսի 26-ի № ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի 2.8–րդ բաժնի 1-ին պարբերության 1-ին կետով նախատեսված հանձնառություններից և 2020-2050թթ. Հայաստանի վերափոխման ռազմավարության 3-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ, 13-րդ և 14-րդ մեգանպատակներից: **1.1Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.** ՀՀ կառավարության 2017թ. օգոստոսի 24-ի N36-21 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման հայեցակարգի պահանջների կատարման ապահովում **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.** Մշակվելիք ռազմավարական փաստաթղթում կտրվեն ոլորտի կայուն զարգացման համար խոչընդոտ հանդիսացող՝ բացահայտված խնդիրների լուծման ուղղությունները և հանքարդյունաբերության ոլորտում բարեփոխումներ ապահովելու համար իրականացվելիք միջոցառումները: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը .**

	Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության մեջ առկա բացթողումների հայտնաբերում, ազգային և տեղական մակարդակներում ֆիսկալ և ոչ ֆիսկալ օգուտները ավելացնելու և բաշխելու համար ինստիտուցիոնալ շրջանակի ստեղծում, բնապահպանական և սոցիալական խնդիրների վերհանում և օգուտ-ծախսերի գնահատում: **10.2 Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարությանը համահունչ ոլորտը կարգավորող օրենքների, ինչպես նաև դրանցից բխող իրավական այլ ակտերի ընդունում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը .** Անհրաժեշտություն կա վերանայելու և ամբողջականացնելու ոլորտին առնչվող գործառույթներ ունեցող պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների շրջանակները, ստեղծել օրենսդրական հիմքեր համաձայնեցված և փոխլրացնող գործառույթների համար, ապահովել կարողությունների զարգացում, որը վերաբերում է ինչպես տեխնիկական, այնպես էլ մարդկային կարողություններին: Նշված խնդիրների լուծման նպատակով Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարությանը համահունչ կիրականացվեն օրենսդրական բարեփոխումներ: Դա բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 2021թ.-ի օգոստոսի 26-ի № ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի 2.8–րդ բաժնի 1-ին պարբերության 2-րդ կետով նախատեսված հանձնառություններից և 2020-2050թթ. Հայաստանի վերափոխման ռազմավարության 3-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ և 13-րդ մեգանպատակներից: **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության պահանջների կատարման ապահովում: **1.2Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարությանը համահունչ օրենսդրական փոփոխությունների իրականացում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Հանքարդյունաբերության ոլորտի կայուն զարգացման համար բարենպաստ միջավայրի ձևավորման ապահովում:
11.	**ԱՃԹՆ/EITI-ի (Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն) շրջանակներում՝ հանքարդյունաբերության ոլորտում իրականացվող միջոցառումների վերաբերյալ տարեկան ազգային զեկույցի կազմում և հրապարակում (շարունակական)** **11.1 ՀՀ-ի կողմից ԱՃԹՆ/EITI-ի (Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն) շրջանակներում՝ հանքարդյունաբերության ոլորտում իրականացվող միջոցառումների վերաբերյալ տարեկան ազգային զեկույցի նախագծի կազմում, ներկայացում ՀՀ կառավարություն և հրապարակում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը.** Հայաստանի Հանրապետությունը 2016 թվականից հանդիսանալով ԱՃԹՆ-ն թեկնածու անդամ, պարտավորություն է ստանձնել կատարել ԱՃԹՆ–ի 2016թ. Ստանդարտի պահանջները, որի 4.8 կետի պահանջի համաձայն ԱՃԹՆ իրականացնող երկրները տարեկան կտրվածքով պետք է հրապարակեն ազգայն զեկույց՝ հասանելի դարձնելով հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ համապարփակ տեղեկատվությունը: Դա բխում է Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ-ին անդամակցության միջազգային պարտավորությունից և 2020-2050թթ. Հայաստանի վերափոխման ռազմավարության 3-րդ մեգանպատակից: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.** ԱՃԹՆ–ի 2016թ. Ստանդարտի պահանջների կատարում, որը հնարավորություն կտա ստանալու համապատասխանող երկրի կարգավիճակ: **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները** ԱՃԹՆ–ի 2016թ. Ստանդարտի պահանջների կատարման ապահովում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը .** Առավել թափանցիկ, հաշվետվողական պետական և գործարար համակարգերի առկայություն, ինչը խթան է հանդիսանում կառավարության, տնտեսության մասնավոր հատվածի և քաղաքացիական հասարակության միջև երկխոսության կայացմանը:

12	**Ընդերքաբանական փորձաքննության ներկայացվող նյութերի հետ կապված գործընթացին առնչվող իրավահարաբերությունների կարգավորում** **12.1 «ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում և ներկայացում Վարչապետի աշխատակազմ** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը .** Հայաստանի Հանրապետության ընդերքը պետության բացառիկ սեփականությունն է և կարող է տրվել օգտագործման իրավունքով: Սակայն պետությունն առայժմ չունի այդ սեփականության ռացիոնալ օգտագործման համար հանքավայրերի ուսումնասիրությանը և դրանց երկրաբանատնտեսագիտական գնահատմանը ներկայացվող հաստատված նվազագույն պահանջներ: Հանքավայրերի ուսումնասիրությունը և դրանց երկրաբանատնտեսագիտական գնահատումը ներկայումս իրականացվում է նախկին ԽՍՀՄ փորձի կիրառմամբ: Դրանց բացակայությունը բարդեցնում է տվյալ բնագավառում պետությանն ամրագրված խնդիրների իրականացումը և տեղիք է տալիս տարբեր տեսակի շահարկումների: Անհրաժեշտություն կա վերանայելու և ամբողջականացնելու ընդերքաբանական փորձաքննության հետ կապված իրավահարաբերությունները, մասնավորապես՝ սահմանելու օգտակար հանածոների հանքավայրերի կոնդիցիաների պարամետրերի երկրաբանատնտեսագիտական հիմնավորման մեթոդական ցուցումները, ինչպես նաև օգտակար հանածոների պաշարների դասակարգման կիրառման հրահանգները: Դա բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 2021թ.-ի օգոստոսի 26-ի № ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի 2.8–րդ բաժնի 1-ին պարբերության 15-րդ կետով նախատեսված հանձնառություններից և 2020-2050թթ. Հայաստանի վերափոխման ռազմավարության 3-րդ մեգանպատակից: **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս չկա իրավական հենք պինդ օգտակար հանածոների հանքավայրերի կոնդիցիաների պարամետրերի երկրաբանատնտեսագիտական հիմնավորման մեթոդական ցուցումները սահմանելու համար, ինչպես նաև անհրաժեշտություն է առաջացել խմբագրելու ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի 25-րդ կետը: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Մշակել և Վարչապետի աշխատակազմ ներկայացնել «ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Օգտակար հանածոների հանքավայրերի կոնդիցիաների պարամետրերի երկրաբանատնտեսագիտական հիմնավորման մեթոդական ցուցումների, ինչպես նաև օգտակար հանածոների պաշարների դասակարգման կիրառման հրահանգների սահմանման իրավական հենքի ստեղծում: **12.2 «Օգտակար հանածոների հանքավայրերի կոնդիցիաների պարամետրերի երկրաբանատնտեսագիտական հիմնավորման մեթոդական ցուցումները սահմանելու մասին» ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հրամանի հաստատում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի մայիսի 3-ի թիվ 04-Նհրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված Հավելված 2-ով սահմանվել են օգտակար հանածոների հանքավայրերի կոնդիցիաների պարամետրերի երկրաբանատնտեսագիտական հիմնավորման նյութերի բովանդակությանը ներկայացվող պահանջները, սակայն ներկայումս չկան սահմանված օգտակար հանածոների հանքավայրերի կոնդիցիաների պարամետրերի երկրաբանատնտեսագիտական հիմնավորման մեթոդական ցուցումները: Դա բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 2021թ.-ի օգոստոսի 26-ի № ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի 2.8–րդ բաժնի 1-ին պարբերության 15-րդ կետով նախատեսված հանձնառություններից և 2020-2050թթ. Հայաստանի վերափոխման ռազմավարության 3-րդ մեգանպատակից: **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.**

Ներկայումս չկան սահմանված օգտակար հանածոների հանքավայրերի կոնդիցիաների պարամետրերի երկրաբանատնտեսագիտական հիմնավորման մեթոդական ցուցումները, ինչը խոչընդոտ է հանդիսանում ընդերքաբանական փորձաքննական գործընթացի համակարգված կազմակերպման համար:

1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Օգտակար հանածոների հանքավայրերի կոնդիցիաների պարամետրերի երկրաբանատնտեսագիտական հիմնավորման մեթոդական ցուցումների առկայություն:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Ընդերքաբանական փորձաքննության ներկայացվող նյութերի հետ կապված գործընթացին առնչվող իրավահարաբերությունների կարգավորում:

12.3 «Օգտակար հանածոների պաշարների դասակարգման կիրառման հրահանգները սահմանելու մասին» ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հրամանի հաստատում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը.

Հայաստանի Հանրապետության ընդերքը պետության բացառիկ սեփականությունն է և կարող է տրվել օգտագործման իրավունքով: Սակայն պետությունն առայժմ չունի այդ սեփականության ռացիոնալ օգտագործումն ապահովող՝ տարբեր տեսակի օգտակար հանածոների պաշարների դասակարգման կիրառման հրահանգներ, ինչը խոչընդոտ է հանդիսանում ընդերքաբանական փորձաքննական գործընթացի համակարգված կազմակերպմանը և տեղիք է տալիս տարբեր տեսակի շահարկումների և մեկնաբանությունների: Դա բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 2021թ.-ի օգոստոսի 26-ի № ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի 2.8–րդ բաժնի 1-ին պարբերության 3-րդ և 15-րդ կետերով նախատեսված հանձնառություններից և 2020-2050թթ. Հայաստանի վերափոխման ռազմավարության 3-րդ մեգանպատակից:

1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.

Ներկայումս չկան սահմանված տարբեր տեսակի օգտակար հանածոների պաշարների դասակարգման կիրառման հրահանգներ, ինչը խոչընդոտ է հանդիսանում ընդերքաբանական փորձաքննական գործընթացի համակարգված կազմակերպմանը և տեղիք է տալիս տարբեր տեսակի շահարկումների և մեկնաբանությունների:

1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

«Օգտակար հանածոների պաշարների դասակարգման կիրառման հրահանգները սահմանելու մասին» ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հրամանի հաստատում:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը.

Ընդերքաբանական փորձաքննության ներկայացվող նյութերի հետ կապված գործընթացին առնչվող իրավահարաբերությունների կարգավորում:

12.4 Մետաղական օգտակար հանածոների արդյունահանման նախագծում ամրագրված՝ հանքավայրի պաշարների գնահատման ժամանակ հիմնավորված հանքաքարի արդյունահանման և վերամշակման տեխնիկա–տեխնոլոգիական ցուցանիշների ամրագրում և սահմանված ցուցանիշից շեղման դեպքում իրավական ակտերով համապատասխան միջոցառումների կիրառման մեխանիզմների ներդրման նպատակով օրենսդրական փոփոխությունների առաջարկության ներկայացում Վարչապետի աշխատակազմ

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը.

Ներկայումս մետաղական օգտակար հանածոների արդյունահանման նախագծում ամրագրված՝ հանքավայրի պաշարների գնահատման ժամանակ հիմնավորված հանքաքարի արդյունահանման և վերամշակման տեխնիկա–տեխնոլոգիական ցուցանիշները հիմնավորվում են ընդերքօգտագործողի հայեցողությամբ, իսկ հիմնավորված ցուցանիշները թեև ամրագրվում են օգտակար հանածոների արդյունահանման նախագծում, սակայն դրանց արժեքներից որևէ տատանումը համարվում է նախագծի խախտում՝ անկախ շեղման չափից: Ընդերքօգտագործման ոլորտում օբյեկտիվորեն անհնար է սահմանել որևէ ցուցանիշի հաստատուն մեծություն: Անհրաժեշտություն է առաջացել սահմանել նշված շեղման թույլատրելի չափ, որը չի համարվի նախագծային դրույթների խախտում, իսկ շեղման թույլատրելի չափը գերազանցելու դեպքում իրավական ակտերով կսահմանվեն համապատասխան միջոցառումներ: Դա բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 2021թ.-ի օգոստոսի 26-ի № ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021-2026թթ

	. ծրագրի 2.8–րդ բաժնի 1-ին պարբերության 3-րդ և 15-րդ կետերով նախատեսված հանձնառություններից և 2020-2050թթ. Հայաստանի վերափոխման ռազմավարության 3-րդ մեգանպատակից: **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.** Ներկայումս նախագծում ամրագրված՝ հանքավայրի պաշարների գնահատման ժամանակ հիմնավորված հանքաքարի արդյունահանման և վերամշակման տեխնիկա–տեխնոլոգիական ցուցանիշների շեղման թույլատրելի չափ սահմանված չէ, ուստի իրավական ակտերով սահմանված չեն նաև շեղման թույլատրելի չափը գերազանցելու դեպքում համապատասխան միջոցառումներ**:** **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.** Սահմանել նախագծում ամրագրված՝ հանքավայրի պաշարների գնահատման ժամանակ հիմնավորված հանքաքարի արդյունահանման և վերամշակման տեխնիկա–տեխնոլոգիական ցուցանիշների շեղման թույլատրելի չափ և շեղման թույլատրելի չափը գերազանցելու դեպքում համապատասխան միջոցառումներ: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը.** Ընդերքաբանական փորձաքննության ներկայացվող նյութերի հետ կապված գործընթացին առնչվող իրավահարաբերությունների կարգավորում:
13	**Ստորերկրյա հանքային ջրերի հորատանցքերի գույքագրման և բազային տվյալների թարմացմանն ուղղված միջոցառումների իրականացման ապահովում** **13.1 Ստորերկրյա հանքային ջրերի հանքավայրերի ջրակետերի (հորատանցք, աղբյուր) գույքագրում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը.** Ստացված արդյունքները հիմք կհանդիսանան լիազոր մարմնի կողմից հանքային ջրերի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման գործընթացը ճիշտ ձևով և արդյունավետ կազմակերպելու համար, ինչպես նաև հնարավորություն կնձեռնեն մշակելու համապատասխան միջոցառումներ ստորերկրյա հանքային ջրերը սպառումից և աղտոտումից զերծ պահելու և աջակցելու ընդերքի պահպանությանը: Դա բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 2021թ.-ի օգոստոսի 26-ի № ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի 2.8–րդ բաժնի 1-ին պարբերության 3-րդ կետով նախատեսված հանձնառություններից և 2020-2050թթ. Հայաստանի վերափոխման ռազմավարության 3-րդ և 8-րդ մեգանպատակներից: **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.** Ստորերկրյա հանքային ջրերի հանքավայրերի հորատանցքերի մեծ մասը հորատվել է 25 և ավելի տարիներ առաջ: Դրանց ամրակապող խողովակները, ժամանակի ընթացքում ենթարկվելով կոռոզիայի (ածխաթթու գազի ազդեցությանից), քայքայվում են, դառնում ծակոտկեն, կորցնում իրենց նշանակությունը, որի հետևանքով առաջանում են տարբեր ջրատար հորիզոնների ջրերի (քաղցրահամ և հանքային) միախառնարաններ՝ հանգեցնելով ստորերկրյա հանքային ջրերի վիճակի և որակի վատթարացման, որոնք կարող են վնաս պատճառել բնակչության առողջությանը և առաջ բերել անբարենպաստ այլ երևույթներ: Ջրօգտագործողների որոշ մասը չի կատարում ստորերկրյա հանքային ջրերի հանքավայրերի և ջրատար հորիզոնների պահպանության գծով խիստ հսկողության սանիտարական պահպանության գոտու ձևավորում, հիդրոերկրաբանական ռեժիմային դիտարկումներ, լաբորատոր փորձարկումներ, ջրակարգավորիչ սարքավորումների տեխնիկական սպասարկում) աշխատանքներ և ծախսեր, որը կապահովեր ջրերի պահպանումը աղտոտումից, աղբակալումից, ինչպես նաև ջրերի վիճակի և ռեժիմի բարելավումը: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.** Վերոնշյալ խնդիրները կարգավորելու, պետական վերահսկողությունը պատշաճ մակարդակով իրականացնելու, ստորերկրյա հանքային ջրերն օգտագործման տրամադրելու ժամանակ առաջացած բացերը և դժվարությունները վերացնելու, օգտագործման տրամադրման գործընթացի ելակետային ֆոնի ապահովման բնավճարների կանոնավոր գանձումը ապահովելու, ինչպես նաև հանքային ջրերի ընթացիկ և հեռանկարային ծրագրավորումն ապահովելու և համալիր օգտագործման և պահպանման սխեմաները մշակելու համար անհրաժեշտ է հանքային ջրերի հանքավայրերում կատարել տարբեր ժամանակներում և տարբեր կազմակերպությունների կողմից հորատված հորատանցքերի գույքագրում և տեխնիկական վիճակի ուսումնասիրում (այն չի կատարվել ընդհանրապես):

	2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը. Ստորերկրյա հանքային ջրերի սպառման ու աղտոտման կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացման ապահովում: Հանքային ջրերի հորատանցքերի, աղբյուրների վիճակի, ջրերի ծախսի, սանիտարական վիճակի, սանիտարական պահպանության խիստ ռեժիմի գոտու առկայության, ջրերի որակի, օգտագործման պիտանելիության վերաբերյալ հավաստի տվյալների առկայություն:
14	**Երկրաբանական տեղեկատվության արժանահավատության ապահովում** **14.1 «Օգտակար հանածոների պաշարների շարժի վերաբերյալ տարեկան հաշվետվությունների ձևերի, լրացման, բացատրագրերի կազմման և ներկայացման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ներկայացում Վարչապետի աշխատակազմ** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը.** Անհրաժեշտություն է առաջացել վերանայել Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 25-ի N 1348-Ն որոշմամբ հաստատված օգտակար հանածոների պաշարների շարժի վերաբերյալ տարեկան հաշվետվության ձևը և սահմանելու օգտակար հանածոների պաշարների վիճակի և փոփոխության վերաբերյալ, ստորերկրյա ջրերի (խմելու, տեխնիկական, հանքային, արդյունաբերական և ջերմաէներգիական) պաշարների հաշվառման վերաբերյալ տարեկան հաշվետվության ձևերը, օգտակար հանածոների պաշարների վիճակի և փոփոխության վերաբերյալ տարեկան հաշվետվության, ստորերկրյա (խմելու, տեխնիկական, հանքային, արդյունաբերական և ջերմաէներգիական) ջրերի պաշարների հաշվառման վերաբերյալ տարեկան հաշվետվության լրացման կարգերը և օգտակար հանածոների պաշարների վիճակի և փոփոխության վերաբերյալ տարեկան հաշվետվության բացատրագրի կազմման կարգը: Դա բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 2021թ.-ի օգոստոսի 26-ի № ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի 2.8–րդ բաժնի 1-ին պարբերության 4-րդ կետով նախատեսված հանձնառություններից և 2020-2050թթ. Հայաստանի վերափոխման ռազմավարության 3-րդ մեգանպատակից: **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.** Ներկայումս սահմանված է միայն օգտակար հանածոների պաշարների շարժի վերաբերյալ տարեկան հաշվետվության ձևը, բացակայում են օգտակար հանածոների պաշարների վիճակի և փոփոխության վերաբերյալ, ստորերկրյա ջրերի (խմելու, տեխնիկական, հանքային, արդյունաբերական և ջերմաէներգիական) պաշարների հաշվառման վերաբերյալ տարեկան հաշվետվության ձևերը, օգտակար հանածոների պաշարների վիճակի և փոփոխության վերաբերյալ տարեկան հաշվետվության, ստորերկրյա (խմելու, տեխնիկական, հան-քային, արդյունաբերական և ջերմաէներգիական) ջրերի պաշարների հաշվառման վերաբերյալ տարեկան հաշվետվության լրացման կարգերը և օգտակար հանածոների պաշարների վիճակի և փոփոխության վերաբերյալ տարեկան հաշվետվության բացատրագրի կազմման կարգը: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.** «Օգտակար հանածոների պաշարների շարժի վերաբերյալ տարեկան հաշվետվությունների ձևերի, լրացման, բացատրագրերի կազմման և ներկայացման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ներկայացում Վարչապետի աշխատակազմ: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը.** Երկրաբանական տեղեկատվության արժանահավատության ապահովում:
15	**Ընդերքի ողջամիտ և համալիր օգտագործման ապահովում՝ ամբողջական նախագծային փաստաթղթերի առկայության միջոցով** **15.1 «Երկրաբանական ուսումնասիրության ծրագրին ներկայացվող նվազագույն պահանջները սահմանելու մասին» ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հրամանի հաստատում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը.** Անհրաժեշտություն է առաջացել մշակելու օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունք հայցելու դիմում կից ներկայացվող երկրաբանական ուսումնասիրության ծրագրին ներկայացվող նվազագույն պահանջներ: Նվազագույն պարտադիր պահանջների սահմանումն ուղղված է պետական սեփականություն հանդիսացող ընդերքի արդյունավետ և համալիր օգտագործման ապահովմանը: Դա բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 2021թ.-ի օգոստոսի 26-ի №

	ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի 2.8–րդ բաժնի 1-ին պարբերության 5-րդ կետով նախատեսված հանձնառություններից և 2020-2050թթ. Հայաստանի վերափոխման ռազմավարության 3-րդ մեգանպատակից: **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.** Ներկայումս ընդերքօգտագործողների կողմից երկրաբանական ուսումնասիրության ծրագիրը ներկայացվում է ազատ ոճով, երբեմն առանց անհրաժեշտ կառուցվածքն ու հիմնավորումները պահպանելու: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.** «Երկրաբանական ուսումնասիրության ծրագրին ներկայացվող նվազագույն պահանջները սահմանելու մասին» ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հրամանի հաստատում **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը.** Ընդերքի ողջամիտ և համալիր օգտագործման ապահովում ամբողջական նախագծային փաստաթղթերի առկայության միջոցով: **15.2 «Օգտակար հանածոյի արդյունահանման նախագծին ներկայացվող նվազագույն պահանջները սահմանելու մասին» ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հրամանի հաստատում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը.** Անհրաժեշտություն է առաջացել մշակելու օգտակար հանածոների արդյունահանման նախագծին ներկայացվող նվազագույն պահանջներ: Նվազագույն պարտադիր պահանջների սահմանումն ուղղված է պետական սեփականություն հանդիսացող ընդերքի արդյունավետ և համալիր օգտագործման ապահովմանը: Դա բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 2021թ.-ի օգոստոսի 26-ի № ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի 2.8–րդ բաժնի 1-ին պարբերության 5-րդ կետով նախատեսված հանձնառություններից և 2020-2050թթ. Հայաստանի վերափոխման ռազմավարության 3-րդ մեգանպատակից: **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.** Ներկայումս ընդերքօգտագործողների կողմից օգտակար հանածոների արդյունահանման ծրագիրը ներկայացվում է ազատ ոճով, երբեմն առանց անհրաժեշտ կառուցվածքն ու հիմնավորումները պահպանելու: **1.3 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.** «Օգտակար հանածոյի արդյունահանման նախագծին ներկայացվող նվազագույն պահանջները սահմանելու մասին» ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հրամանի հաստատում **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը.** Ընդերքի ողջամիտ և համալիր օգտագործման ապահովում ամբողջական նախագծային փաստաթղթերի առկայության միջոցով: **15.3 «ՀՀ կառավարության 2013 թվականի մարտի 28-ի N367-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ներկայացում Վարչապետի աշխատակազմ** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը.** Անհրաժեշտություն է առաջացել վերանայել ընդերքօգտագործողների կողմից ներկայացվող ֆինանսական և տեխնիկական կարողությունների ու միջոցների մասին տեղեկություններ բովանդակությունը և համալրել դրանց ներկայացվող պահանջները: Դա բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 2021թ.-ի օգոստոսի 26-ի № ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի 2.8–րդ բաժնի 1-ին պարբերության 5-րդ կետով նախատեսված հանձնառություններից և 2020-2050թթ. Հայաստանի վերափոխման ռազմավարության 3-րդ մեգանպատակից: **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.** Ընդերքն օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրությունների և օգտակար հանածոների արդյունահանման համար ընդերքօգտագործման իրավունք

	հայցող կազմակերպությունը ներկայացնում է ֆինանսական և տեխնիկական կարողությունների ու միջոցների մասին տեղեկություններ, սակայն անհրաժեշտություն կա դրանք վերանայելու և համալրելու, հաշվի առնելով վերջին տարիներին ի հայտ եկած խնդիրները: **1.2Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.** «ՀՀ կառավարության 2013 թվականի մարտի 28-ի N367-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ներկայացում Վարչապետի աշխատակազմ **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը.** Ընդերքի ողջամիտ և համալիր օգտագործման ապահովում:
16	**Համայնքների նկատմամբ սոցիալական պարտավորությունների պահանջի հստակեցում** **16.1 Օգտակար հանածոյի արդյունահանման նախագծում ամրագրվող սոցիալական մեղմացման հատկացումների հաշվարկման մեխանիզմի մշակում և օրենսդրական փոփոխությունների առաջարկության ներկայացում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Ներակայումս ընդերքօգտագործման պայմանագրերում սահմանված է համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորությունների չափի և կատարման ժամկետների վերաբերյալ դրույթներ, սակայն օրենսդրորեն որևէ կերպ սահմանված չեն համայնքի սոցիալ տնտեսական ոլորտում ստանձնած պարտավորությունների ծավալի և բովանդակության գոյացման չափանիշներ: Անհրաժեշտություն է առաջացել մշակելու օգտակար հանածոյի արդյունահանման նախագծում ամրագրվող սոցիալական մեղմացման հատկացումների հաշվարկման մեխանիզմ և վերջինիս շրջանակներում օրենսդրական փոփոխությունների առաջարկություն ներկայացնել Վարչապետի աշխատակազմ: Դա բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 2021թ.-ի օգոստոսի 26-ի № ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի 2.8–րդ բաժնի 1-ին պարբերության 6-րդ կետով նախատեսված հանձնառություններից և 2020-2050թթ. Հայաստանի վերափոխման ռազմավարության 3-րդ և 9-րդ մեգանպատակներից: **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներակայումս ընդերքօգտագործման պայմանագրերում սահմանված է համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորությունների չափի և կատարման ժամկետների վերաբերյալ դրույթներ: **1.2Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Առաջարկվում է մշակել օգտակար հանածոյի արդյունահանման նախագծում ամրագրվող սոցիալական մեղմացման հատկացումների հաշվարկման մեխանիզմ, որով կկարգավորվեն համայնքի սոցիալ տնտեսական ոլորտում ստանձնած պարտավորությունները: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Տեղական համայնքների զարգացմանը նպաստում:
17	**Համագործակցության ուղղությունների զարգացման ապահովում հանքարդյունաբերության ոլորտի լիազոր մարմնի և ակադեմիայի, հանքարդյունաբերական ոլորտի ընկերությունների ասոցիացիաների, միջազգային կազմակերպությունների միջև: Կրթական համակարգում ըստ պահանջարկի ոլորտային մասնագետների պատրաստման հիմնահարցերին աջակցություն:** **17.1 Բարձրագույն ուսումնական հաստատությունների, Գիտությունների ազգային ակադեմիայի հետ գիտագործնական, գիտելիքի, փորձի, հմտությունների փոխանակման, մասնագիտական հանձնաժողովների ստեղծման և այլ ուղղություններով համագործակցության հուշագրերի կնքում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Ներկայումս համագործակցությունը բարձրագույն ուսումնական հաստատությունների, գիտությունների ազգային ակադեմիայի հետ սերտ չէ և իրականացվում է ոլորտում աշխատող մասնագետների անձնական կապերի միջոցով: Անհրաժեշտություն է առաջացել զարգացնել համագործակցության ուղղությունները ոլորտային մասնագետների, ուսանողների և ընդերքօգտագործողների միջև համագործակցության հարթակի ստեղծման միջոցով: Համագործակցության առանցքում կլինի ուսանողների գործնական հմտությունների ու կարողությունների զարգացումը, բնապահպանության և ընդերքօգտագործման ոլորտում կրթական ծրագրերի կատարելագործումը, մասնագիտական ուսուցման գործնական բաղադրիչի ուժեղացումը և շուկայի

	պահանջներին համահունչ ընթացիկ և հեռահար ծրագրերի մշակումը: Դա բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 2021թ.-ի օգոստոսի 26-ի № ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021-2026թթ . ծրագրի 2.8–րդ բաժնի 1-ին պարբերության 7-րդ կետով նախատեսված հանձնառություններից և 2020-2050թթ. Հայաստանի վերափոխման ռազմավարության 1-ին և 3-րդ մեգանպատակներից: **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներակայումս Բարձրագույն ուսումնական հաստատությունների, գիտությունների ազգային ակադեմիայի հետ սերտ չէ և ոլորտի հիմնախնդիրներից է հանդիսանում ընդերքօգտագործողներին որակյալ մասնագետներով ապահովելը: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Առաջարկվում է մշակել և կնքել հուշագրեր բարձրագույն ուսումնական հաստատությունների, գիտությունների ազգային ակադեմիայի հետ և ստեղծել ոլորտային մասնագետների, ուսանողների և ընդերքօգտագործողների միջև համագործակցության հարթակ: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Ոլորտային որակյալ մասնագետների ապահովում, ընդերքօգտագործման ոլորտի արդյունավետ կառավարում, ընդերքօգտագործման որակի բարձրացում:
18	**Ընդերքօգտագործման համար անհրաժեշտ հողատարածքների տրամադրման իրավական կարգավորում** **18.1 «ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում և ՀՀ հողային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերին հավանություն տալու մասին» Կառավարության որոշման ընդունում** 1. **Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Ընդերքօգտագործման համար անհրաժեշտ հողհատկացման խնդրի իրավակարգավորման նպատակով անհրաժեշտություն է առաջացել իրականացնելու միջազգային փորձի ուսումնասիրություն և վերջինիս արդյունքում ընդերքօգտագործման իրավունքների տրամադրման գործընթացի փոխկապակցված մեխանիզմի ներդրում: Դա բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 2021թ.-ի օգոստոսի 26-ի № ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի 2.8–րդ բաժնի 1-ին պարբերության 8-րդ կետով նախատեսված հանձնառություններից և 2020-2050թթ. Հայաստանի վերափոխման ռազմավարության 3-րդ մեգանպատակից: 1. 1 **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում հողամասերը սեփականության իրավունքով պատկանում են տարբեր սուբյեկտների՝ համայնքներ, ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնք իրենք են տնօրինում իրենց գույքը և այդ իրավազորությունը պահպանված է ՀՀ սահմանադրությամբ: Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 13-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ օգտակար հանածոների արդյունահանման համար հողամասերը տրամադրվում են ընդերքի օգտագործման իրավունք հաստատող փաստաթղթերին համապատասխան: Ընդերքօգտագործման համար պահանջվող հողերի՝ իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից սեփականաշնորված կամ համայնքային հողերը վարձակալությամբ տրամադրված, օգտագործման իրավունքը ընդերքօգտագործողները կարող են ձեռք բերվել միայն բանակցային կամ խորհրդակցային գործընթացների միջոցով,որի ժամանակ էլ առաջանում են բավականին շատ խնդիրներ: **1. 2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Առաջարկվում է մշակել Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություններ և լրացումների կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի փաթեթ, որում կտրվի Ընդերքօգտագործման համար անհրաժեշտ հողատարածքների տրամադրման իրավական կարգավորումը: **2 Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Ընդերքօգտագործման իրավունքների տրամադրման գործընթացի փոխկապակցված մեխանիզմի ներդրում:
19	**Ռեգիոնալ երկրաբանական բնույթի ուսումնասիրությունների նպատակով համաձայնության տրամադրման պայմանների և պահանջների իրավական կարգավորում**

	19.1 Երկրաբանական ուսումնասիրության նպատակով համաձայնության հայցման և տրամադրման գործընթացի կարգավորումների նպատակով իրավական ակտերի նախագծի մշակում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը.** Ընդերքի ոլորտի արդյունավետ կառավարման ապահովման և տեղեկության հավաքագրման նպատակով անհրաժեշտ է ապահովել իրականացվող աշխատանքների օրենքով սահմանված կարգով տրամադրում և հաշվառում, դրանց արդյունքների ընդունում և պահպանում, որը կնպաստի նաև ընդերքի վերաբերյալ տեղեկության ամբողջականության ապահովմանը և թարմացմանը: Մշակված համապատասխան իրավական ակտերի փաթեթի նախագծի ընդունման դեպքում կհստակեցվի երկրաբանական ուսումնասիրության նպատակով համաձայնություն հայցողների համար գործընթացը, կսահմանվի իրավունքի տրամադրման կարգը, կապահովվի համաձայնության տրամադրման և պետական հաշվառման, ուսումնասիրության արդյունքների գրանցման և հանրապետության ընդերքի վերաբերյալ տեղեկատվության ամբողջականությունը: Դա բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 2021թ.-ի օգոստոսի 26-ի № ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի 2.8–րդ բաժնի 1-ին պարբերության 10-րդ կետով նախատեսված հանձնառություններից և 2020-2050թթ. Հայաստանի վերափոխման ռազմավարության 3-րդ մեգանպատակից: **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.** Ներկայումս ՀՀ ընդերքի մասին օերնսգրքի 32-րդ հոդվածի դրույթներով սահմանված համաձայնության տրամադրում չի իրականացվում, քանի որ առկա իրավակարգավորումներում առկա են բացեր, չկա կառավարության կողմից սահմանված ռեգիոնալ երկրաբանական ուսումնասիրության նպատակով տրամադրվող համաձայնության ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման կարգ: Բազմաթիվ ուսումնասիրություններ, որոնք իրականացվում են հիմնականում ակադեմիական խմբերի կողմից, տարբեր գիտական նպատակներով, կատարվում են առանց համաձայնության, չեն հաշվառվում, իսկ դրանց արդյունքները չեն հանձնվում լիազոր մարմնին պահպանելու և ընդերի մասին տեղեկության ամբողջականությունն ապահովելու համար: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.** ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի փոփոխությունների և դրանից բխող կառավարության որոշման նախագծերի մշակում և և ներկայացում Վարչապետի աշխատակազմ **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը.** Ընդերքի ոլորտի կառավարման արդյունավետության բարձրացում, բարելավում և ընդերքի մասին տեղեկության ամբողջականության ապահովում, արդիականացում:
20	**Ընդերքի մասին տեղեկության թվային կադաստրի ստեղծում** **20.1 Օգտակար հանածոների (հանքային ռեսուրսների)՝ պետական կադաստրի (ՕՀՊԿ) և օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռի (ՕՀՊՊՀ) վարման ավտոմատ կառավարման տեղեկատվական համակարգերի (ԱԿՏՀ) ստեղծման, վարման և պահպանման ներդրման նպատակով ճանապարհային քարտեզի մշակում:** **20.2 ՕՀՊԿ և ՕՀՊՊՀ ԱԿՏՀ-ի ստեղծման, վարման և պահպանման ներդրման ճանապարհային քարտեզով սահմանված միջոցառումների՝ ՏԿԵ նախարարությանը վերապահված միջոցառումների իրականացում:** **20.3 Օգտակար հանածոների (հանքային ռեսուրսների) պետական կադաստրի և օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռի վարման ԱԿՏՀ-ի ստեղծում և գործարկում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Այսօր երկրաբանական ֆոնդում պահվող ողջ արժեքավոր տեղեկատվությունն ունի ոչ միայն արխիվային կամ գիտական նշանակություն, այլև տեղեկատվության պահպանման, թարմացման, տնօրինման, տնտեսվարողների կողմից ամենամյա հաշվետվությունների հիման վրա պաշարների շարժի վարման, հանքավայրերի և հանքերևակումների գույքագրման, այդ ամբողջ բազայի հիման վրա քաղաքացիներին և տնտեսվարողներին ծառայությունների մատուցման նշանակություն: Սույն միջոցառման նպատակն է՝

1.մշակել ճանապարհային քարտեզ՝ ՕՀՊԿ և ՕՀՊՊՀ ԱԿՏ համակարգերի ստեղծման, վարման և պահպանման ներդրման համար:

2. իրականացնել հաստատված ճանապարհային քարտեզի իրագործման աշխատանքները, որի արդյունքում կապահովվի տեղեկատվական համակարգերի ներդրմանն գործընթացը:

3. ստեղծել և գործարկել ՕՀՊԿ և ՕՀՊՊՀ վարման ԱԿՏ համակարգերը

ՕՀՊԿ և ՕՀՊՊՀ ԱԿՏՀ-ն իրենից ներկայացնելու է ռեսուրսների և պաշարների թվային կադաստր, որը ոչ միայն կներառի ինչպես տասնամյակներում կուտակված ողջ տեղեկատվությունը, այնպես էլ կնպաստի օրենսդրությամբ սահմանված գործառույթների արդյունավետ իրականացմանը:

Դա բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 2021թ.-ի օգոստոսի 26-ի № ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի 2.8–րդ բաժնի 1-ին պարբերության 11-րդ կետով նախատեսված հանձնառություններից և 2020-2050թթ. Հայաստանի վերափոխման ռազմավարության 3-րդ մեգանպատակից, ինչպես նաև 2023թ. մայիսի 11-ին հաստատված՝ Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության գործողությունների պլանով սահմանված 1-ին նպատակից:

1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Թեև Ֆոնդում առկա նյութերը պահվում են թղթային տարբերակով, իսկ Կառավարության վերջին տարիների ջանքերի շնորհիվ՝ սկանավորված տարբերակներով, այդուհանդերձ, նշյալ ԱԿՏ համակարգերը ստեղծելու նպատակով և ժամանակի պահանջներին համահունչ ծառայություններ գեներացնելու և մատուցելու համար անհրաժեշտ է ողջ բազայի թվայնացում, ինչը հանդիսանում է առաջնային անհրաժեշտություն ոլորտի համար, և որի իրագործումը հնարավորություն կընձեռի օգտակար հանածոների հանքավայրերի և հանքերևակումների պետական կադաստրի, օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռի վարման աշխատանքների արդյունավետության բարձրացմանը, երկրաբանական տեղեկության միասնական համակարգի ստեղծմանն ու վարմանը:

Տարածական և ավտոմատ կառավարման թվային համակարգերի բացակայությունը տվյալների հավաքագրման և մշակման աշխատաժամանակը երկարաձգում ու արգելակում է վերլուծական աշխատանքների իրականացումը: Ժամանակակից տեղեկատվական համակարգերի չօգտագործումը խոչընդոտում է տեղեկատվության լիարժեք օգտագործմանը, պետական հաշվեկշռի վարմանը և տեղեկատվության պատշաճ ձևով ներկայացմանը:

1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Ընդերքի մասին տեղեկության թվային կադաստրի ստեղծման նպատակով երկրաբանական տեղեկության միասնական համակարգի ներդրման համար անհրաժեշտ է մշակել ճանապարհային քարտեզ, որում նախանշված գործողությունների հետագա իրականացումը կապահովեն էլեկտրոնային համակարգերի ներդրումը, կստեղծեն ընդերքօգտագործման իրավունքների տրամադրման գործընթացի փոխկապակցված մեխանիզմների ներդրման հնարավորություն, կնպաստեն ընդերքի ոլորտի կառավարման արդյունավետության բարձրացմանը, կնպաստեն օրենսդրությամբ սահմանված գործառույթների արդյունավետ իրականացմանը:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Գործունակ և լիարժեք ԱԿՏ համակարգերի առկայություն ապահովելու համար գործողությունների իրականացման հստակ ուղենիշների, ժամկետների և ֆինանսական գնահատականների սահմանմամբ ՏԿԵ նախարարի հրամանով հաստատված ճանապարհային քարտեզի առկայություն:

Օգտակար հանածոների (հանքային ռեսուրսների) պետական կադաստրի և պաշարների պետական հաշվեկշռի վարման ԱԿՏՀ-ի հաստատված ճանապարհային քարտեզի իրագործման աշխատանքների իրականացում, որի արդյունքում կապահովվի տեղեկատվական համակարգերի ներդրման գործընթացը:

Նորարարական տեխնոլոգիաների զարգացման միտումներին համահունչ՝ օգտակար հանածոների (հանքային ռեսուրսների) պետական կադաստրի և օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռի վարման ԱԿՏՀ-ի ստեղծում և գործարկում:

	Վերջինս բխում է նաև ՀՀ կառավարության 2019 թ. մայիսի 23-ի N 672-Լ որոշմամբ հաստատված ինտեգրված կադաստրի ստեղծման հայեցակարգից և այն ապահովող միջոցառումներից, ՀՀ կառավարության 2021 թ. ապրիլի 8-ի N 505-Լ որոշմամբ հաստատված՝ **Ինտեգրված կադաստրի ստեղծման ռազմավարական ծրագրից**:
21	**Ընդերքօգտագործման գործող իրավունքների շրջանակներում հանքավայրերի արդյունավետ շահագործման ապահովում** **21.1 «ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի մշակում և ներկայացում Վարչապետի աշխատակազմ** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Այն դեպքերում, երբ ընդերքօգտագործման պարտավորությունների կատարման համար առաջացել է անհաղթահարելի ուժ՝ արտակարգ և անկանխելի հանգամանքներ, որոնք անկախ գործադրված ջանքերից, խոչընդոտել են ընդերքօգտագործողի պարտավորությունների պատշաճ կատարմանը (օրինակ՝ հայտարարված ռազմական դրության կամ ընդերքօգտագործման պարտավորությունների կատարման համար անհաղթահարելի ուժ հանդիսացող այլ հանգամանքներ՝ քաղաքացիական անհնազանդություն, անկարգություններ (բողոքի ակցիաների տարբեր դրսևորումներ, որոնց արդյունքում հնարավոր չի եղել հանքավայրում կազմակերպել ընդերքօգտագործման աշխատանքները), տարերային աղետներ և այլն), ընդերքի մասին օրենսդրության առկա իրավակարգավորումների պարագայում հնարավոր չի լինում անհաղթահարելի ուժ հանդիսացող հանգամանքների գործողության ողջ ժամկետով երկարաձգել ընդերքօգտագործման իրավունքի գործողության ժամկետը: Դա բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 2021թ.-ի օգոստոսի 26-ի № ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի 2.8–րդ բաժնի 1-ին պարբերության 9-րդ կետով նախատեսված հանձնառություններից և 2020-2050թթ. Հայաստանի վերափոխման ռազմավարության 3-րդ մեգանպատակից: **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Անհաղթահարելի ուժի հետևանքով ընդերքի մասին օրենսդրությամբ նախատեսված պարտավորությունների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը որպես ընդերքօգտագործման իրավունքի ժամկետի երկարաձգման հիմք նախատեսված չէ: Միևնույն ժամանակ, ընդերքօգտագործողի պարտավորությունների իրականացման ժամկետները օրենսդրությամբ հստակ են, երբեմն՝ սեղմ, իսկ դրանց չպահպանումը հանգեցնում է բացասական հետևանքների՝ ընդհուպ մինչև օրենքով սահմանված կարգով ընդերօգտագործման իրավունքի դադարեցման **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Առաջարկվող նախագծով կկարգավորվի անհաղթահարելի ուժի առաջացման հետևանքով, այդ հանգամանքների գործողության ժամկետով ընդերքօգտագործման իրավունքի ժամկետի երակարաձգման հետ կապված իրավահարաբերությունները, ինչը հնարավորություն կտա ընդերքօգտագործող ընկերություններին պատշաճ կատարել այն պարտավորությունները, որոնք չէին կատարվել կամ ոչ պատշաճ էին կատարվել աշխարհում և ՀՀ-ում վերջին տարիներին ստեղծված անկանխատեսելի և արտակարգ պայմաններում, որոնք ազդեցություն ունեցան նաև ընդերքօգտագործման պարտավորությունների կատարման վրա: **3.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Ընդերքօգտագործման իրավունքի ժամկետների հստակեցում՝ պայմանավորված անհաղթահարելի ուժի ծագման և դրա հետևանքների օրենսդրական կարգավորման անհրաժեշտությամբ:
22.	**Հանքարդյունաբերության հարկման արդար և երկարաժամկետ զարգացումն ապահովող արդյունավետ մեխանիզմների ներդրում** **22.1 «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում և ներկայացում Վարչապետի աշխատակազմ** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Ներկայումս անհրաժեշտություն է առաջացել կատարելագործել և առավել ճկուն դարձնել ռոյալթիների գործող համակարգը: Հաշվի առնելով, որ ընդերքօգտագործումը մեր երկրում, և ընդհանրապես, համարվում է ամենից կապիտալատար և երկարաժամկետ պլանավորում պահանջող ոլորտներից մեկը, ինչպես նաև այն հանգամանքը, որ ըստ համաշխարհային փորձի դիտարկման՝ հարկային դրույքաչափերի շատ բարձրացումը կարող է բերել տնտեսական ճգնաժամի խորացման, անհրաժեշտություն է առաջանում իրականացնելու խորքային վերլուծություն՝ միջազգային փորձի ուսումնասիրությամբ և Հայաստանի Հանրապետության համար «կենսունակ» և միևնույն ժամանակ պետության հավասարակշռված եկամուտներ ապահովող հարկային դրույքաչափի և

	բազայի վերհանմամբ, որից հետո միայն իրականացնել համապատասխան փոփոխություններ իրավական ակտերում: Միջոցառման իրականացումը բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 2021թ.-ի օգոստոսի 26-ի № ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի 2.8–րդ բաժնի 1-ին պարբերության 12-րդ կետով նախատեսված հանձնառությունից և 2020-2050թթ. Հայաստանի վերափոխման ռազմավարության 3-րդ և 14-րդ մեգանպատակներից: **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս մեկնարկել է հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության մշակման գործընթացը, որով նախատեսվում է վեր հանել հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության մեջ առկա բացթողումները, ազգային և տեղական մակարդակներում ֆիսկալ և ոչ ֆիսկալ օգուտները ավելացնելու և բաշխելու համար ինստիտուցիոնալ շրջանակի ստեղծման հնարավորությունը, բնապահպանական և սոցիալական խնդիրները և օգուտ-ծախսերի գնահատումը: Ռազմավարական փաստաթուղթը թույլ կտա ունենալ տեսլական և իրականացնել կոնկրետ գործողություններ առկա խնդիրների լուծման և ոլորտի կայուն զարգացումն ապահովելու համար: Ռազմավարության նախագիծը ըստ կնքված պայմանագրի, պատրաստ կլինի մինչև 2022 թվականի ապրիլի 31-ը: Ռազմավարության ընդունումից հետո նախատեսվում է Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության շրջանակներում վերհանված՝ միասնական հարկային համակարգի բարեփոխումների համատեքստում ռոյալթիների դրույքաչափի արդարացի հաշվարկման մեխանիզմի ներդնման նպատակով «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում և ներկայացում Վարչապետի աշխատակազմ: **1.1 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Միջազգային փորձի (համադրելի երկրների ֆիսկալ համակարգի ուսումնասիրության շրջանակներում դրույքաչափերի, դրանց հաշվարկման եվ կիրառման առանձնահատկությունների) ուսումնասիրության արդյունքում վեր հանել Հայաստանի համար «կենսունակ» և միևնույն ժամանակ պետության հավասարակշռված եկամուտներ ապահովող հարկային դրույքաչափ և բազա, որց հետո համապատասխան իրավական ակտերում կատարել փոփոխություններ: **3.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Առաջարկվող փոփոխությունները հնարավորություն կտան կատարելագործելու և առավել ճկուն դարձնելու երկրի տնտեսության համար խիստ կարևորություն ունեցող՝ ռոյալթիների գործող համակարգը:

23.	**Հանքահումքային վերջնական արտադրանք ստանալու ուղղությամբ գործուն միջոցառումների ձեռնարկում** **23.1 Պղնձաձուլարանի կառուցման ներդրումային ծրագրին աջակցություն՝ նպաստելով արտադրության թափոնների իրացման հետ կապված խնդիրների լուծմանը** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Ներկայումս հանրապետության տնտեսության զարգացման համար շատ կարևոր է հանքարդյունաբերության ոլորտում՝ մասնավորապես պղնձարտադրությունում, տնտեսական արժեշղթայի փակման մեխանիզմի ներդրումը երկրի ներսում՝ ոլորտից առավել մեծ և կայուն եկամտաբերության ապահովման նպատակով: Սակայն անհրաժեշտություն կա նաև պղնձարտադրության ներդրման քայլերին զուգահեռ նպաստել նաև արտադրության թափոնների իրացման հետ կապված խնդիրների լուծմանը: Միջոցառման իրականացումը բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 2021թ.-ի օգոստոսի 26-ի № ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի 2.8–րդ բաժնի 1-ին պարբերության 13-րդ կետով նախատեսված հանձնառությունից և 2020-2050թթ. Հայաստանի վերափոխման ռազմավարության 3-րդ և 7-րդ մեգանպատակներից: **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Վերջին տարիներին համաշխարհային շուկայում արձանագրվում է գունավոր մետաղների բորսայական գների աճ, ինչը բարենպաստ պայմաններ է ստեղծում Հայաստանի մետաղական հանքարդյունաբերության ոլորտի եկամուտների աճի և ոլորտի հետագա զարգացման համար: Հանրապետությունում ներկայումս արտահանման կազմում գերակա դեր ունի պղնձի խտանյութը: Առավել մաքուր ու էկոլոգիապես անվտանգ տեխնելոգիաների կիրառմամբ արտադրությունների ստեղծման և զարգացման նպատակով առաջարկվում է նոր պղնձաձուլարանի հիմնումը, որը կնպաստի Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի զարգացմանը և կապահովի տնտեսական բարձր եկամուտներ: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Հանքահումքային վերջնական արտադրանք ստանալու նպատակով նոր ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած պղնձաձուլարանի ստեղծում, որը հնարավորություն կտա երկրի ներսում վերամշակել մետաղի հանքաքարը, կորզել մաքուր մետաղն ու արտահանել այն, միաժամանակ պղնձարտադրության ներդրման քայլերին զուգահեռ նպաստելով նաև արտադրության թափոնների իրացման հետ կապված խնդիրների լուծմանը: **3.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի զարգացում, բարձր տնտեսական եկամուտներ, հարակից արտադրությունների ստեղծման հնարավորություն:
24	**Էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացում** **24. 1 Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի նոր մոդելին ամբողջական անցում** **1) միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման անհրաժեշտությունը բխում է 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի (2021-2026թթ.)» 3.4 կետի «Էներգետիկա» բաժնից, ՀՀ կառավարության 2021 թվականի հունվարի 14-ի N 48-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրից (մինչև 2040 թվականը) և դրա իրագործումն ապահովող ծրագիր-ժամանակացույցից: Հայաստանում էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի նոր մոդելի անցնելու անհրաժեշտությունը պայմանավորված է ներքին շուկայի կարիքներով, ինչպես նաև միջսահմանային առևտրի հնարավորություններն օգտագործելու տեսանկյունից: **2) կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Հայաստանի էլեկտրաէներգետիկական շուկայի ներկայիս մոդելը կիրառության մեջ է դրվել 2004 թվականին: Շուկան ինչպես մեծածախ այնպես էլ մանրածախ հատվածում ամբողջությամբ կարգավորվում է: Էլեկտրաէներգետիկական շուկան հենվում է միայն էլեկտրաէներգիայի արտադրության և սպառման տարեկան ծավալների կանխատեսման վրա և շուկայի մասնակիցների համար չի սահմանում պատասխանատվություն՝ այդ ծավալների շեղումների դեպքում: Արդյունքում էլեկտրաէներգիայի արտադրության կանխատեսված և փաստացի ծավալների տարբերության պատճառով առաջացած ռիսկերը հավասարակշռվում են սպառողներին առաքվող

	էլեկտրաէներգիայի սակագների միջոցով, ներառելով նաև էլեկտրաէներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձի՝ այդպիսի ռիսկերի հավասարակշռման արժեքը: **3) առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Անցում կատարել էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի նոր մոդելի, ինչը կնպաստի մեծածախ և մանրածախ շուկաների արդյունավետության բարձրացմանը, իսկ միջպետական առևտրի խթանումը հնարավորություն կընձեռի ներքին շուկայում ունենալ մրցակցության նոր տարրեր: Շուկայի նոր մոդելն արդեն իսկ այս փուլում կհենվի էլեկտրաէներգիայի առևտրի ժամանակակից կանոնների վրա, կգործի պահանջարկի և առաջարկի հավասարակշռման միջոցով և կսահմանի առևտրի ընթացքում շուկայի մասնակիցների պատասխանատվության մեխանիզմները: **4) Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Սակագների հնարավոր նվազեցում, համակարգի արդյունավետության մակարդակի բարձրացում: Հայաստանում էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի նոր մոդելի անցնելու հետ կապված աշխատանքներն իրականացվում են ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ համատեղ: **24.2 «Էլեկտրաէներգետիկայի մասին» ՀՀ օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը** **1) միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման անհրաժեշտությունը բխում է 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի (2021-2026թթ.)» 3.4 կետի «Էներգետիկա» բաժնից, ՀՀ կառավարության 2021 թվականի հունվարի 14-ի N 48-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրից (մինչև 2040 թվականը) և դրա իրագործումն ապահովող ծրագիր-ժամանակացույցից: **2) կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայում էներգետիկայի բնագավառը կարգավորվում է «Էներգետիկայի մասին» ՀՀ ՀՕ-148 օրենքով: Էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացումը և դրա հետ կապված բարեփոխումներն արդեն իսկ նախանշել են մի շարք խնդիրներ, որոնք չեն կարգավորվում գործող օրենքով: Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի նոր մոդելին անցումն առաջ է բերում միանգամայն նոր իրողություններ, որոնց կարգավորման համար առավել նպատակահարմար է մշակել «Էլեկտրաէներգետիկայի մասին» ՀՀ օրենք: **3) առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Մշակել «Էլեկտրաէներգետիկայի մասին» ՀՀ օրենք, որը հաշվի կառնի ԵՄ հրահանգների պահանջները, միջազգային լավագույն փորձը, ինչպես նաև կկարգավորի էլեկտրաէներգետիկական շուկայի նոր մոդելի և էլեկտրաէներգիայի առևտրի մեխանիզմների ներդրման ընթացքում առաջ եկած խնդիրները: Նոր օրենքով նախատեսվում է հստակեցնել պետական քաղաքականության սկզբունքները, պետական տարբեր մարմինների և ոլորտում գործունեություն իրականացնող, ինչպես նաև շուկայի նոր մոդելին անցումով պայմանավորված ձևավորվելիք/ստեղծվելիք նոր դերակատարների/մասնակիցների իրավասությունների շրջանակը, էլեկտրաէներգետիկական շուկայի նոր մոդելին ներկայացվող պահանջները, ինչպես նաև առաջադրել ազդակներ էլեկտրաէներգետիկական համակարգի հետագա կայուն զարգացման համար: **4) միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Հայաստանի էլեկտրաէներգետիկական համակարգի իրավական դաշտի կատարելագործում, օրենսդրական դաշտի ներդաշնակեցում միջազգային փորձի կիրառման հետ: Օրենքի մշակումը նախատեսվում է իրականացնել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ համատեղ:
25	**Եվրասիական տնտեսական միության էլեկտրաէներգետիկական և գազի ընդհանուր շուկաների ձևավորում** **25.1 ԵԱՏՄ էլեկտրաէներգետիկական և գազի ընդհանուր շուկաները կարգավորող հիմնական տասը փաստաթղթերի մշակում և ընդունում՝ աշխատանքների իրականացում** **1) միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման անհրաժեշտությունը բխում է 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի (2021-2026թթ.)» 3.4 կետի «Էներգետիկա» բաժնից, ՀՀ կառավարության 2021 թվականի հունվարի 14-ի N 48-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրից (մինչև 2040 թվականը) և դրա իրագործումն ապահովող ծրագիր-ժամանակացույցից: 2) **կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

	Հայաստանը հանդիսանալով ԵԱՏՄ անդամ պետություն ակտիվորեն մասնակցում է Եվրասիական միասնական էլեկտրաէներգետիկական և գազի ընդհանուր շուկաների ձևավորման աշխատանքներին: Դրանք նախատեսվում են գործարկել 2025 թվականին: Համաձայն Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհուրդի 20.12.2019թ. N 31 որոշմամբ հաստատված միջոցառումների իրականացման պլանի՝ սահմանվում են էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի հինգ հիմնական կարգավորող փաստաթղթերի ընդունում: Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհուրդի 31.05.2016թ. N 7 որոշմամբ ընդունվել են գազի ընդհանուր շուկայի ձևավորման հայեցակարգը և դրա իրականացման ծրագիրը: Ընդհանուր շուկայի լիարժեք գործարկման նպատակով անդամ երկրների միջև կստորագրվի միջազգային պայմանագիր: Գազի շուկայի լիարժեք գործարկման հետ կապված կընդունվեն հինգ հիմնական կարգավորող փաստաթղթեր: **3) առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Եվրասիական միասնական էլեկտրաէներգետիկական և գազի ընդհանուր շուկաների լիարժեք գործարկումն ապահովելու նպատակով կմշակվեն և կնդունվեն հիմնական կարգավորող տասը փաստաթղթեր: **4) միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Փաստաթղթերի մշակումը և ընդունումը կնպաստի էլեկտրաէներգետիկական և գազի ընդհանուր շուկաների ձևավորմանը և լիարժեք գործարկմանը:
26	**26. Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարաձգում և արդիականացում** **26.1 Իրականացնել Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի արդիականացման և շահագործման ժամկետի երկարաձգման ծրագրի և ավարտական փուլի աշխատանքները** **26.1. 1 Իրականացնել Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի արդիականացման և շահագործման ժամկետի երկարաձգման ծրագրի աշխատանքները** **26.1. 2 Իրականացնել Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի արդիականացման և շահագործման ժամկետի երկարաձգման ծրագրի աշխատանքները** **26.1. 3 Իրականացնել Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի արդիականացման և շահագործման ժամկետի երկարաձգման ծրագրի և ավարտական փուլի աշխատանքները** **1) Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման անհրաժեշտությունը բխում է 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի (2021-2026թթ.)» 3.4 կետի «Էներգետիկա» բաժնից, ՀՀ կառավարության 2021 թվականի հունվարի 14-ի № 48-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրից (մինչև 2040 թվականը) և դրա իրագործումն ապահովող ծրագիր-ժամանակացույցից: Միջոցառման նապատակն է Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի մինչև 2026թ անվտանգ շահագործման ապահովումը, ինչպես նաև այդ ժամկետից հետո կայանի անվտանգության հիմնավորման դեպքում, դրա շահագործման ժամկետի լրացուցիչ երկարաձգումը: **2) Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները** Հայկական ԱԷԿ-ի № 2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման ծրագրի շրջանակներում ՀՀ և ՌԴ կառավարությունների միջև կնքվել են՝ 2014 թվականի դեկտեմբերի 20-ին համագործակցության մասին և 2015 թվականի փետրվարի 5-ին վարկի տրամադրման մասին համաձայնագրերը (300 մլն ԱՄՆ դոլար, որից 270 մլն ԱՄՆ դոլար՝ վարկ և 30 մլն ԱՄՆ դոլար՝ դրամաշնորհ): ՌԴ կողմից տրամադրված վարկի պայմանագրով նախատեսված օգտագործման վերջնաժամկետը սահմանվել էր 2019թ. դեկտեմբերի 31-ը, սակայն ռուսական կողմի հետ տեղի ունեցած բանակցությունների արդյունքում վարկի պայմանագրով նախատեսված օգտագործման վերջնաժամկետը չերկարաձգվեց, որից հետո ՀՀ կառավարությունը 2020 թվականի հունիսի 11-ին ընդունել է «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից բյուջետային վարկ տրամադրելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի № 1919-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» № 953-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում): **3) Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** ՌԴ կողմից տրամադրված վարկի պայմանագրով նախատեսված օգտագործման վերջնաժամկետի չերկարաձգմամբ պայմանավորված, ՀԱԷԿ-ի շահագործման ժամկետի երկարաձգման աշխատանքներն ավարտին հասցնելու համար ՀՀ կառավարությունը ընդունեց Որոշում, որի համաձայն՝ ՀՀ տարածքում ատոմային էլեկտրակայանի շահագործման ժամկետի երկարաձգման աշխատանքների ֆինանսավորման նպատակով

	«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ին 2020-2022 թվականների ընթացքում ՀՀ պետական բյուջեից տրամադրվում է 63,2 մլրդ ՀՀ դրամ գումարի չափով բյուջետային վարկ, որից՝ 2020 թվականին՝ 18,7 մլրդ ՀՀ դրամ, 2021 թվականին՝ 25 մլրդ ՀՀ դրամ, 2023 թվականին՝ 4,5 մլրդ ՀՀ դրամ, 2024 թվականին՝ 7 մլրդ ՀՀ դրամ և 2025 թվականին՝ 8 մլրդ ՀՀ դրամ: Միաժամանակ ՀՀ կառավարությունը 2020 թվականի հունիսի 11-ին ընդունել է «Հայկական ատոմային էլեկտրակայանի 2-րդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգում» ծրագրի շրջանակներում «Ռուսատոմ Սերվիս» բաժնետիրական ընկերության կողմից իրականացվող միջոցառումների ծրագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 12-ի № 1785-Ա և 2018 թվականի մայիսի 3-ի № 542-Ա որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» № 945-Ա որոշումը, որի համաձայն՝ հաստատվել է «Հայկական ատոմային էլեկտրակայանի 2-րդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգում» ծրագրի շրջանակներում «Ռուսատոմ Սերվիս» բաժնետիրական ընկերության կողմից իրականացվող միջոցառումների ծրագիրը: Այնուհետև 2020 թվականի հունիսի 19-ին «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ և «Ռուսատոմ Սերվիս» ԲԸ միջև կնքվել է «Հայկական ատոմային էլեկտրակայանի 2-րդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման շրջանակներում միջոցառումների համալիրների իրականացում» № 309/3283-Д/ААЭКД/ААЭК/9545-А-РП/01-01 շրջանակային համաձայնագիրը՝ 40 255 00 ԱՄՆ դոլար պայմանագրային գումարով: **4) Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Արդիականացման արդյունքում կբարձրանա անվտանգության մակարդակը, շահագործման լրացուցիչ ժամանակահատվածում հնարավորություն կտա մեծացնել առաքվող հզորությունն առնվազն 10 %-ով
27	**Հայաստանի Հանրապետությունում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման ծրագրի մշակում** **27.1 Մշակել ՀՀ-ում նոր միջուկային էներգաբլոկի կառոցման ծրագիրը և դրա իրականացումն ապահովող ծրագիր-ժամանակացույցը** **1) միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման անհրաժեշտությունը բխում է 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի (2021-2026թթ.)» 3.4 կետի «Էներգետիկա» բաժնից, ՀՀ կառավարության 2021 թվականի հունվարի 14-ի N 48-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրից (մինչև 2040 թվականը) և դրա իրագործումն ապահովող ծրագիր-ժամանակացույցից: **2) կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Վերը նշված փաստաթղթերի համաձայն կառավարությունը մտադիր է գործող էներգաբլոկի միչև 2036 թվականը շահագործումից հետո փոխարինել նոր միջուկային էներգաբլոկով: **3) առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Հաշվի առնելով, որ նոր միջուկային էներգաբլոկի կառուցման համար՝ կախված տեխնոլոգիաներից, անհրաժեշտ է 8-10-ը տարի ժամանակահատված՝ ներառյալ նախագծում, կառուցում և շահագործման հանձնում, անհրաժեշտ է մեկնարկել ՀՀ –ում նոր միջուկային էներգաբլոկ կառուցման ծրագրի մշակման աշխատանքները: **4) միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման իրականացմամբ կհստակեցվեն նոր միջուկային էներգաբլոկի կառուցման համար անհրաժեշտ քայլերը՝ տեխոլոգիական լուծումները, ֆինանսավորման մեխնիզմները և աղբյուրները, կառուցման ժամակետները և այլն:
28	**28. Էներգետիկ ենթակառուցվածքների վերազինում, արդիականացում, առաջատար տեխնոլոգիաներով հագեցման աշխատանքներ** **28.1 Իրականացնել «Լիճք» 220/110/35 կՎ լարման ենթակայանի ամբողջական վերակառուցման աշխատանքները** **28.2 Իրականացնել «Չարենցավան-3» 110 կՎ լարման ենթակայանի ամբողջական վերակառուցման աշխատանքները** **28.3 Իրականացնել «Զովունի» 220 կՎ լարման ենթակայանի ամբողջական վերակառուցման աշխատանքները** **28.3.1 Իրականացնել «Զովունի» 220 կՎ լարման ենթակայանի վերակառուցման աշխատանքները**

	28.3.2 Իրականացնել «Զովունի» 220 կՎ լարման ենթակայանի ամբողջական վերակառուցման աշխատանքները **28.4 Իրականացնել «Արարատ-2» 220 կՎ լարման ենթակայանի ամբողջական վերակառուցման աշխատանքները** **28.4.1 Իրականացնել «Արարատ-2» 220 կՎ լարման ենթակայանի վերակառուցման աշխատանքները** **28.4. 2 Իրականացնել «Արարատ-2» 220 կՎ լարման ենթակայանի ամբողջական վերակառուցման աշխատանքները** **1) Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման անհրաժեշտությունը բխում է 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի (2021-2026թթ.)» 3.4 կետի «Էներգետիկա» բաժնից, «Հայաստանի վերափոխման ռազմավարություն մինչև 2050» փաստաթղթի 13.3 կետից, ՀՀ կառավարության 2021 թվականի հունվարի 14-ի № 48-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրից (մինչև 2040 թվականը) և դրա իրագործումն ապահովող ծրագիր-ժամանակացույցից: **2) Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները** Բարձրավոլտ էլեկտրահաղորդման ցանցում այժմ շահագործվում են 220 կՎ լարման 13 և երկու 110 կՎ լարման ենթակայաններ ու մեկ փոխանջատիչ կետ՝ Իրանի հետ սահմանին, ինչպես նաև 1960 կմ երկարությամբ էլեկտրահաղորդման օդային գծեր իրենց 5600 հենարաններով: Վերը նշված ենթակայաններից 7-ը (220/110/10 կՎ լարման «Հաղթանակ», 220/35/10 կՎ լարման «Կամո», 220/110/10 կՎ լարման «Գյումրի-2», 220/110/35 կՎ լարման «Վանաձոր-2», 220/110/35 կՎ լարման «Ալավերդի-2», 110/10/6 կՎ լարման «Վանաձոր-1» և 220/110/35 լարման «Լիճք») արդեն իսկ ամբողջությամբ վերակառուցվել են: Ներկայումս Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջոցների հաշվին իրականացվում են նաև 110 կՎ լարման «Չարենցավան-3», 220 կՎ լարման «Զովունի» և «Արարատ-2» ենթակայանների ամբողջական վերակառուցումը: Միևնույն ժամանակ ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգում վերջին տարիներին արտադրող կայանների ավելացումը պահանջում է վերանայել բարձրավոլտ ենթակայանների և օդային գծերի հզորությունները՝ արտադրված էլեկտրական էներգիան վերջնական սպառողին հասցնելու նպատակով: **3) Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (այսուհետ՝ Բանկ) աջակցությամբ իրականացվող «Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային համաձայնագրով տրամադրված 36 մլն ԱՄՆ դոլար գումարի շրջանակներում նախատեսվում է իրականացնել 110 կՎ լարման «Չարենցավան-3» և 220 կՎ լարման «Զովունի» ենթակայանների ամբողջական վերակառուցումը, իսկ Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող «Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում» վարկային համաձայնագրով տրամադրված 39,86 մլն ԱՄՆ դոլար գումարի շրջանակներում՝ 220 կՎ «Արարատ-2» ենթակայանի վերակառուցումը: «Չարենցավան-3» ենթակայանի վերակառուցման շրջանակներում ծրագրի պատվիրատու «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Պատվիրատու) և «Efacec Engenharia e Sistemas, S.A.» (Պորտուգալիա) ընկերության (այսուհետ՝ Կապալառու) միջև 2021թ. մարտի 12-ին կնքվել և ուժի մեջ է մտել պայմանագրի Փոփոխություն № 3-ը, որով վերամեկնարկել են ենթակայանի վերակառուցման աշխատանքները: Վերամեկնարկած պայմանագրով ենթակայանի վերակառուցման աշխատանքների ավարտ էր սահմանված 2023թ. մարտի 16-ը: Կապալառուի կողմից բազմիցս խախտվել են պայմանագրային պարտավորությունները և ավարտին չի հասցվել ենթակայանի վերակառուցումը: Կապալառուի և Պատվիրատուի միջև տեղի է ունեցել հանդիպում, որի ընթացքում քննարկվել են պայմանագրի փոխադարձ համաձայնությամբ դադարեցնելու դրույթները: Իրականացվել են գույքագրման աշխատանքներ, որոնց արդյունքում կազմվել է գույքագրման ակտ, որում արձանագրվել է հաշիվ ապրանքագրերով ներկրված և ստացված սարքավորումների ոչ ամբողջական լինելու փաստը: Գույքագրման ակտը երկկողմանի ստորագրվել է: Պատվիրատուն գրություններով հայտնել է կապալառուին, որ ղեկավարվելով պայմանագրի դրույթներով, ստիպված է նախաձեռնել պայմանագրի միակողմանի լուծման գործընթաց, ինչի վերաբերյալ համաձայնություն է տվել նաև Բանկը: Պայմանագրի լուծման գործընթացի ավարտից հետո կորոշվի ենթակայանի վերակառուցման հետագա ընթացքը: **4) Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

	Էլեկտրաէներգիայի մատակարարման հուսալիության և անվտանգության բարձրացում, հաղորդման ցանցի առկա հզորությունների ավելացում:
29	**Հյուսիս-հարավ էլեկտրաէներգետիկական միջանցք (Հայաստան-Իրան-Վրաստան-Ռուսաստան) քառակողմ նախաձեռնության հետ կապված աշխատանքների իրականացում** **29.1 Տեխնիկական խնդիրների կարգավորում, համապատասխան պայմանագրերի կնքում** **1) միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման անհրաժեշտությունը բխում է 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի (2021-2026թթ.)» 3.4 կետի «Էներգետիկա» բաժնից, «Հայաստանի վերափոխման ռազմավարություն մինչև 2050» փաստաթղթի 13.4 կետից ,ՀՀ կառավարության 2021 թվականի հունվարի 14-ի N 48-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրից (մինչև 2040 թվականը) և դրա իրագործումն ապահովող ծրագիր-ժամանակացույցից: **2) կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Հյուսիս-Հարավ տարանցիկ միջանցքի կառուցման ծրագրի ամբողջական իրականացումը՝ դրա Հայաստան-Իրան և Հայաստան-Վրաստան էլեկտրահաղորդման գծերը և ենթակառուցվածքները որոշիչ դեր ունեն տարածաշրջանային նշանակության էներգետիկ համակարգ ունենալու հարցում: Այս ծրագիրը հնարավորություն է ընձեռում Հայաստանի համար հանդիսանալ ինչպես կամուրջ ավելի գլոբալ էներգետիկ շուկաների հետ ինտեգրման, այնպես էլ առաջնահերթ Իրանի և Վրաստանի հետ փոխշահավետ էլեկտրաէներգիայի առևտրի հնարավորությունների օգտագործման համար: **3) առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Հայաստանի էլեկտրաէներգետիկական համակարգը միացված է Իրանի Իսլամական Հանրապետության և Վրաստանի էլեկտրաէներգետիկական համակարգերի հետ և ունի ռազմավարական նշանակություն Հայաստանի համար: Այն սակայն ենթարկվում է տարբեր տեխնիկական բնույթի սահմանափակումների, հաշվի առնելով Հայաստանի՝ Իրանի հետ և Վրաստանի՝ Ռուսաստանի հետ սինքրոն-զուգահեռ աշխատելու հանգամանքը: Առկա սահմանափակումները վերացնելու, ինչպես նաև թողունակութունն ավելացնելու նպատակով է իրականացվում Կովկասյան Էլեկտրահաղորդման ցանցի (Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/ենթակայաններ) կառուցման ծրագիրը, որը թույլ կտա երկու երկրների՝ էներգետիկայի բնագավառում համագործակցությանը նոր թափ հաղորդել: Ենթակառուցվածքային վերը նշված ծրագրի իրականացմանը զուգընթաց նախատեսվում է մշակել Հայաստան-Վրաստան էլեկտրաէներգիայի առևտրի սկզբունքների մասին համաձայնագիրը, որը նախադրյալներ կստեղծի երկու երկրների միջև էլեկտրաէներգիայի կանոնավոր առևտրի իրականացման համար: Վրաստանի հետ հարաբերությունները կարևոր են նաև որպես բնական գազի տարանցիկ երկիր՝ բնական գազը Ռուսաստանից Հայաստանին մատակարարելու առումով: Հայաստան-Իրան գազ-էլեկտրաէներգիա փոխանակման ծրագրի ժամկետների հնարավորինս երկարաձգումը և փոխշահավետ պայմաններով փոխանակման ծավալների մեծացումը հանդիսանում է այս հարաբերությունների հետագա խորացման գրավականը, որի նպատակով է իրականացվում նաև Հայաստան-Իրան նոր 400 կՎ լարման էլեկտրահաղորդման գծի կառուցման և Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց ծրագրերը: Նոր ենթակառուցվածքների շահագործումը հնարավորություն կտա գազ-էլեկտրաէներգիա փոխանակման ծրագրի շրջանակներում էլեկտրաէներգիայի արտահանումը առնվազն հասցնելով 5. 0 մլրդ կՎտժ: Էլեկտրաէներգիայի արտահանումը իր առավելագույն ծավալին կհասնի մինչև 2025 թվականի ավարտը: 4)**միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը** Համապատասխան աշխատանքների/միջոցառումների իրականացումը կնպաստի հյուսիս-հարավ /ՌԴ-Վրաստան-ՀՀ-ԻԻՀ/ փոխշահավետ համագործակցության զարգացմանը:
30	**30. Իրան-Հայաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի և ենթակայանի կառուցում** **30.1 Հենասյուների, սարքավորումների ներկրման և ենթակայանի կառուցման, հենասյուների հիմքերի փորման, բետոնավորման, ինչպես նաև հենասյուների և էլեկտրահաղորդման օդային գծերի մոնտաժման աշխատանքների իրականացման ավարտ** **30.1. 1 Հենասյուների, սարքավորումների ներկրման և ենթակայանի կառուցման, հենասյուների հիմքերի փորման, բետոնավորման, ինչպես նաև հենասյուների և էլեկտրահաղորդման օդային գծերի մոնտաժման աշխատանքների իրականացում**

	30.1. 2 Հենասյուների, սարքավորումների ներկրման և ենթակայանի կառուցման, հենասյուների հիմքերի փորման, բետոնավորման, ինչպես նաև հենասյուների և էլեկտրահաղորդման օդային գծերի մոնտաժման աշխատանքների իրականացման ավարտ **30.2 Շահագործման հանձնել էլեկտրահաղորդման օդային գիծը և ենթակայանը** **1) միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման անհրաժեշտությունը բխում է 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի (2021-2026թթ.)» 3.4 կետի «Էներգետիկա» բաժնից, ՀՀ կառավարության 2021 թվականի հունվարի 14-ի N 48-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրից (մինչև 2040 թվականը) և դրա իրագործումն ապահովող ծրագիր-ժամանակացույցից: Իրան-Հայաստան 400 կՎ լարման երկշղթա էլեկտրահաղորդման գծի կառուցումը նպատակաուղղված է գազ էլեկտրաէներգիայի դիմաց ծրագրով հայկական կողմի ստանձնած պարտավորությունների կատարման ապահովմանը, ինչպես նաև էներգետիկայի բնագավառում տարածաշրջանային փոխշահավետ համագործակցության զարգացմանը: **2) կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս Իրան-Հայաստան էլեկտրաէներգիայի փոխանակման հզորությունը կազմում է 300 ՄՎտ: Խնդիրներ են առաջանում էլեկտրահաղորդման գծի կառուցման նպատակով ձեռք բերվող հողերի սեփականատերերի հետ, օդային գծի անտառային տարածքներում տեղակայվող հենարանների և դրանց մոտեցման ճանապարհների շինարարական աշխատանքների հետ: Միջոցառման կապալառու «Սանիր» ընկերությունում (այսուհետ՝ Կապալառու) առկա ֆինանսական խնդիրներով, ինչպես նաև կատարված աշխատանքների և մատուցված ծառայությունների դիմաց մատակարարների և ենթակապալառուների հանդեպ կուտակված պարտքերով պայմանավորված՝ Միջոցառման շրջանակներում արձանագրվել է աշխատանքների իրականացման ընթացքի անկում: **3) առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Համապատասխան մարզպետների աշխատակազմերի, համայնքների և շահագրգիռ այլ մարմինների հետ հողերի կատեգորիաները փոխելու և դրանց մի մասը սեփականության իրավունքով ձեռք բերելու ապահովումը: ՀՀ կառավարությունը 2020 թվականի հունիսի 4-ին ընդունել է «Իրան-Հայաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի կառուցման նպատակով՝ Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության անտառային կոմիտեի «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության անտառային տարածքներում անտառհատման և անտառապատման աշխատանքներ իրականացնելու համար մեկ անձից գնման ընթացակարգով գնման գործընթացներ կազմակերպելու մասին» № 888-Ա որոշումը: Որոշման համաձայն՝ 2020 թվականի հուլիսի 1-ին «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի միջև ստորագրվել է Ընկերության կարիքների համար կանգուն ծառուտի հատման, տեղափոխման և պահեստավորման ծառայությունների մատուցման վերաբերյալ պայմանագիր: Միջոցառման ընթացքը քննարկվել է Իրանի Իսլամական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջկառավարական համատեղ հանձնաժողովի 17-րդ նիստում և փորձագիտական հանձնախմբերի հանդիպումների ընթացքում: Հաշվի առնելով, որ Միջոցառման իրականացումը գտնվում է երկու երկրների համապատասխան նախարարությունների և միջկառավարական հանձնաժողովի անմիջական վերահսկողության ներքո, պայմանավորվածություն է ձեռք բերվել Միջոցառման ֆինանսական հոսքերը կայունացնելու նպատակով քննարկել քառակողմ համաձայնագրի («Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն), SUNIR International FZE, «Սանիր» և Իրանի արտահանման զարգացման բանկ (այսուհետ՝ ԻԱԶԲ) կնքման հարցը, ինչպես նաև յուրաքանչյուր եռամսյակ տեղանքում կազմակերպելու աշխատանքների ընթացքի քննարկում ԻԻՀ էներգետիկայի նախարարի տեղակալի և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալի մասնակցությամբ և դրանց մասին զեկուցել միջկառավարական հանձնաժողովի համանախագահներին: Պայմանավորված Միջոցառման իրականացման ընթացքով՝ աշխատանքների իրականացման ընթացքի երկարաձգմամբ, սահմանված կարգով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համաձայնությամբ քննարկվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև կնքված Իրան-Հայաստան երրորդ էլեկտրահաղորդման գծի և համապատասխան ենթակայանի նախագծման, մշակման, ձեռքբերման, մատակարարման և շինարարության պայմանագրի գործողության ժամկետի երկարաձգման հարցը:

	4) միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Նոր էլեկտրահաղորդման գծի կառուցմամբ նկատելիորեն կբարելավվի ծառայության որակը, զգալիորեն կխթանվի էներգետիկայի բնագավառում տարածաշրջանային փոխշահավետ համագործակցության զարգացումը: Արդյունքում Իրան-Հայաստան էլեկտրաէներգիայի փոխանակման հզորությունը ներկայիս 300 ՄՎտ-ից կհասցվի 1000-1200 ՄՎտ-ի:
31	**Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց (Հայաստան-Վրաստան էլեկտրահաղոդման գիծ/ենթակայաններ) ծրագրի իրականացում** **31.1 220/400 կՎ ենթակայանի և 400 կՎ օդային գծի, ինչպես նաև բարձր լարման հաստատուն հոսանքի փոխակերպիչ կայանի կառուցման մրցութային գործընթացի մեկնարկ** **31.2 220/400 կՎ ենթակայանի և 400 կՎ օդային գծի, ինչպես նաև հաստատուն հոսանքի փոխակերպիչ կայանի կառուցման մեկնարկ և ավարտ** **1) միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման անհրաժեշտությունը բխում է 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի (2021-2026թթ.)» 3.4 կետի «Էներգետիկա» բաժնից, ՀՀ կառավարության 2021 թվականի հունվարի 14-ի N 48-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրից (մինչև 2040 թվականը) և դրա իրագործումն ապահովող ծրագիր-ժամանակացույցից: Հայաստան-Վրաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի կառուցման նպատակը Վրաստանի և Իրանի էներգահամակարգերի հետ կայուն աշխատանքի ապահովումն է՝ նպատակ ունենալով երեք երկրների էներգահամակարգերի համատեղ աշխատանքը զուգահեռ ռեժիմում: Հայաստան-Վրաստան էլեկտրահաղորդման օդային գծի կառուցմամբ զգալիորեն կխթանվի էներգետիկայի բնագավառում տարածաշրջանային հյուսիս-հարավ /ՌԴ-Վրաստան-ՀՀ-ԻԻՀ/ փոխշահավետ համագործակցության զարգացումը: **2) կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** 2017 թվականին որոշում է կայացվել ժամանակավորապես դադարեցնել ծրագիրը և ծախսերի օպտիմալացման նպատակով քննարկել ծրագրի տեխնիկական նոր լուծումների հնարավորությունները: Ծրագրի իրականացման վերաբերյալ տեղի ունեցած բազմաթիվ քննարկումների և ՀՀ վարչապետի մոտ 2019 թվականի հոկտեմբերի 30-ին տեղի ունեցած քննարկման արդյունքներով, որոշում է կայացվել ծրագիրն իրականացնել արդեն իսկ կնքված վարկային և դրամաշնորհային համաձայնագրերով նախատեսված տեխնիկական լուծումներով և ծրագրի շարունակումն իրականացնել ընթացիկ մրցութային գործընթացների դադարեցման և երեք լոտով նոր մրցույթների նախաձեռնման տարբերակով: Բացի այդ, քննարկման արդյունքում, հաշվի առնելով, որ նոր մրցութային գործընթացը ծրագրի իրականացման շրջանակներում ընտրված խորհրդատվական «Fichtner GmbH & Co.KG» ընկերության (այսուհետ՝ Խորհրդատու) համար լրացուցիչ նոր առաջադրանք է, որը ներառված չէ Խորհրդատուի հետ կնքված պայմանագրի ծավալներում և, որ ծրագրի կասեցման ընթացքում կասեցվել է նաև պայմանագիրը, հանձնարարվել է ապահովել խորհրդատվական պայմանագրի վերաակտիվացումը՝ նախատեսելով համապատասխան լրացուցիչ ֆինանսական միջոցներ նոր մրցութային գործընթացի կազմակերպման համար: Խորհրդատուի և ծրագիրն իրականացնող «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ (այսուհետ՝ Պատվիրատու) միջև տեղի ունեցած բանակցությունների արդյունքում Գերմանիայի զարգացման վարկերի բանկի (այսուհետ՝ KfW) և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) վարկային և դրամաշնորհային ծրագրերի կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) համաձայնությամբ 2019 թվականի դեկտեմբերի 17-ին ստորագրվել է ծրագրի շրջանակներում կնքված խորհրդատվական պայմանագրի վերաակտիվացման վերաբերյալ Պայմանագրի No.1 փոփոխությունը, որի արդյունքում վերամեկնարկվել է ծրագրի իրականացումը: Ծրագրի շարունակման վերաբերյալ KfW, Պատվիրատուի և Խորհրդատուի միջև իրականացված բանակցությունների արդյունքում կողմերը համաձայնել են, որ KfW (նաև ծրագրի կասեցմամբ պայմանավորված) պահանջների ապահովման նպատակով անհրաժեշտ է իրականացնել ծրագրի նախապատրաստման լրացուցիչ ուսումնասիրություններ և հետազոտություններ: Խորհրդատուի աջակցությամբ պատրաստվել են ծրագրի գլխավոր կապալառուների ընտրության երեք լոտերով (Լոտ 1՝ Դդմաշեն ենթակայան մուտք/ելք, Լոտ 2՝ Էլեկտրահաղորդման գծեր և Լոտ 3՝ բարձր լարման հաստատուն հոսանքի փոխակերպիչ կայանի (ԲԼՀՀՓԿ) կառուցում) մրցույթների իրականացման նախաորակավորման փաստաթղթերի փաթեթների (այսուհետ՝ ՆՓՓ) նախագծերը: Բոլոր 3 լոտերով գլխավոր կապալառուների

	ընտրության ՆՓՓ-ները սահմանված կարգով՝ KfW-ի համաձայնությունն ստանալուց և Խորհրդի կողմից հաստատվելուց հետո, հրապարակվել են գերմանական առևտրի և ներդրումային հարթակում, ինչպես նաև Նախարարության և Պատվիրատուի պաշտոնական կայքերում: Այնուհետև սահմանված կարգով քննարկելով ներկայացված հայտերը՝ KfW-ի համաձայնությամբ և Խորհրդի որոշմամբ հաստատվել են ծրագրի 3 լոտերով գլխավոր կապալառուների ընտրության մրցույթների նախաորակավորման արդյունքները, որոնց համաձայն՝ որակավորված են ճանաչվել հետևյալ ընկերությունների հայտերը՝ Լոտ 1-ով՝ Siemens Aktiengesellshaft (Գերմանիա), EFACEC Engenharia e Sistemas, S.A. (Պորտուգալիա), Լոտ 2-ով՝ KEC International Limited (Հնդկաստան), Kalpataru Power Transmission limited (Հնդկաստան) և Լոտ 3-ով՝ Siemens Aktiengesellshaft (Գերմանիա), ABB Power Grids Sweden AB /COBRA Instalaciones Y Servicios S.A. Consortium (Շվեդիա/Իսպանիա): Երեք լոտերի վերաբերյալ նախաորակավորման գործընթացի գնահատման արդյունքները սահմանված կարգով հրապարակվել են Գերմանիայի առևտրային և ներդրումային հարթակի, Նախարարության և Պատվիրատուի պաշտոնական կայքերում: Բոլոր հայտատուները տեղեկացվել են գնահատման արդյունքների մասին (որակավորված և չորակավորված): Դրանից հետո Խորհրդատուի կողմից պատրաստված ծրագրի գլխավոր կապալառուների ընտրության երեք լոտերով մրցութային փաստաթղթերը (այսուհետ՝ ՄՓ) սահմանված կարգով KfW-ի հետ համաձայնեցնելուց և Խորհրդի հաստատումից հետո, Խորհրդատուի կողմից ՄՓ-ները սահմանված կարգով տրամադրվել են նախաորակավորված հայտատուներին: Իրականացվում է գլխավոր կապալառուների ընտության մրցութային գործընթաց: **3) առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Լոտ 1-ի և Լոտ 2-ի մասով ՆՓՓ-ները հրապարակվել են 2020 թվականի ապրիլի 20-ին՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետ սահմանելով 2020 թվականի հունիսի 3-ը՝ տեղական ժամանակով ժամը 12:00-ը, իսկ Լոտ 3-ի մասով 2020 թվականի մայիսի 7-ին՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետ սահմանելով 2020թ. հունիսի 22-ը՝ տեղական ժամանակով ժամը 12:00-ն: COVID-19 համաճարակի պատճառով ստեղծված դժվարություններով և սահմանափակումներով պայմանավորված՝ մի շարք հայտատուների խնդրանքներին ընդառաջ գնալով, KfW և Խորհրդի համաձայնությամբ, ծրագրի գլխավոր կապալառուների ընտրության երեք լոտերով մրցույթների իրականացման նախաորակավորման գործընթացի հայտերի ներկայացման վերջնաժամկետները երկարաձգվեցին մինչև 2020 թվականի հուլիսի 7-ը՝ տեղական ժամանակով ժամը 12:00-ն: Այնուհետև, պայմանավորված սուրհանդակ ծառայությունների սահմանափակումներով, մի շարք հայտատուների խնդրանքներին ընդառաջ գնալով՝ KfW և Խորհրդի համաձայնությամբ, ծրագրի գլխավոր կապալառուների ընտրության երեք լոտերով նախաորակավորման գործընթացի հայտերի բնօրինակների ներկայացման վայրը Պատվիրատուի (Հայաստան) փոխարեն սահմանվեց Ֆիխթեր ընկերության գրասենյակը (Գերմանիա, Շտուտգարտ), իսկ հայտերի ներկայացման վերջնաժամկետները երկարաձգվեցին մինչև 2020 թվականի հուլիսի 31-ը՝ գերմանական ժամանակով ժամը 10:00-ն: Վերջնաժամկետի դրությամբ ստացված հայտերը ուսումնասիրելուց և գնահատման հաշվետվությունը կազմելուց հետո, սահմանված կարգով ՆՓՓ-ներ գնահատման հաշվետվությունը ներկայացվել է KfW-ի դիտարկմանը, որից հետո KfW-ը ուսումնասիրելով գնահատման հաշվետվությունը, հայտնել է իր անհամաձայնությունը Լոտ 1-ի և Լոտ 3-ի գնահատման արդյունքների վերաբերյալ և առաջարկել է վերանայել հաշվետվությունը: Հաշվի առնելով Մրցութային հանձնաժողովի անհամաձայնությունը KfW-ի դիրքորոշման հետ՝ Մրցութային հանձնաժողովի միջնորդությամբ KfW-ի Արևելյան Եվրոպայի, Կովկասի, Կենտրոնական Ասիայի դեպարտամենտի տնօրեն Օլաֆ Զիմելկային է դիմել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Հակոբ Վարդանյանը՝ խնդրելով վերջինիս միջնորդությունը հանձնաժողովի մեկնաբանությունները մեկ անգամ ևս բովանդակային դիտարկելու հարցում: Օլաֆ Զիմելկան, վերահաստատելով KfW-ի դիրքորոշումը, հայտնել է, որ չեն կարող տալ հաստատում KfW-ի ներկայացված Նախաորակավորման գնահատման հաշվետվության վերաբերյալ, և խնդրել է վերագնահատել Նախաորակավորման գնահատման հաշվետվությունը: Մրցութային հանձնաժողովը վերանայել և KfW-ի համաձայնեցմանն է ներկայացրել ՆՓՓ-ի գնահատման հաշվետվությունը: KfW-ի համաձայնությունն ստանալուց հետո այն ներկայացվել է Խորհրդի քննարկմանը: Խորհրդի համաձայնություն ստանալուց հետո կիրականացվի գլխավոր կապալառուների ընտության մրցութային գործընթաց: Պայմանավորված ծրագրի գլխավոր կապալառուների ընտրության գործընթացների ժամանակահատվածներով՝ փոփոխություններ են կատարվել ծրագրի շրջանակներում կնքված վարկային և դրամաշնորհային համաձայնագրերում՝ համաձայնագրերի վերջնաժամկետները երակարաձգվել են մինչև 2025 թվականի դեկտեմբերի 30-ը և 2027 թվականի դեկտեմբերի 31-ը: Հաշվի առնելով, որ սահմանված նպատակների շրջանակներում մինչև ծրագրի կասեցումն իրականացված ծրագրի նախապատրաստման միջոցառումների արդյունքում միջոցները բավարար չեն նշված լրացուցիչ ուսումնասիրությունների և հետազոտությունների համար, բանակցությունների արդյունքում

	KfW հայտնել է, որ Գերմանիայի կառավարությունը պատրաստ է այդ նպատակով տրամադրել 550 000 եվրո գումարի չափով լրացուցիչ դրամաշնորհային միջոցներ: KfW-ի, Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության և ի դեմս ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և Պատվիրատուի միջև կնքվել է Փորձագիտական ծառայություններ մատուցելու համար ֆինանսավորման համաձայնագիր՝ 550 000 եվրոյի չափով օժանդակություն տրամադրելու մասին: **4) միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Նոր էլեկտրահաղորդման գծերի կառուցմամբ նկատելիորեն կբարելավվի ծառայության որակը, զգալիորեն կխթանվի էներգետիկայի բնագավառում տարածաշրջանային փոխշահավետ համագործակցության զարգացումը: Առաջին փուլի արդյունքում Հայաստան-Վրաստան էլեկտրաէներգիայի փոխանակման հզորությունը ներկայիս 200 ՄՎտ-ից կհասցվի 350 ՄՎտ-ի:
32	**Վերականգնվող էներգիայի աղբյուրների արդյունավետ օգտագործում և զարգացման խթանում** **32.1 Մասրիկ-1 55 ՄՎտ պիկային հզորությամբ արևային ֆոտովոլտային էլեկտրական կայանի կառուցում** **32.2 «Այգ-1 200 ՄՎտ հզորության արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցում** **32.3 Աջակցել գումարային մոտ 500 ՄՎտ հզորությամբ հողմային էլեկտրական կայանների կառուցման մասնավոր ծրագրերի իրականացման և ներդրումային ծրագրերի հաստատման գործընթացներին** **32. 4 Ինքնահոս ջրային ռեսուրսներն էներգետիկ նպատակներով օգտագործման վերաբերյալ հայեցակարգի մշակում** **1) միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման անհրաժեշտությունը բխում է 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի (2021-2026թթ.)» 3.4 կետի «Էներգետիկա» բաժնից, ՀՀ կառավարության 2021 թվականի հունվարի 14-ի N 48-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրից (մինչև 2040 թվականը) և դրա իրագործումն ապահովող ծրագիր-ժամանակացույցից: 32.5 միջոցառումը բխում է 09,06,2021թ. Շիրակի մարզի՝ Մանթաշ համայնքում ՀՀ վարչապետի նախընտրական խոստումներից: Միջոցառման իրականացումն ուղղված է վերականգնվող էներգետիկայի զարգացումը խթանող նոր հզորությունների ստեղծմանը: **2) կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Մասրիկ-1 55 ՄՎտ պիկային հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանի կառուցման ծրագրի համար հայտարարված միջազգային մրցույթում նվազագույն սակագին է ներկայացրել նիդեռլանդական «Ֆոտովատիո Ռենյուաբլ Վենչըս» և իսպանական «ԷՖԷսԷլ Սոլար» ընկերություններից կազմված կոնսորցիումը: Այն կազմում է 4.19 դոլար ցենտ 1 կՎտxժ- ի համար (շուրջ 20.11 ՀՀ դրամ) առանց ԱԱՀ-ի: ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1922-Լ որոշմամբ հավանության արժանացած «Մասդար Արմենիա ծրագիր» ներդրումային ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել «Այգ-1» 200 ՄՎտ արևային ֆոտովոլտային կայանի կառուցում: ՀՀ կառավարության 2021 թվականի հունիսի 18-ի N 1022-Ա որոշմամբ հաստատվել է Հայաստանում արդյունաբերական մասշտաբի «Այգ-1» 200 ՄՎտ հզորության արևային ֆոտովոլտային կայանի կառուցման ծրագրի շրջանակներում կազմակերպված մրցույթի ընթացակարգի արդյունքները և հաղթող է ճանաչվել «Աբու Դաբի Ֆյուչեր Էներջի Քոմփանի» ՀԲԸ («Մասդար») (Abu Dhabi Future Energy Company PJSC Masdar), Արաբական Միացյալ Էմիրություններ ընկերությունը: Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման մինչև 2040 թվականը ռազմավարական ծրագրի 1.13 կետի համաձայն նախատեսվում է հողմային կայանների կառուցում 2025-2040 թթ ընթացքում, փոքր և համակարգային նշանակության մինչև 500 ՄՎտ հզորությամբ՝ մասնավոր ներդրողների կողմից, մրցակցային սակագնային առաջարկների առկայության դեպքում: Կուսումնասիրվի առկա ինքնահոս ջրային պաշարների ներուժը՝ դրանք էներգետիկ նպատակներով օգտագործելու համար: **3) առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Առաջարկվում է պետության կողմից աջակցություն ցուցաբերել մասնավոր ներդրողներին՝ գործընթացի ողջ ընթացքում: **4) միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը** Էներգետիկ անկախության մակարդակի բարձրացում՝ մինչև 2030թ. արևային էներգիայի արտադրության մասնաբաժինը հասցնելով 15% կամ 1000ՄՎտ:

33	**Օրենսդրական դաշտի կատարելագործում և համապատասխանեցում ստանձնած միջազգային պարտավորություններին** **33.1 էներգետիկայի բնագավառի մի շարք տեխնիկական կանոնակարգեր տեխնիկական կանոնակարգման դաշտից դուրս բերում և նոր իրավական ակտերի մշակում** **1) միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի (2021-2026թթ.)» 3.4 կետի «Էներգետիկա» բաժնից, «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի «ը» ենթակետի և 5.1-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» ենթակետի պահանջներից, որոնց համաձայն Էներգետիկայի բնագավառում պետական քաղաքականության հիմնական սկզբունքներից է էներգետիկայի բնագավառի անվտանգության ապահովումը և էներգետիկայի բնագավառում իրականացվող նորագույն և բարձր տեխնոլոգիաների ներդրման խթանման և զարգացմանն ուղղված շարունակական միջոցառումները: Հայաստանի Հանրապետությունում գործող էներգետիկայի բնագավառի տեխնիկական կանոնակարգերի թվում առկա են այնպիսիք, որոնք համաձայն նոր օրենսդրության պահանջների, չեն կարող հանդիսանալ որպես տեխնիկական կանոնակարգեր և հետևաբար, չեն կարող գրանցվել ոլորտի կանոնակարգումն իրականացնող համակարգող մարմնի կողմից վարվող տեխնիկական կանոնակարգերի գրանցամատյանում: Ելնելով վերոգրյալից, ՀՀ էներգետիկայի բնագավառում գործող տեխնիկական կանոնակարգերը «Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենքին համապատասխանեցնելու դեպքում անհրաժեշտ է մշակել ՀՀ կառավարության նորմատիվ որոշման նոր նախագծեր, նկատի ունենալով, որ էներգահամակարգի ընկերություններն ունեն սեփականության տարբեր ձևեր և դրանք աշխատում են ՀՀ օրենսդրության շրջանակներում, իսկ խնդրո առարկա նորմատիվ ակտերը պարունակում են նաև այնպիսի նորմեր, որոնք պարտադիր են կատարման բոլոր կազմակերպությունների համար, անկախ դրանց սեփականության ձևից: Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության և Ատոմային էներգիայի Եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև ստորագրված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը պարտավորվել է սահմանված ժամկետներում աստիճանաբար մոտարկել իր օրենսդրությունը Եվրոպական միության համաձայնագրով ֆիքսված օրենսդրությանը, ինչպես նաև անհրաժեշտ է հնարավորինս նվազեցնել կախվածությունը ներկրվող ածխաջրածնային էներգակիրներից՝ դրանց այլընտրանք հանդիսացող սեփական վերականգնվող էներգառեսուրսների առավելագույն և արդյունավետ կիրառման նպատակով: **2) կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս էներգետիկայի բնագավառում գործող մի շարք տեխնիկական կանոնակարգեր հաստատվել են «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, որը ուժը կորցրել է պայմանավորված նոր օրենքի ընդունմամբ: Քանի որ համաձայն «Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենքի, սահմանազատվել են ծառայություններին և արտադրանքին ներկայացվող պահանջները, ապա նշված տեխնիկական կանոնակարգերը նոր օրենսդրությամբ չեն կարող հանդիսանալ որպես տեխնիկական կանոնակարգեր և հետևաբար չեն կարող գրանցվել ոլորտի կանոնակարգումն իրականացնող համակարգող մարմնի կողմից վարվող տեխնիկական կանոնակարգերի գրանցամատյանում, որի հետևանքով իրավական դաշտը բաց կմնա: Ուստի, անհրաժեշտ է մշակել նոր նորմատիվ իրավական ակտեր, որոնք կհամապատասխանեն «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի «ը» և 5.1-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» ենթակետերի պահանջներին, ինչպես նաև ԵԱՏՄ ստանձնած պարտավորություններին: ՀՀ օրենսդրությունը չի նախատեսում որոշակի թիրախներ վերականգնվող էներգետիկայի հեռանկարային զարգացման համար: ՀՀ օրենսդրությամբ ամրագրված չեն նաև որոշ տերմինների սահմանումները, ինչպես նաև ածխաջրածնային վառելիքներին այլընտրանք հանդիսացող էներգակիրների շուկայահանումը և դրա համար համապատասխան ենթակառուցվածքների զարգացումը ապահովող համապատասխան դրույթները: **3) առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Ուժը կորցրած ճանաչել էներգետիկայի բնագավառի մի շարք տեխնիկական կանոնակարգեր, մշակել էներգետիկ օբյեկտների շահագործման և անվտանգության նոր կանոններ ու պահանջներ, ինչպես նաև փոփոխություններ և լրացումներ կատարել «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում: Միջոցառման մշակման աշխատանքներում համակատարող հանդիսանում է ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը՝ որպես ՀՀ-ում տեխնիկական կանոնակարգման պետական լիազոր մարմին:

	4) միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Կսահմանվեն անվտանգության նոր պահանջներ մատակարարների և բնակիչ սպառողների համար՝ անկախ սեփականության ձևից: Կստեղծվեն օրենսդրական հիմքեր վերականգնվող էներգետիկայի հեռանկարային թիրախային զարգացման, ինչպես նաև ածխաջրածնային վառելիքներին այլընտրանք հանդիսացող էներգակիրների շուկայահանմամ և դրա համար համապատասխան ենթակառուցվածքների զարգացման համար:
34	**Հայաստանի Հանրապետության էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի 2022-2030 թվականների ազգային ծրագրի մշակում** **34.1 Ազգային նոր ծրագրի մշակման աշխատանքների իրականացում** **1) միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման անհրաժեշտությունը բխում է 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի (2021-2026թթ.)» 3.4 կետի «Էներգետիկա» բաժնից, «Հայաստանի վերափոխման ռազմավարություն մինչև 2050» փաստաթղթի 13.1 կետից, ՀՀ կառավարության 2021 թվականի հունվարի 14-ի N 48-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրից (մինչև 2040 թվականը) և դրա իրագործումն ապահովող ծրագիր-ժամանակացույցից, «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի «ժ» ենթակետի պահանջներից: Հաշվի առնելով էներգետիկ անվտանգության կարևորությունը երկրի տնտեսության զարգացման և ազգային անվտանգության համար, ՀՀ-ը որդեգրել է այն ամրապնդելու և բարձրացնելու քաղաքականությունը և շարունակական քայլեր է ձեռնարկում այդ ուղղությամբ: ՀՀ կառավարության նոր ազգային ծրագրի մշակումը պայմանավորված է ՀՀ տնտեսական և էներգետիկ անվտանգության, էներգետիկ համակարգի հուսալիության աստիճանի բարձրացման, տնտեսական և էներգետիկ անկախության ամրապնդման, էներգախնայողությունը և վերականգնվող էներգետիկայի զարգացումը խթանող նոր արտադրությունների ստեղծման և ծառայությունների կազմակերպման, ինչպես նաև շրջակա միջավայրի, մարդու առողջության վրա տեխնածին ազդեցության նվազեցմանն առնչվող հանգամանքներով: **2) կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Էներգախնայողության խթանմանն ուղղված հիմնական փաստաթղթերից մեկը Հայաստանի Հանրապետության էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ազգային ծրագիրն է, որը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից 2007թ. № 2 արձանագրային որոշմամբ: Այդ ծրագիրը բխում է «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի «ժ» ենթակետի դրույթից և սահմանում է միջոցառումներ մինչև 2020թ. ընկած ժամանակահատվածի համար: Ըստ այդ ծրագրի էներգախնայողության խթանման համար սահմանված են գործողություններ տասնամյա հեռանկարում՝ 2011-2020թթ.: Միաժամանակ սահմանված են փուլային մոտեցում՝ այդ գործողությունների և համապատասխան թիրախների վերանայման, դրանց արդյունքների գնահատման, փոփոխված իրավիճակի գնահատման արդյունքում՝ նոր գործողությունների և թիրախների սահմանման նպատակով: Ըստ այդմ, նոր ազգային ծրագրի մշակումը հանդիսանալու է 2011-2020 թվականների Հայաստանի Հանրապետության էներգախնայողության գործողությունների ազգային ծրագրի տրամաբանական շարունակությունը՝ հաջորդ տասնամյակի համար: **3) առկա խնդիրների առաջարկվող լուծումները.** 2022-2030 թվականների հարար նոր ազգային ծարագրի մշակում: **4) միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Ազգային ծրագրով 2022-2030 թվականների համար կսահմանվեն նոր ճյուղային միջոցառումներ և թիրախներ, որոնք կօժանդակեն ՀՀ էներգախնայողության քաղաքականության հետագա ձևավորմանը և դրա իրականացման կոնկրետ քայլերի որոշակիացմանը:
35	**Գիտելիքահենք և խելացի էներգետիկա ունենալու համար ծրագրերի իրականացում** **35.1 Էներգահամակարգի ընկերություններում նորարարական տեխնոլոգիաների ներդրում** **1) միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման անհրաժեշտությունը բխում է 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի (2021-2026թթ.)» 3.4 կետի «Էներգետիկա» բաժնից, ՀՀ կառավարության 2021 թվականի հունվարի 14-ի N 48-Լ որոշմամբ հաստատված

	Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրից (մինչև 2040 թվականը) և դրա իրագործումն ապահովող ծրագիր-ժամանակացույցից: **2) կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Կայուն և խելացի էներգետիկան տնտեսության դինամիկ զարգացման կարևորագույն պայմաններից մեկն է: Հայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը, մրցունակ լինելով համաշխարհային շուկայում, պետք է նաև լայն կիրառություն գտնի էներգետիկայի բնագավառի տարբեր խնդիրների լուծման համար: Այս առնչությամբ առաջինը կլինի էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում առևտրի իրականացումը, որ հաջորդ մի քանի տարիների ընթացքում ամբողջությամբ կիրականացվի էլեկտրոնային հարթակի միջոցով: Մեծածախ շուկայի էլեկտրոնային առևտրի հարթակին լրացնելու կգա բաշխման ցանցին միացված սպառողների էլեկտրաէներգիայի հաշվառման համակարգերից սպառման ծավալների և այլ անհրաժեշտ ցուցանիշների մասին տեղեկատվությունը հեռահար եղանակով փոխանցելու և կառավարելու միասնական տեղեկատվական համակարգը, որը կխթանի էլեկտրաէներգիայի մանրածախ շուկայի ազատականացման գործընթացը: Նույն ժամանակ էլեկտրաէներգետիկական համակարգում կներդրվի SCADA կառավարման ծրագիրը, հնարավորություն ընձեռելով համակարգի օպերատորին ոչ միայն հավաքագրել անհրաժեշտ տվյալներ, այլ նաև իրականացնել համակարգային նշանակության սարքավորումների հեռահար ավտոմատ կառավարում: Այս համատեքստում առաջ կգան նաև կիբեռանվտանգության ապահովման նոր մարտահրավերներ, և էներգետիկայի բնագավառի բնականոն թվային փոխակերպումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է դիտարկել տեղեկատվական անվտանգության գործնական իրականացման հիմնական միջազգային ստանդարտների ներդրում: **3) առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Էներգահամակարգի ընկերություններում տեղեկատվական անվտանգության միջազգային ստանդարտներ կներդրվեն, որոնցից առաջնահերթ են ISO/IEC 27000-ը Security Management Systems (ISMS) standards և NIST SP 800-53 Security and Privacy Controls for Information Systems and Organizations ստանդարտները: Դրանք ներառում են կազմակերպչական և տեխնիկական պահանջների նկարագրություն՝ տեղեկատվական անվտանգության ապահովման և ամբողջական կառավարման համակարգի մշակման համար: **4) միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Ամբողջությամբ կնպաստի կիբեռանվտանգության և թվային փոխակերպման ապահովմանը:
36	**Բնակարանների և անհատական բնակելի տների էներգաարդյունավետ վերանորոգման աշխատանքների պետական աջակցության ծրագրի իրականացում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառումը բխում է ՀՀ կառավարության 2022 թվականի ապրիլի 15-ի №520-Լ և 2022 թվականի մայիսի 26-ի №775-Լ որոշումների պահանջներից: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները** Հայաստանի Հանրապետությունում՝ վիճակագրական տվյալների համաձայն, առկա է 19183 բազմաբնակարան շենք՝ 446.0 հազար բնակարաններով, և 417,3 հազար բնակելի տուն (ընդհանուր առմամբ՝ շուրջ 860.0 հազար բնակելի միավոր): Առկա բնակարանային ֆոնդի շուրջ 80%-ը (մոտ 690.0 հազար բնակելի միավոր) շահագործման է հանձնվել խորհրդային տարիներին և այդ ֆոնդի զգալի մասում՝ սեփականաշնորհման գործընթացից ի վեր, վերանորոգման աշխատանքներ չեն իրականացվել: Բնակարանային ֆոնդի նշված հատվածում իրականացված չեն նաև էներգաարդյունավետության միջոցառումներ, ինչի արդյունքում՝ թեև տնային տնտեսություններն իրենց եկամուտների զգալի (եթե ոչ հիմնական) մասն ուղղում են էներգիայի սպառման դիմաց ծախսերի վճարմանը, չեն կարողանում բավարար չափով ապահովել իրենց բնակելի տարածքների լիարժեք ջեռուցումը: Այդ իսկ նպատակով մշակվել և ընդունվել են ՀՀ կառավարության 2022 թվականի ապրիլի 15-ի №520-Լ և 2022 թվականի մայիսի 26-ի №775-Լ որոշումները: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** ՀՀ կառավարության 2022 թվականի ապրիլի 15-ի №520-Լ և 2022 թվականի մայիսի 26-ի №775-Լ որոշումներով նախատեսվում է ներդնել բնակարանների և անհատական բնակելի տների էներգաարդյունավետ վերանորոգման աշխատանքների պետական աջակցության ծրագիր (այսուհետ՝ Ծրագիր), որի շրջանակներում մատչելի վերանորոգման վարկերի (այսուհետ՝ Վարկ) տրամադրմամբ հնարավորություն կստեղծվի բնակչության համար ապահովել բնակարանային պայմանների և էներգաարդյունավետության բարելավումը՝ զուգահեռաբար ներգրավելով քաղաքաշինության բնագավառում առկա չիրացված ներուժը:

	2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է բնակարանների և բնակելի տների էներգաարդյունավետ վերանորոգման վարկերի մասով ցուցաբերել պետական աջակցություն, ինչը հնարավորություն կտա բարելավել բնակչության բնակարանային պայմանները:
37	**Կանոնավոր ուղևորափոխադրումների կանոնակարգում** **1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման անհրաժեշտությունը բխում է 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի (2021-2026թթ.)» 3.1 կետի «Տրանսպորտ» բաժնից: Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է բոլոր բնակավայրերը մշտական և հարմարավետ տրանսպորտային կապով ապահովելը, մատուցվող ծառայությունների որակական բարելավումը: **1.2. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս հանրապետությունում բազմաթիվ բնակավայրեր զրկված են կանոնավոր ուղևորափոխադրումներից, շահագործվող տրանսպորտային միջոցների գերակշիռ մասը ենթակա է փոխարինման: Տաքսամոտորային փոխադրումների ազատականացումը իր հերթին բացասաբար է անդրադառնում կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների գործունեության վրա: **1.3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Օրենսդրորեն կանոնակարգել տաքսամոտորային փոխադրումները, փոխադրումներում ներգրավել նոր կազմակերպությունների՝ նոր տրանսպորտայիին միջոցներով: Քարտեզագրել երթուղիները, մոբայլ հավելվածի միջոցով ստեղծել հնարավորություն ստանալու տեղեկատվություն երթերի, մեկնման ժամերի, սկզբնակետ/վերջնակետերի վերաբերյալ: Ներդնել տոմսավորման էլեկտրոնային համակարգ: Ներդնել էլեկտրոնային երթակարգավարական ծառայություն, որի միջոցով կիրականացվի երթակարգավարական ծառայությունը և վերահսկողությունը: **2. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը** Ուղևորափոխադրումների ծավալների ավելացում, երթևեկության անվտանգության մակարդակի և մատուցվող ծառայությունների որակի բարձրացում: **3. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ** 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի (2021-2026թթ.)» 3.1 կետի «Տրանսպորտ» բաժին և Հայաստանի վերափոխման ռազմավարության 9.3.2-րդ կետ:
38	**Միջազգային համաձայնագրերով ստանձնած պարտավորությունների կատարում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի (2021-2026թթ.)» 3.1 կետի «Տրանսպորտ» բաժնից և ՀՀ վարչապետի 01.06.2019թ. թիվ 666-Լ որոշմամբ հաստատված ԵՄ և ատոմային էներգետիկայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կիրարկման ճանապարհային քարտեզի «Տրանսպորտ» բաժնի 20-րդ կետի կատարման ապահովմամբ: Միջոցառման նպատակը ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառում Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարումն է: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ըստ ԵԱՏՄ և ԵՄ կանոնակարգերի անհրաժեշտ է հանրապետությունում ներդնել վթարների դեպքում արագ արձագանքման և ճանապարհային վճարների գանձման միասնական էլեկտրոնային համակարգեր, ինչպես նաև գործարկել տրանսպորտային միջոցների կշռման կայանները: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

	Ներդնել նշված համակարգերը՝ ապահովելով վթարների դեպքում օպերատիվ ծառայությունների արագ արձագանքման և ճանապարհների վճարների միասնական չափերի և առանց խտրականությունների գանձման հնարավորությունները: 37. 1-րդ կետի միջոցառման իրականացման համակատարող հանդիսանում է ՀՀ ներքին գործերի նախարարությունը՝ որպես ՀՀ-ում արագ արձագանքման համակարգում փրկարարական, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական և հրդեհաշիջման աշխատանքներ իրականացնող պետական լիազոր մարմին: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Ինտեգրում միջազգային կանոնակարգերին: **3. Կապը ռազմավարական փաստաթղթեր հետ** 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի (2021-2026թթ.)» 3.1 կետի «Տրանսպորտ» բաժին, ՀՀ վարչապետի 01.06.2019թ. թիվ 666-Լ որոշմամբ հաստատված ԵՄ և ատոմային էներգետիկայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կիրարկման ճանապարհային քարտեզի «Տրանսպորտ» բաժնի 20-րդ կետ և Հայաստանի վերափոխման ռազմավարության 3.2.1-րդ կետ:
39	**Ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառի կանոնակարգում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ վարչապետի 01.06.2019թ. թիվ 666-Լ որոշմամբ հաստատված ԵՄ և ատոմային էներգետիկայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կիրարկման ճանապարհային քարտեզի «Տրանսպորտ» բաժնի 23-րդ կետի կատարման ապահովմամբ: Միջոցառման նպատակը ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառում նոր ու ժամանակակից պահանջների սահմանումն է: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Բնագավառի օրենսդրությունը կորցրել է արդիականությունը, չկա սահմանված զարգացման հստակ ռազմավարություն, համակարգը արդիականացնելը հրատապ լուծում է պահանջում: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** **39.1 Ավտոմոբիլային տրանսպորտով վտանգավոր բեռների փոխադրման պահանջները սահմանող օրենսդրության մշակում և ընդունում** **39.2 «Տրանսպորտի բնագավառի բարեփոխումների և շուկայի կարգավորման ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում** **2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Փոխադրումների զարգացում, անվտանգության համալիր միջոցառումների իրականացում: **3. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ** ՀՀ վարչապետի 01.06.2019թ. թիվ 666-Լ որոշմամբ հաստատված ԵՄ և ատոմային էներգետիկայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կիրարկման ճանապարհային քարտեզի «Տրանսպորտ» բաժնի 23-րդ կետ:
40	**Շահագործվող տրանսպորտային միջոցների թարմացում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է շահագործվող տրանսպորտային պարկի թարմացման և երթևեկության անվտանգության բարձրացման կարևորությունից: **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Չկա գործող համակարգ հին մեքենաները նորով փոխարինելու համար, ինչպիսիք մեծ հաջողությամբ գործում են բազմաթիվ երկրներում: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Մշակել համապատասխան իրավական ակտերի նախագծեր խնդրի կարգավորման ուղղությամբ: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Տրանսպորտային պարկի թարմացում, երթևեկության անվտանգության սպառնալիքների նվազեցում:

41	**Միջպետական, հանրապետական և տեղական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների որակի և երկարակեցության շարունակական բարձրացում** **41.1 Միջպետական, հանրապետական և տեղական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների նորոգում (հիմնանորոգում, միջին նորոգում), վերակառուցում և կառուցում** **1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջպետական, հանրապետական և տեղական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների նորոգում (հիմնանորոգում, միջին նորոգում), վերակառուցում և կառուցում միջոցառման համար հիմք է հանդիսացել ՀՀ կառավարության ծրագրի 3.2 գլխի 3-րդ պարբերության 1-ին մասի, ինչպես նաև «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի պահանջները, և բխում է Հայաստանը՝ տարածաշրջանային կարևոր ցամաքային տրանսպորտային հանգույց դարձնելու ՀՀ 2020-2050թթ. վերափոխման ռազմավարության նպատակներից և դրա նպատակն է մշտապես ապահովել ՀՀ ընդհանուր օգտագործման միջպետական, հանրապետական և տեղական նշանակության ճանապարհների և դրանց վրա գտնվող կառույցների որակի շարունակական բարձրացումը, որը համապատասխանում է տարվա ցանկացած ժամանակ անվտանգ և անխափան երթևեկության ապահովման պահանջներին: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում լայն թափով իրականացվում են ճանապարհների հիմնանորոգման և միջին նորագման աշխատանքներ: Մասնավորապես նախորդ 3 տարիներին տարեկան միջին ճանապարհաշինական աշխատանքները ավելի քան 3.5 անգամ գերազանցել են դրան նախորդած 10 տարիների միջին ծավալները: Նորոգել և հիմնանորոգել ենք շուրջ 1300 կմ ճանապարհ: Նախորդ 10 տարիներին այդ թիվը եղել է 1681 կմ: Այս ճանապարհներից 1030 կմ-ը կառուցվել է պետական բյուջեի միջոցներից, մինչդեռ 2008-2017 թվականներին պետական միջոցներից ֆինանսավորվել է ընդամենը 742 կմ: Ճանապարհային ցանցում մինչև 2017 թվականն արված ներդրումներն ու կատարված աշխատանքներն իրականացվել են մեծապես միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից տրամադրվող վարկային միջոցներից: Պետական բյուջեի միջոցներով սահմանամերձ 11 համայնքներում հիմնանորոգվել է շուրջ 20 կմ ճանապարհ և 3 կամուրջ: Սակայն պետք է նշել, որ չնայած տեղ գտած տեսանելի դրական տեղաշարժերին՝ Հայաստանում դեռևս ճանապարհները շարունակում են մնալ վատ վիճակում, որոնց վերականգնման ու պահպանության համար դեռևս ներդրումների կարիք կա: Երկրի առաջընթացի հիմքում տարածքային կայուն զարգացումն է, բոլոր տարածքների համաչափ զարգացման ապահովումը: Իսկ տնտեսական իրավիճակի բարելավման, տարածքային համաչափ զարգացման, համաշխարհային տնտեսական կապերին ինտեգրման կարևոր նախադրյալներից մեկը ճանապարհային ցանցի բարելավումն է: **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Առաջիկա հինգ տարիների ընթացքում շարունակվելու է Հայաստանի ողջ ճանապարհային ցանցի արդիականացումը: Արդյունքում ստեղծվելու է անվտանգ, արդյունավետ, էկոլոգիապես հնարավորինս անվնաս ճանապարհային ցանց, որը կբավարարի նաև միջազգային փոխադրողների պահանջներին: Տնտեսվարողների համար կկրճատվեն երթևեկության տևողությունը և տրանսպորտային ծախսերը: Իր հերթին սա կխթանի առևտուրը և տնտեսական զարգացումը: Հատկացվող ֆինանսական միջոցների շրջանակներում նախատեսվում է հիմնանորոգել առաջնային վերանորոգման կարիք ունեցող ճանապարհահատվածները; Մինչև 2026 թվականը վերանորոգելու է շուրջ 2600 կմ ճանապարհահատվածներ: Մինչև 2026 թվականը վերանորոգելու է շուրջ 2600 կմ ճանապարհահատվածներ: Մասնավորապես հատկանշական է, որ ավարտվել է Հ-46, Մ-2/-Տաթև-Աղվանի-/Մ-2/(Սյունիք) ավտոճանապարհի կմ25+000-կմ37+500 հատվածի վերակառուցման աշխատանքները: Մինչև 2021 թվականի ավարտը շահագործման կհանձնվի Հ-46 ավտոճանապարհի կմ37+500-կմ55+000 և կմ55+000-կմ68+000 հատվածների վերակառուցման աշխատանքները: 2021 թվականին սկսվելու և 2022 թվականին ավարտին է հասցվելու Հ-36, /Մ-4/ (Իջևան) - Նավուր - Բերդ – Այգեպար հանրապետական նշանակության ճանապարհի կմ5+000-կմ42+100 Գանձաքար-Իծաքար բարձր մակարդակի ճանապարհահատվածի կառուցումը: 2022-2026 թվականների ընթացքում կիրականացվեն նաև. 1) ՀՀ Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնքում գտնվող դեպի Կիպլոպյան ամրոց տանող ճանապարհի հիմնանորոգումը. 2) Տանձավեր-Շուռնուխ (Գորիսի հատվածից դեպի Շուռնուխի հատված) ճանապարհի կառուցում.

	3) S-3-52, /Մ-5/–Ամասիա–Նալբանդյան(S-3-11)–Ջանֆիդա–Փշատավան – /Հ-15/ (Արգավանդ) տեղական նշանակության ավտոճանապարհի հիմնանորոգումը. 4) S-5-23, /Մ-3/ - Սարամեջ տեղական նշանակության ավտոճանապարհի հիմնանորոգումը. 5) S-3-38, /S-3-37/ – Նորակերտ տեղական նշանակության ավտոճանապարհի հիմնանորոգումը: **2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** • Յուրաքանչյուր տարի շուրջ 500կմ նորոգված, հիմնանորոգված և վերակառուցված ճանապարհներ: • Ավտոմոբիլային ճանապարհների բարելավում՝ ապահովելով անվտանգ երթևեկություն, արդյունավետ, էկոլոգիապես հնարավորինս անվնաս ճանապարհային ցանց, որը կբավարարի նաև միջազգային փոխադրողների պահանջներին: • Տնտեսվարողների համար երթևեկության տևողության և տրանսպորտային ծախսերի կրճատում, ինչը իր հերթին կխթանի առևտուրը և տնտեսական զարգացումը:
42	**Թունելների և կամուրջների վերականգնում** **42.1 Թունելների և կամուրջների հիմնանորոգում, նորոգում, վերակառուցում, մասնավորապես՝ Դիլիջանի և Պուշկինի թունելների վերականգնում** **1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Թունելների և կամուրջների հիմնանորոգում, նորոգում, վերակառուցում միջոցառման համար հիմք է հանդիսացել ՀՀ կառավարության ծրագրի 3.2 գլխի 3-րդ պարբերության 2-րդ մասի, ինչպես նաև «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի պահանջները և դրա նպատակն է հատուկ պահպանման հանձնված թունելների և կամուրջների վերականգնումը: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող թունելների և կամուրջների պահպանման աշխատանքների կատարման և ընդունման կարգերը հաստատված են ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 07.12.2010թ. N 710-Ն հրամանով: Առանձին պահպանման հանձնվող թունելների և կամուրջների պահպանման հիմնական խնդիրն է՝ մշտապես ապահովել դրանց պահպանվածությունն այնպիսի վիճակում, որը համապատասխանում է անվտանգ և անխափան երթևեկության ապահովման պահանջներին: ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող թունելների պահպանման հիմնական խնդիրն է՝ թունելների և կամուրջների կառույցների, սարքավորումների և այլ տարրերի վնասվածքների առաջացման կանխարգելումը, որի համար իրականացնել թունելների զննման, հսկողության, խնամքի և ընթացիկ նորոգման աշխատանքներ: **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Սահմանված նորմերին համապատասխան թունելների և կամուրջների հիմնանորոգման, նորոգման, վերակառուցման աշխատանքների իրականացում: **2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Յուրաքանչյուր տարի ՀՀ պետական բյուջեով նախատեսված կամուրջների նորոգման, հիմնանորոգման և վերակառուցման աշխատանքների իրականացում, Դիլիջանի և Պուշկինի թունելների վերականգման նախագծանախահաշվային փաստաթղթերը առկա են: ՀՀ ավտոմոբիլային ճանապարհներին գտնվող թունելների և կամուրջների անվտանգ երթևեկության ապահովում
43	**Ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի բարելավում** **43.1 Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ճանապարհային երթևեկության կազմակերպման տեխնիկական միջոցներով (ճանապարհային նշաններ, ճանապարհային լուսացույցներ, ճանապարհային ցանկապատներ, ճանապարհային գծանշում) վերազինում** **1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի բարելավման միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել ՀՀ կառավարության ծրագրի 3.2 գլխի 3-րդ պարբերության 3-րդ մասի, ինչպես նաև «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի «բ», «գ» և «դ» կետերի պահանջները և դրա նպատակն է ստեղծել ճանապարհային երթևեկության կազմակերպման տեխնիկական միջոցների (ճանապարհային նշաններ, ճանապարհային լուսացույցներ, ճանապարհային ցանկապատներ,

	ճանապարհային գծանշում) բարելավված ստանդարտներ, ճանապարհային նշանների տարաբաշխումների հաստատված նախագծեր: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Վերջին տարիներին առաջացած ճանապարհատրանսպորտային պատահարների մեծ մասը պայմանավորված է վնասված, հնացած և բացակայող ճանապարհային երթևեկության կահավորանքով, որը արդիականացման անհրաժեշտություն ունի:: **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Առաջարկվում է ավտոմոբիլային ճանապարհների այն մասերում որտեղ անհրաժեշտ են սակայն բացակայում են ճանապարհային ճանապարհային երթևեկության կահավորանքը: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Երթևեկության մանակիցների անվտանգության մակարդակի բարելավում: Ճանապարհային երթևեկության կազմակերպման տեխնիկական միջոցների (ճանապարհային նշաններ, այդ թվում տեղեկատվություն պահանջող ճանապարհային նշաները, ճանապարհային լուսացույցներ, ճանապարհային ցանկապատներ, ճանապարհային գծանշում) վերազինում: Ճանապարհային նշանների տարաբաշխումների հաստատված նախագծի առկայություն:
44	**Ճանապարհային անվտանգության մակարդակի բարձրացում՝ «սև կետերի» բարելավում** **44.1 ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների «սև կետերի» գույքագրում և դրանց վերացման նպատակով ճանապարհատրանսպորտային պատահարների տվյալների վերլուծության հիման վրա անվտանգության միջոցառումների շարունակական իրականացում** 1. **Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել ՀՀ կառավարության ծրագրի 3.2 գլխի 3-րդ պարբերության 4-րդ մասի, ինչպես նաև «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի պահանջները: Ճանապարհային անվտանգության խնդիրը դիտարկվում է որպես հիմնական խնդիր և հրատապ առաջնահերթություն Հայաստանի Հանրապետության ճանապարհային անվտանգության հինգ տարվա (2017-2021թթ.) ազգային ռազմավարությամբ: Ճանապարհների անվտանգության մակարդակի բարցրացման նպատակով պարբերաբար անհրաշետ է իրականացնել ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների «սև կետերի» գույքագրում, ճանապարհատրանսպորտային պատահարների վերլուծություն և անվտանգության միջոցառումների շարունակական բարձրացում: 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Ինչպես ցույց են տալիս վիճակագրական տվյալները՝ վերջին 10 տարիներին Հայաստանում ճանապարհատրանսպորտային պատահարների հետևանքով զոհերի թիվն աճել է. եթե 2010 թվականին այդ թիվը 294 էր, ապա 2020 թվականին այն հասել է 348-ի, իսկ 2021 թվականի 1-ին կիսմյակում այդ ցուցանիշը կազմել է 168: Նշվածից հետևում է, որ Հայաստանում ճանապարհային անվտանգության ամենաբարձր մակարդակին հասնելու համար անհրաժեշտ է ձեռնարկել համապատասխան միջոցներ «Տեսլական զրո» (Vision Zero) և «Անվտանգ համակարգային մոտեցում» (Safe System Approach) քաղաքականությանը հասնելու համար: 1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Ճանապարհային անվտանգության մակարդակի բարձրացման նպատակով անհրաժեշտ է յուրաքանչյուր տարի գույքագրել ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների «սև կետերը», իրականացնել ճանապարհատրանսպորտային պատահարներ վերլուծություն և միջոցներ ձեռնարկել վթարավտանգ հատվածների վերացման ուղղությամբ: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը • Ճանապարհային երթևեկության անվտանգության բարձրացում • Ճանապարհի անսարքությամբ պայմանաորված ճանապարատրանսպորտային պատահարների թվի նվազեցում մինչև 20 տոկոսով: **44.2. Հ-8 հանրապետական ճանապարհի և Մ-5 միջպետական ճանապարհի վրա վտանգավոր կետերի վերացում** **44.3. Մ-2 և Մ-4 միջպետական ճանապարհների վրա վտանգավոր կետերի վերացում** **44.4. Մ-2, Մ-3, Մ-4, Մ-7, Մ-11 և Մ-14 միջպետական նշանակության ճանապարհների վրա նախանշված 10 և 12 վտանգավոր կետերի վերացում** 1. **Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

	Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել ՀՀ կառավարության ծրագրի 3.2 գլխի 3-րդ պարբերության 4-րդ մասի, ինչպես նաև «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի պահանջները: Ճանապարհային անվտանգության խնդիրը դիտարկվում է որպես հիմնական խնդիր և հրատապ առաջնահերթություն Հայաստանի Հանրապետության ճանապարհային անվտանգության հինգ տարվա (2017-2021թթ.) ազգային ռազմավարությամբ, որով սահմանված են իրատեսական թիրախներ և համապատասխան միջամտություններ: Մահվան ելքերով ճանապարհային պատահարների ցուցանիշը մոտավորապես 18 այդպիսի պատահար յուրաքանչյուր 100 000 բնակչի հաշվով, որը երեք անգամ բարձր է ԵՄ միջին ցուցանիշից, այն է՝ 5 այդպիսի պատահար յուրաքանչյուր 100 000 բնակչի հաշվով: Հաշվի առնելով պատահարների սոցիալական ու տնտեսական ծանր հետեւանքները գնահատվել և ընտրվել են ճանապարհային անվտանգության, ճանապարհային չափանիշների և թողունակության բարելավման տեսանկյունից լավագույն ծրագիրը, որի մասն են կազմում Մ6 մայրուղու վրա, ինչպես նաև երկրի ամբողջ տարածքում ճանապարհային անվտանգության հետ կապված իրականացվելիք միջոցառումները: Եվրոպական ներդրումների կողմից տրամադրված դրամաշնորհի միջոցներն ուղղվել են՝ Մ-2 (Երևան-Մեղրի), Մ-4 (Երևան-Իջևան), Մ-5 (Երևան-Արմավիր-Թուրքիայի սահման), Մ-12 (Գորիս-Լեռնային Ղարաբաղ), Մ-17 (Կապան-Ծավ-Մ2), Հ-8 (Երևան-Արտաշատ Այգեվան) ավտոճանապարհների վրա արդեն ընտրված թվով 30, ինչպես նաև ծրագրի ընթացքում հայտնաբերվելիք լրացուցիչ վտանգավոր կետերի բարելավմանը, Հայաստանի միջպետական և հանրապետական ավտոճանապարհների ճանապարհային անվտանգության աուդիտի իրականացմանը՝ այլ վտանգավոր կետերի հայտնաբերման, գնահատման և ներդրումների առաջնահերթության սահմանման նպատակով, վտանգավոր կետերի բարելավման աշխատանքների տեխնիկական հսկողությանը՝ դրանք ճանապարհային անվտանգության Եվրոպական Միության և միջազգային լավագույն փորձին համապատասխանեցնելու նպատակով: 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Ծրագրի շրջանակում 2021թ. մարտ ամսին իրականացվել է Մ-6 ճանապարհահատվածի վրա երկու իրազեկման վահանակի տեղադրում, 9 վտանգավոր կետերի վերացման միջոցառումներ, որոնք կավարտվեն մինչև 2021թ. ավարտը: Մինչև 2022թ սեպտեմբերի վերջը նախատեսվում է իրականացնել 21 վտանգավոր կետերի վերացման շինարարական աշխատանքներ: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Նոր միջազգային ներդրումների և հնարավոր ֆինանսավորող կազմակերպություններից լրացուցիչ միջոցների ներգրավում՝ ՀՀ ճանապարհային անվտանգության բարելավման նոր միջոցառումներ իրականացնելու նպատակով: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Ծրագրից հիմնական ակնկալիքներն են՝ առնվազն 40 վտանգավոր կետերի բարելավում, մահվան ելքով ճանապարհային վթարների նվազում 20 տոկոսով:
45	**Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավում** **45.1 «Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագրի երկրորդ լրացուցիչ ֆիանսավորում» ծրագրում (ԿՆՃՑԲԾ ԼՖ2 ծրագիր) ընդգրկված 12 ճանապարհների վերականգնում, հիմնանորոգում** **1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության ծրագրի 3.2 գլխի 3-րդ պարբերության 5-րդ մասի, ինչպես նաև «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի պահանջներով: Ծրագիրն իրականացվում է Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև 2019թ. հոկտեմբերի 10-ին ստորագրված «Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագրի երկրորդ լրացուցիչ ֆինանսավորում» N8957 AM վարկային համաձայնագրի շրջանակներում: Ծրագրի նպատակն է՝ ընտրված կենսական նշանակության ճանապարհները վերականգնելու միջոցով ապահովել համայնքների տրանսպորտային կապը միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների հետ, բարելավել շուկաների և ծառայությունների հասանելիությունը գյուղական համայնքների համար և հզորացնել ճանապարհների համար պատասխանատու նախարարության կարողությունները՝ կառավարելու համար Կենսական նշանակության ճանապարհային ցանցը: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

	Ծրագրի իրականացումը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև 2019թ. հոկտեմբերի 10-ին ստորագրված «Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագրի երկրորդ լրացուցիչ ֆինանսավորում» N8957 AM վարկային համաձայնագրի շրջանակներում կնքված շինարարական աշխատանքների կատարման 12 և խորհրդատվական ծառայությունների մատուցման 4 պայմանագրերի դրույթներով: **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները** «Անվտանգ գյուղեր» բաղադրիչի շրջանակներում կիրականացվի ՀՀ Արմավիրի, Արարատի, Սյունիքի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի և Արագածոտնի մարզերում 68,74 կմ ընդհանուր երկարությամբ 12 ճանապարհների վերականգնում, հիմնանորոգում, վերակառուցում, Ծրագրի շահառու 16 համայնքներում: Հիշյալի շրջանակում Լոռու մարզում իրականացվում է նաև Կաթնաջուր համայնք տանող ճանապարհի հիմնանորոգում: Նախատեսվում է նշված ճանապարհի մասով նախագծում չներառված 1 կմ հատվածում նույնպես իրականացնել ասֆալտապատում՝ փոփոխություն կատարելով նախագծում: **2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Ծրագրի ավարտին ակնկալվում է, որ վերականգնման աշխատանքների արդյունքում կբարելավվի շահառու համայնքների տնտեսական և սոցիալական վիճակը, տարեկան կտրվածքով ճանապարհներից օգտվող տեղական բնակչությունը բազային 51%-ից կհասնի 76,8%-ի, կկրճատվի ճանապարհների վրա երթևեկության համար ծախսվող ժամանակը՝ հաշվարկային արագությունը բազային 20կմ/ժ-ից հասնելով 40 կմ/ժ-ի, ծրագրի շրջանակներում «Անվտանգ գյուղեր» բաղադրիչի իրականացման շնորհիվ կբարձրանա երթևեկության անվտանգության մակարդակը և կկրճատվի դժբախտ պատահարների քանակը:
46	**«Հյուսիս-Հարավ» ճանապարհային միջանցքի իրականացման շարունակություն** **46.1. Տրանշ 4-ի Սիսիան-Քաջարան II տեխնիկական կարգի (100 կմ/ժամ հաշվարկային արագությամբ) շուրջ 60 կմ ընդհանուր երկարությամբ նոր ճանապարհահատվածի, այդ թվում՝ 4.7 կմ ընդհանուր երկարությամբ կամուրջների և 12.5 կմ ընդհանուր երկարությամբ թունելների (ամենաերկարը՝ Բարգուշատի թունելն է, որի երկարությունը կկազմի շուրջ 8.6 կմ) կառուցում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության ծրագրի 3.2 գլխի 3-րդ պարբերության 6-րդ մասի, ինչպես նաև «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի պահանջներով, և բխում է Հայաստանը՝ տարածաշրջանային կարևոր ցամաքային տրանսպորտային հանգույց դարձնելու ՀՀ 2020-2050թթ. վերափոխման ռազմավարության նպատակներից: «Հյուսիս-հարավ ծրագրի Տրանշ 4-ի Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի կառուցման նպատակն է՝ II տեխնիկական կարգի (100 կմ/ժամ հաշվարկային արագությամբ) շուրջ 60 կմ ընդհանուր երկարությամբ նոր ճանապարհահատվածի, այդ թվում՝ 4.7 կմ ընդհանուր երկարությամբ կամուրջների և 12.5 կմ ընդհանուր երկարությամբ թունելների (ամենաերկարը՝ Բարգուշատի թունելն է, որի երկարությունը կկազմի շուրջ 8.6 կմ) կառուցումն է: Հյուսիս-հարավ ծրագրի Տրանշ 4-ի Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի կառուցման հիմք է հանդիսանում ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 14 թիվ 14-Ա որոշման Հավելված N 3-ը «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր»: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հյուսիս-հարավ ծրագրի հյուսիսային ուղղությամբ շինարարական աշխատանքները գտնվում են իրականացման փուլում, անհրաժեշտ է հիմնական ուշադրությունը բևեռել հարավային ուղղության (Տրանշ 4) վրա: Նման առաջնահերթությունը հնարավորություն կտա արդիականացնել Իրանին կապող ճանապարհահատվածը, մեծացնել հետաքրքրությունը Հայաստանի տարածքով տարանցիկ երթևեկության նկատմամբ, ապահովել Հայաստանի Հանրապետության հարավային շրջանների անվտանգությունը, ապահովել ճանապարհային անվտանգության պահանջվող մակարդակը, նպաստել հարավային շրջանների (ՀՀ, Վայոց Ձորի և Սյունիքի մարզեր) տնտեսական զարգացմանը և որպես արդյունք՝ նշված մարզերի բնակչության կենսամակարդակի բարելավմանը: Այդ նպատակով նախատեսվում է իրականացնել Հյուսիս-հարավ ծրագրի հարավային հատվածների (Տրանշ 4-ի) կառուցման աշխատանքները: Հյուսիս-հարավ ծրագրի Տրանշ 4-ի Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի կառուցման համար պատրաստ է մանրամասն նախագիծը: Անհրաժեշտ է լուծել նշված հատվածի կառուցման ծրագրի ֆինանսավորման խնդիրը 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Ծրագրի ֆինանսավորումը իրականացնել նոր վարկային կամ ՀՀ պետական բյուջեից համապատասխան միջոցների ներգրավմամբ:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

• Սիսիան-Քաջարան ճանապարհային հատվածի երկարությունը մոտ 58 կմ-ով կրճատում;

• Տրանսպորտային միջոցների առկա 50 կմ / ժ միջին արագությունը ավելացում մինչև 100 կմ / ժ;

• Ճանապարհորդության ժամանակի մոտ 1,5-2 ժամով կրճատում;

• Հարմարավետության ու անվտանգության բարձրացում;

• Ապրանքաշրջանառության մեծացում, տրանսպորտային ծախսերի կրճատում, տարանցիկ տրանսպորտի ներգրավվում, տուրիզմի զարգացում:

46.2. Տրանշ 4-ի Քաջարանի թունելի (երկարությունը՝ շուրջ 7.0 կմ) կառուցման և գոյություն ունեցող Մ2 Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման շուրջ 4 կմ (Քաջարանի թունելի մուտք- Սիսիան-Քաջարան նախատեսվող նոր ճանապարհահատվածի խաչմերուկ) երկարությամբ հատվածի վերակառուցման աշխատանքների իրականացում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության ծրագրի 3.2 գլխի 3-րդ պարբերության 6-րդ մասի, ինչպես նաև «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի պահանջներով, , և բխում է Հայաստանը՝ տարածաշրջանային կարևոր ցամաքային տրանսպորտային հանգույց դարձնելու ՀՀ 2020-2050թթ. վերափոխման ռազմավարության նպատակներից: Հյուսիս-հարավ ծրագրի Տրանշ 4-ի Քաջարանի թունելի և մոտեցումների կառուցման նպատակն է՝ Քաջարանի թունելի (երկարությունը՝ շուրջ 7.0 կմ) կառուցման և գոյություն ունեցող Մ2 Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման շուրջ 4 կմ (Քաջարանի թունելի մուտք- Սիսիան-Քաջարան նախատեսվող նոր ճանապարհահատվածի խաչմերուկ) երկարությամբ հատվածի վերակառուցման աշխատանքների իրականացումն է: Հյուսիս-հարավ ծրագրի Տրանշ 4- Քաջարանի թունելի և մոտեցումների կառուցման հիմք է հանդիսանում ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 14 թիվ 14-Ա որոշման Հավելված N 3-ը «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր»:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հյուսիս-հարավ ծրագրի հյուսիսային ուղղությամբ շինարարական աշխատանքները գտնվում են իրականացման փուլում, անհրաժեշտ է հիմնական ուշադրությունը բևեռել հարավային ուղղության (Տրանշ 4) վրա: Նման առաջնահերթությունը հնարավորություն կտա արդիականացնել Իրանին կապող ճանապարհահատվածը, մեծացնել հետաքրքրությունը Հայաստանի տարածքով տարանցիկ երթևեկության նկատմամբ, ապահովել Հայաստանի Հանրապետության հարավային շրջանների անվտանգությունը, ապահովել ճանապարհային անվտանգության պահանջվող մակարդակը, նպաստել հարավային շրջանների (ՀՀ Արարատի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզեր) տնտեսական զարգացմանը և որպես արդյունք՝ նշված մարզերի բնակչության կենսամակարդակի բարելավմանը: Այդ նպատակով նախատեսվում է իրականացնել Հյուսիս-հարավ ծրագրի հարավային հատվածների (Տրանշ 4-ի) կառուցման աշխատանքները:

Հյուսիս-հարավ ծրագրի Տրանշ 4-ի Քաջարանի թունելի և մոտեցումների կառուցման համար պատրաստ է մանրամասն նախագծի նախնական տարբերակը (վերջնական տարբերակը պատրաստ կլինի 2021 թվականի հուլիս ամսվա վերջում): Անհրաժեշտ է լուծել նշված հատվածի կառուցման ծրագրի ֆինանսավորման խնդիրը:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Ծրագրի ֆինանսավորումը իրականացնել նոր վարկային կամ ՀՀ պետական բյուջեից համապատասխան միջոցների ներգրավմամբ:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

• Տրանսպորտային միջոցների առկա 50 կմ/ժ միջին արագությունը ավելացում մինչև 80 կմ / ժ;

• Քաջարան-Ագարակ հատվածում ճանապարհորդության ժամանակը մոտ 35-40 րոպեով կրճատում;

• Մեղրիի լեռնանցքի (ծովի մակարդակից 2535 մետր բարձրության վրա) օգտագործման նվազեցում, ինչը էապես կբարձրացնի ճանապարհային անվտանգության մակարդակը, ինչպես նաև հնարավորություն կտա խուսափել ձմռանը Մեղրիի լեռնանցքում անցանելիություն ապահովելու հետ կապված դժվարություններից;

• Հարմարավետության ու անվտանգության բարձրացում;

• Ապրանքաշրջանառության մեծացում, տրանսպորտային ծախսերի կրճատում, տարանցիկ տրանսպորտի ներգրավվում, տուրիզմի զարգացում:

46.3. Տրանշ 2-ի Աշտարակ-Թալին շուրջ 42 կմ ընդհանուր երկարությամբ I տեխնիկական կարգի (100 կմ/ժամ հաշվարկային արագությամբ) ճանապարհահատվածի կառուցում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության ծրագրի 3.2 կետի 8-րդ պարբերության, ինչպես նաև «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի պահանջներով, և բխում է Հայաստանը՝ տարածաշրջանային կարևոր ցամաքային տրանսպորտային հանգույց դարձնելու ՀՀ 2020-2050թթ. վերափոխման ռազմավարության նպատակներից : Հյուսիս-հարավ ծրագրի Տրանշ 2-ի Աշտարակ-Թալին 42 կմ հատվածի կառուցման նպատակն է՝ I տեխնիկական կարգի (100 կմ/ժամ հաշվարկային արագությամբ) շուրջ 42 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատվածի կառուցումն է: Հյուսիս-հարավ ծրագրի Տրանշ 2-ի Աշտարակ-Թալին 42 կմ հատվածի կառուցման հիմք է հանդիսանում ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 14 թիվ 14-Ա որոշման Հավելված N 3-ը «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր», ինչպես նաև 2011 թվականի մայիսի 30-ին ԱԶԲ-ի հետ ստորագրված վարկային համաձայնագիրը (վարկ՝ 2729- ARM):

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Տրանշ 2-ի Կապալառուն («Կորսան-Կորվիամ Կոնստրուկսիոն» իսպանական ընկերության) դադարեցրել է շինարարական աշխատանքներն սկսած 2018թ. տարեվերջից և լքել Հայաստանը: 2019թ. հուլիսի 18-ին «Կորսան-Կորվիամ Կոնստրուկսիոն» իսպանական ընկերությանը ծանուցվել է պայմանագիրը լուծելու, Կապալառուի կողմից պայմանագրի դրույթների բազմաթիվ խախտումների, ինչպես նաև վերջինիս անվճարունակ լինելու փաստի մասին: 2019թ. նոյեմբերին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից Առևտրի միջազգային պալատ է ներկայացվել դիմում «Կորսան-Կորվիամ Կոնստրուկսիոն» բաժնետիրական ընկերության նկատմամբ արբիտրաժային գործընթաց սկսելու վերաբերյալ, որն այժմ ընթացքի մեջ է:

Միջոցներ են ձեռնարկվել այլ կապալառու/կապալառուների միջոցով ծրագիրը շարունակելու ուղղությամբ: Մասնավորապես՝ շինարարությունը նախատեսվում է իրականացնել երկու հատվածներով (կմ 29+600-կմ 37+545 և կմ 37+545-կմ 71+500): Այս նպատակով նախատեսվել է ներգրավել ծրագրի նոր ինժեներ/խորհրդատուի: Տրանշ 2-ի շինարարական աշխատանքները հնարավոր սեղմ ժամկետում վերսկսելու նպատակով՝ նախորդ շինարարի կողմից չիրականացված ծավալների հաշվարկման, առկա նախագծերի լրամշակման, նոր մրցութային փաստաթղթերի մշակման, ինչպես նաև շինարարության ժամանակ Ինժեների գործունեությունը իրականացնելու համար նախատեսվել է պայմանագիր ստորագրել «Էջիս Ինթերնեյշնլ» ֆրանսիական ընկերության հետ, հաշվի առնելով այն, որ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի շրջանակներում «Էջիս Ինթերնեյշնլ» ընկերությունը մշակել է Տրանշ 1, 2 և 3-ի ծրագրերի նախագծերը, իսկ ներկայումս ԱԶԲ-ի կողմից ֆինանսավորվող Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի շրջանակներում իրականացնում է Ինժեների պարտականությունները: 2021 թվականի փետրվարի 26-ին «Էջիս Ինթերնեյշնլ և Կոքս Կոնսալթ» համատեղ ձեռնարկության հետ ստորագրվել է համապատասխան պայմանագիր: Վերանախագծման աշխատանքները սկսվել են:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Կմ 29+600-կմ 37+545 հատվածի շինարարական աշխատանքները նախատեսվում է սկսել 2022 թվականի սկզբին, իսկ կմ 37+545-կմ 71+500 հատվածի՝ 2022 կեսին: Տրանշ 2-ի շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել 2023 թվականի դեկտեմբերին:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

• Նախատեսվում է կառուցել I տեխնիկական կարգի (100 կմ/ժամ հաշվարկային արագությամբ) շուրջ 42 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատված:

• Գոյություն ունեցող միակողմանի 2 երթևեկելի գոտուց բաղկացած Մ1 մայրուղու վերակառուցում միջազգային չափանիշներին համապատասխան 4 երթևեկելի գոտուց բաղկացած երկկողմ ավտոմայրուղի

• Ներդրումային ծրագիրը կնպաստի հետևյալ նպատակների իրականացմանը՝ (i) միջշրջանային ճանապարհային տրանսպորտի տրանզիտի հեշտացմանը, (ii) առևտրային հոսքերի և մրցակցայնության մեծացմանը, (iii) տրանսպորտի ծախսերի նվազեցմանը, (iv) շուկաների, աշխատանքների և սոցիալական ծառայությունների մոբիլությանն ու հասանելիությանը, (v) կառավարման բարելավմանը:

46.4. Տրանշ 4-ի Քաջարան-Ագարակ շուրջ 32 կմ ընդհանուր երկարությամբ II տեխնիկական կարգի (80 կմ/ժամ հաշվարկային արագությամբ) ճանապարհահատվածի վերակառուցում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության ծրագրի 3.2 գլխի 3-րդ պարբերության 6-րդ մասի, ինչպես նաև «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի պահանջներով, , և բխում է Հայաստանը՝ տարածաշրջանային կարևոր ցամաքային տրանսպորտային հանգույց դարձնելու ՀՀ 2020-2050թթ. վերափոխման ռազմավարության նպատակներից: Հյուսիս-հարավ ծրագրի Տրանշ 4-ի Քաջարան-Ագարակ 32 կմ հատվածի վերակառուցման նպատակն է՝ II տեխնիկական կարգի (80 կմ/ժամ հաշվարկային արագությամբ) շուրջ 32 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատվածի վերակառուցման աշխատանքների իրականացումն է : Հյուսիս-հարավ ծրագրի Տրանշ 4-Քաջարան-Ագարակ 32 կմ հատվածի վերակառուցման հիմք է հանդիսանում ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 14 թիվ 14-Ա որոշման Հավելված N 3-ը «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր», ինչպես նաև 2015 թվականի ապրիլի 14-ին Եվրասիական զարգացման բանկի հետ ստարգրված վարկային համաձայնագիրը (Соглашение о предоставлении инвестиционного кредита из средств антикризисного фонда Евразийского экономического сообщества для финансирования проекта “Строительство автодорожного коридора “Север-Юг" (4 очередь)“):

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հյուսիս-հարավ ծրագրի հյուսիսային ուղղությամբ շինարարական աշխատանքները գտնվում են իրականացման փուլում, անհրաժեշտ է հիմնական ուշադրությունը բևեռել հարավային ուղղության (Տրանշ 4) վրա: Նման առաջնահերթությունը հնարավորություն կտա արդիականացնել Իրանին կապող ճանապարհահատվածը, մեծացնել հետաքրքրությունը Հայաստանի տարածքով տարանցիկ երթևեկության նկատմամբ, ապահովել Հայաստանի Հանրապետության հարավային շրջանների անվտանգությունը, ապահովել ճանապարհային անվտանգության պահանջվող մակարդակը, նպաստել հարավային շրջանների (ՀՀ Արարատի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզեր) տնտեսական զարգացմանը և որպես արդյունք՝ նշված մարզերի բնակչության կենսամակարդակի բարելավմանը: Այդ նպատակով նախատեսվում է իրականացնել Հյուսիս-հարավ ծրագրի հարավային հատվածների (Տրանշ 4-ի) կառուցման աշխատանքները:

Հյուսիս-հարավ ծրագրի Տրանշ 4-ի Քաջարան-Ագարակ 32 կմ հատվածի համար պատրաստ է վերակառուցման մանրամասն նախագծի նախնական տարբերակը (վերջնական տարբերակը պատրաստ կլինի 2021 թվականի հուլիս ամսվա վերջում):

Նախնական նախագծի համաձայն՝ Քաջարան-Ագարակ 32 կմ հատվածի շինարարության նախնական գնահատված արժեքը կազմում է շուրջ 296,437,000 ԱՄՆ դոլար (այդ թվում ԱԱՀ՝ 49,405,000 ԱՄՆ դոլար), որը 86 մլն ԱՄՆ դոլարով գերազանցում է հաստատված գնումների պլանով շինարարության համար նախատեսված ֆինանսական միջոցները:

Լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավումը հնարավոր չէ իրականացնել նոր վարկային միջոցների ներգրավմամբ, ինչի հետևանքավ այժմ ՀՀ ֆինանսների նախարարության հետ քննարկվում է Ծրագրի Քաջարան-Ագարակ 32 կմ հատվածի շինարարության համար նախատեսված ֆինանսական միջոցների պակասուրդը (շուրջ 86 մլն. ԱՄՆ դոլար, ներառյալ ԱԱՀ) ՀՀ կառավարության կողմից համաֆինանսավորելու հնարավորությունը, որի պարագայում վարկային համաձայնագրում ևս անհրաժեշտ է լինելու կատարել Ծրագրի համաֆինանսավորման վերաբերյալ համապատասխան դրույթների փոփոխություններ:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Անհրաժեշտ է լուծել ֆինանսական միջոցների պակասուրդի ՀՀ կառավարության կողմից համաֆինանսավորման խնդիրը և վարկային համաձայնագրում կատարել համապատասխան համապատասխան դրույթների փոփոխություններ:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

- Քաջարան-Ագարակ հատվածում ճանապարհորդության ժամանակը մոտ 35-40 րոպեով կրճատում;
- Հարմարավետության ու անվտանգության բարձրացում;
- Ապրանքաշրջանառության մեծացում, տրանսպորտային ծախսերի կրճատում, տարանցիկ տրանսպորտի ներգրավվում, տուրիզմի զարգացում:

46.5. Տրանշ 3 Թալին-Լանջիկ և Լանջիկ-Գյումրի, 42 կմ ճանապարհահատվածի շինարարական աշխատանքների իրականացում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության ծրագրի 3.2 գլխի 3-րդ պարբերության 6-րդ մասի, ինչպես նաև «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի պահանջներով, և բխում է Հայաստանը՝ տարածաշրջանային կարևոր ցամաքային տրանսպորտային հանգույց դարձնելու ՀՀ 2020-2050թթ. վերափոխման ռազմավարության նպատակներից: «Հյուսիս-Հարավ» միջանցքը պետք է լինի միջազգային ստանդարտներին համապատասխանող մայրուղի, որն պետք է անցնի Հայաստանի Հանրապետության ողջ տարածքով՝ միմյանց կապելով Վրաստանի և Իրանի սահմանները: «Հյուսիս-Հարավ» ճանապարհային միջանցքի նպատակն է՝ դառնալ տարածաշրջանային մրցունակ միջանցք, որն կկապի Ասիան Սև ծովին և կներգրավվի տարանցիկ տրանսպորտային հոսքեր:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Ներկայումս Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի առկա վիճակը որոշ հատվածներում՝ հատկապես հարավային, չի համապատասխանում երթևեկության անվտանգության այնպիսի պահանջների, որպիսիք թույլ կտային միջազգային տարանցիկ երթևեկության հոսքի տեղափոխում ներհայաստանյան ուղղությամբ: Այդ պատճառով տարածաշրջանի միջազգային բեռնափոխադրումները հիմնականում նախընտրում են հարևան Ադրբեջանի և Թուրքիայի տարածքները, չնայած որ Հայաստանի տարածքով տարանցիկ ուղղությունը (Մ-1 և Մ-2 միջպետական ավտոճանապարհներով) հանդիսանում է Պարսից ծոցը Սև ծովին կապող ամենակարճ ուղին:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Նոր միջազգային ներդրումների և հնարավոր ֆինանսավորող կազմակերպություններից լրացուցիչ միջոցների ներգրավում Հյուսիս-հարավ ծրագիրն ամբողջությամբ և հնարավորինս շուտ ավարտին հասցնելու համար: Միջոցառման շրջանակներում նախատեսվում է Թալին-Լանջիկ և Լանջիկ-Գյումրի, 46,2 կմ ճանապարհահատվածի շինարարական աշխատանքների իրականացում:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

- Գոյություն ունեցող միակողմանի 2 երթևեկելի գոտուց բաղկացած Մ1 մայրուղու վերակառուցում միջազգային չափանիշներին համապատասխան 4 երթևեկելի գոտուց բաղկացած երկկողմ ավտոմայրուղի
- Հարմարավետության ու անվտանգության բարձրացում,

Ապրանքաշրջանառության մեծացում, տրանսպորտային ծախսերի կրճատում, տարանցիկ տրանսպորտի ներգրավվում, տուրիզմի զարգացում:

46.6. Տրանշ 4՝ Արտաշատ-Սիսիան Ի-րդ տեխնիկական կարգի շուրջ 165կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատված, այդ թվում՝ 14 կմ ընդհանուր երկարությամբ կամուրջներ և 12.4 կմ ընդհանուր երկարությամբ թունելների նախագծման և փուլային իրականացման աշխատանքների մեկնարկ

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության ծրագրի 3.2 գլխի 3-րդ պարբերության 6-րդ մասի, ինչպես նաև «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի պահանջներով, և բխում է Հայաստանը՝ տարածաշրջանային կարևոր ցամաքային տրանսպորտային հանգույց դարձնելու ՀՀ 2020-2050թթ. վերափոխման ռազմավարության նպատակներից:: Հյուսիս-հարավ ծրագրի Տրանշ 4-ի Արտաշատ-Սիսիան 175կմ հատվածի վերակառուցման նպատակն է՝ Արտաշատ-Սիսիան Ի-րդ տեխնիկական կարգի շուրջ 175 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատվածի, այդ թվում՝ 14 կմ ընդհանուր երկարությամբ կամուրջների և 12.4 կմ ընդհանուր երկարությամբ թունելների նախագծման աշխատանքների փուլային աշխատանքների իրականացում:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Հյուսիս-հարավ ծրագրի Տրանշ 4 Արտաշատ-Սիսիան 175կմ հատվածի վերակառուցման աշխատանքների համար նախապատրաստվել է նախնական նախագիծ: Սակայն շինարարական աշխատանքները իրականացնել համար անհրաժեշտ է իրականացնել նախագծման աշխատանքներ: Նախագծման աշխատանքների իրականացման համար կպահանջվի շուրջ 12 մլն. ԱՄՆ դոլար կամ շուրջ 5760 մլն ՀՀ դրամ:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Կիրականացվի Արտաշատ-Սիսիան Ի-րդ տեխնիկական կարգի շուրջ 175 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատվածի, այդ թվում՝ 14 կմ ընդհանուր երկարությամբ կամուրջների և 12.4 կմ ընդհանուր երկարությամբ թունելների նախագծման աշխատանքներ: Ֆինանսական միջոցների առկայության դեպքում կմեկնարկվի նաև 50-100կմ ճանապարհահատվաշի վերակառուցման աշխատանքները»

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

- Արտաշատ-Սիսիան հատվածի նախագծային աշխատանքները իրականացվել են

	• Առկա է փորձաքննություն անցած նախագծանախահաշվային փաստաթղթեր: **46.7. Տրանշ 5՝ Գյումրի-Բավրա ճանապարհահատվածի կառուցում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառումը նախատեսվում է իրականացնել ԵՄ-ից ակնկալվող 2,6մլրդ եվրոյի չափով օժանդակության ծրագրային Ուղենիշ 2-ի 2.3 կետի շրջանակում, իսկ անհրաժեշտությունը պայմանավորված է «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի պահանջներով, և բխում է Հայաստանը՝ տարածաշրջանային կարևոր ցամաքային տրանսպորտային հանգույց դարձնելու ՀՀ 2020-2050թթ. վերափոխման ռազմավարության նպատակներից: և «Հյուսիս-Հարավ» ճանապարհային միջանցքի կառուցման շարունակությունը ապահովելու նկատառումներից: «Հյուսիս-Հարավ» միջանցքը պետք է լինի միջազգային ստանդարտներին համապատասխանող մայրուղի, որն պետք է անցնի Հայաստանի Հանրապետության ողջ տարածքով՝ միմյանց կապելով Վրաստանի և Իրանի սահմանները: «Հյուսիս-Հարավ» ճանապարհային միջանցքի նպատակն է՝ դառնալ տարածաշրջանային մրցունակ միջանցք, որն կկապի Ասիան Սև ծովին և կներգրավվի տարանցիկ տրանսպորտային հոսքեր: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի առկա վիճակը որոշ հատվածներում՝ հատկապես հարավային, չի համապատասխանում երթևեկության անվտանգության այնպիսի պահանջների, որպիսիք թույլ կտային միջազգային տարանցիկ երթևեկության հոսքի տեղափոխում ներհայաստանյան ուղղությամբ: Այդ պատճառով տարածաշրջանի միջազգային բեռնափոխադրումները հիմնականում նախընտրում են հարևան Ադրբեջանի և Թուրքիայի տարածքները, չնայած որ Հայաստանի տարածքով տարանցիկ ուղղությունը (Մ-1 և Մ-2 միջպետական ավտոճանապարհներով) հանդիսանում է Պարսից ծոցը Սև ծովին կապող ամենակարճ ուղին: Մանրամասն աշխատանքային նախագիծը և շինարարության նախահաշիվը պատրաստ են և ներկայումս անցնում են պահանջվող փորձաքննություն: Գյումրի-Բավրա 37 կմ ճանապարհային հատվածի շինարարության մանրամասն նախագիծը մշակվել է 2017-2021 և ըստ որի նախատեսվում է վերակառուցել 2-րդ տեխնիկական կարգի Քետի-Բավրա ճանապարհահատվածը: Այն բաժանված է 4 ենթահատվածի՝ Քեթի-Թորոսգյուղ, կմ 0+400-ից- կմ 9+050 (L=8.650կմ), Թորոսգյուղ-Վարդաղբյուր, կմ 9+050-ից - կմ 15+625 (L=6.575կմ), Վարդաղբյուր-Աշոցք, կմ 15+625-ից - կմ 26+725 (L=11.100կմ) և Աշոցք -Բավրա, կմ 26+725 -ից - կմ 37+634 (L=10.909 կմ): Ծրագրի կառավարման խորհրդի կողմից որոշվել է Ծրագիր 5-ի՝ Գյումրի-Բավրա (37.234 կմ) ճանապարհի նախագծի ազդեցության գոտում գտնվող հողամասերի օտարման գործընթացը: Մեկնարկել է հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի մշակման և օտարման գործընթացի նախապատրաստական փուլը, որի շրջանակներում մեկնարկել են ազդակիր համայնքներում հանրային իրազեկման գործընթացը և նախատեսվում է սկսել համապատասխան դաշտային աշխատանքները (հողերի չափագրում, անշարժ գույքի գնահատում, սոցիալ-տնտեսական հետազոտում, մարդահամար և այլն): **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Նոր միջազգային ներդրումների և հնարավոր ֆինանսավորող կազմակերպություններից լրացուցիչ միջոցների ներգրավում Հյուսիս-հարավ ծրագիրն ամբողջությամբ և հնարավորինս շուտ ավարտին հասցնելու համար: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** • II տեխնիկական կարգի (մինչև 100 կմ/ժամ հաշվարկային արագությամբ) շուրջ 37 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատվածը կառուցված է • Հարմարավետության ու անվտանգության բարձրացում; Ապրանքաշրջանառության մեծացում, տրանսպորտային ծախսերի կրճատում, տարանցիկ տրանսպորտի ներգրավվում, տուրիզմի զարգացում **46.8. Տրանշ 5՝ Գյումրի շրջանցիկ ճանապարհահատվածի կառուցում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Նախատեսվում է իրականացնել ԵՄ-ից ակնկալվող 2,6մլրդ եվրոյի չափով օժանդակության ծրագրային Ուղենիշ 2-ի 2.4 կետի շրջանակում, իսկ անհրաժեշտությունը պայմանավորված է «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի պահանջներով, և բխում է Հայաստանը՝ տարածաշրջանային կարևոր ցամաքային տրանսպորտային հանգույց դարձնելու ՀՀ 2020-2050թթ.

	վերափոխման ռազմավարության նպատակներից և «Հյուսիս-Հարավ» ճանապարհային միջանցքի կառուցման շարունակությունը ապահովելու նկատառումներից: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի առկա վիճակը որոշ հատվածներում՝ հատկապես հարավային, չի համապատասխանում երթևեկության անվտանգության այնպիսի պահանջների, որպիսիք թույլ կտային միջազգային տարանցիկ երթևեկության հոսքի տեղափոխում ներհայաստանյան ուղղությամբ: Այդ պատճառով տարածաշրջանի միջազգային բեռնափոխադրումները հիմնականում նախընտրում են հարևան Ադրբեջանի և Թուրքիայի տարածքները, չնայած որ Հայաստանի տարածքով տարանցիկ ուղղությունը (Մ-1 և Մ-2 միջպետական ավտոճանապարհներով) հանդիսանում է Պարսից ծոցը Սև ծովին կապող ամենակարճ ուղին: Ճանապարհահատվածի նախագիծը գտնվում է հատուկ համալիր փորձաքննության փուլում: Գյումրիի շրջանցիկ 23 կմ ճանապարհային հատվածի շինարարության մանրամասն նախագիծը մշակվել է 2017-2021 և ըստ որի նախատեսվում է վերակառուցել 2-րդ տեխնիկական կարգի Ազատան-Քեթի ճանապարհահատվածը: Այն բաժանված է 3 ենթահատվածի՝ Ազատան-Արևիկ, կմ 0+000-ից - կմ 8+000 (L=8.0կմ), Արևիկ- Մ7, կմ 8+000-ից- կմ 16+300 (L=8.3կմ) և Մ7-Քեթի, կմ 16+300-ից- կմ 23+181.21 (L=6.88121կմ): Ծրագրի կառավարման խորհրդի կողմից որոշվել է Ծրագիր 5-ի՝ Գյումրի շրջանցիկ (23.181 կմ) ճանապարհի նախագծի ազդեցության գոտում գտնվող հողամասերի օտարման գործընթացը: Մեկնարկել է հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի մշակման և օտարման գործընթացի նախապատրաստական փուլը, որի շրջանակներում մեկնարկել են ազդակիր համայնքներում հանրային իրազեկման գործընթացը և նախատեսվում է սկսել համապատասխան դաշտային աշխատանքները (հողերի չափագրում, անշարժ գույքի գնահատում, սոցիալ-տնտեսական հետազոտում, մարդահամար և այլն): **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Նոր միջազգային ներդրումների և հնարավոր ֆինանսավորող կազմակերպություններից լրացուցիչ միջոցների ներգրավում Հյուսիս-հարավ ծրագիրն ամբողջությամբ և հնարավորինս շուտ ավարտին հասցնելու համար: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** • II տեխնիկական կարգի (100 կմ/ժամ հաշվարկային արագությամբ) 23 կմ ճանապարհային հատվածիշուրջ 37 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատվածը կառուցված է • Հարմարավետության ու անվտանգության բարձրացում:
47	**Մ-6, Վանաձոր-Ալավերդի-Բագրատաշեն միջպետական նշանակության ճանապարհի վերակառուցման ավարտում** **<u>47.1 Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ38+450-կմ90+191 հատվածի վերականգնում և բարելավում</u>** **1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության ծրագրի 3.2 գլխի 3-րդ պարբերության 7-րդ մասի, ինչպես նաև «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի պահանջներով՝ *Մ6, Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահմանի միջպետական նշանակության ավտոճանապարհի Թումանյան-Բագրատաշենի սահմանային անցակետ կմ 38+450-կմ 90+191 հատվածի հիմնանորոգման աշխատանքները ավարտին հասցնելու համար,* և բխում է Հայաստանը՝ տարածաշրջանային կարևոր ցամաքային տրանսպորտային հանգույց դարձնելու ՀՀ 2020-2050թթ. վերափոխման ռազմավարության նպատակներից: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Աշխատանքները մեկնարկել են 2018թ. մայիսի 29-ին և ներկայում ընթացքում են: **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Աշխատանքները նախատեսվում է ավարտին հասցնել մինչև 2021թ. վերջը, եթե եղանակային պայմանները խոչընդոտ չհանդիսանա: Միաժամանակ նախագծային փոփոխությամբ պայմանավորված՝ Ալավերդու շուրջ 100 մ երկարությամբ կամուրջի ու Օձունի խաչմերուկում շուրջ 500 մ երկարությամբ հանգույցի հետ կապված աշխատանքները նախատեսվում են տեղափոխել մինչև 2022թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ: **2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** • 2022թ.՝ Վանաձորից Բագրատաշեն երևեկության տևողության կրճատում մինչև 100 րոպե՝ 2014թ. 110 րոպեի համեմատ

	• 2022թ.՝ միջին օրական երթևեկության ինտենսիվության ավելացում մինչև 3500 մեք./օր՝ 2014թ. 2800 մեք./օր-ի համեմատ • 2022թ.՝ ավելի քան 1 մլն տոննա բեռնափոխադրումներ Բագրատաշենի մաքսային կետով՝ 2014թ. 0,85 մլն տոննայի համեմատ
48	**Հյուսիսային միջանցքի արդիականացում** **48.1 Բագրատաշենի սահմանային հսկողության անցակետի նոր կամրջի շինարարություն** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Սադախլո-Բագրատաշեն անցման կետի տարածքում նոր կամրջի կառուցման համար հիմք է ՀՀ կառավարության ծրագրի 3.2 գլխի 3-րդ պարբերության 2-րդ մասի, ինչպես նաև «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի պահանջները և Հյուսիսային սահմանի արդիականացման ծրագրի շրջանակներում Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կողմից տրամադրված թիվ 43826 վարկային համաձայնագիրը՝ կնքված 23 Նոյեմբեր, 2012թ, Հայաստանի Հանրապետության և Վրաստանի միջև կնքված միջկառավարական համաձայնագիրը՝ կնքված 24 Դեկտեմբեր, 2014թ., ինչպես նաև 24 սեպտեմբերի 2020 թվականի N 1564-Ա Կառավարության որոշումը: Միջոցառման իրականացումը բխում է Հայաստանը՝ տարածաշրջանային կարևոր ցամաքային տրանսպորտային հանգույց դարձնելու ՀՀ 2020-2050թթ. վերափոխման ռազմավարության նպատակներից: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Սադախլո-Բագրատաշենի անցակետում գործում է ԽՍՀՄ տարիներին կառուցված և արդի պահանջներին տեխնիկապես ոչ պիտանի հին կամուրջը, որն այլևս ի վիճակի չէ սպասարկել ռազմավարական նշանակություն ունեցող անցակետի այժմյան բեռնափոխադրումների և ուղևորափոխադրումների ծավալը, քանի որ արդիական բեռնափոխադրող մեքենաների տեսակը, չափերը և ծանրաբեռնվածությունը, ինչպես նաև ուղևորափոխադրումների քանակը չի համապատասխանում գործող կամրջի ելակետային, ոչ արդիական տվյալների հետ, ինչի արդյունքում կամրջի թողունակությունը չի համապատասխանում անցակետի պահանջներին: **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Նոր կամրջի նախագիծը համապատասխանում է միջազգային ստանդարտներին և տվյալ անցակետի թողունակության պահանջներին ՝ունենալով 4 երթևեկելի գոտի և ավելի լայն մակերես, առանձին կամուրջներ յուրաքանչյուր ուղղության համար, որը էապես կկրճատի անցակետի անցման ժամանակահատվածը և կբարձրացնի հարմարավետությունը: **2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Նախագծով նախատեսված միջոցառումների իրականացումից հետո ակնկալվում է ունենալ միջազգային ստանդարտներին համապատասխան ենթակառուցվածք՝ 160 մ երկարությամբ 2 կամուրջներ՝ բաղկացած 5 թռիչքներից, յուրաքանչյուրը՝ 32 մետր երկարությամբ, մոտեցնող ճանապարհներ, ջրահեռացման և լուսավորության ժամանակակից համակարգեր, մայթեզրեր՝ հետիոտն ուղևորների համար:
49	**Ավտոմոբիլային ճանապարհային ենթակառուցվածքի զարգացում** **49.1 «ՀՀ ավտոմոբիլային ճանապարհային ենթակառուցվածքի զարգացման նպատակով «ՀՀ ավտոմոբիլային ճանապարհների ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացում** **2. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** ՀՀ կառավարության ծրագրի 3.2 գլխի 3-րդ պարբերության 8-րդ մասի պահանջներից ելնելով անհրաժեշտ է իրականացնել ճանապարհային ցանցի կառավարման կայուն ինստիտուցիոնալ համակարգի ձևավորում, որը նպատակ ունի բարձրացնելու ճանապարհատրանսպորտային ենթակառուցվածքների գործունեության արդյունավետությունը՝ տնտեսության և հասարակության պահանջների բավարարման որակի բարձրացման ճանապարհով, ապահովելու տրանսպորտային ծառայությունների անվտանգ և արդյունավետ մատուցումը: Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի պահանջից: **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս հասունացել է ճանապարհային ոլորտի ամբողջական միասնական համակարգ ձևավորման անհրաժեշտությունը, որով կբնորոշվեն ճանապարհային ոլորտի պետական հսկողության, տեխնիկական

	կարգավորման և նոր տեխնոլոգիաների շուկայի զարգացման սկզբունքները՝ որպես ճանապարհային ոլորտի զարգացման միասնական ծրագրային համալիրի բաղկացուցիչների ամբողջականություն: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Ռազմավարությունը կմշակվի Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) տեխնիկական աջակցությամբ մշակվող «Տրանսպորտի և առևտրի խթանման ազգային ռազմավարության» փաստաթղթի շրջանակներում վերջիններիս կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա: Ռազմավրության մեջ կնախանշվեն ռազմավարության հիմնական առաջարկվող ուղղությունները,ինչպես նաև կսահմանվեն ՀՀ ավտոմոբիլային ճանապարհների զարգացման նպատակները և քայլերը: Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը: Ճանապարհային ոլորտում պլանավորման և ծրագրերի իրականացման հետ կապված մեխանիզմների արդիականացում, ճանապարհային երթեկության անվտանգության բարելավում, կառավարում և բարձրացում, ֆինանսական միջոցների արդյունավետ ծախսում, ճանապարհային ցանցի կայուն զարգացում: **2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** «ՀՀ ավտոմոբիլային ճանապարհների ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը մշակված է:Որոշման նախագիծը հաստատվել է ՀՀ կառավարության կողմից:
50	**Շինարարական նյութերի և ճանապարհաշինարարության որակի նկատմամբ վերահսկողության բարձրացման նպատակով նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների ներդրում** **50.1. Ճանապարհաշինության ոլորտում նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների ներդրման և կիրառման ծրագրի մշակում և առաջարկությունների ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ** **1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության ծրագրի 3.2 գլխի 3-րդ պարբերության 9-րդ մասի, ինչպես նաև «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի պահանջներով, որը նպատակ ունի ուսումնասիրելու և ներդնելու ոլորտին առնչվող ինժեներական նորարարական ծրագրեր (նոր, յուրօրինակ մոտեցումներ, լուծումներ և մեթոդներ): **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի տրանսպորտի և առևտրի խթանման 2020-2040թթ. ռազմավարությունը» ծրագրի շրջանակներում ճանապարհային ոլորտի բարելավմանն ուղղված նորարարական մոտեցումների և մեթոդների, ճանապարհաշինության երթևեկության կառավարման և կարգավորման նոր տեխնոլոգիաների ու ինժեներական լուծումների քննարկման, ինչպես նաև ոլորտի կառավարման մոդելի արդյունավետության բարձրացման նպատակով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը նախատեսում է անցկացնել աշխատաժողով, որտեղ կներկայացվեն ոլորտին առնչվող ինժեներական նորարարական ծրագրեր (նոր, յուրօրինակ մոտեցումներ, լուծումներ և մեթոդներ), և կքննարկվեն դրանց ներդրման հնարավորությունները: Նշվածի շրջանակներում նախատեսվում է լավագույն նորարարական առաջարկությունների հիման վրա մշակել ճանապարհաշինության ոլորտում նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների ներդրման և կիրառման ծրագիր: **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Լավագույն նորարարական առաջարկությունների հիման վրա ճանապարհաշինության ոլորտում նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների ներդրման ծրագրի մշակում: **2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Ճանապարհային ցանցի երկարակեցության, որակի և արդյունավետության բարձրացման նպատակով մշակված և հաստատված ճանապարհաշինության ոլորտում նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների ներդրման և կիրառման ծրագիր: **50.2. Ճանապարհաշինության ոլորտում նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների ներդրման ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացում** **1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության ծրագրի 3.2 գլխի 3-րդ պարբերության 9-րդ մասի, ինչպես նաև «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի պահանջներով, որը նպատակ ունի ներդնելու ճանապարհային ոլորտին առնչվող ինժեներական նորարարական ծրագրեր (նոր, յուրօրինակ մոտեցումներ, լուծումներ և մեթոդներ): **1.2կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ճանապարհային ոլորտի բարելավմանն ուղղված նորարարական մոտեցումների և մեթոդների, ճանապարհաշինության երթևեկության կառավարման և կարգավորման նոր տեխնոլոգիաների ու ինժեներական

	լուծումների, ինչպես նաև ոլորտի կառավարման մոդելի արդյունավետության բարձրացման անհրաժեշտություն: Ճանապարհաշինության ոլորտում նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների ներդրման և կիրառման ծրագրի իրականացում: **1.3 առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Ճանապարհաշինության ոլորտում նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների ներդրման և կիրառման ծրագրի իրականացում: Լավագույն նորարարական առաջարկությունների հիման վրա, մասնաորապես՝ ասֆալտբետոնային խառնուրդների նախագծման «Սուպերփեյվ» մեթոդի, հին (ֆրեզավորված) ասֆալտբետոնի խառնուրդի կիրառման, ավտոճանապարհային կամուրջների նախագծման նորմերի զարգացման, ճանապարհների գնահատման ծրագրի և այլ նորագույն մեթոդների ներդրում: **2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Ճանապարհային ցանցի երկարակեցության, որակի և արդյունավետության բարձրացում, միջազգային ստանդարտներին համապատասխան բարձրակարգ ճանապարհային ցանցի առկայություն:
51	**Ճանապարհային անվտանգության համակարգի ներդնում** **51.1. Ճանապարհային անվտանգության ԵՄ հրահանգներին համապատասխան «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը և հարակից օրենքների նախագծերի ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացում** **1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության ծրագրի 3.2 գլխի 3-րդ պարբերության 11-րդ մասի, ինչպես նաև «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի պահանջներով: Ներկայացված միջոցառումը բխում է ԵԽ և Խորհրդի 2004 թվականի ապրիլի 29-ի 2004/54/ԵՀ հրահանգը՝ Անդրեվրոպական ճանապարհային ցանցի թունելներին ներկայացվող նվազագույն անվտանգության պահանջների մասին և ԵԽ և Խորհրդի 2008 թվականի նոյեմբերի 19-ի 2008/96/ԵՀ հրահանգը **1.2կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Եվրոպական Խորհրդարանի և Խորհրդի՝ 2004 թվականի ապրիլի 29-ին Եվրոպական Միության և Ատոմային Էներգիայի Եվրոպական Համայնքի դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետությունը պարտավորվել է կիրառության մեջ դնել՝ տեղայնացնել, համաձայնագրի Հավելված I-ով նախատեսված Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2004 թվականի ապրիլի 29-ի 2004/54/ԵՀ «Անդրեվրոպական ճանապարհային ցանցի թունելներին ներկայացվող նվազագույն անվտանգության պահանջների մասին» և 2008 թվականի նոյեմբերի 19-ի 2008/96/«Ճանապարհային ենթակառուցվածքի անվտանգության կառավարման մասին» ԵՀ հրահանգները: Դրանց կիրառումը ապահովելու նպատակով անհրաժեշտ է ճանապարհային ոլորտին առնչվող օրենսդրական ակտերում՝ մասնավորապես «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքում կատարել փոփոխություններ և լրացումներ, ավելացնելով դրույթներ հրահանգներով պահանջվող ճանապարհային ենթակառուցվածքի անվտանգության կառավարման և թունելներին ներկայացվող անվտանգության նվազագույն պահանջներին առնչվող դրույթները: 1.3 **առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Հրահանգին համապատասխանության նպատակով պետք է իրականացվի հետևյալը. 1) թունելների պարբերական փորձարկում և ստուգում, ինչպես նաև դրանց վերաբերյալ անվտանգության պահանջների սահմանում. 2) կազմակերպչական և շահագործման ռեժիմների (այդ թվում՝ վթարներին արձագանքման ծրագրերի) մշակում՝ վթարային փրկարարական ծառայությունների անձնակազմերի վերապատրաստման և վերազինման համար. 3) վթարի դեպքում թունելի անհապաղ փակման ընթացակարգի սահմանում. ռիսկերի կրճատման անհրաժեշտ միջոցառումների իրականացում 2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը: **2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Ճանապարհային ենթակառուցվածքի անվտանգության կառավարման օրենսդրական կարգավորում միջազգային փորձին համապատասխան: Թունելներին ներկայացվող անվտանգության նվազագույն պահանջների օրենսդրական սահմանում:

51.2 Ճանապարհային աուդիտի համարակարգի ձևավորում (ճանապարհային աուդիտի անցկացման պահանջների ձևավորում, ընթացակարգերի սահմանում, աուդիտորների որակավորում)

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության ծրագրի 3.3 կետի 3-րդ պարբերության պահանջներով: Ներկայացված միջոցառումը բխում է ԵՄ և Խորհրդի 2008 թվականի նոյեմբերի 19-ի 2008/96/ԵՀ հրահանգի, ինչպես նաև «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի պահանջներից:

1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Եվրոպական Խորհրդարանի և Խորհրդի՝ 2004 թվականի ապրիլի 29-ին Եվրոպական Միության և Ատոմային Էներգիայի Եվրոպական Համայնքի դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետությունը պարտավորվել է կիրառության մեջ դնել՝ տեղայնացնել, համաձայնագրի Հավելված I-ով նախատեսված Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2008 թվականի նոյեմբերի 19-ի 2008/96/«Ճանապարհային ենթակառուցվածքի անվտանգության կառավարման մասին» ԵՀ հրահանգի համաձայն՝ պետք է իրականացվի ճանապարհային անվտանգության ազդեցության գնահատմանը, ճանապարհային անվտանգության աուդիտներին, ճանապարհային ցանցի անվտանգության կառավարմանը և անվտանգության տեսչական ստուգումներին վերաբերող դրույթների հաստատումն ու կիրառումը: Վերը նշվածը կիրառվում է անդրեվրոպական ճանապարհային ցանցի մաս կազմող ճանապարհների նկատմամբ՝ անկախ այն հանգամանքից՝ դրանք նախագծման, կառուցապատման փուլում են, թե շահագործվում են:

1.2 **առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Ճանապարհային ենթակառուցվածքի անվտանգության աուդիտորների համակարգի ներդրում:

2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Ճանապարհային անվտանգության կառավարման համակարգի և աուդիտորների ինստիտուտի ներդրում

51.4. Միջազգային չափանիշներին համապատասխան ճանապարհային անվտանգության աուդիտի վերապատրաստման դասընթացի իրականացում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության ծրագրի 3.3 կետի 3-րդ պարբերության, ինչպես նաև «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի պահանջներով: Ճանապարհային անվտանգության խնդիրը դիտարկվում է որպես հիմնական խնդիր և հրատապ առաջնահերթություն Հայաստանի Հանրապետության ճանապարհային անվտանգության հինգ տարվա (2017-2021թթ.) ազգային ռազմավարությամբ, որով սահմանված են իրատեսական թիրախներ և համապատասխան միջամտություններ: Մահվան ելքերով ճանապարհային պատահարների ցուցանիշը մոտավորապես 18 այդպիսի պատահար յուրաքանչյուր 100 000 բնակչի հաշվով, որը երեք անգամ բարձր է ԵՄ միջին ցուցանիշից, այն է՝ 5 այդպիսի պատահար յուրաքանչյուր 100 000 բնակչի հաշվով:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

2021թ. օգոստոս ամսին նախատեսվում է ամփոփել ՀՀ գործող ճանապարհային անվտանգության ստանդարտների և նորմերի արդիականացման և ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացում բաղադրիչը և Միջազգային չափանիշներին համապատասխան ճանապարհային անվտանգության աուդիտի վերապատրաստման դասընթացը:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Նոր միջազգային ներդրումների և հնարավոր ֆինանսավորող կազմակերպություններից լրացուցիչ միջոցների ներգրավում՝ ՀՀ ճանապարհային անվտանգության բարելավման նոր միջոցառումներ իրականացնելու նպատակով:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Ճանապարհային անվտանգության առնվազն 40 աուդիտորների ուսուցում և հավաստագրում:

51.5. Թունելներին ներկայացվող անվտանգության նվազագույն պահանջների կիրառում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Ներկայացված միջոցառումը բխում է ԵՄ և Խորհրդի 2004 թվականի ապրիլի 29-ի 2004/54/ԵՀ հրահանգի՝ Անդրեվրոպական ճանապարհային ցանցի թունելներին ներկայացվող նվազագույն անվտանգության

	պահանջների կիրառկման անհրաժեշտությունից, ինչպես նաև «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի պահանջներից: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** 2021թ. օգոստոս ամսին նախատեսվում է ամփոփել ՀՀ գործող ճանապարհային անվտանգության ստանդարտների և նորմերի արդիականացման և ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացում բաղադրիչը և Միջազգային չափանիշներին համապատասխան ճանապարհային անվտանգության աուդիտի վերապատրաստման դասընթացը: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Նոր միջազգային ներդրումների և հնարավոր ֆինանսավորող կազմակերպություններից լրացուցիչ միջոցների ներգրավում՝ ՀՀ ճանապարհային անվտանգության բարելավման նոր միջոցառումներ իրականացնելու նպատակով: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Ճանապարհային անվտանգության առնվազն 40 աուդիտորների ուսուցում և հավաստագրում: **2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Թունելներում ճանապարհային երթևեկության մասնակիցների համար անվտանգության նվազագույն մակարդակի ապահովում՝ ԵՄ չափանիշներին համապատասխան:
52	**Ճանապարհային ակտիվների կառավարման առկա համակարգի գնահատում և հետագա անհրաժեշտ բարելավումների իրականացում** **52.1. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1419-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնում** **1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել ՀՀ կառավարության ծրագրի 3.2 գլխի 3-րդ պարբերության 11-րդ մասի, ինչպես նաև «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի պահանջները և դրա նպատակն է գնահատել ճանապարհային ակտիվների կառավարման առկա համակարգը և իրականացնել անհրաժեշտ բարելավումներ: Նշվածի շրջանակներում միջպետական, հանրապետական և տեղական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների չափորոշիչների, գնման մրցութային պահանջների հստակեցնելու, մոբայլ հավելվածի միջոցով գործող հսկողության նոր համակարգի ներդրման համար ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1419-Ն որոշման մեջ անհրաժեշտ է կատարել փոփոխություններ և լրացումներ: **1. 1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** ՀՀ կառավարության 04.11.2010թ. թիվ 1419-Ն որոշմամբ սահմանված՝ ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման մակարդակների գնահատման և կատարված աշխատանքների ընդունման կարգի (այսուհետև՝ Կարգ) համաձայն, ըստ համապատասխան տարածաշրջանների, կապալառու կազմակերպությունների կողմից իրականացվում են ավտոմոբիլային ճանապարհների պահպանման աշխատանքներ: Կարգի 8-րդ կետի համաձան ճանապարհների առկա վիճակի, ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման մակարդակների գնահատումը և կատարված աշխատանքների ընդունումն իրականացվում է տվյալ ավտոմոբիլային ճանապարհների պետական կառավարման մարմնի ճանապարհների պահպանման պատասխանատու ստորաբաժանման կողմից: Սակայն պատասխանատու ստորաբաժանման կողմից իրականացվող գործառույթները չեն համապատասխանում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված գնումների պատասխանատու ստորաբաժանման գործառույթներին: Բացի այդ որոշմամբ սահմանված ավտոմոբիլային ճանապարհների առկա վիճակի, պահպանման մակարդակի գնահատման, ինչպես նաև պահպանման աշխատանքների ընդունման մի շարք գործառույթներ արդիականացման կարիք ունեն: **1. 2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Առաջարկվում է վերանայել որոշման դրույթները դրանք համապատասխանեցնելով օրենսդրության առկա պահանջներին: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

	Ճանապարհների պահպանման պատասխանատու ստորաբաժանման կողմից իրականացվող գործառույթների համապատասխանում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված գնումների պատասխանատու ստորաբաժանման գործառույթներին: Ավտոմոբիլային ճանապարհների սպասարկման աշխատանքների արժեքներին համապատասխան լրացուցիչ պահանջների սահմանում՝ ապահովելով սպասարկման աշխատանքների շարունակական բարեփոխումները:
53	**Ճանապարհների պետական գրանցում** **53.1 Միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների չափագրում և պետական գրանցում** **1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Ճանապարհների պետական գրանցման միջոցառման համար հիմք է հանդիսացել միջոցառման համար հիմք է հանդիսացել ՀՀ կառավարության ծրագրի 3.2 գլխի 3-րդ պարբերության 11-րդ մասի, ինչպես նաև «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի պահանջները և դրա նպատակն է միջպետական և հանրապետական ճանապարհների նկատմամբ սեփականության իրավունքի գրանցումը: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս ՀՀ ավտոմոբիլային ճանապարհները հաշվառված են ՀՀ անունով, սակայն բացակայում են դրանց սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականները: Միջոցառման իրականացման բոլոր փուլերում (այդ թվում նաև փորձնական ծրագրի իրականացման ընթացքում) ակնկալվում է իրականացնել Կոմիտեի աջակցությունը: Հաշվի առնելով, որ վերոնշյալ ծրագրերի փաթեթում ներառված հողամասերի նկատմամբ առկա են իրավունքների պետական գրանցումներ, դրանց օտարման և տարաբնակեցման հարցը կարող է կարգավորվել «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի պահանջներով: Ուստի սույն միջոցառումը կարող է իրականացվել Կադաստրի կոմիտեի կողմից մշակվաշ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի և «Կադաստրային քարտեզում հայտնաբերված սխալների ուղղման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերի ընդունումից: Միջոցառումը կիրականացվի փուլային տարբերակով՝ 2022-2026թթ. ընթացքում: Սկզբնական փուլում նախատեսվում է իրականացնել փորձնական (պիլոտային) ծրագիր: **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների սեփականության իրավունքի գրանցումն փորձնական (պիլոտային) ծրագրի իրականացում և դրանց սեփականության գրանցում՝ համապատասխան մասնագիտացված կազմակերպության հետ համատեղ: 2022-2026թթ.ճանապարհների պետական գրանցման գործընթացի իրականացում: **2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Կիրականացվի միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման գործընթացը
54	**Ճանապարհային երթևեկության կազմակերպման գործնթացի կանոնակարգում, ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերին համապատասխանեցում** **54.1 Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 29-ի թիվ 1206-Ն, 2006թ. հոկտեմբերի 26-ի թիվ 1699-Ն, 2008թ. հունվարի 10-ի թիվ 113-Ն որոշումների մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության որոշումների նախագծերը ՀՀ վարչապետի աշխատակազմի ներկայացում** **1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման համար հիմք է հանդիսացել ՀՀ կառավարության ծրագրի 3.2 գլխի 3-րդ պարբերության 14-րդ մասի, ինչպես նաև «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 4-րդ և 5-րդ հոդվածների պահանջները և դրա նպատակն է ճանապարհային երթևեկության կազմակերպման գործնթացի կանոնակարգումը և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերին համապատասխանեցումը:

	1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները ԵԱՏՄ 14.04.2015թ. թիվ 28 որոշման համաձայն Մաքսային միության հանձնաժողովի 18.10.2011թ. թիվ 827 որոշմամբ հաստատված Մաքսային միության ՄՄ ՏԿ 014/2011 «Ավտոմոբիլային ճանապարհների անվտանգություն» տեխնիկական կանոնակարգը պետք է համապատասխանեցնել ՀՀ ավտոմոբիլային ճանապարհների անվտանգությանն առնչվող օրենսդրական ակտերին՝ ինչով պայմանավորված անհրաժեշտություն է առաջացել փոփոխություններ կատարել ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 29-ի թիվ 1206-Ն, 2006թ. հոկտեմբերի 26-ի թիվ 1699-Ն, 2008թ. հունվարի 10-ի թիվ 113-Ն որոշումներում: **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները** ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 29-ի թիվ 1206-Ն, 2006թ. հոկտեմբերի 26-ի թիվ 1699-Ն, 2008թ. հունվարի 10-ի թիվ 113-Ն որոշումների համապատասխանեցում ԵԱՏՄ մաքսային միության հիշյալ կանոնակարգին: **2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** ՀՀ ավտոմոբիլային ճանապարհները ճանապարհային երթևեկության կազմակերպման տեխնիկական միջոցներով լիարժեք ապահովման հստակեցում
55	**Ճանապարհային ենթակառուցվածքների վրա կլիմայի փոփոխության ազդեցության գնահատում և մեղմացնող գործողությունների իրականացում** **55.1 ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների կլիմայական փոփոխությունների ռիսկերի գնահատում և ընթացիկ աշխատանքներում կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագրի մշակում** և իրականացում՝ **միջազգային լավագույն փորձին համապատասխան** **1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության ծրագրի 3.2 գլխի 3-րդ պարբերության 12-րդ մասի, ինչպես նաև «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջներով՝ այն է կլիմայի փոփոխության հետ կապված ճանապարհների վրա ազդեցության գնահատում և համապատասխան մեղմացնող միջոցառումների մշակում ու իրականացման ապահովումը: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս չի իրականացվում ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների կլիմայական փոփոխությունների ռիսկերի գնահատում: Սույն միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ ճանապարհի շինարարության, հիմնանորոգման, նորոգման և ընթացիկ պահպանման գործընթացում անհրաժեծտ է հաշվի առնել բնապահպանական նորմերին ներկայացվող պահանգները: **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Կիրականացվի ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների կլիմայական փոփոխությունների ռիսկերի գնահատում և ընթացիկ աշխատանքներում կլիմայի փոփոխության հարմարավողականության ծրագրի մշակում՝ միջազգային լավագույն փորձին համապատասխան **2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագիրը մշակված է: Ճանապարհաշինության աշխատանքներում հաշվի են առնվում կլիմայի փոփոխության հիմնական գործոնների ազդեցությունները՝ մասնավորապես իրականացվում են տեղումների և ջերմաստիճանների փոփոխությամբ պայմանավորված ճանապարհային պատվածքի փոփոխության ազդեցության գնահատում:
56	**Ճանապարհային ոլորտի մասնագետների կարողությունների զարգացում** **56.1. Յուրաքանչյուր տարի ճանապարհային ոլորտի մասնագետների կրթության և վերապատրաստման տարեկան ծրագրի մշակում և դասընթացների կազմակերպում** **56.2. Ճանապարհային ոլորտում ընդգրկված առանցքային սուբյեկտների (պատվիրատուներ, նախագծողներ, կապալառուներ, տեխնիկական հսկողություն իրականացնողներ և այլն) կարողությունների գնահատման և դրանց բարձրացման մեխանիզմների սահմանում** **1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության ծրագրի 3.2 գլխի 3-րդ պարբերության 13-րդ և 15-րդ մասերի պահանջներով:

	1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Ճանապարհային ոլորտի մասնագետները պարբերաբար կարիք ունեն վերապատրաստվելու: Միաժամանակ ՀՀ-ում վերջին տարիներին իրականացվում են լայնամաշտաբ աշխատանքներ հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով անվտանգ երթևեկության ապահովման ուղղությամբ, սակայն դեռևս կան մի շարք ավտոմոբիլային ճանապարհներ, որոնք գտնվում են անբարեկարգ վիճակում: **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Յուրաքանչյուր տարի կիրականացվի ճանապարհային ոլորտի մասնագետների կրթության և վերապատրաստման տարեկան ծրագրի մշակում և դասընթացների կազմակերպում: Ներկայացված 2-րդ միջոցառմամբ նախատեսվում է շարունակական դարձնել ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների վերականգնման և բարեկարգման գործընթացը՝ ապահովելով միջպետական, հանրապետական և տեղական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ցանցի ամբողջականությունը ճանապարհաշինական նորմերին համապատասխանող հիմնանորոգված ավտոմոբիլային ճանապարհներով: **2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** 1. Մասնագիտական ներուժի մեծացում՝ ճանապարհային ոլորտի մասնագետների կրթության և վերապատրաստման միջոցով, այդ թվում՝ արտասահմանյան առաջատար ուսումնական հաստատություններում և միջազգային շինարարական և ինժեներական ընկերություններում, միջազգային առաջատար փորձի փոխանակում 2. Ճանապարհային ոլորտում ընդգրկված առանցքային սուբյեկտների կարողությունների գնահատում և որակի բարձրացում 3. Յուրաքանչյուր տարի կվերապատրաստվեն ճանապարհային ոլորտի մասնագետների առնվազն 30%-ը. **4.** Յուրաքանչյուր տարի արտասահմանյան առաջատար ուսումնական հաստատություններում և միջազգային շինարարական և ինժեներական ընկերություններում վերապատրաստում կանցնեն ոլորտի առնվազն 10 մասնագետներ
57	**Ճանապարհներին հասցված վնասների, այդ թվում ճանապարհային նշանների և կահավորանքի այլ տարրերի գողության և/կամ վնասման համար պատասխանատվության խստացում** **57.1 «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացում** **1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության ծրագրի 3.2 գլխի 3-րդ պարբերության 16-րդ մասի, ինչպես նաև «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 150.2 հոդվածի և «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Հաճախ ճանապարհը օգտվողների կողմից (վարորդներ, հետիոտն և այլն) ՀՀ ընդհանուր օգտագործման ճանապարհներին հասցվում են վնասները, այդ թվում՝ արձանագրվել են ճանապարհային նշանների գողության դեպքեր՝ պետությանը պատճառելով մեծ չափերի հասնող ֆինանսական միջոցների վնասներ: **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Կմշակվեն «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը, որոնցով կխստացվեն ճանապարհներին հասցված վնասների համար ՀՀ օրենսդրությամբ նախատեսված տուգանքները և պատասխանատվության միջոցները: **2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Ճանապարհներին հասցված վնասների համար վարչական և քրեական պատասխանատվության դրույթների խստացում:
58	**Ճանապարհների պաշտպանական գոտիներում գտնվող տարածքների կառուցապատման կանոնակարգում** **58.1 «ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2404-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմի ներկայացում** **1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

	Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության ծրագրի 3.2 գլխի 3-րդ պարբերության 14-րդ մասի, ինչպես նաև «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ճանապարհների պաշտպանական գոտիներում գտնվող տարածքների՝ որպես հատուկ կարգավորման օբյեկտների նկատմամբ օրենսդրական լրացուցիչ պահանջների սահմանման անհրաժեշտություն: **1. 2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Կմշակվեն ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2404-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով կկանոնակարգվեն Ճանապարհների պաշտպանական գոտիներում գտնվող տարածքների կառուցապատման առնչվող դրույթները: **2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Ճանապարհների պաշտպանական գոտիներում գտնվող տարածքների՝ որպես հատուկ կարգավորման օբյեկտների նկատմամբ օրենսդրական պահանջների սահմանում, դրանց տնօրինման և կառավարման միասնական քաղաքականության մշակում
59	**Ավտոմոբիլային ճանապարհների հարակից տարածքներում առանց ճանապարհը տնօրինողի համաձայնության կառուցված կամ կառուցվող օբյեկտների կանխարգելում** **59.1 Ավտոմոբիլային ճանապարհների հարակից տարածքներում առանց ճանապարհը տնօրինողի համաձայնության կառուցված կամ կառուցվող օբյեկտների գույքագրում և ճանապարհային երթևեկության անվտանգությանը սպառնացող օբյեկտների ապամոնտաժման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ** 1.**Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է ավտոմոբիլային ճանապարհների հարակից տարածքներում առանց ճանապարհը տնօրինողի համաձայնության կառուցված կամ կառուցվող օբյեկտների գույքագրմամբ և դրանց ապամոնտաժմամբ, որի հիմնական նպատակն է ապահովել երթևեկությանանվտանգությունը և խանգարող օբյեկտների բացառումը: Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել ՀՀ կառավարության ծրագրի 3.2 գլխի 3-րդ պարբերության 16-րդ մասի, ինչպես նաև «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 14-րդ և 17-րդ հոդվածների պահանջները: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ մասի «ա» կետի համաձայն՝ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների պաշտպանական գոտիներում, առանց այդ ճանապարհները տնօրինողների և շահագրգիռ այլ մարմինների հետ համաձայնեցնելու, արգելվում են կառուցել շենքեր, կառույցներ, ինժեներական հաղորդակցումներ, կատարել լեռնահետազոտական և արդյունահանման աշխատանքներ: ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2404-Ն որոշման 1-ին կետի համաձայն՝ ՀՀ միջպետական և հանրապետական նշանակության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհները և դրանց հարող տարածքներն առանձնացվում են որպես քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտներ: Որոշման 8-րդ կետի 2-րդ մասին համապատասխան՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով քաղաքաշինական գործունեության իրականացման գործառույթները նախապես համաձայնեցվում են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի ու պետական կառավարման շահագրգիռ այլ մարմինների հետ: Սական մի շարք ճանապարհաշինական ծրագրերի կատարման ընթացքում պարզվել է, որ ՀՀ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարների պաշտպանական գոտում առանց ճանապարհը տնօրինողի համապատասխան համաձայնության կառուցվել են ինքնակամ, անօրինական շինարարական կառույցներ, որոնք խոչնդոտում են ճանապարհային երթևեկության անվտանգությանը, ինչպես նաև դրանց հետևանքով պաշտպանական գոտիների հողերում կարող են առաջանալ հիդրոլոգիական ռեժիմի անբարենպաստ փոփոխություններ կամ ռելիեֆի տարրերի կայունության խախտում (սողանքներ, լանջերի փլվածքներ, ձորակներ, լճակներ կամ հողերի ճահճացում): **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

	Ճանապարհների անվտանգության երթևեկության ապահովման նպատակով անհրաժեշտ է գույքագրել ճանապարհներին ինքնակամ կառուցված շինությունները, հետագայում կանխարգելել և բացառել նման կառույցների շինարարությունը՝ խստացնել միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պաշտպանական գոտիներում կառուցապատման համաձայնությունների տրամադրման գործընթացը: **2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** • Ճանապարհային անվտանգությանը սպառնող օբյեկտների գույքագրում և դրանց ապամոնտաժման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում: ՀՀ ավտամաբիլային ճանապարհների երկանքով ապօրինի տեղակայված օբյեկտների նկատմամբ միասնական մոտեցման ձևավորում, ըստ անհրաժեշտության կկատարվեն օրենսդրական փոփոխություններ: Մասնավերապես, կվերանայվեն և կիստակեցվեն միջպետական և հանրա-պետական նշանակության ավտոճանապարհների պաշտպանական գոտիներում կառուցապատման համաձայնությունների տրամադրման գործընթացը:
60	**Ճանապարհային ոլորտում պետություն–մասնավոր հատված համագործակցության ձևաչափի խթանում** **60.1 Ճանապարհային ոլորտում պետություն–մասնավոր հատված համագործակցության ծրագրերի մշակում և առաջարկությունների ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ** **1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության ծրագրի 3.2 գլխի 3-րդ պարբերության 17-րդ մասի, ինչպես նաև «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» ՀՀ օրենքի պահանջներով: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ճանապարհայն ոլորտում ներդրումների ներգրավման նպատակով անհրաժեշտություն է առաջանում ճանապարհների շինարարության, հիմնանորոման և կառուցման գործընթացներում ներգրավվել նաև մասնավոր կազմակերպություններին: 1.2 **առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Կուսումնասիրվի ճանապարհաշինության մեջ մասնավոր կազմակերպությունների ներգրավման հնարավորությունները և կմշակվի ճանապարհային ոլորտում պետություն–մասնավոր հատված համագործակցության ծրագիր **2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** • Ճանապարհային ոլորտում պետություն–մասնավոր հատված համագործակցության ծրագրերը մշակված են • ՊՄԳ պայմանագրերի համաձայն իրականացվող ՊՄԳ ծրագրերի առկայություն Մինչև 2026թ-ը ճանապարհների շինարարության, հիմնանորոման և կառուցման գործընթացներում առնվազն 2 ՊՄԳ պայմանգրի առկայություն
61	**Դեպի «ալպյան» մարգագետիններ և արոտավայրեր գրունտային ճանապարհի կառուցում** **11 «Ալպյան» մարգագետիններ և արոտավայրեր տանող գրունտային ճանապարհի կառուցում** **1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է նախընտրական քարոզարշավի ժամանակ ՀՀ Տավուշի մարզ կատարած այցի ժամանակ տրված խոստումից, մասնավորապես՝ դեպի «ալպյան» մարգագետիններ **և արոտավայրեր** գրունտային ճանապարհի կառուցմամբ, ինչպես նաև «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի պահանջները: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Բնության վերականգնման, պաշտպանության աշխատանքների, ինչպես նաև «ալպիական» մարգագետինների, ազգային պարկերին լրացուցիչ եկամուտներ ապահովելու, պատմամշակութային, ուսումնական ու գիտաճանաչողական (հնագիտական, երկրաբանական), էկոլոգիական, էթնոգրաֆիկ և տուրիզմի այլ ձևերի զարգացման նպատակով դեպի այդ վայրերի հասանելիությունը ապահովելու համար անհրաժեշտ է կառուցել գրունտային ճանապարհ: 1.2 **առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Դեպի տուրիստական նշանակության տարածքներ՝ «ալպիական» մարգագետիններ և ազգային պարկեր տանող գրունտային ճանապարհների կառուցում/վերակառուցում: **2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

	Գրունտային ճանապարհների կառուցում/վերակառուցում:
62	**Երկաթուղային տրանսպորտով երթևեկության անվտանգության և մատուցվող ծառայությունների որակի բարձրացում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է երկաթուղային շարժակազմի հրատապ նորացման և արդիականացման անհրաժեշտությամբ, ուղղված ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների ծավալների ավելացմանը, երթևեկության անվտանգության մակարդակի և մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը: Ըստ ձեռք բերված պայմանավորվածության 37 կմ գծի հիմնանորոգում: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի կողմից շահագործվող շարժակազմը հնացած է և չի համապատասխանում ներկայացվող տեխնիկական պահանջներին: Շահագործվող շարժակազմը թույլ չի տալիս ապահովվել մատուցվող ծառայությունների անհրաժեշտ որակի մակարդակը, երթևեկության անվտանգությունը և մրցունակությունը տրանսպորտի այլ տեսակների համեմատ: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Ուղևորատար և բեռնատար նոր շարժակազմի ձեռքբերում, գործող շարժակազմի արդիականացում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների ծավալների ավելացում, երթևեկության անվտանգության մակարդակի և մատուցվող ծառայությունների որակի բարձրացում:
63	**Երկաթուղային ուղևորափոխադրումներից ստացված վնասների սուբսիդավորման վերանայում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է երկաթուղային առկա ենթակառուցվածքների պահպանումով և հետագա զարգացումով: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս սուբսիդավորման չափը կարգավորվում է գործող Կոնցեսիոն պայմանագրով, որի սահմանված դրույթները թույլ չեն տալիս սուբսիդավորման առկա եղանակով ապահովել ենթակառուցվածքների պահպանումը և արդիականացումը: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Սուբսիդավորման նոր մեխանիզմների մշակում և կոնցեսիոն պայմանագրի համապատասխան դրույթների փոփոխություն: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Ենթակառուցվածքների պահպանում և զարգացում, երթևեկության անվտանգության մակարդակի բարձրացում:
64	**Առևտրային ծովագնացության հնարավորությունների զարգացում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** ՀՀ դրոշի ներքո առևտրային ծովագնացության հնարավորության և իրավական դաշտի ստեղծման հետ: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս իրավական դաշտի բացակայությունը թույլ չի տալիս ՀՀ դրոշի ներքո առևտրային ծովագնացության իրականացումը և զարգացումը: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Իրավական դաշտի ստեղծում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** ՀՀ դրոշի ներքո առևտրային ծովագնացության զարգացում և բեռնաշրջանառության ավելացում:
65	**65.1, 65.2 «Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ կողմից ներկայացվող 5-ամյա Մաստեր պլանի հաստատման գործընթացի ապահովում. 2. Մաստեր պլանի իրագործում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը.** Միջոցառման իրականացման նպատակն է կիրառվող միջազգային մակարդակին և Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության ստանդարտներին և խորհուրդ տրվող պրակտիկային համապատասխան զարգացնել և արդիականացնել Երևանի «Զվարթնոց» և Գյումրու «Շիրակ» օդանավակայանների ենթակառուցվածքները:

	ՀՀ Կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 1532-Ա որոշում և ՀՀ Կառավարության 2021 թվականի հուլիսի 29-ի թիվ 1237-Ա որոշում: ՀՀ Կառավարության 2021-2026թթ. Ծրագիր, կետ 3, 3.1 ենթակետ՝ Օդային տրանսպորտ, Ձև 1, կետ 38): **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Օդանավակայանի կառավարիչը (կոնցեսիոները) յուրաքանչյուր 5 տարին մեկ ներկայացնում է նոր մաստեր պլան առաջիկա 5 տարվա համար: Գործող մաստեր պլանի ժամկետն ավարտվում է 2022 թվականին և կորոնավիրուսային համավարակով պայմանավորված այն որոշակի վերանայումների է ենթարկվել: Միաժամանակ ուղևորաշրջանառության ծավալների և նոր իրողությունների հաշվառմամբ ըստ առաջնահերթությունների վերանայվելու են ներդրումների առաջնահերթությունները և ուղղությունները՝ դրանք համահունչ դարձնելով սպասվող զարգացումներին: Մաստեր պլանով նախատեսվում են միջոցառումներ, որոնք կբարելավեն օդանավակայանային ենթակառուցվածքները՝ նպաստելով թռիչքային և ավիացիոն անվտանգության մակարդակների բարձրացմանը: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Մաստեր պլանով յուրաքանչյուր տարվա համար նախատեսվում են ներդրումների միջոցով լուծել օդանավակայանային ենթակառուցվածքների արդիականացման խնդիրները: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքն է օդանավակայանների ենթակառուցվածքների պարբերական զարգացման և արդիականացման շնորհիվ վերջիններիս համապատասխանեցումը միջազգային ստանդարտներին, ուղևորահոսքի աճին, որը կնպաստի ՀՀ տնտեսական աճին: **65.3 Կոնցեսիոն ակտիվների գույքագրում** 1. **Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Համաձայն ՀՀ կառավարության 2016 թվականի մարտի 17-ի թիվ 264-Ն որոշման՝ հաշվապահական հաշվառման նոր համակարգին անցմամբ պայմանավորված ակտիվների գույքագրման և վերագնահատման արդյունքները տարեկան ֆինանսական հաշվետվություններում արտացոլելու պահանջի կատարման ապահովում: 1.1 **կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** «Արմենիա միջազգային օդանավականներ» ՓԲԸ-ին 2001 թվականից կոնցեսիայով տրամադրված գույքի կազմում տեղի են ունեցել բազմաթիվ փոփոխություններ և տրամադրված գույքի հստակ գույքագրում իրականացված չէ: «Արմենիա միջազգային օդանավականներ» ՓԲԸ-ի կողմից իրականացված և ՀՀ ՏԿԵՆ Պետական գույքի կառավարման կոմիտե ներկայացված գույքագրման արդյունքներով ներկայացված ցանկերը թերի են, ոչ լիարժեք, անորոշ են որոշ անշարժ, շարժական գույքերի, ինչպես նաև հսկայածավալ պաշարների ճակատագրերը: 1.2. **առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Կոնցեսիոն ակտիվների ցանկում առկա գույքի կազմի ճշգրտման նպատակով առաջարկվում է ստեղծել միջգերատեսչական հանձնաժողով՝ ներգրավելով ՀՀ վարչապետի աշխատակազմի, ՀՀ ֆինանսների, ՀՀ էկոնոմիկայի, ՀՀ ՏԿԵ նախարարությունների, Պետական եկամուտների, Պետական գույքի կառավարման, Քաղաքացիական ավիացիայի կոմիտեների և «Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲ ընկերության համապատասխան աշխատակիցների: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Հանձնաժողովի կողմից իրականացված ուսումնասիրության, տեղազննման և պայմանագրին կից կոնցեսիոն ակտիվների ցանկի տվյալների հետ համեմատման արդյունքներով կներկայացվեն տվյալ ակտիվների (շենքեր, շինություններ, հողամասեր և այլ կոնցեսիոն ակտիվներ) հետագա տնօրինման (հետագա օգտագործման համար ոչ պիտանի հիմնական միջոցների, ապրանքանյութական պաշարների դուրս գրման) վերաբերյալ հիմնավորված եզրակացություններ:
66	**Դեպի ՀՀ և ՀՀ-ից չվերթերի աշխարհագրության ընդլայնում և մատչելի ավիափոխադրումների ապահովում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը:** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է ավիաչվերթների աշխարհագրության ընդլայնմամբ, տեղական ավիաընկերությունների համար նոր հնարավորությունների ստեղծմամբ և դեպի ՀՀ ավիացիոն շուկա նոր ավիաընկերությունների ներգրավմամբ, ինչը կնպաստի ՀՀ

	ավիացիոն շուկայի բազմակողմանի զարգացմանը և առողջ մրցակցության հաստատմանը, ինչպես նաև տնտեսության և ենթակառուցվածքների զարգացմանը, ինչի արդյունքում ակնկալվում է նաև ավիատոմսերի սակագների նվազեցում: **1.1 .Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կողմից շարունակական բանակցություններ են վարվում ավիաընկերությունների հետ ՀՀ ավիացիոն շուկա վերջիններիս ներգրավելու նպատակով, ինչպես նաև աշխատանքներ են տարվում ավիաընկերությունների գործունեության համար նպաստավոր պայմաններ ստեղծելու և առկա իրավական դաշտի փոփոխման ուղղությամբ: 1.2 **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Ավիաընկերությունների հետ խորհրդակցությունների և բանակցությունների վարում, իրավական ակտերում փոփոխությունների կատարում: 2. **Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Ավիաչվերթների իրականացման աշխարհագրության և ՀՀ ավիացիոն շուկայի ընդլայնում, առողջ մրցակցային պայմանների հաստատում, այլ ենթակառուցվածքների զարգացում, ավիափոխադրումների, ուղևորահոսքի թվաքանակի աճ, ինչը կնպաստի Հայաստանի Հանրապետությունում ավիացիոն գործունեություն իրականացնող կազմակերպությունների ցուցանիշների բարելավմանը, ինչպես նաև տնտեսական ակտիվության խթանմանը:
67	**Ավիացիոն շուկայի ազատականացում ԵՄ անդամ բոլոր պետությունների հետ** **67.1 «ՀՀ և ԵՄ և ԵՄ անդամ-պետությունների միջև ընդհանուր Ավիացիոն գոտու մասին» համաձայնագրի ստորագրման գործընթացի կազմակերպում** **1. Միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը և նպատակը:** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության և Եվրոպական Միության անդամ պետությունների միջև ընդհանուր ավիացիոն գոտու մասին» համաձայնագրի նախագծի նպատակներով, մասնավորապես՝ ստեղծել ընդհանուր ավիացիոն գոտի (ԸԱԳ)՝ ապահովելով Կողմերի շուկաների հասանելիությունը՝ հավասար մրցակցային պայմաններով, առանց խտրականության և միասնական կանոններով՝ ներառյալ թռիչքային և ավիացիոն անվտանգության, օդային երթևեկության կազմակերպման, մրցակցության, սոցիալական և շրջակա միջավայրի ոլորտներում, ընդլայնել օդային հաղորդակցությունը և զարգացնել միջազգային ավիացիոն համակարգը՝ հիմնվելով շուկայում ավիաընկերությունների միջև ոչ խտրական, թափանցիկ և արդար մրցակցության վրա: **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Քաղաքացիական ավիացիայի ոլորտի վրա հատկապես ազդել են ժամանակակից այնպիսի մարտահրավերներ, ինչպիսիք են քաղաքացիական ավիացիայի ոլորտում COVID-19 պայմանավորված, թեկուզև ժամանակավոր սահմանափակումները (վակցինացիաների, տեստավորումների պարտադիր պահանջները), սանձազերծված պատերազմի հետևանքները, Եվրոպական թռիչքային անվտանգության ցուցակում Հայաստանի ընդգրկվելը: ԵՄ հետ Բաց երկնքի քաղաքականության ամբողջական իրականացումից առաջ, կարծում ենք անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել և լուծել ԵՄ ավիացիոն անվտանգության ցուցակից դուրս գալու խնդիրը, քանի որ առանց դրա Հայաստանի մասնակցությունը ազատ օդային շուկային կարող է լինել ոչ արդյունավետ: Համաձայնագրի նախագծի 1-ին Հավելվածի 7-րդ կետով նախատեսված ԵՄ օրենսդրության համապատասխան Թռիչքների անվտանգության Եվրոպական Միության գործակալության կողմից տրված օդանավի տիպի վկայական (aircraft type certificate) ունենալու պահանջի կապակցությամբ, որի իրականացման համար սահմանվել է ժամկետ մինչև 2023 թվականի հունվարի 1-ը, ՀՀ Քաղաքացիական ավիացիայի կոմիտեն իր մտահոգությունն է հայտնում **ՄԻԱՅՆ Թռիչքների անվտանգության Եվրոպական Միության գործակալության (EASA) կողմից հավաստագրված օդանավեր շահագործելու պահանջի վերաբերյալ,** քանի որ կարող են առաջանալ այնպիսի իրավիճակներ, երբ պետության անվտանգության շահերից ելնելով կարող են հասանելի լինել օդանավեր, որոնք EASA-ի կողմից չեն ստացել օդանավի տիպի վկայական, սակայն իրականում կարող են ավելի շահավետ լինել՝ Հայաստանի կողմից ձեռք բերելու կամ շահագործելու համար (օրինակ՝ Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում սկսվել է ռուս-չինական ինքնաթիռների արտադրանքը, որը կարող շահավետ լինել Հայաստանի Հանրապետության համար):

	1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության և Եվրոպական Միության անդամ պետությունների միջև ընդհանուր ավիացիոն գոտու մասին» համաձայնագրի ստորագրմանն ուղղված աշխատանքների իրականացում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության և Եվրոպական Միության անդամ պետությունների միջև ընդհանուր ավիացիոն գոտու մասին» համաձայնագրի ստորագրում, ԵՄ անդամ պետությունների հետ ընդհանուր ավիացիոն գոտու ստեղծում, օդային հաղորդակցությունների իրականացման աշխարհագրության ընդլայնում, ինչպես նաև միջազգային ավիացիոն համակարգի զարգացում:
68	**Թռիչքային և ավիացիոն անվտանգության մակարդակի բարձրացում՝ համապատասխանեցնելով միջազգային ավիացիոն կազմակերպությունների ստանդարտներին** **68.1 «Ավիացիայի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում և ներկայացում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** «Ավիացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) ընդունումը պայմանավորված է «Ավիացիայի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) մի շարք դրույթների՝ ՀՀ միջազգային համաձայնագրերին և Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (այսուհետ՝ ICAO) կողմից հրապարակված միջազգային ստանդարտներին, առաջարկվող գործելաձևերին ու ընթացակարգերին, նշված փաստաթղթերում կատարված վերջին փոփոխություններին դրանց առավել հնարավոր չափով համապատասխանությունն ապահովելու, ինչպես նաև բնագավառի մի շարք այլ ընթացակարգային դրույթների կարգավորման անհրաժեշտությամբ: 1.1 **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** «Ավիացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» 2015 թվականի հունիսի 19-ի ՀՕ-101-Ն օրենքով (այսուհետ՝ ՀՕ-101-Ն օրենք) ավիացիայի բնագավառում տարանջատվեցին ոլորտի պետական կառավարման լիազորված մարմինները՝ բնագավառի քաղաքականությունը մշակող, իրականացնող և թռիչքային ու ավիացիոն անվտանգության, տեխնիկական կարգավորման լիազորված մարմիններ, ինչպես նաև ՀՀ-ում ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի պետական մասնագիտական քննության անցկացման լիազորված մարմին: ՀՕ-101-Ն օրենքի ընդունումից հետո ԻԿԱՕ-ի հրապարակած փաստաթղթերում կատարվել են փոփոխություններ, որոնք ենթակա են պարտադիր կիրառման անդամ պետությունների կողմից: Մասնավորապես՝ Չիկագոյի կոնվենցիայի թիվ 17 «Անվտանգություն» և Եվրոմիության /ԵԿԱԿ/ «Անվտանգության կանոնակարգեր» Դոկ. 30 փաստաթղթի նոր՝ 13-րդ խմբագրությամբ ավիացիոն անվտանգության բնագավառում, ինչպես նաև Չիկագոյի կոնվենցիայի թիվ 13 «Օդանավի միջադեպի և պատահարի հետաքննություն» հավելվածի համապատասխան փոփոխություններով սահմանվեցին նոր չափորոշիչներ, որոնք նախատեսում են ՀՀ օրենսդրության պարտադիր համապատասխանեցում նշված պահանջներին և չափորոշիչներին: Միևնույն ժամանակ, Օրենքում հստակ կարգավարորված չեն ընդհանուր նշանակության ավիացիայի հետ կապված հարաբերությունները, օդանավ շահագործողի վկայական կրողի համար սահմանված պահանջը՝ ազգային պատկանելիության մասով, ամբողջապես հնարավորություն չի տալիս լիազորված մարմնի կողմից լիարժեք իրականացնելու օդանավ շահագործողների նկատմամբ արդյունավետ վերահսկողության (effective control) գործառույթը: 1.2 **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Ամբողջությամբ վերանայվելու է «Ավիացիայի մասին» ՀՀ օրենքը՝ համահունչ դարձնելով միջազգային չափորոշիչներին, ինչպես նաև ԵԱՍԱ գնահատողական այցի շրջանակներում ներկայացված առաջարկություններին: Հստակեցվելու է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Քաղաքացիական ավիացիայի կոմիտե կողմից ոլորտի կանոնակարգման շրջանակը և լիազորությունները: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

«Ավիացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համապատասխանեցում ավիացիոն միջազգային կազմակերպությունների ստանդարտների վերջին փոփոխություններին և Հայաստանի Հանրապետության Սահմանադրության դրույթներին:

68.2 Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կողմից «Ավիացիայի մասին» օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր ընդունելու լիազորության հստակեցում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Քաղաքացիական ավիացիայի կոմիտե կողմից «Ավիացիայի մասին» օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր ընդունելու լիազորության հստակեցման անհրաժեշտությունը պայմանավորված է «Ավիացիայի մասին» օրենքով Կոմիտեին վերապահված լիազորությունների իրականացման ժամանակ նորմատիվ կանոնակարգման իրավասության պատշաճ իրականացմամբ:

1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

ՀՀ Սահմանադրության 2015 թվականի փոփոխությունից հետո «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենքով ՀՀ ԿԱ քաղաքացական ավիացիայի գլխավոր վարչությունը (այսուհետ՝ Գլխավոր վարչություն) գործում է որպես ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ենթակա պետական մարմին՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Քաղաքացիական ավիացիայի կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) և հանդիսանում է Գլխավոր վարչության իրավահաջորդ:

ՀՀ Սահմանադրության, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» և «Ավիացիայի մասին» օրենքների համաձայն՝ Կոմիտեն իրավասու է ընդունել իր լիազորությունների շրջանակին վերապահված՝ օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր:

1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Կոմիտեն, հանդիսանալով նախարարությանը ենթակա պետական մարմին, 2018 թվականից մինչև 2020 թվականի հոկտեմբեր ամիսը չի կարողացել ընդունել նորմատիվ իրավական ակտեր՝ ըստ ՀՀ արդարադատության նախարարության դիրքորոշման: Օրենսդրական փոփոխության արդյունքում լիազորող նորմի ընդունմամբ կապահովվի գործառույթի պատշաճ իրականացումը:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Քաղաքացիական ավիացիայի կոմիտե կողմից «Ավիացիայի մասին» օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր ընդունելու լիազորության հստակեցմամբ քաղաքացիական ավիացիայի բնագավառի նորմատիվ կանոնակարգման բնագավառում հիմքեր կստեղծվեն Կոմիտեի կողմից նորմատիվ իրավական ակտեր ընդունելու համար:

68.3 Թռիչքային և ավիացիոն անվտանգությանն առնչվող թերությունների, անհամապատասխանությունների հիմնապատճառների բացահայտում, ուղղիչ գործողությունների պլանի մշակում և վերջիններիս պատշաճ կերպով իրականացման համակարգում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Թռիչքային և ավիացիոն անվտանգությանն առնչվող թերությունները վերացնելու համար անհրաժեշտ է հստակորեն ներկայացնել յուրաքանչյուր դիտարկման հիմնապատճառների վերլուծությունը (root cause statement), ներկայացնել համապատասխան ուղղիչ գործողությունները՝ նշելով պատասխանատու անձանց տվյալները և վերջնաժամկետները: Յուրաքանչյուր ուղղիչ գործողության պատշաճ և ժամանակին իրագործումը հանգեցնելու է թռիչքային և ավիացիոն անվտանգությանն առնչվող թերություններն ու անհամապատասխանությունները վերացնելուն:

1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Թռիչքային և ավիացիոն անվտանգությանն առնչվող թերությունները վերացնելու հիմքում ընկած է Կոմիտեի մասնագետներին համապատասխան որակավորումներով ապահովելը, ինչը պահանջում է բավարար ռեսուրսների առկայություն: Պետությունը պետք է ապահովի ավիացիոն մասնագետներին պատշաճ նախնական

	պատրաստությամբ ու վերապատրաստումներով՝ վերջիններիս որակավորումները պահպանելու և ցանկալի մակարդակի բարձրացնելու համար: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Թռիչքային և ավիացիոն անվտանգությանն առնչվող անհամապատասխանությունները հիմնովին վերացնելու և թռիչքային անվտանգությանը սպառնացող ռիսկերը նվազեցնելու համար անհրաժեշտ է ֆինանսական ռեսուրսների բավարար ապահովում, ինչը հնարավորությունը կտա ստանալ համապատասխան վերապատրաստումներ: **2 Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Ավիացիոն ոլորտում արձանագրված թերությունների և անհամապատասխանությունների հիմնապատճառների վերլուծության և ուղղիչ գործողությունների կատարման արդյունքում հնարավոր կլինի նվազեցնել թռիչքային և ավիացիոն անտանգությանը սպառնացող ռիսկերը: **68.4 Էլեկտրոնային համակարգերի ներդրում, ինչպես նաև գործող տեղեկատվական և վերլուծական տվյալների բազաների թվայնացում:** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Էլեկտրոնային համակարգերի ներդրում, ինչպես նաև գործող տեղեկատվական և վերլուծական տվյալների բազաների թվայնացում: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս կիրառվող վերլուծական տվյալների հավաքագրումը և մշակումը իրականացվում է մեխանիկական, որն առաջացնում է մարդկային ռեսուրսների անարդյունավետ օգտագործում և վերահսկողության ցածր մակարդակ: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Էլեկտրոնային (ավտոմատացված) համակարգի և վերլուծական տվյալների բազաների թվայնացման կիրառումը հանդիսանում է ժամանակակից միջոց, որն ապահովում է աշխատանքի որակի և արդյունավետության բարձրացումը, ինչպես նաև մարդկային միջամտության գործոնը հասցվում է նվազագույնի: **2 Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Թվային տեխնոլոգիաների և էլեկտրոնային համակարգերի կիրառումը կնպաստի ճշգրիտ վերլուծական տեղեկատվության վերահսկմանը, համապատասխան ռիսկերի գնահատման բարձր որակի ապահովմանը, ինչպես նաև կօպտիմալացվի մարդկային ռեսուրսի արդյունավետ կառավարումը: **68.5 Կոմիտեի մասնագետների անհրաժեշտ որակավորումների բարձրացում տեսական և գործնական դասընթացների միջոցով** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ միջազգային ստանդարտներին բավարարող, անվտանգ ու զարգացած քաղաքացիական ավիացիա ունենալու համար անհրաժեշտ է պատրաստել որակավորված անձնակազմ, այդ պահանջը սահմանված է հետևյալ փաստաթղթերով. 1. Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ICAO) Չիկագոյի կոնվենցիայի 19-րդ հավելվածի (Թռիչքների անվտանգության կառավարում) Լրացում 1-ի 4-րդ կետի («Որակավորված տեխնիկական անձնակազմ») 4.1 ենթակետի պահանջների համաձայն՝ «Պետությունը սահմանում է թռիչքների անվտանգության ոլորտում գործունեություն իրականացնող անձնակազմի որակավորման մինիմալ պահանջները և նախատեսում պատշաճ նախնական պատրաստություն ու վերապատրաստումներ՝ նրանց որակավորումները պահպանելու և ցանկալի մակարդակի բարձրացնելու համար»: 2. ICAO-ի 9734 փաստաթղթի (Doc. 9734) 3.3.2 կետի պահանջների համաձայն՝ «Քաղաքացիական ավիացիայի պետական համակարգն իր պարտականություններն արդյունավետ իրականացնելու համար պետք է պատշաճ կարգով կազմակերպի որակավորված անձնակազմով համալրումը, որոնք ունակ լինեն իրականացնել տեխնիկական պարտականությունների լայն շրջանակ, կապված թռիչքների անվտանգության ապահովման հետ»: Նպատակն է ունենալ որակավորված, միջազգային պահանջներին բավարարող անձնակազմ, որոնք պատշաճ կերպով կիրականացնեն ու կապահովեն քաղաքացիական ավիացիայի թռիչքային ու ավիացիոն

	անվտանգության ապահովման իրենց վերապահված գործառույթները՝ նպաստելով թռիչքների անվտանգությանը և քաղաքացիական ավիացիայի զարգացմանը: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Քաղաքացիական ավիացիայի կոմիտեն ֆինանսների նախարարությունից քիչ գումար է ստանում տեխնիկական անձնակազմի վերապատրաստումների կարիքները բավարարելու համար, որի պատճառով հնարավոր չի լինում ապահովել տեխնիկական անձնակազմի համար պահանջվող անհրաժեշտ վերապատրաստումները: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Ֆինանսական ռեսուրսների բավարար ապահովում, որի արդյունքում հնարավոր կլինի պատշաճ կերպով և ողջ ծավալով իրականացնել վերապատրաստումները և ունենալ լավ որակավորված, միջազգային պահանջներին բավարարող անձնակազմ: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Ունենալ լավ որակավորված, միջազգային պահանջներին բավարարող տեխնիկական անձնակազմ, որը ողջ ծավալով կանցնի պահանջվող վերապատրաստումները, կունենա տեսական ու գործնական գիտելիքները գործառույթները բարձր մակարդակով կատարելու՝ պատշաճ կերպով ապահովելով քաղաքացիական ավիացիայի ավիացիոն ու թռիչքային անվտանգությունը:
69	**Ընդհանուր նշանակության ավիացիայի անվտանգ զարգացում.** **69.1 Անօդաչու թռչող համակարգերի շահագործման նոր ընթացակարգի ընդունում, թվային պլատֆորմի ստեղծում և համակարգում** **69.2 Թռիչքադաշտերի և ուղղաթիռահարթակների շահագործման նոր ընթացակարգերի ընդունում** **1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը** Թռիչքադաշտերի, ուղղաթիռահարթակների և անօդաչու թռչող համակարգերի (ԱԹՀ) շահագործման իրավական կանոնակարգման անհրաժեշտությունն առաջացել է դրանց թվի աճով, մասնավոր փոքր ավիացիայի թռիչքների քանակի կտրուկ աճով: 1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը** և **առկա խնդիրները** Ներկայումս կառուցված և փաստացի շահագործվող թռիչքադաշտերը, ուղղաթիռահարթակները, ինչպես նաև ԱԹՀ-ների շահագործումը միջազգային ավիացիոն ստանդարտներին համապատասխանեցնելու առումով բացակայում են նորմատիվ իրավական կարգավորումները: Անօդաչու թռչող համակարգերի շահագործման մասով ներկա վիճակում իրավական առումով կանոնակարգված չէ: 1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Սույն ուղությունով իրականացվում են աշխատանքներ միջազգային ավիացիոն կառույցներում դրանց կանոնակարգման ինչպես նաև համապատասխան ստանդարտների և առաջարկվող գործելաձևերի մշակման ուղղությամբ: Ներկայումս դրանց թվի աճմանը զուգահեռ առաջանում են ԱԹՍ թռիչքների անմիջական վերահսկման լուրջ խոչընդոտներ: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառումների իրականացումը կնպաստի անօդաչու թռչող համակարգերի զարգացմանը և կկանոնակարգի դրանց անվտանգ շահագործումը: Քարտեզների մշակումը և թույլատրելի թռիչքային գոտիների սահմանումը հնարավորություն կտա ապահովել օդային տարածքի օգտագործման անվտանգությունը: Կնպաստի ընդհանուր նշանակության ավիացիայի զարգացմանը և կկանոնակարգի թռիչքադաշտերի և ուղղաթիռահարթակների անվտանգ շահագործումը: Թռիչքադաշտերի և ուղղաթիռահարթակների վերաբերյալ ընթացակարգերի մշակման և իրականացման արդյունքում ներդրողների մոտ կառաջանա հնարավոր ներդրումներ իրականացնելու և ընդհանուր նշանակության ավիացիան զարգացնելու հետաքրքրություն:
70	**Միջազգային չափանիշներին համապատասխան մրցունակ տարածաշրջանային ավիաուսումնական կենտրոնի ստեղծում**

70.1 Ուսումնասիրել միջազգային կազմակերպությունների կողմից հավաստագրված ավիաուսումնական կենտրոնները և բանակցություններ վարել ընտրված միջազգային ավիաուսումնական կենտրոնների ղեկավար կազմի հետ և դիտարկել միջազգային չափանիշներին համապատասխան մրցունակ տարածաշրջանային ավիաուսումնական կենտրոնի ստեղծումը:

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման նպատակը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական ավիացիայի բնագավառը կարգավորող դաշտի արդիականացմամբ, ինչպես նաև ՀՀ օրենսդրական պահաջների համապատասխանեցումը միջազգային կազմակերպությունների ստանդարտներին և առաջարկվող պրակտիկային:

Միջոցառման իրականացումը պայմանավորված է միջազգային կազմակերպությունների կողմից հավաստագրված ավիաուսումնական կենտրոնների ուսումնասիրության անհրաժեշտությամբ, ինչը հնարավորություն կտա կիրառել առկա պրակտիկան:

1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Ստեղծել ոլորտը կարգավորող ժամանակակից ստանդարտներին համապատասխանող իրավական դաշտ:

Մշակվել են ՔԱԳՎ պետի 2010 թվականի հոկտեմբերի 20-Ի թիվ 188-Ն ԱՐՄ-ԷՅՐ ՕՊՍ (ARM-AIR OPS) և ԹԻՎ 181-Ն ԱՐՄ- ԷՅՐ ՔՐՈՒ (ARM-AIR CREW) հրամանների հավելվածների փոփոխության նախագծեր: Կոմիտեի շահագրգիռ ստորաբաժանումների կողմից մշակվում է ՔԱԳՎ պետի մայիսի 14-ի թիվ 79-Ն հրամանի նախագծի փոփոխություն:

1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Ոլորտը կարգավորող դաշտի վերանայման աշխատանքների իրականացում, գործընկեր պետությունների և ավիաուսումնական կենտրոնների հետ խորհրդակցությունների և բանակցությունների վարում: Ֆինանսական ռեսուրսների բավարար ապահովում, որի արդյունքում հնարավոր կլինի պատշաճ կերպով և ողջ ծավալով իրականացնել գործընթացը:

Խորհրդակցությունների և բանակցությունների վարումը հնարավորություն կտա առկա խնդիրների հնարավոր լուծումներ գտնելու համար:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Արդյունքում ավիացիոն մասնագետներ կրթող, վերապատրաստող կազմակերպությունների նկատմամբ պահանջները կհամապատասխանեցվեն միջազգային ստանդարտներին, որը կնպաստի ՀՀ գործող ավիացիոն կրթահամալիրների արդիականացմանը և տարածաշրջանում մրցունակությանը, ինչպես նաև խթան կարող է հանդիսանալ ավիացիոն մասնագետներ պատրաստող համալիրների ոլորտում ներդրումների հարցում:

Միջոցառում. Ուսումնասիրությունը հնարավորություն կտա դիտարկել ներդրումային նպատակահարմարությունը:

70. 2 Ավիաուսումնական կենտրոնների հավաստագրման գործընթացը կանոնակարգող օրենսդրական դաշտի վերանայում՝ միջազգային չափանիշերին համապատասխան

1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը

Նպատակ. Միջոցառման իրականացման նպատակը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական ավիացիայի Ավիաուսումնական կենտրոնների հավաստագրման գործընթացը կանոնակարգող օրենսդրական բնագավառը կարգավորող դաշտի արդիականացմամբ, ինչպես նաև ՀՀ օրենսդրական պահաջների համապատասխանեցումը միջազգային կազմակերպությունների ստանդարտներին և առաջարկվող պրակտիկային:

Միջոցառում. Միջոցառման իրականացումը պայմանավորված է միջազգային կազմակերպությունների Ավիաուսումնական կենտրոնների հավասագրման գործընթացի ուսումնասիրության անհրաժեշտությամբ, ինչը հնարավորություն կտա կիրառել առկա պրակտիկան:

1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Ստեղծել ոլորտը կարգավորող ժամանակակից ստանդարտներին համապատասխանող կանոնակարգ:

Ֆինանսական ռեսուրսների բավարար ապահովում, որի արդյունքում հնարավոր կլինի պատշաճ կերպով և ողջ ծավալով իրականացնել գործընթացը:

1.2 **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Ոլորտը կարգավորող դաշտի վերանայման աշխատանքների իրականացում, գործընկեր պետությունների և ավիաուսումնական կենտրոնների հետ խորհրդակցությունների և բանակցությունների վարում:

	Խորհրդակցությունների և բանակցությունների վարումը հնարավորություն կտա առկա խնդիրների հնարավոր լուծումներ գտնելու համար: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Ստեղծել և կիրառել ժամանակակից Ավիաուսումնական կենտրոնների հավաստագրման գործընթաց: Հնարավորինս ուսումնասիրել միջազգային կիրառվող պրակտիկան:
71	**Օրենսդրական փոփոխությունների միջոցով նպաստավոր միջավայրի և պայմանների ստեղծում՝ տեղական նոր ավիաընկերությունների ստեղծման համար** **71.1 Առաջարկել օրենսդրական փոփոխություններ՝ ստեղծելով նպաստավոր միջավայր և պայմաններ ավիաընկերությունների շահագործման, ինչպես նաև տեղական նոր ավիաընկերությունների ստեղծման և զարգացման համար** **1. Միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական ավիացիայի ոլորտը կարգավորող իրավապայմանագրային դաշտի արդիականացմամբ, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կողմից տրվող օդանավ շահագործողի վկայականի տրամադրման ընթացակարգի վերանայմամբ, ավիաչվերթների աշխարհագրության ընդլայնմամբ՝ տեղական ավիաընկերությունների համար նոր հնարավորությունների ստեղծման և դեպի ՀՀ ավիացիոն շուկա նոր ավիաընկերությունների ներգրավման նպատակով: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կողմից տարվել և տարվում են հետևողական աշխատանքներ գործող միջկառավարական համաձայնագրերի վերանայման և նոր համաձայնագրերի կնքման ուղղությամբ, ինչպես նաև արդեն իսկ մեկնարկել է ոլորտը կարգավորող իրավական ակտերի վերանայման գործընթացը: Կոմիտեի կողմից շարունակական բանակցություններ են վարվում ավիաընկերությունների հետ ՀՀ ավիացիոն շուկա վերջիններիս ներգրավելու նպատակով: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Ոլորտը կարգավորող իրավապայմանագրային դաշտի վերանայման աշխատանքների իրականացում, գործընկեր պետությունների և ավիաընկերությունների հետ խորհրդակցությունների և բանակցությունների վարում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Քաղաքացիական ավիացիայի ոլորտը կարգավորող իրավական ակտերի արդիականացում, միջազգային պահանջներին լիարժեքորեն համապատասխանեցում, ավիաչվերթների իրականացման աշխարհագրության ընդլայնում՝ տեղական ավիաընկերությունների համար նոր հնարավորությունների ստեղծմամբ և ՀՀ ավիացիոն շուկա նոր ավիաընկերությունների ներգրավմամբ: **71.2 Գործող իրավական ակտերի վերանայում՝ համապատասխանեցնելով ICAO ստանդարտներին և առաջարկվող գործելաձևերին** **1. Միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական ավիացիայի ոլորտը կարգավորող իրավապայմանագրային դաշտի, այդ թվում Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կողմից տրվող օդանավ շահագործողի վկայականի տրամադրման ընթացակարգը սահմանող իրավական ակտի վերանայմամբ և արդիականացմամբ՝ համապատասխանեցնելով ICAO ստանդարտներին և առաջարկվող գործելաձևերին: **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կողմից տարվել և տարվում են հետևողական աշխատանքներ գործող իրավապայմանագրային դաշտի վերանայման ուղղությամբ:

	1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Ոլորտը կարգավորող իրավապայմանագրային դաշտի վերանայման աշխատանքների իրականացում, իրավական ակտերում փոփոխությունների և լրացումների կատարում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Օդանավ շահագործողի վկայականի տրամադրման ընթացակարգի լիարժեք համապատասխանեցում գործող միջազգային չափանիշներին:
72	**Ուղևորների սպասարկման որակի բարելավում՝ համաձայն միջազգային պահանջների** **1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը (նպատակը)** Հայաստանի Հանրապետության կառավարության նշված որոշման ընդունումը հնարավորություն կտա հստակեցնել քաղաքացիական ավիացիայի ոլորտում Հայաստանի Հանրապետության կողմից իրականացվող քաղաքականության սկզբունքները և կապահովի դրանց համապատասխանությունը Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության մասին Չիկագոյի կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) «Ընթացակարգերի պարզեցում» N 9-րդ հավելվածով սահմանված չափորոշիչներին: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** «Օդային փոխադրումներին առնչվող ընթացակարգերի պարզեցման ազգային ծրագիրը հաստատելու մասին» N 249 որոշումն ընդունվել է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2002 թվականի մարտի 16-ին, այն համապատասխանել է ICAO-ի կողմից սահմանված չափանիշներին, սակայն 9-րդ՝ «Ընթացակարգերի պարզեցում» հավելվածում 2017 թվականին 15-րդ խմբագրությամբ սահմանվել են նոր չափորոշիչներ՝ կապված օդանավերի ժամանման և մեկնման, օդանավակայաններում օդանավերի և ուղևորների սպասարկման համար անհրաժեշտ ծառայությունների և տեխնիկական միջոցների առկայության, ուղևորների և բեռների սահմանային, մաքսային, առողջապահական, սանիտարակարանտինային հսկողությունների, օդանավերի անձնակազմերի վկայականների, ուղևորային փաստաթղթերի ձևակերպումների, փոխադրվող ուղևորների ուղևորային մանիֆեստների և փոխադրման ընդունված բեռների բեռնային մանիֆեստների ձևաթղթերի, օդանավի անձնակազմի անդամների գլխավոր հայտարարագրերի ձևաթղթերի, օդանավում հիվանդ ուղևորների առկայության մասին, օդանավերի դեզինֆեկցիայի և դեզինսեկցիայի միջոցառումներին ներկայացվող պահանջների հետ: Նշված փոփոխությունների և լրացումների կիրառմամբ ՀՀ օդանավակայաններում իրականացվող ուղևորների սպասարկման ընթացակարգերը կհամապատասխանեցվեն ICAO-ի կողմից սահմանված նոր չափորոշիչներին: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Որոշման նախագծի ընդունումը հնարավորություն կտա համապատասխանեցնելու Միջազգային քաղաքացիական ավիացիայի կազմակերպության (ICAO) կողմից նոր ընդունված չափորոշիչներին և ավելի բարձրացնել Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում կիրառվող ուղևորների սպասարկման աշխատանքների անհրաժեշտ մակարդակը: **2 Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Որոշման նախագծի ընդունմամբ հստակ կամրագրվեն ուղևորների սպասարկման բոլոր փուլերի ընթացքում կիրառվող ընթացակարգերը և դրանց գործնական իրականացման միջոցով կդյուրացվեն օդային փոխադրումների ընթացքում ուղևորների սպասարկումներին առնչվող գործընթացները, դրանք համապատասխանեցնելով ICAO անդամ երկրներում գործող ներկայիս ընթացակարգերին: Նշված փոփոխությունների և լրացումների ընդունումը հնարավորություն կտա կանոնակարգելու Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում ուղևորների սպասարկման աշխատանքները բոլոր փուլերում, համապատասխանեցնելով դրանք ICAO-ի չափորոշիչներին:
73	**Երևանը Զվարթնոց օդանավակայանի հետ կապող տրանսպորտային ենթակառուցվածքների (ճեպագնաց, մետրո կամ ավտոմայրուղի) զարգացում** **1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը** Նոր կառուցված ճանապարհը հնարավորություն կտա օդանավակայան և օդանավակայանից դեպի մայրաքաղաք հասնել արդյունավետ ժամանակահատվածում, ինչը կնպաստի տուրիզմի զարգացմանը և ավիափոխադրումների աճին: Այլընտրանքային ճանապարհը կապահովի նաև արտակարգ իրավիճակների դեպքում փրկարար ուժերի և միջոցների արագ տեղաշարժը դեպի օդանավակայան:

	1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Ներկայումս Օդանավակայանը մայրաքաղաքին կապված է միայն մեկ ավտոճանապարհով և այլընտրանքային ճանապարհի բացակայությունը խոչընդոտում է ավիափոխադրումների աճին, քանի որ մեկ (հատկապես գործող) ճանապարհի թողունակությունը համաձայն միջազգային կազմակերպությունների մասնագետների կարծիքների նույնպես չի կարող ապահովել ավիացիայի զարգացող պահանջները: Այն նաև առանցքային է արտակարգ իրավիճակների դեպքում: Ուստի՝ Կառավարությունը, մի շարք պետական գերատեսչությունների հետ համատեղ պետք է մշակի քաղաքացիական ավիացիայի զարգացման և երկրում առևտրային և ընդհանուր նշանակության ավիացիայի (գործարարական, ուսումնական, անձնական, գյուղատնտեսային, շինարարական և այլ հատուկ բնույթի ծառայությունների համար) զարգացում ապահովելու միասնական տեսլական: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Կարող են լինել մի քանի առաջարկվող լուծումներ, որոնցից են նոր ճանապարհի կառուցումը, մետրոյի լրացուցիչ կայարանի կառուցումը կամ ճեպագնաց ուղու կառուցումը: Մետրոյի նոր կայարանի կառուցումը կարող է ավելացնել մետրոպոլիտենային երթուղուց օգտվող ուղևորների թիվը, ինչը կարող է կրկնակի շահեկան լինել երկրի համար: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Ակնկալվող արդյունքն է՝ ապահովել զբոսաշրջիկների և հայաստանյան ուղևորների համար օդանավակայան հասնելու հնարավորությունը, ազատվել մայրաքաղաքը օդանավակայանին կապող ճանապարհի խցանումներից, որի արդյունքում նաև համոզված լինել, որ ավիափոխադրումների քանակի աճի հետ համաշունչ հնարավոր է ապահովել նաև դեպի մայրաքաղաք տանող ճանապարհների թողունակությունը: Նախաձեռնությունը հնարավորություն կտա ավելացնելու Հայաստանում գործունեություն և/կամ թռիչքներ իրականացնող ընկերությունների թիվը, ինչը նոր հնարավոր ճանապարհներով երկիրը կկապի զարգացած արդյունաբերություն և տուրիզմ ունեցող երկրներին, և ինչպես նաև աշխարհասփյուռ հայ համայնքին՝ տարբեր երկրներում: Նախաձեռնությունն անուղղակի կերպով ավելացնելու է նաև որակավորված մասնագետների պահանջը:
74	**Կառավարությունը «Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ-ի և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի մասնակցությամբ բանակցություններ է վարելու աշխարհում առաջատար ավիաընկերությունների հետ, դեպի Հայաստան և Հայաստանից ավիափոխադրումներ իրականացնելու համար: Միաժամանակ բանակցություններ ենք վարելու հայաստանյան մրցունակ ավիաընկերությունների հետ՝ վերջիններիս գործունեության համար նպաստավոր միջավայր և պայմաններ ստեղծելու, ինչպես նաև մրցունակության բարձրացման ուղղությամբ:** **74 Աշխատանքներ իրականացնել ավիափոխադրումների ծավալները վերականգնելու ուղղությամբ՝ կիրառելով ավիաընկերությունների ծախսերը նվազեցնող մեխանիզմներ (ներառյալ օդի տուրքի ամբողջական վերացում): Պայմանավորվածություն ձեռք բերել «Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ-ի հետ՝ դեպի ԱՄՆ ուղիղ չվերթերի ապահովման աշխատանքների իրականացման և համապատասխան թույլտվություններ ստանալու նպատակով:** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը:** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է ավիաչվերթների աշխարհագրության ընդլայնմամբ, տեղական ավիաընկերությունների համար նոր հնարավորությունների ստեղծմամբ և դեպի ՀՀ ավիացիոն շուկա նոր ավիաընկերությունների ներգրավմամբ, ինչը կնպաստի ՀՀ ավիացիոն շուկայի բազմակողմանի զարգացմանը և առողջ մրցակցության հաստատմանը, ինչպես նաև տնտեսության և ենթակառուցվածքների զարգացմանը: 1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Քաղաքացիական ավիացիայի կոմիտե կողմից շարունակական բանակցություններ են վարվում ավիաընկերությունների հետ ՀՀ ավիացիոն շուկա վերջիններիս ներգրավելու նպատակով, ինչպես նաև աշխատանքներ են տարվում ավիաընկերությունների գործունեության համար նպաստավոր պայմաններ ստեղծելու ուղղությամբ: Համաձայն ՀՀ «Պետական տուրքի

	մասին» 1997 թ. դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի հոդված 20-ի ՀՀ-ից օդային տրանսպորտի միջոցներով ֆիզիկական անձանց (օդային ուղևորների) ելքի համար գանձվում է պետական տուրք բազային տուրքի տասնապատիկի չափով: Օրենքի վերոհիշյալ դրույթի նկատմամբ արտոնությունները սահմանված են նույն օրենքի 29-րդ հոդվածով: Վերոնշյալ 29-րդ հոդվածը լրացվեց նոր պարբերությամբ 2019 թ. դեկտեմբերի 28-ի թիվ 1936-Ն որոշմամբ՝ արտոնություն տալով նոր ուղղություններ շահագործող ավիափոխադրումներ իրականացնող ընկերություններին, անկախ տվյալ ավիաընկերության գրանցման երկրից: Հաշվի առնելով այն փաստը, որ ՀՀ Կառավարությունը զբոսաշրջության զարգացումը Հայաստանում հայտարարել է գերակա ուղղություններից մեկը, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Քաղաքացիական ավիացիայի կոմիտեն կարևորում է օդային ուղևորների ելքի համար գանձվող տուրքի հարցը, և ակնկալում, որ արտոնությունը պետք է տարածվի բոլոր օդային ուղևորների վրա (կամ օդի տուրքի գանձումը պետք է վերացվի): Ներկայումս դեպի ԱՄՆ ուղիղ չվերթերը «Զվարթնոց» օդանավակայանից չի իրականացվում, քանի որ վերջինս չի համապատասխանում ԱՄՆ–ում գործող անհրաժեշտ չափանիշներին: 1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Ավիաընկերությունների հետ խորհրդակցությունների և բանակցությունների վարում, իրավական ակտերում փոփոխությունների կատարում, ինչպես նաև քննարկումներ և փոփոխություններ «Պետական տուրքի մասին» օրենքում: Աջանկցել «Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ-ին՝ դեպի ԱՄՆ ուղիղ չվերթերի ապահովման աշխատանքների իրականացման և համապատասխան թույլտվություններ ստանալու նպատակով: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Ավիաչվերթների իրականացման աշխարհագրության և ՀՀ ավիացիոն շուկայի ընդլայնում, առողջ մրցակցային պայմանների հաստատում, այլ ենթակառուցվածքների զարգացում, ավիափոխադրումների, ուղևորահոսքի թվաքանակի աճ, ինչը կնպաստի Հայաստանի Հանրապետությունում ավիացիոն գործունեություն իրականացնող կազմակերպությունների ցուցանիշների բարելավմանը, ինչպես նաև տնտեսական ակտիվության խթանմանը: Ստանալ թույլտվություններ դեպի ԱՄՆ ուղիղ չվերթերի կատարման համար:
75	**Կառավարությունը միջոցներ է ձեռնարկելու ուժեղացնել ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի պետական մասնագիտական քննության անցկացման լիազորված մարմնի ինստիտուցիոնալ կարողությունները, որը կիրականացնի պատահարների և լուրջ միջադեպերի՝ միջազգային չափանիշներին համապատասխան մասնագիտական քննություն և կլինի անկախ Քաղաքացիական ավիացիայի կոմիտեից** Կոմիտեից անկախ լիազորված մարմին ունենալը սահմանվում է մի շարք միջազգային համաձայնագրերով և ապահովում է թռիչքային անվտանգության հարցերում առկա միտումների վերլուծությունը և ավիացիոն գործունեություն իրականացնողներին հետագա պատահարների կանխարգելման նպատակով համապատասխան տեղեկատվության տրամադրումը և բացառում է շահերի բախումը լուրջ միջադեպերի մասնագիտական քննության ժամանակ և անվտանգության վերահսկողության համընդհանուր աուդիտի ծրագրի շարունակական մոնիտորինգի մոտեցման շրջանակներում: **1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության՝ ICAO-ի հանդեպ ստանձնած պարտավորություններից: Նպատակը՝ համապատասխանեցնել միջազգային քաղաքացիական ավիացիայի կոնվենցիայի Հավելված 13-ի ստանդարտներին և ՀՀ ավիացիայի մասին օրենքի 10-րդ գլխի 54 հոդվածի պահանջներին: Կոմիտեից անկախ լիազորված մարմին ունենալը ապահովում է թռիչքային անվտանգության հարցերում առկա միտումների վերլուծությունը և ավիացիոն գործունեություն իրականացնողներին հետագա պատահարների կանխարգելման նպատակով համապատասխան տեղեկատվության տրամադրումը և բացառում է շահերի բախումը լուրջ միջադեպերի մասնագիտական քննության ժամանակ: 1.1 **կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

	Ներկայումս ՀՀ-ում պատահարների և լուրջ միջադեպերի քննության անցկացման լիազորված մարմնի ինստիտուցիոնալ կարողությունները բավարար չեն պատշաճ մակարդակով՝ ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննություն իրականացնելու համար: Չնայած այն հանգամանքին, որ ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի պետական մասնագիտական քննության անցկացման լիազորված մարմին ունենալու անհրաժեշտությունն ամրագրված է օրենքով, լիազորված մարմինն այս պահին չունի ինստիտուցիոնալ այնպիսի կարողություններ, որ կարողանա իրականացնել միջազգային ստանդարտներով և Չիկագոյի կոնվենցիայի սահմանված պահանջները: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Ստեղծել այդ մարմինը Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում, համալրել համապատասխան որակավորում ունեցող որակյալ մասնագետներով, որոնք հնարավորություն կունենան ՀՀ կառավարության 2003թ. Դեկտեմբերի 11-ի թիվ 1777 որոշմամբ ուժի մեջ մտած «ՀՀ ավիացիոն պատահարների և միջադեպերի քննության անցկացման, դասակարգման և հաշվառման կարգում» փոփոխություններ իրականացնելու առաջարկ ներկայացնել կառավարությանը: Գրել նոր ընթացակարգեր ICAO-ի ստանդարտներին համապատասխան: Անհրաժեշտ է բարձրացնել կառույցի աշխատունակությունը, անհրաժեշտության դեպքում համալրել որակավորված մասնագետներով, որի արդյունքում հնարավոր կլինի հստակեցնել լիազորված մարմնի պարտականությունները և իրավունքները, և հասնել կառույցի աշխատանքային պարտականությունների լիակատար իրականացմանը: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** ՀՀ կողմից ստանձնած պարտավորությունների համապատասխանեցում քաղաքացիական ավիացիայի միջազգային կոնվենցիայի Հավելված 13-ի ստանդարտներին: Հայաստանի Հանրապետությունը կունենա կառույց, որը կիրականացնի պատահարների և լուրջ միջադեպերի՝ միջազգային չափանիշներին համապատասխան մասնագիտական քննություն և կլինի անկախ Քաղաքացիական ավիացիայի կոմիտեից:
76	**76.1 Օդանավակայանի Կոնցեսիոների հետ իրականացնել շարունակական աշխատանքներ՝ սպասարկման որակի բարձրացման, մատուցվող ծառայությունների սակագների նվազեցման և այլ խնդիրների լուծման ուղղությամբ** 1. **Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Ուղևորահոսքերի ծավալների բաձրացման նպատակով անհրաժեշտ է Կոնցեսիոների հետ իրականացնել շարունակական աշխատանքներ՝ սպասարկման որակի բարձրացման, մատուցվող ծառայությունների սակագների նվազեցման և այլ խնդիրների լուծման ուղղությամբ: 1.1 **կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս Կոնցեսիոների հետ իրականացվում են տարբեր տեսակի հանդիպումներ, քննարկումներ, անհրաժեշտության դեպքերում ներգրավելով այլ գերատեսչությունների ներկայացուցիչներին: Խնդիրների մեծ մասը աշխատանքային կարգով լուծումներ նե ստանում: 1.2. **առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Կոնցեսիոների հետ իրականացնել շարունակական աշխատանքներ, իսկ անհրաժեշտության դեպքում առաջարկել ՀՀ կառավարությանը կնքված կոնցեսիոն համաձայնագրում կատարել որոշակի փոփոխություններ: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Օդանավակայանը դարձնել ավիաընկերությունների և տուրիստական կազմակերպությունների համար ավելի գրավիչ և մատչելի: Այդ դեպքում ակնկալվում է, որ կբարձրանա ուղևորահոսքերի ծավալները:
77	**Ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ոլորտում առկա խնդիրների լուծում, սպառողներին մատուցվող ծառայությունների որակի շարունակական բարելավում, և սպառողների պահանջների բավարարում** **77.1 Ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ոլորտում պետություն-մասնավոր գործընկերության շրջանակներում գործող վարձակալության պայմանագրով նախատեսված վարձատուի ու**

	վարձակալի իրավունքների և պարտավորությունների ապահովման ուղղությամբ աշխատանքների իրականացում **77.11 Հայաստանի Հանրապետության 6 մարզերի 11 քաղաքներում և 41 գյուղական բնակավայրերում, այդ թվում՝ Գյումրի, Վանաձոր և Արմավիր քաղաքներում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Հիմք ընդունելով ՀՀ ազգային ժողովի 2021 թվականի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրին հավանություն տալու մասին» որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N1363-Ա որոշման 3.3 «Ջրային տնտեսություն» բաժինը և 2006 թվականի նոյեմբերի 27-ի «ՀՀ ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի 5-րդ գլխի 16-րդ հոդվածը և «Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի 2018-2030 թթ. ռազմավարություն և ֆինանսավորման ծրագիրը», գործող վարձակալության պայմանագիրը՝ իրականացնել վարձակալության պայմանագրով նախատեսված վարձատուի՝ Ջրային կոմիտեի և վարձակալի՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի պարտավորությունների ապահովմանն ուղղված աշխատանքներ: **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս իրականացվում են վարձակալության պայմանագրով սահմանված (Պայմանագրային 5-րդ տարի) վարձատուի և վարձակալի գործառույթները: **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վարձակալության պայմանագիրը գործողության ժամկետը սահմանված է մինչև 2031 թվականը ներառյալ, անհրաժեշտ է հետագայում նույնպես ապահովել վարձակալության պայմանագրով նախատեսված բոլոր պահանջները, այդ թվում՝ վարձակալի հիմնական կատարողական և ներքին համեմատական ցուցանիշները: **2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Վարձակալի կողմից սպասարկվող բնակավայրերում հուսալի, կայուն և անվտանգ ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների ապահովումը: **77.2 Վարձակալի կողմից չսպասարկվող բնակավայրերում ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման գործընթացի կառավարմանն ուղղված բարեփոխումների (այդ թվում ինստիտուցիոնալ) իրականացում՝ այն ներառելով պետական լիազոր մարմնի գործառույթներում** **77.3 Վարձակալի կողմից չսպասարկվող բնակավայրերում ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի իրականացում՝ ծառայությունների պատշաճ մակարդակի ապահովման համար** **77.4 <<Հայջրմուղկոյուղի>> ՓԲԸ-ին ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման համար սահմանված կարգով լիցենզիայի տրամադրում և այդ բնագավառում գործունեության վերսկսման անհրաժեշտ պայմանների ստեղծում** **77.12 Վարձակալի կողմից չսպասարկվող 4 գյուղերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավման աշխատանքների իրականացում և շահագործման ապահովում** **1. Միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Հիմք ընդունելով ՀՀ ազգային ժողովի 2021 թվականի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրին հավանություն տալու մասին» որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021 թվականի որոշման 3.4 «Ջրային տնտեսությունը» բաժինը և 2006 թվականի նոյեմբերի 27-ի «ՀՀ ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի 5-րդ գլխի 16-րդ հոդվածը և «Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի 2018-2030 թթ. ռազմավարություն և ֆինանսավորման ծրագիրը»՝ իրականացնել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից չսպասարկվող բնակավայրերում ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման գործընթացի կառավարման բարելավմանն ուղղված բարեփոխումներ, (այդ թվում՝ ինստիտուցիոնալ): **1.2 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս վարձակալի կողմից չսպասարկվող մի շարք բնակավայրերում ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) համակարգերը գտնվում են տեխնիկապես անբավարար վիճակում կամ բացակայում են:

1.2Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Վարձակալի կողմից չսպասարկվող բնակավայրերում անհրաժեշտ է ներդնել ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) համակարգերի արդյունավետ կառավարում՝ դրանք սահմանված կարգով հանձնելու լիցենզավորված մասնագիտացված կազմակերպությանը (կազմակերպություններին), այդ թվում՝ <<Հայջրմուղկոյուղի>> ՓԲԸ-ին:

2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից չսպասարկվող բնակավայրերում հուսալի, կայուն և անվտանգ ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների ապահովումը:

77.5 Ջրի որակը պետական լիազոր մարմնի կողմից հաստատված սանիտարական կանոններին և նորմերին համապատասխանեցնելու նպատակով ՀՀ բնակավայրերում խմելու ջրի որակի մշտական մոնիտորինգի իրականացման գործուն մեխանիզմի սահմանում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Հիմք ընդունելով 2006 թվականի նոյեմբերի 27-ի «ՀՀ ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի 5-րդ գլխի 16-րդ հոդվածի 4-րդ մաս և «Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի 2018-2030 թթ. ռազմավարություն և ֆինանսավորման ծրագիրը», ինչպես նաև վարձակալության պայմանագրի համապատասխան պահանջները, անհրաժեշտ է ՀՀ բնակավայրերում ներդնել խմելու ջրի որակի մոնիտորինգի գործուն մեխանիզմներ:

1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Ներկայումս ՀՀ որոշ բնակավայրերի ջրի որակի մոնիտորինգի մեխանիզմներն արդյունավետ չեն:

1.2Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Բոլոր բնակավայրերում սահմանել խմելու ջրի որակի մոնտորինգի գործուն մեխանիզմներ:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

ՀՀ բոլոր բնակավայրերում ապահովել խմելու ջրի որակի համապատասխանությունը պետական լիազոր մարմնի կողմից հաստատված և գործող ջրի որակին ներկայացվող պահանջներին՝ սանիտարական կանոններին և նորմերին:

77.6 «Աերացիա» կեղտաջրերի նոր մաքրման կայանի (ԿՄԿ) շինարարության կապալի միջազգային պայմանագրի ավարտի ապահովում, գույքի ձևավորումից հետո կայանի գործարկում և շահագործման հանձնում, ԿՄԿ-ի վերակառուցման ծրագրի հետագա փուլերի համար նախապատրաստական աշխատանքների իրականացում

77.7 Սևանա լճի ավազանի քաղաքային 3 բնակավայրերում գործող ԿՄԿ-ներից արտանետվող կեղտաջրերի ամբողջական մաքրման ապահովման, տարածաշրջանի գյուղական բնակավայրերի կոյուղացման և տարածքում գործող տնտեսվարող սուբյեկտների կողմից կեղտաջրերի մաքրման լոկալ կայանների և սարքավորումների տեղադրման ուղղությամբ աշխատանքների իրականացում

77.8 Պետական սեփականություն հանդիսացող գործող կեղտաջրի մաքրման կայաններից արտահոսող մաքրված կեղտաջրի որակի մշտադիտարկման համակարգի ստեղծում

77.9 . Կոյուղու ցանցին չմիացած տնտեսավարողների օբյեկտներում կեղտաջրերի մաքրման լոկալ կայանների տեղադրման և սպասարկման մասնագիտացված կառույցների ստեղծում

77.10 «Կեղտաջրերի հեռացման բնագավառի զարգացման հայեցակարգի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ներկայացում ՀՀ կառավարություն

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

1.1 Հիմք ընդունելով ՀՀ ազգային ժողովի 2021 թվականի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրին հավանություն տալու մասին» որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021 թվականի որոշման 3.4 «Ջրային տնտեսությունը» բաժինը և 2006 թվականի նոյեմբերի 27-ի «ՀՀ ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ և 12-րդ կետերը՝ անհրաժեշտ է իրականացնել Երևան քաղաքի <<Աերացիա>> կեղտաջրերի նոր մաքրման կայանի սահմանված կարգով գործարկման ու շահագործման ապահովման, ինչպես նաև Սևանա լճի ավազանում գործող ԿՄԿ-ներից արտանետվող կեղտաջրերի ամբողջական մաքրման, գյուղական բնակավայրերի կոյուղացման և տարածքում գործող տնտեսվարող սուբյեկտների կողմից կեղտաջրերի մաքրման լոկալ կայանների և սարքավորումների տեղադրման աշխատանքներ:

1.2Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

	Ներկայումս ավարտվել է Երևանի Աերացիայի մաքրման մեխանիկական կայանի շինարարությունը: Անհրաժեշտ է ապահովել մաքրման կայանի շահագործումը և իրականացնել 2-րդ փուլի աշխատանքներ: Անհրաժեշտ է իրականացնել նաև աշխատանքներ Սևանա լիճ արտանետվող կեղտաջրերի հավաքման և ամբողջական մաքրման աշխատանքներ: **1.3 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Գործող ԿՄԿ-ներում կեղտաջրերի ամբողջական մաքրում և Սևանա լճի ավազանի տնտեսվարող սուբյեկտների կողմից կեղտաջրերի մաքրման լոկալ կայանների և սարքավորումների տեղադրում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Բնապահպանական մի շարք խնդիրների լուծում: **77.13 Երևան քաղաքի ջրամատակարարման համակարգերի բարելավման աշխատանքների իրականացում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Հիմք ընդունելով 2006 թվականի նոյեմբերի 27-ի «ՀՀ ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի 5-րդ գլխի 16-րդ հոդվածի 15-րդ կետ և «Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի 2018-2030 թթ. ռազմավարությունը և ֆինանսավորման ծրագիրը»՝ անհրաժեշտ է բարձրացնել Երևան քաղաքում խմելու ջրի մատակարարման ծառայությունների հուսալիությունը: **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս Երևան քաղաքի մի շարք վարչական շրջանների ջրամատակարարման բաշխիչ ցանցերը տեխնիկապես մաշված վիճակում են և ունեն ներդրումների իրականացման կարիք: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Համապատասխան ներդրումային ծրագրերի իրականացմամբ կապահովվի Երևան քաղաքի բաժանորդների հուսալի, կայուն և անվտանգ ջրամատակարարումը: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Երևան քաղաքում ջրամատակարարման ծառայությունների որակի բարձրացումը և հուսալիության ապահովումը:

78	**Ոռոգման ոլորտում առկա խնդիրները լուծելու և վիճակը բարելավելու նպատակով նախատեսվում է իրականացնել անհրաժեշտ օրենսդրական և կառուցվածքային բարեփոխումներ** **78.1 «Ոռոգման համակարգերի արդյունավետ կառավարման ռազմավարական ծրագրի» մշակում և իրականացում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Հիմք ընդունելով ՀՀ ազգային ժողովի 2021 թվականի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրին հավանություն տալու մասին» որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N1363-Ա որոշման 3.3 «Ջրային տնտեսությունը» բաժինը, ինչպես նաև ՀՀ 2020-2050թթ . վերափոխման ռազմավարությունը անհրաժեշտ է ոռոգման ոլորտում իրականացնել օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումներ: **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս անհրաժեշտություն է առաջացել կանոնակարգել «Ջրառ» ՓԲԸ-ՋՕԸ-ջրօգտագործող իրավահարաբերությունները, կատարելագործել ոռոգման համակարգի կառավարումը, ՋՕԸ-երի գործադիր մարմնի ընտրության փոփոխություն իրականացնել: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** ՋՕԸ-երի ինստիտուցիոնալ հզորացման նպատակով անհրաժեշտ է ոռոգման ոլորտում մշակել զարգացման հայեցակարգ, կատարել կառուցվածքային բարեփոխումներ, կազմել կառավարման բարելավման պլաններ, մշակել և իրականացնել կոնկրետ գործողությունների պլաններ: Նախատեսվում է Ծրագրում ներառել ջրային ռեսուրսների հնարավոր բացասական հաշվեկշռի պայմաններում ոռոգման ջրի պահանջարկի բավարարման հեռանկարային խնդիրների լուծման ուղիները, օգտագործման արդյունավետության բարձրացման ուղիները, ոռոգելի հողատարածքների ավելացումը, միջնաժամկետ և երկարաժամկետ միջոցառումների իրականացման փուլային ծրագրերի իրականացումը, մշակել և ներդնել հոսքերի չափագրման, հեռահար կառավարման, հայտերի ներկայացման և գումարների հավաքագրման ճկուն մեխանիզմներ և այլն **2. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը** Մատուցվող ծառայությունների որակի բարելավում և գործունեության արդյունավետության, հաշվետվողականության և թափանցիկության բարձրացում, ոռոգման համակարգերի սպասարկման տարածքում ընդգրկված և լրացուցիչ ոռոգելի հողերի ջրամատակարարման համար անհրաժեշտ ջրի քանակի կառավարումը: Միաժամանակ նշված խնդրի լուծումն անհրաժեշտ նախադրյալներ կստեղծի ջրային պաշարների արդյունավետության բարձրացման և կայուն զարգացման համար:
79	**Ոռոգման համակարգերը շարունակաբար արդի ջրաչափական սարքավորումներով կահավորում և տվյալների հավաքման ու վերահսկողական համակարգով հագեցում** **79.1 Հիդրոտեխնիկական կառույցների տեխնիկական վիճակի գնահատում և վերահսկելիության բարձրացում** **79.2 Տեխնիկական, տնտեսական, կազմակերպչական, ֆինանսական և իրավական բնույթի փոխկապակցված համալիր միջոցառումների իրականացման նպատակով էլեկտրոնային հարթակի ներդրում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Հիմք ընդունելով ՀՀ ազգային ժողովի 2021 թվականի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրին հավանություն տալու մասին» որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N1363-Ա որոշման 3.3 «Ջրային տնտեսություն» բաժինը,, 2006 թվականի նոյեմբերի 27-ի «ՀՀ ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի 5-րդ գլխի 16-րդ հոդվածը՝ մատակարարված ոռոգման ջրի հստակ հաշվառում իրականացնելու, ինչպես նաև մեխանիկական ջրարտադրության սարքավորումների տեխնիկական վիճակը բարելավելու և կառավարման արդի համակարգերով վերազինելու ծրագրի մշակման նպատակով ոռոգման ջրամատակարարման համակարգերում անհրաժեշտ է գնահատել մեխանիկական ջրարտադրության սարքավորումների տեխնիկական վիճակը, ջրառի կետերը և մայր ջրատարներից մինչև ներտնտեսային ցանցի բաժանարար հանգույցները բերել պատշաճ վիճակի՝ կարգաբերելով և հագեցնելով դրանք ժամանակակից ջրաչափական սարքերով: **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

	Համաշխարհային բանկի աջակցությամբ ոռոգման համակարգերի ջրաբաշխման հանգուցային կետերում տեղադրվել է թվով 83 SCADA համակարգի ջրաչափեր, որը թույլ է տալիս օպերատիվ կերպով, այդ թվում նաև առցանց այդ համակարգերում ջրամատակարարման վերաբերյալ ստանալ տվյալներ: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Ոռոգման ոլորտում ներդրված հստակ հաշվառման համակարգի շնորհիվ հնարավոր կլինի բարձրացնել ոռոգման գործընթացի արդյունավետությունը, կորուստների ցուցանիշի վերահսկումը, ավելի օպերատիվ արձագանքել համակարգում վթարների վերացմանը, իրականացնել ոռոգման ջրի ավելի օպտիմալ բաշխում, էլ. էներգիայի ծախսի վերաբերյալ առցանց տեղեկատվություն ստանալու արդյունքում հնարավոր կլինի զգալիորեն նվազեցնել տարատեսակ ռիսկերը, ինչը նաև կբերի սպասարկման և այլ ընթացիկ ծախսերի նվազեցմանը, հնարավորություն կստեղծվի ջրի կառավարման GIS ծրագրում կիրառել ոռոգման ջրի և էլ. էներգիայի ծախսի հաշվառման առցանց համակարգերը, որոնցից ստացվող տվյալները կօգտագործվեն ծրագրում առկա հաշվետվություններում, մեխանիկական ջրարտադրության գործընթացն կդառնա ավելի վերահսկելի և ավելի կազմակերպված շնորհիվ առցանց ստացվող էլ. էներգիայի ծախսի վերաբերյալ տեղեկատվությունից կազմված վերլուծություններից: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Հաշվառվող ոռոգման ջրի ծավալների և հասույթների մեծացում, գանձման տոկոսի բարձրացում, սուբսիդիայի պակասեցում, ՋՕԸ-երի նկատմամբ վերահսկելիության մեծացում, կոռուպցիոն ռիսկերի նվազեցում, ջրօգտագործողների ընկերություններում ֆինանսական կայունության ապահովում, վերջիններիս նկատմամբ վստահության բարձրացում և ոռոգման ջրի մատակարարման բարելավում:
80	**Ոռոգման համակարգերում շահագործման պայմանների տեխնիկական վիճակի գնահատում** **80.1 Իրականացնել համատարած տեխնիկական աուդիտ և աուդիտի արդյունքներով մշակել և իրականացնել կապիտալ ներդրումների մոտեցումներ և չափորոշիչներ** **80.2.Իրականացնել ոռոգման համակարգերի վերականգնմանն ուղղված կապիտալ ներդրումներ և ներդրումային քաղաքականություն** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Հիմք ընդունելով ՀՀ ազգային ժողովի 2021 թվականի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրին հավանություն տալու մասին» որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N1363-Ա որոշման 3.3 «Ջրային տնտեսություն» բաժինը որով սահմանված է ջրային ռեսուրսների մատչելիության ապահովման ուղղությունները և «ՀՀ ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածը անհրաժեշտություն է առաջացել Ոռոգման համակարգերում շահագործման պայմանների տեխնիկական վիճակի գնահատման: **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս ոռոգման համակարգերում մայր, միջտնտեսային և ներտնտեսային ջրանցքներում առկա են վթարային հատվածներ, շուրջ 46.9% ոռոգման ջրի կորուստներ, չոռոգվող շուրջ 113 հազար հեկտար հողատարածքներ: Համակարգում առկա են նաև ջրամատակարարման մեխանիկական ենթահամակարգեր, որոնք նպատակահարմար է արդիականացնել կամ հնարավորության դեպքում փոխարինել ինքնահոսով: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Անհրաժեշտ է կատարել տեխնիկական աուդիտ, գնահատելու ոռոգման համակարգերում շահագործման պայմանների տեխնիկական վիճակը: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Ոռոգման համակարգերի շահագործման հուսալիության և արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումները կապահովեն ոռոգման համակարգերի վերականգնումը, կորուստների նվազեցումը և հետագա երկարաժամկետ պահպանումը: Միաժամանակ՝ ինքնահոս համակարգերի, ոռոգման ջրանցքների և ջրատարների կառուցմամբ ու նորոգմամբ հնարավորություն կստեղծվի իրականացնելու ինքնարժեքի նվազեցման քաղաքականություն:
81	**Ոռոգման համակարգերի զարգացման ծրագիր** **81.1 Իրականացնել ոռոգման համակարգերի բարելավում՝ միջտնտեսային և ներտնտեսային ոռոգման ցանցերի վերակառուցում** **Մինչև 2023 թվականը նախատեսվում է ավարտին հասցնել միջտնտեսային և ներտնտեսային ոռոգման ցանցերի վերակառուցման աշխատանքները: Ոռոգման**

	համակարգերի կառուցմամբ տարեկան կտնտեսվի 7.3 մլն կՎտ/ժ 50 էլեկտրաէներգիա, ոռոգելի հողատարածքները կավելանան 1373 հեկտարով: **Հինգ մարզերի 105 բնակավայրերում կվերականգնվեն շուրջ 259,1 կմ երկարությամբ ներտնտեսային համակարգեր: Կվերականգնվեն 8,2 կմ երկարությամբ 4 մայր և 54,1 կմ երկարությամբ 22 երկրորդ կարգի ջրանցքների ծայրահեղ քայքայված և վթարային հատվածները: Դրա շնորհիվ կընդլայնվի ոռոգման ջրի մատուցման հասանելիությունը, վերականգնվող հատվածներում կորուստներն աստիճանաբար կկրճատվեն շուրջ 7%-ով, և այդ հողատարածքներում կիրականացվի կայուն, անխափան ջրամատակարարում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է ոռոգման ջրամատակարարման համակարգերի շահագործման հուսալիությամբ ու արդյունավետության բարձրացմամբ: Միջոցառման իրականացման հիմք է հանդիսանում ՀՀ ազգային ժողովի 2021 թվականի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրին հավանություն տալու մասին» որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N1363-Ա որոշման 3.3 «Ջրային տնտեսություն» բաժինը և «ՀՀ ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածը, որով սահմանված է ջրային ռեսուրսների մատչելիության ապահովման ուղղությունները: **1.2 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս ոռոգման համակարգերի մայր, միջտնտեսային և ներտնտեսային ջրանցքներում առկա են վթարային հատվածներ: Համակարգում առկա են նաև ջրամատակարարման մեխանիկական ենթահամակարգեր, որոնք նպատակահարմար է արդիականացնել կամ հնարավորության դեպքում փոխարինել ինքնահոսով, որը կհանգեցնի ծախսվող էլեկտրաէներգիայի և ձևավորվող սակագնի նվազեցման: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Անհրաժեշտ է կատարել վերանորոգման և վերականգնման աշխատանքներ, համակարգը դարձնելով անխափան և հուսալի:Միաժամանակ ավելացնելով համակարգի իշխման տակ գտնվող ոռոգելի հողատարածքները և մատակարարվող ջրային ծավալները: **2. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը** Ոռոգման համակարգերի շահագործման հուսալիության և արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումները կապահովեն ոռոգման համակարգերի վերականգնումը, կորուստների նվազեցումը և հետագա երկարաժամկետ պահպանումը: Միաժամանակ՝ ինքնահոս համակարգերի, ոռոգման ջրանցքների և ջրատարների կառուցմամբ ու նորոգմամբ հնարավորություն կստեղծվի իրականացնելու ինքնարժեքի նվազեցման քաղաքականություն:
82	**2021-2026 թվականների ընթացքում Ջրամբարաշինության (Կապսի և Վեդու ջրամբարներ) ծրագրերի նախապատրաստում և իրականացում** **82.1 «Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարման ծրագրի» Փուլ 1; Կապսի ջրամբարի կառուցում** **82.2 «Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարման ծրագրի» Փուլ 2; ինքնահոս ոռոգման համակարգի կառուցում** **82.3 Վեդու ջրամբարի պատվարի և օժանդակ կառուցվածքների, ջրի փոխադրող և ոռոգման համակարգի շինարարական աշխատանքների իրականացում: Վեդու ջրամբարի իշխման տակ գտնվող ներտնտեսային ոռոգման ցանցի մանրամասն նախագծային աշխատանքների ավարտ** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է 2016 թվականի օգոստոսի 25-ին հավանության արժանացած ՀՀ կառավարության N33-18 արձանագրային որոշմամբ, որի բաղադրիչներն ուղղված են նաև նոր ջրամբարների կառուցմանը, գոյություն ունեցող ենթակառուցվածքների արդիականացմանը, ինստիտուցիոնալ բարեփոխումների խորացմանը, ինչպես նաև ջրօգտագործողների հետ թափանցիկ հարաբերությունների նոր մակարդակի ներդրմանը: Միջոցառման իրականացման հիմք է հանդիսանում ՀՀ ազգային ժողովի 2021 թվականի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրին հավանություն տալու մասին» որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N1363-

	Ա որոշման 3.3 «Ջրային տնտեսություն» բաժինը և «ՀՀ ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածը, որով սահմանված է ջրային ռեսուրսների մատչելիության ապահովման ուղղությունները: **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Կապսի և Վեդու ջրամբարների իշխման տակ ընկած տարածաշրջաններում ձևավորվող մակերևութային ջրահոսքերի ռեժիմի կառավարման բացակայության պատճառով տարեկան շուրջ 60-70 մլն.խոր.մ ջուր չի օգտագործվում հանրապետության տնտեսությունում, մասնավորապես, ոռոգման ոլորտում: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Նախատեսվում է Կապսի, Վեդու, ջրամբարների կառուցմամբ բարելավել ջրամբարների իշխման տակ ընկած հողատարածքների ջրամատակարարումը, ավելացնել նոր հողատարածքներ, մեխանիկական ջրարտադրության ինքնահոսով փոխարինելու արդյունքում համակարգի համար կտնտեսվի շուրջ 20-25 մլն,կՎտ ժամ էլ.էներգիա: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Ջրամբարաշինության միջոցով հնարավորություն կստեղծվի ապահովելու ոռոգման համակարգերի սպասարկման տարածքում ընդգրկված և լրացուցիչ ոռոգելի հողերի ջրամատակարարման համար անհրաժեշտ ջրի քանակը: Միաժամանակ՝ նշված խնդրի լուծումն անհրաժեշտ նախադրյալներ կստեղծի ջրային համակարգերի օգտագործման արդյունավետության բարձրացման և կայուն զարգացման համար: Ջրամբարների կառուցումը/վերականգնումը և ոռոգման համակարգի բարելավումը կնպաստի նաև հանրային ենթակառուցվածքի և հանրային ոլորտի առանցքային գործառույթների բարելավմանը, որը արդյունավետ միջոց կհանդիսանա աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի իրականացման համար, գյուղատնտեսական արտադրությունը բարձրացնելու միջոցով՝ ստեղծելով աշխատատեղեր:
83	**Ոռոգման համակարգերի սպասարկման տարածքում ընդգրկված և լրացուցիչ ոռոգելի հողերի ջրամատակարարման համար անհրաժեշտ ջրի քանակի ապահովման հնարավորությունների ստեղծում, ինքնահոս համակարգերի և նոր ջրամբարների նախագծում և շինարարություն** **83.1 Գեղարքունիքի մարզում Արգիճիի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում** **83.2.Գեղարքունիքի մարզում Աստղաձորի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում** **83.3.Վայոց Ձորի մարզում Ելփինի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում** **83.4.Վայոց Ձորի Խնձորուտի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում** **83.5.Վայոց Ձորի Վերնաշենի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում** **83.6.Վայոց Ձորի Խաչիկի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում** **83.7.Վայոց Ձորի Գետիկ վանքի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում** **83.8.Վայոց Ձորի Ձիրակի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում** **83.9.Արմավիրի մարզի Քասախի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում** **83.10.Արմավիրի մարզի Սելավ-Մաստարայի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում** **83.11.Տավուշի մարզում Հախում-2 ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում** **83.12.Տավուշի մարզում Կողբի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում** **83.13.Շիրակի մարզում Արթիկի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում** **83.14.Սյունիքի մարզում Խնձորեսկի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում**

	83.15.Սյունիքի մարզում Լիճքի (Մեղրի) ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում **83.16.Կապսի ջրամբարից մինչև Թալինի մայր ջրանցքի ոռոգման ջրատարի կառուցում** **83.17.Հեր-Հերի ջրամբարից սկիզբ առնող ինքնահոս համակարգի կառուցում** **83.18.Գեղարդալճի ջրամբարից ինքնահոս համակարգի կառուցում** **83.19.Օրվա կարգավորիչ 31 հատ ջրավազանների կառուցում, վերակառուցում և նախապատրաստական աշխատանքների իրականացում** **83.20. Արագածոտնի մարզում Գառնահովիտի ջրամբարի կառուցման տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրություն և նախագծային փաստաթղթերի կազմում** **83.21. Տավուշի մարզում Կարմիր գյուղի ջրամբարի կառուցման տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրություն և նախագծային փաստաթղթերի կազմում** **83.22. Լոռու մարզում Գետիկի ջրամբարի կառուցման տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրություն և նախագծային փաստաթղթերի կազմում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Ներկայումս ՀՀ տարածքում առաջացող մակերևութային ջրերը հնարավոր չէ արդյունավետ կառավարել և անհրաժեշտություն է առաջացել ջրի պահանջարկի բավարարման համար կազմավորվող ջրային ռեսուրսները ամբարելու: Միջոցառման իրականացման հիմք է հանդիսանում ՀՀ ազգային ժողովի 2021 թվականի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրին հավանություն տալու մասին» որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N1363-Ա որոշման 3.3 «Ջրային տնտեսություն» բաժինը և«ՀՀ ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածը, որով սահմանված է ջրային ռեսուրսների մատչելիության ապահովման ուղղությունները: **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ջրային կոմիտեն «Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ-ի հետ համատեղ քննարկել է հանրապետությունում փոքր և միջին ջրամբարների կառուցման ծրագրերի իրականացման հնարավորությունները և առանձնացրել առաջնահերթ կառուցման ենթակա ջրամբարներ: Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է մասնագիտացված կազմակերպությունների կողմից, ըստ առանձին ջրամբարների, կատարել առավել մանրամասն ուսումնասիրություններ՝ ծրագրերի իրականացվելիությունը գնահատելու և հետագայում սահմանված կարգով ընթացք տալու նպատակով: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Ջրամբարների կառուցմամբ նախատեսվում է բարելավել ոռոգելի հողատարածքների ջրամատակարարումը, ավելացնել նոր հողատարածքներ, մեխանիկական ջրարտադրության ինքնահոսով փոխարինելու արդյունքում համակարգի համար ապահովել էլեկտրաէներգիայի խնայողություն: **2. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը** Ջրամբարաշինության միջոցով հնարավորություն կստեղծվի ապահովելու ոռոգման համակարգերի սպասարկման տարածքում ընդգրկված և լրացուցիչ ոռոգելի հողերի ջրամատակարարման համար անհրաժեշտ ջրի քանակը: Միաժամանակ՝ նշված խնդրի լուծումն անհրաժեշտ նախադրյալներ կստեղծի ջրային համակարգերի օգտագործման արդյունավետության բարձրացման և կայուն զարգացման համար:
84	**«Արփա-Սևան» թունելի անվտանգ շահագործման շարունակականության ապահովում** **84.1 Արփա-Սևան հիդրոտեխնիկական կառույցի վթարային հատվածների ուսումնասիրություն, նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում և շինարարական աշխատանքների իրականացում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Հիմք ընդունելով ՀՀ ազգային ժողովի 2021 թվականի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրին հավանություն տալու մասին» որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N1363-Ա որոշման 3.3 «Ջրային տնտեսություն» բաժինը, 2006 թվականի նոյեմբերի 27-ի «ՀՀ ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի 4-րդ գլխի 15-րդ հոդվածը, ինչպես նաև ՀՀ կառավարության 2003թ. հունվարի 16-ի N 133-Ն որոշումը՝ անհրաժեշտ է ուսումնասիրել Արփա-Սևան թունելի վթարային հատվածները, կազմել նախագծանախահաշվային փաստաթղթեր և իրականացնել շինարարական աշխատանքներ:

	1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Արփա-Սևան ջրատարը բաղկացած է 2 թունելներից: Կեչուտի ջրամբարից N1 թունելով ջուրը տեղափոխվում է Եղեգիս ջրանցույց և Եղեգիս գետի ջրառ կառույցը ընդունում է Եղեգիս գետի հոսքը: N1 թունելով բերված ջուրը ուղղորդվում է N2 թունել, որը ջուրը հասցնում է Սևանա լիճ: Նախատեսված է թունելով տեղափոխել 270 մլն/մ^3 ջուր, սակայն «Արփա-Սևան» թունելի տեխնիկական վիճակով պայմանավորված ներկայումս Սևանա լիճ է տեղափոխվում 160-180 մլն/մ^3 ջուր: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Արփա-Սևան թունելի վթարային հատվածների ուսումնասիրություն և վերականգնման աշխատանքներ: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Սևանա լճի մակարդակի բարձրացում, թունելի անխափան աշխատանքի ապահովում:
85	**Խոնավ (գերխոնավ) գյուղատնտեսական հողատարածքների մելիորատիվ վիճակի բարելավման աշխատանքների իրականացում** **85.1 Կոլեկտորադրենաժային ցանցի պահպանում և շահագործում: Գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշման աշխատանքների իրականացում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Հիմք ընդունելով ՀՀ ազգային ժողովի 2021 թվականի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրին հավանություն տալու մասին» որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N1363-Ա որոշման 3.3 «Ջրային տնտեսություն» բաժինը, 2006 թվականի նոյեմբերի 27-ի «ՀՀ ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի 5-րդ գլխի 16-րդ հոդվածը և 2005թ. մայիսի 20-ի <<Գյուղատնտեսական հողերի մելիորացիայի մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ հանրապետության ոռոգելի հողերի մելիորատիվ վիճակի բարելավման, գրունտային ջրերի մակարդակների կարգավորման, հողատեսքերի աղակալման, բնակավայրերի ջրակալման և տարափոխիկ հիվանդությունների կանխման, մշակաբույսերի բնականոն աճի ապահովման նպատակներով, հանրապետության գերխոնավ հողերի տարածքներում սկսած 1950-ական թվականներից առ այսօր կառուցվել է շուրջ 1696.612 կմ դրենաժային ցանց, այդ թվում՝ բաց՝ 1065.662 կմ և փակ՝ 630.95 կմ, որի պահպանման, շահագործման նպատակով էլ պայմանավորված է միջոցառման իրականացումը: **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս ՀՀ-ում գործում է շուրջ 950 կմ կոլեկտորադրենաժային բաց համակարգեր, որոնց պահպանման և շահագործման համար ըստ նորմատիվի անհրաժեշտ է նվազագույնը 3 տարին մեկ պարբերականությամբ իրականացնել մաքրման և նորոգման աշխատանքներ: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** ՀՀ պետական բյուջեի հատկացումներով հնարավորություն է ընձեռվում յուրաքանչյուր տարի մաքրել և նորոգել շուրջ 218,127կմ դրենաժային համակարգ: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Ակնկալվում է բարելավել ոռոգելի հողերի մելիորատիվ վիճակը, պահպանել գրունտային ջրերի մակարդակը թույլատրելի խորություններում, կանխարգելել հողատեսքերի երկրորդային աղակալումն ու ալկալիացումը, տարափոխիկ հիվանդությունների տարածումը և նպաստել գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության բարձրացմանը:
86	**Հեղեղման ռիսկի նախնական գնահատման իրականացում, հեղեղումների վտանգի և ռիսկի քարտեզների կազմում, հեղեղումների ռիսկի կառավարման պլանների կազմում** **86.1 Հանրապետության բնակավայրերի, տնտեսական արժեք ներկայացնող տարածքների ու բնակչության գույքը վարարումների և սելավների ռիսկից պաշտպանելու տվյալների բազայի ստեղծման, հակահեղեղային առաջնահերթ միջոցառումների իրականացման կանոնակարգման, կառավարման համակարգչային ծրագրի միջոցով ոլորտի կենտրոնացված կառավարման իրականացում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Հիմք ընդունելով Եվրոպական միության համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի 91/271/ԵՀ հրահանգը, ջրային ոլորտների ռազմավարությունների մշակման միջոցառումները և ՀՀ ջրային օրենսգրքի 91-րդ հոդվածը , ՀՀ ազգային ժողովի 2021 թվականի «Հայաստանի Հանրապետության

	կառավարության ծրագրին հավանություն տալու մասին» որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N1363-Ա որոշման 3.3 «Ջրային տնտեսություն» բաժինը և 2006 թվականի նոյեմբերի 27-ի «ՀՀ ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Հանրապետության տարածքի կեսից ավելին ենթակա է սելավային երևույթների ազդեցությանը, որոնք յուրաքանչյուր տարի ունենում են տարբեր ուժգնություն: Վերջիններս պարբերաբար զգալի վնաս են հասցնում հանրապետության տնտեսության տարբեր ճյուղերին և նույնիսկ պատճառ են դառնում բնակավայրերի ավերման: Հեղեղների հետևանքների վերացումը, պահանջում է առավել մեծ կապիտալ ներդրումներ, քան դրանց ծնող պատճառների վերացումը և արդյունքում, անբարենպաստ հետևանքների կանխումը: Հետևաբար առաջնահերթ անհրաժեշտ է հակահեղեղային կանխարգելիչ միջոցառումների իրականացումը, որոնցից առանցքային է համարվում հանրապետության բնակավայրերի, տնտեսական արժեք ներկայացնող տարածքների և բնակչության գույքը վարարումներից, սելավներից պաշտպանելու տվյալների բազայի ստեղծումը, կառավարման համակարգչային ծրագրի մշակումը: Հեղեղաջրերը, դուրս գալով հուներից կամ փոխելով բնական հունը, ջրածածկում են առափնյա գյուղատնտեսական և այլ նշանակության հողատարածքները: Բացի այդ, հեղեղները մեծ չափի վնասներ են հասցնում առափնյա շենք-շինություններին, ինժեներական կառուցվածքներին, այդ թվում՝ կամուրջներին, ճանապարհներին, ոռոգման և չորացման ցանցերին, պոմպակայաններին, գազամուղներին, ջրմուղ-կոյուղու ցանցերին: Միաժամանակ տեղի են ունենում խոշոր չափերի հասնող հողատարման երևույթներ: Ընդհանուր առմամբ սակավահող Հայաստանի համար հիշատակված երևույթը չարիք է հանդիսանում: Հակահեղեղային միջոցառումներն անհրաժեշտ է իրականացնել յուրաքանչյուր տարի՝ ընտրելով գետերի և սելավատարների առավել վտանգավոր հատվածները: **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** 2003-2013 թվականներին իրականացվել են ավելի քան 6,6 մլրդ դրամ արժեքով հակահեղեղային միջոցառումներ, սակայն դրանց պահպանման ու շահագործման գործառույթներ չեն իրականացվում: Համայնքները, սուղ բյուջեների պատճառով, չեն կարողանում իրականացնել վերոհիշյալ գործառույթները, առավել ևս, որ ափապաշտպան կառույցներն արտացոլված չեն իրենց հաշվեկշիռներում: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Անհրաժեշտ է գույքագրել գետերի և հեղեղատարների ափապաշտպան կառույցները՝ դրանք ջրային կոմիտեի հաշվեկշռում արտացոլելու նպատակով: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Ափապաշտպան կառույցների վիճակի վերաբերյալ տեղեկատվական բազան, կենտրոնացնելով մեկ մասնագիտական կառույցում, հնարավորություն կստեղծվի պատշաճ կազմակերպել դրանց շահագործումն ու պահպանումը, ոչ մեծ ֆինանսական ներդրումներ կատարելով ապահովել ափապաշտպան ու հիդրոտեխնիկական այլ կառուցվածքների երկարակեցությունը:
87	**Ոռոգման համակարգերում գույքի առկայության և վիճակի գնահատում** **87.1 Իրականացնել ոռոգման համակարգերի (ջրանցքներ, ջրամբարներ, խորքային հորեր, ջրատար խողովակները, պոմպակայաններ, շենքեր, շինություններ, մեքենամեխանիզմներ, հիդրոտեխնիկական այլ կառուցվածքներ և այլն) գույքագրում և գնահատում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Հիմք ընդունելով ՀՀ ազգային ժողովի 2021 թվականի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրին հավանություն տալու մասին» որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N1363-Ա որոշման 3.3 «Ջրային տնտեսություն» բաժինը, 2006 թվականի նոյեմբերի 27-ի «ՀՀ ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի 5-րդ գլխի 16-րդ հոդվածը՝ անհրաժեշտ է ոռոգման համակարգերում իրականացնել գույքի վիճակի գնահատում: **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս ոռոգման համակարգերում գործում են 100% պետական մասնակցության ընկերություններ և հասարակական հիմունքներով ստեղծված, շահույթ չհետապնդող ջրօգտագործողների ընկերություններ, որոնց անժամկետ շահագործման է հանձնված պետական գույքը: Շուրջ 20 տարի ոռոգման համակարգում գույքագրում չի իրականացվել: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Անհրաժեշտ է կատարել ոռոգման համակարգի գույքի առկայության և վիճակի գնահատում, հետագայում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

	Ներդրումների իրականացման համար առկա գույքի փաստացի վիճակի գնահում:
88	**Գործող ջրամբարների պատշաճ շահագործում** **88.1 Ջրամբարների վերականգնման և վերազինման աշխատանքներ** **88.2 Յուրաքանչյուր ջրամբարի տեխնիկական անվտանգության ապահովման ծրագրի մշակում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման հիմք է հանդիսանում ՀՀ ազգային ժողովի 2021 թվականի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրին հավանություն տալու մասին» որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N1363-Ա որոշման 3.3 «Ջրային տնտեսություն» բաժինը, Ջրային օրենսգրքի 84-րդ հոդվածը և «ՀՀ ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածը՝ անհրաժեշտություն է առաջացել գործող ջրամբարների տեխնիկական վիճակի գնահատման և վերականգնման, ինչպես նաև յուրաքանչյուր ջրամբարի անվտանգության ապահովման համար մշակել ծրագիր: **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս ՀՀ տարածքում գործող ջրամբարների հիմնականում կառուցվել են մինչև 1970-ական թվականները և տեխնիկապես մաշված վիճակում են և ունեն լուրջ հիմնանորոգման կարիք: Ջրամատակարման պատվարները, հանգույցները, և այլ սարքավորումներ և կառույցներ ունեն հիմնանորոգման կարիք: Վերը նշված իրավիճակի արդյունքում մեծ են ջրամբարներում կուտակված ջրի կորուստները, ինչպես նաև դրանց ջրամատակարարման համակարգերով մատակարարման կորուստները: Ջրամբարների ներկայիս տեխնիակական վիճակը առաջացնում է շահագործման անվտանգության կանոնների պահպանման խնդիրներ: Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է մասնագիտացված կազմակերպությունների կողմից, ըստ առանձին ջրամբարների, կատարել առավել մանրամասն ուսումնասիրություններ՝ ծրագրերի իրականացվելիությունը գնահատելու և հետագայում սահմանված կարգով ընթացք տալու նպատակով: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Ծրագրերի մշակման արդյունքում հնարավոր կլինի բարելավել ոռոգելի հողատարածքների ջրամատակարարումը, ավելացնել նոր հողատարածքներ, մեխանիկական ջրարտադրության ինքնահոսով փոխարինելու արդյունքում համակարգի համար ապահովել էլեկտրաէներգիայի խնայողություն, ինչպես նաև ապահովել ջրամբարների անվտանգ շահագործումը:: **2. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը** Գործող ջրամբարների և խոշոր ՀՏԿ-ների անվտանգ շահագործում: Բնակչության և բնակավայրերի անվտանգության բարձրացում:
89	**Միգրացիոն գործընթացների կառավարմանն ուղղված համակարգերի թվայնացում** **89.1 Միգրացիոն գործընթացների կառավարմանն ուղղված համակարգերի թվայնացումն ապահովող ծրագրի մշակում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Ներկայումս առկա չէ մի այնպիսի ամբողջական ծրագիր, որում ներառված կլինեն միգրացիոն գործընթացների կառավարմանն ուղղված բոլոր համակարգերի թվայնացումն ապահովող միջոցառումները, տեխնիկական լուծումները և ֆինասավորման աղբյուրները: Միգրացիոն գործընթացների կառավարմանն ուղղված համակարգերի թվայնացումն ապահովող ծրագրի մշակումը բխում է ՀՀ Ազգային ժողովի 2021թ.-ի օգոստոսի 26-ի № ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021-2026թթ.. ծրագրի 4. 2 -րդ բաժնով նախատեսված հանձնառություններից: Միջոցառման գլխավոր նպատակն է միգրացիոն գործընթացների կառավարմանն ուղղված համակարգերի թվայնացման ապահովումը: 1.1 կ**արգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս միգրացիոն գործընթացների կառավարմանն ուղղված համակարգերի մեծ մասը թվայնացված չէ, իսկ թվայնացվածները մեծամասամբ համակցված չեն, ինչը դժվարություններ է ստեղծում միգրացիոն գործընթացների կառավարման տեսանկյունից: **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

	Միգրացիոն գործընթացների կառավարմանն ուղղված համակարգերի թվայնացման նպատակով կմշակվի համապատասխան ծրագիր: Միջոցառման համակատարողներն են՝ ՀՀ ոստիկանությունը , ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը, ՀՀ արտաքին գործերի նախարարությունը, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակը: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միգրացիոն գործընթացների կառավարմանն ուղղված համակարգերի թվայնացումն ապահովող ծրագիրը մշակված է **89. 2 Միգրացիոն գործընթացների կառավարմանն ուղղված համակարգերի թվայնացումն ապահովող ծրագրից բխող օրենսդրական փոփոխությունների իրականացում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միգրացիոն գործընթացների կառավարմանն ուղղված համակարգերի թվայնացումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է մշակել դրա իրավական հիմքը, այն է՝ օրենսդրական փոփոխություններ նախանշող համապատասխան իրավական ակտերի նախագծեր: Դա բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 2021թ.-ի օգոստոսի 26-ի № ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021-2026թթ.. ծրագրի 4. 2 -րդ բաժնով նախատեսված հանձնառություններից: Միջոցառման իրականացման նպատակն է մշակել միգրացիոն գործընթացների կառավարմանն ուղղված համակարգերի թվայնացումն ապահովող իրավական հիմքը: 1.1 կ**արգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս միգրացիոն գործընթացների կառավարմանն ուղղված համակարգերի մեծ մասը թվայնացված չէ և գործում է որպես առանձին համակարգ: **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Կմշակվեն և ՀՀ կառավարություն կներկայացվեն միգրացիոն գործընթացների կառավարմանն ուղղված համակարգերի թվայնացումն իրականացնելու համար անհրաժեշտ օրենսդրական փոփոխություններ պարունակող իրավական ակտերի նախագծեր: Միջոցառման համակատարողներն են՝ ՀՀ ոստիկանությունը, ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը, ՀՀ արտաքին գործերի նախարարությունը, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակը **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միգրացիոն գործընթացների կառավարմանն ուղղված համակարգերի թվայանցումն ապահովող ծրագրից բխող օրենսդրական փոփոխություններն իրականացված են
90	**Քաղաքացիներին, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիներին տրամադրվող ծառայությունների թվայնացում, պարզեցում և ավտոմատացում** **90.1 Քաղաքացիներին, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիներին տրամադրվող ծառայությունների ուսումնասիրություն** **Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Կառավարությունը խնդիր է դրել իրականացնել պետության և համայնքների կողմից մատուցվող ծառայությունների թվայնացում, արդիականացնել ծառայությունների համար տվյալների ռեգիստրները, այդ թվում՝ ապահովել առկա թվային ռեգիստրների փոխգործելիությունը, իսկ ոչ թվային ռեգիստրների՝ թվայնացումն ու համակցելիությունը: Այդ համատեքստին համահունչ է նաև միգրացիոն ոլորտում քաղաքացիներին, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիներին տրամադրվող ծառայությունների ուսումնասիրության իրականացումը, ինչը հիմք կհանդիսանա այդ ծառայությունների թվայնացման, պարզեցման և ավտոմատացման համար: Քաղաքացիներին, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիներին տրամադրվող ծառայությունների ուսումնասիրությունը բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 2021թ.-ի օգոստոսի 26-ի № ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021-2026թթ.. ծրագրի 4. 2 -րդ բաժնով նախատեսված հանձնառություններից:

	Միջոցառման իրականացման նպատակն է գույքագրել քաղաքացիներին, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիներին տրամադրվող ծառայությունները, այդ թվում թվայնացվածները, կատարել բիզնես գործընթացների վերլուծություն և քարտեզագրում, նախանշել ծառայությունների թվայնացումը, պարզեցումն ու ավտոմատացումն ապահովող քայլերը: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս առկա չէ քաղաքացիներին, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիներին տրամադրվող ծառայությունների թվայնացվածության աստիճանը, գոյություն ունեցող տվյալների ռեգիստրների միջև փոխգործելիության մակարդակը բացահայտող ամբողջական պատկեր: **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Կուսումնասիրվի քաղաքացիներին, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիներին տրամադրվող ծառայությունների թվայնացվածության աստիճանը, կգնահատվեն գոյություն ունեցող տվյալների ռեգիստրների միջև փոխգործելիության հնարավորությունները, կնախանշվեն հայտնաբերված բացերի հաղթահարմանն ուղղված քայլերը: Միջոցառման համակատարողներն են՝ ՀՀ ոստիկանությունը , ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը, ՀՀ արտաքին գործերի նախարարությունը, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակը: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Արձանագրված են քաղաքացիներին, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիներին տրամադրվող թվայնացված ծառայությունները, բացահայտված են չթվայնացված կամ ոչ ամբողջովին թվայնացված ծառայությունների թվայնացման, ավտոմատացման և պարզեցման հնարավորությունները:
91	**Օտարերկրյա քաղաքացիներին ՀՀ-ում աշխատանքի թույլտվության և կացության տրամադրման համակարգի թվայնացում և պարզեցում** **91.1 Օտարերկրյա աշխատողների գրանցման միասնական էլեկտրոնային հարթակի գործարկում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Հայաստանը չունի աշխատուժի քրոնիկ անբավարարությունը օտարերկրացիների հաշվին լրացնելու խնդիր, այլ ունի միգրացիոն հոսքերի վերահսկողության և կարգավորման կարիք՝ հատկապես հաշվի առնելով դեպի Հայաստան ուղղված միգրացիոն հոսքերի առանձնահատկություններն ու աշխարհագրությունը: Օտարերկրացիներին աշխատանքի թույլտվության տրամադրման և օտարերկրացիների աշխատանքային պայմանագրերի հաշվառման էլեկտրոնային կառավարման համակարգի գործարկումը հնարավորություն կընձեռի վերահսկողություն սահմանել ՀՀ-ում գտնվող օտարերկրացիների աշխատանքային գործունեության նկատմամբ՝ ՀՀ-ում նրանց գտնվելու ժամկետների և այլ խախտումները կանխարգելելու նպատակով: Միևնույն ժամանակ առաջարկվող համակարգի կիրառման դեպքում կպաշտպանվեն ինչպես ազգային աշխատաշուկան, այնպես էլ ազգային անվտանգության շահերը: Համակարգի շրջանակներում անվտանգությունը դիտարկվում է միգրացիոն հոսքերի համալիր կառավարման տիրույթում, որը վերաբերելի է երեք ասպեկտների. • անօրինական միգրացիայի կանխարգելում, • միջազգային պաշտպանության համակարգի ապահովում, • աշխատանքային միգրացիայի կանոնակարգում: Շատ կարևոր է նաև որ էլեկտրոնային կառավարման համակարգի գործարկման, այսինքն գործընթացի թվայնացման ու վարչարարության դյուրացման արդյունքում կթեթևանա ինչպես օտարերկրյա աշխատողներ ներգրավող գործատուների, այնպես էլ ՀՀ-ում աշխատելու ցանկություն ունեցող օտարերկրյա քաղաքացիների բեռը: Աշխատանքի թույլտվության տրամադրման և օտարերկրյա աշխատուժի ՀՀ տարածք և ՀՀ աշխատաշուկա մուտքը արդյունավետ վերահսկելու արդիական համակարգի ներդրումը այսօր հրամայական է, որն էլ պայմանավորում է սույն էլեկտրոնային կառավարման համակարգի անհրաժեշտությունը: Էլեկտրոնային հարթակի ստեղծման համար հիմք է հանդիսանում 2021 թվականի մայիսի 27-ի «Օտարեկրացիների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-271-Ն օրենքը: Դա բխում է ՀՀ Ազգային ժողովի 2021թ.-ի օգոստոսի 26-ի № ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021-2026թթ.. ծրագրի 4.2 -րդ բաժնով նախատեսված հանձնառություններից:

	Միջոցառման իրականացման նպատակներն են՝ Հայաստանում օտարերկրացիների աշխատանքային գործունեության ոլորտում ազգային անվտանգության ապահովումը, իմիգրացիոն նոր հոսքերի կառավարման արդյունավետ մեխանիզմների ներդրումը, ոլորտը կարգավորող օրենսդրահիրավական ակտերում և գործառնական մեխանիզմներում առկա թերությունների շտկումը, օտարերկրյա աշխատողներ ներգրավող գործատուների բեռի թեթևացումը: Միջոցառման իրականացման համար հիմք է «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 4-րդ գլուխը: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Օտարերկրացիներին աշխատանքի թույլտվության տրամադրման ՀՀ-ում գործող ներկա կարգավորումները և դրանց հիման վրա ներդրված գործիքակազմը ունեն մի շարք թերություններ. 1. Աշխատանքի թույլտվությունը տրամադրվում է ոչ թե կոնկրետ օտարերկրացուն այլ գործատուին, ինչը մի կողմից ավելորդ բեռ է առաջացնում գործատուների համար, մյուս կողմից օտարերկրացիներն առանց պատշաճ ստուգման, աշխատանքի հիմքով ՀՀ-ում բնակվելու իրավունք են ստանում: 2. «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածը սահմանում է աշխատանքի թույլտվություն ստանալու բացառությունները՝ այն մասնագիտությունների և հատուկ կատեգորիաների օտարերկրացիների ցանկը, որոնք ազատված են աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից: Այս կարգավորումը, մի կողմից դյուրացնելով գործատուների և օտարերկրացիների աշխատանքային փոխհարաբերությունները, մյուս կողմից առաջացնում է որոշակի խնդիրներ, մասնավորապես. ա. աշխատանքի թույլտվություն ստանալու պարտավորությունից ազատված լինելով՝ այս կատեգորիաների օտարերկրացիները դուրս են մնում թե՛ նախնական ստուգումների և թե՛ հետագա վերահսկողության շրջանակից, ինչը իր հերթին կարող է ազգային անվտանգության հետ կապված խնդիրներ առաջացնել, բ. աշխատանքային գործունեություն իրականացնելու հիմքով ՀՀ-ում օրինական բնակվելու իրավունք ունենալով հանդերձ՝ այս օտարերկրացիները ՀՀ-ում իրենց բնակությունը օրինականացնելու համար ստիպված են դիմել ՀՀ-ում կացության կարգավիճակ ստանալու համար, ինչը իր հերթին առաջացնում է ժամանակի և ֆինանսական ավելորդ ծախսեր ինչպես օտարերկրացու, այնպես էլ ՀՀ-ում գործող գործատուի համար: **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Նշված խնդիրները մեծապես լուծվելու են Օտարերկրացիներին աշխատանքի թույլտվության տրամադրման և օտարերկրացիների հետ կնքված աշխատանքային պայմանագրերի հաշվառման էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրմամբ: Օտարերկրացիներին աշխատանքի թույլտվության տրամադրման և օտարերկրացիների հետ կնքված աշխատանքային պայմանագրերի հաշվառման էլեկտրոնային կառավարման համակարգը իրենից ներկայացնում է ինտերնետային պորտալ: Համակարգը տեղակայվելու է երեք հիմնական սերվերների վրա, իսկ աշխատանքի անխափանությունը ապահովելու համար համակարգը կկրկնօրինակվի լրացուցիչ բեքափ (backup) սերվերի վրա: Սերվերները ունենալու են եռաշերտ ճարտարապետություն, որոնցից յուրաքանչյուրը տեղակայվում է առանձին սերվերի վրա: Նմանատիպ ճարտարապետության կիրառումը հնարավորություն է տալիս ապահովել անձնական տվյալների պաշտպանության բարձր մակարդակ, ինչպես նաև ապահովել այլ մարմիններից ստացվող և նրանց տրամադրվող տվյալների փոխանցման անվտանգությունը: Միջոցառման համակատարողներն են՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, արտաքին գործերի, նախարարությունները, Ոստիկանությունը, Ազգային անվտանգության ծառայությունը, Պետական եկամուտների կոմիտեն, «Էկենգ» ՓԲԸ-ն: Անհրաժեշտ ֆինանսական միջոցների հայթայթման համար՝ ՀՀ ՏԿԵՆ միգրացիոն ծառայությունը համագործակցում է Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի (ICMPD) և Միգրացիայի միջազգային կազմակերպության (IOM) հայաստանյան գրասենյակների հետ: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Օտարերկրյա աշխատողների գրանցման միասնական էլեկտրոնային հարթակը գործարկված է
92	**Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կառավարման հայեցակարգով նախատեսված՝ ինտեգրման և վերաինտեգրման խնդիրների կարգավորմանը, միգրացիոն հոսքերի կառավարմանը, հարկադիր միգրանտների զանգվածային ներհոսքի ճգնաժամային կառավարմանը, հայրենադրաձության խթանմանն ուղղված գործողությունների կատարման ապահովում**

92.1 «Հայաստանի Հանրապետության միգրացիոն քաղաքականության՝ ինտեգրման և վերաինտեգրման խնդիրների կարգավորման 2022-2032 թվականների ռազմավարությունը և դրանից բխող 2022-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

ՀՀ կառավարության 2021թ.-ի մայիսի 20-ի N 801-Լ որոշման հավելված 2-ով հաստատված Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կառավարման հայեցակարգի գործողությունների ծրագրի առաջին կետով նախատեսվում է 2021 թվականին ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնել «Հայաստանի Հանրապետության միգրացիոն քաղաքականության՝ ինտեգրման և վերաինտեգրման խնդիրների կարգավորման 2021-2031 թվականների ռազմավարությունը և դրանից բխող 2021-2025 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ: Միջոցառման իրականացման համար հիմք է «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածը: Դա բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 2021թ.-ի օգոստոսի 26-ի № ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021-2026թթ ծրագրի 4.2 -րդ բաժնով նախատեսված հանձնառություններից:

Միջոցառման իրականացման նպատակը առաջիկա տասնամյակի համար ինտեգրման և վերաինտեգրման քաղաքականության միասնականացումն ու հստակեցումն է, ինչպես նաև առաջիկա հինգ տարիների համար դրա իրականացման ճանապարհային քարտեզի ընդունումը: Միջոցառման իրականացման համար հիմք է «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ մասը և 34-րդ հոդվածի 10-րդ մասը:

1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Ներկայումս գոյություն չունի Հայաստանում վերադարձող միգրանտների վերաինտեգրմանն ուղղված համապարփակ քաղաքականություն, ինչպես նաև չկան իրավասու պետական մարմինների համար սահմանված հստակ գործառույթներ: Մյուս կողմից վերջին տարիներին նկատվում է Հայաստանում տարբեր նպատակներով բնակություն հաստատող օտարերկրացիների թվի աճ, և դրանով իսկ մեր պետությունը բացառապես էմիգրանտների ծագման երկրից վերածվում է նաև իմիգրանտներ ընդունող երկրի: Այս անձանց խնդիրներին լուծում տալու նպատակով ՀՀ կառավարությունը 2016թ. հուլիսի 21-ի թիվ 28 արձանագրային որոշմամբ ընդունել է ՀՀ-ում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց, ինչպես նաև երկրաժամակետ միգրանտների ինտեգրման քաղաքականության հայեցակարգը, 2017թ. փետրվարի 23-ի թիվ 8 արձանագրային որոշմամբ էլ հաստատել է հայեցակարգի կիրարկմանն ուղղված գործողությունների ծրագիրը: Սակայն այս ծրագրի շրջանակը սահմանափակ է ինչպես թիրախ խմբերի (փախստականներ, ապաստան հայցողներ), այնպես էլ վերաինտեգրման աջակցության (հայոց լեզվի ուսուցում, քաղաքացիական կողմնորոշման դասընթացների կազմակերպում, կացարանի խնդրի լուծում) տեսանկյունից:

1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները

«Հայաստանի Հանրապետության միգրացիոն քաղաքականության՝ ինտեգրման և վերաինտեգրման խնդիրների կարգավորման 2021-2031 թվականների ռազմավարությունը և դրանից բխող 2021-2025 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը 2021թ. հունիսին ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ և ներկայումս գտնվում է լրամշակման փուլում:Հաշվի առնելով այն հանգամանքը որ նախագիծը դեռևս քննարկման փուլում է , ՀՀ վարչապետի աշխատակազմից առաջարկվել է վերանայել ռազմավարության և գործողությունների ծրագրի նախագծերի գործողության ժամկետները՝ 2021-2031թթ..-ի փոխարեն սահմանելով 2022-2032թթ և 2021-2025թթ. փոխարեն 2022-2026թթ համապատասխանաբար:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

«Հայաստանի Հանրապետության միգրացիոն քաղաքականության՝ ինտեգրման և վերաինտեգրման խնդիրների կարգավորման 2022-2032 թվականների ռազմավարությունը և դրանից բխող 2022-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումն ընդունված է:

92.2 «Հարկադիր միգրանտների զանգվածային ներհոսքի ճգնաժամային կառավարման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ

	1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը ՀՀ կառավարության 2021թ.-ի մայիսի 20-ի N 801-Լ որոշման հավելված 2-ով հաստատված Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կառավարման հայեցակարգի գործողությունների ծրագրի երրորդ կետով նախատեսվում է 2021թ.-ին ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնել «Հարկադիր միգրանտների զանգվածային ներհոսքի ճգնաժամային կառավարման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ: Միջոցառման իրականացման համար հիմք է «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածը: Դա բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 2021թ.-ի օգոստոսի 26-ի № ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021-2026թթ..ծրագրի 4.2 -րդ բաժնով նախատեսված հանձնառություններից: Միջոցառման իրականացման նպատակն է հստակացնել հարկադիր միգրացիոն հոսքերի կառավարման ոլորտում շահագրգիռ պետական կառավարման համակարգի մարմինների գործառույթները, բարձրացնել նրանց միջև համագործակցության մակարդակը, ապահովել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, տեղական, միջազգային, հասարակական և այլ կազմակերպությունների համակարգված գործունեությունը և այդ հոսքերի կառավարման արդյունավետությունը: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի Հանրապետության կողմից 44-օրյա պատերազմի հետևանքով առաջացած միգրացիոն հոսքերի կառավարման փորձը, տարածաշրջանում ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակը, հնարավոր նոր ճգնաժամերով պայմանավորված միգրացիոն հոսքերի ի հայտ գալու հավանականությունը հրատապ են դարձնում միգրանտների զանգվածային ներհոսքի ճգնաժամային կառավարման խնդրի լուծումը: **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները** «Հարկադիր միգրանտների զանգվածային ներհոսքի ճգնաժամային կառավարման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը նախատեսվում է ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնել 2021 թվականին: Միջոցառման համակատարողն է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը: **2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** «Հարկադիր միգրանտների զանգվածային ներհոսքի ճգնաժամային կառավարման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումն ընդունված է **92.3 «Հայրենադարձության խթանման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** ՀՀ կառավարության 2021թ.-ի մայիսի 20-ի N 801-Լ որոշման հավելված 2-ով հաստատված Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կառավարման հայեցակարգի գործողությունների ծրագրի չորրորդ կետով նախատեսվում է 2022թ.-ին ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնել «Հայրենադարձության խթանման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ: Միջոցառման իրականացման համար հիմք է «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածը: Դա բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 2021թ.-ի օգոստոսի 26-ի № ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021-2026թթ.. ծրագրի 4.2 -րդ բաժնով նախատեսված հանձնառություններից: Նպատակն է հայկական սփյուռքի հետ համակողմանի կապերի զարգացման և հայապահպանմանն ուղղված քաղաքականության իրականացումը, հայրենադարձությանը նպաստումը: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Հայրենադարձությունը, որպես պետական քաղաքականության կարևոր բաղադրիչ, համահայկական ներուժի համախմբմանն ուղղված մի շարք միջոցառումների մշակումն ու իրականացումն է: Հայրենադարձությունը դիտարկվում է հայրենիքում բնակություն հաստատելու յուրաքանչյուր հայի իրավունք, և որպես հայապահպանության կարևոր գործոն գտնվում է պետության հովանավորության ներքո: **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

	«Հայրենադարձության խթանման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը նախատեսվում է ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնել 2022 թվականին: Միջոցառման համակատարողն է Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակը: **2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** «Հայրենադարձության խթանման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումն ընդունված է:
93	**Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց ընդունման մեխանիզմների շարունակական կատարելագործում** **93. 1 Ապաստան հայցողների համար նախատեսված ժամանակավոր տեղավորման նոր կենտրոնի կառուցում, կահավորում** **2. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն կացարանի կարիք ունեցող ապաստան հայցողները մինչև նրանց ապաստանի հայցի վերաբերյալ վերջնական որոշում կայացվելը տեղավորվում են ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում, որն այդ նպատակով ստեղծված հատուկ հաստատություն է: Ժամանակավոր տեղավորման կենտրոնում տեղավորված ապաստան հայցողներին տրամադրվում են կենսապահովման պայմաններ՝ համաձայն օրենքի 24-րդ հոդվածի: Ներկայիս գործող կացարանը նախատեսված է 45 անձի համար և գտնվում է Երևանի համեմատաբար խիտ բնակեցված թաղամասում: Սիրիական ճգնաժամը և այլ երկրներից ապաստան հայցողների շարունակական հոսքը ցույց է տալիս, որ նրանց ընդունելու համար եղած հնարավորությունը խիստ անբավարար է: Վերջին հինգ տարիների ընթացքում ՀՀ-ում ստացված ապաստանի հայցերի վիճակագրությունը փաստում է որ միջին հաշվով տարեկան 200 անձ դիմում է ՀՀ իշխանություններին ապաստանի խնդրանքով: Ապաստան հայցողների համար նախատեսված ժամանակավոր տեղավորման նոր կացարանի կառուցումը և կահավորումը բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 2021թ.-ի օգոստոսի 26-ի № ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021-2026թթ.. ծրագրի 4.2 -րդ բաժնով նախատեսված հանձնառություններից: Միջոցառման իրականացման նպատակը ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնի ընդունման հնարավորության համապատասխանեցումն է առկա պահանջարկի հետ, ապաստան հայցողների տրամադրվող կենսապահովման պայմանների բարելավումը՝ դրանք համապատասխանեցնելով միջազգային չափանիշների հետ: Միջոցառման իրականացման համար հիմք է «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքը: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** ՀՀ Կոտայքի մարզի Աբովյանի քաղաքային համայնքի կողմից ՀՀ ՏԿԶՆ միգրացիոն պետական ծառայությանը 2017թ. թվականի սեպտեմբեր ամսին Աբովյան քաղաքում հատկացվել է 2,0 հեկտար հողատարածք՝ ժամանակավոր տեղավորման նոր կենտրոնի կառուցման նպատակով: Միգրացիոն քաղաքականության զարգացման միջազգային կենտրոնի (ՄՔԶՄԿ) հայաստանյան գրասենյակը «Աջակցություն Հայաստանին միգրացիայի և սահմանների կառավարման ոլորտներում» ծրագրի շրջանակներում մշակել է ժամանակավոր տեղավորման նոր կենտրոնի ստեղծման նախագծային-նախահաշվային փաստաթուղթը: Կենտրոնի շինարարության համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները տրամադրել են Դանիայի, Նիդերլանդների և Գերմանիայի կառավարությունները: ՄԱԿ ՓԳՀ-ի հայաստանյան գրասենյակը հանձն է առել շենքի կահավորման ծախսերը: Կենտրոնի շինարարության հետ կապված աշխատանքները COVID-19-ով, իսկ այնուհետև պատերազմական իրավիճակով պայմանավորված զգալիորեն հետ են մնացել նախատեսված ծրագրից: **1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները** ՄՔԶՄԿ հայաստանյան գրասենյակը, որի միջոցով կազմակերպվում են կենտրոնի շինարարության հետ կապված աշխատանքները, հայտարարված շինարարարական աշխատանքների մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված կազմակերպության հետ համապատասխան պայմանգիր է ստորագրել 2021 թվականի սկզբին, իսկ շինարարական աշխատանքները մեկնարկել են 2021 թվականի գարնանը: 2021թ. հունիսի 28-ին տեղի է ունեցել է կացարանի հիմնարկեքի արարողությունը, որին մասնակցել են կացարանի շինարարության համար գումար տրամադրած Դանիայի Թագավորության կառավարության ներկայացուցիչը և ՀՀ-ում հավատարմագրված ԵՄ անդամ պետությունների դեսպաններ, դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներ: Միջոցառման համակատարողներն են՝ Միգրացիոն քաղաքականության զարգացման

	միջազգային կենտրոնի հայաստանյան գրասենյակը,ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակը: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Ապաստան հայցողների համար ժամանակավոր տեղավորման նոր՝ միջազգային չափանիշներին համապատասխան կենտրոնը կառուցված կահավորված է և գործում է:
94	**Հետընդունման (ռեադմիսիայի) գործընթացների արդյունավետ կազմակերպում՝ այդ բնագավառում ստանձնած միջազգային պարտավորություններին համապատասխան** **94.1 Հետընդունման (ռեադմիսոն) համաձայնագրերի աշխարհագրության ընդլայնում և ոլորտում թվային լուծումների կիրառում** **1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** 2021 թվականի ընթացքում ստորագրվել է հետընդունման 1 համաձայագիր, 2 կիրարկումն ապահովող արձանագրություն, 2022թվականի վավերացվել է հետընդունման 1 համաձայագիր, 2 կիրարկումն ապահովող արձանագրություն: ՀՀ-ն հետընդունման (ռեադմիսիոն) համաձայնագրեր է ստորագրել Եվրոպական Միության և Ռուսաստանի Դաշնության հետ: Հետընդունման (ռեադմիսոն) համաձայնագրերի շրջանակներում ստացվող հայցերը տարեց տարի աճում են, և գործընթացի արդյունավետ կազմակերպմանը մեծապես նպաստում է Ռեադմիսիոն հայցերի էլեկտրոնային կառավարման համակարգի առկայությունը, որը շարունակական կատարելագործման կարիք ունի: Կարևոր է նաև ռեադմիսիոն համաձայնագրերի կնքումը ծագման երկրների հետ: Հետընդունման (ռեադմիսոն) համաձայնագրերի աշխարհագրության ընդլայնումը և ոլորտում թվային լուծումների կիրառումը բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 2021թ.-ի օգոստոսի 26-ի № ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021-2026թթ.. ծրագրի 4.2 -րդ բաժնով նախատեսված հանձնառություններից: Միջոցառման իրականացման նպատակը ավելի մեծ թվով, այդ թվում ծագման երկրների հետ հետընդունման (ռեադմիսիոն) համաձայնագրերի ստորագրումն է, և ստորագրված համաձայնագրերի շրջանակներում մուտքի պետությունների կողմից ներկայացված հետընդունման հայցերին պատշաճ կարգով և սահմանված ժամկետներում պատասխանելու ապահովումը: **2.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս մի շարք պետությունների հետ հետընդունման (ռեադմիսիոն) համաձայնագրերի շուրջ քննարկումներն ավարտված են՝ տեքստերը համաձայնեցված և սպասում են ստորագրման, որոշների հետ էլ բանակցություններն ընթացքի մեջ են: ԵՄ երկրներից հայցերը ստացվում են Ռեադմիսիոն հայցերի կառավարման էլեկտրոնային համակարգի միջոցով, որի նպատակն է հետընդունման գործընթացն արագ և արդյունավետ կազմակերպումը ժամանակակից, ավտոմատացված համակարգի միջոցով: Աշխատանքների կազմակերպման արդյունավետության տեսանկյունից կարևոր է ձգտել որ մյուս պետությունները նույնպես հայցերը ներկայացնեն էլեկտրոնային համակարգի միջոցով: Միջոցառման համակատարողներն են ՀՀ ոստիկանությունը , ՀՀ արտաքին գործերի նախարարությունը, ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը: **2.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Բանակցություններ են վարվում այլ, այդ թվում ծագման երկրների հետ հետընդունման (ռեադմիսիոն) համաձայնագրերի ստորագրման ուղղությամբ: ՀՀ-ի հետ հետընդունման (ռեադմիսիոն) համաձայնագրեր ստորագրած մյուս պետությունների հետ նույնպես, հնարավորության դեպքում հայցերի ստացման և պատասխանների ուղարկման գործընթացը կազմակերպվում է Ռեադմիսիոն հայցերի կառավարման էլեկտրոնային համակարգի միջոցով: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Հետընդունման (ռեադմիսոն) համաձայնագրերի աշխարհագրությունն ընդլայնված է՝ այն հաշվով, որ Հայաստանը հանդես է գալիս նաև որպես հետ ուղարկող երկիր, ոլորտում կիրառվում են թվային լուծումներ: **94. 2 ՀՀ վերադարձող քաղաքացիների վերաինտեգրման ուղղված ծրագրերի իրականացում** **1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

	Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության առաջնահերթություններից է հանդիսանում հայրենադարձության խթանումը, ինչպես նաև ՀՀ վերադարձող քաղաքացիների վերաինտեգրման գործընթացին պետական աջակցությունը: Հայրենադարձությունը հանդիսանում է համահայկական օրակարգի առաջնային հարցերից մեկը, այն կարևորվում է ինչպես երկրում առկա ժողովրդագրական մարտահրավերների լուծման, այնպես էլ վերադարձողների մարդկային և ֆինանսական ներուժն ի նպաստ Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացմանն օգտագործելու ենթատեքստերում: ՀՀ վերադարձող քաղաքացիների վերաինտեգրման ուղղված ծրագրերի իրականացումը բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 2021թ.-ի օգոստոսի 26-ի № ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021-2026թթ.. ծրագրի 4.2 -րդ բաժնով նախատեսված հանձնառություններից: Միջոցառման իրականացման նպատակն է օժանդակել հայրենիքում հայության ներուժի կենտրոնացմանը և այդ ներուժի զարգացման ապահովմանը: 1.1 **կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** ՀՀ կառավարության 2020թ. մարտի 19-ի N 336-Լ որոշմամբ հաստատվել է «ՀՀ վերադարձող (այդ թվում՝ հարկադիր վերադարձող) քաղաքացիների վերաինտեգրմանն ուղղված առաջնային աջակցության պետական ծրագիրը», որի շրջանակներում ծրագրի չափանիշներին բավարարող վերադարձող քաղաքացիներին տրամադրվում է բնակվարձի փոխհատուցում՝ 6 ամիս ժամկետով՝ ամսական 60 հազար դրամի չափով: Սա պետական մակարդակով իրականացվող առաջին և միակ ծրագիրն է: Վերադարձող քաղաքացիների վերաինտեգրմանն ուղղված մյուս բոլոր ծրագրերն իրականացվում են հիմնականում հասարակական կազմակերպությունների կողմից՝ գլխավորապես միջազգային կառույցների և միգրանտներին վերադարձնող երկրների ֆինանսավորմամբ, որոնց երբեմն մասնակցում են նաև պետական կառավարման որոշ մարմիններ: Այդպիսի ծրագրերը, սակայն, շարունակական բնույթ չեն կրում: Բաց է մնում նաև այս ուղղությամբ տարբեր կառույցների կողմից իրականացվող աշխատանքների համակարգման հարցը, ինչը բացասաբար է անդրադառնում ոչ միայն պետական մարմինների, այլև այդ ոլորտում գործող միջազգային կազմակերպությունների և հասարակական կազմակերպությունների գործունեության ու համագործակցության վրա: Միջոցառման համակատարողներն են ՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, կրթության, գիտության մշակույթի և սպորտի, առողջապահության, էկոնոմիկայի նախարարությունները, Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի հայաստանյան գրասենյակը: 1.2 **առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Խնդիր է դրվում վերացնել ՀՀ վերադարձող քաղաքացիների հաջող վերաինտեգրման հետևյալ խոչընդոտները՝ իրենց բիզնեսը Հայաստան տեղափոխելու, կամ Հայաստանում նոր բիզնես հիմնելու հետ կապված աջակցության բացակայությունը, Հայաստանում բնակություն հաստատելու հետ կապված ամբողջական տեղեկատվության ցածր հասանելիությունը, և այն մեկ պատուհանի սկզբունքով ստանալու ահնարինությունը, վերադարձողներին միավորող միասնական հարթակի բացակայությունը, առողջապահական համակարգից օգտվելու հետ կապված խնդիրները, դպրոցահասակ երեխաների հայոց լեզվով ուսուցման հետ կապված խնդիրները և այլն: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Իրականացվում են ՀՀ վերադարձող քաղաքացիների վերաինտեգրմանն ուղղված ծրագեր, այդ թվում՝ պետական ֆինանսավորմամբ կամ համաֆինանսավորմամբ
95	**Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների արդյունավետության բարձրացում, այդ նպատակով մշտադիտարկման և վերլուծության գործող համակարգի արմատական բարեփոխում և առևտրային կազմակերպությունների կառավարման որակի բարելավում** **95.1 «Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1262-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** «Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1262-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը բխում է պայմանավորված է պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գործունեության մշտադիտարկման և վերլուծության գործող ցուցանիշների համակարգը բարեփոխելու, կազմակերպությունների

	կառավարման որակը բարելավելու և գործունեության արդյունավետությունը բարձրացնելու անհրաժեշտությամբ, ինչպես նաև բխում է ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.7-րդ բաժնով նախատեսված հանձնառություններից և հիմք է ընդունվել «Պետական գույքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասը ու «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի դրույթները: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպության գործունեության մշտադիտարկման և վերլուծության գործող համակարգը թվայնացված չէ, որի պատճառով գործընթացի իրականացման ժամկետները չեն բավարարում ներկայումս ներկայացվող պահանջներին: Գործնականում առկա են դեպքեր, երբ կիրառվող ցուցանիշների համակարգը հնարավորություն չի տալիս միանշանակ գնահատել կազմակերպության վերջնական արդյունքները, քանի որ ցուցանիշների մի մասն ունի աճի դրական միտում, մի մասը՝ բացասական, ինչպես նաև տնտեսական ցուցանիշները՝ կախված կազմակերպության գործունեության բնույթից ամբողջությամբ և ճշգրիտ չեն գնահատում կատարված աշխատանքների վերջնական արդյունքները: Մշտադիտարկման գործող ցուցանիշների համակարգը հիմք չի հանդիսանում կազմակերպությունների զարգացման հեռանկարային ծրագրերի կազմման, դրանց ցուցանիշների ծրագրավորված աճի սահմանման համար, որի պատճառով գործարար ծրագրի կատարման վերջնական արդյունքները չեն դիտարկվում կազմակերպությունների գործունեության մշտադիտարկման և վերլուծության գործընթացում: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների արդյունավետության բարձրացման նպատակով արմատապես բարեփոխել պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գործունեության մշտադիտարկման և վերլուծության գործող համակարգը, այն դարձնել կիրառելի և դրա շնորհիվ բարելավել կազմակերպությունների կառավարման որակը: Մասնավորապես. սահմանել պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գործունեության արդյունավետության գնահատման այնպիսի ցուցանիշների համակարգ, որը միանշանակ գնահատում է գործունեության արդյունավետության մակարդակը և զարգացման միտումները, ինչպես նաև կարող է հիմք հանդիսանալ կազմակերպությունների զարգացման գործարար ծրագրերի կազմման, դրանց ցուցանիշների ծրագրավորված աճի ապահովմանը ու կատարման վերջնական արդյունքներից կախված ղեկավար անձնակազմի աշխատանքի խրախուսման և պատասխանատվության ենթարկելու բնագավառում կիրառելի գործիքակազմ ներդնելու համար: Միաժամանակ, մշտադիտարկման գործող համակարգի օպերատիվությունը բարձրացնելու և մշտադիտարկման գործընթացի իրականացման ժամկետները կրճատելու նպատակով առաջարկվում է ներդնել մշտադիտարկման իրականացման էլեկտրոնային համակարգ: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների մշտադիտարկման և վերլուծության էլեկտրոնային համակարգի և բարեփոխված ցուցանիշների և դրանց հիման վրա կազմված զարգացման ծրագրերի և դրանց ծրագրավորված աճի ապահովման շնորհիվ ձեռք կբերվի կազմակերպությունների արդյունավետության մակարդակի բարձրացում:
96	**Բնակչության սոցիալ-տնտեսական խնդիրների լուծում, պետական սեփականություն համարվող հանրակացարանային տարածքների նվիրատվության գործընթացի հնարավոր սեղմ ժամկետում ավարտում և բնակարանային ֆոնդի առավել նպատակային և արդյունավետ կառավարում, ինչպես նաև պետական սեփականություն հանդիսացող գույքի նվիրատվության և նվիրաբերության գործընթացի արդյունավետ և ամբողջական իրականացում մեկ միասնական իրավական ակտի միջոցով** **96.1 «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 24-ի N 305-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացումը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** «Պետական սեփականություն հանդիսացող գույքի նվիրատվության և նվիրաբերության կարգերը հաստատելու, 2011 թվականի մարտի 24-ի N 305-Ն և 2016 թվականի հոկտեմբերի 3-ի N 1067-Ն որոշումներն ուժն կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 14-ի «Պետական գույքի կառավարման ոլորտի բարեփոխումների

ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» թիվ N 1063-Լ որոշմամբ սահմանված պետական գույքի կառավարման ոլորտում գործող օրենսդրության արմատական բարեփոխման, մասնավորապես՝ օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի թվաքանակի կրճատման, կառավարման առանձին ոլորտներում իրականացվող կանոնակարգման պարզեցման, իրավական ակտերի մատչելիության մակարդակի բարձրացման, պետական գույքի նվիրատվության և նվիրաբերության գործընթացների օպերատիվ և միասնական կանոնակարգման անհրաժեշտությամբ և նպատակ ունի բարձրացնել պետական գույքի օգտագործման արդյունավետության մակարդակը, ինչպես նաև միջոցառումը բխում է ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.7-րդ բաժնով նախատեսված հանձնառություններից և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ և 605-րդ և «Պետական գույքի կառավարման մասին» օրենքի նոր լրամշակված 6-րդ և 7-րդ հոդվածների պահանջների կիրակումը գործականում ապահովելու անհրաժեշտությունից:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

«Պետական գույքի կառավարման մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումները հաստատելու մասին» ՀՀ վարչապետի 2022 թվականի սեպտեմբերի 1-ի N 1004-Ա որոշմամբ նախատեսվում է մշակել և ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնել «Պետական սեփականություն հանդիսացող գույքի նվիրատվության և նվիրաբերության կարգերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

Ներկա պահի դրությամբ՝

2011 թվականի մարտի 24-ի «Պետական մարմիններին ամրացված՝ բնակելի տարածքների նվիրատվության կարգը հաստատելու մասին» N 305-Ն ՀՀ կառավարության որոշմամբ կարգավորվում են միայն պետական սեփականություն համարվող պետական մարմիններին ամրացված՝ բնակելի տարածքների նվիրատվության գործընթացը, իսկ ինչ վերաբերում է պետական գույքի այլ տեսակների նվիրատվության գործընթացի կանոնակարգմանը, ապա այն ներկայումս առկա չէ: Պետական գույքի նվիրաբերության գործընթացը կանոնակարգվել է 2016 թվականի հոկտեմբերի 3-ի «Պետական սեփականություն հանդիսացող գույքի նվիրաբերության կարգը հաստատելու մասին» N 1067-Ն ՀՀ կառավարության որոշմամբ: Ընդ որում տվյալ որոշմամբ ամբողջական և միասնական ձևով չի կարգավորում պետական գույքի (բացառությամբ՝ հողամասերի, դրամական միջոցների, բնակելի նշանակության շենք, շինությունների, պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների, «Պետական գույքի կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերով սահմանված գույքի) նվիրաբերման գործընթացը:

Նշված իրավական ակտերի վերլուծությունից ակնհայտ է, որ թե՛ պետական գույքերի նվիրատվության, թե՛ նվիրաբերության գործընթացը ամբողջական և միասնական կարգավորում չունի:

Արդյունքում՝ պետական գույքերի նվիրատվության ու նվիրաբերության գործընթացն ամբողջությամբ չի ապահովում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 594-րդ և 605-րդ հոդվածների և «Պետական գույքի կառավարման մասին» օրենքի 6-րդ և 25-րդ հոդվածների պահանջների արդյունավետ կատարումը, ինչն էլ, ելնելով պետական գույքերի առանձնահատկություններից, խնդրահարույց է և չի նպաստում պետական գույքի կառավարման արդյունավետության բարձրացմանը:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Առաջարկվում է սահմանել նվիրատվության ժամանակացույց, ապահովել դրա իրականացումը և ավարտին հասցնել նվիրատվության գործընթացը: Միաժամանակ մեկ միասնական իրավական ակտի միջոցով առաջարկվում է նաև սահմանել նվիրաբերության և նվիրաբերության ենթակա պետական գույքի կազմը, սուբյեկտները և համապատասխան սուբյեկտներին պետական գույքի նվիրաբերության և նվիրաբերության դեպքերը և պայմանները: Ինչն էլ կնպաստի պետական գույքի օգտագործման արդյունավետության բարձրացմանը:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Որոշման ընդունման դեպքում հնարավոր կլինի հնարավոր սեղմ ժամկետում ավարտել հանրակացարանային բնակելի տարածքների նվիրատվության գործընթացը, որը կբարելավվի տվյալ բնակարանային ֆոնդի կառավարման որակը և կտանի գույքի արդյունավետ օգտագործմանը և պահպանմանը: Պետական գույքի նվիրատվության և նվիրաբերության գործընթացի միասնական և ամբողջական կառավարումը կնպաստի պետական գույքի կառավարման արդյունավետություն բարձրացմանը:

96.2 «Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N 404 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացումը Վարչապետի աշխատակազմ

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N 404 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է որոշմամբ սահմանված կարգով 1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթած և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձանց առաջարկվող բնակելի հանրակացարանային տարածքների սեփականաշնորհման գործընթացի իրականացումը պարզեցնելու, և հնարավոր սեղմ ժամկետում այն ավարտին հասցնելու անհրաժեշտությամբ, ինչպես նաև միջոցառումը բխում է ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.7 -րդ բաժնով նախատեսված հանձնառություններից և հիմք է ընդունվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածը, «1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթված և ՀՀ քաղաքացիություն ստացած անձանց իրավական և սոցիալ-տնտեսական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածը ու «Պետական գույքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Ներկա պահի դրությամբ բացակայում է փախստականի կարգավիճակ ունեցող ՀՀ քաղաքացիներին չսեփականաշնորհված պետական սեփականություն համարվող հանրակացարանային տարածքների վերաբերյալ հավաստի հաշվառման բազան: Ընդ որում, բացակայում են տեղեկությունները չսեփականաշնորհված տարածքներում ապրող ընտանիքների և դրանց կազմի վերաբերյալ: Գործող կարգում առկա են որոշակի ժամկետային սահմանափակումներ, որոնք ստեղծում են վարչական քաշքշուկներ սեփականաշնորհման գործընթացում: Առկա է որոշակի անհամապատասխանություն գործող կարգի և գործնականում իրականացվող գործընթացի միջև:

1. 2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Առաջարկվում է առանձին հանրակացարաններում հաշվառել սեփականաշնորհման ենթակա բնակելի սենյակները, այդ սենյակներում ապրող ընտանիքները և դրանց կազմը: Կազմել սեփականաշնորհման ժամանակացույց և ապահովել դրա իրականացումը: Սեփականաշնորհման գործընթացը ըստ ժամանակացույցի ավարտին հասցնելու համար փոփոխություններ կատարել սեփականաշնորհման կարգում: Այլ կերպ՝ բացառել ապրելու ժամկետային սահմանափակումը և գործող կարգը համապատասխանեցնել գործնականում իրականացվող ընթացակարգին:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Որոշման ընդունման դեպքում հնարավոր կլինի հնարավոր սեղմ ժամկետում ավարտել հանրակացարանային բնակելի տարածքների սեփականաշնորհման գործընթացը, լուծել շուրջ 160 ընտանիքի բնակարանային խնդիրների

լուծում, ավարտել հանրակացարանային տարածքների սեփականաշնորհման գործընթացը, որի շնորհիվ կպահպանվի և կբարելավվի տվյալ բնակարանային ֆոնդը:

96.3 Պետական սեփականություն հանդիսացող գույքի նվիրատվության և նվիրաբերության կարգերը հաստատելու ու 2016 թվականի հոկտեմբերի 3-ի N 1067-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Պետական սեփականություն հանդիսացող գույքի նվիրատվության և նվիրաբերության կարգերը հաստատելու ու 2016 թվականի հոկտեմբերի 3-ի N 1067-Ն որոշումներն ուժն կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 14-ի «Պետական գույքի կառավարման ոլորտի բարեփոխումների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» թիվ N 1063-Լ որոշմամբ սահմանված պետական գույքի կառավարման ոլորտում գործող օրենսդրության արմատական բարեփոխման, մասնավորապես՝ օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի թվաքանակի կրճատման, կառավարման առանձին ոլորտներում իրականացվող

	կանոնակարգման պարզեցման, իրավական ակտերի մատչելիության մակարդակի բարձրացման, պետական գույքի նվիրատվության և նվիրաբերության գործընթացների օպերատիվ և միասնական կանոնակարգման անհրաժեշտությամբ և նպատակ ունի բարձրացնել պետական գույքի օգտագործման արդյունավետության մակարդակը, ինչպես նաև միջոցառումը բխում է ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.7-րդ բաժնով նախատեսված հանձնառություններից և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ և 605-րդ և «Պետական գույքի կառավարման մասին» օրենքի նոր լրամշակված 6-րդ և 7-րդ հոդվածների պահանջների կիրակումը գործականում ապահովելու անհրաժեշտությունից: 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները «Պետական գույքի կառավարման մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումները հաստատելու մասին» ՀՀ վարչապետի 2022 թվականի սեպտեմբերի 1-ի N 1004-Ա որոշմամբ նախատեսվում է մշակել և ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնել «Պետական սեփականություն հանդիսացող գույքի նվիրատվության և նվիրաբերության կարգերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Ներկա պահի դրությամբ՝ Պետական գույքի այլ տեսակների նվիրատվության գործընթացի կանոնակարգում առկա չէ: Պետական գույքի նվիրաբերության գործընթացը կանոնակարգվել է 2016 թվականի հոկտեմբերի 3-ի «Պետական սեփականություն հանդիսացող գույքի նվիրաբերության կարգը հաստատելու մասին» N 1067-Ն ՀՀ կառավարության որոշմամբ: Ընդ որում տվյալ որոշմամբ ամբողջական և միասնական ձևով չի կարգավորում պետական գույքի (բացառությամբ՝ հողամասերի, դրամական միջոցների, բնակելի նշանակության շենք, շինությունների, պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների, «Պետական գույքի կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերով սահմանված գույքի) նվիրաբերման գործընթացը: Նշված իրավական ակտերի վերլուծությունից ակնհայտ է, որ թե՛ պետական գույքերի նվիրատվության, թե՛ նվիրաբերության գործընթացը ամբողջական և միասնական կարգավորում չունի: Արդյունքում՝ պետական գույքերի նվիրատվության ու նվիրաբերության գործընթացն ամբողջությամբ չի ապահովում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 594-րդ և 605-րդ հոդվածների և «Պետական գույքի կառավարման մասին» օրենքի 6-րդ և 25-րդ հոդվածների պահանջների արդյունավետ կատարումը, ինչն էլ, ելնելով պետական գույքերի առանձնահատկություններից, խնդրահարույց է և չի նպաստում պետական գույքի կառավարման արդյունավետության բարձրացմանը: 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Առաջարկվում է մեկ միասնական իրավական ակտի միջոցով սահմանել նվիրաբերության և նվիրաբերության ենթակա պետական գույքի կազմը, սուբյեկտները և համապատասխան սուբյեկտներին պետական գույքի նվիրաբերության և նվիրաբերության դեպքերը և պայմանները: Ինչն էլ կնպաստի պետական գույքի օգտագործման արդյունավետության բարձրացմանը: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Պետական գույքի նվիրատվության և նվիրաբերության գործընթացի միասնական և ամբողջական կառավարումը կնպաստի պետական գույքի կառավարման արդյունավետություն բարձրացմանը:
97	**Պետական գույքի արդյունավետության բարձրացում, պետական գույքի էլեկտրոնային հաշվառման միասնական բազայի տվյալների հիման վրա պետական գույքի օգտագործման վիճակի մշտադիտարկման, վերլուծության, ինչպես նաև արդյունավետության մակարդակի գնահատման շնորհիվ պետական գույքի օգտագործումը կանոնակարգող իրավական ակտերի պահանջներից շեղումների, խախտումների և դրանց պատճառած վնասի բացահայտում** **97.1 Պետական անշարժ գույքի օգտագործման մշտադիտարկման շնորհիվ գույքի օգտագործման ժամանակահատվածում պատշաճ հսկողության սահմանում, վնասների բացահայտում և դրանք վերականգնելու ուղղությամբ միջոցների ձեռնարկում, ինչպես նաև առաջին անգամ մշտադիտարկման շնորհիվ անշարժ գույքի օգտագործման արդյունավետության գնահատում:** **Իրավական ակտերի պահանջներից և կնքված պայմանագրերով ստանձնած պարտավորություններից թույլ տված շեղումների, խախտումների բացահայտում, չօգտագործվող կամ ոչ արդյունավետ օգտագործվող պետական գույքի առանձնացում, արդյունքների վ երաբերյալ հաշվետվությունների և գույքի օգտագործման բարելավման վերաբերյալ, Կոմիտեի գործող ստորաբաժանումների օպտիմալացման**

	արդյունքում և հաստիքների օգտագործման շնորհիվ նոր մշտադիտարկման վարչության ստեղծելու մասին առաջարկությունների ներկայացում ՀՀ Վարչապետի աշխատակազմ **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացումը պայմանավորված է պետական գույքի օգտագործման և պահպանման վիճակը բացահայտելու և բարելավելու վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու նպատակով լիազորված մարմնին հանձնված պետական գույքի օգտագործման և պահպանման նկատմամբ մոնիթորինգի իրականացման անհրաժեշտությամբ: Միջոցառումը բխում է ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.7 -րդ բաժնով նախատեսված հանձնառություններից և հիմք է ընդունվել «Պետական գույքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 13-րդ հոդվածի 2-մասի Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 5-ի «Պետական գույքի հայեցակարգը հաստատելու մասին» N 1834-Լ որոշմամբ հաստատված հավելվածի Գործողություն 7-ում Պետական գույքի հաշվառման և միասնական գրանցամատյանի վարման կատարելագործում և անշարժ գույքի մոնիտորինգի համակարգի ներդրում պահանջները: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկա պահի դրությամբ պետական գույքի կառավարման և դրա օգտագործման արդյունավետության բարձրացման հիմնական ուղղությունները բացահայտելու համար անհրաժեշտություն է առաջանում պետական մարմիններին ամրացված պետական ոչ առևտրային կազմակերպությունների, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով հանձնված պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օգտագործման վիճակի վերաբերյալ մշտադիտարկում (մոնիթորինգ) իրականացնել: Վերջինս չափազանց կարևոր գործիքակազմ է պետական գույքի հետագա կառավարման ժամանակ հիմնավորված որոշումներ ընդունելու համար: ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 18-ի թիվ 202-Ն որոշման համաձայն ներդրվել է նոր գործիքակազմ, որը հնարավորություն կտա պարզել անշարժ գույքի վիճակը, բացահայտել տեղ գտած բացթողումները, թերությունները, օգտագործողի կողմից կատարված խախտումները: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Առաջարկվում է ըստ առաջնահերթության մինչև 300 միավոր անշարժ գույքի ներգրավմամբ մշտադիտարկման տարեկան ծրագրի կազմում: Պետական գույքի մշտադիտարկման ծրագրում ընդգրկված մինչև 300 միավոր անշարժ գույքի օգտագործման վիճակի մշտադիտարկման իրականացում: Իրավական ակտերի պահանջներից և կնքված պայմանագրերով ստանձնած պարտավորություններից թույլ տված շեղումների, խախտումների բացահայտում, չօգտագործվող կամ ոչ արդյունավետ օգտագործվող պետական գույքի առանձնացում,արդյունքների վերաբերյալ հաշվետվությունների և գույքի օգտագործման բարելավման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Պետական անշարժ գույքի օգտագործման մշտադիտարկման շնորհիվ գույքի օգտագործման ժամանակահատվածում պատշաճ հսկողության սահմանում, վնասների բացահայտում և դրանք վերականգնելու ուղղությամբ միջոցների ձեռնարկում, ինչպես նաև առաջին անգամ մշտադիտարկման շնորհիվ անշարժ գույքի օգտագործման արդյունավետության գնահատում: Չօգտագործվող կամ ոչ արդյունավետ օգտագործվող գույքի առանձնացում և դրա հետագա օգտագործման վերաբերյալ առաջարկների ներկայացում: Մշտադիտարկման առաջին տարվա (2021թ.) արդյունքները կնպաստեն հետագայում պետական գույքի օգտագործման արդյունավետության մակարդակի և վերականգնվող միջոցների գումարի որոշման գործընթացին:
98.	**Պետական համակարգի մարմինների և պետական կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին օգտագործվող ոչ պետական սեփականություն համարվող տարածքները պետական սեփականություն համարվող տարածքներով փոխարինումը** **98.1 «Պետական կարիքների համար վարձակալած ոչ պետական տարածքները պետական տարածքներով փոխարինելու մասին» Հայաստանի Հանրապետության Վարչապետի որոշման նախագծի ներկայացում ՀՀ Վարչապետի աշխատակազմ** **1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառումը պայմանավորված է պետական գույքի կառավարման ոլորտի արդյունավետության բարձրացման, մասնավորապես՝ գույքի օգտագործման (վարձակալության), ինչպես նաև պետական կարիքների

	համար վարձակալած ոչ պետական տարածքների վարձավճարների կրճատման շնորհիվ ՀՀ պետական բյուջեից կատարվող ծախսերը տնտեսելու անհրաժեշտությամբ, ինչպես նաև բխում է ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.7 -րդ բաժնով նախատեսված հանձնառություններից և հիմք է ընդունվել «Պետական գույքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ ու 9-րդ հոդվածները և Հայաստանի Հանրապետության օրենքի «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ն մասի: **1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտեն պետական գույքի օգտագործման արդյունավետության բարձրացման, ինչպես նաև պետական կարիքների համար վարձակալած տարածքների վարձավճարների ուղղությամբ ՀՀ պետական բյուջեից կատարվող ծախսերի տնտեսման նպատակով դիտարկել է պետական մարմինների կողմից վարձակալած ոչ պետական տարածքները պետական մարմիններին, ինչպես նաև պետական մարմինների ոլորտում գործող պետական հիմնարկներին կամ կազմակերպություններին ամրացված փաստացի չօգտագործվող տարածքներով փոխարինելու հնարավորությունները: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Միջոցառման իրականացման համար նախատեսվում է ստեղծել աշխատանքային խումբ, որը պետք է ուսումնասիրություններ իրականացնի պետական կարիքների համար վարձակալած ոչ պետական տարածքներում, մասնավորապես՝ կնքված պայմանագրերի համաձայն վարձակալած ոչ պետական տարածքների օգտագործման վիճակի, վարձակալական պայմանների վերաբերյալ և այդ ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա համապատասխան ՀՀ վարչապետի որոշման նախագիծ ներկայացնի ՀՀ վարչապետի աշխատակազմ, մասնավորապես՝ պետական կարիքների համար վարձակալած ոչ պետական տարածքները պետական ազատ տարածքներով փոխարինելու վերաբերյալ: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին վարձակալության վճարի դիմաց պետական կառույցների կողմից օգտագործվող ոչ պետական սեփականություն համարվող տարածքները պետության սեփականությունը համարվող համապատասխան տարածքներով փոխարինելու գործընթացի շնորհիվ վարձակալության վճարների տրամադրման հաշվին կնվազեն ՀՀ պետական բյուջեի ծախսերը:
99	**Պետության գործառույթների իրականացման համար օտարման ոչ ենթակա պետական գույքի կազմի սահմանում** **99.1 Պետության գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գույքի կազմը սահմանելու նպատակով Կոմիտեի նախաձեռնությամբ պետական մարմինների մասնակցությամբ ու առաջարկությունների, ինչպես նաև իրականացվող մշտադիտարկման արդյունքների հիման վրա պետական մարմինների գործառույթների իրականացման համար անհրաժեշտ անշարժ գույքի նկատմամբ պահանջների սահմանում և օտարման ոչ ենթակա գույքի կազմի և մակերեսի առանձնացում: Նշված տեղեկատվության հիման վրա համապատասխան փոփոխությունների կատարում Հայաստանի Հանրապետության կառավարության 2021թվականի ապրիլի 1-ի N 458-L որոշմամբ հաստատված պետական գույքի կառավարման 2021-2023 թվականների ծրագրում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման նպատակն է պետության գործառույթների իրականացման համար օտարման ոչ ենթակա պետական գույքի կազմի սահմանումը, միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքների և ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 18-ի թիվ 202-Ն որոշմամբ սահմանված պահանջներով իրականացվող մոնիթորինգի արդյունքների հիման վրա պետական մարմինների գործառույթների իրականացման համար անհրաժեշտ անշարժ գույքի նկատմամբ պահանջների սահմանումը և օտարման ոչ ենթակա գույքի կազմի և մակերեսի առանձնացումը: Միջոցառումը բխում է ՀՀ կառավարության 2021թ. օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.7 -րդ բաժնով նախատեսված հանձնառություններից և հիմք է ընդունվել «Պետական գույքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 7-րդ հոդվածի պահանջները: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Պետական գործառույթների իրականացման համար սահմանված չէ անհրաժեշտ անշարժ գույքի նկատմամբ պետական մարմինների պահանջը, որի հետևանքով հաճախ օտարվում է պետության կարիքների բավարարման համար անհրաժեշտ գույքը և արդյունքում խնայողաբար չեն օգտագործվում ՀՀ պետական բյուջեի միջոցները:

	1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Պետության գործառույթների իրականացման համար, ելնելով պետական մարմինների կողմից ներկայացված առաջարկություններից, առաջարկվում է օտարման ոչ ենթակա պետական գույքի կազմի սահմանում, Կոմիտեի նախաձեռնությամբ պետական մարմինների մասնակցությամբ ու առաջարկությունների հիման վրա, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով ներդնել նոր գործիքակազմ, որով կիրականացվի անհրաժեշտ անշարժ գույքի նկատմամբ պահանջների սահմանումը և օտարման ոչ ենթակա գույքի կազմի և մակերեսի առանձնացումը: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Պետության գործառույթների իրականացման համար, անհրաժեշտ գույքի կազմի և չափերի որոշման շնորհիվ տվյալ գույքի անձեռնմխելիության ապահովում և կառավարման արդյունավետության բարձրացման համար տվյալ գույքի համար նոր գործիքակազմի ներդրում: Միաժամանակ օտարման գործընթացում հստակ սահմանափակումների ներդրում և հետագայում նշված տարածքների նկատմամբ պահանջի չբավարարման և ՀՀ պետական բյուջեի միջոցների անտեղի վատնումից խուսափում:
100	**Բարենպաստ ներդրումային միջավայրի ստեղծում և ներդրումների ներգրավում, ինչպես նաև պետական գույքի օտարման շնորհիվ ՀՀ պետական և համայնքային բյուջեների միջոցների ավելացում** **100.1 Բարենպաստ ներդրումային միջավայր ստեղծելու և պետական գույքի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով 1 մլրդ. և ավել գնահատված արժեքով և ներդրումային հետաքրքրություն ունեցող առնվազն տասը միավոր անշարժ գույքերի վերաբերյալ համապատասխան փաստաթղթերի հավաքագրում և օտարման գործընթացի կազմակերպում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացումը պայմանավորված է բարենպաստ ներդրումային միջավայրի ստեղծմամբ և ներդրումային ծրագրերի իրականացման արդյունքում ներդրումային հետաքրքրություն ունեցող անշարժ գույքի օտարման գործընթացի անհրաժեշտությամբ: **1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Պետական գույքի օտարման գործընթացը չի իրականացվում պահանջվող արդյունավետությամբ և չօգտագործվող ու ոչ արդյունավետ օգտագործվող գույքի օտարման հաշվին չեն ավելանում ՀՀ պետական և համայնքային բյուջեները, գույքի ներգրավմամբ ներդրումային ծրագրեր չեն իրականացվում: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Առաջարկվում է օտարման ճանապարհով գույքի ներգրավմամբ իրականացնել խոշոր ներդրումային ծրագրեր, որոնք կբարձրացնեն անշարժ գույքի հանրային օգտակարությունը և կապահովեն ՀՀ պետական և համայնքային բյուջեների համար լրացուցիչ մուտքեր: Ներդրումային ծրագրի իրականացման արդյունքում կբացվեն լրացուցիչ աշխատատեղեր և հանրային ծառայությունների մատուցման համար կստեղծվեն լայն հնարավորություններ, ինչպես նաև կլուծվեն որոշակի կառուցապատման և սոցիալական խնդիրներ: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Բարձր իրացվելիություն ունեցող պետական գույքի օտարումից ՀՀ պետական և համայնքային բյուջեների մուտքերի ավելացում՝ մասնավորապես վաճառքի լավագույն սցենարի դեպքում ՀՀ պետական բյուջե մինչև 7 մլրդ, իսկ համայնքային բյուջեներ՝ մինչև 3 մլրդ ՀՀ դրամի մուտքագրում: Միաժամանակ նոր աշխատատեղերի ստեղծում և մինչև 5 մլրդ. ներդրումների ապահովում:
101	**Պետական ոչ պրոֆիլային գույքի օտարման գործընթացի արդյունավետության բարձրացում, այդ նպատակով նոր գործիքակազմի ստեղծում՝ մասնագիտացված կառույցներին պատվիրակելու միջոցով** **101.1 Մինչև 3 միավոր պետական ոչ պրոֆիլային գույքի օտարման գործընթացի արդյունավետ կազմակերպելու նպատակով (պիլոտային ծրագրի շրջանակներում) այդ աշխատանքներին մրցակցային եղանակով մասնագիտացված կազմակերպությունների ներգրավում և դրանց մասնակցության կանոնակարգում՝ նոր գործիքակազմի ստեղծման շնորհիվ:** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացումը պայմանավորված է պետական ոչ պրոֆիլային գույքի օտարման գործընթացն արդյունավետ կազմակերպելու նպատակով (պիլոտային ծրագրի շրջանակներում) այդ աշխատանքներին մրցակցային եղանակով մասնագիտացված կազմակերպությունների ներգրավման անհրաժեշտությամբ:

	Միջոցառումը բխում է ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.7-րդ բաժնով նախատեսված հանձնառություններից և հիմք է ընդունվել «Պետական գույքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ, 20-րդ, 21-րդ հոդվածների պահանջները: **1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Պետական գույքի օտարման գործընթացի ոչ արդյունավետ կազմակերպումը չի նպաստում ՀՀ պետական և համայնքային բյուջեների ավելացմանը և գույքի ներգրավմամբ ներդրումային ծրագերի իրականացմանը: Օտարման գործընթացի արդյունավետ իրականացումը պահանջում է նաև այդ գործընթացին մասնագիտացված բրոքերային կազմակերպությունների ներգրավումը: **1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Առաջարկվում է մինչև 3 միավոր պետական ոչ պրոֆիլային գույքի օտարման գործընթացն արդյունավետ կազմակերպելու նպատակով (պիլոտային ծրագրի շրջանակներում) այդ աշխատանքներին մրցակցային եղանակով մասնագիտացված կազմակերպությունների ներգրավում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Պետական ոչ պրոֆիլային գույքի օտարումից կավելանան ՀՀ պետական և համայնքային բյուջեների մուտքերը՝ մասնավորապես, վաճառքի լավագույն սցենարի դեպքում ՀՀ պետական բյուջե կմուտքագրվի մինչև 2.1 մլրդ ՀՀ դրամ, իսկ համայնքային՝ մինչև 900 մլն: Միաժամանակ կստեղծվեն նոր աշխատատեղեր և կապահովվեն մինչև 1.5 մլրդ ներդրումներ:
102	**Նպաստավոր ներդրումային միջավայրի ձևավորում և արժեթղթերի շուկայի կայացում, ինչպես նաև ֆոնդային բորսայի միջոցով համեմատաբար բարձր շահութաբերություն ունեցող պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների մասնավորեցման գործընթացի իրականացում** **102.1 «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում** **1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Նպաստավոր ներդրումային միջավայրի ձևավորման և պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների մասնավորեցման գործընթացի բարեփոխման անհրաժեշտությամբ: Իրավական ակտի ընդունումը բխում է ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.7-րդ բաժնով նախատեսված հանձնառություններից և հիմք է ընդունվել «Պետական գույքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածը և «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 191 հոդվածը «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասին է. կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 5-ի «Պետական գույքի հայեցակարգը հաստատելու մասին» N 1834-Լ որոշման գործողություն 12, «Պետական գույքի 2017-2020 թվականների մասնավորեցման ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք: **1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներդրումային միջավայրի և ՀՀ տնտեսության զարգացման բարելավման տեսանկյունից չափազանց կարևոր նշանակություն ունի առաջին հերթին արժեթղթերի շուկայի կայացումը և երկրորդ հերթին՝ դրա զարգացումը: Այդ նպատակով առաջարկվում է մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մեջ կատարել համապատասխան փոփոխություններ, ընդգրկել շահույթով աշխատող պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններ և դրանք մասնավորեցնել ֆոնդային բորսայի միջոցով: **1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Մասնավորեցման ոչ ենթակա պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կազմը օպտիմալացնելու և մասնավորեցման ենթակա առևտրային կազմակերպությունների վերջնական ցանկը սահմանելու, ներդրումային միջավայրի և ՀՀ տնտեսության զարգացման բարելավման նպատակով պետական շահագրգիռ մարմիններին առաջարկել մասնավորեցման ներկայացնել շահույթով աշխատող պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ցանկը, որոնց մասնավորեցման գործընթացը

	հետագայում կիրականացվի ֆոնդային բորսայի միջոցով՝ ներկայացնելով Կենտրոնական բանկի համաձայնությանը: Ծավալուն նախապատրաստական աշխատանքների շնորհիվ վերջնական կճշգրտվեն մասնավորեցման ենթակա պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ցանկը, և շահագրգիռ պետական մարմինների ներկայացված առաջարկություններին համապատասխան ցանկում ընդգրկված կազմակերպությունները ֆոնդային բորսայի միջոցով մասնավորեցման գործընթացի կազմակերպում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կառավարման բնագավառներում իրականացվող քաղաքականության բարեփոխում, որի շնորհիվ կավելանան ՀՀ պետական բյուջեի մուտքերը:
103	**Մասնավորեցման ոչ ենթակա պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կազմի և կառուցվածքի օպտիմալացում, ըստ ճյուղերի թվաքանակի սահմանում, ինչպես նաև վնասով, ոչ արդյունավետ և զարգացման հեռանկար չունեցող կազմակերպությունների առանձնացում և մասնավորեցման ծրագրում ընդգրկում** **103.1 «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 29-ի N 474-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացումը ՀՀ Վարչապետի աշխատակազմ** 1. **Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 29-ի N 474-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը բխում է պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գործունեության կառավարման որակի բարեփոխման անհրաժեշտությունից, որի արդյունքում ձեռք կբերվի կազմակերպությունների վերջնական արդյունքների բարելավում և շահութաբերության մակարդակի բարձրացում, ինչպես նաև ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.7 -րդ բաժնով նախատեսված հանձնառություններից և հիմք է ընդունվել «Պետական գույքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը: **1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ելնելով պետության կողմից իրականացվող գործառույթների անհրաժեշտությունից հստակ սահմանված չէ պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների թվաքանակը, օգտագործման արդյունավետության տեսանկյունից չի օպտիմալացվել յուրաքանչյուր կազմակերպությունում առկա հիմնական միջոցների կազմը և կառուցվածքը: Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների արտադրանքը և մատուցվող ծառայությունների որակը չի համապատասխանում բնակչության մեծ մասի պահանջներին, կազմակերպությունների տնօրենները հիմնականում մոտիվացված չեն իրենց ղեկավարման հանձնված կազմակերպության ֆինանսական ցուցանիշների բարելավման հարցում, կազմակերպությունների գործունեության հիմքում դրված չեն գործուն գործարար ծրագրեր, դրանցում բացակայում են ներդրումային միջոցների իրականացումը, ծրագրավորված ցուցանիշների իրականացումը իրատեսական չեն, բացակայում են ծրագրերի մշակման և հաստատման, ինչպես նաև դրանց կատարման վերահսկողության գործում վերադաս կառավարման մարմինների մասնակցությունը: Բավարար պահանջվող մակարդակից շատ հեռու է կազմակերպությունների շահութաբերության մակարդակը, տարիներ շարունակ զգալի տեսակարար կշիռ է կազմում վնասով աշխատող և զարգացման հեռանկար չունեցող կազմակերպությունների թվաքանակը: Ընդհանրապես բացակայում է կապը կազմակերպության գործունեության և վերջնական արդյունքների և ղեկավար անձնակազմի պատասխանատվության կամ խրախուսման ենթարկելու միջև: **1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գործունեության բարելավման ոլորտում առաջարկվող լուծումները. - անհրաժեշտ է օպտիմալացնել կազմակերպությունների հիմնական միջոցների կազմը և կառուցվածքը, հաշվառել չօգտագործվող և ոչ արդյունավետ օգտագործվող հիմնական միջոցների թվաքանակը, հստակեցնել պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների թվաքանակը, որպես հստակեցման չափանիշ ընդունելով պետության կողմից հստակ սահմանված գործառույթների իրականացման անհրաժեշտությունը: Մասնավորապես.

	ա) առանձնացնել չօգտագործվող և ոչ արդյունավետ օգտագործվող հիմնական միջոցները և առաջարկություններ ներկայացնել դրանց հետագա տնօրինման վերաբերյալ, բ) մասնավորեցնելու նպատակով պետական գույքի 2017-2020 թվականների մասնավորեցման ծրագիր ընդգրկել պետական մասնակցությամբ այն առևտրային կազմակերպությունները, որոնց կողմից իրականացվող գործառույթները ոչ պետական առևտրային կազմակերպություններն իրականացնում են ավելի արդյունավետ և այդ ոլորտները կարիք ունեն զգալի ներդրումների, գ) մասնավորեցնել պետական մասնակցությամբ այն առևտրային կազմակերպությունները, որոնք վերջին 3 տարվա ընթացքում անընդհատ աշխատել են աճող վնասով և թույլ են տրվել կուտակված վնասի ավելացում և չունեն ներդրումային ծրագրերի իրականացման արդյունքում զարգացման հեռանկար, դ) լուծարել պետական մասնակցությամբ այն առևտրային կազմակերպությունները, որոնք վերջին 3 տարվա ընթացքում անընդհատ աշխատել են վնասով և թույլ են տվել կուտակված վնասի ծավալի ավելացում և չունեն զարգացման հեռանկար, ե) արդյունավետ կառավարում իրականացնելու համար և ներդրումներ ներգրավելու կարիք ունեցող առանձին կազմակերպություններ հանձնել հավատարմագրային և կոնցեսիոն կառավարման: Սահմանել պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գործունեության արդյունքների գնահատման այնպիսի ցուցանիշների համակարգ, որը միանշանակ գնահատում է կազմակերպության գործունեության վերջնական արդյունքները և կարող է հիմք հանդիսանալ կազմակերպությունների զարգացման ծրագրերի կազմման և դրանց ցուցանիշների ծրագրավորված աճի ապահովման համար: Աշխատանքի արտադրողականության և շահութաբերության մակարդակի բարձրացման նպատակով պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների վերադաս կառավարման մարմինների մասնակցությամբ մշակել և հաստատել կազմակերպությունների գործարար ծրագրերը, իրականացնել ներդրումային միջոցներ և դրանց իրականացումը ու կատարման նկատմամբ վերահսկողությունը: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Ելնելով պետության կողմից սահմանված գործառույթների իրականացման անհրաժեշտությունից սահմանել մասնավորեցման ոչ ենթակա կազմակերպությունների թվաքանակը, վերադաս մարմինների նախաձեռնությամբ և պետական գույքի կառավարման կոմիտեի մասնակցությամբ արդյունավետ ծրագրերի մշական և ներդրումային միջոցառումների իրականացման արդյունքում բարձրացնել կազմակերպությունների շահութաբերության մակարդակը, ավելացնել ՀՀ պետական բյուջեի մուտքերը և կազմակերպությունների սեփական միջոցները ու ներդրումային հնարավորությունները, ինչպես նաև անձնակազմի խրախուսման հնարավորությունները:
104	**Պետական գույքի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով բարելավման կարիք ունեցող և հետագայում օտարման ոչ ենթակա, որպես պետական սեփականություն պահպանվող գույքի առանձնացում, և որոշակի ներդրումային ծրագրերի իրականացման դիմաց երկարատև վարձակալության և անհատույց օգտագործման տրամադրման միջոցով տվյալ գույքի հիմնանորոգման և վերակառուցման ապահովում** **104.1 Բարելավման կարիք ունեցող մինչև տասը միավոր պետական անշարժ գույքերի՝ ներդրումների իրականացման դիմաց երկարատև վարձակալության կամ որոշակի ժամկետով անհատույց օգտագործման տրամադրում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման նպատակն է պետական գույքի հիմնանորոգման և վերակառուցման միջոցով պետական գույքի բարելավումը և կառավարման արդյունավետության բարձրացումը: Միջոցառման կատարումը բխում է ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.7 -րդ բաժնով նախատեսված հանձնառություններից և հիմք է ընդունվել «Պետական գույքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ և 9-րդ հոդվածները: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Պետական գույքի վիճակի բարելավման ուղղությամբ ՀՀ պետական բյուջեի միջոցների սուղ լինելու պատճառով չեն իրականացվում հիմնանորոգման և վերակառուցման աշխատանքներ, դրանց հետևանքով մեծանում է պետական գույքի ֆիզիկական մաշվածությունը: Պետական կարիքների համար անհրաժեշտ գույքի բավարար վիճակի պահպանման համար անհրաժեշտ է ներգրավել մասնավոր անձանց միջոցները: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

	Առաջարկվում է բարելավման կարիք ունեցող մինչև տասը միավոր պետական անշարժ գույքերի՝ ներդրումների իրականացման դիմաց երկարատև վարձակալության կամ որոշակի ժամկետով անհատույց օգտագործման տրամադրում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Մասնավոր անձանց ներդրումների շնորհիվ կհիմնանորոգվի և կբարելավվի պետական սեփականություն համարվող անշարժ գույքը, ներդրումների շնորհիվ կստեղծվեն նոր աշխատատեղեր և կավելանան ՀՀ պետական բյուջեի միջոցները: Միջոցառման արդյունքների վերաբերյալ կներկայացվի տարեկան հաշվետվություն: Նախապես կանխատեսվում է մինչև 500 մլն դրամի ներդրում:
105	**Մարզերում պետություն-համայնքներ գործընկերության բնագավառում պետական գույքի ներգրավմամբ ներդրումային ծրագրերի իրականացում և ՓՄՁ-ների զարգացում** **105.1 Մարզերում գտնվող չօգտագործվող կամ ոչ արդյունավետ օգտագործվող գույքի ներգրավմամբ տեղական նշանակության սոցիալ-տնտեսական բնույթի ներդրումային ծրագրերի իրականացում, այդ նպատակով մինչև տասը միավոր ոչ բարձր իրացվելիություն ունեցող անշարժ գույքերի օտարում, վարձակալության և անհատույց օգտագործման տրամադրում ՀՀ ՏԿԵ նախարարության և համայնքների օժանդակությամբ** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման նպատակն է չօգտագործվող կամ ոչ արդյունավետ օգտագործվող գույքի ներգրավմամբ տեղական նշանակության սոցիալ-տնտեսական բնույթի ներդրումային ծրագրերի իրականացումը և ՓՄՁ-երի զարգացումը: Միջոցառման կատարումը բխում է ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.7 -րդ բաժնով նախատեսված հանձնառություններից և հիմք է ընդունվել «Պետական գույքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածը: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս պետության սեփականությունը համարվող անշարժ և շարժական գույքը հիմնականում բարոյապես և ֆիզիկապես մաշված է, այդ թվում՝ չօգտագործվող կամ ոչ արդյունավետ օգտագործվող օտարման ենթակա անշարժ և շարժական գույքի իրացվելության մակարդակը և ներդրումային գրավչությունը բավականին ցածր է: Իրացվելիության ցածր մակարդակը ինչ-որ չափով պայմանավորված է նաև տվյալ գույքի վաճառքի կազմակերպման բնագավառում առկա բազմաթիվ թերություններով ու բացթողումներով և վաճառքի ենթակա գույքի վերաբերյալ հանրային իրազեկման ոչ բավարար մակարդակով: Ներկայումս պետական գույքի ներգրավմամբ բավարար չափով չեն իրականացվում ոլորտային, տարածքային (համայնքային) ներդրումային ծրագրեր, բավարար աջակցություն չի ցուցաբերվում ՓՄՁ-երի գործունեությանը, չի իրականացվում պետական գույքի, կազմի և կառուցվածքի ծրագրային օպտիմալացում ինչպես մակրո, այնպես էլ միկրոմակարդակներում՝ նպատակ ունենալով կայուն նախադրյալներ ստեղծել տնտեսական աճի համար: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Տեղական նշանակության սոցիալ-տնտեսական բնույթի ներդրումային ծրագրերի իրականացման, ոչ բարձր իրացվելիություն ունեցող անշարժ գույքերի օտարման, վարձակալության և անհատույց օգտագործման տրամադրման նպատակով առաջարկվում է ՀՀ համայնքների ղեկավարներին՝ ՀՀ ՏԿԵ նախարարի համապատասխան հանձնարարականի հիմքով, տրամադրելու տեղեկատվություն, յուրաքանչյուրն իր համայնքում գտնվող չօգտագործվող կամ ոչ արդյունավետ օգտագործվող գույքի վերաբերյալ, ինչպես նաև օժանդակություն տվյալ միջոցառման գործընթացը պատշաճ իրականացնելու համար: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Հանրապետության տարբեր համայնքներում գույքի ներգրավմամբ ներդրումների իրականացման շնորհիվ կավելանան ՀՀ պետական և համայնքային բյուջեների մուտքերը: Կապահովվի մինչև 400 մլն. դրամի ներդրում, կստեղծվեն նոր աշխատատեղեր, ինչպես նաև կբավարարվի որոշակի ոլորտներում օբյեկտների (հյուրանոց, հացատուն, հանգստի տուն, մշակութային օջախ..) նկատմամբ պահանջը:
106	**ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի նախընտրական խոստումների իրականացում**

	106.1 ՀՀ Վարչապետ Նիկոլ Փաշինյանի նախընտրական խոստումներից բխող քայլերի իրականացում ուղղված համայնքների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է նախընտրական քարոզարշավի ժամանակ ՀՀ մարզերում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից հնչեցված նախընտրական խոստումով: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Համայնքների սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացման արդյունքում բնակավայրերն ավելի հարմարավետ կլինեն ապրելու համար: 1.2 **առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Իրականացվող ծրագրերն ուղղված են լինելու ՀՀ համայնքներում ճանապարհների կառուցմանն ու նորոգմանը, փողոցների լուսավորությանը, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցմանն ու նորոգմանը, համայնքների գազամատակարարման համակարգի կառուցմանը, մանկապարտեզների նորոգմանը, վերակառուցմանը և կառուցմանը, հասարակական շենքերի, այդ թվում՝ մշակութային տների, համայնաքային կենտրոնների, առողջապահական, մարզական կենտրոնների նորոգմանն ու կառուցմանը, այգիների, պուրակների կառուցմանն ու բարեկարգմանը, տեխնիկայի և գույքի ձեռքբերմանը: **2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման կատարման արդյունքում Հանրապետության բոլոր բնակավայրերը համաչափ և կայուն կզարգանան,բնակավայրերն ավելի հարմարավետ կլինեն ապրելու համար:
107	**Ռեսուրսների ռացիոնալ և համաչափ արդյունահանման ապահովում** **107.1 «Նավթի և բնական գազի երկրաբանական ուսումնասիրությունների և արդյունահանման առանձնահատկությունների մասին» օրենքի նախագծին հավանություն տալու մասին» Կառավարության որոշման ընդունում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** «Նավթի և բնական գազի երկրաբանական ուսումնասիրությունների և արդյունահանման առանձնահատկությունների մասին» օրենքի ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կիրարկմամբ, որի համաձայն՝ «Աձխաջրածինների հետախուզման, երկրաբանական որոնման և արտադրության համար թույլտվությունների տրամադրման և օգտագործման պայմանների մասին» Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 1994 թվականի մայիսի 30-ի 94/22/ԵՀ հրահանգի մոտարկման արդյունքում պետք է մշակվի «Նավթի և բնական գազի երկրաբանական ուսումնասիրությունների և արդյունահանման առանձնահատկությունների մասին» օրենքի (այսուհետ՝ օրենք) նախագիծ և օրենքից բխող ենթաօրենսդրական ակտեր: Օրենքով կսահմանվեն Հայաստանի Հանրապետության տարածքում նավթի և բնական գազի երկրաբանական ուսումնասիրությունների և արդյունահանման նպատակով ընդերքի տրամադրման սկզբունքներն ու կարգը, կկարգավորվեն ընդերքն օգտագործելիս բնակչության առողջությունը, բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև նավթային գործունեության ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները: Դա բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 2021թ.-ի օգոստոսի 26-ի № ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի 2.8–րդ բաժնի 1-ին պարբերության 9-րդ կետով նախատեսված հանձնառություններից և 2020-2050թթ. Հայաստանի վերափոխման ռազմավարության 3-րդ մեգանպատակից: **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս նավթի և բնական գազի երկրաբանական ուսումնասիրություններին առնչվող իրավահարաբերությունները կարգավորվում են ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 1-ի N 1431-Ն և N 1421-Ն որոշումներով, իսկ արդյունահանման մասով համալիր իրավակարգավորումներ սահմանված չեն: **1. 2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Առաջարկվող նախագծով կկարգավորվեն նավթի և բնական գազի ինչպես երկրաբանական ուսումնասիրությունների, այնպես էլ արդյունահանման նպատակով ընդերքի տրամադրման սկզբունքներն ու կարգը:

	2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Բնական պաշարների կայուն կառավարում:
	107.2 Ռեսուրսների ռացիոնալ և համաչափ արդյունահանման ապահովում **«Նավթի և բնական գազի երկրաբանական ուսումնասիրությունների և արդյունահանման առանձնահատկությունների մասին» օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** «Նավթի և բնական գազի երկրաբանական ուսումնասիրությունների և արդյունահանման առանձնահատկությունների մասին» օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կիրարկմամբ, որի համաձայն՝ «Ածխաջրածինների հետախուզման, երկրաբանական որոնման և արտադրության համար թույլտվությունների տրամադրման և օգտագործման պայմանների մասին» Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 1994 թվականի մայիսի 30-ի 94/22/ԵՀ հրահանգի մոտարկման արդյունքում պետք է մշակվի «Նավթի և բնական գազի երկրաբանական ուսումնասիրությունների և արդյունահանման առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) նախագիծ և ***օրենքից բխող ենթաօրենսդրական ակտեր***: Ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի մշակումը կապահովի օրենքի կիրարկումը՝ լիարժեքորեն կարգավորելով Հայաստանի Հանրապետության տարածքում նավթի և բնական գազի ուսումնասիրությունների և արդյունահանման հետ կապված իրավահարաբերությունները: Դա բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 2021թ.-ի օգոստոսի 26-ի № ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի 2.8–րդ բաժնի 1-ին պարբերության 9-րդ կետով նախատեսված հանձնառություններից և 2020-2050թթ. Հայաստանի վերափոխման ռազմավարության 3-րդ մեգանպատակից: **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս նավթի և բնական գազի երկրաբանական ուսումնասիրություններին առնչվող իրավահարաբերությունները կարգավորվում են ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 1-ի N 1431-Ն և N 1421-Ն որոշումներով, իսկ արդյունահանման մասով համալիր իրավակարգավորումներ սահմանված չեն: **1. 2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունմամբ կապահովվի օրենքի կիրարկումը՝ լիարժեքորեն կկարգավորվեն Հայաստանի Հանրապետության տարածքում նավթի և բնական գազի ուսումնասիրությունների և արդյունահանման հետ կապված իրավահարաբերությունները, մասնավորապես՝ կմշակվեն և կհաստատվեն նավթային գործունեության և արտադրանքի բաժանման պայմանագրերի օրինակելի ձևերը, նավթային գործունեության թույլտվությունների ձևերը, նավթի և բնական գազի պաշարների դասակարգման կարգը, ինչպես նաև այլ ենթաօրենսդրական իրավական ակտեր: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Բնական պաշարների կայուն կառավարում:
	107.3 Ռեսուրսների ռացիոնալ և համաչափ արդյունահանման ապահովում **«Գետաողողատային տիպի հանքավայրերում ավազի և ավազակոպճային խառնուրդի վերականգնվող պաշարների արդյունահանման կարգը սահմանելու մասին» Կառավարության որոշման ընդունում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացումը բխում է ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի 25-րդ կետի պահանջից: Միաժամանակ, դեռևս լիարժեք կարգավորված չեն գետաողողատային տիպի հանքավայրերում ավազի և ավազակոպճային խառնուրդի վերականգնվող պաշարների արդյունահանման հետ կապված իրավահարաբերությունները: Դա բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 2021թ.-ի օգոստոսի 26-ի № ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի 2.8–րդ բաժնի 1-ին պարբերության 9-րդ կետով

	նախատեսված հանձնառություններից և 2020-2050թթ. Հայաստանի վերափոխման ռազմավարության 3-րդ և 8-րդ մեգանպատակներից: **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս Հայաստանի Հանրապետության տարածքում, Արաքս գետի ողողատներում գտնվող հանքավայրերից գետավազի արդյունահանման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են 2008 թվականի հունվարի 10-ի թիվ 18-Ն որոշմամբ: Ներկայացվող նախագծով կկարգավորվեն Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում գետաողողատային տիպի հանքավայրերից ավազի և ավազակոպճային խառնուրդի վերականգնվող պաշարների արդյունահանման հետ կապված հարաբերությունները, այդ թվում նաև՝ սահմանային շերտում սահմանային գետերի ափերին գտնվող: **1. 2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Առաջարկվող նախագծով կսահմանվեն գետաողողատներում գտնվող հանքավայրերից՝ ավազի և ավազակոպճային խառնուրդի վերականգնվող պաշարների արդյունահանմանն առաջադրվող պահանջները, կկարգավորվեն սահմանային շերտում սահմանային գետերի ափերին գտնվող գետաողողատային տիպի հանքավայրերից ավազի և ավազակոպճային խառնուրդի պաշարների արդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում հանութաբարձիչ և հանութափոխադրիչ տրանսպորտային միջոցները Գլոբալ տեղորոշման համակարգով՝ GPS կահավորված լինելու և այդ համակարգը սերվերային ենթակառուցվածքին միացված լինելու հետ կապված իրավահարաբերությունները: **3.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Բնական պաշարների կայուն կառավարում:
	107.4 Ռեսուրսների ռացիոնալ և համաչափ արդյունահանման ապահովում **«ՀՀ կառավարության 2020 թվականի հուլիսի 2-ի N 1129-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Օգտակար հանածոյի հանույթի միանգամյա թույլտվության տրամադրման ընթացակարգում կսահմանվեն նաև գետերի հունի արգելապատնեշների կառուցման նպատակով թույլտվությունների տրամադրմանն առնչվող կարգավորումները: Դա բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 2021թ.-ի օգոստոսի 26-ի № ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի 2.8–րդ բաժնի 1-ին պարբերության 9-րդ կետով նախատեսված հանձնառություններից և 2020-2050թթ. Հայաստանի վերափոխման ռազմավարության 3-րդ և 8-րդ մեգանպատակներից: **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս 1129-Ն որոշմամբ հաստատված կարգով կարգավորվում են ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի միանգամյա թույլտվության տրամադրման հետ կապված իրավահարաբերությունները, սակայն սահմանված կարգավորումները վերաբերելի են տրանսպորտային կամ հաղորդակցության ուղիների , թունելների, ջրամբարների կառուցմանը: **1. 2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Առաջարկվող կարգավորումներով ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի միանգամյա թույլտվության տրամադրումը կնախատեսվի նաև գետերի հունի արգելապատնեշների կառուցման նպատակով : **3.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Բնական պաշարների կայուն կառավարում:

Ֆինանսների նախարարություն	
NN	**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ**
1.	**1. Բյուջետային ծրագրերի համապատասխանեցում առկա ռազմավարական փաստաթղթերով սահմանված քաղաքականություններին**

	1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման իրականացման հիմքեր՝ ՀՀ կառավարության 2021-26թթ. ծրագրի «6.10 Պետական ծախսեր» բաժնի 1-ին և 2-րդ կետեր, «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածի 17-րդ կետ, ՊՖԿՀԲ 2019-2023թթ. ռազմավարություն, ՀՀ վարչապետի 11.06.2018թ.-ի «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 743-Լ որոշում, ինչպես նաև «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական ծրագիր: Չնայած այն հանգամանքին, որ 2019 թվականի պետական բյուջեն կազմվել և հաստատվել է ԾԲ պահաջներին համապատասխան, այնուամենայնիվ բյուջետային ծրագրերի կապն ու ներադաշնակությունը ռազմավարական պլանավորման համակարգի հետ դեռևս ամբողջությամբ ապահովված չի: Դա հատկապես վերաբերվում է բյուջետային ծրագրերի նպատակների և համապատասխան արդյունքային ցուցանիշների սահմանմանը և ռազմավարական պլանավորման համակարգի հետ վերջիններիս ներդաշնակեցմանը: *Միջոցառման նպատակն է* բյուջետային ծրագրերը համապատասխանեցնել առկա ռազմավարական փաստաթղթերով իրականացվող քաղաքականությունների հետ: *1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները* ՀՀ-ում ռազմավարական պլանավորման գործընթացի կազմակերպման և բյուջետավորման գործընթացի հետ ներդաշնակեցման մեխանիզմները սահմանվում են ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 42-45 արձանագրային որոշմամբ, որով կանոնակարգվում է պետական եկամուտների և ծախսերի վրա ազդեցություն ունեցող ռազմավարական փաստաթղթերի մշակման, ներկայացման և հսկողության իրականացման գործընթացը: Վերջինս սահմանում է ռազմավարական փաստաթղթերի մշակման և ներկայացման միասնական ընթացակարգեր, հիերարխիա, կառուցվածքներ՝ հիմնականում նպատակ ունենալով ապահովել հստակ կապը ռազավարական փաստաթղթերի և բյուջետային ծրագրերի միջև, որի հիմքում դրված է նաև ԾԲ բարեփոխումների տրամաբանությունը: Այդ առումով, ՀՀ կառավարության 2019-2023թթ գործունեության միջոցառումների ծրագրի համաձայն ՀՀ պետական իշխանության մարմինները նախաձեռնել են իրենց ոլորտային ռազմավարությունների վերանայման և մշակման աշխատանքները, որի հիմքում դրված են վերոհիշյալ որոշմամբ սահմանված մոտեցումները, որն առաջ է բերում գոյություն ունեցող բյուջետային ծրագրերի վերանայման և բովանդակային առումով վերանայված ռազմավարական փաստաթղթերին համապատասխանեցման անհրաժեշտություն: *1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները* ○ առկա բյուջետային ծրագրերի ուսումնասիրում ○ գործող ռազմավարական փաստաթղթերին համապատասխանության գնահատում ○ ըստ անհրաժեշտության՝ բյուջետային ծրագրերի բովանդակության և կառուցվածքների վերանայում *2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը* Բոլոր բյուջետային ծրագրերը համապատասխանում են առկա ռազմավարական փաստաթղթերին:
2.	**2. Պետական բյուջետային ծրագրերի մոնիթորինգի և գնահատման համակարգի ստեղծում** *1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը* Միջոցառման իրականացման հիմքեր՝ ՀՀ կառավարության 2021-26թթ. ծրագրի «6.10 Պետական ծախսեր» բաժնի 1-ին, 3-րդ և 4-րդ կետեր, «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածի 17-րդ կետ, ՊՖԿՀԲ 2019-2023թթ. ռազմավարություն, ՀՀ վարչապետի 11.06.2018թ.-ի «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 743-Լ որոշում, ինչպես նաև «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական ծրագիր: Բյուջետային ծրագրի գնահատումը ենթադրում է ծրագրի վերաբերյալ տեղեկատվության ստացման, վերլուծության և օգտագործման համակարգված եղանակ, որը պատասխանում է ծրագրի արդյունավետության և օգտավետության վերաբերյալ հարցերին: Միջոցառման նպատակն է ունենալ բյուջետային ծրագրերի արդյունավետության և օգտավետության գնահատման կանոնավոր գործընթաց: Ի տարբերություն գնահատման՝ մոնիթորինգը (մշտադիտարկումը) սահմանվում է որպես շարունակաբար իրականացվող գործառույթ, որը որոշակի ցուցանիշների գծով տվյալների համակարգված հավաքագրման միջոցով ծրագրի կառավարիչներին և շահագրգիռ կողմերին տրամադրում է տեղեկություններ ծրագրի իրականացման առաջնթացի և արդյունքների ձեռքբերման, ինչպես նաև ռեսուրսների օգտագործման աստիճանի վերաբերյալ: Մոնիթորինգը և գնահատումը (ՄԳ) դիտարկվում են

	որպես համակցված համակարգային գործընթացներ: Այն թույլ է տալիս պարզել ինչպես ծրագրի իրականացման ընթացքում առաջացած որոշակի փոփոխությունների և բարեավումների կարիքը, այնպես էլ հետագա բարելավումների, զարգացման պահանջը: Միջոցառման նպատակն է նաև ՀՀ ՖՆ ֆինանսաբյուջետային վերահսկողության վարչության և ՀՀ պետական վերահսկողության ծառայության կողմից իրականացվող՝ համապատասխանաբար ստուգումների և ուսումնասիրությունների ընթացքում գործառութային կրկնություններից խուսափելը և միասնական մոտեցման ցուցաբերումը: *1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները* Ներկայումս բյուջետային ծրագրերի գնահատման կանոնավոր գործընթացներ ներդրված չեն, ինչը սահմանափակում է բյուջետային ծրագրերի ազդեցությունը և արդյունքները գնահատելու ՀՀ կառավարության հնարավորությունը: ԾԲ բարեփոխումների շրջանակում բյուջետային ծրագրերի վերանայմանն ու ռազմավարական պլանավարման համակարգին ներդաշնակեցմանը հաջորդող կարևոր քայլ է հանդիսանում բյուջետային ծրագրերի ազդեցության և արդյունավետության պարբերական և կանոնավոր գնահատման գործընթացի ներդրումը: *1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները* • ՀՀ բյուջետային գործընթացում բյուջետային ծրագրերի գնահատման գործառույթի ներդրման նպատակով ուսումնասիրության իրականացում և հայեցակարգի մշակում • Հայեցակարգի հիման վրա բյուջետային ծրագրերի գնահատման ուղեցույցների մշակում • Գնահատման գործառույթների ներդրման ժամանակացույցի և միջոցառումների մշակում • Գնահատման գործառույթների ներդրմանն ուղղված միջոցառումների իրականացում • Գնահատման ուղեցույցներին համապատասխան բյուջետային ծրագրերի գնահատում: *2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը* Սույն միջոցառման ակնկալվող արդյունքը բյուջետային ծրագրերի գնահատման և մոնիթորինգի կանոնավոր գործընթացի ներդրումն է, ինչպես նաև բյուջետային ծրագրերի գնահատման և մոնիթորինգի իրականացման ուղղությամբ ՀՀ ՖՆ համապատասխան մասնագետների վերապատրաստումն ու համապատասխան կարողությունների զարգացումը, կադրային ռեսուրսի առավել արդյունավետ և հասցեական օգտագործումը:
3.	**3. Մասնակցային բյուջետավորման գործընթացի ներդրում** *1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը* Միջոցառման իրականացման հիմքեր՝ ՀՀ կառավարության 2021-26թթ. ծրագրի «6.10 Պետական ծախսեր» բաժնի 1-ին, 5-րդ և 6-րդ կետեր, «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածի 17-րդ կետ, ՊՖԿՀԲ 2019-2023թթ. ռազմավարություն, ՀՀ վարչապետի 11.06.2018թ.-ի «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 743-Լ որոշում, ինչպես նաև «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական ծրագիր: Միջոցառման նպատակն է բյուջետային օրենսդրությամբ նախատեսել կանոնավոր գործընթաց՝ պետական միջոցներից մասնակցային բյուջետավորման նախագծերի իրականացման նպատակով ծախսեր նախատեսելու համար, որով կթիրախավորվեն քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, քաղաքացիների և համայնքների բնակիչների համար ամենակարևոր, հրատապ և արդի խնդիրները, կխթանվի նրանց ակտիվ մասնակցությանը ծրագրերի առաջադրման, քննարկան, որոշումների կայացման գործընթացում: *1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները* Ներկայումս բյուջետային համակարգի տարբեր մակարդակներում, ինչպես նաև բյուջետային գործընթացի տարբեր փուլերում իրականացվում են քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, քաղաքացիների և բնակչության ներգրավման, համագործակցության և նրանց կողմից առաջ քաշվող խնդիրների, ծրագրերի և առաջարկությունների իրականացման հնարավոր գործընթացներ, սակայն մասնակցային բյուջետավորման ինստիտուցոնալ մեխանիզմների և կանոնավոր ընթացակարգեր ներդրման համար անհրաժեշտություն է առաջանում բյուջետային օրենսդրական բարեփոխումների շրջանակում մասնակցային բյուջետավորման գործիքակազմի ներդրումը: *1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները*

	• ՀՀ բյուջետային գործընթացում մասնակցային բյուջետավորման համակարգի ներդրման նպատակով հայեցակարգի մշակում • Հայեցակարգի հիման վրա բյուջետային օրենսդրության և ենթաօրենսդրական իրավական ակտերի մշակում • Մասնակցային բյուջետավորման ընթացակարգերը պարզաբանող ուղեցույցերի, մեթոդական նյութերի մշակում և հրապարակում • Մասնակցային բյուջետավորման գործող ինստիտուցիոնալ մեխանիզմների և ընթացակարգերի վերավերյալ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, քաղաքացիների և համայնքների բնակչության իրազեկում, սեմինար խորհրդակցությունների անցկացում • Մասնակցային բյուջետավորման հարթակի ձևավորում և գործադրում : *2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը* Սույն միջոցառման ակնկալվող արդյունքը օրենսդրությամբ սահմանված մասնակցային բյուջետավորման մեխանիզմների շրջանակներում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, քաղաքացիների և բնակչության բյուջետային քննարկումներում ներգրավման, համագործակցության և նրանց կողմից ծրագրային նախագծերի առաջադրման, ներկայացվող ծրագրերի ընտրության վերաբերյալ որոշումների կայացման և ընտրված ծրագրերի իրականացման ընթացքի վերաբերյալ հաշվետվողականության թափանցիկության ապահովումն է:
4.	**4. ՄԺԾԾ և տարեկան բյուջետային հայտերի ներկայացման մեթոդական ցուցումների լրամշակում, գործընթացների պարզեցում, դյուրացում** *1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը* Միջոցառման իրականացման հիմքեր՝ ՀՀն իրականացման հիմքեր՝ անհրաժեշտությունը և նպատակը ցուցումների լրամշակում, գործընթացների պարզեցում, դյուրացումում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, քաՊՖԿՀԲ 2019-2023թթ. ռազմավարություն, ՀՀ վարչապետի 11.06.2018թ.-ի «-1.06.201 Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրությունը անոնադրությունըհիմքեր՝ անհրաժեշտությունը և նպատակը ցուցումների լրամշակում, գործընթացների պարզեցում, դյու Միջոցառումը նպատակն է Միջոցառման իրականացման նպատակը ՄԺԾԾ և տարեկան բյուջետային հայտերի ներկայացման մեթոդական ցուցումների լրամշակումը, գործընթացների պարզեցումն ու դյուրացումն է:: *1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները* Պետական կառավարման մարմիններում ՖՆ կողմից իրականացված ծրագրային բյուջետավորման մեթոդաբանության վերանայման նպատակով իրականացված ինքնագնահատումների արդյունքներով պետական կառավարման մարմիններից ստացվել են նաև համապատասխան առաջարկություններ ՄԺԾԾ և տարեկան բյուջետային հայտերի ներկայացման մեթոդական ցուցումների լրամշակման, գործընթացների պարզեցման և դյուրացման վերաբերյալ: *1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները* Մինչև 2024-2026թ. թ. բյուջետային գործընթացի սկսվելը վերանայել, լրամշակել, պարզեցնել և դյուրացնել ՄԺԾԾ և տարեկան բյուջետային հայտերի ներկայացման մեթոդական ցուցումները *2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը* ՄԺԾԾ և տարեկան բյուջետային հայտերի ներկայացման մեթոդական ցուցումները լրամշակված, գործընթացները պարզեցված և դյուրացված են:
5.	**5. Օտարերկրյա պետություններ գործուղումների ընթացակարգերի պարզեցում, փաստաթղթաշրջանառության ծավալների օպտիմալացում, արտասահմանյան գործուղումների մասին որոշումների ընդունման լիազորությունների հստակեցում** *1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը* Միջոցառման իրականացման հիմքեր՝ ՀՀ կառավարության 2021-26թթ. ծրագրի «6.10 Պետական ծախսեր» բաժնի 1-ին, 5-րդ և 6-րդ կետեր: Միջոցառումը նպատակն է Նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է պետական մարմինների գործառութային լիազորությունները հստակեցնելու, պաշտոնական փաստաթղթաշրջանառության

	ծավալները օպտիմալացնելու և այդ նպատակով արտասահմանյան գործուղումների հետ կապված կարգավորումները վերանայելու անհրաժեշտությամբ: Նախատեսվում է կատարել փոփոխություններ և լրացումներ ՀՀ վարչապետի 2018 թվականի սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման մեջ և համապատասխանաբար հստակեցնել ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման կարգով գործուղման ծախսերի հատուցման ընթացակարգերը:: *1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները* • ՀՀ պետական բյուջեով արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին իրականացվող գործուղումների ծախսերի ֆինանսավորումն իրականացվում է ՀՀ պետական բյուջեում առանձին տողով արտացոլվող կենտրոնացված ֆոնդի՝ 1185 ծրագրի 11002՝ Արտասահմանյան պաշտոնական գործուղումներ միջոցառման գծով նախատեսված միջոցների հաշվին: • Ինչպես պետական կառավարման համակարգի մարմինների ղեկավարների և նրանց տեղակալների, այնպես էլ պետական բյուջեի հաշվին իրականացվող բոլոր գործուղումները իրականացվում են ՀՀ վարչապետի որոշումներով: ՀՀ վարչապետի որոշման նախագծերը սահմանված կարգով շրջանառվում են և դրանց վերաբերյալ կարծիքներ են տրամադրվում ՀՀ արտաքին գործերի և ՀՀ ֆինանսների նախարարությունների կողմից: • Բոլոր գործուղումների դեպքում գործուղումից վերադառնալուց հետո ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվում գործուղման արդյունքների մասին հաշվետվությունը, որը հրապարակվում է ՀՀ կառավարության պաշտոնական կայքէջում: *1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները* • Նախատեսում է ՀՀ պետական բյուջեում առանձին միջոցառման տեսքով կենտրոնացված ֆոնդի միջոցները բաշխել ըստ մարմինների և դրանք նախատեսել հանրային իշխանության մարմինների պահպանման ծախսերում, այնպես որ ցանկացած մարմնի պաշտոնյայի արտասահմանյան գործուղումն իրականացվի տվյալ մարմնի ղեկավարի որոշմամբ, իսկ ծախսերի ֆինանսավորումն իրականացվի տվյալ մարմնի պահպանման ծախսերում արտասահմանյան գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին: • ՀՀ վարչապետի որոշմամբ կիրականացվեն միայն փոխվարչապետերի, պետական կառավարման համակարգի մարմինների ղեկավարների (բացառությամբ կառավարությանը ենթակա տեսչական մարմինների և նախարարությանը ենթակա մարմինների ղեկավարների) գործուղումները: Մնացած բոլոր դեպքերում գործուղումների մասին համապատասխան իրավական ակտերը կընդունվեն համապատասխան մարմնի ղեկավարի կողմից: • ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվում միայն վարչապետի որոշմամբ գործուղման արդյունքների մասին հաշվետվությունը: • Մնացած բոլոր դեպքերում համապատասխան մարմնին են ներկայացվում գործուղման արդյունքների մասին և գործուղման ծախսերի վերջնահաշվարկի մասին հաշվետվությունները, որոնք համապատասխանաբար հրապարակվում են համապատասխան մարմինների կայքերում: • Արտասահմանյան գործուղումների հետ կապված ծախսերի հատուցման նպատակով գործուղումից վերադառնալուց հետո ֆինանսների նախարարություն է ներկայացվում գործուղման ծախսերի վերջնահաշվարկի մասին հաշվետվությունը: Դրանք հաշվառվում և ամփոփվում են ՀՀ ֆինանսների նախարարության կողմից և ամփոփ հաշվետվությունները ըստ եռամսյակների և ըստ բյուջետային գլխավոր կարգադրիչների արտացոլվում են ՀՀ ֆինանսների նախարարության կայքէջում, ինչպես նաև ներկայացվում են ՀՀ վարչապետի աշխատակազմ՝ ի տնօրինություն: *2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը* • Արտասահմանյան գործուղումների կարգը կպարզեցվի և կհստակեցվեն որոշումների ընդունման լիազորությունները, կկրճատվի պաշտոնական փաստաթղթաշրջանառության ծավալը, ՀՀ վարչապետի կողմից ընդունվող որոշումների քանակը: Գործուղումները կիրականացվեն համապատասխան մարմնի ղեկավարի որոշմամբ, բացառությամբ պետական կառավարման համակարգի մարիների ղեկավարների, որոնց գործուղումը կիրականացվի ՀՀ վարչապետի որոշմամբ: • Արտասահմանյան գործուղումների ծախսերը ներառվելու են ՀՀ պետական բյուջեով նախատեսվող հանրային իշխանության մարմինների պահպանման ծախսերում և կհատուցվեն այդ միջոցների հաշվին: Յուրաքանչյուր մարմնի կայքէջում կիրապարակվեն տվյալ մարմնի ղեկավարի որոշմամբ իրականացված գործուղումների արդյունքների մասին, ինչպես նաև ծախսերի վերջնահաշվարկի մասին հաշվետվությունները:
6.	**6. ՀՀ բյուջետային օրենսդրության լրամշակում**

	1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման իրականացման հիմքեր՝ ՀՀ կառավարության 2021-26թթ. ծրագրի «6.10 Պետական ծախսեր» բաժնի 1-ին, 5-րդ և 6-րդ կետեր, «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածի 17-րդ կետ, ՊՖԿՀԲ 2019-2023թթ. ռազմավարություն, ՀՀ վարչապետի 11.06.2018թ.-ի «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 743-Լ որոշում, ինչպես նաև «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական ծրագիր: Միջոցառման նպատակն է ուսումնասիրել բյուջետային համակարգի մասին օրենքը, բացահայտել և վեր հանել առկա խնդիրները, որոնք առաջացել են կամ կարող են առաջանակ օրենքում՝ պայմանավորված ներկայումս հանրային ֆինանսների բնագավառում իրականացվող արագընթաց փոփոխություններով և դրանում կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ: *1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները* Ներկայումս բյուջետային համակարգի տարբեր մակարդակներում, ինչպես նաև բյուջետային գործընթացի տարբեր փուլերում իրականացվում են բազմաթիվ բարեփոխումներ, որոնք կիրառման ընթացքում պահանջում են արդիական կարգավորումներ, որոնք էլ տանում են բյուջետային օրենսդրությամբ սահմանված կարգավորումների բարեփոխումների անհրաժեշտության: *1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները* • ՀՀ բյուջետային օրենսդրության ուսումնասիրություն • ՀՀ բյուջետային օրենսդրության առկա լուծումներ պահանջող խնդիրների վերհանում • ՀՀ բյուջետային օրենսդրության լրամշակման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում: *2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը* Սույն միջոցառման ակնկալվող արդյունքը հանրային հատվածում իրականացվող բարեփոխումներին համընթաց ՀՀ բյուջետային օրենսդրության լրամշակումն է՝ ըստ անհրաժեշտության:
7.	**7. Գնումների համակարգի զարգացման առաջնահերթ ուղղությունների և միջոցառումների ծրագրի սահմանում** *1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը* Միջոցառման իրականացման հիմքեր՝ ՀՀ կառավարության 2021-26թթ. ծրագրի «6.10 Պետական ծախսեր» բաժնի 7-րդ կետ, «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածի 17-րդ կետ, ՀՀ վարչապետի 11.06.2018թ.-ի «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 743-Լ որոշում: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է գնումների համակարգը բարելավելու նպատակով ՀՀ վարչապետի կողմից տրված հանձնարարականի կատարումից և նպատակ է հետապնդում կառավարության կողմից հաստատված համակարգի զարգացման հայեցակարգի հիման վրա նախաձեռնել համակարգի բարելման աշխատանքները: *1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները* Վեր են հանվել գնումների համակարգի խնդիրները, որոնք հիմնականում պայմանավորված են ինչպես գնումների գործընթացում ներգրավված անձանց կարողությունների շարունակական զարգացման, այնպես էլ ընթացակարգերի ամբողջական թվայնացման, ընթացակարգերի կազմակերպման ժամկետների հնարավորին կրճատման, տեխնիկական բնութագրերում կիրառվող ստանդարտների վերանայման հետ: *1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները* Կառավարության կողմից հաստատված գնումների համակարգի զարգացման հայեցակարգի և միջոցառումների ծրագրի հիման վրա ապահովել համակարգի հետագա զարգացումը և բարելավումների իրականացումը *2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը* Թափանցիկ և արդյունավետ գործող գնումների համակարգ:
8.	**8. Էլեկտրոնային գնումների նոր համակարգի ներդրում**

	1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման իրականացման հիմքեր՝ ՀՀ կառավարության 2021-26թթ. ծրագրի «6.10 Պետական ծախսեր» բաժնի 7-րդ կետ, ՊՖԿՀԲ 2019-2023թթ. ռազմավարություն, «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածի 17-րդ կետ, ՀՀ վարչապետի 11.06.2018թ.-ի «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 743-Լ որոշում: Միջոցառման նպատակն է ներդնել արդի պահանջներին համապատասխանող էլեկտրոնային գնումների նոր համակարգ, որը կինտեգրվի գնումների հետ փոխկապակցված այլ էլեկտրոնային համակարգերի հետ: Միաժամանակ հնարավորություն կստեղծվի ընդլայնել համակարգը շահագործող պատվիրատուների շրջանակը՝ այն հասցնելով 100%-ի: *1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները* Էլեկտրոնային մրցույթների համակարգի ծրագրային ապահովման շահագործումը սկսվել է 2012թ-ից: Համակարգը ի սկզբանե նախատեսված է եղել օգտագործել միայն պետական մարմինների կողմից մրցույթով գնումների կատարման ժամանակ: Գնումների համակարգում իրականացվող շարունակական բարեփոխումների ենթատեքստում ընդլայնվել է ինչպես համակարգը օգտագործող պատվիրատուների շրջանակը (շուրջ 300 պատվիրատու), այնպես էլ կիրառվող գնման ձևերի քանակը: Ներկա պահին նախատեսված թվով 4 գնման ձևերից 3-ը՝ մրցույթ, գնանշման հարցում և հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձի գնումներ, իրականացվում են այդ համակարգի միջոցով: Սակայն պետք է փաստել, որ նշված համակարգը հնարավոր չէ ֆունկցիոնալ առումով ամբողջությամբ համապատասխանեցնել գործող օրենսդրությանը և դրանում բարելավումներ իրականացնելու նպատակով կատարվող փոփոխություններին: Մասնավորապես որոշակի բովանդակային գործողություններ շարունակում են իրականացվել մարդկային միջամտությամբ, ինչը հանգեցնում է ինչպես լրացուցիչ ռեսուրսների օգտագործման, այնպես էլ այդ գործողությունների արդյունքում տեխնիկական սխալների: Հնարավոր չէ նաև ապահովել համակարգում առկա տեղեկատվության ամբողջական տեղափոխումը կամ հրապարակումը պայմանագրերի կառավարման և գնումների հաշվետվողականության մոդուլներում, ծախսատար է համակարգի տեխնիկական սպասարկումը և դրանում անհրաժեշտության դեպքում փոփոխություններ կատարելը, ինչի նաև պայմանավորված է համակարգի հնացած ծրագրային հենք ունենալու հանգամանքով: *1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները* • Էլեկտրոնային գնումների համակարգը շահագործող պատվիրատուների ընդլայնում • Գնման ընթացակարգերի ամբողջական ավտոմատացում • Ավտոմատ եղանակով ստացված ամբողջական տվյալներ • Համակարգի ամբողջական ինտեգրում գնման ընթացակարգերի կազմակերման հետ ուղղակիորեն կապ ունեցող այլ համակարգերի հետ *2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը* Արդի պահանջներին համապատասխանող էլեկտրոնային գնումների համակարգ:
9.	**9. Պայմանագրի արդյունքի դիմաց վճարումների կատարման ժամկետների նվազեցում** *1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը* Միջոցառման իրականացման հիմքեր՝ ՀՀ կառավարության 2021-26թթ. ծրագրի «6.10 Պետական ծախսեր» բաժնի 7-րդ կետ, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական ծրագրի դրույթներից, «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածի 17-րդ կետ, ՀՀ վարչապետի 11.06.2018թ.-ի «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 743-Լ որոշում: Միջոցառումը նպատակ է հետապնդում կնքված պայմանագրի շրջանակում ընդունված արդյունքի դիմաց վճարումները կատարել հանձնման-ընդունման արձանագրությունը հաստատվելուց հետո 5 օրվա ընթացքում՝ հաշվի առնելով բյուջետային ծախսերի կատարման եռամսյակային համամասնությունները: *1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները* Գործող կարգավորման համաձայն վճարումները կատարվում են պայմանագրով նախատեսված ամսվա վերջին երեք օրվա ընթացքում: *1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները*

	Մշակել համապատասխան իրավական ակտի նախագիծ, որի հաստատման դեպքում ընդունված արդյունքի դիմաց վճարումները կտրամադրվեն առավելագույնը 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ հաշվի առնելով բյուջեի ծախսերի եռամսյակային համամասնությունները: Վերջինս հնարավորություն կտա ընկերություններին ճիշտ պլանավորել իրենց ֆինանսական գործարքները՝ հաշվի առնելով ֆինանսական կանխատեսելիության մակարդակի աճը: *2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը* Նվազեցնել գնման պայմանագրերով նախատեսված վճարումների կատարման ժամկետները:
10.	**10. Գնումների գործընթացում ներգրավված և որոշումներ կայացնող անձանց կարողությունների շարունակական զարգացում** *1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը* Միջոցառման իրականացման հիմքեր՝ ՀՀ վարչապետի 25/08/2022թ. N 977-Լ որոշմամբ հաստատված հայեցակարգ: Միջոցառումը նպատակն է գնումների գործընթացում ներգրավված և որոշումներ կայացնող անձանց կարողությունների շարունակական զարգացումը: *1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները* Գնումների համակարգում գործում են շուրջ 1500 որակավորված մասնագետներ և տարեկան կազմակերպվում է շուրջ 100.000 գնման գործընթաց: Գնումների մասնագետների վերապատրաստման և որակավորման համակարգը ներդրվել է 2017 թվականից, մասնավորապես՝ որակավորման շնորհման գործընթացը կազմակերպվում է էլեկտրոնային եղանակով իրականացվող թեսթավորման միջոցով: Որակավորված անձինք յուրաքանչյուր երեք տարին մեկ առնվազն 12 ժամ պարտադիր անցնում են շարունակական մասնագիտական վերապատրաստման կուրս՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից սահմանված ծրագրով: Ֆինանսների նախարարության կողմից 2019-2021 թթ. պետական կառավարման մարմիններից հավաքագրված տեղեկատվության ուսումնասիրության արդյունքում բացահայտվել է, որ նշված ժամանակահատվածում պայմանագրերի միակողմանի դադարեցման հավանականությունը կազմում է 0.57%, ավելին՝ պայմանագրի միակողմանի դադարեցման արդյունքում ապահովման միջոց «գանձվել է» միայն 10 դեպքում (այսինքն՝ փաստացի միջոց գանձելու հավանականությունը կազմում է 0.07%): Առկա է այս իրողության բացատրության 2 տարբերակ՝ ա. գնումների համակարգը գործում է անթերի՝ ապահովելով պահանջված որակի ծառայությունների, աշխատանքների և ապրանքների մատակարարում հանրությանը, բ. գնումների համակարգում առկա է առաջադրանքների մշակման և վերջիններիս հիման վրա պայմանագրերի կառավարման կրիտիկական խնդիր: 2021 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու վերջիններիս ենթակա միավորների հետ տեղի ունեցած քննարկումների արդյունքներով կարելի է եզրակացնել, որ գնումների գործող համակարգը բավարար չափով ճկուն է մրցութային գործընթացների կազմակերպման տեսանկյունից: Սակայն վերոնշյալ ցուցանիշները, ինչպես նաև քննարկումների ընթացքում բարձրացված խնդիրները հուշում են, որ պլանավորման և պայմանագրերի կառավարման փուլերում առկա են խորքային խնդիրներ: *1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները* Կարիքների գնահատման միջոցով նախաձեռնել վերապատրաստման ծրագրերի հաստատում և իրականացում *2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը* Գնումների գործընթացում ներգրավված և որոշումներ կայացնող անձիք ունեն բավարար գիտելիքներ գնումների պլանավորման, ընթացակարգերի կազմակերպման և պայմանագրերի կառավարման գործընթացները պատշաճ կազմակերպելու համար:
11.	**11. Գնման գործընթացների վերաբերյալ մեթոդական աջակցության տրամադրման գործիքակազմի բարելավում** *1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը*

	Միջոցառման իրականացման հիմքեր՝ ՀՀ վարչապետի 25/08/2022թ. N 977-Լ որոշմամբ հաստատված հայեցակարգ: Միջոցառումը նպատակն է՝ գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակել պատվիրատուներից և մասնակիցներից հաճախ ստացվող հարցերը և դրանց վերաբերյալ տրամադրված պարզաբանումները: *1.1. <u>կարգավորմանշտոնական հայեցակարգ:-Լությունը և նպատակը տրամադրմ</u>* Հաճախ տրվող հարցերը և պարզաբանումները չեն հրապարակվում, ինչը հանգեցնում է Ֆինանսների նախարարություն ուղղվող պարզաբանումների քանակի և խորհրդատվական բնույթ կրող հարցադրումների ծավալների մեծացման *1.2. <u>առկախ տրվող հարցերը և պարզաբանումները</u>* Գնումների պաշտոնական տեղեկագրում առանձին բաժնով հաճախ տրվող հարցերի և պարզաբանումների հրապարակում՝ հաճախ հանդիպող խնդիրների և դրանց լուծման տարբերակների վերաբերյալ տեղեկատվության հասանելիության աճ *<u>2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը</u>* Ֆինանսների նախարարություն ուղղվող պարզաբանումների քանակի և խորհրդատվական բնույթ կրող հարցադրումների ծավալների նվազեցում:
12.	**12. Պետական կառավարման մարմիններին գնման գործընթացների մեթոդական աջակցության շրջանակում խորհրդատվության տրամադրում** *<u>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը</u>* Միջոցառման իրականացման հիմքեր՝ ՀՀ վարչապետի 25/08/2022թ. N 977-Լ որոշմամբ հաստատված հայեցակարգ: Միջոցառման նպատակն է՝ Ֆինանսների նախարարությունը շարունակելու է իրականացնել մեթոդական աջակցություն՝ կենտրոնանալով խորհրդատվության տրամադրման վրա, մասնավորապես՝ ռազմավարական նշանակություն ունեցող գործընթացների դեպքում: Ռազմավարական են համարվում այն գործընթացները, որոնց շրջանակներում մարմնի ղեկավարի կամ տեղակալի կողմից աջակցություն տրամադրելու վերաբերյալ դիմում է ներկայացվում նախարարություն:: *<u>1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները</u>* Մեթոդական առաջակցությունը հիմնականում իրականացվում է հարցադրումների վերաբերյալ պարզաբանումներ տրամադրելու միջոցով *<u>1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները</u>* Ֆինանսների նախարարությունը շարունակելու է իրականացնել մեթոդական աջակցություն՝ խորհրդատվության միջոցով: Սակայն խորհրդատվության տրամադրման գործառույթի իրականացումը չպետք է հանգեցնի գնումների պլանավորման, մրցույթի իրականացման կամ պայմանագրի կառավարման մեջ Ֆինանսների նախարարության ուղղակի ներգրավմանը, քանի որ դա կխափանի պետական կառավարման մարմինների անկախությունը՝ հանգեցնելով կարողությունների կորստի և կայացված որոշումների որակի վատթարացմանը: Ֆինանսների նախարարությունը կունենա խորհրդատուի դեր, սակայն վերջինիս կողմից տրամադրված խորհրդատվությանը հետևելու որոշումը, դրան համապատասխան գնման գործընթացի պատշաճ կազմակերպումը և արդյունքները շարունակելու են մնալ պատվիրատուների պատասխանատվության դաշտում: Միաժամանակ նախարարությունը հետևելու է ռազմավարական նշանակություն ունեցող գործընթացների ընթացքում ի հայտ եկող համակարգային խնդիրներին և առաջարկելու է համապատասխան լուծումներ: *<u>2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը</u>* Պատվիրատուների համար տեղեկատվության հասանելիության բարձրացման արդյունքում որոշումների կայացման արագության բարձրացում՝ գնումների գործընթացի առավել բարձր կառավարելիություն:
13.	**13. Գնման պայմանագրերի ոչ պատշաճ կատարման ռիսկերի նվազեցում** *<u>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը</u>* Միջոցառման իրականացման հիմքեր՝ ՀՀ վարչապետի 25/08/2022թ. N 977-Լ որոշմամբ հաստատված հայեցակարգ:

	Միջոցառումը նպատակն է՝ հնարավորինս ձևավորել կարիքների բավարարման անընդհատությունը ապահովող գործունակ համակարգ՝ հիմնված մասնակիցներին ներկայացվող ոչ հայեցողական չափորոշիչների վրա: *1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները* Մրցույթի փուլում չի գնահատվում մասնակիցների ծանրաբեռնվածության հանգամանքը, ինչպես նաև բոլոր մասնակիցների նկատմամբ սահմանվում են մասնակցության հետ կապված միանման պայմաններ: *1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները* Գնման պայմանագրերի ոչ պատշաճ դեպքերի ուսումնասիրության արդյունքներով ոչ հայեցողական չափորոշիչների վրա հիմնված մասնակիցների վարկանիշավորման և ծանրաբեռնվածությունը բացառող համակարգի ներդրում *2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը* Ոչ հայեցողական չափորոշիչների վրա հիմնված մասնակիցների վարկանիշավորման և ծանրաբեռնվածությունը բացառող համակարգի առկայություն:
14.	**14. Ներքին աուդիտի համակարգի ինստիտուցիոնալ վերափոխման տեսլականի և ճանապարհային քարտեզի սահմանում** *1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը* Միջոցառման իրականացման հիմքեր՝ ՀՀ կառավարության 2021-26թթ. ծրագրի «6.10 Պետական ծախսեր» բաժնի 1-ին կետ, «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածի 17-րդ կետ, ՀՀ վարչապետի 11.06.2018թ.-ի «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը կանոնադրությունը հաստատելու մասին» N 743-Լ որոշում: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ներքին աուդիտի համակարգը բարելավելու նպատակով ՀՀ վարչապետի կողմից տրված հանձնարարականի կատարումից և նպատակ է հետապնդում կառավարության կողմից հաստատված տեսլականի հիման վրա իրականացնել համակագի ինստիտուցիոնալ վերափոխում: *1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները* Վեր են հանվում ներքին աուդիտի համակարգի խնդիրները, որոնց նախնական վերլուծությունը ցույց է տալիս, որ խնդիրները հիմնականում պայմանավորված են համակարգի ինիստուցիոնալ կառուցակարգի և գործընթացում ներգրավված անձանց ոչ բավարար կարողություններ ունենալու հետ: *1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները* Ներքին աուդիտի տեսլականի սահմանում՝ հիմնված կենտրոնացված և ապակենտրոնացված, արտապատվիրակման և ներքին կարողությունների զարգացման համակարգային այլընտրանքների միջև ընտրության վրա: Ճանապարհային քարտեզի հիման վրա գործուն ներքին աուդիտի համակարգի կայացմանն ուղղված ինսիտուցիոնալ վերափոխման միջոցառումների իրականացում: *2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը* Արդյունավետ գործող ներքին աուդիտի համակարգ:
15.	**15. «Ցածր արդյունավետություն ունեցող և հասցեականություն չունեցող հարկային արտոնությունների կրճատում» միջոցառում** 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման իրականացման հիմքեր՝ ՀՀ կառավարության 2021-26թթ. ծրագրի «6.8 Հարկաբյուջետային քաղաքականություն» բաժնի 3-րդ կետ, «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածի 17-րդ կետ, ՀՀ վարչապետի 11.06.2018թ.-ի «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը կանոնադրությունը հաստատելու մասին» N 743-Լ որոշում: Միջոցառման իրականացումը պայմանավորված է ցածր արդյունավետություն ունեցող և հասցեականություն չունեցող հարկային արտոնությունները կրճատելու անհրաժեշտությամբ: 1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Ներկայումս գոյություն ունեն մի շարք հարկային արտոնություններ, որոնց կիրառության պայմաններում շատ դեպքերում կորում է նախապես որոշված շահառուների շրջանակի կառավարելիության հանգամանքը, ինչով

	պայմանավորված հնարավոր չի լինում ապահովել նաև արտոնությունների կիրառության արդյունքում շահառուների ստացած օգուտների ու պետության կրած կորուստների համադրելիությունը: 1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները ՀՀ կառավարության նշյալ միջոցառմամբ նախատեսվում է մշակել և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել ցածր արդյունավետություն ունեցող և հասցեականություն չունեցող հարկային արտոնությունների կրճատմանն ուղղված օրենքի նախագիծ: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքն է բավարար հասցեականություն և արդյունավետություն չունեցող հարկային արտոնությունների կրճատումը:
16.	**16. «Հարկման տարբեր համակարգերի միջև համադրելի և արդարացի հարկային բեռի սահմանում» միջոցառում** 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման իրականացման հիմքեր՝ ՀՀ կառավարության 2021-26թթ. ծրագրի «6.8 Հարկաբյուջետային քաղաքականություն» բաժնի 4-րդ կետ, «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածի 17-րդ կետ, ՀՀ վարչապետի 11.06.2018թ.-ի «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 743-Լ որոշում: Միջոցառման իրականացումը պայմանավորված է հարկման տարբեր համակարգերի միջև համադրելի և արդարացի հարկային բեռի սահմանման անհրաժեշտությամբ: 1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Ներկայումս առկա են մի շարք դեպքեր, երբ տնտեսավարող սուբյեկտները հարկերի վճարումից խուսափելու նպատակով արհեստականորեն տեղավորվում են ստորին մակարդակում գտնվող հարկման համակարգերում, ինչպես նաև լինում են դեպքեր, երբ հարկման տարբեր համակարգերի միջև արհեստական գործարքների իրականացմամբ առաջանում են հարկային պլանավորման և գործարքների փաստաթղթավորման շղթայի ամբողջականության խաթարման ռիսկեր: 1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները ՀՀ կառավարության նշյալ միջոցառմամբ նախատեսվում է մշակել և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել հարկման տարբեր համակարգերի միջև համադրելի և արդարացի հարկային բեռի սահմանմանն ուղղված օրենքի նախագիծ: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է ապահովել հարկման համակարգում հարկային բեռի արդարացի և հավասար բաշխում, և նվազեցնել ստորին մակարդակում գտնվող հարկման համակարգերում արհեստականորեն տեղավորվելու և այդ կերպ հարկերի վճարումից խուսափելու, հարկման տարբեր համակարգերի միջև արհեստական գործարքների իրականացմամբ հարկային պլանավորման և գործարքների փաստաթղթավորման շղթայի ամբողջականության խաթարման ռիսկերը:
17.	**17. «ԱԱՀ վճարողների կողմից ապրանքների ներմուծման գործարքների մասով ԱԱՀ-ի չեղարկում» միջոցառում** 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման իրականացման հիմքեր՝ ՀՀ կառավարության 2021-26թթ. ծրագրի «6.8 Հարկաբյուջետային քաղաքականություն» բաժնի 2-րդ կետ, «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածի 17-րդ կետ, ՀՀ վարչապետի 11.06.2018թ.-ի «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 743-Լ որոշում: Միջոցառման իրականացումը պայմանավորված է ԱԱՀ վճարողների կողմից ապրանքների ներմուծման գործարքների մասով ԱԱՀ-ն չեղարկելու անհրաժեշտությամբ: 1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

	Ներկայումս ԱԱՀ վճարողների կողմից ապրանքների ներմուծման գործարքների մասով գանձվում է ԱԱՀ, ինչով պայմանավորված երբեմն վերջիններիս մոտ առաջանում են ազատ շրջանառու միջոցների ապահովման հետ կապված դժվարություններ: 1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները ՀՀ կառավարության նշյալ միջոցառմամբ նախատեսվում է մշակել և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել ԱԱՀ վճարողների կողմից ապրանքների ներմուծման գործարքների մասով ԱԱՀ-ի չեղարկման օրենքի նախագիծ՝ նպատակ ունենալով ԱԱՀ վճարողների համար հավելյալ ռեսուրսների ձևավորման միջոցով ձևավորել բարենպաստ ձեռնարկատիրական միջավայր: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքներն են ԱԱՀ վճարողների կողմից ապրանքների ներմուծման գործարքների մասով ԱԱՀ-ի չեղարկումը և ԱԱՀ վճարողների համար հավելյալ ռեսուրսների ձևավորման միջոցով բարենպաստ ձեռնարկատիրական միջավայրի ձևավորումը:
18.	**18. «Կապիտալի շուկայի զարգացման նպատակով հարկման կարգավորումների վերանայում» միջոցառում** 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման իրականացման հիմքեր՝ ՀՀ կառավարության 2021-26թթ. ծրագրի «6.8 Հարկաբյուջետային քաղաքականություն» բաժնի 5-րդ կետ, «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածի 17-րդ կետ, ՀՀ վարչապետի 11.06.2018թ.-ի «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 743-Լ որոշում: Միջոցառման իրականացումը պայմանավորված է կապիտալի շուկայի զարգացմանը խոչընդոտող հարկային կարգավորումները վերանայելու անհրաժեշտությամբ: 1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Ներկայումս առկա են կապիտալի շուկայում կատարվող գործարքների հարկմանն առնչվող որոշ կարգավորումներ, որոնցով պայմանավորված՝ պոտենցիալ թողարկողների և ներդրողների համար որոշակիորեն նվազում է արժեթղթերից ստացվող եկամուտների և կորպորատիվ շահույթի նկատմամբ կիրառելի հարկային կարգավորումների կանխատեսելիությունը: 1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Նախատեսվում է մշակել և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել շահաբաժինների և տոկոսային եկամուտների համար եկամտային հարկի և շահութահարկի հարկման հանրագումարային բեռի առնչությամբ երկարաժամկետ քաղաքականության որոշմանն ուղղված օրենքի նախագիծ՝ նպատակ ունենալով բարձրացնել պոտենցիալ թողարկողների և ներդրողների համար արժեթղթերից ստացվող եկամուտների և կորպորատիվ շահույթի նկատմամբ կիրառելի հարկային կարգավորումների կանխատեսելիությունը: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքներն են կապիտալի շուկայի զարգացմանը խոչընդոտող հարկային կարգավորումների վերանայումը և կապիտալի շուկա մուտք գործելու հարկային խթանների կանխատեսելիության ապահովումը:
19.	**19. «Տնտեսական շարժառիթների հիման վրա գործող՝ եկամուտների հայտարարագրման համակարգի ներդրում» միջոցառում** 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման իրականացման հիմքեր՝ ՀՀ կառավարության 2021-26թթ. ծրագրի «6.8 Հարկաբյուջետային քաղաքականություն» բաժնի 7-րդ կետ, «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածի 17-րդ կետ, ՀՀ վարչապետի 11.06.2018թ.-ի «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 743-Լ որոշում: Միջոցառման իրականացումը պայմանավորված է տնտեսական շարժառիթների հիման վրա գործող՝ եկամուտների հայտարարագրման համակարգ ներդնելու անհրաժեշտությամբ: 1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

	2020 թվականի հունվարի 1-ից ՀՀ-ում եկամտային հարկի հաստատուն դրույքաչափերի ներդրմամբ պայմանավորված, ըստ էության, վերացել է եկամտային հարկի համակարգի որոշակի պրոգրեսիվությունը: Միևնույն ժամանակ, ներկայումս առկա են ֆիզիկական անձանց կողմից ստացվող՝ հարկման ենթակա, սակայն հարկային գործակալի և համապատասխան գործուն մեխանիզմների բացակայության պատճառով փաստացի չհարկվող եկամուտներ, ինչը խաթարում է հարկման հավասարության ու արդարության սկզբունքները: 1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները ՀՀ կառավարության նշյալ միջոցառմամբ նախատեսվում է մշակել և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել տնտեսական շարժառիթների հիման վրա գործող՝ եկամուտների հայտարարագրման համակարգի ներդրմանն ուղղված օրենքի նախագիծ: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքներն են եկամուտների հայտարարագրման համակարգի կիրառության միջոցով «սոցիալական կրեդիտների» համակարգի ներդրում՝ նպատակ ունենալով ֆիզիկական անձանց հնարավորություն ընձեռել կոնկրետ սոցիալական, կրթական, առողջապահական և (կամ) բնակարանային ապահովման խնդիրների լուծման նպատակով կատարված և սահմանված կարգով փաստաթղթերով հիմնավորված ծախսերը հարկման նպատակով նվազեցնել հարկման բազայից՝ դրանով իսկ ֆիզիկական անձանց եկամուտների հարկման համակարգին հաղորդելով պրոգրեսիվություն, ինչպես նաև կատարելագործելով և արդիականացնելով ֆիզիկական անձանց եկամուտների հարկման ընթացակարգերը:
20.	**20. «Ակցիզային հարկի դրույքաչափերի բարձրացում» միջոցառում** 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման իրականացման հիմքեր՝ ՀՀ կառավարության 2021-26թթ. ծրագրի «6.8 Հարկաբյուջետային քաղաքականություն» բաժին, «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածի 17-րդ կետ, ՀՀ վարչապետի 11.06.2018թ.-ի «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 743-Լ որոշում: Միջոցառման իրականացումը պայմանավորված է այն հանգամանքով, որ Կառավարությունը վերջին տարիներին իրականացնում է ծեռնարկատիրության հարկերի նվազեցման և փոխարենը՝ սպառման հարկերի բարձրացման քաղաքականություն: Մյուս կողմից, Եվրասիական տնտեսական միությունում ընթանում է ակցիզային հարկով հարկվող որոշ ապրանքների (ծխախոտի արտադրանք, ալկոհոլային խմիչքներ) համար նախատեսված դրույքաչափերի ներդաշնակեցման շարունակական գործընթաց, որի համատեքստում նույնպես ենթադրվում է ակցիզային հարկի դրույքաչափերի բարձրացում: Բացի այդ, ակցիզային հարկի դրույքաչափերի բարձրացումը համահունչ է նաև Կառավարության հայտարարած՝ ծրագրային ժամանակահատվածում հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը առնվազն 25 տոկոսի հասցնելու նպատակադրման հետ: 1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Հարկային օրենսգրքով սահմանված ակցիզային հարկերի դրույքաչափերի բարձրացման ժամանակացույցն ավարտվում է 2024 թվականի հունվարի 1-ին և անհրաժեշտ է սահմանել այդ դրույքաչափերը վերանայելու նոր ժամանակացույց: Վերջինս կարևոր է նաև ակցիզային հարկով հարկվող ապրանքներ արտադրող և ներմուծող տնտեսավարող սուբյեկտների համար կանխատեսելի հարկային միջավայր ձևավորելու տեսանկյունից: Մյուս կողմից, խնդիրն այն է, որ ներկայումս կիրառվում են ակցիզային հարկի միայն հաստատուն դրույքաչափեր, ինչը նշանակում է, որ գնաճային երևույթների և միջին աշխատավարձերի տարեցտարի բարձրացման պարագայում ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների գների կառուցվածքում, այլ հավասար պայմաններում, ակցիզային հարկի տեսակարար կշիռը նվազում է: 1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները ՀՀ կառավարության նշյալ միջոցառմամբ նախատեսվում է մշակել և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել ակցիզային հարկի դրույքաչափերի բարձրացմանն ուղղված օրենքի նախագիծ, ինչպես նաև քննարկել ակցիզային հարկով հարկվող ապրանքների ցանկն ընդլայնելու նպատակահարմարությունը: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Միջոցառման իրականացումից ակնկալվում է ակցիզային հարկի դրույքաչափերի բարձրացմամբ ապահովել պետական բյուջեի լրացուցիչ հարկային եկամուտներ:

21.	**21. «Շրջանառության հարկի և միկրոձեռնարկատիրության համակարգերի շարունակական կատարելագործում» միջոցառում** 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման իրականացման հիմքեր՝ ՀՀ կառավարության 2021-26թթ. ծրագրի «6.8 Հարկաբյուջետային քաղաքականություն» բաժնի 4-րդ կետ, «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածի 17-րդ կետ, ՀՀ վարչապետի 11.06.2018թ.-ի «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 743-Լ որոշում: Միջոցառման իրականացումը պայմանավորված է շրջանառության հարկի համակարգի և հարկման ընդհանուր համակարգի միջև համադրելի և արդարացի հարկային բեռի սահմանման անհրաժեշտությամբ: Միաժամանակ, միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է գործունեության որոշ տեսակներ միկրոձեռնարկատիրության հարկման համակարգից դուրս բերելու անհրաժեշտությամբ: 1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Ներկայումս առկա են մի շարք դեպքեր, երբ ցածր հարկային բեռի պատճառով հարկ վճարողներն արհեստականորեն տեղավորվում են շրջանառության հարկի համակարգում, ինչպես նաև առկա են գործունեության որոշ տեսակներ, որոնց ներառումը միկրոձեռնարկատիրության արտոնյալ համակարգ չի բխում միկրոձեռնարկատիրության հարկման համակարգի ներդրման ընդհանուր նպատակադրումներից: 1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները ՀՀ կառավարության նշյալ միջոցառմամբ նախատեսվում է ուսումնասիրել շրջանառության հարկի համակարգում հարկային բեռի բարձրացման, ինչպես նաև միկրոձեռնարկատիրության համակարգից գործունեության որոշ տեսակների դուրս բերման հնարավորությունները և, ըստ անհրաժեշտության, ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել համապատասխան օրենքի նախագիծ: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է ապահովել հարկման համակարգերում հարկային բեռի արդարացի և հավասար բաշխում, և նվազեցնել ստորին մակարդակում գտնվող հարկման համակարգերում արհեստականորեն տեղավորվելու և այդ կերպ հարկերի վճարումից խուսափելու ռիսկերը:
22.	**22. «Կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերի աշխարհագրության ընդլայնում» միջոցառում** 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման իրականացման հիմքեր՝ ՀՀ կառավարության 2021-26թթ. ծրագրի «6.8 Հարկաբյուջետային քաղաքականություն» բաժնի 10-րդ կետ, «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածի 17-րդ կետ, ՀՀ վարչապետի 11.06.2018թ.-ի «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 743-Լ որոշում: 1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Ներկայումս տարբեր միջազգային կազմակերպությունների (հատկապես Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության) և միավորումների կողմից բավականին ակտիվ աշխատանքներ և քննարկումներ են իրականացվում՝ ուղղված միջազգային առևտրին վերաբերող կարգավորումների հստակեցմանը, տարբեր պետություններում ձևավորվող հարկման բազաների պաշտպանության ուղղությամբ համապատասխան կարգավորումների ձևավորմանը, հարկման բազաներին վերաբերող տեղեկատվության փոխանակման միասնական համակարգերի ներդրմանը: Խնդիրը կայանում է նրանում, որ անհրաժեշտություն է առաջացել ավելի ակտիվացնել միջազգային հարկային հարաբերություններում ՀՀ ներգրավվածությունը և ընդլայնել կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերի աշխարհագրությունը: 1.2.առկա խնդիրների առաջարկվող լուծումները Վերոնշյալ խնդրի լուծման նպատակով առաջարկվում է ակտիվ աշխատանքներ իրականացնել կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերի ցանցի ընդլայնման և արդիականացման ուղղությամբ: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է ապահովել միջազգային հարկային հարաբերություններում ՀՀ ներգրավվածությունը և ընդլայնել կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերի աշխարհագրությունը:

23.	**23. «Հարկային եկամուտների կառավարման ծրագիր մշակում» միջոցառում** 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման իրականացման հիմքեր՝ ՀՀ կառավարության 2021-26թթ. ծրագրի «6.8 Հարկաբյուջետային քաղաքականություն» բաժին, «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածի 17-րդ կետ, ՀՀ վարչապետի 11.06.2018թ.-ի «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 743-Լ որոշում: Միջոցառման իրականացումը պայմանավորված է հարկեր/ՀՆԱ ցուցանիշի աճն ապահովող՝ հարկային եկամուտների կառավարման համապարփակ ծրագիր ունենալու անհրաժեշտությամբ: 1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Ներկայումս հարկային եկամուտների աճն ապահովող միջոցառումները սահմանված են տարբեր փաստաթղթերով (Պետական ֆինանսների կառավարման համակարգի 2019-2023 թվականների բարե-փոխումների ռազմավարություն, Հարկային բարեփոխումների հայեցակարգ, ՀՀ վարչապետի 2020 թվականի դեկտեմբերի 30-ի «Հարկային քաղաքականության ճեղքի կրճատմանն ուղղված միջոցառումները հաստատելու մասին» N 1455-Լ որոշում): 1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները ՀՀ կառավարության նշյալ միջոցառմամբ նախատեսվում է ՀՀ կառավարության ծրագրով ամրագրված ծրագրային դրույթներին համապատասխան լրամշակել և նորովի ներկայացնել տարբեր փաստաթղթերով հաստատված՝ հարկային եկամուտների աճն ապահովող միջոցառումները և դրանք մեկտեղել մեկ փաստաթղթում: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքներն են. սահմանել առաջիկա տարիների ընթացքում Հարկեր/ՀՆԱ ցուցանիշի աճն ապահովող միջոցառումները:
24.	**24. «Հարկային ծախսերի արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրի մշակում» միջոցառում** 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման իրականացման հիմքեր՝ ՀՀ կառավարության 2021-26թթ. ծրագրի «6.8 Հարկաբյուջետային քաղաքականություն» բաժին, «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածի 17-րդ կետ, ՀՀ վարչապետի 11.06.2018թ.-ի «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 743-Լ որոշում: Միջոցառման իրականացումը պայմանավորված է հարկային ծախսերի արդյունավետությունը բարձրացնելու անհրաժեշտությամբ: 1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Ներկայումս գոյություն ունեն բավական լայն շրջանակի հարկային արտոնություններ, որոնց արդյունքում ձևավորվում են մեծ հարկային ծախսեր: Խնդիրն այն է, որ այդ հարկային արտոնությունների տրամադրումից ի վեր չեն գնահատվել դրանց կիրառության հասցեականությունն ու արդյունավետությունը: Ուստի, անհրաժեշտ է վերջիններիս գնահատմամբ որոշել այդ հարկային արտոնությունների հետագա կիրառության նպատակահարմարությունը, այդ թվում՝ արտոնությունների կիրառության արդյունքում շահառուների ստացած օգուտների ու պետության կրած կորուստների համադրելիության տեսանկյունից: 1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Նախատեսվում է մշակել և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել հարկային ծախսերի արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրի նախագիծ, որի շրջանակներում կքննարկվեն հարկային ծախսերի գոյություն ունեցող շրջանակը կրճատելու և դրա հաշվին հարկային ներուժը ավելացնելու հնարավորությունները: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը հարկային ծախսերի արդյունավետության բարձրացումը և հարկային ներուժի ավելացումն է:

25.	**25. «Հայաստանի Հանրապետության՝ որպես մեկ միասնական միավորի, համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստում» միջոցառում** *1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը* Միջոցառման իրականացման հիմքեր՝ ՀՀ կառավարության 2021-26թթ. ծրագրի «6.10 Պետական ծախսեր» բաժնի 1-ին կետ, «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածի 17-րդ կետ, ՊՖԿՀԲ 2019-2023թթ. ռազմավարություն, ՀՀ վարչապետի 11.06.2018թ.-ի «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 743-Լ որոշում: Միջոցառման իրականացումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության՝ որպես մեկ միասնական միավորի, համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման անհրաժեշտությամբ: *1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները* Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես վերահսկող կազմակերպություններ նախարարությունները 2023 թվականի հաշվետու տարվա և հետագա տարիների համար պետք է պատրաստեն համախմբված ֆինանսական հաշվետվություններ, որոնց միջոցով հնարավոր կլինի ստանալ ոլորտային ակտիվների, պարտավորությունների և ֆինանսական արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն: Միաժամանակ, նշված հաշվետվությունները հիմք կհանդիսանան ՀՀ՝ որպես մեկ տնտեսական միավորի 2024 թվականի հաշվետու տարվա և հետագա տարիների ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար: *1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները* Նախարարությունների և պետության մակարդակով համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով անհրաժեշտություն է առաջացել մշակել կամ ձեռք բերել համապատասխան միասնական հաշվապահական ծրագիր: Ընդ որում, ծրագիրը հանդիսանալու է Կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգի (GFMIS/ԿՖԿՏՀ) առանձին մոդուլ: *2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը* Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքներն են՝ պետության մակարդակով ֆինանսական հաշվետվությունների համախմբման համար անհրաժեշտ համակարգչային ծրագրի առկայությունը, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը:
26.	**26. Կառավարման տարբեր մակարդակներում պետական ֆինանսների կառավարման հետ կապված գործընթացների ավտոմատացում և գործարքների արդյունավետվության ու թափանցիկության ապահովում (Կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգի (GFMIS/ԿՖԿՏՀ-) ներդրում)** *1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը* Միջոցառման իրականացման հիմքեր՝ ՀՀ կառավարության 2021-26թթ. ծրագրի «6.10 Պետական ծախսեր» բաժնի 1-ին կետ, «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածի 17-րդ կետ, ՊՖԿՀԲ 2019-2023թթ. ռազմավարություն, ՀՀ վարչապետի 11.06.2018թ.-ի «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 743-Լ որոշում: Պետական ֆինանսների կառավարման համակարգում բարեփոխումների իրականացման գործընթացում առանձնակի կարևորվում է կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգի (ԿՖԿՏՀ) ամբողջական ներդրման աշխատանքները: ԿՖԿՏՀ-ի ներդրման ընդհանուր նպատակն է պետական հատվածի կազմակերպությունների ամբողջական ֆինանսական տեղեկատվության համախմբման և փոխադարձ ինտեգրման միջոցով՝ պետական հատվածի բարեփոխումների և ֆինանսական համակարգի հաշվառման և հաշվետվողականության գործառույթների, ինչպես նաև հանրային ծառայությունների մատուցման արդյունավետության, որակի և թափանցիկության բարձրացմանն աջակցումը: *1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները* ԿՖԿՏՀ ստեղծման և ներդրման նախապատրաստական աշխատանքներին աջակցելու նպատակով Համաշխարհային բանկի կողմից ՌԴ կառավարության «Վստահության հիմնադրամի» միջոցների հաշվին տրամադրված TF 012529 դրամաշնորհի շրջանակում կազմակերպված մրցույթի արդյունքներով ընտրված խորհրդատվական կազմակերպության կողմից մշակվել և ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացվել

	ԿՖԿՏՀ-ի մանրամասն տեխնիկական և գործառութային բնութագիրը և դրա հիման վրա իրականացված անհրաժեշտ ֆինանսական միջոցների մանրամասն հաշվարկը: Հիշյալի շրջանակներում ԿՖԿՏՀ ստեղծման և ներդրման նախապատրաստական աշխատանքներին աջակցելու նպատակով Համաշխարհային բանկի կողմից Ռուսաստանի Դաշնության (ՌԴ) կառավարության «Վստահության հիմնադրամի» միջոցների հաշվին տրամադրված TF 012529 դրամաշնորհի շրջանակում կազմակերպված մրցույթի արդյունքներով ընտրված խորհրդատվական կազմակերպության կողմից, կնքված պայմանագրի շրջանակներում, մատուցվում են փուլային ծառայություններ: Մատուցված ծառայությունների արդյունքների ընդունման նպատակով նախարարությունում անցկացվում են քննարկումներ և բացի առկա ռեսուրսներից նախարարության կողմից փորձ է արվում նշված գործընթացին ներգրավել են նաև որոշ միջազգային կազմակերպությունների փորձագետների: Նշված գործոնները հաշվի առնելով պայմանագրով նախատեսված ժամանակացույցը ենթարկվել է որոշակի փոփոխությունների: *<u>1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները</u>* Միջոցառումների շրջանակներում նախատեսվում է վերանայել և ավարտական տեսքի բերել ԿՖԿՏՀ ծրագրի շրջանակներում մրցութային փաստաթղթերը: Կիրականացվի ԿՖԿՏՀ-ի մրցույթի իրականացման փաստաթղթերի ամբողջական փաթեթի կազմում, մրցույթի իրականացում: Կիրականացվի համակարգի փորձարարական թեստավորում (տվյալների փորձնական փոխակերպում և միգրացիա): Կձևավորվեն ԿՖԿՏՀ-ից օգտվողների խմբեր, կկազմվի ուսուցումների ծրագիր և ժամանակացույց, կիրականացվեն ԿՖԿՏՀ-ի օգտվողների ուսուցում: *<u>2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը</u>* ԿՖԿՏՀ-ն հնարավորություն կընձեռի պետական հատվածի բոլոր մակարդակներում արդյունավետ որոշումների կայացմանը, բարելավել ֆինանսական պլանավորման և կառավարման գործընթացները՝ տեղեկատվության և հաշվետվությունների ժամանակին գրանցման և ներկայացման միջոցով: Համակարգի ներդրման արդյունքում հնարավորություն կընձեռվի պետական կառավարման բոլոր մակարդակներում լիովին ավտոմատացնել և ինտեգրել պետական ֆինանսների կառավարման (այսուհետ՝ ՊՖԿ) գործընթացները, մասնավորապես. 1) բարձրացնել պետական միջոցների օգտագործման արդյունավետությունը, 2)բարելավել բյուջետային գործընթացները՝ ծրագրերի վրա հիմնված պետական բյուջեի կազմման միջոցով, 3)ամրապնդել ներքին հսկողությունը, 4)բարձրացնել ֆինանսական հաշվետվությունների որակը՝ մասնավորապես կառավարության ակտիվների և պարտավորությունների մասով, **5)** բարելավել վճարումների ու գնումների գործընթացները և այլն:
27.	**27. Պետական մասնակցությամբ ընկերությունների գործունեությունից բխող ֆիսկալ ռիսկերի կառավարման արդյունավետության բարելավում** *<u>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը</u>* Պետական մասնակցությամբ ընկերություններից բխող ֆիսկալ ռիսկերի կառավարման անհրաժեշտությունը բխում է վերջիններիս գործունեությանն առնչվող հնարավոր ռիսկերի և հանրային ֆինանսների վրա հնարավոր ազդեցության գնահատման և բյուջետային փաստաթղթերում ներառման պահանջից: Համաձայն Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) հետ կնքված Տնտեսական և ֆինանսական քաղաքականության հուշագրի՝ Ֆիսկալ ռիսկերի կառավարման վարչությունը, ԱՄՀ տեխնիկական աջակցությամբ, պետք է մշակի պետական մասնակցությամբ ընկերություններից բխող ֆիսկալ ռիսկերի կառավարման հայեցակարգ, ինչպես նաև ռազմավարական նշանակության ընկերությունների կենսունակության (դրանից բխող հաշվետվողականության) վերաբերյալ պահանջները ամփոփող կառավարության որոշման նախագծի առաջարկ: ***Միջոցառման նպատակն է*** պետական մասնակցությամբ ընկերություններից բխող ֆիսկալ ռիսկերի գնահատման և զսպման գործիքակազմի բարելավումը : *<u>1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները</u>* ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակվող բյուջետային փաստաթղթերում ներկայումս հրապարակվում է «ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ» բաժինը, որում տեղ է գտնում պետական մասնակցությամբ ընկերություններից բխող ֆիսկալ ռիսկերի գնահատականը: Այնուամենայնիվ, առկա են պետական մասնակցությամբ ընկերությունների

	գործունեության թափանցիկությանն ու հաշվետվողականությանն առնչվող խնդիրներ, որի բարելավումը թույլ կտա իրականացնել նշված ընկերությունների գործունեությանն առնչվող ֆիսկալ ռիսկերի պատշաճ գնահատում և բյուջետային փաստաթղթերում ինտեգրում: *1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները* ○ Պետական մասնակցությամբ ընկերությունների հաշվետվողականության նկատմամբ պահանջների հստակեցում և համապատասխան կառավարության որոշման նախագծի ներկայացում ○ Պետական մասնակցությամբ ընկերություններից բխող ֆիսկալ ռիսկերի գնահատման մոդելների բարելավում *2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը* Պետական մասնակցությամբ ընկերություններից բխող ֆիսկալ ռիսկերի գնահատման բարելավում:
28.	**28. Պետություն-մասնավոր գործընկերության (ՊՄԳ) պայմանագրերից բխող ֆիսկալ ռիսկերի գնահատման արդյունավետության բարելավում** *1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը* ՊՄԳ պայմանագրերից բխող ֆիսկալ ռիսկերի կառավարման անհրաժեշտությունը բխում է նշված ձևաչափով իրականացվող գործընկերությանն առնչվող կառավարության կողմից պայմանական և ուղղակի պարտավորությունների բացահայտման և հանրային ֆինանսների վրա հնարավոր ազդեցության գնահատման պահանջից: Համաձայն Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) հետ կնքված Տնտեսական և ֆինանսական քաղաքականության հուշագրի՝ անհրաժեշտ է իրականացնել ՊՄԳ ձևաչափով գործընկերությունների թափանցիկության, այդ թվում՝ ֆիսկալ ռիսկերի գնահատման բարելավում: ***Միջոցառման նպատակն է*** գործող և նոր դիտարկվող ՊՄԳ պայմանագրերից բխող պայմանական և ուղղակի պարտավորությունների գնահատման բարելավումը *1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները* ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակվող բյուջետային փաստաթղթերում ներկայումս հրապարակվում է «ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ» բաժինը, որում տեղ է գտնում Պետություն-մասնավոր գործընկերության (ՊՄԳ) ձևաչափով գործող պայմանագրերից բխող պայմանական պարտավորությունների վերլուծություն: Այնուամենայնիվ, պայմանագրերի վերլուծությունը և հնարավոր պայմանական պարտավորությունների գնահատումը ունի բարելավման կարիք՝ պայմանագրերի խորացված ուսումնասիրմամբ և հնարավոր շոկային իրավիճակների՝ պայմանական պարտավորությունների իրականանալու հավանականության գնահատման բարելավմամբ: *1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները* ○ ՊՄԳ ձևաչափով գործող պայմանագրերի խորացված ուսումնասիրություն ○ Մակրոտնտեսակնա և այլ գործոնների՝ պայմանագրային պարտավորությունների ի հայտ գալու հավանականությունների և ազդեցությունների գնահատման մոդելավորման բարելավում *2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը* ՊՄԳ պայմանագրերից բխող ֆիսկալ ռիսկերի գնահատման բարելավում:
29.	**29. Ֆինանսական համակարգից առաջացող ֆիսկալ ռիսկերի գնահատման արդյունավետության բարելավում** *1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը* Ֆինանսական հատվածից բխող ֆիսկալ ռիսկերի կառավարման անհրաժեշտությունը բխում է ֆինասնական հատվածում համակարգային և առանձնահատուկ ռիսկերի, ինչպես նաև «Կուտակային կենսաթոշակների մասին » օրենքի օրենքի Հոդված 44-ի 1-ին մասով ՀՀ կառավարության ստանձնած պայմանական պարտավորությունների՝ հանրային ֆինանսների վրա հնարավոր ազդեցության գնահատման պահանջից: ***Միջոցառման նպատակն է*** ֆինանսական հատվածից բխող ֆիսկալ ռիսկերի գնահատման բարելավումը, ինչպես նաև նշված համատեքստում այլ պետական գերատեսչությունների հետ համագործակցության ընդլայնումը:

	1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակվող բյուջետային փաստաթղթերում ներկայումս հրապարակվում է «ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ» բաժինը, որում տեղ է գտնում ֆինանսական համակարգից առաջացող ֆիսկալ ռիսկերի վերլուծությունը: Այնուամենայնիվ, նշված հատվածը գլխավորապես հիմնվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակվող «ֆինանսական կայունության հատվետվության» մեջ տեղ գտած դիտարկումների և փաստերի վրա: Անհրաժեշտ է այլ պետական գերատեսչությունների հետ համագործակցության ընդլայնում և ֆինանսական հատվածից բխող հնարավոր ռիսկերի՝ հանրային ֆինանսների վրա ազդեցության գնահատում: *1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները* ○ Ֆինանսական հատվածից բխող ռիսկերի՝ հանրային ֆինանսների վրա հնարավոր ազդեցության ճանապարհների հստակեցում ○ Պետական այլ գերատեսչությունների հետ համագործակցության ընդլայնում ○ Ֆինանսական կայունությանն առնչվող սթրես թեստերի իրականացում և հանրային ֆինասնների վրա ազդեցության գնահատում *2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը* Ֆինանսական հատվածից բխող ֆիսկալ ռիսկերի գնահատման բարելավում:
30.	**30. Երկարաժամկետ ֆիսկալ կայունությանն առնչվող ռիսկերի գնահատման բարելավում** *1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը* Երկարաժամկետ ֆիսկալ կայունությանն առնչվող ֆիսկալ ռիսկերի գնահատման անհրաժեշտությունը բխում է երկարաժամկետ կայուն տնտեսական աճին միտված հարկաբյուջետային քաղաքականության, ֆիսկալ կայունությանը սպառնացող հնարավոր աղբյուրների բացահայտման և հանրային ֆինսնաների վրա հնարավոր ազդեցության բացահայտման տրամաբանությունից: ***Միջոցառման նպատակն է*** երկարաժամկետ ֆիսկալ կայունության սահմանումը, գնահատումը և վերջինիս ուղղությամբ իրականացվող մոդելավորման ուղղությամբ աշխատանքների իրականացումը: *1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները* Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից հրապարակված Հարկաբյուջետային թափանցիկության օրենսգրքում (Fiscal Transparency Code) նշվում է, որ Ֆիսկալ ռիսկերի կառավարման համատեքստում կառավարությունները պարբերաբար պետք է հրապարակեն հանրային ֆինանսների երկարաժամկետ կանխատեսումներ (բազային մակարդակում 10 տարվա հորիզոնում, իսկ ավելի առաջադեմ կառավարությունները՝ 30 տարին գերազանցող ժամանակային հորիզոնի համար), ինչպես նաև իրականացնեն մակրոտնտեսական, բնակլիմայական և դեմոգրաֆիկ գործոնների ազդեցությունների գնահատում նշված հորիզոնում: ՀՀ բյուջետային փաստաթղթերում նշված ժամանակային հորիզոնով կանխատեսումները բացակայում են: *1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները* ○ Երկարաժամկետ ֆիսկալ կայունության սահմանում ○ Երկարաժամկետ ֆիսկալ կայունության գնահատում ○ Երկարաժամկետ ֆիսկալ կանխատեսումների մոդելների մշակում և սցենարային վերլուծությունների իրականացում *2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը* Երկարաժամկետ ֆիսկալ կայունության գնահատականի ստացում:
31.	**31. ՀՀ հարկային ներուժի գնահատում և հարկման միջնաժամկետ հնարավորությունների բացահայտում** 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը ՀՀ կառավարության ծրագրով նախատեսվում է մինչև 2026թ.-ը հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը հասցնել 25%-ի, որը պահանջում է ինչպես օրենսդրական բարեփոխումների, այնպես էլ հարկային վարչարարության բարելավման իրականացում: Վերջինիս մասով, անհրաժեշտ է ունենալ հստակ

	գնահատականներ հարկային ճեղքի (փաստացի հարկային եկամուտների՝ ներուժային մակարդակից հեռացվածության չափի) վերաբերյալ, ինչը հնարավորություն կտա ծրագրել հարկեր/ՀՆԱ հարաբերակցության բարելավման տեմպը: Կարևոր է, որ գնահատման արդյունքներն ընդունելի լինեն բոլոր շահագրգիռ գերատեսչությունների համար, ինչը կնպաստի քաղաքականության մշակման գործում դրանց կիրառման արդյունավետության բարձրացմանը: 1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Ներկայումս հարկային ներուժի և ճեղքի գնահատումներն իրականացվում են ինչպես ՀՀ ֆինանսների նախարարության, այնպես էլ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից: Վերջիններիս գնահատականները, սակայն, էականորեն տարբերվում են, ինչը կարիք է առաջացնում մշակել միասնական մեթոդաբանություն և դրա հիման վրա համատեղ գնահատում, որի արդյունքները կլինեն ընդունելի բոլոր շահագրգիռ գերատեսչությունների համար: 1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Նախատեսվում է ստեղծել միջգերատեսչական աշխատանքային խումբ (ՀՀ ՖՆ, ՀՀ ՊԵԿ, ՀՀ ԷՆ և ՀՀ ԿԲ մասնակցությամբ), որը պարբերաբար հանդիպումների ընթացքում կուսումնասիրի հարկային ներուժի և ճեղքի գնահատման առկա մոտեցումները և կձևավորի գնահատման ընդունելի մեթոդաբանություն, որի միջոցով հնարավոր կլինի պարբերաբար իրականացնել հարկային ներուժի և ճեղքի գնահատումներ: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Միջոցառման իրականացման արդյունքում հնարավոր կլինի ունենալ ՀՀ հարկային ներուժային մակարդակի և ճեղքի՝ բոլոր շահագրգիռ գերատեսչությունների համար ընդունելի գնահատման մեթոդաբանություն և պարբերաբար իրականացվող գնահատականներ, որոնց արդյունքները կօգտագործվեն հարկային եկամուտների և հարկեր/ՀՆԱ ցուցանիշների միջնաժամկետ և կարճաժամկետ կանխատեսումներում: Վերջինս կարևորվում է ՀՀ կառավարության ծրագրով նախատեսված 2026թ. հարկեր/ՀՆԱ-ի թիրախի ապահովման տեսանկյունից:
32.	**32. Կառավարության պարտքի օպտիմալ շեմերի, այդ թվում՝ ներքին պարտքի օպտիմալ մասնաբաժնի գնահատում** 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման իրականացման հիմքեր՝ ՀՀ կառավարության 2021-26թթ. ծրագրի «6.8 Հարկաբյուջետային քաղաքականություն» բաժնի 1-ին և 3-րդ պարբերությունները, «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածի 17-րդ կետ, ՀՀ վարչապետի 11.06.2018թ.-ի «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 743-Լ որոշում: Միջոցառման իրականացումը պայմանավորված է տնտեսական հիմնարարների փոփոխման պայմաններում պետական պարտքի կայունությունը ապահովելու անհրաժեշտությամբ, ինչպես նաև՝ պարտքի կառուցվածքի բարելավման գործընթացը նվազագույն ծախսերի և ռիսկերի (այդ թվում՝ ֆինանսական միջնորդության և տնտեսական աճի համար) ավելացմամբ ապահովելու անհրաժեշտությամբ: 1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները ՀՀ կառավարության պարտքի համար սահմանված ներկա շեմերը հիմնվում են 2017-2018 թվականներին հարկաբյուջետային կանոնների արդիականացման շրջանակներում ԱՄՀ տեխնիկական աջակցությամբ իրականացված վերլուծությունների և գնահատումների վրա՝ սահմանելով կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշի 40, 50 և 60%-ի շեմեր: Մինչդեռ 2020 թվականին COVID-19 համավարակը, 44-օրյա պատերազմը, ինչպես նաև 2022թ. -ին Ուկրաինայում տեղի ունեցող իրադարձությունների արդյունքում համաշխարհային և ՀՀ տնտեսության կրած ազդեցությունները տնտեսական հիմնարարների փոփոխություններ են առաջ բերել, որոնք անհրաժեշտություն են առաջացնում պարտքի անվտանգ շեմերի նոր գնահատումներ իրականացնել: Միաժամանակ, նոր գնահատումներ են անհրաժեշտ պարտքի կառուցվածքի հետագա օպտիմալացման համար: Այսպես, 2021թ. -ի դեկտեմբերի վերջի դրությամբ ՀՀ կառավարության պարտքում արտաքին և արտարժութային պարտքի կշիռները կազմել են շուրջ 71%, ինչն, ինչպես միջազգային կազմակերպությունների սահմանած չափորոշիչներով, այնպես էլ ՀՀ համար իրականացված ախտորոշմամբ բարձր է գնահատվում: ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2023-2025 թվականների ռազմավարական ծրագրով նպատակադրվել է իրականացնել ներքին պարտքի կշռի բարձրացում, սակայն դա էլ իր հերթին կարող է առաջ բերել տոկոսային ծախսերի աճ և ստեղծել մասնավոր հատվածի վարկավորման դուրսմղման ռիսկեր:

	1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները ՀՀ կառավարության նշյալ միջոցառմամբ նախատեսվում է իրականացնել ՀՀ կառավարության պարտքի կայունության վերլուծություն, միջազգային լավագույն փորձին համահունչ գնահատել պարտքի ապահով մակարդակները, ինչպես նաև բացահայտել ներքին պարտքի մասնաբաժնի օպտիմալ մակարդակը: Դրանց արդյունքում կձևավորվեն կառավարության պարտքի և դրա կառուցվածքի թիրախային ցուցանիշներ, որոնք կարտահայտվեն ՀՀ կառավարության միջնաժամկետ հարկաբյուջետային կանխատեսումներում և պարտքի կառավարման ուղենիշներում: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքներն են կառավարության ծրագրով նախատեսված ծախսային նախաձեռնությունների ֆինանսավորման ընթացքի և հարկաբյուջետային կայունության անխախտության ներդաշնակության ապահովումը, միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածներում կառավարության պարտքի կայունության ամրապնդումը և ֆինանսական շուկայի զարգացումը՝ ապահովելով ՀՀ սուվերեն ռիսկի գնահատականի և ՀՀ-ին փոխառությունների տրամադրման պայմանների բարելավում, ներքին ֆինանսական միջնորդության անխափան ավելացում և պետական պարտատոմսերի շուկայի զարգացման և շուկայական ուղենիշի ամրապնդման միջոցով՝ կորպորատիվ արժեթղթերի շուկայի հետագա ակտիվացում:
33.	**33. Ներքին պետական պարտքի գործիքակազմի ընդլայնում** *1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը* Միջոցառման իրականացման հիմքեր՝ կառավարության պարտքի կառավարման 2023-2025թթ. ռազմավարական ծրագիր: Միջոցառման նպատակն է նոր գործիքների կիրառման միջոցով ներքին պարտքի շուկայի կազմի ու կառուցվածքի, ինչպես նաև վերաֆինանսավորման ռիսկի կառավարման գործընթացի բարելավումը: *1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները* Կառավարության պարտքի կառավարման ռազմավարական ծրագրով պետական գանձապետական պարտատոմսերի իրացվելիության աճն ամրագրված է որպես ներքին պետական պարտքի կառավարման նպատակադրում: Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է իրականացնել շրջանառության մեջ գտնվող պետական գանձապետական պարտատոմսերի կոնսոլիդացիա, շուկային առաջարկել նոր գործիքներ՝ ընդլայնելով ներդրողների շրջանակը, ինչպես նաև փոխանակման աճուրդների կազմակերպման միջոցով լրացուցիչ գործիքակազմ ապահովել վերաֆինանսավորման ռիսկի կառավարման գործընթացի իրականացման համար: Պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրներում ներքին փոխառու զուտ միջոցների տեսակարար կշռի ավելացումն արտաքին փոխառու զուտ միջոցների նկատմամբ միտված է նվազեցնել փոխարժեքի ռիսկը, ինչպես նաև հիմքեր ստեղծել ֆինանսական շուկայում նոր գործիքների (լողացող, ինդեքսավորվող և այլն) կիրառման ու շուկայի հետագա խորացման համար: *1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները* Գնաճով ինդեքսավորվող պետական գանձապետական պարտատոմսերի թողարկում: *2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը* Սույն միջոցառման ակնկալվող արդյունքը պետական գանձապետական պարտատոմսերի իրացվելիության խթանումն է և վերաֆինանսավորման ռիսկի կառավարման գործընթացի արդյունավետության բարձրացումը, իսկ նոր՝ գնաճին կցված պարտատոմսերի թողարկումը հնարավորություն կտա գնահատել ներքին պետական պարտքի շուկայի մասնակիցների գնաճային սպասումները:
34.	**34. Խաղային ոլորտի օրենսդրությամբ սահմանված գործող կարգավորումների վերանայում՝ բարեփոխման, այդ թվում՝ հաշվետվողականության արդյունավետության բարձրացում:** *1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը* Միջոցառման նպատակն է «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքով նախատեսված այլ վայրերում խաղատան գործունեության կազմակերպման լիցենզավորման պայման հանդիսացող՝ կատարված ներդրումների գնահատման համար նախատեսված կարգավորումների սահմանումը, խաղային ոլորտի կազմակերպությունների հանրային հաշվետվողականության թափանցիկության բարձրացումը:

	1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքով նախատեսված այլ վայրերում խաղատան գործունեության կազմակերպման լիցենզավորման պայման հանդիսացող՝ կատարված ներդրումների գնահատման համար նախատեսված կարգավորումներ սահմանված չեն, խաղային ոլորտի կազմակերպությունների հանրային հաշվետվողականության թափանցիկության բարձրացում: *1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները* Գործող կարգավորումները վերանայել, լրամշակել, ինչպես նաև մշակել ենթաօրենսդրական ակտեր, որոնցով կսահմանվեն վերը նշված կարգավորումները: *2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը* ՀՀ-ում ներդրումների գնահատման մեթոդաբանության և գործիկազմի շրջանակներում սահմանված կլինեն կարգավորումներ, խաղային ոլորտի կազմակերպությունների հանրային հաշվետվողականության թափանցիկության ապահովվում:
35.	**35. «Գյուղատնտեսության ոլորտի զարգացման նպատակով հարկային կարգավորումների վերանայում» միջոցառում** *1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը* Միջոցառման իրականացման հիմքեր՝ ՀՀ կառավարության 2021-26թթ. ծրագրի «6.8 Հարկաբյուջետային քաղաքականություն» բաժնի 9-րդ կետ, «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածի 17-րդ կետ, ՀՀ վարչապետի 11.06.2018թ.-ի «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 743-Լ որոշում: Միջոցառման իրականացումը պայմանավորված է գյուղատնտեսության ոլորտի զարգացմանը խոչընդոտող հարկային կարգավորումները վերանայելու անհրաժեշտությամբ: *1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները* Ներկայումս ԱԱՀ վճարող համարվող տնտեսավարող սուբյեկտների կողմից ԱԱՀ վճարող չհամարվող գյուղացիական տնտեսություններից գյուղատնտեսական ապրանքներ ձեռք բերելու դեպքում խաթարվում է ԱԱՀ-ի գծով հաշվանցումների կատարման շղթայի ամբողջականությունը, ինչով պայմանավորված՝ շուկայում առաջանում են ձևախեղումներ: *1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները* ՀՀ կառավարության նշյալ միջոցառմամբ նախատեսվում է մշակել և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել գյուղատնտեսության ոլորտի զարգացմանը խոչընդոտող հարկային կարգավորումների վերանայմանն ուղղված օրենքի նախագիծ: *2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը* Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքներն են գյուղատնտեսության ոլորտի զարգացմանը խոչընդոտող հարկային կարգավորումների վերանայումը:
36.	**36. Մակրոտնտեսական և հարկաբյուջետային կարճաժամկետ և միջնաժամկետ կանխատեսումների որակի բարելավում** **36.1. Հարկային եկամուտների՝ ըստ խոշոր հարկատեսակների, կարճաժամկետ և միջնաժամկետ կանխատեսումների համակարգում ժամանակակից մոտեցումներին համապատասխան բայեսյան մոդելների մշակում և ներդրում** 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է հարկային եկամուտների կանխատեսման համակարգի շարունակական բարելավման և ժամանակակից մեթոդների ներառման կարիքով: Միջոցառման նպատակն է բարելավել հարկային եկամուտների կանխատեսումների որակը՝ ուժեղացնելով կանխատեսումային գործիքակազմը առավել բարդ կառուցվածքով և փորձագիտական դատողությունները առավել արդյունավետորեն հաշվի առնող մոդելներով: Վերջիններս պետք է մշակվեն ինչպես հարկային

	եկամուտների ամբողջական մակարդակի, այնպես էլ՝ առանձին հարկատեսակների (ամենաքիչը ԱԱՀ և եկամտային հարկ) մակարդակով և ապահովեն կանխատեսման կանխատեսման սխալների նվազագույն մակարդակ: 1.1Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները ՀՀ ֆինանսների նախարարությունում առկա՝ հարկային եկամուտների կանխատեսման գործիքակազմը ներկայումս բաղկացած է հարկային եկամուտների ընդհանուր մակարդակը և առանձին հարկատեսակների մեծությունը (ավելացված արժեքի հարկ, եկամտային հարկ, շահութահարկ, ակցիզային հարկ) կանխատեսող մեկ հավասարումից բաղկացած, ինչպես նաև վեկտոր-ավտոռեգրեսիոն մոդելներից: Միաժամանակ, մակրոտնտեսական կանխատեսումների միջազգային փորձը հուշում է, որ բավականին բարձր արդյունավետություն կարող են ունենալ բայեսյան մոդելները, որոնք ՀՀ ՖՆ-ում ներկայումս առկա գործիքակազմից տարբերվում են նրանով, որ վերջիններով իրականացվող կանխատեսումների ժամանակ հնարավոր է մոդելում ներդնել առկա նախնական տեղեկատվությունը, ինչի արդյունքում բարձրանում է կանխատեսումների որակը: Այս տեսակի մոդելներով ՀՀ տվյալներով կանխատեսումների իրականացման նախնական փորձերը ևս ցույց են տալիս, որ դրանք կանխատեսումների ճշգրտության զգալի բարելավում են ապահովում: 1.*2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները* Նախատեսվում է մշակել և հարկային եկամուտների կանխատեսման համակարգը լրացնել բայեսյան ավտոռեգրեսիվ մոդելներով: *2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը* Միջոցառման արդյունքում ՀՀ ՖՆ մակրոտնտեսական կանխատեսումների գործիքակազմը կհամալրվի բայեսյան վեկտոր ավտոռեգրեսիոն մոդելներով, որոնք հնարավորության կտան բարձրացնելու հարկային եկամուտների կանխատեսումների որակը: **36.2 Մակրոտնտեսական ցուցանիշների միջնաժամկետ կանխատեսման կիսակառուցվածքային մոդելի (semi-structural gap/SSGM) մշակում և ներդրում** *1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը* Միջոցառման նպատակն է մակրոտնտեսական միջնաժամկետ կանխատեսումների որակի բարելավումը և առանձին ցուցանիշների կանխատեսումների միջև ներդաշնակության ապահովումը: Մակրոտնտեսական կանխատեսումներն առանցքային դեր ունեն պետական բյուջեի մակրո-ֆիսկալ շրջանակի ձևավորման գործընթացում, հավաստի և առավել ճշգրիտ իրականացված մակրտնտեսական կանխատեսումներն բարձրացնում են հարակբյուջետային քաղաքականության հասցեականությունը, հնարավորություն են տալիս գնահատել մակրո-ֆիսկալ ռիսկերը և հնարավորությունները՝ նպաստելով մակրոտնտեսական կայունության ապահովմանը, ինչպես նաև պետական ֆինանսների կառավարման արդյունավետության բարձրացմանը: *1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները* Տարբեր մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումներն իրականացվում են առանձին ժամանակակից տնտեսաչափական մոդելների կիրառմամբ, ինչ արդյունքում ստացվում են առանձին մակրոտնտեսական ցուցանիշների որակյալ կանխատեսումներ, սակայն դրանց համադրելիությունը և ներդաշնակությունը ապահովելու համար անհրաժեշտ է լինում իրականացնել լրացուցիչ աշխատանք: Բացի այդ տնտեսաչափական մեթոդները առավել արդյունավետ են կարճաժամկետ կանխատեսումների իրականացման համար: Այժմ ՀՀ ֆինանսների նախարության «Կանխատեսումների և քաղաքականության վերլուծության համակարգը (ԿՔՎՀ, FPAS)» համալրված է Արարատ հարկաբյուջետային ռազմավարության դինամիկ ստոխաստիկ ընդհանուր հավասարակշռության (այսուհետ՝ AFSM DSGE) մոդելով, որը հնարավորություն է տալիս համապարփակ ձևով վերլուծելու և գնահատելու տարբեր քաղաքականությունների (հարկաբյուջետային, դրամավարկային, տնտեսական), ինչպես նաև առանձին միջոցառումների և արտաքին շոկերի ազդեցությունները: Սակայն կանխատեսումային համակարգի ամբողջականությունն ապահովելու համար անհրաժեշտ է նաև մշակել և ներդնել կիսակառուցվածքային եռամսյակային կանխատեսումների (semi structural gap model, SSGM) մոդել, որը հնարավորություն կտա ապահովել կանխատեսվող մակրոտնտեսական ցուցանիշների համադրելիությունը և ներդաշնակությունը, ինչպես նաև ունենալ որակյալ միջնաժամկետ կանխատեսումներ: *1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները*

	Մակրոտնտեսական ցուցանիշների եռամսյակային կանխատեսման մոդելի (Quarterly Projection Model, QPM) ներդրումը հնարավորություն կտա ունենալ կանխատեսումների մեկ միասնական համակարգ, որը կապահովի կանխատեսումների ներդաշնակությունը և հնարավորություն կտա առավել արդյունավետ ձևով իրականացնել միջնաժամկետ կանխատեսումներ: *2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը* Մակրոտնտեսական կանխատեսումների գործիքակազմում եռամսյակային կանխատեսման մոդելի (Quarterly Projection Model, QPM) առկայություն, որը կապահովի մակրոտնտեսական կանխատեսումների բարելավված և համապարփակ համակարգի առկայությունը:
37.	**37. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կառավարիչների խորհրդի 2024թ. տարեկան հանդիպման և գործարար համաժողովի կազմակերպում** *1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը* Համաշխարհային մակարդակի ֆինանսական միջոցառման կազմակերպում, ՀՀ միջազգային հեղինակության և երկրի ճանաչելիության բարձրացում, Հայաստանի ներդրումային հնարավորությունների բացահայտում: *1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները* Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կառավարիչների խորհրդի՝ 2021թ. փետրվարի 26-ի թիվ 237 բանաձևով Երևանը ընտրվել է որպես 2024թ. տարեկան հանդիպման անցկացման վայր: Հաշվի առնելով, որ ՀՀ ֆինանսների նախարարը ՀՀ վարչապետի՝ 2023թ. փետրվարի 13-ի թիվ 156-Ա որոշմամբ նշանակվել է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կառավարիչների խորհրդում ՀՀ ներկայացուցիչ՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը հանդիսանում է միջոցառման կազմակերպման պատասխանատու մարմին: *1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները* ՀՀ վարչապետի 2022թ. նոյեմբերի 28-ի թիվ 1408-Ա որոշմամբ տարեկան հանդիպման կազմակերպչական աշխատանքների համակարգման և իրականացման նպատակով ստեղծվել են, համապատասխանաբար, ղեկավար կոմիտե և աշխատանքային խումբ: Բացի այդ, տարեկան հանդիպման և գործարար համաժողովի կազմակերպման նպատակով նախատեսվում է ներգրավել միջոցառումների մասնագիտացված կազմակերպիչ: *2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը* Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հետ ՀՀ համագործակցության զարգացում, Հայաստանի միջազգային իմիջի ամրապնդում, գործարար միջավայրի ընդլայնում ու մասնավոր հատվածի ընկերությունների համար ներդրումային միջավայրի գրավչության բարձրացում

Վարչապետի աշխատակազմ	
NN	**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ**
1.	1. **ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ** 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը. ՀՀ կառավարության ծրագրով Կառավարությունը որդեգրել է բարելավել հանրության քաղաքականությունների մշակման գործընթացում ներգրավման և ապահովման մեխանիզմները: Այս պարտավորությունը նաև ամրագրված է «Հանրային կառավարման բարեփոխումների» ռազմավարությամբ: Սույն միջոցառմամբ բարելավելու են գործող մեխանիզմները, կարգավորումները, որոնք կնպաստեն պետություն-քաղաքացի համագործակցությանը քաղաքանությունների մշակման գործընթացում: 2. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները. Չնայած այն հանգամանքին, որ մասնակցային կառավարման կառուցակարգերի տեսանկյունից ներդրված պրոակտիվ ներգրավման և պասիվ իրազեկման մոտեցումների հիբրիդային տարբերակի՝ հանրային

մասնակցությունը հատվածական բնույթ է կրում և չի ապահովում է արդյունավետ ներգրավման ու մասնակցության պրակտիկ: Հանրությանը որոշումների կայացման վրա արդյունավետ ազդելու հնարավորությունները սահմանափակ են, միաժամանակ՝ դրանք առավելապես մշակութային ու վարքաբանական խնդիրներ են:

Հանրության շրջանում առավել հայտնի իրավական ակտերի նախագծերի քննարկման e-draft հարթակը ունի բարելավման կարիք: Հարթակի որոշ բաժիններ գրեթե չեն օգտագործվում, վիճակագրական բաժինն ունի սահմանափակ վերլուծական տեղեկատվություն և գործիքակազմ, հնարավոր չէ գտնել վերլուծական վիճակագրություն նախագծերի վերաբերյալ ստացված առաջարկությունների, պետական մարմնի կողմից եզրակացությունների և այլ բովանդակային իմաստով կարևոր ասպեկտների վերաբերյալ:

Նման բացերի և թերի մեխանիզմների բացակայությունը հանգեցնում է նաև բացերի՝ հանրային լիարժեք տեղեկատվության ստացման, մշտադիտարկում իրականացնելու անհրաժեշտության: Արդյունքում էլ պետական կառավարման համակարգում դանդաղում է հաշվետվողականության և բարեվարքության մշակույթը:

Վերոնշյալ բացերը ունեն իրենց ազդեցությունը նաև կոռուպցիայի դեմ պայքարի, տնտեսական և սոցիալական գործունեության թափանցիկության և հանրության կողմից կառավարության գործունեության նկատմամբ վստահության պակասի վրա: .

3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

Մասնակցային կառավարման կառուցակարգերի ու գործիքակազմի վերանայում՝ ապահովելով բաց ու ներառական որոշումների կայացման գործընթաց, այդ թվում՝

– Հանրային մասնակցության մեխանիզմների վերանայման հիմքում կդիտարկվի 3 հարթություն՝ քաղաքացիների, մասնագիտական ու փորձագիտական համայնքի մասնակցություն, շահառուների ներգրավում:

– Իբրև առաջնային խնդիր կդիտարկվի գործող մասնակցային գործիքների վերլուծությունը միջազգային լավագույն փորձի վերհանումն ու նոր լուծումների նույնականացումը:

– Մասնակցային կառավարման բարեփոխումների առանցքը կլինի մասնակցային կառավարման միավորի ստեղծումը Վարչապետի աշխատակազմի շրջանակներում, որը կունենա ոչ թե համընդգրկուն և անորոշ քննարկումներ ծավալելու մանդատ, այլ՝ կստանձնի մասնակցային գործընթացներին աջակցման, բարելավման, մշտադիտարկման, մասնակցային մշակույթի ստեղծման պարտավորություն:

– Բարեփոխումների գործընթացներում կմշակվեն որոշումների կայացման գործընթացներում հանրային մասնակցության ապահովման ձևերի իրավական ու ընթացակարգային մեխանիզմները, ներառյալ՝ մասնակցության ապահովման ուղեցույցները: Օրակարգում կլինեն էլեկտրոնային հարթակների, Հանրային խորհրդի, նախարարներին կից գործող հասարակական խորհուրդների գործառույթների ու արդյունավետության բարելավմանն ուղղված միջամտությունները:

– Մասնակցության մեխանիզմների ու գործիքների արդիականացման առումով առաջ կմղվի են ոչ առցանց հարթակների վրա հենվելու մշակույթը՝ հաշվի առնելով, որ առցանց հարթակները չեն երաշխավորում օգտակարություն և արդյունավետություն:

– Զուգահեռաբար, կիրականացվի նաև հանրային մասնակցության վերաբերյալ մշտադիտարկման ցուցանիշների սահմանում ու պարբերական թարմացում՝ միտված մասնակցային կառավարման որակի ապահովմանը:

– Կներդրվի նաև պետական մարմինների ու քաղաքականությունների արդյունավետության այլընտրանքային գնահատման մեխանիզմ՝ ներառելով հասարակական ու մասնավոր հատվածի ներկայացուցիչներին և այդպիսով մեծացնելով պետական մարմինների նկատմամբ հանրային վերահսկողությունը:

– Վիրտուալ ձևաչափերից զատ՝ հանրային մասնակցության գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով կձևավորվի հանրային լսումների և քննարկումների համար ֆիզիկական տարածք:

4. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Միջոցառման ողջ ծավալով իրականացման արդյունքում ակնկալվում է՝

- Բարելավել քաղաքականությունների մշակման գործընթացում հանրային մասնակցության գործիքակազմը
- Ձևավորել Մասնակցային կառավարման ինստիտուցիոնալ մեխանիզմի

	• Հասցեական դարձնել թվային հարթակների նշանակությունը և խթանել հանրային լսումների և քննարկումների մշակույթը պետական կառավարման համակարգում:
2.	**2. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՆՈՒՄ** 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը ՀՀ կառավարության ծրագրով Կառավարությունը որդեգրել է ներդնել Ռազմավարական հաղորդակցության միասնական համակարգ: Տեղեկատվական ու ռազմավարական հաղորդակցության հստակ քաղաքականության բացակայության ու ինստիտուցիոնալ կառավարման բացերի հետևանքով պետության քաղաքականությունների շուրջ իրականացվում է անբավարար և ոչ պատշաճ իրազեկում, առաջանում է խզվածքներ հասարակության և տարբեր շերտերի հետ կոմունիկացիայում, որոնք հանգեցնում են անվերահսկելի ռիսկերի հաղորդակցական անվտանգության տեսանկյունից և տեղեկատվական աղմուկի, մանիպուլյատիվ ինֆորմացիայի տարածման առումով: 2. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները. Ներկայում Ռազմավարական հաղորդակցության միասնական քաղաքականության բացակայության պայմաններում առաջանում է հանրային լայն շրջանակների և մեդիայի հետ հաղորդակցության խնդիրների ու նպատակների ահստակության անհրաժեշտություն. – Առանձին բարեփոխումների հանրային հաղորդակցության ու իրազեկման թույլ մշակույթ. – Հաղորդակցության ոլորտում առավելապես արձագանքող վարքագիծը, մասնավորապես՝ լավագույն բարեփոխումներն անհասկանալի են մնում հանրությանը և մեդիա մանիպուլյացիաների արդյունքում հնարավոր է լինում գեներացնել էական բացասական արձագանք. – Պետության և պետական պաշտոնյաների կողմից հանրային խոսքում, հանրությանը տրված ուղերձներում և տեղեկատվության փոխանցման ժամանակ սուբյեկտիվ կամ անհատական տեսակետների հաղորդակցում, որտեղ կարևորվում է անձը, այլ ոչ՝ պետական ինստիտուտը . – Պետական համակարգում ճառագիրների թույլ ինստիտուտ, այս գործառույթը համակցված կերպով իրականացնում է մամուլի խոսնակների և համապատասխան մասնագիտական անձնակազմի կողմից. – Արտաքին լսարանի հավանական արձագանքման գնահատումների ու վարքաբանական դիտարկումների հիման վրա կառուցված հաղորդակցության մշակույթի բացակայություն, հաղորդակցության միջոցների ոչ նպատակային կիրառում, փաստերի ու հանրային կարծիքի ուսումնասիրության թույլ պրակտիկա. – Հաղորդակցության ոլորտում տարբեր մարմինների ու կառուցվածքային միավորների միջև տեղեկատվական թույլ համակարգում, իրավասությունների ու գործառույթների կրկնօրինակումներ, անհստակություն ու աշխատանքի օպտիմալ բաժանման բացակայություն, դրանց և քաղաքականության պատասխանատուների միջև թույլ համագործակցություն: 3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Ելնելով ստեղծված իրավիճակից այս գործողությամբ նախատեսվում է՝ – Ռազմավարական հաղորդակցության համակարգի առանցքը ոչ թե արձագանքող, այլ նախաձեռնող, հանրության լայն մասնակցություն ապահովող ու ապատեղեկատվության դեմ պայքարի գործուն մեխանիզմներ ունեցող քաղաքականությունների ու ինստիտուտների կայացում: – Այս առումով առաջնային կլինի տարբեր ինստիտուտների միջև համակարգումն ապահովող կենտրոնական մարմնի նույնականացումն ու ձևավորումը Վարչապետի աշխատակազմում, որը կապահովի հանրության հետ պետության հաղորդակցման միասնական նպատակների, ուղերձների սահմանումը, հաղորդակարգերի մշակումն ու որակի վերահսկողությունը: – Ինստիտուցիոնալ ճարտարապետության սահմանմանը կհաջորդի հաղորդակարգերի մշակումը, ներառյալ՝ բարեփոխումների արդյունավետ հաղորդակցման, ապատեղեկատվության դեմ պայքարի, ճգնաժամային իրավիճակներում հանրային հաղորդակցության վերաբերյալ:

	– Գործուն քայլեր կձեռնարկվեն նաև ապատեղեկատվության դեմ պայքարի ուղղությամբ, որի առանցքը կլինեն հանրության նախաձեռնողական իրազեկումը, մեդիագրագիտության բարձրացումը և փաստերի ստուգման գործիքների արդյունավետ կիրառումը: 4. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը • Ռազմավարական հաղորդակցության կառավարման ֆունկցիոնալ և ինստիտուցիոնալ ճարտարապետության ձևավորում • Ռազմավարական հաղորդակցության հաղորդակարգերի մշակում և ներդրում • Ռազմավարական հաղորդակցության ոլորտում պետական հատվածի կարողությունների հզորացում • «Ապատեղեկատվության դեմ պայքարի գործողությունների իրագործում»:
3.	**3. ՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** «Տեսչական մարմինների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի մշակման անհրաժեշտությունը բխում է տեսչական մարմինների կողմից վերահսկողության գործառույթի արդյունավետ իրականացման համար համապատասխան նախադրյալներ ստեղծելու, առկա օրենսդրական բացերը վերացնելու, կարգավորումները հստակեցնելու անհրաժեշտությունից: **2. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները** «Տեսչական մարմինների մասին» օրենքով (այսուհետ օրենք) համապատասխան ոլորտների կամ ոլորտի մասերի նկատմամբ պետական վերահսկողություն իրականացնելու իրավասությունը վերապահված է տեսչական մարմիններին, որը նրանց հիմնական գործառույթն է: Նախագծի մշակման անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալ հիմնական խնդիրներով՝ – Տեսչական մարմինների գործունեության արդյունավետության գնահատման, բարձրացման, շարունակական կատարելագործման, ինչպես նաև օրենքով սահմանված սկզբունքների ամբողջական իրագործման ու տեսչական համակարգի միասնական զարգացման նպատակով օրենքը նախատեսում է որակի ապահովման համակարգ՝ սահմանելով որակի ապահովման ստորաբաժանման գործունեության իրավական հիմքերը: Գործող օրենքով սահմանված կարգավորումները՝ կապված ստորաբաժանման աշխատակիցների նշանակման, ղեկավարի լիազորությունների և կառավարչական ենթակայության հետ, որակի ապահովման ստորաբաժանման համար չեն ապահովում անհրաժեշտ և բավարար իրավական գործիքներ օրենքով նրա առջև դրված խնդիրների պատշաճ իրականացման համար: – Գործնականում երբեմն տեսչական մարմնի կառավարման խորհրդի կազմում որպես անդամ նշանակված նախարարի կամ նախարարի տեղակալի կողմից խորհրդի նիստերից բացակայելու կամ խորհրդի նիստերում չքվեարկելու դեպքում խորհրդի գործունեությունը, ըստ էության, կազմալուծվում է, իսկ գործող օրենքը նման իրավիճակների համար կարգավորումներ չի նախատեսում. Առկա են բազմաթիվ բացեր խորհուրդների աշխատակարգերում, նիստերի կազմակերպման և անցկացման, այդ թվում հեռավար նիստերի անցկացման և քվեարկության հետ կապված իրավահարաբերություններում: Անհրաժեշտ է նաև հստակեցնել կառավարման խորհուրդների լիազորությունների շրջանակը, նիստերի անցկացման հաճախականության, ինչպես նաև տեսչական մարմինների ղեկավարների և տեղակալների նշանակման և ազատման հետ կապված իրավահարաբերությունները: – Հաշվի առնելով տվյալների բազաների հասանելիության խնդիրը, որը կանոնակարգված չէ գործող օրենքով, նախատեսվում է ամրագրել դրույթ առ այն, որ տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակը կարող է ստանալ անհատույց և ազատ հասանելիություն պետական կառավարման համակարգի այլ մարմինների թղթային կամ էլեկտրոնային տեղեկատվական շտեմարաններին ու համակարգերին, տեղեկություններին և փաստաթղթերին, որոնք անհրաժեշտ են Տեսչական մարմիններին վերապահված վերահսկողական խնդիրների և գործառույթների իրականացման համար: – Արտակարգ դրություն հայտարարվելու դեպքում օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների պահպանման նկատմամբ պատշաճ վերահսկողությունն ապահովելու և տվյալ ժամանակահատվածում

	գործնականում արդեն ի հայտ եկած խնդիրները կարգավորելու նպատակով իրականացվող միջոցառումները առանց խոչընդոտի իրականացնելու համար առկա օրենսդրական դաշտում վերահսկողության լիազորությունների ընդլայնում և արագ արձագանքման իրավական լիազորությունների ապահովում: **3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Նախագծի մշակման նպատակն է՝ տեսչական մարմինների կողմից պատշաճ վերահսկողության իրականացման իրավական հիմքերի կատարելագործումը, այդ թվում՝ ՀՀ-ում արտակարգ դրություն հայտարարվելու դեպքում օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների պահպանման նկատմամբ պատշաճ վերահսկողության ապահովումը, առկա օրենսդրական բացերի վերացումը, տեսչական մարմինների որակի ապահովման գործառույթի պատշաճ իրականացման ապահովումը, լիազորությունների հստակեցումը, տեսչական մարմինների կառավարման խորհուրդների բնականոն գործունեության ապահովման համար անհրաժեշտ կարգավորումների նախատեսումը: **4. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման արդյունքում ակնկալվում է օրենսդրական բացերի լրացում՝ ՀՀ-ում արտակարգ դրություն հայտարարվելու դեպքում օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների պահպանման նկատմամբ պատշաճ վերահսկողությունն ապահովելու և տվյալ ժամանակահատվածում գործնականում արդեն ի հայտ եկած խնդիրները կարգավորում, որակի ապահովման ստորաբաժանման խնդիրների պատշաճ իրականացման ապահովման նպատակով կհստակեցվեն որակի ապահովման ստորաբաժանման լիազորությունները, Խորհրդի կազմում որպես անդամ ընտրված նախարարի, ինչպես նաև նախարարի տեղակալների անդամությունը դադարելու իրավական հնարավորությունը, ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից լիցենզավորման, ծանուցման կամ թույլտվության ստացման ենթակա գործունեության պայմանների պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու և դրա հիման վրա իրավասու մարմիններին լիցենզիաները, ծանուցման ենթական գործունեությամբ զբաղվելու իրավունքը, թույլտվությունը դադարեցնելու, ուժը կորցրած ճանաչելու կամ դրանց գործողությունը կասեցնելու միջնորդագրերի ներկայացնելու լիազորությունները, կհստակեցվի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի պաշտոնում թեկնածուների առաջադրման և նշանակման կարգի վերաբերյալ դրույթները կնախատեսվեն տեսչական մարմինների կառավարման խորհուրդների բնականոն գործունեությունն ապահովող կարգավորումներ, վերջիններիս լիազորությունները և այլն:
4.	**4. ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՐԶԵՑՈՒՄ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՍՏԱԿԵՑՈՒՄ** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի մշակման անհրաժեշտությունը բխում է տեսչական մարմինների բնականոն գործունեությունն ապահովելու համար համապատասխան նախադրյալներ ստեղծելու, օրենսգրքով նախատեսված իրավախախտումները քննող մարմինների և վարչական իրավախախտումների շրջանակը հստակեցնելու, ինչպես նաև տեսչական մարրմնների վերահսկողության ոլորտներում օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարման և անվտանգության ապահովման նպատակով պատշաճ վերահսկողություն իրականացնելու անհրաժեշտությունից: **2. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները** 2018 թվականի ապրիլի 9-ին ուժի մեջ է մտել «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենքը, որով ձևավորվել է տեսչական մարմինների համակարգը: Նշված օրենքի, ինչպես նաև 2018 թվականի ապրիլի 9-ին ուժի մեջ մտած «Տեսչական մարմինների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-267-Ն օրենքի համաձայն՝ տեսչական մարմինները որոշակի ոլորտում վերահսկողություն և օրենքով սահմանված այլ գործառույթներ իրականացնող Կառավարությանը ենթակա մարմիններ են, որոնք ՀՀ օրենքների, համապատասխան ոլորտի հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտման համար կիրառում են օրենքով սահմանված պատասխանատվության միջոցներ՝ հանդես գալով ՀՀ անունից: Մինչդեռ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում ներկայումս պահպանված են նախկինում համապատասխան ոլորտների նկատմամբ վերահսկողություն իրականացնող և այդ օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների համար պատասխանատվության միջոցներ կիրառող մարմինների անվանումները:

	Առողջապահական և աշխատանքի, սննդամթերքի անվտանգության, շուկայի վերահսկողության տեսչական մարմինների պրակտիկան ցույց է տալիս, որ գործող օրենսգրքում նախատեսված որոշ իրավախախտումների համար վարչական տուգանքի չափը բավարար չէ այդ իրավախախտումների կանխումն ապահովելու համար: Դրանք նաև որոշ դեպքերում այնքան ցածր են, որ տնտեսավարող սուբյեկտները նախընտրում են վճարել տուգանքը, քան վերացնել իրավախախտումը: Ելնելով տեսչական մարմնի գործունեության ոլորտային առանձնահատկություններից՝ անհրաժեշտություն է առաջացել վերանայել տեսչական մարմնի անունից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժեր նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձանց շրջանակը: ՎԻՎ օրենսգրքի 182.1-ին հոդվածը վարչական պատասխանատվություն է նախատեսում ստուգումներ իրականացնող պետական մարմինների աշխատանքներին խոչընդոտելու համար, իսկ օրենսգրքի տարբեր հոդվածներով վարչական պատասխանատվություն է նախատեսվում առանձին տեսչական մարմինների ստուգումների իրականացմանը խոչընդոտելու համար: Միաժամանակ օրենսգրքում որոշ տեսչական մարմինների դեպքում վարչական պատասխանատվություն է նախատեսված այդ տեսչական մարմինների հանձնարարականները չկատարելու համար, իսկ որոշների համար՝ ոչ: Այս առումով բոլոր տեսչական մարմինների համար միասնական մոտեցումն ապահովելու և օրենսգրքում չհիմնավորված կրկնորդումներից խուսափելու համար անհրաժեշտություն է առաջանում տեսչական մարմինների ստուգումների իրականացմանը խոչընդոտելու և հանձնարարականը չկատարելու համար վարչական պատասխանատվություն նախատեսել միևնույն զանցակազմերով: **3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Նախագծի մշակման նպատակն է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով սահմանել, որ համապատասխան ոլորտներում կատարվող իրավախախտումների վերաբերյալ գործերը քննող և/կամ պատասխանատվություն սահմանող մարմինն այդ ոլորտի նկատմամբ վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինն է, ինչպես նաև հստակեցնել տեսչական մարմնի անունից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժեր նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձանց շրջանակը, վարչական պատասխանատվության միջոցներ սահմանել՝ աշխատանքային, առողջապահության, սննդամթերքի անվտանգության օրենսդրություններով նախատեսված պահանջները խախտելու համար, միաժամանակ, ելնելով որոշ վարչական իրավախախտումների վտանգավորության աստիճանից և արդարության սկզբունքի արդյունավետ կիրառման անհրաժեշտությունից՝ որոշ իրավախախտումների համար որպես վարչական տույժի տեսակ նախատեսել նախազգուշացումը, իսկ որոշների դեպքում՝ վերանայել է նախատեսված տուգանքի չափը, նախատեսել միասնական կարգավորում՝ տեսչական մարմինների ստուգումներին խոչընդոտելու և հանձնարարականները չկատարելու համար: **Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման արդյունքում ակնկալվում է, որ տեսչական մարմինները հնարավորություն կստանան լիարժեքորեն իրականացնել իրենց վերապահված գործառույթները՝ ապահովելով վերահսկողության համապատասխան ոլորտներում անվտանգության ու օրենսդրության պահանջների պահպանումը: Ակնկալվում է նաև կրճատել միավոր վարչարարության վրա ծախսվող մարդկային և ֆինանսական ռեսուրսները, ունենալ իրավախախտման նշանակության հետ համադրելի պատասխանատվության միջոցներ՝ նվազեցնելով կրկնախախտումները:
5.	**5. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆԸ ՄԻՏՎԱԾ, ՊԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԵՎ ԸՍՏ ՌԻՍԿԻ ԹԻՐԱԽԱՎՈՐՎԱԾ ՀՍՏԱԿ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐՈՎ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Նախագծի մշակումը պայմանավորված է ՀՀ կառավարությանը ենթակա տեսչական մարմինների կողմից պետական վերահսկողության պատշաճ իրականացման ապահովման անհրաժեշտությամբ, որը բխում է «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասից: **2. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները** Նախագծի մշակումը բխում է տեսչական մարմինների կողմից վերահսկողական գործառույթների արդյունավետ իրականացման համար նախադրյալներ ստեղծելու, առկա օրենսդրական բացերը վերացնելու, օրենսդրական կարգավորումները հստակեցնելու անհրաժեշտությունից: Օրենսդրությամբ սահմանված պարտադիր պահանջների ու պայմանների խախտումները հաճախ դրսևորվում են տնտեսավարող սուբյեկտների կողմից, սակայն թիրախային և պլանավորված վերահսկողության բացակայության պայմաններում գործնականում դրանք կարող են մնալ չբացահայտված իրավասու տեսչական մարմինների կողմից: Խախտումները հաճախ ունեն հանրորեն լուրջ

	վտանգավորություն, ուստի դրանց հայտնաբերումը պահանջում է այնպիսի վերահսկողական մեխանիզմների առկայություն, որը կապահովի վերահսկողության թիրախային բնույթը, ինչն էականորեն կնպաստի հանրորեն վտանգավոր արարքների կանխարգելմանը՝ միաժամանակ չխոչընդոտելով բիզնեսի բնականոն գործունեությանը: Գործող կարգավորումները հնացած են և հաճախ չեն ապահովում ճիշտ պլանավորման, արագ արձագանքման, ճկուն գործելու, ինչպես նաև պարզ ընթացակարգերով խնդիրները լուծելու մեխանիզմներ: **3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Անհրաժեշտ է տարբեր ոլորտներում գործող օրենսդրական պահանջների և նորմերի կատարման նկատմամբ ճկուն և գործուն վերահսկողական արդիական մեխանիզմի ներդրում: **4. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման արդյունքում տեսչական մարմինները հնարավորություն կունենան առավել ճշգրիտ պլանավորել ստուգումները և իրականացնել ռիսկերի գնահատում: Ակնկալվում է նվազեցնել ոչ պլանային ստուգումները: Միջոցառման արդյունքում կիստակեցվեն ծանուցվող և չծանուցվող ստուգումների տեսակները: Ստուգումները կիրականացվեն որպես խախտումների կանխարգելմանն ուղղված վարչարարություն՝ ապահովելով ավելի անվտանգ միջավայր:
6.	**6. ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ, ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԻԱՅԻ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ ԵՎ ՀՍՏԱԿԵՑՈՒՄ** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Նախագծի մշակման հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետությունում սննդամթերքի անվտանգության ոլորտի առկա խնդիրների և օրենսդրական բացերի կարգավորումն է, ինչպես նաև քաղաքականության մշակման և վերահսկողության իրականացման գործառույթների տարանջատումը: **2. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները** Սննդամթերքի անվտանգության ոլորտը կարգավորվում է «Սննդամթերքի անվտանգության մասին», «Անասնաբուժության մասին», «Բուսասանիտարիայի մասին», «Կերի մասին», «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքներով: Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը ՀՀ կառավարությանը ենթակա վերահսկողություն իրականացնող մարմին է, որի նպատակն է վերոնշյալ ոլորտներում անվտանգության և օրենսդրության պահանջների պահպանման ապահովման նկատմամբ վերահսկողության և կանխարգելիչ միջոցառումների իրականացումը, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով պատասխանատվության միջոցների կիրառումը: Ներկայումս վերոնշյալ օրենքներում հստակեցված չեն քաղաքականությունը մշակող և վերահսկողությունը իրականացվող մարմինների գործառույթները, որը գործնականում խնդիրներ է առաջացնում թե՛ քաղաքականությունը մշակող լիազոր մարմնի, թե՛ վերահսկողությունը իրականացնող տեսչական մարմնի համար: Հետևաբար անհրաժեշտություն կա նշված օրենքներում փոփոխություններ կատարելով տարանջատել այդ լիազորությունները, դրանով հստակեցնելով գործառույթները: **3. Կարգավորման նպատակը** Նախագծի ընդունման նպատակն է սննդամթերքի և կերի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառում սահմանված նորմերի նկատմամբ վերահսկողություն իրականացնող Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի գործառույթների իրականացման արդյունավետության ապահովումը, առկա խոչընդոտների վերացումը և քաղաքականության մշակման և վերահսկողության իրականացման գործառույթների տարանջատումը: **4. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Նախագծի մշակման արդյունքում ակնկալվում է կատարելագործել սննդամթերքի անվտանգության ոլորտի օրենսդրությունը՝ ապահովելով տեսչական մարմնի՝ առանց խոչընդոտների վերահսկողության իրականացումը:
7.	**7. ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԻՃԱՀԱՐՈՒՅՑ ՀԱՐՑԵՐԻ ԼՈՒԾՈՒՄ** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լաբորատոր փորձաքննության արդյունքների վիճարկման դեպքում ազգային ռեֆերենս փորձարկման լաբորատորիայի տված արձանագրությունը համարվում է վերջնական: Սակայն ներկայումս ազգային ռեֆերենս

	փորձարկման լաբորատորիա նշանակված չէ և բացակայում է նշանակման հետ կապված հարաբերությունների օրենսդրական կարգավորումը: «Սննդամթերքի անվտանգության ոլորտում ազգային ռեֆերենս փորձարկման լաբորատորիաների նշանակման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունումը պայմանավորված է «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի պահանջով: **2. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները** «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լաբորատոր փորձաքննության արդյունքների վիճարկման դեպքում ազգային ռեֆերենս փորձարկման լաբորատորիայի տված արձանագրությունը համարվում է վերջնական: Նույն օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասն ուժի մեջ է մտնում Կառավարության կողմից ազգային ռեֆերենս լաբորատորիայի նշանակման պահից, իսկ Կառավարության կողմից ազգային ռեֆերենս լաբորատորիա դեռևս չի նշանակվել: Արդյունքում, վերահսկողության շրջանակներում կատարվող լաբորատոր հետազոտությունների հետ համաձայն չլինելու դեպքում, տնտեսավարող սուբյեկտը հնարավորություն չունի վիճարկել այդ փորձաքննության արդյունքները, ինչը սահմանափակում է տնտեսավարողի՝ օրենքով սահմանված դեպքերում վիճարկելու իր իրավուքը, ինչպես նաև հնարավոր չի լինում տեսչական մարմնի կողմից պարզել ներմուծվող կամ իրացվող սննդամթերքի անվտանգությունը: **3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** **«**Սննդամթերքի անվտանգության ոլորտում ազգային ռեֆերենս փորձարկման լաբորատորիաների նշանակման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծով սահմանվում է սննդամթերքի անվտանգության, ոլորտում ազգային ռեֆերենս փորձարկման լաբորատորիայի նշանակման կարգը: **4. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունմամբ կստեղծվի իրավական հիմք սննդամթերքի անվտանգության ոլորտում ռեֆերենս փորձարկման լաբորատորիայի նշանակման համար, ինչը խիստ կարևոր է վստահելի և կայացած որակի ենթակառուցվածքների զարգացման տեսանկյունից:
8.	**8. ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Աշխատանքային պայմանագրերի կնքման էլեկտրոնային հարթակի ներդրումն աշխատողների աշխատանքային իրավունքների պաշտպանության համակարգի բարելավման նպատակ է հետապնդում: Այն հնարավորություն կընձեռնի աշխատողներին ունենալու օրենսդրությամբ նախատեսված աշխատանքի ընդունման պահանջները բավարարող աշխատանքային պայմանագրեր, իսկ տեսչական մարմնին՝ ավելի արդյունավետ կերպով վերահսկելու գործատուների կողմից աշխատողների աշխատանքի ընդունելու գործընթացը: **2. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները** Իրավակիրառ պրակտիկան ցույց է տալիս, որ գործատուները շատ հաճախ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի կամ աշխատանքային պայմանագրի մեկ օրինակը աշխատողներին չեն տրամադրում, ինչն էլ հետագայում դժվարացնում, իսկ երբեմն անգամ անհնար է դարձնում աշխատողների աշխատանքային իրավունքների պաշտպանության իրականացումը: **3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Աշխատանքային պայմանագրերի կնքման էլեկտրոնային հարթակի ներդրման արդյունքում տեսչական մարմինը հնարավորություն կունենա ավելի օպտիմալ ռեսուրսներով ապահովվել աշխատանքի իրավունքի պատշաճ վերահսկողություն: **Հիմք՝ ՀՀ կառավարության գործունեության ծրագրի 4. 6-րդ կետի 6-րդ ենթակետ**
9.	**9. ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ, ԻՆՖԵԿՑԻՈՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՕՊԵՐԱՏԻՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը.**

	ՀՀ կառավարության 4.5-րդ կետի 17-րդ պարբերություն՝ «Ինչպես մարզերում, այնպես էլ Երևանում ուժեղացվելու և արդիականացվելու են համաճարակային իրավիճակների կառավարման և վերահսկման, ինֆեկցիոն հիվանդությունների կանխարգելման և վարման գործում ներգրավված առողջապահական հաստատությունները»: **2. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները** Մինչ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ստեղծվելը (ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 27-ի N 444-Ն որոշում) գործող առողջապահական պետական տեսչությունը (որի վերահսկողական գործառույթները շատ ավելի քիչ էին) բաղկացած էր 11 տարածքային կենտրոններից և ուներ մոտ 450 աշխատակից: Այս պահին Տեսչական մարմնի կազմում գործում են թվով 5 տարածքային կենտրոններ: Յուրաքանչյուր տարածքային կենտրոն սպասարկում է 2-3 մարզ: Աշխատակիցների թիվը ըստ հաստիքացուցակի 340 է: Այս պարագայում վերահսկողական աշխատանքներ իրականացնելու համար ծախսվում է և ավելորդ ժամանակ (ճանապարհի վրա) և մեծ ֆինանսներ գործուղումների համար: Օրինակ՝ Արևմտյան տարածքային կենտրոնը սպասարկում է Արմավիրի, Արարատի և Արագածոտնի մարզերը, որի վարչական շենքը գտնվում է քաղաք Արտաշատում: Արագածոտնի մարզի որոշ բնակավայրեր վարչական շենքից հեռու են 100 կմ-ից ավելի: Այդ պարագայում անհնար է վերահսկողական աշխատանքներում հրատապ դեպքերի իրականացումը (օրինակ՝ ջրային բռնկումներ): **3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Տեսչական մարմնի վերահսկողական աշխատանքների արդյունավետության բարձրացում, ժամանակի արդյունավետ օգտագործում, ֆինանսական խնայողություն: **Հիմք՝ «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի հոդված 7, հոդված 24**
10.	**10. ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ՝ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** «Կրթության բնագավառի պետական վերահսկողության մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի (այսուհետ՝ նախագծեր) մշակման անհրաժեշտությունը պայմանավորված է «Տեսչական մարմինների մասին» օրենքի 6-րդ հոդվածով սահմանված լիազորությունների շրջանակում՝ կրթության բնագավառում իրավաչափ և արդյունավետ վերահսկողության իրականացման անհրաժեշտությամբ: Իրավական ակտի ընդունման նպատակն է կրթության բնագավառի պետական վերահսկողության օրենսդրական դաշտի կարգավորումը: **2. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները** Ներկայումս տեսչական մարմնի լիազորություններն ամրագրված են տեսչական մարմնի կանոնադրությամբ և «Տեսչական մարմինների մասին» օրենքով, իսկ տեսչական մարմնի կողմից վերահսկողության իրականացման գործընթացը կարգավորող միակ օրենսդրական ակտը՝ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքն է: Մինչդեռ, կրթության բնագավառում պետական վերահսկողությունն ունի այս բնագավառի յուրահատկություններով պայմանավորված առանձնահատկություններ, որոնք առանձին օրենսդրական կարգավորման անհրաժեշտություն ունեն: Այսպես. տեսչական մարմնի կանոնադրությամբ, որպես առաջնային գործառույթներ, նախատեսված են կրթության որակի նկատմամբ վերահսկողության իրականացումը և կրթության որակի բարձրացումը: Նշված գործառույթների իրականացումը հնարավոր չէ միայն ստուգումների անցկացման միջոցով, քանի որ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքով նախատեսված գործիքակազմը կա՛մ չի համապատասխանում այս բնագավառում վերահսկողության տրամաբանությանը, կա՛մ չի նախատեսում դրա արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ միջոցներ: Մասնավորապես, ուսումնական հաստատություններում կրթության որակի նկատմամբ պատշաճ վերահսկողությունը հնարավոր չէ միայն ստուգաթերթերի հիման վրա իրականացնել: Բացի այդ կրթության որակի նկատմամբ վերահսկողությունը պահանջում է այնպիսի գործողությունների իրականացում, ինչպիսիք են՝ – գրավոր առաջադրանքների կամ թեստերի միջոցով ուսումնական պարապմունքների լսումներ և սովորողների գիտելիքների գնահատում. – ըստ անհրաժեշտության, դասավանդողին մանկավարժական-մեթոդական կարողությունները, մասնագիտական գիտելիքները, տեղեկատվական, հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը զարգացնող մեթոդական աջակցության տրամադրում.

	– ուսումնական պարապմունքների լսումների, սովորողների գիտելիքների գնահատման և հարցումների արդյունքների միջին ցուցանիշի հիման վրա տվյալ առարկայի դասավանդման բնութագրի կազմում. – ուսումնական հաստատությունում բարոյահոգեբանական մթնոլորտի վերլուծության կամ առանձին խնդիրների պարզաբանման նպատակով տեսչավորման ընթացքում սովորողների և ուսումնական հաստատության աշխատակիցների շրջանում հարցումների իրականացում և այլն: Նման պայմաններում անհրաժեշտ է տեսչական մարմնի համար նախատեսել այնպիսի վարչական գործիք, որը, հաշվի առնելով կրթության բնագավառի առանձնահատկությունները, հնարավորություն կտա ապահովել կրթության որակի նկատմամբ արդյունավետ վերահսկողության իրականացում: **3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Կրթության բնագավառի նկատմամբ պատշաճ վերահսկողության իրականացումն ամբողջական և լիարժեք չի լինի առանց կրթության վիճակի, կրթության արդյունքների փոփոխության դինամիկայի, կրթական գործունեության իրականացման համար ստեղծված պայմանների ուսումնասիրության և դիտարկման, ինչպես նաև սովորողների և մանկավարժական աշխատողների վերաբերյալ տվյալների վերլուծության, որոնց իրականացումը պետք է կրի շարունակական բնույթ: Կրթության բնագավառում վերահսկողության նպատակների արդյունավետ իրականացումը պահանջում է նաև ստուգումների իրականացում պետական, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում: Այս առումով, հարկ է նշել, որ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքով պետական և տարածքային կառավարման մարմիններում ստուգումներ իրականացնելու իրավական կարգավորում նախատեսված չէ: **4. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Նախագծերի ընդունման արդյունքում համապարփակ կարգավորում կստանան կրթության բնագավառում տեսչական մարմնի գործունեության հետ կապված իրավահարաբերությունները՝ ստեղծելով տեսչական մարմնի բնականոն վերահսկողության համար անհրաժեշտ և բավարար իրավական նախադրյալներ, ինչպես նաև ապահովելով «թղթերի ստուգումից» կրթության որակի գնահատմանն ու բարելավմանն ուղղված գործողությունների հիմքեր:
11.	**11. ՈՉ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԹԻՐԱԽԱՅԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** «Շուկայի վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է Շուկայի վերահսկողության տեսչական մարմին (Այսուհետ նաև՝ ՇՎՏՄ-ի) գործունեության արդյունավետության բարձրացման և օրենսդրական բացերը լրացնելու հետ: «Շուկայի վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի նպատակն է սահմանել ոչ պարենային արտադրանքի անվտանգության ապահովման ոլորտներում իրականացվող վերահսկողության հիմնական սկզբունքները, առանձնահատկությունները, ինչպես նաև վերահսկողության հետ կապված այլ հարաբերություններ: **2. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները** Ներկայումս ՇՎՏՄ-ի գործունեությունը կանոնակարգող օրենսդրական դաշտում առկա են օրենսդրական բացեր, ինչը որոշ դեպքերում խոչընդոտում է տեսչական մարմնի արդյունավետ գործունեությանը: «Շուկայի վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունմամբ նախատեսվում է կարգավորել վերոնշյալ խնդիրները, ինչպես նաև բարձրացնել ՇՎՏՄ-ի գործունեության արդյունավետությունը: **3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Ներկայումս ՇՎՏՄ-ին վերապահված չեն մի շարք կարևոր գործառույթներ, որոնք հնարավորություն կտան վերահսկողության գործիքակազմն առավել արդյունավետ իրականացնել, իսկ «Շուկայի վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունմամբ ՇՎՏՄ-ին կվերապահվեն տեխնիկական կանոնակարգին չհամապատասխանող արտադրանքի իրացման կասեցման, հետ կանչման և ոչնչացման գործառույթները: **4. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման արդյունքում ակնկալվում է օրենսդրական բացերի վերացման, վերահսկողությունն առաջին հերթին դեպի խախտման սկզբնաղբյուրն ուղղելու միջոցով ապահովել ոչ պարենային արտադրանքի՝ տեխնիկական կանոնակարգերին համապատասխանության ավելի բարձր մակարդակ:

12.	**12. ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՐԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Նախագծի մշակումը պայմանավորված է տրանսպորտի վերահսկողության ոլորտում իրավական կարգավորումների հստակեցման, վերահսկողության արդյունավետության բարձրացման, ինչպես նաև Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի գործունեությանն առնչվող իրավական կարգավորումների համապատասխանեցմամբ: **2. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները** Ներկայումս ՀՀ տրանսպորտի բնագավառի վերահսկողության մասով հստակ և համապարփակ կարգավորումներ առկա չեն: Որոշակի լիազորություններ և գործառույթներ սահմանված են տարբեր օրենքներում: Սակայն առկա կարգավորումները ընդհանրական են և չեն համապատասխանում ամբողջապես ոլորտում իրականացվող քաղաքականությանը և տեսչական մարմնի կանոնադրությանը: Պատշաճ կերպով հնարավոր չէ իրականացնել, օրինակ՝ ոչ կանոնավոր ուղևորափոխադրումների, բեռնափոխադրումների վերահսկողությունը: Այսինքն՝ միջազգային պայմանագրերով և օրենսդրությամբ սահամանված են այնպիսի կարգավորումներ, որոնց նկատմամբ վերահսկողությունը օրենսդրությամբ օժտված ներկայիս գործիքակազմով պատշաճ իրականացնել հնարավոր չէ: Այդպիսիք են՝ ծանրաքաշ տրանսպորտային միջոցների երթևեկության սահմանափակումները, միջպետական փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցներում տախոգրաֆի առկայության պահանջը, միջպետական ոչ կանոնավոր ուղևորափոխադրում իրականացնելիս ուղևորների թվի սահմանափակումը, ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներին գովազդի տեղադրմանը վերաբերող պահանջներ և այլն: **3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Նախագծով առաջարկվում է տրանսպորտի բնագավառի վերահսկողությունը իրականացնել մեկ համապարփակ օրենքի իրավական կարգավորումներին համապատասխան՝ ապահովելով տրանսպորտի բնագավառի վերահսկողության առավել արդյունավետ, անխափան և բնականոն գործունեությունը: Նախատեսվում է Տեսչական մարմնին օժտել համապատասխան գործիքակազմով, որով վերջինս հնարավորություն կունենա պատշաճ վերահասկողություն իրականացնել նաև այն կարգավորումների նկատմամբ, որոնք ներկայիս գործիքակազմով հնարավոր չէ պատշաճ վերահսկողություն իրականցնել: Մասնավորապես, նախատեսվում է՝ – Հստակեցնել տրանսպորտի բնագավառի վերահսկողության ուղղությունները և վերահսկողության ենթակա ընդհանուր պահանջների շարքը. – Երկաթուղային տրանսպորտի օրենսդրության կիրարկման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու լիազորությունը վերապահել տրանսպորտի բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնին. – Ուժը կորցրած ճանաչել «ՀՀ տրանսպորտային տեսչության մասին» օրենքը: **4. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Նախագծի ընդունմամբ տրանսպորտի բնագավառի վերահսկողության գործընթացը կդառնա ավելի հստակ և արդյունավետ, ինչպես նաև ավելի կանխատեսելի քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների համար:

Փոխվարչապետ Մ. Գրիգորյանի գրասենյակ	
NN	**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ**
1.	**1. ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** ՀՀ կառավարության ծրագրով Կառավարությունը որդեգրել է ինստիտուցիոնալ զարգացման հավակնոտ օրակարգ՝ ուղղված հանրային կառավարման ոլորտում մի շարք ուղղություններով խորքային բարեփոխումներ իրականացնելուն: Օրակարգի առանցքային ելակետներից է «Հանրային կառավարման բարեփոխումների մինչև 2030 թվականի ռազմավարությունն» ընդունելու հանձնառությունը: Սույն միջոցառմամբ ձևակերպվելու է պետական համակարգի արդիականացման ռազմավարական օրակարգը և այն փուլային կերպափոխման միջոցով իրագործելու ճանապարհային քարտեզը:

	2. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Հայաստանում պետական կառավարման համակարգը 1990-ականների ձևավորումից մինչ այժմ բարեփոխումների տարբեր փուլեր է անցել, և համակարգային նշանակության մի շարք ինստիտուտներ են ձևավորվել: 3 տասնամյակների ընթացքում կառավարման համակարգի կայացման և զարգացման գործընթացում մի շարք բարեփոխումներ են իրականացվել՝ շուկայական տնտեսության ինստիտուտների ու կառուցակարգերի ձևավորումից մինչև արդի պահանջներին համահունչ էլեկտրոնային կառավարման գործիքների ներդրում: Չնայած բարեփոխումների 3 սերունդների ընթացքում դրվել են հանրային կառավարման համակարգի ինստիտուցիոնալ հիմքերը, տարբեր ուղղություններով մի շարք ձեռքբերումներ ու դրական տեղաշարժեր են եղել, դրանք շարունակում են կրել հատվածական կամ տեղային բնույթ, վերաբերել կոնկրետ ոլորտի կամ գործընթացի, առավել հաճախ ունենալ կառուցվածքային վերակազմակերպման բնույթ՝ առանց խորքային որակական ու բովանդակային առաջընթացի, չեն ձևավորվել տեխնոկրատ էլիտա ու մերիտոկրատական համակարգեր և, որ չափազանց կարևոր է, չի կայացել կառավարման համակարգի առաքելության ու բովանդակության շուրջ հանրության տարբեր ներկայացուցչական շերտերի հետ արդյունավետ, խորքային ու անհրաժեշտ ծավալով երկխոսությունը: Պետական համակարգում ռեֆորմների ճանապարհին եղել են նաև ձախողումներ, ժառանգականության կորուստ, ընդհատումներ ու քաղաքական նպատակահարմարությամբ պայմանավորված օրակարգերի ձևավորում՝ բացասական հետք թողնելով քաղաքացիակենտրոն և ժողովրդավարական կառավարման արժեքներով առաջնորդվող արդյունավետ պետական կառավարման համակարգ և ինստիտուտներ կայացնելու գործընթացի վրա: **3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Առաջարկվում է մինչև 2021 թվականի նոյեմբերի 3-րդ տասնօրյակի ավարտն ընդունել «Հանրային կառավարման բարեփոխումների մինչև 2030 թվականի ռազմավարությունը»: Ռազմավարությամբ առաջին անգամ ձևակերպվում է երկրի հանրային կառավարման միասնական ու համապարփակ բարեփոխումների օրակարգը՝ նպատակ ունենալով հասցեագրել խորքային ախտորոշման արդյունքում նույնականացված խնդիրները, վերաձևակերպել հանրային կառավարման համակարգի արժեբանական հիմքերը և քաղաքականության թիրախավորված գործողությունների միջոցով ապահովել համակարգի արդիականացման անհրաժեշտ ինստիտուցիոնալ կարողությունները: Ըստ այդմ՝ Ռազմավարությունն անդրադառնում է քաղաքականության մշակման ու համակարգման, հանրությանը պետության կողմից մատուցվող ծառայությունների, հանրային (քաղաքացիական) ծառայության և մարդկային ռեսուրսների կառավարման, ինստիտուտների արդիականացման, ռազմավարական հաղորդակցման ու մասնակցային կառավարման հարցերին՝ որպես ռազմավարական 4 ուղղություններ՝ տիրույթներ: Ռազմավարական տիրույթները համալրվում են հորիզոնական 3 տիրույթներով՝ կարողությունների զարգացում, ինովացիա և թվայնացում, կայուն և ռեսուրսարդյունավետ կառավարում: **4. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման ողջ ծավալով իրականացման արդյունքում ակնկալվում է՝ • սահմանել պետական համակարգի բարեփոխումների երկարաժամկետ տեսլականն ու շրջանակը, փուլային իրագործման ճանապարհային քարտեզը, արդյունքային շրջանակը, մոնիթորինգի ու հաշվետվողականության համակարգը, • ձևավորել հանրային կառավարման բարեփոխումների համակարգման ինստիտուցիոնալ մանդատը և իրականացման կարողությունները, • ապահովել պետական համակարգի բարեփոխումների համար անհրաժեշտ ռեսուրսային փաթեթը:
2.	**2. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** ՀՀ կառավարության ծրագրի 6.1 «Ռազմավարական պլանավորում և քաղաքականությունների մշակում» հատվածում սահմանված են հստակ հանձնառություններ երկրի ռազմավարական պլանավորման և քաղաքականության մշակման համակարգերի արդիականացման և համարժեք կարողությունների ձևավորման ու հզորացման ուղղությամբ: Միջոցառմամբ գործող ռազմավարական պլանավորման համակարգն արդիականացվելու է՝ միջազգային լավագույն պրակտիկային համահունչ և արդիական թվային գործիքակազմերի կիրառությամբ: Միջոցառման հիմնական նպատակը պետության կողմից իրականացվող քաղաքականությունների փաստահենքությունը, արդյունքամետությունը և իրագործելիությունը ապահովելն է՝ ռազմավարական և ֆինանսական պլանավորման համակարգերի ներդաշնակեցման, ինչպես նաև՝ քաղաքականությունների միջոլորտային փոխհամաձայնեցման միջոցով:

	2. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Ներկա դրությամբ մի շարք իրավակարգավորումներ սահմանում են ռազմավարական պլանավորման ու քաղաքականության մշակման բնագավառում իրավասություններ և մեթոդական չափորոշիչներ, այդուհանդերձ, գործնականում անորոշ է տարբեր ռազմավարական փաստաթղթերի միջև հիերարխիկ կապը, առկա են ռազմավարական արդյունավետ պլանավորման թույլ կարողություններ, ցածր է միջոլորտային փոխկապվածությունը, ինչպես նաև՝ երկրի միջնաժամկետ ֆինանսական պլանի, բյուջետային գործընթացի հետ ռազմավարական փաստաթղթերի, քաղաքականությունների ու ծրագրերի ներդաշնակությունը, և որ ավելի կարևոր է, առկա է պլանավորված քաղաքականությունների և ռազմավարական փաստաթղթերի իրականացման ոչ բավարար կատարողական, քաղաքականության իրականացումից պլանավորում հետադարձ կապը ապահովող ինստիտուցիոնալ կառուցակարգերը բացակայում են: Քաղաքականությունների մշակման ու ռազմավարական պլանավորման ասպարեզում շարունակում են գերակշռել ոչ փաստահենք մոտեցումները: **3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Միջոցառման շրջանակներում ձևավորվելու է ռազմավարական պլանավորման ինտեգրված համակարգը, ներդրվելու է դրա համար պատշաճ թվային համակարգը՝ ապահովելով պլանավորման տարբեր շերտերի միջև ուղղահայաց և հորիզոնական փոխհամաձայնեցում և գործընթացների զգալի ծավալով օպտիմալացում, համարժեք մեթոդական ուղեցույցներ և պլանավորման գործընթացում անհրաժեշտ հենքային գործիքներ, ներդրվելու են ռազմավարական պլանավորման և հանրային քաղաքականության մշակման ոլորտում կարողությունների հզորացման ուսուցման և վերապատրաստման ծրագրեր, ապահովվելու են պատշաճ մարդկային կարողություններ: **4. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման արդյունքում ակնկալվող ուղղակի արդյունքներն են՝ • Երկրի ազգային ռազմավարական նպատակների, արդյունքների և գործողությունների միջև լիարժեք ուղղահայաց և միջոլորտային ներդաշնակությունը, ռազմավարական փաստաթղթերով սահմանված շրջանակը և ֆինանսական պլանավորումը լիարժեք փոխհամաձայնությունն ըստ նպատակների, գործողությունների և արդյունքների, • Ռազմավարությունների, քաղաքականության ու ծրագրային այլ փաստաթղթերի մշակման, մոնիթորինգի ու հաշվետվողականության գործընթացների թվայնացումը, զարգացման գործընկերների և միջազգային ֆինանսական կառույցների աջակցությամբ իրականացվող վարկային, դրամաշնորհային ու տեխնիկական աջակցության ծրագրերի կառավարման միասնական թվային համակարգի գործարկումը՝ ապահովելով ծրագրերի և գործողությունների համաձայնեցում ռազմավարական շրջանակով սահմանված նպատակներին ու արդյունքներին: • Պետական մարմիններում ռազմավարական պլանավորման և քաղաքականության համակարգման ու մշակման անձնակազմերի կարողությունների ձևավորում և շարունակական հզորացումը:
3.	**3. ՀԱՆՐՈՒԹՅԱՆԸ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** ՀՀ կառավարության ծրագրի 6.2 «Պետության կողմից հանրությանը մատուցվող ծառայություններ» հատվածում կառավարությունը նպատակադրում է վերափոխել պետության և համայնքների կողմից հանրությանը մատուցվող ծառայությունների որակը՝ քաղաքացիակենտրոն և ավելորդ վարչարարական բեռից զատ, առաջադեմ հասանելի տեխնոլոգիական հենքով լուծումների միջոցով: Միջոցառման միջոցով նշանակալիորեն բարելավվելու է պետական ու համայնքային ծառայություններից օգտվելու հարմարավետությունը: **2. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Չնայած տարիներ շարունակ պետությունը որոշակի ջանքեր և ռեսուրսներ է ներդրել պետության կողմից մատուցվող ծառայությունների ոլորտում բարեփոխումներ իրականացնելու ուղղությամբ, մասնավորապես, վարչարարական բեռի կրճատման և էլեկտրոնային եղանակով դրանց հասանելիության ապահովման, այդուհանդերձ, երկիրը դեռևս բավականին հետ է մնում թվային կերպափոխման ու ժամանակակից կյանքի ու հասարակական հարաբերությունների տեմպին հարիր ծառայություններ մատուցելու և՛ մոդելից, և՛ մեխանիզմներից: Միաժամանակ, հաճախ այս բնագավառում իրականացվող գործընթացները կրել են հատվածական բնույթ՝ արդյունքում պետության կողմից մատուցվող ծառայությունների բնագավառում տեղի է ունեցել ոչ այնքան արդիականացում համակարգային փոխգործելիության ու փոխլրացվելիության սկզբունքով, որքան որոշակի բարելավումներ առանձին վերցրած ոլորտներում որոշակի ծառայությունների մասով: **3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

	Միջոցառման շրջանակներում մինչև կառավարության ծրագրի գործողության ավարտն ապահովվելու են հանրային ծառայությունների մատուցման արմատական բարեփոխումներ՝ դրանք քաղաքացիակենտրոն, համընդհանուր հասանելի և տեխնոլոգիահենք դարձնելու իմաստով: Մասնավորապես, լիարժեք սահմանվելու են հանրային ծառայությունների ոլորտում միասնական քաղաքականության հիմքերը, կյանքի է կոչվելու ծառայությունների թվայնացման մասշտաբային օրակարգը: **4. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման արդյունքում ակնկալվող ուղղակի արդյունքներն են՝ • Պետական և համայնքային ծառայությունների ոլորտում միասնական քաղաքականության իրավական հիմքերի ապահովում՝ միջազգային առաջադեմ փորձին համահունչ, ծառայությունների ընթացակարգային և տեխնիկական (ներառյալ՝ թվային և էլեկտրոնային, կիբեռանվտանգության) միասնական չափանիշների ու ստանդարտների ներդրում, մոնիթորինգի մեխանիզմների և որակի կառավարման համակարգի ներդրում, • Հանրային ծառայությունների արդիականացման գործընթացի փուլային իրագործում՝ կյանքի փորձառության տրամաբանությամբ, • Հանրային ծառայությունների բազմախողովակ (omnichannel) մատուցման գործիքների և բիզնես գործընթացների ապահովում, • Ծառայությունների հանրային գնահատման և հետադարձ կապի արդիական մեխանիզմների գործարկում, • Հանրային ծառայությունների մատուցման միասնական թվային հարթակի գործարկում՝ ապահովելով բոլոր ծառայությունների՝ «մեկ պատուհանի» սկզբունքով հասանելիություն, • Հանրային ծառայությունների փուլային թվայնացում, այդ թվում՝ հանրության կողմից թվային ծառայություններից օգտվելու նախընտրության մոտիվացիոն սխեմաների ներդրմամբ:
4.	**4. ԱՐԺԱՆԻՔԱՀԵՆՔ ԵՎ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՅԱՑՈՒՄ** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** ՀՀ կառավարության ծրագրի 6.3 «Հանրային ծառայության համակարգ և մարդկային ռեսուրսների կառավարում» հատվածում կառավարությունը հավակնում է զարգացնել և կայացնել հանրային ծառայության արդյունավետ համակարգ՝ հանրային ծառայության գրավչությունը բարձրացնելու և պետական համակարգի առջև դրված խնդիրները արդյունավետորեն լուծող բարձր պրոֆեսիոնալիզմով և բարեվարքությամբ օժտված մարդկային կապիտալ ձևավորելու միջոցով: **2. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Առկա չեն հանրային հատվածում մարդկային ռեսուրսների վերաբերյալ համալիր տվյալներ, որոք հնարավորություն կընձեռեին բարձրացնելու փաստահենք որոշումների կայացումն ու հանրային ծառայության բարեփոխումների արդյունավետ իրականացումը, այդ թվում՝ մի շարք գործընթացների վտոմատացմամբ: **3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Մարդկային ռեսուրսների կառավարման տեղեկատվական արդիականացված համակարգի /HRMIS/ առկայություն՝ հարուստ տվյալների շտեմարաններով և վերլուծական գործիքակազմով, այդ թվում՝ փոխգործելի այլ անհրաժեշտ վարչական տվյալների ռեգիստրների հետ:
5.	**5. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** ՀՀ կառավարության ծրագրի 6.4 «Ինստիտուտների և գործառույթների արդիականացում» հատվածում կառավարությունը նպատակ ունի վերանայել պետական համակարգի ֆունկցիոնալ համակազմությունը և ըստ այդմ արդիականացնել ինստիտուցիոնալ կառուցվածքը՝ ապահովելով հանրային շահը սպասարկող արդյունավետ ինստիտուտներ և մեխանիզմներ: Միջոցառումը նպատակ ունի հստակ գործողությունների և փաստահենք աշխատանքի արդյունքների միջոցով ապահովել ինստիտուցիոնալ արդիականացման գործընթացը՝ ձևավորելով պատասխանատու, հաշվետու, թափանցիկ, արդյունավետ, կայուն և ռեսուսարարդյունավետ գործելակերպով աշխատող պետական հաստատություններ: **2. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Երկրի պետական կառավարման համակարգի տարբեր սերնդի բարեփոխումների ընթացքում տեղի են ունեցել պետական կառավարման կառուցվածքի և ինստիտուտների բազում փոփոխություններ: Դրանք գերազանցապես փոխկապակցված են եղել կառավարությունների փոփոխության հետ: Համակարգային բնույթի ուղենիշերի բացակայության դեպքում և առանց խնդիրների ու հստակ նպատակների ձևակերպման՝ վերակազմակերպումը,

	որպես կանոն, կրել է հատվածական, իրավիճակային բնույթ՝ հաճախ կառուցված անձերի շուրջ: Փոփոխությունները հատկապես կարճաժամկետ ու միջնաժամկետ հատվածում արդյունավետություն չեն բերել, ավելին՝ ուղղակիորեն ու բացասաբար անդրադարձել են համակարգի կենսագործունեության որակի վրա՝ որպես հետևանք ունենալով խաթարումներ ծրագրերի, քաղաքականության և բարեփոխումների իրագործման ընթացքում, առաջացնելով ապամոտիվացնող միջավայր հանրային ծառայողների շրջանում: **3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Մատնանշված համակարգային խզվածքների և խնդիրների լուծման նպատակով այս միջոցառման շրջանակներում կառավարությունը ձեռնամուխ է լինելու պետական հատվածում ֆունկցիոնալ և ինստիտուցիոնալ լայնատարած արդիականացման օրակարգի իրականացմանը՝ ձևավորելով պատշաճ վերլուծական հիմքեր ու կարողություններ: **4. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Լիարժեք ներդրվելու են պետական կառավարման համակարգի շարունակական արդիականացումն ապահովող իրավական հիմքերը, ներառյալ՝ դրանց համակարգման մանդատը և իրականացման հստակ պատասխանատվությունը:

Փոխվարչապետ Տ. Խաչատրյանի գրասենյակ	
NN	**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ**
1.	**ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** ՀՀ կառավարության ծրագրի 6.4 «Ինստիտուտների և գործառույթների արդիականացում» հատվածում կառավարությունը նպատակ ունի վերանայել պետական համակարգի ֆունկցիոնալ համակազմությունը և ըստ այդմ արդիականացնել ինստիտուցիոնալ կառուցվածքը՝ ապահովելով հանրային շահը սպասարկող արդյունավետ ինստիտուտներ և մեխանիզմներ: Միջոցառումը նպատակ ունի հստակ գործողությունների և փաստահենք աշխատանքի արդյունքների միջոցով ապահովել ինստիտուցիոնալ արդիականացման գործընթացը՝ ձևավորելով պատասխանատու, հաշվետու, թափանցիկ, արդյունավետ և կայուն գործելակերպով աշխատող պետական հաստատություններ: **2. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Երկրի պետական կառավարման համակարգի տարբեր սերնդի բարեփոխումների ընթացքում տեղի են ունեցել պետական կառավարման կառուցվածքի և ինստիտուտների բազում փոփոխություններ: Դրանք գերազանցապես փոխկապակցված են եղել կառավարությունների փոփոխության հետ: Համակարգային բնույթի ուղենիշերի բացակայության դեպքում և առանց խնդիրների ու հստակ նպատակների ձևակերպման՝ վերակազմակերպումը, որպես կանոն, կրել է հատվածական, իրավիճակային բնույթ՝ հաճախ կառուցված անձերի շուրջ: Փոփոխությունները հատկապես կարճաժամկետ ու միջնաժամկետ հատվածում արդյունավետություն չեն բերել, ավելին՝ ուղղակիորեն ու բացասաբար անդրադարձել են համակարգի կենսագործունեության որակի վրա՝ որպես հետևանք ունենալով խաթարումներ ծրագրերի, քաղաքականության և բարեփոխումների իրագործման ընթացքում, առաջացնելով ապամոտիվացնող միջավայր հանրային ծառայողների շրջանում: Կառավարման համակարգում ֆունկցիոնալ և ինստիտուցիոնալ դաշտի հիմնական խնդիրներն են՝ - Կառավարման բարձր մակարդակում ժամանակն ու ջանքերը համակարգային ու ռազմավարական բովանդակությամբ բարեփոխումներ առաջնորդելու նպատակով առավել արդյունավետ օգտագործելու օբյեկտիվ սահմանափակումները: - Կենտրոնական ապարատում տարբեր օղակների միջև հորիզոնական դերերի մասնակի կրկնորդումները, արդյունքում՝ երբեմն ոչ լիարժեք համակարգված, հատվածական կամ ոչ բավարար արդյունավետությամբ իրականացվող վարչարարությունը, տարբեր դերակատարների և շահառուների հետ հաղորդակցության որոշակի խզումները: - Կառավարման համակարգի միասնական, ամբողջական շրջանակն ու մանրամասն տիպաբանությունը սահմանող օրենսդրության ու կարգավորումների թերությունը: Բացի նախարարություններից, մյուս մարմիններն ըստ էության դուրս են խորհրդարանական ուղղակի վերահսկողությունից: - Նախարարության դերի վերաիմաստավորման անհրաժեշտություն ռազմավարական, ինստիտուցիոնալ, կառավարչական և ռեսուրսային տեսանկյուններից:

- Կառավարման համակարգում մարմինների բազմազանություն (նախարարություն, ենթակա մարմին, կոմիտե, ծառայություն, տեսչական մարմին, հիմնադրամ, ծրագրերի կառավարման գրասենյակ, ՊՈԱԿ, վարչություն, բաժին, գրասենյակ և այլն) և տիպաբանության բացակայությունը:
- Մի շարք հիմնադրամներ ու նման կառույցներ գործում են որպես ծրագրեր իրականացնող և աշխատում նախարարության բյուջետային ծրագրերի ներքո ենթապայմանագրերի միջոցով, մրցակցային ընտրության գործընթացով չեն անցնում, դրանց նկատմամբ ոչ համակարգային ու հատվածական ղեկավարման, հաշվետվականության ու մոնիտորինգի պրակտիկան հրահրում է զուգահեռ և կրկնվող ֆունկցիաների առաջացումը:
- Պետական համակարգում ոչ հիմնական՝ աջակցող գործառույթների ապահովման նորարարական ու այլընտրանքային մոդելներ կիրառելու պրակտիկայի բացակայությունը, արդյունքում՝ համակարգի չհիմնավորված ծանրաբեռնվածություն վարչարարություն ենթադրող գործառնությունների սպասարկմամբ:

3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Մատնանշված համակարգային խզվածքների և խնդիրների լուծման նպատակով այս միջոցառման շրջանակներում կառավարությունը ձեռնամուխ է լինելու պետական հատվածում ֆունկցիոնալ և ինստիտուցիոնալ լայնատարած արդիականացման օրակարգի իրականացմանը՝ ապահովելով պետության ինստիտուցիոնալ արդիականացման մեթոդական գործիքակազմն ու իրավական կարգավորումները, ինչպես նաև պետական համակարգի մարմինների ֆունկցիոնալ և ինստիտուցիոնալ վերանայում և վերակազմակերպում:

4. **Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Միջոցառման ողջ ծավալով իրականացումն ապահովելու է հետևյալ հիմնական արդյունքները՝

- Վերանայվելու է պետական համակարգի ֆունկցիոնալ և ինստիտուցիոնալ ճարտարապետությունը վերևից ներքև ողջ ուղղահայացով, ներառյալ՝ վարչապետի աշխատակազմ, նախարարություններ, պետական մարմիններ և այլ կազմակերպություններ:
- Մշակվելու է պետական կառավարման համակարգի մարմինների կազմակերպական տիպի որոշման միասնական մեթոդաբանություն, որի հիման վրա ապահովվելու է պետական մարմինների ամբողջական գույքագրում ու միասնական տիպաբանության մշակում՝ միտված նմանատիպ գործառույթների համար կազմակերպահրավական ձևի հստակեցմանը:
- Աջակցող մի շարք ընտրված գործառույթներ ռացիոնալացվելու են՝ համակցված /shared services/ ծառայությունների մոդելի գործարկմամբ:
- Համակարգային ֆունկցիոնալ վերակառուցման և զուգահեռ արդյունավետության բարձրացման միջոցառումների արդյունքում ապահովվելու է համակարգի օպտիմալ չափ:

2. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

ՀՀ կառավարության ծրագրի 6.3 «Հանրային ծառայության համակարգ և մարդկային ռեսուրսների կառավարում» հատվածում կառավարությունը հավակնում է զարգացնել և կայացնել հանրային ծառայության արդյունավետ համակարգ՝ հանրային ծառայության գրավչությունը բարձրացնելու և պետական համակարգի առջև դրված խնդիրները արդյունավետորեն լուծող բարձր պրոֆեսիոնալիզմով և բարեվարքությամբ օժտված մարդկային կապիտալ ձևավորելու միջոցով:

2. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Հանրային ծառայությունը կարգավորող օրենսդրությունը վերջին տարիներին որոշակի բարեփոխումների է ենթարկվել, ընդլայնվել է քաղաքացիական ծառայողների շրջանակը, այնուամենայնիվ, համակարգում առկա են որոշ խնդիրներ՝

- Հանրային ծառայության շրջանակը դեռևս լիարժեք միասնական չէ, և որոշ խմբերի կարգավիճակը դեռևս հստակ չէ: Առկա են պետական ծառայության տեսակներ, որոնցից յուրաքանչյուրը կարգավորվում է առանձին օրենսդրությամբ:
- Հանրային և քաղաքացիական ծառայության համակարգից դուրս են մասնավոր իրավունքի հիմունքներով աշխատանք կատարող անձնակազմ ունեցող քվազի-պետական կառույցներ՝ ՊՈԱԿ, ՀՈԱԿ, հիմնադրամներ, պետական մասնաբաժնով բաժնետիրական ընկերություններ և այլն: Այս կառույցներում ղեկավար և մասնագիտական պաշտոնների համալրման, գործառույթների նկարագրի, աշխատանքի գնահատման և ծառայողական այլ իրավահարաբերություններ կարգավորվում են հանրային կամ քաղաքացիական ծառայության օրենսդրությունից դուրս: Արդյունքում պետական գործառույթ իրականացնող տարբեր կատեգորիայի աշխատողների միջև ստեղծված են անհավասար պայմաններ:

- Պետական մարմինների կառուցվածքում քաղաքական, վարչական, հայեցողական, քաղաքացիական ծառայության պաշտոնների համախմբության մեջ առկա է լիազորությունների, խնդիրների ու գործառույթների համընկնումների արդյունքում կառավարման համակարգի տրամաբանության, գործընթացների կառավարման, պատասխանատվության և որոշումների կայացման ինստիտուտի խեղաթյուրում:
- Անձնակազմի հավաքագրման և համալրման համակարգի անկատարությունները, երբ դիմորդի գիտելիքների գնահատման գործընթացում գերակշռում է իրավական ակտերի իմացության, պակաս չափով՝ կարողությունների ու հմտությունների ստուգումը:
- Պետական համակարգում հորիզոնական շարժունության ցածր մակարդակը, ուղղահայաց շարժունության՝ առաջխաղացման խիստ սահմանափակ հնարավորությունները:
- Վերապատրաստման համակարգի հիմնական տարրերի՝ կարիքների վերհանում, ծրագրերի մշակում կամ դասընթացի միասնական ու համակարգային գնահատում, ոչ բավարար որակով իրականացումը:
- ՄՌԿ ստորաբաժանումների աշխատանքի՝ մեծապես վարչարարական բնույթը. դրանցում ծավալապես գերակշռում են աշխատանքի ընդունման հետ կապված վարչարարությունը, արձակուրդների տրամադրումը և այլն, նվազ ծավալով են մարդկային կապիտալի զարգացումը, կորպորատիվ մշակույթի տարրերի ներմուծումը, էթիկայի ու բարեվարքության հարցերը, աշխատանքային պայմանների զարգացման ուղղությամբ առաջարկների մշակումը, վերլուծությունների, հետազոտությունների իրականացումը:
- Հանրային ծառայությունը մի շարք պատճառներով գրավիչ և մրցունակ չէ երիտասարդների և արհեստավարժ մասնագետների համար, ինչի հետևանքով գործադիր իշխանության մարմիններում որակյալ մարդկային ռեսուրսներով ապահովվածության լրջագույն խնդիր կա: Կարևորագույն պատճառներից մեկը աշխատավարձի և նյութական խրախուսման անարդյունավետ համակարգն է վարձատրության չափի և կառուցվածքի, պարգևատրման համակարգի ոչ մոտիվացիոն բնույթի, ոչ բավարար արդյունավետությամբ գործող կատարողականի գնահատման համակարգի առկայությունը:

3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Վերոնշյալ խնդիրների լուծման նպատակով այս միջոցառման շրջանակներում իրականացվելու է հանրային ծառայության հորիզոնական և ուղղահայաց շրջանակի լավարկում, ինչպես նաև պետական հատվածում ֆինանսական և ոչ ֆինանսական համակարգերի լավարկում, հանրային հատվածի գրավչության բարձրացման մեխանիզմների մշակում և գործարկում:

4. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Միջոցառման ողջ ծավալով իրականացումն ապահովելու է հետևյալ հիմնական արդյունքները՝

- Պետական կառավարման համակարգի մարմինների գործառութային վերլուծության արդյունքներով մարմինների անձնակազմի գործառույթների վերանայում և ըստ այդմ՝ հանրային ծառայության տեսակների ու պաշտոնների դասակարգման գործող համակարգի լավարկում, հանրային ծառայողների աշխատանքի նկարագրի արդիականացում՝ ելնելով պետության, և այս ամենի արդյունքում՝ համակարգի ճկունության բարձրացում՝ միաժամանակ չխաթարելով ինստիտուցիոնալ կայունությունն ու արժանիքահենքության սկզբունքի պահպանումը:
- Պետական համակարգում արժանիքահենք և կատարողականի հիման վրա վարձատրության ու խրախուսման արդյունավետ համակարգի կայացում, այդ թվում՝ աշխատավարձի, պարգևատրման և կատարողականի գնահատման համակարգերի ռեֆորմի միջոցով:
- Անձնակազմի հավաքագրման և համալրման գործընթացներում կփոխառնվեն մասնավոր հատվածի լավագույն, միջազգային կիրառելի փորձը, արդյունքում՝ աշխատանքի ընդունման ընթացակարգերը կլինեն ոչ թե ֆորմալ գիտելիքները ստուգելու միջոց, այլ՝ կարողությունների, հմտությունների ու պոտենցիալի գնահատման հնարավորություն:
- Կներդրվեն մեխանիզմներ համակարգում ուղղահայաց և հորիզոնական շարժունությունը խթանելու նպատակով՝ միտված լավագույն փորձի փոխանակմանն ու կարողությունների շարունակական զարգացմանը:
- Կարդիականացվի նաև վերապատրաստումների գործող համակարգը՝ միտված վերապատրաստումները ոչ միայն կարողությունների ու գիտելիքի կատարելագործման, այլև՝ ոլորտի ռազմավարական ու քաղաքականության նպատակներին հասնելու համար անհրաժեշտ հմտությունների պաշար ձևավորելու միջոց դարձնելուն:

Անվտանգության խորհրդի գրասենյակ	
NN	**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ**

1.	<u>Հայաստանի Հանրապետության արտաքին հետախուզության ստեղծում:</u> **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագրով ամրագրված է արտաքին հետախուզական ծառայություն ունենալու հրամայականը: Բացի այդ, 2019թ. օգոստոսի 5-ին, այնուհետև՝ Հայաստանի Անկախության 29-րդ տարեդարձի միջոցառումների շրջանակում, Հայաստանի Հանրապետության վարչապետը ներկայացրել է Հայաստանի վերափոխման՝ մինչև 2050թ. Ռազմավարությունը, որտեղ նույնպես խոսվել է աշխարհի 10 ամենաարդյունավետ հետախուզական ծառայություններից մեկն ունենալու մասին: Հաշվի առնելով 2016թ. ապրիլյան և 2020թ. 44-օրյա պատերազի ընթացքում հետախուզական մարմինների կողմից տեղեկատվության տրամադրման գործընթացում առկա խնդիրները, հետախուզական տեղեկատվության օպերատիվության և որակի բարելավման անհրաժեշտությունը՝ Հայաստանն ունի նոր որակի Հետախուզություն ունենալու և սեփական հետախուզական դպրոցը ձևավորելու հրամայական՝ հետախուզական գործունեության անընդհատության և ոլորտի բարելավման ապահովման նպատակով: Հետախուզության առանձին կառույցի ստեղծման անհրաժեշտության մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ տարածաշրջանում միայն Հայաստանն է, որ առայժմ չունի առանձին հետախուզական ծառայություն: **1. 1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Հետախուզության առանձին կառույց լինելու անհրաժեշտության մասին է վկայում նաև աշխարհի տարբեր երկրներում գործող պրակտիկան: ԱԱԾ համակարգում հետախուզության լինելը հիմնականում պատճառաբանվում է տեխնիկական և ֆինանսական դժվարություններով: Հետախուզությանն իրականում ֆինանսական մեծ ներդրումներ է պահանջում, սակայն ԱԱԾ հետախուզության դեպարտամենտին ևս զգալի միջոցներ են հատկացվում: Բացի այդ, հարկ է նշել, որ Հետախուզության առանձնացումը կարող է էապես նպաստել ԱԱԾ գործառութային արդունավետության բարձրացմանը՝ հնարավորություն ստեղծելով կենտրոնանալ հակահետախուզության և ահաբեկչության դեմ պայքարի ուղղություններով: **1. 2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Հետախուզության առանձին կառույցի ստեղծման գործընթացն անհրաժեշտ է իրականացնել երկու ուղղություններով՝ գործադիր և իրավական՝ համապատասխանաբար կազմակերպչական բնույթի հիմնական աշխատանքներ իրականացնելու և համապատասխան օրենսդրական ապահովմանն ուղղված նախագծեր մշակելու նպատակով: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Նախատեսվում է ունենալ ժամանակակից ենթակառուցվածքներով և նյութատեխնիկական ապահովածությամբ Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովման գործընթացում ուրույն դերակատարում ունեցող, Հայաստանի Հանրապետության վարչապետին ենթակա մասնագիտացված արտաքին հետախուզական գործունեություն իրականացնող ծառայություն:
2.	<u>Պետական պահպանության ծառայության՝ որպես պետական կառավարման համակարգի առանձին մարմնի ստեղծում:</u> **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026թթ. ծրագրից: Ներկայիս օրենսդրական կարգավորումների համաձայն՝ պետական պահպանության ծառայությունն ունի Ազգային անվտանգության ծառայության գրասենյակի կարգավիճակ: Այդուհանդերձ, պետական պահպանության ծառայությունը հանդես է գալիս որպես որոշակիորեն ինքնուրույնությամբ օժտված միավոր, ինչը դրսևորվում է վերջինիս գործառույթների առանձնահատկությամբ և յուրահատկությամբ, որոնց իրացման գործընթացում թեև Ազգային անվտանգության ծառայության աջակցության կարիքն առանձին դեպքերում առկա է, սակայն դրանց կենսագործումն անմիջականորեն «պայմանավորված» չէ Ազգային անվտանգության ծառայության մասնակցությամբ և հարկ եղած դեպքում համապատասխան աջակցությունը լիարժեք կերպով կարող է տրամադրվել նաև պետական մարմինների միջև փոխգործակցության շրջանակներում: Ավելին, պետական պահպանության ծառայության որոշակի ինքնուրույնության արտացոլումն է նաև վարչապետի անմիջական մասնակցությունը նրա ղեկավար կազմի ձևավորման հարցում (ծառայության ղեկավարը նշանակվում և ազատվում է Հանրապետության նախագահի կողմից՝ վարչապետի առաջարկությամբ, իսկ առաջին տեղակալը՝ վարչապետի կողմից՝ Ազգային անվտանգության ծառայության տնօրենի ներկայացմամբ):

	1. 1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Առաջարկվում է պետական պահպանության ծառայությունն առանձնացնել ազգային անվտանգության ծառայության մարմինների համակարգից և դրա հետագա գործունեությունը շարունակել՝ որպես պետական կառավարման համակարգի մարմին: Կարևորել զինծառայողներով համալրված և «այլ զորքերի» կարգավիճակով օժտված մարմնի գործառույթների օպերատիվ կառավարման անհրաժեշտությունը, ինչպես նաև նկատի ունենալով այն, որ պետական պահպանության ծառայության պարագայում ծառայությունը պայմանավորված է ամենօրյա ռեժիմով իրավիճակին արագ արձագանքելու և համարժեք գործողություններ իրականացնելու հրամայականով՝ նախատեսվում է վերջինիս ներառել վարչապետին ենթակա մարմինների շարքում: **1. 2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Միջոցառումը նախատեսվում է իրականացնել երկու ուղղություններով՝ գործադիր և իրավական՝ համապատասխանաբար կազմակերպչական բնույթի հիմնական աշխատանքներ իրականացնելու և համապատասխան օրենսդրական ապահովմանն ուղղված նախագծեր մշակելու նպատակով: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Ակնկալվում է պետական պահպանության ծառայությանը տրամադրել Վարչապետին ենթակա մարմնի կարգավիճակ՝ այն դուրս բերելով ազգային անվտանգության ծառայության մարմինների համակարգից և արդյունքում ունենալ մասնագիտացված պետական պահպանական գործունեություն իրականացնող ծառայություն:
3.	<u>Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության լրամշակում (վերանայում)՝ Հայաստանի Հանրապետության առջև ծառացած նոր մարտահրավերների հաշվառմամբ</u> **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագրից բխում է Ազգային անվտանգության ռազմավարության վերանայման և արդիականացման հրամայականը: 2020 թվականի 44-օրյա պատերազմից հետո տարածաշրջանային անվտանգային միջավայրն էական փոփոխություններ է կրել՝ Հայաստանի առջև ծառացած մարտահրավերները դարձնելով ավելի բարդ և բազմաշերտ: Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում 2021 թվականին կայացած արտահերթ խորհրդարանական ընտրությունների արդյունքում ձևավորված նոր կառավարության ծրագրի դրույթների կենսագործման կարևորությունը՝ անհրաժեշտություն է առաջացել վերանայելու ազգային անվտանգության ռազմավարությունը, ինչը թույլ կտա հիմնարար այդ փաստաթղթում արտացոլել Հայաստանի շուրջ ստեղծված նոր անվտանգային սպառնալիքները և դրանց դիմակայելու և հաղթահարելու ուղիները, անվտանգային ոլորտին առնչվող առաջնահերթությունները, ինչպես նաև լրամշակել Հայաստանի Հանրապետության ազգային շահերի ապահովման միջոցները: **1. 1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ստեղծված միջավայրում Հայաստանի Հանրապետության տարածքային անձեռնմխելիությունը և բնականոն զարգացումը հնարավոր է միայն առաջանցիկ անվտանգային կառուցակարգերի վերանայման պայմաններում: Ազգային անվտանգության ռազմավարության վերանայման անհրաժեշտությունը պայմանավորված է ինչպես ՀՀ ներքին, այնպես էլ արտաքին միջավայրից բխող խնդիրներին և մարտահրավերներին դիմակայելու, անվտանգային գործուն մեխանիզմներ մշակելու անհրաժեշտությամբ: **1. 2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ռազմավարության լրամշակման աշխատանքներ իրականացնելու նպատակով անհրաժեշտ է ստեղծել միջգերատեսչական հանձնախումբ՝ կազմակերպչական բնույթի հիմնական աշխատանքներ իրականացնելու և համապատասխան նախագիծ մշակելու նպատակով: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Նախատեսվում է ունենալ վերանայված և արդիականացված անվտանգային ոլորտում ուղենիշային հանդիսացող փաստաթուղթ, ինչն իր հերթին կնպաստի Հայաստանի անվտանգային համակարգերի արդիականացմանը,

	ինչպես նաև ռազմավարությունից բխող այլ ոլորտային ռազմավարությունների և քաղաքականությունների լրամշակմանը և ներդաշնակեցմանը:

Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակ	
NN	ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ
1.	**1.1 «Հայրենադարձության մասին» ՀՀ օրենքի նախագիծի ներկայացում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Անհրաժեշտությունը բխում է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներից, ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրի «1.4. Սփյուռքի հետ կապեր» ենթաբաժնի 5-րդ կետից, ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության «Հայաստան-սփյուռք. Համահայկականության ձևավորում» բաժնի 5.29 կետից և Հայաստանի մինչև 2050 վերափոխման ռազմավարությունից՝ էջ 50: Նպատակն է հայկական սփյուռքի հետ համակողմանի կապերի զարգացման և հայապահպանմանն ուղղված քաղաքականության իրականացումը, հայրենադարձությանը նպաստումը, հայության համախմբումը Հայրենիքում և ՀՀ ժողովրդագրական իրավիճակի բարելավումը: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Հայրենադարձությունը, որպես պետական քաղաքականության կարևոր բաղադրիչ, համահայկական ներուժի համախմբմանն ուղղված մի շարք միջոցառումների մշակումն ու իրականացումն է: Հայրենադարձությունը դիտարկվում է հայրենիքում բնակություն հաստատելու յուրաքանչյուր հայի իրավունք, և, որպես հայապահպանության կարևոր գործոն, գտնվում է պետության հովանավորության ներքո: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Խթանելով հայրենադարձության գործընթացը՝ զգալիորեն ամրապնդել Հայաստանի Հանրապետության տնտեսական, քաղաքական, մտավոր ու պաշտպանական ներուժը: «Հայրենադարձության մասին» ՀՀ օրենքի հիմնական նպատակը հայրենադարձության հետ կապված իրավահարաբերությունների կարգավորումն է: Օրենքի հիմնական խնդիրներն են սահմանել՝ հայրենադարձության վերաբերյալ պետական քաղաքականության հիմնական նպատակները, ուղղությունները և սկզբունքները, հայրենադարձության հարցերով պետական մարմինների լիազորությունները, հայրենադարձության դիմումի ներկայացման, հայրենադարձի կարգավիճակի տրամադրման և հայրենադարձի ինտեգրման կարգը, արտոնությունները և դրանց տրամադրման կարգերը: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** «Հայրենադարձության մասին» ՀՀ օրենքի ընդունումը հնարավորություն կընձեռի կազմակերպելու հայրենադարձության գործընթացի իրավական հիմքերը:
	1.2. Հայրենադարության և ինտեգրման կենտրոնի ստեղծում և գործունեության ապահովում
	1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Անհրաժեշտությունը բխում է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներից, ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրի «1.4. Սփյուռքի հետ կապեր» ենթաբաժնի 5-րդ կետից, ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության «Հայաստան-սփյուռք. Համահայկականության ձևավորում» բաժնի 5.29 կետից և Հայաստանի մինչև 2050 վերափոխման ռազմավարությունից՝ էջ 50: Նպատակն է ներդնել հայրենադարձվող և վերադարձող անձանց/ընտանիքների տարատեսակ խնդիրների վերհանման, արձանագրման ու կարգավորման արդյունավետ մեխանիզմ, որն, որպես միասնական հարթակ, նպաստելու է հայրենադարձների/վերադարձողների ու պետական մարմինների միջև արագ փոխգործակցությանը: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության 2019 թվականի ծրագրի համաձայն, ինչպես նաև մինչև 2050 թվականը շարունակական ու մեծաքանակ ներգաղթ ապահովելու առաջադրված խնդրի լուծմանը հասնելու համար՝ պետական քաղաքականության առաջնահերթություններից է հանդիսանում հայրենադարձության խթանումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում ինտեգրման գործընթացի արդյունավետ

կազմակերպումը: Հայրենադարձների և վերադարձողների ինտեգրումը համակարգված և համալիր ձևով իրականացնելու առումով այսօր կարևոր խնդիր է մեր հայրենակցիներին արագ, որակյալ ու մատչելի ծառայությունների տրամադրումը: «Մեկ պատուհանի» սկզբունքով գործող ինտեգրման կենտրոնի բացակայությունը զգալիորեն խոչընդոտում է որակյալ ծառայությունների իրականացումը, որի ներդրումից հետո կապահովվի հայրենադարձության ողջ գործընթացի անհատականացված ծառայության մատուցումը, կլուծվեն առկա շատ խնդիրներ:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Նախատեսվում է ստեղծել հայրենադարձության և ինտեգրման կենտրոն, որը ծառայելու է որպես միասնական հարթակ հայրենադարձությանն առնչվող բոլոր հարցերի և խնդիրների կարգավորման համար: Այն կբարելավվի հայրենադարձության ողջ գործընթացի հասանելիությունն ու արդյունավետությունը, ինչն էլ հնարավորություն կընձեռի կարգավորել հայրենադարձների ինտեգրման հետ կապված տարատեսակ խնդիրները, կնպաստի Հայաստանի Հանրապետությունում արագ, արդյունավետ և համալիր ծառայությունների իրականացմանը, կկարգավորվեն հայրենադարձների առաջնահերթ խնդիրները: Այնտեղ իրականացվելու է պետական և հասարակական այլ մարմինների հետ աշխատանքների կոորդինացում: Պետությունն առավել պատրաստ կլինի կամավոր կամ արտակարգ պայմաններում հայրենադարձության հոսքերի ավելացմանն ու սպասարկմանը: Կենտրոնը կլինի հայրենադարձվող և վերադարձող անձանց/ընտանիքների խնդիրների վերհանման, արձանագրման ու կարգավորման արդյունավետ մեխանիզմ: Կենտրոնի աշխատակիցները լինելու են ՀՀ սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի աշխատակիցները: Կենտրոնի ստեղծման վերաբերյալ իրավական ակտի նախագծի ներկայացում չի նախատեսվում:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Հայրենադարձության և ինտեգրման կենտրոնը ծառայելու է որպես միասնական հարթակ հայրենադարձությանն ու ինտեգրմանն առնչվող բոլոր հարցերի և խնդիրների կարգավորման համար: Նախատեսվում է 2022 թվականին սպասարկել առնվազն 2500 հոգու՝ հաջորդ տարիներին այդ թիվը մեծացնելու ակնկալիքներով:

1.3. Հակամարտության գոտիներից և արտակարգ իրավիճակներում հայտնված համայնքներից վերադարձած/հայրենադարձված հայրենակիցների առողջապահական աջակցության տրամադրում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Անհրաժեշտությունը բխում է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներից, ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրի «1.4. Սփյուռքի հետ կապեր» ենթաբաժնի 5-րդ կետից, ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության «Հայաստան-սփյուռք. Համահայկականության ձևավորում» բաժնի 5.29 կետից և Հայաստանի մինչև 2050 վերափոխման ռազմավարությունից՝ էջ 50: Միջոցառման նպատակն է աջակցել հակամարտության գոտիներից և արտակարգ իրավիճակներում հայտնված համայնքներից վերադարձածներին/հայրենադարձներին առողջապահական խնդիրների լուծմանը:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Հակամարտության գոտիներից և արտակարգ իրավիճակներում հայտնված համայնքներից հայրենադարձների ինտեգրումը համակարգված և համալիր ձևով իրականացնելու առումով առանցքային խնդիրներից է մեր հայրենակիցներին հուզող առողջապահական ոլորտի հետ կապված որակյալ ու մատչելի ծառայությունների տրամադրման հարցը, որը շատերի համար արտագաղթի պատճառ է հանդիսացել:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Հակամարտության մեջ ու արտակարգ իրավիճակներում հայտնված այլ համայնքներից տարեկան առնվազն 100 վերադարձած/հայրենադարձ հայրենակիցներ պետական պատվերի շրջանակներում կստանան առողջապահական աջակցություն, որը հնարավորություն կտա լուծելու նրանց առաջնահերթ բժշկական խնդիրները (ախտորոշում և բուժում, բացառությամբ նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաների կիրառմամբ մատուցվող բժշկական ծառայությունների):

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Միջոցառման իրականացումը հնարավորություն կտա լուծելու հակամարտության գոտիներից և արտակարգ իրավիճակներում հայտնված համայնքներից հայրենադարձների առաջնահերթ բժշկական խնդիրները:

1.4. ՀՀ մշտական բնակության վերադարձած/հայրենադարձված ուսանողների համար ՀՀ պետական ԲՈՒՀ-երում անվճար կրթության իրականացում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Անհրաժեշտությունը բխում է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներից, ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրի «1.4. Սփյուռքի հետ կապեր» ենթաբաժնի 3-րդ և 5-րդ կետերից, ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության «Հայաստան-սփյուռք. Համահայկականության ձևավորում» բաժնի 5.29 կետից և Հայաստանի մինչև 2050 վերափոխման ռազմավարությունից՝ էջ 50: Միջոցառման նպատակն է աջակցել հայրենադարձ ուսանողներին Հայաստանի Հանրապետության ԲՈՒՀ-եր ընդունվելու գործընթացում:

	1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Այժմ սփյուռքահայերը կարող են անվճար սովորել հայաստանյան բուհերի միայն հայագիտական ուղղություններով՝ տարեկան մինչև 70 տեղ, սակայն սփյուռքահայերի կողմից բազմիցս բարձրացվել է այլ ուղղություններով ևս անվճար կրթություն ստանալու հնարավորության ընձեռումը: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Առաջարկվում է բացի հայագիտական մասնագիտացումներից լրացուցիչ տեղեր հատկացնել այլ մասնագիտությունների գծով ուսուցում ստանալու համար: ՀՀ պետական ԲՈՒՀ-երում տարեկան մինչև 100 վերադարձած/հայրենադարձված ուսանողներ (ուսումնական տարին սկսելուց առավելագույնը 2 տարի առաջ Հայաստան տեղափոխված) կստանան բակալավրիատի ծրագրով ուսման վարձավճարի ամբողջական փոխհատուցմամբ առկա, պետպատվերի շրջանակներում չլրացված տեղերի /յուրաքանչյուր տարվա Բուհ-ական ընդունելության քննությունների ավարտից և դրանց արդյունքների ամփոփումից հետո/ հատկացում հայրենադարձ/վերադարձած հայրենակիցներին ԲՈՒՀ-ական կրթություն ստանալու և ՀՀ–ում ինտեգրվելու հնարավորությունների ընդլայնման նպատակով: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Ապահովում է հայագիտական և մյուս մասնագիտությունների գծով բուհական կրթության ձեռք բերումը և հնարավորություններ է ընձեռում կրթության շարունակականությունը հայաստանյան ԲՈՒՀ-երում:
2.	**2.1. «Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում**
	1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Անհրաժեշտությունը բխում է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի դրույթներից, ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրի «1.4. Սփյուռքի հետ կապեր» բաժնից, ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության «Հայաստան-սփյուռք. Համահայկականության ձևավորում» բաժնի կետերից և Հայաստանի մինչև 2050 վերափոխման ռազմավարությունից: ՀՀ կառավարության որոշման նախագծում ըստ ուղղությունների կներկայացվեն վերոնշյալ իրավական ակտերում սահմանված դրույթների իրականացման քայլերը և ակնկալվող արդյունքները: Նպատակն է սահմանել Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման հիմնական ուղղությունները: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** 2009 թվականին ՀՀ կառավարության արձանագրային որոշմամբ հաստատվել է Հայաստան-Սփյուռք գործակցությա հայեցակարգը՝ որը սահմանում էր ՀՀ սփյուռքի նախարարության և ՀՀ այլ գերատեսչությունների կողմից սփյուռքի հետ գործակցության հիմնական ուղղությունները: ՀՀ սփյուռքի նախարարությունը, վերակազմակերպվելով ՀՀ վարչապետի աշխատակազմում, նրա կողմից իրականացվող մի շարք գործառույթներ վերաբաշխվեցին ոլորտային նախարարություններին, բայց մի մասը մնացին բաց: Դեռևս չկա Հայաստան-Սփյուռք գործակցությունը կարգավորող որևէ նորմատիվ իրավական ակտ, որը հնարավորություն կտար կազմակերպել և իրականացնել Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացումը բոլոր ուղղություններով: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** «Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշմամբ կսահմանվեն Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման հիմնական ուղղությունները և համահայկական օրակարգ ձևավորելու իրավական հիմքերը: Որոշման մեջ կներկայացվեն Հայաստան-Սփյուռք գործակցության այն բոլոր ուղղությունները, որոնց իրականացումը բխում է ՀՀ սահամանդրության և ՀՀ կառավարության ծրագրի դրույթներից: Այն իր մեր ներառելու է մի շարք ռազմավարական ուղղություններ՝ հայրենադարձություն, հայապահպանություն, աջակցություն հայ համայնքներին, արտակարգ իրավիճակներում հայտնված հայությանն աջակցություն, Սփյուռքի ներուժի ներգրավում Հայաստանի Հանրապետության զարգացման ծրագրերում և այլն: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը հնարավորություն կընձեռի Սփյուռքի հետ տարվող աշխատանքներն իրականացնել բոլոր ուղղություններով և կսահմանի համահայկական օրակարգի հիմքերը:
	2.2. Սփյուռքահայերին և հայրենադարձներին առնչվող ՀՀ օրենսդրության բարելավում
	1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Անհրաժեշտությունը բխում է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի դրույթներից, ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրի «1.4. Սփյուռքի հետ կապեր» բաժնի 5-րդ կետից և ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության «Հայաստան-սփյուռք. Համահայկականության ձևավորում» բաժնի 5.23 կետից: Նպատակն է վերացնել կամ պարզեցնել այն օրենսդրական արգելքները, որոնք թույլ չեն տալիս սփյուռքահայերին լիարժեք ներգրավվելու Հայաստանի Հանրապետության հանրային կյանքում:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները
Ներկայումս ՀՀ պետական կառավարման ոլորտում ներգրավվել կարող են բացառապես ՀՀ քաղաքացիություն ունեցող, իսկ առանձին պաշտոնների պարագայում պահանջվում է նաև ՀՀ-ում մշտական բնակության ժամանակային սահմանափակում: Բացի այդ պետական կառավարման օղակներում պահանջվում է հանրային ոլորտում ծառայության որոշակի ստաժ այս կամ այն պաշտոնը զբաղեցնելու համար: Սփյուռքահայերի՝ ընտրական իրավունքը ևս սահմանափակ է: Խնդրի կարգավորումը բազմիցս բարձրացվել է սփյուռքահայերի կողմից և ՀՀ կառավարությունն իր հերթին անդրադարձել է հարցի կարգավորման անհրաժեշտությանը:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները
Մի շարք օրենսդրական ակտերում իրականացնել փոփոխություններ, մշակել նոր իրավական ակտեր, որոնք հնարավորություն կտան սփյուռքահայերին աշխատել ՀՀ հանրապետական գործադիր, տեղական ինքնակառավարման և օրենսդիր մարմիններում, պարզեցված կարգով սովորել ՀՀ բուհերում, մասնակցություն ունենալ Հայաստանի Հանրապետությունում անկացվող ընտրական պրոցեսներին և այլն:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը
ՀՀ օրենսդրական փոփոխությունները հնարավորություն կընձեռեն սփյուռքահայերին ներգրավվել Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգում, կնպաստի ներդրումների ներգրավման մեխանիզմների պարզեցմանը, բարեգործական և հասարակական ձեռնարկների իրականացման արդյունավետության բարձրացմանը և այլ ոլորտների զարգացմանը:

2.3. «Քայլ դեպի տուն» միջոցառման իրականացում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը
Անհրաժեշտությունը բխում է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի դրույթներից, ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրի «1.4. Սփյուռքի հետ կապեր» բաժնի 3-րդ կետից և ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության «Հայաստան-սփյուռք. Համահայկականության ձևավորում» բաժնի 5.27 կետից: Նպատակն է նպաստել սփյուռքի 13-18 հայ երիտասարդների ազգային ինքնության պահպանումը և զարգացումը, հայրենաճանաչության մակարդակի բարձրացումը, սփյուռքահայ պատանիների Հայաստան ճանաչողական այցելությունների ծավալների մեծացումը:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները
Սփյուռքում վտանգված է հայապահպանությունը, հայոց լեզուն, հայկական մշակույթը: Սփյուռքի կենսունակության գրավականը հայրենիքի հետ երիտասարդության մշտական և բազմաբնույթ կապերն ու հարաբերություններն են, պատանիների ու աղջիկների Հայաստան ճանաչողական այցելություններն են, իրենց հասակակիցների հետ ծանոթություններն ու շփումները, հայկական հարուստ ժառանգության հետ նրանց մշտական առնչությունները:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները
«Քայլ դեպի տուն» ծրագրի իրականացման միջոցով հնարավոր է Սփյուռքի երիտասարդության համար ճանաչելի դարձնել սեփական հայրենիքը, լեզվամշակութային արժեքները, այդ ճանապարհով նպաստել Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդմանը, հայապահպանությանը Սփյուռքում: Միջոցառման շրջանակներում կազմակերպվելու են ճանաչողական այցելություններ Հայաստանի պատմամշակութային վայրեր, կրթական հաստատություններ, թանգարաններ, գյուղական համայնքներ, ինչպես նաև հայերենի ուսուցման արագացված դասեր (ըստ լեզվի իմացության մակարդակի, տարիքային խմբերի, արևմտահայերենի և արևելահայերենի բաժանման և այլն), հայրենագիտության դասընթացներ:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը
Միջոցառման իրականացումը հնարավորություն կընձեռի Սփյուռքի պատանիներին և երիտասարդներին այցելելու Հայաստանի պատմամշակութային կոթողներ, թանգարաններ, կրթական կենտրոններ, գյուղական համայնքներ: Միջոցառման շրջանակներում մասնակիցները կսովորեն հայերեն, հայրենագիտություն, ազգային երգ ու պար, կունենան հանդիպումներ պետական, հասարակական մշակույթի և արվեստի գործիչների հետ, մասնակիցը կլինեն մի շարք մարզական և մշակութային միջոցառումների: Նրանք, վերադառնալով բնակության երկրներ, իրենց տպավորությունները կփոխանցեն հասակակիցներին, ինչը կնպաստի հաջորդ տարիներին նրանց Հայաստան այցելությանը: Տարեկան նախատեսվում է 400 հոգու մասնակցություն: 2024 թվականից նախատեսվում է տարեկան 600 հոգու մասնակցություն:

2.4. «Սփյուռքի երիտասարդ առաջնորդների վերապատրաստում» միջոցառման իրականացում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը
Անհրաժեշտությունը բխում է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի դրույթներից, ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրի «1.4. Սփյուռքի հետ կապեր» բաժնի 2-րդ և 4-րդ կետերից և ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության «Հայաստան-սփյուռք. Համահայկականության ձևավորում» բաժնի 5.28 կետից: Միջոցառման նպատակն է աջակցել Սփյուռքի այն երիտասարդներին, ովքեր ներգրավված են Հայաստան-Սփյուռք հարաբերությունների ամրապնդման գործընթացներում և աշխատանքներ են տանում

համայնքային կյանքի ակտիվացման, հայկական շահերի պաշտպանության ուղղությամբ, ինչպես նաև ձևավորել հայ երիտասարդների դինամիկ ցանց, որը կունենա աշխարհի տարբեր համայնքներից սփյուռքահայ երիտասարդների ընդլայնված ներկայացվածություն:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Այսօր սփյուռքում առկա մարտահրավերներից է ուծացումը, խառնամուսնությունները. քիչ թվով երիտասարդներ են ներգրավված համայնքային կյանքին և համայնքային կառույցների միջև համագործակցությունը գտնվում է ցածր մակարդակի վրա:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Հայաստանում կազմակերպվող երկշաբաթյա վերապատրաստման ծրագրին մասնակցելուց հետո երիտասարդները վերադառնում են համայնքներ և մեկ տարվա ընթացքում իրականացնում են (ընդհանուր թվով) համայնքային և իրազեկման հանդիպումներ՝ առնվազն 60, միջհամայնքային աշխատանքների փորձի փոխանակման ձեռնարկներ՝ առնվազն՝ 20, սոցիալական հարթակներում և լրատվական միջոցներում գրասենյակի, հայաստանյան այլ ծրագրերի վերաբերյալ հրապարակումներ և տեղեկատվական նախաձեռնություններ՝ առնվազն՝ 40: 2024 թվականից միջոցառմանը տարեկան մասնակցելու է 30 հոգի և մեկ տարվա ընթացքում իրականացնելու են (ընդհանուր թվով) համայնքային և իրազեկման հանդիպումներ՝ առնվազն 80, միջհամայնքային աշխատանքների փորձի փոխանակման ձեռնարկներ՝ առնվազն՝ 20, սոցիալական հարթակներում և լրատվական միջոցներում գրասենյակի, հայաստանյան այլ ծրագրերի վերաբերյալ հրապարակումներ և տեղեկատվական նախաձեռնություններ՝ առնվազն՝ 50:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Միջոցառման մասնակիցները, Հայաստանում 2 շաբաթ վերապատրաստվելուց հետո, 1 տարի իրենց բնակության երկրներում աջակցելու են միջոցառումների իրականացմանը, ունենալու են համայնքային հանդիպումներ, ներկայացնելու են գրասենյակի ծրագրերը և այլն:

2.5. «ԻԳործ» սփյուռքահայ մասնագետների ներգրավում ՀՀ պետական կառավարման համակարգում» միջոցառում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրի «1.4. Սփյուռքի հետ կապեր» բաժնի 3-րդ կետից և ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության «Հայաստան-սփյուռք. Համահայկականության ձևավորում» բաժնի 5.23 կետից: Միջոցառման նպատակն է սփյուռքի բարձրակարգ մասնագետներին հնարավորություն տալ իրենց փորձն ու գիտելիքները կիրառել ՀՀ պետական կառավարման համակարգի մարմիններում: 2024 թվականից ծրագրի անվանումը լինելու է «ԻԳործ» սփյուռքահայ մասնագետների ներգրավում ՀՀ պետական կառավարման համակարգում»:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Սփյուռքի կողմից ՀՀ կառավարությանն ուղղված առաջարկություններից է հանդիսանում Սփյուռքահայերին հնարավորություն ընձեռել ներգրավվելու Հայաստանի Հանրապետության հանրային հատվածում և թույլ տալ զբաղեցնել տարբեր պաշտոններ ՀՀ պետական կառավարման տեղական ինքնակառավարման մարմիններում: Այն այժմ իրագործելի չէ, քանի որ դրա համար անհրաժեշտ կլինի իրականացնել մի շարք օրենսդրական փոփոխություններ

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Միջոցառման շրջանակներում նախատեսվում է տարեկան մինչև 50 սփյուռքահայ բարձրակարգ մասնագետների ներգրավվել Հայաստանի պետական կառավարման համակարգի մարմիններում: Պետությունը հոգալու Հայաստանում նրանց կեցության բոլոր ծախսերը, տրամադրելու առողջապահական ապահովագրության փաթեթ, ինչպես նաև հոգալու է նրանց դեպի Հայաստան և հակառակը ճանապարհածախսը:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Հայաստանի համապատասխան ոլորտի մասնագետների հետ համատեղ կմշակվեն տարեկան առնվազն 5 նոր ծրագիր՝ նպատակաուղղված ՀՀ զարգացմանը: Ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվում է մասնագիտական հայրենադարձություն, յուրաքանչյուր տարի մինչև 25%:

2.6. Հայաստան-Սփյուռք գործակցության վերաբերյալ իրազեկման ապահովում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրի «1.4. Սփյուռքի հետ կապեր» բաժնի 3-4-րդ կետերից: Ծրագրի նպատակն է Սփյուռքի հայ համայնքներին հասանելի դարձնել հայկական մշակույթը, արվեստը, պատմությունը, ազգային արժեքներն ու ֆիլմերը: Միջոցառման նպատակն է նաև Սփյուռքում ներկայացնել հայրենադարձների պատմությունները, Հայաստանում սփյուռքահայ գործարարների ներդրումները, բարեգործական ծրագրերը, ինչպես նաև Հայաստան-Սփյուռք գործակցությանը նպատակաուղղված ՀՀ կառավարության ծրագրերը:

	1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Հայկական սփյուռքի շատ համայքներում չկան հայկական կրթական հաստատություններ, դպրոցներ, ակումբներ, որի արդյունքում հատկապես երեխաների, երիտասարդների համար մատչելի չէ սեփական ժողովրդի ինքնության որակների, պատմությանը, լեզվին և մշակույթին հաղորդակից լինելը, ինչն էլ ավելի է բարդացնում հայապահպանության գործընթացը: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Հայաստան-Սփյուռք համագործակցության, ծրագրերի, հայրենադարձության, Սփյուռքից ներդրումների, սփյուռքահայ մասնագիտական ներուժը հայաստանյան կյանքին ներգրավելու վերաբերյալ հաղորդումների, տեսանյութերի, անիմացիոն նյութերի, ուղիղ եթերների, ֆիլմերի պատվիրում, հեռարձակում և առաջմղում սոցիալական հարթակներում, հեռուստաընկերությունների մետրային և արբանյակային սփռմամբ, Սփյուռքի համայնքային կայքերում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառան արդյունքում կիրականացվի Հայաստան-Սփյուռք համագործակցության, ծրագրերի, հայրենադարձության, Սփյուռքից ներդրումների, սփյուռքահայ մասնագիտական ներուժը հայաստանյան կյանքին ներգրավման վերաբերյալ տարեկան առնվազն 30 հաղորդումների, 50 տեսանյութերի, 10 անիմացիոն նյութերի, 4 ուղիղ եթերների, 4 ֆիլմերի պատրաստում, հեռարձակում և առաջմղում սոցիալական հարթակներում, հեռուստաընկերություններում և Սփյուռքի համայնքային կայքերում: Եռալեզու լրատվության ապահովում գրասենյակի կայքում, տարեկան առվնազն 300 մամուլի հաղորդագրությունների տարածում, բոլոր սոցիալական հարթակներում տարեկան առնվազն 2200 հրապարակումների իրականացում, ինչպես նաև տարեկան առնվազն 12 հնգալեզու տեղեկագրերի տարածում սփյուռքի 30 հազարից ավելի էլ. հասցեների: Տեղեկատվական հարթակներում գրասենյակի և առկա ծրագրերի բրենդավորում և առաջմղում: Տեղեկատվական համագործակցություն սփյուռքյան և հայաստանյան առնվազն 40 գործընկերների հետ՝ հանրայնացման և սփյուռքին վերաբերող ծրագրերի և նորությունների մասին իրազեկման աստիճանի բարձրացման համար:
	2.7. «Աջակցություն Վրաստանի հայալեզու լրատվամիջոցներին» միջոցառման իրականացում
	1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրի «1.4. Սփյուռքի հետ կապեր» բաժնի 7-րդ կետից և ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության «Հայաստան-սփյուռք. Համահայկականության ձևավորում» բաժնի 5.27 կետից: Նպատակն է հայկական սփյուռքի հետ համակողմանի կապերի զարգացման և հայապահպանմանն ուղղված քաղաքականության իրականացումը, հայրենադարձությանը նպաստումը: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Հայաստանի Հանրապետության և հայկական սփյուռքի գործակցության ապահովումը, դրանց միջև կապերի ամրապնդումը և հայ ժողովրդի հոգևոր միասնությունը Կառավարության քաղաքականության կարևոր բաղադրիչն է: Հայապահպանության և հայ համայնքների զարգացման համար բարենպաստ միջավայրի ձևավորմանն ու զարգացմանը, համահայկական ծրագրերի մշակմանն ու իրականացմանն աջակցությունը: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Վրաստանի հայալեզու առնվազն 3 լրատվամիջոցների գործունեության ապահովելու նպատակով դրամաշնորհների տրամադրում, որի արդյունքում վրացահայությունը հնարավորություն կունենա հայերենով ծանոթանալու թե Հայաստանի ներքին և արտաքին քաղաքականության, թե Վրաստանի հայ համայնքի վերաբերյալ տեղեկատվությանը: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Վրաստանի հայալեզու առնվազն 3 լրատվամիջոցների գործունեության ապահովում:
	2.8. Սփյուռքի գործերի հանձնակատարների ինստիտուտի ձևավորում
	1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրի «1.4. Սփյուռքի հետ կապեր» բաժնի 9-րդ կետից և ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության «Հայաստան-սփյուռք. Համահայկականության ձևավորում» բաժնի 5.28 կետից: Միջոցառման նպատակն է սփյուռքի համայնքներում ունենալ սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի ներկայացուցիչներ: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** ՀՀ սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակը չունի իր ներկայացուցչությունները Սփյուռքում, որն իր հերթին դժվարություններ է առաջացնում տեղեկացված լինելու համայնքում տեղի ունեցող իրադարձություններին, հետևաբար նաև աջակցելու դրանց լուծմանը: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

	Նախատեսվում է սփյուռքի համայնքներում նշանակել Սփյուռքի գործերի հանձնակատարներ, ովքեր կլինեն ՀՀ սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի ներկայացուցիչները Սփյուռքում՝ ապահովելով համայնքների հետ մշտական կապը, ծրագրերի վերաբերյալ իրազեկումը, խնդիրների վերհանումը և կառաջարկեն դրանց լուծման ուղիները: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** 2023 թվականին նախատեսվում է առնվազն 2 սփյուռքի գործերի հանձնակատարի նշանակում:
	2.9. Սփյուռքահայ խորհրդի ձևավորում
	1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրի «1.4. Սփյուռքի հետ կապեր» բաժնի 1-ին կետից և ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության «Հայաստան-սփյուռք. Համահայկականության ձևավորում» բաժնի 5.21 կետից: Միջոցառման նպատակն է ձևավորվել Սփյուռքի և Հայաստանի հայտնի ոլորտային գործիչներից բաղկացած խորհուրդ՝ Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման ուղղությամբ իրականացվելիք ծրագրերի քննարկման համար: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** ՀՀ կառավարության կողմից Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման ուղղությամբ իրականացվող ծրագրերը մինչ սկսելը հաճախ չեն քննարկվում սփյուռքահայերի հետ և դա երբեմն մեծ դժգոհություններ է առաջացնում սփյուռքահայերի շրջանում: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** ՀՀ սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարին կից ձևավորվելու է խորհրդակցական մարմին բաղկացած հիմնականում սփյուռքահայ հայտնի գործիչներից՝ Հայաստան-Սփյուռք փոխգործակցության ծրագրերը քննարկելու նպատակով: Իրավական ակտի նախագծի ներկայացում չի նախատեսվում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Ունենալ սփյուռքահայերի ներգրավմամբ խորհրդակցական մարմին՝ Հայաստան-Սփյուռք փոխգործակցության իրականացվելիք ծրագրերը նախապես պլանավորելու և քննարկելու համար: 2023 թվականին նախատեսվում է ձևավորել խորհուրդը:
3.	**3.1. Սփյուռքի մարդկային ներուժի վերհանում և դրա քարտեզագրում**
	1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրի «1.4. Սփյուռքի հետ կապեր» բաժնի 2-րդ կետից և ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության «Հայաստան-սփյուռք. Համահայկականության ձևավորում» բաժնի կետերից: Միջոցառման նպատակն է վերհանել տարբեր ոլորտներում առկա Սփյուռքի մարդկային ներուժը և քարտեզագրել են: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Հայաստան-սփյուռք գործակցության խորացման համար կարևոր է իրականացնել հայկական սփյուռքում առկա ռեսուրսների համակարգված ուսումնասիրություն և բացահայտել Սփյուռքի մարդկային, այդ թվում մասնագիտական ամբողջ ներուժը: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Նախատեսվում է համացանցից և այլ բաց աղբյուրներից վերհանել սփյուռքի մասնագիտական, տնտեսական, գիտակրթական, մշակութային և այլ ոլորտներում առկա մարդկային ներուժը, որն հնարավորություն կտա ամբողջական տեղեկատվություն ունենալ սփյուռքում առկա մարդկային ներուժի վերաբերյալ: Միջոցառման շրջանակներում նախատեսվում է Սփյուռքում իրականացնել լայնածավալ փաստահավաք առաքելություն և հավաքված տեղեկատվությունն ամփոփել մեկ ընդհանուր տեղեկատվական հարթակում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** 2023 թվականից սկսած նախատեսվում է տարեկան հավաքագրել 25000 սփյուռքահայ անհատի վերաբերյալ տվյալ և լրամշակել արդեն հավաքագրված տեղեկատվությունը: 2024 թվականին նախատեսվում է լրամշակել նախկինում հավաքագրված 50000 հատ տվյալները:
	3.2. Սփյուռքի համայնքների ուսումնասիրությունների իրականացում
	1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրի «1.4. Սփյուռքի հետ կապեր» բաժնի 2-րդ կետից և ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության «Հայաստան-սփյուռք. Համահայկականության ձևավորում» բաժնի կետերից: Միջոցառման նպատակն է ուսումնասիրել սփյուռքի հայ համայնքները և ունենալ ամբողջական տեղեկատվություն համայնքի ներուժի ու գործող կառույցների վերաբերյալ: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Սփյուռքի համայնքների ուսումնասիրությունը մշտապես եղել է ՀՀ սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի հիմնական գործառույթներից մեկը, սակայն նախկինում համակարգված ուսումնասիրություններ չեն իրականացվել:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Իրականացվելու է սփյուռքի համայնքների լայնամասշտաբ ուսումնասիրություններ՝ պարզելու համայնքային խնդիրները, հայերի ներգրավվածության մակարդակը համայնքային կյանքին, բնակության երկրում ինտեգրման մակարդակը և այլն: Սփյուռքի համայնքների ուսումնասիրությունների ընթացքում նախատեսվում է հաշվառել սփյուռքի բոլոր կառույցները, դասակարգել ըստ գործունեության ոլորտների և ճշտել նրանց պատասխանատուների կոնտակտային տվյալները: Ըստ երկրների կազմվելու են համայնքային անձնագրեր, որտեղ ներկայացված կլինեն համայնքների ամբողջ ներուժն ու գործող բոլոր կառույցները: 2022 թվականին պլանավորվելու են սփյուռքի համայնքների ուսումնասիրության մեթոդները և պլան-ժամանակացույցը և 2023 թվականից սկսած իրականացվելու են ուսումնասիրությունները:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Ըստ երկրների՝ կազմվելու են համայնքային անձնագրեր, որտեղ ներկայացված կլինի համայնքում գործող բոլոր կառույցները: 2023 թվականին ստեղծվելու է տեղեկատվական կայք, որտեղ կամփոփվի համայնքների վերաբերյալ տեղեկատվությունը:

3.3. Աշխատանք սփյուռքի համայնքներում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրի «1.4. Սփյուռքի հետ կապեր» բաժնի 1-ին և 2-րդ կետերից և ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության «Հայաստան-սփյուռք. Համահայկականության ձևավորում» բաժնի 5.27 կետից: Նպատակն է ուսումնասիրել Սփյուռքի համայնքների խնդիրները, միջոցներ ձեռնարկել դրանց լուծման ուղղությամբ, նպաստել սփյուռքի հայերի ինքնակազմակերպմանը որպես համայնքային միավորներ, նպաստել պարբերաբար ըստ մասնագիտական ոլորտների հավաք-հանդիպումների անցկացմանը համայնքներում և անպայման մասնակցել դրանց՝ համագործակցության հեռանկարները նախանշելու և համատեղ իրականացվելիք միջոցառումների պլան-ժամանակացույցի կազմելու համար:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

ՀՀ կառավարության գործունեության ոլորտում գտնվող բազմաբնույթ խնդիրների լուծման, ճանաչողության, կապերի հաստատման, տարբեր համայնքների հրավերներին և միջոցառումներին արձագանքելու, տեղերում լինելու և ստեղծված իրավիճակները հստակ պատկերացնելու անհրաժեշտություն կա: Շատ համայնքներում առկա են յուրօրինակ հիմնախնդիրներ, որոնք օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառներ ունեն: Այդ խնդիրները շատ հաճախ խոչընդոտում են տվյալ համայնքների հետ աշխատանքների կազմակերպմանն ու գործակցությանը, իսկ տեղերում լինելով՝ հնարավոր է ճիշտ գնահատել գործակցության հեռանկարներն ու իրատեսական ուղիները:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Միջոցառման շրջանակներում Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարը, գրասենյակի ղեկավարը և աշխատակիցները աշխատանքային այցերով կլինեն են հայ համայքներում, տեղում կծանոթանան համայնքի խնդիրներին, կմասնակցեն տեղերում կազմակերպված մշակութային, համայնքային և այլ միջոցառումների, կներկայացնեն ՀՀ կառավարության Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացմանը նպատակաուղղված ծրագրերը, կպատասխանեն բազմաթիվ հարցադրումների և այլն: Աշխատանքային այցերի ընթացքում նախատեսվում է նաև քննարկել հայերի ավելի լայն ներգրավմանը համայնքային կյանքին, նպաստել նոր համայնքային միավորումների ձևավորմանը, հանդիպել տարբեր ոլորտների մասնագետների հետ և քննարկել ըստ ոլորտային ցանցերի ստեղծման հնարավորությունները՝ ինչպես ըստ երկրների, այնպես էլ համահայկական: Նպաստել պարբերաբար ըստ մասնագիտական ոլորտների հավաք-հանդիպումների անցկացմանը համայնքներում և անպայման մասնակցել դրանց՝ համագործակցության հեռանկարները նախանշելու և համատեղ իրականացվելիք միջոցառումների պլան-ժամանակացույցի կազմելու համար:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Միջոցառման իրականացումը հնարավորություն կտա խորացնել Հայաստան-Սփյուռք համագործակցությունը: Ակնկալվում է, որ այցելությունների ընթացքում Սփյուռքի հայկական համայնքներում բարձրացված խնդիրներից առնվազն 20 տոկոսը տվյալ տարվա ընթացքում լուծում կստանան:

3.4. Աջակցություն սփյուռքի հայ համայնքներին

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրի «1.4. Սփյուռքի հետ կապեր» բաժնի 4-րդ և 7-րդ կետերից և ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության «Հայաստան-սփյուռք.

	Համահայկականության ձևավորում» բաժնի 5.27 կետից: Միջոցառման նպատակն է աջակցել սփյուռքի կրթամշակութային կառույցների գործունեությանը և նպաստել հայկական մշակույթի տարածմանը սփյուռքում: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Սփյուռքի համայնքներում մշտապես եղել է հայ ինքնության պահպանման խնդիրը: Հայաստանի հետ մշակութային կապերի հաստատումը միշտ կարևորվել է սփյուռքի համայնքների հետ: ՀՀ սփյուռքի նախարարության լուծարումից հետո այլևս չեն իրականացվում մշակութային կապերի ամրապնդման ուղղությամբ միջոցառումներ: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Միջոցառման շրջանակներում Սփյուռքի կրթամշակութային կենտրոնների գործունեությանն աջակցելու նպատակով տրամադրվելու են նյութատեխնիկական պարագաներ: Սփյուռքի խոշոր համայնքներում՝ համայնքային և կրթամշակութային կառույցների հետ համագործակցությամբ, կազմակերպվելու են Հայաստանից մեկնած մշակութային գործիչների ելույթներ: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Սփյուռքի կրթամշակութային կենտրոնների գործունեությանն աջակցելու նպատակով նյութատեխնիկական պարագաների տրամադրում: 2023 թվականին սփյուռքի համայնքներում Հայաստանից մեկնած մշակութային գործիչների ելույթների կազմակերպում՝ տարեկան առնվազն 2 միջոցառում:
4.	**4.1. Հայաստանում համահայկական համաժողովների անցկացում**
	1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրի «1.4. Սփյուռքի հետ կապեր» բաժնի 3-րդ կետից և ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության «Հայաստան-սփյուռք. Համահայկականության ձևավորում» բաժնի 5.21 կետից: Համաժողովների անցկացման նպատակն է նպաստել Հայաստան-Սփյուռք կապերի զարգացմանը, քննարկել համահայկական նշանակության խնդիրները, նախանշել առաջիկա տարիներին համատեղ իրականացվելիք ծրագրերն ու միջոցառումները՝ ըստ համապատասխան ոլորտների: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** 1999 թվականից անցկացվում են Համաստան-Սփյուռք համահայկական համաժողովները: Մինչ սփյուռքի նախարարության կազմավորումը առաջին 3 համաժողովները իրականացվել են ՀՀ արտաքին գործերի նախարարության կողմից: Այնուհետև 2011, 2014 և 2017 թվականներին իրականացվել են ՀՀ սփյուռքի նախարարության կողմից: Համաժողովների ընթացքում քննարկվել տվյալ ժամանակահատվածում համահայկական նշանակության խնդիրները, Հայաստանի Հանրապետության առջև ծառացած խնդիրները, համայնքային խնդիրները և այլն: Յուրաքանչյուր համաժողովի ընթացքում նախանշվել են մոտակա տարիներին իրականացվելիք աշխատանքները, սակայն միշտ չի, որ դրանք ներառվել են կառավարության առաջնահերթություններում և կյանքի կոչվել, ինչպես նաև սփյուռքը չի ունեցել բավարար վստահություն այդ ժամանակվա իշխանությունների հանդեպ: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** 2022 թվականին նախատեսվում է իրականացնել 3 համաժողով (Սփյուռքահայ քաղաքական գործիչների և պետական ծառայողների, Սփյուռքի ներդրումների և բարեգործության վերաբերյալ և Հայաստան-Սփյուռք համահայկական համաժողովներ) և նորովի քննարկել Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման հեռանկարները: Համաժողովներին նախատեսվում է հրավիրել սփյուռքի բոլոր շրջանակներին՝ համահայկական, սփյուռքի կառույցների ղեկավարներին և ներկայացուցիչներին, հայտնի անհատներին, տարբեր ոլորտների մասնագետներին և այլն: Նախատեսվում է քննարկել համահայկական նշանակության խնդիրները, նախանշել առաջիկա տարիների համատեղ իրականացվելիք ծրագրերն ու միջոցառումները, քննարկել և մշակել համահայկական խորհրդի ձևավորման մեխանիզմները: Համաժողովներին մասնակցելու են մինչև 2500 հոգի, որից մինչև 1800-ը սփյուռքից: 2023 թվականին կազմակերպվելու է երիտասարդական համահայկական համաժողով՝ մոտ 800 սփյուռքահայերի մասնակցությամբ՝ որի ընթացքում քննարկվելու է Հայաստանում և Սփյուռքում երիտասարդության խնդիրները, ինչպես նաև մշակվելու են գործողությունների պլան-ժամանակացույց հետագա համագործակցության վերաբերյալ: 2024 թվականից սկսած նախատեսվում է տարեկան կազմակերպել համահայկական 1 համաժողով: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Համաժողովների իրականացման արդյունքում կամրապնդվի Հայաստան-Սփյուռք գործակցությունը, կհաստատվեն երկկողմանի կապեր Հայաստանի և Սփյուռքի համապատասխան ոլորտի մասնագետների միջև, կստեղծվեն գիտական, մասնագիտական, կրթամշակութային, տնտեսական և այլ ոլորտներում համահայկական ցանցեր, համատեղ կիրականացվեն մի շարք ծրագրեր:
	4.2. Մասնագիտական համաժողովների և քննարկումների կազմակերպում
	1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրի «1.4. Սփյուռքի հետ կապեր» բաժնի 3-4-րդ կետերից և ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության «Հայաստան-սփյուռք. Համահայկականության ձևավորում» բաժնի 5.21 կետից: Համաժողովների նպատակն է համախմբել սփյուռքի մասնագիտական ներուժը և քննարկել նրա ներգրավման հնարավորությունները Հայաստանի Հանրապետության զարգացման ծրագրերում:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

ՀՀ կառավարության առաջնահերթություններից է հանդիսանում Հայաստանի Հանրապետության և Հայկական սփյուռքի համար նշանակություն ունեցող հիմնախնդիրների լուծմանը սփյուռքի համակարգված մասնակցության ապահովումը, համահայկական մասնագիտական ցանցերի ստեղծումը, սփյուռքահայ տարբեր ոլորտների մասնագետների ներուժի ներգրավումը Հայաստանի Հանրապետության զարգացման տարբեր ծրագրերում:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Նախատեսվում է տարի Հայաստանում կամ Սփյուռքում կազմակերպել համահայկական մասնագիտական համաժողովներ: Այն հնարավորություն կընձեռի նպաստել մասնագիտական կապերի հաստատմանը և ցանցերի ստեղծմանը, համատեղ ծրագրերի մշակմանը և իրականացմանը: Համաժողովների իրականացման արդյունքում կձևավորվեն համահայկական մասնագիտական նոր ցանցեր, որոնք կնպաստեն Սփյուռքի մասնագիտական ներուժի համակարգված ներգրավմանը Հայաստանի Հանրապետության զարգացման ծրագրերում:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

2023 և 2025 թվականներին նախատեսվում է Հայաստանում կազմակերպել 1-ական համահայկական մասնագիտական համաժողով:

4.3. Սփյուռքի ներուժի ներգրավումը Հայաստանի Հանրապետության զարգացման գործընթացներում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրի «1.4. Սփյուռքի հետ կապեր» բաժնի 3-րդ կետից և ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության «Հայաստան-սփյուռք. Համահայկականության ձևավորում» բաժնի 5.23 կետից: Միջոցառման նպատակն է սփյուռքի տարբեր ոլորտներում առկա ներուժը ներգրավել ի նպաստ Հայաստանի Հանրապետության զարգացմանը:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Հայաստանի աշխատաշուկայում առկա է որակյալ մասնագետների կարիք, ինչպես նաև արտերկրից նորարարական տեխնոլոգիաների Հայաստան բերման և կիրառման անհրաժեշտություն:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Հայաստանի Հանրապետության հանրային և մասնավոր հատվածում ներգրավվել սփյուռքահայ մասնագետներին՝ համագործակցելով ոլորտային գերատեսչությունների հետ: Գործընթացն ենթադրում է ինչպես կամավորության սկզբունքը, այնպես էլ վարձատրությունը: Նրանց օգնությամբ կքննարկվեն նաև Հայաստանի զարգացման տարբեր ճյուղերում նորարարական տեխնոլոգիաների և գաղափարների ներդրման մեխանիզմները:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Համագործակցելով ՀՀ գերատեսչությունների հետ՝ կամավորական հիմունքներով սփյուռքահայ մասնագետների առցանց և անցանց ներգրավում ՀՀ պետական կառավարման համակարգի մարմիններում: 2023 թվականից նախատեսվում է տարեկան առնվազն 5 ոլորտային մասնագետի ներգրավում:

4.4. Հանրային ոլորտի տարբեր մակարդակներում կարճաժամկետ և երկարաժամկետ կտրվածքով սփյուռքահայերի ներգրավում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրի «1.4. Սփյուռքի հետ կապեր» բաժնի 2-րդ կետից և ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության «Հայաստան-սփյուռք. Համահայկականության ձևավորում» բաժնի 5.23 կետից: Միջոցառման նպատակն է սփյուռքի բարձրակարգ մասնագետների ներուժը՝ փորձն ու գիտելիքները, հնարավորինս արդյունավետ ներգրավել ՀՀ պետական կառավարման համակարգում:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

ՀՀ օրենսդրությամբ պայմանավորված սփյուռքահայերը, եթե չունեն ՀՀ քաղաքացիություն, չեն կարող աշխատել ՀՀ պետական կառավարման համակարգի մարմիններում, իսկ քաղաքացիության առկայության դեպքում երբեմն խնդիր է առաջանում աշխատանքային ստաժի հետ: Բացի այդ սփյուռքահայերի կողմից բազմիցս հնչել են առաջարկներ իրենց փորձն ու գիտելիքները կիրառել ՀՀ պետական կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման աշխատանքներում:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Նախատեսվում է սփյուռքի բարձրակարգ մասնագետներին ներգրավել հանրային ոլորտի տարբեր մակարդակներում կարճաժամկետ և երկարաժամկետ կտրվածքով, ինչպես նաև առցանց՝ ըստ պետական կառույցների ներկայացրած հայտերի:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

- ՀՀ գերատեսչություններում ղեկավարների սփյուռքահայ տեղակալների ներգրավում ըստ նպատակահարմարության,
- ՀՀ գերատեսչությունների ղեկավարների սփյուռքահայ խորհրդականների ներգրավում, այդ թվում հասարակական հիմունքներով,
- Կարճաժամկետ և հեռավար ձևաչափով սփյուռքահայ մասնագետների ներգրավում Հանրային ոլորտի տարբեր մակարդակներում՝ փորձագիտական և խորհրդատվական ծառայությունների մատուցման նպատակով՝ ըստ գերատեսչությունների ներկայացրած կարիքների:

4.5. Սփյուռքից ներդրումների իրականացմանն աջակցություն

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրի «1.4. Սփյուռքի հետ կապեր» բաժնի 2-րդ կետից և ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության «Հայաստան-սփյուռք. Համահայկականության ձևավորում» բաժնի 5.23 կետից: Միջոցառման նպատակն է աջակցել սփյուռքից ներդրումների իրականացմանը Հայաստանի Հանրապետությունում՝ տրամադրելով ներդրումային քաղաքականության և տրամադրվող արտոնությունների վերաբերյալ տեղեկատվություն:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Հայաստանի Հանրապետության անկախությունից մինչ այսօր արտերկրից ներդրումները հիմնականում իրականացվել են կամ սփյուռքահայերի կողմից, կամ նրանց անմիջական ջանքերի շնորհիվ: Սփյուռքահայերը, սակայն ներդրումներ իրականացնելիս բախվում են մի շարք խնդիրների, որոնք հիմնականում են վերաբերում են իրազեկվածության պակասին և փաստաթղթային ձևակերպումների հետ կապված հարցերին:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Սփյուռքահայերին տրամադրել Հայաստանում ներդրումներ իրականացնելու հնարավորությունների և պետության կողմից տրամադրվող արտոնությունների վերաբերյալ տեղեկատվություն: Սփյուռքահայ ներդրողներին տրամադրել փաստաթղթային և խորհրդատվական աջակցություն: ՀՀ մարզերում հաստատված և նախագծային փուլում գտնվող ներդրումային ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրել հնարավոր սփյուռքահայ ներդրողներին:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Սփյուռքահայ գործարարների շրջանում Հայաստանի Հանրապետության ներդրումային քաղաքականության վերաբերյալ տեղեկացվածության բարձրացում, որն իր հերթին կհանգեցնի ներդրումների ծավալի աճին:

4.6. Սփյուռքից բարեգործական ծրագրերի իրականացմանն աջակցություն

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրի «1.4. Սփյուռքի հետ կապեր» բաժնի 2-րդ կետից և ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության «Հայաստան-սփյուռք. Համահայկականության ձևավորում» բաժնի 5.23 կետից: Միջոցառման նպատակն է աջակցել Սփյուռքից իրականացվող բարեգործական ծրագրերին՝ տրամադրելով տեղեկատվություն բարեգործության ոլորտի օրենսդրության, տարբեր պետական և հասարակական կառույցների կարիքների վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև աջակցել ծրագրերի տեղայնացման աշխատանքներում:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Սփյուռքից Հայաստանում մշտապես իրականացվել են բազմաթիվ բարեգործական ծրագրեր, սակայն երբեմն սփյուռքահայերը բախվում են տարբեր խնդիրների, որոնք առնչվում են ինչպես ոչ բավարար չափով տեղեկացվածությանը, այնպես էլ բյուրոկրատական քաշքշուկներին:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Աջակցել սփյուռքից բարեգործական ծրագրերի իրականացման և տեղայնացման աշխատանքներին: Աջակցել Հայաստանի Հանրապետության գյուղական համայնքներում Սփյուռքի կողմից կրթամշակութային ոլորտում բարեգործական ծրագրերի իրականացմանը՝ տրամադրելով նաև առաջնահերթ կարիքների ցանկը: Նախատեսվում է ստեղծել տեղեկատվական հարթակ, որտեղ ներկայացված կլինեն Հայաստանի Հանրապետության համայնքների առաջնահերթ կարիքները:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Հայաստանի համայնքներում Սփյուռքի կողմից բարեգործական ծրագրերի իրականացմանն աջակցություն: 2024 թվականին նախատեսվում է աջակցել առնվազն 3 ներդրումային ծրագրի:

Կադաստրի կոմիտե	
NN	**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ**
1	**1.1 Տարածական տվյալների կառավարման (ԵՏՀ/GIS) մասնագետների վերապատրաստում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Ինտեգրված կադաստրի միջոցառման իրականացումը տարածական հղմամբ պետական միասնական տեղեկատվական համակարգի ստեղծումն է, որը կենտրոնացնում է հանրապետության բնական և մարդածին ռեսուրսների, դրանց իրավական կարգավիճակի և արժեքի վերաբերյալ ամբողջական տեքստային ու գրաֆիկական տվյալները և նպատակաուղղված է ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացմանը: Միջոցառման իրականացման համար ընդունման ենթակա են ՀՀ օրենքներ, ՀՀ կառավարության, վարչապետի որոշումներ, ընդունման համար հիմք են հանդիսանում ՀՀ Սահմանադրության 153-րդ հոդվածը, ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 1-ին բաժնի 4-րդ կետը, ՀՀ Ազգային ժողովի 26.08.2021թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.5 բաժինը, ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի «Ինտեգրված կադաստրի ստեղծման ռազմավարության ծրագիրը հաստատելու մասին» N 505-Լ որոշումը: **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները** Հայաստանի Հանրապետության տնտեսության կառավարման մի շարք ոլորտներ կարգավորող օրենսդրությամբ՝ օրենսգրքերով և օրենքներով, համապատասխան կառավարման մարմինների համար սահմանվել են իրենց ոլորտների կառավարման ներքո գտնվող օբյեկտների, գույքի և ռեսուրսների կադաստրների վարման գործառույթներ, սակայն դրանք հիմնականում չեն իրականացվել, իսկ որոշ դեպքերում ստեղծվել են տեղեկատվական ֆոնդեր կամ համակարգեր այլ ոլորտներից՝ անկախ, չհամաձայնեցված, որը լուրջ դժվարություններ է հարուցում պետական համալիր ծրագրերի մշակման և արդյունավետ իրագործման համար: Ակնհայտ է, որ ոլորտային կադաստրների վարումը անհամեմատ ավելի արդյունավետ կարող է լինել՝ դրանք ամբողջական միասնական համակարգի մեջ ընդգրկելով: Այն փոխկապակցված և փոխհամաձայնեցված կադաստրների և ռեգիստրների համալիր է՝ ընդհանուր և միասնական մեթոդական սկզբունքներով և տեղեկատվական հիմքով: Հաշվի առնելով ոլորտային կադաստրներ վարող սուբյեկտների համապատասխան համակարգերի փոխգործելիությունն ապահովելու անհրաժեշտությունը նախատեսվում է հնարավորություն տալ նշված սուբեկտներին (այդ թվում՝ ենթակառուցվածքներ տնօրինող կազմակերպություններին) մասնակցելու Ազգային գեոպորտալի տեխնիկական առաջադրանքի կազմմանը: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Կադաստրի կոմիտեում զգալի աշխատանքներ են կատարվել երկրատեղեկատվական բազային համակարգերի ստեղծման ուղղությամբ: Ժամանակակից թվային տեխնոլոգիաների կիրառմամբ մշակվել են Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքների բազային երկրատեղեկատվական համակարգերը: Ձեռք են բերվել մասնագիտական անհրաժեշտ փորձառություն, համապատասխան տեխնիկական միջոցներ, պատրաստվել են կադրեր: Կոմիտեի ստորաբաժանումներում կուտակած տեղեկատվական բանկը և երկրատեղեկատվական համակարգի բազան հնարավորություն են տալիս կազմակերպելու և համակարգելու ոլորտների թեմատիկ կադաստրների տեղեկատվական բանկի ստեղծումը և դրանք ամբողջացնելով՝ ընդգրկել ինտեգրված կադաստրի և երկրատեղեկատվական համակարգի մեջ: Ծրագրի իրականացման համար ՀՀ վարչապետի 2019 թվականի հուլիսի 26-ի N 1006-Ա որոշմամբ ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով, որում ընդգրկված են համակատարող մարմիններ Շրջակա միջավայրի նախարարությունը, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, Կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարությունը, Էկոնոմիկայի նախարարությունը, Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, Արտակարգ իրավիճակների նախարարությունը, Քաղաքաշինության կոմիտեն, Ներքին գործերի նախարարությունը, Երևանի քաղաքապետարանը, ենթակառուցվածքներ տնօրինող կազմակերպություններ: Նշված մարմինների կողմից միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները կհաստատվեն ստեղծվելիք հանձնաժողովի աշխատակարգով: Կիրականացվեն հետևյալ միջոցառումները՝ 1. Տարածական տվյալների կառավարման (ԵՏՀ/ GIS) մասնագետների վերապատրաստում, 2. Ինտեգրված կադաստրի ոլորտային բաղադրիչների ստեղծում և համակարգի ամբողջական գործարկում՝ ըստ ոլորտների պատրաստվածության, 3. Ազգային գեոպորտալի տեխնիկական առաջադրանքի կազմում, ծրագրի ձեռքբերում և գործարկում,

	4. Պիլոտային ոլորտային կադաստրի ստեղծում և ներդրում, 5. Համակարգի տեխնիկական (սերվերային համակարգ և կառավարման կենտրոն) միջոցների տեխնիկական առաջադրանքի կազմում, ձեռքբերում և տեղադրում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** 1) Ինքնաշխատ ամբողջական տեղեկատվական ռեսուրսի ստեղծում՝ փոխկապակցված տեղեկատվական փաստաթղթերի հիման վրա. 2) Ոլորտային կադաստրների տեղեկատվական բանկի ստեղծում՝ տվյալների տարածական հղմամբ աշխարհագրական հարաչափեր ունեցող ճյուղային կադաստրների և ռեգիստրների միավորմամբ փոխկապակցված տեղեկատվական փաստաթղթերի հիման վրա մեկ միասնական տեղեկատվական ռեսուրսի ստեղծում ապահովելով համապատասխան ոլորտային կադաստրների ինտեգրում մեկ միասնական հարթակում. 3) Ծրագրային ապահովման բազային և թեմատիկ շերտերի մոդուլների, ազգային գեոպորտալի գործարկում և դրանց հասանելիության աստիճանակարգի սահմանում. 4) Տարածքների, տնտեսության, բնական պաշարների, բնապահպանական, քաղաքաշինական և այլ գործընթացների արագ և արդյունավետ կառավարում. 5) Իրական ժամանակի ռեժիմում, փոխկապակցված, հավաստի տեղեկության միջոցով իրավիճակի համալիր վերլուծությամբ հիմնավորված որոշումների ընդունում՝ կրճատելով համաձայնեցումների գրավոր ձևերին տրամադրվող ժամանակը. 6) Ֆինանսական միջոցների և աշխատանքային ռեսուրսների խնայողություն. 7) Հասարակության իրազեկվածության և տեղեկատվության հասանելիության բարձր մակարդակ. 8) Նորագույն ինֆորմացիոն տեխնոլոգիաների և տեխնիկական միջոցների ներդրման արագություն և արդյունավետություն:
	1.2 Ինտեգրված կադաստրի ոլորտային բաղադրիչների ստեղծում և համակարգի ամբողջական գործարկում՝ ըստ ոլորտների պատրաստվածության **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Ինտեգրված կադաստրի միջոցառման իրականացումը տարածական հղմամբ պետական միասնական տեղեկատվական համակարգի ստեղծումն է, որը կենտրոնացնում է հանրապետության բնական և մարդածին ռեսուրսների, դրանց իրավական կարգավիճակի և արժեքի վերաբերյալ ամբողջական տեքստային ու գրաֆիկական տվյալները և նպատակաուղղված է ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացմանը: Միջոցառման իրականացման համար ընդունման ենթակա են ՀՀ օրենքներ, ՀՀ կառավարության, վարչապետի որոշումներ, ընդունման համար հիմք են հանդիսանում ՀՀ Սահմանադրության 153-րդ հոդվածը, ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 1-ին բաժնի 4-րդ կետը: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները** ՀՀ տնտեսության կառավարման մի շարք ոլորտներ կարգավորող օրենսդրությամբ՝ օրենսգրքերով և օրենքներով, համապատասխան կառավարման մարմինների համար սահմանվել են իրենց ոլորտների կառավարման ներքո գտնվող օբյեկտների, գույքի և ռեսուրսների կադաստրների վարման գործառույթներ, սակայն դրանք հիմնականում չեն իրականացվել, իսկ որոշ դեպքերում ստեղծվել են տեղեկատվական ֆոնդեր կամ համակարգեր այլ ոլորտներից՝ անկախ, չհամաձայնեցված, որը լուրջ դժվարություններ է հարուցում պետական համալիր ծրագրերի մշակման և արդյունավետ իրագործման համար: Ակնհայտ է, որ ոլորտային կադաստրների վարումը անհամեմատ ավելի արդյունավետ կարող է լինել՝ դրանք ամբողջական միասնական համակարգի մեջ ընդգրկելով: Այն փոխկապակցված և փոխհամաձայնեցված կադաստրների և ռեգիստրների համալիր է՝ ընդհանուր և միասնական մեթոդական սկզբունքներով և տեղեկատվական հիմքով: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Կադաստրի կոմիտեում զգալի աշխատանքներ են կատարվել երկրատեղեկատվական բազային համակարգերի ստեղծման ուղղությամբ: Ժամանակակից թվային տեխնոլոգիաների կիրառմամբ մշակվել են Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքների բազային երկրատեղեկատվական համակարգերը: Ձեռք են բերվել մասնագիտական անհրաժեշտ փորձառություն, համապատասխան տեխնիկական միջոցներ, պատրաստվել են կադրեր: Կոմիտեի ստորաբաժանումներում կուտակած տեղեկատվական բանկը և երկրատեղեկատվական համակարգի բազան հնարավորություն են տալիս կազմակերպելու և համակարգելու ոլորտների թեմատիկ կադաստրների տեղեկատվական բանկի ստեղծումը և դրանք ամբողջացնելով՝ ընդգրկել ինտեգրված կադաստրի և երկրատեղեկատվական համակարգի մեջ: Ծրագրի իրականացման համար ՀՀ վարչապետի 2019 թվականի հուլիսի 26-ի N 1006-Ա որոշմամբ ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով, որում ընդգկված են համակատարող մարմիններ Շրջակա միջավայրի

նախարարությունը, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, Կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարությունը, Էկոնոմիկայի նախարարությունը, Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, Արտակարգ իրավիճակների նախարարությունը, Քաղաքաշինության կոմիտեն, Ներքին գործերի նախարարությունը, Երևանի քաղաքապետարանը, ենթակառուցվածքներ տնօրինող կազմակերպություններ: Նշված մարմինների կողմից միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները հաստատված են ստեղծված հանձնաժողովի աշխատակարգով:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Ոլորտային կադաստրների տեղեկատվական բանկի ստեղծում՝ տվյալների տարածական հղմամբ աշխարհագրական հարաչափեր ունեցող ճյուղային կադաստրների և ռեգիստրների միավորմամբ փոխկապակցված տեղեկատվական փաստաթղթերի հիման վրա մեկ միասնական տեղեկատվական ռեսուրսի ստեղծում ապահովելով համապատասխան ոլորտային կադաստրների ինտեգրում մեկ միասնական հարթակում:

1.3 Ազգային գեոպորտալի տեխնիկական առաջադրանքի կազմում, ծրագրի ձեռքբերում և գործարկում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Ինտեգրված կադաստրի միջոցառման իրականացումը տարածական հղմամբ պետական միասնական տեղեկատվական համակարգի ստեղծումն է, որը կենտրոնացնում է հանրապետության բնական և մարդածին ռեսուրսների, դրանց իրավական կարգավիճակի և արժեքի վերաբերյալ ամբողջական տեքստային ու գրաֆիկական տվյալները և նպատակաուղղված է ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացմանը:

Միջոցառման իրականացման համար ընդունման ենթակա են ՀՀ օրենքներ, ՀՀ կառավարության, վարչապետի որոշումներ, ընդունման համար հիմք են հանդիսանում ՀՀ Սահմանադրության 153-րդ հոդվածը, ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 1-ին բաժնի 4-րդ կետը:

Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները

ՀՀ տնտեսության կառավարման մի շարք ոլորտներ կարգավորող օրենսդրությամբ՝ օրենսգրքերով և օրենքներով, համապատասխան կառավարման մարմինների համար սահմանվել են իրենց ոլորտների կառավարման ներքո գտնվող օբյեկտների, գույքի և ռեսուրսների կադաստրների վարման գործառույթներ, սակայն դրանք հիմնականում չեն իրականացվել, իսկ որոշ դեպքերում ստեղծվել են տեղեկատվական ֆոնդեր կամ համակարգեր այլ ոլորտներից՝ անկախ, չհամաձայնեցված, որը լուրջ դժվարություններ է հարուցում պետական համալիր ծրագրերի մշակման և արդյունավետ իրագործման համար:

Ակնհայտ է, որ ոլորտային կադաստրների վարումը անհամեմատ ավելի արդյունավետ կարող է լինել՝ դրանք ամբողջական միասնական համակարգի մեջ ընդգրկելով: Այն փոխկապակցված և փոխհամաձայնեցված կադաստրների և ռեգիստրների համալիր է՝ ընդհանուր և միասնական մեթոդական սկզբունքներով և տեղեկատվական հիմքով:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Կադաստրի կոմիտեում զգալի աշխատանքներ են կատարվել երկրատեղեկատվական բազային համակարգերի ստեղծման ուղղությամբ: Ժամանակակից թվային տեխնոլոգիաների կիրառմամբ մշակվել են Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքների բազային երկրատեղեկատվական համակարգերը: Ձեռք են բերվել մասնագիտական անհրաժեշտ փորձառություն, համապատասխան տեխնիկական միջոցներ, պատրաստվել են կադրեր: Կոմիտեի ստորաբաժանումներում կուտակած տեղեկատվական բանկը և երկրատեղեկատվական համակարգի բազան հնարավորություն են տալիս կազմակերպելու և համակարգելու ոլորտների թեմատիկ կադաստրների տեղեկատվական բանկի ստեղծումը և դրանք ամբողջացնելով՝ ընդգրկել ինտեգրված կադաստրի և երկրատեղեկատվական համակարգի մեջ:

Ծրագրի իրականացման համար ՀՀ վարչապետի 2019 թվականի հուլիսի 26-ի N 1006-Ա որոշմամբ ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով, որում ընդգկված են համակատարող մարմիններ Շրջակա միջավայրի նախարարությունը, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, Կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարությունը, Էկոնոմիկայի նախարարությունը, Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, Արտակարգ իրավիճակների նախարարությունը, Քաղաքաշինության կոմիտեն, Ներքին գործերի նախարարությունը, Երևանի քաղաքապետարանը, ենթակառուցվածքներ տնօրինող կազմակերպություններ: Նշված մարմինների կողմից միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները հաստատված են ստեղծված հանձնաժողովի աշխատակարգով:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Ծրագրային ապահովման բազային և թեմատիկ շերտերի մոդուլների, ազգային գեոպորտալի գործարկում և դրանց հասանելիության աստիճանակարգի սահմանում:

1.4 Պիլոտային ոլորտային կադաստրի ստեղծում և ներդրում

	1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Ինտեգրված կադաստրի միջոցառման իրականացումը տարածական հղմամբ պետական միասնական տեղեկատվական համակարգի ստեղծումն է, որը կենտրոնացնում է հանրապետության բնական և մարդածին ռեսուրսների, դրանց իրավական կարգավիճակի և արժեքի վերաբերյալ ամբողջական տեքստային ու գրաֆիկական տվյալները և նպատակաուղղված է ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացմանը: Միջոցառման իրականացման համար ընդունման ենթակա են ՀՀ օրենքներ, ՀՀ կառավարության, վարչապետի որոշումներ, ընդունման համար հիմք են հանդիսանում ՀՀ Սահմանադրության 153-րդ հոդվածը, ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 1-ին բաժնի 4-րդ կետը: **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները** ՀՀ տնտեսության կառավարման մի շարք ոլորտներ կարգավորող օրենսդրությամբ՝ օրենսգրքերով և օրենքներով, համապատասխան կառավարման մարմինների համար սահմանվել են իրենց ոլորտների կառավարման ներքո գտնվող օբյեկտների, գույքի և ռեսուրսների կադաստրների վարման գործառույթներ, սակայն դրանք հիմնականում չեն իրականացվել, իսկ որոշ դեպքերում ստեղծվել են տեղեկատվական ֆոնդեր կամ համակարգեր այլ ոլորտներից՝ անկախ, չհամաձայնեցված, որը լուրջ դժվարություններ է հարուցում պետական համալիր ծրագրերի մշակման և արդյունավետ իրագործման համար: Ակնհայտ է, որ ոլորտային կադաստրների վարումը անհամեմատ ավելի արդյունավետ կարող է լինել՝ դրանք ամբողջական միասնական համակարգի մեջ ընդգրկելով: Այն փոխկապակցված և փոխհամաձայնեցված կադաստրների և ռեգիստրների համալիր է՝ ընդհանուր և միասնական մեթոդական սկզբունքներով և տեղեկատվական հիմքով: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Կադաստրի կոմիտեում զգալի աշխատանքներ են կատարվել երկրատեղեկատվական բազային համակարգերի ստեղծման ուղղությամբ: Ժամանակակից թվային տեխնոլոգիաների կիրառմամբ մշակվել են Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքների բազային երկրատեղեկատվական համակարգերը: Ձեռք են բերվել մասնագիտական անհրաժեշտ փորձառություն, համապատասխան տեխնիկական միջոցներ, պատրաստվել են կադրեր: Կոմիտեի ստորաբաժանումներում կուտակած տեղեկատվական բանկը և երկրատեղեկատվական համակարգի բազան հնարավորություն են տալիս կազմակերպելու և համակարգելու ոլորտների թեմատիկ կադաստրների տեղեկատվական բանկի ստեղծումը և դրանք ամբողջացնելով՝ ընդգրկել ինտեգրված կադաստրի և երկրատեղեկատվական համակարգի մեջ: Ծրագրի իրականացման համար ՀՀ վարչապետի 2019 թվականի հուլիսի 26-ի N 1006-Ա որոշմամբ ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով, որում ընդգկված են համակատարող մարմիններ Շրջակա միջավայրի նախարարությունը, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, Կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարությունը, Էկոնոմիկայի նախարարությունը, Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, Արտակարգ իրավիճակների նախարարությունը, Քաղաքաշինության կոմիտեն, Ներքին գործերի նախարարությունը, Երևանի քաղաքապետարանը, ենթակառուցվածքներ տնօրինող կազմակերպություններ: Նշված մարմինների կողմից միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները հաստատված են ստեղծված հանձնաժողովի աշխատակարգով: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Մեկ ոլորտի կադաստրի ստեղծում և ներդրում, որը հնարավորություն կտա վերհանել ինտեգրման գործնական խնդիրները, և ըստ անհրաժեշտության խմբագրումներ կատարել նախորդ քայլերով մշակված իրավական ակտերում և այլ գործառնական փաստաթղթերում:
	1.5 Համակարգի տեխնիկական (սերվերային համակարգ և կառավարման կենտրոն) միջոցների տեխնիկական առաջադրանքի կազմում, ձեռքբերում և տեղադրում **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Ինտեգրված կադաստրի միջոցառման իրականացումը տարածական հղմամբ պետական միասնական տեղեկատվական համակարգի ստեղծումն է, որը կենտրոնացնում է հանրապետության բնական և մարդածին ռեսուրսների, դրանց իրավական կարգավիճակի և արժեքի վերաբերյալ ամբողջական տեքստային ու գրաֆիկական տվյալները և նպատակաուղղված է ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացմանը: Միջոցառման իրականացման համար ընդունման ենթակա են ՀՀ օրենքներ, ՀՀ կառավարության, վարչապետի որոշումներ, ընդունման համար հիմք են հանդիսանում ՀՀ Սահմանադրության 153-րդ հոդվածը, ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 1-ին բաժնի 4-րդ կետը:

	1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները ՀՀ տնտեսության կառավարման մի շարք ոլորտներ կարգավորող օրենսդրությամբ՝ օրենսգրքերով և օրենքներով, համապատասխան կառավարման մարմինների համար սահմանվել են իրենց ոլորտների կառավարման ներքո գտնվող օբյեկտների, գույքի և ռեսուրսների կադաստրների վարման գործառույթներ, սակայն դրանք հիմնականում չեն իրականացվել, իսկ որոշ դեպքերում ստեղծվել են տեղեկատվական ֆոնդեր կամ համակարգեր այլ ոլորտներից՝ անկախ, չհամաձայնեցված, որը լուրջ դժվարություններ է հարուցում պետական համալիր ծրագրերի մշակման և արդյունավետ իրագործման համար: Ակնհայտ է, որ ոլորտային կադաստրների վարումը անհամեմատ ավելի արդյունավետ կարող է լինել՝ դրանք ամբողջական միասնական համակարգի մեջ ընդգրկելով: Այն փոխկապակցված և փոխհամաձայնեցված կադաստրների և ռեգիստրների համալիր է՝ ընդհանուր և միասնական մեթոդական սկզբունքներով և տեղեկատվական հիմքով: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Կադաստրի կոմիտեում զգալի աշխատանքներ են կատարվել երկրատեղեկատվական բազային համակարգերի ստեղծման ուղղությամբ: Ժամանակակից թվային տեխնոլոգիաների կիրառմամբ մշակվել են Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքների բազային երկրատեղեկատվական համակարգերը: Ձեռք են բերվել մասնագիտական անհրաժեշտ փորձառություն, համապատասխան տեխնիկական միջոցներ, պատրաստվել են կադրեր: Կոմիտեի ստորաբաժանումներում կուտակած տեղեկատվական բանկը և երկրատեղեկատվական համակարգի բազան հնարավորություն են տալիս կազմակերպելու և համակարգելու ոլորտների թեմատիկ կադաստրների տեղեկատվական բանկի ստեղծումը և դրանք ամբողջացնելով՝ ընդգրկել ինտեգրված կադաստրի և երկրատեղեկատվական համակարգի մեջ: Ծրագրի իրականացման համար ՀՀ վարչապետի 2019 թվականի հուլիսի 26-ի N 1006-Ա որոշմամբ ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով, որում ընդգկված են համակատարող մարմիններ Շրջակա միջավայրի նախարարությունը, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, Կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարությունը, Էկոնոմիկայի նախարարությունը, Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, Արտակարգ իրավիճակների նախարարությունը, Քաղաքաշինության կոմիտեն, Ներքին գործերի նախարարությունը, Երևանի քաղաքապետարանը, ենթակառուցվածքներ տնօրինող կազմակերպություններ: Նշված մարմինների կողմից միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները հաստատված են ստեղծված հանձնաժողովի աշխատակարգով: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Սերվերային համակարգի տեղադրում և ծրագրային ապահովում, կադաստրային և քարտեզագրական մոդուլի գործարկում, բազային և ոլորտային կադաստրների ռեգիստրների ծրագրային ապահովում, կառավարման կենտրոնի ստեղծում, սերվերային համակարգի տեղադրում և կառավարման կենտրոնի ստեղծում:
2	**2.1 Հայաստանի Հանրապետության տարածական տվյալների, մետատվյալների բանկերի վերաբերյալ նորմատիվ-տեխնիկական և իրավական փաստաթղթերի մշակում և արդիականացում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Տարածական տվյալների ենթակառուցվածքը (ՏՏԵ) տեխնոլոգիաների, իրավական կարգավորումների, ստանդարտների, մարդկային ռեսուրսների և հարակից գործունեությունների համակարգ է, որն անհրաժեշտ է տարածական տվյաների ստեղծումը, հավաքագրումը, պահպանումը, մշակումը, տարածումը և օգտագործումը արդյունավետ և ճկուն դարձնելու համար: Միջոցառման նպատակն է ստեղծել Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածք (ստանդարտ), որը կուղղորդի տարածական տվյալների հետ առնչվող բոլոր շահագրգիռ կողմերին: Միջոցառման իրականացման համար նորմատիվ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն է առաջանում հիմքը՝ «Գեոդեզիական, քարտեզագրության և տարածական տվյալների ենթակառուցվածքի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդված: **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները** Հայաստանի Հանրապետությունում մինչ այժմ ստեղծված չի եղել ազգային ՏՏԵ, ինչը տարածական տվյալների հետ առնչվող անհատների և կազմակերպությունների անհամաձայնեցված գործողությունների պատճառ է դարձել: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Միջոցառման համակատարող Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության հետ կհամաձայնեցվեն մշակվելիք ստանդարտների շրջանակներում հստակեցվող բոլոր այն մոտեցումները, որոնք անհրաժեշտ են տարածական տվյալների ստեղծման, պահպանման և տարածման համար: Կսահմանվեն պահանջներ որակի ապահովման համար, և կստեղծվի մետատվյալների ալբոմ: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

	Տվյալների քաղաքականության վերաբերյալ իրավական ակտի ընդունում, թեմատիկ շերտերի պահանջների սահմանում:
	2.2 ԵՄ տարածական տվյալներին վերաբերող INSPIRE դիրեկտիվների տեղայնացում և ներդաշնակեցում ՀՀ գեոդեզիայի և քարտեզագրության ոլորտներում գործող նորմատիվ-տեխնիկական և իրավական փաստաթղթերին **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Տարածական տվյալների ենթակառուցվածքը (ՏՏԵ) տեխնոլոգիաների, իրավական կարգավորումների, ստանդարտների, մարդկային ռեսուրսների և հարակից գործունեությունների համակարգ է, որն անհրաժեշտ է տարածական տվյաների ստեղծումը, հավաքագրումը, պահպանումը, մշակումը, տարածումը և օգտագործումը արդյունավետ և ճկուն դարձնելու համար: Միջոցառման նպատակն է ստեղծել Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածք (ստանդարտ), որը կուղղորդի տարածական տվյալների հետ առնչվող բոլոր շահագրգիռ կողմերին: Միջոցառման իրականացման համար նորմատիվ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն է առաջանում հիմքը՝ «Գեոդեզիական, քարտեզագրության և տարածական տվյալների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդված: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները** Հայաստանի Հանրապետությունում մինչ այժմ ստեղծված չի եղել ազգային ՏՏԵ, ինչը տարածական տվյալների հետ առնչվող անհատների և կազմակերպությունների անհամաձայնեցված գործողությունների պատճառ է դարձել: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Կներդրվի ազգային տարածական տվյալների ենթակառուցվածք (ստանդարտներ): **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի (ստանդարտների) ներդրում:
	2.3 Իրավական դաշտի կարգավորում **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Տարածական տվյալների ենթակառուցվածքը (ՏՏԵ) տեխնոլոգիաների, իրավական կարգավորումների, ստանդարտների, մարդկային ռեսուրսների և հարակից գործունեությունների համակարգ է, որն անհրաժեշտ է տարածական տվյաների ստեղծումը, հավաքագրումը, պահպանումը, մշակումը, տարածումը և օգտագործումը արդյունավետ և ճկուն դարձնելու համար: Միջոցառման նպատակն է ստեղծել Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածք (ստանդարտ), որը կուղղորդի տարածական տվյալների հետ առնչվող բոլոր շահագրգիռ կողմերին: Միջոցառման իրականացման համար նորմատիվ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն է առաջանում հիմքը՝ «Գեոդեզիայի, քարտեզագրության և տարածական տվյալների ենթակառուցվածքի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդված: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները** Հայաստանի Հանրապետությունում մինչ այժմ ստեղծված չի եղել ազգային ՏՏԵ, ինչը տարածական տվյալների հետ առնչվող անհատների և կազմակերպությունների անհամաձայնեցված գործողությունների պատճառ է դարձել: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Միջոցառման համակատարող Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության հետ կհամաձայնեցվեն մշակվելիք ստանդարտների շրջանակներում հստակեցվող բոլոր այն մոտեցումները, որոնք անհրաժեշտ են տարածական տվյալների ստեղծման, պահպանման և տարածման համար: Կսահմանվեն պահանջներ որակի ապահովման համար, և կստեղծվի մետատվյալների ալբոմ: Կիրականացվեն հետևյալ միջոցառումները՝ 1. Հայաստանի Հանրապետության տարածական տվյալների՝ պետական, ճյուղային, տարածքային և համայնքային, ինչպես նաև մետատվյալների բանկերի վերաբերյալ նորմատիվ-տեխնիկական և իրավական փաստաթղթերի մշակում և արդիականացում, 2. ԵՄ տարածական տվյալներին վերաբերող INSPIRE դիրեկտիվների տեղայնացում և ներդաշնակեցում ՀՀ գեոդեզիայի և քարտեզագրության ոլորտներում գործող նորմատիվ-տեխնիկական և իրավական փաստաթղթերին: 3. Իրավական դաշտի կարգավորում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման իրականացման արդյունքում կստեղծվի Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի մշակման և ներդրման համար անհրաժեշտ իրավական կարգավորումների և ստանդարտների փաթեթ:
3	**3.1 Հանրապետության տարածքի օդալուսանկարահանում, օրթոֆոտոհատակագծերի և թվային բարձունքային մոդելի ստեղծման աշխատանքներ** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

	ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 16-ի N 86-Ն որոշման պահանջներին համապատասխան՝ ՀՀ մասշտաբային շարքի տեղագրական քարտեզները արդիականացնելու նպատակով իրականացվելու է նոր առաջացած տարածական տվյալների և տեղագրական տարրեր պարունակող օբյեկտների տեղադրում տեղագրական քարտեզների վրա: Այս աշխատանքները լինելու են շարունակական: Միաժամանակ անհրաժեշտ է ՀՀ ամբողջ տարածքի արդեն իսկ ստեղծված թվային քարտեզները տեղափոխել ArcGis ծրագրային փաթեթ: Միջոցառման իրականացման հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետությունում ժամանակակից պահանջներին բավարարող բազային երկրատեղեկատվական համակարգի ստեղծումն է, որն անհրաժեշտ է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին տնտեսության տարբեր ոլորտների խնդիրների արդյունավետ լուծման, հանրապետության բնական և տնտեսական ռեսուրսների վերաբերյալ տվյալների (ինչպես քարտեզագրական, այնպես էլ տեքստային) պետական միասնական տեղեկատվական բանկի ստեղծման և հանրապետության ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացման համար: Հանրապետության բնական և տնտեսական ռեսուրսների արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ է ունենալ հավաստի և ամբողջական տեղեկատվություն ՀՀ և նրա առանձին վարչատարածքային միավորների տնտեսության վիճակի ու բնական ռեսուրսների, այդ թվում՝ հողային, ջրային, անտառային ռեսուրսների, օգտակար հանածոների, տնտեսական զարգացման, արդյունաբերական և գյուղատնտեսական ձեռնարկությունների, անշարժ գույքի, բնակչության տեղաբաշխման, ճանապարհային ցանցի ու ենթակառուցվածքների այլ տարրերի, էկոլոգիական վիճակի վերաբերյալ: Միջոցառման իրականացման համար իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում: **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները** ՀՀ պետական մասշտաբային շարքի քարտեզները՝ տեղափոխված ԵՏՀ միջավայր, հիմք են հանդիսանում գերատեսչական տարբեր ոլորտների (քաղաքաշինական, բնապահպանական, արդյունաբերության, կադաստրի, տարածքների պլանավորման, գյուղատնտեսական հողերի հաշվառման, հողերի միավորման, հողերի օգտագործման և գոտիավորման սխեմաների կազմման, վարչական և տնտեսական գործունեության, մելիորացիայի, երկրաբանական հետախուզական աշխատանքների, անտառտնտեսության և այլն) խնդիրների լուծման նպատակով ստեղծվելիք քարտեզագրական նյութերի համար: Նորվեգական դրամաշնորհով 2014 թվականին նախատեսվել և իրականացվել է ՀՀ տարածքի օդալուսանկարահանում՝ 10 սմ լուծաչափով Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքների համար 20 սմ լուծաչափով՝ և մնացած քաղաքների ու բնակավայրերի հարակից տարածքների համար՝ 1:2000 մասշտաբի օրթոֆոտոհատակագծերի ստեղծման նպատակով: 2013 թվականից մասշտաբային շարքի բոլոր տեղագրական քարտեզները տեղափոխվում են ArcGIS միջավայր, իսկ 2015 թվականից ՀՀ քաղաքների տեղագրական հատակագծերը արդեն իսկ ստեղծվում են ԵՏՀ միջավայրում: Այս ուղղությամբ 2005-2012 թվականներին Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում իրականացվել են բազային երկրատեղեկատվական համակարգի ստեղծման աշխատանքներ, որոնց հիմնական նպատակն աշխարհագրական անվանումների, հողային ֆոնդի, անշարժ գույքի նպատակային, գործառնական նշանակության, հողատեսքերի, ջրագրության, ռելիեֆի, գծային ենթակառուցվածքների օբյեկտների մասին քարտեզագրական և տեքստային տվյալների տեղեկատվական բանկի ստեղծումն ու կառավարումն էր: Ֆինանսավորման առկայության դեպքում այս նյութերը ենթակա են թարմացման: 2016-2017 թվականներին ավարտվել են Գյումրի և Վանաձոր քաղաքների, իսկ 2017-2018 թվականներին՝ Սևան և Սպիտակ քաղաքների բազային երկրատեղեկատվական համակարգի ստեղծման աշխատանքները: **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Ծրագրի հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքի ապահովումն է նոր օրթոֆոտոհատակագծերով, որոնց կիրառմամբ ստեղծվող քարտեզները անհրաժեշտ է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին տնտեսության տարբեր ոլորտների խնդիրների արդյունավետ լուծման, պետական միասնական տեղեկատվական բանկի ստեղծման և հանրապետության ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացման համար: Պետական մակարդակով երկրատեղեկատվական համակարգերի ստեղծումը և ներդրումը թույլ կտան բացառել ոչ բավարար հիմնավորում ունեցող որոշումների ընդունումը և անցնել պետական կառավարման որակապես նոր մակարդակի: Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման բնագավառում ժամանակակից երկրատեղեկատվական համակարգի օգտագործումը կնպաստի՝ Հայաստանի Հանրապետության մարզերի և համայնքների տնտեսական ծրագրերի արդյունավետ մշակմանը, ա. կառավարման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման և մշակման ստանդարտացման աստիճանի բարձրացմանը, բ. տնտեսության տարբեր ոլորտներում օգտագործվող տարածական տեղեկատվության անհարկի կրկնօրինակման և տվյալների հակասականության բացառմանը, գ. տարածական տվյալների ստեղծման գործընթացի հեշտացմանը, օպերատիվության բարձրացմանը և ծախսերի նվազեցմանը,

դ. տարածական տվյալների մատչելիության ապահովմանը, հանրության համար տեղեկատվության հասանելիության ապահովմանը,
ե. տվյալների ամբողջականության, հավաստիության, ճշտության ստուգման ներքին մեխանիզմների մշակմանը,
զ. տարածական տվյալների արդիականության և անընդհատության ապահովմանը:
Կիրականացվեն հետևյալ միջոցառումները՝
1. Հանրապետության տարածքի օդալուսանկարահանում, օրթոֆոտոհատակագծերի և թվային բարձունքային մոդելի ստեղծման աշխատանքներ,
2. Երկրատեղեկատվական համակարգում Հայաստանի Հանրապետության բնակավայրերի քարտեզագրական հենքի ստեղծման աշխատանքներ:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Այս աշխատանքների իրականացման արդյունքում նախատեսվում է ունենալ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքի օրթոֆոտոհատակագծերի և թվային բարձունքային մոդելի թարմացված ժամանակագրական շարք, Հայաստանի Հանրապետության բնակավայրերի տարածական տվյալների բազա և քարտեզագրական հենք, Հայաստանի Հանրապետության քաղաքների քարտեզագրական հենքի թարմացված ժամանակագրական շարք:

3.2 Երկրատեղեկատվական համակարգում Հայաստանի Հանրապետության բնակավայրերի քարտեզագրական հենքի ստեղծման աշխատանքներ

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 16-ի N 86-Ն որոշման պահանջներին համապատասխան՝ ՀՀ մասշտաբային շարքի տեղագրական քարտեզները արդիականացնելու նպատակով իրականացվելու է նոր առաջացած տարածական տվյալների և տեղագրական տարրեր պարունակող օբյեկտների տեղադրում տեղագրական քարտեզների վրա: Այս աշխատանքները լինելու են շարունակական: Միաժամանակ անհրաժեշտ է ՀՀ ամբողջ տարածքի արդեն իսկ ստեղծված թվային քարտեզները տեղափոխել GIS միջավայր:
Միջոցառման իրականացման հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետությունում ժամանակակից պահանջներին բավարարող բազային երկրատեղեկատվական համակարգի ստեղծումն է, որն անհրաժեշտ է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին տնտեսության տարբեր ոլորտների խնդիրների արդյունավետ լուծման, հանրապետության բնական և տնտեսական ռեսուրսների վերաբերյալ տվյալների (ինչպես քարտեզագրական, այնպես էլ տեքստային) պետական միասնական տեղեկատվական բանկի ստեղծման և հանրապետության ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացման համար:
Հանրապետության բնական և տնտեսական ռեսուրսների արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ է ունենալ հավաստի և ամբողջական տեղեկատվություն ՀՀ և նրա առանձին վարչատարածքային միավորների տնտեսության վիճակի ու բնական ռեսուրսների, այդ թվում՝ հողային, ջրային, անտառային ռեսուրսների, օգտակար հանածոների, տնտեսական զարգացման, արդյունաբերական և գյուղատնտեսական ձեռնարկությունների, անշարժ գույքի, բնակչության տեղաբաշխման, ճանապարհային ցանցի ու ենթակառուցվածքների այլ տարրերի, էկոլոգիական վիճակի վերաբերյալ:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները

ՀՀ պետական մասշտաբային շարքի քարտեզները՝ տեղափոխված ԵՏՀ միջավայր, հիմք են հանդիսանում գերատեսչական տարբեր ոլորտների (քաղաքաշինական, բնապահպանական, արդյունաբերության, կադաստրի, տարածքների պլանավորման, գյուղատնտեսական հողերի հաշվառման, հողերի միավորման, հողերի օգտագործման և գոտիավորման սխեմաների կազմման, վարչական և տնտեսական գործունեության, մելիորացիայի, երկրաբանական հետախուզական աշխատանքների, անտառտնտեսության և այլն) խնդիրների լուծման նպատակով ստեղծվելիք քարտեզագրական նյութերի համար:
Նորվեգական դրամաշնորհով 2014 թվականին նախատեսվել և իրականացվել է ՀՀ տարածքի օդալուսանկարահանում՝ 10 սմ լուծաչափով Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքների համար 20 սմ լուծաչափով՝ և մնացած քաղաքների ու բնակավայրերի հարակից տարածքների համար՝ 1:2000 մասշտաբի օրթոֆոտոհատակագծերի ստեղծման նպատակով:
2013 թվականից մասշտաբային շարքի բոլոր տեղագրական քարտեզները տեղափոխվում են GIS միջավայր, իսկ 2015 թվականից ՀՀ քաղաքների տեղագրական հատակագծերը արդեն իսկ ստեղծվում են ԵՏՀ միջավայրում:
Այս ուղղությամբ 2005-2012 թվականներին Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում իրականացվել են բազային երկրատեղեկատվական համակարգի ստեղծման աշխատանքներ, որոնց հիմնական նպատակն աշխարհագրական անվանումների, հողային ֆոնդի, անշարժ գույքի նպատակային, գործառնական նշանակության, հողատեսքերի, ջրագրության, ռելիեֆի, գծային ենթակառուցվածքների օբյեկտների մասին քարտեզագրական և տեքստային տվյալների տեղեկատվական բանկի ստեղծումն ու կառավարումն էր: Ֆինանսավորման առկայության դեպքում այս նյութերը ենթակա են թարմացման:
2016-2017 թվականներին ավարտվել են Գյումրի և Վանաձոր քաղաքների, իսկ 2017-2018 թվականներին՝ Սևան և Սպիտակ քաղաքների բազային երկրատեղեկատվական համակարգի ստեղծման աշխատանքները:

	1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Ծրագրի հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքի ապահովումն է նոր օրթոֆոտոհատակագծերով, որոնց կիրառմամբ ստեղծվող քարտեզները անհրաժեշտ է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին տնտեսության տարբեր ոլորտների խնդիրների արդյունավետ լուծման, պետական միասնական տեղեկատվական բանկի ստեղծման և հանրապետության ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացման համար: Պետական մակարդակով երկրատեղեկատվական համակարգերի ստեղծումը և ներդնումը թույլ կտա բացառել ոչ բավարար հիմնավորում ունեցող որոշումների ընդունումը և անցնել պետական կառավարման որակապես նոր մակարդակի: Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման բնագավառում ժամանակակից երկրատեղեկատվական համակարգի օգտագործումը կնպաստի՝ Հայաստանի Հանրապետության մարզերի և համայնքների տնտեսական ծրագրերի արդյունավետ մշակմանը, ա. կառավարման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման և մշակման ստանդարտացման աստիճանի բարձրացմանը, բ. տնտեսության տարբեր ոլորտներում օգտագործվող տարածական տեղեկատվության անհարկի կրկնօրինակման և տվյալների հակասականության բացառմանը, գ. տարածական տվյալների ստեղծման գործընթացի հեշտացմանը, օպերատիվության բարձրացմանը և ծախսերի նվազեցմանը, դ. տարածական տվյալների մատչելիության ապահովմանը, հանրության համար տեղեկատվության հասանելիության ապահովմանը, ե. տվյալների ամբողջականության, հավաստիության, ճշտության ստուգման ներքին մեխանիզմների մշակմանը, զ. տարածական տվյալների արդիականության և անընդհատության ապահովմանը: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Հայաստանի Հանրապետության շուրջ 41000 հա տարածքի քարտեզագրական հենքի թարմացված ժամանակագրական շարք:
4	**4.1 Գործող իրավական ակտերում փոփոխությունների իրականացում, անհրաժեշտության դեպքում նոր կարգավորումներ** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** 1. Միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Իրավական ակտերի ընդունում (օրենքներ, կառավարության որոշումներ, հրամաններ և հրահանգներ), որոնք հնարավորություն են ընձեռելու ապահովել կադաստրային քարտեզների ուղղման աշխատանքներ: Միջոցառման իրականացումը նորմատիվ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն է առաջացնում: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները** Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղումն իրականացվում է ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի «Կադաստրային քարտեզում հայտնաբերված սխալների ուղղման կարգը սահմանելու մասին» N 698-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2009 թվականի փետրվարի 26-ի «Կադաստրային քարտեզագրման աշխատանքների իրականացման հրահանգը հաստատելու մասին» N 51-Ն հրամանի պահանջներով: Անհրաժեշտություն է առաջացել իրականացնել նոր կարգավորումներ: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Առաջարկվում է փոփոխություն կատարել ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի N 698-Ն որոշման մեջ: Կիրականացվեն հետևյալ միջոցառումները՝ 1. Գործող իրավական ակտերում փոփոխությունների իրականացում, անհրաժեշտության դեպքում նոր կարգավորումներ, 2. ՀՀ օրթոֆոտոհատակագծերով ծածկված համայնքների կադաստրային քարտեզների ճշգրտման աշխատանքներ, 3. ՀՀ համայնքների կադաստրային թաղամասերի ուղղման նպատակով լրացուցիչ կետերի դիտարկում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** ՀՀ օրթոֆոտոհատակագծերով ամբողջությամբ ծածկված համայնքների ճշգրտված կադաստրային հատակագծեր: ՀՀ համայնքների կադաստրային թաղամասերի արտաքին սահմանների ամբողջական ուղղում: Ճշտված կադաստրային քարտեզներ, որը կհանգեցնի անշարժ գույքի արտադատարանական և դատարանական վեճերի նվազմանը: Կադաստրային քարտեզների ուղղման աշխատանքները կարևորվում են նաև հետևյալով. 2021 թվականի արտահերթ խորհրդարանական ընտրությունների նախընտրական քարոզարշավի շրջանում ՀՀ վարչապետի կողմից հնչեցվել են նախընտրական խոստումներ և հանձնարարականներ՝ մանկապարտեզներ, դպրոցներ, ջրամբարներ կառուցելու վերաբերյալ: Ճշտված կադաստրային քարտեզները հնարավորություն են

	ստեղծելու նշված խոստումները և հանձնարարականները իրագործել ժամանակին և առանց լրացուցիչ խոչընդոտների:
	4.2 ՀՀ օրթոֆոտոհատակագծերով ծածկված համայնքների կադաստրային քարտեզների ճշգրտման աշխատանքներ **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման նպատակն է իրավունքի պետական գրանցում ստացած, սակայն կադաստրային քարտեզում չտեղադրված գույքերի հայտնաբերումը, նույնականացումը, կադաստրային քարտեզում արտացոլումը ու Հայաստանի անշարժ գույքի տեղեկատվական (ARPIS) համակարգում տվյալների ուղղումը: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները** Ներկայումս առկա են իրավունքի պետական գրանցում ստացած բազմաթիվ գույքային միավորներ, որոնց կադաստրային գործերում բացակայում են քարտեզահատակագծային տվյալները և/կամ գույքը արտացոլված չէ կադաստրային քարտեզում, ինչը բերում է բազմաթիվ խնդիրների կադաստրային քարտեզի վարման և գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման գործընթացներում: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Դաշտային հանութագրման, գրասենյակային վերծանման և համայնքների ներկայացուցիչների հետ համագործակցության միջոցով իրավունքի պետական գրանցում ստացած, սակայն կադաստրային քարտեզում չտեղադրված գույքերի հայտնաբերում, նույնականացում, կադաստրային քարտեզում արտացոլելու նպատակով հատակագծերի/սխեմաների կազմում ու Հայաստանի անշարժ գույքի տեղեկատվական (ARPIS) համակարկում տվյալների ուղղում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Աշխատանքների իրականացման արդյունքում կունենանք գույքերի թարմացված և ուղղված կադաստրային քարտեզներ ու բազա:
	4.3 ՀՀ համայնքների կադաստրային թաղամասերի ուղղման նպատակով լրացուցիչ կետերի դիտարկում **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման նպատակն է Կադաստրի կոմիտեի նախաձեռնությամբ արբանյակային լուսանկարահանման միջոցով ստացված օրթոֆոտոհատակագծերով ծածկված համայնքների կադաստրային քարտեզների ուղղման ընթացքում անհրաժեշտության դեպքում լրացուցիչ կետերի դիտարկումը: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները** 2021 թ. ընթացքում իրականացվել է ՀՀ ամբողջ տարածքի օրթոֆոտոհատակագծերի կազմումը՝ օդալուսանկարահանման և տիեզերանկարահաման միջոցով: Ստացված օրթոֆոտոհատակագծերը հիմք են հանդիսանում կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման համար՝ համաձայն ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի «Կադաստրային քարտեզում հայտնաբերված սխալների ուղղման կարգը սահմանելու մասին» N 698-Ն որոշման: Արբանյակային նկարների արդյունքում ստացված օրթոֆոտոհատակագծերի առանձնահատկություններից ելնելով, կադաստրային քարտեզները առավել ճշգրիտ ուղղման նպատակով անհրաժեշտ է լրացուցիչ կետերի դիտարկում: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Կադաստրային քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղումը իրականացնել օրթոֆոտոհատակագծերի և՝ ըստ անհրաժեշտության, հանութագրված կետերի հիման վրա: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Յուրաքանչյուր ճշտվող համայնքում անհրաժեշտության դեպքում մինչև 25 կետի հանութագրում:
5	**5.1 Ցանցի խտացում, հավասարակշռում, ծրագրային ապահովումների արդիականացում, սերվերային հանգույցի թարմացում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Նորվեգիայի Թագավորության քարտեզագրության և կադաստրի վարչության (Statens Kartverk) գույքային իրավունքների ու զարգացման կենտրոնի հետ համատեղ իրականացվող «Հողային ռեսուրսների արդյունավետ կառավարման գործիքներ» ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետությունում 2013 թվականին ստեղծվել է մշտապես գործող տասներկու ռեֆերենց կայաններից կազմված ցանց, որոնք հավասարապես բաշխված են Հայաստանի Հանրապետության ողջ տարածքով:

ՀՀ տարածքը «Ռեֆերենց կայանների» ծածկույթով ապահովելու նպատակով ստեղծվել է 40 կմ շառավղով 12 մշտական գործող կայան, որոնք տեղադրվել են հարմարավետ վայրերում: Այդ վայրերը ընտրելիս հաշվի են առնվել.

1) հարևան ռեֆերենց կայաններով ծածկույթների հեռավորությունը (40 կմ),
2) խոշոր բնակավայրերի առկայությունը,
3) գլխավոր ճանապարհներով կապը,
4) օդերևութաբանական կայանների առկայությունը: Որպեսզի կայանների գործունեությունը լինի առավել արդյունավետ և աշխատի անխափան, իրական ժամանակում մշտական գործող կայանի տեղադրման վայրի ընտրության ժամանակ հաշվի են առնվել հետևյալ հանգամանքները.
5) երկնքի տեսանելիության ապահովումը,
6) ալեհավաքի կայունությունը,
7) ալիքների անդրադարձումը,
8) սարքավորումների պահպանությունը,
9) ֆիզիկական անվտանգությունը,
10) տեղադրման վայրի եղանակային պայմանները,
11) էլեկտրասնուցման և մայրուղային կապերի առկայությունը: Ավելին՝ կոորդինատների որոշման՝ հավասարակշռման աշխատանքներում ներգրավված են եղել նաև 8 գեոդեզիական կետեր: Կոորդինատների հաշվարկումը իրականացվել է միջազգային ստանդարտ ռեֆերենց շրջանակում (ITRF2008/IGS08): Վերջնական արդյունքում դրանք փոխակերպվել են ARMREF02 համակարգ՝ օգտագործելով որոշ մշտապես գործող ռեֆերենց կայանների (CORS) ռեֆերենց կոորդինատները: ARMREF02 համակարգը Հայաստանի համար գեոդեզիական ռեֆերենց պաշտոնական համակարգ է, որը համապատասխանում է Համաշխարհային գեոդեզիական ռեֆերենց համակարգին (ITRS) ITRF2000 էպոխայի (epoch) 2002.9-ի միջոցով: Միջոցառման իրականացումը նորմատիվ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջացնում:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները

Մշտապես գործող ռեֆերենց կայանները դիտարկվել և հաշվարկվել են 2013 թվականի սեպտեմբերի 22-ից մինչև հոկտեմբերի 11-ը (տարվա օրերն են 265-284) կատարած GPS C1/L1/P2/L2 չափագրումների 20-օրյա, 30-օրյա նմուշառման չափի շարքով: Ելնելով առաջիկայում Հայաստանի Հանրապետության տարածքում նախատեսվող տեղագրագեոդեզիական աշխատանքների արագ և ճշգրիտ իրականացման պահանջներից անհրաժեշտություն է առաջացել իրական ժամանակում մշտական գործող ռեֆերենց կայանների ցանցը խտացնել՝ կայաններն ավելացնելով ևս 2-ով: Քանի որ Հայաստանի Հանրապետությունում տեղագրագեոդեզիական աշխատանքների առավել զգալի բաժինը իրականացվում է խիտ բնակեցված և կառուցապատված Երևան քաղաքի և Արարատյան դաշտի տարածաշրջանում, ուստի անհրաժեշտություն է առաջացել կայաններից մեկը տեղադրել Երևան քաղաքում: Երևանում նախատեսվող կայանը նպատակահարմար է տեղադրել մայր ապարի վրա՝ գեոդեզիական գրունտային հիմնակետի տեսքով, որպեսզի հնարավոր լինի ավելի ճշգրիտ հետևել երկրակեղևի ուղղաձիգ և հորիզոնական շարժերին (քանի որ 12 մշտական գործող ռեֆերենց կայանները տեղադրված են շենքերի տանիքների վրա): Հյուսիսային տարածքներում նախատեսվում է համագործակցություն Վրաստանի Հանրապետության մշտական գործող կայանների հետ, ուստի երկրորդ ռեֆերենց կայանը նպատակահարմար է տեղադրել Տաշիր քաղաքում, հայ-վրացական սահմանի՝ նախատեսվող սահմանազատման և սահմանագծման աշխատանքները բարձր ճշտությամբ իրականացնելու համար: Մշտական գործող ռեֆերենց կայանների ցանցի ղեկավարումն իրականացվում է վերստուգիչ կենտրոնում՝ «Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» ստորաբաժանման տեխնիկական բազայում առկա հզոր սերվերի, համապատասխան ծրագրային ապահովման միջոցով:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Մշտական գործող նոր կայանները հնարավորություն են տալիս GPS ռովեր կայանի միջոցով իրական ժամանակում, ծածկույթի ընդգրկման շրջանում, կարճ ժամանակամիջոցում ստանալու տեղադիրքի կոորդինատները վերը նշված տարածաշրջանների համար, որոնց տվյալները կկիրառվեն դիրքորոշման բազմաթիվ բնագավառներում: Որպես գեոդեզիայի բնագավառի զարգացում՝ ստեղծվելիք նոր երկու ռեֆերենց մշտական գործող կայանների ներդրմամբ կհասցվեն 14-ի: Կիրականացվի հետևյալ միջոցառումը՝

1. Ցանցի խտացում հավասարակշռում, ծրագրային ապահովումների արդիականացում, սերվերային հանգույցի թարմացում:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Ծրագրի իրականացումից հետո ակնկալվում է ունենալ.

1) մշտական գործող երկու ռեֆերենց կայաններ նախատեսված տարածաշրջաններում,
2) ռեֆերենց երկու կայանների տեղադիրքերի հավասարակշռված կոորդինատներ,
3) ՀՀ տարածքում մշտական գործող 14 ռեֆերենց կայանների Միջազգային արբանյակային նավիգացիոն համակարգին կապակցված ցանց:

6	**6.1 Հայաստանի Հանրապետության աշխարհագրական անվանումների պետական քարտադարանի վարում, թարմացում և տեղեկագրերի ստեղծում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Հայաստանի Հանրապետության աշխարհագրական անվանումների պետական քարտադարանի վարման և թարմացման աշխատանքները կրում են շարունակական բնույթ և բխում են «Աշխարհագրական անվանումների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի պահանջներից: Նախապատրաստվող և հրատարակվող տեղեկատուների անհրաժեշտությունը բխում է «Աշխարհագրական անվանումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի և 13-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից և կարևոր նշանակություն ունի լրատվական, գիտական, կրթական, քարտեզագրական և այլ ոլորտներում: Դրանց անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ վերջին տարիների ընթացքում շատացել է հայալեզու հրատարակչական արտադրանքը, ստեղծվել են նոր հեռուստատեսային և ռադիոընկերություններ, գրահրատարակչություններ, թերթեր և ամսագրեր, որոնց կողմից ներկայացվող նյութերում տեղ են գտնում բազմաթիվ աշխարհագրական անվանումներ: Անճշտություններից և կոպիտ վրիպակներից խուսափելու նպատակով շատ կարևոր է ունենալ հավաստի և պաշտոնական տեղեկատու, որոնց միջոցով կներկայացվեն աշխարհագրական անվանումների ճշգրիտ գրելաձևերը: Աշխատանքների իրականացման արդյունքում ստացված տեղեկատուները անհրաժեշտ են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև համապատասխան պետական կազմակերպություններին, կրթական և գիտական հիմնարկներին: **1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ծրագրի հիմնական նպատակն է «Աշխարհագրական անվանումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան ոլորտի զարգացման և արդյունավետության բարձրացման համար Հայաստանի Հանրապետության աշխարհագրական անվանումների պետական քարտադարանի վարումը, ՀՀ սահմաններից դուրս գտնվող աշխարհագրական անվանումների տեղեկատվական բանկի ստեղծումը և տարբեր տեղեկատուների ու բառարանների առցանց հրատարակումը: Այս բնագավառում ՀՀ կառավարության 2001 թվականի հունիսի 9-ի N 502 որոշմամբ հաստատված «ՀՀ աշխարհագրական անվանումների հաշվառման ու գրանցման, պետական քարտադարանի ստեղծման և վարման կարգ»-ի պահանջներին համապատասխան՝ 2002-2007 թվականներին ավարտվել են Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերի աշխարհագրական անվանումների հաշվառման և գրանցման աշխատանքները, միաժամանակ ստեղծվել է աշխարհագրական անվանումների պետական քարտադարանը, որը պարբերաբար թարմացվում է: 2002-2014 թվականների ընթացքում կատարվել են ՀՀ տարածքի ավելի քան 41000 աշխարհագրական օբյեկտների անվանումների հաշվառման աշխատանքներ: ՀՀ կառավարության կողմից ստեղծված ՀՀ աշխարհագրական օբյեկտների անվանակոչումների և անվանափոխումների մասնագիտական հանձնաժողովի աշխատանքի արդյունքում ՀՀ կառավարության կողմից հաստատվել են ՀՀ 10 մարզերի և Երևան քաղաքի աշխարհագրական օբյեկտների անվանումները: Աշխարհագրական անվանումների պետական քարտադարանի թարմացման արդյունքում 2009-2017 թվականներին ՀՀ կառավարության կողմից հաստատվել են համապատասխանաբար մոտ 3200 նոր աշխարհագրական օբյեկտների անվանումներ: Գրանցվել է ՀՀ 10 մարզերի և Երևան քաղաքի աշխարհագրական օբյեկտների ավելի քան 41 հազար անվանում: Անվանափոխվել են ՀՀ 59 բնակավայրեր, նախատեսվում է անվանափոխել ևս 21 բնակավայր: Այս բնագավառում իրականացված աշխատանքների արդյունքում հրատարակվել են ՀՀ մարզերի աշխարհագրական անվանումների պաշտոնական տեղեկատուները՝ գազետիրները, որոնցում զետեղված են ՀՀ մարզերի տարածքներում գտնող աշխարհագրական օբյեկտների անվանումները: Հրատարակվել է նաև «ՀՀ բնակավայրերի բառարան»-ը, «ՀՀ ֆիզիկաաշխարհագրական օբյեկտների համառոտ տեղեկատու-բառարան»-ը, «Աշխարհագրական անվանումների հայերեն լեզվով էկզոնիմների ցանկ»-ը, «ՀՀ վարչատարածքային բաժանման տեղեկատուն», «ՀՀ պատմաճարտարապետական հուշարձանների համառոտ տեղեկատուն», «ՀՀ լեռնագրական օբյեկտների համառոտ տեղեկատուն», ինչպես նաև «Աշխարհի պետությունների համառոտ տեղեկատու բառարանը» և «Աշխարհի խոշորագույն և կարևորագույն քաղաքների համառոտ տեղեկատու-բառարան»-ը: **1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Աշխարհագրական անվանումների ոլորտում բացի շարունակական բնույթ կրող Հայաստանի Հանրապետության աշխարհագրական անվանումների պետական քարտադարանի վարման և թարմացման աշխատանքներից, իրականացնել առցանց և տպագիր բառարանների և տեղեկատուների ստեղծման աշխատանքներ: Կիրականացվեն հետևյալ միջոցառումները՝ 1 Հայաստանի Հանրապետության աշխարհագրական անվանումների պետական քարտադարանի թարմացում: 2. ՀՀ Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքների համապատասխան շերտի ապահովման աշխատանքներ:

	3. ՀՀ և աշխարհի աշխարհագրական անվանումների փոփոխված և վերականգնված հայերեն տպագիր բառարանների և տեղեկատուների ստեղծում: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը 1. ՀՀ աշխարհագրական անվանումների փոփոխված և վերականգնված հայերեն էլեկտրոնային շտեմարանի թարմացում, ՀՀ Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքների համապատասխան շերտի ապահովում: 2. ՀՀ և աշխարհի աշխարհագրական անվանումների փոփոխված և վերականգնված հայերեն բառարանների և տեղեկատուների տպագրում, որն անհրաժեշտ է պետական, գիտական և կրթական համակարգերի համար: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** ՀՀ աշխարհագրական անվանումների փոփոխված և վերականգնված հայերեն էլեկտրոնային շտեմարանի ստեղծում, ՀՀ Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքների համապատասխան շերտի ապահովում:
	6.2 ՀՀ և աշխարհի աշխարհագրական անվանումների փոփոխված և վերականգնված հայերեն տպագիր բառարանների և տեղեկատուների ստեղծում **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Հայաստանի Հանրապետության աշխարհագրական անվանումների պետական քարտադարանի վարման և թարմացման աշխատանքները կրում են շարունակական բնույթ և բխում են «Աշխարհագրական անվանումների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի պահանջներից: Նախապատրաստվող և հրատարակվող տեղեկատուների անհրաժեշտությունը բխում է «Աշխարհագրական անվանումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի և 13-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից և կարևոր նշանակություն ունի լրատվական, գիտական, կրթական, քարտեզագրական և այլ ոլորտներում: Դրանց անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ վերջին տարիների ընթացքում շատացել է հայալեզու հրատարակչական արտադրանքը, ստեղծվել են նոր հեռուստատեսային և ռադիոընկերություններ, գրահրատարակչություններ, թերթեր և ամսագրեր, որոնց կողմից ներկայացվող նյութերում տեղ են գտնում բազմաթիվ աշխարհագրական անվանումներ: Անճշտություններից և կոպիտ վրիպակներից խուսափելու նպատակով շատ կարևոր է ունենալ հավաստի և պաշտոնական տեղեկատու, որոնց միջոցով կներկայացվեն աշխարհագրական անվանումների ճշգրիտ գրելաձևերը: Աշխատանքների իրականացման արդյունքում ստացված տեղեկատուները անհրաժեշտ են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև համապատասխան պետական կազմակերպություններին, կրթական և գիտական հիմնարկներին: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները** Ծրագրի հիմնական նպատակն է «Աշխարհագրական անվանումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան ոլորտի զարգացման և արդյունավետության բարձրացման համար Հայաստանի Հանրապետության աշխարհագրական անվանումների պետական քարտադարանի վարումը, ՀՀ սահմաններից դուրս գտնվող աշխարհագրական անվանումների տեղեկատվական բանկի ստեղծումը և տարբեր տեղեկատուների ու բառարանների առցանց հրատարակումը: Այս բնագավառում ՀՀ կառավարության 2001 թվականի հունիսի 9-ի N 502 որոշմամբ հաստատված «ՀՀ աշխարհագրական անվանումների հաշվառման ու գրանցման, պետական քարտադարանի ստեղծման և վարման կարգ»-ի պահանջներին համապատասխան՝ 2002-2007 թվականներին ավարտվել են Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերի աշխարհագրական անվանումների հաշվառման և գրանցման աշխատանքները, միաժամանակ ստեղծվել է աշխարհագրական անվանումների պետական քարտադարանը, որը պարբերաբար թարմացվում է: 2002-2014 թվականների ընթացքում կատարվել են ՀՀ տարածքի ավելի քան 41000 աշխարհագրական օբյեկտների անվանումների հաշվառման աշխատանքներ: ՀՀ կառավարության կողմից ստեղծված ՀՀ աշխարհագրական օբյեկտների անվանակոչումների և անվանափոխումների մասնագիտական հանձնաժողովի աշխատանքի արդյունքում ՀՀ կառավարության կողմից հաստատվել են ՀՀ 10 մարզերի և Երևան քաղաքի աշխարհագրական օբյեկտների անվանումները: Աշխարհագրական անվանումների պետական քարտադարանի թարմացման արդյունքում 2009-2017 թվականներին ՀՀ կառավարության կողմից հաստատվել են համապատասխանաբար մոտ 3200 նոր աշխարհագրական օբյեկտների անվանումներ: Գրանցվել է ՀՀ 10 մարզերի և Երևան քաղաքի աշխարհագրական օբյեկտների ավելի քան 41 հազար անվանում: Անվանափոխվել են ՀՀ 59 բնակավայրեր, նախատեսվում է անվանափոխել ևս 21 բնակավայր: Այս բնագավառում իրականացված աշխատանքների արդյունքում հրատարակվել են ՀՀ մարզերի աշխարհագրական անվանումների պաշտոնական տեղեկատուները՝ գազետիրները, որոնցում զետեղված են ՀՀ մարզերի տարածքներում գտնող աշխարհագրական օբյեկտների անվանումները: Հրատարակվել է նաև «ՀՀ բնակավայրերի բառարան»-ը, «ՀՀ ֆիզիկաաշխարհագրական օբյեկտների համառոտ տեղեկատու-բառարան»-ը, «Աշխարհագրական անվանումների հայերեն լեզվով էկզոնիմների ցանկ»-ը, «ՀՀ վարչատարածքային բաժանման տեղեկատուն», «ՀՀ պատմաճարտարապետական հուշարձանների համառոտ տեղեկատուն», «ՀՀ լեռնագրական օբյեկտների համառոտ տեղեկատուն», ինչպես նաև

	«Աշխարհի պետությունների համառոտ տեղեկատու բառարանը» և «Աշխարհի խոշորագույն և կարևորագույն քաղաքների համառոտ տեղեկատու-բառարան»-ը: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Աշխարհագրական անվանումների ոլորտում բացի շարունակական բնույթ կրող Հայաստանի Հանրապետության աշխարհագրական անվանումների պետական քարտադարանի վարման և թարմացման աշխատանքներից, իրականացնել առցանց և տպագիր բառարանների և տեղեկատուների ստեղծման աշխատանքներ: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** ՀՀ և աշխարհի աշխարհագրական անվանումների փոփոխված և վերականգնված հայերեն բառարանների և տեղեկատուների տպագրում, որն անհրաժեշտ է պետական, գիտական և կրթական համակարգերի համար:
7	**7.1** Նոր ձևաչափով՝ տպագիր, բազմալեզու, ինչպես նաև համացանցում տեղադրված հնարավորությամբ ատլաս **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Թեմատիկ քարտեզագրությունը դիտարկվում է որպես պետական նշանակության ոլորտ: Այն ամրագրված է նաև «Գեոդեզիայի, քարտեզագրության և տարածական տվյալների ենթակառուցվածքի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ մասի է/ կետում: Պետական նշանակության թեմատիկ քարտեզագրության հրատարակումները համարվում են պաշտոնական նյութեր, որոնց վրա կարելի է հղում կատարել և օգտագործել հավաստի տեղեկատվություն ստանալու համար: Այդ աշխատանքների շարքնն են դասվում հիմնարար ատլասները (Ազգային ատլաս, Աշխարհի մեծ ատլաս, Երևան ատլաս), ինչպես նաև կրթական համակարգի համար նախատեսված հավաստի նյութ պարունակող ուսումնական քարտեզներն ու ատլասները: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները** Բնագավառում իրականացված աշխատանքների արդյունքում նախկինում հրատարակվել են Հայաստանի ազգային ատլասի Ա և Բ հատորները, շարունակվում են նաև Հայաստանի ազգային ատլասի Ա հատորի անգլերեն տարբերակի ստեղծման աշխատանքները, պատրաստվում են նաև ռուսաց լեզվով միավորված մեկ հատորյակը, ինչպես նաև 32 անվամբ ուսումնական քարտեզներ: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Հիմք ընդունելով «Գեոդեզիայի, քարտեզագրության և տարածական տվյալների ենթակառուցվածքի մասին» ՀՀ օրենքի վերը նշված հոդվածի դրույթները և հաշվի առնելով օգտագործողների մեծ պահանջարկը անհրաժեշտություն է առաջացել պետական մակարդակով ստեղծելու նոր հիմնարար ատլաս՝ Հայաստանի ազգային նոր ատլասի ստեղծում: Դա հիմնավորվում է նաև նրանով, որ նախատեսվում է իրականացնել Աշխարհի աշխարհագրական անվանումների պաշտոնական տեղեկատուի ստեղծման աշխատանքներ, որի արդյունքում ստեղծված հսկայածավալ նյութը կօգտագործվի այդ ատլասի նախապատրաստման համար: Նախկինում ստեղծված քարտեզագրական նյութերի հիման վրա նոր ձևաչափով վերահրատարակվելու է Հայաստանի ազգային ատլասը, Աշխարհի մեծ ատլասը, Սպայի ատլասը և այլ նմանատիպ, անհրաժեշտ ատլասներ: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Թարմացված բազմալեզու ատլասներ:
8	**8.1 Հայաստանի Հանրապետության տարածքում համապատասխան բաշխվածությամբ գեոդեզիական կետերի հանութագրում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Սույն ծրագրի նպատակը պետական ազգային գեոդեզիական 0-ական, 1-ին և 2-րդ դասի ցանցի կետերի վերադիտարկումը, հավասարակշռումը, կոորդինատների հաշվարկումն է: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները** ՀՀ տարածքում պետական ազգային գեոդեզիական 0-ական, 1-ին և 2-րդ դասի ցանցը ստեղծվել է 2002-2006 թվականներին: Կետերը հիմնականում տեղաբաշխված են բնակավայրերի տարածքների մոտակայքում և գեոդեզիական աշխատանքների իրականացման համար հարմարավետ վայրերում: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** ՀՀ տարածքը գտնվում է սեյսմիկ ակտիվ խզվածքների գոտում, հաշվի առնելով այդ հանգամանքը և արբանյակային գեոդեզաիական ցանցերի ստեղծման հրահանգի պահանջները, անհրաժեշտություն է առաջացել պետական ազգային գեոդեզիական 0-ական, 1-ին և 2-րդ դասի ցանցի կետերը վերադիտարկել, հավասարակշռել և հաշվարկել կոորդինատները: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Առկա բարձունքային մոդելի ճշտության բարձրացման համար նոր կետերի տեղադրում, հանութագրում և տվյալների ամբողջական մշակում:

9	**9.1 Քարտեզների կազմում՝ ընդհանրացման եղանակով** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** ՀՀ մասշտաբային շարքի տեղագրական քարտեզներից 1:10000 մասշտաբի ԱՏՀ միջավայր տեղափոխված տեղագրական քարտեզների թարմացում, ըստ օրտոֆոտոլուսանկարների, այնուհետև ընդհանրացման եղանակով ստանալ ԱՏՀ միջավայրում ՀՀ մասշտաբային շարքի 1:25 000,1:50 000, 1:100 000,1:200 000, 1:500 000, 1:1000 000 քարտեզներ: ՀՀ մասշտաբային շարքի տեղագրական քարտեզները արդիականացնելու նպատակով իրականացվելու է նոր առաջացած տարածական տվյալների և տեղագրական տարրեր պարունակող օբյեկտների տեղադրում տեղագրական քարտեզների վրա: Ծրագրի հիմնական նպատակը բազային երկրատեղեկատվական համակարգի ստեղծումն է: Այն անհրաժեշտ է ինչպես պետական, այնպես էլ տեղական ինքնակառավարման մարմիններին տարբեր ոլորտների խնդիրների արդյունավետ լուծման համար: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները** Տեղագրական քարտեզների մասշտաբային շարքի թարմացում՝ ըստ օրթոֆոտոլուսանկարների կազմողական եղանակով: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Ծրագրի նպատակն է ստեղծել տարբեր մասշտաբների բազային քարտեզագրական շերտեր, որոնց կիրառմամբ ստեղծվող քարտեզները անհրաժեշտ է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին տարբեր ոլորտների խնդիրների արդյունավետ լուծման համար: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Տարբեր մասշտաբների բազային քարտեզագրական շերտերի ստացում:
10	**10.1 «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում, ՀՀ Վարչապետի աշխատակազմ ներկայացում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացումն է էականորեն պարզեցնել և դյուրացնել Կադաստրի կոմիտեի կողմից մատուցվող ծառայություններից օգտվելը, հնարավորություն ընձեռել դրանցից օգտվել հիմնականում առանց կադաստր վարող մարմին ներկայանալու և հնարավորինս կարճ ժամկետներում հնարավորինս բացառել քաղաքացիների և պաշտոնատար անձանց անմիջական շփումը, ինչպես նաև նվազեցնել կադաստրի աշխատակիցների ծանրաբեռնվածությունը և հնարավոր դարձնել համակարգի և աշխատակիցների օպտիմալացումը, արդյունքում՝ նվազեցնել համակարգի պահպանման ծախսերը և ավելացնել եկամուտները: Միջոցառման իրականացման համար ընդունման ենթակա է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները** Մշակված և 2012 թվականից ներդրված է ARPIS գրանցման ինքնաշխատ համակարգը: Այն փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգ է, որը թույլ է տալիս դիմումների ընդունումից սկսած մինչև դրանց հիման վրա կազմված իրավունքների պետական գրանցման վկայականների և տեղեկատվության տրամադրման տեղեկանքների տրամադրումն իրականացնել էլեկտրոնային եղանակով: Կադաստրային տվյալների միասնական էլեկտրոնային բազա և գրանցման ինքնաշխատ համակարգ ունենալը հնարավորություն ընձեռեց անցնելու էլեկտրոնային եղանակով իրավունքների պետական գրանցմանը և տեղեկատվության տրամադրմանը: Արդյունքում դյուրինացվեց Կադաստրի կոմիտեի կողմից մատուցվող ծառայություններից օգտվելը, հնարավոր եղավ մատուցել էլեկտրոնային առցանց ծառայություններ: Չնայած վերոգրյալին՝ տեղեկատվության տրամադրման գործընթացը հիմնականում իրականացվում է մարդկային մեծ ռեսուրսների ներգրավմամբ, քանի որ էլեկտրոնային շտեմարաններում առկա է տվյալների ամբողջականացման խնդիր, և անհրաժեշտ է յուրաքանչյուր դիմումի ժամանակ հավաստիանալ հարցվող տեղեկատվության ճիշտ և ամբողջական լինելու մեջ: Տրամադրվող տեղեկանքները պետք է լինեն թղթային, քանի որ հավաստվում են սպասարկման գրասենյակների կնիքով: 2018 թվականից ներդրվել է առցանց՝ ինքնաշխատ եղանակով որոշ տեղեկատվությունների տրամադրման համակարգ, սակայն այն դեռևս չունի բավարար պահանջարկ տրամադրվող տեղեկությունների սահմանափակ լինելու, ինչպես նաև տրամադրված տեղեկանքները կնքված չլինելու պատճառով: Տվյալ ծառայության զարգացմանը խոչընդոտում է նաև քաղաքացիների ոչ իրազեկված լինելու հանգամանքը ևս: **1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Առկա խնդիրները լուծելու նպատակով նախատեսվում է ընդլայնել առցանց տրամադրվող տեղեկությունների տեսակները, մշակել նոր տեղեկատվական փաթեթներ, ստեղծել տեղեկատվության որոնման առցանց գործող

	տարածական հարթակ, վերացնել տրամադրվող ավարտական փաստաթղթի կնքված լինելու պահանջը, զարգացնել էլեկտրոնային ծառայությունների մատուցման համար նախատեսված www.e-cadastre.am կայքը, քաղաքացիներին, անշարժ գույքի շուկայի մասնակիցներին իրազեկել ներդրված նոր ծառայությունների և դրանցից հարմարավետ օգտվելու տարբերակների մասին: Միջոցառման համակատարող հանդիսացող ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության, ՀՀ արդարադատության նախարարության հարկադիր կատարման ծառայության, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի, ՀՀ դատախազության, ՀՀ քննչական կոմիտեի. ՀՀ ազգային անվտանգության ծառայության, Բարձրագույն դատական խորհրդի կողմից կատարման ենթակա գործողությունները կսահմանվեն աշխատանքային խումբ ստեղծելու միջոցով: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Օրենսդրական դաշտի կարգավորում, որի արդյունքում իրավունքների պետական գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը կներկայացվեն այն տրամադրող մարմինների կողմից: Ընդ որում դրանք պետք է ներկայացվեն միայն էլեկտրոնային եղանակով՝ հատուկ կապուղիների կամ էլեկտրոնային տեղեկատվական համակարգերի միջոցով:
	10.2 «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում, ՀՀ Վարչապետի աշխատակազմ ներկայացում **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացումն է էականորեն պարզեցնել և դյուրացնել Կադաստրի կոմիտեի կողմից մատուցվող ծառայություններից օգտվելը, հնարավորություն ընձեռել դրանցից օգտվել հիմնականում առանց կադաստր վարող մարմին ներկայանալու և հնարավորինս կարճ ժամկետներում հնարավորինս բացառել քաղաքացիների և պաշտոնատար անձանց անմիջական շփումը, ինչպես նաև նվազեցնել կադաստրի աշխատակիցների ծանրաբեռնվածությունը և հնարավոր դարձնել համակարգի և աշխատակիցների օպտիմալացումը, արդյունքում՝ նվազեցնել համակարգի պահպանման ծախսերը և ավելացնել եկամուտները: Միջոցառման իրականացման համար ընդունման ենթակա է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները** Մշակված և 2012 թվականից ներդրված է ARPIS գրանցման ինքնաշխատ համակարգը: Այն փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգ է, որը թույլ է տալիս դիմումների ընդունումից սկսած մինչև դրանց հիման վրա կազմված իրավունքների պետական գրանցման վկայականների և տեղեկատվության տրամադրման տեղեկանքների տրամադրումն իրականացնել էլեկտրոնային եղանակով: Կադաստրային տվյալների միասնական էլեկտրոնային բազա և գրանցման ինքնաշխատ համակարգ ունենալը հնարավորություն ընձեռեց անցնելու էլեկտրոնային եղանակով իրավունքների պետական գրանցմանը և տեղեկատվության տրամադրմանը: Արդյունքում դյուրինացվեց Կադաստրի կոմիտեի կողմից մատուցվող ծառայություններից օգտվելը, հնարավոր եղավ մատուցել էլեկտրոնային առցանց ծառայություններ: Չնայած վերոգրյալին՝ տեղեկատվության տրամադրման գործընթացը հիմնականում իրականացվում է մարդկային մեծ ռեսուրսների ներգրավմամբ, քանի որ էլեկտրոնային շտեմարաններում առկա է տվյալների ամբողջականացման խնդիր, և անհրաժեշտ է յուրաքանչյուր դիմումի ժամանակ հավաստիանալ հարցվող տեղեկատվության ճիշտ և ամբողջական լինելու մեջ: Տրամադրվող տեղեկանքները պետք է լինեն թղթային, քանի որ հավաստվում են սպասարկման գրասենյակների կնիքով: 2018 թվականից ներդրվել է առցանց՝ ինքնաշխատ եղանակով որոշ տեղեկատվությունների տրամադրման համակարգ, սակայն այն դեռևս չունի բավարար պահանջարկ տրամադրվող տեղեկությունների սահմանափակ լինելու, ինչպես նաև տրամադրված տեղեկանքները կնքված չլինելու պատճառով: Տվյալ ծառայության զարգացմանը խոչընդոտում է նաև քաղաքացիների ոչ իրազեկված լինելու հանգամանքը ևս: **1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Առկա խնդիրները լուծելու նպատակով նախատեսվում է ընդլայնել առցանց տրամադրվող տեղեկությունների տեսակները, մշակել նոր տեղեկատվական փաթեթներ, ստեղծել տեղեկատվության որոնման առցանց գործող տարածական հարթակ, վերացնել տրամադրվող ավարտական փաստաթղթի կնքված լինելու պահանջը, զարգացնել էլեկտրոնային ծառայությունների մատուցման համար նախատեսված www.e-cadastre.am կայքը, քաղաքացիներին, անշարժ գույքի շուկայի մասնակիցներին իրազեկել ներդրված նոր ծառայությունների և դրանցից հարմարավետ օգտվելու տարբերակների մասին: Միջոցառման համակատարող հանդիսացող ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության, ՀՀ արդարադատության

	նախարարության հարկադիր կատարման ծառայության, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի, ՀՀ դատախազության, ՀՀ քննչական կոմիտեի. ՀՀ ազգային անվտանգության ծառայության, Բարձրագույն դատական խորհրդի կողմից կատարման ենթակա գործողությունները կսահմանվեն աշխատանքային խումբ ստեղծելու միջոցով: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Օրենսդրական դաշտի կարգավորում, որի արդյունքում սահմանափակում կիրառող իրավասու մարմինների կողմից սահմանափակումների կիրառման, փոփոխման, դադարման գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը կներկայացվեն միայն էլեկտրոնային եղանակով՝ Կադաստրի կոմիտեի և համապատասխան մարմինների միջև հատուկ կապուղիների և էլեկտրոնային տեղեկատվական համակարգերի միջոցով առցանց ռեժիմով:
	10.3 Էլեկտրոնային համակարգի տեքստային տվյալների բազայում գործող և դադարած իրավունքների սուբյեկտների ճշգրտում և նույնականացում, այդ թվում համայնքներում և այլ պետական մարմիններում առկա տեղեկատվության հիման վրա **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Նշված աշխատանքների իրականացումը էապես կնպաստի կոնկրետ ֆիզիկական անձին պատկանող անշարժ գույքի (գույքերի) առկայության վերաբերյալ տվյալների արագ տրամադրմանը, այդ թվում՝ առցանց՝ ինքնաշխատ եղանակով, ինչպես նաև անձին պատկանող գույքի նկատմամբ սահմանափակումների (արգելանքի) կիրառմանը: Այն միտված է նաև էլեկտրոնային համակարգից օգտվողների աշխատանքի դյուրացմանը և աշխատաժամանակի կրճատմանը, արդյունավետության բարձրացմանը և ռեսուրսների խնայման ապահովմանը, աշխատակիցների ծանրաբեռնվածության նվազեցմանը՝ էականորեն պարզեցնելով տեղեկատվության ձեռքբերման ընթացակարգը՝ կրճատելով տեղեկատվության տրամադրման ժամկետները (հարցումից հետո անմիջապես ստանալու հնարավորությամբ): **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները** 2000-2006թ.թ. ընթացքում ՀՀ կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 31-ի N 867 որոշմամբ հաստատված կարգի պահանջներին համապատասխան անշարժ գույքի նկատմամբ իրավունքների առաջին պետական գրանցման աշխատանքների իրականացման շրջանակներում անվճար իրավունքների պետական գրանցում են ստացել շուրջ 1,620,000 միավոր անշարժ գույք: Նշված գույքերը քաղաքացիները ձեռք են բերել հիմնականում 1991-1997 թվականների ընթացքում՝ «Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» կամ «Հայաստանի Հանրապետության պետական, հանրային և համայնքային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենքների հիման վրա: Հողամասերի մասով պետական գրանցման համար հիմնականում հիմք են հանդիսացել գյուղական բնակավայրերում տնտեսությունների գրքերից (ծխամատյաններից) քաղվածքները, հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովների որոշումները, հողի սեփականության իրավունքի ժամանակավոր վկայականները, հողի սեփականության իրավունքի պետական ակտերը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականները, այգեգործների անդամատոմսերը, իսկ բնակարանների մասով՝ սեփականության վկայագրերը և բնակարանների սեփականաշնորհման մասին նախկին գործադիր կոմիտեների որոշումները: Այդ փաստաթղթերում նշված են սեփականաշնորհմանը մասնակցած անձանց միայն անունը և ազգանունը, իսկ որոշ դեպքերում՝ նաև հայրանունը և (կամ) ծննդյան տարեթիվը: Բնականաբար պատական գրանցումներն իրականացնելիս չեն լրացվել ֆիզիկական անձին միանշանակ նույնականացնող որևէ տվյալ (անձնագրի համար, ՀԾՀ, Նույնականացման քարտ և այլն), որոնց թիվը 2020 թվականի դեկտեմբերի 10-ի դրությամբ կազմել է շուրջ 2,376,000, իսկ 2022 թվականի նոյեմբերի 14-ի դրությամբ՝ շուրջ 993,000 սուբյեկտ: Միանշանակ նույնականացման համար տվյալների բացակայությունը հնարավորություն չի տալիս կոնկրետ ֆիզիկական անձին պատկանող անշարժ գույքի (գույքերի) առկայության վերաբերյալ տվյալների արագ տրամադրմանը, այդ թվում՝ առցանց՝ ինքնաշխատ եղանակով, ինչպես նաև անձին պատկանող գույքի նկատմամբ սահմանափակումների (արգելանքի) կիրառման դեպքում ճշտգրիտ տվյալների տրամադրումը: **1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» և «Հայաստանի Հանրապետության պետական, հանրային և համայնքային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենքների հիման վրա գույքը հիմնականում սեփականաշնորհվել է կոնկրետ ընտանիքի անդամներին, որոնք սեփականաշնորհման պահին հաշվառված են եղել միևնույն վայրում, նույնականացման աշխատանքները արդյունավետ իրականացնելու նպատակով որպես համակատարող ՀՀ ներքին գործերի նախարարությունից, ինչպես նաև համապատասխան համայնքներից տրամադրված տեղեկատվության հիման վրա Կոմիտեի կողմից 2012 թվականից շահագործվող ARPIS գրանցման էլեկտրոնային համակարգում ֆիզիկական անձանց միանշանակ նույնականացնող տվյալների լրացում:

	2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Անշարժ գույքի սուբյեկտների նույնականացում, առցանց տրամադրվող տեղեկատվության ճշգրտության ապահովում, սահմանափակումների ինքնաշխատ կիրառման համար հնարավորության ընձեռում:
	10.4 Առցանց տրամադրվող տեղեկությունների տեսակների ընդլայնում՝ նոր տեղեկատվական փաթեթների մշակում, տեղեկատվության որոնում առցանց վարվող կադաստրային քարտեզներից **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացումն է էականորեն պարզեցնել և դյուրացնել Կադաստրի կոմիտեի կողմից մատուցվող ծառայություններից օգտվելը, հնարավորություն ընձեռել դրանցից օգտվել հիմնականում առանց կադաստր վարող մարմին ներկայանալու և հնարավորինս կարճ ժամկետներում հնարավորինս բացառել քաղաքացիների և պաշտոնատար անձանց անմիջական շփումը, ինչպես նաև նվազեցնել կադաստրի աշխատակիցների ծանրաբեռնվածությունը և հնարավոր դարձնել համակարգի և աշխատակիցների օպտիմալացումը, արդյունքում՝ նվազեցնել համակարգի պահպանման ծախսերը և ավելացնել եկամուտները: Միջոցառման իրականացման համար ընդունման ենթակա է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք: Միջոցառման իրականացումը կնպաստի «Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050» գործարարների համար գրավիչ և գիտելիքահենք Հայաստան կերտելու մեգանպատակների իրագործմանը: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները** Մշակված և 2012 թվականից ներդրված է ARPIS գրանցման ինքնաշխատ համակարգը: Այն փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգ է, որը թույլ է տալիս դիմումների ընդունումից սկսած մինչև դրանց հիման վրա կազմված իրավունքների պետական գրանցման վկայականների և տեղեկատվության տրամադրման տեղեկանքների տրամադրումն իրականացնել էլեկտրոնային եղանակով: Կադաստրային տվյալների միասնական էլեկտրոնային բազա և գրանցման ինքնաշխատ համակարգ ունենալը հնարավորություն ընձեռեց անցնելու էլեկտրոնային եղանակով իրավունքների պետական գրանցմանը և տեղեկատվության տրամադրմանը: Արդյունքում դյուրինացվեց Կադաստրի կոմիտեի կողմից մատուցվող ծառայություններից օգտվելը, հնարավոր եղավ մատուցել էլեկտրոնային առցանց ծառայություններ: Չնայած վերոգրյալին՝ տեղեկատվության տրամադրման գործընթացը հիմնականում իրականացվում է մարդկային մեծ ռեսուրսների ներգրավմամբ, քանի որ էլեկտրոնային շտեմարաններում առկա է տվյալների ամբողջականացման խնդիր, և անհրաժեշտ է յուրաքանչյուր դիմումի ժամանակ հավաստիանալ հարցվող տեղեկատվության ճիշտ և ամբողջական լինելու մեջ: Տրամադրվող տեղեկանքները պետք է լինեն թղթային, քանի որ հավաստվում են սպասարկման գրասենյակների կնիքով: 2018 թվականից ներդրվել է առցանց՝ ինքնաշխատ եղանակով որոշ տեղեկատվությունների տրամադրման համակարգ, սակայն այն դեռևս չունի բավարար պահանջարկ տրամադրվող տեղեկությունների սահմանափակ լինելու, ինչպես նաև տրամադրված տեղեկանքները կնքված չլինելու պատճառով: Տվյալ ծառայության զարգացմանը խոչընդոտում է նաև քաղաքացիների ոչ իրազեկված լինելու հանգամանքը ևս: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Առկա խնդիրները լուծելու նպատակով նախատեսվում է ընդլայնել առցանց տրամադրվող տեղեկությունների տեսակները, մշակել նոր տեղեկատվական փաթեթներ, ստեղծել տեղեկատվության որոնման առցանց գործող տարածական հարթակ, վերացնել տրամադրվող ավարտական փաստաթղթի կնքված լինելու պահանջը, զարգացնել էլեկտրոնային ծառայությունների մատուցման համար նախատեսված www.e-cadastre.am կայքը, քաղաքացիներին, անշարժ գույքի շուկայի մասնակիցներին իրազեկել ներդրված նոր ծառայությունների և դրանցից հարմարավետ օգտվելու տարբերակների մասին: Միջոցառման համակատարող հանդիսացող ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության, ՀՀ արդարադատության նախարարության հարկադիր կատարման ծառայության, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի, ՀՀ դատախազության, ՀՀ քննչական կոմիտեի. ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից կատարման ենթակա գործողությունները կսահմանվեն աշխատանքային խումբ ստեղծելու միջոցով: Կիրականացվեն հետևյալ միջոցառումները՝ 1. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում, ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացում, 2. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում, ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացում, 3. Էլեկտրոնային համակարգի տեքստային տվյալների բազայում գործող և դադարած իրավունքների սուբյեկտների ճշգրտում և նույնականացում, այդ թվում համայնքներում և այլ պետական մարմիններում առկա տեղեկատվության հիման վրա, 4. Առցանց տրամադրվող տեղեկությունների տեսակների ընդլայնում՝ նոր տեղեկատվական փաթեթների մշակում, տեղեկատվության որոնում առցանց վարվող կադաստրային քարտեզներից,

	5. Յուրաքանչյուր պետական մարմնի պահանջմունքներին համապատասխանող առցանց մատուցվող ծառայության ներդրում (Տեխնիկական առաջադրանքը ներկայացնում է համապատասխան մարմինը: Այն մինչև ներկայացնելը համաձայնեցվում է Կադաստրի կոմիտեի հետ), 6. Կադաստրային գործերի թվայնացում մասամբ տեքստային (OCR) տեսաներածմամբ, 7. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում և ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է հնարավորինս բացառել քաղաքացիների և պաշտոնատար անձանց անմիջական շփումը, նվազեցնել այդ շփումներով պայմանավորված առկա կոռուպցիոն ռիսկերը, բարելավել ՀՀ դիրքը «Գործարարությամբ զբաղվելը զեկույց»-ում, էականորեն պարզեցնել տեղեկատվության ձեռքբերման ընթացակարգը, դիմումներ ներկայացնել, ավարտական փաստաթղթեր ստանալ առանց կադաստր վարող մարմին անձամբ այցելելու, կրճատել տեղեկատվության տրամադրման ժամկետները, ընդհուպ հարցումից հետո անմիջապես ստանալու հնարավորությամբ, նվազեցնել տարածքային ստորաբաժանումների և սպասարկման գրասենյակների աշխատակիցների ծանրաբեռնվածությունը, հնարավորություն ընձեռել համակարգի և աշխատակիցների օպտիմալացման, էականորեն կրճատել համակարգի պահպանման ծախսերը և ավելացնել կոմիտեի եկամուտները:
	10.5 Յուրաքանչյուր պետական մարմնի պահանջմունքներին համապատասխանող առցանց մատուցվող ծառայության ներդրում **(տեխնիկական առաջադրանքը ներկայացնում է համապատասխան մարմինը: Այն մինչև ներկայացնելը համաձյանեցվում է Կադաստրի կոմիտեի հետ)** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացումն է էականորեն պարզեցնել և դյուրացնել Կադաստրի կոմիտեի կողմից մատուցվող ծառայություններից օգտվելը, հնարավորություն ընձեռել դրանցից օգտվել հիմնականում առանց կադաստր վարող մարմին ներկայանալու և հնարավորինս կարճ ժամկետներում հնարավորինս բացառել քաղաքացիների և պաշտոնատար անձանց անմիջական շփումը, ինչպես նաև նվազեցնել կադաստրի աշխատակիցների ծանրաբեռնվածությունը և հնարավոր դարձնել համակարգի և աշխատակիցների օպտիմալացումը, արդյունքում՝ նվազեցնել համակարգի պահպանման ծախսերը և ավելացնել եկամուտները: Միջոցառման իրականացման համար ընդունման ենթակա է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները** Մշակված և 2012 թվականից ներդրված է ARPIS գրանցման ինքնաշխատ համակարգը: Այն փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգ է, որը թույլ է տալիս դիմումների ընդունումից սկսած մինչև դրանց հիման վրա կազմված իրավունքների պետական գրանցման վկայականների և տեղեկատվության տրամադրման տեղեկանքների տրամադրումն իրականացնել էլեկտրոնային եղանակով: Կադաստրային տվյալների միասնական էլեկտրոնային բազա և գրանցման ինքնաշխատ համակարգ ունենալը հնարավորություն ընձեռեց անցնելու էլեկտրոնային եղանակով իրավունքների պետական գրանցմանը և տեղեկատվության տրամադրմանը: Արդյունքում դյուրինացվեց Կադաստրի կոմիտեի կողմից մատուցվող ծառայություններից օգտվելը, հնարավոր եղավ մատուցել էլեկտրոնային առցանց ծառայություններ: Չնայած վերոգրյալին՝ տեղեկատվության տրամադրման գործընթացը հիմնականում իրականացվում է մարդկային մեծ ռեսուրսների ներգրավմամբ, քանի որ էլեկտրոնային շտեմարաններում առկա է տվյալների ամբողջականացման խնդիր, և անհրաժեշտ է յուրաքանչյուր դիմումի ժամանակ հավաստիանալ հարցվող տեղեկատվության ճիշտ և ամբողջական լինելու մեջ: Տրամադրվող տեղեկանքները պետք է լինեն թղթային, քանի որ հավաստվում են սպասարկման գրասենյակների կնիքով: 2018 թվականից ներդրվել է առցանց՝ ինքնաշխատ եղանակով որոշ տեղեկատվությունների տրամադրման համակարգ, սակայն այն դեռևս չունի բավարար պահանջարկ տրամադրվող տեղեկությունների սահմանափակ լինելու, ինչպես նաև տրամադրված տեղեկանքները կնքված չլինելու պատճառով: Տվյալ ծառայության զարգացմանը խոչընդոտում է նաև քաղաքացիների ոչ իրազեկված լինելու հանգամանքը ևս: **1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Առկա խնդիրները լուծելու նպատակով նախատեսվում է ընդլայնել առցանց տրամադրվող տեղեկությունների տեսակները, մշակել նոր տեղեկատվական փաթեթներ, ստեղծել տեղեկատվության որոնման առցանց գործող տարածական հարթակ, վերացնել տրամադրվող ավարտական փաստաթղթի կնքված լինելու պահանջը, զարգացնել էլեկտրոնային ծառայությունների մատուցման համար նախատեսված www.e-cadastre.am կայքը, քաղաքացիներին, անշարժ գույքի շուկայի մասնակիցներին իրազեկել ներդրված նոր ծառայությունների և դրանցից հարմարավետ օգտվելու տարբերակների մասին:

Միջոցառման համակատարող հանդիսացող ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության, ՀՀ արդարադատության նախարարության հարկադիր կատարման ծառայության, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի, ՀՀ դատախազության, ՀՀ քննչական կոմիտեի. ՀՀ ազգային անվտանգության ծառայության, Բարձրագույն դատական խորհրդի կողմից կատարման ենթակա գործողությունները կսահմանվեն աշխատանքային խումբ ստեղծելու միջոցով:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Օպտիմալացման արդյունքում սուբյեկտների նույնականացում իրականացնող 15 հոգանոց խմբի համալրում:

10.6 Կադաստրային գործերի թվայնացում մասամբ տեքստային (OCR) տեսաներածմամբ

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացումն է էականորեն պարզեցնել և դյուրացնել Կադաստրի կոմիտեի կողմից մատուցվող ծառայություններից օգտվելը, հնարավորություն ընձեռել դրանցից օգտվել հիմնականում առանց կադաստր վարող մարմին ներկայանալու և հնարավորինս կարճ ժամկետներում հնարավորինս բացառել քաղաքացիների և պաշտոնատար անձանց անմիջական շփումը, ինչպես նաև նվազեցնել կադաստրի աշխատակիցների ծանրաբեռնվածությունը և հնարավոր դարձնել համակարգի և աշխատակիցների օպտիմալացումը, արդյունքում՝ նվազեցնել համակարգի պահպանման ծախսերը և ավելացնել եկամուտները:

Միջոցառման իրականացման համար ընդունման ենթակա է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները

Մշակված և 2012 թվականից ներդրված է ARPIS գրանցման ինքնաշխատ համակարգը: Այն փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգ է, որը թույլ է տալիս դիմումների ընդունումից սկսած մինչև դրանց հիման վրա կազմված իրավունքների պետական գրանցման վկայականների և տեղեկատվության տրամադրման տեղեկանքների տրամադրումն իրականացնել էլեկտրոնային եղանակով:

Կադաստրային տվյալների միասնական էլեկտրոնային բազա և գրանցման ինքնաշխատ համակարգ ունենալը հնարավորություն ընձեռեց անցնելու էլեկտրոնային եղանակով իրավունքների պետական գրանցմանը և տեղեկատվության տրամադրմանը: Արդյունքում դյուրինացվեց Կադաստրի կոմիտեի կողմից մատուցվող ծառայություններից օգտվելը, հնարավոր եղավ մատուցել էլեկտրոնային առցանց ծառայություններ:

Չնայած վերոգրյալին՝ տեղեկատվության տրամադրման գործընթացը հիմնականում իրականացվում է մարդկային մեծ ռեսուրսների ներգրավմամբ, քանի որ էլեկտրոնային շտեմարաններում առկա է տվյալների ամբողջականացման խնդիր, և անհրաժեշտ է յուրաքանչյուր դիմումի ժամանակ հավաստիանալ հարցվող տեղեկատվության ճիշտ և ամբողջական լինելու մեջ: Տրամադրվող տեղեկանքները պետք է լինեն թղթային, քանի որ հավաստվում են սպասարկման գրասենյակների կնիքով:

2018 թվականից ներդրվել է առցանց՝ ինքնաշխատ եղանակով որոշ տեղեկատվությունների տրամադրման համակարգ, սակայն այն դեռևս չունի բավարար պահանջարկ տրամադրվող տեղեկությունների սահմանափակ լինելու, ինչպես նաև տրամադրված տեղեկանքները կնքված չլինելու պատճառով: Տվյալ ծառայության զարգացմանը խոչընդոտում է նաև քաղաքացիների ոչ իրազեկված լինելու հանգամանքը ևս:

1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Առկա խնդիրները լուծելու նպատակով նախատեսվում է ընդլայնել առցանց տրամադրվող տեղեկությունների տեսակները, մշակել նոր տեղեկատվական փաթեթներ, ստեղծել տեղեկատվության որոնման առցանց գործող տարածական հարթակ, վերացնել տրամադրվող ավարտական փաստաթղթի կնքված լինելու պահանջը, զարգացնել էլեկտրոնային ծառայությունների մատուցման համար նախատեսված www.e-cadastre.am կայքը, քաղաքացիներին, անշարժ գույքի շուկայի մասնակիցներին իրազեկել ներդրված նոր ծառայությունների և դրանցից հարմարավետ օգտվելու տարբերակների մասին:

Միջոցառման համակատարող հանդիսացող ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության, ՀՀ արդարադատության նախարարության հարկադիր կատարման ծառայության, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի, ՀՀ դատախազության, ՀՀ քննչական կոմիտեի. ՀՀ ազգային անվտանգության ծառայության, Բարձրագույն դատական խորհրդի կողմից կատարման ենթակա գործողությունները կսահմանվեն աշխատանքային խումբ ստեղծելու միջոցով:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Թվային արխիվի ամբողջականացում և ընթեռնելիության բարձրացում:

10.7 «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում և ՀՀ Վարչապետի աշխատակազմ ներկայացում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

	Միջոցառման իրականացումն է էականորեն պարզեցնել և դյուրացնել Կադաստրի կոմիտեի կողմից մատուցվող ծառայություններից օգտվելը, հնարավորություն ընձեռել դրանցից օգտվել հիմնականում առանց կադաստր վարող մարմին ներկայանալու և հնարավորինս կարճ ժամկետներում հնարավորինս բացառել քաղաքացիների և պաշտոնատար անձանց անմիջական շփումը, ինչպես նաև նվազեցնել կադաստրի աշխատակիցների ծանրաբեռնվածությունը և հնարավոր դարձնել համակարգի և աշխատակիցների օպտիմալացումը, արդյունքում՝ նվազեցնել համակարգի պահպանման ծախսերը և ավելացնել եկամուտները: Միջոցառման իրականացման համար ընդունման ենթակա է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները** Մշակված և 2012 թվականից ներդրված է ARPIS գրանցման ինքնաշխատ համակարգը: Այն փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգ է, որը թույլ է տալիս դիմումների ընդունումից սկսած մինչև դրանց հիման վրա կազմված իրավունքների պետական գրանցման վկայականների և տեղեկատվության տրամադրման տեղեկանքների տրամադրումն իրականացնել էլեկտրոնային եղանակով: Կադաստրային տվյալների միասնական էլեկտրոնային բազա և գրանցման ինքնաշխատ համակարգ ունենալը հնարավորություն ընձեռեց անցնելու էլեկտրոնային եղանակով իրավունքների պետական գրանցմանը և տեղեկատվության տրամադրմանը: Արդյունքում դյուրինացվեց Կադաստրի կոմիտեի կողմից մատուցվող ծառայություններից օգտվելը, հնարավոր եղավ մատուցել էլեկտրոնային առցանց ծառայություններ: Չնայած վերոգրյալին՝ տեղեկատվության տրամադրման գործընթացը հիմնականում իրականացվում է մարդկային մեծ ռեսուրսների ներգրավմամբ, քանի որ էլեկտրոնային շտեմարաններում առկա է տվյալների ամբողջականացման խնդիր, և անհրաժեշտ է յուրաքանչյուր դիմումի ժամանակ հավաստիանալ հարցվող տեղեկատվության ճիշտ և ամբողջական լինելու մեջ: Տրամադրվող տեղեկանքները պետք է լինեն թղթային, քանի որ հավաստվում են սպասարկման գրասենյակների կնիքով: 2018 թվականից ներդրվել է առցանց՝ ինքնաշխատ եղանակով որոշ տեղեկատվությունների տրամադրման համակարգ, սակայն այն դեռևս չունի բավարար պահանջարկ տրամադրվող տեղեկությունների սահմանափակ լինելու, ինչպես նաև տրամադրված տեղեկանքները կնքված չլինելու պատճառով: Տվյալ ծառայության զարգացմանը խոչընդոտում է նաև քաղաքացիների ոչ իրազեկված լինելու հանգամանքը ևս: **1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Առկա խնդիրները լուծելու նպատակով նախատեսվում է ընդլայնել առցանց տրամադրվող տեղեկությունների տեսակները, մշակել նոր տեղեկատվական փաթեթներ, ստեղծել տեղեկատվության որոնման առցանց գործող տարածական հարթակ, վերացնել տրամադրվող ավարտական փաստաթղթի կնքված լինելու պահանջը, զարգացնել էլեկտրոնային ծառայությունների մատուցման համար նախատեսված www.e-cadastre.am կայքը, քաղաքացիներին, անշարժ գույքի շուկայի մասնակիցներին իրազեկել ներդրված նոր ծառայությունների և դրանցից հարմարավետ օգտվելու տարբերակների մասին: Միջոցառման համակատարող հանդիսացող ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության, ՀՀ արդարադատության նախարարության հարկադիր կատարման ծառայության, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի, ՀՀ դատախազության, ՀՀ քննչական կոմիտեի. ՀՀ ազգային անվտանգության ծառայության, Բարձրագույն դատական խորհրդի կողմից կատարման ենթակա գործողությունները կսահմանվեն աշխատանքային խումբ ստեղծելու միջոցով: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Օրենսդրական դաշտի կարգավորում, որի արդյունքում կադաստրային գործը կվարվի միայն էլեկտրոնային տարբերակով:
11	**11.1 Երևան համայնքի, 1 քաղաքային ու 1 գյուղական բնակավայրի հասցեավորված օբյեկտների վերաբերյալ տվյալների հավաքագրում, մուտքագրում, համակցում կադաստրային քարտեզներին և համակարգի պիլոտային գործարկում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Հանրապետությունում հասցեների ճշգրիտ և լիարժեք ռեեստր ստեղծելու համար անհրաժեշտ է ունենալ հավաստի, չկրկնվող և ամբողջական տեղեկատվություն Հայաստանի Հանրապետության հասցեների վերաբերյալ: Նշված արդյունքին հասնելու համար պետք է հստակեցնել և պարզեցնել բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման և անվանափոխման գրանցման և անշարժ գույքի համարակալման, հասցեավորման ընթացակարգերը՝ դրանք դարձնելով համակարգված և ինքնաշխատ: Անհրաժեշտ է ապահովել անշարժ գույքի հասցեների վերաբերյալ տեղեկատվության միատեսակությունը պետական մարմինների գործառույթների իրականացման գործում՝ բացառելով անշարժ գույքի տարբեր օբյեկտների նույնական հասցեների առկայությունը:

Միջոցառման իրականացման համար ընդունման ենթակա չեն նորմատիվ իրավական ակտեր:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները

Ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման և անվանափոխման մասին որոշումների ընդունումը և անշարժ գույքի հասցեավորումն իրականացվում են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, իսկ հասցեների գրանցումը, ռեեստրի վարումը՝ ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից: Գործառույթների՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջև բաժանված լինելը ոլորտում առաջացնում է տեղական ինքնակառավարման մարմինների (համայնքների) և պետական մարմնի միջև տվյալների փոխանակմանն առնչվող մի շարք խնդիրներ, ինչի արդյունքում հասցեների ռեեստրը պարունակում է որոշ դեպքերում սխալ և թերի տեղեկատվություն, մասնավորապես բազմաթիվ համայնքներում անշարժ գույքի առաջին հասցեավորմանը հաջորդող ժամանակաշրջանում կատարված փոփոխությունները չեն ընդգրկվել հասցեների ռեեստրում և կադաստրային քարտեզներում, քանի որ նոր հասցեավորումներն ու համարակալումները սահմանված կարգով չեն ներկայացվել պետական գրանցման, չեն ներառվել հասցեների ռեեստրում, ինչպես նաև որոշ դեպքերում անվանակոչման լիազոր մարմինների կողմից անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին որոշումները չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման պահանջներին և այլն:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Հասցեավորված գույքերի մասով էլեկտրոնային հարթակի ստեղծում, որը հնարավորություն կտա այն հետագայում ինտեգրելու այլ թվային բազաների հետ, այդ թվում՝ ինտեգրված կադաստրին: Միջոցառման համակատարող ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի, ՀՀ Ներքին գործերի նախարարության և «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի կողմից իրականացվելիք գործառույթները սահմանված են ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 10-ի N 553-L որոշմամբ հաստատված հայեցակարգով: Կիրականացվեն հետևյալ միջոցառումները՝

1. Երևան համայնքի, 1 քաղաքային ու 1 գյուղական բնակավայրի հասցեավորված օբյեկտների վերաբերյալ տվյալների հավաքագրում, մուտքագրում, համակցում կադաստրային քարտեզներին,
2. Մարզկենտրոններում, համայնքներում համայնքի ղեկավարների հետ հանդիպումների կազմակերպում, հասցեների ռեեստրի ինքնաշխատ տեղեկատվական համակարգից օգտվելու կարգի ներկայացում, մասնագետների վերապատրաստում, ինչպես նաև բոլոր համայնքներից հասցեավորված օբյեկտների վերաբերյալ տվյալների հավաքագրում, մուտքագրում և համակցում կադաստրային քարտեզներին,
3. Հասցեների միասնական ռեգիստրի և հասցեների ռեեստրի ինքնաշխատ տեղեկատվական համակարգի գործարկում՝ ինտեգրված կադաստրի և փոխգործելիության շրջանակներում:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Հասցեների միասնական ռեգիստրի և հասցեների միասնական տեղեկատվական համակարգում ճշտված ռեեստրի և կադաստրային քարտեզների հետ համակցման համար:

11.2 Մարզկենտրոններում, համայնքներում համայնքի ղեկավարների հետ հանդիպումների կազմակերպում, հասցեների ռեեստրի տեղեկատվական համակարգից օգտվելու կարգի ներկայացում, մասնագետների վերապատրաստում, ինչպես նաև բոլոր համայնքներից հասցեավորված օբյեկտների վերաբերյալ տվյալների հավաքագրում, մուտքագրում և համակցում կադաստրային քարտեզներին

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Հանրապետությունում հասցեների ճշգրիտ և լիարժեք ռեեստր ստեղծելու համար անհրաժեշտ է ունենալ հավաստի, չկրկնվող և ամբողջական տեղեկատվություն Հայաստանի Հանրապետության հասցեների վերաբերյալ: Նշված արդյունքին հասնելու համար պետք է հստակեցնել և պարզեցնել բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման և անվանափոխման գրանցման և անշարժ գույքի համարակալման, հասցեավորման ընթացակարգերը՝ դրանք դարձնելով համակարգված և ինքնաշխատ: Անհրաժեշտ է ապահովել անշարժ գույքի հասցեների վերաբերյալ տեղեկատվության միատեսակությունը պետական մարմինների գործառույթների իրականացման գործում՝ բացառելով անշարժ գույքի տարբեր օբյեկտների նույնական հասցեների առկայությունը:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները

Ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման և անվանափոխման մասին որոշումների ընդունումը և անշարժ գույքի հասցեավորումն իրականացվում են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, իսկ հասցեների գրանցումը, ռեեստրի վարումը՝ ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից: Գործառույթների՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջև բաժանված լինելը ոլորտում առաջացնում է տեղական ինքնակառավարման մարմինների (համայնքների) և պետական մարմնի միջև տվյալների փոխանակմանն առնչվող մի շարք խնդիրներ, ինչի արդյունքում հասցեների ռեեստրը պարունակում է որոշ դեպքերում սխալ և թերի տեղեկատվություն, մասնավորապես բազմաթիվ համայնքներում անշարժ գույքի առաջին

	հասցեավորմանը հաջորդող ժամանակաշրջանում կատարված փոփոխությունները չեն ընդգրկվել հասցեների ռեեստրում և կադաստրային քարտեզներում, քանի որ նոր հասցեավորումներն ու համարակալումները սահմանված կարգով չեն ներկայացվել պետական գրանցման, չեն ներառվել հասցեների ռեեստրում, ինչպես նաև որոշ դեպքերում անվանակոչման լիազոր մարմինների կողմից անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին որոշումները չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման պահանջներին և այլն: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Հասցեավորված գույքերի մասով էլեկտրոնային հարթակի ստեղծում, որը հնարավորություն կտա այն հետագայում ինտեգրելու այլ թվային բազաների հետ, այդ թվում՝ ինտեգրված կադաստրին: Միջոցառման համակատարող ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության, ՀՀ պետական եկամուտների կոմիտե, ՀՀ ոստիկանության և «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի կողմից իրականացվելիք գործառույթները սահմանված են ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 10-ի N 553-L որոշմամբ հաստատված հայեցակարգով: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Հասցեների միասնական ռեգիստրի և հասցեների միասնական տեղեկատվական համակարգում ճշտված ռեեստրի համակցում կադաստրային քարտեզների հետ:
	11.3 Հասցեների միասնական ռեգիստրի և հասցեների ռեեստրի տեղեկատվական համակարգի գործարկում՝ ինտեգրված կադաստրի և փոխգործելիության շրջանակներում **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Հանրապետությունում հասցեների ճշգրիտ և լիարժեք ռեեստր ստեղծելու համար անհրաժեշտ է ունենալ հավաստի, չկրկնվող և ամբողջական տեղեկատվություն Հայաստանի Հանրապետության հասցեների վերաբերյալ: Նշված արդյունքին հասնելու համար պետք է հստակեցնել և պարզեցնել բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման և անվանափոխման գրանցման և անշարժ գույքի համարակալման, հասցեավորման ընթացակարգերը՝ դրանք դարձնելով համակարգված և ինքնաշխատ: Անհրաժեշտ է ապահովել անշարժ գույքի հասցեների վերաբերյալ տեղեկատվության միատեսակությունը պետական մարմինների գործառույթների իրականացման գործում՝ բացառելով անշարժ գույքի տարբեր օբյեկտների նույնական հասցեների առկայությունը: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները** Ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման և անվանափոխման մասին որոշումների ընդունումը և անշարժ գույքի հասցեավորումն իրականացվում են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, իսկ հասցեների գրանցումը, ռեեստրի վարումը՝ ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից: Գործառույթների՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջև բաժանված լինելը ոլորտում առաջացնում է տեղական ինքնակառավարման մարմինների (համայնքների) և պետական մարմնի միջև տվյալների փոխանակմանն առնչվող մի շարք խնդիրներ, ինչի արդյունքում հասցեների ռեեստրը պարունակում է որոշ դեպքերում սխալ և թերի տեղեկատվություն, մասնավորապես բազմաթիվ համայնքներում անշարժ գույքի առաջին հասցեավորմանը հաջորդող ժամանակաշրջանում կատարված փոփոխությունները չեն ընդգրկվել հասցեների ռեեստրում և կադաստրային քարտեզներում, քանի որ նոր հասցեավորումներն ու համարակալումները սահմանված կարգով չեն ներկայացվել պետական գրանցման, չեն ներառվել հասցեների ռեեստրում, ինչպես նաև որոշ դեպքերում անվանակոչման լիազոր մարմինների կողմից անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին որոշումները չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման պահանջներին և այլն: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Հասցեավորված գույքերի մասով էլեկտրոնային հարթակի ստեղծում, որը հնարավորություն կտա այն հետագայում ինտեգրելու այլ թվային բազաների հետ, այդ թվում՝ ինտեգրված կադաստրին: Միջոցառման համակատարող ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության, ՀՀ պետական եկամուտների կոմիտե, ՀՀ ոստիկանության և «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի կողմից իրականացվելիք գործառույթները սահմանված են ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 10-ի N 553-L որոշմամբ հաստատված հայեցակարգով: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Հասցեների ռեեստրում անշարժ գույքի հասցեի անվանափոխման, համարակալման ցանկացած փոփոխության արտացոլում և հասանելիություն օգտվողների համար, հասցեի հիման վրա գործող պետական ու մասնավոր ռեգիստրների և այլ համակարգերի փոխգործելիության ապահովում, ինչպես նաև տեղեկատվության արտացոլում կադաստրային քարտեզներում:

12	**12.1 Գրանցման միասնական ստորաբաժանման ստեղծում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է Կադաստրի կոմիտեի համակարգում գործող 4 ստորաբաժանումների կենտրոնացմամբ մեկ ստորաբաժանման մեջ, ինչպես նաև գործող 40 սպասարկման գրասենյակների օպտիմալացմամբ ի հաշիվ առցանց մատուցվող ծառայությունների զարգացման, օպերատորների (համայնքներ, «Հայփոստ» ՓԲԸ և այլն) կողմից մատուցվող ծառայությունների ցանկի և աշխարհագրության ընդլայնման, ինչպես նաև մասնավոր ընկերությունների սպասարկման գրասենյակների գործառույթների պատվիրակման: Միջոցառման իրականացումը առաջացնում է ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 749-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները** Կոմիտեի համակարգում ներկայումս գործում է 4 տարածքային ստորաբաժանում, որից 1-ը՝ Երևանում (Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում), 3-ը՝ մարզերում (Շիրակ, Լոռի, Սյունիք) և 40 սպասարկման գրասենյակ, որից 3-ը՝ Երևանում, 37-ը՝ բոլոր 10 մարզերում, որոնց պահպանության ու շահագործման ծախսերն իրականացվում են կոմիտեի միջոցների հաշվին, և հաստիքների որոշակի քանակի անհրաժեշտություն է առաջանում: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Բարեփոխումների արդյունքում նախատեսվում է 4 ստորաբաժանումների գործառույթները կենտրոնացնել մեկ ստորաբաժանման մեջ: Կիրականացվեն հետևյալ միջոցառումները՝ 1. Գրանցման միասնական ստորաբաժանման ստեղծում, 2. Սպասարկման գրասենյակների օպտիմալացում ի հաշիվ առցանց մատուցվող ծառայությունների զարգացման, օպերատորների (համայնքներ, «Հայփոստ» ՓԲԸ և այլն) կողմից մատուցվող ծառայությունների ցանկի և աշխարհագրության ընդլայնման: Օպտիմալացված գրասենյակների փոխարեն խորհրդատվական կենտրոնի ստեղծում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Գրանցման և տեղեկատվության տրամադրման, գնահատման, կադաստրային գործերի արխիվի, հաշվառման տվյալների և կադաստրային քարտեզների վարման կենտրոնացում, միասնական մեթոդաբանության ձևավորում:
	12.2 Սպասարկման գրասենյակների օպտիմալացում ի հաշիվ առցանց մատուցվող ծառայությունների զարգացման, օպերատորների (համայնքներ, «Հայփոստ» ՓԲԸ և այլն) կողմից մատուցվող ծառայությունների ցանկի և աշխարհագրության ընդլայնման: Օպտիմալացված գրասենյակների փոխարեն խորհրդատվական կենտրոնի ստեղծում **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է Կադաստրի կոմիտեի համակարգում գործող 4 ստորաբաժանումների կենտրոնացմամբ մեկ ստորաբաժանման մեջ, ինչպես նաև գործող 40 սպասարկման գրասենյակների օպտիմալացմամբ ի հաշիվ առցանց մատուցվող ծառայությունների զարգացման, օպերատորների (համայնքներ, «Հայփոստ» ՓԲԸ և այլն) կողմից մատուցվող ծառայությունների ցանկի և աշխարհագրության ընդլայնման, ինչպես նաև մասնավոր ընկերությունների սպասարկման գրասենյակների գործառույթների պատվիրակման: Միջոցառման իրականացումը առաջացնում է ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 749-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները** Կոմիտեի համակարգում ներկայումս գործում է 4 տարածքային ստորաբաժանում, որից 1-ը՝ Երևանում (Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում), 3-ը՝ մարզերում (Շիրակ, Լոռի, Սյունիք) և 40 սպասարկման գրասենյակ, որից 3-ը՝ Երևանում, 37-ը՝ բոլոր 10 մարզերում, որոնց պահպանության ու շահագործման ծախսերն իրականացվում են կոմիտեի միջոցների հաշվին, և հաստիքների որոշակի քանակի անհրաժեշտություն է առաջանում: **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Բարեփոխումների արդյունքում նախատեսվում է 4 ստորաբաժանումների գործառույթները կենտրոնացնել մեկ ստորաբաժանման մեջ: Կիրականացվեն հետևյալ միջոցառումները՝ 1. Գրանցման միասնական ստորաբաժանման ստեղծում, 2. Սպասարկման գրասենյակների օպտիմալացում ի հաշիվ առցանց մատուցվող ծառայությունների զարգացման, օպերատորների (համայնքներ, «Հայփոստ» ՓԲԸ և այլն) կողմից մատուցվող ծառայությունների ցանկի և

	աշխարհագրության ընդլայնման: Օպտիմալացված գրասենյակների փոխարեն խորհրդատվական կենտրոնի ստեղծում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Աշխատանքային ռեսուրսների արդյունավետության բարձրացում և օպտիմալացում, Կադաստրի համակարգի պահպանման ծախսերի կրճատում, սպասարկման որակի բարելավում, սպասարկման աշխարհագրության ընդլայնում:
13	**13.1 «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման նպատակը մատուցվող գնահատման ծառայությունների որակի բարելավումն է, անշարժ գույքի գործակալների (բրոքերների) գործունեության օրենսդրական կարգավորումն ու ոլորտի զարգացումը: Ծրագրի համաձայն նորմատիվ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն է առաջանում (ՀՀ օրենք, ՀՀ կառավարության որոշումներ): **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները** Ներկայիս գործող օրենսդրությամբ չեն կարգավորվում մի շարք իրավահարաբերություններ, որոնցում գույքի շուկայական արժեքի արտացոլման անհրաժեշտություն կա, ինչպես նաև խիստ սահմանափակվում են այդ ոլորտը պետական լիազոր մարմնի կողմից կարգավորելու հնարավորությունները: Ներկայումս անշարժ գույքի գործակալների գործունեության ոլորտը օրենսդրությամբ չի կարգավորվում: Այդ գործունեության տեսակով գործունեություն ծավալող կազմակերպությունների կամ ֆիզիկական անձանց վերաբերյալ որևէ հաշվառում չի իրականացվում: Արդյունքում նշված գործունեության տեսակի օրենսդրությամբ կարգավորված չլինելը որոշակի խնդիրներ է առաջացնում անշարժ գույքի շուկայի զարգացման համար: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել՝ 1. «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը, 2. Անշարժ գույքի գործակալների (բրոքերների) գործունեության կարգավորում և զարգացում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Գնահատման ոլորտի ընդլայնում և կայացում, գնահատման գործունեություն իրականացնողների նկատմամբ շուկայի մասնակիցների ու հանրության վստահության բարձրացում, մատուցվող գնահատման ծառայությունների որակի բարելավում և պետական համայնքային բյուջեների աճ և ծախսերի տնտեսում: Անշարժ գույքի գործակալների գործունեության օրենսդրական կարգավորումը կնպաստի անշարժ գույքի շուկայի զարգացմանը, կբարելավվի տվյալ գործունեությամբ զբաղվող կազմակերպությունների կամ ֆիզիկական անձանց մասնագիտական որակները, հնարավորություն կընձեռի հաշվառելու տվյալ գործունեությամբ զբաղվորներին, ինչպես նաև կնպաստի ստվերային դաշտում գործող գործակալների ընդգրկումը հարկայինիրավական համակարգ:
	13.2 Անշարժ գույքի գործակալների (բրոքերներ) գործունեության կարգավորում և զարգացում **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման նպատակը անշարժ գույքի գործակալների (բրոքերների) գործունեության օրենսդրական կարգավորումն է, ու ոլորտի զարգացումը: Ծրագրի համաձայն նորմատիվ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն է առաջանում (ՀՀ օրենք, ՀՀ կառավարության որոշումներ): **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները** Ներկայիս գործող օրենսդրությամբ չեն կարգավորվում մի շարք իրավահարաբերություններ, որոնց պարագայում խիստ սահմանափակվում են այդ ոլորտը պետական լիազոր մարմնի կողմից կարգավորելու հնարավորությունները: Ներկայումս անշարժ գույքի գործակալների գործունեության ոլորտը օրենսդրությամբ չի կարգավորվում: Նման գործունեություն ծավալող կազմակերպությունների կամ ֆիզիկական անձանց վերաբերյալ որևէ հաշվառում չի իրականացվում: Արդյունքում նշված գործունեության տեսակի օրեսդրությամբ կարգավորված չլինելը որոշակի խնդիրներ է առաջացնում անշարժ գույքի շուկայի զարգացման համար: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել անշարժ գույքի գործակալների (բրոքերների) գործունեության կարգավորում և զարգացում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Օրենսդրական կարգավորում, նոր գործիքակազմի ներդրում:

14	**14.1 «Գյուղատնտեսական նշանակության հողերի կադաստրային արժեքները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ համարվող գյուղատնտեսական նշանակության հողամասերի հարկման բազաների ստեղծման համար հողամասի բազային գների ապահովում: Ծրագրի համաձայն նորմատիվ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն է առաջանում (ՀՀ կառավարության որոշում) հիմք՝ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներ: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները** «Գյուղատնտեսական նշանակության հողերի կադաստրային արժեքները հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունումը բխում է Հայաստանի Հանրապետության 712 հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերության պահանջից, ըստ որի՝ գյուղատնտեսական նշանակության հողերի կադաստրային արժեքները հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Որոշման ընդունմամբ կհաստատվեն գյուղատնտեսական նշանակության հողերի կադաստրային արժեքները, ուստի որոշման նախագծի ընդունումն անհրաժեշտ է: Կիրականացվի հետևյալ միջոցառումը՝ 1. «Գյուղատնտեսական նշանակության հողերի կադաստրային արժեքները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Իրավական ակտի կիրառման արդյունքում կսահմանվեն գյուղատնտեսական նշանակության հողերի կադաստրային արժեքները, ինչը կնպաստի հողի շուկայի զարգացմանը, անշարժ գույքի հարկի բազայի և համայնքային բյուջեների ձևավորմանը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասերի կադաստրային արժեքները կկիրառվեն գյուղատնտեսական նշանակության հողերի օտարման, վարձակալության իրավունքով տրամադրելու կամ այլ դեպքերում:
15	**15.1 2023 թվականի հուլիսի 1-ի դրությամբ հաշվառված տվյալներով անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի գնահատումներ (վերագնահատումներ) և դրանց վերաբերյալ տեղեկությունները տվյալների փոխանակման փոխգործելիության հարթակի միջոցով՝ ինքնաշխատ եղանակով տրամադրում համայնքային էլեկտրոնային կառավարման միասնական հարթակի (ՀԷԿՄՀ) օպերատորին** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման նպատակը Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի 2024-2026 և 2027-2029 թվականների հարկման բազաների ձևավորումն է: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները** Ներկայումս անշարժ գույքի կադաստրային գնահատությունն իրականացվում է «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» ՀՕ-225-Ն ՀՀ օրենքով սահմանված գնահատման կարգերով, և անշարժ գույքի կադաստրային արժեքը ձևավորվում է հողամասի և (կամ) դրա բարելավումների (շինությունների) կադաստրային արժեքների հանրագումարից: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել՝ Հայաստանի Հանրապետության աշարժ գույքի 2023 և 2026 թվականների հուլիսի 1-ի դրությամբ հաշվառված տվյալներով գնահատումներ (վերագնահատումներ) և դրանց վերաբերյալ տեղեկությունները տվյալների փոխանակման փոխգործելիության հարթակի միջոցով՝ ինքնաշխատ եղանակով տրամադրել համայնքային էլեկտրոնային կառավարման միասնական հարթակի (ՀԷԿՄՀ) օպերատորին: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի 2024-2026 թվականների հարկման բազաների ձևավորում, ինչը տեղական ինքնակառավարման մարմիններին հնարավորություն կտա հաշվառելու և իրականացնելու 2024-2026 թվականների անշարժ գույքի հարկի վճարումների ընդունումը:
	15.2 2026 թվականի հուլիսի 1-ի դրությամբ հաշվառված տվյալներով անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի գնահատումներ (վերագնահատումներ) և դրանց վերաբերյալ տեղեկությունները տվյալների փոխանակման փոխգործելիության հարթակի միջոցով՝ ինքնաշխատ եղանակով տրամադրում համայնքային էլեկտրոնային կառավարման միասնական հարթակի (ՀԷԿՄՀ) օպերատորին

	1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման նպատակը Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի 2024-2026 և 2027-2029 թվականների հարկման բազաների ձևավորումն է: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները** Ներկայումս անշարժ գույքի կադաստրային գնահատությունն իրականացվում է «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» ՀՕ-225-Ն ՀՀ օրենքով սահմանված գնահատման կարգերով, և անշարժ գույքի կադաստրային արժեքը ձևավորվում է հողամասի և (կամ) դրա բարելավումների (շինությունների) կադաստրային արժեքների հանրագումարից: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել՝ Հայաստանի Հանրապետության աշարժ գույքի 2023 և 2026 թվականների հուլիսի 1-ի դրությամբ հաշվառված տվյալներով գնահատումներ (վերագնահատումներ) և դրանց վերաբերյալ տեղեկությունները տվյալների փոխանակման փոխգործելիության հարթակի միջոցով՝ ինքնաշխատ եղանակով տրամադրել համայնքային էլեկտրոնային կառավարման միասնական հարթակի (ՀԷԿՄՀ) օպերատորին: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի 2027-2029 թվականների հարկման բազաների ձևավորում, ինչը տեղական ինքնակառավարման մարմիններին հնարավորություն կտա հաշվառելու և իրականացնելու 2027-2029 թվականների անշարժ գույքի հարկի վճարումների ընդունումը:
16	**16.1 «Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ յուրաքանչյուր տարվա հաշվետվության (հողային հաշվեկշռի) մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի փաթեթի կազմում և սահմանված կարգով ներկայացում Հայաստանի Հանրապետության կառավարություն** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 34-րդ հոդվածի պահանջներից, ըստ որի՝ հողամասերը, անկախ սեփականության ձևից, ենթակա են պետական հաշվառման: Ծրագրի համաձայն նորմատիվ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն է առաջանում (ՀՀ կառավարության որոշում) հիմք՝ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներ: **1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Հողամասերի պետական հաշվառումն իրականացվում է հողամասերի որակի և քանակի, նպատակային նշանակության, հողատեսքերի և գործառնական նշանակության, սեփականության ու օգտագործման սուբյեկտների վերաբերյալ ամբողջական տվյալներ ստանալու նպատակով: Պետական հաշվառումն իրականացվում է անընդհատ՝ սկզբնական հաշվառման ելակետային տվյալների հիման վրա՝ տարվա ընթացքում կատարված իրավական, որակական և քանակական փոփոխություններն արտացոլելով հաշվառման տեքստային ու գրաֆիկական փաստաթղթերում: Հողամասերի պետական հաշվառման նպատակը Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի տարեկան հաշվետվության (հողային հաշվեկշռի)՝ յուրաքանչյուր տարվա հուլիսի 1-ի դրությամբ կազմումն է, որը հաստատում և հրապարակում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդում կատարվում են նպատակային և գործառնական նշանակությունների, հողատեսքերի և սեփականության սուբյեկտների, ինչպես նաև ոռոգվող հողերի փոփոխություններ: Անհրաժեշտ է վերոհիշյալ փոփոխություններն արտացոլել Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր տարվա ընթացիկ հողային հաշվեկշռում: 1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները Որոշման նախագծի ընդունմամբ կկատարվի Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 34-րդ հոդվածի պահանջը, և տարվա ընթացքում կատարված իրավական, որակական և քանակական փոփոխությունները կարտացոլվեն յուրաքանչյուր տարվա հուլիսի 1-ի դրությամբ կազմված Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշռում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** «Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ յուրաքանչյուր տարվա հաշվետվության (հողային հաշվեկշռի) մասին» ՀՀ կառավարության որոշման հաստատում, որի նորացված և

	ճշտված տվյալներից կկարողանան օգտվել շահագրգիռ բոլոր պետական մարմինները, կազմակերպություններն ու անձինք: Որոշման յուրաքանչյուր տարվա նախագիծը կտեղադրվի Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի պաշտոնական www.cadastre.am կայքէջում:
17	**17.1 Համագործակցություն ոլորտային կրթական ծրագրեր իրականացնող բուհերի հետ, կրթական ծրագրերի վերանայում, լաբորատորիաների ստեղծում** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Կադաստրի կոմիտեի զարգացման ծրագրի միջոցառումներից բխող ոլորտային բարձր որակավորում ունեցող կադրերի ներգրավում: **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Կադաստրի կոմիտեի աշխատակիցները հիմնականում մասնագիտացված են կոնկրետ մի ոլորտի ուղղությամբ, ինչը խոչընդոտում է Կադաստրի կոմիտեի գործառույթների արդյունավետ իրականացմանը: **1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Համագործակցելով ոլորտային բուհերի հետ մշակել նոր կրթական ծրագրեր, ստեղծել լաբորատորիաներ նպատակ ունենալով ապահովել տարբեր ոլորտներում (իրավագիտության, քարտեզագրության, հողաշինարարության և այլն) համակողմանի գիտելիքներ ունեցող մասնագետների պատրաստումը և Կադաստրի կոմիտեում նրանց աշխատանքի ընդունումը: Կիրականացվի հետևյալ միջոցառումը՝ համագործակցություն ոլորտային բուհերի հետ, թարմացված կրթական ծրագրերի սահմանում, լաբորատորիաների ստեղծում: 2023 թվականին եռամսյակային կտրվածքով կիրականացվեն՝ առաջին եռամսյակում՝ ոլորտային կրթական ծրագրի կազմում և ներկայացում բուհերին, երկրորդ եռամսյակում՝ բուհերի կողմից ներկայացված դիրքորոշումների քննարկում, երրորդ եռամսյակում՝ ծրագրի ներդրում բուհական հաստատություններում, չորրորդ եռամսյակում բուհերի կողմից այդ ծրագրով կրթության կազմակերպում, յուրաքանչյուր տարի կրթության ծրագրով ուսումնառությունն առած ուսանողներին Կադաստրի կոմիտեում ուսանողական պրակտիկայի կազմակերպում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Կադաստրի կոմիտեի զարգացման ծրագրի միջոցառումներից բխող ոլորտային բարձր որակավորում ունեցող կադ-րերի ներգրավում, որի արդյունքում Կադաստրի կոմիտեն կհամալրվի գիտության և տեխնիկայի պահանջները բավարարող և բանիմաց մինչև 25 երիտասարդ կադրերով, ովքեր համապատասխան մասնագիտական գիտելիքներ և հմտություններ կստանան համատեղ ստեղծված գիտակրթական լաբորատորիաներում:

Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտե	
NN	**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ**
1.	«Ատոմային էներգիայի մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Վերոհիշյալ իրավական ակտի ընդունումը բխում է «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածից: «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո (01. 02. 1998թ.) թեև կատարվել են մի շարք փոփոխություններ և լրացումներ, սակայն դրանք ամբողջությամբ չեն կարգավորում ատոմային էներգիայի բնագավառում ծագող իրավահարաբերությունները, մասնավորապես՝ ռադոն ռադիոակտիվ գազից բնակչության պաշտպանությունը: Օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026թթ. ծրագրի 3. 4 կետի կատարման անհրաժեշտությամբ, որպես միջուկային նոր էներգաբլոկի կառուցման իրականացման ուղղությամբ իրականացվող միջոցառում: 1. 1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները ՀՀ կողմից վավերացված «Միջուկային նյութի ֆիզիկական պաշտպանության մասին» կոնվենցիայի փոփոխության (2013թ.), «Աշխատած վառելիքի և ռադիոակտիվ թափոնների կառավարման անվտանգության մասին» համատեղ կոնվենցիայի կարգավորումների ամրագրումը, Ատոմային էներգիայի միջազգային գործակալության առաքելությունների (կարգավորող ենթակառուցվածքի դիտարկման միջազգային ծառայություն (IRRS), ֆիզիկական պաշտպանության միջազգային խորհրդատվական ծառայություն (IPPAS), նախագծային անվտանգության

	դիտարկում (DSR) առաջարկությունները, ՀՀ և Եվրոպական Միության և Ատոմային էներգիայի եվրոպական Համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրից բխող պարտավորությունների կատարումը ինչպես նաև բնագավառի մի շարք կարևոր հարցերի կարգավորումները, և «Միջուկային տեղակայանքների միջուկային անվտանգու-թյան գծով Համայնքի համակարգի սահմանումը» 2009/71/ 25. 06. 2009, «Աշխատած վառելիքի և ռադիոակտիվ թափոնների պատասխանատու ու անվտանգ կառավարման գծով Համայնքի իրավական համակարգի սահմանումը» 2011/70/ 19 07 2011 Եվրադիրեկտիվների մոտարկումն ու ԱԷՄԳ անվտանգության ստանդարտների պահանջների ամրագրումը անհրաժեշտություն են առաջացնում մշակել նոր օրենք: 1. 2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները Նոր օրենքով բնագավառի հասկացությունները կսահմանվեն ԱԷՄԳ-ի վերանայված հասկացություններին համապատասխան, կտրվեն միջուկային տեղակայանքների կենսական բոլոր ցիկլերին՝ հրապարակի ընտրում, նախագծում, կառուցում, շահագործում, շահագործումից հանում, վերաբերող կարգավորումները, կամրագրվեն ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերի դրույթները, ԱԷՄԳ-ի առաքելությունների առաջարկությունները: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը Օրենքը կկարգավորի բնագավառի հարաբերությունները ՀՀ միջազգային պայմանագրերի պահանջներին, ԱԷՄԳ-ի անվտանգության ստանդարտների և Եվրամիության վերը նշված դիրեկտիվների պահանջներին համապատասխան:
2.	2. «Սպառման համար նախատեսված ջրում ռադիոակտիվ նյութերի թույլատրելի սահմանաքանակները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Նորմատիվ իրավական ակտի ընդունումը բխում է ՀՀ և Եվրոպական Միության և Ատոմային էներգիայի Եվրոպական Համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրից (ստորագրված՝ 2017թ. նոյեմբերի 24-ին, Բրյուսելում - CEPA) բխող պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից և «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջից, համաձայն որի կարգավորող մարմինը մշակում և վարչապետին է ներկայացնում ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի իրավական ակտերի նախագծեր: Որոշման ընդունումը նպատակ ունի ապահովելու Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026թթ. ծրագրի՝ «4. 10 շրջակա միջավայրի պահպանություն» կետի կատարումը: 1. 1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները «Մարդու կողմից սպառման համար նախատեսված ջրում ռադիոակտիվ նյութերի մասով առողջության պահպանմանը ներկայացվող պահանջները սահմանելու մասին» 2013/51/ 22. 10 2013 Եվրադիրեկտիվի դրույթների ներառում ՀՀ իրավական ակտերում (ՀՀ և Եվրոպական Միության և Ատոմային էներգիայի Եվրոպական Համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի 2-րդ հավելվածով նախատեսված՝ միջուկային էներգետիկա բաժնին վերաբերող դիրեկտիվ): 1. 2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները «Ատոմային էներգիայի մասին» ՀՀ օրենքով ՀՀ կառավարությունը կլիազորվի ընդունելու վերոհիշյալ որոշումը, որով կսահմանվեն խմելու ջրում ռադիոակտիվ նյութերի թույլատրելի սահմանաքանակները, վերը նշված դիրեկտիվների դրույթներին համապատասխան: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը ՀՀ կողմից ստանձնած պարտավորությունների կատարում՝ ապահովելու բնակչության, շրջակա միջավայրի պաշտպանությունն իոնացնող ճառագայթման հնարավոր վնասակար ազդեցությունից:
3.	«Իոնացնող ճառագայթման անվտանգության և իոնացնող ճառագայթումից պաշտպանության անվտանգության պա-հանջները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Նորմատիվ իրավական ակտի ընդունումը բխում է ՀՀ և Եվրոպական Միության և Ատոմային էներգիայի Եվրոպական Համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրից (ստորագրված՝ 2017թ. նոյեմբերի 24-ին, Բրյուսելում- CEPA) բխող պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից և «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջից, համաձայն որի

	կարգավորող մարմինը մշակում և վարչապետին է ներկայացնում ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի իրավական ակտերի նախագծեր: Որոշման ընդունումը բխում է «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի թ) կետի պահանջից, համաձայն որի ՀՀ կառավարությունը հաստատում է կարգավորող մարմնի ներկայացրած՝ անվտանգության նորմերը և կանոնները. 1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները «Իոնացնող ճառագայթումից առաջացող վտանգներից պաշտպանության անվտանգության հիմնական ստանդարտները սահմանելու մասին» 5. 12. 2013/59/ 89/618 90/641, 96/29/ , 97/43 և 2003/122/ Եվրադիրեկտիվների դրույթների ներառում ՀՀ իրավական ակտերում (ՀՀ և Եվրոպական Միության և Ատոմային էներգիայի Եվրոպական Համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի 2-րդ հավելվածով նախատեսված՝ միջուկային էներգետիկա բաժնին վերաբերող դիրեկտիվ): 1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները «Ատոմային էներգիայի մասին» ՀՀ օրենքով ՀՀ կառավարությունը կլիազորվի ընդունելու վերոհիշյալ որոշումը, որով կսահմանվեն իոնացնող ճառագայթման անվտանգության և իոնացնող ճառագայթումից պաշտպանության անվտանգության պահանջներ: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը ՀՀ կողմից ստանձնած պարտավորությունների կատարում՝ ապահովելու բնակչության, ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների անձնակազմի անվտանգության ապահովումը, շրջակա միջավայրի պաշտպանությունն իոնացնող ճառագայթման հնարավոր վնասակար ազդեցությունից, այդ թվում բնական ճառագայթումից. մասնավորապես՝ ռադոն ռադիոակտիվ գազ, շինարարական նյութերի ռադիոակտիվություն և այլն:
4.	«Ռադիոակտիվ թափոնների և աշխատած վառելիքի առաքման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Նորմատիվ իրավական ակտի ընդունումը բխում է ՀՀ և Եվրոպական Միության և Ատոմային էներգիայի Եվրոպական Համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրից (ստորագրված՝ 2017թ. նոյեմբերի 24-ին, Բրյուսելում - CEPA) բխող պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից և «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջից, համաձայն որի կարգավորող մարմինը մշակում և վարչապետին է ներկայացնում ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի իրավական ակտերի նախագծեր: 1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները «Ռադիոակտիվ թափոնների և աշխատած վառելիքի առաքումը ստուգելու և վերահսկելու մասին» 2006/117 20. 11 . 2006 Եվրադիրեկտիվի դրույթների ներառում ՀՀ իրավական ակտերում (ՀՀ և Եվրոպական Միության և Ատոմային էներգիայի Եվրոպական Համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի 2-րդ հավելվածով նախատեսված՝ միջուկային էներգետիկա բաժնին վերաբերող դիրեկտիվ): 1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները «Ատոմային էներգիայի մասին» ՀՀ օրենքով ՀՀ կառավարությունը կլիազորվի ընդունելու վերոհիշյալ որոշումը, որով կսահմանվեն ռադիոակտիվ թափոնների և աշխատած վառելիքի ներմուծման, արտահանման, ներպետական փոխադրումների նկատմամբ կարգավորող նոր պահանջներ: 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը ՀՀ կողմից ստանձնած պարտավորությունների կատարում՝ ապահովելու բնակչության, ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների անձնակազմի, անվտանգությունը, շրջակա միջավայրի պաշտպանությունն իոնացնող ճառագայթման հնարավոր վնասակար ազդեցությունից:

Պետական եկամուտների կոմիտե	
NN	**Հիմնավորումներ**
1.	**Էլեկտրոնային համակարգերի և ենթակառուցվածքների արդիականացում (1.1-1.15)** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Նշված միջոցառումը պայմանավորված է ՊԵԿ համակարգի տեղեկատվական հոսքերի կառավարման արդյունավետության բարձրացման անհրաժեշտությամբ, որն ուղղված է առավել արդիական համակարգ ունենալուն: Էլեկտրոնային կառավարման համակարգի կարողությունների համալրմամբ ու կատարելագործմամբ էականորեն

	կպարզեցվեն տնտեսավարող սուբյեկտների, ֆիզիկական անձանց և պետական մարմինների միջև շփման հնարավորությունները՝ տրամադրելով էլեկտրոնային ծառայություններ ստանալու և տեղեկատվության փոխանակման ժամանակակից հարմարավետ էլեկտրոնային գործիքներ (ՀՀ Ազգային ժողովի 26.08.2021թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 6.9 ենթաբաժնի 5-րդ պարբերություն և 10-րդ պարբերության 2-րդ, 4-րդ և 6-րդ ուղղություններ): **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս ՊԵԿ կողմից շարունակվում են նորարարական ծրագրերի կիրառմանն ուղղված աշխատանքները, այդ թվում՝ «Մեծ ծավալի տվյալների» (Big Data) ժամանակակից կառուցվածքով տվյալների շտեմարանների մշակման գործիքների ստեղծումը, ինքնաուսուցանվող (machine-learning) արհեստական ինտելեկտով համակարգերի մշակումը, ապրանքների և տրանսպորտային միջոցների ինքնաշխատ բացթողման էլեկտրոնային համակարգի ներդրումը ինչպես նաև «Մաքսային միասնական հաշիվ» էլեկտրոնային համակարգի ներդրումը: Այս աշխատանքները կրելու են շարունակական բնույթ, քանի որ ՊԵԿ կողմից կարևորվում է ժամանակին համընթաց էլեկտրոնային համակարգերի և ենթակառուցվածքների առկայության անհրաժեշտությունը: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Վերը նշված խնդիրների լուծման նպատակով նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները՝ 1) վերլուծական գործիքների կատարելագործում և ավտոմատացում, 2) հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների վերադարձի էլեկտրոնային հարթակի գործարկում, 3) մաքսային և այլ վճարների գանձման համակարգերի բարելավում, 4) հաշվարկային փաստաթղթերի դուրսգրման և հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգերի բջջային հավելվածների ներդրում, 5) երրորդ անձանցից ստացվող տեղեկությունների մշակման էլեկտրոնային համակարգերի կատարելագործում, 6) «Մեծ Ծավալի Տվյալների» (Big Data) ժամանակակից կառուցվածքով տվյալների շտեմարանների մշակման գործիքների ստեղծում, գործիքակազմի ընդլայնում և զարգացում, 7) ինքնաուսուցանվող (machine-learning) արհեստական ինտելեկտով համակարգերի մշակում 8) էլեկտրոնային կառավարման համակարգերի հնարավորությունների հզորացում և կատարելագործում, 9) հաշվարկային փաստաթղթերում (հարկային հաշիվներ, ՀԴՄ կտրոններ և այլն) արտացոլվող տվյալների արտածման հնարավորության ապահովում, 10) ապրանքների և տրանսպորտային միջոցների ինքնաշխատ բացթողման էլեկտրոնային համակարգի ներդրում (ավտոմատ բացթողում)՝ առանց մաքսային մարմինների գտնվելու վայրեր այցելության, 11) «Մաքսային միասնական հաշիվ» համակարգի ներդրում, 12) Ուղևորային հայտարարագիր և դրա բջջային հավելվածի ներդրում, 13) Ռեզիդենտության սերտիֆիկատի տրամադրման ավտոմատացում, 14) Տնտեսական համագործակցության զարգացման կազմակերպության՝ հարկման նպատակով թափանցիկության և տեղեկությունների փոխանակման գլոբալ ֆորումին ՀՀ անդամակցություն, 15) Ֆիզիկական անձանց հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգում տաքսի ծառայության ոլորտի կարգավորում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման իրագործման արդյունքում ակնկալվում է ունենալ ժամանակակից չափանիշներին համապատասխան էլեկտրոնային կառավարման համակարգեր և ենթակառուցվածքներ: Ավտոմատացնելով ՊԵԿ գործընթացները առավելագույնի հասցնել հարկ վճարողների և ՊԵԿ աշխատակիցների կողմից SS համակարգերի կիրառումը՝ հնարավորինս սահմանափակելով ՊԵԿ - հարկ վճարող անմիջական շփումը: Արդյունքում կբարձրացվի տնտեսավարող սուբյեկտներին մատուցվող ծառայությունների որակը, կընդլայնվի փոխանակվող տեղեկությունների ծավալն ու կբարձրացվի դրանց անվտանգությունը, կկրճատվի մատուցվող ծառայությունների ժամանակը, փոքր ու միջին բիզնեսի համար կպարզեցվեն հարկային և մաքսային վարչարարությունն ու փաստաթղթաշրջանառությունը: Արդյունքում կբարելավվի հարկային վարչարարության արդյունավետության ցուցանիշը 0.5-ից 0.7 տոկոսային կետով:
2.	**Հարկ վճարողների սպասարկման որակի բարձրացում և մատուցվող ծառայությունների ընդլայնում (2.1-2.9)** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Նշված միջոցառումը պայմանավորված է հարկ վճարողների սպասարկման որակի բարձրացման, հարկ վճարողների հետ գործընկերային հարաբերությունների ամրապնդման, ինչպես նաև օրինապահ հարկ վճարողներին խրախուսելու նպատակով լրացուցիչ վարչարարական բարելավումների ու ծառայությունների սահմանման անհրաժեշտությամբ, որը կանխատեսելի կդարձնի հարկային ու արտաքին տնտեսական գործունեության իրականացման միջավայրը և կբարձրացնի կարգապահության մակարդակը (ՀՀ Ազգային ժողովի 26.08.2021թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության

	կառավարության ծրագրի 6.9 ենթաբաժնի 5-րդ և 9-րդ պարբերություններ, 10-րդ պարբերության 1-ին, 2-րդ և 6-րդ ուղղություններ, իսկ օրենսդրական ակտերի ընդունման մասով՝ նաև ՀՀ Սահմանադրության 109-րդ հոդվածի 1-ին մաս, ՀՀ Ազգային ժողովի 26.08.2021թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 6.3 ենթաբաժին): **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Վերջին տարիներին լայնածավալ աշխատանքներ են իրականացվել հարկ վճարողների սպասարկման որակի բարձրացման և մատուցվող ծառայությունների ընդլայնման, ինչպես նաև հարկային մարմին-հարկ վճարող գործընկերային հարաբերությունների ձևավորման ուղղությամբ, սակայն այս տեսանկյունից դեռևս միջազգային լավագույն չափանիշներին համապատասխան սպասարկում ապահովելու և ծառայություններ մատուցելու մասով պետք է իրականացվեն մի շարք աշխատանքներ: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Վերը նշված խնդիրների լուծման նպատակով նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները՝ 1) համապատասխան ծրագրային ապահովման միջոցով՝ հարկային մարմնի և հարկ վճարողների ամբողջությամբ էլեկտրոնային եղանակով միմյանց հետ հաղորդակցվելու հնարավորության ապահովում, 2) մաքսային հայտարարագրերի և ծանուցումների կառավարման նոր ենթահամակարգի մշակում և ներդրում, 3) օրինապահ հարկ վճարողների համակարգի կատարելագործում, 4) ՊԵԿ մարդկային ռեսուրսների կառավարման արդի համակարգի ներդրում, 5) հարկ վճարողների իրազեկման և ուսուցման համակարգի շարունակական կատարելագործում, 6) հարկային և մաքսային վարչարարության ընթացակարգերի վերաբերյալ հարցումների կազմակերպում, 7) օրենսդրությամբ սահմանված կարգով միասնական հաշվին մուտքագրման ենթակա՝ փոխհատուցվող գումարների միասնական հաշվին մուտքագրման ժամկետների կրճատում, 8) հարկային և մաքսային մարմիններում կոռուպցիոն ռիսկերի և երևույթների բացահայտում և կանխարգելում, 9) մաքսային ձևակերպումների ժամանակակից կենտրոնի ստեղծում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման իրագործման արդյունքում ակնկալվում է բարելավել տնտեսավարող սուբյեկտներին մատուցվող ծառայությունների որակը, բարեխիղճ և օրինապահ հարկ վճարողների համար ընդլայնել պարզեցված հարկային և մաքսային ընթացակարգերը, արմատավորել հարկ վճարողների կողմից հարկային պարտավորությունները կամավորությամբ կատարելու սկզբունքը, առավել ամրապնդել պետություն-հարկ վճարող գործընկերային հարաբերությունները, կրճատել վարչարարական բեռը և մատուցվող ծառայությունների ժամանակը:
3.	**Հարկային հսկողության ռիսկերի կառավարման համակարգերի կատարելագործմամբ ստվերի կրճատում (3.1-3.5)** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Նշված միջոցառումը պայմանավորված է հարկային ոլորտում ռիսկերի կառավարման համակարգերի և գործընթացների կատարելագործման արդյունքում հարկային հսկողության արդյունավետության բարձրացման, տնտեսությունում բոլոր գործարքների լիարժեք փաստաթղթավորման ապահովման անհրաժեշտությամբ (ՀՀ Ազգային ժողովի 26.08.2021թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 6.8 ենթաբաժնի 16-րդ պարբերություն, 6.9 ենթաբաժնի 4-րդ, 6-րդ և 7-րդ պարբերություններ և 10-րդ պարբերության 3-րդ և 5-րդ ուղղություններ, իսկ օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի ընդունման մասով՝ նաև ՀՀ Սահմանադրության 109-րդ և 154-րդ հոդվածների 1-ին մասեր, «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 23.03.2022թ. ՀՕ-86-Ն ՀՀ օրենքի 5-րդ հոդված, 19-րդ հոդված, 24 հոդված, 26 հոդված, 27 հոդված և 28 հոդված): **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս կարևորվում է հասցեական և արդյունավետ հսկողության իրականացումը, այսինքն՝ հարկային վարչարարության բարելավման աշխատանքներում հիմնական մոտեցումն այն է, որ հարկային հսկողական գործիքները կիրառվեն հիմնականում այն հարկ վճարողների նկատմամբ, որոնք վերլուծությունների արդյունքներով կդիտվեն ռիսկային, ակնկալելով կրճատել ստվերային շրջանառությունը՝ բացառելով հարկերի թերհայտարարագրումը: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Վերը նշված խնդիրների լուծման նպատակով նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները՝ 1) տնտեսավարող սուբյեկտների կողմից իրականացվող գործունեության օրինականության կամ գործարքների լիարժեք փաստաթղթավորման կարգապահության բարելավում, հսկողական գործիքակազմի կատարելագործում,

	2) Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն ներմուծում իրականացնող հարկ վճարողների հարկային կարգապահության բարելավում և հսկողական գործիքի կատարելագործում, 3) հարկային պարտավորությունների հաշվարկման մեխանիզմների կատարելագործում, 4) ավելացված արժեքի հարկի, շահութահարկի և եկամտային հարկի ոլորտային հարկային պոտենցիալի գնահատման համակարգի կատարելագործում՝ Արժույթի միջազգային հիմնադրամի հետ համագործակցությամբ, 5) ռիսկերի կառավարման համակարգերի վերանայում և կատարելագործում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման իրագործմամբ նախատեսվում է տնտեսությունում կրճատել ստվերային շրջանառությունը, կատարելագործել ռիսկերի կառավարման համակարգերը, թիրախավորված հարկային հսկողության միջոցով ավելացնել պետական բյուջե մուտքագրվող հարկային եկամուտները, որի արդյունքում Հարկեր/ՀՆԱ ցուցանիշը, այլ հավասար պայմաններում, կբարելավվի շուրջ 2.5 տոկոսային կետով:
4.	**Մաքսային ռիսկերի կառավարման գործիքակազմի կատարելագործմամբ մաքսային հսկողության արդյունավետության բարձրացում (4.1-4.4)** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Նշված միջոցառման իրականացումը պայմանավորված է մաքսային վարչարարության շրջանակներում կիրառվող վերլուծական գործիքակազմի կատարելագործմամբ մաքսային հսկողության արդյունավետության բարձրացման անհրաժեշտությամբ (ՀՀ Ազգային ժողովի 26.08.2021թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 6.9 ենթաբաժնի 8-րդ պարբերություն և 10րդ պարբերության 3-րդ ուղղություն): **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Մաքսային հսկողության գործիքակազմի արդյունավետությունն էապես պայմանավորված է մաքսային գործընթացների ավտոմատացման բարձր մակարդակով, այդ թվում՝ վերլուծական գործիքների կատարելագործմամբ: Ներկայումս համապատասխան աշխատանքներ են տարվում հատկապես ապրանքների բացթողումից հետո իրականացվող մաքսային հսկողության գործընթացներն ավտոմատացնելու ուղղությամբ: Միաժամանակ, պարբերաբար աշխատանքներ են իրականացվում մաքսային հսկողության առանձին ենթագործառույթների ավտոմատացման մակարդակը բարձրացնելու ուղղությամբ: Արտաքին առևտրի աջակցման նպատակով, նախաբացթողումային գործառույթների աստիճանական կրճատմանը զուգահեռ, հետբացթողումային գործառույթների ընդլայնման ուղղությամբ պետք է իրականացվեն մի շարք միջոցառումներ, որոնց արդյունքում կներդրվի ապրանքների և տրանսպորտային միջոցների բացթողումից հետո թիրախային ստուգումների արդի համակարգ: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Վերը նշված խնդիրների լուծման նպատակով նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները՝ 1) մաքսային հսկողության գործիքակազմի կատարելագործում, 2) մաքսային և հարկային ռիսկերի կառավարման համակարգերի ներդաշնակեցում, 3) «Մաքսային իրավախախտումների միասնական շտեմարան» համակարգի ներդրում, 4) փոստային (սուրհանդակային) առաքանիների հետ կապված մաքսային գործառնությունների կանոնակարգման նպատակով ռիսկի ցուցիչների մշակում՝ անձնագրային և ՀԾՀ տվյալների միջոցով սահմանահատումների հաճախականության ռիսկի ցուցիչի ձևավորում, ապրանքների քաշի և սահմանահատումների հաճախականության տվյալների հիման վրա ռիսկի ցուցիչի մշակում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման արդյունքում էապես կպարզեցվի և կբարելավվի մաքսային վարչարարությունը: Մաքսային գործարքների ռիսկերի կառավարման համակարգի կատարելագործման և ավտոմատացման մակարդակի բարձրացման արդյունքում մաքսային մարմինների ռեսուրսներն առավել արդյունավետ կօգտագործվեն՝ նվազեցնելով նախքան ապրանքների բացթողումն իրականացվող հսկողության վրա ծախսվող ժամանակը և միջոցները, որպես հետևանք ապահովելով նաև միջազգային առևտրային հոսքերի գրավիչ պայմաններ:
5.	**«Մեկ կանգառ, մեկ պատուհան» համակարգի կատարելագործում (5.1-5.5)** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Նշված միջոցառումը պայմանավորված է պետական սահմանի անցման կետերով տնտեսավարող սուբյեկտների և քաղաքացիների սահմանահատման սահուն և անխոչընդոտ իրականացման, պետական սահմանի համալիր կառավարման գործում ներգրավված մարմինների փոխլրացված ու փոխհամաձայնեցված գործունեության ապահովման և ժամանակակից ընթացակարգերի ներդրման անհրաժեշտությամբ՝ հաշվի առնելով միջազգային առաջավոր փորձը (ՀՀ Ազգային ժողովի 26.08.2021թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 6.9 ենթաբաժնի 2-րդ, 3-րդ, 8-րդ, 11-րդ և 12-րդ պարբերություններ):

	1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Հայաստանի Հանրապետությունն իրականացնում է պետական սահմանի անցման կետերի խոր և համապարփակ բարեփոխումներ, որոնք թույլ կտան ոչ միայն վերակառուցել և արդիականացնել պետական սահմանի անցման կետերը տեխնիկական զինվածության առումով, այլև ներդնել Եվրամիության երկրների առաջավոր փորձը: Պետական կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով իրականացվում է պետության կողմից մատուցվող ծառայությունների արդիականացումը, ավտոմատացումը և թվայնացումը՝ դրանց մատուցման միասնական կենտրոնի ստեղծումը «Մեկ կանգառ, մեկ պատուհան» սկզբունքի կիրառմամբ: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Վերը նշված խնդիրների լուծման նպատակով նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները՝ 1) կշռման համակարգի տվյալների օգտագործման նոր մոդելի մշակում, ՀՀ պետական սահմանի անցման կետերում գործող կշեռքների կենտրոնացված համակարգի ինտեգրում «ՀՀ արտաքին առևտրի ազգային մեկ պատուհան» համակարգին, 2) մաքսային ձևակերպումների համար անհրաժեշտ թույլատվական փաստաթղթերի տրամադրման էլեկտրոնային համակարգի ներդրում, 3) ՀՀ պետական սահմանի անցման կետերում գործող այլ համակարգերի ինտեգրում «ՀՀ արտաքին առևտրի ազգային մեկ պատուհան» համակարգին, 4) ՀՀ ՊԵԿ և ՀՀ ԱԱԾ կողմից առկա հսկողական գործիքների համատեղ օգտագործում՝ ՀՀ արտաքին առևտրի ազգային մեկ պատուհանի և ՍԷԿՏ համակարգերի ինտեգրում, 5) «Մեկ կանգառ, մեկ պատուհան» համակարգի վերջնական ներդրման համար անհրաժեշտ հիմնական կառավարման էլեկտրոնային համակարգերի արդիականացում, նոր համակարգերի մշակում և ներդրում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է ամբողջապես ներդնել «Մեկ կանգառ, մեկ պատուհան» համակարգը, մատուցել ժամանակակից չափանիշներին համապատասխան ծառայություններ, կրճատել մաքսային ձևակերպումների ժամանակը, սահմանել մաքսային ձևակերպումների իրականացման վայրերում հսկողական և վերահսկողական գործառույթների միասնական աշխատակարգ, իրականացնել պետական մարմինների իրավասությունների օպտիմալացում: Արդյունքում կնվազեցվեն պետական մարմինների և ԱՏԳ սուբյեկտների միջև անմիջական շփումները, սահմանահատումը կդառնա ավելի հարթ, անխոչընդոտ և սահուն՝ նպաստելով նաև ներդրումային գրավչության բարձրացմանը:
6.	**Միջազգային համագործակցության ամրապնդում (6.1-6.4)** **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Նշված միջոցառումը պայմանավորված է միջազգային գործընկեր երկրների և կազմակերպությունների համագործակցության ամրապնդման, ինչպես նաև միջազգային գործարքների նկատմամբ հսկողության գործիքների կատարելագործման անհրաժեշտությամբ (ՀՀ Ազգային ժողովի 26.08.2021թ. Ն ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 6.9 ենթաբաժնի 3-րդ և 13րդ պարբերություններ): **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս տարբեր միջազգային կազմակերպությունների (հատկապես՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության) կողմից բավականին ակտիվ աշխատանքներ են իրականացվում միջազգային մակարդակում հարկային թափանցիկության մակարդակի աճի ուղղությամբ: Մասնավորապես, խիստ արդիական է դարձել երկրների համար ունենալ միջազգային ստանդարտներին համապատասխան տեղեկությունների փոխանակման համակարգ, որը թույլ կտա տեղեկությունների փոխանակումն իրականացնել ժամանակին և անվտանգության կանոններին համահունչ: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Վերը նշված խնդիրների լուծման նպատակով նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները՝ 1) տնտեսական համագործակցության զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) Հարկման նպատակով թափանցիկության և տեղեկությունների փոխանակման գլոբալ ֆորումին ՀՀ անդամակցության շրջանակներում տեղեկությունների փոխանակման միջազգային ստանդարտների ներդրում, 2) ՏՀԶԿ-ի Միասնական հաշվետվողական ստանդարտի (Common Reporting Standard - CRS) ներդրմանն ուղղված աշխատանքների իրականացում, 3) «Հարկվող բազայի քայքայումը և շահույթի տեղաշարժ» ծրագրի՝ հարկային մարմնի գործառույթներին առնչվող ստանդարտների կիրառումն ապահովող աշխատանքների իրականացում: 4) Արևելյան գործընկերության շրջանակում փաստաթղթերի միջսահմանային էլեկտրոնային առաքման համակարգերի հետ ինտեգրում/ տվյալների փոխանակում **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է ապահովել ՏՀԶԿ ստանդարտների ներդրումը՝ ՀՀ-ի համար ապահովելով հարկման նպատակով տեղեկությունների փոխանակման և թափանցիկության միջազգային

	ստանդարտներ կիրառող երկրի կարգավիճակ, բարելավելով միջազգային գործարքների նկատմամբ հսկողության գործիքները և ունենալ հարկային և մաքսային միջազգայնորեն մրցունակ համակարգեր:

Քաղաքաշինության կոմիտե	
NN	ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ
1.	**ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀԻՄՔԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ**

1.1.«Քաղաքաշինական ծրագրային (տարածական պլանավորման) փաստաթղթերի մշակում» 2017-2024 թվականների ծրագրի շրջանակներում՝ միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1 հոդվածի 3-րդ կետի 7-րդ ենթակետից, ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի «ՀՀ քաղաքաշինության բնագավառի ռազմավարական ծրագիրը և ծրագրի իրագործումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 531-Լ որոշման N 2 հավելվածի 2-րդ նպատակի 3.2.2-ից կետի դրույթներից և Ազգային ժողովի 2021թ. օգոստոսի 26-ի N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի 2.7-րդ՝ «Քաղաքաշինություն» բաժնի 2-րդ պարբերության 1-ին կետից:

Համաձայն «Քաղաքաշինության մասին» օրենքի՝ հանրապետության տարածական զարգացման հիմնախնդիրներն ու դրանց լուծմանը նպատակաուղղված միջոցառումներն ամրագրվում են տարածական զարգացման հենքը հանդիսացող ազգային, ռեգիոնալ, միկրոռեգիոնալ և տեղական մակարդակների պլանավորման փաստաթղթերով:

Տեղական և միկրոռեգիոնալ մակարդակի տարածական պլանավորման փաստաթղթերը մշակվում են ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթներին համապատասխան, որը (կարգը) նպատակաուղղված է ՀՀ համայնքներում քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման ու հաստատման գործառույթների պարզեցմանը, հստակեցմանը՝ բնակավայրերի անվտանգ և բնականոն զարգացումն ապահովող մեխանիզմների ամրագրման միջոցով:

Միջոցառման նպատակն է՝ համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերի մշակման միջոցով ՀՀ համայնքներն ապահովել տարածական պլանավորման փաստաթղթերով և տարբեր մակարդակների փաստաթղթերի համատեղման շնորհիվ խնայել ֆինանսական միջոցները:

1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Միկրոռեգիոնալ պլանավորման միջոցով քաղաքաշինական գործունեության կանոնակարգումը սահմանված է «Քաղաքաշինության մասին» օրենքի 14.4 հոդվածով, իսկ 14.3 հոդվածի 32-րդ մասով սահմանված է, որ արգելվում է 2024 թվականի հուլիսի 1-ից հետո առանց սահմանված կարգով հաստատված համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի կառուցապատման նպատակներով հողամասերի և (կամ) ճարտարապետահատակագծային առաջադրանքների տրամադրումը:

Ծրագրի շրջանակներում 2017 թվականին մշակվել են ՀՀ Տավուշի մարզի (բացառությամբ Դիլիջան խոշորացված համայնքի) միկրոռեգիոնալ փաստաթղթերը, 2018 թվականին՝ Սյունիքի և Արարատի մարզերինը, ՀՀ 2019 թվականի պետական բյուջեով հատկացված միջոցների հաշվին մշակվել է Դիլիջանի խոշորացված համայնքի միկրոռեգիոնալ փաստաթուղթը, մշակման փուլում է գտնվում Վայոց ձորի, Արմավիրի, Արագածոտնի, Գեղարքունիքի (մասնակի) և Շիրակի (մասնակի) մարզերինը:

Համավարակով (COVID-19) և 2020 թվականի սեպտեմբերի 27-ին երկրում հայտարարված ռազմական դրությամբ պայմանավորված՝ 2020 թվականի պետական բյուջեի շրջանակներում կնքված ՀՀ Արագածոտնի մարզի, ՀՀ Գեղարքունիքի մարզի (մասնակի) և ՀՀ Շիրակի մարզի (մասնակի) և Աշոցքի խոշորացված համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերը նախագծող ընկերությունները պայմանագրերով նախատեսված ժամկետներում չեն իրականացրել նշված աշխատանքները: ՀՀ կառավարության 2020 թվականի հոկտեմբերի 7-ի N 1651-Ն որոշման համաձայն 2020 թվականին կնքված պայմանագրերով նախատեսված գումարը՝ 409,261.0 հազար դրամը, վերադարձվել է ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ՝ պայմանագրերի ֆինանսավորումը 2021 թվականին ապահովելու պայմանով:

Վերը նշված հանգամանքների պատճառով նաև չեն ավարտվել սահմանված ժամկետներում ՀՀ Արմավիրի մարզի միկրոռեգիոնալ մակարդակի՝ համակցված տարածական պլանավորման թվով 9 փաստաթղթերի և ՀՀ

Վայոց ձորի մարզի միկրոռեգիոնալ մակարդակի՝ համակցված տարածական պլանավորման թվով 6 փաստաթղթերի նախագծերի մշակման աշխատանքները: 2019 թվականին կնքված պայմանագրերով նախատեսված գումարից 67.625.0 հազար դրամը վերադարձվել է ՀՀ պետական բյուջե:

1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

2021 թվականին ավարտել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից 2019 թվականին կնքված պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարումը՝ ՀՀ Վայոց ձորի (բոլոր համայնքները ներառող), ՀՀ Արագածոտնի (40 բնակավայր, 4 փաստաթուղթ) մարզերի և ՀՀ Շիրակի մարզի Աշոցքի խոշորացված համայնքի (11 բնակավայրում) համակցված տարածական պլանավորման փաստաթղթերը (աշխատանքները լրամշակման փուլում են գտնվում): 2022-2024 թվականների ընթացքում մշակել ՀՀ Կոտայքի, Լոռու, Գեղարքունիքի, Արագածոտնի և Շիրակի մարզերի միկրոռեգիոնալ մակարդակի՝ համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակումը:

2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

ՀՀ բոլոր համայնքների տարածական պլանավորման փաստաթղթերով ապահովում:

<u>1.2.«Սևան» ազգային պարկի Լճաշեն-Սևանի թերակղզի հատվածի գոտևորման նախագծի և քաղաքաշինական կանոնադրության նախագծի մշակում</u>

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անրաժեշտությունը բխում է «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1 հոդվածի 3-րդ մասի 14-րդ կետից, ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի «ՀՀ քաղաքաշինության բնագավառի ռազմավարական ծրագիրը և ծրագրի իրագործումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 531-Լ որոշման N 2 հավելվածի 2-րդ նպատակի 4.2.3 կետից և Ազգային ժողովի 2021թ. օգոստոսի 26-ի N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի 2.7-րդ՝ «Քաղաքաշինություն» բաժնի 2-րդ պարբերության 1-ին կետից:

Միջոցառման նպատակն է՝ ներդրումների ներգրավման միջոցով «Սևան» ազգային պարկի տարածքում բարձրացնել տնտեսական ակտիվությունը և ընդլայնել Սևանա լճի զբոսաշրջային հնարավորությունները:

1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Ներկայումս օգտագործվում է Սևանա լճի ռեկրեացիոն ռեսուրսների չնչին մասը, կառուցապատումը կանոնակարգված չէ, գերակշռում են անշուք, ոչ հիմնական շինությունները, լքված, չօգտագործվող կամ անավարտ կառույցներն, ընդ որում դրանց մի մասը ջրածածկման գոտում են:

1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

«Սևան» ազգային պարկի Լճաշեն-Սևանի թերակղզի հատվածի գոտևորման նախագծի և քաղաքաշինական կանոնադրության մշակման միջոցով կանոնակարգվում է առկա կառուցապատման գործընթացները:

2019 թվականի ընթացքում մշակվել է հատվածի գոտևորման նախագծի և քաղաքաշինական կանոնադրության առաջադրանքը, որի հիման վրա ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին՝ պետական գնման համապատասխան պայմանագրի շրջանակներում ներկայումս ընթանում են քաղաքաշինական կանոնադրության մշակման աշխատանքները:

Նախագծի մշակման աշխատանքների ընթացքում առաջացել են որոշակի խոչընդոտներ: Նախագծային ընկերությունը դիմել է Կադաստրի կոմիտե՝ Լճաշեն-Սևան հատվածի կադաստրային քարտեզներ ձեռք բերելու համար, սակայն Կադաստրի կոմիտեից հայտնել են, որ իրենց կողմից հայտարարված մրցույթը չեղյալ է հայտարարվել և ելակետային տվյալներ հնարավոր չէ տրամադրել: Միաժամանակ, հանրության իրազեկման և լսումների հաջորդ փուլերի կազմակերպման, ելակետային նյութերի ձեռքբերման և դրանց արդյունքում նախագծային փաստաթղթերի մշակման աշխատանքներն ավարտին հասցնելու համար անհրաժեշտություն է առաջացել նախագծի ավարտման ժամկետը կրկին երկարաձգել, որի համար շրջանառության մեջ է դրվել ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի N 2096-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու և աշխատանքերի կատարման ժամկետը մինչև 2022թ. ապրիլի 30-ը սահմանելու մասին կառավարության որոշման նախագիծը:

2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Սևանա լճի ռեկրեացիոն գոտում ներդրումների համար բարենպաստ պայմանների ստեղծում:

1.3.Սահմանամերձ համայնքներում քաղաքաշինական գործունեությանն աջակցություն

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է Սահմանադրության 86-րդ հոդվածի 3-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 2-րդ հոդվածի, 10.1 հոդվածի 3-րդ մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 6-րդ և 7-րդ կետերի, 14.4 հոդվածի դրույթներից, ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 650-Լ որոշման N 1 հավելվածի 364-րդ կետի դրույթներից, ինչպես նաև Ազգային ժողովի 2021թ. օգոստոսի 26-ի N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի 2.7-րդ՝ «Քաղաքաշինություն» բաժնի 2-րդ պարբերության 1-ին կետից:

Միջոցառման նպատակը՝ սահմանամերձ համայնքներում քաղաքաշինական գործունեության իրականացման քաղաքականության մշակումն է:

1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Երկրի միակենտրոն զարգացման, ինչպես նաև անբարենպաստ աշխարհաքաղաքական պայմանների արդյունքում սահմանամերձ համայնքներում արձանագրվում է բնակչության թվաքանակի, տնտեսական գործունեության, ներդրումների անկում: Հաճախ գյուղատնտեսության վարումը դառնում է անհնարին, հողատարածքների անբարենպաստ տեղադիրքի պատճառով: Սահմանամերձ համայնքներում առաջնահերթ խնդիր է բնակչության անվտանգության ապահովումը և բնակվելու համար բավարար պայմանների ապահովումը:

Ներկայումս իրականացվող «Քաղաքաշինական ծրագրային (տարածական պլանավորման) փաստաթղթերի մշակում» 2017-2024 թվականների ծրագիրն ուղղված է նաև սահմանամերձ համայնքների խնդիրների գնահատմանը և զարգացման, բնակչության անվտանգության, շրջանցող ճանապարհների և ռեզերվային ջրամբարների, ջրագծերի և այլ անհրաժեշտ միջոցառումների նախատեսմանը: Օրինակ, ՀՀ Տավուշի մարզի միկրոռեգիոնալ փաստաթղթերով առաջարկվել են մարզի սահմանամերձ համայնքների համար շատ կարևոր միջոցառումներ, դրանց իրականացմանը ներգրավելով շահագրգիռ բոլոր մարմիններին:

Խնդիր է համարվում նաև բնակչության անվտանգության ապահովմանն ուղղված հատուկ նորմերի և կանոնների մշակումը՝ որոշ արտոնությունների նախատեսմամբ, որը կխթանի ներդրումների և այլ տնտեսական գործունեության ընդլայնմանը:

1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Նախատեսվում է հետամուտ լինել միկրոռեգիոնալ փաստաթղթերի մշակման արդյունքում սահմանամերձ բնակավայրերում ի հայտ եկած խնդիրների և դրանց լուծմանն ուղղված առաջարկությունների իրագործմանն աջակցելու գործընթացին, ուսումնասիրել առկա այլ խնդիրները և միջոցառման համակատարող դիտարկված մարմինների հետ մշակել առաջարկությունների, մասնավորապես կառուցապատման ներդրումային ծրագրերի փաթեթներ:

2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Առաջնահերթության կարգով սահմանամերձ համայնքների քաղաքաշինական հիմնախնդիրների լուծում, անվտանգ կենսամիջավայրի ապահովում, ժողովրդագրական ցուցանիշների բարելավում:

1.4. ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագծի առաջադրանքի և գլխավոր նախագծի մշակում

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման իրավական հիմքը «Քաղաքաշինության մասին» 10.1 հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետն է, ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի «ՀՀ քաղաքաշինության բնագավառի ռազմավարական ծրագիրը և ծրագրի իրագործումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 531-Լ որոշման N 2 հավելվածի 2-րդ նպատակի 2.1.1 և 2.1.2 կետերը, ինչպես նաև Ազգային ժողովի 2021թ. օգոստոսի 26-ի N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի 2.7-րդ՝ «Քաղաքաշինություն» բաժնի 2-րդ պարբերության 1-ին կետը, պայմանավորված է երկրի կայուն տարածական զարգացման ռազմավարության մշակման և իրագործման անհրաժեշտությամբ՝ հաշվի առնելով սոցիալ-տնտեսական գործոնները, ինժեներաերկրաբանական, ինժեներատրանսպորտային, բնական պայմանների ու պաշարների, էկոլոգիական իրավիճակի, մշակութային ժառանգության, աշխարհագրական ու տարածաշրջանային այլ առանձնահատկությունները,

Միջոցառման նպատակն է՝ օրենքով սահմանված պարտադիր մշակման ենթակա փաստաթղթի հաստատումը, որպես ազգային մակարդակով պետական քաղաքաշինական քաղաքականության իրականացման հիմք:

1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Հաշվի առնելով, որ ՀՀ կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի N 610-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության տարաբնակեցման գլխավոր նախագծի ժամկետը լրանում է 2024 թվականին, անհրաժեշտ է մշակել ՀՀ տարաբնակեցման և տարածքների կազմակերպման գլխավոր նախագծի առաջադրանքը և բուն գլխավոր նախագիծը:

1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

2024 թվականին ՀՀ տարաբնակեցման և տարածքների կազմակերպման գլխավոր նախագծի առաջադրանքի մշակում, առաջադրանքի հաստատումից հետո՝ 2025-2027 թվականներին ՀՀ տարաբնակեցման և տարածքների կազմակերպման գլխավոր նախագծի մշակում:

2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Ազգային և տեղական մակարդակի փաստաթղթերի (տարաբնակեցման և տարածքային կազմակերպման, քաղաքաշինական մանրամասն գոտևորման) հաջորդական մշակման միջոցով տարածական արդյունավետ պլանավորում:

<u>1.5. «Քաղաքաշինության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Տարածքի հատակագծման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագծերի ներկայացում Վարչապետի աշխատակազմ</u>

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման անրաժեշտությունը բխում է «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1 հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի, ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 650-Լ որոշման N 1 հավելվածի 361.3 կետի դրույթներից և Ազգային ժողովի 2021թ. օգոստոսի 26-ի N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի 2.7-րդ՝ «Քաղաքաշինություն» բաժնի 2-րդ պարբերության 1-ին կետից:

Միջոցառման նպատակն է՝ «Քաղաքաշինության մասին» օրենքում «տարածքի հատակագծման նախագիծ» հասկացության և մանրամասն հատակագծման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգի սահմանումը:

1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

«Քաղաքաշինության մասին» օրենքում «տարածքի հատակագծման նախագիծ» հասկացության սահմանված չէ: Քաղաքաշինական ծրագրային (տարածական պլանավորման) փաստաթղթերի հիերարխիկ կառուցվածքում գլխավոր հատակագծից միանգամից անցում է կատարվում կառուցապատման նախագծին, ինչի արդյունքում հնարավոր է, որ իրար հետ սերտ կապված տարածքներում միմյանց փոխկապակցված միջավայր չձևավորվի:

Բացի այդ, ներկայումս քաղաքաշինական նախագծման հիերարխիական կառուցվածքում գլխավոր հատակագծին հաջորդում է գոտևորման նախագիծն, այնուհետև՝ կառուցապատման նախագիծը: Գոտևորման նախագիծը սահմանում է գլխավոր հատակագծում ամրագրված գործառնական գոտիների նկատմամբ կիրառվող կարգավորիչները՝ թույլատրելի հողօգտագործումներին ներկայացվող հիմնական պահանջները ու կառուցապատման ծավալատարածական կարգավորիչները: Կառուցապատման նախագծի ընդգրկման շրջանակներն առավել սահմանափակ են, ուստի միմյանց հարող, սակայն առանձին կառուցապատման նախագծերով իրականացված թաղամասերը կարող են քաղաքաշինական միասնական, գործառնական և հատակագծային կապերով միմյանց փոխկապակցված միջավայր չձևավորել:

1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

«Քաղաքաշինության մասին» օրենքի 14.3 և 17-րդ հոդվածներում լրացում կատարելու միջոցով սահմանել «տարածքի հատակագծման նախագիծ» հասկացությունը:

Նախկինում կիրառվող մանրամասն հատակագծման նախագծերի կիրառման փորձի վերականգնումը հնարավորություն կտա որպես գոտևորման և կառուցապատման նախագծերի միջև միջանկյալ փուլ դիտարկել վերոնշյալ նախագիծը, որում միասնական լուծումներ կտրվեն 1.1 կետում լուսաբանված խնդիրներին:

2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Սահմանված կարգով հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի բացակայության դեպքում կառուցապատման նպատակներով հողամասերի և (կամ) ճարտարապետահատակագծային առաջադրանքների տրամադրման նոր վերջնաժամկետի սահմանում:

Հաջորդող կառուցապատման նախագծերը՝ անկախ ընդգրկման սահմանից ու հաջորդականությունից, ի վերջո կկազմեն մեկ միասնական քաղաքաշինական միջավայրի փոխկապակցված բաղադրիչներ:

1.6. «ՀՀ վարչատարածքային միավորների կամ դրանց խմբերի համար լանդշաֆտային, առողջարանային, ռեկրեացիոն համակարգի տարածքային գլխավոր նախագծի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը» հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի և նախագծի առաջադրանքի մշակում

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1 հոդվածի 3-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերից, ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի «ՀՀ քաղաքաշինության բնագավառի ռազմավարական ծրագիրը և ծրագրի իրագործումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 531-Լ, որոշման N 2 հավելվածի 1-ին նպատակի 9.3.2.1 կետի դրույթներից և Ազգային ժողովի 2021թ. օգոստոսի 26-ի N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի 2.7-րդ՝ «Քաղաքաշինություն» բաժնի 2-րդ պարբերության 1-ին կետից:

Հաշվի առնելով Հայաստանում զբոսաշրջության բաղադրիչի կարևորությունը երկրի տնտեսական զարգացման գործում, սույն միջոցառման նպատակն է մշակել երկրի ողջ տարածքն ընդգրկող քաղաքաշինական, ճարտարապետաշինարարական, ինժեներական և տրանսպորտային ենթակառուցվածքների, պատմամշակութային ժառանգության, բնապահպանական խնդիրները ներառող վարչատարածքային միավորների կամ դրանց խմբերի համար լանդշաֆտային, առողջարանային, ռեկրեացիոն համակարգի տարածքային գլխավոր նախագծի ռազմավարական միասնական փաստաթուղթ, որը առավել արդյունավետ ու լիարժեք կերպով կկանոնակարգի և կհամակարգի տարածական պլանավորման շրջանակներում ոլորտին առնչվող փոխհամաձայնեցված և ընդունված որոշումները, իրականացված ծրագրերն ու նախագծերը:

1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Հաշվի առնելով, որ արդի պայմաններում վարչատարածքային միավորների կամ դրանց խմբերի համար լանդշաֆտային, առողջարանային, ռեկրեացիոն համակարգի քաղաքականությունը ձևավորվում և իրականացվում է անկանոն և հիմնականում փոքր ու միջին տնտեսվարողների ինքնակազմակերպման պայմաններում՝ արդի տեղեկատվական և տեխնոլոգիական գործիքակազմի կամայական կիրառմամբ, իսկ զբոսաշրջության ոլորտի թիրախային կանոնակարգումն ենթադրում է հասարակության գործունեության և պետական աջակցության համատեղ աշխատանք, ինչպես նաև զբոսաշրջության գործունեության սուբյեկտների (պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններ, մասնավոր հատված, հասարակություն, մասնագիտական շրջանակներ, սպասարկում իրականացնող կազմակերպություններ) միջև սերտ համագործակցություն:

1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Վարչատարածքային միավորների կամ դրանց խմբերի համար լանդշաֆտային, առողջարանային, ռեկրեացիոն համակարգը՝ որպես երկրի առավել կայուն զարգացող տնտեսական բաղադրիչ, գործառնելու նպատակով առաջնահերթության կարգով անհրաժեշտ է իրականացնել հանրապետության զբոսաշրջային ռեսուրսների և ներուժի հնարավորինս սպառիչ գույքագրում, գնահատում և օգտագործման ուղղությունների նախանշում՝ հիմնվելով խնայողական օգտագործմանը միտված միասնական փոխկապակցված զբոսաշրջային գոտիների տեղաբաշխման, զբոսաշրջային համակարգի կազմակերպման ուրվագծերի մշակմանը:

Տարածական պլանավորման փաստաթղթերում վարչատարածքային միավորների կամ դրանց խմբերի համար լանդշաֆտային, առողջարանային, ռեկրեացիոն համակարգի ենթակառուցվածքի կազմակեպմանն ու զարգացմանը միտված հայեցակարգային դրույթների ամրագրում, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում, տարածական կազմակերպման առաջադրում:

Բնության հատուկ պահպանվող տարածքներում խնայողական զբոսաշրջության հարաչափերի առաջադրում:

2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Առկա և բարելավվող ռեսուրսային պոտենցիալի համալիր գնահատում, դրանց հիման վրա վարչատարածքային միավորների կամ դրանց խմբերի համար լանդշաֆտային, առողջարանային, ռեկրեացիոն համակարգի կայուն համակարգի փոխկապակցված ցանցի ձևավորում՝ ապահովելով ռեսուրսների խնայողական օգտագործումը, տարածքների ռեկրեացիոն տարողունակության գնահատումը, բնական էկոհամակարգերի գերբեռնման կանխումը,

առկա ենթակառուցվածքի գնահատումը, բարեփոխման հատակագծային կազմակերպման միասնական ուրվագծի առաջադրումը:

ՀՀ վարչատարածքային միավորների կամ դրանց խմբերի համար լանդշաֆտային, առողջարանային, ռեկրեացիոն համակարգի տարածքային կազմակերպման գլխավոր նախագծի առաջադրանքի մշակում:

ՀՀ վարչատարածքային միավորների կամ դրանց խմբերի համար լանդշաֆտային, առողջարանային, ռեկրեացիոն համակարգի ձևավորման շրջանակում մշակել պատմաճարտարապետական ժառանգության պահպանման և խնայողական օգտագործման հարաչափեր:

1.7. «Հայաստանի բնակավայրերի պատմական կառուցապատման, ճարտարապետական և բնական ժառանգության վերականգնման, վերակառուցման և վերաօգտագործման քաղաքաշինական կանոնակարգերի մեթոդաբանությունը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագծի մշակում

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1 հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետից, ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի «ՀՀ քաղաքաշինության բնագավառի ռազմավարական ծրագիրը և ծրագրի իրագործումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 531-Լ որոշման N 2 հավելվածի 3-րդ նպատակի 8.3.1 կետի դրույթներից և Ազգային ժողովի 2021թ. օգոստոսի 26-ի N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի 2.7-րդ՝ «Քաղաքաշինություն» բաժնի 2-րդ պարբերության 1-ին կետից:

Որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ ներկայումս բնակավայրերի կամ դրանց առանձին հատվածների պատմամշակութային հիմնավորման նախագծերի մշակման փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը բացակայում է:

1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Կարգավորվում և հստակեցվում են հուշարձանների պահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր և պետական կառավարման տարածքային մարմինների, Վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի գործառույթները, նախագծի պատվիրատուի և նախագծի մշակողի (կատարողի) պարտականությունները և իրավասությունները:

Կարգավորում է պատմամշակութային հիմնավորման նախագծի առաջադրանքի, նախագծի մշակման կազմակերպման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման գործընթացը:

Հստակեցնում է պատմամշակութային հիմնավորման նախագծի կազմին, ձևաչափին և բովանդակությանը ներկայացվող պահանջները:

1.2..Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

«Քաղաքաշինության մասին» օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի «ե» պարբերության համաձայն բնակավայրերի կամ դրա առանձին հատվածների պատմամշակութային հիմնավորման նախագիծը քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ է, որը ելակետային նյութ է հանդիսանում տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման համար: Վերջիններս փաթեթում ներառվում են որպես առանձին հավելված, իսկ դրույթները հաշվի են առնվում տարածական պլանավորման փաստաթղթերում:

2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Բնակավայրերի ձևավորված քաղաքաշինական միջավայրերի ճարտարապետական և բնական ժառանգության օբյեկտների նկատմամբ միջամտությունների չափորոշիչների և կարգավորիչների մշակված համակարգ, պահպանված քաղաքաշինական ժառանգություն:

Որոշման ընդունման արդյունքում կկանոնակարգվի բնակավայրերի կամ դրա առանձին հատվածների պատմամշակութային հիմնավորման նախագծերի համաձայնեցման ու հաստատման գործընթացը, նախագծերը և առաջադրանքները կմշակվեն որոշակի միասնական սկզբունքներով և տեսքով:

1.8. ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի Շուռնուխ բնակավայրում նոր բնակելի թաղամասի հիմնում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անրաժեշտությունը բխում է ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 3-րդ կետից, «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետից և Ազգային ժողովի 2021թ. օգոստոսի 26-ի N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի 2.7-րդ՝ «Քաղաքաշինություն» բաժնի 2-րդ պարբերության 1-ին կետից:

Միջոցառման նպատակն է ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի Շուռնուխ բնակավայրում սահմանազատման հետևանքով իրենց բնակելի նշանակության գույքերի (այդ թվում՝ հողամասերի և օժանդակ շինությունների) տնօրինման հնարավորությունից զրկված ընտանիքների բնակարանային պայմանների ապահովումը և նշված բնակավայրում քաղաքաշինական միջավայրի պահպանման ապահովումն է:

1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Ադրբեջանի Հանրապետության սանձազերծած պատերազմական գործողությունների հետևանքով Սյունիքի մարզում առկա և հնարավոր խնդիրների բացահայտման և օպերատիվ արձագանքման ուղղությամբ տարվող աշխատանքները համակարգելու նպատակով ստեղծվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ, որը 2021 թվականի հունվարի 29-ին Կապանում կայացած խորհրդակցության արդյունքում որոշել է Շուռնուխ և Որոտան գյուղերում անշարժ գույք կորցրած բնակիչներին ցուցաբերել աջակցություն: Մասնավորապես, նախատեսվել է այդ բնակիչներին ցուցաբերել ֆինանսական աջակցություն, որի միջոցառումն արդեն իսկ հաստատվել է Կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի նիստում (յուրաքաքանչյուր բնակչի միանվագ 300 հազար դրամ, և 6 ամիս՝ 68 հազարական դրամ), իսկ Շուռնուխ բնակավայրում կառուցել բնակելի նոր թաղամաս՝ Շուռնուխ բնակավայրում սահմանազատման հետևանքով իրենց բնակելի նշանակության գույքերի (այդ թվում՝ հողամասերի և օժանդակ շինությունների) տնօրինման հնարավորությունից զրկված ընտանիքների համար:

Ծրագրի իրականացման համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրով Քաղաքաշինության կոմիտեի պատվիրատվությամբ 2021 թվականի ապրիլի 26-ին արդեն իսկ տրվել է շինարարական աշխատանքների կատարման մեկնարկը:

1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Ծրագրի իրագործման համար նախատեսվում է Շուռնուխ բնակավայրում կառուցել բնակելի նկուղով մեկ հարկանի թվով 13 առանձնատուն, որոնցից յուրաքանչյուրի ցանկապատով սահմանազատված տնամերձ հողամասում տեղակայված կլինեն անասնագոմ և օժանդակ շինություններ:

2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է լուծել ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի Շուռնուխ բնակավայրում սահմանազատման հետևանքով իրենց բնակելի նշանակության գույքերի (այդ թվում՝ հողամասերի և օժանդակ շինությունների) տնօրինման հնարավորությունից զրկված ընտանիքների բնակարանային խնդիրը՝ Շուռնուխ բնակավայրում թվով 13 առանձնատնով նոր բնակելի թաղամասի կառուցմամբ:

1.**9.** **<u>«Երևանի փոքր կենտրոնի կառուցապատման մասին» օրենքի և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի N 728-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերի ընդունում</u>**

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է է «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1 հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետից և Ազգային ժողովի 2021թ. օգոստոսի 26-ի N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի 2.7-րդ՝ «Քաղաքաշինություն» բաժնի 2-րդ պարբերության 1-ին կետից:

«Երևանի փոքր կենտրոնի կառուցապատման մասին» օրենքի նախագծին նախորդել է «Փոքր կենտրոնի» կառուցապատման խնդիրները կանոնակարգող օրենքի հայեցակարգի մշակումը, որին հավանություն է տրվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի մարտի 7-ի N 9 արձանագրային որոշմամբ:

Միջոցառման նպատակն է իրավական հենքի ստեղծման միջոցով նախանշել մայրաքաղաքի զարգացման ընթացքում Երևանի փոքր կենտրոնի բարձրարժեք ճարտարապետական կերպարի միասնականության, կառուցապատման գեղագիտական միջավայրի կատարելագործման, առողջ և գրավիչ կենսամիջավայրի ձևավորման ապահովումը՝ խնդրո առարկա տարածական գոտու առանձնահատկություններից բխող հատուկ և լրացուցիչ պայմանների ու սահմանափակումների ամրագրման միջոցով:

1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինության բնագավառի օրենսդրությունը կարգավորում է օրենքով եւ մի քանի տասնյակ օրենսդրական ակտերով, որոնցով սահմանված են կառուցապատման համար հիմք հանդիսացող պարտադիր նորմեր: Ընթացիկ իրավիճակի եւ գործող իրավական դաշտի վերլուծությունը վկայում են, որ առկա են, մասնավորապես, հետեւյալ խնդիրները՝

- Երեւանի փոքր կենտրոնի՝ օրենքով ամրագրված հատուկ կարգավիճակի բացակայությունը, ինչն անհնարին է դարձնում նշված տարածական գոտուն բնորոշ առանձնահատուկ եւ/կամ լրացուցիչ պայմանների սահմանումը.

- կառուցապատման ընթացքում պետական, հանրային և մասնավոր շահերի անբավարար հավասարակշռվածությունը, ինչպես նաեւ քաղաքաշինական գործունեության սուբյեկտների (պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններ, մասնավոր հատված, հասարակություն, մասնագիտական շրջանակներ) միջեւ համագործակցության մեխանիզմների անկատարությունը,
- տարածական, տնտեսական եւ զարգացման այլ ծրագրերի (այդ թվում՝ ինժեներտրանսպորտային ենթակառուցվածքներ, բնապահպանական, էներգախնայողության եւ այլն) միջեւ ոչ լիարժեք փոխկապակցվածությունը,
- ճարտարապետական համալիրների եւ առանձին կառույցների նախագծերի մշակման իրավունքի ձեռքբերման մրցակցության գաղափարախոսության չկանոնակարգված լինելը,
- կառուցապատման կանոնակարգման արդյունավետության ապահովման համար անհրաժեշտ ֆինանսական և տնտեսական գործիքների անկատարությունը եւ այլն:

Օրենքի նախագծով հնարավորինս ներառվել են վերը նշված խնդիրների բովանդակային շեշտադրումներն ու մտահոգությունները, փորձ է կատարվել օրենսդրական կարգավորման առաջարկներ ամրագրել վերջիններիս լուծման ուղղությամբ:

1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Օրենքների նախագծերի հիմնական նպատակն է՝ իրավական հենքի ստեղծման միջոցով նախանշել մայրաքաղաքի զարգացման ընթացքում Երեւանի փոքր կենտրոնի բարձրարժեք ճարտարապետական կերպարի միասնականության, կառուցապատման գեղագիտական միջավայրի կատարելագործման, առողջ եւ գրավիչ կենսամիջավայրի ձեւավորման ապահովումը՝ տվյալ տարածական գոտու առանձնահատկություններից բխող հատուկ եւ լրացուցիչ պայմանների ամրագրման միջոցով:

«Փոքր կետրոնի» և դրա անմիջական ազդեցության (բուֆերային) գոտու սահմաններում ընդրկված տարածքն առանձնացնել որպես ազգային կարեւորություն ունեցող հատուկ եւ լրացուցիչ պայմաններով կառուցապատվող տարածք, որի սահմանագծերը նախատեսվում է հաստատել Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ: Քաղաքաշինական գործունեությունն իրականացվելու է կառուցապատման կանոնակարգման առկա հիմնախնդիրներից բխող իրատեսական համալիր միջոցառումների կիրառման, այդ թվում՝ քաղաքաշինական փաստաթղթերի մշակման, համաձայնեցման եւ հաստատման, քաղաքաշինական գործունեության ու կառավարման գործառույթների, հասարակության մասնակցության եւ այլ գործընթացների վերաբերյալ լրացուցիչ եւ հատուկ պայմանների ու նորմերի սահմանման միջոցով:

2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Օրենքների նախագծերի ընդունման շնորհիվ ակնկալվում է մայրաքաղաքի քաղաքաշինական դիմագծի ձեւավորման վրա գերիշխող ազդեցություն ունեցող տարածական գոտու պահպանման ու ներդաշնակ զարգացման իրական բարելավումը, հարմարավետ եւ բարձրարժեք գեղագիտական հատկանիշներով օժտված կենսամիջավարի ձեւավորումը:

2. **ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ ԱՌՑԱՆՑ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ**

<u>2.1. Պետական քաղաքաշինական տեղեկատվական համակարգի (քաղաքաշինական կադաստրի) ներդրման ծրագրի իրագործում</u>

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետից, 20-րդ հոդվածից, ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի «ՀՀ քաղաքաշինության բնագավառի ռազմավարական ծրագիրը և ծրագրի իրագործումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 531-Լ որոշման N 2 հավելվածի 4-րդ նպատակի 11.4.1 կետից և Ազգային ժողովի 2021թ. օգոստոսի 26-ի N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի 2.7-րդ՝ «Քաղաքաշինություն» բաժնի 2-րդ պարբերության 2-րդ կետից:

Միջոցառման նպատակն է ստեղծել տեխնիկական և ծրագրային ապահովմամբ հանրապետության ողջ տարածքում պետական քաղաքաշինական տեղեկատվական համակարգ՝ քաղաքաշինական գործունեության օբյեկտների, տարածական պլանավորման, քաղաքաշինական նորմերի, սահմանափակումների, ինչպես նաև ինժեներաերկրաբանական, սեյսմիկ իրադրության, քաղաքաշինական գործունեության վրա ազդող այլ գործոնների վերաբերյալ համալիր և ստույգ տեղեկությունների ներառմամբ:

Համակարգի ներդրումը նպատակաուղղված է իրավական, նորմատիվատեխնիկական, ծրագրատեխնոլոգիական և մեթոդական միասնական հիմքի ապահովմանը, ինչպես նաև բազային և քաղաքաշինական երկրատեղեկատվական համակարգերի միասնականության և տվյալների փոխանակման համակարգի ստեղծմանը, կառուցապատման ընթացակարգերի կանոնակարգմանն ուղղված ամբողջ գործընթացի,

	իրավասու մարմինների վարչարարության, թույլտվությունների, եզրակացությունների տրամադրման կարգերի պարզեցմանը, հայեցողական լիազորությունների հստակեցմանը: **1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Կառուցապատման ընթացքում քաղաքաշինական գործունեության սուբյեկտների (պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններ, մասնավոր հատված, հասարակություն, մասնագիտական շրջանակներ) միջև համագործակցությունը գտնվում է անկատար վիճակում և արդի պայմաններում քաղաքաշինության քաղաքականությունը ձևավորվում և իրականացվում է համաշխարհային տնտեսության գլոբալիզացման պայմաններում և տեխնոլոգիական գործընթացները ենթադրում են հասարակության գործունեության և մարդկանց կյանքի կազմակերպման նոր մատեցումներ: **1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Նախատեսվում է գործառույթների զգալի մասն իրականացնել միասնական համակարգի միջոցով էլեկտրոնային եղանակով՝ Օրենսդրական կարգավորման առաջարկների նախանշմամբ և վերջիններիս լուծման ուղղությունների ամրագրմամբ: **2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Համակարգը թույլ կտա իրականացնել գործընթացների մոնիթորինգ և կկազմվի ճարտարապետաշինարարության բնագավառի միասնական տեղեկատվական շտեմարան, որը կնպաստի կառուցապատման թույլտվությունների համակարգերի կանոնակարգմանը և պարզեցմանը**:**
3.	**ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՓՈՒԼԵՐԻ ԶԳԱԼԻ ԿՐՃԱՏՈՒՄ ԵՎ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՀԱՆՋՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԻՄԱՍՏՈՎ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ**
	<u>3.1. «ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ</u> **1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է է «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1 հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետից և Ազգային ժողովի 2021թ. օգոստոսի 26-ի N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի 2.7-րդ՝ «Քաղաքաշինություն» բաժնի 2-րդ պարբերության 3-րդ կետից: Միջոցառման նպատակն է կառուցապատման ընթացակարգերի կանոնակարգմանն ուղղված ամբողջ գործընթացի հստակեցումը, իրավասու մարմինների վարչարարության, թույլտվությունների, եզրակացությունների տրամադրման կարգերի պարզեցումը, ինչպես նաև հայեցողական լիզորությունների հստակեցումը: **1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս գործող ընթացակարգի համաձայն ճարտարապետահատակագծային առաջադրանքի (այսուհետ ՃՀԱ) հետ միասին իրավասու մարմինը (համայնքի ղեկավարը) կառուցապատողին պետք է տրամադրի նաև մատակարար կազմակերպություններից ստացված ինժեներական ենթակառուցվածքներին միանալու տեխնիկական պայմանները: Գործնականում նշվածը մեկ քայլով չի իրականացվում և ՃՀԱ ստանալուց հետո կառուցապատողները ստիպված են լինում ինքնուրույն դիմել մատակարար կազմակերպություններ՝ տեխնիկական պայմանները հստակեցնելու, ինժեներական ենթակառուցվածքների արտաքին գծերի ուղեգծերը համաձայնեցնելու համար, ինչպես նաև յուրաքանչյուր ուղեգիծը նաև այլ կազմակերպությունների և իրավասու մարմնի հետ: Դրա հետ մեկտեղ 2016-2017 թվականներին գործարկվել է կառուցապատման թույլտվությունների տրամադրման էլեկտրոնային «e-permits» համակարգը, որի ռացիոնալ, արագ և թափանցիկ գործելու միաժամանակյա համաձայնեցումներ ստանալու և թվային միջավայրում բացվող բազմաթիվ այլ հնարավորությունները պրակտիկորեն չեն օգտագործվում, քանի որ առցանց գործելու ընտրությունը թողնված է կառուցապատողի հայեցողությանը: Հաջորդ խնդիրը, որ բացահայտվել է բազմաթիվ քննարկումների և փաստացի իրավիճակի ուսումնասիրության արդյունքում հետևյալն է. հաճախ շինարարության թույլտվություններ են տրամադրվում ոչ լրիվ կազմով ներկայացվող նախագծերի հիման վրա, մասնավորապես՝ նածագծային փաստաթղթերը մշակվում են առանց ինժեներական ենթակառուցվածքներին միանալու արտաքին գծերի նախագծային բաժինների, թողնելով նշվածը հետագայի համար, որպես առանձին գործընթաց յուրաքանչյուր մատակարար կազմակերպության կողմից իրականացնելու պայմանով: Վերջինս, բացի այն, որ խախտում է գործող օրենսդրության պահանջները, առաջացնում է բազմաթիվ այլ խնդիրներ՝ կառուցված շենքի պահանջներին համապատասխան հզորություններ

	ապահովելու տեսանկյունից, ինչպես նաև մեկ կառույցի համար տրամադրվող շինարարության թույլտվությունները մեկի փոխարեն դառնում են մի քանիսը (մեկը՝ շենքի կառուցման համար, մյուսը՝ արտաքին էլեկտրամատակարարման գծի անցկացման, մյուսը՝ ջրամատակարարման և ջրահեռացման արտաքին գծերի կառուցման համար և այլն): **1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու միջոցով սահմանել նոր ընթացակարգ, որը կնախատեսի գործառույթների զգալի մասն իրականացնել էլեկտրոնային եղանակով՝ «e-permits» միասնական համակարգի միջոցով, դիտարկելով այն որպես էլեկտրոնային Մեկ պատուհան, որում կգործեն ընթացակարգին մասնակից բոլոր մարմինները և կազմակերպությունները: **2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Որոշման ընդունման արդյունքում կկանոնակարգվեն կառուցապատման հիմնական փուլերի (ՃՀԱ-ի տրամադրում, նախագծի համաձայնեցում և շինարարության թույլտվության տրամադրում) հետ կապված խնդիրները, կստեղծվի հարմար, թափանցիկ գործելու միջավայր (էլեկտրոնային Մեկ պատուհան), որը հնարավորություն կտա մի կողմից ապահովել բոլոր մարմինների և կազմակերպությունների պահանջները, մյուս կողմից առցանց և միաժամանակյա գործելու շնորհիվ կկրճատվի կառուցապատողների շփումները վերջիններիս հետ, կխնայի ժամանակը: Համակարգը թույլ կտա նաև իրականացնել գործընթացների մոնիտորինգը և այն կծառայի որպես շինարարության բնագավառի միասն շտեմարան:
	<u>3.2. Քաղաքաշինական գործունեության գործընթացների բարելավում</u> **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է պետական քաղաքաշինության ոլորտում գործընթացների պարզեցմամբ: քաղաքաշինական գործընթացների անվտանգ իրականացմամբ, պետական և մասնավոր շինարարության իրականացման համակարգային կանոնակարգմամբ և բարելավմամբ, կառուցապատման թույլտվությունների համակարգերի կանոնակարգմամբ և պարզեցմամբ, քաղաքաշինության բնագավառը որպես տնտեսության առանձին ուղղություն զարգացնելուն: Միջոցառման իրականացումը բխում է նաև ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026 թ.թ. ծրագրից՝ «2. Տնտեսություն» բաժնի «Գործարար և ներդրումային միջավայրի բարելավում» հատվածի և 2.7-րդ՝ «Քաղաքաշինություն» բաժնի 2-րդ պարբերության 3-րդ կետից: Նախատեսվող փաստաթղթերի մշակման օրենսդրական հիմք՝ ՀՀ վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-L որոշմամբ հաստատված ՀՀ էկոնոմիկայի նախարարության կանոնադրության 10-րդ կետի 1-ին ենթակետ և 11-րդ կետի 3-րդ, 15-րդ ենթակետեր: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Քաղաքաշինությունը հանդես է գալիս որպես ճարտարապետության և շինարարության ոլորտ, որը տարածական տարբեր մակարդակներում բազմակողմանիորեն և համալիր ձևով ընդգրկում ու լուծում է տալիս գործառնական (տնտեսական, ժողովրդագրական, շինարարական, սանիտարահիգիենիկ, բնապահպանական, գեղագիտական) և գեղագիտական (ճարտարապետական, գեղարվեստական) խնդիրներին: Ոլորտում առկա են տնտեսական միջավայրի բարելավման տեսանկյունից հրատապ լուծում պահանջող խնդիրներ, այդ թվում՝ քաղաքաշինական թույլտվությունների տրամադրման, նոր տեխնոլոգիաների ներդրման և տեղական հումքի նպատակային կիրառության հետ կապված: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Նշված խնդիրների արդյունավետ լուծման նպատակով նախատեսվում է խնդիրները լուծել այդ ուղղությամբ նախաձեռնություններին և համապատասխան նորմատիվ փաստաթղթերի մշակման ու գործարկման գործընթացներին համակողմանի աջակցության, ընթացակարգերի պարզեցման միջոցով: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Քաղաքաշինական գործընթացների առավել արդյունավետ մեխանիզմի վերհանում և մշակում:
4.	**ԽՈՇՈՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՌՑԱՆՑ ՀԱՍԱՆԵԼԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՍԱՀՄԱՆՈՂ ԳՈՏԻՆԵՐԻ ՔԱՐՏԵԶՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ**
	<u>4.1.Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքների մուտքերին հարող միջպետական և հանրապետական նշանակության պետական ավտոմոբիլային ճանապարհներին կից հատուկ կարգավորման գոտիների տարածքների կառուցապատման միասնական սխեմաների մշակում</u>

	1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման իրականացման անրաժեշտությունը բխում է է «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1 հոդվածի 3-րդ մասի 9-րդ և 13-րդ կետերից, ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի «ՀՀ քաղաքաշինության բնագավառի ռազմավարական ծրագիրը և ծրագրի իրագործումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 531-Լ որոշման N 2 հավելվածի 2-րդ նպատակի 5.2.4 կետից և Ազգային ժողովի 2021թ. օգոստոսի 26-ի N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի դրույթներից, որի 2.7-րդ՝ «Քաղաքաշինություն» ենթաբաժնի 2-րդ պարբերության 4-րդ կետից, որով նախատեսվում է յուրաքանչյուր խոշոր համայնքի համար առցանց հասանելի քաղաքաշինական պահանջներ սահմանող գոտիների քարտեզների հաստատումը: Միջոցառման նպատակն է՝ Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքների մուտքերին հարող միջպետական և հանրապետական նշանակության պետական ավտոմոբիլային ճանապարհներին կից հատուկ կարգավորման գոտիների տարածքների կառուցապատման առկա հիմնախնդիրներից բխող կառուցապատման կանոնակարգման լրացուցիչ և հատուկ պայմանների սահմանումը: **1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Հաշվի առնելով Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքների մուտքերին հարող միջպետական և հանրապետական նշանակության պետական ավտոմոբիլային ճանապարհներին կից հասարակական և քաղաքաշինական դերն ու նշանակությունն, ինչպես նաև վերլուծելով դրանից բխող կառուցապատման առանձնահատկությունները, հարկ է արձանագրել, որ ներկայումս գործող օրենսդրական գործիքակազմը բավարար չէ դրանց կառուցապատումը լիարժեք կանոնակարգելու համար: Առկա խնդիրները կառուցապատման ընթացքում պետական, հանրային ու մասնավոր շահերի անբավարար հավասարակշռությունը, ինչպես նաև քաղաքաշինական գործունեության սուբյեկտների (պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններ, մասնավոր հատված, հասարակություն, մասնագիտական շրջանակներ) միջև համագործակցության անկատարությունն է: **1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Օրենսդրական կարգավորման առաջարկների նախանշում և վերջիններիս լուծման ուղղությունների ամրագրում, սխեմաների և գոտևորման նախագծերի մշակում: **2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքների մուտքերին հարող միջպետական և հանրապետական նշանակության պետական ավտոմոբիլային ճանապարհներին կից հատուկ կարգավորման գոտիների տարածքների քաղաքաշինական դիմագծի ձևավորման հարմարավետ և բարձրաժեք գեղագիտական հատկանիշներով օժտված միջավայրի ձևավորումը:
5.	**ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՆՈՐՄԱՏԻՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ, ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆՈՐՄԵՐԻՆ ՆԵՐԴԱՇՆԱԿԵՑՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ՝ ԸՍՏ ՁԵՎԱՎՈՐՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**
	<u>5.1.Քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի (տեխնիկական կանոնակարգեր, շինարարական նորմեր, շինարարական նորմերի ու կանոնների հավաքածուներ, կարգեր) մշակման, տեղայնացման, արդիականացման աշխատանքների պատվիրակում Կապալառու կազմակերպություններին</u> **1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է «Քաղաքաշինության մասին» օրենքի 10-րդ, 10.1 հոդվածի է 3-րդ մասի 5-րդ և 19-րդ կետերից, ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի «ՀՀ քաղաքաշինության բնագավառի ռազմավարական ծրագիրը և ծրագրի իրագործումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 531-Լ որոշման N 1 հավելվածի 5-րդ գլխից, N 2 հավելվածի 12-րդ նպատակից, «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի, ԱՊՀ շրջանակներում կնքված Միջկառավարական համաձայնագրերի, ԵՄ-Հայաստան համապարփակ և ընդլայնված գործընկերության և համագործակցության համաձայնագրի, Առևտրի Համաշխարհային Կազմակերպության «Առևտրում տեխնիկական խոչընդոտների մասին» համաձայնագրի դրույթներից, Եվրասիական տնտեսական միությանն (ԵԱՏՄ) անդամակցելու հետ կապված մարտահրավերներից, ինչպես նաև Ազգային ժողովի 2021թ. օգոստոսի 26-ի N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի 2.7-րդ՝ «Քաղաքաշինություն» բաժնի 2-րդ պարբերության 5-րդ և 2.8-րդ՝ «Բնական ռեսուրսների կայուն կառավարում» բաժնի 1-ին պարբերության 14-րդ կետերից: Միջոցառման նպատակն է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակումը, արդիականացումը, տեղայնացումը, ԽՍՀՄ ժամանակներից գործողության մեջ գտնվող նորմատիվատեխնիկական

	փաստաթղթերի համապատասխանեցումը և ներդաշնակեցումը միջազգային և եվրոպական ստանդարտներին այն հաշվառմամբ, որ այն խթանի տեղական արտադրությունն ու նորարարական տեխնոլոգիաների զարգացումը, գործարար միջավայրի բարելավումը, արտահանման և ներդրումային ծավալների աճը, ինչպես նաև ապահովի շենքերի ու շինությունների անվտանգ և հուսալի շահագործումը: **1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Քաղաքաշինության բնագավառի նորմատիվ փաստաթղթերի համակարգի արդիականացման, միջպետական (տարածաշրջանային), միջազգային և եվրոպական նորմերին ու ստանդարտներին համապատասխանեցման ու ներդաշնակեցման ուղղությամբ աշխատանքներն իրականացվում են 1993 թվականից և կրում են շարունակական բնույթ: Անցած տարիների ընթացքում, ըստ ամփոփ տվյալների, Հայաստանի Հանրապետությունում գործող ավելի քան 1000 նորմատիվ փաստաթղթերից վերանայվել, մշակվել (տեղայնացվել) և գործողության մեջ են դրվել շուրջ 450-ը: ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի շրջանակներում նախատեսվել են 98.5 մլն. դրամ արժեքով թվով 20 նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակման, արդիականացման և տեղայնացման աշխատանքներ: 2020-2021թթ ընթացքում մշակվել և ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրամաններով հաստատվել են թվով 6 շինարարական նորմեր և 2 մեթոդական ուղեցույց: Բացի այդ, Քաղաքաշինության կոմիտեի նախաձեռնությամբ պատվիրվել են թվով 17 նորմատիվատեխնիկական փաստաթղթեր՝ - «Կոյուղի. Արտաքին ցանցեր և կառուցվածքներ», - «Շինարարական բետոնե և գեոտեխնիկական կոնստրուկցիաներում ոչ մետաղական կոմպոզիտ ամրանների կիրառման կանոնների հավաքածու» , - «Ավտոմոբիլային ճանապարհներ», - «Կրող և պատող կոնստրուկցիաներ», - «Բնակելի շենքեր.Մաս II.Անհատական բնակելի տներ», - «Շենքերի էներգաարդյունավետության ապահովում. Էներգաարդյունավետության գնահատման ցուցանիշներ», - «Տանիքներ և տանիքածածկեր», - «Շինարարական կոնստրուկցիաների պաշտպանությունը կոռոզիայից», - «Շինարարությունում գեոդեզիական աշխատանքներ», - «Տարածքի բարեկարգում» , - «Պահեստներ նավթի և նավթամթերքի.Նախագծման նորմեր», - «Նավթի, նավթամթերքի և հեղուկ գազի ստորգետնյա պահեստարաններ», - «Սառնաճկած պողպատե բարակապատ տրամատների կիրառմամբ շենքերի ու շինությունների նախագծման կանոնների հավաքածու», - «Վարչական և կենցաղային շենքեր», - «Անվտանգության տեխնիկան շինարարությունում», - «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցներ», - «Նախագծային աշխատանքների տևողության նորմեր»: **1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Միջպետական (տարածաշրջանային), միջազգային և եվրոպական նորմերին ու ստանդարտներին համահունչ Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինության բնագավառի նորմատիվ փաստաթղթերի հաջորդական արդիականացման աշխատանքների կազմակերպում: Միջոցառման հետ կապված Էկոնոմիկայի նախարարության աջակցությունն ակնկալվում է ստանդարտների հետ կապված հարցերի համաձայնեցման, համատեղ քննարկման, փոխհամապատասխանեցման մասով: **2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Բնակչության առողջության և բարեկեցության բարելավման, շրջակա միջավայրի պաշտպանության, կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության, շենքերի ու շինությունների սեյսմակայունության, հուսալիության, էներգաարդյունավետության, ջրային միջավայրի ազդեցության՝ հիդրոտեխնիկական կառուցվածքների նախագծման (այդ թվում՝ պոչամբարների տեխնիկական անվտանգության ապահովման համար դրանց կառուցման արդի, գիտահենք և լավագույն փորձին համահունչ չափանիշների ու պահանջների մշակում), հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության, կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության, ինչպես նաև քաղաքացիական պաշտպանության մասով բնութագրերի արդիականացման ուղղությամբ միջպետական (տարածաշրջանային), միջազգային և եվրոպական նորմերին ու ստանդարտներին համահունչ նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համակարգ:

5.2 Շինարարության գնագոյացման մեթոդաբանության արդիականացմանն ուղղված առաջարկություններ մթեթի մշակում և ներկայացում Վարչապետի աշխատակազմ

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի աղաքաշինության մասին» օրենքի 10-րդ, 10.1 հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետից, ՀՀ ռավարության 2021 թվականի ապրիլի 8-ի «ՀՀ քաղաքաշինության բնագավառի ռազմավարական ծրագիրը և ծրագրի ագործումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 531-Լ որոշման N 2 հավելվածի 13-ր ատակի դրույթներից, ինչպես նաև Ազգային ժողովի 2021թ. օգոստոսի 26-ի N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության ժանացած ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի 2.7-րդ՝ «Քաղաքաշինություն» բաժնի 2-րդ պարբերության 5-ր ից:

1.1..Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Շուկայական հարաբերությունների և միջազգային ինտեգրացիոն գործընթացների զարգացման պայմաններու տական ներդրումային ծախսերի արդյունավետ պլանավորման, շինարարության ոլորտի զարգացման և բարենպաստ ոդրումային միջավայրի ստեղծման անհրաժեշտությունը պահանջում է ծախսերի գնահատման համակարգ րեփոխում:

Կառավարության 2011 թվականի հունիսի 23-ի N 879-Ն որոշմամբ հաստատվել է գործող գներով շինարարակա խատանքների արժեքի հաշվարկման կարգը: Կարգը կազմվել է 1994–1995 և 2006 թվականներ թոդաբանությունների հիմքով: Ներկայումս շինարարական աշխատանքների արժեքը հաշվարկվում է՝ հիմք ընդունելո 34 թվականի նորմատիվ բազան, այդ թվում՝ աշխատավարձի և մեքենամեխանիզմների շահագործման արժեք շվարկվում է նախկինում գոյություն ունեցող գներով՝ կիրառելով համապատասխան գործակիցներ, որտեղ հաշվի չե նված նոր տեխնոլոգիաների, տեխնիկական միջոցների և սարքավորումների շահագործման, ինչպես նա աշխատանքների կազմակերպման (այդ թվում շինարարությունում զբաղված վարչական, մասնագիտական նվորական անձնակազմի վարձատրության) ներկայիս պահանջները: Ներկայումս գործող կարգով շինմոնտաժայի խատանքների նախահաշվով նախատեսված ծախսերի և փաստացի ծախսերի միջև առկա ե համապատասխանություններ:

1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Առաջարկվում է քաղաքաշինության ոլորտում, հատկապես պետական և համայնքային բյուջեների հաշվի ականացվող շինարարական աշխատանքների գնագոյացման արդիականացում՝ բազիսաինդեքսայի թոդաբանությունից անցնելով ժամանակակից, Եվրոպական և ԱՊՀ երկրներում կիրառվող ռեսուրսայի թոդաբանությանը՝ պետական ներդրումային ծախսերի պլանավորման պայմաններում առավելությունը տալո շորացված գներով շինարարության արժեքի հաշվարկման կարգին, որն ավելի կհստակեցնի բյուջեների ծախսայի ագրերի պլանավորման և գնման գործընթացի կազմակերպումը:

2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Շինարարության գնագոյացման մեթոդաբանության ոչ արդիական (դեռևս խորհրդային ժամանակաշրջանի) մեթոդների փոխարեն նոր՝ ժամանակակից պահանջներին համապատասխանող մեթոդաբանության ներդրման ճանապարհային քարտեզի մշակում, վերանայման ենթակա օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի շրջանակի սահմանում:

5.3 «Բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի ցանկը և ընդհանուր բնութագրերը հաստատելու մասին» ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրամանի նախագծի մշակում

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1 հոդվածի 3-րդ մասի 26-րդ կետի, ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի «ՀՀ քաղաքաշինության բնագավառի ռազմավարական ծրագիրը և ծրագրի իրագործումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 531-Լ որոշման N 1 հավելվածի դրույթներից, ինչպես նաև Ազգային ժողովի 2021թ. օգոստոսի 26-ի N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի 2.7-րդ՝ «Քաղաքաշինություն» բաժնի 2-րդ պարբերության 5-րդ կետից:

Միջոցառման նպատակն է ՀՀ պետական և համայնքային բյուջեների միջոցների հաշվին իրականացվող մեծ թվով նախադպրոցական և դպրոցական, առողջապահական, գյուղատնտեսական, բնակելի նշանակության

	օբյեկտների նոր մասնաշենքերի կառուցման համար առաջիկա տարիներին ապահովել բազմակի օգտագործման նախագծերով: **1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Առաջիկայում, ՀՀ մարզերում նախատեսվող կրթական, առողջապահական, բնակելի, գյուղատնտեսական նշանակության օբյեկտների նոր մասնաշենքերի և շինությունների հիմնական մասի համար պահանջվում են գրեթե նմանատիպ տեխնիկատնտեսական ցուցանիշներով, հզորություններով, «կարողություններով» և արդի կոնստրուկտիվ լուծումներով համալրված նոր շենքային համալիրներ: Նման պահանջարկն ակնհայտ է ՀՀ մարզերում իրականացվող շինարարական ծրագրերի մասով, որտեղ առկա են մեծ թվով անմխիթար վիճակում գտնվող՝ ֆիզիկապես և բարոյապես մաշվածության բարձր աստիճան ունեցող շենք-շինություններ՝ կրթական, առողջապահական, բնակելի, գյուղատնտեսական և այլ նշանակության օբյեկտներ, որոնց փոխարեն նորերի կառուցման անհրաժեշտությունը և ժամկետների առումով խնդիրների լուծման հրատապությունն օրակարգային է: Մեծաքանակ պահանջարկի պարագայում, մասնակի փոփոխությունների (ոչ կոնստրուկտիվ լուծումների մասով) նախատեսմամբ, բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի կիրառումը համարվում է տնտեսապես շահավետ և նպատակահարմար: Այսինքն, լիազոր մարմնի ղեկավարի հրամանով հաստատված օրինակելի նախագծային փաստաթղթերի հիմնական լրակազմի մասով խնդիրները գրեթե բացակայում են և հետագա գործընթացները դիտարկվում են միայն տեղակապման միջոցառումների շրջանակներում, ինչը գործնականում կնախատեսի ծախսերի և ժամանակի խնայողություն: Քանի որ հաստատված օրինակելի նախագծերում, տեղակապման խնդիրները վերաբերում են հիմնականում կառույցների 0-ական «փուլին»՝ Քաղաքաշինության նախարարի 15.02.2008թ N 19-Ն հրամանով կարգավորվում են նաև վերջիններիս համար անհրաժեշտ նախագծային փոփոխությունների (առանց վերգետնյա հատվածի) ծախսերը՝ ըստ հաստատված (20%) նորմատիվի, որը պետք է կիրառվի նախագծային աշխատանքների ամբողջ արժեքի նկատմամբ: Օրինակ, եթե օրինակելի նախագծի արժեքը կազմել է 10,000.0հազ.դրամ, ապա վերջինիս տեղակապման ծախսերը (յուրաքանչյուր տարածքի համար) կկազմեն 10,000.0x20%= 2000.0հազ.դրամ: Իսկ թվով 6 դպրոցների մասով տեղակապման ծախսերը կկազմեն 6x2000.0հազ.դրամ=12000.0հազ.դրամ: Բազմակի օգտագործման նախագծերի չկիրառման պարագայում՝ կառուցվող 1 կրթական օբյեկտի (կամ մասնաշենքի) համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման արժեքը տատանվում է 5000.0 հազար դրամից մինչև 25000.0 հազար դրամ: Կառուցվող (միջին ծավալի 1500-5000քմ) 1 շինարարական օբյեկտի նախագծման տևողությունը կազմում է մինչև 8-10 ամիս, կամ շուրջ 300-350 օրացուցային օր: Հաստատված օրինակելի Նախագծերի տեղակապման (0-ական նիշ) պարագայում անհրաժեշտ ժամանակահատվածը չի գերազանցի նախագծի մշակման ընդհանուր տևողության 30%-40%-ը: Հարկ է նշել նաև, որ գործում է Կառավարության 2012 թվականի հունիսի 12-ի N814-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի և դրանց կատալոգների ներդրման ու կիրառման կարգը»: **1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Նախագծով նախատեսվում է գերատեսչական ակտով կարգավորել կառուցապատողների կողմից բազմակի օգտագործման օրինակելի Նախագծերի կիրառման հնարավորությունը: Նախագծով նախատեսվում է հաստատել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի պատվիրատվությամբ 2020-2021թթ մշակված մի շարք բազմակի օգտագործման ենթակա օրինակելի Նախագծերի ցանկը և դրանց հիմնական բնութագրերը, որոնք կհամալրվեն հաջորդաբար՝ բյուջետային առաջիկա տարիների ընթացքում մշակվող (մշակման ենթակա) նոր օրինակելի, բազմակի օգտագործման ենթակա նախագծերով: **2. Ակնկալվող արդյունքը** Նախագծի ընդունմամբ ակնկալվում է ՀՀ պետական և համայնքային բյուջեների միջոցների հաշվին իրականացվող շինարարական ծրագրերի կատարումը դարձնել առավել մատչելի՝ կրճատելով նախագծման աշխատանքների ծավալն ու տևողությունը:
6.	**ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆՈՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ, ՏԵՂԱԿԱՆ ՀՈՒՄՔՈՎ ՇԻՆԱՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՀՍԿՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՈՒ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ, ԳԻՏԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ (ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ)**

6.1.Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոնի արդիականացման (առողջացման) ծրագրի մշակում և իրականացում

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացումը նախատեսվել է՝ հիմք ընդունելով «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1 հոդվածի 3-րդ մասի 20-րդ և 25-րդ կետերը, ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի «ՀՀ քաղաքաշինության բնագավառի ռազմավարական ծրագիրը և ծրագրի իրագործումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 531-Լ որոշման N 2 հավելվածի 15-րդ նպատակը , ինչպես նաև Ազգային ժողովի 2021թ. օգոստոսի 26-ի N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի դրույթներից, որի 2.7-րդ՝ «Քաղաքաշինություն» ենթաբաժնի 2-րդ պարբերության 6-րդ քայլով նախատեսված է շինարարությունում նոր տեխնոլոգիաների ներդրման, տեղական հումքով շինանյութերի և շինարարության որակի հսկման մեթոդների մշակման ու իրագործման նպատակով ձևավորել գիտահետազոտական և փորձարարական բազա, պատրաստել (վերապատրաստել) գիտական կադրեր՝ ինչը հնարավորություն կտա ապահովել նորարարական տեխնոլոգիաներին արագ արձագանքման, կիրառության և ներդրման, ըստ անհրաժեշտության համապատասխան նորմատիվ դաշտի ապահովման, նյութատեխնիկական բազայի համալրման, տեղական արտադրողներին աջակցություն ցուցաբերելու և բիզնես կարողությունների զարգացման ուղղությամբ շարունակական ու հետևողական աշխատանքների իրականացումը:

Միջոցառման նպատակն է՝ ստեղծել քաղաքաշինության բնագավառի գիտահետազոտական և փորձարարական կենտրոն՝ «Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) վերակազմակերպման, վերազինման միջոցով՝ առկա տեխնիկական և մասնագիտական ներուժի ներգրավմամբ:

1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Շինարարության ոլորտում կիրառվող շինանյութերի, բնական հումքի, դրանցից կոնստրուկտիվ տարրերի ստացման տեխնոլոգիական առանձնահատկությունների հետազոտությունների արդյունքների հիման վրա Ընկերության գործունեությունը նախատեսվում է ապահովել գիտականորեն հիմնավորված փորձարարական և վերլուծական նյութերի մշակմամբ՝ սեյսմակայուն համակարգերի, շինարարական նորմերի, տեղական հումքով շինանյութերի և շինարարության որակի հսկման, նոր տեխնոլոգիաների կիրառման համար:

Քաղաքաշինական ծրագրերի իրականացման արդյունավետության բարձրացման, շինարարության ոլորտում նոր մշակույթ ձևավորելու, նոր տեխնոլոգիաներ ներդնելու, շինարարական նոր նյութեր և կոնստրուկցիաներ կիրառելու համար անհրաժեշտ են թե իրավական և թե նորմատիվատեխնիկական կարգավորումներ:

Նմանատիպ նորարարական գործընթացների մեկնարկի համար գրեթե միշտ անհրաժեշտ են լաբորատոր փորձարկումներ, գիտական և գիտահետազոտական ուսումնասիրություն և համապատասխան եզրակացություններ:

Ներկայումս, նոր մոտեցումներ պահանջող խնդիրների հնարավոր լուծումների վերաբերյալ ուսումնասիրություններն ու վերլուծությունները կատարվում են ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահին կից Գիտատեխնիկական խորհրդի քննարկումների շրջանակներում՝ մի շարք դեպքերում նաև իրավիճակային որոշումների ընդունմամբ:

Այս խնդիրների լուծման հեռանկարը կամ տեսլականն անմիջականորեն կապված են «Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) առողջացման (վերակազմակերպման) և արդիականացման հետ:

Ներկայումս Ընկերության գործունեության հիմնական ուղղություններն են.

- նախագծերի փորձաքննություն (այդ թվում՝ կրկնակի և ուղեկցող),
- շենքերի և կառույցների տեխնիկական վիճակի հետազննություն,
- քաղաքաշինական նորմատիվային փաստաթղթերի մշակում,
- շինարարության որակի հսկողության իրականացում:

Ընկերության լաբորատոր բազան հիմնականում ֆիզիկապես և բարոյապես մաշված է, ոչ արդիական, ինչի հետևանքով իրականացված գրեթե բոլոր հետազննական և հետազոտական աշխատանքները հիմնված են կամ տեսական, կամ ակնադիտական ուսումնասիրությունների վրա:

1.2.**Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Որպես սեյսմակայուն շինարարության ոլորտում 1995 թվականից գործող «Սեյսմակայուն շինարարության և կառուցվածքների պահպանման հայկական գիտահետազոտական ինստիտուտի» իրավահաջորդ՝ ակնհայտ է, որ Ընկերության ներկայիս տեխնիկական, մասնագիտական և ֆինանսական ռեսուրսները կարիք ունեն համալրման և օժանդակության:

Դիտարկելով ընկերության գործունեության հիմնական ուղղությունները, կարելի է եզրահանգել, որ դրանցից շատերը վերաբերում են քաղաքաշինության ոլորտի ռազմավարական խնդիրներին, այն է՝

- կարևորագույն նշանակության (քաղաքացիական և արդյունաբերական նշանակության շենքերի/շինությունների, ինժեներական ենթակառուցվածքների, ռազմավարական նշանակության էներգետիկ և պաշտպանական համալիրների) օբյեկտների տեխնիկական վիճակի հետազննության, անձնագրավորման, համապատասխան կանխարգելիչ միջոցառումների և նոր տեխնոլոգիաների մշակման աշխատանքներին, ինչպես նաև տարիների ընթացքում ընկերության կողմից ձեռքբերված գիտական և գիտահետազոտական բազմամյա աշխատանքային փորձի փոխանցման կարևորագույն գործին:

Հաշվի առնելով վերոգրյալը, նախատեսվում է սեղմ ժամկետում Ընկերության կազմակերպաիրավական ձևի (ոչ պետական բաժնեմասի պետության կողմից մասնավորեցման/գնման) հնարավոր փոփոխության վերաբերյալ խնդրի բազմակողմանի քննարկում՝ վերջինիս առողջացման և արդիականացման ծրագրի նախագծի մշակում:

Ընկերության առողջացման, զարգացման ուղղությամբ նախատեսվող միջոցառումները կարելի է բաժանել հետևյալ ուղղությունների.

- շենքային պայմանների բարելավում՝ գոյություն ունեցող մասնաշենքերի վերակառուցում, հիմնանորոգում՝ արդի փորձագիտական կենտրոններին ներկայացվող չափորոշիչներին համապատասխան,
- լաբորատոր, տեխնիկական հնարավորությունների մակարդակի էականորեն բարձրացում՝ շինարարական նյութերի, պատրաստվածքների և կոնստրուկցիաների փորձարկումների, նյութերի ֆիզիկաքիմիական լաբորատորատորիաների ստեղծում, հաշվի առնելով ՀՀ տարածքի սեյսմիկ ակտիվ զոնայում գտնվելը՝ նաև դինամիկ փորձարկումների հնարավորությունների ստեղծում,
- մասնագիտական անձնակազմի համալրում և վերապատարսում:

Վերոհիշյալ միջոցառումների իրականացման գործընթացում ակնկալվում է Էկոնոմիկայի նախարարության աջակցությունը օրենքով չարգելված աղբյուրներից (միջազգային դոնոր կազմակերպություններ, գործարար միջավայր և այլն) խնդրի կանոնակարգման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ներգրավման հարցում:

2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Հագեցած լաբորատորիաների և բարձր որակավորում ունեցող մասնագետների առկայությունը հնարավորություն կտա Ընկերությանը պատշաճ մակարդակով իրականացնել բարձր ռիսկայնության աստիճան ունեցող քաղաքաշինական օբյեկտների, պատմամշակութային արժեք ներկայացնող շենքերի, շինությունների տեխնիկական վիճակի (ակնադիտական և գործիքային) հետազննման աշխատանքներ:

Ներկայումս, քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննությունը լիցենզավորված գործունեություն է, որը իրականացվում է մասնավոր ընկերությունների կողմից, ինչը շուկայի ազատականացման տեսանկյունից համարվում է առաջադեմ գործընթաց:

Սակայն՝ քաղաքաշինական գործընթացների մշտադիտարկման արդյունքներով արձանագրվում են նաև դեպքեր, երբ քաղաքաշինական փաստաթղթերը վերադարձվում են հիմնական փորձաքննող կազմակերպությանը կրկնակի (կամ այնլընտրանքային) փորձաքննության, ինչը չի կարող երաշխավորել վերջինիս «բացարձակ ապահով» կամ ոչ թերի լինելը:

Ընկերությունում քաղաքաշինական փորձագիտական խմբերի ստեղծումը հնարավորություն կտա պետական կառավարման մարմնի կազմում ունենալ գործող փորձագիտական մարմին, որի նկատմամբ կսահմանվեն համապատասխան լիազորություններ և պարտավորություններ, որոնք կնպաստեն փորձաքննության պատշաճ մակարդակի ապահովմանը:

Ընդհանուր առմամբ՝ քաղաքաշինության բնագավառում արդի սարքավորումներով հագեցած լաբորատորիաների գործունեությունն անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետություն ներմուծվող, կամ տեղում արտադրվող շինակարական նոր նյութերի, պատրաստվածքների կամ կոնստրուկցիաների ուսումնասիրության և փորձարկման (սերտիֆիկացման) համար:

Այսպիսով, Ընկերության վերակազմակերպումը և գործունեությունը, որպես հատուկ լիազորություններով օժտված փորձագիտական կենտրոնի, հնարավորություն կտա արդիականացնել փորձարարական կարևորագույն բազան, համատեղել շինարարական արտադրությունն ու գիտական միտքը, ապահովել քաղաքաշինական ոլորտի առաջընթացը՝ այդ թվում պետական հսկողության և հոգածության ներքո:

7. ՇԵՆՔԵՐԻ ՈՒ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԵՅՍՄԱԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

<u>7.1 «Տեխնիկական վիճակից ելնելով բնակելի, հասարակական և արտադրական նշանակության շենքերն ու շինությունները շահագործման համար ոչ պիտանի (կազմաքանդման ենթակա) ճանաչելու կարգը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ</u>

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է Սահմանադրության 82-րդ և 86-րդ հոդվածների, Քաղաքացիական օրենսգրքի 285-րդ հոդվածի 1-ին մասի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1 հոդվածի 3-րդ մասի 3-րդ, 12-րդ և 20-րդ կետերի, ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի «ՀՀ քաղաքաշինության բնագավառի ռազմավարական ծրագիրը և ծրագրի իրագործումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 531-Լ որոշման N 1 հավելվածի 6-րդ գլխի դրույթներից, ինչպես նաև Ազգային ժողովի 2021թ. օգոստոսի 26-ի N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի 2.7-րդ՝ «Քաղաքաշինություն» բաժնի 2-րդ պարբերության 7-րդ կետի 1-ին ենթակետից:

Միջոցառման հիմնական նպատակը՝ տարածքների համալիր զարգացման նպատակով կառուցապատման ծրագրերի իրականացման համար, որպես վթարային գնահատված, շահագործման համար ոչ պիտանի բնակելի, հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների կազմաքանդման խնդրի իրավական կարգավորումը, մարդկանց կյանքի, առողջության և շրջակա միջավայրի անվտանգության ապահովումը:

1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Հայաստանի Հանրապետությունում բնակելի, հասարակական և արտադրական նշանակության շենքերի ու շինությունների պահպանմանը և հուսալի շահագործմանը նպատակաուղղված բավարար և համակարգված մոտեցումներ չեն ցուցաբերվել: Անբավարար են եղել նաև շենքերի ուժեղացման, վերականգնման և սեյսմակայունության բարձրացման ուղղությամբ իրականացված աշխատանքների ծավալները: Քիչ չեն նաև այն շենքերը, որոնցում ընթացիկ վերանորոգում պահանջող առկա թերությունների (ջրամատակարարման կամ ջրահեռացման համակարգերի վնասվածքներ, տանիքի անբավարար տեխնիկական վիճակ, սալվածքի քայքայվածություն և այլն) ոչ ժամանակին վերացումը կամ բնակիչների կողմից կրող կոնստրուկցիաների ձևափոխության և ամբողջականության խախտման (բացվածքների իրականացում, կառուցվածքային կրող տարրերի կոնստրուկտիվ ձևափոխություններ և այլն) անթույլատրելի միջամտությունները շենքերի նախնական սեյսմակայունության մակարդակի նվազեցման պատճառ են դարձել՝ հանգեցնելով անբավարար տեխնիկական վիճակի, իսկ հետագայում՝ հնարավոր վթարների առաջացման:

Արդյունքում, ֆիզիկական մաշվածության, ինչպես նաև զանազան բնական և տեխնածին գործոնների ազդեցության հետևանքով շենքերի զգալի մասը հայտնվել է անբավարար կամ վթարային տեխնիկական վիճակում: Նման շենքերը սեյսմակայունության տեսանկյունից հուսալի չեն և դրանց հետագա շահագործումը վտանգավոր է մարդկանց անվտանգության և շրջակա միջավայրի համար:

Ներկայումս շահագործվող շենքերի ու շինությունների մեծ մասի շահագործման սահմանված նորմատիվային ժամկետները վաղուց լրացել են: Տարբեր վտանգավոր բնական երևույթների և տեխնածին ազդեցությունների հետևանքով առկա է դրանց վնասվածության և ֆիզիկական մաշվածության բարձր՝ անթույլատրելի մակարդակ: Այդ պատճառով նման շենքերի ու շինությունների բնականոն և հուսալի շահագործումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է համակարգված վերահսկողություն իրականացնել դրանց տեխնիկական վիճակի նկատմամբ:

Տվյալ միջոցառման շրջանակներում Քաղաքաշինության կոմիտեի նախաձեռնությամբ արդեն իսկ մշակվել է «Տարբեր նշանակության շենքերի ու շինությունների սեյսմակայունության (երկրաշարժադիմացկունության) բարձրացման առաջնահերթության գնահատման մեթոդաբանությունը», որը հաստատվել է Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2021 թվականի մայիսի 26-ի N 41-Ն հրամանով:

Հաջորդիվ մշակվել է «Տեխնիկական վիճակից ելնելով բնակելի, հասարակական և արտադրական նշանակության շենքերը/շինությունները շահագործման համար ոչ պիտանի (կազմաքանդման ենթակա) ճանաչելու կարգը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը՝ որը ներկայացվել է իրավական-փորձագիտական եզրակացության՝ ՀՀ արդարադատության նախարարություն:

1.2..Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Հայաստանի Հանրապետությունում, մասնավորապես քաղաքային համայնքներում անվտանգության պահանջների ապահովման և կառուցապատման ծրագրերի իրականացման նպատակով առաջարկվում է կանոնակարգել վթարային բնակելի, հասարակական և արտադրական նշանակության շենքերի ու շինությունների կազմաքանդման խնդիրը՝ համապատասխան իրավակարգավորումների, այդ թվում պարտադիր պահանջների սահմանմամբ:

2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Շենքերի ու շինությունների կառավարման, հուսալի և անվտանգ շահագործման, սեյսմակայունության բարձրացմանն ուղղված միջոցառումների արդյունավետ իրականացում՝ վթարային ճանաչված, շահագործման համար ոչ պիտանի բնակելի, հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների հետագա շահագործումը բացառելու, քաղաքաշինական միջավայրը բարելավելու և դրանց հաջորդական կազմաքանդման շարունակական գործընթացն ապահովելու միջոցով:

7.2.Առավել վտանգավոր սողանքային տեղամասերում հետազննությունների և կանխարգելիչ միջոցառումների ծրագրերի մշակում, քաղաքաշինական օբյեկտների նախագծման նորմատիվ պահանջների համալրում հակասողանքային, կանխարգելիչ միջոցառումների դրույթներով

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1 հոդվածի 3-րդ մասի 5-րդ և 5.1 կետերի, ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի «ՀՀ քաղաքաշինության բնագավառի ռազմավարական ծրագիրը և ծրագրի իրագործումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 531-Լ որոշման դրույթներից, ինչպես նաև Ազգային ժողովի 2021թ. օգոստոսի 26-ի N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի 2.7-րդ՝ «Քաղաքաշինություն» բաժնի 2-րդ պարբերության 7-րդ կետի 1-ին ենթակետից:

Միջոցառման նպատակն է՝ քաղաքաշինության ոլորտում քաղաքականության միջոցառումների մշակման և կատարման միջոցով ապահովել մարդկանց կյանքի, առողջության և շրջակա միջավայրի անվտանգությունը:

1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Հանրապետության տարածքի կատարված օդային ու տիեզերական լուսանկարների վերծանման արդյունքում քարտեզագրված է 2504 սողանքային տեղամաս, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 1216 քառ.կմ: Հանրապետության 233 բնակավայր գտնվում է սողանքային տարածքներում, ճանապարհների 236 կմ-ը ու երկաթգծի 4.8 կմ-ը վնասված և քանդված են սողանքներից:

Վտանգավոր բնական և տեխնածին ազդեցությամբ առաջացող երկրաբանական երևույթներից իրենց տարածվածությամբ ու ազդեցությամբ առավել աղետալի են սողանքները, որոնք հանդիսանում են անընդհատ զարգացող և իրենց ծավալներով մշտական աճող վտանգի աղբյուր:

Սողանքը դինամիկ պրոցես է, և տվյալ պահի համար մշակված միջոցառումը պրոցեսի զարգացման հետևանքով կարող է կորցնել իր նպատակահարմարությունը և կպահանջվի լրացուցիչ հետազննություններ ու նոր նախագծերի մշակում: Հետևաբար, հակասողանքային միջոցառումները, որպես կանոն, պետք է իրականացվեն նախագծով սահմանված ժամկետներում: Դրանով պայմանավորված՝ կանոնավոր ֆինանսավորման բացակայության պարագայում նպատակահարմար չէ սկսել ոչ միայն շինարարական, այլև նախագծահետազննական աշխատանքներ, քանի որ դրանք սերտորեն փոխկապակցված (անբաժանելի, անփոխարինների) գործընթացներ են:

Սողանքային երևույթները մեծ վնաս են հասցրել և շարունակում են հասցնել հանրապետության սողանքային տեղամասերի բնակելի տներին, ենթակառուցվածքներին, կենսապահովման օբյեկտներին, արտադրական կարողություններին, շրջակա միջավայրին՝ սպառնալով այդ տեղամասերի բնակիչների կյանքին: Սողանքները պատճառ են դառնում բնակավայրերի ամայացմանը, բնակչության աղքատացմանը, տարհանմանը, արտագաղթին, մի շարք սոցիալական հիմնահարցերի առաջացմանը և խոչընդոտում են տնտեսության զարգացմանն ու բնակչության աճին: Այդ իսկ պատճառով սողանքային երևույթների ուսումնասիրությունը, կանխատեսումը և կանխարգելումը կարևոր են համայնքների զարգացման, տարածքների պահպանման ու նպատակային օգտագործման, բնակչության անվտանգության ապահովման և շրջակա միջավայրի պահպանման համար:

1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Սողանքային աղետի դեմ պայքարը, որպես ներքին անվտանգության ռազմավարական ուղղություն, անհրաժեշտ է մշտապես ընդգրկել պետական միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրերում և հետազննությունների արդյունքների հիման վրա համակարգված մոտեցմամբ հետևողական լուծումներով կանխել վտանգներն ու նվազեցնել ռիսկերը, իսկ մշտական մոնիթորինգի միջոցով ամբողջությամբ վերահսկել իրավիճակը, ժամանակին արձագանքել և հակազդել սպասվող վտանգներին:

Հանրապետությունում սողանքային հիմնախնդրի արդյունավետ լուծումը պահանջում է համակարգված մոտեցում՝ ծրագրված աշխատանքների ամբողջ համալիրի (հետազննություն, նախագծում, շինարարություն) կայուն ֆինանսավորում:

Անհրաժեշտություն է առաջանում վերանայել քաղաքաշինական օբյեկտների նախագծման պահանջները (ճարտարապետահատակագծային և նախագծային առաջադրանքները), որոնք ակնկալվում է համալրել սողանքային երևույթներով պայմանավորված կառուցապատման հողատարածքներում հակասողանքային պարտադիր (այդ թվում կանխարգելիչ) միջոցառումների կատարման պահանջով:

2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Միջոցառման իրականացումը հնարավորություն կտա գնահատել սողանքային ռիսկը և վտանգը, բացահայտել սողանքների առաջացման և ակտիվացման գործոնները, ահազանգել սողանքային աղետի մասին բնակիչների

	անվտանգության ապահովման, վտանգի կանխման, վնասի չափերի նվազեցման և բացառման համար, հիմնավորել առաջնահերթ միջոցառումներ պահանջող սողանքավտանգ տարածքներում նախագծահետազննական աշխատանքների ու ինժեներապաշտպան միջոցառումների իրականացումը, գնահատել հանրապետության սողանքային տեղամասերում գտնվող բնակելի, հասարակական և արտադրական նշանակության շենքերի/շինությունների տեխնիկական վիճակը, ստեղծել սողանքային տեղամասերին վերաբերող տեղեկատվական բազա:
8.	**ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԱՄԱԼՐՈՒՄ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՀԱՏՈՒԿ ԼՈՒԾՈՒՄՆԵՐՈՎ՝ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ԴՐԱՆՑ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ**
	<u>8.1.«Նախագծային հատուկ լուծումներով համալրման ենթակա մի շարք կարևորագույն նշանակության օբյեկտների ցանկը և դրանց շահագործման մատչելիությունն ապահովող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ</u>
	1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է Սահմանադրության 86-րդ հոդվածի 8-րդ մասի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1 հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետից, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքի 17-րդ հոդվածի պահանջներից, ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի «ՀՀ քաղաքաշինության բնագավառի ռազմավարական ծրագիրը և ծրագրի իրագործումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 531-Լ որոշման N 1 հավելվածի 1-ին գլխի դրույթներից, ինչպես նաև Ազգային ժողովի 2021թ. օգոստոսի 26-ի N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի 2.7-րդ՝ «Քաղաքաշինություն» բաժնի 2-րդ պարբերության 7-րդ կետի 3-րդ ենթակետից: Միջոցառման նպատակն է՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար կյանքի, առողջության և շրջակա միջավայրի անվտանգության, շենքերի շահագործման մատչելիության ապահովումը: **1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Հայաստանի Հանրապետության տարածքում բնակելի, հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների կառուցապատումներն իրականացվել են մեծ մասամբ խորհրդային տարիներին՝ շենքային ֆոնդի և ենթակառուցվածքների մի զգալի մաս ապահովված չէ համապատասխան կոնստրուկտիվ լուծումներով և հարմարեցված չէ հաշմանդամություն ունեցող անձանց (այդ թվում բնակչության սակավաշարժուն խմբերի) կողմից դրանք անվտանգ և մատչելի շահագործելու համար: Քաղաքաշինության բնագավառում գործում են մի շարք նորմատիվ փաստաթղթեր, որոնք կարգավորում են քաղաքաշինական օբյեկտների մատչելիությանն առնչվող խնդիրները, սակայն դրանց ամբողջական կիրառումը, հատկապես գոյություն ունեցող շենքերում համարվում է բավականաչափ բարդ և խնդրահարույց, քանի որ դրանց մի զգալի մաս գտնվում է ոչ բավարար կամ անբավարար տեխնիկական վիճակում, իսկ ֆիզիկական մաշվածության և սեյսմիկ խոցելիության աստիճանները համարվում են բարձր: Հիմնական նորմատիվ փաստաթղթերը, որոնք կարգավորում են նշված խնդիրները հետևյալն են՝ - ՀՀՇՆ IV-11.07.01-2006 «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար» շինարարական նորմերը, - ՀՀ կառավարության 16.02.2006թ. «Հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի համար սոցիալական, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների մատչելիության ապահովման կարգը հաստատելու մասին» N 392-Ն որոշումը, - ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 05.04.2018թ «Բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի և շինությունների մատչելիության ապահովման նախագծման կանոնների հավաքածուին հավանություն տալու մասին» N 43-Ա հրամանը, - ՎՍՆ 62-91* «Проектирование среды жизнедеятельности с учетом потребностей инвалидов и маломобильных групп населения» նորմերը: Ինքնին՝ նշված միջոցառումների իրականացումը պահանջում է որոշակի ֆինանսական ներդրումներ, որոնք պետք է հիմնավորվեն շենքի կայունության, հուսալիության աստիճանով: Առկա են խնդիրներ նաև այն շենքերի մասով, որոնց սեփականատերերը մեկից ավելի են և փոխհամաձայնեցված գործողությունների կատարումը պահանջում է սեփականատերերի գոնե մեծ մասի համաձայնություն և իրենց կողմից համամասնորեն ներդրված ֆինանսական միջոցներ: **1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ոլորտի իրավակագավորումներն ապահովող նորմատիվ փաստաթղթերի գերակշիռ մասն ընդունվել է խորհրդային տարիներից ի վեր, իսկ Հայաստանի Հանրապետության տարածքում բնակելի, հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների կառուցապատումներն իրականացվել են մեծ մասամբ խորհրդային տարիներին, ուստի շենքային ֆոնդի և ենթակառուցվածքների մի զգալի մաս ապահովված չէ համապատասխան կոնստրուկտիվ լուծումներով և հարմարեցված չէ հաշմանդամություն ունեցող անձանց (այդ թվում բնակչության սակավաշարժուն խմբերի) կողմից դրանք անվտանգ և մատչելի շահագործելու համար: Հարկ է նշել, որ ներկայումս, նմանատիպ միջոցառումների իրագործումը հիմնականում հնարավոր է համարվում նոր կառուցապատման և/կամ շենք-շինությունների համալիր վերակառուցման միջոցառումների շրջանակներում, միակ սեփականատիրոջ կամ սեփականատերերի փոխհամաձայնեցմամբ: Նախագծով առաջարկվում է հաստատել մի շարք կարևորագույն նշանակության օբյեկտների (որոնք բացառապես պետական կամ համայնքային նշանակության են և արժևորվում են իրենց պատկանելիությամբ՝ պատմության և մշակույթի հուշարձաններին) ցանկը և միջոցառումների ծրագրի փուլային կատարմամբ դրանք համալրել նախագծային հատուկ լուծումներով՝ վերջիններս հաշմանդամություն ունեցող անձանց (այդ թվում բնակչության սակավաշարժուն խմբերի) համար անվտանգ և մատչելի դարձնելու նպատակով: **4.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Մի շարք կարևորագույն նշանակության օբյեկտների ապահովում՝ նախագծային հատուկ լուծումներով և հարմարեցում հաշմանդամություն ունեցող անձանց (այդ թվում բնակչության սակավաշարժուն խմբերի) համար:
9.	**ՇԵՆՔԵՐԻ ՈՒ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՈՒՄ**
	<u>9.1.«Քաղաքաշինության մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ կատարելու մասին նախագծերի փաթեթին հավանություն տալու, «Շենքերի և շինությունների անձնագրավորման կարգը սահմանելու մասին» Կառավարության որոշումների նախագծերի ներկայացում Վարչապետի աշխատակազմ</u> **1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է Սահմանադրության 86-րդ հոդվածների, «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1 հոդվածի 3-րդ մասի 3-րդ 12-րդ և 20-րդ կետերի, ՀՀ կառավարության 2021թվականի ապրիլի 8-ի «ՀՀ քաղաքաշինության բնագավառի ռազմավարական ծրագիրը և ծրագրի իրագործումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N531-Լ որոշման դրույթներից, ինչպես նաև Ազգային ժողովի 2021թ. օգոստոսի 26-ի N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի 2.7-րդ՝ «Քաղաքաշինություն» բաժնի 2-րդ պարբերության 7-րդ կետի 4-րդ և 5-րդ ենթակետերից: Միջոցառման նպատակն է՝ շենքերի և շինությունների անձնագրավորման միջոցով կանոնակարգել և/կամ բացահայտել տարբեր նշանակության շենքերի ու շինությունների անվտանգ, հուսալի և մատչելի շահագործման նկատմամբ սահմանված կամ սահմանման ենթակա պարտադիր նորմատիվ պահանջների (միջոցառումների) ապահովման շրջանակը, որը հիմք կծառայի քաղաքաշինական օբյեկտների հիմնական և կարևորագույն տվյալների միասնական տեղեկատվական շտեմարանի (կամ բազայի) ներդրման և ռազմավարական հեռանկարային ծրագրերի մշակման համար: **1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Տարբեր նշանակության շենքերի ու շինությունների կառավարման, հուսալի և անվտանգ շահագործման գործառույթների լիարժեք իրականացման որակի ու արդյունավետության ապահովումը պայմանավորված է շենքերի նախագծային լուծումների, շինարարության կատարողական փաստաթղթերի, ինչպես նաև շենքերի փաստացի տեխնիկական վիճակի և մոնիթորինգային դիտարկումների տվյալների առկայությամբ: Մինչդեռ, շատ դեպքերում, նշված տեխնիկական փաստաթղթերը պահպանված չեն, ինչի արդյունքում շենքերի և շինությունների կառավարումն ու շահագործումն իրականացնող մարմինները, սեփականատերերը չեն կարող տիրապետել անհրաժեշտ տեխնիկական տվյալների: Ներկայումս շահագործվող տարբեր նշանակության շենքերի ու շինությունների մեծ մասի շահագործման սահմանված նորմատիվային ժամկետներն արդեն վաղուց լրացել են ու տարբեր վտանգավոր բնական երևույթների և տեխնածին ազդեցությունների հետևանքով առկա է դրանց վնասվածության և ֆիզիկական մաշվածության զգալի աճ, իսկ առանձին շինություններ շահագործվում են այլ նպատակային նշանակությամբ: Այդ պատճառով նման շենքերի ու շինությունների ըստ նպատակային նշանակության հուսալի շահագործումն ապահովելու համար անհրաժեշտ է համակարգված վերահսկողություն իրականացնել դրանց տեխնիկական վիճակի նկատմամբ: Վտանգավոր բնական երևույթների և տեխնածին ազդեցությունների նվազեցման ու չեզոքացման, ժամանակին արտակարգ իրավիճակների հայտնաբերման և սեյսմիկ ռիսկի գնահատման նպատակով անհրաժեշտ է ստեղծել

	բոլոր շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ տվյալների միասնական բազա և ներդնել մոնիթորինգային դիտարկումների համակարգ: Դրա համար անհրաժեշտ է ապահովել նոր կառուցվող և կազմակերպել գոյություն ունեցող տարբեր նպատակային նշանակության շենքերի ու շինությունների անձնագրավորում, որի արդյունքում տրվող տեխնիկական անձնագրերի տվյալներն անհրաժեշտ և բավարար հիմք կհանդիսանան շենքերի ու շինությունների պահպանմանն ու անվտանգ շահագործմանը նպատակաուղղված համակարգված ծրագրային մոտեցումների մշակման, ինչպես նաև օրենսդրության և գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան սեյսմակայունության անհրաժեշտ մակարդակ ապահովելու միջոցառումներ իրականացնելու համար: **1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Կարևորելով շենքերի և շինությունների համընդհանուր անձնագրավորման մեկնարկը՝ նախևառաջ անհրաժեշտ է ապահովել այդ գործընթացի իրականացումն ապահովող իրավական դաշտի ստեղծումը: Համապատասխան իրավակարգավորումների մշակման գործընթացն արդեն իսկ մեկնարկել է, մշակվել են «Քաղաքաշինության մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին նախագծերի փաթեթը և դրանից բխող՝ «Նոր կառուցվող և գոյություն ունեցող տարբեր նշանակության շենքերի ու շինությունների անձնագրավորման կարգը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը, որոնք քննարկվել են շահագրգիռ մարմինների հետ և ուղարկվել պետական իրավական փորձաքննության: Նախագծերի փաթեթին զուգահեռ մշակվել են նաև անձնագրերի օրինակելի ձևերը և դրանց լրացման մեթոդաբանությունը: **2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է սահմանել նոր կառուցվող և գոյություն ունեցող տարբեր նշանակության շենքերի ու շինությունների անձնագրավորման իրականացման, անձնագրերի ձևերի և դրանց լրացմանը ներկայացվող պահանջներ:
10.	**ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԿԱՆԻՇԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՈՒՄ**
	<u>10.1. «Լիցենզավորման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Քաղաքաշինության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի ներկայացում Վարչապետի աշխատակազմ:</u> **1.Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է Ազգային ժողովի 2021թ. օգոստոսի 26-ի N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի 2.7-րդ՝ «Քաղաքաշինություն» բաժնի 2-րդ պարբերության 7-րդ կետի 7-րդ ենթակետից, ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի N 531-Լ որոշմամբ հաստատված N 2 հավելվածի ՀՀ քաղաքաշինության բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրի իրագործումն ապահովող միջոցառումների ցանկի 9-րդ նպատակից (Կառավարության գործունեության ծրագրի 6.2-րդ կետ՝ Պետության կողմից հանրությանը մատուցվող ծառայություններ), որն ուղղված կլինի նաև Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությանը և դրա իրականացման 2019-2022 թվականների «4.3 Հակակոռուպցիոն կրթություն և իրազեկում» գլխի միջոցառումների ծրագրին: Ներկայումս տնտեսավարող սուբյեկտների ինչպես նաև պատասխանատու մասնագետների համար չկա քաղաքաշինական գործունեության տեսակների դասակարգում: Նախատեվում է քաղաքաշինական գործունեության տեսակների դասակարգմանը համապատասխան լիցենզիաների տրամադրման գործընթացի ապահովում, այդ թվում նաև էլեկտրոնային եղանակով: Քաղաքաշինական գործունեության տեսակների դասակարգմանը համապատասխան մասնագիտական գործունեության ապահովման համար նախատեսվում է իրականացնել քաղաքաշինության բնագավառում լիցենզավորված գործունեություն իրականացնող պատասխանատու մասնագետների շարունակական մասնագիտական զարգացման հավաստագրման գործընթացի ներդրում: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Գործող իրավական ակտերի կարգավորումների համաձայն՝ լիցենզավորված սուբյեկտին թույլատրվում է իրականացնել ցանկացած բարդության և ռիսկայնության աստիճան ունեցող քաղաքաշինական փաստաթղթերի մշակման և/կամ փորձաքննության կամ շինարարական աշխատանքների իրականացման գործառույթներ:

Ներկայացվում է վերջին տարիներին իրականացված հիմնական գործառույթներից, ՀՀ պետական բյուջե փաստացի մուտքերը:

Տրամադրվել է. 2016 թվականին՝ 209 լիցենզիա և 434 ներդիր, 2017 թվականին՝ 236 լիցենզիա և 503 ներդիր, 2018 թվականին՝ 204 լիցենզիա և 367 ներդիր, 2019 թվականին՝ 473 լիցենզիա և 1214 ներդիր:

Դադարեցվել է. 2016 թվականին՝ 94 լիցենզիա և 175 ներդիր, 2017 թվականին՝ 97 լիցենզիա և 178 ներդիր, 2018 թվականին՝ 81 լիցենզիա և 167 ներդիր, 2019 թվականին՝ 60 լիցենզիա և 124 ներդիր:

Որպես տարեկան պետական տուրք և տույժ 2016-2019 թվականներին ՀՀ պետական բյուջե փաստացի մուտք է եղել համապատասխանաբար՝ 324, 43 մլն, 344,65 մլն, 322,73 մլն և 355,08 միլիոն ՀՀ դրամ, իսկ որպես կանխատեսում եղել է՝ 339,50 մլն, 343,58 մլն, 326,88 մլն և 347,10 միլիոն ՀՀ դրամ:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Քաղաքաշինական գործունեության տեսակների լիցենզավորում ըստ լիցենզիաների դասային աստիճանների և պատասխանատու մասնագետների հավաստագրում ըստ մասնագետների կարգերի:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

«Քաղաքաշինության մասին», «Լիցենզավորման մասին», «Պետական տուրքի մասին» և «Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության մասին» ՀՀ օրենքների փոփոխության և լրացումների ապահովում: Ոլորտում տնտեսվարող սուբյեկտների ձևավորում, ինչպես նաև շուկայական հարաբերությունների կարգավորում:

10.2. <u>«Լիցենզիանզավորման, մասնագետների հավաստագրման, թեստավորման, մասնագետների և կազմակերպությունների ռեգիստրի ձևավորման և կառուցվածքի վարման կարգերը հաստատելու մասին», ինչպես նաև «Մասնագետների շարունակական մասնագիտական զարգացման հնգամյա ժամանակացույցը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագծի ընդունում</u>

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1 հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետից, Ազգային ժողովի 2021թ. օգոստոսի 26-ի N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի 2.7-րդ՝ «Քաղաքաշինություն» բաժնի 2-րդ պարբերության 7-րդ կետի 7-րդ ենթակետից, ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի N 531-Լ որոշմամբ հաստատված N 2 հավելվածի ՀՀ քաղաքաշինության բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրի իրագործումն ապահովող միջոցառումների ցանկի 9-րդ և 10-րդ նպատակներից, որը ուղղված կլինի նաև Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությանը և դրա իրականացման 2019-2022 թվականների «4.3 Հակակոռուպցիոն կրթություն և իրազեկում» գլխի միջոցառումների ծրագրի:

Նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է քաղաքաշինության ոլորտում գործարար միջավայրի բարելվմանն ուղղված հետևողական քայլերի շարունակականության ապահովման, լիցենզավորման ընթացակարգերի հետագա կանոնակարգման ու պարզեցման, ինչպես նաև կոռուպցիոն ռիսկերի նվազեցման անհրաժեշությամբ՝ լիցենզավորման ընթացակարգերի տարբեր փուլերում հնարավորինս շրջանցելով լիցենզավորող մարմնի և հայտատուի միջև անմիջական շփումը:

Նախագծով առաջարկվում է օպտիմալացնել լիցենզավորման ընթացակարգի առանձին փուլերը կանոնակարգող, տարբեր տարիներին հաստատված և ներկայումս գործող օրենսդրական ակտերը (Հայաստանի Հանրապետության կառավարության 02.07. 2009թ. N774-Ն, 02.07. 2009թ. N775-Ն, 02.07. 2009թ թ. N777-Ն, 02.07. 2009թ. N788-Ն, 27.01. 2018թ. N1533-Ն, որոշումներ)՝ դրանք մեկ ընդհանրական փաստաթղթում միավորելու, առկա փոխհատումներն ու կրկնությունները վերացնելու, լիցենզիաների տրամադրման առավել հստակ և հնարավորին պարզ պայմաններ սահմանելու միջոցով՝ դրանք փոխկապակցելով օբյեկտների ռիսկայնության աստիճանի հետ: Հաշվի առնելով վերը նշված իրավական ակտերի միավորման հանգամանքը, անհրաժեշտություն է առաջացել Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ճանաչել ուժը կորցրած:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Ներկայումս տնտեսավարող սուբյեկտների կամ պատասղանատու մասնագետների համապատասխանաբար լիցենզավորման կամ հավաստագրման համար չկան սահմանված չափորոշիչներ և կարգավորվում է միայն առաջնորդվում են բուհի կողմից տրված որակավորումն և (կամ) մասնագիտական 3 տարվա անընդմեջ աշխատանքային փորձը հավաստող փաստաթղթերով:

Քաղաքաշինության բնագավառի գործունեության լիցենզիաների տեսակները սահմանված են ՀՀ կառավարության մի շարք որոշումներով, որոնք յուրաքանչյուր ոլորտների համար պարունակում են մի շարք ձևաթղթեր և որոշակի բարդություն են առաջացնում հայտատուի համար, մասնավորապես՝ հայտի լրացման և կից անհրաժեշտ տեղեկատվության ներկայացման համար: Բացի այդ, վերանայնման և հստակեցման անհրաժեշտություն ունեն գործող իրավական ակտերով սահմանված մի շարք դրույթներ, այդ թվում՝ որակավորման և լիցենզավորման այլ պահանջների ներկայացման, տնտեսվարող սուբյեկտների կազմավորման խնդիրներն ու գործառույթների:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Քաղաքաշինական գործունեության տեսակների լիցենզավորում ըստ լիցենզիաների դասային աստիճանների և պատասխանատու մասնագետների հավաստագրում ըստ մասնագետների կարգերի:

Ձեռնարկատիրական գործունեության պետական կարգավորումների, ծառայությունների և վարչարարական ընթացակարգերի պարզ, թափանցիկ և քիչ ծախսատար միջավայրի ստեղծում: Շարունակական մասնագիտական որակավորման զարգացման հետևողական կատարելագործում՝ միջազգային, այդ թվում՝ միջազգալին լավագույն փորձի կիրառման և տեղայնացման միջոցով:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Ստեղծել տնտեսվարող սուբյեկտների համար հավասար մրցակցային դաշտ, ինչպես նաև բարձրացնել մասնագիտական որակավորման պահանջներն ու պատասխանատվությունը:

Օրենքով սահմանված Քաղաքաշինական փաստաթղթերի կազմի և բովանդակությանն, ինչպես նաև քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներին և դասակարգմանը համապատասխան լիցենզավորման միասնական կարգի ստեղծում:

<u>10.3. Քաղաքաշինության բնագավառում գործունեություն իրականացնող մասնագետների մասնագիտական չափորոշիչների և որակավորման պահանջների սահմանում՝ Քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրամանով</u>

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1 հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետից, Քաղաքաշինության մասին», «Լիցենզավորման մասին», «Պետական տուրքի մասին» և «Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության մասին» ՀՀ օրենքներում նախատեսվող փոփոխություններից, ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի N 531-Լ որոշմամբ հաստատված N2 հավելվածի ՀՀ քաղաքաշինության բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրի իրագործումն ապահովող միջոցառումների ցանկի 9-րդ և 10-րդ նպատակներից և Ազգային ժողովի 2021թ. օգոստոսի 26-ի ՆԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի 2.7-րդ՝ «Քաղաքաշինություն» բաժնի 2-րդ պարբերության 7-րդ կետի 7-րդ ենթակետից:

Նախագծով նախատեսվում է ապահովել քաղաքաշինական գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբեյեկտների լիցենզավորման գործընթացի կազմակերպումը: Օրենքով սահմանված դասակարգման, քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման և հավաստագրման կարգերին համապատասխան սահմանել մասնագիտական չափորոշիչների և քաղաքաշինության բնագավառում լիցենզավորվող սուբյեկտների համար հստակ, բարենպաստ և ամբողջական մասնագիտական որակավորման պահանջներ, որոնք կհաստատվեն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրամանով:

1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Ներկայումս տնտեսավարող սուբյեկտների կամ պատասխանատու մասնագետների համապատասխանաբար լիցենզավորման կամ հավաստագրման համար չկան սահմանված չափորոշիչներ և կարգավորվում է միայն բուհի կողմից տրված որակավորուման և (կամ) մասնագիտական 3 տարվա անընդմեջ աշխատանքային փորձը հավաստող փաստաթղթերով:

Անհրաժեշտ է սահմանել մասնագիտական գործունեության տեսակներին համապատասխան մասնագիտական որակավորումների և տեխնիկա/ սարքավորումների դասակարգում:

Իրականացնել շարունակական մասնագիտական զարգացման տեսակներին համապատասխան մասնագետների հավաստագրում:

1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Հստակ սահմանել շարունակական մասնագիտական զարգացման տեսակները, մասնագիտական հանձնաժողովների անհատական կազմը և աշխատակարգը: Լիցենզավորված տնտեսվարող սուբյեկտների և

մասնագետների համար սահմանել քաղաքաշինական գործունեության տեսակներին համապատասխան աշխատանքների իրականացման գործելակարգերը և պատասխանատու մասնագետների մասնագիտական բնութագրերը, թեստավորման հարցաշարերը, հայտարարության տեքստի և հավակնորդներին (լիցենզավորվող, հավաստագրվող) ներկայացվող պահանջները:

2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Լիցենզավորման ենթակա քաղաքաշինական գործունեության տեսակներին համապատասխան մասնագիտական բնութագրերի, մասնագիտական հանձնաժողովների անհատական կազմի և աշխատակարգի, աշխատանքային պայմանագրերի օրինակելի ձևերի, թեստավորման հարցաշարերի, հայտարարության տեքստի և հավակնորդներին ներկայացվող չափորոշիչների, մասնագիտական որակավորումների և տեխնիկա/սարքավորումների դասակարգման ցանկի, շարունակական մասնագիտական զարգացում ապահովող միջոցառումների կազմակերպման, իրականացման, ինչպես նաև մասնակցությանը ներկայացվող չափորոշիչներիների սահմանում, յուրաքանչյուր մասնագիտության գծով շնորհվող շարունակական մասնագիտական զարգացման կրեդիտների քանակի և դրանց շնորհման չափորոշիչների հստակեցում:

<u>10.4. Քաղաքաշինության բնագավառում տնտեսվարող սուբյեկտների և մասնագետների ռեեստրների ստեղծում</u>

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է «Քաղաքաշինության մասին», «Լիցենզավորման մասին», «Պետական տուրքի մասին» և «Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության մասին» ՀՀ օրենքներում նախատեսվող փոփոխություններից, ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի N 531-Լ որոշմամբ հաստատված ՀՀ քաղաքաշինության բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրի իրագործումն ապահովող միջոցառումների ցանկի 9-րդ և 10-րդ նպատակներից: Ազգային ժողովի 2021թ. օգոստոսի 26-ի ՆԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի 2.7-րդ՝ «Քաղաքաշինություն» բաժնի 2-րդ պարբերության 7-րդ կետի 7-րդ ենթակետից:

Միջոցառման իրականացմամբ քաղաքաշինության բնագավառում Լիցենզավորման գործընթացում կներդրվի լիցենզավորման և հավաստագրման ռեգիստ, որտեղ կներդրվի մասնագետների և կազմակերպությունների ռեեստր, ինքնաշխատ կերպով կիրականացվի ռեյտինգավորմում, կառուցվածքի վարման և մոնիթորինգի իրականացում, որը ուղղված կլինի նաև Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությանը և դրա իրականացման 2019-2022 թվականների «4.3 Հակակոռուպցիոն կրթություն և իրազեկում» գլխի միջոցառումների ծրագրին:

1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Ներկայումս իրավաբանական կամ անհատ ձեռնարկատիրոջ համար չկա օրենքով նախատեսված ռեյտինգավորման իրականացման գործընթացներ:

Անհրաժեշտ է ապահովել լիցենզավորող մարմիններում գործող գրանցամատյանների փոխգործելիությունն այլ շահագրգիռ պետական մարմիններում (ՀՀ պետական եկամուտների կոմիտե, Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն և այլն) գործող տվյալների շտեմարանների և գործող էլեկտրոնային հարթակների հետ, ներդնել քաղաքաշինական կազմակերպությունների և մասնագետների ռեյտինգավորում:

1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Լիցենզավորված տնտեսվարող սուբյեկտների և մասնագետների գրանցամատյանների ստեղծմամբ և վարմամբ կդյուրինացվի քաղաքաշինական գործընթացներում նրանց ներգրավումը: Հստակ կսահմանվեն ինքնաշխատ կերպով ռեյտինգավորման չափորոշիչները պայմաններն ու պահանջները, որը քաղաքաշինության բնագավառում գործող տնտեսվարող սուբյեկտների համար կստեղծի հավասար մրցակցային դաշտ:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Թվային կառավարման համատեքստում նախատեսվում է անցում կատարել քաղաքաշինական գործունեության լիցենզավորման և հավաստագրման թվայնացմանը և լիցենզավորված կազմակերպությունների, հավաստագրված մասնագետների միասնական ռեեստրի հարթակի ստեղծմանն ու վարմանը, ինչի միջոցով այդ գործընթացը կհամապատասխանեցվի ներկայիս շուկայական պահանջարկին, կդարձնի ռացիոնալ, արագ և թափանցիկ, որի իրականացման արդյունքում կլինի պահանջարկին համապատասխան ոլորտում տնտեսվարող սուբյեկտների ձևավորում, ինչպես նաև շուկայական հարաբերությունների կարգավորում:

Համակարգի ներդրումը շահավետ է ծառայությունների որակյալ մատուցման, ծառայություններից օգտվելու հարմարավետության, ժամանակի և ծախսերի խնայողության, ինչպես նաև ավելորդ թղթաբանության և վարչարարության նվազեցման համար:

11.	ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄ
	<u>11.1. Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության հետ կապված հարաբերությունների կարգավորելու համար ««Քաղաքաշինության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի ընդունում</u> **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1 հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետից և Ազգային ժողովի 2021թ. օգոստոսի 26-ի N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի 2.7-րդ՝ «Քաղաքաշինություն» բաժնի 2-րդ պարբերության 7-րդ կետի 8-րդ ենթակետից: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Քաղաքաշինական փաստաթղթերի որակն և նրանում արտացոլված լուծումներն էական ազդեցություն ունեն բարենպաստ կենսագործունեության միջավայրի ապահովման գործում: Գործող օրենսդրությունը սահմանում է, որ քաղաքաշինական փաստաթղթերը պետք է համապատասխանեն քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական և ՀՀ օրենսդրության այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջներին **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Միջոցառման իրականացմամբ առաջարկվում է Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության հետ կապված հարաբերությունների կարգավորում՝ «քաղաքաշինության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու միջոցով: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Սահմանել փորձագետներին ներկայացվող կոնկրետ պահանջները, նրանց իրավունքներն ու պարտականությունները, քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության տեսակները, հիմնական սկզբունքները:
	<u>11.2. «Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրավակարգավորումների, համաձայնեցման և փոփոխման, փորձագիտական եզրակացության ձևի ու դրա տրամադրման կարգը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագծի ընդունում</u> **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1 հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետից և Ազգային ժողովի 2021թ. օգոստոսի 26-ի ՈԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի 2.7-րդ՝ «Քաղաքաշինություն» բաժնի 2-րդ պարբերության 7-րդ կետի 8-րդ ենթակետից: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Քաղաքաշինական փաստաթղթերի որակն և նրանում արտացոլված լուծումներն էական ազդեցություն ունեն բարենպաստ կենսագործունեության միջավայրի ապահովման գործում: Գործող օրենսդրությունը սահմանում է, որ քաղաքաշինական փաստաթղթերը պետք է համապատասխանեն քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական և ՀՀ օրենսդրության այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջներին **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Միջոցառման իրականացմամբ առաջարկվում է 11.1–ին միջոցառմամբ նախատեսված «քաղաքաշինության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական կարգավորման նախատեսում: **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Փորձաքննություն իրականացնող մարմիններից անկախ, հավաստագրված փորձագետների միջոցով պետական փորձագիտական մարմնի քաղաքաշինական փաստաթղթերի համալիր փորձաքննության իրականացում, համալիր լուծումներ ընդունելու հնարավորություն: Վերահսկողություն իրականացնող մարմիններին հնարավորություն կտրվի ի հայտ եկած նախագծային թերությունները բողոքարկելու փորձագիտական մարմնում վերջնական որոշում կայացնելու համար:
12.	**ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ և ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՅՈՒՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԱՐՄԱՏԱՎՈՐՈՒՄ**

12.1.«Բազմաբնակարան շենքերի կառավարման համակարգի բարեփոխման հայեցակարգին հավանություն տալու մասին» Կառավարության որոշման նախագծի ընդունում

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է «Քաղաքաշինության մասին» օրենքի 10-րդ հոդվածի «ա» և «գ» պարբերությունների , 10.1 հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետից, ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի N 531-Լ որոշման N 1 հավելվածի 9-րդ գլխից, ինչպես նաև Ազգային ժողովի 2021թ. օգոստոսի 26-ի ՈՒԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի 2.7-րդ՝ «Քաղաքաշինություն» բաժնի 2-րդ պարբերության 8-րդ կետից:

Միջոցառման իրականացման նպատակը բազմաբնակարան շենքերի անվտանգ շահագործման ապահովմանն ուղղված գործառույթի՝ բազմաբնակարան շենքի կառավարման հետ կապված կարգավորումների բարելավումն է:

1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքն ընդունվել է 2002 թվականին, սակայն բազմաբնակարան բնակարանային ֆոնդի կառավարման և պահպանման գործառույթները լիովին չեն իրականացվել՝ հիմնականում պայմանավորված օրենսդրական և ինստիտուցիոնալ միջավայրի բացերով, ինչպես նաև ֆինանսական ռեսուրսների սահմանափակությամբ:

Այդ իսկ պատճառով անհրաժեշտություն է առաջանում հիմնովին բարեփոխել Բազմաբնակարան շենքերի կառավարման համակարգը՝ վերանայելով բազմաբնակարան շենքի կառավարման բնագավառում առկա կանոնակարգումները, կարգավորել բնագավառում առկա խնդիրները և իրավահարաբերությունները՝ տարանջատելով շենքի կառավարման և պահպանման գործառույթները և ամրագրելով բնագավառում գործող բոլոր սուբյեկտների իրավասություններն ու պարտականությունները, պարզեցնել կառավարման մեխանիզը, ներդնել բազմաբնակարան շենքերի մասնագիտացված կառավարման համակարգ և այլն:

1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Մինչև 2022 թվականի տարեվերջ հաստատել բազմաբնակարան շենքերի կառավարման համակարգի բարեփոխման հայեցակարգը՝ առաջիկա տարիների համար նախանշելով ոլորտի բարեփոխման ուղղությունները, թիրախները, դրանց հասնելու համար անհրաժեշտ քայլերը և միջոցառումները, իսկ 2023 թվականից՝ մեկնարկել հայեցակարգից բխող միջոցառումների իրականացումը:

2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Բազմաբնակարան շենքերի պահպանմանը և անվտանգ շահագործմանն ուղղված գործառույթի՝ կառավարման համակարգի բարեփոխումների ճանապարհային քարտեզի ուրվագծում :

12.2 «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծին հավանություն տալու մասին» Կառավարության որոշման ընդունում

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1 հոդվածի 3-րդ մասի 12-րդ կետի դրույթներից, ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի N 531-Լ որոշման N 1 հավելվածի 9-րդ գլխից, ինչպես նաև Ազգային ժողովի 2021թ. օգոստոսի 26-ի ՈՒԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի 2.7-րդ՝ «Քաղաքաշինություն» բաժնի 2-րդ պարբերության 8-րդ կետից:

Միջոցառման իրականացման նպատակը բազմաբնակարան շենքերի կառավարման բնագավառում սկզբունքային և երկարաժամկետ լուծումների և ռազմավարական մոտեցումների ամրագրումն է:

1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Բազմաբնակարան շենքերի կառավարման բնագավառում առկա խնդիրների կանոնակարգման նպատակով ՀՀ վարչապետի 2019 թվականի օգոստոսի 20-ի N1160-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբի կողմից վերհանվել են ոլորտի մի շարք խնդիրներ, կարգավորման ենթակա հարցեր, որոնք՝ ըստ լուծման առաջնահերթության, տարանջատվել են երկու փուլի՝ միջնաժամկետ և երկարաժամկետ:

Դրանից ելնելով՝ 12.2 կետի միջոցառման մասով մշակվել է «Բազմաբնակարան շենքերի կառավարման համակարգի բարեփոխման հայեցակարգը և դրանից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով նախատեսվում էր նախանշել առաջիկա 2 տարիների համար բարեփոխման ուղղությունները, դրանց հասնելու համար անհրաժեշտ քայլերը և անդրադարձ է կատարվել

	բազմաբնակարան շենքերի կառավարման բնագավառի այն խնդիրներին, որոնք «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքի վերանայման ցանկացած սցենարի դեպքում՝ կլինեն արդիական: Շահագրգիռ պետական մարմինների, մասնագիտական հանրության հետ Հայեցակարգի նախագծի քննարկման արդյունքում որոշվել է նախաձեռնել նոր օրենքի մշակման գործընթաց և կարգավորման ենթակա բոլոր՝ միջնաժամկետ և երկարաժամկետ լուծում պահանջող հարցերն ամփոփել նոր օրենքի նախագծում՝ դրանով բնագավառի խնդիրների կանոնակարգմանը ցուցաբերելով առավել համակարգային մոտեցում: **1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքի շարադրում՝ նոր խմբագրությամբ, որով կամրագրվեն բազմաբնակարան շենքերի կառավարման համակարգի բարեփոխման սկզբունքային և երկարաժամկետ լուծումներ: **2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության կառավարման արդյունավետության բարձրացում, կառավարման մարմինների կայացում և հզորացում, բազմաբնակարան շենքերի մասնագիտացված կառավարման համակարգի ներդրում, բնագավառում առկա խնդիրների լուծմանը սեփականատերերի մասնակցության բարձրացում, բնագավառում ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացման համար նախադրյալների ստեղծում:
13	**ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ ԵՎ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ՝ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ**
	<u>13.1 «Բազմաբնակարան շենքերի պահպանման և շահագործման, արդիականացման (այդ թվում՝ էներգաարդյունավետության և էներգախնայողության բարձրացման) կանոնները հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ</u> **1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1 հոդվածի 3-րդ մասի 3-րդ և 12-րդ կետերի դրույթներից, ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի N531-Լ որոշման N1 հավելվածի 9-րդ գլխից, ինչպես նաև Ազգային ժողովի 2021թ. օգոստոսի 26-ի ՆԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի 2.7-րդ՝ «Քաղաքաշինություն» բաժնի 2-րդ պարբերության 8-րդ կետի 2-րդ ենթակետից: Միջոցառման իրականացման նպատակը՝ Բազմաբնակարան շենքերի պահպանման և շահագործման, արդիականացման (այդ թվում՝ էներգաարդյունավետության և էներգախնայողության բարձրացման) կանոնները հաստատումն է: **1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Հայաստանի Հանրապետությունում առկա են տարբեր նշանակության ավելի քան 545 հազար շենքեր և շինություններ, որոնցից մոտ 19 հազարը՝ բազմաբնակարան շենքերն են: Բազմաբնակարան շենքերի սեփականատերերի, կամ նրանց կողմից ընտրված՝ կառավարման գործառույթներ իրականացնող անձանց կողմից այդ շենքերի պահպանման և շահագործման աշխատանքները պատշաճ կարգով չեն կազմակերպվում, չեն իրականացվում արդիականացման աշխատանքներ, իսկ իրականացվող աշխատանքների մասով միասնական մոտեցում չի ցուցաբերվում, ինչը հանգեցնում է դրանց շահագործման ժամկետների կրճատմանը, հուսալիության և սպառողական հատկանիշների նվազեցմանը: Վերը նշվածն՝ իր հերթին, հանգեցնում է այդ շենքերի տեխնիկական վիճակի վատթարացմանը, և անդառնալի հետևանքները բացառելու համար անխուսափելի է դառնում այդ դրանց անվտանգ շահագործման և հուսալիության բարձրացման աշխատանքներին պետության մասնակցությունը: **1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Բազմաբնակարան շենքերի պահպանման և շահագործման, արդիականացման (այդ թվում՝ էներգաարդյունավետության և էներգախնայողության բարձրացման) կանոնների մշակում և հաստատում, ինչն էական դրական ազդեցություն կունենա շենքերի պահպանման և շահագործման տեսանկյունից և կհանդիսանա ուղեցույց՝ կառավարման գործառույթներ իրականացնող անձանց համար: **2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Բազմաբնակարան շենքերի շահագործման ժամկետների երկարաձգում, հուսալիության, հարմարավետության և շահագործման սպառողական հատկանիշների բարձրացում, էներգետիկ ռեսուրսների ծախսի նվազեցում:

<u>13.2 «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին համապատասխան օրենքի նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ</u>

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1 հոդվածի 3-րդ մասի 3-րդ և 12-րդ կետերի դրույթներից, ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի N 531-Լ որոշման N 1 հավելվածի 9-րդ գլխից, ինչպես նաև Ազգային ժողովի 2021թ. օգոստոսի 26-ի ՈՒԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի 2.7-րդ՝ «Քաղաքաշինություն» բաժնի 2-րդ պարբերության 8-րդ կետի 2-րդ ենթակետից:

Միջոցառման իրականացման նպատակը՝ «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքի վերանայումն է՝ արդեն իսկ արձանագրված որոշ խնդիրների կանոնակարգման նպատակով:

1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Բազմաբնակարան շենքերի կառավարման բնագավառում առկա խնդիրների կանոնակարգման նպատակով Վարչապետի 2019 թվականի օգոստոսի 20-ի N 1160-Ա որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի կողմից՝ ի թիվս այլ հարցերի, արձանագրվել են հետևյալ խնդիրները.

Բազմաբնակարան շենքի կառավարման ոլորտում՝

- տարանջատված չեն պետական կառավարման լիազոր մարմնի, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները,
- կարգավորված չեն բազմաբնակարան շենքի կառուցումից հետո կառուցապատողի կողմից շենքի կառավարման մարմնին փաստաթղթերի փոխանցման,
- բազմաբնակարան շենքի կառուցումից և բնակարանների վաճառքից հետո ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող գույքը կառուցապատողի կողմից շենքի սեփականատերերին փոխանցում,
- բազմաբնակարան շենքի կառուցման մեկնարկից մինչև կառավարման մարմնի ձևավորում ընկած ժամանակահատվածում հաճախ կառուցապատողի կողմից ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող գույքի մասն առանձնացվում և օտարվում է ըստ հայեցողության, ինչի արդյունքում Շենքի միասնական ամբողջական սպասարկման համար նախատեսված ինժեներական ենթակառուցվածքների, մեխանիկական, էլեկտրական, սանիտարատեխնիկական և այլ սարքավորումները հայտնվում են այլ անձանց սեփականություն հանդիսացող տարածքում և անհնար է դառնում դրանց շահագործումը:

1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Թվարկված խնդիրների կանոնակարգման նպատակով «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքում կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ:

2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Բազմաբնակարան շենքի կառավարման ոլորտում հետևյալ հարցերի կանոնակարգում՝

- պետական կառավարման լիազոր մարմնի, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների տարանջատում,
- բազմաբնակարան շենքի կառուցումից հետո կառուցապատողի կողմից շենքի կառավարման մարմնին փոխանցվող փաստաթղթերի շրջանակի սահմանում,
- բազմաբնակարան շենքի կառուցումից և բնակարանների վաճառքից հետո ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող գույքը կառուցապատողի կողմից շենքի սեփականատերերին փոխանցում,
- բազմաբնակարան շենքի կառուցման մեկնարկից մինչև կառավարման մարմնի ձևավորում ընկած ժամանակահատվածում ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող գույքի (հատկապես՝ Շենքի միասնական ամբողջական սպասարկման համար նախատեսված ինժեներական ենթակառուցվածքների, մեխանիկական, էլեկտրական, սանիտարատեխնիկական և այլ սարքավորումների տեղադրման տարածքների) տնօրինման առանձնահատկությունների և սահմանափակումների սահմանում:

13.3 **<u>«Բազմաբնակարան շենքի կառավարման և պահպանման բնագավառում պետական նպատակային ծրագրերի իրականացման պայմանները, առանձնահատկությունները, կարգը, այդ ծրագրերի ֆինանսավորմանը պետության, ինչպես նաև շենքի շինությունների սեփականատերերի մասնակցության չափը և եղանակը սահմանելու մասին» Կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ</u>**

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի հուլիսի 1-ի ՀՕ-297-Ն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1 հոդվածի 3-րդ մասի 3-րդ և 12-րդ կետերի դրույթներից, ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի N 531-Լ որոշման N 1 հավելվածի 9-րդ գլխից, ինչպես նաև Ազգային ժողովի 2021թ. օգոստոսի 26-ի ՈՒԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի 2.7-րդ՝ «Քաղաքաշինություն» բաժնի 2-րդ պարբերության 8-րդ կետի 2-րդ ենթակետից:

Միջոցառման իրականացման նպատակը՝ **Բազմաբնակարան շենքի կառավարման և պահպանման բնագավառում պետական նպատակային ծրագրերի իրականացման պայմանների, առանձնահատկությունների, կարգի, այդ ծրագրերի ֆինանսավորմանը պետության, ինչպես նաև շենքի շինությունների սեփականատերերի մասնակցության չափի և եղանակի սահմանումն է**:

1**.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի հուլիսի 1-ի ՀՕ-297-Ն օրենքով փոփոխություն է կատարվել «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքում, մասնավորապես նաև օրենքի 31-րդ հոդվածում, որով սահմանվել են Բազմաբնակարան շենքի կառավարման և պահպանման բնագավառում պետական կամ համայնքային աջակցության հիմնական ուղղությունները:

Հիշատակված հոդվածի 31-րդ կետով նախատեսվել է, որ **բազմաբնակարան շենքի կառավարման և պահպանման բնագավառում պետական նպատակային ծրագրերի իրականացման պայմանները, առանձնահատկությունները, կարգը, այդ ծրագրերի ֆինանսավորմանը պետության, ինչպես նաև շենքի շինությունների սեփականատերերի մասնակցության չափը և եղանակը սահմանում է կառավարությունը:**

Նույն օրենսդրական փոփոխության համաձայն՝ Կառավարությունը պարտավոր է մինչև 2022 թվականի հուլիսի 1-ն ապահովել Կառավարության նշված որոշման ընդունումը:

Վարչապետի 2021 թվականի օգոստոսի 13-ի N 853-Ա որոշմամբ **«Բազմաբնակարան շենքի կառավարման և պահպանման բնագավառում պետական նպատակային ծրագրերի իրականացման պայմանները, առանձնահատկությունները, կարգը, այդ ծրագրերի ֆինանսավորմանը պետության, ինչպես նաև շենքի շինությունների սեփականատերերի մասնակցության չափը և եղանակը սահմանելու մասին»** Կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ ներկայացնելու ժամկետ է սահմանվել 2022 թվականի մայիսի 3-րդ տասնօրյակը:

1**.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի հուլիսի 1-ի ՀՕ-297-Ն օրենքից բխող՝ «Բազմաբնակարան շենքի կառավարման և պահպանման բնագավառում պետական նպատակային ծրագրերի իրականացման պայմանները, առանձնահատկությունները, կարգը, այդ ծրագրերի ֆինանսավորմանը պետության, ինչպես նաև շենքի շինությունների սեփականատերերի մասնակցության չափը և եղանակը սահմանելու մասին» Կառավարության որոշման ընդունում:

2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

«Բազմաբնակարան շենքի կառավարման և պահպանման բնագավառում պետության մասնակցության հստակեցում:

<u>13.4 «ՀՀ վարչական իրավախախտումների մասին օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ</u>

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1 հոդվածի 3-րդ մասի 3-րդ և 12-րդ կետերի դրույթներից, ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի N 531-Լ որոշման N 1 հավելվածի 9-րդ գլխից, ինչպես նաև Ազգային ժողովի 2021թ. օգոստոսի 26-ի ՈՒԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի 2.7-րդ՝ «Քաղաքաշինություն» բաժնի 2-րդ պարբերության 8-րդ կետի 2-րդ ենթակետից:

«**Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքով սահմանված պարտադիր և այլ վճարներն անկանխիկ եղանակով չկատարելու համար վարչական պատասխանատվության նախատեսումն** է:

1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

ՀՀ Ազգային ժողովի 2020 թվականի հունվարի 24-ին «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» և «Համատիրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքները, որոնց համաձայն «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքում սահմանված պարտադիր և այլ վճարները պետք է կատարվեն անկանխիկ եղանակով՝ յուրաքանչյուր բազմաբնակարան շենքի համար առանձին, բազմաբնակարան շենքի կառավարման մարմնի անվամբ այդ նպատակով բացված բանկային հաշվին փոխանցելու եղանակով, իսկ բանկային հաշվի վարման կարգը սահմանվել է **Կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի N2078-Ն որոշմամբ:**

2021 թվականի առաջին կիսամյակի արդյունքների ամփոփման արդյունքում վճարների անկանխիկ եղանակով վճարումներ կատարելու նպատակով բանկային հաշիվներ են բացել բազմաբնակարան շենքերի մոտ 60%-ը (հիմնականում՝ ի հաշիվ Երևան քաղաքի): Մնացած շենքերի մասով առաջընթացը խիստ դանդաղ է հատկապես մարզային բնակավայրերի բազմաբնակարան շենքերի մասով:

1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

«**Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքով սահմանված պարտադիր և այլ վճարներն անկանխիկ եղանակով չկատարելու համար վարչական պատասխանատվության նախատեսում:**

2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքում սահմանված պարտադիր և այլ վճարների իրականացում անկանխիկ եղանակով և ֆինանսական հոսքերի թափանցիկության բարձրացում:

<u>13.5 «ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 7-ի N 2078-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» Կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ</u>

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1 հոդվածի 3-րդ մասի 3-րդ և 12-րդ կետերի դրույթներից, ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի N 531-Լ որոշմամբ հաստատված՝ քաղաքաշինության բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրից, ինչպես նաև Ազգային ժողովի 2021թ. օգոստոսի 26-ի ՆԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի 2.7-րդ՝ «Քաղաքաշինություն» բաժնի 2-րդ պարբերության 8-րդ կետի 2-րդ ենթակետից:

Նպատակը **«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքով սահմանված պարտադիր և այլ վճարներն անկանխիկ եղանակով կատարումը դյուրինացնելն է:**

1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

ՀՀ Ազգային ժողովի 2020 թվականի հունվարի 24-ին «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» և «Համատիրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքները, որոնց համաձայն «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքում սահմանված պարտադիր և այլ վճարները պետք է կատարվեն անկանխիկ եղանակով՝ յուրաքանչյուր բազմաբնակարան շենքի համար առանձին, բազմաբնակարան շենքի կառավարման մարմնի անվամբ այդ նպատակով բացված բանկային հաշվին փոխանցելու եղանակով, իսկ բանկային հաշվի վարման կարգը սահմանվել է **Կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի N 2078-Ն որոշմամբ:**

Սակայն որոշ համատիրությունների և բանկերի կողմից բարձրացվել է նշված կարգում «անկանխիկ եղանակով» եզրույթի մանրամասնեցման անհրաժեշտության հարցը, քանի որ որոշ դեպքերում բանկերը բանկային հաշվին գումար մուտքագրելը մեկնաբանում են որպես կանխիկ գործարք:

1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 21-ի N 1609-Ա որոշմամբ հավանության է արժանացել «Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքի նախագիծը, որում անկանխիկ ձևով գործառնություն (վճարում) են սահմանված այն վճարումները, որոնք ուղղված են շահառուի (վճար ստացողի) բանկային հաշվին:

Նախատեսվում է Կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի N 2078-Ն որոշման մեջ «անկանխիկ եղանակով» եզրույթի մանրամասնեցում՝ համաձայն վերը նշված ձևակերպման:

2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

	«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքում սահմանված պարտադիր և այլ վճարների իրականացում անկանխիկ եղանակով իրականացման դյուրինացում:
14.	**ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԱՆՑՈՒՄ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ**
	<u>14.1 «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքում փոփոխություններ լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ</u> **1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1 հոդվածի 3-րդ մասի 3-րդև 12-րդ կետերիիդրույթներից, ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի N 531-Լ, որոշման N 1 հավելվածի 9-րդ գլխից, ինչպես նաև Ազգային ժողովի 2021թ. օգոստոսի 26-ի ՆԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի 2.7-րդ՝ «Քաղաքաշինություն» բաժնի 2-րդ պարբերության 8-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերից: Միջոցառման իրականացման նպատակը՝ բազմաբնակարան շենքի կառավարումը դիտարկել որպես մասնագիտացված գործունեության տեսակ դիտարկելու համար անհրաժեշտ իրավական օրենսդրական ստեղծումն է: **1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** 1991 թվականից հետո բնակարանային ոլորտում իրականացված բարեփոխումների արդյունքում ձևավորվել է ինստիտուցիոնալ նոր միջավայր, մասնավոր սեփականության գերակայությամբ՝ բազմաբնակարան շենքերի բնակարանների 99%-ը ներկայումս մասնավոր սեփականություն է: Բնակարանային տնտեսության բնագավառում իրականացված բարեփոխումները անհրաժեշտություն առաջացրեցին վերակազմավորել բնակարանային ֆոնդի կառավարման ինստիտուցիոնալ համակարգը: Արդյունքում, բազմաբնակարան շենքի կառավարման առավել արդյունավետ ձև ընտրվեց շենքերի շինությունների սեփականատերերի կողմից կառավարման մարմինների, մասնավորապես, համատիրությունների ստեղծումը: Վերջիններս հիմնական խնդիրը՝ հավաքագրել շենքերի սեփականատերերի միջոցները ու դրանք ուղղել սահմանված պարտադիր նորմերի շրջանակներում տվյալ շենքի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման ու անվտանգ շահագործման ապահովմանը: Այդուհանդերձ, այդ գործառույթն իրականացվում է հիմնականում ոչ պատշաճ, որում գերակշռող պատճառ է հանդիսանում բազմաբնակարան շենքերի կառավարման գործառույթներ իրականացնող անձանց մասնագիտական գիտելիքների, հմտությունների և կարողությունների բացն, ինչն էապես սահմնափակում են առաջընթացի հնարավորությունները: **1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Օրենսդրությամբ Բազմաբնակարան շենքի կառավարումը որպես մասնագիտացված գործունեության տեսակ դիտարկում Բազմաբնակարան շենքերի կառավարման գործառույթներ իրականացնող անձանց մասնագիտական որակավորմանը ներկայացվող պահանջները սահմանելու մասով Կառավարությանը լիազորող նորմի սահմանում **2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Բազմաբնակարան շենքի մասնագիտացված կառավարման համար անհրաժեշտ օրենսդրական հիմքերի ստեղծում:
	<u>14.2 Բազմաբնակարան շենքերի կառավարման գործառույթներ իրականացնող անձանց մասնագիտական որակավորմանը ներկայացվող պահանջները սահմանելու մասին Կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ</u> **1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1 հոդվածի 3-րդ մասի 3-րդ և 12-րդ կետերի դրույթներից, ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի N 531-Լ, որոշման N 1 հավելվածի 9-րդ գլխից, ինչպես նաև Ազգային ժողովի 2021թ. օգոստոսի 26-ի ՆԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի 2.7-րդ՝ «Քաղաքաշինություն» բաժնի 2-րդ պարբերության 8-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերից: Միջոցառման իրականացման նպատակը՝ բազմաբնակարան շենքերի կառավարման գործառույթներ իրականացնող անձանց մասնագիտական որակավորմանը ներկայացվող պահանջների սահմանումն է:

1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

1991 թվականից հետո բնակարանային ոլորտում իրականացված բարեփոխումների արդյունքում ձևավորվել է ինստիտուցիոնալ նոր միջավայր, մասնավոր սեփականության գերակայությամբ՝ բազմաբնակարան շենքերի բնակարանների 99%-ը ներկայումս մասնավոր սեփականություն է:

Բնակարանային տնտեսության բնագավառում իրականացված բարեփոխումները անհրաժեշտություն առաջացրեցին վերակազմավորել բնակարանային ֆոնդի կառավարման ինստիտուցիոնալ համակարգը: Արդյունքում, բազմաբնակարան շենքի կառավարման առավել արդյունավետ ձև ընտրվեց շենքերի շինությունների սեփականատերերի կողմից կառավարման մարմինների, մասնավորապես, համատիրությունների ստեղծումը: Վերջիններս հիմնական խնդիրը՝ հավաքագրել շենքերի սեփականատերերի միջոցները ու դրանք ուղղել սահմանված պարտադիր նորմերի շրջանակներում տվյալ շենքի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման ու անվտանգ շահագործման ապահովմանը:

Այդուհանդերձ, այդ գործառույթն իրականացվում է հիմնականում ոչ պատշաճ, որում գերակշռող պատճառ է հանդիսանում բազմաբնակարան շենքերի կառավարման գործառույթներ իրականացնող անձանց մասնագիտական գիտելիքների, հմտությունների և կարողությունների բացն, ինչն էապես սահմնափակում են առաջընթացի հնարավորությունները:

1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Բազմաբնակարան շենքի մասնագիտացված կառավարման համար անհրաժեշտ օրենսդրական հիմքերի ստեղծումից հետո սահմանել բազմաբնակարան շենքերի կառավարման գործառույթներ իրականացնող անձանց մասնագիտական որակավորմանը ներկայացվող պահանջներ:

2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Բազմաբնակարան շենքերի կառավարման գործառույթներ իրականացնող անձանց մասնագիտական որակավորման սահմանված պահանջներ**:**

<u>14.3 Բազմաբնակարան շենքերի կառավարման գործառույթներ իրականացնող անձանց մասնագիտական որակավորման սահմանված պահանջների հիման վրա վերապատրաստման դասընթացների հարցաշարերի կազմում</u>

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1 հոդվածի 3-րդ մասի 12-րդ կետի դրույթներից, ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի N 531-Լ, որոշման N 1 հավելվածի 9-րդ գլխից, ինչպես նաև Ազգային ժողովի 2021թ. օգոստոսի 26-ի ՈՒԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի 2.7-րդ՝ «Քաղաքաշինություն» բաժնի 2-րդ պարբերության 8-րդ կետի 1-ին ենթակետից:

Միջոցառման իրականացման նպատակը՝ բազմաբնակարան շենքերի կառավարման գործառույթներ իրականացնող անձանց համար մասնագիտական որակավորման սահմանված պահանջների հիման վրա կրթական, վերապատրաստման դասընթացների մշակումն է:

1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

1991 թվականից հետո բնակարանային ոլորտում իրականացված բարեփոխումների արդյունքում ձևավորվել է ինստիտուցիոնալ նոր միջավայր, մասնավոր սեփականության գերակայությամբ՝ բազմաբնակարան շենքերի բնակարանների 99%-ը ներկայումս մասնավոր սեփականություն է:

Բնակարանային տնտեսության բնագավառում իրականացված բարեփոխումները անհրաժեշտություն առաջացրեցին վերակազմավորել բնակարանային ֆոնդի կառավարման ինստիտուցիոնալ համակարգը: Արդյունքում, բազմաբնակարան շենքի կառավարման առավել արդյունավետ ձև ընտրվեց շենքերի շինությունների սեփականատերերի կողմից կառավարման մարմինների, մասնավորապես, համատիրությունների ստեղծումը: Վերջիններս հիմնական խնդիրը՝ հավաքագրել շենքերի սեփականատերերի միջոցները ու դրանք ուղղել սահմանված պարտադիր նորմերի շրջանակներում տվյալ շենքի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման ու անվտանգ շահագործման ապահովմանը:

Այդուհանդերձ, այդ գործառույթն իրականացվում է հիմնականում ոչ պատշաճ, որում գերակշռող պատճառ է հանդիսանում բազմաբնակարան շենքերի կառավարման գործառույթներ իրականացնող անձանց մասնագիտական գիտելիքների, հմտությունների և կարողությունների բացն, ինչն էապես սահմանափակում են առաջընթացի հնարավորությունները:

ՀՀ կառավարության կողմից 2023 թվականի հոկտեմբերի 12-ի N1737-ն որոշմամբ սահմանվել են բազմաբնակարան շենքերի կառավարման գործառույթներ իրականացնող անձանց մասնագիտական

որակավորմանը ներկայացվող պահանջները, այդ պահանջների հիման վրա անձանց վերապատրաստման և բազմաբնակարան շենքերի կառավարմանը նրանց ներգրավման կարգը:

Որոշմամբ սահմանվել է, որ վերապատրաստման դասընթացները պետք է մեկնարկեն 2025 թվականի հուլիսի 1-ից, այդ դասընթացները պետք է կազմակերպվեն «Կրթության մասին» օրենքի համաձայն լրացուցիչ կրթական ծրագրի իրականացման իրավասությամբ օժտված ԲՈՒՀ-երը և կազմակերպությունները, իսկ մինչ այդ ՀՀ քաղաքաշինության կոմիտեն՝ համապատասխան հանձնաժողովի միջոցով, պետք է ապահովի այդ դասընթացների հարցաշարերի մշակման աշխատանքները:

1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Բազմաբնակարան շենքերի կառավարման գործառույթներ իրականացնող անձանց մասնագիտական որակավորման պահանջների սահմանումից հետո անձանց համար մասնագիտական որակավորման սահմանված պահանջների հիման վրա կրթական, վերապատրաստման դասընթացների համար հարցաշարերի մշակում**:**

2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Բազմաբնակարան շենքերի կառավարման գործառույթներ իրականացնող անձանց մասնագիտական որակավորման սահմանված պահանջների հիման վրա այդ անձանց համար անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների և կարողությունների շրջանակի սահմանման, ապա ստուգման համար մշակված հարցաշարեր:

<u>14.4 Բազմաբնակարան շենքերի կառավարման գործառույթներ իրականացնող անձանց մասնագիտական որակավորմանը ներկայացվող պահանջների հիման վրա վերապատրաստման դասընթացների Կազմակերպում</u>

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1 հոդվածի 3-րդ մասի 12-րդ կետի դրույթներից, ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի N 531-Լ որոշման N 1 հավելվածի 9-րդ գլխից, ինչպես նաև Ազգային ժողովի 2021թ. օգոստոսի 26-ի ՈՒԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի 2.7-րդ՝ «Քաղաքաշինություն» բաժնի 2-րդ պարբերության 8-րդ կետի 1-ին ենթակետից:

Միջոցառման իրականացման նպատակը՝ բազմաբնակարան շենքերի կառավարման գործառույթներ իրականացնող անձանց համար մասնագիտական որակավորման սահմանված պահանջների հիման վրա վերապատրաստման դասընթացների կազմակերպումն է:

1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

1991 թվականից հետո բնակարանային ոլորտում իրականացված բարեփոխումների արդյունքում ձևավորվել է ինստիտուցիոնալ նոր միջավայր, մասնավոր սեփականության գերակայությամբ՝ բազմաբնակարան շենքերի բնակարանների 99%-ը ներկայումս մասնավոր սեփականություն է:

Բնակարանային տնտեսության բնագավառում իրականացված բարեփոխումները անհրաժեշտություն առաջացրեցին վերակազմավորել բնակարանային ֆոնդի կառավարման ինստիտուցիոնալ համակարգը: Արդյունքում, բազմաբնակարան շենքի կառավարման առավել արդյունավետ ձև ընտրվեց շենքերի շինությունների սեփականատերերի կողմից կառավարման մարմինների, մասնավորապես, համատիրությունների ստեղծումը: Վերջիններս հիմնական խնդիրը՝ հավաքագրել շենքերի սեփականատերերի միջոցները ու դրանք ուղղել սահմանված պարտադիր նորմերի շրջանակներում տվյալ շենքի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման ու անվտանգ շահագործման ապահովմանը:

Այդուհանդերձ, այդ գործառույթն իրականացվում է հիմնականում ոչ պատշաճ, որում գերակշռող պատճառ է հանդիսանում բազմաբնակարան շենքերի կառավարման գործառույթներ իրականացնող անձանց մասնագիտական գիտելիքների, հմտությունների և կարողությունների բացն, ինչն էապես սահմնափակում են առաջընթացի հնարավորությունները:

1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Միջոցառման իրականացման նպատակը՝ բազմաբնակարան շենքերի կառավարման գործառույթներ իրականացնող անձանց համար մասնագիտական որակավորման սահմանված պահանջների հիման վրա մշակված վերապատրաստման դասընթացների կազմակերպումն է:

2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Բազմաբնակարան շենքի կառավարման բնագավառում մասնագիտացված կառավարիչների պատրաստում:

15.	**ԱՆԲԱՎԱՐԱՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ (3-ՐԴ և 4-ՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ ՎՆԱՍՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ) ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ**
	15.1.«Քաղաքաշինության մասին» օրենքում լրացում կատարելու մասին օրենքի նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ **1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1 հոդվածի 3-րդ մասի 3-րդ և 12-րդ կետերի դրույթներից, ՀՀ կառավարության 2021 թվականի մարտի 18-ի N 376-Լ որոշմամբ հաստատված՝ անբավարար տեխնիկական վիճակում գտնվող բնակարանային ֆոնդի հիմնախնդրի կանոնակարգման հայեցակարգից և ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի N 531-Լ որոշմամբ հաստատված՝ քաղաքաշինության բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրից, ինչպես նաև Ազգային ժողովի 2021թ. օգոստոսի 26-ի ՆԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի 2.7-րդ՝ «Քաղաքաշինություն» բաժնի 2-րդ պարբերության 8-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետից: Միջոցառման իրականացման նպատակը՝ անբավարար տեխնիկական վիճակում գտնվող բնակֆոնդի հիմնախնդրի կանոնակարգման հարցում «դերերի» սահմանումը և բաշխումն է: **1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Վերջին տարիներին Կառավարության կառուցվածքային փոփոխություններից բխող՝ պետական կառավարման համակարգի մարմինների գործառույթների վերանայումից և ծրագրային բյուջետավարման ներդրումից հետո անորոշ է, թե պետական կառավարման որ մարմիններն են պատասխանատու խնդրի կանոնակարգման համար: Մասնավորապես, խնդիրը սոցիալական ասպեկտում դիտարկելու պարագայում այն փոխադրվում է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, տարածքային կառավարմանը կամ զարգացմանն առնչվող խնդիր դիտարկելու դեպքում՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, որպես մարդկանց կյանքին, առողջությանը և գույքին սպառնացող վտանգ դիտարկելու դեպքում՝ Արտակարգ իրավիճակների նախարարության, իսկ որպես բնակֆոնդի պահպանման, շահագործման խնդիր դիտարկելու դեպքում՝ Քաղաքաշինության կոմիտեի տիրույթ և այլն: Արդյունքում, խնդրի կանոնակարգումը հեռու է բավարար լինելուց և ինչպես միջազգային և տեղական կառույցների, այնպես էլ քաղաքացիների համար անորոշ են խնդրի կանոնակարգման հարցերում դերակատարները և նրանց պարտականությունները: **1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Ուժեղացման-վերակառուցման ենթակա և քանդման ենթակա՝ վթարային բնակարանային ֆոնդի հիմնախնդիրների կանոնակարգման մասով տարանջատել լիազոր մարմնի, տեղական ինքնակառավարման, տարածքային կառավարման և պետական կառավարման համակարգի մարմինների դերերը: **2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Անբավարար տեխնիկական վիճակում գտնվող բնակֆոնդի հիմնախնդրին առնչվող հարցերում Կառավարության համար լիազորող նորմեր:
	15.2.Բնակարանային ֆոնդի տեխնիկական վիճակի վերաբերյալ տեղեկատվական համակարգ ստեղծելու մասին Կառավարության որոշման նախագծերի ներկայացում Վարչապետի աշխատակազմ **1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1 հոդվածի 3-րդ մասի 3-րդ և 12-րդ կետերի դրույթներից, ՀՀ կառավարության 2021 թվականի մարտի 18-ի N 376-Լ որոշմամբ հաստատված՝ անբավարար տեխնիկական վիճակում գտնվող բնակարանային ֆոնդի հիմնախնդրի կանոնակարգման հայեցակարգից և ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի N 531-Լ որոշմամբ հաստատված՝ քաղաքաշինության բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրից, ինչպես նաև Ազգային ժողովի 2021թ. օգոստոսի 26-ի ՆԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի 2.7-րդ՝ «Քաղաքաշինություն» բաժնի 2-րդ պարբերության 8-րդ կետի 3-րդ ենթակետից: Միջոցառման իրականացման նպատակը՝ բնակֆոնդի տեխնիկական վիճակի վերաբերյալ տեղեկատվական համակարգի ձևավորման համար իրավական հիմքերի ստեղծումն է: **1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** ՀՀ մարզերից և Երևանի քաղաքապետարանից հավաքագրված տվյալների համաձայն՝ ըստ բազմաբնակարան շենքերի տեխնիկական վիճակի հետազննության արդյունքներով առկա եզրակացությունների,

հանրապետությունում առկա է անբավարար տեխնիկական վիճակում գտնվող (3-րդ և 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող) ավելի քան 600 բազմաբնակարան շենք: Այսինքն, առկա տվյալների համաձայն անբավարար տեխնիկական վիճակում է գտնվում հանրապետության մոտ 19000 բազմաբնակարան շենքերի 3.2%-ը: Հիմնական ծավալները բաժին են ընկնում Երևան քաղաքին՝ 120 բազմաբնակարան շենք, Լոռու և Շիրակի մարզերին համապատասխանաբար՝ 149 և 123 բազմաբնակարան շենք: Առկա է նաև քանդման ենթակա վթարային՝ 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող ավելի քան 1200 անհատական բնակելի տուն (որից մոտ 1000-ը՝ բնական աղետների հետևանքով):

Սակայն, թվային տվյալները հիմնված են 2003-2006 թվականների իրականացված տեխնիկական վիճակի հետազննության արդյունքների, վերջին տարիներին կատարված հարցումների վրա և չունեն բավարար ճշտություն:

Բնակֆոնդի (մասնավորապես՝ բնաֆոնդի տեխնիկական վիճակի) վերաբերյալ չունենալով լիարժեք և ակտուալ տեղեկատվություն՝ խնդիրներ են առաջանում ինչպես հիմնախնդիրների կանոնակարգման ընթացակարգեր մշակելու և ներդնելու, այնպես էլ այդ կանոնակարգումը ներդրումային ծրագրերի շրջանակներում դիտարկելու համար: Բազմաբնակարան շենքերի տեղեկատվական համակարգի բացակայությունը բացասաբար է ազդում խնդիրների կանոնակարգմանն ուղղված առավել արդյունավետ քաղաքականության մշակման և իրականացման գործընթացների վրա:

1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Անբավարար տեխնիկական վիճակում գտնվող բնակֆոնդի հիմնախնդրի մասով որոշումներ կայացնելու համար անհրաժեշտ՝ բնակարանային ֆոնդի տեխնիկական վիճակի վերաբերյալ տեղեկատվական համակարգ ստեղծելու համար իրավական հիմքերի ամրագրում:

2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Բնակֆոնդի տեխնիկական վիճակի հետազննության արդյունքում տրված եզրակացությունների հիման վրա տեղեկատվական համակարգի ստեղծում՝ ակտուալ ժամանակահատվածում առավել վատթար վիճակում գտնվող շենքերի մասով տվյալների դուրսբերման հնարավորությամբ:

<u>15.3. Ուժեղացման-վերակառուցման ենթակա (3-րդ աստիճանի վնասվածություն ունեցող) բնակարանային ֆոնդի հիմնախնդիրների կանոնակարգման պետական քաղաքականությունը սահմանելու մասին Կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ</u>

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1 հոդվածի 3-րդ մասի 3-րդ և 12-րդ կետերի դրույթներից, ՀՀ կառավարության 2021 թվականի մարտի 18-ի N 376-Լ որոշմամբ հաստատված՝ անբավարար տեխնիկական վիճակում գտնվող բնակարանային ֆոնդի հիմնախնդրի կանոնակարգման հայեցակարգից և ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի N 531-Լ որոշմամբ հաստատված՝ քաղաքաշինության բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրից, ինչպես նաև Ազգային ժողովի 2021թ. օգոստոսի 26-ի ՆԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի 2.7-րդ՝ «Քաղաքաշինություն» բաժնի 2-րդ պարբերության 8-րդ կետի 3-րդ ենթակետից:

Միջոցառման իրականացման նպատակը՝ բնակարանային ֆոնդի ուժեղացման-վերակառուցմանն ուղղված ծրագրերի իրականացման համար միջազգային փորձի վրա հիմնված իրավական հիմքերի ստեղծումն է, մոտեցումների և առաջնահերթությունների սահմանումը:

1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Հետխորհրդային տարիներին բնակարանային ֆոնդի անվտանգ շահագործման ապահովման ուղղությամբ համակարգված լայնածավալ աշխատանքներ չեն իրականացվել (խնդիրների լուծումն ավելի շատ կրել է իրավիճակային բնույթ): Բազմաբնակարան շենքերի սեփականատերերի կողմից ևս շենքերի պահպանման աշխատանքները չեն կատարվել անհրաժեշտ ծավալով և որակով: Արդյունքում, զգալիորեն մեծացել է բնակֆոնդի մաշվածությունը:

Խնդիրների լուծումն ավելի շատ կրել է կետային և իրավիճակային բնույթ: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրականացված մի շարք ծրագրերի շրջանակներում՝ պետական և համայնքային բյուջեներով նախատեսված շուրջ 23.0 մլրդ դրամ միջոցների հաշվին, վերաբնակեցվել են թվով 36 բազմաբնակարան շենքերի մոտ 1300 բնակարանների և շուրջ 2700 անհատական բնակելի տների բնակիչներ:

Շարունակում է խնդիր մնալ բնակիչների անվտանգության ապահովման՝ բնակֆոնդի ուժեղացման-վերականգնման ուղղությամբ համակարգված և շարունակական միջոցառումների չիրականացումը, պետական աջակցության դեպքերի, առաջնահերթությունների, մոտեցումների միասնական սկզբունքի ամրագրման բացակայությունը:

1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Սահմանել ուժեղացման-վերակառուցման ենթակա բնակարանային ֆոնդի հիմնախնդիրների կանոնակարգման պետական քաղաքականությունը՝

- սահմանել պետական աջակցության դեպքերի, առաջնահերթությունների, մոտեցումները,
- հստակեցնել ֆինանսական գնահատականները, ֆինանսավորման աղբյուրները,
- պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գույքը՝ հողամասերը և կիսակառույց բազմաբնակարան շենքերը դիտարկել որպես խնդրի լուծման պետական կամ համայնքային մասնակցություն,
- սահմանափակել անբավարար բնակֆոնդի հետագա առուվաճառքն, ինչպես նաև դրանում քաղաքացիների անձնագրային հաշվառումները,
- ամրագրել ցանկացած բարելավման ծրագրին սեփականատերերի (բնակիչների) ֆինանսական պարտադիր մասնակցությունը,
- անբավարար տեխնիկական վիճակում գտնվող բնակֆոնդի կուտակում ունեցող համայնքներում, թաղամասերում իրականացնել քաղաքաշինական նոր համալիրների կառուցապատման ներդրումային ծրագրեր՝ ստեղծելով նախադրյալներ՝ այդ ծրագրերը մասնավոր ներդրողների համար գրավիչ դարձնելու համար:

2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Բնակարանային ֆոնդի ուժեղացման-վերակառուցմանն ուղղված ծրագրերի իրականացման համար միջազգային փորձի վրա հիմնված իրավական հիմքերի ստեղծում՝ մոտեցումների և առաջնահերթությունների սահմանում:

<u>15.4 Քանդման ենթակա՝ վթարային (4-րդ աստիճանի վնասվածություն) բնակարանային ֆոնդի հիմնախնդիրների կանոնակարգման պետական քաղաքականությունը սահմանելու մասին Կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ</u>

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը (նպատակը)

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1 հոդվածի 3-րդ մասի 3-րդ և 12-րդ կետերի դրույթներից, ՀՀ կառավարության 2021 թվականի մարտի 18-ի N 376-Լ որոշմամբ հաստատված՝ անբավարար տեխնիկական վիճակում գտնվող բնակարանային ֆոնդի հիմնախնդրի կանոնակարգման հայեցակարգից և ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի N 531-Լ որոշման N 2 հավելվածի 16-րդ նպատակի 31.16.2 կետից, ինչպես նաև Ազգային ժողովի 2021թ. օգոստոսի 26-ի ՆԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ինգամյա ծրագրի 2.7-րդ՝ «Քաղաքաշինություն» բաժնի 2-րդ պարբերության 8-րդ կետի 3-րդ ենթակետից:

Միջոցառման իրականացման նպատակը՝ քանդման ենթակա՝ վթարային բնակֆոնդի բնակիչների վերաբնակեցմանն ուղղված ծրագրերի համար միջազգային փորձի վրա հիմնված իրավական հիմքերի ստեղծումը, մոտեցումների և առաջնահերթությունների սահմանումն է:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Հետխորհրդային տարիներին բնակարանային ֆոնդի անվտանգ շահագործման ապահովման ուղղությամբ համակարգված լայնածավալ աշխատանքներ չեն իրականացվել (խնդիրների լուծումն ավելի շատ կրել է իրավիճակային բնույթ): Բազմաբնակարան շենքերի սեփականատերերի կողմից ևս շենքերի պահպանման աշխատանքները չեն կատարվել անհրաժեշտ ծավալով և որակով: Արդյունքում, զգալիորեն մեծացել է բնակֆոնդի մաշվածությունը:

Խնդիրների լուծումն ավելի շատ կրել է կետային և իրավիճակային բնույթ: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրականացված մի շարք ծրագրերի շրջանակներում՝ պետական և համայնքային բյուջեներով նախատեսված շուրջ 23.0 մլրդ դրամ միջոցների հաշվին, վերաբնակեցվել են թվով 36 բազմաբնակարան շենքերի մոտ 1300 բնակարանների և շուրջ 2700 անհատական բնակելի տների բնակիչներ:

Շարունակում է խնդիր մնալ բնակիչների անվտանգության ապահովման՝ բնակֆոնդի ուժեղացման-վերականգնման կամ քանդման և բնակիչների վերաբնակեցման համակարգված և շարունակական միջոցառումների չիրականացումը, պետական աջակցության դեպքերի, առաջնահերթությունների, մոտեցումների միասնական սկզբունքի ամրագրման բացակայությունը:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Սահմանել քանդման ենթակա՝ վթարային բնակարանային ֆոնդի հիմնախնդիրների կանոնակարգման պետական քաղաքականությունը՝

- սահմանել պետական աջակցության դեպքերի, առաջնահերթությունների, մոտեցումները,
- հստակեցնել ֆինանսական գնահատականները, ֆինանսավորման աղբյուրները,
- պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գույքը՝ հողամասերը և կիսակառույց բազմաբնակարան շենքերը դիտարկել որպես խնդրի լուծման պետական կամ համայնքային մասնակցություն,

- սահմանափակել անբավարար բնակֆոնդի հետագա առուվաճառքն, ինչպես նաև դրանում քաղաքացիների անձնագրային հաշվառումները,
- ամրագրել ցանկացած բարելավման ծրագրին սեփականատերերի (բնակիչների) ֆինանսական պարտադիր մասնակցությունը,
- քանդման ենթակա շենքերի բնակիչների մասով ամրագրել պայման՝ քաղաքացիների բնակարանային պայմանների բարելավման պարագայում բազմաբնակարան շենքի կամ անհատական բնակելի տան պարտադիր ապամոնտաժելու, իսկ որոշ դեպքերում (օրինակ՝ սողանաքային գոտիների դեպքում) տվյալ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու վերաբերյալ,
- անբավարար տեխնիկական վիճակում գտնվող բնակֆոնդի կուտակում ունեցող համայնքներում, թաղամասերում իրականացնել քաղաքաշինական նոր համալիրների կառուցապատման ներդրումային ծրագրեր՝ ստեղծելով նախադրյալներ՝ այդ ծրագրերը մասնավոր ներդրողների համար գրավիչ դարձնելու համար:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Քանդման ենթակա՝ վթարային բնակֆոնդի բնակիչների վերաբնակեցմանն ուղղված ծրագրերի համար միջազգային փորձի վրա հիմնված իրավական հիմքերի ստեղծում, մոտեցումների և առաջնահերթությունների սահմանում:

<u>15.5 «Բնակարանային ֆոնդի ուժեղացման և վերակառուցման կամ քանդման դեպքում այդ ֆոնդից քաղաքացիների ժամանակավոր վերաբնակեցման կարգը սահմանելու սահմանելու մասին Կառավարության որոշման նախագծի ընդունում</u>

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1 հոդվածի 3-րդ մասի 3-րդ և 12-րդ կետերի դրույթներից, ՀՀ կառավարության 2021 թվականի մարտի 18-ի N 376-Լ որոշմամբ հաստատված՝ անբավարար տեխնիկական վիճակում գտնվող բնակարանային ֆոնդի հիմնախնդրի կանոնակարգման հայեցակարգից և ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի N 531-Լ որոշմամբ հաստատված՝ քաղաքաշինության բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրից, ինչպես նաև Ազգային ժողովի 2021թ. օգոստոսի 26-ի ՈՒԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի 2.7-րդ՝ «Քաղաքաշինություն» բաժնի 2-րդ պարբերության 8-րդ կետի 3-րդ ենթակետից:

Միջոցառման իրականացման նպատակը՝ ուժեղացման-վերակառուցման և քանդման ենթակա՝ վթարային բնակարանային ֆոնդից քաղաքացիների վերաբնակեցման կարգի սահմանումն է:

1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Ուժեղացման-վերակառուցման և քանդման ենթակա՝ վթարային բնակարանային ֆոնդից քաղաքացիների վերաբնակեցման բնակարանային ֆոնդից քաղաքացիների վերաբնակեցումն իրականացվում է հիմնականում համայնքի կողմից՝ առկա ֆինանսական հնարավորությունների շրջանակներում: Ընդ որում, հիմնականում ցուցաբերվում է ոչ միատեսակ մոտեցում՝ քաղաքացիների վերաբնակեցման հարցում:

Առկա խնդիրը հիմնականում կարգավորվում է քաղաքացիներին բնակարան վարձակալելու համար ֆինանսական աջակցության տրամադրմամբ:

Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի մարտի 5-ի N 130 որոշմամբ հավանության է արժանացել «Վթարային բնակելի շենքերից բնակիչների վերաբնակեցման մասին հայեցակարգը», որի գործողությունը սահմանված է մինչև ՀՀ բնակարանային օրենսդրության կատարելագործումը, պետության կողմից սահմանված կարգով բնակարանով ապահովման պարտավորությունների ձևակերպման՝ համապատասխան սերտիֆիկատների ներդրումը, հանրապետությունում ապահովագրական համակարգի վերջնական ձևավորումը և գործունեության լիարժեք ծավալումը:

Առկա իրավական դաշտը բավարար չէ՝ քաղաքացիների վերաբնակեցման հետ կապված հարցերը համակարգված և միասնական մոտեցումների համաձայն լուծելու համար:

1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Անբավարար և բնակության համար վտանգավոր գնահատված բնակֆոնդից քաղաքացիների վերաբնակեցման կարգի և պայմանների սահմանում՝ վերաբնակեցված շենքերի պարտադիր քանդման, բնակֆոնդի երկրորդային շրջանառության բացառման միջոցով:

2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Անբավարար տեխնիկական վիճակում գտնվող բնակֆոնդի ուժեղացման-վերակառուցման ժամանակա-հատվածում քաղաքացիների ժամանակավոր վերաբնակեցման կամ վթարային շենքերի քանդման դեպքում քաղաքացիների հիմնական վերաբնակեցման ընթացակարգի ամրագրում:

15.6 Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N274-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին Կառավարության որոշման նախագծի ընդունում

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1 հոդվածի 3-րդ մասի 3-րդ և 12-րդ կետերի դրույթներից, ՀՀ կառավարության 2021 թվականի մարտի 18-ի N 376-Լ որոշմամբ հաստատված՝ անբավարար տեխնիկական վիճակում գտնվող բնակարանային ֆոնդի հիմնախնդրի կանոնակարգման հայեցակարգից և ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի N 531-Լ որոշմամբ հաստատված՝ քաղաքաշինության բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրից, ինչպես նաև Ազգային ժողովի 2021թ. օգոստոսի 26-ի ՆԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի 2.7-րդ՝ «Քաղաքաշինություն» բաժնի 2-րդ պարբերության 8-րդ կետի 3-րդ ենթակետից:

Միջոցառման իրականացման նպատակը՝ բնակֆոնդի տեխնիկական վիճակի հետազննությունների անցկացման և արդյունքում տրված եզրակացությունների վարման ընթացակարգերի սահմանումն է:

1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

ՀՀ մարզերից և Երևանի քաղաքապետարանից հավաքագրված տվյալների համաձայն՝ ըստ բազմաբնակարան շենքերի տեխնիկական վիճակի հետազննության արդյունքներով առկա եզրակացությունների, հանրապետությունում առկա է անբավարար տեխնիկական վիճակում գտնվող (3-րդ և 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող) ավելի քան 600 բազմաբնակարան շենք: Այսինքն, առկա տվյալների համաձայն անբավարար տեխնիկական վիճակում է գտնվում հանրապետության մոտ 19000 բազմաբնակարան շենքերի 3.2%-ը: Հիմնական ծավալները բաժին են ընկնում Երևան քաղաքին՝ 120 բազմաբնակարան շենք, Լոռու և Շիրակի մարզերին համապատասխանաբար՝ 149 և 123 բազմաբնակարան շենք: Առկա է նաև քանդման ենթակա վթարային՝ 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող ավելի քան 1200 անհատական բնակելի տուն (որից մոտ 1000-ը՝ բնական աղետների հետևանքով):

Սակայն, թվային տվյալները հիմնված են 2003-2006 թվականների իրականացված տեխնիկական վիճակի հետազննության արդյունքների, վերջին տարիներին կատարված հարցումների վրա և չունեն բավարար ճշտություն:

Բնակֆոնդի (մասնավորապես՝ բնաֆոնդի տեխնիկական վիճակի) վերաբերյալ չունենալով լիարժեք և ակտուալ տեղեկատվություն՝ խնդիրներ են առաջանում ինչպես հիմնախնդիրների կանոնակարգման ընթացակարգեր մշակելու և ներդնելու, այնպես էլ այդ կանոնակարգումը ներդրումային ծրագրերի շրջանակներում դիտարկելու համար: Բազմաբնակարան շենքերի տեղեկատվական համակարգի բացակայությունը բացասաբար է ազդում խնդիրների կանոնակարգմանն ուղղված առավել արդյունավետ քաղաքականության մշակման և իրականացման գործընթացների վրա:

1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 274-Ն որոշման մեջ փոփոխությունների կատարում, Շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազննությունների անցկացման և արդյունքում տրված եզրակացությունների վարման համար իրավական հիմքերի ստողծում:

2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազննությունների անցկացման և արդյունքում տրված եզրակացությունների վարման ընթացակարգերի սահմանում:

15.7 Անբավարար տեխնիկական վիճակում գտնվող բնակֆոնդի հիմնախնդրի լուծմանն ուղղված ծրագրերի իրականացում

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1 հոդվածի 3-րդ մասի 3-րդ և 12-րդ կետերի դրույթներից, ՀՀ կառավարության 2021 թվականի մարտի 18-ի N 376-Լ որոշմամբ հաստատված՝ անբավարար տեխնիկական վիճակում գտնվող բնակարանային ֆոնդի հիմնախնդրի կանոնակարգման հայեցակարգից և ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի N 531-Լ որոշմամբ հաստատված՝ քաղաքաշինության բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրից, ինչպես նաև Ազգային ժողովի 2021թ. օգոստոսի 26-ի ՆԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի 2.7-րդ՝ «Քաղաքաշինություն» բաժնի 2-րդ պարբերության 8-րդ կետի 3-րդ ենթակետից:

Միջոցառման իրականացման նպատակը՝ Կառավարության կողմից սահմանված սկզբունքների, մոտեցումների և առաջնահերթությունների համաձայն անբավարար տեխնիկական վիճակում գտնվող բնակֆոնդի հիմնախնդրի

	լուծման մեկնարկն է և 2024-2026 թվականների ընթացքում հանրապետությունում 2021 թվականի դրությամբ վթարային (4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող) բազմաբնակարան շենքերի առնվազն 70 տոկոսի խնդրի լուծումը: **1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** ՀՀ կառավարության 2021 թվականի մարտի 18-ի N376-Լ որոշմամբ հաստատվել է անբավարար տեխնիկական վիճակում գտնվող բնակարանային ֆոնդի հիմնախնդրի կանոնակարգման հայեցակարգը և դրանից բխող միջոցառումների ծրագիրը: Հայեցակարգի հիմնական նպատակն անբավարար տեխնիկական վիճակում գտնվող բնակֆոնդի հիմնախնդրի կանոնակարգման համար 2021-2023 թվականների ընթացքում իրավական հիմքերի ստեղծումն է՝ Հայեցակարգից բխող միջոցառումների ծրագրում ներառված իրավական ակտերի մշակման միջոցով, հիմնախնդրի կանոնակարգման համար լուծումների առաջադրումը, պետական քաղաքականության հիմնական մոտեցումների հստակեցումը և այդ մոտեցումների արդյունավետությունը, հասցեականությունը, առաջնահերթությունների ապահովումը: Հայեցակարգի առանցքային դրույթներից է նաև, որ մշակվող պետական քաղաքականությունը պետք է նպաստի սեփականատերերի մասնակցային գործընթացին, խրախուսի հիմնախնդրի կանոնակարգումը հնարավորինս կառուցապատման ներդրումային ծրագրերի շրջանակներում դիտարկելու հնարավորությունը՝ նմանատիպ ծրագրերի իրականացման համար ներդրումների և գործարարության համար բարենպաստ միջավայրի ստեղծման եղանակով: Վերը նշված իրավական հիմքերի ստեղծումից հետո նախատեսվում է մեկնարկել Անբավարար տեխնիկական վիճակում գտնվող բնակֆոնդի հիմնախնդրի լուծմանն ուղղված ծրագրերի իրականացումը: **1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Կառավարության կողմից սահմանված սկզբունքների, մոտեցումների և առաջնահերթությունների համաձայն անբավարար տեխնիկական վիճակում գտնվող բնակֆոնդի հիմնախնդրի փուլային լուծմանն ուղղված ծրագրերի իրականացում, առաջին փուլով՝ մինչև 2026 թվականը, հանրապետությունում 2021 թվականի դրությամբ վթարային (4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող) բազմաբնակարան շենքերի առնվազն 70 տոկոսի խնդրի լուծման մեկնարկ **2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Անբավարար տեխնիկական վիճակում գտնվող բնակֆոնդի բնակիչների բնակարանային պայմանների բարելավում, քաղաքաշինական տեսանկյունից բնակության համար վտանգավոր բազմաբնակարան շենքերի քանդման և իսկ վերակառուցման ենթակա շենքերի մասով՝ ուժեղացման և վերականգնման աշխատանքների շարունակական իրականացում:
16	**ԲՆԱԿԱՐԱՆԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ և ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՐԱԳՐՈՒՄ**
	<u>16.1. Սահմանադրությամբ Կառավարության՝ բնակարանային շինարարության հանձնառությունը խթանելու նպատակով բնակարանաշինության ֆինանսավորման և բնակարանային քաղաքականության ոլորտներում պետական միասնական քաղաքականությունը սահմանող Կառավարության որոշման նախագծի ընդունում</u> **1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է Սահմանադրության 86-րդ հոդվածի 3-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1 հոդվածի 3-րդ մասի 3-րդ և 12-րդ կետերի դրույթներից, ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի N 531-Լ որոշմամբ հաստատված՝ քաղաքաշինության բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրից, ինչպես նաև Ազգային ժողովի 2021թ. օգոստոսի 26-ի ՆԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի 2.7-րդ՝ «Քաղաքաշինություն» բաժնի 2-րդ պարբերության 8-րդ կետի 4-րդ ենթակետից: Միջոցառման իրականացման նպատակը՝ բնակարանային շինարարության հանձնառությունը խթանելու նպատակով բնակարանաշինության ֆինանսավորման և բնակարանային քաղաքականության ոլորտներում պետական միասնական քաղաքականությունը սահմանումն է: **1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Հաշվի առնելով բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքների թվի մեծությունն, ինչպես նաև մինչև 2050 թվականը բնակչության թիվը մինչև 5.0 մլն. հասցնելու վերաբերյալ Կառավարության տեսլականը՝ հանրապետության բնակֆոնդի ընդլայնման անհրաժեշտություն է առաջանում:

Ներկայումս հանրապետությունում գործում են բնակարանային ուղղվածության մի շարք ծրագրեր: Սակայն ոչ միշտ է, որ այդ ծրագրերը բխում են Սահմանադրությամբ Կառավարության՝ բնակարանային շինարարությունը խթանելու հանձնառությունից:

Անգամ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերը հաշվի չեն առնում հանրապետությունում և մասնավորապես կոնկրետ համայնքներում նոր բնակֆոնդի ստեղծման կարիքները, տվյալ համայնքում բակֆոնդի զարգացման և ընդլայնման, դրանց սպասարկման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների հնարավորությունները, իսկ բնակարանային ապահովման ծրագրերի շրջանակներում բնակարան (բնակելի տուն) ձեռք բերելու համար բնակարանի գնման վկայագրի տրամադրման միջոցով ֆինանսական աջակցությունը բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող տարբեր խմբերի տրամադրվում է տրամադրվում է ն իրականացվում են տարբեր մոտեցումներով և սկզբունքներով:

Առանձին դիտարկման կարիք ունի նաև պետության կողմից, որպես բնակարանների հասանելիությունն ապահովող հիմնական գործիքի՝ եկամտային հարկի վերադարձի մասով թիրախների սահմանումը, այդ գործիքի կիրառման միջոցով տարածքային համաչափ զարգացման անցանկալի միտումներ զսպելու հնարավորությունը:

1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Սահմանադրությամբ Կառավարության՝ բնակարանային շինարարության հանձնառությունը խթանելու նպատակով բնակարանաշինության ֆինանսավորման և բնակարանային քաղաքականության ոլորտներում պետական միասնական քաղաքականությունը սահմանող Կառավարության որոշման ընդունում:

Դրան զուգահեռ, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից մինչև 2023 թվականի տարեվերջ նախատեսված է մշակել «Բնակարանով ապահովելու միասնական սոցիալական ռազմավարությունը և հնգամյա գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծ և ներկայացնել Վարչապետի աշխատակազմ:

2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Մարզերում բնակարանների առաջնային շուկայի խրախուսմանը, սեփական միջոցների հաշվին շուկայից բնակարան ձեռք բերելու հնարավորություն չունեցող ընտանիքների համար պատշաճ բնակարանային պայմանների հասանելիության, սոցիալական (մատչելի) բնակարանաշինության խթանմանն ուղղված նախադրյալների ստեղծում:

17. **ԵՐԿՐԱՇԱՐԺԻՑ ՀԵՏՈ ՏԵՂԱԴՐՎԱԾ/ԿԱՌՈՒՑՎԱԾ ՈՉ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ**

<u>17.1. Ոչ հիմնական շինությունների հետագա տնօրինման և դրանցում բնակվող ընտանիքների վերաբնակեցման հետ կապված մոտեցումները և առաջնահերթությունները սահմանող Կառավարության որոշման ընդունում</u>

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է Սահմանադրության 83-րդ և 86-րդ հոդվածի 3-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1 հոդվածի 3-րդ մասի 3-րդ և 12-րդ կետերի, «Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագիրը հաստատելու մասին» օրենքի 4-րդ և 7-րդ բաժինների դրույթներից, ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի N 531-Լ որոշմամբ հաստատված՝ քաղաքաշինության բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրից, ինչպես նաև Ազգային ժողովի 2021թ. օգոստոսի 26-ի ՈԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի 2.7-րդ՝ «Քաղաքաշինություն» բաժնի 2-րդ պարբերության 9-րդ կետից:

Միջոցառման նպատակը՝ ոչ հիմնական շինությունների հետագա տնօրինման և դրանցում բնակվող ընտանիքների վերաբնակեցման հետ կապված մոտեցումների և առաջնահերթությունների սահմանման համար իրավական հիմքերի ստեղծումն է:

1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժից հետո տեղադրված կամ կառուցված ոչ հիմնական շինությունների, ինչպես նաև այդ շինություններում բնակվող ընտանիքների վերաբերյալ ամբողջական և արժանահավատ տվյալներ առկա չէր, չկար նաև տեղեկատվություն ոչ հիմնական շինությունների վիճակի, տեղաբաշխման, օգտագործման նպատակի, այդ ոչ հիմնական շինություններում բնակվող ընտանիքների՝ անօթևանի կարգավիճակում հայտնվելու հիմքերի վերաբերյալ:

Վարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 20-ի N 1658–Ա որոշմամբ ստեղծվել է աշխատանքային խումբ (այսուհետ՝ Աշխատանքային խումբ), որին առաջադրվված խնդիրների շրջանակներում հավաքագրվել է երկրաշարժից հետո աղետի գոտու բնակավայրերում տեղադրված կամ կառուցված ժամանակավոր կացարանների՝ ըստ մարզերի և համայնքների բաշխվածության, պատկանելության, վիճակի, դրանցում բնակվող ընտանիքների

թվի, այդ պայմաններում հայտնվելու պատճառների մասին տեղեկատվությունը, որի հիման Վարչապետի աշխատակազմ է ներկայացվել ոչ հիմնական շինություններում բնակվող ընտանիքների վերաբնակեցման՝ բնակարանային պայմանների բարելավման և տարածքները ոչ հիմնական շինություններից ազատելու վերաբերյալ առաջարկությունների փաթեթ, ինչպես նաև յուրաքանչյուր տնակի և դրանում բնակվող ընտանիքի կարգավիճակի գնահատման նպատակով չափորոշիչներ:

Վարչապետի հանձնարարության համաձայն մշակվել է ներկայացված առաջարկությունների իրագործմանն ուղղված միջոցառումների ծրագիր, որն ընդգրկում է 2021-2022 թվականների ժամանակահատվածը և նախատեսվում է ստեղծել իրավական հիմքեր՝ հիմնախնդրի կանոնակարգման համար:

1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Աղետի գոտու քաղաքային բնակավայրերի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում տեղադրված/կառուցված տարածքները ոչ հիմնական շինությունների հետագա տնօրինման և դրանցում բնակվող ընտանիքների մասով մոտեցումների և առաջնահերթությունների սահմանում:

2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Իրավական հիմքերի ստեղծում՝

- Աղետի գոտու բնակավայրերի հողամասերը ոչ հիմնական շինություններից ազատման և քաղաքաշինական միջավայրի վերականգնման համար՝ որպես առաջնահերթություն դիտարկելով պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը,
- ոչ հիմնական շինություններում բնակվող ընտանիքների վերաբնակեցման համար՝ տարբերակված մոտեցմամբ, կախված ընտանիքի անօթևանի կարգավիճակում գտնվելու հիմքերից:

<u>17.2. Ոչ հիմնական շինությունների հետագա տնօրինման և դրանցում բնակվող ընտանիքների վերաբնակեցման հետ կապված Կառավարության կողմից սահմանված մոտեցումների և առաջնահերթությունների հիման վրա ծրագրերի մեկնարկ</u>

1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է Սահմանադրության 83-րդ և 86-րդ հոդվածի 3-րդ կետի, «Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագիրը հաստատելու մասին» օրենքի 4-րդ և 7-րդ բաժինների դրույթներից, ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի N 531-Լ որոշմամբ հաստատված՝ քաղաքաշինության բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրից, Ազգային ժողովի 2021թ. օգոստոսի 26-ի ՈՒԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի 2.7-րդ՝ «Քաղաքաշինություն» բաժնի 2-րդ պարբերության 9-րդ կետից:

Միջոցառման նպատակը՝ ոչ հիմնական շինությունների հետագա տնօրինման և դրանցում բնակվող ընտանիքների վերաբնակեցման հետ կապված ծրագրերի իրականացնում է:

1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժից հետո տեղադրված կամ կառուցված ոչ հիմնական շինությունների, ինչպես նաև այդ շինություններում բնակվող ընտանիքների վերաբերյալ ամբողջական և արժանահավատ տվյալներ առկա չէր, չկար նաև տեղեկատվություն ոչ հիմնական շինությունների վիճակի, տեղաբաշխման, օգտագործման նպատակի, այդ ոչ հիմնական շինություններում բնակվող ընտանիքների՝ անօթևանի կարգավիճակում հայտնվելու հիմքերի վերաբերյալ:

Վարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 20-ի N 1658–Ա որոշմամբ ստեղծվել է աշխատանքային խումբ (այսուհետ՝ Աշխատանքային խումբ), որին առաջադրվված խնդիրների շրջանակներում հավաքագրվել է երկրաշարժից հետո աղետի գոտու բնակավայրերում տեղադրված կամ կառուցված ժամանակավոր կացարանների՝ ըստ մարզերի և համայնքների բաշխվածության, պատկանելության, վիճակի, դրանցում բնակվող ընտանիքների թվի, այդ պայմաններում հայտնվելու պատճառների մասին տեղեկատվությունը, որի հիման Վարչապետի աշխատակազմ է ներկայացվել ոչ հիմնական շինություններում բնակվող ընտանիքների վերաբնակեցման՝ բնակարանային պայմանների բարելավման և տարածքները ոչ հիմնական շինություններից ազատելու վերաբերյալ առաջարկությունների փաթեթ, ինչպես նաև յուրաքանչյուր տնակի և դրանում բնակվող ընտանիքի կարգավիճակի գնահատման նպատակով չափորոշիչներ:

ՀՀ կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 13-ի N1601-Ն որոշմամբ հաստատվել է աղետի գոտու բնակավայրերի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը երկրաշարժից հետո տեղադրված կամ կառուցված ոչ հիմնական շինություններից ազատելու կարգը:

Որոշման հիմնական նպատակը տարածքները տնակներից ազատելու՝ դրանցում բնակվող ընտանիքների վերաբնակեցման և տնակների քանդման հետ կապված հարցերի կարգավորումն է, ինչը հնարավորություն կտա

	աղետի գոտու բնակավայրերն ազատել քաղաքաշինական տեսանկյունից ոչ անվտանգ և քաղաքաշինական նորմատիվ պահանջներին չհամապատասխանող օբյեկտներից, անհարիր շինություններից՝ վերականգնելով տվյալ տարածքների քաղաքաշինական միջավայրը: Նշված կարգի համաձայն՝ - 2023թ. համար նախատեսված են առավել կազմակերպչական աշխատանքներ (դասակարգված ցուցակների հաստատում, ծանուցումներ, բյուջետային գործընթացի պլանավորում, ֆինանսավորում չպահանջող աշխատանքների մեկնարկ), - 2024-2027թթ. ընթացքում, տնակների ազատում և ապանոտնաժում, բնակության նպատակով օգտագործվող տնակներում ապրող ընտանիքների բնակարանային խնդիրների մասով պետական աջակցության տարբերակված մոտեցում, կախված տվյալ ընտանիքի՝ տնակում բնակվողի կարգավիճակում հայտնվելու հիմքերից: **1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** ՀՀ կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 13-ի N1601-Ն որոշմամբ նախատեսված աշխատանքների մեկնարկ՝ նույն որոշմամբ սահմանված մոտեցումների և առաջնահերթությունների համաձայն: **2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Շարունակաբար աղետի գոտու քաղաքային բնակավայրերի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ազատում՝ տեղադրված/կառուցված ոչ հիմնական շինություններից, դրանցում բնակվող ընտանիքների վերաբնակեցում:
18.	**ՎԱՐՉԱԿԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ և ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ**
	<u>18.1-18.11 միջոցառումներ</u> **1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է Ազգային ժողովի 2021 թվականի օգոստոսի 26-ի N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի վարչական և կրթամշակութային հաստատությունների կառուցման և վերակառուցման աշխատանքների իրագործմանը վերաբերող դրույթներից Նպատակը՝ պետական կապիտալ շինարարական ծրագրերի իրականացումն է: **1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, առողջապահության նախարարության, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, արդարադատության նախարարության, բարձրագույն դատական խորհրդի կարիքների համար ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից կնքված պետական գնման պայմանագրերի իրականացում **1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Պետական գնման պայմանագրերով սահմանված ժամկետներում պատշաճ իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ապահովում **2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** • թվով 10 մանկապարտեզ, • թվով 24 դպրոց, • թվով 3 նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ • թվով 2 մարզաուսմնական հաստատություն • թվով 4 առողջապահական հաստատություն • թվով 2 բազմաբնակարան շենք • արդարադատության ոլորտի թվով 4 վարչական շենք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

25.12.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ